

Եվրոպայի տնտեսական հանձնաժողով  
Ներքին տրանսպորտի կոմիտե

---

# ԱԴՌ

---

Ուժի մեջ է 2017 թվականի հունվարի 1-ից

**«Վտանգավոր բեռների միջազգային  
ճանապարհային փոխադրումների մասին»  
Եվրոպական համաձայնագիր (ADR)**

Հատոր I



ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Նյու Յորք եւ Ժնև, 2016

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սույն հրատարակությունում նշված նշանակությունների կիրառությունը եւ նյութի շարադրանքը չպետք է ընկալվեն որպես որեւէ երկրի, տարածաշրջանի, քաղաքի կամ տարածքի կամ դրա իշխանությունների իրավական կարգավիճակի կամ դրա սահմանագծման վերաբերյալ Միավորված ազգերի կազմակերպության քարտուղարության կողմից որեւէ կարծիքի արտահայտում:

ECE/TRANS/257 (Հատոր I)

Հեղինակային իրավունք © Միավորված ազգերի կազմակերպություն, 2016թ.

*Բոլոր իրավունքները պահպանված են:*

*Սույն հրատարակության եւ ոչ մի մաս վաճառքի նպատակներով չի կարող վերարտադրվել, պահվել տեղեկատվական-որոնողական համակարգում կամ որեւէ ձեւով կամ միջոցով փոխանցվել՝ լինի դա էլեկտրոնային, էլեկտրաստատիկ, մագնիսային ժապավենով, մեխանիկական, լուսապատճենման կամ այլ տարրերակով՝ առանց Միավորված ազգերի կազմակերպության կողմից նախնական գրավոր թույլտվության:*

ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
<i>Վաճառքի համարը՝ 16.VIII.1</i>
ISBN 978-92-1-139156-5 <i>(երկու հատորով ամբողջական հավաքածու)</i>
e-ISBN 978-92-1-058130-1

*I եւ II հատորները չեն կարող առանձին վաճառվել:*

## **ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողով (ՄԱԿ ԵՏՀ (UNECE))**

ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովը (ՄԱԿ ԵՏՀ) ՄԱԿ-ի տարածաշրջանային հինգ հանձնաժողովներից մեկն է, որը կառավարվում է Տնտեսական և սոցիալական խորհրդի (ՏՄԽ (ECOSOC)) կողմից: Այն ստեղծվել է 1947 թվականին՝ հետպատերազմյան Եվրոպայի վերականգնման, տնտեսական գործունեության զարգացման և եվրոպական երկրների, ինչպես նաև Եվրոպայի և աշխարհի մյուս երկրների միջև տնտեսական հարաբերությունների ամրապնդման նպատակով: Սառը պատերազմի ընթացքում ՄԱԿ ԵՏՀ-ն համարվել է Արեւելքի և Արեւմուտքի միջև տնտեսական երկխոսության և համագործակցության եզակի ֆորում: Չնայած այդ ժամանակաշրջանի դժվարություններին՝ այն նշանակալի է կարելի դեռաբերումներով և ներդաշնակեցման ու ստանդարտացման մի շարք համաձայնագրերի շուրջ ընդհանուր համաձայնությամբ:

Սառը պատերազմի ավարտից հետո ՄԱԿ ԵՏՀ-ն ձեռք է բերել ոչ միայն նոր անդամ պետություններ, այլ նաև նոր գործառույթներ: 1990-ական թվականների սկզբից կազմակերպությունն իր ջանքերը կենտրոնացրել է անցումային գործընթացի վերլուծությունների վրա՝ կիրառելով Կենտրոնական և Արեւելյան Եվրոպայի երկրների՝ համաշխարհային շուկաներին ինտեգրման գործընթացը դյուրացնելու հարցում ներդաշնակեցման իր փորձը:

ՄԱԿ ԵՏՀ-ն ֆորում է, որտեղ Արեւմտյան, Կենտրոնական և Արեւելյան Եվրոպայի, Կենտրոնական Ասիայի և Հյուսիսային Ամերիկայի երկրները (ընդհանուր 56 երկիր) համախմբվում են իրենց համագործակցության գործիքները ստեղծելու համար: Այդ համագործակցությունը վերաբերում է տնտեսական համագործակցությանը և ինտեգրմանը, վիճակագրությանը, շրջակա միջավայրին, տրանսպորտին, առևտրին, կայուն էներգետիկային, անտառտնտեսությանն ու անտառանյութերին, բնակարանային տնտեսությանը և հողօգտագործմանը, ինչպես նաև բնակչությանը: Հանձնաժողովն առաջարկում է կոնվենցիաների, նորմերի և ստանդարտների մշակման ու ներդաշնակեցման տարածաշրջանային շրջանակ: Հանձնաժողովի փորձագետները տեխնիկական աջակցություն են տրամադրում Հարավարեւելյան Եվրոպայի և Անկախ Պետությունների Համագործակցության երկրներին: Այս աջակցությունն իրականացվում է խորհրդատվական ծառայությունների, վերապատրաստման սեմինարների և աշխատաժողովների ձեով, որոնց ընթացքում երկրները կարող են փոխանակել իրենց փորձառությունը և լավագույն գործելակերպերը:

### **Տրանսպորտի ոլորտը ՄԱԿ ԵՏՀ-ում**

ՄԱԿ ԵՏՀ-ի կայուն տրանսպորտի հարցերով բաժինը Ներքին տրանսպորտի կոմիտեի (ՆՏԿ) և ՏՄԽ վտանգավոր բեռների փոխադրման, ինչպես նաև քիմիական նյութերի դասակարգման և պիտակավորման

համաշխարհային մակարդակով ներդաշնակեցված համակարգի հարցերով փորձագետների կոմիտեի քարտուղարությունն է: ՆՏԿ-ն եւ դրա 17 աշխատանքային խմբերը, ինչպես նաեւ ՏՄԽ կոմիտեն եւ դրա ենթակոմիտեները միջկառավարական մակարդակում որոշումներ կայացնող մարմիններ են, որոնց գործունեությունն ուղղված է ամբողջ աշխարհում բնակչության առօրյա կյանքը եւ ձեռնարկատիրական գործունեության պայմանները բարելավելուն՝ գնահատելի եղանակների եւ կոնկրետ գործողությունների օգտագործմամբ, երթեւեկության անվտանգության, բնապահպանության ցուցանիշների, էներգաարդյունավետության, ինչպես նաեւ տրանսպորտի ոլորտում մրցակցության մակարդակը բարձրացնելուն:

ՏՄԽ կոմիտեն ստեղծվել է 1953 թվականին Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղարի կողմից՝ Տնտեսական եւ սոցիալական խորհրդի՝ վտանգավոր բեռների փոխադրման վերաբերյալ առաջարկություններ մշակելու պահանջի հիման վրա: 1999 թվականին դրա լիազորությունների շրջանակն ընդլայնվել է՝ ներառելով Քիմիական նյութերի դասակարգման եւ պիտակավորման համակարգերի՝ համաշխարհային մակարդակում (բազմաօլորտային) ներդաշնակեցումը: Դրա կազմի մեջ մտնում են փորձագետներ այնպիսի երկրներից, որոնք համապատասխան գիտելիքներ եւ փորձառություն ունեն միջազգային առետրի, ինչպես նաեւ վտանգավոր բեռների ու քիմիական նյութերի փոխադրման ոլորտում: Դրան անդամակցությունը սահմանափակված է՝ աշխարհի բոլոր շրջանների միջեւ համապատասխան աշխարհագրական հավասարակշռությունն արտացոլելու եւ զարգացող երկրների պատշաճ մասնակցությունն ապահովելու նպատակով: Չնայած Կոմիտեն համարվում է ՏՄԽ-ի օժանդակ մարմին, 1963 թվականին Գլխավոր քարտուղարը որոշել է, որ քարտուղարական ծառայությունները պետք է տրամադրվեն ՄԱԿ ԵՏՀ-ի տրանսպորտի բաժնի կողմից:

ՆՏԿ-ն միջկառավարական եզակի ֆորում է, որն ստեղծվել է 1947 թվականին՝ հետպատերազմյան Եվրոպայում տրանսպորտային կապերի վերականգնման գործընթացին աջակցելու համար: Տարիներ շարունակ այն մասնագիտացել է ներքին տրանսպորտային միջոցների ներդաշնակեցված եւ կայուն զարգացմանը նպաստելու գործում: Այս հաստատուն եւ շարունակական աշխատանքի հիմնական արդյունքներն արտացոլված են, ի թիվս այլնի՝ i) Միավորված ազգերի կազմակերպության 58 կոնվենցիաներում եւ շատ այլ տեխնիկական կանոնակարգերում, որոնք պարբերաբար թարմացվում են եւ ապահովում միջազգային իրավական դաշտ՝ ճանապարհային, երկաթուղային, ներքին ջրային տրանսպորտով եւ տրանսպորտի մի քանի տեսակներով փոխադրման, այդ թվում՝ վտանգավոր բեռների փոխադրման, ինչպես նաեւ ավտոտրանսպորտային միջոցների արտադրության եւ ստուգման՝ ազգային եւ միջազգային մակարդակում կայուն զարգացման համար. ii) Անդրեվրոպական հյուսիս-հարավ ավտոմայրուղու, անդրեվրոպական երկաթուղային եւ եվրո-ասիական տրանսպորտային կապերի ծրագրերում, որոնք նպաստում են տրանսպորտային ենթակառուցվածքներում ներդրումների ծրագրերի

համակարգմանը մի քանի երկրների շրջանում. iii) Միջազգային ճանապարհային փոխադրումների (TIR) համակարգում, ինչը համարվում է մաքսային տարանցման գործընթացի դյուրացման լուծում. iv) «Ներքին տրանսպորտի ապագա համակարգեր» կոչվող գործիքներում, որոնք կարող են ազգային եւ տեղական կառավարման մարմիններին աջակցել ներքին տրանսպորտի տարբեր տեսակներից ածխածնի երկօքսիդի (CO<sub>2</sub>) արտանետումները վերահսկելու, ինչպես նաեւ կլիմայական փոփոխությունների մեղմացման քաղաքականություններ ընտրելու եւ մշակելու հարցում, որոնք հիմնված են դրանց ազդեցության վրա եւ հարմարեցված են տեղական պայմաններին. v) տրանսպորտի վիճակագրության մեջ՝ մեթոդներ եւ տվյալներ, որոնք համաձայնեցված են միջազգային մակարդակում. vi) ուսումնասիրություններում ու հաշվետվություններում, որոնք օգնում են տրանսպորտային քաղաքականության զարգացմանը՝ հետազոտությունների եւ վերլուծությունների առաջադեմ մեթոդների հիման վրա կարգավորելով առկա խնդիրները: ՆՏԿ-ն հատուկ ուշադրություն է դարձնում ինտելեկտուալ տրանսպորտային ծառայություններին (ԻՏԾ), քաղաքային կայուն շարժունակությանը եւ քաղաքային լոգիստիկային, ինչպես նաեւ տրանսպորտային ցանցերի եւ ծառայությունների կայունության բարձրացմանը՝ ի պատասխան կլիմայի փոփոխությունների հարմարվողականությանը եւ անվտանգության մարտահրավերներին:

Բացի այդ, ՄԱԿ ԵՏՀ-ի կայուն տրանսպորտի եւ շրջակա միջավայրի հարցերով բաժինները Եվրոպայի Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) հետ համատեղ սպասարկում են Տրանսպորտի, առողջապահության եւ շրջակա միջավայրի վերաբերյալ համաեվրոպական ծրագիրը (ՏԱՇՄ ՀԵԾ):

Վերջապես, 2015 թվականից ՄԱԿ ԵՏՀ-ի կայուն տրանսպորտի հարցերով բաժինը քարտուղարական ծառայություններ է տրամադրում Գլխավոր քարտուղարին՝ ճանապարհային երթեւեկության անվտանգության հարցերով հատուկ բանազնաց պարոն ժան Թոդթին:

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

### Ընդհանուր նկարագիր

«Վտանգավոր բեռների միջազգային ճանապարհային փոխադրումների մասին» եվրոպական համաձայնագիրը («ԱԴԴ» համաձայնագիր) կազմվել է 1957 թվականի սեպտեմբերի 30-ին՝ Միավորված ազգերի կազմակերպության Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի շրջանակներում: Այն ուժի մեջ է մտել 1968 թվականի հունվարի 29-ին: Նշված Համաձայնագիրը փոփոխվել է 1975 թվականի օգոստոսի 21-ին Նյու Յորքում մշակված 14(3) հոդվածում փոփոխություններ կատարելու մասին արձանագրությամբ, որն ուժի մեջ է մտել 1985 թվականի ապրիլի 19-ին:

Սույն Համաձայնագրի 2-րդ հոդվածի համաձայն՝ Ա հավելվածով փոխադրումների համար արգելված վտանգավոր բեռները չեն կարող ընդունվել միջազգային փոխադրման համար, մինչդեռ այլ վտանգավոր բեռների միջազգային փոխադրումը թույլատրվում է, եթե կատարվում են՝

- համապատասխան բեռների համար Ա հավելվածում սահմանված պայմանները, մասնավորապես՝ կապված դրանց փաթեթավորման եւ պիտակավորման հետ, եւ
- Բ հավելվածում սահմանված պայմանները, մասնավորապես՝ կապված տվյալ բեռները փոխադրող փոխադրամիջոցի կառուցման, սարքավորումների եւ շահագործման հետ:

Այնուամենայնիվ, 4-րդ հոդվածի համաձայն՝ Պայմանավորվող յուրաքանչյուր կողմի իրավունք է վերապահված կարգավորելու կամ արգելելու փոխադրման ընթացքում, անվտանգությունից բացի այլ նկատառումներից ելնելով, վտանգավոր բեռների մուտքն իր տարածք: Պայմանավորվող կողմերին նույնպես իրավունք է վերապահված երկկողմ կամ բազմակողմ համաձայնագրերի միջոցով այնպիսի պայմանավորվածություններ ձեռք բերել, համաձայն որոնց իրականացվի Ա հավելվածով փոխադրման համար արգելված որոշակի վտանգավոր բեռների միջազգային փոխադրում՝ իրենց տարածքներում որոշակի պայմանների կատարմամբ, կամ Ա հավելվածի համաձայն միջազգային փոխադրման համար թույլատրված վտանգավոր բեռները փոխադրվեն իրենց տարածքներում Ա եւ Բ հավելվածներում սահմանված պայմաններից առավել մեղմ պայմաններով:

«ԱԴԴ» համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց ի վեր Ա եւ Բ հավելվածները պարբերաբար փոփոխվել եւ թարմացվել են:

## **Ա Եւ Բ հավելվածների կառուցվածքը**

Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի Ներքին տրանսպորտի կոմիտեի Վտանգավոր բեռների փոխադրման հարցերով աշխատանքային խումբը (ԱԽ.15) 1992 թվականի հոկտեմբերի 26-30-ը կայացած իր հիսունմեկերորդ նիստի ժամանակ որոշում կայացրեց կառուցվածքային փոփոխություններ կատարել Ա Եւ Բ հավելվածներում՝ Միջազգային ճանապարհային փոխադրումների հարցերով միության կողմից ստացված առաջարկության հիման վրա (TRANS/WP.15/124, 100-108-րդ պարբերություններ): Հիմնական նպատակներն էին պահանջները դարձնել ավելի պարզ եւ կիրառման համար մատչելի, որպեսզի դրանք հնարավոր լինի առավել հեշտ կիրառել «ԱԴԴ» համաձայնագրի համաձայն ոչ միայն միջազգային ճանապարհային փոխադրումների նկատմամբ, այլ նաեւ բոլոր եվրոպական պետություններում ներքին փոխադրումների նկատմամբ՝ հիմք ընդունելով ազգային կամ Եվրոպական համայնքի օրենսդրությունը, եւ ամենակարեւորը՝ ապահովելու համար եվրոպական մակարդակով հետեւողական կարգավորիչ շրջանակ: Անհրաժեշտ է համարվել նաեւ տրանսպորտային շղթայում տարբեր մասնակիցների պարտականությունների հստակեցումը, այդ տարբեր մասնակիցներին վերաբերող պահանջների առավել սիստեմատիկ խմբավորումը, ինչպես նաեւ «ԱԴԴ» համաձայնագրի իրավական պահանջների տարանջատումը եվրոպական կամ միջազգային այն ստանդարտներից, որոնք կարող էին կիրառվել այդ պահանջները բավարարելու համար:

Կառուցվածքը համապատասխանում է Վտանգավոր բեռների փոխադրումների մասին Միավորված ազգերի կազմակերպության առաջարկություններով, տիպային կանոնակարգերով, «Վտանգավոր բեռների միջազգային ծովային փոխադրումների մասին» կանոնագրքով (ՎԲՄԾ կանոնագիրք) եւ «Վտանգավոր բեռների միջազգային երկաթուղային փոխադրումների մասին» կանոնակարգերով (ՌԻԴ) նախատեսվող կառուցվածքին:

Այն բաժանված է եղել ինը մասի, թեպետ դեռեւս խմբավորված է երկու հավելվածներում՝ համապատասխանելու համար Համաձայնագրի 2-րդ հոդվածի ձեւակերպմանը: Կառուցվածքը հետեւյալն է.

Հավելված Ա. Ընդհանուր դրույթներ եւ վտանգավոր նյութերին ու պատրաստվածքներին վերաբերող դրույթներ

Մաս 1. Ընդհանուր դրույթները

Մաս 2. Դասակարգումը

Մաս 3. Վտանգավոր բեռների ցանկը, հատուկ դրույթները եւ սահմանափակ ու

ազատված քանակություններին վերաբերող բացառությունները

Մաս 4. Փաթեթավորման եւ ցիստեռնների մասին դրույթները

Մաս 5. Բեռնառաքման ընթացակարգերը

Մաս 6. Փաթեթավածքների, սորուն բեռների համար նախատեսված միջին բեռնվածության կոնտեյներների (ՄՄԿ-ներ), խոշոր փաթեթավածքների, ցիստեռնների եւ սորուն բեռների համար նախատեսված կոնտեյներների պատրաստմանը ու փորձարկմանը ներկայացվող պահանջները

Մաս 7. Փոխադրման, բեռնման, բեռնաթափման եւ վարվելակարգի պայմաններին վերաբերող դրույթները

Հավելված Բ. Տրանսպորտային սարքավորումներին եւ փոխադրման աշխատանքներին վերաբերող դրույթներ

Մաս 8. Տրանսպորտային միջոցների անձնակազմին, սարքավորումներին, շահագործմանը եւ փաստաթղթավորմանը ներկայացվող պահանջները

Մաս 9. Փոխադրամիջոցների կառուցմանը եւ հաստատմանը վերաբերող պահանջները

1-ին մասը, որը ներառում է ընդհանուր դրույթները եւ սահմանումները, հիմնական մասն է, քանի որ այն ներառում է այլ մասերում կիրառվող եզրույթների բոլոր սահմանումները, եւ այն հստակ սահմանում է «ԱԴՌ» համաձայնագրի շրջանակն ու կիրառելիությունը, այդ թվում նաեւ բացառությունների հնարավորությունը, ինչպես նաեւ այլ կանոնակարգերի կիրառելիությունը: Այն նաեւ ներառում է վերապատրաստման, վերապահումների եւ անցումային միջոցների, վտանգավոր բեռների փոխադրման շղթայում տարբեր մասնակիցների անվտանգության համապատասխան պարտավորությունների, վերահսկման միջոցների, անվտանգության հարցերով խորհրդատուների, ճանապարհային թունելներով վտանգավոր բեռներ փոխադրող փոխադրամիջոցների անցման համար սահմանափակումների եւ վտանգավոր բեռների փոխադրման անվտանգության մասին դրույթներ:

Կառուցվածքային փոփոխությունների ենթարկված «ԱԴՌ» համաձայնագրի կիրառման համար կարելու է 3.2 գլխի Ա աղյուսակը, որը ներառում է ՄԱԿ-ի նշագրման համարների թվային հերթականությամբ վտանգավոր բեռները: Կոնկրետ վտանգավոր նյութի կամ պատրաստվածքի ՄԱԿ-ի նշագրման համարը որոշելուց հետո աղյուսակով նախատեսվում են խաչաձեւ հղումներ նշված նյութի կամ պատրաստվածքի փոխադրման համար կիրառվելիք հատուկ պահանջներին եւ այն գլուխներին կամ բաժիններին, որտեղ կարելի է գտնել այդ հատուկ պահանջները: Այնուհանդերձ, անհրաժեշտ է հիշել, որ հարկ եղած դեպքում, հատուկ պահանջներից բացի, պետք է կիրառվեն նաեւ ընդհանուր պահանջներ կամ տարբեր մասերի՝ դասին յուրահատուկ պահանջներ:



Այբբենական ինդեքսը, որը ցույց է տալիս կոնկրետ վտանգավոր բեռներին տրված ՄԱԿ-ի նշագրման համարը, մշակվել է քարտուղարության կողմից եւ ավելացվել որպես 3.2 գլխի Բ աղյուսակ՝ դյուրացնելու համար Ա աղյուսակի կիրառելիությունը, երբ հայտնի չէ ՄԱԿ-ի նշագրման համարը: Նշված Բ աղյուսակը «ԱԴՌ» համաձայնագրի պաշտոնական մաս չի կազմում եւ լոկ հեշտությամբ հղում կատարելու համար է ավելացվել հրատարակությունում:

Եթե այն բեռները, որոնք հայտնի է, որ վտանգավոր են կամ ենթադրվում է, որ վտանգավոր են, հնարավոր չէ Ա եւ Բ աղյուսակներում գտնել անվանմամբ, դրանք պետք է դասակարգվեն 2-րդ մասի համաձայն, որը ներառում է բոլոր համապատասխան ընթացակարգերը եւ չափորոշիչները՝ որոշելու համար, թե արդյոք այդ բեռները համարվում են վտանգավոր, թե՛ ոչ, եւ թե դրանց ՄԱԿ-ի նշագրման ինչ համար պետք է տրվի:

### **Կիրառվող տեքստերը**

Այս տարբերակում («2017 ԱԴՌ համաձայնագիր») հաշվի են առնվում 2014, 2015 եւ 2016 թվականներին WP.15-ի կողմից ընդունված եւ ECE/TRANS/WP.15/231 եւ -/Corr.1 եւ ECE/TRANS/WP.15/231/Add.1 խորհրդանշանների ներքո շրջանառվող բոլոր այն նոր փոփոխությունները, որոնք, Համաձայնագրի 14(3) հոդվածի համաձայն, Պայմանավորվող կողմերի կողմից ընդունվելու դեպքում պետք է ուժի մեջ մտնեն 2017 թվականի հունվարի 1-ին:

Այնուհանդերձ, Ա հավելվածի 1.6.1.1-ով նախատեսվող անցումային միջոցների շնորհիվ Ավանդապահի կողմից արված «C.N.354.2015.TREATIES-XI.B.14» եւ «C.N.710.2015.TREATIES-XI.B.14» ծանուցումներին համապատասխան փոփոխված նախորդ տարբերակը («2015 ԱԴՌ համաձայնագիր») կարող է շարունակել կիրառվել մինչեւ 2017 թվականի հունիսի 30-ը:

### **Տարածքային կիրառելիությունը**

«ԱԴՌ» համաձայնագիրը պետությունների միջեւ կնքվող համաձայնագիր է, եւ դրա դրույթների ապահովման համար չի գործում ընդհանուր կիրարկող մարմին: Գործնականում մայրուղիների ստուգումներն իրականացվում են Պայմանավորվող կողմերի կողմից, եւ անհամապատասխանությունը կարող է հանգեցնել իրավախախտ անձանց նկատմամբ ազգային մարմինների կողմից իրենց ներպետական օրենսդրության համաձայն դատական գործի հարուցմանը: «ԱԴՌ» համաձայնագրով պատժամիջոցներ չեն նախատեսվում: Հրատարակման ընթացքում Պայմանավորվող կողմ պետություններն են Ալբանիան, Անդորրան, Ավստրիան, Ադրբեջանը, Բելառուսը, Բելգիան, Բոսնիան եւ Հերցեգովինան, Բուլղարիան, Խորվաթիան, Կիպրոսը, Չեխիայի Հանրապետությունը, Դանիան, Էստոնիան, Ֆինլանդիան, Ֆրանսիան, Գերմանիան, Հունաստանը, Հունգարիան, Իսլանդիան, Իռլանդիան, Իտալիան, Ղազախստանը, Լատվիան, Լիխտենշտեյնը,

Լիտվան, Լյուքսեմբուրգը, Մալթան, Մոնտենեգրոն, Մարոկկոն, Նիդեռլանդները, Նորվեգիան, Լեհաստանը, Պորտուգալիան, Մոլդովայի Հանրապետությունը, Ռումինիան, Ռուսաստանի Դաշնությունը, Սերբիան, Սլովակիան, Սլովենիան, Իսպանիան, Շվեդիան, Շվեյցարիան, Տաջիկստանը, Մակեդոնիայի նախկին Հարավսլավական Հանրապետությունը, Թունիսը, Թուրքիան, Ուկրաինան եւ Միացյալ Թագավորությունը:

«ԱԴՌ» համաձայնագիրը կիրառվում է վերը նշված՝ Պայմանավորվող կողմեր հանդիսացող պետություններից առնվազն երկուսի տարածքում իրականացվող փոխադրումների նկատմամբ: Բացի այդ, հարկ է նշել, որ, ելնելով Եվրոպական միությունում (ԵՄ) միասնականության եւ ազատ առևտրի նկատառումներից, «ԱԴՌ» համաձայնագրի Ա եւ Բ հավելվածները նույնպես ընդունվել են ԵՄ անդամ պետությունների կողմից որպես հիմք՝ իրենց տարածքներում կամ իրենց տարածքների միջև վտանգավոր բեռների ճանապարհային փոխադրման կարգավորման համար (Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2008 թվականի սեպտեմբերի 24-ի թիվ 2008/68/ԵՀ հրահանգ «Վտանգավոր բեռների ներքին փոխադրումների մասին», փոփոխված): ԵՄ-ի ոչ անդամ մի շարք երկրներ նույնպես ընդունել են «ԱԴՌ» համաձայնագրի Ա եւ Բ հավելվածները՝ որպես իրենց ազգային օրենսդրության հիմք:

### **Հավելյալ գործնական տեղեկություններ**

«ԱԴՌ» համաձայնագրի կիրառմանը վերաբերող ցանկացած հարց պետք է ուղղվի համապատասխան իրավասու մարմնին: Լրացուցիչ տեղեկություններ կարելի է գտնել ՄԱԿ ԵՏՀ-ի Փոխադրման բաժնի կայքի հետևյալ էջում՝

<http://www.unece.org/trans/danger/danger.htm>

Տվյալ կայքը պարբերաբար թարմացվում է եւ պարունակում հետևյալ տեղեկությունները.

- «ԱԴՌ» համաձայնագրի մասին ընդհանուր տեղեկություններ
- Համաձայնագիր (առանց հավելվածների)
- Ստորագրման արձանագրություն
- «ԱԴՌ» համաձայնագրի ներկայիս կարգավիճակը
- Ավանդապահի կողմից տրվող ծանուցումներ
- Երկրի մասին տեղեկություններ (Իրավասու մարմիններ, ծանուցումներ)
- Լեզվաբանական տարբերակներ («ԱԴՌ» համաձայնագիր, գրավոր ցուցումներ)

- Բազմակողմ համաձայնագրեր
- «ԱԴՌ» համաձայնագիր 2017թ. (ֆայլեր)
- «ԱԴՌ» համաձայնագիր 2015թ. (ֆայլեր)
- «ԱԴՌ» համաձայնագիր 2015թ. (փոփոխություններ)
- Նախկին տարբերակները (ֆայլեր եւ փոփոխություններ)
- Հրատարակության մասին մանրամասներ եւ վրիպակների ցանկ

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՏՈՐ I

Էջ

«ՎՏԱՆԳԱՎՈՐ ԲԵՌՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ («ԱԴՌ») .....	<b>xxii</b>
ՍՏՈՐԱԳՐՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ .....	<b>xxxii</b>
ՀԱՎԵԼՎԱԾ ԱԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ ԵՎ ՎՏԱՆԳԱՎՈՐ ՆՅՈՒԹԵՐԻՆ ՈՒ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՔՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԴՐՈՒՅԹՆԵՐ .....	<b>1</b>
ՄԱՍ 1_Ընդհանուր դրույթներ .....	<b>1</b>
ԳԼՈՒԽ 1.1_ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ ԵՎ ԿԻՐԱՌԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ .....	<b>3</b>
1.1.1. Կառուցվածքը.....	<b>3</b>
1.1.2. Գործողության ոլորտը .....	<b>3</b>
1.1.3. Բացառությունները .....	<b>5</b>
1.1.4. Այլ կանոնակարգերի կիրառելիությունը .....	<b>17</b>
1.1.5. Ստանդարտների կիրառումը .....	<b>20</b>
ԳԼՈՒԽ 1.2_ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՉԱՓՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ.....	<b>22</b>
1.2.1. Սահմանումները.....	<b>22</b>
1.2.2. Չափման միավորները .....	<b>58</b>
ԳԼՈՒԽ 1.3_ՎՏԱՆԳԱՎՈՐ ԲԵՌՆԵՐԻ ՓՈԽԱԴՐՄԱՄԲ ԶԲԱՂՎՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ .....	<b>63</b>
1.3.1. Գործողության ոլորտը եւ կիրառելիությունը .....	<b>63</b>
1.3.2. Վերապատրաստման բնույթը .....	<b>63</b>
1.3.3. Փաստաթղթավորումը .....	<b>64</b>
ԳԼՈՒԽ 1.4_ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՌՈՒՄՈՎ .....	<b>65</b>
1.4.1. Անվտանգության ընդհանուր միջոցառումները .....	<b>65</b>
1.4.2. Հիմնական մասնակիցների պարտավորությունները.....	<b>65</b>
1.4.3. Այլ մասնակիցների պարտավորությունները .....	<b>69</b>
ԳԼՈՒԽ 1.5_ՇԵՂՈՒՄՆԵՐԸ .....	<b>73</b>
1.5.1. Սահմանված կարգից ժամանակավոր շեղումները .....	<b>73</b>
1.5.2. (Նախատեսվում է վերապահում) .....	<b>73</b>
ԳԼՈՒԽ 1.6_ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ .....	<b>73</b>

1.6.1. Ընդհանուր դրույթները .....	73
1.6.2. Ճնշումային տարաները եւ 2-րդ դասի տարաները .....	79
1.6.3 Անշարժ ցիստեռնները (ավտոցիստեռնները), հանովի ցիստեռնները եւ մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցները <sup>81</sup>	
1.6.4 Ցիստեռն-կոնտեյներները, շարժական ցիստեռնները եւ ԳԲՏԿ-ները .....	88
1.6.5. Փոխադրամիջոցները .....	92
1.6.6. Դաս 7 .....	95
<b>ԳԼՈՒԽ 1.7_ ՌԱԴԻՈԱԿՏԻՎ ՆՅՈՒԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ.....</b>	<b>99</b>
1.7.1. Գործողության ոլորտը եւ կիրառումը.....	99
1.7.2. Ճառագայթային պաշտպանության ծրագիրը.....	102
1.7.3. Կառավարման համակարգը.....	103
1.7.4. Հատուկ ռեժիմը.....	104
1.7.5. Այլ վտանգավոր հատկանիշներ ունեցող ռադիոակտիվ նյութը.....	104
1.7.6. Անհամապատասխանությունը.....	104
<b>ԳԼՈՒԽ 1.8_ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՄՅՈՒՍ ՕԺԱՆԴԱԿ ՄԻՋՈՑՆԵՐԸ՝ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԲԱՎԱՐԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ .....</b>	<b>106</b>
1.8.1. Վտանգավոր բեռների վարչական վերահսկումը.....	106
1.8.2. Փոխադարձ վարչական օգնությունը .....	107
1.8.3. Անվտանգության հարցերով խորհրդատուն.....	107
1.8.4. Իրավասու մարմինները եւ նրանց կողմից նշանակված մարմինների ցանկը.....	116
1.8.5. Վտանգավոր բեռների հետ կապված դեպքերի վերաբերյալ ծանուցումները .....	116
1.8.6. Համապատասխանության գնահատման, պարբերական, միջանկյալ եւ 1.8.7-ում նկարագրված ոչ պլանային ստուգումների կիրառման նկատմամբ վարչական վերահսկողությունը .....	122
1.8.7. Համապատասխանության գնահատման եւ պարբերական ստուգումների ընթացակարգերը.....	125
1.8.8. Գազի անոթների համապատասխանության գնահատման ընթացակարգերը .....	138
<b>ԳԼՈՒԽ 1.9_ ԻՐԱՎԱՍՈՒ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ.....</b>	<b>143</b>

1.9.5. Թունելներին վերաբերող սահմանափակումները .....	144
<b>ԳԼՈՒԽ 1.10_ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ .....</b>	<b>149</b>
1.10.1. Ընդհանուր դրույթները .....	150
1.10.2. Անվտանգության թեմայով վերապատրաստումը .....	150
1.10.3. Էական հետեւանքներ առաջացնող վտանգավոր բեռների մասին դրույթները .....	151
<b>ՄԱՍ 2_Դասակարգում .....</b>	<b>156</b>
<b>ԳԼՈՒԽ 2.1_ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ .....</b>	<b>157</b>
2.1.1. Ներածություն.....	157
2.1.2. Դասակարգման սկզբունքները.....	159
2.1.3. Նյութերի՝ այդ թվում անվանմամբ չնշված լուծույթների եւ խառնուրդների (ինչպիսիք են պատրաստուկները եւ թափոնները) դասակարգումը .....	161
2.1.4. Նմուշների դասակարգումը .....	171
2.1.5. Դուրս գրված, դատարկ, չմաքրված փաթեթվածքների դասակարգումը .....	172
<b>ԳԼՈՒԽ 2.2_ԴԱՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՏՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ.....</b>	<b>173</b>
2.2.1. Դաս 1 Պայթյունավտանգ նյութերը եւ պատրաստվածքները ....	173
2.2.2. Դաս 2 Գազերը .....	220
2.2.3. Դաս 3 Դյուրավառ հեղուկները .....	235
2.2.41. Դաս 4.1 Դյուրավառ պինդ նյութերը, ինքնառեակտիվ նյութերը, պոլիմերացված նյութերը եւ պինդ ապազգայունացված պայթուցիկ նյութերը .....	244
2.2.42. Դաս 4.2 Նյութեր, որոնք կարող են ինքնաբռնկվել.....	262
2.2.43. Դաս 4.3 Նյութեր, որոնք ջրի հետ փոխազդելիս արտազատում են դյուրավառ գազեր .....	267
2.2.51. Դաս 5.1 Օքսիդացնող նյութերը.....	272
2.2.52. Դաս 5.2 Օրգանական պերօքսիդները .....	279
2.2.61. Դաս 6.1 Թունավոր նյութերը.....	302
2.2.62. Դաս 6.2 Վարակիչ նյութեր .....	325
2.2.7. Դաս 7 Ռադիոակտիվ նյութ .....	337
2.2.8. Դաս 8 Կոռոզիոն նյութեր .....	382
2.2.9. Դաս 9 Այլ վտանգավոր նյութեր եւ պատրաստվածքներ .....	392

ԳԼՈՒԽ 2.3_ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ.....	<b>423</b>
2.3.0. Ընդհանուր նկարագիրը .....	423
2.3.1.«A» տեսակի փշրտող պայթուցիկ նյութերի արտաձորման փորձարկումը .....	423
2.3.2. 4.1 դասի նիտրոցեյուլոզի խառնուրդներին առնչվող փորձարկումները .....	425
2.3.3. 3, 6.1 եւ 8 դասերի դյուրավառ հեղուկներին առնչվող փորձարկումները .....	427
2.3.4. Հոսունությունը որոշելու փորձարկումը.....	430
2.3.5. 4.2 եւ 4.3 դասերում մետաղորգանական նյութերի դասակարգումը .....	433
ՄԱՍ 3_Վտանգավոր բեռների ցանկը, սահմանափակ եւ ազատված քանակություններին վերաբերող հատուկ դրույթներն ու ազատումները .....	<b>436</b>
ԳԼՈՒԽ 3.1_ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ .....	<b>437</b>
3.1.1. Ներածություն .....	437
3.1.2. Բեռնառաքման ճշգրիտ անվանումը.....	437
3.1.3. Լուծույթները կամ խառնուրդները .....	440
ԳԼՈՒԽ 3.2_ՎՏԱՆԳԱՎՈՐ ԲԵՌՆԵՐԻ ՑԱՆԿԸ.....	<b>443</b>
3.2.1. Աղյուսակ Ա. Վտանգավոր բեռների ցանկը.....	443
3.2.2. Աղյուսակ Բ. «ԱԴԴ» համաձայնագրի պահանջներով կարգավորվող նյութերի եւ պատրաստվածքների այբբենական ինդեքսը	941
ԳԼՈՒԽ 3.3_ԱՌԱՆՁԻՆ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՔՆԵՐԻ ԿԱՄ ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՏՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ.....	<b>1041</b>
ԳԼՈՒԽ 3.4_ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՔԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՓԱԹԵԹԱՎՈՐՎԱԾ ՎՏԱՆԳԱՎՈՐ ԲԵՌՆԵՐ.....	<b>1125</b>
3.4.7. Սահմանափակ քանակություններ պարունակող փաթեթների մակնշումը .....	1126
3.4.8. ԻԿԱՕ-ի Տեխնիկական ցուցումների 3-րդ մասի 4-րդ գլխի դրույթներին համապատասխանող սահմանափակ քանակություններ պարունակող փաթեթների մակնշումը.....	1127
3.4.11. Տրանսպորտային կապոցների օգտագործումը .....	1128
ԳԼՈՒԽ 3.5_ԱԶԱՏՎԱԾ ՔԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՓԱԹԵԹԱՎՈՐՎԱԾ ՎՏԱՆԳԱՎՈՐ ԲԵՌՆԵՐԸ .....	<b>1131</b>
3.5.1. Ազատված քանակությունները .....	1131
3.5.2. Փաթեթվածքներ՝ .....	1133

3.5.3. Փաթեթների փորձարկումները.....	1134
3.5.4. Փաթեթների մակնշումը .....	1135
3.5.5. Ցանկացած փոխադրամիջոցում կամ կոնտեյներում առկա փաթեթների առավելագույն թիվը .....	1136
3.5.6. Փաստաթղթավորումը.....	1137



# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՏՈՐ II

Էջ

ՄԱՍ 4_Փաթեթավորման եւ ցիստեռնների վերաբերյալ դրույթները.....	20
ԳԼՈՒԽ 4.1_Փաթեթավածքների, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՍՈՐՈՒՆ ԲԵՌՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋԻՆ ԲԵՌՆՎԱԾՈՒԹՅԱՆ ԿՈՆՏԵՅՆԵՐՆԵՐԻ (ՍՄԿ-ներ) ԵՎ ԽՈՇՈՐ ՓԱԹԵԹՎԱԾՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ .....	21
ԳԼՈՒԽ 4.2_ՇԱՐԺԱԿԱՆ ՑԻՍՏԵՌՆԵՐԻ ԵՎ ՄԱԿ-Ի ՆՇԱԳՐՄԱՆ՝ ԳԱԶԻ ԲԱԶՄԱՏԱՐՐ ԿՈՆՏԵՅՆԵՐՆԵՐԻ (ԳԲՏԿ-ՆԵՐ) ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ .....	205
ԳԼՈՒԽ 4.3_ԱՆՇԱՐԺ ՑԻՍՏԵՌՆԵՐԻ (ԱՎՏՈՑԻՍՏԵՌՆԵՐԻ), ՀԱՆՈՎԻ ՑԻՍՏԵՌՆԵՐԻ, ՑԻՍՏԵՌՆ-ԿՈՆՏԵՅՆԵՐՆԵՐԻ ԵՎ ՄԵՏԱՂԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԿՈՐՊՈՒՍՈՎ ՀԱՆՈՎԻ ԹԱՓՔ-ՑԻՍՏԵՌՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՄԱՐՏԿՈՑԱՆՄԱՆ ՀԱՎԱՔՎԱԾՔՈՎ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ԳԱԶԻ ԲԱԶՄԱՏԱՐՐ ԿՈՆՏԵՅՆԵՐՆԵՐԻ (ԳԲՏԿ-ներ) ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ.....	246
ԳԼՈՒԽ 4.4_ՎՈՂՈԿՆԻՏԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ՑԻՍՏԵՌՆԵՐԻ, ԱՆՇԱՐԺ ՑԻՍՏԵՌՆԵՐԻ (ԱՎՏՈՑԻՍՏԵՌՆԵՐԻ), ՀԱՆՈՎԻ ՑԻՍՏԵՌՆԵՐԻ, ՑԻՍՏԵՌՆ-ԿՈՆՏԵՅՆԵՐՆԵՐԻ ԵՎ ՀԱՆՈՎԻ ԹԱՓՔ-ՑԻՍՏԵՌՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ .....	289
ԳԼՈՒԽ 4.5_ԹԱՓՈՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՎԱԿՈՒՈՒՄԱՅԻՆ ՑԻՍՏԵՌՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ.....	291
ԳԼՈՒԽ 4.6_(Նախապրեսվում է վերապահում).....	293
ԳԼՈՒԽ 4.7_ՊԱՅԹՈՒՑԻԿՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՇԱՐԺԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ (ՊԱՇՄ-ներ) ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ .....	294
ՄԱՍ 5_Բեռնառաքման ընթացակարգերը.....	296
ԳԼՈՒԽ 5.1_ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ .....	297
ԳԼՈՒԽ 5.2_ՄԱԿՆՇՈՒՄԸ ԵՎ ՊԻՏԱԿԱՎՈՐՈՒՄԸ.....	310
ԳԼՈՒԽ 5.3_ԿՈՆՏԵՅՆԵՐՆԵՐԻ, ԳԲՏԿ-ՆԵՐԻ, ՊԱՇՄ-ՆԵՐԻ, ՑԻՍՏԵՌՆ-ԿՈՆՏԵՅՆԵՐՆԵՐԻ, ՇԱՐԺԱԿԱՆ ՑԻՍՏԵՌՆԵՐԻ ԵՎ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՎՐԱ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԱԿՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒՄՆ ՈՒ ԴՐԱՆՑ ՄԱԿՆՇՈՒՄԸ .....	333
ԳԼՈՒԽ 5.4_ՓԱՍՏԱԹՂԹԱՎՈՐՈՒՄԸ .....	351
ԳԼՈՒԽ 5.5_ՀԱՏՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ.....	381

ՄԱՍ 6\_Փաթեթվածքների, սորուն բեռների համար նախատեսված միջին բեռնվածության կոնտեյներների (ՍՄԿ-ներ), խոշոր փաթեթվածքների, ցիստեռնների եւ սորուն բեռների համար նախատեսված կոնտեյներների պատրաստման եւ փորձարկման վերաբերյալ պահանջները ..... 391

ԳԼՈՒԽ 6.1\_Փաթեթվածքների ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ..... 392

ԳԼՈՒԽ 6.2\_ՃՆՇՈՒՄԱՅԻՆ ՏԱՐԱ, ԱԵՐՈՂՈՒՄԱՅԻՆ ՑՈՂԱՑԻՐՆԵՐԻ, ԳԱՋ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ՓՈՔՐ ՏԱՐԱՆԵՐԻ (ԳԱՋԻ ԱՆՈՐՆԵՐԻ) ԵՎ ՀԵՂՈՒԿԱՑՎԱԾ ԴՅՈՒՐԱՎԱՌ ԳԱՋԵՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ՎԱՌԵԼԻՔԱՅԻՆ ԷԼԵՄԵՆՏՆԵՐՈՎ ՔԱՐԹՐԻՋՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ..... 446

ԳԼՈՒԽ 6.3\_6.2\_ԴԱՍԻ «A» ԿԱՏԵԳՈՐԻԱՅԻ ՎԱՐԱԿԻՉ ՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՓԱԹԵԹՎԱԾՔՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ..... 520

ԳԼՈՒԽ 6.4\_ՌԱԴԻՈԱԿՏԻՎ ՄԵՏԱՂ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ՓԱԹԵԹՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ, ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ՈՒ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԵՎ ԱՅԴ ՄԵՏԱՂԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ..... 532

ԳԼՈՒԽ 6.5\_ՍՈՐՈՒՆ ԲԵՌՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋԻՆ ԲԵՌՆՎԱԾՈՒԹՅԱՆ ԿՈՆՏԵՅՆԵՐՆԵՐԻ (ՍՄԿ-ներ) ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՈՒ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ..... 582

ԳԼՈՒԽ 6.6\_ԽՈՇՈՐ ՓԱԹԵԹՎԱԾՔՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՈՒ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ..... 624

ԳԼՈՒԽ 6.7\_ՇԱՐԺԱԿԱՆ ՑԻՍՏԵՌՆՆԵՐԻ ԵՎ ՄԱԿԻ ՆՇԱԳՐՄԱՆ՝ ԳԱՋԻ ԲԱԶՄԱՏԱՐՐ ԿՈՆՏԵՅՆԵՐՆԵՐԻ (ԳԲՏԿ-ներ) ՆԱԽԱԳԾՄԱՆ, ՊԱՏՐԱՍՏՄԱՆ, ՍՏՈՒԳՄԱՆ ՈՒ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ..... 644

ԳԼՈՒԽ 6.8\_ԱՆՇԱՐԺ ՑԻՍՏԵՌՆՆԵՐԻ (ԱՎՏՈՑԻՍՏԵՌՆՆԵՐԻ), ՀԱՆՈՎԻ ՑԻՍՏԵՌՆՆԵՐԻ, ՑԻՍՏԵՌՆ-ԿՈՆՏԵՅՆԵՐՆԵՐԻ ԵՎ ՄԵՏԱՂԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԿՈՐՊՈՒՍՈՎ ՀԱՆՈՎԻ ԹԱՓՔ-ՑԻՍՏԵՌՆՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՄԱՐՏԿՈՑԱՆՄԱՆ ՀԱՎԱՔՎԱԾՔՈՎ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ԳԱՋԻ ԲԱԶՄԱՏԱՐՐ ԿՈՆՏԵՅՆԵՐՆԵՐԻ (ԳԲՏԿ-ներ) ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ, ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ, ՏԵՍԱԿԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ, ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՄԱԿՆՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ..... 750

ԳԼՈՒԽ 6.9\_ՎՈՂՈԿՆԻՏԻՑ ՊԼԱՍՏՄԱՍՍԱՅԻՑ ԱՆՇԱՐԺ ՑԻՍՏԵՌՆՆԵՐԻ (ԱՎՏՈՑԻՍՏԵՌՆՆԵՐԻ), ՀԱՆՈՎԻ ՑԻՍՏԵՌՆՆԵՐԻ, ՑԻՍՏԵՌՆ-ԿՈՆՏԵՅՆԵՐՆԵՐԻ ԵՎ ՀԱՆՈՎԻ ԹԱՓՔ-ՑԻՍՏԵՌՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԾՄԱՆ, ՊԱՏՐԱՍՏՄԱՆ, ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ, ՏԵՍԱԿԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ, ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ԵՎ ՄԱԿՆՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ..... 832

ԳԼՈՒԽ 6.10_ԹԱՓՈՆՆԵՐԻ ՎԱԿՈՒՈՒՄԱՅԻՆ ՑԻՍՏԵՌՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ, ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ, ՏԵՍԱԿԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ, ՍՏՈՒԳՄԱՆ ԵՎ ՄԱԿՆՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ .....	845
ԳԼՈՒԽ 6.11_ՍՈՐՈՒՆ ԲԵՌՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԿՈՆՏԵՅՆԵՐՆԵՐԻ ՆԱԽԱԳԾՄԱՆ, ՊԱՏՐԱՍՏՄԱՆ, ՍՏՈՒԳՄԱՆ ԵՎ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ.....	850
ԳԼՈՒԽ 6.12_ՑԻՍՏԵՌՆՆԵՐԻ, ՍՈՐՈՒՆ ԲԵՌՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԿՈՆՏԵՅՆԵՐՆԵՐԻ, ՊԱՅԹՈՒՑԻԿՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՇԱՐԺԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ՝(ՊԱՇՄ-նեթ) ՊԱՅԹՈՒՑԻԿ ՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀԱՏՈՒԿ ԽՅԻԿՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ, ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ, ՏԵՍԱԿԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ, ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ, ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՄԱԿՆՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ .....	863
ՄԱՍ 7_Փոխադրման, բեռնման, բեռնաթափման եւ վարվելակարգի վերաբերյալ դրույթները.....	868
ԳԼՈՒԽ 7.1_ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ .....	869
ԳԼՈՒԽ 7.2_ՓԱԹԵԹՆԵՐՈՎ ՓՈԽԱԴՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ .....	872
ԳԼՈՒԽ 7.3_ԽՈՒՌՆԱԲԵՌՆ ՓՈԽԱԴՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ .....	878
ԳԼՈՒԽ 7.4_ՑԻՍՏԵՌՆՆԵՐՈՎ ՓՈԽԱԴՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ .....	890
ԳԼՈՒԽ 7.5_ԲԵՌՆՄԱՆ, ԲԵՌՆԱԹԱՓՄԱՆ ԵՎ ՎԱՐՎԵԼԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ .....	891
ՀԱՎԵԼՎԱԾ Բ_ԴՐՈՒՅԹՆԵՐ՝ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ .....	918
ՄԱՍ 8_Փոխադրամիջոցի անձնակազմերի, սարքավորումների, աշխատանքի ու փաստաթղթավորման վերաբերյալ պահանջները .....	919
ԳԼՈՒԽ 8.1____ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻՆ ԵՎ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ .....	920
ԳԼՈՒԽ 8.2_ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ .....	924
ԳԼՈՒԽ 8.3_ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԱՐԲԵՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ .....	936
ԳԼՈՒԽ 8.4____ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ .....	938

ԳԼՈՒԽ 8.5_ՈՐՈՇԱԿԻ ԴԱՍԵՐԻ ԿԱՄ ՆՅՈՒԹԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ .....	940
ԳԼՈՒԽ 8.6_ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԹՈՒՆԵԼՆԵՐՈՎ ՎՏԱՆԳԱՎՈՐ ԲԵՌՆԵՐ ՏԵՂԱՓՈԽՈՂ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ .....	948
ՄԱՍ 9_Փոխադրամիջոցների կառուցվածքի եւ հաստատման վերաբերյալ պահանջները.....	952
ԳԼՈՒԽ 9.1_ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ, ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԱՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ, ՈՐՈՆՔ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ ԵՆ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆԸ .....	953
ԳԼՈՒԽ 9.2_ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ .....	961
ԳԼՈՒԽ 9.3_ՓԱԹԵԹՆԵՐՈՒՄ՝ ՊԱՅԹՅՈՒՆԱՎՏԱՆԳ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՔՆԵՐԻ (ԴԱՍ 1) ՓՈԽԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿԱՄ ԼՐԱԿԱԶՄՎԱԾ EX/II ԿԱՄ EX/III ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ .....	976
ԳԼՈՒԽ 9.4_ՓԱԹԵԹՆԵՐՈՒՄ ՎՏԱՆԳԱՎՈՐ ԲԵՌՆԵՐԻ ՓՈԽԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿԱՄ ԼՐԱԿԱԶՄՎԱԾ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ (ԲԱՅԻ EX/II ԵՎ EX/III ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻՑ) ԹԱՓՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ .....	979
ԳԼՈՒԽ 9.5_ՎՏԱՆԳԱՎՈՐ ՊԻՆԴ ՆՅՈՒԹԵՐԻ ԽՈՒՌՆԱԲԵՌՆ ՓՈԽԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿԱՄ ԼՐԱԿԱԶՄՎԱԾ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԹԱՓՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ.....	980
ԳԼՈՒԽ 9.6_ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՄԲ ՆՅՈՒԹԵՐԻ ՓՈԽԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿԱՄ ԼՐԱԿԱԶՄՎԱԾ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ .....	981
ԳԼՈՒԽ 9.7_ԱՎԵԼԻ ՔԱՆ 1 Մ <sup>3</sup> ՏԱՐՈՂՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՆՈՎԻ ՑԻՍՏԵՌՆՆԵՐՈՒՄ ԿԱՄ ԱՎԵԼԻ ՔԱՆ 3 Մ <sup>3</sup> ՈՒՆԵՑՈՂ ՑԻՍՏԵՌՆ-ԿՈՆՏԵՅՆԵՐՆԵՐՈՒՄ, ՇԱՐԺԱԿԱՆ ՑԻՍՏԵՌՆՆԵՐՈՒՄ ԿԱՄ ԳՔՏԿ-ՈՒՄ (EX/III, FL ԵՎ AT ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐ) ՎՏԱՆԳԱՎՈՐ ԲԵՌՆԵՐԻ ՓՈԽԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՆՇԱՐԺ ՑԻՍՏԵՌՆՆԵՐԻ (ԱՎՏՈՑԻՍՏԵՌՆՆԵՐԻ), ՄԱՐՏԿՈՑԱՆՄԱՆ ՀԱՎԱՔՎԱԾՔՈՎ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿԱՄ ԼՐԱԿԱԶՄՎԱԾ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ .....	982
ԳԼՈՒԽ 9.8_ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿԱՄ ԼՐԱԿԱԶՄՎԱԾ ՊԱՇՄ-ՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ.....	986



**«ՎՏԱՆԳԱՎՈՐ ԲԵՌՆԵՐԻ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ  
ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ («ԱԴՌ»)**

ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎՈՂ ԿՈՂՄԵՐԸ,

ՑԱՆԿԱՆԱԼՈՎ բարձրացնել միջազգային ճանապարհային  
փոխադրումների անվտանգությունը,

ՀԱՄԱՁԱՅՆԵՑԻՆ ներքոհիշյալի մասին.

**Հոդված 1**

Սույն Համաձայնագրի նպատակներով՝

- ա) «փոխադրամիջոց» եզրույթը նշանակում է ավտոտրանսպորտային միջոցներ, կիսակցասայլով քարշակներ, կցասայլեր եւ կիսակցասայլեր, ինչպես սահմանված է 1949 թվականի սեպտեմբերի 19-ի «Ճանապարհային երթեւեկության մասին» կոնվենցիայի 4-րդ հոդվածում՝ բացառությամբ այն փոխադրամիջոցների, որոնք պատկանում են Պայմանավորվող կողմի զինված ուժերին կամ գտնվում են այդ զինված ուժերի ենթակայության ներքո,
- բ) «վտանգավոր բեռներ» եզրույթը նշանակում է այն նյութերը եւ պատրաստվածքները, որոնց միջազգային ճանապարհային փոխադրումն արգելվում է կամ թույլատրվում է միայն որոշակի պայմաններում՝ համաձայն Ա եւ Բ հավելվածների,
- գ) «միջազգային փոխադրում» եզրույթը նշանակում է առնվազն երկու Պայմանավորվող կողմի տարածքում վերոնշյալ (ա) կետում սահմանված փոխադրամիջոցներով իրականացվող փոխադրման ցանկացած գործողություն:

**Հոդված 2**

- 1. 4-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթների պահպանմամբ՝ միջազգային փոխադրման համար չեն ընդունվի այն վտանգավոր բեռները, որոնց փոխադրումն արգելված է Ա հավելվածով:
- 2. Այլ վտանգավոր բեռների միջազգային փոխադրումը թույլատրվում է, պահպանելով՝
  - ա) տվյալ բեռների համար Ա հավելվածում սահմանված պայմանները, մասնավորապես՝ կապված դրանց փաթեթավորման եւ պիտակավորման հետ, եւ

- բ) Բ հավելվածում սահմանված պայմանները, մասնավորապես՝ կապված տվյալ բեռները փոխադրող փոխադրամիջոցի կառուցվածքի, սարքավորումների եւ շահագործման հետ՝ 4-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթների պահպանմամբ:

### Հոդված 3

Սույն Համաձայնագրի հավելվածները կազմում են դրա անբաժանելի մասը:

### Հոդված 4

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ իրավունք ունի փոխադրման ժամանակ անվտանգությունից բացի այլ պատճառներով կարգավորելու կամ արգելելու վտանգավոր բեռների մուտքն իր տարածք:
2. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու ժամանակ Պայմանավորվող կողմի տարածքում շահագործման մեջ գտնվող կամ այն ուժի մեջ մտնելուց հետո երկու ամսվա ընթացքում այդ տարածքում շահագործված փոխադրամիջոցներով Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց սկսած՝ երեք տարվա ընթացքում, թույլատրվում է վտանգավոր բեռների միջազգային փոխադրումների իրականացումը, անգամ եթե դրանց կառուցվածքն ու սարքավորումներն ամբողջովին չեն համապատասխանում Բ հավելվածում տվյալ փոխադրման գործողության համար սահմանված պահանջներին: Այնուամենայնիվ, Բ հավելվածի հատուկ դրույթների համաձայն, այս ժամանակահատվածը կարող է կրճատվել:
3. Պայմանավորվող կողմերը հատուկ երկկողմ կամ բազմակողմ համաձայնագրերով իրավունք ունեն պայմանավորվելու, որ սույն Համաձայնագրի համաձայն բոլոր տեսակի միջազգային փոխադրումների համար արգելված որոշ վտանգավոր բեռներ որոշակի պայմանների պահպանմամբ իրենց տարածքներում կարողանան ընդունվել միջազգային փոխադրման համար, կամ որ այն վտանգավոր բեռները, որոնք, սույն Համաձայնագրի համաձայն, միջազգային փոխադրման համար ընդունելի են միայն նշված պայմաններով, իրենց տարածքներում կարողանան ընդունվել միջազգային փոխադրման համար սույն Համաձայնագրի հավելվածներում սահմանված պայմաններից ավելի մեղմ պայմաններով: Սույն կետում նշված հատուկ երկկողմ կամ բազմակողմ համաձայնագրերը ներկայացվում են Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղարին, որը դրանց մասին հաղորդում է նշված համաձայնագրերի՝ ստորագրող կողմեր չհանդիսացող Պայմանավորվող կողմերին:

### Հոդված 5

Փոխադրման այն գործողությունները, որոնց նկատմամբ կիրառելի է սույն Համաձայնագիրը, շարունակում են կարգավորվել ճանապարհային երթևեկության, միջազգային ճանապարհային փոխադրումների եւ միջազգային առևտրի նկատմամբ ընդհանուր առմամբ կիրառելի ազգային ու միջազգային կանոնակարգերով:

#### Հոդված 6

1. Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի անդամ երկրները եւ այդ Հանձնաժողովի տեխնիկական առաջադրանքի 8-րդ կետի համաձայն խորհրդակցական ձայնի իրավունքով Հանձնաժողով ընդունված երկրները կարող են դառնալ սույն Համաձայնագրի Պայմանավորվող կողմեր՝
  - ա) այն ստորագրելով,
  - բ) վավերացման ենթակա սույն Համաձայնագիրն ստորագրելուց հետո այն վավերացնելով,
  - գ) դրան միանալով:
2. Այն երկրները, որոնք Հանձնաժողովի տեխնիկական առաջադրանքի 11-րդ կետի համաձայն կարող են մասնակցել Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի գործունեության որոշ տեսակներին, կարող են դառնալ սույն Համաձայնագրի Պայմանավորվող կողմեր՝ այն ուժի մեջ մտնելուց հետո դրան միանալով:
3. Համաձայնագիրն ստորագրման համար բաց է մինչեւ 1957 թվականի դեկտեմբերի 15-ը: Համաձայնագիրը դրանից հետո բաց է դրան միանալու համար:
4. Վավերացումը կամ միացումը կատարվում է համապատասխան փաստաթուղթը Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղարին ի պահ տալով:

#### Հոդված 7

1. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում այն օրվանից մեկ ամիս հետո, երբ 6-րդ հոդվածի 1-ին կետում նշված՝ առանց վավերացման վերապահման ստորագրած կամ իրենց՝ վավերացման կամ ընդունման մասին փաստաթղթերն ի պահ տված երկրների ընդհանուր թիվը հասնի հինգի: Այնուհանդերձ, դրա հավելվածները չեն կիրառվում Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո վեց ամսվա ընթացքում:
2. Սույն Համաձայնագիրը վավերացնող կամ դրան միացող յուրաքանչյուր երկրի համար 6-րդ հոդվածի 1-ին կետում նշված հինգ երկրի կողմից այն առանց վավերացման վերապահման ստորագրելուց կամ իրենց՝ վավերացման կամ ընդունման մասին փաստաթղթերն ի պահ տալուց հետո



սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում նշված երկրի կողմից վավերացման կամ ընդունման մասին իր փաստաթուղթն ի պահ տալուց մեկ ամիս հետո, եւ դրա հավելվածները կիրառվում են նշված երկրի համար կամ նույն օրը, եթե դրանք արդեն ուժի մեջ են մտել մինչեւ այդ օրը, կամ եթե դրանք ուժի մեջ չեն մտել մինչեւ այդ օրը, սույն հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դրանց կիրառվելու օրը:

#### Հոդված 8

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ կարող է Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղարին ուղղված ծանուցման միջոցով չեղյալ հայտարարել սույն Համաձայնագիրը:
2. Չեղյալ հայտարարելն ուժի մեջ է մտնում գլխավոր քարտուղարի կողմից՝ չեղյալ հայտարարելու մասին ծանուցումն ստանալու օրվանից տասներկու ամիս հետո:

#### Հոդված 9

1. Սույն Համաձայնագիրն ուժը կորցրած է համարվում, եթե այն ուժի մեջ մտնելուց հետո Պայմանավորվող կողմերի թիվը հաջորդող տասներկու ամիսների ընթացքում հինգից պակաս է:
2. Վտանգավոր բեռների փոխադրումը կարգավորելու համար համաշխարհային համաձայնագրի կնքման դեպքում սույն Համաձայնագրի ցանկացած դրույթ, որը հակասում է նշված համաշխարհային համաձայնագրի որեւէ դրույթի, վերջինս ուժի մեջ մտնելու օրվանից սկսած՝ ինքնաբերաբար դադարում է կիրառվել սույն Համաձայնագրի այն Կողմերի հարաբերությունների նկատմամբ, որոնք դառնում են համաշխարհային համաձայնագրի կողմ, եւ ipso facto ինքնաբերաբար փոխարինվում է նշված համաշխարհային համաձայնագրի համապատասխան դրույթով:

#### Հոդված 10

1. Յանկացած երկիր կարող է սույն Համաձայնագիրն առանց վավերացման վերապահման ստորագրելու կամ իր՝ վավերացման կամ ընդունման մասին փաստաթուղթն ի պահ հանձնելու պահին կամ դրանից հետո որեւէ այլ ժամանակ Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղարին ուղղված ծանուցման միջոցով հայտարարել, որ սույն Համաձայնագիրը տարածվում է այն բոլոր տարածքների կամ դրանցից որեւէ մեկի վրա, որոնց միջազգային հարաբերությունների համար այն պատասխանատու է: Սույն Համաձայնագիրը եւ դրա հավելվածները տարածվում են ծանուցման մեջ նշված տարածքի կամ տարածքների վրա՝

գլխավոր քարտուղարի կողմից ծանուցումն ստանալուց մեկ ամիս հետո:

2. Ցանկացած երկիր, որը սույն հոդվածի 1-ին կետի համաձայն հայտարարություն է արել՝ սույն Համաձայնագիրը տարածելով ցանկացած տարածքի վրա, որի միջազգային հարաբերությունների համար այն պատասխանատու է, կարող է, 8-րդ հոդվածի դրույթների համաձայն, նշված տարածքի համար առանձին չեղյալ հայտարարել Համաձայնագիրը:

#### Հոդված 11

1. Երկու կամ ավելի Պայմանավորվող կողմերի միջև սույն Համաձայնագրի մեկնաբանմանը կամ կիրառմանը վերաբերող ցանկացած վեճ հնարավորության դեպքում կարգավորվում է դրանց միջև բանակցությունների միջոցով:
2. Ցանկացած վեճ, որը չի կարգավորվում բանակցության միջոցով, ներկայացվում է արբիտրաժ, եթե վեճի կողմ հանդիսացող Պայմանավորվող կողմերից որեւէ մեկն այդպես է պահանջում, եւ ուղարկվում է վեճի կողմերի միջև համաձայնությամբ ընտրված համապատասխանաբար մեկ կամ ավելի արբիտրների: Եթե վեճն արբիտրաժի միջոցով լուծելու վերաբերյալ դիմումն ուղարկելուց հետո երեք ամսվա ընթացքում վեճի կողմերը չեն կարողանում համաձայնության գալ արբիտրի կամ արբիտրների ընտրության հարցում, ապա այդ կողմերից յուրաքանչյուրը կարող է դիմել Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղարին՝ նրան խնդրելով վեճի վերաբերյալ որոշում կայացնելու համար նշանակել մեկ ընդհանուր արբիտր:
3. Սույն հոդվածի 2-րդ կետի համաձայն նշանակված արբիտրի կամ արբիտրների որոշումը պարտադիր է վեճի կողմ հանդիսացող Պայմանավորվող կողմերի համար:

#### Հոդված 12

1. Սույն Համաձայնագիրը ստորագրելիս, վավերացնելիս կամ դրան միանալիս յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ կարող է հայտարարել, որ իրեն պարտավորված չի համարում 11-րդ հոդվածով: Մյուս Պայմանավորվող կողմերը 11-րդ հոդվածով պարտավորված չեն այդպիսի վերապահում կատարած որեւէ Պայմանավորվող կողմի նկատմամբ:
2. Սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված վերապահում կատարած յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ կարող է Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղարին ուղղված ծանուցման միջոցով ցանկացած պահի հրաժարվել այդպիսի վերապահումից:

### Հոդված 13

1. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց երեք տարի հետո յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ կարող է Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղարին ուղղված ծանուցման միջոցով խնդրել խորհրդաժողով հրավիրել՝ Համաձայնագրի տեքստը վերանայելու նպատակով: Գլխավոր քարտուղարը բոլոր Պայմանավորվող կողմերին ծանուցում է այդ խնդրանքի մասին, եւ վերանայման խորհրդաժողովը հրավիրվում է գլխավոր քարտուղարի կողմից, եթե գլխավոր քարտուղարի կողմից ծանուցում ուղարկելու ամսաթվին հաջորդող չորս ամսվա ընթացքում Պայմանավորվող կողմերի ոչ պակաս, քան մեկ քառորդը նրան ծանուցում են խնդրանքի վերաբերյալ իրենց համաձայնության մասին:
2. Եթե սույն հոդվածի 1-ին կետի համաձայն հրավիրվում է խորհրդաժողով, ապա գլխավոր քարտուղարը բոլոր Պայմանավորվող կողմերին ծանուցում է դրա մասին եւ հրավիրում նրանց երեք ամսվա ընթացքում ներկայացնել այնպիսի առաջարկներ, որոնք նրանք հնարավոր է՝ ցանկանում են դնել խորհրդաժողովի քննարկմանը: Գլխավոր քարտուղարը բոլոր Պայմանավորվող կողմերին այդպիսի առաջարկների հետ մեկտեղ ուղարկում է խորհրդաժողովի նախնական օրակարգը՝ խորհրդաժողովի անցկացման նախատեսված ամսաթվից առնվազն երեք ամիս առաջ:
3. Գլխավոր քարտուղարը սույն հոդվածի համաձայն հրավիրված յուրաքանչյուր խորհրդաժողովի հրավիրում է 6-րդ հոդվածի 1-ին կետում նշված բոլոր երկրներին, ինչպես նաեւ 6-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն Պայմանավորվող կողմ դարձած երկրներին:

### Հոդված 14<sup>1</sup>

1. Անկախ 13-րդ հոդվածով նախատեսված վերանայման ընթացակարգից՝ յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ կարող է առաջարկել սույն Համաձայնագրի հավելվածների մեկ կամ մի քանի փոփոխություն: Այդ նպատակով նրանք փոփոխությունների տեքստը փոխանցում են Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղարին: Գլխավոր քարտուղարը եւս կարող է առաջարկել սույն Համաձայնագրի հավելվածների փոփոխություններ՝ այդ հավելվածների եւ վտանգավոր բեռների փոխադրման վերաբերյալ միջազգային համաձայնագրերի միջեւ համապատասխանությունն ապահովելու նպատակով:

---

<sup>1</sup> Ծանոթագրություն՝ քարտուղարության կողմից. 14-րդ հոդվածի 3-րդ կետի տեքստը ներառում է փոփոխություն, որն ուժի մեջ է մտել 1985 թվականի ապրիլի 19-ին՝ Պայմանավորվող կողմերին ավանդապահի կողմից «C.N.229.1975.TREATIES-8 1975 թվականի սեպտեմբերի 18-ի ծանուցում» վերդառությամբ ուղարկված արձանագրության համաձայն:

2. Գլխավոր քարտուղարը բոլոր Պայմանավորվող կողմերին է փոխանցում սույն հոդվածի առաջին կետի համաձայն ներկայացված ցանկացած առաջարկ եւ դրա մասին տեղեկացնում է 6-րդ հոդվածի 1-ին կետում նշված մյուս երկրներին:
3. Հավելվածների առաջարկվող ցանկացած փոփոխություն համարվում է ընդունված, եթե գլխավոր քարտուղարի կողմից այդ փոփոխությունն ուղարկելու օրվանից երեք ամսվա ընթացքում Պայմանավորվող կողմերի առնվազն մեկ երրորդը կամ նրանցից հինգը, եթե մեկ երրորդը գերազանցում է այդ թիվը, գլխավոր քարտուղարին գրավոր ծանուցում չի ուղարկում՝ առաջարկվող փոփոխության մասին ներկայացնելով իր առարկությունը: Եթե փոփոխությունը համարվում է ընդունված, այն ուժի մեջ է մտնում բոլոր Պայմանավորվող կողմերի համար նոր եռամսյա ժամկետի ավարտից հետո՝ բացառությամբ հետեւյալ դեպքերի.
  - ա) Այն դեպքերում, երբ սույն հոդվածի 1-ին կետում նշված միջազգային այլ համաձայնագրերում կատարվել են կամ հնարավոր է կատարվեն նմանատիպ փոփոխություններ, փոփոխությունն ուժի մեջ է մտնում այն ժամկետի ավարտին, որի տեւողությունը գլխավոր քարտուղարը սահմանում է այնպես, որ հնարավորության դեպքում թույլ տա տվյալ փոփոխության եւ այդ մյուս համաձայնագրերում կատարված կամ կատարվելիք մյուս փոփոխությունների միաժամանակ ուժի մեջ մտնելը. այնուամենայնիվ, նման ժամկետը չպետք է մեկ ամսից պակաս լինի:
  - բ) Առաջարկված փոփոխությունը ներկայացնող Պայմանավորվող կողմը կարող է փոփոխության ընդունման դեպքում իր առաջարկում նշել փոփոխությունն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ երեք ամիսը գերազանցող ժամկետ:
4. Գլխավոր քարտուղարը բոլոր Պայմանավորվող կողմերին եւ 6-րդ հոդվածի 1-ին կետում նշված մյուս բոլոր երկրներին հնարավորինս շուտ տեղեկացնում է առաջարկված փոփոխության վերաբերյալ Պայմանավորվող կողմերից ստացված հնարավոր որեւէ առարկության մասին:
5. Եթե հավելվածների առաջարկվող փոփոխությունն ընդունված չի համարվում, սակայն Պայմանավորվող կողմերից առնվազն մեկը, բացառությամբ այն Պայմանավորվող կողմի, որն առաջարկել է փոփոխությունը, գլխավոր քարտուղարին գրավոր ծանուցում է ուղարկել առաջարկի վերաբերյալ իր համաձայնության մասին, ապա գլխավոր քարտուղարը փոփոխության վերաբերյալ առարկության մասին ծանուցման համար սույն հոդվածի 3-րդ կետով նախատեսված եռամսյա ժամկետի ավարտից հետո երեք ամսվա ընթացքում նիստ է հրավիրում՝ բոլոր Պայմանավորվող կողմերի եւ 6-րդ հոդվածի 1-ին կետում նշված երկրների մասնակցությամբ: Գլխավոր քարտուղարը կարող է այդ նիստին հրավիրել նաեւ հետեւյալ կառույցների ներկայացուցիչներին.

- ա) տրանսպորտային հարցերով զբաղվող միջկառավարական կազմակերպություններ,
  - բ) միջազգային հասարակական կազմակերպություններ, որոնց գործունեությունն անմիջականորեն կապված է Պայմանավորվող կողմերի տարածքներում վտանգավոր բեռների փոխադրման հետ:
6. Սույն հոդվածի 5-րդ կետի համաձայն հրավիրված նիստին ներկա գտնվող Պայմանավորվող կողմերի ընդհանուր թվի կեսից ավելի կողմից ընդունված յուրաքանչյուր փոփոխություն բոլոր Պայմանավորվող կողմերի համար ուժի մեջ է մտնում նիստին մասնակցող Պայմանավորվող կողմերի մեծամասնության կողմից այդ նիստի ընթացքում համաձայնեցված ընթացակարգի համաձայն:

#### Հոդված 15

Ի հավելումն 13-րդ եւ 14-րդ հոդվածներով նախատեսված ծանուցումների՝ Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղարը 6-րդ հոդվածի 1-ին կետում նշված, ինչպես նաեւ 6-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն Պայմանավորվող կողմեր դարձած երկրներին տեղեկացնում է.

- ա) 6-րդ հոդվածի համաձայն՝ ստորագրությունների, վավերացումների եւ միացումների մասին,
- բ) 7-րդ հոդվածի համաձայն՝ սույն Համաձայնագիրն ու դրա հավելվածներն ուժի մեջ մտնելու ամսաթվերի մասին,
- գ) 8-րդ հոդվածի համաձայն՝ չեղյալ հայտարարելու մասին,
- դ) 9-րդ հոդվածի համաձայն՝ Համաձայնագրի գործողությունը դադարեցնելու մասին,
- ե) 10-րդ հոդվածի համաձայն ստացված ծանուցումների եւ չեղյալ հայտարարելու մասին,
- զ) 12-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ կետերի համաձայն՝ հայտարարությունների եւ ծանուցումների մասին,
- է) 14-րդ հոդվածի 3-րդ եւ 6-րդ կետերի համաձայն՝ փոփոխություններն ընդունելու եւ դրանք ուժի մեջ մտնելու ամսաթվի մասին:

#### Հոդված 16

1. Սույն Համաձայնագրի ստորագրման արձանագրությունն ունի նույն ուժը, գործողությունը եւ գործողության ժամկետը, որն ունի սույն Համաձայնագիրը, որի անբաժանելի մասն է հանդիսանալու այն:

2. Սույն Համաձայնագրի դրույթների նկատմամբ վերապահումներ չեն թույլատրվում՝ բացառությամբ ստորագրման արձանագրությունում նշված եւ 12-րդ հոդվածի համաձայն կատարված վերապահումների:

#### Հոդված 17

1957 թվականի դեկտեմբերի 15-ից հետո սույն Համաձայնագրի բնօրինակն ի պահ է տրվում Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղարին, որը դրա հաստատված պատճեններն ուղարկում է 6-րդ հոդվածի 1-ին կետում նշված երկրներից յուրաքանչյուրին:

Ի ՀԱՍՏԱՏՈՒՄՆ ՈՐԻ՝ ներքոստորագրյալները, պատշաճ կերպով լիազորված լինելով, ստորագրեցին սույն Համաձայնագիրը:

ԿԱՏԱՐՎԱԾ Է Ժնեւում հազար ինը հարյուր հիսունյոթ թվականի սեպտեմբերի երեսունին՝ մեկ օրինակով, Համաձայնագրի տեքստը՝ անգլերենով եւ ֆրանսերենով, իսկ հավելվածները՝ ֆրանսերենով, ընդ որում, տեքստերից յուրաքանչյուրը հավասարազոր է որպես Համաձայնագիր:

Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղարը պետք է ապահովի հավելվածների պաշտոնական թարգմանությունն անգլերենով եւ այն կցի 17-րդ հոդվածում նշված հաստատված օրինակներին:

## ՍՏՈՐԱԳՐՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## ՍՏՈՐԱԳՐՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«ՎՏԱՆԳԱՎՈՐ ԲԵՌՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ («ԱԴՌ»)

«Վտանգավոր բեռների միջազգային ճանապարհային փոխադրումների մասին» եվրոպական համաձայնագիրը («ԱԴՌ» համաձայնագիր) ստորագրելիս պատշաճ կերպով լիազորված ներքոստորագրյալները,

1. ՀԱՄԱՐԵԼՈՎ, որ դեպի Միացյալ Թագավորություն կամ այնտեղից վտանգավոր բեռների ծովային ճանապարհով փոխադրումը կարգավորող պայմանները զգալիորեն տարբերվում են «ԱԴՌ» համաձայնագրի Ա հավելվածում սահմանված պայմաններից, եւ որ անհնար է դրանք փոփոխել այնպես, որ դրանք մոտ ապագայում համապատասխանեն վերջինիս պայմաններին,

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ, որ Միացյալ Թագավորությունը պարտավորություն է ստանձնել որպես նշված Ա հավելվածի փոփոխություն ներկայացնելու եվրոպական մայրցամաքի եւ Միացյալ Թագավորության միջեւ վտանգավոր բեռների ճանապարհային-ծովային փոխադրման համար հատուկ դրույթներ պարունակող հատուկ հավելված,

ՀԱՄԱՁԱՅՆԵՑԻՆ, որ մինչեւ այդ հատուկ հավելվածն ուժի մեջ մտնելը դեպի Միացյալ Թագավորություն կամ այնտեղից «ԱԴՌ» համաձայնագրի համաձայն փոխադրված վտանգավոր բեռները համապատասխանում են «ԱԴՌ» համաձայնագրի Ա հավելվածին, ինչպես նաեւ Միացյալ Թագավորության՝ ծովային ճանապարհով վտանգավոր բեռների փոխադրման համար նախատեսված պայմաններին:

2. Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՎ Ֆրանսիայի ներկայացուցիչների հայտարարությունն այն մասին, որ Ֆրանսիայի Հանրապետությունը, անկախ 4-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթներից, իրավունք է վերապահում արգելելու մեկ այլ Պայմանավորվող կողմի տարածքում շահագործման մեջ գտնվող փոխադրամիջոցների օգտագործումը Ֆրանսիայի տարածք վտանգավոր բեռներ փոխադրելու համար՝ անկախ դրանց շահագործման մեջ դրվելու ամսաթվից, եթե դրանք չեն համապատասխանում Բ հավելվածում այդպիսի փոխադրումների համար սահմանված պայմաններին կամ վտանգավոր բեռների ճանապարհային փոխադրումը կարգավորող ֆրանսիական կանոնակարգերում նշված բեռների փոխադրման համար սահմանված պայմաններին:

3. ԱՌԱՋԱՐԿՈՒՄ ԵՆ, որ սույն Համաձայնագրում կամ դրա հավելվածներում առաջարկվող փոփոխությունները, նախքան 14-րդ հոդվածի 1-ին կետի կամ 13-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն դրանք ներկայացնելը, հնարավորության սահմաններում նախ քննարկվեն Պայմանավորվող կողմերի փորձագետների եւ անհրաժեշտության դեպքում՝ Համաձայնագրի 6-րդ հոդվածի 1-ին կետում նշված այլ երկրների, ինչպես նաեւ



Համաձայնագրի 14-րդ հոդվածի 5-րդ կետում նշված միջազգային կազմակերպությունների փորձագետների հանդիպումների ժամանակ:

ՀԱՎԵԼՎԱԾ Ա

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ ԵՎ  
ՎՏԱՆԳԱՎՈՐ ՆՅՈՒԹԵՐԻՆ ՈՒ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՔՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ  
ԴՐՈՒՅԹՆԵՐ

**ՄԱՍ 1**

**Ընդհանուր դրույթներ**

## ԳԼՈՒԽ 1.1

### ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ ԵՎ ԿԻՐԱՌԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

#### 1.1.1. Կառուցվածքը

«ԱԴՌ» համաձայնագրի Ա եւ Բ հավելվածները խմբավորված են ինը մասերում: Ա հավելվածը բաղկացած է 1-7 մասերից, Բ հավելվածը՝ 8-րդ եւ 9-րդ մասերից: Յուրաքանչյուր մաս բաժանված է գլուխների եւ յուրաքանչյուր գլուխ՝ բաժինների ու ենթաբաժինների: Յուրաքանչյուր մասում, մասի համարում նշվում են գլուխների, բաժինների, ենթաբաժինների թվերը, օրինակ՝ Մաս 4, Գլուխ 2, Բաժին 1-ը համարակալվում է «4.2.1»:

#### 1.1.2. Գործողության ոլորտը

##### 1.1.2.1. «ԱԴՌ» համաձայնագրի 2-րդ հոդվածի նպատակներից ելնելով՝ Ա հավելվածով սահմանվում են՝

- ա) այն վտանգավոր բեռները, որոնց միջազգային փոխադրումն արգելված է.
- բ) այն վտանգավոր բեռները, որոնց միջազգային փոխադրումը թույլատրված է, եւ որոնց նկատմամբ որոշակի պայմաններ են կիրառվում (ներառյալ՝ բացառությունները), մասնավորապես՝
  - բեռների դասակարգման, ներառյալ՝ դասակարգման չափորոշիչները եւ համապատասխան փորձարկման մեթոդները,
  - փաթեթվածքների օգտագործման (ներառյալ՝ խառը փաթեթավորումը),
  - ցիստեռնների օգտագործման (ներառյալ՝ լցնելը),
  - մատակարարման ընթացակարգերի (ներառյալ՝ փաթեթների մակնշումը եւ պիտակավորումը, տրանսպորտային միջոցների մասին տեղեկատվական ցուցանակներ տեղադրելը եւ մակնշելը, ինչպես նաեւ անհրաժեշտ փաստաթղթերն ու տեղեկությունները),
  - փաթեթվածքների եւ ցիստեռնների պատրաստման, փորձարկման ու հաստատման մասին դրույթների,
  - տրանսպորտային միջոցների օգտագործման (ներառյալ՝ բեռնումը, խառը բեռնումը եւ բեռնաթափումը) առումով:

1.1.2.2. Ա հավելվածը պարունակում է որոշակի դրույթներ, որոնք «ԱԴԲ» համաձայնագրի 2-րդ հոդվածի համաձայն վերաբերում են Բ հավելվածին կամ Ա ու Բ հավելվածներին, ինչպես նշվում է ստորև.

- 1.1.1 Կառուցվածքը
- 1.1.2.3 (Բ հավելվածի գործողության ոլորտը)
- 1.1.2.4
- 1.1.3.1 Տրանսպորտային գործունեության բնույթի վերաբերյալ բացառությունները
- 1.1.3.6 Տրանսպորտային յուրաքանչյուր միավորով փոխադրվող քանակին վերաբերող բացառությունները
- 1.1.4 Այլ կանոնակարգերի կիրառելիությունը
- 1.1.4.5 Փոխադրումը ճանապարհային տրանսպորտային միջոցներից տարբեր՝ այլ միջոցներով
- Գլուխ 1.2 Սահմանումները եւ չափման միավորները
- Գլուխ 1.3 Վտանգավոր բեռների փոխադրմամբ զբաղվող անձանց վերապատրաստումը
- Գլուխ 1.4 Մասնակիցների պարտավորություններն անվտանգության առումով
- Գլուխ 1.5 Շեղումները
- Գլուխ 1.6 Անցումային միջոցները
- Գլուխ 1.8 Ստուգումները եւ մյուս օժանդակ միջոցները՝ անվտանգության պահանջների բավարարումն ապահովելու նպատակով
- Գլուխ 1.9 Իրավասու մարմինների կողմից սահմանված տրանսպորտային սահմանափակումները
- Գլուխ 1.10 Անվտանգության դրույթները
- Գլուխ 3.1 Ընդհանուր դրույթները
- Գլուխ 3.2 Սյունակներ (1), (2), (14), (15) եւ (19) (8-րդ եւ 9-րդ մասերի կիրառությունն առանձին նյութերի կամ պատրաստվածքների նկատմամբ):

1.1.2.3. «ԱԴԲ» համաձայնագրի 2-րդ հոդվածի նպատակներից ելնելով՝ Բ հավելվածով սահմանվում է թույլատրված վտանգավոր բեռները փոխադրող փոխադրամիջոցների կառուցվածքի, սարքավորումների եւ շահագործման պայմանները,

- փոխադրամիջոցների աշխատակազմի, սարքավորումների, շահագործման եւ փաստաթղթերի վերաբերյալ պայմանները,
- փոխադրամիջոցների կառուցման եւ հաստատման մասին պահանջները:

1.1.2.4. «ԱԴԲ» համաձայնագրի 1-ին հոդվածի (գ) կետում «փոխադրամիջոցներ» բառը կարող է միեւնոյն փոխադրամիջոցին չվերաբերել: Միջազգային տրանսպորտային գործունեությունը կարող է իրականացվել մի քանի տարբեր փոխադրամիջոցներով՝ պայմանով, որ այն իրականացվում է «ԱԴԲ» համաձայնագրի առնվազն երկու Պայմանավորվող կողմերի տարածքում՝ տրանսպորտային փաստաթղթում նշված բեռնառաքողի եւ բեռն ստացողի միջեւ:

1.1.3. Բացառությունները

1.1.3.1. Տրանսպորտային գործունեության բնույթի վերաբերյալ բացառությունները

«ԱԴԲ» համաձայնագրով սահմանված դրույթները չեն կիրառվում՝

- ա) մասնավոր անձանց կողմից վտանգավոր բեռների փոխադրման նկատմամբ, եթե տվյալ ապրանքները փաթեթավորված են մանրաձախ վաճառքի համար եւ նախատեսված են նրանց անձնական կամ ընտանեկան օգտագործման համար կամ նրանց հանգստի կամ սպորտային պարապմունքների համար՝ պայմանով, որ միջոցներ են ձեռնարկվել փոխադրման բնականոն պայմանների դեպքում պարունակության արտահոսքը կանխարգելելու համար: Այն դեպքում, երբ այդ բեռները վերալցավորվող տարաներով փոխադրվող դյուրավառ հեղուկներ են, որոնք լցվում են մասնավոր անձի կողմից կամ մասնավոր անձի համար, ապա ընդհանուր քանակությունը յուրաքանչյուր տարայի դեպքում չպետք է գերազանցի 60 լիտրը, իսկ յուրաքանչյուր տրանսպորտային միավորի համար՝ 240 լիտրը: ՍՄԿ-ներում, խոշոր փաթեթավածքներում կամ ցիստեռններում պարունակվող վտանգավոր բեռները չեն համարվում մանրաձախ վաճառքի համար փաթեթավորված,
- բ) սույն հավելվածում չնշված այն մեխանիզմների կամ սարքավորումների փոխադրման նկատմամբ, որոնք իրենց ներքին կամ գործող սարքավորումներում պարունակում են վտանգավոր բեռներ՝ պայմանով, որ միջոցներ են ձեռնարկվել փոխադրման բնականոն պայմանների դեպքում պարունակության արտահոսքը կանխարգելելու համար,
- գ) ձեռնարկությունների կողմից իրականացվող փոխադրման նկատմամբ, որն իրականացնում են իրենց հիմնական

գործունեությանը զուգահեռ, ինչպես, օրինակ՝ առաքումները շենքեր կամ քաղաքաշինական տարածքներ կամ այնտեղից վերադարձների կատարումը, կամ ուսումնասիրության, վերանորոգման ու պահպանման առումով իրականացվող փոխադրման նկատմամբ, յուրաքանչյուր փաթեթվածքի, այդ թվում՝ սորուն բեռների համար նախատեսված միջին բեռնվածության կոնտեյներների (ՍՄԿ-ներ) եւ խոշոր փաթեթվածքների դեպքում՝ 450 լիտրից ոչ ավելի եւ 1.1.3.6-ում նշված առավելագույն քանակի սահմաններում: Միջոցներ պետք է ձեռնարկվեն փոխադրման բնականոն պայմանների դեպքում պարունակության արտահոսքը կանխարգելելու համար: Այս բացառությունները չեն կիրառվում 7-րդ դասի նկատմամբ:

Այդպիսի ձեռնարկությունների կողմից իրենց մատակարարման կամ արտաքին եւ կամ ներքին բաշխման համար իրականացվող փոխադրումները չեն մտնում այս բացառությունների շրջանակի մեջ,

- դ) իրավասու մարմինների կողմից վթարային արձագանքման համար կամ իրենց վերահսկողության տակ իրականացվող փոխադրման նկատմամբ այնքանով, որքանով այդ փոխադրումն անհրաժեշտ է վթարային արձագանքման համար, մասնավորապես՝ այն փոխադրման նկատմամբ, որն իրականացվում է՝
- տարիանոլ մեքենաներով՝ էվակուատորներով, որոնք փոխադրում են վթարի ենթարկված կամ շարքից դուրս եկած այնպիսի փոխադրամիջոցներ, որոնք պարունակում են վտանգավոր բեռներ, կամ
  - միջադեպի կամ վթարի ենթարկված վտանգավոր բեռները պարփակելու եւ վերականգնելու, դրանք մոտակա համապատասխան ապահով վայր տեղափոխելու նպատակով,
- ե) վթարային փոխադրման նկատմամբ, որի նպատակը մարդկանց կյանքեր փրկելը կամ շրջակա միջավայրը պաշտպանելն է՝ պայմանով, որ ձեռնարկվում են բոլոր միջոցները՝ այդպիսի փոխադրումը միանգամայն անվտանգ կերպով ապահովելու համար,
- զ) դատարկ չմաքրված ստացիոնար կոնտեյներների փոխադրման նկատմամբ, որոնք պարունակում են 2-րդ դասի գազ՝ «A», «O» կամ «F» խմբին պատկանող, 3-րդ կամ 9-րդ դասի նյութեր, որոնք պատկանում են II կամ III փաթեթավորման խմբերին կամ 6.1 դասի պեստիցիդներ, որոնք պատկանում են II կամ III փաթեթավորման խմբերին՝ հետեւյալ պայմանների պահպանմամբ՝

- բոլոր բացվածքները, բացառությամբ ճնշումը նվազեցնող սարքերի (եթե այդպիսիք կան), հերմետիկ փակված են.
- միջոցներ են ձեռնարկվել փոխադրման բնականոն պայմանների դեպքում պարունակության արտահոսքը կանխարգելելու համար, եւ
- բեռն ամրացված է սայլակներում, կավարամածներում կամ բեռնման-բեռնաթափման այլ սարքերում կամ փոխադրամիջոցին կամ կոնտեյներին այնպես, որ դրանք չեն թուլանա կամ տեղաշարժվի փոխադրման բնականոն պայմանների դեպքում:

Այս բացառությունը չի վերաբերում ստացիոնար կոնտեյներներին, որոնք պարունակել են ապազգայունացված պայթուցիկ նյութեր կամ այնպիսի նյութեր, որոնց փոխադրումն արգելված է «ԱԴՌ» համաձայնագրով:

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Ռադիոակտիվ նյութերի համար տե՛ս նաեւ 1.7.1.4:*

1.1.3.2. Գազերի փոխադրմանը վերաբերող բացառությունները

«ԱԴՌ» համաձայնագրով սահմանված դրույթները չեն կիրառվում հետեւյալների փոխադրման նկատմամբ.

ա) տրանսպորտային փոխադրում իրականացնող փոխադրամիջոցի վառելիքի ցիստեռններում կամ բալոններում պարունակվող գազեր, որոնք նախատեսված են քարշի ապահովման կամ դրանց՝ փոխադրման ժամանակ օգտագործվող կամ օգտագործման համար նախատեսված ցանկացած սարքի գործունեության համար (օրինակ՝ սառնարանային սարքավորում):

Գազերը կարող են փոխադրվել վառելիքի անշարժ ցիստեռններով կամ բալոններով, որոնք անմիջականորեն միացված են փոխադրամիջոցի շարժիչին եւ (կամ) լրացուցիչ սարքավորմանը կամ ճնշումային տեղափոխելի տարաներին, որոնք բավարարում են համապատասխան օրենսդրական դրույթների պահանջները:

Տրանսպորտային միավորի համար վառելիքի ցիստեռնների կամ բալոնների, այդ թվում՝ 1.1.3.3 (ա)-ին համապատասխան թույլատրված վառելիքի ցիստեռնների կամ բալոնների ընդհանուր տարողությունը չպետք է գերազանցի 54 000 ՄՋ էներգետիկ համարժեքին համապատասխանող էներգիայի (ՄՋ) կամ զանգվածի (կգ) չափը:

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1. 54 000 ՄՋ էներգետիկ համարժեքը համապատասխանում է 1.1.3.3 (ա)-ում նշված վառելիքի սահմանաչափին (1 500 լիտր): Վառելիքի էներգատարողության համար տե՛ս հետեւյալ աղյուսակը.*



<b>Վառելիքը</b>	<b>Էներգատարողությունը</b>
Դիզել	36 ՄՋ/լիտր
Բենզին	32 ՄՋ/լիտր
Բնական գազ/Բիոգազ	35 ՄՋ/Նմ3
Հեղուկացված նավթային գազ (ՀՆԳ)	24 ՄՋ/լիտր
Էթանոլ	21 ՄՋ/լիտր
Բիոդիզել	33 ՄՋ/լիտր
Էմուլսիոն վառելիք	32 ՄՋ/լիտր
Հիդրոգեն	11 ՄՋ/Նմ3

Ընդհանուր տարողությունը չպետք է գերազանցի՝

- 1 080 կգ-ը՝ ՀԲԳ-ի (հեղուկացված բնական գազ) եւ ՍԲԳ-ի (սեղմված բնական գազ) դեպքում.
- 2 250 լիտրը՝ ՀՆԳ-ի դեպքում.

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2. Փոխադրման ընթացքում օգտագործման համար նախատեսված սարքավորմամբ կոնյուեյները, որն ամրացված է փոխադրամիջոցի վրա, փոխադրամիջոցի անբաժանելի մասն է եւ օգտվում է այն նույն բացառություններից, որոնք վերաբերում են սարքավորման շահագործման համար անհրաժեշտ վառելիքին:*

բ) (Հանվել է)

գ) «A» եւ «O» խմբերի գազեր (2.2.2.1-ի համաձայն), եթե տարայում կամ ցիստեռններում 20 °C ջերմաստիճանի պայմաններում գազի ճնշումը չի գերազանցում 200 կՊա (2 բար), եւ եթե գազը հեղուկացված կամ սառեցված-հեղուկացված չէ: Սա վերաբերում է ցանկացած տեսակի տարայի կամ ցիստեռնի, օրինակ՝ նաեւ մեխանիզմների եւ սարքերի մասերին.

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Այս բացառությունը չի փարածվում լամպերի վրա: Լամպերի համար տե՛ս 1.1.3.10:*

դ) այն գազերը, որոնք պարունակվում են փոխադրամիջոցի շահագործման նպատակով օգտագործվող սարքավորման մեջ (օրինակ՝ կրակմարիչներ), ներառյալ՝ պահեստային մասերում (օրինակ՝ փքված օդաճնշմամբ գործող անվադողեր) պարունակվող գազերը. այս բացառությունը նաեւ վերաբերում է փքված օդաճնշմամբ գործող անվադողերին, որոնք տեղափոխվում են որպես բեռ.

ե) այն գազերը, որոնք պարունակվում են փոխադրամիջոցների

հատուկ սարքավորման մեջ եւ անհրաժեշտ են փոխադրման ժամանակ այս հատուկ սարքավորման աշխատանքի համար (սառեցնող համակարգեր, ձկների համար նախատեսված ցիստեռններ, տաքացուցիչներ եւ այլն), ինչպես նաեւ այդպիսի սարքավորումների պահեստային տարաները կամ չմաքրված դատարկ փոխանակման տարաները, որոնք փոխադրվում են նույն տրանսպորտային միավորով:

- զ) այն գազերը, որոնք պարունակվում են սննդամթերքի մեջ (բացառությամբ UN 1950-ի), ներառյալ՝ գազավորված ըմպելիքները. եւ
- է) այն գազերը, որոնք պարունակվում են սպորտում օգտագործվող գնդակների մեջ.
- ը) (Հանվել է)

#### 1.1.3.3. Հեղուկ վառելիքի փոխադրմանը վերաբերող բացառությունները

«ԱԴՌ» համաձայնագրով սահմանված դրույթները չեն կիրառվում հետեւյալների փոխադրման նկատմամբ.

- ա) տրանսպորտային փոխադրում իրականացնող փոխադրամիջոցի ցիստեռններում պարունակվող վառելիք, որը նախատեսված է քարշի ապահովման կամ դրա՝ փոխադրման ժամանակ օգտագործվող կամ օգտագործման համար նախատեսված ցանկացած սարքի գործունեության համար:

Վառելիքը կարող է տեղափոխվել վառելիքի անշարժ ցիստեռններով, որոնք անմիջականորեն միացված են փոխադրամիջոցի շարժիչին եւ (կամ) լրացուցիչ սարքավորմանը, որը բավարարում է համապատասխան օրենսդրական դրույթների պահանջները կամ կարող է տեղափոխվել վառելիքի շարժական կոնտեյներներով (ինչպիսիք են կանիստրները):

Անշարժ ցիստեռնի ընդհանուր տարողությունը տրանսպորտային յուրաքանչյուր միավորի դեպքում չպետք է գերազանցի 1500 լիտրը, իսկ կցասայլին փակցված ցիստեռնի տարողությունը չպետք է գերազանցի 500 լիտրը: Վառելիքի շարժական կոնտեյներներով տրանսպորտային յուրաքանչյուր միավորի դեպքում կարող է տեղափոխվել առավելագույնը 60 լիտր: Այս սահմանափակումները չպետք է կիրառվեն այն փոխադրամիջոցների նկատմամբ, որոնք օգտագործվում են վթարային ծառայությունների կողմից:

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1. Փոխադրման ընթացքում*

օգտագործման համար նախատեսված սարքավորմամբ կոնտեյները, որն ամրացված է փոխադրամիջոցի վրա, փոխադրամիջոցի անբաժանելի մասն է եւ օգտվում է այն նույն բացառություններից, որոնք վերաբերում են սարքավորման շահագործման համար անհրաժեշտ վառելիքին:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2.** Ցիստեռնների կամ բալոնների, այդ թվում՝ գազային վառելիք պարունակողների ընդհանուր տարողությունը չպետք է գերազանցի 54 000 ՄՋ էներգետիկ համարժեքը (տե՛ս 1.1.3.2 (ա)-ի ծանոթագրությունը):

բ) եւ գ) (Հանվել են)

1.1.3.4. Հատուկ դրույթներին կամ սահմանափակ եւ կամ ազատված քանակություններով փաթեթավորված վտանգավոր բեռներին վերաբերող բացառությունները

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** Ռադիոակտիվ նյութերի համար տե՛ս նաեւ 1.7.1.4:

1.1.3.4.1. 3.3 գլխի որոշ հատուկ դրույթներով որոշ վտանգավոր բեռների փոխադրումը մասնակիորեն կամ ամբողջությամբ ազատվում է «ԱԴՌ» համաձայնագրի պահանջները բավարարելու պայմանից: Բացառությունը կիրառվում է, երբ 3.2 գլխի Ա աղյուսակի 6-րդ սյունակում՝ համապատասխան վտանգավոր բեռների դիրքի դիմաց, հղում է կատարվում հատուկ դրույթին:

1.1.3.4.2. Որոշ վտանգավոր բեռների նկատմամբ կարող են կիրառվել բացառություններ՝ պայմանով, որ բավարարվեն 3.4 գլխի պահանջները:

1.1.3.4.3. Որոշ վտանգավոր բեռների նկատմամբ կարող են կիրառվել բացառություններ՝ պայմանով, որ բավարարվեն 3.5 գլխի պահանջները:

1.1.3.5. Դատարկ չմաքրված փաթեթվածքներին վերաբերող բացառությունները

Դատարկ չմաքրված փաթեթվածքների նկատմամբ (ներառյալ՝ ՍՄԿ-ները եւ խոշոր փաթեթվածքները), որոնք պարունակել են 2-րդ, 3-րդ, 4.1, 5.1, 6.1, 8-րդ եւ 9-րդ դասերի նյութեր, չեն կիրառվում «ԱԴՌ» համաձայնագրի պայմանները, եթե համապատասխան միջոցներ են ձեռնարկվել ցանկացած վտանգ չեզոքացնելու համար: Վտանգը չեզոքացված է, եթե համապատասխան միջոցներ են ձեռնարկվել 1-9-րդ դասերի բոլոր վտանգները չեզոքացնելու համար:

1.1.3.6. Տրանսպորտային յուրաքանչյուր միավորով փոխադրվող քանակություններին վերաբերող բացառությունները

1.1.3.6.1. Այս ենթաբաժնի նպատակներից ելնելով՝ վտանգավոր բեռները

վերագրվում են տրանսպորտային 0, 1-ին, 2-րդ, 3-րդ կամ 4-րդ կատեգորիաներին, ինչպես նշված է 3.2. գլխի Ա աղյուսակի 15-րդ սյունակում: Դատարկ չմաքրված փաթեթվածքները, որոնք պարունակել են այնպիսի նյութեր, որոնք վերագրվում են տրանսպորտային 0 կատեգորիային, նույնպես վերագրվում են տրանսպորտային 0 կատեգորիային: Դատարկ չմաքրված փաթեթվածքները, որոնք պարունակել են այնպիսի նյութեր, որոնք վերագրվում են տրանսպորտային 0-ից տարբեր՝ այլ կատեգորիայի, ներառվում են տրանսպորտային 4-րդ կատեգորիայում:

1.1.3.6.2. Եթե տրանսպորտային միավորով փոխադրվող վտանգավոր բեռների քանակը չի գերազանցում 1.1.3.6.3 աղյուսակի 3-րդ սյունակում նշված արժեքներին տվյալ տրանսպորտային կատեգորիայի դեպքում (երբ տրանսպորտային միավորով տեղափոխվող վտանգավոր բեռները պատկանում են նույն կատեգորիային) կամ այն արժեքին, որը հաշվարկվում է 1.1.3.6.4-ին համապատասխան (երբ տրանսպորտային միավորով տեղափոխվող վտանգավոր բեռները պատկանում են տրանսպորտային տարբեր կատեգորիաների), դրանք կարող են փոխադրվել մեկ տրանսպորտային միավորով, փաթեթներով՝ առանց հետևյալ դրույթների կիրառման.

- 1.10 գլուխ՝ բացառությամբ ՄԱԿ-ի նշագրման 0029, 0030, 0059, 0065, 0073, 0104, 0237, 0255, 0267, 0288, 0289, 0290, 0360, 0361, 0364, 0365, 0366, 0439, 0440, 0441, 0455, 0456 եւ 0500 համարների 1-ին դասի պայթուցիկ նյութերի եւ բացառությամբ ՄԱԿ-ի նշագրման 2910 եւ 2911 համարների 7-րդ դասի ազատված փաթեթների, եթե ակտիվության մակարդակը գերազանցում է A2 արժեքը,
- 5.3 գլուխ,
- 5.4.3 բաժին,
- 7.2 գլուխ՝ բացառությամբ 7.2.4-ի V5-ի եւ V8-ի,
- 7.5.11-ի CV1,
- Մաս 8՝ բացառությամբ 8.1.2.1 (ա),  
8.1.4.2 - 8.1.4.5,  
8.2.3,  
8.3.3,  
8.3.4,  
8.3.5,  
Գլուխ 8.4,

- S1(3) եւ (6),
- S2(1),
- S4, S5,
- S14-S21 եւ
- 8.5 գլխի S24,
- Մաս 9:

1.1.3.6.3. Եթե տրանսպորտային միավորով փոխադրվող վտանգավոր բեռները պատկանում են միեւնույն կատեգորիային, յուրաքանչյուր տրանսպորտային միավորի դեպքում ընդհանուր առավելագույն քանակությունը նշվում է ստորեւ ներկայացված աղյուսակի 3-րդ սյունակում:

Տրանսպորտային կատեգորիան (1)	Նյութերի կամ պատրաստվածքների փաթեթավորման խումբը կամ դասակարգման ծածկագիրը (խումբը) կամ ՄԱԿ-ի նշագրման համարը (2)	Յուրաքանչյուր տրանսպորտային միավորի համար ընդհանուր առավելագույն քանակը (3)
0	1-ին դաս 1.1A/1.1L/1.2L/1.3L եւ ՄԱԿ-ի նշագրման 0190 համար 3-րդ դաս ՄԱԿ-ի նշագրման 3343 համար 4.2 դաս Փաթեթավորման I խմբին պատկանող նյութեր 4.3 դաս ՄԱԿ-ի նշագրման 1183, 1242, 1295, 1340, 1390, 1403, 1928, 2813, 2965, 2968, 2988, 3129, 3130, 3131, 3134, 3148, 3396, 3398 եւ 3399 համարներ 5.1 դաս ՄԱԿ-ի նշագրման 2426 համար 6.1 դաս ՄԱԿ-ի նշագրման 1051, 1600, 1613, 1614, 2312, 3250 եւ 3294 համարներ 6.2 դաս ՄԱԿ-ի նշագրման 2814 եւ 2900 համարներ 7-րդ դաս ՄԱԿ-ի նշագրման 2912-2919, 2977, 2978 եւ 3321-3333 համարներ 8-րդ դաս ՄԱԿ-ի նշագրման 2215 համար (ՄԱԼԵԻՆԱՅԻՆ ԱՆՀԻԴՐԻԴ, ՀԱԼԵՑՎԱԾ) 9-րդ դաս ՄԱԿ-ի նշագրման 2315, 3151, 3152 եւ 3432 համարներ եւ այդպիսի նյութեր կամ խառնուրդներ պարունակող պատրաստվածքներ, եւ դատարկ չմաքրված փաթեթվածքներ՝ բացառությամբ այն	0

Տրանսպորտային կատեգորիան (1)	Նյութերի կամ պատրաստվածքների փաթեթավորման խումբը կամ դասակարգման ծածկագիրը (խումբը) կամ ՄԱԿ-ի նշագրման համարը (2)	Յուրաքանչյուր տրանսպորտային միավորի համար ընդհանուր առավելագույն քանակը (3)
	տեսակների, որոնք դասակարգվում են ՄԱԿ-ի նշագրման 2908 համարի համաձայն, որոնք պարունակել են այնպիսի նյութեր, որոնք դասակարգվում են տրանսպորտային այս կատեգորիայի համաձայն	
1	<p>Նյութեր եւ պատրաստվածքներ, որոնք պատկանում են փաթեթավորման I խմբին եւ չեն դասակարգվում տրանսպորտային 0 կատեգորիայի ներքո,</p> <p>եւ այն նյութերն ու պատրաստվածքները, որոնք պատկանում են հետեւյալ դասերին.</p> <p>1-ին դաս 1.1B-ից 1.1Jա /1.2B-ից 1.2J/1.3C/1.3G/1.3H/1.3J/1.5Dա</p> <p>2-րդ դաս T, TCա, TO, TF, TOCա եւ TFC խմբեր</p> <p>աերոզոլներ՝ C, CO, FC, T, TF, TC, TO, TFC եւ TOC խմբերի</p> <p>ճնշման տակ գտնվող քիմիական նյութեր. ՄԱԿ-ի նշագրման 3502, 3503, 3504 եւ 3505 համարներ</p> <p>4.1 դաս ՄԱԿ-ի նշագրման 3221-3224, 3231-3240, 3533 եւ 3534 համարներ</p> <p>5.2 դաս ՄԱԿ-ի նշագրման 3101-3104 եւ 3111-3120 համարներ</p>	20
2	<p>Այն նյութերը, որոնք պատկանում են փաթեթավորման II խմբին եւ չեն դասակարգվում տրանսպորտային 0, 1-ին կամ 4-րդ կատեգորիաների ներքո,</p> <p>եւ այն նյութերն ու պատրաստվածքները, որոնք պատկանում են հետեւյալ դասերին.</p> <p>1-ին դաս 1.4B-ից 1.4G եւ 1.6N</p> <p>2-րդ դաս խումբ «F»</p> <p>աերոզոլներ՝ խումբ «F»</p> <p>ճնշման տակ գտնվող քիմիական նյութեր. ՄԱԿ-ի նշագրման 3501 համար</p> <p>4.1 դաս ՄԱԿ-ի նշագրման 3225-3230, 3531 եւ 3532 համարներ</p> <p>4.3 դաս ՄԱԿ-ի նշագրման 3292 համար</p> <p>5.1 դաս ՄԱԿ-ի նշագրման 3356 համար</p> <p>5.2 դաս ՄԱԿ-ի նշագրման 3105-3110 համարներ</p> <p>6.1 դաս ՄԱԿ-ի նշագրման 1700, 2016 եւ 2017 համարներ,</p> <p>եւ այն նյութերը, որոնք պատկանում են փաթեթավորման III խմբին</p> <p>9-րդ դաս ՄԱԿ-ի նշագրման 3090, 3091, 3245, 3480 եւ 3481</p>	333

Տրանսպորտային կատեգորիան (1)	Նյութերի կամ պատրաստվածքների փաթեթավորման խումբը կամ դասակարգման ծածկագիրը (խումբը) կամ ՄԱԿ-ի նշագրման համարը (2)	Յուրաքանչյուր տրանսպորտային միավորի համար ընդհանուր առավելագույն քանակը (3)
	համարներ	
3	<p>Այն նյութերը, որոնք պատկանում են փաթեթավորման III խմբին եւ չեն դասակարգվում 0, 2-րդ կամ 4-րդ տրանսպորտային կատեգորիաների ներքո,</p> <p>եւ այն նյութերն ու պատրաստվածքները, որոնք պատկանում են հետեւյալ դասերին.</p> <p>2-րդ դաս «A» եւ «O» խմբեր</p> <p>Աերոզոլներ՝ «A» եւ «O» խմբեր</p> <p>3-րդ դաս ՄԱԿ-ի նշագրման 3473 համար</p> <p>4.3 դաս ՄԱԿ-ի նշագրման 3476 համար</p> <p>8-րդ դաս ՄԱԿ-ի նշագրման 2794, 2795, 2800, 3028, 3477 եւ 3506 համարներ</p> <p>9-րդ դաս ՄԱԿ-ի նշագրման 2990 եւ 3072 համարներ</p>	1 000
4	<p>1-ին դաս 1.4S</p> <p>4.1 դաս ՄԱԿ-ի նշագրման 1331, 1345, 1944, 1945, 2254 եւ 2623 համարներ</p> <p>4.2 դաս ՄԱԿ-ի նշագրման 1361 եւ 1362 համարի փաթեթավորման III խումբ</p> <p>7-րդ դաս ՄԱԿ-ի նշագրման 2908-2911 համարներ</p> <p>9-րդ դաս ՄԱԿ-ի նշագրման 3268, 3499, 3508 եւ 3509 համարներ,</p> <p>եւ դատարկ ու չմաքրված փաթեթվածքներ, որոնք պարունակել են վտանգավոր բեռներ՝ բացառությամբ նրանց, որոնք դասակարգված են տրանսպորտային 0-րդ կատեգորիայի ներքո</p>	անսահմանափակ

ա ՄԱԿ-ի նշագրման 0081, 0082, 0084, 0241, 0331, 0332, 0482, 1005 եւ 1017 համարների դեպքում տրանսպորտային յուրաքանչյուր միավորի համար ընդհանուր առավելագույն քանակը պետք է կազմի 50 կգ:

Վերը նշված աղյուսակում «յուրաքանչյուր տրանսպորտային միավորի համար ընդհանուր առավելագույն քանակը» նշանակում է՝

- պատրաստվածքների դեպքում՝ անզուտ քաշը՝ կիլոգրամով արտահայտված (1-ին դասի պատրաստվածքների դեպքում՝ պայթուցիկ նյութի զտաքաշը՝ կիլոգրամով արտահայտված, սույն Հավելվածում նշված մեխանիզմներում եւ սարքավորումներում գտնվող վտանգավոր բեռների դեպքում՝ դրանց մեջ գտնվող վտանգավոր բեռների ընդհանուր քանակը՝ համապատասխանաբար կիլոգրամներով կամ լիտրերով արտահայտված)
- պինդ նյութերի, հեղուկացված գազերի, սառեցված-հեղուկացված գազերի եւ լուծված գազերի դեպքում՝ զտաքաշը՝ կիլոգրամներով արտահայտված,
- հեղուկների դեպքում՝ վտանգավոր բեռների ընդհանուր քանակը՝ լիտրերով արտահայտված,
- սեղմված գազերի, կլանված (ադսորբված) եւ ճնշման տակ գտնվող քիմիական նյութերի դեպքում՝ տարանների տարողությունը՝ լիտրերով:

1.1.3.6.4 Երբ տրանսպորտային տարբեր կատեգորիաներին պատկանող վտանգավոր բեռները փոխադրվում են միեւնույն տրանսպորտային միավորով, հետեւյալների գումարը.

- տրանսպորտային 1-ին կատեգորիայի նյութերի եւ պատրաստվածքների քանակությունը՝ բազմապատկված «50»-ով,
- 1.1.3.6.3-ում ներկայացված աղյուսակի «ա» ծանոթագրության մեջ նշված տրանսպորտային 1-ին կատեգորիայի նյութերի եւ պատրաստվածքների քանակությունը՝ բազմապատկված «20»-ով,
- տրանսպորտային 2-րդ կատեգորիայի նյութերի եւ պատրաստվածքների քանակությունը՝ բազմապատկված «3»-ով, եւ
- տրանսպորտային 3-րդ կատեգորիայի նյութերի եւ պատրաստվածքների քանակությունը

չպետք է գերազանցի «1 000»-ը:

1.1.3.6.5. Սույն ենթաբաժնի նպատակներից ելնելով՝ վտանգավոր բեռները, որոնք բացառվում են 1.1.3.1 (ա), (բ) եւ (դ)-(զ)-ի, 1.1.3.2 - 1.1.3.5, 1.1.3.7, 1.1.3.9 եւ 1.1.3.10-ի համաձայն, հաշվի չեն առնվի:

1.1.3.7. Էլեկտրաէներգիայի կուտակման եւ արտադրման համակարգերի փոխադրմանը վերաբերող բացառությունները

«ԱԴԴ» համաձայնագրով սահմանված դրոյթները չեն կիրառվում



էլեկտրաէներգիայի կուտակման եւ արտադրման համակարգերի նկատմամբ (օրինակ՝ լիթիումային մարտկոցներ, էլեկտրական կոնդենսատորներ, անհամաչափ կոնդենսատորներ, մետաղ-հիդրիդային կուտակման համակարգեր եւ վառելիքային էլեմենտներ), որոնք՝

- ա) տեղադրված են փոխադրում իրականացնող փոխադրամիջոցում եւ նախատեսված են քարշի ապահովման կամ դրա ցանկացած սարքի շահագործման համար,
- բ) պարունակվում են սարքավորման մեջ այդ սարքի շահագործման համար կամ նախատեսված են փոխադրման ժամանակ օգտագործման համար (օրինակ՝ ծնկադիր):

1.1.3.8. (Նախատեսվում է վերապահում)

1.1.3.9. Փոխադրման ժամանակ որպես սառնազդակ կամ օդորակիչ օգտագործվող վտանգավոր բեռներին վերաբերող բացառությունները

Եթե միայն խեղդող հատկություն ունեցող վտանգավոր բեռները (որոնք լուծում են մթնոլորտում սովորաբար առկա թթվածինը կամ փոխարինում են դրան) տրանսպորտային միջոցներում կամ կոնտեյներներում օգտագործվում են սառեցման կամ օդորակման նպատակով, ապա դրանց նկատմամբ կիրառվում են միայն 5.5.3 բաժնի դրույթները:

1.1.3.10. Վտանգավոր բեռներ պարունակող լամպերի փոխադրմանը վերաբերող բացառությունները

Հետեւյալ լամպերը չեն կարգավորվում «ԱԴՌ» համաձայնագրով՝ պայմանով, որ դրանք չեն պարունակում ռադիոակտիվ նյութ կամ չեն պարունակում 3.3 գլխի 366-րդ հատուկ դրույթում նշված քանակությունից ավելի սնդիկ՝

- ա) այն լամպերը, որոնք հավաքման կամ օգտահանման վայր տեղափոխելիս հավաքվել են անմիջականորեն անհատներից եւ տնային տնտեսություններից,

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Դրանք ներառում են նաեւ այն լամպերը, որոնք անհատների կողմից բերվել են հավաքման առաջին վայր, հետո տեղափոխվել են հավաքման, միջանկյալ վերամշակման կամ օգտահանման մեկ այլ վայր.*

- բ) լամպեր, որոնցից յուրաքանչյուրը պարունակում է 1 գրամից ոչ ավելի վտանգավոր բեռ եւ փաթեթավորված է այնպես, որ յուրաքանչյուր փաթեթ պարունակի 30 գրամից ոչ ավելի վտանգավոր բեռ՝ պայմանով, որ՝

- i) լամպերն արտադրված են որակի կառավարման սերտիֆիկացված համակարգերին համապատասխան,

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Այս նպատակով կարող է օգտագործվել ISO 9001 ստանդարտը:*

եւ

- ii) յուրաքանչյուր լամպ կա՛մ առանձին փաթեթավորված է բաժանարարներով առանձնացված ներքին փաթեթվածքներում, կա՛մ լամպերը պաշտպանելու համար պատված է պաշտպանիչ նյութով եւ փաթեթավորված է ամուր արտաքին փաթեթվածքներով, որոնք համապատասխանում են 4.1.1.1-ի ընդհանուր դրույթներին եւ ունակ են անցնելու 1.2 մ բարձրությունից անկման փորձարկումը.
- գ) օգտագործված, վնասված կամ խոտանված լամպերը, որոնցից յուրաքանչյուրը հավաքման կամ օգտահանման վայրից փոխադրման ժամանակ պարունակում է 1 գրամից ոչ ավելի վտանգավոր բեռ՝ յուրաքանչյուր փաթեթում պարունակելով 30 գրամից ոչ ավելի վտանգավոր բեռ: Լամպերը պետք է փաթեթավորված լինեն արտաքին ամուր փաթեթվածքներով, որոնք բավականին դիմացկուն են փոխադրման բնականոն պայմաններում դրանց պարունակության դուրս գալը կանխելու համար, համապատասխանում են 4.1.1.1-ի ընդհանուր դրույթներին, ինչպես նաեւ ունակ են անցնելու 1.2 մ-ից ոչ պակաս բարձրությունից անկման փորձարկումը.
- դ) միայն «A» եւ «O» խմբերի գազեր (2.2.2.1-ի համաձայն) պարունակող լամպերը՝ պայմանով, որ դրանք փաթեթավորված են այնպես, որ լամպերը պայթելու դեպքում դրանք պահպանվեն փաթեթի մեջ:

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Ռադիոակտիվ նյութեր պարունակող լամպերը ներկայացված են 2.2.7.2.2.2 (բ)-ում:*

- 1.1.4. Այլ կանոնակարգերի կիրառելիությունը
- 1.1.4.1. (Նախատեսվում է վերապահում)
- 1.1.4.2. Տրանսպորտային շղթայով փոխադրումը, ներառյալ՝ ծովային եւ օդային փոխադրումը
- 1.1.4.2.1. Փաթեթները, կոնտեյներները, շարժական ցիստեռնները, ցիստեռն-կոնտեյներները եւ ԳՖՏԿ-ները, որոնք ամբողջությամբ չեն բավարարում փաթեթավորմանը, խառը փաթեթավորմանը, մակնշմանը, փաթեթների պիտակավորմանը կամ տեղեկատվական ցուցանակների տեղադրմանը եւ նարնջագույն թիթեղների վրա մակնշմանն առնչվող՝ «ԱԴՌ» համաձայնագրի պահանջները, սակայն

համապատասխանում են ՎԲՄԾ կանոնագրքի կամ ԻԿԱՕ-ի տեխնիկական ցուցումների պահանջներին, պետք է ընդունվեն տրանսպորտային շղթայով իրականացվող, ներառյալ՝ ծովային կամ օդային փոխադրումների համար՝ հետեւյալ պայմանների պահպանմամբ.

- ա) եթե փաթեթները մակնշված կամ պիտակավորված չեն «ԱԴԻ» համաձայնագրին համապատասխան, ապա դրանք պետք է կրեն մակնշումներ եւ նախազգուշացնող պիտակներ՝ ՎԲՄԾ կանոնագրքի կամ ԻԿԱՕ-ի տեխնիկական ցուցումների պահանջներին համապատասխան,
- բ) ՎԲՄԾ կանոնագրքի կամ ԻԿԱՕ-ի տեխնիկական ցուցումների պահանջները պետք է կիրառվեն փաթեթի մեջ առկա խառը փաթեթվածքի նկատմամբ,
- գ) տրանսպորտային շղթայով փոխադրման, ներառյալ՝ ծովային փոխադրման դեպքում, եթե կոնտեյներները, շարժական ցիստեռնները, ցիստեռն-կոնտեյներները կամ ԳԲՏԿ-ները մակնշված չեն կամ դրանց վրա սույն հավելվածի 5.3 գլխի համաձայն փակցված չեն նախազգուշացնող պիտակներ, ապա դրանք պետք է մակնշվեն եւ դրանց վրա նախազգուշացնող պիտակներ պետք է փակցվեն՝ ՎԲՄԾ կանոնագրքի 5.3 գլխի համաձայն: Այդ դեպքում սույն հավելվածի միայն 5.3.2.1.1-ն է կիրառվում հենց փոխադրամիջոցի մակնշման նկատմամբ: Դատարկ, չմաքրված շարժական ցիստեռնների, ցիստեռն-կոնտեյներների եւ ԳԲՏԿ-ների դեպքում այս պահանջը պետք է կիրառվի եւ ընդգրկի մաքրման կայան տեղափոխումը:

Այս շեղումը չի կիրառվում «ԱԴԻ» համաձայնագրի 1-9-րդ դասերում նշված վտանգավոր բեռների դասին պատկանող եւ ՎԲՄԾ կանոնագրքի եւ ԻԿԱՕ-ի տեխնիկական ցուցումների կիրառելի պահանջների համաձայն ոչ վտանգավոր բեռներ համարվող բեռների դեպքում:

- 1.1.4.2.2. Տրանսպորտային միավորները, որոնք բաղկացած են փոխադրամիջոցից կամ փոխադրամիջոցներից՝ բացառությամբ կոնտեյներների, շարժական ցիստեռնների, ցիստեռն-կոնտեյներների կամ ԳԲՏԿ-ներ փոխադրող փոխադրամիջոցների, ինչպես նշված է 1.1.4.2.1 (գ)-ում, որոնց վրա տեղեկատվական ցուցանակները տեղադրված չեն «ԱԴԻ» համաձայնագրի 5.3.1-ի համաձայն, սակայն որոնք մակնշված են, եւ որոնց վրա տեղեկատվական ցուցանակները տեղադրված են ՎԲՄԾ կանոնագրքի 5.3 գլխի համաձայն, կարող են ընդունվել տրանսպորտային շղթայով փոխադրման, ներառյալ՝ ծովային փոխադրման համար՝ պայմանով, որ կպահպանվեն «ԱԴԻ»

համաձայնագրի 5.3.2-ի նարնջագույն թիթեղների մակնշման մասին դրույթները:

- 1.1.4.2.3. Տրանսպորտային շղթայով փոխադրման, ներառյալ՝ ծովային կամ օդային փոխադրման դեպքում 5.4.1-ի եւ 5.4.2-ի, ինչպես նաեւ 3.3 գլխի ցանկացած հատուկ դրույթի համաձայն պահանջվող տեղեկությունները կարող են փոխարինվել տրանսպորտային փաստաթղթով եւ համապատասխանաբար ՎԲՄԾ կանոնագրքի կամ ԻԿԱՕ-ի տեխնիկական ցուցումներով պահանջվող տեղեկություններով՝ պայմանով, որ «ԱԴՌ» համաձայնագրով պահանջվող ցանկացած լրացուցիչ տեղեկություն նույնպես կընդգրկվի:

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. 1.1.4.2.1-ի համաձայն փոխադրման համար տե՛ս նաեւ 5.4.1.1.7: Կոնտեյներներով փոխադրման համար տե՛ս նաեւ 5.4.2:*

- 1.1.4.3. Ծովային փոխադրման համար հաստատված ԾՄԿ տեսակի շարժական ցիստեռնների օգտագործումը

ԾՄԿ տեսակի շարժական ցիստեռնները (1-ին, 2-րդ, 5-րդ եւ 7-րդ տեսակներ), որոնք չեն բավարարում 6.7 կամ 6.8 գլուխների պահանջները, բայց որոնք ՎԲՄԾ կանոնագրքի դրույթներին համապատասխան (փոփոխություն՝ 29-98) կառուցվել ու հաստատվել են մինչեւ 2003 թվականի հունվարի 1-ը, կարող են շարունակել օգտագործվել՝ պայմանով, որ դրանք կհամապատասխանեն ՎԲՄԾ կանոնագրքի<sup>1</sup> պարբերական ստուգման եւ փորձարկման մասին կիրառելի դրույթներին: Բացի այդ, դրանք պետք է համապատասխանեն «ԱԴՌ» համաձայնագրի 3.2 գլխի Ա աղյուսակի 10-րդ եւ 11-րդ սյունակներում սահմանված ցուցումներին վերաբերող դրույթներին, ինչպես նաեւ 4.2 գլխի դրույթներին: Տես նաեւ ՎԲՄԾ կանոնագրքի 4.2.0.1-ը:

- 1.1.4.4. (Նախատեսվում է վերապահում)

- 1.1.4.5. Փոխադրումը ճանապարհային տրանսպորտային միջոցներից տարբեր՝ այլ միջոցներով

- 1.1.4.5.1. Եթե «ԱԴՌ» համաձայնագրի պահանջներին համապատասխան փոխադրումներ իրականացնող փոխադրամիջոցը ուղերթի որեւէ հատված է տեղափոխվում ավտոճանապարհայինից տարբեր՝ այլ եղանակով, ապա ուղերթի այդ հատվածի նկատմամբ կիրառվում է

---

<sup>1</sup> Ծովագնացության միջազգային կազմակերպությունը (ԾՄԿ) թողարկել է «Վերանգավոր բեռների փոխադրման համար օգտագործվող ԾՄԿ տեսակի շարժական ցիստեռնների եւ ավտոցիստեռնների անընդհապ օգտագործման մասին ուղեցույց՝ որպես DSC.1/Circ.12 եւ ուղղված վրիպակների շրջաբերական»: Այս ուղեցույցի տեքստը կարելի է գտնել ԾՄԿ-ի համացանցային կայքում. <http://www.imo.org>

միայն ազգային կամ միջազգային այն օրենսդրությունը, որը կարգավորում է այդ հատվածում վտանգավոր բեռների փոխադրումը տրանսպորտային այն միջոցով, որն օգտագործվել է ճանապարհային փոխադրամիջոցի տեղափոխման համար:

- 1.1.4.5.2. Վերը նշված 1.1.4.5.1-ով սահմանված դեպքերում «ԱԴՌ» համաձայնագրի ներգրավված Պայմանավորվող կողմերը կարող են համաձայնել կիրառել «ԱԴՌ» համաձայնագրի պահանջներն ուղերթի այն հատվածի նկատմամբ, որտեղ փոխադրամիջոցը տեղափոխվել է ավտոճանապարհայինից տարբեր՝ այլ միջոցով, եւ եթե անհրաժեշտություն համարվի դրանք լրացվեն լրացուցիչ պահանջներով, եթե «ԱԴՌ» համաձայնագրի ներգրավված Պայմանավորվող կողմերի միջեւ այդ պայմանավորվածությունները չեն հակասում միջազգային կոնվենցիաների այն դրույթներին, որոնք կարգավորում են ուղերթի այդ հատվածում վտանգավոր բեռների փոխադրումը տրանսպորտային այն միջոցով, որն օգտագործվել է ճանապարհային փոխադրամիջոցի տեղափոխման համար, օրինակ՝ Ծովում կյանքի անվտանգության մասին միջազգային կոնվենցիան (SOLAS), որի Պայմանավորվող կողմեր են համարվում նաեւ «ԱԴՌ» համաձայնագրի Պայմանավորվող կողմերը:

Այս պայմանավորվածությունները նախաձեռնող Պայմանավորվող կողմը պետք է դրանց մասին տեղեկացնի ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի քարտուղարությանը, որն իր հերթին դրանց վրա պետք է հրավիրի Պայմանավորվող կողմերի ուշադրությունը:

- 1.1.4.5.3. Երբ «ԱԴՌ» համաձայնագրի դրույթներով կարգավորվող տրանսպորտային գործունեության նկատմամբ ամբողջ ուղերթի կամ ուղերթի մի հատվածի մասով կիրառվում է նաեւ միջազգային կոնվենցիա, որը կարգավորում է ավտոճանապարհայինից տարբեր՝ այլ եղանակով վտանգավոր բեռների փոխադրումն այն դրույթների լույսի ներքո, որոնք կիրառվում են որոշ մեքենաների ծառայությունների դեպքում, ապա այդ միջազգային կոնվենցիայի դրույթները պետք է կիրառվեն տվյալ ուղերթի նկատմամբ «ԱԴՌ» համաձայնագրի այն դրույթների հետ զուգահեռ, որոնք չեն հակասում դրանց, «ԱԴՌ» համաձայնագրի մյուս դրույթները չեն կիրառվում տվյալ ուղերթի նկատմամբ:

#### 1.1.5. Ստանդարտների կիրառումը

Եթե պահանջվում է կիրառել ստանդարտը, իսկ ստանդարտի եւ «ԱԴՌ» համաձայնագրի դրույթների միջեւ կա որեւէ հակասություն, ապա գերակայում են «ԱԴՌ» համաձայնագրի դրույթները: «ԱԴՌ» համաձայնագրին չհակասող ստանդարտի պահանջները կիրառվում են

սահմանված կարգով, ներառյալ՝ ցանկացած այլ ստանդարտի կամ ստանդարտի մի մասի պահանջները, որին հղում է կատարվում այդ ստանդարտի շրջանակներում՝ ներկայացնելով այն որպես նորմատիվ:

## ԳԼՈՒԽ 1.2

### ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՉԱՓՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ

#### 1.2.1. Սահմանումները

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Այս բաժնում ընդգրկված են բոլոր ընդհանուր կամ հատուկ սահմանումները:*

«ԱԴՌ» համաձայնագրի նպատակներից ելնելով՝

Ա

«ԱԲԿ» նշանակում է Ավտոմոբիլային տրանսպորտով բեռների միջազգային փոխադրումների մասին պայմանագրի վերաբերյալ կոնվենցիա (Ժնև, 1956 թվականի մայիսի 19)՝ ենթարկված փոփոխության.

«ԱԴՆ (ADN)» նշանակում է «Ներքին ջրուղիներով վտանգավոր բեռների միջազգային փոխադրումների վերաբերյալ» եվրոպական համաձայնագիր.

«Աերոզոլ կամ աերոզոլային ցողացիր» նշանակում է պատրաստվածք՝ բաղկացած 6.2.6-ի պահանջները բավարարող, չվերալցավորվող ցանկացած տարայից՝ պատրաստված մետաղից, ապակուց կամ պլաստմասսայից, որը պարունակում է սեղմված, հեղուկացված կամ ճնշման տակ լուծված գազ՝ հեղուկի, մածուկի կամ փոշու առկայությամբ կամ առանց դրանց, որն ունի արձակող սարք, որի միջոցով պարունակությունը գազում կախության լիճակում արտանետվում է պինդ կամ հեղուկ մասնիկների, փրփուրի, մածուկի կամ փոշու, կամ հեղուկ կամ գազային վիճակում.

«ԱԷՄԳ» նշանակում է Ատոմային էներգիայի հարցերով միջազգային գործակալություն (IAEA) (IAEA, P.O. Box 100 - A - 1400 Vienna).

«ԱԿԿ» նշանակում է Անվտանգ կոնտեյներների վերաբերյալ միջազգային կոնվենցիա (Ժնև, 1972թ.), որը փոփոխվել է հրապարակվել է Ծովագնացության միջազգային կազմակերպության կողմից (ԾՄԿ), Լոնդոն.

«Այլ կերպ չնշված դիրք» նշանակում է հավաքական դիրք, որին կարող են դասվել նյութերը, խառնուրդները, լուծույթները կամ պատրաստվածքները, եթե դրանք՝

ա) նշված չեն անվանումով՝ 3.2 գլխի Ա աղյուսակում, եւ

բ) ունեն դասին, դասակարգման ծածկագրին, փաթեթավորման խմբին, ինչպես նաեւ այլ կերպ չնշված դիրքի անվանմանն ու

նկարագրությանը համապատասխանող քիմիական, ֆիզիկական եւ (կամ) վտանգավոր հատկություններ.

«Անթափանցելի փաթեթվածք» նշանակում է այնպիսի փաթեթվածք, որտեղ չեն կարող ներթափանցել չոր պարունակությունները, այդ թվում՝ փոխադրման ժամանակ առաջացող կոշտ նյութերը.

«Անշարժ ցիստեռն» նշանակում է 1 000 լիտրից ավելի տարողությամբ ցիստեռն, որը մշտապես ամրացված է փոխադրամիջոցին (որը հետագայում դառնում է ավտոցիստեռն) կամ այդպիսի փոխադրամիջոցի հիմնակմախքի անբաժանելի մասն է.

«Անջրանցիկության փորձարկում» նշանակում է փորձարկում՝ ցիստեռնի, փաթեթվածքի կամ ՍՄԿ-ի կամ սարքավորման եւ փակիչ սարքերի անջրանցիկությունը որոշելու համար.

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Շարժական ցիստեռնների համար տե՛ս 6.7 գլուխը:*

«Աշխատանքային ճնշում» նշանակում է սեղմված գազի հաստատված ճնշում 15 °C էտալոնային ջերմաստիճանում՝ ճնշման տակ գտնվող լիքը տարայում.

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Ցիստեռնների համար տե՛ս «Առավելագույն աշխատանքային ճնշում»:*

«Ապահովիչ կափույր» նշանակում է զսպանակավոր սարք, որը մեխանիկորեն գործարկվում է ճնշման տակ եւ նպատակ ունի պաշտպանելու ցիստեռնն անընդունելի հավելյալ ներքին ճնշումից.

«Առավելագույն զտաքաշ» նշանակում է մեկ փաթեթվածքի պարունակության առավելագույն զտաքաշը կամ ներքին փաթեթվածքների ու դրանց պարունակության առավելագույն ընդհանուր քաշը՝ արտահայտված կիլոգրամներով.

«Առավելագույն թույլատրելի անգուտ քաշ (բրուտտո)»

ա) (ՍՄԿ-ների համար) նշանակում է ՍՄԿ-ի եւ ցանկացած օժանդակ կամ կառուցվածքային սարքավորումների քաշն առավելագույն զտաքաշի հետ մեկտեղ.

բ) (ցիստեռնների դեպքում) նշանակում է դատարկ ցիստեռնի քաշը եւ փոխադրման համար թույլատրված առավելագույն բեռնվածքը.

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Շարժական ցիստեռնների համար տե՛ս 6.7 գլուխը:*

«Առավելագույն աշխատանքային ճնշում (մանոմետրական ճնշում)» հետեւյալ երեք ճնշումներից ամենաբարձրը, որը կարող է ի հայտ գալ ցիստեռնի վերելի հատվածում՝



- ա) լցավորման ընթացքում ցիստեռնում թույլատրված ամենաբարձր արդյունավետ ճնշումը (լցավորման համար թույլատրված առավելագույն ճնշում)։
- բ) արտամղման ընթացքում ցիստեռնում թույլատրված ամենաբարձր արդյունավետ ճնշումը (արտամղման համար թույլատրված առավելագույն ճնշում) եւ
- գ) արդյունավետ մանոմետրական ճնշումը, որին ենթարկվում է ցիստեռնը դրա պարունակության ազդեցության ներքո (ներառյալ այն կողմնակի գազերը, որոնք այն կարող է պարունակել) առավելագույն աշխատանքային ջերմաստիճանի պայմաններում։

Եթե այլ բան չի նախատեսվում 4.3 գլխով սահմանված հատուկ պահանջներով, ապա այդ աշխատանքային ճնշման (մանոմետրական ճնշում) թվային արժեքը չպետք է ցածր լինի 50°C ջերմաստիճանում լցվող նյութի գոլորշու ճնշման մեծությունից (բացարձակ ճնշում)։

Ապահովիչ կափույրներ (պոկովի թաղանթով կամ առանց դրա) ունեցող ցիստեռնների դեպքում, բացի 2-րդ դասին պատկանող սեղմված, հեղուկ կամ լուծված գազերի փոխադրման համար ցիստեռններից, առավելագույն աշխատանքային ճնշումը (մանոմետրական ճնշում) պետք է, այնուամենայնիվ, հավասար լինի այդպիսի ապահովիչ կափույրների գործարկման ճնշման մեծությանը։

(Տե՛ս նաեւ «Հաշվարկային ճնշում», «Արտամղման ճնշում», «Լցավորման ճնշում» եւ «Փորձարկման ճնշում»)։

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1. Առավելագույն աշխատանքային ճնշումը կիրառելի չէ ինքնահոս եղանակով դադարկվող ցիստեռնների նկատմամբ՝ համաձայն 6.8.2.1.14 (ա)-ի։*

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2. Շարժական ցիստեռնների համար տե՛ս 6.7 գլուխը։*

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3. Կրիոգեն փակ տարաների համար տե՛ս 6.2.1.3.6.5-ի ծանոթագրությունը։*

«Առավելագույն տարողություն» նշանակում է տարաների կամ փաթեթվածքների, այդ թվում՝ սորուն բեռների համար նախատեսված միջին բեռնվածության կոնտեյներների (ՍՄԿ-ներ) եւ խոշոր փաթեթվածքների առավելագույն ներքին ծավալը՝ արտահայտված խորանարդ մետրերով կամ լիտրերով։

«Ավտոցիստեռն» նշանակում է փոխադրամիջոց, որով փոխադրվում են հեղուկներ, գազեր կամ փոշենման կամ հատիկավոր նյութեր, եւ բաղկացած է մեկ կամ մի քանի անշարժ ցիստեռններից։ Բացի մեքենայի հատուկ ընթացքային եւ այլ բաղադրիչներից՝

ավտոցիստեռնն ունի նաեւ մեկ կամ մի քանի կորպուսներ, սպասարկող սարքեր եւ դրանք փոխադրամիջոցին կամ ընթացքային մասին ամրացնելու կցամասեր.

«Արկղ» նշանակում է ուղղանկյուն կամ բազմանկյուն ամբողջական արտաքին տեսք ունեցող փաթեթվածք՝ պատրաստված մետաղից, փայտից, նրբատախտակից, վերամշակված փայտից, փայտաթելքային սալից, պլաստմասսայից կամ համապատասխան այլ նյութերից: Արկղի օգտագործումը կամ բացումը դյուրացնելու կամ դասակարգման պահանջները կատարելու նպատակով թույլատրվում է բացել փոքր անցքեր, եթե դրանք փոխադրման ընթացքում չեն խախտում փաթեթվածքի ամբողջականությունը.

«Արտամղման ճնշում» նշանակում է առավելագույն աստիճանի ճնշում, որին ենթարկվում է ցիստեռնը ճնշման տակ դատարկվելիս (տե՛ս նաեւ «Հաշվարկային ճնշում», «Լցավորման ճնշում», «Առավելագույն աշխատանքային ճնշում (մանոմետրական ճնշում)» եւ «Փորձարկման ճնշում»).

«Արտաքին փաթեթվածք» նշանակում է բարդ կամ համակցված փաթեթվածքի արտաքին պաշտպանություն. այն ներառում է ցանկացած կլանիչ, պաշտպանիչ նյութ եւ ցանկացած այլ տարր, որն անհրաժեշտ է ներքին տարաները կամ ներքին փաթեթվածքները պահելու եւ պաշտպանելու համար.

## Բ

«Բազմակի օգտագործման համար նախատեսված փաթեթվածք» նշանակում է այնպիսի փաթեթվածք, որն ստուգվել է եւ դրա արդյունքում բացառվել է այնպիսի թերությունների առկայությունը, որոնք կխոչընդոտեն շահագործման պիտանիության փորձարկումներն անցնելը: Եզրույթը ներառում է նաեւ այն փաթեթվածքները, որոնք վերալցավորվում են նույն կամ նման համարժեք պարունակությամբ եւ փոխադրվում են արտադրանքն առաքողի կողմից հսկվող բաշխման շղթաների շրջանակներում.

«Բազմակի օգտագործման համար նախատեսված խոշոր փաթեթվածք» նշանակում է խոշոր փաթեթվածք, որը նախատեսված է վերալցավորելու համար եւ ստուգվել ու բացառվել է դրանում այնպիսի թերությունների առկայությունը, որոնք կխոչընդոտեին շահագործման պիտանիության փորձարկումներն անցնելը. եզրույթը ներառում է նաեւ այն փաթեթվածքները, որոնք կրկին լցավորվում են նույն կամ նման համարժեք պարունակությամբ եւ փոխադրվում են արտադրանքն

առաքողի կողմից հսկվող բաշխման շղթաների շրջանակներով.

«Բալոն» նշանակում է շարժական, ճնշումային տարա, որի տարրողությունը չի գերազանցում 150 լիտրը (տե՛ս նաեւ «Բալոնների կապուկ»).

«Բալոնների կապուկ» նշանակում է միմյանց ամրացված բալոնների կոմպլեկտ, որոնք միակցված են բաշխիչ սարքի միջոցով եւ փոխադրվում են որպես մեկ միավոր: Ընդհանուր տարրողությունը չի գերազանցում 3 000 լիտրը՝ բացառությամբ 2-րդ դասի թունավոր գազերի փոխադրման համար նախատեսված կապուկների («T» տառով սկսվող խմբեր՝ 2.2.2.1.3-ին համապատասխան), որոնց տարրողունակությունը չպետք է գերազանցի 1 000 լիտրը.

«Բարդ ՍՄԿ պլաստմասսայից ներքին տարայով» նշանակում է կոշտ արտաքին պատյանով կառուցվածքային սարքավորումներ ունեցող ՍՄԿ, որում տեղադրված է պլաստմասսայից ներքին տարա ցանկացած տեսակի օժանդակ կամ այլ կառուցվածքային սարքավորումների հետ: Դա ունի այնպիսի կառուցվածք, որ կոմպլեկտավորված վիճակում ներքին տարան ու արտաքին պատյանը կազմում են մեկ միասնական միավոր եւ օգտագործվում (լցվում, պահվում, փոխադրվում կամ դատարկվում) են որպես մեկ ամբողջություն.

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. «Պլաստիկ նյութ» բարդ ՍՄԿ-ների ներքին տարաների հետ օգտագործվելիս ներառում է այլ պոլիմերային նյութեր, օրինակ՝ ռետին:*

«Բարդ փաթեթվածք» նշանակում է արտաքին փաթեթվածքից եւ ներքին տարայից փաթեթվածք, որն ունի այնպիսի կառուցվածք, որ ներքին տարան եւ արտաքին փաթեթվածքը կազմում են միասնական փաթեթվածք: Կոմպլեկտավորումից հետո այն դառնում է մեկ միասնական միավոր. դա լցվում, պահվում, փոխադրվում եւ դատարկվում է որպես մեկ ամբողջություն:

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Բարդ փաթեթվածքների համար օգտագործվող «ներքին տարա» եզրույթը չպետք է շփոթել համակցված փաթեթվածքների համար օգտագործվող «ներքին փաթեթվածք» եզրույթի հետ: Օրինակ՝ 6HA1 տիպի ներքին բաղադրիչը (պլաստիկ նյութ) այդպիսի ներքին տարա է, քանի որ այն սովորաբար նախատեսված չէ առանց իր արտաքին փաթեթվածքի տեղայնացման ֆունկցիա կատարելու համար, այդ իսկ պատճառով դա ներքին փաթեթվածք չի համարվում:*

Եթե նյութը «բարդ փաթեթվածք» եզրույթից հետո նշված է փակագծերի մեջ, ապա այն վերաբերում է ներքին տարային:

«Բաց կոնտեյների» համար տե՛ս «Կոնտեյներ».

«Բաց կրիոգեն տարա» նշանակում է այնպիսի սառեցված հեղուկացված գազերի համար նախատեսված շարժական, ջերմամեկուսիչ տարա, որոնք պահվում են մթնոլորտային ճնշման պայմաններում՝ սառեցված-հեղուկացված գազի ճնշումն անընդհատ նվազեցնելու միջոցով.

«Բաց փոխադրամիջոց» նշանակում է տրանսպորտային միջոց, որի հարթակը չունի վերին հատված կամ պարզապես ունի կողային եւ հետեւի եզրեր.

«Բացառիկ օգտագործում» ռադիոակտիվ նյութերի փոխադրման դեպքում նշանակում է միայն մեկ բեռնառաքողի կողմից այնպիսի փոխադրամիջոցի կամ մեծ կոնտեյնների օգտագործում, որի նկատմամբ բոլոր սկզբնական, միջանկյալ եւ վերջնական բեռնման ու բեռնաթափման, ինչպես նաեւ առաքման աշխատանքներն իրականացվում են բեռնառաքողի կամ բեռն ստացողի ցուցումներին համապատասխան, եթե այդպես է պահանջվում «ԱԴԴ» համաձայնագրով.

«Բեռ» նշանակում է վտանգավոր բեռների ցանկացած փաթեթ կամ փաթեթներ կամ բեռնվածք, որը բեռնառաքողի կողմից հանձնված է փոխադրման համար.

«Բեռն ստացող» նշանակում է բեռն ստացող՝ փոխադրման պայմանագրին համապատասխան: Եթե բեռն ստացողը նշանակում է երրորդ անձ՝ փոխադրման պայմանագրի նկատմամբ կիրառելի դրույթներին համապատասխան, ապա այդ անձը համարվում է բեռն ստացող՝ «ԱԴԴ» համաձայնագրի իմաստով: Եթե փոխադրման գործողությունն իրականացվում է առանց փոխադրման պայմանագրի, ապա ժամանման պահից վտանգավոր բեռների համար պատասխանատվություն ստանձնող ձեռնարկությունը համարվում է բեռն ստացող.

«Բեռնաթափող» նշանակում է ցանկացած ձեռնարկություն, որը՝

- ա) փոխադրամիջոցից բեռնաթափում է կոնտեյները, սորուն բեռների համար նախատեսված կոնտեյները, ԳԲՏԿ-ն, ցիստեռն-կոնտեյները կամ շարժական ցիստեռնը. կամ
- բ) փոխադրամիջոցից կամ կոնտեյներից բեռնաթափում է փաթեթավորված վտանգավոր բեռներ, փոքր կոնտեյներներ կամ շարժական ցիստեռններ. կամ
- գ) բեռնաթափում է վտանգավոր բեռներ ցիստեռնից (ավտոցիստեռնից, հանովի ցիստեռնից, շարժական ցիստեռնից կամ ցիստեռն-կոնտեյներից) մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցից, ՊԱՇՄ-ից կամ ԳԲՏԿ-ից կամ խուռնաբեռն

փոխադրման համար նախատեսված մեծ կոնտեյներից, փոքր կոնտեյներից կամ սորուն բեռների համար նախատեսված կոնտեյներից.

«Բեռնաթափում» նշանակում է «բեռնաթափող» եզրույթի սահմանմանը համապատասխան բեռնաթափողի կողմից իրականացվող բոլոր գործողությունները:

«Բեռնառաքող» նշանակում է այն ձեռնարկությունը, որն առաքում է վտանգավոր բեռները իր իսկ անունից կամ երրորդ անձի փոխարեն: Եթե փոխադրման գործողությունն իրականացվում է փոխադրման պայմանագրի համաձայն, բեռնառաքող նշանակում է բեռնառաքող՝ փոխադրման պայմանագրին համապատասխան.

«Բեռնատար տրանսպորտային միավոր» նշանակում է փոխադրամիջոց, վագոն, կոնտեյներ, ցիստեռն-կոնտեյներ, շարժական ցիստեռն կամ ԳՐՏԿ.

«Բեռնման-բեռնաթափման սարք» (փափուկ ՍՄԿ-ների դեպքում) նշանակում է ՍՄԿ-ի հենամարմնին ամրացված կամ ՍՄԿ-ի հենամարմնի նյութից բեռնամբարձ ճուպան, օղակ, ունկ կամ բռնիչ.

«Բեռնող» նշանակում է ցանկացած ձեռնարկություն, որը՝

- ա) փոխադրամիջոցի կամ կոնտեյների մեջ կամ դրա վրա բեռնում է փաթեթավորված վտանգավոր բեռներ, փոքր կոնտեյներներ կամ շարժական ցիստեռններ, կամ
- բ) փոխադրամիջոցի վրա է բեռնում կոնտեյներ, սորուն բեռների համար նախատեսված կոնտեյներ, ԳՐՏԿ, ցիստեռն-կոնտեյներ կամ շարժական ցիստեռն.

«Բեռնում» նշանակում է «բեռնող» եզրույթի սահմանմանը համապատասխան բեռնողի կողմից իրականացվող բոլոր գործողությունները:

«Բռնկման ջերմաստիճան» նշանակում է հեղուկի նվազագույն ջերմաստիճանը, որում հեղուկի գոլորշիներն օդի հետ առաջացնում են դյուրավառ խառնուրդներ.

«Բրեզենտից ծածկով կոնտեյների» համար տե՛ս «Կոնտեյներ».

«Բրեզենտից ծածկով փոխադրամիջոց» նշանակում է բաց տրանսպորտային միջոց, որը բեռը պաշտպանելու համար ծածկված է բրեզենտով.

Գ

«Գազ» նշանակում է նյութ, որը՝

ա) 50 օC ջերմաստիճանում 300 կՊա (3 բար)-ից ավելի գուրորշու ճնշում ունի, կամ

բ) լրիվ գազային է 20 օC ջերմաստիճանում եւ 101.3 կՊա ստանդարտ ճնշման պայմաններում.

«Գազ պարունակող փոքր տարա (գազի անոթ)» նշանակում է չվերալցավորվող տարա, որը մետաղից պատրաստված տարաների դեպքում ունի 1000 մլ-ից ոչ ավելի տարողություն, իսկ սինթետիկ նյութից կամ ապակուց պատրաստված տարաների դեպքում՝ 500 մլ-ից ոչ ավելի տարողություն եւ ճնշման տակ պարունակում է գազ կամ գազախառնուրդ: Այն կարող է կափույր ունենալ.

«Գազի անոթ»՝ տե՛ս «գազ պարունակող փոքր տարա».

«Գազի բազմատարր կոնտեյներ» (ԳԲՏԿ) նշանակում է այնպիսի տարրեր պարունակող միավոր, որոնք միմյանց միանում են բաշխիչ սարքի միջոցով եւ տեղադրվում են հիմնականախթի մեջ: Հետեւյալ տարրերը համարվում են գազի բազմատարր կոնտեյների տարրեր՝ բալոններ, գլաններ, ճնշումային թմբկազլաններ կամ բալոնների կապուկներ, ինչպես նաեւ 2.2.2.1.1-ով սահմանված՝ 450 լիտրից ավելի տարողությամբ ցիստեռններ նախատեսված գազերի փոխադրման համար.

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. ՄԱԿ-ի կողմից սահմանված պահանջներին համապատասխանող ԳԲՏԿ-ների համար տե՛ս 6.7 գլուխը:*

«ԳԲՏԿ»՝ տե՛ս «Գազի բազմատարր կոնտեյներ».

«Գլան» (2-րդ դաս) նշանակում է ամբողջաձիգ կամ բարդ կառուցվածք ունեցող ճնշումային տեղափոխելի տարա, որն ունի 150 լիտրը գերազանցող, բայց 3000 լիտրից ոչ ավելի տարողություն.

Դ

«Դյուրավառ բաղադրիչ» (աերոզոլների համար) նշանակում է դյուրավառ հեղուկներ, դյուրավառ պինդ նյութեր կամ դյուրավառ գազեր ու գազային խառնուրդներ, ինչպես սահմանված է «Փորձարկումների եւ չափորոշիչների ձեռնարկ»-ի III մասի 31.1.3-ի 1-3-րդ ծանոթագրություններում: Այս անվանման մեջ չեն ներառվում հրակիր, ինքնատաքացող կամ ջրի հետ ռեակցիայի մեջ մտնող նյութերը: Այրման քիմիական ջերմությունը որոշվում է հետեւյալ մեթոդներից որեւէ մեկով՝ ASTM D 240, ISO/FDIS 13943:1999 (E/F) 86.1 - 86.3 կամ NFPA 30B.

Ե

«ԵՀ հրահանգ» նշանակում է Եվրոպական համայնքի իրավասու կառույցների կողմից սահմանված դրույթներ, որոնք արդյունքի ապահովման առումով պարտադիր են յուրաքանչյուր անդամ պետության համար, որին այն հասցեագրված է, սակայն դրանց իրականացման ձեերի եւ մեթոդների ընտրության իրավունքը պատկանում է ազգային մարմիններին.

«ԵՄՄ» (UIC) նշանակում է Երկաթուղագծերի միջազգային միություն (UIC, 16 rue Jean Rey, F-75015 Paris, France)

«ԵՆ» (ստանդարտ) նշանակում է Ստանդարտացման եվրոպական կոմիտեի (ՍԵՆ) կողմից հրապարակված եվրոպական ստանդարտ (CEN, Avenue Marnix 17, B-1000 Brussels).

«ԵՏՀ կանոնակարգ» նշանակում է կանոնակարգ՝ կցված «Անվավոր փոխադրամիջոցների վրա ամրացվող եւ (կամ) օգտագործվող՝ անվավոր փոխադրամիջոցների սարքավորումներին եւ մասերին վերաբերող միասնական տեխնիկական հրահանգներ ընդունելու եւ այդ հրահանգների հիման վրա տրված թույլտվությունները փոխադարձաբար ճանաչելու պայմանների վերաբերյալ» համաձայնագրին (1958 թվականի համաձայնագիր՝ փոփոխված).

«ԵՓԿ» (CIM) նշանակում է Երկաթուղային տրանսպորտով բեռների միջազգային փոխադրումների մասին պայմանագրի վերաբերյալ միասնական կանոններ (Երկաթուղային տրանսպորտով միջազգային փոխադրումների վերաբերյալ կոնվենցիային կից Բ հավելված ((COTIF))՝ փոփոխության ենթարկված.

Զ

«Զուտ պայթուցիկ զանգված (ԶՊԶ)» նշանակում է պայթուցիկ նյութերի ընդհանուր զանգվածը՝ առանց փաթեթվածքների, պատյանների, եւ այլն: («Զուտ պայթուցիկ քանակ (ԶՊՔ)», «զուտ պայթուցիկ պարունակություն (ԶՊՊ)», «զուտ պայթուցիկ քաշ (ԶՊԶ)» կամ «պայթուցիկ պարունակության զուտ զանգված» եզրույթները սովորաբար օգտագործվում են նույն միտքն արտահայտելու համար).

Ը

«Ընդկալ» (1-ին դաս) նշանակում է մետաղ, պլաստմասսա, փայտաթելքային սալ կամ որեւէ այլ համապատասխան նյութ, որը դրվում է ներքին, միջանկյալ կամ արտաքին փաթեթվածքի մեջ՝ այդպիսի փաթեթվածքի սեղմ ամրակցումն ապահովելու համար: Ընդկալը կարող է ունենալ այնպիսի ձեւ, որ հնարավոր լինի տեղավորել փաթեթվածքներ կամ պատրաստվածքներ, պահել դրանք ապահով եւ միմյանցից առանձնացված վիճակում.

Թ

«Թափոններ» նշանակում է այնպիսի նյութեր, լուծույթներ, խառնուրդներ կամ պատրաստվածքներ, որոնք նախատեսված չեն անմիջական կիրառության համար, բայց որոնք տեղափոխվում են վերամշակման, աղբաթափության, այրման կամ այլ միջոցներով աղբահեռացման նպատակով:

«Թափոնների վակուումային ցիստեռն» նշանակում է անշարժ ցիստեռն, հանովի ցիստեռն, ցիստեռն-կոնտեյներ կամ հանովի թափք ցիստեռն, որոնք հիմնականում օգտագործվում են վտանգավոր թափոնների տեղափոխման համար եւ ունեն հատուկ կոնստրուկցիոն հատկություններ եւ (կամ) սարքավորումներ, որոնք հեշտացնում են թափոնների լցավորումը եւ դատարկումը, ինչպես սահմանված է 6.10 գլխում: 6.7 կամ 6.8 գլխի պահանջները լիովին բավարարող ցիստեռնը չի համարվում թափոնների վակուումային ցիստեռն:

«Թեթեւ մետաղյա փաթեթվածք» նշանակում է շրջանաձեւ, էլիպսաձեւ, ուղղանկյուն կամ բազմանկյուն լայնական հատումով (նաեւ՝ կոնաձեւ) եւ նեղացող ու լայնացող բերանով մետաղյա փաթեթվածք, որն ունի առավելագույնը 0,5մմ հաստությամբ պատեր (օրինակ՝ թիթեղ), հարթ կամ ուռուցիկ հատակ եւ մեկ կամ մի քանի անցքեր, եւ որն ընդգրկված չէ թմբկազլանների կամ կանխատրների սահմանումներում:

«Թմբկազլան» նշանակում է հարթ կամ ուռուցիկ զլանաձեւ փաթեթվածք՝ պատրաստված մետաղից, փայտաթելքային սալից, պլաստմասսայից, նրբատախտակից կամ համապատասխան այլ նյութերից: Այդ սահմանումը վերաբերում է նաեւ այլ ձեւեր ունեցող փաթեթվածքներին, օրինակ՝ կլոր, նեղացող կամ լայնացող բերանով փաթեթվածքներ: Այդ սահմանման մեջ չեն ներառվում փայտե տակառները եւ կանխատրները:

«Թույլատրելի առավելագույն բեռնվածություն» (փափուկ ՍՄԿ-ների համար) նշանակում է առավելագույն զտաքաշը, որի համար նախատեսված է ՍՄԿ-ն, եւ որի փոխադրումը թույլատրվում է:

«Թույլտվություն»՝

Բազմակողմանի թույլտվություն՝ ռադիոակտիվ նյութերի փոխադրման դեպքում նշանակում է թույլտվություն՝ տրված կառուցվածքի ծագման երկրի կամ առաքող երկրի համապատասխան իրավասու մարմնի եւ այն երկրների իրավասու մարմինների կողմից, որոնց տարածքով կամ որոնց տարածք պետք է փոխադրվի բեռը:

Միակողմանի թույլտվություն՝ ռադիոակտիվ նյութերի փոխադրման դեպքում նշանակում է կառուցվածքի հաստատում, որը պետք է տրվի միայն կառուցվածքի ծագման երկրի իրավասու մարմնի կողմից: Եթե ծագման երկիրը «ԱԴԴ» համաձայնագրի Պայմանավորվող կողմ չէ, ապա թույլտվությունը պետք է հաստատվի «ԱԴԴ» համաձայնագրի



Պայմանավորվող կողմ հանդիսացող այն երկրի իրավասու մարմնի կողմից, որի տարածք հասնում է բեռը (տե՛ս 6.4.22.8).

Ի

«ԻԱՊՁ» եզրույթի համար տե՛ս «Ինքնաարագացող պոլիմերացման ջերմաստիճան».

«ԻԿԱՕ» նշանակում է Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպություն (ICAO, 999 University Street, Montreal, Quebec H3C 5H7, Canada).

«ԻԿԱՕ-ի տեխնիկական ցուցումներ» նշանակում է Օդով վտանգավոր բեռների անվտանգ փոխադրման տեխնիկական ցուցումներ, որոնք լրացնում են Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության (ԻԿԱՕ) կողմից Մոնրեալում հրապարակված՝ «Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին» Չիկագոյի կոնվենցիային (Չիկագո, 1944թ.) կից 18-րդ հավելվածը.

«Ինքնաարագացող պոլիմերացման ջերմաստիճան (ԻԱՊՁ)» նշանակում է ամենացածր ջերմաստիճանը, որի պայմաններում փոխադրման համար առաջարկված փաթեթվածքի, ՍՄԿ-ի կամ ցիստեռնի մեջ դրված նյութի հետ կարող է տեղի ունենալ ինքնաարագացող պոլիմերացում: ԻԱՊՁ-ն որոշվում է ինքնառեակտիվ նյութերի դեպքում ինքնաարագացող տրոհման ջերմաստիճանի համար սահմանված փորձարկման ընթացակարգերին համապատասխան՝ համաձայն «Փորձարկումների եւ չափորոշիչների ձեռնարկ»-ի II մասի 28-րդ բաժնի:

«Ինքնաարագացող տրոհման ջերմաստիճան» (ԻՏՋ) նշանակում է ամենացածր ջերմաստիճանը, որի պայմաններում փոխադրման ժամանակ օգտագործվող փաթեթվածքի մեջ դրված նյութի հետ կարող է տեղի ունենալ ինքնաարագացող տրոհում: Հերմետիկ պայմաններում ԻՏՋ-ն եւ տաքացման ազդեցությունը որոշելու միջոցների մասին կարելի է գտնել «Փորձարկումների եւ չափորոշիչների ձեռնարկ»-ի II մասում.

«ISO» (ստանդարտ) նշանակում է Ստանդարտացման միջազգային կազմակերպության (ISO) կողմից հրապարակված միջազգային ստանդարտ (ISO-1, rue de Varembe.CH-1204 Geneva 20).

«ԻՏՋ-ի» համար տե՛ս «Ինքնաարագացող տրոհման ջերմաստիճանը».

«Իրավասու մարմին» նշանակում է պետական մարմին կամ մարմիններ կամ ցանկացած այլ մարմին կամ մարմիններ՝ որպես այդպիսին նշանակված յուրաքանչյուր պետությունում եւ յուրաքանչյուր հատուկ դեպքում՝ ներպետական իրավունքին համապատասխան.

Լ

«Լրիվ բեռնվածք» նշանակում է մեկ բեռնառաքողից ծագող ցանկացած բեռնվածք, որի համար օգտագործվում է բացառապես մեկ փոխադրամիջոց կամ մեծ կոնտեյներ, եւ որի բեռնման ու բեռնաթափման աշխատանքներն իրականացվում են բեռնառաքողի կամ բեռն ստացողի ցուցումներին համապատասխան.

«Լցավորող» նշանակում է ցանկացած ձեռնարկություն, որը վտանգավոր բեռները լցնում է ցիստեռնի (ավտոցիստեռն, հանովի ցիստեռն, շարժական ցիստեռն կամ ցիստեռն-կոնտեյներ) եւ (կամ) փոխադրամիջոցի, խուռնաբեռն փոխադրման համար նախատեսված մեծ կամ փոքր կոնտեյների կամ մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցի կամ ԳԲՏԿ-ի մեջ.

«Լցավորման գործակից» նշանակում է 15 °C ջերմաստիճանում գազի զանգվածի հարաբերակցությունը ջրի զանգվածին, որն ամբողջությամբ կլցնի ճնշման տակ գտնվող, օգտագործման համար պատրաստ տարան.

«Լցավորման ճնշում» նշանակում է ճնշման առավելագույն աստիճան, որին ենթարկվում է ցիստեռնը ճնշման տակ լցավորվելիս (տե՛ս նաեւ «Հաշվարկային ճնշում», «Արտամղման ճնշում», «Առավելագույն աշխատանքային ճնշում (մանոմետրական ճնշում)» եւ «Փորձարկման ճնշում»).

Խ

«Խոշոր փաթեթվածք» նշանակում է փաթեթվածք՝ բաղկացած արտաքին փաթեթվածքից, որը պարունակում է պատրաստվածքներ կամ ներքին փաթեթվածքներ, եւ որը՝

- ա) նախատեսված է մեխանիկական միջոցներով բեռնավորման-բեռնաթափման համար.
- բ) գերազանցում է 400 կգ զուտ քաշը կամ 450 լիտր տարողությունը, սակայն ունի 3 մ<sup>3</sup>-ից պակաս ծավալ.

«Խոշոր վթարային փաթեթվածք» նշանակում է հատուկ փաթեթվածք, որը՝

- ա) նախատեսված է մեխանիկական միջոցներով բեռնավորման-բեռնաթափման համար, եւ
- բ) գերազանցում է 400 կգ զուտ քաշը կամ 450 լիտր տարողությունը, սակայն ունի 3 մ<sup>3</sup>-ից պակաս ծավալ.

որտեղ տեղադրվում են վտանգավոր բեռներ պարունակող վնասված, խոտանված կամ արտահոսած փաթեթները կամ թափված կամ արտահոսած վտանգավոր բեռները՝ վերականգնման կամ հեռացման

նպատակով փոխադրելու համար.

«Խուռնաբեռն փոխադրում» նշանակում է չփաթեթավորված պինդ նյութերի կամ պատրաստվածքների փոխադրում փոխադրամիջոցներով, կոնտեյներներով կամ սորուն բեռների համար նախատեսված կոնտեյներներով: Եզրույթը չի կիրառվում փաթեթավորված բեռների եւ ցիստեռններով փոխադրվող նյութերի նկատմամբ.

Ծ

«ԾՄԿ» նշանակում է Ծովագնացության միջազգային կազմակերպություն (IMO, 4 Albert Embankment, London SE1 7SR, United Kingdom).

Կ

«Կազմակերպություն» տե՛ս «Ձեռնարկություն».

«Կանխսոր» նշանակում է ուղղանկյուն կամ բազմանկյուն, մետաղյա կամ պլաստմասսայից փաթեթվածք՝ մեկ կամ մի քանի անցքերով.

«Կառավարման համակարգ»՝ ռադիոակտիվ նյութերի փոխադրման դեպքում նշանակում է փոխկապակցված կամ փոխազդող տարրերի ամբողջություն (համակարգ), որով սահմանվում են քաղաքականություններ եւ նպատակներ, ինչպես նաեւ ստեղծվում է այդ նպատակներին արդյունավետ եւ էֆեկտիվ ձեւով հասնելու հնարավորություն.

«Կառուցվածք»՝ ռադիոակտիվ նյութերի փոխադրման դեպքում նշանակում է 2.2.7.2.3.5 (գ)-ով բացառված տրոհվող նյութի, հատուկ տեսակի ռադիոակտիվ նյութի, տարածման ցածր հատկությամբ ռադիոակտիվ նյութի, փաթեթի կամ փաթեթվածքի նկարագրությունը, որը հնարավորություն է տալիս լիովին դրանք տարբերակելու: Նման նկարագրությունը կարող է ընդգրկել տեխնիկական մասնագրեր, ինժեներատեխնիկական գծագրեր, նորմատիվ պահանջներին համապատասխանությունը հաստատող հաշվետվություններ եւ համապատասխան այլ փաստաթղթեր.

«Կառուցվածքային սարքավորումներ»

- ա) ցիստեռնը՝ ավտոցիստեռնի կամ հանովի ցիստեռնների դեպքում նշանակում է կորպուսի մաս կազմող ուժեղացման, ամրացման, պաշտպանիչ կամ կայունացման արտաքին կամ ներքին սարքեր.
- բ) ցիստեռնը՝ ցիստեռն-կոնտեյների դեպքում նշանակում է կորպուսի մաս կազմող ուժեղացման, ամրացման, պաշտպանիչ կամ կայունացման արտաքին կամ ներքին սարքեր.

- գ) մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցի կամ ԳԲՏԿ-ի մասերի դեպքում նշանակում է կորպուսի կամ տարայի մաս կազմող ուժեղացման, ամրացման, պաշտպանիչ կամ կայունացման արտաքին կամ ներքին սարքեր.
- դ) փափուկ ՍՄԿ-ներից բացի այլ ՍՄԿ-ների դեպքում նշանակում է հենամարմնի մաս կազմող ուժեղացման, ամրացման, շահագործման, պաշտպանիչ կամ կայունացման հենամարմիններ (ներառյալ՝ պլաստմասսայից ներքին տարա ունեցող բարդ ՍՄԿ-ների համար նախատեսված տակդիր).

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Շարժական ցիսլոնների համար տե՛ս 6.7 գլուխը:*

«Կավարամած» նշանակում է ոչ ամբողջական մակերեսով արտաքին փաթեթվածք.

«Կենդանական ծագման հումք» նշանակում է կենդանու մսեղիք, կենդանու մարմնի մասեր կամ կենդանական ծագման սննդամթերք.

«Կոճ» (1-ին դաս) նշանակում է պլաստմասսայից, փայտից, փայտաթելքային սալից, մետաղից կամ համապատասխան այլ նյութից պատրաստված սարք, որն ունի կենտրոնական իլ, որը յուրաքանչյուր կողմից ունի կամ չունի կողապատեր: Պատրաստվածքները եւ նյութերը կարող են փաթաթվել իլի վրա եւ պահվել կողապատերով.

«Կոնտեյներ» նշանակում է տրանսպորտային սարքավորման մաս (վանդակ կամ նմանատիպ այլ կառուցվածք), որը՝

- նախատեսված է երկարաժամկետ օգտագործման համար, ուստի բավարար չափով ամուր է՝ բազմիցս օգտագործվելու համար.
- հատուկ նախատեսված է առանց միջանկյալ բեռնաթափման մեկ կամ մի քանի տրանսպորտային միջոցով բեռների փոխադրումը դյուրացնելու համար.
- ունի դրա տեղավորման ու օգտագործման համար հարմար սարքեր, մասնավորապես՝ մեկ տրանսպորտային միջոցից մեկ այլ տրանսպորտային միջոց վերաբեռնվելիս.
- ունի այնպիսի կառուցվածք, որն ապահովում է դրա դյուրին լցավորումն ու դատարկումը.
- ունի ոչ պակաս, քան 1մ<sup>3</sup> ներքին ծավալ՝ բացառությամբ ռադիոակտիվ նյութեր փոխադրելու համար նախատեսված կոնտեյներների:

Բացի այդ՝

«Փոքր կոնտեյներ» նշանակում է կոնտեյներ, որի ներքին ծավալը 3 մ<sup>3</sup>-ից ավելի չէ.

«Մեծ կոնտեյներ» նշանակում է՝

ա) կոնտեյներ, որը չի համապատասխանում փոքր կոնտեյների սահմանման պահանջներին.

բ) ԱԿԿ-ի իմաստով՝ կոնտեյներ, որի արտաքին ստորին անկյունների միջուց ընկած մակերեսը կազմում է՝

i) առնվազն 14 մ<sup>2</sup> (150 քառակուսի ոտնաչափ), կամ

ii) առնվազն 7 մ<sup>2</sup> (75 քառակուսի ոտնաչափ)՝ վերին անկյունային կցամասի առկայության դեպքում.

«Փակ կոնտեյներ» նշանակում է ամբողջովին փակված կոնտեյներ՝ ամուր ծածկով, ամուր կողապատերով, ամուր ճակատային պատերով եւ հատակով: Եզրույթը վերաբերում է նաեւ բաց ծածկով կոնտեյներներին, եթե ծածկը կարող է փակվել փոխադրման ընթացքում.

«Բաց կոնտեյներ» նշանակում է ծածկ չունեցող կոնտեյներ կամ հարթակով կոնտեյներ.

«Բրեզենտից ծածկով կոնտեյներ» նշանակում է բաց կոնտեյներ, որը բեռը պաշտպանելու համար ծածկվում է բրեզենտով.

«Հանովի թափքը» կոնտեյներ է, որը EN 283:1991 ստանդարտին համապատասխան ունի հետեւյալ հատկանիշները՝

- մեխանիկական ամրության տեսակետից այն կառուցված է միայն վազոնների կամ ցամաքային փոխադրամիջոցների վրա կամ ro-ro տեսակի նավերով փոխադրման համար.
- այն չի կարող դարսակվել.
- այն կարելի է անջատել փոխադրամիջոցներից փոխադրամիջոցում գտնվող սարքավորումների միջոցով եւ իր իսկ հենակներով ու կրկին միացնել.

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. «Կոնտեյներ» եզրույթը չի ներառում սովորական փաթեթվածքները, ՍՄԿ-ները, ցիստեռն-կոնտեյներները կամ փոխադրամիջոցները: Այնուամենայնիվ, կոնտեյները կարող է օգտագործվել որպես փաթեթվածք՝ ռադիոակտիվ նյութեր փոխադրելու համար:*

«Կոշտ ներքին տարա» (բարդ ՍՄԿ-ներ) նշանակում է տարա, որը դատարկ վիճակում պահում է իր սկզբնական ձեւը՝ չունենալով փականներ եւ արտաքին պատյան: Ցանկացած ներքին տարա, որը «կոշտ» չէ, համարվում է «փափուկ»:

«Կոշտ պլաստմասսայից ՍՄԿ» նշանակում է կոշտ պլաստմասսայից հենամարմին, որը կարող է ունենալ կառուցվածքային եւ օժանդակ սարքավորումներ:

«Կոշտ ՍՄԿ-ների ընթացիկ տեխնիկական սպասարկման» համար տե՛ս «Սորուն բեռների համար նախատեսված միջին բեռնվածության կոնտեյները (ՍՄԿ)»:

«Կորպուս» (ցիստեռնների դեպքում) նշանակում է ցիստեռնի այն մասը, ներառյալ՝ բացվածքները եւ դրանց փականները, որտեղ պահվում են փոխադրման համար նախատեսված նյութերը, որը սակայն չի պարունակում օժանդակ սարքավորումներ կամ արտաքին կառուցվածքային սարքավորումներ:

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Շարժական ցիստեռնների համար տե՛ս 6.7 գլուխը:*

«Կորպուսի կամ կորպուսի հատվածամասի տարողություն» ցիստեռնների դեպքում նշանակում է կորպուսի կամ կարկասի հատվածամասի տարողության ընդհանուր ներքին ծավալը՝ արտահայտված լիտրերով կամ խորանարդ մետրերով: Եթե անհնար է ամբողջությամբ լցնել կորպուսը կամ կորպուսի հատվածամասը՝ դրա ձեւի կամ կառուցվածքի առանձնահատկություններից ելնելով, ապա այդ նվազեցված տարողությունը պետք է օգտագործվի լցավորման աստիճանը որոշելու եւ ցիստեռնի մակնշման համար:

«Կրիոգեն տարա» նշանակում է սառեցված-հեղուկացված գազերի համար նախատեսված շարժական, ջերմամեկուսիչ, ճնշումային տարա, որի տարողությունը չի գերազանցում 1 000 լիտրը (տե՛ս նաեւ «Բաց կրիոգեն տարա»):

«Կրիտիկական ջերմաստիճան» նշանակում է այնպիսի ջերմաստիճան, որից ավելի բարձր պայմաններում նյութը չի կարող գոյություն ունենալ հեղուկ վիճակում:

«Կրիտիկականության տեսակետից անվտանգության ինդեքս (ԿԱԻ)՝ սահմանված տրոհվող նյութ պարունակող փաթեթի, տրանսպորտային կապոցի կամ կոնտեյների համար» ռադիոակտիվ նյութերի փոխադրման դեպքում նշանակում է այնպիսի թիվ, որն օգտագործվում է տրոհվող նյութ պարունակող փաթեթների, տրանսպորտային կապոցների կամ կոնտեյներների ընդհանուր թիվը սահմանափակելու նպատակով:

<

«Համակցված փաթեթվածք» նշանակում է փոխադրման համար նախատեսված փաթեթվածքների համակցում, որի մեջ մտնում են արտաքին փաթեթվածքով մեկ կամ մի քանի ներքին փաթեթվածքներ՝ 4.1.1.5-ին համապատասխան.

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Համակցված փաթեթվածքների համար օգտագործվող «ներքին փաթեթվածք» եզրույթը չպետք է շփոթել բարդ փաթեթվածքների համար օգտագործվող «ներքին տարա» եզրույթի հետ:*

«Համապատասխանության ապահովում» (ռադիոակտիվ նյութեր) նշանակում է իրավասու մարմնի կողմից կիրառվող միջոցների համակարգված ծրագիր, որը նպատակ ունի ապահովելու «ԱԴՌ» համաձայնագրի պահանջների գործնականում կատարումը.

«Համապատասխանության գնահատում» նշանակում է արտադրանքի համապատասխանության ստուգման գործընթաց՝ 1.8.6-ի եւ 1.8.7-ի դրույթներին համապատասխան՝ կապված դրա տեսակի հաստատման, արտադրության հսկողության եւ նախնական ստուգման ու փորձարկման հետ.

«Հայտ ներկայացնող» համապատասխանության գնահատման դեպքում նշանակում է արտադրող կամ դրա լիազոր ներկայացուցիչը Պայմանավորվող կողմ հանդիսացող երկրում: Պարբերական, միջանկյալ ստուգումների եւ բացառիկ բնույթ կրող ստուգումների դեպքում «Հայտ ներկայացնող» նշանակում է փորձարկման օբյեկտ, օպերատոր կամ նրանց լիազոր ներկայացուցիչը Պայմանավորվող կողմ հանդիսացող երկրում.

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Բացառիկ դեպքերում որեւէ երրորդ անձ (օրինակ՝ ցիստեռն-կոնտեյնների օպերատոր՝ 1.2.1-ի սահմանմանը համապատասխան) կարող է հայտ ներկայացնել համապատասխանության գնահատման համար:*

«Հանովի թափք»՝ տե՛ս «Կոնտեյներ».

«Հանովի թափք-ցիստեռնը»-ը համարվում է ցիստեռն-կոնտեյներ.

«Հանովի ցիստեռն» նշանակում ցիստեռն՝ բացի ավելի քան 450 լիտր տարողությամբ ներկառուցված ցիստեռնից, շարժական ցիստեռնից, ցիստեռն-կոնտեյններից կամ մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցի կամ ԳՔՏԿ-ի տարրից, որը նախատեսված չէ բեռների փոխադրման համար՝ առանց բեռնաթափման, եւ սովորաբար ենթարկվում է մշակման միայն դատարկ վիճակում.

«Հաշվարկային ճնշում» նշանակում է այնպիսի տեսական մեծություն, որն առնվազն հավասար է փորձարկման ճնշման մեծությանը, եւ որը,

փոխադրվող նյութի վտանգավորության աստիճանին համապատասխան, կարող է ավելի կամ պակաս լինել աշխատանքային ճնշման մեծությունից: Դա օգտագործվում է միայն կորպուսի պատերի հաստությունը որոշելու համար՝ անկախ ամրացման արտաքին կամ ներքին միջոցներից (տե՛ս նաեւ «Արտամղման ճնշում», «Լցավորման ճնշում», «Առավելագույն աշխատանքային ճնշում (մանոմետրական հավելյալ ճնշում)» եւ «Փորձարկման ճնշում»):

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Շարժական ցիստերնների համար տե՛ս 6.7 գլուխը:*

«Հաստատված ճնշում» նշանակում է ճնշումային տարայի պարունակության ճնշում, որը գտնվում է ջերմային եւ դիֆուզային հավասարակշռության վիճակում.

«Հավաքական դիրք» նշանակում է այնպիսի դիրք, որում ընդգրկվում են սահմանված խմբի նյութեր կամ պատրաստվածքներ (տե՛ս 2.1.1.2, Բ, Գ եւ Դ).

«Հեղուկ» նշանակում է նյութ, որը 50°C ջերմաստիճանում ունի առավելագույնը 300 կՊա (բար) գոլորշու ճնշում, 20°C ջերմաստիճանում եւ 101.3 կՊա ճնշման պայմաններում լրիվ գազային չէ, եւ որի՝

- ա) հալման ջերմաստիճանը կամ հալման սկզբնական ջերմաստիճանը 20 °C է կամ ավելի պակաս 101.3 կՊա ճնշման պայմաններում, կամ
- բ) հեղուկ է՝ ըստ ASTM D 4359-90 փորձարկման մեթոդի, կամ
- գ) մածուցիկ չէ՝ համաձայն 2.3.4-ում նկարագրված՝ հոսունությունը որոշելու (կակղաչափով փորձարկում) նպատակով փորձարկման նկատմամբ կիրառելի չափորոշիչների.

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. «Հեղուկ վիճակում փոխադրում» ցիստերնի նկարմամբ ներկայացվող պահանջների նպատակներով նշանակում է՝*

- հեղուկ նյութերի փոխադրում՝ նշված սահմանմանը համապատասխան, կամ
- հալեցված վիճակում փոխադրման համար հանձնված պինդ նյութեր.

«Հեղուկացված բնական գազ (ՀԲԳ)» նշանակում է սառեցված հեղուկացված գազ, որը բաղկացած է ՄԱԿ-ի նազարման 1972 համարի ներքո դասակարգված մեթանի բարձր պարունակությամբ բնական գազից:

«Հեղուկացված նավթային գազ (ՀՆԳ)» նշանակում է ցածր ճնշման



հեղուկացված գազ, որը բաղկացած է ՄԱԿ-ի նշագրման միայն 1011, 1075, 1965, 1969 կամ 1978 համարների ներքո դասակարգված մեկ կամ մեկից ավելի թեթև ածխաջրածիններից եւ հիմնականում պարունակում է պրոպան, պրոպեն, բութան, բութանի իզոմերներ, քիչ քանակությամբ այլ ածխաջրածնային գազեր պարունակող բութան:

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1. ՄԱԿ-ի նշագրման այլ համարների ներքո դասակարգված դյուրավառ գազերը չեն դասվում ՀՆԳ-երի շարքին:*

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2. ՄԱԿ-ի նշագրման 1075 համարի համար տե՛ս 2.2.2.3-ի Հեղուկացված գազերի աղյուսակի 2F դասակարգման ծածկագրի, ՄԱԿ-ի նշագրման 1965 համարի 2-րդ ծանոթագրությունը:*

«Հենամարմին» (ՍՄԿ-ների բոլոր կատեգորիաների դեպքում՝ բացի բարդ ՍՄԿ-ներից) նշանակում է պարզապես տարա, ներառյալ՝ բացվածքները եւ փականները, որը սակայն չի ներառում օժանդակ սարքավորումներ:

«Հերմետիկ փակված ցիստեռն» նշանակում է հեղուկ նյութերի փոխադրման համար նախատեսված, առնվազն 4 բար հաշվարկային ճնշում ունեցող ցիստեռն կամ պինդ նյութերի (փոշենման կամ հատիկավոր) փոխադրման համար նախատեսված ցիստեռն՝ անկախ դրա հաշվարկային ճնշումից, որի բացվածքները հերմետիկ փակված են, եւ որը՝

- չունի ապահովիչ կափույրներ, պոկովի թաղանթներ, նմանատիպ այլ ապահովիչ սարքեր կամ վակուումային կափույրներ, կամ
- չունի ապահովիչ կափույրներ, պոկովի թաղանթներ կամ նմանատիպ այլ ապահովիչ սարքեր, սակայն ունի վակուումային կափույրներ՝ 6.8.2.2.3-ի պահանջներին համապատասխան, կամ
- ունի ապահովիչ կափույրներ, որի տակ կա պոկովի թաղանթ, սակայն չունի վակուումային կափույրներ, կամ
- ունի ապահովիչ կափույրներ, որի տակ կա պոկովի թաղանթ՝ 6.8.2.2.10-ին համապատասխան, ինչպես նաեւ վակուումային կափույրներ՝ 6.8.2.2.3-ի պահանջներին համապատասխան:

«Հյուսածո պլաստմասսա» (փափուկ ՍՄԿ-ների դեպքում) նշանակում է նյութ, որը պատրաստված է համապատասխան պլաստիկ նյութից պատրաստված ձգվող ժապավենից կամ մոնոթելերից:

«ՀՆՀ» նշանակում է Քիմիական նյութերի դասակարգման ու պիտակավորման համաշխարհային մակարդակով ներդաշնակեցված

համակարգի վեցերորդ վերանայված հրատարակություն՝ հրապարակված Միավորված ազգերի կազմակերպության կողմից որպես ST/SG/AC.10/30/Rev.6 փաստաթուղթ.

Ձ

«Ձեռնարկություն» նշանակում է շահույթ հետապնդող կամ շահույթ չհետապնդող գործունեություն իրականացնող ցանկացած ֆիզիկական անձ, ցանկացած իրավաբանական անձ, շահույթ հետապնդող կամ շահույթ չհետապնդող գործունեություն իրականացնող, իրավասութեկտություն ունեցող անձանց ասոցիացիա կամ խումբ կամ ինքնուրույն իրավասութեկտություն ունեցող կամ այդպիսի իրավասութեկտություն ունեցող մարմնի ենթակայության տակ գործող ցանկացած պետական մարմին.

Ճ

«Ճառագայթման դետեկտման համակարգ» նշանակում է ապարատուրա, որը որպես բաղադրիչներ ներառում է ճառագայթման դետեկտորներ.

«Ճառագայթման մակարդակ» ռադիոակտիվ նյութի փոխադրման դեպքում նշանակում է ճառագայթման էֆեկտիվ դոզայի հզորությունը՝ արտահայտված միլիզիվերտ ժամով կամ միկրոզիվերտ ժամով.

«Ճնշման տակ աշխատող գազի անոթի» համար տե՛ս «Աերոզոլ կամ աերոզոլային ցողացիր».

«Ճնշումային թմբկազլան» նշանակում է զոդված, շարժական, ճնշումային տարա, որի տարողությունը գերազանցում է 150 լիտրը, եւ որը 1 000 լիտրից ավելի չէ (օր.՝ գլանաձեւ տարաներ, որոնք ունեն գլորման հարմարանքներ, սահուղու վրա գնդաձեւ անոթներ).

«Ճնշումային տարա» հավաքական եզրույթ է, որը ներառում է բալոններ, գլաններ, ճնշումային թմբկազլաններ, փակ կրիոգեն տարաներ, մետաղ-հիդրիդային պահեստավորման համակարգեր, բալոնների կապուկներ եւ վթարային ճնշումային տարաներ.

Մ

«ՄԱԿ-ի ԵՏՀ» (UNECE) նշանակում է ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողով (UNECE, Palais des Nations, 8-14 avenue de la Paix, CH-1211 Geneva 10, Switzerland).

«ՄԱԿ-ի նշագրման համար» նշանակում է ՄԱԿ-ի տիպային կանոնակարգերում ընդգրկված նյութերի կամ ապրանքների չորս թիվ ունեցող նույնականացման համարը.

«ՄԱԿ-ի տիպային կանոնակարգեր» նշանակում է նմուշային կանոնակարգեր, որոնք որպես հավելված կցված են Միավորված ազգերի կազմակերպության կողմից հրապարակված՝ «Վտանգավոր բեռների փոխադրման մասին» առաջարկների տասնիններորդ վերանայված խմբագրությանը (ST/SG/AC.10/1/Rev.19)։

«Մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոց» նշանակում է այնպիսի տարրեր պարունակող փոխադրամիջոց, որոնք միմյանց միանում են խողովակների միջոցով եւ մշտապես ամրացված են այդ փոխադրամիջոցին։ Հետեյալ տարրերը համարվում են մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցի տարրեր՝ բալոններ, գլաններ, բալոնների կապուկներ (հայտնի նաեւ ինչպես բալոնների հիմնակմախքներ), ճնշումային թմբկազաններ, ինչպես նաեւ 2.2.2.1.1-ով սահմանված՝ ավելի քան 450 լիտր տարողությամբ ցիստեռններ՝ նախատեսված գազերի փոխադրման համար։

«Մեծ կոնտեյներ»՝ տե՛ս «Կոնտեյներ»։

«Մետաղյա ՍԿՄ» նշանակում է մետաղյա հենամարմին, ներառյալ՝ դրա օժանդակ եւ կառուցվածքային սարքավորումները։

«Մետաղ-հիդրիդային պահման համակարգ» նշանակում է ջրածնի պահման ամբողջական առանձին համակարգ, որում կան տարա, մետաղ-հիդրիդային պաշտպանիչ սարք, ճնշումը նվազեցնող սարք, փակող կափույր, օժանդակ սարքավորումներ եւ միայն ջրածնի փոխադրման համար օգտագործվող ներքին բաղադրիչներ։

«Միջանկյալ փաթեթվածք» նշանակում է փաթեթվածք, որը դրվում է ներքին փաթեթվածքների կամ պատրաստվածքների եւ արտաքին փաթեթվածքի միջեւ։

Ն

«Նեյտրոնային ճառագայթման դետեկտոր» նշանակում է սարք, որը հայտնաբերում է նեյտրոնային ճառագայթումը։ Այդպիսի սարքում գազը կարող է պարունակվել հերմետիկ փակվող էլեկտրոնային փոխակերպիչում, որը նեյտրոնային ճառագայթումը փոխակերպում է էլեկտրոնային չափելի ազդանշանի։

«Ներդիր» նշանակում է փաթեթվածքների, այդ թվում՝ խոշոր փաթեթվածքների կամ ՍՄԿ-ների մեջ դրվող, սակայն դրանց անբաժանելի մաս չկազմող գլան կամ պարկ, ներառյալ՝ դրա բացվածքների փականները։

«Ներքին տարա» նշանակում է տարա, որի տեղայնացման ֆունկցիայի

իրականացման համար պահանջվում է արտաքին փաթեթվածք.

«Ներքին փաթեթվածք» նշանակում է փաթեթվածք, որի փոխադրման համար պահանջվում է արտաքին փաթեթվածք.

«Նորմալ շահագործման առավելագույն ճնշում» ռադիոակտիվ նյութերի փոխադրման դեպքում նշանակում է ծովի միջին մակարդակում մթնոլորտային ճնշման մակարդակը գերազանցող առավելագույն ճնշում, որը պաշտպանիչ պատյանի համակարգում կարող է առաջանալ մեկ տարվա ընթացքում ջերմաստիճանային եւ արեային ճառագայթման այնպիսի պայմաններում, որոնք համապատասխանում են օդափոխության, արտաքին սառեցման օժանդակ համակարգի կամ փոխադրման ընթացքում շահագործման հսկողության միջոցների բացակայության պարագայում առաջացող շրջակա միջավայրի պայմաններին.

Շ

«Շահագործման նախագծային ժամկետ» բարդ բաղնների եւ գլանների դեպքում նշանակում է առավելագույն ժամկետ (տարիների քանակ), որի համար բալոնը կամ գլանը նախագծված եւ հաստատված է՝ կիրառելի ստանդարտին համապատասխան.

«Շարժական ցիստեռն» նշանակում է համակցված փոխադրումների համար նախատեսված ցիստեռն, որն ունի 450 լիտրից ավելի տարողություն 2.2.2.1.1-ով սահմանված գազերի փոխադրման համար օգտագործվելու դեպքում՝ 6.7 գլխի սահմանումներին կամ ՎԲՄԾ կանոնագրքին համապատասխան, եւ նշված է 3.2 գլխի Ա աղյուսակի 10-րդ սյունակում ներկայացված շարժական ցիստեռնի վերաբերյալ ցուցմամբ (ծածկագիր T).

«Շարժական ցիստեռնի օպերատորի» համար տե՛ս «Ցիստեռն-կոնտեյների/շարժական ցիստեռնի օպերատոր».

Ո

«Որակի ապահովում» նշանակում է ցանկացած այն կազմակերպության կամ մարմնի կողմից կիրառված հսկողությունների եւ ստուգումների համակարգված ծրագիր, որով նպատակ է դրվում վստահեցնելու, որ «ԱԴՌ» համաձայնագրով սահմանված անվտանգության ցուցումները գործնականում կատարվում են.

Պ

«Պահման ժամկետ» նշանակում է նախնական լցավորումից եւ ջերմության հոսքի պատճառով ճնշման բարձրացումից մինչեւ ճնշման սահմանափակման՝ սառեցված- հեղուկացված գազերի փոխադրման

համար նախատեսված ցիստեռնների սարքի (սարքերի) ամենացածր արձանագրված ճնշման միջեւ ընկած ժամանակը.

*ԾՆՈՐԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Շարժական ցիստեռնների համար տե՛ս 6.7.4.1:*

«Պայթուցիկների արտադրության շարժական մեքենա» (ՊԱՇՄ) նշանակում է պայթուցիկներ չհանդիսացող վտանգավոր բեռներից պայթուցիկների արտադրության եւ լիցքավորման մեքենա կամ փոխադրամիջոց, որի վրա մոնտաժված է այդպիսի մեքենա: Մեքենան բաղկացած է տարբեր ցիստեռններից ու սորուն բեռների համար նախատեսված կոնտեյներներից եւ տեխնոլոգիական սարքավորումներից, ինչպես նաեւ պոմպերից ու համապատասխան սարքավորումներից: ՊԱՇՄ-ն կարող է ունենալ հատուկ հատվածամասեր՝ փաթեթավորված պայթուցիկ նյութերի համար.

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Թեեւ ՊԱՇՄ-ի սահմանման մեջ ներառված է «Պայթուցիկների արտադրություն եւ լիցքավորում» արտահայտությունը, ՊԱՇՄ-ներին ներկայացվող պահանջները վերաբերում են միայն պայթուցիկների փոխադրմանը, այլ ոչ թե դրանց արտադրությանն ու լիցքավորմանը:*

«ՊԱՇՄ»՝ տե՛ս «Պայթուցիկների արտադրության շարժական մեքենա».

«Պաշտպանված ՍՄԿ» (մետաղական ՍՄԿ-ների համար) նշանակում է ՍՄԿ, որն ունի որեւէ ազդեցությունից լրացուցիչ պաշտպանություն. այն ունի բազմաշերտ (սենդվիչի տեսքով) կամ երկպատ կառուցվածք կամ մետաղական կավարամածով հիմնակմախք.

«Պարկ» նշանակում է փափուկ փաթեթվածք՝ պատրաստված թղթից, պլաստմասսայից թաղանթից, տեքստիլից, գործվածքից կամ համապատասխան այլ նյութերից.

«Պինդ նյութ» նշանակում է՝

ա) նյութ, որի հալման ջերմաստիճանը կամ հալման սկզբնական ջերմաստիճանը ավելի քան 20 °C է 101.3 կՊա ճնշման պայմաններում, կամ

բ) նյութ, որը հեղուկ է՝ ASTM D 4359-90 փորձարկման մեթոդի համաձայն, կամ մածուցիկանման է՝ 2.3.4-ում նկարագրված՝ հոսունությունը (կակղաչափով փորձարկում) որոշելու փորձարկման նկատմամբ կիրառվող չափորոշիչների համաձայն:

«Պինդ ՍՄԿ-ների ընթացիկ տեխնիկական սպասարկում» նշանակում է մետաղյա, կոշտ պլաստմասսայից կամ բարդ ՍՄԿ-ների վրա հետեւյալ ընթացիկ աշխատանքների իրականացում՝

ա) մաքրում, կամ

- բ) հենամարմնի փականների (նաեւ համապատասխան խցանիչների) կամ օժանդակ սարքավորումների ապամոնտաժում եւ տեղակայում կամ փոխարինում՝ առաջնային արտադրողի կողմից սահմանված տեխնիկական մասնագրերին համապատասխան՝ պայմանով, որ ստուգվում է ՍՄԿ-ի հերմետիկությունը, կամ
- գ) վտանգավոր բեռների տեղայնացման կամ արտամղման ճնշումը պահելու ֆունկցիան անմիջականորեն չկատարող կառուցվածքային սարքավորումների վերականգնում՝ կառուցվածքի տեսակի (օրինակ՝ հենակների կամ ամբարձիչ հարմարանքների ուղղում) համապատասխանությունն ապահովելու նպատակով՝ պայմանով, որ ՍՄԿ-ի տեղայնացման ֆունկցիան չի խախտվում.

## Բ

«Բադիոակտիվ պարունակություն» ռադիոակտիվ նյութի փոխադրման դեպքում նշանակում է փաթեթվածքում պարունակվող ռադիոակտիվ նյութը փաթեթավորման նույն կոմպլեկտում դրա հետ գտնվող ցանկացած ռադիոակտիվ աղտոտված կամ ակտիվացված պինդ, հեղուկ կամ գազային նյութերի հետ մեկտեղ.

«ԲԻԴ» նշանակում է «Երկաթուղով վտանգավոր բեռների միջազգային փոխադրումների մասին» կանոնակարգեր (ՄԵՓԿ-ի («Միջազգային երկաթուղային փոխադրումների մասին» կոնվենցիա) Գ հավելվածը).

## Ս

«ՍԳԱ» նշանակում է Սեղմված գազեր արտադրողների ասոցիացիա (CGA, 14501 George Carter Way, Suite 103, Chantilly, VA 20151, United States of America).

«Սեղմված բնական գազ (ՍԲԳ)» նշանակում է սեղմված գազ, որը բաղկացած է ՄԱԿ-ի նշագրման 1971 համարի ներքո դասակարգված մեթանի բարձր պարունակությամբ բնական գազից.

«ՍՄԿ»՝ տե՛ս «Սորուն բեռների համար նախատեսված միջին բեռնվածության կոնտեյներ».

«Սորուն բեռների համար նախատեսված ծովային կոնտեյներ» նշանակում է բազմակի օգտագործման համար հատուկ նախատեսված սորուն բեռների համար նախատեսված կոնտեյներ, որով դեպի ափամերձ օբյեկտներ, ինչպես նաեւ նշված օբյեկտներից եւ դրանց միջեւ բեռներ են փոխադրվում: Սորուն բեռների համար նախատեսված ծովային կոնտեյները նախագծված եւ կառուցված է բաց ծովում օգտագործվող ծովային կոնտեյներների հաստատման այն ուղեցույցներին համապատասխան, որոնք MSC/Circ.860 փաստաթղթում սահմանվել են Ծովագնացության միջազգային

կազմակերպության (ԾՄԿ) կողմից.

«Սորուն բեռների համար նախատեսված կոնտեյներ» նշանակում է պաշտպանիչ պատյանի համակարգ (ներառյալ՝ ցանկացած ներդիր կամ պատվածք)՝ նախատեսված այնպիսի պինդ նյութերի փոխադրման համար, որոնք անմիջական շփման մեջ են տեղայնացման համակարգի հետ: Փաթեթվածքները, սորուն բեռների համար նախատեսված միջին բեռնվածության կոնտեյներները (ՍՄԿ-ներ), խոշոր փաթեթվածքներն ու ցիստեռնները չեն ներառվում:

Սորուն բեռների համար նախատեսված կոնտեյները՝

- երկարաժամկետ օգտագործման համար է, ուստի բավարար չափով ամուր է բազմիցս օգտագործվելու համար.
- հատուկ նախատեսված է առանց միջանկյալ բեռնաթափման մեկ կամ մի քանի տրանսպորտային միջոցներով բեռների փոխադրումը դյուրացնելու համար.
- ունի դրա օգտագործման համար հարմար սարքեր.
- ունի առնվազն 1.0 մ<sup>3</sup> տարողություն:

Սորուն բեռների համար նախատեսված կոնտեյներներ են կոնտեյներները, սորուն բեռների համար նախատեսված ծովային կոնտեյներները, բունկերները, սորուն բեռների համար նախատեսված բունկերները, հանովի թափքերը, ակոսաձեւ կոնտեյներները, անիվների վրա կոնտեյներները, փոխադրամիջոցների բեռնախցիկները.

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Այս սահմանումը վերաբերում է միայն 6.11 գլխի պահանջներին համապատասխանող սորուն բեռների համար նախատեսված կոնտեյներներին:*

«Սորուն բեռների համար նախատեսված բրեզենտից ծածկով կոնտեյներ» նշանակում է սորուն բեռների համար նախատեսված ծածկ չունեցող կոնտեյներ՝ ամուր հատակով (ներառյալ՝ հոպերի տիպի հատակները), կողապատերով եւ ճակատային պատերով, ինչպես նաեւ ոչ ամուր պատվածքով.

«Սորուն բեռների համար նախատեսված բրեզենտից ծածկով կոնտեյների» համար տե՛ս «Սորուն բեռների համար նախատեսված կոնտեյներ».

«Սորուն բեռների համար նախատեսված փակ կոնտեյներ» նշանակում է ամբողջովին փակված կոնտեյներ՝ ամուր ծածկով, ամուր պատերով, ամուր ճակատային պատերով եւ հատակով (ներառյալ՝ հոպերի տիպի հատակները): Եզրույթը վերաբերում է նաեւ բաց ծածկով

կոնտեյներներին, եթե ծածկը կարող է փակվել փոխադրման ընթացքում: Սորուն բեռների համար նախատեսված փակ կոնտեյներները կարող են սարքավորված լինել բացվածքներով, որոնցով հնարավոր կլինի գոլորշին ու գազերը փոխարինել օդով, եւ որոնք կանխում են փոխադրման նորմալ պայմաններում դրանց պինդ պարունակության դուրս գալը, ինչպես նաեւ անձրեւի եւ ցայտի ներթափանցումը.

«Սորուն բեռների համար նախատեսված փակ կոնտեյներ»՝ տե՛ս «Սորուն բեռների համար նախատեսված կոնտեյներ».

«Սորուն բեռների համար նախատեսված միջին բեռնվածության կոնտեյներ» (ՍՄԿ) նշանակում է կոշտ կամ փափուկ շարժական փաթեթվածք՝ բացի 6.1 գլխում նշվածներից, որն ունի հետեւյալ հատկանիշները՝

ա) տարողությունը՝

- i) 3 մ<sup>3</sup>-ից ոչ ավելի՝ II եւ III փաթեթավորման խմբերի պինդ նյութերի եւ հեղուկների համար.
- ii) 1.5 մ<sup>3</sup>-ից ոչ ավելի՝ I փաթեթավորման խմբի պինդ նյութերի համար, երբ փաթեթավորվում են փափուկ, կոշտ պլաստմասսայից, բարդ, փայտաթելքային սալից ու փայտյա ՍՄԿ-ներում.
- iii) 3 մ<sup>3</sup>-ից ոչ ավելի՝ I փաթեթավորման խմբի պինդ նյութերի համար, երբ փաթեթավորվում են մետաղյա ՍՄԿ-ներում.
- iv) 3 մ<sup>3</sup>-ից ոչ ավելի՝ 7-րդ դասում դասակարգված ռադիոակտիվ նյութերի համար.

բ) նախատեսված է մեխանիկական միջոցներով բեռնավորման-բեռնաթափման համար.

գ) ինչպես հաստատվել է 6.5 գլխով սահմանված փորձարկումների արդյունքում, դիմացկուն է բեռնավորման-բեռնաթափման աշխատանքների եւ փոխադրման ընթացքում առաջացող ծանրաբեռնվածության դեպքում.

(տե՛ս նաեւ «Բարդ ՍՄԿ պլաստմասսայից ներքին տարայով», «Փայտաթելքային սալից ՍՄԿ», «Փափուկ ՍՄԿ», «Մետաղյա ՍՄԿ», «Կոշտ պլաստմասսայից ՍՄԿ» եւ «Փայտյա ՍՄԿ»).

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1. 6.7 կամ 6.8 գլխի պահանջները համապատասխանաբար բավարարող շարժական ցիստեռնները կամ ցիստեռն-կոնտեյներները չեն համարվում սորուն բեռների համար նախատեսված միջին բեռնվածության կոնտեյներներ (ՍՄԿ-ներ):*



*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2. Սորուն բեռների համար նախատեսված միջին բեռնվածության կոնտեյներները (ՍՄԿ-ները), որոնք բավարարում են 6.5 գլխի պահանջները, չեն համարվում կոնտեյներներ՝ «ԱԴԴ» համաձայնագրի նպատակներով:*

«Սորուն բեռների համար նախատեսված փափուկ կոնտեյներ» նշանակում է փափուկ կոնտեյներ, որն ունի 15 մ<sup>3</sup>-ը չգերազանցող տարողություն եւ ներառում է ներդիրներ ու ամրակցված բեռնման-բեռնաթափման սարքեր եւ օժանդակ սարքավորումներ.

«Սորուն բեռների համար նախատեսված փափուկ կոնտեյներ»՝ տե՛ս «Սորուն բեռների համար նախատեսված կոնտեյներ».

«Ստանդարտ պողպատ» նշանակում է 370 Ն/մմ<sup>2</sup> ձգման ամրություն եւ 27% պատռման դեֆորմացիա ունեցող պողպատ.

«Ստուգող մարմին» նշանակում է իրավասու մարմնի կողմից հաստատված՝ ստուգումներ եւ փորձարկումներ իրականացնող անկախ մարմին.

Վ

«Վակուումային կափույր» նշանակում է զսպանակավոր սարք, որը մեխանիկորեն միանում է ճնշման տակ եւ պաշտպանում է ցիստեռնն անցանկալի բացասական ներքին ճնշումից.

«Վառելիքային էլեմենտ» նշանակում է էլեկտրաքիմիական սարք, որը վառելիքի քիմիական էներգիան փոխակերպում է էլեկտրական էներգիայի, ջերմության եւ ռեակցիայի արդյունքների.

«Վառելիքային էլեմենտով շարժիչ» նշանակում է այնպիսի սարք, որն օգտագործվում է սարքավորման էներգասնուցման համար եւ բաղկացած է վառելիքային էլեմենտից ու վառելիքի էլեմենտի մաս հանդիսացող կամ չհանդիսացող՝ վառելիք մատակարարող սարքից, ինչպես նաեւ ներառում է այդ ֆունկցիայի կատարման համար անհրաժեշտ բոլոր պարագաները.

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Ռադիոակտիվ նյութերի դեպքում օգտագործվում է «Բացառիկ օգտագործում» եզրույթը:*

«Վառելիքի այրման սարք» նշանակում է այնպիսի սարք, որում անմիջականորեն օգտագործվում է հեղուկ կամ գազային վառելիք, այլ ոչ փոխադրամիջոցի մղման համար շարժիչից արձակված ջերմությունը.

«ՎԲՄԾ կանոնագիրք» նշանակում է «Վտանգավոր բեռների միջազգային ծովային փոխադրումների մասին» կանոնագիրք՝ Ծովում

մարդու կյանքի անվտանգության մասին միջազգային կոնվենցիայի VII գլխի Ա մասի իրականացման համար (1974թ.) (ՍՈԼԱՍ կոնվենցիա)՝ հրապարակված Ծովագնացության միջազգային կազմակերպության (ԾՄԿ) կողմից, Լոնդոն.

«Վերարտադրված, խոշոր փաթեթվածք» նշանակում է խոշոր մետաղյա կամ կոշտ պլաստմասսայից փաթեթվածք, որը՝

- ա) արտադրվում է ՄԱԿ-ի կողմից սահմանված պահանջներին չհամապատասխանող տեսակից՝ որպես ՄԱԿ-ի կողմից սահմանված պահանջներին համապատասխանող տեսակ, կամ
- բ) վերափոխվում է ՄԱԿ-ի կողմից սահմանված պահանջներին համապատասխանող կառուցվածքի տեսակից մեկ այլ՝ ՄԱԿ-ի կողմից սահմանված պահանջներին համապատասխանող կառուցվածքի տեսակի:

Վերարտադրված, խոշոր փաթեթվածքների նկատմամբ կիրառվում են «ԱԴԲ» համաձայնագրի այն նույն պահանջները, որոնք տարածվում են նույն տեսակի նոր խոշոր փաթեթվածքների վրա (տե՛ս նաեւ 6.6.5.1.2-ում ներկայացված կառուցվածքի տեսակի սահմանումը).

«Վերարտադրված ՍՄԿ» նշանակում է մետաղյա, կոշտ պլաստմասսայից կամ բարդ ՍՄԿ, որը՝

- ա) արտադրվում է ՄԱԿ-ի կողմից սահմանված պահանջներին չհամապատասխանող տեսակից՝ որպես ՄԱԿ-ի կողմից սահմանված պահանջներին համապատասխանող տեսակ, կամ
- բ) վերափոխվում է ՄԱԿ-ի կողմից սահմանված պահանջներին համապատասխանող կառուցվածքի տեսակից ՄԱԿ-ի կողմից սահմանված պահանջներին համապատասխանող կառուցվածքի մեկ այլ տեսակի:

Վերարտադրված ՍՄԿ-ների նկատմամբ կիրառվում են «ԱԴԲ» համաձայնագրի այն նույն պահանջները, որոնք կիրառվում են նույն տեսակի նոր ՍՄԿ-ների նկատմամբ (տե՛ս նաեւ 6.5.6.1.1-ում ներկայացված կառուցվածքի տեսակի սահմանումը).

«Վերարտադրված ՍՄԿ-ի» համար տե՛ս «Սորուն բեռների համար նախատեսված միջին բեռնվածության կոնտեյները (ՍՄԿ)».

«Վերարտադրված փաթեթվածք» նշանակում է մասնավորապես՝

- ա) մետաղյա թմբկազլաններ՝
  - i) որոնք արտադրվում են ՄԱԿ-ի կողմից սահմանված պահանջներին չհամապատասխանող տեսակից՝ 6.1 գլխի պահանջներին համապատասխանող եւ ՄԱԿ-ի կողմից

սահմանված պահանջներին համապատասխան տեսակ.

- ii) որոնք վերափոխվում են 6.1 գլխի եւ ՄԱԿ-ի կողմից սահմանված պահանջներին համապատասխանող մեկ տեսակից մեկ այլ՝ ՄԱԿ-ի կողմից սահմանված պահանջներին համապատասխանող տեսակի.
- iii) որոնց նախագծի հիմնական մաս կազմող բաղադրիչները ենթարկվում են փոփոխության (ինչպես, օրինակ՝ հանովի հատակները).

բ) պլաստմասսայից թմբկազլաններ՝

- i) որոնք վերափոխվում են ՄԱԿ-ի կողմից սահմանված պահանջներին համապատասխանող մեկ տեսակից մեկ այլ՝ ՄԱԿ-ի կողմից սահմանված պահանջներին համապատասխանող տեսակի (օր.՝ 1H1-ից 1H2), կամ
- ii) որոնց նախագծի հիմնական մաս կազմող բաղադրիչները ենթարկվում են փոփոխության:

Վերարտադրված թմբկազլանների նկատմամբ կիրառվում են 6.1 գլխի այն պահանջները, որոնք տարածվում են նույն տեսակի նոր թմբկազլանների վրա.

«Վերականգնված փաթեթվածք» նշանակում է մասնավորապես՝

ա) մետաղյա թմբկազլաններ՝

- i) որոնք մաքրվել են՝ թողնելով դրանց պատրաստման ելանյութը, վերացվել են նախորդ բոլոր պարունակությունները, ներքին եւ արտաքին կոռոզիան ու արտաքին պատվածքներն ու պիտակները.
- ii) որի սկզբնական տեսքն ու ուրվագծերը վերականգնվել են, ձգվել են օղակները (եթե այդպիսիք կան), եւ փոխվել են բոլոր հանովի խցանիչները, եւ
- iii) որն ստուգվել է մաքրումից հետո, սակայն նախքան ներկումը՝ հանելով այն փաթեթվածքները, որոնց վրա կարելի է նկատել ակնհայտ կետային քայքայում, նյութի հաստության զգալի նվազեցում, մետաղի հոգնածություն, վնասված պարուրակներ կամ փականներ կամ նշանակալից այլ թերություններ.

բ) պլաստմասսայից թմբկազլաններ եւ կանխտրներ՝

- i) որոնք մաքրվել են սկզբնական շինանյութից, վերացվել են նախորդ բոլոր պարունակությունները, արտաքին պատվածքներն ու պիտակները.

- ii) որոնց հանովի խցանիչները փոխվել են, եւ
- iii) որոնք ստուգվել են մաքրումից հետո՝ հանելով այն փաթեթվածքները, որոնց վրա կարելի է նկատել ակնհայտ վնասվածքներ, ինչպես, օրինակ՝ կտրվածքներ, ծալքեր կամ ճաքեր, կամ վնասված պարուրակներ, կամ փականներ, կամ նշանակալից այլ թերություններ.

«Վերահսկման ջերմաստիճան» նշանակում է այն առավելագույն ջերմաստիճանը, որում օրգանական պերօքսիդը կամ ինքնառեակտիվ նյութը կարող է անվտանգ փոխադրվել.

«Վերամշակված պլաստիկ նյութ» նշանակում է օգտագործված արդյունաբերական փաթեթվածքներից վերականգնված նյութ, որը մաքրվել է պատրաստվել է նոր փաթեթվածքներ մշակելու համար.

«Վերանորոգված ՍՄԿ» նշանակում է մետաղյա, կոշտ պլաստմասսայից կամ բարդ ՍՄԿ, որը հարվածների հետեւանքով կամ ցանկացած այլ պատճառով (օրինակ՝ կոռոզիա, դյուրաբեկություն կամ կառուցվածքի տեսակի համեմատ՝ ամրության նվազման այլ նշաններ) վերանորոգվում է, որպեսզի համապատասխանի տվյալ կառուցվածքի տեսակին եւ կարողանա անցնել կառուցվածքի տեսակի փորձարկումները: «ԱԴԴ» համաձայնագրի նպատակներով նույն արտադրողի կողմից բարդ ՍՄԿ-ի ներքին պինդ տարայի փոխարինումը բնօրինակ կառուցվածքի տեսակին համապատասխանող տարայով համարվում է վերանորոգում: Այնուամենայնիվ, պինդ ՍՄԿ-ների ընթացիկ տեխնիկական սպասարկումը չի համարվում վերանորոգում: Կոշտ պլաստմասսայից ՍՄԿ-ների կորպուսները եւ բարդ ՍՄԿ-ների ներքին տարաները վերանորոգման չեն ենթարկվում: Փափուկ ՍՄԿ-ները չեն վերանորոգվում, եթե չեն հաստատվում իրավասու մարմնի կողմից.

«Վերանորոգված ՍՄԿ-ի» համար տե՛ս «Սորուն բեռների համար նախատեսված միջին բեռնվածության կոնտեյները (ՍՄԿ)».

«Վթարային ջերմաստիճան» նշանակում է այնպիսի ջերմաստիճան, որի դեպքում իրականացվում են արտակարգ միջոցառումներ՝ ջերմաստիճանի վերահսկման հնարավորությունը կորցնելու դեպքում.

«Վթարային փաթեթվածք» նշանակում է հատուկ փաթեթվածք, որտեղ տեղադրվում են վտանգավոր բեռներ պարունակող վնասված, խոտանված, արտահոսած կամ չթույլատրված շեղումներով փաթեթները կամ թափված կամ արտահոսած վտանգավոր բեռները՝ վերականգնման կամ հեռացման նպատակով փոխադրելու համար.

«Վթարային ճնշումային տարա» նշանակում է 3 000 լիտրից ոչ ավելի տարողությամբ ճնշումային տարա, որի մեջ տեղադրվում է (են)

վնասված, խոտանված, արտահոսված կամ չթույլատրված շեղումներով ճնշումային տարան (տարաները)՝ վերականգնման կամ հեռացման նպատակով փոխադրելու եւ այլնի համար:

«Վտանգավոր բեռներ» նշանակում է այնպիսի նյութեր եւ պատրաստվածքներ, որոնց փոխադրումն արգելված է «ԱԴԴ» համաձայնագրով կամ թույլատրվում է միայն այդ համաձայնագրով սահմանված պայմանների համաձայն.

«Վտանգավոր ռեակցիա» նշանակում է՝

- ա) այրում կամ զգալի քանակությամբ ջերմության արձակում.
- բ) դյուրավառ, խեղդող, օքսիդացնող կամ թունավոր գազերի արձակում.
- գ) կոռոզիոն նյութերի առաջացում.
- դ) անկայուն նյութերի առաջացում. կամ
- ե) վտանգավոր չափով ճնշման բարձրացում (միայն ցիստեոնների դեպքում).

S

«Տարա» (1-ին դաս) նշանակում է արկղեր, շշեր, թիթեղյա տուփեր, թմբկազլաններ, ապակե տարաներ եւ գլաններ, ներառյալ՝ փակման ցանկացած միջոց, որն օգտագործվում է ներքին կամ միջանկյալ փաթեթվածքի մեջ.

«Տարա» նշանակում է նյութեր կամ պատրաստվածքներ տեղակայելու եւ պահելու հերմետիկացնող անոթ, ներառյալ՝ փակման ցանկացած միջոց: Նշված սահմանումը չի կիրառվում կորպուսների նկատմամբ (տե՛ս նաեւ «Կրիոգեն տարա», «Ներքին տարա», «Ճնշումային տարա», «Կոշտ ներքին տարա» եւ «Գազի անոթ»).

«Տարածքով կամ դեպի տարածք» ռադիոակտիվ նյութի փոխադրման դեպքում նշանակում է երկրների տարածքով կամ դեպի այդ երկրների տարածք կատարվող բեռնափոխադրումները, սակայն մասնավորապես բացառում է այն երկրները, որոնց «վրայով» օդով բեռնափոխադրում է իրականացվում, եթե այդ երկրներում ծրագրված կանգառներ չկան.

«Տարայի նոմինալ տարողություն» նշանակում է տարայում լցված վտանգավոր նյութերի նոմինալ ծավալը՝ արտահայտված լիտրերով: Սեղմված գազի բալոնների նոմինալ տարողությունը հավասար է այդ բալոնում տեղավորվող ջրի ծավալին.

«Տեխնիկական անվանում» նշանակում է ընդունված քիմիական անվանում կամ կենսաբանական անվանում կամ որեւէ այլ անվանում, որն օգտագործվում է գիտական եւ տեխնիկական ձեռնարկներում,

ամսագրերում եւ տեքստերում (տե՛ս 3.1.2.8.1.1).

«Տեղայնացման համակարգ» ռադիոակտիվ նյութերի փոխադրման դեպքում նշանակում է տրոհվող նյութի եւ փաթեթվածքի տարրերի տեղաբաշխման համակարգ, որը նախագծողի կողմից որոշվել է իրավասու մարմնի կողմից հավանության է արժանացել որպես կրիտիկականության տեսակետից անվտանգության պահպանման համակարգ.

«Տեղայնացման համակարգ» 7-րդ դասում դասակարգված նյութերի փոխադրման դեպքում նշանակում է փաթեթվածքի տարրերի տեղաբաշխման համակարգ, որը նախագծողի կողմից որոշվել է որպես փոխադրման ընթացքում ռադիոակտիվ նյութի պահպանման համար նախատեսված համակարգ.

«Տրանսպորտային ինդեքս (ՏԻ), որը կցվում է փաթեթին, տրանսպորտային կապոցին կամ կոնտեյներին կամ չփաթեթավորված LSA-I եւ SCO-I-ին» ռադիոակտիվ նյութերի բեռնափոխադրման համար նշանակում է այնպիսի համար, որով վերահսկվում է ռադիացիայի ներգործությունը.

«Տրանսպորտային կապոց» նշանակում է բեռնարկը (ռադիոակտիվ նյութի դեպքում մեկ բեռնառաքողի կողմից), որը փոխադրման ընթացքում բեռի դասավորումը եւ փոխադրումը հեշտացնելու նպատակով օգտագործվում է մեկ կամ մի քանի փաթեթներ որպես մեկ բեռ միավորելու համար.

Տրանսպորտային կապոցների օրինակներից են՝

ա) բեռնման համար նախատեսված ընդկալ, ինչպես, օրինակ՝ տակդիրը, որի վրա դրվում կամ դարսակվում են մի քանի փաթեթներ կամ ամրացվում են պլաստմասսայից ձողով, ջերմակծկումային նյութով կամ ձգվող թաղանթով կամ այլ համապատասխան միջոցներով. Կամ

բ) արտաքին պաշտպանիչ փաթեթվածք, ինչպես, օրինակ՝ արկղ կամ կավարամած.

«Տրանսպորտային միավոր» նշանակում է ավտոտրանսպորտային միջոց, որին կցված չէ կցասայլ կամ տրանսպորտային միջոցից ու ամրակցված կցասայլից բաղկացած շարժակազմ.

«Տրանսպորտային միջոց» ճանապարհային կամ երկաթուղային փոխադրումների դեպքում նշանակում է փոխադրամիջոց կամ վագոն.

Ց

«Ցիստեոն» նշանակում է կորպուս, ներառյալ՝ դրա օժանդակ եւ կառուցվածքային սարքավորումները: Երբ այս եզրույթն առանձին է օգտագործվում, այն նշանակում է ցիստեոն-կոնտեյներ, շարժական ցիստեոն, հանովի ցիստեոն կամ անշարժ ցիստեոն, ինչպես սահմանված է այս բաժնում, ներառյալ՝ մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցի կամ ԳՔՏԿ-ների մաս կազմող ցիստեոնները (տե՛ս նաեւ «Հանովի ցիստեոն», «Անշարժ ցիստեոն», «Շարժական ցիստեոն» եւ «Գազի բազմատարր կոնտեյներ»):

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Շարժական ցիստեոնների համար տե՛ս 6.7.4.1:*

«Ցիստեոն-կոնտեյներ» նշանակում է տրանսպորտային սարքավորումների առարկա, որը բավարարում է «Կոնտեյներ» եզրույթի սահմանումը եւ բաղկացած է կորպուսից ու օժանդակ սարքավորումներից (ներառյալ առանց էականորեն դիրքը փոխելու՝ ցիստեոն-կոնտեյների տեղափոխմանն օժանդակող սարքերը), եւ որն օգտագործվում է գազեր, հեղուկ, փոշենման կամ հատիկավոր նյութեր փոխադրելու համար: Երբ այն օգտագործվում է գազ փոխադրելու համար, ինչպես սահմանված է 2.2.2.1.1-ում, այն պետք է ունենա 0.45 մ<sup>3</sup> տարողություն (450 լիտր):

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. 6.5 գլխի պայմանները բավարարող ՍՄԿ-ները չեն համարվում ցիստեոն-կոնտեյներ:*

«Ցիստեոն-կոնտեյների/շարժական ցիստեոնի օպերատոր» նշանակում է ցանկացած ձեռնարկություն, որի անվանման տակ գրանցված է ցիստեոն-կոնտեյները/շարժական ցիստեոնը:

«Ցիստեոնի մասին գրառումներ» նշանակում է այնպիսի ֆայլ, որը պարունակում է ցիստեոնի, մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցի կամ ԳՔՏԿ-ի մասին կարելի է տեխնիկական տեղեկություններ, ինչպես, օրինակ՝ 6.8.2.3, 6.8.2.4 եւ 6.8.3.4-ում նշված սերտիֆիկատներն են:

Փ

«Փաթեթ» նշանակում է փաթեթավորման արդյունքում ստացված վերջնական արտադրանք, որը բաղկացած է փաթեթվածքից կամ խոշոր փաթեթվածքից կամ ՍՄԿ-ից եւ դրա պարունակությունից, որը պատրաստված է առաքման համար: Եզրույթը ներառում է սույն բաժնով սահմանված գազի տարաները, ինչպես նաեւ այնպիսի պատրաստվածքներ, որոնք իրենց չափսերի, զանգվածի կամ ձեւի շնորհիվ կարող են փոխադրվել առանց փաթեթվածքի կամ փոխադրվել սայլակներով, կավարամածերով կամ բեռնման-բեռնաթափման սարքերով: Բացառությամբ ռադիոակտիվ նյութի փոխադրման՝ եզրույթը չի կիրառվում այն ապրանքների նկատմամբ, որոնք

փոխադրվում են խուռնաբեռն. այն չի կիրառվում նաեւ ցիստեռններով փոխադրվող նյութերի նկատմամբ.

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Ռադիոակտիվ նյութի համար տե՛ս 2.2.7.2, 4.1.9.1.1 եւ 6.4 գլուխը:*

«Փաթեթավորման խումբ» նշանակում է խումբ, որին, փաթեթավորման նպատակներից ելնելով, կարող են դասվել որոշ նյութեր՝ պայմանավորված վտանգավորության իրենց աստիճանով: Փաթեթավորման խմբերն ունեն հետեւյալ իմաստները, որոնց մանրամասն բացատրությունը կարելի է գտնել 2-րդ մասում.

Փաթեթավորման I խումբ՝ մեծ վտանգ ներկայացնող նյութեր.

Փաթեթավորման II խումբ՝ Միջին վտանգավորության նյութեր. եւ

Փաթեթավորման III խումբ՝ Վտանգավորության ցածր աստիճան ունեցող նյութեր.

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Վտանգավոր բեռներ պարունակող որոշ պատրաստվածքներ դասվում են փաթեթավորման որեւէ խմբի:*

«Փաթեթավորող» նշանակում է ցանկացած կազմակերպություն, որը վտանգավոր բեռները տեղադրում է փաթեթվածքներում, այդ թվում՝ խոշոր փաթեթվածքներում եւ սորուն բեռների համար նախատեսված միջին բեռնվաճուռայան կոնտեյններում (ՍՄԿ-ներում) եւ անհրաժեշտության դեպքում պատրաստում է փաթեթներ՝ բեռների փոխադրման համար.

«Փաթեթի քաշ» նշանակում է փաթեթի անզուտ քաշը (բրուտտո), եթե այլ բան սահմանված չէ: Բեռների փոխադրման համար օգտագործվող կոնտեյններների եւ ցիստեռնների քաշը չի ներառվում անզուտ քաշում (բրուտտո).

«Փաթեթվածք» նշանակում է մեկ կամ ավելի տարաներ եւ ցանկացած այլ բաղադրիչ կամ նյութ, որն անհրաժեշտ է, որպեսզի տարաները կատարեն տեղայնացման եւ անվտանգության ապահովման իրենց ֆունկցիաները (տե՛ս նաեւ «Համակցված փաթեթվածք», «Բարդ փաթեթվածք», «Ներքին փաթեթվածք», «Սորուն բեռների համար նախատեսված միջին բեռնվաճուռայան կոնտեյներ (ՍՄԿ)», «Միջանկյալ փաթեթվածք», «Խոշոր փաթեթվածք», «Թեթեւ երկաթյա թիթեղից պատրաստված փաթեթվածք», «Արտաքին փաթեթվածք», «Վերականգնված փաթեթվածք», «Վերարտադրված փաթեթվածք», «Կրկնակի օգտագործված փաթեթվածք», «Վթարային փաթեթվածք» եւ «Անթափանցելի փաթեթվածք»).

«Փակ կոնտեյներ»՝ տե՛ս «Կոնտեյներ».

«Փակ փոխադրամիջոց» նշանակում է այնպիսի փոխադրամիջոց, որի



հենամարմինն ունի փակվելու հնարավորություն.

«Փական» նշանակում է այնպիսի հարմարանք, որը փակում է տարայի բացվածքը.

«Փայտաթելքային սալից ՍՄԿ» նշանակում է փայտաթելքային սալից հենամարմին՝ վերելից կամ ներքելից առանձին կափարիչներով կամ առանց դրանց, որն անհրաժեշտության դեպքում ունենում է ներքին ներդիր (բայց առանց ներքին փաթեթվածքների) եւ համապատասխան օժանդակ ու կառուցվածքային սարքավորումներ.

«Փայտե տակառ» նշանակում է բնական փայտից պատրաստված փաթեթվածք, որն ունի կլոր կտրվածք, դուրս ընկած պատեր, բաղկացած է տակառատախտակներից, հատակներից եւ վրան ամրացված է օղագոտի.

«Փայտից պատրաստված ՍՄԿ» նշանակում է կոշտ կամ հավաքովի փայտե հենամարմին, որն ունի ներքին ներդիր (բայց առանց ներքին փաթեթվածքի) եւ համապատասխան օժանդակ ու կառուցվածքային սարքավորումներ.

«Փափուկ պողպատ» նշանակում է նվազագույնը 370-440 Ն/մմ<sup>2</sup> ձգման ամրություն ունեցող պողպատ.

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Շարժական ցիստերնների համար տե՛ս 6.7 գլուխը:*

«Փափուկ ՍՄԿ» նշանակում է հենամարմին՝ պատրաստված թաղանթից, գործվածքից կամ ցանկացած այլ փափուկ նյութից կամ դրանց համակցությամբ, որն անհրաժեշտության դեպքում ունենում է ներքին պատվածք կամ ներդիր, ինչպես նաեւ համապատասխան օժանդակ սարքավորումներ եւ բեռնման-բեռնաթափման սարքեր.

«Փափուկ ՍՄԿ-ների ընթացիկ տեխնիկական սպասարկում» նշանակում է պլաստմասսայից կամ գործվածքից պատրաստված փափուկ ՍՄԿ-ների վրա հետեւյալ ընթացիկ աշխատանքների իրականացում.

ա) մաքրում, կամ

բ) հանովի մասերի (ինչպիսիք են հանովի ներդիրները եւ փակիչ ամրանները) փոխարինում՝ առաջնային արտադրողի կողմից սահմանված տեխնիկական մասնագրերին համապատասխանող մասերով՝

պայմանով, որ այդ աշխատանքները բացասական ազդեցություն չեն ունենում փափուկ ՍՄԿ-ի տեղայնացման ֆունկցիայի վրա կամ չեն

փոխում կառուցվածքի տեսակը.

«Փափուկ ՍՄԿ-ների ընթացիկ տեխնիկական սպասարկման» համար տե՛ս «Սորուն բեռների համար նախատեսված միջին բեռնվածության կոնտեյները (ՍՄԿ)».

«ՓՆԱՄ» (ASTM) նշանակում է Փորձարկումների եւ նյութերի հարցերով ամերիկյան միություն (ASTM International, 100 Barr Harbor Drive, PO Box C700, West Conshohocken, PA, 19428-2959, United States of America).

«Փոխադրամիջոց»՝ տե՛ս «Մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոց», «Փակ փոխադրամիջոց», «Բաց փոխադրամիջոց», «Բրեզենտից ծածկով փոխադրամիջոց» եւ «Ավտոցիստեռն».

«Փոխադրամիջոցի անձնակազմի անդամ» նշանակում է վարորդ կամ ցանկացած այլ անձ, որն ուղեկցում է վարորդին՝ անվտանգության, ապահովության, վերապատրաստման կամ աշխատանքային այլ նկատառումներով.

«Փոխադրող» նշանակում է ձեռնարկություն, որը տրանսպորտային գործունեություն է իրականացնում փոխադրման պայմանագրով կամ առանց դրա.

«Փոխադրում» նշանակում է վտանգավոր բեռների գտնվելու վայրի փոփոխություն, ներառյալ՝ փոխադրման պայմաններով պահանջվող կանգառները, ինչպես նաեւ երթեւեկության պայմաններով պահանջվող այն ժամանակահատվածը, որի ընթացքում վտանգավոր բեռները մնում են փոխադրամիջոցներում, ցիստեռններում եւ կոնտեյներներում՝ նախքան գտնվելու վայրի փոփոխությունը, դրա ընթացքում եւ դրանից հետո:

Այս սահմանումը ներառում է նաեւ վտանգավոր բեռների միջանկյալ ժամանակավոր պահեստավորումը՝ փոխադրման եղանակի կամ տրանսպորտային միջոցի փոփոխության (վերաբեռնում) համար: Դա կիրառվում է՝ պայմանով, որ պահանջի դեպքում ներկայացվեն առաքման վայրը եւ ստացման վայրը ցույց տվող տրանսպորտային փաստաթղթեր, եւ որ միջանկյալ կանգառների ընթացքում փաթեթներն ու ցիստեռնները չբացվեն, եթե դա չի կատարվում իրավասու մարմինների կողմից ստուգման նպատակով.

«Փորձարկման ճնշում» նշանակում է պահանջվող ճնշում, որը կիրառվում է նախնական կամ պարբերական ստուգումների նպատակով կատարվող ճնշման փորձարկման ժամանակ (տե՛ս նաեւ «Հաշվարկային ճնշում», «Արտամղման ճնշում», «Լցավորման ճնշում» եւ «Առավելագույն աշխատանքային ճնշում (մանոմետրական ճնշում)»).

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Շարժական ցիստեռնների համար տե՛ս 6.7 գլուխը:*

«Փորձարկումների եւ չափորոշիչների ձեռնարկ» նշանակում է Միավորված ազգերի կազմակերպության կողմից հրապարակված՝ Վտանգավոր բեռների փոխադրման մասին առաջարկությունների տասնվեցերորդ վերանայված հրատարակություն՝ Փորձարկումների եւ չափորոշիչների ձեռնարկ (ST/SG/AC.10/11/Rev.5).

«Փոքր կոնտեյնրների» համար տե՛ս «Կոնտեյնր».

Օ

«Օգտագործման ժամկետ» բարդ բաղադրանքների եւ գլանների դեպքում նշանակում է այն տարիների քանակը, որոնց ընթացքում թույլատրվում է օգտագործել բաղադրանքը կամ գլանը.

«Օժանդակ սարքավորումներ»՝

- ա) ցիստեռնի՝ նշանակում է լցավորման եւ դատարկման, օդափոխման սարքեր, ապահովիչ, տաքացման, ջերմամեկուսիչ եւ հավելանյութերի ավելացման ու չափիչ սարքեր.
- բ) մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոց կամ ԳՖՏԿ-ի տարրերի՝ նշանակում է լցավորման եւ դատարկման սարքեր, ներառյալ՝ կոլեկտորը, ապահովիչ եւ չափիչ սարքերը.
- գ) ՍՄԿ-ի՝ նշանակում է լցավորման եւ դատարկման սարքեր, ճնշումը նվազեցնելու ցանկացած սարք կամ օդափոխման, ապահովիչ, տաքացման, ջերմամեկուսիչ ու չափիչ սարքեր.

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Շարժական ցիստեռնների համար տե՛ս 6.7 գլուխը:*

1.2.2. Չափման միավորները

1.2.2.1. «ԱԴՌ» համաձայնագրում կիրառելի են հետեւյալ չափման միավորները<sup>ա</sup>

Չափում	Միջազգային համակարգի միավորներ <sup>բ</sup>	Ընդունված այլընտրանքային միավոր	Միավորների միջեւ հարաբերությունը
--------	---	---------------------------------	----------------------------------

<sup>ա</sup> Վերոնշյալ միավորները ՄՀ միավորներով հաշվարկելու համար կիրառվում են հետեւյալ կլորացված թվերը:

<sup>բ</sup> Միավորների միջազգային համակարգը (ՄՀ) ընդունվել է Քաշի եւ չափումների հարցերով գլխավոր կոնֆերանսի որոշման արդյունքում (Address: Pavillon de Breteuil, Parc de St-Cloud, F-92 310 Sevres):

Երկարությունը	մ (մետր)	-	-
Մակերեսը	մ <sup>2</sup> (մետր քառակուսի)	-	-
Ծավալը	մ <sup>3</sup> (մետր խորանարդ)	լ <sup>q</sup> (լիտր)	1 լ = 10 <sup>-3</sup> մ <sup>3</sup>
Ժամանակը	վրկ (վայրկյան)	ր (րոպե)	1 ր = 60 վրկ
		ժ (ժամ)	1 ժ = 3 600 վրկ
		օր (օր)	1 օր = 86,400 վրկ
		ա (գրամ)	1գ = 10 <sup>-3</sup> կգ
Ջանգվածը	կգ (կիլոգրամ)	տ (տոննա)	1 տ = 103 կգ
		կգ/մ <sup>3</sup>	1 կգ/լ = 103 կգ/մ <sup>3</sup>
Ջերմաստիճանը	Կ (կելվին)	°C (աստիճանը Ցելսիուսով)	0 °C = 273.15 Կ
Ջերմաստիճանի տարբերությունը	Կ (կելվին)	°C (աստիճանը Ցելսիուսով)	1 °C = 1 Կ
Ուժը	Ն (նյուտոն)	-	1 Ն = 1 կգ.մ/վրկ <sup>2</sup>
Ճնշումը	Պա (պասկալ)	-	1 Պա = 1 Ն/մ <sup>2</sup>
		բար (բար)	1 բար = 105 Պա
Սթրեսը	Ն/մ <sup>2</sup>	Ն/մմ <sup>2</sup>	1 Ն/մմ <sup>2</sup> = 1 ՄՊա
Աշխատանքը		կվ ժամ (կիլովատ ժամ)	1 կվ ժամ = 3.6 ՄՋ
Էներգիան	Ջ (ջոուլ)		1 Ջ = 1 Ն.մ = 1 Վտ. վրկ
Ջերմության քանակությունը		ԷՎ (էլեկտրոն-վոլտ)	1 ԷՎ = 0.1602 x 10 <sup>-18</sup> Ջ
Հզորությունը	Վ (վատ)	-	1 Վ = 1 Ջ/վրկ = 1 Ն.մ/վրկ
Կինեմատիկ մածուցիկությունը	մ <sup>2</sup> /վրկ	մմ <sup>2</sup> /վրկ	1 մմ <sup>2</sup> /վրկ = 10 <sup>-6</sup> մ <sup>2</sup> /վրկ
Դինամիկ մածուցիկությունը	Պա վրկ	ՄՊա. վրկ	1 ՄՊա. վրկ = 10 <sup>-3</sup> Պա վրկ
Ակտիվությունը	Բկ (բեկերել)		
Ճառագայթահարման համարժեք դոզան	Ջվտ (զիվերտ)		

Ուժը	Սթրեսը		
1 կգ= 9.807 Ն	1 կգ/մմ <sup>2</sup>	=	9.807 Ն/մմ <sup>2</sup>
1Ն = 0.102 կգ	1 Ն/մմ <sup>2</sup>	=	0.102 կգ/մմ <sup>2</sup>
Ճնշումը			

<sup>q</sup> «Լ» տառը, որը նշվում է լիտր բառի համար, կարող է օգտագործվել նաև «լ» տառի փոխարեն, եթե տպագրական մեքենան չի տարբերում «1» թիվը «լ» տառից:

$$1 \text{ Պա} = 1 \text{ Ն/մ}^2 = 10^{-5} \text{ բար} = 1.02 \times 10^{-5} \text{ կգ/սմ}^2 = 0.75 \times 10^{-2} \text{ տորր}$$

$$1 \text{ բար} = 105 \text{ Պա} = 1.02 \text{ կգ/սմ}^2 = 750 \text{ տորր}$$

$$1 \text{ կգ/սմ}^2 = 9.807 \times 10^4 \text{ Պա} = 0.9807 \text{ բար} = 736 \text{ տորր}$$

$$1 \text{ տորր} = 1.33 \times 10^2 \text{ Պա} = 1.33 \times 10^{-3} \text{ բար} = 1.36 \times 10^{-3} \text{ կգ/սմ}^2$$

Էներգիան, աշխատանքը, ջերմության քանակությունը

$$1 \text{ Ջ} = 1 \text{ Ն.մ} = 0.278 \times 10^{-6} \text{ կվ ժամ} = 0.102 \text{ կգմ} = 0.239 \times 10^{-3} \text{ կկալ}$$

$$1 \text{ կվ ժամ} = 3.6 \times 10^6 \text{ Ջ} = 367 \times 10^3 \text{ կգ մ} = 860 \text{ կկալ}$$

$$1 \text{ կգմ} = 9.807 \text{ Ջ} = 2.72 \times 10^{-6} \text{ կվ ժամ} = 2.34 \times 10^{-3} \text{ կկալ}$$

$$1 \text{ կկալ} = 4.19 \times 10^3 \text{ Ջ} = 1.16 \times 10^{-3} \text{ կվ ժամ} = 427 \text{ կգմ}$$

Հզորությունը

Կինեմատիկ մածուցիկություն

$$1 \text{ Վտ} = 0.102 \text{ կգմ/վրկ} = 0.86 \text{ կկալ/ժ}$$

$$1 \text{ մ}^2 \text{ վրկ} = 104 \text{ Ստ (Ստոկս)}$$

$$1 \text{ կգմ/վրկ} = 9.807 \text{ Վտ} = 8.43 \text{ կկալ/ժ}$$

$$1 \text{ Ստ} = 10^{-4} \text{ մ}^2/\text{վրկ}$$

$$1 \text{ կկալ/ժ} = 1.16 \text{ Վտ} = 0.119 \text{ կգմ/վրկ}$$

Դինամիկ մածուցիկություն

$$1 \text{ Պա վրկ} = 1 \text{ Ն վրկ/մ}^2 = 10 \text{ Պ (պուազ)} = 0.102 \text{ կգ.վրկ/մ}^2$$

$$1 \text{ Պ} = 0.1 \text{ Պա.վրկ} = 0.1 \text{ Ն.վրկ/մ}^2 = 1.02 \times 10^{-2} \text{ կգ.վրկ/մ}^2$$

$$1 \text{ կգ.վրկ/մ}^2 = 9.807 \text{ Պա.վրկ} = 9.807 \text{ Ն.վրկ/մ}^2 = 98.07 \text{ Պ}$$

Տասնապատիկ եւ հակադարձ մեծությունները կարող են կազմվել միավորի անվանման կամ խորհրդանշանի առջեւ հետեւյալ իմաստներով նախաձանցներ կամ խորհրդանշաններ դնելու միջոցով.

Գործակից			Նախաձանց խորհրդանշան	
1 000 000 000 000 000 000	= 10 <sup>18</sup>	քվինտիլիոն	էքսա	է
1 000 000 000 000 000	= 10 <sup>15</sup>	քվադրիլիոն	պետա	Պ
1 000 000 000 000	= 10 <sup>12</sup>	տրիլիոն	տերա	Տ
1 000 000 000	= 10 <sup>9</sup>	միլիարդ	գիգա	Գ
1 000 000	= 10 <sup>6</sup>	միլիոն	մեգա	Մ
1 000	= 10 <sup>3</sup>	հազար	կիլո	կ
100	= 10 <sup>2</sup>	հարյուր	հեկտո	հ
10	= 10 <sup>1</sup>	տասը	դեկա	դա
0.1	= 10 <sup>-1</sup>	տասնորդական	դեցի	դ
0.01	= 10 <sup>-2</sup>	հարյուրերորդական	սենտի	ս
0.001	= 10 <sup>-3</sup>	հազարերորդական	միլի	մ
0.000 001	= 10 <sup>-6</sup>	միլիոներորդական	միկրո	մկ
0.000 000 001	= 10 <sup>-9</sup>	միլիարդական	նանո	ն
0.000 000 000 001	= 10 <sup>-12</sup>	տրիլիոներորդական	պիկո	պ
0.000 000 000 000 001	= 10 <sup>-15</sup>	քվադրիլիոնական	ֆեմտո	ֆ
0.000 000 000 000 000 001	= 10 <sup>-18</sup>	քվինտիլիոններորդական	ատտո	ա

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Միավորված Ազգերի կազմակերպությունն օգտագործում է 10<sup>9</sup> միլիարդ՝ անգլերենում: Նմանապես, 10<sup>-9</sup> = 1 միլիարդականի*

1.2.2.2 Եթե այլ բան նշված չէ, «%» նշանը «ԱԴՌ» համաձայնագրում նշանակում է՝

ա) պինդ եւ հեղուկ նյութերի խառնուրդների դեպքում, ինչպես նաեւ լուծույթներով ու հեղուկով խոնավացված պինդ նյութերի դեպքում՝ խառնուրդի, լուծույթի կամ խոնավացված պինդ նյութի ընդհանուր զանգվածի հիման վրա հաշվարկված՝ զանգվածի տոկոսային մասը.

բ) սեղմված գազերի խառնուրդների դեպքում, երբ այն լցավորվում է ճնշման տակ՝ ծավալի չափաբաժինը՝ արտահայտված գազային խառնուրդի ընդհանուր ծավալի տոկոսով, իսկ եթե այն լցավորվում է ըստ զանգվածի՝ զանգվածի չափաբաժինը՝ գազային խառնուրդի ընդհանուր զանգվածի տոկոսով արտահայտված.

գ) հեղուկացված գազերի եւ լուծված գազերի խառնուրդների

դեպքում՝ զանգվածի չափաբաժինը՝ խառնուրդի ընդհանուր զանգվածի տոկոսով արտահայտված:

- 1.2.2.3 Տարաների հետ կապված բոլոր տեսակի ճնշումները (ինչպես օրինակ՝ փորձարկման ճնշումը, ներքին ճնշումը, ապահովիչ կափույրն աշխատեցնելու ճնշումը) միշտ ցույց է տրվում որպես մանոմետրական ճնշում (ճնշում, որը մթնոլորտային ճնշման համեմատությամբ հավելյալ է). իսկ նյութերի գոլորշու ճնշումը միշտ արտահայտվում է բացարձակ ճնշմամբ:
- 1.2.2.4 Եթե «ԱԴԻ» համաձայնագրում սահմանվում է տարաների լցավորման մակարդակ, ապա այդ դեպքում նկատի է առնվում նյութերի լցավորման մակարդակը 15 °C էտալոնային ջերմաստիճանում, եթե այլ ջերմաստիճան նշված չէ:

### ԳԼՈՒԽ 1.3

## ՎՏԱՆԳԱՎՈՐ ԲԵՌՆԵՐԻ ՓՈԽԱԴՐՄԱՄԲ ԶԲԱՂՎՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

#### 1.3.1. Գործողության ոլորտը եւ կիրառելիությունը

1.4 գլխում նշված՝ վտանգավոր բեռների փոխադրմամբ զբաղվող մասնակիցների կողմից աշխատանքի վերցված անձինք պետք է վերապատրաստվեն այդպիսի ապրանքների փոխադրումը կարգավորող պայմանների համաձայն՝ ըստ իրենց պարտականությունների եւ գործառույթների: Աշխատողները պետք է վերապատրաստվեն 1.3.2-ի համաձայն՝ նախքան իրենց պարտականությունները ստանձնելը, եւ պետք է այն գործառույթները, որոնց համար պահանջվող վերապատրաստում չեն անցել, իրականացնեն միայն վերապատրաստում անցած անձի վերահսկողության տակ: Վերապատրաստումը պետք է ներառի 1.10 գլխի վտանգավոր բեռների անվտանգությանը վերաբերող հատուկ պահանջներ:

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1. Անվտանգության գծով խորհրդարանի վերապատրաստման համար սույն բաժնի փոխարեն տե՛ս 1.8.3:*

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2. Փոխադրամիջոցի անձնակազմի վերապատրաստման համար սույն բաժնի փոխարեն տե՛ս 8.2 գլուխը:*

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3. 7-րդ դասի աշխատողների վերապատրաստման համար տե՛ս 1.7.2.5:*

#### 1.3.2. Վերապատրաստման բնույթը

Վերապատրաստումը պետք է ունենա համապատասխան անձի պարտավորություններին եւ գործառույթներին բնորոշ հետեւյալ կառուցվածքը.

##### 1.3.2.1. Ընդհանուր իրազեկմանն ուղված վերապատրաստում

Աշխատողները պետք է ծանոթ լինեն վտանգավոր բեռների փոխադրման մասին դրույթների ընդհանուր պահանջներին:

##### 1.3.2.2. Մասնագիտացված վերապատրաստում

Աշխատողները պետք է վերապատրաստվեն իրենց պարտավորություններին եւ գործառույթներին ուղղակիորեն վերաբերող՝ վտանգավոր բեռների փոխադրման մասին կանոնակարգերի պահանջներին համապատասխան:

Եթե վտանգավոր բեռների փոխադրումը կապված է համակցված տրանսպորտային գործունեության հետ, ապա այդ դեպքում



աշխատակիցները պետք է իմանան տրանսպորտային մյուս եղանակներին վերաբերող պահանջների մասին:

1.3.2.3. Անվտանգության հարցերով վերապատրաստումը

Վտանգավոր բեռների փոխադրման, այդ թվում՝ բեռնման եւ բեռնաթափման ժամանակ վնասվածք ստանալու կամ ներգործության ենթարկվելու ռիսկի աստիճանով պայմանավորված՝ աշխատակազմը պետք է վերապատրաստում անցնի վտանգավոր բեռների ռիսկերի եւ վտանգավորության մասով:

Այդ վերապատրաստման ժամանակ պետք է աշխատողներին տեղեկություններ տալ անվտանգ աշխատանքի եւ վթարային արձագանքման ընթացակարգերի մասին:

1.3.2.4. Վերապատրաստումը պետք է պարբերաբար լրացվի լրացուցիչ վերապատրաստմամբ՝ հաշվի առնելու համար կանոնակարգերում կատարվող փոփոխությունները:

1.3.3. Փաստաթղթավորումը

Գործատուն պետք է պահի սույն գլխի համաձայն անցած վերապատրաստման վերաբերյալ փաստաթղթերը, որոնք պետք է հասանելի լինեն աշխատողներին եւ իրավասու մարմնին՝ ըստ պահանջի: Գործատուն փաստաթղթերը պահում է իրավասու մարմնի կողմից սահմանված ժամկետով: Վերապատրաստման վերաբերյալ փաստաթղթերը ստուգվում են նոր աշխատանքի անցնելու դեպքում:

## ԳԼՈՒԽ 1.4

### ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՌՈՒՄՈՎ

- 1.4.1. Անվտանգության ընդհանուր միջոցառումները
- 1.4.1.1. Վտանգավոր բեռներ փոխադրելիս մասնակիցները պետք է ձեռնարկեն համապատասխան միջոցներ՝ ելնելով կանխատեսելի վտանգի բնույթից ու աստիճանից, նյութական եւ մարմնական վնասներից խուսափելու կամ վթարի դեպքում վնասակար ազդեցությունը նվազեցնելու համար: Նրանք պետք է բոլոր դեպքերում բավարարեն «ԱԴՌ» համաձայնագրի պահանջները համապատասխան ոլորտներում:
- 1.4.1.2. Այն դեպքերում, երբ առկա է հասարակական անվտանգության խաթարման վերահաս վտանգ, մասնակիցները պետք է անհապաղ տեղեկացնեն արտակարգ իրավիճակների ծառայություններին եւ վերջիններիս տրամադրեն այն տվյալները, որոնք անհրաժեշտ ե՛ իրավիճակին արձագանքելու համար:
- 1.4.1.3. «ԱԴՌ» համաձայնագրով տարբեր մասնակիցների համար կարող են սահմանվել որոշակի պարտականություններ:

Այն դեպքում, երբ Պայմանավորվող կողմը կարծում է, որ անվտանգության աստիճանի նվազեցում չի սպասվում, նա կարող է կոնկրետ մասնակցի պարտավորություններն իր երկրի օրենսդրությամբ փոխանցել մեկ կամ մի քանի ուրիշ մասնակիցների, եթե 1.4.2-ով եւ 1.4.3-ով նախատեսված պարտավորությունները կատարվում են: Այս շեղումների մասին Պայմանավորվող կողմը պետք է տեղյակ պահի ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի քարտուղարությանը, որն իր հերթին պետք է դրանք ներկայացնի Պայմանավորվող կողմերի ուշադրությանը:

Մասնակիցների եւ նրանց պարտավորությունների մասին 1.2.1, 1.4.2 եւ 1.4.3-ի պահանջները չպետք է ազդեն տվյալ մասնակցի կարգավիճակից (օր.՝ իրավաբանական անձ, ինքնազբաղված անձ, գործատու կամ աշխատող) բխող իրավական հետեւանքների (քրեական բնույթ, պատասխանատվություն և այլն) մասին ազգային օրենսդրության դրույթների վրա:

- 1.4.2. Հիմնական մասնակիցների պարտավորությունները

Ծանոթագրություն 1. Մի շարք մասնակիցներ, որոնց համար սույն բաժնով նախատեսվում են անվտանգության առումով պարտավորություններ, կարող են իրենցից ներկայացնել միեւնույն ձեռնարկությունը: Միեւնույն ժամանակ մասնակցի գործունեությունը եւ

անվտանգության առումով համապատասխան պարտավորությունները կարող են իրականացվել մի քանի ձեռնարկությունների կողմից:

*Ծանոթագրություն 2. Ռադիոակտիվ նյութերի համար տե՛ս նաեւ 1.7.6:*

#### 1.4.2.1. Բեռնառաքողը

1.4.2.1.1. Վտանգավոր բեռներ առաքողը պարտավոր է փոխադրման հանձնել միայն այն բեռները, որոնք համապատասխանում են «ԱԴՌ» համաձայնագրի պահանջներին: Մասնավորապես 1.4.1-ի համատեքստում նա պետք է՝

- ա) ապահովի, որ վտանգավոր բեռները դասակարգվեն եւ փոխադրման համար թույլատրվեն «ԱԴՌ» համաձայնագրի համաձայն.
- բ) բեռնափոխադրողին տրամադրի այնպիսի տեղեկություններ ու տվյալներ, որոնք հնարավոր է վերահսկել, եւ անհրաժեշտության դեպքում՝ փոխադրման պահանջվող փաստաթղթերն ու կից փաստաթղթերը (թույլտվությունները, լիազորագրերը, տեղեկանքները, սերտիֆիկատները եւ այլն)՝ հաշվի առնելով մասնավորապես 5.4 գլխի եւ 3-րդ մասի աղյուսակների պահանջները.
- գ) օգտագործի միայն տվյալ նյութի փոխադրման համար պիտանի եւ «ԱԴՌ» համաձայնագրի մակնշումներն ունեցող փաթեթվածքներ, խոշոր փաթեթվածքներ, սորուն բեռների համար նախատեսված միջին բեռնվածության կոնտեյներներ (ՍՄԿ-ներ) եւ ցիստեռններ (ավտոցիստեռններ, հանովի ցիստեռններ, մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցներ, ԳԲՏԿ-ներ, շարժական ցիստեռններ եւ ցիստեռն-կոնտեյներներ).
- դ) բավարարի առաքման եղանակներին եւ բեռնափոխադրման սահմանափակումներին ներկայացվող պահանջները.
- ե) ապահովի, որ նույնիսկ դատարկ չմաքրված եւ չզազազերծված ցիստեռնների (ավտոցիստեռնների, հանովի ցիստեռնների, մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցների, ԳԲՏԿ-ների, շարժական ցիստեռնների եւ ցիստեռն-կոնտեյներների) կամ դատարկ չմաքրված փոխադրամիջոցների եւ սորուն բեռների համար նախատեսված կոնտեյներների վրա տեղադրված լինեն տեղեկատվական ցուցանակներ, դրանք լինեն մակնշված ու պիտակավորված՝ 5.3 գլխի համաձայն, եւ որ դատարկ չմաքրված ցիստեռնները նույն կերպ փակված եւ արտահոսքերից պաշտպանված լինեն, ինչպես լիքը ցիստեռնները:

1.4.2.1.2. Եթե բեռնառաքողն օգտվում է այլ մասնակիցների (փաթեթավորողների, բեռնողների, լցավորողների եւ այլն)

ծառայություններից, նա պետք է ձեռնարկի համապատասխան միջոցներ՝ ապահովելու համար, որ բեռը բավարարի «ԱԴՌ» համաձայնագրի պահանջները: Նա կարող է նաեւ 1.4.2.1.1 (ա), (բ), (գ) եւ (ե)-ով նախատեսված դեպքերում հիմնվել այլ մասնակիցների կողմից տրամադրված տվյալների եւ տեղեկությունների վրա:

1.4.2.1.3. Երբ բեռնառաքողը գործում է երրորդ կողմի անունից, վերջինս պետք է գրավոր տեղեկացնի բեռնառաքողին առաքանու մեջ վտանգավոր բեռների առկայության մասին եւ տրամադրի նրան բոլոր տվյալներն ու փաստաթղթերը, որոնք պահանջվում են բեռների առաքումն իրականացնելու համար:

1.4.2.2. Փոխադրողը

1.4.2.2.1. Մասնավորապես 1.4.1-ի համատեքստում, ըստ անհրաժեշտության, փոխադրողը պետք է՝

ա) ապահովի, որ փոխադրման ենթակա վտանգավոր բեռները թույլատրված լինեն փոխադրման համար՝ «ԱԴՌ» համաձայնագրի համաձայն:

բ) ապահովի, որ «ԱԴՌ» համաձայնագրով սահմանված՝ փոխադրման ենթակա վտանգավոր բեռներին առնչվող բոլոր տեղեկությունները բեռնառաքողի կողմից տրամադրված լինեն մինչեւ փոխադրումը, եւ որ սահմանված փաստաթղթերը լինեն տրանսպորտային միավորում, կամ եթե տպագիր փաստաթղթերի փոխարեն օգտագործվում են տվյալների էլեկտրոնային եղանակով մշակման (EDP) կամ տվյալների էլեկտրոնային եղանակով փոխանակման (EDI) տեխնիկաներ, ապա այդ տվյալները փոխադրման ընթացքում հասանելի լինեն առնվազն այնպես, ինչպես տպագիր փաստաթղթերի դեպքում է:

գ) համոզվի, որ փոխադրամիջոցները եւ բեռները չունենան տեսանելի դեֆեկտներ, արտահոսքեր կամ ճաքեր, պակաս մասեր եւ այլն:

դ) համոզվի, որ ավտոգիստեռնների, մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցների, հանովի ցիստեռնների, շարժական ցիստեռնների, ԳՔՏԿ-ների եւ ցիստեռն-կոնտեյներների հաջորդ փորձարկման վերջնաժամկետը չի անցել:

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Ցիստեռնները, մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցները եւ ԳՔՏԿ-ները կարող են օգտագործվել նշված վերջնաժամկետն անցնելուց հետո, եթե բավարարվում են 4.1.6.10 (որպես տարրեր ճնշումային տարաներ պարունակող մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցների եւ ԳՔՏԿ-ների դեպքում), 4.2.4.4, 4.3.2.3.7, 4.3.2.4.4, 6.7.2.19.6, 6.7.3.15.6 կամ 6.7.4.14.6-ի պայմանները:*

- ե) ստուգի, որ փոխադրամիջոցները գերբեռնված չլինեն.
- զ) համոզվի, որ 5.3 գլխով փոխադրամիջոցների համար սահմանված տեղեկատվական ցուցանակները, մակնշումները եւ նարնջագույն թիթեղները փակցված լինեն.
- է) ապահովի, որ տրանսպորտային միավորի, փոխադրամիջոցի անձնակազմի եւ որոշակի դասերի համար «ԱԴԴ» համաձայնագրով սահմանված սարքավորումները գտնվեն տրանսպորտային միավորում:

Ելնելով հանգամանքներից՝ դա կարող է իրականացվել փոխադրման եւ կից փաստաթղթերի հիման վրա, փոխադրամիջոցի կամ կոնտեյներների եւ ըստ անհրաժեշտության՝ բեռնվածքի արտաքին զննման միջոցով:

1.4.2.2.2. Փոխադրողը կարող է նաեւ 1.4.2.2.1 (ա), (բ), (ե) եւ (զ)-ով նախատեսված դեպքերում հիմնվել այլ մասնակիցների կողմից տրամադրված տեղեկությունների եւ տվյալների վրա:

1.4.2.2.3. Այն դեպքերում, երբ փոխադրողը 1.4.2.2.1-ով սահմանված կարգով «ԱԴԴ» համաձայնագրի պահանջների խախտում է հայտնաբերում, նա պետք է մինչեւ իրավիճակի շտկումը դադարեցնի բեռնափոխադրման աշխատանքները:

1.4.2.2.4. Եթե ուղերթի ժամանակ խախտում է նկատվում, որը կարող է խաթարել գործունեության անվտանգությունը, բեռնափոխադրումը հնարավորինս արագ դադարեցվում է՝ հաշվի առնելով երթեւեկության եւ հասարակական անվտանգության պահպանման եւ բեռի ապահով անշարժացման պահանջները: Փոխադրման գործունեությունը կարելի է շարունակել միայն այն բանից հետո, երբ բեռը համապատասխանեցվի գործող կանոնակարգերին: Ուղերթի մնացած մասի համար պատասխանատու իրավասու մարմինը (մարմինները) կարող է (են) թույլատրել փոխադրման գործունեությունը:

Այն դեպքերում, երբ չի կարող ապահովվել պահանջվող համապատասխանությունը, եւ ուղերթի մնացած մասի համար թույլտվություն չի տրվում, իրավասու մարմինը (մարմինները) անհրաժեշտ վարչական օժանդակություն է (են) տրամադրում փոխադրողին: Նույն կարգը գործում է նաեւ այն ժամանակ, երբ փոխադրողը հայտնում է այդ իրավասու մարմին (մարմիններին), որ բեռնառաքողի կողմից չի տեղեկացվել բեռների վտանգավոր բնույթի մասին, եւ ցանկանում է մասնավորապես փոխադրման պայմանագրի նկատմամբ կիրառելի օրենքի ուժով բեռնաթափել, ոչնչացնել կամ վնասազերծել բեռները:

1.4.2.2.5. (Նախատեսվում է վերապահում)

1.4.2.2.6. Փոխադրողը պետք է փոխադրամիջոցի անձնակազմին տրամադրի «ԱԴՌ» համաձայնագրով սահմանված գրավոր ցուցումները:

1.4.2.3. Բեռն ստացողը

1.4.2.3.1. Բեռն ստացողը պարտավոր է առանց հիմնավոր պատճառների չուշացնել ապրանքների ընդունումը, իսկ բեռնաթափումից հետո՝ ստուգել, որ իր մասով «ԱԴՌ» համաձայնագրի պահանջները բավարարվել են:

1.4.2.3.2. Եթե կոնտեյնրի դեպքում ստուգման արդյունքում հայտնաբերվում է «ԱԴՌ» համաձայնագրի պահանջների խախտում, ապա բեռն ստացողն այն վերադարձնում է փոխադրողին միայն այն բանից հետո, երբ խախտումը վերացվում է:

1.4.2.3.3. Եթե բեռն ստացողն օգտվում է այլ մասնակիցների (բեռնաթափող, մաքրող, ախտահանող եւ այլ կազմակերպությունների) ծառայություններից, նա համապատասխան միջոցներ է ձեռնարկում՝ ապահովելու համար, որ կատարվեն 1.4.2.3.1-ում եւ 1.4.2.3.2-ում նշված «ԱԴՌ» համաձայնագրի պահանջները:

1.4.3. Այլ մասնակիցների պարտավորությունները

Ստորեւ ներկայացված է այլ մասնակիցների եւ նրանց պարտավորությունների ոչ սպառիչ ցուցակը: Այլ մասնակիցների պարտավորությունները բխում են սույն փաստաթղթի վերոնշյալ 1.4.1 բաժնից այնքանով, որքանով նրանք տեղյակ են կամ պետք է տեղյակ լինեին, որ իրենց պարտականություններն իրականացվում են «ԱԴՌ» համաձայնագրով կանոնակարգվող տրանսպորտային գործունեության շրջանակներում:

1.4.3.1. Բեռնողը

1.4.3.1.1. Մասնավորապես 1.4.1-ի համատեքստում բեռնողը պետք է՝

ա) վտանգավոր բեռները փոխանցի փոխադրողին միայն այն դեպքում, երբ դրանք թույլատրված են փոխադրման համար՝ «ԱԴՌ» համաձայնագրի համաձայն:

բ) փաթեթավորված վտանգավոր բեռները կամ չմաքրված դատարկ փաթեթավաճքները փոխադրման հանձնելիս ստուգի՝ արդյոք վնասված չէ փաթեթավաճքը: Մինչեւ վնասված մասի նորոգումը նա չպետք է փոխադրման հանձնի այն փաթեթը, որի փաթեթավաճքը վնասված է, հատկապես, եթե այն անջրանցիկ չէ, եւ առկա են վտանգավոր նյութերի արտահոսքեր կամ դրանց ի հայտ գալու վտանգ: Այս պահանջը տարածվում է նաեւ դատարկ չմաքրված փաթեթավաճքների վրա:

- գ) բավարարի բեռնմանը եւ վարվելակարգին ներկայացվող հատուկ պահանջները.
- դ) կոնտեյները վտանգավոր բեռներով բեռնելուց հետո բավարարի 5.3 գլխում ներկայացված՝ տեղեկատվական ցուցանակների, մակնշման եւ նարնջագույն թիթեղների հետ կապված պահանջները.
- ե) փաթեթները բեռնելիս ենթարկվի վտանգավոր բեռների խառը բեռնման հետ կապված սահմանափակումներին՝ հաշվի առնելով փոխադրամիջոցում կամ մեծ կոնտեյներում մինչեւ այդ տեղավորված վտանգավոր բեռները, ինչպես նաեւ բավարարի սննդամթերքն այլ սպառողական ապրանքներից կամ անասնակերից առանձնացնելու պահանջը:

1.4.3.1.2. Բեռնողը կարող է նաեւ 1.4.3.1.1 (ա), (դ) եւ (ե)-ով նախատեսված դեպքերում հիմնվել այլ մասնակիցների կողմից տրամադրված տեղեկությունների եւ տվյալների վրա:

#### 1.4.3.2. Փաթեթավորողը

Մասնավորապես 1.4.1-ի համատեքստում փաթեթավորողը պետք է՝

- ա) բավարարի փաթեթավորման կամ խառը փաթեթավորման պայմաններին ներկայացվող պահանջները,
- բ) փաթեթները փոխադրման համար նախապատրաստելիս կատարի դրանց մակնշման եւ պիտակավորման հետ կապված պահանջները:

#### 1.4.3.3. Լցավորողը

Մասնավորապես 1.4.1-ի համատեքստում լցավորողը պետք է՝

- ա) ցիստեռնը լցավորելուց առաջ համոզվի, որ ցիստեռնը եւ դրա սարքավորումները տեխնիկապես բավարար վիճակում են գտնվում.
- բ) համոզվի, որ ավտոցիստեռնների, մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցների, հանովի ցիստեռնների, շարժական ցիստեռնների, ԳԲՏԿ-ների եւ ցիստեռն-կոնտեյներների հերթական փորձարկման ժամկետը չի անցել.
- գ) ցիստեռնները լցավորի միայն այն վտանգավոր բեռներով, որոնց փոխադրումը թույլատրվում է տվյալ տեսակի ցիստեռններով.
- դ) ցիստեռնը լցավորելիս կատարի հարակից հատվածամասերում առկա վտանգավոր բեռներին ներկայացվող պահանջները.

- ե) ցիստեռնը լցավորելիս չգերազանցի լցավորվող նյութի համար սահմանված լցավորման առավելագույն թույլատրելի աստիճանը կամ տարողության մեկ լիտրին բաժին ընկնող լցանյութի առավելագույն թույլատրելի զանգվածը.
- զ) ցիստեռնը լցավորելուց հետո ապահովի, որ բոլոր փականները լինեն փակ, ինչպես նաև որեւէ արտահոսք չլինի.
- է) ապահովի, որ ցիստեռնի արտաքին մակերեսային վրա չմնան լցավորվող վտանգավոր նյութի մնացորդներ.
- ը) վտանգավոր բեռները փոխադրման համար նախապատրաստելիս համոզվի, որ ցիստեռնների, փոխադրամիջոցների եւ խուռնաբեռն փոխադրման համար նախատեսված կոնտեյներների վրա փակցված են տեղեկատվական ցուցանակներ, մակնշումներ, նարնջագույն թիթեղներ եւ պիտակներ՝ 5.3 գլխի համաձայն.
- թ) (Նախատեսվում է վերապահում)
- ժ) փոխադրամիջոցները կամ կոնտեյներները վտանգավոր բեռներով խուռնաբեռն լցավորելիս համոզվի, որ 7.3 գլխի պահանջները բավարարված են:

1.4.3.4. Ցիստեռն-կոնտեյների /շարժական ցիստեռնի օպերատորը

Մասնավորապես 1.4.1-ի համատեքստում ցիստեռն-կոնտեյների/շարժական ցիստեռնի օպերատորը պետք է՝

- ա) ապահովի տեխնիկական միջոցի կառուցվածքին, սարքավորմանը, փորձարկմանը եւ մակնշմանը ներկայացվող պահանջների կատարումը.
- բ) ապահովի, որ կորպուսների եւ դրանց սարքավորումների շահագործումն իրականացվի այնպես, որ նորմալ պայմաններում օգտագործման դեպքում ցիստեռն-կոնտեյները/շարժական ցիստեռնը համապատասխանի «ԱԴԴ» համաձայնագրի պահանջներին՝ մինչեւ հերթական տեխզնումը.
- գ) իրականացնի արտահերթ ստուգում, եթե կասկած կա, որ կորպուսի կամ դրա սարքավորման հուսալիության աստիճանը նվազել է վերանորոգման, ձեւափոխման կամ վթարի հետեւանքով:

1.4.3.5. եւ 1.4.3.6 (Նախատեսվում է վերապահում)

1.4.3.7. Բեռնաթափողը

1.4.3.7.1. Մասնավորապես 1.4.1-ի համատեքստում բեռնաթափողը պետք է՝

- ա) համոզվի, որ բեռնաթափվում են ճիշտ բեռներ՝ տրանսպորտային



փաստաթղթում նշված համապատասխան տեղեկությունները համեմատելով փաթեթի, կոնտեյների, ցիստեռնի, ՊԱՇՄ-ի, ԳԲՏԿ-ի կամ փոխադրամիջոցի վրա նշված տեղեկությունների հետ.

- բ) բեռնաթափումից առաջ եւ դրա ընթացքում ստուգի՝ արդյոք վնասված չեն փաթեթվածքները, ցիստեռնը, փոխադրամիջոցը կամ կոնտեյները, եւ արդյոք դա չի վտանգում բեռնաթափման աշխատանքները: Վտանգման դեպքում նա պետք է ապահովի, որ բեռնաթափման աշխատանքները շարունակվեն միայն այն բանից հետո, երբ ձեռնարկվեն համապատասխան միջոցները.
- գ) կատարի բեռնաթափման աշխատանքներին եւ վարվելակարգին ներկայացվող բոլոր համապատասխան պահանջները.
- դ) ցիստեռնի, փոխադրամիջոցի կամ կոնտեյների բեռնաթափումից անմիջապես հետո՝
  - i) հեռացնի ցիստեռնի, փոխադրամիջոցի կամ կոնտեյների արտաքին մակերեսային բեռնաթափման ժամանակ կապձ բոլոր վտանգավոր մնացորդները,
  - ii) ապահովի կափույրների եւ դիտանցքերի հերմետիկ փակումը.
- ե) ապահովի, որ փոխադրամիջոցները կամ կոնտեյներները սահմանված կարգով մաքրվեն եւ ախտահանվեն,
- զ) ապահովի, որ ամբողջությամբ բեռնաթափված, մաքրված եւ ախտահանված կոնտեյներների վրայից հանվեն 5.3 գլխի համաձայն փակցված տեղեկատվական ցուցանակները, մակնշումները եւ նարնջագույն թիթեղները:

1.4.3.7.2. Եթե բեռնաթափողն օգտվում է այլ մասնակիցների (մաքրող, ախտահանող եւ այլ կազմակերպությունների) ծառայություններից, նա համապատասխան միջոցներ է ձեռնարկում՝ ապահովելու համար, որ կատարվեն «ԱԴԴ» համաձայնագրի պահանջները:

## ԳԼՈՒԽ 1.5 ՇԵՂՈՒՄՆԵՐԸ

- 1.5.1. Սահմանված կարգից ժամանակավոր շեղումները
- 1.5.1.1. «ԱԴՌ» համաձայնագրի 4-րդ հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ Պայմանավորվող կողմերի իրավասու մարմինները կարող են ուղղակիորեն միմյանց հետ համաձայնության գալ՝ իրենց երկրների տարածքում առանձին տրանսպորտային գործունեության մասով «ԱԴՌ» համաձայնագրի պահանջներից որոշ ժամանակավոր շեղումներ թույլատրելու վերաբերյալ, եթե դրանով չի խաթարվում անվտանգությունը: Այն մարմինը, որը հանդես է գալիս ժամանակավոր շեղումների հետ կապված նախաձեռնությամբ, պետք է տեղեկացնի դրա մասին ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի քարտուղարությանը, որն իր հերթին պետք է այն ներկայացնի Պայմանավորվող կողմերին<sup>1</sup>:
- ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. 1.7.4-ով նախատեսված «հատուկ ռեժիմը» չի համարվում ժամանակավոր շեղում՝ սույն բաժնի համաձայն:*
- 1.5.1.2. Սահմանված կարգից ժամանակավոր շեղումը չի կարող գործել այն ուժի մեջ մտնելու օրվանից 5 տարուց ավելի: «ԱԴՌ» համաձայնագրում համապատասխան փոփոխություն կատարելու դեպքում ժամանակավոր շեղումը մեխանիկորեն դադարում է գործել նշված փոփոխություններն ուժի մեջ մտնելու օրվանից:
- 1.5.1.3. Ժամանակավոր շեղումների հիման վրա իրականացվող տրանսպորտային գործունեությունը համարվում է «ԱԴՌ» համաձայնագրի շրջանակներում իրականացվող տրանսպորտային գործունեություն:
- 1.5.2. (Նախատեսվում է վերապահում)

## ԳԼՈՒԽ 1.6 ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

- 1.6.1. Ընդհանուր դրույթները
- 1.6.1.1. Եթե այլ բան նախատեսված չէ, «ԱԴՌ» համաձայնագրի կարգավորման դաշտի մեջ մտնող նյութերն ու պատրաստվածքները կարող են փոխադրվել մինչև 2017 թվականի հունիսի 30-ը՝ մինչև 2016 թվականի

---

<sup>1</sup> **Ծանոթագրություն՝ քարտուղարության կողմից.** Սույն գլխի հիման վրա կնքված հատուկ պայմանագրերին կարող եք ծանոթանալ Եվրոպայի հարցերով ՄԱԿ-ի տնտեսական հանձնաժողովի քարտուղարության կայքէջում (<http://www.unece.org/trans/danger/danger.htm>):

դեկտեմբերի 31-ը գործող «ԱԴՌ» համաձայնագրի պահանջների համաձայն:

1.6.1.2. (Հանվել է)

1.6.1.3. Պայմանավորվող կողմերից մեկի զինված ուժերին պատկանող առաջին դասի այն նյութերն ու պատրաստվածքները, որոնք փաթեթավորվել են մինչև 1990 թվականի հունվարի 1-ը՝ այդ պահի դրությամբ գործող «ԱԴՌ» համաձայնագրի պահանջների համաձայն, կարող են փոխադրվել 1989 թվականի դեկտեմբերի 31-ից հետո, եթե փաթեթավածքներն անվնաս են մնացել, իսկ նյութերը հայտարարագրվել են տրանսպորտային փաստաթղթերում որպես «մինչև 1990 թվականի հունվարի 1-ը փաթեթավորված ռազմական պարագաներ»: Այս դասի համար 1990 թվականի հունվարի 1-ից գործող մնացած պահանջները պետք է կատարվեն:

1.6.1.4. Առաջին դասի այն նյութերն ու պատրաստվածքները, որոնք փաթեթավորվել են 1990 թվականի հունվարի 1-ից մինչև 1996 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում՝ այդ պահի դրությամբ գործող «ԱԴՌ» համաձայնագրի պահանջների համաձայն, կարող են փոխադրվել 1996 թվականի դեկտեմբերի 31-ից հետո, եթե փաթեթավածքներն անվնաս են մնացել, իսկ նյութերը հայտարարագրվել են տրանսպորտային փաստաթղթերում որպես «1990 թվականի հունվարի 1-ից մինչև 1996 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում փաթեթավորված առաջին դասի ապրանքներ»:

1.6.1.5. (Նախատեսվում է վերապահում)

1.6.1.6. Մինչև 2001 թվականի հունիսի 30-ը գործող թիվ 3612 (1) լուսանցագրի համաձայն՝ մինչև 2003 թվականի հունվարի 1-ն արտադրված սորուն բեռների համար նախատեսված միջին բեռնվածության կոնտեյներները (ՍՄԿ-ներ), որոնք չեն համապատասխանում 2001 թվականի հուլիսի 1-ից կիրառելի տառերի, թվերի եւ խորհրդանշանների բարձրության մասին 6.5.2.1.1-ի պահանջներին, կարող են մնալ օգտագործման մեջ:

1.6.1.7. Բարձր կամ միջին մոլեկուլային զանգված ունեցող պոլիէթիլեններից պատրաստված թմբկազևանների, կանխատրների եւ բարդ փաթեթավածքների համար մինչև 2005 թվականի հուլիսի 1-ը 6.1.5.2.6-ի պահանջների համաձայն տրամադրված տեսակի հաստատումները, որոնք ուժի մեջ են մինչև 2004 թվականի դեկտեմբերի 31-ը, բայց որոնք չեն համապատասխանում 4.1.1.21-ի պահանջներին, ուժի մեջ կմնան մինչև 2009 թվականի դեկտեմբերի 31-ը: Նշված փաթեթավածքները, որոնք արտադրվել ու մակնշվել են տեսակի հաստատման հիշյալ որոշումների հիման վրա, կարող են օգտագործվել մինչև 4.1.1.15-ի համաձայն հաշվարկված շահագործման ժամկետի

ավարտը:

1.6.1.8. Օգտագործման մեջ գտնվող նարնջագույն թիթեղները, որոնք համապատասխանում են մինչև 2004 թվականի դեկտեմբերի 31-ը գործող 5.3.2.2-ի պահանջներին, կարող են շարունակել օգտագործվել, եթե 5.3.2.2.1-ի եւ 5.3.2.2.2-ի պահանջները, որոնց համաձայն թիթեղը, թվերը եւ տառերը մնում են նույն տեղերում՝ անկախ փոխադրամիջոցի դիրքից, կատարվում են:

1.6.1.9. եւ 1.6.1.10. (Հանվել են)

1.6.1.11 Բարձր կամ միջին մոլեկուլային զանգված ունեցող պոլիէթիլեններից պատրաստված թմբկազևանների, կանխատրների եւ բարդ փաթեթվածքների, ինչպես նաեւ բարձր մոլեկուլային զանգված ունեցող պոլիէթիլեններից պատրաստված ՍՄԿ-ների համար մինչև 2006 թվականի դեկտեմբերի 31-ը գործող 6.1.6.1 (ա)-ով սահմանված պահանջների համաձայն մինչև 2007 թվականի հուլիսի 1-ը տրամադրված տեսակի հաստատումները, որոնք, սակայն, չեն համապատասխանում 6.1.6.1 (ա)-ով 2007 թվականի հունվարի 1-ից հետո ընկած ժամանակահատվածի համար սահմանված պահանջներին, կշարունակեն ուժի մեջ մնալ:

1.6.1.12. եւ 1.6.1.13. (Հանվել են)

1.6.1.14. Մինչև 2011 թվականի հունվարի 1-ն արտադրված եւ 6.5.6.13-ով նախատեսված թրթռման փորձարկում չանցած կառուցվածքի տեսակին համապատասխանող ՍՄԿ-ները կամ այն ՍՄԿ-ները, որոնց անկման փորձարկման ժամանակ 6.5.6.9.5 (դ)-ով սահմանված չափորոշիչները բավարարելու պահանջ ներկայացված չի եղել, կարող են դեռ օգտագործվել:

1.6.1.15. Մինչև 2011 թվականի հունվարի 1-ն արտադրված, վերարտադրված կամ վերանորոգված ՍՄԿ-ները կարող են չմակնշվել դարսակման դեպքում առավելագույն թույլատրելի բեռնվածքի նշանով՝ 6.5.2.2.2-ի համաձայն: Նշված 6.5.2.2.2-ին համապատասխան չմակնշված ՍՄԿ-ները կարող են դեռ օգտագործվել 2010 թվականի դեկտեմբերի 31-ից հետո, բայց այդ օրվանից հետո վերարտադրվելու կամ վերանորոգման ենթարկվելու դեպքում պետք է մակնշվեն 6.5.2.2.2-ին համապատասխան: 2011 թվականի հունվարի 1-ից մինչև 2016 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում արտադրված, վերարտադրված կամ վերանորոգված եւ մինչև 2014 թվականի դեկտեմբերի 31-ը գործող 6.5.2.2.2-ի համաձայն՝ դարսակման դեպքում առավելագույն թույլատրելի բեռնվածքի նշանով մակնշված ՍՄԿ-ները կարող են շարունակել օգտագործվել:

1.6.1.16 - 1.6.1.20 (Հանվել են)

- 1.6.1.21. Պայմանավորվող կողմերի կողմից մինչև 2012 թվականի դեկտեմբերի 31-ը թողարկված՝ վարորդների համար մինչև 2010 թվականի դեկտեմբերի 31-ն ընդունված ձեռագրված վերապատրաստման սերտիֆիկատները կարող են 8.2.2.8.5-ի պահանջներին համապատասխանող սերտիֆիկատների փոխարեն օգտագործվել մինչև դրանց 5-ամյա վավերականության ժամկետի ավարտը:
- 1.6.1.22. Մինչև 2011 թվականի հուլիսի 1-ն արտադրված եւ 6.5.2.2.4-ի՝ մինչև 2010 թվականի դեկտեմբերի 31-ը գործող պահանջների համաձայն մակնշված բարդ ՍՄԿ-ների ներքին տարաները կարող են դեռ օգտագործվել:
- 1.6.1.23. Մինչև 2010 թվականի դեկտեմբերի 31-ը կիրառելի 8.1.4.3-ում նշված պահանջներին համապատասխան մինչև 2011 թվականի հուլիսի 1-ն արտադրված կրակմարիչները կարող են շարունակել օգտագործվել:
- 1.6.1.24. (Հանվել է)
- 1.6.1.25. 60 լիտր կամ դրանից պակաս տարողությամբ այն բալոնները, որոնք «ԱԴԴ» համաձայնագրի՝ մինչև 2012 թվականի դեկտեմբերի 31-ը կիրառելի դրույթներին համապատասխան մակնշված են ՄԱԿ-ի նշագրման համարով, եւ որոնք չեն համապատասխանում 2013 թվականի հունվարի 1-ից կիրառվող՝ ՄԱԿ-ի նշագրման համարի եւ «ՄԱԿ» տառերի չափի վերաբերյալ 5.2.1.1-ի պահանջներին, կարող են շարունակել օգտագործվել մինչև հաջորդ պարբերական ստուգումը, սակայն 2018 թվականի հունիսի 30-ից ոչ ուշ:
- 1.6.1.26. Այն խոշոր փաթեթվածքները, որոնք արտադրվել կամ վերարտադրվել են մինչև 2014 թվականի հունվարի 1-ը եւ չեն համապատասխանում 2013 թվականի հունվարի 1-ից կիրառվող՝ տառերի, թվերի եւ խորհրդանշանների բարձրության վերաբերյալ 6.6.3.1-ի պահանջներին, կարող են շարունակել օգտագործվել: Մինչև 2015 թվականի հունվարի 1-ն արտադրված կամ վերարտադրված խոշոր փաթեթվածքները կարող են չմակնշվել դարսակման դեպքում առավելագույն թույլատրելի բեռնվածքի նշանով՝ 6.6.3.3-ի համաձայն: 6.6.3.3-ի համաձայն չմակնշված այդպիսի խոշոր փաթեթվածքները կարող են շարունակել օգտագործվել մինչև 2014 թվականի դեկտեմբերի 31-ը. այդ օրվանից հետո վերարտադրվելու դեպքում պետք է պարտադիր մակնշվեն 6.6.3.3-ի համաձայն: 2011 թվականի հունվարի 1-ից մինչև 2016 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում արտադրված կամ վերարտադրված եւ մինչև 2014 թվականի դեկտեմբերի 31-ը գործող 6.6.3.3-ի համաձայն՝ դարսակման դեպքում առավելագույն թույլատրելի բեռնվածքի նշանով մակնշված խոշոր փաթեթվածքները կարող են շարունակել

օգտագործվել:

1.6.1.27. Մինչև 2013 թվականի հուլիս 1-ն արտադրված՝ սարքավորումների կամ մեքենաների անբաժանելի մաս կազմող տեղայնացման միջոցները, որոնք պարունակում են ՄԱԿ-ի նշագրման 1202, 1203, 1223, 1268, 1863 եւ 3475 համարների ներքո դասակարգված հեղուկ վառելիք եւ չեն համապատասխանում 2013 թվականի հունվարի 1-ից կիրառվող 3.3 գլխի 363-րդ հատուկ դրույթի «ա» պարբերության պահանջներին, կարող են շարունակել օգտագործվել:

1.6.1.28. (Հանվել է)

1.6.1.29. Լիթիումային էլեմենտներն ու մարտկոցները, որոնք արտադրված են «Փորձարկումների եւ չափորոշիչների ձեռնարկ»-ի 3-րդ վերանայված հրատարակության 1-ին փոփոխության կամ տեսակի փորձարկման օրը կիրառվող ցանկացած հետագա վերանայված կամ փոփոխված տարբերակի 38.3 ենթաբաժնի պահանջներին համապատասխանող տեսակի համաձայն, կարող են շարունակել փոխադրվել, եթե այլ բան նախատեսված չէ «ԱԴՌ» համաձայնագրով:

Մինչև 2003 թվականի հուլիսի 1-ն արտադրված լիթիումային էլեմենտներն ու մարտկոցները, որոնք համապատասխանում են «Փորձարկումների եւ չափորոշիչների ձեռնարկ»-ի 3-րդ վերանայված հրատարակության պահանջներին, կարող են շարունակել փոխադրվել, եթե մյուս բոլոր կիրառելի պահանջները բավարարված են:

1.6.1.30. Մինչև 2014 թվականի դեկտեմբերի 31-ը կիրառվող 5.2.2.2.1.1-ի պահանջները բավարարող պիտակները կարող են շարունակել օգտագործվել մինչև 2019 թվականի հունիսի 30-ը:

1.6.1.31. եւ 1.6.1.32. (Հանվել են)

1.6.1.33. ՄԱԿ-ի նշագրման 3499 համարի էլեկտրական կրկնակի շերտ ունեցող կոնդենսատորները, որոնք արտադրվել են մինչև 2014 թվականի հունվարի 1-ը, կարող են չմակնշվել Վատտ-ժամով արտահայտված էներգատարողության մասին նշումով, ինչպես պահանջվում է 3.3 գլխի 361-րդ հատուկ դրույթի «ե» ենթապարբերությամբ:

1.6.1.34. ՄԱԿ-ի նշագրման 3508 համարի ասիմետրիկ կոնդենսատորները, որոնք արտադրվել են մինչև 2016 թվականի հունվարի 1-ը, կարող են չմակնշվել Վատտ-ժամով արտահայտված էներգատարողության մասին նշումով, ինչպես պահանջվում է 3.3 գլխի 372-րդ հատուկ դրույթի «գ» ենթապարբերությամբ:

1.6.1.35. «ԱԴՌ» համաձայնագրի՝ մինչև 2014 թվականի դեկտեմբերի 31-ը կիրառվող պահանջներին համապատասխանող գրավոր ցուցումները, որոնք, այնուամենայնիվ, չեն համապատասխանում 2015 թվականի հունվարի 1-ից կիրառվող 5.4.3-ի պահանջներին, կարող են

շարունակել օգտագործվել մինչև 2017 թվականի հունիսի 30-ը:

- 1.6.1.36. Մինչև 2014 թվականի հունվարի 1-ը թողարկված՝ վարորդների վերապատրաստման սերտիֆիկատները, որոնք չեն համապատասխանում 2013 թվականի հունվարի 1-ից կիրառվող 8.2.2.8.5-ի՝ 4-րդ եւ 8-րդ համարների տակ ամսաթվերի նշման հերթականության, գույնի (սպիտակ՝ սեւ տառերով), ինչպես նաեւ այն դասերի համապատասխան ցանկերի, որոնց դեպքում սերտիֆիկատը համարվում է վավեր, ներկայացման համար սերտիֆիկատի դարձերեսին 9-րդ եւ 10-րդ համարների օգտագործման հետ կապված պահանջներին, կարող են շարունակել օգտագործվել մինչև դրանց ժամկետը լրանալը:
- 1.6.1.37. (Նախատեսվում է վերապահում)
- 1.6.1.38. Մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը Պայմանավորվող կողմերը կարող են 2017 թվականի հունվարի 1-ից կիրառվող 1.8.3.18-ի պահանջներին համապատասխանող սերտիֆիկատների փոխարեն շարունակել թողարկել մինչև 2016 թվականի դեկտեմբերի 31-ն ընդունված ձեւաչափով՝ վտանգավոր բեռների անվտանգության հարցերով խորհրդատուների վերապատրաստման սերտիֆիկատներ: Այդ սերտիֆիկատները կարող են շարունակել օգտագործվել մինչև դրանց 5-ամյա վավերականության ժամկետի ավարտը:
- 1.6.1.39. Չնայած 2017 թվականի հունվարի 1-ից կիրառվող 3.3 գլխի 188-րդ հատուկ դրույթի պահանջներին՝ լիթուանյան էլեմենտներ կամ մարտկոցներ պարունակող փաթեթները կարող են շարունակել մակնշվել մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը՝ մինչև 2016 թվականի դեկտեմբերի 31-ը գործող 3.3 գլխի 188-րդ հատուկ դրույթի պահանջներին համապատասխան:
- 1.6.1.40. Չնայած «ԱԴՌ» համաձայնագրի՝ 2017 թվականի հունվարի 1-ից կիրառվող պահանջներին՝ մինչև 2016 թվականի դեկտեմբերի 31-ն արտադրված՝ ՄԱԿ-ի նշագրման 0015, 0016 եւ 0303 համարների պատրաստվածքները, որոնք 6.1 դասի չափորոշիչների համաձայն պարունակում են շնչելու համար թունավոր ծուխ արտադրող նյութ (նյութեր), կարող են մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը փոխադրվել առանց «ԹՈՒՆԱՎՈՐ» լրացուցիչ ռիսկի պիտակի (մոդել թիվ 6.1, տե՛ս 5.2.2.2.2):
- 1.6.1.41. Չնայած «ԱԴՌ» համաձայնագրի՝ 2017 թվականի հունվարի 1-ից կիրառվող պահանջներին՝ փաթեթավորման III խմբի շահագործման մակարդակին համապատասխանող խոշոր փաթեթվածքները, մինչև 2016 թվականի դեկտեմբերի 31-ը կիրառվող 4.1.4.3-ի LP02 փաթեթավորման ցուցման L2 փաթեթավորման վերաբերյալ հատուկ դրույթին համապատասխան, կարող են շարունակել օգտագործվել

մինչեւ 2022 թվականի դեկտեմբերի 31-ը՝ ՄԱԿ-ի նշագրման 1950 համարի դեպքում:

- 1.6.1.42. Չնայած ՄԱԿ-ի նշագրման 3090, 3091, 3480 եւ 3481 համարների նկատմամբ 3.2 գլխի Ա աղյուսակի 5-րդ սյունակի՝ 2017 թվականի հունվարի 1-ից կիրառվող պահանջներին՝ 9-րդ դասի պիտակը (մոդել թիվ 9, տե՛ս 5.2.2.2.2) կարող է ՄԱԿ-ի նշագրման այս համարների դեպքում օգտագործվել մինչեւ 2018 թվականի դեկտեմբերի 31-ը:
- 1.6.1.43. Մինչեւ 2017 թվականի հուլիսի 1-ը 3.3 գլխի 240-րդ, 385-րդ եւ 669-րդ հատուկ դրույթներով սահմանված կարգով գրանցված կամ շահագործման մեջ դրված փոխադրամիջոցները եւ փոխադրման ընթացքում օգտագործվելու համար նախատեսված դրանց սարքավորումները, որոնք համապատասխանում են «ԱԴՌ» համաձայնագրի՝ մինչեւ 2016 թվականի դեկտեմբերի 31-ը կիրառվող պահանջներին, սակայն պարունակում են 2.2.9.1.7-ի պահանջներին չհամատասխանող լիթիումային էլեմենտներ եւ մարտկոցներ, կարող են շարունակել փոխադրվել որպես բեռ՝ 3.3 գլխի 666-րդ հատուկ դրույթի պահանջներին համապատասխան:
- 1.6.2. Ծնշումային տարաները եւ 2-րդ դասի տարաները
  - 1.6.2.1. Մինչեւ 1997 թվականի հունվարի 1-ը պատրաստված եւ «ԱԴՌ» համաձայնագրի 1997 թվականի հունվարի 1-ից գործող պահանջներին չհամապատասխանող, բայց «ԱԴՌ» համաձայնագրի 1996 թվականի դեկտեմբերի 31-ից գործող պահանջներով փոխադրման համար թույլատրված տարաները կարող են շարունակել փոխադրվել նշված օրվանից հետո, եթե P200 եւ P203 փաթեթավորման ցուցումներով նախատեսված պարբերական փորձարկման պահանջները կատարվում են:
  - 1.6.2.2. (Հանվել է)
  - 1.6.2.3. Մինչեւ 2003 թվականի հունվարի 1-ը պատրաստված եւ 2-րդ դասի նյութերի փոխադրման համար նախատեսված տարաները կարող են 2003 թվականի հունվարի 1-ից հետո էլ օգտագործվել 2002 թվականի դեկտեմբերի 31-ին ուժը կորցրած պահանջներին համապատասխանող մակնշումներով:
  - 1.6.2.4. Շրջանառությունից 6.2.5-ի համաձայն հանված տեխնիկական կանոններով նախագծված եւ պատրաստված ճնշումային տարաները կարող են դեռ օգտագործվել:
  - 1.6.2.5. Այն ճնշումային տարաները եւ դրանց փականները, որոնք նախագծվել եւ պատրաստվել են այդ ժամանակ կիրառելի ստանդարտներին եւ «ԱԴՌ» համաձայնագրի դրույթներին համապատասխան (տես 6.2.4), կարող են դեռ օգտագործվել, եթե դրանց օգտագործումը չի



սահմանափակվել հատուկ անցումային միջոցներով:

1.6.2.6. Մինչև 2008 թվականի դեկտեմբերի 31-ը գործող 4.1.4.4-ի պահանջների համաձայն եւ մինչև 2009 թվականի հուլիսի 1-ը պատրաստված, սակայն 2009 թվականի հունվարի 1-ից կիրառելի 4.1.3.6-ի պահանջներին չհամապատասխանող այն ճնշումային տարաները, որոնք նախատեսված են 2-րդ դասի մեջ չմտնող նյութերի համար, կարող են շարունակել օգտագործվել, եթե կատարվում են մինչև 2008 թվականի դեկտեմբերի 31-ը գործող 4.1.4.4-ի պահանջները:

1.6.2.7 եւ 1.6.2.8 (Հանվել են)

1.6.2.9. P200(10) փաթեթավորման ցուցման եւ 4.1.4.1-ի «v» ենթակետի՝ փաթեթավորման հատուկ դրույթները, որոնք կիրառելի են մինչև 2010 թվականի դեկտեմբերի 31-ը, կարող են կիրառվել «ԱԴՌ» համաձայնագրի կողմերի կողմից մինչև 2015 թվականի հունվարի 1-ը պատրաստված բալոնների նկատմամբ:

1.6.2.10. Գազերի փոխադրման համար նախատեսված ՄԱԿ-ի նշագրման 1011, 1075, 1965, 1969 կամ 1978 համարները կրող վերալցավորվող եռակցված պողպատե բալոնները, որոնց համար P200(10) փաթեթավորման ցուցման եւ 4.1.4.1-ի «v» ենթակետի փաթեթավորման հատուկ դրույթներով փոխադրման երկրի (երկրների) իրավասու մարմնի կողմից սահմանվել էր ստուգումների 15 տարվա պարբերականություն, ինչը կիրառելի է մինչև 2010 թվականի դեկտեմբերի 31-ը, կարող են հետագայում եւս ենթարկվել պարբերական ստուգումների՝ այդ դրույթների համաձայն:

1.6.2.11. Մինչև 2013 թվականի հունվարի 1-ը փոխադրման համար արտադրված եւ նախապատրաստված գազի անոթները, որոնց նկատմամբ չեն կիրառվել 1.8.6, 1.8.7 կամ 1.8.8-ի՝ գազի անոթների համապատասխանության գնահատման վերաբերյալ պահանջները, կարող են դեռ փոխադրվել այդ ամսաթվից հետո՝ պայմանով, որ պահպանվեն «ԱԴՌ» համաձայնագրի կիրառելի մյուս բոլոր դրույթները:

1.6.2.12. Վթարային ճնշումային տարաները կարող են մինչև 2013 թվականի դեկտեմբերի 31-ը շարունակել արտադրվել եւ հաստատվել ազգային կանոնակարգերի համաձայն: Մինչև 2014 թվականի հունվարի 1-ն ազգային կանոնակարգերի համաձայն արտադրված եւ հաստատված վթարային ճնշումային տարաները կարող են շարունակել օգտագործվել օգտագործման երկրների իրավասու մարմինների հաստատմամբ:

1.6.2.13 Մինչև 2013 թվականի հուլիսի 1-ն արտադրված բալոնների կապուկները, որոնք չեն մակնշվել 2013 թվականի հունվարի 1-ից կիրառվող 6.2.3.9.7.2-ին եւ 6.2.3.9.7.3-ին կամ 2015 թվականի

հունվարի 1-ից կիրառվող 6.2.3.9.7.2-ին համապատասխան, կարող են օգտագործվել մինչև 2015 թվականի հուլիսի 1-ից հետո հաջորդ պարբերական ստուգումը:

- 1.6.2.14. Մինչև 2016 թվականի հունվարի 1-ը 6.2.3-ին եւ փոխադրման ու օգտագործման երկրների իրավասու մարմինների կողմից հաստատված մասնագրին համապատասխան, սակայն 4.1.4.1-ով, P208 (1) փաթեթավորման ցուցումով պահանջվող ISO 11513:2011-ին կամ ISO 9809-1:2010-ին ոչ համապատասխան արտադրված բալոնները կարող են օգտագործվել կլանված (ադսորբված) գազերի փոխադրման համար՝ պայմանով, որ պահպանվեն 4.1.6.1-ի փաթեթավորման ընդհանուր պահանջները:
- 1.6.2.15. Մինչև 2015 թվականի հուլիսի 1-ը պարբերաբար ստուգված բալոնների կապուկները, որոնք մակնշված չեն 2015 թվականի հունվարի 1-ից կիրառվող 6.2.3.9.7.3-ին համապատասխան, կարող են օգտագործվել մինչև 2015 թվականի հուլիսի 1-ից հետո հաջորդ պարբերական ստուգումը:
- 1.6.3 Անշարժ ցիստեռնները (ավտոցիստեռնները), հանովի ցիստեռնները եւ մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցները
  - 1.6.3.1. 1978 թվականի հոկտեմբերի 1-ից կիրառման համար նախատեսված պահանջներն ուժի մեջ մտնելուց առաջ պատրաստված անշարժ ցիստեռնները (ավտոցիստեռնները), հանովի ցիստեռնները եւ մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցները կարող են շահագործվել, եթե կորպուսի սարքավորումները բավարարում են 6.8 գլխի պահանջները: Կորպուսի պատի հաստությունը, բացառությամբ 2-րդ դասի սառեցված-հեղուկացված գազերի փոխադրման համար նախատեսված կորպուսների, պետք է լինի առնվազն 0.4 ՄՊա (4 բար) (մանոմետրական ճնշում) հաշվարկային ճնշման համապատասխան՝ փափուկ պողպատի դեպքում, կամ առնվազն 200 կՊա (2 բար) (մանոմետրական ճնշում) ճնշման համար՝ ալյումինի եւ ալյումինի համաձուլվածքների դեպքում: Ոչ օղակաձեւ կտրվածք ունեցող ցիստեռնների դեպքում հաշվարկներում օգտագործվում է ցիստեռնի փաստացի կտրվածքի մակերեսով շրջանագծի տրամագիծը:
  - 1.6.3.2. Այս անցումային պահանջների հիման վրա շահագործվող անշարժ ցիստեռնների (ավտոցիստեռնների), հանովի ցիստեռնների եւ մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցների պարբերական փորձարկումները պետք է իրականացվեն 6.8.2.4-ի եւ 6.8.3.4-ի պահանջների եւ տարբեր դասերի համար գործող հատուկ պահանջների համաձայն: Եթե նախկինում գործող պահանջներով ավելի բարձր փորձարկման ճնշում չի պահանջվել, ապա 200 կՊա

(2 բար) (մանոմետրական ճնշմամբ) փորձարկման ճնշումը բավարար է այլումինից եւ այլումինի համաձուլվածքներից պատրաստված կորպուսների համար:

- 1.6.3.3. 1.6.3.1-ով եւ 1.6.3.2-ով սահմանված անցումային պահանջներին համապատասխանող անշարժ ցիստեռնները (ավտոցիստեռնները), հանովի ցիստեռնները եւ մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցները կարող են մինչեւ 1993 թվականի սեպտեմբերի 30-ն օգտագործվել վտանգավոր բեռների փոխադրման նպատակով՝ թույլատրված լինելով դրա համար: Այս անցումային ժամանակաշրջանը չի տարածվում այն անշարժ ցիստեռնների (ավտոցիստեռնների), հանովի ցիստեռնների եւ մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցների վրա, որոնք նախատեսված են 2-րդ դասի նյութերի փոխադրման համար, կամ այն ավտոցիստեռնների, ապամոնտաժվող ցիստեռնների եւ մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցների վրա, որոնց պատի հաստությունը եւ սարքավորման տարրերը չեն համապատասխանում 6.8 գլխի պահանջներին:
- 1.6.3.4. ա) Մինչեւ 1985 թվականի մայիսի 1-ը «ԱԴԴ» համաձայնագրի 1978 թվականի հոկտեմբերի 1-ից մինչեւ 1985 թվականի ապրիլի 30-ը գործող պահանջների համաձայն պատրաստված անշարժ ցիստեռնները (ավտոցիստեռնները), հանովի ցիստեռնները եւ մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցները, որոնք չեն համապատասխանում 1985 թվականի մայիսի 1-ից կիրառվող պահանջներին, կարող են շարունակել օգտագործվել նշված օրվանից հետո.
- բ) 1985 թվականի մայիսի 1-ից մինչեւ 1988 թվականի հունվարի 1-ից կիրառվող պահանջներն ուժի մեջ մտնելը պատրաստված այն անշարժ ցիստեռնները (ավտոցիստեռնները), հանովի ցիստեռնները եւ մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցները, որոնք չեն համապատասխանում այդ պահանջներին, բայց որոնք պատրաստվել են «ԱԴԴ» համաձայնագրի՝ տվյալ պահի դրությամբ գործող պահանջների համաձայն, կարող են շարունակել օգտագործվել նշված օրվանից հետո:
- 1.6.3.5. Մինչեւ 1992 թվականի դեկտեմբերի 31-ը գործող պահանջների համաձայն եւ մինչեւ 1993 թվականի հունվարի 1-ն արտադրված այն անշարժ ցիստեռնները (ավտոցիստեռնները), հանովի ցիստեռնները եւ մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցները, որոնք չեն համապատասխանում 1993 թվականի հունվարի 1-ից կիրառվող պահանջներին, կարող են դեռ օգտագործվել:
- 1.6.3.6. ա) 1978 թվականի հունվարի 1-ից մինչեւ 1984 թվականի

դեկտեմբերի 31-ն արտադրված անշարժ ցիստեռնները (ավտոցիստեռնները), հանովի ցիստեռնները եւ մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցները 2004 թվականի դեկտեմբերի 31-ից հետո շահագործվելու դեպքում պետք է համապատասխանեն 1990 թվականի հունվարի 1-ից կիրառվող թիվ 211 127 (5) լուսանցագրի պահանջներին, որոնք վերաբերում են կորպուսի պատերի հաստությանը եւ վթարներից պաշտպանվածությանը.

բ) 1985 թվականի հունվարի 1-ից մինչեւ 1989 թվականի դեկտեմբերի 31-ն արտադրված անշարժ ցիստեռնները (ավտոցիստեռնները), հանովի ցիստեռնները եւ մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցները 2010 թվականի դեկտեմբերի 31-ից հետո շահագործվելու դեպքում պետք է համապատասխանեն 1990 թվականի հունվարի 1-ից կիրառվող թիվ 211 127 (5) լուսանցագրի պահանջներին, որոնք վերաբերում են կորպուսի պատերի հաստությանը եւ վթարներից պաշտպանվածությանը:

1.6.3.7. Մինչեւ 1998 թվականի դեկտեմբերի 31-ը գործող պահանջների համաձայն եւ մինչեւ 1999 թվականի հունվարի 1-ն արտադրված այն անշարժ ցիստեռնները (ավտոցիստեռնները), հանովի ցիստեռնները եւ մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցները, որոնք չեն համապատասխանում 1999 թվականի հունվարի 1-ից կիրառվող պահանջներին, կարող են դեռ օգտագործվել:

1.6.3.8. Եթե «ԱԴՌ» համաձայնագրում կատարվող փոփոխությունների ու լրացումների արդյունքում փոխվում են գազերի բեռնառաքման ճշգրիտ անվանումները, պարտադիր չէ ուղղումներ կատարել փակցված թիթեղների կամ անմիջապես կորպուսների վրա (տես՝ 6.8.3.5.2 կամ 6.8.3.5.3)՝ պայմանով, որ անշարժ ցիստեռնների (ավտոցիստեռնների), հանովի ցիստեռնների եւ մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցների կամ փակցված թիթեղների վրա գազերի անվանումները համապատասխանեցվեն (տես՝ 6.8.3.5.6 (բ) կամ (գ)) դրան հաջորդող առաջին իսկ փորձարկման ժամանակ:

1.6.3.9. եւ 1.6.3.10 (Նախատեսվում է վերապահում)

1.6.3.11. Մինչեւ 1996 թվականի դեկտեմբերի 31-ը գործող պահանջների համաձայն եւ մինչեւ 1997 թվականի հունվարի 1-ն արտադրված այն անշարժ ցիստեռնները (ավտոցիստեռնները) եւ հանովի ցիստեռնները, որոնք, այնուամենայնիվ, չեն համապատասխանում 1997 թվականի հունվարի 1-ից կիրառվող թիվ 211 332 եւ 211 333 լուսանցագրերի պահանջներին, կարող են դեռ օգտագործվել:

1.6.3.12. (Նախատեսվում է վերապահում)

- 1.6.3.13. (Հանվել է)
- 1.6.3.14. (Նախատեսվում է վերապահում)
- 1.6.3.15. (Հանվել է)
- 1.6.3.16. Մինչև 2007 թվականի հունվարի 1-ն արտադրված այն անշարժ ցիստեռնների (ավտոցիստեռնների), հանովի ցիստեռնների եւ մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցների դեպքում, որոնք չեն համապատասխանում ցիստեռնների մասին գրառումների վերաբերյալ 4.3.2, 6.8.2.3, 6.8.2.4 եւ 6.8.3.4-ի պահանջներին, ցիստեռնների մասին գրառումների ֆայլերի պահպանումը սկսվում է ամենաուշը հաջորդ պարբերական ստուգման ժամանակ:
- 1.6.3.17. Այն անշարժ ցիստեռնները (ավտոցիստեռնները) եւ հանովի ցիստեռնները, որոնք նախատեսված են 3-րդ դասի, փաթեթավորման I խմբի եւ 50 °C-ում 175 կՊա-ից ոչ ավելի (1.75 բար) (բացարձակ) գոլորշու ճնշում ունեցող նյութերի փոխադրման համար եւ արտադրվել են մինչև 2007 թվականի հուլիսի 1-ը՝ մինչև 2006 թվականի դեկտեմբերի 31-ը կիրառվող պահանջների համաձայն, եւ որոնց նույն պահանջների համաձայն տրվել է L1.5BN ցիստեռնների համար նախատեսված ծածկագիր, կարող են մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը շարունակել օգտագործվել նշված նյութերի փոխադրման համար:
- 1.6.3.18. Մինչև 2001 թվականի հունիսի 30-ը գործող պահանջների համաձայն եւ մինչև 2003 թվականի հունվարի 1-ն արտադրված այն անշարժ ցիստեռնները (ավտոցիստեռնները), հանովի ցիստեռնները եւ մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցները, որոնք չեն համապատասխանում 2001 թվականի հուլիսի 1-ից կիրառելի պահանջներին, կարող են դեռ օգտագործվել, եթե անցումը համապատասխան ցիստեռնի ծածկագրին իրականացվել է:
- 1.6.3.19. Մինչև 2002 թվականի դեկտեմբերի 31-ը գործող 6.8.2.1.21-ի պահանջների համաձայն եւ մինչև 2003 թվականի հունվարի 1-ն արտադրված այն անշարժ ցիստեռնները (ավտոցիստեռնները) եւ հանովի ցիստեռնները, որոնք, այնուամենայնիվ, չեն համապատասխանում 2003 թվականի հունվարի 1-ից կիրառվող պահանջներին, կարող են դեռ օգտագործվել:
- 1.6.3.20. Մինչև 2002 թվականի դեկտեմբերի 31-ը գործող պահանջների համաձայն եւ մինչև 2003 թվականի հուլիսի 1-ն արտադրված այն անշարժ ցիստեռնները (ավտոցիստեռնները) եւ հանովի ցիստեռնները, որոնք, այնուամենայնիվ, չեն համապատասխանում 6.8.2.1.7-ի՝ 2003 թվականի հունվարի 1-ից կիրառվող պահանջներին եւ 6.8.4 (բ)-ի՝ 2003 թվականի հունվարի 1-ից մինչև 2006 թվականի դեկտեմբերի 31-ը

կիրառվող TE15 հատուկ դրույթին, կարող են դեռ օգտագործվել:

1.6.3.21. (Հանվել է)

1.6.3.22 - 1.6.3.24 (Նախատեսվում է վերապահում)

1.6.3.25. (Հանվել է)

1.6.3.26. Մինչև 2006 թվականի դեկտեմբերի 31-ը գործող պահանջների համաձայն եւ մինչև 2007 թվականի հունվարի 1-ն արտադրված այն անշարժ ցիստեռնները (ավտոցիստեռնները) եւ հանովի ցիստեռնները, որոնք, այնուամենայնիվ, չեն համապատասխանում 6.8.2.5.1-ի համաձայն արտաքին հաշվարկային ճնշման մասին մակնշման վերաբերյալ 2007 թվականի հունվարի 1-ից կիրառվող պահանջներին, կարող են դեռ օգտագործվել:

1.6.3.27 - 1.6.3.29 (Նախատեսվում է վերապահում)

1.6.3.30. Մինչև 2004 թվականի դեկտեմբերի 31-ը կիրառվող պահանջների համաձայն եւ մինչև 2005 թվականի հուլիսի 1-ն արտադրված՝ թափոնների վակուումային այն անշարժ ցիստեռնները (ավտոցիստեռնները) եւ հանովի ցիստեռնները, որոնք չեն համապատասխանում 6.10.3.9-ի՝ 2005 թվականի հունվարի 1-ից կիրառվող պահանջներին, կարող են դեռ օգտագործվել:

1.6.3.31. Անշարժ ցիստեռնները (ավտոցիստեռնները), հանովի ցիստեռնները եւ մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցների տարողությունը ձեւավորող ցիստեռնները, որոնք նախագծվել եւ պատրաստվել են սովյալ պահի դրությամբ գործող տեխնիկական կանոնների եւ 6.8.2.7-ի դրույթների համաձայն, կարող են դեռ օգտագործվել:

1.6.3.32. Մինչև 2006 թվականի դեկտեմբերի 31-ը գործող պահանջների համաձայն եւ մինչև 2007 թվականի հուլիսի 1-ը պատրաստված անշարժ ցիստեռնները (ավտոցիստեռնները) եւ հանովի ցիստեռնները, որոնք ունեն մինչև 2006 թվականի դեկտեմբերի 31-ը կիրառվող 6.8.2.6-ում նշված EN 13317:2002 ստանդարտի, ինչպես նաեւ նույն ստանդարտի Բ հավելվածի Բ.2 աղյուսակի պահանջների համաձայն տեղակայված կափարիչներ, որոնք սկսած 2007 թվականի հունվարի 1-ից այլևս չեն կիրառվում, կամ որոնք պատրաստված են EN 13094:2004 ստանդարտի 5.2 պարբերության պահանջներին չհամապատասխանող նյութերից, կարող են դեռ օգտագործվել:

1.6.3.33. Եթե անշարժ ցիստեռնի (ավտոցիստեռնի) կամ հանովի ցիստեռնի կորպուսը մինչև 2009 թվականի հունվարի 1-ը բաժանարար միջնորմներով կամ ավերեկիչ թիթեղներով արդեն իսկ բաժանվել է 7 500 լիտրից ոչ ավելի տարողությամբ բաժինների, ապա մինչև 6.8.2.4.2-ի համաձայն կատարվելիք հերթական ստուգումը կորպուսի վրա 6.8.2.5.1-ով պահանջվող տեղեկությունների կողքին չպետք է

ավելացվի «Տ» խորհրդանշանը:

- 1.6.3.34. Անկախ 4.3.2.2.4-ի դրույթներից՝ հեղուկացված գազերի կամ սառեցված-հեղուկացված գազերի փոխադրման համար նախատեսված այն անշարժ ցիստեռնները (ավտոցիստեռնները) եւ հանովի ցիստեռնները, որոնց կառուցվածքը համապատասխանում է «ԱԴՌ» համաձայնագրի պահանջներին, սակայն որոնք բաժանարար միջնորմներով կամ ալեբեկիչ թիթեղներով մինչեւ 2009 թվականի հուլիսի 1-ը բաժանված են եղել 7 500 լիտրից ոչ ավելի տարողությամբ բաժինների, կարող են դեռուս լցվել իրենց տարողության 20%-ից ավելի եւ տարողության 80%-ից պակաս չափով:
- 1.6.3.35. (Հանվել է)
- 1.6.3.36. Մինչեւ 2011 թվականի հուլիսի 1-ը պատրաստված եւ հեղուկացված ոչ թունավոր, դյուրավառ գազերի փոխադրման համար նախատեսված անշարժ ցիստեռնները (ավտոցիստեռնները), որոնց վրա ներքին կասեցման կափույրների փոխարեն տեղադրված են հակադարձ կափույրներ եւ որոնք չեն համապատասխանում 6.8.3.2.3-ի պահանջներին, կարող են դեռ օգտագործվել:
- 1.6.3.37. (Հանվել է)
- 1.6.3.38. Այն անշարժ ցիստեռնները (ավտոցիստեռնները), հանովի ցիստեռնները եւ մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցները, որոնք նախագծվել եւ պատրաստվել են այդ ժամանակ կիրառելի ստանդարտների եւ «ԱԴՌ» համաձայնագրի գործող դրույթների համաձայն (տես 6.8.2.6 եւ 6.8.3.6), կարող են օգտագործվել, քանի դեռ դրանց օգտագործումը չի սահմանափակվել հատուկ անցումային միջոցներով:
- 1.6.3.39. 6.8.2.2.3-ի՝ մինչեւ 2010 թվականի դեկտեմբերի 31-ը գործող պահանջների համաձայն եւ մինչեւ 2011 թվականի հուլիսի 1-ը պատրաստված այն անշարժ ցիստեռնները (ավտոցիստեռնները), հանովի ցիստեռնները, որոնք, այնուամենայնիվ, չեն բավարարում կրակի մարման համար նախատեսված կամ կրակի տարածումը կանխող հարմարանքի տեղադրմանը վերաբերող 6.8.2.2.3-ի երրորդ պարբերության պահանջները, կարող են դեռ օգտագործվել:
- 1.6.3.40. (Հանվել է)
- 1.6.3.41. Մինչեւ 2012 թվականի դեկտեմբերի 31-ը գործող պահանջներին համապատասխան եւ մինչեւ 2013 թվականի հուլիսի 1-ն արտադրված անշարժ ցիստեռնները (ավտոցիստեռնները) եւ հանովի ցիստեռնները, որոնք, այնուամենայնիվ, չեն համապատասխանում 2013 թվականի հունվարի 1-ից կիրառվող 6.8.2.5.2-ի կամ 6.8.3.5.6-ի մակնշման վերաբերյալ դրույթներին, կարող են մինչեւ 2012 թվականի

դեկտեմբերի 31-ը կիրառվող պահանջներին համապատասխան շարունակել մակնշվել մինչև 2013 թվականի հուլիսի 1-ից հետո հաջորդ պարբերական ստուգումը:

- 1.6.3.42. ՄԱԿ-ի նշագրման 2381 համարի դեպքում ցիստեռնի ծածկագիրը, որը սահմանված է մինչև 2012 թվականի դեկտեմբերի 31-ը կիրառվող 3.2 գլխի Ա աղյուսակի 12-րդ սյունակով, կարող է շարունակել կիրառվել մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ն այն անշարժ ցիստեռնների (ավտոցիստեռնների) եւ հանովի ցիստեռնների համար, որոնք արտադրվել են մինչև 2013 թվականի հուլիսի 1-ը:
- 1.6.3.43. Մինչև 2012 թվականի դեկտեմբերի 31-ը գործող պահանջներին համապատասխան եւ մինչև 2012 թվականի հունվարի 1-ն արտադրված անշարժ ցիստեռնները (ավտոցիստեռնները) եւ հանովի ցիստեռնները, որոնք, այնուամենայնիվ, չեն համապատասխանում 2011 թվականի հունվարի 1-ից կիրառվող EN14432:2006 եւ EN 14433:2006 ստանդարտների վերաբերյալ 6.8.2.6-ի պահանջներին, կարող են դեռ օգտագործվել:
- 1.6.3.44. ՄԱԿ-ի նշագրման 1202, 1203, 1223, 3475 համարների ներքո դասակարգված բեռների եւ ՄԱԿ-ի նշագրման 1268 կամ 1863 համարի ներքո դասակարգված ավիացիոն վառելիքի փոխադրման համար նախատեսված՝ հավելանյութերի ավելացման սարքեր ունեցող անշարժ ցիստեռնները (ավտոցիստեռնները) եւ հանովի ցիստեռնները, որոնք նախագծվել եւ արտադրվել են մինչև 2015 թվականի հուլիսի 1-ը՝ ազգային դրույթներին համապատասխան, եւ որոնք, այնուամենայնիվ, չեն համապատասխանում 2015 թվականի հունվարի 1-ից կիրառվող 3.3 գլխի 664-րդ հատուկ դրույթի արտադրման, հաստատման եւ ստուգման վերաբերյալ պահանջներին, կարող են շարունակել օգտագործվել մինչև 2015 թվականի դեկտեմբերի 31-ից հետո դրանց առաջին միջանկյալ կամ պարբերական ստուգումը: Այս ամսաթվից հետո դրանք պետք է օգտագործվեն միայն օգտագործման երկրների իրավասու մարմինների համաձայնությամբ:
- 1.6.3.45. (Նախատեսվում է վերապահում)
- 1.6.3.46. Մինչև 2016 թվականի դեկտեմբերի 31-ը գործող պահանջներին համապատասխան եւ մինչև 2017 թվականի հուլիսի 1-ն արտադրված անշարժ ցիստեռնները (ավտոցիստեռնները) եւ հանովի ցիստեռնները, որոնք, այնուամենայնիվ, չեն համապատասխանում 2017 թվականի հունվարի 1-ից կիրառվող 6.8.2.1.23-ի պահանջներին, կարող են դեռ օգտագործվել:
- 1.6.3.47 - 1.6.3.49 (Նախատեսվում է վերապահում)
- 1.6.3.50. Վոլոկնիտից պատրաստված ցիստեռնները



Վոլոկնիտից պատրաստված այն ցիստեռնները, որոնք արտադրվել են մինչև 2002 թվականի հուլիսի 1-ը՝ մինչև 2001 թվականի հուլիսի 1-ը հաստատված կառուցվածքի տեսակին համապատասխան, որն էլ հաստատվել է Բ.1(գ) հավելվածի՝ մինչև 2001 թվականի հունիսի 30-ը գործող պահանջների համաձայն, կարող են շարունակել օգտագործվել մինչև շահագործման ժամկետի ավարտը՝ պայմանով, որ բավարարվել է շարունակում են բավարարվել մինչև 2001 թվականի հունիսի 30-ը գործող բոլոր պահանջները:

Այնուամենայնիվ, մինչև 2001 թվականի հունիսի 30-ը գործող պահանջների համաձայն, 2001 թվականի հուլիսի 1-ից կառուցվածքի ոչ մի նոր տեսակ չի կարող հաստատվել:

- 1.6.4 Ցիստեռն-կոնտեյներները, շարժական ցիստեռնները եւ ԳԲՏԿ-ները
  - 1.6.4.1. Մինչև 1987 թվականի դեկտեմբերի 31-ը գործող պահանջների համաձայն եւ մինչև 1988 թվականի հունվարի 1-ն արտադրված այն ցիստեռն-կոնտեյներները, որոնք, այնուամենայնիվ, չեն համապատասխանում 1988 թվականի հունվարի 1-ից կիրառվող պահանջներին, կարող են դեռ օգտագործվել:
  - 1.6.4.2. Մինչև 1992 թվականի դեկտեմբերի 31-ը գործող պահանջների համաձայն եւ մինչև 1993 թվականի հունվարի 1-ն արտադրված այն ցիստեռն-կոնտեյներները, որոնք, այնուամենայնիվ, չեն համապատասխանում 1993 թվականի հունվարի 1-ից կիրառվող պահանջներին, կարող են դեռ օգտագործվել:
  - 1.6.4.3. Մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը գործող պահանջների համաձայն եւ մինչև 1999 թվականի հունվարի 1-ն արտադրված այն ցիստեռն-կոնտեյներները, որոնք, այնուամենայնիվ, չեն համապատասխանում 1999 թվականի հունվարի 1-ից կիրառվող պահանջներին, կարող են դեռ օգտագործվել:
  - 1.6.4.4. (Նախատեսվում է վերապահում)
  - 1.6.4.5. «ԱԴՌ» համաձայնագրում կատարված փոփոխությունների արդյունքում գազերի բեռնառաքման ճշգրիտ անվանումների փոփոխությունների դեպքում անհրաժեշտ չէ դրանք փոփոխել նաեւ հենց ցուցանակի կամ կորպուսի վրա (տես՝ 6.8.3.5.2 կամ 6.8.3.5.3)՝ պայմանով, որ ցիստեռն-կոնտեյներների եւ ԳԲՏԿ-ների կամ ցուցանակների վրա գազերի անվանումները կհամապատասխանեցվեն [տես՝ 6.8.3.5.6 (բ) կամ (գ)] այդուհետ անցկացվելիք առաջին իսկ պարբերական փորձարկման ժամանակ:
  - 1.6.4.6. Մինչև 2006 թվականի դեկտեմբերի 31-ը գործող պահանջների համաձայն եւ մինչև 2007 թվականի հունվարի 1-ն արտադրված այն ցիստեռն-կոնտեյներները, որոնք, այնուամենայնիվ, չեն

համապատասխանում 6.8.2.5.1-ի համաձայն արտաքին նախագծային ճնշման մասին մակնշման վերաբերյալ 2007 թվականի հունվարի 1-ից կիրառվող պահանջներին, կարող են դեռ օգտագործվել:

1.6.4.7. Մինչև 1996 թվականի դեկտեմբերի 31-ը գործող պահանջների համաձայն եւ մինչև 1997 թվականի հունվարի 1-ն արտադրված այն ցիստեռն-կոնտեյներները, որոնք, այնուամենայնիվ, չեն համապատասխանում 1997 թվականի հունվարի 1-ից կիրառվող թիվ 212 332 եւ 212 333 լուսանցագրերի պահանջներին, կարող են դեռ օգտագործվել:

1.6.4.8. (Նախատեսվում է վերապահում)

1.6.4.9 Ցիստեռն-կոնտեյներները եւ ԳՔՏԿ-ները, որոնք նախագծվել եւ արտադրվել են դրանց արտադրության ժամանակ ընդունված տեխնիկական կանոնների եւ 6.8.2.7-ի՝ այդ ժամանակ կիրառվող դրույթների համաձայն, կարող են դեռ օգտագործվել:

1.6.4.10. (Հանվել է)

1.6.4.11. (Նախատեսվում է վերապահում)

1.6.4.12. Մինչև 2001 թվականի հունիսի 30-ը կիրառվող պահանջների համաձայն եւ մինչև 2003 թվականի հունվարի 1-ն արտադրված այն ցիստեռն-կոնտեյներներն ու ԳՔՏԿ-ները, որոնք, այնուամենայնիվ, չեն համապատասխանում 2001 թվականի հուլիսի 1-ից կիրառվող պահանջներին, կարող են դեռ օգտագործվել:

Այնուամենայնիվ, դրանց վրա մակնշվում է ցիստեռնի համապատասխան ծածկագիրը, եւ եթե կիրառելի է, 6.8.4-ի համաձայն՝ TC եւ TE հատուկ պայմանների համապատասխան տառաթվային ծածկագրերը:

1.6.4.13. Մինչև 2002 թվականի դեկտեմբերի 31-ը գործող պահանջների համաձայն եւ մինչև 2003 թվականի հուլիսի 1-ն արտադրված այն ցիստեռն-կոնտեյներները, որոնք, այնուամենայնիվ, չեն համապատասխանում 6.8.2.1.7-ի՝ 2003 թվականի հունվարի 1-ից կիրառվող պահանջներին եւ 6.8.4 (բ)-ի՝ 2003 թվականի հունվարի 1-ից մինչև 2006 թվականի դեկտեմբերի 31-ը կիրառելի TE15 հատուկ դրույթին, կարող են դեռ օգտագործվել:

1.6.4.14. (Նախատեսվում է վերապահում)

1.6.4.15. 6.8.2.5.1-ի համաձայն պահանջվող փորձարկման («P» կամ «L») տեսակներն անհրաժեշտ չէ ավելացնել ցիստեռնի ցուցանակի վրա մինչև 2007 թվականի հունվարի 1-ից հետո առաջին փորձարկման իրականացումը:

1.6.4.16 եւ 1.6.4.17 (Հանվել են)

- 1.6.4.18. Մինչև 2007 թվականի հունվարի 1-ն արտադրված այն ցիստեռն-կոնտեյներների եւ ԳՐՏԿ-ների դեպքում, որոնք չեն համապատասխանում ցիստեռնների մասին գրառումների վերաբերյալ 4.3.2, 6.8.2.3, 6.8.2.4 եւ 6.8.3.4-ի պահանջներին, ցիստեռնների վերաբերյալ գրառումների ֆայլերի պահպանումը սկսվում է ամենաուշը հերթական պարբերական ստուգման ժամանակ:
- 1.6.4.19. (Հանվել է)
- 1.6.4.20. Մինչև 2004 թվականի դեկտեմբերի 31-ը կիրառվող պահանջների համաձայն եւ մինչև 2005 թվականի հուլիսի 1-ն արտադրված թափոնների վակուումային այն ցիստեռն-կոնտեյներները, որոնք չեն համապատասխանում 6.10.3.9-ի՝ 2005 թվականի հունվարի 1-ից կիրառվող պահանջներին, կարող են դեռ օգտագործվել:
- 1.6.1.21 - 1.6.4.29 (Նախատեսվում է վերապահում)
- 1.6.4.30. Այն շարժական ցիստեռնները եւ ՄԱԿ-ի ԳՐՏԿ-ները, որոնք չեն համապատասխանում 2007 թվականի հունվարի 1-ից կիրառվող կառուցվածքի վերաբերյալ պահանջներին, սակայն արտադրվել են մինչև 2008 թվականի հունվարի 1-ը տրված կառուցվածքի հաստատման սերտիֆիկատի համաձայն, կարող են շարունակել օգտագործվել:
- 1.6.4.31. (Հանվել է)
- 1.6.4.32. Այն դեպքում, երբ մինչև 2009 թվականի հունվարի 1-ը ցիստեռն-կոնտեյների կորպուսը բաժանարար միջնորմներով կամ ավերելիչ թիթեղներով արդեն իսկ բաժանված է եղել 7 500 լիտրից ոչ ավելի տարողությամբ բաժինների, ապա մինչև 6.8.2.4.2-ի համաձայն կատարվող հերթական պարբերական ստուգման անցկացումը 6.8.2.5.1-ով պահանջվող մանրամասների մեջ կորպուսի տարողության մասին նշմանը չպետք է ավելացվի «S» խորհրդանշանը:
- 1.6.4.33. Անկախ 4.3.2.2.4-ի դրույթներից՝ հեղուկացված գազերի կամ սառեցված հեղուկացված գազերի փոխադրման համար նախատեսված այն ցիստեռն-կոնտեյներները, որոնք բավարարում են «ԱԴԴ» համաձայնագրի կառուցվածքային կիրառելի պահանջները, սակայն որոնք բաժանարար միջնորմներով կամ ավերելիչ թիթեղներով մինչև 2009 թվականի հուլիսի 1-ը բաժանված են եղել 7 500 լիտրից ոչ ավելի տարողությամբ բաժինների, կարող են դեռեւս լցվել իրենց տարողության 20%-ից ավելի եւ տարողության 80%-ից պակաս չափով:
- 1.6.4.34 - 1.6.4.36 (Հանվել են)
- 1.6.4.37. Մինչև 2012 թվականի հունվարի 1-ն արտադրված այն շարժական ցիստեռնները եւ ԳՐՏԿ-ները, որոնք համապատասխանում են 6.7.2.20.1, 6.7.3.16.1, 6.7.4.15.1 կամ 6.7.5.13.1-ի՝ մակնշման մասին

մինչեւ 2010 թվականի դեկտեմբերի 31-ը կիրառվող պահանջներին, համապատասխանաբար կարող են շարունակել կիրառվել, եթե դրանք բավարարում են «ԱԴՌ» համաձայնագրի՝ 2011 թվականի հունվարի 1-ից կիրառվող մյուս բոլոր կարեւոր պահանջները եւ անհրաժեշտության դեպքում՝ 6.7.2.20.1 (է)-ի՝ ցուցանակը «Տ» խորհրդանշանով մակնշելու պահանջը, երբ կորպուսը կամ խցիկն ավելեկիչ թիթեղով բաժանված է 7 500 լիտրից ոչ ավելի տարողությամբ բաժինների:

- 1.6.4.38. Կարիք չկա, որ մինչեւ 2014 թվականի հունվարի 1-ն արտադրված շարժական ցիստեռնները, նախքան հերթական պարբերական ստուգումը եւ փորձարկումը, մակնշվեն 6.7.2.20.2, 6.7.3.16.2 եւ 6.7.4.15.2-ով պահանջվող՝ շարժական ցիստեռններին վերաբերող ցուցումներով:
- 1.6.4.39. Այն ցիստեռն-կոնտեյներները եւ ԳՐՏԿ-ները, որոնք նախագծվել եւ արտադրվել են այդ ժամանակ կիրառվող ստանդարտներին եւ «ԱԴՌ» համաձայնագրի նույն ժամանակ կիրառվող դրույթներին համապատասխան (տե՛ս 6.8.2.6 եւ 6.8.3.6), կարող են դեռ օգտագործվել, քանի դեռ դրանց օգտագործումը չի սահմանափակվել հատուկ անցումային միջոցներով:
- 1.6.4.40. Մինչեւ 2011 թվականի հուլիսի 1-ը 6.8.2.2.3-ի՝ մինչեւ 2010 թվականի դեկտեմբերի 31-ը գործող պահանջների համաձայն արտադրված այն ցիստեռն-կոնտեյներները, որոնք, այնուամենայնիվ, չեն բավարարում կրակի մարման համար նախատեսված կամ կրակի տարածումը կանխող հարմարանքի տեղադրմանը վերաբերող 6.8.2.2.3-ի երրորդ պարբերության պահանջները, կարող են դեռ օգտագործվել:
- 1.6.4.41. (Հանվել է)
- 1.6.4.42. Մինչեւ 2012 թվականի դեկտեմբերի 31-ը գործող պահանջներին համապատասխան եւ մինչեւ 2013 թվականի հուլիսի 1-ն արտադրված ցիստեռն-կոնտեյներները, որոնք, այնուամենայնիվ, չեն համապատասխանում 2013 թվականի հունվարի 1-ից գործող 6.8.2.5.2 կամ 6.8.3.5.6-ի մակնշման վերաբերյալ դրույթներին, կարող են մինչեւ 2012 թվականի դեկտեմբերի 31-ը գործող պահանջներին համապատասխան շարունակել կիրառվել մինչեւ 2013 թվականի հուլիսի 1-ից հետո հաջորդ պարբերական ստուգումը:
- 1.6.4.43. Մինչեւ 2014 թվականի հունվարի 1-ն արտադրված շարժական ցիստեռնները եւ ԳՐՏԿ-ները պետք է բավարարեն 6.7.2.13.1 (զ), 6.7.3.9.1 (ե), 6.7.4.8.1 (ե) եւ 6.7.5.6.1 (դ)-ի՝ ճնշումը նվազեցնող սարքերի մակնշման վերաբերյալ պահանջները:

- 1.6.4.44. Շարժական ցիստեռնների վերաբերյալ «ԱԴՌ» համաձայնագրով սահմանված ցուցումը, որը կիրառելի է մինչև 2012 թվականի դեկտեմբերի 31-ը, կարող է 3.2 գլխի Ա աղյուսակի 11-րդ սյունակում TP38 կամ TP39 նշում ունեցող նյութերի համար շարունակել կիրառվել մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը:
- 1.6.4.45 ՄԱԿ-ի նշագրման 2381 համարի դեպքում մինչև 2012 թվականի դեկտեմբերի 31-ը գործող 3.2 գլխի Ա աղյուսակի 12-րդ սյունակում նշված ցիստեռնների համար նախատեսված ծածկագիրը մինչև 2013 թվականի հուլիսի 1-ն արտադրված ցիստեռն-կոնտեյներների համար կարող է շարունակել կիրառվել մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը:
- 1.6.4.46. Մինչև 2012 թվականի դեկտեմբերի 31-ը գործող պահանջներին համապատասխան եւ մինչև 2012 թվականի հունվարի 1-ն արտադրված այն ցիստեռն-կոնտեյներները, որոնք, այնուամենայնիվ, չեն համապատասխանում 2011 թվականի հունվարի 1-ից կիրառվող EN 14432:2006 եւ EN 14433:2006 ստանդարտների վերաբերյալ 6.8.2.6-ի պահանջներին, կարող են դեռ օգտագործվել:
- 1.6.4.47. Մինչև 2016 թվականի դեկտեմբերի 31-ը գործող պահանջներին համապատասխան եւ մինչև 2017 թվականի հուլիսի 1-ն արտադրված՝ սառեցված- հեղուկացված գազերի համար նախատեսված ցիստեռն-կոնտեյներները, որոնք, այնուամենայնիվ, չեն համապատասխանում 2017 թվականի հունվարի 1-ից կիրառվող 6.8.3.4.10, 6.8.3.4.11 եւ 6.8.3.5.4-ի պահանջներին, կարող են շարունակել օգտագործվել մինչև 2017 թվականի հուլիսի 1-ից հետո հաջորդ ստուգումը: Մինչև այդ ժամկետը 4.3.3.5-ի եւ 5.4.1.2.2 (դ)-ի պահանջները բավարարելու համար պահման փաստացի ժամանակը կարող է հաշվարկվել առանց պահման հղումային ժամանակի վրա հիմնվելու:
- 1.6.4.48. Մինչև 2016 թվականի դեկտեմբերի 31-ը գործող պահանջներին համապատասխան եւ մինչև 2017 թվականի հուլիսի 1-ն արտադրված ցիստեռն-կոնտեյներները, որոնք, այնուամենայնիվ, չեն համապատասխանում 2017 թվականի հունվարի 1-ից կիրառվող 6.8.2.1.23-ի պահանջներին, կարող են դեռ օգտագործվել:
- 1.6.5. Փոխադրամիջոցները
- 1.6.5.1 եւ 1.6.5.2 (Նախատեսվում է վերապահում)
- 1.6.5.3. (Հանվել է)
- 1.6.5.4 Ինչ վերաբերում է EX/II, EX/III, FL, OX եւ AT տեսակի փոխադրամիջոցների արտադրությանը, ապա 9-րդ մասի՝ մինչև 2016 թվականի դեկտեմբերի 31-ը գործող պահանջները կարող են կիրառվել մինչև 2018 թվականի մարտի 31-ը:

- 1.6.5.5. Մինչև 2003 թվականի հունվարի 1-ը գրանցված կամ շահագործված այն փոխադրամիջոցները, որոնց էլեկտրական սարքավորումները չեն համապատասխանում 9.2.2, 9.3.7 կամ 9.7.8-ի պահանջներին, սակայն համապատասխանում են մինչև 2001 թվականի հունիսի 30-ը կիրառվող պահանջներին, կարող են դեռ օգտագործվել:
- 1.6.5.6. (Հանվել է)
- 1.6.5.7. Ամբողջական կամ լրակազմված այն փոխադրամիջոցները, որոնց տեսակը 98/91/ԵՀ հրահանգի<sup>1</sup> համապատասխան դրույթների համաձայն կամ փոփոխությունների 01 շարքով փոփոխված թիվ 105<sup>2</sup> ԵՏՀ կանոնակարգի համաձայն հաստատված է եղել մինչև 2002 թվականի դեկտեմբերի 31-ը, եւ որոնք չեն համապատասխանում 9.2 գլխի պահանջներին, սակայն համապատասխանում են փոխադրամիջոցների բազային տեսակների արտադրության դեպքում կիրառելի եւ մինչև 2001 թվականի հունիսի 30-ը գործող պահանջներին (Բ.2 հավելվածի թիվ 220 100-ից 220 540 լուսանցագրեր), կարող են շարունակել հաստատվել եւ օգտագործվել՝ պայմանով, որ դրանք առաջին անգամ գրանցվել են կամ շահագործվել մինչև 2003 թվականի հուլիսի 1-ը:
- 1.6.5.8. EX/II եւ EX/III տեսակի այն փոխադրամիջոցները, որոնք առաջին անգամ հաստատվել են մինչև 2005 թվականի հուլիսի 1-ը եւ համապատասխանում են 9-րդ մասի՝ մինչև 2004 թվականի դեկտեմբերի 31-ը գործող պահանջներին, սակայն, այնուամենայնիվ, չեն բավարարում 2005 թվականի հունվարի 1-ից կիրառվող պահանջները, կարող են դեռ օգտագործվել:
- 1.6.5.9. Անշարժ ցիստեռններով այն ավտոցիստեռնները, որոնք ունեն 3 մ<sup>3</sup>-ից ավելի տարողություն եւ նախատեսված են հեղուկ կամ հալեցված վիճակում ու 4 բար-ից ավելի ճնշման դեպքում փորձարկված վտանգավոր բեռները փոխադրելու համար, եւ որոնք չեն համապատասխանում 9.7.5.2-ի պահանջներին եւ առաջին անգամ գրանցվել են (կամ շահագործվել են, եթե գրանցումը պարտադիր չէ) մինչև 2004 թվականի հուլիսի 1-ը, կարող են դեռ օգտագործվել:

<sup>1</sup> Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 1998 թվականի դեկտեմբերի 14-ի 98/91/ԵՀ հրահանգ՝ «Ավտոճանապարհով վրանգավոր բեռների փոխադրման համար նախատեսված մեքենաների եւ դրանց կցասայլերի մասին», ու փոփոխություններ կատարող 70/156/ԵՏՀ հրահանգ՝ «Մեքենաների եւ դրանց կցասայլերի տեսակի հաստատման մասին» (Եվրոպական համայնքների պաշտոնական տեղեկագիր, L 011, 1999 թվականի հունվարի 16, էջեր 0025-0036):

<sup>2</sup> ԵՏՀ կանոնակարգ թիվ 105 (Վրանգավոր բեռների փոխադրման համար նախատեսված փոխադրամիջոցների հաստատման մասին միասնական դրույթներ՝ փոխադրամիջոցների կառուցվածքային առանձնահատկությունների մասով):

- 1.6.5.10. Հաստատման մասին այն սերտիֆիկատները, որոնք համապատասխանում են 9.1.3.5-ում ներկայացված եւ մինչեւ 2006 թվականի դեկտեմբերի 31-ը կիրառվող, ինչպես նաեւ 9.1.3.5-ում ներկայացված ու 2007 թվականի հունվարի 1-ից 2008 թվականի դեկտեմբերի 31-ը կիրառվող ձեւանմուշին, կարող են շարունակել օգտագործվել: Հաստատման մասին այն սերտիֆիկատները, որոնք համապատասխանում են 9.1.3.5-ում ներկայացված եւ 2009 թվականի հունվարի 1-ից մինչեւ 2014 թվականի դեկտեմբերի 31-ը կիրառվող ձեւանմուշին, կարող են շարունակել օգտագործվել:
- 1.6.5.11. Այն ՊԱՇՄ-ները, որոնք ազգային իրավունքի դրույթների համաձայն արտադրվել եւ հաստատվել են մինչեւ 2009 թվականի հուլիսի 1-ը, սակայն որոնք, այնուամենայնիվ, չեն համապատասխանում արտադրության եւ հաստատման վերաբերյալ 2009 թվականի հունվարի 1-ից կիրառվող պահանջներին, կարող են օգտագործվել այն երկրի իրավասու մարմինների թույլտվությամբ, որտեղ դրանք օգտագործվում են:
- 1.6.5.12. EX/III եւ FL տեսակի այն փոխադրամիջոցները, որոնք գրանցվել եւ շահագործվել են մինչեւ 2012 թվականի ապրիլի 1-ը, եւ որոնց էլեկտրական միացումները չեն համապատասխանում 9.2.2.6.3-ի պահանջներին, սակայն համապատասխանում են մինչեւ 2010 թվականի դեկտեմբերի 31-ը կիրառելի պահանջներին, կարող են դեռ օգտագործվել:
- 1.6.5.13. Մինչեւ 1995 թվականի հուլիսի 1-ն առաջին անգամ գրանցված կցասայլերը (կամ շահագործված, եթե գրանցումը պարտադիր չի եղել), որոնք թիվ 13 ԵՏՀ կանոնակարգի՝ փոփոխությունների 06 շարքի համաձայն սարքավորված են արգելակման հակաբլոկային համակարգով, սակայն չեն համապատասխանում արգելակման հակաբլոկային համակարգի «A» կատեգորիայի տեխնիկական պահանջներին, կարող են դեռ օգտագործվել:
- 1.6.5.14. «ԱԴԴ» համաձայնագրի՝ մինչեւ 2012 թվականի դեկտեմբերի 31-ը գործող դրույթներին համապատասխան եւ մինչեւ 2013 թվականի հուլիսի 1-ը հաստատված ՊԱՇՄ-ները, որոնք, այնուամենայնիվ, չեն համապատասխանում 2013 թվականի հունվարի 1-ից կիրառվող 6.12.3.1.2-ի կամ 6.12.3.2.2-ի պահանջներին, կարող են դեռ օգտագործվել:
- 1.6.5.15. Ինչ վերաբերում է 9-րդ մասի դրույթների կիրառմանը, մինչեւ 2014 թվականի նոյեմբերի 1-ն առաջին անգամ գրանցված կամ շահագործման մեջ դրված, ինչպես նաեւ թիվ 661/2009

կանոնակարգով (ԵՄ)<sup>1</sup> ուժը կորցրած հրահանգների դրույթներին համապատասխան հաստատված փոխադրամիջոցները կարող են շարունակել օգտագործվել:

- 1.6.5.16. ԵՏՀ թիվ 34 կանոնակարգի համաձայն չհաստատված վառելիքի ցիստեռններ ունեցող EX/II, EX/III, FL եւ OX փոխադրամիջոցները, որոնք գրանցվել են մինչեւ 2018 թվականի ապրիլի 1-ը, կարող են դեռ օգտագործվել:
- 1.6.5.17. Մինչեւ 2018 թվականի ապրիլի 1-ն առաջին անգամ գրանցված կամ շահագործման մեջ դրված այն փոխադրամիջոցները, որոնք չեն համապատասխանում 9.2.2.8.5-ին կամ 9.2.2.2.1-ի մալուխների համար սահմանված ISO 6722-1:2011 + Cor 01:2012 կամ ISO 6722-2:2013 ստանդարտներին, սակայն համապատասխանում են մինչեւ 2016 թվականի դեկտեմբերի 31-ը կիրառվող պահանջներին, կարող են շարունակել օգտագործվել:
- 1.6.5.18. Մինչեւ 2018 թվականի ապրիլի 1-ն առաջին անգամ գրանցված կամ շահագործման մեջ դրված եւ հատուկ որպես «OX» տեսակի փոխադրամիջոց հաստատված փոխադրամիջոցները կարող են շարունակել օգտագործվել ՄԱԿ-ի նշագրման 2015 համարի ներքո դասակարգված նյութերի փոխադրման համար:
- 1.6.5.19. Մինչեւ 2018 թվականի ապրիլի 1-ն առաջին անգամ գրանցված կամ շահագործման մեջ դրված եւ հատուկ որպես «OX» տեսակի փոխադրամիջոց հաստատված փոխադրամիջոցների տեխնիկական ստուգման նկատմամբ կարող են դեռ կիրառվել մինչեւ 2016 թվականի դեկտեմբերի 31-ը գործող 9-րդ մասի պահանջները:
- 1.6.5.20. «OX» տեսակի փոխադրամիջոցների համար հաստատման մասին սերտիֆիկատները, որոնք համապատասխանում են 9.1.3.5-ում ներկայացված եւ մինչեւ 2016 թվականի դեկտեմբերի 31-ը կիրառվող ձեւաչափին, կարող են շարունակել օգտագործվել:
- 1.6.6. Դաս 7
- 1.6.6.1. ԱԷՄԳ-ի անվտանգության ստանդարտների թիվ 6 շարքի 1985 թվականի եւ 1985 թվականի (փոփոխված 1990 թվականին) հրատարակությունների համաձայն իրավասու մարմնի կողմից կառուցվածքի հաստատում չպահանջող փաթեթները

---

<sup>1</sup> 2009 թվականի հուլիսի 13-ի «Ավտոմեքենաների, դրանց կցասայլերի եւ համակարգերի, բաղադրիչների եւ դրանց համար նախատեսված տեխնիկական առանձին մասերի տեսակների ընդհանուր անվտանգությանը ներկայացվող համապատասխանության պահանջների վերաբերյալ» թիվ 661/2009 կանոնակարգ (ԵՀ) (Պաշտոնական տեղեկագիր, L 200, 2009 թվականի հուլիսի 31, էջ 1):



Այն փաթեթները, որոնց համար չի պահանջվում իրավասու մարմնի կողմից կառուցվածքի հաստատում (ազատված փաթեթներ, «IP-1» տեսակի, «IP-2» տեսակի, «IP-3» տեսակի եւ «A» տեսակի փաթեթներ), պետք է ամբողջությամբ համապատասխանեն «ԱԴՌ» համաձայնագրի պահանջներին՝ բացի այն փաթեթներից, որոնք համապատասխանում են ռադիոակտիվ նյութերի անվտանգ փոխադրումը կարգավորող ԱԷՄԳ-ի կանոնակարգերի 1985 թվականի կամ 1985 թվականի (փոփոխված 1990 թվականին) հրատարակությունների (ԱԷՄԳ-ի անվտանգության ստանդարտների թիվ 6 շարք) պահանջներին՝

- ա) կարող են փոխադրման ժամանակ շարունակել օգտագործվել՝ պայմանով, որ դրանք փոխադրման համար նախապատրաստվել են մինչեւ 2003 թվականի դեկտեմբերի 31-ը, եւ դրանց նկատմամբ կիրառվում են 1.6.6.3-ի պահանջները, եթե կիրառելի են.
- բ) կարող են շարունակել օգտագործվել՝ պայմանով, որ՝
  - i) դրանք նախատեսված չեն ուրանի հեքսաֆտորիդ պարունակելու համար.
  - ii) կիրառվում են 1.7.3-ի կիրառելի պահանջները.
  - iii) կիրառվում են 2.2.7-ում նշված ակտիվության մակարդակն ու դասակարգումը.
  - iv) կիրառվում են 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ եւ 7-րդ մասերի՝ փոխադրմանը ներկայացվող պահանջներն ու այն վերահսկելու միջոցները.
  - v) փաթեթվածքը չի արտադրվել կամ չի ձեւափոխվել 2003 թվականի դեկտեմբերի 31-ից հետո:

1.6.6.2. ԱԷՄԳ-ի անվտանգության ստանդարտների թիվ 6 շարքի 1973 թվականի, 1973 թվականի (փոփոխված), 1985 թվականի եւ 1985 թվականի (փոփոխված 1990 թվականին) հրատարակությունների համաձայն հաստատված փաթեթները

1.6.6.2.1. Իրավասու մարմնի կողմից կառուցվածքի հաստատում պահանջող փաթեթները պետք է ամբողջությամբ համապատասխանեն «ԱԴՌ» համաձայնագրի պահանջներին՝ բացառությամբ այն դեպքերի, երբ բավարարվում են հետեւյալ պայմանները՝

- ա) փաթեթվածքներն արտադրվել են ԱԷՄԳ-ի անվտանգության ստանդարտների թիվ 6 շարքի 1973 թվականի կամ 1973 թվականի (փոփոխված) կամ 1985 թվականի կամ 1985 թվականի (փոփոխված 1990 թվականին) հրատարակությունների համաձայն իրավասու մարմնի կողմից հաստատված փաթեթի կառուցվածքին համապատասխան.

- բ) փաթեթի կառուցվածքը ենթակա է բազմակողմանի հաստատման.
- գ) կիրառվում են 1.7.3-ի կիրառելի պահանջները.
- դ) կիրառվում են 2.2.7-ում նշված ակտիվության մակարդակն ու դասակարգումը.
- ե) կիրառվում են 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ եւ 7-րդ մասերի՝ փոխադրմանը ներկայացվող պահանջներն ու այն վերահսկելու միջոցները.
- զ) (Նախատեսվում է վերապահում)
- է) ԱԷՄԳ-ի անվտանգության ստանդարտների թիվ 6 շարքի 1973 թվականի կամ 1973 թվականի (փոփոխված) հրատարակությունների պահանջներին համապատասխանող փաթեթների դեպքում՝
  - i) ԱԷՄԳ-ի անվտանգության ստանդարտների թիվ 6 շարքի 1973 թվականի կամ 1973 թվականի (փոփոխված) հրատարակություններում սահմանված փոխադրման վթարային պայմաններում եւ տվյալ փաթեթվածքների համար թույլատրված ռադիոակտիվ նյութերի առավելագույն պարունակության դեպքում փաթեթները պահպանում են ճառագայթումից պաշտպանելու հատկությունը՝ ապահովելու համար, որ փաթեթի մակերեսային 1 մ բարձրության վրա ճառագայթման մակարդակը չգերազանցի 10 մՉվ/ժ-ը.
  - ii) փաթեթներում չի իրականացվում մշտական օդափոխում.
  - iii) 5.2.1.7.5-ի դրույթի համաձայն՝ յուրաքանչյուր փաթեթվածքի արտաքին կողմի վրա պետք է նշված եւ մակնշված լինի սերիական համարը:

1.6.6.2.2. Չի թույլատրվում սկսել ԱԷՄԳ-ի անվտանգության ստանդարտների թիվ 6 շարքի 1973 թվականին, 1973 թվականին (փոփոխված), 1985 թվականին կամ 1985 թվականին (փոփոխված 1990 թվականին) ընդունված դրույթներին համապատասխան փաթեթի կառուցվածք ունեցող փաթեթվածքների նոր արտադրություն:

1.6.6.3. «ԱԴՌ» համաձայնագրի 2011 եւ 2013 թվականների հրատարակությունների (ԱԷՄԳ-ի անվտանգության ստանդարտների թիվ TS-R-1 շարքի 2009 թվականի հրատարակություն) համաձայն տրոհվող նյութերին ներկայացվող պահանջներից ազատված փաթեթները

Տրոհվող նյութ պարունակող փաթեթները, որոնք, «ԱԴՌ»

համաձայնագրի 2011 եւ 2013 թվականների հրատարակությունների 2.2.7.2.3.5 (ա)(i)-ի կամ (iii)-ի (Ռադիոակտիվ նյութերի անվտանգ փոխադրմանն առնչվող ԱԷՄԳ-ի կանոնակարգերի 2009 թվականի հրատարակության 417 (ա)(i) կամ (iii) պարբերության) համաձայն ազատվել են «ՏՐՈՀՎՈՂ» դասակարգումից եւ փոխադրման համար նախապատրաստվել են մինչեւ 2014 թվականի դեկտեմբերի 31-ը, կարող են շարունակել օգտագործվել փոխադրման ժամանակ եւ կարող են շարունակել դասակարգվել որպես չորհիվող կամ տրոհվող-ազատված՝ բացառությամբ այն դեպքի, երբ այս հրատարակությունների 2.2.7.2.3.5 աղյուսակում ներկայացված՝ բեռի սահմանային արժեքները պետք է կիրառվեն փոխադրամիջոցի նկատմամբ: Բեռը պետք է փոխադրվի բացառիկ օգտագործման պայմանով:

- 1.6.6.4. ԱԷՄԳ-ի անվտանգության ստանդարտների թիվ 6 շարքի 1973 թվականի, 1973 թվականի (փոփոխված), 1985 թվականի եւ 1985 թվականի (փոփոխված 1990 թվականին) հրատարակությունների համաձայն հաստատված հատուկ տեսակի ռադիոակտիվ նյութը

ԱԷՄԳ-ի անվտանգության ստանդարտների թիվ 6 շարքի 1973 թվականի, 1973 թվականի (փոփոխված), 1985 թվականի եւ 1985 թվականի (փոփոխված 1990 թվականին) հրատարակությունների համաձայն իրավասու մարմնի կողմից միակողմանի թույլտվություն ստացած կառուցվածքի տեսակին համապատասխան արտադրված հատուկ տեսակի ռադիոակտիվ նյութը կարող է շարունակել օգտագործվել այն դեպքում, երբ այն, 1.7.3-ի կիրառվող պահանջների համաձայն, համապատասխանում է կառավարման պարտադիր համակարգին: Չի թույլատրվում սկսել այսպիսի հատուկ տեսակի ռադիոակտիվ նյութի նոր արտադրություն:

## ԳԼՈՒԽ 1.7

### ՌԱԴԻՈԱԿՏԻՎ ՆՅՈՒԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

#### 1.7.1. Գործողության ոլորտը եւ կիրառումը

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1. Ռադիոակտիվ նյութերի փոխադրման ընթացքում տեղի ունեցած վթարների կամ պատահարների դեպքում, ինչպես սահմանված է համապատասխան ազգային եւ (կամ) միջազգային կազմակերպությունների կողմից, մարդկանց, գույքը եւ շրջակա միջավայրը պաշտպանելու նպատակով պետք է ուսումնասիրվեն վթարային իրավիճակների համար նախատեսված դրույթները: «Ռադիոակտիվ նյութերի փոխադրման հետ կապված պատահարների դեպքում վթարային արձագանքման միջոցների պլանավորման եւ նախապատրաստման մասին» անվտանգության ստանդարտների թիվ TS-G-1.2 (ST-3) շարք, ԱԷՄԳ, Վիեննա (2002թ.):*

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2. Վթարային իրավիճակների հետ կապված գործելակարգերում պետք է հաշվի առնվի այլ վտանգավոր նյութերի ձեւավորման հավանականությունը, որը կարող է առաջանալ պատահարի դեպքում բեռի պարունակության եւ շրջակա միջավայրի միջեւ տեղի ունեցած փոխազդեցության հետեւանքով:*

1.7.1.1. «ԱԴՌ» համաձայնագրով սահմանվում են անվտանգության ստանդարտներ, որոնցով ապահովվում է ռադիոակտիվ նյութերի փոխադրման հետ կապված՝ ճառագայթման, մարդկանց, գույքին եւ շրջակա միջավայրին սպառնացող ջերմային վտանգի կամ կրիտիկականության վերահսկողության պատշաճ մակարդակը: Այդ ստանդարտները հիմնված են Ռադիոակտիվ նյութերի անվտանգ փոխադրմանն առնչվող ԱԷՄԳ-ի կանոնակարգերի 2012 թվականի հրատարակության վրա, ԱԷՄԳ-ի անվտանգության ստանդարտների թիվ SSR-6 շարք, ԱԷՄԳ, Վիեննա (2012թ.): Բացատրական նյութեր կարելի է գտնել «Ռադիոակտիվ նյութերի անվտանգ փոխադրման մասին ԱԷՄԳ-ի կանոնակարգերի վերաբերյալ տեղեկատվական նյութեր» ձեռնարկում (2012 թվականի հրատարակություն), ԱԷՄԳ-ի Անվտանգության ստանդարտների թիվ SSG-26, ԱԷՄԳ, Վիեննա (2014թ.):

1.7.1.2. «ԱԴՌ» համաձայնագրի նպատակը պահանջներ սահմանելն է, որոնք պետք է բավարարվեն անվտանգության ապահովման, ինչպես նաեւ մարդկանց, գույքը եւ շրջակա միջավայրը ռադիոակտիվ նյութերի փոխադրման ժամանակ ճառագայթումից պաշտպանելու նպատակով: Նշված պաշտպանությանը կարելի է հասնել հետեւյալ պահանջի դեպքում՝

- ա) ռադիոակտիվ պարունակության տեղայնացում.
- բ) արտաքին ճառագայթման մակարդակների վերահսկողություն.
- գ) կրիտիկականության կանխում. եւ
- դ) ջերմության հետեւանքով պատճառվող վնասի կանխում:

Այդ պահանջներն առաջին հերթին բավարարվում են փաթեթների եւ փոխադրամիջոցների պարունակության սահմանափակումների նկատմամբ աստիճանական մոտեցման եւ ռադիոակտիվ պարունակության վտանգից կախված՝ փաթեթի կառուցվածքի հետ կապված գործողության կատարման ստանդարտների կիրառման արդյունքում: Երկրորդ հերթին դրանք բավարարվում են փաթեթների կառուցվածքի, շահագործման, պահպանման պայմանների սահմանման շնորհիվ՝ հաշվի առնելով ռադիոակտիվ պարունակության բնույթը: Վերջիվերջո, դրանք բավարարվում են վարչական վերահսկողության եւ համապատասխան դեպքում՝ իրավասու մարմնի կողմից հաստատման պահանջի հետեւանքով:

1.7.1.3. «ԱԴՌ» համաձայնագիրը վերաբերում է ավտոճանապարհով ռադիոակտիվ նյութերի փոխադրմանը, ներառյալ՝ այնպիսի փոխադրումը, որի անհրաժեշտությունն առաջանում է ռադիոակտիվ նյութերի օգտագործման հետեւանքով: Փոխադրումն ընդգրկում է ռադիոակտիվ նյութերի փոխադրման հետ կապված եւ դրանում ներառված բոլոր գործողություններն ու պայմանները, որոնք ներառում են փաթեթվածքի նախագծումը, արտադրությունը, պահպանումն ու նորոգումը, ինչպես նաեւ դրանց նախապատրաստումը, առաքումը, բեռնումը, փոխադրումը՝ տարանցիկ պահեստավորմամբ բեռնաթափումը եւ ռադիոակտիվ նյութեր ու փաթեթներ պարունակող բեռների ստացումը վերջնական նպատակակետում: «ԱԴՌ» համաձայնագրում աստիճանական մոտեցում է կիրառվում գործողության կատարման ստանդարտ պայմանների նկատմամբ, որոնց համար հատկանշական են վտանգավորության երեք ընդհանուր մակարդակներ՝

- ա) փոխադրման ստանդարտ պայմաններ (առանց միջադեպերի).
- բ) փոխադրման բնականոն պայմաններ (թեթեւ միջադեպեր).
- գ) փոխադրման վթարային պայմաններ:

1.7.1.4. «ԱԴՌ» համաձայնագրում սահմանված դրույթները չեն կիրառվում հետեւյալ փոխադրումներից որեւէ մեկի նկատմամբ՝

- ա) տրանսպորտային միջոցների աշխատանքի անբաժանելի մաս կազմող ռադիոակտիվ նյութեր.
- բ) ռադիոակտիվ նյութեր, որոնք տեղափոխվում են այնպիսի

հաստատության ներսում, որտեղ գործում են պատշաճ անվտանգության կանոններ, ինչպես նաև այն դեպքում, երբ դրանց տեղափոխությունը չի իրականացվում հանրային ճանապարհներով կամ երկաթուղով.

- գ) ախտորոշման կամ բուժման նպատակով մարդու կամ կենդանի կենդանիների օրգանիզմում ներդրված կամ ներառված ռադիոակտիվ նյութեր.
- դ) բուժման նպատակով տեղափոխման ենթակա մարդու օրգանիզմում կամ մարմնի վրա առկա ռադիոակտիվ նյութեր, որոնք ի հայտ են եկել մարդու օրգանիզմ պատահաբար կամ դիտավորությամբ ռադիոակտիվ նյութերի ներթափանցման կամ աղտոտվածության ազդեցության ենթարկվելու հետևանքով.
- ե) սպառողական ապրանքատեսակներում առկա ռադիոակտիվ նյութեր, այն դեպքում, երբ վերահսկող մարմնի կողմից թույլտվությունը ստացվել է այդ ապրանքատեսակները վերջնական օգտագործողին վաճառելուց հետո.
- զ) բնական ծագում ունեցող ռադիոնուկլիդներ պարունակող բնական նյութեր եւ հանքանյութեր (որոնք կարող են մշակված լինել)՝ պայմանով, որ նյութերի տեսակարար ակտիվությունը 10 անգամ չի գերազանցում 2.2.7.2.2.1 աղյուսակում նշված արժեքները, կամ որ դրանք հաշվարկվել են 2.2.7.2.2.2 (ա)-ի եւ 2.2.7.2.2.3 - 2.2.7.2.2.6-ի համաձայն: Հարյուրամյա հավասարակշռության մեջ գտնվող՝ բնական ծագում ունեցող ռադիոնուկլիդներ պարունակող բնական նյութերի եւ հանքանյութերի դեպքում տեսակարար ակտիվությունը հաշվարկվում է 2.2.7.2.2.4-ի համաձայն.
- է) ռադիոակտիվ նյութերի առկայությամբ ոչ ռադիոակտիվ պինդ առարկաներ, որոնք ցանկացած մակերեսային վրա առկա են 2.2.7.1.2-ի «ռադիոակտիվ աղտոտման» սահմանման մեջ նշված սահմանաչափերը չգերազանցող քանակությամբ:

1.7.1.5. Ազատված փաթեթների փոխադրման վերաբերյալ հատուկ դրույթներ

1.7.1.5.1. Սահմանափակ քանակությամբ ռադիոակտիվ նյութեր պարունակող՝ ազատված փաթեթների, գործիքների, արդյունաբերական պատրաստվածքների կամ 2.2.7.2.4.1-ում նշված դատարկ փաթեթվածքների վրա տարածվում են 5-7-րդ մասերի միայն հետևյալ դրույթները.

- ա) 5.1.2.1, 5.1.3.2, 5.1.5.2.2, 5.1.5.2.3, 5.1.5.4, 5.2.1.10, 7.5.11 CV33 (3.1), (5.1)-(5.4) եւ (6)-ում նշված կիրառելի դրույթներ, եւ

բ) 6.4.4-ում նշված՝ ազատված փաթեթներին առնչվող պահանջներ՝

բացառությամբ այն դեպքերի, երբ ռադիոակտիվ նյութն ունի այլ վտանգավոր հատկություններ եւ պետք է դասակարգվի 7-րդ դասից տարբեր՝ այլ դասում՝ 3.3 գլխի 290-րդ կամ 369-րդ հատուկ դրույթներին համապատասխան, որոնց համաձայն վերոնշյալ (ա) եւ (բ) կետերի դրույթները կիրառվում են միայն համապատասխան դեպքերում եւ ի հավելումն հիմնական դասին վերաբերող դրույթների:

Ազատված փաթեթները կարգավորվում են «ԱԴՌ» համաձայնագրի մյուս բոլոր մասերի համապատասխան դրույթներով: Եթե ազատված փաթեթը պարունակում է տրոհվող նյութեր, ապա պետք է կիրառվի 2.2.7.2.3.5-ով տրոհվող նյութերի համար նախատեսված բացառություններից որեւէ մեկը, եւ պետք է բավարարվեն 7.5.11 CV33 (4.3)-ի պահանջները:

1.7.2. Ճառագայթային պաշտպանության ծրագիրը

1.7.2.1. Ռադիոակտիվ նյութերի փոխադրումը պետք է կարգավորվի Ճառագայթային պաշտպանության ծրագրով, որը պետք է բաղկացած լինի պարբերաբար անցկացվող եւ ճառագայթային պաշտպանության միջոցների համարժեք դիտարկման նպատակով անցկացվող միջոցառումներից:

1.7.2.2. Մարդկանց կողմից ստացվող դրա դոզան չպետք է գերազանցի դոզայի համապատասխան սահմանաչափերը: Պաշտպանությունն ու անվտանգությունը պետք է օպտիմալացվեն այնպես, որ անհատական դոզաների չափը, ճառագայթահարված մարդկանց թիվը եւ ճառագայթահարման հավանականության աստիճանը պահպանվեն հնարավորինս ցածր մակարդակում՝ տնտեսական եւ սոցիալական գործոնները հաշվի առնելով եւ մարդկանց ճառագայթահարումը սահմանային դոզաներով կարգավորելու սահմանափակման կիրառմամբ: Պետք է որդեգրվի կառուցվածքային եւ համակարգված մոտեցում, որում հաշվի կառնվի փոխադրման եւ գործունեության այլ տեսակների միջեւ փոխադարձ կապը:

1.7.2.3. Ծրագրում նախատեսվող միջոցների բնույթը եւ մասշտաբը պետք է կախված լինեն ճառագայթահարման ուժգնությունից ու հավանականությունից: Ծրագիրը պետք է ներառի 1.7.2.2, 1.7.2.4, 1.7.2.5 եւ 7.5.11 CV33 (1.1)-ի պահանջները: Ծրագրի փաստաթղթերը պահանջի դեպքում պետք է տրամադրվեն՝ համապատասխան իրավասու մարմնի կողմից ստուգում անցկացնելու նպատակով:

1.7.2.4. Տրանսպորտային գործունեության հետեւանքով տեղի ունեցած աշխատանքային ճառագայթահարման դեպքում, երբ գնահատման

համաձայն արդյունարար դոզայի արժեքը կամ՝

- ա) կարող է տարեկան կազմել 1մՁվ - 6մՁվ, ապա պետք է անցկացվի աշխատանքի վայրի կամ անհատական դիտանցում. կամ
- բ) եթե կարող է գերազանցել տարեկան 6 մՁվ արժեքը, ապա պետք է անցկացվի անհատական դիտանցում:

Անհատական կամ աշխատանքի վայրի դիտանցում անցկացվելու դեպքում պետք է կատարվեն համապատասխան գրառումներ:

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Տրանսպորտային գործունեության հետեւանքով տեղի ունեցած աշխատանքային ճառագայթահարումների դեպքում, երբ գնահատման համաձայն քիչ հավանական է, որ արդյունարար դոզան կգերազանցի տարեկան 1 մՁվ արժեքը, անհրաժեշտ է, որ պահանջվեն հատուկ աշխատանքային ռեժիմներ, մանրամասն դիտանցում, դոզայի գնահատման ծրագրեր կամ գրառումներ կատարելու անհատական համակարգ:*

- 1.7.2.5. Աշխատողները (տես՝ 7.5.11, CV33 ծանոթագրություն 3 ) պետք է պատշաճ կերպով տիրապետեն ճառագայթային պաշտպանության եւ նախազգուշական միջոցներին, որոնք պետք է ուսումնասիրվեն աշխատանքային ճառագայթահարման, ինչպես նաեւ իրենց գործունեության հետեւանքով ազդեցության ենթարկվելու հավանականություն ունեցող մարդկանց ճառագայթահարման սահմանափակման նպատակով:

- 1.7.3. Կառավարման համակարգը

Միջազգային, ազգային կամ իրավասու մարմնի կողմից ընդունելի այլ չափանիշների վրա հիմնված կառավարման համակարգն ստեղծվում է իրականացվում է «ԱԴՌ» համաձայնագրի շրջանակում 1.7.1.3-ով սահմանված բոլոր գործողությունների համար՝ ապահովելու համար «ԱԴՌ» համաձայնագրի համապատասխան դրույթների հետ համապատասխանությունը: Իրավասու մարմինը պետք է սերտիֆիկատ ստանա այն մասին, որ կառուցվածքի մասնագրի պահանջներն ամբողջությամբ կատարված են: Արտադրողը, բեռնառաքողը կամ օգտագործողը պետք է պատրաստ լինեն՝

- ա) հնարավորություն տալ ստուգումներ իրականացնել արտադրության եւ օգտագործման ընթացքում, եւ
- բ) իրավասու մարմնին ապացույցներ ներկայացնել «ԱԴՌ» համաձայնագրին համապատասխանելու վերաբերյալ:

Իրավասու մարմնի հաստատումը պահանջվելու դեպքում այդպիսի հաստատումը հաշվի է առնվում եւ պայմանավորված է կառավարման



համակարգի համապատասխանությամբ:

1.7.4. Հատուկ ռեժիմը

1.7.4.1. Հատուկ ռեժիմ նշանակում է իրավասու մարմնի կողմից հաստատված այն դրույթները, որոնց համաձայն բեռները, որոնք չեն համապատասխանում ռադիոակտիվ նյութերի նկատմամբ կիրառվող «ԱԴՌ» համաձայնագրի բոլոր պահանջներին, կարող են փոխադրվել:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Հատուկ արտոնությունը ժամանակավոր շեղում չի համարվում 1.5.1-ի համաձայն:

1.7.4.2. Այն բեռները, որոնց դեպքում ռադիոակտիվ նյութերի նկատմամբ կիրառվող որեւէ դրույթի հետ համապատասխանությունը գործնականում անհնար է իրականացնել, պետք է փոխադրվեն միայն հատուկ պայմաններով: Եթե իրավասու մարմնին գոհացնում է, որ «ԱԴՌ» համաձայնագրի ռադիոակտիվ նյութերի վերաբերյալ դրույթների հետ համապատասխանությունը գործնականում անհնար է, եւ որ «ԱԴՌ» համաձայնագրով սահմանված անվտանգության պարտադիր չափանիշները պահպանվել են այլընտրանքային եղանակներով, իրավասու մարմինը կարող է միանգամյա փոխադրման կամ բազմակի բեռների համար պլանային փոխադրումների նպատակով հատուկ ռեժիմ հաստատել: Փոխադրման ընթացքում անվտանգության ընդհանուր մակարդակը պետք է առնվազն լինի նույնը, ինչպես կիրառվող բոլոր պայմանները բավարարելու դեպքում: Այս տեսակի միջազգային բեռների դեպքում բազմակի հաստատում է պահանջվում:

1.7.5. Այլ վտանգավոր հատկանիշներ ունեցող ռադիոակտիվ նյութը

Ի հավելումն ռադիոակտիվության եւ տրոհման հատկությունների՝ փաթեթի պարունակության հետ կապված ցանկացած լրացուցիչ ռիսկ, ինչպես օրինակ՝ պայթյունավտանգությունը, դյուրավառությունը, հրակիրությունը, քիմիական թունավորությունը, կոռոզիականությունը, պետք է նույնպես հաշվի առնվի փաստաթղթավորման, փաթեթավորման, պիտակավորման, մակնշման, տեղեկատվական ցուցանակների տեղադրման, դասավորման, տարանջատման եւ փոխադրման ժամանակ՝ վտանգավոր բեռների վերաբերյալ «ԱԴՌ» համաձայնագրի բոլոր համապատասխան դրույթների պահանջները բավարարելու նպատակով:

1.7.6. Անհամապատասխանությունը

1.7.6.1. Ճառագայթման մակարդակի կամ աղտոտման նկատմամբ կիրառվող

«ԱԴԴ» համաձայնագրով սահմանված որեւէ սահմանափակման պահանջ չբավարարելու դեպքում՝

- ա) բեռնառաքողին, բեռն ստացողին, փոխադրողին եւ փոխադրման գործընթացում ներգրավված ցանկացած կազմակերպության, որի վրա դրանք կարող են ազդեցություն ունենալ, անհրաժեշտության դեպքում տեղեկացնում են հետեւյալ անձանց կողմից պարտականությունները չկատարելու մասին՝
  - i) փոխադրողի կողմից, եթե անհամապատասխանությունը պարզվել է փոխադրման ժամանակ, կամ
  - ii) բեռն ստացողի կողմից, եթե անհամապատասխանությունը պարզվել է ստացման ժամանակ.
- բ) փոխադրողը, բեռնառաքողը կամ բեռն ստացողն անհրաժեշտության դեպքում՝
  - i) ձեռնարկում են անհապաղ քայլեր՝ անհամապատասխանության հետեւանքները մեղմացնելու համար,
  - ii) ուսումնասիրում են անհամապատասխանությունը եւ դրա պատճառները, հետեւանքներն ու հանգամանքները.
  - iii) ձեռնարկում են անհրաժեշտ քայլեր՝ անհամապատասխանությանը հանգեցրած պատճառները եւ հետեւանքները վերացնելու եւ անհամապատասխանության հանգեցնող նմանատիպ հանգամանքների կրկնությունը կանխելու նպատակով.
  - iv) տեղեկացնում են իրավասու մարմնին (մարմիններին) անհամապատասխանության պատճառների եւ ձեռնարկված կամ ձեռնարկվելիք կանխարգելիչ քայլերի մասին.
- գ) բեռնառաքողին եւ իրավասու մարմնին (մարմիններին) անհամապատասխանության մասին ծանուցումը համապատասխանաբար պետք է կիրառելի լինի հնարավորինս շուտ եւ ենթակա է անմիջական կատարման, եթե ստեղծվել կամ կարող է ստեղծվել վթարային ազդեցության ենթարկվելու իրավիճակ:

## ԳԼՈՒԽ 1.8

### ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՄՅՈՒՍ ՕԺԱՆԴԱԿ ՄԻՋՈՑՆԵՐԸ՝ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԲԱՎԱՐԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ

- 1.8.1. Վտանգավոր բեռների վարչական վերահսկումը
- 1.8.1.1. Պայմանավորվող կողմերի իրավասու մարմինները կարող են իրենց ազգային տարածքում յուրաքանչյուր պահի տեղային ստուգումներ անցկացնել՝ ճշտելու՝ արդյոք բավարարվել են վտանգավոր բեռների փոխադրմանը վերաբերող, այդ թվում՝ 1.10.1.5-ի պահանջները, ինչպես նաև անվտանգության միջոցներին վերաբերող պահանջները:  

Այնուամենայնիվ, այս ստուգումները պետք է կատարվեն առանց մարդկանց, գույքը, շրջակա միջավայրը վտանգելու եւ ճանապարհային ծառայությունների աշխատանքը խափանելու:
- 1.8.1.2. Վտանգավոր բեռների փոխադրմանը մասնակցողները (գլուխ 1.4) առանց հապաղելու իրենց համապատասխան պարտավորությունների շրջանակներում իրավասու մարմիններին եւ իրենց գործակալներին ապահովում են ստուգումներն անցկացնելու համար անհրաժեշտ տեղեկատվությամբ:
- 1.8.1.3. Վտանգավոր բեռների փոխադրմանը մասնակցող ձեռնարկությունների տարածքներում ստուգումներ անցկացնելու նպատակով (գլուխ 1.4) իրավասու մարմինները կարող են նաև ստուգումներ իրականացնել, օգտվել անհրաժեշտ փաստաթղթերից, ուսումնասիրելու նպատակով առանձնացնել վտանգավոր բեռների նմուշները կամ փաթեթվածքները միայն այն դեպքում, երբ անվտանգությանը վտանգ չի սպառնում: Վտանգավոր բեռների փոխադրման մասնակիցները (գլուխ 1.4) հնարավորության ու խելամտության դեպքում նաև պետք է փոխադրամիջոցները կամ դրանց մասերը, սարքերը եւ դրանց սարքավորումները հասանելի դարձնեն ստուգման նպատակով: Անհրաժեշտ համարելու դեպքում նրանք նաև կարող են ձեռնարկությունից մարդ նշանակել՝ իրավասու մարմնի ներկայացուցչին աջակցելու նպատակով:
- 1.8.1.4. Եթե իրավասու մարմինները նկատում են, որ «ԱԴԴ» համաձայնագրի պահանջները բավարարված չեն, ապա նրանք կարող են արգելել բեռնափոխադրումը, կասեցնել տրանսպորտային գործունեությունը, մինչև որ նկատված թերությունները շտկվեն, կամ նրանք կարող են ձեռնարկել այլ համապատասխան միջոցներ: Գործողությունների կասեցումը կարող է իրականացվել տեղում կամ մեկ այլ վայրում, որն անվտանգության նկատառումներով կընտրվի գերատեսչությունների կողմից: Այս միջոցառումները չպետք է լուրջ խաթարում առաջացնեն

ճանապարհային ծառայություններում:

1.8.2. Փոխադարձ վարչական օգնությունը

1.8.2.1. Պայմանավորվող կողմերը պետք է համաձայնեն «ԱԴՌ» համաձայնագրի կատարման համար փոխադարձ վարչական օգնության հարցում:

1.8.2.2. Երբ Պայմանավորվող կողմը պատճառներ է ունենում դիտարկելու, որ վտանգավոր բեռների փոխադրման անվտանգությունն իր տարածքում խափանվել է շատ լուրջ կամ կրկնվող խախտումների հետեւանքով՝ կատարված այն ձեռնարկության կողմից, որը մեկ այլ Պայմանավորվող կողմի տարածքում ունի իր կենտրոնական գրասենյակը, ապա այն կարող է այդպիսի խախտումների մասին տեղեկացնել մյուս Պայմանավորվող կողմի իրավասու մարմիններին: Այն Պայմանավորվող կողմի իրավասու մարմինները, որի տարածքում նկատվել են շատ լուրջ եւ կրկնվող խախտումներ, կարող է մյուս Պայմանավորվող կողմի իրավասու մարմիններից, որոնց տարածքում ձեռնարկությունն ունի իր կենտրոնական գրասենյակը, պահանջել խախտողի (խախտողների) դեմ համապատասխան միջոցներ ձեռնարկել: Տվյալ անձանց վերաբերվող տվյալների փոխանցումը չպետք է թույլատրվի, եթե այն անհրաժեշտ չէ շատ վտանգավոր եւ կրկնվող խախտումները կանխելու համար:

1.8.2.3. Տեղեկացված գերատեսչությունները պետք է Պայմանավորվող կողմի իրավասու մարմիններին, որի տարածքում խախտումները դիտարկվել են, տեղեկացնեն այն միջոցների մասին, որոնք անհրաժեշտության դեպքում ձեռնարկվել են ձեռնարկության համար:

1.8.3. Անվտանգության հարցերով խորհրդատուն

1.8.3.1. Յուրաքանչյուրը ձեռնարկություն, որի գործողությունները ներառում են վտանգավոր բեռների ավտոճանապարհային փոխադրումը կամ համապատասխան փաթեթավորումը, բեռնումը, լցավորումը կամ բեռնաթափումը, վտանգավոր բեռների փոխադրման նպատակով նշանակում է անվտանգության հարցերով մեկ կամ մի քանի խորհրդատուներ, որոնք պատասխանատու են այդպիսի գործողություններում մարդկանց, գույքին, շրջակա միջավայրին առնչվող ռիսկերի կրճատման համար:

1.8.3.2. Պայմանավորվող կողմերի իրավասու մարմինները կարող են ապահովել, որ այս պահանջները չկիրառվեն այն ձեռնարկությունների նկատմամբ՝

ա) որոնց գործունեությունը ներառում է վտանգավոր բեռների փոխադրումը, որոնց քանակը յուրաքանչյուր տրանսպորտային միավորի մեջ ավելի քիչ է, քան նշված է 1.1.3.6, 1.7.1.4-ում եւ 3.3,

3.4, ու 3.5 գլուխներում, կամ

բ) որոնց գլխավոր կամ երկրորդական գործունեությունը վտանգավոր բեռների փոխադրումը կամ համապատասխան փաթեթավորումը, լցավորումը, բեռնումը կամ բեռնաթափումը չէ, այլ որոնք երբեմն զբաղվում են վտանգավոր բեռների ներքին փոխադրմամբ կամ համապատասխան փաթեթավորմամբ, լցավորմամբ, բեռնմամբ ու բեռնաթափմամբ՝ առաջացնելով աղտոտվածության փոքր վտանգ կամ ռիսկ:

1.8.3.3. Ձեռնարկության ղեկավարի պատասխանատվության տակ գտնվող խորհրդատուի հիմնական առաջադրանքն այն է, որ նա պետք է փորձի համապատասխան միջոցներով եւ գործողություններով տվյալ ձեռնարկության համապատասխան գործունեության շրջանակներում հեշտացնել այդ գործունեության տեսակների իրականացումը՝ կիրառելի պահանջների համաձայն եւ ամենաանվտանգ ձեւով:

Ինչ վերաբերում է ձեռնարկության գործունեությանը, խորհրդատուն մասնավորապես ունի հետեւյալ պարտականությունները.

- վտանգավոր բեռների փոխադրման պահանջների պահպանման դիտանցում (մոնիթորինգ).
- վտանգավոր բեռների փոխադրման վերաբերյալ խորհրդատվության տրամադրում իր ձեռնարկությանը.
- իր ձեռնարկության ղեկավարության կամ անհրաժեշտության դեպքում՝ տեղի պետական մարմնի համար վտանգավոր բեռների փոխադրման հետ կապված գործունեության վերաբերյալ տարեկան հաշվետվության պատրաստում: Այդպիսի տարեկան հաշվետվությունները պետք է պահվեն հինգ տարի ժամկետով եւ պետք է հասանելի դարձվեն ազգային մարմիններին՝ նրանց պահանջի դեպքում:

Խորհրդատուի պարտականությունների մեջ են մտնում նաեւ ձեռնարկության համապատասխան գործունեության վերաբերյալ հետեւյալ գործելակերպերի եւ գործընթացների դիտանցումը.

- փոխադրվող վտանգավոր բեռների նույնականացումը կարգավորող պահանջների կատարման ընթացակարգեր.
- փոխադրամիջոցներ գնելիս փոխադրվող վտանգավոր բեռների հետ կապված հատուկ պահանջները հաշվի առնելու՝ ձեռնարկության գործելակերպ.
- վտանգավոր բեռների փոխադրման, փաթեթավորման, լցավորման, բեռնման կամ բեռնաթափման համար օգտագործվող սարքավորումների ստուգման

ընթացակարգեր.

- ձեռնարկության աշխատողների պատշաճ վերապատրաստում, այդ թվում՝ կանոնակարգերում կատարված փոփոխությունների վերաբերյալ, եւ այդպիսի վերապատրաստման մասին տվյալների պահպանում.
- վթարային ընթացակարգերի իրականացում ցանկացած վթարի կամ միջադեպի դեպքում, որը կարող է խափանել վտանգավոր բեռների փոխադրման, փաթեթավորման, լցավորման, բեռնման կամ բեռնաթափման անվտանգությունը.
- վտանգավոր բեռների փոխադրման, փաթեթավորման, լցավորման, բեռնման կամ բեռնաթափման ընթացքում արձանագրված լուրջ վթարների, միջադեպերի կամ լուրջ խախտումների վերաբերյալ հաշվետվությունների ուսումնասիրություն եւ անհրաժեշտության դեպքում՝ պատրաստում.
- համապատասխան միջոցների ձեռնարկում՝ վթարների, միջադեպերի կամ լուրջ խախտումների կրկնությունից խուսափելու նպատակով.
- երրորդ կողմերի կամ ենթակապալառուների ընտրության եւ նրանց միջոցով վտանգավոր բեռների փոխադրման հետ կապված իրավական եւ հատուկ պահանջների հաշվի առնում.
- ստուգում, որ վտանգավոր բեռների փոխադրմանը, փաթեթավորմանը, լցավորմանը, բեռնմանը կամ բեռնաթափմանը մասնակցած աշխատողներն ունեն աշխատանքային մանրամասն ընթացակարգեր ու ցուցումներ.
- միջոցների ներմուծում՝ վտանգավոր բեռների փոխադրման, փաթեթավորման, լցավորման, բեռնման եւ բեռնաթափման հետ կապված վտանգների մասին ավելի տեղեկացված լինելու նպատակով.
- ստուգման ընթացակարգերի իրականացում՝ ապահովելու համար տրանսպորտային միջոցում փոխադրման ժամանակ փաստաթղթերի եւ դրանցում անվտանգության սարքավորումների պարտադիր առկայությունը, ինչպես նաեւ այդ փաստաթղթերի եւ սարքավորումների համապատասխանությունը կանոնակարգերին.
- ստուգման ընթացակարգերի իրականացում՝

փաթեթավորումը, լցավորումը, բեռնումն ու բեռնաթափումը կարգավորող պահանջների համապատասխանությունն ապահովելու համար.

- 1.10.3.2-ում նշված անվտանգության պլանի առկայություն:

- 1.8.3.4. Խորհրդատուն կարող է լինել նաեւ ձեռնարկության ղեկավարը՝ անձ, որը ձեռնարկությունում ունի նաեւ այլ պարտականություններ, կամ լինել մեկը, որը տվյալ ձեռնարկության անմիջական աշխատողը չէ, սակայն ի վիճակի է կատարել խորհրդատուի պարտականությունները:
- 1.8.3.5. Յուրաքանչյուր համապատասխան ձեռնարկություն պահանջի դեպքում յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի կողմից այդ նպատակով նշանակված իրավասու մարմինն կամ գերատեսչությանը տեղեկացնում է իր խորհրդատուի ինքնության մասին:
- 1.8.3.6. Եթե համապատասխան ձեռնարկության կողմից իրականացված վտանգավոր բեռների փոխադրման, փաթեթավորման, լցավորման, բեռնման կամ բեռնաթափման ժամանակ տեղի ունեցած վթարը վնաս է հասցնում մարդկանց, գույքին կամ շրջակա միջավայրին, ապա խորհրդատուն համապատասխան տեղեկատվություն հավաքելուց հետո վթարի մասին հաշվետվություն է ներկայացնում ձեռնարկության ղեկավարություն կամ տեղի պետական մարմիններ: Այդ հաշվետվությունը չի կարող փոխարինել ձեռնարկության ղեկավարության մեկ այլ այնպիսի հաշվետվությանը, որը կարող է պահանջվել՝ համաձայն որեւէ այլ միջազգային կամ ազգային օրենսդրության:
- 1.8.3.7. Խորհրդատուն պետք է մասնագիտական վերապատրաստման սերտիֆիկատ ունենա, որը վավեր է ճանապարհային փոխադրման համար: Այդ սերտիֆիկատը պետք է տրամադրի իրավասու մարմինը կամ այդ նպատակով յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի կողմից նշանակված մարմինը:
- 1.8.3.8. Սերտիֆիկատը ստանալու համար թեկնածուն պետք է վերապատրաստման կուրսեր անցնի կամ հանձնի Պայմանավորվող կողմի իրավասու մարմինների կողմից հաստատված քննությունը:
- 1.8.3.9. Վերապատրաստման գլխավոր նպատակը թեկնածուներին գիտելիքներով ապահովելն է վտանգավոր բեռների փոխադրման, փաթեթավորման, լցավորման, բեռնման կամ բեռնաթափման, կիրառելի օրենքների, կանոնակարգերի եւ վարչական դրույթների, ինչպես նաեւ 1.8.3.3.-ում նշված պարտականությունների վերաբերյալ:
- 1.8.3.10. Քննությունը կազմակերպվում է իրավասու մարմնի կամ նրա կողմից նշանակված քննող մարմնի կողմից: Քննող մարմինը չպետք է վերապատրաստման կազմակերպիչ լինի:

Քննող մարմնի նշանակումն իրականացվում է գրավոր հաստատմամբ:

Այդ հաստատումը կարող է սահմանափակ ժամկետ ունենալ եւ պետք է հիմնված լինի հետեւյալ չափորոշիչների վրա.

- քննող մարմնի իրավասություն,
- քննող մարմնի կողմից առաջարկված քննության անցկացման ձեւերի, այդ թվում՝ անհրաժեշտությունից ելնելով՝ 1.8.3.12.5-ին համապատասխան էլեկտրոնային քննության անցկացման (եթե դրանք պետք է անցկացվեն) ենթակառուցվածքի եւ կազմակերպման նկարագրեր.
- քննությունների անաչառության ապահովմանն ուղղված միջոցառումներ.
- խորհրդատուներին աշխատանքի վերցնող բոլոր ֆիզիկական եւ իրավաբանական կազմակերպություններից անկախություն:

1.8.3.11. Քննությունը նպատակ ունի ստուգելու, թե արդյոք թեկնածուներն ունեն գիտելիքների անհրաժեշտ մակարդակ՝ կատարելու անվտանգության հարցերով խորհրդատուի՝ 1.8.3.3-ում նշված պարտականությունները՝ 1.8.3.7-ով սահմանված սերտիֆիկատ ստալանու համար, եւ այն առնվազն պետք է ներառի հետեւյալ առարկաները.

ա) վտանգավոր բեռների հետ կապված վթարի պատճառով առաջացած հետեւանքների տեսակների եւ այդ վթարի գլխավոր պատճառների վերաբերյալ գիտելիքներ,

բ) ազգային օրենսդրությամբ, միջազգային կոնվենցիաներով եւ համաձայնագրերով, մասնավորապես հետեւյալ հարցերին առնչվող պահանջներ՝

- վտանգավոր բեռների դասակարգում (լուծույթներն ու խառնուրդները, նյութերի ցանկի կառուցվածքը, վտանգավոր բեռների տեսակները դասակարգելու ընթացակարգ եւ դրանք դասակարգելու, փոխադրված վտանգավոր բեռների բնույթը, ֆիզիկական, քիմիական եւ թունաբանական հատկանիշները որոշելու սկզբունքներ).
- փաթեթավորման ընդհանուր դրույթներ, ցիստեռնների եւ ցիստեռն-կոնտեյնրների վերաբերյալ դրույթներ (տեսակներ, ծածկագիր, մակնշում, կառուցում, նախնական ու պարբերական ստուգում եւ փորձարկում).
- մակնշում եւ պիտակավորում, տեղեկատվական ցուցանակների տեղադրում ու նարնջագույն թիթեղների մակնշում (փաթեթների մակնշում եւ պիտակավորում,



- տեղեկատվական ցուցանակների ու նարնջագույն թիթեղների փակցում եւ հանում)։
- տրանսպորտային փաստաթղթերի մասին մանրամասներ (պահանջվում են տեղեկություններ)։
  - բեռնառաքման մեթոդ եւ առաքման սահմանափակումներ (ամբողջական բեռնվաճառություն, խուռնաբեռն փոխադրում, սորուն բեռների համար նախատեսված միջին բեռնվաճառության կոնտեյներներով, կոնտեյներներով, անշարժ կամ հանովի ցիստեռններով փոխադրում)։
  - ուղեւորների տեղափոխում։
  - խառը բեռնման վերաբերյալ արգելքներ եւ նախազգուշացումներ։
  - ապրանքների առանձնացում։
  - փոխադրված քանակությունների սահմանափակում եւ քանակություններից ազատում։
  - բեռնում-բեռնաթափում ու դասավորում (փաթեթավորում, լցավորում, բեռնում եւ բեռնաթափում, լցավորման գործակիցները, դասավորելն ու առանձնացնելը)։
  - մաքրում եւ (կամ) ապազազացում՝ փաթեթավորելուց, լցավորելուց, բեռնելուց առաջ եւ բեռնաթափելուց հետո։
  - անձնակազմեր եւ մասնագիտական վերապատրաստում։
  - փոխադրամիջոցի փաստաթղթեր (տրանսպորտային փաստաթղթեր, գրավոր ցուցումներ, փոխադրամիջոցի հաստատման սերտիֆիկատ, վարորդի վերապատրաստման սերտիֆիկատ, սահմանված պահանջներից ցանկացած շեղում հավաստող փաստաթղթերի պատճեններ, այլ փաստաթղթեր)։
  - գրավոր ցուցումներ (ցուցումների կատարում եւ անձնակազմի պաշտպանիչ սարքավորում)։
  - վերահսկման պահանջներ (կայանում)։
  - երթեւեկության կարգավորումներ եւ սահմանափակումներ։
  - աղտոտիչների օպերացիոն արտամղում կամ պատահական արտահոսք։
  - փոխադրամիջոցի սարքավորման հետ կապված

պահանջներ:

1.8.3.12. Քննությունները

1.8.3.12.1. Քննությունը բաղկացած է գրավոր թեստից, որը կարող է համալրվել բանավոր քննությամբ:

1.8.3.12.2. Իրավասու մարմինը կամ իրավասու մարմնի կողմից նշանակված քննություն իրականացնող մարմինը վերահսկում է յուրաքանչյուր քննություն: Հնարավորինս պետք է բացառել ցանկացած մանիպուլյացիա եւ խարդախություն: Ապահովվում է թեկնածուի նույնականացումը: Գրավոր թեստի ընթացքում չի թույլատրվում օգտվել միջազգային կամ պետական կանոնակարգերից տարբեր՝ այլ փաստաթղթերից: Քննության բոլոր փաստաթղթերը գրանցվում եւ պահպանվում են որպես ֆայլ՝ տպագրված կամ էլեկտրոնային տեսքով:

1.8.3.12.3. Էլեկտրոնային միջոցից կարելի է օգտվել միայն այն դեպքում, եթե այն տրամադրվում է քննող մարմնի կողմից: Օգտվելով էլեկտրոնային միջոցից՝ թեկնածուն այլեւս իրավունք չունի լրացուցիչ տվյալներ ներկայացնելու. նա կարող է միայն պատասխանել իրեն ուղղված հարցերին:

1.8.3.12.4. Գրավոր թեստը բաղկացած է երկու մասից.

ա) թեկնածուին տրվում է հարցաշար: Այն ներառում է առնվազն 1.8.3.11-ի ցանկում նշված թեմաներին առնչվող նվազագույնը 20 բաց հարց: Սակայն կարող են օգտագործվել նաեւ պատասխանի բազմակի ընտրության հնարավորությամբ հարցեր: Այս դեպքում երկու բազմակի ընտրության հարցերը հավասարազոր են մեկ բաց հարցին: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել այդ թեմաներից հետեւյալներին՝

- ընդհանուր կանխարգելիչ եւ անվտանգության միջոցառումներ.
- վտանգավոր բեռների դասակարգում.
- փաթեթավորման ընդհանուր դրույթներ, այդ թվում՝ ցիստեռններ, ցիստեռն-կոնտեյներներ, ավտոցիստեռններ եւ այլն.
- նախազգուշացնող մակնշում, պիտակավորում եւ տեղեկատվական ցուցանակների տեղադրում.
- տրանսպորտային փաստաթղթերում զետեղված տեղեկություններ.
- բեռնում-բեռնաթափում եւ դասավորում.
- անձնակազմ, մասնագիտական վերապատրաստում.

- փոխադրամիջոցների փաստաթղթեր եւ տրանսպորտային սերտիֆիկատներ.
  - գրավոր ցուցումներ.
  - տրանսպորտային սարքավորումների վերաբերյալ պահանջներ.
- բ) թեկնածուները պետք է կատարեն կոնկրետ իրավիճակի իրենց ուսումնասիրությունները՝ համապատասխանեցնելով դրանք 1.8.3.3-ում նշված խորհրդատուի պարտականություններին, որպեսզի ցույց տան, որ իրենք ունեն անհրաժեշտ որակավորում՝ խորհրդատուի առաջադրանքը լիարժեք կատարելու համար:

1.8.3.12.5. Գրավոր քննություններն ամբողջությամբ կամ մասամբ կարող են իրականացվել որպես էլեկտրոնային քննություններ, որտեղ պատասխանները գրանցվում եւ գնահատվում են՝ օգտագործելով տվյալների էլեկտրոնային մշակման (ՏԷՄ) գործընթացները, եթե ապահովվում են հետեւյալ պայմանները՝

- ա) սարքաշարը եւ ծրագրաշարը ստուգվում եւ ընդունվում են իրավասու մարմնի կամ իրավասու մարմնի կողմից նշանակված քննություն իրականացնող մարմնի կողմից.
- բ) ապահովվում է տեխնիկական գործառույթների պատշաճ իրականացում: Անհրաժեշտ է նախատեսել քննությունը շարունակելու ընթացակարգ՝ սարքերի եւ ծրագրերի ձախողման դեպքերի համար: Տվյալների մուտքագրման սարքերից բացառվում են օգնության հնարավորությունները (օրինակ՝ էլեկտրոնային որոնման գործառույթը). 1.8.3.12.3-ի համաձայն տրամադրված սարքավորումները չպետք է թույլ տան թեկնածուներին կապ հաստատել ցանկացած այլ սարքի հետ քննության ժամանակ.
- գ) յուրաքանչյուր թեկնածուի վերջնական մուտքագրումները պետք է գրանցվեն: Արդյունքների որոշումը պետք է լինի թափանցիկ:

1.8.3.13. Պայմանավորվող կողմերը կարող են որոշել, որ այն թեկնածուները, որոնք մտադրված են աշխատելու որոշակի տեսակի վտանգավոր բեռների մասնագիտացված փոխադրման ոլորտում, կպատասխանեն միայն իրենց աշխատանքին վերաբերող հարցերին: Ապրանքների այդ տեսակներն են՝

- 1-ին դաս
- 2-րդ դաս
- 7-րդ դաս

- 3-րդ, 4.1, 4.2, 4.3, 5.1, 5.2, 6.1, 6.2, 8-րդ եւ 9-րդ դասեր
- ՄԱԿ-ի նշագրման 1202, 1203, 1223, 3475 համարներ եւ ավիացիոն վառելիք՝ դասակարգված ՄԱԿ-ի նշագրման 1268 կամ 1863 համարի տակ:

1.8.3.7-ով նախատեսված սերտիֆիկատում պետք է հստակ նշված լինի, որ այն ուժի մեջ է սույն ենթաբաժնում թվարկված միայն մեկ տեսակի վտանգավոր բեռների համար, եւ որ դրա վերաբերյալ տվյալ խորհրդատուն արդեն հարցաքննվել է 1.8.3.12-ի պահանջներին համապատասխան:

1.8.3.14. Իրավասու կամ քննող մարմինը պետք է ունենա քննության մեջ ներառված բոլոր հարցերի ամբողջական ցանկը:

1.8.3.15. 1.8.3.7-ով նախատեսված սերտիֆիկատը պետք է կազմվի 1.8.3.18-ով սահմանված օրինակի համաձայն, եւ այն պետք է ճանաչեն բոլոր Պայմանավորվող կողմերը:

1.8.3.16. Սերտիֆիկատների գործողության ժամկետը եւ երկարաձգումը

1.8.3.16.1. Սերտիֆիկատն ուժի մեջ է 5 տարի: Սերտիֆիկատի ժամկետը սպառման օրվանից 5 տարով կերկարաձգվի այն դեպքում, եթե դրա իրավատերը ժամկետը սպառվելուց առաջ մեկ տարվա ընթացքում քննություն է հանձնել: Քննությունը պետք է հաստատվի իրավասու մարմնի կողմից:

1.8.3.16.2. Քննության նպատակը համոզվելն է, որ սերտիֆիկատի իրավատերը 1.8.3.3-ով սահմանված պարտականությունները կատարելու համար ունի անհրաժեշտ գիտելիքներ: Պահանջվող գիտելիքները նշված են 1.8.3.11(բ)-ում եւ ընդգրկում են կարգավորումների վերաբերյալ բոլոր այն փոփոխությունները, որոնք կատարվել են վերջին սերտիֆիկատի շնորհումից հետո: Քննություններն անցկացվում եւ վերահսկվում են միեւնույն հիմունքներով, ինչպես 1.8.3.10-ի եւ 1.8.3.12 - 1.8.3.14-ի դեպքում: Սակայն կարիք չկա, որ սերտիֆիկատի իրավատերերն իրականացնեն 1.8.3.12.4 (բ)-ում նշված կոնկրետ իրավիճակի ուսումնասիրությունը:

1.8.3.17. (Հանվել է)

1.8.3.18. Սերտիֆիկատի ձեւաթուղթը

Վտանգավոր բեռների փոխադրման անվտանգության հարցերով խորհրդատուի վերապատրաստման սերտիֆիկատ

Սերտիֆիկատի համարը՝ .....

Սերտիֆիկատը տրամադրող երկրի տարբերակիչ նշանը՝ .....

Ազգանունը՝ .....

Անունը (անունները)՝ .....

Ծննդյան ամսաթիվը եւ վայրը՝ .....

Քաղաքացիությունը՝ .....

Սերտիֆիկատի իրավատիրոջ ստորագրությունը՝ .....

Ուժի մեջ է մինչեւ ..... այն ձեռնարկությունների համար, որոնք փոխադրում են վտանգավոր բեռներ, ինչպես նաեւ այն ձեռնարկությունների համար, որոնք իրականացնում են բեռների համապատասխան փաթեթավորման, լցավորման, բեռնման կամ բեռնաթափման աշխատանքներ:

- Ճանապարհային
- Երկաթուղային
- Ներքին ջրուղիներով

Տրված է ..... կողմից

Ամսաթիվ՝ ..... Ստորագրություն՝ .....

1.8.4. Իրավասու մարմինները եւ նրանց կողմից նշանակված մարմինների ցանկը

Պայմանավորվող կողմերը ՄԱԿ-ի Եվրոպայի հանձնաժողովի քարտուղարությանը տրամադրում են իրենց կողմից նշանակված գերատեսչությունների եւ մարմինների հասցեները, որոնք իրավասու են ազգային օրենսդրության համաձայն իրականացնելու «ԱԴՌ» համաձայնագիրը՝ յուրաքանչյուր դեպքում հղում կատարելով «ԱԴՌ» համաձայնագրի համապատասխան պահանջին, ինչպես նաեւ տրամադրում են այն հասցեները, որտեղ պետք է ներկայացվեն համապատասխան դիմումները:

ՄԱԿ-ի Եվրոպայի հանձնաժողովի քարտուղարությունը ստացված տեղեկության հիման վրա կազմում է մի ցանկ, որը ժամանակի ընթացքում անընդհատ թարմացվում է: Նա այդ ցանկի եւ դրանում կատարված փոփոխությունների մասին տեղեկացնում է Պայմանավորվող կողմերին:

1.8.5. Վտանգավոր բեռների հետ կապված դեպքերի վերաբերյալ ծանուցումները

1.8.5.1. Եթե Պայմանավորվող կողմի տարածքում վտանգավոր բեռների բեռնման, լցավորման, փոխադրման կամ բեռնաթափման ժամանակ որեւէ լուրջ վթար կամ միջադեպ է տեղի ունենում, ապա համապատասխանաբար բեռնողը, լցավորողը, փոխադրողը կամ բեռն ստացողը պետք է հավաստիանա, որ տեղի ունեցածից առնվազն մեկ

ամիս հետո համապատասխան Պայմանավորվող կողմի իրավասու մարմնին ներկայացվել է 1.8.5.4-ով նախատեսված ձեւանմուշին համապատասխանող հաշվետվություն այդ ամենի մասին:

1.8.5.2. Անհրաժեշտության դեպքում Պայմանավորվող կողմն իր հերթին հաշվետվություն է ներկայացնում ՄԱԿ-ի Եվրոպայի հանձնաժողովի քարտուղարությանը՝ մյուս Պայմանավորվող կողմերին կատարվածի մասին տեղեկացնելու նպատակով:

1.8.5.3. Եթե որեւէ վտանգավոր բեռի արտահոսք է տեղի ունեցել կամ արտադրանքի կորստի մոտալուտ վտանգ է զգացվում, եթե անձնական վնասվածք, նյութական կամ շրջակա միջավայրին սպառնացող վտանգ կա, կամ եթե որոշ մարմիններ են ներգրավված եղել, կամ բավարարվել են հետեւյալ չափորոշիչներից մեկը կամ մի քանիսը, 1.8.5.1-ի համաձայն պետք է դրանց մասին անմիջապես հաշվետվություն ներկայացվի:

Անձնական վնասվածքներն առնչվում են այն դեպքերին, երբ ուղղակիորեն վտանգավոր բեռների փոխադրման հետեւանքով տեղի է ունեցել մահ կամ մարմնական վնասվածք, եւ այդ վնասվածքը՝

- ա) պահանջում է ինտենսիվ բուժում,
- բ) պահանջում է առնվազն մեկ օր հիվանդանոցում մնալ, կամ
- գ) հանգեցնում է առնվազն երեք հաջորդական օրեր անաշխատունակ դառնալուն:

Արտադրանքի կորուստ նշանակում է հետեւյալ վտանգավոր բեռների արտահոսք՝

- ա) 0 կամ 1-ին տրանսպորտային կատեգորիաների՝ 50կգ / 50լ կամ ավելի քանակությամբ,
- բ) 2-րդ տրանսպորտային կատեգորիայի՝ 333կգ / 333լ կամ ավելի քանակությամբ, կամ
- գ) 3-րդ կամ 4-րդ տրանսպորտային կատեգորիաների՝ 1 000կգ / 1 000լ կամ ավելի քանակությամբ:

Արտադրանքի կորստի չափորոշիչը վերաբերում է նաեւ այն դեպքերին, երբ վերը նշված քանակությամբ ապրանքի կորստի վտանգ է նկատվում: Որպես կանոն դա կարելի է ենթադրել այն դեպքում, երբ կառուցվածքային վնասման պատճառով տեղայնացման միջոցներն այլեւս պիտանի չեն հետագա փոխադրման համար, կամ ցանկացած այլ պատճառով այլեւս չի ապահովվում անվտանգության բավարար մակարդակ (օրինակ՝ ցիստեռնների կամ կոնտեյնրների ծովելու պատճառով, ցիստեռնի շուռ գալու կամ հարակից տարածքում կրակի բռնկման պատճառով):

Եթե պատահարը կապված է 6.2 դասի վտանգավոր բեռների հետ, ապա դրա մասին զեկուցելու պարտավորության մասով պահանջը կիրառվում է առանց որեւէ քանակային սահմանափակում հաշվի առնելու:

Եթե տեղի ունեցածը վերաբերում է ռադիոակտիվ նյութերին, ապա արտադրանքի կորստի չափորոշիչները հետեւյալն են.

- ա) ռադիոակտիվ նյութի փաթեթից ցանկացած արտահոսք,
- բ) ճառագայթում, որը հանգեցնում է կանոնակարգերում ամրագրված սահմանաչափերի խախտմանը՝ ուղղված աշխատողների եւ հասարակության անդամների իոնացնող ճառագայթումից պաշտպանությանը (2-րդ գրաֆիկ ԱԷՄԳ-ի Անվտանգության ստանդարտների թիվ 115 շարք. «Իոնացնող ճառագայթումից պաշտպանության եւ ռադիացիոն աղբյուրների անվտանգության հիմնական միջազգային նորմեր»), կամ
- գ) երբ հիմքեր կան ենթադրելու, որ տեղի է ունեցել փաթեթի անվտանգության ցանկացած ֆունկցիայի զգալի վատացում (զսպման, պաշտպանիչ փականի, ջերմային պաշտպանության կամ կրիտիկական վիճակի), որը կարող է փաթեթն անպիտան դարձնել շարունակական փոխադրման համար՝ առանց անվտանգության լրացուցիչ միջոցներ ձեռնարկելու:

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Առաքման ոչ ենթակա բեռների առնչությամբ տե՛ս 7.5.11 CV33(6)-ի պահանջները:*

Նյութական կամ բնապահպանական վնաս տեղի է ունենում վտանգավոր բեռների արտահոսքի ժամանակ՝ անկախ քանակից, որի դեպքում վնասի գնահատված գումարը գերազանցում է 50.000 եվրոն: Սակայն անմիջականորեն վտանգավոր բեռներ պարունակող փոխադրամիջոցներին եւ ենթակառուցվածքներին հասցված վնասները հաշվի չեն առնվում այդ նպատակով:

Իշխանությունների ներգրավում նշանակում է իշխանությունների կամ արտակարգ իրավիճակների ծառայությունների անմիջական միջամտում վտանգավոր բեռների հետ կապված պատահարի եւ մարդկանց տարհանման կամ հանրային երթուղային ճանապարհների փակման (ճանապարհներ/երկաթուղիներ) ժամանակ՝ առնվազն 3 ժամով՝ հաշվի առնելով վտանգավոր բեռների ներկայացրած վտանգը:

Իրավասու մարմինն անհրաժեշտության դեպքում կարող է համապատասխան լրացուցիչ տեղեկություն պահանջել:

- 1.8.5.4. Վտանգավոր բեռների փոխադրման ժամանակ տեղի ունեցած պատահարների մասին հաշվետվության ձեւանմուշը

Հաշվետվություն՝ վտանգավոր բեռների փոխադրման ժամանակ տեղի ունեցած պատահարների մասին՝ ՌԻԴ/«ԱԴՌ» համաձայնագրի 1.8.5 բաժնին համապատասխան

Փոխադրող/երկաթուղային ենթակառուցվածքի օպերատոր՝ .....
Հասցե՝ .....
Կոնտակտային անձ՝ ..... Հեռախոս՝ ..... Ֆաքս՝ .....

(Իրավասու մարմինը հաշվետվությունը պետք է ուղարկի առանց այս տխտղոսաթերթի)



<b>1. Եղանակ</b>						
<input type="checkbox"/> Երկաթուղի Վագոնի համարը (կամընտիր) .....			<input type="checkbox"/> Ճանապարհային Փոխադրամիջոցի գրանցման համարը (կամընտիր) .....			
<b>2. Պատահարի ամսաթիվը եւ վայրը</b>						
Տարի ..... Ամիս ..... Օր ..... Ժամ .....						
<input type="checkbox"/> Երկաթուղի <input type="checkbox"/> Կայարան <input type="checkbox"/> Տեսակավորման կայարան <input type="checkbox"/> Բեռնավորման/բեռնաթափման/փոխաբեռնման վայր Վայր / Երկիր ..... կամ <input type="checkbox"/> Բաց երկաթգիծ Երկաթգծի նկարագրություն ..... Կիլոմետր .....			<input type="checkbox"/> Ճանապարհային <input type="checkbox"/> Կառուցապատման տարածքներ <input type="checkbox"/> Բեռնավորման/բեռնաթափման/փոխաբեռնման վայր <input type="checkbox"/> Բաց ճանապարհ Վայր / Երկիր .....			
<b>3. Տեղագրություն</b>						
<input type="checkbox"/> Գրադիենտ/թեքություն <input type="checkbox"/> Թունել <input type="checkbox"/> Կամուրջ/կամրջի տակով անցում <input type="checkbox"/> Խաչմերուկ						
<b>4. Հատուկ եղանակային պայմաններ</b>						
<input type="checkbox"/> Անձրեւ <input type="checkbox"/> Ձյուն <input type="checkbox"/> Սառույց <input type="checkbox"/> Մառախուղ <input type="checkbox"/> Կայծակ <input type="checkbox"/> Փոթորիկ Ջերմաստիճան՝ .....°C						
<b>5. Պատահարի նկարագրություն</b>						
<input type="checkbox"/> Գծից դուրս գալը/ճանապարհի սահմաններից շեղվելը <input type="checkbox"/> Բախում <input type="checkbox"/> Շրջվել <input type="checkbox"/> Հրդեհ <input type="checkbox"/> Պայթյուն <input type="checkbox"/> Ապրանքի կորուստ <input type="checkbox"/> Տեխնիկական անսարքություն Պատահարի լրացուցիչ նկարագրություն ..... ..... ..... ..... ..... ..... .....						
<b>6. Փոխադրվող վտանգավոր բեռներ</b>						
ՄԱԿ-ի նշագրման համար (1)	Դաս	Փաթեթավորման խումբ	Կորցրած ապրանքների մոտավոր քանակ (կգ կամ լ) (2)	Տեղայնացման միջոցները (3)	Տեղայնացման միջոցների նյութը	Տեղայնացման միջոցի խափանման տեսակը (4)
(1) Հավաքական դիրքերի վերագրվող վտանգավոր բեռների դեպքում, որոնց նկատմամբ կիրառվում է 274 հատուկ դրոյթը, պետք է նշվի նաեւ տեխնիկական անվանումը				(2) 7-րդ դասի դեպքում նշել արժեքները՝ 1.8.5.3-ի չափորոշիչներին համապատասխան		
(3) Նշել համապատասխան համարը 1 Փաթեթվածք 2 ՍՄԿ 3 Խոշոր փաթեթվածք 4 Փոքր կոնտեյներ 5 Վագոն				(4) Նշել համապատասխան համարը 1 Ապրանքի կորուստ 2 Հրդեհ 3 Պայթյուն 4 Կառուցվածքային խափանում		

6	Փոխադրամիջոց	
7	Ցիստեռն-վազոն	
8	Ավտոցիստեռն	
9	Մարտկոցանման հավաքվածքով վազոն	
10	Մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոց	
11	Վազոն՝ հանովի ցիստեռններով	
12	Հանովի ցիստեռն	
13	Մեծ կոնտեյներ	
14	Ցիստեռն-կոնտեյներ	
15	ԳՐՏԿ	
16	Շարժական ցիստեռն	
<b>7. Պատահարի պատճառը (եթե հստակ պարզ է)</b>		
<input type="checkbox"/> Տեխնիկական անսարքություն <input type="checkbox"/> Բեռների ոչ ճիշտ ամրացում <input type="checkbox"/> Շահագործման պատճառ (երկաթուղային փոխադրում) <input type="checkbox"/> Այլ ..... ..... .....		
<b>8. Պատահարի հետեւանքները</b>		
Անձնական վնասվածք՝ կապված վտանգավոր բեռների փոխադրման հետ <input type="checkbox"/> Մահ (թիվը. ....) <input type="checkbox"/> Մարմնական վնասվածք (թիվը. ....)		
Արտադրանքի կորուստ <input type="checkbox"/> Այո <input type="checkbox"/> Ոչ <input type="checkbox"/> Արտադրանքի կորստի մոտալուտ վտանգ		
Նյութական/Բնապահպանական վնաս <input type="checkbox"/> Վնասի գնահատված չափը < 50,000 եվրո <input type="checkbox"/> Վնասի գնահատված չափը > 50,000 եվրո		
Իշխանությունների միջամտություն <input type="checkbox"/> Այո <input type="checkbox"/> Մարդկանց տարհանում առնվազն 3 ժամ տեւողությամբ՝ կապված վտանգավոր բեռների փոխադրման հետ <input type="checkbox"/> Հանրային երթուղիների փակում առնվազն 3 ժամ տեւողությամբ՝ կապված վտանգավոր բեռների փոխադրման հետ <input type="checkbox"/> Ոչ		

Իրավասու մարմինն անհրաժեշտության դեպքում կարող է համապատասխան լրացուցիչ տեղեկություն պահանջել:

- 1.8.6. Համապատասխանության գնահատման, պարբերական, միջանկյալ եւ 1.8.7-ում նկարագրված ոչ պլանային ստուգումների կիրառման նկատմամբ վարչական վերահսկողությունը
- 1.8.6.1. Ստուգող մարմինների հաստատումը
- Իրավասու մարմինը կարող է հավանություն տալ, որ ստուգող մարմիններն իրականացնեն 1.8.7.-ում նշված համապատասխանության գնահատում, պարբերական, միջանկյալ, ոչ պլանային ստուգումներ եւ ներքին ստուգման ծառայության նկատմամբ վերահսկողություն:
- 1.8.6.2. Իրավասու մարմնի, նրա պատվիրակի կամ ստուգող մարմնի գործառական պարտավորությունները
- 1.8.6.2.1. Իրավասու մարմինը, նրա պատվիրակը կամ ստուգող մարմինն իրականացնում են համապատասխանության գնահատում, պարբերական ստուգումներ, միջանկյալ ստուգումներ եւ ոչ պլանային ստուգումներ համաչափ կարգով՝ խուսափելով անհարկի ծանրաբեռնվածությունից: Իրավասու մարմինը, նրա պատվիրակը կամ ստուգող մարմինն իրականացնում են իրենց գործունեությունը՝ հաշվի առնելով ներգրավված կազմակերպությունների չափը, ոլորտը եւ կառուցվածքը, տեխնոլոգիայի հարաբերական բարդությունն ու արտադրանքի սերիական բնութագիրը:
- 1.8.6.2.2. Այնուամենայնիվ, իրավասու մարմինը, նրա պատվիրակը կամ ստուգող մարմինը պետք է բավարարեն 4-րդ եւ 6-րդ մասերի դրույթներով սահմանված՝ ճնշման տակ աշխատող շարժական սարքավորումների համապատասխանության համար պահանջվող ճշգրտության աստիճանը եւ պաշտպանության մակարդակը:
- 1.8.6.2.3. Եթե իրավասու մարմինը, նրա պատվիրակը կամ ստուգող մարմինը պարզում են, որ 4-րդ կամ 6-րդ մասերով սահմանված պահանջները չեն բավարարվել արտադրողի կողմից, ապա պետք է պահանջեն, որ արտադրողը ձեռնարկի համապատասխան ուղղիչ միջոցներ, ինչպես նաեւ չպետք է տրամադրեն որեւէ՝ տեսակի հաստատման հավաստագիր կամ համապատասխանության հավաստագիր:
- 1.8.6.3. Տեղեկություններ ներկայացնելու պարտավորությունը
- «ԱԴՌ» համաձայնագրի Պայմանավորվող կողմերը հրապարակում են ստուգող մարմինների գնահատման, նշանակման եւ դիտանցման իրենց ազգային ընթացակարգերն ու այդ տեղեկություններում տեղ գտած ցանկացած փոփոխություն:
- 1.8.6.4. Ստուգման գործառույթների պատվիրակումը
- ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. 1.8.7.6-ի համաձայն ներքին ստուգման ծառայությունները չեն կարգավորվում 1.8.6.4-ով:*

- 1.8.6.4.1. Եթե ստուգող մարմինը համապատասխանության գնահատում, պարբերական, միջանկյալ կամ ոչ պլանային ստուգումների հետ կապված կոնկրետ գործառույթներ իրականացնելիս օգտվում է ցանկացած այլ մարմնի (օր.՝ ենթակապալառուի, դուստր ընկերության) ծառայություններից, ապա նշված մարմինն ընդգրկվում է ստուգող մարմնի հավատարմագրման գործընթացում, կամ այն առանձին է հավատարմագրվում: Առանձին հավատարմագրման դեպքում այդ մարմինը պետք է պատշաճ կերպով հավատարմագրվի EN ISO/IEC 17025:2005 ստանդարտին համապատասխան եւ ստուգող մարմնի կողմից պետք է ճանաչվի որպես անկախ եւ անկողմնակալ փորձարարական լաբորատորիա՝ իր հավատարմագրմանը համապատասխան փորձարկման գործառույթներ իրականացնելու համար, կամ այն պետք է հավատարմագրվի EN ISO/IEC 17020:2012 ստանդարտին համապատասխան (բացառությամբ 8.1.3 կետի): Ստուգող մարմինն ապահովում է, որ նշված մարմինը բավարարի իրեն պատվիրակված գործառույթների իրականացման համար սահմանված պահանջներն իրավասության ու անվտանգության այն նույն մակարդակի վրա, որը նախատեսված է ստուգող մարմնի համար (տե՛ս 1.8.6.8), եւ ստուգող մարմինը դիտանցում է այն: Ստուգող մարմինը տեղեկացնում է իրավասու մարմնին նշված պայմանավորվածությունների մասին:
- 1.8.6.4.2. Ստուգող մարմինը լրիվ պատասխանատվություն է կրում նշված մարմինների կողմից իրականացված գործառույթների համար՝ անկախ այն հանգամանքից, թե որտեղ են դրանք իրականացվում:
- 1.8.6.4.3. Ստուգող մարմինը չպետք է պատվիրակի համապատասխանության գնահատման, պարբերական եւ միջանկյալ կամ ոչ պլանային ստուգումների հետ կապված բոլոր աշխատանքները: Այնուամենայնիվ, գնահատումը եւ սերտիֆիկատների տրամադրումը կատարվում է անմիջապես ստուգող մարմնի կողմից:
- 1.8.6.4.4. Աշխատանքները չեն պատվիրակվում առանց հայտ ներկայացնողի համաձայնության:
- 1.8.6.4.5. Ստուգող մարմինն իրավասու մարմնին տրամադրում է նշված մարմինների կողմից իրականացվող որակավորումների եւ աշխատանքի գնահատմանը վերաբերող համապատասխան փաստաթղթեր:
- 1.8.6.5. Ստուգող մարմինների՝ տեղեկատվություն տրամադրելու պարտավորությունը
- Ցանկացած ստուգող մարմին իրեն հաստատող իրավասու մարմնին տրամադրում է հետեւյալի մասին տեղեկություններ՝
- ա) տեսակի հաստատման սերտիֆիկատների տրամադրումը

մերժելու, դրա գործողությունը սահմանափակելու, կասեցնելու կամ դադարեցնելու մասին՝ բացառությամբ, երբ կիրառվում են 1.8.7.2.4-ի դրույթները.

բ) իրավասու մարմնի կողմից տրամադրված հաստատման գործողության շրջանակի եւ պայմանների վրա ազդող ցանկացած հանգամանքի (հանգամանքների) մասին.

գ) իրականացված համապատասխանության գնահատման վերաբերյալ 1.8.1-ի կամ 1.8.6.6-ի համաձայն համապատասխանությունը դիտանցող իրավասու մարմինների կողմից ստացված տեղեկությունների առնչությամբ ցանկացած հարցման մասին.

դ) անհրաժեշտության դեպքում՝ իրենց հաստատման շրջանակներում իրականացված համապատասխանության գնահատման, կատարված ցանկացած այլ աշխատանքի, այդ թվում՝ գործառույթների պատվիրակման մասին:

1.8.6.6. Իրավասու մարմինն ապահովում է ստուգում իրականացնող մարմինների դիտանցումը եւ ուժը կորցրած է ճանաչում տրամադրված հաստատումը կամ սահմանափակում է դրա գործողությունը, եթե գտնում է, որ հաստատված մարմինն այլեւս չի կատարում հաստատման եւ 1.8.6.8-ի պահանջները կամ «ԱԴԲ» համաձայնագրի դրույթներով սահմանված ընթացակարգերը:

1.8.6.7. Եթե ստուգող մարմնի հաստատումն ուժը կորցրած է ճանաչվում, կամ դրա գործողությունը սահմանափակվում է, կամ ստուգող մարմինը դադարեցնում է իր գործունեությունը, ապա իրավասու մարմինը համապատասխան քայլեր է ձեռնարկում՝ ապահովելու համար, որ փաստաթղթերը մշակվեն կամ մեկ այլ ստուգող մարմնի կողմից, կամ հասանելի դարձվեն:

1.8.6.8. Ստուգող մարմինը պետք է՝

ա) ունենա կազմակերպական-հաստիքային կառուցվածք ունեցող, գիտակ, վերապատրաստված, իրազեկ եւ հմուտ անձնակազմ, որպեսզի պատշաճ կերպով իրականացնի իր տեխնիկական գործառույթները.

բ) հասանելիություն ունենա պիտանի եւ համապատասխան տարածքներ ու սարքավորումներ.

գ) աշխատի անաչառ ձեւով եւ զերծ մնա ցանկացած ազդեցությունից, որը կարող է խոչընդոտել նրան իր գործառույթներն իրականացնելիս.

դ) ապահովի արտադրողի եւ այլ մարմինների առետրային ու

սեփական գործունեության առեւտրային գաղտնիքը.

- ե) հստակ տարանջատի ստուգող մարմնի փաստացի գործառույթները եւ դրա հետ կապ չունեցող գործառույթները.
- զ) ունենա փաստաթղթով ամրագրված՝ որակի ապահովման համակարգ.
- է) ապահովի համապատասխան ստանդարտով եւ «ԱԴՌ» համաձայնագրով սահմանված փորձարկումների եւ ստուգումների իրականացումը.
- ը) վարի հաշվետվությունների եւ գրառումների արդյունավետ ու համապատասխան համակարգ՝ 1.8.7-ին եւ 1.8.8-ին համապատասխան:

Ավելին, ստուգող մարմինը հավատարմագրվում է 6.2.2.11, 6.2.3.6-ում եւ 6.8.4-ի TA4 ու TT9 հատուկ դրույթներում նշված EN ISO/IEC 17020:2012 (բացառությամբ 8.1.3-ի) ստանդարտով:

Նոր գործունեություն սկսող ստուգող մարմինը կարող է ժամանակավորապես հաստատվել: Նախքան ժամանակավոր նշանակումը՝ իրավասու մարմինն ապահովում է, որ ստուգող մարմինը բավարարի EN ISO/IEC 17020:2012 (բացառությամբ 8.1.3-ի) ստանդարտի պահանջները: Ստուգող մարմինը պետք է հավատարմագրվի գործունեություն իրականացնելու առաջին տարում, որպեսզի կարողանա շարունակել այս նոր գործունեության իրականացումը:

- 1.8.7. Համապատասխանության գնահատման եւ պարբերական ստուգումների ընթացակարգերը

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Սույն բաժնում «համապատասխան մարմին» նշանակում է ՄԱԿ-ի ճնշումային տարաների սերտիֆիկացման համար 6.2.2.11-ում նշված մարմին, ՄԱԿ-ի ճնշումային տարաներ չհանդիսացող տարաների հաստատման համար 6.2.3.6-ում եւ 6.8.4-ի TA4 եւ TT9 հատուկ դրույթներում նշված մարմին:

- 1.8.7.1. Ընդհանուր դրույթները

- 1.8.7.1.1. 1.8.7 բաժնով նախատեսված ընթացակարգերը կիրառվում են 6.2.3.6-ի համաձայն ՄԱԿ-ի ճնշումային տարաներ չհանդիսացող տարաների հաստատման դեպքում, ինչպես նաեւ 6.8.4-ի TA4 եւ TT9 հատուկ դրույթների համաձայն՝ ցիստեռնների, մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցների, ԳՔՏԿ-ների հաստատման դեպքում:

1.8.7 բաժնով նախատեսված ընթացակարգերը ՄԱԿ-ի ճնշումային տարաների սերտիֆիկացման դեպքում կարող են կիրառվել 6.2.2.11-ում ներկայացված աղյուսակի համաձայն:

1.8.7.1.2. Յուրաքանչյուր հայտ, որը՝

- ա) 1.8.7.2-ի համաձայն ներկայացվում է տեսակի հաստատման համար, կամ
- բ) 1.8.7.3-ի համաձայն՝ արտադրական պրոցեսի նկատմամբ վերահսկողության եւ 1.8.7.4-ի համաձայն՝ նախնական ստուգման ու փորձարկման համար, կամ
- գ) 1.8.7.5-ի համաձայն՝ պարբերական, միջանկյալ եւ ոչ պլանային ստուգումների համար,

տրվում է հայտ ներկայացնողի կողմից մեկ իրավասու մարմնի, իր ներկայացուցչին կամ իր ընտրությամբ՝ ստուգող մարմնին:

1.8.7.1.3. Հայտը պետք է պարունակի՝

- ա) հայտ ներկայացնողի անունը եւ հասցեն.
- բ) համապատասխանության գնահատման դեպքում, երբ հայտ ներկայացնողն արտադրողը չէ՝ արտադրողի անվանումը եւ հասցեն.
- գ) գրավոր հայտարարագիր այն մասին, որ նույն հայտը չի ներկայացվել որեւէ այլ իրավասու մարմնի, իր ներկայացուցչին կամ ստուգող մարմնին.
- դ) 1.8.7.7-ում նշված համապատասխան տեխնիկական փաստաթղթերը.
- ե) հայտարարություն այն մասին, որ իրավասու մարմնին, իր ներկայացուցիչը կամ ստուգող մարմնին ստուգում իրականացնելու նպատակներով կարող են մուտք գործել արտադրության, ստուգումների, փորձարկման, ինչպես նաեւ պահեստների տարածք եւ ստանալ բոլոր անհրաժեշտ տեղեկությունները:

1.8.7.1.4. Եթե հայտ ներկայացնողը կարող է ապացուցել իրավասու մարմնին կամ իր կողմից լիազորված ստուգող մարմնին, որ համապատասխանում է 1.8.7.6-ի պահանջներին, եւ այն հավանության արժանանա նրա կողմից, ապա հայտ ներկայացնողը կարող է ստեղծել ներքին ստուգում իրականացնող ծառայություն, որը կարող է իրականացնել բոլոր ստուգումներն ու փորձարկումները կամ դրանց մի մասը 6.2.2.11-ում կամ 6.2.3.6-ում նշված լինելու դեպքում:

1.8.7.1.5. Կառուցվածքի տեսակի հաստատման սերտիֆիկատները եւ համապատասխանության սերտիֆիկատները, այդ թվում՝ տեխնիկական փաստաթղթերը պետք է պահվեն արտադրողի կամ տեսակի հաստատման համար դիմած հայտ ներկայացնողի կողմից,

եթե վերջինս արտադրող չէ, ինչպես նաև ստուգող մարմնի կողմից, որն առնվազն քսան տարի ժամկետով սերտիֆիկատ է տրամադրել՝ սկսած նույն տեսակի արտադրանքի արտադրության վերջին ամսաթվից:

1.8.7.1.6. Երբ արտադրողը կամ սեփականատերը մտադիր են դադարեցնել աշխատանքները, ապա նա փաստաթղթերն ուղարկում է իրավասու մարմին: Իրավասու մարմինը պետք է 1.8.7.1.5-ում նշված մնացած ժամանակահատվածի ընթացքում պահի փաստաթղթերը:

1.8.7.2. Տեսակի հաստատումը

Տեսակի հաստատումները թույլ են տալիս այդ հաստատման գործողության ժամկետի ընթացքում արտադրել ճնշումային տարաներ, ցիստեռններ, մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցներ կամ ԳԲՏԿ-ներ:

1.8.7.2.1. Հայտ ներկայացնողը պետք է՝

ա) ճնշումային տարաների դեպքում համապատասխան մարմին տրամադրի արտադրության ներկայացուցչական նմուշներ, որոնք նախատեսվում է արտադրել: Համապատասխան մարմինը կարող է պահանջել լրացուցիչ նմուշներ, եթե այդպիսիք անհրաժեշտ են փորձարկման ծրագրով:

բ) ցիստեռնների, մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցների կամ ԳԲՏԿ-ների դեպքում մատչելի դարձնի նախատիպը՝ տեսակի փորձարկում անցկացնելու նպատակով:

1.8.7.2.2. Համապատասխան մարմինը պետք է՝

ա) ուսումնասիրի 1.8.7.2.1-ում նշված տեխնիկական փաստաթղթերը՝ ստուգելու համար, որ կառուցվածքը համապատասխանում է «ԱԴԲ» համաձայնագրի համապատասխան դրույթներին, ինչպես նաև նախատիպը կամ փորձնական խմբաքանակն արտադրվել է տեխնիկական փաստաթղթերին համահունչ, եւ որ այն արտացոլում է կառուցվածքի հատկությունները:

բ) կատարի ուսումնասիրություններ եւ մասնակցի «ԱԴԲ» համաձայնագրով սահմանված փորձարկումներին՝ որոշելու համար, որ դրույթները կիրարկվել ու իրականացվել են, եւ արտադրողի կողմից ընդունված ընթացակարգերը բավարարում են պահանջները:

գ) ստուգի նյութեր արտադրողի (արտադրողների) կողմից տրված սերտիֆիկատի (սերտիֆիկատների)՝ «ԱԴԲ» համաձայնագրի համապատասխան դրույթների հետ համապատասխանությունը:

դ) անհրաժեշտության դեպքում հաստատի մասերի մշտական



միացումների ընթացակարգերը կամ ստուգի, թե արդյոք դրանք նախկինում հաստատվել են, ինչպես նաև ստուգի, որ մասերի մշտական միացումներով եւ ոչ քայքայիչ փորձարկմամբ զբաղվող անձնակազմը որակավորված կամ հաստատված լինի.

ե) հայտ ներկայացնողի հետ համաձայնեցնի այն վայրը եւ փորձարկումների անցկացման այն օբյեկտները, որտեղ պետք է իրականացվեն ստուգումներն ու անհրաժեշտ փորձարկումները:

Համապատասխան մարմինը տեսակի համապատասխանության ստուգման վերաբերյալ հաշվետվությունը տրամադրում է հայտ ներկայացնողին:

1.8.7.2.3. Եթե տեսակը համապատասխանում է բոլոր կիրառելի դրույթներին, ապա իրավասու մարմինը, նրա ներկայացուցիչը կամ ստուգող մարմինը հայտ ներկայացնողին տրամադրում են տեսակի հաստատման սերտիֆիկատ:

Այդ սերտիֆիկատը պետք է պարունակի հետևյալ տվյալները՝

ա) սերտիֆիկատ տվող անձի անունը եւ հասցեն.

բ) արտադրողի եւ հայտ ներկայացնողի անունն ու հասցեն, եթե վերջինս արտադրողը չէ.

գ) «ԱԴՌ» համաձայնագրի տարբերակին եւ տեսակի համապատասխանության ստուգման համար օգտագործված ստանդարտներին կատարված հղումը.

դ) ստուգման արդյունքում սահմանված ցանկացած պահանջ.

ե) համապատասխան ստանդարտով նախատեսված կարգով՝ տեսակի եւ դրա փոփոխությունների նույնականացման համար անհրաժեշտ տվյալները.

զ) տեսակի համապատասխանության ստուգման վերաբերյալ հաշվետվությանը (հաշվետվություններին) կատարված հղումը. եւ

է) տեսակի հաստատման գործողության առավելագույն ժամկետը:

Տեխնիկական փաստաթղթերի համապատասխան մասերի ցանկը կցվում է սերտիֆիկատին (տե՛ս 1.8.7.7.1):

1.8.7.2.4. Տեսակի հաստատումը վավեր է առավելագույնը տասը տարի: Եթե նշված ժամկետի ընթացքում «ԱԴՌ» համաձայնագրի համապատասխան տեխնիկական պահանջները (այդ թվում՝ այն ստանդարտները, որոնց հղումներ են կատարվել) այնպես են փոփոխվել, որ հաստատված տեսակն այլևս չի համապատասխանում դրանց հետ, ապա տեսակի հաստատում տվող համապատասխան մարմինը դրա գործողությունը դադարեցնում է եւ դրա մասին

տեղեկացնում է տեսակի հաստատման իրավատիրոջը:

*ԾԱՆՈՐԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Հարկ եղած դեպքում տեսակի գործող հաստատումների չեղյալ ճանաչման ժամկետների համար տե՛ս 6.2.4-ում եւ 6.8.2.6-ում կամ 6.8.3.6-ում նշված աղյուսակի 5-րդ սյունակը:*

Եթե տեսակի հաստատման ժամկետը լրացել է կամ դրա գործողությունը դադարեցվել է, ապա ճնշումային տարաների, ցիստեռնների, մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցների կամ ԳՐՏԿ-ների արտադրությունը, նշված տեսակի հաստատման համաձայն, այլեւս չի թույլատրվում:

Այդ դեպքում ժամկետը լրացած եւ գործողությունը դադարեցված տեսակի հաստատման մեջ ընդգրկված ճնշումային տարաների, ցիստեռնների, մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցների կամ ԳՐՏԿ-ների օգտագործմանը, պարբերական ու միջանկյալ ստուգմանը վերաբերող համապատասխան դրույթները շարունակվում են կիրառվել նախքան տեսակի հաստատման ժամկետի լրանալը կամ գործողությունը դադարեցնելը կառուցված ճնշումային տարաների, ցիստեռնների, մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցների կամ ԳՐՏԿ-ների նկատմամբ, եթե դրանք կարող են դեռեւս օգտագործվել:

Դրանք կարող են շարունակել օգտագործվել այնքան ժամանակ, քանի դեռ համապատասխանում են «ԱԴԻ» համաձայնագրի պահանջներին: Եթե դրանք այլեւս չեն համապատասխանում «ԱԴԻ» համաձայնագրի պահանջներին, ապա կարող են օգտագործվել միայն այն դեպքում, եթե դրանց օգտագործումը թույլատրվում է 1.6 գլխով սահմանված համապատասխան անցումային դրույթներով:

Տեսակի հաստատումների ժամկետը կարող է երկարաձգվել երկարաձգման ամսաթվի դրությամբ «ԱԴԻ» համաձայնագրի կիրառելի դրույթներին համապատասխանության մասով համապարփակ ուսումնասիրություն եւ գնահատում իրականացնելուց հետո: Տեսակի հաստատման ժամկետը չի կարող երկարաձգվել, եթե դրա գործողությունը դադարեցվել է: Տեսակի գործող հաստատման (օր.՝ ճնշումային տարաների դեպքում փոքր փոփոխությունները, ինչպես, օրինակ՝ լրացուցիչ չափսերի կամ ծավալների ավելացումը, որը չի ազդում համապատասխանության վրա, կամ ցիստեռնների դեպքում տե՛ս 6.8.2.3.2) միջանկյալ փոփոխությունները չեն երկարաձգում կամ փոփոխում սերտիֆիկատի սկզբնական գործողության ժամկետը:

*ԾԱՆՈՐԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Համապատասխանության ուսումնասիրությունը եւ գնահատումը կարող են իրականացվել տեսակի սկզբնական հաստատումը տվող մարմնից տարբեր՝ այլ մարմնի կողմից:*

Տեսակի հաստատում տվող մարմինը պահում է տեսակի հաստատման

բոլոր փաստաթղթերը (տե՛ս 1.8.7.7.1) դրա գործողության, այդ թվում՝ երկարաձգման դեպքում երկարաձգումների ամբողջ ժամանակահատվածի ընթացքում:

- 1.8.7.2.5. Ժամկետի մեջ գտնվող, ժամկետը լրացած եւ գործողությունը դադարեցված ճնշումային տարաների, ցիստեռնների, մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցների կամ ԳՖՏԿ-ների փոփոխության դեպքում փորձարկումը, ստուգումը եւ հաստատումն իրականացվում են միայն ճնշումային տարաների, ցիստեռնների, մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցների կամ ԳՖՏԿ-ների այն մասերի նկատմամբ, որոնք փոփոխվել են: Փոփոխությունները պետք է իրականացվեն «ԱԴՌ» համաձայնագրի՝ փոփոխության պահին կիրառելի դրույթներին համապատասխան: Ճնշումային տարաների, ցիստեռնների, մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցների կամ ԳՖՏԿ-ների բոլոր մասերի համար, որոնք փոփոխությունների արդյունքում չեն կրում ազդեցություն, տեսակի նախնական հաստատման փաստաթղթերը շարունակում են մնալ ուժի մեջ:

Փոփոխությունները կարող են վերաբերել մեկ կամ մի քանի ճնշումային տարաների, ցիստեռնների, մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցների կամ ԳՖՏԿ-ների, որոնց վրա տարածվում է տեսակի հաստատումը:

«ԱԴՌ» համաձայնագրի ցանկացած Պայմանավորվող կողմի իրավասու մարմնի կամ իրավասու մարմնի կողմից նշանակված մարմնի կողմից հայտ ներկայացնողին տրամադրվում է փոփոխությունը հաստատող սերտիֆիկատ: Ցիստեռնների, մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցների կամ ԳՖՏԿ-ների համար կրկնօրինակը պահպանվում է որպես ցիստեռնի մասին գրառումների մաս:

Փոփոխության համար հաստատման սերտիֆիկատի յուրաքանչյուր հայտ հայտ ներկայացնողի կողմից ներկայացվում է միայն մեկ իրավասու մարմնի կամ այդ մարմնի կողմից նշանակված մարմնին:

- 1.8.7.3. Արտադրական պրոցեսի նկատմամբ վերահսկողությունը

- 1.8.7.3.1. Արտադրական պրոցեսը վերահսկվում է համապատասխան մարմնի կողմից՝ ապահովելու համար, որ արտադրանքն արտադրվի տեսակի հաստատման դրույթներին համապատասխան:

- 1.8.7.3.2. Հայտ ներկայացնողը ձեռնարկում է բոլոր անհրաժեշտ միջոցները՝ ապահովելու համար, որ արտադրական պրոցեսը համապատասխանի «ԱԴՌ» համաձայնագրի եւ տեսակի հաստատման սերտիֆիկատի կիրառելի դրույթներին ու դրա հավելվածներին:

- 1.8.7.3.3. Համապատասխան մարմինը պետք է՝

- ա) ստուգի 1.8.7.7.2-ում նշված՝ տեխնիկական փաստաթղթերի հետ համապատասխանությունը.
- բ) ստուգի, թե արդյոք արտադրական պրոցեսի արդյունքում արտադրվում են պահանջներին եւ արտադրանքին վերաբերող փաստաթղթերին համապատասխանող արտադրանք.
- գ) ստուգի նյութերի հետազոտությունը եւ նյութի սերտիֆիկատի (սերտիֆիկատների)՝ տեխնիկական մասնագրերի հետ համապատասխանությունը.
- դ) անհրաժեշտության դեպքում ստուգի, որ մասերի մշտական միացումներով եւ ոչ քայքայիչ փորձարկմամբ զբաղվող անձնակազմը որակավորված կամ հաստատված լինի.
- ե) հայտ ներկայացնողի հետ համաձայնեցնի այն վայրը, որտեղ պետք է անցկացվեն ուսումնասիրություններն ու անհրաժեշտ փորձարկումները.
- զ) արձանագրի վերահսկման արդյունքները:

#### 1.8.7.4. Նախնական ստուգումները եւ փորձարկումները

##### 1.8.7.4.1. Հայտ ներկայացնողը պետք է՝

- ա) փակցնի «ԱԴՌ» համաձայնագրով սահմանված համապատասխանության նշանները.
- բ) համապատասխան մարմինն տրամադրի 1.8.7.7-ում նշված տեխնիկական փաստաթղթերը:

##### 1.8.7.4.2. Համապատասխան մարմինը պետք է՝

- ա) իրականացնի անհրաժեշտ ուսումնասիրություններ եւ փորձարկումներ՝ ստուգելու համար, որ արտադրանքն արտադրված է տեսակի հաստատման եւ համապատասխան դրույթներին համապատասխան.
- բ) ստուգի օժանդակ սարքավորումներն արտադրողների կողմից դրանց առնչությամբ տրամադրված սերտիֆիկատները.
- գ) հայտ ներկայացնողին տրամադրի իրականացված մանրամասն փորձարկումների ու ստուգումների մասին նախնական ստուգման եւ փորձարկման հաշվետվությունը, ինչպես նաեւ ստուգված տեխնիկական փաստաթղթերը.
- դ) կազմի արտադրության համապատասխանության գրավոր

սերտիֆիկատ եւ փակցնի իր գրանցված նշանը, երբ արտադրությունը համապատասխանում է դրույթներին. եւ

ե) ստուգի, թե արդյոք տեսակի հաստատումը «ԱԴԴ» համաձայնագրի՝ տեսակի հաստատմանը վերաբերող դրույթների (այդ թվում՝ այն ստանդարտների, որոնց հղում է կատարվել) փոփոխությունից հետո վավեր է մնում.

(դ) կետում նշված սերտիֆիկատը եւ (զ) կետում նշված հաշվետվությունը կարող են վերաբերել նույն տեսակի մի շարք ապրանքների (համակցված սերտիֆիկատ կամ հաշվետվություն):

1.8.7.4.3. Սերտիֆիկատը պետք է պարունակի նվազագույնը հետեւյալ տվյալները՝

ա) համապատասխան մարմնի անվանումը եւ հասցեն.

բ) արտադրողի անվանումը եւ հասցեն, ինչպես նաեւ հայտ ներկայացնողի անունն ու հասցեն, եթե վերջինս արտադրողը չէ.

գ) «ԱԴԴ» համաձայնագրի տարբերակին եւ նախնական ստուգումների ու փորձարկումների համար օգտագործված ստանդարտներին կատարված հղումը.

դ) ստուգումների եւ փորձարկումների արդյունքները.

ե) ստուգված արտադրանքի նույնականացման տվյալները, առնվազն սերիայի համարը կամ չվերալցավորվող բալոնների դեպքում՝ խմբաքանակի համարը. եւ

զ) տեսակի հաստատման համարը:

1.8.7.5. Պարբերական, միջանկյալ եւ ոչ պլանային ստուգումները

1.8.7.5.1. Համապատասխան մարմինը պետք է՝

ա) իրականացնի նույնականացում եւ ստուգի փաստաթղթերի հետ համապատասխանությունը.

բ) իրականացնի ստուգումներ եւ ներկա գտնվի փորձարկումներին՝ որոշելու համար, որ պահանջները բավարարված են.

գ) տրամադրի ստուգումների եւ փորձարկումների արդյունքների վերաբերյալ հաշվետվություններ, որոնք կարող են վերաբերել մի շարք սարքավորումների. կամ

դ) ապահովի համապատասխանության անհրաժեշտ նշանների կիրառումը:

1.8.7.5.2. Ճնշումային տարաների պարբերական ստուգումների եւ փորձարկման

վերաբերյալ հաշվետվությունները պահվում են հայտ ներկայացնողի մոտ առնվազն մինչեւ հաջորդ պարբերական ստուգումը:

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Ցիստեոնների դեպքում տե՛ս ցիստեոնների մասին գրառումների վերաբերյալ 4.3.2.1.7-ում նշված դրույթները:*

1.8.7.6. Հայտ ներկայացնողի՝ ներքին ստուգում իրականացնող ծառայության նկատմամբ վերահսկողությունը

1.8.7.6.1. Հայտ ներկայացնողը պետք է՝

ա) ստեղծի վերահսկողության ենթակա՝ ներքին ստուգում իրականացնող ծառայություն, որը պետք է ունենա 1.8.7.7.5-ում նշված ստուգումների եւ փորձարկումների անցկացման համար որակի ապահովման համակարգ.

բ) իրականացնի հաստատված որակի ապահովման համակարգի հետ կապված պարտավորությունները եւ ապահովի դրա բավարար ու արդյունավետ գործունեությունը.

գ) ներքին ստուգում իրականացնող ծառայության համար հավաքագրի վերապատրաստված եւ իրազեկ անձնակազմ.

դ) հարկ եղած դեպքում փակցնի ստուգող մարմնի գրանցված նշանը:

1.8.7.6.2. Ստուգող մարմինն իրականացնում է նախնական աուդիտ: Եթե աուդիտի արդյունքները գոհացնում են ստուգող մարմնին, ապա վերջինիս երեք տարի ժամկետով թույլտվություն է տրամադրում: Անհրաժեշտ է բավարարել հետեւյալ դրույթները՝

ա) նշված աուդիտի արդյունքում պետք է հաստատվի, որ արտադրանքի ստուգումներն ու փորձարկումները համապատասխանում են «ԱԴԻ» համաձայնագրի պահանջներին.

բ) ստուգող մարմինը կարող է թույլ տալ հայտ ներկայացնողի ներքին ստուգում իրականացնող ծառայությանը յուրաքանչյուր հաստատված արտադրանքի վրա փակցնել ստուգող մարմնի գրանցված նշանը.

գ) թույլտվության գործողության ժամկետը կարող է երկարաձգվել, եթե թույլտվության ժամկետի ավարտից մեկ տարի առաջ կատարված աուդիտի արդյունքները գոհացուցիչ են: Թույլտվության գործողության նոր ժամկետն սկսվում է թույլտվության գործողության ժամկետի ավարտից սկսած. եւ

դ) ստուգող մարմնի աուդիտորներն իրավասու են իրականացնելու որակի ապահովման համակարգում ընդգրկված արտադրանքի

համապատասխանության գնահատումը:

1.8.7.6.3. Ստուգող մարմինն իրականացնում է պարբերական աուդիտ թույլտվության գործողության ընթացքում՝ համոզվելու համար, որ հայտ ներկայացնողն ունի եւ վարում է որակի ապահովման համակարգ: Անհրաժեշտ է բավարարել հետեւյալ դրույթները՝

- ա) անհրաժեշտ է տասներկու ամսվա ընթացքում իրականացնել առնվազն երկու աուդիտ.
- բ) ստուգող մարմինը կարող է պահանջել լրացուցիչ այցեր, վերապատրաստումներ, տեխնիկական փոփոխություններ, որակի ապահովման համակարգի փոփոխություններ, ինչպես նաեւ կարող է սահմանափակել կամ արգելել հայտ ներկայացնողի կողմից կատարվող ստուգումները եւ փորձարկումները.
- գ) ստուգող մարմինը գնահատում է որակի ապահովման համակարգում կատարվող ցանկացած փոփոխություն եւ որոշում է, թե արդյոք փոփոխված որակի ապահովման համակարգը դեռեւս համապատասխանում է նախնական աուդիտի պահանջներին, թե անհրաժեշտ է դրա լրիվ վերագնահատում.
- դ) ստուգող մարմնի աուդիտորներն իրավասու են իրականացնելու որակի ապահովման համակարգում ընդգրկված արտադրանքի համապատասխանության գնահատումը. եւ
- ե) ստուգող մարմինը հայտ ներկայացնողին է տրամադրում այցի կամ աուդիտի, ինչպես նաեւ փորձարկման մասին հաշվետվություն, եթե այն տեղի է ունեցել:

1.8.7.6.4. Համապատասխան պահանջներին չհամապատասխանելու դեպքում ստուգող մարմինն ապահովում է ուղղիչ միջոցների կիրառումը: Եթե ուղղիչ միջոցներ չեն կիրառվում ողջամիտ ժամկետներում, ապա ստուգող մարմինը կասեցնում կամ դադարեցնում է ներքին ստուգումներ իրականացնող ծառայության՝ գործողություններ իրականացնելու թույլտվության գործողությունը: Թույլտվության գործողության կասեցման կամ դադարեցման մասին ծանուցումը փոխանցվում է իրավասու մարմնին: Ստուգող մարմնի կայացրած որոշումների մանրամասն պատճառների մասին հաշվետվությունը տրամադրվում է հայտ ներկայացնողին:

1.8.7.7. Փաստաթղթերը

Տեխնիկական փաստաթղթերը հնարավորություն են տալիս գնահատելու համապատասխան պահանջների հետ համապատասխանությունը:

1.8.7.7.1. Տեսակի հաստատման համար ներկայացվող փաստաթղթերը

Հայտ ներկայացնողը հարկ եղած դեպքում պետք է տրամադրի՝

- ա) նախագծման եւ արտադրության մեջ օգտագործվող ստանդարտների ցանկը.
- բ) տեսակի, այդ թվում՝ բոլոր փոփոխությունների նկարագրությունը.
- գ) 3.2 գլխի Ա աղյուսակի համապատասխան սյունակում նշված ցուցումները կամ համապատասխան արտադրանքի համար փոխադրված վտանգավոր բեռների ցանկը.
- դ) հավաքակցման գծագիրը կամ գծագրերը.
- ե) արտադրանքի մանրամասն գծագրերը, այդ թվում՝ հաշվարկների համար օգտագործվող չափսերը, օժանդակ սարքավորումները, կառուցվածքային սարքավորումները, համապատասխանությունն ստուգելու համար անհրաժեշտ մակնշումը եւ (կամ) պիտակավորումը.
- զ) հաշվարկային փաստաթղթերը, ստացված արդյունքներն ու եզրակացությունները.
- է) օժանդակ սարքավորումների ցանկը, ապահովիչ սարքերի համապատասխան տեխնիկական տվյալները եւ տեղեկությունները, այդ թվում՝ անհրաժեշտության դեպքում՝ թողունակության հաշվարկը.
- ը) արտադրության ստանդարտով պահանջվող այն նյութի ցանկը, որն օգտագործվում է յուրաքանչյուր մասի, մասի տարրի, երեսապատման, օժանդակ եւ կառուցվածքային սարքավորումների համար, ինչպես նաեւ համապատասխան նյութի մասնագրերը կամ «ԱԴՌ» համաձայնագրին համապատասխանության համապատասխան հայտարարագիրը.
- թ) մշտական միացման մեթոդի որակի հաստատված գնահատումը.
- ժ) ջերմամշակման պրոցեսի (պրոցեսների) նկարագրությունը. եւ
- ժա) ստանդարտում կամ «ԱԴՌ» համաձայնագրում նշված բոլոր համապատասխան փորձարկումների ընթացակարգերը, նկարագրությունները եւ արձանագրությունները՝ տեսակի հաստատման ու արտադրության համար:

1.8.7.7.2. Արտադրական պրոցեսի նկատմամբ վերահսկողության համար ներկայացվող փաստաթղթերը

Հայտ ներկայացնողը հարկ եղած դեպքում պետք է տրամադրի՝

- ա) 1.8.7.7.1-ում նշված փաստաթղթերը.
- բ) տեսակի հաստատման սերտիֆիկատի կրկնօրինակը.



- գ) տեխնոլոգիական պրոցեսների փաստաթղթերը, այդ թվում՝ փորձարկման մեթոդները.
- դ) արտադրության արձանագրությունները.
- ե) մասերի մշտական միացումներով զբաղվող անձնակազմի հաստատված որակավորումները.
- զ) ոչ քայքայիչ փորձարկմամբ զբաղվող օպերատորների հաստատված որակավորումները.
- է) քայքայիչ եւ ոչ քայքայիչ փորձարկումների վերաբերյալ հաշվետվությունները.
- ը) ջերմամշակման վերաբերյալ արձանագրությունները. եւ
- թ) ստուգաճշտման վերաբերյալ արձանագրությունները:

1.8.7.7.3. Նախնական ստուգումների եւ փորձարկումների համար ներկայացվող փաստաթղթերը

Հայտ ներկայացնողը հարկ եղած դեպքում պետք է տրամադրի՝

- ա) 1.8.7.7.1-ում եւ 1.8.7.7.2-ում նշված փաստաթղթերը.
- բ) արտադրանքի եւ մասի ցանկացած տարրի մեջ օգտագործվող նյութի սերտիֆիկատները.
- գ) համապատասխանության հայտարարագրերն ու օժանդակ սարքավորումների մեջ օգտագործվող նյութի սերտիֆիկատները. եւ
- դ) համապատասխանության հայտարարագիրը, այդ թվում՝ տեսակի հաստատման մեջ ընդգրկված արտադրանքի եւ բոլոր տարբերակների նկարագրությունը:

1.8.7.7.4. Պարբերական, միջանկյալ եւ ոչ պլանային ստուգումների համար ներկայացվող փաստաթղթերը

Հայտ ներկայացնողը հարկ եղած դեպքում պետք է տրամադրի՝

- ա) ճնշումային տարաների դեպքում հատուկ պահանջներ նշող փաստաթղթերը, երբ դրանք նախատեսվում են արտադրման եւ պարբերական ստուգումների ու փորձարկումների անցկացման ստանդարտներով.
- բ) ցիստեռնների դեպքում՝
  - i) ցիստեռնների մասին գրառումները, եւ

ii) 1.8.7.7.1 - 1.8.7.7.3-ում նշված մեկ կամ ավելի փաստաթղթեր:

1.8.7.7.5. Ներքին ստուգում իրականացնող ծառայության գնահատման համար ներկայացվող փաստաթղթերը

Ներքին ստուգում իրականացնող ծառայության համար հայտ ներկայացնողը հարկ եղած դեպքում պետք է տրամադրի որակի ապահովման համակարգի հետ կապված փաստաթղթերը՝

- ա) կազմակերպական կառուցվածքը եւ պարտականությունները.
- բ) համապատասխան ստուգման եւ փորձարկման, որակի հսկման, որակի ապահովման ու տեխնոլոգիական պրոցեսների մասով ցուցումները եւ սխտեմատիկ միջոցները, որոնք կարող են օգտագործվել.
- գ) որակի մասին արձանագրությունները, ինչպես, օրինակ՝ ստուգումների մասին հաշվետվությունները, փորձարկման տվյալները, ստուգաճշտման տվյալները եւ սերտիֆիկատները.
- դ) ղեկավարության կողմից 1.8.7.6-ին համապատասխան իրականացված աուդիտի արդյունքների հիման վրա կատարվող ուսումնասիրությունները՝ ապահովելու համար որակի ապահովման համակարգի արդյունավետ գործունեությունը.
- ե) հաճախորդների եւ կանոնակարգի պահանջների կատարումը նկարագրող պրոցեսը.
- զ) փաստաթղթերի հսկողության եւ դրանց վերանայման գործընթացը.
- է) պահանջներին չհամապատասխանող արտադրանքին վերաբերող ընթացակարգերը. եւ
- ը) համապատասխան անձնակազմի վերապատրաստման ծրագրերը եւ որակավորման ընթացակարգերը:

1.8.7.8. Ստանդարտի համաձայն արտադրված, հաստատված, ստուգված եւ փորձարկված արտադրանքը

1.8.7.7-ում նշված պահանջները համարվում են կատարված, եթե հարկ եղած դեպքում կիրառվում են հետեւյալ ստանդարտները.

Կիրառվող ենթաբաժինը եւ պարբերությունը	Հղումները	Փաստաթղթի անվանումը
1.8.7.7.1 - 1.8.7.7.4	EN 12972:2007	Վտանգավոր բեռների փոխադրման ցիստեռնները. մետաղական ցիստեռնների փորձարկումը, ստուգումը եւ մակնշումը

1.8.8. Գազի անոթների համապատասխանության գնահատման ընթացակարգերը

Գազի անոթների համապատասխանությունը գնահատելիս կիրառվում է հետևյալ ընթացակարգերից որեւէ մեկը.

ա) ՄԱԿ-ի ճնշումային տարաներ չհանդիսացող տարայի դեպքում 1.8.7-ով սահմանված ընթացակարգը՝ բացառությամբ 1.8.7.5-ի, կամ

բ) 1.8.8.1-1.8.8.7 ենթաբաժիններով սահմանված ընթացակարգը:

1.8.8.1. Ընդհանուր դրույթները

1.8.8.1.1. Արտադրական պրոցեսի նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է Xa մարմնի կողմից, մինչդեռ 6.2.6-ով նախատեսված փորձարկումներն իրականացվում են կամ նշված Xa մարմնի կամ վերջինիս կողմից հաստատված ստուգող մարմնի կողմից: Xa մարմնի եւ ստուգող մարմինների սահմանումը կարելի է գտնել 6.2.3.6.1-ում: Համապատասխանության գնահատումն իրականացնում է իրավասու մարմինը, վերջինիս ներկայացուցիչը կամ իր կողմից հաստատված՝ «ԱԴՌ» համաձայնագրի Պայմանավորվող կողմի հաստատված ստուգող մարմինը:

1.8.8.1.2. Հայտ ներկայացնողը, կիրառելով 1.8.8-ը, միայն իր պատասխանատվության ներքո ցույց է տալիս, ապահովում եւ հայտարարում է գազի անոթների՝ 6.2.6-ի դրույթներին եւ «ԱԴՌ» համաձայնագրի բոլոր հետագա կիրառելի դրույթներին համապատասխանությունը:

1.8.8.1.3. Հայտ ներկայացնողը պետք է՝

ա) իրականացնի յուրաքանչյուր տեսակի գազի անոթների (այդ թվում՝ օգտագործվելիք նյութերը եւ այդ տեսակի փոփոխությունները, օր.՝ ծավալը, ճնշումը, գծագրերը եւ փակման ու բացթողման սարքերը) կառուցվածքի տեսակի համապատասխանության ստուգում՝ 1.8.8.2-ի համաձայն.

բ) ունենա որակի ապահովման հաստատված համակարգ՝ 1.8.8.3-ի համաձայն նախագծման, արտադրության, ստուգման եւ փորձարկման համար.

գ) ունենա 1.8.8.4-ի համաձայն փորձարկման հաստատված ռեժիմ՝ 6.2.6-ով նախատեսված փորձարկումների համար.

դ) դիմի իր ընտրությամբ Պայմանավորվող կողմի որեւէ Xa մարմին՝ արտադրման գործընթացի նկատմամբ վերահսկողության եւ

փորձարկման նպատակով որակի ապահովման իր համակարգը հաստատելու համար. եթե դիմումատուն չի հաստատվել Պայմանավորվող կողմում, ապա նա, նախքան դեպի Պայմանավորվող կողմ իրականացվող առաջին փոխադրումը, պետք է դիմի Պայմանավորվող կողմի որեւէ Xa մարմին.

ե) եթե գազի անոթը վերջնականապես հավաքվել է հայտ ներկայացնողի, մեկ կամ ավելի այլ ձեռնարկությունների կողմից արտադրված մասերից՝ տրամադրի գրավոր ցուցումներ գազի անոթի հավաքման եւ լցավորման եղանակների մասին՝ համապատասխանելու համար իր տեսակի համապատասխանության ստուգման սերտիֆիկատի դրույթներին:

1.8.8.1.4. Եթե հայտ ներկայացնողը եւ ձեռնարկությունները, որոնք հայտ ներկայացնողի ցուցումների համաձայն հավաքում կամ գազի անոթներ են լցավորում, կարող են Xa մարմնին ապացուցել, որ դրանք համապատասխանում են 1.8.7.6-ի դրույթներին՝ բացառությամբ 1.8.7.6.1 (դ)-ի եւ 1.8.7.6.2 (բ)-ի դրույթների, եւ այն հավանության արժանանա դրա կողմից, ապա դրանք կարող են ստեղծել ներքին ստուգում իրականացնող ծառայություն, որը կարող է իրականացնել 6.2.6-ով նախատեսված բոլոր ստուգումները եւ փորձարկումները կամ դրանց մի մասը:

1.8.8.2. Կառուցվածքի տեսակի համապատասխանության ստուգումը

1.8.8.2.1. Հայտ ներկայացնողը կազմում է յուրաքանչյուր տեսակի գազի անոթների տեխնիկական փաստաթղթերը, ինչպես նաեւ նշում է կիրառված տեխնիկական ստանդարտը (ստանդարտները): Եթե նա որոշում է կիրառել 6.2.6-ում հղում չկատարված ստանդարտը, ապա նա տեխնիկական փաստաթղթերում ներառում է այն ստանդարտը, որը կիրառվել է:

1.8.8.2.2. Հայտ ներկայացնողը տեխնիկական փաստաթղթերը, ինչպես նաեւ տվյալ կառուցվածքի տեսակի նմուշներն ի պահ է հանձնում Xa մարմնին գազի անոթների արտադրության ընթացքում եւ դրանց արտադրության վերջին ամսաթվից հետո առնվազն հինգ տարի՝ ըստ տվյալ կառուցվածքի տեսակի համապատասխանության ստուգման սերտիֆիկատի:

1.8.8.2.3. Հայտ ներկայացնողը մանրամասն ստուգումից հետո տրամադրում է կառուցվածքի տեսակի սերտիֆիկատ՝ առավելագույնը տասը տարի ժամկետով: Նա նշված սերտիֆիկատը կցում է փաստաթղթերին: Այդ սերտիֆիկատը թույլ է տալիս իրեն տվյալ ժամանակահատվածի ընթացքում արտադրելու տվյալ տեսակի գազի անոթներ:

1.8.8.2.4. Եթե նշված ժամկետի ընթացքում «ԱԴՌ» համաձայնագրի (այդ թվում՝ այն ստանդարտների, որոնց հղում են կատարվել) համապատասխան

տեխնիկական պահանջներն այնպես են փոխվել, որ կառուցվածքի տեսակն այլևս չի համապատասխանում դրանց, ապա հայտ ներկայացնողը դադարեցնում է տեսակի համապատասխանության ստուգման իր սերտիֆիկատի գործողությունը եւ դրա մասին տեղեկացնում է Xa մարմինին:

1.8.8.2.5. Հայտ ներկայացնողը մանրամասն եւ ամբողջական ուսումնասիրությունից հետո կարող է կրկին տրամադրել սերտիֆիկատ, մեկ այլ՝ առավելագույնը տասը տարի ժամկետով:

1.8.8.3. Արտադրական պրոցեսի նկատմամբ վերահսկողությունը

1.8.8.3.1. Կառուցվածքի տեսակի համապատասխանության ստուգման ընթացակարգը, ինչպես նաեւ արտադրական պրոցեսը վերահսկվում են Xa մարմնի կողմից՝ ապահովելու համար, որ հայտ ներկայացնողի սերտիֆիկացված տեսակը եւ արտադրած արտադրանքը համապատասխանեն կառուցվածքի տեսակի սերտիֆիկատի դրույթներին եւ «ԱԴՌ» համաձայնագրի կիրառելի դրույթներին: Եթե կիրառվում է 1.8.8.1.3 (ե) ենթակետը, ապա հավաքակցմամբ եւ լցավորմամբ զբաղվող ձեռնարկությունները ներգրավվում են այդ ընթացակարգում:

1.8.8.3.2. Հայտ ներկայացնողը ձեռնարկում է բոլոր անհրաժեշտ միջոցները՝ ապահովելու համար, որ արտադրական պրոցեսը համապատասխանի «ԱԴՌ» համաձայնագրի եւ իր կառուցվածքի տեսակի սերտիֆիկատի կիրառելի դրույթներին եւ դրա հավելվածներին: Եթե կիրառվում է 1.8.8.1.3 (ե) ենթակետը, ապա հավաքակցմամբ եւ լցավորմամբ զբաղվող ձեռնարկությունները ներգրավվում են այդ ընթացակարգում:

1.8.8.3.3. Xa մարմինը պետք է՝

ա) ստուգի հայտ ներկայացնողի կողմից իրականացված՝ կառուցվածքի տեսակի համապատասխանության ստուգման համապատասխանությունը, ինչպես նաեւ գազի անոթների տեսակի՝ 1.8.8.2-ում նշված տեխնիկական փաստաթղթերին համապատասխանությունը.

բ) ստուգի, որ արտադրական պրոցեսի արդյունքում արտադրվի պահանջներին եւ դրան վերաբերող փաստաթղթերին համապատասխանող արտադրանք. եթե գազի անոթը վերջնականապես հավաքվել է հայտ ներկայացնողի, մեկ կամ ավելի այլ ձեռնարկությունների կողմից արտադրված մասերից, ապա Xa մարմինը ստուգում է նաեւ, որ գազի անոթները վերջնական հավաքումից եւ լցավորումից հետո լրիվ համապատասխանեն կիրառելի դրույթներին, եւ որ հայտ ներկայացնողի ցուցումները ճշգրտորեն կատարվեն.

գ) ստուգի, որ մասերի մշտական միացումներով եւ փորձարկմամբ զբաղվող անձնակազմը որակավորված կամ հաստատված լինի.

դ) արձանագրի վերահսկման արդյունքները:

1.8.8.3.4. Եթե Xa մարմնի եզրահանգումների արդյունքում բացահայտվում է հայտ ներկայացնողի տված կառուցվածքի տեսակի սերտիֆիկատի կամ արտադրական պրոցեսի անհամապատասխանություն, ապա նա հայտ ներկայացնողից պահանջում է համապատասխան ուղղիչ միջոցների ձեռնարկում կամ սերտիֆիկատի գործողության դադարեցում:

1.8.8.4. Անջրանցիկության փորձարկումը

1.8.8.4.1. Հայտ ներկայացնողը եւ այն ձեռնարկությունները, որոնք հավաքում կամ գազի անոթներ են լցավորում, հայտ ներկայացնողի ցուցումների համաձայն՝

ա) իրականացնում են 6.2.6-ով նախատեսված փորձարկումները.

բ) արձանագրում են փորձարկումների արդյունքները.

գ) տրամադրում են համապատասխանության սերտիֆիկատ միայն այն գազի անոթների համար, որոնք լրիվ համապատասխանում են իրենց կառուցվածքի տեսակի համապատասխանության ստուգման եւ «ԱԴՌ» համաձայնագրի կիրառելի դրույթներին եւ հաջողությամբ անցել են 6.2.6-ով նախատեսված փորձարկումները.

դ) պահում են 1.8.8.7-ով նախատեսված փաստաթղթերը մի տեսակի հաստատմանը ենթակա գազի անոթների արտադրության ընթացքում եւ դրանց արտադրման վերջին ամսաթվից նվազագույնը հինգ տարի, որպեսզի Xa մարմինը ցանկացած ժամանակ կարողանա ստուգում իրականացնել.

ե) փակցնում են չճնշվող եւ ընթեռնելի նշան, որտեղ նշվում են գազի անոթի տեսակը, հայտ ներկայացնողը եւ արտադրության ամսաթիվը կամ խմբաքանակի համարը. եթե տեղի սահմանափակ լինելու պատճառով նշանը չի կարող ամբողջությամբ փակցվել գազի անոթի պատյանի վրա, ապա նա գազի անոթի վրա փակցնում է այդ տեղեկատվությամբ չճնշվող պիտակ կամ այն դնում է գազի անոթի հետ ներքին փաթեթվածքի մեջ:

1.8.8.4.2. Xa մարմինը պետք է՝

ա) պարբերաբար իրականացնի անհրաժեշտ ստուգումներ եւ փորձարկումներ, սակայն գազի անոթների տեսակի արտադրությունն սկսելուց առնվազն կարճ ժամանակ հետո եւ այնուհետեւ առնվազն երեք տարին մեկ անգամ, որպեսզի ստուգի,

որ հայտ ներկայացնողի՝ կառուցվածքի տեսակի համապատասխանության ստուգման ընթացակարգը, ինչպես նաև արտադրանքի արտադրությունն ու փորձարկումն իրականացվում են կառուցվածքի տեսակի սերտիֆիկատին եւ համապատասխան դրույթներին համապատասխան.

բ) ստուգի հայտ ներկայացնողի կողմից տրված սերտիֆիկատները.

գ) իրականացնի 6.2.6-ով նախատեսված փորձարկումները կամ հաստատի փորձարկումների իրականացման նպատակով փորձարկման եւ ներքին ստուգում իրականացնող ծառայության ծրագիրը:

1.8.8.4.3. Սերտիֆիկատը պետք է պարունակի նվազագույնը հետեւյալ տվյալները՝

ա) հայտ ներկայացնողի անունն ու հասցեն, եւ երբ վերջնական հավաքումը չի իրականացվում հայտ ներկայացնողի կողմից, այլ իրականացվում է ձեռնարկության կամ ձեռնարկությունների կողմից, հայտ ներկայացնողի գրավոր ցուցումների համաձայն՝ նշված ձեռնարկությունների անվանումը (անվանումները) եւ հասցեն (հասցեները).

բ) «ԱԴԻ» համաձայնագրի տարբերակին եւ արտադրության ու փորձարկումների համար օգտագործված ստանդարտին (ստանդարտներին) արված հղումը.

գ) ստուգումների եւ փորձարկումների արդյունքները.

դ) 1.8.8.4.1 (ե)-ով նախատեսված մակնշման տվյալները:

1.8.8.5. (Նախատեսվում է վերապահում)

1.8.8.6. Ներքին ստուգումներ իրականացնող ծառայության վերահսկողությունը եթե հայտ ներկայացնողը կամ ձեռնարկությունը, որը հավաքում կամ գազի անոթներ է լցավորում, ստեղծել է ներքին ստուգումներ իրականացնող ծառայություն, ապա կիրառվում են 1.8.7.6-ի դրույթները՝ բացառությամբ 1.8.7.6.1 (դ)-ի եւ 1.8.7.6.2 (բ)-ի դրույթների: Գազի անոթներ հավաքող կամ լցավորող ձեռնարկությունը կատարում է հայտ ներկայացնողին վերաբերող դրույթները:

1.8.8.7. Փաստաթղթերը

Կիրառվում են 1.8.7.7.1, 1.8.7.7.2, 1.8.7.7.3 եւ 1.8.7.7.5-ի դրույթները:

## ԳԼՈՒԽ 1.9

### ԻՐԱՎԱՍՈՒ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ

- 1.9.1. «ԱԴՌ» համաձայնագրի 4-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ վտանգավոր բեռները կարող են մուտք գործել Պայմանավորվող կողմերի տարածք փոխադրման անվտանգությունից տարբեր՝ այլ նկատառումներով սահմանված կանոնների կամ արգելքների համաձայն: Այդ կանոնները կամ արգելքները պատշաճ կերպով հրապարակվում են:
- 1.9.2. Պահպանելով 1.9.3-ի դրույթները՝ Պայմանավորվող կողմը կարող է կիրառել «ԱԴՌ» համաձայնագրում չներառված լրացուցիչ դրույթներ այն փոխադրամիջոցների նկատմամբ, որոնք իր տարածքի ճանապարհներով կատարում են վտանգավոր բեռների միջազգային փոխադրումներ՝ պայմանով, որ այդ դրույթները չհակասեն Համաձայնագրի 2-րդ հոդվածի 2-րդ պարբերության դրույթներին եւ ներառված լինեն ներպետական օրենսդրության մեջ, որը հավասար հիմունքներով կիրառվում է այն փոխադրամիջոցների նկատմամբ, որոնք այդ Պայմանավորվող կողմի տարածքի ճանապարհներով կատարում են վտանգավոր բեռների ներքին փոխադրումներ:
- 1.9.3. 1.9.2-ի շրջանակում ներառված լրացուցիչ դրույթները վերաբերում են՝
- ա) անվտանգության լրացուցիչ պահանջներին եւ սահմանափակումներին՝ կապված որոշակի կառույցներից, օրինակ՝ կամուրջներից օգտվող փոխադրամիջոցների, համակցված տրանսպորտային միջոցներից, օրինակ՝ նավերից եւ գնացքներից օգտվող փոխադրամիջոցների կամ նավահանգիստներ կամ տրանսպորտային այլ տերմինալներ մուտք գործող եւ այդ տերմինալներից մեկնող փոխադրամիջոցների հետ.
  - բ) այն փոխադրամիջոցներին ներկայացվող պահանջներին, որոնք պետք է շարժվեն սահմանված երթուղով՝ խուսափելու համար առետրային կամ բնակելի տարածքներից, էկոլոգիապես զգայուն տարածքներից, վտանգավոր օբյեկտներ ունեցող արդյունաբերական գոտիներից կամ լուրջ ֆիզիկական ռիսկեր պարունակող ճանապարհներից.
  - գ) վթարային պահանջներին, որոնք վերաբերում են վտանգավոր բեռներ փոխադրող փոխադրամիջոցների երթուղագծմանը եւ կանգառներին՝ պայմանավորված եղանակային խիստ պայմաններով, երկրաշարժերով, պատահարներով,



գործադրուներով, քաղաքացիական անկարգություններով կամ  
նազմական իրավիճակներով.

դ) վտանգավոր բեռներ փոխադրող փոխադրամիջոցների  
տեղաշարժի սահմանափակումներին՝ շաբաթվա կամ տարվա  
որոշակի օրերին:

1.9.4. Պայմանավորվող կողմի իրավասու մարմինը, որն իր տարածքում  
լրացուցիչ դրույթներ է կիրառում վերոնշյալ 1.9.3 (ա) եւ (դ)-ի  
շրջանակներում, պետք է ծանուցի ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական  
հանձնաժողովի քարտուղարությանն այդ լրացուցիչ դրույթների մասին,  
եւ քարտուղարությունը Պայմանավորվող կողմերի՝ ուշադրությանը  
պետք է ներկայացնի դրանք:

1.9.5. Թունելներին վերաբերող սահմանափակումները

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Ծանապարհային թունելներով  
փոխադրամիջոցների անցմանը վերաբերող սահմանափակումների  
մասին դրույթները ներառված են նաեւ 8.6 գլխում:*

1.9.5.1. Ընդհանուր դրույթները

Թունելներով վտանգավոր բեռներ փոխադրող փոխադրամիջոցների  
անցման նկատմամբ սահմանափակումներ կիրառելիս իրավասու  
մարմինը ճանապարհային թունելը դասակարգում է 1.9.5.2.2-ում  
սահմանված կատեգորիաներից որեւէ մեկում: Պետք է հաշվի առնվեն  
թունելի հատկանիշները, ռիսկի գնահատումը, ներառյալ՝  
այլընտրանքային ճանապարհների եւ տրանսպորտային միջոցների  
հասանելիությունն ու համապատասխանությունը եւ երթեւեկության  
կառավարման նկատառումները: Միեւնույն թունելը կարող է ընդգրկվել  
մեկից ավելի կատեգորիաներում, օրինակ՝ պայմանավորված օրվա  
ժամերով ու շաբաթվա օրերով, եւ այլն:

1.9.5.2. Կատեգորիաների վերագրումը

1.9.5.2.1. Կատեգորիաների վերագրումը հիմնվում է այն ենթադրության վրա, որ  
թունելներում առկա են երեք հիմնական տեսակի վտանգներ, որոնք  
կարող են բազմաթիվ զոհերի պատճառ լինել կամ լրջորեն վնասել  
թունելի կառուցվածքը՝

ա) պայթյուններ.

---

<sup>1</sup> Ավտոճանապարհով վրանգավոր բեռների փոխադրման ռիսկերի հաշվարկման մասին  
ընդհանուր ուղեցույցը կարելի է գտնել Միավորված ազգերի կազմակերպության Եվրոպայի  
տնտեսական հանձնաժողովի քարտուղարության կայքէջում՝  
(<http://www.unece.org/trans/danger/danger.htm>):

բ) թունավոր գազերի կամ ցնդող թունավոր հեղուկների արտանետում.

գ) հրդեհներ:

1.9.5.2.2. Թունելները դասակարգվում են ըստ հետևյալ հինգ կատեգորիաների.

«A» կատեգորիայի թունել՝

վտանգավոր բեռների փոխադրման համար սահմանափակումներ սահմանված չեն.

«B» կատեգորիայի թունել՝

սահմանափակումներ են սահմանված այն վտանգավոր բեռների փոխադրման համար, որոնք կարող են շատ մեծ պայթյունի պատճառ դառնալ.

Այս չափորոշի տակ ներառված են հետևյալ վտանգավոր բեռները<sup>2</sup>

1-ին դաս	«A» եւ «L» համատեղելիության խմբեր
3-րդ դաս	դասակարգման ծածկագիր D (ՄԱԿ-ի նշագրման 1204, 2059, 3064, 3343, 3357 եւ 3379 համարներ)
4.1 դաս	դասակարգման ծածկագրեր D եւ DT. եւ Ինքնառեակտիվ նյութեր, «B» տեսակի (ՄԱԿ-ի նշագրման 3221, 3222, 3231 եւ 3232 համարներ)
5.2 դաս	Օրգանական պերօքսիդներ, «B» տեսակի (ՄԱԿ-ի նշագրման 3101, 3102, 3111 եւ 3112 համարներ)
Եթե յուրաքանչյուր տրանսպորտային միավորին ընկնում է 1000 կգ-ից ավելի ընդհանուր զուտ պայթուցիկ զանգված՝	
1-ին դաս 1.1, 1.2 եւ 1.5 ենթադասեր (բացի «A» եւ «L» համատեղելիության խմբերից)	
Երբ այդ բեռները փոխադրվում են ցիստեռններով՝	
2-րդ դաս	F, TF եւ TFC դասակարգման ծածկագրեր
4.2 դաս	Փաթեթավորման I խումբ
4.3 դաս	Փաթեթավորման I խումբ
5.1 դաս	Փաթեթավորման I խումբ
6.1 դաս	ՄԱԿ-ի նշագրման 1510 համար

«C» կատեգորիայի թունել՝

սահմանափակումներ են սահմանված այն վտանգավոր բեռների փոխադրման համար, որոնք կարող են շատ մեծ պայթյունի, մեծ պայթյունի կամ մեծամասշտաբ թունավոր արտանետման պատճառ

<sup>2</sup> Գնահատումը կատարվում է բեռներին բնորոշ վտանգավոր հատկությունների, դրանց տեղայնացման տեսակի եւ փոխադրվող քանակության հիման վրա:

դառնալ.

Այս չափորոշի տակ ներառված են հետևյալ վտանգավոր բեռները<sup>2</sup>

- «B» կատեգորիայի թունելներով փոխադրման սահմանափակման ենթակա վտանգավոր բեռներ. եւ
- հետևյալ վտանգավոր բեռները՝

1-ին դաս	1.1, 1.2 եւ 1.5 ենթադասեր (բացի «A» եւ «L» համատեղելիության խմբերից). եւ 1.3 ենթադաս («H» եւ «J») համատեղելիության խմբեր)
7-րդ դաս	ՄԱԿ-ի նշագրման 2977 եւ 2978 համարներ
Եթե յուրաքանչյուր տրանսպորտային միավորին ընկնում է 5 000 կգ-ից ավելի ընդհանուր զուտ պայթուցիկ զանգված՝	
1-ին դաս 1.3 ենթադաս («C» եւ «G» համատեղելիության խմբեր)	
Երբ այդ բեռները փոխադրվում են ցիստեռններով՝	
2-րդ դաս	2A, 2O, 3A եւ 3O դասակարգման ծածկագրեր եւ միայն T տառը կամ TC, TO եւ TOC տառերը պարունակող դասակարգման ծածկագրեր
3-րդ դաս	փաթեթավորման I խումբ, FC, FT1, FT2 եւ FTC դասակարգման ծածկագրեր
6.1 դաս	փաթեթավորման I խումբ՝ բացի ՄԱԿ-ի նշագրման 1510 համարից
8-րդ դաս	փաթեթավորման I խումբ, CT1, CFT եւ COT դասակարգման ծածկագրեր

«D» կատեգորիայի թունել՝

սահմանափակումներ են սահմանված այն վտանգավոր բեռների փոխադրման համար, որոնք կարող են շատ մեծ պայթյունի, մեծ պայթյունի, մեծամասշտաբ թունավոր արտանետման կամ մեծ հրդեհի պատճառ դառնալ.

Այս չափորոշի տակ ներառված են հետևյալ վտանգավոր բեռները<sup>2</sup>

- «C» կատեգորիայի թունելներով փոխադրման սահմանափակման ենթակա վտանգավոր բեռներ. եւ
- հետևյալ վտանգավոր բեռները՝

1-ին դաս	1.3 ենթադաս («C» եւ «G» համատեղելիության խմբեր)
2-րդ դաս	F, FC, T, TF, TC, TO, TFC եւ TOC դասակարգման ծածկագրեր
4.1 դաս	հնքնառեակտիվ նյութեր՝ «C», «D», «E» եւ «F» տեսակի. եւ ՄԱԿ-ի նշագրման 2956, 3241, 3242, 3251, 3531, 3532, 3533 եւ 3534 համարներ

<sup>2</sup> Գնահատումը կատարվում է բեռներին բնորոշ վտանգավոր հատկությունների, դրանց տեղայնացման տեսակի եւ փոխադրվող քանակության հիման վրա:

5.2 դաս	Օրգանական պերօքսիդներ՝ «C», «D», «E» եւ «F» տեսակի
6.1 դաս	Փաթեթավորման I խումբ, TF1, TFC եւ TFW դասակարգման ծածկագրեր եւ ՄԱԿ-ի նշագրման 3507 համար. եւ ներշնչման դեպքում թունավոր, որի համար հատուկ դրոյթ (թիվ 354) է սահմանվել 3.2 գլխի Ա աղյուսակի 6-րդ սյունակում եւ ներշնչման դեպքում թունավոր՝ ՄԱԿ-ի նշագրման 3381-3390 համարներ
8-րդ դաս	Փաթեթավորման I խումբ, CT1, CFT եւ COT դասակարգման ծածկագրեր
9-րդ դաս	M9 եւ M10 դասակարգման ծածկագրեր
Երբ այդ բեռները փոխադրվում են խումբերուն կամ ցիստեռներով՝ 3-րդ դաս	
4.2 դաս	Փաթեթավորման II խումբ
4.3 դաս	Փաթեթավորման II խումբ
6.1 դաս	Փաթեթավորման II խումբ. եւ Փաթեթավորման III խումբ, TF2 դասակարգման ծածկագիր
8-րդ դաս	Փաթեթավորման I խումբ, CF1, CFT եւ CW1 դասակարգման ծածկագրեր Փաթեթավորման II խումբ, CF1 եւ CFT դասակարգման ծածկագրեր
9-րդ դաս	M2 եւ M3 դասակարգման ծածկագրեր

«E» կատեգորիայի թունել՝

Սահմանափակումները սահմանված են բոլոր վտանգավոր բեռների փոխադրման համար՝ բացի այն բեռներից, որոնց համար 3.2 գլխի Ա աղյուսակի 15-րդ սյունակում նշված է «(-)», եւ բոլոր վտանգավոր բեռների համար՝ 3.4 գլխի դրոյթների համաձայն, եթե փոխադրվող քանակությունները գերազանցում են մեկ տրանսպորտային միավորի համար 8 տոննա ընդհանուր անզուտ զանգվածը:

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. ՄԱԿ-ի նշագրման 2919 եւ 3331 համարների վրանգավոր բեռների դեպքում թունելներով փոխադրումը, այնուամենայնիվ, կարող է կարգավորվել իրավասու մարմնի (մարմինների) կողմից սահմանված հատուկ պայմաններով՝ 1.7.4.2-ի հիման վրա:*

- 1.9.5.3. Ճանապարհային նշանների եւ սահմանափակումների մասին ծանուցման դրոյթները
- 1.9.5.3.1. Պայմանավորվող կողմերը թունելից օգտվելու արգելքների եւ այլընտրանքային երթուղիների մասին տեղեկացնում են նշանների եւ ազդանշանների միջոցով:
- 1.9.5.3.2. Այդ նպատակով նրանք C, 3h եւ D, 10a, 10b եւ 10c նշաններն ու ազդանշանները կարող են օգտագործել «Ճանապարհային նշանների

եւ ազդանշանների մասին» Վիեննայի կոնվենցիայի (Վիեննա, 1968 թվական), ինչպես նաեւ «Ճանապարհային նշանների եւ ազդանշանների մասին» կոնվենցիան (Ժնև, 1971 թվական) լրացնող՝ Եվրոպական համաձայնագրի՝ ՄԱԿ ԵՏՀ-ի Ներքին տրանսպորտի կոմիտեի՝ Ճանապարհային տրանսպորտի հարցերով հիմնական աշխատանքային խմբի կողմից մշակված «Ճանապարհային նշանների եւ ազդանշանների մասին» բանաձեւի (R.E.2) մեկնաբանությունների համաձայն՝ ըստ հետագա փոփոխությունների:

1.9.5.3.3. Միջազգային մակարդակով նշանների նշանակության ըմբռնելիությունը հեշտացնելու նպատակով Վիեննայի կոնվենցիայով սահմանված նշանների եւ ազդանշանների համակարգը հիմնված է նշանների յուրաքանչյուր դասին հատուկ ձեւի եւ գույների համադրության, եւ որտեղ հնարավոր է՝ առավելապես գրաֆիկական խորհրդանշանների եւ ոչ թե նշագրերի կիրառության վրա: Եթե Պայմանավորվող կողմերն անհրաժեշտ են համարում փոփոխել սահմանված նշանները եւ խորհրդանշանները, ապա այդ փոփոխությունները չպետք է փոխեն դրանց էական հատկանիշները: Եթե Պայմանավորվող կողմերը չեն կիրառում Վիեննայի կոնվենցիան, ապա սահմանված նշանները եւ խորհրդանշանները կարող են փոփոխվել՝ պայմանով, որ այդ փոփոխությունները չպետք է փոխեն դրանց բուն իմաստը:

1.9.5.3.4. Վտանգավոր բեռներ փոխադրող փոխադրամիջոցների համար ճանապարհային թունելով անցնելու արգելքի նպատակով տեղադրված ճանապարհային նշանները եւ ազդանշանները պետք է դրվեն այնպիսի վայրերում, որտեղ հնարավոր է այլընտրանքային երթուղու ընտրություն:

1.9.5.3.5. Եթե թունելներով անցնելու սահմանափակումներ կան, կամ սահմանված են այլընտրանքային երթուղիներ, այդ դեպքում նշանները պետք է ցուցադրվեն լրացուցիչ ցուցանակներով՝ ըստ հետեւյալի՝

Նշանի բացակայության դեպքում՝ սահմանափակում չկա.

B տառը կրող լրացուցիչ ցուցանակի վրա նշված նշան՝ վերաբերում է այն փոխադրամիջոցներին, որոնք փոխադրում են վտանգավոր բեռներ, որոնց փոխադրումը «B» կատեգորիայի թունելներով չի թույլատրվում.

C տառը կրող լրացուցիչ ցուցանակի վրա նշված նշան՝ վերաբերում է այն փոխադրամիջոցներին, որոնք փոխադրում են վտանգավոր բեռներ, որոնց փոխադրումը «C» կատեգորիայի թունելներով չի թույլատրվում

D տառը կրող լրացուցիչ ցուցանակի վրա նշված նշան՝ վերաբերում է այն փոխադրամիջոցներին, որոնք փոխադրում են վտանգավոր

բեռներ, որոնց փոխադրումը «D» կատեգորիայի թունելներով չի թույլատրվում:

Ե տառը կրող լրացուցիչ ցուցանակի վրա նշված նշան՝ վերաբերում է այն փոխադրամիջոցներին, որոնք փոխադրում են վտանգավոր բեռներ, որոնց փոխադրումը «E» կատեգորիայի թունելներով չի թույլատրվում:

- 1.9.5.3.6. Թունելով բեռների փոխադրման սահմանափակումները կիրառվում են այն տրանսպորտային միավորների նկատմամբ, որոնց համար 5.3.2-ի համաձայն պահանջվում է նարնջագույն թիթեղ՝ բացառությամբ այն վտանգավոր բեռների փոխադրման դեպքերի, որոնց համար 3.2 գլխի Ա աղյուսակի 15-րդ սյունակում նշված է «(-)»: ՄԱԿ-ի նշագրման 2919 եւ 3331 համարների վտանգավոր բեռների դեպքում թունելներով փոխադրումը, այնուամենայնիվ, կարող է կարգավորվել իրավասու մարմնի (մարմինների) կողմից սահմանված հատուկ պայմաններով՝ 1.7.4.2-ի հիման վրա: «E» կատեգորիայի թունելների դեպքում դրանք նաեւ կիրառվում են այն տրանսպորտային միավորների նկատմամբ, որոնց համար պահանջվում է մակնշում՝ 3.4.13-ի համաձայն, կամ որոնք փոխադրում են այնպիսի կոնտեյներներ, որոնց համար պահանջվում է մակնշում՝ համաձայն 3.4.13-ի:

Թունելով բեռների փոխադրման սահմանափակումները չեն գործում, երբ վտանգավոր բեռները փոխադրվում են 1.1.3-ի համաձայն՝ բացառությամբ, երբ այդ տրանսպորտային միջոցները մակնշված են 3.4.13-ին համապատասխան՝ 3.4.14-ի համաձայն:

- 1.9.5.3.7. Սահմանափակումները պետք է պաշտոնապես հրապարակվեն եւ հանրության համար լինեն հասանելի: Պայմանավորվող կողմերն այդ սահմանափակումների մասին ծանուցում են ՄԱԿ ԵՏՀ-ի քարտուղարությանը, եւ քարտուղարությունն այդ տեղեկությունները հանրորեն հասանելի է դարձնում իր կայքէջի միջոցով:
- 1.9.5.3.8. Եթե Պայմանավորվող կողմերը կիրառում են շահագործման հատուկ միջոցներ, որոնք նպատակ ունեն նվազեցնելու ռիսկերը եւ վերաբերում են թունելներից օգտվող բոլոր կամ մի քանի փոխադրամիջոցների, ինչպես, օրինակ՝ պաշտոնական հայտարարություն ներկայացնելն այն մասին, որ թունել մտնելուց կամ անցնելուց փոխադրամիջոցներին կուղեկցեն այլ փոխադրամիջոցներ, այդ դեպքում շահագործման այդպիսի միջոցները պետք է պաշտոնապես հրապարակվեն եւ հանրության համար հասանելի դարձվեն:

## **ԳԼՈՒԽ 1.10**

### **ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ**

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Սույն գլխի նպատակներով անվտանգություն նշանակում է այն միջոցները կամ նախազգուշական միջոցառումները, որոնք ձեռնարկվում են նվազեցնելու համար վրանգավոր բեռների գողությունը կամ սխալ օգտագործումը, որը կարող է վրանգել անձանց, սեփականությունը կամ շրջակա միջավայրը:*

- 1.10.1. Ընդհանուր դրույթները
  - 1.10.1.1. Վտանգավոր բեռների փոխադրմամբ զբաղվող բոլոր անձինք պետք է հաշվի առնեն իրենց պարտականությունների մասով անվտանգության այն պահանջները, որոնք սահմանված են սույն գլխում:
  - 1.10.1.2. Վտանգավոր բեռներ պետք է փոխադրվեն միայն այն փոխադրողների կողմից, որոնց ինքնությունը համապատասխան կերպով հաստատված է:
  - 1.10.1.3. Ժամանակավոր պահեստավորման տերմինալներում, ժամանակավոր պահեստներում, փոխադրամիջոցների դեպոններում, կառանատեղերում եւ տեսակավորման կայաններում, որոնք վտանգավոր բեռները փոխադրելու համար օգտագործվում են որպես ժամանակավոր պահեստներ, պետք է պահպանվեն անվտանգության պայմանները, դրանք պետք է լավ լուսավորված լինեն, իսկ հնարավորության եւ հարկ եղած դեպքերում՝ փակ լինեն հանրության համար:
  - 1.10.1.4. Փոխադրամիջոցի անձնակազմի յուրաքանչյուր անդամ վտանգավոր բեռների փոխադրման ժամանակ պետք է իր հետ ունենա նույնականացման փաստաթղթեր, ներառյալ՝ լուսանկար:
  - 1.10.1.5. 1.8.1-ի եւ 7.5.1.1-ի համաձայն անվտանգության ստուգումների ժամանակ պետք է ստուգվեն անվտանգության համապատասխան միջոցները:
  - 1.10.1.6. Իրավասու մարմնի մոտ պահվում է 8.2.1-ում նշված վարորդների վերապատրաստման վավեր սերտիֆիկատների մասին թարմ տվյալներ պարունակող ռեգիստր: Սերտիֆիկատները պետք է տրված լինեն այդ իրավասու մարմնի կամ որեւէ այլ համապատասխան լիազորություն ունեցող կազմակերպության կողմից:
- 1.10.2. Անվտանգության թեմայով վերապատրաստումը
  - 1.10.2.1. 1.3 գլխում նշված վերապատրաստումը եւ նորացված տվյալներով վերապատրաստումը պետք է նաեւ ներառի անվտանգության մասին իրազեկման տարրեր: Նորացված տվյալներով վերապատրաստումը պարտադիր չէ, որ վերաբերի միայն կանոններում կատարված փոփոխությունների հարցերին:
  - 1.10.2.2. Անվտանգության հարցերով իրազեկման վերապատրաստմամբ պետք է բարձրացվեն անվտանգության ռիսկերի, այդ ռիսկերը ճանաչելու, ռիսկերը լուծելու եւ նվազեցնելու եւ անվտանգության խախտումների

դեպքում ձեռնարկվող գործողությունների հետ կապված խնդիրներ: Այդ վերապատրաստումն անհրաժեշտության դեպքում պետք է ներառի անվտանգության պլանների մասին իրազեկում՝ տարբեր անձանց պարտականությունների եւ գործառույթների ու այդ պլաններում նրանց դերակատարման մասով:

1.10.2.3. Նշված վերապատրաստումը տրամադրվում է ստուգվում է վտանգավոր բեռների փոխադրում ենթադրող աշխատանքի անցնելիս եւ պարբերաբար թարմացվում է նոր վերապատրաստմամբ:

1.10.2.4. Անվտանգության թեմայով իրականացված բոլոր վերապատրաստումների մասին գրառումները պետք է պահվեն գործատուի կողմից, որոնք աշխատողների եւ իրավասու մարմնի պահանջի դեպքում պետք է տրամադրվեն նրանց: Գործատուն փաստաթղթերը պահում է իրավասու մարմնի կողմից սահմանված ժամկետով:

1.10.3. Էական հետեւանքներ առաջացնող վտանգավոր բեռների մասին դրույթները

1.10.3.1. «Էական հետեւանքներ առաջացնող վտանգավոր բեռներ» եզրույթի սահմանումը

1.10.3.1.1. Էական հետեւանքներ առաջացնող վտանգավոր բեռներն այն բեռներն են, որոնք կարող են օգտագործվել ոչ ըստ իրենց նպատակի, այլ ահաբեկչական գործողություններում, եւ որոնք կարող են հանգեցնել լուրջ հետեւանքների, ինչպիսիք, օրինակ, զանգվածային մարդկային կորուստները, զանգվածային բնաջնջումը կամ մասնավորապես 7-րդ դասի դեպքում զանգվածային սոցիալ-տնտեսական խաթարումն են:

1.10.3.1.2. 7-րդ դասից տարբեր՝ այլ դասի պատկանող էական հետեւանքներ առաջացնող վտանգավոր բեռներ են այն բեռները, որոնց ցանկը տրված է ստորեւ բերված 1.10.3.1.2 աղյուսակում, եւ որոնք տեղափոխվում են աղյուսակում նշվածից ավելի մեծ քանակություններով:

Աղյուսակ 1.10.3.1.2. Էական հետեւանքներ առաջացնող վտանգավոր բեռների ցանկը

Դաս	Ենթադաս	Նյութ կամ պատրաստվածք	Քանակություն		
			Ցիստոն (I) գ	Խուունաբեռն (Iq) դ	Փաթեթներ (Iq)
1	1.1	Պայթուցիկներ	ա	ա	0
	1.2	Պայթուցիկներ	ա	ա	0
	1.3	«C» համատեղելիության խմբի պայթուցիկներ	ա	ա	0



Դաս	Ենթադաս	Նյութ կամ պատրաստվածք	Քանակություն		
			Ցիստոնն (լ) գ	խուռնաբեռն (կգ) դ	Փաթեթներ (կգ)
	1.4	ՄԱԿ-ի նշագրման 0104, 0237, 0255, 0267, 0289, 0361, 0365, 0366, 0440, 0441, 0455, 0456 եւ 0500 համարների պայթուցիկներ	ա	ա	0
	1.5	Պայթուցիկներ	0	ա	0
2		Դյուրավառ գազեր (ընդգրկվում են միայն F տառի տակ ներառված դասակարգման ծածկագրերը)	3000	ա	բ
		Թունավոր գազեր (T, TF, TC, TO, TFC կամ TOC տառերը ներառող դասակարգման ծածկագրեր)՝ բացառությամբ անբոցողների	0	ա	0
3		I եւ II փաթեթավորման խմբերի դյուրավառ հեղուկներ	3000	ա	բ
		Ապագգայունացված պայթուցիկներ	0	ա	0
4.1		Ապագգայունացված պայթուցիկներ	ա	ա	0
4.2		Փաթեթավորման I խմբի նյութեր	3000	ա	բ
4.3		Փաթեթավորման II խմբի նյութեր	3000	ա	բ
5.1		Փաթեթավորման I խմբին պատկանող օքսիդացնող հեղուկներ	3000	ա	բ
		Պերքլորատներ, ամոնիումի նիտրատներ, ամոնիումի նիտրատ պարարտանյութեր եւ ամոնիումի նիտրատ էմուլսիաներ կամ սուսպենզիաներ կամ ժելներ	3000	3000	բ
6.1		Փաթեթավորման I խմբի թունավոր նյութեր	0	ա	0
6.2		«A» կատեգորիայի վարակիչ նյութեր (ՄԱԿ-ի նշագրման 2814 եւ 2900 համարներ՝ բացառությամբ կենդանական ծագման նյութերի)	ա	0	0
8		Փաթեթավորման I խմբի կոռոզիոն նյութեր	3000	ա	բ

ա Կիրառելի չէ:

բ 1.10.3-ի դրույթները չեն կիրառվում՝ անկախ քանակությունից:

գ Այս սյունակում նշված արժեքը կիրառելի է, միայն եթե ցիստոններով փոխադրումը թույլատրվում է 3.2 գլխի Ա աղյուսակի 10-րդ կամ 12-րդ սյունակի համաձայն: Եթե նյութի փոխադրումն արգելված է ցիստոններով, ապա այս սյունակի ցուցումը կիրառելի չէ:

դ Այս սյունակում նշված արժեքը կիրառելի է, միայն եթե խուռնաբեռն փոխադրումը թույլատրվում է 3.2 գլխի Ա աղյուսակի 10-րդ կամ 17-րդ սյունակի համաձայն: Եթե նյութի խուռնաբեռն փոխադրումն արգելված է, ապա այս սյունակի ցուցումը կիրառելի չէ:

1.10.3.1.3. 7-րդ դասի վտանգավոր բեռների դեպքում էական հետեւանքներ առաջացնող վտանգավոր նյութ է հանդիսանում մեկ փաթեթի համար 3 000 A2 փոխադրման անվտանգության շեմին հավասար կամ բարձր

ակտիվություն ունեցող նյութը (տե՛ս նաեւ 2.2.7.2.2.1)՝ բացառությամբ հետեւյալ ռադիոնուկլիդների, որոնց փոխադրման անվտանգության շեմերը տրված են ստորեւ բերված 1.10.3.1.3 աղյուսակում:

Աղյուսակ 1.10.3.1.3. Հատուկ ռադիոնուկլիդների փոխադրման անվտանգության շեմերը

Տարր	Ռադիոնուկլիդ	Փոխադրման անվտանգության շեմ (Տերաբեկերել (ՏԲԿ))
Ամերիցիում	Am-241	0.6
Ոսկի	Au-198	2
Կադմիում	Cd-109	200
Կալիֆորնիում	Cf-252	0.2
Կյուրիում	Cm-244	0.5
Կոբալտ	Co-57	7
Կոբալտ	Co-60	0.3
Ցեզիում	Cs-137	1
Երկաթ	Fe-55	8000
Գերմանիում	Ge-68	7
Գադոլինիում	Gd-153	10
Իրիդիում	Ir-192	0.8
Նիկել	Ni-63	600
Պալադիում	Pd-103	900
Պրոմեթիում	Pm-147	400
Պոլոնիում	Po-210	0.6
Պլուտոնիում	Pu-238	0.6
Պլուտոնիում	Pu-239	0.6
Ռադիում	Ra-226	0.4
Ռութենիում	Ru-106	3
Սելենիում	Se-75	2
Ստրոնտիում	Sr-90	10
Տալիում	Tl-204	200
Տուլիում	Tm-170	200
Իտերբիում	Yb-169	3

1.10.3.1.4. Ռադիոնուկլիդների խառնուրդների դեպքում փոխադրման անվտանգության շեմը բավարարելու կամ գերազանցելու փաստը որոշելու համար այն կարող է հաշվարկվել՝ գումարելով ներկա ակտիվության գործակիցները՝ յուրաքանչյուր ռադիոնուկլիդի ներկա ակտիվությունը բաժանելով տվյալ ռադիոնուկլիդի փոխադրման անվտանգության շեմին: Եթե մասնաքանակների հանրագումարը փոքր է 1-ից, ապա խառնուրդի ռադիոակտիվության շեմը չի բավարարվել եւ չի գերազանցվել:

Այս հաշվարկը կարող է կատարվել հետեւյալ բանաձեւով՝

$$\sum_i \frac{A_i}{T_i} < 1,$$

որտեղ՝

$A_i$ -ն փաթեթում ներկա  $i$  ռադիոնուկլիդի ակտիվությունն է (ՏԲկ),

$T_i$ -ն փոխադրման անվտանգության շեմն է  $i$  ռադիոնուկլիդի համար (ՏԲկ):

1.10.3.1.5 Երբ ռադիոակտիվ նյութը ներկայացնում է այլ դասերի լրացուցիչ վտանգներ, ապա պետք է հաշվի առնել նաեւ 1.10.3.1.2 աղյուսակի չափորոշիչները (տե՛ս նաեւ՝ 1.7.5):

1.10.3.2. Անվտանգության պլանները

1.10.3.2.1. 1.4.2-ում եւ 1.4.3-ում նշված՝ էական հետեւանքներ առաջացնող վտանգավոր բեռներ (տե՛ս 1.10.3.1.2 աղյուսակը) կամ էական հետեւանքներ առաջացնող ռադիոակտիվ նյութեր (տե՛ս 1.10.3.1.3) փոխադրողները, բեռնառաքողները եւ այլ մասնակիցներ ընդունում, իրականացնում եւ պահպանում են անվտանգության պլանը, որում առնվազն ներառվում են 1.10.3.2.2-ում սահմանված տարրերը:

1.10.3.2.2. Անվտանգության պլանն ընդգրկում է առնվազն հետեւյալ տարրերը.

ա) անվտանգության մասով պարտականությունների կոնկրետ բաշխում կոմպետենտ եւ որակավորում ունեցող անձանց միջեւ, որոնց տրված է իրենց պարտականություններն իրականացնելու համապատասխան իրավասություն.

բ) համապատասխան վտանգավոր բեռների կամ դրանց տեսակների մասին գրառումներ.

գ) ընթացիկ գործունեության ամփոփում եւ անվտանգության ռիսկերի գնահատում, ներառյալ՝ բոլոր տրանսպորտային փոխադրումների ընթացքում պահանջվող կանգառները, փոխադրամիջոցի, ցիստեռնի կամ կոնտեյնրի մեջ նախքան երթը, երթից հետո եւ դրա ընթացքում վտանգավոր բեռներ

պահելը, վտանգավոր բեռների ժամանակավոր պահեստավորումը դրանք այլ փոխադրամիջոցներ տեղափոխելիս կամ տարբեր նպատակակետերի միջև տարանցիկ փոխադրում կատարելիս՝ ըստ առանձին դեպքերի.

դ) միջոցների հստակ սահմանում, որոնք պետք է ձեռնարկվեն անվտանգության ռիսկերը նվազեցնելու համար՝ ըստ մասնակիցների առանձին պարտականությունների եւ գործառույթների, որոնք ներառում են՝

- վերապատրաստում,
- անվտանգության հարցերով քաղաքականություններ (օրինակ՝ բարձր վտանգավորության իրավիճակների արձագանքում, ստուգումներ նոր աշխատակից աշխատանքի վերցնելիս եւ այլն).
- շահագործման գործելակերպեր (օրինակ՝ եթե հայտնի է երթուղիների ընտրությունը/կիրառությունը, վտանգավոր բեռների հասանելիությունը, որոնք գտնվում են ժամանակավոր միջանկյալ պահեստներում (ինչպես սահմանված է (գ) կետում), խոցելի ենթակառուցվածքների մոտիկությունը եւ այլն).
- սարքավորումներ եւ ռեսուրսներ, որոնք պետք է օգտագործվեն անվտանգության ռիսկերը նվազեցնելու համար.

ե) անվտանգությանը սպառնացող վտանգների, անվտանգության խախտումների ու վտանգավոր պատահարների մասին զեկուցելու եւ դրանք լուծելու արդյունավետ ու ժամանակակից ընթացակարգեր.

զ) անվտանգության պլանների գնահատման եւ փորձարկման ընթացակարգեր ու պարբերական վերանայումների եւ պլանների թարմացման ընթացակարգեր.

է) անվտանգության պլանում պարունակվող՝ փոխադրման մասին տեղեկությունների ֆիզիկական անվտանգությունն ապահովելու միջոցներ.

ը) միջոցներ՝ ապահովելու համար, որ անվտանգության պլանում ներառված՝ տրանսպորտային գործունեության մասին տեղեկությունների տարածումը սահմանափակվի այն անձանց շրջանակով, որոնք այդ տեղեկություններն ստանալու անհրաժեշտություն ունեն: Այդ միջոցներով չպետք է խոչընդոտեն

տեղեկությունների տրամադրումը, եթե այդպես պահանջվում է «ԱԴՌ» համաձայնագրի այլ բաժինների համաձայն:

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Փոխադրողները, բեռնառաքողները եւ բեռն սրացողները պետք է համագործակցեն միմյանց եւ իրավասու մարմնի հետ՝ վրանգների մասին տեղեկություններ փոխանակելու, անվտանգության համապատասխան միջոցներ կիրառելու եւ վրանգավոր պատահարներին արձագանքելու նպատակով:*

- 1.10.3.3. Հսկան հետեւանքներ առաջացնող վտանգավոր բեռներ (տե՛ս 1.10.3.1.2 աղյուսակը) կամ հսկան հետեւանքներ առաջացնող ռադիոակտիվ նյութեր (տե՛ս 1.10.3.1.3) փոխադրող փոխադրամիջոցների եւ դրանցում առկա բեռների գողությունը կանխելու նպատակով պետք է կիրառվեն սարքեր, սարքավորումներ կամ կարգավորումներ, ինչպես նաեւ ձեռնարկվեն միջոցներ՝ ապահովելու համար, որ դրանք մշտապես լինեն գործող եւ արդյունավետ: Այդ պաշտպանիչ միջոցների կիրառությունը չպետք է խոչընդոտի վթարային արձագանքման միջոցները:

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Եթե այդ միջոցները տեղին են եւ արդեն տեղադրված, ապա պետք է կիրառվեն տրանսպորտային հեռուստաչափության եւ հետազոտության այլ մեթոդներ կամ սարքեր՝ հսկան հետեւանքներ առաջացնող վրանգավոր բեռների (տե՛ս 1.10.3.1.2 աղյուսակը) կամ հսկան հետեւանքներ առաջացնող ռադիոակտիվ նյութերի (տե՛ս 1.10.3.1.3) տեղաշարժին հետեւելու համար:*

1.10.4. 1.1.3.6-ի դրույթների համաձայն՝ 1.10.1, 1.10.2, 1.10.3 եւ 8.1.2.1 (դ)-ի պահանջները չեն կիրառվում, եթե տրանսպորտային միավորի փաթեթներում փոխադրվող քանակությունը չի գերազանցում 1.1.3.6.3-ում նշված քանակությունը՝ բացառությամբ ՄԱԿ-ի նշագրման 0029, 0030, 0059, 0065, 0073, 0104, 0237, 0255, 0267, 0288, 0289, 0290, 0360, 0361, 0364, 0365, 0366, 0439, 0440, 0441, 0455, 0456 եւ 0500 համարներում նշված բեռների, բացառությամբ ՄԱԿ-ի նշագրման 2910 եւ 2911 համարների, եթե ակտիվության մակարդակը գերազանցում է A2 արժեքը (տե՛ս 1.1.3.6.2-ի առաջին պարբերույթը): Բացի այդ, 1.10.1, 1.10.2, 1.10.3 եւ 8.1.2.1 (դ)-ի պահանջները չեն կիրառվում, երբ ցիստեռններում կամ տրանսպորտային միավորով խուռնաբեռն փոխադրվող քանակությունները չեն գերազանցում 1.1.3.6.3-ում նշված քանակությունը: Բացի այդ, գլխի դրույթները չեն կիրառվում ՄԱԿ-ի նշագրման 2912 համարի ՑԱԾՐ ՏԵՍԱԿԱՐԱՐ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՄԲ ՌԱԴԻՈԱԿՏԻՎ ՆՅՈՒԹԵՐԻ (LSA-I) եւ ՄԱԿ-ի նշագրման 2913 համարի ՌԱԴԻՈԱԿՏԻՎ ՆՅՈՒԹԵՐԻ, ՄԱԿԵՐԵՍԱՅԻՆ ՌԱԴԻՈԱԿՏԻՎ ԱՂՏՈՏՎԱԾՈՒԹՅԱՄԲ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ (SCO-I) փոխադրման նկատմամբ:

1.10.5. Սույն գլխի դրույթները համարվում են պահպանված ռադիոակտիվ նյութերի համար, եթե կիրառվում են «Ատոմային նյութի ֆիզիկական պաշտպանության մասին» կոնվենցիայի<sup>1</sup> եւ «Ատոմային նյութի ու ատոմային կայանների ֆիզիկական պաշտպանության մասին» ԱԷՄԳ շրջիկ թերթիկի<sup>2</sup> դրույթները:

---

<sup>1</sup> INFCIRC/274/Վեր.1, ԱԷՄԳ, Վիեննա (1980թ.).

<sup>2</sup> INFCIRC/225/Վեր.4 (ուղղված), ԱԷՄԳ, Վիեննա (1999թ.).

**ՄԱՍ 2**

**Դասակարգում**

**ԳԼՈՒԽ 2.1**  
**ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ**

2.1.1. Ներածություն

2.1.1.1. «ԱԴՌ» համաձայնագրի համաձայն՝ վտանգավոր բեռները բաժանվում են հետևյալ դասերի.

- Դաս 1 Պայթյունավտանգ նյութեր եւ պատրաստվածքներ
- Դաս 2 Գազեր
- Դաս 3 Դյուրավառ հեղուկներ
- Դաս 4.1 Դյուրավառ պինդ նյութեր, ինքնառեակտիվ նյութեր, պոլիմերիզացնող նյութեր եւ պինդ ապազգայունացված պայթուցիկներ
- Դաս 4.2 Նյութեր, որոնք ունակ են ինքնաբռնկման
- Դաս 4.3 Ջրի հետ փոխազդեցության հետեանքով դյուրավառ գազեր արտանետող նյութեր
- Դաս 5.1 Օքսիդացնող նյութեր
- Դաս 5.2 Օրգանական պերօքսիդներ
- Դաս 6.1 Թունավոր նյութեր
- Դաս 6.2 Վարակիչ նյութեր
- Դաս 7 Ռադիոակտիվ նյութեր
- Դաս 8 Կոռոզիոն նյութեր
- Դաս 9 Այլ վտանգավոր նյութեր եւ պատրաստվածքներ

2.1.1.2. Տարբեր դասերի յուրաքանչյուր դիրքի տրվել է ՄԱԿ-ի առանձին համար: Օգտագործված են դիրքերի հետևյալ տեսակները.

Ա Առանձին դիրքեր՝ հստակ սահմանված նյութերի կամ պատրաստվածքի համար, ներառյալ՝ մի քանի իզոմերից բաղկացած նյութերի համար դիրքերը, օրինակ՝

ՄԱԿ-ի նշագրման 1090 համարի ԱՅԵՏՈՆ

ՄԱԿ-ի նշագրման 1104 համարի ԱՄԻԼԱՅԵՏԱՏ

ՄԱԿ-ի նշագրման 1194 համարի ԷԹԻԼ ՆԻՏՐԻՏԻ ԼՈՒԾՈՒՅԹ

Բ Ընդհանրացված դիրքեր՝ հստակ սահմանված այն նյութերի խմբերի կամ պատրաստվածքի համար, որոնք «այլ կերպ չնշված» դիրքեր չեն, օրինակ՝

ՄԱԿ-ի նշագրման 1133 համարի ՍՈՍԻՆՁՆԵՐ



ՄԱԿ-ի նշագրման 1266 համարի ՕԾԱՆԵԼԻՔԱՅԻՆ ԱՊՐԱՆՔՆԵՐ

ՄԱԿ-ի նշագրման 2757 համարի ՊԵՍՏԻՑԻԴՆԵՐ ԿԱՐՔԱՄԱՏՆԵՐԻ ՀԻՄՔԻ ՎՐԱ, ՊԻՆԴ, ԹՈՒՆԱՎՈՐ

ՄԱԿ-ի նշագրման 3101 համարի «Բ» ՏԵՍԱԿԻ ՕՐԳԱՆԱԿԱՆ ՊԵՐՕՔՍԻԴ, ՀԵՂՈՒԿ

Գ Որոշակի «այլ կերպ չնշված» դիրքեր, որոնք ընդգրկում են այլ կերպ չնշված առանձին քիմիական կամ տեխնիկական բնույթի նյութերի կամ պատրաստվածքների խմբեր, օրինակ՝

ՄԱԿ-ի նշագրման 1477 համարի ՆԻՏՐԱՏՆԵՐ, ԱՆՕՐԳԱՆԱԿԱՆ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ

ՄԱԿ-ի նշագրման 1987 համարի ՍՊԻՐՏՆԵՐ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ

Դ Ընդհանուր «այլ կերպ չնշված» դիրքեր, որոնք ընդգրկում են այլ կերպ չնշված մեկ կամ մի քանի վտանգավոր հատկություններ ունեցող նյութերի կամ պատրաստվածքների խմբեր, օրինակ՝

ՄԱԿ-ի նշագրման 1325 համարի ԴՅՈՒՐԱՎԱՌ, ՊԻՆԴ, ՕՐԳԱՆԱԿԱՆ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ

ՄԱԿ-ի նշագրման 1993 համարի ԴՅՈՒՐԱՎԱՌ, ՀԵՂՈՒԿ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ

Բ, Գ, Ե և Դ կետերում սահմանված դիրքերը սահմանվում են որպես հավաքական դիրքեր:

2.1.1.3. Փաթեթավորման նպատակներով 1, 2, 5.2, 6.2 և 7-րդ դասերով նախատեսված և 4.1 դասին պատկանող ինքնառեակտիվ նյութեր չհանդիսացող նյութերը դասվում են փաթեթավորման որոշակի խմբերի՝ ըստ դրանց վտանգավորության աստիճանի.

փաթեթավորման I խումբ՝ վտանգավորության բարձր աստիճան ունեցող նյութեր.

փաթեթավորման II խումբ՝ վտանգավորության միջին աստիճան ունեցող նյութեր.

փաթեթավորման III խումբ՝ վտանգավորության ցածր աստիճան ունեցող նյութեր:

Փաթեթավորման խումբը (խմբերը), որին (որոնց) դասվում է նյութը, նշված է (են) 3.2 գլխի Ա աղյուսակում:

Պատրաստվածքները չեն դասակարգվում փաթեթավորման խմբերի ներքո: Փաթեթավորման նպատակներով հատուկ փաթեթավորում կատարելու մակարդակը սահմանվում է դրանց համար կիրառվող փաթեթավորման ցուցումներով:

- 2.1.2. Դասակարգման սկզբունքները
- 2.1.2.1. Այս կամ այն դասին պատկանող վտանգավոր բեռները սահմանվում են դրանց հատկությունների հիման վրա՝ համապատասխան դասի 2.2.x.1 ենթաբաժնի համաձայն: Վտանգավոր բեռների դասակարգումն այս կամ այն դասի եւ փաթեթավորման խմբի կատարվում է միեւնույն՝ 2.2.x.1 ենթաբաժնում նշված չափորոշիչների համաձայն: Վտանգավոր նյութը կամ պատրաստվածքը մեկ կամ մի քանի լրացուցիչ վտանգի (վտանգների) տեսակի է դասվում՝ ըստ այդ վտանգներին համապատասխանող դասի կամ դասերի չափորոշիչների՝ 2.2.x.1 համապատասխան ենթաբաժնում (ենթաբաժիններում) նշվածի համաձայն:
- 2.1.2.2. Վտանգավոր բեռների բոլոր դիրքերը թվարկված են 3.2 գլխի Ա աղյուսակում՝ ըստ իրենց ՄԱԿ-ի համարի թվային հաջորդականության: Այս աղյուսակը պարունակում է համապատասխան տեղեկություններ թվարկված բեռների մասին, ինչպես, օրինակ՝ դրանց անվանումը, դասը, փաթեթավորման խումբը (խմբերը), ամրացվելիք պիտակը (պիտակները), փաթեթավորման եւ փոխադրման մասին դրույթները<sup>1</sup>: 3.2 գլխի Ա աղյուսակի 2-րդ սյունակում նշված նյութերը փոխադրվում են Ա աղյուսակում իրենց դասակարգմանը համապատասխան կամ 2.1.2.8-ում սահմանված պայմաններով:
- 2.1.2.3 Նյութը կարող է պարունակել տեխնիկական խառնուկներ (ինչպես, օրինակ՝ արտադրության գործընթացի ժամանակ առաջացող խառնուկներ) կամ կայունացման կամ այլ նպատակներով ավելացվող հավելանյութեր, որոնք չեն ազդում դրա դասակարգման վրա: Այնուամենայնիվ, անվանմամբ նշված, այսինքն՝ 3.2 գլխի Ա աղյուսակում որպես առանձին դիրք թվարկված նյութը, որը պարունակում է տեխնիկական խառնուկներ կամ կայունացման կամ այլ նպատակներով ավելացվող հավելանյութեր, որոնք ազդում են դրա դասակարգման վրա, համարվում է լուծույթ կամ խառնուրդ (տես՝ 2.1.3.3):
- 2.1.2.4. Այն վտանգավոր բեռները, որոնք թվարկված կամ սահմանված են յուրաքանչյուր դասի 2.2.x.2 ենթաբաժնում, չպետք է թույլատրվեն փոխադրման համար:
- 2.1.2.5. Անվանմամբ չնշված, այսինքն՝ 3.2 գլխի Ա աղյուսակում որպես առանձին դիրք չթվարկված եւ վերոնշյալ 2.2.x.2 ենթաբաժիններից որեւէ մեկում չթվարկված կամ չսահմանված նյութը դասվում է համապատասխան դասին՝ 2.1.3-ով նախատեսված ընթացակարգի

---

<sup>1</sup> **Ծանոթագրություն քարտուղարության կողմից.** Այս դիրքերի այբբենական ցանկը կազմվել է քարտուղարության կողմից եւ վերարտադրվել է 3.2 գլխի Բ աղյուսակում: Այս աղյուսակը չի կազմում «ԱԴԴ» համաձայնագրի պաշտոնական մասը:

համաձայն: Բացի այդ որոշվում է լրացուցիչ վտանգի տեսակը (առկայության դեպքում) եւ փաթեթավորման խումբը (առկայության դեպքում): Դասը, լրացուցիչ վտանգի տեսակը (առկայության դեպքում) եւ փաթեթավորման խումբը (առկայության դեպքում) սահմանելուց հետո որոշվում է նյութի ՄԱԿ-ի համապատասխան համարը: Յուրաքանչյուր դասի վերջում, 2.2.x.3 ենթաբաժիններում (հավաքական դիրքերի ցանկը) ներկայացված՝ որոշումների կայացման սխեմաներում նշվում են համապատասխան հավաքական դիրքը (ՄԱԿ-ի համարը) ընտրելու համար սահմանված համապատասխան պարամետրերը: Բոլոր դեպքերում նյութի կամ պատրաստվածքի հատկություններն ընդգրկող ամենակոնկրետ հավաքական դիրքն ընտրվում է 2.1.1.2-ում համապատասխանաբար Բ, Գ եւ Դ տառերով արտահայտված ստորակարգության հիման վրա: Եթե նյութը կամ պատրաստվածքը 2.1.1.2-ի համաձայն չի կարող դասվել «Բ» եւ «Գ» տեսակի դիրքերի, ապա միայն այդ դեպքում այն պետք է դասվի «Դ» տեսակի դիրքի:

- 2.1.2.6. 2.3 գլխով նախատեսված փորձարկման ընթացակարգերի եւ դասերի 2.2.x.1 բաժիններում սահմանված չափորոշիչների հիման վրա՝ այդպես նշված լինելու դեպքում կարող է որոշվել, որ 3.2 գլխի Ա աղյուսակում անվանմամբ նշված որոշակի դասի պատկանող նյութը, լուծույթը կամ խառնուրդը չեն համապատասխանում տվյալ դասի համար սահմանված չափորոշիչներին: Այդ դեպքում համարվում է, որ նյութը, լուծույթը կամ խառնուրդը չեն պատկանում տվյալ դասին:
- 2.1.2.7. Դասակարգման նպատակով հեղուկներ են համարվում այն նյութերը, որոնց հալման ջերմաստիճանը կամ հալման սկիզբնական ջերմաստիճանը 20 °C է կամ ավելի ցածր՝ 101.3 կՊա ճնշման պայմաններում: Մածուցիկ նյութը, որի հալման կոնկրետ ջերմաստիճանը հնարավոր չէ որոշել, ենթարկվում է ASTM D 4359-90 փորձարկման կամ 2.3.4-ով սահմանված հոսունությունը որոշելու (կակղաչափով փորձարկում) փորձարկման:
- 2.1.2.8. Բեռնառաքողը, որը փորձարկման տվյալների վրա հիմնվելով պարզել է, որ 3.2 գլխի Ա աղյուսակի 2-րդ սյունակում անվանմամբ նշված նյութը համապատասխանում է այն դասի դասակարգման չափորոշիչին, որը նշված չէ 3.2 գլխի Ա աղյուսակի 3ա կամ 5-րդ սյունակում, իրավասու մարմնի թույլտվությամբ կարող է փոխադրել նյութը՝
- 2.2.x.3 բաժիններում բոլոր վտանգներն արտացոլող ամենահամապատասխան հավաքական դիրքով. կամ
  - ՄԱԿ-ի նշագրման նույն համարով եւ անվանմամբ, սակայն անհրաժեշտության դեպքում ապահովելով վտանգի մասին տեղեկացման լրացուցիչ տեղեկատվություն՝ լրացուցիչ ռիսկը (ռիսկերը) արտացոլելու նպատակով (փաստաթղթեր, պիտակներ,

տեղեկատվական ցուցանակներ)՝ պայմանով, որ դասը մնում է անփոփոխ, եւ որ վտանգի այդպիսի համակցություն պարունակող նյութերի նկատմամբ սովորաբար կիրառվող այլ փոխադրման պայմաններ (օրինակ՝ սահմանափակ քանակության, փաթեթավորման եւ ցիստեռնի մասին դրույթներ) նույնն են, ինչ նշված նյութի դեպքում կիրառվող պայմանները:

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1. Թույլտվությունը տվող իրավասու մարմինը կարող է լինել «ԱԴԴ» համաձայնագրի որեւէ Պայմանավորվող կողմի իրավասու մարմին, որը կարող է նաեւ ճանաչել «ԱԴԴ» համաձայնագրի Պայմանավորվող կողմ չհանդիսացող երկրի իրավասու մարմնի կողմից տրված թույլտվությունը, եթե այդ թույլտվությունը տրվել է «ՌԻԴ»-ի, «ԱԴԴ»-ի, «ԱԲԿ»-ի, «ՎԲՄԾ» կանոնագրքի կամ «ԻԿԱՕ»-ի տեխնիկական ցուցումների համաձայն կիրառվող ընթացակարգերին համապատասխան:*

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2. Երբ իրավասու մարմինը տալիս է այդ թույլտվությունը, ապա այդ մասին նա պետք է համապատասխանաբար տեղեկացնի Միավորված ազգերի կազմակերպության՝ վրանգավոր բեռների փոխադրման հարցերով փորձագետների ենթակոմիտեին եւ ներկայացնի ՄԱԿ-ի տիպային կանոնակարգի վրանգավոր բեռների ցանկում փոփոխություններ կատարելու համապատասխան առաջարկ: Առաջարկվող փոփոխությունը մերժվելու դեպքում իրավասու մարմինը դադարեցնում է իր թույլտվության գործողությունը:*

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3. 2.1.2.8-ին համապատասխան փոխադրման դեպքում տե՛ս նաեւ 5.4.1.1.20:*

- 2.1.3. Նյութերի՝ այդ թվում անվանմամբ չնշված լուծույթների եւ խառնուրդների (ինչպիսիք են պատրաստուկները եւ թափոնները) դասակարգումը
- 2.1.3.1. Նյութերը, ներառյալ՝ անվանմամբ չնշված լուծույթները եւ խառնուրդներն ըստ իրենց վտանգավորության աստիճանի դասակարգվում են տարբեր դասերի՝ 2.2.x.1 բաժնում նշված չափորոշիչների հիման վրա: Նյութի ներկայացրած վտանգը (վտանգները) որոշվում է (են) դրա ֆիզիկաքիմիական հատկանիշների եւ ֆիզիոլոգիական հատկությունների հիման վրա: Այդ հատկանիշները եւ հատկությունները նաեւ հաշվի են առնվում այն ժամանակ, երբ դրանց մասով փորձը ցույց է տալիս, որ նյութն անհրաժեշտ է դասել ավելի խիստ պահանջներ բավարարող կատեգորիայի:
- 2.1.3.2. 3.2 գլխի Ա աղյուսակում անվանմամբ չնշված՝ մեկ տեսակի վտանգ ներկայացնող նյութը ներառվում է համապատասխան դասին՝ ընդգրկվելով այդ դասի 2.2.x.3 ենթաբաժնում թվարկված հավաքական դիրքերից որեւէ մեկում:

2.1.3.3. 3.2 գլխի Ա աղյուսակում անվանմամբ նշված՝ մեկ գերակշռող նյութից բաղկացած՝ «ԱԴԴ» համաձայնագրի դասակարգման չափորոշիչներին համապատասխանող լուծույթին կամ խառնուրդին եւ մեկ կամ մի քանի նյութերին, որոնց վրա չեն տարածվում «ԱԴԴ» համաձայնագրի դրույթները եւ կամ 3.2 գլխի Ա աղյուսակում անվանմամբ նշված՝ մեկ կամ մի քանի նյութերի աննշան քանակություններին տրվում է ՄԱԿ-ի նշագրման համար եւ 3.2 գլխի Ա աղյուսակում անվանմամբ նշված՝ գերակշռող նյութի բեռնառաքման ճշգրիտ անվանում, եթե՝

- ա) լուծույթը կամ խառնուրդն անվանմամբ նշված չէ 3.2 գլխի Ա աղյուսակում,
- բ) 3.2 գլխի Ա աղյուսակում նշված նյութի անվանմամբ եւ նկարագրությամբ մասնավորապես չի նշվում, որ դրանք կիրառելի են միայն մաքուր նյութերի նկատմամբ,
- գ) լուծույթի կամ խառնուրդի դասը, դասակարգման ծածկագիրը, փաթեթավորման խումբը կամ ֆիզիկական վիճակը նույնն են, ինչ որ 3.2 գլխի Ա աղյուսակում անվանմամբ նշված նյութինը, կամ
- դ) լուծույթի կամ խառնուրդի վտանգավոր հատկանիշները եւ հատկություններն այնպիսի վթարային միջոցառումների անհրաժեշտություն են առաջացնում, որոնք նույնն են, ինչ որ 3.2 գլխի Ա աղյուսակում անվանմամբ նշված՝ նյութի համար պահանջվող վթարային միջոցառումները:

Բոլոր մյուս դեպքերում, բացառությամբ (ա) կետում նկարագրված դեպքի, լուծույթը կամ խառնուրդը դասակարգվում է որպես այդ դասի 2.2.x.3 ենթաբաժնում թվարկված համապատասխան դասի հավաքական դիրքում անվանմամբ չնշված նյութ՝ հաշվի առնելով այդ լուծույթի կամ խառնուրդի ներկայացրած լրացուցիչ վտանգները (առկայության դեպքում)՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այդ լուծույթը կամ խառնուրդը չի համապատասխանում որեւէ դասի չափորոշիչներին, ինչի դեպքում «ԱԴԴ» համաձայնագրի դրույթները չեն տարածվում դրա վրա:

2.1.3.4. 2.1.3.4.1-ում կամ 2.1.3.4.2-ում նշված դիրքերից որեւէ մեկին պատկանող նյութեր պարունակող լուծույթները կամ խառնուրդները դասակարգվում են այս պարբերությունների դրույթների համաձայն:

2.1.3.4.1. Անվանմամբ նշված հետեւյալ նյութերից որեւէ մեկը պարունակող լուծույթները կամ խառնուրդները միշտ ընդգրկվում են այն նույն դիրքում, որում որ ընդգրկվում է իրենց բաղկացուցիչ նյութը՝ պայմանով, որ դրանք չունենան 2.1.3.5.3-ում նշված վտանգավոր հատկանիշները:

- Դաս 3

ՄԱԿ-ի նշագրման 1921 համարի ՊՐՈՊԻԼԵՆԻՄԻՆ, ԿԱՅՈՒՆԱՑՎԱԾ, ՄԱԿ-ի նշագրման 3064 համարի ՆԻՏՐՈԳԼԻՑԵՐԻՆԻ ՍՊԻՐՏԱՅԻՆ ԼՈՒԾՈՒՅԹ՝ նիտրոգլիցերինի ավելի քան 1%, սակայն ոչ ավելի, քան 5% պարունակությամբ,

- Դաս 6.1

ՄԱԿ-ի նշագրման 1051 համարի ՋՐԱԾՆԻ ՑԻԱՆԻԴ, ԿԱՅՈՒՆԱՑՎԱԾ՝ ջրի ավելի քիչ, քան 3% պարունակությամբ, ՄԱԿ-ի նշագրման 1185 համարի ԷԹԻԼԵՆԻՄԻՆ, ԿԱՅՈՒՆԱՑՎԱԾ, ՄԱԿ-ի նշագրման 1259 համարի ՆԻԿԵԼԻ ԿԱՐԲՈՆԻԼ, ՄԱԿ-ի նշագրման 1613 համարի ԿԱՊՏԱԹԹՈՒ, ՋՐԱՅԻՆ ԼՈՒԾՈՒՅԹ (ՋՐԱԾՆԻ ՑԻԱՆԻԴԻ ՋՐԱՅԻՆ ԼՈՒԾՈՒՅԹ)՝ ջրածնի ցիանիդի ոչ ավելի, քան 20% պարունակությամբ, ՄԱԿ-ի նշագրման 1614 համարի ՋՐԱԾՆԻ ՑԻԱՆԻԴ, ԿԱՅՈՒՆԱՑՎԱԾ՝ ջրի ոչ ավելի, քան 3% պարունակող եւ ծակոտկեն իներտ նյութի մեջ կլանված, ՄԱԿ-ի նշագրման 1994 համարի ԵՐԿԱԹԻ ՊԵՆՏԱԿԱՐԲՈՆԻԼ, ՄԱԿ-ի նշագրման 2480 համարի ՄԵԹԻԼ ԻՉՈՑԻԱՆԱՏ, ՄԱԿ-ի նշագրման 2481 համարի ԷԹԻԼ ԻՉՈՑԻԱՆԱՏ, ՄԱԿ-ի նշագրման 3294 համարի ՋՐԱԾՆԻ ՑԻԱՆԻԴԻ ՍՊԻՐՏԱՅԻՆ ԼՈՒԾՈՒՅԹ՝ ջրածնի ցիանիդի ոչ ավելի, քան 45% պարունակությամբ,

- Դաս 8

ՄԱԿ-ի նշագրման 1052 համարի ՋՐԱԾՆԻ ՖՏՈՐԻԴ, ՋՐԱՉՈՒՐԿ, ՄԱԿ-ի նշագրման 1744 համարի ԲՐՈՄ կամ ՄԱԿ-ի նշագրման 1744 համարի ԲՐՈՄԻ ԼՈՒԾՈՒՅԹ, ՄԱԿ-ի նշագրման 1790 համարի ՖՏՈՐԱՋՐԱԾՆԱՅԻՆ ԹԹՈՒ՝ ջրածնի ֆտորիդի ավելի քան 85% պարունակությամբ, ՄԱԿ-ի նշագրման 2576 համարի ՖՈՍՖՈՐԻ ԲՐՈՄՕՔՍԻԴ, ՀԱԼԵՑՎԱԾ,

2.1.3.4.2. 9-րդ դասի հետեւյալ դիրքերից որեւէ մեկին պատկանող նյութ պարունակող հետեւյալ լուծույթները եւ խառնուրդները՝

ՄԱԿ-ի նշագրման 2315 համարի ՊՈԼԻՔԼՈՐԻՆԱՑՎԱԾ ԲԻՖԵՆԻԼՆԵՐ, ՀԵՂՈՒԿ,

ՄԱԿ-ի նշագրման 3151 համարի ՊՈԼԻՀԱԼՈԳԵՆԱՑՎԱԾ ԲԻՖԵՆԻԼՆԵՐ, ՀԵՂՈՒԿ,

ՄԱԿ-ի նշագրման 3151 համարի ՀԱԼՈԳԵՆԱՑՎԱԾ ՄՈՆՈՄԵԹԻԼԴԻՖԵՆԻԼՄԵԹԱՆՆԵՐ, ՀԵՂՈՒԿ

ՄԱԿ-ի նշագրման 3151 համարի ՊՈԼԻՀԱԼՈԳԵՆԱՑՎԱԾ ՏԵՐՖԵՆԻԼՆԵՐ, ՀԵՂՈՒԿ,

ՄԱԿ-ի նշագրման 3152 համարի ՊՈԼԻՀԱԼՈԳԵՆԱՑՎԱԾ ԲԻՖԵՆԻԼՆԵՐ, ՊԻՆԴ,

ՄԱԿ-ի նշագրման 3152 համարի ՀԱԼՈԳԵՆԱՑՎԱԾ

ՄՈՆՈՄԵԹԻՆԳԻՖԵՆԻԼՄԵԹԱՆՆԵՐ, ՊԻՆԴ

ՄԱԿ-ի նշագրման 3152 համարի ՊՈԼԻՀԱԼՈԳԵՆԱՑՎԱԾ ՏԵՐՖԵՆԻԼՆԵՐ, ՊԻՆԴ, կամ

ՄԱԿ-ի նշագրման 3432 համարի ՊՈԼԻՔԼՈՐԻՆԱՑՎԱԾ ԲԻՖԵՆԻԼՆԵՐ, ՊԻՆԴ

միշտ ընդգրկվում են 9-րդ դասի նույն դիրքում՝ պայմանով, որ՝

- դրանք չեն պարունակում փաթեթավորման III խմբի 3, 4.1, 4.2, 4.3, 5.1, 6.1 դասերով կամ 8-րդ դասով նախատեսված բաղադրիչներից տարբեր՝ այլ լրացուցիչ վտանգավոր որևէ բաղադրիչ, եւ
- դրանք չունեն 2.1.3.5.3-ում նշված վտանգավոր հատկանիշները:

2.1.3.5. 3.2 գլխի Ա աղյուսակում անվանմամբ չնշված՝ ավելի քան մեկ վտանգավոր հատկանիշ ունեցող նյութերը եւ «ԱԴՌ» համաձայնագրի դասակարգման չափորոշիչներին համապատասխանող մի քանի վտանգավոր նյութեր պարունակող լուծույթները կամ խառնուրդներն ընդգրկվում են մեկ հավաքական դիրքում (տես՝ 2.1.2.5) եւ համապատասխան դասի փաթեթավորման խմբում՝ ըստ իրենց վտանգավոր հատկանիշների: Այդ դասակարգումը, ըստ վտանգավոր հատկանիշների, իրականացվում է հետեւյալ կերպ.

2.1.3.5.1. Ֆիզիկաքիմիական հատկանիշները եւ ֆիզիոլոգիական հատկությունները որոշվում են չափման կամ հաշվարկի միջոցով, եւ նյութը, լուծույթը կամ խառնուրդը դասակարգվում են 2.2.x.1 ենթաբաժնում նշված չափորոշիչների համաձայն:

2.1.3.5.2. Եթե դրանք հնարավոր չէ որոշել առանց անհամաչափ ծախսերի եւ ջանքերի (ինչպես, օրինակ՝ թափոնների որոշ տեսակների դեպքում), ապա նյութը, լուծույթը կամ խառնուրդն ընդգրկվում են առավելագույն վտանգ ներկայացնող բաղադրիչի դասում:

2.1.3.5.3. Եթե նյութի, լուծույթի կամ խառնուրդի վտանգավոր հատկանիշները կարող են ընդգրկվել ստորեւ թվարկված ավելի քան մեկ դասում կամ նյութերի խմբում, ապա այդ նյութը, լուծույթը կամ խառնուրդն ընդգրկվում են առավելագույն վտանգին համապատասխանող դասում կամ նյութերի խմբում՝ առաջնահերթության հետեւյալ կարգով.

ա) 7-րդ դասին պատկանող նյութեր (բացի ազատված փաթեթներում փոխադրվող ռադիոակտիվ նյութերից՝ բացառությամբ ՄԱԿ-ի նշագրման 3507 համարի (ՈՒՐԱՆԻՈՒՄ ՀԵՔՍԱՖՏՈՐԻԴ ՌԱԴԻՈԱԿՏԻՎ ՆՅՈՒԹ, ԱՁԱՏՎԱԾ ՓԱԹԵԹ), որոնց նկատմամբ կիրառվում է 3.3 գլխի 290-րդ հատուկ դրույթը, երբ

գերակայում են մյուս վտանգավոր հատկությունները),

- բ) 1-ին դասին պատկանող նյութեր,
- գ) 2-րդ դասին պատկանող նյութեր,
- դ) 3-րդ դասին պատկանող հեղուկ ապազգայունացված պայթուցիկներ,
- ե) 4.1 դասին պատկանող ինքնառեակտիվ նյութեր եւ պինդ ապազգայունացված պայթուցիկներ,
- զ) 4.2 դասին պատկանող հրակիր նյութեր,
- է) 5.2 դասին պատկանող նյութեր,
- ը) 6.1 դասին պատկանող նյութեր, որոնք համապատասխանում են փաթեթավորման I խմբի ներշնչման դեպքում թունավորման չափորոշչին (8-րդ դասի դասակարգման չափորոշչներին համապատասխանող եւ փաթեթավորման I խմբի տիրույթում փոշու եւ անոթալի (LC50) ներշնչման դեպքում թունավորման հատկություն, ինչպես նաեւ միայն փաթեթավորման III խմբի տիրույթում կամ ավելի ցածր խմբի՝ կուլ տալու կամ մաշկին դիպչելու դեպքում թունավորման հատկություն ունեցող նյութերն ընդգրկվում են 8-րդ դասում),
- թ) 6.2 դասին պատկանող վարակիչ նյութեր:

2.1.3.5.4. Եթե նյութի վտանգավոր հատկանիշներն ընդգրկվում են վերոնշյալ 2.1.3.5.3-ում չնշված ավելի քան մեկ դասում կամ նյութերի խմբում, ապա նյութը դասակարգվում է նույն ընթացակարգի համաձայն, սակայն համապատասխան դասն ընտրվում է 2.1.3.10-ում նշված վտանգների առաջնահերթության աղյուսակի համաձայն:

2.1.3.5.5. Եթե փոխադրման ենթակա նյութը թափոն է, որի բաղադրությունը հստակորեն հայտնի չէ, ապա 2.1.3.5.2-ի համաձայն կարելի է դրան ՄԱԿ-ի որեւէ համար տալ կամ այն փաթեթավորման որեւէ խմբի դասել՝ հիմնվելով բեռնառաքողի՝ այդ թափոնի մասին ունեցած գիտելիքների վրա, ներառյալ՝ հասանելի բոլոր տեխնիկական եւ անվտանգության մասով տվյալները, որոնք պահանջվում են՝ համաձայն անվտանգության եւ շրջակա միջավայրի մասին գործող օրենսդրության<sup>2</sup>:

---

<sup>2</sup> Այդ օրենսդրության օրինակ է Խորհրդի «Թափոնների մասին» 75/442/ԵՏՀ հրահանգի 1(ա) հոդվածի համաձայն թափոնների ցանկը սահմանող 94/3/ԵՀ որոշումը եւ Խորհրդի «Վրանգավոր թափոնների մասին» 91/689/ԵՏՀ հրահանգի 1(4) հոդվածի համաձայն վրանգավոր թափոնների ցանկը սահմանող՝ Խորհրդի 94/904/ԵՀ որոշումը (Եվրոպական համայնքների 2000 թվականի սեպտեմբերի 6-ի թիվ L 226 պաշտոնական տեղեկագիր, էջ 3) փոխարինող՝ Հանձնաժողովի 2000 թվականի մայիսի 3-ի 2000/532/ԵՀ որոշումը, ինչպես նաեւ Եվրոպական պառլամենտի եւ



Կասկածների դեպքում ընտրությունը կանգ է առնում վտանգավորության ամենաբարձր աստիճանի վրա:

Եթե, այնուամենայնիվ, թափոնի բաղադրության մասին ունեցած գիտելիքների եւ հայտնաբերված բաղադրիչների ֆիզիկաքիմիական հատկությունների հիման վրա հնարավոր է ապացուցել, որ թափոնի հատկությունները չեն համապատասխանում փաթեթավորման I խմբի մակարդակի համար նախատեսված հատկություններին, ապա թափոնը կարող է ինքնաբերաբար ընդգրկվել փաթեթավորման II խմբի «այլ կերպ չնշված» ամենահամապատասխան դիրքում: Ամեն դեպքում, եթե հայտնի է, որ թափոնն ունի միայն բնապահպանական վտանգներ առաջացնելու հատկություններ, ապա այն կարող է դասակարգվել փաթեթավորման III խմբին՝ ՄԱԿ-ի նշագրման 3077 կամ 3082 համարներին:

Այս ընթացակարգը չի կարող օգտագործվել 2.1.3.5.3-ում նշված նյութեր պարունակող թափոնների, 4.3 դասին պատկանող նյութերի, 2.1.3.7-ում նշված դեպքի հետ կապված նյութերի կամ այն նյութերի համար, որոնք, 2.2.x.2-ի համաձայն, չեն թույլատրվում փոխադրման համար:

- 2.1.3.6. Միշտ օգտագործվում է ամենակոնկրետ կիրառելի հավաքական դիրքը (տես՝ 2.1.2.5), այսինքն՝ ընդհանուր «այլ կերպ չնշված» դիրքն օգտագործվում է միայն այն դեպքում, երբ ընդհանրացված դիրքը կամ կոնկրետ «այլ կերպ չնշված» դիրքը չի կարող օգտագործվել:
- 2.1.3.7. Օքսիդացնող լուծույթները եւ խառնուրդները կամ օքսիդացման լրացուցիչ վտանգ պարունակող նյութերը կարող են պայթուցիկ հատկություններ ունենալ: Դրանց փոխադրումն այդպիսի դեպքերում պետք է թույլատրվի միայն այն ժամանակ, երբ դրանք բավարարում են 1-ին դասի պահանջները:
- 2.1.3.8. 2.2.9.1.10-ի չափորոշիչներին համապատասխանող՝ 1-6.2, 8-րդ եւ 9-րդ դասերին պատկանող նյութերը, բացառությամբ ՄԱԿ-ի նշագրման 3077 եւ 3082 համարներում ընդգրկված նյութերի, 1-6.2, 8-րդ եւ 9-րդ դասերի ներկայացրած վտանգներով պայմանավորված, լրացուցիչ կերպով համարվում են նաեւ շրջակա միջավայրի համար վտանգավոր նյութեր: Մյուս բոլոր նյութերը, որոնք 2.2.9.1.10-ի չափորոշիչներից բացի չեն համապատասխանում որեւէ այլ դասի չափորոշիչի, համապատասխանաբար դասակարգվում են ՄԱԿ-ի նշագրման 3077 եւ 3082 համարներին:
- 2.1.3.9. Այն թափոնները, որոնք չեն համապատասխանում 1-9-րդ դասի դասակարգման չափորոշիչներին, սակայն կարգավորվում են

---

*Խորհրդի 2008 թվականի նոյեմբերի 19-ի «Թափոնների մասին» եւ որոշ հրահանգներ ուժը կորցրած ճանաչող 2008/98/ԵՀ հրահանգը (Եվրոպական միության 2008 թվականի նոյեմբերի 22-ի թիվ L312 պաշտոնական տեղեկագիր, էջ 3-30):*

«Վտանգավոր թափոնների անդրսահմանային փոխադրման եւ դրանց հեռացման նկատմամբ հսկողություն սահմանելու մասին» Բազելի կոնվենցիայով, կարող են փոխադրվել ՄԱԿ-ի նշագրման 3077 կամ 3082 համարների ներքո:

2.1.3.10. Վտանգների առաջնահերթության աղյուսակ

Դաս եւ փաթեթավորման խումբ	4.1, II	4.1, III	4.2, II	4.2, III	4.3, I	4.3, II	4.3, III	5.1, I	5.1, II	5.1, III	6.1, I ՄԱՇԿԱՅԻՆ	6.1, I ԲԵՐԱՆԱՅԻՆ	6.1, II	6.1, III	8, I	8, II	8, III	9
3, I	ՊԻՆԴ ՀԵՂՈՒԿ 4.1 3, I	ՊԻՆԴ ՀԵՂՈՒԿ 4.1 3, I	ՊԻՆԴ ՀԵՂՈՒԿ 4.2 3, I	ՊԻՆԴ ՀԵՂՈՒԿ 4.2 3, I	4.3, I	4.3, I	4.3, I	ՊԻՆԴ ՀԵՂՈՒԿ 5.1, I 3, I	ՊԻՆԴ ՀԵՂՈՒԿ 5.1, I 3, I	ՊԻՆԴ ՀԵՂՈՒԿ 5.1, I 3, I	3, I	3, I	3, I	3, I	3, I	3, I	3, I	3, I
3, II	ՊԻՆԴ ՀԵՂՈՒԿ 4.1, 3, II	ՊԻՆԴ ՀԵՂՈՒԿ 4.1, 3, II	ՊԻՆԴ ՀԵՂՈՒԿ 4.2, 3, II	ՊԻՆԴ ՀԵՂՈՒԿ 4.2, 3, II	4.3, I	4.3, II	4.3, II	ՊԻՆԴ ՀԵՂՈՒԿ 5.1, I 3, I	ՊԻՆԴ ՀԵՂՈՒԿ 5.1, II 3, II	ՊԻՆԴ ՀԵՂՈՒԿ 5.1, II 3, II	3, I	3, I	3, II	3, II	8, I	3, II	3, II	3, II
3, III	ՊԻՆԴ ՀԵՂՈՒԿ 4.1 3, II	ՊԻՆԴ ՀԵՂՈՒԿ 4.1 3, III	ՊԻՆԴ ՀԵՂՈՒԿ 4.2 3, II	ՊԻՆԴ ՀԵՂՈՒԿ 4.2 3, III	4.3, I	4.3, II	4.3, III	ՊԻՆԴ ՀԵՂՈՒԿ 5.1, I 3, I	ՊԻՆԴ ՀԵՂՈՒԿ 5.1, II 3, II	ՊԻՆԴ ՀԵՂՈՒԿ 5.1, III 3, III	6.1, I	6.1, I	6.1, II	3, III a	8, I	8, II	3, III	3, III
4.1, II			4.2, II	4.2, II	4.3, I	4.3, II	4.3, II	5.1, I	4.1, II	4.1, II	6.1, I	6.1, I	ՊԻՆԴ ՀԵՂՈՒԿ 4.1, II 6.1, II	ՊԻՆԴ ՀԵՂՈՒԿ 4.1, II 6.1, II	8, I	ՊԻՆԴ ՀԵՂՈՒԿ 4.1, II 8, II	ՊԻՆԴ ՀԵՂՈՒԿ 4.1, II 8, II	4.1, II
4.1, III			4.2, II	4.2, III	4.3, I	4.3, II	4.3, III	5.1, I	4.1, II	4.1, III	6.1, I	6.1, I	6.1, II	ՊԻՆԴ ՀԵՂՈՒԿ 4.1, III 6.1, III	8, I	8, II	ՊԻՆԴ ՀԵՂՈՒԿ 4.1, III 8, III	4.1, III
4.2, II					4.3, I	4.3, II	4.3, II	5.1, I	4.2, II	4.2, II	6.1, I	6.1, I	4.2, II	4.2, II	8, I	4.2, II	4.2, II	4.2, II
4.2, III					4.3, I	4.3, II	4.3, III	5.1, I	5.1, II	4.2, III	6.1, I	6.1, I	6.1, II	4.2, III	8, I	8, II	4.2, III	4.2, III
4.3, I								5.1, I	4.3, I	4.3, I	6.1, I	4.3, I	4.3, I	4.3, I	4.3, I	4.3, I	4.3, I	4.3, I
4.3, II								5.1, I	4.3, II	4.3, II	6.1, I	4.3, I	4.3, II	4.3, II	8, I	4.3, II	4.3, II	4.3, II
4.3, III								5.1, I	5.1, II	4.3, III	6.1, I	6.1, I	6.1, II	4.3, III	8, I	8, II	4.3, III	4.3, III
5.1, I											5.1, I	5.1, I	5.1, I	5.1, I	5.1, I	5.1, I	5.1, I	5.1, I
5.1, II											6.1, I	5.1, I	5.1, II	5.1, II	8, I	5.1, II	5.1, II	5.1, II
5.1, III											6.1, I	6.1, I	6.1, II	5.1, III	8, I	8, II	5.1, III	5.1, III
6.1, I ՄԱՇԿԱՅԻՆ															ՊԻՆԴ ՀԵՂՈՒԿ 6.1, I 8, I	6.1, I	6.1, I	6.1, I

6.1, I ԲԵՐԱՆԱՅԻՆ															ՊԻՆԴ ՀԵՂՈՒԿ 6.1, I 8, I	6.1, I	6.1, I	6.1, I
6.1, II ՆԵՐՇՆՉՄԱՆ															ՊԻՆԴ ՀԵՂՈՒԿ 6.1, I 8, I	6.1, II	6.1, II	6.1, II
6.1, II ՄԱՇԿԱՅԻՆ															ՊԻՆԴ ՀԵՂՈՒԿ 6.1, I 8, I	ՊԻՆ Դ ՀԵՂՈ ՒԿ 6.1, II 8, II	6.1, II	6.1, II
6.1, II ԲԵՐԱՆԱՅԻՆ			ՊԻՆԴ՝ պինդ նյութեր եւ խառնուրդներ ՀԵՂՈՒԿ՝ հեղուկ նյութեր, խառնուրդներ եւ լուծույթներ ՄԱՇԿԱՅԻՆ՝ մաշկին ընկնելու միջոցով թունավորման կարողություն ԲԵՐԱՆԱՅԻՆ՝ կու տալու դեպքում թունավորություն ՆԵՐՇՆՉՄԱՆ՝ ներշնչման դեպքում թունավորություն ա 6.1 դաս՝ պեստիցիդների համար											8.1	ՊԻՆ Դ ՀԵՂՈ ՒԿ 6.1, II 8, II	6.1, II	6.1, II	
6.1, III															8, I	8, II	8, III	6.1, III
8, I																		8, I
8, II																		8, II
8, III																		8, III

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1. Աղյուսակն օգտագործելու կարգը հստակեցնող օրինակներ

Առանձին նյութի դասակարգումը

Դասակարգման ենթակա նյութի նկարագրությունը.

Անվանմամբ չնշված ամին, որը համապատասխանում է 3-րդ դասի, փաթեթավորման II խմբի չափորոշիչներին, ինչպես նաև 8-րդ դասի, փաթեթավորման I խմբի չափորոշիչներին:

Ընթացակարգը.

3 II տողի եւ 8 I սյունակի հատման կետում նշված է 8 I:

Հետեւաբար ամինը պետք է ընդգրկվի 8-րդ դասում, ՄԱԿ-ի հետեւյալ համարի տակ՝

ՄԱԿ-ի նշագրման 2734 համարի ՀԵՂՈՒԿ ԱՄԻՆՆԵՐ, ԿՈՌՈՋԻՈՆ, ԴՅՈՒՐԱՎԱՌ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ կամ ՄԱԿ-ի նշագրման 2734 համարի ՊՈԼԻԱՄԻՆՆԵՐ, ՀԵՂՈՒԿ, ԿՈՌՈՋԻՈՆ, ԴՅՈՒՐԱՎԱՌ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ,

փաթեթավորման I խումբ

Խառնուրդի դասակարգումը

Դասակարգման ենթակա խառնուրդի նկարագրությունը.

3-րդ դասում, փաթեթավորման III խումբ, ընդգրկված դյուրավառ հեղուկից բաղկացած խառնուրդ, 6.1 դասում, փաթեթավորման II խումբ, ընդգրկված թունավոր նյութ եւ 8-րդ դասում, փաթեթավորման I խումբ, ընդգրկված կոռոզիոն նյութ:

Ընթացակարգը.

3 III տողի եւ 6.1 II սյունակի հատման կետում նշված է 6.1 II:

6.1 II տողի եւ 8 I սյունակի հատման կետում նշված է 8 I ՀԵՂՈՒԿԸ:

Հետեւաբար այս խառնուրդը, որը հետագայում չի սահմանվում, պետք է ընդգրկվի 8-րդ դասում՝ ՄԱԿ-ի հետեւյալ համարի տակ՝

ՄԱԿ-ի նշագրման 2922 համարի ԿՈՌՈՋԻՈՆ ԼՈՒԾՈՒՅԹ, ԹՈՒՆԱՎՈՐ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ, փաթեթավորման I խումբ:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2. Խառնուրդների եւ լուծույթների՝ որեւէ դասում կամ փաթեթավորման խմբում ընդգրկման օրինակներ.

6.1-ին դասին, (II), պատկանող ֆենոլի լուծույթը 3-րդ դասին, (II), պատկանող բենզոլում պետք է ընդգրկվի 3-րդ դասում, (II). այս լուծույթը, ֆենոլի թունավորությունից ելնելով, պետք է ընդգրկվի ՄԱԿ-ի

նշագրման 1992 համարի ԴՅՈՒՐԱՎԱՌ ՀԵՂՈՒԿ, ԹՈՒՆԱՎՈՐ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ, 3-րդ դաս, (II), համարի ներքո:

6.1-ին դասին, (II), պատկանող նապրիումի արսենաթի պինդ խառնուրդը եւ 8-րդ դասին, (II), պատկանող նապրիումի հիդրօքսիդը պետք է ընդգրկվի ՄԱԿ-ի նշագրման 3290 ԹՈՒՆԱՎՈՐ ՊԻՆԴ, ԿՈՌՈՋԻՈՆ, ԱՆՕՐԳԱՆԱԿԱՆ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ, 6.1-ին դաս, (II), համարի ներքո:

4.1 դասին, (III), պատկանող չմշակված կամ մաքրված նավթալինը 3-րդ դասին, (II), պատկանող բենզինում պետք է ընդգրկվի ՄԱԿ-ի նշագրման 3295 համարի ԱԾԽԱՋՐԱԾԻՆՆԵՐ, ՀԵՂՈՒԿ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ, 3-րդ դաս, (II), համարի ներքո:

3-րդ դասին, (III), պատկանող ածխաջրածինների խառնուրդը եւ 9-րդ դասին, (II), պատկանող պոլիքլորինացված բիֆենիլները (ՊՔՔ/PCB) պետք է ընդգրկվեն ՄԱԿ-ի նշագրման 2315 համարի ՊՈԼԻՔԼՈՐԻՆԱՅՎԱԾ ԲԻՖԵՆԻԼՆԵՐ, ՀԵՂՈՒԿ կամ ՄԱԿ-ի նշագրման 3432 համարի ՊՈԼԻՔԼՈՐԻՆԱՅՎԱԾ ԲԻՖԵՆԻԼՆԵՐ, ՊԻՆԴ, 9-րդ դաս, (II), համարների ներքո:

3-րդ դասին պատկանող պրոպիլենիմինի խառնուրդը եւ 9-րդ դասին, (II), պատկանող պոլիքլորինացված բիֆենիլները (ՊՔՔ/PCB) պետք է ընդգրկվեն ՄԱԿ-ի նշագրման 1921 համարի ՊՐՈՊԻԼԵՆԻՄԻՆ, ՉՍՊՎԱԾ, 3-րդ դասի համարի ներքո:

#### 2.1.4. Նմուշների դասակարգումը

2.1.4.1. Երբ նյութի դասը սահմանված չէ եւ այն փոխադրվում է լրացուցիչ փորձարկման նպատակով, ապա դրան վերագրվում է ժամանակավոր դաս, բեռնառաքման ճշգրիտ անվանում եւ ՄԱԿ-ի նշագրման համար բեռնառաքողի՝ այդ նյութի մասին ունեցած գիտելիքների, ինչպես նաեւ հետեւյալի կիրառության հիման վրա՝

ա) 2.2 գլխի դասակարգման չափորոշիչներ, եւ

բ) սույն գլխի պահանջներ:

Ընտրված բեռնառաքման ճշգրիտ անվանման համար օգտագործվում է պահանջները խստագույնս բավարարող փաթեթավորման խումբը:

Այս դրույթի կիրառության դեպքում բեռնառաքման ճշգրիտ անվանմանը պետք է ավելացվի «ՆՄՈՒՇ» բառը (օրինակ՝ «ԴՅՈՒՐԱՎԱՌ ՀԵՂՈՒԿ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ, ՆՄՈՒՇ»): Որոշ դեպքերում, երբ նյութի նմուշին, որը համարվում է դասակարգման որոշակի չափորոշիչների համապատասխանող, տրվել է որոշակի բեռնառաքման ճշգրիտ անվանում (օրինակ՝ ԳԱՋԻ ՆՄՈՒՇ, ՃՆՇՄԱՆ ՏԱԿ ՉԳՏՆՎՈՂ, ԴՅՈՒՐԱՎԱՌ, ՄԱԿ-ի նշագրման 3167 համարի),

ապա օգտագործվում է տվյալ բեռնառաքման ճշգրիտ անվանումը: Երբ նմուշը փոխադրելու համար օգտագործվում է «ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ» դիրքը, ապա 3.3 գլխի 274-րդ հատուկ դրույթի համաձայն պահանջվող բեռնառաքման ճշգրիտ անվանման ավելացումը տեխնիկական անվանմանը պարտադիր չէ:

2.1.4.2. Նյութի նմուշները փոխադրվում են ժամանակավոր տրված բեռնառաքման ճշգրիտ անվանմանը ներկայացվող պահանջների համաձայն՝ պայմանով, որ՝

- ա) տվյալ նյութը չհամարվի մի նյութ, որի փոխադրումը չի թույլատրվում 2.2 գլխի 2.2.x.2 ենթաբաժինների կամ 3.2 գլխի համաձայն,
- բ) տվյալ նյութը չհամարվի 1-ին դասի չափորոշիչներին համապատասխանող կամ չհամարվի վարակիչ նյութ կամ ռադիոակտիվ նյութ,
- գ) տվյալ նյութը համապատասխանի 2.2.41.1.15-ի կամ 2.2.52.1.9-ի դրույթներին, եթե այն համապատասխանաբար ինքնառեակտիվ նյութ է կամ օրգանական պերօքսիդ,
- դ) նմուշը փոխադրվի համակցված փաթեթվածքով՝ յուրաքանչյուր փաթեթի զտաքաշը չգերազանցելով 2.5 կգ-ը, եւ
- ե) նմուշը փաթեթավորված չլինի այլ բեռների հետ միասին:

2.1.5. Դուրս գրված, դատարկ, չմաքրված փաթեթվածքների դասակարգումը

Դատարկ, չմաքրված փաթեթվածքները, խոշոր փաթեթվածքները կամ ՍՄԿ-ները կամ դրանց մասերը, որոնք փոխադրվում են աղբահեռացման, վերամշակման կամ դրանց նյութի կորզման նպատակով՝ բացառությամբ վերականգնման, վերանորոգման, ընթացիկ պահպանման, վերարտադրման կամ վերաօգտագործման դեպքերի, կարող են դասակարգվել ՄԱԿ-ի նշագրման 3509 համարին, եթե դրանք համապատասխանում են այդ դիրքի պահանջներին:

## ԳԼՈՒԽ 2.2

### ԴԱՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՏՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

2.2.1. Դաս 1 Պայթյունավտանգ նյութերը եւ պատրաստվածքները

2.2.1.1. Չափորոշիչները

2.2.1.1.1. 1-ին դասի վերնագրի տակ մտնում են՝

ա) պայթյունավտանգ նյութեր՝ պինդ կամ հեղուկ նյութեր (կամ նյութերի խառնուրդներ), որոնք քիմիական ռեակցիայի միջոցով կարող են գազեր առաջացնել այնպիսի ջերմաստիճանում եւ ճնշման պայմաններում ու այնպիսի արագությամբ, որը կարող է վնաս հասցնել շրջապատին:

Հրատեխնիկական նյութեր. նյութեր կամ խառնուրդներ, որոնք նախատեսված են ազդեցություն առաջացնելու համար՝ ջերմության, լույսի, ձայնի, գազի կամ ծխի կամ դրանց համադրության միջոցով՝ ինքնակարգավորվող, ջերմազատիչ քիմիական ռեակցիաների արդյունքում՝ առանց դետոնացման:

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1. Ինքնին պայթյունավտանգ չհամարվող, սակայն գազի, գոլորշու կամ փոշու պայթյունավտանգ խառնուրդ առաջացնելու հավանականություն ունեցող նյութերը չեն մտնում 1-ին դասի մեջ.*

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2. 1-ին դասի մեջ չեն մտնում նաեւ ջրում կամ ալկոհոլում խոնավացված այն պայթյունավտանգ նյութերը, որոնց մեջ ջրի կամ ալկոհոլի պարունակությունը գերազանցում է նշված սահմանաչափերը, եւ պլաստիկարար նյութեր պարունակող պայթյունավտանգ նյութերը (այս նյութերը դասակարգվում են 3-րդ դասում կամ 4.1 դասում), ինչպես նաեւ այն պայթյունավտանգ նյութերը, որոնք իրենց վտանգավորության հիմնական հատկանիշի հիման վրա դասակարգվում են 5.2 դասում:*

բ) պայթյունավտանգ պատրաստվածքներ. մեկ կամ մի քանի պայթյունավտանգ կամ հրատեխնիկական նյութեր պարունակող պատրաստվածքներ.

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. 1-ին դասի պահանջները չեն տարածվում այն սարքերի վրա, որոնցում պայթյունավտանգ կամ հրատեխնիկական նյութերի պարունակությունն այնպիսի աննշան քանակությամբ է, կամ դրանք այնպիսի բնույթ ունեն, որ դրանց ականա կամ պատահական բռնկումը կամ հարուցումը փոխադրման ընթացքում չի կարող առաջացնել փարերի տարածման, կրակի, ծխի, ջերմության կամ բարձր ձայնի*



*հետեւանքով սարքից դուրս տեղի ունեցող որեւէ դրսևորում:*

- զ) վերելում չնշված նյութեր եւ պատրաստվածքներ, որոնք արտադրվել են պայթեցմամբ պրակտիկ արդյունք ստանալու կամ հրատեխնիկական ազդեցություն առաջացնելու համար:

1-ին դասի նպատակներով կիրառվում է հետեւյալ սահմանումը՝

Զգայանվազեցված նյութ (կամ «զգայանվազիչ») նշանակում է այն նյութը, որն ավելացվել է պայթյունավտանգ նյութին՝ օգտագործման եւ փոխադրման ժամանակ դրա անվտանգությունը բարձրացնելու համար: Զգայանվազիչը պայթյունավտանգ նյութը դարձնում է ոչ զգայուն կամ քիչ զգայուն հետեւյալ գործողությունների նկատմամբ՝ ջերմություն, ցնցում, հարված, հրում կամ շփում: Տիպային զգայանվազեցնող նյութերից են մոմը, թուղթը, ջուրը, պոլիմերները (օրինակ՝ քլորաֆտորապոլիմերները), ալկոհոլը եւ յուղերը (օրինակ՝ վազելինային յուղը եւ պարաֆինը):

- 2.2.1.1.2. Պայթյունավտանգ հատկություններ ունեցող կամ ենթադրաբար ունեցող ցանկացած նյութ կամ պատրաստվածք ընդգրկվում է 1-ին դասում՝ «Փորձարկումների եւ չափորոշիչների ձեռնարկ»-ի I մասով սահմանված փորձարկումներին, ընթացակարգերին ու չափորոշիչներին համապատասխան:

1-ին դասում ընդգրկված նյութը կամ պատրաստվածքը կարող է ընդունվել փոխադրման միայն այն դեպքում, երբ դրան տրվել է 3.2 գլխի Ա աղյուսակում նշված որեւէ անվանում, կամ այն ընդգրկվել է այլ կերպ չնշված դիրքում եւ եթե համապատասխանում է «Փորձարկումների եւ չափորոշիչների ձեռնարկ»-ի չափորոշիչներին:

- 2.2.1.1.3. 1-ին դասի նյութերին եւ պատրաստվածքներին տրվում է ՄԱԿ-ի նշագրման համար եւ անվանում, կամ դրանք ընդգրկվում են «այլ կերպ չնշված» դիրքում, ինչպես նշված է 3.2 գլխի Ա աղյուսակում: 3.2 գլխի Ա աղյուսակում նշված նյութերի եւ պատրաստվածքների անվանումների մեկնաբանման համար հիմք է ընդունվում 2.2.1.4-ում ներկայացված բառարանը:

Նորահայտ կամ գոյություն ունեցող պայթյունավտանգ նյութերի կամ պատրաստվածքների նմուշները, որոնք փոխադրվում են փորձարկման, դասակարգման, գիտահետազոտական, որակի հսկման նպատակով կամ որպես առետրային նմուշներ, բացառությամբ հարուցիչ պայթյունավտանգ նյութերի, կարող են ընդգրկվել ՄԱԿ-ի նշագրման 0190 համարի ներքո՝ որպես ՊԱՅԹՅՈՒՆԱՎՏԱՆԳ ՆՄՈՒՇՆԵՐ:

3.2 գլխի Ա աղյուսակում այդպիսի անվանմամբ չնշված

պայթյունավտանգ նյութերը եւ պատրաստվածքները, ինչպես նաեւ որոշ նյութեր, որոնց փոխադրման համար անհրաժեշտ է իրավասու մարմնի հատուկ թույլտվությունը՝ 3.2 գլխի Ա աղյուսակի 6-րդ սյունակում նշված հատուկ դրույթներին համապատասխան, ընդգրկվում են «այլ կերպ չնշված» դիրքում կամ ՄԱԿ-ի նշագրման 0190 համարի ներքո՝ որպես ՊԱՅԹՅՈՒՆԱՎՏԱՆԳ ՆՄՈՒՇՆԵՐ ծագման երկրի իրավասու մարմնի կողմից: Այդ իրավասու մարմինը գրավոր հաստատում է նաեւ այդ նյութերի ու պատրաստվածքների փոխադրման պայմանները: Եթե ծագման երկիրը «ԱԴՌ» համաձայնագրի Պայմանավորվող կողմ չէ, ապա փոխադրվող նյութի դասը եւ փոխադրման պայմաններն ընդունվում են «ԱԴՌ» համաձայնագրի Պայմանավորվող կողմ հանդիսացող այն երկրի իրավասու մարմնի կողմից, որի տարածքով առաջինն է անցնում բեռը:

2.2.1.1.4. 1-ին դասի նյութերը եւ պատրաստվածքներն ընդգրկվում են որեւէ ենթադասում՝ 2.2.1.1.5-ին համապատասխան, եւ համատեղելիության որեւէ խմբում՝ 2.2.1.1.6-ին համապատասխան: Ենթադասում ընդգրկելու համար հիմք են ընդունվում 2.3.0-ում եւ 2.3.1-ում նկարագրված փորձարկումների արդյունքները՝ 2.2.1.1.5-ում նշված սահմանումների կիրառմամբ: Համատեղելիության խումբը որոշվում է 2.2.1.1.6-ում նշված սահմանումներին համապատասխան: Դասակարգման ծածկագիրը կազմվում է ենթադասի համարից եւ համատեղելիության խմբի տառից:

2.2.1.1.5. Ենթադասերի սահմանումը

Ենթադաս 1.1. Նյութեր եւ պատրաստվածքներ, որոնք ներկայացնում են զանգվածային պայթյունի վտանգ (զանգվածային պայթյունն այն պայթյունն է, որն ազդում է գրեթե ամբողջ բեռնվածությամբ, ըստ էության, ակնթարթորեն):

Ենթադաս 1.2. Նյութեր եւ պատրաստվածքներ, որոնք պրոյեկցիոն, սակայն ոչ զանգվածային վտանգ են ներկայացնում:

Ենթադաս 1.3. Նյութեր եւ պատրաստվածքներ, որոնք հրդեհի վտանգ են ներկայացնում եւ պայթյունի կամ ցրման (կամ երկուսը միասին) ոչ զգալի վտանգ, սակայն ոչ զանգվածային պայթյունի վտանգ՝

ա) այրում, որից առաջանում է զգալի քանակությամբ ճառագայթման ջերմություն, կամ

բ) որոնք բռնկվում են մեկը մյուսի ետեւից՝ առաջացնելով բռնկման կամ ցրման փոքր (կամ երկուսը միասին) ազդեցություններ:

Ենթադաս 1.4. Նյութեր եւ պատրաստվածքներ, որոնք փոխադրման

ընթացքում բռնկման կամ հարուցման դեպքում միայն թույլ վտանգ են ներկայացնում: Ազդեցությունները հիմնականում սահմանափակվում են փաթեթի սահմաններում, եւ չի ակնկալվում բավականին մեծ չափի ու տիրույթի հասնող մասերի ցրում: Արտաքին միջավայրից կրակը չպետք է առաջացնի փաթեթի գրեթե ամբողջ պարունակության ակնթարթային պայթյուն:

Ենթադաս 1.5. Շատ անզգայուն նյութեր, որոնք զանգվածային պայթյունի վտանգ են ներկայացնում, սակայն որոնց զգայունությունն այնքան ցածր է, որ շատ քիչ է դրանց հարուցման կամ այրումից դետոնացման անցնելու հավանականությունը փոխադրման բնականոն պայմաններում: Որպես նվազագույն պահանջ՝ դրանք չպետք է պայթեն արտաքին ազդակների նկատմամբ հրակայունության փորձարկման ժամանակ:

Ենթադաս 1.6. Չափազանց անզգայուն պատրաստվածքներ, որոնք զանգվածային պայթյունի վտանգ չեն ներկայացնում: Այդ պատրաստվածքները հիմնականում պարունակում են չափազանց անզգայուն նյութեր եւ բռնկման ու տարածման չնչին հավանականություն են ներկայացնում:

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. 1.6 ենթադասի պատրաստվածքներից առաջացող ռիսկը սահմանափակվում է մեկ պատրաստվածքի պայթյունով:*

2.2.1.1.6. Նյութերի եւ պատրաստվածքների համատեղելիության խմբերի սահմանումը

- A Առաջնային պայթյունավտանգ նյութեր
- B Առաջնային պայթյունավտանգ նյութեր եւ երկու կամ ավելի արդյունավետ ապահովիչ սարքավորումներ չպարունակող պատրաստվածքներ: Ներառվում են նաեւ այնպիսի պատրաստվածքներ, ինչպիսիք են պայթյուն առաջացնող դետոնատորները, պայթյուն առաջացնող դետոնատորների հավաքածուները եւ բռնկվող պատիճները, թեեւ դրանք չեն պարունակում առաջնային պայթյունավտանգ նյութեր:
- C Նետող պայթյունավտանգ նյութեր կամ այլ դեֆլագրացող պայթյունավտանգ նյութեր կամ այդպիսի պայթյունավտանգ նյութեր պարունակող պատրաստվածքներ:
- D Երկրորդային ճայթիչ պայթյունավտանգ նյութեր կամ ծխատու

վառող կամ երկրորդային ճայթիչ պայթյունավտանգ նյութեր պարունակող, սակայն առանց հարուցիչ միջոցների եւ նետվող լիցքերի պատրաստվածքներ կամ առաջնային պայթյունավտանգ նյութեր պարունակող եւ երկու կամ ավելի արդյունավետ ապահովիչ սարքավորումներ պարունակող պատրաստվածքներ:

- E Երկրորդային ճայթիչ պայթյունավտանգ նյութեր պարունակող պատրաստվածքներ՝ առանց հարուցիչ միջոցների, բայց նետվող լիցքերով (բացառությամբ դյուրավառ հեղուկ կամ դոնդող կամ հիպերգոլական դյուրավառ հեղուկներ պարունակող պատրաստվածքների):
- F Երկրորդային ճայթիչ պայթյունավտանգ նյութեր, ինչպես նաեւ հարուցիչ միջոցներ պարունակող պատրաստվածքներ՝ նետվող լիցքերով (բացառությամբ դյուրավառ հեղուկ կամ դոնդող կամ հիպերգոլական հեղուկներ պարունակող պատրաստվածքների) կամ առանց դրա:
- G Հրակիր նյութեր կամ հրակիր նյութեր պարունակող պատրաստվածքներ, ինչպես նաեւ պայթյունավտանգ նյութեր եւ լուսավորող, վառիչ, արցունքաբեր կամ ծխաբեր նյութեր պարունակող պատրաստվածքներ (բացի ջրակտիվացվող պատրաստվածքներից կամ սպիտակ ֆոսֆոր, ֆոսֆիդներ, հրակիր նյութեր, դյուրավառ հեղուկներ կամ դոնդող կամ հիպերգոլական հեղուկներ պարունակող պատրաստվածքներից):
- H Պայթյունավտանգ նյութեր եւ սպիտակ ֆոսֆոր պարունակող պատրաստվածքներ:
- J Պայթյունավտանգ նյութեր եւ դյուրավառ հեղուկ կամ դոնդող պարունակող պատրաստվածքներ:
- K Պայթյունավտանգ նյութեր եւ թունավոր քիմիական նյութեր պարունակող պատրաստվածքներ:
- L Հատուկ վտանգավորություն ունեցող պայթյունավտանգ նյութեր կամ պայթյունավտանգ նյութեր պարունակող պատրաստվածքներ (օրինակ՝ ջրակտիվացվող կամ հիպերգոլիական հեղուկներ, ֆոսֆիդներ կամ հրակիր նյութեր պարունակող պատրաստվածքներ), որոնք ցանկացած տեսակի մեկուսացում են պահանջում:
- N Պատրաստվածքներ, որոնք հիմնականում պարունակում են չափազանց անզգայուն նյութեր:
- S Նյութեր կամ պատրաստվածքներ՝ փաթեթավորված կամ

նախագծված այնպես, որ պատահական գործարկման դեպքում ցանկացած վտանգ սահմանափակվում է փաթեթով, եթե փաթեթը չի վնասվում կրակից, որի դեպքում պայթյունի կամ ցրման ազդեցությունները սահմանափակվում են եւ էապես չեն խոչընդոտում կամ խանգարում հակահրդեհային կամ վթարային արձագանքման մյուս աշխատանքներին՝ փաթեթի գտնվելու վայրին անմիջականորեն հարող տարածքում:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1.** Կոնկրետ փաթեթվածքում փաթեթավորված յուրաքանչյուր նյութ կամ պատրաստվածք կարող է ընդգրկվել միայն մեկ համարեղեղիության խմբում: Քանի որ համարեղեղիության «S» խմբի նկատմամբ կիրառվող չափորոշիչը հիմնված է փորձարկումների վրա, այդ խմբում ներգրավելու համար անհրաժեշտ է կատարել փորձարկումներ՝ դասակարգման ծածկագիր նշանակելու նպատակով:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2.** Համարեղեղիության «D» ու «E» խմբերի պատրաստվածքները կարող են տեղավորվել կամ փաթեթավորվել իրենց հարուցիչ միջոցների հետ մեկտեղ՝ պայմանով, որ այդ միջոցներն ապահովված լինեն առնվազն երկու արդյունավետ ապահովիչ սարքավորումներով, որոնք նախատեսված են հարուցիչ միջոցների պատահական գործարկման դեպքում պայթյունը կանխելու համար: Այդպիսի պատրաստվածքներն ու փաթեթներն ընդգրկվում են համարեղեղիության «D» կամ «E» խմբերում:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3.** Համարեղեղիության «D» ու «E» խմբերի պատրաստվածքները կարող են փաթեթավորվել երկու արդյունավետ ապահովիչ սարքավորումներ (այն է համարեղեղիության «B» խմբին պատկանող հարուցիչ միջոցներ) չպարունակող իրենց հարուցիչ միջոցների հետ մեկտեղ՝ պայմանով, որ դրանք համապատասխանում են 4.1.10-ի խառը փաթեթավորման մասին MP21 դրույթին: Այդպիսի փաթեթներն ընդգրկվում են համարեղեղիության «D» կամ «E» խմբերում:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 4.** Պատրաստվածքները կարող են տեղավորվել կամ փաթեթավորվել իրենց բռնկման միջոցների հետ մեկտեղ՝ պայմանով, որ բռնկման միջոցները չեն կարող գործարկվել փոխադրման բնականոն պայմաններում:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 5.** Համարեղեղիության «C», «D» եւ «E» խմբերում ընդգրկված պատրաստվածքները կարող են միասին փաթեթավորվել: Այդպիսի փաթեթներն ընդգրկվում են համարեղեղիության «E» խմբում:

2.2.1.1.7. Հրավառության միջոցների դասակարգումը վտանգավորության ենթադասերում

2.2.1.1.7.1. Հրավառության միջոցները սովորաբար դասակարգվում են 1.1, 1.2, 1.3 եւ 1.4 վտանգավորության ենթադասերում՝ «Փորձարկումների եւ չափորոշիչների ձեռնարկ»-ի 6-րդ շարքի փորձարկումների արդյունքում ստացված տվյալների հիման վրա:

Այնուամենայնիվ՝

ա) «Փորձարկումների եւ չափորոշիչների ձեռնարկ»-ի 7-րդ հավելվածում նշված HSL տեսակի բռնկվող միացության փորձարկումներում դրական արդյունք ունեցող հրավառության միջոցները դասակարգվում են որպես 1.1G՝ անկախ փորձարկման 6-րդ շարքի արդյունքներից.

բ) քանի որ այդպիսի պատրաստվածքների անվանացանկը չափազանց ընդարձակ է, իսկ փորձարկումների համար նախատեսված միջոցները սահմանափակ են, դրանց դասակարգումը վտանգավորության ենթադասերում կարող է կատարվել նաեւ 2.2.1.1.7.2-ում նշված ընթացակարգին համապատասխան:

2.2.1.1.7.2. Հրավառության միջոցները, առանց 6-րդ շարքի փորձարկումների անհրաժեշտության, կարող են համարակալվել ՄԱԿ-ի նշագրման 0333, 0334, 0335 եւ 0336 համարներով անալոգիայի սկզբունքով՝ 2.2.1.1.7.5-ում նշված՝ հրավառության միջոցների ստանդարտ դասակարգման աղյուսակին համապատասխան: Այդպիսի համարակալումը կատարվում է իրավասու մարմնի համաձայնությամբ: Աղյուսակում չնշված տարրերը դասակարգվում են 6-րդ շարքի փորձարկումների արդյունքում ստացված տվյալների հիման վրա:

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1. 2.2.1.1.7.5-ում նշված աղյուսակի 1-ին սյունակում այլ տեսակի հրավառության միջոցների ավելացումը պետք է կատարվի միայն լիարժեք փորձարկման արդյունքում ստացված տվյալների հիման վրա, որոնք պետք է ներկայացվեն ՄԱԿ-ի՝ վրանգավոր բեռների փոխադրման հարցերով փորձագետների ենթակոմիտեի ուսումնասիրությանը:*

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2. 2.2.1.1.7.5-ում նշված աղյուսակի 4-րդ սյունակում նշված հրավառության միջոցները 5-րդ սյունակի վրանգավորության ենթադասերում ընդգրկելը հաստատող կամ մերժող իրավասու մարմիններից ստացված փորձարկման արդյունքները պետք է ներկայացվեն ՄԱԿ-ի՝ վրանգավոր բեռների փոխադրման հարցերով փորձագետների ենթակոմիտեի ուսումնասիրությանը:*

2.2.1.1.7.3. Եթե վտանգավորության ավելի քան մեկ ենթադասում ընդգրկված հրավառության միջոցները փաթեթավորվում են միեւնույն փաթեթում, ապա դրանք դասակարգվում են վտանգավորության

ամենաբարձր աստիճան ունեցող ենթադասում, եթե 6-րդ շարքի փորձարկումների արդյունքում ստացված տվյալներն այլ բան չեն վկայում:

2.2.1.1.7.4. 2.2.1.1.7.5 աղյուսակում նշված դասակարգումը կիրառվում է միայն փայտաթելքային սալից արկղերում փաթեթավորված պատրաստվածքների նկատմամբ (4G):

2.2.1.1.7.5. Հրավառության միջոցների ստանդարտ դասակարգման աղյուսակ<sup>1</sup>

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1.** Աղյուսակում ներառված տոկոսները, եթե այլ բան նշված չէ, վերաբերում են հրատեխնիկական բոլոր նյութերի զանգվածին (օրինակ՝ հրթիռային շարժիչներ, արտամղիչ լիցքեր, պայթուցիկ լիցքեր եւ համապատասխան արդյունք ստանալու համար գործարկվող լիցքեր):

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2.** Այս աղյուսակում «բռնկվող միացություն» արտահայտությունը վերաբերում է փոշենման հրատեխնիկական նյութերին կամ հրավառության միջոցում գործածվող հրատեխնիկական արտադրանքին, որոնք օգտագործվում են լսողական ազդեցություն ստեղծելու համար կամ որպես պայթուցիկ լիցքեր կամ նեփող լիցք, եթե «Փորձարկումների եւ չափորոշիչների ձեռնարկ»-ի 7-րդ հավելվածում նշված HSL տեսակի բռնկվող միացության փորձարկումների արդյունքում պարզվել է, որ 0,5 գ հրատեխնիկական նյութի դեպքում ճնշման բարձրացման համար պահանջվող ժամանակը չի գերազանցում 6մվ-ը:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3.** Միլիմետրերով արտահայտված չափսերը վերաբերում են՝

- բարձրության վրա գործարկվող գնդաձեւ եւ ձվաձեւ գնդերի դեպքում՝ գնդի սֆերայի տրամագիծը.
- բարձրության վրա գործարկվող գլանաձեւ գնդերի դեպքում՝ գնդի երկարությունը.
- գնդի եւ հրասանդի կոմպլեկտի, հոռմեական մոմերի, միալիցք գլանով հրավառության միջոցի կամ ականիկների դեպքում՝ հրավառության միջոցներ պարունակող գլանի ներքին տրամագիծը.
- պարկաձեւ կամ գլանաձեւ ականիկների դեպքում՝ ականիկ պարունակելու համար նախատեսված հրասանդի ներքին տրամագիծը:

---

<sup>1</sup> Այս աղյուսակում ներառված է հրավառության միջոցների դասակարգումների ցանկը, որը կարող է օգտագործվել 6-րդ շարքի փորձարկումների արդյունքում ստացված տվյալների բացակայության դեպքում (տե՛ս 2.2.1.1.7.2):





Տեսակը	Ներառյալ/հոմանիշ	Սահմանումը	Մասնագիրը	Դասակարգումը
Գունդ՝ գնդաձեռ կամ գլանաձեռ	Ցուցադրական միջոցառումների համար նախատեսված գնդաձեռ գնդեր՝ օդում գործարկվող գնդեր, գունավոր գնդեր, գունավոր լույսեր, բազմապայթյուն գնդեր, բազմաէֆեկտ գնդեր, ջրային հրավառության գնդեր, պարաշյուտ-հրավառություն, ծխաբեր գնդեր, լուսարձակ գնդեր, պայթյունի ձայն առաջացնող գունդ, ձայնային հրթիռներ, հրավառություն, ձայնային էֆեկտով գնդեր, ամպրոպի ճայթյուն, օդում գործարկվող գնդերի հավաքածու	Սարք՝ նետող լիցքով կամ առանց դրա, դանդաղ գործողության քուղով եւ պայթուցիկ լիցքերով, հրատեխնիկական տարրով (տարրերով) կամ ցրվող հրատեխնիկական նյութերով, որը նախատեսված է հրասանդից պայթելու համար	Պայթյունի ձայն առաջացնող բոլոր գնդերը	1.1G
			Գունավոր գունդ՝ $\geq 180$ մմ	1.1G
			Գունավոր գունդ՝ $< 180$ մմ $> 25\%$ բռնկվող միացությամբ՝ որպես ցրվող վառող եւ (կամ) պայթյունի ձայնի էֆեկտներ	1.1G
			Գունավոր գունդ՝ $< 180$ մմ $\leq 25\%$ բռնկվող միացությամբ՝ որպես ցրվող վառող եւ (կամ) պայթյունի ձայնի էֆեկտներ	1.3G
			Գունավոր գունդ՝ $\leq 50$ մմ կամ $\leq 60$ գ հրատեխնիկական նյութ՝ $\leq 2\%$ բռնկվող միացությամբ՝ որպես ցրվող վառող եւ (կամ) պայթյունի ձայնի էֆեկտներ	1.4G
Բարձրության վրա գործարկվող ձվաձեռ գնդեր	Սարք՝ օդում գործարկվող միեւնույն փաթեթում գտնվող երկու կամ ավելի գնդաձեռ գնդերով, որոնք պայթում են դանդաղ գործարկման առանձին արտաքին քուղեր ունեցող միեւնույն նետող լիցքից	Դասակարգման համար հիմք է ծառայում օդում գործարկվող ամենավտանգավոր գնդաձեռ գունդը		
Լիցքավորված հրասանդ, գնդի եւ հրասանդի կոմպլեկտ	Գնդաձեռ կամ գլանաձեռ գնդի եւ հրասանդի հավաքածու, որից նախատեսված է գնդի պայթյունը		Պայթյունի ձայն առաջացնող բոլոր գնդերը	1.1G
			Գունավոր գունդ՝ $\geq 180$	1.1G
			Գունավոր գունդ՝ $> 25\%$ բռնկվող միացությամբ՝ որպես ցրվող վառող եւ (կամ) պայթյունի ձայնի էֆեկտներ	1.1G
			Գունավոր գունդ՝ $> 50$ մմ եւ $< 180$ մմ	1.2G
			Գունավոր գունդ՝ $\leq 50$ մմ, կամ $\leq 60$ գ հրատեխնիկական նյութ՝ $\leq 25\%$ բռնկվող միացությամբ՝ որպես ցրվող վառող եւ (կամ) պայթյունի ձայնի էֆեկտներ	1.3G

Տեսակը	Ներառյալ/հոմանիշ	Սահմանումը	Մասնագիրը	Դասակարգումը
Գունդ՝ գնդաձեռ կամ գլանաձեռ (շարունակելի)	Գնդեր պարունակող գունդ (գնդաձեռ)  (Գնդեր պարունակող գնդերի դեպքում նշված տոկոսային հարաբերությունը հաշվարկված է հրավառության միջոցի անզուտ (բրուտո) քաշի նկատմամբ)	Սարք՝ առանց նետողական լիցքի դանդաղ գործարկման քուղով եւ պայթուցիկ լիցքով, պայթյունի ձայն արձակող գնդիկների եւ չեզոք նյութերի պարունակությամբ, որը նախատեսված է հրասանդից պայթելու համար	> 120 մմ	1.1G
		Սարք՝ առանց նետողական լիցքի դանդաղ գործարկման քուղով եւ պայթուցիկ լիցքով՝ պայթյունի ձայն առաջացնող գնդիկների պարունակությամբ, յուրաքանչյուր պայթյունի ձայն առաջացնող միավորի համար՝ < 25գ բռնկվող միացությամբ, < 33% բռնկվող միացությամբ եւ > 60% չեզոք նյութերով, որը նախատեսված է հրասանդից պայթելու համար	≤ 120 մմ	1.3G
		Սարք՝ առանց նետողական լիցքի, դանդաղ գործարկման քուղով եւ պայթուցիկ լիցքով, գունավոր գնդիկների եւ (կամ) հրատեխնիկական նյութերի պարունակությամբ՝ նախատեսված հրասանդից պայթելու համար	> 300 մմ	1.1G
		Սարք՝ առանց նետողական լիցքի, դանդաղ գործարկման քուղով եւ պայթուցիկ լիցքով, < 70մմ գունավոր գնդիկների եւ (կամ) հրատեխնիկական նյութերի պարունակությամբ, < 25% բռնկվող միացությամբ եւ < 60% հրատեխնիկական նյութով՝ նախատեսված հրասանդից պայթելու համար	> 200 մմ եւ ≤ 300 մմ	1.3G
		Սարք՝ նետողական լիցքով, դանդաղ գործարկման քուղով եւ պայթուցիկ լիցքով, < 70մմ գունավոր գնդիկների եւ (կամ) հրատեխնիկական նյութերի պարունակությամբ, < 25% բռնկվող միացությամբ եւ < 60% հրատեխնիկական նյութով՝ նախատեսված	≤ 200 մմ	1.3G

Տեսակը	Ներառյալ/հոմանիշ	Սահմանումը	Մասնագիրը	Դասակարգումը
		հրասանդից պայթելու համար		
Հրավառության միջոցների մարտկոցներ	Կրակապատվար, ումբիկներ, տորթիկներ, եզրափակիչ փունջ, ծաղկամահիճ, հիբրիդ, բազմազանակներ, գնդիկավոր տորթիկներ, պայթակ- մարտկոցներ, լուսարձակող պայթակ- մարտկոցներ	Միեւնույն կամ տարբեր տեսակների մի քանի այնպիսի տարրերից կազմված հավաքածու, որոնցից յուրաքանչյուրը համապատասխանում է սույն աղյուսակում թվարկված հրավառության միջոցների տեսակներից որեւէ մեկին՝ բռնկման մեկ կամ մի քանի ծայրով	Դասակարգման համար հիմք է ծառայում հրավառության ամենավտանգավոր տեսակը	
Հռոմեական մոմ	Փառատոնային մոմեր, մոմեր, գիսաստղիկներ	Գլան, որը պարունակում է տարբեր հրատեխնիկական նյութերից բաղկացած մի քանի հրատեխնիկական արտադրանք, նետողական լիցք ու փոխանցման քուղ	$\geq 50$ մմ ներքին տրամագիծ՝ բռնկվող միացությամբ կամ $< 50$ մմ $> 25\%$ բռնկվող միացությամբ	1.1G
			$\geq 50$ մմ ներքին տրամագիծ՝ առանց բռնկվող միացության	1.2G
			$< 50$ մմ ներքին տրամագիծ եւ $\leq 25\%$ բռնկվող միացություն	1.3G
			$\leq 30$ մմ ներքին տրամագիծ, հրատեխնիկական յուրաքանչյուր արտադրանք $\leq 25$ գ եւ $\leq 5\%$ բռնկվող միացություն	1.4G
Միալիցք գլանակ	Միալիցք հռոմեական մոմ, լիցքավորված փոքր հրասանդ	Գլան, որը պարունակում է հրատեխնիկական նյութից բաղկացած հրատեխնիկական արտադրանք, նետողական լիցք՝ փոխանցման քուղով կամ առանց դրա	$\leq 30$ մմ ներքին տրամագիծ եւ հրատեխնիկական արտադրանք $> 25$ գ, կամ $> 5\%$ ու $\leq 25\%$ բռնկվող միացություն	1.3G
			$\leq 30$ մմ ներքին տրամագիծ եւ հրատեխնիկական արտադրանք $\leq 25$ գ եւ $\leq 5\%$ բռնկվող միացություն	1.4G
Հրթիռ	Ձայնային հրթիռ, ազդանշանային հրթիռ, սուլող հրթիռ, շշածեւ հրթիռ, երկնային հրթիռ, նետողական	Հրատեխնիկական նյութ եւ (կամ) արտադրանք պարունակող գլանակ՝ թռիչքը ստաբիլիզացնող ձողով (ձողերով) կամ այլ միջոցով, որը	Միայն բռնկվող միացության էֆեկտներ	1.1G
			Հրատեխնիկական նյութի $> 25\%$ բռնկվող միացություն	1.1G

Տեսակը	Ներառյալ/հոմանիշ	Սահմանումը	Մասնագիրը	Դասակարգումը
	տեսակի հրթիռ, սեղանի հրթիռ	նախատեսված է դեպի երկինք նետվելու համար	> 20 գ հրատեխնիկական նյութ եւ բռնկվող միացություն ≤ 25%	1.3G
			≤ 20 գ հրատեխնիկական նյութ, ծխատու վառողով պայթուցիկ լիցք եւ ≤ 0.13 գ բռնկվող միացություն՝ յուրաքանչյուր եւ ≤ 1 գ՝ ամբողջական պայթյունի ձայնի համար	1.4G
Ականիկ	«Pot-a-feu», վերգետնյա ականիկ, փափուկ պատյանով ականիկ, գլանաձեւ ականիկ	Նետողական լիցքեր եւ հրատեխնիկական արտադրանք պարունակող գլանակ՝ գետնին տեղադրելու կամ գետնին ամրացնելու համար: Հիմնական էֆեկտը մեկ պայթյունով հրատեխնիկական բոլոր արտադրանքների արտամղումն է՝ օդում լայնորեն տարածվող տեսողական ու (կամ) լսողական էֆեկտ առաջացնելու համար, կամ գործվածքից կամ թղթից գլան, որը պարունակում է նետողական լիցք եւ հրատեխնիկական արտադրանք՝ նախատեսված հրասանդում տեղավորելու եւ որպես ականիկ գործարկվելու համար	> 25% բռնկվող միացություն՝ որպես սորուն փոշի եւ (կամ) պայթյունի ձայնի էֆեկտներ	1.1G
			≥ 180 մմ եւ ≤ 25% բռնկվող միացություն՝ որպես սորուն փոշի եւ (կամ) պայթյունի ձայնի էֆեկտներ	1.1G
			< 180 մմ եւ ≤ 25% բռնկվող միացություն՝ որպես սորուն փոշի եւ (կամ) պայթյունի ձայնի էֆեկտներ	1.3G
			≤ 150 գ հրատեխնիկական նյութ՝ ≤ 5% սորուն փոշու տեսքով բռնկվող միացության եւ (կամ) պայթյունի ձայնի էֆեկտների պարունակությամբ. յուրաքանչյուր հրատեխնիկական արտադրանք ≤ 25 գ, պայթյունի ձայնի յուրաքանչյուր էֆեկտ < 2 գ. յուրաքանչյուր սուլոց առկայության դեպքում ≤ 3 գ	1.4G
Շատրվան	Հրաբուխ, խրձաձեւ հրավառության միջոցներ, նիզակներ, բենգալյան կրակ, ջրվեժ, գլանաձեւ շատրվաններ, կոնաձեւ շատրվաններ, լուսավորող լապտերիկ	Ոչ մետաղյա պատյան՝ կայծեր ու բոցեր առաջացնող սեղմված կամ համախմբված հրատեխնիկական նյութերի պարունակությամբ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Շատրվանները, որոնք նախատեսված են ուղղահայաց սանդղաջրվեժ կամ կայծերի վարագույր ստանալու համար, հանդիսանում են ջրվեժներ (տե՛ս ներքեւի տողը):	≥ 1 կգ հրատեխնիկական նյութ	1.3G
			< 1 կգ հրատեխնիկական նյութ	1.4G

Տեսակը	Ներառյալ/հոմանիշ	Սահմանումը	Մասնագիրը	Դասակարգումը
Ջրվեժներ	Սանդղաջրվեժներ, ցնցուղներ	Հրատեխնիկական շատրվան, որը նախատեսված է ուղղահայաց սանդղաջրվեժ կամ կայծերի վարագույր ստանալու համար	Պարունակում է հրատեխնիկական նյութ, որը «Փորձարկումների եւ չափորոշիչների ձեռնարկ»-ի 7-րդ հավելվածում նշված HSL տեսակի բռնկվող միացության փորձարկումներում ունենում է դրական արդյունք՝ անկախ 6-րդ շարքի փորձարկումների արդյունքներից (տե՛ս 2.2.1.1.7.1 (ա))	1.1G
			Պարունակում է հրատեխնիկական նյութ, որը «Փորձարկումների եւ չափորոշիչների ձեռնարկ»-ի 7-րդ հավելվածում նշված HSL տեսակի բռնկվող միացության փորձարկումներում ունենում է բացասական արդյունք	1.3G
Բռնկիչ	Շարժական բռնկիչներ, ոչ շարժական բռնկիչներ, մետաղալարով բռնկիչներ	Ամուր մետաղալար՝ մասամբ (մեկ ծայրի երկայնքով) պատված դանդաղ այրվող հրատեխնիկական նյութով, որ կարող է բռնկիչ ունենալ կամ չունենալ	Պերքլորատի հիմքով բոցավառիչներ՝ > 5գ՝ յուրաքանչյուր արտադրանքի համար, կամ > 10 արտադրանք մեկ փաթեթում	1.3G
			Պերքլորատի հիմքով բոցավառիչներ՝ ≤ 5 գ՝ յուրաքանչյուր արտադրանքի համար, եւ ≤ 10 արտադրանք՝ մեկ փաթեթում.  Նիտրատի հիմքով բոցավառիչներ՝ ≤ 30 գ՝ յուրաքանչյուր արտադրանքի համար	1.4G
Բենգալյան ձողիկ	Բենգալյան կրակ	Ոչ մետաղյա ձողիկ՝ մասամբ (մեկ ծայրի երկայնքով) պատված դանդաղ այրվող հրատեխնիկական նյութով եւ նախատեսված՝ ձեռքում պահելու համար	Պերքլորատի հիմքով արտադրանք՝ > 5 գ՝ յուրաքանչյուր արտադրանքի համար, կամ > 10 արտադրանք մեկ փաթեթում	1.3 G
			Պերքլորատի հիմքով արտադրանք՝ ≤ 5 գ՝ յուրաքանչյուր արտադրանքի համար, եւ ≤ 10 արտադրանք մեկ փաթեթում. Նիտրատի հիմքով արտադրանք՝ ≤ 30 գ՝ յուրաքանչյուր	1.4G

Տեսակը	Ներառյալ/հոմանիշ	Սահմանումը	Մասնագիրը	Դասակարգումը
			արտադրանքի համար	
Վտանգավորության ցածր աստիճանի հրավառության միջոցներ եւ նորարար միջոցներ	Սեղանի ումիկներ, շառաչող սիսեռներ, փայլփլող հատիկներ, ծխարձակներ, մառախուղ, լուսատուփներ, օձեր, ճչանակներ, շրխկաններ	Չափազանց սահմանափակ տեսողական եւ (կամ) լսողական էֆեկտ առաջացնելու համար նախատեսված սարք, որը պարունակում է քիչ քանակությամբ հրատեխնիկական ու (կամ) պայթուցիկ միացություններ	Ճչանակները եւ շառաչող սիսեռները կարող են պարունակել մինչեւ 1.6 մգ արծաթի ֆուլմինատ, շառաչող սիսեռները եւ տոնական կոնֆետի արձակող սարքերը կարող են պարունակել մինչեւ 16 մգ կալիումի քլորատի եւ կարմիր ֆոսֆորային խառնուրդ, մյուս միջոցները կարող են պարունակել մինչեւ 5 գ հրատեխնիկական նյութ, բայց ոչ բռնկվող միացություն	1.4G
Պտտիկ	Օդային պտտիկ, ուղղաթիռ, կործանիչ, գետնին գործարկվող պտտաններ	Ոչ մետաղական գլան կամ գլաններ, որոնք պարունակում են գազ կամ բոց արձակող հրատեխնիկական նյութ՝ աղմուկ առաջացնող միացությամբ կամ առանց դրա, եւ որոնք ունեն կամ չունեն կցված թելիկներ	Յուրաքանչյուր իրի համար հրատեխնիկական նյութը > 20գ, որը պարունակում է ≤ 3% բռնկվող միացություն՝ որպես պայթյունի ձայնի էֆեկտներ կամ սուլող միացություն՝ ≤ 5 գ	1.3G
			Յուրաքանչյուր իրի համար հրատեխնիկական նյութը ≤ 20գ, որը պարունակում է ≤ 3% բռնկվող միացություն՝ որպես պայթյունի ձայնի էֆեկտներ կամ սուլող միացություն՝ ≤ 5 գ	1.4G
Անիվներ	Քեթրին անիվներ, Սաքսոնյան անիվներ	Հրատեխնիկական նյութ պարունակող հավաքածու, ներառյալ այնպիսի նետող սարքեր, որը կարելի է ամրացնել առանցքին, որպեսզի այն պտտվելու հնարավորություն ունենա	≥ 1 կգ ընդհանուր հրատեխնիկական նյութ՝ առանց պայթյունի ձայնի էֆեկտի, յուրաքանչյուր սուլոց (առկայության դեպքում) ≤ 25 եւ յուրաքանչյուր անիվի համար՝ ≤ 50 գ սուլող միացություն	1.3G
			< 1 կգ ընդհանուր հրատեխնիկական նյութ՝ առանց պայթյունի ձայնի էֆեկտի, յուրաքանչյուր սուլոցը (առկայության դեպքում) ≤ 5 եւ յուրաքանչյուր անիվի համար՝ ≤ 10 գ սուլող միացություն	1.4G

Տեսակը	Ներառյալ/հոմանիշ	Սահմանումը	Մասնագիրը	Դասակարգումը
Օդային անիվ	Թռչող Սաքոն, ՉԹՕ-ներ, թռչող ափսե	Նետողական լիցքեր ու կայծեր, հուր եւ (կամ) աղմուկ առաջացնող հրատեխնիկական նյութեր պարունակող գլաններ, որոնք ամրացվում են պահող օղակի վրա	> 200գ ընդհանուր հրատեխնիկական նյութ կամ յուրաքանչյուր նետող սարքի համար՝ > 60 գ հրատեխնիկական նյութ, ≤ 3% բռնկվող միացություն՝ որպես պայթյունի ծայնի էֆեկտներ, յուրաքանչյուր սուլոց (առկայության դեպքում) ≤ 25 գ եւ յուրաքանչյուր անիվի համար ≤ 50 գ սուլող միացություն	1.3G
			≤ 200գ ընդհանուր հրատեխնիկական նյութ կամ յուրաքանչյուր նետող սարքի համար՝ ≤ 60 գ հրատեխնիկական նյութ, ≤ 3% բռնկվող միացություն՝ որպես պայթյունի ծայնի էֆեկտներ, յուրաքանչյուր սուլոցը (առկայության դեպքում) ≤ 5 գ եւ յուրաքանչյուր անիվի համար ≤ 10 գ սուլող միացություն	1.4G
Հրավառության միջոցների ընտրանի	Ընտրանի՝ զանգվածային միջոցառումների համար, ընտրանի՝ անհատական (բակում կամ փակ տարածքում) օգտագործման համար, տեսականի	Սույն աղյուսակում թվարկված հրավառության միջոցների տեսակներին համապատասխանող՝ մեկից ավելի տեսակներ ընդգրկող փաթեթ	Դասակարգման համար հիմք է ծառայում ամենավտանգավոր հրավառության միջոցի տեսակը	
Պայթակ	Տոնական պայթակ, տոնական գլանակաձեւ պայթակ, գնդացի-պայթակ	Գլանների հավաքածու (թղթյա կամ ստվարաթղթե)՝ միացված մեկ հրատեխնիկական քուղով, որոնցից յուրաքանչյուրը նախատեսված է լսողական էֆեկտ առաջացնելու համար	Յուրաքանչյուր գլանակի համար՝ ≤ 140 մգ բռնկվող միացություն կամ ≤ 1 գ ծխատու վառող	1.4G
Պատրույգով պայթակ	Ձայնարձակ պայթակ (սալյուտ), լուսարձակող պայթակ, վզնոցաձեւ պայթակ (մեկ լարին ամրացված փոքր պայթակների շարան)	Ոչ մետաղյա գլան, որը պարունակում է պայթյունի ձայն առաջացնող միացություն՝ լսողական էֆեկտ առաջացնելու համար	> 2 գ բռնկվող միացություն՝ յուրաքանչյուր առարկայի համար	1.1G

Տեսակը	Ներառյալ/հոմանիշ	Սահմանումը	Մասնագիրը	Դասակարգումը
			<p>≤ 2 գ բռնկվող միացություն՝ յուրաքանչյուր առարկայի համար, եւ ≤ 10 գ՝ յուրաքանչյուր ներքին փաթեթվածքի համար</p>	1.3G
			<p>≤ 1 գ բռնկվող միացություն՝ յուրաքանչյուր առարկայի համար, եւ ≤ 10 գ՝ յուրաքանչյուր ներքին փաթեթվածքի համար, կամ ≤ 10գ ծխատու վառող՝ յուրաքանչյուր առարկայի համար</p>	1.4G



2.2.1.1.8. Բացառում 1-ին դասից

2.2.1.1.8.1. Փորձարկումների արդյունքների համաձայն պատրաստվածքը կամ նյութը կարող է հանվել 1-ին դասից եւ 1-ին դասի սահմանումից «ԱԴՌ» ցանկացած այն Պայմանավորվող կողմի իրավասու մարմնի թույլտվությամբ, որը կարող է նաեւ ճանաչել «ԱԴՌ»-ի Պայմանավորվող կողմ չհանդիսացող երկրի իրավասու մարմնի կողմից տրված թույլտվությունը, եթե այդ թույլտվությունը տրվել է «ՌԻԴ»-ի, «ԱԴՌ»-ի, «ԱԲԿ»-ի, «ՎԲՄԾ» կանոնագրքի կամ «ԻԿԱՕ»-ի տեխնիկական ցուցումների համաձայն կիրառվող ընթացակարգերին համապատասխան:

2.2.1.1.8.2. Իրավասու մարմնի թույլտվությամբ, 2.2.1.1.8.1-ի համաձայն, պատրաստվածքը կարող է հանվել 1-ին դասից, եթե երեք չփաթեթավորված պատրաստվածք, որոնցից յուրաքանչյուրն առանձին ակտիվանում է իր սեփական հարուցիչ կամ բռնկման միջոցներով կամ արտաքին միջոցներով՝ նախատեսված կերպով աշխատելու համար, համապատասխանում է հետեւյալ չափորոշիչներին՝

ա) ոչ մի արտաքին մակերեսի ջերմաստիճան չպետք է գերազանցի  $65^{\circ}\text{C}$ -ը: Ընդունելի է ջերմաստիճանի ակնթարթային կտրուկ աճ մինչեւ  $200^{\circ}\text{C}$ .

բ) ոչ մի արտաքին պատվածքի ճեղքում կամ մասնատվածություն կամ պատրաստվածքի կամ դրա բաղադրամասի՝ որեւէ ուղղությամբ 1 մետրից ավելի տեղաշարժի բացակայություն.

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Եթե արտաքին հրդեհի դեպքում կարող է վնասվել պատրաստվածքի ամբողջականությունը, այդ չափորոշիչը պետք է ուսումնասիրել հրակայունության փորձարկմամբ, ինչպես օրինակ ISO 12097-3 ստանդարտում նկարագրված դեպքում:*

գ) մեկ մետր հեռավորության վրա  $135^{\circ}\text{C}$  առավելագույն շեմը գերազանցող ձայնային ազդակի բացակայություն.

դ) բռնկման կամ կրակի այնպիսի քանակությունների բացակայություն, որոնք ունեն այնպիսի նյութի կրակատարության հատկություն, ինչպիսին է  $80 \pm 10$  գ/մ<sup>2</sup> թղթի կտորը պատրաստվածքի հետ շփվելիս, եւ

ե) ծխի, գոլորշու կամ փոշու բացակայություն այնպիսի քանակություններով, որոնց դեպքում ավելցուկային ճնշումն արտանետելու համապատասխան չափսերի անցքերով կահավորված մեկ խորանարդ մետր տարողությամբ խցիկում տեսանելիությունը կրճատվում է 50%-ից ավելի՝ համաձայն

խցիկի հակադիր պատի կենտրոնում գտնվող լույսի հաստատուն աղբյուրից մեկ մետր հեռավորության վրա տեղադրված ստուգաճշտված լուսա(լյուքսա)չափի կամ ճառագայթաչափի չափումների: Կարելի է օգտվել ISO 5659-1 ստանդարտի օպտիկական խտության փորձարկումների վերաբերյալ ընդհանուր ուղեցույցից եւ ISO 5659-2 ստանդարտի 7.5 բաժնում նկարագրված լուսաչափական համակարգի վերաբերյալ ընդհանուր ուղեցույցից, կամ կարող են կիրառվել նաեւ նույն նպատակն իրագործելու համար նախատեսված օպտիկական խտությունը չափելու համանման մեթոդներ: Պետք է օգտագործել լուսաչափի հետին եւ կողային հատվածները ծածկող համապատասխան պատյան՝ աղբյուրից ուղղակիորեն արձակվող ցրված կամ ծորանցած լույսի ազդեցությունը նվազեցնելու համար:

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՈՒՆ 1. Եթե (ա), (բ), (գ) եւ (դ) կետերում նշված չափորոշիչներին ուղղված փորձարկումների ժամանակ չի նկատվում կամ շատ քիչ է նկատվում ծուխ, կարելի է հրաժարվել (ե) կետում նկարագրված փորձարկումից:*

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2. 2.2.1.1.8.1-ում նշված իրավասու մարմինը կարող է պահանջել փորձարկում փաթեթավորված տեսքով, եթե որոշվում է, որ փաթեթավորված վիճակում պատրաստվածքը կարող է առաջացնել ավելի մեծ ռիսկ փոխադրման համար:*

- 2.2.1.1.9. Դասակարգման փաստաթղթերը
- 2.2.1.1.9.1. Պատրաստվածքը կամ նյութը 1-ին դասին դասակարգող իրավասու մարմինը գրավոր հաստատում է այդ դասակարգումը հայտատուի հետ:
- 2.2.1.1.9.2. Իրավասու մարմնի դասակարգման փաստաթուղթը կարող է ունենալ ցանկացած ձեւ եւ կարող է բաղկացած լինել 1-ից ավելի էջերից՝ պայմանով, որ էջերը լինեն հերթականությամբ համարակալված: Փաստաթուղթը պետք է ունենա եզակի նույնականացման համար:
- 2.2.1.1.9.3. Տրամադրված տեղեկատվությունը պետք է լինի հեշտ նույնականացվող, ընթեռնելի եւ չճնշվող:
- 2.2.1.1.9.4. Դասակարգման փաստաթղթում ներկայացվող տեղեկատվության օրինակներ են՝
  - ա) իրավասու մարմնի անվանումը եւ ազգային օրենսդրության դրույթները, որոնց համաձայն նրան տրամադրվել է իր լիազորությունը.
  - բ) օժանդակ կամ ազգային կանոնակարգերը, որոնց դեպքում

կիրառելի են դասակարգման փաստաթղթերը.

- գ) հաստատում առ այն, որ դասակարգումը հաստատվել, պատրաստվել կամ համաձայնեցվել է ՄԱԿ-ի տիպային կանոնակարգերին կամ համապատասխան օժանդակ կանոնակարգերին համապատասխան.
- դ) օրենքի սուբյեկտի անվանումը եւ հասցեն, որին հատկացվել է դասակարգումը եւ ցանկացած ընկերության գրանցումը, որն առանձնահատուկ սահմանում է ընկերություն կամ այլ մարմին, որին ազգային օրենսդրությամբ տրվում է իրավաբանական անձի իրավունքներ.
- ե) անվանումը, որով պայթուցիկ նյութերը շուկայահանվելու են կամ որեւէ այլ կերպ մատակարարվելու են փոխադրման համար.
- զ) պայթուցիկ նյութերի բեռնառաքման ճշգրիտ անվանումը, ՄԱԿ-ի նշագրման համարը, դասը, ենթադասը եւ համապատասխան համատեղելիության խումբը.
- է) անհրաժեշտության դեպքում՝ փաթեթի կամ պատրաստվածքի զուտ պայթուցիկ նյութի առավելագույն զանգվածը.
- ը) իրավասու մարմնի կողմից դասակարգման փաստաթղթեր տրամադրելու լիազորություն ստացած անձի անվանումը, ստորագրությունը, կնիքը, կապարակնիքը կամ այլ նույնականացնող միջոցներ պետք է լինեն հստակ տեսանելի.
- թ) եթե փոխադրման կամ ենթադասի անվտանգությունը գնահատվում է որպես փաթեթավորմամբ պայմանավորված, փաթեթավորման մակնշումը կամ նկարագրությունը՝
  - ներքին փաթեթավածքների համար
  - միջանկյալ փաթեթավածքների համար
  - արտաքին փաթեթավածքների համար
- ժ) դասակարգման փաստաթղթով սահմանվում է մասի համարը, անվանացանկի համարը կամ այլ նույնականացնող հղում, որին համապատասխան պայթուցիկ նյութերը շուկայահանվելու են կամ որեւէ այլ կերպ մատակարարվելու են փոխադրման համար.
- ժա) պայթուցիկ նյութեր արտադրող՝ օրենքի սուբյեկտի անվանումը եւ հասցեն կամ ցանկացած ընկերության գրանցումը, որն առանձնահատուկ սահմանում է ընկերություն կամ այլ մարմին, որին ազգային օրենսդրությամբ տրվում է իրավաբանական

անձի իրավունքներ.

- ժբ) փաթեթավորման կիրառվող ցուցումների վերաբերյալ ցանկացած այլ լրացուցիչ տեղեկություններ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ փաթեթավորման հատուկ դրույթներ.
- ժգ) դասակարգումը սահմանելու հիմքերը, այսինքն՝ արդյոք դասակարգումն իրականացվել է փորձարկումների արդյունքների, հրավառության միջոցների ստանդարտ դասակարգման, դասակարգված պայթուցիկ նյութերի անալոզների, 3.2 գլխի Ա աղյուսակի սահմանումների հիման վրա եւ այլն.
- ժդ) ցանկացած հատուկ պայման կամ սահմանափակում, որը պայթուցիկ նյութերի փոխադրման անվտանգության, վտանգի մասին տեղեկատվության տրամադրման եւ միջազգային փոխադրումների առումով իրավասու մարմնի կողմից համարվել է կարելի.
- ժե) դասակարգման փաստաթղթերի ժամկետը լրանալու օրը սահմանվում է իրավասու մարմնի կողմից անհրաժեշտ համարվելու դեպքում:

2.2.1.2. Փոխադրման համար անթույլատրելի նյութերը եւ պատրաստվածքները

2.2.1.2.1. Այն պայթյունավտանգ նյութերը, որոնց զգայունությունը չափազանց բարձր է «Փորձարկումների եւ չափորոշիչների ձեռնարկի» 1-ին մասի չափորոշիչների համաձայն, կամ որոնք կարող են ինքնուրույն մտնել ռեակցիայի մեջ, ինչպես նաեւ այն պայթյունավտանգ նյութերն ու պատրաստվածքները, որոնք չեն ներառվել 3.2 գլխի Ա աղյուսակի որեւէ անվանման մեջ կամ «այլ կերպ չնշված» որեւէ դիրքում, ենթակա չեն փոխադրման:

2.2.1.2.2. Համատեղելիության «K» խմբի պատրաստվածքները չեն ընդունվում փոխադրման համար (1.2K, ՄԱԿ-ի նշագրման 0020 համար եւ 1.3K, ՄԱԿ-ի նշագրման 0021 համար):

2.2.1.3. Հավաքական դիրքերի ցանկը

Դասակարգման ծածկագիրը (տե՛ս 2.2.1.1.4)	ՄԱԿ-ի նշագրման համարը	Նյութի կամ պատրաստվածքի անվանումը
1.1A	0473	ՊԱՅԹՅՈՒՆԱՎՏԱՆԳ ՆՅՈՒԹԵՐ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ
1.1B	0461	ՀՐԱՀԱՂՈՐԴԻՉՆԵՐԻ ԿՈՄՊՈՆԵՆՏՆԵՐ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ

Դասակարգման ծածկագիրը (տե՛ս 2.2.1.1.4)	ՄԱԿ-ի նշագրման համարը	Նյութի կամ պատրաստվածքի անվանումը
1.1C	0474 0497 0498 0462	ՊԱՅԹՅՈՒՆԱՎՏԱՆԳ ՆՅՈՒԹԵՐ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ ՀԵՂՈՒԿ ՆԵՏՈՂԱԿԱՆ ՊԱՅԹՅՈՒՆԱՎՏԱՆԳ ՆՅՈՒԹ ՊԻՆԴ ՆԵՏՈՂԱԿԱՆ ՊԱՅԹՅՈՒՆԱՎՏԱՆԳ ՆՅՈՒԹ ՊԱՅԹՅՈՒՆԱՎՏԱՆԳ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՔՆԵՐ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ
1.1D	0475 0463	ՊԱՅԹՅՈՒՆԱՎՏԱՆԳ ՆՅՈՒԹԵՐ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ ՊԱՅԹՅՈՒՆԱՎՏԱՆԳ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՔՆԵՐ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ
1.1E	0464	ՊԱՅԹՅՈՒՆԱՎՏԱՆԳ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՔՆԵՐ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ
1.1F	0465	ՊԱՅԹՅՈՒՆԱՎՏԱՆԳ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՔՆԵՐ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ
1.1G	0476	ՊԱՅԹՅՈՒՆԱՎՏԱՆԳ ՆՅՈՒԹԵՐ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ
1.1L	0357 0354	ՊԱՅԹՅՈՒՆԱՎՏԱՆԳ ՆՅՈՒԹԵՐ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ ՊԱՅԹՅՈՒՆԱՎՏԱՆԳ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՔՆԵՐ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ
1.2B	0382	ԿՈՄՊՈՆԵՆՏՆԵՐ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ
1.2C	0466	ՊԱՅԹՅՈՒՆԱՎՏԱՆԳ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՔՆԵՐ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ
1.2D	0467	ՊԱՅԹՅՈՒՆԱՎՏԱՆԳ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՔՆԵՐ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ
1.2E	0468	ՊԱՅԹՅՈՒՆԱՎՏԱՆԳ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՔՆԵՐ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ
1.2F	0469	ՊԱՅԹՅՈՒՆԱՎՏԱՆԳ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՔՆԵՐ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ
1.2L	0358 0248 0355	ՊԱՅԹՅՈՒՆԱՎՏԱՆԳ ՆՅՈՒԹԵՐ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ ՋՐԱԱԿՏԻՎԱՅՈՂ ՍԱՐՔԵՐ, պայթուցիկ, նետողական կամ արտամղիչ լիցքով ՊԱՅԹՅՈՒՆԱՎՏԱՆԳ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՔՆԵՐ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ
1.3C	0132 0477 0495 0499 0470	ԱՐՈՄԱՏԻԿ ՆԻՏՐՈՍԱՆՑՅԱԼՆԵՐԻ ԴԵՖԼԱԳՐԱՅՈՂ ՄԵՏԱՂԱԿԱՆ ԱՂԵՐ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ ՊԱՅԹՅՈՒՆԱՎՏԱՆԳ ՆՅՈՒԹԵՐ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ ՀԵՂՈՒԿ ՆԵՏՈՂԱԿԱՆ ՊԱՅԹՅՈՒՆԱՎՏԱՆԳ ՆՅՈՒԹ ՊԻՆԴ ՆԵՏՈՂԱԿԱՆ ՊԱՅԹՅՈՒՆԱՎՏԱՆԳ ՆՅՈՒԹ ՊԱՅԹՅՈՒՆԱՎՏԱՆԳ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՔՆԵՐ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ
1.3G	0478	ՊԱՅԹՅՈՒՆԱՎՏԱՆԳ ՆՅՈՒԹԵՐ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ
1.3L	0359 0249 0356	ՊԱՅԹՅՈՒՆԱՎՏԱՆԳ ՆՅՈՒԹԵՐ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ ՋՐԱԱԿՏԻՎԱՅՈՂ ՍԱՐՔԵՐ, պայթուցիկ, նետողական կամ արտամղիչ լիցքով ՊԱՅԹՅՈՒՆԱՎՏԱՆԳ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՔՆԵՐ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ
1.4B	0350 0383	ՊԱՅԹՅՈՒՆԱՎՏԱՆԳ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՔՆԵՐ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ ՀՐԱՀԱՂՈՐԴԻՉՆԵՐԻ ԿՈՄՊՈՆԵՆՏՆԵՐ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ

Դասակարգման ծածկագիրը (տե՛ս 2.2.1.1.4)	ՄԱԿ-ի նշագրման համարը	Նյութի կամ պատրաստվածքի անվանումը
1.4C	0479 0501 0351	ՊԱՅԹՅՈՒՆԱՎՏԱՆԳ ՆՅՈՒԹԵՐ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ ՊԻՆԴ ՆԵՏՈՂԱԿԱՆ ՊԱՅԹՅՈՒՆԱՎՏԱՆԳ ՆՅՈՒԹ ՊԱՅԹՅՈՒՆԱՎՏԱՆԳ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՔՆԵՐ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ
1.4D	0480 0352	ՊԱՅԹՅՈՒՆԱՎՏԱՆԳ ՆՅՈՒԹԵՐ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ ՊԱՅԹՅՈՒՆԱՎՏԱՆԳ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՔՆԵՐ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ
1.4E	0471	ՊԱՅԹՅՈՒՆԱՎՏԱՆԳ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՔՆԵՐ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ
1.4F	0472	ՊԱՅԹՅՈՒՆԱՎՏԱՆԳ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՔՆԵՐ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ
1.4G	0485 0353	ՊԱՅԹՅՈՒՆԱՎՏԱՆԳ ՆՅՈՒԹԵՐ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ ՊԱՅԹՅՈՒՆԱՎՏԱՆԳ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՔՆԵՐ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ
1.4S	0481 0349 0384	ՊԱՅԹՅՈՒՆԱՎՏԱՆԳ ՆՅՈՒԹԵՐ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ ՊԱՅԹՅՈՒՆԱՎՏԱՆԳ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՔՆԵՐ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ ՀՐԱՀԱՂՈՐԴԻՉՆԵՐԻ ԿՈՄՊՈՆԵՆՏՆԵՐ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ
1.5D	0482	ՊԱՅԹՅՈՒՆԱՎՏԱՆԳ ՆՅՈՒԹԵՐ՝ ՇԱՏ ՑԱԾՐ ԶԳԱՅՈՒՆՈՒԹՅԱՄԲ (ՇՅԶ ՆՅՈՒԹԵՐ), ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ
1.6N	0486	ՊԱՅԹՅՈՒՆԱՎՏԱՆԳ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՔՆԵՐ՝ ՉԱՓԱԶԱՆՑ ՑԱԾՐ ԶԳԱՅՈՒՆՈՒԹՅԱՄԲ (ԶՅԶ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՔՆԵՐ)
	0190	ՊԱՅԹՅՈՒՆԱՎՏԱՆԳ ՆՅՈՒԹԵՐԻ ՆՄՈՒՇՆԵՐ՝ բացառությամբ հարուցիչ պայթյունավտանգ նյութերի  ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Ենթադասը եւ համատեղելիության խումբը որոշում է իրավասու մարմինը՝ 2.2.1.4-ի սկզբունքների համաձայն:

#### 2.2.1.4. Անվանումների բառարան

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1.** Բառարանում տեղ գտած նկարագրությունները նախատեսված չեն փորձարկման ընթացակարգերին փոխարինելու եւ ոչ էլ 1-ին դասի նյութի կամ պատրաստվածքի վրանգավորության դասը որոշելու համար: Վրանգավորության ճիշտ ենթադասում ընդգրկելու եւ համատեղելիության «S» խմբի հետ համապատասխանությունը որոշելու համար հիմք են ընդունվում արտադրանքի փորձարկման արդյունքները՝ «Փորձարկումների եւ չափորոշիչների ձեռնարկի» I մասի համաձայն, կամ «Փորձարկումների եւ չափորոշիչների ձեռնարկ»-ով սահմանված ընթացակարգերին համապատասխան արդեն փորձարկված եւ դասակարգված նույնանման արտադրանքների համանմանությունը:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2.** Անվանումներին հաջորդող թվերով հղում է

*կատարվում ՄԱԿ-ի նշագրման համապատասխան համարներին (3.2 գլխի Ա աղյուսակի 1-ին սյունակ): Դասակարգման ծածկագրի համար տե՛ս 2.2.1.1.4:*

ՌԱԶՄԱՄԹԵՐՔ՝ ԼՌԻՍԱՎՈՐՈՂ, պայթուցիկ, արտամղիչ կամ նետողական լիցքով կամ առանց դրանց. ՄԱԿ-ի նշագրման 0171, 0254, 0297 համարներ

Ռեզմամթերք, որը նախատեսված է ուժգին լույսի մեկ աղբյուրից տարածքը լուսավորելու համար: Եզրույթը ներառում է լուսավորող փամփուշտներ, նռնակներ եւ գնդակներ, ինչպես նաեւ լուսավորող ռումբեր՝ թիրախի նույնականացման հնարավորությամբ:

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Հետեւյալ պատրաստվածքները չեն ներառվում սույն սահմանման մեջ՝ ԱԶԴԱՆՇԱՆԱՅԻՆ ՓԱՄՓՈՒՇՏՆԵՐ, ԱԶԴԱՆՇԱՆԱՅԻՆ ՍԱՐՔԵՐ՝ ՁԵՌՔԻ, ՎԹԱՐԱՅԻՆ ԱԶԴԱՆՇԱՆՆԵՐ, ԱՎԻԱՑԻՈՆ ԼՌԻՍԱՎՈՐՈՂ ՀՐԹԻՌՆԵՐ, ՑԱՄԱՔԻՑ ԱՐՁԱԿՎՈՂ ԼՌԻՍԱՎՈՐՈՂ ՀՐԹԻՌՆԵՐ: Դրանք ընդգրկվում են առանձին ցանկում:*

ՌԱԶՄԱՄԹԵՐՔ՝ ՎԱՌՈՂ, հեղուկ կամ դոնդողանման, պայթուցիկ, արտամղիչ կամ նետողական լիցքով. ՄԱԿ-ի նշագրման 0247 համար

Հեղուկ կամ դոնդողանման վառող նյութ պարունակող ռազմամթերք: Բացի այն դեպքերից, երբ վառող նյութն ինքնառեակտիվ է, այն նաեւ պարունակում է հետեւյալ բաղադրիչներից մեկը կամ մի քանիսը՝ պատիճով եւ բոցավառիչ լիցքով նետողական լիցք, պայթուցիկ կամ արտամղիչ լիցքով պայթուցիչ:

ՌԱԶՄԱՄԹԵՐՔ՝ ՎԱՌՈՂ, ՍՊԻՏԱԿ ՖՈՍՖՈՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ, պայթուցիկ, արտամղիչ կամ նետողական լիցքով. ՄԱԿ-ի նշագրման 0243, 0244 համարներ

Որպես վառող նյութ՝ սպիտակ ֆոսֆոր պարունակող ռազմամթերք: Այն նաեւ պարունակում է հետեւյալ բաղադրիչներից մեկը կամ մի քանիսը՝ պատիճով եւ բոցավառիչ լիցքով նետողական լիցք, պայթուցիկ կամ արտամղիչ լիցքով պայթուցիչ:

ՌԱԶՄԱՄԹԵՐՔ՝ ՎԱՌՈՂ, պայթուցիկ, արտամղիչ կամ նետողական լիցքով կամ առանց դրանց. ՄԱԿ-ի նշագրման 0009, 0010, 0300 համարներ

Վառող միացություն պարունակող ռազմամթերք: Բացի այն դեպքերից, երբ միացությունն ինքնառեակտիվ է, այն նաեւ պարունակում է հետեւյալ բաղադրիչներից մեկը կամ մի քանիսը՝ պատիճով եւ բոցավառիչ լիցքով նետողական լիցք, պայթուցիկ կամ արտամղիչ

լիցքով պայթուցիչ:

ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՌԱԶՄԱՄԹԵՐՔ. ՄԱԿ-ի նշագրման 0362, 0488 համարներ

Ռազմամթերք, որը չունի հիմնական պայթուցիկ լիցք, սակայն պարունակում է պայթուցիկ կամ արտամղիչ լիցք: Սովորաբար այն պարունակում է նաեւ պայթուցիչ եւ նետողական լիցք:

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՌՆԱԿՆԵՐԸ սույն սահմանման մեջ չեն ընդգրկվում: Դրանք ընդգրկվում են առանձին ցանկում:*

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՌԱԶՄԱՄԹԵՐՔ. ՄԱԿ-ի նշագրման 0363 համար

Հրատեխնիկական նյութեր պարունակող ռազմամթերք, որն օգտագործվում է նոր ռազմամթերքի, զենքի մասերի կամ հավաքվածքների արդյունավետությունը կամ ուժը փորձարկելու համար:

ՌԱԶՄԱՄԹԵՐՔ՝ ԾԽԱՅՈՂ, ՍՊԻՏԱԿ ՖՈՍՖՈՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ, պայթուցիկ, արտամղիչ կամ նետողական լիցքով. ՄԱԿ-ի նշագրման 0245, 0246 համարներ

Որպես ծուխ արձակող նյութ՝ սպիտակ ֆոսֆոր պարունակող ռազմամթերք: Այն նաեւ պարունակում է հետեւյալ բաղադրիչներից մեկը կամ մի քանիսը՝ պատիճով եւ բոցավառիչ լիցքով նետողական լիցք, պայթուցիկ կամ արտամղիչ լիցքով պայթուցիչ: Եզրույթը ներառում է նաեւ ծխացող նոնակները:

ՌԱԶՄԱՄԹԵՐՔ՝ ԾԽԱՅՈՂ, պայթուցիչով, արտամղիչ կամ նետողական լիցքով կամ առանց դրանց. ՄԱԿ-ի նշագրման 0015, 0016, 0303 համարներ

Ռազմամթերք, որը պարունակում է ծուխ արձակող այնպիսի նյութ, ինչպիսին օրինակ՝ քլորասուլֆոթթթյունների խառնուրդը կամ տիտանի քառաքլորիդը եւ կամ հեքսաքլորէթանի կամ կարմիր ֆոսֆորի հիմքով ծուխ արձակող հրատեխնիկական միացությունն է: Բացի այն դեպքերից, երբ նյութն ինքնառեակտիվ է, այն նաեւ պարունակում է հետեւյալ բաղադրիչներից մեկը կամ մի քանիսը՝ պատիճով եւ բոցավառիչ լիցքով նետողական լիցք, պայթուցիկ կամ արտամղիչ լիցքով պայթուցիչ: Եզրույթը ներառում է նաեւ ծխացող նոնակները:

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. ԾԽԱՅԻՆ ԱՂԴԱՆՇԱՆՆԵՐԸ չեն ընդգրկվում սույն սահմանման մեջ: Դրանք ընդգրկվում են առանձին ցանկում:*

ՌԱԶՄԱՄԹԵՐՔ՝ ԱՐՅՈՒՆՔԱՔԵՐ, պայթուցիչով, արտամղիչ լիցքով կամ նետողական լիցքով. ՄԱԿ-ի նշագրման 0018, 0019, 0301 համարներ



Արցունքաբեր նյութ պարունակող ռազմամթերք: Այն նաեւ պարունակում է հետեւյալ բաղադրիչներից մեկը կամ մի քանիսը՝ հրատեխնիկական նյութ, պատիճով եւ բոցավառիչ լիցքով նետողական լիցք, պայթուցիկ կամ արտամղիչ լիցքով պայթուցիչ:

ՊԱՅԹՅՈՒՆԱՎՏԱՆԳ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՔՆԵՐ՝ ՉԱՓԱԶԱՆՑ ՑԱԾՐ ԶԳԱՅՈՒՆՈՒԹՅԱՄԲ (ԶՅԶ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՔՆԵՐ). ՄԱԿ-ի նշագրման 0486 համար

Չափազանց ցածր զգայունության նյութեր պարունակող պատրաստվածքներ, որոնց պատահական պայթյունի կամ տարածման հավանականությունն աննշան է տեղափոխման բնականոն պայմաններում, եւ որոնք ենթարկվել են 7-րդ շարքի փորձարկմանը:

ՊԱՏՐԱՍՏՎԱԾՔՆԵՐ՝ ՀՐԱԿԻՐ. ՄԱԿ-ի նշագրման 0380 համար

Պատրաստվածքներ, որոնք պարունակում են հրակիր նյութեր (օդում ինքնաբռնկման հատկությամբ) եւ պայթյունավտանգ նյութ կամ բաղադրիչ: Եզրույթը չի վերաբերում սպիտակ ֆոսֆոր պարունակող պատրաստվածքներին:

ՊԱՏՐԱՍՏՎԱԾՔՆԵՐ՝ ՀՐԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ, տեխնիկական նպատակներով. ՄԱԿ-ի նշագրման 0428, 0429, 0430, 0431, 0432 համարներ

Պատրաստվածքներ, որոնք պարունակում են հրատեխնիկական նյութեր եւ օգտագործվում են տեխնիկական նպատակներով, օրինակ՝ ջերմության արտադրություն, գազի արտադրություն, բեմական էֆեկտներ եւ այլն:

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Հետեւյալ պատրաստվածքները չեն ներառվում սույն սահմանման մեջ՝ ռազմամթերքի բոլոր տեսակները, ԱԶԴԱՆՇԱՆԱՅԻՆ ՓԱՄՓՈՒՇՏՆԵՐ, ՊԱՅԹՅՈՒՆԱՎՏԱՆԳ ԿԱԲԵԼԱՅԻՆ ԿՏՐՈՅՆԵՐ, ՀՐԱՎԱՌՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ, ԱՎԻԱՅԻՈՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՂ ՀՐԹԻՌՆԵՐ, ՑԱՄԱՔԻՑ ԱՐՁԱԿՎՈՂ ԼՈՒՍԱՎՈՐՈՂ ՀՐԹԻՌՆԵՐ, ՊԱՅԹՅՈՒՆԱՎՏԱՆԳ ԱՆՋԱՏԻՉ ՍԱՐՔԵՐ, ՊԱՅԹՅՈՒՆԱՎՏԱՆԳ ԳԱՄԵՐ, ԱԶԴԱՆՇԱՆԱՅԻՆ ՍԱՐՔԵՐ՝ ՁԵՌՔԻ, ՎԹԱՐԱՅԻՆ ԱԶԴԱՆՇԱՆՆԵՐ, ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ՊԱՅԹՅՈՒՆԱՎՏԱՆԳ ՃԱՅԹՈՒԿՆԵՐ, ԾԽԱՅԻՆ ԱԶԴԱՆՇԱՆՆԵՐ: Դրանք ընդգրկվում են առանձին ցանկում:*

ԾԽԱՏՈՒ ՎԱՌՈՂ (ՍԵՎ ՎԱՌՈՂ)՝ ՄԱՄԼԱԾ կամ ԾԽԱՏՈՒ ՎԱՌՈՂ (ՍԵՎ ՎԱՌՈՂ)՝ ԳԼԱՆԻԿՆԵՐՈՎ. ՄԱԿ-ի նշագրման 0028 համար

Ծխատու վառողի գլանիկներից բաղկացած նյութ:

ԾԽԱՏՈՒ ՎԱՌՈՂ (ՍԵՎ ՎԱՌՈՂ)՝ հատիկավոր կամ փոշենման. ՄԱԿ-ի նշագրման 0027 համար

Նյութ, որ բաղկացած է փայտածխի կամ ածխածնի այլ տեսակի եւ կա՛մ կալիումի նիտրատի, կա՛մ նատրիումի նիտրատի միատարր խառնուրդից՝ ծծմբի հավելմամբ կամ առանց դրա:

ԴՅՈՒՐԱՎԱՌ ՀԵՂՈՒԿ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ՌՈՒՄԲԵՐ՝ պայթուցիկ լիցքով. ՄԱԿ-ի նշագրման 0399, 0400 համարներ

Դյուրավառ հեղուկով լցված ցիստոն եւ պայթուցիկ լիցք պարունակող պատրաստվածքներ, որոնք նետվում են թռչող սարքերից:

ՖՈՏՈԱՎԻԱՌՈՒՄԲԵՐ. ՄԱԿ-ի նշագրման 0038 համար

Պայթյունավտանգ պատրաստվածքներ, որոնք նետվում են թռչող սարքից լուսանկարչության համար կարճատեւ, ինտենսիվ լուսավորություն ապահովելու համար: Դրանք պարունակում են դետոնացնող պայթյունավտանգ նյութի լիցք՝ առանց հարուցիչ միջոցների կամ երկու կամ ավելի արդյունավետ ապահովիչ սարքավորումներ պարունակող հարուցիչ միջոցներով:

ՖՈՏՈԱՎԻԱՌՈՒՄԲԵՐ. ՄԱԿ-ի նշագրման 0037 համար

Պայթյունավտանգ պատրաստվածքներ, որոնք նետվում են թռչող սարքերից՝ լուսանկարչության համար կարճատեւ, ինտենսիվ լուսավորություն ապահովելու համար: Դրանք պարունակում են դետոնացնող պայթուցիկ նյութի լիցք՝ հարուցիչ միջոցներով, որոնք երկու կամ ավելի արդյունավետ ապահովիչ սարքավորումներ չեն պարունակում:

ՖՈՏՈԱՎԻԱՌՈՒՄԲԵՐ. ՄԱԿ-ի նշագրման 0039, 0299 համարներ

Պայթյունավտանգ պատրաստվածքներ, որոնք նետվում են թռչող սարքերից՝ լուսանկարչության համար կարճատեւ, ինտենսիվ լուսավորություն ապահովելու համար: Դրանք պարունակում են ֆոտոլուսավորող կազմ:

ՊԱՅԹՈՒՑԻԿ ԼԻՑՔՈՎ ՌՈՒՄԲԵՐ. ՄԱԿ-ի նշագրման 0034, 0035 համարներ

Պայթյունավտանգ պատրաստվածքներ, որոնք նետվում են թռչող սարքերից, առանց հարուցիչ միջոցների կամ երկու կամ ավելի արդյունավետ ապահովիչ սարքավորումներ պարունակող հարուցիչ միջոցներով:

ՊԱՅԹՈՒՑԻԿ ԼԻՑՔՈՎ ՌՈՒՄԲԵՐ. ՄԱԿ-ի նշագրման 0033, 0291 համարներ

Պայթյունավտանգ պատրաստվածքներ, որոնք նետվում են թռչող սարքերից՝ հարուցիչ միջոցներով, որոնք չեն պարունակում երկու կամ ավելի արդյունավետ ապահովիչ սարքավորումներ:

ԱՌԱՋՆԱՅԻՆ ԴԵՏՈՆԱՏՈՐՈՎ ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ԴԵՏՈՆԱՏՈՐՆԵՐ.  
ՄԱԿ-ի նշագրման 0225, 0268 համարներ

Պատրաստվածքներ, որոնք պարունակում են դետոնացնող պայթուցիկ նյութի լիցք՝ հարուցիչ միջոցներով: Դրանք օգտագործվում են դետոնատորների կամ դետոնացման քուղի հարուցման ազդեցությունն ավելացնելու համար:

ԱՌԱՆՑ ԱՌԱՋՆԱՅԻՆ ԴԵՏՈՆԱՏՈՐԻ ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ԴԵՏՈՆԱՏՈՐՆԵՐ. ՄԱԿ-ի նշագրման 0042, 0283 համարներ

Այն պատրաստվածքները, որոնք պարունակում են դետոնացնող պայթուցիկ նյութի լիցք՝ առանց հարուցիչ միջոցների: Դրանք օգտագործվում են դետոնատորների կամ դետոնացման քուղի հարուցման ազդեցությունն ավելացնելու համար:

ՊԱՅԹՈՒՑԻԿ ԼԻՑՔԵՐ. ՄԱԿ-ի նշագրման 0043 համար

Այն պատրաստվածքները, որոնք պարունակում են պայթյունավտանգ նյութի փոքր լիցք, օգտագործվում են արկի կամ այլ ռազմամթերքի պատյանը պայթեցնելու համար՝ դրանց պարունակությունը ցրելու նպատակով:

ԼՈՒՍԱՎՈՐՈՂ ՓԱՄՓՈՒՇՏՆԵՐ. ՄԱԿ-ի նշագրման 0049, 0050 համարներ

Պարկուճ, պատիճ եւ լուսային բռնկման փոշի պարունակող պատրաստվածքներ՝ բոլորը հավաքված մեկ կոմպլեկտում՝ պատրաստ կրակելու համար:

ԳՐԾԻՔՆԵՐԻ ԱՆԳՆԴԱԿ ՓԱՄՓՈՒՇՏՆԵՐ. ՄԱԿ-ի նշագրման 0014 համար

Գործիքներում օգտագործվող պատրաստվածք, որը պարունակում է փակ պարկուճ, կենտրոնական կամ օղակաձեւ պատիճ, անծուխ կամ ծխատու վառողի լիցքով կամ առանց դրա, բայց առանց արկի:

ԶԵՆՔԻ ՓԱՄՓՈՒՇՏՆԵՐ՝ ԱՆԳՆԴԱԿ. ՄԱԿ-ի նշագրման 0326, 0413, 0327, 0338, 0014 համարներ

Ռազմամթերք, որը պարունակում է փակ պարկուճ, կենտրոնական կամ օղակաձեւ պատիճ եւ անծուխ կամ ծխատու վառողի լիցք, բայց առանց փամփուշտի կամ արկի: Այն արձակում է բարձր ձայն եւ օգտագործվում է մարզումների, զինվորական ողջույնի ժամանակ՝ որպես նետողական լիցք, մեկնարկային ատրճանակներում եւ այլն: Եզրույթը ներառում է ռազմամթերք՝ անգնդակ:

ԶԵՆՔԻ ՓԱՄՓՈՒՇՏՆԵՐ՝ ԻՆԵՐՏ ԱՐԿՈՎ. ՄԱԿ-ի նշագրման 0328, 0417, 0339, 0012 համարներ

Ռազմամթերք, որը պարունակում է առանց պայթող լիցքի գնդակով, սակայն նետողական լիցքով արկեր՝ պատիճով կամ առանց պատիճի: Պատրաստվածքը կարող է ներառել հետագծող պատրաստվածք՝ պայմանով, որ առավելագույն վտանգը ներկայացնի նետողական լիցքը:

ԶԵՆՔԻ ՓԱՄՓՈՒՇՏՆԵՐ՝ պայթուցիկ լիցքով. ՄԱԿ-ի նշագրման 0006, 0321, 0412 համարներ

Ռազմամթերք, որը պարունակում է առանց հարուցիչ միջոցների կամ հարուցիչ միջոցներով պայթող լիցքով արկեր, որոնք պարունակում են երկու կամ ավելի ապահովիչ սարքավորումներ, ինչպես նաև նետողական լիցք՝ պատիճով կամ առանց պատիճի: Եզրույթը ներառում է վերջնականապես կամ ոչ վերջնականապես լիցքավորված ռազմամթերք եւ առանձին լիցքավորվող ռազմամթերք, եթե բաղադրիչները միասին են փաթեթավորված:

ԶԵՆՔԻ ՓԱՄՓՈՒՇՏՆԵՐ՝ պայթուցիկ լիցքով. ՄԱԿ-ի նշագրման 0005, 0007, 0348 համարներ

Ռազմամթերք, որը պարունակում է պայթուցիկ լիցքով արկեր՝ հարուցիչ միջոցներով, որոնք չեն պարունակում երկու կամ ավելի արդյունավետ ապահովիչ սարքավորումներ, ինչպես նաև նետողական լիցք՝ պատիճով կամ առանց պատիճի: Եզրույթը ներառում է վերջնականապես կամ ոչ վերջնականապես լիցքավորված ռազմամթերք եւ առանձին լիցքավորվող ռազմամթերք, եթե բաղադրիչները միասին են փաթեթավորված:

ՓԱՄՓՈՒՇՏՆԵՐ ՆԱՎԹԱՀՈՐԵՐԻ ՀԱՄԱՐ. ՄԱԿ-ի նշագրման 0277, 0278 համարներ

Պատրաստվածքներ, որոնք կազմված են փայտաթելքային սալից, մետաղյա կամ այլ նյութից բարակ պարկուճից, որը պարունակում է միայն նետողական պայթուցիկ նյութեր, որոնք պինդ արկեր են նետում նավթահորի շրջապահ խողովակները ծակատելու համար:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԼԻՑՔԵՐԸ չեն ընդգրկվում սույն սահմանման մեջ: Դրանք ընդգրկվում են առանձին ցանկում:

ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԿՄԱՆ ՓԱՄՓՈՒՇՏՆԵՐ. ՄԱԿ-ի նշագրման 0275, 0276, 0323, 0381 համարներ

Պատրաստվածքներ, որոնք նախատեսված են մեխանիկական գործողություններ կատարելու համար: Դրանք պարունակում են դեֆլագրացող պայթուցիկ նյութի լիցք եւ բոցավառման միջոցներով պարկուճներ: Դեֆլագրացիայի գազանման նյութերն առաջացնում են ճնշման բարձրացում, գծային կամ պտտական շարժումներ կամ

ակտիվացնում են դիաֆրագման, կափույրները կամ փոխարկիչները արտահրում են կա՛մ կցորդման սարքավորումները, կա՛մ մարիչ ազդակները:

ԱՂԴԱՆՇԱՆԱՅԻՆ ՓԱՄՓՈՒՇՏՆԵՐ. ՄԱԿ-ի նշագրման 0054, 0312, 0405 համարներ

Պատրաստվածքներ, որոնք նախատեսված են ազդանշանային ատրճանակներից գունավոր հրթիռներ կամ այլ ազդանշաններ արձակելու համար:

ՀՐԱԶԵՆԻ՝ ՓՈՔՐ ՏՐԱՄԱՉԱՓԻ ՓԱՄՓՈՒՇՏՆԵՐ. ՄԱԿ-ի նշագրման 0417, 0339, 0012 համարներ

Ռազմամթերք, որը կազմված է պարկուճից, կենտրոնական կամ օղակաձեւ պատիճից եւ պարունակում է թե՛ նետողական լիցք, թե՛ կարծր արկ: Դրանք նախատեսված են 19.1 մմ-ից ոչ ավելի տրամաչափով զենքից կրակելու համար: Այս եզրույթը ներառում է ցանկացած տրամաչափի կոտորակային գնդակները:

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. ՀՐԱԶԵՆԻ՝ ՓՈՔՐ ՏՐԱՄԱՉԱՓԻ ԱՆԳՆԴԱԿ ՓԱՄՓՈՒՇՏՆԵՐԸ չեն ընդգրկվում սույն սահմանման մեջ: Դրանք ընդգրկվում են առանձին ցանկում: Ռազմական հրազենի՝ փոքր տրամաչափի որոշ փամփուշտներ չեն ընդգրկվում սույն սահմանման մեջ: Դրանք ընդգրկված են ՉԵՆՔԻ ՓԱՄՓՈՒՇՏՆԵՐ՝ ԻՆԵՐՏ ԱՐԿՈՎ ցանկում:*

ՀՐԱԶԵՆԻ՝ ՓՈՔՐ ՏՐԱՄԱՉԱՓԻ ԱՆԳՆԴԱԿ ՓԱՄՓՈՒՇՏՆԵՐ. ՄԱԿ-ի նշագրման 0014, 0327, 0338 համարներ

Ռազմամթերք, որը պարունակում է փակ պարկուճ, կենտրոնական կամ օղակաձեւ պատիճ եւ անձուխ կամ ծխատու վառողի լիցք: Պարկուճները չեն պարունակում արկեր կամ փամփուշտներ: Փամփուշտները նախատեսված են առավելագույնը 19.1 մմ տրամաչափով զենքերից կրակելու համար եւ օգտագործվում են բարձր ձայն արձակելու համար, մարզումների, զինվորական ողջույնի ժամանակ՝ որպես նետողական լիցք, մեկնարկային ատրճանակներում եւ այլն:

ՓԱՄՓՈՒՇՏՆԵՐԻ ՊԱՐԿՈՒՃՆԵՐ՝ ԴԱՏԱՐԿ, ՊԱՏԻՃՈՎ. ՄԱԿ-ի նշագրման 0379, 0055 համարներ

Մետաղից, պլաստմասսայից կամ այլ՝ ոչ դյուրավառ նյութից պատրաստված պարկուճներ պարունակող պատրաստվածքներ, որոնցում միակ պայթուցիկ բաղադրիչը պատիճն է:

ԱՅՐՎՈՂ ՊԱՐԿՈՒՃՆԵՐ, ԴԱՏԱՐԿ, ԱՌԱՆՑ ՊԱՏԻՃԻ. ՄԱԿ-ի նշագրման 0447, 0446 համարներ

Մասամբ կամ ամբողջությամբ նիտրոթաղանթանյութից պատրաստված, պարկուճ պարունակող պատրաստվածք:

ՊԱՅԹՈՒՑԻԿ ԼԻՑԲԵՐ՝ ՊԼԱՍՏԻԿԱՑՎԱԾ. ՄԱԿ-ի նշագրման 0457, 0458, 0459, 0460 համարներ

Դետոնացնող պայթուցիկ նյութի լիցք պարունակող պատրաստվածք, պլաստիկացված, առանձնահատուկ ձեւի, առանց պարկուճի եւ առանց հարուցիչ միջոցների: Դրանք նախատեսված են այնպիսի ռազմամթերքում օգտագործելու համար, ինչպիսիք մարտագլխիկներն են:

ՊԱՅԹԵՑՄԱՆ ԼԻՑԲԵՐ. ՄԱԿ-ի նշագրման 0048 համար

Փայտաթելքային սալից, պլաստմասսայից, մետաղից կամ այլ նյութից պատրաստված պարկուճում դետոնացնող պայթուցիկ նյութի լիցք պարունակող պատրաստվածքներ: Պատրաստվածքները չունեն հարուցիչ միջոցներ կամ ունեն երկու կամ ավելի պաշտպանիչ սարքավորումներ պարունակող հարուցիչ միջոցներ:

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. «ՌՈՒՄԲԵՐ, ԱԿԱՆՆԵՐ, ԱՐԿԵՐ» պատրաստվածքները չեն ընդգրկված սույն սահմանման մեջ: Դրանք ընդգրկված են առանձին ցանկում:*

ԽՈՐՔԱՅԻՆ ՌՈՒՄԲԵՐ. ՄԱԿ-ի նշագրման 0056 համար

Թմբկագլանում կամ գնդակում տեղադրված դետոնացնող պայթուցիկ նյութերի լիցք պարունակող պատրաստվածք, առանց հարուցիչ միջոցների կամ երկու կամ ավելի արդյունավետ ապահովիչ սարքավորումներ պարունակող հարուցիչ միջոցներով: Դրանք նախատեսված են ջրում պայթեցնելու համար:

ՊԱՅԹՈՒՑԻԿ ԼԻՑԲԵՐ՝ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ, առանց դետոնատորի. ՄԱԿ-ի նշագրման 0442, 0443, 0444, 0445 համարներ

Դետոնացնող պայթուցիկ նյութի լիցք պարունակող պատրաստվածքներ՝ առանց հարուցիչ միջոցների, օգտագործվում են եռակցման, միացման, դրոշմման կամ այլ մետաղագործական պրոցեսների ժամանակ:

ԼԻՑԲԵՐ՝ ՆԵՏՈՂԱԿԱՆ ՀՐԱՆՈԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ. ՄԱԿ-ի նշագրման 0242, 0279, 0414 համարներ

Ցանկացած ֆիզիկական ձեւի նետողական լիցքեր հրանոթների՝ առանձին լիցքավորման ռազմամթերքի համար:

ՆԵՏՈՂԱԿԱՆ ԼԻՑԲԵՐ. ՄԱԿ-ի նշագրման 0271, 0272, 0415, 0491 համարներ

Ցանկացած ֆիզիկական ձեւի նետողական լիցք պարունակող պատրաստվածք, պատյանում կամ առանց պատյանի, օգտագործվում են

որպես հրթիռային շարժիչների բաղադրիչ կամ արկերի դիմադրողականությունը նվազեցնելու համար:

ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԼԻՑՔԵՐ առանց դետոնատորի. ՄԱԿ-ի նշագրման 0059, 0439, 0440, 0441 համարներ

Դետոնացնող պայթուցիկ նյութերի լիցք պարունակող պարկուճից կազմված պատրաստվածքներ՝ կարծր նյութով ծածկված գոգավոր խոռոչով, առանց հարուցիչ միջոցների: Դրանք նախատեսված են ուժեղ, ծակող կուտակային էֆեկտ ստեղծելու համար:

ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԼԻՑՔԵՐ՝ ՃԿՈՒՆ, ԵՐԿԱՐԱՑՎԱԾ. ՄԱԿ-ի նշագրման 0237, 0288 համարներ

Դետոնացնող պայթուցիկ նյութի տեսքով սեպածեւ միջաձող պարունակող պատրաստվածքներ՝ պատված ճկուն մետաղական թաղանթով:

ՀԱՎԵԼՅԱԼ ԼԻՑՔԵՐ, ՊԱՅԹՈՒՑԻԿ. ՄԱԿ-ի նշագրման 0060 համար

Պատրաստվածքներ, որոնք պարունակում են հանովի երկրորդային դետոնատոր, որոնք օգտագործվում են արկի խոռոչում՝ պայթուցիչի եւ պայթող լիցքի միջեւ:

ՀՐԱՀԱՂՈՐԴԻՉՆԵՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ. ՄԱԿ-ի նշագրման 0382, 0383, 0384, 0461 համարներ

Պատրաստվածքներ, որոնք պարունակում են պայթյունավտանգ նյութ եւ նախատեսված են հրահաղորդիչում դեֆլագրացիա կամ դետոնացում առաջացնելու համար:

ՋՐԱԿՏԻՎԱՑՈՂ ՍԱՐՔԵՐ՝ պայթուցիկ, նետողական կամ արտամղիչ լիցքով. ՄԱԿ-ի նշագրման 0248, 0249 համարներ

Պատրաստվածքներ, որոնք գործարկվում են ջրի հետ դրանց բաղադրիչների ֆիզիկաքիմիական ռեակցիայի արդյունքում:

ԴԵՏՈՆԱՑՄԱՆ ՔՈՒՂ՝ ճկուն. ՄԱԿ-ի նշագրման 0065, 0289 համարներ

Պատրաստվածք, որը պարունակում է դետոնացնող պայթուցիկ նյութից կազմված միջաձող՝ պատված շտապելով կամ պլաստմասսայով կամ այլ պատվածքով: Պատվածք չի պահանջվում, եթե շտապելն անթափանց է:

ԴԵՏՈՆԱՑՄԱՆ ՔՈՒՂ՝ մետաղական թաղանթով. ՄԱԿ-ի նշագրման 0102, 0290 համարներ

Պատրաստվածք, որը պարունակում է պաշտպանիչ պատվածքով կամ առանց դրա փափուկ մետաղից գլան՝ դետոնացնող պայթուցիկ նյութից

կազմված միջաձողով:

ԴԵՏՈՆԱՑՄԱՆ ՔՈՒՂ՝ թույլ ազդեցությամբ, մետաղական թաղանթով.  
ՄԱԿ-ի նշագրման 0104 համար

Պատրաստվածք, որը պարունակում է պաշտպանիչ պատվածքով կամ առանց դրա փափուկ մետաղից գլան՝ դետոնացնող պայթուցիկ նյութից կազմված միջաձողով: Պայթյունավտանգ նյութի քանակությունն այնքան փոքր է, որ քուղից դուրս ազդեցությունը չափազանց թույլ է:

ԿՐԱԿԱՏԱՐ ՔՈՒՂ. ՄԱԿ-ի նշագրման 0066 համար

Պատրաստվածք, որը պարունակում է մանածագործական թելեր՝ ծածկված սեւ վառողով կամ այլ դյուրավառ հրատեխնիկական նյութով, ճկուն պաշտպանիչ պատվածքով, կամ պարունակում է սեւ վառողից միջաձող՝ ծածկված փափուկ գործվածքով: Այն այրվում է արտաքին բոցով իր երկայնքով այրման աստիճանաբար ավելացմամբ եւ օգտագործվում է այրումը սարքից դեպի լիցք կամ պատիճ փոխանցելու նպատակով:

ԿՏՐՈՑՆԵՐ՝ ՄԱԼՈՒԽԱՅԻՆ, ՊԱՅԹՈՒՑԻԿ. ՄԱԿ-ի նշագրման 0070 համար

Պատրաստվածքներ, որոնք կազմված են հատող հարմարանքից, որոնք դեֆլագրացող նյութի փոքր լիցքի պայթյունի հետեանքով հարվածում են զնդանին:

ԴԵՏՈՆԱՏՈՐՆԵՐԻ ՀԱՎԱՔՎԱԾՔՆԵՐ՝ ՈՉ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ, պայթեցման աշխատանքների համար. ՄԱԿ-ի նշագրման 0360, 0361, 0500 համարներ

Ոչ էլեկտրական դետոնատորներ, որոնք մոնտաժված են եւ գործարկվում են այնպիսի միջոցներով, ինչպիսիք են անվտանգ կրակատար քուղը, հարվածային փողակը, իմպուլսային լամպը կամ դետոնացման քուղը: Դրանք կարող են լինել ակնթարթային ներգործման կամ պարունակել արգելակիչներ: Այստեղ ընդգրկվում են դետոնացման քուղ պարունակող ճայթիչ ռելեները:

ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԴԵՏՈՆԱՏՈՐՆԵՐ՝ ՊԱՅԹԵՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ. ՄԱԿ-ի նշագրման 0030, 0255, 0456 համարներ

Պատրաստվածքներ, որոնք նախատեսված են պայթուցիկ նյութերի հարուցման համար: Այս դետոնատորները կարող են նախատեսված լինել ակնթարթային դետոնացման համար կամ պարունակեն արգելակիչներ: Էլեկտրական դետոնատորները գործարկվում են էլեկտրական հոսանքով:

ԴԵՏՈՆԱՏՈՐՆԵՐ՝ ՌԱԶՄԱՄԹԵՐՔԻ ՀԱՄԱՐ. ՄԱԿ-ի նշագրման համարներ 0073, 0364, 0365, 0366



Պատրաստվածքներ, որոնք կազմված են փոքր մետաղյա կամ պլաստմասսայե գլանից, որը պարունակում է այնպիսի պայթուցիկ նյութեր, ինչպիսիք են կապարի ազիդը, պենտաէրիտրիտիլ տետրանիտրատը, կամ պայթուցիկ նյութերի խառնուրդները: Դրանք նախատեսված են ճայթիչ շղթայի հարուցման համար:

ՈՉ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԴԵՏՈՆԱՏՈՐՆԵՐ՝ պայթեցման աշխատանքների համար. ՄԱԿ-ի նշագրման համարներ 0029, 0267, 0455

Պատրաստվածքներ, որոնք նախատեսված են պայթյունավտանգ նյութերի հարուցման համար: Այս դետոնատորները կարող են նախատեսված լինել ակնթարթային դետոնացման համար կամ պարունակեն արգելակիչներ: Ոչ էլեկտրական դետոնատորները գործարկվում են այնպիսի միջոցներով, ինչպիսիք են անվտանգ կրակատար քուղը, հարվածային խողովակը, իմպուլսային լամպը, այլ կրակատար հարմարանքներ կամ դետոնացման քուղը: Այստեղ ընդգրկվում են առանց դետոնացման քուղի ճայթիչ ռելեները:

ԲՈՒՆԿՎՈՂ ՊԱՅԹՅՈՒՆԱՎՏԱՆԳ ՆՅՈՒԹԵՐ, «A» տեսակի. ՄԱԿ-ի նշագրման 0081 համար

Նյութեր, որոնք պարունակում են հեղուկ օրգանական, նիտրատներ, ինչպիսիք են նիտրոգլիցերինը կամ նման բաղադրիչների խառնուրդները եւ հետեյալ նյութերից մեկը կամ ավելին՝ նիտրոցելյուլոզա, ամոնիումի նիտրատ կամ այլ անօրգանական նիտրատներ, արոմատիկ նիտրոածանցյալներ կամ այրվող նյութեր, ինչպիսիք են փայտալյուրը եւ այլումինի փոշին: Դրանք կարող են պարունակել իներտ բաղադրիչներ, ինչպիսին կիզելգուրն է, ու հավելանյութեր, ինչպիսիք ներկանյութերը եւ կայունարարներն են: Նման պայթուցիկ նյութերը պետք է լինեն փոշու, դոնդողի կամ առածգական նյութի տեսքով: Այս եզրույթը ներառում է դինամիտը, պայթուցիկ դինամիտը եւ ժելատինացված դինամիտը:

ԲՈՒՆԿՎՈՂ ՊԱՅԹՅՈՒՆԱՎՏԱՆԳ ՆՅՈՒԹԵՐ, «B» տեսակի. ՄԱԿ-ի նշագրման 0082, 0331 համարներ

Նյութեր, որոնք պարունակում են՝

- ա) ամոնիումի նիտրատի կամ այլ անօրգանական նիտրատների խառնուրդ այնպիսի պայթուցիկ նյութերով, ինչպիսին տրինիտրոտոլուոլն է, այլ նյութերով կամ առանց նման նյութերի, ինչպիսիք փայտալյուրը եւ այլումինի փոշին են,
- բ) ամոնիումի նիտրատի կամ այլ անօրգանական նիտրատների

խառնուրդ այլ այրվող նյութերի հետ, որոնք պայթուցիկ բաղադրիչներ են: Երկու դեպքում էլ դրանք կարող են պարունակել իներտ բաղադրիչներ, ինչպիսին կիզելգուրն է, եւ հավելանյութեր, ինչպիսիք ներկանյութերն ու կայունարարներն են: Այդ պայթուցիկ նյութերը չպետք է պարունակեն նիտրոզվիցերին, նմանատիպ հեղուկ օրգանական նիտրատներ կամ քլորատներ:

ԲՈՒԿՎՈՂ ՊԱՅԹՅՈՒՆԱՎՏԱՆԳ ՆՅՈՒԹԵՐ՝ «C» տեսակի. ՄԱԿ-ի նշագրման 0083 համար

Նյութեր, որոնք պարունակում են կա՛մ կալիումի կամ նատրիումի քլորատի խառնուրդ, կա՛մ կալիումի, նատրիումի կամ ամոնիումի պերքլորատի խառնուրդ՝ օրգանական նիտրոածանցյալներով կամ այրվող նյութերով, ինչպիսիք են փայտալյուրը կամ ալյումինի փոշին կամ ածխաջրածինը: Դրանք կարող են պարունակել իներտ բաղադրիչներ, ինչպիսին կիզելգուրն է, եւ հավելանյութեր, ինչպիսիք ներկանյութերը եւ կայունարարներն են: Այդ պայթուցիկ նյութերը չպետք է պարունակեն նիտրոզվիցերին, նմանատիպ հեղուկ օրգանական նիտրատներ կամ քլորատներ:

ԲՈՒԿՎՈՂ ՊԱՅԹՅՈՒՆԱՎՏԱՆԳ ՆՅՈՒԹԵՐ՝ «D» տեսակի. ՄԱԿ-ի նշագրման 0084 համար

Նյութեր, որոնք պարունակում են օրգանական ազոտացված միացությունների եւ այնպիսի այրվող նյութերի խառնուրդներ, ինչպիսիք են ածխաջրածինները եւ ալյումինի փոշին: Դրանք կարող են պարունակել իներտ բաղադրիչներ, ինչպիսին կիզելգուրն է, եւ հավելանյութեր, ինչպիսիք ներկանյութերը եւ կայունարարներն են: Այդ պայթուցիկ նյութերը չպետք է պարունակեն նիտրոզվիցերին, նմանատիպ հեղուկ օրգանական նիտրատներ, քլորատներ կամ ամոնիումի նիտրատ: Եզրույթը ներառում է պլաստիկ պայթուցիկ նյութերը:

ԲՈՒԿՎՈՂ ՊԱՅԹՅՈՒՆԱՎՏԱՆԳ ՆՅՈՒԹԵՐ՝ «E» տեսակի. ՄԱԿ-ի նշագրման 0241, 0332 համարներ

Նյութեր, որոնց հիմնական բաղադրիչը ջուրն է, եւ պարունակում են ամոնիումի նիտրատի կամ այլ օքսիդացնող նյութերի մեծ մասնաբաժիններ, որոնց մի քանիսը կամ բոլորը լուծված են: Մյուս բաղադրիչներից կարող են լինել նիտրոածանցյալները, ինչպիսիք են տրինիտրոտոլուոլը, ածխաջրածինները կամ ալյումինի փոշին: Դրանք կարող են պարունակել իներտ բաղադրիչներ, ինչպիսին կիզելգուրն է, եւ այնպիսի հավելանյութեր, ինչպիսիք ներկանյութերը եւ կայունարարներն են: Եզրույթը ներառում է էմուլսիոն, սուսպենզիոն եւ ջրադոնդողային պայթուցիկ նյութեր:

ՀՐԱՎԱՌՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ. ՄԱԿ-ի նշագրման 0333, 0334, 0335, 0336, 0337 համարներ

Հրատեխնիկական պատրաստվածքներ, որոնք նախատեսված են ժամանցային միջոցառումների համար:

ԱԶԴԱՆՇԱՆԱՅԻՆ ՀՐԹԻՌՆԵՐ՝ ՕԴԱՅԻՆ. ՄԱԿ-ի նշագրման 0093, 0403, 0404, 0420, 0421 համարներ

Պատրաստվածքներ, որոնք պարունակում են հրատեխնիկական նյութեր եւ նախատեսված են թռչող սարքերից նետելու համար՝ լուսավորության, նույնականացման համար, ազդանշաններ կամ նախազգուշացում հաղորդելու նպատակով:

ԱԶԴԱՆՇԱՆԱՅԻՆ ՀՐԹԻՌՆԵՐ՝ ՅԱՄԱՔԱՅԻՆ. ՄԱԿ-ի նշագրման 0092, 0418, 0419 համարներ

Պատրաստվածքներ, որոնք պարունակում են հրատեխնիկական նյութեր եւ նախատեսված են ցամաքում օգտագործելու համար՝ լուսավորության, նույնականացման համար՝ ազդանշաններ կամ նախազգուշացում հաղորդելու նպատակով:

ՎԱՌՈՂ՝ ՀՐԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ. ՄԱԿ-ի նշագրման 0094, 0305 համարներ

Հրատեխնիկական նյութ, որը բռնկվելիս ուժեղ լույս է արձակում:

ՄԱՍՆԱՏՈՂ ՍԱՐՔԵՐ, ՊԱՅԹՅՈՒՆԱՎՏԱՆԳ՝ առանց դետոնատորի, նավթահորերի համար. ՄԱԿ-ի նշագրման 0099 համար

Պատրաստվածքներ, որոնք պարունակում են դետոնացնող պայթուցիկ նյութի լիցք, որն առանց հարուցիչ միջոցների տեղադրված է պարկուճում: Դրանք օգտագործվում են հորատման հատվածամասում՝ ժայռը մասերի բաժանելու համար, որպեսզի հնարավոր լինի ապահովել ժայռից դուրս եկող չմշակված նավթի հոսքը:

ՔՈՒՂ՝ ԿՐԱԿԱՏԱՐ, խողովակաձեւ, մետաղական պատվածքով. ՄԱԿ-ի նշագրման 0103 համար

Պատրաստվածք, որը պարունակում է մետաղական գլան՝ դեֆլագրացող պայթուցիկ նյութից կազմված միջաձողով:

ՔՈՒՂ՝ ԱՌԱՆՑ ԴԵՏՈՆԱՅՄԱՆ. ՄԱԿ-ի նշագրման 0101 համար

Պատրաստվածք, որը պարունակում է բամբակե մանվածք, որը հագեցած է մանրահատիկ ծխատու վառողով (դյուրավառ կրակատար քուր): Այն այրվում է բաց բոցով եւ օգտագործվում է հրավառության միջոցների կրակատար շղթաներում:

ՔՈՒՂ՝ ԿՐԱԿԱՏԱՐ, ԱՆՎՏԱՆԳ. ՄԱԿ-ի նշագրման 0105 համար

Պատրաստվածք, որը պարունակում է մանրահատիկ ծխատու վառող՝ տեղադրված ճկուն գործվածքի թաղանթում, երկու կամ ավելի

պաշտպանիչ արտաքին պատյանով: Բռնկման ժամանակ այն այրվում է սահմանված արագությամբ՝ առանց արտաքին պայթուցիկ ազդեցության:

ԴԵՏՈՆԱՑՄԱՆ ՔՈՒՂԵՐ. ՄԱԿ-ի նշագրման 0106, 0107, 0257, 0367 համարներ

Պատրաստվածքներ՝ պայթուցիկ բաղադրիչներով, որը նախատեսված է ռազմամթերքում դետոնացում առաջացնելու համար: Դրանք ներառում են մեխանիկական, էլեկտրական, քիմիական կամ հիդրոստատիկ բաղադրիչներ՝ դետոնացում առաջացնելու համար: Դրանք սովորաբար ներառում են պաշտպանիչ սարքավորումներ:

ԴԵՏՈՆԱՑՄԱՆ ՔՈՒՂԵՐ՝ պաշտպանիչ սարքավորումներով. ՄԱԿ-ի նշագրման 0408, 0409, 0410 համարներ

Պատրաստվածքներ՝ պայթուցիկ բաղադրիչներով, որոնք նախատեսված են ռազմամթերքում դետոնացում առաջացնելու համար: Դրանք ներառում են մեխանիկական, էլեկտրական, քիմիական կամ հիդրոստատիկ բաղադրիչներ՝ դետոնացում առաջացնելու համար: Դետոնացման քուղը պետք է պարունակի երկու կամ ավելի պաշտպանիչ սարքավորումներ:

ԿՐԱԿԱՏԱՐ ՔՈՒՂԵՐ. ՄԱԿ-ի նշագրման 0316, 0317, 0368 համարներ

Պատրաստվածքներ՝ պայթուցիկ բաղադրիչներով, որը նախատեսված է ռազմամթերքում դեֆլագրացիա առաջացնելու համար: Դրանք ներառում են մեխանիկական, էլեկտրական, քիմիական կամ հիդրոստատիկ բաղադրիչներ՝ դեֆլագրացիա առաջացնելու համար: Դրանք սովորաբար պարունակում են պաշտպանիչ սարքավորումներ:

ՆՌՆԱԿՆԵՐ՝ ձեռքի կամ հրացանի, պայթուցիկ լիցքով. ՄԱԿ-ի նշագրման 0284, 0285 համարներ

Պատրաստվածքներ, որոնք նախատեսված են ձեռքով կամ հրացանի նռնականետով նետելու համար: Դրանք չունեն հարուցիչ միջոցներ կամ ունեն երկու կամ ավելի պաշտպանիչ սարքավորումներ պարունակող հարուցիչ միջոցներ:

ՆՌՆԱԿՆԵՐ՝ ձեռքի կամ հրացանի, պայթուցիկ լիցքով. ՄԱԿ-ի նշագրման 0292, 0293 համարներ

Պատրաստվածքներ, որոնք նախատեսված են ձեռքով կամ հրացանով նետման համար: Դրանք պարունակում են երկու կամ ավելի արդյունավետ ապահովիչ սարքավորումներ չպարունակող հարուցիչ միջոցներ:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՌՆԱԿՆԵՐ՝ ձեռքի կամ հրացանի. ՄԱԿ-ի նշագրման 0110, 0372, 0318, 0452 համարներ

Պատրաստվածքներ՝ առանց պայթուցիկ լիցքի, որոնք նախատեսված են ձեռքով կամ հրացանով նետման համար: Դրանք պարունակում են պատիճ եւ կարող են պարունակել նշանափորձման պայթուցիկ լիցք:

ՀԵՔՍՈՏՈՆԱԼ. ՄԱԿ-ի նշագրման 0393 համար

Նյութ, որը կազմված է ցիկլոտրիմեթիլեն-տրինիտրամինի, տրինիտրոտոլուոլի եւ ալյումինի միատարր խառնուրդից:

ՀԵՔՍՈԼԻՏ (ՀԵՔՍՈՏՈԼ)՝ չոր կամ խոնավացված, 15%-ից պակաս ջրով՝ ըստ զանգվածի. ՄԱԿ-ի նշագրման 0118 համար

Նյութ, որը կազմված է ցիկլոտրիմեթիլեն-տրինիտրամինի ու տրինիտրոտոլուոլի միատարր խառնուրդից: Եզրույթը ներառում է «B» կոմպոզիցիան:

ԲՈՑԱՎԱՌԻՉՆԵՐ. ՄԱԿ-ի նշագրման 0121, 0314, 0315, 0325, 0454 համարներ

Պատրաստվածքներ, որոնք պարունակում են մեկ կամ ավելի պայթուցիկ նյութեր եւ նախատեսված են հրահաղորդիչներում դեֆլագրացիա առաջացնելու համար: Դրանք կարող են գործարկվել քիմիական, էլեկտրական կամ մեխանիկական միջոցներով:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Հետեյալ պատրաստվածքները՝ ԿՐԱԿԱՏԱՐ ՔՈՒՂ, ԱՌԱՆՑ ԴԵՏՈՆԱՑՄԱՆ ՔՈՒՂ, ԿՐԱԿԱՏԱՐ ՔՈՒՂԻ ԲՈՒՆԿԻՉՆԵՐ, ԲՈՒՆԿՎՈՂ ՊԱՏԻՃՆԵՐ, ՀՐԱՊԱՏԻՃԻ ԱԿԱՆՈՑՆԵՐ, չեն ներառվում սույն սահմանման մեջ: Դրանք ընդգրկվում են առանձին ցանկում:

ՊԵՐՖՈՐԱՑԻՈՆ ԱՐԿԵՐ՝ նավթահորերի համար, առանց դետոնատորի. ՄԱԿ-ի նշագրման 0124, 0494 համարներ

Պատրաստվածքներ, որոնք կազմված են պողպատե գլանից կամ մետաղական ձողից, որոնց մեջ ներառված են կուտակիչ լիցքեր՝ կապված դետոնացման քուղով, առանց հարուցիչ միջոցների:

ԿՐԱԿԱՏԱՐ ՔՈՒՂԻ ԲՈՒՆԿԻՉՆԵՐ. ՄԱԿ-ի նշագրման 0131 համար

Տարբեր կառուցվածք ունեցող պատրաստվածքներ, որոնք գործարկվում են շփելու, հարվածի կամ էլեկտրականության միջոցով եւ օգտագործվում են այրիչ փողակները բոցավառելու համար:

ԱԿԱՆՆԵՐ՝ պայթուցիկ լիցքով. ՄԱԿ-ի նշագրման 0137, 0138 համարներ

Պատրաստվածքներ, որոնք սովորաբար պարունակում են

մետաղական կամ բարդ տարաներ, որոնք լցված են դետոնացող պայթուցիկ նյութով՝ առանց հարուցիչ միջոցների կամ երկու կամ ավելի արդյունավետ ապահովիչ սարքավորումներ պարունակող հարուցիչ միջոցներով: Դրանք նախատեսված են նավերի, փոխադրամիջոցների միջանցքներում կամ անձնակազմի կողմից գործարկվելու համար: Եզրույթը ներառում է «Բանգալորյան տորպեդները»:

ԱԿԱՆՆԵՐ՝ պայթուցիկ լիցքով. ՄԱԿ-ի նշագրման 0136, 0294 համարներ

Պատրաստվածքներ, որոնք սովորաբար պարունակում են դետոնացող պայթուցիկ նյութով լցված մետաղական կամ բարդ տարաներ՝ հարուցիչ միջոցներով, որոնք պարունակում են երկու կամ ավելի արդյունավետ ապահովիչ սարքավորումներ: Դրանք նախատեսված են նավերի, փոխադրամիջոցների միջանցքներում կամ անձնակազմի կողմից գործարկվելու համար: Եզրույթը ներառում է «Բանգալորյան տորպեդները»:

ՕԿՏՈԼԻՏ (ՕԿՏՈԼ)՝ չոր կամ խոնավացված, 15%-ից պակաս ջրով՝ ըստ զանգվածի. ՄԱԿ-ի նշագրման 0266 համար

Նյութ, որը կազմված է ցիկլոտրիմեթիլ-տետրանիտրամինի ու տրինիտրոտոլուոլի միատարր խառնուրդից:

ՕԿՏՈՆԱԼ. ՄԱԿ-ի նշագրման 0496 համար

Նյութ, որը կազմված է ցիկլոտետրամեթիլտետրանիտրամինի, տրինիտրոտոլուոլի եւ այլումինի միատարր խառնուրդից:

ՊԵՆՏՈԼԻՏ՝ չոր կամ խոնավացված, 15%-ից պակաս ջրով՝ ըստ զանգվածի. ՄԱԿ-ի նշագրման 0151 համար

Նյութ, որը կազմված է պենտաէրիտրիտքառանիտրատի ու տրինիտրոտոլուոլի միատարր խառնուրդից:

ՄԱՆՐԱՑՎԱԾ ՎԱՌՈՂ՝ ԽՈՆԱՎԱՑՎԱԾ ոչ պակաս, քան 17 % ալկոհոլով՝ ըստ զանգվածի

ՄԱՆՐԱՑՎԱԾ ՎԱՌՈՂ, ԽՈՆԱՎԱՑՎԱԾ ոչ պակաս, քան 25% ջրով՝ ըստ զանգվածի. ՄԱԿ-ի նշագրման 0433, 0159 համարներ

Նյութ, որը պարունակում է նիտրոթաղանթանյութ, որը հագեցված է ոչ ավելի, քան 60 % նիտրոգլիցերինով կամ այլ հեղուկ օրգանական նիտրատներով կամ դրանց խառնուրդով:

ԱՆԾՈՒԽ ՎԱՌՈՂ. ՄԱԿ-ի նշագրման 0160, 0161, 0509 համարներ

Նիտրոթաղանթանյութի հիմքի վրա նյութ, որն օգտագործվում է որպես նետողական պայթյունավտանգ նյութ: Եզրույթի մեջ մտնում են միայն մեկ հիմքով (միայն նիտրոթաղանթանյութ), երկու հիմքով (ինչպիսիք

նիտրոթաղանթանյութը եւ նիտրոգլիցերինն են) եւ եռահիմք (նիտրոթաղանթանյութ, նիտրոգլիցերին, նիտրոգուանիդին) նետողական պայթյունավտանգ նյութերը:

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Անծուխ վառողի՝ լցովի, մամլած եւ վառողային լիցքերը ներառված են ՆԵՏՈՂԱԿԱՆ ԼԻՑՔԵՐ կամ ՀՐԱՆՈԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԵՏՈՂԱԿԱՆ ԼԻՑՔԵՐ սահմանման մեջ:*

ՊԱՏԻՃՆԵՐ ԲՈՒՆԿՎՈՂ. ՄԱԿ-ի նշագրման 0044, 0377, 0378 համարներ

Պատրաստվածքներ, որոնք կազմված են մետաղյա կամ պլաստմասսայե թասակից, որը պարունակում է պայթյունավտանգ խառնուրդ, որը հեշտորեն բռնկվում է հարվածի հետեւանքով: Դրանք ծառայում են որպես բոցավառվող տարրեր՝ հրազենի փամփուշտներում եւ հարվածային պատիճներում նետողական լիցքերի համար:

ՀՐԱՊԱՏԻՃԻ ԱԿԱՆՈՅՆԵՐ. ՄԱԿ-ի նշագրման 0319, 0320, 0376 համարներ

Պատրաստվածքներ, որոնք պարունակում են բռնկման առաջնային միջոց եւ այնպիսի դեֆլագրացող պայթյունավտանգ նյութի լրացուցիչ լիցք, ինչպիսին ծխատու վառողն է, օգտագործվում են հրանոթի պարկուճում՝ նետողական լիցքը բռնկելու համար:

ԳՆԴԱԿՆԵՐ՝ իներտ, առանց հետագծող պատրաստվածքի. ՄԱԿ-ի նշագրման 0345, 0424, 0425 համարներ

Պատրաստվածքներ, ինչպիսին պարկուճը կամ փամփուշտն է, որոնք օգտագործվում են հրանոթից կամ այլ զենքից, հրացանից կամ այլ հրազենից կրակելու համար:

ԳՆԴԱԿՆԵՐ՝ պայթուցիկ կամ արտամղիչ լիցքով. ՄԱԿ-ի նշագրման 0346, 0347 համարներ

Պատրաստվածքներ, ինչպիսին պարկուճը կամ փամփուշտն է, որոնք օգտագործվում են հրանոթից կամ այլ զենքից կրակելու համար: Դրանք չեն պարունակում հարուցիչ միջոցներ, պարունակում են երկու կամ ավելի արդյունավետ պաշտպանիչ սարքավորումներ: Դրանք կիրառվում են հստակ տեղորոշման նպատակով ներկանյութեր կամ այլ իներտ նյութեր ցրելու համար:

ԳՆԴԱԿՆԵՐ՝ պայթուցիկ կամ արտամղիչ լիցքով. ՄԱԿ-ի նշագրման 0426, 0427 համարներ

Պատրաստվածքներ, ինչպիսին պարկուճը կամ փամփուշտն է, որոնք օգտագործվում են հրանոթից կամ այլ զենքից կրակելու համար: Դրանք

պարունակում են հարուցիչ միջոցներ, որոնք չեն պարունակում երկու կամ ավելի արդյունավետ ապահովիչ սարքավորումներ: Դրանք կիրառվում են հստակ տեղորոշման նպատակով ներկանյութեր կամ այլ իներտ նյութեր ցրելու համար:

ԳՆԴԱԿՆԵՐ՝ պայթուցիկ կամ արտամղիչ լիցքով. ՄԱԿ-ի նշագրման 0434, 0435 համարներ

Պատրաստվածքներ, ինչպիսին պարկուճը կամ փամփուշտն է, որոնք օգտագործվում են հրանոթից կամ այլ զենքից, հրացանից կամ այլ հրազենից կրակելու համար: Դրանք կիրառվում են հստակ տեղորոշման նպատակով ներկանյութեր կամ այլ իներտ նյութեր ցրելու համար:

ԳՆԴԱԿՆԵՐ՝ ՊԱՅԹՈՒՑԻԿ ԼԻՑՔՈՎ. ՄԱԿ-ի նշագրման 0168, 0169, 0344 համարներ

Պատրաստվածքներ, ինչպիսին պարկուճը կամ փամփուշտն է, որոնք օգտագործվում են հրանոթից կամ այլ զենքից կրակելու համար: Դրանք չեն պարունակում հարուցիչ միջոցներ կամ պարունակում են երկու կամ ավելի պաշտպանիչ սարքավորումներով հարուցիչ միջոցներ:

ՊԱՅԹՈՒՑԻԿ ԼԻՑՔՈՎ ԳՆԴԱԿՆԵՐ. ՄԱԿ-ի նշագրման 0167, 0324 համարներ

Պատրաստվածքներ, ինչպիսին պարկուճը կամ փամփուշտն է, որոնք օգտագործվում են հրանոթից կամ այլ զենքից կրակելու համար: Դրանք պարունակում են հարուցիչ միջոցներ, որոնք չեն պարունակում երկու կամ ավելի արդյունավետ ապահովիչ սարքավորումներ:

ՊԱՅԹՈՒՑԻԿ ՆՅՈՒԹ, ՆԵՏՈՂԱԿԱՆ, ՀԵՂՈՒԿ. ՄԱԿ-ի նշագրման 0495, 0497 համարներ

Նյութ, որը պարունակում է դեֆլագրացող հեղուկ պայթյունավտանգ նյութ, օգտագործվում է շարժում առաջացնելու համար:

ՊԱՅԹՈՒՑԻԿ ՆՅՈՒԹ՝ ՆԵՏՈՂԱԿԱՆ, ՊԻՆԴ. ՄԱԿ-ի նշագրման 0498, 0499, 0501 համարներ

Նյութ, որը պարունակում է դեֆլագրացող պինդ պայթյունավտանգ նյութ, օգտագործվում է շարժում առաջացնելու համար:

ԱՆՋԱՏԻՉ ՍԱՐՔԵՐ՝ ՊԱՅԹՅՈՒՆԱՎՏԱՆԳ. ՄԱԿ-ի նշագրման 0173 համար

Պայթյունավտանգ նյութի փոքր լիցք պարունակող պատրաստվածքներ՝ հարուցիչ միջոցներով եւ ձողերով կամ օղակներով: Դրանք ծառայում են ձգաձողերին կամ հողակապերին՝ սարքավորումն արագ անջատելու



համար:

ԳԱՄԵՐ ՊԱՅԹՅՈՒՆԱՎՏԱՆԳ. ՄԱԿ-ի նշագրման 0174 համար

Պատրաստվածքներ, որոնք մետաղական գամի ներսում պարունակում են պայթյունավտանգ նյութի փոքր լիցք:

ՀՐԹԻՌԱՅԻՆ ՇԱՐԺԻՉՆԵՐ. ՄԱԿ-ի նշագրման 0186, 0280, 0281, 0510 համարներ

Պատրաստվածքներ, որոնք պարունակում են պայթյունավտանգ նյութի լիցք՝ հիմնականում պինդ նետողական պայթյունավտանգ նյութ, որը գտնվում է գլանի ներսում՝ մեկ կամ ավելի ծայրափողակներով: Դրանք նախատեսված են հրթիռը կամ կառավարվող հրթիռը շարժման մեջ դնելու համար:

ՀՐԹԻՌԱՅԻՆ ՇԱՐԺԻՉՆԵՐ՝ ՀԵՂՈՒԿ ՎԱՌԵԼԻՔՈՎ ԼՅԱՎՈՐՎԱԾ. ՄԱԿ-ի նշագրման 0395, 0396 համարներ

Պատրաստվածքներ, որոնք պարունակում են հեղուկ վառելիք, որը գտնվում է գլանի մեջ՝ մեկ կամ ավելի ծայրափողակներով: Դրանք նախատեսված են հրթիռը կամ կառավարվող հրթիռը շարժման մեջ դնելու համար:

ՀՐԹԻՌԱՅԻՆ ՇԱՐԺԻՉՆԵՐ՝ հիպերգոլական հեղուկներ պարունակող, նետողական լիցքով կամ առանց նետողական լիցքի. ՄԱԿ-ի նշագրման 0322, 0250 համարներ

Պատրաստվածքներ, որոնք պարունակում են հիպերգոլական վառելիք, որը գտնվում է գլանի մեջ՝ մեկ կամ ավելի ծայրափողակներով: Դրանք նախատեսված են հրթիռը կամ կառավարվող հրթիռը շարժման մեջ դնելու համար:

ՀՐԹԻՌՆԵՐ, ՇՂԹԱՅԱՆԵՏ. ՄԱԿ-ի նշագրման 0238, 0240, 0453 համարներ

Պատրաստվածքներ, որոնք պարունակում են հրթիռային շարժիչ, որը նախատեսված է շղթա նետելու համար:

ՀՐԹԻՌՆԵՐ՝ ՀԵՂՈՒԿ ՎԱՌԵԼԻՔՈՎ ԼՅԱՎՈՐՎԱԾ, պայթուցիկ լիցքով. ՄԱԿ-ի նշագրման 0397, 0398 համարներ

Պատրաստվածքներ, որոնք պարունակում են հեղուկ վառելիք, որը գտնվում է գլանի մեջ՝ մեկ կամ ավելի ծայրափողակներով ու մարտագլխիկով: Եզրույթը ներառում է կառավարվող հրթիռները:

ՀՐԹԻՌՆԵՐ՝ ՊԱՅԹՅՈՒՑԻԿ ԼԻՑՔՈՎ. ՄԱԿ-ի նշագրման 0181, 0182 համարներ

Պատրաստվածքներ, որոնք պարունակում են հրթիռային շարժիչ եւ մարտագլխիկ՝ առանց հարուցիչ միջոցների կամ երկու կամ ավելի արդյունավետ ապահովիչ սարքավորումներ պարունակող հարուցիչ միջոցներով: Եզրույթը ներառում է կառավարվող հրթիռները:

ՀՐԹԻՌՆԵՐ՝ ՊԱՅԹՈՒՑԻԿ ԼԻՑԲՈՎ. ՄԱԿ-ի նշագրման 0180, 0295 համարներ

Պատրաստվածքներ, որոնք պարունակում են հրթիռային շարժիչ եւ մարտագլխիկ՝ հարուցիչ միջոցներով, որոնք չեն պարունակում երկու կամ ավելի արդյունավետ ապահովիչ սարքավորումներ: Եզրույթը ներառում է կառավարվող հրթիռները:

ՀՐԹԻՌՆԵՐ՝ ԱՐՏԱՄՂԻՉ ԼԻՑԲՈՎ. ՄԱԿ-ի նշագրման 0436, 0437, 0438 համարներ

Պատրաստվածքներ, որոնք պարունակում են հրթիռային շարժիչ եւ լիցք՝ հրթիռի գլխամասից օգտակար բեռ նետելու համար: Եզրույթը ներառում է կառավարվող հրթիռները:

ՀՐԹԻՌՆԵՐ՝ Իներտ գլխիկով. ՄԱԿ-ի նշագրման 0183, 0502 համարներ

Պատրաստվածքներ, որոնք պարունակում են հրթիռային շարժիչ եւ իներտ գլխիկ: Եզրույթը ներառում է կառավարվող հրթիռները:

ՀՐԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՍԱՐՔԵՐ. ՄԱԿ-ի նշագրման 0503 համար

Պատրաստվածքներ, որոնք պարունակում են հրատեխնիկական նյութեր կամ այլ դասի վտանգավոր բեռներ եւ օգտագործվում են փոխադրամիջոցներում, անոթներում կամ թռչող սարքերում՝ անձանց անվտանգությունն ուժեղացնելու համար: Դրանց օրինակներ են անվտանգության բարձիկների գազամղիչ սարքերը, անվտանգության բարձիկների մոդուլները, անվտանգության գոտիների վթարային ձգման սարքերը եւ հրամեխանիկական սարքերը: Այդ հրամեխանիկական սարքերը հավաքված բաղադրիչներ են, որոնք օգտագործվում են այնպիսի նպատակներով, ինչպես, օրինակ՝ առանձնացումը, կողպելը կամ օգտվողի պահումը:

ՊԱՅԹՅՈՒՆԱՎՏԱՆԳ ՆՅՈՒԹԵՐԻ ՆՄՈՒՇՆԵՐ՝ բացառությամբ հարուցիչ պայթյունավտանգ նյութերի. ՄԱԿ-ի նշագրման 0190 համար

Նոր կամ գոյություն ունեցող նյութեր կամ պատրաստվածքներ, որոնք դեռեւս 3.2 գլխի Ա աղյուսակում որեւէ անվանման մեջ չեն ընդգրկվել եւ փոխադրվում են իրավասու մարմինների հրահանգների համաձայն եւ սովորաբար փոքր քանակությամբ, մասնավորապես՝ փորձարկման, դասակարգման, գիտահետազոտական եւ փորձարարական

նախագծման կամ որակի կառավարման նպատակով կամ որպես առեւտրային նմուշներ:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Պայթյունավտանգ նյութեր կամ պատրաստվածքներ, որոնց արդեն ուրիշ անվանում է տրվել 3.2 գլխի Ա աղյուսակում, սույն սահմանման մեջ ներառված չեն:

ՁԵՌՔԻ ԱԶԴԱՆՇԱՆԱՅԻՆ ՍԱՐՔԵՐ. ՄԱԿ-ի նշագրման 0191, 0373 համարներ

Շարժական պատրաստվածքներ, որոնք պարունակում են հրատեխնիկական նյութեր, որոնք արձակում են վիզուալ ազդանշաններ կամ նախազգուշացումներ: Եզրույթը ներառում է փոքր ցամաքային հրթիռները, ինչպիսիք ավտոճանապարհային լուսավորող ջահերը կամ երկաթուղային հրափամփուշտները եւ աղետի ազդանշաններն են:

ՏԱԳՆԱՊԻ ԱԶԴԱՆՇԱՆՆԵՐ՝ նախատեսված նավերի համար. ՄԱԿ-ի նշագրման 0194, 0195, 0505, 0506 համարներ

Պատրաստվածքներ, որոնք պարունակում են հրատեխնիկական նյութեր, նախատեսված են ազդանշաններ արձակելու համար՝ ձայնի, կրակի կամ ծխի կամ դրանց համադրության միջոցով:

ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ՃԱՅԹՈՒՒԿՆԵՐ՝ ՊԱՅԹՅՈՒՆԱՎՏԱՆԳ. ՄԱԿ-ի նշագրման 0192, 0193, 0492, 0493 համարներ

Պատրաստվածքներ, որոնք պարունակում են հրատեխնիկական նյութ, որը պայթում է բարձր աղմուկով պատրաստվածքը ճզմելու դեպքում: Դրանք նախատեսված են երկաթգծերի վրա տեղադրելու համար:

ԾԻԱՅԻՆ ԱԶԴԱՆՇԱՆՆԵՐ. ՄԱԿ-ի նշագրման 0196, 0197, 0313, 0487, 0507 համարներ

Պատրաստվածքներ, որոնք պարունակում են հրատեխնիկական նյութեր, որոնք ծուխ են արձակում: Բացի այդ, նրանք կարող են պարունակել սարքեր՝ ձայնային ազդանշաններ արձակելու համար:

ՁԱՅՆԱՅԻՆ ԱԶԴԱՆՇԱՆՆԵՐ՝ ՊԱՅԹՅՈՒՆԱՎՏԱՆԳ. ՄԱԿ-ի նշագրման 0374, 0375 համարներ

Պատրաստվածքներ, որոնք պարունակում են դետոնացնող պայթուցիկ նյութի լիցք՝ առանց հարուցիչ միջոցների կամ երկու կամ ավելի արդյունավետ ապահովիչ սարքավորումներ պարունակող հարուցիչ միջոցներով: Դրանք նետվում են նավերից եւ գործարկվում են նախատեսված խորություն կամ ծովի հատակ հասնելուց հետո:

ՁԱՅՆԱՅԻՆ ԱԶԴԱՆՇԱՆՆԵՐ՝ ՊԱՅԹՅՈՒՆԱՎՏԱՆԳ. ՄԱԿ-ի նշագրման 0204, 0296 համարներ

Պատրաստվածքներ, որոնք պարունակում են դետոնացնող պայթուցիկ նյութի լիցք՝ հարուցիչ միջոցներով, որոնք չեն պարունակում երկու կամ ավելի արդյունավետ ապահովիչ սարքավորումներ: Դրանք նետվում են նավերից եւ գործարկվում են նախատեսված խորություն կամ ծովի հատակ հասնելուց հետո:

ՊԱՅԹՅՈՒՆԱՎՏԱՆԳ ՆՅՈՒԹԵՐ՝ ՇԱՏ ՑԱԾՐ ԶԳԱՅՈՒՆՈՒԹՅԱՄԲ (ՇՏՁ ՆՅՈՒԹԵՐ), ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ. ՄԱԿ-ի նշագրման 0482 համար

Նյութեր, որոնք ներկայացնում են զանգվածային պայթյունի վտանգ, բայց որոնց զգայունությունն այնքան ցածր է, որ շատ քիչ է հարուցման կամ այրումից դետոնացման անցնելու հավանականությունը փոխադրման բնականոն պայմաններում, եւ որոնք անցել են 5-րդ շարքի փորձարկումները:

ՏՈՐՊԵԴՆԵՐ՝ ՀԵՂՈՒԿ ՎԱՌԵԼԻՔՈՎ ԼՅԱՎՈՐՎԱԾ, իներտ գլխիկով. ՄԱԿ-ի նշագրման 0450 համար

Պատրաստվածքներ, որոնք պարունակում են հեղուկ պայթյունավտանգ վառելիքով աշխատող համակարգ՝ ջրի տակ տորպեդի շարժվելը հնարավոր դարձնելու համար, իներտ գլխիկով:

ՀՐԹԻՌՆԵՐ՝ ՀԵՂՈՒԿ ՎԱՌԵԼԻՔՈՎ ԼՅԱՎՈՐՎԱԾ, պայթուցիկ լիցքով կամ առանց պայթուցիկ լիցքի. ՄԱԿ-ի նշագրման 0449 համար

Պատրաստվածքներ, որոնք պարունակում են կա՛մ հեղուկ պայթյունավտանգ վառելիքով աշխատող համակարգ՝ ջրի տակ տորպեդի շարժվելը հնարավոր դարձնելու համար, մարտագլխիկով կամ առանց մարտագլխիկի, կա՛մ հեղուկ ոչ պայթյունավտանգ վառելիքով աշխատող համակարգ՝ ջրի տակ տորպեդի շարժվելը հնարավոր դարձնելու համար, մարտագլխիկով:

ՏՈՐՊԵԴՆԵՐ՝ ՊԱՅԹՈՒՑԻԿ ԼԻՑՔՈՎ. ՄԱԿ-ի նշագրման 0451 համար

Պատրաստվածքներ, որոնք պարունակում են հեղուկ ոչ պայթյունավտանգ վառելիքով աշխատող համակարգ՝ ջրի տակ տորպեդի շարժվելը հնարավոր դարձնելու համար, մարտագլխիկով՝ առանց հարուցիչ միջոցների կամ հարուցիչ միջոցներով, որոնք պարունակում են երկու կամ ավելի արդյունավետ ապահովիչ սարքավորումներ:

ՏՈՐՊԵԴՆԵՐ՝ ՊԱՅԹՈՒՑԻԿ ԼԻՑՔՈՎ. ՄԱԿ-ի նշագրման 0329 համար

Պատրաստվածքներ, որոնք պարունակում են հեղուկ պայթյունավտանգ վառելիքով աշխատող համակարգ՝ ջրի տակ տորպեդի շարժվելը

հնարավոր դարձնելու համար, մարտագլխիկով՝ առանց հարուցիչ միջոցների կամ հարուցիչ միջոցներով, որոնք պարունակում են երկու կամ ավելի արդյունավետ ապահովիչ սարքավորումներ:

ՏՈՐՊԵԴՆԵՐ՝ ՊԱՅԹՈՒՑԻԿ ԼԻՑԲՈՎ. ՄԱԿ-ի նշագրման 0330 համար

Պատրաստվածքներ, որոնք պարունակում են հեղուկ պայթյունավտանգ կամ ոչ պայթյունավտանգ վառելիքով աշխատող համակարգ՝ ջրի տակ տորպեդի շարժվելը հնարավոր դարձնելու համար, մարտագլխիկով՝ հարուցիչ միջոցներով, որոնք չեն պարունակում երկու կամ ավելի արդյունավետ ապահովիչ սարքավորումներ:

ՀԵՏԱԳԾՈՂ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՔՆԵՐ ՌԱԶՄԱՄԹԵՐՔԻ ՀԱՄԱՐ. ՄԱԿ-ի նշագրման 0212, 0306 համարներ

Հերմետիկ փակված պատրաստվածքներ, որոնք պարունակում են հրատեխնիկական նյութեր եւ նախատեսված են արկի ուղեծիրը ցույց տալու համար:

ՏՐԻՏՈՆԱԼ. ՄԱԿ-ի նշագրման 0390 համար

Նյութ, որը կազմված է տրինիտրոտոլուոլի եւ ալյումինի խառնուրդից:

ՀՐԹԻՌՆԵՐԻ ՄԱՐՏԱԳԼԽԻԿՆԵՐ՝ պայթուցիկ կամ արտամղիչ լիցքով. ՄԱԿ-ի նշագրման 0370 համար

Պատրաստվածքներ, որոնք պարունակում են իներտ մարտական մաս եւ դետոնացնող կամ դեֆլագրացող պայթյունավտանգ նյութի փոքր լիցք՝ առանց հարուցիչ միջոցների կամ երկու կամ ավելի արդյունավետ ապահովիչ սարքավորումներ պարունակող հարուցիչ միջոցներով: Դրանք նախատեսված են հրթիռի շարժիչին ամրացնելու համար՝ իներտ նյութը ցրելու նպատակով: Եզրույթը ներառում է կառավարվող հրթիռների մարտագլխիկները:

ՀՐԹԻՌՆԵՐԻ ՄԱՐՏԱԳԼԽԻԿՆԵՐ՝ պայթուցիկ կամ արտամղիչ լիցքով. ՄԱԿ-ի նշագրման 0371 համար

Պատրաստվածքներ, որոնք պարունակում են իներտ մարտական մաս եւ դետոնացնող կամ դեֆլագրացող պայթյունավտանգ նյութի փոքր լիցք՝ հարուցիչ միջոցներով, որոնք չեն պարունակում երկու կամ ավելի արդյունավետ ապահովիչ սարքավորումներ: Դրանք նախատեսված են հրթիռի շարժիչին ամրացնելու համար՝ իներտ նյութը ցրելու նպատակով: Եզրույթը ներառում է կառավարվող հրթիռների մարտագլխիկները:

ՀՐԹԻՌՆԵՐԻ ՄԱՐՏԱԳԼԽԻԿՆԵՐ՝ պայթուցիկ լիցքով. ՄԱԿ-ի նշագրման 0286, 0287 համարներ

Պատրաստվածքներ, որոնք պարունակում են դետոնացնող պայթուցիկ նյութի լիցք՝ առանց հարուցիչ միջոցների կամ երկու կամ ավելի արդյունավետ ապահովիչ սարքավորումներ պարունակող հարուցիչ միջոցներով: Դրանք նախատեսված են հրթիռներին ամրացնելու համար: Եզրույթը ներառում է կառավարվող հրթիռների մարտագլխիկները:

ՀՐԹԻՌՆԵՐԻ ՄԱՐՏԱԳԼԽԻԿՆԵՐ՝ պայթուցիկ լիցքով. ՄԱԿ-ի նշագրման 0369 համար

Պատրաստվածքներ, որոնք պարունակում են դետոնացնող պայթուցիկ նյութի լիցք՝ հարուցիչ միջոցներով, որոնք չեն պարունակում երկու կամ ավելի արդյունավետ ապահովիչ սարքավորումներ: Դրանք նախատեսված են հրթիռներին ամրացնելու համար: Եզրույթը ներառում է կառավարվող հրթիռների մարտագլխիկները:

ՏՈՐՊԵԴՆԵՐԻ ՄԱՐՏԱԳԼԽԻԿՆԵՐ՝ պայթուցիկ լիցքով. ՄԱԿ-ի նշագրման 0221 համար

Պատրաստվածքներ, որոնք պարունակում են դետոնացնող պայթուցիկ նյութի լիցք՝ առանց հարուցիչ միջոցների կամ երկու կամ ավելի արդյունավետ ապահովիչ սարքավորումներ պարունակող հարուցիչ միջոցներով: Դրանք նախատեսված են տորպեդներին ամրացնելու համար:

2.2.2. Դաս 2 Գազերը

2.2.2.1. Չափորոշիչները

2.2.2.1.1. 2-րդ դասի վերնագրի ներքո ընդգրկվում են մաքուր գազերը, գազային խառնուրդները, մեկ կամ ավելի գազերի խառնուրդները մեկ կամ ավելի այլ նյութերի հետ եւ այդպիսի նյութեր պարունակող պատրաստվածքները:

Գազը մի նյութ է, որը՝

ա) 50 °C ջերմաստիճանում ունի 300 կՊա-ից (3 բար) բարձր գոլորշու ճնշում, կամ

բ) 20 °C ջերմաստիճանում 101.3 կՊա ստանդարտ ճնշման դեպքում լրիվ գազային է:

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1. ՄԱԿ-ի նշագրման 1052 համարի ՋՐԱԾՆԻ ՖՏՈՐԻԴԸ՝ ԱՆՋՈՒՐ, այնուամենայնիվ, դասակարգված է 8-րդ դասում:*

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2. Մաքուր գազը կարող է պարունակել իր արտադրության գործընթացի արդյունքում առաջացող կամ արտադրանքի կայունությունը պահպանելու նպատակով հավելված այլ բաղադրիչներ՝ պայմանով, որ այդ բաղադրիչների մակարդակը չի փոփոխի դրա դասակարգումը կամ փոխադրման պայմանները, ինչպես, օրինակ՝ լցավորման գործակիցը, լցավորման ճնշումը եւ փորձարկման ճնշումը:*

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3. Այլ կերպ չնշված (ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ) դիրքերը 2.2.2.3-ում կարող են ներառել մաքուր գազեր, ինչպես նաեւ խառնուրդներ:*

2.2.2.1.2. 2 դասի նյութերը եւ պատրաստվածքները բաժանվում են հետեւյալ ենթախմբերի՝

1. Սեղմված գազ՝ գազ, որը փոխադրման նպատակով ճնշման տակ փաթեթավորվելու դեպքում -50°C ջերմաստիճանում ամբողջությամբ գազային է. սույն կատեգորիայում ընդգրկվում են -50°C ջերմաստիճանին հավասար կամ դրանից ցածր կրիտիկական ջերմաստիճան ունեցող գազերը.

2. Հեղուկացված գազ՝ գազ, որը փոխադրման նպատակով ճնշման տակ փաթեթավորվելու դեպքում -50°C-ից բարձր ջերմաստիճաններում մասամբ հեղուկ է: Հարկ է տարանջատել՝

բարձր ճնշման հեղուկացված գազը՝ -50°C-ից բարձր կամ +65°C-ից ցածր կամ դրան հավասար կրիտիկական ջերմաստիճան ունեցող գազ. եւ

ցածր ճնշման հեղուկացված գազը՝ +65°C-ից բարձր կրիտիկական ջերմաստիճան ունեցող գազ.

3. Սառեցված հեղուկացված գազ՝ գազ, որը փոխադրման նպատակով փաթեթավորվելու ժամանակ դարձվում է մասամբ հեղուկ՝ իր ցածր ջերմաստիճանի շնորհիվ.
4. Լուծված գազ՝ գազ, որը փոխադրման նպատակով ճնշման տակ փաթեթավորվելու ժամանակ լուծվում է հեղուկ ֆազայում գտնվող լուծիչում.
5. Աերոզոլային ցողացիրներ եւ տարաներ՝ փոքր, գազ պարունակող (գազի անոթներ).
6. Ճնշման տակ գտնվող գազ պարունակող այլ պատրաստվածքներ.
7. Ճնշման տակ չգտնվող գազեր, որոնց նկատմամբ կիրառվում են հատուկ պահանջներ (գազի նմուշներ):
8. Ճնշման տակ գտնվող քիմիական նյութեր՝ հեղուկներ, մածուկներ կամ փոշիներ՝ արտամղիչի ճնշման տակ, որը համապատասխանում է սեղմված կամ հեղուկացված գազի եւ դրանց խառնուրդի սահմանմանը:
9. Ադսորբացված գազ՝ գազ, որը փոխադրման նպատակով փաթեթավորվելու ժամանակ ներծծվում է պինդ ծակոտկեն նյութի մեջ՝ հանգեցնելով 20°C ջերմաստիճանում 101.3 կՊա-ից ցածր եւ 50°C ջերմաստիճանում 300 կՊա-ից ցածր տարայի ներքին ճնշման:

2.2.2.1.3. 2-րդ դասի նյութերը եւ պատրաստվածքները (բացառությամբ աերոզոլների եւ ճնշման տակ գտնվող քիմիական նյութերի) ընդգրկվում են ստորեւ բերված խմբերից մեկի ներքո՝ ըստ իրենց վտանգավոր հատկանիշների հետեւյալ կերպ՝

A	խեղդող
O	օքսիդացնող
F	դյուրավառ
T	թունավոր
TF	թունավոր, դյուրավառ
TC	թունավոր, կոռոզիոն
TO	թունավոր, օքսիդացնող
TFC	թունավոր, դյուրավառ, կոռոզիոն
TOC	թունավոր, օքսիդացնող, կոռոզիոն:



Չափորոշիչների համաձայն՝ մեկից ավելի խմբերի հետ կապված վտանգավոր հատկանիշներ ներկայացնող գազերի եւ գազային խառնուրդների համար T տառով նշանակված խմբերը գերակայում են բոլոր այլ խմբերի նկատմամբ: F տառով նշանակված խմբերը գերակայում են «A» կամ «O» տառերով նշանակված խմբերի նկատմամբ:

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1. ՄԱԿ-ի տիպային կանոնակարգերում, ՎԲՄԾ (Վտանգավոր բեռների միջազգային ծովային փոխադրման) կանոնագրքում եւ ԻԿԱՕ-ի տեխնիկական ցուցումներում գազերն ընդգրկվում են ստորեւ բերված երեք ենթադասերից մեկում՝ էլնելով առաջնային վտանգից՝*

Ենթադաս 2.1. դյուրավառ գազեր («F» մեծատառով նշանակված խմբերին համապատասխանող).

Ենթադաս 2.2. ոչ դյուրավառ, ոչ թունավոր գազեր («A» կամ «O» մեծատառերով նշանակված խմբերին համապատասխանող).

Ենթադաս 2.3. թունավոր գազեր (մեծատառ T-ով, այսինքն՝ «T», «TF», «TC», «TO», «TFC» եւ «TOC»-ով նշանակված խմբերին համապատասխանող):

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2. Տարաները՝ փոքր, գազ պարունակող (ՄԱԿ-ի նշագրման 2037 համար) ընդգրկվում են «A»-ից մինչեւ «TOC» խմբերում՝ պարունակության ներկայացրած վտանգի համաձայն: Աերոզոլների դեպքում (ՄԱԿ-ի նշագրման 1950 համար) տե՛ս 2.2.2.1.6: Ճնշման տակ գտնվող քիմիական նյութերի դեպքում տե՛ս 2.2.2.1.7 (ՄԱԿ-ի նշագրման 3500-3505 համարներ):*

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3. Կոռոզիոն գազերը համարվում են թունավոր, այդ իսկ պատճառով ընդգրկվում են «TC», «TFC» կամ «TOC» խմբերում:*

2.2.2.1.4. Եթե 3.2 գլխի Ա աղյուսակում անվանմամբ նշված 2-րդ դասի խառնուրդը համապատասխանում է 2.2.2.1.2-ում եւ 2.2.2.1.5-ում նշված տարբեր չափորոշիչներին, ապա այս խառնուրդը պետք է դասակարգվի այդ չափորոշիչների համաձայն եւ ընդգրկվի ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ համապատասխան դիրքում:

2.2.2.1.5. 2-րդ դասի այն նյութերը եւ պատրաստվածքները (բացառությամբ աերոզոլների եւ ճնշման տակ գտնվող քիմիական նյութերի), որոնք անվանմամբ նշված չեն 3.2 գլխի Ա աղյուսակում, պետք է դասակարգվեն 2.2.2.3-ում թվարկված հավաքական դիրքի ներքո՝ 2.2.2.1.2-ի եւ 2.2.2.1.3-ի համաձայն: Կիրառվում են հետեւյալ չափորոշիչները.

### Խեղդող գազեր

Գազեր, որոնք օքսիդացնող, դյուրավառ ու թունավոր չեն, եւ որոնք սովորաբար լուծում են մթնոլորտում առկա թթվածինը կամ փոխարինում են դրան:

### Դյուրավառ գազեր

Գազեր, որոնք 20 °C ջերմաստիճանում եւ 101.3 կՊա ստանդարտ ճնշման ներքո՝

- ա) բռնկվող են, երբ առկա են 13% կամ դրանից պակաս ծավալով օդ պարունակող խառնուրդում, կամ
- բ) օդի հետ ունեն առնվազն 12 տոկոսային կետ բռնկման ընդգրկույթ՝ անկախ բռնկման առավել ցածր սահմանաչափից:

Դյուրավառությունը պետք է որոշվի փորձարկումների կամ հաշվարկի միջոցով՝ ISO-ի կողմից ընդունված մեթոդների համաձայն (տե՛ս ISO 10156:2010):

Այդ մեթոդները կիրառելու համար ոչ բավականաչափ տվյալների առկայության դեպքում կարող են կիրառվել ծագման երկրի իրավասու մարմնի կողմից ճանաչված համադրելի մեթոդով փորձարկումները:

Եթե ծագման երկիրը «ԱԴԲ» համաձայնագրի Պայմանավորվող կողմ չէ, ապա այդ մեթոդները պետք է ճանաչվեն «ԱԴԲ» համաձայնագրի Պայմանավորվող կողմ հանդիսացող այն երկրի իրավասու մարմնի կողմից, որի տարածք բեռն առաջինն է հասնում:

### Օքսիդացնող գազեր

Գազեր, որոնք կարող են, հիմնականում թթվածին մատակարարելով, ավելի հաճախ հանգեցնել կամ նպաստել այլ նյութի այրմանը, քան օդը: Դրանք մաքուր գազեր են կամ գազային խառնուրդներ՝ ISO 10156:2010 ստանդարտում սահմանված մեթոդով որոշված 23.5%-ից բարձր օքսիդացնող հատկությամբ:

### Թունավոր գազեր

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Այն գազերը, որոնք իրենց կոռոզիականության պատճառով մասամբ կամ ամբողջությամբ համապատասխանում են թունավորության չափորոշիչներին, պետք է դասակարգվեն որպես թունավոր: Տե՛ս նաեւ «Կոռոզիոն գազեր» վերնագրի ներքո ընդգրկվող չափորոշիչները՝ կոռոզիականության հնարավոր լրացուցիչ ռիսկի համար:*

Գազեր, որոնք՝

- ա) հայտնի են որպես մարդկանց համար այնքան թունավոր կամ կոռոզիոն, որ կարող են վտանգ սպառնալ նրանց առողջությանը, կամ
- բ) ենթադրվում է, որ թունավոր կամ կոռոզիոն են մարդկանց համար, քանի որ դրանք ունեն սուր թունավորության LC50 արժեք, որը 2.2.61.1-ի համաձայն փորձարկվելիս հավասար կամ պակաս է 5 000 մլ/մ<sup>3</sup> (ppm)-ից:

Գազային խառնուրդների դեպքում (ներառյալ՝ այլ դասերի նյութերի գոլորշիները) կարող է կիրառվել հետևյալ բանաձևեր՝

$$LC_{50} \text{ Toxic (mixture)} = \frac{1}{\sum_{i=1}^n \frac{f_i}{T_i}}$$

որտեղ՝  $f_i$ -ն խառնուրդի  $i$ -րդ բաղադրիչ նյութի մոլյար բաժինն է.

$T_i$ -ն խառնուրդի  $i$ -րդ բաղադրիչ նյութի թունավորության ինդեքսն է:

$T_i$ -ն հավասար է LC50 արժեքին, ինչպես նշված է 4.1.4.1-ի P200 փաթեթավորման ցուցման մեջ:

Եթե 4.1.4.1-ի P200 փաթեթավորման ցուցման մեջ ոչ մի LC50 արժեք նշված չէ, ապա պետք է կիրառվի գիտական գրականության մեջ առկա LC50 արժեքը:

Եթե LC50 արժեքը հայտնի չէ, ապա թունավորության ինդեքսը որոշվում է համանման ֆիզիոլոգիական եւ քիմիական ազդեցություն ունեցող նյութերի ամենացածր LC50 արժեքի կիրառմամբ կամ փորձարկման միջոցով, եթե դա միակ գործնական հնարավորությունն է:

Կոռոզիոն գազեր

Իրենց կոռոզիականության պատճառով թունավորության չափորոշիչներին միանգամայն համապատասխանող գազերը կամ գազային խառնուրդները պետք է դասակարգվեն որպես թունավոր՝ կոռոզիականության լրացուցիչ ռիսկով:

Գազային խառնուրդը, որն իր կոռոզիականության եւ թունավորության համակցված ազդեցությունների պատճառով համարվում է թունավոր, ունի կոռոզիականության լրացուցիչ ռիսկ, եթե մարդկանց փորձից ելնելով՝ հայտնի է, որ խառնուրդը քայքայիչ է մաշկի, աչքերի կամ լորձաթաղանթի համար, կամ երբ խառնուրդի կոռոզիոն բաղադրիչների LC50 արժեքը հավասար է կամ պակաս է 5 000 մլ/մ<sup>3</sup> (ppm)-ից այն դեպքում, երբ LC50-ն հաշվարկված է հետևյալ բանաձևով՝

$$LC_{50} \text{ Corrosive (mixture)} = \frac{1}{\sum_{i=1}^n \frac{f_{ci}}{T_{ci}}}$$

որտեղ՝  $f_{ci}$ -ն խառնուրդի  $i$ -րդ կոռոզիոն բաղադրիչ նյութի մոլյար բաժինն է:

$T_{ci}$ -ն խառնուրդի  $i$ -րդ կոռոզիոն բաղադրիչ նյութի թունավորության ինդեքսն է:

$T_{ci}$ -ն հավասար է  $LC_{50}$  արժեքին, ինչպես նշված է 4.1.4.1-ի P200 փաթեթավորման ցուցման մեջ:

Եթե 4.1.4.1-ի P200 փաթեթավորման ցուցման մեջ ոչ մի  $LC_{50}$  արժեք նշված չէ, ապա պետք է կիրառվի գիտական գրականության մեջ առկա  $LC_{50}$  արժեքը:

Եթե  $LC_{50}$  արժեքը հայտնի չէ, ապա թունավորության ինդեքսը որոշվում է համանման ֆիզիոլոգիական եւ քիմիական ազդեցություն ունեցող նյութերի ամենացածր  $LC_{50}$  արժեքի կիրառմամբ կամ փորձարկման միջոցով, եթե դա միակ գործնական հնարավորությունն է:

#### 2.2.2.1.6. Աերոզոլները

Աերոզոլները (ՄԱԿ-ի նշագրման 1950 համար) իրենց վտանգավոր հատկանիշների համաձայն ընդգրկվում են հետեւյալ կերպ ներկայացված ստորեւ բերված խմբերից մեկում՝

A	խեղդող
O	օքսիդացնող
F	ոչուրավառ
T	թունավոր
C	կոռոզիոն
CO	կոռոզիոն, օքսիդացնող
FC	ոչուրավառ, կոռոզիոն
TF	թունավոր, ոչուրավառ
TC	թունավոր, կոռոզիոն
TO	թունավոր, օքսիդացնող
TFC	թունավոր, ոչուրավառ, կոռոզիոն
TOC	թունավոր, օքսիդացնող, կոռոզիոն:

Դասակարգումը պայմանավորված է աերոզոլային ցողացիի պարունակության բնույթով:

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Այն գազերը, որոնք 2.2.2.1.5-ի համաձայն համապատասխանում են թունավոր գազերի եւ «հրակիր գազեր*

համարվող» այն գազերի սահմանմանը, որոնք նշված են 4.1.4.1-ի P200 փաթեթավորման ցուցման 2-րդ աղյուսակի «գ» ծանոթագրության մեջ, անբողբոջ ցողացիներում չեն կարող կիրառվել որպես արտամղիչ գազ: Թունավորության կամ կոռոզիականության I փաթեթավորման խմբի չափորոշիչներին համապատասխանող պարունակությամբ անբողբոջները ենթակա չեն փոխադրման (տե՛ս նաեւ 2.2.2.2.2):

Կիրառվում են հետեւյալ չափորոշիչները՝

- ա) «A» խմբին պետք է դասել, երբ պարունակությունը (բ)-(գ) ենթապարբերությունների համաձայն չի համապատասխանում որեւէ այլ խմբի չափորոշիչներին.
- բ) «O» խմբին պետք է դասել, երբ անբողբոջ պարունակում է օքսիդացնող գազ՝ 2.2.2.1.5-ի համաձայն.
- գ) «F» խմբին պետք է դասել, եթե պարունակությունը ներառում է 85% կամ ավելի զանգվածով դյուրավառ բաղադրիչներ, եւ այրման քիմիական ջերմությունը 30 կՋ/գ կամ ավելի է:

Այն չի կիրառվում, եթե պարունակությունը ներառում է 1% կամ պակաս զանգվածով դյուրավառ բաղադրիչներ, եւ այրման ջերմությունը ցածր է 20 կՋ/գ-ից:

Այլ կերպ ասած, անբողբոջ անցնում է դյուրավառությունը որոշելու փորձարկում՝ «Փորձարկումների եւ չափորոշիչների ձեռնարկ»-ի III մասի 31-րդ բաժնում նկարագրված փորձարկումների համաձայն: Չափազանց դյուրավառ եւ դյուրավառ անբողբոջներն ընդգրկվում են «F» խմբում:

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Դյուրավառ բաղադրիչները դյուրավառ հեղուկներ, դյուրավառ պինդ նյութեր կամ դյուրավառ գազեր եւ գազային խառնուրդներ են, ինչպես սահմանված է «Փորձարկումների եւ չափորոշիչների ձեռնարկ»-ի III մասի 31.1.3 ենթաբաժնի 1-3-րդ ծանոթագրություններում: Այս նշանակումը չի ներառում հրակիր, ինքնադառնացող կամ ջրի հետ ուռալիցիայի մեջ մտնող նյութերը: Այրման քիմիական ջերմությունը որոշվում է հետեւյալ մեթոդներից մեկով՝ ASTM D 240, ISO/FDIS 13943:1999 (E/F) 86.1-86.3 կամ NFPA 30B.*

- դ) «T» խմբին պետք է դասել, երբ անբողբոջ ցողացիների արտազատվող պարունակությունը, բացի արտամղիչ գազից, պատկանում է 6.1 դասին, II կամ III փաթեթավորման խմբերին.
- ե) «C» խմբին պետք է դասել, երբ անբողբոջ ցողացիների արտազատվող պարունակությունը, բացի արտամղիչ գազից, համապատասխանում է 8-րդ դասի, II կամ III փաթեթավորման խմբերի չափորոշիչներին.

զ) «O», «F», «T», եւ «C» խմբերից մեկից ավելի խմբերի չափորոշիչներին համապատասխանելու դեպքում համապատասխանաբար նշանակվում են «CO», «FC», «TF», «TC», «TO», «TFC» կամ «TOC» խմբերը:

2.2.2.1.7. Ճնշման տակ գտնվող քիմիական նյութերը

Ճնշման տակ գտնվող քիմիական նյութերը (ՄԱԿ-ի նշագրման 3500-3505 համարներ) իրենց վտանգավոր հատկանիշների համաձայն ընդգրկվում են հետեւյալ կերպ ներկայացված ստորեւ բերված խմբերից մեկում՝

- A խեղդող
- F դյուրավառ
- T թունավոր
- C կոռոզիոն
- FC դյուրավառ, կոռոզիոն
- TF թունավոր, դյուրավառ:

Դասակարգումը պայմանավորված է տարբեր վիճակներում գտնվող բաղադրիչների վտանգավոր հատկանիշներով.

արտամղիչ գազ,

հեղուկ, կամ

պինդ նյութ:

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1. Այն գազերը, որոնք 2.2.2.1.5-ի համաձայն համապատասխանում են թունավոր գազերի եւ «հրակիր գազեր համարվող» այն գազերի սահմանմանը, որոնք նշված են 4.1.4.1-ի P200 փաթեթավորման ցուցման 2-րդ աղյուսակի՝ ճնշման տակ գտնվող քիմիական նյութերում, չեն կարող կիրառվել որպես արտամղիչ գազ:*

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2. Ճնշման տակ գտնվող այնպիսի պարունակությամբ քիմիական նյութերը, որոնք համապատասխանում են թունավորության կամ կոռոզիականության I փաթեթավորման խմբի չափորոշիչներին, կամ այնպիսի պարունակությամբ, որոնք համապատասխանում են եւ՝ թունավորության II կամ III, եւ՝ կոռոզիականության II կամ III փաթեթավորման խմբի չափորոշիչներին, ՄԱԿ-ի նշագրման այս համարների ներքո չեն ընդունվում փոխադրման համար:*

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3. Այնպիսի բաղադրիչներ ունեցող ճնշման տակ գտնվող քիմիական նյութերը, որոնք համապատասխանում են 1-ին դասի, 3-րդ դասին պատկանող հեղուկ ապազգայունացված պայթուցիկների, 4.1 դասին պատկանող ինքնատեակտիվ նյութերի եւ պինդ*

ապագգայունացված պայթուցիկների, 4.2 դասի, 4.3 դասի, 5.1 դասի, 5.2 դասի, 6.2 դասի կամ 7-րդ դասի հատկություններին, ՄԱԿ-ի նշագրման այս համարների ներքո չեն օգտագործվում փոխադրման համար:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 4. Աերոզոլային ցողացիներում ճնշման տակ գտնվող քիմիական նյութերը փոխադրվում են ՄԱԿ-ի նշագրման 1950 համարի ներքո:**

Կիրառվում են հետևյալ չափորոշիչները.

- ա) «A» խմբին պետք է դասել, երբ պարունակությունը «բ»-«ե» ենթապարբերությունների համաձայն՝ չի համապատասխանում որեւէ այլ խմբի չափորոշիչներին,
- բ) «F» խմբին պետք է դասել, եթե բաղադրիչներից մեկը, որը կարող է լինել մաքուր նյութ կամ խառնուրդ, պետք է դասակարգվի որպես դյուրավառ: Դյուրավառ բաղադրիչներն են դյուրավառ հեղուկները եւ դյուրավառ խառնուրդները, դյուրավառ պինդ նյութերը եւ պինդ խառնուրդները կամ դյուրավառ գազերը կամ գազային խառնուրդները, որոնք համապատասխանում են հետևյալ չափորոշիչներին՝
  - i) դյուրավառ հեղուկը 93 °C-ից ոչ ավելի բարձր բռնկման ջերմաստիճան ունեցող հեղուկն է,
  - ii) դյուրավառ պինդ նյութն այն նյութն է, որը համապատասխանում է 2.2.41.1-ի չափորոշիչներին,
  - iii) դյուրավառ գազն այն գազն է, որը համապատասխանում է 2.2.2.1.5-ի չափորոշիչներին,
- գ) «T» խմբին պետք է դասել, եթե արտամղիչ գազից բացի, պարունակությունը պատկանում է 6.1 դասի վտանգավոր նյութերի շարքին, II կամ III փաթեթավորման խմբերին.
- դ) «C» խմբին պետք է դասել, եթե արտամղիչ գազից բացի, պարունակությունը պատկանում է 8-րդ դասի վտանգավոր նյութերի շարքին, II կամ III փաթեթավորման խմբերին.
- ե) «F», «T» եւ «C» խմբերից երկուսի չափորոշիչներին համապատասխանելու դեպքում համապատասխանաբար նշանակվում են «FC» կամ «TF» խմբերը:

2.2.2.2. Փոխադրման համար անթույլատրելի գազերը

2.2.2.2.1. 2-րդ դասին պատկանող քիմիապես անկայուն նյութերը ենթակա չեն փոխադրման, քանի դեռ չեն ձեռնարկվել փոխադրման բնականոն պայմաններում վտանգավոր տրոհման կամ պոլիմերացման հնարավորությունը կանխելուն ուղղված անհրաժեշտ նախազգուշական

միջոցներ, կամ եթե համապատասխան դեպքերում դա չի իրականացվում 4.1.4.1-ի «P200(10)» փաթեթավորման ցուցման «ժը» փաթեթավորման հատուկ դրույթին համաձայն: Պոլիմերացումը կանխելուն ուղղված անհրաժեշտ նախազգուշական միջոցների համար տե՛ս 3.3 գլխի 386-րդ հատուկ դրույթը: Այդ իսկ նպատակով առանձնահատուկ զգուշություն պետք է ցուցաբերվի՝ ապահովելու համար, որ տարաները եւ ցիստեռնները չպարունակեն նշված ռեակցիաները խթանող որեւէ նյութ:

2.2.2.2.2. Հետեւյալ նյութերը եւ խառնուրդները ենթակա չեն փոխադրման՝

- ՄԱԿ-ի նշագրման 2186 համարի ՋՐԱԾՆԻ ՔԼՈՐԻԴ՝ ՍԱՌԵՑՎԱԾ ՀԵՂՈՒԿ.
- ՄԱԿ-ի նշագրման 2421 համարի ԱՁՈՏԻ ԵՌՕՔՍԻԴ.
- ՄԱԿ-ի նշագրման 2455 համարի ՄԵԹԻԼԵՆՍՐԻՏ.
- Սառեցված հեղուկացված գազեր, որոնք չեն կարող ընդգրկվել 3A, 3O կամ 3F դասակարգման ծածկագրերի ներքո.
- Լուծված գազեր, որոնք չեն կարող դասակարգվել ՄԱԿ-ի նշագրման 1001, 2073 կամ 3318 համարների ներքո.
- Այն աերոզոլները, որոնցում որպես արտամղիչ գազեր օգտագործված են այնպիսի գազեր, որոնք թունավոր են 2.2.2.1.5-ի կամ հրակիր են 4.1.4.1-ի P200 փաթեթավորման ցուցման համաձայն:
- Փաթեթավորման I խմբի՝ թունավորության կամ կոռոզիականության չափորոշիչներին համապատասխանող պարունակությամբ աերոզոլներ (տե՛ս 2.2.61 եւ 2.2.8).
- Փոքր տարաներ, որոնք պարունակում են այնպիսի գազեր, որոնք չափազանց թունավոր (LC50 — արժեքը փոքր է 200 ppm) կամ հրակիր են 4.1.4.1-ի P200 փաթեթավորման ցուցման համաձայն:

2.2.2.3. Հավաքական դիրքերի ցանկ

Սեղմած գազեր	
Դասակարգման ծածկագիրը	ՄԱԿ-ի նշագրման համարը Նյութի կամ պատրաստվածքի անվանումը
1A	1956 ՍԵՂՄԱԾ ԳԱՋ , ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ
1O	3156 ՍԵՂՄԱԾ ԳԱՋ, ՕՔՍԻԴԱՅՆՈՂ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ
1F	1964 ԱԾԻԱՋՐԱԾԻՆ ԳԱՋԱՅԻՆ ԽԱՌՆՈՒՐԴ, ՍԵՂՄՎԱԾ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ



	1954	ՍԵՂՄԱԾ ԳԱԶ, ԴՅՈՒՐԱՎԱՌ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ
1T	1955	ՍԵՂՄԱԾ ԳԱԶ, ԹՈՒՆԱՎՈՐ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ
1TF	1953	ՍԵՂՄԱԾ ԳԱԶ, ԹՈՒՆԱՎՈՐ, ԴՅՈՒՐԱՎԱՌ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ
1TC	3304	ՍԵՂՄԱԾ ԳԱԶ, ԹՈՒՆԱՎՈՐ, ՔԱՅՔԱՅԻՉ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ
1TO	3303	ՍԵՂՄԱԾ ԳԱԶ, ԹՈՒՆԱՎՈՐ, ՕՔՍԻԴԱՑՆՈՂ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ
1TFC	3305	ՍԵՂՄԱԾ ԳԱԶ, ԹՈՒՆԱՎՈՐ, ԴՅՈՒՐԱՎԱՌ, ԿՈՌՈՋԻՈՆ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ
1TOC	3306	ՍԵՂՄԱԾ ԳԱԶ, ԹՈՒՆԱՎՈՐ, ՕՔՍԻԴԱՑՆՈՂ, ԿՈՌՈՋԻՈՆ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ

Հեղուկացված գազեր	
Դասակարգման ծածկագիրը	ՄԱԿ-ի նշագրման համարը Նյութի կամ պատրաստվածքի անվանումը
2A	<p>1058 ՀԵՂՈՒԿԱՑՎԱԾ ԳԱԶԵՐ, ոչ դյուրավառ, ազոտով, ածխածնի երկօքսիդով կամ օդով լիցքավորված</p> <p>1078 ՍԱՌԵՑՆՈՂ ԳԱԶ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ</p> <p>Ինչպես, օրինակ՝ R... տառով նշված գազերի խառնուրդները, որոնք որպես՝</p> <p>F1 խառնուրդ՝ 70 °C ջերմաստիճանում 1.3 ՄՊա (13 բար) չգերազանցող գոլորշու ճնշմամբ եւ 50 °C ջերմաստիճանում երկքլորֆտորոմեթանի խտությունից (1.30կգ/լ) ոչ ցածր խտությամբ.</p> <p>F2 խառնուրդ՝ 70 °C ջերմաստիճանում 1.9 ՄՊա (19 բար) չգերազանցող գոլորշու ճնշմամբ եւ 50 °C ջերմաստիճանում երկքլորֆտորոմեթանի խտությունից (1.21կգ/լ) ոչ ցածր խտությամբ.</p> <p>F3 խառնուրդ՝ 70 °C ջերմաստիճանում 3 ՄՊա (30 բար) չգերազանցող գոլորշու ճնշմամբ եւ 50 °C ջերմաստիճանում քլորաերկֆտորոմեթանի խտությունից (1.09 կգ/լ) ոչ ցածր խտությամբ.</p> <p>ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Եռքլորաֆտորոմեթանը (Սառեցնող R 11), 1,1,2-եռքլորո-1,2,2-եռֆտորոմեթան (Սառեցնող R 113), 1,1,1-եռքլորո-2,2,2-եռֆտորոմեթան (Սառեցնող R 113a), 1-քլորո -1,2,2-եռֆտորոմեթան (Սառեցնող R 133) եւ 1-քլորո -1,1,2- եռֆտորոմեթան (Սառեցնող R 133b) 2-րդ դասին պատկանող նյութեր են: Դրանք, այնուհանդերձ, կարող են մտնել F1-ից մինչեւ F3 խառնուրդների բաղադրության մեջ:</p> <p>1968 ՄԻՋԱՏԱՍՊԱՆ ԳԱԶԵՐ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ</p> <p>3163 ՀԵՂՈՒԿԱՑՎԱԾ ԳԱԶԵՐ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ</p>
20	3157 ՀԵՂՈՒԿԱՑՎԱԾ ԳԱԶ, ՕՔՍԻԴԱՑՆՈՂ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ
2F	<p>1010 ԲՈՒՏԱԴԻԵՆ ԵՎ ԱԾԻԱՋՐԱԾՆԻ ԽԱՌՆՈՒՐԴ, ԿԱՅՈՒՆԱՑՎԱԾ, որը 70 °C ջերմաստիճանում ունի 1.1 ՄՊա (11 բար) չգերազանցող գոլորշու ճնշում եւ 50 °C ջերմաստիճանում՝ 0.525 կգ/լ-ից ոչ ցածր խտություն.</p> <p>ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Բուտադիենը՝ կայունացված, նույնպես դասակարգվում է ՄԱԿ-ի նշագրման 1010 համարի ներքո, տե՛ս 3.2 գլխի Ա աղյուսակը:</p> <p>1060 ՄԵԹԻԼԱՑԵՏԻԼԵՆԻ ԵՎ ՊՐՈՊԱԴԻԵՆԻ ԽԱՌՆՈՒՐԴ, ԿԱՅՈՒՆԱՑՎԱԾ</p> <p>Ինչպես, օրինակ՝ ածխաջրածինների հետ մեթիլացետիլենի եւ պրոպադիենի խառնուրդները, որոնք որպես՝</p> <p>P1 խառնուրդ, պարունակում են 63%-ից ոչ ավելի ծավալով մեթիլացետիլեն եւ պրոպադիեն ու 24%-ից ոչ ավելի ծավալով պրոպան եւ պորպիլեն, որտեղ C4-ի հազեցված ածխաջրածինների տոկոսը՝ ըստ ծավալի, 14%-ից պակաս չէ, եւ</p> <p>P2 խառնուրդ, պարունակում են 48%-ից ոչ ավելի ծավալով մեթիլացետիլեն եւ պրոպադիեն ու 50%-ից ոչ ավելի ծավալով պրոպան եւ պորպիլեն, որտեղ C4-ի հազեցված ածխաջրածինների տոկոսը՝ ըստ ծավալի 5%-ից պակաս չէ,</p> <p>ինչպես նաեւ 1-4%-անոց մեթիլացետիլենի հետ պրոպադիենի խառնուրդները:</p> <p>1965 ԱԾԻԱՋՐԱԾՆԱՅԻՆ ԳԱԶԻ ԽԱՌՆՈՒՐԴ՝ ՀԵՂՈՒԿԱՑՎԱԾ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ</p>

Հեղուկացված գազեր	
Դասակարգման ծածկագիրը	ՄԱԿ-ի նշագրման համարը Նյութի կամ պատրաստվածքի անվանումը
	<p>Ինչպես, օրինակ՝</p> <p>A խառնուրդ՝ 70 °C ջերմաստիճանում 1.1 ՄՊա (11 բար) չգերազանցող գոլորշու ճնշմամբ եւ 50 °C ջերմաստիճանում՝ 0.525 կգ/լ-ից ոչ ցածր խտությամբ.</p> <p>A01 խառնուրդ՝ 70 °C ջերմաստիճանում 1.6 ՄՊա (16 բար) չգերազանցող գոլորշու ճնշմամբ եւ 50 °C ջերմաստիճանում 0.516 կգ/լ-ից ոչ ցածր հարաբերական խտությամբ.</p> <p>A02 խառնուրդ՝ 70 °C ջերմաստիճանում 1.6 ՄՊա (16 բար) չգերազանցող գոլորշու ճնշմամբ եւ 50 °C ջերմաստիճանում 0.505 կգ/լ-ից ոչ ցածր հարաբերական խտությամբ.</p> <p>A0 խառնուրդ՝ 70 °C ջերմաստիճանում 1.6 ՄՊա (16 բար) չգերազանցող գոլորշու ճնշմամբ եւ 50 °C ջերմաստիճանում 0.495 կգ/լ-ից ոչ ցածր խտությամբ.</p> <p>A1 խառնուրդ՝ 70 °C ջերմաստիճանում 2.1 ՄՊա (21 բար) չգերազանցող գոլորշու ճնշմամբ եւ 50 °C ջերմաստիճանում 0.485 կգ/լ-ից ոչ ցածր խտությամբ.</p> <p>B1 խառնուրդ՝ 70 °C ջերմաստիճանում 2.6 ՄՊա (26 բար) չգերազանցող գոլորշու ճնշմամբ եւ 50 °C ջերմաստիճանում 0.474 կգ/լ-ից ոչ ցածր հարաբերական խտությամբ.</p> <p>B2 խառնուրդ՝ 70 °C ջերմաստիճանում 2.6 ՄՊա (26 բար) չգերազանցող գոլորշու ճնշմամբ եւ 50 °C ջերմաստիճանում 0.463 կգ/լ-ից ոչ ցածր հարաբերական խտությամբ.</p> <p>B խառնուրդ՝ 70 °C ջերմաստիճանում 2.6 ՄՊա (26 բար) չգերազանցող գոլորշու ճնշմամբ եւ 50 °C ջերմաստիճանում 0.450 կգ/լ-ից ոչ ցածր խտությամբ.</p> <p>C խառնուրդ՝ 70 °C ջերմաստիճանում 3.1 ՄՊա (31 բար) չգերազանցող գոլորշու ճնշմամբ եւ 50 °C ջերմաստիճանում 0.440 կգ/լ-ից ոչ ցածր հարաբերական խտությամբ.</p> <p>ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1. Վերը նշված խառնուրդների դեպքում առետրում ընդունված հետեւյալ անվանումների կիրառումը թույլատրվում է այս նյութերը նկարագրելու համար՝ A, A01, A02 եւ A0 խառնուրդների համար՝ ԲՈՒԹԱՆ, C խառնուրդի համար՝ ՊՐՈՊԱՆ:</p> <p>ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2. ՄԱԿ-ի նշագրման 1075 համարի ՎԱՌԵԼԻՔԱՅԻՆ ԳԱԶԵՐԸ՝ ՀԵՂՈՒԿԱՑՎԱԾ, կարող են կիրառվել որպես ՄԱԿ-ի նշագրման 1965 համարի ԱԾԽԱԶՐԱԾՆԱՅԻՆ ԳԱԶԻ ԽԱՌՆՈՒՐԴ՝ ՀԵՂՈՒԿԱՑՎԱԾ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ-ի համար այլընտրանքային դիրք՝ փոխադրման նպատակով մինչեւ ծովային կամ օդային փոխադրումը կամ դրանցից հետո:</p> <p>3354 ՄԻՋԱՏԱՍՊԱՆ ԳԱԶ, ԴՅՈՒՐԱՎԱՌ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ</p> <p>3161 ՀԵՂՈՒԿԱՑՎԱԾ ԳԱԶ, ԴՅՈՒՐԱՎԱՌ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ</p>
2T	<p>1967 ՄԻՋԱՏԱՍՊԱՆ ԳԱԶ, ԹՈՒՆԱՎՈՐ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ</p> <p>3162 ՀԵՂՈՒԿԱՑՎԱԾ ԳԱԶ, ԹՈՒՆԱՎՈՐ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ</p>
2TF	<p>3355 ՄԻՋԱՏԱՍՊԱՆ ԳԱԶ, ԹՈՒՆԱՎՈՐ, ԴՅՈՒՐԱՎԱՌ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ</p> <p>3160 ՀԵՂՈՒԿԱՑՎԱԾ ԳԱԶ, ԹՈՒՆԱՎՈՐ, ԴՅՈՒՐԱՎԱՌ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ</p>
2TC	3308 ՀԵՂՈՒԿԱՑՎԱԾ ԳԱԶ, ԹՈՒՆԱՎՈՐ, ԿՈՌՈՋԻՈՆ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ
2TO	3307 ՀԵՂՈՒԿԱՑՎԱԾ ԳԱԶ, ԹՈՒՆԱՎՈՐ, ՕՔՍԻԴԱՅՆՈՂ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ
2TFC	3309 ՀԵՂՈՒԿԱՑՎԱԾ ԳԱԶ, ԹՈՒՆԱՎՈՐ, ԴՅՈՒՐԱՎԱՌ, ԿՈՌՈՋԻՈՆ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ

Հեղուկացված գազեր	
Դասակարգման ծածկագիրը	ՄԱԿ-ի նշագրման համարը Նյութի կամ պատրաստվածքի անվանումը
2T0C	3310 ՀԵՂՈՒԿԱՑՎԱԾ ԳԱԶ, ԹՈՒՆԱՎՈՐ, ՕՔՍԻԴԱՑՆՈՂ, ԿՈՌՈԶԻՈՆ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ

Սառեցված հեղուկացված գազեր	
Դասակարգման ծածկագիրը	ՄԱԿ-ի նշագրման համարը Նյութի կամ պատրաստվածքի անվանումը
3A	3158 ԳԱԶ, ՍԱՌԵՑՎԱԾ ՀԵՂՈՒԿ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ
3O	3311 ԳԱԶ, ՍԱՌԵՑՎԱԾ ՀԵՂՈՒԿ, ՕՔՍԻԴԱՑՆՈՂ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ
3F	3312 ԳԱԶ, ՍԱՌԵՑՎԱԾ ՀԵՂՈՒԿ, ԴՅՈՒՐԱՎԱՌ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ

Լուծված գազեր	
Դասակարգման ծածկագիրը	ՄԱԿ-ի նշագրման համարը Նյութի կամ պատրաստվածքի անվանումը
4	Միայն 3.2 գլխի Ա աղյուսակում թվարկված նյութերն են ենթակա փոխադրման

Աերոզոլներ եւ տարաներ՝ փոքր, գազ պարունակող	
Դասակարգման ծածկագիրը	ՄԱԿ-ի նշագրման համարը Նյութի կամ պատրաստվածքի անվանումը
5	1950 ԱԵՐՈԶՈՂՆԵՐ 2037 ՏԱՐԱՆԵՐ՝ ՓՈՔՐ, ԳԱԶ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ (ԳԱԶԻ ԱՆՈԹՆԵՐ), առանց արտազատման սարքի, չվերալցավորվող

Ճնշման տակ գտնվող գազեր պարունակող այլ պատրաստվածքներ	
Դասակարգման ծածկագիրը	ՄԱԿ-ի նշագրման համարը Նյութի կամ պատրաստվածքի անվանումը
6A	2857 ՍԱՌԵՑՆՈՂ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ, որոնք պարունակում են ոչ դյուրավառ, ոչ թունավոր գազեր կամ ամոնիակի լուծույթներ (ՄԱԿ-ի նշագրման 2672 համար) 3164 ՊԱՏՐԱՍՏՎԱԾՔՆԵՐ՝ ՃՆՇՄԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ, ՊՆԵՎՄԱՏԻԿ (որոնք պարունակում են ոչ դյուրավառ գազ) կամ 3164 ՊԱՐԱԳԱՆԵՐ՝ ՃՆՇՄԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ, ՀԻԴՐԱՎԼԻԿ (որոնք պարունակում են ոչ դյուրավառ գազ)

6F	3150	ՍԱՐՔԵՐ՝ ՓՈՔՐ, ԱԾԽԱԶՐԱԾՆԱՅԻՆ ԳԱԶՈՎ ԱՇԽԱՏՈՂ, կամ
	3150	ՓՈՔՐ ՍԱՐՔԵՐԻ ՀԱՄԱՐ ԱԾԽԱԶՐԱԾՆԱՅԻՆ ԳԱԶԻ ՓՈԽՆՈՐԴՆԵՐ՝ արտազատման սարքով
	3478	ՎԱՌԵԼԻՔԱՅԻՆ ԷԼԵՄԵՆՏՆԵՐՈՎ ՔԱՐԹՐԻՋՆԵՐ, որոնք հեղուկացված դյուրավառ գազ են պարունակում, կամ
	3478	ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ ՄԵՋ ԱՌԿԱ՝ ՎԱՌԵԼԻՔԱՅԻՆ ԷԼԵՄԵՆՏՆԵՐՈՎ ՔԱՐԹՐԻՋՆԵՐ, որոնք հեղուկացված դյուրավառ գազ են պարունակում, կամ
	3478	ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ ՀԵՏ ՓԱԹԵԹԱՎՈՐՎԱԾ՝ ՎԱՌԵԼԻՔԱՅԻՆ ԷԼԵՄԵՆՏՆԵՐՈՎ ՔԱՐԹՐԻՋՆԵՐ, որոնք հեղուկացված դյուրավառ գազ են պարունակում
	3479	ՎԱՌԵԼԻՔԱՅԻՆ ԷԼԵՄԵՆՏՆԵՐՈՎ ՔԱՐԹՐԻՋՆԵՐ, որոնք մետաղական հիդրիդում ջրածին են պարունակում, կամ
	3479	ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ ՄԵՋ ԱՌԿԱ ՎԱՌԵԼԻՔԱՅԻՆ ԷԼԵՄԵՆՏՆԵՐՈՎ ՔԱՐԹՐԻՋՆԵՐ, որոնք մետաղական հիդրիդում ջրածին են պարունակում, կամ
	3479	ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ ՀԵՏ ՓԱԹԵԹԱՎՈՐՎԱԾ՝ ՎԱՌԵԼԻՔԱՅԻՆ ԷԼԵՄԵՆՏՆԵՐՈՎ ՔԱՐԹՐԻՋՆԵՐ, որոնք մետաղական հիդրիդում ջրածին են պարունակում
	3529	ՇԱՐԺԻՉ՝ ՆԵՐՔԻՆ ԱՅՐՄԱՆ, ԴՅՈՒՐԱՎԱՌ ԳԱԶՈՎ ԱՇԽԱՏՈՂ, կամ
	3529	ՇԱՐԺԻՉ՝ ՎԱՌԵԼԻՔԱՅԻՆ ԷԼԵՄԵՆՏՆԵՐՈՎ, ԴՅՈՒՐԱՎԱՌ ԳԱԶՈՎ ԱՇԽԱՏՈՂ, կամ
3529	ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ՝ ՆԵՐՔԻՆ ԱՅՐՄԱՆ, ԴՅՈՒՐԱՎԱՌ ԳԱԶՈՎ ԱՇԽԱՏՈՂ, կամ	
3529	ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ՝ ՎԱՌԵԼԻՔԱՅԻՆ ԷԼԵՄԵՆՏՆԵՐՈՎ, ԴՅՈՒՐԱՎԱՌ ԳԱԶՈՎ ԱՇԽԱՏՈՂ, կամ	

Գազի նմուշներ	
Դասակարգման ծածկագիրը	ՄԱԿ-ի նշագրման համարը Նյութի կամ պատրաստվածքի անվանումը
7F	3167 ԳԱԶԻ ՆՄՈՒՇ՝ ՃՆՇՄԱՆ ՏԱԿ ՉԳՏՆՎՈՂ, ԴՅՈՒՐԱՎԱՌ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ, չսառեցված հեղուկ
7T	3169 ԳԱԶԻ ՆՄՈՒՇ՝ ՃՆՇՄԱՆ ՏԱԿ ՉԳՏՆՎՈՂ, ԹՈՒՆԱՎՈՐ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ, չսառեցված հեղուկ
7TF	3168 ԳԱԶԻ ՆՄՈՒՇ՝ ՃՆՇՄԱՆ ՏԱԿ ՉԳՏՆՎՈՂ, ԹՈՒՆԱՎՈՐ, ԴՅՈՒՐԱՎԱՌ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ, չսառեցված հեղուկ

Ճնշման տակ գտնվող գազեր		
Դասակարգման ն ծածկագիրը	ՄԱԿ-ի նշագրման	Նյութի կամ պատրաստվածքի անվանումը

	համարը	
8A	3500	ՃՆՇՄԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՔԻՄԻԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ
8F	3501	ՃՆՇՄԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՔԻՄԻԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ, ԴՅՈՒՐԱՎԱՌ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ
8T	3502	ՃՆՇՄԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՔԻՄԻԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ, ԹՈՒՆԱՎՈՐ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ
8C	3503	ՃՆՇՄԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՔԻՄԻԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ, ԿՈՌՈՋԻՈՆ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ
8TF	3504	ՃՆՇՄԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՔԻՄԻԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ, ԴՅՈՒՐԱՎԱՌ, ԹՈՒՆԱՎՈՐ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ
8FC	3505	ՃՆՇՄԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՔԻՄԻԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ, ԴՅՈՒՐԱՎԱՌ, ԿՈՌՈՋԻՈՆ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ

Աղտորբացված գազեր		
Դասակարգման ծածկագիրը	ՄԱԿ-ի նշագրման համարը	Նյութի կամ պատրաստվածքի անվանումը
9A	3511	ԱԴՍՈՐԲԱՑՎԱԾ ԳԱԶ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ
9O	3513	ԱԴՍՈՐԲԱՑՎԱԾ ԳԱԶ, ՕՔՍԻԴԱՑՆՈՂ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ
9F	3510	ԱԴՍՈՐԲԱՑՎԱԾ ԳԱԶ, ԴՅՈՒՐԱՎԱՌ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ
9T	3512	ԱԴՍՈՐԲԱՑՎԱԾ ԳԱԶ, ԹՈՒՆԱՎՈՐ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ
9TF	3514	ԱԴՍՈՐԲԱՑՎԱԾ ԳԱԶ, ԹՈՒՆԱՎՈՐ, ԴՅՈՒՐԱՎԱՌ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ
9TC	3516	ԱԴՍՈՐԲԱՑՎԱԾ ԳԱԶ, ԹՈՒՆԱՎՈՐ, ԿՈՌՈՋԻՈՆ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ
9TO	3515	ԱԴՍՈՐԲԱՑՎԱԾ ԳԱԶ, ԹՈՒՆԱՎՈՐ, ՕՔՍԻԴԱՑՆՈՂ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ
9TFC	3517	ԱԴՍՈՐԲԱՑՎԱԾ ԳԱԶ, ԹՈՒՆԱՎՈՐ, ԴՅՈՒՐԱՎԱՌ, ԿՈՌՈՋԻՈՆ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ
9TOC	3518	ԱԴՍՈՐԲԱՑՎԱԾ ԳԱԶ, ԹՈՒՆԱՎՈՐ, ՕՔՍԻԴԱՑՆՈՂ, ԿՈՌՈՋԻՈՆ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ

### 2.2.3. Դաս 3 Դյուրավառ հեղուկները

#### 2.2.3.1. Չափորոշիչները

2.2.3.1.1. 3-րդ դասի վերնագրի ներքո ընդգրկվում են սույն դասի նյութեր պարունակող այն նյութերը եւ պատրաստվածքները, որոնք՝

- հեղուկներ են՝ 1.2.1-ում «հեղուկ» սահմանման (ա) ենթապարբերության համաձայն.

- 50 °C ջերմաստիճանում ունեն 300 կՊա-ից ոչ ավելի (3 բար) գոլորշու ճնշում եւ 20 °C ջերմաստիճանում ու 101.3 կՊա ստանդարտ ճնշման տակ լրիվ գազային չեն, եւ
- ունեն 60 °C-ից ոչ ավելի բռնկման ջերմաստիճան (համապատասխան փորձարկման համար տե՛ս 2.3.3.1):

3-րդ դասի վերնագրի ներքո ընդգրկվում են նաեւ 60 °C ջերմաստիճանից ավելի բռնկման ջերմաստիճան ունեցող հեղուկ նյութերը եւ հալեցված պինդ նյութերը, որոնք փոխադրվում կամ հանձնվում են փոխադրման համար իրենց բռնկման ջերմաստիճանին հավասար կամ ավելի բարձր ջերմաստիճաններում տաքացված վիճակում: Այս նյութերին տրվում է ՄԱԿ-ի նշագրման 3256 համարը:

3-րդ դասի վերնագիրը նաեւ ներառում է հեղուկ ապազգայունացված պայթուցիկ նյութերը: Հեղուկ ապազգայունացված պայթուցիկ նյութերն այն պայթուցիկ նյութերն են, որոնք լուծված են կամ կախյալ են ջրում կամ այլ հեղուկ նյութերում՝ ձեւավորելու համար միատարր հեղուկ խառնուրդ՝ իրենց պայթուցիկ հատկանիշները ճնշելու նպատակով: 3.2 գլխի Ա աղյուսակում այդ դիրքերը ՄԱԿ-ի նշագրման 1204, 2059, 3064, 3343, 3357 եւ 3379 համարներն են:

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1. 35 °C ջերմաստիճանից բարձր բռնկման ջերմաստիճան ունեցող նյութերը, որոնք չեն պահպանում այրումը «Փորձարկումների եւ չափորոշիչների ձեռնարկ»-ի III մասի 32.2.5 ենթաբաժնի չափորոշիչների համաձայն, 3-րդ դասին պատկանող նյութեր չեն: Եթե, այնուհանդերձ, այս նյութերը հանձնվում են փոխադրման նպատակով եւ փոխադրվում են իրենց բռնկման ջերմաստիճանին հավասար կամ ավելի բարձր ջերմաստիճաններում տաքացված վիճակում, ապա դրանք 3-րդ դասին պատկանող նյութեր են:*

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2. Շեղում կատարելով վերը նշված 2.2.3.1.1 պարբերությունից՝ դիզելային վառելիքը, գազայուղերը, հնոցային մազուլը (թեթեւ), այդ թվում՝ սինթետիկ ճանապարհով արտադրված արտադրանքը, որոնց բռնկման ջերմաստիճանը բարձր է 60 °C-ից, սակայն բարձր չէ 100 °C-ից, համարվում են 3-րդ դասի նյութեր՝ ՄԱԿ-ի նշագրման 1202 համարի:*

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3. Այն դյուրավառ հեղուկները, որոնք ներշնչման ժամանակ չափազանց թունավոր են, ինչպես սահմանված է 2.2.61.1.4 - 2.2.61.1.9-ում, եւ այն թունավոր նյութերը, որոնք ունեն 23°C կամ դրանից բարձր բռնկման ջերմաստիճան, 6.1 դասի նյութեր են (տե՛ս 2.2.61.1): Այն հեղուկները, որոնք ներշնչման դեպքում չափազանց թունավոր են, նշված են որպես «ներշնչման դեպքում թունավոր»՝ 3.2 գլխի «Ա» աղյուսակի 2-րդ սյունակում կամ 6-րդ սյունակի 354-րդ հատուկ դրոյթում նշված՝ բեռնառաքման ճշգրիտ անվանման մեջ:*

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 4. Որպես թունաքիմիկատներ օգտագործվող դյուրավառ հեղուկ նյութերը եւ պատրաստուկները, որոնք չափազանց թունավոր են, թունավոր կամ թեթեւ թունավոր են եւ ունեն 23 °C կամ դրանից բարձր բռնկման ջերմաստիճան, 6.1 դասի նյութեր են (տե՛ս 2.2.61.1):*

2.2.3.1.2. 3-րդ դասի նյութերը եւ պատրաստվածքները բաժանվում են հետեւյալ ենթախմբերի՝

F դյուրավառ հեղուկներ՝ առանց լրացուցիչ ռիսկի, եւ այդպիսի նյութեր պարունակող պատրաստվածքներ՝

F1 60 °C կամ ավելի ցածր բռնկման ջերմաստիճան ունեցող դյուրավառ հեղուկներ.

F2 60 °C-ից բարձր բռնկման ջերմաստիճան ունեցող դյուրավառ հեղուկներ, որոնք փոխադրվում կամ հանձնվում են փոխադրման համար իրենց բռնկման կամ ավելի բարձր ջերմաստիճանում (բարձր ջերմաստիճանային նյութեր).

F3 պատրաստվածքներ, որոնք պարունակում են դյուրավառ հեղուկներ.

FT դյուրավառ նյութեր՝ թունավոր.

FT1 դյուրավառ հեղուկներ՝ թունավոր.

FT2 թունաքիմիկատներ.

FC դյուրավառ հեղուկներ՝ կոռոզիոն.

FTC դյուրավառ հեղուկներ՝ թունավոր, կոռոզիոն.

D հեղուկ ապազգայունացված պայթուցիկ նյութեր:

2.2.3.1.3. 3-րդ դասում դասակարգված նյութերը եւ պատրաստվածքները թվարկված են 3.2 գլխի Ա աղյուսակում: 3.2 գլխի Ա աղյուսակում անվանմամբ չնշված նյութերը պետք է ընդգրկվեն 2.2.3.3 համապատասխան դիրքում եւ փաթեթավորման համապատասխան խմբում՝ սույն բաժնի դրույթների համաձայն: Դյուրավառ հեղուկները պետք է ընդգրկվեն հետեւյալ փաթեթավորման խմբերից որեւիցե մեկում՝ ըստ փոխադրման ժամանակ դրանց ներկայացրած վտանգի.

Փաթեթավորման խումբ	Բռնկման ջերմաստիճան (փակ հալքանոթ)	Եռման սկզբնական ջերմաստիճան
I	--	< 35°C



II <sup>ա</sup>	< 23°C	> 35°C
III <sup>ա</sup>	> 23°C < 60°C	> 35°C

Լրացուցիչ ռիսկով (ռիսկերով) հեղուկի դեպքում պետք է հաշվի առնվեն վերը նշված աղյուսակի համաձայն սահմանված փաթեթավորման խումբը եւ լրացուցիչ ռիսկի (ռիսկերի) լրջության հիման վրա սահմանված փաթեթավորման խումբը. դասակարգման եւ փաթեթավորման խմբերն այնուհետեւ պետք է որոշվեն 2.1.3.10-ում ներկայացված վտանգների առաջնահերթության աղյուսակի համաձայն:

2.2.3.1.4 Մածուցիկ դյուրավառ հեղուկները, ինչպես օրինակ՝ ներկերը, էմալը, արծնուկը, օլիֆը, հարակցանյութերը եւ պոլիտուրան, որոնք ունեն 23°C-ից ցածր բռնկման ջերմաստիճան, կարող են ընդգրկվել III փաթեթավորման խմբում՝ «Փորձարկումների եւ չափորոշիչների ձեռնարկ»-ի III մասի 32.3 ենթաբաժնում նշված ընթացակարգերի համաձայն՝ պայմանով, որ՝

ա) մածուցիկությունը<sup>2</sup> եւ բռնկման ջերմաստիճանը համապատասխանում են հետեւյալ աղյուսակին՝

Կինեմատիկ մածուցիկություն (էքստրապոլիզացված) «v» (զրոյին մոտ տեղաշարժի արագությամբ) մմ <sup>2</sup> /վ 23 °C ջերմաստիճանում	Հոսելու ժամանակը «t» վայրկյաններով	Շիթի տրամագիծը մմ-ով	Փակ հալքանոթ, բռնկման ջերմաստիճանը °C
20 < v < 80	20 < t < 60	4	17-ից բարձր
80 < v < 135	60 < t < 100	4	10-ից բարձր
135 < v < 220	20 < t < 32	6	5-ից բարձր
220 < v < 300	32 < t < 44	6	-1-ից բարձր
300 < v < 700	44 < t < 100	6	-5-ից բարձր
700 < v	100 < t	6	սահմանաչափ առկա չէ

<sup>ա</sup> Տե՛ս նաեւ 2.2.3.1.4:

<sup>2</sup> Մածուցիկության որոշումը. Եթե համապատասխան նյութը չի ենթարկվում նյութոնական օրենքներին, կամ եթե ձագարի օգնությամբ մածուցիկությունը որոշելու մեթոդն անհարմար է, ապա նյութի փոփոխական տեղաշարժի արագության գործակիցը որոշելու համար պետք է օգտագործվի տեղաշարժի փոփոխական արագությամբ մածուցիկաչափ՝ 23 °C ջերմաստիճանում եւ տեղաշարժման փարբեր արագությունների ժամանակ նյութի դինամիկ մածուցիկության գործակիցը որոշելու համար: Ստացված արժեքների գրաֆիկը կառուցվում է տեղաշարժի արագության գրադիենտի հիման վրա եւ այնուհետեւ էստրապոլիացիայի (սպարեւեռացման) է ենթարկվում մինչեւ զրո տեղաշարժի արագության գրադիենտը: Արդյունքում ստացված դինամիկ մածուցիկության արժեքը բաժանելով խտության արժեքի վրա՝ ստացվում է իրական կինեմատիկ մածուցիկությունը՝ զրոյին մոտ տեղաշարժի արագության գրադիենտում:

- բ) մաքուր լուծիչի շերտից 3%-ից պակաս է տարանջատվում լուծիչի տարանջատման փորձարկման ընթացքում,
- գ) խառնուրդը կամ որեւէ տարանջատված լուծիչ չի համապատասխանում 6.1 դասի կամ 8-րդ դասի չափորոշիչներին,
- դ) Նյութերը փաթեթավորվում են 450 լիտրից ավելի տարողությամբ տարաներում:

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Այս դրույթները կիրառվում են նաեւ այն խառնուրդների դեպքում, որոնք պարունակում են 12.6%-ը չգերազանցող չոր զանգվածով ազոտի պարունակությամբ՝ 20%-ից ոչ ավելի նիտրոցեյուլոզ: 12.6%-ը չգերազանցող չոր զանգվածով ազոտի պարունակությամբ՝ 20%-ից ավելի, սակայն 55%-ից ոչ ավելի նիտրոցեյուլոզ պարունակող խառնուրդները սահմանված են ՄԱԿ-ի նշագրման 2059 համարի ներքո:*

23 °C ջերմաստիճանից ցածր բռնկման ջերմաստիճան ունեցող խառնուրդները, որոնք պարունակում են՝

- 55%-ից ավելի նիտրոցեյուլոզ՝ անկախ ազոտի իրենց պարունակությունից, կամ
- 55%-ից ոչ ավելի նիտրոցեյուլոզ՝ 12.6%-ից ավելի չոր զանգվածով ազոտի պարունակությամբ,

1-ին (ՄԱԿ-ի նշագրման 0340 կամ 0342 համար) կամ 4.1 դասի նյութեր են (ՄԱԿ-ի նշագրման 2555, 2556 կամ 2557 համարներ):

#### 2.2.3.1.5. Մածուցիկ հեղուկները

##### 2.2.3.1.5.1. Բացի 2.2.3.1.5.2-ով նախատեսվածից՝ մածուցիկ հեղուկները, որոնք՝

- ունեն 23 °C կամ դրանից բարձր եւ 60 °C-ից պակաս կամ դրան հավասար բռնկման ջերմաստիճան,
- թունավոր, կոռոզիոն կամ շրջակա միջավայրի համար վտանգավոր չեն,
- պարունակում են 20%-ից ոչ ավելի նիտրոցեյուլոզ, եթե նիտրոցեյուլոզը, ըստ չոր զանգվածի, ունի 12.6%-ից ոչ ավելի ազոտի բաղադրություն, եւ
- փաթեթավորվում են 450 լիտրից ոչ ավելի տարողությամբ տարաներում,

ապա «ԱԴՌ» համաձայնագրի դրույթները չեն տարածվում դրանց

վրա, եթե՝

- ա) լուծիչի տարանջատման փորձարկման ժամանակ (տե՛ս «Փորձարկումների և չափորոշիչների ձեռնարկ», III մաս, 32.5.1 ենթաբաժին) լուծիչի բաժանված շերտի բարձրությունն ընդհանուր բարձրության 3%-ից ցածր է, և
- բ) մածուցիկության փորձարկման ընթացքում հոսքի ժամանակը (տե՛ս «Փորձարկումների և չափորոշիչների ձեռնարկ», III մաս, 32.4.3 ենթաբաժին) 6 մմ շիթ տրամագծով հավասար է կամ ավելի մեծ է, քան՝
  - i) 60 վայրկյանը, կամ
  - ii) 40 վայրկյանը, եթե մածուցիկ հեղուկը պարունակում է 3-րդ դասի նյութերի 60%-ից ոչ ավելին:

2.2.3.1.5.2. «ԱԴԲ» համաձայնագրի որեւէ այլ դրույթ չի տարածվում այն մածուցիկ հեղուկների վրա, որոնք նույնպես վտանգավոր են շրջակա միջավայրի համար, սակայն համապատասխանում են 2.2.3.1.5.1-ի բոլոր մյուս չափորոշիչներին, եթե դրանք փոխադրվում են առանձին կամ համակցված այնպիսի փաթեթվածքներով, որոնք յուրաքանչյուր առանձին կամ ներքին փաթեթվածքի հաշվարկով պարունակում են 5 լիտր կամ դրանից պակաս զուտ քանակություն՝ պայմանով, որ փաթեթվածքները համապատասխանում են 4.1.1.1, 4.1.1.2 և 4.1.1.4 - 4.1.1.8-ի ընդհանուր դրույթներին:

2.2.3.1.6. Եթե 3-րդ դասի նյութերին խառնուրդներ ավելացնելու հետեանքով դրանք դասվում են 3.2 գլխի Ա աղյուսակում անվանմամբ նշված նյութերի ռիսկի կատեգորիաներից տարբեր՝ այլ կատեգորիաներում, ապա այս խառնուրդները կամ լուծույթները պետք է վերագրվեն այն դիրքերին, որոնց նրանք պատկանում են՝ վտանգի իրենց փաստացի աստիճանի հիման վրա:

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Լուծույթների և խառնուրդների դասակարգման համար (ինչպես, օրինակ՝ պատրաստուկներ և թափոններ) տե՛ս նաեւ 2.1.3:*

2.2.3.1.7. 2.3.3.1-ի և 2.3.4-ի համաձայն՝ փորձարկման ընթացակարգերի և 2.2.3.1.1-ով սահմանված չափորոշիչների վրա հիմնվելով՝ կարելի է նաեւ որոշել, թե արդյոք անվանմամբ նշված կամ անվանմամբ նշված նյութ պարունակող լուծույթի կամ խառնուրդի բնույթն այնպիսին է, որ այդ լուծույթը կամ խառնուրդը չի կարգավորվում այս դասի դրույթներով (տե՛ս նաեւ 2.1.3):

2.2.3.2. Փոխադրման համար անթույլատրելի նյութերը

2.2.3.2.1. 3-րդ դասի նյութերը, որոնք հեշտությամբ կարող են պերօքսիդներ

առաջացնել (ինչը տեղի է ունենում եթերների կամ բազմացիկլ եղանակով թթվածնով հագեցած որոշակի նյութերի հետ) անթույլատրելի են փոխադրման համար, եթե պերօքսիդի՝ որպես ջրածնի պերօքսիդ հաշվարկված իրենց պարունակությունը ( $H_2O_2$ ) գերազանցում է 0.3%-ը: Պերօքսիդի պարունակությունը պետք է որոշվի այնպես, ինչպես նշված է 2.3.3.3-ում:

- 2.2.3.2.2. 3-րդ դասի քիմիապես անկայուն նյութերն անթույլատրելի են փոխադրման համար՝ բացառությամբ, երբ ձեռնարկվել են անհրաժեշտ նախազգուշական միջոցառումներ՝ փոխադրման բնականոն պայմաններում դրանց վտանգավոր տրոհումը կամ պոլիմերացումը կանխելու համար: Պոլիմերացումը կանխելու համար անհրաժեշտ նախազգուշական միջոցների համար տե՛ս 3.3 գլխի 386-րդ հատուկ դրույթը: Այդ իսկ նպատակով մասնավորապես անհրաժեշտ է ապահովել, որ տարաները եւ ցիստեռնները չպարունակեն նշված ռեակցիաները խթանող որեւէ նյութ:
- 2.2.3.2.3. 3.2 գլխի Ա աղյուսակում թվարկվածներից տարբեր՝ այլ հեղուկ ապազգայունացված պայթուցիկ նյութեր չպետք է թույլատրվեն փոխադրման համար որպես 3-րդ դասի նյութեր:

### 2.2.3.3. Հավաքական դիրքերի ցանկ

Դյուրավառ հեղուկներ եւ այդպիսի նյութեր պարունակող պատրաստվածքներ	1133	Դյուրավառ հեղուկ պարունակող ՍՈՍԻՆՁՆԵՐ
	1136	ՔԱՐԱԾԽԱՅԻՆ ԽԵԺԻ ԹՈՐՎԱԾՔՆԵՐ, ԴՅՈՒՐԱՎԱՌ
	1139	ՊԱՏՈՂ ԼՈՒԾՈՒՅԹՆԵՐ (այդ թվում նաեւ արդյունաբերական կամ այլ նպատակներով օգտագործվող մակերեսային մշակման կամ պատման համար, ինչպես, օրինակ՝ փոխադրամիջոցների նախաներկման, թմբկազանի կամ տակառի ներպատման համար)
	1169	ԼՈՒԾԱՄՋՈՒՔՆԵՐ՝ ԲՈՒՐԱՎԵՏ, ՀԵՂՈՒԿ
	1197	ԼՈՒԾԱՄՋՈՒՔՆԵՐ՝ ԱՐՈՄԱՏԻՋԱՑՆՈՂ, ՀԵՂՈՒԿ
	1210	ՏՊԱԳՐԱԿԱՆ ՆԵՐԿ, դյուրավառ կամ
	1210	ՏՊԱԳՐԱԿԱՆ ՆԵՐԿԻ ՀԵՏ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՆՅՈՒԹ (այդ թվում նաեւ տպագրական ներկի նոսրացուցիչներ կամ լուծիչներ), դյուրավառ
	1263	ՆԵՐԿ (այդ թվում նաեւ ներկ, արծնուկ, էմալ, ներկանյութ, շելլաք, օլիֆ, պոլիտուրա, հեղուկ լցանյութ եւ լաքային հեղուկ հիմք), կամ
	1263	ՆԵՐԿԻ ՀԵՏ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՆՅՈՒԹԵՐ (այդ թվում նաեւ նոսրացուցիչներ կամ լուծիչներ )
	1266	ԾՍԱՆԵԼԻՔԱՅԻՆ ԱՊՐԱՆՔՆԵՐ՝ դյուրավառ լուծիչների պարունակությամբ
	1293	ԹՈՒՐՄԵՐ ԲԺՇԿԱԿԱՆ
	1306	ՓԱՅՏԱՆՅՈՒԹԻ ՀԱԿԱՆԵՒԻՉ ՆՅՈՒԹԵՐ, ՀԵՂՈՒԿ
	1866	ԽԵԺԻ ԼՈՒԾՈՒՅԹ, դյուրավառ
	1999	ՀԱՆՔԱՁՅՈՒԹ, ՀԵՂՈՒԿ, ներառյալ՝ ճանապարհային յուղերը եւ հեղուկացված բիտումները
	3065	ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐ
Առանց լրացուցիչ դիսկի	1224	ԿԵՏՈՆՆԵՐ, ՀԵՂՈՒԿ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ
	1268	ՆԱՎԹԻ ԹՈՐՎԱԾՔՆԵՐ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ, կամ
	1268	ՆԱՎԹԱՄԹԵՐՔ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ
	1987	ՍՊԻՐՏՆԵՐ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ
	1989	ԱԼԴԵՇԻԴՆԵՐ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ
	2319	ՏԵՐՊԵՆԱՅԻՆ ԱԾԽԱՋՐԱԾԻՆՆԵՐ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ
	3271	ԵԹԵՐՆԵՐ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ
	3272	ԲԱՐԴ ԵԹԵՐՆԵՐ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ
	3295	ԱԾԽԱՋՐԱԾԻՆՆԵՐ, ՀԵՂՈՒԿ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ
	3336	ՄԵՐԿԱՊՏԱՆՆԵՐ, ՀԵՂՈՒԿ, ԴՅՈՒՐԱՎԱՌ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ, կամ
3336	ՄԵՐԿԱՊՏԱՆՆԵՐԻ ԽԱՌՆՈՒՐԴ, ՀԵՂՈՒԿ ԴՅՈՒՐԱՎԱՌ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ	
1993	ԴՅՈՒՐԱՎԱՌ ՀԵՂՈՒԿ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ	
F2 բարձր ջերմաստիճան	3256	ՀԵՂՈՒԿ՝ ԲԱՐՁՐ ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ, ԴՅՈՒՐԱՎԱՌ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ, 60 °C ջերմաստիճանից բարձր բռնկման ջերմաստիճանով՝ իր բռնկման ջերմաստիճանին համարժեք կամ դրանից բարձ ջերմաստիճանային պայմաններում
F3 պատրաստվածքներ	3269	ԲԱՋՄԱԵԹԵՐԱՅԻՆ ԽԵԺԻ ՀԱՎԱՔԱԾՈՒ, հեղուկի հիմքով նյութ
	3473	ՎԱՌԵԼԻՔԱՅԻՆ ԷԼԵՄԵՆՏՆԵՐՈՎ ՔԱՐԹՐԻՋՆԵՐ, կամ
	3473	ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ ՄԵՋ ԱՌԿԱ ՎԱՌԵԼԻՔԱՅԻՆ ԷԼԵՄԵՆՏՆԵՐՈՎ ՔԱՐԹՐԻՋՆԵՐ, կամ
	3473	ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ ՀԵՏ ՓԱԹԵԹԱՎՈՐՎԱԾ՝ ՎԱՌԵԼԻՔԱՅԻՆ ԷԼԵՄԵՆՏՆԵՐՈՎ ՔԱՐԹՐԻՋՆԵՐ
	3528	ՇԱՐԺԻՉ՝ ՆԵՐՔԻՆ ԱՅՐՄԱՆ, ԴՅՈՒՐԱՎԱՌ ՀԵՂՈՒԿՈՎ ԱՇԽԱՏՈՂ, կամ

		3528 ՇԱՐԺԻՉ՝ ՎԱՌԵԼԻՔԱՅԻՆ ԷԼԵՄԵՆՏՆԵՐՈՎ, ԴՅՈՒՐԱՎԱՌ ՀԵՂՈՒԿՈՎ ԱՇԽԱՏՈՂ, կամ	
		3528 ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ՝ ՆԵՐՔԻՆ ԱՅՐՄԱՆ, ԴՅՈՒՐԱՎԱՌ ՀԵՂՈՒԿՈՎ ԱՇԽԱՏՈՂ, կամ	
		3528 ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ՝ ՎԱՌԵԼԻՔԱՅԻՆ ԷԼԵՄԵՆՏՆԵՐՈՎ, ԴՅՈՒՐԱՎԱՌ ՀԵՂՈՒԿՈՎ ԱՇԽԱՏՈՂ, կամ	
Թունավոր		1228 ՄԵՐԿԱՊՏԱՆՆԵՐ, ՀԵՂՈՒԿ ԴՅՈՒՐԱՎԱՌ, ԹՈՒՆԱՎՈՐ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ, կամ	
		1228 ՄԵՐԿԱՊՏԱՆԻ ԽԱՌՆՈՒՐԴ, ՀԵՂՈՒԿ, ԴՅՈՒՐԱՎԱՌ, ԹՈՒՆԱՎՈՐ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ	
		1986 ՍՊԻՐՏՆԵՐ, ԴՅՈՒՐԱՎԱՌ, ԹՈՒՆԱՎՈՐ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ	
		1988 ԱԼԴԵՀԻԴՆԵՐ, ԴՅՈՒՐԱՎԱՌ ԹՈՒՆԱՎՈՐ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ	
	FT1	2478 ԻՋՈՑԻԱՆԱՏՆԵՐ, ԴՅՈՒՐԱՎԱՌ, ԹՈՒՆԱՎՈՐ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ, կամ	
		2478 ԻՋՈՑԻԱՆԱՏԻ ԼՈՒԾՈՒՅԹ, ԴՅՈՒՐԱՎԱՌ, ԹՈՒՆԱՎՈՐ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ	
		3248 ԴԵՂՈՐԱՅՔ, ՀԵՂՈՒԿ, ԴՅՈՒՐԱՎԱՌ, ԹՈՒՆԱՎՈՐ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ	
		3273 ՆԻՏՐԻԼՆԵՐ, ԴՅՈՒՐԱՎԱՌ, ԹՈՒՆԱՎՈՐ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ	
		1992 ԴՅՈՒՐԱՎԱՌ ՀԵՂՈՒԿ, ԹՈՒՆԱՎՈՐ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ	
	FT		2758 ԿԱՐՔԱՄԻՆԱՏՆԵՐԻ ՀԻՄՔՈՎ ԹՈՒՆԱՔԻՄԻԿԱՏ, ՀԵՂՈՒԿ, ԴՅՈՒՐԱՎԱՌ, ԹՈՒՆԱՎՈՐ
		2760 ԱՐՍԵՆԻ ՀԻՄՔՈՎ, ԹՈՒՆԱՔԻՄԻԿԱՏ, ՀԵՂՈՒԿ, ԴՅՈՒՐԱՎԱՌ, ԹՈՒՆԱՎՈՐ	
		2762 ՔԼՈՐՕՐԳԱՆԱԿԱՆ ԹՈՒՆԱՔԻՄԻԿԱՏ, ՀԵՂՈՒԿ, ԴՅՈՒՐԱՎԱՌ, ԹՈՒՆԱՎՈՐ	
		2764 ՏՐԻԱՋԻՆԱՅԻՆ ԹՈՒՆԱՔԻՄԻԿԱՏ, ՀԵՂՈՒԿ, ԴՅՈՒՐԱՎԱՌ, ԹՈՒՆԱՎՈՐ	
		2772 ՏԻՈՎԱՐՔԱՄԻԴԻ ՀԻՄՔՈՎ ԹՈՒՆԱՔԻՄԻԿԱՏ, ՀԵՂՈՒԿ, ԴՅՈՒՐԱՎԱՌ, ԹՈՒՆԱՎՈՐ	
		2776 ՊՂՆՁԻ ՀԻՄՔՈՎ ԹՈՒՆԱՔԻՄԻԿԱՏ, ՀԵՂՈՒԿ, ԴՅՈՒՐԱՎԱՌ, ԹՈՒՆԱՎՈՐ	
		2778 ՄՆԴԻԿԻ ՀԻՄՔՈՎ ԹՈՒՆԱՔԻՄԻԿԱՏ, ՀԵՂՈՒԿ, ԴՅՈՒՐԱՎԱՌ ԹՈՒՆԱՎՈՐ	
		2780 ՆԻՏՐՈՖԵՆՈԼԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐՈՎ ԹՈՒՆԱՔԻՄԻԿԱՏ, ՀԵՂՈՒԿ, ԴՅՈՒՐԱՎԱՌ, ԹՈՒՆԱՎՈՐ	
		2782 ԵՐԿՊԻՐԻԴԻԼԻՈՒՄԻ ՀԻՄՔՈՎ ԹՈՒՆԱՔԻՄԻԿԱՏ, ՀԵՂՈՒԿ, ԴՅՈՒՐԱՎԱՌ, ԹՈՒՆԱՎՈՐ	
		2784 ՖՈՍՖՈՐՕՐԳԱՆԱԿԱՆ ԹՈՒՆԱՔԻՄԻԿԱՏ, ՀԵՂՈՒԿ, ԴՅՈՒՐԱՎԱՌ, ԹՈՒՆԱՎՈՐ	
		2787 ԱՆԱԳՕՐԳԱՆԱԿԱՆ ԹՈՒՆԱՔԻՄԻԿԱՏ, ՀԵՂՈՒԿ, ԴՅՈՒՐԱՎԱՌ, ԹՈՒՆԱՎՈՐ	
		3024 ԿՈՒՄԱՐԻՆԻ ԱԾԱՆՅՅԱԼԻ ԹՈՒՆԱՔԻՄԻԿԱՏՆԵՐ, ՀԵՂՈՒԿ, ԴՅՈՒՐԱՎԱՌ, ԹՈՒՆԱՎՈՐ	
		3346 ՖԵՆՈՔՍԻՔԱՑԱԽԱԹԹՎԻ ԱԾԱՆՅՅԱԼԻ ԹՈՒՆԱՔԻՄԻԿԱՏ, ՀԵՂՈՒԿ, ԴՅՈՒՐԱՎԱՌ, ԹՈՒՆԱՎՈՐ	
		3350 ՊԻՐԵՏՐՈՒԴԱՅԻՆ ՀԻՄՔՈՎ ԹՈՒՆԱՔԻՄԻԿԱՏ, ՀԵՂՈՒԿ, ԴՅՈՒՐԱՎԱՌ ԹՈՒՆԱՎՈՐ	
		3021 ԹՈՒՆԱՔԻՄԻԿԱՏ, ՀԵՂՈՒԿ, ԴՅՈՒՐԱՎԱՌ, ԹՈՒՆԱՎՈՐ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ	
		ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Դիրքի ներքո թունաքիմիկատի դասակարգումը կատարվում է ակտիվ բաղադրատարրի, թունաքիմիկատի ֆիզիկական վիճակի եւ դրա կողմից ներկայացվող ցանկացած լրացուցիչ ռիսկի հիման վրա	
Կոռոզիոն			3469 ՆԵՐԿ, ԴՅՈՒՐԱՎԱՌ, ԿՈՌՈԶԻՈՆ (այդ թվում նաեւ ներկ, արծնուկ, էմալ, ներկանյութ, շելլաք, օլիֆ, պոլիտուրա, հեղուկ լցանյութ եւ լաքային հեղուկ հիմք) կամ
			3469 ՆԵՐԿԻ ՀԵՏ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՆՅՈՒԹԵՐ, ԴՅՈՒՐԱՎԱՌ, ԿՈՌՈԶԻՈՆ (այդ թվում նաեւ նոսրացուցիչներ կամ լուծիչներ)
		FC	2733 ԱՄԻՆՆԵՐ, ԴՅՈՒՐԱՎԱՌ, ԿՈՌՈԶԻՈՆ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ, կամ
		2733 ՊՈԼԻԱՄԻՆՆԵՐ, ԴՅՈՒՐԱՎԱՌ, ԿՈՌՈԶԻՈՆ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ	
	2985 ՔԼՈՐՍԻԼԱՆՆԵՐ, ԴՅՈՒՐԱՎԱՌ, ԿՈՌՈԶԻՈՆ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ		

		3274 ԱԼԿՈՇՈՒՄԻ ԼՈՒԾՈՒՅԹ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ, սպիրտի մեջ
		2924 ԴՅՈՒՐԱՎԱՌ ՀԵՂՈՒԿ, ԿՈՌՈՋԻՈՆ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ
Թունավոր,		
կոռոզիոն	FTC	3286 ԴՅՈՒՐԱՎԱՌ ՀԵՂՈՒԿ, ԹՈՒՆԱՎՈՐ, ԿՈՌՈՋԻՈՆ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ
Հեղուկ	D	3343 ՆԻՏՐՈԳԼԻՑԵՐԻՆԻ ԽԱՌՆՈՒՐԴ, ԱՊԱԶԳԱՅՈՒՆԱՑՎԱԾ, ՀԵՂՈՒԿ, ԴՅՈՒՐԱՎԱՌ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ. 30%-ից ոչ ավելի նիտրոգլիցերինով՝ ըստ զանգվածի
		3357 ՆԻՏՐՈԳԼԻՑԵՐԻՆԻ ԽԱՌՆՈՒՐԴ, ԱՊԱԶԳԱՅՈՒՆԱՑՎԱԾ, ՀԵՂՈՒԿ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ, 30%-ից ոչ ավելի նիտրոգլիցերինով՝ ըստ զանգվածի
ապազգայունացված պայթուցիկ նյութ		3379 ԱՊԱԶԳԱՅՈՒՆԱՑՎԱԾ ՊԱՅԹՈՒՑԻԿ ՆՅՈՒԹ, ՀԵՂՈՒԿ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ

2.2.41. Դաս 4.1 Դյուրավառ պինդ նյութերը, ինքնառեակտիվ նյութերը, պոլիմերացված նյութերը եւ պինդ ապազգայունացված պայթուցիկ նյութերը

2.2.41.1. Չափորոշիչները

2.2.41.1.1. 4.1 դասի վերնագրի ներքո ընդգրկվում են դյուրավառ նյութերը եւ պատրաստվածքները, ապազգայունացված պայթուցիկ նյութերը, որոնք պինդ են 1.2.1-ում «պինդ» սահմանման (ա) ենթապարբերության համաձայն եւ ինքնառեակտիվ հեղուկ կամ պինդ նյութերը, ինչպես նաեւ պոլիմերացված նյութերը:

Ստորեւ նշվածները դասվում են 4.1 դասի ներքո՝

- դյուրավառ պինդ նյութեր եւ պատրաստվածքներ (տե՛ս 2.2.41.1.3 - 2.2.41.1.8 պարբերությունները).
- ինքնառեակտիվ պինդ կամ հեղուկ նյութեր (տե՛ս 2.2.41.1.9 - 2.2.41.1.17 պարբերությունները).
- պինդ ապազգայունացված պայթուցիկ նյութեր (տե՛ս 2.2.41.1.18).
- ինքնառեակտիվ նյութերի հետ կապված նյութեր (տե՛ս 2.2.41.1.19)
- պոլիմերացված նյութեր (տե՛ս 2.2.41.1.20 եւ 2.2.41.1.21):

2.2.41.1.2. 4.1 դասի նյութերը եւ պատրաստվածքները բաժանվում են հետեւյալ ենթախմբերի՝

- F Առանց լրացուցիչ ռիսկի դյուրավառ պինդ նյութեր՝
- F1 Օրգանական
- F2 Օրգանական, հալեցված

- F3 Անօրգանական
- F4 Պատրաստվածքներ
- FO Դյուրավառ պինդ նյութեր, օքսիդացնող
- FT Դյուրավառ պինդ նյութեր, թունավոր
- FT1 Օրգանական, թունավոր
- FT2 Անօրգանական, թունավոր
- FC Դյուրավառ պինդ նյութեր, կոռոզիոն
- FC1 Օրգանական, կոռոզիոն
- FC2 Անօրգանական, կոռոզիոն
- D Առանց լրացուցիչ ռիսկի պինդ ապազգայունացված պայթուցիկ նյութեր
- DT Պինդ ապազգայունացված պայթուցիկ նյութեր, թունավոր
- SR Ինքնառեակտիվ նյութեր
- SR1 Ջերմաստիճանի վերահսկողություն չպահանջող
- SR2 Ջերմաստիճանի վերահսկողություն պահանջող
- PM Պոլիմերացնող նյութեր
- PM1 Ջերմաստիճանի վերահսկողություն չպահանջող
- PM2 Ջերմաստիճանի վերահսկողություն պահանջող:

Դյուրավառ պինդ նյութերը

Սահմանումը եւ հատկանիշները

2.2.41.1.3. Դյուրավառ պինդ նյութերն արագ այրվող պինդ նյութեր են եւ այնպիսի պինդ նյութեր, որոնք շփման արդյունքում կարող են կրակ առաջացնել:

Հեշտությամբ այրվող պինդ նյութերը փոշենման, հատիկավոր կամ մածուկանման նյութեր են եւ վտանգավոր են, եթե դրանք կարող են հեշտությամբ այրվել այրման աղբյուրի, ինչպես, օրինակ՝ վառվող լուցկու հետ կարճատեւ շփման հետեւանքով, եւ եթե կրակն արագ տարածվում է: Վտանգը կարող է առաջանալ ոչ միայն կրակից, այլ նաեւ այրման թունավոր արգասիքներից: Մետաղական փոշիները հատկապես վտանգավոր են կրակը հանգեցնելու դժվարության պատճառով, քանի որ ածխաթթու գազը կամ ջուրը կարող են խորացնել վտանգը:



## Դասակարգումը

2.2.41.1.4. 4.1 դասում որպես դյուրավառ պինդ նյութեր դասակարգված նյութերը եւ պատրաստվածքները թվարկված են 3.2 գլխի Ա աղյուսակում: 3.2 գլխի Ա աղյուսակում անվանմամբ չնշված օրգանական նյութերի եւ պատրաստվածքների վերագրումը 2.2.41.3-ի համապատասխան դիրքին 2.1 գլխի դրույթների համաձայն կարող է հիմնված լինել փորձի կամ փորձարկման ընթացակարգերի արդյունքների վրա՝ «Փորձարկումների եւ չափորոշիչների ձեռնարկ»-ի III մասի 33.2.1 ենթաբաժնի համաձայն: Անվանմամբ չնշված անօրգանական նյութերի վերագրումն այս կամ այն դիրքին պետք է հիմնված լինի փորձարկման ընթացակարգերի արդյունքների վրա՝ «Փորձարկումների եւ չափորոշիչների ձեռնարկ»-ի III մասի 33.2.1 ենթաբաժնի համաձայն: Փորձը նույնպես պետք է հաշվի առնվի, եթե այն հանգեցնում է առավել խիստ դասակարգման:

2.2.41.1.5. Եթե անվանմամբ չնշված նյութերը «Փորձարկումների եւ չափորոշիչների ձեռնարկ»-ի III մասի 33.2.1 ենթաբաժնին համապատասխան փորձարկման ընթացակարգերի հիման վրա վերագրվում են 2.2.41.3-ում թվարկված դիրքերից մեկին, ապա կիրառվում են հետեւյալ չափորոշիչները՝

ա) բացառությամբ մետաղական փոշիների կամ մետաղական համաձուլվածքների փոշիների՝ փոշենման, հատիկավոր կամ մաճուկանման նյութերը պետք է դասակարգվեն որպես 4.1 դասի դյուրավառ նյութեր, եթե դրանք կարող են հեշտությամբ այրվել այրման աղբյուրի, ինչպես, օրինակ՝ վառվող լուցկու հետ կարճատեւ շփման հետեւանքով, կամ եթե այրման դեպքում կրակն արագ է տարածվում, այրման տեւողությունը 45 վայրկյանից պակաս է 100 մմ տարածության նկատմամբ հաշվարկված լինելու դեպքում, կամ այրման արագությունը 2.2 մմ/վայրկյանից ավելի է:

բ) մետաղական փոշիները կամ մետաղական համաձուլվածքների փոշիները վերագրվում են 4.1 դասին, եթե դրանք կարող են այրվել կրակի հետ շփման հետեւանքով, եւ եթե ռեակցիան 10 րոպե կամ դրանից պակաս ժամանակահատվածում տարածվում է նմուշի ամբողջ երկարությամբ:

Այն պինդ նյութերը, որոնք կարող են կրակ առաջացնել շփման հետեւանքով, պետք է դասակարգվեն 4.1 դասում՝ առկա դիրքերի հետ համանմանության սկզբունքով (օրինակ՝ լուցկի) կամ ցանկացած համապատասխան հատուկ դրույթի համաձայն:

2.2.41.1.6. «Փորձարկումների եւ չափորոշիչների ձեռնարկ»-ի III մասի 33.2.1 բաժնի եւ 2.2.41.1.4-ում եւ 2.2.41.1.5-ում սահմանված չափորոշիչների

համաձայն՝ փորձարկման ընթացակարգերի հիման վրա նույնպես կարելի է որոշել՝ արդյոք անվանմամբ նշված նյութի բնույթն այնպիսին է, որ նյութը չի կարգավորվում սույն դասի դրույթներով:

2.2.41.1.7. Այն դեպքում, երբ 4.1 դասի նյութերին խառնուրդներ ավելացնելու հետեւանքով դրանք դասվում են 3.2 գլխի Ա աղյուսակում անվանմամբ նշված նյութերի ռիսկի կատեգորիաներից տարբեր՝ ռիսկի այլ կատեգորիաների ներքո, ապա այս խառնուրդները պետք է վերագրվեն այն դիրքերին, որոնց նրանք պատկանում են՝ վտանգի իրենց փաստացի աստիճանի հիման վրա:

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Լուծույթների եւ խառնուրդների դասակարգման համար (ինչպես, օրինակ՝ պատրաստուկներ եւ թափոններ) տե՛ս նաեւ 2.1.3:*

Փաթեթավորման խմբերի սահմանումը

2.2.41.1.8. 3.2 գլխի Ա աղյուսակում տարբեր դիրքերի ներքո դասակարգված դյուրավառ պինդ նյութերին «Փորձարկումների եւ չափորոշիչների ձեռնարկ»-ի III մասի 33.2.1 բաժնի փորձարկման ընթացակարգերի հիման վրա վերագրվում են II կամ III փաթեթավորման խմբերը՝ հետեւյալ չափորոշիչների համաձայն՝

ա) այն դյուրավառ պինդ նյութերը, որոնք փորձարկման ժամանակ 100 մմ տարածության նկատմամբ հաշվարկված լինելու դեպքում ունեն 45 վայրկյանից պակաս այրման տեւողություն, դասվում են՝

փաթեթավորման II խմբին, եթե կրակն անցնում է խոնավացված գոտին.

փաթեթավորման III խմբին, եթե խոնավացված գոտին կանգնեցնում է կրակն առնվազն չորս բոպետով.

բ) մետաղական փոշիները կամ մետաղական համաձուլվածքների փոշիները դասվում են՝

փաթեթավորման II խմբին, եթե փորձարկվելիս ռեակցիան տարածվում է հինգ բոպետում կամ ավելի պակաս ժամկետում՝ նմուշի ամբողջ երկարությամբ.

փաթեթավորման III խմբին, եթե փորձարկվելիս ռեակցիան ավելի քան հինգ բոպետում տարածվում է նմուշի ամբողջ երկարությամբ:

Այն պինդ նյութերի համար, որոնք շփման արդյունքում կարող են կրակ առաջացնել, փաթեթավորման խումբը սահմանվում է առկա դիրքերի հետ համանմանության սկզբունքով կամ ցանկացած հատուկ դրույթի համաձայն:

Ինքնառեակտիվ նյութերը

Սահմանումները

2.2.41.1.9. «ԱԴԴ» համաձայնագրի նպատակներով ինքնառեակտիվ նյութերը ջերմային տեսանկյունից անկայուն նյութեր են, որոնք կարող են ենթարկվել խորը էկզոթերմիկ քայքայման՝ նույնիսկ առանց թթվածնի (օդի) մասնակցության: 4.1 դասի ինքնառեակտիվ նյութեր չեն համարվում այն նյութերը, որոնք՝

- ա) պայթուցիկ նյութեր են՝ 1-ին դասի չափորոշիչների համաձայն.
- բ) օքսիդացնող նյութեր են՝ 5.1 դասի դասակարգման ընթացակարգի համաձայն (տե՛ս 2.2.51.1)՝ բացառությամբ, եթե օքսիդացնող նյութերի խառնուրդները, որոնք պարունակում են 5% կամ ավելի այրվող օրգանական նյութեր, ենթարկվում են 2-րդ ծանոթագրությունում սահմանված դասակարգման ընթացակարգին.
- գ) դրանք օրգանական պերօքսիդներ են՝ 5.2 դասի չափորոշիչների համաձայն (տե՛ս 2.2.52.1).
- դ) դրանց տրոհման ջերմությունը պակաս է 300 Ջ/գ-ից, կամ
- ե) ինքնաարագացող տրոհման ջերմաստիճանը (ԻՏՁ) (տե՛ս ստորեւ ներկայացված 3-րդ ծանոթագրությունը) բարձր է 75 °C-ից՝ 50 կիլոգրամանոց փաթեթի համար:

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1. Տրոհման ջերմությունը կարող է որոշվել միջազգայնորեն ճանաչված մեթոդի կիրառմամբ, ինչպիսիք են, օրինակ՝ դիֆերենցիալ սկանավորման կալորիաչափությունը եւ ադիաբատային կալորիաչափությունը:*

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2. 5.1 դասի չափորոշիչներին համապատասխանող՝ օքսիդացնող նյութերի այն խառնուրդները, որոնք պարունակում են 5% կամ ավելի այրվող օրգանական նյութեր, որոնք չեն համապատասխանում վերը նշված (ա), (գ), (դ) կամ (ե) կետերում նշված չափորոշիչներին, պետք է ենթարկվեն ինքնառեակտիվ նյութերի դասակարգման ընթացակարգին:*

«B»-ից մինչեւ «F» տեսակի ինքնառեակտիվ նյութի հատկություններով օժտված նյութը դասակարգվում է որպես 4.1 դասի ինքնառեակտիվ նյութ:

«Փորձարկումների եւ չափորոշիչների ձեռնարկ»-ի II մասի 20.4.3 (ե) բաժնում ներկայացված սկզբունքի համաձայն՝ ինքնառեակտիվ նյութի հատկություններով օժտված «G» տեսակի խառնուրդը պետք է դասակարգվի որպես 5.1 դասի նյութ (տե՛ս 2.2.51.1):

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3.** *Ինքնաարագացող տրոհման ջերմաստիճանը (ԻՏՋ) այն ամենացածր ջերմաստիճանն է, որի ժամանակ ինքնաարագացող տրոհում կարող է տեղի ունենալ նյութի հետ փաթեթվածքում՝ փոխադրման ընթացքում օգտագործվելու ժամանակ: ԻՏՋ-ն որոշելու համար անհրաժեշտ պահանջները ներկայացված են «Փորձարկումների եւ չափորոշիչների ձեռնարկ»-ի II մասի 20-րդ գլխում եւ 28.4 բաժնում:*

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 4.** *Բոլոր այն նյութերը, որոնք օժտված են ինքնառեակտիվ նյութի հատկություններով, դասակարգվում են որպես այդպիսին, նույնիսկ եթե այդ նյութի 4.2 դասում ընդգրկման նպատակով անցկացվող փորձարկման արդյունքում դրական արդյունք է ստացվում՝ 2.2.42.1.5-ի համաձայն:*

### Հատկանիշները

2.2.41.1.10. Ինքնառեակտիվ նյութերի տրոհումը կարող է սկսվել ջերմության, կատալիտիկ խառնուկների հետ շփման (օրինակ՝ թթուներ, ծանր մետաղական միացություններ, հիմքեր), շփման կամ հարվածի հետեւանքով: Տրոհման արագությունն աճում է ջերմաստիճանից կախված եւ տարբեր է տարբեր նյութերի դեպքում: Տրոհումը, մասնավորապես, եթե ոչ մի այրում տեղի չի ունենում, կարող է հանգեցնել թունավոր գազերի կամ գոլորշիների արտազատմանը: Ինքնառեակտիվ որոշ նյութերի համար ջերմաստիճանը պետք է վերահսկել: Ինքնառեակտիվ որոշ նյութեր կարող են տրոհվել պայթյունի հետեւանքով, մասնավորապես, եթե դրանք պահվում են փակ անոթներում: Այս բնութագիրը կարող է փոփոխվել նոսրացուցիչների հավելմամբ կամ համապատասխան փաթեթվածքների կիրառմամբ: Ինքնառեակտիվ որոշ նյութեր արագ են վառվում: Ինքնառեակտիվ նյութերը, օրինակ՝ ստորեւ թվարկված տեսակների որոշ միացություններ են՝

ալիֆատիկ ազոմիացություններ (-C-N=N-C-).

օրգանական ազիդներ (-C-N<sub>3</sub>).

դիազոնիումի աղեր (-CN<sub>2</sub>+ Z-).

N-նիտրոզոմիացություններ (-N-N=O). եւ

արոմատիկ սուլֆոհիդրազիդներ (-SO<sub>2</sub>-NH-NH<sub>2</sub>):

Ցանկը սպառիչ չէ, ուստի այլ ռեակտիվ խմբերի հետ առկա նյութերը եւ նյութերի որոշ խառնուրդներ կարող են ունենալ միեւնույն հատկությունները:

Դասակարգումը

2.2.41.1.11. Ինքնառեակտիվ նյութերը դասակարգվում են յոթ տեսակների ներքո՝ իրենց կողմից ներկայացվող վտանգի աստիճանի համաձայն: Ինքնառեակտիվ նյութերի տեսակները լինում են «A» տեսակից, որն ընդունելի չէ փոխադրման համար այն փաթեթվածքում, որում այն փորձարկվել է, մինչև «G» տեսակի, որը չի կարգավորվում 4.1 դասի ինքնառեակտիվ նյութերի վերաբերյալ դրույթներով: «B»-ից մինչև «F» տեսակների համար դասակարգումն ուղղակիորեն կապված է մեկ միավոր փաթեթվածքում թույլատրված առավելագույն քանակության հետ: Դասակարգման համար կիրառվելիք սկզբունքները, ինչպես նաև դասակարգման կիրառելի ընթացակարգերը, փորձարկման մեթոդները եւ չափորոշիչներն ու փորձարկման մասին համապատասխան արձանագրության օրինակը ներկայացված են «Փորձարկումների եւ չափորոշիչների ձեռնարկի» II մասում:

2.2.41.1.12. Ինքնառեակտիվ այն նյութերը, որոնք արդեն դասակարգվել են եւ թույլատրվել են փաթեթվածքներում փոխադրվելու համար, թվարկված են 2.2.41.4-ում, այնպիսիները, որոնք արդեն թույլատրվել են ՍՄԿ-ներում փոխադրվելու համար, թվարկված են 4.1.4.2-ի IBC520 փաթեթավորման ցուցման մեջ, ինչպես նաև այնպիսիները, որոնք 4.2 գլխի համաձայն արդեն թույլատրվել են ցիստեռններում փոխադրվելու համար, թվարկված են 4.2.5.2-ում՝ շարժական ցիստեռնների վերաբերյալ T23 ցուցման մեջ: Թվարկված յուրաքանչյուր թույլատրված նյութին վերագրվում է 3.2 գլխի Ա աղյուսակի ընդհանրական դիրք (ՄԱԿ-ի նշագրման 3221-3240 համարներ ), եւ տրվում են համապատասխան լրացուցիչ ռիսկերի եւ փոխադրման մասին համապատասխան տեղեկություններ ապահովող նշումներ:

Հավաքական դիրքերում նշված են՝

- «B»-«F» տեսակների ինքնառեակտիվ նյութերը, տե՛ս վերը նշված 2.2.41.1.11,
- ֆիզիկական վիճակը (հեղուկ/պինդ), եւ
- ջերմաստիճանի վերահսկողությունը (անհրաժեշտության դեպքում), տե՛ս ստորեւ բերված 2.2.41.1.17:

2.2.41.4-ում թվարկված ինքնառեակտիվ նյութերի դասակարգումը հիմնված է տեխնիկապես մաքուր նյութի վրա (բացառությամբ, եթե նշվում է 100%-ից ցածր կոնցենտրացիա):

2.2.41.1.13. 2.2.41.4, 4.1.4.2-ում, IBC520 փաթեթավորման ցուցման մեջ կամ 4.2.5.2-ում՝ T23 շարժական ցիստեռնների վերաբերյալ ցուցման մեջ

չթվարկված ինքնառեակտիվ նյութերի դասակարգումը եւ հավաքական դիրքին վերագրելը կատարվում է ծագման երկրի իրավասու մարմնի կողմից՝ փորձարկման մասին արձանագրության հիման վրա: Հաստատման որոշումը պետք է պարունակի փոխադրման համապատասխան պայմանները եւ դասակարգումը: Եթե ծագման երկիրը «ԱԴԲ» համաձայնագրի Պայմանավորվող կողմ չէ, ապա դասակարգումը եւ փոխադրման պայմանները պետք է ճանաչվեն «ԱԴԲ» համաձայնագրի Պայմանավորվող կողմ հանդիսացող այն երկրի իրավասու մարմնի կողմից, որի տարածք բեռն առաջինն է հասնում:

2.2.41.1.14. Այնպիսի ակտիվարարները, ինչպես, օրինակ՝ ցինկի միացություններ են, կարող են հավելվել ինքնառեակտիվ նյութերին՝ դրանց ռեակտիվությունը փոփոխելու նպատակով: Կախված ակտիվարարի թե՛ տեսակից եւ թե՛ կոնցենտրացիայից՝ դա կարող է հանգեցնել ջերմային կայունության նվազմանը եւ պայթուցիկ հատկություններում փոփոխությանը: Եթե այս հատկություններից որեւիցե մեկը փոփոխվում է, ապա նոր գոյացությունը պետք է գնահատվի դասակարգման ընթացակարգի համաձայն:

2.2.41.1.15. 2.2.41.4-ում չթվարկված ինքնառեակտիվ նյութերը կամ ինքնառեակտիվ նյութերի գոյացությունների նմուշները, որոնց մասին առկա չեն փորձարկման արդյունքների ամբողջական տվյալներ, եւ որոնք պետք է փոխադրվեն հետագա փորձարկումների եւ գնահատման համար, պետք է վերագրվեն «C» տեսակի ինքնառեակտիվ նյութերի համապատասխան դիրքերից որեւէ մեկին՝ պայմանով, որ բավարարվեն հետեւյալ պայմանները՝

- առկա տվյալները վկայում են այն մասին, որ նմուշն այլեւս չի լինի ավելի վտանգավոր, քան «B» տեսակի ինքնառեակտիվ նյութերը.
- նմուշը փաթեթավորված է փաթեթավորման OP2 մեթոդի համաձայն, եւ տրանսպորտային միավորի համար դրա քանակությունը սահմանափակվում է 10 կգ-ով.
- առկա տվյալները վկայում են այն մասին, որ վերահսկման ջերմաստիճանն առկայության դեպքում բավականին ցածր է վտանգավոր տրոհումները եւ բավականին բարձր՝ վտանգավոր ֆազային բաժանումը կանխելու համար:

#### *Ապազգայունացումը*

2.2.41.1.16. Փոխադրման ընթացքում անվտանգությունն ապահովելու համար ինքնառեակտիվ նյութերը շատ դեպքերում ապազգայունացվում են նոսրացուցիչի կիրառման միջոցով: Եթե նյութի տոկոսը նշված է, ապա դա վերաբերում է տոկոսին՝ ըստ զանգվածի, որը կլորացված է ամենամոտ ամբողջ թվով: Նոսրացուցիչի կիրառման դեպքում

ինքնառեակտիվ նյութը պետք է փորձարկվի նոսրացուցիչի այն կոնցենտրացիայի եւ տեսակի հետ, որն օգտագործվում է փոխադրման ժամանակ: Չպետք է օգտագործվեն այնպիսի նոսրացուցիչներ, որոնք փաթեթվածքից գրանցված արտահոսքի դեպքում կարող են հանգեցնել ինքնառեակտիվ նյութի վտանգավոր չափերի հասնող կոնցենտրացիայի ձեւավորմանը: Ցանկացած նոսրացուցիչ պետք է համատեղելի լինի ինքնառեակտիվ նյութի հետ: Այս առումով համատեղելի նոսրացուցիչներն այն պինդ կամ հեղուկ նյութերն են, որոնք ոչ մի վնասակար ազդեցություն չունեն ինքնառեակտիվ նյութի ջերմային կայունության եւ դրա ներկայացրած վտանգի տեսակի վրա: Ջերմաստիճանի վերահսկողություն պահանջող միացություններում առկա հեղուկ նոսրացուցիչները (տե՛ս 2.2.41.1.14) պետք է ունենան առնվազն 60 °C եռման ջերմաստիճան եւ ոչ պակաս, քան 5 °C բռնկման ջերմաստիճան: Հեղուկի եռման ջերմաստիճանը պետք է առնվազն 50 °C-ով բարձր լինի ինքնառեակտիվ նյութի վերահսկման ջերմաստիճանից:

#### *Ջերմաստիճանի վերահսկման պահանջները*

- 2.2.41.1.17. Ինքնառեակտիվ որոշ նյութեր կարող են փոխադրվել բացառապես վերահսկվող ջերմաստիճանային պայմաններում: Վերահսկման ջերմաստիճանն այն առավելագույն ջերմաստիճանն է, որի ժամանակ ինքնառեակտիվ նյութը կարող է անվտանգ կերպով փոխադրվել: Ենթադրվում է, որ փաթեթին հարող շրջակա միջավայրի ջերմաստիճանը փոխադրման ժամանակ 55 °C ջերմաստիճանը 24 ժամում գերազանցում է միայն համեմատաբար կարճ ժամանակով: Ջերմաստիճանը վերահսկելու հնարավորությունը կորցնելու դեպքում կարող է անհրաժեշտ լինի իրականացնել վթարային ընթացակարգեր: Վթարային ջերմաստիճանն այն ջերմաստիճանն է, որի ժամանակ այդպիսի ընթացակարգեր են իրականացվում:

Վերահսկման եւ վթարային ջերմաստիճանների հաշվարկումը կատարվում է ԻՏՋ-ի հիման վրա (տե՛ս աղյուսակ 1): ԻՏՋ-ն սահմանվում է՝ որոշելու համար՝ արդյոք նյութը փոխադրման ընթացքում պետք է ենթարկվի ջերմաստիճանի վերահսկման: ԻՏՋ-ի որոշման վերաբերյալ դրույթները ներկայացված են «Փորձարկումների եւ չափորոշիչների ձեռնարկի» II մասի 20-րդ գլխում եւ 28.4 բաժնում:

Աղյուսակ 1. Վերահսկման եւ վթարային ջերմաստիճանների հաշվարկումը

Տարայի տեսակը	ԻՏՋ <sup>ա</sup>	Վերահսկման ջերմաստիճանը	Վթարային ջերմաստիճանը
Առանձին փաթեթավածքներ եւ ՄԱԿ-ներ	20 °C կամ պակաս	ԻՏՋ-ից 20 °C-ով ցածր	ԻՏՋ-ից 10 °C-ով ցածր
	20 °C-ից ավելի՝ մինչեւ 35 °C	ԻՏՋ-ից 15 °C-ով ցածր	ԻՏՋ-ից 10 °C-ով ցածր
	35 °C-ից բարձր	ԻՏՋ-ից 10 °C-ով ցածր	ԻՏՋ-ից 5 °C-ով ցածր
Ցիստոններ	50 °C-ից ոչ բարձր	ԻՏՋ-ից 10 °C-ով ցածր	ԻՏՋ-ից 5 °C-ով ցածր

55 °C-ից ոչ բարձր ԻՏՋ-ով ինքնառեակտիվ նյութերը փոխադրման ընթացքում ենթարկվում են ջերմաստիճանի վերահսկման: Համապատասխան դեպքերի համար վերահսկման եւ վթարային ջերմաստիճանները թվարկված են 2.2.41.4-ում: Փոխադրման ընթացքում առկա փաստացի ջերմաստիճանը կարող է ավելի ցածր լինել, քան վերահսկման ջերմաստիճանը, սակայն այն այնպես պետք է ընտրվի, որ հնարավոր լինի խուսափել ֆազաների վտանգավոր տարանջատումից:

Պինդ ապազգայունացված պայթուցիկ նյութերը

- 2.2.41.1.18. Պինդ ապազգայունացված պայթուցիկ նյութերն այն նյութերն են, որոնք խոնավացված են ջրով կամ սպիրտներով կամ նոսրացված են այլ նյութերի հետ՝ ճնշելու համար դրանց պայթուցիկ հատկությունները: 3.2 գլխի Ա աղյուսակում այդպիսի դիրքեր են ՄԱԿ-ի նշագրման 1310, 1320, 1321, 1322, 1336, 1337, 1344, 1347, 1348, 1349, 1354, 1355, 1356, 1357, 1517, 1571, 2555, 2556, 2557, 2852, 2907, 3317, 3319, 3344, 3364, 3365, 3366, 3367, 3368, 3369, 3370, 3376, 3380 եւ 3474 համարները:

Ինքնառեակտիվ նյութերի հետ կապված նյութերը

- 2.2.41.1.19. Այն նյութերը, որոնք՝

- ա) պայմանականորեն ընդունվել են 1-ին դասում՝ փորձարկման 1-ին եւ 2-րդ շարքերի համաձայն, սակայն հանվել են 1-ին դասից՝ փորձարկման 6-րդ շարքի համաձայն.
- բ) 4.1 դասի ինքնառեակտիվ նյութեր չեն, եւ
- գ) 5.1 կամ 5.2 դասի նյութեր չեն:

Որոնց նաեւ վերագրվում են 4.1 դասի ՄԱԿ-ի նշագրման 2956, 3241,

<sup>ա</sup> Փոխադրման համար փաթեթավորված նյութի ԻՏՋ:



3242 եւ 3251 համարները:

Պոլիմերացնող նյութերը

Սահմանումը եւ հատկանիշները

2.2.41.1.20. Պոլիմերացնող նյութերն այն նյութերն են, որոնք առանց կայունացման կարող են ենթարկվել խորը էկզոթերմիկ քայքայման, որի արդյունքում փոխադրման բնականոն պայմաններում ավելի մեծ մոլեկուլներ են ձեւավորվում, կամ ձեւավորվում են պոլիմերներ:

Այդպիսի նյութերը համարվում են 4.1 դասի պոլիմերացնող նյութեր, եթե՝

ա) դրանց ինքնաարագացող պոլիմերացման ջերմաստիճանը (ԻԱՊՋ)  $75^{\circ}\text{C}$  է կամ ավելի պակաս (կայունացմամբ կամ առանց քիմիական կայունացման, ինչպես առաջարկվել է փոխադրման համար) այն պայմաններում եւ փաթեթվածքներում, ՍՄԿ-ներում կամ ցիստեռններում, որոնցում պետք է փոխադրվի նյութը կամ խառնուրդը,

բ) դրանք առաջացնում են ավելի քան 300 Ջ/գ ռեակցիայի ջերմություն, եւ

գ) դրանք չեն համապատասխանում որեւէ այլ չափորոշչի՝ 1-8-րդ դասերում ընդգրկվելու համար:

Խառնուրդը, որը համապատասխանում է պոլիմերացնող նյութերի չափորոշիչներին, դասակարգվում է որպես 4.1 դասի պոլիմերացնող նյութ:

Ջերմաստիճանի վերահսկման պահանջները

2.2.41.1.21. Պոլիմերացնող նյութերը ենթակա են փոխադրման ժամանակ ջերմաստիճանի վերահսկման, եթե դրանց ինքնաարագացող պոլիմերացման ջերմաստիճանը (ԻԱՊՋ)՝

ա) փաթեթվածքներում կամ ՍՄԿ-ներում փոխադրման ենթակա լինելու դեպքում  $50^{\circ}\text{C}$  կամ պակաս է այն փաթեթվածքներում կամ ՍՄԿ-ներում, որոնցում նյութը պետք է փոխադրվի, կամ

բ) ցիստեռններում փոխադրման ենթակա լինելու դեպքում  $45^{\circ}\text{C}$  կամ պակաս է այն ցիստեռնում, որում նյութը պետք է փոխադրվի:

2.2.41.2. Փոխադրման համար անթույլատրելի նյութերը

2.2.41.2.1. 4.1 դասի քիմիապես անկայուն նյութերն անթույլատրելի են փոխադրման համար՝ բացառությամբ, երբ ձեռնարկվել են անհրաժեշտ քայլեր՝ փոխադրման ընթացքում դրանց վտանգավոր

տրոհումը կամ պոլիմերացումը կանխելու համար: Այդ իսկ նպատակով մասնավորապես անհրաժեշտ է ապահովել, որ տարաները եւ ցիստեռնները չպարունակեն նշված ռեակցիաները խթանող որեւէ նյութ:

2.2.41.2.2. ՄԱԿ-ի նշագրման 3097 համարին վերագրվող օքսիդացնող դյուրավառ պինդ նյութերն անթույլատրելի են փոխադրման համար, եթե չեն բավարարում 1-ին դասի պահանջները (տե՛ս նաեւ 2.1.3.7):

2.2.41.2.3. Փոխադրման համար անթույլատրելի են հետեւյալ նյութերը՝

- «A» տեսակի ինքնառեակտիվ նյութերը (տե՛ս «Փորձարկումների եւ չափորոշիչների ձեռնարկ»-ի II մասի 20.4.2 (ա) պարբերությունը).
- ֆոսֆորային սուլֆիդները, որոնք զերծ չեն դեղին եւ սպիտակ ֆոսֆորից.
- 3.2 գլխի Ա աղյուսակում նշվածներից տարբեր՝ այլ պինդ ապազգայունացված պայթուցիկ նյութեր.
- անօրգանական դյուրավառ նյութեր՝ հալեցված վիճակում՝ բացառությամբ ՄԱԿ-ի նշագրման 2448 համարի ԾԾՈՒՄԲ, ՀԱԼԵՑՎԱԾ:

2.2.41.3. Հավաքական դիրքերի ցանկը

Դյուրավառ պինդ նյութեր	օրգանական	F1	3175 ԴՅՈՒՐԱՎԱՌ ՀԵՂՈՒԿ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ՊԻՆԴ ՆՅՈՒԹԵՐ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ
		3153 ՄԱՆՐԱԹԵԼԵՐ՝ ԹԱԹԱԽՎԱԾ ՆԻՏՐՈՍԻ ԹՈՒՅԼ ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹՅԱՄԲ ՆԻՏՐՈՑԵԼՅՈՒԼՈՁԱՅՈՎ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ	
		3153 ԳՈՐԾՎԱԾՔ՝ ԹԱԹԱԽՎԱԾ ՆԻՏՐՈՍԻ ԹՈՒՅԼ ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹՅԱՄԲ ՆԻՏՐՈՑԵԼՅՈՒԼՈՁԱՅՈՎ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ	
		1325 ԴՅՈՒՐԱՎԱՌ ՊԻՆԴ ՆՅՈՒԹ, ՕՐԳԱՆԱԿԱՆ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ	
	առանց լրացուցիչ դիսկի	F2	3176 ԴՅՈՒՐԱՎԱՌ ՊԻՆԴ ՆՅՈՒԹ, ՕՐԳԱՆԱԿԱՆ, ՀԱԼԵՑՎԱԾ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ
		անօրգանական	F3
	3181 ՕՐԳԱՆԱԿԱՆ ՄԻԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՏԱՂԻ ԱՂԵՐ, ԴՅՈՒՐԱՎԱՌ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ		
	3182 ՄԵՏԱՂԻ ՀԻԴՐԻԴՆԵՐ, ԴՅՈՒՐԱՎԱՌ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ գ		
	3178 ԴՅՈՒՐԱՎԱՌ ՊԻՆԴ ՆՅՈՒԹ, ԱՆՕՐԳԱՆԱԿԱՆ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ		
	օքսիդացնող	F4	3527 ԲԱԶՄԱԵԹԵՐԱՅԻՆ ԽԵԺԻ ՀԱՎԱՔԱԾՈՒ, ամուր հիմքով նյութ
Թունավոր	օրգանական	FT	3097 ԴՅՈՒՐԱՎԱՌ ՊԻՆԴ ՆՅՈՒԹ, ՕՔՍԻԴԱՑՆՈՂ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ (չի թույլատրվում, տե՛ս պարբերություն 2.2.41.2.2)
		FT1	2926 ԴՅՈՒՐԱՎԱՌ ՊԻՆԴ ՆՅՈՒԹ, ԹՈՒՆԱՎՈՐ, ՕՐԳԱՆԱԿԱՆ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ
	անօրգանական	FT2	3179 ԴՅՈՒՐԱՎԱՌ ՊԻՆԴ ՆՅՈՒԹ, ԹՈՒՆԱՎՈՐ, ԱՆՕՐԳԱՆԱԿԱՆ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ
		FC	2925 ԴՅՈՒՐԱՎԱՌ ՊԻՆԴ ՆՅՈՒԹ, ԹՈՒՆԱՎՈՐ, ՕՐԳԱՆԱԿԱՆ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ
	անօրգանական	FC1	3180 ԴՅՈՒՐԱՎԱՌ ՊԻՆԴ ՆՅՈՒԹ, ԿՈՌՈՋԻՈՆ, ԱՆՕՐԳԱՆԱԿԱՆ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ
		FC2	3180 ԴՅՈՒՐԱՎԱՌ ՊԻՆԴ ՆՅՈՒԹ, ԿՈՌՈՋԻՈՆ, ԱՆՕՐԳԱՆԱԿԱՆ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ
առանց լրացուցիչ դիսկի	D	3319 ՆԻՏՐՈԳԼԻՑԵՐԻՆԻ ԽԱՌՆՈՒՐԴ, ԱՊԱԶԳԱՅՈՒՆԱՑՎԱԾ, ՊԻՆԴ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ, 2%, բայց ոչ ավելի, քան 10% նիտրոգլիցերինի պարունակությամբ՝ ըստ զանգվածի	
		3344 ՊԵՆՏԱԷՐԻՏՐԻՏ ՏԵՏՐԱՆԻՏՐԱՏ (ՏԵՏՐԱՆԻՏՐԱՏԻ ՊԵՆՏԷՐԻՏՐԻՏՈԼ, ՏՆՊԷ), ԽԱՌՆՈՒՐԴ, ԱՊԱԶԳԱՅՈՒՆԱՑՎԱԾ, ՊԻՆԴ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ 10%-ից ավելի,	

<sup>w</sup> 4.2 դասին պատկանում են փոշիացված կամ այլ դյուրավառ մեխանիկական կամ մեխանիկական համաձուլվածքներ, որոնք կարող են ինքնաբռնակվել:

<sup>p</sup> 4.3 դասին պատկանում են փոշիացված կամ այլ դյուրավառ մեխանիկական կամ մեխանիկական համաձուլվածքներ, որոնք ջրի հետ փոխազդեցության դեպքում արտազատում են դյուրավառ գազեր:

<sup>q</sup> 4.3 դասին պատկանում են մեխանիկական հիդրիդներ, որոնք ջրի հետ փոխազդեցության դեպքում արտազատում են դյուրավառ գազեր: Այլումինիումի բորաջրածինը կամ սարքերում պարունակվող այլումինիումի բորաջրածինը պատկանում է 4.2 դասի նյութերին՝ ՄԱԿ-ի մակնշման 2870 համար:

<p>Պինդ ապագգայու նացված պայթուցիկ նյութեր</p>		<p>բայց 20%-ից ոչ ավելի ՏՆՊԷ՝ ըստ զանգվածի</p> <p>3380 ԱՊԱԶԳԱՅՈՒՆԱՑՎԱԾ ՊԱՅԹՈՒՑԻԿ, ՊԻՆԴ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ</p>
<p>Ինքնատեակ տիվ նյութեր</p>	<p>թունավոր DT</p> <p>ջերմաստիճանի վերահսկողություն չի պահանջվում SR1</p> <p>պահանջվում է ջերմաստիճանի վերահսկողություն SR2</p>	<p>որպես 4.1 դասի նյութեր կարելի է փոխադրել միայն 3.2 գլխի Ա աղյուսակում նշված նյութերը</p> <p>         ԻՆՔՆԱՌԵԱԿՏԻՎ ՀԵՂՈՒԿ, «A» } Փոխադրման համար թույլատրելի չէ, տե՛ս          ՏԵՍԱԿԻ } 2.2.41.2.3          ԻՆՔՆԱՌԵԱԿՏԻՎ ՊԻՆԴ ՆՅՈՒԹ,          «A» ՏԵՍԱԿԻ          3221 ԻՆՔՆԱՌԵԱԿՏԻՎ ՀԵՂՈՒԿ, «B»          ՏԵՍԱԿԻ          3222 ԻՆՔՆԱՌԵԱԿՏԻՎ ՊԻՆԴ ՆՅՈՒԹ,          «B» ՏԵՍԱԿԻ          3223 ԻՆՔՆԱՌԵԱԿՏԻՎ ՀԵՂՈՒԿ, «C»          ՏԵՍԱԿԻ          3224 ԻՆՔՆԱՌԵԱԿՏԻՎ ՊԻՆԴ ՆՅՈՒԹ,          «C» ՏԵՍԱԿԻ          3225 ԻՆՔՆԱՌԵԱԿՏԻՎ ՀԵՂՈՒԿ, «D»          ՏԵՍԱԿԻ          3226 ԻՆՔՆԱՌԵԱԿՏԻՎ ՊԻՆԴ ՆՅՈՒԹ,          «D» ՏԵՍԱԿԻ          3227 ԻՆՔՆԱՌԵԱԿՏԻՎ ՀԵՂՈՒԿ, «E»          ՏԵՍԱԿԻ          3228 ԻՆՔՆԱՌԵԱԿՏԻՎ ՊԻՆԴ ՆՅՈՒԹ,          «E» ՏԵՍԱԿԻ          3229 ԻՆՔՆԱՌԵԱԿՏԻՎ ՀԵՂՈՒԿ, «F»          ՏԵՍԱԿԻ          3230 ԻՆՔՆԱՌԵԱԿՏԻՎ ՊԻՆԴ ՆՅՈՒԹ, } Չի կարգավորվում 4.1 դասի համար          «F» ՏԵՍԱԿԻ } կիրառելի դրոյթներով, տե՛ս 2.2.41.1.11          ԻՆՔՆԱՌԵԱԿՏԻՎ ՀԵՂՈՒԿ, «G»          ՏԵՍԱԿԻ          ԻՆՔՆԱՌԵԱԿՏԻՎ ՊԻՆԴ ՆՅՈՒԹ,          «G» ՏԵՍԱԿԻ       </p>
<p>SR</p>	<p>SR2</p>	<p>3231 ԻՆՔՆԱՌԵԱԿՏԻՎ ՀԵՂՈՒԿ՝ «B» ՏԵՍԱԿԻ, ԶԵՐՄԱՍՏԻՃԱՆԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՄԲ</p> <p>3232 ԻՆՔՆԱՌԵԱԿՏԻՎ ՊԻՆԴ ՆՅՈՒԹ՝ «B» ՏԵՍԱԿԻ, ԶԵՐՄԱՍՏԻՃԱՆԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՄԲ</p> <p>3233 ԻՆՔՆԱՌԵԱԿՏԻՎ ՀԵՂՈՒԿ՝ «C» ՏԵՍԱԿԻ, ԶԵՐՄԱՍՏԻՃԱՆԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՄԲ</p> <p>3234 ԻՆՔՆԱՌԵԱԿՏԻՎ ՊԻՆԴ ՆՅՈՒԹ՝ «C» ՏԵՍԱԿԻ, ԶԵՐՄԱՍՏԻՃԱՆԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՄԲ</p> <p>3235 ԻՆՔՆԱՌԵԱԿՏԻՎ ՀԵՂՈՒԿ՝ «D» ՏԵՍԱԿԻ, ԶԵՐՄԱՍՏԻՃԱՆԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՄԲ</p> <p>3236 ԻՆՔՆԱՌԵԱԿՏԻՎ ՊԻՆԴ ՆՅՈՒԹ՝ «D» ՏԵՍԱԿԻ, ԶԵՐՄԱՍՏԻՃԱՆԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՄԲ</p> <p>3237 ԻՆՔՆԱՌԵԱԿՏԻՎ ՀԵՂՈՒԿ՝ «E» ՏԵՍԱԿԻ, ԶԵՐՄԱՍՏԻՃԱՆԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՄԲ</p>

Պոլիմերացնող նյութեր	ջերմաստիճանի վերահսկողություն չի պահանջվում	PM1	3238	ԻՆՔՆԱՌԵԱԿՏԻՎ ՊԻՆԴ ՆՅՈՒԹ՝ «E» ՏԵՍԱԿԻ, ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՄԲ
			3239	ԻՆՔՆԱՌԵԱԿՏԻՎ ՀԵՂՈՒԿ՝ «F» ՏԵՍԱԿԻ, ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՄԲ
			3240	ԻՆՔՆԱՌԵԱԿՏԻՎ ՀԵՂՈՒԿ՝ «F» ՏԵՍԱԿԻ, ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՄԲ
			3531	ՊՈԼԻՄԵՐԱՑՆՈՂ ՆՅՈՒԹ, ՊԻՆԴ, ԿԱՅՈՒՆԱՑՎԱԾ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ
			3532	ՊՈԼԻՄԵՐԱՑՆՈՂ ՆՅՈՒԹ, ՀԵՂՈՒԿ, ԿԱՅՈՒՆԱՑՎԱԾ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ
PM	պահանջվում է ջերմաստիճանի վերահսկողություն	PM2	3533	ՊՈԼԻՄԵՐԱՑՆՈՂ ՆՅՈՒԹ, ՊԻՆԴ, ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՄԲ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ
3534			ՊՈԼԻՄԵՐԱՑՆՈՂ ՆՅՈՒԹ, ՀԵՂՈՒԿ, ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՄԲ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ	

**2.2.41.4. Փաթեթվածքներում փոխադրվող՝ ներկայումս դասակարգված ինքնառեակտիվ նյութերի ցանկը**

«Փաթեթավորման մեթոդ» սյունակում OP1-OP8 ծածկագրերը վերաբերում են 4.1.4.1-ում նշված փաթեթավորման մեթոդներին եւ P520 փաթեթավորման ցուցմանը (տե՛ս նաեւ 4.1.7.1): Փոխադրման ենթակա ինքնառեակտիվ նյութերը պետք է համապատասխանեն ցանկում նշված՝ դասակարգման, ինչպես նաեւ ջերմաստիճանի վերահսկման եւ վթարային կարգավորման պահանջներին (ըստ ԻՏՋ-ի): ՄԱԿ-ներում թույլատրված նյութերի համար տե՛ս 4.1.4.2, IBC520 փաթեթավորման ցուցումը, իսկ 4.2 գլխի համաձայն ցիստեռններում թույլատրված նյութերի համար տե՛ս 4.2.5.2, T23 շարժական ցիստեռնի վերաբերյալ ցուցումը:

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Սույն աղյուսակում ներկայացված դասակարգումն իրականացվում է տեխնիկապես մաքուր նյութերի հիման վրա (բացառությամբ, եթե նշված է 100%-ից պակաս կոնցենտրացիա): Այլ կոնցենտրացիաների դեպքում նյութը կարող է դասակարգվել «Փորձարկումների եւ չափորոշիչների ձեռնարկ»-ի II մասում եւ 2.2.41.1.17-ում նշված ընթացակարգերի համաձայն:*

ԻՆՔՆԱՌԵԱԿՏԻՎ ՆՅՈՒԹ	Կոնցենտրացիա (%)	Փաթեթավորման մեթոդ	Վերահսկման ջերմաստիճան (°C)	Վթարային ջերմաստիճան (°C)	ՄԱԿ-ի ընդհանրական դիրք	Նշումներ
ԱՅԵՏՈՆ-ՊԻՐՈԳԱԼՈԼ ՍՈՊՈԼԻՄԵՐ 2-ԴԻԱՁՈ-1-ՆԱՎԹՈԼ-5-ՍՈՒԼՖՈՆԱՏ	100	OP8			3228	
ԱՁՈԴԻԿԱՐԲՈՆԱՄԻԴԻ ՄԻԱՅՈՒԹՅՈՒՆ, «B» ՏԵՍԱԿԻ, ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՄԲ	< 100	OP5			3232	(1)(2)
ԱՁՈԴԻԿԱՐԲՈՆԱՄԻԴԻ ՄԻԱՅՈՒԹՅՈՒՆ, «C» ՏԵՍԱԿԻ	< 100	OP6			3224	(3)
ԱՁՈԴԻԿԱՐԲՈՆԱՄԻԴԻ ՄԻԱՅՈՒԹՅՈՒՆ, «C» ՏԵՍԱԿԻ, ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՄԲ	< 100	OP6			3234	(4)

ԻՆՔՆԱՌԵԱԿՏԻՎ ՆՅՈՒԹ	Կոնցենտրացիա(%)	Փաթեթավորման մեթոդ	Վերահսկման ջերմաստիճան (°C)	Վթարային ջերմաստիճան (°C)	ՄԱԿ-ի ընդհանրական դիրք	Նշումներ
ԱՁՈԴԻԿԱՐՔՈՆԱՄԻԴԻ ԲԱՂԱԴՐՈՒԹՅՈՒՆ, «D» ՏԵՍԱԿԻ	< 100	OP7			3226	(5)
ԱՁՈԴԻԿԱՐՔՈՆԱՄԻԴԻ ՄԻԱՑՈՒԹՅՈՒՆ, «D» ՏԵՍԱԿԻ, ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՄԲ	< 100	OP7			3236	(6)
2,2' -ԱՁՈԴԻ (2,4-ԴԻՄԵԹԻԼ- 4-ՄԵԹՕՔՍԻ-ՎԱԼԵՐՈՆԻՏՐԻԼ)	100	OP7	-5	+5	3236	
2,2' -ԱՁՈԴԻ (2,4-ԴԻՄԵԹԻԼ-ՎԱԼԵՐՈՆԻՏՐԻԼ)	100	OP7	+10	+15	3236	
2,2' -ԱՁՈԴԻ (ԷԹԻԼ- 2ՄԵԹԻԼ-ՊՐՈՊԻՈՆԱՏ)	100	OP7	+20	+25	3235	
1,1-ԱՁՈԴԻ(ՀԵՔՍԱՀԻԴՐՈՔՆԻՏՐԻԼ)	100	OP7			3226	
2,2' -ԱՁՈԴԻ (ԻՋՈՔՈՒՏԻՈՆԻՏՐԻԼ)	100	OP6	+40	+45	3234	
2,2' -ԱՁՈԴԻ (ԻՋՈՔՈՒՏԻՈՆԻՏՐԻԼ)՝ զրպես ջրային հիմքով մածուկ	< 50%	OP6			3224	
2,2' -ԱՁՈԴԻ (2-ԴԻՄԵԹԻԼ- ՎԱԼԵՐՈՆԻՏՐԻԼ)	100	OP7	+35	+40	3236	
ԲԵՆՉՈԼ-1,3-ԴԻՍՈՒԼՖՈՆԻԼ ՀԻԴՐԱՋԻԴ՝ զրպես մածուկ	52	OP7			3226	
ԲԵՆՉՈԼ ՍՈՒԼՖՈՆԻԼ ՀԻԴՐԱՋԻԴ	100	OP7			3226	
4-(ԲԵՆՉԻԼ (ԷԹԻԼ) ԱՄԻՆՈ) -3 ԷԹՕՔՍԻ - ԲԵՆՉՈԼ ԴԻԱՉՈՆԻՈՒՄ ՑԻՆԿԻ ՔԼՈՐԻԴ	100	OP7			3226	
4-(ԲԵՆՉԻԼ (ՄԵԹԻԼ) ԱՄԻՆՈ) -3 ԷԹՕՔՍԻ - ԲԵՆՉՈԼ ԴԻԱՉՈՆԻՈՒՄ ՑԻՆԿԻ ՔԼՈՐԻԴ	100	OP7	+40	+45	3236	
3-ՔԼՈՐՈ-4-ԴԻԷԹԻԼԱՄԻՆՈՔՆԻՏՐԻԼ - ԴԻԱՉՈՆԻՈՒՄ ՑԻՆԿԻ ՔԼՈՐԻԴ	100	OP7			3226	
2- ԴԻԱՉՈ - 1 - ՆԱՎԹՈԼ - 4 - ՍՈՒԼՖՈՆԻԼ ՔԼՈՐԻԴ	100	OP5			3222	(2)
2- ԴԻԱՉՈ - 1 - ՆԱՎԹՈԼ - 5 - ՍՈՒԼՖՈՆԻԼ ՔԼՈՐԻԴ	100	OP5			3222	(2)
2- ԴԻԱՉՈ - 1 - ՆԱՎԹՈԼ ՍՈՒԼՖՈՆԱՅԻՆ ԹԹՎԻ ԵԹԵՐ, ԽԱՌՆՈՒՐԴ, «D» ՏԵՍԱԿԻ	< 100	OP7			3226	(9)
2,5 - ԴԻՔՈՒՏՈԿՍԻ - 4 - (4-ՄՈՐՖՈԼԻՆԻԼ)- ԲԵՆՉՈԼ ԴԻԱՉՈՆԻՈՒՄ, ՏԵՏՐԱՔԼՈՐՑԻՆԿԱՏ (2:1)	100	OP8			3228	
2.5-ԴԻՏՕՔՍԻ-4-ՄՈՐՖՈԼԻՆՈ- ԲԵՆՉՈԼ ԴԻԱՉՈՆԻՈՒՄ ՑԻՆԿԻ ՔԼՈՐԻԴ	67-100	OP7	+35	+40	3236	
2.5-ԴԻՏՕՔՍԻ-4-ՄՈՐՖՈԼԻՆՈ- ԲԵՆՉՈԼ ԴԻԱՉՈՆԻՈՒՄ ՑԻՆԿԻ ՔԼՈՐԻԴ	66	OP7	+40	+45	3236	
2.5-ԴԻՏՕՔՍԻ-4-ՄՈՐՖՈԼԻՆՈ- ԲԵՆՉՈԼ ԴԻԱՉՈՆԻՈՒՄ ՏԵՏՐԱՖԼՈՐՈՐՈՐԱՏ	100	OP7	+30	+35	3236	
2.5-ԴԻԷՏՈՔՍԻ-4-(4-ՄՈՐՖՈԼԻՆԻԼ)- ԲԵՆՉՈԼ ԴԻԱՉՈՆԻՈՒՄ ՍՈՒԼՖԱՏ	100	OP7			3226	
2.5-ԴԻՏՕՔՍԻ-4-(ՖԵՆԻԼՍՈՒԼՖՈՆԻԼ)- ԲԵՆՉՈԼ ԴԻԱՉՈՆԻՈՒՄ ՑԻՆԿԻ ՔԼՈՐԻԴ	67	OP7	+40	+45	3236	
ԴԻԷԹԻԼԵՆԳԼԻԿՈԼ ԲԻՍ (ԱԼԻԼ ԿԱՐՔՈՆԱՏ) + ԴԻ - ԻՋՈՊՐՈՊԻԼ-ՊԵՐՕՔՍԻԴԿԱՐՔՈՆԱՏ	> 88+< 12	OP8	-10	0	3237	

ԻՆՔՆԱՌԵԱԿՏԻՎ ՆՅՈՒԹ	Կոնցենտրացիա(%)	Փայթեթավորման մեթոդ	Վերահսկման ջերմաստիճան (°C)	Վթարային ջերմաստիճան (°C)	ՄԱԿ-ի ընդհանրական դիրք	Նշումներ
2.5-ԴԻՄԵՏՕՔՍԻ-4-(4-ՄԵԹԻԼ ՖԵՆԻԼՍՈՒԼՖՈՆԻԼ)-ԲԵՆՉՈԼ-ԴԻԱՉՈՆԻՈՒՄ ՑԻՆԿԻ ՔԼՈՐԻԴ	79	OP7	+40	+45	3236	
2.2.7.2.4.1.5. Ուրանի հեքսաֆտորիդ, որը չի գերազանցում 2.2.7.2.4.1.2 աղյուսակի 4-րդ սյունակում նշված ակտիվության սահմանը, կարող է դասակարգվել ՄԱԿ-ի նշագրման 3507 «ՈՒՐԱՆԻ ՀԵՔՍԱՖՏՏՈՐԻԴ, ՌԱԴԻՈԱԿՏԻՎ ՆՅՈՒԹ, ԱԶԱՏՎԱԾ ՓԱԹԵԹ» համարի ներքո՝ յուրաքանչյուր փաթեթի համար 0,1 կգ-ից պակաս, չորոհվող կամ տրոհվող-ազատված, եթե՝

- ա) փաթեթում ուրանի հեքսաֆտորիդի զանգվածը 0,1 կգ-ից պակաս է,
- բ) 2.2.7.2.4.5.2-ի եւ 2.2.7.2.4.1.4 (ա) եւ (բ)-ի պայմանները բավարարվում են:

2.2.7.2.4.1.6. Բնական ուրանից, աղքատացված ուրանից կամ բնական թորիումից արտադրված պատրաստվածքները եւ այն պատրաստվածքները, որոնց մեջ եզակի ռադիոակտիվ նյութը չճառագայթված բնական ուրանն է, չճառագայթված աղքատացված ուրանը կամ աղքատացված բնական թորիումը կարող են դասակարգվել ՄԱԿ-ի նշագրման 2909 համարի «ՌԱԴԻՈԱԿՏԻՎ ՆՅՈՒԹ, ԱԶԱՏՎԱԾ ՓԱԹԵԹ — ԲՆԱԿԱՆ ՈՒՐԱՆԻՑ ԿԱՄ ԱՂՔԱՏԱՑՎԱԾ ՈՒՐԱՆԻՑ ԿԱՄ ԲՆԱԿԱՆ

ԹՈՐԻՈՒՄԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԱՐՏԱԴՐԱՆՔ» խմբի տակ, եթե ուրանի կամ թորիումի արտաքին շերտը ծածկված է մետաղից կամ այլ ամուր նյութից պատրաստված ոչ ակտիվ պատյանով:

2.2.7.2.4.1.7. Դատարկ փաթեթավորման կոմպլեկտ, որը նախկինում պարունակում էր ռադիոակտիվ նյութ, կարող է դասակարգվել ՄԱԿ-ի նշագրման 2908 համարի «ՌԱԴԻՈԱԿՏԻՎ ՆՅՈՒԹ, ԱԶԱՏՎԱԾ ՓԱԹԵԹ — ԴԱՏԱՐԿ ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ԿՈՄՊԼԵԿՏ» խմբի տակ, եթե՝

ա) այն լավ վիճակում է եւ հուսալի փակվում է.

բ) ուրան կամ թորիում պարունակող նրա ցանկացած մասի արտաքին շերտը ծածկված է մետաղից կամ այլ ամուր նյութից պատրաստված ոչ ակտիվ պատյանով.

գ) ներքին չամրացված ռադիոակտիվ աղտոտվածությունը, միջինացված ավելի քան 300 սմ<sup>2</sup>-ով, չի գերազանցում՝

i) բետա եւ գամմա ճառագայթամաբ ռադիոիզոտոպների դեպքում՝ 400 Բկ/սմ<sup>2</sup>-ը եւ ցածր թունայնությամբ ալֆա ճառագայթիչները, եւ

ii) ալֆա ճառագայթամաբ բոլոր այլ ռադիոիզոտոպների դեպքում՝ 40 Բկ/սմ<sup>2</sup>,

դ) ցանկացած պիտակ, որը կարող էր դրա վրա դրվել՝ 5.2.2.1.11.1-ի համաձայն, այլևս տեսանելի չէ:

2.2.7.2.4.2. Ցածր տեսակարար ակտիվությամբ ռադիոակտիվ նյութի (LSA) դասակարգում

Ռադիոակտիվ նյութը կարող է դասակարգվել որպես LSA նյութ, եթե 2.2.7.1.3-ում նշված LSA սահմանումը եւ 2.2.7.2.3.1, 4.1.9.2 ու 7.5.11 CV33 (2)-ի պահանջները բավարարվում են:

2.2.7.2.4.3. Մակերեսային ռադիոակտիվ աղտոտվածությամբ օբյեկտների (SCO) դասակարգում

Ռադիոակտիվ նյութը կարող է դասակարգվել որպես SCO նյութ, եթե 2.2.7.1.3-ում նշված SCO սահմանումը եւ 2.2.7.2.3.2, 4.1.9.2 եւ 7.5.11 CV33 (2)-ի պահանջները բավարարվում են:

2.2.7.2.4.4. Դասակարգումը՝ որպես ազատված «A» տեսակի փաթեթ

Այն փաթեթները, որոնք պարունակում են ռադիոակտիվ նյութ, կարող են դասակարգվել որպես «A» տեսակի փաթեթներ, պայմանով, որ հետեւյալ պայմանները բավարարվում են.

«A» տեսակի փաթեթների ռադիոակտիվ պարունակության

ակտիվությունը չպետք է գերազանցի հետեւյալ արժեքներից որեւէ մեկը՝

ա) հատուկ տեսակի ռադիոակտիվ նյութի համար — A1

բ) բոլոր այլ տեսակների ռադիոակտիվ նյութերի համար — A2

Ռադիոնուկլիդների խառնուրդի համար, որի մեջ առկա ռադիոիզոտոպների կազմը եւ համապատասխան ակտիվությունը հայտնի են, ապա «A» տեսակի փաթեթի ռադիոակտիվ պարունակության նկատմամբ կիրառվում է հետեւյալ պայմանը՝

$$\sum_i \frac{B(i)}{A_1(i)} + \sum_j \frac{C(j)}{A_2(j)} \leq 1$$

որտեղ՝ B (i)-ը հատուկ տեսակի ռադիոակտիվ նյութի i ռադիոնուկլիդի ակտիվությունն է,

A1 (i)-ը՝ i ռադիոնուկլիդի համար A1-ի արժեքը,

C(j)-ը հատուկ տեսակի ռադիոակտիվ նյութից տարբերվող j ռադիոնուկլիդի ակտիվությունն է, իսկ

A2 (j) -ը j ռադիոնուկլիդի համար A2-ի արժեքն է:

#### 2.2.7.2.4.5. Ուրանի հեքսաֆտորիդի դասակարգում

##### 2.2.7.2.4.5.1. Ուրանի հեքսաֆտորիդին պետք է միայն տրվի՝

ա) ՄԱԿ-ի նշագրման 2977 համարը՝ ՌԱԴԻՈԱԿՏԻՎ ՆՅՈՒԹ, ՈՒՐԱՆԻ ՀԵՔՍԱՖՏՈՐԻԴ, ՏՐՈՂՎՈՂ ՆՅՈՒԹ,

բ) ՄԱԿ-ի նշագրման 2978 համարը՝ ՌԱԴԻՈԱԿՏԻՎ ՆՅՈՒԹ, ՈՒՐԱՆԻ ՀԵՔՍԱՖՏՈՐԻԴ, չտրոհվող կամ տրոհվող-ազատված, կամ

գ) ՄԱԿ-ի նշագրման 3507 համարը՝ յուրաքանչյուր փաթեթում 0,1 կգ-ից պակաս ՈՒՐԱՆԻ ՀԵՔՍԱՖՏՈՐԻԴ, ՌԱԴԻՈԱԿՏԻՎ ՆՅՈՒԹ, ԱԶԱՏՎԱԾ ՓԱԹԵԹ, չտրոհվող կամ տրոհվող-ազատված:

##### 2.2.7.2.4.5.2. Ուրանի հեքսաֆտորիդ պարունակող փաթեթների պարունակությունը պետք է բավարարի հետեւյալ պահանջները՝

ա) ՄԱԿ-ի նշագրման 2977 եւ 2978 համարների դեպքում՝ ուրանի հեքսաֆտորիդի զանգվածը չպետք է տարբերվի փաթեթի կառուցվածքի համար թույլատրված զանգվածից, եւ ՄԱԿ-ի նշագրման 3507 համարի դեպքում՝ ուրանի հեքսաֆտորիդի զանգվածը պետք է լինի 0,1 կգ-ից պակաս,



- բ) ուրանի հեքսաֆտորիդի զանգվածը չպետք է գերազանցի այն արժեքը, որը կարող է փաթեթի առավելագույն ջերմաստիճանի պայմաններում հանգեցնել 5%-ից փոքր չգրադեցրած ծավալի առաջացման, ինչպես նշվում է գործարանային այն համակարգերի համար, որտեղ պետք է օգտագործվի փաթեթը, եւ
- գ) ուրանի հեքսաֆտորիդը պետք է լինի պինդ վիճակում, իսկ փաթեթի փոխադրման ներկայացման ժամանակ փաթեթի ներքին ճնշումը չպետք է լինի մթնոլորտային ճնշումից բարձր:

2.2.7.2.4.6. «B(U)», «B(M)» կամ «C» տեսակի փաթեթների դասակարգումը

2.2.7.2.4.6.1. Փաթեթները, որոնք դասակարգված չեն 2.2.7.2.4-ում (2.2.7.2.4.1 - 2.2.7.2.4.5), պետք է դասակարգվեն համաձայն լիազոր մարմնի հաստատման սերտիֆիկատի այն փաթեթի դեպքում, որը թողարկվել է կառուցվածքի ծագման երկրի կողմից:

2.2.7.2.4.6.2. «B(U)», «B(M)» կամ «C» տեսակի փաթեթների պարունակությունը պետք է լինի այնպես, ինչպես նշված է հաստատման սերտիֆիկատում:

2.2.7.2.5. Հատուկ պայմանները

Ռադիոակտիվ նյութը պետք է դասակարգվի որպես փոխադրվող՝ ըստ հատուկ պայմանների, երբ այն նախատեսված է փոխադրման համար՝ համաձայն 1.7.4-ի:

2.2.8. Դաս 8 Կոռոզիոն նյութեր

2.2.8.1. Չափորոշիչներ

2.2.8.1.1. Ց-րդ դասի անվանումը ներառում է նյութեր եւ պատրաստվածքներ, որոնք պարունակում են այս դասի նյութեր, որոնք քիմիական գործողության միջոցով էպիթելային հյուսվածքի՝ մաշկի կամ լորձաթաղանթի վրա են ներգործում, որի հետ նրանք շփման մեջ են, կամ որոնք արտահոսքի դեպքում կարող են վնասվել կամ վնասել մյուս ապրանքները կամ տրանսպորտի միջոցները: Այս դասը նաեւ ներառում է մյուս նյութերը, որոնք ձեւավորում են կոռոզիոն հեղուկ միայն ջրի առկայությամբ, կամ որոնք օդի բնական խոնավության դեպքում արտադրում են կոռոզիոն գոլորշի կամ կաթիլներ:

2.2.8.1.2. Ց-րդ դասի նյութերն ու պատրաստվածքները հետեւյալ կերպ են բաժանվում՝

հետեւյալ նյութերը պարունակող «C1-C11» կոռոզիոն նյութեր, որոնք լրացուցիչ վտանգ չեն ներկայացնում՝

C1-C4	թթու նյութեր՝
C1	անօրգանական, հեղուկ
C2	անօրգանական, պինդ
C3	օրգանական, հեղուկ
C4	օրգանական, պինդ
C5-C8	հիմնական նյութեր՝
C5	անօրգանական, հեղուկ
C6	անօրգանական, պինդ
C7	օրգանական, հեղուկ
C8	օրգանական, պինդ
C9-C10	կոռոզիոն այլ նյութեր՝
C9	հեղուկ,
C10	պինդ
C11	Պատրաստվածքներ
CF	Կոռոզիոն նյութեր, դյուրավառ.
CF1	հեղուկ,
CF2	պինդ
CS	Կոռոզիոն նյութեր, ինքնատաքացող.
CS1	հեղուկ,
CS2	պինդ
CW	Կոռոզիոն նյութեր, որոնք ջրի հետ փոխազդեցության մեջ մտնելիս արտազատում են դյուրավառ գազեր.
CW1	հեղուկ,
CW2	պինդ
CO	Կոռոզիոն նյութեր, օքսիդացնող.
CO1	հեղուկ,
CO2	պինդ
CT	Կոռոզիոն նյութեր, թունավոր նյութեր եւ պատրաստվածքներ, որոնք այդպիսի նյութեր են պարունակում՝
CT1	հեղուկ,
CT2	պինդ,
CT3	պատրաստվածքներ
CFT	Կոռոզիոն նյութեր, դյուրավառ, հեղուկ, թունավոր
COT	Կոռոզիոն նյութեր, օքսիդացող, թունավոր:

Փաթեթավորման խմբերի դասակարգումը եւ նշանակությունը

2.2.8.1.3. 8-րդ դասի նյութերը պետք է դասակարգվեն ըստ փաթեթավորման երեք խմբերի՝ ելնելով վտանգի աստիճանից, որը նրանք ներկայացնում են փոխադրման ժամանակ, հետեւյալ կերպ՝

փաթեթավորման I խումբ՝ խիստ կոռոզիոն նյութեր

փաթեթավորման II խումբ՝ կոռոզիոն նյութեր

փաթեթավորման III խումբ՝ քիչ կոռոզիոն նյութեր:

2.2.8.1.4. 8-րդ դասին պատկանող նյութերը եւ պատրաստվածքները թվարկված են 3.2 գլխի Ա աղյուսակում: Փաթեթավորման I, II եւ III խմբերում նյութերի տեղադրումն իրականացվել է փորձի հիման վրա՝ հաշվի առնելով այնպիսի լրացուցիչ գործոններ, ինչպիսիք են ներշնչման ռիսկը (տե՛ս 2.2.8.1.5) եւ ջրի հետ ռեակցիայի մեջ մտնելը (ներառյալ վնասակար քայքայված արտադրանքի առաջացումը):

2.2.8.1.5. 8-րդ դասի չափորոշիչներին համապատասխանող նյութը կամ պատրաստուկը ներշնչման համար թունավոր փոշիներ եւ կաթիլներ ունի (LC50) I փաթեթավորման խմբում, սակայն բերանային ճանապարհով ներս ընդունման կամ մաշկային շփման միջոցով թունավորության աստիճանը՝ փաթեթավորման III խմբում կամ դրանից ցածր, պետք է դասվի 8-րդ դասին:

2.2.8.1.6. Նյութերը, ներառյալ՝ խառնուրդները, որոնք անվանմամբ նշված չեն 3.2 գլխի Ա աղյուսակում, կարող են դասվել 2.2.8.3 ենթաբաժնի համապատասխան մասում եւ համապատասխան փաթեթավորման խմբում՝ հիմնվելով շփման այն տեսողության վրա, որի դեպքում մարդու մաշկը լիովին կարող է վնասվել՝ ստորեւ (ա)-(գ) կետերում նշված չափորոշիչների համաձայն:

Հեղուկներն ու այն պինդ նյութերը, որոնք կարող են փոխադրման ժամանակ հեղուկ դառնալ, որոնք լիովին չեն վնասում մարդու մաշկը, դեռեւս համարվում է, որ կարող են մետաղական որոշ մակերեսների վրա կոռոզիա առաջացնել: Փաթեթավորման խմբում դասակարգելիս պետք է հաշվի առնվի մարդկային փորձը պատահական ճառագայթման ժամանակ: Մարդկային փորձի բացակայության դեպքում խմբավորումը պետք է իրականացվի փորձարկումներից ձեռք բերվող տվյալների հիման վրա՝ ՏՀՁԿ փորձարկման ուղեցույցների 404<sup>5</sup> կամ 435<sup>6</sup>-ի համաձայն: Այն նյութը, որը կոռոզիոն չի համարվում

<sup>5</sup> Քիմիկատների փորձարկման վերաբերյալ թիվ 404 ՏՀՁԿ ուղեցույց՝ «Մաշկի համար գրգռող/կոռոզիոն սուր ազդեցություն», 2002թ.:

<sup>6</sup> Քիմիկատների փորձարկման վերաբերյալ թիվ 435 ՏՀՁԿ ուղեցույց՝ «Վալիդացված լորձաթաղանթի խոչընդոտների փորձարկման մեթոդը մաշկի վրա կոռոզիոն ազդեցություն», 2006թ.:

ՏՀՁԿ փորձարկման ուղեցույցների 430<sup>7</sup> կամ 431<sup>8</sup>-ի համաձայն, կարող է կոռոզիոն չհամարվել մաշկի համար՝ «ԱԴՌ» համաձայնագրի նպատակներից ելնելով, առանց հետագա փորձարկման:

- ա) փաթեթավորման I խմբում դասակարգվում են այն նյութերը, որոնք առաջացնում են մաշկի հյուսվածքի խորը վնասվածք ճառագայթումից 3 կամ ավելի քիչ թույլ անց՝ մինչև 60 թույլ դիտարկման փուլում,
- բ) փաթեթավորման II խմբում դասակարգվում են այն նյութերը, որոնք առաջացնում են մաշկի հյուսվածքի խորը վնասվածք՝ ճառագայթումից 3 թույլ անց, բայց ոչ ուշ, քան 60 թույլ մինչև 14 օր դիտարկման փուլում,
- գ) փաթեթավորման III խմբում դասակարգվում են այն նյութերը, որոնք՝
  - առաջացնում են մաշկի հյուսվածքի խորը վնասվածք ճառագայթումից 60 թույլ անց, բայց ոչ ուշ, քան 4 ժամը՝ մինչև 14 օր դիտարկման փուլում,
  - համարվում է, որ չեն առաջացնում մաշկի հյուսվածքի խորը վնասվածք, սակայն որոնք կոռոզիոն ցուցանիշ ունեն կա՛մ պողպատի, կա՛մ ալյումինիումի մակերեսի վրա՝ գերազանցելով տարեկան 6,25 մմ 55 °C ջերմաստիճանի պայմաններում փորձարկումը, երբ երկու նյութի վրա փորձարկում է իրականացվում: Պողպատը փորձարկելու նպատակով S235JR+CR (1.0037 resp. St 37-2), S275J2G3+CR (1.0144 resp. St 44-3), ISO 3574 տեսակը, Միացյալ թվային համակարգը (ՄԹՀ) G10200 կամ SAE 1020 եւ ալյումինիումի փորձարկման դեպքում, չերեսապատված տեսակները՝ 7075-T6, կամ AZ5GU-T6 տեսակները պետք է օգտագործվեն: Ընդունելի փորձարկում կարող է նախատեսվել «Փորձարկումների եւ չափորոշիչների ձեռնարկի» III մասի 37-րդ բաժնով:

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Եթե նախնական փորձարկման ընթացքում պողպատի կամ ալյումինիումի վրա երեւում է, որ փորձարկման ենթակա նյութը կոռոզիոն հատկություններ է ցուցաբերում, անհրաժեշտ է լրացուցիչ փորձարկում իրականացնել այլ մետաղի նկատմամբ:*

Աղյուսակ 2.2.8.1.6՝ 2.2.8.1.6 կետի չափորոշիչներն ամփոփող աղյուսակ

<sup>7</sup> Քիմիկատների փորձարկման վերաբերյալ թիվ 430 ՏՀՁԿ ուղեցույց՝ «Մաշկի համար գրգռող/կոռոզիոն սուր ազդեցություն» Միջմաշկային էլեկտրական հոսանքին դիմադրության փորձաստիվում», 2004թ.:

<sup>8</sup> Քիմիկատների փորձարկման վերաբերյալ թիվ 431 ՏՀՁԿ ուղեցույց «Մաշկի համար կոռոզիոն ազդեցություն. Մարդու մաշկի մոդելի փորձարկում» 2004թ.

Փաթեթավորման խումբ	Ազդեցության տևողություն	Դիտարկման փուլ	Ազդեցություն
I	≤ 3 ր	≤ 60 ր	Մաշկի հյուսվածքի խորը վնասվածք
II	> 3 ր ≤ 1 ժ	≤ 14 օր	Մաշկի հյուսվածքի խորը վնասվածք
III	> 1ժ ≤ 4 ժ	≤ 14 օր	Մաշկի հյուսվածքի խորը վնասվածք
III	-	-	Պողպատի կամ ալյումինիումի մակերեսային կոռոզիայի արագությունը գերազանցում է տարեկան 6,25 մմ 55°С փորձաստուգման ջերմաստիճանում, երբ դրանք թեստավորվում են այդ երկու նյութերի վրա

2.2.8.1.7. Եթե խառնուրդներ ավելացնելու հետեանքով 8-րդ դասի նյութերն ընկնում են վտանգավորության տարբեր կատեգորիաների տակ ի տարբերություն այն վտանգավորության կատեգորիաների, որոնց մեջ ընդգրկված են 3.2 գլխի Ա աղյուսակի մեջ անվանմամբ նշված նյութերը, ապա այդ խառնուրդները կամ լուծույթները պետք է դասակարգվեն այն դիրքերում, որոնց իրենք պատկանում են իրենց իրական վտանգավորության աստիճանի հիման վրա:

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Լուծույթների եւ խառնուրդների դասակարգման համար (ինչպես օրինակ՝ պատրաստուկների եւ թափոնների) տե՛ս նաեւ 2.1.3:*

2.2.8.1.8. 2.2.8.1.6 պարբերությունում սահմանված չափորոշիչների հիման վրա կարող է նաեւ որոշվել՝ արդյո՞ք տվյալ անվանմանը համապատասխանող լուծույթի կամ խառնուրդի բնույթն այնպիսին է, որ լուծույթը կամ խառնուրդը ենթակա չէ տվյալ դասի պահանջներին:

2.2.8.1.9. Նյութերը, լուծույթները եւ խառնուրդները, որոնք, թիվ 1272/2008<sup>3</sup> (ԵՀ) կանոնակարգի համաձայն, մաշկի համար կոռոզիոն չեն կամ 1-ին կատեգորիայի մետաղ չեն, կարող են համարվել նյութեր, որոնք չեն պատկանում 8-րդ դասին:

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. ՄԱԿ-ի նշագրման 1910 համարի կալցիումի օքսիդը եւ ՄԱԿ-ի նշագրման 2812 համարի նատրիումի ալյումինատը, որոնք թվարկված են ՄԱԿ-ի տրիպային կանոնակարգերում, չեն ենթարկվում «ԱԴԴ» համաձայնագրի դրույթներին:*

<sup>3</sup> 67/548/ԵՏՀ եւ 1999/45/ԵՀ հրահանգները փոփոխող եւ ուժը կորցրած ճանաչող, ինչպես նաեւ թիվ 1907/2006 կանոնակարգը (ԵՀ) փոփոխող՝ Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2008 թվականի դեկտեմբերի 16-ի «Նյութերի եւ խառնուրդների դասակարգման, պիտակավորման ու փաթեթավորման մասին» թիվ 1272/2008 կանոնակարգ (ԵՀ)՝ հրապարակված Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում, L 353 , 31.12.2008թ., էջ 1-1355:

2.2.8.2. Փոխադրման համար անթույլատրելի նյութեր

2.2.8.2.1. Ց-րդ դասի քիմիապես անկայուն նյութերը ենթակա չեն փոխադրման՝ բացառությամբ, եթե ձեռնարկվել են նախազգուշական միջոցներ փոխադրման նորմալ պայմաններում վտանգավոր տրոհման եւ պոլիմերացման հավանականությունը կանխելու համար: Պոլիմերացումը կանխելու համար անհրաժեշտ նախազգուշական միջոցների համար տե՛ս 3.3 գլխի 386-րդ հատուկ դրույթը: Այդ պատճառով հատկապես հարկավոր է ապահովել, որ տարաներում եւ ցիստեռններում չլինեն այնպիսի նյութեր, որոնք կարող են նպաստել նման ռեակցիաների առաջացմանը:

2.2.8.2.2. Հետեւյալ նյութերի փոխադրումն արգելվում է՝

- ՄԱԿ-ի նշագրման 1798 համարի ՆԻՏՐՈ-ՔԼՈՐԱԶՐԱԾՆԱՅԻՆ ԹԹՈՒՆԵՐ,
- օգտագործված ծծմբական թթվի քիմիական ոչ կայուն խառնուրդներ,
- քիմիական տեսանկյունից ոչ կայուն նիտրատի թթվի խառնուրդների կամ ծծմբական եւ ազոտական թթուների խառնուրդներ՝ ոչ ազոտազերծված,
- քլորաթթվի լուծույթներ, որոնք պարունակում են 72%-ից ավելի մաքուր թթու (ըստ զանգվածի) կամ քլորաթթվի խառնուրդներ, որոնք պարունակում են ջրից բացի այլ հեղուկներ:

2.2.8.3. Խմբային դիրքերի ցանկ

Կոռոզիոն նյութեր, որոնք լրացուցիչ ռիսկ չեն ներկայացնում եւ այդպիսի նյութեր պարունակող պատրաստվածքներ.

Թթու	անօրգան ական	հեղուկ C1	2584 ԱԼԿԻԼԾՄԲԱԿԱՆ ԹԹՈՒՆԵՐ, ՀԵՂՈՒԿ՝ ավելի քան 5% ազատ ծծմբական թթվով կամ 2584 ԱՐԻԼԾՄԲԱԿԱՆ ԹԹՈՒՆԵՐ, ՀԵՂՈՒԿ՝ ավելի քան 5% ազատ ծծմբական թթվով 2693 ԲԻՍՈՒԼՖԻՏ, ԶՐԱՅԻՆ ԼՈՒԾՈՒՅԹ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ 2837 ԲԻՍՈՒԼՖԱՏ, ԶՐԱՅԻՆ ԼՈՒԾՈՒՅԹ 3264 ԿՈՌՈՁԻՈՆ ՀԵՂՈՒԿ, ԹԹՎԱՅԻՆ, ԱՆՕՐԳԱՆԱԿԱՆ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ
	պինդ C2	1740 ՀԻԴՐՈՆԵՐԿՖՏՈՐԻԴՆԵՐ, ՊԻՆԴ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ 2583 ԱԼԿԻԼԾՄԲԱԿԱՆ ԹԹՈՒՆԵՐ, ՊԻՆԴ՝ ավելի քան 5% ազատ ծծմբական թթվով, կամ 2583 ԱՐԻԼԾՄԲԱԿԱՆ ԹԹՈՒՆԵՐ, ՊԻՆԴ՝ ավելի քան 5% ազատ	

			<p>ծծմբական թթվով, կամ</p> <p>3260 ԿՈՌՈՋԻՈՆ ՊԻՆԴ ՆՅՈՒԹ, ԹԹՎԱՅԻՆ, ԱՆՕՐԳԱՆԱԿԱՆ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ</p>
C1-C4	օրգանակ ան	հեղուկ C3	<p>2586 ԱԼԿԻԼԾՑՄԲԱԿԱՆ ԹԹՈՒՆԵՐ, ՀԵՂՈՒԿ՝ ոչ ավելի, քան 5% ազատ ծծմբական թթվով կամ</p> <p>2586 ԱՐԻԼԾՑՄԲԱԿԱՆ ԹԹՈՒՆԵՐ, ՀԵՂՈՒԿ՝ ոչ ավելի, քան 5% ազատ ծծմբական թթվով</p> <p>2987 ՔԼՈՐԱՍԻԼՆԵՐ, ԿՈՌՈՋԻՈՆ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ</p> <p>3145 ԱԼԿԻԼՖԵՆՈԼ, ՀԵՂՈՒԿ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ (ներառյալ C2-C12 հոմոլոգները)</p> <p>3265 ԿՈՌՈՋԻՈՆ ՀԵՂՈՒԿ, ԹԹՎԱՅԻՆ, ՕՐԳԱՆԱԿԱՆ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ</p>
Հիմք	անօրգան ական	պինդ C4	<p>2430 ԱԼԿԻԼՖԵՆՈԼ, ՊԻՆԴ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ (ներառյալ C2-C12 հոմոլոգները)</p> <p>2585 ԱԼԿԻԼԾՑՄԲԱԿԱՆ ԹԹՈՒՆԵՐ, ՊԻՆԴ՝ ոչ ավելի, քան 5% ազատ ծծմբական թթվով կամ</p> <p>2585 ԱՐԻԼԾՑՄԲԱԿԱՆ ԹԹՈՒՆԵՐ, ՊԻՆԴ՝ ոչ ավելի, քան 5% ազատ ծծմբական թթվով</p> <p>3261 ԿՈՌՈՋԻՈՆ ՊԻՆԴ ՆՅՈՒԹ, ԹԹՎԱՅԻՆ, ՕՐԳԱՆԱԿԱՆ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ</p>
		հեղուկ C5	<p>1719 ԿԱՌԻՍՏԻԿ ԱԼԿԱԼԻՆ ՀԵՂՈՒԿ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ</p> <p>2797 ԷԼԵԿՏՐՈԼԻՏ, ԱԼԿԱԼԻ</p> <p>3266 ԿՈՌՈՋԻՈՆ ՀԵՂՈՒԿ, ՀԻՄՆԱՅԻՆ, ԱՆՕՐԳԱՆԱԿԱՆ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ</p>
	պինդ C6	<p>3262 ԿՈՌՈՋԻՈՆ ՊԻՆԴ ՆՅՈՒԹ, ՀԻՄՆԱՅԻՆ, ԱՆՕՐԳԱՆԱԿԱՆ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ</p>	
	օրգանակ ան	հեղուկ C7	<p>2735 ԱՄԻՆՆԵՐ, ՀԵՂՈՒԿ, ԿՈՌՈՋԻՈՆ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ կամ</p> <p>2735 ԲԱԶՄԱՄԻՆՆԵՐ, ՀԵՂՈՒԿ, ԿՈՌՈՋԻՈՆ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ</p> <p>3267 ԿՈՌՈՋԻՈՆ ՀԵՂՈՒԿ, ՀԻՄՆԱՅԻՆ, ՕՐԳԱՆԱԿԱՆ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ</p>
		պինդ C8	<p>3259 ԱՄԻՆՆԵՐ, ՊԻՆԴ, ԿՈՌՈՋԻՈՆ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ, կամ</p> <p>3259 ԲԱԶՄԱՄԻՆ, ՊԻՆԴ, ԿՈՌՈՋԻՈՆ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ</p>

		3263 ԿՈՌՈՁԻՈՆ ՊԻՆԴ ՆՅՈՒԹ, ՀԻՄՆԱՅԻՆ, ՕՐԳԱՆԱԿԱՆ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ
Այլ կոռուզիոն նյութեր	հեղուկ C9	1903 ԱԽՏԱՀԱՆԻՉ, ՀԵՂՈՒԿ, ԿՈՌՈՁԻՈՆ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ 2801 ՆԵՐԿԱՆՅՈՒԹ, ՀԵՂՈՒԿ, ԿՈՌՈՁԻՈՆ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ, կամ 2801 ՄԻՋԱՆԿՅԱԼ ՆԵՐԿԱՆՅՈՒԹ, ՀԵՂՈՒԿ, ԿՈՌՈՁԻՈՆ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ 3066 ՆԵՐԿ (ներառյալ՝ ներկը, էմալը, ներկանյութը, շելլաքը, դոմխեժը (օլիֆ), արծնուկը, հեղուկ լցանյութը եւ լաքի հեղուկ հիմքը), կամ 3066 ՆԵՐԿԵՐԻ ՀԵՏ ԱՌՆՉՎՈՂ ՆՅՈՒԹԵՐ (ներառյալ՝ ներկերի նոսրացուցիչը կամ լուծիչները) 1760 ԿՈՌՈՁԻՈՆ ՀԵՂՈՒԿ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ
C9-C10	պինդ <sup>ա</sup> C10	3147 ՆԵՐԿԱՆՅՈՒԹ, ՊԻՆԴ, ԿՈՌՈՁԻՈՆ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ, կամ 3147 ՄԻՋԱՆԿՅԱԼ ՆԵՐԿԱՆՅՈՒԹ, ՊԻՆԴ, ԿՈՌՈՁԻՈՆ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ 3244 ԿՈՌՈՁԻՈՆ ՀԵՂՈՒԿ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ՊԻՆԴ ՆՅՈՒԹԵՐ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ 1759 ԿՈՌՈՁԻՈՆ ՊԻՆԴ ՆՅՈՒԹ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ
Պատրաստվածքներ  (շարունակությունը՝ հաջորդ էջում)	C11	2794 ՄԱՐՏԿՈՑՆԵՐ, ԹԱՑ, ԹԹՈՒՆՆԵՐՈՎ, էլեկտրականության պահպանություն 2795 ՄԱՐՏԿՈՑՆԵՐ, ԹԱՑ, ԱԼԿԱԼԻՈՎ, էլեկտրականության պահպանություն 2800 ՄԱՐՏԿՈՑՆԵՐ, ԹԱՑ, ՉԹԱՓՎՈՂ, էլեկտրականության պահպանություն 3028 ՄԱՐՏԿՈՑՆԵՐ, ՉՈՐ, ՊԱՐՈՒՆԱԿՈՒՄ ԵՆ ԿԱԼԻՈՒՄԻ ՀԻԴՐՕՔՍԻԴ ՊԻՆԴ ՆՅՈՒԹ, էլեկտրականության պահպանություն 1774 ԿՐԱԿՄԱՐԻՉՆԵՐԻ ԼԻՑՔԱՎՈՐԻՉՆԵՐ, կոռուզիոն հեղուկ

<sup>ա</sup> Կոռուզիոն հեղուկների եւ այն պինդ նյութերի խառնուրդները, որոնց վրա չեն տարածվում «ԱԴՌ» համաձայնագրի դրույթները, կարող են փոխադրվել այնպես, ինչպես ՄԱԿ-ի նշագրման 3244 ծածկագիրը կրող նյութերը՝ առանց սկզբում դրանց նկատմամբ 8-րդ դասի դասակարգման չափորոշիչները կիրառելու՝ պայմանով, որ այդ խառնուրդի բեռնման ժամանակ, կամ երբ փաթեթվածքը, կոնսերվները կամ տրանսպորտային միավորը փակվում է, տեսանելի անջատված հեղուկ առկա չէ: Յուրաքանչյուր փաթեթվածք պետք է համապատասխանի կառուցվածքի այն տեսակին, որը փաթեթավորման II խմբի համար նախատեսված անջրանցիկության փորձարկումն անցել է:



	2028 ՌՈՒՄԲԵՐ, ԾԽԱՌՈՒՄԲԵՐ՝ ՈՉ ՊԱՅԹՈՒՑԻԿ կոռոզիոն հեղուկ պարունակող, առանց հարուցիչ սարքի
	3477 ՎԱՌԵԼԻՔԻ ԷԼԵՄԵՆՏՆԵՐ, ՔԱՐԹՐԻՋՆԵՐ կոռոզիոն նյութեր պարունակող, կամ
	3477 ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ ՄԵՋ ԱՌԿԱ ՎԱՌԵԼԻՔԻ ԷԼԵՄԵՆՏՆԵՐ, ՔԱՐԹՐԻՋՆԵՐ, որոնք կոռոզիոն նյութեր են պարունակում, կամ
	3477 ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ ՀԵՏ ՓԱԹԵԹԱՎՈՐՎԱԾ՝ ՎԱՌԵԼԻՔԻ ԷԼԵՄԵՆՏՆԵՐ, ՔԱՐԹՐԻՋՆԵՐ, որոնք կոռոզիոն նյութեր են պարունակում

Կոռոզիոն նյութեր, որոնք լրացուցիչ ռիսկ (ռիսկեր) են ներկայացնում, եւ այդպիսի նյութեր պարունակող պատրաստվածքներ.

(շարունակություն)			
Դյուրավառք	հեղուկ CF1	3470 ՆԵՐԿ, ԿՈՌՈՋԻՈՆ, ԴՅՈՒՐԱՎԱՌ (ներառյալ՝ ներկը, էմալը, ներկանյութը, շելլաքը, դոմխեժը (օլիֆ), արծնուկը, հեղուկ լցանյութը եւ լաքի հեղուկ հիմքը), կամ 3470 ՆԵՐԿԵՐԻ ՀԵՏ ԱՌՆՉՎՈՂ ՆՅՈՒԹԵՐ, ԿՈՌՈՋԻՈՆ, ԴՅՈՒՐԱՎԱՌ (ներառյալ՝ ներկերի նոսրացուցիչը կամ լուծիչը) 2734 ԱՄԻՆՆԵՐ, ՀԵՂՈՒԿ, ԿՈՌՈՋԻՈՆ, ԴՅՈՒՐԱՎԱՌ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ, կամ 2734 ԲԱԶՄԱՄԻՆՆԵՐ, ՀԵՂՈՒԿ, ԿՈՌՈՋԻՈՆ, ԴՅՈՒՐԱՎԱՌ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ 2986 ՔԼՈՐԱՍԻԼՆԵՐ, ԿՈՌՈՋԻՈՆ, ԴՅՈՒՐԱՎԱՌ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ 2920 ԿՈՌՈՋԻՈՆ ՀԵՂՈՒԿ, ԴՅՈՒՐԱՎԱՌ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ	
	պինդ CF2	2921 ԿՈՌՈՋԻՈՆ ՊԻՆԴ ՆՅՈՒԹ, ԴՅՈՒՐԱՎԱՌ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ	
	հնքնատաքացող	հեղուկ CS1	3301 ԿՈՌՈՋԻՈՆ ՀԵՂՈՒԿ, ԻՆՔՆԱՏԱՔԱՑՈՂ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ
	CS	պինդ CS2	3095 ԿՈՌՈՋԻՈՆ ՊԻՆԴ ՆՅՈՒԹ, ԻՆՔՆԱՏԱՔԱՑՈՂ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ
		Ջրի հետ ռեակցիայի մեջ մտնող	հեղուկ CW1 <sup>բ</sup>
	CW	պինդ CW2	3096 ԿՈՌՈՋԻՈՆ ՊԻՆԴ ՆՅՈՒԹ, ՋՐԻ ՀԵՏ ՌԵԱԿՑԻԱՅԻ ՄԵՋ ՄՏՆՈՂ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ

<sup>բ</sup> 4.3 դասին պատկանում են այն քլորասիլանները, որոնք ջրի կամ խոնավ օդի հետ փոխազդեցության դեպքում արտազատում են դյուրավառ գազեր:

Օքսիդացնող	հեղուկ CO1	3093 ԿՈՌՈՋԻՈՆ ՀԵՂՈՒԿ, ՕՔՍԻԴԱՑՆՈՂ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ
CO	պինդ CO2	3084 ԿՈՌՈՋԻՈՆ ՊԻՆԴ ՆՅՈՒԹ, ՕՔՍԻԴԱՑՆՈՂ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ
Թունավորող	հեղուկ <sup>9</sup> CT1	3471 ՀԻԴՐՈԵՐԿՖՏՈՐԻԴՆԵՐԻ ԼՈՒԾՈՒՅԹ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ 2922 ԿՈՌՈՋԻՈՆ ՀԵՂՈՒԿ, ԹՈՒՆԱՎՈՐ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ
CT	CT2	
	պինդ <sup>ե</sup>	2923 ԿՈՌՈՋԻՈՆ ՊԻՆԴ ՆՅՈՒԹ, ԹՈՒՆԱՎՈՐ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ
	պատրաստվածքներ	CT3 3506 ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԱՐՏԱԴՐԱՆՔՈՒՄ ՊԱՐՈՒՆԱԿՎՈՂ ՍՆԴԻԿ
Դյուրավառ, հեղուկ, թունավոր <sup>7</sup>	CFT	Այս դասակարգման ծածկագրով այլ հավաքական դիրք չկա, անհրաժեշտության դեպքում դասակարգման ծածկագրով հավաքական դիրքում դասակարգումը սահմանվում է 2.1.3.10-ի վտանգավորության առաջնայնության աղյուսակի համաձայն:
Օքսիդացնող, թունավոր <sup>7,ե</sup>	COT	Այս դասակարգման ծածկագրով այլ հավաքական դիրք չկա, անհրաժեշտության դեպքում դասակարգման ծածկագրով հավաքական դիրքում դասակարգումը սահմանվում է 2.1.3.10-ի վտանգավորության առաջնայնության աղյուսակի համաձայն:

<sup>9</sup> Այն քլորոֆորմալդեհիդը, որոնք առավելապես թունավոր հատկություններ ունեն, 6.1 դասի նյութեր են:

<sup>7</sup> Այն կոռոզիոն նյութերը, որոնք ներշնչման դեպքում ունեն բարձր թունավորություն, ինչպես սահմանված է 2.2.61.1.4 - 2.2.61.1.9-ում, 6.1 դասի նյութեր են:

<sup>ե</sup> ՄԱԿ-ի նշագրման 2505 համարի ԱՄՈՆԻՈՒՄ ՖՏՈՐԻԴ, ՄԱԿ-ի նշագրման 1812 համարի ԿԱԼԻՈՒՄԻ ՖՏՈՐԻԴ, ՊԻՆԴ ՆՅՈՒԹ, ՄԱԿ-ի նշագրման 1690 համարի ՆԱՏՐԻՈՒՄ ՖՏՈՐԻԴ, ՊԻՆԴ ՆՅՈՒԹ, ՄԱԿ-ի նշագրման 2674 համարի ՆԱՏՐԻՈՒՄ ՖՏՈՐՍԻԼԻԿԱՏ, ՄԱԿ-ի նշագրման 2856 համարի ՖՏՈՐԻՍԻԼԻԿԱՏ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ, ՄԱԿ-ի նշագրման 3415 համարի ՆԱՏՐԻՈՒՄ ՖՏՈՐԻԴԻ ԼՈՒԾՈՒՅԹ եւ ՄԱԿ-ի նշագրման համարի 3422 ԿԱԼԻՈՒՄԻ ՖՏՈՐԻԴԻ ԼՈՒԾՈՒՅԹ 6.1 դասի նյութեր են:

2.2.9. Դաս 9 Այլ վտանգավոր նյութեր եւ պատրաստվածքներ

2.2.9.1. Չափորոշիչներ

2.2.9.1.1. 9-րդ դասի անվանումը ներառում է այնպիսի նյութեր եւ պատրաստվածքներ, որոնք փոխադրման ընթացքում վտանգավոր են եւ ներառված չեն այլ դասերի անվանումներում:

2.2.9.1.2. 9-րդ դասի նյութերը եւ պատրաստվածքները բաժանվում են հետեւյալ ենթախմբերի՝

- M1 նյութեր, որոնց մանր փոշին ներշնչելու դեպքում կարող է վտանգվել առողջությունը.
- M2 նյութեր եւ պատրաստվածքներ, որոնք հրդեհի դեպքում կարող են դիօքսին առաջացնել.
- M3 դյուրավառ գոլորշի արձակող նյութեր.
- M4 լիթումային մարտկոցներ.
- M5 փրկարարական սարքեր.
- M6-M8 շրջակա միջավայրի համար վտանգավոր նյութեր՝
  - M6 ջրային միջավայրի հեղուկ աղտոտիչ.
  - M7 ջրային միջավայրի պինդ աղտոտիչ.
  - M8 գենետիկորեն ձեւափոխված միկրոօրգանիզմներ եւ օրգանիզմներ.
- M9-M10 նյութեր՝ բարձր ջերմաստիճանում
  - M9 հեղուկ.
  - M10 պինդ.
- M11 այլ նյութեր եւ պատրաստվածքներ, որոնք վտանգավոր են փոխադրման ժամանակ, սակայն չեն համապատասխանում այլ դասի սահմանումներին:

Սահմանումներ եւ դասակարգում

2.2.9.1.3. 9-րդ դասին պատկանող նյութերը եւ պատրաստվածքները թվարկված են 3.2 գլխի Ա աղյուսակում: 3.2 գլխի Ա աղյուսակում անվանմամբ չնշված նյութերի եւ պատրաստվածքների վերագրումն այդ աղյուսակի համապատասխան տողին կամ 2.2.9.3-ին կատարվում է ներքոնշյալ 2.2.9.1.4-2.2.9.1.14-ի համաձայն:

Այն նյութերը, որոնց մանր փոշին ներշնչելու դեպքում կարող է վտանգվել առողջությունը

2.2.9.1.4. Այն նյութերը, որոնց մանր փոշին ներշնչելու դեպքում կարող է վտանգվել առողջությունը, ներառում են ասբեստ եւ ասբեստ պարունակող խառնուրդներ:

Այն նյութերը եւ պատրաստվածքները, որոնք հրդեհի դեպքում կարող են

դիօքսին առաջացնել

- 2.2.9.1.5. Այն նյութերը եւ պատրաստվածքները, որոնք հրդեհի դեպքում կարող են դիօքսին առաջացնել, ներառում են պոլիքլորինացված բիֆենիլներ (PCB) եւ տերֆենիլներ (PCT), պոլիհալոգենացված բիֆենիլները եւ տերֆենիլները, այդ նյութերը պարունակող խառնուրդներ, ինչպես նաեւ տրանսֆորմատորներ, կոնդենսատորներ եւ այդ նյութերը կամ խառնուրդներ պարունակող պատրաստվածքներ:

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. «ԱԴՌ» համաձայնագրի դրույթները չեն տարածվում 50 մգ/կգ «PCB» կամ «PCT» պարունակությամբ խառնուրդների վրա:*

Դյուրավառ գոլորշի արձակող նյութեր

- 2.2.9.1.6. Դյուրավառ գոլորշի արձակող նյութերը ներառում են դյուրավառ հեղուկներ պարունակող պոլիմերներ, որոնց բռնկման ջերմաստիճանը չի գերազանցում 55 °C-ը:

Լիթիումային մարտկոցներ

- 2.2.9.1.7. Լիթիումային մարտկոցները պետք է բավարարեն հետեւյալ պահանջները, եթե այլ բան նախատեսված չէ «ԱԴՌ» համաձայնագրով (օրինակ՝ փորձական մարտկոցները եւ փոքր արտադրությունը կարգավորվում են 310-րդ հատուկ դրույթով, կամ վնասված մարտկոցները՝ 376-րդ հատուկ դրույթով):

Էլեմենտներն ու մարտկոցները, սարքավորումներում պարունակվող էլեմենտներն ու մարտկոցները, սարքավորման հետ փաթեթավորված էլեմենտներն ու մարտկոցները, որոնք ցանկացած տեսքով պարունակում են լիթիում, պատկանում են, համապատասխանաբար, ՄԱԿ-ի նշագրման 3090, 3091, 3480 կամ 3481 համարների դասին: Դրանք կարող են դասակարգվել հետեւյալ դիրքերի ներքո, եթե համապատասխանում են հետեւյալ դրույթներին՝

- ա) յուրաքանչյուր էլեմենտ կամ մարտկոց պատկանում է այն տեսակին, որը բավարարում է III մասի 38.3 բաժնի «Թեստավորման ձեռնարկում» ներկայացված յուրաքանչյուր թեստի պահանջները.

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Մարտկոցները պատկանում են այն տեսակին, որը բավարարում է «Փորձարկումների եւ չափորոշիչների ձեռնարկ»-ի III մասի 38.3 բաժնի փորձաստուգման պահանջները, անկախ այն փաստից, թե արդյոք դրանք բաղկացած են էլեմենտներից, որոնք փորձարկված տեսակի են:*

- բ) յուրաքանչյուր էլեմենտ եւ մարտկոց ունեն անվտանգության օդափոխման կափույր կամ նախատեսված են փոխադրման

նորմալ պայմաններում կտրուկ մեխանիկական ձախողումը կանխելու համար.

- գ) յուրաքանչյուր էլեմենտ եւ մարտկոց ունեն արտաքին կարճ միացումները կանխարգելելու արդյունավետ միջոց.
- դ) յուրաքանչյուր մարտկոց, որը պարունակում է էլեմենտներ կամ զուգահեռ կապակցված էլեմենտների շարք, ունի արդյունավետ միջոցներ՝ անհրաժեշտության դեպքում վտանգավոր հետադարձ հոսանքի հոսքը կանխարգելելու համար (օրինակ՝ դիոդներ, ապահովիչներ եւ այլն).
- ե) էլեմենտները եւ մարտկոցները պետք է արտադրվեն որակի կառավարման ծրագրին համապատասխան՝
  - i) անձնակազմի կազմակերպչական կառուցվածքի նկարագրությունն ու պարտականությունները՝ նախագծի եւ ապրանքի որակի հետ կապված.
  - ii) վերահսկողության եւ փորձարկման, որակի հսկողության, որակի ապահովման եւ տեխնոլոգիական գործընթացների համապատասխան ցուցումները, որոնք պետք է կիրառվեն.
  - iii) հսկողության գործընթացը, որն ընդգրկում է էլեմենտների արտադրության ընթացքում ներքին կարճ միացումների խափանումը կանխարգելելուն եւ հայտնաբերելուն ուղղված համապատասխան գործունեություն.
  - iv) որակի մասին արձանագրությունները, ինչպես օրինակ՝ ստուգումների արձանագրությունները, փորձարկման տվյալները, ստուգաճշտման տվյալները եւ սերտիֆիկատները:

Փորձարկման արդյունքները պահվում են եւ ներկայացվում իրավասու Հանձնաժողովին՝ պահանջի հիման վրա.

- v) որակի կառավարման ծրագրի արդյունավետ գործարկումն ապահովելու նպատակով կառավարման գործընթացների ստուգումներ.
- vi) փաստաթղթերի եւ դրանց վերանայման հսկողության գործընթաց.
- vii) էլեմենտների կամ մարտկոցների հսկողության միջոց, որը չի համապատասխանում այն տեսակին, որը փորձարկվել է վերը բերված (ա) կետում նշված կերպով.
- viii) համապատասխան անձնակազմի վերապատրաստման ծրագրեր եւ որակավորման ընթացակարգեր, եւ

ix) ընթացակարգեր, որոնց միջոցով կարելի է համոզվել, որ վերջնական արտադրանքը վնասված չէ:

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Ներքին որակի կառավարման ծրագրերը թույլատրելի են: Երրորդ կողմի սերտիֆիկացում չի պահանջվում, սակայն վերը նշված (i)-(ix) ենթակետերում թվարկված ընթացակարգերը պետք է պատշաճ կերպով արձանագրվեն, եւ դրանց պետք է հետեւել: Որակի կառավարման ծրագրի պատճենը պետք է ներկայացվի իրավասու մարմին՝ պահանջի հիման վրա:*

3.3 գլխի թիվ 188 հատուկ դրույթի պահանջներին համապատասխանելու դեպքում լիթիումային մարտկոցները չեն կարգավորվում «ԱԴԴ» համաձայնագրի դրույթներով:

Փրկարարական սարքեր

2.2.9.1.8. Փրկարարական սարքերը ներառում են փրկարարական այն սարքերը եւ փոխադրամիջոցի բաղադրամասերը, որոնք համապատասխանում են 3.3 գլխի թիվ 235 կամ 296 հատուկ դրույթներում ներկայացված բնութագրերին:

Շրջակա միջավայրի համար վտանգավոր նյութեր

2.2.9.1.9. (Հանվել է)

Ջրային միջավայրի աղտոտիչներ

2.2.9.1.10. Շրջակա միջավայրի համար վտանգավոր նյութեր (ջրային միջավայր)

2.2.9.1.10.1. Ընդհանուր սահմանումներ

2.2.9.1.10.1.1. Շրջակա միջավայրի համար վտանգավոր նյութերը մասնավորապես ներառում են ջրային միջավայրն աղտոտող հեղուկ կամ պինդ նյութեր, ինչպես նաեւ լուծույթներ եւ այդպիսի նյութերի խառնուրդներ (ինչպիսիք են պատրաստուկները եւ թափոնները):

2.2.9.1.10-ի նպատակներով «նյութ» նշանակում է բնական վիճակում գտնվող կամ ցանկացած արտադրական պրոցեսից ստացված քիմիական տարր եւ դրա միացություն, ներառյալ արտադրանքի կայունության պահպանման համար անհրաժեշտ ցանկացած հավելանյութ եւ պրոցեսից ստացված ցանկացած խառնուկ՝ բացառությամբ այն լուծիչների, որոնք կարող են առանձնացվել՝ առանց ազդելու նյութի կայունության վրա կամ փոխելու դրա բաղադրությունը:

2.2.9.1.10.1.2 Ջրային միջավայրի մեջ մտնում են այն ջրային օրգանիզմները, որոնք ապրում են ջրում, եւ ջրային էկոհամակարգը, որի մասն են

կազմում դրանք<sup>9</sup>: Ուստի վտանգավորության որոշման համար հիմք է ծառայում ջրային միջավայրում նյութի կամ խառնուրդի թունավորությունը, այնուամենայնիվ դա կարող է փոփոխվել՝ հաշվի առնելով քայքայման եւ կենսակուտակման մասին լրացուցիչ տեղեկությունները:

- 2.2.9.1.10.1.3. Թեեւ դասակարգման այդ ընթացակարգը նախատեսված է բոլոր նյութերի եւ խառնուրդների նկատմամբ կիրառման համար, սակայն հայտնի է, որ որոշ, օրինակ, մետաղների կամ վատ լուծվող անօրգանական միացությունների դեպքում անհրաժեշտ կլինեն հատուկ ցուցումներ<sup>10</sup>:
- 2.2.9.1.10.1.4. Սույն բաժնում օգտագործված հապավումների կամ եզրույթների համար կիրառվում են հետեւյալ սահմանումները՝
- BCF՝ կենսակուտակման գործոն.
  - BOD՝ թթվածնի կենսաքիմիական պահանջ.
  - COD՝ թթվածնի քիմիական պահանջ.
  - GLP՝ պատշաճ լաբորատոր գործելակերպ.
  - ECx՝ x% ռեակցիայի հետ զուգորդվող կոնցենտրացիա.
  - EC50՝ նյութի արդյունավետ կոնցենտրացիա, որի դեպքում ստացվում է առավելագույն ռեակցիայի 50%-ը.
  - ErC50՝ EC50՝ աճի արագության նվազեցմամբ.
  - Kow՝ օկտանոլ-ջուր բաշխման գործակից.
  - LC50 (50% լետալ/մահացու կոնցենտրացիա)՝ ջրում նյութի այն կոնցենտրացիան, որը 50% դեպքերում մահ է պատճառում փորձակենդանիներին (դրանց ամբողջ թվի կեսին).
  - L(E)C50՝ LC50 կամ EC50.
  - NOEC (ոչ տեսանելի ազդեցության հանգեցնող կոնցենտրացիա)՝ փորձարարական կոնցենտրացիա, որի արժեքը ցածր է վիճակագրորեն հիմնավորված՝ էական բացասական ազդեցություն ունեցող փորձարկված կոնցենտրացիայի ամենացածր արժեքից: NOEC-ը փորձարկված կոնցենտրացիայի համեմատությամբ չունի

<sup>9</sup> Դրանում չեն ընդգրկվում ջրային միջավայրի աղտոտիչները, որոնց դեպքում անհրաժեշտություն կարող է առաջանալ դիտարկել ջրային միջավայրից բացի, օրինակ, մարդու առողջության վրա ունեցած դրանց ազդեցությունը եւ այլն:

<sup>10</sup> Այն կարելի է գտնել ՀՆՀ-ի 10-րդ հավելվածում:

վիճակագրորեն հիմնավորված էական բացասական ազդեցություն.

- ՏՀԶԿ փորձարկման ուղեցույցներ՝ Տնտեսական համագործակցության եւ զարգացման կազմակերպության (ՏՀԿԶ) կողմից հրատարակված փորձարկման ուղեցույցներ:

2.2.9.1.10.2. Սահմանումներ եւ տվյալների վերաբերյալ պահանջներ

2.2.9.1.10.2.1. Շրջակա միջավայրի համար վտանգավոր նյութերի (ջրային միջավայր) դասակարգման հիմնական տարրերն են՝

- ա) սուր թունավորություն՝ ջրային միջավայրում.
- բ) քրոնիկ թունավորություն՝ ջրային միջավայրում.
- գ) կենսակուտակման պոտենցիալ կամ փաստացի կենսակուտակում եւ
- դ) օրգանական քիմիական նյութերի քայքայում (կենսաբանական կամ ոչ կենսաբանական):

2.2.9.1.10.2.2. Թեեւ գործնականում նախապատվություն է տրվում միջազգայնորեն ներդաշնակեցված փորձարկման եղանակներով ստացված տվյալներին, սակայն ազգային մեթոդներով ստացված տվյալները եւս կարող են օգտագործվել, եթե դրանք համարժեք են համարվում: Ընդհանուր առմամբ ընդունված է, որ քաղցրահամ ջրերի եւ ծովային ջրերի տեսակներից ստացված թունավորության տվյալները համարվում են համարժեք, ու դրանք նախընտրելի է ստանալ ՏՀԶԿ փորձարկման ուղեցույցների օգտագործման արդյունքում կամ համարժեք եղանակով՝ պատշաճ լաբորատոր գործելակերպի (GLP) համաձայն: Եթե նման տվյալներ առկա չեն, դասակարգումը հիմնվում է լավագույն առկա տվյալների վրա:

2.2.9.1.10.2.3. «Սուր թունավորություն ջրային միջավայրում» նշանակում է օրգանիզմին վնաս հասցնելու՝ նյութին բնորոշ հատկանիշ այդ նյութի վրա ջրի կարճաժամկետ ներգործության դեպքում:

«Սուր (կարճաժամկետ) վտանգավորություն» դասակարգման նպատակներով նշանակում է քիմիական նյութի վտանգավորություն՝ պայմանավորված այդ քիմիական նյութի վրա ջրի կարճաժամկետ ներգործության դեպքում օրգանիզմի համար սուր թունավորությամբ:

Սուր թունավորությունը ջրային միջավայրում սովորաբար որոշվում է ձկների վրա LC50-ի (ՏՀԶԿ փորձարկման ուղեցույց, 203 կամ համարժեք եղանակ) 96-ժամյա, խեցգետնակերպների վրա EC50-ի (ՏՀԶԿ փորձարկման ուղեցույց 202 կամ համարժեք եղանակ) 48-ժամյա եւ (կամ) ջրիմուռների վրա EC50 (ՏՀԶԿ



փորձարկման ուղեցույց, 201 կամ համարժեք եղանակ) 72 կամ 96-ժամյա կիրառման արդյունքում: Այդ տեսակները համարվում են բոլոր տեսակի ջրային օրգանիզմների փոխնակներ (սուրճատ) եւ այլ տեսակների, ինչպես օրինակ՝ լամնաների մասին տվյալները կարող են նույնպես հաշվի առնվել փորձարկման տվյալ եղանակը կիրառելի լինելու դեպքում:

2.2.9.1.10.2.4. «Քրոնիկ թունավորություն ջրային միջավայրում» նշանակում է ջրի ներգործության ընթացքում ջրային օրգանիզմներին բացասական ազդեցության ենթարկելու նյութի բնորոշ հատկանիշը, որը որոշվում է օրգանիզմի կենսացիկլի ընթացքում:

«Երկարաժամկետ վտանգավորություն» դասակարգման նպատակներով նշանակում է քիմիական նյութի վտանգավորություն՝ պայմանավորված ջրային միջավայրի երկարաժամկետ ներգործության դեպքում քիմիական նյութի քրոնիկ թունավորությամբ:

Սուր թունավորության վերաբերյալ տվյալների համեմատությամբ ավելի քիչ տվյալներ են առկա քրոնիկ թունավորության վերաբերյալ եւ փորձարկման ընթացակարգերից քչերն են ստանդարտացված: ՏՀԶԿ փորձարկման ուղեցույցներ 210-ի (ձկների կյանքի վաղ փուլ) կամ 211-ի (դաֆնիայի բազմացումը) եւ 201-ի (ջրիմուռների աճի կասեցում) համաձայն ստացված տվյալները կարող են ընդունվել: Կարող են նաեւ օգտագործվել այլ վալիդացված եւ միջազգայնորեն ընդունված փորձարկման տեսակներ: Պետք է օգտագործվեն NOEC-ներ կամ ECx-ի այլ էկվիվալենտներ:

2.2.9.1.10.2.5. «Կենսակուտակում» նշանակում է օրգանիզմում նյութի կլանման, ձեւափոխության եւ ոչնչացման զուտ արդյունքը՝ կախված ներգործության բոլոր միջոցներից (այն է՝ օդային, ջրային, նստվածքային/հողային եւ սննդային):

Կենսակուտակման պոտենցիալը սովորաբար որոշվում է օկտանոլ/ջուր բաշխման գործակցի կիրառմամբ, որը սովորաբար ներկայացվում է որպես ՏՀԶԿ փորձարկման 107-րդ կամ 117-րդ ուղեցույցների համաձայն որոշված Kow-ի լոգարիթմ: Թեեւ այդ գործակիցն արտահայտում է կենսակուտակման պոտենցիալ, սակայն փորձարարական եղանակով որոշված կենսակուտակման գործոնը (BCF) ավելի ստույգ գործակից է, եւ դրա առկայության դեպքում նախապատվությունը տրվում է դրա կիրառմանը: BCF-ը որոշվում է ՏՀԶԿ փորձարկման 107-րդ, 117-րդ կամ 123-րդ ուղեցույցների համաձայն:

2.2.9.1.10.2.6. «Քայքայում» նշանակում է օրգանական մոլեկուլների

տարրալուծումն առավել փոքր մոլեկուլների եւ, ի վերջո, ածխաթթու գազի, ջրի եւ աղերի:

Շրջակա միջավայրում քայքայումը կարող է լինել կենսաբանական կամ ոչ կենսաբանական (օրինակ՝ հիդրոլիզ), եւ կիրառվող չափորոշիչներն արտահայտում են այդ փաստը: Արագ կենսաքայքայումը շատ հեշտ է որոշվում ՏՀՁԿ փորձարկման 301-րդ ուղեցույցի (A-F) կենսաքայքայման վերաբերյալ փորձարկումների միջոցով: Արագ քայքայման վերաբերյալ այդ փորձարկումների ցուցանիշները կարող են հատկանշական համարվել միջավայրերի մեծամասնության համար: Այդ փորձարկումներն անցկացվում են քաղցրահամ ջրում եւ ուստի ՏՀՁԿ փորձարկման 306-րդ ուղեցույցի արդյունքները, որոնք ավելի համապատասխանում են ծովային միջավայրին, նույնպես հաշվի են առնվում: Եթե առկա չեն նման տվյալներ, ապա  $BOD(5 \text{ օր}) / COD > 0,5$  հարաբերակցությունը համարվում է արագ քայքայման ցուցիչ:

Ոչ կենսաբանական քայքայման տեսակները, ինչպիսիք են, օրինակ՝ հիդրոլիզը. կենսաբանական կամ ոչ կենսաբանական առաջնային քայքայումը, ոչ ջրային միջավայրում քայքայումը, ինչպես նաեւ ապացուցված արագ քայքայումը՝ շրջակա միջավայրում, կարող են հաշվի առնվել արագ քայքայման հատկության որոշման ժամանակ<sup>11</sup>:

Նյութերը համարվում են շրջակա միջավայրում արագ քայքայվող այն դեպքում, երբ համապատասխանում են հետեւյալ չափորոշիչներին.

ա) արագ կենսաքայքայման հատկության 28-օրյա ուսումնասիրությունների ժամանակ դրանք հասել են քայքայման հետեւյալ մակարդակների՝

i) լուծված օրգանական ածխածնի հիման վրա կատարված փորձարկումների դեպքում՝ 70%.

ii) թթվածնի սպառման կամ ածխաթթու գազի առաջացման հիման վրա կատարված փորձարկումների դեպքում՝ տեսական առավելագույնը 60 %-ի չափով.

նյութերը կենսաքայքայման այդ մակարդակներին պետք է հասնեն քայքայումն սկսվելուց հետո 10 օրվա ընթացքում, ընդ որում, քայքայման սկիզբ է համարվում այն պահը, երբ քայքայվել է նյութի 10%-ը, բացի այն դեպքերից, երբ նյութը որոշված է որպես բարդ կամ

<sup>11</sup> Տվյալների մեկնաբանման վերաբերյալ հարուկ ցուցումները ներկայացված են ՀՆՀ-ի 9-րդ հավելվածի 4.1 գլխում:

որպես կառուցվածքային առումով նման տարրերից բաղկացած բազմաբաղադրիչ նյութ: Այդ կամ այն դեպքում, երբ կան բավարար հիմնավորումներ, 10-օրյա «պատուհանի» պայմանից կարելի է հրաժարվել եւ անհրաժեշտ մակարդակին հասնելու համար կիրառել 28-օրյա ժամանակահատվածը<sup>12</sup>, կամ՝

- բ) այն դեպքերում, երբ առկա են միայն BOD-ի եւ COD-ի մասին տվյալներ, եւ երբ դրանց հարաբերակցությունը հետեւյալն է՝  $BOD5/ COD > 0,5$ , կամ
- գ) երբ գոյություն ունի մեկ այլ գիտականորեն համոզիչ փաստարկ, որը ցույց է տալիս, որ նյութը կամ խառնուրդը կարող է 28 օրվա ընթացքում ջրային միջավայրում քայքայվել (կենսաբանորեն եւ (կամ) ոչ կենսաբանորեն) 70%-ից ավելի չափով:

2.2.9.1.10.3. Նյութերի դասակարգման կատեգորիաներ եւ չափորոշիչներ

2.2.9.1.10.3.1. Նյութերը դասակարգվում են որպես «ջրջակա միջավայրի համար վտանգավոր նյութեր (ջրային միջավայր)», երբ դրանք 2.2.9.1.10.3.1 աղյուսակի համաձայն բավարարում են սուր թունավորության 1-ին, քրոնիկ թունավորության 1-ին եւ 2-րդ կատեգորիաների չափորոշիչները: Այդ չափորոշիչներով մանրամասն նկարագրվում են դասակարգման կատեգորիաները: Դրանց գծագիրը ամփոփ ներկայացված է 2.2.9.1.10.3.2 աղյուսակում:

Աղյուսակ 2.2.9.1.10.3.1 Ջրային միջավայրի համար վտանգավոր նյութերի կատեգորիաներ (տե՛ս 1-ին ծանոթագրությունը)

- ա) Ջրային միջավայրի համար սուր (կարճաժամկետ) վտանգավորություն

Սուր թունավորության կատեգորիա 1 (տե՛ս 2-րդ ծանոթագրությունը)	
96 ժամ LC50 (ծկան դեպքում)	< 1 մգ/լ եւ (կամ)
48 ժամ EC50 (խեցգետնակերպի դեպքում)	< 1 մգ/լ եւ (կամ)
72 կամ 96 ժամ ErC50 (ջրիմուռների եւ այլ ջրային բույսերի դեպքում)	< 1 մգ/լ (տե՛ս 3-րդ ծանոթագրությունը)

- բ) Ջրային միջավայրի համար երկարաժամկետ վտանգավորություն (տե՛ս նաեւ գծագիր 2.2.9.1.10.3.1-ը)

- i) Ոչ արագ քայքայվող նյութեր (տե՛ս 4-րդ ծանոթագրությունը), որոնց քրոնիկ թունավորության

<sup>12</sup> Տե՛ս ՀՆՀ-ի 9-րդ հավելվածի 4.1 գլխի A9.4.2.2.3 պարբերությունը:

մասին բավարար տվյալներ են առկա

Քրոնիկ թունավորության կատեգորիա 1 (տե՛ս 2-րդ ծանոթագրությունը)	
Քրոնիկ թունավորության NOEC կամ ECx (ձկան դեպքում)	≤ 0,1 մգ/լ եւ (կամ)
Քրոնիկ թունավորության NOEC կամ ECx (խեցգետնակերպի դեպքում)	≤ 0,1 մգ/լ եւ (կամ)
Քրոնիկ թունավորության NOEC կամ ECx (ջրիմուռների եւ այլ ջրային բույսերի դեպքում)	≤ 0,1 մգ/լ
Քրոնիկ թունավորության կատեգորիա 2	
Քրոնիկ թունավորության NOEC կամ ECx (ձկան դեպքում)	≤ 1 մգ/լ եւ (կամ)
Քրոնիկ թունավորության NOEC կամ ECx (խեցգետնակերպի դեպքում)	≤ 1 մգ/լ եւ (կամ)
Քրոնիկ թունավորության NOEC կամ ECx (ջրիմուռների եւ այլ ջրային բույսերի դեպքում)	≤ 1 մգ/լ

ii) Արագ քայքայվող նյութեր, որոնց քրոնիկ թունավորության մասին բավարար տվյալներ են առկա

Քրոնիկ թունավորության կատեգորիա 1 (տե՛ս 2-րդ ծանոթագրությունը)	
Քրոնիկ թունավորության NOEC կամ ECx (ձկան դեպքում)	≤ 0,01 մգ/լ եւ (կամ)
Քրոնիկ թունավորության NOEC կամ ECx (խեցգետնակերպի դեպքում)	≤ 0,01 մգ/լ եւ (կամ)
Քրոնիկ թունավորության NOEC կամ ECx (ջրիմուռների եւ այլ ջրային բույսերի դեպքում)	≤ 0,01 մգ/լ
Քրոնիկ թունավորության կատեգորիա 2	
Քրոնիկ թունավորության NOEC կամ ECx (ձկան դեպքում)	≤ 0,1 մգ/լ եւ (կամ)
Քրոնիկ թունավորության NOEC կամ ECx (խեցգետնակերպի դեպքում)	≤ 0,1 մգ/լ եւ (կամ)
Քրոնիկ թունավորության NOEC կամ ECx (ջրիմուռների եւ այլ ջրային բույսերի դեպքում)	≤ 0,1 մգ/լ

iii) Նյութեր, որոնց քրոնիկ թունավորության մասին բավարար տվյալներ առկա չեն

Քրոնիկ թունավորության կատեգորիա 1 (տե՛ս 2-րդ ծանոթագրությունը)	
96 ժամ LC50 (ձկան դեպքում)	≤ 1 մգ/լ եւ (կամ)
48 ժամ EC50 (խեցգետնակերպի դեպքում)	≤ 1 մգ/լ եւ (կամ)
72 կամ 96 ժամ ErC50 (ջրիմուռների եւ այլ ջրային բույսերի դեպքում)	≤ 1 մգ/լ (տե՛ս 3-րդ ծանոթագրությունը)
Ե՛ւ նյութն արագ քայքայվող չէ, ե՛ւ(կամ) փորձարարական ճանապարհով որոշված BCF-ը ≥ 500-ից (կամ, դրա բացակայության դեպքում՝ Kow-ի լոգարիթմը ≥ 4 ) (տե՛ս 4-րդ եւ 5-րդ ծանոթագրությունները):	

Քրոնիկ թունավորության կատեգորիա 2

96 ժամ LC50 (ծկան դեպքում)	>1 բայց ≤ 10 մգ/լ եւ (կամ)
48 ժամ EC50 (խեցգետնակերպի դեպքում)	>1 բայց ≤ 10 մգ/լ եւ (կամ)
72 կամ 96 ժամ ErC50 (ջրիմուռների եւ այլ ջրային բույսերի դեպքում)	>1 բայց ≤ 10 մգ/լ (տե՛ս 3-րդ ծանոթագրությունը)

Ե՛ւ նյութն արագ քայքայվող չէ, ե՛ւ(կամ) փորձարարական ճանապարհով որոշված BCF-ը  $\geq 500$ -ից (կամ, դրա բացակայության դեպքում՝ Kow-ի լոգարիթմը  $\geq 4$ ) (տե՛ս 4-րդ եւ 5-րդ ծանոթագրությունները):

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1.** Ձկների, խեցգետնակերպների եւ ջրիմուռների օրգանիզմները փորձարկման են ենթարկվում որպես փոխնակներ (սուրոգատներ)՝ ներառելով տրոֆիկական մակարդակները եւ տաքսոնները, ընդ որում, փորձարկման եղանակները բավականին ստանդարտացված են: Այլ օրգանիզմների վերաբերյալ տվյալները նույնպես կարող են հաշվի առնվել, սակայն պայմանով, որ դրանք ներկայացնում են համարժեք տեսակներ եւ փորձարկման ցուցանիշներ:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2.** Սուր թունավորության 1-ին կատեգորիայում (կամ) քրոնիկ թունավորության 1-ին կատեգորիայում նյութերը դասակարգելիս անհրաժեշտ է միեւնույն ժամանակ նշել համապատասխան **F** գործոնը (տե՛ս 2.2.9.1.10.4.6.4)՝ գումարման եղանակը կիրառելու համար:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3.** Այն դեպքում, երբ ջրիմուռների համար թունավորության ErC50-ը (= EC50 (աճի տեմպ)) մյուս ամենազգայուն տեսակների համեմատությամբ 100 անգամից ավելի է նվազում եւ հանգեցնում է միայն այդ ազդեցության վրա հիմնված դասակարգման, ապա պետք է դիտարկել ջրային բույսերի համար այդ թունավորության բնորոշ լինելու հարցը: Այն դեպքում, երբ հնարավոր է ցույց տալ, որ դա այդպես չէ, պետք է որոշելու համար օգտվել մասնագիտական եզրահանգումներից՝ կիրառել դասակարգում, թե ոչ: Դասակարգումը պետք է հիմնված լինի ErC50-ի վրա: Այն դեպքերում, երբ EC50-ի հիմքը սահմանված չէ, կամ արձանագրված չէ ոչ մի ErC50, ապա դասակարգումը հիմնվում է առկա ամենացածր EC50-ի ցուցիչի վրա:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 4.** Արագ քայքայման հատկության բացակայությունը բացատրվում է արագ կենսաքայքայման պոտենցիալի բացակայությամբ կամ արագ քայքայման հատկության բացակայության մասին այլ փաստերով: Այն դեպքում, երբ առկա չեն քայքայման հատկության վերաբերյալ օգտակար, այդ թվում՝ փորձարարական ճանապարհով որոշված կամ հաշվարկված տվյալներ, ապա նյութը պետք է դիտարկվի

որպես արագ քայքայման հատկություն չունեցող նյութ:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 5. Կենսակուրակման պոպուլացիան հիմնվում է փորձարարական եղանակով սրացված BCF-ը > 500 կամ դրա բացակայության դեպքում Kow-ի լոգարիթմը > 4 արժեքի վրա, այն դեպքում, երբ Kow-ի լոգարիթմը նյութի կենսակուրակման պոպուլացիայի պատշաճ նկարագրիչն է: Հաշվարկային արժեքների համեմատ նախապատվությունը տրվում է Kow-ի լոգարիթմի որոշված արժեքին, իսկ Kow-ի լոգարիթմի արժեքների համեմատ նախապատվությունը տրվում է BCF որոշված արժեքներին:

Գծագիր 2.2.9.1.10.3.1 Ջրային միջավայրի համար երկարաժամկետ վտանգավորություն ներկայացնող նյութերի կատեգորիաներ

Առկա՞ են արդյոք բոլոր երեք տրոֆիկական մակարդակների համար քրոնիկ թունավորության բավարար տվյալները: Տե՛ս 2.2.9.1.10.3.1 աղյուսակի 2-րդ ծանոթագրությունը :	Այո	Կախված արագ քայքայման վերաբերյալ տվյալներից՝ նյութերը դասակարգել 2.2.9.1.10.3.1 աղյուսակի (բ)(i)-ում կամ 2.2.9.1.10.3.1 աղյուսակի (բ)(ii)-ում ներկայացված չափորոշիչների համաձայն:
Ոչ		
Առկա՞ են արդյոք մեկ կամ երկու տրոֆիկական մակարդակների համար քրոնիկ թունավորության բավարար տվյալներ:	Այո	Գնահատել երկուսն էլ՝ ա) 2.2.9.1.10.3.1 աղյուսակի (բ)(i)-ում կամ 2.2.9.1.10.3.1 աղյուսակի (բ)(ii)-ում ներկայացված չափորոշիչների համաձայն (կախված արագ քայքայման վերաբերյալ տվյալներից), եւ բ) 2.2.9.1.10.3.1 աղյուսակի (բ)(iii)-ում ներկայացված չափորոշիչների համաձայն (եթե առկա են այլ տրոֆիկական մակարդակ(ներ)ի համար սուր թունավորության բավարար տվյալներ), եւ դասակարգել ամենահամոզիչ արդյունքների համաձայն:
Ոչ		
Առկա՞ են արդյոք սուր թունավորության բավարար տվյալներ:	Այո	Դասակարգել 2.2.9.1.10.3.1 աղյուսակի (բ)(iii)-ում ներկայացված չափորոշիչների համաձայն:

2.2.9.1.10.3.2. Ներքոնշյալ՝ 2.2.9.1.10.3.2 աղյուսակում ներկայացված դասակարգման սխեմայում ամփոփված են նյութերի դասակարգման չափորոշիչները:

Աղյուսակ 2.2.9.1.10.3.2 Ջրային միջավայրի համար վտանգավոր նյութերի դասակարգման սխեմա

Դասակարգման կատեգորիաներ	
Սուր	Երկարաժամկետ վտանգավորություն (տե՛ս 2-րդ ծանոթագրությունը)

վտանգավորություն (տե՛ս 1-ին ծանոթագրությունը)	Քրոնիկ թունավորության վերաբերյալ բավարար տվյալների առկայություն		Քրոնիկ թունավորության վերաբերյալ բավարար տվյալների բացակայություն (տե՛ս 1-ին ծանոթագրությունը)
	Արագ ջրաքայվող նյութեր (տե՛ս 3-րդ ծանոթագրությունը)	Արագ քայքայվող նյութեր (տե՛ս 3-րդ ծանոթագրությունը)	
Կատեգորիա՝ Սուր թունավորություն 1	Կատեգորիա՝ Քրոնիկ թունավորություն 1	Կատեգորիա՝ Քրոնիկ թունավորություն 1	Կատեգորիա՝ Քրոնիկ թունավորություն 1
L(E)C50 < 1,00	NOEC կամ ECx < 0,1	NOEC կամ ECx < 0,01	L(E)C50 < 1,00 եւ արագ քայքայման հատկության բացակայություն, եւ (կամ) BCF-ն > 500, կամ դրա բացակայության դեպքում Kow-ի լոգարիթմը > 4
	Կատեգորիա՝ Քրոնիկ թունավորություն 2	Կատեգորիա՝ Քրոնիկ թունավորություն 2	Կատեգորիա՝ Քրոնիկ թունավորություն 2
	0,1 < NOEC կամ ECx < 1	0,01 < NOEC կամ ECx < 0,1	1,00 < L(E)C50 < 10,0 եւ արագ քայքայման հատկության բացակայություն, եւ (կամ) BCF-ն > 500, կամ դրա բացակայության դեպքում Kow-ի լոգարիթմը > 4

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1.** Ձկների, խեցգետնակերպների եւ (կամ) ջրիմուռների կամ այլ ջրային բույսերի համար մգ/լ-ով արտահայտված L(E)C50 արժեքների վրա հիմնված սուր թունավորության ընդգրկում (կամ «կառուցվածք-ակտիվություն» քանակական հարաբերության գնահատում՝ փորձարարական տվյալների բացակայության դեպքում<sup>13</sup>):

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2.** Ջրում լուծելիության մակարդակից բարձր կամ 1 մգ/լ-ից բարձր կոնցենտրացիայով նյութերը դասակարգվում են քրոնիկ թունավորության տարբեր կատեգորիաներում, եթե առկա չեն բոլոր երեք տրոֆիկական մակարդակների համար քրոնիկ թունավորության վերաբերյալ բավարար տվյալներ: («բավարար» նշանակում է, որ տվյալները բավարար չափով ընդգրկում են համապատասխան ցուցանիշները: Սովորաբար խոսքը վերաբերում է փորձարկումների արդյունքում ստացված տվյալներին, սակայն անհարկի փորձարկումների անցկացումից խուսափելու համար տվյալները կարող են հաշվարկվել ըստ կոնկրետ դեպքերի, օրինակ՝ «կառուցվածք-ակտիվություն» քանակական հարաբերության կամ ակնհայտ դեպքերում փորձագիտական եզրահանգումների համաձայն):

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3.** Ձկների կամ խեցգետնակերպների համար

<sup>13</sup> Հարուկ ցուցումները ներկայացված են ՀՆՀ-ի A9.6 բաժնի 9-րդ հավելվածի 4.1 գլխի 4.1.2.13 պարբերության մեջ:

*մգ/լ-ով արտահայտված NOEC արժեքների կամ ECx էկվիվալենտային արժեքների վրա կամ քրոնիկ թունավորության այլ ընդունված ցուցիչների վրա հիմնված քրոնիկ թունավորության ընդգրկում:*

2.2.9.1.10.4. Խառնուրդների դասակարգման կատեգորիաներ եւ չափորոշիչներ

2.2.9.1.10.4.1. Խառնուրդների դասակարգման համակարգը ներառում է դասակարգման այն կատեգորիաները, որոնք օգտագործվում են նյութերի համար, այն է՝ սուր թունավորության 1-ին եւ քրոնիկ թունավորության 1-ին ու 2-րդ կատեգորիաներ: Խառնուրդն ըստ ջրային միջավայրի համար ներկայացրած վտանգավորության դասակարգելու նպատակով առկա բոլոր տվյալներն օգտագործելու համար կատարվել է հետեւյալ ենթադրությունը, որը կիրառվում է անհրաժեշտության դեպքում՝

Խառնուրդի «համապատասխան բաղադրիչներ» համարվում են սուր թունավորության եւ (կամ) քրոնիկ թունավորության 1-ին կատեգորիայում դասակարգված այն բաղադրիչները, որոնք առկա են 0,1%-ին հավասար կամ այն գերազանցող կոնցենտրացիայով (ըստ զանգվածի), իսկ այլ բաղադրիչների դեպքում՝ 1%-ին հավասար կամ այն գերազանցող կոնցենտրացիայով՝ բացառությամբ երբ ենթադրվում է (ինչպես օրինակ՝ չափազանց թունավոր բաղադրիչների դեպքում), որ 0,1%-ից ցածր կոնցենտրացիայով առկա բաղադրիչը կարող է էական դեր ունենալ խառնուրդն ըստ ջրային միջավայրի համար ներկայացրած վտանգավորության դասակարգելու գործում:

2.2.9.1.10.4.2. Ջրային միջավայրի համար ներկայացրած վտանգավորության դասակարգման մոտեցումը փուլային է եւ կախված է այդ խառնուրդի ու դրա բաղադրիչների մասին առկա տեղեկությունների տեսակից: Փուլային մոտեցման տարրերն են՝

ա) փորձարկում անցած խառնուրդների հիման վրա դասակարգում.

բ) համեմատության սկզբունքների հիման վրա դասակարգում.

գ) «դասակարգված բաղադրիչների գումարման մեթոդի» եւ (կամ) «ադիտիվության բանաձեւի» կիրառում:

Ստորեւ ներկայացված 2.2.9.1.10.4.2 գծագիրն ուրվագծում է այն պրոցեսը, որին պետք է հետեւել:

Գծագիր 2.2.9.1.10.4.2 Խառնուրդներն ըստ ջրային միջավայրի համար ներկայացրած սուր եւ երկարաժամկետ վտանգավորության դասակարգելու փուլային մոտեցում

Խառնուրդի՝ որպես մեկ ամբողջության, ջրային միջավայրում թունավորության փորձարկման



վերաբերյալ առկա տվյալներ			
Ոչ		Այո	
Վտանգավորության հաշվարկման համար առկա են նմանատիպ խառնուրդների մասին բավարար տվյալներ	Այո	Կիրառել համեմատության սկզբունքները (2.2.9.1.10.4.4)	ԴԱՍԱԿԱՐԳԵԼ ըստ սուր/երկարաժամկետ վտանգավորության (2.2.9.1.10.4.3)
Ոչ		Կիրառել գումարման մեթոդը (2.2.9.1.10.4.6.1 - 2.2.9.1.10.4.6.4)՝ օգտագործելով	ԴԱՍԱԿԱՐԳԵԼ ըստ սուր/երկարաժամկետ վտանգավորության
Առկա են ջրային միջավայրում թունավորության կամ դասակարգման վերաբերյալ տվյալներ բոլոր համապատասխան բաղադրիչների համար	Այո	ա) «քրոնիկ» դասակարգված բոլոր բաղադրիչների տոկոսը. բ) «սուր» դասակարգված բոլոր բաղադրիչների տոկոսը. գ) սուր թունավորության մասին տվյալներ ունեցող բաղադրիչների տոկոսը. կիրառել ադիտիվության բանաձևեր (2.2.9.1.10.4.5.2) եւ ստացված L(E)C50 կամ EqNOECm արժեքները փոխարկել համապատասխան «սուր» կամ «քրոնիկ» կատեգորիաների	ԴԱՍԱԿԱՐԳԵԼ ըստ սուր/երկարաժամկետ վտանգավորության
Ոչ		Կիրառել գումարման մեթոդը եւ ադիտիվության բանաձևեր (2.2.9.1.10.4.6.1- 2.2.9.1.10.4.6.4) եւ կիրառել 2.2.9.1.10.4.6.5-ը	ԴԱՍԱԿԱՐԳԵԼ ըստ սուր/երկարաժամկետ վտանգավորության
Օգտագործել վտանգավորության վերաբերյալ առկա տվյալները հայտնի բաղադրիչների մասին			

2.2.9.1.10.4.3. Խառնուրդների դասակարգումն այն դեպքում, երբ առկա են ամբողջ խառնուրդի թունավորության վերաբերյալ տվյալներ

2.2.9.1.10.4.3.1. Այն դեպքում, երբ խառնուրդը ենթարկվել է փորձարկման՝ որոշելու համար դրա թունավորությունը ջրային միջավայրում, այդ տեղեկությունները պետք է օգտագործվեն՝ խառնուրդը նյութերի համար համաձայնեցված չափորոշիչների համաձայն դասակարգելու նպատակով: Դասակարգումը սովորաբար հիմնվում է ձկների, խեցգետնակերպների եւ ջրիմուռների/բույսերի մասին տվյալների վրա (տե՛ս 2.2.9.1.10.2.3 եւ 2.2.9.1.10.2.4): Այն դեպքում, երբ բացակայում են խառնուրդի սուր կամ քրոնիկ թունավորության վերաբերյալ բավարար տվյալներ, պետք է կիրառվեն «համեմատության սկզբունքները» կամ «գումարման

մեթոդը» (տե՛ս 2.2.9.1.10.4.4 - 2.2.9.1.10.4.6):

2.2.9.1.10.4.3.2. Խառնուրդները երկարաժամկետ վտանգավորության կատեգորիային դասելու համար պահանջվում են դրա քայքայման, կամ որոշ դեպքերում կենսակուտակման հատկության մասին լրացուցիչ տեղեկություններ: Խառնուրդի՝ որպես մեկ ամբողջություն, քայքայման եւ կենսակուտակման հատկության վերաբերյալ տվյալներ գոյություն չունեն: Խառնուրդների դեպքում քայքայման եւ կենսակուտակման հատկության փորձարկումներ չեն կիրառվում, քանի որ դրանք սովորաբար դժվար է մեկնաբանել, եւ այդօրինակ փորձարկումները կարող են իմաստ ունենալ միայն առանձին նյութերի դեպքում:

2.2.9.1.10.4.3.3. Սուր թունավորության 1 կատեգորիայի դասակարգելը

ա) Այն դեպքում, երբ խառնուրդի համար, որպես մեկ ամբողջություն, առկա են սուր թունավորության փորձարկման վերաբերյալ բավարար տվյալներ (LC50 կամ EC50)՝  $L(E)C50 < 1$  մգ/լ ցուցանիշով՝

ապա խառնուրդը, 2.2.9.1.10.3.1 աղյուսակի (ա)-ի համաձայն, պետք է դասել սուր թունավորության 1-ին կատեգորիային.

բ) այն դեպքում, երբ խառնուրդի համար, որպես մեկ ամբողջություն, առկա են սուր թունավորության փորձարկման վերաբերյալ տվյալներ LC50(s) կամ EC50(s)՝ ջրում լուծելիության մակարդակից բարձր կամ  $L(E)C50(s) > 1$  մգ/լ ցուցանիշով՝

ապա այն «ԱԴԴ» համաձայնագրի սուր վտանգավորության կատեգորիային դասելու անհրաժեշտություն չկա:

2.2.9.1.10.4.3.4. Քրոնիկ թունավորության 1-ին եւ 2-րդ կատեգորիաների դասակարգելը

ա) Այն դեպքում, երբ խառնուրդի համար, որպես մեկ ամբողջություն, առկա են քրոնիկ թունավորության վերաբերյալ բավարար տվյալներ (ECx կամ NOEC), որոնց համաձայն փորձարկման ենթարկված խառնուրդն ունի ECx-ը կամ NOEC-ը  $< 1$  մգ/լ ցուցանիշ՝

i) ապա խառնուրդը, 2.2.9.1.10.3.1 աղյուսակի (բ) (ii)-ի համաձայն, պետք է դասել քրոնիկ թունավորության 1-ին կամ 2-րդ կատեգորիաներին (արագ քայքայվող), եթե առկա տեղեկությունների համաձայն կարելի է եզրակացնել, որ խառնուրդի բոլոր համապատասխան

բաղադրիչներն արագ քայքայվող են.

ii) մյուս բոլոր դեպքերում խառնուրդը, 2.2.9.1.10.3.1 աղյուսակի (բ) (i)-ի համաձայն, պետք է դասել քրոնիկ թունավորության 1-ին կամ 2 -րդ կատեգորիաներին (արագ չքայքայվող).

բ) այն դեպքում, երբ խառնուրդի համար, որպես մեկ ամբողջություն, առկա են քրոնիկ թունավորության վերաբերյալ բավարար տվյալներ (ECx կամ NOEC), որոնց համաձայն փորձարկման ենթարկված խառնուրդը ջրում լուծելիության մակարդակից բարձր է ECx(s)-ը կամ NOEC(s)-ը  $> 1$  մգ/լ ցուցանիշ ունի՝

ապա այն «ԱԴԲ» համաձայնագրի երկարաժամկետ վտանգավորության կատեգորիային դասակարգելու անհրաժեշտություն չկա:

2.2.9.1.10.4.4. Խառնուրդների դասակարգումը, եթե հայտնի չեն թունավորության վերաբերյալ տվյալներ ամբողջ խառնուրդի մասին. համեմատության սկզբունքներ

2.2.9.1.10.4.4.1. Եթե խառնուրդը, որպես մեկ ամբողջություն, փորձարկում չի անցել ջրային միջավայրի համար ներկայացրած վտանգավորության որոշման համար, սակայն բավարար տվյալներ կան դրա առանձին բաղադրիչների եւ փորձարկում անցած նմանատիպ խառնուրդների մասին, որոնք կարող են բավարար չափով բնութագրել այդ խառնուրդի վտանգավորությունը, ապա այդ տվյալներն օգտագործվում են համեմատության հետեւյալ համաձայնեցված կանոնների համաձայն: Դրանով ապահովվում է դասակարգման ընթացքում խառնուրդի վտանգավորության բնորոշման ժամանակ առկա տվյալների հնարավորինս կիրառումը՝ բացառելով կենդանիներին լրացուցիչ փորձարկման ենթարկելու անհրաժեշտությունը:

2.2.9.1.10.4.4.2. Նոսրացում

Այն դեպքում, երբ փորձարկման ենթարկված խառնուրդը կամ նյութը նոսրացուցիչով նոսրացնելիս նոր խառնուրդ է առաջանում, որը սկզբնական ամենաքիչ թունավոր բաղադրիչի համեմատությամբ, ըստ ջրային միջավայրի համար ներկայացրած վտանգավորության, դասվում է դրան համարժեք կամ ավելի թեթեւ վտանգավորության կատեգորիային, եւ չի ակնկալվում, որ այն ազդեցություն կունենա մյուս բաղադրիչների՝ ջրում ունեցած վտանգավորության վրա, ապա արդյունքում ստացված խառնուրդը պետք է դասել փորձարկման ենթարկված սկզբնական

խառնուրդի կամ նյութի համարժեք կատեգորիային: Որպես այլընտրանքային տարբերակ կարող է կիրառվել 2.2.9.1.10.4.5-ում պարզաբանված մեթոդը:

#### 2.2.9.1.10.4.4.3. Խմբավորում

Խառնուրդի արտադրական մեկ խմբաքանակի ջրային միջավայրի համար ներկայացրած վտանգավորության դասակարգումը կարող է համարվել էապես համարժեք միեւնույն առետրային ապրանքի մեկ այլ արտադրական խմբաքանակի վտանգավորության դասակարգմանը, որն արտադրվել է միեւնույն արտադրողի կողմից կամ նրա հսկողության ներքո, բացառությամբ եթե հիմք կա կարծելու, որ էական տարբերություն գոյություն ունի, որի հետեւանքով փոխվել է փորձարկում չանցած խմբաքանակի՝ ջրային միջավայրի համար ներկայացրած վտանգավորության դասակարգումը: Նման բան տեղի ունենալու դեպքում անհրաժեշտ է իրականացնել նոր դասակարգում:

#### 2.2.9.1.10.4.4.4. Ամենաթունավոր կատեգորիաներին (քրոնիկ թունավորության 1-ին եւ սուր թունավորության 1-ին կատեգորիա) դասված խառնուրդների կոնցենտրացիան

Այն դեպքում, երբ փորձարկում անցած խառնուրդը դասվում է քրոնիկ թունավորության 1-ին եւ (կամ) սուր թունավորության 1-ին կատեգորիաներին, եւ դրա՝ միեւնույն կատեգորիաներին դասված բաղադրիչների կոնցենտրացիան շարունակում է ավելանալ, ապա փորձարկում չանցած ու ամենաբարձր կոնցենտրացիա ունեցող խառնուրդը պետք է դասվի փորձարկում անցած սկզբնական խառնուրդի միեւնույն կատեգորիային՝ առանց լրացուցիչ փորձարկման:

#### 2.2.9.1.10.4.4.5. Միջարկում (ինտերպոլացիա)՝ թունավորության մեկ կատեգորիայում

Միատեսակ բաղադրիչներից բաղկացած երեք խառնուրդների դեպքում (A, B եւ C), երբ փորձարկում անցած A եւ B խառնուրդները գտնվում են թունավորության միեւնույն կատեգորիայում, եւ երբ փորձարկում չանցած C խառնուրդը բաղկացած է տոքսիկոլոգիապես միեւնույն ակտիվ բաղադրիչներից, որպիսիք ունեն A եւ B խառնուրդները, սակայն որոնք ունեն A եւ B խառնուրդների կոնցենտրացիաների միջին արժեքը, ապա C խառնուրդը պետք է դասվի A եւ B խառնուրդների կատեգորիային:

2.2.9.1.10.4.4.6. Էապես նման խառնուրդներ

Դիտարկենք հետևյալը՝

ա) երկու խառնուրդներ՝

i)  $A + B$

ii)  $C + B$

բ) B բաղադրիչի կոնցենտրացիան էապես նույնն է երկու խառնուրդում.

գ) A բաղադրիչի կոնցենտրացիան (i) խառնուրդում հավասար է (ii) խառնուրդի C բաղադրիչին.

դ) առկա են A եւ C բաղադրիչների՝ ջրային միջավայրի համար ներկայացրած վտանգավորության մասին տվյալները, եւ դրանք էապես համարժեք են, այսինքն՝ դրանք պատկանում են վտանգավորության միեւնույն կատեգորիային եւ հավանական չէ, որ կազդեն B բաղադրիչի՝ ջրում ունեցած թունավորության վրա:

Երբ (i) կամ (ii) խառնուրդն արդեն դասակարգված է փորձարկման տվյալների համաձայն, ապա մյուս խառնուրդը կարելի է դասել վտանգավորության միեւնույն կատեգորիային:

2.2.9.1.10.4.5. Խառնուրդների դասակարգումը, եթե առկա են խառնուրդի բոլոր բաղադրիչների կամ միայն որոշ բաղադրիչների թունավորության վերաբերյալ տվյալներ

2.2.9.1.10.4.5.1. Խառնուրդի դասակարգումը կատարվում է դրա դասակարգված բաղադրիչների կոնցենտրացիաների գումարման եղանակով: «Սուր» կամ «քրոնիկ» թունավորության կատեգորիաներում դասակարգված բաղադրիչների տոկոսային հարաբերության նկատմամբ անմիջականորեն կիրառվում է գումարման մեթոդը: Գումարման մեթոդի մանրամասները նկարագրված են 2.2.9.1.10.4.6.1 - 2.2.9.1.10.4.6.4-ում:

2.2.9.1.10.4.5.2. Խառնուրդները կարող են բաղկացած լինել ինչպես դասակարգված բաղադրիչներից (սուր թունավորության 1-ին եւ (կամ) քրոնիկ թունավորության 1-ին, 2-րդ կատեգորիաներ), այնպես էլ այն բաղադրիչներից, որոնց մասին թունավորության փորձարկման վերաբերյալ բավարար տվյալներ են առկա: Այն դեպքում, երբ առկա են խառնուրդի մեկից ավելի բաղադրիչների թունավորության փորձարկման վերաբերյալ բավարար տվյալներ, ապա այդ բաղադրիչների ընդհանուր

թունավորությունը հաշվարկվում է օգտագործելով հետևյալ (ա) եւ (բ) ադիտիվության բանաձեւերը՝ կախված թունավորության վերաբերյալ տվյալների բնույթից՝

ա) ջրային միջավայրի համար սուր թունավորության հիման վրա՝

$$\frac{\sum C_i}{L(E)C_{50m}} = \sum_n \frac{C_i}{L(E)C_{50i}}$$

որտեղ՝

$C_i$  =  $i$  բաղադրիչի կոնցենտրացիան (տոկոսն ըստ զանգվածի).

$L(E)C_{50i}$  =  $i$  բաղադրիչի LC50 կամ EC50 (արտահայտված մգ/լ-ով).

$n$  = բաղադրիչների թիվը, որտեղ  $i$ -ն 1-ից  $n$ -ն է.

$L(E)C_{50m}$  =  $L(E)C_{50}$ ՝ խառնուրդի այն մասի համար, որի մասին փորձարկման տվյալներ են առկա.

հաշվարկված թունավորությունն օգտագործվում է խառնուրդի այն չափաբաժինը սուր վտանգավորության կատեգորիային դասելու համար, որն այնուհետեւ օգտագործվում է գումարման մեթոդի կիրառման դեպքում.

բ) ջրային միջավայրի համար քրոնիկ թունավորության հիման վրա՝

$$\frac{\sum C_i + \sum C_j}{EqNOEC_m} = \sum_n \frac{C_i}{NOEC_i} + \sum_n \frac{C_j}{0.1 \cdot NOEC_j}$$

որտեղ՝

$C_i$  =  $i$  բաղադրիչի կոնցենտրացիան (տոկոսն ըստ զանգվածի, ներառյալ արագ քայքայվող բաղադրիչները).

$C_j$  =  $j$  բաղադրիչի կոնցենտրացիան (տոկոսն ըստ զանգվածի), ներառյալ արագ չքայքայվող բաղադրիչները.

$NOEC_i$  =  $i$  բաղադրիչի NOEC (կամ քրոնիկ թունավորության այլ ընդունված ցուցիչներ), ներառյալ մգ/լ-ով արտահայտված արագ քայքայվող բաղադրիչները.

$NOEC_j$  =  $j$  բաղադրիչի NOEC (կամ քրոնիկ թունավորության այլ

ընդունված ցուցիչներ), ներառյալ մգ/լ-ով արտահայտված արագ չքայքայվող բաղադրիչները.

$n$  = բաղադրիչների թիվը, որտեղ  $i$  -ը եւ  $j$ -ը 1-ից  $n$ -ն են.

$E_{qNOECm}$  = խառնուրդի այն մասի NOEC-ի էկվիվալենտ, որի մասին փորձարկման տվյալներ են առկա.

էկվիվալենտ թունավորությունը, այդպիսով, արտացոլում է այն փաստը, որ արագ չքայքայվող նյութերը դասվում են արագ քայքայվող նյութերի վտանգավորության կատեգորիայից մեկ մակարդակ վերել՝ ավելի «խիստ» վտանգավորության կատեգորիային:

Հաշվարկված էկվիվալենտ թունավորությունն օգտագործվում է արագ քայքայվող նյութերի համար նախատեսված չափորոշիչների համաձայն (2.2.9.1.10.3.1 աղյուսակի (բ) (ii) բաժին) խառնուրդի այն չափաբաժինը երկարաժամկետ վտանգավորության կատեգորիային դասելու համար, որն այնուհետեւ օգտագործվում է գումարման մեթոդի կիրառման դեպքում:

2.2.9.1.10.4.5.3. Երբ ադիտիվության բանաձեւը կիրառվում է խառնուրդի մի մասի նկատմամբ, նախընտրելի է խառնուրդի այդ մասի թունավորությունը հաշվարկել՝ յուրաքանչյուր բաղադրիչի համար օգտագործելով թունավորության այն արժեքները, որոնք վերաբերում են միեւնույն տաքսոնոմիկ խմբին (դրանք են՝ ձկներ, խեցգետնակերպներ կամ ջրիմուռներ), եւ այնուհետեւ օգտագործել ստացված ամենաբարձր թունավորությունը (ամենացածր արժեքը) (այսինքն՝ օգտագործել երեք խմբերից ամենազգայունը): Այնուամենայնիվ, այն դեպքում, երբ յուրաքանչյուր բաղադրիչի համար միեւնույն տաքսոնոմիկ խմբում թունավորության մասին տվյալներ առկա չեն, ապա յուրաքանչյուր բաղադրիչի թունավորության արժեքն ընտրվում է միեւնույն եղանակով, ինչպես ընտրվել են թունավորության արժեքները նյութերի դասակարգման համար, այսինքն՝ օգտագործվում է ամենաբարձր թունավորությունը (ամենազգայուն փորձարկված օրգանիզմից): Հաշվարկված սուր եւ քրոնիկ թունավորությունն այնուհետեւ օգտագործվում է խառնուրդի այդ մասը սուր թունավորության 1-ին եւ (կամ) քրոնիկ թունավորության 1-ին կամ 2-րդ կատեգորիաներին դասելու համար՝ օգտվելով նյութերի համար ներկայացված չափորոշիչներից:

2.2.9.1.10.4.5.4. Եթե խառնուրդը դասակարգված է մեկից ավելի եղանակներով, ապա պետք է օգտագործվի այն մեթոդը, որով ստացվում է առավել ցածր արդյունք:

2.2.9.1.10.4.6. Գումարման մեթոդ

2.2.9.1.10.4.6.1. Դասակարգման գործընթաց

Սովորաբար խառնուրդների ավելի խիստ դասակարգումը գերակայում է ավելի նվազ խիստ դասակարգման նկատմամբ, օրինակ՝ քրոնիկ թունավորության 1-ին դասակարգումը գերակայում է քրոնիկ թունավորության 2-րդի նկատմամբ: Հետեւաբար դասակարգման գործընթացն ավարտվում է, երբ այն հանգեցնում է քրոնիկ թունավորության 1-ին կատեգորիային: Քրոնիկ թունավորության կատեգորիայից ավելի խիստ դասակարգում գոյություն չունի, ուստի անհրաժեշտություն չկա այլեւ շարունակել դասակարգման գործընթացը:

2.2.9.1.10.4.6.2. Սուր թունավորության 1-ին կատեգորիայի դասակարգելը

2.2.9.1.10.4.6.2.1. Սկզբում քննվում են սուր թունավորության 1-ին կատեգորիային դասված բոլոր բաղադրիչները: Երբ այդ բաղադրիչների կոնցենտրացիաների գումարը (տոկոսով արտահայտված) մեծ է կամ հավասար 25%-ի, ապա ամբողջ խառնուրդը դասվում է սուր թունավորության 1-ին կատեգորիային: Երբ հաշվարկների արդյունքում խառնուրդը դասվում է սուր թունավորության 1-ին կատեգորիային, ապա դասակարգման գործընթացը դրանով ավարտվում է:

2.2.9.1.10.4.6.2.2. Սուր վտանգավորության կատեգորիաներում խառնուրդների դասակարգումը, որը հիմնված է դասակարգված բաղադրիչների կոնցենտրացիաների գումարման վրա, ամփոփված է ստորեւ ներկայացված 2.2.9.1.10.4.6.2.2 աղյուսակում:

Աղյուսակ 2.2.9.1.10.4.6.2.2 Խառնուրդի դասակարգումը սուր վտանգավորության կատեգորիաներում՝ դասակարգված բաղադրիչների կոնցենտրացիաների գումարման հիման վրա

Բաղադրիչների կոնցենտրացիաների գումարը (տոկոսով արտահայտված), որոնք դասակարգված են որպես՝	Խառնուրդ, որը դասակարգված է որպես՝
Սուր թունավորության $1 \times M^w > 25\%$	Սուր թունավորության 1-ին

2.2.9.1.10.4.6.3. Քրոնիկ թունավորության 1-ին եւ 2 -րդ կատեգորիաներին դասելը

2.2.9.1.10.4.6.3.1. Սկզբում քննվում են քրոնիկ թունավորության 1-ին կատեգորիային դասված բոլոր բաղադրիչները: Երբ այդ

<sup>w</sup> M գործակցի վերաբերյալ պարզաբանումները տես՝ 2.2.9.1.10.4.6.4-ում:



բաղադրիչների կոնցենտրացիաների գումարը (տոկոսով արտահայտված) մեծ է կամ հավասար 25 %-ի, ապա խառնուրդը դասվում է քրոնիկ թունավորության 1-ին կատեգորիային: Երբ հաշվարկների արդյունքում խառնուրդը դասվում է քրոնիկ թունավորության 1-ին կատեգորիային, ապա դասակարգման գործընթացը դրանով ավարտվում է:

2.2.9.1.10.4.6.3.2. Եթե խառնուրդը չի դասվում քրոնիկ թունավորության 1-ին կատեգորիային, ապա քննվում է խառնուրդի քրոնիկ թունավորության 2-րդ կատեգորիային դասելու հարցը: Խառնուրդը դասվում է քրոնիկ թունավորության 2-րդ կատեգորիային, երբ քրոնիկ թունավորության 2-րդ կատեգորիային դասված բոլոր բաղադրիչների կոնցենտրացիաների գումարը քրոնիկ թունավորության 1-ին կատեգորիային դասված բոլոր բաղադրիչների կոնցենտրացիաների գումարի տասնապատիկի գումարից (տոկոսով արտահայտված) մեծ է կամ հավասար 25%-ի: Եթե հաշվարկման արդյունքում խառնուրդը դասվում է քրոնիկ թունավորության 2-րդ կատեգորիային, ապա դասակարգման պրոցեսը համարվում է ավարտված:

2.2.9.1.10.4.6.3.3. Երկարաժամկետ վտանգավորության կատեգորիաներում խառնուրդների դասակարգումը, որը հիմնված է դասակարգված բաղադրիչների կոնցենտրացիաների գումարման վրա, ամփոփված է ստորեւ ներկայացված 2.2.9.1.10.4.6.3.3 աղյուսակում:

Աղյուսակ 2.2.9.1.10.4.6.3.3 Խառնուրդի դասակարգումը երկարաժամկետ վտանգավորության կատեգորիաներում՝ դասակարգված բաղադրիչների կոնցենտրացիաների գումարման հիման վրա

Բաղադրիչների կոնցենտրացիաների գումարը (տոկոսով արտահայտված), որոնք դասակարգված են որպես՝	Խառնուրդ, որը դասակարգված է որպես՝
քրոնիկ թունավորության 1-ին $\times M^w > 25\%$	քրոնիկ թունավորության 1-ին
$(M \times 10 \times$ քրոնիկ թունավորության 1-ին) + քրոնիկ թունավորության 2-րդ $> 25\%$	քրոնիկ թունավորության 2-րդ

2.2.9.1.10.4.6.4. Չափազանց թունավոր բաղադրիչներ ունեցող խառնուրդներ  
Սուր թունավորության 1-ին եւ քրոնիկ թունավորության 1-ին

<sup>w</sup> M գործակցի վերաբերյալ պարզաբանումները տես՝ 2.2.9.1.10.4.6.4-ում:

կատեգորիաներին դասված բաղադրիչները, որոնք ունեն սուր թունավորության 1 մգ/լ-ից եւ (կամ) քրոնիկ թունավորության 0,1 մգ/լ-ից (արագ չքայքայվող լինելու դեպքում) եւ 0,01 մգ/լ-ից (արագ քայքայվող լինելու դեպքում) շատ ավելի ցածր արժեք, կարող են իրենց ազդեցությունն ունենալ խառնուրդի թունավորության վրա ուստի դրանց մեծ նշանակություն է տրվում գումարման մեթոդի կիրառման ժամանակ: Երբ խառնուրդը պարունակում է սուր կամ քրոնիկ թունավորության 1-ին կատեգորիաներին դասված բաղադրիչներ, կիրառվում է 2.2.9.1.10.4.6.2-ում եւ 2.2.9.1.10.4.6.3-ում ներկայացված փուլային մոտեցումը, որի ժամանակ կշռյալ գումարն ստացվում է սուր կամ քրոնիկ թունավորության 1-ին կատեգորիաներին դասված բաղադրիչների կոնցենտրացիաների արժեքը բազմապատկելով որեւէ գործակցով՝ տոկոսային արժեքները պարզապես գումարելու փոխարեն: Սա նշանակում է, որ 2.2.9.1.10.4.6.2.2 աղյուսակի ձախ սյունակի «սուր թունավորության 1-ին կատեգորիայի» կոնցենտրացիան եւ 2.2.9.1.10.4.6.3.3 աղյուսակի ձախ սյունակի «քրոնիկ թունավորության 1-ին կատեգորիայի» կոնցենտրացիան բազմապատկվում են համապատասխան բազմապատկչով: Այդ բաղադրիչների դեպքում կիրառվող բազմապատկիչները որոշվում են, օգտագործելով թունավորության արժեքները, ինչպես ամփոփ ներկայացված է ստորեւ բերված 2.2.9.1.10.4.6.4 աղյուսակում: Հետեւաբար սուր եւ (կամ) քրոնիկ թունավորության 1-ին կատեգորիաներին դասված բաղադրիչներ պարունակող խառնուրդը դասակարգելու համար դասակարգողին անհրաժեշտ է ներկայացնել M գործակցի արժեքը, որպեսզի վերջինս կիրառի գումարման մեթոդը: Որպես այլընտրանքային տարբերակ՝ ադիտիվության բանաձեւը (տե՛ս 2.2.9.1.10.4.5.2) կարող է օգտագործվել, երբ առկա են խառնուրդի բոլոր չափազանց թունավոր բաղադրիչների թունավորության վերաբերյալ տվյալները, եւ երբ գոյություն ունի համոզիչ փաստարկ, համաձայն որի, մյուս բոլոր բաղադրիչները՝ ներառյալ այնպիսիք, որոնց մասին առկա չեն սուր եւ (կամ) քրոնիկ թունավորության վերաբերյալ հատուկ տվյալներ, ունեն ցածր թունավորություն կամ ընդհանրապես թունավորություն չունեն եւ էապես չեն ազդում խառնուրդի շրջակա միջավայրի համար ներկայացրած վտանգավորության վրա:

Աղյուսակ 2.2.9.1.10.4.6.4 Խառնուրդի չափազանց թունավոր բաղադրիչների բազմապատկման գործակիցները

Սուր թունավորություն	M գործակից	Քրոնիկ թունավորություն	M գործակից	
			NRD <sup>ա</sup> բաղադրիչներ	RD <sup>բ</sup> բաղադրիչներ
L(E)C50՝ արժեք		NOEC արժեք		
0,1 < L(E)C50 < 1	1	0,01 < NOEC < 0,1	1	-
0,01 < L(E)C50 < 0,1	10	0,001 < NOEC < 0,01	10	1
0,001 < L(E)C50 < 0,01	100	0,0001 < NOEC < 0,001	100	10
0,0001 < L(E)C50 < 0,001	1 000	0,00001 < NOEC < 0,0001	1 000	100
0,00001 < L(E)C50 < 0,0001	10 000	0,000001 < NOEC < 0,00001	10 000	1 000
(շարունակել 10 գործակցի միջակայքով)		(շարունակել 10 գործակցի միջակայքով)		

2.2.9.1.10.4.6.5. Այն խառնուրդների դասակարգումը, որոնց բաղադրիչների մասին օգտակար տեղեկություններ չկան

Այն դեպքում, երբ մեկ կամ մի քանի համապատասխան բաղադրիչների մասին առկա չեն ջրային միջավայրի համար սուր եւ (կամ) քրոնիկ թունավորության վերաբերյալ օգտակար տեղեկություններ, պետք է եզրակացնել, որ խառնուրդը չի կարող դասակարգվել սահմանված վտանգավորության կատեգորիայում (կատեգորիաներում): Նման իրավիճակում խառնուրդը դասակարգվում է միայն հայտնի բաղադրիչների հիման վրա՝ հետեւյալ լրացուցիչ գրությամբ՝ «խառնուրդի x տոկոսը բաղկացած է ջրային միջավայրի համար անհայտ թունավորության բաղադրիչից (բաղադրիչներից)»:

2.2.9.1.10.5. Նյութեր կամ խառնուրդներ, որոնք 1272/2008/ԵՀ կանոնակարգի<sup>3</sup> համաձայն դասակարգված են որպես շրջակա միջավայրի համար վտանգավոր նյութեր (ջրային միջավայր):

Երբ առկա չեն 2.2.9.1.10.3-ի եւ 2.2.9.1.10.4-ի չափորոշիչների համաձայն դասակարգման համար տվյալները, ապա նյութը կամ խառնուրդը՝

ա) պետք է դասակարգվի որպես շրջակա միջավայրի համար վտանգավոր նյութ (ջրային միջավայր), երբ դրան, 1272/2008/ԵՀ կանոնակարգի<sup>3</sup> համաձայն, պետք է

<sup>ա</sup> Արագ չբայթայվող

<sup>բ</sup> Արագ քայթայվող

<sup>3</sup> 67/548/ԵՏՀ եւ 1999/45/ԵՀ հրահանգները փոփոխող եւ չեղյալ ճանաչող եւ Եվրոպական միության 2008 թվականի դեկտեմբերի 31-ի Թիվ L 353 պաշտոնական տեղեկագրի 1-1355 էջերում հրապարակված Թիվ 1907/2006 կանոնակարգը (ԵՀ) փոփոխող՝ «Նյութերի եւ

վերագրվի ջրային սուր թունավորության 1-ին, ջրային քրոնիկ թունավորության 1-ին կամ ջրային քրոնիկ թունավորության 2-րդ կատեգորիային (կատեգորիաներ)։

բ) կարող է դիտվել, որպես շրջակա միջավայրի համար ոչ վտանգավոր նյութ (ջրային միջավայր), այն դեպքում, երբ նշված կանոնակարգի համաձայն, դրան պետք չէ վերագրել նմանատիպ կատեգորիա։

2.2.9.1.10.6. Շրջակա միջավայրի (ջրային միջավայր) համար վտանգավոր նյութերի կատեգորիային դասված նյութերի կամ խառնուրդների դասակարգումը՝ 2.2.9.1.10.3, 2.2.9.1.10.4 կամ 2.2.9.1.10.5-ի դրույթների համաձայն

Շրջակա միջավայրի (ջրային միջավայր) համար վտանգավոր նյութերի կատեգորիային դասված եւ «ԱԴՌ» համաձայնագրով այլ կերպ չդասակարգված նյութերը կամ խառնուրդները պետք է նշվեն՝

ՄԱԿ-ի նշագրման համար 3077. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՐ ՎՏԱՆԳԱՎՈՐ ՆՅՈՒԹ, ՊԻՆԴ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ, կամ

ՄԱԿ-ի նշագրման համար 3082. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՐ ՎՏԱՆԳԱՎՈՐ ՆՅՈՒԹ, ՀԵՂՈՒԿ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ

Դրանք պետք է դասվեն փաթեթավորման III խմբին։

Գենետիկորեն ձեւափոխված միկրոօրգանիզմները կամ օրգանիզմները

2.2.9.1.11. Գենետիկորեն ձեւափոխված միկրոօրգանիզմները (GMMO) եւ գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմները (GMO) այն միկրոօրգանիզմներն ու օրգանիզմներն են, որոնցում գենետիկ նյութը գենային ինժեներիայի միջոցով՝ ոչ բնական ճանապարհներով նպատակայնորեն փոփոխվել է։ Դրանց վերագրվում է 9-րդ դասը (ՄԱԿ-ի նշագրման 3245 համար) այն դեպքում, երբ դրանք չեն համապատասխանում թունավոր նյութերի կամ վարակիչ նյութերի սահմանմանը, սակայն ունակ են այնպիսի փոփոխությունների ենթարկել կենդանիներին, բույսերը կամ միկրոկենսաբանական նյութերը, որոնք սովորաբար բնական վերարտադրության արդյունք չեն համարվում։

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1. GMMO-ներին եւ GMO-ներին, որոնք վարակիչ նյութեր են, վերագրվում է 6.2 դասը, ՄԱԿ-ի նշագրման 2814, 2900 կամ 3373 համարները։*

---

խառնուրդների դասակարգման, պիտակավորման եւ փաթեթավորման մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2008 թվականի դեկտեմբերի 16-ի Թիվ 1272/2008 կանոնակարգ (ԵՀ)։

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2. Ծագման, տարանցման եւ նշանակման երկրների իրավասու մարմինների կողմից օգտագործման թույլտվության դեպքում GMMO-ները կամ GMO-ները չեն կարգավորվում «ԱԴՌ» համաձայնագրի դրույթներով<sup>14</sup>:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3. «ԱԴՌ» համաձայնագրի դրույթները չեն տարածվում գենետիկորեն ձեւափոխված այն կենդանի կենդանիների վրա որոնք, գիտական գիտելիքների ընթացիկ վիճակի համաձայն չունեն որեւէ հայտնի պաթոգենիկ ազդեցություն մարդկանց, կենդանիների եւ բույսերի վրա եւ փոխադրվում են այնպիսի տարաներով, որոնք հարմար են է՛լ կենդանիների փախուստը, է՛լ դրանց չթույլատրված հասանելիությունն անվտանգ կերպով կանխարգելելու համար: Օդային տրանսպորտի միջազգային ստոցիացիայի (ՕՏՄԱ) կողմից սահմանված՝ «Կենդանի կենդանիների վերաբերյալ կանոնակարգեր (ԿԿԿ)» օդային փոխադրումների համար սահմանված դրույթները կարող են մշակվել որպես կենդանի կենդանիների փոխադրման համար հարմար տարաների համար նախատեսված ուղեցույցներ:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 4. Կենդանի կենդանիները չպետք է օգտագործվեն 9-րդ դասին դասված գենետիկորեն ձեւափոխված միկրոօրգանիզմներ փոխադրելու համար, եթե այդ նյութն այլ կերպ հնարավոր չէ փոխադրել: Գենետիկորեն ձեւափոխված կենդանի կենդանիները պետք է փոխադրվեն ծագման եւ նշանակման երկրների իրավասու մարմինների կողմից սահմանված ժամկետների ու պայմանների համաձայն:

2.2.9.1.12. (Հանվել է)

Բարձր ջերմաստիճանային նյութեր

2.2.9.1.13. Բարձր ջերմաստիճանային նյութերը ներառում են այն նյութերը, որոնք փոխադրվում կամ փոխադրման են հանձնվում հեղուկ վիճակում՝ 100 °C կամ դրանից բարձր ջերմաստիճանում, այն դեպքում, երբ դրանք ունեն իրենց բռնկման ջերմաստիճանից ցածր բռնկման ջերմաստիճան: Դրանք նաեւ պինդ վիճակում ներառում են այնպիսի նյութեր, որոնք փոխադրվում կամ

<sup>14</sup> Տե՛ս Խորհրդի 90/220/ԵՏՀ հրահագր ուժը կորցրած ճանաչող «Գենետիկորեն փոփոխված օրգանիզմների՝ շրջակա միջավայր կանխամտածված կերպով արտանետման մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2001/18/ԵՀ հրահանգի 9 մասը (Եվրոպական համայնքների պաշտոնական տեղեկագիր թիվ L 106, 2001 թվականի ապրիլի 17, էջեր 8-14) եւ Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի «Գենետիկորեն փոփոխված սննդի եւ անասնակերի մասին» թիվ 1829/2003 ԵՀ կանոնակարգը (Եվրոպական միության 2003 թվականի հոկտեմբերի 18-ի պաշտոնական տեղեկագիր, թիվ L 268, էջեր 1-23), որոնցով սահմանվում են թույլտվության ստացման ընթացակարգեր Եվրոպական միության համար:

փոխադրման են հանձնվում 240 °C կամ դրանից բարձր ջերմաստիճանում:

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Բարձր ջերմաստիճանային նյութերը կարող են վերագրվել 9-րդ դասին միայն այն դեպքում, երբ դրանք չեն համապատասխանում որեւէ այլ դասի չափորոշիչներին:*

Այլ նյութեր, որոնք վտանգավոր են փոխադրման ժամանակ, սակայն չեն համապատասխանում այլ դասի սահմանումներին:

2.2.9.1.14. Մեկ այլ դասի սահմանմանը չհամապատասխանող հետեւյալ մյուս նյութերին վերագրվում է 9-րդ դասը՝

պինդ ամոնիակային միացություններ՝ 60°C-ից ցածր բռնկման ջերմաստիճանով.

թույլ վտանգավորության դիտիոնիտներ.

բարձր ցնդելիության հեղուկներ.

վնասակար գոլորշիներ արձակող նյութեր.

ալերգեններ պարունակող նյութեր.

քիմիական նյութերի հավաքածու եւ առաջին օգնության պարագաներ.

երկակի էլեկտրական շերտով կոնդենսատորներ (0,3 Վտժ-ից ավելի էներգատարողությամբ).

տրանսպորտային միջոցներ, շարժիչներ ըստ մեխանիզմներ, ներքինիզմներն

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. «ԱԴՌ» համաձայնագրի դրույթներով չեն կարգավորվում՝ ՄԱԿ-ի նշագրման 1845<sup>15</sup> համար՝ ածխաթթու գազ, պինդ (չոր սառույց), ՄԱԿ-ի նշագրման 2071 համար՝ ամոնիումի նիտրատի հիմքով պարարտանյութեր, ՄԱԿ-ի նշագրման 2216 համար՝ ձկան կեր (ձկան մնացորդներ)՝ կայունացված, ՄԱԿ-ի նշագրման 2807 համար՝ մագնիսացված նյութ, ՄԱԿ-ի նշագրման 3334 համարի հեղուկներ, որոնց ավիափոխադրումը կարգավորվում է հատուկ կանոններով, այլ կերպ չնշված, ՄԱԿ-ի նշագրման 3335 համար՝ պինդ նյութեր, որոնց ավիափոխադրումը կարգավորվում է հատուկ կանոններով, այլ կերպ չնշված, ՄԱԿ-ի նշագրման 3363 համարի վրանգավոր*

<sup>15</sup> Տե՛ս 5.5.3 կետը՝ որպես սառեցնող միջոց օգտագործվող՝ ՄԱԿ-ի նշագրման 1845 համարի ածխաթթու գազի, պինդ (չոր սառույց) վիճակի համար:

բեռներ՝ մեխանիզմներում կամ վրանգավոր բեռներ՝ սարքերում՝ ՄԱԿ-ի տիպային կանոնակարգերում նշված:

Փաթեթավորման խմբերի նշանակումը

2.2.9.1.15. 3.2 գլխի Ա աղյուսակի 4-րդ սյունակում նշված լինելու դեպքում 9-րդ դասի նյութերը եւ պատրաստվածքներն ըստ իրենց վտանգավորության աստիճանի դասվում են փաթեթավորման հետեւյալ խմբերից որեւէ մեկին՝

փաթեթավորման II խումբ՝ վտանգավորության միջին աստիճան ունեցող նյութեր:

փաթեթավորման III խումբ՝ վտանգավորության ցածր աստիճան ունեցող նյութեր:

2.2.9.2. Փոխադրման համար անթույլատրելի նյութեր եվ պատրաստվածքներ

Հետեւյալ նյութերի եւ պատրաստվածքների փոխադրումն արգելվում է՝

- լիթումային մարտկոցներ, որոնք չեն համապատասխանում 3.3 գլխի թիվ 188, 230, 310 կամ 636 հատուկ դրույթների համապատասխան պայմաններին:
- այնպիսի սարքերի չմաքրված դատարկ տարաներ, ինչպիսիք են տրանսֆորմատորները, կոնդենսատորները եւ ՄԱԿ-ի նշագրման 2315, 3151, 3152 կամ 3432 համարներին վերագրվող նյութեր պարունակող հիդրավլիկ սարքեր:

2.2.9.3. Դիրքերի ցանկ

<p>Նյութեր, որոնց մանր փոշին ներշնչելիս կարող է առողջությանը վտանգ սպառնալ</p>	<p>M1</p>	<p>2212 ԱՍԲԵՍ, ԱՄՖԻԲՈԼ (ամոզիտ, տրեմոլիտ, ակտինոլիտ, անթոֆիլիտ, կրոկիդոլիտ)</p> <p>2590 ԱՍԲԵՍ, ՔՐԻՉՈՏԻԼ</p>
<p>Նյութեր, որոնք կրակի դեպքում կարող են առաջացնել դիօքսիններ</p>	<p>M2</p>	<p>2315 ՊՈԼԻՔԼՈՐԻՆԱՑՎԱԾ ԲԻՖԵՆԻԼՆԵՐ՝ ՀԵՂՈՒԿ</p> <p>3432 ՊՈԼԻՔԼՈՐԻՆԱՑՎԱԾ ԲԻՖԵՆԻԼՆԵՐ, ՊԻՆԴ</p> <p>3151 ՊՈԼԻՀԱԼՈԳԵՆԱՑՎԱԾ ԲԻՖԵՆԻԼՆԵՐ՝ ՀԵՂՈՒԿ, կամ</p> <p>3151 ՀԱԼՈԳԵՆԱՑՎԱԾ ՄՈՆՈՄԵԹԻԼԴԻՖԵՆԻԼՄԵԹԱՆՆԵՐ՝ ՀԵՂՈՒԿ, կամ</p> <p>3151 ՊՈԼԻՀԱԼՈԳԵՆԱՑՎԱԾ ՏԵՐՖԵՆԻԼՆԵՐ՝ ՀԵՂՈՒԿ</p>
		<p>3152 ՊՈԼԻՀԱԼՈԳԵՆԱՑՎԱԾ ԲԻՖԵՆԻԼՆԵՐ, ՊԻՆԴ, կամ</p> <p>3152 ՀԱԼՈԳԵՆԱՑՎԱԾ ՄՈՆՈՄԵԹԻԼԵՐԿՖԵՆԻԼՄԵԹԱՆՆԵՐ՝ ՊԻՆԴ, կամ</p> <p>3152 ՊՈԼԻՀԱԼՈԳԵՆԱՑՎԱԾ ՏԵՐՖԵՆԻԼՆԵՐ՝ ՊԻՆԴ</p>

Դյուրավառ գոլորշի գոյացնող նյութեր		2211 ՊՈԼԻՄԵՐԱՅԻՆ ՇՂԹԱ՝ ԸՆԴԼԱՅՆՎՈՂ, դյուրավառ գոլորշի գոյացնող
	M3	3314 ԿԱՂԱՊԱՐՄԱՆ ՊԼԱՍՏԻԿ ՋԱՆԳՎԱԾ՝ մածուկի, թերթերի կամ քուղի տեսքով, դյուրավառ գոլորշի գոյացնող
Լիթիումի մարտկոցներ	M4	<p>3090 ԼԻԹԻՈՒՄԻ ՄԵՏԱՂԱԿԱՆ ՄԱՐՏԿՈՑՆԵՐ (այդ թվում նաեւ լիթիում համաձուլվածքի մարտկոցներ)</p> <p>3091 ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ ՄԵՋ ԱՌԿԱ ԼԻԹԻՈՒՄԻ ՄԵՏԱՂԱԿԱՆ ՄԱՐՏԿՈՑՆԵՐ (այդ թվում նաեւ՝ լիթիումի համաձուլվածքի մարտկոցներ), կամ</p> <p>3091 ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ ՀԵՏՐՔԱՎՈՐՄԱՆ ՄԱՆ ԼԻԹԻՈՒՄԻ ՄԵՏԱՂԱԿԱՆ ՄԱՐՏԿՈՑՆԵՐ (այդ թվում նաեւ լիթիումի համաձուլվածքի մարտկոցներ)</p>
		<p>3480 ԼԻԹԻՈՒՄ-ԻՈՆԱՅԻՆ ՄԱՐՏԿՈՑՆԵՐ (այդ թվում նաեւ լիթիում-իոնային պոլիմեր մարտկոցներ)</p> <p>3481 ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ ՄԵՋ ԱՌԿԱ ԼԻԹԻՈՒՄ-ԻՈՆԱՅԻՆ ՄԱՐՏԿՈՑՆԵՐ (այդ թվում նաեւ լիթիում-իոնային պոլիմեր մարտկոցներ) կամ</p> <p>3481 ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ ՀԵՏ ՏԵՂԱԴՐՎԱԾՄԱՆ ԼԻԹԻՈՒՄ-ԻՈՆԱՅԻՆ ՄԱՐՏԿՈՑՆԵՐ (այդ թվում նաեւ լիթիում-իոնային պոլիմեր մարտկոցներ)</p>
Փրկարարական միջոցներ	M5	<p>2990 ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ՝ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ՓՉՎՈՂ</p> <p>3072 ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ՝ ՈՉ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ՓՉՎՈՂ, որոնք որպես սարքեր պարունակում են վտանգավոր բեռներ</p> <p>3268 ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՍԱՐՔԵՐ՝ էլեկտրական մղմամբ</p>
Շրջակա միջավայրի համար վտանգավոր նյութեր	<p>ջրային միջավայրի աղտոտիչ՝ հեղուկ</p> <p>ջրային միջավայրի աղտոտիչ՝ պինդ</p>	<p>M6 3082 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՐ ՎՏԱՆԳԱՎՈՐ ՆՅՈՒԹԵՐ՝ ՀԵՂՈՒԿ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ</p> <p>M7 3077 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՐ ՎՏԱՆԳԱՎՈՐ ՆՅՈՒԹԵՐ՝ ՊԻՆԴ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ</p>
	<p>գենետիկորեն ձեւափոխված միկրոօրգանիզմներ եւ օրգանիզմներ</p>	<p>M8 3245 ԳԵՆԵՏԻԿՈՐԵՆ ՁԵՎԱՓՈԽՎԱԾ ՄԻԿՐՈՐԳԱՆԻԶՄՆԵՐ, կամ</p> <p>3245 ԳԵՆԵՏԻԿՈՐԵՆ ՁԵՎԱՓՈԽՎԱԾ ՕՐԳԱՆԻԶՄՆԵՐ</p>
Բարձրացված ջերմաստիճանով նյութեր	հեղուկ	M9 3257 ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆՈՎ ՀԵՂՈՒԿ՝ ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ, 100 °C ջերմաստիճանում կամ ավելի բարձր եւ իր բունկման ջերմաստիճանից ցածր (այդ թվում նաեւ հալած մետաղ, հալած աղեր եւ այլն)
	պինդ	M10 3258 ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆՈՎ ՊԻՆԴ ՊԻՆԴ՝ ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ, 240 °C ջերմաստիճանում կամ ավելի բարձր



Փոխադրման ժամանակ վտանգ ներկայացնող, սակայն մեկ այլ դասի սահմանումներին չհամապատասխանող այլ նյութեր կամ պատրաստվածքներ

M11

Ոչ մի հավաքական դիրք չկա: Միայն 3.2 գլխի Ա աղյուսակում թվարկված նյութերը ենթակա են 9-րդ դասի դրույթներին սույն դասակարգման ծածկագրի ներքո հետևյալ կերպ՝

1841	ԱՅԵՏԱԼԴԵՇԻԴԱՄԻԱԿ
1931	ՑԻՆԿԻ ԴԻԹԻՈՆԻՏ (ՑԻՆԿԻ ՀԻԴՐՈՍՈՒԼՖԻՏ)
1941	ԵՐԿԲՐՈՄԵՐԿՖՏՈՐՄԵԹԱՆ
1990	ԲԵՆԶԱԼԴԵՇԻԴ
2969	ԳԵՐՉԱԿԻ ՍԵՐՄԵՐ, կամ
2969	ԳԵՐՉԱԿԻ ԱԼՅՈՒՐ, կամ
2969	ԳԵՐՉԱԿԻ ՄՁՈՒԿ, կամ
2969	ԳԵՐՉԱԿԻ ԹԵՓՈՒԿ
3166	ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑ՝ ԱՅՐՎՈՂ ԳԱՁՈՎ ԱՇԽԱՏՈՂ, կամ
3166	ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑ՝ ԱՅՐՎՈՂ ՀԵՂՈՒԿՈՎ ԱՇԽԱՏՈՂ, կամ
3166	ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑ, ՎԱՌԵԼԻՔԱՅԻՆ ԷԼԵՄԵՆՏ՝ ԱՅՐՎՈՂ ԳԱՁՈՎ ԱՇԽԱՏՈՂ կամ
3166	ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑ, ՎԱՌԵԼԻՔԱՅԻՆ ԷԼԵՄԵՆՏ՝ ԱՅՐՎՈՂ ՀԵՂՈՒԿՈՎ ԱՇԽԱՏՈՂ, կամ
3171	ՄԱՐՏԿՈՑՈՎ ԱՇԽԱՏՈՂ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑ կամ
3171	ՄԱՐՏԿՈՑՈՎ ԱՇԽԱՏՈՂ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄ
3316	ՔԻՄԻԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԿՈՄՊԼԵԿՏ, կամ
3316	ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿՈՄՊԼԵԿՏ
3359	ԳԱՁՈՎ ԾԽԵՅՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ ԱԽՏԱՀԱՆՎԱԾ ՄԻԱՎՈՐ
3499	ԿՈՆԴԵՆՍԱՏՈՐ՝ ԵՐԿԱԿԻ ԷԼԵԿՏՐՈՎԱԿԱՆ ՇԵՐՏՈՎ (0,3 Վտժ-ից ավելի էներգատարողությամբ)
3508	ԿՈՆԴԵՆՍԱՏՈՐ, ԱՍԻՄԵՏՐԻԿ (0,3 Վտժ-ից ավելի էներգատարողությամբ)
3509	ՓԱԹԵԹՎԱԾՔՆԵՐ՝ ԳՑՎԱԾ, ԴԱՏԱՐԿ, ՉՄԱՔՐՎԱԾ
3530	ՇԱՐԺԻՉ՝ ՆԵՐՔԻՆ ԱՅՐՄԱՆ, կամ
3530	ՄԵԽԱՆԻՉՄՆԵՐ՝ ՆԵՐՔԻՆ ԱՅՐՄԱՆ

## ԳԼՈՒԽ 2.3

### ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

#### 2.3.0. Ընդհանուր նկարագիրը

Եթե 2.2 գլխով կամ սույն գլխում այլ բան չի նախատեսվում, ապա վտանգավոր բեռների դասակարգման համար կիրառվելիք փորձարկման մեթոդները «Փորձարկումների եւ չափորոշիչների ձեռնարկ»-ում նկարագրված մեթոդներն են:

#### 2.3.1. «A» տեսակի փշրտող պայթուցիկ նյութերի արտածորման փորձարկումը


##### 2.3.1.1. «A» տեսակի փշրտող պայթուցիկ նյութերը (ՄԱԿ-ի նշագրման 0081 համար) պետք է 40%-ից ավելի հեղուկ ազոտային եթեր պարունակելու դեպքում, ի հավելումն «Փորձարկումների եւ չափորոշիչների ձեռնարկ»-ում նշված փորձարկման, անցնեն հետեւյալ արտածորման փորձարկումը:

##### 2.3.1.2. Փշրտող պայթուցիկ նյութերի արտածորման փորձարկման համար նախատեսված սարքը (1-3 գծապատկերներ) բաղկացած է դատարկ բրոնզաձույլ բալոնից: Նշված բալոնը, որը ծայրում փակվում է միեւնույն մետաղից պատրաստված սկավառակով, ունի 15,7 մմ տրամագիծ եւ 40 մմ խորություն: Վերջինիս վրա շրջանագծի ամբողջ երկարությամբ բացված է 0,5 մմ տրամագիծ ունեցող 20 անցք (հինգ անցքերի չորս խումբ): 52 մմ ընդհանուր երկարությամբ եւ 48 մմ երկարության վրա գլանաձեւ տեղադրված բրոնզաձույլ մխոցն իջնում է ուղղահայաց տեղադրված բալոնի մեջ: Մխոցը, որն ունի 15,6 մմ տրամագիծ, բեռնվում է 2 220 գ զանգվածով այնպես, որ 120 կՊա (1,20 բար) ճնշում է գործադրվում բալոնի հիմքին:


##### 2.3.1.3. 5-8 գրամ քաշ ունեցող, 30 մմ երկարությամբ եւ 15 մմ տրամագծով փշրտող պայթուցիկ նյութի մի փոքր խցան փաթաթվում է շատ բարակ մառլայով եւ տեղադրվում բալոնի մեջ. մխոցը եւ դրա բեռնման զանգվածն այնուհետեւ տեղադրվում են դրա վրա այնպես, որ բրիզանտ պայթուցիկ նյութի վրա գործադրվի 120 կՊա (1,20 բար) ճնշում: Բալոնի արտաքին անցքերում յուղային կաթիլների (նիտրոգլիցերին) առաջին իսկ նշանների հայտնվելու համար ծախսվող ժամանակը արձանագրվում է:

##### 2.3.1.4. Փշրտող պայթուցիկ նյութը համարվում է փորձարկումն անցած, եթե 15 °C-25 °C ջերմաստիճանում իրականացված փորձարկման ժամանակ նախքան հեղուկի արտածորումն անցած ժամանակը հինգ րոպեից ավելին է:

## Արտածորման առկայության համար փշրտող պայթուցիկ նյութի փորձարկում




Գծապատկեր 1. Գմբեթաձեւ լիցքավորում, զանգվածը՝ 2220գ, ինչը կարող է կասեցվել բրոնզաձուլյ մխոցով



Գծապատկեր 2. Գլանաձեւ բրոնզաձուլյ մխոց, չափսերը՝ մմ-ով

Գծապատկեր 3. Դատարկ բրոնզաձուլյ բալոն, մեկ ծայրը փակված.



Նախագծումը եւ չափսերի մանրամասները՝ մմ-ով

1- 3-րդ գծապատկերները.

- 1) 0,5 N-ով 5 անցքերի 4 շարք
- 2) պղինձ
- 3) երկաթյա թիթեղ՝ ստորին մակերեսին կենտրոնական գլանով
- 4) շրջանագծի վրա հավասար ինտերվալներով արված՝ մոտավորապես 46x56 չափսերի 4 բացվածք

- 2.3.2. 4.1 դասի նիտրոցեյուլոզի խառնուրդներին առնչվող փորձարկումները
- 2.3.2.1. 132 °C ջերմաստիճանում կես ժամ տաքացված նիտրոցեյուլոզը չի գոյացնում տեսանելի դեղնավուն-շագանակագույն ազոտային գոլորշիներ (ազոտային գազեր): Այրման ջերմաստիճանը 180 °C-ից բարձր է: Տե՛ս ստորեւ բնութագրված 2.3.2.3 - 2.3.2.8, 2.3.2.9 (ա) եւ 2.3.2.10:
- 2.3.2.2. 132 °C ջերմաստիճանում մեկ ժամ տաքացված 3 գ պլաստիկացված նիտրոցեյուլոզը չի գոյացնում տեսանելի դեղնավուն-շագանակագույն ազոտային գոլորշիներ (ազոտային գազեր): Այրման ջերմաստիճանը 170 °C-ից բարձր է: Տե՛ս ստորեւ նկարագրված 2.3.2.3 - 2.3.2.8, 2.3.2.9 (բ) եւ 2.3.2.10:
- 2.3.2.3. Ստորեւ սահմանված փորձարկման ընթացակարգերը պետք է կիրառվեն ճանապարհային փոխադրման համար նյութերի ընդունելի լինելու մասով տարակարծությունների առաջացման դեպքում:
- 2.3.2.4. Եթե սույն բաժնում վերը նկարագրված կայունության պայմանները ստուգելու համար կիրառվում են այլ մեթոդներ կամ փորձարկման ընթացակարգեր, ապա այդ մեթոդների արդյունքում պետք է ստացվեն այն նույն արդյունքները, որոնք ստացվում են ստորեւ նշված մեթոդների արդյունքում:
- 2.3.2.5. Ստորեւ նկարագրված՝ տաքացման միջոցով կայունության փորձարկումներ իրականացնելիս փորձարկվող նմուշը պարունակող վառարանի ջերմաստիճանը չպետք է շեղվի ավելի քան 2 °C-ից նախատեսվող ջերմաստիճանից. 30 կամ 60 րոպե տեւողությամբ փորձարկման նախատեսվող տեւողությունն ուսումնասիրվում է երկու րոպեի ընթացքում: Վառարանի միջոցով պետք է ապահովվի, որ պահանջվող ջերմաստիճանը վերականգնվի ոչ ուշ քան նմուշը ներմուծելուց հինգ րոպե անց:
- 2.3.2.6. Նախքան 2.3.2.9-ում եւ 2.3.2.10-ում նշված փորձարկումներն անցնելը նմուշները պետք է չորացվեն հալեցված եւ հատիկավորված կալցիում քլորիդ պարունակող վակուում-խոնավազերծիչ սարքում (էքսիկատոր), մթնոլորտային ջերմաստիճանում՝ 15 ժամից ոչ պակաս, որտեղ նմուշը բարակ շերտով տարածվում է: Այդ իսկ նպատակով այն նյութերը, որոնք ոչ փոշու, ոչ էլ թելքի տեսքով են, պետք է լինեն մանրացված կամ տրորված կամ փոքր մասերի կտրատված: Խոնավազերծիչ սարքում (էքսիկատոր) ճնշումը պետք է լինի 6,5 կՊա-ից ցածր (0,065 բար):
- 2.3.2.7. Մինչեւ չորանալը, ինչպես նախատեսվում է վերը նշված 2.3.2.6-ով, 2.3.2.2-ին համապատասխանող նյութերը պետք է նախնական չորացման ենթարկվեն լավ օդափոխվող վառարանում 70 °C ջերմաստիճանում, մինչեւ զանգվածի կորուստը տասնհինգ րոպե

կտրվածքով կկազմի սկզբնական զանգվածի 0,3%-ից ոչ պակաս:

2.3.2.8. 2.3.2.1-ին համապատասխանող՝ թույլ ազոտացված նիտրոցելյուլոզը պետք է նախետառաջ վերը 2.3.2.7-ով նախատեսվող նախնական չորացում անցնի: Չորացումն այնուհետև պետք է ամփոփվի՝ պահելով նիտրոցելյուլոզը էքսիկատորում առնվազն 15 ժամ ծծմբական թթվի վրա:

2.3.2.9. Ջերմության տակ քիմիական կայունության փորձարկումը

ա) Վերը նշված 2.3.2.1 պարբերությունում թվարկված նյութի փորձարկումը.

i) երկու ապակե փորձանոթներից յուրաքանչյուրում, որոնք ունեն հետևյալ չափսերը՝

երկարություն	350 մմ
ներքին տրամագիծ	16 մմ
պատի հաստություն	1,5 մմ

տեղադրվում է կալցիում քլորիդի վրա չորացված 1 գրամ նյութ (հարկ եղած դեպքում չորացումը կատարվում է՝ նվազեցնելով նյութը ոչ ավելին, քան յուրաքանչյուրը 0,05 գ կշռող կտորների):

Ամբողջությամբ թույլ փականներով ծածկված երկու փորձանոթներ էլ այնուհետև տեղադրվում են վառարանում այնպես, որ տեսանելի լինի իրենց երկարության առնվազն չորս-հինգերորդը, եւ պահվում են 132 °C կայուն ջերմաստիճանում 30 րոպե: Ուսումնասիրվում է, թե արդյոք այդ ընթացքում սպիտակ ֆոնի ներքո գոյանում են հստակ տեսանելի դեղնավուն-շագանակագույն գոլորշիների տեսքով ազոտային գազեր:

ii) Այդ գոլորշիների բացակայության դեպքում նյութը համարվում է կայուն:

բ) Պլաստիկացված նիտրոցելյուլոզի փորձարկումը (տե՛ս 2.3.2.2)

i) 3 գրամ պլաստիկացված նիտրոցելյուլոզը տեղադրվում է (ա) կետում նշված փորձանոթների նման ապակե փորձանոթներում, որոնք այնուհետև տեղադրվում են 132 °C կայուն ջերմաստիճանում պահվող վառարանում.

ii) պլաստիկացված նիտրոցելյուլոզ պարունակող փորձանոթները վառարանում պահվում են մեկ ժամ: Այս ժամանակահատվածում ոչ մի դեղնավուն-շագանակագույն գոլորշիներ (ազոտային գազեր) տեսանելի չեն: Ուսումնասիրությունը եւ գնահատումը կատարվում է ըստ (ա)-ի:

2.3.2.10. Այրման ջերմաստիճանը (տե՛ս 2.3.2.1 եւ 2.3.2.2)

ա) Այրման ջերմաստիճանը որոշվում է Վուդի համաձուլվածքի վաննայում ընկղմված ապակե փորձանոթում տեղադրված 0.2 գրամ նյութի տաքացմամբ: Փորձանոթը տեղադրվում է վաննայում, որտեղ վերջինիս ջերմաստիճանը հասնում է 100 °C-ի: Վաննայի ջերմաստիճանն այնուհետեւ ամեն րոպե արագորեն ավելանում է 5 °C-ով:

բ) Փորձանոթները պետք է ունենան հետեւյալ չափսերը՝

երկարություն	125 մմ
ներքին տրամագիծ	15 մմ
պատի հաստություն	0,5 մմ

եւ ընկղմվեն մինչեւ 20 մմ խորությամբ:

գ) Փորձարկումը երեք անգամ կրկնվում է, որի ընթացքում ջերմաստիճանը, որով տեղի է ունենում նյութի այրումը, այսինքն՝ դանդաղ կամ արագ այրում, դեֆլագրացիա կամ դետոնացիա, յուրաքանչյուր անգամ արձանագրվում է.

դ) երեք փորձարկման ընթացքում արձանագրված ամենացածր ջերմաստիճանն այրման ջերմաստիճանն է:

2.3.3. 3, 6.1 եւ 8 դասերի դյուրավառ հեղուկներին առնչվող փորձարկումները

2.3.3.1. Բռնկման ջերմաստիճանը որոշելը

2.3.3.1.1. Կարող են կիրառվել դյուրավառ հեղուկների բռնկման ջերմաստիճանները որոշելու ստորեւ նշված մեթոդները՝

Միջազգային ստանդարտներ՝

ISO 1516 (Բռնկման առկայության/բացակայության որոշելը՝ փակ հալքանոթի հավասարակշռության մեթոդ)

ISO 1523 (Բռնկման ջերմաստիճանը որոշելը՝ փակ հալքանոթի հավասարակշռության մեթոդ)

ISO 2719 (Բռնկման ջերմաստիճանը որոշելը՝ Պենսկի-Մարտենսի փակ հալքանոթի մեթոդ)

ISO 13736 (Բռնկման ջերմաստիճանը որոշելը՝ Աբելի փակ հալքանոթի մեթոդ)

ISO 3679 (Բռնկման ջերմաստիճանը որոշելը՝ փակ հալքանոթի արագ հավասարակշռության մեթոդ)

ISO 3680 (Բռնկման առկայությունը/բացակայությունը որոշելը՝ փակ հալքանոթի արագ հավասարակշռության մեթոդ)

Ազգային ստանդարտներ՝

Փորձարկումների եւ նյութերի հարցերով ամերիկյան միջազգային միություն (ASTM, 100 Barr Harbor Drive, PO Box C700, West Conshohocken, Pennsylvania, USA 19428-2959)

ASTM D3828-07a, Փոքրամասշտաբ փակ հալքանոթի փորձարկման սարքով բռնկման ջերմաստիճանի փորձարկման ստանդարտ մեթոդներ

ASTM D56-05, Տափի փակ հալքանոթի փորձարկման սարքով բռնկման ջերմաստիճանի փորձարկման ստանդարտ մեթոդ

ASTM D3278-96(2004)e1, Փոքրամասշտաբ փակ հալքանոթի սարքով հեղուկների բռնկման ջերմաստիճանի մասով փորձարկման ստանդարտ մեթոդներ

ASTM D93-08, Պենսիլ-Մարտենսի փակ հալքանոթով փորձարկման սարքով բռնկման ջերմաստիճանի մասով փորձարկման ստանդարտ մեթոդներ

Association française de normalisation, AFNOR, 11, rue de Pressense, F-93571 La Plaine Saint-Denis Cedex

Ֆրանսիական ստանդարտ NF M 07-019

Ֆրանսիական ստանդարտներ NF M 07-011 / NF T 30-050 / NF T 66-009

Ֆրանսիական ստանդարտ NF M 07-036

Deutsches Institut für Normung, Burggrafenstr. 6, D-10787 Berlin՝

Ստանդարտ DIN 51755 (65 °C ջերմաստիճանից ցածր բռնկման ջերմաստիճաններ)

Ստանդարտացման հարցերով նախարարների խորհրդի պետական կոմիտե, RUS-113813, GSP, Մոսկվա, M-49 Լենինի պողոտա, 9:

GOST 12.1.044-84

2.3.3.1.2. Ներկերի, մաստակների եւ լուծիչներ պարունակող համանման մածուցիկ նյութերի ու խառնուրդների բռնկման ջերմաստիճանը որոշելու նպատակով կիրառվում են բացառապես այն սարքերը եւ փորձարկման մեթոդները, որոնք հարմար են մածուցիկ հեղուկ նյութերի բռնկման ջերմաստիճանը որոշելու համար, հետեւյալ ստանդարտներին համապատասխան՝

ա) Միջազգային ստանդարտ ISO 3679, 1983,

բ) Միջազգային ստանդարտ ISO 3680, 1983,

գ) Միջազգային ստանդարտ ISO 1523, 1983,

դ) Միջազգային ստանդարտներ EN/ISO 13736 եւ EN/ISO 2719,  
Բ մեթոդ:

2.3.3.1.3. 2.3.3.1.1-ում նշված ստանդարտները կիրառվում են բացառապես բռնկման ջերմաստիճանների այն միջակայքերի համար, որոնք այնտեղ նշված են: Կիրառվելիք ստանդարտն ընտրելիս անհրաժեշտ է հաշվի առնել նյութի եւ նմուշը պարունակող հարմարանքի միջեւ քիմիական ռեակցիաների հավանականությունը: Սարքը պետք է, հնարավորինս պահպանելով անվտանգությունը, տեղադրվի միջանցուկ քամիներից չեզոք դիրքում: Անվտանգության նկատառումներից ելնելով՝ մոտավորապես 2 մլ փոքր չափսի նմուշի օգտագործմամբ մեթոդը կիրառվում է օրգանական պերօքսիդների եւ ինքնառեակտիվ նյութերի (նաեւ հայտնի որպես «էներգետիկ» նյութեր) կամ թունավոր նյութերի համար:

2.3.3.1.4. Եթե ոչ հավասարակշռության մեթոդով որոշված բռնկման ջերմաստիճանը եղել է  $23 \pm 2$  °C կամ  $60 \pm 2$  °C, ապա այն պետք է ջերմաստիճանի յուրաքանչյուր միջակայքի համար հաստատվի հավասարակշռության մեթոդով:

2.3.3.1.5. Դյուրավառ հեղուկ նյութի դասակարգման շուրջ տարածայնությունների առաջացման դեպքում պետք է ընդունվի բեռնառաքողի կողմից առաջարկվող դասակարգումը, եթե բռնկման ջերմաստիճանի ստուգիչ փորձարկումների հետեւանքով ստացվում է մի արդյունք, որը ավելի քան 2°C-ով չի տարբերվում 2.2.3.1-ում նշված սահմանաչափերից (համապատասխանաբար 23°C եւ 60°C): Եթե տարբերությունը 2 °C-ից ավելի է, ապա կատարվում է երկրորդ ստուգիչ փորձարկում, եւ ընդունվում է ստուգիչ փորձարկումներից որեւէ մեկում ստացվող բռնկման ջերմաստիճանի ամենացածր թվանշանը:

2.3.3.2. Եռման սկզբնական ջերմաստիճանի որոշումը

Դյուրավառ հեղուկ նյութերի եռման սկզբնական ջերմաստիճանը որոշելու համար կարող են կիրառվել հետեւյալ մեթոդները.

Միջազգային ստանդարտներ՝

ISO 3924 (Նավթամթերք՝ եռման միջակայքի բաշխումը որոշելը՝ Գազի քրոմատոգրաֆիայի մեթոդ)

ISO 4626 (Ցնդող օրգանական հեղուկ նյութեր՝ որպես հումք օգտագործվող օրգանական լուծիչների եռման միջակայքը որոշելը)

ISO 3405 (Նավթամթերք՝ մթնոլորտային ճնշման տակ չափային կազմը որոշելը)



Ազգային ստանդարտներ՝

Փորձարկումների եւ նյութերի հարցերով ամերիկյան միջազգային միություն (ASTM, 100 Barr Harbor Drive, PO Box C700, West Conshohocken, Pennsylvania, USA 19428-2959)

ASTM D86-07a, Մթնոլորտային ճնշման տակ նավթամթերքների թորման համար փորձարկման ստանդարտ մեթոդ

ASTM D1078-05, Ցնդող օրգանական հեղուկ նյութերի թորման միջակայքի համար փորձարկման ստանդարտ մեթոդ

Այլ ընդունելի մեթոդներ՝

Հանձնաժողովի թիվ 440/20081 (ԵՀ) կանոնակարգի հավելվածի Ա մասում նկարագրված Մեթոդ Ա.2:

### 2.3.3.3. Պերօքսիդի բաղադրությունը որոշելու փորձարկում

Հեղուկի պերօքսիդի բաղադրությունը որոշելու համար կիրառվում է հետևյալ ընթացակարգը՝

Տիտրվող հեղուկի  $\rho$  քանակություն (մոտավորապես 5գ, կշռված մինչև ամենամոտ 0,01 գ-ը) տեղադրվում է էրլենմեյերի փորձանոթում. այնուհետև ավելացվում են 20 սմ3 քացախաթթվի անհիդրիդ եւ մոտ 1 գ փոշի պինդ կալիումի յոդիդ. փորձանոթը թափահարվում է եւ 10 րոպե անց՝ 3 րոպե տաքացվում է մինչև մոտ 60 °C ջերմաստիճանը: Հինգ րոպե այն հովացնելուց հետո ավելացվում է 25 սմ3 ջուր: Դրանից հետո այն կես ժամ թողնվում է, այնուհետև անջատված յոդինը տիտրվում է նատրիումի թիոսուլֆատի դեցինորմալ լուծույթի հետ՝ չավելացնելով ոչ մի ինդիկատոր. լրիվ գունազրկումը վկայում է ռեակցիայի ավարտի մասին: Եթե  $n$ -ը պահանջվող թիոսուլֆատի լուծույթի սմ3 քանակությունն է, ապա նմուշում առկա պերօքսիդի տոկոսը (հաշվարկվող որպես H2O2) ստացվում է հետևյալ բանաձևի միջոցով՝

17n

100p

### 2.3.4. Հոսունությունը որոշելու փորձարկումը

Հեղուկի, մածուցիկ կամ մածուկանման նյութերի եւ խառնուրդների հոսունությունը որոշելու համար կիրառվում է հետևյալ փորձարկման

<sup>1</sup> Հանձնաժողովի 2008 թվականի մայիսի 30-ի թիվ 440/2008/ԵՀ կանոնակարգ «Քիմիական նյութերի գրանցման, գնահատման, թույլտվության եւ սահմանափակման մասին (REACH) Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի թիվ 1907/2006/ԵՀ կանոնակարգի համաձայն փորձարկման մեթոդներ սահմանելու մասին» (Եվրոպական միության պաշտոնական տեղեկագիր, թիվ L 142, 31.05.2008թ., էջեր 1-739 եւ թիվ L 143, 03.06.2008թ., էջ 55):

մեթոդը:

2.3.4.1. Փորձարկման սարք

ISO 2137:1985 ստանդարտին համապատասխանող 47,5 գ ± 0,05 գ ուղղորդիչ ձողով կոմերցիոն կակղաչափ. 102,5 գ ± 0,05գ զանգվածով եւ կոնուսածեւ անցքերով դյուրալյումինի գտիչ սկավառակ (տե՛ս 1-ին գծապատկերը). նմուշն ընդունելու համար նախատեսված 72 մմ-ից մինչեւ 80 մմ ներքին տրամագծով ներթափանցման անոթ:

2.3.4.2. Փորձարկման ընթացակարգը

Նմուշը լցվում է ներթափանցման անոթ ոչ ուշ, քան չափումից կես ժամ առաջ: Այնուհետեւ անոթը հերմետիկ փակվում եւ մնում է մինչեւ չափելը: Հերմետիկ փակված ներթափանցման անոթում տեղադրված նմուշը տաքացվում է մինչեւ 35 °C ± 0,5 °C ջերմաստիճանը եւ այնուհետեւ չափելուց անմիջապես առաջ տեղադրվում կակղաչափի սեղանի վրա (երկու բոպեից ոչ ավելի): Ջտիչ սկավառակի S կետն այնուհետեւ շփման մեջ է դրվում հեղուկի մակերեսի հետ, եւ չափվում է ներթափանցման չափը:


2.3.4.3. Փորձարկման արդյունքների գնահատում

Նյութը համարվում է մածուցիկ, եթե նմուշի մակերեսի հետ S կետորոնը շփման մեջ դնելուց հետո չափիչ սարքի թվացույցով նշված ներթափանցումը՝

- ա) 5 վ ± 0,1 վ բեռնման ժամանակից հետո 15,0 մմ ± 0,3 մմ-ից պակաս է, կամ
- բ) 5 վ ± 0,1 վ բեռնման ժամանակից հետո 15,0 մմ ± 0,3 մմ-ից մեծ է, սակայն եւս մեկ 55 վ ± 0,5 վ-ից հետո լրացուցիչ ներթափանցումը պակաս է 5,0 մմ ± 0,5 մմ-ից:

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Հոսունության ջերմաստիճանն ունեցող նմուշների դեպքում հաճախ հնարավոր է ներթափանցման անոթում ստանալ կայուն մակարդակի մակերես եւ ուստի ստեղծել S կետի շփման համար նախնական չափման բավարար պայմաններ: Ավելին, որոշ նմուշների դեպքում գտիչ սկավառակի ներգործությունը կարող է առաջացնել մակերեսի էլաստիկ դեֆորմացում եւ առաջին մի քանի վայրկյանների ընթացքում վերարտադրել առավել խորը թափանցում: Բոլոր նշված դեպքերում նպատակահարմար կլինի գնահատումը կատարել վերը նշված (բ) պարբերությունում:*

# Գծապատկեր 1. Կակղաչափ



Չնշված առավելագույն չափսերն են ± 0,1 մմ:


2.3.5. 4.2 եւ 4.3 դասերում մետաղորգանական նյութերի դասակարգումը


Պայմանավորված իրենց հատկանիշներով, ինչպես սահմանված է Փորձարկումների եւ չափորոշիչների ձեռնարկի III մասի 33-րդ բաժնի N.1-N.5 փորձարկումներով մետաղորգանական նյութերը կարող են, հարկ եղած դեպքում, դասակարգվել 4.2 կամ 4.3 դասում՝ 2.3.5 գծապատկերում ներկայացված գրաֆիկական սխեմայի համաձայն:

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1. Պայմանավորված իրենց հատկանիշներով եւ վրանգը ներկայացնող աղյուսակի գերակայությամբ (տե՛ս 2.1.3.10) մետաղորգանական նյութերը հարկ եղած դեպքում կարող են այլ դասերում դասակարգվել:*

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2. Դյուրավառ լուծույթները մետաղորգանական միացությունների այնպիսի կոնցենտրացիաներով, որոնց դեպքում դրանք հակված չեն ինքնաայրման կամ ջրի հետ շփվելիս չեն արտանետում վրանգավոր քանակություններով դյուրավառ գազեր, 3-րդ դասին պատկանող նյութեր են:*

**Գծապատկեր 2.3.5. 4.2 եւ 4.3 դասերում մետաղորգանական նյութերի դասակարգման համար գրաֆիկական սխեմա Բ**





*ա Համապատասխան դեպքերում, եւ եթե փորձարկումը տեղին է, հաշվի առնելով քիմիական ակտիվության հատկությունները, 6.1 եւ 8-րդ դասի հատկությունները պետք է ուսումնասիրվեն 2.1.3.10-ի՝ վրանգների վերաբերյալ աղյուսակում նշված առաջնահերթությամբ:*

*բ Թիվ 1-ից թիվ 5 փորձարկման մեթոդները կարելի է գտնել «Փորձարկումների եւ չափորոշիչների ձեռնարկ»-ի III մասի 33-րդ բաժնում:*

### **ՄԱՍ 3**

**Վտանգավոր բեռների ցանկը,  
սահմանափակ եւ ազատված քանակություններին վերաբերող հատուկ  
դրույթներն ու ազատումները**

## ԳԼՈՒԽ 3.1

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

#### 3.1.1. Ներածություն

Ի հավելումն սույն մասի աղյուսակներում նշված կամ ներկայացված դրույթների՝ պետք է պահպանվեն յուրաքանչյուր մասի, գլխի եւ (կամ) բաժնի ընդհանուր պահանջները: Նշված ընդհանուր պահանջները ներկայացված չեն աղյուսակներում: Երբ ընդհանուր պահանջը հակասում է հատուկ դրույթին, ապա կիրառվում է հատուկ դրույթը:

#### 3.1.2. Բեռնառաքման ճշգրիտ անվանումը

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Նմուշների փոխադրման համար օգտագործվող բեռնառաքման ճշգրիտ անվանման համար տե՛ս 2.1.4.1:*

3.1.2.1. Բեռնառաքման ճշգրիտ անվանումը դիրքի այն բաժինն է, որն ավելի ճշգրիտ է նկարագրում 3.2 գլխի Ա աղյուսակում թվարկված բեռները: Այն գրվում է մեծատառերով (այդ թվում՝ անվանման անբաժան մասը կազմող ցանկացած թիվ, հունական տառեր, «երկ», «եռա» նախածանցները եւ «մ», «ն», «օ», «պ» տառերը): Բեռնառաքման ճշգրիտ այլընտրանքային անվանումը կարող է նշվել փակագծերում բեռնառաքման ճշգրիտ հիմնական անվանումից հետո [օր.՝ ԷԹԱՆՈԼ (ԷԹԻԼԱՅԻՆ ՍՊԻՐՏ)]: Դիրքի՝ փոքրատառերով նշվող բաժինները կարող են չհամարվել որպես բեռնառաքման ճշգրիտ անվանման մաս:

3.1.2.2. Երբ «եւ», «կամ» շաղկապները գրվում են փոքրատառերով կամ անվանման մասերը բաժանվում են ստորակետերով, կարիք չկա, որ դիրքի ամբողջական անվանումը ներկայացվի տրանսպորտային փաստաթղթում կամ փաթեթի մակնշման նշաններով: Սա վերաբերում է հատկապես այն դեպքերին, երբ ՄԱԿ-ի մեկ համարի ներքո թվարկված են մի քանի առանձին ապրանքային դիրքեր: Նշված ապրանքային դիրքերի դեպքում ստորեւ ներկայացվում են բեռնառաքման ճշգրիտ անվանման ընտրության օրինակները՝

ա) ՄԱԿ-ի ՆՇԱԳՐՄԱՆ 1057 ՀԱՄԱՐԻ ԿՐԱԿԱՅՐԻՉՆԵՐ կամ ԿՐԱԿԱՅՐԻՉՆԵՐԻ ՎԵՐԱԼՑԱՎՈՐՄԱՆ ԲԱԼՈՆՆԵՐ: Բեռնառաքման ճշգրիտ անվանումը հետեյալ համակցություններից ամենահարմարն է՝

ԿՐԱԿԱՅՐԻՉՆԵՐ

ԿՐԱԿԱՅՐԻՉՆԵՐԻ ՎԵՐԱԼՑԱՎՈՐՄԱՆ ԲԱԼՈՆՆԵՐ.

բ) ՄԱԿ-ի ՆՇԱԳՐՄԱՆ 2793 ՀԱՄԱՐԻ ՄԵՏԱՂԱԿԱՆ ՏԱՇԵՂՆԵՐ, ՍՂՈՑՈՒՔՆԵՐ, ԽԱՐՏՈՒՔՆԵՐ ԿԱՄ ԿՏՈՐՏԱՆՔՆԵՐ, որոնք



ենթարկվել են ինքնատաքացման: Բեռնատաքման ճշգրիտ անվանումը հետեւյալ հնարավոր համակցություններից ամենահարմարն է՝

ՄԵՏԱՂԱԿԱՆ ՏԱՇԵՂՆԵՐ

ՄԵՏԱՂԱԿԱՆ ՍՂՈՅՈՒՔՆԵՐ

ՄԵՏԱՂԱԿԱՆ ԽԱՐՏՈՒՔՆԵՐ

ՄԵՏԱՂԱԿԱՆ ԿՏՈՐՏԱՆՔՆԵՐ:

- 3.1.2.3. Բեռնատաքման ճշգրիտ անվանումը հարկ եղած դեպքում կարող է օգտագործվել եզակի կամ հոգնակի թվով: Ավելին, երբ բնորոշիչ բառերն օգտագործվում են որպես բեռնատաքման ճշգրիտ անվանման մաս, ապա փաստաթղթի կամ փաթեթի մակնշման նշանների վրա դրանց հերթականությունը կամընտիր է: Օրինակ՝ «ԴԻՄԵԹԻԼԱՄԻՆ ԶՐԱՅԻՆ ԼՈՒԾՈՒՅԹԸ» կարող է այլ կերպ նշվել՝ «ԶՐԱՅԻՆ ԼՈՒԾՈՒՅԹ ԴԻՄԵԹԻԼԱՄԻՆԻ»: Կարող են օգտագործվել 1-ին դասի բեռների առետրային կամ ռազմական անվանումները, որոնք ներառում են լրացուցիչ նկարագրական տեքստով լրացված բեռնատաքման ճշգրիտ անվանումը:
- 3.1.2.4. Շատ նյութեր թե՛ հեղուկ եւ թե՛ պինդ վիճակի (հեղուկի եւ պինդ նյութերի սահմանման համար տե՛ս 1.2.1) կամ պինդ եւ լուծույթ վիճակի համար դիրք ունեն: Դրանց հատկացված են ՄԱԿ-ի նշագրման առանձին համարներ, որոնք պարտադիր չէ, որ նշվեն միասին<sup>1</sup>:
- 3.1.2.5. Եթե այն արդեն մեծատառերով ներառված է 3.2 գլխի Ա աղյուսակում նշված անվանման մեջ, ապա «ՀԱԼՎԱԾ» բնորոշիչ բառն ավելանում է տրանսպորտային ճշգրիտ անվանմանը՝ որպես դրա մի մաս, երբ նյութը, որը, 1.2.1-ում նշված սահմանմանը համապատասխան, առաջարկվում է փոխադրման հալված վիճակում (օր.՝ ԱԼԿԻԼՖԵՆՈԼ, ՊԻՆԴ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ, ՀԱԼՎԱԾ):
- 3.1.2.6. Բացի ինքնառեակտիվ նյութերից ու օրգանական պերօքսիդներից, եւ եթե «ԿԱՅՈՒՆԱՑՎԱԾ» բառն արդեն մեծատառերով ներառված է 3.2 գլխի Ա աղյուսակի 2-րդ սյունակում նշված անվանման մեջ, ապա այն ավելանում է բեռնատաքման ճշգրիտ անվանմանը, որպես դրա մի մաս, որի փոխադրումն առանց կայունացման, փոխադրման ժամանակ սովորաբար հանդիպող պայմաններում վտանգավոր կերպով ռեակցիայի մեջ մտնելու հատկությամբ, արգելվում է 2.2.X.2 պարբերություններին համապատասխան (օր.՝ ԹՈՒՆԱՎՈՐ ՀԵՂՈՒԿ, ՕՐԳԱՆԱԿԱՆ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ, ԿԱՅՈՒՆԱՑՎԱԾ):

<sup>1</sup> Մանրամասները ներկայացված են այբբենական ինդեքսով (3.2 գլխի Բ աղյուսակ), օր՝  
ՆԻՏՐԱՔՍԻԼՈԼՆԵՐ, ՀԵՂՈՒԿ 6.1 1665.  
ՆԻՏՐԱՔՍԻԼՈԼՆԵՐ, ՊԻՆԴ 6.1 3447:

Եթե վտանգավոր ցանկացած հավելյալ ճնշման առաջացումը կամ ավելցուկային ջերմության գոյացումը կանխելու նպատակով նյութերի կայունացման համար օգտագործվում է ջերմաստիճանի վերահսկողությունը, կամ եթե քիմիական կարգավորումն օգտագործվում է ջերմաստիճանի վերահսկողության հետ համակցությամբ, ապա՝

ա) հեղուկ եւ պինդ նյութերի դեպքում, երբ ԻՏՋ<sup>2</sup>-ն (չափված առանց դանդաղիչի կամ դանդաղիչով, երբ կիրառվում է քիմիական կարգավորում) ցածր է կամ հավասար է 2.2.41.1.21-ում նշված ջերմաստիճանին, կիրառվում են 2.2.41.1.17-ի դրույթները, 3.3 գլխի 386-րդ հատուկ դրույթը, 7.2 գլխի V8 հատուկ դրույթը, 8.5 գլխի S4 հատուկ դրույթը եւ 9.6 գլխի պահանջները՝ բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան նյութը պոլիմերիզացիայի ռեակցիայի մեջ մտնելու ժամանակ «ԱԻՋ» եզրույթը սույն պարբերությունում նաեւ ներառում է ԻՏՋ-ն:)

բ) գազերի դեպքում փոխադրման պայմանները հաստատվում են իրավասու մարմնի կողմից:

3.1.2.7. Հիդրատները կարող են փոխադրվել անհիդրիդների բեռնառաքման ճշգրիտ անվանման ներքո:

3.1.2.8. Ընդհանուր կամ «այլ կերպ չնշված» անվանումները

3.1.2.8.1. Ընդհանուր կամ «այլ կերպ չնշված» բեռնառաքման ճշգրիտ անվանումները, որոնց համար 3.2 գլխի Ա աղյուսակի 6-րդ սյունակում նշված է 274 անուր կահատուկ դրույթը, լրացվում են բեռների տեխնիկական անվանմամբ, եթե ազգային իրավունքով կամ միջազգային կոնվենցիայով չի արգելում դրա մասին բացահայտ նշումը, եթե այն վերահսկվող նյութ է: 1-ին դասի պայթուցիկների դեպքում վտանգավոր բեռների նկարագրությանը կարող է նկարագրական տեքստ ավելանալ՝ դրանց առետրային կամ ռազմական անվանումները նշելու նպատակով: Բեռի տեխնիկական անվանումները նշվում են փակագծերում՝ դրա բեռնառաքման ճշգրիտ անվանումից անմիջապես հետո: Անհրաժեշտության դեպքում կարող են օգտագործվել այնպիսի բնորոշիչ բառեր, ինչպես օրինակ՝ «պարունակում է» կամ «պարունակող» կամ այլ բնորոշիչ բառեր, օրինակ՝ «խառնուրդ», «լուծույթ» եւ այլն, ինչպես նաեւ կարող են օգտագործվել տեխնիկական բաղադրիչների պարունակության տոկոսները: Օրինակ՝ «ՄԱԿ-ի նշագրման 1993 համարի ԴՅՈՒՐԱՎԱՌ-ՀԵՂՈՒԿ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ (ՊԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ՔՍԻԼՈԼ ԵՎ ԲԵՆՉՈԼ), 3, II»:

<sup>2</sup> Ինքնարագացող տրոհման ջերմաստիճանի սահմանումը (ԻՏՋ) տե՛ս 1.2.1 կետում:

3.1.2.8.1.1. Տեխնիկական անվանումը ճանաչված քիմիական կամ կենսաբանական անվանումն է կամ ներկայումս գիտական ու տեխնիկական ձեռնարկներում, ամսագրերում եւ տեքստերում օգտագործվող այլ անվանում: Այս նպատակով առետրային անվանումները չեն օգտագործվում: Պեստիցիդների դեպքում կարող են օգտագործվել միայն ISO ընդունված անվանումը (անվանումները), Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) «Պեստիցիդների առաջարկվող դասակարգումն ըստ վտանգի աստիճանի եւ դասակարգման ուղեցույցները» ձեռնարկում նշված այլ անվանում (անվանումներ) կամ ակտիվ նյութի (նյութերի) անվանումը (անվանումները):

3.1.2.8.1.2. Երբ վտանգավոր բեռների խառնուրդը նկարագրվում է «Այլ կերպ չնշված» կամ «ընդհանուր» դիրքերից մեկում, որի համար 3.2 գլխի Ա աղյուսակի 6-րդ սյունակում նախատեսվում է 274 դրույթը, անհրաժեշտ է նշել մինչեւ երկու բաղադրիչ, որոնք մեծ մասամբ նպաստում են խառնուրդի վտանգավոր հատկությանը կամ հատկություններին՝ բացառությամբ վերահսկվող նյութերի, երբ դրանց մասին բացահայտ նշումն արգելվում է ազգային իրավունքով կամ միջազգային կոնվենցիայով: Եթե այն փաթեթի վրա, որում դրված է խառնուրդը, լրացուցիչ ռիսկի մասին նշում է առկա, կլոր փակագծերում նշվող երկու տեխնիկական անվանումներից մեկն այն բաղադրիչի անվանումն է, որը պահանջում է լրացուցիչ ռիսկի մասին նշման կիրառումը:

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Տե՛ս 5.4.1.2.2:*

Ճնշման տատանման փորձարկումներ. Թրթռակայունության փորձարկումից հետո մարտկոցը պահվում է  $24^{\circ}\text{C} \pm 4^{\circ}\text{C}$  ջերմաստիճանում վեց ժամվա ընթացքում, որի ժամանակ ճնշման տատանումը պետք է լինի 88 կՊա-ից ոչ պակաս: Մարտկոցը փորձարկվում է երեք՝ միմյանց նկատմամբ ուղղահայաց դիրքերում (ներառյալ այն դիրքը, որտեղ լցավորման եւ գազի արտամղման համար նախատեսված բացվածքները, եթե այդպիսիք կան, տեղակայված են ստորին հատվածում)՝ առնվազն վեց ժամ յուրաքանչյուր դիրքում:

բ) Չթափվող մարտկոցները չեն ենթարկվում «ԱԴՌ» համաձայնագրի պահանջներին, եթե  $55^{\circ}\text{C}$  ջերմաստիճանում ճեղքած կամ ճաքած կմախքից չի արտահոսում էլեկտրոլիտ, եւ տեղի չի ունենում ազատ հեղուկի արտահոսք, եւ եթե փոխադրման համար փաթեթավորված մարտկոցների կոնտակտները պաշտպանված են կարճ միացումից:

- 239 Մարտկոցները կամ էլեմենտները չպետք է պարունակեն նատրիումից, ծծմբից կամ նատրիումի միացություններից (օրինակ՝ նատրիումի պոլիսուլֆիդներ եւ նատրիումի քառաքլորայուրմինատ) բացի այլ վտանգավոր նյութեր: Մարտկոցները կամ էլեմենտները չեն կարող ներկայացվել փոխադրման այնպիսի ջերմաստիճանում, երբ մարտկոցում կամ էլեմենտում առկա է հեղուկ նատրիում, բացառությամբ այն դեպքերի, երբ մարտկոցները կամ էլեմենտները թույլատրվում են փոխադրման ծագման երկրի իրավասու մարմնի կողմից եւ փոխադրվում են վերջինիս կողմից սահմանված պայմանների համաձայն: Եթե ծագման երկիրը «ԱԴՌ» համաձայնագրի Պայմանավորվող կողմ չէ, ապա թույլտվությունը եւ փոխադրման պայմանները պետք է ընդունվեն բեռնափոխադրման երթուղով «ԱԴՌ»



համաձայնագրի Պայմանավորվող կողմ հանդիսացող առաջին երկրի իրավասու մարմնի կողմից:

Էլեմենտները պետք է ունենան հերմետիկ փակված մետաղական կմախք, որտեղ տեղադրվում են վտանգավոր նյութերը, եւ որոնք այնպես են պատրաստված եւ փակված, որ բացառվի փոխադրման սովորական պայմաններում վտանգավոր նյութերի արտանետման հավանականությունը:

Մարտկոցները պետք է բաղկացած լինեն մետաղական կմախքի ներսում ապահով ամրացված եւ նշված կմախքով ամբողջությամբ պաշտպանված էլեմենտներից, որոնք պատրաստված եւ փակված են այնպես, որ բացառվի փոխադրման սովորական պայմաններում վտանգավոր նյութերի արտանետման հավանականությունը:

- 240 Այս դիրքը կիրառվում է միայն այն փոխադրամիջոցների նկատմամբ, որոնք աշխատում են հեղուկային տարրերով մարտկոցներով, նատրիումային մարտկոցներով, լիթիումի մետաղական մարտկոցներով կամ լիթիում-իոնային մարտկոցներով, եւ այն սարքավորումների նկատմամբ, որոնք աշխատում են հեղուկային տարրերով մարտկոցներով, նատրիումային մարտկոցներով եւ փոխադրվում են այդ մարտկոցները դրանց մեջ տեղադրված վիճակում: Լիթիումային մարտկոցները պետք է բավարարեն 2.2.9.1.7-ի պահանջները՝ բացառությամբ այն դեպքերի, երբ 667-րդ հատուկ դրույթով նախատեսված է այլ բան:

Այս հատուկ դրույթի նպատակով փոխադրամիջոցներն ինքնագնաց մեքենաներ են, որոնք նախատեսված են մեկ կամ ավելի մարդ կամ բեռներ տեղափոխելու համար:

Այդպիսի փոխադրամիջոցների օրինակներ են էլեկտրական շարժիչով ավտոմոբիլները, մոտոցիկլետները, սկուտերները, եռանիվ եւ քառանիվ փոխադրամիջոցները կամ մոտոցիկլետները, բեռնատար ավտոմոբիլները, լոկոմոտիվները, հեծանիվները (էլեկտրական շարժիչով հեծանիվները) եւ այս տեսակի այլ փոխադրամիջոցներ (օրինակ՝ ինքնահավասարակշռվող փոխադրամիջոցներ կամ նստելատեղ չունեցող փոխադրամիջոցներ), հաշմանդամների սայլակները, այգեգործական տրակտորները, գյուղատնտեսական եւ շինարարական ինքնագնաց սարքավորումները, նավերն ու օդանավերը:

Սրանց մեջ մտնում են նաեւ փաթեթվածքներով փոխադրվող փոխադրամիջոցները:

Այս դեպքում փոխադրամիջոցի որոշ մասեր կարող են առանձնացվել դրա հիմնակմախքից՝ փաթեթվածքի մեջ տեղավորվելու համար:

Սարքավորումների օրինակներ են հնձիչ մեքենաները, մաքրման մեքենաները կամ նավերի ու օդանավերի մոդելները:

Լիթիումի մետաղական մարտկոցներով կամ լիթիում-իոնային մարտկոցներով աշխատող սարքավորումները պետք է համապատասխանաբար ընդգրկվեն հետևյալ դիրքերում՝ ՄԱԿ-ի նշագրման 3091 համար՝ ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ ՄԵՋ ԱՌԿԱ ԼԻԹԻՈՒՄԻ ՄԵՏԱՂԱԿԱՆ ՄԱՐՏԿՈՑՆԵՐ, կամ ՄԱԿ-ի նշագրման 3091 համար՝ ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ ՄԵՋ ՏԵՂԱԴՐՎԱԾ ԼԻԹԻՈՒՄԻ ՄԵՏԱՂԱԿԱՆ ՄԱՐՏԿՈՑՆԵՐ, կամ ՄԱԿ-ի նշագրման 3481 համար՝ ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ ՄԵՋ ԱՌԿԱ ԼԻԹԻՈՒՄ-ԻՈՆԱՅԻՆ ՄԱՐՏԿՈՑՆԵՐ, կամ ՄԱԿ-ի նշագրման 3481 համար՝ ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ ՄԵՋ ՏԵՂԱԴՐՎԱԾ ԼԻԹԻՈՒՄ-ԻՈՆԱՅԻՆ ՄԱՐՏԿՈՑՆԵՐ: Այն հիբրիդային էլեկտրական փոխադրամիջոցները, որոնք աշխատում են եւ՛ ներքին այրման շարժիչով, եւ՛ հեղուկ էլեմենտներ ունեցող մարտկոցներով, նատրիումային մարտկոցներով, լիթիումի մետաղական մարտկոցներով կամ լիթիում-իոնային մարտկոցներով, փոխադրվում են այդ մարտկոցը (մարտկոցները) դրանց մեջ տեղադրված վիճակում, պետք է համապատասխանաբար ընդգրկվեն հետևյալ դիրքերում՝ ՄԱԿ-ի նշագրման 3166 համար՝ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑ՝ ԴՅՈՒՐԱՎԱՌ ԳԱՋՈՎ ԱՇԽԱՏՈՂ, կամ ՄԱԿ-ի նշագրման 3166 համար՝ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑ՝ ԴՅՈՒՐԱՎԱՌ ՀԵՂՈՒԿՈՎ ԱՇԽԱՏՈՂ: Վառելիքային էլեմենտ պարունակող փոխադրամիջոցները պետք է ընդգրկվեն հետևյալ դիրքերում՝ ՄԱԿ-ի նշագրման 3166 համար՝ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑ, ՎԱՌԵԼԻՔԱՅԻՆ ԷԼԵՄԵՆՏ՝ ԴՅՈՒՐԱՎԱՌ ԳԱՋՈՎ ԱՇԽԱՏՈՂ, ՄԱԿ-ի նշագրման 3166 համար՝ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑ, ՎԱՌԵԼԻՔԱՅԻՆ ԷԼԵՄԵՆՏ՝ ԴՅՈՒՐԱՎԱՌ ՀԵՂՈՒԿՈՎ ԱՇԽԱՏՈՂ:

Փոխադրամիջոցները, մարտկոցներից բացի, կարող են պարունակել այլ վտանգավոր բեռներ (օրինակ՝ կրակմարիչներ, սեղմված գազի կուտակիչներ կամ ապահովիչ սարքեր), որոնք անհրաժեշտ են դրանց գործարկման կամ անվտանգ շահագործման համար՝ չենթարկվելով այդ վտանգավոր բեռներին ներկայացվող որեւէ լրացուցիչ պահանջի, եթե այլ բան նշված չէ «ԱԴՌ» համաձայնագրում:

- 241 Բաղադրությունը պետք է պատրաստված լինի այնպես, որ փոխադրման ընթացքում այն միատարր մնա եւ չենթարկվի տրոհման: Նիտրոցելյուլոզի ցածր պարունակությամբ բաղադրությունները, որոնք «Փորձարկումների եւ չափորոշիչների ձեռնարկ»-ի 1-ին մասով նախատեսվող՝ համապատասխանաբար 1 (ա), 2 (բ) եւ 2 (գ) սերիայի փորձարկումների համաձայն դետոնացիային, դեֆլագրացիային կամ պայթյունին դիմակայելու փորձարկման ժամանակ որոշակի պայմաններում տաքացվելու դեպքում չեն դրսևորում վտանգավոր հատկություններ եւ, որոնք դյուրավառ պինդ նյութեր չեն

«Փորձարկումների և չափորոշիչների ձեռնարկ»-ի III մասի 33.2.1.4 բաժնով նախատեսված՝ նշագրման 1-ին համարի փորձարկման արդյունքների համաձայն (հարկ եղած դեպքում փշուրները մանրանում և ցրվում են՝ 1,25 մմ-ից փոքր չափսի մասնիկներ ստանալու համար), չեն ենթարկվում «ԱԴԲ» համաձայնագրի պահանջներին:

- 242 «ԱԴԲ» համաձայնագրի պահանջները չեն տարածվում ծծումբի վրա, երբ այն որոշակի ձեւի է հասցվել (օրինակ՝ կծիկներ, հատիկներ, հաբեր, գնդիկներ կամ փաթիլներ):
- 243 Կայծային այրման շարժիչներում օգտագործվող բենզինը, ավտոմոբիլային բենզինը և շարժիչային բենզինը (օրինակ՝ մեքենաներում, ամրակայված և այլ շարժիչներում) պետք է դասվեն այս դիրքին՝ անկախ ցնդելիության տատանումներից:
- 244 Այս դիրքը ներառում է, օրինակ, այլումինային խարամ, վաննաների մակերեսից առանձնացված այլումինի խարամներ, բանեցրած կատոդներ, վաննաների համար ներպատող նյութի թափոններ և այլումինային աղի շլակներ:
- 247 Ծավալով 24%-ից ավելի, սակայն 70%-ից ոչ ավելի սպիրտ պարունակող ոգելից խմիչքներն արտադրական գործընթացի շրջանակներում փոխադրվելիս կարող են փոխադրվել 4.1.1-ի ընդհանուր պահանջները բավարարող՝ 250 լիտրը գերազանցող, սակայն 500 լիտրից ոչ ավելի տարողությամբ փայտե տակառներում ստորեւ նշված պայմանների պահպանման դեպքում՝
- ա) նախքան լցավորումը փայտե տակառներն անհրաժեշտ է ստուգել և օղակները ձգել:
  - բ) պետք է թողնվի բավականաչափ չլցված ծավալ (3%-ից ոչ պակաս)՝ հեղուկի ընդլայնման համար:
  - գ) փայտե տակառները պետք է փոխադրվեն բկանցքներով դեպի վերեւ:
  - դ) փայտե տակառները պետք է փոխադրվեն ԱԿԿ-ի պահանջները բավարարող կոնտեյներներում: Յուրաքանչյուր փայտե տակառ պետք է ապահով, համապատասխան միջոցների օգնությամբ ամրացվի հատուկ հենոցներին՝ փոխադրման ընթացքում վերջինիս որեւէ տեղափոխում կանխելու նպատակով:
- 249 Կոռոզիայից ստաբիլիզացված՝ 10% երկաթի նվազագույն պարունակությամբ ֆեռոցերիումը չի ենթարկվում «ԱԴԲ» համաձայնագրի պահանջներին:
- 250 Այս դիրքը կարող է կիրառվել բացառապես հետազոտման նպատակով վերցված քիմիական նյութերի նմուշների համար՝ կապված քիմիական

զենքի մշակման, արտադրման, կուտակման եւ կիրառման արգելման ու դրանց վերացման մասին կոնվենցիայի կիրարկման հետ: Սույն դիրքի պահանջների համաձայն՝ նյութերի փոխադրումը պետք է իրականացվի Քիմիական զենքի արգելման հարցերով կազմակերպության կողմից սահմանված պահպանման համակարգի եւ անվտանգության ընթացակարգերի համաձայն:

Քիմիական նմուշը կարող է փոխադրվել բացառապես իրավասու մարմնի կամ Քիմիական զենքերի արգելման հարցերով կազմակերպության գլխավոր տնօրենի նախնական թույլտվությամբ, ինչպես նաեւ այն պայմանով, որ նմուշը բավարարում է ստորեւ բերված պահանջները՝

ա) այն պետք է փաթեթավորված լինի ԻԿԱՕ տեխնիկական ցուցումների 623-րդ փաթեթավորման ցուցման համաձայն (տե՛ս Լրացման S-3-8 գլուխը), եւ

բ) փոխադրման ընթացքում տրանսպորտային փաստաթղթին կից պետք է ներկայացվի փոխադրման թույլտվության փաստաթղթի պատճեն, որտեղ նշվում են քանակության սահմանափակումը եւ փաթեթավորման վերաբերյալ դրույթները:

251 «ՔԻՄԻԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԿՈՄՊԼԵԿՏ կամ ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿՈՄՊԼԵԿՏ» դիրքը նախատեսված է այն տարբեր վտանգավոր բեռների փոքր քանակություններ պարունակող արկղերի, տուփերի եւ այլ համանման իրերի նկատմամբ կիրառելու համար, որոնք օգտագործվում են, օրինակ, բժշկական, վերլուծական կամ փորձարկման կամ էլ վերանորոգման նպատակներով: Նման կոմպլեկտները չպետք է պարունակեն այնպիսի վտանգավոր բեռներ, որոնց համար 3.2 գլխի Ա աղյուսակի (7ա) սյունակում նշված է «0» քանակությունը:

Բաղադրիչները չպետք է միմյանց հետ վտանգավոր ռեակցիայի մեջ մտնեն (տե՛ս «վտանգավոր ռեակցիա» 1.2.1-ում): Վտանգավոր բեռների ընդհանուր քանակությունը ցանկացած մեկ արկղիկում չպետք է գերազանցի 1 լիտրը կամ 1 կիլոգրամը: Ամբողջ արկղիկն անհրաժեշտ է դասել առավել խիստ պահանջներին համապատասխանող փաթեթավորման խմբին, որին դասվում է կոմպլեկտում առկա ցանկացած առանձին նյութ:

Եթե արկղիկը պարունակում է միայն այնպիսի վտանգավոր բեռներ, որոնք չեն դասվում փաթեթավորման որեւէ խմբի, ապա անհրաժեշտ չէ վտանգավոր բեռների մասին տրանսպորտային փաստաթղթերում նշել փաթեթավորման որեւէ խումբ:

Առաջին օգնություն ցուցաբերելու կամ շահագործման նպատակներով

փոխադրամիջոցներով փոխադրվող կոմպլեկտները չեն ենթարկվում «ԱԴԴ» համաձայնագրի պահանջներին:

Ներքին փաթեթվածքներում վտանգավոր բեռներ պարունակող քիմիական նյութերի կոմպլեկտները եւ առաջին օգնության դեղարկղերը, որոնք չեն գերազանցում 3.2 գլխի Ա աղյուսակի (7ա) սյունակում նշված առանձին նյութերի նկատմամբ կիրառվող սահմանային արժեքները, կարող են փոխադրվել 3.4 գլխի դրույթների համաձայն:

- 252 Եթե ամոնիումի նիտրատը մնում է լուծույթում՝ փոխադրման ցանկացած պայմաններում, ապա 0,2%-ից ոչ ավելի վառելանյութի պարունակությամբ եւ 80%-ից ոչ ավելի կոնցենտրացիայով դյուրավառ նյութի պարունակությամբ ամոնիումի նիտրատի ջրային լուծույթների վրա չեն տարածվում «ԱԴԴ» համաձայնագրի պահանջները:
- 266 Եթե այս նյութը նշվածից պակաս սպիրտ, ջուր կամ զգայանվազիչ է պարունակում, ապա այն կարող է փոխադրվել բացառապես իրավասու մարմնի հատուկ թույլտվությամբ (տե՛ս 2.2.1.1):
- 267 «C» տեսակի՝ քլորատներ պարունակող բոլոր բրիզանտ պայթուցիկ նյութերը պետք է տարանջատվեն ամոնիումի նիտրատ կամ ամոնիումի այլ աղեր պարունակող պայթուցիկ նյութերից:
- 270 5.1 դասի պինդ անօրգանական նիտրատների ջրային լուծույթները ենթադրաբար չեն բավարարում 5.1 դասի չափորոշիչներին, եթե փոխադրման ընթացքում առաջացող նվազագույն ջերմաստիճանում նյութերի կոնցենտրացիան լուծույթում չի գերազանցում հազեցման սահմանի 80%-ը:
- 271 Լակտոզան կամ գլյուկոզան կամ էլ համանման նյութերը կարող են օգտագործվել որպես զգայանվազիչ՝ պայմանով, որ նյութի զգայանվազիչ զանգվածային պարունակությունը ոչ պակաս, քան 90% է: Իրավասու մարմինը կարող է թույլ տալ այդ խառնուրդները դասել 4.1 դասին «Փորձարկումների եւ չափորոշիչների ձեռնարկ»-ի I մասի 16-րդ բաժնով նախատեսվող՝ 6(գ) սերիայի փորձարկման արդյունքների հիման վրա, որին ենթարկվում են փոխադրման համար նախապատրաստված տեսակում առնվազն երեք փաթեթ: «ԱԴԴ» համաձայնագրի պահանջները չեն տարածվում զգայանվազիչ 98%-ից ոչ պակաս զանգվածային պարունակությամբ խառնուրդների վրա: Զգայանվազիչ 90%-ից ոչ պակաս զանգվածային պարունակությամբ խառնուրդներով փաթեթները չպետք է ունենան թիվ 6.1 նմուշի նշան:
- 272 Այս նյութը կարող է փոխադրվել 4.1 դասի համար նախատեսվող դրույթների համաձայն՝ բացառապես իրավասու մարմնի հատուկ թույլտվությամբ (տե՛ս համապատասխանաբար ՄԱԿ-ի նշագրման 0143

համարը կամ ՄԱԿ-ի նշագրման 0150 համարը):

- 273 Ինքնատաքացման դեմ կայունացված մաները եւ մաների պատրաստուկները կարող են չդասվել 4.2 դասին, եթե փորձարկման արդյունքում կարելի է ցույց տալ, որ նյութի 1 մ3 ծավալը ենթակա չէ ինքնաբռնկման, եւ որ նմուշի կենտրոնում ջերմաստիճանը չի գերազանցում 200°C-ը, երբ նմուշի ջերմաստիճանը պահպանվում է 75 °C ± 2 °C-ից ոչ պակաս 24 ժամվա ընթացքում:
- 274 Կիրառվում են 3.1.2.8-ի դրույթները:
- 278 Այս նյութերը դասակարգվում եւ փոխադրվում են բացառապես իրավասու մարմնի թույլտվությամբ փոխադրման համար նախապատրաստված փաթեթներում՝ «Փորձարկումների եւ չափորոշիչների ձեռնարկ»-ի I մասով նախատեսվող՝ 6(գ) սերիայի եւ 2-րդ սերիայի փորձարկումների արդյունքների հիման վրա (տե՛ս 2.2.1.1): Իրավասու մարմինը նշանակում է փաթեթավորման խումբը 2.2.3-ի չափորոշիչների եւ 6(գ) սերիայի փորձարկման համար օգտագործվող փաթեթի տեսակի հիման վրա:
- 279 Նյութն ընդգրկվում է փաթեթի տվյալ դասում կամ խմբում՝ առկա փորձի, այլ ոչ թե «ԱԴԴ» համաձայնագրով սահմանված դասակարգման չափորոշիչների խիստ կիրառման հիման վրա:
- 280 Այս դիրքը կիրառվում է փոխադրամիջոցներում, վերջոյա նավերում կամ օդանավերում տեղադրված անվտանգության այն սարքերի նկատմամբ, ինչպես օրինակ՝ անվտանգության բարձիկների գազալցման սարքեր, անվտանգության բարձիկների մոդուլներ, անվտանգության գոտիների ձգող սարքեր եւ հրատեխնիկական սարքեր, որոնք որպես բաղադրիչ մասեր փոխադրվելիս պարունակում են 1-ին դասին կամ այլ դասերի դասված վտանգավոր բեռներ, եւ եթե փոխադրման համար ներկայացված ձեռով այդ պատրաստվածքները փորձարկումներ են անցել «Փորձարկումների եւ չափորոշիչների ձեռնարկ»-ի I մասի 6 (գ) սերիայի փորձարկումների համաձայն, որոնց ընթացքում սարքը չի պայթել, սարքի կմախքը կամ ճնշումային տարան չի վնասվել եւ չի առաջացել փշուրները ցրելու կամ ջերմային ներգործության վտանգ, որը կարող էր զգալիորեն խոչընդոտել հրդեհը հանգցնելուն ուղղված միջոցների կամ այլ արտակարգ միջոցների ձեռնարկմանն անմիջական մոտակայքում: Այս դիրքը չի կիրառվում 296-րդ հատուկ դրույթում նկարագրված փրկարարական միջոցների նկատմամբ (ՄԱԿ-ի նշագրման 2990 եւ 3072 համարներ):
- 282 (Հանվել է)
- 283 «ԱԴԴ» համաձայնագրի պահանջները չեն տարածվում գազ պարունակող այն պատրաստվածքների վրա, որոնք նախատեսված են

որպես թափամեղմիչ օգտագործվելու համար, ներառյալ՝ հարվածի ժամանակ էներգիայի կլանման համար սարքերը կամ օդաճնշական զսպանը, եթե՝

- ա) յուրաքանչյուր պատրաստվածք ունի 280 բարը չգերազանցող լիցքավորման ճնշմամբ 1,6 լիտրը չգերազանցող տարողությամբ գազային խցիկ, ընդ որում, տարողության արժեքների (լիտրերով) եւ լիցքավորման ճնշման (բարերով) արտադրյալը չի գերազանցում 80-ը (օրինակ՝ գազային խցիկի տարողությունը՝ 0,5 լ եւ լիցքավորման ճնշումը՝ 160 բար, գազային խցիկի տարողությունը՝ 1 լ եւ լիցքավորման ճնշումը՝ 80 բար, գազային խցիկի տարողությունը՝ 1,6 լ եւ լիցքավորման ճնշումը՝ 50 բար, գազային խցիկի տարողությունը՝ 0,28 լ եւ լիցքավորման ճնշումը՝ 280 բար)։
- բ) յուրաքանչյուր պատրաստվածք ունի նվազագույն պայթման ներքին ճնշում, որը չորս անգամ գերազանցում է լիցքավորման ճնշումը 20°C ջերմաստիճանում գազային խցիկի 0,5 լ-ը չգերազանցող տարողության դեպքում եւ հինգ անգամ գերազանցում է լիցքավորման ճնշումը 0,5 լ-ը գերազանցող տարողության դեպքում։
- գ) յուրաքանչյուր պատրաստվածք պատրաստված է այնպիսի նյութից, որը պայթելու դեպքում ենթակա չէ մասնատման։
- դ) յուրաքանչյուր պատրաստվածք պատրաստված է իրավասու մարմնի կողմից կիրառելի որակի երաշխիքի ստանդարտին համապատասխան, եւ
- ե) կառուցվածքի տեսակը ենթարկվել է կրակով փորձարկման, որի հետեւանքով ցույց է տրվել, որ պատրաստվածքի ներսում ներքին ճնշումն արտանետվում է դյուրահալ ապահովիչի միջոցով կամ ճնշումը նվազեցնող այլ սարքի միջոցով այնպես, որ պատրաստվածքը չի ենթարկվում մասնատման եւ կտրուկ նետման։

Տե՛ս նաեւ 1.1.3.2 (դ) կետը փոխադրամիջոցի շահագործման համար կիրառվող սարքավորման մասով։

284 Օքսիդացնող նյութեր պարունակող թթվածնի քիմիական գեներատորը պետք է բավարարի հետեւյալ պահանջները՝

- ա) եթե գեներատորը պարունակում է պայթուցիկ գործարկող սարք, ապա այն պետք է փոխադրվի սույն դիրքի համաձայն միայն այն դեպքում, եթե այն բացառված է 1-ին դասից՝ 2.2.1.1.1 (բ)-ի

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅԱՆ համաձայն.

- բ) առանց փաթեթվածքի գեներատորը պետք է առանց պարունակության կորստի եւ առանց սարքի աշխատելու կարողանա դիմակայել կոշտ, ոչ առածգական, հարթ, հորիզոնական մակերես ունեցող 1,8 մ բարձրությունից անկման փորձարկմանն այնպիսի դիրքում, որի ժամանակ առավել բարձր է վնասվածք ստանալու հավանականությունը.
  - գ) եթե գեներատորը սարքավորված է գործարկող սարքով, ապա այն պետք է ունենա պատահական աշխատանքը կանխարգելող առնվազն երկու հուսալի միջոցներ:
- 286 Սույն դիրքով նախատեսվող՝ յուրաքանչյուրը զանգվածով 0,5 գրամը չգերազանցող նիտրոցեյլոզային թաղանթային զտիչների վրա չեն տարածվում «ԱԴԴ» համաձայնագրի պահանջները, եթե դրանք առկա են առանձին պատրաստվածքի մեջ կամ կնքված փաթեթում:
- 288 Այս նյութերը դասակարգվում եւ փոխադրվում են բացառապես իրավասու մարմնի թույլտվությամբ (տե՛ս 2.2.1.1)՝ «Փորձարկումների եւ չափորոշիչների ձեռնարկ»-ի I մասի 6(գ) սերիայի եւ 2-րդ սերիայի՝ փոխադրման համար նախապատրաստած փաթեթների վրա իրականացված փորձարկումների արդյունքների հիման վրա:
- 289 Փոխադրամիջոցներում, վագոններում, վերջրյա նավերում կամ օդանավերում կամ կոմպլեկտավորված հանգույցներում, ինչպես օրինակ՝ ղեկասյունակները, դռնային պանելները, նստատեղերը եւ այլն, տեղադրված էլեկտրական հարուցմամբ անվտանգության սարքերը կամ անվտանգության հրատեխնիկական սարքերը չեն կարգավորվում «ԱԴԴ» համաձայնագրով:
- 290 Եթե այս նյութը համապատասխանում է 2-րդ մասում սահմանված այլ դասերի սահմանումներին եւ չափորոշիչներին, ապա այն պետք է դասակարգվի ստորեւ ներկայացվածի համաձայն՝
- ա) եթե նյութը բավարարում է 3.5 գլխում սահմանված՝ բացառված քանակություններով վտանգավոր բեռների համար չափորոշիչները, ապա փաթեթվածքները պետք է համապատասխանեն 3.5.2-ին եւ բավարարեն 3.5.3-ով նախատեսվող փորձարկման պահանջները: Ռադիոակտիվ նյութի՝ բացառված փաթեթների նկատմամբ կիրառվող՝ 1.7.1.5-ով սահմանված բոլոր այլ պահանջները կիրառվում են այլ դասի հղմամբ.
  - բ) եթե քանակությունը գերազանցում է 3.5.1.2-ում սահմանված սահմանաչափերը, նյութը պետք է դասակարգվի գերակա լրացուցիչ ռիսկի համաձայն: Տրանսպորտային փաստաթղթում պետք է նկարագրվի 3.2 գլխի Ա աղյուսակի 2-րդ սյունակի



համաձայն ռադիոակտիվ ազատված փաթեթի նկատմամբ կիրառվող անվանը հավելված այլ դասի նկատմամբ կիրառվող ՄԱԿ-ի նշագրման համարով եւ բեռնառաքման ճշգրիտ անվանմամբ նյութը, եւ նյութը պետք է փոխադրվի ՄԱԿ-ի նշագրման տվյալ համարի նկատմամբ կիրառվող դրույթների համաձայն: Տրանսպորտային փաստաթղթում արտացոլված տեղեկությունները, օրինակ, հետեւյալն են.

ՄԱԿ-ի նշագրման 1993 համար, դյուրավառ հեղուկ, այլ կերպ չնշված (էթանոլ եւ տոլուոլի խառնուրդ), ռադիոակտիվ նյութ, ազատված փաթեթ՝ նյութի սահմանափակ քանակություն, 3, PG II":

Դրանից բացի կիրառվում են 2.2.7.2.4.1-ի պահանջները՝

- գ) սահմանափակ քանակություններով փաթեթավորված վտանգավոր բեռների փոխադրման համար 3.4 գլխի դրույթները չեն կիրառվում (բ) ենթապարբերության համաձայն դասակարգված նյութերի նկատմամբ.
- դ) եթե նյութը բավարարում է հատուկ դրույթի պահանջները, որն ազատում է այս նյութն այլ դասերի բոլոր վտանգավոր բեռների մասին դրույթների պահանջներից, ապա այն պետք է դասակարգվի 7-րդ դասի ՄԱԿ-ի նշագրման կիրառվող համարի համաձայն, եւ պետք է կիրառվեն 1.7.1.5-ում սահմանված բոլոր պահանջները:

291 Դյուրավառ հեղուկացված գազերը պետք է առկա լինեն սառնարանային սարքի բաղադրիչներում: Այդ բաղադրիչները պետք է նախագծվեն եւ փորձարկվեն այն ճնշման հաշվարկով, որն առնվազն երեք անգամ գերազանցում է սարքի աշխատանքային ճնշումը: Սառեցնող սարքը պետք է նախագծվի եւ պատրաստվի այնպես, որ կարողանա պահել հեղուկացված գազը եւ կանխարգելել փոխադրման սովորական պայմաններում ճնշման տակ գտնվող բաղադրիչների պայթելու կամ ճաքելու ռիսկը: «ԱԴԴ» համաձայնագրի պահանջները չեն տարածվում սառեցնող սարքի եւ սառեցնող սարքի բաղադրիչների վրա, եթե դրանք 12 կգ-ից պակաս գազ են պարունակում:

292 (Հանվել է)

293 Լուցկիների նկատմամբ կիրառվում են հետեւյալ սահմանումները.

- ա) բռնկիչ լուցկիներն այն լուցկիներն են, որոնց գլխիկները պատրաստված են շփման նկատմամբ զգայուն բոցավառիչ բաղադրության եւ հրատեխնիկական բաղադրության կիրառմամբ, որի այրման ժամանակ նկատվում է աննշան կրակ կամ կրակի բացակայություն, սակայն մեծ քանակությամբ ջերմություն է առաջանում.

- բ) անվտանգ լուցկիներն այն լուցկիներն են, որոնք տեղադրված են արկղերում, գրքույկներում կամ ստվարաթղթերում, կամ էլ ամրացված են վերջիններիս եւ կարող են բոցավառվել միայն հատուկ մակերեսի հետ շփվելիս.
  - գ) ցանկացած մակերեսի հետ շփումից բռնկվող լուցկիներն այն լուցկիներն են, որոնք կարող են վառվել պինդ մակերեսի հետ շփվելիս.
  - դ) «Վեստա» պարաֆինացված լուցկիներն այն լուցկիներն են, որոնք կարող են վառվել հատուկ կամ էլ կոշտ մակերեսի հետ շփվելիս:
- 295 Մարտկոցներն առանձին մակնշելու եւ պիտակավորելու պահանջ չի ներկայացվում, եթե համապատասխան մակնշումը կամ պիտակը դրված է տակդիրի վրա:
- 296 Այս դիրքերը կիրառվում են փրկարարական միջոցների նկատմամբ, ինչպես օրինակ՝ փրկարարական լաստեր, լողալու համար անհատական միջոցներ եւ ինքնափչվող սանդուղքներ: ՄԱԿ-ի նշագրման 2990 համարը կիրառվում է ինքնափչվող միջոցների նկատմամբ, իսկ ՄԱԿ-ի նշագրման 3072 համարը կիրառվում է այն փրկարարական միջոցների նկատմամբ, որոնք ինքնափչվող չեն: Փրկարարական միջոցները կարող են պարունակել՝
- ա) ազդանշանային սարքեր (1-ին դաս), որոնք կարող են ներառել իրենց պատահական աշխատանքը խոչընդոտող փաթեթվածքում փաթեթավորված ծխային եւ լուսային ազդանշաններ.
  - բ) միայն ՄԱԿ-ի նշագրման 2990 համարում կարող են ընդգրկվել 1.4 ենթադասի, «S» համատեղելիության խմբի մեխանիզմների բանեցման համար պարկուճները՝ որպես ինքնափչման մեխանիզմ, պայմանով, որ պայթուցիկ նյութերի քանակությունը մեկ միջոցի հաշվով չի գերազանցում 3,2 գրամը.
  - գ) 2.2.2.1.3-ի համաձայն՝ 2-րդ դասի սեղմված կամ հեղուկացված գազերը, «A» կամ «O» խմբերը.
  - դ) էլեկտրական կուտակչային մարտկոցներ (8-րդ դաս) եւ լիթիումային մարտկոցներ (9-րդ դաս).
  - ե) փոքր քանակությամբ վտանգավոր բեռներ (օրինակ՝ 3, 4.1, 5.2, 8 կամ 9 դասի նյութեր) պարունակող առաջին օգնության դեղարկղեր կամ վերանորոգման կոմպլեկտներ, կամ
  - զ) «ցանկացած մակերեսի հետ շփումից բռնկվող» լուցկիները՝ իրենց պատահական աշխատանքը խոչընդոտող փաթեթվածքի մեջ

փաթեթավորված:

«ԱԴԴ» համաձայնագրի պահանջները չեն տարածվում ամուր եւ կոշտ արտաքին փաթեթվածքներով փաթեթավորված, ընդհանուր 40 կգ առավելագույն անզուտ քաշ ունեցող այն փրկարարական միջոցների վրա, որոնք, բացի 2-րդ դասի «A» կամ «O» խմբերի սեղմված կամ հեղուկացված գազերից, չեն պարունակում որեւէ այլ վտանգավոր բեռ, գտնվում են 120 մլ-ը չգերազանցող տարողությամբ տարաներում, որոնք տեղադրված են բացառապես տվյալ միջոցն ակտիվացնելու համար:

298 (Հանվել է)

300 Ձկնալյուրը, ձկնային մնացուկները եւ կրիլի ալյուրը չեն թույլատրվում բեռնման, եթե վերջիններիս ջերմաստիճանը բեռնման ժամանակ գերազանցում է 35°C-ը կամ 5°C-ով բարձր է մթնոլորտային ջերմաստիճանից, ընդ որում, որպես հիմք է ընդունվում առավել բարձր ջերմաստիճանը:

302 Ոչ մի այլ վտանգավոր բեռ չպարունակող ծխահարմամբ վարակազերծված տրանսպորտային միավորները կարգավորվում են միայն 5.5.2-ի դրույթներով:

303 Տարաներն ընդգրկվում են այն դասակարգված ծածկագրում, որին դասվել են դրանց մեջ պարունակվող գազը կամ գազերի խառնուրդները, եւ որը որոշվում է 2.2.2-ի դրույթների համաձայն:

304 Այս դիրքը կարող է կիրառվել բացառապես այն չակտիվացված մարտկոցների փոխադրման համար, որոնք պարունակում են չոր կալիումի հիդրօքսիդ եւ որոնք նախատեսվում է ակտիվացնել մինչեւ օգտագործումն առանձին հատվածներում՝ ջրի համապատասխան քանակության հավելմամբ:

305 «ԱԴԴ» համաձայնագրի պահանջները չեն տարածվում այս նյութերի վրա, երբ վերջիններիս կոնցենտրացիան չի գերազանցում 50 մգ/կգ-ը:

306 Սույն դիրքը կարող է կիրառվել միայն այն նյութերի համար, որոնք 2-րդ սերիային համապատասխան իրականացված փորձարկման ենթարկվելու ժամանակ չափազանց անզգայուն են 1-ին դասում ընդգրկվելու համար (տե՛ս «Փորձարկումների եւ չափորոշիչների ձեռնարկ», I մաս):

307 Սույն դիրքը կարող է կիրառվել բացառապես միասեռ խառնուրդների համար, որոնք պարունակում են ամոնիումի նիտրատ՝ որպես հիմնական բաղադրատարր, հետեւյալ սահմանային կոնցենտրացիաներով՝

ա) 90%-ից ոչ պակաս ամոնիումի նիտրատ՝ 0,2%-ից ոչ ավելի ածխածնով հաշվարկվող վառելիք/օրգանական նյութի ընդհանուր պարունակությամբ եւ ավելացված անօրգանական ու

ամոնիումի նիտրատի նկատմամբ չեզոք նյութի հնարավոր առկայության դեպքում, կամ

- բ) այլ անօրգանական նյութերի հետ խառնուրդում ամոնիումի նիտրատի 90%-ից պակաս, սակայն 70%-ից ավելի կամ կալցիում կարբոնատի եւ (կամ) դոլոմիտի հետ խառնուրդում 80%-ից ավելի, սակայն 90%-ից պակաս ամոնիումի նիտրատի կամ էլ 0,4%-ից ոչ ավելի ածխածնով հաշվարկված վառելիք/օրգանական նյութի ընդհանուր պարունակությամբ, կամ
- գ) ամոնիումի նիտրատի եւ ամոնիումի սուլֆատի խառնուրդներ պարունակող ազոտային տեսակի ամոնիումի նիտրատի հիմքով պարարտանյութեր՝ 45%-ից ավելի, սակայն 70%-ից պակաս ամոնիումի նիտրատի պարունակությամբ եւ 0,4%-ը չգերազանցող՝ ածխածնով հաշվարկված վառելիք/օրգանական նյութի ընդհանուր պարունակությամբ այնպես, որ ամոնիումի նիտրատի եւ ամոնիումի սուլֆատի տոկոսային կոնցենտրացիաների գումարը գերազանցում է 70%-ը:

309 Նշված դիրքը կիրառվում է չզգայունացված էմուլսիաների, սուսպենզիաների եւ գելերի համար, որոնք հիմնականում բաղկացած են «E» տեսակի բրիզանտ պայթուցիկ նյութի արտադրության համար նախատեսվող ամոնիումի նիտրատից եւ վառելանյութից՝ բացառապես հետագա մշակման համար նախքան օգտագործումը:

Էմուլսիաների դեպքում խառնուրդը սովորաբար ունի հետեւյալ բաղադրությունը՝ 60-85% ամոնիումի նիտրատ, 5-30% ջուր, 2-8% վառելանյութ, 0,5-4% էմուլսարար նյութ, 0-10% լուծվող բոցամարիչ տարրեր եւ ծրագծման հավելումներ: Ամոնիումի նիտրատը կարող է մասամբ փոխարինվել անօրգանական նիտրատային աղերով:

Սուսպենզիաների եւ գելերի դեպքում խառնուրդը սովորաբար ունի հետեւյալ բաղադրությունը՝ 60-85% ամոնիումի նիտրատ, 0-5% նատրիումի կամ կալիումի պերքլորատ, 0-17% հեքսամինի նիտրատ կամ մոնոմեթիլամինի նիտրատ, 5-30% ջուր, 2-15% վառելանյութ, 0,5-4% խտացուցիչ, 0-10% լուծվող բոցամարիչ տարրեր եւ ծրագծման հավելումներ: Ամոնիումի նիտրատը կարող է մասամբ փոխարինվել անօրգանական նիտրատային աղերով:

Նյութերը պետք է բավարարեն «Փորձարկումների եւ չափորոշիչների ձեռնարկ»-ի I մասի 18-րդ բաժնով նախատեսվող 8-րդ սերիայի փորձարկումների 8 (ա), (բ) եւ (գ) փորձարկումների պահանջները եւ պետք է հաստատվեն իրավասու մարմնի կողմից:

310 «Փորձարկումների եւ չափորոշիչների ձեռնարկ»-ի 38.3 ենթաբաժնի III մասում նշված փորձարկման պահանջները չեն կիրառվում 100-ից ոչ

ավելի լիթումային էլեմենտներից եւ մարտկոցներից բաղկացած արտադրական խմբաքանակների կամ էլեմենտների եւ մարտկոցների նախարտադրական նախատիպերի նկատմամբ, երբ այդ նախատիպերը փոխադրվում են փորձարկման նպատակով այն դեպքում, երբ դրանք փաթեթավորվել են 4.1.4.1-ի «P910» փաթեթավորման ցուցմանը համապատասխան:

Տրանսպորտային փաստաթուղթը պետք է ներառի հետևյալ նշումը՝ «Փոխադրումը՝ 310-րդ հատուկ դրույթին համապատասխան»

Վնասված կամ խոտանված էլեմենտները, մարտկոցները կամ սարքավորման մեջ պարունակվող էլեմենտները եւ մարտկոցները պետք է փոխադրվեն 376-րդ հատուկ դրույթին համապատասխան եւ փաթեթավորվեն համապատասխանաբար՝ 4.1.4.1-ի «P908» կամ 4.1.4.3-ի «LP904» փաթեթավորման ցուցումներին համապատասխան:

Վերացման կամ վերամշակման համար փոխադրվող էլեմենտները, մարտկոցները կամ սարքավորման մեջ տեղադրված էլեմենտները եւ մարտկոցները կարող են փաթեթավորվել 377-րդ հատուկ դրույթին եւ 4.1.4.1-ի «P909» փաթեթավորման ցուցմանը համապատասխան:

311 Նյութերը չեն կարող փոխադրվել այս դիրքի ներքո առանց «Փորձարկումների եւ չափորոշիչների ձեռնարկ»-ի I մասի համաձայն անցկացված համապատասխան փորձարկումների արդյունքների հիման վրա տրվող իրավասու մարմնի թույլտվության: Փաթեթվածքով պետք է ապահովվի, որ ցանկացած պահի փոխադրման ընթացքում նոսրացուցիչի տոկոսային մասնաբաժինը չնվազի իրավասու մարմնի թույլտվության մեջ նշված մակարդակից:

312 Վառելիքային էլեմենտներ ունեցող շարժիչով աշխատող փոխադրամիջոցներին պետք է համապատասխանաբար տրվի ՄԱԿ-ի նշագրման 3166 համարը՝ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑ՝ ՎԱՌԵԼԻՔԱՅԻՆ ԷԼԵՄԵՆՏՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ, ԴՅՈՒՐԱՎԱՌ ԳԱՋՈՎ ԱՇԽԱՏՈՂ, կամ ՄԱԿ-ի նշագրման 3166 համարը՝ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑ՝ ՎԱՌԵԼԻՔԱՅԻՆ ԷԼԵՄԵՆՏՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ, ԴՅՈՒՐԱՎԱՌ ՀԵՂՈՒԿՈՎ ԱՇԽԱՏՈՂ: Այս դիրքերն ընդգրկում են եւ՝ վառելիքային էլեմենտով, եւ՝ ներքին այրման շարժիչով աշխատող այն հիբրիդային էլեկտրական փոխադրամիջոցները՝ հեղուկ էլեմենտներ ունեցող մարտկոցներով, նատրիումային մարտկոցներով, լիթումի մետաղական մարտկոցներով կամ լիթում-իոնային մարտկոցներով, որոնք փոխադրվում են այդ մարտկոցը (մարտկոցները) դրանց մեջ տեղադրված վիճակում:

Ներքին այրման շարժիչ ունեցող մյուս փոխադրամիջոցները պետք է համապատասխանաբար ընդգրկվեն հետևյալ դիրքերում՝ ՄԱԿ-ի նշագրման 3166 համար՝ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑ՝ ԴՅՈՒՐԱՎԱՌ ԳԱՋՈՎ ԱՇԽԱՏՈՂ, կամ ՄԱԿ-ի նշագրման 3166 համար՝ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑ՝

ԴՅՈՒՐԱՎԱՌ ՀԵՂՈՒԿՈՎ ԱՇԽԱՏՈՂ: Այս դիրքերն ընդգրկում են եւ՝ ներքին այրման շարժիչով, եւ՝ հեղուկ էլեմենտներ ունեցող մարտկոցներով, նատրիումային մարտկոցներով, լիթիումի մետաղական մարտկոցներով կամ լիթիում-իոնային մարտկոցներով աշխատող հիբրիդային էլեկտրական փոխադրամիջոցները, որոնք փոխադրվում են այդ մարտկոցը (մարտկոցները) դրանց մեջ տեղադրված վիճակում:

Լիթիումային մարտկոցները պետք է բավարարեն 2.2.9.1.7-ի պահանջները՝ բացառությամբ այն դեպքերի, երբ 667-րդ հատուկ դրույթով նախատեսված է այլ բան:

313 (Հանվել է)

314 ա) Այս նյութերը կարող են ենթարկվել էկզոթերմիկ տրոհման բարձր ջերմաստիճաններում: Տրոհումը կարող է առաջանալ ջերմության կամ խառնուկների ներգործությամբ (օրինակ՝ մետաղների փոշիներով (երկաթ, մարգանեց, կոբալտ, մագնիում) եւ դրանց միացություններով):

բ) փոխադրման ընթացքում այդ նյութերը պետք է պաշտպանված լինեն արեւի ուղիղ շողերից եւ ջերմության բոլոր աղբյուրներից եւ տեղադրվեն պատշաճ կերպով օդափոխված տարածքում:

315 Այս դիրքը չպետք է կիրառվի 6.1 դասի այն նյութերի համար, որոնք բավարարում են 2.2.61.1.8-ում նշված փաթեթավորման I խմբի համար ինհալյացիոն թունայնության չափորոշիչները:

316 Այս դիրքը կիրառվում է բացառապես ոչ փխրուն հաբերի տեսքով փոխադրվող կալցիումի չոր հիպոքլորիտի նկատմամբ:

317 «Տրոհվող-ազատված» անվանումը կիրառվում է այն տրոհվող նյութերի եւ տրոհվող նյութ պարունակող փաթեթների նկատմամբ, որոնք բացառված են 2.2.7.2.3.5-ին համապատասխան:

318 Փաստաթղթավորման նպատակներով բեռնառաքման ճշգրիտ անվանումից բացի պետք է նշվի տեխնիկական անվանումը (տե՛ս 3.1.2.8): Եթե փոխադրման ենթակա վարակիչ նյութերը հայտնի չեն, սակայն ենթադրվում է, որ դրանք համապատասխանում են «A» կատեգորիայում ներառելու եւ ՄԱԿ-ի նշագրման 2814 կամ 2900 համարին դասելու չափորոշիչներին, ապա տրանսպորտային փաստաթղթում բեռնառաքման ճշգրիտ անվանումից հետո փակագծերում պետք է նշվի հետեւյալը՝ «A կատեգորիային ենթադրաբար դասվող վարակիչ նյութ»:

319 P650 փաթեթավորման ցուցմանը համաձայն մակնշված

փաթեթավորված նյութերի եւ փաթեթների վրա չի տարածվում «ԱԴՌ» համաձայնագրի որեւէ այլ պահանջ:

320 (Հանվել է)

321 Պահման այս համակարգերը պետք է միշտ դիտվեն որպես ջրածին պարունակող համակարգեր:

322 Եթե այս բեռները փոխադրվում են ոչ որպես փխրուն հաբեր, ապա դրանք դասվում են փաթեթավորման III խմբին:

323 (Նախատեսվում է վերապահում)

324 Այս նյութը պետք է կայունացվի 99%-ը չգերազանցող կոնցենտրացիաների դեպքում:

325 Չտրոհվող կամ տրոհվող ազատված ուրանի հեքսաֆտորիդի դեպքում այդ նյութը դասակարգվում է ՄԱԿ-ի նշագրման 2978 համարի ներքո:

326 Տրոհվող ուրանի հեքսաֆտորիդի դեպքում այդ նյութը դասակարգվում է ՄԱԿ-ի նշագրման 2977 համարի ներքո:

327 5.4.1.1.3-ի դրույթների համաձայն առաքվող շահագործումից հանված աերոզոլները կարող են փոխադրվել այս դիրքի ներքո՝ վերամշակման կամ օգտահանման նպատակով: Դրանք կարող են չպաշտպանվել տեղաշարժվելուց եւ ականա արտանետումից, եթե նախատեսված են համապատասխան միջոցներ՝ ճնշման վտանգավոր բարձրացումը եւ վտանգավոր մթնոլորտի առաջացումը կանխարգելելու նպատակով: Արտահոսող կամ ուժեղ դեֆորմացվածներից բացի շահագործումից հանված մյուս աերոզոլները փաթեթավորվում են փաթեթավորման «P207» ցուցման եւ «PP87» հատուկ դրույթի համաձայն կամ փաթեթավորման «LP200» ցուցման եւ փաթեթավորման L2 հատուկ դրույթի համաձայն: Արտահոսող կամ խիստ դեֆորմացված աերոզոլները փոխադրվում են վթարային փաթեթվածքներում՝ պայմանով, որ ճնշման վտանգավոր բարձրացման դեմ ուղղված համապատասխան միջոցները ձեռնարկված են:

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Ծովային փոխադրման դեպքում շահագործումից հանված աերոզոլները չպետք է փոխադրվեն փակ կոնտեյներներում:*

328 Այս դիրքը նախատեսված է վառելիքային էլեմենտներով քարթիջների համար, ներառյալ, երբ դրանք գտնվում են սարքի մեջ կամ փաթեթավորված են սարքի հետ: Վառելիքային էլեմենտներով այն քարթիջները, որոնք տեղադրված են վառելիքային էլեմենտներով համակարգի մեջ կամ դրա մասն են կազմում, համարվում են սարքավորման մեջ գտնվող վառելիքային էլեմենտներով քարթիջներ: Վառելիքային էլեմենտներով քարթիջը պատրաստվածք է, որտեղ

պահվում է վառելիքային էլեմենտ մատակարարվող վառելիքը, որի փոխանցումը կատարվում է վառելիքի փոխանցումը դեպի վառելիքային էլեմենտ կարգավորող փականի (փականների) միջոցով: Վառելիքային էլեմենտներով քարթրիջները, ներառյալ՝ սարքավորման մեջ գտնվող քարթրիջները, պետք է նախագծված եւ պատրաստված լինեն այնպես, որ փոխադրման կանոնավոր պայմաններում կանխարգելի վառելիքի արտահոսքը:

Որպես վառելիք հեղուկներ օգտագործող կառուցվածքի տեսակների վառելիքային էլեմենտներով քարթրիջները պետք է անցնեն ներքին ճնշման փորձարկումը 100 կՊա (մանոմետրական) ճնշման տակ՝ առանց արտահոսքի:

Մետաղի դրոշմում ջրածին պարունակող վառելիքային էլեմենտներով քարթրիջներից բացի, որոնք պետք է համապատասխանեն 339-րդ հատուկ դրույթին, վառելիքային էլեմենտներով քարթրիջի կառուցվածքի յուրաքանչյուր տեսակ պետք է 1,2 մետր բարձրությունից անկման փորձարկում անցնի՝ ոչ առաձգական մակերեսի վրա այն դիրքով, որն ամենայն հավանականությամբ կարող է հանգեցնել պաշտպանիչ պատյանի համակարգի վնասվելուն՝ առանց պարունակության կորստի:

Այն դեպքում, երբ վառելիքային էլեմենտի համակարգում առկա են լիթիումի մետաղական կամ լիթիում-իոնային մարտկոցներ, բեռը պետք է փոխադրվի այս դիրքի եւ հետեւյալ համապատասխան դիրքերի ներքո՝ ՄԱԿ-ի նշագրման 3091 համար՝ ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ ՄԵՋ ԱՌԿԱ ԼԻԹԻՈՒՄԻ ՄԵՏԱՂԱԿԱՆ ՄԱՐՏԿՈՑՆԵՐ, կամ ՄԱԿ-ի նշագրման 3481 համար՝ ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ ՄԵՋ ԱՌԿԱ ԼԻԹԻՈՒՄ-ԻՈՆԱՅԻՆ ՄԱՐՏԿՈՑՆԵՐ:

- 329 (Նախատեսվում է վերապահում)
- 330 (Հանվել է)
- 331 (Նախատեսվում է վերապահում)
- 332 «ԱԴՌ» համաձայնագրի պահանջները չեն տարածվում մագնեզիումի նիտրատի հեքսահիդրատի վրա:
- 333 Հարկադրական վառումով շարժիչներում օգտագործման համար գազոլիմի, շարժիչային բենզինի կամ պետրոլի հետ էթանոլի խառնուրդները (օրինակ՝ ավտոմեքենաներում, ստացիոնար շարժիչներում եւ այլ շարժիչներում) պետք է դասվեն այս հատուկ դիրքին՝ անկախ ցնդելիության արժեքներից:
- 334 Վառելիքային էլեմենտներով քարթրիջները կարող են պարունակել ակտիվարար՝ պայմանով, որ այն ապահովված է փոխադրման ժամանակ վառելիքի հետ պատահական միախառնումը կանխարգելելու



համար նախատեսված երկու անկախ միջոցներով:

- 335 «ԱԴԴ» համաձայնագրի պահանջներով չկարգավորվող պինդ նյութերի խառնուրդները եւ շրջակա միջավայրի համար վնասակար հեղուկները կամ պինդ նյութերը պետք է դասվեն ՄԱԿ-ի նշագրման 3077 համարին եւ կարող են փոխադրվել այս հատուկ դիրքին համապատասխան՝ պայմանով, որ նյութի բեռնման կամ փաթեթվածքի կամ բեռնատար տրանսպորտային միավորի փակման ընթացքում բացակայում են արտահոսքի տեսանելի նշանները: Ցանկացած փոխադրամիջոց կամ բեռնատար տրանսպորտային միավոր պետք է լինի անջրանցիկ, երբ այն օգտագործվում է խուռնաբեռն փոխադրման համար: Եթե խառնուրդի բեռնման կամ փաթեթվածքի կամ բեռնատար տրանսպորտային միավորի փակման ժամանակ առկա են արտահոսած հեղուկի տեսանելի նշաններ, ապա խառնուրդը դասակարգվում է ՄԱԿ-ի նշագրման 3082 համարի ներքո:

Հերմետիկ փակված՝ շրջակա միջավայրի համար վտանգավոր 10 մլ-ից պակաս հեղուկ պարունակող, պինդ նյութում կլանված, սակայն փաթեթում կամ պատրաստվածքում առանց ազատ հեղուկի առկայության կամ շրջակա միջավայրի համար վնասակար 10 գ-ից պակաս պինդ նյութ պարունակող փաթեթների կամ պատրաստվածքների վրա չեն տարածվում «ԱԴԴ» համաձայնագրի պահանջները:

- 336 LSA-II կամ LSA-III չայրվող պինդ նյութով առանձին փաթեթը չպետք է պարունակի 3 000 A2-ը գերազանցող ակտիվություն:

- 337 «B(U)» եւ «B(M)» տեսակի փաթեթները չպետք է պարունակեն այնպիսի ակտիվություն, որը գերազանցում է հետեւյալ արժեքները՝

ա) տարածման ցածր հատկություն ունեցող ռադիոակտիվ նյութի համար՝ հաստատման սերտիֆիկատում նշված փաթեթի տվյալ կառուցվածքի համար թույլատրելի արժեքը.

բ) հատուկ տեսակի ռադիոակտիվ նյութի համար՝ 3 000 A1 կամ 100 000 A2 արժեքը՝ կախված նրանից, թե այս արժեքներից որն է առավել ցածր, կամ

գ) մնացած բոլոր ռադիոակտիվ նյութերի համար՝ 3 000 A2:

- 338 Տվյալ դիրքի համաձայն փոխադրվող եւ հեղուկացված դյուրավառ գազի պահման համար նախատեսվող վառելիքային էլեմենտներով յուրաքանչյուր քարթիջ պետք է՝

ա) առանց արտահոսքի կամ պայթելու դիմակայի 55 °C ջերմաստիճանում պարունակության հավասարակշռության ճնշումն առնվազն կրկնակի գերազանցող ճնշմանը.

բ) պարունակի 200 մլ-ը չգերազանցող հեղուկացված դյուրավառ գազ, որի գոլորշու ճնշումը 55 °C ջերմաստիճանում չպետք է գերազանցի 1 000 կՊա-ն, եւ

գ) անցնի 6.2.6.3.1-ով նախատեսվող՝ վաննայում տաք ջրով փորձարկում:

339 Այս դիրքի համաձայն փոխադրվող՝ մետաղիդրիդում ջրածին պարունակող վառելիքային էլեմենտներով քարթիջները պետք է ունենան 120 մլ-ն չգերազանցող տարողություն:

Վառելիքային էլեմենտներով քարթիջներում ճնշումը 55 °C ջերմաստիճանում չպետք է գերազանցի 5 ՄՊա-ն: Կառուցվածքի տեսակը պետք է առանց արտահոսքի կամ պայթելու դիմակայի 55 °C ջերմաստիճանում քարթիջի հաշվարկային ճնշումը կրկնակի գերազանցող կամ 55 °C ջերմաստիճանում 200 կՊա-ով քարթիջի հաշվարկային ճնշումը գերազանցող ճնշմանը, կախված նրանից, թե այս արժեքներից որն է առավել մեծ: Այս փորձարկման ընթացքում կիրառվող ճնշումը կոչվում է «կորպուսի պայթման նվազագույն ճնշում» անկման փորձարկման եւ ջրածնի օգտագործմամբ ճնշման ցիկլիկ փորձարկման ժամանակ:

Վառելիքային էլեմենտներով քարթիջները պետք է լցվեն արտադրողի կողմից նախատեսվող ընթացակարգերի համաձայն: Արտադրողը վառելիքային էլեմենտներով յուրաքանչյուր քարթիջի համար պետք է տրամադրի հետեւյալ տեղեկությունները՝

ա) ստուգման ընթացակարգերը, որոնք պետք է իրականացվեն վառելիքային էլեմենտներով քարթիջների նախնական լցավորումից եւ վերալցավորումից առաջ.

բ) նախազգուշական միջոցները եւ վտանգների հնարավոր ձեւերը, որոնք պետք է հիշել.

գ) նոմինալ տարողության ապահովման որոշման մեթոդը.

դ) նվազագույն եւ առավելագույն ճնշման արժեքների միջակայքը.

ե) նվազագույն եւ առավելագույն ջերմաստիճանի արժեքների միջակայքը.

զ) բոլոր մյուս պահանջները, որոնք պետք է կատարվեն նախնական լցավորման կամ վերալցավորման ժամանակ, ներառյալ՝ սարքավորման տեսակը, որը պետք է կիրառվի նախնական լցավորման եւ վերալցավորման ժամանակ:

Վառելիքային էլեմենտներով քարթիջները պետք է նախագծված եւ պատրաստված լինեն այնպես, որ փոխադրման նորմալ պայմաններում բացառվի վառելիքի արտահոսքի հավանականությունը: Քարթիջի

կառուցվածքի յուրաքանչյուր տեսակ, այդ թվում՝ նաև վառելիքային էլեմենտի մաս հանդիսացող քարթրիջները պետք է ենթարկվեն հետեւյալ փորձարկումներին.

Անկման փորձարկում

1,8 մ բարձրության վրա ոչ առաձգական մակերեսի վրա փորձարկումը չորս տարբեր ուղղություններով՝

- ա) ուղղահայաց դիրքով՝ այն ճակատի վրա, որտեղ գտնվում է փակիչ կափույրի հանգույցը.
- բ) ուղղահայաց ուղղությամբ՝ հակառակ ճակատի վրա.
- գ) հորիզոնական ուղղությամբ՝ 38 մմ երկարությամբ պողպատե առանցքի վրա, որը պետք է գտնվի ուղղահայաց դիրքում.
- դ) 45° անկյան տակ՝ այն ճակատի վրա, որտեղ մոնտաժված է փակիչ կափույրի հանգույցը:

Չպետք է տեղի ունենա արտահոսք, որը որոշվում է օճառային լուծույթի կամ այլ համարժեք լուծույթի կիրառմամբ հնարավոր արտահոսքի բոլոր վայրերում, երբ քարթրիջը լիցքավորված է մինչև իր լիցքավորման նոմինալ ճնշումը: Այնուհետև վառելիքային էլեմենտներով քարթրիջները պետք է ենթարկվեն հիդրոստատիկ ճնշման ներգործության՝ մինչև իրենց փլուզումը: Պայթման ճնշման արձանագրված արժեքը պետք է գերազանցի կորպուսի պայթման նվազագույն ճնշման 85 %-ը:

Հրակայունության փորձարկում

Մինչև իր նոմինալ տարողությունը ջրածնով լցված վառելիքային էլեմենտներով քարթրիջը պետք է ենթարկվի հրակայունության փորձարկման: Քարթրիջի կառուցվածքը, որը կարող է ներառել քարթրիջի մաս հանդիսացող օդափոխիչ սարք, համարվում է հրակայունության փորձարկումն արդյունավետորեն անցած, եթե՝

- ա) ներքին ճնշումը նվազում է մինչև զրոյական մանոմետրական ճնշում՝ առանց քարթրիջը պայթելու, կամ
- բ) քարթրիջն առանց պայթելու դիմակայում է կրակի ներգործությանն առնվազն 20 րոպե:

Ջրածնի կիրառմամբ ճնշման ցիկլիկ փորձարկում

Այս փորձարկման նպատակն է համոզվել, որ շահագործման ընթացքում չեն գերազանցվում վառելիքային էլեմենտներով քարթրիջների տվյալ կառուցվածքի համար սահմանված ճնշման առավելագույն արժեքները:

Վառելիքային էլեմենտներով քարթրիջը պետք է ենթարկվի փորձարկումների ցիկլի, որի ընթացքում այն պետք է լցվի 5 %-ը

չգերազանցող ջրածնի նոմինալ տարողությունից մինչև 95 %-ից ոչ պակաս ջրածնի նոմինալ տարողությամբ եւ հակառակ ուղղությամբ՝ մինչև 5 %-ը չգերազանցող ջրածնի նոմինալ տարողությամբ: Լիցքավորման ընթացքում պետք է կիրառվի լիցքավորման նոմինալ ճնշումը, եւ ջերմաստիճանի արժեքները պետք է պահվեն շահագործման ջերմաստիճանի միջակայքի սահմաններում: Փորձարկումները պետք է ներառեն առնվազն 100 ցիկլ:

Ցիկլիկ փորձարկումից հետո վառելիքային էլեմենտներով քարթրիջը պետք է լիցքավորվի, եւ պետք է չափվի քարթրիջով դուրս մղված ջրի ծավալը: Քարթրիջի կառուցվածքը համարվում է ջրածնի օգտագործմամբ ցիկլիկ փորձարկումն անցած, եթե ցիկլիկ փորձարկմանը ենթարկված քարթրիջով դուրս մղված ջրի ծավալը չի գերազանցում փուլային ցիկլիկ փորձարկման չենթարկված այն քարթրիջով դուրս մղված ջրի ծավալը, որը լիցքավորված է եղել մինչև նոմինալ տարողության 95 %-ը եւ ենթակա է կորպուսի պայթման 75 % նվազագույն ճնշմանը հավասար ճնշման:

Արտահոսքի գործարանային փորձարկումներ

Վառելիքային էլեմենտներով յուրաքանչյուր քարթրիջ պետք է անցնի արտահոսքի փորձարկում  $15\text{ }^{\circ}\text{C} \pm 5\text{ }^{\circ}\text{C}$  ջերմաստիճաններում իր լիցքավորման նոմինալ ճնշմանը հավասար ճնշման տակ: Չպետք է տեղի ունենա արտահոսք, ինչը որոշվում է օճառային լուծույթի կամ մեկ այլ համարժեք միջոցի կիրառման միջոցով՝ հավանական արտահոսքի բոլոր տեղերում:

Վառելիքային էլեմենտներով յուրաքանչյուր քարթրիջի վրա պետք է լինի չջնջվող երկարակյաց մակնշում, որն իր մեջ կներառի հետեւյալ տեղեկությունները՝

- ա) ՄՊա-ներով լիցքավորման նոմինալ ճնշումը.
- բ) արտադրողի կողմից յուրացված վառելիքային էլեմենտներով քարթրիջների սերիական համարը կամ անհատական նույնականացման համարը, եւ
- գ) շահագործման առավելագույն ժամկետը լրանալու ամսաթիվը (տարի՝ չորս թիվ, ամիս՝ երկու թիվ):

340 Քիմիական նյութերի կոմպլեկտները, առաջին օգնության դեղարկղերը եւ բազմաթերային խեժի կոմպլեկտները, որոնք ներքին փաթեթվածքում պարունակում են 3.2 գլխի Ա աղյուսակի (7բ) սյունակում նշված առանձին նյութերի նկատմամբ կիրառվող ազատված քանակությունների առավելագույն արժեքները չգերազանցող քանակությամբ վտանգավոր նյութեր, կարող են փոխադրվել 3.5 գլխի դրույթների համաձայն: 5.2

դասի նյութերը, որոնց համար 3.2 գլխի Ա աղյուսակի (7բ) սյունակում չի նախատեսվում առանձին թույլատրված ազատված քանակություններ, կարող են առկա լինել այս կոմպլեկտների կազմում, եւ դրանց տրվում է E2 ծածկագիրը (տե՛ս 3.5.1.2):

341 (Նախատեսվում է վերապահում)

342 Բացառապես ախտահանված սարքերում կիրառման համար նախատեսվող ապակե ներքին տարաները (ինչպես օրինակ՝ ամպուլաները եւ կապուլաները), երբ դրանցում առկա է ներքին փաթեթվածքի մեկ միավորի հաշվով 30 մլ-ից պակաս եւ արտաքին փաթեթվածքի միավորի հաշվով 300 մլ-ից ոչ ավելի օքսիդ էթիլեն, կարող են փոխադրվել 3.5 գլխի դրույթների համաձայն՝ անկախ նրանից՝ «EO»-ն նշված է 3.2 գլխի Ա աղյուսակի (7բ) սյունակում՝ պայմանով, որ.

ա) լցավորելուց հետո յուրաքանչյուր ապակե ներքին տարա ենթարկվում է անջրանցիկության փորձարկման այնպիսի ջերմաստիճանում եւ այնքան ժամանակով տաք ջրով վաննայում ապակե ներքին տարայի տեղադրման միջոցով, որոնք բավարար են՝ 55 °C ջերմաստիճանում էթիլենի օքսիդի գոլորշիների ճնշմանը հավասար ներքին ճնշումն ապահովելու համար: Տվյալ փորձարկման ընթացքում արտահոսքի, դեֆորմացիայի նշաններ կամ այլ թերություն ցուցադրող ցանկացած ապակե ներքին տարա չի կարող փոխադրվել տվյալ հատուկ դրույթի պայմանների համաձայն.

բ) ի հավելումն 3.5.2-ի համաձայն պահանջվող փաթեթվածքի՝ յուրաքանչյուր ապակե ներքին տարա տեղադրվում է հերմետիկ փակված պլաստմասսայից պարկում, որը համատեղելի է էթիլենի օքսիդի հետ եւ կարող է պահել պարունակությունն ապակե ներքին տարայի ջարդվելու կամ դրանից արտահոսքի դեպքում, եւ

գ) փաթեթվածքի վնասվելու դեպքում յուրաքանչյուր ապակե ներքին տարա պաշտպանված է (ինչպես օրինակ՝ սեղմվելու արդյունքում) պլաստմասսայից պարկի ծակելուն խոչընդոտող այս կամ այլ միջոցի օգնությամբ (ինչպես օրինակ՝ թեզանիքի կամ պաշտպանիչ նյութի օգնությամբ):

343 Այս դիրքը կիրառվում է այնպիսի կոնցենտրացիայով ծծմբաջրածին պարունակող չմշակված նավթի նկատմամբ, որը բավարար է, որ չմշակված նավթից առաջացող գոլորշիներն ինհալյացիոն վտանգ ներկայացնեն: Փաթեթավորման նշանակվող խումբը պետք է որոշվի՝ ելնելով բոցավառման վտանգից եւ ինհալյացիոն վտանգից՝ հաշվի առնելով ներկայացվող վտանգի աստիճանը:

344 Պետք է կատարվեն 6.2.6-ի դրույթները:

- 345 «ԱԴԴ» համաձայնագրի պահանջները չեն տարածվում այն գազ վրա, որը լցված է առավելագույնը 1 Լ տարողությամբ բաց կրիոգեն տարաներում, որոնք ունեն ապակե կրկնակի պատեր, որոնց (ներքին եւ արտաքին) միջեւ ընկած տարածությունից օդը հանվել է (վակուումային մեկուսացում)՝ պայմանով, որ յուրաքանչյուր տարա փոխադրվում է արտաքին փաթեթվածքում, որտեղ տեղադրված է համապատասխան պաշտպանիչ կամ կլանիչ նյութ՝ հարվածի դեպքում տարան վնասվելուց պաշտպանելու նպատակով:
- 346 4.1.4.1-ով նախատեսվող P203 փաթեթավորման ցուցումը բավարարող եւ ծակոտկեն նյութով ամբողջությամբ կլանված ՄԱԿ-ի նշագրման 1977 համարի ներքո ներկայացված սառեցված հեղուկ ազոտից բացի այլ վտանգավոր բեռներ չպարունակող բաց կրիոգեն տարաների վրա չեն տարածվում «ԱԴԴ» համաձայնագրի պահանջները:
- 347 Այս դիրքը կիրառվում է բացառապես այն դեպքում, երբ «Փորձարկումների եւ չափորոշիչների ձեռնարկ»-ի I մասով նախատեսվող 6 (դ) փորձարկման սերիայի արդյունքներով ցույց է տրվում, որ գործարկման հետեւանքով ցանկացած վտանգավոր ներգործություն չի տարածվում փաթեթից դուրս:
- 348 2011 թվականի դեկտեմբերի 31-ից հետո արտադրված մարտկոցները կորպուսի արտաքին մակերեսի վրա պետք է մակնշում ունենան, որտեղ նշված է վատտ/ժամում հզորությունը:
- 349 Ամոնիումի աղի հետ հիպոքլորիտի խառնուրդները չեն թույլատրվում փոխադրման: ՄԱԿ-ի նշագրման 1791 համարի հիպոքլորիտի լուծույթը 8-րդ դասի նյութ է համարվում:
- 350 Ամոնիումի բրոմատը եւ վերջինիս ջրային լուծույթները, ինչպես նաեւ ամոնիումի աղի հետ բրոմատի խառնուրդները չեն թույլատրվում փոխադրման:
- 351 Ամոնիումի քլորատը եւ վերջինիս ջրային լուծույթները, ինչպես նաեւ ամոնիումի աղի հետ քլորատի խառնուրդները չեն թույլատրվում փոխադրման:
- 352 Ամոնիումի քլորիտը եւ վերջինիս ջրային լուծույթները, ինչպես նաեւ ամոնիումի աղի հետ քլորիտի խառնուրդները չեն թույլատրվում փոխադրման:
- 353 Ամոնիումի պերմանգանատը եւ վերջինիս ջրային լուծույթները, ինչպես նաեւ ամոնիումի աղի հետ պերմանգանատի խառնուրդները չեն թույլատրվում փոխադրման:
- 354 Այս նյութը ներշնչելիս թունավոր է:

- 355 Արտակարգ իրավիճակներում օգտագործման համար նախատեսվող եւ տվյալ դիրքի համաձայն փոխադրվող թթվածնով բալոնները կարող են սարքավորված լինել իրենց գործարկման համար հրահրիչ պարկուճներով (մեխանիզմներն աշխատեցնելու համար պարկուճներ, 1.4 ենթադաս, «C» կամ «S» համատեղելիության խումբ)՝ առանց որպես 2.2 ենթադասի ապրանքների իրենց դասակարգման փոփոխության՝ պայմանով, որ դեֆլագրացնող (նետիչ) պայթուցիկ նյութերի ընդհանուր քանակությունը չի գերազանցում թթվածնով մեկ բալոնի հաշվով 3,2 գրամը: Իրենց գործարկման համար հրահրիչ պարկուճներով սարքավորված եւ փոխադրման համար պատրաստված բալոնները պետք է ապահովված լինեն պատահական աշխատանքը կանխարգելող արդյունավետ միջոցով:
- 356 Տրանսպորտային միջոցներում, վագոններում, վերջրյա նավերում կամ օդանավերում տեղադրման համար նախատեսվող մետաղ-հիդրիդային պահման համակարգերը պետք է հաստատվեն՝ արտադրող երկրի<sup>1</sup> իրավասու մարմնի կողմից փոխադրումը թույլ տալու համար: Տրանսպորտային փաստաթղթում պետք է գրառում լինի այն մասին, որ փաթեթը հաստատված է արտադրող երկրի<sup>1</sup> իրավասու մարմնի կողմից, կամ էլ յուրաքանչյուր բեռին կցված պետք է լինի արտադրող երկրի<sup>1</sup> իրավասու մարմնի կողմից տրված հաստատումը:
- 357 Այնպիսի կոնցենտրացիայով ծծմբաջրածին պարունակող չմշակված նավթը, որը բավարար է, որպեսզի չմշակված նավթից արտազատվող գոլորշիներն ինհալյացիոն վտանգ ներկայացնեն, պետք է փոխադրվի ՄԱԿ-ի նշագրման 3494 համարի՝ ՆԱՎԹ՝ ԲԱՐՁՐԱԾԾՄԲԱՅԻՆ, ԴՅՈՒՐԱՎԱՌ, ԹՈՒՆԱՎՈՐ դիրքի ներքո:
- 358 Նիտրոգլիցերինի 1%-ից ավելի, սակայն 5%-ից ոչ ավելի պարունակությամբ նիտրոգլիցերինի սպիրտային լուծույթը պետք է դասակարգվի 3-րդ դասում, եւ դրան պետք է տրվի ՄԱԿ-ի նշագրման 3064 համարը՝ պայմանով, որ բավարարվեն 4.1.4.1-ի «P300» փաթեթավորման ցուցման բոլոր պահանջները:
- 359 Նիտրոգլիցերինի 1%-ից ավելի, սակայն 5%-ից ոչ ավելի պարունակությամբ նիտրոգլիցերինի սպիրտային լուծույթը պետք է դասակարգվի 1-ին դասում, եւ դրան տրվի ՄԱԿ-ի նշագրման 0144 համարն այն դեպքում, երբ չեն բավարարվում 4.1.4.1-ի «P300» փաթեթավորման ցուցման բոլոր պահանջները:
- 360 Միայն լիթիումի մետաղական մարտկոցներով կամ լիթիում-իոնային մարտկոցներով աշխատող փոխադրամիջոցները պետք է ընդգրկվեն ՄԱԿ-ի նշագրման 3171 համարի դիրքում՝ մարտկոցով աշխատող

<sup>1</sup> Եթե արտադրող երկիրը «ԱԴՌ» համաձայնագրի կողմ չէ, ապա հաստատումը պետք է ճանաչվի «ԱԴՌ» համաձայնագրի կողմ հանդիսացող իրավասու մարմնի կողմից:

փոխադրամիջոց:

361 Այս դրույթը կիրառվում է կրկնակի էլեկտրական շերտով այն կոնդենսատորների նկատմամբ, որոնց էներգատարողությունը 0,3 Վտ-ժ-ից ավելի է: 0,3 Վտ-ժ կամ դրանից պակաս էներգատարողություն ունեցող կոնդենսատորները չեն կարգավորվում «ԱԴԴ» համաձայնագրով: Էներգատարողություն նշանակում է կոնդենսատորի մեջ պարունակվող էներգիան, որը հաշվարկվում է անվանական լարումով եւ տարողությամբ: Այն բոլոր կոնդենսատորները, որոնց նկատմամբ կիրառվում է այս դիրքը, այդ թվում՝ վտանգավոր բեռների որել է դասի դասակարգման չափորոշիչներին չհամապատասխանող էլեկտրոլիտ պարունակող կոնդենսատորները, պետք է բավարարեն հետեւյալ պայմանները՝

ա) սարքավորման մեջ չտեղադրված կոնդենսատորները պետք է փոխադրվեն չլիցքավորված վիճակում: Սարքավորման մեջ տեղադրված կոնդենսատորները պետք է կա՛մ փոխադրվեն չլիցքավորված վիճակում, կա՛մ պաշտպանված լինեն կարճ միացումից.

բ) յուրաքանչյուր կոնդենսատոր փոխադրման ժամանակ պետք է պաշտպանված լինի հնարավոր կարճ միացման վտանգից հետեւյալ ձեւով՝

i) այն դեպքում, երբ կոնդենսատորն ունի 10 Վտ-ժ-ից պակաս կամ դրան հավասար էներգատարողություն, կամ այն դեպքում, երբ մոդուլում գտնվող յուրաքանչյուր կոնդենսատոր ունի 10 Վտ-ժ-ից պակաս կամ դրան հավասար էներգատարողություն, ապա կոնդենսատորը կամ մոդուլը պետք է պաշտպանված լինի կարճ միացումից կամ ունենա արտանցիչները միացնող մետաղական ժապավեն, եւ

ii) այն դեպքում, երբ կոնդենսատորը կամ մոդուլում գտնվող կոնդենսատորն ունի 10 Վտ-ժ-ից ավելի էներգատարողություն, կոնդենսատորը կամ մոդուլը պետք է ունենա արտանցիչները միացնող մետաղական ժապավեն.

գ) վտանգավոր բեռներ պարունակող կոնդենսատորները պետք է նախազգծված լինեն այնպես, որ դիմակայեն 95 կՊա ճնշման գրադիենտին.

դ) կոնդենսատորները պետք է նախազգծված եւ կառուցված լինեն այնպես, որ հնարավոր լինի անվտանգ ձեւով նվազեցնել ճնշումը, որը կարող է կուտակվել օգտագործման ընթացքում՝ կոնդենսատորի պատյանում առկա օդանցքի կամ առանձնացող միացման միջոցով: Ճնշումը նվազեցնելու ժամանակ առաջացած



ցանկացած հեղուկ պետք է պարունակվի այն փաթեթվածքի կամ սարքավորման մեջ, որտեղ տեղադրված է կոնդենսատորը, եւ

ե) կոնդենսատորների վրա էներգատարողությունը պետք է նշված լինի Վտ-ով:

«ԱԴՌ» համաձայնագրի մյուս դրույթները չեն տարածվում վտանգավոր բեռների որեւէ դասի դասակարգման չափորոշիչներին չհամապատասխանող էլեկտրոլիտ պարունակող կոնդենսատորների վրա, այդ թվում՝ սարքավորման մեջ տեղադրված լինելու դեպքում:

«ԱԴՌ» համաձայնագրի մյուս դրույթները չեն տարածվում վտանգավոր բեռների որեւէ դասի դասակարգման չափորոշիչներին համապատասխանող էլեկտրոլիտ պարունակող այն կոնդենսատորների վրա, որոնք ունեն 10 Վտ-ժ կամ դրանից պակաս էներգատարողություն այն դեպքում, երբ դրանք կարող են չփաթեթավորված վիճակում անցնել ոչ առաձգական մակերեսային վրա 1,2 մ բարձրությունից անկման փորձարկումը՝ առանց պարունակության կորստի:

Վտանգավոր բեռների որեւէ դասի դասակարգման չափորոշիչներին համապատասխանող էլեկտրոլիտ պարունակող այն կոնդենսատորները, որոնք տեղադրված չեն սարքավորման մեջ եւ ունեն 10 Վտ-ժ-ից ավելի էներգատարողություն, կարգավորվում են «ԱԴՌ» համաձայնագրով:

«ԱԴՌ» համաձայնագրի մյուս դրույթները չեն տարածվում սարքավորման մեջ տեղադրված եւ վտանգավոր բեռների որեւէ դասի դասակարգման չափորոշիչներին համապատասխանող էլեկտրոլիտ պարունակող կոնդենսատորների վրա՝ պայմանով, որ սարքավորումը փաթեթավորված լինի համապատասխան նյութից պատրաստված, ինչպես նաեւ բավարար ամրություն եւ կառուցվածք ունեցող ամուր արտաքին փաթեթվածքով՝ կախված փաթեթվածքի օգտագործման համար նախատեսված ձեւից, եւ այնպես, որ փոխադրման ընթացքում կանխվի կոնդենսատորների պատահական գործարկումը: Կոնդենսատորներ պարունակող մեծ ամուր սարքավորումները կարող են փոխադրվել չփաթեթավորված վիճակում կամ տակդիրների վրա այն դեպքում, երբ դրանց համար ապահովված է համարժեք պաշտպանություն այն սարքավորման մեջ, որտեղ դրանք գտնվում են:

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Այն կոնդենսատորները, որոնք իրենց կառուցվածքով արդանցիչներում պահպանում են ճնշումը (օրինակ՝ ասիմետրիկ կոնդենսատորները), չեն դասվում այս դիրքին:*

362 (Նախատեսվում է վերապահում)

363 ա) Այս դիրքը կիրառվում է այն շարժիչների եւ մեխանիզմների նկատմամբ, որոնք աշխատում են որպես վտանգավոր բեռներ

դասակարգված վառելիքով՝ ներքին այրման համակարգերի կամ վառելիքային էլեմենտների օգտագործմամբ (օրինակ՝ ներքին այրման շարժիչների, գեներատորների, կոմպրեսորների, տուրբինների, ջեռուցիչների եւ այլն)՝ այն քանակությունից բարձր քանակությամբ, որը նշված է 3.2 գլխի Ա աղյուսակի (7ա) սյունակում՝ բացի 666-րդ հատուկ դրույթում նշված՝ ՄԱԿ-ի նշագրման 3166 համարի ներքո դասակարգված փոխադրամիջոցի սարքավորումների:

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Այս դիրքը չի կիրառվում 1.1.3.2 (ա), (դ) եւ (ե), 1.1.3.3 եւ 1.1.3.7-ում նշված սարքավորումների նկատմամբ:*

բ) Այն շարժիչները կամ մեխանիզմները, որոնցից դատարկվել է հեղուկ կամ գազային վառելիքը, կամ որոնք չեն պարունակում այլ վտանգավոր նյութեր, չեն կարգավորվում «ԱԴԴ» համաձայնագրով:

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1. Այն դեպքում, երբ հեղուկ վառելիքի ցիստեռնը դատարկվել է, եւ շարժիչը կամ մեխանիզմը վառելիքի բացակայության պատճառով չի կարող գործարկվել, համարվում է, որ շարժիչից կամ մեխանիզմից վառելիքը դատարկվել է: Անհրաժեշտ չէ մաքրել, դատարկել կամ փչահարել շարժիչի կամ մեխանիզմի բաղադրիչները, ինչպես օրինակ՝ վառելիքամուղները, վառելիքի ֆիլտրերը եւ ինժեկտորները, որպեսզի համարվի, որ այն դատարկված է հեղուկ վառելիքից: Բացի այդ, անհրաժեշտ չէ մաքրել կամ փչահարել հեղուկ վառելիքի ցիստեռնները:*

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2. Այն դեպքում, երբ գազային վառելիքի ցիստեռններից դատարկվել է հեղուկը (հեղուկացված գազերի դեպքում), ցիստեռններում ճնշումը չի գերազանցում 2 բարը, իսկ փակման կամ կասեցման փակույրը փակված եւ ամրացված է, համարվում է, որ շարժիչը կամ մեխանիզմը դատարկված է գազային վառելիքից:*

գ) 3-րդ դասի դասակարգման չափորոշիչներին համապատասխանող վառելիք պարունակող շարժիչները եւ մեխանիզմները պետք է համապատասխանաբար ընդգրկվեն հետեւյալ դիրքերում՝ ՄԱԿ-ի նշագրման 3528 համար՝ ՇԱՐԺԻՉ՝ ՆԵՐՔԻՆ ԱՅՐՄԱՆ, ԴՅՈՒՐԱՎԱՌ ՀԵՂՈՒԿՈՎ ԱՇԽԱՏՈՂ կամ ՄԱԿ-ի նշագրման 3528 համար՝ ՇԱՐԺԻՉ, ՎԱՌԵԼԻՔԱՅԻՆ ԷԼԵՄԵՆՏ, ԴՅՈՒՐԱՎԱՌ ՀԵՂՈՒԿՈՎ ԱՇԽԱՏՈՂ կամ ՄԱԿ-ի նշագրման 3528 համար՝ ՄԵԽԱՆԻԶՄ՝ ՆԵՐՔԻՆ ԱՅՐՄԱՆ, ԴՅՈՒՐԱՎԱՌ ՀԵՂՈՒԿՈՎ ԱՇԽԱՏՈՂ կամ ՄԱԿ-ի նշագրման 3528 համար՝ ՄԵԽԱՆԻԶՄ, ՎԱՌԵԼԻՔԱՅԻՆ ԷԼԵՄԵՆՏ, ԴՅՈՒՐԱՎԱՌ ՀԵՂՈՒԿՈՎ ԱՇԽԱՏՈՂ:

դ) 2-րդ դասի դյուրավառ գազերի դասակարգման չափորոշիչներին

համապատասխանող վառելիք պարունակող շարժիչները եւ մեխանիզմները պետք է համապատասխանաբար ընդգրկվեն հետեւյալ դիրքերում՝ ՄԱԿ-ի նշագրման 3529 համար՝ ՇԱՐԺԻՉ՝ ՆԵՐՔԻՆ ԱՅՐՄԱՆ, ԴՅՈՒՐԱՎԱՌ ԳԱԶՈՎ ԱՇԽԱՏՈՂ, կամ ՄԱԿ-ի նշագրման 3529 համար՝ ՇԱՐԺԻՉ, ՎԱՌԵԼԻՔԱՅԻՆ ԷԼԵՄԵՆՏ, ԴՅՈՒՐԱՎԱՌ ԳԱԶՈՎ ԱՇԽԱՏՈՂ, կամ ՄԱԿ-ի նշագրման 3529 համար՝ ՄԵԽԱՆԻԶՄ՝ ՆԵՐՔԻՆ ԱՅՐՄԱՆ, ԴՅՈՒՐԱՎԱՌ ԳԱԶՈՎ ԱՇԽԱՏՈՂ, կամ ՄԱԿ-ի նշագրման 3529 համար՝ ՄԵԽԱՆԻԶՄ, ՎԱՌԵԼԻՔԱՅԻՆ ԷԼԵՄԵՆՏ, ԴՅՈՒՐԱՎԱՌ ԳԱԶՈՎ ԱՇԽԱՏՈՂ:

Ե՛վ դյուրավառ գազով եւ՛ դյուրավառ հեղուկով աշխատող շարժիչները եւ մեխանիզմները պետք է ընդգրկվեն ՄԱԿ-ի նշագրման 3529 համարի համապատասխան դիրքում:

- ե) 2.2.9.1.10-ի՝ շրջակա միջավայրի համար վտանգավոր նյութերի դասակարգման չափորոշիչներին համապատասխանող եւ ցանկացած այլ դասի դասակարգման չափորոշիչներին չհամապատասխանող հեղուկ վառելիք պարունակող շարժիչները եւ մեխանիզմները պետք է համապատասխանաբար ընդգրկվեն հետեւյալ դիրքերում՝ ՄԱԿ-ի նշագրման 3530 համար՝ ՇԱՐԺԻՉ՝ ՆԵՐՔԻՆ ԱՅՐՄԱՆ, կամ ՄԱԿ-ի նշագրման 3530 համար՝ ՄԵԽԱՆԻԶՄ՝ ՆԵՐՔԻՆ ԱՅՐՄԱՆ:
- զ) Շարժիչները կամ մեխանիզմները, վառելիքներից բացի, կարող են պարունակել այլ վտանգավոր բեռներ (օրինակ՝ կրակմարիչներ, սեղմված գազի կուտակիչներ կամ ապահովիչ սարքեր), որոնք անհրաժեշտ են դրանց գործարկման կամ ապահով շահագործման համար՝ չենթարկվելով այդ վտանգավոր բեռներին ներկայացվող որելէ լրացուցիչ պահանջի, եթե այլ բան նշված չէ «ԱԴՌ» համաձայնագրում: Այնուամենայնիվ, լիթիումային մարտկոցները պետք է բավարարեն 2.2.9.1.7-ի պահանջները՝ բացառությամբ այն դեպքերի, երբ 667-րդ հատուկ դրույթով նախատեսված է այլ բան:
- է) Շարժիչների կամ մեխանիզմների վրա չի տարածվում «ԱԴՌ» համաձայնագրի որելէ այլ պահանջ, եթե բավարարվում են հետեւյալ պահանջները՝
  - ի) շարժիչը կամ մեխանիզմը, այդ թվում՝ վտանգավոր բեռներ պարունակող տեղայնացման միջոցները, պետք է համապատասխանեն արտադրման երկրի իրավասու մարմնի կողմից սահմանված՝ կառուցվածքին ներկայացվող

պահանջներին<sup>2</sup>.

- ii) փոխադրման ընթացքում ցանկացած կափույր կամ բացվածք (օրինակ՝ օդափոխման սարք) պետք է լինի փակված.
- iii) շարժիչները կամ մեխանիզմները պետք է տեղակայված լինեն այնպես, որ կանխվի վտանգավոր բեռների արտահոսքը, եւ ամրակցված լինեն այնպիսի միջոցներով, որոնք կարող են արգելակել շարժիչները կամ մեխանիզմները՝ փոխադրման ընթացքում դրանց դիրքը փոփոխող կամ դրանց վնասման պատճառ համարվող տեղաշարժը կանխելու համար.
- iv) ՄԱԿ-ի նշագրման 3528 եւ 3530 համարների դեպքում՝

Եթե շարժիչը կամ մեխանիզմը պարունակում է 60 լիտրից ավելի հեղուկ վառելիք եւ ունի 450 լիտրից ավելի, սակայն 3 000 լիտրից ոչ ավելի տարողություն, ապա դրա երկու հակառակ կողմերը պետք է պիտակավորվեն 5.2.2-ին համապատասխան:

Եթե շարժիչը կամ մեխանիզմը պարունակում է 60 լիտրից ավելի հեղուկ վառելիք եւ ունի 3 000 լիտրից ավելի տարողություն, ապա տեղեկատվական ցուցանակը պետք է փակցվի դրա երկու հակառակ կողմերում: Տեղեկատվական ցուցանակները պետք է համապատասխանեն Ա աղյուսակի 5-րդ սյունակով պահանջվող պիտակներին, ինչպես նաեւ պետք է համապատասխանեն 5.3.1.7-ում ներկայացված մասնագրերին: Տեղեկատվական ցուցանակները պատկերվում են գունային հակադրությամբ ֆոնի վրա կա՛մ կետագծային, կա՛մ հոծ գծով գծված վանդակի մեջ:

- v) ՄԱԿ-ի նշագրման 3529 համարի դեպքում՝

Եթե շարժիչի կամ մեխանիզմի վառելիքային ցիստեռնն ունի 450 լիտրից ավելի, սակայն 1 000 լիտրից ոչ ավելի տարողություն, ապա դրա երկու հակառակ կողմերը պետք է պիտակավորվեն 5.2.2-ին համապատասխան:

Եթե շարժիչի կամ մեխանիզմի վառելիքային ցիստեռնն ունի 1 000 լիտրից ավելի տարողություն, ապա տեղեկատվական ցուցանակը պետք է տեղադրվի դրա երկու հակառակ կողմերում: Տեղեկատվական ցուցանակները պետք է համապատասխանեն Ա աղյուսակի 5-րդ սյունակով պահանջվող պիտակներին, ինչպես նաեւ պետք է համապատասխանեն 5.3.1.7-ում ներկայացված մասնագրերին: Տեղեկատվական ցուցանակները պետք է

---

<sup>2</sup> Օրինակ՝ Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2006 թվականի մայիսի 17-ի «Մեխանիզմների մասին» 2006/42/ԵՀ հրահանգի եւ 95/16/ԵՀ փոփոխող հրահանգի համապատասխան դրույթներին համապատասխանությունը (Եվրոպական միության 2006 թվականի հունիսի 9-ի թիվ L 157 պաշտոնական տեղեկագիր, էջեր 0024-0086):

պատկերված լինեն գունային հակադրությամբ ֆոնի վրա կա՛մ կետագծային, կա՛մ հոծ գծով գծված վանդակի մեջ:

vi) 5.4.1-ին համապատասխան տրանսպորտային փաստաթուղթը պահանջվում է միայն այն դեպքում, երբ շարժիչը կամ մեխանիզմը պարունակում է 1 000 լիտրից ավելի հեղուկ վառելիք՝ ՄԱԿ-ի նշագրման 3528 եւ 3530 համարների դեպքում, կամ վառելիքային ցիստեռնն ունի 1 000 լիտրից ավելի տարողություն՝ ՄԱԿ-ի նշագրման 3529 համարի դեպքում:

Այս տրանսպորտային փաստաթուղթը պետք է պարունակի հետեւյալ լրացուցիչ նշումը՝ «Փոխադրումը՝ 363-րդ հատուկ դրույթին համապատասխան»:

364 Այս պատրաստվածքը կարող է փոխադրվել 3.4 գլխի դրույթների համաձայն այն դեպքում, երբ փոխադրման համար ներկայացված փաթեթը կարող է անցնել «Փորձարկումների եւ չափորոշիչների ձեռնարկ»-ի I մասի 6 (դ) սերիայի փորձարկումը, ինչպես սահմանված է իրավասու մարմնի կողմից:

365 Ծծումբ պարունակող՝ արտադրված գործիքների եւ պատրաստվածքների համար տե՛ս ՄԱԿ-ի նշագրման 3506 համարը:

366 1 կգ-ից ոչ ավելի ծծումբ պարունակող՝ արտադրված գործիքները եւ պատրաստվածքները չեն կարգավորվում «ԱԴԻ» համաձայնագրով:

367 Փաստաթղթավորման նպատակով՝

«Ներկի հետ օգտագործվող նյութեր» բեռնառաքման ճշգրիտ անվանումը կարող է օգտագործվել փաթեթների այնպիսի բեռների դեպքում, որոնք միեւնույն փաթեթում պարունակում են «Ներկ» եւ «Ներկի հետ օգտագործվող նյութեր»:

«Ներկի հետ օգտագործվող նյութեր՝ կոռոզիոն, դյուրավառ» բեռնառաքման ճշգրիտ անվանումը կարող է օգտագործվել փաթեթների այնպիսի բեռների դեպքում, որոնք միեւնույն փաթեթում պարունակում են «Ներկ՝ կոռոզիոն, դյուրավառ» եւ «Ներկի հետ օգտագործվող նյութեր՝ կոռոզիոն, դյուրավառ»:

«Ներկի հետ օգտագործվող նյութեր՝ դյուրավառ, կոռոզիոն» բեռնառաքման ճշգրիտ անվանումը կարող է օգտագործվել փաթեթների այնպիսի բեռների դեպքում, որոնք միեւնույն փաթեթում պարունակում են «Ներկ՝ դյուրավառ, կոռոզիոն» եւ «Ներկի հետ օգտագործվող նյութեր՝ կոռոզիոն, դյուրավառ»:

«Տպագրական թանաքի հետ օգտագործվող նյութեր» բեռնառաքման ճշգրիտ անվանումը կարող է օգտագործվել փաթեթների այնպիսի

բեռների դեպքում, որոնք միեւնույն փաթեթում պարունակում են «Տպագրական թանաք» եւ «Տպագրական թանաքի հետ օգտագործվող նյութեր»:

368 Տրոհվող կամ տրոհվող-ազատված ուրանի հեքսաֆտորիդի դեպքում նյութը պետք է դասակարգվի ՄԱԿ-ի նշագրման 3507 համարի կամ ՄԱԿ-ի նշագրման 2978 համարի ներքո:

369 2.1.3.5.3 (ա)-ի համաձայն՝ ազատված փաթեթում գտնվող՝ թունավոր եւ կոռոզիոն հատկություններ ունեցող այս ռադիոակտիվ նյութը դասակարգվում է 6.1 դասում՝ որպես ռադիոակտիվության եւ կոռոզիոն լրացուցիչ ռիսկեր ներկայացնող:

Ուրանի հեքսաֆտորիդը կարող է դասակարգվել այս դիրքի ներքո միայն այն դեպքում, երբ բավարարվում են 2.2.7.2.4.1.2, 2.2.7.2.4.1.5, 2.2.7.2.4.5.2-ի, իսկ տրոհվող-ազատված նյութի դեպքում՝ 2.2.7.2.3.5-ի պայմանները:

6.1 դասի՝ կոռոզիոն լրացուցիչ ռիսկ ներկայացնող նյութերի փոխադրման նկատմամբ կիրառվող դրոյթներից բացի կիրառվում են 5.1.3.2, 5.1.5.2.2, 5.1.5.4.1 (բ), 7.5.11 CV33 (3.1), (5.1)-(5.4) եւ (6)-ի դրոյթները:

Չի պահանջվում փակցնել 7-րդ դասի որեւէ պիտակ:

370 Այս դիրքը կիրառվում է հետեւյալի նկատմամբ՝

- ամոնիումի նիտրատ՝ ավելի քան 0,2% այրվող նյութերի պարունակությամբ, ներառյալ՝ որպես ածխածին հաշվարկված ցանկացած օրգանական նյութ, բացառությամբ ավելացված նյութի, եւ
- ամոնիումի նիտրատ՝ 0,2%-ից ոչ ավելի այրվող նյութերի պարունակությամբ, ներառյալ՝ որպես ածխածին հաշվարկված ցանկացած օրգանական նյութ, բացառությամբ ավելացված ցանկացած այնպիսի նյութի, որը փորձարկման ընթացքում տալիս է դրական արդյունք՝ 2-րդ սերիայի փորձարկմանը համապատասխան (տե՛ս «Փորձարկումների եւ չափորոշիչների ձեռնարկ», I մաս): Տե՛ս նաեւ ՄԱԿ-ի նշագրման 1942 համարը:

371 1) Այս դիրքը կիրառվում է նաեւ այն պատրաստվածքների նկատմամբ, որոնք պարունակում են արտազատման սարքով փոքր ճնշումային տարա: Այդպիսի պատրաստվածքները պետք է համապատասխանեն հետեւյալ պահանջներին.

- ա) ճնշումային տարայի տարողությունը չպետք է գերազանցի 0,5 լիտրը, իսկ աշխատանքային ճնշումը 15 °C ջերմաստիճանում

չպետք է գերազանցի 25 բարը.

- բ) ճնշումային տարայի նվազագույն պայթյունային ճնշումը 15 °C ջերմաստիճանում պետք է լինի գազի ճնշումից առնվազն չորս անգամ ավելի.
- գ) յուրաքանչյուր պատրաստվածք պետք է արտադրված լինի այնպես, որ նորմալ պայմաններում բեռնման-բեռնաթափման, փաթեթավորման, փոխադրման եւ օգտագործման ժամանակ տեղի չունենա պատահական գործարկում կամ արտազատում: Սա կարող է ապահովվել ակտիվարարին միացված արգելափակման լրացուցիչ սարքի միջոցով.
- դ) յուրաքանչյուր պատրաստվածք պետք է արտադրված լինի այնպես, որ կանխվեն ճնշումային տարայից կամ ճնշումային տարայի մասերից վտանգավոր արտանետումները.
- ե) յուրաքանչյուր ճնշումային տարա պետք է արտադրված լինի այնպիսի նյութից, որը պայթյունի դեպքում չի քանդվի.
- զ) պատրաստվածքի կառուցվածքի տեսակը պետք է ենթարկվի հրակայունության փորձարկման: Այս փորձարկման համար կիրառվում են «Փորձարկումների եւ չափորոշիչների ձեռնարկ»-ի 16.6.1.2 պարբերությունը՝ բացի «է» տառից, 16.6.1.3.1-16.6.1.3.6 պարբերությունները, 16.6.1.3.7 պարբերության «բ» կետը եւ 16.6.1.3.8 պարբերությունը: Պետք է ցույց տրվի, որ պատրաստվածքում ճնշումը նվազեցվում է հալուն ապահովիչի կամ ճնշումը նվազեցնող այլ սարքի միջոցով այնպես, որ ճնշումային տարան չքանդվի, եւ որ պատրաստվածքը կամ պատրաստվածքի բեկորները չթռչեն 10 մետրից ավելի հեռու.
- է) պատրաստվածքի կառուցվածքի տեսակը պետք է ենթարկվի հետեւյալ փորձարկմանը: Փաթեթավորման ընթացքում մեկ պատրաստվածքի գործարկման համար պետք է օգտագործել խթանող մեխանիզմը: Փաթեթի արտաքին մասում չպետք է լինի որեւէ վտանգավոր ազդեցություն, ինչպես օրինակ՝ փաթեթի ճեղքում, մետաղական բեկորներ կամ փաթեթվածքից տարայի արտանետում.

- 2) արտադրողը պետք է պատրաստի կառուցվածքի տեսակի, ինչպես նաեւ փորձարկումների եւ դրանց արդյունքների վերաբերյալ տեխնիկական փաստաթղթեր: Արտադրողը պետք է իրականացնի այնպիսի գործողություններ, որոնցով կհաստատվի, որ սերիաներով արտադրված պատրաստվածքներն ունեն լավ որակ, համապատասխանում են կառուցվածքի տեսակին, ինչպես նաեւ

կարող են բավարարել 1-ին կետի պահանջները: Արտադրողը պահանջի դեպքում այդ տեղեկությունները պետք է տրամադրի իրավասու մարմին:

372 Այս դիրքը կիրառվում է 0,3 Վտ-ժ-ից ավելի էներգատարողություն ունեցող ասիմետրիկ կոնդենսատորների նկատմամբ, 0,3 Վտ-ժ կամ դրանից պակաս էներգատարողություն ունեցող կոնդենսատորները չեն կարգավորվում «ԱԴԴ» համաձայնագրով:

«էներգատարողություն» նշանակում է կոնդենսատորում պարունակվող էներգիայի քանակը, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$\text{Վտ-ժ} = 1/2\text{CN}(\text{UR2}-\text{UL2}) \times (1/3600),$$

օգտագործելով անվանական տարողությունը (CN), անվանական լարումը (UR) եւ անվանական նվազագույն լարումը (UL):

Այն բոլոր ասիմետրիկ կոնդենսատորները, որոնց նկատմամբ կիրառվում է այս դիրքը, պետք է բավարարեն հետևյալ պայմանները.

- ա) կոնդենսատորները կամ մոդուլները պետք է պաշտպանված լինեն կարճ միացումից.
- բ) կոնդենսատորները պետք է նախագծված եւ կառուցված լինեն այնպես, որ հնարավոր լինի անվտանգ ձեռով նվազեցնել ճնշումը, որը կարող է կուտակվել օգտագործման ընթացքում՝ կոնդենսատորի պատյանում առկա օդանցքի կամ առանձնացող միացման միջոցով: Ճնշումը նվազեցնելու ժամանակ առաջացած ցանկացած հեղուկ պետք է պարունակվի այն փաթեթվածքի կամ սարքավորման մեջ, որտեղ տեղադրված է կոնդենսատորը.
- գ) կոնդենսատորների վրա էներգատարողությունը պետք է նշվի Վտ-ժ-ով, եւ
- դ) Վտանգավոր բեռների որեւէ դասի դասակարգման չափորոշիչներին համապատասխանող էլեկտրոլիտ պարունակող կոնդենսատորները պետք է նախագծված լինեն այնպես, որ դիմակայեն 95 կՊա ճնշման գրադիենտին:

«ԱԴԴ» համաձայնագրի մյուս դրույթները չեն տարածվում վտանգավոր բեռների որեւէ դասի դասակարգման չափորոշիչներին չհամապատասխանող էլեկտրոլիտ պարունակող կոնդենսատորների վրա, այդ թվում՝ մոդուլում լրակազմված լինելու կամ սարքավորման մեջ տեղադրված լինելու դեպքում:

«ԱԴԴ» համաձայնագրի մյուս դրույթները չեն տարածվում վտանգավոր բեռների որեւէ դասի դասակարգման չափորոշիչներին համապատասխանող էլեկտրոլիտ պարունակող այն կոնդենսատորների վրա, որոնք ունեն 20 Վտ-ժ կամ դրանից պակաս էներգատարողություն



այն դեպքում, երբ դրանք կարող են չփաթեթավորված վիճակում անցնել ոչ առաձգական մակերեսույթի վրա 1,2 մ բարձրությունից անկման փորձարկումը՝ առանց պարունակության կորստի, այդ թվում՝ այն դեպքում, երբ դրանք լրակազմված են մոդուլում:

Վտանգավոր բեռների որեւէ դասի դասակարգման չափորոշիչներին համապատասխանող՝ էլեկտրոլիտ պարունակող այն կոնդենսատորները, որոնք տեղադրված չեն սարքավորման մեջ եւ ունեն 20 Վտ-ժ-ից ավելի էներգատարողություն, կարգավորվում են «ԱԴԴ» համաձայնագրով:

«ԱԴԴ» համաձայնագրի մյուս դրույթները չեն տարածվում սարքավորման մեջ տեղադրված եւ վտանգավոր բեռների որեւէ դասի դասակարգման չափորոշիչներին համապատասխանող էլեկտրոլիտ պարունակող կոնդենսատորների վրա՝ պայմանով, որ սարքավորումը փաթեթավորված լինի համապատասխան նյութից պատրաստված, ինչպես նաեւ բավարար ամրություն եւ կառուցվածք ունեցող ամուր արտաքին փաթեթվածքով՝ կախված փաթեթվածքի օգտագործման համար նախատեսված ձեւից, եւ այնպես, որ փոխադրման ընթացքում կանխվի կոնդենսատորների պատահական գործարկումը: Կոնդենսատորներ պարունակող մեծ ամուր սարքավորումները կարող են փոխադրվել չփաթեթավորված վիճակում կամ տակդիրների վրա այն դեպքում, երբ դրանց համար ապահովված է նույն պաշտպանությունն այն սարքավորման մեջ, որտեղ դրանք գտնվում են:

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Չնայած այս հատուկ դրույթի դրույթներին՝ 8-րդ դասի ակալիական էլեկտրոլիտներ պարունակող նիկել-ածխածնային ասիմետրիկ կոնդենսատորները պետք է փոխադրվեն ՄԱԿ-ի նշագրման 2795 համարի ներքո՝ ՄԱՐՏԿՈՅՆԵՐ, ԹԱՅ, ԱԼԿԱԼԻՈՎ, էլեկտրականության պահպանություն:*

373 Ծնշման տակ չգտնվող եռֆտորիդ բորի գազ պարունակող նեյտրոնային ճառագայթման դետեկտորները կարող են փոխադրվել այս դիրքի ներքո՝ պայմանով, որ բավարարվեն հետեւյալ պայմանները՝

- ա) Ծառագայթման յուրաքանչյուր դետեկտոր պետք է բավարարի հետեւյալ պայմանները՝
  - i) յուրաքանչյուր դետեկտորում բացարձակ ճնշումը 20°C ջերմաստիճանում չպետք է գերազանցի 105 ԿՊա-ն.
  - ii) յուրաքանչյուր դետեկտորում գազի քանակը չպետք է գերազանցի 13 գրամը.
  - iii) յուրաքանչյուր դետեկտոր պետք է արտադրված լինի ըստ որակի ապահովման գրանցված ծրագրի.

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Այս նպատակով կարող է օգտագործվել ISO*

9001 ստանդարտը:

- iv) նեյտրոնային ճառագայթման յուրաքանչյուր դետեկտոր պետք է ունենա զոդովի մետաղական կառուցվածք, որը հավաքված է ամուր մետաղակերամիկական զոդանյութով: Այս դետեկտորները պետք է ունենան պայթման նվազագույն 1800 կՊա ճնշում, որը հաստատվում է կառուցվածքի տեսակի փորձարկան միջոցով, եւ
  - v) մինչեւ լցավորումը յուրաքանչյուր դետեկտոր պետք է ենթարկվի հերմետիկության 1 x 10<sup>-10</sup> սմ<sup>3</sup>/վ ստանդարտին համապատասխանության փորձարկման:
- բ) Որպես առանձին բաղադրիչներ փոխադրվող ճառագայթման դետեկտորները պետք է փոխադրվեն հետեւյալ ձեւով՝
- i) դետեկտորները պետք է տեղավորվեն հերմետիկ պլաստմասսե միջանկյալ ներդիրի մեջ՝ ամբողջ գազային պարունակությունը կլանելու (աբսորբելու) կամ մակակլանելու (ադսորբելու) համար նախատեսված կլանման կամ մակակլանման համապատասխան նյութով.
  - ii) դրանք պետք է փաթեթավորվեն ամուր արտաքին փաթեթվածքով: Պատրաստի փաթեթը պետք է անցնի 1,8 մ բարձրությունից անկման փորձարկումը՝ առանց դետեկտորներից գազային պարունակության արտահոսքի.
  - iii) յուրաքանչյուր արտաքին փաթեթվածքում բոլոր դետեկտորներից գազի ընդհանուր քանակը չպետք է գերազանցի 52 գրամը:
- գ) «ա» պարբերության պայմանները բավարարող դետեկտորներ պարունակող նեյտրոնային ճառագայթման ամբողջական համակարգերը պետք է փոխադրվեն հետեւյալ ձեւով՝
- i) դետեկտորները պետք է պահվեն ամուր փակված արտաքին պատյանում.
  - ii) պատյանը պետք է պարունակի կլանման կամ մակակլանման համապատասխան նյութ՝ ամբողջ գազային պարունակությունը կլանելու կամ մակակլանելու համար.
  - iii) ամբողջական համակարգերը պետք է փաթեթավորվեն ամուր արտաքին փաթեթվածքներով, որոնք առանց արտահոսքի կարող են անցնել 1,8 մ բարձրությունից անկման փորձարկումը՝ բացառությամբ այն դեպքի, երբ համակարգի արտաքին պատյանով ապահովվում է

համարժեք պաշտպանություն:

4.1.4.1-ի «P200» փաթեթավորման ցուցումը կիրառելի չէ:

Տրանսպորտային փաստաթուղթը պետք է ներառի հետևյալ նշումը՝ «Փոխադրումը՝ 373-րդ հատուկ դրույթին համապատասխան»:

1 գրամից ոչ ավելի եռֆտորիդ բոր պարունակող նեյտրոնային ճառագայթման դետեկտորները, այդ թվում՝ ապակե զոդանյութով միացումներով դետեկտորները, չեն կարգավորվում «ԱԴԴ» համաձայնագրով՝ պայմանով, որ դրանք բավարարեն «ա» պարբերության պահանջները եւ փաթեթավորվեն «բ» պարբերությանը համապատասխան: Այդպիսի դետեկտորներ պարունակող ճառագայթման դետեկտման համակարգերը չեն կարգավորվում «ԱԴԴ» համաձայնագրով՝ պայմանով, որ դրանք փաթեթավորվում են «գ» պարբերությանը համապատասխան:

374 (Նախատեսվում է վերապահում)

375 Այս նյութերը, երբ փոխադրվում են առանձին կամ համակցված այնպիսի փաթեթվածքներով, որոնք հեղուկների դեպքում յուրաքանչյուր առանձին կամ ներքին փաթեթվածքի համար ունեն 5 լիտր կամ դրանից պակաս զուտ քանակ, կամ որոնք պինդ նյութերի դեպքում յուրաքանչյուր առանձին կամ ներքին փաթեթվածքի համար ունեն 5 կգ կամ դրանից պակաս զուտ քաշ, չեն կարգավորվում «ԱԴԴ» համաձայնագրի ցանկացած այլ դրույթով՝ պայմանով, որ փաթեթվածքները համապատասխանում են 4.1.1.1, 4.1.1.2 եւ 4.1.1.4 - 4.1.1.8-ի ընդհանուր դրույթներին:

376 Այն լիթիում-իոնային էլեմենտները կամ մարտկոցները եւ լիթիումի մետաղական էլեմենտները կամ մարտկոցները, որոնք համարվել են վնասված կամ խոտանված, ինչի հետեւանքով դրանք չեն համապատասխանում «Փորձարկումների եւ չափորոշիչների ձեռնարկ»-ի կիրառելի դրույթների համաձայն փորձարկված տեսակին, պետք է բավարարեն այս հատուկ դրույթի պահանջները:

Այս հատուկ դրույթի նպատակներով սրանք կարող են ներառել, սակայն չեն սահմանափակվում հետևյալով՝

- անվտանգության նկատառումներով խոտանված համարված էլեմենտներ կամ մարտկոցներ.
- էլեմենտներ կամ մարտկոցներ, որոնցից դուրս է հոսել հեղուկ կամ գազ.
- էլեմենտներ կամ մարտկոցներ, որոնց թերությունները չեն կարող հայտնաբերվել մինչեւ փոխադրումը, կամ

- էլեմենտներ կամ մարտկոցներ, որոնք ենթարկվել են ֆիզիկական կամ մեխանիկական վնասվածքի:

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Մարտկոցի վնասված կամ խոտրանված լինելը գնահատելու ժամանակ պետք է հաշվի առնել մարտկոցի տեսակը, ինչպես նաև նախկինում դրա օգտագործված կամ չօգտագործված լինելը:*

Էլեմենտները եւ մարտկոցները պետք է փոխադրվեն՝ համաձայն ՄԱԿ-ի նշագրման 3090, ՄԱԿ-ի նշագրման 3091, ՄԱԿ-ի նշագրման 3480 եւ ՄԱԿ-ի նշագրման 3481 համարների նկատմամբ կիրառելի դրույթների, բացի 230-րդ հատուկ դրույթից եւ այս դրույթում այլ բան նշված լինելու դեպքերից:

Փաթեթների վրա համապատասխանաբար պետք է նշվի «ՎՆԱՍՎԱԾ/ԽՈՏԱՆՎԱԾ ԼԻԹԻՈՒՄ-ԻՈՆԱՅԻՆ ՄԱՐՏԿՈՑՆԵՐ» կամ «ՎՆԱՍՎԱԾ/ԽՈՏԱՆՎԱԾ ԼԻԹԻՈՒՄԻ ՄԵՏԱՂԱԿԱՆ ՄԱՐՏԿՈՑՆԵՐ»:

Էլեմենտները եւ մարտկոցները պետք է փաթեթավորվեն համապատասխանաբար 4.1.4.1-ի «P908» կամ 4.1.4.3-ի «LP904» փաթեթավորման ցուցումներին համապատասխան:

Այն էլեմենտները եւ մարտկոցները, որոնք փոխադրման նորմալ պայմաններում կարող են արագ քանդվել, վտանգավոր ռեակցիայի մեջ մտնել, առաջացնել բոց կամ վտանգավոր ձեռով արձակել ջերմություն կամ արտանետել թունավոր, կոռոզիոն կամ դյուրավառ գազեր կամ գոլորշիներ, չպետք է փոխադրվեն՝ բացառությամբ այն պայմանների, որոնք հաստատվել են «ԱԴՌ» համաձայնագրի ցանկացած Պայմանավորվող կողմի իրավասու մարմնի կողմից, որը նույնպես կարող է ընդունել «ԱԴՌ» համաձայնագրի Պայմանավորվող կողմ չհանդիսացող երկրի իրավասու մարմնի կողմից տրամադրված հաստատումը՝ պայմանով, որ այդ հաստատումը տրամադրվել է «ՌԻԴ» կանոնակարգերի, «ԱԴՌ» համաձայնագրի, «ԱԴՆ» համաձայնագրի, ՎԲՄԾ կանոնագրի կամ ԻԿԱՕ-ի տեխնիկական ցուցումների համաձայն կիրառելի ընթացակարգերին համապատասխան: Այս դեպքում էլեմենտները եւ մարտկոցները վերագրվում են տրանսպորտային «0» կատեգորիային:

- 377 Վերացման կամ վերամշակման նպատակով փոխադրվող լիթիում-իոնային եւ լիթիումի մետաղական էլեմենտները եւ մարտկոցները, ինչպես նաև այդպիսի էլեմենտներ եւ մարտկոցներ պարունակող սարքավորումները, որոնք փաթեթավորված են ոչ լիթիումային մարտկոցների հետ կամ առանց դրանց, կարող են փաթեթավորվել

4.1.4.1-ի «P909» փաթեթավորման ցուցմանը համապատասխան:

2.2.9.1.7 (ա)-(ե)-ի պահանջները չեն տարածվում այս էլեմենտների եւ մարտկոցների վրա:

Փաթեթների վրա պետք է նշվի «ԼԻԹԻՈՒՄԱՅԻՆ ՄԱՐՏԿՈՑՆԵՐ՝ ՎԵՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ» կամ «ԼԻԹԻՈՒՄԱՅԻՆ ՄԱՐՏԿՈՑՆԵՐ՝ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ»:

Վնասված կամ խոտանված համարված մարտկոցները պետք է փոխադրվեն 376-րդ հատուկ դրույթին համապատասխան եւ փաթեթավորվեն՝ համապատասխանաբար 4.1.4.1-ի «P908» փաթեթավորման ցուցմանը կամ 4.1.4.3-ի «LP904» փաթեթավորման ցուցմանը համապատասխան:

378 Ճառագայթման այն դետեկտորները, որոնք այս գազը պարունակում են 6.2 գլխի պահանջներին եւ 4.1.4.1-ի «P200» փաթեթավորման ցուցմանը չհամապատասխանող չվերալցավորվող ճնշումային տարաներում, կարող են փոխադրվել այս դիրքի ներքո՝ պայմանով, որ՝

- ա) յուրաքանչյուր տարայում աշխատանքային ճնշումը չի գերազանցում 50 բարը.
- բ) տարայի տարողությունը չի գերազանցում 12 լիտրը.
- գ) այն դեպքում, երբ տեղադրված է ճնշումը նվազեցնող սարք, յուրաքանչյուր տարայի նվազագույն պայթման ճնշումը պետք է լինի աշխատանքային ճնշումից առնվազն 3 անգամ ավելի, իսկ այն դեպքում, երբ տեղադրված չէ ճնշումը նվազեցնող որեւէ սարք՝ աշխատանքային ճնշումից առնվազն 4 անգամ ավելի.
- դ) յուրաքանչյուր տարա արտադրված է այնպիսի նյութից, որը պայթյունի դեպքում չի քայքայվի.
- ե) յուրաքանչյուր դետեկտոր արտադրված է ըստ որակի ապահովման գրանցված ծրագրի.

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Այս նպատակով կարող է օգտագործվել ISO 9001 ստանդարտը:*

- զ) Դետեկտորները փոխադրվում են ամուր արտաքին փաթեթվածքներով: Պատրաստի փաթեթը պետք է անցնի 1,2 մետր բարձրությունից անկման փորձարկումը՝ առանց դետեկտորը ջարդելու կամ արտաքին փաթեթվածքը վնասելու: Դետեկտոր պարունակող սարքավորումը պետք է փաթեթավորվի ամուր արտաքին փաթեթվածքով՝ բացառությամբ, եթե դետեկտորի համար ապահովված է համարժեք պաշտպանություն այն սարքավորմամբ, որում այն գտնվում է, եւ

է) տրանսպորտային փաստաթուղթը ներառում է հետեւյալ նշումը՝  
«Փոխադրումը 378-րդ հատուկ դրույթին համապատասխան»:

«ԱԴԴ» համաձայնագրի ցանկացած այլ պահանջ չի տարածվում ճառագայթման դետեկտորների, այդ թվում՝ ճառագայթման դետեկտման համակարգերում առկա դետեկտորների վրա, եթե դետեկտորները բավարարում են վերոնշյալ (ա)-(գ) կետերի պահանջները, իսկ դետեկտորի տարաների տարողությունը չի գերազանցում 50 մլ-ն:

379 Այն անջուր ամոնիակը, որը մակակլանվել կամ կլանվել է այնպիսի պինդ նյութով, որը պարունակվում է ամոնիակի բաշխման համակարգերում կամ այդպիսի համակարգերի մաս կազմելու համար նախատեսված տարաներում, չի կարգավորվում «ԱԴԴ» համաձայնագրի մյուս դրույթներով, եթե պահպանվում են հետեւյալ պայմանները՝

- ա) Մակակլանումը (ադսորբում) կամ կլանումը (աբսորբում) ունեն հետեւյալ հատկությունները՝
  - i) տարայում 20 °C ջերմաստիճանի դեպքում ճնշումը 0,6 բարից պակաս է.
  - ii) տարայում 35 °C ջերմաստիճանի դեպքում ճնշումը 1 բարից պակաս է.
  - iii) տարայում 85 °C ջերմաստիճանի դեպքում ճնշումը 12 բարից պակաս է.
- բ) մակակլանման կամ կլանման նյութը չպետք է ունենա 1-ից 8-րդ դասերում թվարկված վտանգավոր հատկությունները.
- գ) տարայի առավելագույն պարունակությունը պետք է լինի 10 կգ ամոնիակ, եւ
- դ) մակակլանված կամ կլանված ամոնիակ պարունակող տարաները պետք է բավարարեն հետեւյալ պայմանները՝
  - i) տարաները պետք է պատրաստված լինեն ամոնիակի հետ համատեղելի նյութից, ինչպես նշված է ISO 11114-1:2012 ստանդարտում.
  - ii) տարաները եւ դրանց փակման միջոցները պետք է լինեն հերմետիկ փակված եւ կարողանան պահել առաջացած ամոնիակը.
  - iii) յուրաքանչյուր տարա պետք է կարողանա դիմանալ 85 °C ջերմաստիճանում առաջացած ճնշմանը՝ 0,1%-ից ոչ ավելի ծավալային ընդլայնմամբ.
  - iv) յուրաքանչյուր տարա պետք է ունենա այնպիսի սարք, որը թույլ է տալիս դուրս հանել գազն այն դեպքում, երբ ճնշումը

գերազանցում է 15 բարը՝ առանց կտրուկ քանդման, պայթյունի կամ արտանետման, եւ

- v) ճնշումը նվազեցնող սարքն ապակտիվացված լինելու դեպքում յուրաքանչյուր տարա պետք է առանց արտահոսքի դիմանա 20 բար ճնշմանը:

Ամոնիակի բաշխիչ սարքով փոխադրվելու դեպքում տարաները պետք է միացված լինեն բաշխիչ սարքին այնպես, որ տվյալ հավաքվածքն ունենա նույն ամրությունը, ինչ առանձին տարան:

Այս հատուկ դրույթում նշված մեխանիկական ամրության հատկությունները պետք է փորձարկվեն անվանական տարողության չափով լցավորված տարայի եւ (կամ) բաշխիչ սարքի նախատիպի օգտագործմամբ՝ մինչեւ նշված ճնշմանը հասնելը ջերմաստիճանը բարձրացնելու միջոցով:

Փորձարկման արդյունքները պետք է փաստաթղթավորվեն, պետք է լինեն հետագծելի եւ պահանջի հիման վրա ուղարկվեն համապատասխան մարմիններ:

380 եւ 381 (Նախատեսվում է վերապահում)

382 Պոլիմերային հատիկները կարող են պատրաստվել պոլիստիրոլից, պոլի(մեթիլ)մետակրիլատից կամ այլ պոլիմերներից: Անհրաժեշտ չէ ընդարձակվող պոլիմերային հատիկները դասակարգել ՄԱԿ-ի նշագրման այս համարի ներքո այն դեպքում, երբ կարելի է ցույց տալ, որ, համաձայն «Փորձարկումների եւ չափորոշիչների ձեռնարկ»-ի 38.4.4 ենթաբաժնի III մասի Ս1 փորձարկման (Դյուրավառ գոլորշիներ արձակող նյութերի փորձարկման մեթոդ), դյուրավառ միջավայր առաջացնող որեւէ դյուրավառ գոլորշի չի արձակվում: Այս փորձարկումը պետք է իրականացնել միայն այն դեպքում, երբ քննարկվում է տվյալ նյութը դասակարգումից հանելու հարցը:

383 Սեղանի թենիսի՝ ցելյուլոզից պատրաստված գնդակները չեն կարգավորվում «ԱԴՌ» համաձայնագրով այն դեպքում, երբ սեղանի թենիսի յուրաքանչյուր գնդակի զուտ քաշը չի գերազանցում 3,0 գրամը եւ մեկ փաթեթում սեղանի թենիսի գնդակների ընդհանուր զուտ քաշը չի գերազանցում 500 գրամը:

384 (Նախատեսվում է վերապահում)

385 Այս դիրքը կիրառվում է դյուրավառ հեղուկով կամ գազով ներքին այրման շարժիչներով կամ վառելիքային էլեմենտներով աշխատող փոխադրամիջոցների նկատմամբ:

Ե՛վ ներքին այրման շարժիչով, եւ՛ ուժահավաքիչ մարտկոցներով, նատրիումային մարտկոցներով, լիթիումի մետաղական մարտկոցներով

կամ լիթիում-իոնային մարտկոցներով աշխատող հիբրիդային էլեկտրական փոխադրամիջոցները, որոնք փոխադրվում են այդ մարտկոցները դրանց մեջ տեղադրված վիճակում, պետք է ընդգրկվեն այս դիրքում: Ուժահավաքիչ մարտկոցներով, նատրիումային մարտկոցներով, լիթիումի մետաղական մարտկոցներով կամ լիթիում-իոնային մարտկոցներով աշխատող հիբրիդային էլեկտրական փոխադրամիջոցները, որոնք փոխադրվում են այդ մարտկոցները դրանց մեջ տեղադրված վիճակում, պետք է ընդգրկվեն հետևյալ դիրքում՝ ՄԱԿ-ի նշագրման 3171 համար՝ ՄԱՐՏԿՈՑՈՎ ԱՇԽԱՏՈՂ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑ (տե՛ս 240-րդ հատուկ դրույթը):

Այս հատուկ դրույթի նպատակով՝ փոխադրամիջոցներն ինքնագնաց մեքենաներ են, որոնք նախատեսված են մեկ կամ ավելի մարդ կամ բեռներ տեղափոխելու համար: Այդպիսի փոխադրամիջոցների օրինակներ են ավտոմոբիլները, մոտոցիկլետները, բեռնատար ավտոմոբիլները, լոկոմոտիվները, սկուտերները, եռանիվ եւ քառանիվ փոխադրամիջոցները կամ մոտոցիկլետները, այգեգործական տրակտորները, գյուղատնտեսական եւ շինարարական ինքնագնաց սարքավորումները, նավերն ու օդանավերը:

Այն վտանգավոր բեռները, ինչպես օրինակ՝ մարտկոցները, անվտանգության բարձիկները, կրակմարիչները, սեղմված գազի կուտակիչները եւ անվտանգության սարքերը, ինչպես նաեւ փոխադրամիջոցի անբաժանելի մաս կազմող այլ բաղադրիչներ, որոնք անհրաժեշտ են փոխադրամիջոցի շահագործման եւ այն շահագործողի կամ ուղեւորների անվտանգության համար, պետք է ապահով տեղադրված լինեն փոխադրամիջոցի մեջ, եւ այլ ձեւով չեն կարգավորվում «ԱԴԴ» համաձայնագրով: Այնուամենայնիվ, լիթիումային մարտկոցները պետք է բավարարեն 2.2.9.1.7-ի պահանջները՝ բացառությամբ այն դեպքերի, երբ 667-րդ հատուկ դրույթով նախատեսված է այլ բան:

- 386 Այն դեպքում, երբ նյութերը կայունացվում են ջերմաստիճանային կարգավորմամբ, կիրառվում են 2.2.41.1.17-ի դրույթները, 7.2 գլխի V8 հատուկ դրույթը, 8.5 գլխի S4 հատուկ դրույթը եւ 9.6 գլխի պահանջները: Քիմիական կայունացում կիրառելու դեպքում փոխադրման համար փաթեթվածքներ, ՍՄԿ-ներ կամ ցիստեռններ առաջարկող անձը պետք է ապահովի, որ կայունացման մակարդակը բավարար լինի կանխելու համար փաթեթվածքում, ՍՄԿ-ում կամ ցիստեռնում գտնվող նյութի վտանգավոր պոլիմերացումը  $50^{\circ} \text{C}$  զանգվածային միջին ջերմաստիճանում, իսկ շարժական ցիստեռնի դեպքում՝  $45^{\circ} \text{C}$  զանգվածային միջին ջերմաստիճանում: Երբ փոխադրման համար կանխատեսված ժամանակահատվածում ավելի ցածր ջերմաստիճաններում քիմիական կայունացումը դառնում է



անարդյունավետ, անհրաժեշտ է ջերմաստիճանի վերահսկողություն: Այս որոշիչ գործոնները, որոնք պետք է հաշվի առնվեն, ներառում են, սակայն չեն սահմանափակվում հետեւյալով՝ փաթեթվածքի, ՄԱԿ-ի կամ ցիստեռնի տարողությունը եւ երկրաչափական պարամետրերը, ինչպես նաեւ մեկուսացման յուրաքանչյուր դեպքի ազդեցությունը, փոխադրման համար ներկայացված նյութի ջերմաստիճանը, երթի տեւողությունը եւ արտաքին միջավայրի ջերմաստիճանի պայմանները, որոնք սովորաբար գոյանում են երթի ժամանակ (հաշվի առնելով նաեւ տարվա եղանակը), օգտագործվող կայունացուցիչի արդյունավետությունը եւ այլ հատկություններ, կանոնակարգով սահմանված կիրառելի գործառական վերահսկողությունը (օրինակ՝ ջերմության աղբյուրներից պաշտպանությանը ներկայացվող պահանջներ, այդ թվում՝ այլ բեռներ, որոնք փոխադրվում են արտաքին միջավայրի ջերմաստիճանից բարձր ջերմաստիճանում) եւ ցանկացած այլ համապատասխան գործոն:

387-499 (Նախատեսվում է վերապահում)

500 (Հանվել է)

501 Հալեցված նավթալինի հետ կապված՝ տե՛ս ՄԱԿ-ի նշագրման 2304 համարը:

502 ՄԱԿ-ի նշագրման 2006 համարի պլաստմասսան՝ նիտրոցելյուլոզային հիմքով, ինքնատաքացող, այլ կերպ չնշված, եւ ՄԱԿ-ի նշագրման 2002 համարի ցելյուլոզի թափոնները 4.2 դասի նյութեր են:

503 Սպիտակ հալեցված ֆոսֆորի համար տե՛ս ՄԱԿ-ի նշագրման 2447 համարը:

504 ՄԱԿ-ի նշագրման 1847 համարի կալիումի սուլֆիդը՝ 30%-ից ոչ պակաս բյուրեղացնող ջուր պարունակող, ՄԱԿ-ի նշագրման 1849 համարի նատրիումի սուլֆիդը՝ 30%-ից ոչ պակաս բյուրեղացնող ջուր պարունակող, ՄԱԿ-ի նշագրման 2949 համարի նատրիումի հիդրոսուլֆիդը՝ 25%-ից ոչ պակաս բյուրեղացնող ջուր պարունակող, 8-րդ դասի նյութեր են:

505 ՄԱԿ-ի նշագրման 2004 համարի մագնեզիումի երկամիդը 4.2 դասի նյութ է:

506 Հողալկալիական մետաղները եւ հողալկալիական մետաղի համաձուլվածքները 4.2 դասի նյութեր են:

ՄԱԿ-ի նշագրման 1869 համարի մագնեզիումը կամ մագնեզիումի համաձուլվածքները՝ հատիկների, տաշեղների կամ ժապավենների տեսքով, 50%-ից ավելին մագնեզիում պարունակող, 4.1 դասի նյութեր են:

507 ՄԱԿ-ի նշագրման 3048 համարի թունավոր դյուրավառ գազերի արտազատումը դանդաղեցնող հավելումներով այլումինի ֆոսֆիդի

հիմքով պեստիցիդները 6.1 դասի նյութեր են:

- 508 ՄԱԿ-ի նշագրման 1871 համարի տիտանի հիդրիդը եւ ՄԱԿ-ի նշագրման 1437 համարի ցիրկոնիումի հիդրիդը 4.1 դասի նյութեր են: ՄԱԿ-ի նշագրման 2870 համարի ալյումինի բորհիդրիդը 4.2 դասի նյութ է:
- 509 ՄԱԿ-ի նշագրման 1908 համարի քլորիտի լուծույթը 8-րդ դասի նյութ է:
- 510 ՄԱԿ-ի նշագրման 1755 համարի քրոմային լուծույթի թթուն 8-րդ դասի նյութ է:
- 511 ՄԱԿ-ի նշագրման 1625 համարի սնդիկի նիտրատը, ՄԱԿ-ի նշագրման 1627 համարի սնդիկի նիտրատը եւ ՄԱԿ-ի նշագրման 2727 համարի թալիումի նիտրատը 6.1 դասի նյութեր են: Թորիումի նիտրատը՝ պինդ, ուրանիլ նիտրատի հեքսահիդրատի լուծույթը եւ ուրանիլի նիտրատը՝ պինդ, 7-րդ դասի նյութեր են:
- 512 ՄԱԿ-ի նշագրման 1730 համարի ծարիրի պենտաքլորիդի հեղուկը, ՄԱԿ-ի նշագրման 1731 համարի ծարիրի պենտաքլորիդի լուծույթը, ՄԱԿ-ի նշագրման 1732 համարի ծարիրի պենտաֆտորիդը եւ ՄԱԿ-ի նշագրման 1733 համարի ծարիրի եռքլորիդը 8-րդ դասի նյութերն են:
- 513 ՄԱԿ-ի նշագրման 0224 համարի բարիումի ազիդը չոր կամ խոնավացված, 50%-ից պակաս ջրի զանգվածային պարունակությամբ 1-ին դասի նյութ է: ՄԱԿ-ի նշագրման 1571 համարի բարիումի ազիդը խոնավացված, 50%-ից ոչ պակաս ջրի զանգվածային պարունակությամբ 4.1 դասի նյութ է: ՄԱԿ-ի նշագրման 1854 համարի բարիումի համաձուլվածքները հրակիր, 4.2 դասի նյութեր են: ՄԱԿ-ի նշագրման 1445 համարի բարիումի քլորատը՝ պինդ, ՄԱԿ-ի նշագրման 1446 համարի բարիումի նիտրատը, ՄԱԿ-ի նշագրման 1447 համարի բարիումի պերքլորատը՝ պինդ, ՄԱԿ-ի նշագրման 1448 համարի բարիումի պերմանգանատը, ՄԱԿ-ի նշագրման 1449 համարի բարիումի պերօքսիդը, ՄԱԿ-ի նշագրման համարի 2719 բարիումի բրոմատը, ՄԱԿ-ի նշագրման 2741 համարի բարիումի հիպոքլորիտը՝ 22%-ից ավելի ակտիվ քլոր պարունակող, ՄԱԿ-ի նշագրման 3405 համարի բարիումի քլորատը՝ լուծույթ, եւ ՄԱԿ-ի նշագրման 3406 համարի բարիումի պերքլորատը՝ լուծույթ, 5.1 դասի նյութեր են: ՄԱԿ-ի նշագրման 1565 համարի բարիումի ցիանիդը եւ ՄԱԿ-ի նշագրման 1884 համարի բարիումի օքսիդը 6.1 դասի նյութեր են:
- 514 ՄԱԿ-ի նշագրման 2464 համարի բերիլիումի նիտրատը 5.1 դասի նյութ է:
- 515 ՄԱԿ-ի նշագրման 1581 համարի քլորպիկրինի եւ մեթիլ բրոմիդի խառնուրդը եւ ՄԱԿ-ի նշագրման 1582 համարի քլորպիկրինի եւ մեթիլ քլորիդի խառնուրդը 2-րդ դասի նյութեր են:
- 516 ՄԱԿ-ի նշագրման 1912 համարի մեթիլքլորիդի եւ մեթիլենքլորիդի

խառնուրդը 2-րդ դասի նյութ է:

- 517 ՄԱԿ-ի նշագրման 1690 համարի նատրիումի ֆտորիդը՝ պինդ, ՄԱԿ-ի նշագրման համարի 1812 կալիումի ֆտորիդը՝ պինդ, ՄԱԿ-ի նշագրման համարի 2505 ամոնիումի ֆտորիդը, ՄԱԿ-ի նշագրման համարի 2674 նատրիումի ֆտորոսիլիկատը, ՄԱԿ-ի նշագրման 2856 համարի ֆտորոսիլիկատները, այլ կերպ չնշված, ՄԱԿ-ի նշագրման 3415 համարի նատրիումի ֆտորիդը՝ լուծույթ, եւ ՄԱԿ-ի նշագրման 3422 համարի կալիում ֆտորիդը՝ լուծույթ, 6.1 դասի նյութեր են:
- 518 ՄԱԿ-ի նշագրման 1463 համարի քրոմի եռօքսիդը՝ անջուր (քրոմաթթու, պինդ), 5.1 դասի նյութ է:
- 519 ՄԱԿ-ի նշագրման 1048 համարի բրոմաջրածինը՝ անջուր, 2-րդ դասի նյութ է:
- 520 ՄԱԿ-ի նշագրման 1050 համարի քլորիդային ջրածինը՝ անջուր, 2-րդ դասի նյութ է:
- 521 Պինդ քլորիտները եւ հիպոքլորիտները 5.1 դասի նյութեր են:
- 522 ՄԱԿ-ի նշագրման 1873 համարի քլորաթթվի ջրային լուծույթը, որը պարունակում է 50%-ից ավելի, սակայն 72%-ից ոչ ավելին մաքուր թթու՝ ըստ զանգվածի, 5.1 դասի նյութ է: Բլորաթթվի ջրային լուծույթները, որոնք պարունակում են 72%-ից ավելի մաքուր թթու՝ ըստ զանգվածի, կամ ջրից բացի մեկ այլ հեղուկի հետ քլորաթթվի խառնուրդները ենթակա չեն փոխադրման:
- 523 ՄԱԿ-ի նշագրման 1382 համարի կալիումի անջուր սուլֆիդը եւ ՄԱԿ-ի նշագրման 1385 համարի նատրիումի անջուր սուլֆիդը եւ դրանց հիդրատները, որոնք պարունակում են 30%-ից պակաս բյուրեղացման ջուր, եւ ՄԱԿ-ի նշագրման 2318 համարի նատրիումի հիդրոսուլֆիդը, որը պարունակում է 25%-ից պակաս բյուրեղացման ջուր, 4.2 դասի նյութեր են:
- 524 ՄԱԿ-ի նշագրման 2858 համարի՝ 18 մկմ կամ ավելի հաստության ցիրկոնիումից պատրաստի ապրանքները 4.1 դասի նյութեր են:
- 525 30%-ից ավելի ցիանիդի իոնների ընդհանուր պարունակությամբ անօրգանական ցիանիդների լուծույթները դասվում են փաթեթավորման I խմբին, 3%-ից ավելի, սակայն 30%-ից ոչ ավելի իոնների ցիանիդի ընդհանուր պարունակությամբ լուծույթները՝ փաթեթավորման II խմբին, եւ 0,3%-ից ավելի, սակայն 3%-ից ոչ ավելի իոնների ցիանիդի ընդհանուր պարունակությամբ լուծույթները՝ փաթեթավորման III խմբին:
- 526 ՄԱԿ-ի նշագրման 2000 համարի ցելուլոզին ընդգրկվում է 4.1 դասում:
- 528 ՄԱԿ-ի նշագրման 1353 համարի նիտրատների ցածր պարունակությամբ

նիտրոցեյուրոզով ներծծված մանրաթելերը կամ թելերը՝ ոչ ինքնատաքացող, 4.1 դասի նյութեր են:

- 529 ՄԱԿ-ի նշագրման 0135 համարի շառաչուն սնդիկը, որը խոնավացված է ջրի կամ սպիրտի եւ ջրի խառնուրդի ոչ պակաս, քան 20%-ով՝ ըստ զանգվածի, 1-ին դասի նյութ է: Սնդիկի քլորիդը (կալումել) 6.1 դասի նյութ է (ՄԱԿ-ի նշագրման 2025 համար):
- 530 ՄԱԿ-ի նշագրման 3293 համարի՝ հիդրազինի 37%-ից ոչ ավելի զանգվածային պարունակությամբ հիդրազինի ջրային լուծույթը 6.1 դասի նյութ է:
- 531 23 °C-ից ցածր բռնկման ջերմաստիճանով եւ անկախ ազոտի պարունակությունից 55%-ից ավելի նիտրոցեյուրոզ պարունակող կամ 12,6%-ից ավելի ազոտի պարունակությամբ 55%-ից ոչ ավելին նիտրոցեյուրոզ պարունակող խառնուրդները (չոր նյութի զանգվածով) 1-ին դասի (տե՛ս ՄԱԿ-ի նշագրման 0340 կամ 0342 համարը) կամ 4.1 դասի նյութեր են (ՄԱԿ-ի նշագրման 2555, 2556 կամ 2557 համարներ):
- 532 ՄԱԿ-ի նշագրման 2672 համարի 10%-ից ոչ պակաս, սակայն 35%-ից ոչ ավելի ամոնիակ պարունակող ամոնիակի լուծույթը 8-րդ դասի նյութ է:
- 533 ՄԱԿ-ի նշագրման 1198 համարի ֆորմալդեհիդի դյուրավառ լուծույթները 3-րդ դասի նյութեր են: «ԱԴԴ» համաձայնագրի պահանջները չեն տարածվում 25%-ից պակաս ֆորմալդեհիդ պարունակող ֆորմալդեհիդի ոչ դյուրավառ լուծույթների վրա:
- 534 Եթե որոշակի կլիմայական պայմաններում բենզինի (գազոլինի) գոլորշու ճնշումը 50 °C ջերմաստիճանում կարող է գերազանցել 110 կՊա-ն (1,10 բար), սակայն այն չի բարձրանում 150 կՊա-ից բարձր (1,50 բար), ապա այդ ապրանքը կրկին պետք է համարվի 50 °C ջերմաստիճանում 110 կՊա-ից ոչ բարձր գոլորշու ճնշում ունեցող (1,10 բար) նյութ:
- 535 ՄԱԿ-ի նշագրման 1469 համարի կապարի նիտրատը, ՄԱԿ-ի նշագրման 1470 համարի կապարի պերքլորատը՝ պինդ, եւ ՄԱԿ-ի նշագրման 3408 համարի կապարի պերքլորատը՝ լուծույթ, 5.1 դասի նյութեր են:
- 536 Պինդ նավթալինի համար տե՛ս ՄԱԿ-ի նշագրման 1334 համարը:
- 537 ՄԱԿ-ի նշագրման 2869 համարի տիտանի եռքլորիդի խառնուրդը՝ ոչ հրակիր, 8-րդ դասի նյութ է:
- 538 Ծծմբի համար (պինդ վիճակում) տե՛ս ՄԱԿ-ի նշագրման 1350 համարը:
- 539 23 °C-ից ոչ պակաս բռնկման ջերմաստիճանով իզոցիանատների լուծույթները 6.1 դասի նյութեր են:

- 540 ՄԱԿ-ի նշագրման 1326 համարի հաֆնիումի փոշին՝ խոնավացված, ՄԱԿ-ի նշագրման 1352 համարի տիտանիումի փոշին՝ խոնավացված, կամ ՄԱԿ-ի նշագրման 1358 համարի ցիրկոնիումի փոշին՝ խոնավացված 25%-ից ոչ պակաս ջրի զանգվածային բաժնով, 4.1 դասի նյութեր են:
- 541 Նիտրոցելյուլոզի խառնուրդները, որոնց մեջ ջրի, սպիրտի կամ պլաստիկարարի պարունակությունը ցածր է սահմանված սահմանային արժեքներից, 1-ին դասի նյութեր են:
- 542 Այս դիրքը ներառում է տրեմոլիտ եւ (կամ) ակտինոլիթ պարունակող տալկ:
- 543 ՄԱԿ-ի նշագրման 1005 համարի անջուր ամոնիակը, ՄԱԿ-ի նշագրման 3318 համարի 50%-ից ավելի ամոնիակ պարունակող ամիակի լուծույթը եւ ՄԱԿ-ի նշագրման 2073 համարի 35%-ից ավելի, սակայն 50%-ից ոչ ավելի ամոնիակ պարունակող ամոնիակի լուծույթը 2-րդ դասի նյութեր են: «ԱԴՌ» համաձայնագրի պահանջները չեն տարածվում 10%-ից ոչ ավելի ամոնիակ պարունակող ամոնիակի լուծույթների վրա:
- 544 ՄԱԿ-ի նշագրման 1032 համարի երկմեթիլամինը՝ անջուր, ՄԱԿ-ի նշագրման 1036 համարի էթիլամինը, ՄԱԿ-ի նշագրման 1061 համարի մեթիլամինը՝ անջուր, եւ ՄԱԿ-ի նշագրման 1083 համարի եռմեթիլամինը՝ անջուր, 2-րդ դասի նյութեր են:
- 545 ՄԱԿ-ի նշագրման 0401 համարի 10%-ից պակաս ջրի զանգվածային պարունակությամբ խոնավացված երկպիկրիլ սուլֆիդը 1-ին դասի նյութ է:
- 546 ՄԱԿ-ի նշագրման 2009 համարի 18 մկմ-ից պակաս հաստությամբ մշակված թերթերի, շերտերի կամ մետաղալարի տեսքով չոր ցիրկոնիումը 4.2 դասի նյութ է: 254 մկմ կամ ավելի հաստությամբ մշակված թերթերի, շերտերի կամ մետաղալարի տեսքով չոր ցիրկոնիումի վրա չեն տարածվում «ԱԴՌ» համաձայնագրի պահանջները:
- 547 ՄԱԿ-ի նշագրման 2210 համարի մանեբը կամ ՄԱԿ-ի նշագրման 2210 համարի ինքնատաքացման ենթակա մանեբի պատրաստուկները 4.2 դասի նյութեր են:
- 548 Քլորսիլանները, որոնք ջրի հետ շփվելիս առաջացնում են դյուրավառ գազեր, 4.3 դասի նյութեր են:
- 549 23 °C-ից ցածր բռնկման ջերմաստիճանով քլորսիլանները, որոնք ջրի հետ շփվելիս չեն առաջացնում դյուրավառ գազեր, 3-րդ դասի նյութեր են: 23 °C կամ ավելի բարձր բռնկման ջերմաստիճանով քլորսիլանները, որոնք ջրի հետ շփվելիս չեն առաջացնում դյուրավառ գազեր, 8-րդ դասի

նյութեր են:

- 550 ՄԱԿ-ի նշագրման 1333 համարի թիթեղիկների, ձողերի կամ ձուլակտորների տեսքով ցերիումը 4.1 դասի նյութ է:
- 551 23 °C-ից ցածր բռնկման ջերմաստիճանով այս իզոցիանատների լուծույթները 3-րդ դասի նյութեր են:
- 552 Փոշու տեսքով կամ այլ դյուրավառության նպաստող այլ վիճակով մետաղները եւ մետաղների համաձուլվածքները 4.2 դասի նյութեր են: Փոշու տեսքով կամ այլ դյուրավառության նպաստող այլ վիճակով մետաղները եւ մետաղների համաձուլվածքները, որոնք ջրի հետ շփվելիս առաջացնում են դյուրավառ գազեր, 4.3 դասի նյութեր են:
- 553 Լաբորատոր փորձարկումների ընթացքում պերքացախաթթվի հետ ջրածնի պերօքսիդի այս խառնուրդը (տե՛ս «Փորձարկումների եւ չափորոշիչների ձեռնարկ»-ի , II մաս, բաժին 20) չպետք է դետոնացվի կավիտացիայի վիճակում, ենթարկվի որեւէ դեֆլագրացիայի եւ փակ տարածքում տաքացնելիս չպետք է նույնպես որեւէ կերպ արձագանքի կամ դրսեւորի որեւէ պայթուցիկ հատկություն: Բաղադրությունը պետք է լինի ջերմակայուն (ինքնաարագացող տրոհման ջերմաստիճանը պետք է կազմի 60 °C կամ ավելի բարձր 50 կգ քաշով փաթեթի համար), իսկ ապագայունացման համար պետք է կիրառվի պերքացախաթթվի հետ համատեղելի հեղուկ: Այս չափորոշիչները չբավարարող բաղադրությունները պետք է դիտվեն որպես 5.2 դասի նյութեր (տե՛ս «Փորձարկումների եւ չափորոշիչների ձեռնարկ»-ի, մաս II, 20.4.3(է) պարբերությունը):
- 554 Մետաղների այն հիդրիդները, որոնք ջրի հետ շփվելիս առաջացնում են դյուրավառ գազեր, 4.3 դասի նյութեր են: ՄԱԿ-ի նշագրման 2870 համարի այլումինի բորհիդրիդը կամ ՄԱԿ-ի նշագրման 2870 համարի սարքերում այլումինի բորհիդրիդը 4.2 դասի նյութ է:
- 555 Պատահական այրմանը չենթարկվող ոչ թունավոր մետաղների փոշին եւ այն փոշին, որը, այնուամենայնիվ, ջրի հետ շփվելիս դյուրավառ գազեր է առաջացնում, 4.3 դասի նյութեր են:
- 556 Ինքնաբռնկվող մետաղաօրգանական միացությունները եւ դրանց լուծույթները 4.2 դասի նյութեր են: Այնպիսի կոնցենտրացիաներով մետաղաօրգանական միացությունների հետ դյուրավառ լուծույթները, որոնց դեպքում ջրի հետ շփվելիս դրանք վտանգավոր քանակություններով դյուրավառ գազեր չեն առաջացնում եւ չեն ինքնաբռնկվում, 3-րդ դասի նյութեր են:
- 557 Հրակիր փոշին եւ մետաղների փոշին 4.2 դասի նյութեր են:
- 558 Հրակիր մետաղները եւ մետաղի համաձուլվածքները 4.2 դասի նյութեր են: Այն մետաղները եւ մետաղի համաձուլվածքները, որոնք ջրի հետ

շփվելիս դյուրավառ գազեր չեն առաջացնում եւ հրակիր կամ ինքնատաքացող չեն, սակայն հեշտությամբ վառվում են, դասվում են 4.1 դասի նյութերի շարքին:

- 559 (Հանվել է)
- 560 Բարձրացված ջերմաստիճանում հեղուկը, այլ կերպ չնշված, որը փոխադրվում է 100 °C կամ ավելի բարձր ջերմաստիճանում (ներառյալ՝ հալեցված մետաղները եւ հալեցված աղերը), իսկ բռնկման ջերմաստիճան ունեցող նյութի դեպքում՝ իր բռնկման ջերմաստիճանից ցածր ջերմաստիճանում, 9-րդ դասի նյութ է (ՄԱԿ-ի նշագրման 3257 համար):
- 561 Գերիշխող քայքայիչ հատկություններով օժտված քլորոֆորմիատները 8-րդ դասի նյութեր են:
- 562 Դյուրավառ մետաղաօրգանական միացությունները 4.2 դասի նյութեր են: Զրի հետ ռեակցիայի մեջ մտնող մետաղաօրգանական դյուրավառ միացությունները 4.3 դասի նյութեր են:
- 563 ՄԱԿ-ի նշագրման 1905 համարի սելենաթթուն 8-րդ դասի նյութ է:
- 564 ՄԱԿ-ի նշագրման 2443 համարի վանադիումի օքսիտքլորիդը, ՄԱԿ-ի նշագրման 2444 համարի վանադիումի տետրաքլորիդը եւ ՄԱԿ-ի նշագրման 2475 համարի վանադիումի եռքլորիդը 8-րդ դասի նյութեր են:
- 565 Այս դիրքին դասվում են տարբեր թափոններ, որոնք գոյանում են մարդկանց կամ կենդանիների բուժման արդյունքում կամ կենսաբանական հետազոտությունների ընթացքում, եւ որոնք ամենայն հավանականությամբ չեն պարունակում 6.2 դասի նյութեր: 6.2 դասի պահանջները չեն տարածվում վերամշակված կլինիկական թափոնների կամ կենսաբանական հետազոտությունների արդյունքում առաջացող թափոնների վրա, որոնք նախկինում պարունակել են վարակիչ նյութեր:
- 566 ՄԱԿ-ի նշագրման 2030 համարի՝ հիդրազինի 37%-ից ավելի զանգվածային պարունակությամբ հիդրազինի ջրային լուծույթը 8-րդ դասի նյութ է:
- 567 (Հանվել է)
- 568 Բարիումի ազիդը, որում ջրի պարունակությունը ցածր է նշված սահմանային արժեքից, 1-ին դասի, ՄԱԿ-ի նշագրման 0224 համարի նյութ է:
- 569-579 (Նախատեսվում է վերապահում)
- 580 (Հանվել է)
- 581 Այս դիրքը ներառում է 1-4% մեթիլացետիլենի հետ պրոպադիենի

խառնուրդներ, ինչպես նաև հետեւյալ խառնուրդները՝

Խառնուրդ	Պարունակությունը, % ըստ ծավալի			Թույլատրված տեխնիկական անվանումը՝ 5.4.1.1-ի նպատակով
	Մեթիլացետիլեն եւ պրոպադիեն, ոչ ավելի, քան	Պրոպան եւ պրոպիլեն, ոչ ավելի, քան	C4-ով հագեցած ածխաջրածիններ, ոչ պակաս, քան	
P1	63	24	14	«Խառնուրդ P1»
P2	48	50	5	«Խառնուրդ P2»

582 Այս դիրքը մասնավորապես ներառում է R ... տառով նշված գազերի խառնուրդները, որոնք ունեն հետեւյալ հատկությունները՝

Խառնուրդ	Առավելագույն գոլորշու ճնշումը 70 °C ջերմաստիճանում (ՄՊա)	Նվազագույն խտությունը 50 °C ջերմաստիճանում (կգ/լ)	Թույլատրված տեխնիկական անվանումը՝ 5.4.1.1-ի նպատակով
F1	1,3	1,30	«Խառնուրդ F1»
F2	1,9	1,21	«Խառնուրդ F2»
F3	3,0	1,09	«Խառնուրդ F3»

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1. Եռքլորֆտորմեթանը (սառնազդակ R 11), 1,1,2-եռքլոր -1,2,2-եռֆտորէթանը (սառնազդակ R 113), 1,1,1-եռքլոր-2,2,2-եռֆտորէթանը (սառնազդակ R 113a), 1-քլոր-1,2,2-եռֆտորէթանը (սառնազդակ R 133) եւ 1-քլոր-1,1,2-եռֆտորէթանը (սառնազդակ R 133b) 2-րդ դասի նյութեր չեն: Այնուամենայնիվ, դրանք կարող են մտնել F1-F3 խառնուրդների բաղադրության մեջ:*

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2. Ստանդարտ խտության արժեքները համապատասխանում են երկքլորֆտորմեթանի (1,30 կգ/լ), երկքլորերկֆտորմեթանի (1,21 կգ/լ) եւ քլորաերկֆտորմեթանի (1,09 կգ/լ) խտության արժեքներին:*

583 Այս դիրքը ներառում է, մասնավորապես, գազերի այնպիսի խառնուրդներ, որոնք ունեն հետեւյալ հատկությունները՝

Խառնուրդ	Առավելագույն գոլորշու ճնշումը 70 °C ջերմաստիճանում (ՄՊա)	Նվազագույն խտությունը 50 °C ջերմաստիճանում (կգ/լ)	Թույլատրված տեխնիկական անվանումը՝ 5.4.1.1-ի նպատակով
A	1,1	0,525	«Խառնուրդ A» կամ «Բութան»
A01	1,6	0,516	«Խառնուրդ A01» կամ «Բութան»
A02	1,6	0,505	«Խառնուրդ A02» կամ «Բութան»
A0	1,6	0,495	«Խառնուրդ A0» կամ «Բութան»
A1	2,1	0,485	«Խառնուրդ A1»
B1	2,6	0,474	«Խառնուրդ B1»



B2	2,6	0,463	«Խառնուրդ B2»
B	2,6	0,450	«Խառնուրդ B»
C	3,1	0,440	«Խառնուրդ C» կամ «Պրոպան»

ա Ցիստեռններով փոխադրման դեպքում «Բութան» կամ «Պրոպան» առետրային անվանումները կարող են օգտագործվել միայն որպես լրացում:

584 Այս գազի վրա չեն տարածվում «ԱԴՌ» համաձայնագրի պահանջները, եթե՝

- այն պարունակում է 0,5%-ից ոչ ավելի գազային վիճակում օդ.
- այն առկա է դեֆեկտ չունեցող մետաղական պատիճներում (sodors, sparklets), որոնք կարող են նվազեցնել իրենց ամրությունը.
- պատիճի փականի անջրանցիկությունը երաշխավորված է.
- պատիճն այս գազից պարունակում է 25 գ-ից ոչ ավելի.
- պատիճն այս գազից պարունակում է 1 սմ<sup>3</sup> տարողության հաշվով 0,75 գ-ից ոչ ավելի:

585 (Հանվել է)

586 Հաֆնիումի, տիտանի եւ ցիրկոնիումի փոշիները պետք է պարունակեն ջրի տեսանելի ավելցուկ: «ԱԴՌ» համաձայնագրի պահանջները չեն տարածվում 53 մկմ եւ ավելի մասնիկների չափսի մեխանիկական եղանակով ստացված կամ 840 մկմ եւ ավելին մասնիկների չափսի քիմիական եղանակով ստացված հաֆնիումի, տիտանի եւ ցիրկոնիումի խոնավացված փոշիների վրա:

587 «ԱԴՌ» համաձայնագրի պահանջները չեն տարածվում բարիումի ստեարատի եւ բարիումի տիտանատի վրա:

588 «ԱԴՌ» համաձայնագրի պահանջները չեն տարածվում այլումինի բրոմիդի եւ այլումինի քլորիդի պինդ հիդրատացված ձեւերի վրա:

589 (Հանվել է)

590 «ԱԴՌ» համաձայնագրի պահանջները չեն տարածվում երկաթի քլորիդի հեքսահիդրատի վրա:

591 «ԱԴՌ» համաձայնագրի պահանջները չեն տարածվում 3%-ից ոչ ավելի ազատ թթու պարունակող կապարի սուլֆատի վրա:

592 «ԱԴՌ» համաձայնագրի պահանջները չեն տարածվում այդ նյութը պարունակող չմաքրված դատարկ փաթեթվածքների (այդ թվում՝ նաեւ դատարկ ՍՄԿ-ների եւ խոշոր փաթեթվածքների), դատարկ ավտոցիստեռնների, դատարկ հանովի ցիստեռնների, դատարկ շարժական ցիստեռնների, դատարկ ցիստեռն-կոնտեյներների եւ

դատարկ փոքր կոնտեյներների վրա:

593 «ԱԴՌ» համաձայնագրի պահանջները չեն տարածվում այս գազի վրա, որը նախատեսված է, օրինակ, բժշկական կամ կենսաբանական նմուշների սառեցման համար, եթե այն առկա է կրկնակի պատերով տարաներում, որոնք համապատասխանում են 4.1.4.1-ում ներկայացված բաց կրիոգեն տարաների համար (6) պարբերության P203 փաթեթավորման ցուցմանը՝ բացի 5.5.3-ում նշված դեպքերից:

594 Արտադրող երկրում կիրառվող դրույթների համաձայն պատրաստված եւ լցված ստորեւ թվարկված պատրաստվածքների վրա չեն տարածվում «ԱԴՌ» համաձայնագրի պահանջները՝

ա) ՄԱԿ-ի նշագրման 1044 համարի պատահական աշխատելուց պաշտպանությամբ ապահովված կրակմարիչներ այն դեպքում, երբ՝

- դրանք փաթեթավորված են ամուր արտաքին փաթեթվածքով, կամ
- դրանք մեծ կրակմարիչներ են, որոնք բավարարում են 4.1.4.1-ի փաթեթավորման վերաբերյալ «PP91» հատուկ դրույթի եւ «P003» փաթեթավորման ցուցմանը.

բ) ՄԱԿ-ի նշագրման 3164 համարի պնեմատիկ կամ հիդրավլիկ ճնշման տակ պատրաստվածքներ՝ այնպես նախագծված, որ դիմակայեն գազի ներքին ճնշումը գերազանցող ծանրաբեռնվածությանը՝ ուժերի փոխանցման, իրենց ներհատուկ ամրության կամ իրենց նախագծման առանձնահատկությունների շնորհիվ այն դեպքում, երբ դրանք փաթեթավորված են ամուր փաթեթվածքով:

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. «Արտադրման երկրում կիրառվող դրույթներ» նշանակում է դրույթներ, որոնք կիրառելի են արտադրման երկրում, կամ դրույթներ, որոնք կիրառելի են օգտագործման երկրում:*

596 «ԱԴՌ» համաձայնագրի պահանջները չեն տարածվում կադմիումային ներկանյութերի, ինչպես օրինակ՝ կադմիումի սուլֆիդների, կադմիումի սուլֆոսելենիդների եւ բարձր յուղայնությամբ թթուների կադմիումային աղերի (օրինակ՝ կադմիումի ստեարատ) վրա:

597 «ԱԴՌ» համաձայնագրի պահանջները չեն տարածվում 10%-ից ոչ ավելի մաքուր թթվի զանգվածային պարունակությամբ քացախաթթվի լուծույթների վրա:

598 «ԱԴՌ» համաձայնագրի պահանջները չեն տարածվում՝

ա) նոր կուտակչային մարտկոցների վրա, եթե՝

- դրանք ամրացված են իրենց սահելուն, անկմանը կամ վնասվելուն խոչընդոտող եղանակով.
- դրանք սարքավորված են բռնիչ հարմարանքներով, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք պատշաճորեն դարսակված են, օրինակ, տակդիրների վրա.
- իրենց արտաքին մակերեսի վրա չկա վտանգ ներկայացնող հիմքերի կամ թթուների որել է հետք.
- դրանք պաշտպանված են կարճ միացումներից.

բ) օգտագործված կուտակչային մարտկոցները, եթե՝

- դրանց կմախքները վնասված չեն.
- դրանք ամրացված են իրենց պարունակության արտահոսքին, սահելուն, անկմանը կամ վնասմանը խոչընդոտող եղանակով, օրինակ՝ տակդիրների վրա դարսակվելու միջոցով.
- պատրաստվածքների արտաքին մակերեսի վրա չկա վտանգ ներկայացնող հիմքերի կամ թթուների որել է հետք.
- դրանք պաշտպանված են կարճ միացումներից:

«Օգտագործված կուտակչային մարտկոցներ» նշանակում է կուտակչային մարտկոցներ, որոնք փոխադրվում են վերամշակվելու նպատակով իրենց շահագործման համար նախատեսված ժամկետը լրանալուց հետո:

599 (Հանվել է)

600 «ԱԴԲ» համաձայնագրի պահանջները չեն տարածվում հալեցված եւ պնդացած վանադիումի պենտաօքսիդի վրա:

601 «ԱԴԲ» համաձայնագրի պահանջները չեն տարածվում օգտագործման համար պատրաստի դեղագործական արտադրանքի (դեղորայք) վրա, որոնք արտադրվել եւ փաթեթավորվել են մանրածախ առետրի կամ անհատական օգտագործման կամ կենցաղային կիրառման նպատակով բաշխվելու համար:

602 Դեղին եւ սպիտակ ֆոսֆոր պարունակող ֆոսֆորի սուլֆիդները չեն թույլատրվում փոխադրման:

603 ՄԱԿ-ի նշագրման 1051 համարի կամ ՄԱԿ-ի նշագրման 1614 համարի՝ նկարագրությանը չհամապատասխանող անջուր ցիանաջրածինը չի թույլատրվում փոխադրման: 3%-ից պակաս ջուր պարունակող ցիանաջրածինը (ցիանաջրածնային թթու) համարվում է կայուն, եթե

pH-արժեքը կազմում է  $2,5 \pm 0,5$ , եւ հեղուկը թափանցիկ ու անգույն է:

604-606 (Հանվել է)

607 Կալիումի նիտրատի եւ նատրիումի նիտրիտի խառնուրդներն ամոնիումի աղի հետ չեն թույլատրվում փոխադրման:

608 (Հանվել է)

609 Այրվող խառնուկներ պարունակող քառանիտրոմեթանը չի թույլատրվում փոխադրման:

610 Եթե այս նյութը պարունակում է 45%-ից ավելի ցիանաջրածին, ապա դրա փոխադրումն արգելվում է:

611 0,2%-ից ավելի այրվող նյութեր պարունակող ամոնիումի նիտրատը (ներառյալ ածխածնով հաշվարկված ցանկացած օրգանական նյութ) թույլատրվում է փոխադրման, եթե այն համարվում է 1-ին դասի նյութի կամ պատրաստվածքի բաղադրիչ:

612 (Նախատեսվում է վերապահում)

613 10%-ից ավելի քլորաթթու պարունակող քլորաթթվի լուծույթը եւ ջրից բացի ցանկացած այլ հեղուկի հետ քլորաթթվի խառնուրդները չեն թույլատրվում փոխադրման:

614 2,3,7,8-քառաքլորդիբենզո-պ-դիօքսինը (TCDD) այնպիսի կոնցենտրացիաներով, որոնք համարվում են չափազանց թունավոր՝ 2.2.61.1-ում նշված չափորոշիչների համաձայն, չեն թույլատրվում փոխադրման:

615 (Նախատեսվում է վերապահում)

616 40%-ից ավելի բարդ հեղուկ ազոտական թթվի էսթերներ պարունակող նյութերը պետք է անցնեն 2.3.1-ով նախատեսված՝ արտածորման փորձարկումը:

617 Ի հավելումն պայթուցիկ նյութի տեսակի՝ փաթեթի վրա պետք է նշվի վերջինիս առետրային անվանումը:

618 1,2-բութադիեն պարունակող տարաներում գազային ֆազայում թթվածնի կոնցենտրացիան չպետք է գերազանցի 50 մլ/մ<sup>3</sup>-ը:

619-622 (Նախատեսվում է վերապահում)

623 ՄԱԿ-ի նշագրման 1829 համարի ծծմբի եռօքսիդը պետք է զսպված լինի: 99,95% կամ ավելի մաքրությամբ ծծմբի եռօքսիդը կարող է փոխադրվել ցիստեռններով՝ առանց ինհիբիտորի, եթե այդ ընթացքում ջերմաստիճանը պահպանվում է 32,5 °C կամ ավելի բարձր մակարդակում: Նվազագույնը 32,5 °C ջերմաստիճանում՝ առանց ինհիբիտորի հավելման, ցիստեռններով այդ նյութի փոխադրման

դեպքում տրանսպորտային փաստաթղթում պետք է կատարվի հետևյալ գրառումը՝ «32,5 °C արտադրանքի նվազագույն ջերմաստիճանում փոխադրում»:

625 Այդ պատրաստվածքները պարունակող փաթեթների վրա պետք է կատարվի հստակորեն տեսանելի գրառում՝ «ՄԱԿ 1950 ԱԵՐՈՁՈՒՆԵՐ»:

626-627 (Նախատեսվում է վերապահում)

632 Համարվում է ինքնաայրման ընդունակ (հրակիր):

633 Այս նյութը պարունակող փաթեթների եւ փոքր կոնտեյներների վրա պետք է առկա լինի հետևյալ մակնշումը՝ «Հեռու պահել բռնկման ցանկացած աղբյուրից»: Տվյալ մակնշումը պետք է արվի առաքման երկրի պաշտոնական լեզվով, ինչպես նաեւ, եթե այդ լեզուն անգլերենը, գերմաներենը կամ ֆրանսերենը չէ՝ անգլերենով, գերմաներենով կամ ֆրանսերենով, եթե փոխադրմանը մասնակցող երկրների միջեւ կնքված համաձայնագրերով այլ բան չի նախատեսվում:

634 (Հանվել է)

635 Այս պատրաստվածքները պարունակող փաթեթները կարող են չունենալ նշագրման 9 համարի նմուշի նշան՝ բացառությամբ այն դեպքերի, երբ պատրաստվածքն ամբողջությամբ փակված է փաթեթվածքով, կավարամածով կամ մեկ այլ միջոցով, որոնք թույլ չեն տալիս հեշտությամբ նույնականացնել պատրաստվածքը:

636 ա) Սարքավորումներում տեղադրված էլեմենտները չպետք է լիցքաթափ անել փոխադրման ընթացքում մինչեւ այն մակարդակը, որի ժամանակ լարումը բաց շղթայում կազմում է 2 վոլտից կամ չլիցքաթափված էլեմենտի լարման երկու երրորդից պակաս՝ կախված նրանից, թե այդ արժեքներից որն է ավելի ցածր:

բ) Մինչեւ միջանկյալ վերամշակման վայր հասնելը՝

- յուրաքանչյուրը 500գ-ից ոչ ավելի անզուտ քաշով լիթիումային էլեմենտները եւ մարտկոցները կամ 20 Վտ-ժ-ից ոչ ավելի հզորությամբ լիթիում-իոնային էլեմենտները, 100 Վտ-ժ-ից ոչ ավելի հզորությամբ լիթիում-իոնային մարտկոցները, 1 գրամից ոչ ավելի տարողությամբ լիթիումի մետաղական էլեմենտները եւ 2 գրամից ոչ ավելի լիթիումի ընդհանուր պարունակությամբ լիթիումի մետաղական մարտկոցները, որոնք չեն տեղադրվել սարքավորման մեջ, հավաքվել եւ հանձնվել են տեսակավորման, վերացման կամ վերամշակման նպատակով փոխադրման համար, ինչպես նաեւ՝

- մասնավոր տնտեսություններից ստացված սարքավորման մեջ տեղադրված լիթիումային էլեմենտները եւ մարտկոցները,

որոնք հավաքվել եւ հանձնվել են դեկոնտամինացիայի, ապամոնտաժման, վերամշակման կամ վերացման նպատակով փոխադրման համար.

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.* «Մասնավոր տնտեսություններից ստացված սարքավորում» նշանակում է սարքավորում, որը ծագել է մասնավոր տնտեսություններից, եւ սարքավորում, որն ունի առեւտրային, արդյունաբերական, ինստիտուցիոնալ եւ ծագման այլ աղբյուրներ եւ ըստ իր բնույթի ու քանակի նման է մասնավոր տնտեսություններից ստացված սարքավորմանը: Այն սարքավորումները, որոնք կարող են օգտագործվել եւ՝ մասնավոր տնտեսությունների, եւ՝ մասնավոր տնտեսություններից փարբեր այլ օգտագործողների կողմից, պետք է ամեն դեպքում համարվեն որպես մասնավոր տնտեսություններից ստացված սարքավորումներ:

չեն կարգավորվում «ԱԴՌ» համաձայնագրի մյուս դրույթներով, ներառյալ՝ 376-րդ հատուկ դրույթը եւ 2.2.9.1.7 պարբերությունը, եթե դրանք բավարարում են հետեւյալ պայմանները՝

- i) կիրառվում են 4.1.4.1-ի «P909» փաթեթավորման ցուցման դրույթները՝ բացի 1-ին եւ 2-րդ լրացուցիչ պահանջներից.
- ii) առկա է որակի ապահովման համակարգ՝ ապահովելու համար, որ լիթիումային էլեմենտների կամ մարտկոցների ընդհանուր քանակությունը տրանսպորտային մեկ միավորի հաշվով չգերազանցի 333 կգ-ը.

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.* Խառը բեռում լիթիումային էլեմենտների եւ մարտկոցների ընդհանուր քանակը կարող է գնահատվել որակի ապահովման համակարգում ներառված վիճակագրական մեթոդով: Պահանջի հիման վրա որակի ապահովման վերաբերյալ արձանագրությունները պետք է հասանելի լինեն իրավասու մարմնի համար:

- iii) փաթեթների վրա համապատասխանաբար նշվում է՝ «ԼԻԹԻՈՒՄԱՅԻՆ ՄԱՐՏԿՈՑՆԵՐ՝ ՎԵՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ» կամ «ԼԻԹԻՈՒՄԱՅԻՆ ՄԱՐՏԿՈՑՆԵՐ՝ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ»:

Եթե լիթիումային էլեմենտներ կամ մարտկոցներ պարունակող սարքավորումը փոխադրվում է չփաթեթավորված վիճակում կամ տակդիրների վրա՝ 4.1.4.1-ի «P 909 (3)» փաթեթավորման ցուցմանը համապատասխան, ապա այս մակնշումը կարող է, որպես այլընտրանք, փակցվել փոխադրամիջոցների կամ կոնտեյներների արտաքին մակերեսին:

637 Գենետիկորեն ձեւափոխված միկրոօրգանիզմներն այն միկրոօրգանիզմներն են, որոնք վտանգ չեն ներկայացնում մարդու եւ

կենդանիների համար, բայց որոնք կարող են ենթարկել կենդանիներին, բույսերը, միկրոկենսաբանական նյութերը եւ էկոհամակարգն այնպիսի փոփոխությունների, որոնք չեն կարող տեղի ունենալ բնական պայմաններում: Գենետիկորեն ձեւափոխված միկրոօրգանիզմների եւ գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմների վրա չեն տարածվում «ԱԴԴ» համաձայնագրի պահանջները, եթե դրանց օգտագործումը թույլատրվել է ծագման, տարանցման եւ նշանակման երկրների իրավասու մարմինների կողմից<sup>3</sup>:

Կենդանի ողնաշարավոր կամ անողնաշարավոր կենդանիները չպետք է օգտագործվեն ՄԱԿ-ի նշագրման այս համարի ներքո դասակարգված նյութերի փոխադրման համար, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ նյութերն այլ եղանակով չեն կարող փոխադրվել:

ՄԱԿ-ի նշագրման այս համարի ներքո շուտ փչացող նյութերի փոխադրման դեպքում պետք է նշվի հետեւյալ համապատասխան տեղեկությունը, օրինակ՝ «Պահել +2 °/+4 °C ջերմաստիճանում» կամ «Փոխադրել սառեցված վիճակում» կամ «Չսառեցնել»:

638 Ինքնառեակտիվ նյութերի նման նյութեր (տե՛ս 2.2.41.1.19):

639 Տես 2.2.2.3, դասակարգման ծածկագիր 2F, ՄԱԿ-ի նշագրման 1965 համար, Ծանոթագրություն 2:

640 3.2 գլխի Ա աղյուսակի 2-րդ սյունակում նշված ֆիզիկական եւ տեխնիկական բնութագրերի հիման վրա որոշվում են «ԱԴԴ» համաձայնագրով սահմանված՝ ցիստեռններում փաթեթավորման այս կամ այն խմբին դասված նյութերի փոխադրման համար ցիստեռնների տարբեր ծածկագրերը:

Ցիստեռնում փոխադրվող արտադրանքի տվյալ ֆիզիկական եւ տեխնիկական բնութագրերը որոշելու համար այն տեղեկություններին, որոնք պետք է նշվեն փոխադրման փաստաթղթում միայն «ԱԴԴ» համաձայնագրով սահմանված ցիստեռններում փոխադրման դեպքում, պետք է հավելվի հետեւյալ գրառումը՝

«Հատուկ դրույթ 640X», որտեղ «X»-ը 3.2 գլխի Ա աղյուսակի 6-րդ սյունակում նշված 640 հատուկ դրույթի համարին հաջորդող կիրառելի մեծատառն է:

Այնուամենայնիվ, այս տեղեկությունները կարող են չնշվել այն

---

<sup>3</sup> Տե՛ս մասնավորապես Խորհրդի 90/220/ԵՏՀ հրահանգն ուժը կորցրած ճանաչող՝ «Շրջակա միջավայր գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմների՝ շրջակա միջավայր միտոմնավոր արտաներման մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2001/18/ԵՀ հրահանգի 9 մասը (Եվրոպական համայնքների Պաշտոնական տեղեկագիր, համար L 106, 2001 թվականի ապրիլի 17, էջեր 8-14), որում սահմանված են Եվրոպական համայնքի անդամ պետություններին թույլտվության տրամադրման ընթացակարգերը:

ցիստեռնում փոխադրման դեպքում, որի տեսակն առնվազն բավարարում է ՄԱԿ-ի նշագրման տվյալ համարի տակ՝ փաթեթավորման տվյալ խմբի նյութերի համար նախատեսված խստագույն պահանջները:

- 642 Բացառությամբ 1.1.4.2-ի համաձայն թույլատրված դեպքերի՝ ՄԱԿ-ի տիպային կանոնակարգի այս դիրքը չպետք է կիրառվի ազատ ամոնիակ պարունակող ամոնիակային պարարտանյութի լուծույթների փոխադրման համար:
- 643 9-րդ դասին վերաբերող պահանջները չեն տարածվում ձուլածո ասֆալտային խառնուրդի վրա:
- 644 Այս նյութը թույլատրվում է փոխադրման պայմանով, որ՝
- փոխադրվող նյութի 10%-անոց ջրային լուծույթում չափված pH արժեքը գտնվում է 5-ից 7 միջակայքում.
  - լուծույթը պարունակում է 0,2%-ից ոչ ավելի վառելանյութ կամ պարունակում է քլորի միացություններ այնպիսի քանակություններով, որ քլորի պարունակությունը չի գերազանցում 0,02%-ը:
- 645 3.2 գլխի Ա աղյուսակի (3բ) սյունակում նշված դասակարգման ծածկագիրը պետք է կիրառվի բացառապես նախքան փոխադրումն ստացված «ԱԴՌ» համաձայնագրի Պայմանավորվող կողմ հանդիսացող պետության իրավասու մարմնի թույլտվությամբ: Թույլտվությունը տրվում է գրավոր տեսքով՝ դասակարգման հաստատման սերտիֆիկատի տեսքով (տե՛ս 5.4.1.2.1 (է)), եւ տրամադրվում է դրան հատուկ եզակի հղում: Այն դեպքերում, երբ ենթադասին դասելն իրականացվում է 2.2.1.1.7.2-ում նշված ընթացակարգի համաձայն, իրավասու մարմինը կարող է պահանջել ստանդարտ դասակարգման ճշգրտության ստուգման անցկացում՝ «Փորձարկումների եւ չափորոշիչների ձեռնարկ»-ի I մասի 16-րդ բաժնում նախատեսված 6-րդ սերիայի փորձարկումներից ստացված արդյունքների հիման վրա:
- 646 «ԱԴՌ» համաձայնագրի պահանջները չեն տարածվում գոլորշագազային ակտիվացման մեթոդով ստացված ածուխի վրա:
- 647 25%-ից ոչ ավելի մաքուր թթվի զանգվածային պարունակությամբ քացախի եւ կերակրի քացախաթթվի փոխադրման նկատմամբ կիրառվում են միայն հետեւյալ պահանջները՝
- ա) փաթեթվածքները, այդ թվում նաեւ ՍՄԿ-ները եւ խոշոր փաթեթվածքները, ինչպես նաեւ ցիստեռնները պետք է պատրաստվեն քացախի կամ կերակրի քացախաթթվի կոռոզիոն ներգործությանը դիմակայուն չժանգոտվող պողպատից կամ



պլաստմասսայից.

- բ) փաթեթվածքները, այդ թվում նաեւ ՍՄԿ-ները եւ խոշոր փաթեթվածքները, ինչպես նաեւ ցիստեռնները պետք է իրենց սեփականատիրոջ կողմից յուրաքանչյուր տարի առնվազն մեկ անգամ ենթարկվեն տեսողական զննման: Չննման արդյունքները պետք է գրի առնվեն, եւ գրառումները պետք է պահվեն առնվազն մեկ տարվա ընթացքում: Վնասված փաթեթվածքները, այդ թվում նաեւ ՍՄԿ-ները եւ խոշոր փաթեթվածքները, ինչպես նաեւ վնասված ցիստեռնները ենթակա չեն լցավորման.
- գ) փաթեթվածքները, այդ թվում՝ ՍՄԿ-ները եւ խոշոր փաթեթվածքները, ինչպես նաեւ ցիստեռնները պետք է լցավորվեն այնպես, որ տեղի չունենա ապրանքի ցայտյուն կամ վերջինիս հոսք արտաքին մակերես.
- դ) զոդակարերը եւ փականները պետք է կայուն լինեն քացախի եւ կերակրի քացախաթթվի ներգործության նկատմամբ: Փաթեթվածքները, այդ թվում նաեւ ՍՄԿ-ները եւ խոշոր փաթեթվածքները, ինչպես նաեւ ցիստեռնները պետք է հերմետիկ փակվեն փաթեթավորողի կամ լցավորման համար պատասխանատուի կողմից այնպես, որ փոխադրման կանոնավոր պայմաններում արտահոսք տեղի չունենա.
- ե) թույլատրվում է ապակուց կամ պլաստմասսայից ներքին փաթեթվածքով համակցված փաթեթվածքի օգտագործումը (տե՛ս 4.1.4.1-ի «P001» փաթեթավորման ցուցումը), որը բավարարում է 4.1.1.1, 4.1.1.2, 4.1.1.4, 4.1.1.5, 4.1.1.6, 4.1.1.7 եւ 4.1.1.8-ում ներկայացված փաթեթավորման ընդհանուր պահանջները:

«ԱԴԴ» համաձայնագրի մնացած դրույթները չեն կիրառվում:

- 648 «ԱԴԴ» համաձայնագրի դրույթները չեն տարածվում այս թունաքիմիկատով ներծծված պատրաստվածքների, ինչպես օրինակ՝ հերմետիկ փակված փաթեթներում տեղադրված փայտաթելքային սալից ափսեների, թղթե ժապավենների, բամբակե խծուծների, պլաստիկ նյութից թերթերի նկատմամբ:
- 649 (Հանվել է)
- 650 Փաթեթավորման նյութի մնացորդներից, ներկի կարծրացած մնացորդներից եւ ներկի հեղուկ մնացորդներից բաղկացած թափոնները կարող են փոխադրվել փաթեթավորման II խմբի համար սահմանված պայմանների համաձայն: Ի հավելումն ՄԱԿ-ի նշագրման 1263 համարի՝ փաթեթավորման II խմբի թափոնները նույնպես կարող են փաթեթավորվել եւ փոխադրվել հետեւյալ պայմանների պահպանմամբ՝

- ա) թափոնները կարող են փաթեթավորվել 4.1.4.1-ում առկա «P002» փաթեթավորման ցուցման կամ 4.1.4.2-ում առկա «IBC06» փաթեթավորման ցուցման համաձայն.
- բ) թափոնները կարող են փաթեթավորվել ամբողջական պատերով տրանսպորտային կապոցներում տեղադրված 13H3, 13H4 եւ 13H5 տեսակի փափուկ ՍՄԿ-ներում.
- գ) (ա) կամ (բ) ենթակետերում նշված փաթեթավաճքների եւ ՍՄԿ-ների փորձարկումները կարող են կատարվել 6.1 կամ 6.5 գլուխներում ներկայացված՝ պինդ նյութերի համար համապատասխան պահանջների համաձայն՝ փաթեթավորման II խմբի համար փորձարկումների վերաբերյալ պահանջների մակարդակով:  
 Փորձարկման պետք է ենթարկվեն փոխադրման համար պատրաստված թափոնների ներկայացուցչական նմուշներով լցված փաթեթավաճքները եւ ՍՄԿ-ները.
- դ) թույլատրվում է խուռնաբեռն փոխադրումը բրեզենտից ծածկով փոխադրամիջոցներում, փակ կոնտեյներներում կամ բրեզենտից ծածկով ամբողջական պատերով մեծ կոնտեյներներում: Փոխադրամիջոցների կամ կոնտեյներների հենամարմինը պետք է լինի անջրանցիկ կամ անջրանցիկ դարձված, օրինակ՝ համապատասխան կամ բավականաչափ ամուր ներքին երեսապատման միջոցով.
- ե) եթե թափոնները փոխադրվում են այս հատուկ դրույթի պայմանների համաձայն, ապա բեռների խմբերը պետք է հայտարարագրվեն 5.4.1.1.3-ի համաձայն փոխադրման փաստաթղթում հետևյալ կերպ՝

«ՄԱԿ 1263 ՆԵՐԿԻ ԹԱՓՈՆՆԵՐ, 3, II, (D/E)», կամ

«ՄԱԿ 1263 ՆԵՐԿԻ ԹԱՓՈՆՆԵՐ, 3, PG II, (D/E)»:

- 651 V2 (1) հատուկ դրույթը չի կիրառվում, եթե մեկ տրանսպորտային միավորի հաշվով պայթուցիկ նյութերի զտաքաշը չի գերազանցում 4 000 կգ-ը՝ պայմանով, որ մեկ փոխադրամիջոցի հաշվով պայթուցիկ նյութերի զտաքաշը չի գերազանցում 3 000 կգ-ը:
- 652 Աուստենիտային չժանգոտվող պողպատից կամ ֆերիտաուստինիտային (դուպլեքսային) պողպատից եւ տիտանից զողովի այն տարաները, որոնք չեն բավարարում 6.2 գլխի պահանջները, սակայն պատրաստված եւ հաստատված են օդային շարժման ազգային կանոնների համաձայն՝ ջերմային օդապարիկների (աերոստատների) եւ ջերմային դիրիժաբլների համար որպես վառելիքով տարաներ կիրառելու նպատակով, եւ դրվել են

շահագործման մեջ (նախնական ստուգման ամսաթիվ) մինչև 2004 թվականի հուլիսի 1-ը, կարող են փոխադրվել ավտոմոբիլային տրանսպորտով՝ պայմանով, որ բավարարում են հետևյալ պահանջները՝

- ա) պետք է պահպանվեն 6.2.1-ի ընդհանուր դրույթները.
- բ) տարաների նախագծումը եւ պատրաստումը պետք է հաստատվի ավիացիոն նպատակներով օգտագործման համար ազգային օդային տրանսպորտի վարչության կողմից.
- գ) կատարելով շեղում 6.2.3.1.2-ից՝ հաշվարկային ճնշումը կարող է որոշվել՝ ելնելով  $+40\text{ }^{\circ}\text{C}$  մթնոլորտային առավելագույն ջերմաստիճանի նվազեցված արժեքից. Այս դեպքում՝
  - i) կատարելով շեղում 6.2.5.1-ից, բալոնները կարող են պատրաստվել  $R_m > 450\text{ ՄՊա}$ ,  $\epsilon A > 20\%$  ( $\epsilon A =$  ճեղքումից հետո երկարացումը) նվազագույն պահանջները բավարարող գլանված եւ շիկափափկացված կոմերցիոն մաքուր տիտանից.
  - ii) կարող են օգտագործվել աուստենիտային չժանգոտվող պողպատից կամ ֆերիտոաուստենիտային (դուպլեքսային) պողպատից բալոններ՝ մինչև 85 % հոսունության երաշխավորված նվազագույն սահմանի (Re) լարման մակարդակով՝  $+40\text{ }^{\circ}\text{C}$  մթնոլորտային առավելագույն ջերմաստիճանի նվազեցված արժեքի հիման վրա ստացված հաշվարկային ճնշման պայմաններում.
  - iii) տարաները պետք է սարքավորված լինեն ճնշումը նվազեցնող՝ 26 բար աշխատանքային անվանական սահմանված ճնշման սարքով: Այս տարաների փորձարկման ճնշումը պետք է կազմի 30 բարից ոչ պակաս.
- դ) եթե չեն կիրառվում (գ) կետում նախատեսված շեղումները, ապա տարաները պետք է նախագծված լինեն  $65\text{ }^{\circ}\text{C}$  մեկնարկային ջերմաստիճանի համաձայն եւ սարքավորված լինեն օգտագործման երկրի իրավասու մարմնի կողմից նշված գործարկման սահմանված ճնշմամբ՝ ճնշումը նվազեցնող սարքով.
- ե) տարաների հիմնական հենամարմինը պետք է պատված լինի առնվազն 25 մմ հաստությամբ կառուցվածքային ծակոտկեն պենոպլաստի կամ նմանատիպ նյութի արտաքին պաշտպանիչ անջրանցիկ շերտով.
- զ) փոխադրման ընթացքում տարան պետք է ամուր ամրացված լինի կավարամաձին կամ այլ անվտանգության լրացուցիչ սարքին.

- ե) տարաների վրա պետք է առկա լինի հստակ եւ տեսանելի մակնշման նշան, որտեղ կնշվի, որ դրանք նախատեսված են բացառապես ջերմային աերոստատներում եւ ջերմային դիրիժաբլներում օգտագործման համար.
- ը) ծառայության տեւողությունը (նախնական ստուգումից հետո) չպետք է գերազանցի 25 տարին:

653 Այս գազի փոխադրումը 15,2 ՄՊա.լիտր (152 բար.լիտր) առավելագույն տարողությամբ բալոններում ենթակա չէ «ԱԴՌ» համաձայնագրի պահանջներին, եթե բավարարվում են հետեւյալ պահանջները՝

- կատարվում են բալոնների նախագծմանը եւ փորձարկմանը վերաբերող պահանջները.
- բալոնները տեղադրվում են համակցված փաթեթվածքին վերաբերող՝ առնվազն 4-րդ մասի պահանջները բավարարող արտաքին փաթեթվածքում: Ընդ որում, պետք է պահպանվեն 4.1.1.1, 4.1.1.2-ում եւ 4.1.1.5 - 4.1.1.7-ում առկա փաթեթավորման ընդհանուր դրույթները.
- բալոնները չեն փաթեթավորվում այլ վտանգավոր բեռների հետ միասին.
- փաթեթի ընդհանուր անզուտ քաշը չի գերազանցում 30 կգ-ը, եւ
- յուրաքանչյուր փաթեթի վրա կատարվում է հստակ եւ չջնջվող հետեւյալ գրառումը՝ «ՄԱԿ-ի նշագրման 1006 համար»՝ սեղմված արգոնի դեպքում, «ՄԱԿ-ի նշագրման 1013 համար»՝ ածխաթթու գազի դեպքում, «ՄԱԿ-ի նշագրման 1046 համար»՝ սեղմված հելիումի դեպքում, կամ «ՄԱԿ-ի նշագրման 1066 համար»՝ սեղմված ազոտի դեպքում: Այս մակնշումը պետք է վերցվի առնվազն 100 մմ x 100 մմ երկարությամբ կողմ ունեցող շեղանկյան շրջանակի մեջ:

654 5.4.1.1.3-ի համաձայն առանձին հավաքված եւ առաքված օգտագործված հրահանները կարող են փոխադրվել այս դիրքի ներքո՝ օգտահանման նպատակով: Պարտադիր չէ պատահական աշխատանքի դեմ դրանց պաշտպանությունը՝ պայմանով, որ ձեռնարկվել են միջոցներ ճնշման վտանգավոր բարձրացման եւ վտանգավոր միջավայրի ստեղծման կանխարգելման ուղղությամբ:

Բացի արտահոսող կամ դեֆորմացված հրահաններից՝ օգտագործված հրահանները պետք է փաթեթավորվեն P003 փաթեթավորման ցուցման համաձայն: Բացի այդ, պետք է կիրառվեն հետեւյալ դրույթները՝

- պետք է կիրառվեն միայն 60 և առավելագույն տարողությամբ կոշտ

փաթեթվածքները.

- փաթեթվածքները պետք է լցավորվեն այրումը կանխարգելող ջրով կամ մեկ այլ պաշտպանիչ նյութով.
- փոխադրման սովորական պայմաններում հրահանների վառքի բոլոր սարքերը պետք է ամբողջությամբ պատված լինեն պաշտպանիչ նյութով.
- փաթեթվածքները պետք է պատշաճ կերպով օդափոխվեն՝ վառվող միջավայր ստեղծելուց կամ ճնշման բարձրացումից խուսափելու նպատակով.
- փաթեթները պետք է փոխադրվեն միայն օդափոխվող կամ բաց փոխադրամիջոցներում կամ կոնտեյներներում:

Արտահոսող կամ դեֆորմացված հրահանները պետք է փոխադրվեն վթարային փաթեթվածքներում՝ պայմանով, որ ձեռնարկվել են համապատասխան բոլոր միջոցները՝ ճնշման վտանգավոր բարձրացումը կանխարգելելու համար:

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. 4.1.4.1-ում բերված P002 փաթեթավորման ցուցման 201 հատուկ դրույթը եւ փաթեթավորման PP84 եւ RR5 հատուկ դրույթները չեն կիրառվում օգտագործված հրահանների նկատմամբ:*

655 Թիվ 97/23/ԵՀ<sup>4</sup> կամ թիվ 2014/68 ԵՄ<sup>5</sup> հրահանգի համաձայն՝ նախագծված, պատրաստված, հաստատված եւ մակնշված ու շնչառական սարքավորման համար կիրառվող բալոնները եւ դրանց փականները կարող են փոխադրվել առանց 6.2 գլխի պահանջներին համապատասխանելու՝ պայմանով, որ դրանք ենթարկվում են ստուգումների եւ փորձարկումների՝ 6.2.1.6.1-ի համաձայն, եւ պահպանվում է 4.1.4.1-ում նշված P200 փաթեթավորման ցուցմամբ սահմանված ստուգումների եւ փորձարկումների անցկացման հաճախականությունը: Ճնշման տակ հիդրավլիկ փորձարկումը կատարելիս կիրառվում է 97/23/ԵՀ<sup>4</sup> կամ 2014/68 ԵՄ<sup>5</sup> հրահանգին համապատասխան բալոնի վրա նշված ճնշումը:

656 (Հանվել է)

<sup>4</sup> Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 1997 թվականի մայիսի 29-ի «Ճնշումային սարքերի վերաբերյալ անդամ պետությունների օրենքների համապատասխանեցման մասին» 97/23/ԵՀ հրահանգ (PED) (Եվրոպական համայնքների 1997 թվականի հուլիսի 9-ի թիվ L 181 պաշտոնական տեղեկագիր, էջեր 1-55):

<sup>5</sup> Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2014 թվականի մայիսի 15-ի «Ճնշումային սարքերը շուկայում հասանելի դարձնելու վերաբերյալ անդամ պետությունների օրենքների ներդաշնակեցման մասին» 2014/68/ԵՄ հրահանգ (PED) (Եվրոպական միության 2014 թվականի հունիսի 27-ի թիվ L 189 պաշտոնական տեղեկագիր, էջեր 164-259):

- 657 Այս դիրքը պետք է օգտագործվի միայն տեխնիկապես մաքուր նյութի դեպքում. ՀՆԳ բաղադրիչների խառնուրդների համար տե՛ս ՄԱԿ-ի նշագրման 1965 համարը կամ տե՛ս ՄԱԿ-ի նշագրման 1075 համարը՝ 2.2.2.3-ի 2-րդ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅԱՆ հետ:
- 658 EN ISO 9994:2006 + A1:2008 «Կրակայրիչներ՝ անվտանգության մասնագիր» ստանդարտին համապատասխանող՝ ՄԱԿ-ի նշագրման 1057 համարի ԿՐԱԿԱՅՐԻՉՆԵՐԸ կամ ՄԱԿ-ի նշագրման 1057 համարի ԿՐԱԿԱՅՐԻՉՆԵՐԻ ՎԵՐԱԼՑԱՎՈՐՄԱՆ ԲԱԼՈՆՆԵՐԸ կարող են փոխադրվել՝ հաշվի առնելով միայն 3.4.1 (ա)-(ը)-ի, 3.4.2-ի (բացի 30 կգ ընդհանուր անզուտ քաշից), 3.4.3-ի (բացի 20 կգ ընդհանուր անզուտ քաշից), 3.4.11-ի եւ 3.4.12-ի դրույթները՝ պայմանով, որ բավարարվեն հետեւյալ պայմանները՝
- ա) յուրաքանչյուր փաթեթի ընդհանուր անզուտ քաշը 10 կգ-ից ավելի չէ.
  - բ) փոխադրամիջոցով կամ մեծ կոնտեյներով փոխադրվում են 100 կգ-ից ոչ ավելի անզուտ քաշ ունեցող այդպիսի փաթեթները, եւ
  - գ) յուրաքանչյուր արտաքին փաթեթվածքի վրա կատարվում է համապատասխանաբար «ՄԱԿ-ի նշագրման 1057 համարի ԿՐԱԿԱՅՐԻՉՆԵՐ» կամ «ՄԱԿ-ի նշագրման 1057 համարի ԿՐԱԿԱՅՐԻՉՆԵՐԻ ՎԵՐԱԼՑԱՎՈՐՄԱՆ ԲԱԼՈՆՆԵՐ» հստակ եւ չջնջվող մակնշում:
- 659 Այն նյութերը, որոնց վրա տարածվում են 3.2 գլխի Ա աղյուսակի (Թա) եւ 11-րդ աղյուսակի PP86 կամ TP7 հատուկ դրույթները, եւ որոնք հետեւաբար պահանջում են գոյորշի պարունակող տարածությունից օդի հեռացում, չպետք է փոխադրման համար օգտագործվեն ՄԱԿ-ի նշագրման այս համարի ներքո, սակայն պետք է փոխադրվեն ՄԱԿ-ի նշագրման իրենց համապատասխան համարների ներքո, ինչպես թվարկված է 3.2 գլխի Ա աղյուսակում:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Տե՛ս նաեւ 2.2.2.1.7

- 660 Վառելիքային գազի տեղայնացման այն համակարգերի փոխադրման դեպքում, որոնք նախագծված են այս գազը պարունակող շարժիչային փոխադրամիջոցներում տեղադրվելու համար, անհրաժեշտ չէ կիրառել 4.1.4.1-ի, 5.2 գլխի, 5.4 գլխի եւ 6.2 գլխի դրույթները՝ պայմանով, որ բավարարվեն հետեւյալ պայմանները՝
- ա) վառելիքային գազի տեղայնացման համակարգերը պետք է բավարարեն համապատասխանաբար ԵՏՀ թիվ 67 կանոնակարգի 2-րդ վերանայված տարբերակի<sup>6</sup>, ԵՏՀ թիվ 110 կանոնակարգի 1-ին

<sup>6</sup> ԵՏՀ կանոնակարգ թիվ 67 (Հեղեյալի հաստատմանը վերաբերող միասնական դրույթներ՝ I. «Մ» եւ «Ն» կարեգործիայի այն փոխադրամիջոցների հատուկ սարքավորման հաստատում, որոնք իրենց շարժիչի համակարգում օգտագործում են հեղուկացված նավթային գազեր, «Մ» եւ «Ն»

վերանայված տարբերակի<sup>7</sup> կամ ԵՏՀ թիվ 115 կանոնակարգի<sup>8</sup> կամ թիվ 79/2009 կանոնակարգի (ԵՀ)<sup>9</sup> թիվ 406/2010 կանոնակարգի (ԵՄ)<sup>10</sup> հետ պահանջները.

- բ) վառելիքային գազի տեղայնացման համակարգերը պետք է լինեն հերմետիկ եւ չունենան արտաքին վնասվածքի որեւէ նշան, որը կարող է ազդել դրանց անվտանգության վրա.

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1. Չափորոշիչը կարելի է գտնել ISO 11623:2002 ստանդարտում՝ «Գազի շարժական բալոններ. Գազի կոմպոզիտային բալոնների պարբերական զննում եւ փորձարկում (կամ ISO DIS 19078 ստանդարտում՝ Գազային բալոններ. Բալոնի տեղադրման զննում եւ բարձր ճնշումային բալոնների վերստուգում՝ ավտոտրանսպորտային միջոցներում բնական գազը որպես վառելիք պահելու համար)»:*

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2. Եթե վառելիքային գազի տեղայնացման համակարգերը հերմետիկ չեն կամ լցված են ամբողջությամբ, կամ եթե դրանք ներկայացնում են այնպիսի վտանգ, որը կարող է ազդել դրանց անվտանգության վրա, ապա դրանք պետք է փոխադրվեն միայն վթարային ճնշումային տարաներով՝ «ԱԴՌ» համաձայնագրին համապատասխան:*

- գ) եթե վառելիքային գազի տեղայնացման համակարգն ունի երկու կամ ավելի հաջորդաբար տեղադրված կափույրներ, ապա երկու կափույրները պետք է փակված լինեն այնպես, որ փոխադրման նորմալ պայմաններում ապահովվի գազանվտանգությունը: Եթե

---

կատեգորիայի այն փոխադրամիջոցների հաստատում, որոնք ունեն իրենց շարժիչային համակարգերում հեղուկացված նավթային գազերի օգտագործման համար նախատեսված հատուկ սարքավորում՝ այդ սարքավորումը տեղադրելու մասով):

<sup>7</sup> ԵՏՀ թիվ 110 կանոնակարգ (Հեղուկային հաստատմանը վերաբերող միասնական դրույթներ՝ I. Իրենց շարժիչային համակարգում սեղմված բնական գազ (ՄԲԳ) եւ (կամ) հեղուկացված բնական գազ (ՀԲԳ) օգտագործող շարժիչային տրանսպորտային միջոցների հատուկ բաղադրիչների, II. Տրանսպորտային միջոցների՝ իրենց շարժիչային համակարգում սեղմված բնական գազի (ՄԲԳ) եւ (կամ) հեղուկացված բնական գազի (ՀԲԳ) օգտագործման համար նախատեսված՝ հաստատված տեսակի հատուկ բաղադրիչների տեղադրման մասով):

<sup>8</sup> ԵՏՀ թիվ 115 կանոնակարգ (Հեղուկային հաստատմանը վերաբերող միասնական դրույթներ՝ I. ՀՆԳ (հեղուկացված նավթային գազերի) արդիականացման հատուկ համակարգերի, որոնք պետք է տեղադրվեն շարժիչային տրանսպորտային միջոցներում՝ իրենց շարժիչային համակարգում ՀՆԳ օգտագործելու համար. II. ՄԲԳ (սեղմված բնական գազ) արդիականացման հատուկ համակարգերի, որոնք պետք է տեղադրվեն շարժիչային տրանսպորտային միջոցներում՝ իրենց շարժիչային համակարգում ՄԲԳ օգտագործելու համար):

<sup>9</sup> Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2009 թվականի հունվարի 14-ի «Ջրածնային վառելիքով աշխատող շարժիչային տրանսպորտային միջոցների տեսակի հաստատման մասին» թիվ 79/2009 կանոնակարգ (ԵՀ) եւ 2007/46/ԵՀ փոփոխող հրահանգ:

<sup>10</sup> Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի «Ջրածնային վառելիքով աշխատող շարժիչային տրանսպորտային միջոցների տեսակի հաստատման մասին» թիվ 79/2009 կանոնակարգը (ԵՀ) կիրարկող՝ Հանձնաժողովի 2010 թվականի ապրիլի 26-ի թիվ 406/2010 կանոնակարգ (ԵՄ):

գոյություն ունի միայն մեկ կափույր, կամ միայն մեկ կափույրն է պատշաճ ձեռով աշխատում, ապա բոլոր բացվածքները, բացի ճնշումը նվազեցնող սարքի բացվածքից, պետք է փակվեն այնպես, որ փոխադրման նորմալ պայմաններում ապահովվի գազանվտանգությունը.

- դ) վառելիքային գազի տեղայնացման համակարգը պետք է փոխադրվի այնպես, որ կանխվի ճնշումը նվազեցնող սարքի խցանումը կամ կափույրների ցանկացած վնասվածք, ինչպես նաև վառելիքային գազի տեղայնացման համակարգերի ճնշման տակ գտնվող ցանկացած մասի առկայությունը եւ փոխադրման նորմալ պայմաններում գազի պատահական արտահոսքը: Վառելիքային գազի տեղայնացման համակարգը պետք է ամրացված լինի այնպես, որ կանխվի դրա սայթաքումը, գլորվելը կամ ուղղահայաց տեղաշարժը.
- ե) վառելիքային գազի տեղայնացման համակարգերը պետք է համապատասխանեն 4.1.6.8 (ա), (բ), (գ), (դ) կամ (ե)-ի դրույթներին.
- զ) պետք է բավարարվեն 5.2 գլխի մակնշման եւ պիտակավորման վերաբերյալ դրույթների պահանջները՝ բացառությամբ, եթե վառելիքային գազի տեղայնացման համակարգերը փոխադրվում են բեռնման-բեռնաթափման սարքով: Այդ դեպքում մակնշումները եւ նախազգուշացնող պիտակները պետք է փակցվեն բեռնման-բեռնաթափման սարքի վրա.
- է) փաստաթղթավորումը

Սույն հատուկ դրույթին համապատասխան փոխադրվող ցանկացած բեռ պետք է ուղեկցվի տրանսպորտային փաստաթղթով, որը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները՝

- i) վառելիքային գազի տեղայնացման համակարգերում պարունակվող գազի ՄԱԿ-ի նշագրման համարը, որին պետք է նախորդեն «ՄԱԿ» տառերը.
- ii) գազի բեռնառաքման ճշգրիտ անվանումը.
- iii) պիտակի նմուշի համարը.
- iv) վառելիքային գազի տեղայնացման համակարգերի քանակը.
- v) հեղուկացված գազերի դեպքում՝ վառելիքային գազի տեղայնացման յուրաքանչյուր համակարգի գազի զուտ քաշը կգ-ով, իսկ սեղմված գազերի դեպքում՝ վառելիքային գազի տեղայնացման յուրաքանչյուր համակարգի տարողությունը լիտրերով, որոնց պետք է հաջորդի անվանական



աշխատանքային ճնշումը.

vi) բեռնառաքողի եւ բեռն ստացողի անվանումն ու հասցեն.

(i)-(v) ենթակետերի տեղեկությունները պետք է նշվեն ըստ հետեւյալ օրինակներից որեւէ մեկի՝

Օրինակ 1. ՄԱԿ-ի նշագրման 1971 համարի բնական գազ՝ սեղմված, 2.1, ընդհանուր 50 լիտր տարողությամբ վառելիքային գազի տեղայնացման 1 համակարգ, 200 բար:

Օրինակ 2. ՄԱԿ-ի նշագրման 1965 համարի ածխաջրածնի գազի խառնուրդ՝ հեղուկացված, այլ կերպ չնշված, 2.1, վառելիքային գազի տեղայնացման 3 համակարգեր, որոնցից յուրաքանչյուրն ունի գազի 15 կգ զուտ քաշ:

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Պետք է կիրառվեն «ԱԴՌ» համաձայնագրի բոլոր մյուս դրույթները:*

661 (Հանվել է)

662 6.2 գլխի դրույթներին չհամապատասխանող այն բալոնները, որոնք օգտագործվում են բացառապես նավերի կամ օդանավերի վրա, կարող են փոխադրվել լցավորման կամ ստուգման եւ հետագա վերադարձման նպատակով՝ պայմանով, որ բալոնները նախագծված եւ կառուցված լինեն հաստատման երկրի իրավասու մարմնի կողմից հաստատված չափանիշին համապատասխան, ինչպես նաեւ բավարարվեն «ԱԴՌ» համաձայնագրի մյուս համապատասխան պահանջները, այդ թվում՝

- ա) բալոնները պետք է փոխադրվեն կափույրների պաշտպանության սարքերով՝ 4.1.6.8-ին համապատասխան.
- բ) բալոնները պետք է մակնշվեն եւ պիտակավորվեն 5.2.1-ին եւ 5.2.2-ին համապատասխան. եւ
- գ) պետք է բավարարվեն 4.1.4.1-ի «P200» փաթեթավորման ցուցման՝ լցավորման բոլոր համապատասխան պահանջները:

Տրանսպորտային փաստաթուղթը պետք է ներառի հետեւյալ նշումը՝ «Փոխադրումը՝ 662-րդ հատուկ դրույթին համապատասխան»:

663 Այս դիրքը կարող է օգտագործվել միայն այն փաթեթվածքների, խոշոր փաթեթվածքների կամ ՍՄԿ-ների դեպքում, որոնք նախկինում պարունակել են դրանց նյութի վերացման, վերամշակման կամ վերականգնման համար, բացի ակտիվացումից, վերանորոգումից, ընթացիկ տեխնիկական սպասարկումից, վերարտադրությունից կամ վերաօգտագործումից, փոխադրվող վտանգավոր բեռներ, եւ որոնք դատարկվել են այնքան, որ փոխադրման համար հանձնելու ժամանակ փաթեթվածքի մասերի վրա կպած մնում են միայն վտանգավոր բեռների

մնացորդները:

Գործողության ոլորտը.

Խոտանված, դատարկ եւ չմաքրված փաթեթվածքներում առկա մնացորդները պետք է լինեն միայն 3-րդ, 4.1, 5.1, 6.1, 8-րդ կամ 9-րդ դասերի վտանգավոր բեռների մնացորդներ:

Բացի այդ, դրանք չպետք է լինեն՝

- փաթեթավորման I խմբում դասակարգված նյութերը կամ այն նյութերը, որոնց համար 3.2 գլխի Ա աղյուսակի (7ա) սյունակում նշված է «0», կամ
- որպես 3-րդ դասի կամ 4.1 դասի ապազգայունացված պայթուցիկ նյութեր դասակարգված նյութեր, կամ
- որպես 4.1 դասի ինքնատեակտիվ նյութեր դասակարգված նյութեր, կամ
- ռադիոակտիվ նյութ, կամ
- ասբեստ (ՄԱԿ 2212 եւ ՄԱԿ 2590), պոլիքլորինացված բիֆենիլներ (ՄԱԿ 2315 եւ ՄԱԿ 3432) եւ պոլիհալոգենացված բիֆենիլներ, հալոգենացված միամեթիլերկֆենիլմեթաններ կամ պոլիհալոգենացված տերֆենիլներ (ՄԱԿ 3151 եւ ՄԱԿ 3152):

Ընդհանուր դրույթներ.

5.1 դասի ռիսկ կամ լրացուցիչ ռիսկ ներկայացնող մնացորդներ պարունակող խոտանված, դատարկ եւ չմաքրված փաթեթվածքները չպետք է փաթեթավորվեն այլ խոտանված, դատարկ եւ չմաքրված փաթեթվածքների հետ կամ այլ խոտանված, դատարկ եւ չմաքրված փաթեթվածքների հետ բեռնվեն միեւնույն կոնտեյնների, փոխադրամիջոցի կամ սորուն բեռների համար նախատեսված կոնտեյնների մեջ:

Այս դիրքի նկատմամբ կիրառելի դրույթներին համապատասխանությունն ապահովելու համար բեռնման վայրում պետք է իրականացվի տեսակավորման ընթացակարգերի փաստաթղթավորում:

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. «ԱԴՌ» համաձայնագրի մյուս բոլոր դրույթները կիրառելի են:*

664 Այն դեպքում, երբ այս դիրքի ներքո նյութերը փոխադրվում են անշարժ ցիստեռններով (ավտոցիստեռններ) կամ հանովի ցիստեռններով, ապա այս ցիստեռնները կարող են սարքավորվել հավելանյութերի ավելացման սարքերով:

Հավելանյութերի ավելացման սարքերը՝

- ցիստեռնի դատարկման ընթացքում համարվում են ՄԱԿ-ի նշագրման 1202 համարի, ՄԱԿ-ի նշագրման 1993 համարի՝ փաթեթավորման III խումբ, ՄԱԿ-ի նշագրման 3082 համարի հավելանյութերի կամ ոչ վտանգավոր նյութերի բաշխման օժանդակ սարքավորման մաս.
- կազմված են այնպիսի տարրերից, ինչպիսիք են միացնող խողովակներն ու փողակները, փակման սարքերը, պոմպերը եւ չափաբաշխիչ այն սարքերը, որոնք մշտապես միացված են ցիստեռնի օժանդակ սարքավորման դատարկման սարքին.
- ներառում են տեղայնացման այնպիսի միջոցներ, որոնք համարվում են կորպուսի անբաժանելի մասը, կամ մշտապես ամրացված են ցիստեռնի կամ ավտոցիստեռնի արտաքին հատվածին:

Որպես այլընտրանք, հավելանյութերի ավելացման սարքերը կարող են ունենալ միակցիչներ՝ փաթեթվածքները միացնելու համար: Այս վերջին դեպքում փաթեթվածքն ինքնին չի համարվում հավելանյութերի ավելացման սարքի մաս:

Կախված կոնֆիգուրացիայից՝ պետք է կիրառվեն հետեւյալ պահանջները՝

ա) Տեղայնացման միջոցների ստեղծում՝

- i) Որպես կորպուսի անբաժանելի մաս (օրինակ՝ ցիստեռնի խուց)՝ դրանք պետք է համապատասխանեն 6.8 գլխի համապատասխան դրույթներին:
- ii) Ցիստեռնի կամ ավտոցիստեռնի արտաքին հատվածին մշտապես ամրացված լինելու դեպքում դրանք չեն կարգավորվում «ԱԴԴ» համաձայնագրի կառուցվածքի վերաբերյալ դրույթներով՝ պայմանով, որ դրանք համապատասխանեն հետեւյալ դրույթներին՝

Դրանք պետք է պատրաստված լինեն մետաղական նյութից եւ բավարարեն պատի նվազագույն հաստության հետեւյալ պահանջները՝

Նյութը	Պատի նվազագույն հաստությունը <sup>ա</sup>
Առատենիտային չժանգոտվող պողպատ	2,5 մմ
Այլ պողպատներ	3 մմ

<sup>ա</sup> Կրկնակի պատերով ստեղծված տեղայնացման միջոցների դեպքում արտաքին մետաղական պատի եւ ներքին մետաղական պատի ընդհանուր հաստությունը պետք է համապատասխանի պատի սահմանված հաստությանը:

Այլումինի համաձուլվածքներ	4 մմ
99,80% մաքուր ալյումին	6 մմ

Եռակցումը պետք է իրականացվի 6.8.2.1.23-ի առաջին պարբերությանը համապատասխան՝ բացառությամբ, եթե եռակցման որակը հավաստելու համար կարող են օգտագործվել ավելի համապատասխան մեթոդներ:

iii) Հավելանյութերի ավելացման սարքին միացվող փաթեթվածքները պետք է լինեն մետաղական փաթեթվածքներ եւ բավարարեն 6.1 գլխի՝ հավելանյութերի ավելացման տվյալ սարքի նկատմամբ կիրառելի՝ կառուցվածքին ներկայացվող համապատասխան պահանջները:

բ) Ցիստեռնի հաստատումը

Հավելանյութերի ավելացման սարքերի հետ տեղադրված կամ դրանց հետ տեղադրվելու համար նախատեսված ցիստեռնների դեպքում կիրառվում են 6.8.2.3.4-ի դրույթները, եթե հավելանյութերի ավելացման սարքը ներառված չէ ցիստեռնի տեսակի սկզբնական պաշտոնական հաստատման մեջ:

գ) Տեղայնացման միջոցների եւ հավելանյութերի ավելացման սարքերի օգտագործում.

i) վերոնշյալ (ա) (i) ենթակետի դեպքում չկա որեւէ լրացուցիչ պահանջ.

ii) վերոնշյալ (ա) (ii) ենթակետի դեպքում տեղայնացման միջոցների ընդհանուր տարողությունը մեկ փոխադրամիջոցում չպետք է գերազանցի 400 լիտրը.

iii) վերոնշյալ (ա) (iii) ենթակետի դեպքում 7.5.7.5-ը եւ 8.3.3-ը չեն կիրառվում: Փաթեթվածքները հավելանյութերի ավելացման սարքին կարող են միացվել միայն ցիստեռնը դատարկ լինելու ընթացքում: Փոխադրման ընթացքում փականները եւ միակցիչները պետք է հերմետիկ փակված լինեն:

դ) Հավելանյութերի ավելացման սարքերի փորձարկումը

6.8.2.4-ի դրույթները կիրառվում են հավելանյութերի ավելացման սարքի նկատմամբ: Այնուամենայնիվ, վերոնշյալ (ա) (ii) ենթակետի դեպքում ցիստեռնի սկզբնական, միջանկյալ կամ ընթացիկ ստուգման ժամանակ տեղայնացման միջոցները պետք է ենթարկվեն միայն արտաքին տեսողական զննման եւ հերմետիկության փորձարկման: Հերմետիկության փորձարկումը պետք է իրականացվի առնվազն 0,2 բար

փորձարկային ճնշման տակ:

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Վերոնշյալ (ա) (iii) ենթակետում նկարագրված փաթեթավորման դեպքում կիրառվում են «ԱԴՌ» համաձայնագրի համապատասխան դրույթները:*

ե) Տրանսպորտային փաստաթուղթը

Հավելանյութերի ավելացման տվյալ սարքի տրանսպորտային փաստաթղթում անհրաժեշտ է ավելացնել միայն 5.4.1.1.1 (ա)-(դ)-ին համապատասխան պահանջվող տեղեկությունները: Այս դեպքում տրանսպորտային փաստաթղթում պետք է ավելացվի «հավելանյութերի ավելացման սարք» նշումը:

զ) Վարորդների վերապատրաստումը

Անհրաժեշտ չէ, որ ցիստեռներով այս նյութը փոխադրելու համար 8.2.1-ին համապատասխան վերապատրաստված վարորդներն անցնեն հավելանյութերը փոխադրելու համար լրացուցիչ վերապատրաստում:

է) Տեղեկատվական ցուցանակների տեղադրումը կամ մակնշումը

5.3 գլխին համապատասխան՝ այս դիրքում դասակարգված նյութերի փոխադրման դեպքում ցիստեռնի (ավտոցիստեռնի) կամ շարժական ցիստեռնի վրա տեղեկատվական ցուցանակի տեղադրման կամ մակնշման վրա չի ազդում հավելանյութերի ավելացման սարքի կամ դրա մեջ պարունակվող հավելանյութերի առկայության հանգամանքը:

665 «ԱԴՌ» համաձայնագրի պահանջները չեն տարածվում փաթեթավորման III խմբի 4.2 դասի դասակարգման չափորոշիչներին համապատասխանող չմանրացված քարածխի, կոքսի եւ անտրացիտի վրա:

666 240-րդ, 312-րդ եւ 385-րդ հատուկ դրույթներին համապատասխան՝ ՄԱԿ-ի նշագրման 3166 կամ ՄԱԿ-ի նշագրման 3171 համարների ներքո դասակարգված փոխադրամիջոցները եւ ՄԱԿ-ի նշագրման 3171 համարի ներքո դասակարգված մարտկոցով աշխատող սարքավորումները, ինչպես նաեւ դրանց մեջ պարունակվող ցանկացած վտանգավոր բեռ, որն անհրաժեշտ է դրանք գործարկելու կամ դրանց սարքավորումը շահագործելու համար, որպես բեռ փոխադրման դեպքում չեն կարգավորվում «ԱԴՌ» համաձայնագրի որեւէ այլ դրույթով՝ պայմանով, որ բավարարվեն հետեւյալ պայմանները՝

ա) հեղուկ վառելիքի դեպքում շարժիչի կամ սարքավորման եւ վառելիքի ցիստեռնի միջեւ առկա ցանկացած կափույր պետք է փակ լինի փոխադրման ժամանակ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ անհրաժեշտ է, որ սարքավորումը շահագործվի: Անհրաժեշտության դեպքում փոխադրամիջոցները պետք է բեռնավորվեն ուղղահայաց

դիրքով եւ ամրացվեն՝ ընկնելուց խուսափելու համար.

- բ) գազային վառելիքի դեպքում գազի ցիստեռնի եւ շարժիչի միջեւ առկա կափույրը պետք է լինի փակ, իսկ էլեկտրականության հետ շփումը՝ բաց, բացառությամբ այն դեպքերի, երբ անհրաժեշտ է, որ սարքավորումը շահագործվի.
- գ) մետաղ-հիդրիդային պահեստավորման համակարգերը պետք է հաստատվեն արտադրման երկրի իրավասու մարմնի կողմից: Եթե արտադրման երկիրը «ԱԴՌ» համաձայնագրի Պայմանավորվող կողմ չէ, ապա հաստատումը պետք է ճանաչվի «ԱԴՌ» համաձայնագրի Պայմանավորվող կողմ հանդիսացող երկրի իրավասու մարմնի կողմից.
- դ) (ա) եւ (բ) կետերի դրույթները չեն տարածվում այն փոխադրամիջոցների վրա, որոնք դատարկված են հեղուկ կամ գազային վառելիքից:

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1. Այն դեպքում, երբ հեղուկ վառելիքի ցիստեռնը դադարկվել է, եւ փոխադրամիջոցը վառելիքի բացակայության պարճառով չի կարող գործարկվել, համարվում է, որ փոխադրամիջոցից վառելիքը դադարկվել է: Անհրաժեշտ չէ մաքրել, դադարկել կամ փչահարել փոխադրամիջոցի բաղադրիչները, ինչպես օրինակ, վառելիքամուղները, վառելիքի ֆիլտրերը եւ ինժեկտորները, որպեսզի համարվի, որ այն դադարկված է հեղուկ վառելիքից: Բացի այդ, անհրաժեշտ չէ մաքրել կամ փչահարել հեղուկ վառելիքի ցիստեռնները:*

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2. Այն դեպքում, երբ գազային վառելիքի ցիստեռններից դադարկվել է հեղուկը (հեղուկացված գազերի դեպքում), ցիստեռններում ճնշումը չի գերազանցում 2 բարը, իսկ փակիչ կամ կասեցման փակույրը փակված եւ ամրացված է, համարվում է, որ փոխադրամիջոցը դադարկված է գազային վառելիքից:*

- 667 ա) 2.2.9.1.7 (ա)-ն չի կիրառվում այն դեպքում, երբ լիթումային էլեմենտների կամ մարտկոցների նախարտադրական նախատիպերը կամ 100-ից ոչ ավելի էլեմենտներից կամ մարտկոցներից բաղկացած արտադրական փոքր խմբաքանակով լիթումային էլեմենտները կամ մարտկոցները տեղադրված են փոխադրամիջոցի, շարժիչի կամ մեխանիզմի մեջ.
- բ) 2.2.9.1.7-ի պահանջները չեն կիրառվում վնասված կամ խոտանված փոխադրամիջոցներում, շարժիչում կամ մեխանիզմում առկա լիթումային էլեմենտների կամ մարտկոցների նկատմամբ: Այս դեպքերում պետք է բավարարվեն հետեւյալ պայմանները՝
    - i) եթե վնասվածքը կամ դեֆեկտը որեւէ էական ազդեցություն չունի էլեմենտի կամ մարտկոցի անվտանգության վրա, ապա

վնասված կամ խոտանված տրանսպորտային միջոցները, շարժիչները կամ մեխանիզմները պետք է փոխադրվեն համապատասխանաբար 363-րդ կամ 666-րդ հատուկ դրույթներով սահմանված պայմաններով:

ii) եթե վնասվածքը կամ դեֆեկտն էլեմենտի կամ մարտկոցի անվտանգության վրա էական ազդեցություն ունի, ապա լիթիումային էլեմենտը կամ մարտկոցը պետք է հանվի եւ փոխադրվի 376-րդ հատուկ դրույթի համաձայն:

Այնուամենայնիվ, եթե հնարավոր չէ ապահով հանել էլեմենտը կամ մարտկոցը կամ հնարավոր չէ ստուգել էլեմենտի կամ մարտկոցի վիճակը, ապա տրանսպորտային միջոցը, շարժիչը կամ մեխանիզմը կարող է քարշակվել կամ փոխադրվել, ինչպես նշված է «i» ենթակետում:

668 «ԱԴԴ» համաձայնագրի պահանջները չեն տարածվում ճանապարհային գծանշումներ կատարելու համար նախատեսված բարձր ջերմաստիճանային նյութերի վրա՝ պայմանով, որ բավարարվեն հետևյալ պայմանները՝

ա) դրանք, բացի 9-րդ դասից, չպետք է համապատասխանեն որեւէ այլ դասի չափորոշիչներին:

բ) կաթսայի արտաքին մակերեսի ջերմաստիճանը չպետք է գերազանցի 70 °C ջերմաստիճանը:

գ) կաթսան փակվում է այնպես, որ փոխադրման ընթացքում կանխվի որեւէ արտադրանքի կորուստ:

դ) կաթսայի առավելագույն տարողությունը 3000 լիտր է:

669 Որպես տրանսպորտային միջոցի բեռ փոխադրվելու դեպքում այն կցասայլը, որն ունի հեղուկ կամ գազային վառելիքով կամ էլեկտրաէներգիայի պահպանման կամ արտադրման համակարգով աշխատող այնպիսի սարքավորում, որը նախատեսված է այս կցասայլով իրականացվող փոխադրման ընթացքում որպես տրանսպորտային միավորի մաս օգտագործելու համար, պետք է դասակարգվի ՄԱԿ-ի նշագրման 3166 կամ 3171 համարների ներքո եւ ենթարկվի ՄԱԿ-ի նշագրման այս համարների համար սահմանված նույն պայմաններին՝ պայմանով, որ հեղուկ վառելիք պարունակող ցիստեռնների ընդհանուր տարողությունը չի գերազանցում 500 լիտրը:

### ԳԼՈՒԽ 3.4

#### ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՔԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՓԱԹԵԹԱՎՈՐՎԱԾ ՎՏԱՆԳԱՎՈՐ ԲԵՌՆԵՐ

3.4.1. Սույն գլխով նախատեսվում են սահմանափակ քանակություններով՝ որոշ դասերի վտանգավոր բեռների փոխադրման նկատմամբ կիրառվող դրույթներ: Ներքին փաթեթվածքի կամ պատրաստվածքի համար կիրառվող սահմանային քանակությունը յուրաքանչյուր նյութի համար նշված է 3.2 գլխի Ա աղյուսակի (7ա) սյունակում: Բացի այդ, այդ սյունակում «0» քանակական արժեքը նշված է յուրաքանչյուր դիրքի համար, որի փոխադրումը չի թույլատրվում՝ սույն գլխի դրույթների համաձայն:

Սույն գլխի դրույթները բավարարող նման սահմանափակ քանակություններով փաթեթավորված վտանգավոր բեռների սահմանափակ քանակությունները չեն կարգավորվում «ԱԴՌ» համաձայնագրի որեւէ այլ դրույթով՝ բացառությամբ ստորեւ նշված կետերով նախատեսվող համապատասխան դրույթների՝

- ա) 1-ին մաս, 1.1, 1.2, 1.3, 1.4, 1.5, 1.6, 1.8, 1.9 գլուխներ.
- բ) 2-րդ մաս.
- գ) 3-րդ մաս, 3.1, 3.2, 3.3 գլուխներ (բացառությամբ 61, 178, 181, 220, 274, 625, 633 եւ 650 (ե) հատուկ դրույթների).
- դ) 4-րդ մաս, 4.1.1.1, 4.1.1.2, 4.1.1.4- 4.1.1.8 պարբերություններ.
- ե) 5-րդ մաս, 5.1.2.1(ա)(i) եւ (բ), 5.1.2.2, 5.1.2.3, 5.2.1.10, 5.4.2.
- զ) 6-րդ մաս, 6.1.4-ի նախագծման պահանջներ ու 6.2.5.1 եւ 6.2.6.1 - 6.2.6.3 պարբերություններ.
- է) 7-րդ մաս, 7.1 գլուխ եւ 7.2.1, 7.2.2, 7.5.1 (բացառությամբ 7.5.1.4-ի), 7.5.2.4, 7.5.7, 7.5.8 եւ 7.5.9.
- ը) 8.6.3.3 եւ 8.6.4:

3.4.2. Վտանգավոր բեռները պետք է փաթեթավորվեն միայն համապատասխան արտաքին փաթեթվածքում տեղադրված ներքին փաթեթվածքներում: Կարելի է կիրառել միջանկյալ փաթեթվածքներ: Բացի այդ, 1.4 ենթադասի՝ համատեղելիության «S» խմբի պատրաստվածքների դեպքում, պետք է ամբողջությամբ բավարարվեն 4.1.5-ի դրույթների պահանջները: Ներքին փաթեթվածք չի պահանջվում այնպիսի ապրանքների փոխադրման համար, ինչպիսիք են աերոզոլները կամ «տարաները՝ փոքր, գազ պարունակող»: Փաթեթի ընդհանուր անզուտ քաշը չպետք է գերազանցի 30 կգ-ը:



3.4.3. Բացի 1.4 ենթադասի՝ համատեղելիության «Տ» խմբի պատրաստվածքներից՝ 4.1.1.1, 4.1.1.2 եւ 4.1.1.4 - 4.1.1.8-ի պահանջները բավարարող, ջերմակծկումային նյութով կամ ձգվող թաղանթով փաթաթված ընդկալները կիրառելի են որպես արտաքին փաթեթվածքներ՝ սույն գլխին համապատասխան փոխադրվող վտանգավոր բեռներ պարունակող ներքին փաթեթվածքների կամ պատրաստվածքների համար: Կոտրվող կամ հեշտությամբ պատռվող ներքին փաթեթվածքները, ինչպես օրինակ՝ ապակուց, ճենապակուց, կերամիկայից եւ որոշ պլաստամասսայե նյութերից պատրաստվածները պետք է տեղադրվեն 4.1.1.1, 4.1.1.2 եւ 4.1.1.4 - 4.1.1.8-ի պահանջները բավարարող համապատասխան միջանկյալ փաթեթվածքներում եւ պետք է այնպես նախագծված լինեն, որ բավարարեն 6.1.4-ի պատրաստման պահանջները: Փաթեթի ընդհանուր անզուտ քաշը չպետք է գերազանցի 20 կգ-ը:


3.4.4. Ապակե, ճենապակե կամ կերամիկական ներքին փաթեթվածքներում տեղադրված 8-րդ դասի հեղուկ բեռները, փաթեթավորման II խումբ, պետք է փաթեթավորվեն համատեղելի եւ կոշտ միջանկյալ փաթեթվածքում:

3.4.5 եւ 3.4.6 (Նախատեսվում է վերապահում)

3.4.7. Սահմանափակ քանակություններ պարունակող փաթեթների մակնշումը

3.4.7.1. Բացառությամբ օդային փոխադրումների՝ սահմանափակ քանակություններով վտանգավոր բեռներ պարունակող փաթեթները պետք է ունենան 3.4.7.1 նկարում պատկերված մակնշումը:

Նկար 3.4.7.1



Սահմանափակ քանակություններ պարունակող փաթեթների նշանը


Այս նշանը պետք է լինի լավ տեսանելի, ընթեռնելի եւ կարողանա դիմակայել մթնոլորտային ազդեցությանը՝ առանց վերջինիս

արդյունավետության զգալի նվազման:

Նշանը պետք է ունենա 45° անկյան տակ շրջված քառակուսու ձեւ (շեղանկյան տեսքով): Վերին եւ ստորին մասերն ու ուրվագիծը պետք է լինեն սեւ գույնի: Կենտրոնական հատվածը պետք է լինի սպիտակ կամ համապատասխան կոնտրաստային գույնի: Նվազագույն չափերը պետք է լինեն 100 մմ x 100 մմ, իսկ շեղանկյան ուրվագիծը կազմող գծի նվազագույն լայնությունը պետք է լինի 2 մմ: Եթե չափերը նշված չեն, ապա բոլոր հատկանիշները պետք է մոտավոր համաչափ լինեն ցուցադրված պատկերի հատկանիշներին:

- 3.4.7.2. Եթե դա փաթեթի ծավալային ուրվագծով է պայմանավորված, ապա 3.4.7.1 նկարում ցուցադրված արտաքին նվազագույն չափերը կարող են նվազեցվել 50 մմ x 50 մմ-ից ոչ ցածր՝ պայմանով, որ այդ մակնշումը մնա հստակ տեսանելի: Շեղանկյան ուրվագիծը կազմող գծի նվազագույն լայնությունը պետք է նվազեցվի առնվազն մինչեւ 1 մմ:
- 3.4.8. ԻԿԱՕ-ի Տեխնիկական ցուցումների 3-րդ մասի 4-րդ գլխի դրույթներին համապատասխանող սահմանափակ քանակություններ պարունակող փաթեթների մակնշումը
- 3.4.8.1. ԻԿԱՕ-ի Տեխնիկական ցուցումների 3-րդ մասի 4-րդ գլխի դրույթներին համապատասխան փաթեթավորված վտանգավոր բեռներ պարունակող փաթեթները կարող են կրել 3.4.8.1 նկարում պատկերված նշանը՝ այս դրույթներին համապատասխանությունը հավաստելու համար՝

Նկար 3.4.8.1



ԻԿԱՕ-ի Տեխնիկական ցուցումների 3-րդ մասի 4-րդ գլխի դրույթներին համապատասխանող սահմանափակ քանակություններ պարունակող փաթեթների նշանը

Այս նշանը պետք է լինի լավ տեսանելի, ընթեռնելի եւ կարողանա դիմակայել մթնոլորտային ազդեցությանը՝ առանց վերջինիս արդյունավետության զգալի նվազման:

Նշանը պետք է ունենա 45° անկյան տակ շրջված քառակուսու ձեւ (շեղանկյան տեսքով): Վերին եւ ստորին մասերն ու ուրվագիծը պետք է

լինեն սեւ գույնի: Կենտրոնական հատվածը պետք է լինի սպիտակ կամ համապատասխան կոնտրաստային գույնի: Նվազագույն չափսերը պետք է լինեն 100 մմ x 100 մմ, իսկ շեղանկյան ուրվագիծը կազմող գծի նվազագույն լայնությունը՝ 2 մմ: «Y» խորհրդանշանը պետք է տեղադրված լինի նշանի կենտրոնում եւ պետք է հստակ տեսանելի լինի:

3.4.8.2. Եթե դա փաթեթվածքի ծավալային ուրվագծով է պայմանավորված, ապա 3.4.8.1 նկարում ցուցադրված արտաքին նվազագույն չափսերը կարող են նվազեցվել 50 մմ x 50 մմ-ից ոչ ցածր՝ պայմանով, որ այդ մակնշումը մնա հստակ տեսանելի: Շեղանկյան ուրվագիծը կազմող գծի նվազագույն լայնությունը պետք է նվազեցվի առնվազն մինչեւ 1 մմ: «Y» խորհրդանշանի չափսը պետք է մոտավոր համաչափ լինի 3.4.8.1 նկարում ցուցադրված չափսերին:

3.4.9. Վտանգավոր բեռներ պարունակող փաթեթները, որոնք իրենց վրա կրում են 3.4.8-ում պատկերված նշանը՝ օդային տրանսպորտի համար լրացուցիչ պիտակներով եւ նշաններով, համարվում են համապատասխանաբար 3.4.1-ի եւ 3.4.2 - 3.4.4-ի դրույթների պահանջները բավարարող, եւ անհրաժեշտ չէ, որ կրեն 3.4.7-ում պատկերված նշանը:

3.4.10. 3.4.7-ում պատկերված նշանը կրող՝ սահմանափակ քանակությամբ վտանգավոր բեռներ պարունակող եւ ԻԿԱՕ-ի Տեխնիկական ցուցումներին, այդ թվում՝ 5-րդ եւ 6-րդ մասերում նշված բոլոր անհրաժեշտ նշաններին եւ պիտակներին համապատասխանող փաթեթները համարվում են համապատասխանաբար 3.4.1-ի եւ 3.4.2-3.4.4-ի դրույթների պահանջները բավարարող:

3.4.11. Տրանսպորտային կապոցների օգտագործումը

Սահմանափակ քանակություններով փաթեթավորված վտանգավոր բեռներ պարունակող տրանսպորտային կապոցի դեպքում կիրառվում է հետեւյալը՝

Եթե տեսանելի չեն տրանսպորտային կապոցում առկա բոլոր վտանգավոր բեռները բնութագրող նշանները, ապա տրանսպորտային կապոցը պետք է լինի՝

- մակնշված «ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԿԱՊՈՑ» բառերով: «ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԿԱՊՈՑ» մակնշման տառերը պետք է ունենան առնվազն 12 մմ բարձրություն: Մակնշումը պետք է լինի ծագման երկրի պաշտոնական լեզվով եւ, եթե այդ լեզուն անգլերեն, ֆրանսերեն կամ գերմաներեն չէ, ապա նաեւ անգլերենով, ֆրանսերենով կամ գերմաներենով, եթե այլ բան նախատեսված չէ տրանսպորտային գործունեությամբ զբաղվող համապատասխան երկրների միջեւ ձեռք բերված

համաձայնությամբ, եւ

- մակնշված սույն գլխով պահանջվող նշաններով:

Բացի օդային տրանսպորտից, 5.1.2.1-ի մյուս դրույթները կիրառվում են միայն այն դեպքում, երբ սահմանափակ քանակություններով չփաթեթավորված վտանգավոր բեռները պարունակվում են տրանսպորտային կապոցի մեջ, ինչպես նաեւ կիրառվում են միայն մյուս այսպիսի վտանգավոր բեռների նկատմամբ:

3.4.12. Մինչեւ փոխադրումը սահմանափակ քանակություններով փաթեթավորված վտանգավոր բեռներ առաքողները պետք է փոխադրողին գրավոր հայտնեն փոխադրման ենթակա այդ բեռների ընդհանուր անզուտ քաշը:

3.4.13. ա) 12 տոննան գերազանցող առավելագույն զանգվածով տրանսպորտային միավորները, որոնցում փոխադրվում են սահմանափակ քանակություններով փաթեթավորված վտանգավոր բեռներ, պետք է, 3.4.15-ին համապատասխան, ճակատային մասում եւ հետնամասում ունենան մակնշում, բացառությամբ այն դեպքերի, երբ տրանսպորտային միավորը պարունակում է այլ վտանգավոր բեռներ, որոնց համար, 5.3.2-ին համապատասխան, պահանջվում է նարնջագույն թիթեղով մակնշում: Այս վերջին դեպքում տրանսպորտային միավորի վրա կարող է տեղադրվել միայն պահանջվող նարնջագույն թիթեղով մակնշումը կամ եւ՝ նարնջագույն թիթեղով մակնշումը՝ 5.3.2-ին համապատասխան, եւ նշաններ՝ 3.4.15-ին համապատասխան:

բ) Կոնտեյներները, որոնք 12 տ-ից բարձր առավելագույն զանգվածով տրանսպորտային միավորների վրա փոխադրում են սահմանափակ քանակություններով փաթեթավորված վտանգավոր բեռներ, պետք է 3.4.15-ի համաձայն, բոլոր չորս կողմերում ունենան մակնշում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ կոնտեյները պարունակում է այլ վտանգավոր բեռներ, որոնց համար, 5.3.1-ին համապատասխան, պահանջվում է տեղադրել տեղեկատվական ցուցանակ: Այս վերջին դեպքում կոնտեյների վրա կարող են տեղադրվել միայն պահանջվող տեղեկատվական ցուցանակները կամ եւ՝ տեղեկատվական ցուցանակները՝ 5.3.1-ին համապատասխան, եւ նշաններ՝ 3.4.15-ին համապատասխան:

Փոխադրող տրանսպորտային միավորն անհրաժեշտ չէ, որ մակնշված լինի՝ բացառությամբ այն դեպքերի, երբ

կոնտեյներների վրա դրված նշանները տեսանելի չեն դրանք փոխադրող տրանսպորտային միավորի արտաքին կողմից: Այս վերջին դեպքում միեւնույն նշանները պետք է տեղադրված լինեն տրանսպորտային միավորի ճակատային մասում եւ հետնամասում:

- 3.4.14. 3.4.13-ում նշված նշանները կարող են չդրվել, եթե սահմանափակ քանակություններով վտանգավոր բեռներ պարունակող փաթեթների ընդհանուր անզուտ քաշը չի գերազանցում 8 տոննան՝ մեկ տրանսպորտային միավորի հաշվով:
- 3.4.15. 3.4.13-ում նշված նշանները պետք է լինեն 3.4.7-ով պահանջվող նույն նշանները՝ բացառությամբ այն դեպքերի, երբ նվազագույն չափսերը պետք է կազմեն 250 մմ x 250 մմ: Այսպիսի նշանները պետք է հանվեն կամ փակվեն, եթե չի փոխադրվում սահմանափակ քանակություններով որեւէ վտանգավոր բեռ:

### ԳԼՈՒԽ 3.5

#### ԱԶԱՏՎԱԾ ՔԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՓԱԹԵԹԱՎՈՐՎԱԾ ՎՏԱՆԳԱՎՈՐ ԲԵՈՆԵՐԸ

- 3.5.1. Ազատված քանակությունները
- 3.5.1.1. Սույն գլխի դրույթներին համապատասխանող պատրաստվածքներից բացի՝ որոշակի դասերի վտանգավոր բեռների ազատված քանակությունները չեն կարգավորվում «ԱԴՌ» համաձայնագրի որեւէ այլ դրույթով, բացառությամբ՝
- ա) 1.3 գլխի՝ աշխատողների վերապատրաստմանը վերաբերող պահանջների.
  - բ) 2-րդ մասով նախատեսվող դասակարգման ընթացակարգերի եւ փաթեթավորման խմբի նշանակման չափորոշիչների.
  - գ) 4.1.1.1, 4.1.1.2, 4.1.1.4 եւ 4.1.1.6-ում առկա փաթեթավորման վերաբերյալ պահանջների:
- ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Ռադիոակտիվ նյութերի դեպքում կիրառվում են 1.7.1.5-ով նախատեսվող ազատված փաթեթներում ռադիոակտիվ նյութերին վերաբերող պահանջները:*
- 3.5.1.2. Այն վտանգավոր բեռները, որոնք սույն գլխի դրույթների համաձայն կարող են փոխադրվել որպես ազատված քանակություններ, նշված են 3.2 գլխի Ա աղյուսակի (7բ) սյունակում տառաթվային ծածկագրով՝ հետեւյալ կերպ.

Ծածկագիր	Առավելագույն զուտ քանակությունը ներքին փաթեթվածքի հաշվով (գրամներով պինդ նյութերի եւ մլ-ով՝ հեղուկների եւ գազերի համար)	Առավելագույն զուտ քանակությունն արտաքին փաթեթվածքի հաշվով (գրամներով պինդ նյութերի եւ մլ-ով՝ հեղուկների եւ գազերի համար, կամ գրամների եւ մլ-ի գումարով՝ խառը փաթեթավորման դեպքում)
E0	Չի թույլատրվում որպես ազատված քանակություն	
E1	30	1000
E2	30	500
E3	30	300
E4	1	500
E5	1	300

Գազերի դեպքում ներքին փաթեթվածքների համար նշված ծավալը նշանակում է ներքին տարայի տարողությունը, իսկ արտաքին փաթեթվածքի համար նշված ծավալը նշանակում է մեկ արտաքին փաթեթվածքում տեղադրված ներքին փաթեթվածքների բոլոր միավորների ընդհանուր տարողությունը:

3.5.1.3. Այն դեպքերում, երբ ազատված քանակություններով վտանգավոր բեռները, որոնց տրված են տարբեր ծածկագրեր, միասին են փաթեթավորված, արտաքին փաթեթվածքի հաշվով ընդհանուր քանակությունը չպետք է գերազանցի առավել սահմանափակիչ ծածկագրին համապատասխանող քանակությունը:

3.5.1.4. Յուրաքանչյուր ներքին փաթեթվածքի համար՝ հեղուկների եւ գազերի դեպքում՝ մինչեւ 1 մլ, իսկ պինդ նյութերի դեպքում՝ 1 գրամ վտանգավոր բեռների առավելագույն զուտ քանակի պայմաններում, եւ յուրաքանչյուր արտաքին փաթեթվածքի համար՝ պինդ նյութերի դեպքում՝ 100 գրամը չգերազանցող, կամ հեղուկների եւ գազերի դեպքում՝ 100 մլ-ն չգերազանցող վտանգավոր բեռների առավելագույն զուտ զանգվածի պայմաններում E1, E2, E4 եւ E5 ծածկագրերին դասվող վտանգավոր բեռների ազատված քանակությունները կարգավորվում են միայն՝

ա) 3.5.2-ի դրույթներով՝ բացառությամբ այն դեպքերի, երբ չի պահանջվում միջանկյալ փաթեթվածք, եթե ներքին փաթեթվածքներն արտաքին փաթեթվածքի մեջ ամուր փաթեթավորված են պաշտպանիչ նյութով այնպես, որ փոխադրման բնականոն պայմաններում տեղի չունենա վերջինիս ճեղքում, պատռում կամ էլ դրա պարունակության արտահոսք. իսկ հեղուկների դեպքում՝ արտաքին փաթեթվածքը պարունակում է համապատասխան կլանիչ նյութ՝ ներքին փաթեթվածքների ամբողջ պարունակությունը կլանելու համար, եւ

բ) 3.5.3-ի դրույթները:

3.5.2. Փաթեթվածքներ՝

Ազատված քանակություններով վտանգավոր բեռների փոխադրման համար կիրառվող փաթեթվածքները պետք է համապատասխանեն հետևյալ պահանջներին՝

- ա) պետք է առկա լինի ներքին փաթեթվածք եւ յուրաքանչյուր ներքին փաթեթվածք պետք է պատրաստված լինի պլաստմասսայից (եթե այդ փաթեթվածքն օգտագործվում է հեղուկների համար, ապա դրա պատերի հաստությունը չպետք է գերազանցի 0,2 մմ-ը) կամ ապակուց, ճենապակուց, կերամիկայից, կավից կամ մետաղից (տե՛ս նաեւ 4.1.1.2), եւ յուրաքանչյուր ներքին փաթեթվածքի փականը պետք է հուսալիորեն հարմարեցվի մետաղալարով, ժապավենով կամ մեկ այլ արդյունավետ միջոցով. սեղմված պարուրակով վզիկով յուրաքանչյուր տարա պետք է ունենա անջրանցիկ պարուրակավոր թասակ: Փականը պետք է կայուն լինի պարունակության ներգործության նկատմամբ.
- բ) յուրաքանչյուր ներքին փաթեթվածք պետք է ապահով տեղադրվի պաշտպանիչ նյութով միջանկյալ փաթեթվածքում այնպես, որ փոխադրման բնականոն պայմաններում տեղի չունենա վերջինիս ճեղքում, պատռում կամ էլ դրա պարունակության արտահոսք: Միջանկյալ փաթեթվածքը պետք է կարողանա տեղավորել ամբողջ պարունակությունը ճեղքման կամ պատռման դեպքում՝ անկախ փաթեթի դիրքից: Հեղուկ վտանգավոր բեռների դեպքում միջանկյալ կամ արտաքին փաթեթվածքը պետք է պարունակի բավականաչափ քանակությամբ կլանիչ նյութ՝ ներքին փաթեթվածքների ամբողջ պարունակությունը կլանելու համար: Միջանկյալ փաթեթվածքի մեջ տեղադրված լինելու դեպքում որպես կլանիչ նյութ կարող է ծառայել պաշտպանիչ նյութը: Վտանգավոր բեռները չպետք է վտանգավոր ռեակցիայի մեջ մտնեն պաշտպանիչ, կլանիչ նյութի եւ փաթեթվածքի նյութի հետ, կամ խախտեն դրանց ամբողջականությունը կամ բացասաբար անդրադառնան դրանց ֆունկցիաների վրա: Անկախ դրա դիրքից՝ փաթեթվածքը ճեղքման կամ արտահոսքի դեպքում պետք է ամբողջությամբ պահպանի պարունակությունը.
- գ) միջանկյալ փաթեթվածքը պետք է ապահով տեղադրվի ամուր կոշտ արտաքին փաթեթվածքում (փայտից, փայտաթելքային սալից կամ մեկ այլ նույնչափ ամուր նյութից).
- դ) յուրաքանչյուր փաթեթի տեսակ պետք է համապատասխանի 3.5.3-ի դրույթներին.



- ե) յուրաքանչյուր փաթեթ պետք է այնպիսի չափսեր ունենա, որ բավականաչափ մակերես լինի՝ բոլոր անհրաժեշտ մակնշումները կատարելու համար. եւ
- զ) կարող են օգտագործվել տրանսպորտային կապոցներ, որոնք կարող են նաեւ պարունակել փաթեթներ՝ վտանգավոր բեռներով կամ այնպիսի բեռներով, որոնք չեն կարգավորվում «ԱԴՌ» համաձայնագրով:

### 3.5.3. Փաթեթների փորձարկումները

3.5.3.1. Փոխադրման համար պատրաստված պատրաստի փաթեթները՝ ներքին փաթեթվածքով, որում առկա է պինդ նյութերի դեպքում տարողության 95%-ից ոչ պակաս եւ հեղուկների դեպքում 98%-ից ոչ պակաս չափով լցված ներքին փաթեթվածքներ, պետք է առանց ներքին փաթեթվածքի որեւէ միավորի կտրման կամ արտահոսքի եւ առանց ամրության զգալի նվազման կարողանան անցնել ստորեւ ներկայացված փորձարկումները, որոնք էլ պետք է պատշաճորեն փաստաթղթավորվեն՝

- ա) նետումներ 1,8 մ բարձրությունից՝ կոշտ, ոչ առաձգական, հարթ եւ հորիզոնական մակերեսի վրա՝
  - i) եթե նմուշն արկղի տեսք ունի, ապա այն պետք է նետվի բոլոր ստորեւ բերված ուղղություններով՝
    - տափակ կողմով հիմքի վրա.
    - տափակ կողմով վերին հատվածի վրա.
    - տափակ կողմով առավել երկար կողմի վրա.
    - տափակ կողմով առավել կարճ կողմի վրա.
    - անկյան վրա.
  - ii) եթե նմուշն ունի թմբուկի տեսք, ապա այն պետք է նետվի բոլոր հետեւյալ ուղղություններով՝
    - անկյունագծով՝ վերին ակոսվածքի վրա, ընդ որում, ծանրության կենտրոնը պետք է տեղակայված լինի անմիջապես հարվածի կետի վրա.
    - անկյունագծով՝ հիմքի ակոսվածքի վրա.
    - տափակ կողմով կողային հատվածի վրա:

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Վերը նշված յուրաքանչյուր ներում կարող է հրականացվել փորձեր, սակայն նույնանման փաթեթների վրա:*

բ) 3 մետր բարձրությամբ դարսակված համանման փաթեթների

ընդհանուր քաշին համարժեք՝ 24 ժամվա ընթացքում վերին մակերեսի վրա գործադրվող ուժ (ներառյալ նմուշը):


3.5.3.2. Փորձարկման նպատակներով այն նյութերը, որոնք պետք է փոխադրվեն տվյալ փաթեթվածքում, կարող են փոխարինվել այլ նյութերով, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ փոխարինումը կարող է փորձարկումների արդյունքներն անվավեր դարձնել: Ինչ վերաբերում է պինդ նյութերին, ապա եթե օգտագործվում է մեկ այլ նյութ, այն պետք է ունենա միեւնույն ֆիզիկական հատկանիշները (զանգված, մասնիկների չափս եւ այլն), որոնք ունի այն նյութը, որը փոխադրվելու է: Եթե հեղուկների համար նախատեսվող անկման փորձարկումների ժամանակ այլ նյութ է կիրառվում, ապա այն պետք է ունենա միեւնույն հարաբերական խտությունը (տեսակարար կշիռ) եւ միեւնույն մածուցիկությունը, ինչ այն նյութը, որը փոխադրվելու է:

3.5.4. Փաթեթների մակնշումը

3.5.4.1. Սույն գլխի դրույթներին համապատասխան պատրաստված վտանգավոր բեռների ազատված քանակություններ պարունակող փաթեթները պետք է չմաքրվող եւ ընթեռնելի կերպով մակնշվեն 3.5.4.2-ում նշված նշանով: Նշանը պետք է ներառի 3.2 գլխի Ա աղյուսակի 5-րդ սյունակում նշված նշանի առաջին կամ միակ համարը՝ փաթեթում առկա յուրաքանչյուր վտանգավոր բեռի համար: Այն դեպքերում, երբ փաթեթի վրա այլ տեղերում նշված չէ բեռնառաքողի կամ բեռն ստացողի անվանումը, ապա այդ տեղեկությունները պետք է նշվեն նշանի վրա:

3.5.4.2. Ազատված քանակություն խորհրդանշող նշանը

Նկար 3.5.4.2



## Ազատված քանակություն խորհրդանշող նշան

\* 3.2 գլխի Ա աղյուսակի 5-րդ սյունակում բերված՝ նշանի առաջին կամ միակ համարը նշելու տեղ:

\*\* Բեռնառաքողի կամ բեռն ստացողի անվանումը նշելու տեղ, եթե այն նշված չէ որեւէ այլ տեղ փաթեթի վրա:

Նշանը պետք է ունենա քառակուսու ձեւ: Ստվերագծերը եւ խորհրդանշանը պետք է ունենան միեւնոյն գոյնը՝ սեւ կամ կարմիր՝ սպիտակ կամ համապատասխան գունային հակադրությամբ ֆոնի վրա: Նվազագոյն չափսերը պետք է լինեն 100 մմ x 100 մմ: Եթե չափսերը նշված չեն, ապա բոլոր հատկանիշները պետք է մոտավոր համաչափ լինեն ցուցադրված պատկերի հատկանիշներին:

### 3.5.4.3. Տրանսպորտային կապոցների օգտագործումը

Սահմանափակ քանակություններով փաթեթավորված վտանգավոր բեռներ պարունակող տրանսպորտային կապոցի դեպքում կիրառվում է հետևյալը՝

Եթե տեսանելի չեն տրանսպորտային կապոցում առկա բոլոր վտանգավոր բեռները բնութագրող նշանները, ապա տրանսպորտային կապոցը պետք է լինի՝

- մակնշված «ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԿԱՊՈՑ» բառերով: «ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԿԱՊՈՑ» մակնշման տառերը պետք է ունենան առնվազն 12 մմ բարձրություն: Մակնշումը պետք է լինի ծագման երկրի պաշտոնական լեզվով, եւ եթե այդ լեզուն անգլերեն, ֆրանսերեն կամ գերմաներեն չէ, ապա՝ նաեւ անգլերենով, ֆրանսերենով կամ գերմաներենով, եթե այլ բան նախատեսված չէ տրանսպորտային գործունեությամբ զբաղվող համապատասխան երկրների միջեւ ձեռք բերված համաձայնությամբ, եւ

- մակնշված սույն գլխով պահանջվող նշաններով:

5.1.2.1-ի մյուս դրույթները կիրառվում են միայն այն դեպքում, երբ սահմանափակ քանակություններով չփաթեթավորված վտանգավոր բեռները պարունակվում են տրանսպորտային կապոցի մեջ, ինչպես նաեւ կիրառվում են միայն մյուս այսպիսի վտանգավոր բեռների նկատմամբ:

### 3.5.5. Ցանկացած փոխադրամիջոցում կամ կոնտեյներում առկա փաթեթների առավելագույն թիվը

Ցանկացած փոխադրամիջոցում կամ կոնտեյներում առկա փաթեթի թիվը չպետք է գերազանցի 1000-ը:

### 3.5.6. Փաստաթղթավորումը

Եթե ազատված քանակություններով փոխադրվող վտանգավոր բեռներին կից փաստաթուղթ (կամ փաստաթղթեր) է ներկայացվում (ներկայացվում են) (օրինակ՝ ապրանքագիր, ավիաբեռնագիր կամ CMR/CIM բեռնագիր), ապա դրանում (դրանցում) պետք է կատարվի հետեւյալ գրառումը՝ «Վտանգավոր բեռներ՝ ազատված քանակություններով» եւ պետք է նշված լինի փաթեթների թիվը:

Եվրոպայի տնտեսական հանձնաժողով  
Ներքին տրանսպորտի կոմիտե

---

# ԱԴՌ

---

«Վտանգավոր բեռների միջազգային ճանապարհային փոխադրումների մասին»  
Եվրոպական համաձայնագիր («ԱԴՌ» (ADR), ֆրանսերեն հապավում)

Ուժի մեջ է 2017 թվականի հունվարի 1-ից

«Վտանգավոր բեռների միջազգային  
ճանապարհային փոխադրումների մասին»  
Եվրոպական համաձայնագիր (ADR)

**Հատոր II**



ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Նյու Յորք եւ Ժնև, 2016թ.

## Ծանոթագրություն

Սույն հրատարակությունում նշված նշանակությունների կիրառությունը եւ նյութի շարադրանքը չպետք է ընկալվեն որպես որեւէ երկրի, տարածաշրջանի, քաղաքի կամ տարածքի կամ դրա իշխանությունների իրավական կարգավիճակի, ինչպես նաեւ դրա սահմանազման վերաբերյալ Միավորված ազգերի կազմակերպության քարտուղարության կողմից որեւէ կարծիքի արտահայտում:

ECE/TRANS/257 (Հատոր II)

Հեղինակային իրավունք ©  
Միավորված ազգերի կազմակերպություն, 2016թ.

### *Բոլոր իրավունքները պահպանված են:*

*Սույն հրատարակության եւ ոչ մի մաս վաճառքի նպատակներով չի կարող վերարտադրվել, պահվել տեղեկատվական-որոնողական համակարգում կամ որեւէ ձեւով կամ միջոցով փոխանցվել՝ լինի դա էլեկտրոնային, էլեկտրաստատիկ, մագնիսային ժապավենով, մեխանիկական, լուսապատճենման կամ այլ տարբերակով՝ առանց Միավորված Ազգերի կազմակերպության կողմից նախնական գրավոր թույլտվության:*

ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
Վաճառքի համարը՝ 16.VIII.1
ISBN 978-92-1-139156-5 (երկու հատորով ամբողջական հավաքածու)
e-ISBN 978-92-1-058130-1

I եւ II հատորները չեն կարող առանձին վաճառվել:

## **ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողով (ՄԱԿ ԵՏՀ (UNECE))**

ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովը (ՄԱԿ ԵՏՀ) ՄԱԿ-ի տարածաշրջանային հինգ հանձնաժողովներից մեկն է, որը կառավարվում է Տնտեսական և սոցիալական խորհրդի (ՏԽԽ (ECOSOC)) կողմից: Այն ստեղծվել է 1947 թվականին՝ հետպատերազմյան Եվրոպայի վերականգնման, տնտեսական գործունեության զարգացման և եվրոպական երկրների, ինչպես նաև Եվրոպայի և աշխարհի մյուս երկրների միջև տնտեսական հարաբերությունների ամրապնդման նպատակով: Սառը պատերազմի ընթացքում ՄԱԿ ԵՏՀ-ն համարվել է Արևելքի և Արևմուտքի միջև տնտեսական երկխոսության և համագործակցության եզակի ֆորում: Չնայած այդ ժամանակաշրջանի դժվարություններին՝ այն նշանակալի է կարևոր ձեռքբերումներով և ներդաշնակեցման ու ստանդարտացման մի շարք համաձայնագրերի շուրջ ընդհանուր համաձայնությամբ:

Սառը պատերազմի ավարտից հետո ՄԱԿ ԵՏՀ-ն ձեռք է բերել ոչ միայն նոր անդամ պետություններ, այլ նաև նոր գործառույթներ: 1990-ական թվականների սկզբից կազմակերպությունն իր ջանքերը կենտրոնացրել է անցումային գործընթացի վերլուծությունների վրա՝ կիրառելով Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների՝ համաշխարհային շուկաներին ինտեգրման գործընթացը դյուրացնելու հարցում ներդաշնակեցման իր փորձը:

ՄԱԿ ԵՏՀ-ն ֆորում է, որտեղ Արևմտյան, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի, Կենտրոնական Ասիայի և Հյուսիսային Ամերիկայի երկրները (ընդհանուր 56 երկիր) համախմբվում են իրենց համագործակցության գործիքները ստեղծելու համար: Այդ համագործակցությունը վերաբերում է տնտեսական համագործակցությանը և ինտեգրմանը, վիճակագրությանը, շրջակա միջավայրին, տրանսպորտին, առևտրին, կայուն էներգետիկային, անտառտնտեսությանն ու անտառանյութերին, բնակարանային տնտեսությանը և հողօգտագործմանը, ինչպես նաև բնակչությանը: Հանձնաժողովն առաջարկում է կոնվենցիաների, նորմերի և ստանդարտների մշակման ու ներդաշնակեցման տարածաշրջանային շրջանակ: Հանձնաժողովի փորձագետները տեխնիկական աջակցություն են տրամադրում Հարավարևելյան Եվրոպայի և Անկախ Պետությունների Համագործակցության երկրներին: Այս աջակցությունն իրականացվում է խորհրդատվական ծառայությունների, վերապատրաստման սեմինարների և աշխատաժողովների ձևով, որոնց ընթացքում երկրները կարող են փոխանակել իրենց փորձառությունը և լավագույն գործելակերպերը:

## Տրանսպորտի ոլորտը ՄԱԿ ԵՏՀ-ում

ՄԱԿ ԵՏՀ-ի կայուն տրանսպորտի հարցերով բաժինը Ներքին տրանսպորտի կոմիտեի (ՆՏԿ) եւ ՏՄԽ վտանգավոր բեռների փոխադրման, ինչպես նաեւ քիմիական նյութերի դասակարգման եւ պիտակավորման համաշխարհային մակարդակով ներդաշնակեցված համակարգի հարցերով փորձագետների կոմիտեի քարտուղարությունն է: ՆՏԿ-ն եւ դրա 17 աշխատանքային խմբերը, ինչպես նաեւ ՏՄԽ կոմիտեն եւ դրա ենթակոմիտեները միջկառավարական մակարդակում որոշումներ կայացնող մարմիններ են, որոնց գործունեությունն ուղղված է ամբողջ աշխարհում բնակչության առօրյա կյանքը եւ ձեռնարկատիրական գործունեության պայմանները բարելավելուն՝ գնահատելի եղանակների եւ կոնկրետ գործողությունների օգտագործմամբ, երթեւեկության անվտանգության, բնապահպանության ցուցանիշների, էներգաարդյունավետության, ինչպես նաեւ տրանսպորտի ոլորտում մրցակցության մակարդակը բարձրացնելուն:

ՏՄԽ կոմիտեն ստեղծվել է 1953 թվականին Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղարի կողմից՝ Տնտեսական եւ սոցիալական խորհրդի՝ վտանգավոր բեռների փոխադրման վերաբերյալ առաջարկություններ մշակելու պահանջի հիման վրա: 1999 թվականին դրա լիազորությունների շրջանակն ընդլայնվել է՝ ներառելով Քիմիական նյութերի դասակարգման եւ պիտակավորման համակարգերի՝ համաշխարհային մակարդակում (բազմաօլորտային) ներդաշնակեցումը: Դրա կազմի մեջ մտնում են փորձագետներ այնպիսի երկրներից, որոնք համապատասխան գիտելիքներ եւ փորձառություն ունեն միջազգային առեստրի, ինչպես նաեւ վտանգավոր բեռների ու քիմիական նյութերի փոխադրման ոլորտում: Դրան անդամակցությունը սահմանափակված է՝ աշխարհի բոլոր շրջանների միջեւ համապատասխան աշխարհագրական հավասարակշռությունն արտացոլելու եւ զարգացող երկրների պատշաճ մասնակցությունն ապահովելու նպատակով: Չնայած Կոմիտեն համարվում է ՏՄԽ-ի օժանդակ մարմին, 1963 թվականին Գլխավոր քարտուղարը որոշել է, որ քարտուղարական ծառայությունները պետք է տրամադրվեն ՄԱԿ ԵՏՀ-ի տրանսպորտի բաժնի կողմից:

ՆՏԿ-ն միջկառավարական եզակի ֆորում է, որն ստեղծվել է 1947 թվականին՝ հետպատերազմյան Եվրոպայում տրանսպորտային կապերի վերականգնման գործընթացին աջակցելու համար: Տարիներ շարունակ այն մասնագիտացել է ներքին տրանսպորտային միջոցների ներդաշնակեցված եւ կայուն զարգացմանը նպաստելու գործում: Այս հաստատուն եւ շարունակական աշխատանքի հիմնական արդյունքներն արտացոլված են, ի թիվս այլնի՝ i) Միավորված ազգերի կազմակերպության 58 կոնվենցիաներում եւ շատ այլ տեխնիկական կանոնակարգերում, որոնք պարբերաբար թարմացվում են եւ ապահովում միջազգային իրավական դաշտ՝ ճանապարհային, երկաթուղային, ներքին ջրային տրանսպորտով եւ տրանսպորտի մի քանի տեսակներով փոխադրման, այդ թվում՝ վտանգավոր բեռների փոխադրման, ինչպես նաեւ



ավտոտրանսպորտային միջոցների արտադրության եւ ստուգման՝ ազգային եւ միջազգային մակարդակում կայուն զարգացման համար. ii) Անդրեվրոպական հյուսիս-հարավ ավտոմայրուղու, անդրեվրոպական երկաթուղային եւ եվրո-ասիական տրանսպորտային կապերի ծրագրերում, որոնք նպաստում են տրանսպորտային ենթակառուցվածքներում ներդրումների ծրագրերի համակարգմանը մի քանի երկրների շրջանում. iii) Միջազգային ճանապարհային փոխադրումների (TIR) համակարգում, ինչը համարվում է մաքսային տարանցման գործընթացի դյուրացման լուծում. iv) «Ներքին տրանսպորտի ապագա համակարգեր» կոչվող գործիքներում, որոնք կարող են ազգային եւ տեղական կառավարման մարմիններին աջակցել ներքին տրանսպորտի տարբեր տեսակներից ածխածնի երկօքսիդի (CO<sub>2</sub>) արտանետումները վերահսկելու, ինչպես նաեւ կլիմայական փոփոխությունների մեղմացման քաղաքականություններ ընտրելու եւ մշակելու հարցում, որոնք հիմնված են դրանց ազդեցության վրա եւ հարմարեցված են տեղական պայմաններին. v) տրանսպորտի վիճակագրության մեջ՝ մեթոդներ եւ տվյալներ, որոնք համաձայնեցված են միջազգային մակարդակում. vi) ուսումնասիրություններում ու հաշվետվություններում, որոնք օգնում են տրանսպորտային քաղաքականության զարգացմանը՝ հետազոտությունների եւ վերլուծությունների առաջադեմ մեթոդների հիման վրա կարգավորելով առկա խնդիրները: ՆՏԿ-ն հատուկ ուշադրություն է դարձնում ինտելեկտուալ տրանսպորտային ծառայություններին (ԻՏԾ), քաղաքային կայուն շարժունակությանը եւ քաղաքային լոգիստիկային, ինչպես նաեւ տրանսպորտային ցանցերի եւ ծառայությունների կայունության բարձրացմանը՝ ի պատասխան կլիմայի փոփոխությունների հարմարվողականությանը եւ անվտանգության մարտահրավերներին:

Բացի այդ, ՄԱԿ ԵՏՀ-ի կայուն տրանսպորտի եւ շրջակա միջավայրի հարցերով բաժինները Եվրոպայի Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) հետ համատեղ սպասարկում են Տրանսպորտի, առողջապահության եւ շրջակա միջավայրի վերաբերյալ համաեվրոպական ծրագիրը (ՏԱՇՄ ՀԵԾ):

Վերջապես, 2015 թվականից ՄԱԿ ԵՏՀ-ի կայուն տրանսպորտի հարցերով բաժինը քարտուղարական ծառայություններ է տրամադրում Գլխավոր քարտուղարին՝ ճանապարհային երթեւեկության անվտանգության հարցերով հատուկ բանազնաց պարոն Ժան Թոդթին:

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

**ՀԱՏՈՐ II**

**Էջ**

ՄԱՍ 4\_Փաթեթավորման եւ ցիստեռնների վերաբերյալ դրույթները .....20

**ԳԼՈՒԽ 4.1\_ՓԱԹԵԹՎԱԾՔՆԵՐԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՍՈՐՈՒՆ ԲԵՌՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋԻՆ ԲԵՌՆՎԱԾՈՒԹՅԱՆ ԿՈՆՏԵՅՆԵՐՆԵՐԻ (ՍՄԿ-ներ) ԵՎ ԽՈՇՈՐ ՓԱԹԵԹՎԱԾՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ..... 21**

4.1.1. Փաթեթվածքներում, այդ թվում նաեւ ՍՄԿ-ներում եւ խոշոր փաթեթվածքներում վտանգավոր բեռների փաթեթավորման վերաբերյալ ընդհանուր դրույթները .....21

4.1.2 ՍՄԿ-ների օգտագործման վերաբերյալ լրացուցիչ ընդհանուր դրույթները .....66

4.1.3 Փաթեթավորման ցուցումներին վերաբերող ընդհանուր դրույթները .....68

4.1.4 Փաթեթավորման ցուցումների ցանկ..... 74

4.1.5. Առաջին դասի բեռների փաթեթավորման վերաբերյալ հատուկ դրույթները .....178

4.1.6. Երկրորդ դասի բեռների եւ P200 փաթեթավորման ցուցմանը դասված այլ դասերի բեռների վերաբերյալ փաթեթավորման հատուկ դրույթները ..... 180

4.1.7. Օրգանական պերօքսիդների (դաս 5.2) եւ 4.1 դասի ինքնառեակտիվ նյութերի փաթեթավորման վերաբերյալ հատուկ դրույթները .....185

4.1.8. Վարակիչ նյութերի փաթեթավորման վերաբերյալ հատուկ դրույթները (դաս 6.2) .....188

4.1.9. Ռադիոակտիվ նյութերի փաթեթավորման վերաբերյալ հատուկ դրույթները ..... 191

4.1.10. Խառը փաթեթավորման վերաբերյալ հատուկ դրույթները.....196

**ԳԼՈՒԽ 4.2\_ՇԱՐԺԱԿԱՆ ՑԻՍՏԵՌՆՆԵՐԻ ԵՎ ՄԱԿ-Ի ՆՇԱԳՐՄԱՆ՝ ԳԱԶԻ ԲԱԶՄԱՏԱՐՐ ԿՈՆՏԵՅՆԵՐՆԵՐԻ (ԳՔՏԿ-ՆԵՐ) ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ.....205**

4.2.1. 1-ին եւ 3-9-րդ դասերի նյութերի փոխադրման համար շարժական ցիստեռնների կիրառմանը վերաբերող ընդհանուր դրույթները..... 205

4.2.2. Չստեղծված-հեղուկացված ճնշման տակ գտնվող գազերի եւ քիմիական նյութերի փոխադրման համար շարժական ցիստեռնների օգտագործմանը վերաբերող ընդհանուր դրույթները .....	213
4.2.3. Ստեղծված-հեղուկացված գազերի փոխադրման համար շարժական ցիստեռնների օգտագործմանը վերաբերող ընդհանուր դրույթները .....	216
4.2.4. ՄԱԿ-ի նշագրման՝ գազի բազմատարր կոնտեյներների (ԳՔՏԿ-ներ) օգտագործմանը վերաբերող ընդհանուր դրույթները.....	218
4.2.5. Շարժական ցիստեռնների վերաբերյալ ցուցումները եւ հատուկ դրույթները .....	220
<b>ԳԼՈՒԽ 4.3_ԱՆՇԱՐԺ ՑԻՍՏԵՌՆՆԵՐԻ (ԱՎՏՈՑԻՍՏԵՌՆՆԵՐԻ), ՀԱՆՈՎԻ ՑԻՍՏԵՌՆՆԵՐԻ, ՑԻՍՏԵՌՆ-ԿՈՆՏԵՅՆԵՐՆԵՐԻ ԵՎ ՄԵՏԱՂԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԿՈՐՊՈՒՍՈՎ ՀԱՆՈՎԻ ԹԱՓՔ-ՑԻՍՏԵՌՆՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՄԱՐՏԿՈՑԱՆՄԱՆ ՀԱՎԱՔՎԱԾՔՈՎ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ԳԱԶԻ ԲԱԶՄԱՏԱՐՐ ԿՈՆՏԵՅՆԵՐՆԵՐԻ (ԳՔՏԿ-ներ) ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ .....</b>	<b>246</b>
4.3.1. Գործողության ոլորտը .....	246
4.3.2. Բոլոր դասերի նկատմամբ կիրառվող դրույթները .....	247
4.3.3. 2-րդ դասի նկատմամբ կիրառվող հատուկ դրույթները.....	253
4.3.4. 1-ին եւ 3-9-րդ դասերի նկատմամբ կիրառվող հատուկ դրույթները .....	270
4.3.5. Հատուկ դրույթներ.....	283
<b>ԳԼՈՒԽ 4.4_ՎՈԼՈԿՆԻՏԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ՑԻՍՏԵՌՆՆԵՐԻ, ԱՆՇԱՐԺ ՑԻՍՏԵՌՆՆԵՐԻ (ԱՎՏՈՑԻՍՏԵՌՆՆԵՐԻ), ՀԱՆՈՎԻ ՑԻՍՏԵՌՆՆԵՐԻ, ՑԻՍՏԵՌՆ-ԿՈՆՏԵՅՆԵՐՆԵՐԻ ԵՎ ՀԱՆՈՎԻ ԹԱՓՔ-ՑԻՍՏԵՌՆՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ.....</b>	<b>289</b>
4.4.1. Ընդհանուր դրույթները .....	289
4.4.2. Շահագործումը .....	289
<b>ԳԼՈՒԽ 4.5_ԹԱՓՈՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՎԱԿՈՒՈՒՄԱՅԻՆ ՑԻՍՏԵՌՆՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ .....</b>	<b>291</b>
4.5.1. Օգտագործումը .....	291
4.5.2. Շահագործումը .....	291
<b>ԳԼՈՒԽ 4.6_(Նախապեսվում է վերապահում)</b>	<b>293</b>
<b>ԳԼՈՒԽ 4.7_ՊԱՅԹՈՒՑԻԿՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՇԱՐՃԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ (ՊԱՇՄ-ներ) ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ .....</b>	<b>294</b>

4.7.1. Օգտագործումը .....	294
4.7.2. Շահագործումը .....	294
ՄԱՍ 5_Բեռնառաքման	ընթացակարգերը
.....	296
<b>ԳԼՈՒԽ 5.1_ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ .....</b>	<b>297</b>
5.1.1. Կիրառումն ու ընդհանուր դրույթները .....	297
5.1.2. Տրանսպորտային կապոցների օգտագործումը .....	297
5.1.3. Դատարկ չմաքրված փաթեթվածքները (ներառյալ ՍՄԿ-ները եւ խոշոր փաթեթվածքները), ցիստեռնները, ՊԱՇՄ-ները, մեքենաները եւ կոնտեյներները, որոնք նախատեսված են խումնաբեռն փոխադրման համար: .....	298
5.1.4. Խառը փաթեթավորում.....	298
5.1.5. 7-րդ դասի վերաբերյալ ընդհանուր դրույթները .....	299
<b>ԳԼՈՒԽ 5.2_ՄԱԿՆՇՈՒՄԸ</b>	<b>ԵՎ</b>
<b>.....</b>	<b>ՊԻՏԱԿԱՎՈՐՈՒՄԸ</b>
<b>.....</b>	<b>310</b>
5.2.1. Փաթեթների մակնշումը.....	310
5.2.2. Փաթեթների պիտակավորումը.....	319
<b>ԳԼՈՒԽ 5.3ՅԿՈՆՏԵՅՆԵՐՆԵՐԻ, ԳԲՏԿ-ՆԵՐԻ, ՊԱՇՄ-ՆԵՐԻ, ՑԻՍՏԵՌՆ-ԿՈՆՏԵՅՆԵՐՆԵՐԻ, ՇԱՐԺԱԿԱՆ ՑԻՍՏԵՌՆԵՐԻ ԵՎ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՎՐԱ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԱԿՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒՄՆ ՈՒ ԴՐԱՆՑ ՄԱԿՆՇՈՒՄԸ .....</b>	<b>333</b>
5.3.1. Տեղեկատվական ցուցանակների տեղադրումը.....	333
5.3.2. Նարնջագույն թիթեղով մակնշումը .....	339
5.3.3. Բարձր ջերմաստիճանի նյութերի մասին նախազգուշացնող նշանը .....	349
5.3.4. (Նախատեսվում է վերապահում) .....	349
5.3.5. (Նախատեսվում է վերապահում) .....	349
5.3.6. Շրջակա միջավայրի համար վտանգավոր նյութերի մասին նախազգուշացնող նշանը .....	349
<b>ԳԼՈՒԽ 5.4_ՓԱՍՏԱԹՂԹԱՎՈՐՈՒՄԸ .....</b>	<b>351</b>
5.4.0. Ընդհանուր դրույթներ .....	351
5.4.1. Վտանգավոր բեռների մասին տրանսպորտային փաստաթղթերը եւ դրան վերաբերող տեղեկությունները.....	351
5.4.2. Կոնտեյների/փոխադրամիջոցի փաթեթավորման սերտիֆիկատ ..	369

5.4.3. Գրավոր ցուցումները .....	371
5.4.4. Վտանգավոր բեռների փոխադրման մասին տեղեկությունների պահպանումը .....	378
5.4.5. Վտանգավոր բեռների բազմաձեւ փոխադրման մասին ձեւաթղթի օրինակ .....	378
<b>ԳԼՈՒԽ 5.5_ՀԱՏՈՒԿ</b>	<b>ԴՐՈՒՅԹՆԵՐԸ</b>
.....	<b>381</b>
5.5.1. (Հանվել է) .....	381
5.5.2. Ախտահանված բեռնատար տրանսպորտային միավորների նկատմամբ կիրառելի հատուկ դրույթներ (ՄԱԿ 3359) .....	381
5.5.3. Սառեցման կամ օդորակման նպատակով օգտագործելու ժամանակ շնչահեղձ լինելու վտանգ ներկայացնող նյութեր (ինչպես օրինակ չոր սառույց (ՄԱԿ-ի նշագրման 1845 համար) կամ նիտրոգեն, սառեցված հեղուկ (ՄԱԿ-ի նշագրման 1977 համար) կամ արգոն, սառեցված հեղուկ (ՄԱԿ-ի նշագրման 1951 համար)) պարունակող փաթեթների եւ փոխադրամիջոցների եւ կոնտեյներների նկատմամբ կիրառվող հատուկ դրույթներ .....	384
ՄԱՍ 6_Փաթեթվածքների, սորուն բեռների համար նախատեսված միջին բեռնվածության կոնտեյներների (ՍՄԿ-ներ), խոշոր փաթեթվածքների, ցիստեռնների եւ սորուն բեռների համար նախատեսված կոնտեյներների պատրաստման եւ փորձարկման վերաբերյալ պահանջները .....	391
<b>ԳԼՈՒԽ 6.1_ՓԱԹԵԹՎԱԾՔՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ</b> .....	<b>392</b>
6.1.1. Ընդհանուր դրույթներ .....	392
6.1.2. Փաթեթվածքների տեսակների նշման ծածկագիր .....	393
6.1.3. Մակնշումը .....	397
6.1.4. Փաթեթվածքներին ներկայացվող պահանջները .....	405
6.1.5. Փաթեթվածքի փորձարկումներին ներկայացվող պահանջները .....	426
6.1.6. Պոլիէթիլենից փաթեթվածքների, այդ թվում նաեւ ՍՄԿ-ների քիմիական համատեղելիության համար համապատասխանաբար 6.1.5.2.6-ի եւ 6.5.6.3.5-ի համաձայն ստուգման համար ստանդարտ հեղուկները .....	442
<b>ԳԼՈՒԽ 6.2_ՃՆՇՈՒՄԱՅԻՆ ՏԱՐԱ, ԱԵՐՈՂՈՒՄԱՅԻՆ ՑՈՂԱՑԻՐՆԵՐԻ, ԳԱՁ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ՓՈՔՐ ՏԱՐԱՆԵՐԻ (ԳԱՁԻ ԱՆՈՐՆԵՐԻ) ԵՎ ՀԵՂՈՒԿԱՑՎԱԾ ԴՅՈՒՐԱՎԱՌ ԳԱՁԵՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ՎԱՌԵԼԻՔԱՅԻՆ ԷԼԵՄԵՆՏՆԵՐՈՎ ՔԱՐԹՐԻՋՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ</b> .....	<b>446</b>

6.2.1. Ընդհանուր պահանջները.....	446
6.2.2. ՄԱԿ-ի՝ ճնշումային տարաներին ներկայացվող պահանջները	455
6.2.3. ՄԱԿ-ի նշագրման ճնշումային տարա չհանդիսացող տարաների վերաբերյալ ընդհանուր պահանջները .....	490
6.2.4. ՄԱԿ-ի նշագրման ճնշումային տարա չհանդիսացող տարաների նկատմամբ կիրառվող պահանջները, որոնք նախագծված, պատրաստված եւ փորձարկված չեն այն ստանդարտների համաձայն, որոնց հղում է կատարված.....	497
6.2.5. ՄԱԿ-ի նշագրման տարա չհանդիսացող ճնշումային տարաներին ներկայացվող պահանջները, որոնք նախագծված, պատրաստված եւ փորձարկված չեն՝ հղում կատարված ստանդարտների համաձայն ..	507
6.2.6. Աերոզոլային ցողացիրների, գազ պարունակող փոքր տարաների (գազի անոթների) եւ հեղուկացված դյուրավառ գազ պարունակող վառելիքային էլեմենտներով քարթրիջների նկատմամբ կիրառվող ընդհանուր պահանջներ .....	513
<b>ԳԼՈՒԽ 6.3_6.2 ԴԱՍԻ «Ա» ԿԱՏԵԳՈՐԻԱՅԻ ՎԱՐԱԿԻՉ ՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՓԱԹԵԹՎԱԾՔՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ .....</b>	<b>520</b>
6.3.1. Ընդհանուր դրույթներ .....	520
6.3.2. Փաթեթվածքների համար նախատեսված պահանջները .....	520
6.3.3. Փաթեթվածքների տեսակների նշանակման ծածկագրերը .....	521
6.3.4. Մակնշումը .....	521
6.3.5. Փաթեթվածքների համար պահանջվող փորձարկման պահանջները .....	523
<b>ԳԼՈՒԽ 6.4_ՌԱԴԻՈԱԿՏԻՎ ՄԵՏԱՂ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ՓԱԹԵԹՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ, ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ՈՒ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԵՎ ԱՅԴ ՄԵՏԱՂԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ .....</b>	<b>532</b>
6.4.1. (Նախատեսվում է վերապահում).....	532
6.4.2. Ընդհանուր պահանջները .....	532
6.4.3. (Նախատեսվում է վերապահում) .....	534
6.4.4. Ազատված փաթեթներին ներկայացվող պահանջներ.....	534
6.4.5. Արդյունաբերական փաթեթներին ներկայացվող պահանջներ	534
6.4.6. Ուրանի հեքսաֆտորիդ պարունակող փաթեթներին ներկայացվող պահանջները .....	536
6.4.7. «A» տեսակի փաթեթներին ներկայացվող պահանջները .....	537
6.4.8. «B(U)» տեսակի փաթեթներին ներկայացվող պահանջները ...	539

6.4.9 «B(M)» տեսակի փաթեթներին ներկայացվող պահանջները ....	544
6.4.10 «C» տեսակի փաթեթներին ներկայացվող պահանջները .....	544
6.4.11 Տրոհվող նյութեր պարունակող փաթեթներին ներկայացվող պահանջները .....	545
6.4.12. Փորձարկման ընթացակարգերը եւ համապատասխանության հաստատումը .....	552
6.4.13. Պաշտպանիչ պատյանի համակարգի եւ պաշտպանության ամբողջականության փորձարկումն ու կրիտիկականության տեսանկյունից անվտանգության գնահատումը.....	553
6.4.14. Անկման փորձարկումների համար օգտագործվող թիրախը ..	553
6.4.15. Փոխադրման նորմալ պայմաններում դիմակայելու հատկությունները հաստատելու համար անհրաժեշտ փորձարկումները	554
6.4.16. Հեղուկների եւ գազերի համար նախատեսված «A» տեսակի փաթեթների լրացուցիչ փորձարկումները.....	556
6.4.17. Փոխադրման վթարային պայմաններում դիմակայելու հատկությունները հաստատելու համար անհրաժեշտ փորձարկումներ	556
6.4.18. Ավելի քան $10^5$ A <sub>2</sub> ակտիվությամբ ռադիոակտիվ պարունակությամբ «B(U)» եւ «B(M)» տեսակների փաթեթների եւ «C» տեսակի փաթեթների՝ ջրի մեջ խորասուզման փորձարկում.....	558
6.4.19. Տրոհվող նյութ պարունակող փաթեթների հերմետիկության փորձարկումը .....	559
6.4.20. «C» տեսակի փաթեթների փորձարկումները.....	559
6.4.21. 0.1 կգ կամ ավելի ուրանի հեքսաֆտորիդ պարունակելու համար նախատեսված փաթեթվածքների ստուգումներ.....	561
6.4.22. Փաթեթի կառուցվածքների եւ նյութերի հաստատումներ .....	562
6.4.23. Ռադիոակտիվ նյութերի փոխադրման հայտերն ու հաստատումները .....	564
<b>ԳԼՈՒԽ 6.5_ՍՈՐՈՒՆ ԲԵՌՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋԻՆ ԲԵՌՆՎԱԾՈՒԹՅԱՆ ԿՈՆՏԵՅՆԵՐՆԵՐԻ (ՍՄԿ-ներ) ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՈՒ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ .....</b>	<b>582</b>
6.5.1. Ընդհանուր պահանջները.....	582
6.5.2. Մակնշումը .....	586
6.5.3. Պատրաստման պահանջները .....	590
6.5.4. Փորձարկում, սերտիֆիկացում եւ ստուգում .....	591
6.5.5. ՍՄԿ-ների վերաբերյալ հատուկ պահանջները.....	594

6.5.6. ՍՄԿ-ների փորձարկումների վերաբերյալ պահանջները .....	608
<b>ԳԼՈՒԽ 6.6_ԽՈՇՈՐ ՓԱԹԵԹՎԱԾՔՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՈՒ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ .....</b>	<b>624</b>
6.6.1. Ընդհանուր դրույթները .....	625
6.6.2. Խոշոր փաթեթվածքների տեսակների նշանակման ծածկագրերը	626
6.6.3. Մակնշումը .....	626
6.6.4. Խոշոր փաթեթվածքների վերաբերյալ հատուկ պահանջները	629
6.6.5. Խոշոր փաթեթվածքների վերաբերյալ փորձարկման պահանջները .....	635
<b>ԳԼՈՒԽ 6.7_ՇԱՐԺԱԿԱՆ ՑԻՍՏԵՌՆՆԵՐԻ ԵՎ ՄԱԿ-Ի ՆՇԱԳՐՄԱՆ՝ ԳԱԶԻ ԲԱԶՄԱՏԱՐՐ ԿՈՆՏԵՅՆԵՐՆԵՐԻ (ԳԲՏԿ-ՆԵՐ) ՆԱԽԱԳԾՄԱՆ, ՊԱՏՐԱՍՏՄԱՆ, ՍՏՈՒԳՄԱՆ ՈՒ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ.....</b>	<b>644</b>
6.7.1. Կիրառումն ու ընդհանուր պահանջները.....	644
6.7.2. 1-ին, ինչպես նաեւ 3-9-րդ դասերի նյութերի փոխադրման համար նախատեսված շարժական ցիստեռնների նախագծման, պատրաստման, ստուգման եւ փորձարկման վերաբերյալ պահանջները: .....	645
6.7.3. Չստեցված-հեղուկացված գազերի փոխադրման համար նախատեսված շարժական ցիստեռնների նախագծման, պատրաստման, ստուգման եւ փորձարկման պահանջները .....	681
6.7.4. Ստեցված-հեղուկացված գազերի փոխադրման համար նախատեսված շարժական ցիստեռնների նախագծման, պատրաստման, ստուգման եւ փորձարկման պահանջները .....	709
6.7.5. Չստեցված գազերի փոխադրման համար նախատեսված ՄԱԿ-ի նշագրման՝ գազի բազմատարր կոնտեյներների (ԳԲՏԿ-ՆԵՐ) նախագծման, պատրաստման, ստուգման եւ փորձարկման պահանջները .....	733
<b>ԳԼՈՒԽ 6.8_ԱՆՇԱՐԺ ՑԻՍՏԵՌՆՆԵՐԻ (ԱՎՏՈՑԻՍՏԵՌՆՆԵՐԻ), ՀԱՆՈՎԻ ՑԻՍՏԵՌՆՆԵՐԻ, ՑԻՍՏԵՌՆ-ԿՈՆՏԵՅՆԵՐՆԵՐԻ ԵՎ ՄԵՏԱՂԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԿՈՐՊՈՒՍՈՎ ՀԱՆՈՎԻ ԹԱՓՔ-ՑԻՍՏԵՌՆՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՄԱՐՏԿՈՑԱՆՄԱՆ ՀԱՎԱՔՎԱԾՔՈՎ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ԳԱԶԻ ԲԱԶՄԱՏԱՐՐ ԿՈՆՏԵՅՆԵՐՆԵՐԻ (ԳԲՏԿ-ՆԵՐ) ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ, ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ, ՏԵՍԱԿԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ, ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՄԱԿՆՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ .....</b>	<b>750</b>
6.8.1. Գործողության ոլորտը.....	750



6.8.2. Բոլոր դասերի նկատմամբ կիրառվող պահանջները .....	751
6.8.3 2-րդ դասի նկատմամբ կիրառվող հատուկ պահանջները.....	792
6.8.4. Հատուկ դրույթները.....	812
6.8.5. Անշարժ եռակցված ցիստեռնների, հանովի եռակցված ցիստեռնների եւ ցիստեռն-կոնտեյնրների եռակցված կորպուսների, որոնց համար նախատեսվում է 1 ՄՊա-ից (10 բար) ոչ պակաս փորձարկման ճնշում, ինչպես նաեւ 2-րդ դասի սառեցված-հեղուկացված գազերի փոխադրման համար նախատեսված անշարժ եռակցված ցիստեռնների, հանովի եռակցված ցիստեռնների եւ ցիստեռն-կոնտեյնրների եռակցված կորպուսների նյութերի եւ պատրաստման վերաբերյալ պահանջները .....	825
<b>ԳԼՈՒԽ 6.9_ՎՈԼՈԿՆԻՏԻՑ ՊԼԱՍՏՄԱՍՍԱՅԻՑ ԱՆՇԱՐԺ ՑԻՍՏԵՌՆՆԵՐԻ (ԱՎՏՈՑԻՍՏԵՌՆՆԵՐԻ), ՀԱՆՈՎԻ ՑԻՍՏԵՌՆՆԵՐԻ, ՑԻՍՏԵՌՆ-ԿՈՆՏԵՅՆԵՐՆԵՐԻ ԵՎ ՀԱՆՈՎԻ ԹԱՓՔ-ՑԻՍՏԵՌՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԾՄԱՆ, ՊԱՏՐԱՍՏՄԱՆ, ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ, ՏԵՍԱԿԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ, ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ԵՎ ՄԱԿՆՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ.....</b>	<b>832</b>
6.9.1. Ընդհանուր դրույթները .....	832
6.9.2. Պատրաստումը .....	832
6.9.3. Սարքավորման տարրերը .....	839
6.9.4. Կառուցվածքի տեսակի փորձարկումները եւ հաստատումը ....	839
6.9.5. Ստուգումները .....	843
6.9.6. Մակնշումը .....	844
<b>ԳԼՈՒԽ 6.10_ԹԱՓՈՆՆԵՐԻ ՎԱԿՈՒՈՒՄԱՅԻՆ ՑԻՍՏԵՌՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ, ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ, ՏԵՍԱԿԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ, ՍՏՈՒԳՄԱՆ ԵՎ ՄԱԿՆՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ.....</b>	<b>845</b>
6.10.1. Ընդհանուր դրույթները .....	845
6.10.2. Կառուցվածքը .....	846
6.10.3. Սարքավորման տարրերը.....	846
6.10.4. Ստուգումները .....	850
<b>ԳԼՈՒԽ 6.11_ՍՈՐՈՒՆ ԲԵՌՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԿՈՆՏԵՅՆԵՐՆԵՐԻ ՆԱԽԱԳԾՄԱՆ, ՊԱՏՐԱՍՏՄԱՆ, ՍՏՈՒԳՄԱՆ ԵՎ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ .....</b>	<b>850</b>
6.11.1. (Նախատեսվում է վերապահում).....	850
6.11.2. Կիրառումը եւ ընդհանուր պահանջները .....	850
6.11.3. Որպես BK1 կամ BK2 սորուն բեռների համար նախատեսված կոնտեյնրներն օգտագործվող՝ ԱԿԿ-ի դրույթներին	

համապատասխանող կոնտեյներների նախագծման, պատրաստման, ստուգման եւ փորձարկման վերաբերյալ պահանջները.....	851
6.11.4. ԱԿԿ-ի դրույթներին համապատասխանող կոնտեյներներից բացի BK1 կամ BK2 սորուն բեռների համար նախատեսված կոնտեյներների նախագծման, պատրաստման եւ հաստատման վերաբերյալ պահանջները.....	853
6.11.5. BK3 սորուն բեռների համար նախատեսված փափուկ կոնտեյներների նախագծման, պատրաստման եւ հաստատման վերաբերյալ պահանջները.....	854
<b>ԳԼՈՒԽ 6.12_ՑԻՍՏԵՌՆՆԵՐԻ, ՍՈՐՈՒՆ ԲԵՌՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԿՈՆՏԵՅՆԵՐՆԵՐԻ, ՊԱՅԹՈՒՑԻԿՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՇԱՐԺԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ՝(ՊԱՇՄ-ներ) ՊԱՅԹՈՒՑԻԿ ՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀԱՏՈՒԿ ԽՑԻԿՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ, ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ, ՏԵՍԱԿԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ, ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ, ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՄԱԿՆՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ.....</b>	<b>863</b>
6.12.1. Գործողության ոլորտը.....	863
6.12.2. Ընդհանուր դրույթները .....	863
6.12.3. Ցիստեռնները .....	864
6.12.4. Սարքավորման տարրերը .....	866
6.12.5. Պայթուցիկ նյութերի համար նախատեսված հատուկ խցիկները.....	866
<b>ՄԱՍ 7_Փոխադրման, բեռնման, բեռնաթափման եւ վարվելակարգի վերաբերյալ դրույթները.....</b>	<b>868</b>
<b>ԳԼՈՒԽ 7.1_ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ .....</b>	<b>869</b>
<b>ԳԼՈՒԽ 7.2_ՓԱԹԵԹՆԵՐՈՎ ՓՈԽԱԴՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ.....</b>	<b>872</b>
<b>ԳԼՈՒԽ 7.3_ԽՈՒՌՆԱԲԵՌՆ ՓՈԽԱԴՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ .....</b>	<b>878</b>
7.3.1. Ընդհանուր դրույթները.....	878
7.3.2. 7.3.1.1 (ա)-ի դրույթների կիրառման դեպքում խուռնաբեռն փոխադրմանն առնչվող դրույթները .....	881
7.3.3. 7.3.1.1 (բ)-ի դրույթների կիրառման դեպքում խուռնաբեռն փոխադրմանն առնչվող դրույթները .....	886
<b>ԳԼՈՒԽ 7.4_ՑԻՍՏԵՌՆՆԵՐՈՎ ՓՈԽԱԴՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ.....</b>	<b>890</b>
<b>ԳԼՈՒԽ 7.5_ԲԵՌՆՄԱՆ, ԲԵՌՆԱԹԱՓՄԱՆ ԵՎ ՎԱՐՎԵԼԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ.....</b>	<b>891</b>

7.5.1. Բեռնման, բեռնաթափման եւ վարվելակարգի վերաբերյալ ընդհանուր դրույթները.....	891
7.5.2. Արգելքներ խառը բեռնման համար.....	892
7.5.3. (Նախատեսվում է վերապահում) .....	896
7.5.4. Նախազգուշական միջոցներ՝ կապված ուտելիքի, սպառողական այլ ապրանքների եւ անասնակերի հետ .....	896
7.5.5. Փոխադրվող քանակությունների մասով սահմանափակումները.....	897
7.5.6. (Նախատեսվում է վերապահում) .....	899
7.5.7. Տնօրինումը եւ դասավորումը.....	899
7.5.8. Բեռնաթափումից հետո իրականացվող մաքրման աշխատանքները .....	901
7.5.9. Ծխելու արգելքը.....	902
7.5.10. Նախազգուշական միջոցներ էլեկտրաստատիկ լիցքերից խուսափելու համար.....	902
7.5.11. Առանձին դասերի կամ հատուկ տիպի բեռների նկատմամբ կիրառվող լրացուցիչ դրույթները.....	902
<b>ՀԱՎԵԼՎԱԾ Բ_ԴՐՈՒՅԹՆԵՐ՝ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ .....</b>	<b>918</b>
<b>ՄԱՍ 8_Փոխադրամիջոցի անձնակազմերի, սարքավորումների, աշխատանքի ու փաստաթղթավորման վերաբերյալ պահանջները.....</b>	<b>919</b>
<b>ԳԼՈՒԽ 8.1_ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻՆ ԵՎ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ .....</b>	<b>920</b>
8.1.1. Տրանսպորտային միավորները .....	920
8.1.2. Այն փաստաթղթերը, որոնք պետք է գտնվեն տրանսպորտային միավորում .....	920
8.1.3. Տեղեկատվական ցուցանակների տեղադրումը եւ մակնշումը..	920
8.1.4. Հակահրդեհային սարքավորումները .....	921
8.1.5. Տարբեր սարքավորումներ եւ անհատական պաշտպանության սարքավորումները .....	922
<b>ԳԼՈՒԽ 8.2_ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ .....</b>	<b>924</b>
8.2.1. Գործողության շրջանակը եւ վարորդների վերապատրաստմանը ներկայացվող ընդհանուր պահանջները.....	924

8.2.2. Վարորդների վերապատրաստմանը ներկայացվող հատուկ պահանջները .....	925
8.2.3. Վարորդներից բացի վտանգավոր բեռների ճանապարհային փոխադրումն ապահովող անձանց վերապատրաստումը, ովքեր 8.2.1-ին համապատասխան սերտիֆիկատ ունեն.....	935
<b>ԳԼՈՒԽ 8.3_ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԱՐԲԵՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ .....</b>	<b>936</b>
8.3.1. Ուղեորները .....	936
8.3.2. Հակահրդեհային սարքավորումների օգտագործումը .....	936
8.3.3. Փաթեթները բացելու արգելքը .....	936
8.3.4. Լուսավորման շարժական սարքերը .....	936
8.3.5. Ծխելու արգելքը.....	936
8.3.6. Շարժիչի աշխատանքը բեռնման կամ բեռնաթափման ժամանակ .....	936
8.3.7. Կայանման արգելակների եւ արգելակային կաղապարների օգտագործումը .....	936
8.3.8. Էլեկտրական միացումների կիրառումը .....	937
<b>ԳԼՈՒԽ 8.4_ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ .....</b>	<b>938</b>
<b>ԳԼՈՒԽ 8.5_ՈՐՈՇԱԿԻ ԴԱՍԵՐԻ ԿԱՄ ՆՅՈՒԹԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ .....</b>	<b>940</b>
<b>ԳԼՈՒԽ 8.6_ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԹՈՒՆԵԼՆԵՐՈՎ ՎՏԱՆԳԱՎՈՐ ԲԵՌՆԵՐ ՏԵՂԱՓՈԽՈՂ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓՎԿՈՒՄՆԵՐԸ.....</b>	<b>948</b>
8.6.1. Ընդհանուր դրույթներ .....	948
8.6.2. Վտանգավոր բեռներ տեղափոխող փոխադրամիջոցների երթեւեկությունը կարգավորող ճանապարհային նշանները կամ ազդանշանները .....	948
8.6.3. Թունելներով բեռների փոխադրման սահմանափակումների ծածկագրերը .....	948
8.6.4. Վտանգավոր բեռներ փոխադրող տրանսպորտային միավորների համար թունելով երթեւեկության սահմանափակումները.....	949
<b>ՄԱՍ 9_Փոխադրամիջոցների կառուցվածքի եւ հաստատման վերաբերյալ պահանջները.....</b>	<b>952</b>
<b>ԳԼՈՒԽ 9.1_ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ, ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԱՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ, ՈՐՈՆՔ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ ԵՆ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆԸ .....</b>	<b>953</b>

9.1.1. Գործողության շրջանակը եւ սահմանումները .....	953
9.1.2. EX/II, EX/III, FL եւ AT փոխադրամիջոցների եւ ՊԱՇՄ-ների հաստատումը .....	955
9.1.3. Հաստատման սերտիֆիկատը .....	957
<b>ԳԼՈՒԽ 9.2_ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ.....</b>	<b>961</b>
9.2.1. Սույն գլխի պահանջների կատարումը.....	961
9.2.2. Էլեկտրական սարքավորումները .....	964
9.2.3. Արգելակման սարքավորումներ.....	971
9.2.4. Հրդեհի առաջացման ռիսկերի կանխարգելում .....	971
9.2.5. Արագության սահմանափակման սարք.....	974
9.2.6. Ավտոմատ փոխադրամիջոցների եւ կցորդների կցորդման սարքերը .....	975
9.2.7. Վառելիքի հետեւանքով առաջացած այլ ռիսկերի կանխարգելումը.....	975
<b>ԳԼՈՒԽ 9.3_ՓԱԹԵԹՆԵՐՈՒՄ՝ ՊԱՅԹՅՈՒՆԱՎՏԱՆԳ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՔՆԵՐԻ (ԴԱՍ 1) ՓՈԽԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿԱՄ ԼՐԱԿԱԶՄՎԱԾ EX/II ԿԱՄ EX/III ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ</b>	<b>976</b>
9.3.1. Փոխադրամիջոցների թափքի արտադրման համար օգտագործվող նյութեր .....	976
9.3.2. Վառելիքի այրման սարքեր .....	976
9.3.3. EX/II փոխադրամիջոցներ .....	976
9.3.4. EX/II փոխադրամիջոցներ.....	977
9.3.5. Շարժիչը եւ բեռնախցիկը.....	977
9.3.6. Ջերմության արտաքին աղբյուրները եւ բեռնախցիկը.....	977
9.3.7. Էլեկտրական սարքավորումներ.....	977
<b>ԳԼՈՒԽ 9.4_ՓԱԹԵԹՆԵՐՈՒՄ ՎՏԱՆԳԱՎՈՐ ԲԵՌՆԵՐԻ ՓՈԽԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿԱՄ ԼՐԱԿԱԶՄՎԱԾ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ (ԲԱՑԻ EX/II ԵՎ EX/III ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻՑ) ԹԱՓՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ</b>	<b>979</b>
<b>ԳԼՈՒԽ 9.5_ՎՏԱՆԳԱՎՈՐ ՊԻՆԴ ՆՅՈՒԹԵՐԻ ԽՈՒՌՆԱԲԵՌՆ ՓՈԽԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿԱՄ ԼՐԱԿԱԶՄՎԱԾ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԹԱՓՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ .....</b>	<b>980</b>

ԳԼՈՒԽ 9.6\_ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՄԲ ՆՅՈՒԹԵՐԻ ՓՈԽԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿԱՄ ԼՐԱԿԱԶՄՎԱԾ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ.....**981**

ԳԼՈՒԽ 9.7\_ԱՎԵԼԻ ՔԱՆ 1 Մ<sup>3</sup> ՏԱՐՈՂՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՆՈՎԻ ՑԻՍՏԵՌՆՆԵՐՈՒՄ ԿԱՄ ԱՎԵԼԻ ՔԱՆ 3 Մ<sup>3</sup> ՈՒՆԵՑՈՂ ՑԻՍՏԵՌՆ-ԿՈՆՏԵՅՆԵՐՆԵՐՈՒՄ, ՇԱՐԺԱԿԱՆ ՑԻՍՏԵՌՆՆԵՐՈՒՄ ԿԱՄ ԳՔՏԿ-ՈՒՄ (EX/III, FL ԵՎ AT ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐ) ՎՏԱՆԳԱՎՈՐ ԲԵՌՆԵՐԻ ՓՈԽԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՆՇԱՐԺ ՑԻՍՏԵՌՆՆԵՐԻ (ԱՎՏՈՑԻՍՏԵՌՆՆԵՐԻ), ՄԱՐՏԿՈՑԱՆՄԱՆ ՀԱՎԱՔՎԱԾՔՈՎ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿԱՄ ԼՐԱԿԱԶՄՎԱԾ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ..... **982**

- 9.7.1. Ընդհանուր դրույթներ..... 982
- 9.7.2. Ցիստեռններին վերաբերող պահանջները ..... 982
- 9.7.3. Ամրակապեր ..... 982
- 9.7.4. FL փոխադրամիջոցների հողանցումը..... 983
- 9.7.5. Ավտոցիստեռնների կայունությունը ..... 983
- 9.7.6. Փոխադրամիջոցների պաշտպանությունը հետեւի կողմից ..... 983
- 9.7.7. Վառելիքի այրման սարքեր ..... 984
- 9.7.8. Էլեկտրական սարքավորումներ..... 985
- 9.7.9. EX/III փոխադրամիջոցներին առնչվող անվտանգության լրացուցիչ պահանջները ..... 986

ԳԼՈՒԽ 9.8\_ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿԱՄ ԼՐԱԿԱԶՄՎԱԾ ՊԱՇՄ-ՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ .....**986**

- 9.8.1. Ընդհանուր դրույթներ ..... 986
- 9.8.2. Սորուն բեռների համար նախատեսված կոնտեյներներին եւ ցիստեռններին վերաբերող պահանջները ..... 986
- 9.8.3. ՊԱՇՄ-ների հողանցումը ..... 986
- 9.8.4. ՊԱՇՄ-ների կայունությունը ..... 986
- 9.8.5. ՊԱՇՄ-ների պաշտպանությունը հետեւի կողմից..... 987
- 9.8.6. Վառելիքի այրման սարքեր ..... 987
- 9.8.7. Անվտանգության լրացուցիչ պահանջներ..... 988
- 9.8.8. Անվտանգության լրացուցիչ պահանջներ ..... 988

**ՀԱՎԵԼՎԱԾ Ա**

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ ԵՎ ՎՏԱՆԳԱՎՈՐ ՆՅՈՒԹԵՐԻ ՈՒ  
ՊԱՏՐԱՍՏՎԱԾՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

**(շարունակություն)**

## **ՄԱՍ 4**

**Փաթեթավորման եւ ցիստեռնների վերաբերյալ դրույթները**



## ԳԼՈՒԽ 4.1

### ՓԱԹԵԹՎԱԾՔՆԵՐԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՍՈՐՈՒՆ ԲԵՌՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋԻՆ ԲԵՌՆՎԱԾՈՒԹՅԱՆ ԿՈՆՏԵՅՆԵՐՆԵՐԻ (ՍՄԿ-ներ) ԵՎ ԽՈՇՈՐ ՓԱԹԵԹՎԱԾՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

4.1.1. Փաթեթվածքներում, այդ թվում նաեւ ՍՄԿ-ներում եւ խոշոր փաթեթվածքներում վտանգավոր բեռների փաթեթավորման վերաբերյալ ընդհանուր դրույթները

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** 2-րդ, 6.2 եւ 7-րդ դասերի բեռները փաթեթավորելիս սույն բաժնի ընդհանուր դրույթները կիրառվում են միայն 4.1.8.2-ում (6.2 դաս), 4.1.9.1.5-ում (7-րդ դաս) եւ 4.1.4-ի փաթեթավորման կիրառելի ցուցումներում (P201 եւ LP200 փաթեթավորման ցուցումներ՝ 2-րդ դասի համար, եւ P620, P621, IBC620 եւ LP621 փաթեթավորման ցուցումներ՝ 6.2 դասի համար) նշվածի համաձայն:

4.1.1.1. Վտանգավոր բեռները պետք է փաթեթավորվեն որակյալ փաթեթվածքներում, այդ թվում նաեւ ՍՄԿ-ներում եւ խոշոր փաթեթվածքներում, որոնք պետք է բավականաչափ ամուր լինեն՝ դիմակայելու համար հարվածներին եւ բեռնվաճուռայնը, որոնք տեղի են ունենում փոխադրման սովորական պայմաններում, այդ թվում նաեւ բեռնատար տրանսպորտային միավորների, ինչպես նաեւ բեռնատար տրանսպորտային միավորների եւ պահեստների միջեւ փոխաբեռնում իրականացնելիս, ինչպես նաեւ ձեռքով կամ մեխանիկական եղանակով հետագա մշակման նպատակով տակդիրից կամ տրանսպորտային կապոցից հանելիս: Փաթեթվածքները, այդ թվում նաեւ ՍՄԿ-ները եւ խոշոր փաթեթվածքները պետք է պատրաստված լինեն ու փակվեն այնպես, որ հնարավոր լինի կանխել դրանց պարունակության ցանկացած կորուստ, որը կարող է տեղի ունենալ փոխադրման բնականոն պայմաններում՝ տատանման, ջերմաստիճանի փոփոխության, խոնավության կամ ճնշման հետեւանքով (օրինակ՝ բարձրության պատճառով): Փաթեթվածքները, այդ թվում նաեւ ՍՄԿ-ները եւ խոշոր փաթեթվածքները պետք է փակվեն արտադրողի կողմից տրամադրված տեղեկությունների համաձայն: Փոխադրման ընթացքում փաթեթվածքի, այդ թվում նաեւ ՍՄԿ-ի եւ խոշոր փաթեթվածքի արտաքին մակերեսի վրա չպետք է կպած մնան վտանգավոր նյութերի մնացորդներ: Այս դրույթներն անհրաժեշտության դեպքում կիրառվում են նոր, վերաօգտագործված, վերականգնված կամ վերարտադրված փաթեթվածքների, ինչպես նաեւ նոր, վերաօգտագործված, վերանորոգված կամ վերարտադրված ՍՄԿ-ների եւ նոր, վերաօգտագործված կամ վերարտադրված խոշոր փաթեթվածքների նկատմամբ:

4.1.1.2. Վտանգավոր բեռների հետ անմիջական շփման մեջ գտնվող փաթեթավածքների, այդ թվում նաև ՍՄԿ-ների եւ խոշոր փաթեթավածքների մասերը՝

- ա) չպետք է ենթարկվեն այդ վտանգավոր բեռների ներգործությանը կամ զգալի չափով կորցնեն իրենց ամրությունը նման ներգործության հետեւանքով.
- բ) չպետք է առաջացնեն վտանգավոր ազդեցություն, օրինակ՝ նպաստեն ռեակցիայի առաջացմանը կամ ռեակցիայի մեջ մտնեն վտանգավոր բեռների հետ.
- գ) չպետք է թույլ տան վտանգավոր բեռների ներթափանցումը, ինչը կարող է վտանգ առաջացնել փոխադրման նորմալ պայմաններում:

Հարկ եղած դեպքում դրանք պետք է ապահովված լինեն համապատասխան ներքին պատվածքով կամ ներքին մշակմամբ:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** Պլաստմասսայից փաթեթավածքի, այդ թվում նաև պոլիէթիլենից պատրաստված ՍՄԿ-ների քիմիական համադրելիության համար տե՛ս 4.1.1.21-ը:

4.1.1.3. Եթե «ԱԴՌ» համաձայնագրի մյուս դրույթներով այլ բան չի նախատեսվում, ապա յուրաքանչյուր փաթեթավածք, այդ թվում նաև ՍՄԿ-ները եւ խոշոր փաթեթավածքները, բացառությամբ ներքին փաթեթավածքների, պետք է համապատասխանեն 6.1.5, 6.3.5, 6.5.6 կամ 6.6.5-ի պահանջների համաձայն փորձարկումները հաջողությամբ անցած նախագծի տեսակին: Փաթեթավածքները, որոնց համար փորձարկում չի պահանջվում, նշված են 6.1.1.3-ում:

4.1.1.4. Փաթեթավածքները, այդ թվում նաև ՍՄԿ-ները եւ խոշոր փաթեթավածքները հեղուկով լցնելիս պետք է թողնել բավականաչափ չլցված (թերլցված) տարածություն՝ ապահովելու համար, որ փոխադրման ընթացքում ջերմաստիճանի փոփոխությամբ առաջացած հեղուկի ընդարձակման արդյունքում փաթեթավածքից արտահոսք կամ փաթեթավածքի մնացորդային դեֆորմացիա տեղի չունենա: Եթե այլ հատուկ պահանջներ չեն նախատեսվում, ապա 55 °C ջերմաստիճանում փաթեթավածքը հեղուկով չպետք է ամբողջությամբ լցվի: Սակայն ՍՄԿ-ները լցնելիս անհրաժեշտ է թողնել բավականաչափ չլցված տարածություն՝ ապահովելու համար, որ զանգվածի 50°C միջին ջերմաստիճանի պայմաններում այն չլցվի իր խոնավատարողության 98%-ից ավելի չափով: Եթե այլ բան չի նախատեսվում, ապա 15 °C լցավորման ջերմաստիճանի դեպքում լցավորման առավելագույն մակարդակը պետք է սահմանվի ըստ ստորեւ բերված մեծությունների՝

ա) Նյութի եռման ջերմաստիճան (սկզբնական եռման ջերմաստիճան) °C-ով	< 60	> 60 < 100	> 100 < 200	> 200 < 300	> 300
Լցավորման մակարդակը՝ փաթեթվածքի տարողության տոկոսային հարաբերությամբ	90	92	94	96	98

կամ

բ) 
$$L_{\text{ցավորման մակարդակը}} = \frac{98}{1 + \alpha (50 - tf)}$$
 փաթեթվածքի տարողության տոկոսային հարաբերությամբ

Այս բանաձևում  $\alpha$ -ն 15 °C եւ 50 °C միջակայքում հեղուկի ծավալային ընդարձակման միջին գործակիցն է, այն է՝ 35 °C ջերմաստիճանով առավելագույն աճի դեպքում

$\alpha$ -ն հաշվարկվում է հետևյալ բանաձևի համաձայն՝  $\alpha = \frac{d_{15} - d_{50}}{35 \times d_{50}}$ ,

որտեղ  $d_{15}$  եւ  $d_{50}$  հեղուկի հարաբերական խտություններն են՝ 15 °C եւ 50 °C ջերմաստիճանների պայմաններում, իսկ  $tf$ -ն լցավորման ժամանակ հեղուկի միջին ջերմաստիճանն է:

4.1.1.5. Ներքին փաթեթվածքները պետք է այնպես տեղադրվեն արտաքին փաթեթվածքում, որ փոխադրման նորմալ պայմաններում դրանք չկոտրվեն, չպատռվեն կամ դրանց պարունակությունը չարտահոսի դեպի արտաքին փաթեթվածք: Հեղուկ պարունակող ներքին փաթեթվածքները պետք է տեղադրվեն իրենց փականներով դեպի վեր եւ տեղադրվեն արտաքին փաթեթվածքներում 5.2.1.10-ում նկարագրված կողմնորոշող մակնշումների համաձայն: Հեշտությամբ կոտրվող կամ պատռվող այնպիսի ներքին փաթեթվածքները, ինչպիսիք են օրինակ՝ ապակուց, ճենապակուց, կերամիկայից կամ որոշ պլաստիկ նյութերից պատրաստվածները եւ այլն, պետք է տեղադրվեն համապատասխան պաշտպանիչ նյութից կազմված ապահով արտաքին փաթեթվածքներում: Պարունակության ցանկացած արտահոսք չպետք է էապես վատթարացնի պաշտպանիչ նյութի կամ արտաքին փաթեթվածքի պաշտպանիչ հատկությունները:

4.1.1.5.1. Այն դեպքում, երբ համակցված փաթեթվածքի կամ խոշոր փաթեթվածքի արտաքին փաթեթվածքը բարեհաջող փորձարկվում է ներքին փաթեթվածքի տարբեր տեսակների հետ, այդ արտաքին

<sup>1</sup> Հարաբերական խտությունը ( $d$ ) համարվում է տեսակարար կշռի (SG) հոմանիշ, եւ այդ եզրույթն օգտագործվելու է սույն ամբողջ գլխում:

փաթեթվածքի կամ խոշոր փաթեթվածքի մեջ կարող են տեղադրվել նմանատիպ տարբեր տեսակի ներքին փաթեթվածքներ: Բացի այդ, որակի ցուցանիշների համարժեք պահպանման դեպքում, առանց փաթեթի լրացուցիչ փորձարկման, թույլատրելի են ներքին փաթեթվածքի հետեւյալ տարբերակները՝

- ա) կարող են կիրառվել համարժեք կամ ավելի փոքր չափի ներքին փաթեթվածքներ՝ պայմանով, որ՝
  - i) ներքին փաթեթվածքներն ունեն փորձարկված ներքին փաթեթվածքի կառուցվածքին նման կառուցվածք (օրինակ՝ ձեւը՝ կլոր, ուղղանկյուն եւ այլն).
  - ii) այն նյութը, որից պատրաստված են ներքին փաթեթվածքները (ապակի, պլաստմասսա, մետաղ եւ այլն), սկզբում փորձարկված ներքին փաթեթվածքի հետ համեմատած ապահովի համարժեք կամ բարձր հարվածադիմացկունություն եւ դիմադրողականություն դարսակման ժամանակ առաջացող ուժերին.
  - iii) ներքին փաթեթվածքներն ունեն նույն կամ ավելի փոքր չափի բացվածքներ եւ համարժեք կառուցվածքի փական (օրինակ՝ պտուտակավոր թասակ, կիպահղկած խցան եւ այլն).
  - iv) օգտագործվում է բավարար քանակությամբ լրացուցիչ պաշտպանիչ նյութ՝ դատարկ տարածքները լցնելու եւ ներքին փաթեթվածքների զգալի տեղաշարժերը կանխելու նպատակով. եւ
  - v) ներքին փաթեթվածքներն արտաքին փաթեթվածքում տեղադրվում են նույն դիրքով, ինչ փորձարկված փաթեթում.
- բ) կարող են օգտագործվել ավելի քիչ թվով փորձարկված ներքին փաթեթվածքներ կամ վերոնշյալ (ա) կետում ներկայացված դրանց այլընտրանքային տեսակներ՝ պայմանով, որ ազատ տարածքը (տարածքները) լցնելու եւ ներքին փաթեթվածքների զգալի տեղաշարժերը կանխելու նպատակով բավականաչափ պաշտպանիչ նյութ է ավելացվում:

4.1.1.5.2 Արտաքին փաթեթվածքի ներսում լրացուցիչ փաթեթվածքի օգտագործումը (օրինակ՝ միջանկյալ փաթեթվածք կամ պահանջվող ներքին փաթեթվածքի ներսում տարա), ի լրումն այն ամենի, ինչը պահանջվում է փաթեթավորման ցուցումներով, թույլատրվում է՝ պայմանով, որ բավարարվել են բոլոր համապատասխան պահանջները, այդ թվում՝ 4.1.1.3-ի պահանջները, եւ անհրաժեշտության դեպքում համապատասխան պաշտպանիչ նյութեր են օգտագործվում փաթեթվածքի ներսում տեղաշարժը կանխելու համար:

4.1.1.6. Վտանգավոր բեռները չպետք է միեւնույն արտաքին փաթեթվածքում կամ խոշոր փաթեթվածքներում փաթեթավորվեն վտանգավոր կամ այլ բեռների հետ միասին, եթե դրանք միմյանց հետ կարող են վտանգավոր ռեակցիայի մեջ մտնել եւ առաջացնել՝

- ա) բռնկում կամ զգալի քանակությամբ ջերմության առաջացում.
- բ) դյուրավառ, հեղձուցիչ, օքսիդացնող կամ թունավոր գազերի առաջացում.
- գ) կոռոզիոն նյութերի գոյացում. կամ
- դ) անկայուն նյութերի գոյացում:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** *Խառը փաթեթավորման մասով հայրուկ դրոյթների համար տե՛ս 4.1.10-ը:*

4.1.1.7. Խոնավացված կամ լուծված նյութեր պարունակող փաթեթվածքների փականները պետք է այնպիսին լինեն, որ փոխադրման ժամանակ հեղուկի (ջրի, լուծիչի կամ զգայանվազիչի) տոկոսային պարունակությունը չնվազի նախատեսվող սահմաններից:

4.1.1.7.1. Եթե ՍՄԿ-ի վրա կա երկու կամ ավելի հաջորդաբար տեղադրված փակող համակարգեր, ապա առաջին հերթին պետք է փակվի փոխադրվող նյութին ամենամոտ գտնվողը:

4.1.1.8. Եթե փաթեթի պարունակությունից գազերի արտազատման հետեւանքով (ջերմաստիճանի բարձրացման կամ մեկ այլ պատճառով) փաթեթի ներսում կարող է ճնշում առաջանալ, փաթեթվածքը կամ ՍՄԿ-ն կարող են համալրվել օդափոխիչ սարքով՝ պայմանով, որ արտազատված գազը վտանգ չի ներկայացնի, օրինակ՝ իր թունավորության, դյուրավառության կամ արտազատված քանակության պատճառով:

Պետք է տեղադրվի օդափոխիչ կափույր, եթե նյութերի սովորական տրոհման հետեւանքով կարող է առաջանալ վտանգավոր ավելցուկային ճնշում: Օդափոխիչ սարքը պետք է նախագծված լինի այնպես, որ այն դիրքում, որում նախատեսվում է փաթեթվածքի կամ ՍՄԿ-ի փոխադրումը, բացառվի փոխադրման նորմալ պայմաններում հեղուկի արտահոսքը եւ կողմնակի նյութերի ներթափանցումը:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** *Օդային փոխադրման ժամանակ չի թույլատրվում փաթեթվածքի օդափոխումը:*

4.1.1.8.1. Հեղուկները կարող են լցվել միայն այն ներքին փաթեթվածքների մեջ, որոնք կարող են համապատասխան կերպով դիմակայել ներքին ճնշմանը, որը կարող է առաջանալ փոխադրման նորմալ պայմաններում:

4.1.1.9. Նոր, վերարտադրված կամ վերաօգտագործված փաթեթվածքները,

այդ թվում նաև ՍՄԿ-ները եւ խոշոր փաթեթվածքները, կամ վերականգնված փաթեթվածքները եւ վերանորոգված կամ ընթացիկ տեխնիկական սպասարկում անցած ՍՄԿ-ները պետք է կարողանան անցնել համապատասխանաբար 6.1.5, 6.3.5, 6.5.6 կամ 6.6.5-ով նախատեսվող փորձարկումները: Մինչև լցվելը եւ փոխադրման ներկայացվելը յուրաքանչյուր փաթեթվածք, այդ թվում նաև ՍՄԿ-ները եւ խոշոր փաթեթվածքները, պետք է ստուգվեն կոռոզիայի, աղտոտման կամ որեւէ այլ վնասվածքների բացակայության առումով, իսկ յուրաքանչյուր ՍՄԿ՝ ցանկացած օժանդակ սարքավորումների պատշաճ աշխատանքի առումով: Կառուցվածքի հաստատված տեսակի հետ համեմատած պակաս ամրության հատկանիշներով յուրաքանչյուր փաթեթվածք այլևս չի օգտագործվում կամ վերականգնվում է այնպես, որ այն կարողանա անցնել տվյալ կառուցվածքի տեսակի համար նախատեսվող փորձարկումները: Կառուցվածքի փորձարկված տեսակի հետ համեմատած պակաս ամրության հատկանիշներով յուրաքանչյուր ՍՄԿ այլևս չի օգտագործվում կամ վերանորոգման կամ ընթացիկ տեխնիկական սպասարկման է ենթարկվում այնպես, որ այն կարողանա անցնել տվյալ կառուցվածքի տեսակի համար նախատեսվող փորձարկումները:

4.1.1.10. Հեղուկները պետք է լցվեն միայն այն փաթեթվածքների, այդ թվում նաև ՍՄԿ-ների մեջ, որոնք կարող են պատշաճ կերպով դիմակայել ներքին ճնշմանը, որը կարող է առաջանալ փոխադրման նորմալ պայմաններում: Այն փաթեթվածքները եւ ՍՄԿ-ները, որոնց մակնշման մեջ նշված է համապատասխանաբար 6.1.3.1 (դ)-ով եւ 6.5.2.2.1-ով նախատեսվող հիդրավլիկ փորձարկման ճնշումը, պետք է լցվեն միայն այնպիսի հեղուկներով, որոնց գոլորշու ճնշումը՝

ա) այնպիսին է, որ փաթեթվածքում կամ ՍՄԿ-ում ընդհանուր մանոմետրական ճնշումը (այսինքն՝ լցվող նյութի գոլորշու ճնշման եւ օդի կամ այլ չեզոք գազերի մասնակի ճնշումների հանրագումարը՝ 100կՊա-ից պակաս) 55 °C ջերմաստիճանում, որը հաշվարկված է 4.1.1.4-ի համաձայն լցման առավելագույն մակարդակի հիման վրա եւ 15 °C լցման ջերմաստիճանում, չի գերազանցում մակնշման մեջ նշված փորձարկման ճնշման երկու երրորդը, կամ

բ) 50 °C ջերմաստիճանում կազմում է մակնշման մեջ նշված փորձարկման ճնշման 4/7-ից պակաս՝ գումարած 100 կՊա, կամ

գ) 55 °C ջերմաստիճանում կազմում է մակնշման մեջ նշված փորձարկման ճնշման 2/3-ից պակաս՝ գումարած 100 կՊա:

Հեղուկների փոխադրման համար նախատեսված ՍՄԿ-ները չպետք է օգտագործվեն 50 °C ջերմաստիճանում ավելի, քան 110 կՊա (1.1բար)

կամ 55 °C ջերմաստիճանում 130 կՊա (1.3 բար) գոլորշու ճնշմամբ հեղուկների փոխադրման համար:

4.1.1.10 (գ) կետի համաձայն հաշվարկված՝ փաթեթվածքների, այդ թվում նաեւ ՍՄԿ-ների համար մակնշման մեջ նշված պահանջվող փորձարկման ճնշման օրինակներ

ՍԱԿ-ի նշագրման համարը	Անվանումը	Դասը	Փաթեթավորման խումբը	Vp55 (կՊա)	Vp55 x 1□5 (կՊա)	(Vp55 x 1.5) հանած 100 (կՊա)	Պահանջվող նվազագույն (մանոմետրական) փորձարկման ճնշումը՝ 6.1.5.5.4 (գ)-ի համաձայն (կՊա)	Փաթեթվածքի վրա մակնշման ենթակա նվազագույն (մանոմետրական) փորձարկման ճնշումը (կՊա)
2056	Տետրահիդրոֆոսֆան	3	II	70	105	5	100	100
2247	ն-դեկան	3	III	1.4	2.1	-97.9	100	100
1593	Դիքլորոմեթան	6.1	III	164	246	146	146	150
1155	Դիէթիլային եթեր	3	I	199	299	199	199	250

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1.** Մաքուր հեղուկների համար 55 °C (Vp55) ջերմաստիճանում գոլորշու ճնշումը հաճախ կարելի է ստանալ գիտափորձարկման տեղեկատվությունը բերված աղյուսակներից:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2.** Աղյուսակն առնչվում է միայն 4.1.1.10 (գ)-ի կիրառմանը, ինչը նշանակում է, որ մակնշման մեջ նշված փորձարկման ճնշումը պետք է 1,5 անգամ գերազանցի գոլորշու ճնշումը 55 °C ջերմաստիճանում՝ հանած 100 կՊա: Եթե, օրինակ՝ ն-դեկանի համար փորձարկման ճնշումը որոշվում է 6.1.5.5.4 (ա)-ի համաձայն, ապա մակնշման մեջ նշված նվազագույն փորձարկման ճնշումը կարող է ցածր լինել:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3.** Դիէթիլային եթերի համար պահանջվող նվազագույն փորձարկման ճնշումը 6.1.5.5.5-ի համաձայն կազմում է 250 կՊա:

4.1.1.11. Վտանգավոր նյութ պարունակած դատարկ փաթեթվածքների, այդ թվում նաեւ ՍՄԿ-ների եւ խոշոր փաթեթվածքների նկատմամբ կիրառվում են միեւնույն պահանջները, ինչ բեռով լցված փաթեթվածքի նկատմամբ, եթե միայն չեն ձեռնարկվել համապատասխան միջոցներ՝ ցանկացած հնարավոր վտանգի վերացման համար:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** Երբ այդպիսի փաթեթվածքները փոխադրվում են դրանց մեջ գտնվող նյութերի վերամշակման, վերականգնման կամ հեռացման համար, դրանք նաեւ կարող են փոխադրվել ՍԱԿ-ի նշագրման 3509 համարի ներքո, եթե պահպանվում են զլուխ 3.3-ի 663-րդ հատուկ դրույթի պայմանները:

4.1.1.12. 6.1 գլխում նշված՝ հեղուկներ պարունակելու համար նախատեսված յուրաքանչյուր փաթեթվածք պետք է անցնի հերմետիկության համապատասխան փորձարկում: Այս փորձարկումը որակի ապահովման ծրագրի մաս է կազմում, ինչպես սահմանված է 6.1.1.4-ում, ինչը ցույց է տալիս 6.1.5.4.3-ում նշված փորձարկման մակարդակի պահանջներին համապատասխանելու կարողությունը՝

- ա) մինչեւ փոխադրման նպատակով առաջին անգամ օգտագործվելը.
- բ) ցանկացած փաթեթվածքի վերարտադրումից կամ վերականգնումից հետո՝ մինչեւ փոխադրման նպատակով վերաօգտագործումը:

Այդ փորձարկման համար չի պահանջվում, որ փաթեթվածքը սարքավորված լինի սեփական փականներով: Բարդ փաթեթվածքի ներքին տարաները կարող են փորձարկվել առանց արտաքին փաթեթվածքի՝ պայմանով, որ դա չի ազդի փորձարկման արդյունքների վրա: Այս փորձարկումը չի պահանջվում՝

- համակցված փաթեթվածքների կամ խոշոր փաթեթվածքների կազմում ներքին փաթեթվածքների համար.
- բարդ փաթեթվածքների ներքին տարաների համար (ապակի, ճենապակի կամ կերամիկա), որոնք մակնշված են «ՌԻԴ/ԱԴՌ» խորհրդանշանով՝ 6.1.3.1 (ա) (ii)-ի համաձայն.
- 6.1.3.1 (ա) (ii)-ի համաձայն «ՌԻԴ/ԱԴՌ» խորհրդանշանով մակնշված բարակ մետաղից փաթեթվածքների համար:

4.1.1.13. Այն փաթեթվածքները, այդ թվում նաեւ ՍՄԿ-ները, որոնք օգտագործվում են այնպիսի պինդ նյութերի համար, որոնք կարող են փոխադրման ժամանակ ակնկալվող ջերմաստիճանների պայմաններում վերածվել հեղուկի, պետք է նաեւ կարողանան նյութը պահել հեղուկ վիճակում:

4.1.1.14. Այն փաթեթվածքները, այդ թվում նաեւ ՍՄԿ-ները, որոնք օգտագործվում են փոշենման կամ հատիկավոր նյութերի համար, պետք է անթափանցելի լինեն եւ ապահովված լինեն ներդիրով:

4.1.1.15. Եթե իրավասու մարմնի կողմից այլ բան նախատեսված չէ, ապա պլաստմասսայե թմբկազլանների եւ կանիստրների, կոշտ պլաստմասսայից ՍՄԿ-ների եւ պլաստմասսայե ներքին տարաներով բարդ ՍՄԿ-ների դեպքում վտանգավոր նյութերի փոխադրման համար թույլատրելի շահագործման ժամանակահատվածը պետք է կազմի հինգ տարի՝ տարաների արտադրման ամսաթվից՝ բացառությամբ այն դեպքերի, երբ հաշվի առնելով փոխադրվող նյութի բնույթը՝ նախատեսված է շահագործման առավել կարճ ժամանակահատված:



- 4.1.1.16. Երբ սառույցն օգտագործվում է որպես սառեցնող նյութ, այն չպետք է ազդի փաթեթվածքի ամբողջականության վրա:
- 4.1.1.17. 6.1.3, 6.2.2.7, 6.2.2.8, 6.3.1, 6.5.2 կամ 6.6.3 կետերի պահանջների համաձայն մակնշված, սակայն «ԱԴՌ» համաձայնագրի Պայմանավորվող կողմ չհանդիսացող պետությունում հաստատված փաթեթվածքները, այդ թվում նաև ՍՄԿ-ները եւ խոշոր փաթեթվածքները, այնուամենայնիվ, կարող են օգտագործվել ԱԴՌ» համաձայնագրի համաձայն փոխադրման համար:
- 4.1.1.18. Պայթուցիկ նյութեր, ինքնառեակտիվ նյութեր եւ օրգանական պերօքսիդներ
- Եթե «ԱԴՌ» համաձայնագիրը չի ներառում այլ բան նախատեսող հատուկ դրույթ, ապա 1-ին դասի բեռների, 4.1 դասի ինքնառեակտիվ նյութերի եւ 5.2 դասի օրգանական պերօքսիդների համար օգտագործվող փաթեթվածքները, այդ թվում նաև ՍՄԿ-ները եւ խոշոր փաթեթվածքները պետք է բավարարեն միջին աստիճանի վտանգավորության նյութերի խմբին ներկայացվող պահանջները (փաթեթավորման II խումբ):
- 4.1.1.19. Վթարային փաթեթվածքների եւ խոշոր վթարային փաթեթվածքների օգտագործումը
- 4.1.1.19.1. Վնասված, թերություններ ունեցող, արտահոսած կամ փաթեթավորման պահանջներին չհամապատասխանող փաթեթները կամ արտահոսած կամ թափած վտանգավոր բեռները կարող են փոխադրվել 6.1.5.1.11-ում նշված վթարային փաթեթվածքներով եւ 6.6.5.1.9-ում նշված խոշոր վթարային փաթեթվածքներով: Դրանով չի բացառվում ավելի խոշոր չափսերի փաթեթվածքների, 11A տեսակի ՍՄԿ-ի կամ համապատասխան տեսակի եւ որակի ցուցանիշներին համապատասխանող խոշոր փաթեթվածքի օգտագործումը՝ 4.1.1.19.2-ում եւ 4.1.1.19.3-ում նշված պայմանների համաձայն:
- 4.1.1.19.2 Պետք է ձեռնարկվեն համապատասխան միջոցներ՝ վթարային փաթեթվածքի կամ խոշոր վթարային փաթեթվածքի ներսում վնասված կամ արտահոսած փաթեթների՝ թույլատրելից ավելի տեղաշարժվելը կանխելու համար: Եթե վթարային փաթեթվածքը կամ խոշոր վթարային փաթեթվածքը հեղուկ է պարունակում, դրանում պետք է տեղադրվի բավականաչափ չեզոք կլանիչ նյութ՝ ազատ հեղուկը հեռացնելու համար:
- 4.1.1.19.3 Պետք է ձեռնարկվեն համապատասխան միջոցներ՝ ճնշման վտանգավոր բարձրացումը կանխելու համար:
- 4.1.1.20 Վթարային ճնշումային տարաների օգտագործումը
- 4.1.1.20.1 Վնասված, թերություններ ունեցող, արտահոսած կամ պահանջներին

չհամապատասխանող ճնշումային տարաների դեպքում 6.2.3.11-ի համաձայն կարող են օգտագործվել վթարային ճնշումային տարաներ:

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Վթարային ճնշումային տարան կարող է օգտագործվել որպես տրանսպորտային կապոց՝ 5.1.2-ին համապատասխան: Որպես տրանսպորտային կապոց օգտագործվելիս մականշվածքները 5.2.1.3-ի փոխարեն կդրվեն 5.1.2.1-ին համապատասխան:*

4.1.1.20.2. Ճնշումային տարաները կտեղադրվեն համապատասխան չափ ունեցող վթարային ճնշումային տարաների մեջ: Տեղադրված ճնշումային տարայի առավելագույն չափը սահմանափակվում է 1 000 լիտր ջրի տարողությամբ: Նույն վթարային ճնշումային տարայում կարելի է տեղադրել մեկից ավելի ճնշումային տարա միայն այն դեպքում, երբ դրանց պարունակությունները հայտնի են եւ միմյանց հետ վտանգավոր ռեակցիայի մեջ չեն մտնում (տե՛ս 4.1.1.6-ը): Այդ դեպքում տեղադրված ճնշումային տարաներում ջրի ընդհանուր տարողությունը չպետք է գերազանցի 1 000 լիտրը: Համապատասխան միջոցառումներ պետք է ձեռնարկվեն վթարային ճնշումային տարաներում ճնշումային տարաների տեղաշարժը կանխարգելելու համար, օրինակ՝ հատվածավորման, ամրացման կամ պաշտպանիչ նյութերով ապահովման միջոցով:

4.1.1.20.3 Ճնշումային տարան կարող է տեղադրվել վթարային ճնշումային տարայում, եթե՝

- ա) վթարային ճնշումային տարան համապատասխանում է 6.2.3.11-ին, եւ առկա է հաստատման սերտիֆիկատի պատճենը,
- բ) վտանգավոր բեռների հետ ուղղակի շփում կամ հնարավոր ուղղակի շփում ունեցող վթարային ճնշումային տարայի մասերի վրա այդ վտանգավոր բեռները չպետք է ազդեցություն ունենան կամ թուլացնեն դրանք եւ չպետք է հանգեցնեն վտանգավոր հետեւանքի (օրինակ՝ նպաստեն ռեակցիայի առաջացմանը կամ վտանգավոր բեռների հետ ռեակցիայի մեջ մտնելուն), եւ
- գ) մեկուսացված ճնշումային տարայի (տարաների) պարունակությունը սահմանափակված է ճնշման եւ ծավալի մասով այնպես, որ վթարային ճնշումային տարայի մեջ ամբողջովին բաց թողնվելու դեպքում ճնշումը 65 °C վթարային ճնշումային տարայում չգերազանցի վթարային ճնշումային տարայի փորձարկման ճնշումը (գազերի համար տե՛ս P200 (3) փաթեթավորման ցուցումները 4.1.4.1-ում): Վթարային ճնշումային տարայում օգտագործելի ջրի տարողության կրճատումը, օրինակ, ցանկացած մեկուսացված սարքավորման եւ պաշտպանիչ նյութերի միջոցով պետք է հաշվի առնվի:

4.1.1.20.4 Բեռնառաքման ճշգրիտ անվանումը, ՄԱԿ-ի համարը, որին նախորդում են «ՄԱԿ» տառերը եւ պիտակը (պիտակները), կիրառվում են փոխադրման համար նախատեսված վթարային ճնշումային տարաների դեպքում, ինչպես պահանջվում է գլուխ 5.2-ում նշված՝ մեկուսացված ճնշումային տարայում (տարաներում) վտանգավոր բեռների համար կիրառելի փաթեթների համար:

4.1.1.20.5 Վթարային ճնշումային տարաները պետք է մաքրվեն, փչահարվեն եւ վիզուալ կերպով ներսից ու դրսից ստուգվեն յուրաքանչյուր օգտագործումից հետո: Դրանք պետք է պարբերաբար ստուգվեն եւ փորձարկվեն առնվազն հինգ տարին մեկ անգամ՝ 6.2.3.5-ին համապատասխան:

4.1.1.21 Պլաստամասսայե փաթեթվածքների, այդ թվում նաեւ ՍՄԿ-ների քիմիական համատեղելիության ստուգում՝ լցանյութերը ստանդարտ հեղուկներին ասիմիլացնելու միջոցով

4.1.1.21.1 Գործողության ոլորտը

6.1.5.2.6-ում նշված պոլիէթիլենային փաթեթվածքների եւ 6.5.6.3.5-ում նշված պոլիէթիլենային ՍՄԿ-ների դեպքում լցանյութերի հետ քիմիական համատեղելիությունը կարող է ստուգվել 4.1.1.21.3-4.1.1.21.5-ում նկարագրված ընթացակարգերին համապատասխան լցանյութերը ստանդարտ հեղուկներին ասիմիլացնելու միջոցով եւ 4.1.1.21.6-ի աղյուսակում առկա ցանկի կիրառմամբ՝ պայմանով, որ կառուցվածքների առանձին տեսակներ փորձարկվել են այդ ստանդարտ հեղուկների կիրառմամբ՝ 6.1.5-ին կամ 6.5.6-ին համապատասխան՝ հաշվի առնելով 6.1.6-ը եւ 4.1.1.21.2-ում նշված պայմանների պահպանումը: Երբ սույն ենթաբաժնի համաձայն ասիմիլացումը հնարավոր չէ, ապա քիմիական համատեղելիությունն անհրաժեշտ է ստուգել կառուցվածքի տեսակի փորձարկման միջոցով՝ 6.1.5.2.5-ի համաձայն, իսկ համապատասխանաբար փաթեթվածքների դեպքում՝ 6.1.5.2.7-ի համաձայն, եւ ՍՄԿ-ների դեպքում՝ 6.5.6.3.3-ի կամ 6.5.6.3.6-ի համաձայն՝ լաբորատոր փորձարկումների միջոցով:

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Անկախ սույն ենթաբաժնի դրույթներից՝ առանձին լցանյութի համար փաթեթվածքների, այդ թվում նաեւ ՍՄԿ-ների կիրառման նկատմամբ կիրառվում են 4.1 գլխում ներկայացված փաթեթավորման ցուցումները եւ 3.2 գլխի Ա աղյուսակով նախատեսվող սահմանափակումները:*

4.1.1.21.2 Պայմանները

Լցանյութերի հարաբերական խտությունները չպետք է գերազանցեն այն խտությունները, որոնք կիրառվել են 6.1.5.3.5-ի կամ 6.5.6.9.4-ի

համաձայն բարեհաջող իրականացված՝ անկման փորձարկման ժամանակ բարձրությունը որոշելու համար, ինչպես նաև 6.1.5.6-ի համաձայն բարեհաջող իրականացված՝ դարսակման փորձարկման ժամանակ զանգվածը որոշելու համար կամ հարկ եղած դեպքում՝ 6.5.6.6-ի համաձայն՝ ասիմիլացված ստանդարտ հեղուկի (հեղուկների) կիրառմամբ: 50 °C կամ 55 °C ջերմաստիճանում լցանյութերի գոլորշու ճնշումները չպետք է գերազանցեն այն ճնշումները, որոնք կիրառվել են ասիմիլացված ստանդարտ հեղուկի (հեղուկների) օգտագործմամբ՝ 6.1.5.5.4-ի կամ 6.5.6.8.4.2-ի համաձայն բարեհաջող իրականացված ներքին ճնշման (հիդրավիկ) փորձարկման ժամանակ ճնշումը որոշելու համար: Այն դեպքում, երբ լցանյութերն ասիմիլացվում են ստանդարտ հեղուկներին, ապա լցանյութերի համապատասխան արժեքները չպետք է գերազանցեն կիրառվող անկման բարձրությունների, դարսելու ժամանակ զանգվածի եւ փորձարկման ներքին ճնշումների հիման վրա ստացված նվազագույն արժեքները:

Օրինակ՝ ՄԱԿ-ի նշագրման 1736 համարի բենզոլի քլորիդն ասիմիլացվում է ստանդարտ հեղուկների «Ածխաջրածինների խառնուրդ եւ խոնավացնող լուծույթ» համակցությանը: Բենզոլի քլորիդը 50 °C ջերմաստիճանում ունի 0.34 կՊա գոլորշու ճնշում եւ մոտավորապես 1,2 հարաբերական խտություն: Պլաստմասսայից թմբկազլանների եւ կանխտրների կառուցվածքի տեսակի փորձարկումները հաճախ իրականացվում են փորձարկումների պահանջվող նվազագույն մակարդակով: Գործնականում դա նշանակում է, որ դարսակման փորձարկումը հաճախ իրականացվում է դարսակման բեռնվածությունների կիրառմամբ՝ հաշվի առնելով միայն 1.0 հարաբերական խտությունը «Ածխաջրածինների խառնուրդի» դեպքում եւ 1.2 հարաբերական խտությունը՝ «խոնավացնող լուծույթի» դեպքում (ստանդարտ հեղուկների սահմանումը տե՛ս 6.1.6-ում): Արդյունքում՝ նման կերպ փորձարկված կառուցվածքների տեսակների քիմիական համատեղելիությունը չի կարող ստուգվել բենզոլի քլորիդի համար «Ածխաջրածինների խառնուրդ» ստանդարտ հեղուկների կիրառմամբ կառուցվածքի տեսակի փորձարկումների անհամապատասխան մակարդակի պատճառով (քանի որ մեծ մասամբ փորձարկումների ժամանակ կիրառվող ներքին հիդրավիկ ճնշումը կազմում է 100 կՊա-ից ոչ ցածր, բենզոլի քլորիդի գոլորշու ճնշումը հաշվի է առնվելու փորձարկումների նման մակարդակում 4.1.1.10-ի համաձայն):

Լցանյութի բոլոր բաղադրիչները, որոնք կարող են լինել լուծույթներ, խառնուրդներ կամ պատրաստուկներ, ինչպիսիք են օրինակ՝ վացող նյութերի եւ ախտահանող միջոցների խոնավացնող ռեագենտները՝ ինչպես վտանգավոր, այնպես էլ ոչ վտանգավոր, պետք է ընդգրկվեն

ասիմիլացման ընթացակարգում:

#### 4.1.1.21.3 Ասիմիլացման ընթացակարգը

Լցանյութերը 4.1.1.21.6 աղյուսակում թվարկված նյութերին կամ նյութերի խմբերին դասելու համար (տե՛ս նաեւ 4.1.1.21.1 պատկերի մեջ ներկայացված սխեման) անհրաժեշտ է ձեռնարկել հետեւյալ քայլերը՝

- ա) դասակարգել լցանյութը՝ 2-րդ մասում նկարագրված ընթացակարգերի եւ չափորոշիչների համաձայն (ՄԱԿ-ի նշագրման համարը եւ փաթեթավորման խումբը որոշելը).
- բ) եթե այն նշված է 4.1.1.21.6 աղյուսակում, ապա գտնել այդ աղյուսակի առաջին սյունակում ՄԱԿ-ի համապատասխան նշագրման համարը.
- գ) ընտրել այն տողը, որը համապատասխան է փաթեթավորման խմբի, կոնցենտրացիայի, բնկման ջերմաստիճանի, անվտանգ բաղադրիչների առկայության տեսանկյունից՝ ելնելով (2ա), (2բ) եւ (4)-րդ սյունակներում տրված տեղեկություններից, եթե ՄԱԿ-ի նշագրման տվյալ համարի համար կան մի քանի դիրքեր:

Եթե դա հնարավոր չէ, ապա փաթեթվածքների դեպքում քիմիական համատեղելիությունը պետք է ստուգվի 6.1.5.2.5-ի կամ 6.1.5.2.7-ի համաձայն եւ ՍՄԿ-ների դեպքում՝ 6.5.6.3.3-ի կամ 6.5.6.3.6-ի համաձայն (սակայն ջրային լուծույթների դեպքում տե՛ս 4.1.1.21.4-ը).


- դ) եթե (ա) կետի համաձայն որոշված լցանյութի փաթեթավորման խումբը եւ ՄԱԿ-ի նշագրման համարը նշված չեն ասիմիլացման ցանկում, ապա քիմիական համատեղելիությունը փաթեթվածքների դեպքում պետք է ապացուցվի 6.1.5.2.5-ի կամ 6.1.5.2.7-ի համաձայն եւ ՍՄԿ-ների դեպքում՝ 6.5.6.3.3-ի կամ 6.5.6.3.6-ի համաձայն.
- ե) կիրառել 4.1.1.21.5-ում նկարագրված «Հավաքական դիրքերի վերաբերյալ կանոնը», եթե այն նշված է ընտրված տողի 5-րդ սյունակում.
- զ) լցանյութի քիմիական համատեղելիությունը կարող է համարվել ստուգված՝ հաշվի առնելով 4.1.1.21.1-ը եւ 4.1.1.21.2-ը, եթե 5-րդ սյունակում ասիմիլացված ստանդարտ հեղուկը կամ ստանդարտ հեղուկների համակցությունները եւ կառուցվածքի տեսակը հաստատվել են այդ ստանդարտ հեղուկի (հեղուկների) համար:



Պատկեր 4.1.1.21.1. Լցանյութերը  
ասիմիլացնելու սխեմա

ստանդարտ

հեղուկներին



4.1.1.21.4 Ջրային լուծույթները

4.1.1.21.3-ի համաձայն որոշակի ստանդարտ հեղուկին (հեղուկներին) ասիմիլացված նյութերի եւ նյութերի խմբերի ջրային լուծույթները նույնպես կարող են ասիմիլացվել տվյալ ստանդարտ հեղուկին (հեղուկներին)՝ հետեւյալ պայմանների բավարարման դեպքում՝

- ա) ջրային լուծույթը կարող է դասվել ՄԱԿ-ի նշագրման նույն համարին, ինչ ցանկում նշված նյութը՝ 2.1.3.3-ում տրված չափորոշիչներին համապատասխան, եւ
- բ) ջրային լուծույթը 4.1.1.21.6-ում ներկայացված ասիմիլացման ցանկում անվանմամբ կոնկրետ այլ կերպ նշված չէ, եւ
- գ) վտանգավոր նյութի եւ լուծույթում առկա ջրի միջեւ քիմիական ռեակցիա տեղի չի ունենում:

Օրինակ՝ ՄԱԿ-ի նշագրման 1120 համարի տրետ-բուֆանոլի ջրային լուծույթներ՝

- Մաքուր տրետ-բուֆանոլն ինքնին դասվում է

ասիմիլացման ցանկում առկա «քացախաթթու» ստանդարտ հեղուկի խմբին.

- տերտ-բութանոլի ջրային լուծույթները կարող են դասակարգվել ՄԱԿ-ի նշագրման 1120 համարի ԲՈՒԹԱՆՈԼՆԵՐ դիրքում՝ 2.1.3.3-ի համաձայն, քանի որ տերտ-բութանոլի ջրային լուծույթը չի տարբերվում դիրքերում նշված մաքուր նյութերից՝ դասի, փաթեթավորման խմբի (խմբերի) եւ ֆիզիկական վիճակի տեսանկյունից: Բացի այդ, «1120 ԲՈՒԹԱՆՈԼՆԵՐ» դիրքը չի սահմանափակվում զուտ մաքուր նյութերով, եւ այդ նյութերի ջրային լուծույթները կոնկրետ այլ կերպ հատուկ նշված չեն 3.2 գլխի Ա աղյուսակում եւ ասիմիլացման ցանկում.
- ՄԱԿ-ի նշագրման 1120 համարի ԲՈՒԹԱՆՈԼՆԵՐԸ ջրի մեջ ռեակցիայի մեջ չեն մտնում փոխադրման սովորական պայմաններում:

Հետեւաբար ՄԱԿ-ի նշագրման 1120 համարի տերտ-բութանոլի ջրային լուծույթները կարող են դասվել «քացախաթթու» ստանդարտ հեղուկի խմբին:

#### 4.1.1.21.5 Հավաքական դիրքերի վերաբերյալ կանոնը

Այն լցանյութերի ասիմիլացման դեպքում, որոնց համար 5-րդ սյունակում նշված է «Հավաքական դիրքերի վերաբերյալ կանոն», անհրաժեշտ է ձեռնարկել հետեւյալ քայլերը եւ բավարարել ստորեւ նշված պայմանները (տե՛ս նաեւ 4.1.1.21.2 պատկերում նշված սխեման)

- ա) 4.1.1.21.3-ի համաձայն, 4.1.1.21.2-ում սահմանված պայմանները հաշվի առնելով՝ իրականացնել ասիմիլացման ընթացակարգը՝ լուծույթի, խառնուրդի կամ պատրաստուկի յուրաքանչյուր վտանգավոր բաղադրիչի համար: Ընդհանրացված դիրքերի դեպքում կարող են անտեսվել այն բաղադրիչները, որոնք հայտնի են որպես բարձր խտությամբ պոլիէթիլենի վրա վնասակար ազդեցություն չունեցող (օրինակ՝ պինդ ներկանյութեր, որոնք նշված են ՄԱԿ-ի նշագրման 1263 համարի՝ ՆԵՐԿ ԿԱՄ ԼԱՔԱՆԵՐԿԱՅԻՆ ՆՅՈՒԹ ներքո).
- բ) լուծույթը, խառնուրդը կամ պատրաստուկը չեն կարող ասիմիլացվել ստանդարտ հեղուկին, եթե՝
  - i) վտանգավոր բաղադրիչներից մեկի կամ մի քանիսի ՄԱԿ-ի նշագրման համարը եւ փաթեթավորման խումբը նշված չեն ասիմիլացման ցանկում, կամ
  - ii) «Հավաքական դիրքերի վերաբերյալ կանոնը» նշված է ասիմիլացման ցանկի 5-րդ սյունակում՝ բաղադրիչներից



մեկի կամ մի քանիսի համար, կամ

- iii) (բացառությամբ ՄԱԿ-ի նշագրման 2059 համարի՝ ՆԻՏՐՈՑԵԼՅՈՒԼՈՁԻ ԼՈՒԾՈՒՅԹ, ԴՅՈՒՐԱՎԱՌ) դրա վտանգավոր բաղադրիչներից մեկի կամ մի քանիսի դասակարգման ծածկագիրը տարբերվում է լուծույթի, խառնուրդի կամ պատրաստուկի դասակարգման ծածկագրից.
- գ) եթե բոլոր վտանգավոր բաղադրիչները նշված են ասիմիլացման ցանկում, եւ վերջիններիս դասակարգման ծածկագրերը համապատասխանում են հենց լուծույթի, խառնուրդի կամ պատրաստուկի դասակարգման ծածկագրին, եւ բոլոր վտանգավոր բաղադրիչները ասիմիլացվել են 5-րդ սյունակում նշված միեւնույն ստանդարտ հեղուկին կամ ստանդարտ հեղուկների համակցությանը, ապա լուծույթի, խառնուրդի կամ պատրաստուկի քիմիական համատեղելիությունը կարող է համարվել ստուգված՝ հաշվի առնելով 4.1.1.21.1-ը եւ 4.1.1.21.2-ը.
- դ) եթե բոլոր վտանգավոր բաղադրիչները նշված են ասիմիլացման ցանկում, եւ վերջիններիս դասակարգման ծածկագրերը համապատասխանում են հենց լուծույթի, խառնուրդի կամ պատրաստուկի դասակարգման ծածկագրին, սակայն 5-րդ սյունակում նշված են տարբեր ստանդարտ հեղուկներ, ապա քիմիական համատեղելիությունը կարող է համարվել ստուգված միայն ստանդարտ հեղուկների հետեւյալ համակցությունների համար՝ հաշվի առնելով 4.1.1.21.1-ը եւ 4.1.1.21.2-ը՝
  - i) ջուր/ազոտաթթու (55%)՝ բացառությամբ C1 դասակարգման ծածկագրով անօրգանական թթուների, որոնք դասվում են «ջուր» ստանդարտ հեղուկի խմբին.
  - ii) ջուր/խոնավացնող լուծույթ.
  - iii) ջուր /քացախաթթու.
  - iv) ջուր /ածխաջրածինների խառնուրդ.
  - v) ջուր/ն-բութիլացետատ — ն-բութիլացետատ-հագեցած խոնավացնող լուծույթ.
- ե) սույն կանոնի գործողության ոլորտի շրջանակներում քիմիական համատեղելիությունը ստուգված չի համարվում ստանդարտ հեղուկների այլ համակցությունների համար՝ բացի նրանցից,

որոնք նշված են (դ) կետում, եւ (բ) կետում նշված բոլոր դեպքերի համար: Նման դեպքերում քիմիական համատեղելիությունը պետք է ստուգվի այլ միջոցներով (տե՛ս 4.1.1.21.3 (դ) կետը):

Օրինակ 1. ՄԱԿ-ի նշագրման 1940 համարի ԹԻՈԳԼԻԿՈԼԱՅԻՆ ԹԹՎԻ (50%) եւ ՄԱԿ-ի նշագրման 2531 համարի ՄԵԹԱԿՐԻԼԱՅԻՆ ԹԹՎԻ՝ ԿԱՅՈՒՆԱՑՎԱԾ (50%) խառնուրդ. խառնուրդի դասակարգումը՝ ՄԱԿ-ի նշագրման 3265 համարի ԿՈՌՈՋԻՈՆ ՀԵՂՈՒԿ, ԹԹՎԱՅԻՆ, ՕՐԳԱՆԱԿԱՆ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ,


- բաղադրիչների համար ՄԱԿ-ի նշագրման համարները եւ խառնուրդի համար ՄԱԿ-ի նշագրման համարները ներառված են ասիմիլացման ցանկում.
- ե՛ւ բաղադրիչները, ե՛ւ խառնուրդն ունեն դասակարգման միեւնոյն՝ C3 ծածկագիրը;
- ՄԱԿ-ի նշագրման 1940 համարի ԹԻՈԳԼԻԿՈԼԱՅԻՆ ԹԹՈՒՆ ասիմիլացվում է «քացախաթթու» ստանդարտ հեղուկին, իսկ ՄԱԿ-ի նշագրման 2531 համարի ՄԵԹԱԿՐԻԼԱՅԻՆ ԹԹՈՒՆ՝ ԿԱՅՈՒՆԱՑՎԱԾ, ասիմիլացվում է «ն-բուֆիլացետատ/ն-բուֆիլացետատ-հագեցած խոնավացնող լուծույթ» ստանդարտ հեղուկին: Համաձայն (դ) պարբերության՝ դա ստանդարտ հեղուկների ընդունելի համակցություն չէ: Այս խառնուրդի քիմիական համատեղելիությունը պետք է այլ կերպ ստուգվի:

Օրինակ 2. ՄԱԿ-ի նշագրման 1793 համարի ԻՋՈՊՐՈՊԻԼ ՖՈՍՖԱՏԱԹԹՎԻ (50%) եւ ՄԱԿ-ի նշագրման 1803 համարի ՖԵՆՈԼՍՈՒԼՖՈՆԱԹԹՎԻ՝ ՀԵՂՈՒԿ (50%) խառնուրդ. խառնուրդի դասակարգումը՝ ՄԱԿ-ի նշագրման 3265 համարի ԿՈՌՈՋԻՈՆ ՀԵՂՈՒԿ, ԹԹՎԱՅԻՆ, ՕՐԳԱՆԱԿԱՆ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ,

- բաղադրիչների համար ՄԱԿ-ի նշագրման համարները եւ խառնուրդի համար ՄԱԿ-ի նշագրման համարները ներառված են ասիմիլացման ցանկում.
- եւ՛ բաղադրիչները, եւ՛ խառնուրդն ունեն դասակարգման միեւնոյն՝ C3 ծածկագիրը;
- ՄԱԿ-ի նշագրման 1793 համարի ԻՋՈՊՐՈՊԻԼ-ՖՈՍՖԱՏԱԹԹՈՒՆ ասիմիլացվում է «խոնավացնող լուծույթ» ստանդարտ հեղուկին, իսկ ՄԱԿ-ի նշագրման 1803 համարի ՖԵՆՈԼՍՈՒԼՖՈՆԱԹԹՈՒՆ, ՀԵՂՈՒԿ՝ «ջուր» ստանդարտ հեղուկի խմբին: Համաձայն (դ)

պարբերության՝ սա ստանդարտ հեղուկների ընդունելի համակցություններից մեկն է: Հետեւաբար այս խառնուրդի քիմիական համատեղելիությունը կարող է համարվել ստուգված, եթե փաթեթվածքի կառուցվածքի տեսակը հաստատված է «խոնավացնող լուծույթ» եւ «ջուր» ստանդարտ հեղուկների համար:

Պատկեր 4.1.1.21.2. «Հավաքական դիրքերի վերաբերյալ կանոններ» սխեմա



Ստանդարտ հեղուկների ընդունելի համակցություններ՝

- ջուր/ազոտաթթու (55%)՝ բացառությամբ C1 դասակարգման ծածկագրով անօրգանական թթուների, որոնք դասվում են «ջուր» ստանդարտ հեղուկին.
- ջուր/խոնավացնող լուծույթ.
- ջուր /քացախաթթու.
- ջուր /ածխաջրածինների խառնուրդ.
- ջուր/ն-բուֆիլացետատ                      -ն-բուֆիլացետատ                      -հագեցած խոնավացնող լուծույթ:

#### 4.1.1.21.6 Ասիմիլացման ցանկ

Ստորեւ բերված աղյուսակում (ասիմիլացման ցանկ) վտանգավոր նյութերը ներկայացված են իրենց ՄԱԿ-ի նշագրման համարների հերթականությամբ: Որպես կանոն, յուրաքանչյուր տողում նշված է մեկ վտանգավոր նյութ, մեկ առանձին դիրք կամ հավաքական դիրք, որին տրված է ՄԱԿ-ի նշագրման առանձին համար: Սակայն ՄԱԿ-ի միեւնույն նշագրման համարի համար կարող են կիրառվել մի քանի հաջորդական տողեր, եթե ՄԱԿ-ի նշագրման միեւնույն համարին վերաբերող նյութերն ունեն տարբեր անվանումներ (ինչպես, օրինակ՝ մի խումբ նյութերի առանձին իզոմերներ), տարբեր քիմիական հատկություններ, տարբեր ֆիզիկական հատկություններ եւ (կամ) դրանց համար նախատեսվող փոխադրման տարբեր պայմաններ: Նման դեպքերում փաթեթավորման որոշակի խմբի առանձին դիրքը կամ հավաքական դիրքը նշվում է այդ հաջորդական տողերից վերջինում:

3.2 գլխի Ա աղյուսակին կառուցվածքով նման 4.1.1.21.6 աղյուսակի 1-4-րդ սյունակները սույն ենթաբաժնի նպատակով կիրառվում են նյութի նույնականացման համար: Վերջին սյունակում նշվում է այն ստանդարտ հեղուկը (հեղուկները), որին նյութը կարող է ասիմիլացվել:

Բացատրական նշումներ յուրաքանչյուր սյունակի համար՝

Սյունակ (1). ՄԱԿ-ի նշագրման համարը:

Այս սյունակում նշվում է ստորեւ նշվածների ՄԱԿ-ի նշագրման համարը՝

- վտանգավոր նյութի, եթե այդ նյութին տրված է սեփական առանձին ՄԱԿ-ի նշագրման համարը, կամ
- հավաքական դիրքի, որին դասվել են անվանմամբ չնշված վտանգավոր նյութերը՝ 2-րդ մասի չափորոշիչների համաձայն («որոշումների կայացման սխեմաներ»):

Սյունակ (2ա). Բեռնառաքման ճշգրիտ անվանումը կամ տեխնիկական անվանումը

Այս սյունակում նշված է նյութի անվանումը, առանձին դիրքի անվանումը, որը կարող է ներառել տարբեր իզոմերներ, կամ հենց հավաքական դիրքի անվանումը:

Նշված անվանումը կարող է տարբերվել կիրառվող բեռնառաքման ճշգրիտ անվանումից:

Սյունակ (2բ). Նկարագրությունը

Այս սյունակում ներառված է նկարագրական տեքստ, որը համապատասխան դիրքի գործողության ոլորտը հստակեցնում է այն դեպքերում, երբ դասակարգումը, փոխադրման պայմանները եւ (կամ) նյութի քիմիական համատեղելիությունը կարող են փոփոխվել:

Սյունակ (3ա). Դասը

Այս սյունակում նշվում է դասի թիվը, որի վերնագիրը ներառում է տվյալ վտանգավոր նյութը: Դասի այս թիվը տրվում է 2-րդ մասում նկարագրված ընթացակարգերի եւ չափորոշիչների համաձայն:

Սյունակ (3բ). Դասակարգման ծածկագիրը

Այս սյունակում նշվում է վտանգավոր նյութի դասակարգման ծածկագիրը՝ 2-րդ մասում նկարագրված ընթացակարգերի եւ չափորոշիչների համաձայն:

Սյունակ (4). Փաթեթավորման խումբը

Այս սյունակում նշված է (են) տվյալ վտանգավոր նյութին տրված (I, II կամ III) փաթեթավորման խմբի թիվը (թվերը): Որոշ նյութեր չեն դասվում փաթեթավորման խմբերին:

Սյունակ (5). Ստանդարտ հեղուկը

Այս սյունակում որպես հստակ տեղեկատվություն նշվում են այն ստանդարտ հեղուկը կամ ստանդարտ հեղուկների համակցությունները, որոնց կարող է ասիմիլացվել տվյալ նյութը, կամ առկա է հղում 4.1.1.21.5-ում նկարագրված հավաքական դիրքերի վերաբերյալ կանոնին:

Աղյուսակ 4.1.1.21.6. Ասիմիլացման ցանկ

ՄԱԿ-ի նշագրման համարը	Բեռնառաքման ճշգրիտ անվանումը կամ տեխնիկական անվանումը	Նկարագրությունը	Դասը	Դասակարգման ծածկագիրը	Փաթեթավորման խումբը	Ստանդարտ հեղուկը
(1)	(2a)	(2b)	(3a)	(3b)	(4)	(5)
1090	Ացետոն		3	F1	II	Ածխաջրածինների խառնուրդ Նշում՝ կիրառվում է միայն այն դեպքում, եթե ապացուցված է, որ փոխադրման համար նախատեսված փաթեթից նյութի թափանցելիությունը ընդունելի մակարդակ ունի
1093	Ակրիլոնիտրիլ, կայունացված		3	FT1	I	Ն-բութիլացետատ/ ն-բութիլացետատ-հագեցած

ՄԱԿ-ի նշագրման համարը	Բեռնառաքման ճշգրիտ անվանումը կամ տեխնիկական անվանումը	Նկարագրությունը	Դասը	Դասակարգման ծածկագիրը	Փաթեթավորման խումբը	Ստանդարտ հեղուկը
(1)	3.1.2 (2a)	3.1.2 (2b)	2.2 (3a)	2.2 (3b)	2.1.1.3 (4)	(5)
1104	Ամիլացետատներ	մաքուր իզոմերներ եւ իզոմերային խառնուրդ	3	F1	III	խոնավացնող լուծույթ ն-բուիլացետատ/ ն-բուիլացետատ-հագեցած խոնավացնող լուծույթ
1105	Պենտանոլներ	մաքուր իզոմերներ եւ իզոմերային խառնուրդ	3	F1	II/III	ն-բուիլացետատ/ ն-բուիլացետատ-հագեցած խոնավացնող լուծույթ
1106	Ամիլամիններ	մաքուր իզոմերներ եւ իզոմերային խառնուրդ	3	FC	II/III	ածխաջրածինների խառնուրդ եւ խոնավացնող լուծույթ
1109	Ամիլֆորմիատներ	մաքուր իզոմերներ եւ իզոմերային խառնուրդ	3	F1	III	ն-բուիլացետատ/ ն-բուիլացետատ-հագեցած խոնավացնող լուծույթ
1120	Բուբանոլներ	մաքուր իզոմերներ եւ իզոմերային խառնուրդ	3	F1	II/III	քացախաթթու
1123	Բուիլացետատներ	մաքուր իզոմերներ եւ իզոմերային խառնուրդ	3	F1	II/III	ն-բուիլացետատ/ ն-բուիլացետատ-հագեցած խոնավացնող լուծույթ
1125	ն-Բուիլամին		3	FC	II	ածխաջրածինների խառնուրդ եւ խոնավացնող լուծույթ
1128	ն-Բուիլֆորմիատ		3	F1	II	ն-բուիլացետատ/ ն-բուիլացետատ-հագեցած խոնավացնող լուծույթ
1129	Բուիլալդեհիդ		3	F1	II	ածխաջրածինների խառնուրդ
1133	Սոսինձներ	դյուրավառ հեղուկ պարունակող	3	F1	I/II/III	կոլեկտիվ դիրքերի համար կանոն
1139	Պատող լուծույթ	ներառում է արդյունաբերական կամ այլ նպատակներով օգտագործվող մակերեսային մշակումների կամ պատվածքների համար, ինչպես, օրինակ՝ փոխադրամիջոցների նախաներկման, թմբկազանի կամ տակառի երեսպատման համար	3	F1	I/II/III	կոլեկտիվ դիրքերի համար կանոն
1145	Ցիկլոհեքսան		3	F1	II	ածխաջրածինների խառնուրդ
1146	Ցիկլոպենտան		3	F1	II	ածխաջրածինների խառնուրդ
1153	Էթիլենգլիկոլի դիէթիլային եթեր		3	F1	III	ն-բուիլացետատ/ ն-բուիլացետատ-հագեցած խոնավացնող լուծույթ եւ ածխաջրածինների խառնուրդ
1154	Դիէթիլամին		3	FC	II	ածխաջրածինների խառնուրդ եւ խոնավացնող լուծույթ
1158	Դիիզոպրոպիլամին		3	FC	II	ածխաջրածինների խառնուրդ

ՄԱԿ-ի նշագրման համարը	Բեռնառաքման ճշգրիտ անվանումը կամ տեխնիկական անվանումը	Նկարագրությունը	Դասը	Դասակարգման ծածկագիրը	Փաթեթավորման խումբը	Ստանդարտ հեղուկը
(1)	3.1.2 (2a)	3.1.2 (2b)	2.2 (3a)	2.2 (3b)	2.1.1.3 (4)	(5)
						եւ խոնավացնող լուծույթ
1160	Դիմեթիլամինի ջրային լուծույթ		3	FC	II	ածխաջրածինների խառնուրդ եւ խոնավացնող լուծույթ
1165	Դիօքսան		3	F1	II	ածխաջրածինների խառնուրդ
1169	Լուծամզույքներ՝ բուրավետ, հեղուկ		3	F1	I/II/III	Հավաքական դիրքերի վերաբերյալ կանոն
1170	Էթանոլ կամ էթանոլի լուծույթ	ջրային լուծույթ	3	F1	II/III	քացախաթթու
1171	Միաէթիլային էթիլենգլիկոլի եթեր		3	F1	III	ն-բուֆիլացետատ/ ն-բուֆիլացետատ-հագեցած խոնավացնող լուծույթ եւ ածխաջրածինների խառնուրդ
1172	Միաէթիլային էթիլենգլիկոլի եթեր ացետատ		3	F1	III	ն-բուֆիլացետատ/ ն-բուֆիլացետատ-հագեցած խոնավացնող լուծույթ եւ ածխաջրածինների խառնուրդ
1173	Էթիլացետատ		3	F1	II	ն-բուֆիլացետատ/ ն-բուֆիլացետատ-հագեցած խոնավացնող լուծույթ
1177	2-Էթիլբուֆիլացետատ		3	F1	III	ն-բուֆիլացետատ/ ն-բուֆիլացետատ-հագեցած խոնավացնող լուծույթ
1178	2-Էթիլբուֆիրալդեհիդ		3	F1	II	ածխաջրածինների խառնուրդ
1180	Էթիլբուֆիրատ		3	F1	III	ն-բուֆիլացետատ/ ն-բուֆիլացետատ-հագեցած խոնավացնող լուծույթ
1188	Միամեթիլային էթիլենգլիկոլի եթեր		3	F1	III	ն-բուֆիլացետատ/ ն-բուֆիլացետատ-հագեցած խոնավացնող լուծույթ եւ ածխաջրածինների խառնուրդ
1189	Միամեթիլային էթիլենգլիկոլի եթեր ացետատ		3	F1	III	ն-բուֆիլացետատ/ ն-բուֆիլացետատ-հագեցած խոնավացնող լուծույթ եւ ածխաջրածինների խառնուրդ
1190	Էթիլֆորմիատ		3	F1	II	ն-բուֆիլացետատ/ ն-բուֆիլացետատ-հագեցած խոնավացնող լուծույթ



ՄԱԿ-ի նշագրման համարը	Բեռնառաքման ճշգրիտ անվանումը կամ տեխնիկական անվանումը	Նկարագրությունը	Դասը	Դասակարգման ծածկագիրը	Փաթեթավորման խումբը	Ստանդարտ հեղուկը
(1)	(2a)	(2b)	(3a)	(3b)	(4)	(5)
1191	Օկտիլային ալղեհիդրներ	մաքուր իզոմերներ եւ իզոմերային խառնուրդ	3	F1	III	ածխաջրածինների խառնուրդ
1192	Էթիլակտատ		3	F1	III	ն-բուիլացետատ/ ն-բուիլացետատ-հագեցած խոնավացնող լուծույթ
1195	Էթիլպրոպիոնատ		3	F1	II	ն-բուիլացետատ/ ն-բուիլացետատ-հագեցած խոնավացնող լուծույթ
1197	Լուծանգույքներ՝ բուրավետ, հեղուկ		3	F1	I/II/III	Հավաքական դիրքերի վերաբերյալ կանոն
1198	Ֆորմալդեհիդի լուծույթ՝ դյուրավառ	ջրային լուծույթ՝ 23 °C-ից 60 °C բռնկման ջերմաստիճանով	3	FC	III	քացախաթթու
1202	Դիզելային վառելիք	EN 590:2013 +AC:2014 ստանդարտին համապատասխանող կամ 100 °C-ից ոչ ավելի բռնկման ջերմաստիճանով	3	F1	III	ածխաջրածինների խառնուրդ
1202	Գազայուղ	100 □-ից ոչ ավելի բռնկման ջերմաստիճանով	3	F1	III	ածխաջրածինների խառնուրդ
1202	Վառարանային վառելիք՝ թեթեւ	չափազանց թեթեւ	3	F1	III	ածխաջրածինների խառնուրդ
1202	Վառարանային վառելիք՝ թեթեւ	EN 590: 2013 +AC:2014 ստանդարտին համապատասխանող կամ 100 °C-ից ոչ ավելի բռնկման ջերմաստիճանով	3	F1	III	ածխաջրածինների խառնուրդ
1203	Շարժիչային վառելիք կամ գազոլին, կամ բենզին		3	F1	II	ածխաջրածինների խառնուրդ
1206	Հեպտաններ	մաքուր իզոմերներ եւ իզոմերային խառնուրդ	3	F1	II	ածխաջրածինների խառնուրդ
1207	Հեքսալդեհիդ	ն-հեքսալդեհիդ	3	F1	III	ածխաջրածինների խառնուրդ
1208	Հեքսաններ	մաքուր իզոմերներ եւ իզոմերային խառնուրդ	3	F1	II	ածխաջրածինների խառնուրդ
1210	Տպագրական ներկ կամ տպագրական ներկի հետ օգտագործվող նյութ	Դյուրավառ, ներառյալ՝ տպագրական ներկի նոսրացուցիչը կամ լուծիչը	3	F1	I/II/III	Հավաքական դիրքերի վերաբերյալ կանոն
1212	Իզոբութանոլ		3	F1	III	քացախաթթու
1213	Իզոբութիլացետատ		3	F1	II	ն-բուիլացետատ/ ն-բուիլացետատ-հագեցած խոնավացնող լուծույթ
1214	Իզոբութիլամին		3	FC	II	ածխաջրածինների խառնուրդ եւ խոնավացնող լուծույթ
1216	Իզոկտեններ	մաքուր իզոմերներ եւ իզոմերային խառնուրդ	3	F1	II	ածխաջրածինների խառնուրդ

ՄԱԿ-ի նշագրման համարը	Բեռնառաքման ճշգրիտ անվանումը կամ տեխնիկական անվանումը	Նկարագրությունը	Դասը	Դասակարգման ծածկագիրը	Փաթեթավորման խումբը	Ստանդարտ հեղուկը
(1)	3.1.2 (2a)	3.1.2 (2b)	2.2 (3a)	2.2 (3b)	2.1.1.3 (4)	(5)
1219	Իզոպրոպանոլ		3	F1	II	քացախաթթու
1220	Իզոպրոպիլ ացետատ		3	F1	II	ն-բուֆիլացետատ/ ն-բուֆիլացետատ-հագեցած խոնավացնող լուծույթ
1221	Իզոպրոպիլամին		3	FC	I	ածխաջրածինների խառնուրդ եւ խոնավացնող լուծույթ
1223	Կերոսին		3	F1	III	ածխաջրածինների խառնուրդ
1224	3,3-դիմեթիլ -2-բութանոն		3	F1	II	ածխաջրածինների խառնուրդ
1224	Կետոններ՝ հեղուկ, այլ կերպ չնշված		3	F1	II/III	Հավաքական դիրքերի վերաբերյալ կանոն
1230	Մեթանոլ		3	FT1	II	քացախաթթու
1231	Մեթիլ ացետատ		3	F1	II	ն-բուֆիլացետատ/ ն-բուֆիլացետատ-հագեցած խոնավացնող լուծույթ
1233	Մեթիլամիլ ացետատ		3	F1	III	ն-բուֆիլացետատ/ ն-բուֆիլացետատ-հագեցած խոնավացնող լուծույթ
1235	Մեթիլամին՝ ջրային լուծույթ		3	FC	II	ածխաջրածինների խառնուրդ եւ խոնավացնող լուծույթ
1237	Մեթիլբութիրատ		3	F1	II	ն-բուֆիլացետատ/ ն-բուֆիլացետատ-հագեցած խոնավացնող լուծույթ
1247	Մեթիլմետակրիլատի մոնոմեր՝ կայունացված		3	F1	II	ն-բուֆիլացետատ/ ն-բուֆիլացետատ-հագեցած խոնավացնող լուծույթ
1248	Մեթիլ պրոպիոնատ		3	F1	II	ն-բուֆիլացետատ/ ն-բուֆիլացետատ-հագեցած խոնավացնող լուծույթ
1262	Օկտաններ	մաքուր իզոմերներ եւ իզոմերային խառնուրդ	3	F1	II	ածխաջրածինների խառնուրդ
1263	ներկ կամ ներկի հետ օգտագործվող նյութ	Ներառյալ՝ ներկը, արծնուկը, էմալը, ներկանյութը, շելլաքը, օլիֆը, պոլիտուրան, հեղուկ լցանյութը եւ լաքային հեղուկ հիմքը կամ ներառյալ՝ ներկի նոսրացուցիչը կամ լուծիչը	3	F1	I/II/III	Հավաքական դիրքերի վերաբերյալ կանոն
1265	Պենտաններ	ն-Պենտան	3	F1	II	ածխաջրածինների խառնուրդ
1266	Օծանելիքային ապրանքներ	ոլյուրավառ լուծիչներ պարունակող	3	F1	II/III	Հավաքական դիրքերի վերաբերյալ կանոն
1268	Քարածխային խեժ՝ լիգրոին	գոլորշու ճնշումը 50 °C ջերմաստիճանում 110 կՊա-ից ոչ	3	F1	II	ածխաջրածինների խառնուրդ

ՄԱԿ-ի նշագրման համարը	Բեռնաառքման ճշգրիտ անվանումը կամ տեխնիկական անվանումը	Նկարագրությունը	Դասը	Դասակարգման ծածկագիրը	Փաթեթավորման խումբը	Ստանդարտ հեղուկը
(1)	(2a)	(2b)	(3a)	(3b)	(4)	(5)
		ավելին				
1268	Նավթի թորվածքներ՝ այլ կերպ չնշված, կամ նավթամթերքներ՝ այլ կերպ չնշված		3	F1	I/II/III	Հավաքական դիրքերի վերաբերյալ կանոն
1274	Ն-Պրոպանոլ		3	F1	II/III	քացախաթթու
1275	Պրոպիոնալդեհիդ		3	F1	II	ածխաջրածինների խառնուրդ
1276	Ն-պրոպիլացետատ		3	F1	II	ն-բուրիլացետատ/ ն-բուրիլացետատ-հագեցած խոնավացնող լուծույթ
1277	Պրոպիլամին	Ն-Պրոպիլամին	3	FC	II	ածխաջրածինների խառնուրդ եւ խոնավացնող լուծույթ
1281	Պրոպիլֆորմիատներ	մաքուր իզոմերներ եւ իզոմերային խառնուրդ	3	F1	II	ն-բուրիլացետատ/ ն-բուրիլացետատ-հագեցած խոնավացնող լուծույթ
1282	Պիրիդին		3	F1	II	ածխաջրածինների խառնուրդ
1286	Խեժայուղ		3	F1	II/III	Հավաքական դիրքերի վերաբերյալ կանոն
1287	Կաուչուկի լուծույթ		3	F1	II/III	Հավաքական դիրքերի վերաբերյալ կանոն
1296	Տրիէթիլամին		3	FC	II	ածխաջրածինների խառնուրդ եւ խոնավացնող լուծույթ
1297	Տրիէթիլամին՝ ջրային լուծույթ	50%-ից ոչ ավելի տրիմէթիլամին, ըստ զանգվածի	3	FC	I/II/III	ածխաջրածինների խառնուրդ եւ խոնավացնող լուծույթ
1301	Վինիլացետատ՝ կայունացված		3	F1	II	ն-բուրիլացետատ/ ն-բուրիլացետատ-հագեցած խոնավացնող լուծույթ
1306	Փայտանյութի հականեխիչ նյութեր՝ հեղուկ		3	F1	II/III	Հավաքական դիրքերի վերաբերյալ կանոն
1547	Անիլին		6.1	T1	II	քացախաթթու
1590	Դիքլորոանիլիններ՝ հեղուկ	մաքուր իզոմերներ եւ իզոմերային խառնուրդ	6.1	T1	II	քացախաթթու
1602	Ներկանյութ՝ հեղուկ, թունավոր, այլ կերպ չնշված, կամ ներկանյութերի		6.1	T1	I/II/III	Հավաքական դիրքերի վերաբերյալ կանոն

ՄԱԿ-ի նշագրման համարը	Բեռնառաքման ճշգրիտ անվանումը կամ տեխնիկական անվանումը	Նկարագրությունը	Դասը	Դասակարգման ծածկագիրը	Փաթեթավորման խումբը	Ստանդարտ հեղուկը
(1)	3.1.2 (2a)	3.1.2 (2b)	2.2 (3a)	2.2 (3b)	2.1.1.3 (4)	(5)
	միջանկյալ արգասիք՝ հեղուկ, թունավոր, այլ կերպ չնշված					
1604	Էթիլենդիամին		8	CF1	II	ածխաջրածինների խառնուրդ եւ խոնավացնող լուծույթ
1715	Քացախային անհիդրիդ		8	CF1	II	քացախաթթու
1717	Ացետիլլորիդ		3	FC	II	ն-բուլիլացետատ/ ն-բուլիլացետատ-հագեցած խոնավացնող լուծույթ
1718	Բութիլ ֆոսֆատաթթու		8	C3	III	խոնավացնող լուծույթ
1719	Ջրածնի սուլֆիդ	ջրային լուծույթ	8	C5	III	քացախաթթու
1719	Կաուստիկ ալկալիական լուծույթ՝ այլ կերպ չնշված	անօրգանական	8	C5	II/III	Հավաքական դիրքերի վերաբերյալ կանոն
1730	Ծարիրի պենտաքլորիդ՝ հեղուկ	մաքուր	8	C1	II	ջուր
1736	Բենզոլիլլորիդ		8	C3	II	ածխաջրածինների խառնուրդ եւ խոնավացնող լուծույթ
1750	Քլորքացախաթթվի լուծույթ	ջրային լուծույթ	6.1	TC1	II	քացախաթթու
1750	Քլորքացախաթթվի լուծույթ	մոնո- եւ դիքլորքացախաթթվի խառնուրդներ	6.1	TC1	II	քացախաթթու
1752	Քլորացետիլլորիդ		6.1	TC1	I	ն-բուլիլացետատ/ ն-բուլիլացետատ-հագեցած խոնավացնող լուծույթ
1755	Քրոմաթթվի լուծույթ	ջրային լուծույթ՝ 30%-ից ոչ ավելի քրոմային թթվի պարունակությամբ	8	C1	II/III	ազոտական թթու
1760	Ցիանամիդ	ջրային լուծույթ՝ 50%-ից ոչ ավելի ցիանամիդի պարունակությամբ	8	C9	II	ջուր
1760	O,O-դիէթիլ - դիթիոֆոսֆորաթթու		8	C9	II	ն-բուլիլացետատ/ ն-բուլիլացետատ-հագեցած խոնավացնող լուծույթ
1760	O,O-դիիզոպրոպիլ - դիթիոֆոսֆորաթթու		8	C9	II	ն-բուլիլացետատ/ ն-բուլիլացետատ-հագեցած խոնավացնող լուծույթ
1760	O,O-դի-ն-պրոպիլ - դիթիոֆոսֆորաթթու		8	C9	II	ն-բուլիլացետատ/ ն-բուլիլացետատ-հագեցած խոնավացնող լուծույթ
1760	Կոռոզիոն հեղուկ՝ այլ կերպ չնշված	60 °C-ից ավելի բռնկման ջերմաստիճանով	8	C9	I/II/III	Հավաքական դիրքերի վերաբերյալ կանոն
1761	Պղնձաէթիլենդիամինի լուծույթ	ջրային լուծույթ	8	CT1	II/III	ածխաջրածինների խառնուրդ եւ

ՄԱԿ-ի նշագրման համարը	Բեռնառաքման ճշգրիտ անվանումը կամ տեխնիկական անվանումը	Նկարագրությունը	Դասը	Դասակարգման ծածկագիրը	Փաթեթավորման խումբը	Ստանդարտ հեղուկը
(1)	3.1.2 (2a)	3.1.2 (2b)	2.2 (3a)	2.2 (3b)	2.1.1.3 (4)	(5)
						խոնավացնող լուծույթ
1764	Դիքլորբացախաթթու		8	C3	II	քացախաթթու
1775	Ֆտորբորաթթու	ջրային լուծույթ՝ 50%-ից ոչ ավելի ֆտորբորաթթվի պարունակությամբ	8	C1	II	ջուր
1778	Ֆտորսիլիկաթթու		8	C1	II	ջուր
1779	Մրջնաթթու	85%-ից ավելի թթվի զանգվածային պարունակությամբ	8	C3	II	քացախաթթու
1783	Հեքսամեթիլենդիամինի լուծույթ	ջրային լուծույթ	8	C7	II/III	ածխաջրածինների խառնուրդ էլ խոնավացնող լուծույթ
1787	Յոդաջրածնային թթու	ջրային լուծույթ	8	C1	II/III	ջուր
1788	Բրոմաջրածնային թթու	ջրային լուծույթ	8	C1	II/III	ջուր
1789	Քլորաջրածնային թթու	38%-ից ոչ ավելի ջրային լուծույթ	8	C1	II/III	ջուր
1790	Ֆտորաջրածնային թթու	60%-ից ոչ ավելի ֆտորաջրածնային թթվի պարունակությամբ	8	CT1	II	ջրի օգտագործման թույլատրելի ժամանակահատվածը՝ երկու տարուց ոչ ավելի
1791	Հիպոքլորիտի լուծույթ	ջրային լուծույթ՝ առետրում ընդունված խոնավացնող ռեագենտներ պարունակող	8	C9	II/III	Ազոտական թթու էլ խոնավացնող լուծույթ*
1791	Հիպոքլորիտի լուծույթ	ջրային լուծույթ	8	C9	II/III	ազոտական թթու*
<p>* ՄԱԿ-ի նշագրման 1791 համարի համար՝ փորձարկումը պետք է կատարվի միայն օդափոխիչ սարքի առկայությամբ: Եթե փորձարկումը կատարվում է ազոտական թթվով՝ որպես ստանդարտ հեղուկ, ապա պետք է կիրառվեն թթվի ներգործության հանդեպ կայուն օդափոխիչ սարք էլ խցանիչ: Եթե փորձարկումն իրականացվում է հենց հիպոքլորիտի լուծույթների հետ, ապա թույլատրվում է կիրառել նաև հիպոքլորիտի (օրինակ՝ սիլիկոնային կաուչուկից) ներգործության հանդեպ կայուն, սակայն ազոտական թթվի ներգործության նկատմամբ ոչ կայուն միեւնույն կառուցվածքի օդափոխիչ սարքեր էլ խցանիչներ:</p>						
1793	Իզոպրոպիլ ֆոսֆատաթթու		8	C3	III	խոնավացնող լուծույթ
1802	Պերքլորաթթու	ջրային լուծույթ՝ 50%-ից ոչ ավելի թթվի զանգվածային բաժնով	8	CO1	II	ջուր
1803	Ֆենոլսուլֆոնաթթու՝ հեղուկ	իզոմերային խառնուրդ	8	C3	II	ջուր
1805	Ֆոսֆորաթթու՝ լուծույթ		8	C1	III	ջուր
1814	Կալիումի հիդրօքսիդի լուծույթ	ջրային լուծույթ	8	C5	II/III	ջուր
1824	Նատրիումի հիդրօքսիդի լուծույթ	ջրային լուծույթ	8	C5	II/III	ջուր
1830	Ծծմբաթթու	51%-ից ավելի մաքուր թթվի պարունակությամբ	8	C1	II	ջուր
1832	Ծծմբաթթու՝ օգտագործած	Քիմիապես կայուն	8	C1	II	ջուր
1833	Ծծմբային թթու		8	C1	II	ջուր

ՄԱԿ-ի նշագրման համարը	Բեռնառաքման ճշգրիտ անվանումը կամ տեխնիկական անվանումը	Նկարագրությունը	Դասը	Դասակարգման ծածկագիրը	Փաթեթավորման խումբը	Ստանդարտ հեղուկը
(1)	(2a)	(2b)	(3a)	(3b)	(4)	(5)
1835	Տետրամեթիլամոնիումի հիդրօքսիդ՝ լուծույթ	ջրային լուծույթ՝ 60 °C-ից ավելի բռնկման ջերմաստիճանով	8	C7	II	ջուր
1840	Ցինկի քլորիդի լուծույթ	ջրային լուծույթ	8	C1	III	ջուր
1848	Պրոպիլոնային թթու	10%-ից ոչ պակաս եւ 90%-ից պակաս թթվի զանգվածային պարունակությամբ	8	C3	III	ն-բուխիլացետատ/ ն-բուխիլացետատ-հագեցած խոնավացնող լուծույթ
1862	Էթիլկրոտոնատ		3	F1	II	ն-բուխիլացետատ/ ն-բուխիլացետատ-հագեցած խոնավացնող լուծույթ
1863	Վառելիք՝ ավիացիոն, տուրբինային շարժիչների		3	F1	I/II/III	ածխաջրածինների խառնուրդ
1866	Խեժի լուծույթ	ոչուրավառ	3	F1	I/II/III	Հավաքական դիրքերի վերաբերյալ կանոն
1902	Դիիզոկտիլ ֆոսֆատաթթու		8	C3	III	խոնավացնող լուծույթ
1906	Թթու հիդրոնից ռեզիներացված ձմրաթթու		8	C1	II	ազոտական թթու
1908	Քլորիտի լուծույթ	ջրային լուծույթ	8	C9	II/III	քացախաթթու
1914	Բուխիլարոպիոնատներ		3	F1	III	ն-բուխիլացետատ/ ն-բուխիլացետատ-հագեցած խոնավացնող լուծույթ
1915	Ցիկլոհեքսանոն		3	F1	III	ածխաջրածինների խառնուրդ
1917	Էթիլակրիլատ՝ կայունացված		3	F1	II	ն-բուխիլացետատ/ ն-բուխիլացետատ-հագեցած խոնավացնող լուծույթ
1919	Մեթիլակրիլատ՝ կայունացված		3	F1	II	ն-բուխիլացետատ/ ն-բուխիլացետատ-հագեցած խոնավացնող լուծույթ
1920	Նոնաններ	մաքուր իզոմերներ եւ իզոմերային խառնուրդ, 23 °C-ից 60 °C բռնկման ջերմաստիճանով	3	F1	III	ածխաջրածինների խառնուրդ
1935	Ցիանիդի լուծույթ՝ այլ կերպ չնշված	անօրգանական	6.1	T4	I/II/III	ջուր
1940	Թիոգլիկոլային թթու		8	C3	II	քացախաթթու
1986	Սպիրտներ՝ ոչուրավառ, թունավոր, այլ կերպ չնշված		3	FT1	I/II/III	Հավաքական դիրքերի վերաբերյալ կանոն
1987	Ցիկլոհեքսանոլ	տեխնիկապես մաքուր	3	F1	III	քացախաթթու
1987	Սպիրտներ՝ այլ կերպ չնշված		3	F1	II/III	Հավաքական դիրքերի վերաբերյալ կանոն
1988	Ալդեհիդներ՝ ոչուրավառ, թունավոր, այլ կերպ չնշված		3	FT1	I/II/III	Հավաքական դիրքերի վերաբերյալ կանոն

ՄԱԿ-ի նշագրման համարը	Բեռնառաքման ճշգրիտ անվանումը կամ տեխնիկական անվանումը 3.1.2 (2a)	Նկարագրությունը 3.1.2 (2b)	Դասը 2.2 (3a)	Դասակարգման ծածկագիրը 2.2 (3b)	Փաթեթավորման խումբը 2.1.1.3 (4)	Ստանդարտ հեղուկը (5)
1989	Ալդեհիդներ՝ այլ կերպ չնշված		3	F1	I/II/III	Հավաքական դիրքերի վերաբերյալ կանոն
1992	2,6-ցիս -դիմերիլ - մորֆոլին		3	FT1	III	ածխաջրածինների խառնուրդ
1992	Դյուրավառ հեղուկ՝ թունավոր, այլ կերպ չնշված		3	FT1	I/II/III	Հավաքական դիրքերի վերաբերյալ կանոն
1993	Պրոպիլոնային թթվի վինիլային բարդ եթեր		3	F1	II	ն-բուխլացետատ/ ն-բուխլացետատ-հագեցած խոնավացնող լուծույթ
1993	(1-մեթոքսի-2-պրոպիլ) ացետատ		3	F1	III	ն-բուխլացետատ/ ն-բուխլացետատ-հագեցած խոնավացնող լուծույթ
1993	Դյուրավառ հեղուկ՝ այլ կերպ չնշված		3	F1	I/II/III	Հավաքական դիրքերի վերաբերյալ կանոն
2014	Ջրածնի պերօքսիդ՝ ջրային լուծույթ	20%-ից ոչ պակաս, սակայն 60%-ից ոչ ավելի ջրածնի պերօքսիդ՝ հարկ եղած դեպքում կայունացված	5.1	OC1	II	ազոտական թթու
2022	Կրեզոլային թթու	հեղուկ խառնուրդ՝ կրեզոլներ, քսիլենոլներ եւ մեթիլֆենոլներ պարունակող	6.1	TC1	II	քացախաթթու
2030	Հիդրազինի ջրային լուծույթ	37%-ից ոչ պակաս, սակայն 64%-ից ոչ ավելի հիդրազինի զանգվածային պարունակությամբ	8	CT1	II	ջուր
2030	Հիդրազինի հիդրատ	ջրային լուծույթ 64% հիդրազինի պարունակությամբ	8	CT1	II	ջուր
2031	Ազոտական թթու	բացի կարմիր ծխացողից՝ 55%-ից ոչ ավելի մաքուր թթվի պարունակությամբ	8	CO1	II	ազոտական թթու
2045	Իզոբութիրալդեհիդ		3	F1	II	ածխաջրածինների խառնուրդ
2050	Դիիզոբութիլենի իզոմերային միացություններ		3	F1	II	ածխաջրածինների խառնուրդ
2053	Մեթիլիզոբութիլկարբինոլ		3	F1	III	քացախաթթու
2054	մորֆոլին		8	CF1	I	ածխաջրածինների խառնուրդ
2057	Տրիպրոպիլեն		3	F1	II/III	ածխաջրածինների խառնուրդ
2058	Վալերալդեհիդ	մաքուր իզոմերներ եւ իզոմերային խառնուրդ	3	F1	II	ածխաջրածինների խառնուրդ
2059	Նիտրոցետյուլոզի լուծույթ՝ դյուրավառ		3	D	I/II/III	Հավաքական դիրքերի վերաբերյալ կանոն <input type="checkbox"/> ելնելով ընդհանուր ընթացակարգից՝ այս կանոնը կարող է կիրառվել F1 դասակարգման ծածկագրով

ՄԱԿ-ի նշագրման համարը	Բեռնառաքման ճշգրիտ անվանումը կամ տեխնիկական անվանումը	Նկարագրությունը	Դասը	Դասակարգման ծածկագիրը	Փաթեթավորման խումբը	Ստանդարտ հեղուկը
(1)	(2a)	(2b)	(3a)	(3b)	(4)	(5)
						լուծիչների նկատմամբ
2075	Քլորալ՝ անջուր, կայունացված		6.1	T1	II	խոնավացնող լուծույթ
2076	Կրեզոլներ՝ հեղուկ	մաքուր իզոմերներ եւ իզոմերային խառնուրդ	6.1	TC1	II	քացախաթթու
2078	Տոլուոլի դիիզոգիանատ	հեղուկ	6.1	T1	II	ն-բուֆիլացետատ/ ն-բուֆիլացետատ-հագեցած խոնավացնող լուծույթ
2079	Դիէթիլենտրիամին		8	C7	II	ածխաջրածինների խառնուրդ
2209	Ֆորմալդեհիդի լուծույթ	ջրային լուծույթ՝ 37% ֆորմալդեհիդի պարունակությամբ, մեթանոլի պարունակությունը՝ 8-10%	8	C9	III	քացախաթթու
2209	Ֆորմալդեհիդի լուծույթ	ջրային լուծույթ, 25%-ից ոչ պակաս ֆորմալդեհիդի պարունակությամբ	8	C9	III	ջուր
2218	Ակրիլաթթու՝ կայունացված		8	CF1	II	ն-բուֆիլացետատ/ ն-բուֆիլացետատ-հագեցած խոնավացնող լուծույթ
2227	ն-Բուֆիլմետակրիլատ՝ կայունացված		3	F1	III	ն-բուֆիլացետատ/ ն-բուֆիլացետատ-հագեցած խոնավացնող լուծույթ
2235	Քլորոբենզիլքլորիդներ՝ հեղուկ	պարա-Քլորոբենզիլքլորիդ	6.1	T2	III	ածխաջրածինների խառնուրդ
2241	Ցիկլոհեպտան		3	F1	II	ածխաջրածինների խառնուրդ
2242	Ցիկլոհեպտեն		3	F1	II	ածխաջրածինների խառնուրդ
2243	Ցիկլոհեքսիլացետատ		3	F1	III	ն-բուֆիլացետատ/ ն-բուֆիլացետատ-հագեցած խոնավացնող լուծույթ
2244	Ցիկլոպենտանոլ		3	F1	III	քացախաթթու
2245	Ցիկլոպենտանոն		3	F1	III	ածխաջրածինների խառնուրդ
2247	ն-դեկան		3	F1	III	ածխաջրածինների խառնուրդ
2248	դի-ն-բուֆիլամին		8	CF1	II	ածխաջրածինների խառնուրդ
2258	1,2-պրոպիլենդիամին		8	CF1	II	ածխաջրածինների խառնուրդ եւ խոնավացնող լուծույթ
2259	Տրիէթիլենտետրամին		8	C7	II	ջուր
2260	Տրիպրոպիլամին		3	FC	III	ածխաջրածինների խառնուրդ եւ խոնավացնող լուծույթ
2263	Դիմեթիլցիկլոհեքսաններ	մաքուր իզոմերներ եւ իզոմերային խառնուրդ	3	F1	II	ածխաջրածինների խառնուրդ
2264	Ն,Ն-Դիմեթիլ - ցիկլոհեքսիլամին		8	CF1	II	ածխաջրածինների խառնուրդ



ՄԱԿ-ի նշագրման համարը	Բեռնաառքման ճշգրիտ անվանումը կամ տեխնիկական անվանումը	Նկարագրությունը	Դասը	Դասակարգման ծածկագիրը	Փաթեթավորման խումբը	Ստանդարտ հեղուկը
(1)	3.1.2 (2a)	3.1.2 (2b)	2.2 (3a)	2.2 (3b)	2.1.1.3 (4)	(5)
2265	Ն,Ն-Դիմեթիլ - ֆորմամիդ		3	F1	III	եւ խոնավացնող լուծույթ ն-բուլբուլացետատ/ ն-բուլբուլացետատ-հագեցած խոնավացնող լուծույթ
2266	Դիմեթիլ-Ն-պրոպիլամին		3	FC	II	ածխաջրածինների խառնուրդ եւ խոնավացնող լուծույթ
2269	3,3'-Իմինո - դիպրոպիլամին		8	C7	III	ածխաջրածինների խառնուրդ եւ խոնավացնող լուծույթ
2270	Էթիլամին՝ ջրային լուծույթ	50%-ից ոչ պակաս, սակայն 70%-ից ոչ ավելի էթիլամինի պարունակությամբ, 23 °C-ից ցածր բռնկման ջերմաստիճանով, քայքայիչ կամ թույլ քայքայիչ	3	FC	II	ածխաջրածինների խառնուրդ եւ խոնավացնող լուծույթ
2275	2-Էթիլբութանոլ		3	F1	III	ն-բուլբուլացետատ/ ն-բուլբուլացետատ-հագեցած խոնավացնող լուծույթ
2276	2-Էթիլիեքսիլամին		3	FC	III	ածխաջրածինների խառնուրդ եւ խոնավացնող լուծույթ
2277	Էթիլմեթակրիլատ՝ կայունացված		3	F1	II	ն-բուլբուլացետատ/ ն-բուլբուլացետատ-հագեցած խոնավացնող լուծույթ
2278	ն-Հեպտեն		3	F1	II	ածխաջրածինների խառնուրդ
2282	Հեքսանոլներ	մաքուր իզոմերներ եւ իզոմերային խառնուրդ	3	F1	III	ն-բուլբուլացետատ/ ն-բուլբուլացետատ-հագեցած խոնավացնող լուծույթ
2283	Իզոբուլբուլ մեթակրիլատ՝ կայունացված		3	F1	III	ն-բուլբուլացետատ/ ն-բուլբուլացետատ-հագեցած խոնավացնող լուծույթ
2286	Պենտամեթիլիեպտան		3	F1	III	ածխաջրածինների խառնուրդ
2287	Իզոհեպտեններ		3	F1	II	ածխաջրածինների խառնուրդ
2288	Իզոհեքսեններ		3	F1	II	ածխաջրածինների խառնուրդ
2289	Իզոֆորոնդիլամին		8	C7	III	ածխաջրածինների խառնուրդ եւ խոնավացնող լուծույթ
2293	4-Մեթոքսի-4-մեթիլ - պենտան-2-ոն		3	F1	III	ածխաջրածինների խառնուրդ
2296	Մեթիլցիկլոհեքսան		3	F1	II	ածխաջրածինների խառնուրդ

ՄԱԿ-ի նշագրման համարը	Բեռնաառքման ճշգրիտ անվանումը կամ տեխնիկական անվանումը	Նկարագրությունը	Դասը	Դասակարգման ծածկագիրը	Փաթեթավորման խումբը	Ստանդարտ հեղուկը
(1)	(2a)	(2b)	(3a)	(3b)	(4)	(5)
2297	Մեթիլցիկլոհեքսանոն	մաքուր իզոմերներ եւ իզոմերային խառնուրդ	3	F1	III	ածխաջրածինների խառնուրդ
2298	Մեթիլցիկլոպենտան		3	F1	II	ածխաջրածինների խառնուրդ
2302	5-մեթիլհեքսան-2-ոն		3	F1	III	ածխաջրածինների խառնուրդ
2308	Նիտրոզիլծծմբական թթու՝ հեղուկ		8	C1	II	ջուր
2309	Օկտադիեններ		3	F1	II	ածխաջրածինների խառնուրդ
2313	Պիկոլիններ	մաքուր իզոմերներ եւ իզոմերային խառնուրդ	3	F1	III	ածխաջրածինների խառնուրդ
2317	Նատրիումի պնդացիանիդի լուծույթ	ջրային լուծույթ	6.1	T4	I	ջուր
2320	Տետրաէթիլենպենտամին		8	C7	III	ածխաջրածինների խառնուրդ եւ խոնավացնող լուծույթ
2324	Տրիիզոբութիլեն	C12-մոնո-օլեֆինների լուծույթ՝ 23 °C-ից 60 °C բռնկման ջերմաստիճանով	3	F1	III	ածխաջրածինների խառնուրդ
2326	Տրիմեթիլցիկլոհեքսիլամին		8	C7	III	ածխաջրածինների խառնուրդ եւ խոնավացնող լուծույթ
2327	Տրիմեթիլհեքսամեթիլեն- դիամիններ	մաքուր իզոմերներ եւ իզոմերային խառնուրդ	8	C7	III	ածխաջրածինների խառնուրդ եւ խոնավացնող լուծույթ
2330	Ունդեկան		3	F1	III	ածխաջրածինների խառնուրդ
2336	Ալիլֆորմիատ		3	FT1	I	ն-բութիլացետատ/ ն-բութիլացետատ-հազեցած խոնավացնող լուծույթ
2348	Բուֆիլակրիլատներ՝ կայունացված	մաքուր իզոմերներ եւ իզոմերային խառնուրդ	3	F1	III	ն-բութիլացետատ/ ն-բութիլացետատ-հազեցած խոնավացնող լուծույթ
2357	Ցիկլոհեքսիլամին	23 °C-ից 60 °C բռնկման ջերմաստիճանով	8	CF1	II	ածխաջրածինների խառնուրդ եւ խոնավացնող լուծույթ
2361	Դիիզոբութիլամին		3	FC	III	ածխաջրածինների խառնուրդ եւ խոնավացնող լուծույթ
2366	Դիէթիլկարբոնատ		3	F1	III	ն-բութիլացետատ/ ն-բութիլացետատ-հազեցած խոնավացնող լուծույթ
2367	ալֆա-Մեթիլ - վալերալդեհիդ		3	F1	II	ածխաջրածինների խառնուրդ

ՄԱԿ-ի նշագրման համարը	Բեռնառաքման ճշգրիտ անվանումը կամ տեխնիկական անվանումը	Նկարագրությունը	Դասը	Դասակարգման ծածկագիրը	Փաթեթավորման խումբը	Ստանդարտ հեղուկը
(1)	3.1.2 (2a)	3.1.2 (2b)	2.2 (3a)	2.2 (3b)	2.1.1.3 (4)	(5)
2370	1-Հեքսեն		3	F1	II	ածխաջրածինների խառնուրդ
2372	1,2-Դի - (դիմեթիլամինո)- էթան		3	F1	II	ածխաջրածինների խառնուրդ եւ խոնավացնող լուծույթ
2379	1,3-Դիմեթիլբութիլամին		3	FC	II	ածխաջրածինների խառնուրդ եւ խոնավացնող լուծույթ
2383	Դիպրոպիլամին		3	FC	II	ածխաջրածինների խառնուրդ եւ խոնավացնող լուծույթ
2385	Էթիլդրոբութիլատ		3	F1	II	ն-բութիլացետատ/ ն-բութիլացետատ-հագեցած խոնավացնող լուծույթ
2393	Իզոբութիլֆորմիատ		3	F1	II	ն-բութիլացետատ/ ն-բութիլացետատ-հագեցած խոնավացնող լուծույթ
2394	Իզոբութիլպրոպիոնատ	23 °C-ից 60 °C բռնկման ջերմաստիճանով	3	F1	III	ն-բութիլացետատ/ ն-բութիլացետատ-հագեցած խոնավացնող լուծույթ
2396	Մեթակրիլային ալդեհիդ՝ կայունացված		3	FT1	II	ածխաջրածինների խառնուրդ
2400	Մեթիլդրոպիլատ		3	F1	II	ն-բութիլացետատ/ ն-բութիլացետատ-հագեցած խոնավացնող լուծույթ
2401	Պիպերիդին		8	CF1	I	ածխաջրածինների խառնուրդ եւ խոնավացնող լուծույթ
2403	Իզոպրոպենիլացետատ		3	F1	II	ն-բութիլացետատ/ ն-բութիլացետատ-հագեցած խոնավացնող լուծույթ
2405	Իզոպրոպիլբուտիրատ		3	F1	III	ն-բութիլացետատ/ ն-բութիլացետատ-հագեցած խոնավացնող լուծույթ
2406	Իզոպրոպիլիզոբուտիրատ		3	F1	II	ն-բութիլացետատ/ ն-բութիլացետատ-հագեցած խոնավացնող լուծույթ
2409	Իզոպրոպիլպրոպիոնատ		3	F1	II	ն-բութիլացետատ/ ն-բութիլացետատ-հագեցած խոնավացնող լուծույթ
2410	1,2,3,6-Տետրահիդրո - պիրիդին		3	F1	II	ածխաջրածինների խառնուրդ
2427	Կալիումի քլորատ՝ ջրային լուծույթ		5.1	O1	II/III	ջուր

ՄԱԿ-ի նշագրման համարը	Բեռնաառքման ճշգրիտ անվանումը կամ տեխնիկական անվանումը	Նկարագրությունը	Դասը	Դասակարգման ծածկագիրը	Փաթեթավորման խումբը	Ստանդարտ հեղուկը
(1)	3.1.2 (2a)	3.1.2 (2b)	2.2 (3a)	2.2 (3b)	2.1.1.3 (4)	(5)
2428	Նատրիումի քլորատ՝ ջրային լուծույթ		5.1	O1	II/III	ջուր
2429	Կալցիումի քլորատ՝ ջրային լուծույթ		5.1	O1	II/III	ջուր
2436	Թիոքսացախաթթու		3	F1	II	քացախաթթու
2457	2,3-Դիմեթիլբութան	ջրային լուծույթ	3	F1	II	ածխաջրածինների խառնուրդ
2491	Էթանոլամին		8	C7	III	խոնավացնող լուծույթ
2491	Էթանոլամինի լուծույթ		8	C7	III	խոնավացնող լուծույթ
2496	Պրոպիլոնային անհիդրիդ		8	C3	III	ն-բուտիլացետատ/ ն-բուտիլացետատ-հազեցած խոնավացնող լուծույթ
2524	Էթիլթթթոքսոմիատ		3	F1	III	ն-բուտիլացետատ/ ն-բուտիլացետատ-հազեցած խոնավացնող լուծույթ
2526	Ֆուրֆուրիլամին		3	FC	III	ածխաջրածինների խառնուրդ եւ խոնավացնող լուծույթ
2527	Իզոբութիլակրիատ՝ կայունացված		3	F1	III	ն-բուտիլացետատ/ ն-բուտիլացետատ-հազեցած խոնավացնող լուծույթ
2528	Իզոբութիլիզոբութիրատ		3	F1	III	ն-բուտիլացետատ/ ն-բուտիլացետատ-հազեցած խոնավացնող լուծույթ
2529	Իզոբութիրային թթու		3	FC	III	ն-բուտիլացետատ/ ն-բուտիլացետատ-հազեցած խոնավացնող լուծույթ
2531	Մեթակրիլային թթու՝ կայունացված		8	C3	II	ն-բուտիլացետատ/ ն-բուտիլացետատ-հազեցած խոնավացնող լուծույթ
2542	Տրիբութիլամին	ջրային լուծույթ	6.1	T1	II	ածխաջրածինների խառնուրդ
2560	2-Մեթիլպենտան-2-ոլ		3	F1	III	ն-բուտիլացետատ/ ն-բուտիլացետատ-հազեցած խոնավացնող լուծույթ
2564	Տրիքլորոքսացախային լուծույթ		8	C3	II/III	քացախաթթու
2565	Դիցիկլոհեքսիլամին		8	C7	III	ածխաջրածինների խառնուրդ եւ խոնավացնող լուծույթ
2571	Էթիլծծմբական թթու			8	C3	II
2571	Ակիլծծմբական թթուներ		8	C3	II	Հավաքական դիրքերի վերաբերյալ կանոն

ՄԱԿ-ի նշագրման համարը	Բեռնառաքման ճշգրիտ անվանումը կամ տեխնիկական անվանումը	Նկարագրությունը	Դասը	Դասակարգման ծածկագիրը	Փաթեթավորման խումբը	Ստանդարտ հեղուկը
(1)	(2a)	(2b)	(3a)	(3b)	(4)	(5)
2580	Ալյումինիումի բրոմիդի լուծույթ	ջրային լուծույթ	8	C1	III	ջուր
2581	Ալյումինիումի քլորիդի լուծույթ	ջրային լուծույթ	8	C1	III	ջուր
2582	Երկաթի քլորիդի լուծույթ	ջրային լուծույթ	8	C1	III	ջուր
2584	Մեթանսուլֆաթու	5%-ից ավելի ազատ ծծմբաթթու պարունակող	8	C1	II	ջուր
2584	Ալկիլսուլֆաթոններ՝ հեղուկ	5%-ից ավելի ազատ ծծմբաթթու պարունակող	8	C1	II	ն-բուրֆիլացետատ/ ն-բուրֆիլացետատ-հագեցած խոնավացնող լուծույթ
2584	Բենզոլսուլֆաթու	5%-ից ավելի ազատ ծծմբաթթու պարունակող	8	C1	II	ջուր
2584	Տոլուոլսուլֆաթոններ	5%-ից ավելի ազատ ծծմբաթթու պարունակող	8	C1	II	ջուր
2584	Արիլսուլֆաթոններ՝ հեղուկ	5%-ից ավելի ազատ ծծմբաթթու պարունակող	8	C1	II	ն-բուրֆիլացետատ/ ն-բուրֆիլացետատ-հագեցած խոնավացնող լուծույթ
2586	Մեթանսուլֆաթու	5%-ից ոչ ավելի ազատ ծծմբաթթու պարունակող	8	C1	III	ջուր
2586	Ալկիլսուլֆաթոններ՝ հեղուկ	5%-ից ոչ ավելի ազատ ծծմբաթթու պարունակող	8	C1	III	ն-բուրֆիլացետատ/ ն-բուրֆիլացետատ-հագեցած խոնավացնող լուծույթ
2586	Բենզոլսուլֆաթու	5%-ից ոչ ավելի ազատ ծծմբաթթու պարունակող	8	C1	III	ջուր
2586	Տոլուոլսուլֆաթոններ	5%-ից ոչ ավելի ազատ ծծմբաթթու պարունակող	8	C1	III	ջուր
2586	Արիլսուլֆաթոններ՝ հեղուկ	5%-ից ոչ ավելի ազատ ծծմբաթթու պարունակող	8	C1	III	ն-բուրֆիլացետատ/ ն-բուրֆիլացետատ-հագեցած խոնավացնող լուծույթ
2610	Տրիալիլամին		3	FC	III	ածխաջրածինների խառնուրդ էլ խոնավացնող լուծույթ
2614	Մեթալիլային սպիրտ		3	F1	III	քացախաթթու
2617	Մեթիլցիկլոհեքսանոլներ	մաքուր իզոմերներ եւ իզոմերային խառնուրդ, 23 °C-ից 60 °C բռնկման ջերմաստիճանով	3	F1	III	քացախաթթու
2619	Բենզիլդիմեթիլամին		8	CF1	II	ածխաջրածինների խառնուրդ էլ խոնավացնող լուծույթ
2620	Ամիլբուրֆիրատներ	մաքուր իզոմերներ եւ իզոմերային խառնուրդ, 23 °C-ից 60 °C բռնկման ջերմաստիճանով	3	F1	III	ն-բուրֆիլացետատ/ ն-բուրֆիլացետատ-հագեցած խոնավացնող լուծույթ

ՄԱԿ-ի նշագրման համարը	Բեռնառաքման ճշգրիտ անվանումը կամ տեխնիկական անվանումը	Նկարագրությունը	Դասը	Դասակարգման ծածկագիրը	Փաթեթավորման խումբը	Ստանդարտ հեղուկը
(1)	3.1.2 (2a)	3.1.2 (2b)	2.2 (3a)	2.2 (3b)	2.1.1.3 (4)	(5)
2622	Գլիցիդալդեհիդ	23 °C-ից ցածր բռնկման ջերմաստիճանով	3	FT1	II	ածխաջրածինների խառնուրդ
2626	Քլորաթթու՝ ջրային լուծույթ	10%-ից ոչ ավելի քլորաթթվի պարունակությամբ	5.1	O1	II	ազոտական թթու
2656	Քինոլին	60 °C-ից ավելի բռնկման ջերմաստիճանով	6.1	T1	III	ջուր
2672	Ամոնիակի լուծույթ	ջրում 15 °C ջերմաստիճանում 0.880-ից 0.957 հարաբերական խտությամբ, 10%-ից ավելի, սակայն 35%-ից ոչ ավելի ամոնիակի պարունակությամբ	8	C5	III	ջուր
2683	Ամոնիումի սուլֆիդի լուծույթ	ջրային լուծույթ՝ 23 °C-ից 60 °C բռնկման ջերմաստիճանով	8	CFT	II	քացախաթթու
2684	3-Դիէթիլամին-պրոպիլամին		3	FC	III	ածխաջրածինների խառնուրդ եւ խոնավացնող լուծույթ
2685	Ն, Ն-Դիէթիլէթիլեն - դիամին		8	CF1	II	ածխաջրածինների խառնուրդ եւ խոնավացնող լուծույթ
2693	Բիսուլֆիտներ՝ ջրային լուծույթ, այլ կերպ չնշված	անօրգանական	8	C1	III	ջուր
2707	Դիմեթիլդիօքսաններ	մաքուր իզոմերներ եւ իզոմերային խառնուրդ	3	F1	II/III	ածխաջրածինների խառնուրդ
2733	Ամիններ՝ դյուրավառ, քայքայիչ, այլ կերպ չնշված, կամ պոլիամիններ՝ դյուրավառ, քայքայիչ, այլ կերպ չնշված		3	FC	I/II/III	ածխաջրածինների խառնուրդ եւ խոնավացնող լուծույթ
2734	Դի-երկրորդային-բութիլամին		8	CF1	II	ածխաջրածինների խառնուրդ
<p>Եթե շարժիչը կամ մեխանիզմը կառուցված կամ նախագծված է այնպես, որ վտանգավոր բեռներ պարունակող տեղայնացման միջոցները համարժեք պաշտպանություն են ապահովում, ապա արտաքին փաթեթվածք չի պահանջվում:</p> <p>Հակառակ դեպքում շարժիչների կամ մեխանիզմների մեջ առկա վտանգավոր բեռները պետք է փաթեթավորվեն այնպիսի արտաքին փաթեթվածքներով, որոնք պատրաստված են համապատասխան նյութից, ունեն բավարար ամրություն եւ կառուցվածք՝ կախված փաթեթվածքի տարրողությունից եւ օգտագործման համար նախատեսված ձեւից, ինչպես նաեւ բավարարում են 4.1.1.1-ի պահանջները, կամ դրանք պետք է ամրացվեն այնպես, որ օրինակ՝ հենարաններով, կավարամածերով կամ բեռնման-բեռնաթափման այլ սարքերով փոխադրման նորմալ պայմաններում չթուլանան:</p> <p>Բացի այդ, շարժիչի կամ մեխանիզմի մեջ տեղայնացման միջոցների տեղադրման ձեւը պետք է լինի այնպիսին, որ փոխադրման նորմալ պայմաններում կանխվի վտանգավոր բեռներ պարունակող տեղայնացման միջոցների վնասումը. իսկ հեղուկ վտանգավոր բեռներ պարունակող տեղայնացման միջոցների վնասվելու դեպքում շարժիչից կամ մեխանիզմից վտանգավոր բեռի արտահոսքը հնարավոր չլինի (այս պահանջը բավարարելու համար կարող է օգտագործվել հերմետիկ ներդիր):</p> <p>Վտանգավոր բեռներ պարունակող տեղայնացման միջոցները պետք է տեղադրված, ամրացված կամ պաշտպանված լինեն այնպես, որ փոխադրման նորմալ պայմաններում կանխվի դրանց ջարդվելը կամ արտահոսքը, եւ վերահսկվի շարժիչի կամ մեխանիզմի մեջ դրանց տեղաշարժը: Պաշտպանիչ նյութը չպետք է վտանգավոր ռեակցիայի մեջ մտնի տեղայնացման միջոցների պարունակության հետ: Պարունակության ցանկացած արտահոսք չպետք է էականորեն վատթարացնի պաշտպանիչ նյութի պաշտպանական հատկությունները:</p> <p>Լրացուցիչ պահանջ՝ □</p> <p>Շարժիչի կամ մեխանիզմի գործարկման կամ ապահով շահագործման համար պահանջվող այլ վտանգավոր բեռներ (օրինակ՝ մարտկոցներ, կրակմարիչներ, սեղմված գազի կուտակիչներ կամ անվտանգության սարքեր) պետք է ապահով տեղադրվեն շարժիչի կամ մեխանիզմի մեջ:</p>		

P010	ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ՑՈՒՑՈՒՄ	P010
Հետեւյալ փաթեթվածքները թույլատրվում են՝ պայմանով, որ պահպանվեն 4.1.1-ի եւ 4.1.3-ի ընդհանուր դրույթները՝		
Համակցված փաթեթվածքներ		
Ներքին փաթեթվածքներ	Արտաքին փաթեթվածքներ	Առավելագույն զտաքաշ (տե՛ս 4.1.3.3-ը)
Ապակյա 1 լ	Թմբկազևաններ	
պողպատյա 40 լ	պողպատյա (1A1, 1A2)	400 կգ
	պլաստմասսայե (1H1,1H2)	400 կգ
	նրբատախտակից (1D)	400 կգ
	ֆիբրից (1G)	400 կգ
	Արկղեր	
	պողպատյա (4A)	400 կգ
	բնական փայտից (4C1, 4C2)	400 կգ
	նրբատախտակից (4D)	400 կգ
	վերամշակված փայտից (4F)	400 կգ
	փայտաթելքային սալից (4G)	400 կգ
	փրփրապլաստից (4H1)	60 կգ
	պինդ պլաստմասսայից (4H2)	400 կգ
Առանձին փաթեթվածքներ		Առավելագույն տարողություն (տե՛ս 4.1.3.3-ը)
Թմբկազևաններ		450 լ
պողպատյա, չհանվող հատակով (1A1)		
Կանխատրներ		
պողպատյա, չհանվող հատակով (3A1)		60 լ
Բարդ փաթեթվածքներ		250 լ
պլաստմասսայից տարա՝ պողպատյա թմբկազևաններում (6HA1)		
Պողպատյա ճնշումային տարաներ՝ պայմանով, որ պահպանվեն 4.1.3.6-ի ընդհանուր դրույթները:		

P099	ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ՑՈՒՑՈՒՄ	P099
Կարող են գործածվել միայն այդ ապրանքների համար իրավասու մարմնի կողմից հաստատված փաթեթվածքները: Յուրաքանչյուր բեռի պետք է կցված լինի իրավասու մարմնի կողմից տրված հաստատման փաստաթղթի օրինակը կամ տրանսպորտային փաստաթղթում պետք է լինի նշում այն մասին, որ փաթեթվածքը հաստատվել է իրավասու մարմնի կողմից:		

P101	ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ՑՈՒՑՈՒՄ	P101
Կարող են գործածվել միայն ծագման երկրի իրավասու մարմնի կողմից հաստատված փաթեթվածքները: Եթե ծագման երկիրը «ԱՂԴ» համաձայնագրի Պայմանավորվող կողմ չէ, ապա փաթեթվածքը հաստատվում է «ԱՂԴ» համաձայնագրի Պայմանավորվող կողմ հանդիսացող այն երկրի իրավասու մարմնի կողմից, որի տարածքով առաջինն է անցնում բեռը: Այն երկրի միջազգային ճանապարհային երթեւեկության մեջ փոխադրամիջոցների վրա օգտագործվող տարբերանշանը, որի համար գործում է տվյալ մարմինը, տրանսպորտային փաստաթղթերի վրա նշվում է հետեւյալ կերպ՝		
«Փաթեթվածքը հաստատված է .....-ի իրավասու մարմնի կողմից» (տե՛ս 5.4.1.2.1(ե)-ն):		

ա Միջազգային երթեւեկության մեջ գտնվող շարժիչային փոխադրամիջոցների եւ դրանց կցորդների վրա օգտագործվող՝ գրանցման

պետության տարբերանշաններ, օրինակ՝ «Ճանապարհային երթեւեկության մասին» 1949 թվականի Ժնևի կոնվենցիային կամ «Ճանապարհային երթեւեկության մասին» 1968 թվականի Վիեննայի կոնվենցիային համապատասխան:

P110(ա)	ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ՑՈՒՑՈՒՄ	P110(ա)
(Նախատեսվում է վերապահում)		
ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. ՄԱԿ-ի տիպային կանոնակարգերում նշված այդ փաթեթավորման ցուցումը չի ընդունվում «ԱԴՌ» համաձայնագրի ներքո իրականացվող փոխադրման դեպքում:		

P110(բ)	ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ՑՈՒՑՈՒՄ	P110(բ)
Հետեւյալ փաթեթավաճքները թույլատրվում են՝ պայմանով, որ պահպանվում են 4.1.1-ի, 4.1.3-ի փաթեթավորման ընդհանուր դրույթները եւ 4.1.5-ի փաթեթավորման հատուկ դրույթները.		
Ներքին փաթեթավաճքներ	Միջանկյալ փաթեթավաճքներ	Արտաքին փաթեթավաճքներ
Տարաներ մետաղական փայտյա ռետինե՝ հաղորդիչ պլաստմասսայե՝ հաղորդիչ Պարկեր ռետինե՝ հաղորդիչ պլաստմասսայե՝ հաղորդիչ	Բաժանարար միջնորմներ մետաղյա փայտյա պլաստմասսայե փայտաթելքային սալից	Արկղեր բնական փայտից՝ անթափանցելի պատով (4C2) նրբատախտակից (4D) վերամշակված փայտից (4F)
Փաթեթավորման մասին հատուկ դրույթ		
PP42 ՄԱԿ-ի նշագրման հետեւյալ համարների համար՝ 0074, 0113, 0114, 0129, 0130, 0135 եւ 0224, բավարարվում են հետեւյալ պայմանները՝ ա) ներքին փաթեթավաճքներում պայթուցիկ նյութերի պարունակությունը չպետք է գերազանցի 50 գ-ը (չոր նյութին համապատասխանող քանակ). բ) բաժանարար միջնորմների միջեւ առկա խցիկները չպետք է պարունակեն կիս ամրացված՝ մեկից ավելի ներքին փաթեթավաճք. գ) արտաքին փաթեթավաճքը կարող է բաժանված լինել մինչեւ 25 խցիկի:		

P111	ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ՑՈՒՑՈՒՄ	P111
Հետեւյալ փաթեթավաճքները թույլատրվում են՝ պայմանով, որ պահպանվեն 4.1.1-ի, 4.1.3-ի փաթեթավորման ընդհանուր դրույթները եւ 4.1.5-ի փաթեթավորման հատուկ դրույթները.		
Ներքին փաթեթավաճքներ	Միջանկյալ փաթեթավաճքներ	Արտաքին փաթեթավաճքներ
Պարկեր թղթե՝ անջրանցիկ պլաստմասսայե կտորից՝ ռետինապատված Տարաներ փայտյա Թերթեր պլաստմասսայե	Չեն պահանջվում	Արկղեր պողպատյա (4A) ալյումինե (4B) այլ մետաղից (4N) բնական փայտից՝ սովորական (4C1) բնական փայտից՝ անթափանցելի (4C2) նրբատախտակից (4D) վերամշակված փայտից (4F) փայտաթելքային սալից (4G) փրփրապլաստից (4H1)

կտորից՝ ռետինապատված		պինդ պլաստմասսայից (4H2)  Թմբկազլաններ պողպատյա (1A1, 1A2) ալյումինե (1B1, 1B2) այլ մետաղից (1N1, 1N2) նրբատախտակից (1D) ֆիբրից (1G) պլաստմասսայե (1H1, 1H2)
Փաթեթավորման մասին հատուկ դրույթ PP43 ՄԱԿ-ի նշագրման 0159 համարի դեպքում ներքին փաթեթավածքներ չեն պահանջվում, եթե որպես արտաքին փաթեթավածքներ օգտագործվում են մետաղյա (1A1, 1A2, 1B1, 1B2, 1N1 կամ 1N2) կամ պլաստմասսայե (1H1 կամ 1H2) թմբկազլաններ:		

P112(ա) ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ՑՈՒՑՈՒՄ (հոնավացված պինդ նյութեր, 1.1D)	P112(ա)	
Հետեւյալ փաթեթավածքները թույլատրվում են՝ պայմանով, որ պահպանվեն 4.1.1-ի, 4.1.3-ի փաթեթավորման ընդհանուր դրույթները եւ 4.1.5-ի փաթեթավորման հատուկ դրույթները:		
Ներքին փաթեթավածքներ Պարկեր թղթից՝ բազմաշերտ, ջրակայուն պլաստմասսայե կտորից կտորից՝ ռետինապատված հյուսածո պլաստմասսայից  Տարաներ մետաղյա պլաստմասսայե փայտյա	Միջանկյալ փաթեթավածքներ Պարկեր պլաստմասսայե կտորից՝ պլաստմասսայով պատված կամ եզրագծված  Տարաներ մետաղյա պլաստմասսայե փայտյա	Արտաքին փաթեթավածքներ Արկղեր պողպատյա (4A) ալյումինե (4B) այլ մետաղից (4N) բնական փայտից՝ սովորական (4C1) բնական փայտից՝ անթափանցելի (4C2) նրբատախտակից (4D) վերամշակված փայտից (4F) փայտաթելքային սալից (4G) փրփրապլաստից (4H1) պինդ պլաստմասսայից (4H2)  Թմբկազլաններ պողպատյա (1A1, 1A2) ալյումինե (1B1, 1B2) այլ մետաղից (1N1, 1N2) նրբատախտակից (1D) ֆիբրից (1G) պլաստմասսայե (1H1, 1H2)
Լրացուցիչ պահանջ:		
Միջանկյալ փաթեթավածքներ չեն պահանջվում, եթե որպես արտաքին փաթեթավածք օգտագործվում են անջրանցիկ, հանդիս հատակով թմբկազլանները:		
Փաթեթավորման մասին հատուկ դրույթներ		
PP26 ՄԱԿ-ի նշագրման հետեւյալ համարների համար՝ 0004, 0076, 0078, 0154, 0219 եւ 0394, փաթեթավածքները չպետք է կապար		



պարունակեն:

PP45 ՄԱԿ-ի նշագրման հետեյալ համարների համար՝ 0072 եւ 0226, միջանկյալ փաթեթվածքներ չեն պահանջվում:

P112(բ) ՓԱԹԵԹՎԱՎՈՐՄԱՆ ՑՈՒՑՈՒՄ (Չոր պինդ նյութեր՝ բացի փոշուց 1.1D)		P112(բ)
<p>Հետեյալ փաթեթվածքները թույլատրվում են՝ պայմանով, որ պահպանվեն 4.1.1-ի, 4.1.3-ի փաթեթավորման ընդհանուր դրույթները եւ 4.1.5-ի փաթեթավորման հատուկ դրույթները.</p>		
<p>Ներքին փաթեթվածքներ</p> <p>Պարկեր</p> <p>ամրաթղթե</p> <p>թղթից՝ բազմաշերտ, ջրակայուն</p> <p>պլաստմասսայե</p> <p>կտորից</p> <p>կտորից՝ ռետինապատված</p> <p>հյուսածո պլաստմասսայից</p>	<p>Միջանկյալ փաթեթվածքներ</p> <p>Պարկեր (միայն ՄԱԿ-ի նշագրման 0150 համարի դեպքում)</p> <p>պլաստմասսայե</p> <p>կտորից՝ պլաստմասսայով պատված կամ եզրագծված</p>	<p>Արտաքին փաթեթվածքներ</p> <p>Պարկեր</p> <p>հյուսածո պլաստմասսայից՝ անթափանցելի (5H2)</p> <p>հյուսածո պլաստմասսայից՝ ջրակայուն (5H3)</p> <p>պլաստմասսայե՝ ժապավեն (5H4)</p> <p>կտորից՝ անթափանցելի (5L2)</p> <p>կտորից՝ ջրակայուն (5L3)</p> <p>թղթից՝ բազմաշերտ, ջրակայուն (5M2)</p> <p>Արկղեր</p> <p>պողպատյա (4A)</p> <p>այլումինե (4B)</p> <p>այլ մետաղից (4N)</p> <p>բնական փայտից՝ սովորական (4C1)</p> <p>բնական փայտից՝ անթափանցելի (4C2)</p> <p>նրբատախտակից (4D)</p> <p>վերամշակված փայտից (4F)</p> <p>փայտաթելքային սալից (4G)</p> <p>փրփրապլաստից (4H1)</p> <p>պինդ պլաստմասսայից (4H2)</p> <p>Թմբկազևաններ</p> <p>պողպատյա ( 1A1, 1A2)</p> <p>այլումինե (1B1, 1B2)</p> <p>այլ մետաղից (1N1, 1N2)</p> <p>նրբատախտակից (1D)</p> <p>Ֆիբրից (1G)</p> <p>պլաստմասսայե (1H1, 1H2)</p>
<p>Փաթեթավորման մասին հատուկ դրույթներ</p> <p>PP26 ՄԱԿ-ի նշագրման 0004, 0076, 0078, 0154, 0216, 0219 եւ 0386 համարների դեպքում փաթեթվածքները կապար չպետք է պարունակեն:</p> <p>PP46 ՄԱԿ-ի նշագրման 0209 համարի դեպքում առաջարկվում են անթափանցելի պարկեր (5H2)՝ չոր վիճակում, փաթիլանման կամ հատիկավորված տրինիտրոտոլուոլի (TNT) համար՝ 30 կգ առավելագույն զտաքաշով:</p> <p>PP47 ՄԱԿ-ի նշագրման 0222 համարի դեպքում ներքին փաթեթվածքներ չեն պահանջվում, եթե արտաքին փաթեթվածքը պարկ է:</p>		

P112(գ) ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ՑՈՒՑՈՒՄ (Չոր պինդ փոշի, 1.1D)		P112(գ)
Հետեյալ փաթեթավաճքները թույլատրվում են՝ պայմանով, որ պահպանվեն 4.1.1-ի, 4.1.3-ի փաթեթավորման ընդհանուր դրույթները եւ 4.1.5-ի փաթեթավորման հատուկ դրույթները.		
Ներքին փաթեթավաճքներ Պարկեր թղթից՝ բազմաշերտ, ջրակայուն պլաստմասսայե հյուսածո պլաստմասսայից  Տարաներ փայտաթելքային սալից մետաղյա պլաստմասսայե փայտյա	Միջանկյալ փաթեթավաճքներ Պարկեր թղթից՝ բազմաշերտ, ջրակայուն, ներքին երեսպատումով պլաստմասսայե  Տարաներ մետաղյա պլաստմասսայե փայտյա	Արտաքին փաթեթավաճքներ Արկղեր պողպատյա (4A) ալյումինե (4B) այլ մետաղից (4N) բնական փայտից՝ սովորական (4C1) բնական փայտից՝ անթափանցելի (4C2) նրբատախտակից (4D) վերամշակված փայտից (4F) փայտաթելքային սալից (4G) պինդ պլաստմասսայից (4H2)  Թմբկազաններ պողպատյա (1A1, 1A2) ալյումի (1N1, 1N2) նրբատախտակից (1D) ֆիբրից (1G) պլաստմասսայե (1H1, 1H2)
Լրացուցիչ պահանջներ 1. Ներքին փաթեթավաճքներ չեն պահանջվում, եթե որպես արտաքին փաթեթավաճք օգտագործվում են թմբկազաններ: 2. Այդ փաթեթավաճքները պետք է անթափանցելի լինեն:		
Փաթեթավորման մասին հատուկ դրույթներ PP26 ՄԱԿ-ի նշագրման 0004, 0076, 0078, 0154, 0216, 0219 եւ 0386 համարների դեպքում փաթեթավաճքները կապար չպետք է պարունակեն: PP46 ՄԱԿ-ի նշագրման 0209 համարի դեպքում առաջարկվում են անթափանցելի պարկեր (5H2)՝ չոր վիճակում, փաթիլանման կամ հատիկավորված տրինիտրոտոլուոլի (TNT) համար՝ 30 կգ առավելագույն զտաքաշով: PP48 ՄԱԿ-ի նշագրման 0504 համարի դեպքում մետաղյա փաթեթավաճքներ չեն օգտագործվում: Քիչ քանակությամբ մետաղ, օրինակ՝ մետաղական փականներ կամ մետաղական այլ կցամասեր պարունակող՝ այլ նյութից փաթեթավաճքները, ինչպիսիք 6.1.4-ում նշվածներն են, չեն համարվում մետաղական փաթեթավաճքներ:		

P113 ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ՑՈՒՑՈՒՄ		P113
Հետեյալ փաթեթավաճքները թույլատրվում են՝ պայմանով, որ պահպանվեն 4.1.1-ի, 4.1.3-ի փաթեթավորման ընդհանուր դրույթները եւ 4.1.5-ի փաթեթավորման հատուկ դրույթները.		
Ներքին փաթեթավաճքներ  Պարկեր թղթե պլաստմասսայե կտորից՝ ռետինապատված	Միջանկյալ փաթեթավաճքներ  Չեն պահանջվում	Արտաքին փաթեթավաճքներ Արկղեր պողպատյա (4A) ալյումինե (4B) այլ մետաղից (4N)

<p>Տարաներ փայտաթելքային սալից մետաղյա պլաստմասսայե փայտյա</p>		<p>բնական փայտից՝ սովորական (4C1) բնական փայտից՝ անթափանցելի պատեր (4C2) նրբատախտակից (4D) վերամշակված փայտից (4F) փայտաթելքային սալից (4G) պինդ պլաստմասսայից (4H2)</p> <p>Թմբկազևաններ պողպատյա (1A1, 1A2) ալյումինե (1B1, 1B2) այլ մետաղից (1N1, 1N2) նրբատախտակից (1D) ֆիբրից (1G) պլաստմասսայե (1H1, 1H2)</p>
<p>Լրացուցիչ պահանջ՝ Այդ փաթեթվածքները պետք է լինեն անթափանցելի:</p>		
<p>Փաթեթավորման մասին հատուկ դրույթներ</p> <p>PP49 ՄԱԿ-ի նշագրման 0094 եւ 0305 համարների դեպքում ներքին փաթեթվածքում փաթեթավորվող նյութի քաշը չպետք է գերազանցի 50 գրամը:</p> <p>PP50 ՄԱԿ-ի նշագրման 0027 համարի դեպքում ներքին փաթեթվածքներ չեն պահանջվում, եթե որպես արտաքին փաթեթվածքներ օգտագործվում են թմբկազևաններ:</p> <p>PP51 ՄԱԿ-ի նշագրման 0028 համարի դեպքում որպես ներքին փաթեթվածքներ կարող են օգտագործվել ամրաթուղթը կամ մոմաթուղթը:</p>		

P114(ա) ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ՑՈՒՑՈՒՄ (Խոնավացված պինդ նյութեր)		P114(ա)
Հետևյալ փաթեթավաճքները թույլատրվում են՝ պայմանով, որ պահպանվեն 4.1.1-ի, 4.1.3-ի փաթեթավորման ընդհանուր դրույթները եւ 4.1.5-ի փաթեթավորման հատուկ դրույթները.		
Ներքին փաթեթավաճքներ Պարկեր պլաստմասսայե կտորից հյուսածո պլաստմասսայից  Տարաներ մետաղյա պլաստմասսայե փայտյա	Միջանկյալ փաթեթավաճքներ Պարկեր պլաստմասսայե կտորից՝ պլաստմասսայով պատված կամ եզրագծված  Տարաներ մետաղյա պլաստմասսայե  Բաժանարար միջնորմներ փայտյա	Արտաքին փաթեթավաճքներ Արկղեր պողպատյա (4A) մետաղյա՝ պողպատից կամ ալյումինից բացի (4N) բնական փայտից՝ սովորական (4C1) բնական փայտից՝ անթափանցելի պատերով (4C2) նրբատախտակից (4D) վերամշակված փայտից (4F) փայտաթելքային սալից (4G) պինդ պլաստմասսայից (4H2)  Թմբկազլաններ պողպատյա (1A1, 1A2) ալյումինե (1B1, 1B2) այլ մետաղից (1N1, 1N2) նրբատախտակից (1D) ֆիբրից (1G) պլաստմասսայե (1H1, 1H2)
Լրացուցիչ պահանջ՝ Միջանկյալ փաթեթավաճքներ չեն պահանջվում, եթե որպես արտաքին փաթեթավաճքներ օգտագործվում են անջրանցիկ, հանովի հատակով թմբկազլաններ:		
Փաթեթավորման մասին հատուկ դրույթներ PP26 ՄԱԿ-ի նշագրման 0077, 0132, 0234, 0235 եւ 0236 համարների դեպքում փաթեթավաճքները չպետք է կապար պարունակեն: PP43 ՄԱԿ-ի նշագրման 0342 համարի դեպքում ներքին փաթեթավաճքներ չեն պահանջվում, եթե որպես արտաքին փաթեթավաճքներ օգտագործվում են մետաղյա (1A1, 1A2, 1B1, 1B2, 1N1 կամ 1N2) կամ պլաստմասսայե (1H1 կամ 1H2) թմբկազլաններ:		

P114(բ)	ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ՑՈՒՑՈՒՄ (Չոր պինդ նյութեր)	P114(բ)
<p>Հետեւյալ փաթեթվածքները թույլատրվում են՝ պայմանով, որ պահպանվեն 4.1.1-ի, 4.1.3-ի փաթեթավորման ընդհանուր դրույթները եւ 4.1.5-ի փաթեթավորման հատուկ դրույթները.</p>		
Ներքին փաթեթվածքներ	Միջանկյալ փաթեթվածքներ	Արտաքին փաթեթվածքներ
Պարկեր	Չեն պահանջվում	Արկղեր
ամրաթղթե		բնական փայտից՝ սովորական (4C1)
պլաստմասսայե		բնական փայտից՝ անթափանցելի պատերով (4C2)
կտորից՝ անթափանցելի		նրբատախտակից (4D)
հյուսածո պլաստմասսայից՝ անթափանցելի		վերամշակված փայտից (4F) փայտաթելքային սալից (4G)
Տարաներ		Թմբկազևաններ
փայտաթելքային սալից		պողպատյա (1A1, 1A2)
մետաղյա		ալյումինե (1B1, 1B2)
թղթե		այլ մետաղից (1N1, 1N2)
պլաստմասսայե		նրբատախտակից (1D)
հյուսածո պլաստմասսայից՝ անթափանցելի		Ֆիբրից (1G)
փայտյա		պլաստմասսայե (1H1, 1H2)
<p>Փաթեթավորման մասին հատուկ դրույթներ</p> <p>PP26 ՄԱԿ-ի նշագրման 0077, 0132, 0234, 0235 եւ 0236 համարների դեպքում փաթեթվածքները չպետք է կապար պարունակեն:</p> <p>PP48 ՄԱԿ-ի նշագրման 0508 եւ 0509 համարների դեպքում մետաղյա փաթեթվածքներ չեն օգտագործվում: Քիչ քանակությամբ մետաղ, օրինակ՝ մետաղական փականներ կամ մետաղական այլ կցամասեր պարունակող՝ այլ նյութից փաթեթվածքները, ինչպիսիք 6.1.4-ում նշվածներն են, չեն համարվում մետաղական փաթեթվածքներ:</p> <p>PP50 ՄԱԿ-ի նշագրման 0160, 0161 եւ 0508 համարների դեպքում ներքին փաթեթվածքներ չեն պահանջվում, եթե որպես արտաքին փաթեթվածքներ օգտագործվում են թմբկազևաններ:</p> <p>PP52 ՄԱԿ-ի նշագրման 0160 եւ 0161 համարների դեպքում, երբ որպես արտաքին փաթեթվածքներ օգտագործվում են մետաղյա թմբկազևաններ (1A1, 1A2, 1B1, 1B2, 1N1 կամ 1N2), մետաղյա փաթեթվածքները պետք է նախագծվեն այնպես, որ բացառվի ներքին կամ արտաքին գործոններով պայմանավորված՝ ներքին ճնշման ավելացման հետեւանքով պայթյունի ռիսկը:</p>		

Հետեւյալ փաթեթավածքները թույլատրվում են՝ պայմանով, որ պահպանվեն 4.1.1-ի, 4.1.3-ի փաթեթավորման ընդհանուր դրույթները եւ 4.1.5-ի փաթեթավորման հատուկ դրույթները:

Ներքին փաթեթավածքներ	Միջանկյալ փաթեթավածքներ	Արտաքին փաթեթավածքներ
Տարաներ պլաստմասսայե փայտյա	Պարկեր մետաղյա տարաներում օգտագործվող պլաստմասսայե հարմարանքներ  Թմբկազլաններ մետաղյա  Տարաներ փայտյա	Արկղեր  բնական փայտից՝ սովորական (4C1) բնական փայտից՝ անթափանցելի պատերով (4C2) Նրբատախտակից (4D) վերամշակված փայտից (4F)  Թմբկազլաններ պողպատյա (1A1, 1A2) ալյումինե (1B1, 1B2) այլ մետաղից (1N1, 1N2) Նրբատախտակից (1D) Ֆիբրից (1G) պլաստմասսայե (1H1, 1H2)

**Փաթեթավորման մասին հատուկ դրույթներ**

- PP45 ՄԱԿ-ի նշագրման 0144 համարի դեպքում միջանկյալ փաթեթավածքներ չեն պահանջվում:
- PP53 ՄԱԿ-ի նշագրման 0075, 0143, 0495 եւ 0497 համարների դեպքում, երբ որպես արտաքին փաթեթավածքներ արկղեր են օգտագործվում, ներքին փաթեթավածքները պետք է ունենան ժապավենով փաթեթաված պտուտակավոր թասակով փականներ, եւ դրանցից յուրաքանչյուրի տարողունակությունը չպետք է գերազանցի 5 լիտրը: Ներքին փաթեթավածքները պետք է շրջապատված լինեն չայրվող, կլանիչ հատկությամբ պաշտպանիչ նյութերով: Կլանիչ հատկությամբ պաշտպանիչ նյութի չափը պետք է բավարար լինի հեղուկ պարունակությունը կլանելու համար: Մետաղյա տարաները պետք է պաշտպանված լինեն մեկը մյուսից: Պայթյունավտանգ նյութի զտաքաշը յուրաքանչյուր փաթեթում չպետք է գերազանցի 30 կգ-ը, եթե արտաքին փաթեթավածքներն արկղեր են:
- PP54 ՄԱԿ-ի նշագրման 0075, 0143, 0495 եւ 0197 համարների դեպքում, երբ որպես արտաքին փաթեթավածքներ օգտագործվում են թմբկազլաններ, եւ երբ միջանկյալ փաթեթավածքները նույնպես թմբկազլաններ են, դրանք պետք է շրջապատված լինեն չայրվող պաշտպանիչ նյութով, որի չափը պետք է բավարար լինի հեղուկ պարունակությունը կլանելու համար: Ներքին ու միջանկյալ փաթեթավածքների փոխարեն կարող է մետաղյա թմբկազլանում պլաստմասսայե տարայից բաղկացած բարդ փաթեթավածք օգտագործվել: Յուրաքանչյուր փաթեթում պայթյունավտանգ նյութի զուտ ծավալը չպետք է գերազանցի 120 լիտրը:
- PP55 ՄԱԿ-ի նշագրման 0144 համարի դեպքում ավելացվում է կլանիչ հատկությամբ պաշտպանիչ նյութ:
- PP56 ՄԱԿ-ի նշագրման 0144 համարի դեպքում որպես ներքին փաթեթավածքներ կարող են մետաղյա տարաներ օգտագործվել:
- PP57 ՄԱԿ-ի նշագրման 0075, 0143, 0495 եւ 0497 համարների դեպքում որպես միջանկյալ փաթեթավածքներ պարկեր են օգտագործվում այն դեպքում, երբ որպես արտաքին փաթեթավածքներ արկղեր են օգտագործվում:
- PP58 ՄԱԿ-ի նշագրման 0075, 0143, 0495 եւ 0497 համարների դեպքում որպես միջանկյալ փաթեթավածքներ թմբկազլաններ են օգտագործվում, երբ որպես արտաքին փաթեթավածքներ նույնպես օգտագործվում են թմբկազլաններ:
- PP59 ՄԱԿ-ի նշագրման 0144 համարի դեպքում որպես արտաքին փաթեթավածքներ կարող են փայտաթեթային սալից արկղեր օգտագործվել (4G):
- PP60 ՄԱԿ-ի նշագրման 0144 համարի դեպքում չեն օգտագործվում ալյումինե թմբկազլանները (1B1 եւ 1B2) եւ մետաղյա՝ բացի պողպատից կամ ալյումինից, թմբկազլանները (1N1 եւ 1N2):

P116	ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ՑՈՒՑՈՒՄ	P116
<p>Հետևյալ փաթեթավաճքները թույլատրվում են՝ պայմանով, որ պահպանվեն 4.1.1-ի, 4.1.3-ի փաթեթավորման ընդհանուր դրույթները եւ 4.1.5-ի փաթեթավորման հատուկ դրույթները.</p>		
<p>Ներքին փաթեթավաճքներ</p> <p>Պարկեր՝ թղթից՝ անջրանցիկ եւ անյուղանցիկ պլաստմասսայե</p> <p>կտորից՝ պլաստմասսայով պատված կամ եզրագծված</p> <p>հյուսածո պլաստմասսայից՝ անթափանցելի</p> <p>Տարաներ</p> <p>փայտաթելքային սալից՝ ջրակայուն</p> <p>մետաղյա պլաստմասսայե փայտից՝ անթափանցելի</p> <p>Թերթեր</p> <p>թղթից՝ ջրակայուն</p> <p>մոմաթղթե պլաստմասսայե</p>	<p>Միջանկյալ փաթեթավաճքներ</p> <p>Չեն պահանջվում</p>	<p>Արտաքին փաթեթավաճքներ</p> <p>Պարկեր</p> <p>հյուսածո պլաստմասսայից (5H1, 5H2, 5H3)</p> <p>թղթից՝ բազմաշերտ, ջրակայուն (5M2)</p> <p>պլաստմասսայե՝ ժապավեն (5H4)</p> <p>կտորից՝ անթափանցելի (5L2)</p> <p>կտորից՝ ջրակայուն (5L3)</p> <p>Արկղեր</p> <p>պողպատյա (4A)</p> <p>ալյումինե (4B)</p> <p>այլ մետաղից (4N)</p> <p>բնական փայտից՝ սովորական (4C1)</p> <p>բնական փայտից՝ անթափանցելի պատերով (4C2)</p> <p>նրբատախտակից (4D)</p> <p>վերամշակված փայտից (4F)</p> <p>փայտաթելքային սալից (4G)</p> <p>պինդ պլաստմասսայից (4H2)</p> <p>Թմբկազևաններ</p> <p>պողպատյա (1A1, 1A2)</p> <p>ալյումինե (1B1, 1B2)</p> <p>այլ մետաղից (1N1, 1N2)</p> <p>նրբատախտակից (1D)</p> <p>Ֆիբրից (1G)</p> <p>պլաստմասսայե (1H1, 1H2)</p> <p>Կանխտորներ</p> <p>պողպատյա (3A1, 3A2)</p> <p>պլաստմասսայե (3H1, 3H2)</p>
<p>Փաթեթավորման մասին հատուկ դրույթներ</p>		
<p>PP61 ՄԱԿ-ի նշագրման 0082, 0241, 0331 եւ 0332 համարների դեպքում ներքին փաթեթավաճքներ չեն պահանջվում, եթե որպես արտաքին փաթեթավաճքներ անջրանցիկ, հանովի հատակով թմբկազևաններ են օգտագործվում:</p>		
<p>PP62 ՄԱԿ-ի նշագրման 0082, 0241, 0331 եւ 0332 համարների դեպքում ներքին փաթեթավաճքներ չեն պահանջվում, եթե պայթուցիկ նյութը տեղավորված է այնպիսի նյութի մեջ, որի մեջ հեղուկ չի կարող թափանցել:</p>		
<p>PP63 ՄԱԿ-ի նշագրման 0081 համարի դեպքում ներքին փաթեթավաճքներ չեն պահանջվում կոշտ պլաստմասսայից պատրաստված այնպիսի փաթեթավաճքում տեղավորված լինելու դեպքում, որի մեջ ազոտի բարդ եթերներ չեն կարող թափանցել:</p>		
<p>PP64 ՄԱԿ-ի նշագրման 0331 համարի դեպքում ներքին փաթեթավաճքներ չեն պահանջվում, եթե որպես արտաքին փաթեթավաճքներ պարկեր են օգտագործվում (5H2), (5H3) կամ (5H4):</p>		
<p>PP65 (Հանվել է)</p>		
<p>PP66 ՄԱԿ-ի նշագրման 0081 համարի դեպքում որպես արտաքին փաթեթավաճքներ պարկեր չեն օգտագործվում:</p>		

P130 ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ՑՈՒՑՈՒՄ	P130	
<p>Հետեյալ փաթեթվածքները թույլատրվում են՝ պայմանով, որ պահպանվեն 4.1.1-ի, 4.1.3-ի փաթեթավորման ընդհանուր դրույթները եւ 4.1.5-ի փաթեթավորման հատուկ դրույթները.</p>		
<p>Ներքին փաթեթվածքներ</p> <p>Չեն պահանջվում</p>	<p>Միջանկյալ փաթեթվածքներ</p> <p>Չեն պահանջվում</p>	<p>Արտաքին փաթեթվածքներ</p> <p>Արկղեր</p> <p>պողպատյա (4A)</p> <p>ալյումինե (4B)</p> <p>այլ մետաղից (4N)</p> <p>բնական փայտից՝ սովորական (4C1)</p> <p>բնական փայտից՝ անթափանցելի պատերով (4C2)</p> <p>նրբատախտակից (4D)</p> <p>վերամշակված փայտից (4F)</p> <p>փայտաթելքային սալից (4G)</p> <p>փրփրապլաստից (4H1)</p> <p>պինդ պլաստմասսայից (4H2)</p> <p>Թմբկազևաններ</p> <p>պողպատյա (1A1, 1A2)</p> <p>ալյումինե (1B1, 1B2)</p> <p>այլ մետաղից (1N1, 1N2)</p> <p>նրբատախտակից (1D)</p> <p>Ֆիբրից (1G)</p> <p>պլաստմասսայե (1H1, 1H2)</p>
<p>Փաթեթավորման մասին հատուկ դրույթներ</p>		
<p>PP67 Ստորեւ նշվածը կիրառելի է ՄԱԿ-ի նշագրման հետեյալ համարների նկատմամբ. 0006, 0009, 0010, 0015, 0016, 0018, 0019, 0034, 0035, 0038, 0039, 0048, 0056, 0137, 0138, 0168, 0169, 0171, 0181, 0182, 0183, 0186, 0221, 0243, 0244, 0245, 0246, 0254, 0280, 0281, 0286, 0287, 0297, 0299, 0300, 0301, 0303, 0321, 0328, 0329, 0344, 0345, 0346, 0347, 0362, 0363, 0370, 0412, 0424, 0425, 0434, 0435, 0436, 0437, 0438, 0451, 0488, 0502 եւ 0510:</p> <p>Սովորաբար ռազմական օգտագործման համար նախատեսված, հարուցիչ միջոցներ չունեցող կամ առնվազն երկու արդյունավետ պաշտպանիչ հատկությամբ հարուցիչ միջոցներ ունեցող խոշոր եւ ամուր պայթուցիկ պատրաստվածքները կարող են փոխադրվել առանց փաթեթավորման: Եթե նման պատրաստվածքները պարունակում են նետողական լիցքեր կամ ինքնաշարժ են, դրանց բռնկման համակարգերը պետք է պաշտպանված լինեն փոխադրման նորմալ պայմաններում առաջացող խթանող ազդեցություններից: Չփաթեթավորված պատրաստվածքի 4-րդ սերիայի փորձարկումների բացասական արդյունքը վկայում է այն մասին, որ կարելի է դիտարկել պատրաստվածքն առանց փաթեթավորման փոխադրելու հարցը: Նման չփաթեթավորված պատրաստվածքները կարող են ամրացվել հենարաններին կամ փոխադրվել կավարամածների մեջ կամ բեռնման եւ բեռնաթափման այլ սարքերով:</p>		



P131	ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ՑՈՒՑՈՒՄ	P131
<p>Հետևյալ փաթեթվածքները թույլատրվում են՝ պայմանով, որ պահպանվեն 4.1.1-ի, 4.1.3-ի փաթեթավորման ընդհանուր դրույթները եւ 4.1.5-ի փաթեթավորման հատուկ դրույթները.</p>		
<p>Ներքին փաթեթվածքներ</p> <p>Պարկեր թղթե պլաստմասսայե</p> <p>Տարաներ փայտաթելքային սալից մետաղական պլաստմասսայե փայտյա Կոճեր</p>	<p>Միջանկյալ փաթեթվածքներ</p> <p>Չեն պահանջվում</p>	<p>Արտաքին փաթեթվածքներ</p> <p>Արկղեր</p> <p>պողպատյա (4A) այլումինե (4B) այլ մետաղից (4N) բնական փայտից՝ սովորական (4C1) բնական փայտից՝ անթափանցելի պատերով (4C2) նրբատախտակից (4D) վերամշակված փայտից (4F) փայտաթելքային սալից (4G) պինդ պլաստմասսայից (4H2)</p> <p>Թմբկազաններ</p> <p>պողպատյա (1A1, 1A2) այլումինե (1B1, 1B2) այլ մետաղից (1N1, 1N2) նրբատախտակից (1D) Ֆիբրից (1G) պլաստմասսայե (1H1, 1H2)</p>
<p>Փաթեթավորման մասին հատուկ դրույթ</p> <p>PP68 ՄԱԿ-ի նշագրման 0029, 0267 եւ 0455 համարների դեպքում պարկերը եւ կոճերը չպետք է օգտագործվեն որպես ներքին փաթեթվածք:</p>		

P132(ա)	ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ՑՈՒՑՈՒՄ	P132(ա)
<p>(Պատրաստվածքներ՝ մետաղից, պլաստմասսայից կամ փայտաթելքային սալից փակ պարկուճներից կազմված , որոնք պարունակում են դետոնացնող պայթուցիկ նյութ, կամ պոլիմերային կապակցիչով դետոնացնող պայթուցիկ նյութից կազմված)</p>		
<p>Հետևյալ փաթեթվածքները թույլատրվում են՝ պայմանով, որ պահպանվեն 4.1.1-ի, 4.1.3-ի փաթեթավորման ընդհանուր դրույթները եւ 4.1.5-ի փաթեթավորման հատուկ դրույթները.</p>		
<p>Ներքին փաթեթվածքներ</p> <p>Չեն պահանջվում</p>	<p>Միջանկյալ փաթեթվածքներ</p> <p>Չեն պահանջվում</p>	<p>Արտաքին փաթեթվածքներ</p> <p>Արկղեր</p> <p>պողպատյա (4A) այլումինե (4B) այլ մետաղից (4N) բնական փայտից՝ սովորական (4C1) բնական փայտից՝ անթափանցելի պատերով (4C2) նրբատախտակից (4D) վերամշակված փայտից (4F) փայտաթելքային սալից (4G) պինդ պլաստմասսայից (4H2)</p>

P132(բ)	ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ՑՈՒՑՈՒՄ (Պատրաստվածքներ՝ առանց փակ պարկուճների)	P132(բ)
Հետևյալ փաթեթավածքները թույլատրվում են՝ պայմանով, որ պահպանվեն 4.1.1-ի, 4.1.3-ի փաթեթավորման ընդհանուր դրույթները եւ 4.1.5-ի փաթեթավորման հատուկ դրույթները.		
Ներքին փաթեթավածքներ	Միջանկյալ փաթեթավածքներ	Արտաքին փաթեթավածքներ
Տարաներ	Չեն պահանջվում	Արկղեր
փայտաթելքային սալից		պողպատյա (4A)
մետաղական		ալյումինե (4B)
պլաստմասսայե		այլ մետաղից (4N)
փայտյա		բնական փայտից՝ սովորական (4C1)
		բնական փայտից՝ անթափանցելի պատերով (4C2)
Թերթեր		նրբատախտակից (4D)
թղթե		վերամշակված փայտից (4F)
պլաստմասսայե		փայտաթելքային սալից (4G)
		պինդ պլաստմասսայից (4H2)

P133	ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ՑՈՒՑՈՒՄ	P133
Հետևյալ փաթեթավածքները թույլատրվում են՝ պայմանով, որ պահպանվեն 4.1.1-ի, 4.1.3-ի փաթեթավորման ընդհանուր դրույթները եւ 4.1.5-ի փաթեթավորման հատուկ դրույթները.		
Ներքին փաթեթավածքներ	Միջանկյալ փաթեթավածքներ	Արտաքին փաթեթավածքներ
Տարաներ	Տարաներ	Արկղեր
փայտաթելքային սալից	փայտաթելքային սալից	պողպատյա (4A)
մետաղական	մետաղական	ալյումինե (4B)
պլաստմասսայե	պլաստմասսայե	այլ մետաղից (4N)
փայտյա	փայտյա	բնական փայտից՝ սովորական (4C1)
Բաժանարար միջնորմներով ընդկալներ		բնական փայտից՝ անթափանցելի պատերով (4C2)
փայտաթելքային սալից		նրբատախտակից (4D)
պլաստմասսայե		վերամշակված փայտից (4F)
փայտյա		փայտաթելքային սալից (4G)
		պինդ պլաստմասսայից (4H2)
Լրացուցիչ պահանջ.		
Տարաների օգտագործումը որպես միջանկյալ փաթեթավածքներ պահանջվում է միայն այն դեպքում, երբ ներքին փաթեթավածքները ընդկալներ են:		
Փաթեթավորման մասին հատուկ դրույթ		
PP69 ՄԱԿ-ի նշագրման 0043, 0212, 0225, 0268 եւ 0306 համարների դեպքում ընդկալները չպետք է օգտագործվեն որպես ներքին փաթեթավածքներ:		

P134		ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ՑՈՒՑՈՒՄ	P134
Հետևյալ փաթեթավաճքները թույլատրվում են՝ պայմանով, որ պահպանվեն 4.1.1-ի, 4.1.3-ի փաթեթավորման ընդհանուր դրույթները եւ 4.1.5-ի փաթեթավորման հատուկ դրույթները.			
Ներքին փաթեթավաճքներ	Միջանկյալ փաթեթավաճքներ	Արտաքին փաթեթավաճքներ	
Պարկեր	Չեն պահանջվում	Արկղեր	
ջրակայուն		պողպատյա (4A)	
		ալյումինե (4B)	
Տարաներ		այլ մետաղից (4N)	
		բնական փայտից՝ սովորական (4C1)	
փայտաթելքային սալից		բնական փայտից՝ անթափանցելի պատերով (4C2)	
մետաղական		նրբատախտակից (4D)	
պլաստմասսայե		վերամշակված փայտից (4F)	
փայտյա		փայտաթելքային սալից (4G)	
		փրփրապլաստից (4H1)	
Թերթեր		պինդ պլաստմասսայից (4H2)	
փայտաթելքային սալից՝		Թմբկազևաններ	
ծալքավորված		պողպատյա (1A1, 1A2)	
		ալյումինե (1B1, 1B2)	
Գլաններ		այլ մետաղից (1N1, 1N2)	
փայտաթելքային սալից		նրբատախտակից (1D)	
		ֆիբրից (1G)	
		պլաստմասսայե (1H1, 1H2)	

P135		ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ՑՈՒՑՈՒՄ	P135
Հետևյալ փաթեթավաճքները թույլատրվում են՝ պայմանով, որ պահպանվեն 4.1.1-ի, 4.1.3-ի փաթեթավորման ընդհանուր դրույթները եւ 4.1.5-ի փաթեթավորման հատուկ դրույթները.			
Ներքին փաթեթավաճքներ	Միջանկյալ փաթեթավաճքներ	Արտաքին փաթեթավաճքներ	
Պարկեր	Չեն պահանջվում	Արկղեր	
թղթե		պողպատյա (4A)	
պլաստմասսայե		ալյումինե (4B)	
		այլ մետաղից (4N)	
Տարաներ		բնական փայտից՝ սովորական (4C1)	
փայտաթելքային սալից		բնական փայտից՝ անթափանցելի պատերով (4C2)	
մետաղական		նրբատախտակից (4D)	
պլաստմասսայե		վերամշակված փայտից (4F)	
փայտյա		փայտաթելքային սալից (4G)	
		փրփրապլաստից (4H1)	
Թերթեր		պինդ պլաստմասսայից (4H2)	
թղթե		Թմբկազևաններ	
պլաստմասսայե		պողպատյա (1A1, 1A2)	

	այլումինե (1B1, 1B2) այլ մետաղից (1N1, 1N2) նրբատախտակից (1D) ֆիբրից (1G) պլաստմասսայե (1H1, 1H2)
--	---

P136	ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ՑՈՒՑՈՒՄ	P136
Հետևյալ փաթեթվածքները թույլատրվում են՝ պայմանով, որ պահպանվեն 4.1.1-ի, 4.1.3-ի փաթեթավորման ընդհանուր դրույթները եւ 4.1.5-ի փաթեթավորման հատուկ դրույթները.		
Ներքին փաթեթվածքներ Պարկեր պլաստմասսայե կտորից  Արկղեր փայտաթելքային սալից պլաստմասսայե փայտյա  Բաժանարար միջնորմներ՝ արտաքին փաթեթվածքներում	Միջանկյալ փաթեթվածքներ Չեն պահանջվում	Արտաքին փաթեթվածքներ Արկղեր պողպատյա (4A) այլումինե (4B) այլ մետաղից (4N) բնական փայտից՝ սովորական (4C1) բնական փայտից՝ անթափանցելի պատերով (4C2) նրբատախտակից (4D) վերամշակված փայտից (4F) փայտաթելքային սալից (4G) պինդ պլաստմասսայից (4H2)  Թմբկազաններ պողպատյա (1A1, 1A2) այլումինե (1B1, 1B2) այլ մետաղից (1N1, 1N2) նրբատախտակից (1D) ֆիբրից (1G) պլաստմասսայե (1H1, 1H2)

P137	ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ՑՈՒՑՈՒՄ	P137
Հետևյալ փաթեթվածքները թույլատրվում են՝ պայմանով, որ պահպանվեն 4.1.1-ի, 4.1.3-ի փաթեթավորման ընդհանուր դրույթները եւ 4.1.5-ի փաթեթավորման հատուկ դրույթները.		
Ներքին փաթեթվածքներ Պարկեր պլաստմասսայե Արկղեր փայտաթելքային սալից փայտյա Գլաններ փայտաթելքային սալից մետաղական	Միջանկյալ փաթեթվածքներ Չեն պահանջվում	Արտաքին փաթեթվածքներ Արկղեր պողպատյա (4A) այլումինե (4B) այլ մետաղից (4N) բնական փայտից՝ սովորական (4C1) բնական փայտից՝ անթափանցելի պատերով (4C2) նրբատախտակից (4D) վերամշակված փայտից (4F)

պլաստմասսայե Բաժանարար միջնորմներ՝ արտաքին փաթեթվածքներում	փայտաթեթքային սալից (4G) պինդ պլաստմասսայից (4H2) Թմբկազլաններ պողպատյա (1A1, 1A2) ալյումինե (1B1, 1B2) այլ մետաղից (1N1, 1N2) նրբատախտակից (1D) ֆիբրից (1G) պլաստմասսայե (1H1, 1H2)
--	--

Փաթեթավորման մասին հատուկ դրույթ

PP70 ՄԱԿ-ի նշագրման 0059, 0439, 0440 եւ 0441 համարների դեպքում, երբ կուտակային լիցքերը փաթեթավորվում են առանձին, կոնային խողոչը պետք է դեպի ներքեւ դրված լինի, եւ փաթեթը պետք է մակնշվի 5.2.1.10.1-ին համապատասխան: Երբ կուտակային լիցքերը փաթեթավորվում են զույգերով, կոնային խողոչները պետք է դրված լինեն դեպի ներս՝ պատահական բռցավառման դեպքում դուրս նետման ազդեցությունը նվազագույնի հասցնելու համար:

P138	ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ՑՈՒՑՈՒՄ	P138
Հետեւյալ փաթեթվածքները թույլատրվում են՝ պայմանով, որ պահպանվեն 4.1.1-ի, 4.1.3-ի փաթեթավորման ընդհանուր դրույթները եւ 4.1.5-ի փաթեթավորման հատուկ դրույթները.		
Ներքին փաթեթվածքներ Պարկեր պլաստմասսայե	Միջանկյալ փաթեթվածքներ Չեն պահանջվում	Արտաքին փաթեթվածքներ Արկղեր պողպատյա (4A) ալյումինե (4B) այլ մետաղից (4N) բնական փայտից՝ սովորական (4C1) բնական փայտից՝ անթափանցելի պատերով (4C2) նրբատախտակից (4D) վերամշակված փայտից (4F) փայտաթեթքային սալից (4G) պինդ պլաստմասսայից (4H2) Թմբկազլաններ պողպատյա (1A1, 1A2) ալյումինե (1B1, 1B2) այլ մետաղից (1N1, 1N2) նրբատախտակից (1D) ֆիբրից (1G) պլաստմասսայե (1H1, 1H2)
Լրացուցիչ պահանջ.		
Եթե պատրաստվածքների ծայրերը ամրափակված են, ապա ներքին փաթեթվածքներ չեն պահանջվում:		

P139	ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ՑՈՒՑՈՒՄ	P139
Հետեւյալ փաթեթվածքները թույլատրվում են՝ պայմանով, որ պահպանվեն 4.1.1-ի, 4.1.3-ի փաթեթավորման ընդհանուր դրույթները եւ 4.1.5-ի		

փաթեթավորման հատուկ դրույթները.		
Ներքին փաթեթավածքներ	Միջանկյալ փաթեթավածքներ	Արտաքին փաթեթավածքներ
Պարկեր պլաստմասսայե	Չեն պահանջվում	Արկղեր պողպատյա (4A) այլումինե (4B) այլ մետաղից (4N) բնական փայտից՝ սովորական (4C1) բնական փայտից՝ անթափանցելի պատերով (4C2) նրբատախտակից (4D) վերամշակված փայտից (4F) փայտաթելքային սալից (4G) պինդ պլաստմասսայից (4H2)
Տարաներ փայտաթելքային սալից մետաղական պլաստմասսայե փայտյա		Թմբկազլաններ պողպատյա (1A1, 1A2) այլումինե (1B1, 1B2) այլ մետաղից (1N1, 1N2) նրբատախտակից (1D) ֆիբրից (1G) պլաստմասսայե (1H1, 1H2)
Կոճեր		
Թերթեր թղթե պլաստմասսայե		
<p>Փաթեթավորման մասին հատուկ դրույթներ</p> <p>PP71 ՄԱԿ-ի նշագրման 0065, 0102, 0104, 0289 եւ 0290 համարների դեպքում դետոնացման քուղի ծայրերը պետք է մեկուսացվեն, օրինակ՝ կիպ տեղադրված խցանափակիչի միջոցով այնպես, որ պայթուցիկ նյութը չկարողանա դուրս գալ: Դետոնացման ճկուն քուղի ծայրերը պետք է ապահով ամրացված լինեն:</p> <p>PP72 ՄԱԿ-ի նշագրման 0065 եւ 0289 համարների դեպքում ներքին փաթեթավածքներ չեն պահանջվում, եթե դրանք պարուրածու են փաթաթված:</p>		

P140	ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ՑՈՒՑՈՒՄ	P140
<p>Հետևյալ փաթեթավածքները թույլատրվում են՝ պայմանով, որ պահպանվեն 4.1.1-ի, 4.1.3-ի փաթեթավորման ընդհանուր դրույթները եւ 4.1.5-ի փաթեթավորման հատուկ դրույթները.</p>		
Ներքին փաթեթավածքներ	Միջանկյալ փաթեթավածքներ	Արտաքին փաթեթավածքներ
Պարկեր պլաստմասսայե	Չեն պահանջվում	Արկղեր պողպատյա (4A) այլումինե (4B) այլ մետաղից (4N) բնական փայտից՝ սովորական (4C1) բնական փայտից՝ անթափանցելի պատերով (4C2) նրբատախտակից (4D) վերամշակված փայտից (4F) փայտաթելքային սալից (4G) պինդ պլաստմասսայից (4H2)
Տարաներ փայտյա		Թմբկազլաններ պողպատյա (1A1, 1A2)
Կոճեր		
Թերթեր ամրաթղթե պլաստմասսայե		

	այլումինե (1B1, 1B2) այլ մետաղից (1N1, 1N2) նրբատախտակից (1D) ֆիբրից (1G) պլաստմասսայե (1H1, 1H2)
Փաթեթավորման մասին հատուկ դրույթներ PP73 ՄԱԿ-ի նշագրման 0105 համարի դեպքում ներքին փաթեթավաճքներ չեն պահանջվում, եթե պատրաստվածքի ծայրերն ամրափակված են: PP74 ՄԱԿ-ի նշագրման 0101 համարի դեպքում փաթեթավաճքը պետք է լինի անթափանցելի՝ բացառությամբ այն դեպքերի, երբ բոցավառիչը պատված է թղթե գլանով եւ գլանի երկու ծայրերը փակված են հանովի թասակներով: PP75 ՄԱԿ-ի նշագրման 0101 համարի դեպքում չպետք է օգտագործվեն պողպատյա, այլումինե կամ այլ մետաղից արկղեր կամ թմբկազաններ:	

P141	ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ՑՈՒՑՈՒՄ	P141
Հետեւյալ փաթեթավաճքները թույլատրվում են՝ պայմանով, որ պահպանվեն 4.1.1-ի, 4.1.3-ի փաթեթավորման ընդհանուր դրույթները եւ 4.1.5-ի փաթեթավորման հատուկ դրույթները.		
Ներքին փաթեթավաճքներ Տարաներ փայտաթելքային սալից մետաղական պլաստմասսայե փայտյա  Բաժանարար միջնորմներով ընդկալներ պլաստմասսայե փայտյա  Բաժանարար միջնորմներ՝ արտաքին փաթեթավաճքներում	Միջանկյալ փաթեթավաճքներ Չեն պահանջվում	Արտաքին փաթեթավաճքներ Արկղեր պողպատյա (4A) այլումինե (4B) այլ մետաղից (4N) բնական փայտից՝ սովորական (4C1) բնական փայտից՝ անթափանցելի պատերով (4C2) նրբատախտակից (4D) վերամշակված փայտից (4F) փայտաթելքային սալից (4G) պինդ պլաստմասսայից (4H2) Թմբկազաններ  պողպատյա (1A1, 1A2) այլումինե (1B1, 1B2) այլ մետաղից (1N1, 1N2) նրբատախտակից (1D) ֆիբրից (1G) պլաստմասսայե (1H1, 1H2)

P142		ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ՑՈՒՑՈՒՄ	P142
Հետեյալ փաթեթվածքները թույլատրվում են՝ պայմանով, որ պահպանվեն 4.1.1-ի, 4.1.3-ի փաթեթավորման ընդհանուր դրույթները եւ 4.1.5-ի փաթեթավորման հատուկ դրույթները.			
Ներքին փաթեթվածքներ	Միջանկյալ փաթեթվածքներ	Արտաքին փաթեթվածքներ	
Պարկեր	Չեն պահանջվում	Արկղեր	
թղթե		պողպատյա (4A)	
պլաստմասսայե		ալյումինե (4B)	
Տարաներ		այլ մետաղից (4N)	
փայտաթելքային սալից		բնական փայտից՝ սովորական (4C1)	
մետաղական		բնական փայտից՝ անթափանցելի պատերով (4C2)	
պլաստմասսայե		նրբատախտակից (4D)	
փայտյա		վերամշակված փայտից (4F)	
Թերթեր		փայտաթելքային սալից (4G)	
թղթե		պինդ պլաստմասսայից (4H2)	
Բաժանարար միջնորմներով ընդկալներ		Թմբկազևաններ	
պլաստմասսայե		պողպատյա (1A1, 1A2)	
		ալյումինե (1B1, 1B2)	
		այլ մետաղից (1N1, 1N2)	
		նրբատախտակից (1D)	
		Ֆիբրից (1G)	
		պլաստմասսայե (1H1, 1H2)	

P143		ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ՑՈՒՑՈՒՄ	P143
Հետեյալ փաթեթվածքները թույլատրվում են՝ պայմանով, որ պահպանվեն 4.1.1-ի, 4.1.3-ի փաթեթավորման ընդհանուր դրույթները եւ 4.1.5-ի փաթեթավորման հատուկ դրույթները.			
Ներքին փաթեթվածքներ	Միջանկյալ փաթեթվածքներ	Արտաքին փաթեթվածքներ	
Պարկեր	Չեն պահանջվում	Արկղեր	
ամրաթղթե		պողպատյա (4A)	
պլաստմասսայե		ալյումինե (4B)	
կտորից		այլ մետաղից (4N)	
կտորից՝ ռետինապատված		բնական փայտից՝ սովորական (4C1)	
Տարաներ		բնական փայտից՝ անթափանցելի պատերով (4C2)	
փայտաթելքային սալից		նրբատախտակից (4D)	
մետաղական		վերամշակված փայտից (4F)	
պլաստմասսայե		փայտաթելքային սալից (4G)	
փայտյա		պինդ պլաստմասսայից (4H2)	
Բաժանարար միջնորմներով ընդկալներ		Թմբկազևաններ	
պլաստմասսայե		պողպատյա (1A1, 1A2)	
փայտյա		ալյումինե (1B1, 1B2)	
		այլ մետաղից (1N1, 1N2)	
		նրբատախտակից (1D)	



	Ֆիրրից (1G) պլաստմասսայե (1H1, 1H2)
<p>Լրացուցիչ պահանջ.</p> <p>Վերոնշյալ ներքին եւ արտաքին փաթեթվածքների փոխարեն կարող են օգտագործվել բարդ փաթեթվածքներ (6HH2) (պլաստմասսայից տարա՝ պինդ պլաստմասսայե արտաքին արկղում):</p>	
<p>Փաթեթավորման մասին հատուկ դրույթ</p> <p>PP76 ՄԱԿ-ի նշագրման 0271, 0272, 0415 եւ 0491 համարների դեպքում, երբ օգտագործվում են մետաղական փաթեթվածքներ, դրանք պետք է նախագծվեն այնպես, որ բացառվի ներքին կամ արտաքին գործոններով պայմանավորված՝ ներքին ճնշման ավելացման հետեւանքով պայթյունի ռիսկը:</p>	

P144	ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ՑՈՒՑՈՒՄ	P144
<p>Հետեւյալ փաթեթվածքները թույլատրվում են՝ պայմանով, որ պահպանվեն 4.1.1-ի, 4.1.3-ի փաթեթավորման ընդհանուր դրույթները եւ 4.1.5-ի փաթեթավորման հատուկ դրույթները.</p>		
<p>Ներքին փաթեթվածքներ</p> <p>Տարաներ</p> <p>փայտաթելքային սալից</p> <p>մետաղական</p> <p>պլաստմասսայե</p> <p>փայտյա</p> <p>Բաժանարար միջնորմներ՝ արտաքին փաթեթվածքներում</p>	<p>Միջանկյալ փաթեթվածքներ</p> <p>Չեն պահանջվում</p>	<p>Արտաքին փաթեթվածքներ</p> <p>Արկղեր</p> <p>պողպատյա (4A)</p> <p>ալյումինե (4B)</p> <p>այլ մետաղից (4N)</p> <p>բնական փայտից՝ սովորական, մետաղական ներդիրով (4C1)</p> <p>նրբատախտակից՝ մետաղական ներդիրով (4D)</p> <p>վերամշակված փայտից՝ մետաղական ներդիրով (4F)</p> <p>փրփրապլաստից (4H1)</p> <p>պինդ պլաստմասսայից (4H2)</p> <p>Թմբկազաններ</p> <p>պողպատյա (1A1, 1A2)</p> <p>ալյումինե (1B1,1B2)</p> <p>այլ մետաղից (1N1, 1N2)</p> <p>պլաստմասսայե (1H1, 1H2)</p>
<p>Փաթեթավորման մասին հատուկ դրույթ</p> <p>PP77 ՄԱԿ-ի նշագրման 0248 եւ 0249 համարների դեպքում փաթեթվածքները պետք է պաշտպանված լինեն ջրի ներթափանցումից: Երբ ջրակտիվացվող սարքերը փոխադրվում են առանց փաթեթվածքի, դրանք պետք է ապահովված լինեն առնվազն երկու անկախ պաշտպանիչ սարքավորումներով, որոնք կանխում են ջրի ներթափանցումը:</p>		

Փաթեթավորման տեսակը. բալոններ, գլաններ, ճնշումային թմբկազաններ եւ բալոնների կապուկներ

Բալոնները, գլանները, ճնշումային թմբկազանները եւ բալոնների կապուկները թույլատրվում են՝ պայմանով, որ պահպանվեն 4.1.6-ի փաթեթավորման վերաբերյալ հատուկ դրույթները եւ ներքոնշյալ 1-9-րդ կետերում թվարկված դրույթները, իսկ 1-ին, 2-րդ կամ 3-րդ աղյուսակների «Հատուկ դրույթներ՝ փաթեթավորման վերաբերյալ» սյունակում նշված լինելու դեպքում պահպանվեն ներքոնշյալ 10-րդ կետում թվարկված փաթեթավորման վերաբերյալ համապատասխան հատուկ դրույթները:

Ընդհանուր դրույթներ

- 1) Ճնշումային տարաները պետք է փակ եւ անջրանցիկ լինեն այնպես, որ հնարավոր լինի խուսափել գազերի արտահոսքից:
- 2) Ճնշումային տարաների վրա, որտեղ թունավոր նյութերի «LC50»-ը կազմում է աղյուսակում նշված 200 մ/մ<sup>3</sup>-ից (միլիոներորդ մասը) պակաս կամ դրան հավասար, չպետք է տեղադրվի ճնշումը նվազեցնող որեւէ սարք: Ճնշումը նվազեցնող սարքերը պետք է տեղադրվեն ՄԱԿ-ի այն ճնշումային տարաների վրա, որոնք օգտագործվում են ՄԱԿ-ի նշագրման 1013 համարի ածխաթթու գազ եւ ՄԱԿ-ի նշագրման 1070 համարի ազոտի օքսիդ փոխադրելու համար:
- 3) Հետեւյալ երեք աղյուսակներում ներառված են սեղմված (Աղյուսակ 1), հեղուկացված եւ լուծված գազերը (Աղյուսակ 2) եւ 2-րդ դասին չպատկանող նյութերը (Աղյուսակ 3): Աղյուսակներում ներկայացվում են հետեւյալ տեղեկությունները՝
  - ա) ՄԱԿ-ի նշագրման համարը, նյութի անվանումը, նկարագրությունը եւ դասակարգման ծածկագիրը.
  - բ) թունավոր նյութերի «LC50»-ը.
  - գ) «X» տառով նշվող՝ նյութի համար թույլատրվող ճնշումային տարաների տեսակները.
  - դ) ճնշումային տարաների պարբերական ստուգումների դեպքում փորձարկման առավելագույն ժամկետը.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Կոմպոզիտային նյութերից պատրաստված ճնշումային տարաների փորձարկման առավելագույն ժամկետը պետք է լինի 5 տարի: Փորձարկման ժամկետը կարող է երկարաձգվել մինչեւ 1-ին եւ 2-րդ աղյուսակներում նշված ժամկետը (այսինքն՝ մինչեւ 10 տարի), եթե դա հաստատվել է հաստատման տեսակը տրամադրած իրավասու մարմնի կամ այդ մարմնի կողմից նշանակված մարմնի կողմից:

  - ե) ճնշումային տարաների փորձարկման նվազագույն ճնշումը.
  - զ) սեղմված գազերի համար նախատեսված ճնշումային տարաների առավելագույն աշխատանքային ճնշումը (եթե ներկայացված չէ որեւէ արժեք, ապա աշխատանքային ճնշումը չպետք է գերազանցի փորձարկման ճնշման երկու երրորդը) կամ հեղուկացված եւ լուծված գազերի փորձարկման ճնշումից կախված՝ լցվորման առավելագույն գործակիցը (գործակիցները).
  - է) փաթեթավորման հատուկ դրույթները, որոնք վերաբերում են միայն կոնկրետ նյութի:

Փորձարկման ճնշումը, լցվորման գործակիցները եւ լցվորման պահանջները

- 4) Փորձարկման նվազագույն անհրաժեշտ ճնշումը 1 ՄՊա է (10 բար):
- 5) Ճնշումային տարաները չպետք է ոչ մի դեպքում լցվորվեն հետեւյալ պահանջներով թույլատրված սահմանաչափից ավելի՝
  - ա) Սեղմված գազերի դեպքում աշխատանքային ճնշումը ճնշումային տարաների փորձարկման ճնշման երկու երրորդից ավելի չպետք է լինի: Աշխատանքային ճնշման այս վերին սահմանաչափի սահմանափակումները սահմանված են «Ժե» փաթեթավորման հատուկ դրույթով: 65 °C ջերմաստիճանի դեպքում ներքին ճնշումը ոչ մի դեպքում չպետք է գերազանցի փորձարկման ճնշումը:
  - բ) Բարձր ճնշմամբ հեղուկացված գազերի դեպքում լցվորման գործակիցը պետք է այնպես սահմանվի, որ 65 °C ջերմաստիճանի դեպքում հաստատված ճնշումը չգերազանցի ճնշումային տարաների փորձարկման ճնշումը:

Աղյուսակով սահմանված փորձարկման ճնշումներից եւ լցվորման գործակիցներից այլ ճնշումների եւ գործակիցների օգտագործումը թույլատրվում է՝ բացառությամբ այն դեպքերի, երբ կիրառվում է «Ժե» փաթեթավորման հատուկ դրույթը՝ պայմանով, որ

  - i) հարկ եղած դեպքում պահպանվում է «Ժը» փաթեթավորման հատուկ դրույթի չափորոշիչը, կամ
  - ii) բոլոր մնացած դեպքերում պահպանվում է նշված չափորոշիչը:

Բարձր ճնշմամբ հեղուկացված գազերի եւ գազային խառնուրդների դեպքում, որոնց համար համապատասխան տվյալներ հասանելի չեն, լցվորման առավելագույն գործակիցը (FR) որոշվում է հետեւյալ բանաձեռով՝

$$FR = 8.5 \times 10^{-4} \times dg \times Ph,$$

որտեղ՝ FR-ը լցվորման առավելագույն գործակիցն է,  
 dg-ն գազի խտությունն է (15 °C ջերմաստիճանի եւ 1 բար ճնշման պայմաններում)(կգ/մ<sup>3</sup>-ում),  
 Ph-ը փորձարկման նվազագույն ճնշումն է (արտահայտված բարով):

Եթե գազի խտությունն անհայտ է, ապա լցավորման առավելագույն գործակիցը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$FR = \frac{Ph \times MM \times 10^{-3}}{R \times 338}$$

որտեղ՝ FR-ը լցավորման առավելագույն գործակիցն է,  
 Ph-ը փորձարկման նվազագույն ճնշումն է (արտահայտված բարով),  
 MM-ը մոլեկուլային զանգվածն է (արտահայտված գ/մոլ-ով),  
 R = 8.31451 x 10<sup>-2</sup> բար.լ.մոլ<sup>-1</sup>.Կ-1 (գազային հաստատուն):

Գազային խառնուրդների դեպքում մոլեկուլային միջին զանգվածը որոշվում է՝ հաշվի առնելով տարբեր բաղադրիչների ծավալային խտությունները:

- գ) Ցածր ճնշմամբ հեղուկացված գազերի դեպքում ջրի տարողության յուրաքանչյուր լիտրի հաշվով պարունակության առավելագույն զանգվածը 50 °C ջերմաստիճանի պայմաններում հավասար է հեղուկ ֆազի խտության 0.95-ապատիկին. ավելին, հեղուկ ֆազը չպետք է զբաղեցնի ճնշումային տարան մինչև 60 °C ցանկացած ջերմաստիճանի պայմաններում: Ճնշումային տարայի փորձարկման ճնշումը պետք է 65 °C ջերմաստիճանի պայմաններում առնվազն հավասար լինի հեղուկից արտազատվող գոլորշու ճնշմանը (բացարձակ)՝ հանած 100 կՊա-ն (1 բար):

Ցածր ճնշմամբ հեղուկացված գազերի եւ գազային խառնուրդների դեպքում, որոնց համար համապատասխան տվյալներ հասանելի չեն, լցավորման առավելագույն գործակիցը որոշվում է հետևյալ բանաձևով՝  
 FR = (0.0032 x BP - 0.24) x d1,

որտեղ՝  
 FR-ը լցավորման առավելագույն գործակիցն է,  
 BP-ն եռման կետն է (ըստ Կելվինի սանդղակի),  
 d1-ը եռման կետում հեղուկի խտությունն է (արտահայտված կգ/լ-ով):

- դ) ՄԱԿ-ի նշագրման 1001 համարի՝ լուծվող ագետիլենի եւ ՄԱԿ-ի նշագրման 3374 համարի՝ առանց լուծիչի ագետիլենի դեպքում տե՛ս 10-րդ կետը, փաթեթավորման հատուկ «Ժգ» դրույթը:

- ե) Սեղմված գազերով լիցքավորված հեղուկացված գազերի դեպքում երկու բաղադրիչները՝ հեղուկացված գազը եւ սեղմված գազը պետք է հաշվի առնվեն ճնշումային տարայում ներքին ճնշումը հաշվարկելիս:

Ջրի տարողության յուրաքանչյուր լիտրի հաշվով պարունակության առավելագույն զանգվածը չպետք է 50°C ջերմաստիճանի դեպքում գերազանցի հեղուկ ֆազի խտության 0.95-ապատիկը. բացի այդ, հեղուկ ֆազը չպետք է ամբողջությամբ զբաղեցնի ճնշումային տարան մինչև 60 °C ցանկացած ջերմաստիճանի պայմաններում:

Լցավորված վիճակում ներքին ճնշումը 65 °C ջերմաստիճանում չպետք է գերազանցի ճնշումային տարաների փորձարկման ճնշումը: Պետք է հաշվի առնել ճնշումային տարաներում բոլոր նյութերի գոլորշու ճնշումները եւ դրանց ծավալային ընդարձակումները: Փորձարարական տվյալների բացակայության դեպքում պետք է ձեռնարկել հետևյալ քայլերը.

- i) հաշվարկել հեղուկացված գազի գոլորշու ճնշումը եւ սեղմված գազի մասնակի ճնշումը 15 °C ջերմաստիճանում (լցավորման ջերմաստիճան),
- ii) հաշվարկել 15 °C-ից մինչև 65 °C տաքացնելու արդյունքում հեղուկ ֆազի ծավալային ընդարձակումը եւ գազային ֆազի համար մնացած ծավալը,
- iii) հաշվարկել սեղմված գազի մասնակի ճնշումը 65 °C ջերմաստիճանում՝ հաշվի առնելով հեղուկ ֆազի ծավալային ընդարձակումը.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Պետք է հաշվի առնել 15 °C եւ 65 °C ջերմաստիճաններում սեղմված գազի սեղմելիության գործակիցը:

- iv) հաշվարկել հեղուկացված գազի գոլորշու ճնշումը 65 °C ջերմաստիճանում,
- v) ընդհանուր ճնշումը 65 °C ջերմաստիճանում հեղուկացված գազի գոլորշու ճնշման եւ սեղմված գազի մասնակի ճնշման հանրագումարն է,
- vi) հաշվի առնել սեղմված գազի լուծելիությունը 65 °C ջերմաստիճանում, հեղուկ ֆազում:

Ճնշումային տարայի փորձարկման ճնշումը չպետք է լինի հաշվարկված ընդհանուր ճնշումից պակաս՝ հանած 100 կՊա-ն (1 բար): Եթե հեղուկ ֆազում սեղմված գազի լուծելիությունը հայտնի չէ հաշվարկ կատարելու համար, ապա փորձարկման ճնշումը կարող է հաշվարկվել՝ հաշվի չառնելով գազի լուծելիությունը ((vi) ենթապարբերություն):

P200	ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ՑՈՒՑՈՒՄ (շարունակություն)	P200
6)	<p>Կարող են օգտագործվել փորձարկման ճնշման եւ լցավորման գործակցի այլ արժեքներ՝ պայմանով, որ դրանք բավարարում են վերոնշյալ (4) եւ (5) պարբերություններում սահմանված ընդհանուր պահանջները:</p>	
7)	<p>ա) Ճնշումային տարաների լցավորումը կարող է իրականացվել միայն հատուկ սարքավորումներով համալրված կենտրոններում, որակավորում ունեցող անձնակազմի կողմից՝ համապատասխան ընթացակարգերի կիրառմամբ:</p> <p>Ընթացակարգերը պետք է ներառեն՝</p> <ul style="list-style-type: none"> <li>- տարաների եւ հարմարանքների՝ «ԱԴԲ» համաձայնագրին համապատասխանության ստուգումը.</li> <li>- փոխադրվող արտադրանքի հետ դրանց համատեղելիության ստուգումը.</li> <li>- այն վնասվածքների բացակայության ստուգումը, որոնք կարող են ազդել անվտանգության վրա.</li> <li>- հարկ եղած դեպքում՝ լցավորման աստիճանի կամ ճնշման հետ համապատասխանության ստուգումը.</li> <li>- մակնշման եւ նույնականացման ստուգումը.</li> </ul> <p>բ) բալոնների մեջ լցվող ՀՆԳ-ն պետք է լինի բարձր որակի. այս պահանջը համարվում է կատարված, եթե ՀՆԳ-ն լցվում է ISO 9162:1989 ստանդարտում նշված կոռոզիակառնության վերաբերյալ սահմանափակումներին համապատասխան:</p>	
	<p>Պարբերական ստուգումները</p> <p>8) Վերալցավորվող ճնշումային տարաները պետք է ենթարկվեն պարբերական ստուգումների՝ համապատասխանաբար 6.2.1.6-ի եւ 6.2.3.5-ի պահանջներին համապատասխան:</p> <p>9) Եթե որոշ նյութերի առնչությամբ ստորեւ նշված աղյուսակներում չեն նշվում հատուկ դրույթներ, ապա պարբերական ստուգումներն իրականացվում են՝</p> <ul style="list-style-type: none"> <li>ա) յուրաքանչյուր հինգ տարին մեկ անգամ՝ 1T, 1TF, 1TO, 1TC, 1TFC, 1TOC, 2T, 2TO, 2TF, 2TC, 2TFC, 2TOC, 4A, 4F եւ 4TC դասակարգման ծածկագրերին դասվող գազերի փոխադրման համար նախատեսված ճնշումային տարաների դեպքում.</li> <li>բ) յուրաքանչյուր հինգ տարին մեկ անգամ՝ դասակարգման այլ ծածկագրերի դասվող նյութերի փոխադրման համար նախատեսված ճնշումային տարաների դեպքում.</li> </ul>	
	<p>գ) յուրաքանչյուր տասը տարին մեկ անգամ՝ 1A, 1O, 1F, 2A, 2O եւ 2F դասակարգման ծածկագրերին դասվող գազերի փոխադրման համար նախատեսված ճնշումային տարաների դեպքում:</p> <p>Կոմպոզիտային նյութերից պատրաստված ճնշումային տարաների փորձարկման առավելագույն ժամկետը պետք է լինի 5 տարի: Փորձարկման ժամկետը կարող է երկարաձգվել մինչեւ 1-ին եւ 2-րդ աղյուսակներում նշված ժամկետը (այսինքն՝ մինչեւ 10 տարի), եթե դա հաստատվել է հաստատման տեսակը տրամադրած իրավասու մարմնի կամ այդ մարմնի կողմից նշանակված մարմնի կողմից:</p> <p>Փաթեթավորման մասին հատուկ դրույթներ</p> <p>10) Նյութերի համատեղելիությունը</p> <ul style="list-style-type: none"> <li>a. Չպետք է օգտագործվեն այլումինի համաձուլվածքից պատրաստված ճնշումային տարաներ:</li> <li>b. Չպետք է օգտագործվեն պղնձե կափույրներ:</li> <li>c. Պարունակության հետ շփման մեջ գտնվող մետաղյա մասերը չպետք է 65 % ավելի պղինձ պարունակեն:</li> <li>d. Պողպատից պատրաստված ճնշումային տարաների օգտագործման դեպքում թույլատրվում են միայն 6.2.2.7.4 (բ)-ին համապատասխան «H» նշանը կրող տարաները:</li> </ul>	

P200	ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ՑՈՒՑՈՒՄ (շարունակություն)	P200
<p>Թունավոր նյութերին ներկայացվող պահանջները, որոնց «LC50»-ը կազմում է 200 մլ/մ<sup>3</sup>-ից (միլիոներորդ մասը) պակաս կամ դրան հավասար</p> <p>k. Արտաթող կափույրները պետք է ունենան ճնշումը պահող անզագանցիկ խցափակիչներ կամ թասակներ՝ պարուրակներով, որոնք համապատասխանում են արտաթող կափույրների պարուրակներին եւ պատրաստված են ճնշումային տարայի պարունակության ներգործությանը չենթարկվող նյութից:</p> <p>Կապուկում յուրաքանչյուր բալոն պետք է ունենա առանձին կափույր, որը պետք է փակվի փոխադրման ընթացքում: Լցավորումից հետո կոլեկտորը պետք է փչահարվի, մաքրվի եւ խցափակվի:</p> <p>Կապուկները, որոնք պարունակում են ՄԱԿ-ի նշագրման 1045 համարի սեղմված ֆտոր, կարող են պատրաստվել՝ ջրի ընդհանուր տարողության 150 լիտրը չգերազանցող բալոնների խմբերի վրա տեղադրելով մեկուսիչ կափույրներ՝ յուրաքանչյուր բալոնի վրա մեկուսիչ կափույր տեղադրելու փոխարեն:</p> <p>Բալոնները եւ կապուկում առանձին բալոնները պետք է ենթարկվեն 200 բարից ավելի կամ դրան հավասար փորձարկման ճնշման եւ այլումինի համաձուլվածքի դեպքում ունենան առնվազն 3.5 մմ կամ պողպատի դեպքում՝ 2 մմ հաստությամբ պատեր: Նշված պահանջին չհամապատասխանող առանձին բալոնները պետք է փոխադրվեն կոշտ արտաքին փաթեթվածքով, որը պատշաճ կերպով կպաշտպանի բալոնը եւ դրա կցամասերը, ինչպես նաեւ պետք է բավարարեն փաթեթավորման I խմբի որակի ցուցանիշները: Ճնշումային թմբկազանները պետք է իրավասու մարմնի կողմից սահմանված՝ պատի նվազագույն հաստություն ունենան:</p> <p>Ճնշումային տարաների վրա չպետք է տեղադրված լինի ճնշումը նվազեցնող սարք:</p> <p>Բալոնների եւ կապուկում առանձին բալոնների ջրի առավելագույն տարողությունը չպետք է գերազանցի 85 լիտրը:</p> <p>Յուրաքանչյուր կափույր պետք է կարողանա դիմանալ ճնշումային տարայի փորձարկման ճնշմանը եւ պետք է ուղղակիորեն միացվի ճնշումային տարային ISO 10692-2:2001 ստանդարտի պահանջներին համապատասխանող կոնական պարուրակով կամ այլ եղանակով:</p> <p>Յուրաքանչյուր կափույր կամ պետք է լինի ոչ խցվածքային տիպի եւ ունենա ոչ ծակոտկեն դիաֆրագմա, կամ այնպիսին, որը կանխում է արտահոսքը փաթեթավորման միջոցով կամ առանց դրա:</p> <p>Փոխադրումը պարկուճներով չի թույլատրվում:</p> <p>Ճնշումային յուրաքանչյուր տարա պետք է լցավորումից հետո անցնի արտահոսքի փորձարկում:</p>		

P200	ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ՑՈՒՑՈՒՄ (շարունակություն)	P200
	այլ մետաղյա (4N)	125 կգ
	բնական փայտից (4C1)	125 կգ
	բնական փայտից՝ անթափանցելի պատերով (4C2)	125 կգ
	նրբատախտակից (4D)	125 կգ
	վերամշակված փայտից (4F)	125 կգ
	փայտաթելքային սալից (4G)	40 կգ
	փրփրապլաստից (4H1)	60 կգ
	պինդ պլաստմասսայից (4H2)	125 կգ
<p>Առանձին փաթեթվածքներ</p> <p>Մետաղյա թմբկազևաններ (1A1, 1A2, 1B1, 1B2, 1N1 կամ 1N2)՝ 250 կգ առավելագույն զտաքաշով:</p> <p>Փայտաթելքային սալից (1G) կամ նրբատախտակից թմբկազևաններ (1D)՝ համալրված ներքին ներդիրներով՝ 200 կգ առավելագույն զտաքաշով:</p>		

P504	ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ՑՈՒՑՈՒՄ	P504
Հետեւյալ փաթեթվածքները թույլատրվում են՝ պայմանով, որ պահպանվեն 4.1.1-ի եւ 4.1.3-ի ընդհանուր դրույթները.		
Համակցված փաթեթվածքներ՝		Առավելագույն զտաքաշ
1) Ապակյա տարաներ՝ 5 լիտր առավելագույն տարողությամբ՝ 1A1, 1A2, 1B1, 1B2, 1N1, 1N2, 1H1, 1H2, 1D, 1G, 4A, 4B, 4N, 4C1, 4C2, 4D, 4F, 4G, 4H2 արտաքին փաթեթվածքներում		75 կգ
2) Պլաստմասսայից տարաներ՝ 30 լիտր առավելագույն տարողությամբ՝ 1A1, 1A2, 1B1, 1B2, 1N1, 1N2, 1H1, 1H2, 1D, 1G, 4A, 4B, 4N, 4C1, 4C2, 4D, 4F, 4G, 4H2 արտաքին փաթեթվածքներում		75 կգ
3) Մետաղյա տարաներ՝ 40 լիտր առավելագույն տարողությամբ՝ 1G, 4F կամ 4G արտաքին փաթեթվածքներում		125 կգ
4) Մետաղյա տարաներ՝ 40 լիտր առավելագույն տարողությամբ՝ 1A1, 1A2, 1B1, 1B2, 1N1, 1N2, 1H1, 1H2, 1D, 4A, 4B, 4N, 4C1, 4C2, 4D, 4H2 արտաքին փաթեթվածքներում		225 կգ
Առանձին փաթեթվածքներ		Առավելագույն տարողություն
Թմբկազաններ		
պողպատյա, չհանվող հատակով (1A1)		250 լ
պողպատյա, հանովի հատակով (1A2)		250 լ
ալյումինե, չհանվող հատակով (1B1)		250 լ
ալյումինե, հանովի հատակով (1B2)		250 լ
պողպատ կամ ալյումին չհանդիսացող մետաղից, չհանվող հատակով (1N1)		250 լ
պողպատ կամ ալյումին չհանդիսացող մետաղից, հանովի հատակով (1N2)		250 լ
պլաստմասսայից, չհանվող հատակով (1H1)		250 լ
պլաստմասսայից, հանովի հատակով (1H2)		250 լ
Կանխտրներ		
պողպատյա, չհանվող հատակով (3A1)		60 լ
պողպատյա, հանովի հատակով (3A2)		60 լ
ալյումինե, չհանվող հատակով (3B1)		60 լ
ալյումինե, հանովի հատակով (3B2)		60 լ
պլաստմասսայից, չհանվող հատակով (3H1)		60 լ
պլաստմասսայից, հանովի հատակով (3H2)		60 լ
Բարդ փաթեթվածքներ		
պլաստմասսայից տարա՝ պողպատյա կամ ալյումինե արտաքին թմբկազանում (6HA1, 6HB1)		250 լ
պլաստմասսայից տարա՝ ֆիբրից, պլաստմասսայից կամ նրբատախտակից արտաքին թմբկազանում (6HG1, 6HH1, 6HD1)		120 լ
պլաստմասսայից տարա՝ պողպատյա կամ ալյումինե արտաքին կավարամածում կամ արկղում, կամ պլաստմասսայից տարա՝ փայտից, նրբատախտակից, փայտաթելքային սալից կամ պինդ պլաստմասսայից արտաքին արկղում (6HA2, 6HB2, 6HC, 6HD2, 6HG2 կամ 6HH2)		60 լ
ապակյա տարա՝ պողպատից, ալյումինից, ֆիբրից կամ նրբատախտակից արտաքին թմբկազանում (6PA1, 6PB1, 6PD1 կամ 6PG1) կամ պողպատյա, ալյումինե, փայտից կամ փայտաթելքային սալից արտաքին արկղում կամ արտաքին հյուսած զամբյուղում (6PA2, 6PB2, 6PC, 6PG2 կամ 6PD2) կամ պինդ պլաստմասսայից կամ փրփրապլաստից արտաքին փաթեթվածքում (6PH1 կամ 6PH2):		60 լ
Փաթեթավորման մասին հատուկ դրույթներ		
PP10 ՄԱԿ-ի նշագրման 2014, 2984 եւ 3149 համարների դեպքում փաթեթվածքը պետք է օդափոխվի:		

P505	ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ՑՈՒՑՈՒՄ	P505
Այս ցուցումը կիրառելի է ՄԱԿ-ի նշագրման 3375 համարի նկատմամբ:		
Հետեւյալ փաթեթվածքները թույլատրվում են՝ պայմանով, որ պահպանվեն 4.1.1-ի եւ 4.1.3-ի ընդհանուր դրույթները.		
Համակցված փաթեթվածքներ՝	Ներքին փաթեթվածքի առավելագույն տարողություն	Արտաքին փաթեթվածքի առավելագույն զտաքաշ
Արկղեր (4B, 4C1, 4C2, 4D, 4G, 4H2) կամ թմբկազվաններ (1B2, 1G, 1N2, 1H2, 1D) կամ կանխատրներ (3B2, 3H2)՝ ապակյա, պլաստմասսայե կամ մետաղյա ներքին փաթեթվածքներում	5 լ	125 կգ
Առանձին փաթեթվածքներ՝	Առավելագույն տարողություն	
Թմբկազվաններ		
այլումինե (1B1, 1B2)	250 լ	
պլաստմասսայից (1H1, 1H2)	250 լ	
Կանխատրներ՝		
այլումինե (3B1, 3B2)	60 լ	
պլաստմասսայից (3H1, 3H2)	60 լ	
Բարդ փաթեթվածքներ՝		
պլաստմասսայից տարա՝ այլումինե արտաքին թմբկազվանում (6HB1)	250 լ	
պլաստմասսայից տարա՝ ֆիբրից, պլաստմասսայից կամ նրբատախտակից արտաքին թմբկազվանում (6HG1, 6HH1, 6HD1)	250 լ	
պլաստմասսայից տարա՝ այլումինե արտաքին կավարամածում կամ արկղում, կամ պլաստմասսայից տարա՝ փայտից, նրբատախտակից, փայտաթելքային սալից կամ պինդ պլաստմասսայից արտաքին արկղում (6HB2, 6HC, 6HD2, 6HG2 կամ 6HH2)	60 լ	
ապակյա տարա՝ այլումինից, ֆիբրից կամ նրբատախտակից արտաքին թմբկազվանում (6PB1, 6PG1, 6PD1), կամ պինդ պլաստմասսայից կամ փրփրապլաստից պլաստմասսայե արտաքին տարաներում (6PH1 կամ 6PH2), կամ այլումինե արտաքին կավարամածում կամ արկղում կամ փայտից կամ փայտաթելքային սալից արտաքին արկղում կամ արտաքին հյուսած զամբյուղում (6PB2, 6PC, 6PG2 կամ 6PD2)	60 լ	

P520	ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ՑՈՒՑՈՒՄ	P520
Սույն ցուցումը կիրառվում է 5.2 դասի օրգանական պերօքսիդների եւ 4.1 դասի ինքնառեակտիվ նյութերի նկատմամբ		
Ներքոնշյալ փաթեթվածքները թույլատրվում են՝ պայմանով, որ պահպանվեն 4.1.1-ի եւ 4.1.3-ի ընդհանուր դրույթները եւ 4.1.7.1-ի հատուկ դրույթները:		
Փաթեթավորման մեթոդները նշանագրված են OP1-ից OP8 ծածկագրերով: Ներկայումս դասակարգված առանձին օրգանական պերօքսիդներին եւ ինքնառեակտիվ նյութերին համապատասխանող փաթեթավորման մեթոդները թվարկված են 2.2.41.4-ում եւ 2.2.52.4-ում: Փաթեթավորման յուրաքանչյուր մեթոդի համար սահմանված քանակությունները յուրաքանչյուր փաթեթի համար թույլատրված առավելագույն քանակություններն են: Թույլատրված են հետեւյալ փաթեթվածքները՝		
1) Արկղեր ներառող արտաքին փաթեթվածքներով համակցված փաթեթվածքներ (4A, 4B, 4N, 4C1, 4C2, 4D, 4F, 4G, 4H1 եւ 4H2), թմբկազվաններ (1A1, 1A2, 1B1, 1B2, 1G, 1H1, 1H2 եւ 1D), կանխատրներ (3A1, 3A2, 3B1, 3B2, 3H1 եւ 3H2).		
2) Թմբկազվաններից կազմված առանձին փաթեթվածքներ (1A1, 1A2, 1B1, 1B2, 1G, 1H1, 1H2 եւ 1D) եւ կանխատրներ (3A1, 3A2, 3B1, 3B2, 3H1 եւ 3H2).		
3) Պլաստմասսայից ներքին տարաներով բարդ փաթեթվածքներ (6HA1, 6HA2, 6HB1, 6HB2, 6HC, 6HD1, 6HD2, 6HG1, 6HG2, 6HH1 եւ 6HH2):		
OP1-ից OP8 ծածկագրերի փաթեթավորման մեթոդների ա դեպքում փաթեթվածքի/ փաթեթի առավելագույն քանակություն		

Փաթեթավորման մեթոդ	OP1	OP2 ա	OP3	OP4 ա	OP5	OP6	OP7	OP8
Առավելագույն քանակություն								
Առավելագույն զանգված (կգ)՝ պինդ նյութերի եւ համակցված փաթեթվածքների համար (հեղուկ եւ պինդ)	0.5	0.5/10	5	5/25	25	50	50	400բ
Հեղուկների դեպքում առավելագույն պարունակություն՝ արտահայտված լիտրով գ	0.5	-	5	-	30	60	60	225 դ
<p>ա Երբ նշված են երկու արժեքներ, առաջինը կիրառվում է յուրաքանչյուր ներքին փաթեթվածքի համար սահմանված առավելագույն զտաքաշի, իսկ երկրորդը՝ ամբողջական փաթեթի առավելագույն զտաքաշի նկատմամբ:</p> <p>բ 60 կգ կանխատրների/ 200 կգ արկղերի դեպքում, իսկ պինդ նյութերի դեպքում 400 կգ՝ արկղեր ներառող արտաքին փաթեթվածքներով համակցված փաթեթվածքներում (4C1, 4C2, 4D, 4F, 4G, 4H1 եւ 4H2) եւ 25 կգ առավելագույն զտաքաշ՝ պլաստմասսայից կամ ֆիբրից ներքին փաթեթվածքներում:</p> <p>գ Մաճուցիկ նյութերը պետք է դիտարկվեն որպես պինդ նյութեր այն դեպքում, երբ դրանք չեն համապատասխանում 1.2.1-ում «հեղուկներ»-ի սահմանման մեջ ներկայացված չափորոշիչներին:</p> <p>դ 60 լիտր՝ կանխատրների դեպքում:</p>								
<p>Լրացուցիչ պահանջներ.</p> <p>1. Մետաղյա փաթեթվածքները, ներառյալ՝ համակցված փաթեթվածքների ներքին փաթեթվածքները եւ համակցված կամ բարդ փաթեթվածքների արտաքին փաթեթվածքները կարող են օգտագործվել միայն OP7 եւ OP8 ծածկագրերի փաթեթավորման մեթոդների դեպքում:</p> <p>2. Համակցված փաթեթվածքներում ապակյա տարաները կարող են օգտագործվել միայն որպես ներքին փաթեթվածքներ՝ պինդ նյութերի դեպքում՝ 0.5 կգ կամ հեղուկ նյութերի դեպքում՝ 0.5 լիտր առավելագույն պարունակությամբ:</p> <p>3. Համակցված փաթեթվածքներում պաշտպանիչ նյութերը չպետք է դյուրավառ լինեն:</p> <p>4. Օրգանական պերօքսիդի կամ ինքնառեակտիվ նյութի փաթեթվածքը, որի վրա պետք է գետեղված լինի լրացուցիչ դիսկի մասին «ՊԱՅԹՅՈՒՆԱՎՏԱՆԳ» պիտակը (մոդել թիվ 1, տե՛ս 5.2.2.2-ը), նաեւ պետք է համապատասխանի 4.1.5.10-ում եւ 4.1.5.11-ում ներկայացված դրույթներին:</p>								
<p>Փաթեթավորման մասին հատուկ դրույթներ</p> <p>PP21 «B» կամ «C» տեսակների՝ ՄԱԿ-ի նշագրման 3221, 3222, 3223, 3224, 3231, 3232, 3233 եւ 3234 համարների որոշ ինքնառեակտիվ նյութերի դեպքում պետք է օգտագործվի համապատասխանաբար OP5 կամ OP6 ծածկագրերի փաթեթավորման մեթոդներով թույլատրվածից ավելի փոքր չափսի փաթեթվածք (տե՛ս 4.1.7-ը եւ 2.2.41.4-ը):</p> <p>PP22 ՄԱԿ-ի նշագրման 3241 համարի՝ 2-բրոմո-2-նիտրոպրոպան-1, 3-դիոլը պետք է փաթեթավորի OP6 ծածկագրի փաթեթավորման մեթոդի համաձայն:</p>								

P600	ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ՑՈՒՑՈՒՄ	P600
Այս ցուցումը կիրառելի է ՄԱԿ-ի նշագրման 1700, 2016 եւ 2017 համարների նկատմամբ:		
<p>Հետեւյալ փաթեթվածքները թույլատրվում են՝ պայմանով, որ պահպանվեն 4.1.1-ի եւ 4.1.3-ի ընդհանուր դրույթները.</p> <p>արտաքին փաթեթվածքները (1A1, 1A2, 1B1, 1B2, 1N1, 1N2, 1H1, 1H2, 1D, 1G, 4A, 4B, 4N, 4C1, 4C2, 4D, 4F, 4G, 4H2), որոնք համապատասխանում են փաթեթավորման II խմբի որակի ցուցանիշներին: Պատրաստվածքները պետք է առանձին փաթեթավորվեն եւ միմյանցից առանձնացվեն միջնորմներով, բաժանարարներով, ներքին փաթեթվածքներով կամ պաշտպանիչ նյութերով՝ փոխադրման բնականոն պայմաններում պատահական արտանետումը կանխելու համար:</p> <p>Առավելագույն զտաքաշը՝ 75 կգ:</p>		

P601	ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ՑՈՒՑՈՒՄ	P601
<p>Հետեւյալ փաթեթվածքները թույլատրվում են՝ պայմանով, որ պահպանվեն 4.1.1-ի եւ 4.1.3-ի ընդհանուր դրույթները, եւ փաթեթվածքները հերմետիկորեն ամրափակվեն.</p> <p>1) 15 կգ առավելագույն համախառն քաշով համակցված փաթեթվածքները, որոնք բաղկացած են՝</p> <ul style="list-style-type: none"> <li>- յուրաքանչյուրը 1 լիտր առավելագույն քանակությամբ եւ իր տարողության 90%-ից ոչ ավելի չափով լցված մեկ կամ ավելի ապակյա ներքին փաթեթվածքից (փաթեթվածքներից), որի (որոնց) փականը (փականները) պետք է ֆիզիկապես տեղում պահվի (պահվեն) փոխադրման ընթացքում տատանման կամ որել ներգործության հետեւանքով դրանց հետպտուտակումը կամ թուլանալը կանխող ցանկացած միջոցով, եւ որոնք պետք է առանձին տեղադրվեն</li> <li>- ապակյա ներքին փաթեթվածքի (փաթեթվածքների) ամբողջ պարունակությունը կլանելու համար բավարար կլանիչ եւ պաշտպանիչ նյութ ունեցող մետաղյա տարաներում, որոնք այնուհետեւ փաթեթավորվում են</li> <li>- 1A1, 1A2, 1B1, 1B2, 1N1, 1N2, 1H1, 1H2, 1D, 1G, 4A, 4B, 4N, 4C1, 4C2, 4D, 4F, 4G կամ 4H2 արտաքին փաթեթվածքներում.</li> </ul> <p>2) համակցված փաթեթվածքները, որոնք բաղկացած են 5 լիտրից ոչ ավելի տարողությամբ մետաղյա կամ պլաստմասսայե ներքին փաթեթվածքներից, որոնք պարունակությունը կլանելու համար բավարար կլանիչ նյութով եւ իներտ պաշտպանիչ նյութով առանձին փաթեթավորված են 1A1, 1A2, 1B1, 1B2, 1N1, 1N2, 1H1, 1H2, 1D, 1G, 4A, 4B, 4N, 4C1, 4C2, 4D, 4F, 4G կամ 4H2 արտաքին փաթեթվածքներում՝ 75 կգ առավելագույն համախառն քաշով: Ներքին փաթեթվածքները չպետք է լցված լինեն իրենց տարողության 90%-ից ավելի չափով: Յուրաքանչյուր ներքին փաթեթվածքի փական պետք է ֆիզիկապես տեղում պահվի փոխադրման ընթացքում տատանման կամ որել ներգործության հետեւանքով դրա հետպտուտակումը կամ թուլանալը կանխող ցանկացած միջոցով.</p> <p>3) փաթեթվածքները, որոնք բաղկացած են՝</p> <p>արտաքին փաթեթվածքներից՝ պողպատյա կամ պլաստմասսայե թմբկազաններ (1A1, 1A2, 1H1 կամ 1H2), որոնք 6.1.5-ում նշված փորձարկման պահանջների համաձայն փորձարկվել են համակցված փաթեթի զանգվածին համարժեք զանգվածի դեպքում՝ որպես ներքին փաթեթվածքներ պարունակելու համար նախատեսված փաթեթվածք կամ որպես պինդ կամ հեղուկ նյութեր պարունակելու համար նախատեսված առանձին փաթեթվածք եւ նշագրվել են համապատասխանաբար.</p> <p>Ներքին փաթեթվածքներ՝</p> <p>թմբկազաններ եւ բարդ փաթեթվածքներ (1A1, 1B1, 1N1, 1H1 կամ 6HA1), որոնք համապատասխանում են առանձին փաթեթվածքների վերաբերյալ 6.1 գլխում նշված պահանջներին՝ հետեւյալ պայմանների պահպանմամբ՝</p> <ul style="list-style-type: none"> <li>ա) հիդրավիկ ճնշման փորձարկումը պետք է անցկացվի առնվազն 0.3 ՄՊա ճնշման պայմաններում (մանոմետրական ճնշում).</li> <li>բ) նախագծմամբ եւ արտադրությամբ նախատեսված անջրանցիկության փորձարկումները պետք է անցկացվեն 30 կՊա փորձարկման ճնշման պայմաններում.</li> <li>գ) դրանք արտաքին թմբկազանից պետք է առանձնացված լինեն հարվածի ուժգնությունը մեղմացնող պաշտպանիչ իներտ նյութով, որը ներքին փաթեթվածքը պարուրում է բոլոր կողմերից.</li> <li>դ) դրանց տարողությունը չպետք է գերազանցի 125 լիտրը.</li> </ul>		

P601	ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ՑՈՒՑՈՒՄ	P601
<p>ե) փականները պետք է պտուտակավոր թասակի ձեւ ունենան, որոնք՝</p> <p>i) պետք է ֆիզիկապես տեղում պահվեն՝ փոխադրման ընթացքում տատանման կամ որել: ներգործության հետեւանքով դրա հետպտուտակումը կամ թուլանալը կանխող ցանկացած միջոցով, եւ</p> <p>ii) պետք է ապահովված լինեն թասակի խցվածքով.</p> <p>զ) արտաքին եւ ներքին փաթեթվածքները, (բ) կետի համաձայն, պետք է պարբերաբար՝ երկուսուկես տարուց ոչ ավելի տեսողությամբ ընդմիջումներով, ենթարկվեն անջրանցիկության փորձարկման.</p> <p>է) ամբողջական փաթեթվածքը պետք է առնվազն յուրաքանչյուր 3 տարին մեկ վիզուալ կերպով զննվի իրավասու մարմնի պահանջներին համապատասխան, եւ</p> <p>ը) արտաքին եւ ներքին փաթեթվածքների վրա պետք է գտեղվեն հետեւյալ դյուրընթեռնելի եւ չջնջվող մականշվածքները՝</p> <p>i) սկզբնական փորձարկման եւ վերջին պարբերական փորձարկման ու զննության անցկացման ամսաթիվը (ամիսը, տարին).</p> <p>ii) զննությունը եւ փորձարկումն իրականացրած փորձագետի կնիքը.</p> <p>4) ճնշումային տարաներ՝ պայմանով, որ պահպանվեն 4.1.3.6-ի ընդհանուր դրույթները: Դրանք յուրաքանչյուր 10 տարին մեկ պետք է ենթարկվեն սկզբնական եւ պարբերական փորձարկումների՝ ոչ պակաս, քան 1 ՄՊա (10 բար) (մանոմետրական ճնշման) պայմաններում: Ճնշումային տարաների վրա կարող է չտեղադրվել ճնշումը նվազեցնող սարք: Յուրաքանչյուր ճնշումային տարա, որը պարունակում է ներշնչման դեպքում թունավոր հեղուկ՝ «LC50»-ի՝ 200 մլ/մ<sup>3</sup>-ից (միլիոներորդ մաս) պակաս կամ դրան հավասար արժեքով, պետք է փակված լինի խցափակիչով կամ կափույրով՝ հետեւյալ պայմանների բավարարմամբ՝</p> <p>ա) յուրաքանչյուր խցափակիչ կամ կափույր պետք է ունենա կոնաձեւ պտուտակավոր միացք, որն ուղիղ միանում է ճնշումային տարային եւ կարող է դիմանալ ճնշումային տարայի փորձարկման ճնշմանը՝ առանց վնասվածքի կամ արտահոսքի.</p> <p>բ) յուրաքանչյուր կափույր պետք է լինի ոչ խցվածքային տիպի, ունենա ոչ ծակոտկեն դիաֆրագմա՝ բացի կոռոզիոն նյութերի համար նախատեսվածներից, որոնց կափույրը պետք է իրանի կամ ճնշումային տարային միացված կիպարար խցվածքով թասակի միջոցով անգազանցիկ լինի՝ փաթեթավորման միջով կամ առանց դրա նյութի կորուստը կանխելու համար.</p> <p>գ) յուրաքանչյուր արտաթող կափույր պետք է ամրափակված լինի պտուտակավոր թասակով կամ պտուտակավոր կիպ խցափակիչով եւ իներտ խցանիչ նյութով.</p> <p>դ) ճնշումային տարայի, կափույրների, խցափակիչների, արտաթող թասակների, մածիկների եւ խցանիչների պատրաստման համար օգտագործված նյութերը պետք է համատեղելի լինեն միմյանց եւ պարունակության հետ:</p> <p>Յուրաքանչյուր ճնշումային տարա, որի պատի հաստությունը ցանկացած կետում 2.0 մմ-ից պակաս է, եւ յուրաքանչյուր ճնշումային տարա, որի համար նախատեսված չէ կափույրի պաշտպանության սարք, պետք է փոխադրվի արտաքին փաթեթվածքով: Ճնշումային տարաները չպետք է կոլեկտորներով ամրացված կամ միակցված լինեն:</p>		
Փաթեթավորման մասին հատուկ դրույթ		
PP82	(Հանվել է)	
ՌԻԴ-ի եւ «ԱԴՌ» համաձայնագրի համար հատկանշական՝ փաթեթավորմանը վերաբերող հատուկ դրույթներ		
RR3	(Հանվել է)	
RR7	ՄԱԿ-ի նշագրման 1251 համարի դեպքում ճնշումային տարաները, այնուամենայնիվ, յուրաքանչյուր հինգ տարին մեկ պետք է ենթարկվեն փորձարկման:	
RR10	ՄԱԿ-ի նշագրման 1614 համարի բեռները, որոնք ամբողջությամբ կլանվում են ծակոտկեն նյութի կողմից, պետք է փաթեթավորվեն 7.5 լիտրից ոչ ավելի տարողությամբ մետաղյա տարաներում, փայտյա տուփերի մեջ տեղադրվեն այնպես, որ բացառվի միմյանց հետ շփումը: Տարաները պետք է ամբողջությամբ լցված լինեն ծակոտկեն նյութով, որը նույնիսկ երկարատեւ օգտագործումից հետո կամ ազդեցության հետեւանքով, անգամ մինչեւ 50 °C ջերմաստիճանի պայմաններում չի թափահարվի կամ վտանգավոր տարածություն չի առաջացնի:	



Հետեւյալ փաթեթվածքները թույլատրվում են՝ պայմանով, որ պահպանվեն 4.1.1-ի եւ 4.1.3-ի ընդհանուր դրույթները, եւ փաթեթվածքները հերմետիկորեն ամրափակվեն.

1) 15 կգ առավելագույն համախառն քաշով համակցված փաթեթվածքները, որոնք բաղկացած են՝

- յուրաքանչյուր 1 լիտր առավելագույն քանակությամբ եւ իր տարողության 90%-ից ոչ ավելի չափով լցված մեկ կամ ավելի ապակյա ներքին փաթեթվածքից (փաթեթվածքներից), որի (որոնց) փականը (փականները) պետք է ֆիզիկապես տեղում պահվի (պահվեն) փոխադրման ընթացքում տատանման կամ որելէ ներգործության հետեւանքով դրանց հետպտուտակումը կամ թուլանալը կանխող ցանկացած միջոցով, եւ որոնք պետք է առանձին տեղադրվեն

- ապակյա ներքին փաթեթվածքի (փաթեթվածքների) ամբողջ պարունակությունը կլանելու համար բավարար կլանիչ եւ պաշտպանիչ նյութ ունեցող մետաղյա տարաներում, որոնք այնուհետեւ փաթեթավորվում են

- 1A1, 1A2, 1B1, 1B2, 1N1, 1N2, 1H1, 1H2, 1D, 1G, 4A, 4B, 4N, 4C1, 4C2, 4D, 4F, 4G կամ 4H2 արտաքին փաթեթվածքներում.

2) համակցված փաթեթվածքները, որոնք բաղկացած են մետաղյա կամ պլաստմասսայե ներքին փաթեթվածքներից, որոնք ամբողջ պարունակությունը կլանելու համար բավարար կլանիչ նյութով եւ իներտ պաշտպանիչ նյութով առանձին փաթեթավորված են 1A1, 1A2, 1B1, 1B2, 1N1, 1N2, 1H1, 1H2, 1D, 1G, 4A, 4B, 4N, 4C1, 4C2, 4D, 4F, 4G կամ 4H2 արտաքին փաթեթվածքներում՝ 75 կգ առավելագույն համախառն քաշով: Ներքին փաթեթվածքները չպետք է լցված լինեն իրենց տարողության 90%-ից ավելի չափով: Յուրաքանչյուր ներքին փաթեթվածքի փական պետք է ֆիզիկապես տեղում պահվի փոխադրման ընթացքում տատանման կամ որելէ ներգործության հետեւանքով դրա հետպտուտակումը կամ թուլանալը կանխող ցանկացած միջոցով: Ներքին փաթեթվածքների տարողությունը չպետք է գերազանցի 5 լիտրը.

3) թմբկազլանների եւ բարդ փաթեթվածքների դեպքում (1A1, 1B1, 1N1, 1H1, 6HA1 կամ 6HH1) պետք է բավարարվեն հետեւյալ պայմանները՝

ա) հիդրավիկ ճնշման փորձարկումը պետք է անցկացվի առնվազն 0.3 ՄՊա ճնշման պայմաններում (մանոմետրական ճնշում).

բ) նախագծմամբ եւ արտադրությամբ նախատեսվող անջրանցիկության փորձարկումները պետք է իրականացվեն 30 կՊա փորձարկման ճնշման պայմաններում, եւ

գ) փականները պետք է պտուտակավոր թասակի ձեւ ունենան, որոնք՝

i) պետք է ֆիզիկապես տեղում պահվեն՝ փոխադրման ընթացքում տատանման կամ որելէ ներգործության հետեւանքով դրա հետպտուտակումը կամ թուլանալը կանխող ցանկացած միջոցով, եւ

ii) պետք է ապահովված լինեն թասակի խցվածքով.

4) ճնշումային տարաներ՝ պայմանով, որ պահպանվեն 4.1.3.6-ի ընդհանուր դրույթները: Դրանք յուրաքանչյուր 10 տարին մեկ պետք է ենթարկվեն սկզբնական եւ պարբերական փորձարկումների՝ ոչ պակաս, քան 1 ՄՊա (10 բար) (մանոմետրական ճնշման) պայմաններում: Ճնշումային տարաների վրա կարող է չտեղադրվել ճնշումը նվազեցնող սարք: Յուրաքանչյուր ճնշումային տարա, որը պարունակում է ներշնչման դեպքում թունավոր հեղուկ՝ «LC50»-ի՝ 200 մլ/մ<sup>3</sup>-ից (միլիոներորդ մաս) պակաս կամ դրան հավասար արժեքով, պետք է փակված լինի խցափակիչով կամ կափույրով՝ հետեւյալ պայմանների բավարարմամբ՝

ա) յուրաքանչյուր խցափակիչ կամ կափույր պետք է ունենա կոնաձեւ պտուտակավոր միացք, որն ուղիղ միանում է ճնշումային տարային եւ կարող է դիմանալ ճնշումային տարայի փորձարկման ճնշմանը՝ առանց վնասվածքի կամ արտահոսքի.

բ) յուրաքանչյուր կափույր պետք է լինի ոչ խցվածքային տիպի, ունենա ոչ ծակոտկեն դիաֆրագմա՝ բացի կոռոզիոն նյութերի համար նախատեսվածներից, որոնց կափույրը պետք է իրանի կամ ճնշումային տարային միացված կիպարար խցվածքով թասակի միջոցով անզազանցիկ լինի՝ փաթեթավորման միջով

կամ առանց դրա նյութի կորուստը կանխելու համար.

գ) յուրաքանչյուր արտաթող կափույր պետք է ամրափակված լինի պտուտակավոր թասակով կամ պտուտակավոր կիպ խցափակիչով եւ իներտ խցանիչ նյութով.

դ) ճնշումային տարայի, կափույրների, խցափակիչների, արտաթող թասակների, մածիկների եւ խցանիչների պատրաստման համար օգտագործված նյութերը պետք է համատեղելի լինեն միմյանց եւ պարունակության հետ:

Յուրաքանչյուր ճնշումային տարա, որի պատի հաստությունը ցանկացած կետում 2.0 մմ-ից պակաս է, եւ յուրաքանչյուր ճնշումային տարա, որի համար նախատեսված չէ կափույրի պաշտպանության սարք, պետք է փոխադրվի արտաքին փաթեթվածքով: Ճնշումային տարաները չպետք է կոլեկտորներով ամրացված կամ միակցված լինեն:

Այս ցուցումը կիրառելի է ՄԱԿ-ի նշագրման 3507 համարի նկատմամբ:

Հետեւյալ փաթեթվածքները թույլատրվում են՝ պայմանով, որ պահպանվեն 4.1.1-ի եւ 4.1.3-ի ընդհանուր դրույթները եւ 4.1.9.1.2-ի, 4.1.9.1.4-ի եւ 4.1.9.1.7-ի փաթեթավորման վերաբերյալ հատուկ դրույթները.

Հետեւյալները պարունակող փաթեթվածքները՝

- ա) մետաղյա կամ պլաստմասայե առաջնային տարա (տարաներ)՝ տեղադրված հետեւյալի մեջ.
- բ) անջրանցիկ կոշտ երկրորդային փաթեթվածք (փաթեթվածքներ)՝ տեղադրված հետեւյալի մեջ.
- գ) կոշտ արտաքին փաթեթվածք՝  
 թմբկազլաններ (1A2, 1B2, 1N2, 1H2, 1D, 1G).  
 արկղեր (4A, 4B, 4C1, 4C2, 4D, 4F, 4G, 4H1, 4H2).  
 կանխստրներ (3A2, 3B2, 3H2):

Լրացուցիչ պահանջներ.

1. Առաջնային ներքին տարաները պետք է փաթեթավորվեն երկրորդային փաթեթվածքների մեջ այնպես, որ փոխադրման բնականոն պայմաններում անհնար լինի դրանց կոտրվելը, պատռվելը կամ դրանց պարունակության արտահոսելը եւ երկրորդային փաթեթվածքի մեջ լցվելը: Երկրորդային փաթեթվածքները պետք է ապահով տեղադրվեն համապատասխան պաշտպանիչ նյութերից կազմված արտաքին փաթեթվածքների մեջ՝ դրանց տեղաշարժը կանխելու համար: Եթե մեկ երկրորդային փաթեթվածքում մի քանի առաջնային տարա է գետեղված, ապա դրանք պետք է կա՛մ փաթեթվեն առանձին, կա՛մ առանձնացվեն՝ միմյանց միջեւ շփումը կանխելու նպատակով:
2. Պարունակությունը պետք է համապատասխանի 2.2.7.2.4.5.2-ի դրույթներին:
3. Պետք է պահպանվեն 6.4.4-ի դրույթները:

Փաթեթավորման մասին հատուկ դրույթ

Տրոհվող-ազատված նյութի դեպքում պետք է պահպանվեն 2.2.7.2.3.5-ում սահմանված սահմանաչափերը:

P620 ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ՑՈՒՑՈՒՄ	P620
Այս ցուցումը կիրառելի է ՄԱԿ-ի նշագրման 2814 եւ 2900 համարների նկատմամբ:	
Հետեւյալ փաթեթվածքները թույլատրվում են՝ պայմանով, որ պահպանվեն 4.1.8-ի փաթեթավորման վերաբերյալ հատուկ դրոյթները.	
<p>6.3 գլխում նշված պահանջները բավարարող եւ համապատասխանաբար հաստատված փաթեթվածքները, որոնք պարունակում են՝</p> <p>ա) ներքին փաթեթվածքներ՝</p> <p>i) անջրանցիկ առաջնային տարայով (տարաներով).</p> <p>ii) անջրանցիկ երկրորդային փաթեթվածքով.</p> <p>iii) պինդ վարակիչ նյութեր չհանդիսացող այլ նյութերի դեպքում՝ առաջնային տարայի (տարաների) եւ երկրորդային փաթեթվածքի միջեւ առկա ամբողջ պարունակությունը կլանելու համար անհրաժեշտ բավարար քանակությամբ կլանիչ նյութ, եթե մեկ երկրորդային փաթեթվածքի մեջ մի քանի առաջնային տարա է տեղադրված, ապա դրանք կա՛մ պետք է փաթաթվեն առանձին, կա՛մ առանձնացվեն՝ միմյանց միջեւ շփումը կանխելու նպատակով.</p> <p>բ) կոշտ արտաքին փաթեթվածք՝</p> <p>թմբկազվաններ (1A1, 1A2, 1B1, 1B2, 1N1, 1N2, 1H1, 1H2, 1D, 1G).</p> <p>արկղեր (4A, 4B, 4N, 4C1, 4C2, 4D, 4F, 4G, 4H1, 4H2).</p> <p>կանխտրներ (3A1, 3A2, 3B1, 3B2, 3H1, 3H2):</p> <p>Ամենափոքր եզրաչափը չպետք է 100 մմ-ից պակաս լինի:</p>	
<p>Լրացուցիչ պահանջներ.</p> <p>1) Վարակիչ նյութեր պարունակող ներքին փաթեթվածքները չպետք է համակցվեն դրանց հետ կապ չունեցող ապրանքներ պարունակող ներքին փաթեթվածքների հետ: Ամբողջական փաթեթները, 1.2.1-ի եւ 5.1.2-ի դրոյթների համաձայն, կարող են ամփոփվել մեկ տրանսպորտային կապոցի մեջ, եւ այդօրինակ տրանսպորտային կապոցը կարող է չոր սառույց պարունակել:</p> <p>2) Հատուկ բեռներ չհանդիսացող այլ, օրինակ՝ ամբողջական տարրերի դեպքում, որոնց համար պահանջվում է հատուկ փաթեթավորում, կիրառվում են հետեւյալ լրացուցիչ պահանջները՝</p> <p>ա) արտաքին միջավայրի ջերմաստիճանում կամ դրանից բարձր ջերմաստիճանում առաքված նյութերի դեպքում առաջնային տարաները պետք է լինեն ապակուց, մետաղից կամ պլաստմասսայից: Պետք է նախատեսվեն խցվածքի անջրանցիկությունն ապահովող կոնկրետ միջոցներ, ինչպիսիք են, օրինակ՝ ջերմամեկուսիչ խցվածքը, եզրաշերտ խցանը կամ մետաղական շրջասեղմիչ խցվածքը: Պտուտակավոր թասակներ օգտագործելու դեպքում դրանք պետք է պաշտպանված լինեն կոնկրետ միջոցներով, ինչպիսիք են, օրինակ՝ ժապավենը, պարաֆինից հերմետիկացնող ժապավենը կամ գործարանային արտադրության բլոկավորող փականը.</p> <p>բ) սառնապահված կամ սառեցված վիճակում առաքված նյութերի դեպքում սառույցը, չոր սառույցը կամ մյուս սառնազդակները պետք է դրված լինեն երկրորդային փաթեթվածքի (փաթեթվածքների) շուրջը կամ որպես այլընտրանքային տարբերակ՝ մեկ կամ մի քանի ամբողջական փաթեթներ պարունակող եւ 6.3.3-ի համաձայն նշագրված տրանսպորտային կապոցի մեջ: Պետք է նախատեսվեն ներքին հենարաններ՝ սառույցը կամ չոր սառույցը վերջանալու դեպքում երկրորդային փաթեթվածքը (փաթեթվածքները) կամ փաթեթներն անխախտ պահելու համար: Սառույցի կիրառման դեպքում արտաքին փաթեթվածքը կամ տրանսպորտային կապոցը պետք է անջրանցիկ լինի: Չոր սառույցի կիրառման դեպքում արտաքին փաթեթվածքը կամ տրանսպորտային կապոցը պետք է լինի այնպիսին, որ թույլ տա ածխաթթու գազի հեռացումը: Առաջնային տարան եւ երկրորդային փաթեթվածքը պետք է իրենց ամբողջականությունը պահպանեն օգտագործված սառնազդակի համար անհրաժեշտ ջերմաստիճանի պայմաններում.</p> <p>գ) այն նյութերի դեպքում, որոնք առաքվում են հեղուկ ազոտի մեջ, պետք է օգտագործվեն շատ ցածր ջերմաստիճանային պայմաններում դիմացկուն պլաստմասսայից առաջնային տարաներ: Երկրորդային փաթեթվածքը նույնպես պետք է դիմացկուն լինի շատ ցածր ջերմաստիճանային պայմաններում, եւ շատ դեպքերում այն պետք է առանձին տեղադրվի առաջնային տարայի վրա: Պետք է բավարարվեն նաեւ հեղուկ ազոտի փոխադրման վերաբերյալ դրոյթները: Առաջնային տարան եւ երկրորդային փաթեթվածքը պետք է իրենց ամբողջականությունը պահպանեն հեղուկ ազոտի համար անհրաժեշտ ջերմաստիճանի պայմաններում.</p> <p>դ) լիոֆիլացված նյութերը նույնպես կարող են փոխադրվել առաջնային տարաներում, որոնք հրակայուն ապակյա սրվակներ կամ ռետինե խցանով ապակյա փորձանոթներ են, որոնց վրա հարմարեցված են մետաղյա խցվածքներ:</p> <p>3) Անկախ բեռի համար նախատեսված ջերմաստիճանից՝ առաջնային տարան կամ երկրորդային փաթեթվածքը պետք է կարողանա առանց արտահոսքի դիմակայել ոչ պակաս, քան 95 կՊա ճնշման գրադիենտ առաջացնող ներքին ճնշմանը եւ -40 °C-ից մինչեւ +55 °C ջերմաստիճանային պայմաններին:</p> <p>4) 6.2 դասին պատկանող վարակիչ նյութերի հետ միեւնույն փաթեթվածքում չպետք է փաթեթավորվեն այլ վտանգավոր բեռներ, եթե միայն դրանք անհրաժեշտ չեն վարակիչ նյութերի կենսունակությունը պահպանելու, դրանք քայքայումը կանխելու կամ կայունացնելու կամ դրանց հետեւանքով առաջացող վտանգները չեզոքացնելու համար: Վարակիչ նյութեր պարունակող յուրաքանչյուր առաջնային տարայում կարող են փաթեթավորվել 3-րդ, 8-րդ կամ 9-րդ դասում ներառված՝ 30 մլ կամ ավելի քիչ քանակությամբ վտանգավոր բեռներ: 3-րդ, 8-րդ կամ 9-րդ դասերի վտանգավոր բեռների այդ փոքր քանակությունների նկատմամբ «ԱԴՌ» համաձայնագրի լրացուցիչ որեւէ պահանջ չի ներկայացվում, եթե դրանք փաթեթավորված են փաթեթավորման սույն ցուցման համաձայն:</p>	

P620	ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ՅՈՒՑՈՒՄ	P620
5) Կենդանական ծագման նյութերի փոխադրման համար նախատեսված այլընտրանքային փաթեթվածքները ծագման երկրի իրավասու մարմնի <sup>ա</sup> կողմից կարող են թույլատրվել 4.1.8.7-ի դրույթների համաձայն:		

P621	ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ՅՈՒՑՈՒՄ	P621
Այս ցուցումը կիրառելի է ՄԱԿ-ի նշագրման 3291 համարի նկատմամբ:		
<p>Հետևյալ փաթեթվածքները թույլատրվում են՝ պայմանով, որ պահպանվեն 4.1.1-ի՝ բացի 4.1.1.15-ից, եւ 4.1.3-ի ընդհանուր դրույթները՝</p> <p>1) պայմանով, որ դրանցում առկա է փաթեթվածքում եղած հեղուկի ամբողջ պարունակությունը կլանելու համար անհրաժեշտ բավականաչափ կլանիչ նյութ, եւ փաթեթվածքը կարող է հեղուկը պահել իր ներսում.</p> <p>թմբկազաններ (1A2, 1B2, 1N2, 1H2, 1D, 1G),</p> <p>արկղեր (4A, 4B, 4N, 4C1, 4C2, 4D, 4F, 4G, 4H1, 4H2),</p> <p>կանխտրներ (3A2, 3B2, 3H2):</p> <p>Փաթեթվածքները պետք է համապատասխանեն փաթեթավորման II խմբի պինդ նյութերի համար նախատեսված որակի ցուցանիշներին:</p> <p>2) Ավելի մեծ քանակությամբ հեղուկ պարունակող փաթեթների դեպքում.</p> <p>թմբկազաններ (1A1, 1A2, 1B1, 1B2, 1N1, 1N2, 1H1, 1H2, 1D, 1G),</p> <p>կանխտրներ (3A1, 3A2, 3B1, 3B2, 3H1, 3H2),</p> <p>բաղկացուցիչ տարաներ (6HA1, 6HB1, 6HG1, 6HH1, 6HD1, 6HA2, 6HB2, 6HC, 6HD2, 6HG2, 6HH2, 6PA1, 6PB1, 6PG1, 6PD1, 6PH1, 6PH2, 6PA2, 6PB2, 6PC, 6PG2 կամ 6PD2):</p> <p>Փաթեթվածքները պետք է համապատասխանեն փաթեթավորման II խմբի հեղուկների համար նախատեսված որակի ցուցանիշներին:</p> <p>Լրացուցիչ պահանջ.</p> <p>Այն փաթեթվածքները, որոնք նախատեսված են այնպիսի սուր առարկաներ պարունակելու համար, ինչպիսիք են կտրված ապակիները եւ ասեղները, պետք է պատռվածքադիմացկուն լինեն եւ կարողանան 6.1 գլխում նշված որակի փորձարկման պայմաններում հեղուկը պահել ներսում:</p>		

<sup>ա</sup> Եթե ծագման երկիրը «ԱԴԴ» համաձայնագրի Պայմանավորվող կողմ չէ, ապա բեռի փոխադրման երթուղով «ԱԴԴ» համաձայնագրի Պայմանավորվող կողմ հանդիսացող այն երկրի իրավասու մարմինը, որի տարածքով առաջինն է անցնում բեռը:

Այս ցուցումը կիրառելի է ՄԱԿ-ի նշագրման 3373 համարի նկատմամբ:

1) Փաթեթվածքը պետք է լինի բարձրորակ, բավականաչափ ամուր՝ փոխադրման, այդ թվում՝ բեռնատար տրանսպորտային միավորների միջև եւ բեռնատար տրանսպորտային միավորների ու պահեստների միջև փոխաբեռումների, ինչպես նաեւ ձեռքով կամ մեխանիկական եղանակով հետագա մշակման նպատակով տակդիրի վրայից կամ տրանսպորտային կապոցից հանելու ժամանակ սովորաբար առաջացող ցնցումներին եւ բեռնվածքներին դիմակայելու համար: Փաթեթվածքների կառուցվածքը պետք է լինի այնպիսին, եւ դրանք պետք է փակված լինեն այնպես, որ հնարավոր լինի կանխել դրանց պարունակության ցանկացած կորուստ, որը կարող է առաջանալ փոխադրման բնականոն պայմաններում՝ տատանման կամ ջերմաստիճանի փոփոխության, խոնավության կամ ճնշման հետեւանքով:

2) Փաթեթվածքը պետք է բաղկացած լինի առնվազն հետեւյալ երեք բաղադրիչներից՝


ա) առաջնային տարայից.

բ) երկրորդային փաթեթվածքից, եւ

գ) արտաքին փաթեթվածքից, որոնցից կա՛մ երկրորդային, կա՛մ արտաքին փաթեթվածքը պետք է կոշտ լինի:

3) Առաջնային տարաները պետք է փաթեթավորվեն երկրորդային փաթեթվածքների մեջ այնպես, որ փոխադրման բնականոն պայմաններում անհնար լինի դրանց կոտրվելը, պատռվելը կամ դրանց պարունակության արտահոսելը եւ երկրորդային փաթեթվածքի մեջ լցվելը: Երկրորդային փաթեթվածքները պետք է ապահով կերպով տեղադրվեն համապատասխան պաշտպանիչ նյութից կազմված արտաքին փաթեթվածքների մեջ: Պարունակության ցանկացած արտահոսքի դեպքում չպետք է խախտվի պաշտպանիչ նյութի կամ արտաքին փաթեթվածքի ամբողջականությունը:

4) Փոխադրման համար արտաքին փաթեթվածքի արտաքին մակերեսի վրա պետք է կոնտրաստային գույնի ֆոնի վրա պատկերված լինի ներքեւում ներկայացված նշանը, որը պետք է հստակ տեսանելի եւ ընթեռնելի լինի: Նշանը պետք է ունենա 45° անկյան տակ պատկերված քառակուսու տեսք (ադամանդաձեւ)՝ 50մմ x 50 մմ նվազագույն չափսով. գծի լայնությունը պետք է լինի առնվազն 2 մմ, իսկ տառերի եւ թվերի բարձրությունը՝ 6մմ: «ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՆՅՈՒԹ, «Բ» ԿԱՏԵԳՈՐԻԱ» բեռնաառքման ճշգրիտ անվանումը՝ առնվազն 6մմ բարձրության տառերով, պետք է նշվի արտաքին փաթեթվածքի վրա՝ ադամանդաձեւ նշանի հարեւանությամբ:



Նվազագույն չափսը՝ 50մմ

Նվազագույն չափսը՝ 50մմ

5) Արտաքին փաթեթվածքի առնվազն մեկ մակերեսը պետք է ունենա նվազագույնը 100 մմ x 100 մմ չափս:

6) Ամբողջական փաթեթը պետք է բարեհաջող անցնի 6.3.5.3-ում նշված անկման փորձարկումը 1.2 մետր բարձրությունից, ինչպես նշված է 6.3.5.2-ում: Համապատասխան անկման փորձարկումից հետո առաջնային տարայից (տարաներից) չպետք է արտահոսք գրանցվի, եւ այն պետք է շարունակի մնալ կլանիչ նյութով պաշտպանված, իսկ անհրաժեշտության դեպքում՝ տեղադրվի երկրորդային փաթեթվածքի մեջ:

7) Հեղուկ նյութերի դեպքում՝

ա) առաջնային տարան (տարաները) պետք է անջրանցիկ լինի (լինեն)։

բ) երկրորդային փաթեթվածքը պետք է անջրանցիկ լինի։

գ) եթե առանձին երկրորդային փաթեթվածքում մի քանի փխրուն առաջնային տարաներ են զետեղված, ապա դրանք կամ պետք է փաթեթավորվեն առանձին, կամ առանձնացվեն՝ միմյանց միջև շփումը կանխելու նպատակով։

դ) առաջնային տարայի (տարաների) եւ երկրորդային փաթեթվածքի միջև պետք է կլանիչ նյութ զետեղվի: Կլանիչ նյութը պետք է ունենա առաջնային տարայի (տարաների) ամբողջ պարունակությունը կլանելու համար անհրաժեշտ բավարար քանակություն, որպեսզի հեղուկ նյութի ցանկացած արտահոսքի դեպքում չխախտվի պաշտպանիչ նյութի կամ արտաքին փաթեթվածքի ամբողջականությունը։

ե) առաջնային տարան կամ երկրորդային փաթեթվածքը պետք է կարողանա առանց արտահոսքի դիմակայել 95 կՊա (0.95 բար) ներքին ճնշմանը։

8) Պինդ նյութերի դեպքում՝

ա) առաջնային տարան (տարաները) պետք է անթափանցելի լինի (լինեն)։

բ) երկրորդային փաթեթվածքը պետք է անթափանցելի լինի։

գ) եթե առանձին երկրորդային փաթեթվածքում մի քանի փխրուն առաջնային տարաներ են զետեղված, ապա դրանք կամ պետք է փաթեթավորվեն առանձին, կամ առանձնացվեն՝ միմյանց միջև շփումը կանխելու նպատակով։

դ) այն դեպքում, երբ կասկած կա, որ առաջնային տարայում փոխադրման ընթացքում կարող է մնացորդային հեղուկ լինել, ապա պետք է օգտագործվեն հեղուկների համար համապատասխան փաթեթվածքներ, այդ թվում՝ կլանիչ նյութեր։

9) Սառնապահված կամ սառեցված նմուշների՝ սառույցի, չոր սառույցի եւ հեղուկ ազոտի դեպքում՝

ա) երբ չոր սառույցը կամ հեղուկ ազոտը օգտագործվում է որպես սառեցնող նյութ, կիրառվում են 5.5.3-ի պահանջները: Օգտագործման դեպքում սառույցը պետք է տեղադրվի երկրորդային փաթեթվածքի դրսի կողմում կամ արտաքին փաթեթվածքի կամ տրանսպորտային կապոցի ներսում: Պետք է նախատեսվեն ներքին հենարաններ՝ երկրորդային փաթեթվածքներն սկզբնական դիրքում պահելու համար: Սառույցի կիրառման դեպքում արտաքին փաթեթվածքը կամ տրանսպորտային կապոցը պետք է անջրանցիկ լինի։

բ) առաջնային տարան եւ երկրորդային փաթեթվածքը պետք է կարողանան պահպանել իրենց ամբողջականությունն օգտագործված սառնագրակի համար անհրաժեշտ ջերմաստիճանում, ինչպես նաեւ սառնապահումը չհաջողելու դեպքում առաջացող ջերմաստիճանային եւ ճնշման պայմաններում:

10) Երբ փաթեթները տեղադրվում են տրանսպորտային կապոցի մեջ, ապա փաթեթների՝ փաթեթավորման սույն ցուցման համաձայն պահանջվող մակնշումները պետք է կամ հստակ տեսանելի լինեն, կամ վերարտադրվեն տրանսպորտային կապոցի դրսի կողմում:

11) ՄԱԿ-ի նշագրման 3373 համարին դասվող փաթեթավորված վարակիչ նյութերը եւ փաթեթները, որոնք մակնշված են փաթեթավորման սույն ցուցմանը համապատասխան, ենթակա չեն «ԱԴԲ» համաձայնագրի որեւէ այլ պահանջի բավարարմանը:

12) Փաթեթվածքներն արտադրողները եւ դրանց բաշխողներն այդ փաթեթվածքների լցավորման եւ ամրափակման վերաբերյալ հստակ ցուցումներ պետք է տրամադրեն բեռնառաքողին կամ փաթեթը պատրաստող անձին (օրինակ՝ հաճախորդին), որպեսզի փաթեթները ճիշտ կերպով նախապատրաստվեն փոխադրման համար:

13) 6.2 դասին պատկանող վարակիչ նյութերի հետ միեւնոյն փաթեթվածքում չպետք է փաթեթավորվեն այլ վտանգավոր բեռներ, եթե միայն դրանք անհրաժեշտ չեն վարակիչ նյութերի կենսունակությունը պահպանելու, դրանց քայքայումը կանխելու կամ կայունացնելու կամ դրանց հետեանքով առաջացող վտանգները չեզոքացնելու համար: Վարակիչ նյութեր պարունակող յուրաքանչյուր առաջնային տարայում կարող են փաթեթավորվել 3-րդ, 8-րդ կամ 9-րդ դասում ներառված՝ 30 մլ կամ ավելի քիչ քանակությամբ վտանգավոր բեռներ: Այն դեպքում, երբ վտանգավոր բեռների այդ փոքր քանակությունները փաթեթավորված են վարակիչ նյութերի հետ փաթեթավորման սույն ցուցմանը համապատասխան, ապա կարիք չկա կատարել «ԱԴԲ» համաձայնագրի մյուս պահանջները:

14) Եթե որեւէ նյութ արտահոսել է թափվել է բեռնատար տրանսպորտային միավորի մեջ, այն չի կարող կրկին օգտագործվել, քանի դեռ այն մանրակրկիտ ձեռով չի մաքրվել եւ անհրաժեշտության դեպքում՝ ախտահանվել կամ վարակազերծվել: Միեւնոյն փոխադրամիջոցով կամ կոնտեյներով փոխադրվող այլ բեռներ եւ պատրաստվածքներ պետք է ստուգվեն հնարավոր վարակված լինելու մասով:

Լրացուցիչ պահանջ.

Կենդանական ծագման նյութերի փոխադրման համար նախատեսված այլընտրանքային փաթեթվածքները ծագման երկրի իրավասու մարմին<sup>13</sup> կողմից կարող են թույլատրվել 4.1.8.7-ի դրույթների համաձայն:

<sup>13</sup> Եթե ծագման երկիրը «ԱԴԲ» համաձայնագրի Պայմանավորվող կողմ չէ, ապա բեռի փոխադրման երթուղով «ԱԴԲ» համաձայնագրի Պայմանավորվող կողմ հանդիսացող այն երկրի իրավասու մարմինը, որի փորձաքննում առաջինն է անցնում բեռը:

P800 ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ՑՈՒՑՈՒՄ	P800
Այս ցուցումը կիրառելի է ՄԱԿ-ի նշագրման 2803 եւ 2809 համարների նկատմամբ:	
<p>Հետեւյալ փաթեթվածքները թույլատրվում են՝ պայմանով, որ պահպանվեն 4.1.1-ի եւ 4.1.3-ի ընդհանուր դրույթները.</p> <p>1) Ճնշումային տարաներ՝ պայմանով, որ պահպանվեն 4.1.3.6-ի ընդհանուր դրույթները.</p> <p>2) 3 լիտրը չգերազանցող տարողությամբ եւ պտուտակավոր փականներով պողպատյա կուլթաներ կամ շշեր, կամ</p> <p>3) համակցված փաթեթվածքներ, որոնք համապատասխանում են հետեւյալ պահանջներին՝</p> <p>ա) ներքին փաթեթվածքները պետք է պատրաստված լինեն հեղուկներ պարունակելու համար նախատեսված ապակուց, մետաղից կամ կոշտ պլաստմասսայից՝ յուրաքանչյուրը առավելագույնը 15 կգ զտաքաշով.</p> <p>բ) ներքին փաթեթվածքները պետք է փաթեթավորվեն կոտրվելը կանխող՝ բավականաչափ պաշտպանիչ նյութով.</p> <p>գ) կա՛մ ներքին, կա՛մ արտաքին փաթեթվածքները պետք է ունենան ամուր, անջրանցիկ եւ չպատռվող նյութից պարկեր կամ ներքին ներդիրներ, որոնցից պարունակությունը չի կարող դուրս թափանցել, եւ որոնք ամբողջությամբ պատում են պարունակությունը՝ փաթեթից դրա դուրս թափանցումը կանխելու համար՝ անկախ դրա դիրքից կամ ուղղությունից.</p> <p>դ) թույլատրվում են հետեւյալ արտաքին փաթեթվածքները եւ առավելագույն զտաքաշերը՝</p>	
Արտաքին փաթեթվածք՝	Առավելագույն զտաքաշ
Թմբկազաններ	
պողպատյա (1A1, 1A2)	400 կգ
պողպատ կամ ալյումին չհանդիսացող այլ մետաղից (1N1, 1N2)	400 կգ
պլաստմասսայից (1H1, 1H2)	400 կգ
նրբատախտակից (1D)	400 կգ
ֆիբրից (1G)	400 կգ
Արկղեր	
պողպատյա (4A)	400 կգ
պողպատ կամ ալյումին չհանդիսացող այլ մետաղից (4N)	400 կգ
բնական փայտից (4C1)	250 կգ
բնական փայտից՝ անթափանցելի պատերով (4C2)	250 կգ
նրբատախտակից (4D)	250 կգ
վերամշակված փայտից (4F)	125 կգ
փայտաթելքային սալից (4G)	125 կգ
փրփրապլաստից (4H1)	60 կգ
պինդ պլաստմասսայից (4H2)	125 կգ
Փաթեթավորման մասին հատուկ դրույթ	
PP41	<p>ՄԱԿ-ի նշագրման 2803 համարի դեպքում, երբ գալիումն ամբողջապես պինդ վիճակում պահելու համար անհրաժեշտ է այն տեղափոխել ցածր ջերմաստիճանային պայմաններում, վերը նշված փաթեթվածքները կարող են տեղադրվել ամուր, ջրակայուն եւ չոր սառույց կամ սառնապահման համար նախատեսված այլ միջոցներ պարունակող արտաքին փաթեթվածքի մեջ: Սառնազդակի օգտագործման դեպքում գալիումի փաթեթավորման համար օգտագործված բոլոր նյութերը պետք է քիմիապես եւ ֆիզիկապես կայուն լինեն այդ սառնազդակի նկատմամբ եւ պետք է կարողանան դիմակայել օգտագործված սառնազդակի համար պահանջվող ցածր ջերմաստիճանի ազդեցությանը: Չոր սառույցի օգտագործման դեպքում արտաքին փաթեթվածքը պիտի լինի այնպիսին, որ թույլ տա անխաթառ գազի հեռացումը:</p>

P801	ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ՑՈՒՑՈՒՄ	P801
Սույն ցուցումը վերաբերում է ՄԱԿ-ի նշագրման 2794, 2795 կամ 3028 համարների՝ նոր եւ օգտագործված մարտկոցների նկատմամբ:		
Հետեւյալ փաթեթվածքները թույլատրվում են՝ պայմանով, որ պահպանվեն 4.1.1-ի՝ բացի 4.1.1.3-ից, եւ 4.1.3-ի ընդհանուր դրույթները՝		
<ol style="list-style-type: none"> <li>1) կոշտ արտաքին փաթեթվածքներ.</li> <li>2) փայտյա շերտաձողերով արկղեր.</li> <li>3) տակդիրներ:</li> </ol>		
Լրացուցիչ պահանջներ.		
<ol style="list-style-type: none"> <li>1. Մարտկոցները պետք է պաշտպանված լինեն կարճ միացումներից:</li> <li>2. Դասավորված մարտկոցների համար պետք է ապահովվի համապատասխան անվտանգություն՝ դրանք ոչ հաղորդիչ նյութի շերտով շարքերով առանձնացնելու միջոցով:</li> <li>3. Մարտկոցի հպակները չպետք է իրենց վրա կրեն մարտկոցի վրա դրված այլ տարրերի ծանրությունը:</li> <li>4. Մարտկոցները պետք է փաթեթավորված կամ պաշտպանված լինեն պատահական տեղաշարժը կանխելու համար: Օգտագործվող ցանկացած պաշտպանիչ նյութ պետք է իներտ լինի:</li> </ol>		

P801ա	ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ՑՈՒՑՈՒՄ	P801ա
Այս ցուցումը կիրառելի է ՄԱԿ-ի նշագրման 2794, 2795, 2800 եւ 3028 համարների՝ օգտագործված մարտկոցների նկատմամբ:		
Մարտկոցների՝ չժանգոտվող պողպատից կամ պինդ պլաստմասսայից պատրաստված եւ 1մ <sup>3</sup> մակերեսով արկղերը թույլատրված են՝ պայմանով, որ բավարարվեն հետեւյալ դրույթների պահանջները՝		
<ol style="list-style-type: none"> <li>1) մարտկոցների արկղերը պետք է դիմակայուն լինեն կուտակչային մարտկոցներում պարունակվող քայքայիչ նյութերի նկատմամբ.</li> <li>2) փոխադրման բնականոն պայմաններում ոչ մի քայքայիչ նյութ չպետք է արտահոսի մարտկոցների արկղերից, եւ ոչ մի այլ նյութ (օրինակ՝ ջուրը) չպետք է ներթափանցի մարտկոցների արկղեր: Կուտակչային մարտկոցներում պարունակվող քայքայիչ նյութերի ոչ մի վտանգավոր մնացորդ չպետք է կապած մնա մարտկոցների արկղերի արտաքին մասին.</li> <li>3) մարտկոցների արկղերում կուտակչային մարտկոցները չպետք է լցված լինեն այնպիսի բարձրությամբ, որն ավելի մեծ է, քան դրանց կողմնային մասերի բարձրությունը.</li> <li>4) մարտկոցների արկղում չպետք է տեղադրվեն միմյանց հետ վտանգավոր կերպով փոխազդեցության մեջ մտնող նյութեր կամ այլ վտանգավոր բեռներ պարունակող կուտակչային մարտկոցներ.</li> <li>5) մարտկոցների արկղերը պետք է՝ <ol style="list-style-type: none"> <li>ա) կա՛մ ծածկված լինեն,</li> <li>բ) կա՛մ փոխադրվեն փակ կամ ծածկ ունեցող փոխադրամիջոցներով կամ կոնտեյներներով:</li> </ol> </li> </ol>		



P802	ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ՑՈՒՑՈՒՄ	P802
<p>Հետեյալ փաթեթվածքները թույլատրվում են՝ պայմանով, որ պահպանվում են 4.1.1-ի եւ 4.1.3-ի ընդհանուր դրույթները.</p> <p>1) համակցված փաթեթվածքներ՝ արտաքին փաթեթվածքներ՝ 1A1, 1A2, 1B1, 1B2, 1N1, 1N2, 1H1, 1H2, 1D, 1G, 4A, 4B, 4N, 4C1, 4C2, 4D, 4F, 4G կամ 4H2. առավելագույն զտաքաշը՝ 75 կգ: Ներքին փաթեթվածքներ՝ ապակյա կամ պլաստմասսայից. առավելագույն տարողությունը՝ 10 լիտր.</p> <p>2) համակցված փաթեթվածքներ՝ արտաքին փաթեթվածքներ՝ 1A1, 1A2, 1B1, 1B2, 1N1, 1N2, 1H1, 1H2, 1D, 1G, 4A, 4B, 4N, 4C1, 4C2, 4D, 4F, 4G կամ 4H2. առավելագույն զտաքաշը՝ 125 կգ: Ներքին փաթեթվածքներ՝ մետաղյա. առավելագույն տարողությունը՝ 40 լիտր.</p> <p>3) բարդ փաթեթվածքներ՝ ապակյա տարա՝ պողպատյա, ալյումինից կամ նրբատախտակից արտաքին թմբկազևանում (6PA1, 6PB1 կամ 6PD1) կամ պողպատյա, ալյումինե կամ փայտից արտաքին արկղում, կամ արտաքին հյուսած զամբյուղում (6PA2, 6PB2, 6PC կամ 6PD2) կամ պինդ պլաստմասսայից արտաքին փաթեթվածքում (6PH2). առավելագույն տարողությունը՝ 60 լիտր.</p> <p>4) պողպատյա թմբկազևաններ (1A1)՝ 250 լիտր առավելագույն տարողությամբ.</p> <p>5) ճնշումային տարաններ՝ պայմանով, որ պահպանվում են 4.1.3.6-ի ընդհանուր դրույթները:</p>		

P803	ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ՑՈՒՑՈՒՄ	P803
<p>Այս ցուցումը կիրառելի է ՄԱԿ-ի նշագրման 2028 համարի նկատմամբ:</p> <p>Հետեյալ փաթեթվածքները թույլատրվում են՝ պայմանով, որ պահպանվեն 4.1.1-ի եւ 4.1.3-ի ընդհանուր դրույթները.</p> <p>1) թմբկազևաններ (1A2, 1B2, 1N2, 1H2, 1D, 1G).</p> <p>2) արկղեր(4A, 4B, 4N, 4C1, 4C2, 4D, 4F, 4G, 4H2):</p> <p>Առավելագույն զտաքաշ՝ 75 կգ:</p> <p>Պատրաստվածքները պետք է փաթեթավորվեն առանձին եւ միմյանցից առանձնացվեն միջնորմներով, բաժանարարներով, ներքին փաթեթվածքներով կամ պաշտպանիչ նյութերով՝ փոխադրման բնականոն պայմաններում պատահական արտանետումը կանխելու համար:</p>		

P804	ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ՅՈՒՑՈՒՄ	P804
Այս ցուցումը կիրառելի է ՄԱԿ-ի նշագրման 1744 համարի նկատմամբ:		
<p>Հետևյալ փաթեթվածքները թույլատրվում են՝ պայմանով, որ պահպանվեն 4.1.1-ի եւ 4.1.3-ի ընդհանուր դրույթները, եւ փաթեթվածքները հերմետիկորեն ամրափակվեն.</p>		
<p>1) 25 կգ առավելագույն համախառն քաշով համակցված փաթեթվածքները, որոնք բաղկացած են՝</p> <ul style="list-style-type: none"> <li>- յուրաքանչյուրը 1.3 լիտր առավելագույն տարողությամբ եւ իր տարողության 90%-ից ոչ ավելի չափով լցված մեկ կամ ավելի ապակյա ներքին փաթեթվածքից (փաթեթվածքներից), որի (որոնց) փականը (փականները) պետք է ֆիզիկապես տեղում պահվի (պահվեն) փոխադրման ընթացքում տատանման կամ որեւէ ներգործության հետեանքով դրանց հետպտտակումը կամ թուլանալը կանխող ցանկացած միջոցով, եւ որոնք պետք է առանձին տեղադրվեն</li> <li>- ապակյա ներքին փաթեթվածքի (փաթեթվածքների) ամբողջ պարունակությունը կլանելու համար բավարար կլանիչ եւ պաշտպանիչ նյութ ունեցող մետաղյա կամ կոշտ պլաստմասսայից տարաներում, որոնք այնուհետեւ փաթեթավորվում են</li> <li>- 1A1, 1A2, 1B1, 1B2, 1N1, 1N2, 1H1, 1H2, 1D, 1G, 4A, 4B, 4N, 4C1, 4C2, 4D, 4F, 4G կամ 4H2 արտաքին փաթեթվածքներում.</li> </ul> <p>2) համակցված փաթեթվածքները, որոնք բաղկացած են 5 լիտրից ոչ ավելի տարողությամբ մետաղյա կամ պոլիվինիլիդենի ֆտորիդից (PVDF) ներքին փաթեթվածքներից, որոնք պարունակությունը կլանելու համար բավարար կլանիչ նյութով եւ իներտ պաշտպանիչ նյութով առանձին փաթեթավորված են 1A1, 1A2, 1B1, 1B2, 1N1, 1N2, 1H1, 1H2, 1D, 1G, 4A, 4B, 4N, 4C1, 4C2, 4D, 4F, 4G կամ 4H2 արտաքին փաթեթվածքներում՝ 75 կգ առավելագույն համախառն քաշով: Ներքին փաթեթվածքները չպետք է լցված լինեն իրենց տարողության 90%-ից ավելի չափով: Յուրաքանչյուր ներքին փաթեթվածքի փական պետք է ֆիզիկապես տեղում պահվի փոխադրման ընթացքում տատանման կամ որեւէ ներգործության հետեանքով դրա հետպտտակումը կամ թուլանալը կանխող ցանկացած միջոցով.</p> <p>3) փաթեթվածքները, որոնք բաղկացած են՝</p> <p>արտաքին փաթեթվածքներից՝</p> <p>պողպատյա կամ պլաստմասսայե թմբկազաններ (1A1, 1A2, 1H1 կամ 1H2), որոնք 6.1.5-ում նշված փորձարկման պահանջների համաձայն փորձարկվել են համակցված փաթեթի զանգվածին համարժեք զանգվածի դեպքում՝ որպես ներքին փաթեթվածքներ պարունակելու համար նախատեսված փաթեթվածք կամ որպես պինդ կամ հեղուկ նյութեր պարունակելու համար նախատեսված առանձին փաթեթվածք, եւ նշագրվել են համապատասխանաբար՝</p> <p>ներքին փաթեթվածքներ՝</p> <p>թմբկազաններ եւ բարդ փաթեթվածքներ (1A1, 1B1, 1N1, 1H1 կամ 6HA1), որոնք համապատասխանում են առանձին փաթեթվածքների վերաբերյալ 6.1 գլխում նշված պահանջներին՝ հետևյալ պայմանների պահպանմամբ՝</p> <ul style="list-style-type: none"> <li>ա) հիդրավլիկ ճնշման փորձարկումը պետք է անցկացվի առնվազն 300 կՊա (3 բար) ճնշման պայմաններում (մանոմետրական ճնշում).</li> <li>բ) նախազձմամբ եւ արտադրությամբ նախատեսված անջրանցիկության փորձարկումները պետք է անցկացվեն 30 կՊա (0.3 բար) փորձարկման ճնշման պայմաններում.</li> <li>գ) դրանք արտաքին թմբկազանից պետք է առանձնացված լինեն հարվածի ուժգնությունը մեղմացնող պաշտպանիչ իներտ նյութով, որը ներքին փաթեթվածքը պարուրում է բոլոր կողմերից.</li> <li>դ) դրանց տարողությունը չպետք է գերազանցի 125 լիտրը.</li> <li>ե) փականները պետք է պտտակավոր լինեն, որոնք՝</li> <li>i) պետք է ֆիզիկապես տեղում պահվեն՝ փոխադրման ընթացքում տատանման կամ որեւէ ներգործության հետեանքով դրա հետպտտակումը կամ թուլանալը կանխող ցանկացած միջոցով.</li> <li>ii) պետք է ապահովված լինեն թասակի խցվածքով.</li> <li>զ) արտաքին եւ ներքին փաթեթվածքները, (բ) կետի համաձայն, պետք է պարբերաբար՝ երկուսուկես տարուց ոչ ավելի տեւողությամբ ընդմիջումներով, ենթարկվեն ներքին զննության եւ անջրանցիկության փորձարկման.</li> <li>է) արտաքին եւ ներքին փաթեթվածքների վրա պետք է զետեղվեն հետևյալ դյուրընթեռնելի եւ չջնջվող մականշվածքները՝</li> <li>i) ներքին փաթեթվածքի սկզբնական փորձարկման եւ վերջին պարբերական փորձարկման եւ զննության անցկացման ամսաթիվը (ամիսը, տարին), եւ</li> <li>ii) զննություններն ու փորձարկումներն իրականացրած փորձագետի անունը կամ արտոնագրված խորհրդանշանը.</li> </ul> <p>4) ճնշումային տարաներ՝ պայմանով, որ պահպանվեն 4.1.3.6-ի ընդհանուր դրույթները.</p> <ul style="list-style-type: none"> <li>ա) դրանք յուրաքանչյուր 10 տարին մեկ պետք է ենթարկվեն սկզբնական եւ պարբերական փորձարկումների՝ ոչ պակաս, քան 1 ՄՊա (10 բար) (մանոմետրական ճնշման) պայմաններում.</li> <li>բ) դրանք պարբերաբար՝ երկուսուկես տարուց ոչ ավելի ընդմիջումներով, պետք է ենթարկվեն ներքին զննության եւ անջրանցիկության փորձարկման.</li> <li>գ) դրանց վրա կարող է չտեղադրվել ճնշումը նվազեցնող սարք.</li> </ul>		

P804	ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ՑՈՒՑՈՒՄ	P804
<p>դ) յուրաքանչյուր ճնշումային տարա պետք է փակված լինի երկրորդային փակիչ սարք ունեցող խցափակիչով կամ կափույրով (կափույրներով), եւ  ե) ճնշումային տարայի, կափույրների, խցափակիչների, արտաթող թասակների, մածիկների եւ խցանիչների պատրաստման համար օգտագործված նյութերը պետք է համատեղելի լինեն միմյանց եւ պարունակության հետ:</p>		

P900	ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ՑՈՒՑՈՒՄ	P900
(Նախատեսվում է վերապահում)		

P901	ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ՑՈՒՑՈՒՄ	P901
Այս ցուցումը կիրառելի է ՄԱԿ-ի նշագրման 3316 համարի նկատմամբ:		
<p>Հետեւյալ համակցված փաթեթվածքները թույլատրվում են՝ պայմանով, որ պահպանվեն 4.1.1-ի եւ 4.1.3-ի ընդհանուր դրույթները.  թմբկազաններ (1A1, 1A2, 1B1, 1B2, 1N1, 1N2, 1H1, 1H2, 1D, 1G),  արկղեր (4A, 4B, 4N, 4C1, 4C2, 4D, 4F, 4G, 4H1, 4H2),  կանխտրներ (3A1, 3A2, 3B1, 3B2, 3H1, 3H2):</p> <p>Փաթեթվածքները պետք է համապատասխանեն ամբողջ հավաքածուի փաթեթավորման խմբին համապատասխանող որակի ցուցանիշներին (տե՛ս 3.3 գլխի 251-րդ հատուկ դրույթը): Եթե հավաքածուն պարունակում է միայն այնպիսի վտանգավոր բեռներ, որոնք չեն դասակարգվում որեւէ փաթեթավորման խմբում, ապա փաթեթվածքները պետք է համապատասխանեն փաթեթավորման II խմբի որակի ցուցանիշներին:</p> <p>Յուրաքանչյուր արտաքին փաթեթվածքին բաժին ընկած վտանգավոր բեռների առավելագույն քանակությունը՝ 10 կգ ` բացառությամբ ածխաթթու գազի, որպես ստանդարտ օգտագործված պինդ (չոր սառույցի) զանգվածի:</p> <p>Լրացուցիչ պահանջներ.</p> <p>Հավաքածուի մեջ առկա վտանգավոր բեռները պետք է փաթեթավորվեն 250 մլ-ը կամ 250գ-ը չգերազանցող ներքին փաթեթվածքներում եւ պետք է պաշտպանված լինեն այդ հավաքածուի մեջ առկա մյուս նյութերից:</p>		

P902	ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ՑՈՒՑՈՒՄ	P902
Այս ցուցումը կիրառելի է ՄԱԿ-ի նշագրման 3268 համարի նկատմամբ:		
<p>Փաթեթավորված պատրաստվածքներ՝</p> <p>Հետեւյալ փաթեթվածքները թույլատրվում են՝ պայմանով, որ պահպանվեն 4.1.1-ի եւ 4.1.3-ի ընդհանուր դրույթները.  թմբկազաններ (1A2, 1B2, 1N2, 1H2, 1D, 1G).  արկղեր (4A, 4B, 4N, 4C1, 4C2, 4D, 4F, 4G, 4H1, 4H2).  կանխտրներ (3A2, 3B2, 3H2):</p> <p>Փաթեթվածքները պետք է համապատասխանեն փաթեթավորման III խմբի որակի ցուցանիշներին:</p> <p>Փաթեթվածքները պետք է նախագծված եւ պատրաստված լինեն այնպես, որ փոխադրման բնականոն պայմաններում հնարավոր կլինի կանխել պատրաստվածքների տեղաշարժը եւ պատահական գործարկումը:</p> <p>Չփաթեթավորված պատրաստվածքներ՝</p> <p>Պատրաստվածքները դրանց արտադրության վայրից հավաքման գործարան տեղափոխվելու ժամանակ կարող են փոխադրվել նաեւ չփաթեթավորված՝ դրանց համար նախատեսված բեռնման եւ բեռնաթափման սարքերով կամ բեռնատար տրանսպորտային միավորներով:</p> <p>Լրացուցիչ պահանջ.</p> <p>Ցանկացած ճնշումային տարա պետք է համապատասխանի դրանում պարունակվող նյութի (նյութերի) համար իրավասու մարմնի կողմից սահմանված պահանջներին:</p>		

P903	ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ՑՈՒՑՈՒՄ	P903
------	----------------------	------

Այս ցուցումը կիրառելի է ՄԱԿ-ի նշագրման 3090, 3091, 3480 եւ 3481 համարների նկատմամբ:

Հետեյալ փաթեթավածքները թույլատրվում են՝ պայմանով, որ պահպանվեն 4.1.1-ի եւ 4.1.3-ի ընդհանուր դրույթները.

- 1) էլեմենտների եւ մարտկոցների դեպքում՝  
 թմբկազաններ (1A2, 1B2, 1N2, 1H2, 1D, 1G).  
 արկղեր (4A, 4B, 4N, 4C1, 4C2, 4D, 4F, 4G, 4H1, 4H2).  
 կանխտրներ (3A2, 3B2, 3H2):

էլեմենտները կամ մարտկոցները պետք է փաթեթավորվեն փաթեթավածքներում այնպես, որ էլեմենտները կամ մարտկոցները պաշտպանված լինեն վնասվելուց, ինչը կարող է տեղի ունենալ փաթեթավածքում էլեմենտների կամ մարտկոցների տեղաշարժումից կամ տեղադրումից:

Փաթեթավածքները պետք է համապատասխանեն փաթեթավորման II խմբի որակի ցուցանիշներին:

- 2) Բացի այդ, այն էլեմենտների կամ մարտկոցների դեպքում, որոնց համախառն քաշը 12 կգ կամ ավելի է, եւ որոնք ունեն ամուր, հարվածակայուն արտաքին պատյան, ինչպես նաեւ այդպիսի էլեմենտների կամ մարտկոցների հավաքվածքների դեպքում.

- ա) ամուր արտաքին փաթեթավածքներ,
- բ) պաշտպանական պատյաններ (օրինակ՝ ամբողջությամբ պատյանի մեջ կամ փայտյա շերտաձողերով արկղերում), կամ
- գ) տակդիրներ կամ բեռնման եւ բեռնաթափման այլ սարքեր:

էլեմենտները կամ մարտկոցները պետք է պաշտպանված լինեն այնպես, որ հնարավոր լինի կանխել դրանց պատահական տեղաշարժը, իսկ դրանց հպակները չպետք է իրենց վրա կրեն մարտկոցների վրա դրված այլ տարրերի ծանրությունը:

Փաթեթավածքները կարող են չբավարարել 4.1.1.3-ի պահանջները:

- 3) Սարքավորման հետ փաթեթավորված էլեմենտների կամ մարտկոցների համար.

այս փաթեթավորման ցուցման 1-ին պարբերության մեջ նշված պահանջներին համապատասխանող փաթեթավածքներ, որոնք այնուհետեւ սարքավորման հետ դրվում են արտաքին փաթեթավածքի մեջ, կամ

փաթեթավածքներ, որոնք ամբողջությամբ ներփակում են էլեմենտները կամ մարտկոցները, այնուհետեւ սարքավորման հետ դրվում են այս փաթեթավորման ցուցման 1-ին պարբերության մեջ նշված պահանջներին համապատասխանող փաթեթավածքի մեջ:

Սարքավորումը պետք է պաշտպանված լինի արտաքին փաթեթավածքում տեղաշարժվելուց:

Այս փաթեթավորման ցուցման նպատակներով «սարքավորում» նշանակում է ապարատուրա, որի գործարկման համար անհրաժեշտ է լիթիումի մետաղական կամ լիթիում-իոնային էլեմենտներ կամ մարտկոցներ, որոնք փաթեթավորվում են դրա հետ:

- 4) Սարքավորման մեջ տեղադրված էլեմենտների կամ մարտկոցների դեպքում.

Ամուր արտաքին փաթեթավածքներ, որոնք պատրաստված են համապատասխան նյութից եւ ունեն համապատասխան ամրություն ու կառուցվածք՝ հաշվի առնելով փաթեթավորման տարողությունը եւ դրա նշանակությունը: Դրանք պետք է պատրաստված լինեն այնպես, որ փոխադրման ընթացքում հնարավոր լինի կանխել դրանց պատահական գործարկումը: Փաթեթավածքները կարող են չբավարարել 4.1.1.3-ի պահանջները:

Մեծ սարքավորումները կարող են փոխադրվել չփաթեթավորված վիճակում կամ տակդիրների վրա այն դեպքում, երբ էլեմենտների կամ մարտկոցների համար ապահովված է համարժեք պաշտպանություն այն սարքավորման մեջ, որտեղ դրանք գտնվում են:

Այնպիսի սարքերը, ինչպիսիք են ռադիոհաճախականության նույնականացման համակարգի (RFID) պիտակները, ժամացույցները եւ ջերմաստիճանը գրանցող սարքերը, որոնք չեն կարող առաջացնել ջերմության վտանգավոր բարձրացում, ամուր արտաքին փաթեթավածքներում կարող են փոխադրվել այն ժամանակ, երբ դրանք ակնհայտորեն ակտիվ են:

Լրացուցիչ պահանջ.

էլեմենտները կամ մարտկոցները պետք է պաշտպանված լինեն կարճ միացումից:

P903(ա)	ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ՅՈՒՑՈՒՄ	P903(ա)
(Հանվել է)		

P903(բ)	ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ՅՈՒՑՈՒՄ	P903(բ)
---------	----------------------	---------

(Հանվել է)

P904	ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ՑՈՒՑՈՒՄ	P904
------	----------------------	------

Այս ցուցումը կիրառելի է ՄԱԿ-ի նշագրման 3245 համարի նկատմամբ:

Թույլատրված են հետևյալ փաթեթվածքները.

1) Փաթեթվածքներ, որոնք համապատասխանում են 4.1.1.1-ի, 4.1.1.2-ի, 4.1.1.4-ի, 4.1.1.8-ի եւ 4.1.3-ի դրոյթների պահանջներին եւ նախագծված են այնպես, որ բավարարեն 6.1.4-ի՝ կառուցվածքին վերաբերող պահանջները: Պետք է օգտագործվեն փաթեթվածքի տարողունակության եւ դրա նախատեսված գործածության առումով համապատասխան նյութից պատրաստված եւ համապատասխան ամրության ու կառուցվածքի արտաքին փաթեթվածքներ: Եթե այս փաթեթավորման ցուցումը կիրառվում է համակցված փաթեթվածքների ներքին փաթեթվածքները փոխադրելու համար, ապա փաթեթվածքը պետք է նախագծվի ու պատրաստվի այնպես, որ կանխվի փոխադրման բնականոն պայմաններում պատրաստվածքի պատահական արտանետումը:

2) Այն փաթեթվածքների դեպքում, որոնք անհրաժեշտ չէ, որ համապատասխանեն 6-րդ մասում նշված փաթեթվածքի փորձարկման վերաբերյալ պահանջներին, սակայն բավարարում են հետևյալ պայմանները՝

ա) ներքին փաթեթվածք, որը պարունակում է՝

i) առաջնային տարա (տարաներ) եւ երկրորդային փաթեթվածք, առաջնային տարան (տարաները) կամ երկրորդային փաթեթվածքը պետք է հեղուկների համար լինի անջրանցիկ, իսկ պինդ նյութերի համար՝ անթափանցելի:

ii) հեղուկների դեպքում առաջնային տարայի (տարաների) եւ երկրորդային փաթեթվածքի միջեւ պետք է կլանիչ նյութ առկա լինի: Կլանիչ նյութը պետք է ունենա առաջնային տարայի (տարաների) ամբողջ պարունակությունը կլանելու համար անհրաժեշտ բավարար քանակություն, որպեսզի հեղուկ նյութի ցանկացած արտահոսքի դեպքում չխախտվի պաշտպանիչ նյութի կամ արտաքին փաթեթվածքի ամբողջականությունը:

iii) եթե առանձին երկրորդային փաթեթվածքում մի քանի փխրուն առաջնային տարաներ են զետեղված, ապա դրանք պետք է փաթեթավորվեն առանձին կամ առանձնացվեն՝ միմյանց միջեւ շփումը կանխելու նպատակով:

բ) արտաքին փաթեթվածքը պետք է իր ծավալի, զանգվածի եւ նախատեսված օգտագործման տեսակետից բավականաչափ ամուր լինի, իսկ դրա արտաքին ամենափոքր չափսը պետք է լինի առնվազն 100 մմ:

Փոխադրման համար արտաքին փաթեթվածքի արտաքին մակերեսի վրա պետք է կոնտրաստային գույնի ֆոնի վրա պատկերված լինի ներքեւում ներկայացված նշանը, որը պետք է հստակ տեսանելի եւ ընթեռնելի լինի: Նշանը պետք է ունենա 45° անկյան տակ պատկերված քառակուսու տեսք (աղանամդաձեւ)՝ յուրաքանչյուր կողմի երկարությունը պետք է կազմի առնվազն 50մմ, գծի լայնությունը պետք է լինի առնվազն 2 մմ, իսկ տառերի եւ թվերի բարձրությունը՝ 6մմ:



Նվազագույն չափսը՝ 50 մմ

Նվազագույն չափսը՝ 50 մմ

Լրացուցիչ պահանջ.

Սառույց, չոր սառույց եւ հեղուկ ազոտ

Երբ չոր սառույցը կամ հեղուկ ազոտը կիրառվում է որպես սառեցնող նյութ, կիրառվում են 5.5.3-ի պահանջները: Օգտագործման դեպքում սառույցը պետք է տեղադրվի երկրորդային փաթեթվածքի դրսի կողմում կամ արտաքին փաթեթվածքի կամ տրանսպորտային կապոցի ներսում: Պետք է նախատեսվեն ներքին հենարաններ՝ երկրորդային փաթեթվածքներն սկզբնական դիրքում պահելու համար: Սառույցի կիրառման դեպքում արտաքին փաթեթվածքը կամ տրանսպորտային կապոցը պետք է անջրանցիկ լինի:

P905	ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ՑՈՒՑՈՒՄ	P905
Այս ցուցումը կիրառելի է ՄԱԿ-ի նշագրման 2990 և 3072 համարների նկատմամբ:		
Ցանկացած համապատասխան փաթեթված թույլատրվում է՝ պայմանով, որ պահպանվեն 4.1.1-ի և 4.1.3-ի ընդհանուր դրույթները՝ բացի այն փաթեթվածներից, որոնք պարտադիր չէ, որ համապատասխանեն 6-րդ մասի պահանջներին:		
Փրկարարական սարքերը կարող են փոխադրվել չփաթեթավորված, եթե դրանց կառուցվածքը թույլ է տալիս, որ դրանք ներառվեն կոշտ և եղանակային ազդեցությունների նկատմամբ կայուն արտաքին պարկուճներում կամ տեղադրվեն դրանցում (ինչպես, օրինակ՝ փրկամակույկների դեպքում):		
Լրացուցիչ պահանջներ.		
1) Բոլոր վտանգավոր նյութերը և պատրաստվածքները, որոնք սարքերում առկա են որպես դրանց բաղկացուցիչներ, պետք է պաշտպանված լինեն, որպեսզի հնարավոր լինի կանխել դրանց պատահական տեղաշարժը, եւ բացի այդ՝		
ա) 1-ին դասի ազդանշանային սարքերը պետք է փաթեթավորվեն պլաստմասսայից կամ փայտաթեթային սալից ներքին փաթեթվածքներում.		
բ) ոչ դյուրավառ, ոչ թունավոր գազերը, իրավասու մարմնի կողմից նշվածի համաձայն, պետք է լցված լինեն բալոնների մեջ, որոնք կարող են միացված լինել սարքին.		
գ) էլեկտրական կուտակչային մարտկոցները (դաս 8) և լիթիումային մարտկոցները (դաս 9) պետք է անջատված կամ էլեկտրականությունից մեկուսացված լինեն, ինչպես նաև պաշտպանված լինեն հեղուկի ցանկացած կերպ դուրս թափվելուց, և		
դ) այլ վտանգավոր նյութերի (օրինակ՝ 3-րդ, 4.1 և 5.2 դասերի) փոքր քանակությունները պետք է փաթեթավորվեն ամուր ներքին փաթեթվածքներում:		
2) Փոխադրման և փաթեթավորման նախապատրաստական աշխատանքների մասով պետք է նախատեսվեն սարքի ճնշման ցանկացած պատահական բարձրացումը կանխելու մասին դրույթներ:		

P906	ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ՑՈՒՑՈՒՄ	P906
Այս ցուցումը կիրառելի է ՄԱԿ-ի նշագրման 2315, 3151, 3152 և 3432 համարների նկատմամբ:		
Հետևյալ փաթեթվածքները թույլատրվում են՝ պայմանով, որ պահպանվում են 4.1.1-ի և 4.1.3-ի ընդհանուր դրույթները.		
1) պոլիքլորինացված բիֆենիլներ (PCB-ներ), պոլիհալոգենացված բիֆենիլներ, պոլիհալոգենացված տերֆենիլներ կամ հալոգենացված մոնոմեթիլդիֆենիլմեթաններ պարունակող կամ դրանցով աղտոտված հեղուկների և պինդ նյութերի համար՝ անհրաժեշտության դեպքում P001 կամ P002 փաթեթավորման ցուցումներին համապատասխանող փաթեթվածքներ.		
2) տրանսֆորմատորների, կոնդենսատորների և այլ պատրաստվածքների համար՝		
ա) P001 կամ P002 փաթեթավորման ցուցումներին համապատասխանող փաթեթվածքներ: Պատրաստվածքների անվտանգությունը պետք է ապահովվի համապատասխան պաշտպանիչ նյութով՝ փոխադրման բնականոն պայմաններում դրանց պատահական տեղաշարժը կանխելու համար, կամ		
բ) անջրանցիկ փաթեթվածքներ, որոնք, ի լրումն պատրաստվածքների, կարող են պարունակել դրանցում առկա հեղուկ պոլիքլորինացված բիֆենիլների, պոլիհալոգենացված բիֆենիլների, պոլիհալոգենացված տերֆենիլների կամ հալոգենացված մոնոմեթիլդիֆենիլմեթանների ծավալից առնվազն 1.25 անգամ ավելի քանակություն: Փաթեթվածքներում պետք է առկա լինի բավականաչափ կլանիչ նյութ՝ պատրաստվածքներում առկա հեղուկի ծավալից առնվազն 1.1 անգամ ավելի քանակություն կլանելու համար: Ընդհանուր առմամբ, տրանսֆորմատորները և կոնդենսատորները պետք է փոխադրվեն անջրանցիկ մետաղյա փաթեթվածքներում, որոնք, ի լրումն տրանսֆորմատորների և կոնդենսատորների, կարող են պահել դրանցում առկա հեղուկի ծավալից առնվազն 1.25 անգամ ավելի քանակություն:		
Անկախ վերը նշվածից՝ հեղուկները և պինդ նյութերը, որոնք փաթեթավորված չեն P001 և P002 փաթեթավորման ցուցումների համաձայն, ինչպես նաև չփաթեթավորված տրանսֆորմատորները և կոնդենսատորները կարող են փոխադրվել առնվազն 800 մմ բարձրության հասնող անջրանցիկ մետաղյա ընդկալ ունեցող բեռնատար տրանսպորտային միավորներով, որոնք պարունակում են ցանկացած ազատ հեղուկի ծավալից առնվազն 1.1 անգամ ավելի քանակություն կլանող՝ բավականաչափ իներտ կլանիչ նյութ:		
Լրացուցիչ պահանջ.		
Համապատասխան միջոցներ պետք է ձեռնարկվեն տրանսֆորմատորները և կոնդենսատորներն այնպես ամրափակված պահելու համար, որ փոխադրման բնականոն պայմաններում հնարավոր լինի կանխել ցանկացած արտահոսք:		

P908	ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ՑՈՒՑՈՒՄ	P908
<p>Այս ցուցումը կիրառվում է ՄԱԿ-ի նշագրման 3090, 3091, 3480 եւ 3481 համարների ներքո դասակարգված՝ վնասված կամ թերություններ ունեցող լիթիում-իոնային էլեմենտների եւ մարտկոցների ու վնասված կամ թերություններ ունեցող լիթիումի մետաղական էլեմենտների եւ մարտկոցների նկատմամբ, այդ թվում՝ նրանց նկատմամբ, որոնք տեղադրված են սարքավորման մեջ:</p>		
<p>Հետեւյալ փաթեթվածքները թույլատրվում են՝ պայմանով, որ պահպանվեն 4.1.1-ի եւ 4.1.3-ի ընդհանուր դրույթները.</p>		
<p>էլեմենտների եւ մարտկոցների ու էլեմենտներ եւ մարտկոցներ պարունակող սարքավորման համար՝</p> <p>թմբկազևաններ (1A2, 1B2, 1N2, 1H2, 1D, 1G)</p> <p>արկղեր (4A, 4B, 4N, 4C1, 4C2, 4D, 4F, 4G, 4H1, 4H2)</p> <p>կանխտրներ (3A2, 3B2, 3H2):</p>		
<p>Փաթեթվածքները պետք է համապատասխանեն փաթեթավորման II խմբի որակի ցուցանիշներին:</p>		
<ol style="list-style-type: none"> <li>1. Վնասված կամ թերություններ ունեցող յուրաքանչյուր էլեմենտ կամ մարտկոց կամ այդպիսի էլեմենտներ կամ մարտկոցներ պարունակող սարքավորում պետք է առանձին փաթեթավորվի ներքին փաթեթվածքում եւ տեղադրվի արտաքին փաթեթվածքում: Ներքին փաթեթվածքը կամ արտաքին փաթեթվածքը պետք է լինի անջրանցիկ՝ էլեկտրոլիտի հնարավոր արտահոսքը կանխելու համար:</li> <li>2. Յուրաքանչյուր ներքին փաթեթվածք պետք է պատված լինի չայրվող եւ չհաղորդող ջերմամեկուսացնող նյութով՝ ջերմության վտանգավոր առաջացումը կանխելու համար:</li> <li>3. Փակված փաթեթվածքները պետք է անհրաժեշտության դեպքում սարքավորված լինեն օդափոխիչ կափույրով:</li> <li>4. Պետք է ձեռնարկվեն անհրաժեշտ միջոցներ տատանումների եւ ցնցումների ազդեցությունը նվազեցնելու, փաթեթվածքում էլեմենտների կամ մարտկոցների տեղաշարժը կանխելու համար, որոնք կարող են դառնալ հետագա վնասի պատճառ եւ փոխադրման ընթացքում ստեղծել վտանգավոր իրավիճակ: Այս պահանջը բավարարելու համար կարող է նաեւ օգտագործվել չայրվող եւ չհաղորդող պաշտպանիչ նյութ:</li> <li>5. Չայրվող լինելու հատկանիշը պետք է գնահատվի այն երկրում ընդունված ստանդարտի համաձայն, որտեղ նախագծվել կամ պատրաստվել է փաթեթվածքը:</li> </ol>		
<p>Արտահոսող էլեմենտների կամ մարտկոցների դեպքում ներքին կամ արտաքին փաթեթվածքում պետք է տեղադրվի բավականաչափ իներտ կլանիչ նյութ՝ էլեկտրոլիտի ցանկացած արտահոսք կլանելու համար:</p>		
<p>30 կգ-ից ավելի զտաքաշով էլեմենտի կամ մարտկոցի քանակը չպետք է գերազանցի մեկ արտաքին փաթեթվածքի հաշվով մեկ էլեմենտը կամ մարտկոցը:</p>		
<p>Լրացուցիչ պահանջ.</p>		
<p>էլեմենտները կամ մարտկոցները պետք է պաշտպանված լինեն կարճ միացումից:</p>		

Այս ցուցումը կիրառվում է ՄԱԿ-ի նշագրման 3090, 3091, 3480 եւ 3481 համարների ներքո դասակարգված բեռների նկատմամբ, որոնք օգտահանման կամ վերամշակման նպատակով փոխադրվում են միասին փաթեթավորված կամ առանց ոչ լիթիումային մարտկոցների:

- 1) Էլեմենտները եւ մարտկոցները պետք է փաթեթավորվեն հետեւյալի համաձայն՝
  - ա) Հետեւյալ փաթեթվածքները թույլատրվում են՝ պայմանով, որ պահպանվեն 4.1.1-ի եւ 4.1.3-ի ընդհանուր դրույթները.
    - թմբկազևաններ (1A2, 1B2, 1N2, 1H2, 1D, 1G).
    - արկղեր (4A, 4B, 4N, 4C1, 4C2, 4D, 4F, 4G, 4H2). եւ
    - կանխտրներ (3A2, 3B2, 3H2):
  - բ) Փաթեթվածքները պետք է համապատասխանեն փաթեթավորման II խմբի որակի ցուցանիշներին:
  - գ) Մետաղյա փաթեթվածքները պետք է ունենան չհաղորդող նյութից (օրինակ՝ պլաստմասսա) երեսպատվածք, որը բավականաչափ ամուր է նպատակային օգտագործման համար:
- 2) Այնուհանդերձ, լիթիում-իոնային էլեմենտները, որոնց հզորությունը ՎտԺ-ում չի գերազանցում 20Վտ-ը, լիթիում-իոնային մարտկոցները, որոնց հզորությունը ՎտԺ-ում չի գերազանցում 100 Վտ-ը, լիթիումի մետաղական էլեմենտները, որոնցում լիթիումի պարունակությունը չի գերազանցում 1գ-ը, եւ լիթիումի մետաղական մարտկոցները, որոնցում լիթիումի գումարային պարունակությունը չի գերազանցում 2 գ-ը, կարող են փաթեթավորվել հետեւյալի համաձայն՝
  - ա) մինչեւ 30 կգ համախառն քաշով ամուր արտաքին փաթեթվածքում, որը համապատասխանում է 4.1.1-ի եւ 4.1.3-ի՝ բացառությամբ 4.1.1.3-ի, ընդհանուր դրույթներին:
  - բ) Մետաղյա փաթեթվածքները պետք է ունենան չհաղորդող նյութից (օրինակ՝ պլաստմասսա) երեսպատվածք, որը բավականաչափ ամուր է նպատակային օգտագործման համար:
- 3) Սարքավորման մեջ տեղադրված էլեմենտների կամ մարտկոցների համար կարող են օգտագործվել փաթեթվածքի տարրողունակության ու դրա նպատակային գործածության առումով համապատասխան նյութից պատրաստված եւ համապատասխան ամրության ու կառուցվածքի արտաքին փաթեթվածքներ: Փաթեթվածքները կարող են չբավարարել 4.1.1.3-ի պահանջները: Սարքավորումները կարող են փոխադրման համար առաջարկվել նաեւ չփաթեթավորված վիճակում կամ տակդիրների վրա այն դեպքում, երբ էլեմենտների կամ մարտկոցների համար ապահովված է համարժեք պաշտպանություն այն սարքավորման մեջ, որտեղ դրանք գտնվում են:
- 4) Բացի այդ, այն էլեմենտների կամ մարտկոցների համար, որոնց համախառն քաշը 12 կգ կամ ավելի է, եւ որոնք ունեն ամուր, հարվածակայուն պատյան, կարող են օգտագործվել փաթեթվածքի տարրողունակության ու դրա նպատակային գործածության առումով համապատասխան նյութից պատրաստված եւ համապատասխան ամրության ու կառուցվածքի արտաքին փաթեթվածքներ: Փաթեթվածքները կարող են չբավարարել 4.1.1.3-ի պահանջները:

Լրացուցիչ պահանջներ.

1. Էլեմենտները եւ մարտկոցները պետք է նախագծված կամ փաթեթավորված լինեն այնպես, որ հնարավոր լինի կանխել կարճ միացումներն ու ջերմության վտանգավոր առաջացումը:
2. Կարճ միացումներից եւ ջերմության վտանգավոր առաջացումից պաշտպանությունը ներառում, սակայն չի սահմանափակվում հետեւյալ միջոցառումներով.
  - մարտկոցի հպակների առանձին պաշտպանություն,
  - ներքին փաթեթվածք՝ էլեմենտների եւ մարտկոցների միջեւ շփումը կանխելու համար,
  - ներկառուցված հպակներով մարտկոցներ, որոնք նախատեսված են կարճ միացումներից պաշտպանելու համար, կամ
  - փաթեթվածքում էլեմենտների կամ մարտկոցների միջեւ առկա դատարկ տարածությունը լցնելու համար չհաղորդող եւ չայրվող պաշտպանիչ նյութի օգտագործում:
3. Էլեմենտները եւ մարտկոցները պետք է ամրացված լինեն արտաքին փաթեթվածքում՝ փոխադրման ընթացքում թույլատրելից ավելի տեղաշարժը կանխելու համար (օրինակ՝ օգտագործելով չայրվող եւ չհաղորդող պաշտպանիչ նյութ կամ ամուր փակված պլաստմասսայից տոպրակներ):



Այս ցուցումը կիրառվում է ՄԱԿ-ի նշագրման 3090, 3091, 3480 եւ 3481 համարների ներքո դասակարգված՝ 100-ից ոչ ավելի էլեմենտներից եւ մարտկոցներից բաղկացած արտադրական խմբաքանակների եւ էլեմենտների ու մարտկոցների նախարտադրական նախատիպերի նկատմամբ այն դեպքում, երբ այդ նախատիպերը փոխադրվում են փորձարկման նպատակով:

Հետեւյալ փաթեթվածքները թույլատրվում են՝ պայմանով, որ պահպանվեն 4.1.1-ի եւ 4.1.3-ի ընդհանուր դրույթները.

- 1)
  - էլեմենտների եւ մարտկոցների, այդ թվում՝ սարքավորման հետ փաթեթավորվածների համար՝  
 թմբկազևաններ (1A2, 1B2, 1N2, 1H2, 1D, 1G).  
 արկղեր (4A, 4B, 4N, 4C1, 4C2, 4D, 4F, 4G, 4H1, 4H2).  
 կանխտրներ (3A2, 3B2, 3H2):
  - Փաթեթվածքները պետք է համապատասխանեն փաթեթավորման II խմբի որակի ցուցանիշներին եւ պետք է բավարարեն հետեւյալ պահանջները՝
  - ա) տարբեր չափսեր, ձեւեր կամ զանգվածներ ունեցող էլեմենտները եւ մարտկոցները, այդ թվում՝ սարքավորումները պետք է փաթեթավորվեն վերելում նշված՝ կառուցվածքի փորձարկված տեսակի արտաքին փաթեթվածքում՝ պայմանով, որ փաթեթի ընդհանուր համախառն քաշը չի գերազանցում այն համախառն քաշը, որի համար փորձարկվել է կառուցվածքի տվյալ տեսակը.
  - բ) յուրաքանչյուր էլեմենտ կամ մարտկոց պետք է առանձին փաթեթավորվի ներքին փաթեթվածքում եւ տեղադրվի արտաքին փաթեթվածքում.
  - գ) յուրաքանչյուր ներքին փաթեթվածք պետք է ամբողջությամբ պատված լինի բավարար քանակությամբ չայրվող եւ չհաղորդող ջերմամեկուսացնող նյութով՝ ջերմության վտանգավոր առաջացումը կանխելու համար.
  - դ) պետք է ձեռնարկվեն անհրաժեշտ միջոցներ՝ տատանումների եւ ցնցումների ազդեցությունը նվազեցնելու եւ փաթեթվածքում էլեմենտների կամ մարտկոցների տեղաշարժը կանխելու համար, որոնք կարող են դառնալ հետագա վնասի պատճառ եւ փոխադրման ընթացքում ստեղծել վտանգավոր իրավիճակ: Այս պահանջը բավարարելու համար կարող է նաեւ օգտագործվել չայրվող եւ չհաղորդող պաշտպանիչ նյութ.
  - ե) չայրվող լինելու հատկանիշը պետք է գնահատվի այն երկրում ընդունված ստանդարտի համաձայն, որտեղ նախագծվել կամ պատրաստվել է փաթեթվածքը.
  - զ) 30 կգ-ից ավելի գտաքաշով էլեմենտի կամ մարտկոցի քանակը չպետք է գերազանցի մեկ արտաքին փաթեթվածքի հաշվով մեկ էլեմենտը կամ մարտկոցը:
- 2)
  - Սարքավորման մեջ տեղադրված էլեմենտների եւ մարտկոցների համար՝  
 թմբկազևաններ (1A2, 1B2, 1N2, 1H2, 1D, 1G).  
 արկղեր (4A, 4B, 4N, 4C1, 4C2, 4D, 4F, 4G, 4H1, 4H2).  
 կանխտրներ (3A2, 3B2, 3H2):
  - Փաթեթվածքները պետք է համապատասխանեն փաթեթավորման II խմբի որակի ցուցանիշներին եւ պետք է բավարարեն հետեւյալ պահանջները՝
  - ա) տարբեր չափսեր, ձեւեր կամ զանգվածներ ունեցող սարքավորումները պետք է փաթեթավորվեն վերելում նշված՝ կառուցվածքի փորձարկված տեսակի արտաքին փաթեթվածքում՝ պայմանով, որ փաթեթի ընդհանուր համախառն քաշը չի գերազանցում այն համախառն քաշը, որի համար փորձարկվել է կառուցվածքի տվյալ տեսակը.
  - բ) սարքավորումները պետք է պատրաստված կամ փաթեթավորված լինեն այնպես, որ հնարավոր լինի կանխել փոխադրման ընթացքում դրանց պատահական գործարկումը.
  - գ) պետք է ձեռնարկվեն անհրաժեշտ միջոցներ՝ տատանումների եւ ցնցումների ազդեցությունը նվազեցնելու եւ փաթեթվածքում սարքավորումների տեղաշարժը կանխելու համար, որոնք կարող են դառնալ հետագա վնասի պատճառ եւ փոխադրման ընթացքում ստեղծել վտանգավոր իրավիճակ: Այս պահանջը բավարարելու համար պաշտպանիչ նյութ օգտագործելու դեպքում այն պետք է լինի չայրվող եւ չհաղորդող. եւ
  - դ) չայրվող լինելու հատկանիշը պետք է գնահատվի այն երկրում ընդունված ստանդարտի համաձայն, որտեղ նախագծվել կամ պատրաստվել է փաթեթվածքը:

P910	ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ՑՈՒՑՈՒՄ	P910
<p>3) Սարքավորումը կամ մարտկոցները կարող են փոխադրվել չփաթեթավորված վիճակում՝ պահպանելով «ԱԴԻ» համաձայնագրի ցանկացած Պայմանավորվող կողմի այն իրավասու մարմնի կողմից նշված պայմանները, որը կարող է նաեւ ճանաչել «ԱԴԻ» համաձայնագրի Պայմանավորվող կողմ չհանդիսացող երկրի իրավասու մարմնի կողմից տրամադրված հաստատումը՝ պայմանով, որ այդ հաստատումը տրամադրվել է «ՌԻԴ» կանոնակարգերի, «ԱԴԻ» համաձայնագրի, «ԱԴՆ» համաձայնագրի, ՎԲՄԾ կանոնագրի կամ ԻԿԱՕ-ի տեխնիկական ցուցումների համաձայն կիրառելի ընթացակարգերին համապատասխան: Լրացուցիչ պայմանները, որոնք կարող են դիտարկվել հաստատման գործընթացում, ներառում են հետևյալը, սակայն չեն սահմանափակվում դրանցով.</p> <p>ա) սարքավորումը կամ մարտկոցը պետք է լինի բավականաչափ ամուր՝ փոխադրման, այդ թվում՝ բեռնատար տրանսպորտային միավորների միջև եւ բեռնատար տրանսպորտային միավորների ու պահեստների միջև փոխաբեռնումների, ինչպես նաեւ ձեռքով կամ մեխանիկական եղանակով հետագա մշակման նպատակով տակդիրի վրայից հանելու ժամանակ սովորաբար առաջացող ցնցումներին եւ բեռնվածքներին դիմակայելու համար, եւ</p> <p>բ) սարքավորումը կամ մարտկոցը պետք է ամրացված լինի հենարանի կամ կավարամածի վրա կամ բեռնման ու բեռնաթափման այլ սարքերի վրա այնպես, որ փոխադրման բնականոն պայմաններում դրանք չթուլանան:</p>		
<p>Լրացուցիչ պահանջներ</p> <p>Էլեմենտները եւ մարտկոցները պետք է պաշտպանված լինեն կարճ միացումից.</p> <p>Կարճ միացումներից պաշտպանությունը ներառում է, սակայն չի սահմանափակվում հետևյալ միջոցառումներով.</p> <ul style="list-style-type: none"> <li>- մարտկոցի հպակների առանձին պաշտպանություն,</li> <li>- ներքին փաթեթվածք՝ էլեմենտների եւ մարտկոցների միջև շփումը կանխելու համար,</li> <li>- ներկառուցված հպակներով մարտկոցներ, որոնք նախատեսված են կարճ միացումներից պաշտպանելու համար, կամ</li> <li>- փաթեթվածքում էլեմենտների կամ մարտկոցների միջև առկա դատարկ տարածությունը լցնելու համար չհաղորդող եւ չայրվող պաշտպանիչ նյութի օգտագործում:</li> </ul>		

R001	ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ՑՈՒՑՈՒՄ	R001	
<p>Հետևյալ փաթեթվածքները թույլատրվում են՝ պայմանով, որ պահպանվեն 4.1.1-ի եւ 4.1.3-ի ընդհանուր դրույթները.</p>			
Բարակ մետաղից փաթեթվածքներ	Առավելագույն տարողություն/ առավելագույն զտաքաշ		
	Փաթեթավորման I խումբ	Փաթեթավորման II խումբ	Փաթեթավորման III խումբ
պողպատյա, չհանվող հատակով (0A1)	Չի թույլատրվում	40 / 50 կգ	40 / 50 կգ
պողպատյա, հանվող հատակով (0A2)ա	Չի թույլատրվում	40 / 50 կգ	40 / 50 կգ
<p>ա Չի թույլատրվում ՄԱԿ-ի նշագրման 1261 (ՆԻՏՐՈՄԵԹԱՆ) համարի դեպքում:</p>			
<p>ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1. Այս ցուցումը կիրառելի է պինդ եւ հեղուկ նյութերի նկատմամբ (պայմանով, որ կառուցվածքի տեսակը փորձարկվել եւ նշագրվել է համապատասխանաբար):</p> <p>ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2. 3-րդ դասի, փաթեթավորման II խմբի դեպքում այդ փաթեթվածքները կարող են օգտագործվել միայն այն նյութերի համար, որոնք լրացուցիչ ռիսկ չեն ներկայացնում եւ 50 °C ջերմաստիճանի դեպքում ունեն ոչ ավելի, քան 110 կՊա գոլորշու ճնշում, ինչպես նաեւ քիչ թունավոր թունաքիմիկատների համար:</p>			

### 4.1.4.2 ՍՄԿ-ների օգտագործման վերաբերյալ փաթեթավորման ցուցումները

IBC01	ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ՑՈՒՑՈՒՄ	IBC01
<p>Հետեւյալ ՍՄԿ-ները թույլատրվում են՝ պայմանով, որ պահպանվեն 4.1.1-ի, 4.1.2-ի եւ 4.1.3-ի ընդհանուր դրույթները:</p> <p>Մետաղյա (31A, 31B եւ 31N):</p> <p>Ուր-ի եւ «ԱԴԴ» համաձայնագրի համար հատկանշական՝ փաթեթավորմանը վերաբերող հատուկ դրույթ</p> <p>BB1 ՄԱԿ-ի նշագրման 3130 համարի դեպքում տվյալ նյութի համար նախատեսված տարաների բացվածքները պետք է ամուր փակված լինեն միմյանց հաջորդող երկու սարքերով, որոնցից մեկը պետք է համապատասխան եղանակով ապահով ներպտուտակված կամ ամրացված լինի:</p>		

IBC02	ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ՑՈՒՑՈՒՄ	IBC02
<p>Հետեւյալ ՍՄԿ-ները թույլատրվում են՝ պայմանով, որ պահպանվեն 4.1.1-ի, 4.1.2-ի եւ 4.1.3-ի ընդհանուր դրույթները:</p> <p>1) մետաղյա (31A, 31B եւ 31N).</p> <p>2) կոշտ պլաստմասսայից (31H1 եւ 31H2).</p> <p>3) բարդ (31HZ1):</p> <p>Փաթեթավորման մասին հատուկ դրույթներ</p> <p>B5 ՄԱԿ-ի նշագրման 1791, 2014, 2984 եւ 3149 համարների դեպքում ՍՄԿ-ների համար պետք է նախատեսված լինի այնպիսի սարք, որով փոխադրման ընթացքում օդափոխություն կապահովվի: Օդափոխիչ կափույրի օդի ներթող բացվածքը պետք է տեղակայված լինի գոլորշի պարունակող տարածության մեջ՝ փոխադրման ընթացքում ՍՄԿ-ի առավելագույնս լցավորված պայմաններում:</p> <p>B7 ՄԱԿ-ի նշագրման 1222 եւ 1865 համարների դեպքում չեն թույլատրվում 450 լիտրից ավելի տարողությամբ ՍՄԿ-ներ՝ պայմանավորված նյութերի՝ մեծ ծավալներով փոխադրվելու դեպքում պայթյուն առաջացնելու հավանականությամբ:</p> <p>B8 Այդ նյութի մաքուր ձեւը չպետք է փոխադրվի ՍՄԿ-ներով, քանի դեռ հայտնի է, որ դրա գոլորշու ճնշումը 50 °C-ի դեպքում ավելի քան 110 կՊա է կամ 55 °C-ի դեպքում՝ 130 կՊա:</p> <p>B15 ՄԱԿ-ի նշագրման 2031 համարի դեպքում՝ 55%-ից ավելի ազոտաթթվի պարունակությամբ, կոշտ պլաստմասսայից ՍՄԿ-ների եւ կոշտ պլաստմասսայից ներքին տարաներով բարդ ՍՄԿ-ների օգտագործումը թույլատրվում է դրանց արտադրության օրվանից հետո երկու տարվա ընթացքում:</p> <p>B16 ՄԱԿ-ի նշագրման 3375 համար դեպքում 31A եւ 31N տեսակի ՍՄԿ-ների գործածությունը չի թույլատրվում առանց իրավասու մարմնի հաստատման:</p> <p style="text-align: center;">Ուր-ի եւ «ԱԴԴ» համաձայնագրի համար հատկանշական՝ փաթեթավորմանը վերաբերող հատուկ դրույթներ</p> <p>BB2 ՄԱԿ-ի նշագրման 1203 համարի դեպքում, անկախ 534-րդ հատուկ դրույթից (տե՛ս 3□3□1-ը), ՍՄԿ-ներն օգտագործվում են միայն այն դեպքում, երբ գոլորշու փաստացի ճնշումը 50 °C-ի պայմաններում ոչ ավելին է, քան 110 կՊա, իսկ 55 °C-ի դեպքում՝ 130 կՊա:</p> <p>BB4 2.2.3.1.4-ի համաձայն փաթեթավորման III խմբին դասվող՝ ՄԱԿ-ի նշագրման 1133, 1139, 1169, 1197, 1210, 1263, 1266, 1286, 1287, 1306, 1866, 1993 եւ 1999 համարների դեպքում 450 լիտրից ավելի տարողությամբ ՍՄԿ-ների գործածությունը չի թույլատրվում:</p>		

IBC03	ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ՑՈՒՑՈՒՄ	IBC03
<p>Հետեւյալ ՍՄԿ-ները թույլատրվում են՝ պայմանով, որ պահպանվեն 4.1.1-ի, 4.1.2-ի եւ 4.1.3-ի ընդհանուր դրույթները:</p> <p>1) մետաղյա (31A, 31B եւ 31N).</p> <p>2) կոշտ պլաստմասսայից (31H1 եւ 31H2).</p> <p>3) բարդ (31HZ1, 31HA2, 31HB2, 31HN2, 31HD2 եւ 31HH2):</p> <p>Փաթեթավորման մասին հատուկ դրույթ</p> <p>B8 Այդ նյութի մաքուր ձեւը չպետք է փոխադրվի ՍՄԿ-ներով, քանի դեռ հայտնի է, որ դրա գոլորշու ճնշումը 50 °C-ի դեպքում ավելի քան 110 կՊա է կամ 55 °C-ի դեպքում՝ 130 կՊա:</p> <p>B19 ՄԱԿ-ի նշագրման 3532 եւ 3534 համարների դեպքում ՍՄԿ-ները պետք է նախագծված եւ պատրաստված լինեն այնպես, որ հնարավոր լինի գազի կամ գոլորշու հեռացումը՝ կանխելու համար ճնշման կուտակումը, որի հետեւանքով ՍՄԿ-ները կարող են պատռվել կայունության կորստի դեպքում:</p>		

IBC04	ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ՑՈՒՑՈՒՄ	IBC04
<p>Հետեյալ ՍՄԿ-ները թույլատրվում են՝ պայմանով, որ պահպանվեն 4.1.1-ի, 4.1.2-ի եւ 4.1.3-ի ընդհանուր դրույթները.</p> <p>մետաղյա (11A, 11B, 11N, 21A, 21B, 21N, 31A, 31B եւ 31N):</p>		

IBC05	ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ՑՈՒՑՈՒՄ	IBC05
<p>Հետեյալ ՍՄԿ-ները թույլատրվում են՝ պայմանով, որ պահպանվեն 4.1.1-ի, 4.1.2-ի եւ 4.1.3-ի ընդհանուր դրույթները.</p> <p>1) մետաղյա (11A, 11B, 11N, 21A, 21B, 21N, 31A, 31B եւ 31N).</p> <p>2) կոշտ պլաստմասսայից (11H1, 11H2, 21H1, 21H2, 31H1 եւ 31H2).</p> <p>3) բարդ (11HZ1, 21HZ1 եւ 31HZ1):</p>		

IBC06	ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ՑՈՒՑՈՒՄ	IBC06
<p>Հետեյալ ՍՄԿ-ները թույլատրվում են՝ պայմանով, որ պահպանվեն 4.1.1-ի, 4.1.2-ի եւ 4.1.3-ի ընդհանուր դրույթները.</p> <p>1) մետաղյա (11A, 11B, 11N, 21A, 21B, 21N, 31A, 31B եւ 31N).</p> <p>2) կոշտ պլաստմասսայից (11H1, 11H2, 21H1, 21H2, 31H1 եւ 31H2).</p> <p>3) բարդ (11HZ1, 11HZ2, 21HZ1, 21HZ2 եւ 31HZ1):</p>		
<p>Լրացուցիչ պահանջ.</p> <p>Այն դեպքում, երբ փոխադրման ընթացքում պինդ նյութը կարող է վերածվել հեղուկ նյութի, տե՛ս 4.1.3.4-ը:</p>		
<p>Փաթեթավորման մասին հատուկ դրույթներ</p> <p>B12 ՄԱԿ-ի նշագրման 2907 համարի դեպքում ՍՄԿ-ները պետք է համապատասխանեն փաթեթավորման II խմբի որակի ցուցանիշներին: Չպետք է օգտագործվեն փաթեթավորման I խմբի փորձարկման չափորոշիչներին համապատասխանող ՍՄԿ-ներ:</p>		

IBC07	ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ՑՈՒՑՈՒՄ	IBC07
<p>Հետեյալ ՍՄԿ-ները թույլատրվում են՝ պայմանով, որ պահպանվեն 4.1.1-ի, 4.1.2-ի եւ 4.1.3-ի ընդհանուր դրույթները.</p> <p>1) մետաղյա (11A, 11B, 11N, 21A, 21B, 21N, 31A, 31B եւ 31N).</p> <p>2) կոշտ պլաստմասսայից (11H1, 11H2, 21H1, 21H2, 31H1 եւ 31H2).</p> <p>3) բարդ (11HZ1, 11HZ2, 21HZ1, 21HZ2 եւ 31HZ1).</p> <p>4) փայտից (11C, 11D եւ 11F):</p>		
<p>Լրացուցիչ պահանջներ.</p> <p>1. Այն դեպքում, երբ փոխադրման ընթացքում պինդ նյութը կարող է վերածվել հեղուկ նյութի, տե՛ս 4.1.3.4-ը:</p> <p>2. Փայտից ՍՄԿ-ների ներդիրները պետք է անթափանցելի լինեն:</p>		
<p>Փաթեթավորման մասին հատուկ դրույթ</p> <p>B18 ՄԱԿ-ի նշագրման 3531 եւ 3533 համարների դեպքում ՍՄԿ-ները պետք է նախագծված եւ պատրաստված լինեն այնպես, որ հնարավոր լինի գազի կամ գոլորշու հեռացումը՝ կանխելու համար ճնշման կուտակումը, որի հետեանքով ՍՄԿ-ները կարող են պատռվել կայունության կորստի դեպքում:</p>		

IBC08	ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ՑՈՒՑՈՒՄ	IBC08
<p>Հետեւյալ ՍՄԿ-ները թույլատրվում են՝ պայմանով, որ պահպանվեն 4.1.1-ի, 4.1.2-ի եւ 4.1.3-ի ընդհանուր դրույթները.</p> <ol style="list-style-type: none"> <li>1) մետաղյա (11A, 11B, 11N, 21A, 21B, 21N, 31A, 31B եւ 31N).</li> <li>2) կոշտ պլաստմասսայից (11H1, 11H2, 21H1, 21H2, 31H1 եւ 31H2).</li> <li>3) բարդ (11HZ1, 11HZ2, 21HZ1, 21HZ2 եւ 31HZ1).</li> <li>4) փայտաթելքային սալից (11G).</li> <li>5) փայտից (11C, 11D եւ 11F).</li> <li>6) փափուկ (13H1, 13H2, 13H3, 13H4, 13H5, 13L1, 13L2, 13L3, 13L4, 13M1 եւ 13M2):</li> </ol>		
<p>Լրացուցիչ պահանջ.</p> <p>Այն դեպքում, երբ փոխադրման ընթացքում պինդ նյութը կարող է վերածվել հեղուկ նյութի, տե՛ս 4.1.3.4-ը:</p>		
<p>Փաթեթավորման մասին հատուկ դրույթներ</p> <p>B3 Փափուկ ՍՄԿ-ները պետք է անթափանցելի եւ ջրակայուն լինեն, կամ դրանք պետք է ապահովված լինեն անթափանցելի եւ ջրակայուն ներդիրով:</p> <p>B4 Փափուկ, փայտաթելքային սալից կամ փայտից ՍՄԿ-ները պետք է անթափանցելի եւ ջրակայուն լինեն, կամ դրանք պետք է ապահովված լինեն անթափանցելի եւ ջրակայուն ներդիրով:</p> <p>B6 ՄԱԿ-ի նշագրման 1363, 1364, 1365, 1386, 1408, 1841, 2211, 2217, 2793 եւ 3314 համարների դեպքում անհրաժեշտ չէ, որ ՍՄԿ-ները համապատասխանեն ՍՄԿ-ների՝ 6.5 գլխում նշված փորձարկման պահանջներին:</p> <p>B13 Ծանոթագրություն. ՄԱԿ-ի նշագրման 1748, 2208, 2880, 3485, 3486 եւ 3487 համարների դեպքում ծովով փոխադրվող ՍՄԿ-ներով արգելված է ՎԲՄԾ կանոնագրքի համաձայն:</p> <p>«ՌԻԴ»-ի եւ «ԱԴՌ» համաձայնագրի համար հատկանշական՝ փաթեթավորմանը վերաբերող հատուկ դրույթ</p> <p>BB3 ՄԱԿ-ի նշագրման 3509 համարի դեպքում չի պահանջվում, որ ՍՄԿ-ները բավարարեն 4.1.1.3-ի պահանջները:</p> <p>Պետք է օգտագործվեն ՍՄԿ-ներ, որոնք բավարարում են 6.5.5-ի պահանջները, հերմետիկացված են կամ ունեն հերմետիկ եւ չպատռվող ներդիր կամ պարկ:</p> <p>Եթե միակ թափոնները պինդ նյութեր են, որոնք չեն կարող հեղուկանալ փոխադրման ընթացքում առաջացող հավանական ջերմաստիճանային պայմաններում, ապա կարող են օգտագործվել փափուկ ՍՄԿ-ներ:</p> <p>Հեղուկ մնացորդների առկայության դեպքում պետք է օգտագործվեն կոշտ ՍՄԿ-ներ, որոնք ունեն պահող միջոցներ (օրինակ՝ կլանիչ նյութ):</p> <p>Նախքան լցնելը եւ փոխադրման հանձնելը յուրաքանչյուր ՍՄԿ պետք է ստուգվի՝ բացառելու քայքայման, աղտոտվածության կամ այլ վնասվածքի առկայությունը: Պակաս ամրության նշաններ ունեցող ցանկացած ՍՄԿ այլևս չպետք է օգտագործվի (աննշան փոսերը եւ քերծվածքները չեն համարվում ՍՄԿ-ի ամրությունը նվազեցնող):</p> <p>Խոտանված, դատարկ, չմաքրված եւ 5.1 դասի մնացորդներ պարունակող փաթեթվածքների փոխադրման համար նախատեսված ՍՄԿ-ները պետք է պատրաստված կամ հարմարեցված լինեն այնպես, որ ապրանքները փայտի կամ այլ այրվող նյութի հետ շփման մեջ չլինեն:</p>		

IBC99	ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ՑՈՒՑՈՒՄ	IBC99
<p>Կարող են գործածվել միայն այդ ապրանքների համար իրավասու մարմնի կողմից հաստատված ՍՄԿ-ները: Յուրաքանչյուր բեռի պետք է կցված լինի իրավասու մարմնի կողմից տրված հաստատման փաստաթղթի օրինակը, կամ տրանսպորտային փաստաթղթում պետք է լինի նշում այն մասին, որ փաթեթվածքը հաստատվել է իրավասու մարմնի կողմից:</p>		

IBC100	ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ՑՈՒՑՈՒՄ	IBC100
Այս ցուցումը կիրառելի է ՄԱԿ-ի նշագրման 0082, 0222, 0241, 0331 եւ 0332 համարների նկատմամբ:		
Հետեւյալ ՄԱԿ-ները թույլատրվում են՝ պայմանով, որ պահպանվեն 4.1.1-ի, 4.1.2-ի եւ 4.1.3-ի ընդհանուր դրույթները եւ 4.1.5-ի հատուկ դրույթները.		
1) մետաղյա (11A, 11B, 11N, 21A, 21B, 21N, 31A, 31B եւ 31N). 2) փափուկ (13H2, 13H3, 13H4, 13L2, 13L3, 13L4 եւ 13M2). 3) կոշտ պլաստմասսայից (11H1, 11H2, 21H1, 21H2, 31H1 եւ 31H2). 4) բարդ (11HZ1, 11HZ2, 21HZ1, 21HZ2, 31HZ1 եւ 31HZ2):		
Լրացուցիչ պահանջներ.		
1. ՄԱԿ-ները պետք է օգտագործվեն միայն ազատ հոսող նյութերի համար: 2. Փափուկ ՄԱԿ-ները պետք է օգտագործվեն միայն պինդ նյութերի համար:		
Փաթեթավորման մասին հատուկ դրույթներ		
B3 ՄԱԿ-ի նշագրման 0222 համարի դեպքում փափուկ ՄԱԿ-ները պետք է անթափանցելի եւ ջրակայուն լինեն կամ ապահովված լինեն անթափանցելի եւ ջրակայուն ներդիրով:		
B9 ՄԱԿ-ի նշագրման 0082 համարի դեպքում փաթեթավորման այս ցուցումը կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ նյութերը ամոնիումի նիտրատի կամ այլ անօրգանական նիտրատների եւ այլ այրվող նյութերի խառնուրդներ են, որոնք պայթուցիկ բաղադրիչներ չեն: Նման պայթուցիկ նյութերը չպետք է պարունակեն նիտրոգլիցերին, նմանատիպ հեղուկ օրգանական նիտրատներ կամ քլորատներ: Մետաղյա ՄԱԿ-ների գործածությունը չի թույլատրվում:		
B10 ՄԱԿ-ի նշագրման 0241 համարի դեպքում փաթեթավորման այս ցուցումը կարող է կիրառվել միայն այն նյութերի համար, որոնց հիմնական բաղադրիչը ջուրն է ու ամոնիումի նիտրատի մեծ մասնաբաժինը կամ այլ օքսիդացնող նյութեր, որոնցից մի քանիսը կամ բոլորը պարունակվում են լուծույթում: Մյուս բաղադրիչները կարող են ներառել ածխաջրածիններ կամ այլոմինի փոշի, սակայն չպետք է ներառեն այնպիսի նիտրոածխածնային, ինչպիսիք են տրինիտրոտոլուոլը: Մետաղյա ՄԱԿ-ների գործածությունը չի թույլատրվում:		
B17 ՄԱԿ-ի նշագրման 0222 համարի դեպքում մետաղյա ՄԱԿ-ների գործածությունը չի թույլատրվում:		

IBC520	ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ՑՈՒՑՈՒՄ	IBC520			
Այս ցուցումը կիրառվում է օրգանական պերօքսիդների եւ «F» տեսակի ինքնառեակտիվ նյութերի նկատմամբ:					
Ներքոնշյալ ՄԱԿ-ները թույլատրված են՝ պայմանով, որ պահպանվեն 4.1.1-ի, 4.1.2-ի եւ 4.1.3-ի ընդհանուր դրույթները եւ 4.1.7.2-ի հատուկ դրույթները:					
Ստորեւ չնշված բաղադրությունների դեպքում կարող են գործածվել միայն իրավասու մարմնի կողմից հաստատված ՄԱԿ-ները (տե՛ս 4.1.7.2.2-ը)4.					
ՄԱԿ-ի նշագրման համար	Օրգանական պերօքսիդ	ՄԱԿ-ի տեսակ	Առավելագույն քանակություն (լիտր/կգ)	Հսկիչ ջերմաստիճան	Վթարային ջերմաստիճան
3109	ՕՐԳԱՆԱԿԱՆ ՊԵՐՕՔՍԻԴ՝ «F» ՏԵՍԱԿԻ, ՀԵՂՈՒԿ				
	տերտ-բուֆիլ կումիլ պերօքսիդ	31HA1	1000		
	տերտ-բուֆիլ հիդրոպերօքսիդ, ջրի՝ 72%-ից ոչ ավելի պարունակությամբ	31A	1 250		
	տերտ-բուֆիլ պերօքսիացետատ, «A» տեսակի նոսրացուցիչում 32%-ից ոչ ավելի պարունակությամբ	31A 31HA1	1 250 1 000		
	տերտ-բուֆիլ պերօքսիբենզատ, «A» տեսակի նոսրացուցիչում 32%-ից ոչ ավելի պարունակությամբ	31A	1 250		
	տերտ-բուֆիլ պերօքսի-3,5,5-տրիմեթիլիեքսանատ, «A» տեսակի նոսրացուցիչում 37%-ից ոչ ավելի պարունակությամբ	31A 31HA1	1 250 1 000		
	Կումիլ հիդրոպերօքսիդ, «A» տեսակի նոսրացուցիչում 90%-ից ոչ ավելի պարունակությամբ	31HA1	1 250		

IBC520	ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ՑՈՒՑՈՒՄ	IBC520			
	Դիբենզոլի պերօքսիդ, ջրում որպես կայուն դիսպերս լուծույթ 42%-ից ոչ ավելի պարունակությամբ	31H1	1 000		
	Դի-տերտ-բուֆիլ պերօքսիդ, «A» տեսակի նոսրացուցիչում 52%-ից ոչ ավելի պարունակությամբ	31A 31HA1	1 250 1 000		
	1,1-Դի-(տերտ-բուֆիլպերօքսի) ցիկլոհեքսան, «A» տեսակի նոսրացուցիչում 42%-ից ոչ ավելի պարունակությամբ	31H1	1 000		
	1,1-Դի-(տերտ-բուֆիլպերօքսի) ցիկլոհեքսան, «A» տեսակի նոսրացուցիչում 37%-ից ոչ ավելի պարունակությամբ	31A	1 250		
	Դիլաուրոլի պերօքսիդ, 42%-ից ոչ ավելի պարունակությամբ՝ ջրում կայուն դիսպերս լուծույթ	31HA1	1 000		
	Իզոպրոպիլ կումիլ հիդրոպերօքսիդ, «A» տեսակի նոսրացուցիչում 72%-ից ոչ ավելի պարունակությամբ	31HA1	1 250		
	պ- մեթիլ հիդրոպերօքսիդ, «A» տեսակի նոսրացուցիչում 72%-ից ոչ ավելի պարունակությամբ	31HA1	1 250		
	Պերօքսիքսացախաթթու, կայունացված՝ 17%-ից ոչ ավելի պարունակությամբ	31A 31H1 31H2 31HA1	1 500 1 500 1 500 1 500		
3110	ՕՐԳԱՆԱԿԱՆ ՊԵՐՕՔՍԻԴ՝ «F» ՏԵՍԱԿԻ, ՊԻՆԴ				
	Դիկումիլ պերօքսիդ	31A 31H1 31HA1	2 000		
3119	ՕՐԳԱՆԱԿԱՆ ՊԵՐՕՔՍԻԴ՝ «F» ՏԵՍԱԿԻ, ՀԵՂՈՒԿ, ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆՈՎ				
	տերտ-ամիլ պերօքսիպիվալատ, «A» տեսակի նոսրացուցիչում 32%-ից ոչ ավելի պարունակությամբ	31A	1 250	+10 °C	+15 °C
	տերտ-բուֆիլ պերօքսի-2-էթիլհեքսանոատ, «B» տեսակի նոսրացուցիչում 32%-ից ոչ ավելի պարունակությամբ	31HA1 31A	1 000 1 250	+30 °C +30 °C	+35 °C +35 °C
	տերտ-բուֆիլ պերօքսիներոդեկանոատ, «A» տեսակի նոսրացուցիչում 32%-ից ոչ ավելի պարունակությամբ	31A	1 250	0 °C	+10 °C
	տերտ-բուֆիլ պերօքսիներոդեկանոատ՝ 52%-ից ոչ ավելի պարունակությամբ, ջրում կայուն դիսպերս լուծույթ	31A	1 250	-5 °C	+5 °C
	տերտ-բուֆիլ պերօքսիպիվալատ, «B» տեսակի նոսրացուցիչում 27%-ից ոչ ավելի պարունակությամբ	31HA1 31A	1 000 1 250	+10 °C +10 °C	+15 °C +15 °C
	Կումիլ պերօքսիներոդեկանոատ, 52%-ից ոչ ավելի պարունակությամբ, ջրում կայուն դիսպերս լուծույթ	31A	1 250	-15 °C	- 5 °C

IBC520		ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ՑՈՒՑՈՒՄ (շարունակություն)				IBC520	
ՄԱԿ-ի նշագրման համար	Օրգանական պերօքսիդ	ՄՄԿ-ի տեսակ	Առավելագույն քանակություն (լիտր/կգ)	Հսկիչ ջերմաստիճան	Վթարային ջերմաստիճան		
3119 (շարունակություն)	տերտ-բութիլ պերօքսինեոդեկանոատ, 42%-ից ոչ ավելի պարունակությամբ, ջրում կայուն դիսպերս լուծույթ	31A	1 250	- 5 °C	+ 5 °C		
	Դի-(4-տերտ-բութիլցիկլոհեքսիլ) պերօքսիդիկարբոնատ, 42%-ից ոչ ավելի պարունակությամբ, ջրում կայուն դիսպերս լուծույթ	31HA1	1 000	+30 °C	+35 °C		
	Դիցետիլ պերօքսիդիկարբոնատ, 42%-ից ոչ ավելի պարունակությամբ, ջրում կայուն դիսպերս լուծույթ	31HA1	1 000	+30 °C	+35 °C		
	Դի-(2-նեոդեկանոիլպերօքսիդոպրոպիլ) բենզոլ, 42%-ից ոչ ավելի պարունակությամբ, ջրում կայուն դիսպերս լուծույթ	31A	1 250	-15 °C	-5 °C		
	3-հիդրօքսի-1,1-դիմեթիլբութիլ պերօքսինեոդեկանոատ, 52%-ից ոչ ավելի պարունակությամբ, ջրում կայուն դիսպերս լուծույթ	31A	1 250	-15 °C	-5 °C		
	Դի-(2-էթիլհեքսիլ) պերօքսիդիկարբոնատ, 62%-ից ոչ ավելի պարունակությամբ, ջրում կայուն դիսպերս լուծույթ	31A 31HA1	1 250 1000	-20 °C -20°C	-10 °C -10°C		
	Դիմիրիստիլ պերօքսիդիկարբոնատ, 42%-ից ոչ ավելի պարունակությամբ, ջրում կայուն դիսպերս լուծույթ	31HA1	1 000	+15 °C	+20 °C		
	Դի-(3,5,5-տրիմեթիլհեքսանոիլ) պերօքսիդ, «A» տեսակի նոսրացուցիչում 52%-ից ոչ ավելի պարունակությամբ	31HA1 31A	1 000 1 250	+10 °C +10 °C	+15 °C +15 °C		
	Դի-(3,5,5-տրիմեթիլհեքսանոիլ) պերօքսիդ, 52%-ից ոչ ավելի պարունակությամբ, ջրում կայուն դիսպերս լուծույթ	31A	1 250	+10 °C	+15 °C		
	1,1,3,3 - տետրամեթիլբութիլ պերօքսինեոդեկանոատ, 52%-ից ոչ ավելի պարունակությամբ, ջրում կայուն դիսպերս լուծույթ	31A 31HA1	1 250 1 000	- 5 °C -5 °C	+ 5 °C +5 °C		
	1,1,3,3-տետրամեթիլբութիլ պերօքսի-2-էթիլհեքսանոատ, «A» տեսակի նոսրացուցիչում 67%-ից ոչ ավելի պարունակությամբ	31HA1	1000	+15 °C	+20 °C		
	Դիցիկլոհեքսիլպերօքսիդիկարբոնատ, 42%-ից ոչ ավելի պարունակությամբ, ջրում կայուն դիսպերս լուծույթ	31A	1 250	+10 °C	+15 °C		
	Դիիզոբուտիլի պերօքսիդ, 28%-ից ոչ ավելի պարունակությամբ, ջրում կայուն դիսպերս լուծույթ	31HA1	1 000	-20°C	-10 °C		
		31A	1 250	-20°C	-10 °C		
	Դիիզոբուտիլի պերօքսիդ, 42%-ից ոչ ավելի պարունակությամբ, ջրում կայուն դիսպերս լուծույթ	31HA1	1 000	-25 °C	-15 °C		
		31A	1 250	-25 °C	-15 °C		
3120	ՕՐԳԱՆԱԿԱՆ ՊԵՐՕՔՍԻԴ՝ «F» ՏԵՍԱԿԻ, ՊԻՆԴ, ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆՈՎ Ոչ մի բաղադրություն նշված չէ						

Լրացուցիչ պահանջներ.

- ՄՄԿ-ների համար պետք է նախատեսված լինի այնպիսի սարք, որով փոխադրման ընթացքում օդափոխություն կապահովվի: Ճնշումը նվազեցնող սարքի ներթող բացվածքը պետք է տեղակայված լինի գոլորշի պարունակող տարածության մեջ՝ փոխադրման ընթացքում ՄՄԿ-ի առավելագույնս լցավորված պայմաններում:
- Մետաղյա ՄՄԿ-ների կամ ամբողջությամբ մետաղական կորպուսով բարդ ՄՄԿ-ների՝ պայթյունի հետևանքով պատռվելը կանխելու նպատակով պետք է նախագծվեն վթարային սարքեր, որոնք պետք է դուրս թողնեն այն քայքայման արգասիքները եւ գոլորշին, որոնք առաջացել են ինքնաարագացող քայքայման կամ մեկ ժամից ոչ պակաս տեղի բռնկված հրդեհի ժամանակ՝ 4.2.1.13.8-ում նշված բանաձեռով իրականացված հաշվարկի համաձայն: Փաթեթավորման այս ցուցման մեջ նշված հսկիչ եւ վթարային ջերմաստիճանները վերաբերում են չմեկուսացված ՄՄԿ-ներին: Սույն ցուցման համաձայն ՄՄԿ-ով օրգանական պերօքսիդ առաքելու դեպքում բեռնառաքողի պատասխանատվությունն է պահպանվել, որ՝
  - ՄՄԿ-ի վրա տեղադրված ճնշումը նվազեցնող սարքերը եւ վթարային սարքերը նախագծված լինեն այնպես, որ պատշաճ կերպով հաշվի առնվեն օրգանական պերօքսիդի ինքնաարագացող քայքայումն ու հրդեհի բռնկումը, եւ
  - հարկ եղած դեպքում՝ նշված հսկիչ եւ վթարային ջերմաստիճանները լինեն համապատասխան՝ հաշվի առնելով գործածվելիք ՄՄԿ-ի կառուցվածքը (օրինակ՝ մեկուսացված լինելը):



IBC620	ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ՑՈՒՑՈՒՄ (շարունակություն)	IBC620
Այս ցուցումը կիրառելի է ՄԱԿ-ի նշագրման 3291 համարի նկատմամբ:		
Հետևյալ ՄՄԿ-ները թույլատրվում են՝ պայմանով, որ պահպանվեն 4.1.1-ի՝ բացի 4.1.1.15-ից, 4.1.2-ի եւ 4.1.3-ի ընդհանուր դրույթները. Փաթեթավորման II խմբի որակի ցուցանիշներին համապատասխանող կոշտ, անջրանցիկ ՄՄԿ-ներ:		
Լրացուցիչ պահանջներ.		
1. Պետք է առկա լինի կլանիչ նյութի բավականաչափ քանակություն՝ ՄՄԿ-ում առկա հեղուկի ամբողջ քանակությունը կլանելու համար:		
2. ՄՄԿ-ները պետք է հեղուկներն իրենց ներսում պահելու հնարավորություն ունենան:		
3. Այն ՄՄԿ-ները, որոնք նախատեսված են այնպիսի սուր առարկաներ պարունակելու համար, ինչպիսիք են կտրված ապակին եւ ասեղները, պետք է պատվածքադիմացկուն լինեն:		

#### 4.1.4.3 Խոշոր փաթեթվածքների օգտագործման վերաբերյալ փաթեթավորման ցուցումներ

LP01	ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ՑՈՒՑՈՒՄ (ՀԵՂՈՒԿՆԵՐ)	LP01			
Հետևյալ խոշոր փաթեթվածքները թույլատրվում են՝ պայմանով, որ պահպանվեն 4.1.1-ի եւ 4.1.3-ի ընդհանուր դրույթները.					
Ներքին փաթեթվածքներ	Խոշոր արտաքին փաթեթվածքներ	Փաթեթավորման I խումբ	Փաթեթավորման II խումբ	Փաթեթավորման III խումբ	
Ապակյա Պլաստմասսայից Մետաղյա	10 լիտր 30 լիտր 40 լիտր	պողպատյա (50A) ալյումինե (50B) պողպատ կամ ալյումին չհանդիսացող այլ մետաղից (50N) կոշտ պլաստմասսայից (50H) բնական փայտից (50C) նրբատախտակից (50D) վերամշակված փայտից (50F) փայտաթելքային սալից (50G).	Չի թույլատրվում	Չի թույլատրվում	Առավելագույն տարողություն՝ 3 մ <sup>3</sup>

LP02	ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ՑՈՒՑՈՒՄ (ՊԻՆԴ ՆՅՈՒԹԵՐ)	LP02			
Հետևյալ խոշոր փաթեթվածքները թույլատրվում են՝ պայմանով, որ պահպանվեն 4.1.1-ի եւ 4.1.3-ի ընդհանուր դրույթները.					
Ներքին փաթեթվածքներ	Խոշոր արտաքին փաթեթվածքներ	Փաթեթավորման I խումբ	Փաթեթավորման II խումբ	Փաթեթավորման III խումբ	
Ապակյա Պլաստմասսայից ք Մետաղյա Թղթից ա, ք Ֆիբրից ա, ք	10 կգ 50 կգ 50 կգ 50 կգ 50 կգ	պողպատյա (50A) ալյումինե (50B) պողպատ կամ ալյումին չհանդիսացող այլ մետաղից (50N) կոշտ պլաստմասսայից (50H) բնական փայտից (50C) նրբատախտակից (50D) վերամշակված փայտից (50F) փայտաթելքային սալից (50G). փափուկ պլաստմասսայից (51H) գ	Չի թույլատրվում	Չի թույլատրվում	Առավելագույն տարողություն՝ 3 մ <sup>3</sup>
ա Այս ներքին փաթեթվածքները չպետք է օգտագործվեն, եթե փոխադրվող նյութերը կարող են փոխադրման ընթացքում հեղուկանալ:					

LP02	ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ՑՈՒՑՈՒՄ (ՊԻՆԴ ՆՅՈՒԹԵՐ)	LP02
բ	Այս ներքին փաթեթվածքները պետք է լինեն անթափանցելի:	
գ	Պետք է օգտագործվեն փափուկ ներքին փաթեթվածքների հետ միայն:	
Փաթեթավորման մասին հատուկ դրույթ		
L2 Հանվել է:		
L3 Ծանոթագրություն. ՄԱԿ-ի նշագրման 2208 եւ 3486 համարների դեպքում ծովով փոխադրումը խոշոր փաթեթվածքներով արգելված է:		

LP02	ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ՑՈՒՑՈՒՄ (ՊԻՆԴ ՆՅՈՒԹԵՐ) (շարունակություն)	LP02
ՌԻԴ-ի եւ «ԱԴՌ» համաձայնագրի համար հատկանշական՝ փաթեթավորմանը վերաբերող հատուկ դրույթ		
LL1	<p>ՄԱԿ-ի նշագրման 3509 համարի դեպքում չի պահանջվում, որ խոշոր փաթեթվածքները բավարարեն 4.1.1.3-ի պահանջները:</p> <p>Պետք է օգտագործվեն խոշոր փաթեթվածքներ, որոնք բավարարում են 6.6.4-ի պահանջները, հերմետիկացված են կամ ունեն հերմետիկ եւ չպատվող ներդիր կամ պարկ:</p> <p>Եթե միակ թափոնները պինդ նյութեր են, որոնք չեն կարող հեղուկանալ փոխադրման ընթացքում առաջացող հավանական ջերմաստիճանային պայմաններում, ապա կարող են օգտագործվել փափուկ խոշոր փաթեթվածքներ:</p> <p>Հեղուկ մնացորդների առկայության դեպքում պետք է օգտագործվեն կոշտ խոշոր փաթեթվածքներ, որոնք ունեն պահող միջոցներ (օրինակ՝ կլանիչ նյութ):</p> <p>Նախքան լցնելը եւ փոխադրման հանձնելը յուրաքանչյուր խոշոր փաթեթվածք պետք է ստուգվի՝ բացառելու քայքայման, աղտոտվածության կամ այլ վնասվածքի առկայությունը: Պակաս ամրության նշաններ ունեցող ցանկացած խոշոր փաթեթվածք այլևս չպետք է օգտագործվի (աննշան փոսերը եւ քերծվածքները չեն համարվում խոշոր փաթեթվածքի ամրությունը նվազեցնող նշաններ):</p> <p>Խոտանված, դատարկ, չնաքրված եւ 5.1 դասի մնացորդներ պարունակող փաթեթվածքների փոխադրման համար նախատեսված խոշոր փաթեթվածքները պետք է պատրաստված կամ հարմարեցված լինեն այնպես, որ ապրանքները փայտի կամ այլ այրվող նյութի հետ շփման մեջ չլինեն:</p>	

LP99	ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ՑՈՒՑՈՒՄ	LP99
Կարող են գործածվել միայն այդ ապրանքների համար իրավասու մարմնի կողմից հաստատված խոշոր փաթեթվածքներ: Յուրաքանչյուր բեռի պետք է կցված լինի իրավասու մարմնի կողմից տրված հաստատման փաստաթղթի օրինակը, կամ տրասնպորտային փաստաթղթում պետք է լինի նշում այն մասին, որ փաթեթվածքը հաստատվել է իրավասու մարմնի կողմից:		

LP101	ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ՑՈՒՑՈՒՄ	LP101
Հետեւյալ փաթեթվածքները թույլատրվում են՝ պայմանով, որ պահպանվեն 4.1.1-ի, 4.1.3-ի ընդհանուր դրույթները եւ 4.1.5-ի հատուկ դրույթները.		
Ներքին փաթեթվածքներ	Միջանկյալ փաթեթվածքներ	Խոշոր փաթեթվածքներ
Չեն պահանջվում	Չեն պահանջվում	<p>պողպատյա (50A)</p> <p>ալյումինե (50B)</p> <p>պողպատ կամ ալյումին չհանդիսացող այլ մետաղից (50N)</p> <p>կոշտ պլաստմասսայից (50H)</p> <p>բնական փայտից (50C)</p> <p>նրբատախտակից (50D)</p> <p>վերամշակված փայտից (50F)</p> <p>փայտաթելքային սալից (50G)</p>
Փաթեթավորման մասին հատուկ դրույթ		
L1 ՄԱԿ-ի նշագրման հետեւյալ համարների դեպքում՝ 0006, 0009, 0010, 0015, 0016, 0018, 0019, 0034, 0035, 0038, 0039, 0048, 0056, 0137, 0138, 0168, 0169, 0171, 0181, 0182, 0183, 0186, 0221, 0243, 0244, 0245, 0246, 0254, 0280, 0281, 0286, 0287, 0297, 0299, 0300, 0301,		

LP101	ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ՑՈՒՑՈՒՄ	LP101
0303, 0321, 0328, 0329, 0344, 0345, 0346, 0347, 0362, 0363, 0370, 0412, 0424, 0425, 0434, 0435, 0436, 0437, 0438, 0451, 0488, 0502 եւ 0510.		
<p>Սովորաբար ռազմական օգտագործման համար նախատեսված, հարուցիչ միջոցներ չունեցող կամ առնվազն երկու արդյունավետ պաշտպանիչ հատկությամբ հարուցիչ միջոցներ ունեցող խոշոր եւ ամուր պայթուցիկ պատրաստվածքները կարող են փոխադրվել առանց փաթեթավորման: Եթե նման պատրաստվածքները պարունակում են նետողական լիցքեր կամ ինքնաշարժ են, դրանց բռնկման համակարգերը պետք է պաշտպանված լինեն փոխադրման նորմալ պայմաններում առաջացող խթանող ազդեցություններից:</p> <p>Չփաթեթավորված պատրաստվածքի 4-րդ սերիայի փորձարկումների բացասական արդյունքը վկայում է այն մասին, որ կարելի է դիտարկել պատրաստվածքն առանց փաթեթավորման փոխադրելու հարցը: Նման չփաթեթավորված պատրաստվածքները կարող են ամրացվել հենարաններին կամ փոխադրվել կավարամածների մեջ կամ բեռնման եւ բեռնաթափման այլ սարքերով:</p>		

LP102	ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ՑՈՒՑՈՒՄ	LP102
Հետեւյալ փաթեթվածքները թույլատրվում են՝ պայմանով, որ պահպանվեն 4.1.1-ի, 4.1.3-ի ընդհանուր դրույթները եւ 4.1.5-ի հատուկ դրույթները.		
Ներքին փաթեթվածքներ	Միջանկյալ փաթեթվածքներ	Արտաքին փաթեթվածքներ
Պարկեր ջրակայուն  Տարաներ փայտաթելքային սալից մետաղյա պլաստմասսայից փայտյա  Թերթեր փայտաթելքային սալից՝ ծալքավորված  Գլաններ փայտաթելքային սալից	Չեն պահանջվում	պողպատյա (50A) այլումինե (50B) պողպատ կամ այլումին չհանդիսացող այլ մետաղից (50N) կոշտ պլաստմասսայից (50H) բնական փայտից (50C) նրբատախտակից (50D) վերամշակված փայտից (50F) փայտաթելքային սալից (50G)

LP200	ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ՑՈՒՑՈՒՄ	LP200
<p>Այս ցուցումը կիրառելի է ՄԱԿ-ի նշագրման 1950 համարի նկատմամբ:</p> <p>Հետեւյալ խոշոր փաթեթվածքները աերոզոլների համար թույլատրվում են՝ պայմանով, որ պահպանվեն 4.1.1-ի եւ 4.1.3-ի ընդհանուր դրույթները.</p> <p>Փաթեթավորման II խմբի որակի ցուցանիշներին համապատասխանող կոշտ խոշոր փաթեթվածքներ, որոնք պատրաստված են՝</p> <p>պողպատից (50A).</p> <p>այլումինից (50B).</p> <p>պողպատ կամ այլումին չհանդիսացող այլ մետաղից (50N).</p> <p>կոշտ պլաստմասսայից (50H).</p> <p>բնական փայտից (50C).</p> <p>նրբատախտակից (50D).</p> <p>վերամշակված փայտից (50F).</p> <p>կոշտ փայտաթելքային սալից (50G):</p>		

Փաթեթավորման մասին հատուկ դրույթ

L2 Խոշոր փաթեթավաճքները պետք է նախագծված եւ պատրաստված լինեն այնպես, որ փոխադրման բնականոն պայմաններում հնարավոր լինի կանխել անբողկների վտանգավոր տեղաշարժը եւ պատահական արտագատումը: 327-րդ հատուկ դրույթին համապատասխան փոխադրվող շահագործումից հանված անբողկների համար խոշոր փաթեթավաճքները պետք է ունենան փոխադրման ընթացքում արտահոսող հեղուկը պահող միջոց, օրինակ՝ կլանիչ նյութ: Խոշոր փաթեթավաճքները պետք է պատշաճ ձեռով օդափոխվեն, որպեսզի կանխվեն դյուրավառ միջավայրի ստեղծումը եւ ճնշման կուտակումը:

LP621	ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ՑՈՒՑՈՒՄ	LP621
Այս ցուցումը կիրառելի է ՄԱԿ-ի նշագրման 3291 համարի նկատմամբ:		
<p>Հետեւյալ խոշոր փաթեթավաճքները թույլատրվում են՝ պայմանով, որ պահպանվեն 4.1.1-ի եւ 4.1.3-ի ընդհանուր դրույթները.</p> <p>1) Ներքին փաթեթավաճքների մեջ տեղադրված կլինիկական թափոնների դեպքում՝ 6.6 գլխի՝ պինդ նյութերի համար նախատեսված պահանջները բավարարող եւ փաթեթավորման II խմբի որակի ցուցանիշներին համապատասխանող կոշտ, անջրանցիկ խոշոր փաթեթավաճքներ՝ պայմանով, որ դրանցում առկա է փաթեթավաճքում եղած հեղուկի ամբողջ պարունակությունը կլանելու համար անհրաժեշտ բավականաչափ կլանիչ նյութ, եւ որ փաթեթավաճքը կարող է պահել հեղուկն իր ներսում.</p> <p>2) Մեծ քանակությամբ հեղուկ պարունակող փաթեթների դեպքում՝ 6.6 գլխի պահանջները բավարարող եւ հեղուկ նյութերի համար նախատեսված եւ փաթեթավորման II խմբի որակի ցուցանիշներին համապատասխանող կոշտ, խոշոր փաթեթավաճքներ:</p>		
<p>Լրացուցիչ պահանջ.</p> <p>Այն խոշոր փաթեթավաճքները, որոնք նախատեսված են այնպիսի սուր առարկաներ պարունակելու համար, ինչպիսիք են կտրված ապակիները եւ ասեղները, պետք է պատվաճքադիմացկուն լինեն եւ 6.6 գլխում նշված որակի փորձարկման պայմաններում կարողանան հեղուկն իրենց ներսում պահել:</p>		

LP902	ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ՑՈՒՑՈՒՄ	LP902
Այս ցուցումը կիրառելի է ՄԱԿ-ի նշագրման 3268 համարի նկատմամբ:		
<p>Փաթեթավորված պատրաստվածքներ</p> <p>Հետեւյալ փաթեթավաճքները թույլատրվում են՝ պայմանով, որ պահպանվում են 4.1.1-ի եւ 4.1.3-ի ընդհանուր դրույթները.</p> <p>Փաթեթավորման III խմբի որակի ցուցանիշներին համապատասխանող փաթեթավաճքներ: Փաթեթավաճքները պետք է նախագծված եւ պատրաստված լինեն այնպես, որ փոխադրման բնականոն պայմաններում հնարավոր լինի կանխել պատրաստվածքների տեղաշարժը եւ պատահական գործարկումը:</p> <p>Չփաթեթավորված պատրաստվածքներ՝</p> <p>Պատրաստվածքները դրանց արտադրության վայրից հավաքման գործարան տեղափոխվելու ժամանակ կարող են փոխադրվել նաեւ չփաթեթավորված՝ դրանց համար նախատեսված բեռնման եւ բեռնաթափման սարքերով կամ բեռնատար տրանսպորտային միավորներով:</p>		
<p>Լրացուցիչ պահանջ.</p> <p>Ցանկացած ճնշումային տարա պետք է համապատասխանի ճնշումային տարայում (տարաներում) պարունակվող նյութերի համար իրավասու մարմնի կողմից սահմանված պահանջներին:</p>		

LP903	ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ	LP903
Այս ցուցումը կիրառելի է ՄԱԿ-ի նշագրման 3090, 3091, 3480 եւ 3481 համարների նկատմամբ:		
<p>Հետեւյալ խոշոր փաթեթավաճքները առանձին մարտկոցի, այդ թվում՝ սարքավորման մեջ տեղադրված մարտկոցի համար թույլատրվում են՝ պայմանով, որ պահպանվում են 4.1.1-ի եւ 4.1.3-ի ընդհանուր դրույթները.</p> <p>Փաթեթավորման II խմբի որակի ցուցանիշներին համապատասխանող կոշտ խոշոր փաթեթավաճքներ, որոնք պատրաստված են՝</p> <p>պողպատից (50A).</p> <p>ալյումինից (50B).</p>		

LP903	ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ՅՈՒՅՈՒՄՆԵՐ	LP903
<p>պողպատ կամ ալյումին չհանդիսացող այլ մետաղից (50N).</p> <p>կոշտ պլաստմասսայից (50H).</p> <p>բնական փայտից (50C).</p> <p>նրբատախտակից (50D).</p> <p>վերամշակված փայտից (50F).</p> <p>կոշտ փայտաթելքային սալից (50G):</p>		
<p>Մարտկոցը պետք է փաթեթավորվի այնպես, որ պաշտպանված լինի վնասվելուց, ինչը կարող է տեղի ունենալ խոշոր փաթեթվածքում դրա տեղաշարժումից կամ տեղադրումից:</p>		
<p>Լրացուցիչ պահանջ.</p> <p>Մարտկոցները պետք է պաշտպանված լինեն կարճ միացումից:</p>		

LP904	ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ՅՈՒՅՈՒՄ	LP904
<p>Այս ցուցումը կիրառվում է ՄԱԿ-ի նշագրման 3090, 3091, 3480 եւ 3481 համարների ներքո դասակարգված՝ վնասված կամ թերություններ ունեցող առանձին մարտկոցի, այդ թվում՝ սարքավորման մեջ տեղադրված մարտկոցների նկատմամբ:</p>		
<p>Հետեւյալ խոշոր փաթեթվածքները վնասված կամ թերություններ ունեցող առանձին մարտկոցի եւ սարքավորման մեջ տեղադրված՝ վնասված կամ թերություններ ունեցող մարտկոցի համար թույլատրվում են՝ պայմանով, որ պահպանվում են 4.1.1-ի եւ 4.1.3-ի ընդհանուր դրույթները.</p> <p>Մարտկոցների եւ մարտկոցներ պարունակող սարքավորման դեպքում խոշոր փաթեթվածքները, որոնք պատրաստված են՝</p> <p>պողպատից (50A)</p> <p>ալյումինից (50B)</p> <p>պողպատ կամ ալյումին չհանդիսացող այլ մետաղից (50N)</p> <p>կոշտ պլաստմասսայից (50H)</p> <p>նրբատախտակից (50D)</p>		
<p>Փաթեթվածքները պետք է համապատասխանեն փաթեթավորման II խմբի որակի ցուցանիշներին:</p> <ol style="list-style-type: none"> <li>1. Վնասված կամ թերություններ ունեցող յուրաքանչյուր մարտկոց կամ այդպիսի մարտկոց պարունակող սարքավորում պետք է առանձին փաթեթավորվի ներքին փաթեթվածքում եւ տեղադրվի արտաքին փաթեթվածքում: Ներքին փաթեթվածքը կամ արտաքին փաթեթվածքը պետք է լինի անջրանցիկ՝ էլեկտրոլիտի հնարավոր արտահոսքը կանխելու համար:</li> <li>2. Յուրաքանչյուր ներքին փաթեթվածք պետք է պատված լինի բավականաչափ քանակությամբ չայրվող եւ չհաղորդող ջերմամեկուսացնող նյութով՝ ջերմության վտանգավոր առաջացումը կանխելու համար:</li> <li>3. Փակված փաթեթվածքները պետք է անհրաժեշտության դեպքում սարքավորված լինեն օդափոխիչ կափույրով:</li> <li>4. Պետք է ձեռնարկվեն անհրաժեշտ միջոցներ՝ տատանումների եւ ցնցումների ազդեցությունը նվազեցնելու, փաթեթվածքում մարտկոցի տեղաշարժը կանխելու համար, որոնք կարող են դառնալ հետագա վնասի պատճառ եւ փոխադրման ընթացքում ստեղծել վտանգավոր իրավիճակ: Այս պահանջը բավարարելու համար կարող է նաեւ օգտագործվել չայրվող եւ չհաղորդող պաշտպանիչ նյութ:</li> <li>5. Չայրվող լինելու հատկանիշը պետք է գնահատվի այն երկրում ընդունված ստանդարտի համաձայն, որտեղ նախագծվել կամ պատրաստվել է փաթեթվածքը:</li> </ol> <p>Արտահոսող մարտկոցների դեպքում ներքին կամ արտաքին փաթեթվածքում պետք է տեղադրվի բավականաչափ իներտ կլանիչ նյութ՝ էլեկտրոլիտի ցանկացած արտահոսք կլանելու համար:</p>		
<p>Լրացուցիչ պահանջ.</p> <p>Մարտկոցները պետք է պաշտպանված լինեն կարճ միացումից:</p>		

4.1.4.4. (Հանվել է)

- 4.1.5. Առաջին դասի բեռների փաթեթավորման վերաբերյալ հատուկ դրույթները
- 4.1.5.1. Պետք է կատարվեն 4.1.1 բաժնի ընդհանուր դրույթները:
- 4.1.5.2. Առաջին դասի բեռների համար նախատեսված բոլոր փաթեթավածքները պետք է նախագծված եւ պատրաստված լինեն այնպես, որ՝
- ա) պաշտպանեն պայթուցիկ նյութերը, կանխեն դրանց արտահոսքը եւ չմեծացնեն փոխադրման սովորական պայմաններում պատահական բռնկման կամ վառման վտանգը, ներառյալ՝ ջերմաստիճանի, խոնավության եւ ճնշման հնարավոր փոփոխությունները.
  - բ) հնարավոր լինի փոխադրման սովորական պայմաններում անվտանգ կերպով գործ ունենալ ամբողջական փաթեթի հետ. եւ
  - գ) փաթեթները կարողանան դիմանալ նախատեսված դարսակման միջոցով դրանց վրա դրվող ցանկացած բեռնվածքի, որին կարող են ենթարկվել փոխադրման ընթացքում՝ այնպես, որ պայթուցիկ նյութերի առաջացրած վտանգը չմեծանա, պարունակությունը պահելու փաթեթավածքի հատկությունը չնվազի, իսկ փաթեթները չձեռախախտվեն այն կերպ կամ այն չափով, որոնք կնվազեցնեն դրանց ամրությունը կամ կխաթարեն դարսակի կայունությունը:
- 4.1.5.3. Փոխադրման համար պատրաստված բոլոր պայթուցիկ նյութերը եւ պատրաստվածքները պետք է դասակարգվեն 2.2.1-ում ներկայացված ընթացակարգերի համաձայն:
- 4.1.5.4. Առաջին դասի բեռները պետք է փաթեթավորվեն 3.2 գլխի Ապոլոսակի 8-րդ սյունակում նշված եւ 4.1.4-ում նկարագրված փաթեթավորման համապատասխան ցուցմանը համաձայն:
- 4.1.5.5. Եթե «ԱԴՌ» համաձայնագրում այլ բան սահմանված չէ, ապա փաթեթավածքները, ներառյալ՝ ՍՄԿ-ները եւ խոշոր փաթեթավածքները պետք է բավարարեն 6.1, 6.5 կամ 6.6 գլուխների պահանջները՝ կախված կոնկրետ դեպքից, ինչպես նաեւ II փաթեթավորման խմբի համար նախատեսված փորձարկումների պահանջները:
- 4.1.5.6. Հեղուկ պայթուցիկ նյութեր պարունակող փաթեթավածքների փակիչ սարքը պետք է արտահոսքի դեմ կրկնակի պաշտպանություն ապահովի:
- 4.1.5.7. Մետաղական թմբկազլանների փակիչ սարքը պետք է ներառի համապատասխան խցանիչ. եթե փակիչ սարքն ունի պտուտակավոր պարուրակ, ապա պայթուցիկ նյութերի ներթափանցումը պտուտակավոր պարուրակի մեջ պետք է կանխվի:

- 4.1.5.8. Ջրի մեջ լուծվող նյութերի համար նախատեսված փաթեթվածքները պետք է լինեն ջրակայուն: Ապագգայունացված կամ զգայանվազեցված նյութերի համար նախատեսված փաթեթվածքները պետք է այնպես փակվեն, որ փոխադրման ընթացքում չփոփոխվի դրանց կոնցենտրացիան:
- 4.1.5.9. Եթե փաթեթվածքն ունի ջրով լցված կրկնակի պատյան, որը կարող է սառչել փոխադրման ընթացքում, ապա սառեցումը կանխելու համար անհրաժեշտ է ավելացնել բավականաչափ քանակությամբ հակասառչչ: Չպետք է օգտագործվի այնպիսի հակասառչչ, որին բնորոշ դյուրավառությունը կարող է հրդեհի վտանգ առաջացնել:
- 4.1.5.10. Պաշտպանիչ ծածկույթ չունեցող մեխերը, բռնակները եւ մյուս մետաղական փակիչ սարքերը չպետք է ներթափանցեն արտաքին փաթեթվածքի մեջ, եթե ներքին փաթեթվածքը պայթուցիկ նյութերը մետաղի հետ շփումից պատշաճորեն չի պաշտպանում:
- 4.1.5.11. Ներքին փաթեթվածքները, կցամասերը եւ պաշտպանիչ նյութերը, ինչպես նաեւ պայթուցիկ նյութերի կամ պատրաստվածքների տեղադրումը փաթեթների մեջ պետք է իրականացվեն այնպես, որ փոխադրման սովորական պայմաններում պայթուցիկ նյութերը կամ պատրաստվածքները չքանդվեն արտաքին փաթեթվածքի ներսում: Պատրաստվածքների մետաղական տարրերը չպետք է շփվեն մետաղական փաթեթվածքների հետ: Արտաքին պատյանում չտեղադրված՝ պայթուցիկ նյութեր պարունակող պատրաստվածքները պետք է միմյանցից տարանջատվեն՝ շփումը եւ հարվածը կանխելու համար: Այդ նպատակով կարող են օգտագործվել միջադիրներ, տակդիրներ, բաժանարար միջնորմներ ներքին կամ արտաքին փաթեթվածքի մեջ, ինչպես նաեւ կաղապարներ կամ տարաներ:
- 4.1.5.12. Փաթեթվածքները պետք է պատրաստված լինեն փաթեթում պարունակվող պայթուցիկ նյութերի հետ համատեղելի եւ դրանց նկատմամբ անթափանց նյութերից այնպես, որ պայթուցիկ նյութերի եւ փաթեթավորման նյութերի միջեւ փոխազդեցության կամ պայթուցիկ նյութերի արտահոսքի դեպքերում պայթուցիկները չդառնան փոխադրման համար վտանգավոր, եւ վտանգավորության ենթադասը կամ համատեղելիության խումբը չփոփոխվի:
- 4.1.5.13. Պետք է կանխվի պայթուցիկ նյութերի ներթափանցումը կարեր ունեցող մետաղական փաթեթվածքի կարերի փոսիկների մեջ:
- 4.1.5.14. Պլաստմասսայից փաթեթվածքները չպետք է առաջացնեն կամ կուտակեն այնպիսի քանակությամբ ստատիկ էլեկտրականություն, որ պարպումը հանգեցնի փաթեթավորված պայթուցիկ նյութերի կամ պատրաստվածքների վառմանը, բռնկմանը կամ գործարկմանը:

4.1.5.15. Սովորաբար ռազմական օգտագործման համար նախատեսված, հարուցիչ սեփական միջոցներ չունեցող կամ առնվազն երկու արդյունավետ պաշտպանիչ հատկությամբ հարուցիչ սեփական միջոցներ ունեցող խոշոր եւ ամուր պայթուցիկ պատրաստվածքները կարող են փոխադրվել չփաթեթավորված: Եթե նման պատրաստվածքները պարունակում են նետողական լիցքեր կամ ինքնաշարժ են, դրանց բռնկման համակարգերը պետք է պաշտպանված լինեն փոխադրման նորմալ պայմաններում առաջացող խթանող ազդեցություններից: Չփաթեթավորված պատրաստվածքի 4-րդ սերիայի փորձարկումների բացասական արդյունքը վկայում է այն մասին, որ կարելի է դիտարկել պատրաստվածքն առանց փաթեթավորման փոխադրելու հարցը: Նման չփաթեթավորված պատրաստվածքները կարող են ամրացվել հենարանների վրա կամ տեղադրվել կավարամածներում կամ բեռնման ու բեռնաթափման, պահման կամ գործարկման համապատասխան այլ սարքերում այնպես, որ դրանք չթուլանան փոխադրման սովորական պայմաններում:

Եթե շահագործման անվտանգության եւ պիտանելիության մասով փորձարկումներ կատարելիս նման խոշոր պայթուցիկ պատրաստվածքները ենթարկվում են «ԱԴՌ» համաձայնագրի պահանջները բավարարող փորձարկումների, եւ այդ փորձարկումները հաջողվում են, ապա իրավասու մարմինը կարող է թույլատրել այդ պատրաստվածքների՝ «ԱԴՌ» համաձայնագրի համաձայն փոխադրումը:

4.1.5.16. Պայթուցիկ նյութերը չպետք է փաթեթավորվեն այնպիսի ներքին կամ արտաքին փաթեթվածքներում, որոնց դեպքում ջերմային կամ այլ ներգործությամբ առաջացող ներքին եւ արտաքին ճնշումների միջեւ տարբերությունը կարող է հանգեցնել պայթյունի կամ փաթեթի պատռվելուն:

4.1.5.17. Եթե չամրացված պայթուցիկ նյութերը կամ պատյանում չներառված կամ մասամբ ներառված պատրաստվածքում պարունակվող պայթուցիկ նյութը կարող են շփվել մետաղական փաթեթվածքների ներքին մակերեսի հետ (1A1, 1A2, 1B1, 1B2, 1N1, 1N2, 4A, 4B, 4N եւ մետաղական տարաներ), ապա մետաղական փաթեթվածքը պետք է ունենա ներդիր կամ պատվածք (տե՛ս 4.1.1.2-ը):

4.1.5.18. Ցանկացած պայթուցիկ նյութի համար կարող է կիրառվել P101 փաթեթավորման ցուցումը՝ պայմանով, որ փաթեթվածքը հաստատված է իրավասու մարմնի կողմից՝ անկախ նրանից՝ արդյոք փաթեթվածքը համապատասխանում է 3.2 գլխի Ա աղյուսակի 8-րդ սյունակում նշված փաթեթավորման ցուցմանը:

4.1.6. Երկրորդ դասի բեռների եւ P200 փաթեթավորման ցուցմանը դասված այլ դասերի բեռների վերաբերյալ փաթեթավորման հատուկ դրույթները



- 4.1.6.1. Սույն բաժնով նախատեսվում են 2-րդ դասի նյութերի եւ P200 փաթեթավորման ցուցմանը դասված այլ դասերի բեռների փոխադրման համար ճնշումային տարաների եւ բաց կրիոգեն տարաների օգտագործման առնչությամբ կիրառելի ընդհանուր պահանջները (օրինակ՝ ՄԱԿ-ի նշագրման 1051 համարի ջրածնի ցիանիդ՝ կայունացված): Ճնշումային տարաները պետք է կառուցված եւ փակված լինեն այնպես, որ տեղի չունենա պարունակության այնպիսի կորուստ, որը կարող է տեղի ունենալ փոխադրման սովորական պայմաններում, այդ թվում՝ տատանման, ջերմաստիճանի փոփոխության, խոնավության կամ ճնշման հետեւանքով (օրինակ՝ բարձրության փոփոխության պատճառով):
- 4.1.6.2. Վտանգավոր բեռների հետ անմիջական շփման մեջ գտնվող՝ ճնշումային տարաների եւ բաց կրիոգեն տարաների մասերը չպետք է ենթարկվեն վտանգավոր բեռների ներգործությանը կամ նման ներգործության հետեւանքով կորցնեն ամրությունն ու չպետք է հանգեցնեն վտանգավոր հետեւանքների (օրինակ՝ խթանեն ռեակցիայի առաջացումը կամ ռեակցիայի մեջ մտնեն վտանգավոր բեռների հետ) (տե՛ս նաեւ ստանդարտների աղյուսակը՝ սույն բաժնի վերջում):
- 4.1.6.3. Ճնշումային տարաները, ներառյալ՝ դրանց փականները եւ բաց կրիոգեն տարաները պետք է ընտրվեն 6.2.1.2-ի պահանջների եւ 4.1.4.1-ի համապատասխան փաթեթավորման ցուցումներով նախատեսվող պահանջների համաձայն գազով կամ գազերի խառնուրդով լցավորվելու համար: Սույն ենթաբաժինը կիրառվում է նաեւ ԳԲՏԿ-ների եւ մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցների տարրեր հանդիսացող ճնշումային տարաների նկատմամբ:
- 4.1.6.4. Վերալցավորվող ճնշումային տարայի օգտագործման փոփոխումը պետք է ներառի անվտանգ շահագործման ապահովման համար անհրաժեշտ դատարկման, փչահարման եւ պոմպահանման աշխատանքները (տե՛ս նաեւ ստանդարտների աղյուսակը՝ սույն բաժնի վերջում): Բացի այդ, նախկինում 8-րդ դասում ներառված կոռոզիոն նյութ կամ այլ դասի լրացուցիչ կոռոզիոն վտանգ ներկայացնող նյութ պարունակող ճնշումային տարան չի թույլատրվում փոխադրման 2-րդ դասի նյութի փոխադրման համար, եթե չեն իրականացվել համապատասխանաբար 6.2.1.6-ում եւ 6.2.3.5-ում սահմանված անհրաժեշտ ստուգումներն ու փորձարկումները:
- 4.1.6.5. Լցավորելուց առաջ փաթեթավորողն իրականացնում է ճնշումային տարայի կամ բաց կրիոգեն տարայի ստուգումը եւ հավաստիանում է, որ ճնշումային տարան կամ բաց կրիոգեն տարան կարող է թույլատրվել համապատասխան նյութի փոխադրման համար, իսկ ճնշման տակ գտնվող քիմիական նյութի դեպքում՝ պայթյունավտանգ

նյութի փոխադրման համար, եւ որ կատարվել են համապատասխան պահանջները: Լցավորվելուց հետո փակիչ կափույրները պետք է փակվեն եւ փոխադրման ընթացքում փակ մնան: Բեռնառաքողը պետք է համոզվի, որ փականներից եւ սարքավորումներից արտահոսք չկա:

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Կապուկներում առանձին բալոններում հարմարեցված փակիչ կափույրները կարող են փոխադրման ընթացքում բաց լինել՝ բացառությամբ այն դեպքերի, երբ փոխադրվող նյութի վրա տարածվում է P200 փաթեթավորման ցուցման «k» կամ «q» փաթեթավորման հատուկ դրոյթը:*

- 4.1.6.6. Ճնշումային տարաները եւ բաց կրիոգեն տարաները պետք է լցավորվեն աշխատանքային ճնշումների, լցավորման գործակիցների եւ լցվելիք կոնկրետ նյութի համար համապատասխան փաթեթավորման ցուցումներում նշված դրոյթների համաձայն: Քիմիապես ակտիվ գազերը եւ գազերի խառնուրդները պետք է լցավորվեն մինչեւ այն ճնշումը, որի ժամանակ գազի լրիվ քայքայման դեպքում ճնշումային տարայի աշխատանքային ճնշումը չգերազանցվի: Բալոնների կապուկները չպետք է լցավորվեն այնքան, որ դա գերազանցի կապուկում ցանկացած բալոնի ամենացածր աշխատանքային ճնշումը:
- 4.1.6.7. Ճնշումային տարաները, ներառյալ՝ դրանց փականները պետք է համապատասխանեն 6.2 գլխում ներկայացված՝ նախագծման, կառուցման, ստուգման եւ փորձարկումների պահանջներին: Եթե նախատեսվում են արտաքին փաթեթվածքներ, ճնշումային տարաները եւ բաց կրիոգեն տարաները պետք է ապահով զետեղվեն այդ փաթեթվածքներում: Եթե փաթեթավորման մանրամասն ցուցումներով այլ բան չի նախատեսվում, ապա մեկ արտաքին փաթեթվածքում կարող են տեղադրվել մեկ կամ մի քանի ներքին փաթեթվածքներ:
- 4.1.6.8. Կափույրները պետք է նախագծված եւ պատրաստված լինեն այնպես, որ իրենց կառուցվածքի շնորհիվ կարողանան դիմակայել վնասվելուն՝ առանց ճնշումային տարայի պարունակության արտազատման, կամ պաշտպանված լինեն այնպիսի վնասվածքներից, որոնք կարող են հանգեցնել ճնշումային տարայի պարունակության պատահական արտազատմանը (տե՛ս նաեւ ստանդարտների աղյուսակը՝ սույն բաժնի վերջում)
- ա) կափույրները պետք է տեղադրված լինեն ճնշումային տարայի բկանցքի ներսում եւ պաշտպանված լինեն պարուրակավոր խցանով կամ կափարիչով.
- բ) կափույրները պետք է պաշտպանված լինեն կափարիչներով: Կափարիչներում պետք է նախատեսվեն խաչաձեւ հատման գոտու բավականաչափ մակերես ունեցող օդափոխիչ բացվածքներ՝ կափույրներից արտահոսքի դեպքում գազերը հեռացնելու

նպատակով.

- գ) կափույրները պետք է պաշտպանված լինեն պատյաններով կամ այլ պաշտպանիչ հարմարանքներով.
- դ) ճնշումային տարաները պետք է փոխադրվեն շրջանակների մեջ (օրինակ՝ բալոնների կապուկներում). կամ
- ե) ճնշումային տարաները պետք է փոխադրվեն պաշտպանիչ արկղերում: ՄԱԿ-ի ճնշումային տարաների դեպքում փոխադրման համար պատրաստված փաթեթվածքը պետք է կարողանա անցնել 6.1.5.3-ում նշված անկման փորձարկումը՝ փաթեթավորման I խմբի որակի ցուցանիշների մակարդակով:

4.1.6.9. Չվերալցավորվող ճնշումային տարաները՝

- ա) պետք է փոխադրվեն այնպիսի արտաքին փաթեթվածքում, ինչպիսին, օրինակ՝ արկղը կամ կավարամածն է, կամ ընդկալների վրա՝ ջերմակծկումային նյութով կամ ձգվող թաղանթով փաթաթված.
- բ) պետք է ունենան 1.25 լիտրից պակաս կամ դրան հավասար ջրի տարողություն՝ դյուրավառ կամ թունավոր գազով լցավորվելու դեպքում.
- գ) չպետք է օգտագործվեն այն թունավոր գազերի համար, որոնց LC50-ը 200 մլ/մ<sup>3</sup>-ից պակաս է կամ դրան հավասար. եւ
- դ) չպետք է ենթարկվի վերանորոգման՝ շահագործման մեջ դնելուց հետո:

4.1.6.10. Կրիոգեն տարաներ չհանդիսացող՝ վերալցավորվող ճնշումային տարաները պետք է պարբերաբար ենթարկվեն ստուգման՝ 6.2.1.6-ի դրույթների կամ 6.2.3.5.1-ի դրույթների համաձայն ՄԱԿ-ի նշագրման տարա չհանդիսացող տարաների դեպքում, ինչպես նաեւ համապատասխանաբար P200, P205 կամ P206 փաթեթավորման ցուցմանը համաձայն: Փակ կրիոգեն տարաների համար նախատեսված ճնշման նվազեցման կափույրները ենթակա են պարբերական ստուգումների եւ փորձարկումների՝ 6.2.1.6.3-ի դրույթներին եւ P203 փաթեթավորման ցուցմանը համաձայն: Ճնշումային տարաները չպետք է լցավորվեն այն բանից հետո, երբ սկսվում է դրանց պարբերական ստուգման ժամանակահատվածը, սակայն դրանք կարող են փոխադրվել վերջնաժամկետը լրանալուց հետո ստուգումներ կատարելու կամ շահագործումից հանելու նպատակով՝ ներառյալ միջանկյալ փոխադրումները:

4.1.6.11. Վերանորոգումը պետք է համապատասխանի նախագծման եւ կառուցման կիրառելի ստանդարտների պատրաստման եւ փորձարկումների մասով պահանջներին, եւ թույլատրվում է միայն 6.2

գլխում նշված պարբերական ստուգման վերաբերյալ ստանդարտների համաձայն: Ճնշումային տարաները, բացառությամբ փակ կրիոգեն տարաների պատյանի, ենթակա չեն վերանորոգման ստորեւ նշված թերություններից որեւէ մեկի առկայության դեպքում՝

- ա) ճեղքվածքներ զոդակարերում կամ զոդման այլ թերություններ.
- բ) ճաքեր պատերում.
- գ) արտահոսք կամ թերություններ այն նյութում, որից պատրաստված են պատերը, վերնամասը կամ հատակը:

4.1.6.12. Տարաները չպետք է ներկայացվեն լցավորման համար՝

- ա) եթե դրանք վնասված են այն աստիճանի, որ կարող է խախտվել տարայի կամ դրա օժանդակ սարքավորումների ամբողջականությունը.
- բ) եթե տարան եւ դրա օժանդակ սարքավորումները չեն զննվել, եւ դրանց աշխատանքային սարքին վիճակը չի հաստատվել. եւ
- գ) եթե սերտիֆիկացման, վերափորձարկումների եւ լցավորման մասով պահանջվող նշումներն ընթեռնելի չեն:

4.1.6.13. Լցավորված տարաները չպետք է ներկայացվեն փոխադրման՝

- ա) արտահոսքի առկայության դեպքում.
- բ) եթե դրանք վնասված են այն աստիճանի, որ կարող է խախտվել տարայի կամ դրա օժանդակ սարքավորումների ամբողջականությունը.
- գ) եթե տարան եւ դրա օժանդակ սարքավորումները չեն զննվել, եւ դրանց աշխատանքային սարքին վիճակը չի հաստատվել. եւ
- դ) եթե սերտիֆիկացման, վերափորձարկումների եւ լցավորման մասով պահանջվող նշումներն ընթեռնելի չեն:

4.1.6.14. Իրավասու մարմնի հիմնավորված հարցման հիման վրա սեփականատերերը պետք է վերջինիս ներկայացնեն բոլոր անհրաժեշտ տեղեկությունները, որոնցով հաստատվում է ճնշումային տարաների համապատասխանությունը սահմանված պահանջներին՝ իրավասու մարմնի համար հասկանալի լեզվով: Նրանք այդ մարմնի հարցման համաձայն պետք է համագործակցեն նրա հետ իրենց սեփականությունը հանդիսացող ճնշումային տարաների անհամապատասխանության վերացմանն ուղղված ցանկացած միջոցի ձեռնարկման շուրջ:

4.1.6.15. ՄԱԿ-ի ճնշումային տարաների նկատմամբ պետք է կիրառվեն ստորեւ ներկայացված ISO ստանդարտները: Ճնշումային այլ տարաների

համար 4.1.6-ի պահանջները համարվում են կատարված, եթե, ելնելով կոնկրետ դեպքից, կիրառվում են հետևյալ ստանդարտները.

Կիրառվող պարբերությունները	Հղումը	Փաստաթղթի անվանումը
4.1.6.2	ISO 11114-1:2012	Գազի բալոններ. Բալոնների եւ կափույրների նյութի համատեղելիությունը գազի պարունակության հետ. Մաս 1. Մետաղական նյութեր
	ISO 11114-2:2013	Գազի շարժական բալոններ. Բալոնների եւ կափույրների նյութի համատեղելիությունը գազի պարունակության հետ. Մաս 2. Ոչ մետաղական նյութեր
4.1.6.4	ISO 11621:1997	Գազի բալոններ. Գազի մատակարարման փոփոխության ընթացակարգեր ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Սույն ISO ստանդարտի EN տարբերակը համապատասխանում է պահանջներին եւ նույնպես կարող է կիրառվել
4.1.6.8 Նախագծված պաշտպանությամբ կափույրներ	EN ISO 10297:2006 կամ ISO 10297:2014 ստանդարտի Ա հավելված	Գազի բալոն. Վերալցավորվող գազի բալոնների կափույրներ. Մասնագրեր եւ տեսակի փորձարկում ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Սույն ISO ստանդարտի EN տարբերակը համապատասխանում է պահանջներին եւ նույնպես կարող է կիրառվել
	EN 13152:2001 + A1:2003	ՀՆԳ-ի բալոնների կափույրների մասնագրեր եւ դրանց փորձարկում. Ինքնափակվող կափույրներ
	EN 13153:2001 + A1:2003	ՀՆԳ-ի բալոնների կափույրների մասնագրեր եւ դրանց փորձարկում. Ձեռքով կառավարվող կափույրներ
	EN ISO 14245:2010	Գազի բալոններ. ՀՆԳ-ի բալոնների կափույրների մասնագրեր եւ դրանց փորձարկում. Ինքնափակվող կափույրներ (ISO 14245:2006)
	EN ISO 15995:2010	Գազի բալոններ. ՀՆԳ-ի բալոնների կափույրների մասնագրեր եւ դրանց փորձարկում. Ձեռքով կառավարվող կափույրներ (ISO 15995:2006)
4.1.6.8 (բ) եւ (գ)	կամ ISO 11117:1998 կամ ISO 11117:2008+Cor 1:2009	Գազի բալոններ. Կափույրների պաշտպանիչ կափարիչներ եւ կափույրների պաշտպանիչ հարմարանքներ՝ արդյունաբերական եւ բժշկական գազի բալոնների համար. Նախագծում, պատրաստում եւ փորձարկում
	EN 962:1996+ A2:2000	Կափույրների պաշտպանիչ կափարիչներ եւ կափույրների պաշտպանիչ հարմարանքներ՝ արդյունաբերական եւ բժշկական գազի բալոնների համար. Նախագծում, պատրաստում եւ փորձարկում
	ISO 16111:2008	Գազի պահման շարժական սարքեր. դարձելի մետաղի հիդրիդով կլանված ջրածին

4.1.7. Օրգանական պերօքսիդների (դաս 5.2) եւ 4.1 դասի ինքնառեակտիվ նյութերի փաթեթավորման վերաբերյալ հատուկ դրույթները

4.1.7.0.1. Օրգանական պերօքսիդների համար բոլոր տարաները պետք է «արդյունավետ կերպով փակված լինեն»: Այն դեպքերում, երբ գազի առաջացման արդյունքում փաթեթում կարող է առաջանալ զգալի ներքին ճնշում, կարող է տեղադրվել օդափոխիչ սարք՝ պայմանով, որ արտանետվող գազը վտանգ չառաջացնի, հակառակ դեպքում պետք է սահմանափակվի լցավորման աստիճանը: Ցանկացած օդափոխիչ կափույր պետք է նախագծված լինի այնպես, որ փաթեթի ուղղաձիգ գտնվելու դեպքում բացառվի հեղուկի արտահոսքը, եւ այն պետք է կարողանա կանխել աղտոտումների ներթափանցումը: Արտաքին

փաթեթվածքի առկայության դեպքում այն պետք է նախագծված լինի այնպես, որ չխոչընդոտի օդափոխիչ կափույրի աշխատանքը:

4.1.7.1. Փաթեթվածքների կիրառումը (բացառությամբ ՍՄԿ-ների)

4.1.7.1.1. Օրգանական պերօքսիդների եւ ինքնառեակտիվ նյութերի համար օգտագործվող փաթեթվածքը պետք է համապատասխանի 6.1 գլխի պահանջներին եւ բավարարի փաթեթավորման II խմբի համար նախատեսված փորձարկումների պահանջները:

4.1.7.1.2. Օրգանական պերօքսիդների եւ ինքնառեակտիվ նյութերի փաթեթավորման մեթոդները թվարկված են 520 փաթեթավորման ցուցման մեջ, եւ դրանց տրված են OP1-OP8 ծածկագրերը: Փաթեթավորման յուրաքանչյուր մեթոդի համար նշված քանակությունները մեկ փաթեթի հաշվով թույլատրված առավելագույն քանակություններն են:

4.1.7.1.3. Դասակարգված տվյալ առանձին օրգանական պերօքսիդների եւ ինքնառեակտիվ նյութերի համար փաթեթավորման համապատասխան մեթոդները նշված են 2.2.41.4-ում եւ 2.2.52.4-ում:

4.1.7.1.4. Ինչ վերաբերում է նոր օրգանական պերօքսիդներին, նոր ինքնառեակտիվ նյութերին կամ դասակարգված տվյալ օրգանական պերօքսիդների կամ ինքնառեակտիվ նյութերի նոր բաղադրություններին, ապա փաթեթավորման համապատասխան մեթոդի նշանակման համար պետք է կիրառվի հետեւյալ ընթացակարգը՝

ա) ՕՐԳԱՆԱԿԱՆ ՊԵՐՕՔՍԻԴ, «B» ՏԵՍԱԿԻ կամ ԻՆՔՆԱՌԵԱԿՏԻՎ ՆՅՈՒԹ, «B» ՏԵՍԱԿԻ.

Պետք է նշանակվի OP5 փաթեթավորման մեթոդը՝ պայմանով, որ օրգանական պերօքսիդը (կամ ինքնառեակտիվ նյութը) փաթեթավորման տվյալ մեթոդի համաձայն թույլատրված փաթեթվածքում բավարարում է «Փորձարկումների եւ չափորոշիչների ձեռնարկ»-ի 20.4.3 (բ) կետի (համապատասխանաբար 20.4.2 (բ)) չափորոշիչները: Եթե օրգանական պերօքսիդը (կամ ինքնառեակտիվ նյութը) կարող է միայն բավարարել այդ չափորոշիչներն այնպիսի փաթեթվածքում, որն ավելի փոքր է, քան OP5 փաթեթավորման մեթոդի համաձայն թույլատրված փաթեթվածքները (այսինքն՝ OP1-OP4 փաթեթավորման մեթոդների համար թվարկված փաթեթվածքներից որեւէ մեկը), ապա նշանակվում է OP համարից ավելի ցածր համարով փաթեթավորման համապատասխան մեթոդ:

բ) ՕՐԳԱՆԱԿԱՆ ՊԵՐՕՔՍԻԴ, «C» ՏԵՍԱԿԻ կամ ԻՆՔՆԱՌԵԱԿՏԻՎ ՆՅՈՒԹ, «C» ՏԵՍԱԿԻ.

Պետք է նշանակվի OP6 փաթեթավորման մեթոդը՝ պայմանով, որ

օրգանական պերօքսիդը (կամ ինքնառեակտիվ նյութը) փաթեթավորման տվյալ մեթոդի համաձայն թույլատրված փաթեթվածքում բավարարում է «Փորձարկումների եւ չափորոշիչների ձեռնարկ»-ի 20.4.3 (գ) կետի (համապատասխանաբար 20.4.2 (գ)) չափորոշիչները: Եթե օրգանական պերօքսիդը (կամ ինքնառեակտիվ նյութը) կարող է միայն բավարարել այդ չափորոշիչներն այնպիսի փաթեթվածքում, որն ավելի փոքր է, քան OP6 փաթեթավորման մեթոդի համաձայն թույլատրված փաթեթվածքները, ապա նշանակվում է OP համարից ավելի ցածր համարով փաթեթավորման համապատասխան մեթոդ:

գ) ՕՐԳԱՆԱԿԱՆ ՊԵՐՕՔՍԻԴ, «D» ՏԵՍԱԿԻ կամ ԻՆՔՆԱՌԵԱԿՏԻՎ ՆՅՈՒԹ, «D» ՏԵՍԱԿԻ.

Օրգանական պերօքսիդի կամ ինքնառեակտիվ նյութի տվյալ տեսակի համար նշանակվում է OP7 փաթեթավորման մեթոդը:

դ) ՕՐԳԱՆԱԿԱՆ ՊԵՐՕՔՍԻԴ, «E» ՏԵՍԱԿԻ կամ ԻՆՔՆԱՌԵԱԿՏԻՎ ՆՅՈՒԹ, «E» ՏԵՍԱԿԻ.

Օրգանական պերօքսիդի կամ ինքնառեակտիվ նյութի տվյալ տեսակի համար նշանակվում է OP8 փաթեթավորման մեթոդը:

ե) ՕՐԳԱՆԱԿԱՆ ՊԵՐՕՔՍԻԴ, «F» ՏԵՍԱԿԻ կամ ԻՆՔՆԱՌԵԱԿՏԻՎ ՆՅՈՒԹ, «F» ՏԵՍԱԿԻ.

Օրգանական պերօքսիդի կամ ինքնառեակտիվ նյութի տվյալ տեսակի համար նշանակվում է OP8 փաթեթավորման մեթոդը:

4.1.7.2. Սորուն բեռների համար նախատեսված միջին բեռնվածության կոնտեյներների օգտագործումը

4.1.7.2.1. IBC520 փաթեթավորման ցուցման մեջ կոնկրետ նշված՝ դասակարգված տվյալ օրգանական պերօքսիդները կարող են փոխադրվել ՍՄԿ-ներում՝ փաթեթավորման այդ ցուցմանը համաձայն: ՍՄԿ-ները պետք է համապատասխանեն 6.5 գլխի պահանջներին եւ բավարարեն փաթեթավորման II խմբի համար նախատեսված փորձարկումների պահանջները:

4.1.7.2.2. «F» տեսակի այլ օրգանական պերօքսիդներ եւ ինքնառեակտիվ նյութեր կարող են փոխադրվել ՍՄԿ-ներում՝ ծագման երկրի իրավասու մարմնի կողմից սահմանված պայմանների համաձայն, եթե այդ իրավասու մարմինը համապատասխան փորձարկումների հիման վրա հավաստիացել է այն մասին, որ նման փոխադրումը կարելի է անվտանգ իրականացնել: Իրականացված փորձարկումները պետք է ներառեն այնպիսի գործողություններ, որոնք անհրաժեշտ են ստորեւ նշվածների համար՝

- ա) հաստատել, որ օրգանական պերօքսիդը (կամ ինքնառեակտիվ նյութը) համապատասխանում է «Փորձարկումների եւ չափորոշիչների ձեռնարկ»-ի 20.4.3 (գ) [համապատասխանաբար՝ 20.4.2 (գ)] կետում ներկայացված դասակարգման սկզբունքներին, ձեռնարկի 20.1 (բ) գծապատկերի ելքային «F» վանդակ.
- բ) հաստատել բոլոր այն նյութերի համատեղելիությունը, որոնք սովորաբար շփվում են նյութի հետ փոխադրման ընթացքում.
- գ) անհրաժեշտության դեպքում որոշել տվյալ ՍՄԿ-ում ապրանքի փոխադրման հետ կապված հսկիչ եւ վթարային ջերմաստիճանները, որոնք ստացվել են ԻՏՁ-ից.
- դ) անհրաժեշտության դեպքում նախագծել ճնշումը նվազեցնող սարքը եւ վթարային սարքը. եւ
- ե) որոշել նյութի անվտանգ փոխադրման համար անհրաժեշտ հատուկ դրույթները, եթե այդպիսիք կան:

Եթե ծագման երկիրը «ԱԴՌ» համաձայնագրի Պայմանավորվող կողմ չէ, ապա դասակարգման եւ փոխադրման պայմանները պետք է ճանաչվեն «ԱԴՌ» համաձայնագրի Պայմանավորվող կողմ հանդիսացող այն երկրի իրավասու մարմնի կողմից, որի տարածքով առաջինն է անցնում բեռը:

- 4.1.7.2.3. Վթարային իրավիճակները, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել, ինքնաարագացող քայքայումն ու հրդեհի բռնկումն են: Ամբողջովին մետաղական պատյանով մետաղական կամ բարդ ՍՄԿ-ների պայթյունավտանգ պատռվածքը կանխելու նպատակով վթարային սարքերը պետք է նախագծված լինեն այնպես, որ ինքնաարագացող քայքայման ընթացքում առաջացող քայքայման արգասիքները եւ գոլորշիներն օդափոխվեն կամ հրդեհի բռնկման առնվազն մեկ ժամվա ընթացքում դրանք վերացվեն 4.2.1.13.8-ում ներկայացված հավասարումների համաձայն:
- 4.1.8. Վարակիչ նյութերի փաթեթավորման վերաբերյալ հատուկ դրույթները (դաս 6.2)
- 4.1.8.1. Վարակիչ նյութերի բեռնառաքողները պետք է ապահովեն փաթեթների այնպիսի նախապատրաստումը, որ դրանք նշանակման վայր հասնեն պատշաճ վիճակում եւ փոխադրման ընթացքում վտանգ չներկայացնեն մարդկանց կամ կենդանիների համար:
- 4.1.8.2. Վարակիչ նյութերի փաթեթների նկատմամբ կիրառվում են 1.2.1-ում նշված սահմանումները եւ 4.1.1.1-4.1.1.17-ի փաթեթավորման ընդհանուր դրույթները՝ բացառությամբ 4.1.1.10-4.1.1.12-ի եւ 4.1.1.15-ի:



Այնուհանդերձ, հեղուկները պետք է լցավորվեն միայն այն փաթեթվածքներում, որոնք ունեն համապատասխան դիմադրողականություն այն ներքին ճնշմանը, որը կարող է առաջանալ փոխադրման սովորական պայմաններում:

4.1.8.3. Երկրորդային փաթեթվածքի եւ արտաքին փաթեթվածքի միջեւ պետք է տեղադրվի պարունակության մանրամասն ցանկ: Եթե փոխադրման ենթակա վարակիչ նյութերը հայտնի չեն, սակայն ենթադրվում է, որ դրանք համապատասխանում են «A» կատեգորիայում ընդգրկելու չափորոշիչներին, ապա արտաքին փաթեթվածքում դրված փաստաթղթում բեռնառաքման ճշգրիտ անվանումից հետո՝ չակերտներում, պետք է նշվեն «Վարակիչ նյութ՝ ենթադրաբար «A» կատեգորիային դասվող» բառերը:

4.1.8.4. Նախքան դատարկ փաթեթվածքը բեռնառաքողին վերադարձնելը կամ այլ տեղ ուղարկելն այն պետք է ախտահանվի կամ մանրէազերծվի բոլոր վտանգները չեզոքացնելու նպատակով, եւ ցանկացած պիտակ կամ նշում, որը ցույց է տալիս, որ փաթեթվածքում առկա է եղել վարակիչ նյութ, պետք է հեռացվի կամ ջնջվի:

4.1.8.5. Համարժեք մակարդակի շահագործման բնութագրերի պահպանման դեպքում թույլատրվում են երկրորդային փաթեթվածքի մեջ տեղադրված առաջնային տարաների հետեւյալ տարատեսակները՝ առանց ամբողջական փաթեթվածքի լրացուցիչ փորձարկման անհրաժեշտության՝

ա) կարող են օգտագործվել փորձարկման ենթարկված առաջնային տարաներին համարժեք կամ ավելի փոքր չափի առաջնային տարաներ՝ պայմանով, որ՝

i) առաջնային տարաներն ունեն փորձարկված առաջնային տարայի կառուցվածքին նման կառուցվածք (օրինակ՝ ձեւը՝ կլոր, ուղղանկյուն եւ այլն).

ii) այն նյութը, որից պատրաստված են առաջնային տարաները (օրինակ՝ ապակի, պլաստմասսա, մետաղ), սկզբում փորձարկված առաջնային տարաների հետ համեմատած, ապահովի համարժեք կամ բարձր հարվածադիմացկունություն եւ դիմադրողականություն դարսակման ժամանակ առաջացող ուժերին.

iii) առաջնային տարաներն ունեն նույն կամ ավելի փոքր չափի բացվածքներ եւ համարժեք կառուցվածքի փական (օրինակ՝ պտուտակավոր թասակ, կիպահղկած խցան եւ այլն).

iv) օգտագործվում է բավարար քանակությամբ լրացուցիչ պաշտպանիչ նյութ՝ դատարկ տարածքները լցնելու եւ

առաջնային տարաների զգալի տեղաշարժը կանխելու նպատակով. եւ

v) առաջնային տարաները երկրորդային փաթեթվածքներում տեղադրվում են նույն դիրքով, ինչ փորձարկված փաթեթում:

բ) Կարող են օգտագործվել ավելի քիչ թվով փորձարկված առաջնային տարաներ կամ վերոնշյալ (ա) ենթակետում ներկայացված դրանց այլընտրանքային տեսակներ՝ պայմանով, որ ազատ տարածքը (տարածքները) լցնելու եւ առաջնային տարաների զգալի տեղաշարժը կանխելու նպատակով բավականաչափ պաշտպանիչ նյութ է ավելացվում:

4.1.8.6. 4.1.8.1-4.1.8.5 պարբերությունները կիրառվում են միայն «A» կատեգորիայի վարակիչ նյութերի նկատմամբ (ՄԱԿ-ի նշագրման 2814 եւ 2900 համարներ): Դրանք չեն կիրառվում ոչ ՄԱԿ-ի նշագրման 3373 համարի ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԻ, «B» ԿԱՏԵԳՈՐԻԱ ( տե՛ս 4.1.4.1-ի P650 փաթեթավորման ցուցումը), ոչ ՄԱԿ-ի նշագրման 3291 համարի ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ՝ չհստակեցված, այլ կերպ չնշված կամ (BIO) ԲԺՇԿԱԿԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ՝ այլ կերպ չնշված կամ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՎՈՂ ԲԺՇԿԱԿԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ՝ այլ կերպ չնշված, նկատմամբ:

4.1.8.7. Կենդանական ծագման նյութի փոխադրման դեպքում կիրառելի փաթեթավորման ցուցման մեջ հատուկ կերպով չթույլատրված փաթեթվածքները կամ ՍՄԿ-ները չպետք է օգտագործվեն որեւէ նյութի կամ պատրաստվածքի փոխադրման համար՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք հատուկ կերպով հաստատվում են ծագման երկրի<sup>2</sup> իրավասու մարմնի կողմից, եւ կատարվում են հետեւյալ պայմանները՝

ա) այլընտրանքային փաթեթվածքը պետք է բավարարի սույն մասի ընդհանուր պահանջները.

բ) եթե դա նախատեսվում է 3.2 գլխի Ա աղյուսակի 8-րդ սյունակում նշված փաթեթավորման ցուցմամբ, ապա այլընտրանքային փաթեթվածքը պետք է բավարարի 6-րդ մասի պահանջները.

գ) ծագման երկրի<sup>2</sup> իրավասու մարմինը պետք է սահմանի, որ այլընտրանքային փաթեթվածքն ապահովի անվտանգության առնվազն այն նույն մակարդակը, որը կլիներ, եթե այդ նյութը փաթեթավորված լիներ 3.2 գլխի Ա աղյուսակի 8-րդ սյունակում նշված փաթեթավորման կոնկրետ ցուցման մեջ նշված մեթոդի համաձայն. եւ

---

<sup>2</sup> Եթե ծագման երկիրը «ԱԴԴ» համաձայնագրի Պայմանավորվող կողմ չէ, ապա բեռի փոխադրման երթուղով «ԱԴԴ» համաձայնագրի Պայմանավորվող կողմ հանդիսացող այն երկրի իրավասու մարմինը, որի տարածքով առաջինն է անցնում բեռը:

դ) յուրաքանչյուր բեռի պետք է կցված լինի իրավասու մարմնի կողմից տրված հաստատման փաստաթղթի օրինակը, կամ տրանսպորտային փաստաթղթում պետք է լինի նշում այն մասին, որ այլընտրանքային փաթեթվածքը հաստատվել է իրավասու մարմնի կողմից:

4.1.9. Ռադիոակտիվ նյութերի փաթեթավորման վերաբերյալ հատուկ դրույթները

4.1.9.1. Ընդհանուր պահանջները

4.1.9.1.1. Ռադիոակտիվ նյութերը, փաթեթվածքները եւ փաթեթները պետք է բավարարեն 6.4 գլխի պահանջները: Փաթեթում ռադիոակտիվ նյութի քանակությունը չպետք է գերազանցի 2.2.7.2.2-ում, 2.2.7.2.4.1-ում, 2.2.7.2.4.4-ում, 2.2.7.2.4.5-ում, 2.2.7.2.4.6-ում, 3.3 գլխի 336-րդ հատուկ դրույթի եւ 4.1.9.3-ում նշված սահմանային արժեքները:

«ԱԴՌ» համաձայնագիրը տարածվում է ռադիոակտիվ նյութերի համար հետեւյալ տեսակի փաթեթների վրա՝

ա) ազատված փաթեթ (տե՛ս 1.7.1.5-ը).

բ) 1-ին տեսակի արդյունաբերական փաթեթ (IP-1 տեսակի փաթեթ).

գ) 2-րդ տեսակի արդյունաբերական փաթեթ (IP-2 տեսակի փաթեթ).

դ) 3-րդ տեսակի արդյունաբերական փաթեթ (IP-3 տեսակի փաթեթ).

ե) «A» տեսակի փաթեթ.

զ) «B(U)» տեսակի փաթեթ.

է) «B(M)» տեսակի փաթեթ.

ը) «C» տեսակի փաթեթ:

Տրոհվող նյութ կամ ուրանի հեքսաֆտորիդ պարունակող փաթեթների նկատմամբ կիրառվում են լրացուցիչ պահանջներ:

4.1.9.1.2. Ցանկացած փաթեթի արտաքին մակերեսների չֆիքսված ռադիոակտիվ աղտոտումը պետք է պահվի գործնականում հնարավորինս ցածր մակարդակում եւ փոխադրման սովորական պայմաններում չպետք է գերազանցի ստորեւ բերված սահմանային արժեքները՝

ա)  $4 \text{ Bq/սմ}^2$  բետա- եւ գամմա-ճառագայթիչների եւ ցածր թունայնության ալֆա-ճառագայթիչների համար. եւ

բ)  $0.4 \text{ Bq/սմ}^2$  բոլոր այլ ալֆա-ճառագայթիչների համար:

Այս սահմանային արժեքները կիրառվում են մակերեսի ցանկացած հատվածում  $300 \text{ սմ}^2$  ցանկացած տարածքում միջինացնելիս:

- 4.1.9.1.3. Փաթեթը չպետք է պարունակի որեւէ այլ առարկաներ՝ բացառությամբ նրանց, որոնք անհրաժեշտ են ռադիոակտիվ նյութի օգտագործման համար: Կառուցվածքի նկատմամբ կիրառվող փոխադրման պայմաններում այդ առարկաների եւ փաթեթի միջեւ փոխազդեցությունը չպետք է նվազեցնի փաթեթի անվտանգությունը:
- 4.1.9.1.4. Բացառությամբ 7.5.11-ի CV33-ում նախատեսվածի՝ տրանսպորտային կապոցների, կոնտեյներների, ցիստեռնների, ՍՄԿ-ների եւ փոխադրամիջոցների արտաքին եւ ներքին մակերեսների չֆիքսված ռադիոակտիվ աղտոտումը չպետք է գերազանցի 4.1.9.1.2-ում նշված սահմանային արժեքները:
- 4.1.9.1.5. Այլ վտանգավոր հատկանիշներ ունեցող ռադիոակտիվ նյութերի դեպքում այդ հատկությունները պետք է հաշվի առնվեն փաթեթի նախագծման ընթացքում: Իրավասու մարմնի կողմից հաստատում չպահանջող փաթեթների մեջ տեղադրված՝ լրացուցիչ վտանգ ներկայացնող ռադիոակտիվ նյութը պետք է փոխադրվի այն փաթեթվածքներում, ՍՄԿ-ներում, ցիստեռններում կամ սորուն բեռների համար նախատեսված կոնտեյներներում, որոնք լրիվ բավարարում են 6-րդ մասի համապատասխան գլուխներով նախատեսվող պահանջները, ինչպես նաեւ այդ լրացուցիչ վտանգի համար 4.1, 4.2 կամ 4.3 գլուխների կիրառվող պահանջները:
- 4.1.9.1.6. Մինչեւ ռադիոակտիվ նյութի փոխադրման համար փաթեթն առաջին անգամ օգտագործելը պետք է հաստատվի, որ այն պատրաստվել է տեխնիկական բնութագրերին համապատասխան՝ «ԱԴՌ» համաձայնագրի համապատասխան դրույթներին եւ հաստատման ցանկացած կիրառելի սերտիֆիկատին համապատասխանությունն ապահովելու նպատակով: Կիրառելիության դեպքում պետք է կատարվեն նաեւ հետեւյալ պահանջները՝
- ա) եթե պաշտպանիչ պատյանի համակարգի հաշվարկային ճնշումը գերազանցում է 35 կՊա-ն (մանոմետրական), ապա պետք է ապահովվի ցանկացած փաթեթվածքի պաշտպանիչ պատյանի համակարգի համապատասխանությունը հաստատված հաշվարկային պահանջներին, որոնք առնչվում են տվյալ ճնշման դեպքում տվյալ համակարգի՝ ամբողջականությունը պահպանելու ունակությանը.
  - բ) որպես «B(U)», «B(M)» կամ «C» տեսակ օգտագործվելու համար նախատեսված յուրաքանչյուր փաթեթվածքի համար եւ տրոհվող նյութ պարունակելու համար նախատեսված յուրաքանչյուր փաթեթվածքի դեպքում պետք է ապահովվի, որ դրա պաշտպանության ու պաշտպանիչ պատյանի եւ անհրաժեշտության դեպքում ջերմափոխանցման բնութագրերի

արդյունավետությունը եւ տեղայնացման համակարգի արդյունավետությունը գտնվեն հաստատված նախագծի նկատմամբ կիրառելի կամ դրա համար նշված սահմաններում.

- գ) տրոհվող նյութ պարունակելու համար նախատեսված յուրաքանչյուր փաթեթվածքի դեպքում պետք է ապահովվի, որ դրա կրիտիկականության տեսակետից անվտանգության միջոցների արդյունավետությունը գտնվի հաստատված նախագծի նկատմամբ կիրառելի կամ դրա համար նշված սահմաններում, եւ մասնավորապես, եթե 6.4.11.1-ի պահանջների կատարման նպատակով հատուկ կերպով նեյտրոնային կլանիչներ են ներառվում, պետք է ստուգումներ անցկացվեն այդ նեյտրոնային կլանիչների առկայությունը եւ բաշխումը հաստատելու նպատակներով:

4.1.9.1.7. Մինչեւ ցանկացած փաթեթի յուրաքանչյուր փոխադրում պետք է հավաստիանալ, որ փաթեթը չի պարունակում ստորեւ նշված նյութերից որեւէ մեկը՝

- ա) ռադիոնուկլիդներ, որոնք տարբերվում են փաթեթի կառուցվածքի համար նախատեսվածից, կամ
- բ) պարունակություն, որի ձեւը կամ ֆիզիկական կամ քիմիական վիճակը տարբերվում է փաթեթի կառուցվածքի համար նախատեսվածից:

4.1.9.1.8. Մինչեւ յուրաքանչյուր փաթեթի բեռնառաքումը պետք է հավաստիանալ, որ «ԱԴՌ» համաձայնագրի համապատասխան դրույթներում նշված եւ հաստատման կիրառելի սերտիֆիկատների բոլոր պահանջները կատարվել են: Համապատասխան դեպքերում պետք է կատարվեն նաեւ հետեւյալ պահանջները՝

- ա) պետք է ապահովվի, որ 6.4.2.2-ի պահանջները չբավարարող ամբարձիչ հարմարանքները հեռացվեն կամ փաթեթը բարձրացնելու համար որեւէ այլ կերպ դառնան օգտագործման համար ոչ պիտանի՝ 6.4.2.3-ի համաձայն.
- բ) «B(U)», «B(M)» եւ «C» տեսակի ցանկացած փաթեթ պետք է պահվի այնքան ժամանակ, մինչեւ ապահովվեն հավասարակշռության պայմանները, որոնք բավականաչափ մոտ են ջերմաստիճանին եւ ճնշմանը ներկայացվող պահանջներին, եթե միայն այդ պահանջները չեն հանվել միակողմանի հաստատման կարգով.
- գ) «B(U)», «B(M)» եւ «C» տեսակի ցանկացած փաթեթի համար ստուգումների եւ (կամ) համապատասխան փորձարկումների միջոցով պետք է ապահովվի բոլոր այն փականների, կափույրների

եւ պաշտպանիչ պատյանի համակարգում այլ բացվածքների պատշաճ փակումը, որոնց միջոցով կարող է տեղի ունենալ ռադիոակտիվ պարունակության արտահոսք, եւ հարկ եղած դեպքում՝ դրանց հերմետիկացումն այնպես, որ հաստատվի 6.4.8.8-ի եւ 6.4.10.3-ի պահանջների հետ համապատասխանությունը.

դ) տրոհվող նյութ պարունակող փաթեթների համար պետք է իրականացվեն 6.4.11.5 (բ)-ում նշված չափումները եւ փորձարկումները՝ 6.4.11.8-ում նշված պահանջների համաձայն յուրաքանչյուր փաթեթի փակումը հաստատելու նպատակով:

4.1.9.1.9. Մինչեւ սերտիֆիկատների պայմանների համաձայն որել է բեռնառաքում իրականացնելը բեռնառաքողը պետք է նաեւ ունենա փաթեթը պատշաճ կերպով փակելուն եւ բեռնառաքման համար նախապատրաստվելուն ուղղված միջոցառումների մասով ցանկացած ցուցման պատճենը:

4.1.9.1.10. Բացառիկ օգտագործման պայմաններում փոխադրվող բեռներից բացի՝ ցանկացած փաթեթի կամ տրանսպորտային կապոցի տրանսպորտային ինդեքսը չպետք է գերազանցի 10-ը, իսկ ցանկացած փաթեթի կամ տրանսպորտային կապոցի կրիտիկականության տեսակետից անվտանգության ինդեքսը չպետք է գերազանցի 50-ը:

4.1.9.1.11. Բացառությամբ 7.5.11-ի CV33 (3.5)(ա)-ում նշված պայմաններով բացառիկ օգտագործման պայմաններում փոխադրվող փաթեթների կամ տրանսպորտային կապոցների՝ փաթեթի կամ տրանսպորտային կապոցի արտաքին մակերեսի ցանկացած կետում ճառագայթման առավելագույն մակարդակը չպետք է գերազանցի 2 մՋվ/ժ-ն:

4.1.9.1.12. Բացառիկ օգտագործման պայմաններում փաթեթի կամ տրանսպորտային կապոցի արտաքին մակերեսի ցանկացած կետում առավելագույն ճառագայթման մակարդակը չպետք է գերազանցի 10 մՋվ/ժ-ն:

4.1.9.2. ՅՏԱ [Յաճր տեսակարար ակտիվությամբ] նյութի եւ ՄՌԱՆ-ի [Մակերեսային ռադիոակտիվ աղտոտվածությամբ նյութ] փոխադրմանը ներկայացվող պահանջները եւ հսկողությունը

4.1.9.2.1. IP-1, IP-2, IP-3 տեսակների առանձին փաթեթներում կամ առարկայում կամ առարկաների խմբում ՅՏԱ նյութի կամ ՄՌԱՆ-ի քանակությունը, պայմանավորված կոնկրետ դեպքով, պետք է սահմանափակվի այնպես, որ առարկայի կամ առարկաների խմբերի չպաշտպանված նյութից 3 մետր հեռավորության վրա արտաքին ճառագայթման մակարդակը չգերազանցի 10 մՋվ/ժ-ն:

- 4.1.9.2.2. Տրոհվող նյութ հանդիսացող կամ այն պարունակող ՑՏԱ նյութի եւ ՄՌԱՆ-ի դեպքում, որը 2.2.7.2.3.5-ի համաձայն ազատված չէ, պետք է կատարվեն 7.5.11-ի CV33 (4.1) եւ (4.2)-ի համապատասխան պահանջները:
- 4.1.9.2.3. Տրոհվող նյութ հանդիսացող կամ այն պարունակող ՑՏԱ նյութի եւ ՄՌԱՆ-ի դեպքում պետք է կատարվեն 6.4.11.1-ի համապատասխան պահանջները:
- 4.1.9.2.4. «ՑՏԱ-1» եւ «ՄՌԱՆ-1» խմբերում ՑՏԱ նյութերը եւ ՄՌԱՆ-ը կարող են փոխադրվել չփաթեթավորված՝ հետեւյալ պայմանները կատարելու դեպքում.
- ա) բոլոր չփաթեթավորված նյութերը, բացառությամբ միայն բնական ռադիոնուկլիդների պարունակող հանքաքարերի, պետք է փոխադրվեն այնպես, որ փոխադրման սովորական պայմաններում փոխադրամիջոցից ռադիոակտիվ պարունակության արտահոսք կամ պաշտպանության վատթարացում տեղի չունենա.
  - բ) յուրաքանչյուր փոխադրամիջոց պետք է գտնվի բացառիկ օգտագործման պայմաններում՝ բացառությամբ միայն ՄՌԱՆ-1 փոխադրման դեպքերի, որի մոտ հասանելի եւ անհասանելի մակերեսների ռադիոակտիվ աղտոտումը 10 անգամ չի գերազանցում համապատասխան մակարդակը՝ 2.2.7.1.2-ում նշված «աղտոտում» սահմանման համաձայն.
  - գ) ՄՌԱՆ-1-ի դեպքում, երբ կան կասկածներ, որ անհասանելի մակերեսների վրա առկա են 2.2.7.2.3.2 (ա)(i)-ում նշված արժեքները գերազանցող չֆիքսված ռադիոակտիվ աղտոտումներ, պետք է միջոցներ ձեռնարկվեն՝ բացառելու համար ռադիոակտիվ նյութի արտազատումը փոխադրամիջոցի մեջ
  - դ) չփաթեթավորված տրոհվող նյութը պետք է համապատասխանի 2.2.7.2.3.5 (ե)-ի պահանջներին:
- 4.1.9.2.5. ՑՏԱ նյութը եւ ՄՌԱՆ-ը, եթե 4.1.9.2.4-ում այլ բան նշված չէ, պետք է փաթեթավորվեն ստորեւ բերված աղյուսակի համաձայն.

Աղյուսակ 4.1.9.2.5: ՑՏԱ նյութին եւ ՄՌԱՆ-ին ներկայացվող արդյունաբերական փաթեթի պահանջները

Ռադիոակտիվ պարունակությունը	Արդյունաբերական փաթեթի տեսակը	
	Բացառիկ օգտագործումը	Ոչ բացառիկ օգտագործումը
ՑՏԱ-1		

Պինդ նյութ <sup>ա</sup>	IP-1 տեսակ	IP-1 տեսակ
Հեղուկ	IP-1 տեսակ	IP-2 տեսակ
<b>ՅՏԱ-II</b>		
Պինդ նյութ	IP-2 տեսակ	IP-2 տեսակ
Հեղուկ եւ գազ	IP-2 տեսակ	IP-3 տեսակ
<b>ՅՏԱ-III</b>	IP-2 տեսակ	IP-3 տեսակ
ՄՌԱՆ-I ա	IP-1 տեսակ	IP-1 տեսակ
ՄՌԱՆ-II	IP-2 տեսակ	IP-2 տեսակ

4.1.9.3. Տրոհվող նյութ պարունակող փաթեթները

Տրոհվող նյութ պարունակող փաթեթների պարունակությունը պետք է լինի անմիջապես «ԱԴՌ» համաձայնագրում կամ հաստատման սերտիֆիկատում սահմանված փաթեթի կառուցվածքի համար նախատեսված պարունակությունը:

4.1.10. Խառը փաթեթավորման վերաբերյալ հատուկ դրույթները

4.1.10.1. Երբ խառը փաթեթավորումը թույլատրվում է սույն բաժնի դրույթների համաձայն, տարբեր վտանգավոր բեռներ կամ վտանգավոր բեռներ եւ այլ բեռներ կարող են փաթեթավորվել միասին 6.1.4.21-ին համապատասխանող համակցված փաթեթվածքներում՝ պայմանով, որ դրանք միմյանց հետ վտանգավոր ռեակցիայի մեջ չեն մտնում, եւ կատարվում են սույն գլխի բոլոր մնացած համապատասխան դրույթները:

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1. Տե՛ս նաեւ 4.1.1.5-ը եւ 4.1.1.6-ը:*

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2. Ռադիոակտիվ նյութերի մասով տե՛ս 4.1.9-ը:*

4.1.10.2. Բացառությամբ այն դեպքերի, երբ փաթեթները պարունակում են միայն 1-ին կամ միայն 7-րդ դասի բեռներ, եթե որպես արտաքին փաթեթվածքներ օգտագործվում են փայտե կամ փայտաթելքային սալից արկղեր, ապա միասին փաթեթավորված տարբեր բեռներ պարունակող փաթեթի կշիռը չպետք է գերազանցի 100 կգ-ը:

4.1.10.3. Եթե 4.1.10.4-ի համաձայն կիրառվող որեւէ հատուկ դրույթով այլ բան չի նախատեսվում, ապա միեւնույն դասակարգման ծածկագիրն ունեցող եւ միեւնույն դասի վտանգավոր բեռները կարող են միասին փաթեթավորվել:

4.1.10.4. Եթե 3.2 գլխի Ա աղյուսակի (9բ) սյունակում տվյալ դիրքի համար

<sup>ա</sup> 4.1.9.2.4-ում նշված պայմաններում ՅՏԱ-I նյութը եւ ՄՌԱՆ-I-ն կարող են փոխադրվել չփաթեթավորված:



համապատասխան նշում է արված, ապա այդ դիրքին դասված բեռներն այլ բեռների հետ միեւնույն փաթեթում խառը փաթեթավորելու նկատմամբ կիրառվում են հետեւյալ հատուկ դրույթները:

MP 1 Կարող են փաթեթավորվել միայն համատեղելիության միեւնույն խմբի մեջ մտնող միեւնույն տեսակի բեռների հետ միասին:

MP 2 Չպետք է փաթեթավորվեն այլ բեռների հետ միասին:

MP 3 Թույլատրվում է ՄԱԿ-ի նշագրման 1873 եւ ՄԱԿ-ի նշագրման 1802 համարների բեռների հետ խառը փաթեթավորումը:

MP 4 Չպետք է փաթեթավորվեն այլ դասերի բեռների կամ «ԱԴԴ» համաձայնագրի պահանջներով չկարգավորվող բեռների հետ: Այնուհանդերձ, եթե տվյալ օրգանական պերօքսիդը 3-րդ դասի նյութերի համար բաղադրյալ համակարգ կամ կարծրացուցիչ է, ապա 3-րդ դասի այդ նյութերի հետ խառը փաթեթավորումը թույլատրվում է:

MP 5 ՄԱԿ-ի նշագրման 2814 եւ ՄԱԿ-ի նշագրման 2900 համարների նյութերը կարող են փաթեթավորվել միասին՝ համակցված փաթեթվածքում՝ P620 փաթեթավորման ցուցմանը համապատասխան: Դրանք չպետք է փաթեթավորվեն այլ բեռների հետ միասին. այդ պահանջը չի կիրառվում P650 փաթեթավորման ցուցման համաձայն փաթեթավորված՝ ՄԱԿ-ի նշագրման 3373 համարի «Կենսաբանական նյութ, «B» կատեգորիա»-ի նկատմամբ կամ որպես սառեցնող նյութեր ավելացված այնպիսի նյութերի նկատմամբ, ինչպիսիք են, օրինակ՝ սառույցը, չոր սառույցը կամ սառեցված հեղուկ ազոտը:

MP 6 Չպետք է փաթեթավորվեն այլ բեռների հետ միասին: Սույն դրույթը չի կիրառվում որպես սառեցնող նյութեր ավելացված այնպիսի նյութերի նկատմամբ, ինչպիսիք են, օրինակ՝ սառույցը, չոր սառույցը կամ սառեցված հեղուկ ազոտը:

MP 7 Ներքին մեկ փաթեթվածքի հաշվով 5 լիտրը չգերազանցող քանակությամբ կարող են միասին փաթեթավորել 6.1.4.21-ին համապատասխանող համակցված փաթեթվածքում՝

- դասակարգման այլ ծածկագրեր ունեցող միեւնույն դասի բեռների հետ, եթե դրանց համար նույնպես թույլատրվում է խառը փաթեթավորումը, կամ
- այն բեռների հետ, որոնց վրա չեն տարածվում «ԱԴԴ» համաձայնագրի պահանջները,

պայմանով, որ դրանք միմյանց հետ չեն մտնում վտանգավոր ռեակցիայի մեջ:

MP 8 Ներքին մեկ փաթեթվածքի հաշվով 3 լիտրը չգերազանցող քանակությամբ կարող են միասին փաթեթավորել 6.1.4.21-ին համապատասխանող համակցված փաթեթվածքում՝

- դասակարգման այլ ծածկագրեր ունեցող միեւնույն դասի բեռների հետ, եթե դրանց համար նույնպես թույլատրվում է խառը փաթեթավորումը, կամ
- այն բեռների հետ, որոնց վրա չեն տարածվում «ԱԴՌ» համաձայնագրի պահանջները,

պայմանով, որ դրանք միմյանց հետ չեն մտնում վտանգավոր ռեակցիայի մեջ:

MP 9 Համակցված փաթեթվածքների դեպքում կարող են արտաքին փաթեթվածքում 6.1.4.21-ի համաձայն միասին փաթեթավորվել՝

- 2-րդ դասի այլ բեռների հետ.
- այլ դասերի բեռների հետ, եթե այդ բեռների համար նույնպես թույլատրվում է խառը փաթեթավորումը. կամ
- այն բեռների հետ, որոնց վրա չեն տարածվում «ԱԴՌ» համաձայնագրի պահանջները,

պայմանով, որ դրանք միմյանց հետ չեն մտնում վտանգավոր ռեակցիայի մեջ:

MP 10 Ներքին մեկ փաթեթվածքի հաշվով 5 կգ-ը չգերազանցող քանակությամբ կարող են միասին փաթեթավորել 6.1.4.21-ին համապատասխանող համակցված փաթեթվածքում՝

- դասակարգման այլ ծածկագրեր ունեցող միեւնույն դասի բեռների հետ, եթե դրանց համար նույնպես թույլատրվում է խառը փաթեթավորումը, կամ
- այն բեռների հետ, որոնց վրա չեն տարածվում «ԱԴՌ» համաձայնագրի պահանջները,

պայմանով, որ դրանք միմյանց հետ չեն մտնում վտանգավոր ռեակցիայի մեջ:

MP 11 Ներքին մեկ փաթեթվածքի հաշվով 5 կգ-ը չգերազանցող քանակությամբ կարող են միասին փաթեթավորել 6.1.4.21-ին համապատասխանող համակցված փաթեթվածքում՝

- դասակարգման այլ ծածկագրեր ունեցող միեւնույն դասի բեռների կամ այլ դասերի բեռների հետ (բացառությամբ I կամ II փաթեթավորման խմբերին դասված 5.1 դասի նյութերի), եթե դրանց համար նույնպես թույլատրվում է խառը փաթեթավորումը, կամ

- այն բեռների հետ, որոնց վրա չեն տարածվում «ԱԴՌ» համաձայնագրի պահանջները,

պայմանով, որ դրանք միմյանց հետ չեն մտնում վտանգավոր ռեակցիայի մեջ:

MP 12 Ներքին մեկ փաթեթվածքի հաշվով 5 կգ-ը չգերազանցող քանակությամբ կարող են միասին փաթեթավորել 6.1.4.21-ին համապատասխանող համակցված փաթեթվածքում՝

- դասակարգման այլ ծածկագրեր ունեցող միեւնույն դասի բեռների կամ այլ դասերի բեռների հետ (բացառությամբ I կամ II փաթեթավորման խմբերին դասված 5.1 դասի նյութերի), եթե դրանց համար նույնպես թույլատրվում է խառը փաթեթավորումը, կամ

- այն բեռների հետ, որոնց վրա չեն տարածվում «ԱԴՌ» համաձայնագրի պահանջները,

պայմանով, որ դրանք միմյանց հետ չեն մտնում վտանգավոր ռեակցիայի մեջ:

Փաթեթվածքների կշիռը չպետք է գերազանցի 45 կգ-ը: Այնուհանդերձ, եթե որպես արտաքին փաթեթվածք օգտագործվում են փայտաթելքային սալից արկղերը, ապա փաթեթի կշիռը չպետք է գերազանցի 27 կգ-ը:

MP 13 Ներքին մեկ փաթեթվածքի եւ մեկ փաթեթի հաշվով 3 կգ-ը չգերազանցող քանակությամբ կարող են միասին փաթեթավորել 6.1.4.21-ին համապատասխանող համակցված փաթեթվածքում՝

- դասակարգման այլ ծածկագրեր ունեցող միեւնույն դասի բեռների կամ այլ դասերի բեռների հետ, եթե դրանց համար նույնպես թույլատրվում է խառը փաթեթավորումը, կամ

- այն բեռների հետ, որոնց վրա չեն տարածվում «ԱԴՌ» համաձայնագրի պահանջները,

պայմանով, որ դրանք միմյանց հետ չեն մտնում վտանգավոր ռեակցիայի մեջ:

MP 14 Ներքին մեկ փաթեթվածքի հաշվով 6 կգ-ը չգերազանցող քանակությամբ կարող են միասին փաթեթավորել 6.1.4.21-ին համապատասխանող համակցված փաթեթվածքում՝

- դասակարգման այլ ծածկագրեր ունեցող միեւնույն դասի բեռների կամ այլ դասերի բեռների հետ, եթե դրանց համար նույնպես թույլատրվում է խառը փաթեթավորումը, կամ

- այն բեռների հետ, որոնց վրա չեն տարածվում «ԱԴՌ»

համաձայնագրի պահանջները,

պայմանով, որ դրանք միմյանց հետ չեն մտնում վտանգավոր ռեակցիայի մեջ:

MP 15 Ներքին մեկ փաթեթվածքի հաշվով 3 լիտրը չգերազանցող քանակությամբ կարող են միասին փաթեթավորել 6.1.4.21-ին համապատասխանող համակցված փաթեթվածքում՝

- դասակարգման այլ ծածկագրեր ունեցող միեւնույն դասի բեռների կամ այլ դասերի բեռների հետ, եթե դրանց համար նույնպես թույլատրվում է խառը փաթեթավորումը, կամ
- այն բեռների հետ, որոնց վրա չեն տարածվում «ԱԴՌ» համաձայնագրի պահանջները,

պայմանով, որ դրանք միմյանց հետ չեն մտնում վտանգավոր ռեակցիայի մեջ:

MP 16 (Նախատեսվում է վերապահում)

MP 17 Ներքին մեկ փաթեթվածքի հաշվով 0,5 լիտրը եւ մեկ փաթեթի հաշվով 1 լիտրը չգերազանցող քանակությամբ կարող են միասին փաթեթավորել 6.1.4.21-ին համապատասխանող համակցված փաթեթվածքում՝

- բացառությամբ 7-րդ դասի՝ այլ դասերի բեռների հետ, եթե դրանց համար նույնպես թույլատրվում է խառը փաթեթավորումը, կամ
- այն բեռների հետ, որոնց վրա չեն տարածվում «ԱԴՌ» համաձայնագրի պահանջները,

պայմանով, որ դրանք միմյանց հետ չեն մտնում վտանգավոր ռեակցիայի մեջ:

MP 18 Ներքին մեկ փաթեթվածքի հաշվով 0,5 կգ-ը եւ մեկ փաթեթի հաշվով 1 կգ-ը չգերազանցող քանակությամբ կարող են միասին փաթեթավորել 6.1.4.21-ին համապատասխանող համակցված փաթեթվածքում՝

- բացառությամբ 7-րդ դասի՝ այլ դասերի բեռների հետ, եթե դրանց համար նույնպես թույլատրվում է խառը փաթեթավորումը, կամ
- այն բեռների հետ, որոնց վրա չեն տարածվում «ԱԴՌ» համաձայնագրի պահանջները,

պայմանով, որ դրանք միմյանց հետ չեն մտնում վտանգավոր ռեակցիայի մեջ:

MP 19 Ներքին մեկ փաթեթվածքի հաշվով 5 լիտրը չգերազանցող քանակությամբ կարող են միասին փաթեթավորել 6.1.4.21-ին

համապատասխանող համակցված փաթեթվածքում՝

- դասակարգման այլ ծածկագրեր ունեցող միեւնույն դասի բեռների կամ այլ դասերի բեռների հետ, եթե դրանց համար նույնպես թույլատրվում է խառը փաթեթավորումը, կամ
- այն բեռների հետ, որոնց վրա չեն տարածվում «ԱԴՌ» համաձայնագրի պահանջները,

պայմանով, որ դրանք միմյանց հետ չեն մտնում վտանգավոր ռեակցիայի մեջ:

MP 20 Կարող են փաթեթավորել ՄԱԿ-ի միեւնույն նշագրման համարն ունեցող նյութերի հետ միասին:

Չպետք է փաթեթավորվեն ՄԱԿ-ի նշագրման տարբեր համարներ ունեցող 1-ին դասի բեռների հետ միասին՝ բացառությամբ այն դեպքերի, եթե դա նախատեսվում է MP 24 հատուկ դրույթով:

Չպետք է փաթեթավորվեն այլ դասերի բեռների կամ «ԱԴՌ» համաձայնագրի պահանջներով չկարգավորվող բեռների հետ միասին:

MP 21 Կարող են փաթեթավորվել ՄԱԿ-ի նշագրման միեւնույն համարն ունեցող պատրաստվածքների հետ միասին:

Չպետք է փաթեթավորվեն ՄԱԿ-ի նշագրման այլ համարներ ունեցող 1-ին դասի բեռների հետ միասին. բացառություն են կազմում՝

- ա) իրենց սեփական հարուցիչ միջոցները՝ պայմանով, որ՝
  - i) հարուցիչ այդ միջոցները չգործարկվեն փոխադրման սովորական պայմաններում, կամ
  - ii) հարուցիչ այդ միջոցներն ապահովված են առնվազն երկու արդյունավետ պաշտպանիչ հատկությամբ, որոնք հնարավորություն են տալիս կանխելու պատրաստվածքի պայթյունը հարուցիչ միջոցների պատահական գործարկման դեպքում, կամ
  - iii) եթե հարուցիչ այդ միջոցներն ապահովված չեն երկու արդյունավետ պաշտպանիչ հատկությամբ (այսինքն՝ «B» համատեղելիության խմբին դասված հարուցիչ միջոցները), ապա ծագման երկրի<sup>2</sup> իրավասու մարմնի կարծիքով՝ հարուցիչ միջոցների պատահական գործարկումը փոխադրման սովորական պայմաններում պատրաստվածքի պայթյուն չի առաջացնի. եւ

<sup>2</sup> Եթե ծագման երկիրը «ԱԴՌ» համաձայնագրի Պայմանավորվող կողմ չէ, ապա բեռի փոխադրման երթուղով «ԱԴՌ» համաձայնագրի Պայմանավորվող կողմ հանդիսացող այն երկրի իրավասու մարմինը, որի տարածքով առաջինն է անցնում բեռը:

բ) «C», «D» եւ «E» համատեղելիության խմբերին դասված պատրաստվածքները:

Չպետք է փաթեթավորվեն այլ դասերի բեռների կամ «ԱԴԲ» համաձայնագրի պահանջներով չկարգավորվող բեռների հետ միասին:

Սույն հատուկ դրույթի համաձայն բեռների միասին փաթեթավորման դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել 2.2.1.1-ի համաձայն փաթեթների դասակարգման հնարավոր փոփոխությունը: Տրանսպորտային փաստաթղթում բեռների նկարագրության համար տե՛ս 5.4.1.2.1 (բ) կետը:

MP 22 Կարող են փաթեթավորվել ՄԱԿ-ի նշագրման միեւնույն համարն ունեցող պատրաստվածքների հետ միասին:

Չպետք է փաթեթավորվեն ՄԱԿ-ի նշագրման տարբեր համարներ ունեցող՝ 1-ին դասին պատկանող բեռների հետ միասին, բացառությամբ՝

ա) հարուցիչ սեփական միջոցների հետ միասին՝ պայմանով, որ հարուցիչ այդ միջոցները չգործարկվեն փոխադրման սովորական պայմաններում, կամ

բ) «C», «D» եւ «E» համատեղելիության խմբերին դասվող պատրաստվածքների հետ միասին, կամ

գ) եթե դա նախատեսված է MP 24-ի հատուկ դրույթով:

Չպետք է փաթեթավորվեն այլ դասերի բեռների կամ «ԱԴԲ» համաձայնագրի պահանջներին չհամապատասխանող բեռների հետ միասին:

Սույն հատուկ դրույթի համաձայն բեռների միասին փաթեթավորման դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել 2.2.1.1-ի համաձայն փաթեթների դասակարգման հնարավոր փոփոխությունը: Տրանսպորտային փաստաթղթում բեռների նկարագրության համար տե՛ս 5.4.1.2.1 (բ) կետը:

MP 23 Կարող են փաթեթավորվել ՄԱԿ-ի նշագրման միեւնույն համարն ունեցող պատրաստվածքների հետ միասին:

Չպետք է փաթեթավորվեն ՄԱԿ-ի նշագրման տարբեր համարներ ունեցող՝ 1-ին դասին պատկանող բեռների հետ միասին, բացառությամբ՝

ա) հարուցիչ սեփական միջոցների հետ միասին՝ պայմանով, որ հարուցիչ այդ միջոցները չգործարկվեն փոխադրման սովորական պայմաններում, կամ

բ) եթե դա նախատեսված է MP 24-ի հատուկ դրույթով:

Չպետք է փաթեթավորվեն այլ դասերի բեռների կամ «ԱԴԲ» համաձայնագրի պահանջներին չհամապատասխանող բեռների հետ

միասին:

Սույն հատուկ դրույթի համաձայն բեռների միասին փաթեթավորման դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել 2.2.1.1-ի համաձայն փաթեթների դասակարգման հնարավոր փոփոխությունը: Տրանսպորտային փաստաթղթում բեռների նկարագրության համար տե՛ս 5.4.1.2.1 (բ) կետը:

MP 24 Կարող են փաթեթավորվել ստորեւ բերված աղյուսակում նշված ՄԱԿ-ի նշագրման համարներ ունեցող բեռների հետ միասին հետեւյալ պայմանների պահպանմամբ՝

- եթե աղյուսակում նշված է «Ա» տառը, ապա ՄԱԿ-ի նշագրման այդ համարներն ունեցող բեռները կարող են տեղադրվել միեւնույն փաթեթում՝ առանց զանգվածի մասով որեւէ հատուկ սահմանափակման.
- եթե աղյուսակում նշված է «Բ» տառը, ապա ՄԱԿ-ի նշագրման այդ համարներն ունեցող բեռները կարող են տեղադրվել միեւնույն փաթեթում 50 կգ-ը չգերազանցող ընդհանուր զանգված ունեցող պայթուցիկ նյութերի հետ միասին:

Սույն հատուկ դրույթի համաձայն բեռների միասին փաթեթավորման դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել 2.2.1.1-ի համաձայն փաթեթների դասակարգման հնարավոր փոփոխությունը: Տրանսպորտային փաստաթղթում բեռների նկարագրության համար տե՛ս 5.4.1.2.1 (բ) կետը:

ՄԱԿ-ի նշագրման համար	0012	0014	0027	0028	0044	0054	0160	0161	0186	0191	0194	0195	0197	0238	0240	0312	0333	0334	0335	0336	0337	0373	0405	0428	0429	0430	0431	0432	0505	0506	0507		
0012		A																															
0014	A																																
0027				B	B		B	B																									
0028			B		B		B	B																									
0044			B	B			B	B																									
0054									B	B	B	B	B	B	B	B						B	B	B	B	B	B	B	B	B	B		
0160			B	B	B			B																									
0161			B	B	B		B																										
0186						B			B	B	B	B	B	B	B	B						B	B	B	B	B	B	B	B	B	B	B	
0191						B			B	B	B	B	B	B	B	B						B	B	B	B	B	B	B	B	B	B	B	
0194						B			B	B	B	B	B	B	B	B						B	B	B	B	B	B	B	B	B	B	B	
0195						B			B	B	B	B	B	B	B	B						B	B	B	B	B	B	B	B	B	B	B	
0197						B			B	B	B	B	B	B	B	B						B	B	B	B	B	B	B	B	B	B	B	
0238						B			B	B	B	B	B	B	B	B						B	B	B	B	B	B	B	B	B	B	B	
0240						B			B	B	B	B	B	B	B	B						B	B	B	B	B	B	B	B	B	B	B	
0312						B			B	B	B	B	B	B	B	B						B	B	B	B	B	B	B	B	B	B	B	
0333																																	
0334																																	
0335																																	
0336																																	
0337																																	
0373						B			B	B	B	B	B	B	B	B							B	B	B	B	B	B	B	B	B	B	
0405						B			B	B	B	B	B	B	B	B							B	B	B	B	B	B	B	B	B	B	
0428						B			B	B	B	B	B	B	B	B							B	B	B	B	B	B	B	B	B	B	
0429						B			B	B	B	B	B	B	B	B							B	B	B	B	B	B	B	B	B	B	
0430						B			B	B	B	B	B	B	B	B							B	B	B	B	B	B	B	B	B	B	
0431						B			B	B	B	B	B	B	B	B							B	B	B	B	B	B	B	B	B	B	
0432						B			B	B	B	B	B	B	B	B							B	B	B	B	B	B	B	B	B	B	
0505						B			B	B	B	B	B	B	B	B							B	B	B	B	B	B	B	B	B	B	
0506						B			B	B	B	B	B	B	B	B							B	B	B	B	B	B	B	B	B	B	
0507						B			B	B	B	B	B	B	B	B							B	B	B	B	B	B	B	B	B	B	



## ԳԼՈՒԽ 4.2

### ՇԱՐԺԱԿԱՆ ՑԻՍՏԵՌՆՆԵՐԻ ԵՎ ՄԱԿ-Ի ՆՇԱԳՐՄԱՆ՝ ԳԱԶԻ ԲԱԶՄԱՏԱՐԻ ԿՈՆՏԵՅՆԵՐՆԵՐԻ (ԳՐՏԿ-ՆԵՐ) ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1. Անշարժ ցիստեռնների (ավրոցցիստեռնների), հանովի ցիստեռնների, ցիստեռն-կոնտեյներների եւ մեքաղական նյութերից պատրաստված կորպուսով հանովի թափք-ցիստեռնների, ինչպես նաեւ մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցների եւ գազի բազմաբարր կոնտեյներների (ԳՐՏԿ-ների) համար տե՛ս 4.3 գլուխը. վոլոկնիտից պատրաստված ցիստեռնների համար տե՛ս 4.4 գլուխը. թափոնների համար նախատեսված վակուումային ցիստեռնների համար տե՛ս 4.5 գլուխը:*

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2.6.7 գլխի կիրառելի դրույթներին համապատասխան մակնշված, սակայն «ԱԴԴ» համաձայնագրի Պայմանավորվող կողմ չհանդիսացող պետությունում հաստատված շարժական ցիստեռնները եւ ՄԱԿ-ի ԳՐՏԿ-ները, այնուամենայնիվ, կարող են օգտագործվել «ԱԴԴ» համաձայնագրով փոխադրման համար:*

- 4.2.1. 1-ին եւ 3-9-րդ դասերի նյութերի փոխադրման համար շարժական ցիստեռնների կիրառմանը վերաբերող ընդհանուր դրույթները
- 4.2.1.1. Սույն բաժնով նախատեսվում են 1, 3, 4.1, 4.2, 4.3, 5.1, 5.2, 6.1, 6.2, 7, 8 եւ 9 դասերի նյութերի փոխադրման համար շարժական ցիստեռնների կիրառմանը վերաբերող ընդհանուր դրույթները: Սույն ընդհանուր դրույթներից բացի՝ շարժական ցիստեռնները պետք է համապատասխանեն նախագծմանը, պատրաստմանը, ստուգմանը եւ փորձարկմանը ներկայացվող՝ 6.7.2-ում նշված պահանջներին: Նյութերը պետք է փոխադրվեն շարժական ցիստեռններում 3.2 գլխի Ա աղյուսակի 10-րդ սյունակում նշված եւ 4.2.5.2.6-ում (T1-T23) նկարագրված՝ շարժական ցիստեռնին առնչվող համապատասխան ցուցումների համաձայն, ինչպես նաեւ 3.2 գլխի Ա աղյուսակի 11-րդ սյունակում յուրաքանչյուր նյութի համար նշված եւ 4.2.5.3-ում նկարագրված շարժական ցիստեռնին առնչվող հատուկ դրույթների համաձայն:
- 4.2.1.2. Փոխադրման ժամանակ շարժական ցիստեռնները պետք է բավարար չափով պաշտպանված լինեն լայնական ու երկայնական հարվածի եւ շուռ գալու հետեւանքով կորպուսի եւ օժանդակ սարքավորումների վնասվելուց: Եթե կորպուսը եւ օժանդակ սարքավորումները կառուցված են այնպես, որ կարող են դիմակայել հարվածին կամ շուռ գալուն, ապա կարելի է չապահովել նման պաշտպանություն: Նման պաշտպանության օրինակները բերված են 6.7.2.17.5-ում:
- 4.2.1.3. Որոշ նյութեր քիմիապես անկայուն են: Դրանք թույլատրվում են

փոխադրման միայն այն դեպքում, երբ ձեռնարկվել են անհրաժեշտ միջոցներ՝ փոխադրման ընթացքում դրանց վտանգավոր տրոհումը, փոխակերպումը կամ պոլիմերացումը կանխելու նպատակով: Դրա համար անհրաժեշտ է մասնավորապես ապահովել, որ կորպուսներում չլինեն այդ ռեակցիաների ակտիվացմանը նպաստող նյութեր:

- 4.2.1.4. Փոխադրման ընթացքում կորպուսի արտաքին մակերեսի՝ բացառությամբ բացվածքների եւ դրանց փականների, կամ ջերմամեկուսացնող նյութի ջերմաստիճանը չպետք է գերազանցի 70 °C-ը: Կորպուսն անհրաժեշտության դեպքում պետք է ջերմամեկուսացվի:
- 4.2.1.5. Չմաքրված եւ ոչ գազազերծված դատարկ շարժական ցիստեռնները պետք է համապատասխանեն նույն պահանջներին, ինչ նախորդ փոխադրվող նյութով լցավորված շարժական ցիստեռնները:
- 4.2.1.6. Նյութերը չպետք է փոխադրվեն կորպուսների միեւնույն կամ դրանց հարակից խցիկներում, եթե դրանք կարող են միմյանց հետ վտանգավոր ռեակցիայի մեջ մտնել («վտանգավոր ռեակցիա» եզրույթի սահմանումը տե՛ս 1.2.1-ում):
- 4.2.1.7. Իրավասու մարմնի կամ վերջինիս կողմից լիազորված կազմակերպության կողմից տրված՝ կառուցվածքի հաստատման սերտիֆիկատը, փորձարկումների արձանագրությունը եւ յուրաքանչյուր շարժական ցիստեռնի նախնական ստուգման եւ փորձարկման արդյունքներ պարունակող սերտիֆիկատը պետք է պահվեն այդ մարմնում կամ կազմակերպությունում եւ սեփականատիրոջ մոտ: Սեփականատերերը պետք է կարողանան ներկայացնել այդ փաստաթղթերը ցանկացած իրավասու մարմնի կողմից պահանջի դեպքում:
- 4.2.1.8. Եթե փոխադրվող նյութի (նյութերի) անվանումը նշված չէ 6.7.2.20.2-ում նկարագրված մետաղական ցուցանակի վրա, ապա 6.7.2.18.1-ում սահմանված սերտիֆիկատի պատճենը պետք է իրավասու մարմնի կամ վերջինիս կողմից լիազորված կազմակերպության պահանջով լինի հասանելի եւ համապատասխան դեպքերում անհապաղ ներկայացվի բեռնառաքողի, բեռն ստացողի կամ փոխադրման գործակալի կողմից:
- 4.2.1.9. Լցավորման աստիճանը
- 4.2.1.9.1. Նախքան լցավորումը բեռնառաքողը պետք է ապահովի, որ օգտագործվի համապատասխան շարժական ցիստեռն, եւ որ դա չլցավորվի այնպիսի նյութերով, որոնք, շփվելով այն նյութերի հետ, որոնցից պատրաստված է կորպուսը, խցանիչները, օժանդակ սարքավորումները եւ ցանկացած պաշտպանական երեսապատում, կարող են վերջիններիս հետ մտնել վտանգավոր ռեակցիայի մեջ՝ առաջացնելով վտանգավոր արգասիքներ կամ զգալիորեն

նվազեցնելով այդ նյութերի ամրությունը: Կարող է անհրաժեշտ լինել, որ բեռնառաքողը խորհրդակցի նյութը պատրաստողի եւ իրավասու մարմնի հետ՝ շարժական ցիստեռնի նյութերի հետ այդ նյութի համատեղելիության մասին տեղեկությունների վերաբերյալ:

4.2.1.9.1.1. Շարժական ցիստեռնները չպետք է լցվեն 4.2.1.9.2 - 4.2.1.9.6-ում նշված մակարդակից բարձր: Առանձին նյութերի նկատմամբ 4.2.1.9.2-ի, 4.2.1.9.3-ի կամ 4.2.1.9.5.1-ի դրույթների կիրառելիությունը սահմանված է 4.2.5.2.6-ում կամ 4.2.5.3-ում նկարագրված եւ 3.2 գլխի Ա աղյուսակի 10-րդ կամ 11-րդ սյունակում նշված՝ շարժական ցիստեռններին առնչվող համապատասխան ցուցումներում կամ հատուկ դրույթներում:

4.2.1.9.2. Ընդհանուր կիրառման դեպքում լցավորման առավելագույն աստիճանը (%-ով) որոշվում է հետեւյալ բանաձեւով՝

$$L_{\text{լցավորման աստիճանը}} = \frac{97}{1 + \alpha(tr - tf)}$$

4.2.1.9.3. Փաթեթավորման I եւ II խմբերին վերաբերող 6.1 դասի եւ 8-րդ դասի հեղուկների, ինչպես նաեւ 65 °C ջերմաստիճանում ավելի քան 175 կՊա (1.75 բար) գոլորշու բացարձակ ճնշմամբ հեղուկների համար լցավորման առավելագույն աստիճանը (%-ով) որոշվում է հետեւյալ բանաձեւով՝

$$L_{\text{լցավորման աստիճանը}} = \frac{95}{1 + \alpha(tr - tf)}$$

4.2.1.9.4. Այս բանաձեւերում  $\alpha$ -ն հեղուկի ծավալային ընդարձակման միջին գործակիցն է՝ լցավորման ժամանակ հեղուկի միջին ջերմաստիճանի (tf) եւ փոխադրման ժամանակ առավելագույն միջին ծավալային ջերմաստիճանի (tr) միջեւ ընկած ինտերվալում (երկու ցուցանիշներն էլ տրված են °C-ով): Շրջակա միջավայրի պայմաններում փոխադրվող հեղուկների համար  $\alpha$  մեծությունը կարող է հաշվարկվել հետեւյալ բանաձեւի օգնությամբ՝

$$\alpha = \frac{d_{15} - d_{50}}{35d_{50}}$$

որտեղ  $d_{15}$ -ը եւ  $d_{50}$ -ը հեղուկի խտություններն են՝ համապատասխանաբար 15 °C եւ 50° C ջերմաստիճաններում:

4.2.1.9.4.1. Առավելագույն միջին ծավալային ջերմաստիճանը (tr) ընդունվում է որպես 50 °C՝ բացառությամբ չափավոր կամ ծայրահեղ կլիմայական պայմաններում փոխադրումների, երբ համապատասխան իրավասու մարմինները կարող են, կախված կոնկրետ դեպքից, թույլատրել առավել ցածր ջերմաստիճանի կիրառումը կամ պահանջել ավելի բարձր ջերմաստիճան:

4.2.1.9.5. 4.2.1.9.2 - 4.2.1.9.4.1-ի դրույթները չեն կիրառվում այնպիսի նյութեր պարունակող շարժական ցիստեռնների նկատմամբ, որոնց ջերմաստիճանը փոխադրման ընթացքում պահպանվում է 50 °C-ից բարձր մակարդակում (օրինակ՝ տաքացնող սարքի միջոցով): Տաքացնող սարքով համալրված շարժական ցիստեռնների համար պետք է օգտագործվի ջերմակարգավորիչ՝ ապահովելու համար, որ փոխադրման ժամանակ ցանկացած պահի լցավորման առավելագույն աստիճանը չգերազանցի տարողության 95%-ը:

4.2.1.9.5.1. Լցավորման առավելագույն աստիճանը (%-ով) այն պինդ նյութերի համար, որոնք փոխադրվում են իրենց հալեցման ջերմաստիճանը գերազանցող ջերմաստիճաններում եւ այն հեղուկների համար, որոնք փոխադրվում են բարձրացված ջերմաստիճանում, պետք է որոշվի հետեւյալ բանաձեւի օգնությամբ՝

$$\text{Լցավորման աստիճանը} = 95 \frac{dr}{df}$$

որտեղ df-ն եւ dr-ն հեղուկի խտություններն են՝ համապատասխանաբար լցավորման ժամանակ հեղուկի միջին ջերմաստիճանում եւ փոխադրման ժամանակ առավելագույն միջին ծավալային ջերմաստիճանում:

4.2.1.9.6. Շարժական ցիստեռնները փոխադրման համար չպետք է ներկայացվեն՝

ա) 20 °C ջերմաստիճանում 2 680 մմ<sup>2</sup>/վ-ից ցածր մածուցիկությամբ հեղուկների դեպքում կամ տաքացված նյութի դեպքում փոխադրման ժամանակ առավելագույն ջերմաստիճանում 20%-ից բարձր, սակայն 80%-ից ցածր լցավորման աստիճանով՝ բացառությամբ այն դեպքերի, երբ շարժական ցիստեռնների կորպուսները միջնորմներով կամ ալեբեկիչ թիթեղներով բաժանված են 7 500 լիտրից ոչ ավելի տարողությամբ բաժինների.

բ) կորպուսի արտաքին մակերեսի կամ օժանդակ սարքավորումների վրա նախկինում փոխադրված նյութերի մնացորդներով.

գ) այն աստիճանի արտահոսքի կամ վնասվածքի դեպքում, որը կարող է ազդել շարժական ցիստեռնի ամբողջականության կամ դրա ամբարձիչ կամ ամրացման հարմարանքների վրա, եւ

դ) եթե օժանդակ սարքավորումները չեն զննվել, եւ դրանց աշխատանքային սարքին վիճակը չի հաստատվել:

4.2.1.9.7. Շարժական ցիստեռնների ճանկավոր ավտոբեռնիչի գրպանիկի

համար նախատեսված որմնաբացվածքները պետք է փակ լինեն այն ժամանակ, երբ ցիստեռնը լցված է: Սույն դրույթը չի կիրառվում այն շարժական ցիստեռնների նկատմամբ, որոնք 6.7.2.17.4-ի համաձայն կարող են չափահովվել ճանկավոր ավտոբեռնիչի որմնաբացվածքների փակման միջոցներով:

- 4.2.1.10. Շարժական ցիստեռններում 3-րդ դասի նյութերի փոխադրմանը վերաբերող լրացուցիչ դրույթները
- 4.2.1.10.1. Դյուրավառ հեղուկների փոխադրման համար նախատեսվող բոլոր շարժական ցիստեռնները պետք է փակվեն եւ պետք է ապահովված լինեն պաշտպանիչ սարքերով՝ 6.7.2.8-6.7.2.15-ի համաձայն:
- 4.2.1.10.1.1. Բացառապես ցամաքային փոխադրումների համար նախատեսվող շարժական ցիստեռնների դեպքում կարող են օգտագործվել բաց օդափոխիչ համակարգեր, եթե դա թույլատրվում է 4.3 գլխի համաձայն:
- 4.2.1.11. Շարժական ցիստեռններում 4.1, 4.2 կամ 4.3 դասերի նյութերի փոխադրմանը վերաբերող լրացուցիչ դրույթները (բացառությամբ 4.1 դասի ինքնառեակտիվ նյութերի)
- (Նախատեսվում է վերապահում)
- ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. 4.1 դասի ինքնառեակտիվ նյութերի համար տե՛ս 4.2.1.13.1-ը:*
- 4.2.1.12. Շարժական ցիստեռններում 5.1 դասի նյութերի փոխադրմանը վերաբերող լրացուցիչ դրույթները
- (Նախատեսվում է վերապահում)
- 4.2.1.13. Շարժական ցիստեռններում 5.2 դասի նյութերի եւ 4.1 դասի ինքնառեակտիվ նյութերի փոխադրմանը վերաբերող լրացուցիչ դրույթները
- 4.2.1.13.1. Յուրաքանչյուր նյութ պետք է ենթարկվի փորձարկումների, եւ ծագման երկրի իրավասու մարմնին հաստատման համար պետք է փոխանցվի արձանագրություն: Համապատասխան ծանուցումը պետք է ներկայացվի նշանակման երկրի իրավասու մարմնին: Ծանուցումը պետք է պարունակի փոխադրման մասին համապատասխան տեղեկություններ եւ փորձարկումների արդյունքները պարունակող արձանագրություն: Կատարվող փորձարկումները պետք է ներառեն այնպիսի փորձարկումներ, որոնք անհրաժեշտ են՝

ա) փոխադրման ընթացքում նյութի հետ սովորաբար շփվող բոլոր

նյութերի համատեղելիությունը հաստատելու համար.

բ) ճնշումը նվազեցնող սարքերի եւ վթարային սարքերի կառուցվածքի մասին տվյալներ տրամադրելու համար՝ հաշվի առնելով շարժական ցիստեռնի կառուցվածքային առանձնահատկությունները:

Արձանագրությունում պետք է հստակ նշվեն նյութի անվտանգ փոխադրման համար անհրաժեշտ բոլոր լրացուցիչ դրույթները:

- 4.2.1.13.2. Ստորեւ բերված դրույթները կիրառվում են ինքնաարագացող քայքայման 55 °C կամ ավելի ջերմաստիճանով (ԻՏՋ) F տեսակի ինքնառեակտիվ նյութերի կամ F տեսակի օրգանական պերօքսիդների փոխադրման համար նախատեսվող շարժական ցիստեռնների նկատմամբ: Հակասությունների առաջացման դեպքում տվյալ դրույթները գերակայում են 6.7.2-ի դրույթների նկատմամբ: Անհրաժեշտ է հաշվի առնել այնպիսի արտակարգ իրավիճակներ, ինչպիսիք են, օրինակ՝ նյութի ինքնաարագացող քայքայումը եւ հրդեհի բռնկումը, որոնք նկարագրված են 4.2.1.13.8-ում:
- 4.2.1.13.3. Շարժական ցիստեռններում 55 °C-ից ցածր ԻՏՋ-ով ինքնառեակտիվ նյութերի կամ օրգանական պերօքսիդների փոխադրմանը վերաբերող լրացուցիչ դրույթները պետք է սահմանվեն ծագման երկրի իրավասու մարմնի կողմից: Համապատասխան ծանուցումը պետք է ներկայացվի նշանակման երկրի իրավասու մարմնին:
- 4.2.1.13.4. Շարժական ցիստեռնը պետք է նախագծվի այնպես, որ դիմակայի առնվազն 0.4 ՄՊա (4 բար) փորձարկման ճնշմանը:
- 4.2.1.13.5. Շարժական ցիստեռնները պետք է սարքավորված լինեն ջերմաստիճանի տվիչներով:
- 4.2.1.13.6. Շարժական ցիստեռնները պետք է սարքավորված լինեն ճնշումը նվազեցնող սարքերով եւ վթարային սարքերով: Կարող են օգտագործվել նաեւ վակուումային ապահովիչ սարքեր: Ճնշումը նվազեցնող սարքերը պետք է աշխատեն այնպիսի ճնշումների ներքո, որոնք որոշվում են՝ հաշվի առնելով նյութի հատկանիշները, ինչպես նաեւ շարժական ցիստեռնի կառուցվածքային առանձնահատկությունները: Հալուն տարրերի առկայությունը կորպուսում չի թույլատրվում:
- 4.2.1.13.7. Ճնշումը նվազեցնող սարքերը պետք է բաղկացած լինեն զսպանակավոր կափույրներից, որոնք տեղադրված են 50 °C ջերմաստիճանում առաջացող քայքայման արգասիքների եւ գոլորշիների՝ շարժական ցիստեռնում զգալի քանակության կուտակումը կանխելու նպատակով: Ապահովիչ կափույրների թողունակությունը եւ գործարկային ճնշումը պետք է հիմնված լինեն

4.2.1.13.1-ում սահմանված փորձարկումների արդյունքների վրա: Այնուամենայնիվ, գործարկային ճնշումը ոչ մի դեպքում չպետք է լինի այնպիսին, որ շարժական ցիստեռնի շուռ տալու դեպքում հեղուկը դուրս հոսի կափույրից (կափույրներից):

4.2.1.13.8. Վթարային սարքերը կարող են լինել զսպանակավոր կամ դյուրաբեկ տեսակի կամ այդ երկու տեսակների համադրությունը, պետք է նախագծված լինեն այնպես, որ ամբողջությամբ հրդեհի բռնկման դեպքում առնվազն մեկ ժամվա ընթացքում առաջացող քայքայման բոլոր արգասիքները եւ գոլորշիներն օդափոխվեն՝ հետեւյալ բանաձեւով հաշվարկված՝

$$q = 70961 \times F \times A^{0.82}$$

որտեղ՝

$$q = \text{ջերմակլանում [Վտ]}$$

$$A = \text{խոնավացված տարածք [մ<sup>2</sup>]}$$

$$F = \text{ջերմամեկուսացման գործակից}$$

$$= 1 \text{ առանց մեկուսացման կորպուսների համար, կամ}$$

$$F = \frac{U(923 - T)}{47032} \text{ մեկուսացված կորպուսների համար}$$

որտեղ՝

$$K = \text{ջերմամեկուսացնող շերտի տեսակարար ջերմահաղորդականությունը} \quad [\text{Վտ. մ-1.Կ-1}]$$

$$L = \text{ջերմամեկուսացնող շերտի հաստությունը} \quad [\text{մ}]$$

$$U = K/L = \text{ջերմամեկուսացման ջերմափոխանցման գործակիցը} \quad [\text{Վտ. մ-2.Կ-1}]$$

$$T = \text{ճնշման նվազման ժամանակ նյութի ջերմաստիճանը} \quad [Կ]$$

Վթարային սարքի (սարքերի) գործարկային ճնշումը պետք է գերազանցի 4.2.1.13.7-ում սահմանված արժեքը եւ հիմնված լինի 4.2.1.13.1-ում նշված փորձարկումների արդյունքների վրա: Վթարային սարքերը պետք է ունենան այնպիսի պարամետրեր, որ շարժական ցիստեռնում առավելագույն ճնշումը երբեւէ չգերազանցի ցիստեռնի փորձարկման ճնշումը:

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Այն մեթոդի օրինակը, որը հնարավորություն է տալիս որոշել վթարային սարքերի չափերը, ներկայացված է «Փորձարկումների եւ չափորոշիչների ձեռնարկ»-ի 5-րդ հավելվածում:*

4.2.1.13.9. Ջերմամեկուսացված շարժական ցիստեռնների համար թողունակությունը եւ վթարային սարքի (սարքերի) գործարկումը պետք է որոշվեն այն ենթադրության հիման վրա, որ խախտված է մակերեսի 1%-ի ջերմամեկուսացումը:

4.2.1.13.10. Վակուումային ապահովիչ սարքերը եւ զսպանակավոր կափույրները

պետք է սարքավորված լինեն կրակմարիչներով: Անհրաժեշտ է հաշվի առնել կրակմարիչի պատճառով առաջացող՝ կափույրի թողունակության անկումը:

- 4.2.1.13.11. Այնպիսի օժանդակ սարքավորումներ, ինչպիսիք են, օրինակ՝ կափույրները եւ արտաքին խողովակատարը, պետք է տեղադրվեն այնպես, որ շարժական ցիստեռնը լցնելուց հետո դրանց մեջ նյութ չմնա:
- 4.2.1.13.12. Շարժական ցիստեռնները կարող են լինել ջերմամեկուսացված կամ արեւապաշտպան էկրանով պաշտպանված: Եթե նյութի ԻՏՋ-ն շարժական ցիստեռնում 55 °C կամ ավելի ցածր է, կամ եթե շարժական ցիստեռնը պատրաստված է ալյումինից, ապա շարժական ցիստեռնը պետք է ամբողջությամբ մեկուսացվի: Արտաքին մակերեսը պետք է պատված լինի սպիտակ կամ բաց գույնի մետաղով:
- 4.2.1.13.13. 15 °C ջերմաստիճանում շարժական ցիստեռնի լցավորման աստիճանը չպետք է գերազանցի 90%-ը:
- 4.2.1.13.14. 6.7.2.20.2-ով պահանջվող նշումը պետք է ներառի համապատասխան նյութի ՄԱԿ-ի նշագրման համարը եւ հաստատված կոնցենտրացիայի տեխնիկական անվանումը:
- 4.2.1.13.15. Շարժական ցիստեռններում կարող են փոխադրվել 4.2.5.2.6-ում նշված T23 շարժական ցիստեռնների ցուցումներում կոնկրետ նշված օրգանական պերօքսիդներ եւ ինքնառեակտիվ նյութեր:
- 4.2.1.14. Շարժական ցիստեռններում 6.1 դասի նյութերի փոխադրմանը վերաբերող լրացուցիչ դրույթները  
(Նախատեսվում է վերապահում)
- 4.2.1.15. Շարժական ցիստեռններում 6.2 դասի նյութերի փոխադրմանը վերաբերող լրացուցիչ դրույթները  
(Նախատեսվում է վերապահում)
- 4.2.1.16. Շարժական ցիստեռններում 7-րդ դասի նյութերի փոխադրմանը վերաբերող լրացուցիչ դրույթները
- 4.2.1.16.1. Ռադիոակտիվ նյութերի փոխադրման համար օգտագործվող շարժական ցիստեռնները չպետք է օգտագործվեն այլ բեռների փոխադրման համար:
- 4.2.1.16.2. Շարժական ցիստեռնների լցավորման աստիճանը չպետք է գերազանցի 90%-ը կամ որպես այլընտրանք՝ իրավասու մարմնի կողմից սահմանված ցանկացած այլ արժեք:



- 4.2.1.17. Շարժական ցիստեռններում 8-րդ դասի նյութերի փոխադրմանը վերաբերող լրացուցիչ դրույթները
- 4.2.1.17.1. 8-րդ դասի նյութերի փոխադրման համար օգտագործվող շարժական ցիստեռնների ճնշումը նվազեցնող սարքերը պետք է ստուգվեն տարին առնվազն մեկ անգամ:
- 4.2.1.18. Շարժական ցիստեռններում 9-րդ դասի նյութերի փոխադրմանը վերաբերող լրացուցիչ դրույթները  
(Նախատեսվում է վերապահում)
- 4.2.1.19. Հալման ջերմաստիճանը գերազանցող ջերմաստիճաններում պինդ նյութերի փոխադրմանը վերաբերող լրացուցիչ դրույթները
- 4.2.1.19.1. Հալման ջերմաստիճանը գերազանցող ջերմաստիճաններում փոխադրվող կամ փոխադրման համար ներկայացվող պինդ նյութերը, որոնց համար 3.2 գլխի Ա աղյուսակի 10-րդ սյունակում շարժական ցիստեռնների վերաբերյալ ցուցումներ չկան, կամ որոնց համար շարժական ցիստեռնների վերաբերյալ ցուցումը չի կիրառվում հալման ջերմաստիճանը գերազանցող ջերմաստիճաններում փոխադրման նկատմամբ, կարող են փոխադրվել շարժական ցիստեռններում՝ պայմանով, որ այդ պինդ նյութերն ընդգրկված են 4.1, 4.2, 4.3, 5.1, 6.1, 8-րդ կամ 9-րդ դասերում, չեն պարունակում 6.1 դասի կամ 8-րդ դասի վտանգներից տարբեր՝ այլ լրացուցիչ վտանգ եւ դասված են փաթեթավորման II կամ III խմբերին:
- 4.2.1.19.2. Եթե 3.2 գլխի Ա աղյուսակում այլ բան նշված չէ, ապա հալման ջերմաստիճանը գերազանցող ջերմաստիճաններում նշված պինդ նյութերի փոխադրման համար օգտագործվող շարժական ցիստեռնները պետք է համապատասխանեն փաթեթավորման III խմբի պինդ նյութերի համար T4 շարժական ցիստեռնների կամ փաթեթավորման II խմբի պինդ նյութերի համար T7 շարժական ցիստեռնների վերաբերյալ ցուցումների դրույթներին: Կարող է ընտրվել 4.2.5.2.5-ի համաձայն անվտանգության համարժեք կամ առավել բարձր մակարդակ երաշխավորող շարժական ցիստեռն: Լցավորման առավելագույն աստիճանը (%-ով) պետք է որոշվի 4.2.1.9.5 (TP3)-ի համաձայն:
- 4.2.2. Չսառեցված-հեղուկացված ճնշման տակ գտնվող գազերի եւ քիմիական նյութերի փոխադրման համար շարժական ցիստեռնների օգտագործմանը վերաբերող ընդհանուր դրույթները
- 4.2.2.1. Սույն բաժնով նախատեսվում են չսառեցված-հեղուկացված ճնշման տակ գտնվող գազերի եւ քիմիական նյութերի փոխադրման համար շարժական ցիստեռնների օգտագործմանը վերաբերող ընդհանուր

դրույթները:

- 4.2.2.2. Շարժական ցիստեռնները պետք է համապատասխանեն նախագծմանը, պատրաստմանը, ստուգմանը եւ փորձարկումներին ներկայացվող՝ 6.7.3-ում նշված պահանջներին: Ճնշման տակ գտնվող՝ չսառեցված հեղուկացված գազերը եւ քիմիական նյութերը պետք է փոխադրվեն 4.2.5.2.6-ում ներկայացված T50 շարժական ցիստեռններին առնչվող ցուցումներին համապատասխանող շարժական ցիստեռններում եւ 3.2 գլխի Ա աղյուսակի 11-րդ սյունակում նշված եւ 4.2.5.3-ում նկարագրված չսառեցված-հեղուկացված կոնկրետ գազերի համար սահմանված՝ շարժական ցիստեռններին առնչվող ցանկացած հատուկ դրույթի համաձայն:
- 4.2.2.3. Փոխադրման ժամանակ շարժական ցիստեռնները պետք է բավարար չափով պաշտպանված լինեն լայնական ու երկայնական հարվածի եւ շուռ գալու հետեւանքով կորպուսի եւ օժանդակ սարքավորումների վնասվելուց: Եթե կորպուսը եւ օժանդակ սարքավորումները կառուցված են այնպես, որ կարող են դիմակայել հարվածին կամ շուռ գալուն, ապա կարելի է չապահովել նման պաշտպանություն: Նման պաշտպանության օրինակները բերված են 6.7.3.13.5-ում:
- 4.2.2.4. Որոշ չսառեցված հեղուկացված գազեր քիմիապես անկայուն են: Դրանք թույլատրվում են փոխադրման միայն այն դեպքում, երբ ձեռնարկվել են անհրաժեշտ միջոցներ՝ փոխադրման ընթացքում դրանց վտանգավոր տրոհումը, փոխակերպումը կամ պոլիմերացումը կանխելու նպատակով: Դրա համար անհրաժեշտ է մասնավորապես ապահովել, որ շարժական ցիստեռններում չլինեն այդ ռեակցիաների ակտիվացմանը նպաստող չսառեցված-հեղուկացված գազեր:
- 4.2.2.5. Եթե փոխադրվող գազի (գազերի) անվանումը նշված չէ 6.7.3.16.2-ում նկարագրված մետաղական ցուցանակի վրա, ապա 6.7.3.14.1-ում սահմանված սերտիֆիկատի պատճենը պետք է իրավասու մարմնի պահանջով լինի հասանելի եւ համապատասխան դեպքերում անհապաղ ներկայացվի բեռնառաքողի, բեռն ստացողի կամ փոխադրման գործակալի կողմից:
- 4.2.2.6. Չմաքրված եւ ոչ գազազերծված դատարկ շարժական ցիստեռնները պետք է համապատասխանեն նույն պահանջներին, ինչ նախորդ փոխադրվող չսառեցված-հեղուկացված գազով լցավորված շարժական ցիստեռնները:
- 4.2.2.7. Լցավորումը
- 4.2.2.7.1. Նախքան լցավորումը պետք է անցկացնել շարժական ցիստեռնի

ստուգում՝ համոզվելու համար, որ այն թույլատրված է ճնշման տակ գտնվող՝ չսառեցված-հեղուկացված գազի կամ քիմիական պայթյունավտանգ նյութի տվյալ փոխադրման համար, եւ պետք է ապահովել, որ շարժական ցիստեռնը չբեռնվի ճնշման տակ գտնվող՝ չսառեցված-հեղուկացված այնպիսի գազերով կամ քիմիական նյութերով, որոնք կորպուսի, խցանիչների, օժանդակ սարքավորումների եւ պաշտպանիչ ներդիրների նյութերի հետ շփվելիս, ամենայն հավանականությամբ, կարող են դրանց հետ մտնել վտանգավոր ռեակցիայի մեջ՝ առաջացնելով վտանգավոր արգասիքներ կամ զգալիորեն նվազեցնել այդ նյութերի ամրությունը: Լցավորման ժամանակ ճնշման տակ գտնվող՝ չսառեցված-հեղուկացված գազի կամ պայթյունավտանգ քիմիական նյութի ջերմաստիճանը պետք է լինի հաշվարկային ջերմաստիճանի միջակայքում:

4.2.2.7.2. Չսառեցված հեղուկացված գազի առավելագույն զանգվածը կորպուսի տարողության յուրաքանչյուր լիտրի հաշվով (կգ/լ) չպետք է գերազանցի չսառեցված հեղուկացված գազի խտությունը 50 °C ջերմաստիճանում՝ բազմապատկած 0.95-ով: Բացի այդ, 60 °C ջերմաստիճանում կորպուսը չպետք է ամբողջությամբ լցված լինի հեղուկով:

4.2.2.7.3. Շարժական ցիստեռնները չպետք է լցվեն իրենց առավելագույն թույլատրելի համախառն քաշից եւ յուրաքանչյուր փոխադրվող գազի համար սահմանված՝ առավելագույն թույլատրելի բեռնվածության զանգվածից բարձր:

4.2.2.8. Շարժական ցիստեռնները չպետք է ներկայացվեն փոխադրման՝

ա) եթե առկա է չլցված տարածություն, որը կորպուսի ներսում հեղուկի շարժի հետեւանքով կարող է անթույլատրելի հիդրավլիկ ուժ առաջացնել.

բ) արտահոսքի առկայության դեպքում.

գ) եթե դրանք այն աստիճանի են վնասված, որ կարող են խախտել ցիստեռնի կամ վերջինիս ամբարձիչ կամ ամրացման հարմարանքների ամբողջականությունը. եւ

դ) եթե օժանդակ սարքավորումները չեն զննվել, եւ դրանց աշխատանքային սարքին վիճակը չի հաստատվել:

4.2.2.9. Շարժական ցիստեռնների ճանկավոր ավտոբեռնիչի գրպանիկի համար նախատեսված որմնաբացվածքները պետք է փակ լինեն այն

ժամանակ, երբ ցիստեոնը լցված է: Սույն դրույթը չի կիրառվում այն շարժական ցիստեոնների նկատմամբ, որոնք 6.7.3.13.4-ի համաձայն կարող են չապահովվել ճանկավոր ավտոբեռնիչի որմնաբացվածքների փակման միջոցներով:

- 4.2.3. Սառեցված-հեղուկացված գազերի փոխադրման համար շարժական ցիստեոնների օգտագործմանը վերաբերող ընդհանուր դրույթները
- 4.2.3.1. Սույն բաժնով նախատեսվում են սառեցված-հեղուկացված գազերի փոխադրման համար շարժական ցիստեոնների օգտագործմանը վերաբերող ընդհանուր դրույթները:
- 4.2.3.2. Շարժական ցիստեոնները պետք է համապատասխանեն նախագծմանը, պատրաստմանը, ստուգմանը եւ փորձարկումներին ներկայացվող՝ 6.7.4-ում նշված պահանջներին: Սառեցված-հեղուկացված գազերը պետք է փոխադրվեն 4.2.5.2.6-ում նկարագրված T75 շարժական ցիստեոններին առնչվող ցուցումներին համապատասխանող շարժական ցիստեոններում եւ 3.2 գլխի Ա աղյուսակի 11-րդ սյունակում նշված եւ 4.2.5.3-ում նկարագրված յուրաքանչյուր նյութի համար սահմանված՝ շարժական ցիստեոններին առնչվող ցանկացած հատուկ դրույթի համաձայն:
- 4.2.3.3. Փոխադրման ժամանակ շարժական ցիստեոնները պետք է բավարար չափով պաշտպանված լինեն լայնական ու երկայնական հարվածի եւ շուռ գալու հետեւանքով կորպուսի եւ օժանդակ սարքավորումների վնասվելուց: Եթե կորպուսը եւ օժանդակ սարքավորումները կառուցված են այնպես, որ կարող են դիմակայել հարվածին կամ շուռ գալուն, ապա կարելի է չապահովել նման պաշտպանություն: Նման պաշտպանության օրինակները բերված են 6.7.4.12.5-ում:
- 4.2.3.4. Եթե փոխադրվող գազի (գազերի) անվանումը նշված չէ 6.7.4.15.2-ում նկարագրված մետաղական ցուցանակի վրա, ապա 6.7.4.13.1-ում սահմանված սերտիֆիկատի պատճենը պետք է իրավասու մարմնի պահանջով լինի հասանելի եւ համապատասխան դեպքերում անհապաղ ներկայացվի բեռնառաքողի, բեռն ստացողի կամ փոխադրման գործակալի կողմից:
- 4.2.3.5. Չմաքրված եւ ոչ գազազերծված դատարկ շարժական ցիստեոնները պետք է համապատասխանեն նույն պահանջներին, ինչ նախորդ փոխադրվող նյութով լցավորված շարժական ցիստեոնները:
- 4.2.3.6. Լցավորումը
- 4.2.3.6.1. Նախքան լցավորումը պետք է անցկացնել շարժական ցիստեոնի ստուգում՝ համոզվելու համար, որ այն թույլատրված է տվյալ սառեցված-հեղուկացված գազի փոխադրման համար, եւ պետք է

ապահովել, որ շարժական ցիստեռնը չբեռնվի այնպիսի սառեցված-հեղուկացված գազերով, որոնք կորպուսի, խցանիչների, օժանդակ սարքավորումների եւ պաշտպանիչ ներդիրների նյութերի հետ շփվելիս, ամենայն հավանականությամբ, կարող են դրանց հետ մտնել վտանգավոր ռեակցիայի մեջ՝ առաջացնելով վտանգավոր արգասիքներ կամ զգալիորեն նվազեցնել այդ նյութերի ամրությունը: Լցավորման ժամանակ սառեցված-հեղուկացված գազի ջերմաստիճանը պետք է նախագծման ջերմաստիճանի միջակայքում լինի:

4.2.3.6.2. Լցավորման սկզբնական աստիճանը որոշելիս անհրաժեշտ է հաշվի առնել փոխադրման ենթադրյալ տեւողության համար անհրաժեշտ պահման ժամանակը, այդ թվում՝ ցանկացած հնարավոր ուշացում: Կորպուսի լցավորման սկզբնական աստիճանը, բացառությամբ 4.2.3.6.3-ով եւ 4.2.3.6.4-ով նախատեսվող դեպքերի, պետք է լինի այնպիսին, որ եթե պարունակության, բացառությամբ հելիումի, ջերմաստիճանը բարձրանա մինչեւ այնպիսի մակարդակի, որի դեպքում գոլորշու ճնշումը հավասար է առավելագույն թույլատրելի աշխատանքային ճնշմանը (ԱԹԱՃ), հեղուկի զբաղեցրած ծավալը չգերազանցի 98%-ը:

4.2.3.6.3. Հելիումի փոխադրման համար նախատեսվող կորպուսները կարող են լցավորվել մինչեւ ճնշումը նվազեցնող սարքի ներթող բացվածքի մակարդակը, սակայն դրանից ոչ բարձր:

4.2.3.6.4. Եթե փոխադրման ենթադրյալ տեւողությունը զգալիորեն ցածր է պահման ժամանակից, ապա իրավասու մարմնի հաստատմամբ թույլատրվում է լցավորման առավել բարձր սկզբնական աստիճան:

4.2.3.7. Պահման փաստացի ժամանակը

4.2.3.7.1. Պահման փաստացի ժամանակը հաշվարկվում է յուրաքանչյուր փոխադրման համար իրավասու մարմնի կողմից ճանաչված ընթացակարգի համաձայն՝ հաշվի առնելով հետեւյալ ցուցանիշները՝

ա) փոխադրման ենթակա սառեցված-հեղուկացված գազի համար պահման սահմանված ժամանակը (տե՛ս 6.7.4.2.8.1.-ը) (ըստ 6.7.4.15.1-ում նշված ցուցանակի վրա նշվածի).

բ) լցավորման փաստացի խտությունը.

գ) լցավորման փաստացի ճնշումը.

դ) ճնշման սահմանափակման սարքի (սարքերի) համար սահմանված առավել ցածր ճնշումները:

4.2.3.7.2. Պահման փաստացի ժամանակը պետք է նվազի հենց շարժական

ցիստեռնի վրա կամ դրան ամուր ամրացված մետաղական ցուցանակի վրա՝ 6.7.4.15.2-ի համաձայն:

- 4.2.3.8. Շարժական ցիստեռնները չպետք է ներկայացվեն փոխադրման՝
- ա) եթե առկա է չլցված տարածություն, որը կորպուսի ներսում հեղուկի շարժի հետեւանքով կարող է անթույլատրելի հիդրավլիկ ուժ առաջացնել.
  - բ) արտահոսքի առկայության դեպքում.
  - գ) եթե դրանք այն աստիճանի են վնասված, որ կարող է խախտվել ցիստեռնի կամ վերջինիս ամբարձիչ կամ ամրացման հարմարանքների ամբողջականությունը. եւ
  - դ) եթե օժանդակ սարքավորումները չեն զննվել, եւ դրանց աշխատանքային սարքին վիճակը չի հաստատվել.
  - ե) եթե փոխադրվող սառեցված-հեղուկացված գազի համար պահման փաստացի ժամանակը որոշված չէ 4.2.3.7-ի համաձայն, եւ փոխանցվող ցիստեռնը մակնշված չէ 6.7.4.15.2-ի համաձայն, եւ
  - զ) եթե փոխադրման տեւողությունը, հաշվի առնելով ցանկացած հնարավոր ուշացում, գերազանցում է պահման փաստացի ժամանակը:
- 4.2.3.9. Շարժական ցիստեռնների ճանկավոր ավտոբեռնիչի գրպանիկների համար նախատեսված որմնաբացվածքները պետք է փակ լինեն այն ժամանակ, երբ ցիստեռնը լցված է: Սույն դրույթը չի կիրառվում այն շարժական ցիստեռնների նկատմամբ, որոնք 6.7.4.12.4-ի համաձայն կարող են չապահովվել ճանկավոր ավտոբեռնիչի որմնաբացվածքների փակման միջոցներով:
- 4.2.4. ՄԱԿ-ի նշագրման՝ գազի բազմատարր կոնտեյներների (ԳՐՏԿ-ներ) օգտագործմանը վերաբերող ընդհանուր դրույթները
- 4.2.4.1. Սույն բաժնով նախատեսվում են 6.7.5-ում հիշատակված՝ չսառեցված գազերի փոխադրման համար գազի բազմատարր կոնտեյներների (ԳՐՏԿ-ների) օգտագործմանը վերաբերող ընդհանուր դրույթները:
- 4.2.4.2. ԳՐՏԿ-ները պետք է համապատասխանեն նախագծմանը, պատրաստմանը, ստուգումներին եւ փորձարկումներին ներկայացվող՝ 6.7.5-ում նկարագրված պահանջներին: ԳՐՏԿ-ների տարրերը պետք է ենթարկվեն պարբերական ստուգման՝ 4.1.4.1-ի P200 փաթեթավորման ցուցումներում ներկայացված դրույթների,

ինչպես նաև 6.2.1.6-ի դրույթների համաձայն:

- 4.2.4.3. Փոխադրման ընթացքում ԳՐՏԿ-ները պետք է պաշտպանված լինեն լայնական ու երկայնական հարվածի եւ շուռ գալու հետեւանքով տարրերի եւ օժանդակ սարքավորումների վնասվելուց: Եթե տարրերը եւ օժանդակ սարքավորումները կառուցված են այնպես, որ կարող են դիմակայել հարվածին կամ շուռ գալուն, ապա կարելի է չապահովել նման պաշտպանություն: Նման պաշտպանության օրինակները բերված են 6.7.5.10.4-ում:
- 4.2.4.4. ԳՐՏԿ-ների պարբերական փորձարկումներին եւ ստուգումներին վերաբերող պահանջները նշված են 6.7.5.12-ում: ԳՐՏԿ-ները կամ վերջիններիս տարրերը չպետք է բեռնվեն կամ լցավորվեն պարբերական ստուգման ժամանակահատվածն սկսելուց հետո, սակայն դրանք կարող են փոխադրվել այդ ժամկետը լրանալուց հետո:
- 4.2.4.5. Լցավորումը
  - 4.2.4.5.1. Նախքան լցավորումը պետք է անցկացնել ԳՐՏԿ-ի ստուգում՝ համոզվելու համար, որ այն թույլատրված է գազի փոխադրման համար, եւ ապահովվում է «ԱԴՌ» համաձայնագրի կիրառելի դրույթների համապատասխանությունը:
  - 4.2.4.5.2. ԳՐՏԿ-ների տարրերը պետք է լցավորվեն աշխատանքային ճնշումների, լցավորման գործակիցների համաձայն, ինչպես նաև յուրաքանչյուր տարրի մեջ լցավորված կոնկրետ գազի համար 4.1.4.1-ում P200 փաթեթավորման ցուցումներում սահմանված՝ լցավորմանը վերաբերող դրույթների համաձայն: ԳՐՏԿ-ները կամ տարրերի խմբերը ոչ մի դեպքում չպետք է լցավորվեն որպես մեկ կոմպլեկտ՝ գերազանցելով տվյալ ցանկացած տարրի համար նվազագույն աշխատանքային ճնշումը:
  - 4.2.4.5.3. ԳՐՏԿ-ները չպետք է լցավորվեն՝ գերազանցելով իրենց առավելագույն թույլատրելի համախառն քաշը:
  - 4.2.4.5.4. Լցավորումից հետո մեկուսիչ կափույրները պետք է փակվեն եւ փակ մնան փոխադրման ամբողջ ընթացքում: Թունավոր գազերը («T», «TF», «TC», «TO», «TFC» եւ «TOC» խմբերի գազերը) պետք է փոխադրվեն միայն այնպիսի ԳՐՏԿ-ներում, որոնց յուրաքանչյուր տարր սարքավորված է մեկուսիչ կափույրով:
  - 4.2.4.5.5. Լցավորման համար բացվածքը (բացվածքները) պետք է փակվի կափարիչներով կամ խցաններով: Փականների եւ սարքավորման անջրանցիկությունը պետք է ստուգվի լցավորումից հետո լցավորման համար պատասխանատու անձի կողմից:
  - 4.2.4.5.6. ԳՐՏԿ-ները չպետք է ներկայացվեն լցավորման՝

- ա) եթե դրանք այն աստիճանի են վնասված, որ կարող է խախտվել ճնշումային տարաների կամ վերջիններիս կառուցվածքային կամ օժանդակ սարքավորումների ամբողջականությունը.
- բ) եթե ճնշումային տարաները կամ վերջիններիս կառուցվածքային եւ օժանդակ սարքավորումները չեն գննվել, եւ դրանց աշխատանքային սարքին վիճակը չի հաստատվել. եւ
- գ) եթե սերտիֆիկացման, վերափորձարկումների եւ լցավորման մասով պահանջվող նշումներն ընթեռնելի չեն:

4.2.4.6. Բեռնված ԳՐՏԿ-ները չպետք է ներկայացվեն փոխադրման՝

- ա) արտահոսքի դեպքում.
- բ) եթե դրանք այն աստիճանի են վնասված, որ կարող է խախտվել ճնշումային տարաների կամ վերջիններիս կառուցվածքային կամ օժանդակ սարքավորումների ամբողջականությունը.
- գ) եթե ճնշումային տարաները կամ վերջիններիս կառուցվածքային եւ օժանդակ սարքավորումները չեն գննվել, եւ դրանց աշխատանքային սարքին վիճակը չի հաստատվել. եւ
- դ) եթե սերտիֆիկացման, վերափորձարկումների եւ լցավորման մասով պահանջվող նշումներն ընթեռնելի չեն:

4.2.4.7. Չմաքրված եւ ոչ գազագերծված դատարկ ԳՐՏԿ-ները պետք է համապատասխանեն նույն պահանջներին, ինչ նախորդ փոխադրվող նյութով լցավորված ԳՐՏԿ-ները:

4.2.5. Շարժական ցիստեռնների վերաբերյալ ցուցումները եւ հատուկ դրույթները

4.2.5.1. Ընդհանուր դրույթները

4.2.5.1.1. Սույն բաժինը ներառում է շարժական ցիստեռններով փոխադրման համար թույլատրված վտանգավոր բեռների նկատմամբ կիրառվող՝ շարժական ցիստեռնների մասով ցուցումներ եւ հատուկ դրույթներ: Շարժական ցիստեռնների մասով յուրաքանչյուր ցուցում ունի տառաթվային ծածկագիր (օրինակ՝ T1): 3.2 գլխի Ա աղյուսակի 10-րդ սյունակում նշված են շարժական ցիստեռնով փոխադրման համար թույլատրված յուրաքանչյուր նյութի դեպքում օգտագործվող՝ շարժական ցիստեռնների մասով ցուցումները: Եթե 10-րդ սյունակում յուրաքանչյուր կոնկրետ վտանգավոր բեռի համար նախատեսվող դիրքի դիմաց շարժական ցիստեռնների մասով ցուցումներ նշված չեն, ապա շարժական ցիստեռններում այդ նյութի փոխադրումը թույլատրվում է 6.7.1.3-ի համաձայն իրավասու մարմնի կողմից



հաստատման դեպքում: Շարժական ցիստեռնների մասով հատուկ դրույթները նշված են կոնկրետ վտանգավոր բեռների համար 3.2 գլխի Ա աղյուսակի 11-րդ սյունակում: Շարժական ցիստեռնների մասով ցանկացած հատուկ դրույթ ունի տառաթվային ծածկագիր (օրինակ՝ TP1): Շարժական ցիստեռնների մասով հատուկ դրույթների ցանկը ներկայացված է 4.2.5.3-ում:

*ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. ԳՔՏԿ-ներում փոխադրման թույլատրված գազերը 3.2 գլխի Ա աղյուսակի 10-րդ սյունակում նշված են «M» տառով:*

- 4.2.5.2. Շարժական ցիստեռնների մասով ցուցումները
- 4.2.5.2.1. Շարժական ցիստեռնների մասով ցուցումները կիրառվում են 1-9-րդ դասի վտանգավոր բեռների նկատմամբ: Շարժական ցիստեռնների մասով ցուցումներով նախատեսվում են կոնկրետ նյութերի նկատմամբ կիրառվող շարժական ցիստեռնների մասով դրույթներին վերաբերող կոնկրետ տեղեկություններ: Այդ դրույթները պետք է կատարվեն՝ ի լրումն 6.7 գլխում նշված ընդհանուր պահանջների եւ սույն գլխում նշված ընդհանուր դրույթների:
- 4.2.5.2.2. 1-ին եւ 3-9-րդ դասերի նյութերի համար շարժական ցիստեռնների մասով ցուցումներում նշվում են փորձարկման կիրառվող նվազագույն ճնշումը, կորպուսի նվազագույն հաստությունը (ստանդարտ պողպատ), հատակային բացվածքների մասով պահանջները եւ ճնշումը նվազեցնելու մասով պահանջները: Շարժական ցիստեռնների մասով T23 ցուցումներում շարժական ցիստեռններով փոխադրման թույլատրված 4.1 դասի ինքնառեակտիվ նյութերը եւ 5.2 օրգանական պերօքսիդները թվարկված են հսկիչ եւ վթարային կիրառելի ջերմաստիճանների հետ մեկտեղ:
- 4.2.5.2.3. Չսառեցված հեղուկացված գազերի համար սահմանված են շարժական ցիստեռնների մասով T50 ցուցումները: T50 ցուցումներում տրված են առավելագույն թույլատրելի աշխատանքային ճնշումները, հեղուկի մակարդակից ցածր տեղակայված բացվածքների մասով պահանջները, ճնշումը նվազեցնելու մասով պահանջները եւ շարժական ցիստեռններում փոխադրման համար թույլատրված չսառեցված-հեղուկացված գազերի համար լցավորման առավելագույն խտության մասով պահանջները:
- 4.2.5.2.4. Սառեցված-հեղուկացված գազերի համար սահմանված են շարժական ցիստեռնների մասով T75 ցուցումները:

4.2.5.2.5. Շարժական ցիստեռնների մասով համապատասխան ցուցումների սահմանումը

Եթե 3.2 գլխի Ա աղյուսակի 10-րդ սյունակում որեւէ վտանգավոր բեռի դիրքի համար նշված է շարժական ցիստեռնների մասով որեւէ կոնկրետ ցուցում, ապա կարող են օգտագործվել այլ շարժական ցիստեռններ, որոնք ունեն ավելի բարձր նվազագույն փորձարկման ճնշում, կորպուսի ավելի մեծ հաստություն, ինչպես նաեւ հատակային բացվածքների եւ ճնշումը նվազեցնող սարքերի մասով ավելի խիստ պահանջներ: Կիրառվում են հետեւյալ ուղեցույցներն այն համապատասխան շարժական ցիստեռնները որոշելու համար, որոնք կարող են օգտագործվել առանձին նյութերի փոխադրման համար՝

Շարժական ցիստեռնների մասով սահմանված ցուցումները	Շարժական ցիստեռնների մասով թույլատրված այլ ցուցումներ
T1	T2, T3, T4, T5, T6, T7, T8, T9, T10, T11, T12, T13, T14, T15, T16, T17, T18, T19, T20, T21, T22
T2	T4, T5, T7, T8, T9, T10, T11, T12, T13, T14, T15, T16, T17, T18, T19, T20, T21, T22
T3	T4, T5, T6, T7, T8, T9, T10, T11, T12, T13, T14, T15, T16, T17, T18, T19, T20, T21, T22
T4	T5, T7, T8, T9, T10, T11, T12, T13, T14, T15, T16, T17, T18, T19, T20, T21, T22
T5	T10, T14, T19, T20, T22
T6	T7, T8, T9, T10, T11, T12, T13, T14, T15, T16, T17, T18, T19, T20, T21, T22
T7	T8, T9, T10, T11, T12, T13, T14, T15, T16, T17, T18, T19, T20, T21, T22
T8	T9, T10, T13, T14, T19, T20, T21, T22
T9	T10, T13, T14, T19, T20, T21, T22
T10	T14, T19, T20, T22
T11	T12, T13, T14, T15, T16, T17, T18, T19, T20, T21, T22
T12	T14, T16, T18, T19, T20, T22
T13	T14, T19, T20, T21, T22
T14	T19, T20, T22
T15	T16, T17, T18, T19, T20, T21, T22
T16	T18, T19, T20, T22
T17	T18, T19, T20, T21, T22
T18	T19, T20, T22
T19	T20, T22
T20	T22
T21	T22
T22	Չկա
T23	Չկա

4.2.5.2.6. Շարժական ցիստեռնների մասով ցուցումները

Շարժական ցիստեռնների մասով ցուցումներում նշված են կոնկրետ նյութերի փոխադրման համար օգտագործվող շարժական

ցիստեոնների նկատմամբ կիրառվող պահանջները: T1-T22 շարժական ցիստեոնների մասով ցուցումներում նշված են կիրառվող նվազագույն փորձարկման ճնշումը, կորպուսի նվազագույն հաստությունը (ստանդարտ պողպատի մմ-ով) և ճնշումը նվազեցնող սարքերի և հատակային բացվածքների մասով պահանջները:

T1 - T22		ՇԱՐՃԱԿԱՆ ՑԻՍՏԵՈՆՆԵՐԻ ՄԱՍՈՎ ՑՈՒՑՈՒՄՆԵՐԸ			T1 - T22
Շարժական ցիստեոնների մասով սույն ցուցումները կիրառվում են 1-ին և 3-9-րդ դասերի հեղուկ և պինդ նյութերի նկատմամբ: Պետք է բավարարվեն 4.2.1-ի ընդհանուր դրույթները և 6.7.2-ի պահանջները:					
Շարժական ցիստեոնների մասով ցուցումները	Նվազագույն փորձարկման ճնշումը (բար)	Կորպուսի նվազագույն հաստությունը (ստանդարտ պողպատի մմ-ով) (տե՛ս 6.7.2.4-ը)	Ճնշումը նվազեցնելու մասով պահանջները <sup>ա</sup> (տե՛ս 6.7.2.8-ը)	Հատակային բացվածքների մասով պահանջները <sup>բ</sup> (տե՛ս 6.7.2.6-ը)	
T1	1.5	Տե՛ս 6.7.2.4.2-ը	Սովորական	Տե՛ս 6.7.2.6.2-ը	
T2	1.5	Տե՛ս 6.7.2.4.2-ը	Սովորական	Տե՛ս 6.7.2.6.3-ը	
T3	2.65	Տե՛ս 6.7.2.4.2-ը	Սովորական	Տե՛ս 6.7.2.6.2-ը	
T4	2.65	Տե՛ս 6.7.2.4.2-ը	Սովորական	Տե՛ս 6.7.2.6.3-ը	
T5	2.65	Տե՛ս 6.7.2.4.2-ը	Տե՛ս 6.7.2.8.3-ը	Չթույլատրված	
T6	4	Տե՛ս 6.7.2.4.2-ը	Սովորական	Տե՛ս 6.7.2.6.2-ը	
T7	4	Տե՛ս 6.7.2.4.2-ը	Սովորական	Տե՛ս 6.7.2.6.3-ը	
T8	4	Տե՛ս 6.7.2.4.2-ը	Սովորական	Չթույլատրված	
T9	4	6 մմ	Սովորական	Չթույլատրված	
T10	4	6 մմ	Տե՛ս 6.7.2.8.3-ը	Չթույլատրված	
T11	6	Տե՛ս 6.7.2.4.2-ը	Սովորական	Տե՛ս 6.7.2.6.3-ը	
T12	6	Տե՛ս 6.7.2.4.2-ը	Տե՛ս 6.7.2.8.3-ը	Տե՛ս 6.7.2.6.3-ը	
T13	6	6 մմ	Սովորական	Չթույլատրված	
T14	6	6 մմ	Տե՛ս 6.7.2.8.3-ը	Չթույլատրված	
T15	10	Տե՛ս 6.7.2.4.2-ը	Սովորական	Տե՛ս 6.7.2.6.3-ը	
T16	10	Տե՛ս 6.7.2.4.2-ը	Տե՛ս 6.7.2.8.3-ը	Տե՛ս 6.7.2.6.3-ը	
T17	10	6 մմ	Սովորական	Տե՛ս 6.7.2.6.3-ը	
T18	10	6 մմ	Տե՛ս 6.7.2.8.3-ը	Տե՛ս 6.7.2.6.3-ը	
T19	10	6 մմ	Տե՛ս 6.7.2.8.3-ը	Չթույլատրված	
T20	10	8 մմ	Տե՛ս 6.7.2.8.3-ը	Չթույլատրված	
T21	10	10 մմ	Սովորական	Չթույլատրված	
T22	10	10 մմ	Տե՛ս 6.7.2.8.3-ը	Չթույլատրված	

<sup>ա</sup> Այն դեպքերում, երբ նշված է «Սովորական» բառը, կիրառվում են 6.7.2.8-ի բոլոր պահանջները՝ բացառությամբ 6.7.2.8.3-ի:

<sup>բ</sup> Այն դեպքերում, երբ այս սյունակում նշված է «Չթույլատրված» բառը, հատակային բացվածքների առկայությունը չի թույլատրվում, եթե փոխադրման ենթակա նյութը հեղուկ է (տե՛ս 6.7.2.6.1-ը): Եթե փոխադրման ենթակա նյութը փոխադրման սովորական պայմաններում առաջացող բոլոր ջերմաստիճաններում պինդ նյութ է, 6.7.2.6.2-ի պահանջներին համապատասխանող հատակային բացվածքները թույլատրվում են:

T23 ՇԱՐԺԱԿԱՆ ՑԻՍՏԵՌՆՆԵՐԻ ՄԱՍՈՎ ՑՈՒՑՈՒՄՆԵՐԸ		T23						
Շարժական ցիստեռնների մասով սույն ցուցումները կիրառվում են 4.1 դասի ինքնառեակտիվ նյութերի եւ 5.2 դասի օրգանական պերօքսիդների նկատմամբ: Պետք է բավարարվեն 4.2.1-ի դրույթները եւ 6.7.2-ի պահանջները: Պետք է բավարարվեն նաեւ 4.2.1.13-ում նշված 5.2 դասի օրգանական պերօքսիդներին եւ 4.1 դասի ինքնառեակտիվ նյութերին առնչվող լրացուցիչ դրույթները:								
ՄԱԿ-ի նշագրման համարը	Նյութը	Նվազագույն փորձարկման ճնշումը (բար)	Կորպուսի նվազագույն հաստությունը (ստանդարտ պողպատի մմ-ով)	Հատակային բացվածքների մասով պահանջները	Ճնշումը նվազեցնելու մասով պահանջները	Լցավորման աստիճանը	Հսկիչ ջերմաստիճանը	Վթարային ջերմաստիճանը
3109	ՕՐԳԱՆԱԿԱՆ ՊԵՐՕՔՍԻԴ, «F» ՏԵՍԱԿԻ, ՀԵՂՈՒԿ  տերտ-Բութիլ հիդրոպերօքսիդ, 72%-ից ոչ ավելի, ջրով  Կումիլ հիդրոպերօքսիդ, 90%-ից ոչ ավելի, «Ա» տեսակի նոսրացուցիչում  Դի-տերտ-բութիլի պերօքսիդ, 32%-ից ոչ ավելի, Ա տեսակի նոսրացուցիչում  Իզոպրոպիլ կումիլ հիդրոպերօքսիդ, 72%-ից ոչ ավելի, «Ա» տեսակի նոսրացուցիչում  պ-մենթիլ հիդրոպերօքսիդ, 72%-ից ոչ ավելի, «Ա» տեսակի նոսրացուցիչում  Պինանիլ հիդրոպերօքսիդ, 56%-ից ոչ ավելի, «Ա» տեսակի նոսրացուցիչում	4	Տե՛ս 6.7.2.4.2-ը	Տե՛ս 6.7.2.6.3-ը	Տե՛ս 6.7.2.8.2-ը 4.2.1.13.6-ը 4.2.1.13.7-ը 4.2.1.13.8-ը	Տե՛ս 4.2.1.13.13-ը		
3110	ՕՐԳԱՆԱԿԱՆ ՊԵՐՕՔՍԻԴ, F ՏԵՍԱԿԻ, ՊԻՆԻԼ,  Դիկումիլ պերօքսիդ <sup>բ</sup>	4	Տե՛ս 6.7.2.4.2-ը	Տե՛ս 6.7.2.6.3-ը	Տե՛ս 6.7.2.8.2-ը 4.2.1.13.6-ը 4.2.1.13.7-ը 4.2.1.13.8-ը	Տե՛ս 4.2.1.13.13-ը		
3119	ՕՐԳԱՆԱԿԱՆ ՊԵՐՕՔՍԻԴ, «F» ՏԵՍԱԿԻ, ՀԵՂՈՒԿ, ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆՈՎ  Տերտ-Ամիլ-պերօքսիներոդեկանատ, 47%-ից ոչ ավելի, «A» տեսակի	4	Տե՛ս 6.7.2.4.2-ը	Տե՛ս 6.7.2.6.3-ը	Տե՛ս 6.7.2.8.2-ը 4.2.1.13.6-ը 4.2.1.13.7-ը 4.2.1.13.8-ը	Տե՛ս 4.2.1.13.13-ը	<sup>գ</sup>	<sup>գ</sup>
							-10 °C	-5 °C

<sup>ա</sup> Պայմանով, որ միջոցներ են ձեռնարկվել ապահովելու համար 65% տերտ-Բութիլի հիդրոպերօքսիդի եւ 35% ջրի անվտանգության մակարդակին հավասար անվտանգության մակարդակ:

<sup>բ</sup> Առավելագույն քանակությունը մեկ շարժական ցիստեռնի հաշվով՝ 2000 կգ:

<sup>գ</sup> Ըստ իրավասու մարմնի հաստատման:

T23 ՇԱՐԺԱԿԱՆ ՑԻՍՏԵՌՆՆԵՐԻ ՄԱՍՈՎ ՑՈՒՑՈՒՄՆԵՐԸ		T23						
<p>Շարժական ցիստեռնների մասով սույն ցուցումները կիրառվում են 4.1 դասի ինքնառեակտիվ նյութերի եւ 5.2 դասի օրգանական պերօքսիդների նկատմամբ: Պետք է բավարարվեն 4.2.1-ի դրույթները եւ 6.7.2-ի պահանջները: Պետք է բավարարվեն նաեւ 4.2.1.13-ում նշված 5.2 դասի օրգանական պերօքսիդներին եւ 4.1 դասի ինքնառեակտիվ նյութերին առնչվող լրացուցիչ դրույթները:</p>								
ՄԱԿ-ի նշագրման համարը	Նյութը	Նվազագույն փորձարկման ճնշումը (բար)	Կորպուսի նվազագույն հաստությունը (ստանդարտ պողպատի մմ-ով)	Հատակային բացվածքների մասով պահանջները	Ճնշումը նվազեցնելու մասով պահանջները	Լցավորման աստիճանը	Հսկիչ ջերմաստիճանը	Վթարային ջերմաստիճանը
	Նոսրացուցիչում							
	Տերո-Բութիլպերօքսիացետատ, 32%-ից ոչ ավելի, «B» տեսակի նոսրացուցիչում						+30 °C	+35 °C
	Տերո-Բութիլպերօքսի-2-էթիլհեքսանոատ, 32%-ից ոչ ավելի, B» տեսակի նոսրացուցիչում						+15 °C	+20°C

T23 ՇԱՐԺԱԿԱՆ ՑԻՍՏԵՌՆԵՐԻ ՄԱՍՈՎ ՑՈՒՑՈՒՄՆԵՐԸ (շարունակություն)							T23	
Շարժական ցիստերնների մասով սույն ցուցումները կիրառվում են 4.1 դասի ինքնառեակտիվ նյութերի եւ 5.2 դասի օրգանական պերօքսիդների նկատմամբ: Պետք է բավարարվեն 4.2.1-ի դրույթները եւ 6.7.2-ի պահանջները: Պետք է բավարարվեն նաեւ 4.2.1.13-ում նշված 5.2 դասի օրգանական պերօքսիդներին եւ 4.1 դասի ինքնառեակտիվ նյութերին առնչվող լրացուցիչ դրույթները:								
ՄԱԿ-ի նշագրման համարը	Նյութը	Նվազագույն փորձարկման ճնշումը (բար)	Կորպուսի նվազագույն հաստությունը (ստանդարտ պողպատի մմ-ով)	Հատակային բացվածքների մասով պահանջները	Ճնշումը նվազեցնելու մասով պահանջները	Լցավորման աստիճանը	Հսկիչ ջերմաստիճանը	Վթարային ջերմաստիճանը
3119 (շարունակություն)	տերտ-Բութիլ						+5 °C	+10 °C
	պերօքսիպիվատ, 27%-ից ոչ ավելի, «B» տեսակի նոսրացուցիչում						+35 °C	+40 °C
	տերտ-Բութիլպերօքսի- 3,5,5-տրիմեթիլհեքսանոատ, 32%-ից ոչ ավելի, «B» տեսակի նոսրացուցիչում						0 °C	+5 °C
	Դի-(3,5,5-տրիմեթիլհեքսանոիլ) պերօքսիդ, 38%-ից ոչ ավելի, «A» կամ «B» տեսակի ջրիկացուցիչում						+30 °C	+35 °C
	Պերօքսիքացախաթթու, թորած, «F» տեսակի, կայունացված <sup>†</sup>							
3120	ՕՐԳԱՆԱԿԱՆ ՊԵՐՕՔՍԻԴ, «F» ՏԵՍԱԿԻ, ՊԻՆԴ, ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆՈՎ	4	Տե՛ս 6.7.2.4.2-ը	Տե՛ս 6.7.2.6.3-ը	Տե՛ս 6.7.2.8.2-ը 4.2.1.13.6-ը 4.2.1.13.7-ը 4.2.1.13.8-ը	Տե՛ս 4.2.1.13.13-ը	⁹	⁹
3229	ԻՆՔՆԱՌԵԱԿՏԻՎ ՀԵՂՈՒԿ՝ «F» ՏԵՍԱԿԻ	4	Տե՛ս 6.7.2.4.2-ը	Տե՛ս 6.7.2.6.3-ը	Տե՛ս 6.7.2.8.2-ը 4.2.1.13.6-ը 4.2.1.13.7-ը 4.2.1.13.8-ը	Տե՛ս 4.2.1.13.13-ը		
3230	ԻՆՔՆԱՌԵԱԿՏԻՎ ՆՅՈՒԹ՝ «F» ՏԵՍԱԿԻ	4	Տե՛ս 6.7.2.4.2-ը	Տե՛ս 6.7.2.6.3-ը	Տե՛ս 6.7.2.8.2-ը 4.2.1.13.6-ը 4.2.1.13.7-ը 4.2.1.13.8-ը	Տե՛ս 4.2.1.13.13-ը		
3239	ԻՆՔՆԱՌԵԱԿՏԻՎ ՀԵՂՈՒԿ՝ «F» ՏԵՍԱԿԻ, ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆՈՎ	4	Տե՛ս 6.7.2.4.2-ը	Տե՛ս 6.7.2.6.3-ը	Տե՛ս 6.7.2.8.2-ը 4.2.1.13.6-ը 4.2.1.13.7-ը 4.2.1.13.8-ը	Տե՛ս 4.2.1.13.13-ը	⁹	⁹

† 41%-ից ոչ ավելի կոնցենտրացիայով պերօքսիքացախաթթվից առաջացած՝ ջրով պերօքսիքացախաթթվի թորման արդյունքում սրացվող բաղադրություն, ազատ թթվածնի ընդհանուր պարունակությունը (պերօքսիքացախաթթու+H2O2) <9.5%, որը բավարարում է «Փորձարկումների եւ չափորոշիչների ձեռնարկ»-ի 20.4.3 (գ) կետի չափորոշիչները: Պահանջվում է «ԿՈՌՈՋԻՈՆ» լրացուցիչ դիսկի պիտակ (մոդել թիվ 8, տե՛ս 5.2.2.2.2-ը):

T23 ՇԱՐԺԱԿԱՆ ՑԻՍՏԵՌՆՆԵՐԻ ՄԱՍՈՎ ՑՈՒՑՈՒՄՆԵՐԸ (շարունակություն)						T23		
Շարժական ցիստեռների մասով սույն ցուցումները կիրառվում են 4.1 դասի ինքնատեակտիվ նյութերի եւ 5.2 դասի օրգանական պերօքսիդների նկատմամբ: Պետք է բավարարվեն 4.2.1-ի դրույթները եւ 6.7.2-ի պահանջները: Պետք է բավարարվեն նաեւ 4.2.1.13-ում նշված 5.2 դասի օրգանական պերօքսիդներին եւ 4.1 դասի ինքնատեակտիվ նյութերին առնչվող լրացուցիչ դրույթները:								
ՄԱԿ-ի նշագրման համարը	Նյութը	Նվազագույն փորձարկման ճնշումը (բար)	Կորպուսի նվազագույն հաստությունը (ստանդարտ պողպատի մմ-ով)	Հատակային բացվածքների մասով պահանջները	Ճնշումը նվազեցնելու մասով պահանջները	Լցավորման աստիճանը	Հսկիչ ջերմաստիճանը	Վթարային ջերմաստիճանը
3240	ԻՆՔՆԱՌԵԱԿՏԻՎ ՊԻՆԴ ՆՅՈՒԹ՝ «F» ՏԵՍԱԿԻ, ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆՈՎ	4	Տե՛ս 6.7.2.4.2-ը	Տե՛ս 6.7.2.6.3-ը	Տե՛ս 6.7.2.8.2-ը 4.2.1.13.6-ը 4.2.1.13.7-ը 4.2.1.13.8-ը	Տե՛ս 4.2.1.13.13-ը	q	q

T50 ՇԱՐԺԱԿԱՆ ՑԻՍՏԵՌՆՆԵՐԻ ՄԱՍՈՎ ՑՈՒՑՈՒՄՆԵՐԸ						T50		
Շարժական ցիստեռների մասով սույն ցուցումները կիրառվում են ճնշման տակ գտնվող՝ չսառեցված-հեղուկացված գազերի եւ քիմիական նյութերի նկատմամբ (ՄԱԿ-ի նշագրման 3500, 3501, 3502, 3503, 3504 եւ 3505 համարներ): Պետք է կատարվեն 4.2.2 բաժնի ընդհանուր դրույթները եւ 6.7.3 բաժնի պահանջները:								
ՄԱԿ-ի նշագրման համար	Չսառեցված-հեղուկացված գազեր	Առավելագույն թույլատրելի աշխատանքային ճնշում (բար). համապատասխանաբար՝ փոքր, առանց ջերմամեկուսացման, արեապաշտպան էկրանով, իզոթերմիկ <sup>ա</sup>	Հեղուկի մակարդակից ցածր տեղակայված բացվածքներ	Ճնշումը նվազեցնելու մասով պահանջներ <sup>բ</sup> (տե՛ս 6.7.3.7-ը)	Լցավորման առավելագույն գործակից			
1005	Անջուր ամոնիակ	29.0 25.7 22.0 19.7	Թույլատրված	Տե՛ս 6.7.3.7.3-ը	0.53			
1009	Բրոմտրիֆտորմեթան (սառեցնող գազ R 13B1)	38.0 34.0 30.0 27.5	Թույլատրված	Սովորական	1.13			
1010	Բութադիեններ, կայունացված	7.5	Թույլատրված	Սովորական	0.55			

<sup>ա</sup> «Փոքր» նշանակում է ցիստեռներ, որոնց կորպուսի տրամագիծը 1.5 մ է կամ դրանից պակաս. «առանց ջերմամեկուսացման» նշանակում է ցիստեռներ, որոնց կորպուսի տրամագիծը գերազանցում է 1,5 մ-ը, առանց ջերմամեկուսացման կամ արեապաշտպան էկրանի (տե՛ս 6.7.3.2.12-ը). «արեապաշտպան էկրանով» նշանակում է ցիստեռներ, որոնց կորպուսի տրամագիծը գերազանցում է 1.5 մ-ը, արեապաշտպան էկրանով (տե՛ս 6.7.3.2.12-ը). «իզոթերմիկ» նշանակում է ցիստեռներ, որոնց կորպուսի տրամագիծը գերազանցում է 1.5 մ-ը, ջերմամեկուսացմամբ (տե՛ս 6.7.3.2.12-ը) («Հաշվարկային ելակետային ջերմաստիճանի» սահմանումը տե՛ս 6.7.3.1-ում):

<sup>բ</sup> Ճնշումը նվազեցնելու մասով պահանջների սյունակում «Սովորական» բառը նշում է այն, որ 6.7.3.7.3 կետում նկարագրված պարզվող թաղանթը չի պահանջվում:

T50		ՇԱՐԺԱԿԱՆ ՑԻՍՏԵՌՆՆԵՐԻ ՄԱՍՈՎ ՑՈՒՑՈՒՄՆԵՐԸ				T50
Շարժական ցիստեռների մասով սույն ցուցումները կիրառվում են ճնշման տակ գտնվող՝ չսառեցված-հեղուկացված գազերի եւ քիմիական նյութերի նկատմամբ (ՄԱԿ-ի նշագրման 3500, 3501, 3502, 3503, 3504 եւ 3505 համարներ): Պետք է կատարվեն 4.2.2 բաժնի ընդհանուր դրույթները եւ 6.7.3 բաժնի պահանջները:						
ՄԱԿ-ի նշագրման համար	Չսառեցված-հեղուկացված գազեր	Առավելագույն թույլատրելի աշխատանքային ճնշում (բար). համապատասխանաբար՝ փոքր, առանց ջերմամեկուսացման, արեապաշտպան էկրանով, իզոթերմիկ <sup>ա</sup>	Հեղուկի մակարդակից ցածր տեղակայված բացվածքներ	Ճնշումը նվազեցնելու մասով պահանջներ <sup>բ</sup> (տե՛ս 6.7.3.7-ը)	Լցավորման առավելագույն գործակից	
		7.0 7.0 7.0				
1010	Բութադիենների եւ ածխաջրածնի խառնուրդ, կայունացված	Տե՛ս ԱԹԱՃ-ի սահմանումը 6.7.3.1-ում	Թույլատրված	Սովորական	Տե՛ս 4.2.2.7-ը	
1011	Բութան	7.0 7.0 7.0 7.0	Թույլատրված	Սովորական	0.51	
1012	Բութիլեն	8.0 7.0 7.0 7.0	Թույլատրված	Սովորական	0.53	
1017	Քլոր	19.0 17.0 15.0 13.5	Չթույլատրված	Տե՛ս 6.7.3.7.3-ը	1.25	
1018	Քլորդիֆտորմեթան (սառեցնող գազ R 22)	26.0 24.0 21.0 19.0	Թույլատրված	Սովորական	1.03	



T50 ՇԱՐԺԱԿԱՆ ՑԻՍՏԵՌՆՆԵՐԻ ՄԱՍՈՎ ՑՈՒՑՈՒՄՆԵՐԸ (շարունակություն)		T50			
Շարժական ցիստեռների մասով սույն ցուցումները կիրառվում են ճնշման տակ գտնվող՝ չսառեցված-հեղուկացված գազերի եւ քիմիական նյութերի նկատմամբ (ՄԱԿ-ի նշագրման 3500, 3501, 3502, 3503, 3504 եւ 3505 համարներ): Պետք է կատարվեն 4.2.2 բաժնի ընդհանուր դրույթները եւ 6.7.3 բաժնի պահանջները:					
ՄԱԿ-ի նշագրման համար	Չսառեցված-հեղուկացված գազեր	Առավելագույն թույլատրելի աշխատանքային ճնշում (բար). համապատասխանաբար՝ փոքր, առանց ջերմամեկուսացման, արեապաշտպան էկրանով, իզոթերմիկ <sup>ա</sup>	Հեղուկի մակարդակից ցածր տեղակայված բացվածքներ	Ճնշումը նվազեցնելու մասով պահանջներ <sup>բ</sup> (տե՛ս 6.7.3.7-ը)	Լցավորման առավելագույն գործակից
1020	Քլորպենտաֆտորէթան (սառեցնող գազ R 115)	23.0 20.0 18.0 16.0	Թույլատրված	Սովորական	1.06
1021	1-Քլոր-1,2,2,2-տետրաֆտորէթան (սառեցնող գազ R 124)	10.3 9.8 7.9 7.0	Թույլատրված	Սովորական	1.20
1027	Ցիկլոպրոպան	18.0 16.0 14.5 13.0	Թույլատրված	Սովորական	0.53
1028	Դիքլորդիֆտորմեթան (սառեցնող գազ R 12)	16.0 15.0 13.0 11.5	Թույլատրված	Սովորական	1.15
1029	Դիքլորֆտորմեթան (սառեցնող գազ R 21)	7.0 7.0 7.0 7.0	Թույլատրված	Սովորական	1.23
1030	1,1-Դիֆտորէթան (սառեցնող գազ R 152a)	16.0 14.0 12.4	Թույլատրված	Սովորական	0.79

<sup>ա</sup> «Փոքր» նշանակում է ցիստեռներ, որոնց կորպուսի տրամագիծը 1.5 մ է կամ դրանից պակաս. «առանց ջերմամեկուսացման» նշանակում է ցիստեռներ, որոնց կորպուսի տրամագիծը գերազանցում է 1,5 մ-ը, առանց ջերմամեկուսացման կամ արեապաշտպան էկրանի (տե՛ս 6.7.3.2.12-ը). «արեապաշտպան էկրանով» նշանակում է ցիստեռներ, որոնց կորպուսի տրամագիծը գերազանցում է 1.5 մ-ը, արեապաշտպան էկրանով (տե՛ս 6.7.3.2.12-ը). «իզոթերմիկ» նշանակում է ցիստեռներ, որոնց կորպուսի տրամագիծը գերազանցում է 1,5 մ-ը, ջերմամեկուսացմամբ (տե՛ս 6.7.3.2.12-ը) («Հաշվարկային ելակետային ջերմաստիճանի» սահմանումը տե՛ս 6.7.3.1-ում):

<sup>բ</sup> Ճնշումը նվազեցնելու մասով պահանջների սյունակում «Սովորական» բառը նշում է այն, որ 6.7.3.7.3 կետում նկարագրված պատրվող թաղանթը չի պահանջվում:

T50 ՇԱՐԺԱԿԱՆ ՑԻՍՏԵՌՆՆԵՐԻ ՄԱՍՈՎ ՑՈՒՑՈՒՄՆԵՐԸ (շարունակություն)		T50			
Շարժական ցիստեռների մասով սույն ցուցումները կիրառվում են ճնշման տակ գտնվող՝ չսառեցված-հեղուկացված գազերի եւ քիմիական նյութերի նկատմամբ (ՄԱԿ-ի նշագրման 3500, 3501, 3502, 3503, 3504 եւ 3505 համարներ): Պետք է կատարվեն 4.2.2 բաժնի ընդհանուր դրույթները եւ 6.7.3 բաժնի պահանջները:					
ՄԱԿ-ի նշագրման համար	Չսառեցված-հեղուկացված գազեր	Առավելագույն թույլատրելի աշխատանքային ճնշում (բար). համապատասխանաբար՝ փոքր, առանց ջերմամեկուսացման, արեւապաշտպան էկրանով, իզոթերմիկ <sup>ա</sup>	Հեղուկի մակարդակից ցածր տեղակայված բացվածքներ	Ճնշումը նվազեցնելու մասով պահանջներ <sup>բ</sup> (տե՛ս 6.7.3.7-ը)	Լցավորման առավելագույն գործակից
		11.0			
1032	Դիմեթիլամին, անջուր	7.0 7.0 7.0 7.0	Թույլատրված	Սովորական	0.59
1033	Դիմեթիլային եթեր	15.5 13.8 12.0 10.6	Թույլատրված	Սովորական	0.58

T50 ՇԱՐԺԱԿԱՆ ՑԻՍՏԵՌՆՆԵՐԻ ՄԱՍՈՎ ՑՈՒՑՈՒՄՆԵՐԸ (շարունակություն)		T50			
Շարժական ցիստեռների մասով սույն ցուցումները կիրառվում են ճնշման տակ գտնվող՝ չսառեցված-հեղուկացված գազերի եւ քիմիական նյութերի նկատմամբ (ՄԱԿ-ի նշագրման 3500, 3501, 3502, 3503, 3504 եւ 3505 համարներ): Պետք է կատարվեն 4.2.2 բաժնի ընդհանուր դրույթները եւ 6.7.3 բաժնի պահանջները:					
ՄԱԿ-ի նշագրման համար	Չսառեցված-հեղուկացված գազեր	Առավելագույն թույլատրելի աշխատանքային ճնշում (բար). համապատասխանաբար՝ փոքր, առանց ջերմամեկուսացման, արեւապաշտպան էկրանով, իզոթերմիկ <sup>ա</sup>	Հեղուկի մակարդակից ցածր տեղակայված բացվածքներ	Ճնշումը նվազեցնելու մասով պահանջներ <sup>բ</sup> (տե՛ս 6.7.3.7-ը)	Լցավորման առավելագույն գործակից
1036	Էթիլամին	7.0 7.0 7.0 7.0	Թույլատրված	Սովորական	0.61

<sup>ա</sup> «Փոքր» նշանակում է ցիստեռներ, որոնց կորպուսի տրամագիծը 1.5 մ է կամ դրանից պակաս. «առանց ջերմամեկուսացման» նշանակում է ցիստեռներ, որոնց կորպուսի տրամագիծը գերազանցում է 1,5 մ-ը, առանց ջերմամեկուսացման կամ արեւապաշտպան էկրանի (տե՛ս 6.7.3.2.12-ը). «արեւապաշտպան էկրանով» նշանակում է ցիստեռներ, որոնց կորպուսի տրամագիծը գերազանցում է 1.5 մ-ը, արեւապաշտպան էկրանով (տե՛ս 6.7.3.2.12-ը). «իզոթերմիկ» նշանակում է ցիստեռներ, որոնց կորպուսի տրամագիծը գերազանցում է 1,5 մ-ը, ջերմամեկուսացմամբ (տե՛ս 6.7.3.2.12-ը) («Հաշվարկային ելակետային ջերմաստիճանի» սահմանումը տե՛ս 6.7.3.1-ում):

<sup>բ</sup> Ճնշումը նվազեցնելու մասով պահանջների սյունակում «Սովորական» բառը նշում է այն, որ 6.7.3.7.3 կետում նկարագրված պատրվող թաղանթը չի պահանջվում:

T50 ՇԱՐԺԱԿԱՆ ՑԻՍՏԵՌՆՆԵՐԻ ՄԱՍՈՎ ՑՈՒՑՈՒՄՆԵՐԸ (շարունակություն)		T50			
Շարժական ցիստերնների մասով սույն ցուցումները կիրառվում են ճնշման տակ գտնվող՝ չսառեցված-հեղուկացված գազերի եւ քիմիական նյութերի նկատմամբ (ՄԱԿ-ի նշագրման 3500, 3501, 3502, 3503, 3504 եւ 3505 համարներ): Պետք է կատարվեն 4.2.2 բաժնի ընդհանուր դրույթները եւ 6.7.3 բաժնի պահանջները:					
ՄԱԿ-ի նշագրման համար	Չսառեցված-հեղուկացված գազեր	Առավելագույն թույլատրելի աշխատանքային ճնշում (բար).  համապատասխանաբար՝ փոքր, առանց ջերմամեկուսացման, արեապաշտպան էկրանով, իզոթերմիկ <sup>ա</sup>	Հեղուկի մակարդակից ցածր տեղակայված բացվածքներ	Ճնշումը նվազեցնելու մասով պահանջներ <sup>բ</sup> (տե՛ս 6.7.3.7-ը)	Լցավորման առավելագույն գործակից
1037	Էթիլբորիդ	7.0 7.0 7.0 7.0	Թույլատրված	Սովորական	0.80
1040	Ազոտով էթիլենի օքսիդ մինչեւ 1ՄՊա (10 բար) ընդհանուր ճնշմամբ՝ 50 °C ջերմաստիճանում	- - - 10.0	Չթույլատրված	Տե՛ս 6.7.3.7.3-ը	0.78
1041	Էթիլենի օքսիդի եւ ածխածնի դիօքսիդի խառնուրդ, 9%-ից ավելի, սակայն 87%-ից ոչ ավելի էթիլենի օքսիդ պարունակող	Տե՛ս ԱԹԱԾ-ի սահմանումը 6.7.3.1-ում	Թույլատրված	Սովորական	Տե՛ս 4.2.2.7-ը
1055	Իզոբութիլեն	8.1 7.0 7.0 7.0	Թույլատրված	Սովորական	0.52
1060	Մեթիլացետիլենի եւ պրոպադիենի խառնուրդ, կայունացված	28.0 24.5 22.0 20.0	Թույլատրված	Սովորական	0.43
1061	Մեթիլամին, անջուր	10.8 9.6 7.8 7.0	Թույլատրված	Սովորական	0.58
1062	Մեթիլբրոմիդ, 2%-ից ոչ ավելին քլորափրկին պարունակող	7.0 7.0 7.0 7.0	Չթույլատրված	Տե՛ս 6.7.3.7.3-ը	1.51

T50 ՇԱՐԺԱԿԱՆ ՑԻՍՏԵՌՆՆԵՐԻ ՄԱՍՈՎ ՑՈՒՑՈՒՄՆԵՐԸ (շարունակություն)		T50			
Շարժական ցիստեռների մասով սույն ցուցումները կիրառվում են ճնշման տակ գտնվող՝ չսառեցված-հեղուկացված գազերի եւ քիմիական նյութերի նկատմամբ (ՄԱԿ-ի նշագրման 3500, 3501, 3502, 3503, 3504 եւ 3505 համարներ): Պետք է կատարվեն 4.2.2 բաժնի ընդհանուր դրույթները եւ 6.7.3 բաժնի պահանջները:					
ՄԱԿ-ի նշագրման համար	Չսառեցված-հեղուկացված գազեր	Առավելագույն թույլատրելի աշխատանքային ճնշում (բար). համապատասխանաբար՝ փոքր, առանց ջերմամեկուսացման, արեապաշտպան էկրանով, իզոթերմիկ <sup>ա</sup>	Հեղուկի մակարդակից ցածր տեղակայված բացվածքներ	Ճնշումը նվազեցնելու մասով պահանջներ <sup>բ</sup> (տե՛ս 6.7.3.7-ը)	Լցավորման առավելագույն գործակից
1063	Մեթիլբլորիդ (սառեցնող գազ R 40)	14.5 12.7 11.3 10.0	Թույլատրված	Սովորական	0.81
1064	Մեթիլմերկապտան	7.0 7.0 7.0 7.0	Չթույլատրված	Տե՛ս 6.7.3.7.3-ը	0.78
1067	Դիագրոսի տետրոքսիդ	7.0 7.0 7.0 7.0	Չթույլատրված	Տե՛ս 6.7.3.7.3-ը	1.30
1075	Նավթային գազեր, հեղուկացված	Տե՛ս ԱԹԱՃ-ի սահմանումը 6.7.3.1-ում	Թույլատրված	Սովորական	Տե՛ս 4.2.2.7-ը
1077	Պրոպիլեն	28.0 24.5 22.0 20.0	Թույլատրված	Սովորական	0.43
1078	Սառեցնող գազ, այլ կերպ չնշված	Տե՛ս ԱԹԱՃ-ի սահմանումը 6.7.3.1-ում	Թույլատրված	Սովորական	Տե՛ս 4.2.2.7-ը
1079	Ծծմբի դիօքսիդ	11.6 10.3 8.5 7.6	Չթույլատրված	Տե՛ս 6.7.3.7.3-ը	1.23

ii) ՄԱԿ-ի նշագրման համարով կամ այլ նշաններով պիտակավորված կամ մակնշված, ինչպես փաթեթվածքների համար պահանջվում է 5.2 գլխով՝ բացի 5.2.1.3 - 5.2.1.6, 5.2.1.7.2 - 5.2.1.7.8 եւ 5.2.1.10-ից, տրանսպորտային կապոցում պարունակվող վտանգավոր բեռների յուրաքանչյուր տարրի համար: Անհրաժեշտ է յուրաքանչյուր կիրառվող մակնշվածք կամ պիտակ կիրառել մեկ անգամ:

Ռադիոակտիվ նյութ պարունակող տրանսպորտային կապոցների պիտակավորումը պետք է իրականացվի 5.2.2.1.11-ին համապատասխան:

բ) փաթեթի ճիշտ դիրքը մատնանշող սլաքները, որոնք պատկերված են 5.2.1.10-ում, պետք է ցուցադրվեն այնպիսի փաթեթներ պարունակող տրանսպորտային կապոցների երկու հակառակ կողմերում, որոնք պետք է մակնշվեն 5.2.1.10.1-ի համաձայն,

բացառությամբ այն դեպքերի, երբ նշանները տեսանելի են, եւ

- 5.1.2.2. Վտանգավոր բեռներով յուրաքանչյուր փաթեթ, որն ընդգրկված է տրանսպորտային կապոցի մեջ պետք է համապատասխանի «ԱԴՌ» համաձայնագրի բոլոր կիրառելի դրույթներին: Տրանսպորտային կապոցը չպետք է վնաս հասցնի յուրաքանչյուր փաթեթի այն գործառույթին, որի համար վերջինս նախատեսված է:
- 5.1.2.3. Յուրաքանչյուր փաթեթ, որը կրում է փաթեթի ճիշտ դիրքը մատնանշող մակնշումներ՝ 5.2.1.10-ով սահմանված կարգով, եւ որը դրված է տրանսպորտային կապոցի կամ խոշոր փաթեթվածքի մեջ պետք է փոխադրվի տվյալ մակնշումներին համապատասխանող դիրքով:
- 5.1.2.4. Խառը բեռնավորման մասին սահմանափակումները նույնպես կիրառվում են տվյալ տրանսպորտային կապոցների նկատմամբ:
- 5.1.3. Դատարկ չմաքրված փաթեթվածքները (ներառյալ ՍՄԿ-ները եւ խոշոր փաթեթվածքները), ցիստեռնները, ՊԱՇՄ-ները, մեքենաները եւ կոնտեյներները, որոնք նախատեսված են խուռնաբեռն փոխադրման համար:**

- 5.1.3.1. Դատարկ չմաքրված փաթեթվածքները (ներառյալ ՍՄԿ-ները եւ խոշոր փաթեթվածքները), ցիստեռնները (ներառյալ ավտոցիստեռնները, մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցները, հանովի ցիստեռնները, շարժական ցիստեռնները, ցիստեռն-կոնտեյներները, ԳԲՏԿ-ները), ՊԱՇՄ-ները, փոխադրամիջոցները եւ կոնտեյներները, որոնք նախատեսված են խուռնաբեռն փոխադրման համար եւ որոնք պարունակել են 7-րդ դասից բացի այլ տարբեր դասերին պատկանող վտանգավոր բեռներ, պետք է մակնշվեն եւ պիտակավորվեն այնպես, ինչպես կմակնշվեին եւ կպիտակավորվեին լցված լինելու դեպքում:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** Փաստաթղթերի համար տե՛ս 5.4 գլուխը:

- 5.1.3.2. Կոնտեյներները, ցիստեռնները, ՍՄԿ-ները, ինչպես նաեւ մյուս փաթեթվածքներն ու տրանսպորտային կապոցները, որոնք օգտագործվում են ռադիոակտիվ նյութերի փոխադրման համար, չպետք է օգտագործվեն այլ ապրանքների պահպանման կամ փոխադրման համար՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք մաքրված են առավելագույնը 0.4 Բկ/սմ<sup>2</sup>-ով բետա, գամա եւ ցածր թունայնությամբ ալֆա ճառագայթներից եւ 0.04 Բկ/սմ<sup>2</sup>-ով բոլոր այլ ալֆա ճառագայթներից:

#### **5.1.4. Խառը փաթեթավորում**

Երբ երկու կամ ավելի վտանգավոր բեռներ են փաթեթավորվում միեւնույն արտաքին փաթեթվածքի մեջ, ապա յուրաքանչյուր նյութի եւ պատրաստվածքի համար փաթեթը պետք է պիտակավորվի եւ մակնշվի: Եթե տարբեր ապրանքների համար պահանջվում է միեւնույն

պիտակը, ապա բավարար է այն փակցնել միայն մեկ անգամ:

## **5.1.5. 7-րդ դասի վերաբերյալ ընդհանուր դրույթները**

### **5.1.5.1. Փոխադրման հաստատումն ու ծանուցումը**

#### *5.1.5.1.1. Ընդհանուր դրույթներ*

6.4 գլխում նշված փաթեթի կառուցվածքի հաստատումից բացի, որոշ դեպքերում անհրաժեշտ է նաև փոխադրման բազմակողմանի հաստատում (5.1.5.1.2 եւ 5.1.5.1.3): Որոշ դեպքերում անհրաժեշտ է նաև փոխադրման մասին տեղեկացնել իրավասու մարմիններին (5.1.5.1.4):

#### *5.1.5.1.2. Փոխադրման հաստատումը*

Բազմակողմանի հաստատումը անհրաժեշտ է՝

ա) «B(M)» տեսակի այն փաթեթների փոխադրման համար, որոնք չեն համապատասխանում 6.4.7.5-ի պահանջներին կամ որոնք այնպես են կառուցված, որ չեն նախատեսում պարբերական կարգավորված օդափոխություն:

բ) «B(M)» տեսակի փաթեթների փոխադրումը, որոնք պարունակում են համապատասխանաբար 3 000 A<sub>1</sub> կամ 3 000 A<sub>2</sub>-ից ավելի մեծ ակտիվությամբ, կամ 1 000 SF<sub>6</sub> ակտիվությամբ ռադիոակտիվ նյութ՝ կախված նրանից, թե տվյալ արժեքներից որն է ավելի փոքր, եւ

գ) տրոհվող նյութեր պարունակող փաթեթների փոխադրումը, եթե մեկ փոխադրամիջոցում կամ կոնտեյներում պարունակվող փաթեթների կրիտիկականության տեսակետից անվտանգության ինդեքսների գումարը գերազանցում է 50-ը՝

բացառությամբ այն դեպքերի, երբ իրավասու մարմինը կարող է թույլատրել փոխադրումը դեպի իր երկիր կամ իր երկրով առանց փոխադրման հաստատման՝ դրա վերաբերյալ հատուկ դրույթ ներառելով կառուցվածքի հաստատման փաստաթղթի մեջ (տե՛ս 5.1.5.2.1):

#### *5.1.5.1.3. Փոխադրման հաստատումը հափուկ պայմաններում*

Իրավասու մարմինը կարող է հաստատել հատուկ դրույթներ, որոնց համաձայն, հատուկ պայմաններում թույլատրվում է իրականացնել այնպիսի բեռնառաքում, որը չի բավարարում «ԱԴԲ» համաձայնագրում կիրառվող պահանջները (տե՛ս 1.7.4):

#### *5.1.5.1.4. Ծանուցումը*

Իրավասու մարմիններին ծանուցումը պահանջվում է հետեւյալ դեպքերում՝

ա) նախքան ցանկացած փաթեթի առաջին փոխադրումը, որը պահանջում է իրավասու մարմնի հաստատում, բեռնառաքողն ապահովում է, որ իրավասու մարմնի կողմից փաթեթի կառուցվածքի վերաբերյալ տրվող իրավասու մարմնի յուրաքանչյուր գործող սերտիֆիկատի պատճեն փոխադրման համար տրամադրվի ծագման երկրի իրավասու մարմնին եւ բոլոր այն երկրների իրավասու մարմիններին, որոնց տարածքով կամ որոնց տարածք պետք է իրականացվի բեռնառաքումը: Բեռնառաքողը պարտավոր չէ իրավասու մարմնի կողմից ակնկալել սերտիֆիկատի ստացման հաստատում, իսկ իրավասու մարմինը պարտավոր չէ տրամադրել սերտիֆիկատի ստացման նմանատիպ հաստատում՝

բ) Փոխադրման հետեւյալ տեսակներից յուրաքանչյուրի համար՝

i) «C» տեսակի փաթեթներով փոխադրում, որոնք պարունակում են ռադիոակտիվ նյութ՝ համապատասխանաբար 3 000 A<sub>1</sub> կամ 3 000 A<sub>2</sub>-ից ավելի մեծ ակտիվությամբ, կամ 1 000 ՏԲկ ակտիվությամբ՝ կախված նրանից, թե տվյալ արժեքներից որն է ավելի փոքր,

ii) «B(U)» տեսակի փաթեթներով փոխադրում, որոնք պարունակում են ռադիոակտիվ նյութ՝ համապատասխանաբար 3 000 A<sub>1</sub> կամ 3 000 A<sub>2</sub>-ից ավելի մեծ ակտիվությամբ, կամ 1 000 ՏԲկ ակտիվությամբ՝ կախված նրանից, թե տվյալ արժեքներից որն է ավելի փոքր,

iii) «B(M)» տեսակի փաթեթներով փոխադրում,

iv) հատուկ պայմաններում փոխադրում՝

բեռնառաքողը ծանուցում է փոխադրման մասին ծագման երկրի իրավասու մարմնին եւ բոլոր այն երկրների իրավասու մարմիններին, որոնց տարածքով կամ որոնց տարածք պետք է իրականացվի բեռնառաքումը: Այս ծանուցագիրը պետք է գտնվի յուրաքանչյուր իրավասու մարմնի մոտ՝ բեռնառաքումն սկսելուց առաջ, եւ նախընտրելի է առնվազն 7 օր առաջ:

գ) Բեռնառաքողը պարտավոր չէ ուղարկել առանձին ծանուցագիր այն դեպքում, երբ պահանջվող տեղեկությունները ներառված են եղել փոխադրումը հաստատող հայտի մեջ (տե՛ս 6.4.23.2):

դ) Բեռնառաքման ծանուցագիրը պետք է պարունակի՝

i) փաթեթի կամ փաթեթների նույնականացման համար



բավարար տեղեկություններ, այդ թվում՝ սերտիֆիկատի բոլոր համապատասխան համարները եւ նույնականացման նշանները,

- ii) փոխադրման ամսաթվի, ժամանման ենթադրյալ ամսաթվի եւ նախատեսված երթուղու վերաբերյալ տեղեկություններ,
- iii) ռադիոակտիվ նյութի (նյութերի) կամ իզոտոպի (իզոտոպների) անվանումը (անվանումները),
- iv) ռադիոակտիվ նյութի ֆիզիկական կամ քիմիական տեսակների նկարագրությունները, կամ տեղեկություն, որ դա ռադիոակտիվ նյութի հատուկ տեսակ է կամ տարածման ցածր հատկությամբ ռադիոակտիվ նյութ, եւ
- v) ռադիոակտիվ պարունակության առավելագույն ակտիվությունը փոխադրման ընթացքում՝ արտահայտված բեկերելներով եւ SI նախաձանցին համապատասխան խորհրդանշանով (տե՛ս 1.2.2.1): Տրոհվող նյութի դեպքում՝ ակտիվության փոխարեն կարող է նշվել տրոհվող նյութի զանգվածը (կամ, անհրաժեշտության դեպքում, խառնուրդներում յուրաքանչյուր տրոհվող նուկլիդի զանգվածը) գրամներով (գ) կամ դրա բազմապատիկներով:

### **5.1.5.2. Իրավասու մարմինների կողմից տրամադրվող սերտիֆիկատները**

5.1.5.2.1. Իրավասու մարմինների կողմից տրամադրվող սերտիֆիկատներն անհրաժեշտ են՝

- ա) այն կառուցվածքների համար, որոնք նախատեսված են՝
  - i) հատուկ տեսակի ռադիոակտիվ նյութերի համար,
  - ii) տարածման ցածր հատկություն ունեցող ռադիոակտիվ նյութերի համար,
  - iii) տրոհվող նյութ համար՝ բացի 2.2.7.2.3.5(գ)-ով սահմանվածի,
  - iv) 0.1 կգ կամ ավելի ուրանի հեքսաֆտորիդի պարունակությամբ փաթեթների համար,
  - v) տրոհվող նյութ պարունակող բոլոր փաթեթների համար, եթե դրանց վրա չի տարածվում 2.2.7.2.3.5, 6.4.11.2 կամ 6.4.11.3-ով սահմանված բացառությունը:
  - vi) «B(U)» եւ «B(M)» տեսակի փաթեթների համար,
  - vii) «C» տեսակի փաթեթների համար,

- բ) հատուկ պայմանների դեպքում,
- գ) որոշ փոխադրումների դեպքում (տե՛ս 5.1.5.1.2):
- դ) 2.2.7.2.2.1-ում նշված՝ ռադիոնուկլիդների հիմնական արժեքի որոշման դեպքում՝ 2.2.7.2.2.1 աղյուսակում չնշված առանձին ռադիոնուկլիդների դեպքում (տե՛ս 2.2.7.2.2.2 (ա)).
- ե) սարքերի կամ պատրաստվածքների ազատված բեռի ակտիվության այլընտրանքային սահմանները (տե՛ս 2.2.7.2.2.2 (բ)):

Սերտիֆիկատները հավաստում են, որ համապատասխան պահանջները բավարարվել են, եւ կառուցվածքի հաստատման համար վկայագրերում նույնականացման նշան է վերագրվում կառուցվածքին:

Փաթեթի կառուցվածքի եւ փոխադրման հաստատման սերտիֆիկատները կարող են տրվել մեկ սերտիֆիկատով:

Տվյալ սերտիֆիկատները եւ սերտիֆիկատների համար ներկայացված հայտերը պետք է համապատասխանեն 6.4.23-ի պահանջներին:

5.1.5.2.2. Բեռնառաքողը պետք է իր տրամադրության տակ ունենա յուրաքանչյուր գործող սերտիֆիկատի պատճենը:

5.1.5.2.3. Փաթեթի այնպիսի կառուցվածքների դեպքում, որոնց համար չի պահանջվում, որ իրավասու մարմինը տրամադրի հաստատման սերտիֆիկատ, բեռնառաքողը պետք է ըստ պահանջի իրավասու մարմնի ստուգմանը ներկայացնի փաստաթղթային ապացույց, որով հաստատվում է, որ փաթեթի կառուցվածքը բավարարում է բոլոր համապատասխան պահանջները:

**5.1.5.3. Տրանսպորտային ինդեքսի (ՏԻ) եւ կրիտիկականության տեսակետից անվտանգության ինդեքսի (ԿԱԻ)որոշումը**

5.1.5.3.1. Փաթեթի, տրանսպորտային կապոցի կամ կոնտեյնների համար կամ չփաթեթավորված «LSA-I» խմբի նյութերի կամ «SCO-I» խմբի օբյեկտների համար տրանսպորտային ինդեքսի (ՏԻ) արժեքը որոշվում է հետեւյալ ընթացակարգով՝

- ա) որոշվում է առավելագույն ճառագայթման մակարդակը՝ արտահայտված «միլիզիվերտ ժամում» (մՋվ/ժամ) միավորներով փաթեթի, տրանսպորտային կապոցի կամ կոնտեյնների, կամ չփաթեթավորված «LSA-I» խմբի նյութերի կամ «SCO-I» խմբի օբյեկտների արտաքին մակերեսույթից 1 մ հեռավորության վրա: Սահմանված արժեքը բազմապատկվում է 100-ով, եւ ստացված արժեքը կազմում է տրանսպորտային ինդեքսը: Ուրանի կամ թորիումի հանքաքարերի կամ դրանց խտանյութերի դեպքում բեռի

արտաքին մակերեսային 1մ հեռավորության վրա գտնվող ցանկացած կետում որպես առավելագույն ճառագայթման մակարդակ կարող է ընդունվել՝

0.4 մՉվ/ժ՝ հանքաքարերի եւ ուրանի ու թորիումի ֆիզիկական խտանյութերի համար,

0.3 մՉվ/ժ՝ թորիումի քիմիական խտանյութերի համար,

0.02 մՉվ/ժ՝ ուրանի հեքսաֆտորիդից բացի՝ ուրանի այլ քիմիական խտանյութերի համար,

բ) ցիստեռնների, կոնտեյներների եւ չփաթեթավորված «LSA-I» խմբի նյութերի կամ «SCO-I» խմբի օբյեկտների դեպքում, վերոնշյալ (ա) կետի համաձայն որոշված արժեքը պետք է բազմապատկվի 5.1.5.3.1 աղյուսակում նշված համապատասխան գործակցով:

գ) վերոնշյալ (ա) եւ (բ) կետերի համաձայն ստացված արժեքը կլորացվում է մինչեւ առաջին տասնորդական թիվը (օրինակ՝ 1.13-ը դառնում է 1.2)՝ բացառությամբ այն դեպքերի, երբ 0.05 կամ ավելի փոքր թվերը 0-ին հավասար են համարվում:

**5.1.5.3.1 աղյուսակ. Ցիստեռնների, կոնտեյներների եւ չփաթեթավորված «LSA-I» խմբի նյութերի կամ «SCO-I» խմբի օբյեկտների համար բազմապատկման գործակիցները**

բեռի չափսը <sup>ա</sup>	Բազմապատկման գործակիցը
բեռի չափսը $\leq 1$ մ <sup>2</sup>	1
$1$ մ <sup>2</sup> < բեռի չափսը $\leq 5$ մ <sup>2</sup>	2
$5$ մ <sup>2</sup> < բեռի չափսը $\leq 20$ մ <sup>2</sup>	3
$20$ մ <sup>2</sup> < բեռի չափսը	10

<sup>ա</sup> Բեռի խաչաձեւ հատման գոյու չափվող ամենամեծ մակերեսը:

5.1.5.3.2. Յուրաքանչյուր տրանսպորտային կապոցի, կոնտեյների կամ փոխադրամիջոցի համար տրանսպորտային ինդեքսը որոշվում է որպես բոլոր պարունակվող փաթեթների ՏԻ-ների գումարը կամ ճառագայթման մակարդակի անմիջական չափումների միջոցով՝ բացառությամբ ոչ կոշտ տրանսպորտային կապոցների, որոնց համար տրանսպորտային ինդեքսը որոշվում է միայն որպես բոլոր փաթեթների ՏԻ-ների գումար:

5.1.5.3.3. Յուրաքանչյուր տրանսպորտային կապոցի կամ կոնտեյների համար կրիտիկականության տեսակետից անվտանգության ինդեքսը որոշվում է որպես բոլոր պարունակվող փաթեթների ԿԱԻ-ների գումար: Նույն ընթացակարգին պետք է հետեւել նաեւ առաքվող բեռի կամ փոխադրամիջոցի վրա ԿԱԻ-ների գումարը որոշելու համար:

5.1.5.3.4. Փաթեթները, տրանսպորտային կապոցները եւ կոնտեյներներն ընդգրկվում են I-ՍՊԻՏԱԿ (I-WHITE),II-ԴԵՂԻՆ (II-YELLOW) կամ III-ԴԵՂԻՆ (III-YELLOW) կատեգորիաների մեջ՝ համաձայն 5.1.5.3.4 աղյուսակում նշված պայմանների եւ հետեւյալ պահանջների՝

- ա) փաթեթի, տրանսպորտային կապոցի կամ կոնտեյների համար համապատասխան կատեգորիան որոշելիս հաշվի են առնվում ինչպես տրանսպորտային ինդեքսը, այնպես էլ մակերեւույթի վրա առկա ճառագայթման մակարդակը: Եթե տրանսպորտային ինդեքսը համապատասխանում է մեկ կատեգորիայի պայմանին, իսկ ճառագայթման մակարդակը՝ մեկ այլ կատեգորիայի պայմանին, ապա փաթեթը, տրանսպորտային կապոցը կամ կոնտեյներն ընդգրկվում է ավելի բարձր կատեգորիայի մեջ: Այս նպատակով I-ՍՊԻՏԱԿ կատեգորիան համարվում է ամենացածր կատեգորիա,
- բ) տրանսպորտային ինդեքսը որոշվում է 5.1.5.3.1-ու եւ 5.1.5.3.2-ում նշված ընթացակարգերի համաձայն,
- գ) այն դեպքում, երբ մակերեւույթի վրա ճառագայթման մակարդակն ավելի մեծ է, քան 2 մՋվ/ժ-ն, փաթեթը կամ տրանսպորտային կապոցը պետք է փոխադրվի բացառիկ օգտագործման պայմաններում եւ 7.5.11, CV33 (1.3) եւ (3.5) (ա)-ի դրույթների համաձայն:
- դ) հատուկ պայմաններում փոխադրվող փաթեթը պետք է ընդգրկվի III-ԴԵՂԻՆ կատեգորիայի մեջ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ կիրառվում են 5.1.5.3.5-ի դրույթները,
- ե) այն տրանսպորտային կապոցը կամ կոնտեյները, որը պարունակում է հատուկ պայմաններում փոխադրվող փաթեթներ, պետք է ընդգրկվի III-ԴԵՂԻՆ կատեգորիայի մեջ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ կիրառվում են 5.1.5.3.5-ի դրույթները:

**5.1.5.3.4 աղյուսակ՝ փաթեթների, տրանսպորտային կապոցների եւ կոնտեյներների կատեգորիաները**

Պայմանները		
Տրանսպորտային ինդեքս	Արտաքին մակերեսային վրա ցանկացած կետում առավելագույն ճառագայթման մակարդակ	Կատեգորիա
0 <sup>ա</sup>	0.005 մՋվ/ժ-ից ոչ ավելի	I-ՍՊԻՏԱԿ
0-ից բարձր, բայց 1-ից ոչ ավելի <sup>ա</sup>	0.005 մՋվ/ժ-ից ավելի, բայց առավելագույնը՝ 0.5 մՋվ/ժ	II-ԴԵՂԻՆ
1-ից ավելի, բայց 10-ից ոչ ավելի	0.5 մՋվ/ժ-ից ավելի, բայց առավելագույնը՝ 2 մՋվ/ժ	III-ԴԵՂԻՆ
10-ից ավելի	2 մՋվ/ժ-ից ավելի, բայց առավելագույնը՝ 10 մՋվ/ժ	III-ԴԵՂԻՆ <sup>բ</sup>

<sup>ա</sup> Այն դեպքում, երբ հաշվարկվող ՏԻ-ն չի գերազանցում 0.05-ը, նշված արժեքը կարող է հավասար լինել զրոյի՝ 5.1.5.3.1 (գ)-ի համաձայն:

<sup>բ</sup> Ինչպես նաև պետք է փոխադրվեն բացառիկ օգտագործման պայմաններում՝ բացի կոնտեյներներից (տե՛ս 7.5.11 CV33 (3.3)-ի Դ աղյուսակը):

5.1.5.3.5. Իրավասու մարմնի կողմից կառուցվածքի կամ առաքման հաստատում պահանջող փաթեթների միջազգային փոխադրման բոլոր դեպքերում, որոնց համար փոխադրման մեջ ներառված տարբեր երկրներում կիրառվում են հաստատման տարբեր ձեւեր, կատեգորիաների սահմանումը պետք է իրականացվի կառուցվածքի ծագման երկրում տրված սերտիֆիկատին համապատասխան:

**5.1.5.4. 7-րդ դասի ռադիոակտիվ նյութերի ազատված փաթեթներին վերաբերող հատուկ դրույթները**

5.1.5.4.1. 7-րդ դասի ռադիոակտիվ նյութերի ազատված փաթեթները արտաքին փաթեթվածքի վրա պետք է ունենան ընթեռնելի եւ չջնջվող մակնշում, որի վրա նշվում է՝

- ա) ՄԱԿ-ի նշագրման համարը, որին նախորդում են «ՄԱԿ» տառերը,
- բ) բեռնառաքողի կամ բեռն ստացողի կամ նրանց երկուսի մասին նշում, եւ
- գ) թույլատրելի անգուտ քաշը, եթե այն գերազանցում է 50 կգ-ը:

5.1.5.4.2. 5.4 գլխի համաձայն՝ փաստաթղթերի վերաբերյալ պահանջները չեն կիրառվում 7-րդ դասի ռադիոակտիվ նյութի ազատված փաթեթների նկատմամբ՝ բացառությամբ այն դեպքի, երբ՝

- ա) ՄԱԿ-ի նշագրման համարին նախորդող «ՄԱԿ» տառերը, բեռնառաքողի եւ բեռն ստացողի անվանումն ու հասցեն եւ, անհրաժեշտության դեպքում, յուրաքանչյուր իրավասու մարմնի կողմից տրված հաստատման սերտիֆիկատը (տե՛ս 5.4.1.2.5.1 (է)) ցուցադրվում են փոխադրման փաստաթղթի, ինչպես, օրինակ՝ ապրանքագրի, օդային բեռնափոխադրման բեռնագրի կամ ԱԲԿ կամ ԵՓԿ բեռնման կարգադրագրի վրա.
- բ) Անհրաժեշտության դեպքում կիրառվում են 5.4.1.2.5.1 (է), 5.4.1.2.5.3 եւ 5.4.1.2.5.4-ի պահանջները.
- գ) Կիրառվում են 5.4.2-ի եւ 5.4.4-ի պահանջները:

5.1.5.4.3 Անհրաժեշտության դեպքում կիրառվում են 5.2.1.7.8-ի եւ 5.2.2.1.11.5-ի պահանջները:

**5.1.5.5. Հաստատման եւ նախապես ծանուցման պահանջների ամփոփումը**

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1.** Նախքան ցանկացած փաթեթի առաջին փոխադրումը, որը պահանջում է իրավասու մարմնի հաստատում, բեռնառաքողն ապահովում է, որ իրավասու մարմնի կողմից փաթեթի կառուցվածքի մասով տրվող յուրաքանչյուր հաստատման սերտիֆիկատի պատճեն տրամադրվի բոլոր այն երկրների իրավասու մարմիններին, որոնք գտնվում են տվյալ փոխադրման ճանապարհին (տե՛ս 5.1.5.1.4 (ա)):

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2.** Ծանուցագիրը պահանջվում է այն դեպքում, երբ պարունակությունը գերազանցում է  $3 \times 10^3 A_1$ , կամ  $3 \times 10^3 A_2$ , կամ 1 000 ՏԲԿ-ն, (տե՛ս 5.1.5.1.4 (բ)):

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3.** Փոխադրման բազմակողմանի հաստատումը պահանջվում է այն դեպքում, երբ պարունակությունը գերազանցում է  $3 \times 10^3 A_1$ , կամ  $3 \times 10^3 A_2$ , կամ 1 000 ՏԲԿ-ն, կամ եթե թույլատրվում է պարբերական կարգավորված օդափոխություն (տե՛ս 5.1.5.1):

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 4.** Տե՛ս նյութի հաստատմանը եւ այդ նյութի փոխադրման համար նախապեսված փաթեթի վերաբերյալ նախնական ծանուցման դրույթները:

Կարգավորման առարկան	ՄԱԿ-ի նշագրման համարը	Պահանջվում է հաստատում իրավասու մարմնի կողմից		Յուրաքանչյուր փոխադրումից առաջ բեռնառաքողից պահանջվում է ծանուցել փոխադրման ծագման երկրի եւ փոխադրման ճանապարհին գտնվող բոլոր երկրների <sup>ա</sup> իրավասու մարմիններին	Հղումը
		Ծագման երկիր	Փոխադրման ճանապարհին գտնվող երկրներ <sup>ա</sup>		
Չնշված A <sub>1</sub> եւ A <sub>2</sub> արժեքների հաշվարկը	-	Այո	Այո	Ոչ	2.2.7.2.2.2 (ա), 5.1.5.2.1 (դ)
Ազատված փաթեթներ	2908, 2909,				---
- փաթեթի կառուցվածքը	2910, 2911	Ոչ	Ոչ	Ոչ	
- փոխադրումը		Ոչ	Ոչ	Ոչ	
LSA <sup>բ</sup> եւ SCO <sup>բ</sup> տեսակի նյութեր 1,2 կամ 3 տեսակի «LSA» խմբի նյութական <sup>բ</sup> կամ «SCO» <sup>բ</sup> խմբի արդյունաբերական փաթեթներ՝ բացառությամբ չտրոհվող եւ տրոհվող նյութերի	2912, 2913, 3321, 3322				---
- փաթեթի կառուցվածքը		Ոչ	Ոչ	Ոչ	
- փոխադրումը		Ոչ	Ոչ	Ոչ	
«A» տեսակի փաթեթներ <sup>բ</sup> բացառությամբ չտրոհվող եւ տրոհվող նյութերի	2915, 3332				--
- փաթեթի կառուցվածքը		Ոչ	Ոչ	Ոչ	
- փոխադրումը		Ոչ	Ոչ	Ոչ	
«B(U)» տեսակի փաթեթներ <sup>բ</sup> բացառությամբ չտրոհվող եւ տրոհվող նյութերի	2916				5.1.5.1.4 (բ), 5.1.5.2.1 (ա), 6.4.22.2
- փաթեթի կառուցվածքը		Այո	Ոչ	Տե՛ս 1-ին ծանոթագրությունը	
- փոխադրումը		Ոչ	Ոչ	Տե՛ս 2-րդ ծանոթագրությունը	
«B(M)» տեսակի փաթեթներ <sup>բ</sup> բացառությամբ չտրոհվող եւ տրոհվող նյութերի	2917				5.1.5.1.4 (բ), 5.1.5.2.1 (ա), 5.1.5.1.2, 6.4.22.3
- փաթեթի կառուցվածքը		Այո	Այո	Ոչ	
- փոխադրումը		Տե՛ս 3-րդ ծանոթագրությունը	Տե՛ս 3-րդ ծանոթագրությունը	Այո	

<sup>ա</sup> Երկրներ, որոնց տարածքից, որոնց տարածքով կամ որոնց տարածքով կապարվում է բեռնառաքումը:

<sup>բ</sup> Եթե ուղիորակչով պարունակությունները տրոհվող նյութեր են, որոնց վրա տարածվում են տրոհվող նյութ պարունակող փաթեթների վերաբերյալ դրույթները, ապա կիրառվում են տրոհվող նյութի համար նախատեսված փաթեթների վերաբերյալ դրույթները (տե՛ս 6.4.11 կետը):

Կարգավորման առարկան	ՄԱԿ-ի նշագրման համարը	Պահանջվում է հաստատում իրավասու մարմնի կողմից		Յուրաքանչյուր փոխադրումից առաջ բեռնառաքողից պահանջվում է ծանուցել փոխադրման ծագման երկրի եւ փոխադրման ճանապարհին գտնվող բոլոր երկրների՝ իրավասու մարմիններին	Հղումը
		Ծագման երկիր	Փոխադրման ճանապարհի ն գտնվող երկրներ <sup>9</sup>		
«Գ» տեսակի փաթեթներ <sup>9</sup> բացառությամբ չտրոհվող եւ տրոհվող նյութերի - փաթեթի կառուցվածքը - փոխադրումը	3323	Այո Ոչ	Ոչ Ոչ	Տե՛ս 1-ին ծանոթագրությունը Տե՛ս 2-րդ ծանոթագրությունը	5.1.5.1.4 (բ), 5.1.5.2.1 (ա), 6.4.22.2
Տրոհվող նյութերի համար նախատեսված փաթեթներ - փաթեթի կառուցվածքը - փոխադրումը - կրիտիկականության տեսակետից անվտանգության ինդեքսների գումարը, որը չի գերազանցում 50-ը - կրիտիկականության տեսակետից անվտանգության ինդեքսների գումարը, որը գերազանցում է 50-ը	2977, 3324, 3325, 3326, 3327, 3328, 3329, 3330, 3331, 3333	Այո <sup>9</sup> Ոչ <sup>9</sup> Այո	Այո <sup>9</sup> Ոչ <sup>9</sup> Այո	Ոչ Տե՛ս 2-րդ ծանոթագրությունը Տե՛ս 2-րդ ծանոթագրությունը	5.1.5.2.1 (ա), 5.1.5.1.2, 6.4.22.4, 6.4.22.5
Հատուկ տեսակի ռադիոակտիվ նյութ - կառուցվածքը - փոխադրումը	- Տե՛ս 4-րդ ծանոթագրությունը	Այո Տե՛ս 4-րդ ծանոթագրությունը	Ոչ Տե՛ս 4-րդ ծանոթագրությունը	Ոչ Տե՛ս 4-րդ ծանոթագրությունը	1.6.6.4, 5.1.5.2.1 (ա), 6.4.22.5
Տարածման ցածր հատկություն ունեցող ռադիոակտիվ նյութ - կառուցվածքը - փոխադրումը	- Տե՛ս 4-րդ ծանոթագրությունը	Այո Տե՛ս 4-րդ ծանոթագրությունը	Ոչ Տե՛ս 4-րդ ծանոթագրությունը	Ոչ Տե՛ս 4-րդ ծանոթագրությունը	5.1.5.2.1 (ա), 6.4.22.5
Ուրանի հեքսաֆտորիդի 0.1 կգ-ից ավելի պարունակությամբ փաթեթներ - կառուցվածքը - փոխադրումը	- Տե՛ս 4-րդ ծանոթագրությունը	Այո Տե՛ս 4-րդ ծանոթագրությունը	Ոչ Տե՛ս 4-րդ ծանոթագրությունը	Ոչ Տե՛ս 4-րդ ծանոթագրությունը	5.1.5.2.1 (ա), 6.4.22.1
Հատուկ պայմաններ - փոխադրումը	2919, 3331	Այո	Այո	Այո	1.7.4.2, 5.1.5.2.1 (բ), 5.1.5.1.4 (բ)
Անցումային դրույթներով կարգավորվող փաթեթների հաստատված	-	Տե՛ս 1.6.6	Տե՛ս 1.6.6	Տե՛ս 1-ին ծանոթագրությունը	1.6.6.2,

<sup>9</sup> Տրոհվող նյութի համար նախատեսված փաթեթների կառուցվածքով կարող է նաեւ պահանջվել աղյուսակի այլ դիրքերից որեւէ մեկի մասով հաստատում:

<sup>9</sup> Փոխադրումների համար կարող է, այնուամենայնիվ, պահանջվել աղյուսակի այլ դիրքերից որեւէ մեկի մասով հաստատում:



Կարգավորման առարկան	ՄԱԿ-ի նշագրման համարը	Պահանջվում է հաստատում իրավասու մարմնի կողմից		Յուրաքանչյուր փոխադրումից առաջ բեռնառաքողից պահանջվում է ծանուցել փոխադրման ծագման երկրի եւ փոխադրման ճանապարհին գտնվող բոլոր երկրների՝ իրավասու մարմիններին	Հղումը
		Ծագման երկիր	Փոխադրման ճանապարհի ն գտնվող երկրներ՝		
կառուցվածքներ					5.1.5.1.4 (բ), 5.1.5.2.1 (ա), 5.1.5.1.2. 6.4.22.9
Սարքերի կամ պատրաստվածքների ազատված բեռի ակտիվության այլընտրանքային սահմանները	-	Այո	Այո	Ոչ	5.1.5.2.1(ե), 6.4.22.7
Տրոհվող նյութեր՝ ազատված 2.2.7.2.3.5 (գ)-ին համապատասխան	-	Այո	Այո	Ոչ	5.1.5.2.1(ա)(iii), 6.4.22.6

## ԳԼՈՒԽ 5.2

### ՄԱԿՆՇՈՒՄԸ ԵՎ ՊԻՏԱԿԱՎՈՐՈՒՄԸ

#### 5.2.1. Փաթեթների մակնշումը

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** Փաթեթվածքների, խոշոր փաթեթվածքների, գազի տարաների եւ ՍՄԿ-ների կառուցվածքին, փորձարկմանը եւ հաստատմանը վերաբերող մակնշումների համար տե՛ս 6-րդ մասը:

5.2.1.1. Եթե այլ բան նախատեսված չէ «ԱԴՌ» համաձայնագրով, ապա տարայում պարունակվող վտանգավոր բեռներին համապատասխանող ՄԱԿ-ի նշագրման համարը, որին նախորդում են «ՄԱԿ» տառերը, պետք է ակնհայտորեն ու մշտապես նշված լինի յուրաքանչյուր փաթեթվածքի վրա: ՄԱԿ-ի նշագրման համարը եւ «ՄԱԿ» տառերը պետք է ունենան 12 մմ-ից ոչ պակաս բարձրություն՝ բացառությամբ 30 լիտր կամ դրանից քիչ տարողությամբ կամ 30 կգ առավելագույն զուտ քաշ ունեցող փաթեթվածքների եւ 60 լիտր կամ դրանից քիչ տարողությամբ բալոնների՝ այն դեպքում, երբ դրանք պետք է ունենան 6 մմ-ից ոչ պակաս բարձրություն, եւ բացառությամբ 5 լիտր կամ 5 կգ կամ դրանից քիչ տարողությամբ փաթեթվածքների՝ այն դեպքում, երբ դրանք պետք է լինեն համապատասխան չափերի: Չփաթեթավորված պատրաստվածքների դեպքում մակնշումը պետք է երեւա պատրաստվածքի, դրա համար հենարան ծառայող սարքի կամ դրա բեռնավորման-բեռնաթափման հարմարանքի, ինչպես նաեւ պահեստավորման կամ գործարկման սարքի վրա:

5.2.1.2. Սույն գլխի դրույթներով պահանջվող բոլոր փաթեթվածքների մակնշումները՝

ա) պետք է պարզ տեսանելի ու ընթեռնելի լինեն,

բ) կարողանան դիմակայել եղանակային պայմաններին՝ առանց կորցնելու արդյունավետությունը:

5.2.1.3. Վթարային փաթեթվածքները եւ վթարային ճնշումային տարաները լրացուցիչ մակնշվում են «ՎԹԱՐԱՅԻՆ» բառով: «ՃՆՇՈՒՄԱՅԻՆ» բառի տառերի բարձրությունը պետք է լինի առնվազն 12 մմ:

5.2.1.4. Ավելի քան 450 լիտր տարողությամբ՝ սորուն բեռների համար նախատեսված միջին բեռնվածության կոնտեյներները եւ խոշոր փաթեթվածքները մակնշվում են երկու հակադիր կողմերից:

#### 5.2.1.5. **Լրացուցիչ դրույթներ՝ 1-ին դասի ապրանքների համար**

1-ին դասի ապրանքների համար փաթեթների վրա պետք է լինի նաեւ դրանց բեռնառաքման ճշգրիտ անվանումը, ինչպես սահմանված է

3.1.2-ին համապատասխան: Մակնշումը, որը պետք է լինի պարզ ընթեռնելի եւ չջնջվող, գրվում է ծագման երկրի պետական լեզվով, ինչպես նաեւ անգլերեն, ֆրանսերեն կամ գերմաներեն, եթե այդ պետական լեզուն անգլերենը, ֆրանսերենը կամ գերմաներենը չէ, եթե այլ բան նախատեսված չէ տրանսպորտային գործունեությամբ զբաղվող համապատասխան երկրների միջեւ ձեռք բերված համաձայնությամբ:

#### **5.2.1.6. Լրացուցիչ դրույթներ՝ 2-րդ դասի ապրանքների համար**

Վերալցավորվող տարաների վրա փակցվում է դյուրընթեռնելի ու չջնջվող պիտակ՝ հետեւյալ մանրամասներով՝

ա) տվյալ գազի կամ գազային խառնուրդի ՄԱԿ-ի նշագրման համարը եւ բեռնառաքման ճշգրիտ անվանումը՝ 3.1.2-ին համապատասխան սահմանված կարգով:

«Այլ կերպ չնշված» դիրքում դասակարգված գազերի դեպքում, բացի ՄԱԿ-ի նշագրման համարից, պետք է նշվի միայն այդ գազի տեխնիկական անվանումը<sup>1</sup>:

Խառնուրդների դեպքում նշվում են առավելագույն վտանգ ներկայացնող երկու բաղադրիչներից ոչ ավելի.

բ) ըստ զանգվածի սեղմված գազերի դեպքում եւ հեղուկացված գազերի դեպքում՝ լցավորման առավելագույն զանգվածը եւ տարայի քաշը լցավորման ժամանակ ամրացված կցամասերով ու պարագաներով կամ անզուտ քաշը.

գ) հաջորդ պարբերական ստուգման ամսաթիվը (տարին):

Այդ մանրամասները կարող են փորագրվել կամ նշվել տարայի վրա փակցված չջնջվող տեղեկաթերթիկի կամ պիտակի վրա, կամ արտահայտվել ամրացված ու պարզ տեսանելի մակնշմամբ, ինչպես, օրինակ՝ տպելու կամ համարժեք այլ միջոցով:

---

<sup>1</sup> Տեխնիկական անվանման փոխարեն կարելի է օգտագործել հետեւյալ անվանումներից որեւէ մեկը՝

- ՄԱԿ-ի նշագրման 1078 համարի ստեցնող գազի դեպքում՝ «այլ կերպ չնշված»՝ F1 խառնուրդ, F2 խառնուրդ, F3 խառնուրդ.
- ՄԱԿ-ի նշագրման 1060 համարի մեթիլացեդիլենային եւ պրոպադիենի կայունացված խառնուրդների դեպքում՝
- ՄԱԿ-ի նշագրման 1965 համարի ածխաջրածնային գազի խառնուրդի դեպքում՝ «այլ կերպ չնշված»՝ A խառնուրդ կամ բութան, A01 խառնուրդ կամ բութան, A02 խառնուրդ կամ բութան, A0 խառնուրդ կամ բութան, A1 խառնուրդ, B1 խառնուրդ, B2 խառնուրդ, B խառնուրդ, C խառնուրդ կամ պրոպան.
- ՄԱԿ-ի նշագրման 1010 համարի կայունացված բութադիենների դեպքում՝ 1,2-բութադիեն, կայունացված, 1,3-բութադիեն, կայունացված:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1.** Տե՛ս նաեւ 6.2.2.7:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2.** Չվերալցավորվող փարաների համար տե՛ս 6.2.2.8:

**5.2.1.7. Մակնշման մասին հատուկ դրույթներ՝ ռադիոակտիվ նյութերի համար**

5.2.1.7.1. Յուրաքանչյուր փաթեթի արտաքին փաթեթվածքի վրա պետք է լինի ընթեռնելի եւ չճշվող մակնշում, որի վրա նշված կլինի բեռնառաքողը կամ բեռն ստացողը կամ երկուսը միասին: Յուրաքանչյուր տրանսպորտային կապոցի արտաքին մասից պետք է լինի ընթեռնելի եւ չճշվող մակնշում, որի վրա նշված կլինի բեռնառաքողը կամ բեռն ստացողը կամ երկուսը միասին, եթե տրանսպորտային կապոցի մեջ բոլոր փաթեթների այս մակնշումները հստակ տեսանելի չեն:

5.2.1.7.2. Բացառությամբ ազատված փաթեթների՝ յուրաքանչյուր փաթեթ արտաքին փաթեթվածքի մակերեսի վրա պետք է ունենա ընթեռնելի եւ չճշվող մակնշում, որի վրա «ՄԱԿ» տառերից հետո նշվում է ՄԱԿ-ի նշագրման համարը եւ բեռնառաքման ճշգրիտ անվանումը: Ազատված փաթեթների նկատմամբ կիրառվում են 5.1.5.4.1-ով սահմանված մակնշման պահանջները:

5.2.1.7.3. 50 կգ անզուտ քաշը գերազանցող յուրաքանչյուր փաթեթ արտաքին փաթեթվածքի մակերեսի վրա պետք է ունենա ընթեռնելի ու չճշվող մակնշում, որի վրա նշվում է դրա թույլատրելի անզուտ քաշը:

5.2.1.7.4. Յուրաքանչյուր փաթեթ, որը համապատասխանում է՝

ա) «Type IP-1», «Type IP-2» կամ «Type IP-3» տեսակի փաթեթները արտաքին փաթեթվածքի վրա պետք է ունենան ընթեռնելի ու չճշվող մակնշում, որի վրա համապատասխանաբար նշվում է «Type IP-1», «Type IP-2» կամ «Type IP-3»:

բ) «A» տեսակի յուրաքանչյուր փաթեթի տեսակի արտաքին փաթեթվածքի վրա պետք է ունենա ընթեռնելի ու չճշվող մակնշում, որի վրա նշվում է «TYPE A»:

գ) «Type IP-2» կամ «Type IP-3» յուրաքանչյուր փաթեթ կամ «A» տեսակի փաթեթ արտաքին փաթեթվածքի վրա պետք է ունենա ընթեռնելի ու չճշվող մակնշում, որի վրա պետք է նշվի կառուցվածքի ծագման երկրում ճանապարհային երթեւեկության մեջ փոխադրամիջոցների վրա օգտագործվող տարբերանշանը<sup>1</sup>,

---

<sup>1</sup> Միջազգային երթեւեկության մեջ գործվող փոխադրամիջոցների եւ դրանց կցորդների՝ գրանցման պետության փարբերանշաններ, օրինակ՝ 1949 թվականի «Ճանապարհային երթեւեկության մասին» Ժնեւի կոնվենցիային կամ 1968 թվականի «Ճանապարհային երթեւեկության մասին» Վիեննայի կոնվենցիային համապատասխան:

ինչպես նաև այն արտադրող ֆիրմայի անվանումը կամ կառուցվածքի ծագման երկրի իրավասու մարմնի կողմից փաթեթվածքի համար սահմանված այլ տարբերանշան:


5.2.1.7.5. 1.6.6.2.1, 5.1.5.2.1, 6.4.22.1 - 6.4.22.4 եւ 6.4.23.4 - 6.4.23.7-ի համաձայն հաստատված կառուցվածքին համապատասխանող յուրաքանչյուր փաթեթ արտաքին փաթեթի վրա պետք է ունենա ընթերցելի ու չճնշվող մակնշում, որի վրա նշվում են հետևյալ տեղեկությունները՝

- ա) իրավասու մարմնի կողմից այդ կառուցվածքի համար սահմանված տարբերանշանը,
- բ) այդ կառուցվածքին համապատասխանող յուրաքանչյուր փաթեթվածք յուրովի տարբերակելու նպատակով տրված հաջորդական համարը,
- գ) «B(U)», «B(M)» կամ «C» տեսակի փաթեթների դեպքում՝ «TYPE B(U)», «TYPE B(M)» կամ «Type C» գրառումը:

5.2.1.7.6. Յուրաքանչյուր փաթեթ, որ համապատասխանում է փաթեթի կառուցվածքի «B(U)», «B(M)» կամ «C» տեսակին, հրակայուն եւ ջրակայուն արտաքին տարայի արտաքին մակերեսի վրա պետք է ունենա հստակ մակնշում, որը պետք է կատարվի կրակի եւ ջրի ազդեցությանը դիմացկուն մեթոդով (փորագրում, դրոշմում եւ այլն) ու կպատկերի 1-ին պատկերում ներկայացված եռաշերտ խորհրդանշանը:

X շառավղով կենտրոնական շրջանի հիման վրա սահմանված համամասնություններով հիմնական եռաշերտ խորհրդանշանը:

X-ի թույլատրելի նվազագույն չափը պետք է լինի 4մմ:



5.2.1.7.7. Եթե «LSA-1» կամ «SCO-1» տեսակի նյութերը գտնվում են տարաներում կամ փաթեթավորման համար նախատեսված նյութերում եւ փոխադրվում են բացառիկ օգտագործման պայմաններում, ինչպես թույլատրված է 4.1.9.2.4-ով, ապա այդ տարաները կամ փաթեթավորման համար նախատեսված նյութերը արտաքին մակերեսին կարող են ունենալ նշան, որի վրա համապատասխանաբար նշված կլինի «RADIOACTIVE LSA-1» կամ «RADIOACTIVE SCO-1» գրառումը:

5.2.1.7.8. Իրավասու մարմնի կողմից կառուցվածքի կամ առաքման հաստատման պահանջով օգտագործվող փաթեթների միջազգային առաքման բոլոր դեպքերում, որի համար փոխադրման հարցով հետաքրքրված տարբեր երկրներում կիրառվում են հաստատման տարբեր ձեւեր, մակնշումը պետք է կատարվի կառուցվածքի ծագման երկրում տրված սերտիֆիկատին համապատասխան:

**5.2.1.8. Շրջակա միջավայրի համար վտանգավոր նյութերի հարուկ մակնշման մասին դրույթներ**

5.2.1.8.1. 2.2.9.1.10-ի չափորոշիչները բավարարող փաթեթները, որոնք պարունակում են շրջակա միջավայրի համար վտանգավոր նյութեր, պետք է ունենան 5.2.1.8.3 շրջակա միջավայրի համար վտանգավոր նյութի մասին նշան, բացառությամբ առանձին եւ համակցված փաթեթվածքների, եթե այդ առանձին փաթեթվածքները կամ համակցված փաթեթվածքների ներքին փաթեթվածքներն ունեն՝


- 5 կամ 5-ից պակաս լիտր տարողություն՝ հեղուկների դեպքում, կամ
- 5 կգ կամ 5 կգ-ից պակաս զտաքաշ՝ պինդ նյութերի դեպքում:

5.2.1.8.2. Շրջակա միջավայրի համար վտանգավոր նյութի առկայության մասին

նշանը տեղադրվում է 5.2.1.1-ով պահանջվող նշաններին կից: Պետք է պահպանվեն 5.2.1.2-ի եւ 5.2.1.4-ի պահանջները:

- 5.2.1.8.3. Շրջակա միջավայրի համար վտանգավոր նյութի առկայության մասին նախազգուշացնող նշանը պետք է լինի 5.2.1.8.3 նկարում ներկայացված ձեւով:

### Նկար 5.2.1.8.3



Նվազագույն չափսը՝ 100 մմ

Նվազագույն չափսը՝ 100 մմ

Շրջակա միջավայրի համար վտանգավոր նյութի առկայության մասին նախազգուշացնող նշան

Նշանը պետք է ունենա 45° անկյան տակ պատկերված քառակուսու ձեւ (շեղանկյան տեսքով): Խորհրդանշանը (ձուկ եւ ծառ) պատկերվում է սեւով սպիտակ կամ համապատասխան գունային հակադրությամբ ֆոնի վրա: Նվազագույն չափսերը պետք է լինեն 100 մմ x 100 մմ, իսկ շեղանկյան ուրվագիծը կազմող գծի նվազագույն լայնությունը պետք է լինի 2 մմ: Պայմանավորված փաթեթի չափսով՝ պիտակների չափսերը կարող են փոքրացվել՝ պայմանով, որ պահպանվի դրանց պարզ տեսանելիությունը: Եթե չափսերը նշված չեն, ապա բոլոր հատկանիշները պետք է մոտավոր համաչափ լինեն ցուցադրված պատկերի հատկանիշներին:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** Բացի շրջակա միջավայրի համար վտանգավոր նյութի առկայության մասին նախազգուշացնող նշան կրելու համար փաթեթվածքներին ներկայացվող որեւէ պահանջից՝ կիրառվում են 5.2.2-ի պիտակավորման վերաբերյալ դրույթները:

### 5.2.1.9 Լիթիումային մարտկոցի նշանը

- 5.2.1.9.1 188-րդ հատուկ դրույթին համապատասխան պատրաստված՝ լիթիումային էլեմենտներ կամ մարտկոցներ պարունակող փաթեթվածքները պետք է մակնշվեն 5.2.1.9.2 նկարում ներկայացված կարգով:

- 5.2.1.9.2 Նշանը պետք է պարունակի ՄԱԿ-ի նշագրման համարը, որին նախորդում են «ՄԱԿ» տառերը. օրինակ՝ «ՄԱԿ 3090»՝ լիթիումի մետաղական էլեմենտների կամ մարտկոցների համար, կամ «ՄԱԿ 3480»՝ լիթիում-իոնային էլեմենտների կամ մարտկոցների համար: Եթե

լիթիումային էլեմենտները կամ մարտկոցները գտնվում են սարքավորման մեջ կամ փաթեթավորված են սարքավորման հետ, ապա պետք է նշվի ՄԱԿ-ի նշագրման համարը, որին նախորդում են «ՄԱԿ» տառերը, օրինակ, համապատասխանաբար, «ՄԱԿ 3091» կամ «ՄԱԿ 3481»: Եթե փաթեթը պարունակում է ՄԱԿ-ի նշագրամը տարբեր համակարգերի ներքո դասակարգված լիթիումային էլեմենտներ կամ մարտկոցներ, ապա պետք է մեկ կամ մեկից ավելի մակնշումների վրա նշվեն ՄԱԿ-ի նշագրման բոլոր կիրառելի համարները:



### Նկար 5.2.1.9.2



Լիթիումային մարտկոցի նշանը

- \* ՄԱԿ-ի նշագրման համարի (համարների) տեղը
- \*\* Հեռախոսահամարի տեղը՝ լրացուցիչ տեղեկությունների համար

Նշանը պետք է ունենա ստվերագծված եզրերով ուղղանկյան ձև: Չափսերը պետք է լինեն նվազագույնը 120 մմ (լայնությունը) x 110 մմ (բարձրությունը), իսկ ստվերագծի նվազագույն լայնությունը պետք է լինի 5 մմ: Խորհրդանշանը (այնպիսի մարտկոցների խումբ, որոնցից մեկը վնասված է, կամ որից տեղի է ունենում արտահոսք, ՄԱԿ-ի նշագրման վերոնշյալ համար՝ լիթիում-իոնային կամ լիթիումի մետաղական մարտկոցների կամ էլեմենտների դեպքում) պետք է լինի սեւ սպիտակի վրա: Ստվերագիծը պետք է լինի կարմիր: Պայմանավորված փաթեթի չափսով՝ չափսերը/գծի հաստությունը կարող են փոքրացվել մինչև 105 մմ (լայնությունը) x 74 մմ (բարձրությունը): Եթե չափսերը նշված չեն, ապա բոլոր հատկանիշները պետք է մոտավոր համաչափ լինեն ցուցադրված պատկերի հատկանիշներին:

#### 5.2.1.10. Փաթեթի ճիշտ դիրքը մատնանշող սլաքները


5.2.1.10.1. Եթե այլ բան նախատեսված չէ 5.2.1.10.2-ով,

- հեղուկներ պարունակող ներքին փաթեթվածքներով համակցված փաթեթվածքները,


- օդանցքներ ունեցող առանձին փաթեթվածքները, եւ
- սառեցված հեղուկացված գազերի փոխադրման համար նախատեսված կրիոգեն տարաները,

պետք է պարզորեն մակնշված լինեն ստորեւ պատկերված՝ փաթեթի ճիշտ դիրքը մատնանշող սլաքներով կամ ISO 780:1997 ստանդարտով սահմանված տեխնիկական մասնագրերը բավարարող սլաքներով: Փաթեթի ճիշտ դիրքը մատնանշող սլաքները պետք է դրվեն փաթեթի երկու հակադիր ուղղահայաց կողմերում, եւ սլաքները պետք է ցույց տան ճիշտ ուղղահայաց ուղղություն: Դրանք պետք է լինեն ուղղանկյուն եւ այնպիսի չափսերի, որ լինեն պարզ տեսանելի եւ փաթեթի չափսերին համաչափ: Սլաքների շուրջ ուղղանկյունաձեւ վանդակ պատկերելը պարտադիր չէ:

Նկար 5.2.1.10.1.1



Նկար 5.2.1.0.1.2



կամ

Երկու սեւ կամ կարմիր սլաք սպիտակ կամ համապատասխան գունային հակադրությամբ ֆոնի վրա:

Ուղղանկյունաձեւ վանդակը պարտադիր չէ:

Բոլոր հատկանիշները պետք է մոտավոր համաչափ լինեն ցուցադրված պատկերի հատկանիշներին:

5.2.1.10.2. Փաթեթի ճիշտ դիրքը մատնանշող սլաքների առկայություն չի պահանջվում այն փաթեթների դեպքում, որոնք պարունակում են՝

- ա) ճնշումային տարաներ պարունակող արտաքին փաթեթվածքներ՝ բացի կրիոգեն տարաներից,
- բ) վտանգավոր բեռներ պարունակող արտաքին փաթեթվածքներ, որոնք տեղադրված են յուրաքանչյուրը 120 մլ-ից ոչ ավելի տարողությամբ ներքին փաթեթվածքներում, որոնք ապահովված են հեղուկ պարունակությունն ամբողջությամբ կլանելու համար ներքին եւ արտաքին փաթեթվածքների միջեւ տեղադրվող բավարար քանակությամբ կլանիչ նյութով,
- գ) 6.2 դասի վարակիչ նյութեր պարունակող արտաքին փաթեթվածքներ, որոնք տեղադրված են յուրաքանչյուրը 50 մլ-ը չգերազանցող առաջնային տարաներում,

- դ) 7-րդ դասի ռադիոակտիվ նյութեր պարունակող «IP-2», «IP-3», «A», «B(U)», «B(M)» կամ «C» տեսակի փաթեթներ,
- ե) այնպիսի պատրաստվածքներ պարունակող արտաքին փաթեթվածքներ, որոնք բոլոր կողմերից հերմետիկ փակված են (օրինակ՝ ալկոհոլ կամ սնդիկ պարունակող ջերմաչափեր, ատրոզոլներ եւ այլն), կամ
- զ) արտաքին փաթեթվածքներ, որոնք պարունակում են հերմետիկորեն փակված այնպիսի ներքին փաթեթվածքներով վտանգավոր բեռներ, որոնցից յուրաքանչյուրի տարողությունը չի գերազանցում 500 մլ-ը:

5.2.1.10.3. Փաթեթի ճիշտ դիրքից բացի, այլ նպատակներով սլաքները չեն ցուցադրվում սույն ենթաբաժնին համապատասխան մակնշված փաթեթի վրա:

## **5.2.2. Փաթեթների պիտակավորումը**

### **5.2.2.1. Պիտակավորման մասին դրույթներ**

5.2.2.1.1. 3.2 գլխի Ա աղյուսակում նշված յուրաքանչյուր պատրաստվածքի կամ նյութի դեպքում ամրացվում են 5-րդ սյունակում նշված պիտակները, եթե այլ բան նախատեսված չէ 6-րդ սյունակում նշված հատուկ դրույթով:

5.2.2.1.2. Պիտակների փոխարեն կարող են օգտագործվել սահմանված նմուշներին համապատասխանող, չջնջվող՝ վտանգի մասին նախազգուշացնող մակնշումներ:

### **5.2.2.1.3.-5.2.2.1.5 (Նախատեսվում է վերապահում)**

5.2.2.1.6. Եթե այլ բան նախատեսված չէ 5.2.2.1.2-ով, յուրաքանչյուր պիտակ՝

- ա) ամրացվում է փաթեթի նույն մակերեսին, եթե փաթեթի չափսերը թույլ են տալիս, իսկ 1-ին եւ 7-րդ դասի փաթեթների դեպքում՝ բեռնառաքման ճշգրիտ անվանման նշանի մոտ,
- բ) փաթեթի վրա տեղադրվում է այնպես, որպեսզի այն չծածկվի կամ չխաթարվի փաթեթվածքի որեւէ մասով կամ դրան ամրացված այլ հարմարանքով կամ որեւէ այլ պիտակով կամ մակնշմամբ, եւ
- գ) մեկից ավելի պիտակի պահանջի դեպքում, փակցվում է մյուսների կողքին:

Եթե փաթեթն ունի այնպիսի անկանոն ձեւ կամ այնքան փոքր չափսեր, որ պիտակը հնարավոր չէ հարկ եղած ձեւով ամրացնել, ապա պիտակը կարող է փակցվել փաթեթի վրա պինդ ամրացված պիտակի կամ այլ հարմար միջոցներով:

5.2.2.1.7. 450 լիտրից ավելի տարողությամբ՝ սորուն բեռների համար նախատեսված միջին բեռնվածության կոնտեյներները եւ խոշոր փաթեթվածքները պիտակավորվում են երկու հակադիր կողմերից:

5.2.2.1.8. *(Նախատեսվում է վերապահում)*

5.2.2.1.9. *Ինքնաբռնկվող նյութերի եւ օրգանական պերօքսիդների պիտակավորման մասին հատուկ դրույթներ*

ա) Թիվ 4.1 նմուշին համապատասխանող պիտակով նաեւ ցույց է տրվում, որ արտադրանքը կարող է լինել դյուրավառ, եւ թիվ 3 նմուշին համապատասխանող պիտակ այլեւս չի պահանջվում: Բացի դրանից, «B» տեսակի ինքնաբռնկվող նյութերի դեպքում կիրառվում է թիվ 1 նմուշին համապատասխանող պիտակ, եթե իրավասու մարմինը կոնկրետ փաթեթվածքի համար չի տվել այդպիսի պիտակ չկիրառելու թույլտվություն՝ հիմք ընդունելով փորձարկման արդյունքները, որոնց համաձայն այդպիսի փաթեթվածքում ինքնաբռնկվող նյութը բռնկման հատկություններ չի դրսեւորում:

բ) Թիվ 5.2 նմուշին համապատասխանող պիտակով նաեւ ցույց է տրվում, որ արտադրանքը կարող է լինել դյուրավառ, եւ թիվ 3 նմուշին համապատասխանող պիտակ այլեւս չի պահանջվում: Բացի դրանից՝ օգտագործվում են հետեւյալ պիտակները՝

i) «B» տեսակի օրգանական պերօքսիդների դեպքում կիրառվում է թիվ 1 նմուշին համապատասխանող պիտակ, եթե իրավասու մարմինը կոնկրետ փաթեթվածքի համար չի տվել այդպիսի պիտակ չկիրառելու թույլտվություն՝ հիմք ընդունելով փորձարկման արդյունքները, որոնց համաձայն այդպիսի փաթեթվածքում օրգանական պերօքսիդը բռնկման հատկություններ չի դրսեւորում:

ii) Պահանջվում է թիվ 8 նմուշին համապատասխանող պիտակ, եթե ապահովված է Ց-րդ դասին ներկայացվող փաթեթավորման I կամ II խմբի չափորոշիչների համապատասխանությունը:

Անվանմամբ նշված ինքնաբռնկվող նյութերի եւ օրգանական պերօքսիդների դեպքում՝ փակցվող պիտակները նշված են համապատասխանաբար 2.2.41.4-ում եւ 2.2.52.4-ում ներկայացված ցանկում:

5.2.2.1.10. *Վարակիչ նյութերի փաթեթների պիտակավորման մասին հատուկ դրույթներ*

Բացի թիվ 6.2 նմուշի պիտակից՝ վարակիչ նյութերի փաթեթների վրա

պետք է լինի որեւէ այլ պիտակ, որը պահանջվում է պարունակության բնույթով:

5.2.2.1.11. *Ռադիոակտիվ նյութերի փաթեթների պիտակավորման մասին հարուկ դրույթներ*

5.2.2.1.11.1. Բացառությամբ այն դեպքերի, երբ 5.3.1.1.3-ին համապատասխան օգտագործվում են խոշորացված պիտակներ, ռադիոակտիվ նյութեր պարունակող յուրաքանչյուր փաթեթի, տրանսպորտային կապոցի եւ կոնտեյնների վրա պետք է լինի առնվազն երկու պիտակ, որը պետք է համապատասխանի թիվ 7A, 7B կամ 7C կիրառելի նմուշներին՝ ըստ համապատասխան կատեգորիայի: Պիտակներն ամրացվում են փաթեթի կամ տրանսպորտային կապոցի արտաքին մակերեսին երկու հակադիր կողմերից կամ կոնտեյնների կամ ցիստեռնի արտաքին մակերեսին՝ բոլոր չորս կողմերից: Բացի դրանից՝ տրոհվող նյութ, բացառությամբ 2.2.7.2.3.5-ի դրույթների համաձայն ազատված տրոհվող նյութի, պարունակող յուրաքանչյուր փաթեթի, տրանսպորտային կապոցի եւ կոնտեյնների վրա պետք է լինեն թիվ 7E նմուշին համապատասխանող պիտակներ. այդ պիտակները համապատասխան դեպքերում փակցվում են ռադիոակտիվ նյութի այն պիտակների կողքին, որոնք համապատասխանում են թիվ 7A, 7B կամ 7C կիրառելի նմուշին: Պիտակները չեն ծածկում 5.2.1-ում նշված մակնշումները: Պարունակությանը չառնչվող պիտակները հեռացվում կամ ծածկվում են:

5.2.2.1.11.2. Թիվ 7A, 7B կամ 7C կիրառելի նմուշին համապատասխանող յուրաքանչյուր պիտակի վրա լրացվում են հետեւյալ տեղեկությունները՝

ա) *պարունակությունը՝*

i) 2.2.7.2.2.1 աղյուսակից վերցված ռադիոնուկլիդի (ռադիոնուկլիդների) անվանումը (անվանումները)՝ օգտագործելով այդ աղյուսակում նշված խորհրդանշանները՝ բացառությամբ LSA-I նյութի: Ռադիոնուկլիդների խառնուրդների դեպքում, տողի ազատ տարածությունից ելնելով, նշվում են այն ռադիոնուկլիդները, որոնց նկատմամբ կիրառվում են առավել մեծ թվով սահմանափակումներ: Ռադիոնուկլիդի (ռադիոնուկլիդների) անվանումից (անվանումներից) հետո նշվում է «LSA» կամ «SCO» խումբը: Այդ նպատակով օգտագործվում են «LSA-II», «LSA-III», «SCO-I» եւ «SCO-II» եզրույթները»

ii) LSA-I նյութի դեպքում անհրաժեշտ է նշել միայն "LSA-I" տերմինը. ռադիոնուկլիդի անվանումն անհրաժեշտ չէ.

բ) *ակտիվությունը՝* ռադիոակտիվ պարունակության առավելագույն

ակտիվությունը փոխադրման ընթացքում՝ արտահայտված բեկկերելներով (Բկ) եւ SI նախաձանցի համապատասխան խորհրդանշանով (տե՛ս 1.2.2.1): Տրոհվող նյութի դեպքում ակտիվության փոխարեն կարող է նշվել միավորումներում առկա տրոհվող նուկլիդների ընդհանուր զանգվածը՝ գրամներով (գ) կամ դրա բազմապատիկներով:

գ) տրանսպորտային կապոցների եւ կոնտեյնների դեպքում պիտակի վրա առկա «պարունակություն» եւ «ակտիվություն» գրառումների տեղում պետք է նշված լինեն (ա)-ով եւ (բ)-ով պահանջվող տեղեկությունները՝ ամբողջացված տրանսպորտային կապոցի եւ տարայի ամբողջ պարունակության համար, սակայն եթե տրանսպորտային կապոցները կամ տարաները պարունակում են խառը բեռներ, որոնց փաթեթներում կան տարբեր ռադիոնուկլիդներ, ապա դրանց պիտակների վրա այդ գրառումների փոխարեն կարող է գրված լինել՝ «տե՛ս տրանսպորտային բեռնագրերը»:

դ) *տրանսպորտային ինդեքսը՝* 5.1.5.3.1-ին եւ 5.1.5.3.2-ին համապատասխան սահմանված համարը (տրանսպորտային ինդեքսի գրառում չի պահանջվում I-WHITE դասի դեպքում):

5.2.2.1.11.3. Թիվ 7E նմուշին համապատասխանող յուրաքանչյուր պիտակ լրացվում է կրիտիկականության տեսակետից անվտանգության ինդեքսով (ԿԱԻ), ինչպես նշված է հաստատման այն սերտիֆիկատում, որը կիրառելի է այն երկրներում, որոնց տարածք կամ որոնց տարածքով փոխադրվում է բեռը, եւ որը տրվել է իրավասու մարմնի կողմից, կամ ինչպես նշված է 6.4.11.2-ում կամ 6.4.11.3-ում:

5.2.2.1.11.4. Տրանսպորտային կապոցների եւ կոնտեյներների դեպքում թիվ 7E նմուշին համապատասխանող պիտակի վրա նշվում են դրանց մեջ պարունակվող բոլոր փաթեթների կրիտիկականության տեսակետից անվտանգության ինդեքսները:

5.2.2.1.11.5. Իրավասու մարմնի կողմից կառուցվածքի կամ առաքման հաստատման պահանջով օգտագործվող փաթեթների միջազգային առաքման բոլոր դեպքերում, որի համար փոխադրման հարցով հետաքրքրված տարբեր երկրներում կիրառվում են հաստատման տարբեր ձեւեր, պիտակավորումը պետք է կատարվի կառուցվածքի ծագման երկրում տրված սերտիֆիկատին համապատասխան:

## **5.2.2.2. Պիտակների մասին դրույթներ**


5.2.2.2.1. Պիտակները պետք է բավարարեն ստորեւ սահմանված դրույթները եւ գույնի, խորհրդանշանների եւ ընդհանուր ձեւաչափի առումով համապատասխանեն 5.2.2.2.2-ում նշված նմուշներին: Ընդունելի են նաեւ փոխադրման այլ եղանակների համար պահանջվող

համապատասխան նմուշները՝ չնչին տարբերություններով, եթե դրանք չեն խաթարում պիտակի հիմնական իմաստը:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** Անհրաժեշտության դեպքում, 5.2.2.2.2-ում պիտակները պատկերվում են կետագծված սահմաններով՝ 5.2.2.2.1.1-ին համապատասխան: Այդ պահանջը կիրառելու անհրաժեշտություն չի առաջանում, եթե պիտակը պատկերված է գունային հակադրությամբ ֆոնի վրա:

5.2.2.2.1.1. Պիտակները պետք է ունենան 5.2.2.2.1.1 նկարում ներկայացված ձևը:

Նկար 5.2.2.2.1.1



Դասի/բաժնի պիտակը

- \* Ստորին անկյունում ներկայացվում է դասը կամ 4.1, 4.2 եւ 4.3 դասերի համար՝ «4» թիվը, կամ 6.1 եւ 6.2 դասերի համար՝ «6» թիվը:
- \*\* Ստորին կետում պետք է (պարտադիր) ներկայացված լինի կամ կարող է (ոչ պարտադիր) ներկայացված լինել լրացուցիչ տեքստը/խորհրդանշանը/տառերը:
- \*\*\* Այս վերին կետում պետք է ներկայացված լինի դասի խորհրդանշանը կամ ենթադասի համարը՝ 1.4, 1.5 եւ 1.6 ենթադասերի դեպքում, կամ «ՏՐՈՎՈՂ» բառը՝ թիվ 7E նմուշի դեպքում:

5.2.2.2.1.1.1 Պիտակները պատկերվում են գունային հակադրությամբ ֆոնի վրա կամ կետագծային կամ հոծ գծով գծված վանդակի մեջ:

5.2.2.2.1.1.2 Պիտակը պետք է ունենա 45° անկյան տակ պատկերված քառակուսու ձեւ (շեղանկյան տեսքով): Նվազագույն չափսերը պետք է լինեն 100 մմ x 100 մմ, իսկ շեղանկյան ուրվագիծը կազմող եզրագծի ներսի կողմից անցնող գծի նվազագույն լայնությունը պետք է լինի 2 մմ: Եզրագծի ներսի կողմից անցնող գիծը պետք է լինի դրան զուգահեռ եւ դրսի կողմից պետք է լինի պիտակի եզրագծից 5 մմ հեռավորության վրա:



Պիտակի վերին կեսում եզրագծի ներսի կողմից անցնող գիծը պետք է ունենա նույն գույնը, ինչ խորհրդանշանը, իսկ պիտակի ստորին կեսում եզրագծի ներսի կողմից անցնող գիծը պետք է ունենա նույն գույնը, ինչ ստորին անկյունում նշված դասի կամ ենթադասի համարը: Եթե չափսերը նշված չեն, ապա բոլոր հատկանիշները պետք է մոտավոր համաչափ լինեն ցուցադրված պատկերի հատկանիշներին:

- 5.2.2.2.1.1.3 Պայմանավորված փաթեթի չափսով՝ չափսերը կարող են փոքրացվել՝ պայմանով, որ պահպանվի խորհրդանշանների եւ պիտակի մյուս տարրերի պարզ տեսանելիությունը: Պետք է պահպանվի եզրագծի ներսի կողմից անցնող գծի՝ պիտակի եզրագծից 5 մմ հեռավորությունը: Պետք է պահպանվի եզրագծի ներսի կողմից անցնող գծի նվազագույն 2մմ լայնությունը: Բալոնների չափսերը պետք է համապատասխանեն 5.2.2.2.1.2-ին:
- 5.2.2.2.1.2. 2-րդ դասի բալոնների դեպքում, ըստ դրանց ձեւի, փաթեթի ճիշտ դիրքի եւ փոխադրման համար նախատեսված պաշտպանիչ միջոցների, կարող են օգտագործվել սույն բաժնում նշված պիտակները եւ, անհրաժեշտության դեպքում, վտանգավոր նյութի առկայության մասին նախազգուշացնող նշան, որոնց չափսերը փոքրացվել են «Գազի բալոններ-նախազգուշական պիտակներ» ISO 7225:2005 ստանդարտով սահմանված չափսերին համապատասխան՝ այդպիսի բալոնների ոչ գլանաձեւ հատվածում (ուսանման թեքվածքին) ամրացնելու համար:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** Եթե բալոնի տրամագիծը չափազանց փոքր է բալոնի վերին ոչ գլանաձեւ հատվածում փոքրացված պիտակները ցուցադրելու համար, ապա փոքրացված պիտակները կարող են ցուցադրվել գլանաձեւ հատվածում:

Չնայած 5.2.2.1.6-ի դրույթի պահանջներին՝ պիտակները եւ վտանգավոր նյութի առկայության մասին նախազգուշացնող նշանը (տե՛ս 5.2.1.8.3) կարող են ծածկել մեկը մյուսին այնչափ, որչափ սահմանված է ISO 7225:2005 ստանդարտով: Այնուամենայնիվ, ցանկացած դեպքում, պիտակի վրա փակցված՝ վտանգի մասին նախազգուշացնող հիմնական պիտակները եւ թվերը պետք է մշտապես լինեն լրիվ տեսանելի, իսկ խորհրդանշանները՝ տարբերակելի:

2-րդ դասի գազերի համար ճնշումային դատարկ ու չմաքրված տարաները կիրառությունից դուրս եկած կամ վնասված պիտակներով կարող են փոխադրվել վերալցավորման կամ զննման նպատակով, ինչպես անհրաժեշտ է, եւ գործող նորմերին համապատասխան, նոր պիտակի փակցման նպատակով կամ ճնշումային տարայի հեռացման համար:

- 5.2.2.2.1.3. Բացառությամբ 1-ին դասի 1.4, 1.5 եւ 1.6 ենթադասերի համար

գործածվող պիտակների՝ պիտակի վերին կեսում պետք է պատկերված լինի խորհրդանշանը, իսկ ստորին կեսը պետք է պարունակի՝

ա) 1, 2, 3, 5.1, 5.2, 7, 8 եւ 9 դասերի դեպքում՝ դասի համար,

բ) 4.1, 4.2 եւ 4.3 դասերի դեպքում՝ «4» թիվը,

գ) 6.1 եւ 6.2 դասերի դեպքում՝ «6» թիվը:

Այնուամենայնիվ, թիվ 9A նմուշի պիտակի դեպքում պիտակի վերին կեսը պետք է պարունակի միայն խորհրդանշանի յոթ ուղղահայաց զույգերը, իսկ ստորին կեսը պետք է պարունակի խորհրդանշանի մարտկոցների խումբը եւ դասի համարը:

Բացի թիվ 9A պիտակի նմուշից՝ պիտակները կարող են պարունակել տեքստային տեղեկություններ, ինչպես օրինակ՝ ՄԱԿ-ի նշագրման համարը կամ վտանգը նկարագրող բառեր (օրինակ՝ «ոչուրավառ»)՝ 5.2.2.2.1.5-ին համապատասխան՝ պայմանով, որ տեքստը չփակի կամ չխաթարի պիտակի համար պահանջվող մյուս տարրերը:

5.2.2.2.1.4. Բացի դրանից՝ 1-ին դասի պիտակների ստորին կեսում, բացառությամբ 1.4, 1.5 եւ 1.6 ենթադասերի, դասի համարի վերելում պետք է նշված լինի նյութի կամ պատրաստվածքի ենթադասի համար ու համատեղելիության խմբի տառը: 1.4, 1.5 եւ 1.6 ենթադասերի պիտակների վերին կեսում նշվում է ենթադասի համարը, իսկ ստորին կեսում՝ դասի համարը եւ համատեղելիության խմբի տառը:

5.2.2.2.1.5. 7-րդ դասի նյութերի համար օգտագործվող պիտակներից բացի՝ այլ պիտակների վրա խորհրդանշանի ստորին կեսում ոչ պարտադիր պահանջով նշվող տեղեկությունները կարող են լինել վտանգի բնույթի եւ բեռնավորման-բեռնաթափման ժամանակ ձեռնարկվող նախազգուշական միջոցների մասին:

5.2.2.2.1.6. Խորհրդանշանները, տեքստը եւ համարները պետք է լինեն հստակ ընթեռնելի, չճնշվող եւ բոլոր պիտակների վրա պատկերված լինեն սեւ գույնով, բացի՝

ա) 8-րդ դասի համար օգտագործվող պիտակներից, որոնց վրա տեքստը (առկայության դեպքում) եւ դասի համարը պատկերվում են սպիտակ գույնով.

բ) ամբողջությամբ կանաչ, կարմիր կամ կապույտ ֆոնով պիտակներից, որոնց վրա դրանք կարող են պատկերվել սպիտակ գույնով.

գ) 5.2 դասի համար օգտագործվող պիտակներից, որոնց վրա խորհրդանշանը կարող է պատկերվել սպիտակ գույնով, եւ

դ) ՄԱԿ-ի նշագրման 1011, 1075, 1965 եւ 1978 համարների գազերի

համար օգտագործվող բալունների եւ գազի անոթների վրա ամրացվող թիվ 2.1 նմուշին համապատասխանող պիտակներից, որոնց վրա դրանք կարող են պատկերվել տարայի ֆոնային գույնով, եթե ապահովվում է համապատասխան գունային հակադրություն:

5.2.2.2.1.7. Բոլոր պիտակները պետք է կարողանան դիմակայել եղանակային պայմաններին՝ առանց կորցնելու արդյունավետությունը:

5.2.2.2.2. Պիտակների օրինակները

## 1-ԻՆ ԴԱՍԻ ՎՏԱՆԳԸ

### Պայթյունավտանգ նյութեր կամ պատրաստվածքներ



(Թիվ 1)

1.1, 1.2 եւ 1.3 ենթաբաժինները

Խորհրդանշան (պայթող ռումբ)՝ սեւ, ֆոնը՝ նարնջագույն, ստորին անկյունում՝ թիվ «1»



(Թիվ 1.4)

Ենթադաս 1.4



(Թիվ 1.5)

Ենթադաս 1.5



(Թիվ 1.6)

Ենթադաս 1.6

Ֆոնը՝ նարնջագույն, թվերը՝ սեւ: Թվանշանները պետք է լինեն մոտ 30մմ բարձրության եւ 5մմ հաստության (100մմ x 100մմ չափսեր ունեցող պիտակի համար): Ստորին անկյունում՝ թիվ «1»

\*\* Ենթաբաժնի մասին տեղեկությունների տեղը, որը կարող է մնալ դատարկ, եթե պայթյունավտանգ լինելը լրացուցիչ վտանգ է:

\* Համատեղելիության խմբի մասին տեղեկությունների տեղը, որը կարող է մնալ դատարկ, եթե պայթյունավտանգ լինելը լրացուցիչ վտանգ է:

## 2-ՐԴ ԴԱՍԻ ՎՏԱՆԳԸ

### Գազեր



(Թիվ 2.1)

Դյուրավառ գազեր  
Խորհրդանշան (կրակ)՝ սեւ կամ սպիտակ,  
(եթե այլ բան նախատեսված է 5.2.2.2.1.6(դ)-ով)  
Ֆոնը՝ կարմիր, ստորին անկյունում՝ թիվ «2»



(Թիվ 2.2)

Ոչ դյուրավառ, ոչ թունավոր գազեր  
Խորհրդանշանը (գազի բալոն)՝ սեւ կամ սպիտակ,  
Ֆոնը՝ կանաչ, ստորին անկյունում՝ թիվ «2»

### Յ-ՐԴ ԴԱՍԻ ՎՏԱՆԳԸ

#### Դյուրավառ հեղուկներ



(Թիվ 2.3)

Թունավոր գազեր Խորհրդանշանը  
(գանգ եւ խաչվող ոսկորներ)՝ սեւ,  
Ֆոնը՝ սպիտակ, ստորին անկյունում՝ թիվ «2»



(Թիվ 3)

Խորհրդանշանը (կրակ)՝ սեւ կամ սպիտակ,  
Ֆոնը՝ կարմիր, ստորին անկյունում՝ թիվ «3»

#### 4.1 ԴԱՍԻ ՎՏԱՆԳ

Դյուրավառ պինդ նյութեր, ինքնաբռնկվող նյութեր, պոլիմերացնող նյութեր եւ պինդ ապազգայունացված պայթուցիկներ



(Թիվ 4.1)

Խորհրդանշանը (կրակ)՝ սեւ, ֆոնը՝ սպիտակ, յոթ ուղղահայաց կարմիր զուլերով, ստորին անկյունում՝ թիվ «4»

#### 4.2 ԴԱՍԻ ՎՏԱՆԳ

Նյութեր, որոնք ունակ են ինքնաբռնկման



(Թիվ 4.2)

Խորհրդանշանը (կրակ)՝ սեւ, ֆոնը՝ վերին կեսը՝ սպիտակ, ստորին կեսը՝ կարմիր, ստորին անկյունում՝ թիվ «4»

#### 4.3 ԴԱՍԻ ՎՏԱՆԳ

Նյութեր, որոնք ջրի հետ փոխազդեցության մեջ մտնելիս, արտազատում են դյուրավառ գազեր



(Թիվ 4.3)

Խորհրդանշանը (կրակ)՝ սեւ կամ սպիտակ, ֆոնը՝ կապույտ, ստորին անկյունում՝ թիվ «4»

#### 5.1 ԴԱՍԻ ՎՏԱՆԳ

Օքսիդացնող նյութեր



(Թիվ 5.1)

Խորհրդանշանը (բոց շրջանակի վրա)՝ սեւ, ֆոնը՝ դեղին, ստորին անկյունում՝ թիվ «5.1»

#### 5.2 ԴԱՍԻ ՎՏԱՆԳ

Օրգանական պերօքսիդներ



(Թիվ 5.2)

Խորհրդանշանը (կրակ)՝ սեւ կամ սպիտակ, ֆոնը՝ վերին կեսը՝ կարմիր, ստորին կեսը՝ դեղին, ստորին անկյունում՝ թիվ «5.2»

## 6.1 ԴԱՍԻ ՎՏԱՆԳ

### Թունավոր նյութեր



(Թիվ 6.1)

Խորհրդանշանը (գանգ եւ խաչվող ոսկորներ)՝ սեւ,  
Ֆոնը՝ սպիտակ, ստորին անկյունում՝ թիվ «6»

## 6.2 ԴԱՍԻ ՎՏԱՆԳ

### Վարակիչ նյութեր



(Թիվ 6.2)

Պիտակի ստորին կեսում կարող են տեղադրվել հետեւյալ գրառումները՝ «ՎԱՐԱԿԻՉ ՆՅՈՒԹ»  
եւ «Վնասման կամ արտահոսքի դեպքում անմիջապես տեղեկացնել պետական  
առողջապահական մարմիններին»

Խորհրդանշանը՝ (երեք կիսալուսիններ՝ մեջտեղում շրջան) եւ գրառումները՝ սեւ,  
ֆոնը՝ սպիտակ, ստորին անկյունում՝ թիվ «6»

## 7-ՐԴ ԴԱՍԻ ՎՏԱՆԳԸ

### Ռադիոակտիվ նյութեր



(Թիվ 7A)

I կատեգորիա՝ սպիտակ  
Խորհրդանշանը (եռաշերտ նշան)՝ սեւ,  
ֆոնը՝ սպիտակ,  
Տեքստը (պարտադիր)՝ սեւ գույնով՝  
պիտակի ստորին կեսում՝  
«ՌԱԴԻՈԱԿՏԻՎ»  
«ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝.....»  
«ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆԸ՝.....»  
«ՌԱԴԻՈԱԿՏԻՎ» բառին հաջորդում է մեկ  
կարմիր զուլակ  
ստորին անկյունում՝ թիվ «7»



(Թիվ 7B)

II կատեգորիա՝ դեղին  
Խորհրդանշանը (եռաշերտ նշան)՝ սեւ,  
ֆոնը՝ վերին կեսը՝ դեղին սպիտակ եզրագծերով, ստորին կեսը՝ սպիտակ,  
տեքստը (պարտադիր)՝ սեւ գույնով՝ պիտակի ստորին կեսում՝  
«ՌԱԴԻՈԱԿՏԻՎ»  
«ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝.....»  
«ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆԸ՝.....»  
Սեւ եզրագծված վանդակում՝ «ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԻՆԴԵՔՍԸ»,  
«ՌԱԴԻՈԱԿՏԻՎ» բառին «ՌԱԴԻՈԱԿՏԻՎ» բառին հաջորդում  
հաջորդում է երկու կարմիր զուլակ, է երեք կարմիր զուլակ,  
ստորին անկյունում՝ թիվ «7»



(Թիվ 7B)

7-րդ դասի տրոհվող նյութեր ֆոնը՝ սպիտակ,  
տեքստը (պարտադիր)՝ սեւ գույնով՝ պիտակի վերին կեսում՝  
«ՏՐՈՂՎՈՂ», պիտակի ստորին կեսում՝ սեւ եզրագծված վանդակում՝ «ԿՐԻՏԻԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ՏԵՍԱԿԵՏԻՑ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍԸ»  
ստորին անկյունում՝ թիվ «7»

## 8-ՐԴ ԴԱՍԻ ՎՏԱՆԳԸ

### Կոռոզիոն նյութեր




(Թիվ 8)

խորհրդանշանը՝ (երկու ապակյա անոթներից ծորացող եւ ձեռքի ու մետաղի վրա կաթող հեղուկներ) սեւ,

ֆոնը՝ վերին կեսը՝ սպիտակ, ստորին կեսը՝ սեւ՝ սպիտակ եզրերով, ստորին անկյունում՝ թիվ «8»

## 9-ՐԴ ԴԱՍԻ ՎՏԱՆԳԸ

### Այլ վտանգավոր նյութեր եւ պատրաստվածքներ



(Թիվ 9)

խորհրդանշանը (յոթ ուղղահայաց զույգ վերին կեսում)՝ սեւ, ֆոնը՝ սպիտակ, ստորին անկյունում՝ ընդգծված թիվ «9»



(Թիվ 9A)

խորհրդանշանը (յոթ ուղղահայաց զույգ վերին կեսում, այնպիսի մարտկոցների խումբ, որոնցից մեկը ջարդվել է, կամ տեղի է ունենում արտահոսք՝ ստորին կեսում)՝ սեւ.

Ֆոնը՝ սպիտակ. ստորին անկյունում՝ ընդգծված թիվ «9»



### ԳԼՈՒԽ 5.3

#### ԿՈՆՏԵՅՆԵՐՆԵՐԻ, ԳՐՏԿ-ՆԵՐԻ, ՊԱՇՄ-ՆԵՐԻ, ՑԻՍՏԵՌՆ-ԿՈՆՏԵՅՆԵՐՆԵՐԻ, ՇԱՐԺԱԿԱՆ ՑԻՍՏԵՌՆԵՐԻ ԵՎ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՎՐԱ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԱԿՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒՄՆ ՈՒ ԴՐԱՆՑ ՄԱԿՆՇՈՒՄԸ

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** Տրանսպորտային շղթայով փոխադրման նպատակով՝ ներառյալ ծովային ուղեւորությունները, կոնտեյներների, ԳՐՏԿ-ների, ցիստեռն-կոնտեյներների եւ շարժական ցիստեռնների մակնշման ու դրանց վրա տեղեկատվական ցուցանակների տեղադրման համար տե՛ս նաեւ 1.1.4.2.1: Եթե կիրառվում են 1.1.4.2.1(գ)-ի դրույթները, ապա կիրառելի են միայն սույն գլխի 5.3.1.3-ը եւ 5.3.2.1.1-ը:

#### **5.3.1. Տեղեկատվական ցուցանակների տեղադրումը**

##### **5.3.1.1. Ընդհանուր դրույթներ**

5.3.1.1.1. Ինչպես եւ երբ պահանջվում է սույն բաժնում, տեղեկատվական ցուցանակներն ամրացվում են կոնտեյներների, ԳՐՏԿ-ների, ՊԱՇՄ-ների, ցիստեռն-կոնտեյներների, շարժական ցիստեռնների եւ փոխադրամիջոցների արտաքին մակերեսին: Տեղեկատվական ցուցանակները համապատասխանում են կոնտեյներներում, ԳՐՏԿ-ներում, ՊԱՇՄ-ներում, ցիստեռն-կոնտեյներներում, շարժական ցիստեռններում կամ փոխադրամիջոցներում պարունակվող վտանգավոր բեռների համար 3.2 գլխի Ա աղյուսակի 5-րդ սյունակով, անհրաժեշտության դեպքում, 6-րդ սյունակով պահանջվող պիտակներին եւ 5.3.1.7-ում նշված տեխնիկական մասնագրերին: Տեղեկատվական ցուցանակները պատկերվում են գունային հակադրությամբ ֆոնի վրա կամ կետագծային, կամ հոծ գծով գծված վանդակի մեջ:

5.3.1.1.2. 1-ին դասի համար համատեղելիության խմբերը չեն նշվում տեղեկատվական ցուցանակների վրա, եթե փոխադրամիջոցով, կոնտեյներով կամ ՊԱՇՄ-ների հատուկ խցիկներով փոխադրվում են համատեղելիության երկու կամ ավելի խմբերի պատկանող նյութեր կամ պատրաստվածքներ: Տարբեր ենթադասերի պատկանող նյութեր կամ պատրաստվածքներ փոխադրող փոխադրամիջոցների, կոնտեյներների կամ ՊԱՇՄ-ների հատուկ խցիկների վրա պետք է տեղադրվեն միայն ամենավտանգավոր ենթադասի նմուշին համապատասխանող ցուցանակներ՝ հետեւյալ հերթականությամբ՝

1.1 (վտանգավորության առավելագույն աստիճան), 1.5, 1.2, 1.3, 1.6, 1.4 (վտանգավորության նվազագույն աստիճան):

Երբ 1.5 D նյութերը փոխադրվում են 1.2 ենթադասի նյութերի կամ պատրաստվածքների հետ, փոխադրամիջոցի կամ կոնտեյնների վրա պետք է տեղադրված լինի նույն տեղեկատվական ցուցանակը, ինչ 1.1 ենթադասի դեպքում:

1.4 ենթադասի, համատեղելիության «S» խմբի պայթյունավտանգ նյութերի փոխադրման դեպքում տեղեկատվական ցուցանակներ չեն պահանջվում:

- 5.3.1.1.3. 7-րդ դասի դեպքում, վտանգի մասին նախազգուշացնող հիմնական ցուցանակը պետք է համապատասխանի 5.3.1.7.2-ում ներկայացված թիվ 7D նմուշին: Այդպիսի ցուցանակ չի պահանջվում ազատված փաթեթներ փոխադրող փոխադրամիջոցների կամ կոնտեյնների, ինչպես նաև փոքր կոնտեյնների դեպքում:

Եթե կարող է պահանջվել, որ փոխադրամիջոցների, կոնտեյնների, ԳՔՏԿ-ների, ցիստեռն-կոնտեյնների կամ շարժական ցիստեռնների վրա փակցվեն 7-րդ դասի պիտակներ եւ տեղեկատվական ցուցանակներ, ապա թիվ 7D տեղեկատվական ցուցանակի փոխարեն կարող է տեղադրվել պահանջվող՝ թիվ 7A, 7B կամ 7C նմուշի պիտակին համապատասխանող խոշորացված պիտակ, որը կարող է ծառայել երկու նպատակներին: Այդ դեպքում չափսերը չպետք է լինեն 250 մմ x 250 մմ-ից պակաս:

- 5.3.1.1.4 9-րդ դասի դեպքում տեղեկատվական ցուցանակը պետք է համապատասխանի 5.2.2.2.2-ի պիտակավորման թիվ 9 նմուշին. պիտակավորման թիվ 9A նմուշը չպետք է օգտագործվի տեղեկատվական ցուցանակներ տեղադրելու նպատակներով:

- 5.3.1.1.5 Մեկից ավելի դասերին պատկանող բեռներ պարունակող կոնտեյնների, ԳՔՏԿ-ների, ՊԱՇՄ-ների, ցիստեռն-կոնտեյնների, շարժական ցիստեռնների կամ փոխադրամիջոցների վրա կարող է չփակցվել լրացուցիչ վտանգի մասին ցուցանակ, եթե տվյալ ցուցանակով ներկայացվող վտանգն արդեն նշված է հիմնական կամ լրացուցիչ վտանգի մասին տեղեկատվական ցուցանակում:

- 5.3.1.1.6 Փոխադրվող վտանգավոր բեռներին կամ դրանց մնացորդներին չառնչվող տեղեկատվական ցուցանակները հանվում կամ փակվում են:

- 5.3.1.1.7 Երբ տեղեկատվական ցուցանակը փակցվում է ծալվող վահանակների վրա, դրանք պետք է նախազգծված ու ամրացված լինեն այնպես, որ բացառվի փոխադրման ընթացքում դրանց բացվելու կամ ամրակից

թուլանալու ցանկացած հնարավորություն (հատկապես հարվածների կամ չկանխատեսված գործողությունների հետեւանքով):

**5.3.1.2. Կոնտեյներների, ԳՐՏԿ-ների, ցիստեռն-կոնտեյներների եւ շարժական ցիստեռնների վրա տեղեկատվական ցուցանակների տեղադրումը**

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** Սույն ենթաբաժինը չի կիրառվում հանովի թափքերի նկատմամբ՝ բացառությամբ հանովի ցիստեռն-թափքերի կամ ավտոճանապարհային/երկաթուղային համակցված փոխադրումներում օգտագործվող հանովի թափքերի:

Տեղեկատվական ցուցանակներն ամրացվում են կոնտեյների, ԳՐՏԿ-ի, ցիստեռն-կոնտեյների կամ շարժական ցիստեռնի երկու կողային մասին եւ ճակատային մասին:

Երբ ցիստեռն-կոնտեյները կամ շարժական ցիստեռնն ունի բազմաթիվ խցիկներ եւ փոխադրում է երկու կամ ավելի վտանգավոր բեռներ, համապատասխան տեղեկատվական ցուցանակները փակցվում են համապատասխան խցիկների տեղադրման վայրի յուրաքանչյուր կողային մասում, իսկ յուրաքանչյուր նմուշի մեկ ցուցանակ տեղադրվում է երկու ճակատային մասերի յուրաքանչյուր կողմում: Եթե բոլոր խցիկների վրա պետք է լինեն նույն տեղեկատվական ցուցանակները, ապա դրանցից միայն մեկական ցուցանակ պետք է տեղադրվի ցիստեռն-կոնտեյների կամ շարժական ցիստեռնի յուրաքանչյուր կողային մասին եւ երկու հետնամասերին:

**5.3.1.3. Կոնտեյներներ, ԳՐՏԿ-ներ, ցիստեռն-կոնտեյներներ կամ շարժական ցիստեռններ տեղափոխող փոխադրամիջոցների վրա տեղեկատվական ցուցանակների տեղադրումը**

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** Սույն ենթաբաժինը չի կիրառվում հանովի թափքերի վրա տեղեկատվական ցուցանակներ տեղադրելու գործողության նկատմամբ՝ բացառությամբ հանովի ցիստեռն-թափքերի կամ ավտոճանապարհային-երկաթուղային համակցված փոխադրումներում օգտագործվող հանովի թափքերի. այդպիսի փոխադրամիջոցների համար տե՛ս 5.3.1.5:

Եթե կոնտեյներների, ԳՐՏԿ-ների, ցիստեռն-կոնտեյներների կամ շարժական ցիստեռնների վրա ամրացված տեղեկատվական ցուցանակները տեսանելի չեն դրանք տեղափոխող փոխադրամիջոցների արտաքին մասից, ապա նույն տեղեկատվական ցուցանակները փակցվում են նաեւ փոխադրամիջոցի երկու կողային մասերին եւ հետնամասին: Հակառակ դեպքում, փոխադրում իրականացնող փոխադրամիջոցի վրա տեղեկատվական ցուցանակի

տեղադրման անհրաժեշտություն չի լինում:

**5.3.1.4. *Խուռնաբեռն փոխադրման համար նախատեսված փոխադրամիջոցների, ավտոցիստեռնների, մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցների, ՊԱՇՄ-ների եւ հանովի ցիստեռններով փոխադրամիջոցների վրա տեղեկատվական ցուցանակների տեղադրումը***

5.3.1.4.1. Տեղեկատվական ցուցանակներն ամրացվում են փոխադրամիջոցի երկու կողային մասերին եւ հետնամասին:

Երբ ավտոցիստեռնը կամ փոխադրամիջոցի վրա հարմարեցված հանովի ցիստեռնն ունի բազմաթիվ խցիկներ եւ փոխադրում է երկու կամ ավելի վտանգավոր բեռներ, ապա համապատասխան տեղեկատվական ցուցանակները փակցվում են համապատասխան խցիկների տեղադրման վայրի յուրաքանչյուր կողային մասում, իսկ յուրաքանչյուր կողային մասում տեղադրված յուրաքանչյուր նմուշի մեկ ցուցանակ՝ փոխադրամիջոցի հետնամասում: Եթե բոլոր խցիկների վրա պետք է լինեն նույն տեղեկատվական ցուցանակները, ապա դրանցից միայն մեկական ցուցանակ պետք է տեղադրվի փոխադրամիջոցի յուրաքանչյուր կողային մասին եւ հետնամասին:

Եթե նույն խցիկի համար պահանջվում են մեկից ավելի ցուցանակներ, ապա դրանք տեղադրվում են կողք կողքի:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** Ծանոթագրություն. եթե, «ԱԴՌ» համաձայնագրին համապատասխան իրականացվող ուղեւորության ընթացքում կամ դրա ավարտից հետո նավի կամ ներքին ջրուղիներով նավարկություն իրականացնող փոխադրամիջոցի վրա բեռնավորման նպատակով ցիստեռն-կիսակցորդն անջատվում է իր տրակտորից, ապա տեղեկատվական ցուցանակներ տեղադրվում են նաեւ կիսակցորդի ճակատային մասում:

5.3.1.4.2. Ցիստեռններով եւ սորուն բեռների համար նախատեսված կոնտեյներներով ՊԱՇՄ-ների վրա դրանցում պարունակվող նյութերի մասին տեղեկատվական ցուցանակներ տեղադրվում են 5.3.1.4.1-ին համապատասխան: 1 000 լիտրից պակաս տարողությամբ ցիստեռնների դեպքում տեղեկատվական ցուցանակները կարող են փոխարինվել 5.2.2.2-ին համապատասխանող պիտակներով:

5.3.1.4.3. 1-ին դասի (բացառությամբ 1.4 ենթադասի «S» համատեղելիության խմբի) նյութեր կամ պատրաստվածքներ պարունակող փաթեթներ փոխադրող ՊԱՇՄ-ների դեպքում տեղեկատվական ցուցանակները տեղադրվում են ՊԱՇՄ-ի երկու կողային մասերին եւ հետնամասում:

Պայթյունավտանգ նյութերի հատուկ խցիկների վրա տեղեկատվական ցուցանակներ տեղադրվում են 5.3.1.1.2-ի դրույթներին

համապատասխան: 5.3.1.1.2-ի վերջին նախադասությունը չի կիրառվում:

5.3.1.1.2-ի վերջին նախադասությունը չի կիրառվում:

**5.3.1.5. Միայն փաթեթներ տեղափոխող փոխադրամիջոցների վրա տեղեկատվական ցուցանակների տեղադրումը**

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** Սույն ենթաբաժինը կիրառվում է միայն փաթեթներով բեռնավորված հանովի թափքեր տեղափոխող փոխադրամիջոցների նկատմամբ՝ բացառությամբ ավտոճանապարհային-երկաթուղային համակցված փոխադրումներում օգտագործվող փոխադրամիջոցների. ավտոճանապարհային-երկաթուղային համակցված փոխադրումներում օգտագործվող փոխադրամիջոցների համար տե՛ս 5.3.1.2 եւ 5.3.1.3:

5.3.1.5.1. 1-ին դասի (բացառությամբ 1.4 ենթադասի «S» համատեղելիության խմբի) նյութեր կամ պատրաստվածքներ պարունակող փաթեթներ փոխադրող փոխադրամիջոցների դեպքում տեղեկատվական ցուցանակները տեղադրվում են փոխադրամիջոցի երկու կողային մասերին եւ հետնամասում:

5.3.1.5.2. 7-րդ դասի (բացառությամբ ազատված փաթեթների) ռադիոակտիվ նյութեր փոխադրող փոխադրամիջոցների կամ ՍՄԿ-ների դեպքում տեղեկատվական ցուցանակները տեղադրվում են փոխադրամիջոցի երկու կողային մասերին եւ հետնամասում:

**5.3.1.6. Դատարկ ավտոցիստեռների, մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցների, ԳՔՏԿ-ների, ՊԱՇՄ-ների, ցիստեռն-կոնտեյներների, շարժական ցիստեռների եւ դատարկ փոխադրամիջոցների ու խուռնաբեռն փոխադրման համար նախատեսված կոնտեյներների վրա տեղեկատվական ցուցանակների տեղադրումը**


5.3.1.6.1. Դատարկ ավտոցիստեռների, հանովի ցիստեռներով փոխադրամիջոցների, մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցների, ԳՔՏԿ-ների, ՊԱՇՄ-ների, ցիստեռն-կոնտեյներների եւ շարժական ցիստեռների (չմաքրված ու չգազազերծված), ինչպես նաեւ դատարկ փոխադրամիջոցների եւ խուռնաբեռն փոխադրման համար նախատեսված կոնտեյներների (չմաքրված) վրա մնում են նախորդ բեռնվածքի համար պահանջված տեղեկատվական ցուցանակները:

**5.3.1.7. Տեղեկատվական ցուցանակների տեխնիկական մասնագրերը**

5.3.1.7.1. Բացառությամբ 5.3.1.7.2-ով նախատեսված՝ 7-րդ դասի բեռների համար օգտագործվող ցուցանակների, եւ 5.3.6.2-ով նախատեսված՝ Շրջակա միջավայրի համար վտանգավոր նյութի առկայության մասին

նախագգուշացնող նշանի, ցուցանակը պետք է ունենա 5.3.1.7.1 նկարում ներկայացված ձևը:

**Նկար 5.3.1.7.1**




Տեղեկատվական ցուցանակ (բացի 7-րդ դասի բեռների համար օգտագործվող ցուցանակներից)

Տեղեկատվական ցուցանակը պետք է ունենա  $45^\circ$  անկյան տակ պատկերված քառակուսու ձև (շեղանկյան տեսքով): Նվազագույն չափսերը պետք է լինեն 250 մմ x 250 մմ (տեղեկատվական ցուցանակի եզրագծի): Եզրագծի ներսի կողմից անցնող գիծը պետք է լինի դրան զուգահեռ եւ դրսի կողմից պետք է լինի տեղեկատվական ցուցանակի եզրագծից 12.5 մմ հեռավորության վրա: Խորհրդանշանի եւ եզրագծի ներսի մասով անցնող գծի գույնը պետք է համապատասխանի տվյալ վտանգավոր բեռների դասի կամ ենթադասի պիտակին: Դասի կամ ենթադասի խորհրդանշանը/թվերը պետք է ունենան այնպիսի դիրք եւ չափս, որ համարժեք լինեն տվյալ վտանգավոր բեռների համապատասխան դասի կամ ենթադասի համար 5.2.2.2-ով սահմանված խորհրդանշանին/թվերին: Տեղեկատվական ցուցանակի վրա պետք է ցուցադրված լինի տվյալ վտանգավոր բեռների դասի կամ ենթադասի համարը (իսկ 1-ին դասի բեռների համար՝ համատեղելիության խմբի տառը)՝ այն համապատասխան պիտակի համար 5.2.2.2-ով սահմանված կարգով, որոնց թվանշանները պետք է լինեն նվազագույնը 25 մմ բարձրության: Եթե չափսերը նշված չեն, ապա բոլոր հատկանիշները պետք է մոտավոր համաչափ լինեն ցուցադրված պատկերի հատկանիշներին:

- 5.3.1.7.2. 7-րդ դասի համար օգտագործվող ցուցանակը չպետք է ունենա 250x250մմ-ից պակաս չափսեր եւ պետք է ունենա եզրագծերից 5մմ հեռավորության վրա գծված՝ եզրագծերին զուգահեռ սեւ գիծ, իսկ մյուս դեպքերում պետք է համապատասխանի ստորեւ պատկերված նմուշին (նմուշ՝ թիվ 7D): «7» թիվը պետք է նվազագույնը 25 մմ բարձրության

լինի: Ցուցանակի վերին կեսի ֆոնը դեղին է, իսկ ստորին կեսի գույնը՝ սպիտակ, եռաշերտ նշանի եւ տպագրված տեքստի գույնը սեւ է: «RADIOACTIVE» («ՌԱԴԻՈԱԿՏԻՎ») բառի գործածությունը ստորին կեսում պարտադիր չէ, ինչի միջոցով հնարավոր է դառնում օգտագործել այդ ցուցանակը բեռի համար ՄԱԿ-ի համապատասխան նշագրման համարը պատկերելու նպատակով:

7-րդ դասի ռադիոակտիվ նյութերի համար նախատեսված ցուցանակը



Խորհրդանշանը (եռաշերտ նշան)՝ սեւ, ֆոնը՝ վերին կեսը՝ դեղին սպիտակ եզրագծերով, ստորին կեսը՝ սպիտակ, Ստորին կեսում նշվում է «ՌԱԴԻՈԱԿՏԻՎ» բառը, կամ այլ դեպքերում՝ ՄԱԿ-ի համապատասխան նշագրման համարը եւ «7» թիվը՝ ստորին անկյունում:

5.3.1.7.3. 3 մ<sup>3</sup>-ից պակաս տարողությամբ ցիստեռնների կամ փոքր կոնտեյներների դեպքում տեղեկատվական ցուցանակները կարող են փոխարինվել 5.2.2.2-ին համապատասխանող պիտակներով: Եթե այս պիտակները տեսանելի չեն փոխադրումն իրականացնող փոխադրամիջոցի արտաքին կողմից, ապա տեղեկատվական ցուցանակները պետք է ամրացվեն նաեւ փոխադրամիջոցի երկու կողային մասերին եւ հետնամասին՝ համաձայն 5.3.1.7.1-ի:

5.3.1.7.4. 1-ին եւ 7-րդ դասերի դեպքում, եթե փոխադրամիջոցի չափսը եւ կառուցվածքն այնպիսին է, որ առկա մակերեսը չի բավարարում սահմանված ցուցանակները տեղադրելու համար, ապա դրա չափսերը կարող են յուրաքանչյուր կողմից նվազեցվել մինչեւ 100 մմ:

### 5.3.2. Նարնջագույն թիթեղով մակնշումը

### **5.3.2.1. Նարնջագույն թիթեղով մակնշման ընդհանուր դրույթներ**

5.3.2.1.1. Վտանգավոր բեռներ փոխադրող տրանսպորտային միավորների վրա պետք է լինի 5.3.2.2.1-ին համապատասխան երկու ուղղանկյուն թիթեղ՝ տեղադրված ուղղահայաց հարթությամբ: Դրանցից մեկը պետք է փակցվի տրանսպորտային միավորի ճակատային մասում, մյուսը՝ հետնամասում, երկուսն էլ՝ տրանսպորտային միավորի երկայնական սոնուն ուղղահայաց: Դրանք պետք է լինեն պարզ տեսանելի:

Եթե վտանգավոր բեռներ պարունակող կցասայլը վտանգավոր բեռների փոխադրման ընթացքում առանձնացված է շարժիչային տրանսպորտային միջոցից, ապա նարնջագույն թիթեղը պետք է փակցված մնա կցասայլի հետնամասին: Այն դեպքում, երբ ցիստեռնները մակնշված են 5.3.2.1.3-ին համապատասխան, այս թիթեղը պետք է համապատասխանի ցիստեռնով փոխադրվող ամենավտանգավոր նյութին:

5.3.2.1.2. Երբ վտանգի նույնականացման համարը նշվում է 3.2 գլխի Ա աղյուսակի 20-րդ սյունակում, ավտոցիստեռնների, մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցների կամ վտանգավոր բեռներ փոխադրող մեկ կամ ավելի ցիստեռններ ունեցող տրանսպորտային միավորների վրա յուրաքանչյուր ցիստեռնի, յուրաքանչյուր ցիստեռնի խցիկի կամ մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցների յուրաքանչյուր տարրի կողային մասերին պարզ տեսանելի վայրում եւ փոխադրամիջոցի երկայնական սոնուն զուգահեռ տեղադրվում են 5.3.2.1.1-ով սահմանված թիթեղների նման նարնջագույն թիթեղներ: Նարնջագույն թիթեղների վրա նշվում են ցիստեռնում, ցիստեռնի խցիկում կամ մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցի յուրաքանչյուր միավորում պարունակվող նյութերից յուրաքանչյուրի վտանգի նույնականացման համարը եւ ՄԱԿ-ի նշագրման համարը՝ համապատասխանաբար սահմանված 3.2 գլխի Ա աղյուսակի 20-րդ եւ 1-ին սյունակներում: ՊԱՇՄ-ների դեպքում այդ պահանջները կիրառվում են միայն 1 000 լիտր կամ ավելի տարողությամբ ցիստեռնների կամ սորուն բեռների համար նախատեսված կոնտեյներների նկատմամբ:

5.3.2.1.3. ՄԱԿ-ի նշագրման 1202, 1203 կամ 1223 համարների տակ դասակարգված նյութեր կամ ՄԱԿ-ի նշագրման 1268 կամ 1863 համարների տակ դասակարգված ավիացիոն վառելիք, բացառությամբ այլ վտանգավոր նյութերի, տեղափոխող ավտոցիստեռնների կամ մեկ կամ ավելի ցիստեռններ ունեցող տրանսպորտային միավորների դեպքում, 5.3.2.1.2-ով սահմանված նարնջագույն թիթեղները կարող են չփակցվել, եթե 5.3.2.1.1-ին համապատասխան ճակատային մասում ու հետնամասում ամրացված թիթեղների վրա առկա է փոխադրվող ամենավտանգավոր, այսինքն ամենացածր բռնկման ջերմաստիճանում



նյութի համար սահմանված վտանգի նույնականացման համարը եւ ՄԱԿ-ի նշագրման համարը:

5.3.2.1.4. Երբ վտանգի նույնականացման համարը նշվում է 3.2 գլխի Ա աղյուսակի 20-րդ սյունակում, տրանսպորտային միավորները եւ կոնտեյներները, որոնցով փոխադրվում են չփաթեթավորված պինդ նյութեր կամ պատրաստվածքներ կամ ՄԱԿ-ի նույն նշագրման համարի տակ դասակարգված փաթեթավորված ռադիոակտիվ նյութեր, որոնք պետք է տեղափոխվեն բացառիկ օգտագործման պայմաններում, եւ որոնցով չի փոխադրվում որեւէ այլ վտանգավոր բեռ, պետք է յուրաքանչյուր տրանսպորտային միավորի կամ կոնտեյների կողային մասերի պարզ տեսանելի վայրում եւ փոխադրամիջոցի երկայնական սոնուն զուգահեռ ունենան 5.3.2.1.1-ով սահմանված թիթեղների նման նարնջագույն թիթեղներ: Նարնջագույն թիթեղների վրա նշվում են վտանգի նույնականացման համարը եւ ՄԱԿ-ի նշագրման համարը՝ համապատասխանաբար սահմանված 3.2 գլխի Ա աղյուսակի 20-րդ եւ 1-ին սյունակներում այն յուրաքանչյուր նյութի համար, որն առանց փաթեթավորման փոխադրվում է տրանսպորտային միավորով կամ կոնտեյներով, կամ փաթեթավորված ռադիոակտիվ նյութի համար, երբ դրա փոխադրումը տրանսպորտային միավորով կամ կոնտեյներով պետք է իրականացվի բացառիկ օգտագործման պայմաններում:

5.3.2.1.5. Եթե կոնտեյներների, ցիստեռն-կոնտեյներների, ԳՐՏԿ-ների կամ շարժական ցիստեռնների վրա ամրացված 5.3.2.1.2-ով եւ 5.3.2.1.4-ով սահմանված նարնջագույն թիթեղները պարզ տեսանելի չեն դրանք տեղափոխող փոխադրամիջոցների արտաքին կողմից, ապա նույն թիթեղները փակցվում են նաեւ փոխադրամիջոցի երկու կողային մասերին:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** Սույն պարբերությունը կարող է չկիրառվել առավելագույնը 3 000 լիտր տարողությամբ ցիստեռններ փոխադրող փակ եւ բրեզենտից ծածկով փոխադրամիջոցների վրա՝ նարնջագույն թիթեղներով մակնշման նկատմամբ:

5.3.2.1.6. 5.3.2.1.2-ով, 5.3.2.1.4-ով եւ 5.3.2.1.5-ով սահմանված նարնջագույն ցուցանակներ չեն պահանջվում այն տրանսպորտային միավորների դեպքում, որոնցով փոխադրվում է միայն մեկ վտանգավոր նյութ եւ չեն փոխադրվում ոչ վտանգավոր նյութերը՝ պայմանով, որ 5.3.2.1.1-ին համապատասխան ճակատային մասում եւ հետնամասում ցուցադրված ցուցանակների վրա լինեն տվյալ նյութի համար 3.2 գլխի Ա աղյուսակի համապատասխանաբար 20-րդ եւ 1-ին սյունակներով սահմանված վտանգի նույնականացման համարը եւ ՄԱԿ-ի նշագրման համարը:

5.3.2.1.7. 5.3.2.1.1-5.3.2.1.5-ի պահանջները կիրառելի են նաեւ դատարկ ավտոցիստեռնների կամ հանովի ցիստեռնների, մարտկոցանման

հավաքվածքով փոխադրամիջոցների, ցիստեոն-կոնտեյներների, շարժական ցիստեոնների եւ ԳՔՏԿ-ների նկատմամբ, որոնք մաքրված, գազազերծված կամ ախտահանված չեն, չմաքրված ՊԱՇՄ-ների նկատմամբ, ինչպես նաեւ խուռնաբեռն փոխադրման համար նախատեսված դատարկ փոխադրամիջոցների եւ կոնտեյներների նկատմամբ, որոնք մաքրված կամ ախտահանված չեն:

5.3.2.1.8. Փոխադրվող վտանգավոր բեռներին կամ դրանց մնացորդներին չառնչվող նարնջագույն թիթեղները հանվում կամ փակվում են: Ցուցանակները պետք է փակվեն ամբողջությամբ, եւ փակող նյութը 15 րոպե կրակի մեջ մնալուց հետո պետք է պահպանի իր արդյունավետությունը

### **5.3.2.2. Նարնջագույն ցուցանակների տեխնիկական մասնագրերը**

5.3.2.2.1. Նարնջագույն ցուցանակները պետք է լինեն լուսարձակող, հիմքից դրանց երկարությունը պետք է լինի 40 սմ, իսկ բարձրությունը՝ 30 սմ, եւ պետք է ունենան 15 մմ լայնությամբ սեւ եզրագծեր: Օգտագործված նյութը պետք է կարողանա դիմակայել եղանակային պայմաններին եւ լինի չճնշվող: Ցուցանակը չպետք է անջատվի ամրակից՝ 15 րոպե կրակի մեջ մնալու դեպքում: Այն պետք է ամուր լինի անկախ փոխադրամիջոցի դիրքից: Նարնջագույն ցուցանակները կարող են առանձնացվել մեջտեղից՝ 15մմ հաստությամբ սեւ հորիզոնական գծով:

Եթե փոխադրամիջոցի չափսը եւ կառուցվածքն այնպիսին են, որ առկա մակերեսը չի բավարարում նշված նարնջագույն ցուցանակները տեղադրելու համար, ապա դրանց չափսերը կարող են հիմքում նվազեցվել մինչեւ նվազագույնը 300 մմ, բարձրությունը կարող է հասցվել 120 մմ-ի, իսկ սեւ եզրագիծը՝ 10 մմ-ի: Այդ դեպքում 5.3.2.1.1-ում նշված երկու նարնջագույն թիթեղների համար կարող են օգտագործվել նշված սահմաններում այլ չափսեր: Այն դեպքում, երբ բացառիկ օգտագործման պայմաններում փոխադրվող փաթեթավորված ռադիոակտիվ նյութերի դեպքում օգտագործվում են փոքրացված չափսերով նարնջագույն թիթեղներ, պահանջվում է միայն ՄԱԿ-ի նշագրման համարը, եւ 5.3.2.2.2-ով նախատեսված թվանշանների բարձրությունը կարող է նվազեցվել մինչեւ 65 մմ-ի, իսկ գծերի հաստությունը՝ 10 մմ-ի:

Չփաթեթավորված վտանգավոր պինդ նյութերի խուռնաբեռն փոխադրման կոնտեյներների եւ ցիստեոն-կոնտեյներների, ԳՔՏԿ-ների եւ շարժական ցիստեոնների դեպքում 5.3.2.1.2-ով, 5.3.2.1.4-ով եւ 5.3.2.1.5-ով սահմանված ցուցանակները կարող են փոխարինվել ինքնակայուն պիտակով, ներկով կամ մակնշման որեւէ այլ համապատասխան միջոցով: Մակնշման այդ այլընտրանքային միջոցը պետք է համապատասխանի այս ենթաբաժնում նշված տեխնիկական

մասնագրերին՝ բացառությամբ 5.3.2.2.1-ում եւ 5.3.2.2.2-ում նշված հրակայունության վերաբերյալ դրույթների:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** Օգտագործման նորմալ պայմաններում նարնջագույն ցուցանակները պետք է ունենան գունավորության կորրեկցիաներ, որոնք գտնվում են գունավորության սխեմայի մակերեսին՝ կազմված հետեւյալ կորրեկցիաների սահմաններում.

Գունավորության սխեմայի մակերեսի անկյուններում գտնվող կետերի գունավորության կորրեկցիաները				
x	0.52	0.52	0.578	0.618
y	0.38	0.40	0.422	0.38

Լուսարձակող գույնի պայծառության գործակիցը՝  $\beta > 0.12$ .

Պայմանական կենտրոնը E-ն է, լույսի սրանդարտ աղբյուրը՝ C-ն, լույսի նորմալ անկման անկյունը՝  $45^\circ$ , տեսողական անկյունը՝  $0^\circ$ :

Անդրադարձվող լույսի պայծառության ինտենսիվության գործակիցը  $5^\circ$  լուսարձակման անկյան տակ, որի տեսողական անկյունը  $0.2^\circ$  է, մեկ քառակուսի մետր տարածության համար կազմում է նվազագույնը 20 կանդելա՝ 1 լյուքսի դեպքում:

5.3.2.2.2. Վտանգի նույնականացման համարի եւ ՄԱԿ-ի նշագրման համարի թվանշանները պետք է լինեն սեւ, դրանց բարձրությունը՝ 100 մմ, իսկ եզրագծերի հաստությունը՝ 15 մմ: Վտանգի նույնականացման համարը պատկերվում է ցուցանակի վերին կեսում, իսկ ՄԱԿ-ի նշագրման համարը՝ ստորին կեսում. դրանք առանձնացվում են ցուցանակի (տե՛ս 5.3.2.2.3) մի ծայրից մյուս ծայրը միջին բարձրությամբ ձգվող հորիզոնական սեւ գծով, որի հաստությունը կազմում է 15 մմ: Վտանգի նույնականացման համարը եւ ՄԱԿ-ի նշագրման համարը պետք է լինեն չջնջվող եւ մնան ընթեռնելի կրակի մեջ կլանվելուց հետո 15 րոպեի ընթացքում: Վտանգի նույնականացման համարը եւ ՄԱԿ-ի նշագրման համարը ներկայացնող փոխադարձ փոխարինելի թվերը եւ տառերը պետք է մնան տեղում փոխադրման ընթացքում եւ անկախ փոխադրամիջոցի դիրքից:

5.3.2.2.3. Վտանգի նույնականացման համար եւ ՄԱԿ-ի նշագրման համար ունեցող նարնջագույն ցուցանակի նմուշ



Վտանգի նույնականացման համար (2 կամ 3 թվանշաններ, որոնց անհրաժեշտության դեպքում նախորդում է X տառը, տե՛ս 5.3.2.3)

Ֆոնը նարնջագույն է:

Եզրագծերը, հորիզոնական գիծը եւ թվանշանները սեւ են, հաստությունը՝ 15մմ:

5.3.2.2.4. Ենթաբաժնով սահմանված չափսերից շեղումներ թույլատրվում է  $\pm 10\%$ -ի չափով:

5.3.2.2.5. Երբ նարնջագույն ցուցանակը փակցվում է ծալվող վահանակների վրա, դրանք պետք է նախագծված ու ամրացված լինեն այնպես, որ բացառվի փոխադրման ընթացքում դրանց բացվելու կամ ամրակից թուլանալու ցանկացած հնարավորություն (հատկապես հարվածների կամ չկանխատեսված գործողությունների հետեւանքով):

### **5.3.2.3. Վրանգի նույնականացման համարների իմաստը**

5.3.2.3.1. Վտանգի նույնականացման համարը կազմվում է երկու կամ երեք թվերից: Ընդհանրապես թվերն ունեն հետեւյալ իմաստները՝

2՝ գազի արտահոսք ճնշման կամ քիմիական ռեակցիայի դեպքում

3՝ հեղուկների (գոլորշիների) ու գազերի դյուրավառություն կամ ինքնատաքացող հեղուկ

4՝ պինդ նյութերի դյուրավառություն կամ ինքնատաքացող պինդ նյութեր

5՝ օքսիդացնող (կրակ բորբոքող) էֆեկտ

6՝ թունայնություն կամ վարակի վտանգ

7՝ ռադիոակտիվություն

8՝ կոռոզիոն նյութ

9՝ ինքնաբուխ բուռն ռեակցիայի վտանգ

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** 9 թվի իմաստով ինքնաբուխ բուռն ռեակցիայի վտանգ նշանակում է նյութի բնույթով պայմանավորված պայթյունի, մասնատման ու պոլիմերացման վրանգի հնարավորություն, որին կարող է հաջորդել զգալի տաքության կամ դյուրավառ եւ (կամ) թունավոր գազերի արտահոսք:

Նույն թվանշանի կրկնակի օգտագործումը նշանակում է կոնկրետ վտանգի ուժգնացում:

Երե որեւէ նյութի հետ կապված վտանգը կարող է համապատասխանաբար նշվել մեկ թվով, ապա այդ թվին հաջորդում է զրո թիվը:

Այնուամենայնիվ, թվերի հետեւյալ համադրություններն ունեն հատուկ նշանակություն՝ 22, 323, 333, 362, 382, 423, 44, 446, 462, 482, 539, 606, 623, 642, 823, 842, 90 եւ 99, տե՛ս 5.3.2.3.2-ը ներքեւում:

Եթե վտանգի նույնականացման համարին նախորդում է «X» տառը, ապա դա նշանակում է, որ այդ նյութը վտանգավոր հակազդեցության մեջ է մտնում ջրի հետ: Այդպիսի նյութերի դեպքում ջուր կարող է օգտագործվել միայն փորձագետների հաստատմամբ:

1-ին դասի նյութերի դեպքում 3.2 գլխի Ա աղյուսակի 3բ սյունակին համապատասխան տրվող դասակարգման ծածկագիրն օգտագործվում է որպես վտանգի նույնականացման համար: Դասակարգման ծածկագիրը կազմվում է՝

- ենթադասի համարից՝ 2.2.1.1.5-ին համապատասխան, եւ
- համատեղելիության խմբի տառից՝ 2.2.1.1.6-ին համապատասխան:

5.3.2.3.2. 3.2 գլխի Ա աղյուսակի 20-րդ սյունակում նշված վտանգի նույնականացման համարներն ունեն հետեւյալ նշանակությունը՝

20	Խեղդող գազ կամ լրացուցիչ վտանգ չներկայացնող գազ
22	Սառեցված հեղուկացված գազ՝ խեղդող
223	Սառեցված հեղուկացված գազ՝ դյուրավառ
225	Սառեցված հեղուկացված գազ՝ օքսիդացնող (կրակը բորբոքող)
23	Դյուրավառ գազ
238	Գազ՝ դյուրավառ, կոռոզիոն
239	Դյուրավառ գազ, որը կարող է առաջացնել ինքնաբոխ բուռն ռեակցիա
25	օքսիդացնող (կրակ բորբոքող) գազ
26	Թունավոր գազ
263	Թունավոր գազ՝ դյուրավառ
265	Թունավոր գազ՝ օքսիդացնող (կրակ բորբոքող)
268	Թունավոր գազ՝ կոռոզիոն
28	Գազ կոռոզիոն
30	Դյուրավառ հեղուկ (բռնկման ջերմաստիճանը՝ 23 °C - 60 °C ներառյալ) կամ 60 °C-ից բարձր բռնկման ջերմաստիճան ունեցող դյուրավառ հեղուկ կամ հալված վիճակում գտնվող պինդ նյութ, որը տաքացվել է իրենց բռնկման ջերմաստիճանին համարժեք կամ դրանից բարձր պայմաններում կամ ինքնատաքացող հեղուկ
323	Դյուրավառ հեղուկ, որը ջրի հետ փոխազդելիս արտազատում է դյուրավառ գազեր
X323	Դյուրավառ հեղուկ, որը վտանգավոր փոխազդեցության մեջ է մտնում ջրի հետ եւ արտազատում է դյուրավառ գազեր <sup>1</sup>
33	Չափազանց դյուրավառ հեղուկ (բռնկման ջերմաստիճանը ցածր է 23 °C-ից)
333	Հրակիր հեղուկ
X333	Հրակիր հեղուկ, որը վտանգավոր փոխազդեցության մեջ է մտնում ջրի հետ <sup>1</sup>
336	Չափազանց դյուրավառ հեղուկ՝ թունավոր

<sup>1</sup> Ջուր կարելի է օգտագործել միայն փորձագետների հաստատմամբ:

- 338 Չափազանց դյուրավառ հեղուկ՝ կոռոզիոն
- X338 Չափազանց դյուրավառ հեղուկ՝ կոռոզիոն, որը վտանգավոր փոխազդեցության մեջ է մտնում ջրի հետ՝
- 339 Չափազանց դյուրավառ հեղուկ, որը կարող է առաջացնել ինքնաբոխ բուռն ռեակցիա
- 36 Դյուրավառ հեղուկ (բռնկման ջերմաստիճանը 23 °C - 60 °C ներառյալ)՝ քիչ թունավոր, կամ ինքնատաքացող հեղուկ՝ թունավոր
- 362 Դյուրավառ հեղուկ՝ թունավոր, որը ջրի հետ փոխազդելիս արտազատում է դյուրավառ գազեր
- X362 Դյուրավառ հեղուկ՝ թունավոր, որը վտանգավոր փոխազդեցության մեջ է մտնում ջրի հետ եւ արտազատում է դյուրավառ գազեր՝
- 368 Դյուրավառ հեղուկ՝ թունավոր, կոռոզիոն
- 38 Դյուրավառ հեղուկ (բռնկման ջերմաստիճանը 23 °C - 60 °C ներառյալ)՝ քիչ կոռոզիոն, կամ ինքնատաքացող հեղուկ՝ կոռոզիոն
- 382 Դյուրավառ հեղուկ՝ կոռոզիոն, որը ջրի հետ փոխազդելիս արտազատում է դյուրավառ գազեր
- X382 Դյուրավառ հեղուկ՝ կոռոզիոն, որը վտանգավոր փոխազդեցության մեջ է մտնում ջրի հետ եւ արտազատում է դյուրավառ գազեր՝
- 39 Դյուրավառ հեղուկ, որը կարող է առաջացնել ինքնաբոխ բուռն ռեակցիա
- 40 Դյուրավառ պինդ նյութ, կամ ինքնաբռնկվող նյութ, կամ ինքնատաքացող նյութ, կամ պոլիմերացնող նյութ
- 423 Պինդ նյութ, որը փոխազդում է ջրի հետ եւ արտազատում է դյուրավառ գազեր, կամ դյուրավառ պինդ նյութ, որը փոխազդում է ջրի հետ եւ արտազատում է դյուրավառ գազեր կամ ինքնատաքացող պինդ նյութ, որը փոխազդում է ջրի հետ եւ արտազատում է դյուրավառ գազեր
- X423 Պինդ նյութ, որը վտանգավոր փոխազդեցության մեջ է մտնում ջրի հետ եւ արտազատում է դյուրավառ գազեր, կամ դյուրավառ պինդ նյութ, որը վտանգավոր փոխազդեցության մեջ է մտնում ջրի հետ եւ արտազատում է դյուրավառ գազեր կամ ինքնատաքացող պինդ նյութ, որը վտանգավոր փոխազդեցության մեջ է մտնում ջրի հետ եւ արտազատում է դյուրավառ գազեր՝
- 43 Ինքնաբոխ դյուրավառ (հրակիր) պինդ նյութ
- X432 Ինքնաբոխ դյուրավառ (հրակիր) պինդ նյութ, որը վտանգավոր փոխազդեցության մեջ է մտնում ջրի հետ եւ արտազատում է դյուրավառ գազեր՝
- 44 Դյուրավառ պինդ նյութ՝ հալված վիճակում, բարձր ջերմաստիճանային պայմաններում
- 446 Դյուրավառ պինդ նյութ՝ թունավոր, հալված վիճակում, բարձր ջերմաստիճանային պայմաններում
- 46 Դյուրավառ կամ ինքնատաքացող պինդ նյութ՝ թունավոր
- 462 Թունավոր պինդ նյութ, որը ջրի հետ փոխազդելիս արտազատում է դյուրավառ գազեր
- X462 Պինդ նյութ, որը վտանգավոր փոխազդեցության մեջ է մտնում ջրի հետ եւ թունավոր գազեր է արտազատում՝
- 48 Դյուրավառ կամ ինքնատաքացող պինդ նյութ՝ կոռոզիոն
- 482 Կոռոզիոն պինդ նյութ, որը ջրի հետ փոխազդելիս դյուրավառ գազեր է արտազատում.
- X482 Պինդ նյութ, որը վտանգավոր փոխազդեցության մեջ է մտնում ջրի հետ եւ արտազատում է կոռոզիոն գազեր՝
- 50 օքսիդացնող (կրակ բորբոքող) նյութ
- 539 Դյուրավառ օրգանական պերօքսիդ
- 55 Չափազանց օքսիդացնող (կրակ բորբոքող) նյութ
- 556 Չափազանց օքսիդացնող (կրակ բորբոքող) նյութ՝ թունավոր
- 558 Չափազանց օքսիդացնող (կրակ բորբոքող) նյութ՝ կոռոզիոն

- 559 Չափազանց օքսիդացնող (կրակ բորբոքող) նյութ, որը կարող է առաջացնել ինքնաբուխ բուռն ռեակցիա
- 56 Օքսիդացնող (կրակ բորբոքող) նյութ՝ թունավոր
- 568 Օքսիդացնող (կրակ բորբոքող) նյութ՝ թունավոր, կոռոզիոն
- 58 Օքսիդացնող (կրակ բորբոքող) նյութ՝ կոռոզիոն
- 59 Օքսիդացնող (կրակ բորբոքող) նյութ, որը կարող է ինքնաբուխ բուռն ռեակցիա առաջացնել
- 60 Թունավոր կամ քիչ թունավոր նյութ
- 606 Վարակիչ նյութ
- 623 Թունավոր հեղուկ, որը ջրի հետ փոխազդելիս դյուրավառ գազեր է արտազատում
- 63 Թունավոր նյութ՝ դյուրավառ (բռնկման ջերմաստիճանը 23 °C - 60 °C ներառյալ)
- 638 Թունավոր նյութ՝ դյուրավառ (բռնկման ջերմաստիճանը 23 °C - 60 °C ներառյալ), կոռոզիոն
- 639 Թունավոր նյութ՝ դյուրավառ (բռնկման ջերմաստիճանը բարձր է 60 °C-ից), որը կարող է ինքնաբուխ բուռն ռեակցիա առաջացնել
- 64 Թունավոր պինդ նյութ՝ դյուրավառ կամ ինքնատաքացող
- 642 Թունավոր պինդ նյութ, որը ջրի հետ փոխազդելիս արտազատում է դյուրավառ գազեր
- 65 Թունավոր նյութ՝ օքսիդացնող (կրակ բորբոքող)
- 66 Չափազանց թունավոր նյութեր
- 663 Չափազանց թունավոր նյութ՝ դյուրավառ (բռնկման ջերմաստիճանը բարձր է 60 °C-ից)
- 664 Չափազանց թունավոր պինդ նյութ՝ դյուրավառ կամ ինքնատաքացող
- 665 Չափազանց թունավոր նյութ՝ օքսիդացնող (կրակ բորբոքող)
- 668 Չափազանց թունավոր նյութ՝ կոռոզիոն
- X668 Չափազանց թունավոր նյութ՝ կոռոզիոն, որը վտանգավոր փոխազդեցության մեջ է մտնում ջրի հետ<sup>1</sup>
- 669 Չափազանց թունավոր հեղուկ, որը կարող է առաջացնել ինքնաբուխ բուռն ռեակցիա
- 68 Թունավոր նյութ՝ կոռոզիոն
- 69 Թունավոր կամ քիչ թունավոր նյութ, որը կարող է առաջացնել ինքնաբուխ բուռն ռեակցիա
- 70 Ռադիոակտիվ նյութ
- 768 Ռադիոակտիվ նյութ՝ թունավոր, կոռոզիոն
- 78 Ռադիոակտիվ նյութ՝ կոռոզիոն
- 80 Կոռոզիոն կամ քիչ կոռոզիոն նյութ
- X80 Կոռոզիոն կամ քիչ կոռոզիոն նյութ, որը վտանգավոր փոխազդեցության մեջ է մտնում ջրի հետ<sup>1</sup>
- 823 Կոռոզիոն հեղուկ, որը ջրի հետ փոխազդելիս արտազատում է դյուրավառ գազեր
- 83 Կոռոզիոն կամ քիչ կոռոզիոն նյութ՝ դյուրավառ (բռնկման ջերմաստիճանը 23 °C - 60 °C ներառյալ)
- X83 Կոռոզիոն կամ քիչ կոռոզիոն նյութ՝ դյուրավառ (բռնկման ջերմաստիճանը 23 °C - 60 °C ներառյալ), որը վտանգավոր փոխազդեցության մեջ է մտնում ջրի հետ<sup>1</sup>
- 839 Կոռոզիոն կամ քիչ կոռոզիոն նյութ՝ դյուրավառ (բռնկման ջերմաստիճանը 23 °C - 60 °C ներառյալ), որն առաջացնում է ինքնաբուխ բուռն ռեակցիա
- X839 Կոռոզիոն կամ քիչ կոռոզիոն նյութ՝ դյուրավառ (բռնկման ջերմաստիճանը 23 °C - 60 °C ներառյալ), որն առաջացնում է ինքնաբուխ բուռն ռեակցիա եւ որը վտանգավոր հակազդեցության մեջ է մտնում ջրի հետ<sup>1</sup>
- 84 Կոռոզիոն պինդ նյութ՝ դյուրավառ կամ ինքնատաքացող
- 842 Կոռոզիոն պինդ նյութ, որը ջրի հետ փոխազդելիս արտազատում է դյուրավառ գազեր
- 85 Կոռոզիոն կամ քիչ կոռոզիոն նյութ՝ օքսիդացնող (կրակ բորբոքող)

- 856 Կոռոզիոն կամ քիչ կոռոզիոն նյութ՝ օքսիդացնող (կրակ բորբոքող) եւ թունավոր
- 86 Կոռոզիոն կամ քիչ կոռոզիոն նյութ՝ թունավոր
- 88 Չափազանց կոռոզիոն նյութ
- X88 Չափազանց կոռոզիոն նյութ, որը վտանգավոր փոխազդեցության մեջ է մտնում ջրի հետ՝
- 883 Չափազանց կոռոզիոն նյութ՝ դյուրավառ (բռնկման ջերմաստիճանը 23 °C - 60 °C ներառյալ)
- 884 Չափազանց կոռոզիոն պինդ նյութ՝ դյուրավառ կամ ինքնատաքացող
- 885 Չափազանց կոռոզիոն նյութ՝ օքսիդացնող (կրակ բորբոքող)
- 886 Չափազանց կոռոզիոն նյութ՝ թունավոր
- X886 Չափազանց կոռոզիոն նյութ՝ թունավոր, որը վտանգավոր փոխազդեցության մեջ է մտնում ջրի հետ՝
- 89 Կոռոզիոն նյութ կամ քիչ կոռոզիոն նյութ, որը կարող է առաջացնել ինքնաբուխ բուռն ռեակցիա
- 90 Շրջակա միջավայրի համար վտանգավոր նյութ, խառը վտանգավոր նյութեր
- 99 Խառը վտանգավոր նյութեր, որոնք փոխադրվում են բարձր ջերմաստիճանային պայմաններում



**5.3.3. Բարձր ջերմաստիճանի նյութերի մասին նախազգուշացնող նշանը**

Այնպիսի նյութեր պարունակող ավտոցիստեռնները, ցիստեռն-կոնտեյներները, շարժական ցիստեռնները, հատուկ փոխադրամիջոցները կամ կոնտեյներները կամ հատուկ սարքավորումներով հագեցված փոխադրամիջոցները կամ կոնտեյներները, որոնք փոխադրվում կամ փոխադրման են հանձնվում հեղուկ վիճակում՝ 100 °C կամ դրանից բարձր ջերմաստիճանում, կամ պինդ վիճակում՝ 240 °C կամ դրանից բարձր ջերմաստիճանում, պետք է փոխադրամիջոցների կողային մասերին ու հետնամասում, իսկ կոնտեյներների, ցիստեռն-կոնտեյներների եւ շարժական ցիստեռնների դեպքում՝ երկու կողային մասերին ու յուրաքանչյուր ճակատային մասում ունենան 5.3.3 նկարում ներկայացված նշանը:

**Նկար 5.3.3**

Նվազագույն չափսը՝ 250 մմ



Նվազագույն չափսը՝ 250 մմ

Նվազագույն չափսը՝ 250 մմ

**Բարձր ջերմաստիճանի նյութերի մասին նախազգուշացնող նշան**

Նշանը պետք է լինի հավասարակողմ եռանկյան տեսքով: Նշանի գույնը պետք է լինի կարմիր: Կողմերի նվազագույն չափսը պետք է լինի 250 մմ: Եթե չափսերը նշված չեն, ապա բոլոր հատկանիշները պետք է մոտավոր համաչափ լինեն ցուցադրված պատկերի հատկանիշներին: Այն ցիստեռն-կոնտեյներների կամ շարժական ցիստեռնների դեպքում, որոնք ունեն 3 000 լիտրից ոչ ավելի տարողություն, եւ որոնց առկա մակերեսը չի բավարարում սահմանված մականշվածքները տեղադրելու համար, կողմերի նվազագույն չափսերը կարող են փոքրացվել մինչեւ 100 մմ:

**5.3.4. (Նախատեսվում է վերապահում)**

**5.3.5. (Նախատեսվում է վերապահում)**

**5.3.6. Շրջակա միջավայրի համար վտանգավոր նյութերի մասին նախազգուշացնող նշանը**

- 5.3.6.1 Եթե պահանջվում է, որ տեղեկատվական ցուցանակը տեսանելի լինի՝ 5.3.1-ի դրույթներին համապատասխան, ապա շրջակա միջավայրի համար վտանգավոր նյութեր պարունակող կոնտեյներների, ԳՔՏԿ-ների, ցիստեռն-կոնտեյներների, շարժական ցիստեռնների եւ փոխադրամիջոցների վրա, որոնք համապատասխանում են 2.2.9.1.10-ի չափորոշիչներին, տեղադրվում է 5.2.1.8.3-ում նշված՝ շրջակա միջավայրի համար վտանգավոր նյութի մասին նախազգուշացնող նշանը:
- 5.3.6.2 Կոնտեյներների, ԳՔՏԿ-ների, ցիստեռն-կոնտեյներների, շարժական ցիստեռնների եւ փոխադրամիջոցների դեպքում շրջակա միջավայրի համար վտանգավոր նյութի առկայության մասին նախազգուշացնող նշանը պետք է լինի 5.2.1.8.3-ում եւ 5.2.1.8.3 նկարում նկարագրված ձևով՝ բացառությամբ այն դեպքերի, երբ նվազագույն չափսերը պետք է լինեն 250 մմ x 250 մմ: Այն ցիստեռն-կոնտեյներների կամ շարժական ցիստեռնների դեպքում, որոնք ունեն 3 000 լիտրից ոչ ավելի տարողություն, եւ որոնց առկա մակերեսը չի բավարարում սահմանված նշանները տեղադրելու համար, կողմերի նվազագույն չափսերը կարող են փոքրացվել մինչեւ 100 մմ x 100 մմ: 5.3.1-ի՝ տեղեկատվական ցուցանակներին վերաբերող մյուս դրույթները համապատասխան փոփոխություններով (*mutatis mutandis*) կիրառվում են այդ նշանների նկատմամբ:

## ԳԼՈՒԽ 5.4

### ՓԱՍՏԱԹՂԹԱՎՈՐՈՒՄԸ

#### 5.4.0. Ընդհանուր դրույթներ

5.4.0.1. Եթե այլ բան նախատեսված չէ, «ԱԴՌ» համաձայնագրով կարգավորվող բեռների ցանկացած փոխադրման պետք է, հարկ եղած դեպքում, կցված լինեն սույն գլխով սահմանված փաստաթղթերը:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** *Տրանսպորտային միավորներում պահվող փաստաթղթերի ցանկի համար տե՛ս 8.1.2:*

5.4.0.2. Որպես օգնություն կամ թղթային փաստաթղթավորման փոխարեն՝ տվյալների էլեկտրոնային մշակման (ՏԷՄ) կամ տվյալների էլեկտրոնային փոխանցման (ՏԷՓ) միջոցների օգտագործումը թույլատրվում է՝ պայմանով, որ էլեկտրոնային տվյալների հավաքման, պահման ու մշակման համար կիրառվող ընթացակարգերով բավարարվում են փոխադրման ընթացքում տվյալների ապացուցողական արժեքի ու մատչելիության հետ կապված օրինական պահանջներն առնվազն այնպես, ինչպես թղթային փաստաթղթավորմամբ:

5.4.0.3. Երբ վտանգավոր բեռների փոխադրման հետ կապված տեղեկությունները փոխադրողին հանձնվում են ՏԷՄ կամ ՏԷՓ միջոցների օգնությամբ, բեռնառաքողը պետք է կարողանա փոխադրողին հանձնել տեղեկությունները թղթային տարբերակով, որի մեջ տեղեկությունները պետք է ներկայացված լինեն սույն գլխում պահանջվող հերթականությամբ:

#### 5.4.1. Վտանգավոր բեռների մասին տրանսպորտային փաստաթղթերը եւ դրան վերաբերող տեղեկությունները

##### 5.4.1.1. **Տրանսպորտային փաստաթղթերում ներառվելիք ընդհանուր տեղեկությունները**

5.4.1.1.1. Տրանսպորտային փաստաթղթում (փաստաթղթերում) ներառվում են հետևյալ տեղեկությունները փոխադրման համար առաջարկվող յուրաքանչյուր վտանգավոր նյութի կամ պատրաստվածքի մասին՝

- ա) ՄԱԿ-ի նշագրման համարը, որին նախորդում են «ՄԱԿ» տառերը,
- բ) բեռնառաքման ճշգրիտ անվանումը, որը, կիրառելիության դեպքում (տե՛ս 3.1.2.8.1), լրացվում է փակագծերում վերցված տեխնիկական անվանմամբ (տե՛ս 3.1.2.8.1.1), ինչպես սահմանված՝ է 3.1.2-ին համապատասխան,
- գ) - 1-ին դասի նյութերի ու պատրաստվածքների համար՝ 3.2 գլխի

Ա աղյուսակի (3բ) սյունակում նշված դասակարգման ծածկագիրը:

Երբ 3.2 գլխի Ա աղյուսակի 5-րդ սյունակում նշվում են 1, 1.4, 1.5 ու 1.6 համարներից բացի, պիտակների նմուշների այլ համարներ, ապա պիտակների նմուշների այդ համարներին (վերցված փակագծերի մեջ) հաջորդում է դասակարգման ծածկագիրը՝

- 7-րդ դասի ռադիոակտիվ նյութերի համար՝ դասի համարը՝ «7».

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** Հավելյալ վրանգով ռադիոակտիվ նյութի համար տե՛ս նաեւ 3.3 գլխի 172-րդ հատուկ դրույթը:

- ՄԱԿԻ-ի նշագրման 3090, 3091, 3480 եւ 3481 համարների լիթումային մարտկոցների համար՝ դասի համարը «9».
- այլ նյութերի ու պատրաստվածքների համար՝ 3.2 գլխի Ա աղյուսակի 5-րդ սյունակում տրված կամ 6-րդ սյունակում նշված հատուկ դրույթին համապատասխան կիրառելի պիտակի նմուշի համարները: Եթե տրված են պիտակի նմուշի մեկից ավելի համարներ, ապա առաջին համարին հաջորդող համարները նշվում են փակագծերում: Այն նյութերի ու պատրաստվածքների դեպքում, որոնց համար 3.2 գլխի Ա աղյուսակի 5-րդ սյունակում պիտակի որեւէ նմուշ տրված չէ, փոխարենը նշվում է դրանց դասը՝ (3ա) սյունակին համապատասխան.

- դ) եթե նշանակված է, նյութի փաթեթավորման խումբը, որին կարող են նախորդել «PG» («ՓԽ») տառերը (օրինակ «PG II») կամ 5.4.1.4.1-ին համապատասխան օգտագործվող լեզուներով "Packing Group" («Փաթեթավորման խումբ») բառերին համարժեք արտահայտության սկզբնատառերը.

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** Լրացուցիչ վրանգ ներկայացնող 7-րդ խմբի ռադիոակտիվ նյութերի համար տե՛ս 3.3 գլխի 172(դ) հատուկ դրույթը:

- ե) կիրառելիության դեպքում, փաթեթների խումբն ու բնութագիրը: ՄԱԿ-ի կողմից սահմանված փաթեթավորման ծածկագրերը կարող են օգտագործվել միայն որպես փաթեթի տեսակի լրացուցիչ բնութագիր (օրինակ՝ մեկ արկղ (4G)).

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** Անհրաժեշտ չէ նշել համակցված փաթեթվածքի արտաքին փաթեթվածքում ներառված յուրաքանչյուր ներքին փաթեթվածքի համարը, տեսակն ու

*տարողությունը:*

- զ) ՄԱԿ-ի նշագրման տարբեր համարներ ունեցող վտանգավոր բեռներից յուրաքանչյուրի ընդհանուր թիվը, բեռնառաքման ճշգրիտ անվանումը կամ կիրառելիության դեպքում փաթեթավորման խումբը (ծավալով, կամ անզուտ քաշով կամ զտաքաշով, ինչպես հարկն է)։

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1.** 1.1.3.6-ով սահմանված ըստ նշանակության կիրառության դեպքում, յուրաքանչյուր տրանսպորտային դասի համար վտանգավոր բեռների ընդհանուր թիվը նշվում է տրանսպորտային փաստաթղթում՝ 1.1.3.6.3-ին համապատասխան:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2.** Սույն հավելվածում նշված մեքենաներում կամ սարքավորումներում առկա վտանգավոր բեռների դեպքում սահմանված քանակը նշվում է դրանցում պարունակվող վտանգավոր բեռների ամբողջ քանակությամբ՝ արտահայտված կիլոգրամներով կամ լիտրերով, ինչպես հարկն է:

- է) բեռնառաքողի անվանումն ու հասցեն.
- ը) բեռն ստացողի (բեռն ստացողների) անվանումն ու հասցեն. Փոխադրման հարցով շահագրգռված երկրների իրավասու մարմինների համաձայնությամբ, երբ վտանգավոր բեռները փոխադրվում են այնպիսի տարբեր բեռներ ստացողների հանձնվելու նպատակով, որոնց հնարավոր չէ որոշել փոխադրման մեկնարկին, կարող են նշվել «Վաճառք՝ առաքումով» բառերը.
- թ) հայտարարագիր, եթե պահանջվում է որեւէ հատուկ համաձայնագրի պայմաններով.
- ժ) *(Նախատեսվում է վերապահում)*
- ժա) եթե նշանակված է, 3.2 գլխի Ա աղյուսակի 15-րդ սյունակում նշված թունելով բեռների փոխադրման սահմանափակման ծածկագիրը՝ փակագծերում նշված մեծատառերով: Թունելով փոխադրման սահմանափակման ծածկագիրը կարող է չնշվել տրանսպորտային փաստաթղթում, եթե նախապես հայտնի է, որ փոխադրումը չի իրականացվելու վտանգավոր բեռների փոխադրման համար սահմանափակումներով թունելով:

Տրանսպորտային փաստաթղթում տեղեկատվության տարրերը ներկայացվում են կամայական տեղում ու հերթականությամբ, բացառությամբ (ա), (բ), (գ), (դ) եւ (ժա) կետերի, որոնք ներկայացվում են վերը նշված հերթականությամբ (այսինքն՝ (ա), (բ), (գ), (դ), (ժա) առանց որեւէ հավելյալ տեղեկատվության, եթե այլ բան նախատեսված չէ «ԱԴԴ» համաձայնագրով:

Այդպիսի վտանգավոր բեռների բնութագրերի օրինակներ են՝

**«ՄԱԿ 1098 ԱԼԻԼ ԱԼԿՈՆՈԼ, 6.1 (3), I, (C/D)»** կամ

**«ՄԱԿ 1098, ԱԼԻԼ ԱԼԿՈՆՈԼ, 6.1 (3), PG I, (C/D)»**

- 5.4.1.1.2. Տրանսպորտային փաստաթղթում ներկայացվող տեղեկությունները պետք է լինեն ընթեռնելի:

Թեև բեռնառաքման ճշգրիտ անվանման մաս համարվող տարրերը նշելու համար 3.1 գլխում եւ 3.2 գլխի Ա աղյուսակում օգտագործվում է մեծատառ, եւ տրանսպորտային փաստաթղթում ներառվելիք տեղեկությունները ներկայացնելու համար սույն գլխում օգտագործվում են մեծատառեր ու փոքրատառեր, բացառությամբ 5.4.1.1.1(Ժա)-ի դրույթների, տրանսպորտային փաստաթղթում տեղեկություններ ներառելու համար մեծատառի կամ փոքրատառի օգտագործումը համարվում է ոչ պարտադիր:

- 5.4.1.1.3. *Թափոնների մասին հապուկ դրույթներ*

Եթե փոխադրվում են թափոններ պարունակող վտանգավոր բեռներ (բացի ռադիոակտիվ թափոններից), բեռնառաքման ճշգրիտ անվանմանը պետք է նախորդի **«ԹԱՓՈՆ»** բառը, եթե այդ տերմինը բեռնառաքման ճշգրիտ անվանման մաս չէ, օրինակ՝

**«ՄԱԿ 1230 ՄԵԹԱՆՈԼԻ ԹԱՓՈՆ, 3 (6.1), II, (D/E)»** կամ

**«ՄԱԿ 1230 ՄԵԹԱՆՈԼԻ ԹԱՓՈՆ, 3 (6.1), PG (ՓԽ) II, (D/E)»** կամ

**«ՄԱԿ 1993 ԴՅՈՒՐԱՎԱՌ ՀԵՂՈՒԿԻ ԹԱՓՈՆ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՎԱԾ (տողուղ եւ էթիլային սպիրտ) 3, II, (D/E)»** կամ

**«ՄԱԿ 1993 ԴՅՈՒՐԱՎԱՌ ՀԵՂՈՒԿԻ ԹԱՓՈՆ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՎԱԾ (տողուղ եւ էթիլային սպիրտ) 3, PG (ՓԽ) II, (D/E)»:**

Եթե կիրառվում է թափոնների մասին դրույթը, ինչպես սահմանված է 2.1.3.5.5, 5.4.1.1.1 (ա)-(դ) եւ (Ժա)-ով պահանջվող վտանգավոր բեռների բնութագրերը լրացվում են հետեւյալ տեղեկություններով՝

**«ԹԱՓՈՆ 2.1.3.5.5-ԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ»** (օրինակ՝ ՄԱԿ 3264, ԿՈՌՈՉԻՈՆ ՀԵՂՈՒԿ՝ ԹԹՎԱՅԻՆ, ԱՆՕՐԳԱՆԱԿԱՆ, ԱՅԼ ԿԵՐՊ ՉՆՇՎԱԾ, 8, II, (E), ԹԱՓՈՆ 2.1.3.5.5-ԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ»):

3.3 գլխի, 274-րդ հատուկ դրույթով սահմանված տեխնիկական անվանումը կարող է չավելացվել:

- 5.4.1.1.4. *(Հանվել է)*

- 5.4.1.1.5. *Վթարային փաթեթվածքների եւ վթարային ճնշումային տարաների մասին հապուկ դրույթներ*

Երբ վտանգավոր բեռները փոխադրվում են վթարային փաթեթվածքում կամ վթարային ճնշումային տարաներում, «ՎԹԱՐԱՅԻՆ ՓԱԹԵԹՎԱԾՔ» կամ «ՎԹԱՐԱՅԻՆ ՃՆՇՈՒՄԱՅԻՆ ՏԱՐԱՆԵՐ» բառերը տրանսպորտային փաստաթղթում ավելացվում են բեռների բնութագրից հետո:

5.4.1.1.6. *Տեղայնացման դատարկ ու չմաքրված միջոցների մասին հատուկ դրույթ*

5.4.1.1.6.1. Տեղայնացման դատարկ ու չմաքրված միջոցների դեպքում, որոնք պարունակում են 7-րդ դասից բացի, այլ դասերի վտանգավոր բեռների մնացորդներ, «ԴԱՏԱՐԿ, ՉՄԱՔՐՎԱԾ» կամ «ՄՆԱՑՈՐԴ, ՎԵՐՋԻՆ ԲԵՌՆՎԱԾՔ» բառերը նշվում են վտանգավոր բեռների համար 5.4.1.1.1 (ա)-(դ) եւ (ժա)-ում նշված բնութագրից առաջ կամ հետո: Ավելին, 5.4.1.1.1 (զ)-ն չի կիրառվում:

5.4.1.1.6.2. 5.4.1.1.6.1-ի հատուկ դրույթը, անհրաժեշտության դեպքում, կարող է փոխարինվել 5.4.1.1.6.2.1-ով, 5.4.1.1.6.2.2-ով կամ 5.4.1.1.6.2.3-ով:

5.4.1.1.6.2.1. Դատարկ ու չմաքրված փաթեթվածքների դեպքում, որոնք պարունակում են 7-րդ դասից բացի, այլ դասերի պատկանող վտանգավոր բեռների մնացորդ, ներառյալ 1 000 լիտրից ավելի տարողությամբ դատարկ չմաքրված տարաները՝ նախատեսված գազերի համար, 5.4.1.1.1 (ա), (բ), (գ), (դ), (ե) եւ (զ)-ով պահանջվող մանրամասները, անհրաժեշտության դեպքում, փոխարինվում են «ԴԱՏԱՐԿ ՓԱԹԵԹՎԱԾՔ», «ԴԱՏԱՐԿ ՏԱՐԱ», «ԴԱՏԱՐԿ ՍՄԿ» կամ «ԴԱՏԱՐԿ ԽՈՇՈՐ ՓԱԹԵԹՎԱԾՔ» բառերով, որոնց հաջորդում են վերջին անգամ բեռնված բեռների մասին տեղեկություններ, ինչպես ներկայացված է 5.4.1.1.1 (զ)-ում:

Տե՛ս հետեւյալ օրինակը՝ «ԴԱՏԱՐԿ ՓԱԹԵԹՎԱԾՔ, 6.1 (3)»:

Բացի դրանից՝ այդպիսի դեպքերում՝

ա) եթե վերջին բեռնված վտանգավոր բեռը 2-րդ դասի բեռ է, 5.4.1.1.1 (զ)-ով սահմանված տեղեկությունները կարող են փոխարինվել «2» դասի համարով.

բ) եթե վերջին բեռնված վտանգավոր բեռը 3-րդ, 4.1, 4.2, 4.3, 5.1, 5.2, 6.1, 8-րդ կամ 9-րդ դասի բեռ է, 5.4.1.1.1 (զ)-ով սահմանված տեղեկությունները կարող են փոխարինվել «[...]»-ի ՄՆԱՑՈՐԴՆԵՐՈՎ» բառերով, որոնց հաջորդում են տարբեր մնացորդներին համապատասխանող դասը (դասերը) եւ հավելյալ ռիսկերը՝ դասի համարակալման հերթականությամբ:

Օրինակ՝

3-րդ դասի բեռներ պարունակող դատարկ, չմաքրված փաթեթվածքները, որոնք փոխադրվում են 6.1 դասի հավելյալ դիսկեր պարունակող 8-րդ դասի դատարկ չմաքրված փաթեթվածքների հետ, տրանսպորտային փաստաթղթերում նշվում են որպես՝

«ԴԱՏԱՐԿ ՓԱԹԵԹՎԱԾՔՆԵՐ 3-ՐԴ, 6.1 ԵՎ 8-ՐԴ ԴԱՍԻ ՄՆԱՑՈՐԴՆԵՐՈՎ»:

5.4.1.1.6.2.2. Փաթեթվածքներից բացի՝ տեղայնացման դատարկ ու չմաքրված այլ միջոցների դեպքում, որոնք պարունակում են 7-րդ դասին պատկանող վտանգավոր բեռների մնացորդ, ինչպես նաև 1 000 լիտրից ավելի տարողությամբ դատարկ չմաքրված տարաների դեպքում՝ նախատեսված գազերի համար, 5.4.1.1.1 (ա)-(դ) եւ (Ժա)-ով պահանջվող մանրամասներին, անհրաժեշտության դեպքում, նախորդում են «ԴԱՏԱՐԿ ԱՎՏՈՑԻՍՏԵՌՆ», «ԴԱՏԱՐԿ ՀԱՆՈՎԻ ՑԻՍՏԵՌՆ», «ԴԱՏԱՐԿ ՑԻՍՏԵՌՆ-ԿՈՆՏԵՅՆԵՐ», «ԴԱՏԱՐԿ ՇԱՐԺԱԿԱՆ ՑԻՍՏԵՌՆ», «ԴԱՏԱՐԿ ՄԱՐՏԿՈՑԱՆՄԱՆ ՀԱՎԱՔՎԱԾՔՈՎ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑ», «ԴԱՏԱՐԿ ԳԲՏԿ», «ԴԱՏԱՐԿ ՊԱՇՄ», «ԴԱՏԱՐԿ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑ», «ԴԱՏԱՐԿ ԿՈՆՏԵՅՆԵՐ» կամ «ԴԱՏԱՐԿ ՏԱՐԱ» բառերը, որոնց հաջորդում են «ՎԵՐՋԻՆ ԲԵՌՆՎԱԾՔ» բառերը: Ավելին, 5.4.1.1.1 (գ)-ն չի կիրառվում:

Տե՛ս հետեւյալ օրինակները.

«ԴԱՏԱՐԿ ԱՎՏՈՑԻՍՏԵՌՆ, ՎԵՐՋԻՆ ԲԵՌՆՎԱԾՔ. ՄԱԿ 1098 ԱԼԻԼ ԱԼԿՈՂՈԼ 6.1 (3), I, (C/D)» կամ

«ԴԱՏԱՐԿ ԱՎՏՈՑԻՍՏԵՌՆ, ՎԵՐՋԻՆ ԲԵՌՆՎԱԾՔ. ՄԱԿ 1098 ԱԼԻԼ ԱԼԿՈՂՈԼ 6.1 (3), ՓԽ I, (C/D)»:

5.4.1.1.6.2.3. Երբ տեղայնացման դատարկ ու չմաքրված միջոցները, որոնք պարունակում են 7-րդ դասից բացի, այլ դասերի վտանգավոր բեռների մնացորդներ, վերադարձվում են բեռնառաքողին, ապա կարող են օգտագործվել նաև այդպիսի բեռների փոխադրումն ամբողջ տարողությամբ իրականացնելու համար նախապատրաստված տրանսպորտային փաստաթղթերը: Այդ դեպքերում քանակի մասին նշումը պետք է վերացվի (այն ջնջելու, ընդգծելու կամ ցանկացած այլ միջոցով) եւ փոխարինվի «ԴԱՏԱՐԿ, ՉՄԱՔՐՎԱԾ ՎԵՐԱԴՐԱՐՁՈՒՄ» բառերով:

5.4.1.1.6.3. ա) Եթե դատարկ ու չմաքրված ցիստեռները, մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցները եւ ԳԲՏԿ-ները փոխադրվում են մոտակա տարածք, որտեղ մաքրումը կամ վերանորոգումը կարող են իրականացվել 4.3.2.4.3-ի դրույթներին համապատասխան, տրանսպորտային



փաստաթղթում ավելացվում է հետևյալ լրացուցիչ դիրքը՝  
**«Փոխադրումը 4.3.2.4.3-ին համապատասխան»:**

բ) Եթե դատարկ ու չմաքրված փոխադրամիջոցներն ու կոնտեյներները փոխադրվում են մոտակա տարածք, որտեղ մաքրումը կամ վերանորոգումը կարող են իրականացվել 7.5.8.1-ի դրույթներին համապատասխան, տրանսպորտային փաստաթղթում ավելացվում է հետևյալ լրացուցիչ դիրքը՝  
**«Փոխադրումը՝ 7.5.8.1-ին համապատասխան»:**

5.4.1.1.6.4. Անշարժ ցիստեռնները (ավտոցիստեռնները), հանովի ցիստեռնները, մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցները, ցիստեռն-կոնտեյներները ու ԳԲՏԿ-ները 4.3.2.4.4-ի պայմաններում փոխադրելու դեպքում տրանսպորտային փաստաթղթում ավելացվում է հետևյալ դիրքը՝ «Փոխադրումը 4.3.2.4.4-ին համապատասխան»:

5.4.1.1.7. *Հարուկ դրույթներ տրանսպորտային շղթայով փոխադրման մասին՝ ներառյալ ծովային կամ օդային փոխադրումը*

1.1.4.2.1-ին համապատասխան իրականացվող փոխադրման դեպքում տրանսպորտային փաստաթղթում ներառվում է հետևյալ նշումը՝  
**«Փոխադրումը 1.1.4.2.1-ին համապատասխան»:**

5.4.1.1.8. *եւ 5.4.1.1.9 (Նախատեսվում է վերապահում)*

5.4.1.1.10. *(Հանվել է)*

5.4.1.1.11. *Հարուկ դրույթներ՝ վերջին պարբերական փորձարկման կամ ստուգման վավերականության ժամկետի ավարտից հետո ՍՄԿ-ների ցիստեռնների, մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցների, շարժական ցիստեռնների եւ ԳԲՏԿ-ների փոխադրման մասին*

4.1.2.2 (բ), 4.3.2.3.7 (բ), 6.7.2.19.6 (բ), 6.7.3.15.6 (բ) կամ 6.7.4.14.6 (բ)-ին համապատասխան իրականացվող փոխադրման դեպքում այդ առնչությամբ տրանսպորտային փաստաթղթում, համապատասխանաբար, ներառվում է հետևյալ նշումը՝

«ՓՈՒՆԱԴՐՈՒՄԸ 4.1.2.2(բ)-ԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ»,

«ՓՈՒՆԱԴՐՈՒՄԸ 4.3.2.3.7(բ)-ԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ»,

«ՓՈՒՆԱԴՐՈՒՄԸ 6.7.2.19.6(բ)-ԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ»,

«ՓՈՒՆԱԴՐՈՒՄԸ 6.7.3.15.6(բ)-ԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ» կամ

«ՓՈՒՆԱԴՐՈՒՄԸ 6.7.4.14.6(բ)-ԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ»:

5.4.1.1.12. *(Նախատեսվում է վերապահում)*

5.4.1.1.13. *Հարուկ դրույթներ բազմախցիկ ավտոցիստեռններով կամ մեկից ավելի ցիստեռն ունեցող տրանսպորտային միավորներով փոխադրման*

*մասին*

Երբ շեղում կատարելով 5.3.2.1.2-ի դրույթներից, բազմախցիկ ավտոցիստեռնը կամ մեկից ավելի ցիստեռն ունեցող տրանսպորտային միավորը մակնշվում է 5.3.2.1.3-ին համապատասխան, յուրաքանչյուր ցիստեռնում կամ յուրաքանչյուր խցիկում պարունակվող նյութերը նշվում են տրանսպորտային փաստաթղթերում:

5.4.1.1.14. *Հատուկ դրույթներ՝ բարձր ջերմաստիճանային պայմաններում տեղափոխվող նյութերի փոխադրման մասին*

Եթե 100 °C-ին համարժեք կամ այն գերազանցող ջերմաստիճանային պայմաններում հեղուկ վիճակում կամ 240 °C-ին համարժեք կամ գերազանցող ջերմաստիճանային պայմաններում պինդ վիճակում փոխադրվող կամ փոխադրման համար առաջարկվող նյութի բեռնառաքման ճշգրիտ անվանումը չի արտահայտում բարձր ջերմաստիճանային պայմանները (օրինակ՝ օգտագործելով «ՀԱԼԵՑՎԱԾ» կամ «ԲԱՐՁՐ ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆ» տերմինները՝ որպես բեռնառաքման ճշգրիտ անվանման մաս), ապա անհրաժեշտ փոխադրամիջոցի անվանմանն անմիջապես պետք է նախորդի «**SUP**» բառը:

5.4.1.1.15. *Հատուկ դրույթներ՝ ջերմաստիճանի կարգավորման միջոցով կայունացված նյութերի փոխադրման մասին*

Եթե «ԿԱՅՈՒՆԱՑՎԱԾ» բառը բեռնառաքման ճշգրիտ անվանման մաս է (տե՛ս 3.1.2.6), երբ կայունացումը կատարվում է ջերմաստիճանի կարգավորման միջոցով, կարգավորման ջերմաստիճանն ու վթարային ջերմաստիճանը (տե՛ս 2.2.41.1.17) նշվում են տրանսպորտային փաստաթղթում՝ հետևյալ ձևով՝

«**Վերահսկման ջերմաստիճանը՝:....°C, Վթարային ջերմաստիճանը՝....°C**»

5.4.1.1.16. *3.3 գլխի 640-րդ հատուկ դրույթին համապատասխան պահանջվող տեղեկատվությունը*

Եթե պահանջվում է 3.3 գլխի 640-րդ հատուկ դրույթով, տրանսպորտային փաստաթղթերում պետք է լինի «**Հատուկ դրույթ 640X**» նշագիրը, որտեղ «X»-ը նշվում է մեծատառով եւ տեղադրվում է 3.2 գլխի Ա աղյուսակի 6-րդ սյունակի 640-րդ հատուկ դրույթին համապատասխան հղումից հետո:

5.4.1.1.17. *Հատուկ դրույթներ 6.11.4 դրույթներին համապատասխանող՝ սորուն բեռների համար նախատեսված կոնտեյներներով պինդ նյութերի*

*փոխադրման մասին*

Երբ պինդ նյութերը փոխադրվում են 6.11.4-ի դրույթներին համապատասխանող՝ սորուն բեռների համար նախատեսված կոնտեյներներով, տրանսպորտային փաստաթղթերում նշվում է հետևյալ հայտարարությունը՝ (տե՛ս 6.11.4-ի սկզբում նշված ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ)՝

**«Սորուն բեռների համար նախատեսված կոնտեյներներ ՄԲԿ (x)՝ հաստատված .....-ի իրավասու մարմնի կողմից»**

5.4.1.1.18. *Հատուկ դրույթներ՝ շրջակա միջավայրի համար վրանգավոր նյութերի (ջրային միջավայր) փոխադրման մասին*

Երբ 1-9-րդ դասերից որեւէ մեկին պատկանող որեւէ նյութ բավարարում է 2.2.9.1.10-ի դասակարգման չափորոշիչները, տրանսպորտային փաստաթղթում պետք է ներառվի լրացուցիչ նշագիր՝ «ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՐ ՎՏԱՆԳԱՎՈՐ» կամ «ԾՈՎԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐՆ ԱՂՏՈՏՈՂ ՆՅՈՒԹ/ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՐ ՎՏԱՆԳԱՎՈՐ»: Այդ լրացուցիչ պահանջը չի կիրառվում ՄԱԿ-ի նշագրման 3077 եւ 3082 համարների կամ 5.2.1.8.1-ում նշված բացառությունների նկատմամբ:

«ԾՈՎԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐՆ ԱՂՏՈՏՈՂ ՆՅՈՒԹ» նշագրի գործածությունը (համաձայն ՎԲՄԾ կանոնագրքի 5.4.1.4.3-ի) ընդունելի է ծովային տրանսպորտով փոխադրում ներառող տրանսպորտային շղթայով փոխադրման դեպքում:

5.4.1.1.19. *Դուրս գրված, դատարկ, չմաքրված փաթեթվածքների մասին հատուկ դրույթներ (ՄԱԿ-ի նշագրման 3509 համար)*

Դուրս գրված, դատարկ, չմաքրված փաթեթվածքների համար 5.4.1.1.1 (բ)-ում նշված բեռնառաքման ճշգրիտ անվանումը պետք է լրացվի «[...]»-ի ՄՆԱՅՈՐԴՆԵՐՈՎ» բառերով, որոնց հաջորդում է տարբեր մնացորդներին համապատասխանող դասը (դասերը) եւ հավելյալ ռիսկերը՝ դասի համարակալման հերթականությամբ: Ավելին, 5.4.1.1.1 (գ)-ն չի կիրառվում:

Օրինակ՝ 4.1 դասի բեռներ պարունակող դուրս գրված դատարկ, չմաքրված փաթեթվածքները, որոնք փաթեթավորված են 6.1 դասի հավելյալ ռիսկեր պարունակող 3-րդ դասի դուրս գրված, դատարկ, չմաքրված փաթեթվածքների հետ, տրանսպորտային փաստաթղթերում նշվում են որպես՝

«ՄԱԿ-ի նշագրման 3509 համարի՝ ԴՈՒՐՍ ԳՐՎԱԾ, ԴԱՏԱՐԿ, ՉՄԱՔՐՎԱԾ ՓԱԹԵԹՎԱԾՔՆԵՐ (3-րդ, 4.1, 6.1 դասերի

<sup>1</sup> (x)-ը փոխարինվում է «1»-ով կամ «2»-ով՝ համապատասխանաբար:

մնացորդներով), դասի համարը՝ 9»:

5.4.1.1.20. *2.1.2.8-ին համապատասխան դասակարգված նյութերի փոխադրման մասին հատուկ դրույթներ*

2.1.2.8-ին համապատասխան իրականացվող փոխադրման դեպքում տրանսպորտային փաստաթղթում ներառվում է հետևյալ նշումը՝ «Դասակարգված է 2.1.2.8-ին համապատասխան»:

5.4.1.1.21. *ՄԱԿ-ի նշագրման 3528, 3529 եւ 3530 համարների բեռների փոխադրման մասին հատուկ դրույթներ*

ՄԱԿ-ի նշագրման 3528, 3529 եւ 3530 համարների բեռների փոխադրման դեպքում, եթե դա պահանջվում է 3.3 գլխի 363-րդ հատուկ դրույթով, տրանսպորտային փաստաթղթում ներառվում է հետևյալ լրացուցիչ նշումը՝ «Փոխադրել 363-րդ հատուկ դրույթին համապատասխան»:

5.4.1.2. ***Որոշակի դասերի համար պահանջվող լրացուցիչ կամ հատուկ տեղեկատվությունը***

5.4.1.2.1. *Հատուկ դրույթներ՝ 1-ին դասի մասին*

ա) Ի լրումն 5.4.1.1(գ)-ով սահմանված պահանջների՝ տրանսպորտային փաստաթղթում նշվում են՝

- ՄԱԿ-ի նշագրման տարբեր համարներ կրող յուրաքանչյուր նյութում կամ պատրաստվածքում պարունակվող պայթյունավտանգ նյութի<sup>2</sup> ընդհանուր զտաքաշը՝ արտահայտված կիլոգրամներով.
- տրանսպորտային փաստաթղթում ներառված բոլոր նյութերում ու պատրաստվածքներում պարունակվող պայթյունավտանգ նյութի<sup>2</sup> ընդհանուր զտաքաշը՝ արտահայտված կիլոգրամներով.

բ) Երկու տարբեր բեռների խառը փաթեթավորման դեպքում տրանսպորտային փաստաթղթում բեռների բնութագրում ներառվում են երկու նյութերի կամ պատրաստվածքների համար ՄԱԿ-ի նշագրման համարները եւ 3.2 գլխի Ա աղյուսակի 1-ին ու 2-րդ սյունակներում մեծատառերով տպված անվանումները: Եթե նույն փաթեթում պարունակվում են երկուսից ավելի տարբեր բեռներ՝ 4.1.10-ի MP1, MP2 ու MP20-MP24 հատուկ դրույթներում նշված խառը փաթեթավորման մասին դրույթներին համապատասխան, տրանսպորտային փաստաթղթում բեռների բնութագրի ներքո նշվում են փաթեթում պարունակվող բոլոր

<sup>2</sup> Պատրաստվածքների դեպքում «պայթյունավտանգ պարունակություն» նշանակում է պատրաստվածքում պարունակվող պայթյունավտանգ նյութ:

նյութերի ու պատրաստվածքների ՄԱԿ-ի նշագրման համարները՝ հետեւյալ ձեւակերպմամբ՝ **«Բռններ, որոնք կրում են ՄԱԿ-ի նշագրման հետեւյալ համարները.....»**.

- գ) Այլ կերպ չնշված դիրքում կամ «0190 ՊԱՅԹՅՈՒՆԱՎՏԱՆԳ ՆՄՈՒՇՆԵՐ» դիրքում դասակարգված կամ 4.1.4.1-ի P101 փաթեթավորման հրահանգին համապատասխան փաթեթավորված նյութերի ու պատրաստվածքների դեպքում տրանսպորտային փաստաթղթին կցվում է իրավասու մարմնի հաստատման օրինակը՝ փոխադրման պայմանների հետ մեկտեղ: Այն կազմվում է առաքող երկրի պետական լեզվով, ինչպես նաեւ անգլերեն, ֆրանսերեն կամ գերմաներեն, եթե այդ պետական լեզուն անգլերենը, ֆրանսերենը կամ գերմաներենը չէ, եթե այլ բան նախատեսված չէ տրանսպորտային գործունեությամբ զբաղվող համապատասխան երկրների միջւեւ ձեռք բերված համաձայնությամբ:
- դ) Եթե համատեղելիության «B» եւ «D» խմբերին պատկանող նյութեր ու պատրաստվածքներ պարունակող փաթեթները միասին բեռնավորվում են նույն փոխադրամիջոցում՝ 7.5.2.2-ի պահանջներին համապատասխան, պաշտպանող խցիկի կամ պաշտպանիչ պատյանի համակարգի՝ իրավասու մարմնի կողմից հաստատման օրինակը՝ աղյուսակին կից ծանոթագրություն <sup>ա</sup>, կցվում է տրանսպորտային փաստաթղթի 7.5.2.2-ին համապատասխան: Այն կազմվում է առաքող երկրի պետական լեզվով, ինչպես նաեւ անգլերեն, ֆրանսերեն կամ գերմաներեն, եթե այդ պետական լեզուն անգլերենը, ֆրանսերենը կամ գերմաներենը չէ, եթե տրանսպորտային գործունեությամբ զբաղվող համապատասխան երկրների միջւեւ ձեռք բերված համաձայնությամբ այլ բան նախատեսված չէ:
- ե) Երբ պայթյունավտանգ նյութերը կամ պատրաստվածքները փոխադրվում են փաթեթավորման P101 հրահանգին համապատասխանող փաթեթվածքներում, տրանսպորտային փաստաթղթի վրա պետք է լինի հետեւյալ նշագիրը **«Փաթեթվածքը հաստատված է ...իրավասու մարմնի կողմից»** (տե՛ս 4.1.4.1, փաթեթավորման հրահանգ P101).
- ե) *(Նախատեսվում է վերապահում)*
- ե) Երբ փոխադրվում են ՄԱԿ-ի նշագրման 0333, 0334, 0335, 0336 ու 0337 համարների հրավառության միջոցներ, տրանսպորտային փաստաթղթի վրա պետք է լինի հետեւյալ նշագիրը՝  
**«Հրավառության միջոցների դասակարգումը XX իրավասու մարմնի կողմից, դասակարգման համարը՝ XX/YYZZZZ»:**

Դասակարգման հաստատման սերտիֆիկատը կարող է բեռին կցված չլինի, սակայն բեռնառաքողը պետք է այն տրամադրի փոխադրողին կամ իրավասու մարմիններին՝ հսկման նպատակով: Դասակարգման հաստատման սերտիֆիկատը կամ դրա օրինակը կազմվում է առաքող երկրի պետական լեզվով, ինչպես նաև գերմաներեն, անգլերեն կամ ֆրանսերեն, եթե այդ պետական լեզուն գերմաներենը, անգլերենը կամ ֆրանսերենը չէ:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1.** *Տրանսպորտային փաստաթղթում բեռնառաքման ճշգրիտ անվանմանը կարող է լրացուցիչ ավելացվել բեռների առելորային կամ տեխնիկական անվանումը:*

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2.** *Դասակարգման համարը պարունակում է նշում «ԱԴԴ» համաձայնագրի Պայմանավորվող կողմի մասին, որտեղ 3.3.1-ի 645-րդ հարուկ դրույթին համապատասխան՝ հաստատվել է դասակարգման ծածկագիրը եւ արտահայտվել միջազգային ճանապարհային երթեւեկությունում ներառված փոխադրամիջոցների համար կիրառվող փարբերանշանով (XX)<sup>3</sup>, այնուհետև նշվում է իրավասու մարմինը (YY) եւ անհատական սերիայի համարը (ZZZZ): Այդօրինակ դասակարգման համարների օրինակներ են՝*

*GB/HSE123456*

*D/BAM1234.*

#### 5.4.1.2.2. *Լրացուցիչ դրույթներ 2-րդ դասի մասին*

- ա) Խառնուրդները (տե՛ս 2.2.2.1.1) ցիստեռններով (հանվի ցիստեռններ, անշարժ ցիստեռններ, շարժական ցիստեռններ, ցիստեռն-կոնտեյներներ կամ մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցներ կամ ԳԲՏԿ-ների տարրեր) փոխադրելու դեպքում նշվում է խառնուրդների բաղադրության ծավալը կամ քաշն արտահայտվում է տոկոսով: 1%-ից ցածր բաղադրամասերը կարող են չնշվել (տե՛ս նաև 3.1.2.8.1.2): Խառնուրդի բաղադրությունը կարող է չնշվել, երբ 581-րդ, 582-րդ կամ 583-րդ հատուկ դրույթներով թույլատրված տեխնիկական անվանումներն օգտագործվում են բեռնառաքման ճշգրիտ անվանումը լրացնելու համար:
- բ) Բալոնները, գլանները, ճնշումային թմբկազլանները, կրիոգեն տարաները եւ բալոնների կապուլկները 4.1.6.10-ի պայմաններում

<sup>3</sup> Միջազգային երթեւեկության մեջ գործող փոխադրամիջոցների եւ դրանց կցորդների՝ գրանցման պետության փարբերանշաններ, օրինակ՝ 1949 թվականի «Ճանապարհային երթեւեկության մասին» Ժնևի կոնվենցիային կամ 1968 թվականի «Ճանապարհային երթեւեկության մասին» Վիեննայի կոնվենցիային համապատասխան:

փոխադրելու դեպքում տրանսպորտային փաստաթղթում ավելացվում է հետևյալ դիրքը՝ **«Փոխադրումը՝ 4.1.6.10-ին համապատասխան»:**

գ) (Նախատեսվում է վերապահում)

դ) Ստեղծված, հեղուկացված գազեր փոխադրող ցիստեռն-կոնտեյներների դեպքում բեռնառաքողը պահման փաստացի ժամանակը տրանսպորտային փաստաթղթում լրացնում է հետևյալ ձեւաչափով՝

«Պահման փաստացի ժամանակը՝ .....DD/MM/YYYY»:

5.4.1.2.3. *Լրացուցիչ դրույթներ՝ 4.1 դասի ինքնաբռնկվող նյութերի եւ պոլիմերային նյութերի եւ 5.2 դասի օրգանական պերօքսիդների մասին*

5.4.1.2.3.1. 4.1 դասի ինքնաբռնկվող նյութերի եւ պոլիմերային նյութերի եւ 5.2 դասի օրգանական պերօքսիդների դեպքում, որոնց փոխադրման ընթացքում պահանջվում է ջերմաստիճանի կարգավորում (ինքնաբռնկվող նյութերի համար տե՛ս 2.2.41.1.17, պոլիմերային նյութերի համար տե՛ս 2.2.41.1.21, իսկ օրգանական պերօքսիդների համար տե՛ս 2.2.52.1.15 - 2.2.52.1.17), կարգավորման ու վթարային ջերմաստիճանները պետք է նշված լինեն տրանսպորտային փաստաթղթում՝ հետևյալ կերպ՝

**«Վերահսկման ջերմաստիճանը՝:....°C, վթարային ջերմաստիճանը՝....°C»**

5.4.1.2.3.2. Երբ 4.1 դասի որոշակի տեսակի ինքնաբռնկվող նյութերի եւ 5.2 դասի որոշակի օրգանական պերօքսիդների դեպքում իրավասու մարմինը թույլատրել է հատուկ փաթեթվածքների համար չկիրառել թիվ 1 նմուշին համապատասխանող պիտակը (տե՛ս 5.2.2.1.9), տրանսպորտային փաստաթղթում ներառվում է նշում այդ մասին՝ հետևյալ կերպ՝

**«Թիվ 1 նմուշին համապատասխանող պիտակը չի պահանջվում»:**

5.4.1.2.3.3. Երբ օրգանական պերօքսիդներն ու ինքնաբռնկվող նյութերը փոխադրվում են այնպիսի պայմաններում, որոնց համար պահանջվում է հաստատում (օրգանական պերօքսիդների համար տե՛ս 2.2.52.1.8, 4.1.7.2.2 եւ 6.8.4-ի TA2 հատուկ դրույթը, իսկ ինքնաբռնկվող նյութերի համար տե՛ս 2.2.41.1.13 եւ 4.1.7.2.2), տրանսպորտային փաստաթղթում ներառվում է նշում այդ մասին, օրինակ՝ **«Փոխադրումը՝ 2.2.52.1.8-ին համապատասխան»:**

Տրանսպորտային փաստաթղթին կցվում են իրավասու մարմնի հաստատման օրինակն ու փոխադրման պայմանները: Այն կազմվում է առաքող երկրի պետական լեզվով, ինչպես նաեւ անգլերեն, ֆրանսերեն

կամ գերմաներեն, եթե այդ պետական լեզուն անգլերենը, ֆրանսերենը կամ գերմաներենը չէ, եթե տրանսպորտային գործունեությամբ զբաղվող համապատասխան երկրների միջև ձեռք բերված համաձայնությամբ այլ բան նախատեսված չէ:

5.4.1.2.3.4. Երբ փոխադրվում է օրգանական պերօքսիդի (տե՛ս 2.2.52.1.9) կամ ինքնաբռնկվող նյութի (տե՛ս 2.2.41.1.15) նմուշ, տրանսպորտային փաստաթղթում ներառվում է նշում այդ մասին, օրինակ՝ **«Փոխադրումը՝ 2.2.52.1.9-ին համապատասխան»:**

5.4.1.2.3.5. Երբ փոխադրվում են «G» տեսակի ինքնաբռնկվող նյութեր (տե՛ս «Փորձարկումների ու չափորոշիչների ձեռնարկ»-ի II մասի 20.4.2 (է) պարբերությունը), տրանսպորտային փաստաթղթում ներառվում է հետևյալ նշումը՝ **«4.1 դասի ինքնաբռնկվող նյութ»:**

Երբ փոխադրվում են «G» տեսակի օրգանական պերօքսիդներ (տե՛ս «Փորձարկումների ու չափորոշիչների ձեռնարկ»-ի II մասի 20.4.3 (է) պարբերությունը), տրանսպորտային փաստաթղթում ներառվում է հետևյալ նշումը՝ **«5.2 դասի նյութ չէ»:**

5.4.1.2.4. *Լրացուցիչ դրույթներ՝ 6.2 դասի մասին*

Բեռն ստացողի վերաբերյալ տեղեկատվությունից բացի (տե՛ս 5.4.1.1.1 (ը)) նշվում են պատասխանատու անձի անունն ու հեռախոսահամարը:

5.4.1.2.5. *Լրացուցիչ դրույթներ՝ 7-րդ դասի մասին*

5.4.1.2.5.1. Հետևյալ տեղեկությունները ներառվում են տրանսպորտային փաստաթղթում 7-րդ դասի նյութի յուրաքանչյուր խմբաքանակի համար 5.4.1.1.1 (ա)-(զ) եւ (ժա)-ում նշված հերթականությամբ եւ դրանցով պահանջվող տեղեկություններից անմիջապես հետո՝

ա) յուրաքանչյուր ռադիոնուկլիդի անվանումն ու խորհրդանշանը, կամ ռադիոնուկլիդների խառնուրդների դեպքում՝ այն նուկլիդների համապատասխան ընդհանուր բնութագիրը կամ ցանկը, որոնց նկատմամբ կիրառվում են առավել մեծ թվով սահմանափակումներ.

բ) նյութի ֆիզիկական եւ քիմիական տեսակների բնութագիրը, կամ տեղեկություն, որ դա ռադիոակտիվ նյութի հատուկ տեսակ է կամ տարածման ցածր հատկությամբ ռադիոակտիվ նյութ: Տեսակային քիմիական բնութագիրն ընդունելի է քիմիական տեսակի համար: Լրացուցիչ վտանգ ներկայացնող ռադիոակտիվ նյութերի համար տե՛ս 3.3 գլխի 172-րդ հատուկ դրույթի (զ) ենթակետը.

զ) ռադիոակտիվ պարունակության առավելագույն ակտիվությունը փոխադրման ընթացքում՝ արտահայտված բեկկերելներով (Բկ) եւ



ՏԻ նախաձեռնող համապատասխան խորհրդանշանով (տե՛ս 1.2.2.1): Տրոհվող նյութի դեպքում՝ ակտիվության փոխարեն կարող է նշվել տրոհվող նյութի զանգվածը (կամ, անհրաժեշտության դեպքում, խառնուրդներում յուրաքանչյուր տրոհվող նուկլիդի զանգվածը) գրամներով (գ) կամ դրան համապատասխան բազմապատիկներով.

- դ) փաթեթի կատեգորիան, այսինքն՝ I-ՍՊԻՏԱԿ, II-ԴԵՂԻՆ, III-ԴԵՂԻՆ.
- ե) տրանսպորտային ինդեքսը (միայն II-ԴԵՂԻՆ եւ III-ԴԵՂԻՆ կատեգորիաների դեպքում).
- ե) տրոհվող նյութերի դեպքում՝
  - i) որոնք փոխադրվում են 2.2.7.2.3.5 (ա)-(զ)-ում նշված ազատման մեկ տեսակի համաձայն, հղում այդ կետին
  - ii) որոնք փոխադրվում են 2.2.7.2.3.5 (զ)-(ե)-ի համաձայն, տրոհվող նուկլիդների ընդհանուր զանգվածը.
  - iii) որոնք գտնվում են այնպիսի փաթեթում, որոնց դեպքում կիրառվում է 6.4.11.2 (ա)-(զ)-ից մեկը կամ 6.4.11.3 կետը, հղում այդ կետին.
  - iv) համապատասխան դեպքերում, կրիտիկականության տեսակետից անվտանգության ինդեքսը.
- ե) տվյալ խմբաքանակի համար կիրառելի՝ իրավասու մարմնի կողմից տրված հաստատման սերտիֆիկատի (հատուկ տեսակի ռադիոակտիվ նյութ, տարածման ցածր հատկություն ունեցող ռադիոակտիվ նյութ, 2.2.7.2.3.5 (զ)-ի համաձայն փոխադրվող տրոհվող նյութ, հատուկ պայմաններ, փաթեթի կառուցվածք, կամ փոխադրում) նույնականացման նշանը.
- ը) մեկից ավելի փաթեթներից բաղկացած բեռների դեպքում յուրաքանչյուր փաթեթի համար նշվում է 5.4.1.1.1-ով եւ վերը նշված (ա)-(ե) կետերով պահանջվող տեղեկությունները: Տրանսպորտային կապոցում, կոնտեյներում կամ փոխադրամիջոցում գտնվող փաթեթների դեպքում ներառվում է տրանսպորտային կապոցում, կոնտեյներում կամ փոխադրամիջոցում գտնվող յուրաքանչյուր փաթեթի պարունակության, համապատասխան դեպքերում նաեւ՝ յուրաքանչյուր տրանսպորտային կապոցի, կոնտեյների կամ փոխադրամիջոցի մասին մանրամասն հայտարարություն: Եթե փաթեթները միջանկյալ բեռնաթափման որեւէ կետում պետք է հանվեն այդ տրանսպորտային կապոցից, կոնտեյներից կամ

փոխադրամիջոցից, ապա ներկայացվում են համապատասխան տրանսպորտային փաստաթղթեր.

- թ) եթե պահանջվում է, որ բեռը փոխադրվի բացառիկ օգտագործման պայմաններում, ապա՝ «**ՓՈՒՍԱԴՐՈՒՄԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲԱՑԱՌԻԿ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ**» նշագիրը, եւ
- ժ) LSA-II ու LSA-III, ինչպես նաեւ SCO-I եւ SCO-II նյութերի դեպքում՝ բեռի լիարժեք ակտիվությունը՝ որպես A<sub>2</sub>-ի բազմապատիկ: Այն ռադիոակտիվ նյութերի համար, որոնց դեպքում A<sub>2</sub> արժեքն անսահմանափակ է, A<sub>2</sub>-ի բազմապատիկը պետք է լինի:

5.4.1.2.5.2. Տրանսպորտային փաստաթղթերում բեռնառաքողը տրամադրում է հայտարարություն այն գործողությունների մասին (առկայության մասին), որոնք պետք է իրականացվեն փոխադրողի կողմից: Հայտարարությունը պետք է կատարվի փոխադրողի կամ համապատասխան մարմինների կողմից անհրաժեշտ համարվող լեզուներով եւ պետք է ներառի հետեւյալ տեղեկությունները՝

- ա) լրացուցիչ պահանջներ՝ փաթեթի, տրանսպորտային կապոցի կամ կոնտեյնների բեռնավորման, դասավորման, փոխադրման, վարվելակարգի եւ բեռնաթափման վերաբերյալ, այդ թվում՝ ջերմության անվտանգ հեռացման նպատակով դասավորման մասին հատուկ դրույթներ (տե՛ս 7.5.11-ի CV33 (3.2) հատուկ դրույթը) կամ նշում այն մասին, որ նման պահանջների անհրաժեշտություն չկա.
- բ) փոխադրման եղանակի կամ փոխադրամիջոցի մասով սահմանափակումներ եւ որեւէ այլ անհրաժեշտ երթուղային ցուցումներ.
- գ) կոնկրետ բեռնառաքման համար անհրաժեշտ արտակարգ միջոցառումներ:

5.4.1.2.5.3. Իրավասու մարմնի կողմից կառուցվածքի կամ առաքման հաստատման պահանջով օգտագործվող փաթեթների միջազգային առաքման բոլոր դեպքերում, որի համար փոխադրման հարցով հետաքրքրված տարբեր երկրներում կիրառվում են հաստատման տարբեր ձեւեր, 5.4.1.1-ով պահանջվող՝ ՄԱԿ-ի նշագրման համարը եւ բեռնառաքման ճշգրիտ անվանումը պետք է լինեն կառուցվածքի ծագման երկրում տրված սերտիֆիկատին համապատասխան:

5.4.1.2.5.4. Իրավասու մարմնի կիրառելի սերտիֆիկատները կարող են կցված չլինել բեռին: Բեռնառաքողը այն հանձնում է փոխադրողին (փոխադրողներին)՝ նախքան բեռնավորումը եւ բեռնաթափումը:

**5.4.1.3. (Նախապեսվում է վերապահում)**

#### **5.4.1.4. Ձեռագիրը եւ լեզուն**

5.4.1.4.1. 5.4.1.1 եւ 5.4.1.2-ում նշված տեղեկությունները պարունակող փաստաթուղթը կարող է լինել փոխադրման այլ եղանակով փոխադրմանը վերաբերող՝ գործող այլ կանոնակարգերով արդեն իսկ պահանջված փաստաթուղթ: Եթե բեռներն ստացողները բազմաթիվ են, ապա բեռներն ստացողների անունները եւ հասցեները, ինչպես նաեւ բեռների քանակը, որի միջոցով կարելի է ցանկացած պահի գնահատել փոխադրվող բեռների բնույթն ու քանակը, կարող են նշվել կիրառման ենթակա այլ փաստաթղթերում կամ ցանկացած տեսակի այլ փաստաթղթերում, որոնց կիրառումը պարտադիր է համարվում՝ կոնկրետ կանոնակարգերին համապատասխան, եւ որոնք պետք է պահվեն փոխադրամիջոցում:

Փաստաթղթում ներառվելիք տեղեկությունները կազմվում է առաքող երկրի պետական լեզվով, ինչպես նաեւ անգլերեն, ֆրանսերեն կամ գերմաներեն, եթե այդ երկրի պետական լեզուն անգլերենը, ֆրանսերենը կամ գերմաներենը չէ, եթե տրանսպորտային գործունեությամբ զբաղվող համապատասխան երկրների միջեւ ձեռք բերված համաձայնությամբ այլ բան նախատեսված չէ:

5.4.1.4.2. Եթե բեռի չափսերի պատճառով բեռը չի կարող ամբողջությամբ բեռնավորվել մեկ տրանսպորտային միավորում, ապա պետք է լրացվեն առնվազն այնքան առանձին փաստաթղթեր կամ մեկ ընդհանուր փաստաթղթի օրինակներ, որքան տրանսպորտային միավորներ բեռնավորվել են: Ավելին, բոլոր դեպքերում, առանձին տրանսպորտային փաստաթղթեր պետք է լրացվեն այն բեռների կամ բեռների մասի համար, որոնք չեն կարող բեռնավորվել միասին նույն փոխադրամիջոցում 7.5.2-ով սահմանված արգելքների պատճառով:

Փոխադրվող բեռների վտանգավորությանն առնչվող տեղեկությունները (ինչպես նշված է 5.4.1.1-ում) կարող են ներառվել կամ համախմբել գոյություն ունեցող տրանսպորտային կամ բեռների վարվելակարգին վերաբերող փաստաթղթում: Փաստաթղթում տեղեկությունները ներկայացնելու կառուցվածքը (կամ էլեկտրոնային տվյալների մշակման (ԷՏՄ) կամ էլեկտրոնային տվյալների փոխանակման (ԷՏՓ) միջոցներով համապատասխան տվյալների փոխանցման կարգը) պետք է համապատասխանի 5.4.1.1.1-ով սահմանված կառուցվածքին:

Երբ առկա տրանսպորտային փաստաթուղթը կամ բեռների հետ վարվելակարգին վերաբերող փաստաթուղթը չի կարող օգտագործվել բազմաձեւ փոխադրման համար վտանգավոր բեռների փաստաթղթավորման նպատակով, խորհուրդ է տրվում օգտագործել 5.4.5-ում ներկայացված օրինակին համապատասխանող

փաստաթղթեր<sup>4</sup>:

#### 5.4.1.5. **Ոչ վրանգավոր բեռները**

Երբ 3.2 գլխի Ա աղյուսակում անվանական նշված բեռների նկատմամբ չի կիրառվում «ԱԴՌ» համաձայնագիրը, որովհետեւ դրանք 2-րդ մասի համաձայն չեն համարվում վտանգավոր բեռներ, բեռնառաքողը կարող է տրանսպորտային փաստաթղթում նշում կատարել այդ մասին, օրինակ՝ «.... դասին չպատկանող բեռներ»:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** Սույն դրույթը կարող է կիրառվել մասնավորապես, երբ բեռնառաքողը համարում է, որ պայմանավորված փոխադրվող բեռների (օրինակ՝ լուծույթներ եւ խառնուրդներ) քիմիական բնույթով կամ այն հանգամանքով, որ այդպիսի բեռները վրանգավոր են համարվում կարգավորման այլ նպատակներից ելնելով, բեռների նկատմամբ ուղեւորության ընթացքում պետք է իրականացվի հսկողություն:

---

<sup>4</sup> Կարելի է նկատի ունենալ ՄԱԿ-ի ԵՏՀ Առեւտրի դյուրացման ու էլեկտրոնային բիզնեսի կենտրոնի համապատասխան առաջարկությունները (ՄԱԿ-ի ԱԴԷԲԿ) (UN/CEFACT), մասնավորապես թիվ 1 առաջարկությունը (Միավորված ազգերի կազմակերպության առեւտրային փաստաթղթերի նախագծային ձեւաթուղթ) (ECE/TRADE/137, հրատարակություն 81.3), ՄԱԿ-ի առեւտրային փաստաթղթերի նախագծային ձեւաթուղթ - կիրառման մասին ուղեցույցներ (ECE/TRADE/270, հրատարակություն 2002թ.), թիվ 11 առաջարկությունը (Վրանգավոր բեռների միջազգային փոխադրմանն առնչվող փաստաթղթերին վերաբերող հայեցակետերը) (ECE/TRADE/204, հրատարակություն 96.1՝ ներկայումս վերանայման գործընթացում) եւ թիվ 22 առաջարկությունը (Ստանդարտ բեռնառաքման ցուցումների նախագծային ձեւաթուղթ) (ECE/TRADE/168, հրատարակություն 1989թ.): Տե՛ս նաեւ ՄԱԿ-ի Առեւտրի դյուրացման ու էլեկտրոնային բիզնեսի կենտրոնի Առեւտրի դյուրացման մասին առաջարկությունների ամփոփագիրը (ECE/TRADE/346, հրատարակություն 2006թ.) եւ Միավորված ազգերի կազմակերպության առեւտրային տրվալների փորձերի տեղեկատու (ՄԱԿ-ի ԱՏՏՏ) (UNTDED) (ECE/TRADE/362, հրատարակություն 2005թ.):

#### 5.4.2. Կոնտեյների/փոխադրամիջոցի փաթեթավորման սերտիֆիկատ

Եթե կոնտեյներով վտանգավոր բեռների փոխադրումը նախորդում է ծովով փոխադրմանը, ապա ՎԲՄԾ կանոնագրի<sup>5,6</sup> 5.4.2-ի

<sup>5</sup> Ծովագնացության միջազգային կազմակերպությունը (ԾՄԿ), Աշխատանքի միջազգային կազմակերպությունը (ԱՄԿ) եւ Միավորված ազգերի կազմակերպության Եվրոպայի հարցերով փնտրեսական հանձնաժողովը (ՄԱԿ-ի ԵՏՀ) մշակել են նաեւ Տրանսպորտային միավորներում բեռների բեռնավորման մասին գործնական եւ ուսումնական ուղեցույցներ, որոնք հրատարակել է ԾՄԿ-ն ("IMO/ILO/UNECE Guidelines for Packing of Cargo Transport Units (CTUs)"):

<sup>6</sup> ՎԲՄԾ կանոնագրի (38-16 փոփոխություն) 5.4.2 բաժնով պահանջվում է հետևյալը՝

##### «5.4.2 Կոնտեյների/փոխադրամիջոցի փաթեթավորման սերտիֆիկատ

5.4.2.1 Երբ վրանգավոր բեռները փաթեթավորվում կամ բեռնավորվում են որեւէ կոնտեյներում կամ փոխադրամիջոցում, կոնտեյների/փոխադրամիջոցի փաթեթավորման համար պատասխանատուները պրամադրում են «կոնտեյների/փոխադրամիջոցի փաթեթավորման սերտիֆիկատ»՝ նշելով կոնտեյների/փոխադրամիջոցի նույնականացման համարը (համարները) եւ հավաստելով, որ գործողությունն իրականացվել է հետևյալ պայմաններին համապատասխան՝

- 1 Կոնտեյները/փոխադրամիջոցը եղել է մաքուր, չոր եւ ակնհայտորեն պատրաստ՝ բեռնավորման համար.
- 2 Փաթեթները, որոնք պետք է լինեն առանձնացված՝ առանձնացմանը վերաբերող կիրառելի պահանջներին համապատասխան, կոնտեյներում/փոխադրամիջոցում չեն փաթեթավորվել միասին [եթե այլ բան հաստատված չէ փյույլ իրավասու մարմնի կողմից՝ 7.3.4.1-ին (ՎԲՄԾ կանոնագրի համապատասխան)].
- 3 Բոլոր փաթեթներն արտաքինից ստուգվել են՝ հայտնաբերելու համար, թե արդյո՞ք դրանք վնասված չեն, բեռնավորվել են միայն չվնասված փաթեթները.
- 4 Թմբկազևանները դասավորվել են ուղղահայաց դիրքով, եթե այլ պահանջ չի ներկայացվել իրավասու մարմնի կողմից: Բոլոր բեռները պարզաճ կերպով բեռնավորվել են եւ, անհրաժեշտության դեպքում, հարկ եղած ձեւով կապվել պահպանիչ ամրակներով՝ նախատեսված ուղեորության ընթացքում փոխադրման եղանակին (եղանակներին) համապատասխանելու համար.
- 5 Առանց փաթեթավորման բեռնավորված բեռները հավասարաչափ բաշխվել են կոնտեյներում/փոխադրամիջոցում.
- 6 1-ին դասի՝ բացառությամբ 1.4 ենթադասի, բեռներ պարունակող խմբաբանակների համար կոնտեյները/փոխադրամիջոցը կառուցվածքային տեսակետից շահագործելի է՝ (ՎԲՄԾ կանոնագրի) 7.1.2-ին համապատասխան.
- 7 Կոնտեյները/փոխադրամիջոցը եւ փաթեթները պահանջված ձեւով մակնշված են, պիտակավորված, իսկ, հարկ եղած դեպքերում, դրանց վրա տեղադրված են տեղեկատվական ցուցանակներ.
- 8 Այն դեպքում, երբ ասֆիքսացիայի վրանգ ներկայացնող նյութերն օգտագործվում են հովացման կամ օդափոխման նպատակներով (ինչպես օրինակ՝ չոր սառույցը (ՄԱԿ-ի նշագրման 1845 համար)) կամ ազդրը, սառեցված հեղուկ (ՄԱԿ-ի նշագրման 1977 համար) կամ արգոնը, սառեցված հեղուկ (ՄԱԿ-ի նշագրման 1951 համար)), կոնտեյների/փոխադրամիջոցի արտաքին մակերեսի վրա պետք է կատարվի նշում՝ (ՎԲՄԾ կանոնագրի) 5.5.3.6-ին համապատասխան. եւ
- 9 կոնտեյներում/փոխադրամիջոցում բեռնավորված վրանգավոր բեռների յուրաքանչյուր խմբաբանակի համար ստացվել է վրանգավոր բեռների մասին տրանսպորտային փաստաթուղթ, ինչպես նշված է (ՎԲՄԾ կանոնագրի) 5.4.1-ում:

**ՃԱՆՈՑԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** Ցիստեռների համար կոնտեյների/փոխադրամիջոցի փաթեթավորման սերտիֆիկատ չի պահանջվում:

համապատասխան «կոնտեյների/փոխադրամիջոցի փաթեթավորման սերտիֆիկատը» տրամադրվում է տրանսպորտային փաստաթղթի հետ միասին:

5.4.1-ով պահանջվող տրանսպորտային փաստաթղթի ու «կոնտեյների/փոխադրամիջոցի փաթեթավորման սերտիֆիկատի» գործառույթները, ինչպես նախատեսված է վերելում, կարող են միավորվել մեկ ընդհանուր փաստաթղթում, այլապես, այդ փաստաթղթերը պետք է կցվեն միմյանց: Եթե այդ գործառույթները միավորվում են մեկ ընդհանուր փաստաթղթում, բավարար է տրանսպորտային փաստաթղթում ներառել հայտարարություն այն մասին, որ կոնտեյների կամ փոխադրամիջոցի բեռնավորումն իրականացվել է մոդելային կիրառելի կանոնակարգերին համապատասխան՝ միեւնույն ժամանակ նշելով «կոնտեյների/փոխադրամիջոցի փաթեթավորման սերտիֆիկատի» համար պատասխանատու անձին:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** «Կոնտեյների/փոխադրամիջոցի փաթեթավորման սերտիֆիկատ» չի պահանջվում շարժական ցիսպեռնների, ցիսպեռն-կոնտեյներների եւ ԳՐՏԿ-ների համար:

Եթե փոխադրամիջոցով վտանգավոր բեռների փոխադրումը նախորդում է ծովով փոխադրմանը, ապա ՎԲՄԾ կանոնագրի<sup>5,6</sup> 5.4.2-ի համապատասխան «կոնտեյների/փոխադրամիջոցի փաթեթավորման սերտիֆիկատի» կարող է տրամադրվել տրանսպորտային փաստաթղթի հետ միասին:

---

5.4.2.2 Վրանգավոր բեռների մասին տրանսպորտային փաստաթղթում ու կոնտեյների/փոխադրամիջոցի փաթեթավորման սերտիֆիկատում պահանջվող տեղեկությունները կարող են միավորվել մեկ ընդհանուր փաստաթղթում, այլապես, այդ փաստաթղթերը պետք է կցվեն միմյանց: Եթե տեղեկությունները միավորվում են մեկ ընդհանուր փաստաթղթում, փաստաթղթում պետք է ներառվի հետևյալ բովանդակությամբ ստորագրված հայտարարություն՝ «Հայտարարվում է, որ կոնտեյներում/փոխադրամիջոցում բեռների փաթեթավորումն իրականացվել է կիրառելի դրույթներին համապատասխան»: Այդ հայտարարությունը պետք է թվագրվի, եւ այն ստորագրող անձը պետք է նշվի փաստաթղթում: Ստորագրությունների ֆաքսիմիլային վերարտադրություններն ընդունելի են, եթե կիրառելի օրենքներով ու կանոնակարգերով ճանաչվում է ստորագրությունների ֆաքսիմիլային վերարտադրությունների իրավական վավերականությունը:

5.4.2.3 Եթե կոնտեյների/փոխադրամիջոցի փաթեթավորման սերտիֆիկատ ներկայացվում են փոխադրողին էՏՄ կամ էՏՓ փոխանցման մեթոդներով, ստորագրությունը (ստորագրությունները) կարող է լինել էլեկտրոնային ստորագրություն (ստորագրություններ) կամ կարող է փոխարինվել ստորագրման համար լիազորված անձի անվամբ (անուններով) (մեծատառերով):

5.4.2.4 Երբ կոնտեյների/փոխադրամիջոցի փաթեթավորման սերտիֆիկատ տրամադրվում են փոխադրողին էՏՄ կամ էՏՓ մեթոդներով, որից հետո վրանգավոր բեռները փոխանցվում են փոխադրողին, որը պահանջում է վրանգավոր բեռների մասին տրանսպորտային փաստաթղթի թղթային տարբերակը, փոխադրողը պետք է ապահովի, որ փաստաթղթի թղթային տարբերակում նշվի հետևյալը՝ «Բնօրինակն ստացվել է էլեկտրոնային տարբերակով», եւ ստորագրողի անունը նշվի մեծատառերով:

### 5.4.3. Գրավոր ցուցումները

- 5.4.3.1. 5.4.3.4-ում նշված ձեւի գրավոր ցուցումները պետք է մշտապես լինեն փոխադրամիջոցի անձնակազմի խցիկում եւ տեղադրված լինեն հասանելի վայրում՝ որպէս օգնության միջոց ծառայելով վթարային իրավիճակում, որ կարող է ստեղծվել կամ առաջանալ փոխադրման ընթացքում:
- 5.4.3.2. Փոխադրողն այդ ցուցումները տրամադրում է փոխադրամիջոցի անձնակազմին այն լեզվով (լեզուներով), որ յուրաքանչյուր անդամ կարողանա կարդալ ու հասկանալ այդ ցուցումները՝ նախքան ուղեւորության մեկնարկը: Փոխադրողն ապահովում է, որ համապատասխան փոխադրամիջոցի անձնակազմի յուրաքանչյուր անդամ հասկանա ու կարողանա պատշաճ կերպով իրականացնել ցուցումները:
- 5.4.3.3. Ճանապարհորդության մեկնարկից առաջ փոխադրամիջոցի անձնակազմի անդամները պետք է տեղեկացվեն բեռնված վտանգավոր բեռների մասին եւ գրավոր ձեւով մանրամասն խորհրդակցեն վթարի կամ արտակարգ իրավիճակների դեպքում ձեռնարկվելիք գործողությունների հետ կապված ցուցումների մասին:
- 5.4.3.4. Գրավոր ցուցումները պետք է համապատասխանեն հետեւյալ չորս էջանոց մոդելին՝ կապված դրա ձեւի եւ բովանդակության հետ:

### **ԳՐԱՎՈՐ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ «ԱԴՌ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ**







#### Գործողությունները պատահարի կամ վթարի դեպքում

Պատահարի կամ վթարի դեպքում, որ կարող է տեղի ունենալ կամ առաջանալ փոխադրման ժամանակ, փոխադրամիջոցի անձնակազմի անդամները ձեռնարկում են հետեւյալ գործողությունները, եթե դրանց իրականացումն անվտանգ ու կիրառելի է՝







- գործարկել արգելակման համակարգը, անջատել շարժիչը եւ առանձնացնել մարտկոցը անջատիչի միջոցով, եթե այդպիսին կա:
- Խուսափել բռնկման աղբյուրներից, մասնավորապես, չծխել կամ չմիացնել որեւէ էլեկտրական սարքավորում:
- Տեղեկացնել համապատասխան արտակարգ իրավիճակների ծառայություններին՝ տրամադրելով դեպքի կամ պատահարի, ինչպէս նաեւ ներգրավված նյութերի մասին հնարավորինս շատ տեղեկություններ:
- Հազնել ազդանշանային ժիլետ, անհրաժեշտության դեպքում՝ տեղադրել հենակ ունեցող նախազգուշացնող նշաններ:






- Տրանսպորտային փաստաթղթերը պահել հասանելի վայրում՝ արտակարգ իրավիճակների ծառայողության աշխատողների ժամանելուն պես նրանց տրամադրելու համար:
- Չմտնել թափված նյութերի մեջ կամ չչփվել դրանց հետ, ինչպես նաև մնալ օդափոխվող տարածքում՝ խուսափելով գազեր, ծուխ, փոշիներ ու գոլորշիներ ներշնչելուց:
- Եթե նպատակահարմար է եւ անվտանգ, օգտագործել կրակմարիչ սարքեր՝ անվադողերում, արգելակման ու շարժիչի խցիկներում փոքր կամ նոր սկսվող կրակը մարելու համար:
- Բեռնախցիկներում առաջացած կրակը փոխադրամիջոցի անձնակազմի անդամները չպետք է փորձեն մարել:
- Եթե նպատակահարմար է եւ անվտանգ, փոխադրամիջոցում գտնվող սարքավորումներն օգտագործել՝ դեպի ջրային միջավայր կամ ջրահեռացման համակարգ արտահոսքը կանխելու կամ թափվող նյութը տեղայնացնելու նպատակով:
- Հեռու մնալ պատահարի կամ վթարի վայրից, նույնը խորհուրդ տալ նաև այլ մարդկանց եւ հետեւել արտակարգ իրավիճակների ծառայությունների աշխատողների խորհուրդներին:
- Հանել աղտոտված հագուստը եւ աղտոտված պաշտպանական սարքավորումներն ու անվտանգ կերպով հեռացնել դրանք:



Փոխադրամիջոցի անձնակազմի անդամներին ուղղված լրացուցիչ ցուցումներ՝ ըստ դասերի դասակարգված վտանգավոր բեռների վտանգավոր բնութագրերի և առկա հանգամանքներում ձեռնարկվող գործողությունների վերաբերյալ		
Նախագուշացնող պիտակներ և տեղեկատվական ցուցանակներ	Վտանգի բնութագրեր	Լրացուցիչ ցուցում
(1)	(2)	(3)
<p>Պայթյունավտանգ նյութեր և պատրաստվածքներ</p>  <p>1 1.5 1.6</p>	<p>Կարող են ունենալ մի շարք հատկություններ ու ազդեցություններ, ինչպես, օրինակ՝ զանգվածային դետոնացում, մասերի ցրում, ուժգին կրակ (ջերմության հոսք), պայծառ լույսի առաջացում, բարձր աղմուկ կամ ծուխ:</p> <p>Ձգայուն են ցնցումների և (կամ) հարվածների և (կամ) ջերմության նկատմամբ:</p>	<p>Մտնել պատսպարան, սակայն հեռու մնալ պատուհաններից:</p>
<p>Պայթյունավտանգ նյութեր և պատրաստվածքներ</p>  <p>1.4</p>	<p>Պայթյունի ու հրդեհի թեթև վտանգ:</p>	<p>Մտնել պատսպարան:</p>
<p>Դյուրավառ գազեր</p>  <p>2.1</p>	<p>Հրդեհի վտանգ:</p> <p>Պայթյունի վտանգ:</p> <p>Կարող է գտնվել ճնշման տակ:</p> <p>Շնչահեղձ լինելու վտանգ:</p> <p>Կարող է առաջացնել այրվածքներ և (կամ) ցրտահարում:</p> <p>Տաքանալու դեպքում փականները կարող են պայթել:</p>	<p>Մտնել պատսպարան:</p> <p>Հեռու մնալ ցածր տարածքներից:</p>
<p>Ոչ դյուրավառ, ոչ թունավոր գազեր</p>  <p>2.2</p>	<p>Շնչահեղձ լինելու վտանգ:</p> <p>Կարող է գտնվել ճնշման տակ:</p> <p>Կարող է առաջացնել ցրտահարում:</p> <p>Տաքանալու դեպքում փականները կարող են պայթել:</p>	<p>Մտնել պատսպարան:</p> <p>Հեռու մնալ ցածր տարածքներից:</p>
<p>Թունավոր գազեր</p>  <p>2.3</p>	<p>Թունավորման վտանգ:</p> <p>Կարող է գտնվել ճնշման տակ:</p> <p>Կարող է առաջացնել այրվածքներ և (կամ) ցրտահարում:</p> <p>Տաքանալու դեպքում փականները կարող են պայթել:</p>	<p>Օգտագործել վթարային իրավիճակում փոխադրամիջոցից հեռանալու համար նախատեսված դիմակ:</p> <p>Մտնել պատսպարան:</p> <p>Հեռու մնալ ցածր տարածքներից:</p>
<p>Դյուրավառ հեղուկներ</p>  <p>3</p>	<p>Հրդեհի վտանգ:</p> <p>Հրդեհի վտանգ:</p> <p>Տաքանալու դեպքում փականները կարող են պայթել:</p>	<p>Մտնել պատսպարան:</p> <p>Հեռու մնալ ցածր տարածքներից:</p>
<p>Դյուրավառ պինդ նյութեր, ինքնաքայքայվող նյութեր, պոլիմերային նյութեր և պինդ ապագայունացված պայթուցիկներ</p>	<p>Հրդեհի վտանգ: Դյուրավառ է կամ բռնկվող. կարող է բռնկվել ջերմության հետեւանքով, կայծերից կամ բոցերից:</p> <p>Կարող է պարունակել ինքնաքայքայվող նյութեր, որոնց հատուկ է էկզոթերմիկ քայքայումը ջերմազատման, այլ նյութերի հետ խառնվելու (ինչպես օրինակ՝ թթուներ, ծանր մետաղի</p>	

**Փոխադրամիջոցի անձնակազմի անդամներին ուղղված լրացուցիչ ցուցումներ՝ ըստ դասերի դասակարգված վտանգավոր բեռների վտանգավոր բնութագրերի և առկա հանգամանքներում ձեռնարկվող գործողությունների վերաբերյալ**



Նախագուշացնող պիտակներ և տեղեկատվական ցուցանակներ	Վտանգի բնութագրեր	Լրացուցիչ ցուցում
(1)	(2)	(3)
 <p align="center">4.1</p>	<p>միացություններ և ամիսներ), շփման կամ ցնցման հետեանքով: Նշված գործողությունների հետեանքով կարող են առաջանալ վտանգավոր և դյուրավառ գազեր, կամ գոլորշիներ, կամ ինքնաբռնկում:</p> <p>Տաքանալու դեպքում փականները կարող են պայթել:</p> <p>Զգայանվազեցնող հատկության կորստի դեպքում ապագայունացված պայթուցիկների պայթման վտանգ:</p>	
<p>Նյութեր, որոնք ունակ են ինքնաբռնկման</p>  <p align="center">4.2</p>	<p>Ինքնաբռնկման հետեանքով հրդեհի առաջացման վտանգ, եթե փաթեթները վնասված են, կամ տեղի է ունեցել պարունակության արտահոսք:</p> <p>Ջրի հետ փոխազդեցության մեջ մտնելիս կարող է առաջանալ բուռն հակազդեցություն:</p>	
<p>Նյութեր, որոնք ջրի հետ փոխազդեցության մեջ մտնելիս, արտազատում են դյուրավառ գազեր</p>  <p align="center">4.3</p>	<p>Ջրի հետ փոխազդեցության մեջ մտնելիս հրդեհի և պայթյունի վտանգ:</p>	<p>Թափված նյութերը պետք է ծածկվեն ու պահվեն չոր վիճակում:</p>
<p>Օքսիդացնող նյութեր</p>  <p align="center">5.1</p>	<p>Բռնկվող կամ դյուրավառ նյութերի հետ փոխազդեցության մեջ մտնելիս բուռն հակազդեցության, բռնկման և պայթյունի վտանգ:</p>	<p>Խուսափել դյուրավառ կամ բռնկվող նյութերի (օրինակ՝ փայտի թեփի) հետ խառնելուց:</p>
<p>Օրգանական պերօքսիդներ</p>  <p align="center">5.2</p>	<p>Էկզոթերմիկ քայքայման վտանգ՝ բարձր ջերմաստիճանի, այլ նյութերի հետ խառնվելու (օր.՝ թթուներ, ծանր մետաղներ միացություններ կամ ամիսներ), շփման կամ հարվածի դեպքում: Նշված գործողությունների հետեանքով կարող են առաջանալ վտանգավոր և դյուրավառ գազեր կամ գոլորշիներ, կամ ինքնաբռնկում:</p>	<p>Խուսափել դյուրավառ կամ բռնկվող նյութերի (օրինակ՝ փայտի թեփի) հետ խառնելուց:</p>
<p>Թունավոր նյութեր</p>  <p align="center">6.1</p>	<p>Ներշնչման, մաշկի հետ շփման կամ կլանման դեպքում թունավորման վտանգ:</p> <p>Վտանգ է ներկայացնում ջրային միջավայրի կամ ջրահեռացման համակարգի համար:</p>	<p>Օգտագործել վթարային իրավիճակում փոխադրամիջոցից հեռանալու համար նախատեսված դիմակ:</p>
<p>Վարակիչ նյութեր</p>	<p>Վարակման վտանգ:</p> <p>Կարող է մարդկանց կամ կենդանիների մոտ ծանր հիվանդությունների առաջացման պատճառ</p>	

Փոխադրամիջոցի անձնակազմի անդամներին ուղղված լրացուցիչ ցուցումներ՝ ըստ դասերի դասակարգված վտանգավոր բեռների վտանգավոր բնութագրերի եւ առկա հանգամանքներում ձեռնարկվող գործողությունների վերաբերյալ		
Նախագուշացնող պիտակներ եւ տեղեկատվական ցուցանակներ	Վտանգի բնութագրեր	Լրացուցիչ ցուցում
(1)	(2)	(3)
 6.2	<p>դատնալ:</p> <p>Վտանգ է ներկայացնում ջրային միջավայրի կամ ջրահեռացման համակարգի համար:</p>	
<p>Ռադիոակտիվ նյութեր</p>  7A 7B 7C 7D	<p>Կլման ու արտաքին ճառագայթման վտանգ:</p>	<p>Սահմանափակել ճառագայթահարման ժամանակը:</p>
<p>Տրոհվող նյութ</p>  7E	<p>Միջուկային շղթայական ռեակցիայի առաջացման վտանգ:</p>	
<p>Կոռոզիոն նյութեր</p>  8	<p>Կոռոզիայի հետեւանքով այրվածքների առաջացման վտանգ:</p> <p>Կարող են բուռն հակազդեցության մեջ մտնել միմյանց, ջրի եւ այլ նյութերի հետ:</p> <p>Թափված նյութը կարող է առաջացնել կոռոզիոն գոլորշիներ:</p> <p>Վտանգ է ներկայացնում ջրային միջավայրի կամ ջրահեռացման համակարգի համար:</p>	
<p>Այլ վտանգավոր նյութեր եւ պատրաստվածքներ</p>  9 9A	<p>Այրվածքների առաջացման վտանգ:</p> <p>Հրդեհի առաջացման վտանգ:</p> <p>Պայթյունի վտանգ:</p> <p>Վտանգ է ներկայացնում ջրային միջավայրի կամ ջրահեռացման համակարգի համար:</p>	

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1.** Բազմապիսի վտանգներ ներկայացնող վտանգավոր բեռների եւ խառը բեռների դեպքում պետք է պահպանել աղյուսակում նշված կիրառելի բոլոր դիրքերը:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2.** Աղյուսակի 3-րդ սյունակում նշված լրացուցիչ ուղեցույցը կարող է համապատասխանեցվել՝ հաշվի առնելով

փոխադրվող վրանգավոր բեռների դասերը եւ դրանց համար նախատեսված տրանսպորտային միջոցները:

Փոխադրամիջոցի անձնակազմի անդամներին ուղղված լրացուցիչ ցուցումներ՝ ըստ դասերի վտանգավոր բեռների վտանգավոր բնութագրերի եւ առկա հանգամանքներում ձեռնարկվող գործողությունների վերաբերյալ		
Նշան	Վտանգի բնութագրեր	Լրացուցիչ ցուցում
(1)	(2)	(3)
 Շրջակա միջավայրի համար վտանգավոր նյութեր	Վտանգ է ներկայացնում ջրային միջավայրի կամ ջրահեռացման համակարգի համար:	
 Բարձր ջերմաստիճանային նյութեր	Ջերմության հետեւանքով այրվածքների առաջացման վտանգ:	Խուսափել տրանսպորտային միավորի տաքացած հատվածների եւ թափված նյութի հետ շփումից:

**Անձնական եւ ընդհանուր պաշտպանության համար անհրաժեշտ սարքավորումներ՝ ընդհանուր գործողություններ եւ «ԱԴՌ» համաձայնագրի 8.1.5-ին համապատասխան՝ տրանսպորտային միավորով իրականացվելիք՝ կոնկրետ վտանգին հատուկ վթարային գործողություններ իրականացնելու համար**

Հետեւյալ սարքավորումները պետք է լինեն տրանսպորտային միավորում՝

- յուրաքանչյուր փոխադրամիջոցի համար՝ փոխադրամիջոցի առավելագույն քաշին ու անվի տրամագծին հարմարեցված չափսեր ունեցող արգելակային կաղապար,
- հենակ ունեցող երկու նախազգուշական նշան,
- աչքերը լվանալու հեղուկ<sup>ա</sup>,

փոխադրամիջոցի անձնակազմի յուրաքանչյուր անդամի համար եւ

- մեկ ազդանշանային ժիլետ,
- շարժական լուսավորող սարք,
- մի զույգ պաշտպանիչ ձեռնոց, եւ
- աչքերի պաշտպանական միջոցներ:

Որոշակի դասերի համար պահանջվող լրացուցիչ սարքավորումներ՝

- փոխադրամիջոցի անձնակազմի յուրաքանչյուր անդամի համար վթարային իրավիճակում փոխադրամիջոցից տրանսպորտային միավորից հեռանալու համար նախատեսված դիմակ, որը պետք է պահվի տրանսպորտային միավորում՝ 2.3 կամ 6.1 համարները

<sup>ա</sup> Չի պահանջվում 1, 1.4, 1.5, 1.6, 2.1, 2.2 եւ 2.3 համարների վթարային պիտակների դեպքում:

կրող վթարային պիտակների առկայության դեպքում,

- թի<sup>բ</sup>,
- դրենաժային ծուղակ<sup>բ</sup>,
- հավաքող կոնտեյներ<sup>բ</sup>:

5.4.3.5 Պայմանավորվող կողմերը Միավորված ազգերի կազմակերպության Եվրոպայի հարցերով տնտեսական հանձնաժողովի (ՄԱԿ-ի ԵՏՀ) քարտուղարությանը տրամադրում է ցուցումների պաշտոնական գրավոր թարգմանությունը՝ իրենց լեզվով (լեզուներով), սույն բաժնին համապատասխան: ՄԱԿ-ի ԵՏՀ քարտուղարությունն իր կողմից ստացված գրավոր ցուցումների ազգային տարբերակները հասանելի է դարձնում բոլոր Պայմանավորվող կողմերի համար:

#### **5.4.4. Վտանգավոր բեռների փոխադրման մասին տեղեկությունների պահպանումը**

5.4.4.1. Բեռնառաքողը եւ փոխադրողը պահպանում են վտանգավոր բեռների փոխադրմանը վերաբերող փաստաթղթի մի օրինակ եւ լրացուցիչ տեղեկություններ ու փաստաթղթեր, ինչպես նախատեսված է «ԱԴՌ» համաձայնագրով, նվազագույնը երեք ամիս ժամանակահատվածում:

5.4.4.2. Երբ փաստաթղթերը պահվում են էլեկտրոնային տարբերակով կամ համակարգչային համակարգում, բեռնառաքողը եւ բեռը փոխադրողը պետք է կարողանան վերարտադրել թղթային տարբերակը:

#### **5.4.5. Վտանգավոր բեռների բազմաձեւ փոխադրման մասին ձեւաթղթի օրինակ**

Ձեւաթղթի օրինակ, որը վտանգավոր բեռների բազմաձեւ փոխադրման դեպքում կարող է օգտագործվել որպես համակցված վտանգավոր բեռների հայտարարագիր եւ կոնտեյնների փաթեթավորման սերտիֆիկատ:

---

<sup>բ</sup> Պահանջվում է միայն 3, 4.1, 4.3, 8 կամ 9 համարների վթարային պիտակներ կրող պինդ նյութերի ու հեղուկների դեպքում:







## ԳԼՈՒԽ 5.5

### ՀԱՏՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

5.5.1. *(Հանվել է)*

**5.5.2. Ախտահանված բեռնատար տրանսպորտային միավորների նկատմամբ կիրառելի հատուկ դրույթներ (ՄԱԿ 3359)**

**5.5.2.1. Ընդհանուր դրույթներ**

5.5.2.1.1. Այլ վտանգավոր բեռներ չպարունակող՝ գազով ծխեցման միջոցով ախտահանված բեռնատար տրանսպորտային միավորների նկատմամբ (ՄԱԿ 3359) սույն բաժնի դրույթներից բացի, «ԱԴԴ» համաձայնագրի այլ դրույթներ չեն կիրառվում:

5.5.2.1.2. Երբ գազով ծխեցման միջոցով ախտահանված բեռնատար տրանսպորտային միավորը, ախտահանող նյութից բացի, բեռնավորված է նաև վտանգավոր բեռներով, ի հավելումն սույն բաժնի դրույթների, կիրառվում է «ԱԴԴ» համաձայնագրի՝ այդ բեռներին առնչվող ցանկացած դրույթ (ներառյալ տեղեկատվական ցուցանակների տեղադրումը, մակնշումը եւ փաստաթղթավորումը):

5.5.2.1.3. Գազով ծխեցման ենթարկվող բեռների փոխադրման համար օգտագործվում են միայն բեռնատար այնպիսի տրանսպորտային միավորներ, որոնք կարող են փակվել այնպես, որ գազի արտահոսքը հասցվի նվազագույնի:

**5.5.2.2. Վերապատրաստում**

Գազով ծխեցման միջոցով ախտահանված բեռնատար տրանսպորտային միավորների բեռնավորման-բեռնաթափման աշխատանքներում ներգրավված անձինք պետք է անցնեն իրենց պարտականություններին համարժեք վերապատրաստման դասընթացներ:

**5.5.2.3. Մակնշումը եւ տեղեկատվական ցուցանակների տեղադրումը**

5.5.2.3.1. Գազով ծխեցման միջոցով ախտահանված բեռնատար տրանսպորտային միավորները մակնշվում են նախազգուշական նշանով, ինչպես նշված է 5.5.2.3.2-ում, եւ փակցվում են այնպիսի հարմար վայրում, որտեղից այն պարզ տեսանելի կլինի բեռնատար տրանսպորտային միավորը բացող կամ այնտեղ մտնող անձանց համար: Այդ նշանը պետք է մնա բեռնատար տրանսպորտային միավորի վրա, մինչեւ հետեւյալ դրույթների իրականացումը՝


ա) գազով ծխեցման միջոցով ախտահանված տրանսպորտային միավորն օդափոխվել է՝ ծխեցնող գազի վնասակար

ազդեցությունները վերացնելու համար եւ

բ) գազով ծխեցման ենթարկված բեռները կամ նյութերը  
բեռնաթափվել են:

5.5.2.3.2. Գազով ծխեցման միջոցով ախտահանման մասին նախազգուշացնող  
նշանը պետք է լինի, ինչպես պատկերված է 5.5.2.3.2 գծագրում:

**Գծագիր 5.5.2.3.2.**



\* Անհրաժեշտության դեպքում ներառել մանրամասները

Գազով ծխեցման միջոցով ախտահանման մասին նախազգուշացնող նշան

Նշանը պետք է լինի ուղղանկյուն: Նվազագույն չափսերը պետք է լինեն 400 մմ լայնություն x 300 մմ բարձրություն, իսկ դրսի գծի նվազագույն լայնությունը պետք է լինի 2 մմ: Մակնշումը պետք է տպագրված լինի սեւ գույնով՝ սպիտակ ֆոնի վրա, իսկ տառերի բարձրությունը չպետք է 25 մմ-ից ցածր լինի: Եթե չափսերը նշված չեն, բոլոր բնորոշիչները պետք է լինեն պատկերում ներկայացված մոտավոր համամասնությամբ:

- 5.5.2.3.3. Եթե գազով ծխեցման միջոցով ախտահանումից հետո գազով ծխեցման միջոցով ախտահանված տրանսպորտային միավորն օդափոխվում է միավորի դռները բաց թողնելու կամ մեխանիկական օդափոխման միջոցով, ապա օդափոխման ամսաթիվը պետք է նշվի գազով ծխեցման միջոցով ախտահանման մասին նախազգուշացնող նշանով:
- 5.5.2.3.4. Երբ գազով ծխեցման միջոցով ախտահանված բեռնատար տրանսպորտային միավորն օդափոխվել է բեռնաթափվել է, գազով ծխեցման միջոցով ախտահանման մասին նախազգուշացնող նշանը պետք է հեռացվի:
- 5.5.2.3.5. Թիվ 9 նմուշին համապատասխանող տեղեկատվական ցուցանակները (տե՛ս 5.2.2.2.2) չեն ամրացվում ծխեցման միջոցով ախտահանված բեռնատար տրանսպորտային միավորին, բացառությամբ այն

դեպքերի, երբ դրանք պահանջվում են դրանցում փաթեթավորված՝ 9-րդ դասի այլ նյութերի կամ պատրաստվածքների համար:

#### **5.5.2.4. Փաստաթղթերը**

5.5.2.4.1. Մինչեւ փոխադրումը գազով ծխեցման միջոցով ախտահանված ու ամբողջությամբ չօդափոխված բեռնատար տրանսպորտային միավորների փոխադրմանը վերաբերող փաստաթղթերում ներառվում են հետեւյալ տեղեկությունները՝

- «ՄԱԿ-ի նշագրման 3359 համար, գազով ծխեցման միջոցով ախտահանված տրանսպորտային միավոր, 9» կամ «ՄԱԿ-ի նշագրման 3359 համար, գազով ծխեցման միջոցով ախտահանված տրանսպորտային միավոր, 9-րդ դաս»,
- գազով ծխեցման միջոցով ախտահանման օրն ու ժամը, եւ
- գազով ծխեցման միջոցով ախտահանման համար օգտագործված նյութի տեսակն ու քանակը:

Այդ տեղեկությունները կազմվում են առաքող երկրի պետական լեզվով, ինչպես նաեւ անգլերեն, ֆրանսերեն կամ գերմաներեն, եթե այդ պետական լեզուն անգլերենը, ֆրանսերենը կամ գերմաներենը չէ, եթե տրանսպորտային գործունեությամբ զբաղվող համապատասխան երկրների միջեւ ձեռք բերված համաձայնությամբ այլ բան նախատեսված չէ:

5.5.2.4.2. Փաստաթղթերը կարող են ձեւակերպվել ցանկացած ձեւով՝ պայմանով, որ դրանցում պարունակում են 5.5.2.4.1-ով պահանջվող տեղեկությունները: Այդ տեղեկությունները պետք է հեշտությամբ նույնականացվեն, պետք է լինեն ընթեռնելի ու չջնջվող:

5.5.2.4.3. Պետք է ցուցումներ տրվեն գազով ծխեցմամբ ախտահանման համար օգտագործված նյութի ցանկացած մնացորդի, ինչպես նաեւ սարքերի (եթե օգտագործվել են) հեռացման վերաբերյալ:

5.5.2.4.4. Փաստաթուղթ չի պահանջվում, երբ գազով ծխեցման միջոցով ախտահանված բեռնատար տրանսպորտային միավորն ամբողջությամբ օդափոխվել է, եւ օդափոխման ամսաթիվը նշված է նախազգուշացնող նշանի վրա (տե՛ս 5.5.2.3.3 եւ 5.5.2.3.4):

**5.5.3. Սառեցման կամ օդորակման նպատակով օգտագործելու ժամանակ շնչահեղձ լինելու վտանգ ներկայացնող նյութեր (ինչպես օրինակ չոր սառույց (ՄԱԿ-ի նշագրման 1845 համար) կամ նիտրոգեն, սառեցված հեղուկ (ՄԱԿ-ի նշագրման 1977 համար) կամ արգոն, սառեցված հեղուկ (ՄԱԿ-ի նշագրման 1951 համար)) պարունակող փաթեթների եւ փոխադրամիջոցների եւ կոնտեյներների նկատմամբ կիրառվող հատուկ դրույթներ**

### **5.5.3.1. Շրջանակը**

5.5.3.1.1. Սույն բաժինը կիրառելի չէ այն նյութերի նկատմամբ, որոնք կարող են օգտագործվել սառեցման կամ օդորակման համար, երբ դրանք փոխադրվում են որպես վտանգավոր բեռների բեռնառաքում՝ բացառությամբ չոր սառույցի (ՄԱԿ-ի նշագրման 1845 համար): Երբ դրանք փոխադրվում են որպես բեռ, այս նյութերը պետք է փոխադրվեն 3.2 գլխի Ա աղյուսակի համապատասխան դիրքի համաձայն՝ դրանց հետ կապված փոխադրման պայմաններին համապատասխան:

ՄԱԿ-ի նշագրման 1845 համարի դեպքում սույն բաժնում նշված փոխադրման պայմանները, բացառությամբ 5.5.3.3.1-ի, կիրառվում են որպես սառեցնող, օդորակող նյութի կամ բեռի փոխադրման բոլոր տեսակների համար: ՄԱԿ-ի նշագրման 1845 համարի դեպքում չի կիրառվում «ԱԴԲ» համաձայնագրի որեւէ այլ դրույթ:

5.5.3.1.2. Սույն բաժինը չի կիրառվում սառեցման ցիկլերում առկա գազերի նկատմամբ:

5.5.3.1.3. Սույն բաժինը չի վերաբերում սառեցման կամ օդորակման ցիստեռների կամ փոխադրման ընթացքում օգտագործվող ԳՔՏԿ-ների համար օգտագործվող վտանգավոր բեռներին:

5.5.3.1.4. Սառեցման կամ օդորակման համար օգտագործվող նյութեր պարունակող փոխադրամիջոցները եւ կոնտեյներները ներառում են այն փոխադրամիջոցները եւ կոնտեյներները, որոնք պարունակում են փաթեթի ներսում սառեցման կամ օդորակման համար օգտագործվող նյութեր, ինչպես նաեւ սառեցման կամ օդորակման համար օգտագործվող չփաթեթավորված նյութերով փոխադրամիջոցները եւ կոնտեյներները:

5.5.3.1.5. 5.5.3.6-ը եւ 5.5.3.7-ը կիրառվում են միայն, երբ առկա է փոխադրամիջոցում կամ կոնտեյներում շնչահեղձ լինելու վտանգ: Սա այն մասնակիցների համար է, ովքեր զբաղվում են ռիսկերի գնահատմամբ՝ հաշվի առնելով սառեցման կամ օդորակման համար օգտագործվող նյութերի կողմից ներկայացված վտանգները, փոխադրվող նյութի քանակը, երթի տեւողությունը, օգտագործվող տեղայնացման տեսակները եւ գազի կոնցենտրացիայի սահմանաչափը, որը ներկայացված է 5.5.3.3.3-ի ծանոթագրության մեջ:

### **5.5.3.2. Ընդհանուր**

5.5.3.2.1. Սառեցման կամ օդորակման (բացի ծխահարումից) համար օգտագործվող նյութեր պարունակող փոխադրամիջոցների կամ

կոնտեյներների փոխադրման ժամանակ չեն կիրառվում «ԱԴՌ» համաձայնագրի այլ դրույթներ՝ բացի սույն բաժնում նշված դրույթներից:

5.5.3.2.2. Եթե վտանգավոր բեռները բեռնվում են սառեցման կամ օդորակման համար օգտագործվող նյութեր պարունակող փոխադրամիջոցներ կամ կոնտեյներներ, սույն բաժնի դրույթներից բացի կիրառվում են այդ վտանգավոր բեռներին վերաբերող «ԱԴՌ» համաձայնագրի բոլոր դրույթները:

5.5.3.2.3. *(Նախատեսվում է վերապահում)*

5.5.3.2.4. Սառեցման կամ օդորակման համար օգտագործվող նյութեր պարունակող փոխադրամիջոցների կամ կոնտեյներների օգտագործմանը կամ փոխադրմանն առնչվող անձինք պետք է վերապատրաստվեն ըստ իրենց պատասխանատվությունների:

**5.5.3.3. Սառնազդակ կամ օդորակիչ նյութ պարունակող փաթեթվածքներ**

5.5.3.3.1. Փաթեթավորված վտանգավոր բեռները, որոնք պահանջում են 4.1.4.1-ի P203, P620, P650, P800, P901 կամ P904 փաթեթավորման ցուցումներին համապատասխան սառեցում կամ օդորակում, պետք է բավարարեն փաթեթավորման ցուցումների համապատասխան պահանջները:

5.5.3.3.2. Այլ փաթեթավորման ցուցումներին համապատասխան սառեցում կամ օդորակում պահանջող փաթեթավորված վտանգավոր բեռների դեպքում փաթեթվածքները պետք է ունենան շատ ցածր ջերմաստիճանին դիմակայելու հատկություն եւ չպետք է ենթարկվեն այդ սառնազդակի կամ օդորակիչ նյութի ազդեցությանը: Փաթեթվածքները նախագծվում եւ կառուցվում են այնպես, որ հնարավոր լինի գազի հեռացումը՝ կանխելու համար ճնշման առաջացումը, որի հետեւանքով կարող են պատռվել փաթեթվածքները: Վտանգավոր բեռները պետք է փաթեթավորվեն այնպես, որ հնարավոր լինի կանխարգելել դրանց շարժը սառնազդակը կամ օդորակիչ նյութը հեռացնելուց հետո:

5.5.3.3.3. Սառնազդակ կամ օդորակիչ նյութ պարունակող փաթեթվածքները պետք է փոխադրվեն լավ օդափոխություն ունեցող փոխադրամիջոցներով կամ կոնտեյներներով: Այս դեպքում չի պահանջվում կատարել մակնշում 5.5.3.6-ի համաձայն:

Օդափոխություն չի պահանջվում, եւ մակնշում 5.5.3.6-ի համաձայն պահանջվում է, եթե՝

- կանխարգելվում է գազի փոխանակումը բեռնախցիկի եւ վարորդի խցիկի միջեւ, կամ
- բեռնախցիկը հանդիսանում է իզոթերմային, սառեցված կամ

մեխանիկական սառնարան-սարքավորում, օրինակ, ինչպես սահմանված է «Արագ փչացող սննդամթերքի միջազգային փոխադրման եւ այդ փոխադրման ժամանակ օգտագործվող հատուկ սարքավորումների մասին» (ATP) համաձայնագրում, եւ առանձնացված է վարորդի խցիկից:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** Այս համալրեքստում «լավ օդափոխվող» եզրույթը նշանակում է, որ առկա է այնպիսի մթնոլորտ, որտեղ ածխաթթու գազի կոնցենտրացիան ծավալով ցածր է 0.5%-ից, իսկ թթվածնի կոնցենտրացիան ծավալով բարձր է 19.5%-ից:

#### **5.5.3.4. Սառնազդակ կամ օդորակիչ նյութ պարունակող փաթեթվածքների մակնշումը**

5.5.3.4.1. Սառեցման կամ ջերմաստիճանը պահելու համար օգտագործվող վտանգավոր բեռներ պարունակող փաթեթվածքները պետք է մակնշվեն 3.2 գլխի Ա աղյուսակի 2-րդ սյունակում նշված այս վտանգավոր բեռի անվանումով, որին հաջորդում են «ՈՐՊԵՍ ՍԱՌՆԱԶԴԱԿ» կամ «ՈՐՊԵՍ ԶԵՐՄԱՍՏԻՃԱՆԸ ՊԱՀԵԼՈՒ ՆՅՈՒԹ» բառերը, համապատասխանաբար ծագման երկրի պաշտոնական լեզվով, ինչպես նաեւ, այն դեպքում, երբ այդ լեզուն անգլերենը, ֆրանսերեն կամ գերմաներենը չէ՝ անգլերենով, գերմաներենով կամ ֆրանսերենով, եթե փոխադրմանը մասնակցող երկրների միջեւ կնքված համաձայնագրերով այլ բան չի նախատեսվում:

5.5.3.4.2. Մակնշումը պետք է լինի դիմացկուն, ընթեռնելի եւ փաթեթի այնպիսի համապատասխան մասում ու այնպիսի չափսերի, որ պարզորոշ կերպով լինի տեսանելի:

#### **5.5.3.5. Զփաթեթավորված չոր սառույց պարունակող փոխադրամիջոցներ եւ կոնտեյներներ**

5.5.3.5.1. Եթե օգտագործվում է չոր սառույց չփաթեթավորված ձեւով, այն չպետք է լինի ուղղակի շփման մեջ փոխադրամիջոցի կամ կոնտեյների մետաղական կառուցվածքի հետ՝ մետաղի դյուրաբեկությունից խուսափելու համար: Պետք է ձեռնարկվեն միջոցներ չոր սառույցի եւ փոխադրամիջոցի կամ կոնտեյների միջեւ համապատասխան մեկուսացում ապահովելու համար՝ պահպանելով դրանց միջեւ առնվազն 30 մմ տարածություն (օրինակ՝ օգտագործելով այնպիսի ցածր ջերմային հաղորդիչ նյութեր, ինչպիսիք են գերանակապ երեսվածքները, տակդիրները եւ այլն):

5.5.3.5.2. Եթե չոր սառույցը տեղադրվում է փաթեթվածքի շուրջ, պետք է ձեռնարկել միջոցներ՝ ապահովելու, որ փոխադրման ընթացքում փաթեթվածքները մնան իրենց նախնական դիրքում սառույցը վերջանալու դեպքում:

**5.5.3.6. Փոխադրամիջոցների եւ կոնտեյներների մակնշումը** 5.5.3.6.1.

Սառեցման կամ օդորակման համար օգտագործվող վտանգավոր բեռներ պարունակող փոխադրամիջոցները կամ կոնտեյներները, որոնք լավ չեն օդափոխվում, մակնշվում են նախազգուշական նշանով, ինչպես նշված է 5.5.3.6.2-ում, փակցվում են յուրաքանչյուր մուտքի կետում, որտեղից դրանք պարզ տեսանելի կլինեն բեռնատար տրանսպորտային միավորը բացող կամ այնտեղ մտնող անձանց համար: Այդ նշանը պետք է մնա փոխադրամիջոցի կամ կոնտեյների վրա մինչեւ հետեւյալ դրույթների իրականացումը՝

ա) փոխադրամիջոցը կամ կոնտեյները լավ օդափոխվել է՝ սառնազդակի կամ օդորակիչ նյութի վնասակար կոնցենտրացիան վերացնելու համար, եւ


բ) սառեցված կամ օդորակված ապրանքները բեռնաթափվել են:

Եթե փոխադրամիջոցը կամ կոնտեյները մակնշված է, այնտեղ մուտք գործելուց առաջ պետք է ձեռնարկվեն համապատասխան նախազգուշական միջոցներ: Բեռնախցիկի դռներից կամ այլ միջոցներով օդափոխելու անհրաժեշտությունը (հարկադրական օդափոխություն) պետք է գնահատվի եւ ներառվի ներգրավված անձանց վերապատրաստման ծրագրում:

5.5.3.6.2. Նախազգուշական նշանը պետք է ունենա 5.5.3.6.2 գծագրում պատկերված տեսքը:

**Գծագիր 5.5.3.6.2**





Սառնազդակի/ օդորակիչ նյութի մասին նախազգուշական նշան փոխադրամիջոցների եւ կոնտեյներների համար

- \* Լրացնել 3.2 գլխի Ա աղյուսակի 2-րդ սյունակում նշված սառնազդակի /օդորակիչ նյութի անվանումը: Տառերը պետք է լինեն տպատառ, բոլորը լինեն մեկ գծի վրա, իսկ բարձրությունը պետք է կազմի առնվազն 25մմ: Եթե նյութերի բեռնառաքման ճշգրիտ անվանումը չափազանց երկար է առկա տարածքում այն տեղավորելու համար, տառերի մեծությունը կարող է նվազեցվել մինչեւ այն հնարավոր չափսը, որի դեպքում այն հնարավոր կլինի տեղավորել: Օրինակ, «ԱԾԽԱԹԹՈՒ ԳԱԶ, ՊԻՆԴ»:
- \*\* Լրացնել «ՈՐՊԵՍ ՍԱՌՆԱԶԴԱԿ» կամ «ՈՐՊԵՍ ՕԴՈՐԱԿԻՉ ՆՅՈՒԹ»՝ համապատասխանաբար: Տառերը պետք է լինեն մեծատառ, բոլորը մեկ գծի վրա, իսկ բարձրությունը պետք է կազմի առնվազն 25մմ:

Նշանը պետք է լինի ուղղանկյուն: Նվազագույն չափսերը պետք է կազմեն 150 մմ լայնություն x 250 մմ բարձրություն: «ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ» բառը պետք է լինի կարմիր կամ սպիտակ եւ նվազագույնը 25 մմ բարձրությամբ: Եթե չափսերը նշված չեն, բոլոր բնորոշիչները պետք է լինեն պատկերում ներկայացված մոտավոր համամասնությամբ:

«ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ» բառը եւ «ՈՐՊԵՍ ՍԱՌՆԱԶԴԱԿ» կամ

«ՈՐՊԵՍ ՕԴՈՐԱԿԻՉ ՆՅՈՒԹ» բառերը, համապատասխանաբար, ծագման երկրի պետական լեզվով, ինչպես նաև, եթե այդ լեզուն անգլերենը, ֆրանսերենը կամ գերմաներենը չէ, ապա անգլերեն, ֆրանսերեն կամ գերմաներեն, եթե այլ բան նախատեսված չէ տրանսպորտային գործունեությամբ զբաղվող համապատասխան երկրների միջև ձեռք բերված համաձայնությամբ:

**5.5.3.7. Փաստաթղթավորումը** 5.5.3.7.1. Այն փոխադրամիջոցների կամ կոնտեյներների փոխադրման հետ կապված փաստաթղթերը (օրինակ՝ ապրանքագիր, ավիաբեռնագիր կամ CMR/CIM բեռնագիր), որոնք պարունակում կամ պարունակել են սառեցման կամ օդորակման նպատակով օգտագործվող նյութեր եւ փոխադրելուց առաջ ամբողջությամբ չեն օդափոխվել, պետք է ներառեն հետևյալ տեղեկատվությունը՝

- ա) ՄԱԿ-ի նշագրման համարը, որին նախորդում է «ՄԱԿ» բառը, եւ
- բ) 3.2 գլխի Ա աղյուսակի 2-րդ սյունակում նշված անվանումը, որին հաջորդում են «ՈՐՊԵՍ ՍԱՌՆԱԶԴԱԿ» ԿԱՄ «ՈՐՊԵՍ ՕԴՈՐԱԿԻՉ ՆՅՈՒԹ» բառերը, համապատասխանաբար, ծագման երկրի պետական լեզվով, ինչպես նաև, եթե այդ լեզուն անգլերենը, ֆրանսերենը կամ գերմաներենը չէ, ապա անգլերեն, ֆրանսերեն կամ գերմաներեն, եթե այլ բան նախատեսված չէ տրանսպորտային գործունեությամբ զբաղվող համապատասխան երկրների միջև ձեռք բերված համաձայնությամբ:

Օրինակ՝ ՄԱԿ-ի ՆՇԱԳՐՄԱՆ 1845 ՀԱՄԱՐ, ԱԾԽԱԹԹՈՒ ԳԱԶ, ՊԻՆԴ, ՈՐՊԵՍ ՍԱՌՆԱԶԴԱԿ:

5.5.3.7.2. Տրանսպորտային փաստաթուղթը կարող է ունենալ ցանկացած ձեւաչափ՝ պայմանով, որ այն պարունակի 5.5.3.7.1-ով պահանջվող տեղեկատվությունը: Տեղեկատվությունը պետք է լինի հեշտ տեսանելի, ընթեռնելի եւ չճնշվող:

## ՄԱՍ 6

**Փաթեթվածքների, սորուն բեռների համար նախատեսված միջին բեռնվածության կոնտեյներների (ՍՄԿ-ներ), խոշոր փաթեթվածքների, ցիստեռնների եւ սորուն բեռների համար նախատեսված կոնտեյներների պատրաստման եւ փորձարկման վերաբերյալ պահանջները**

## ԳԼՈՒԽ 6.1

### ՓԱԹԵԹՎԱԾՔՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

#### 6.1.1. Ընդհանուր դրույթներ

6.1.1.1. Սույն գլխի պահանջները չեն կիրառվում՝

- ա) 7-րդ դասի ռադիոակտիվ նյութ պարունակող փաթեթների նկատմամբ, եթե այլ բան չի նախատեսվում (տես 4.1.9).
- բ) 6.2. դասի վարակիչ նյութեր պարունակող փաթեթների նկատմամբ, եթե այլ բան չի նախատեսվում (տես 6.3 գլուխը, 4.1.4.1-ի P621 Ծանոթագրությունը եւ փաթեթավորման ցուցումը).
- գ) 2-րդ դասի գազեր պարունակող՝ ճնշումային տարաների նկատմամբ.
- դ) այն փաթեթների նկատմամբ, որոնց զտաքաշը գերազանցում է 400 կգ-ը.
- ե) 450 է-ից ավելի տարողություն ունեցող փաթեթվածքների նկատմամբ՝ բացի համակցված փաթեթվածքներից:

6.1.1.2. 6.1.4-ում ներկայացված՝ փաթեթվածքներին ներկայացվող պահանջները ձեւակերպված են՝ ելնելով տվյալ պահին օգտագործվող փաթեթվածքների բնութագրից: Հաշվի առնելով գիտության եւ տեխնիկայի զարգացման գործընթացում առաջընթացը, չի արգելվում օգտագործել այնպիսի փաթեթվածք, որն իր տեխնիկական բնութագրով տարբեր է 6.1.4-ում նկարագրված փաթեթվածքներից՝ պայմանով, որ այդ փաթեթվածքը նույնչափ արդյունավետ է, կիրառելի իրավասու մարմնի կողմից եւ կարող է արդյունավետ կերպով անցնել 6.1.1.3-ում եւ 6.1.5-ում նշված փորձարկումները: Ի լրումն սույն գլխով նախատեսվող փորձարկումների մեթոդների, թույլ են տրվում նույնպես իրավասու մարմնի կողմից ընդունված համարժեք մեթոդներ:

6.1.1.3. Հեղուկների համար նախատեսվող յուրաքանչյուր փաթեթվածք պետք է բարեհաջող կերպով անջրանցիկության համապատասխան փորձարկում անցնի: Այս փորձարկումը 6.1.1.4-ով սահմանված որակի ապահովման ծրագրի մաս է, որը ցույց է տալիս, թե որքանով է հնարավոր համապատասխան մակարդակով բավարարել 6.1.5.4.3-ում նշված փորձարկումների պահանջները՝

- ա) մինչեւ առաջին օգտագործումը փոխադրման նպատակներով.
- բ) վերարտադրումից կամ վերականգնումից հետո փոխադրման նպատակներով մինչեւ հերթական օգտագործումը:

Այս փորձարկման համար չի պահանջվում, որպեսզի փաթեթվածքները սարքավորված լինեն սեփական փականներով:

Բարդ փաթեթվածքների ներքին տարան կարող է օգտագործվել առանց արտաքին փաթեթվածքի՝ պայմանով, որ դա չի ազդի փորձարկումների արդյունքների վրա:

Նման փորձարկում չի պահանջվում հետեւյալ դեպքերում՝

- համակցված փաթեթվածքների ներքին փաթեթվածքներ.
- 6.1.3.1 (ա) (ii)-ի համաձայն՝ «ՌԻԴ/ԱԴՌ» խորհրդանշանով մակնշված բարդ փաթեթվածքների ներքին տարաներ (ապակուց, ճենապակուց կամ կերամիկայից).
- թեթեւ մետաղյա փաթեթվածքների՝ 6.1.3.1 (ա) (ii)-ի համաձայն «ՌԻԴ/ԱԴՌ» համաձայնագրի խորհրդանշանով մակնշված:

6.1.1.4. Փաթեթվածքները պետք է պատրաստվեն, վերականգնվեն եւ փորձարկվեն իրավասու մարմինին բավարարող որակի երաշխավորման ծրագրի համաձայն, որպեսզի փաթեթվածքի յուրաքանչյուր միավոր համապատասխանի սույն գլխի պահանջներին:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** «Փաթեթվածք. Տրանսպորտային փաթեթներ. վրանգավոր բեռների համար. Վրանգավոր բեռների համար նախատեսված փաթեթվածքներ, սորուն բեռների համար նախատեսված միջին բեռնվածության կոնտեյներներ (ՍՄԿ-ներ) եւ խոշոր փաթեթվածքներ. ISO 9001 ստանդարտի կիրառման ուղեցույցներ» ISO 16106:2006 ստանդարտով նախատեսվում են այն ընթացակարգերի վերաբերյալ կիրառելի ցուցումներ, որոնք կարող են կիրառվել:

6.1.1.5. Փաթեթվածքների արտադրողները եւ դրանց հետագա վաճառքն իրականացնող ձեռնարկությունները պետք է այն ընթացակարգերի մասին տեղեկություններ ներկայացնեն, որոնք պետք է կատարվեն, ինչպես նաեւ փականների տեսակների եւ չափսերի (ներառյալ պահանջվող խցանիչները) եւ ցանկացած այլ բաղադրիչների նկարագրությունը, որոնք անհրաժեշտ են, որպեսզի փոխադրման համար ներկայացվող փաթեթները կարողանան անցնել սույն գլխով նախատեսված՝ կիրառվող շահագործման փորձարկումները:

## 6.1.2. Փաթեթվածքների տեսակների նշման ծածկագիր

6.1.2.1. Ծածկագիրը բաղկացած է՝

- ա) փաթեթվածքի, ինչպես օրինակ՝ թմբկագլան, կանխտոր եւ այլն տեսակը ցույց տվող արաբական թվից, որին հաջորդում են.
- բ) նյութը, ինչպես օրինակ՝ պողպատ, փայտ եւ այլն ցույց տվող

տպատառ լատինական տառը (տառերը), որին (որոնց), հարկ եղած դեպքում, հաջորդում է

գ) այնպիսի տեսակի շրջանակում այն փաթեթվածքի կատեգորիան ցույց տվող արաբական թիվը, որին պատկանում է այդ փաթեթվածքը:

6.1.2.2. Բարդ փաթեթվածքների դեպքում կիրառվում են երկու մեծատառ լատիններեն տառեր, որոնք հաջորդաբար դրվում են ծածկագրի երկրորդ դիրքում: Առաջին տառը նշանակում է այն նյութը, որից պատրաստված է ներքին տարան, երկրորդը՝ այն նյութը, որից պատրաստված է արտաքին փաթեթվածքը:

6.1.2.3. Համակցված փաթեթվածքների դեպքում կիրառվում է միայն արտաքին փաթեթվածքը ցույց տվող ծածկագիրը:

6.1.2.4. Փաթեթվածքի ծածկագրին կարող են հաջորդել «T», «V» կամ «W» տառերը: «T» տառը նշանակում է 6.1.5.1.11-ի պահանջներին համապատասխանող վթարային փաթեթվածք: «V» տառը նշանակում է 6.1.5.1.7-ի պահանջները բավարարող հատուկ փաթեթվածք: «W» տառը նշանակում է, որ թեպետ փաթեթվածքը պատկանում է ծածկագրում նշված տեսակին, այնուամենայնիվ, պատրաստված է 6.1.4-ի պահանջներից որոշ տարբերություններով եւ համարվում է համարժեք՝ 6.1.1.2-ի պահանջների համաձայն:

6.1.2.5. Փաթեթվածքի տեսակները նշելու համար կիրառվում են հետևյալ թվերը՝

1. Թմբկագլան
2. (Նախատեսվում է վերապահում)
3. Կանիստր
4. Արկղ
5. Պարկ
6. Բարդ փաթեթվածք
7. (Նախատեսվում է վերապահում)
0. Թեթեւ մետաղյա փաթեթվածքներ

6.1.2.6. Նյութի տեսակները նշելու համար օգտագործվում են հետևյալ մեծատառերը՝

- A. Պողպատ (թուր տեսակների եւ մակերեսի մշակման տեսակների)
- B. Այլումին

- C. Բնափայտ
- D. Նրբատախտակ
- F. Վերամշակված փայտ
- G. Փայտաթելքային սալ
- H. Պլաստիկ նյութ
- L. Տեքստիլ
- M. Բազմաշերտ թուղթ
- N. Մետաղ (պողպատից կամ ալյումինից բացի)
- P. Ապակի, ճենապակի կամ կերամիկա:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** Պլաստիկ նյութ նշանակում է նաեւ այլ պոլիմերային նյութեր, ինչպես օրինակ՝ ռեզինը:

- 6.1.2.7. Ստորեւ բերված աղյուսակում նշված են այն ծածկագրերը, որոնք պետք է օգտագործվեն փաթեթվածքի տեսակների նշման համար՝ ելնելով փաթեթվածքի տեսակից, վերջինիս պատրաստման համար օգտագործված նյութից եւ դրա կատեգորիայից. այնտեղ նաեւ նշված են այն ենթաբաժինները, որտեղ ներկայացված են համապատասխան պահանջները.

Տեսակը	Նյութը	Կատեգորիան	Ծածկագիրը	Ենթաբաժինը
1. Թմբկագլաններ	A. Պողպատ	չհանվող հատակով	1A1	6.1.4.1
		հանովի հատակով	1A2	
	B. Ալյումին	չհանվող հատակով	1B1	6.1.4.2
		հանովի հատակով	1B2	
	D. Նրբատախտակ		1D	6.1.4.5
	G. Ֆիբրային ստվարաթուղթ		1G	6.1.4.7
	H. Պլաստմասսա	չհանվող հատակով	1H1	6.1.4.8
		հանովի հատակով	1H2	
N. Մետաղ՝ պողպատից կամ ալյումինից բացի	չհանվող հատակով	1N1	6.1.4.3	
	հանովի հատակով	1N2		
2. (Նախատեսվում է վերապահում)				
3. Կանխատրներ	A. Պողպատ	չհանվող հատակով	3A1	6.1.4.4
		հանովի հատակով	3A2	
	B. Ալյումին	չհանվող հատակով	3B1	6.1.4.4
		հանովի հատակով	3B2	
	H. Պլաստմասսա	չհանվող հատակով	3H1	6.1.4.8
		հանովի հատակով	3H2	
4. Արկղեր	A. Պողպատ		4A	6.1.4.14
	B. Ալյումին		4B	6.1.4.14
	C. Բնափայտ	սովորական	4C1	6.1.4.9
		անթափանցելի պատերով	4C2	
	D. Նրբատախտակ		4D	6.1.4.10
	F. Վերամշակված փայտ		4F	6.1.4.11
	G. Փայտաթելքային սալ		4G	6.1.4.12
	H. Պլաստմասսա	փրփրապլաստից	4H1	6.1.4.13
		պինդ պլաստմասսայից	4H2	
N. Մետաղ՝ բացի պողպատից կամ ալյումինից		4N	6.1.4.14	
5. Պարկեր	H. Հյուսածո պլաստմասսա	Առանց ներքին ներդիրի կամ պատվածքի	5H1	6.1.4.16
		անթափանցելի	5H2	
		ջրակայուն	5H3	
	H. Պոլիմերային թաղանթ		5H4	6.1.4.17
	L. Տեքստիլ	առանց ներքին ներդիրի կամ պատվածքի	5L1	6.1.4.15
		անթափանցելի	5L2	
		ջրակայուն	5L3	
	M. Թուղթ	բազմաշերտ	5M1	6.1.4.18
բազմաշերտ, ջրակայուն		5M2		
6. Բարդ փաթեթվածքներ	H. Պլաստմասսայից տարա	արտաքին պողպատե թմբկագլանով	6HA1	6.1.4.19



Տեսակը	Նյութը	Կատեգորիան	Ծածկագիրը	Ենթաբաժինը
		արտաքին պողպատե կավարամածով կամ արկղով	6HA2	
		արտաքին այրումինե թմբկազևանով	6HB1	
		արտաքին այրումինե կավարամածով կամ արկղով	6HB2	
		արտաքին փայտե արկղով	6HC	
		արտաքին նրբատախտակից թմբկազևանով	6HD1	
		արտաքին նրբատախտակից արկղով	6HD2	
		արտաքին ֆիբրային թմբկազևանով	6HG1	
		փայտաթելքային սալից արտաքին արկղով	6HG2	
		արտաքին պլաստմասսայից թմբկազևանով	6HH1	
		պինդ պլաստմասսայից արտաքին արկղով	6HH2	
		P. Ապակե, ճենապակե կամ կերամիկական տարա	արտաքին պողպատե թմբկազևանով	
արտաքին պողպատե կավարամածով կամ արկղով	6PA2			
արտաքին այրումինե թմբկազևանով	6PB1			
արտաքին այրումինե կավարամածով կամ արկղով	6PB2			
արտաքին փայտե արկղով	6PC			
արտաքին նրբատախտակից թմբկազևանով	6PD1			
արտաքին հյուսված զամբյուղով	6PD2			
արտաքին ֆիբրային թմբկազևանով	6PG1			
Փայտաթելքային սալից արտաքին արկղով	6PG2			
փրփրապլաստից արտաքին փաթեթվածքով	6PH1			
պինդ պլաստմասսայից արտաքին փաթեթվածքով	6PH2			
7. (Նախատեսվում է վերապահում)				
O. Թեթև մետաղա փաթեթվածք	A. Պողպատ	չհանվող հատակով	0A1	6.1.4.22
		հանովի հատակով	0A2	

### 6.1.3. Մակնշումը

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1.** Մակնշումը ցույց է տալիս, որ այն փաթեթվածքը, որի վրա այն արված է, համապատասխանում է փորձարկման բարեհաջող ենթարկված կառուցվածքի տեսակին, ինչպես նաև բավարարում է այդ փաթեթվածքի պատրաստմանը, սակայն ոչ օգտագործմանը վերաբերող՝ սույն գլխի պահանջները: Այդ իսկ պատճառով մակնշումը պարտադիր չէ, որ հաստատվի, որ տվյալ փաթեթվածքը կարող է օգտագործվել ցանկացած նյութի համար. սովորաբար փաթեթվածքի տեսակը (ինչպես, օրինակ՝ պողպատե թմբկազևան), վերջինիս առավելագույն փարողությունը եւ(կամ) քաշը եւ բոլոր հատուկ պահանջները կոնկրետ նշվում են յուրաքանչյուր նյութի համար 3.2 գլխի Ա աղյուսակում:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2.** Մակնշմամբ նախատեսվում է դյուրացնել փաթեթվածքի արտադրողների, վերջինիս վերականգնմամբ զբաղվող անձանց, դրանց օգտագործողների, փոխադրողների եւ կարգավորող մարմինների առջեւ դրված խնդիրը: Ինչ վերաբերում է նոր փաթեթվածքի օգտագործմանը, ապա նախնական մակնշումը արտադրողի (արտադրողների) համար միջոց է՝ նշելու համար վերջինիս տեսակը եւ շահագործման որակների այն փորձարկումների մասով պահանջները, որոնք այն բավարարում է:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3.** Մակնշումը ոչ միշտ է տալիս ամբողջական տեղեկություններ փորձարկումների մակարդակների եւ այլնի մասին, սակայն հետագայում կարող է անհրաժեշտ լինել եւ այդ դեպքում պետք է դիմել փորձարկման հավաստագրին, փորձարկման արձանագրություններին կամ փորձարկումները բարեհաջող անցած փաթեթվածքների ռեգիստրին: Օրինակ՝ X կամ Y մակնշմամբ փաթեթվածքը կարող է օգտագործվել այնպիսի նյութերի համար, որոնց նշանակված է առավել ցածր աստիճանի վրանգավորության բեռների համար նախատեսվող փաթեթավորման խումբ, ընդ որում, հարաբերական խտության՝ առավելագույն թույլատրելի արժեքը հաշվարկվում է 1.5 կամ 2.25 գործակիցների կիրառմամբ այն արժեքների նկատմամբ, որոնք նշված են 6.1.5-ում փաթեթվածքի փորձարկումներին վերաբերող պահանջներում, այն է՝ որ 1,2 հարաբերական խտությամբ նյութի համար փորձարկված I փաթեթավորման խմբի փաթեթվածքը հնարավոր լինի օգտագործել որպես 1,8 հարաբերական խտությամբ նյութի համար II փաթեթավորման խմբի փաթեթվածք կամ որպես 2,7 հարաբերական խտությամբ նյութի համար III փաթեթավորման խմբի փաթեթվածք՝ պայմանով, որ իհարկե այն նույնպես համապատասխանի առավել բարձր հարաբերական խտությամբ նյութերի համար նախատեսվող

<sup>1</sup> Հարաբերական խտությունը (d) համարվում է տեսակարար կշռի (SG) հոմանիշ, եւ այդ եզրույթն օգտագործվում է ամբողջ տեքստում:

*շահագործման բոլոր չափանիշներին:*

6.1.3.1. «ԱԴՌ» համաձայնագրի պահանջներին համապատասխան՝ օգտագործման համար նախատեսվող յուրաքանչյուր փաթեթվածք պետք է համապատասխան մասում ունենա այնպիսի չափսերի դիմացկուն եւ ընթեռնելի մակնշումներ, որոնք դրանք պարզորոշ կերպով տեսանելի կդարձնեն: 30 կգ-ից բարձր անզուտ քաշով փաթեթների մակնշումները կամ դրանց կրկնօրինակները պետք է տեղադրված լինեն փաթեթվածքի վերին կամ կողմնային մասում: Տառերը, թվերը եւ խորհրդանշանները պետք է ունենան 12 մմ-ից ոչ պակաս բարձրություն, բացառությամբ 30 և կամ 30 կգ կամ ավելի քիչ տարողությամբ փաթեթվածքների, երբ դրանք պետք է ունենան 6 մմ-ից ոչ պակաս բարձրություն եւ 5 և կամ 5 կգ կամ պակաս տարողությամբ փաթեթվածքները, երբ դրանք պետք է լինեն համապատասխան չափերի:

Մակնշումը պետք է ներառի՝

- ա) i) Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ-ի) փաթեթվածքների խորհրդանշանը.



Նշված խորհրդանշանը պետք է օգտագործվի՝ բացառապես հավաստելու համար, որ փաթեթվածքը, սորուն բեռների համար նախատեսված շարժական կոնտեյները, շարժական ցիստեռնը կամ ԳԲՏԿ-ն բավարարում է 6.1, 6.2, 6.3, 6.5, 6.6, 6.7 կամ 6.11 գլխի պահանջները: Ծալքավորված մետաղից փաթեթվածքների վրա խորհրդանշանի փոխարեն կարող է կիրառվել միայն «UN» մեծատառերի մակնշումը, կամ

- ii) պարզեցված պահանջները (տե՛ս 6.1.1.3, 6.1.5.3.1 (ե), 6.1.5.3.5 (գ), 6.1.5.4, 6.1.5.5.1 եւ 6.1.5.6) բավարարող բարդ փաթեթվածքների (ապակի, ճենապակի կամ կերամիկա) եւ թեթեւ մետաղյա փաթեթվածքների համար «ՌԻԴ/ԱԴՌ» խորհրդանշանը.,

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** Նշված խորհրդանշանով մակնշված փաթեթվածքները հաստատված են այն երկաթուղային, ավտոմոբիլային փոխադրումների եւ ներքին ջրուղիներով փոխադրումների համար, որոնց նկատմամբ կիրառվում են համապատասխանաբար «ՌԻԴ»-ի, «ԱԴՌ»-ի եւ «ԱԴՆ»-ի դրույթները: Դրանք կարող են չընդունվել այլ կանոններով կարգավորվող փոխադրման տրանսպորտային այլ միջոցներով կամ ավտոմոբիլային, երկաթուղային փոխադրումների կամ ներքին ջրուղիներով փոխադրման համար:

- բ) 6.1.2-ի դրույթների համաձայն փաթեթվածքի տեսակը ցույց տվող

ծածկագիր.

գ) երկու մասից բաղկացած ծածկագիր՝

i) տառ, որը ցույց է տալիս այն փաթեթավորման խումբը (խմբերը), որին (որոնց) դասելու համար կառուցվածքի տեսակը բարեհաջող կերպով փորձարկում է անցել՝

«X»-ը՝ փաթեթավորման I, II եւ III խմբերի համար.

«Y»-ը՝ փաթեթավորման II եւ III խմբերի համար.

«Z»-ը՝ միայն փաթեթավորման III խմբի համար:


ii) մինչեւ առաջին տասնորդական նիշը կլորացված հարաբերական խտության արժեքը, որի մասով փորձարկվել է ներքին փաթեթվածքներ չունեցող եւ հեղուկ պահելու համար նախատեսվող փաթեթվածքների կառուցվածքի տեսակը. այն կարող է չնշվել, եթե հարաբերական խտությունը չի գերազանցում 1,2-ը: Պինդ նյութեր կամ ներքին փաթեթվածքներ պարունակելու համար նախատեսված փաթեթվածքների համար անհրաժեշտ է նշել առավելագույն անզուտ քաշի արժեքը՝ կիլոգրամներով:

23 °C ջերմաստիճանում 200 մմ<sup>2</sup>/վ-ը չգերազանցող մածուցիկությամբ հեղուկներ պահելու համար նախատեսվող՝ 6.1.3.1(ա)(ii)-ի համաձայն «ՌԻԴ/ԱԴՌ» խորհրդանշանով մակնշված թեթեւ մետաղյա փաթեթվածքի վրա անհրաժեշտ է նշել առավելագույն անզուտ քաշը՝ կիլոգրամներով.

դ) կամ «S» տառը, որը ցույց է տալիս, որ փաթեթվածքը նախատեսվում է պինդ նյութերի կամ ներքին փաթեթվածքների փոխադրման համար, կամ այն փաթեթվածքների համար, որը նախատեսված է հեղուկներ պահելու համար (բացի համակցված փաթեթվածքներից)՝ բարեհաջող կատարված հիդրավլիկ փորձարկումներում փորձարկման ճնշման արժեքը՝ կլորացված մինչեւ ամենամոտ տասնապատիկ միավորը՝ կՊա-ներով:

23 °C ջերմաստիճանում 200 մմ<sup>2</sup>/վ-ը չգերազանցող մածուցիկությամբ հեղուկներ պարունակելու համար նախատեսված՝ 6.1.3.1(ա)(ii)-ին համապատասխան «ՌԻԴ/ԱԴՌ» խորհրդանշանով մակնշված թեթեւ մետաղյա փաթեթվածքի վրա անհրաժեշտ է նշել «S» տառը.

ե) փաթեթվածքի պատրաստման տարվա երկու վերջին թվերը: 1H եւ 3H տեսակի փաթեթվածքի վրա անհրաժեշտ է նույնպես նշել արտադրման ամիսը, որը կարելի է զետեղել մնացած մակնշումից անջատ: Այդ նպատակով կարելի է կիրառել հետեւյալ մեթոդը՝



- \* Փաթեթվածքի պատրաստման տարվա վերջին երկու թվերը կարող են ցուցադրվել այդ վայրում: Այդ դեպքում տեսակի հաստատման տարվա նշանի եւ ժամացույցի միջին շրջանի վերջին երկու թվերը պետք է լինեն նույնը:

**ՃԱՆՈՐԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** *Ընդունելի են նաեւ այլ մեթոդներ, որոնք տրամադրում են չճնշվող, տեսանելի եւ ընթեռնելի նվազագույն պահանջվող տեղեկատվություն:*

- զ) մակնշումը թույլատրած պետության նշումը միջազգային ճանապարհային երթեւեկության<sup>2</sup> մեջ գտնվող փոխադրամիջոցների վրա տարբերակիչ նշանի նշմամբ.
- է) արտադրողի անվանումը կամ իրավասու մարմնի կողմից նշված փաթեթվածքի նույնականացման այլ տվյալներ:

6.1.3.2. 6.1.3.1-ով նախատեսվող երկարակյաց մակնշումից բացի՝ 100 լ-ից ավելի տարողությամբ նոր մետաղյա թմբկազլանը պետք է իր ստորին հատակին ունենա 6.1.3.1 (ա)-(ե)-ով նախատեսվող մշտական մակնշում (օրինակ՝ դրոշմված)՝ առնվազն այն մետաղի նոմինալ հաստության նշմամբ, որից պատրաստված է հենամարմինը (մմ-ով մինչեւ 0.1 մմ): Եթե մետաղյա թմբկազլանի ցանկացած հատակի նոմինալ հաստությունը փոքր է հենամարմնի հաստությունից, ապա վերին հատակի, հենամարմնի եւ ստորին հատակի (կափարիչ) նոմինալ հաստությունը պետք է նշվի ստորին հատակի վրա մշտական մակնշման տեսքով (օրինակ՝ դրոշմված), օրինակ՝ «1.0-1.2-1.0» կամ «0.9-1.0-1.0»: Մետաղի նոմինալ հաստությունը պետք է սահմանվի համապատասխան ISO ստանդարտի հիման վրա, օրինակ՝ պողպատի համար ISO 3574:1999 ստանդարտի հիման վրա: 6.1.3.1 (զ)-ում եւ (է)-ում նշված մակնշման տարրերը չպետք է դրվեն մշտական մակնշման ձեւով՝ բացառությամբ 6.1.3.5-ով նախատեսվող դեպքի:

6.1.3.3. Վերականգնման ենթակա՝ 6.1.3.2-ում նշված փաթեթվածքից բացի ցանկացած փաթեթվածք պետք է ունենա 6.1.3.1 (ա)-(ե)-ում նշված մշտական մակնշում: Մակնշումը համարվում է մշտական, եթե այն կարող է պահպանվել փաթեթվածքի վերականգնման ընթացքում (այն, օրինակ՝ կարող է լինել դրոշմված): 100 լ-ից ավելի տարողությամբ

<sup>2</sup> Միջազգային երթեւեկության մեջ գտնվող փոխադրամիջոցների եւ դրանց կցորդների՝ գրանցման պետության տարբերանշաններ, օրինակ՝ 1949 թվականի «Ճանապարհային երթեւեկության մասին» Ժնևի կոնվենցիային կամ 1968 թվականի «Ճանապարհային երթեւեկության մասին» Վիեննայի կոնվենցիային համապատասխան:

մետաղյա թմբկազլաններից բացի այլ փաթեթվածքների համար այդ մշտական մակնշումը կարող է փոխարինել 6.1.3.1-ով նախատեսվող երկարակյաց մակնշմանը:

6.1.3.4. Վերաարտադրված մետաղյա թմբկազլանների վրա պահանջվող մակնշումը, եթե չի փոփոխվել փաթեթվածքի տեսակը եւ չեն փոխարինվել կամ հեռացվել կառուցվածքային անբաժանելի տարրերը, կարող է մշտական չլինել: Մնացած այլ դեպքերում վերաարտադրված մետաղյա թմբկազլանի վերին հատակի կամ կողային մասում պետք է դրվեն մշտական մակնշման տեսքով (օրինակ՝ դրոշմված) 6.1.3.1 (ա)-(ե)-ում նշված մակնշման տարրերը:

6.1.3.5. Այնպիսի նյութերից պատրաստված բազմակի օգտագործման մետաղյա թմբկազլանները (օրինակ՝ չժանգոտվող պողպատը) կարող են ունենալ 6.1.3.1 (զ)-ում եւ (է)-ում նշված մակնշումը (օրինակ՝ դրոշմված):

6.1.3.6. 6.1.3.1-ով նախատեսվող մակնշումը գործում է միայն մեկ կառուցվածքի տեսակի կամ կառուցվածքի տեսակների սերիաների համար: Կառուցվածքի միեւնոյն տեսակը կարող է ենթադրել մակերեսի մշակման տարբեր եղանակներ:

«Կառուցվածքի տեսակների սերիաները» ենթադրում է միեւնոյն նյութից պատրաստված, միեւնոյն կառուցվածքն ունեցող, պատերի նոյն հաստությունն ունեցող, միեւնոյն հատումն ունեցող փաթեթվածքներ, որոնք հաստատված կառուցվածքի տեսակից տարբերվում են միայն նրանով, որ ունեն նախագծվածից ավելի ցածր բարձրություն:

Տարաների փականները պետք է համապատասխանեն փորձարկումների արձանագրություններում նկարագրված փականներին:

6.1.3.7. Մակնշումը պետք է կատարվի 6.1.3.1-ի ենթապարբերությունների հերթականությամբ եւ, կիրառելի լինելու դեպքում, 6.1.3.8-ի (ը)-(ժ) համապատասխան ենթապարբերություններով պահանջվող յուրաքանչյուր մակնշում պետք է հստակ առանձնացվի այլ տարրերից, օրինակ՝ թեք գծով կամ բացատով՝ այն հեշտությամբ նույնականացնելու նպատակով: Օրինակները տե՛ս 6.1.3.11:

Իրավասու մարմնի կողմից թույլատրված ցանկացած լրացուցիչ մակնշում չպետք է խոչընդոտի 6.1.3.1-ով նախատեսվող այլ մակնշման ճիշտ նույնականացմանը:

6.1.3.8. Փաթեթվածքը վերականգնելուց հետո վերականգնումն իրականացրած կազմակերպությունը պետք է կատարի երկարակյաց մակնշում՝ ներկայացնելով ջնջվող մակնշում՝ հետեւյալ հերթականությամբ՝

- ը) այն պետության նշումը, որտեղ իրականացվել է վերականգնումը՝ միջազգային ճանապարհային երթուղիների<sup>2</sup> մեջ գտնվող փոխադրամիջոցի տարբերակիչ նշանի նշմամբ.
- թ) վերականգնումն իրականացրած կազմակերպության անվանումը կամ իրավասու մարմնի կողմից նշված փաթեթվածքի այլ նույնականացում.
- ժ) վերականգնման տարին. «R» տառը. եւ 6.1.1.3-ին համապատասխան անջրանցիկության փորձարկումը հաջող անցած յուրաքանչյուր փաթեթվածքի համար՝ լրացուցիչ «L» տառը:

6.1.3.9. Եթե վերականգնումից հետո 6.1.3.1 (ա)-(դ)-ով նախատեսվող մակնշումն այլևս տեսանելի չէ մետաղյա թմբկազևանի վերին հատակի վրա կամ կողմնային մասում, ապա վերականգնումն իրականացրած կազմակերպությունը պետք է այն կատարի երկարակյաց ձեռով մինչև 6.1.3.8 (ը), (թ) եւ (ժ)-ով նախատեսվող մակնշումը: Նշված մակնշումը չպետք է ցույց տա շահագործման ավելի բարձր բնութագրեր, քան այն բնութագրերը, որոնց մասով փորձարկվել է եւ, որոնց համապատասխան, մակնշվել է կառուցվածքի նախնական տեսակը:

6.1.3.10. «REC» խորհրդանշանով մակնշված 1.2.1-ում բերված սահմանմանը համապատասխանող՝ կրկնակի օգտագործվող պլաստիկ նյութից պատրաստված փաթեթվածքներ: Այս մակնշումը կատարվում է 6.1.3.1-ով նախատեսվող մակնշման կողքին:

**6.1.3.11. ՆՈՐ փաթեթվածքների մակնշումների օրինակները**

	4G/Y145/S/02 NL/VL823	6.1.3.1(ա)(i), (բ), (գ), (դ) եւ (ե)-ի համաձայն 6.1.3.1(զ) եւ (է)-ի համաձայն	Փայտաթելքային սալից նոր արկղի համար
	1A1/Y1.4/150/98 NL/VL824	6.1.3.1(ա)(i), (բ), (գ), (դ) եւ (ե)-ի համաձայն 6.1.3.1(զ) եւ (է)-ի համաձայն	Հեղուկների համար նախատեսվող նոր պողպատե թմբկազևանի համար
	1A2/Y150/S/01 NL/VL825	6.1.3.1(ա)(i), (բ), (գ), (դ) եւ (ե)-ի համաձայն 6.1.3.1(զ) եւ (է)-ի համաձայն	Պինդ նյութերի կամ ներքին փաթեթվածքի համար նախատեսվող նոր պողպատե թմբկազևանի համար
	4HW/Y136/S/98 NL/VL826	6.1.3.1(ա)(i), (բ), (գ), (դ) եւ (ե)-ի համաձայն 6.1.3.1(զ) եւ (է)-ի համաձայն	Համարժեք տեսակի նոր պլաստմասսայից արկղի համար

<sup>2</sup> Միջազգային երթուղիների մեջ գտնվող փոխադրամիջոցների եւ դրանց կցորդների՝ գրանցման պետության տարբերանշաններ, օրինակ՝ 1949 թվականի «Ճանապարհային երթուղիների մասին» Ժնևի կոնվենցիային կամ 1968 թվականի «Ճանապարհային երթուղիների մասին» Վիեննայի կոնվենցիային համապատասխան:



1A2/Y/100/01  
USA/MM5

RID/ADR/0A1/Y100/89  
NL/VL123

RID/ADR/0A2/Y20/S/04  
NL/VL124

6.1.3.1(ա)(i), (բ), (գ), (դ) եւ (ե)-ի համաձայն  
6.1.3.1(զ) եւ (է)-ի համաձայն

6.1.3.1(ա)(ii), (բ), (գ), (դ) եւ (ե)-ի համաձայն  
6.1.3.1(զ) եւ (է)-ի համաձայն

6.1.3.1(ա)(ii), (բ), (գ), (դ) եւ (ե)-ի համաձայն  
6.1.3.1(զ) եւ (է)-ի համաձայն

Հեղուկների համար նախատեսվող  
վերականգնված պողպատե թմբկազանի համար

Չհանվող հատակով նոր թեթև մետաղյա  
փաթեթվածքի համար

23 °C ջերմաստիճանում 200 մմ<sup>2</sup>-ը գերազանցող  
մածուցիկությամբ հեղուկների կամ պինդ նյութերի  
համար նախատեսվող հանովի հատակով նոր  
թեթև մետաղյա փաթեթվածքի համար



**6.1.3.12. ՎԵՐԱԿԱՆԳՆՎԱԾ փաթեթվածքների մակնշումների օրինակները**



1A1/Y1.4/150/97  
NL/RB/01 RL

6.1.3.1(ա)(i), (բ), (գ), (դ) եւ (ե)-ի համաձայն 6.1.3.8(ը), (թ) եւ (ժ)-ի համաձայն



1A2/Y150/S/99  
USA/RB/00 R

6.1.3.1(ա)(i), (բ), (գ), (դ) եւ (ե)-ի համաձայն 6.1.3.8(ը), (թ) եւ (ժ)-ի համաձայն

**6.1.3.13. ՎԹԱՐԱՅԻՆ փաթեթվածքների մակնշման օրինակ**



1A2T/Y300/S/01  
USA/abc

6.1.3.1(ա)(i), (բ), (գ), (դ) եւ (ե)-ի համաձայն 6.1.3.1(գ) եւ (ե)-ի համաձայն

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** Այն մակնշումները, որոնց օրինակները բերված են 6.1.3.11, 6.1.3.12 եւ 6.1.3.13-ում, կարող են կատարվել մեկ կամ մի քանի տողով՝ պայմանով, որ պահպանվում է համապատասխան հերթականությունը:

**6.1.3.14. Սերտիֆիկացում**

6.1.3.1-ի համաձայն մակնշում դնելու միջոցով սերտիֆիկացվում է, որ սերիական արտադրության փաթեթվածքները համապատասխանում են կառուցվածքի հաստատված տեսակին եւ, որ հաստատմամբ նախատեսվող պահանջները կատարվել են:

**6.1.4. Փաթեթվածքներին ներկայացվող պահանջները**

**6.1.4.0. Ընդհանուր պահանջները**

Փաթեթվածքում եղած նյութի ներթափանցումը չպետք է փոխադրման սովորական պայմաններում վտանգ ներկայացնի:

**6.1.4.1. Պողպատե թմբկազևաններ**

1A1 չհանվող հատակով

1A2 հանովի հատակով

6.1.4.1.1. Հենամարմինը եւ հատակները պետք է պատրաստված լինեն համապատասխան տեսակի եւ բավականաչափ հաստությամբ պողպատե թերթից՝ հաշվի առնելով թմբկազևանի տարողությունը եւ վերջինիս՝ ըստ նշանակության օգտագործումը:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** Ածխածնային պողպատից թմբկազևանների դեպքում պողպատի «համապատասխան» տեսակները նշված են «Սովորական որակի ածխածնային պողպատից եւ ձգման համար շիկազրոցված թերթեր» ISO 3573:1999 ստանդարտում եւ «Սովորական

որակի ածխածնային պողպատից եւ ձգման համար սառը պատրաստված թերթեր» ISO 3574:1999 ստանդարտում: 100 լիտրից ցածր տարողությամբ ածխածնային պողպատից թմբկազևանի համար պողպատի «հարմար» տեսակները, ի լրումն վերը նշված ստանդարտների, նույնպես նշված են «Սառը եղանակով էլեկտրոլիտիկ կլայեկման սպիտակ թիթեղ» ISO 11949:1995 ստանդարտում, «Սառը եղանակով պատրաստված էլեկտրոլիտիկ քրոմային/քրոմապատված պողպատ» ISO 11950:1995 ստանդարտում եւ «Գլանափաթեթներով՝ սառը եղանակով գլանված սեւ թիթեղ եւ էլեկտրոլիտիկ քրոմային/քրոմապատված պողպատ պատրաստելու համար» ISO 11951:1995 ստանդարտում:

- 6.1.4.1.2. 40 լիտրից ավելի հեղուկ պարունակելու համար նախատեսվող թմբկազևանների հենամարմնի կարերը պետք է լինեն զոդակարեր: Պինդ նյութեր կամ 40 լիտրից ավելի հեղուկ պարունակելու համար նախատեսվող թմբկազևանների հենամարմնի կարերը պետք է լինեն մեխանիկական եղանակով գլանված կամ ձուլված:
- 6.1.4.1.3. Ակոսվածքները պետք է լինեն մեխանիկական եղանակով գլանված կամ ձուլված: Կարող են կիրառվել առանձին ամրացնող օղակներ:
- 6.1.4.1.4. 60 լիտրից բարձր տարողությամբ թմբկազևանի հենամարմինը պետք է, որպես կանոն, ունենա իր հետ մեկ ամբողջություն կազմող գլանակման առնվազն երկու օղակ կամ, որպես այլընտրանք՝ առնվազն երկու առանձին գլանակման օղակ: Եթե կիրառվում են գլանակման առանձին օղակներ, ապա դրանք պետք է պինդ հարմարեցվեն հենամարմնին եւ այնպես ամրացվեն, որ դրանք չտեղաշարժվեն: Գլանակման օղակները չպետք է ձուլվեն կետային զոդմամբ:
- 6.1.4.1.5. Չհանվող հատակով (1A1) թմբկազևանների հենամարմիններում կամ հատակներում գոլորշիների լցավորման, դատարկման եւ հեռացման բացվածքները չպետք է գերազանցեն 7 սմ տրամագիծը: Ավելի լայն բացվածքներով թմբկազևանները համարվում են հանովի հատակով տեսակի թմբկազևաններ (1A2): Թմբկազևանների հենամարմիններում եւ հատակներում բացվածքների փականները պետք է ունենան այնպիսի կառուցվածք եւ կիրառվեն այնպես, որ դրանք լավ փակված եւ անջրանցիկ մնան փոխադրման սովորական պայմաններում: Փականների կցաշուրթերը կարող են մեխանիկական եղանակով գլանվել կամ ձուլվել: Փականները պետք է սարքավորված լինեն խցանիչներով կամ այլ հերմետիզացնող տարրերով՝ բացառությամբ այն դեպքերի, երբ փականն ինքնին անջրանցիկ է:
- 6.1.4.1.6. Հանովի հատակով (1A2) թմբկազևանների փականները պետք է ունենան այնպիսի կառուցվածք եւ կիրառվեն այնպես, որ փոխադրման

սովորական պայմաններում դրանք մնան ամուր փակված, իսկ թմբկազլանները՝ անջրանցիկ: Բոլոր հանովի հատակները պետք է սարքավորված լինեն խցանիչներով կամ այլ հերմետիզացնող տարրերով:

6.1.4.1.7. Եթե հենամարմնի հատակի, փականների եւ ամրակի համար օգտագործվող նյութերն ինքնին անհամատեղելի են փոխադրման ենթակա պարունակության հետ, ապա պետք է կիրառվեն համապատասխան ներքին պաշտպանիչ պատվածքներ կամ մշակում: Այդ պատվածքները կամ մշակումը պետք է պահպանի դրանց պաշտպանիչ հատկություններ փոխադրման սովորական պայմաններում:

6.1.4.1.8. Թմբկազլանի առավելագույն տարողությունը՝ 450 լիտր:

6.1.4.1.9. Առավելագույն զտաքաշը՝ 400 կգ:

#### **6.1.4.2. Այլումինե թմբկազլաններ**

1B1 չհանվող հատակով

1B2 հանովի հատակով

6.1.4.2.1. Հենամարմինը եւ հատակը պետք է պատրաստված լինեն առնվազն 99% մաքրության այլումինից կամ այլումինի հիմքով համաձուլվածքից: Նյութը պետք է լինի համապատասխան տեսակի կամ բավականաչափ հաստությամբ՝ հաշվի առնելով թմբկազլանի տարողությունը եւ վերջինիս՝ ըստ նշանակության օգտագործումը:

6.1.4.2.2. Բոլոր կարերը պետք է լինեն զոդակարեր: Ակոսվածքների կարերը, եթե այդպիսիք կան, պետք է ամրացված լինեն առանձին ամրացնող օղակների միջոցով:

6.1.4.2.3. 60 լիտրից բարձր տարողությամբ թմբկազլանի հենամարմինը պետք է, որպես կանոն, ունենա իր հետ մեկ ամբողջություն կազմող գլանակման առնվազն երկու օղակ կամ, որպես այլընտրանք՝ առնվազն երկու առանձին գլանակման օղակ: Եթե կիրառվում են գլանակման առանձին օղակներ, ապա դրանք պետք է պինդ հարմարեցվեն հենամարմնին եւ այնպես ամրացվեն, որ դրանք չտեղաշարժվեն: Գլանակման օղակները չպետք է ձուլվեն կետային զոդմամբ:

6.1.4.2.4. Չհանվող հատակով (1B1) թմբկազլանների հենամարմիններում կամ հատակներում գոլորշիների լցավորման, դատարկման եւ հեռացման բացվածքները չպետք է գերազանցեն 7 սմ տրամագիծը: Ավելի լայն բացվածքներով թմբկազլանները համարվում են հանովի հատակով տեսակի թմբկազլաններ (1B2): Թմբկազլանների հենամարմիններում եւ հատակներում բացվածքների փականները պետք է ունենան այնպիսի կառուցվածք եւ կիրառվեն այնպես, որ դրանք լավ փակված եւ

անջրանցիկ մնան փոխադրման սովորական պայմաններում: Փականների կցաշուրթերը կարող են մեխանիկական եղանակով գլանվել կամ ձուլվել: Փականները պետք է սարքավորված լինեն խցանիչներով կամ այլ հերմետիզացնող տարրերով՝ բացառությամբ այն դեպքերի, երբ փական ինքնին անջրանցիկ է:

6.1.4.2.5. Հանովի հատակով (1B2) թմբկազլանների փականները պետք է ունենան այնպիսի կառուցվածք եւ կիրառվեն այնպես, որ փոխադրման սովորական պայմաններում դրանք մնան ամուր փակված, իսկ թմբկազլանները՝ անջրանցիկ: Բոլոր հանովի հատակները պետք է սարքավորված լինեն խցանիչներով կամ այլ հերմետիզացնող տարրերով:

6.1.4.2.6. Թմբկազլանի առավելագույն տարողությունը՝ 450 լիտր:

6.1.4.2.7. Առավելագույն զտաքաշը՝ 400 կգ:

**6.1.4.3. Մեդաղյա թմբկազլաններ՝ բացի այլումինե կամ պողպատե թմբկազլանները**

1N1 չհանվող հատակով

1N2 հանովի հատակով

6.1.4.3.1. Հենամարմինը եւ հատակը պետք է պատրաստված լինեն մետաղից կամ մետաղի համաձուլվածքից: Նյութը պետք է լինի համապատասխան տեսակի կամ բավականաչափ հաստությամբ՝ հաշվի առնելով թմբկազլանի տարողությունը եւ վերջինիս՝ ըստ նշանակության օգտագործումը:

6.1.4.3.2. Ակոսվածքների կարերը, եթե այդպիսիք կան, պետք է ամրացված լինեն առանձին ամրացնող օղակների միջոցով: Բոլոր կարերը, եթե այդպիսիք կան, պետք է միացված լինեն՝ (ձուլված, զոդված եւ այլն) տվյալ տեսակի մետաղի կամ մետաղի համաձուլվածքի համար կիրառվող տեխնոլոգիայի համաձայն:

6.1.4.3.3. 60 լիտրից բարձր տարողությամբ թմբկազլանի հենամարմինը պետք է, որպես կանոն, ունենա իր հետ մեկ ամբողջություն կազմող գլանակման առնվազն երկու օղակ կամ, որպես այլընտրանք՝ առնվազն երկու առանձին գլանակման օղակ: Եթե կիրառվում են գլանակման առանձին օղակներ, ապա դրանք պետք է պինդ հարմարեցվեն հենամարմնին եւ այնպես ամրացվեն, որ դրանք չտեղաշարժվեն: Գլանակման օղակները չպետք է ձուլվեն կետային զոդմամբ:

6.1.4.3.4. Չհանվող հատակով (1N1) թմբկազլանների հենամարմիններում կամ հատակներում գոլորշիների լցավորման, դատարկման եւ հեռացման բացվածքները չպետք է գերազանցեն 7 սմ տրամագիծը: Ավելի լայն բացվածքներով թմբկազլանները համարվում են հանովի հատակով

տեսակի թմբկազլաններ (1N2): Թմբկազլանների հենամարմիններում եւ հատակներում բացվածքների փականները պետք է ունենան այնպիսի կառուցվածք եւ կիրառվեն այնպես, որ դրանք լավ փակված եւ անջրանցիկ մնան փոխադրման սովորական պայմաններում: Փականների կցաշուրթերը պետք է միացված լինեն՝ (ծուլված, զոդված եւ այլն) տվյալ տեսակի մետաղի կամ մետաղի համաձուլվածքի համար կիրառվող տեխնոլոգիայի համաձայն այնպես, որ միացման կարը լինի անջրանցիկ: Փականները պետք է սարքավորված լինեն խցանիչներով կամ այլ հերմետիզացնող տարրերով՝ բացառությամբ այն դեպքերի, երբ փականն ինքնին անջրանցիկ է:

6.1.4.3.5. Հանովի հատակով (1N2) թմբկազլանների փականները պետք է ունենան այնպիսի կառուցվածք եւ կիրառվեն այնպես, որ փոխադրման սովորական պայմաններում դրանք մնան ամուր փակված, իսկ թմբկազլանները՝ անջրանցիկ: Բոլոր հանովի հատակները պետք է սարքավորված լինեն խցանիչներով կամ այլ հերմետիզացնող տարրերով:

6.1.4.3.6. Թմբկազլանի առավելագույն տարողությունը՝ 450 լիտր:

6.1.4.3.7. Առավելագույն զտաքաշը՝ 400 կգ:

#### **6.1.4.4. Պողպատե կամ այլումինե կանխարներ**

3A1 պողպատից, չհանվող հատակով

3A2 պողպատից, հանովի հատակով

3B1 այլումինից, չհանվող հատակով

3B2 այլումինից, հանովի հատակով

6.1.4.4.1. Հենամարմինը եւ հատակները պետք է պատրաստված լինեն պողպատե թերթից, առնվազն 99% մաքրությամբ այլումինից կամ այլումինի հիմքով համաձուլվածքից: Նյութը պետք է լինի համապատասխան տեսակի կամ բավականաչափ հաստության՝ հաշվի առնելով թմբկազլանի տարողությունը եւ վերջինիս՝ ըստ նշանակության օգտագործումը:

6.1.4.4.2. Ակոսվածքները պետք է լինեն մեխանիկական եղանակով գլանված կամ ձուլված: 40 լիտրից ավելի հեղուկ պարունակելու համար նախատեսվող պողպատե կանխարների հենամարմնի կարերը պետք է զոդակարեր լինեն: 40 լիտր կամ պակաս պարունակելու համար նախատեսվող պողպատե կանխարների հենամարմնի կարերը պետք է լինեն մեխանիկական եղանակով գլանված կամ ձուլված: Այլումինից կանխարների բոլոր կարերը պետք է լինեն զոդակարեր: Ակոսվածքների կարերը, եթե այդպիսիք կան, պետք է ամրացված լինեն առանձին ամրացնող օղակների միջոցով:

6.1.4.4.3. Չհանվող հատակով (3A1 եւ 3B1) կանխատրներում բացվածքները չպետք է գերազանցեն 7 սմ տրամագիծը: Ավելի լայն բացվածքներով կանխատրները համարվում են հանովի հատակով տեսակի կանխատրներ (3A2 եւ 3B2): Փականները պետք է ունենան այնպիսի կառուցվածք, որ դրանք լավ փակված եւ անջրանցիկ մնան փոխադրման սովորական պայմաններում: Փականները պետք է սարքավորված լինեն խցանիչներով կամ այլ հերմետիզացնող տարրերով՝ բացառությամբ այն դեպքերի, երբ փականն ինքնին անջրանցիկ է:

6.1.4.4.4. Եթե հենամարմնի, հատակների, փականների եւ ամրակների համար օգտագործվող նյութերն անհամատեղելի են փոխադրման ենթակա պարունակության հետ, ապա պետք է կիրառվեն համապատասխան ներքին պաշտպանիչ պատվածքներ կամ մշակում: Այդ պատվածքները կամ մշակումը պետք է պահպանի դրանց պաշտպանիչ հատկությունները փոխադրման սովորական պայմաններում:

6.1.4.4.5. Կանխատրի առավելագույն տարողությունը՝ 60 լիտր:

6.1.4.4.6. Առավելագույն զտաքաշը՝ 120 կգ:

#### **6.1.4.5. Նրբատախտակից թմբկազլաններ**

1D

6.1.4.5.1. Օգտագործվող անտառանյութը պետք է լավ պահպանված լինի, լինի կոմերցիոն չոր եւ չունենա այնպիսի թերություններ, որոնք կարող են նվազեցնել թմբկազլանի՝ ըստ նշանակության օգտագործվելու արդյունավետությունը: Եթե հատակների պատրաստման համար օգտագործվում է ոչ թե նրբատախտակ, այլ մեկ այլ նյութ, ապա վերջինիս որակը պետք է լինի նրբատախտակի որակին համարժեք:

6.1.4.5.2. Թմբկազլանի հենամարմինը պատրաստելու համար պետք է օգտագործվի առնվազն երկշերտ նրբատախտակ, իսկ հատակների համար՝ եռաշերտ. բոլոր կից շերտերը պետք է սոսնձվեն ջրակայուն սոսնձով թելքի խաչաձեւ ուղղությամբ:

6.1.4.5.3. Թմբկազլանի հենամարմինը եւ հատակներն ու դրանց միացումները պետք է ունենան թմբկազլանի տարողությանը եւ վերջինիս՝ ըստ նշանակության օգտագործմանը համապատասխանող կառուցվածք:

6.1.4.5.4. Տարողության թափվելը կանխարգելելու նպատակով կափարիչները պետք է պատվեն ամրաթղթով կամ այլ համարժեք նյութով, որը պետք է հուսալի կերպով ամրացված լինի կափարիչին եւ դուրս գա իր ամբողջ շրջանակով:

6.1.4.5.5. Թմբկազլանի առավելագույն տարողությունը՝ 250 լիտր:

6.1.4.5.6. Առավելագույն զտաքաշը՝ 400 կգ:

**6.1.4.6.** *(Հանվել է)*

**6.1.4.7. Ֆիրբային թմբկազլաններ**

1G

6.1.4.7.1. Թմբկազլանի հենամարմինը պետք է բաղկացած լինի խիտ թղթի մեծ քանակությամբ իրար հետ սերտորեն սոսնձված կամ կաղապարված շերտերից, կամ փայտաթելքային սալ (չծալքավորված) եւ կարող է ներառել բիտումի, պարաֆինապատ ամրաթղթի, մետաղյա փայլաթիթեղի, պլաստիկ նյութի մեկ կամ մի քանի պաշտպանիչ շերտ:

6.1.4.7.2. Հատակները պետք է պատրաստված լինեն բնափայտից, փայտաթելքային սալից, մետաղից, նրբատախտակից, պլաստիկ կամ համապատասխան այլ նյութից եւ կարող են ներառել բիտումի, պարաֆինապատ ամրաթղթի, մետաղյա փայլաթիթեղի, պլաստիկ նյութի մեկ կամ մի քանի պաշտպանիչ շերտ:

6.1.4.7.3. Հենամարմինը եւ թմբկազլանի հատակներն ու դրանց միացումները պետք է ունենան թմբկազլանի տարողությանը եւ վերջինիս՝ ըստ նշանակության կիրառմանը համապատասխանող կառուցվածք:

6.1.4.7.4. Հավաքված վիճակում փաթեթվածքը պետք է լինի բավականաչափ ջրակայուն՝ փոխադրման սովորական պայմաններում չշերտավորվելու համար:

6.1.4.7.5. Թմբկազլանի առավելագույն տարողությունը՝ 450 լիտր:

6.1.4.7.6. Առավելագույն զտաքաշը՝ 400 կգ:

**6.1.4.8. Պլաստմասսայից թմբկազլաններ եւ կանխտրներ**

1H1 թմբկազլաններ, չհանվող հատակով

1H2 թմբկազլաններ, հանովի հատակով

3H1 կանխտրներ, չհանվող հատակով

3H2 կանխտրներ, հանովի հատակով

6.1.4.8.1. Փաթեթվածքը պետք է պատրաստված լինի համապատասխան պլաստիկ նյութից եւ պետք է լինի բավականաչափ ամուր՝ հաշվի առնելով վերջինիս տարողությունն ու ըստ նշանակության օգտագործումը: Բացառությամբ կրկնակի օգտագործվող պլաստիկ նյութի, որի սահմանումը բերված է 1.2.1-ում, չպետք է կիրառվի օգտագործման մեջ եղած որեւէ նյութ՝ բացառությամբ այդ իսկ պատրաստման ընթացքում առաջացած կտորների կամ մնացորդների: Փաթեթվածքը պետք է բավականաչափ կայուն լինի իր մեջ պարունակվող նյութի, ինչպես նաեւ ուլտրամանուշակագույն ճառագայթման ազդեցության ներքո հնեցման կամ մաշման

նկատմամբ: Փաթեթվածքի՝ իր մեջ պարունակվող նյութի կամ նոր փաթեթվածքի պատրաստման համար կրկնակի օգտագործված պլաստիկ նյութի թափանցիկությունը չպետք է վտանգ առաջացնի փոխադրման սովորական պայմաններում:

- 6.1.4.8.2. Եթե պահանջվում է պաշտպանություն ուլտրամանուշակագույն ճառագայթումից, այն պետք է ապահովվի մոխրի կամ այլ համապատասխան պիգմենտների կամ ինհիբիտորների հավելման միջոցով: Այս հավելումները պետք է համատեղելի լինեն պարունակության հետ եւ պահպանեն արդյունավետությունը փաթեթվածքի շահագործման ժամկետի ամբողջ ընթացքում: Կառուցվածքի փորձարկված տեսակի պատրաստման ժամանակ չօգտագործված մոխրի, պիգմենտների կամ ինհիբիտորների հավելման դեպքում կրկնակի փորձարկում կարող է չկատարվել, եթե մոխրի պարունակության զանգվածը չի գերազանցում 2%-ը կամ եթե պիգմենտի պարունակության զանգվածը չի գերազանցում 3%-ը. ուլտրամանուշակագույն ճառագայթման դեմ ինհիբիտորների պարունակությունը չի սահմանափակվում:
- 6.1.4.8.3. Ոչ ուլտրամանուշակագույն ճառագայթման դեմ պաշտպանվելու համար օգտագործվող հավելումները կարող են ներառվել պլաստիկ նյութի բաղադրության մեջ՝ պայմանով, որ դրանք բացասաբար չեն ազդի փաթեթվածքի նյութի քիմիական եւ ֆիզիկական հատկությունների վրա: Նման դեպքերում կրկնակի փորձարկում կարող է չիրականացվել:
- 6.1.4.8.4. Փաթեթվածքի ցանկացած կետում պատերի հաստությունը պետք է համապատասխանի վերջինիս տարողությանը եւ ըստ նշանակության օգտագործմանը՝ հաշվի առնելով այն լարվածությունները, որոնք կարող են առաջանալ ցանկացած կետում:
- 6.1.4.8.5. Չհանվող հատակով թմբկազլանների (1H1) եւ կանխտրների (3H1) հենամարմիններում կամ հատակներում գոլորշիների լցավորման, դատարկման եւ հեռացման բացվածքները չպետք է գերազանցեն 7 սմ տրամագիծը: Ավելի լայն բացվածքներով թմբկազլանները եւ կանխտրները համարվում են հանովի հատակով տեսակի թմբկազլաններ եւ կանխտրներ (1H2 եւ 3H2): Թմբկազլանների հենամարմիններում եւ հատակներում բացվածքների փականները պետք է ունենան այնպիսի կառուցվածք եւ կիրառվեն այնպես, որ դրանք լավ փակված եւ անջրանցիկ մնան փոխադրման սովորական պայմաններում: Փականները պետք է սարքավորված լինեն խցանիչներով կամ այլ հերմետիզացնող տարրերով՝ բացառությամբ այն դեպքերի, երբ փականն ինքնին անջրանցիկ է:
- 6.1.4.8.6. Հանովի հատակով թմբկազլանների եւ կանխտրների (1H2 եւ 3H2) փականները պետք է ունենան այնպիսի կառուցվածք եւ կիրառվեն



այնպես, որ փոխադրման սովորական պայմաններում դրանք մնան լավ փակված, իսկ թմբկազլանները՝ անջրանցիկ: Բոլոր հանովի հատակները պետք է սարքավորված լինեն խցանիչներով՝ բացառությամբ այն դեպքերի, երբ թմբկազլանի կամ կանխտրի կառուցվածքն այնպիսին է, որ հանովի հատակն այնպես է տեղադրված, որ դրանք արդեն իսկ անջրանցիկ են:

6.1.4.8.7. Դյուրավառ հեղուկների համար առավելագույն թույլատրելի թափանցիկությունը  $23\text{ }^{\circ}\text{C}$  ջերմաստիճանում կազմում է  $0.008\text{ գ/լ.ժ}$  (տե՛ս 6.1.5.7):

6.1.4.8.8. Եթե նոր փաթեթվածքի պատրաստման համար օգտագործվում է կրկնակի օգտագործվող պլաստմասսա, ապա նոր փաթեթվածքի պատրաստման համար օգտագործվող վերամշակված նյութը պետք է երաշխավորվի եւ փաստաթղթերով պարբերաբար հաստատվի իրավասու մարմնի կողմից ճանաչված՝ որակի ապահովման ծրագրի շրջանակում: Որակի երաշխավորման ծրագրով պետք է նախատեսվի պատշաճ նախնական սորտավորման արձանագրության կազմում եւ ստուգում, որ վերամշակված պլաստիկ նյութի յուրաքանչյուր խմբաքանակ ունի հալման հոսքի արագության, ամրության եւ ձգման դեպքում հոսունության սահմանի համապատասխան արժեքներ, որոնք համընկնում են նման կրկնակի օգտագործվող նյութից պատրաստված կառուցվածքի տեսակի համապատասխան արժեքների հետ: Դրա համար պետք է իմանալ, թե ինչ նախնական փաթեթավորման նյութից է պատրաստված կրկնակի օգտագործվող պլաստմասսան եւ ինչ է պարունակվել նախնական փաթեթվածքում, եթե այդ նախորդ պարունակությունը կարող է նվազեցնել այդ նյութից պատրաստված նոր փաթեթվածքի ամրությունը: Բացի այդ, որակի երաշխավորման ծրագիրը, որին հետեւում է փաթեթվածքը արտադրող կազմակերպությունը 6.1.1.4-ին համապատասխան, պետք է ներառի 6.1.5-ով նախատեսվող՝ վերամշակված պլաստիկ նյութի յուրաքանչյուր խմբաքանակից պատրաստված փաթեթվածքի կառուցվածքի տեսակի մեխանիկական փորձարկումների իրականացումը: Նման փորձարկման ընթացքում դարսակման ընթացքում փաթեթվածքի ամրությունը կարող է ստուգվել ավելի շուտ դինամիկ սեղմելու համապատասխան փորձարկումների, քան ստատիկ բեռնվածքի փորձարկումների միջոցով:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** «Փաթեթվածք. Վրանգավոր բեռների համար նախատեսված տրանսպորտային փաթեթվածք. Կրկնակի օգտագործվող պլաստիկ նյութ» ISO 16103:2005 սրանդարտը ներառում է լրացուցիչ ուղեցույցներ այն ընթացակարգերի վերաբերյալ, որոնք անհրաժեշտ է կատարել կրկնակի օգտագործվող պլաստիկ նյութի կիրառումը հաստատելիս:

6.1.4.8.9. Թմբկազլանների եւ կանխտրների առավելագույն տարողությունը՝

1H1, 1H2՝ 450 լիտր,

3H1, 3H2՝ 60 լիտր:

6.1.4.8.10. Առավելագույն զտաքաշը՝ 1H1, 1H2՝ 400 կգ,

3H1, 3H2՝ 120 կգ:

#### **6.1.4.9. Բնափայտից արկղեր**

4C1 սովորական

4C2 անթափանցելի պատերով

6.1.4.9.1. Օգտագործվող անտառանյութը պետք է լավ պահպանված լինի, լինի կոմերցիոն չոր եւ չունենա այնպիսի թերություններ, որոնք կարող են զգալիորեն նվազեցնել արկղի որելէ մասի ամրությունը: Օգտագործվող նյութի ամրությունը եւ պատրաստման մեթոդը պետք է համապատասխանեն արկղի տարողությանը եւ ըստ նշանակության օգտագործմանը: Կափարիչը եւ հատակները կարող են պատրաստվել այնպիսի ջրակայուն փայտանյութից, ինչպես, օրինակ՝ պինդ սովարաթուղթը, փայտի թեփից սալիկները կամ համապատասխան որելէ այլ տեսակի նյութ:

6.1.4.9.2. Ամրակումները պետք է դիմակայեն փոխադրման սովորական պայմաններում առաջացող վիբրացիային: Հնարավորինս պետք է խուսափել փայտախյուսե թելերի մեջ մեխ խփելուց: Այն միացումները, որոնք կարող են դիմանալ մեծ բեռնվածքի, պետք է կատարվեն ծավիկով ծայրով կամ օղակաձեւ կտրվածքով մեխերի կամ այլ համարժեք ամրակման միջոցների օգնությամբ:

6.1.4.9.3. Արկղ 4C2՝ արկղի յուրաքանչյուր տարր պետք է պատրաստված լինի միակտոր տախտակից կամ լինի համարժեք ամուր: Տարրերը համարվում են միակտոր տախտակին ամրությամբ համարժեք, եթե կիրառվում է սոսնձով միացման հետեւյալ մեթոդներից որելէ մեկը՝ ծիծեռնակի պոչ միացում, ագուցավոր միացում, խփած միացում, քառապատիկ միահյուսում կամ յուրաքանչյուր միացման համար առնվազն երկու մետաղյա ֆասոնային երկաթակապերի միջոցով հատման կետերի միացում:

6.1.4.9.4. Առավելագույն զտաքաշը՝ 400 կգ:

#### **6.1.4.10. Նրբափայտակից արկղեր**

4D

6.1.4.10.1. Օգտագործվող նրբատախտակը պետք է ունենա առնվազն երեք շերտ: Այն պետք է պատրաստված լինի լավ պահպանված կեղևահանված, ռանդած կամ սղոցած միաշերտ նրբատախտակից, պետք է լինի կոմերցիոն առումով չոր եւ առանց այնպիսի թերությունների, որոնք կարող են զգալիորեն նվազեցնել արկղի ամրությունը: Օգտագործվող նյութի ամրությունը եւ պատրաստման մեթոդը պետք է համապատասխանեն արկղի տարողությանը եւ ըստ նշանակության օգտագործմանը: Բոլոր կից շերտերը պետք է սոսնձվեն ջրակայուն սոսնձով: Արկղերի պատրաստման համար նրբատախտակից բացի թույլատրվում է նաեւ համապատասխան այլ նյութերի օգտագործումը: Արկղի տարրերը պետք է սերտորեն խմբված լինեն մեխերով կամ հարմարեցված լինեն անկյունային հենակներին կամ կողաճակատին, կամ հավաքված լինեն այլ համարժեք միջոցներով:

6.1.4.10.2. Առավելագույն զտաքաշը՝ 400 կգ:

#### **6.1.4.11. Փայտանյութից արկղեր**

4F

6.1.4.11.1. Արկղերի պատերը պետք է պատրաստված լինեն այնպիսի ջրակայուն փայտանյութերից, ինչպես, օրինակ՝ սովարաթուղթ, փայտի թեփից սալիկ կամ համապատասխան այլ տեսակի նյութ: Օգտագործվող նյութի ամրությունը եւ պատրաստման մեթոդը պետք է համապատասխանեն արկղերի տարողությանը եւ վերջիններիս ըստ նշանակության օգտագործմանը:

6.1.4.11.2. Արկղերի մյուս մասերը պետք է պատրաստված լինեն համապատասխան այլ նյութից:

6.1.4.11.3. Արկղերը պետք է ամուր հավաքված լինեն համապատասխան հարմարանքների միջոցով:

6.1.4.11.4. Առավելագույն զտաքաշը՝ 400 կգ:

#### **6.1.4.12. Փայտաթելքային սալից արկղ**

4G

6.1.4.12.1. Հաշվի առնելով արկղերի տարողությունը եւ վերջիններիս ըստ նշանակության օգտագործումը՝ դրանց պատրաստման համար պետք է օգտագործվի ամուր եւ բարձրորակ հարթ կամ կրկնակի ծալքավորված (միաշերտ կամ բազմաշերտ) փայտաթելքային սալ: Արտաքին մակերեսի ջրակայունությունը պետք է լինի այնպիսին, որ Կոբբի մեթոդով ջրի կլանումը որոշելու՝ 30 րոպեի ընթացքում կատարված փորձարկման ժամանակ որոշված զանգվածի ավելացումը չգերազանցի 155 գ/մ<sup>2</sup> (տե՛ս ISO 535:1991 ստանդարտը): Այն պետք ունենա ճկվելու հատկություն: Փայտաթելքային սալը պետք է լինի

կտրված եւ ծավլած՝ առանց ավելորդ մասերի եւ դրանում պետք է արվեն կտրվածքներ, որպեսզի կոմպլեկտը հավաքելու ժամանակ չառաջանան ճեղքեր, մակերեսի վնասվածքներ կամ ավելորդ ճկվածքներ: Ծալքավորված փայտաթելքային սալի մատներավոր շերտը պետք է ամուր սոսնձված լինի երեսապատմանը:

6.1.4.12.2. Արկղերի գլխիկները կարող են ունենալ փայտե շրջանակ կամ ամբողջությամբ պատրաստվել փայտից կամ մեկ այլ հարմար նյութից: Ամրացնելու համար կարող են օգտագործվել փայտանյութից կամ մեկ համապատասխան այլ նյութից շերտաձողիկներ:

6.1.4.12.3. Արկղի հենամարմնի միացումները պետք է կատարվեն կաշուն ժապավենի միջոցով, սոսնձվեն իրար վրա բերված կամ իրար կարված մետաղյա կեռիկների ամրացմամբ: Իրար վրա բերված միացումները պետք է ունենան համապատասխան մակածալք:

6.1.4.12.4. Սոսնձելու միջոցով կամ կաշուն ժապավենի օգնությամբ արկղը փակելու համար պետք է օգտագործվի ջրակայուն սոսինձ:

6.1.4.12.5. Արկղերի չափերը պետք է համապատասխանեն իրենց պարունակության ձեւին եւ ծավալին:

6.1.4.12.6. Առավելագույն զտաքաշը՝ 400 կգ:

#### **6.1.4.13. Պլաստմասսայից արկղեր**

4H1 փրփրապլաստից արկղեր

4H2 պինդ պլաստմասսայից արկղեր

6.1.4.13.1. Արկղը պետք է պատրաստված լինի համապատասխան պլաստիկ նյութից եւ լինի բավականաչափ ամուր՝ հաշվի առնելով դրա տարողությունը եւ ըստ նշանակության օգտագործումը: Արկղը պետք է բավականաչափ կայուն լինի իր մեջ պարունակվող նյութի, ինչպես նաեւ ուլտրամանուշակագույն ճառագայթման ազդեցության ներքո հնեցման կամ մաշման նկատմամբ:

6.1.4.13.2. Փրփրապլաստից արկղը պետք է բաղկացած լինի ձեւավորված փրփրապլաստից պատրաստված երկու մասից՝ ստորին մասից, որն ունի հատուկ խոռոչներ ներքին փաթեթվածքների համար եւ վերին մասից, որը փակում է ստորինը եւ վերջինիս հետ սերտորեն միանում է: Արկղի վերին եւ ստորին մասերը պետք է ունենան այնպիսի կառուցվածք, որպեսզի ներքին փաթեթվածքը սերտորեն մտնի դրանց մեջ: Ներքին փաթեթվածքի կափարիչները չպետք է շփվեն այդ արկղի վերին մասի ներքին կողմի հետ:

6.1.4.13.3. Ուղարկելիս փրփրապլաստից արկղը պետք է փակված լինի ինքնասոսնձվող ժապավենով, որը, պոկվելու դեպքում, պետք է բավականաչափ ամուր լինի՝ կանխարգելելու համար արկղի բացվելը:

Ինքնասուսնծվող ժապավենը պետք է լինի կայուն եղանակային պայմանների ներգործության նկատմամբ, իսկ դրա սուսնծող նյութը պետք է համատեղելի լինի այն փրփրապլաստի հետ, որից պատրաստված է արկղը: Կարող են օգտագործվել առնվազն նույնչափ արդյունավետ փակող հարմարանքներ:

6.1.4.13.4. Եթե պինդ պաստմասսայից արկղերի համար պահանջվում է պաշտպանություն ուլտրամանուշակագույն ճառագայթումից, ապա այն պետք է ապահովվի մոխրի կամ համապատասխան այլ պիգմենտների կամ ինհիբիտորների միջոցով: Այդ հավելումները պետք է համատեղելի լինեն պարունակության հետ եւ պահպանեն արդյունավետությունն արկղի շահագործման ժամկետի ամբողջ ընթացքում: Կառուցվածքի փորձարկված տեսակի պատրաստման ժամանակ չօգտագործված մոխրի, պիգմենտների կամ ինհիբիտորների հավելման դեպքում կրկնակի փորձարկումը կարող է չկատարվել, եթե մոխրի պարունակության զանգվածը չի գերազանցում 2%-ը կամ եթե պիգմենտի պարունակության զանգվածը չի գերազանցում 3%-ը. ուլտրամանուշակագույն ճառագայթման դեմ ինհիբիտորների պարունակությունը չի սահմանափակվում:

6.1.4.13.5. Ոչ ուլտրամանուշակագույն ճառագայթման դեմ պաշտպանվելու համար օգտագործվող հավելումները կարող են ներառվել պլաստիկ նյութի բաղադրության մեջ՝ պայմանով, որ դրանք բացասաբար չեն ազդի փաթեթվածքի նյութի քիմիական եւ ֆիզիկական հատկությունների վրա: Նման դեպքերում կրկնակի փորձարկում կարող է չիրականացվել:

6.1.4.13.6. Պինդ պլաստմասսայից արկղերը պետք է սարքավորվեն բավականաչափ ամրության համապատասխան նյութից պատրաստված փակող հարմարանքներով, որոնք նախագծված են այնպես, որ կանխարգելվում է արկղի պատահական բացումը:

6.1.4.13.7. Եթե նոր փաթեթվածքի պատրաստման համար օգտագործվում է կրկնակի օգտագործվող պլաստիկ նյութ ապա նոր փաթեթվածքի պատրաստման համար օգտագործվող վերամշակված նյութը պետք է երաշխավորվի եւ փաստաթղթերով պարբերաբար հաստատվի իրավասու մարմնի կողմից ճանաչված՝ որակի ապահովման ծրագրի շրջանակում: Որակի երաշխավորման ծրագրով պետք է նախատեսվի պատշաճ նախնական սորտավորման արձանագրության կազմում եւ ստուգում, որ վերամշակված պլաստիկ նյութի յուրաքանչյուր խմբաքանակ ունի հալման հոսքի արագության, ամրության եւ ձգման դեպքում հոսունության սահմանի համապատասխան արժեքներ, որոնք համընկնում են նման կրկնակի օգտագործվող նյութից պատրաստված կառուցվածքի տեսակի համապատասխան արժեքների հետ:

Դրա համար պետք է իմանալ, թե ինչ նախնական փաթեթավորման նյութից է պատրաստված կրկնակի օգտագործվող պլաստմասսան եւ ինչ է պարունակվել նախնական փաթեթվածքում, եթե այդ նախորդ պարունակությունը կարող է նվազեցնել այդ նյութից պատրաստված նոր փաթեթվածքի ամրությունը: Բացի այդ, որակի երաշխավորման ծրագիրը, որին հետեւում է փաթեթվածքը արտադրող կազմակերպությունը 6.1.1.4-ին համապատասխան, պետք է ներառի 6.1.5-ով նախատեսվող՝ վերամշակված պլաստիկ նյութի յուրաքանչյուր խմբաքանակից պատրաստված փաթեթվածքի կառուցվածքի տեսակի մեխանիկական փորձարկումների իրականացումը: Նման փորձարկման ընթացքում դարսակման ընթացքում փաթեթվածքի ամրությունը կարող է ստուգվել ավելի շուտ դինամիկ սեղմելու մասով համապատասխան փորձարկումների, քան ստատիկ բեռնվածքի մասով փորձարկումների միջոցով:

6.1.4.13.8. Առավելագույն զտաքաշը՝ 4H1՝ 60 կգ

4H2՝ 400 կգ:

**6.1.4.14. Պողպատե, ալյումինե կամ այլ մեխաղից արկղեր**

4A պողպատե արկղեր,

4B ալյումինե արկղեր

4N պողպատե կամ ալյումինե արկղերից բացի այլ մետաղյա արկղեր

6.1.4.14.1. Մետաղի ամրությունը եւ արկղի կառուցվածքը պետք է համապատասխանեն դրա տարողությանը եւ ըստ նշանակության օգտագործմանը:

6.1.4.14.2. Արկղերի ներսում պետք է դրվեն փայտաթելքային սալից կամ թաղիքե միջադիրներ կամ ունենան համապատասխան նյութից ներքին ներդիր կամ ներքին պատվածք (եթե կա դրա անհրաժեշտությունը): Եթե օգտագործվում է կրկնակի գլանված մետաղյա ներդիր, ապա պետք է ձեռնարկվեն միջոցներ նյութերի, հատկապես պայթուցիկ նյութերի՝ կարերի խոռոչներ ընկնելու կանխարգելման ուղղությամբ:

6.1.4.14.3. Փականները կարող են լինել ցանկացած համապատասխան տեսակի. դրանք պետք է մնան փակ վիճակում փոխադրման սովորական պայմաններում:

6.1.4.14.4. Առավելագույն զտաքաշը՝ 400 կգ:

**6.1.4.15. Մանածագործվածքից պարկեր**

5L1 առանց ներքին ներդիրի կամ պատվածքի

5L2 անթափանցելի

### 5L3 ջրակայուն

6.1.4.15.1. Պարկերի պատրաստման համար օգտագործվող մանածագործվածքները պետք է լինեն լավ որակի: Կտորի ամրությունը եւ պարկի կառուցվածքը պետք է համապատասխանեն դրա տարողությանը եւ ըստ նշանակության օգտագործմանը:

6.1.4.15.2. Պարկեր, անթափանցելի, 5L2՝ պարկը պետք է անթափանցելի դարձվի, օրինակ հետեւյալ կերպով՝

ա) ջրակայուն սոսնձի, ինչպես օրինակ՝ բիտումի օգնությամբ պարկի ներքին մակերեսի վրա թղթի սոսնձման. կամ

բ) պոլիմերային ժապավենով պարկի ներքին մակերեսը ծածկելու. կամ

գ) թղթից կամ պլաստիկ նյութի մեկ կամ մի քանի ներդիրների կիրառման միջոցով:

6.1.4.15.3. Պարկեր, ջրակայուն, 5L3՝ խոնավության ներթափանցումը կանխարգելելու նպատակով պարկը պետք է լինի անջրանցիկ, ինչն ապահովվում է, օրինակ՝

ա) ջրակայուն թղթից առանձին ներդիրների օգտագործման (օրինակ՝ պարաֆինապատ ամրաթուղթ, բիտումացված թուղթ կամ պլաստմասսայից ծածկույթով ամրաթուղթ). կամ

բ) պոլիմերային ժապավենով պարկի ներքին մակերեսը ծածկելու. կամ

գ) պլաստիկ նյութից մեկ կամ մի քանի ներդիրների կիրառման միջոցով:

6.1.4.15.4. Առավելագույն զտաքաշը՝ 50 կգ:

### **6.1.4.16. Հյուսածո պլաստմասսայից պարկերը**

5H1 առանց ներքին ներդիրի կամ պատվածքի

5H2 անթափանցելի

5H3 ջրակայուն

6.1.4.16.1. Պարկերը պետք է պատրաստված լինեն ձգովի համապատասխան պլաստիկ նյութի ժապավենից կամ միաթելքերից: Նյութի ամրությունը եւ պարկի կառուցվածքը պետք է համապատասխանեն դրա տարողությանը եւ ըստ նշանակության օգտագործմանը:

6.1.4.16.2. Եթե օգտագործվում է հարթ միահյուսվածքի կտոր, ապա պարկերի հատակը եւ կողմնային մասը պետք է այլ եղանակով կարված կամ ամրացված լինեն: Եթե կտորը խողովակաձեւ է, ապա պարկի հատակը

պետք է կարված, հյուսված կամ ամրացված լինի կարի համարժեք ամրությունն ապահովող մեկ այլ միջոցով:

6.1.4.16.3. Պարկեր, անթափանցելի, 5H2՝ պարկը պետք է անթափանցելի դարձվի օրինակ հետևյալ կերպով՝

ա) պարկի ներքին մակերեսի վրա թղթի կամ պոլիմերային թաղանթի սունձման. կամ

բ) թղթից կամ պլաստիկ նյութից մեկ կամ մի քանի առանձին ներդիրների կիրառման միջոցով:

6.1.4.16.4. Պարկեր, ջրակայուն, 5H3՝ խոնավության ներթափանցումը կանխարգելելու նպատակով պարկը պետք է դարձվի անջրանցիկ, ինչն ապահովվում է, օրինակ՝

ա) ջրակայուն թղթից առանձին ներքին ներդիրների օգտագործման (օրինակ՝ պարաֆինապատ ամրաթուղթ, բիտումացված երկշերտ թուղթ կամ պլաստմասսայից ծածկույթով ամրաթուղթ). կամ

բ) պոլիմերային ժապավենով պարկի ներքին կամ արտաքին մակերեսը ծածկելու. կամ

գ) պլաստմասսայից մեկ կամ մի քանի ներքին ներդիրների կիրառման միջոցով:

6.1.4.16.5. Առավելագույն զտաքաշը՝ 50 կգ:

#### **6.1.4.17. Պոլիմերային թաղանթից պատրաստված պարկեր**

5H4

6.1.4.17.1. Պարկերը պետք է պատրաստված լինեն համապատասխան պլաստիկ նյութից: Նյութի ամրությունը եւ պարկի կառուցվածքը պետք է համապատասխանեն դրա տարողությանը եւ ըստ նշանակության օգտագործմանը: Միացումները եւ փականները պետք է դիմակայեն ճնշմանը եւ հարվածներին, որոնք կարող են լինել փոխադրման սովորական պայմաններում:

6.1.4.17.2. Առավելագույն զտաքաշը՝ 50 կգ:

#### **6.1.4.18. Թղթե պարկեր**

5M1 բազմաշերտ

5M2 բազմաշերտ, ջրակայուն

6.1.4.18.1. Պարկերը պատրաստելու համար անհրաժեշտ է օգտագործել համապատասխան ամրաթուղթ կամ համարժեք թուղթ, որն ունի առնվազն երեք շերտ, ընդ որում միջին շերտը կարող է պատրաստվել



կաչուն բաղադրությամբ ցանցանման նյութից, որն էլ ապահովում է արտաքին շերտերի հետ կպնելը: Թղթի ամրությունը եւ պարկերի կառուցվածքը պետք է համապատասխանեն դրանց տարողությանը եւ ըստ նշանակության օգտագործմանը: Միացումները եւ կարերը պետք է անթափանցելի լինեն:

6.1.4.18.2. Պարկեր 5M2՝ խոնավության ներթափանցումը կանխարգելելու նպատակով չորս կամ ավելի շերտեր ունեցող պարկը պետք է անջրանցիկ դարձվի երկու արտաքին շերտերից մեկը ջրակայուն շերտ օգտագործելու՝ կամ երկու արտաքին շերտերի միջեւ համապատասխան պաշտպանիչ նյութից պատրաստված ջրակայուն անջրպետ օգտագործելու միջոցով. եռաշերտ պարկը պետք է անջրանցիկ դարձվի՝ որպես արտաքին շերտ օգտագործելով ջրակայուն շերտ: Եթե կա պարունակության՝ խոնավության հետ ռեակցիայի մեջ մտնելու վտանգ կամ եթե պարունակությունը փաթեթավորվում է խոնավ վիճակում, ապա ներքին կողմից պարկը նույնպես պետք է ապահովված լինի ջրակայուն շերտով կամ պաշտպանիչ նյութից անջրպետով, ինչպես օրինակ՝ բիտումացված երկշերտ ամրաթղթով, պլաստմասսայից ծածկույթով ամրաթուղթ, պարկի ներքին մակերեսին փակցված պոլիմերային ժապավեն կամ պլաստմասսայից մեկ կամ մի քանի ներդիրներ: Միացումները եւ կարերը պետք է ջրակայուն լինեն:

6.1.4.18.3. Առավելագույն զտաքաշը՝ 50 կգ:

**6.1.4.19. Բարդ փաթեթվածքներ (պլաստիկ նյութից)**

- 6HA1 արտաքին պողպատե թմբկազլանով պլաստմասսայից տարա
- 6HA2 արտաքին պողպատե կավարածածկով կամ արկղով պլաստմասսայից տարա
- 6HB1 արտաքին ալյումինե թմբկազլանով պլաստմասսայից անոթ
- 6HB2 արտաքին ալյումինե կավարածածկով կամ արկղով պլաստմասսայից անոթ
- 6HC փայտանյութից արտաքին արկղով պլաստմասսայից տարա
- 6HD1 արտաքին նրբատախտակից թմբկազլաններից պլաստմասսայից տարա
- 6HD2 արտաքին նրբատախտակից արկղերից պլաստմասսայից տարա
- 6HG1 արտաքին ֆիբրային թմբկազլանից պլաստմասսայից տարա
- 6HG2 փայտաթելքային սալից արտաքին արկղով պլաստմասսայից

տարա

6HH1 պլաստմասսայից արտաքին թմբկազլանից պլաստմասսայից տարա

6HH2 պինդ պլաստմասսայից արտաքին արկղով պլաստմասսայից տարա

#### 6.1.4.19.1. Ներքին տարա

6.1.4.19.1.1. Պլաստմասսայից ներքին տարաների նկատմամբ կիրառվում են 6.1.4.8.1-ի եւ 6.1.4.8.4 - 6.1.4.8.7-ի պահանջները:

6.1.4.19.1.2. Պլաստմասսայից ներքին տարան պետք է սերտորեն հպվի այն արտաքին փաթեթվածքին, որի մեջ չպետք է լինեն ցցվածքներ, որոնք կարող են պլաստիկ նյութի մաշեցում առաջացնել:

6.1.4.19.1.3. Ներքին տարաների առավելագույն տարողությունը՝

6HA1, 6HB1, 6HD1, 6HG1, 6HH1՝ 250 լիտր

6HA2, 6HB2, 6HC, 6HD2, 6HG2, 6HH2՝ 60 լիտր:

6.1.4.19.1.4. Առավելագույն զտաքաշը՝

6HA1, 6HB1, 6HD1, 6HG1, 6HH1՝ 400 կգ

6HA2, 6HB2, 6HC, 6HD2, 6HG2, 6HH2՝ 75 կգ:

#### 6.1.4.19.2. Արտաքին փաթեթվածք

6.1.4.19.2.1. 6HA1 կամ 6HB1 պողպատե, կամ այլումինե արտաքին թմբկազլանով պլաստմասսայից տարա՝ արտաքին փաթեթվածքի կառուցվածքը պետք է բավարարի 6.1.4.1 կամ 6.1.4.2-ի համապատասխան պահանջները:

6.1.4.19.2.2. 6HA2 կամ 6HB2 արտաքին պողպատե կամ այլումինե կավարամածով պլաստմասսայից տարա. արտաքին փաթեթվածքի կառուցվածքը պետք է բավարարի 6.1.4.14-ի պահանջները:

6.1.4.19.2.3. 6HC փայտանյութից արտաքին արկղով պլաստմասսայից տարա. արտաքին փաթեթվածքի կառուցվածքը պետք է բավարարի 6.1.4.9-ի պահանջները:

6.1.4.19.2.4. 6HD1 արտաքին նրբատախտակից թմբկազլանով պլաստմասսայից տարա. արտաքին փաթեթվածքի կառուցվածքը պետք է բավարարի 6.1.4.5-ի պահանջները:

6.1.4.19.2.5. 6HD2 արտաքին նրբատախտակից արկղով պլաստմասսայից տարա. արտաքին փաթեթվածքի կառուցվածքը պետք է բավարարի 6.1.4.10-ի պահանջները:

- 6.1.4.19.2.6. 6HG1 արտաքին ֆիբրային թմբկազլանով պլաստմասսայից տարա. արտաքին փաթեթվածքի կառուցվածքը պետք է բավարարի 6.1.4.7.1 - 6.1.4.7.4-ի պահանջները:
- 6.1.4.19.2.7. 6HG2 փայտաթելքային սալից արտաքին արկղով պլաստմասսայից տարա. արտաքին փաթեթվածքի կառուցվածքը պետք է բավարարի 6.1.4.12-ի պահանջները:
- 6.1.4.19.2.8. 6HH1 արտաքին պլաստմասսայից թմբկազլանով պլաստմասսայից տարա. արտաքին փաթեթվածքի կառուցվածքը պետք է բավարարի 6.1.4.8.1 - 6.1.4.8.6-ի պահանջները:
- 6.1.4.19.2.9. 6HH2 պինդ պլաստմասսայից արտաքին արկղով պլաստմասսայից տարաներ (այդ թվում նաեւ մատնեքավոր պլաստիկ նյութ) արտաքին փաթեթվածքի կառուցվածքը պետք է բավարարի 6.1.4.13.1 եւ 6.1.4.13.4 - 6.1.4.13.6-ի պահանջները:

**6.1.4.20. Բարդ փաթեթվածքներ (ապակի, ճենապակի կամ կերամիկա)**

- 6PA1 արտաքին պողպատե թմբկազլանով տարա
- 6PA2 արտաքին պողպատե կավարամածով կամ արկղով տարա
- 6PB1 արտաքին այլումինե թմբկազլանով տարա
- 6PB2 արտաքին այլումինե կավարամածով կամ արկղով տարա
- 6PC փայտանյութից արտաքին արկղով տարա
- 6PD1 արտաքին նրբատախտակից թմբկազլանով տարա
- 6PD2 արտաքին հյուսված գործված զամբյուղով տարա
- 6PG1 արտաքին ֆիբրային թմբկազլանով տարա
- 6PG2 փայտաթելքային սալից արտաքին արկղով տարա
- 6PH1 փրփրապլաստից արտաքին տարայով տարա
- 6PH2 պինդ պլաստմասսայից արտաքին փաթեթվածքով տարա

**6.1.4.20.1. Ներքին տարա**

- 6.1.4.20.1.1. Տարաները պետք է ունենան համապատասխան ձեւ (զլանածեւ կամ տանձածեւ), պատրաստված լինեն բարձրորակ նյութից եւ չունենան դրանց ամրությունը նվազեցնող թերություններ: Պատերն իրենց ցանկացած կետում պետք է ունենան բավականաչափ հաստություն եւ չունենան ներքին լարվածություններ:
- 6.1.4.20.1.2. Տարաների համար որպես փական պետք է օգտագործել պտուտակավոր պլաստմասսայից կափարիչներ, հղկած-հարմարեցված ապակե խցաններ կամ, առնվազն, նույնքան արդյունավետ փակող

հարմարանքներ: Փականի ցանկացած մաս, որը կարող է շփվել տարայի պարունակության հետ, պետք է կայուն լինի այդ պարունակության նկատմամբ: Անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել՝ փականների անջրանցիկությունն ապահովելու եւ դրանք պատշաճ փակելու նպատակով՝ փոխադրման ընթացքում դրանց թուլացումը կանխարգելելու նպատակով: Եթե անհրաժեշտ լինի բացթողնման համար կափույրներով սարքավորված փականների տեղադրում, ապա այդ փականները պետք է համապատասխանեն 4.1.1.8-ի պահանջներին:

6.1.4.20.1.3. Տարան պետք է ամուր ամրացված լինի արտաքին փաթեթվածքին պաշտպանիչ եւ (կամ) կլանիչ նյութերի օգնությամբ:

6.1.4.20.1.4. Տարայի առավելագույն տարողությունը՝ 60 լիտր:

6.1.4.20.1.5. Առավելագույն զտաքաշը՝ 75 կգ:

6.1.4.20.2. *Արտաքին փաթեթվածք*

6.1.4.20.2.1. Արտաքին պողպատե թմբկազևանով տարա 6PA1. արտաքին փաթեթվածքի կառուցվածքը պետք է բավարարի 6.1.4.1-ի համապատասխան պահանջները: Այս տեսակի փաթեթվածքի համար պահանջվող հանովի կափարիչը, այնուամենայնիվ, կարող է ունենալ թասակի տեսք:

6.1.4.20.2.2. Արտաքին պողպատե կավարամածով կամ արկղով տարա 6PA2. արտաքին փաթեթվածքի կառուցվածքը պետք է բավարարի 6.1.4.14-ի համապատասխան պահանջները: Գլանաձեւ տարաների համար արտաքին փաթեթվածքը պետք է, գտնվելով ուղղաձիգ դիրքում, բարձրանա տարայից եւ դրա փականից բարձր: Եթե տանձաձեւ անոթը տեղադրված է կավարամածում, որի ձեւը համապատասխանում է տարայի ձեւին, ապա արտաքին փաթեթվածքը պետք է սարքավորված լինի պաշտպանիչ կափարիչով (թասակով):

6.1.4.20.2.3. Արտաքին այլումինե թմբկազևանով տարա 6PB1. արտաքին փաթեթվածքի կառուցվածքը պետք է բավարարի 6.1.4.2-ի համապատասխան պահանջները:

6.1.4.20.2.4. Արտաքին այլումինե կավարածածկով կամ արկղով տարա 6PB2. արտաքին փաթեթվածքի կառուցվածքը պետք է բավարարի 6.1.4.14-ի համապատասխան պահանջները:

6.1.4.20.2.5. Փայտանյութից արտաքին արկղով տարա 6PC. արտաքին փաթեթվածքի կառուցվածքը պետք է բավարարի 6.1.4.9-ի համապատասխան պահանջները:

6.1.4.20.2.6. Արտաքին նրբատախտակից թմբկազևանով տարա 6PD1. արտաքին փաթեթվածքի կառուցվածքը պետք է բավարարի 6.1.4.5-ի

համապատասխան պահանջները:

- 6.1.4.20.2.7. Արտաքին հյուսված զամբյուղով տարա 6PD2: Հյուսված զամբյուղը պետք է պատրաստված լինի բարձրորակ նյութից: Այն պետք է սարքավորված լինի պաշտպանիչ փականով՝ տարան վնասելը կանխարգելելու նպատակով:
- 6.1.4.20.2.8. Արտաքին ֆիբրային թմբկազևանով տարա 6PG1. արտաքին փաթեթվածքի կառուցվածքը պետք է բավարարի 6.1.4.7.1 - 6.1.4.7.4-ի համապատասխան պահանջները:
- 6.1.4.20.2.9. Փայտաթելքային սալից արտաքին արկղով տարա 6PG2. արտաքին փաթեթվածքի կառուցվածքը պետք է բավարարի 6.1.4.12-ի համապատասխան պահանջները:
- 6.1.4.20.2.10. Փրփրապլաստից կամ պինդ պլաստմասսայից արտաքին փաթեթվածքով տարա (6PH1 կամ 6PH2): Արտաքին փաթեթվածքի կառուցվածքը պետք է բավարարի 6.1.4.13-ի համապատասխան պահանջները: Պինդ պլաստմասսայից արտաքին փաթեթվածքը պետք է պատրաստվի բարձր խտության պոլիէթիլենից կամ մեկ այլ համարժեք պոլիմերային նյութից: Այս տեսակի փաթեթվածքի համար պահանջվող հանովի կափարիչը, այնուամենայնիվ, կարող է թասակի տեսք ունենալ:

**6.1.4.21. Համակցված փաթեթվածքներ**

Կիրառվում են արտաքին փաթեթվածքին ներկայացվող՝ 6.1.4-ի համապատասխան պահանջները:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** Օգտագործվելիք ներքին եւ արտաքին փաթեթվածքի համար տես 4.1 գլխում փաթեթավորման համապատասխան ցուցումները:

**6.1.4.22. Թեթեւ մեկաղյա փաթեթվածքներ**

OA1 չհանվող հատակով

OA2 հանովի հատակով

- 6.1.4.22.1. Հենամարմնի պատերը եւ հատակը պետք է պատրաստված լինեն համապատասխան պողպատից. դրանց հաստությունը պետք է համապատասխանի փաթեթվածքի տարողությանը եւ ըստ նշանակության օգտագործմանը:
- 6.1.4.22.2. Միացումները պետք է լինեն զողված կամ, առնվազն, երկկար զողվածքով կամ պետք է պատրաստված լինեն այնպիսի մեթոդով,

որը համարժեք ամրություն եւ անջրանցիկություն կապահովի:

- 6.1.4.22.3. Տինկից, անագից, լաքաներկից ներքին պատվածքները պետք է ունենան անհրաժեշտ ամրություն եւ սերտորեն հպվեն ցանկացած կետին, այդ թվում նաեւ փականներին:
- 6.1.4.22.4. Չհանվող հատակով (ՕԱ1) փաթեթվածքների կորպուսում կամ հատակներում գոլորշիների լցավորման, դատարկման եւ հեռացման համար նախատեսվող բացվածքները չպետք է գերազանցեն 7 սմ տրամագիծը: Առավել լայն բացվածքներով փաթեթվածքները համարվում են հանովի հատակով տեսակի փաթեթվածք (ՕԱ2):
- 6.1.4.22.5. Չհանվող հատակով (ՕԱ1) փաթեթվածքների փականները պետք է լինեն կամ պտուտակավոր տեսակի, կամ թույլ տալ պտուտակավոր պարուրակով կափարիչի օգտագործումը կամ մեկ այլ հարմարանքի, որն առնվազն ապահովում է նման արդյունավետություն: Հանովի հատակով (ՕԱ2) փաթեթվածքների փականները պետք է այնպես կառուցված լինեն, որ փոխադրման սովորական պայմաններում դրանք մնան ամուր փակված, իսկ փաթեթվածքն՝ անջրանցիկ լինի:
- 6.1.4.22.6. Փաթեթվածքի առավելագույն տարողությունը՝ 40 լիտր:
- 6.1.4.22.7. Առավելագույն զտաքաշը՝ 50 կգ:

## **6.1.5. Փաթեթվածքի փորձարկումներին ներկայացվող պահանջները**

### **6.1.5.1. Փորձարկումների կատարումը եւ դրանց հաճախականությունը**

- 6.1.5.1.1. Յուրաքանչյուր փաթեթվածքի կառուցվածքի տեսակը պետք է փորձարկվի, ինչպես նշված է 6.1.5-ում, մակնշման թույլտվություն տվող իրավասու մարմնի կողմից սահմանված ընթացակարգերի համաձայն եւ պետք է հաստատվի այդ իրավասու մարմնի կողմից:
- 6.1.5.1.2. Մինչեւ օգտագործումը փաթեթվածքի յուրաքանչյուր կառուցվածքի տեսակ պետք է բարեհաջող անցնի սույն գլխով նախատեսվող փորձարկումները: Փաթեթվածքի կառուցվածքի տեսակը որոշվում է կառուցվածքով, չափսով, նյութով եւ դրա հաստությամբ, պատրաստման եղանակով եւ կիրառմամբ, ինչպես նաեւ մակերեսի մշակման եղանակով: Այն նույնպես կարող է ներառել փաթեթվածքներ, որոնք տարբերվում են իրենց կառուցվածքի տեսակից միայն պակաս բարձրությամբ:
- 6.1.5.1.3. Արտադրանքի սերիական նմուշները նույնպես պետք է ենթարկվեն փորձարկումների իրավասու մարմնի կողմից սահմանված հաճախականությամբ: Թղթից կամ փայտաթելքային սալից փաթեթվածքի նման փորձարկումների համար շրջակա միջավայրի պայմաններում պատրաստումը համարվում է 6.1.5.2.3-ի պահանջների կատարմանը համարժեք:

6.1.5.1.4. Փորձարկումները պետք է կրկնվեն, ընդ որում, փաթեթվածքի կառուցվածքի, նյութի կամ պատրաստման եղանակի յուրաքանչյուր փոփոխմանը զուգահեռ:

6.1.5.1.5. Իրավասու մարմինը կարող է թույլատրել այն փաթեթվածքի ընտրովի փորձարկումները, որը քիչ է տարբերվում արդեն իսկ փորձարկված տեսակից, օրինակ՝ իր փոքր չափսերով կամ փոքր զտաքաշով, ինչպես նաև այն փաթեթվածքների փորձարկումը, ինչպիսին են ավելի փոքրացված չափսերով պատրաստվող թմբկազևանները, պարկերը կամ արկղերը:

6.1.5.1.6. *(Նախատեսվում է վերապահում)*

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** Արտաքին փաթեթվածքում ներքին փաթեթվածքի տարբեր տեսակների օգտագործմանը վերաբերող պայմանների եւ ներքին փաթեթվածքի թույլատրելի ձեւափոխումների համար տե՛ս 4.1.1.5.1: Այս պայմանները չեն սահմանափակում ներքին փաթեթվածքների օգտագործումը 6.1.5.1.7-ը կիրառելիս:

6.1.5.1.7. Պինդ կամ հեղուկ նյութերի համար նախատեսվող ցանկացած տեսակի պատրաստվածք կամ ներքին փաթեթվածք կարող է հավաքվել կամ փոխադրվել առանց արտաքին փաթեթվածքով փորձարկման ենթարկվելու՝ ստորեւ բերված պայմանների պահպանմամբ.

ա) արտաքին փաթեթվածքը պետք է բարեհաջող փորձարկումն անցնի 6.1.5.3-ի համաձայն I փաթեթավորման խմբի համար նախատեսվող անկման բարձրության դեպքում՝ հեղուկներ պարունակող փխրուն (ինչպես, օրինակ՝ ապակի) ներքին փաթեթվածքի հետ մեկտեղ.

բ) ներքին փաթեթվածքի ընդհանուր անզուտ քաշը չպետք է գերազանցի վերը նշված՝ (ա) ենթակետի համաձայն անկման մասով փորձարկումների անցկացման համար օգտագործված ներքին փաթեթվածքի անզուտ քաշի կեսը.

գ) ներքին փաթեթվածքի առանձին միավորների, ինչպես նաև արտաքին եւ ներքին փաթեթվածքի միջեւ ներդիր նյութի հաստությունը չպետք է լինի նախնական փորձարկված փաթեթվածքում համապատասխան միջադիր նյութի հաստությունից պակաս, իսկ եթե նախնական փորձարկման ժամանակ օգտագործվել է ներքին փաթեթվածքի միայն մեկ միավոր, ապա ներքին փաթեթվածքի առանձին միավորների միջեւ հաստությունը չպետք է լինի նախնական փորձարկման ժամանակ արտաքին եւ ներքին փաթեթվածքի միջեւ միջադիր նյութի հաստությունից պակաս: Եթե օգտագործվում է փոքր չափսերի ներքին կամ արտաքին փաթեթվածքի փոքր

քանակությամբ միավոր (համեմատած անկման փորձարկման ժամանակ օգտագործված ներքին փաթեթվածքի հետ), ապա անհրաժեշտ է օգտագործել բավականաչափ լրացուցիչ քանակությամբ միջադիր նյութ՝ ազատ տարածքները լցնելու համար.

- դ) արտաքին փաթեթվածքը պետք է բարեհաջող անցնի լցավորված վիճակում 6.1.5.6-ով նախատեսվող դարսակման փորձարկումը: Համանման փաթեթների ընդհանուր զանգվածը պետք է որոշվի (ա) ենթակետի համապատասխան անկման փորձարկման ժամանակ օգտագործված ներքին փաթեթվածքի միավորների գումարային զանգվածի հիման վրա.
- ե) հեղուկ պարունակող արտաքին փաթեթվածքը պետք է ամբողջությամբ շրջապատված լինի բավականաչափ քանակությամբ կլանիչ նյութով, որը կարող է կլանել ներքին փաթեթվածքում պարունակվող ամբողջ հեղուկը.
- զ) եթե արտաքին փաթեթվածքը նախատեսված է դրանում հեղուկներ պարունակող ներքին փաթեթվածքներ պարունակելու համար եւ անջրանցիկ չէ կամ նախատեսված է դրանում պինդ նյութերով ներքին փաթեթվածքներ պարունակելու համար եւ անթափանցելի չէ, ապա արտահոսքի դեպքում անհրաժեշտ է նախատեսել այնպիսի միջոց, որը կարող է պահել հեղուկը կամ պինդ նյութը, անջրանցիկ ներդիրի, պլաստմասսայից պարկի կամ մեկ այլ նույնչափ արդյունավետ պահման միջոցի տեսքով: Հեղուկ պարունակող փաթեթվածքի դեպքում (ե) ենթակետի համաձայն պահանջվող կլանիչ նյութը պետք է տեղադրվի նման պահման միջոցի ներսում.
- է) փաթեթվածքները պետք է ունենան մակնշում՝ 6.1.3-ի համաձայն, որը ցույց է տալիս, որ դրանք փորձարկվել են որպես համակցված փաթեթվածքներ՝ I փաթեթավորման խմբին ներկայացվող պահանջների համապատասխանության առումով: Կիրառամներով նշվող առավելագույն անզուտ քաշը պետք է հավասար լինի արտաքին փաթեթվածքի զանգվածի եւ վերը նշված (ա) ենթակետում հիշատակվող անկման փորձարկման ժամանակ օգտագործված ներքին փաթեթվածքի անզուտ քաշի կեսի գումարին: Նման մակնշումը պետք է ներառի նաեւ «V» տառը, ինչպես նկարագրված է 6.1.2.4-ում:

6.1.5.1.8. Իրավասու մարմինը կարող է ցանկացած պահի պահանջել սույն բաժնում նախատեսվող փորձարկումների կատարումը՝ համոզվելու համար, որ արտադրվող սերիական փաթեթվածքները բավարարում են կառուցվածքի տեսակի փորձարկումներին ներկայացվող պահանջները:



Ստուգման նպատակով պահպանվում են այդ փորձարկումների արձանագրությունները:

6.1.5.1.9. Եթե անվտանգության նպատակներով պահանջվում է ներքին մակերեսի մշակում կամ ներքին պատվածք, ապա նման մշակումը կամ ծածկույթը պետք է պահպանի իր պաշտպանիչ հատկանիշները նույնիսկ փորձարկումները կատարելուց հետո:

6.1.5.1.10. Իրավասու մարմինը կարող է թույլ տալ մեկ նմուշի վրա մի քանի տեսակի փորձարկումների իրականացում, եթե դա չի անդրադառնա փորձարկումների արդյունքների ճշգրտության վրա:

6.1.5.1.11. *Վթարային փաթեթվածքներ*

Վթարային փաթեթվածքները (տե՛ս 1.2.1) պետք է փորձարկվեն եւ մակնշվեն պինդ նյութերի կամ ներքին փաթեթվածքի փոխադրման համար նախատեսվող՝ II փաթեթավորման խմբի փաթեթվածքի նկատմամբ կիրառվող պահանջներին համապատասխան, ընդ որում՝

ա) փորձարկումների դեպքում պետք է օգտագործվի ջուր, իսկ փաթեթվածքը պետք է լցված լինի իր առավելագույն տարողության ոչ պակաս, քան 98%-ի չափով: Փաթեթի պահանջվող ընդհանուր զանգվածն ստանալու համար կարելի է, օրինակ, ավելացնել հավելումներ, ինչպիսիք են կապարե կոտորուքներով պարկերն են, սակայն դրանք պետք է այնպես տեղադրել, որպեսզի դրանք չազդեն փորձարկումների արդյունքների վրա: Անկման մասով փորձարկումների անցկացման դեպքում կարելի է նույնպես փոխել անկման բարձրությունը՝ 6.1.5.3.5(բ)-ի համաձայն:

բ) Փաթեթվածքը պետք է նույնպես բարեհաջող անցնի անջրանցիկության փորձարկումը 30 կՊա ճնշման դեպքում, իսկ այդ փորձարկումների արդյունքները պետք է ներառվեն 6.1.5.8-ի համաձայն պահանջվող փորձարկումների արձանագրությունում եւ

գ) փաթեթվածքի վրա պետք է զետեղվի «T» տառը՝ 6.1.2.4-ին համապատասխան:

**6.1.5.2. Փաթեթվածքների նախապատրաստումը փորձարկումներին**

6.1.5.2.1. Փորձարկումներին պետք է ենթարկվեն այնպիսի փաթեթվածքներ, որոնք պատրաստված են այնպես, ինչպես դրանք պատրաստվում են փոխադրման համար՝ ներառյալ համակցված փաթեթվածքների ներքին փաթեթվածքները: Ներքին կամ առանձին տարաները կամ փաթեթվածքները, բացառությամբ պարկերի, պետք է հեղուկների դեպքում լցավորվեն իրենց առավելագույն տարողության 98%-ից ոչ պակաս, իսկ պինդ նյութերի դեպքում՝ ոչ պակաս, քան 95%-ով: Պարկերը պետք է լցավորվեն իրենց օգտագործման համար

թույլատրելի առավելագույն զանգվածի չափով: Համակցված փաթեթվածքները, որոնց ներքին փաթեթվածքը նախատեսված է ինչպես հեղուկների, այնպես էլ պինդ նյութերի համար, պետք է անցնի առանձին փորձարկումներ պարունակության երկու տեսակների համար՝ ինչպես հեղուկների, այնպես էլ պինդ նյութերի համար: Այն ապրանքները կամ նյութերը, որոնք փոխադրվելու են փաթեթվածքում, կարող են փոխարինվել այլ նյութերով կամ ապրանքներով, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ փոխարինումը փորձարկումների արդյունքները կարող է դարձնել անիրատեսական: Ինչ վերաբերում է պինդ նյութերին, ապա եթե օգտագործվում է այլ նյութ, ապա պետք է ունենա միեւնույն ֆիզիկական հատկությունները (մասնիկների զանգված, չափս եւ այլն), ինչ այն նյութը, որը փոխադրվելու է: Փաթեթի պահանջվող ընդհանուր զանգվածն ապահովելու նպատակով թույլատրվում է հավելումների օգտագործում, ինչպես օրինակ՝ կապարե կոտորուքներով պարկեր՝ պայմանով, որ դրանք այնպես տեղադրված լինեն, որ դրանց օգտագործումը չանդրադառնա փորձարկումների արդյունքների վրա:

6.1.5.2.2. Եթե հեղուկների համար նախատեսվող փաթեթվածքի անկման դեպքում փորձարկումների ժամանակ այլ նյութ է օգտագործվում, ապա այն պետք է ունենա միեւնույն հարաբերական խտությունը եւ մածուցիկությունը, ինչ այն նյութը, որը փոխադրվելու է: Նման փորձարկման համար կարող է նույնպես ջուր օգտագործվել՝ պահպանելով 6.1.5.3.5-ում նշված պայմանները:

6.1.5.2.3. Թղթից կամ փայտաթելքային սալից փաթեթվածքը պետք է պահվի 24 ժամից ոչ պակաս կարգավորվող ջերմաստիճանով եւ հարաբերական խտությամբ միջավայրում: Գոյություն ունի երեք տարբերակ, որից անհրաժեշտ է միայն մեկն ընտրել: Առավել նախընտրելի է միջավայրը  $23 \pm 2$  °C ջերմաստիճանում եւ  $50\% \pm 2\%$  հարաբերական խտության դեպքում: Մնացած երկու տարբերակները՝  $20 \pm 2$  °C ջերմաստիճանում եւ  $65\% \pm 2\%$  հարաբերական խտության դեպքում կամ  $27 \pm 2$  °C ջերմաստիճանում եւ  $65\% \pm 2\%$  հարաբերական խտության դեպքում:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** Միջին արժեքները պետք է լինեն այս միջակայքերում: Այդ արժեքների կարճաժամկետ փափանցումները եւ չափումների սահմանափակ ճշգրտությունը կարող են հանգեցնել նրան, որ ըստ առանձին չափումների արդյունքների՝ հարաբերական խոնավությունը կարող է փոփոխվել  $\pm 5\%$  միջակայքում՝ առանց զգալի վնաս հասցնելու փորձարկումների արդյունքների վերարտադրողականությանը:

6.1.5.2.4. (Նախատեսվում է վերապահում)

6.1.5.2.5. 6.1.4.8-ով նախատեսվող պլաստմասսայից թմբկազլանը եւ

կանխատեսվող եւ, հարկ եղած դեպքում, 6.1.4.19-ով նախատեսվող բարդ փաթեթվածքները (պլաստիկ նյութից) պետք է, ստուգելու համար հեղուկների հետ վերջիններիս բավականաչափ քիմիական համատեղելիությունը, ենթարկվեն պահման վեց ամսվա ընթացքում մթնոլորտային ջերմաստիճանում, ընդ որում, ամբողջ այդ ընթացքում փորձարկվող նմուշները պետք է լցավորված լինեն այն նյութերով, որոնց փոխադրման համար դրանք նախատեսված են:

Պահման առաջին եւ վերջին 24 ժամվա ընթացքում նմուշները պետք է տեղադրված լինեն՝ փականներով դեպի ներքե: Սակայն օդափոխիչ կափույրներով սարքավորված փաթեթվածքները պահվում են այս դիրքում՝ յուրաքանչյուր դեպքում միայն հինգ րոպեով: Նման պահումից հետո փորձարկման նմուշները ենթարկվում են 6.1.5.3 - 6.1.5.6-ով նախատեսվող փորձարկումների:

Եթե հայտնի է, որ այն պլաստմասսայի ամրությունը, որից պատրաստված են բարդ փաթեթվածքների ներքին տարաները (պլաստիկ նյութից), զգալիորեն չի փոփոխվում լցանյութի ազդեցության տակ, ապա անհրաժեշտություն չկա ստուգել, թե արդյոք քիմիական համատեղելիությունը բավականաչափ է:

Ամրության զգալի փոփոխությունը նշանակում է՝

- ա) ակնհայտ փխրունացում
- բ) էլաստիկության զգալի նվազեցում, եթե այն չի ուղեկցվում ոչ պակաս քան բեռնվածության տակ դրա ձգման ավելացմանը համաչափ:

Եթե պլաստմասսայի բնութագրերը սահմանված են այլ ընթացակարգերի միջոցով, ապա վերը նշված համատեղելիության մասով փորձարկումը կարելի է չկատարել: Նման ընթացակարգերը պետք է լինեն առնվազն վերը նշված համատեղելիության մասով փորձարկումներին համարժեք եւ պետք է ընդունված լինեն իրավասու մարմնի կողմից:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** Պլաստմասսայից թմբկազլանների եւ կանխատեսվող եւ, հարկ եղած դեպքում, 6.1.4.19-ով նախատեսվող բարդ փաթեթվածքների (պլաստիկ նյութից) համար տե՛ս նույնպես ստորեւ բերված 6.1.5.2.6:

- 6.1.5.2.6. 6.1.4.8-ում նախատեսվող պոլիէթիլենից թմբկազլանների եւ կանխատեսվող եւ, հարկ եղած դեպքում, 6.1.4.19-ում նախատեսվող պոլիէթիլենից բարդ փաթեթվածքների համար 4.1.1.21-ի համաձայն ստանդարտ հեղուկներին դասված հեղուկ լցանյութերի հետ քիմիական համատեղելիությունը կարող է ստուգվել հեղուկների կիրառմամբ (տե՛ս 6.1.6), ինչպես դա ստորեւ նկարագրված է:

Ստանդարտ հեղուկները բնորոշ կործանարար ազդեցություն ունեն պոլիէթիլենի վրա, քանի որ այն առաջացնում է փափկեցում լարման տակ ուռչելու, ճաքճքելու, մոլեկուլների ճեղքման եւ այդ ներգործությունների տեսակների համակցության դեպքում: Փաթեթվածքի բավականաչափ քիմիական համատեղելիությունը կարող է ստուգվել 40 °C ջերմաստիճանում համապատասխան ստանդարտ հեղուկի (հեղուկների) օգտագործմամբ երեք շաբաթվա ընթացքում պահանջվող փորձարկման նմուշների պահման միջոցով. եթե այդ ստանդարտ հեղուկը ջուրն է, ապա պահումը, տվյալ ընթացակարգի համաձայն, չի պահանջվում: Այն փորձարկման նմուշների պահումը, որոնք օգտագործվում են դարսակման փորձարկման ժամանակ, չի պահանջվում նաեւ «թրջող լուծույթ» եւ «քացախաթթու» ստանդարտ հեղուկների դեպքում:

Պահման առաջին եւ վերջին 24 ժամվա ընթացքում փորձարկման նմուշները պետք է տեղադրված լինեն փականներով դեպի ներքե: Սակայն օդափոխիչ կափույրներով սարքավորված փաթեթվածքը պահվում է այս դիրքում՝ յուրաքանչյուր դեպքում միայն հինգ րոպեով: Նման պահումից հետո փորձարկման նմուշները ենթարկվում են 6.1.5.3 - 6.1.5.6-ով նախատեսվող փորձարկումների:

40%-ից ավելին պերօքսիդի եւ 5.2 դասում ընդգրկված վերքացախաթթվի պարունակությամբ տրետ-բուֆիլի հիդրոպերօքսիդի դեպքում համատեղելիության մասով փորձարկումը չպետք է կատարվի ստանդարտ հեղուկների օգտագործմամբ: Այս նյութերի համար փորձարկման նմուշների բավականաչափ քիմիական համատեղելիությունը պետք է ապացուցվի այն նյութերի հետ մթնոլորտային ջերմաստիճանում վեց ամսվա ընթացքում այն նյութերի հետ դրանց պահման միջոցով, որոնց փոխադրման համար նախատեսված են դրանք:

Սույն կետով նախատեսվող ընթացակարգերի համաձայն անցկացված՝ պոլիէթիլենից փաթեթվածքների փորձարկումների արդյունքները կարող են հաստատվել միեւնույն կառուցվածքի տեսակի փաթեթվածքի համար, որի ներքին մակերեսը մշակված է ֆտորով:

- 6.1.5.2.7. 6.1.5.2.6-ում նշված պոլիէթիլենից փաթեթվածքի համար, որը փորձարկվել է 6.1.5.2.6-ի համաձայն որպես լցանյութեր, կարող են նույնպես հաստատվել այլ նյութեր՝ բացի նրանցից, որոնք դասվել են ստանդարտ հեղուկների դասին՝ 4.1.1.21-ի համաձայն: Նման հաստատումը պետք է հիմնված լինի լաբորատոր փորձարկումների արդյունքների վրա, որոնք հաստատում են, որ փորձանմուշների վրա այդ լցանյութերի ազդեցությունը պակաս կարեւոր է, քան համապատասխան ստանդարտ հեղուկի (հեղուկների) ազդեցությունը՝ հաշվի առնելով փլուզման համապատասխան գործընթացները: Ինչ

վերաբերում է գոլորշիների խտությանը եւ ճնշմանը, ապա տվյալ դեպքում կիրառվում են նույն պայմանները, ինչ 4.1.1.21.2-ով նախատեսվող պայմանները:

6.1.5.2.8. Եթե հայտնի է, որ այն պլաստմասսայի ամրությունը, որից պատրաստված են համակցված փաթեթվածքի ներքին տարաները, զգալիորեն չի փոփոխվում լցանյութի ազդեցության տակ, ապա անհրաժեշտություն չկա ստուգելու, թե արդյոք քիմիական համատեղելիությունը բավականաչափ է, թե ոչ Ամրության զգալի փոփոխությունը նշանակում է՝

ա) Ակնհայտ փխրունացում

բ) Էլաստիկության զգալի նվազեցում, եթե այն չի ուղեկցվում ոչ պակաս քան բեռնվածության տակ դրա ձգման ավելացմանը համաչափ:

**6.1.5.3. Անկման փորձարկումներ<sup>3</sup>**

6.1.5.3.1. *Փորձարկման նմուշների քանակը (կառուցվածքի յուրաքանչյուր տեսակի համար եւ յուրաքանչյուր արտադրողի համար) եւ նմուշի դիրքը անկման ժամանակ*

Բոլոր տեսակի անկումների համար՝ բացառությամբ տափակ կողմով անկումից, ծանրության կենտրոնը պետք է լինի ուղղաձիգ հարվածի կետից բարձր:

Եթե տվյալ անկման մասով փորձարկման համար կարելի է կիրառել հարվածի մի քանի ուղղություններ, ապա անհրաժեշտ է ընտրել այն ուղղությունը, որն առավել բարձր հավանականությամբ կհանգեցնի փաթեթվածքի վնասվելուն:

Փաթեթվածք	Փորձարկման նմուշների քանակը	Նմուշի դիրքի անկման ժամանակ
<p>ա) Պողպատե թմբկազևաններ Ալյումինե թմբկազևաններ Պողպատե եւ ալյումինե թմբկազևաններից բացի, մետաղյա թմբկազևաններ Պողպատե կանխտրներ Ալյումինե կանխտրներ Նրբատախտակից թմբկազևաններ Ֆիբրային թմբկազևաններ Պլաստմասսայից թմբկազևաններ եւ կանխտրներ</p>	<p>Վեց (երեքական՝ յուրաքանչյուր անկման համար)</p>	<p>Առաջին անկումը (օգտագործելով երեք նմուշ)՝ փաթեթվածքը պետք է անկյունագծով խփի փորձարկման հարթակին ակոսվածքով կամ, եթե դա ակոսվածք չունի, ապա օղակաձեւ կարով կամ ծայրով:</p> <p>Երկրորդ անկում (օգտագործելով երեք մնացած նմուշները)՝ փաթեթվածքը պետք է խփի փորձարկման հարթակին պակաս ամուր մասով, որը չի փորձարկվել առաջին անկման ժամանակ, օրինակ՝ փականով կամ, որոշակի կոնաձեւ թմբկազևանների համար, թմբկազևանի հենամարմնի երկայնակի զոդակարով</p>

<sup>3</sup> Տե՛ս ISO 2248 ստանդարտը:

Փաթեթվածք	Փորձարկման նմուշների քանակը	Նմուշի դիրքի անկման ժամանակ
Թմբկազլանի տեսքով բաղադրիչ տարա Թեթե մետաղյա փաթեթվածք		
բ) Բնափայտից արկղեր Նրբատախտակից արկղեր Վերամշակված փայտից արկղեր Փայտաթելքային սալից արկղ Պլաստմասսայից արկղեր Պողպատե կամ ալյումինե արկղեր Արկղի ձեռով բարդ փաթեթվածքներ	Հինգ (մեկական անկում յուրաքանչյուր պարկի համար)	Առաջին անկում՝ հատակին կողմնային մասով Երկրորդ անկում՝ կափարիչին կողմնային մասով Երրորդ անկում՝ հատակին կողմնային մասով Չորրորդ անկում՝ կողմնային մասով Հինգերորդ անկում՝ անկյունով
գ) Պարկեր՝ միաշերտ կողմնային կարով	Երեք (երեք անկում՝ յուրաքանչյուր պարկի համար)	Առաջին անկում՝ կողմնային մասով լայն մասում Երկրորդ անկում՝ կողմնային մասով նեղ մասում Երրորդ անկում՝ պարկի հատակին
դ) Պարկեր՝ միաշերտ առանց կողմնային կարի կամ բազմաշերտ	Երեք (երկու անկում յուրաքանչյուր պարկի համար)	Առաջին անկում՝ կողմնային մասով լայն մասում Երկրորդ անկում՝ պարկի հատակին
ե) Բարդ փաթեթվածքներ (ապակուց, ճենապակուց կամ կերամիկայից)՝ 6.1.3.1 (ա) (ii)-ի համաձայն, «ԲԻԴ/ԱԴԻ» խորհրդանշանով մակնշված, թմբկազլանի կամ արկղի տեսքով	Երեք (մեկական անկում յուրաքանչյուր պարկի համար)	Անկյունագծով ստորին ակոսվածքով, եթե ակոսվածք չկա, ապա օղակաձեռ կարով կամ ստորին ծայրով

#### 6.1.5.3.2. Փորձարկման նմուշներին՝ անկման մասով փորձարկումներին հատուկ նախապատրաստելը

Փորձանմուշի եւ վերջինիս պարունակության ջերմաստիճանը պետք է նվազեցվի մինչեւ  $-18^{\circ}\text{C}$  կամ ցածր հետեւյալ տեսակի փաթեթվածքների համար՝

- ա) պլաստմասսայից թմբկազլաններ (տե՛ս 6.1.4.8).
- բ) պլաստմասսայից կանխտրներ (տե՛ս 6.1.4.8).
- գ) պլաստմասսայից արկղեր՝ բացառությամբ փրփրապլաստից արկղերի (տե՛ս 6.1.4.13).
- դ) բարդ փաթեթվածք (պլաստիկ նյութից) (տե՛ս 6.1.4.19) եւ
- ե) պլաստմասսայից ներքին փաթեթվածքով համակցված փաթեթվածքներ՝ բացառությամբ պինդ նյութերի կամ ապրանքների պահման համար նախատեսվող պլաստմասսայից պարկերի:

Եթե փորձանմուշները պատրաստված են այդ եղանակով, ապա 6.1.5.2.3-ում նախատեսվող պահումը կարելի է չկատարել:

Փորձարկային հեղուկները պետք է պահվեն հեղուկ վիճակում հավելման համար, հարկ եղած դեպքում՝ անտիֆրիզով:

6.1.5.3.3. Հեղուկների համար օգտագործվող հանովի հատակով փաթեթվածքը պետք է ենթարկվի անկման մասով փորձարկման ոչ պակաս, քան 24 ժամ այն լցավորելուց եւ փակելուց հետո՝ հաշվի առնելով խցանիչի հնարավոր ռելաքսացիան:

6.1.5.3.4. Փորձարկման հարթակ

Փորձարկման հարթակը պետք է ունենա ոչ առաձգական եւ հորիզոնական մակերես եւ պետք է լինի՝

- ամբողջական եւ բավականաչափ զանգվածային՝ անշարժ մնալու համար.
- հարթ եւ առանց մակերեսային տեղային թերությունների, որոնք կարող են ազդել փորձարկումների արդյունքների վրա.
- բավականաչափ կոշտ, որպեսզի չդեֆորմանա փորձարկումների անցկացման ժամանակ եւ չվնասվի փորձարկումների ընթացքում. ու
- բավականաչափ մեծ մակերեսով, որպեսզի փորձարկվող փաթեթը ամբողջությամբ ընկնի դրա մակերեսի վրա:

6.1.5.3.5. Անկման բարձրությունը

Պինդ նյութերի եւ հեղուկների համար, եթե փորձարկումը կատարվում է փոխադրման ենթակա պինդ նյութերի կամ հեղուկների հետ կամ հիմնականում միեւնույն ֆիզիկական հատկություններով օժտված այլ նյութերի հետ՝

Փաթեթավորման խումբ I	Փաթեթավորման խումբ II	Փաթեթավորման խումբ III
1.8 մ	1.2 մ	0.8 մ

Առանձին փաթեթվածքներում հեղուկների եւ համակցված փաթեթվածքների ներքին փաթեթվածքների համար, եթե փորձարկումը կատարվում է ջրով՝

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** «Զուր» եզրույթը ներառում է  $-18\text{ }^{\circ}\text{C}$  ջերմաստիճանում անցկացվող փորձարկումների համար 0.95 նվազագույն հարաբերական խտությամբ ջրի մեջ անտիֆրիզի լուծույթ:

ա) եթե փոխադրման ենթակա նյութերն ունեն 1.2-ը չգերազանցող հարաբերական խտություն՝

Փաթեթավորման խումբ I	Փաթեթավորման խումբ II	Փաթեթավորման խումբ III
1.8 մ	1.2 մ	0.8 մ

բ) Երբ փոխադրման ենթակա նյութերն ունեն 1.2-ը գերազանցող հարաբերական խտություն, անկման բարձրությունը պետք է հաշվարկվի հետևյալ կերպ մինչև առաջին տասնորդական նշանը կլորացված՝ փոխադրվող նյութի հարաբերական խտության (d) հիման վրա՝

Փաթեթավորման խումբ I	Փաթեթավորման խումբ II	Փաթեթավորման խումբ III
d x 1.5 (մ)	d x 1.0 (մ)	d x 0.67 (մ)

գ) փոխադրման համար նախատեսվող 6.1.3.1(ա)(ii)-ի համաձայն՝ «ՌԻԴ/ԱԴՌ» խորհրդանշանով մակնշված թեթև մետաղյա փաթեթվածքի համար, որոնց մածուցիկությունը 23 °C ջերմաստիճանում գերազանցում է 200 մմ<sup>2</sup>/վ-ը (համապատասխանում է 30 վայրկյան ժամանակի լրանալուն 6 մմ տրամագծով անցք ունեցող ISO ստանդարտ ձագարի կիրառմամբ ISO 2431:1993 ստանդարտի համաձայն փորձարկումներ անցկացնելիս),

i) եթե նյութի հարաբերական խտությունը չի գերազանցում 1.2-ը՝

Փաթեթավորման խումբ II	Փաթեթավորման խումբ III
0.6 մ	0.4 մ

ii) 1.2-ից բարձր հարաբերական խտություն ունեցող՝ փոխադրման ենթակա նյութերի համար անկման բարձրությունը հաշվարկվում է հետևյալ կերպ՝ մինչև առաջին տասնորդական նշանը կլորացված՝ փոխադրվող նյութի հարաբերական խտության հիման վրա՝

Փաթեթավորման խումբ II	Փաթեթավորման խումբ III
d x 0.5 մ	d x 0.33 մ

6.1.5.3.6. Փորձարկումներն անցնելու չափորոշիչները

6.1.5.3.6.1. Ներքին եւ արտաքին ճնշումների միջեւ հավասարակշռության հաստատումից հետո հեղուկ պարունակող յուրաքանչյուր փաթեթվածք պետք է լինի անջրանցիկ, սակայն 6.1.3.1(ա)(ii)-ի համաձայն «ՌԻԴ/ԱԴՌ» խորհրդանշանով մակնշված համակցված փաթեթվածքների ներքին փաթեթվածքների եւ բարդ փաթեթվածքների ներքին տարաների դեպքում (ապակուց, ճենապակուց կամ կերամիկայից) ճնշումների հավասարակշռությունները չեն պահանջվում:

6.1.5.3.6.2. Երբ պինդ նյութերի համար նախատեսվող փաթեթվածքը



ենթարկվում է անկման մասով փորձարկումների եւ խփվում է փորձարկային հարթակին իր վերին հատվածով, ապա համարվում է, որ նմուշը բարեհաջող անցել է փորձարկումն այն դեպքում, եթե պարունակությունն ամբողջությամբ մնացել է ներքին փաթեթվածքում կամ ներքին տարայում (օրինակ՝ պլաստմասսայից պարկում) նույնիսկ եթե փականը, պահպանելով իր հետ պահող ֆունկցիան, արդեն նյութի համար անթափանցելի չի համարվում:

- 6.1.5.3.6.3. Փաթեթվածքը կամ բարդ կամ համակցված փաթեթվածքի արտաքին փաթեթվածքը չպետք է ունենան վնասվածքներ, որոնք կարող են բացասաբար անդրադառնալ փոխադրման անվտանգության վրա: Չպետք է տեղի ունենա ներքին տարայից (տարաններից) կամ ներքին փաթեթվածքից (փաթեթվածքներից) լցնող նյութի որեւէ արտահոսք:
- 6.1.5.3.6.4. Ոչ պարկի արտաքին շերտը, ոչ էլ արտաքին փաթեթվածքը չպետք է ունենան այնպիսի վնասվածքներ, որոնք բացասաբար կանդրադառնան փոխադրման անվտանգության վրա:
- 6.1.5.3.6.5. Հարվածի դեպքում փականից (փականներից) նյութի աննշան ներթափանցումը համարվում է փաթեթվածքի թերություն՝ պայմանով, որ հետագայում արտահոսք տեղի չի ունենում:
- 6.1.5.3.6.6. Առաջին դասի բեռների համար փաթեթվածքի դեպքում ոչ մի այնպիսի կոտրվածք չի թույլատրվում, որը կարող է հանգեցնել պայթուցիկ նյութերի արտահոսքին կամ արտաքին փաթեթվածքից պայթուցիկ ապրանքների դուրս ընկնելուն:

#### **6.1.5.4. Անջրանցիկության փորձարկումը**

Անջրանցիկության փորձարկման պետք է ենթարկվեն կառուցվածքի բոլոր տեսակի փաթեթվածքները, որոնք նախատեսված են հեղուկների համար: Սակայն այդ փորձարկումը պարտադիր չէ հետեւյալի համար՝

- Համակցված փաթեթվածքների ներքին փաթեթվածքների.
- 6.1.3.1(ա)(ii)-ի համաձայն՝ «ՌԻԴ/ԱԴՌ» խորհրդանշանով մակնշված բարդ փաթեթվածքի ներքին տարանների (ապակուց, ճենապակուց կամ կերամիկայից).
- 6.1.3.1(ա)(ii)-ի համաձայն՝ «ՌԻԴ/ԱԴՌ» խորհրդանշանով մակնշված եւ այնպիսի նյութերի համար նախատեսվող թեթեւ մետաղյա փաթեթվածք, որոնց մածուցիկությունը 23 °C ջերմաստիճանում գերազանցում է 200 մմ<sup>2</sup>/վ-ը:

6.1.5.4.1. *Փորձարկման նմուշների քանակը՝* երեքական փորձարկման նմուշ

կառուցվածքի յուրաքանչյուր տեսակի հաշվով կամ յուրաքանչյուր արտադրողի հաշվով:

6.1.5.4.2. *Նմուշների՝ փորձարկմանը հատուկ նախապատրաստումը՝* կամ բաց թողնող կափույրներով սարքավորված փականները, պետք է փոխարինվեն համանման փականներով, որոնք չունեն նման հարմարանքներ, կամ բաց թողնող կափույրները պետք է հերմետիկ փակ լինեն:

6.1.5.4.3. *Փորձարկման մեթոդը եւ կիրառվող ճնշումը՝* փաթեթվածքը, այդ թվում իր փականները, պահվում է ջրի տակ հինգ րոպե, ընդ որում, այն ենթարկվում է օդի ներքին ճնշմանը: Ջրի տակ նմուշների պահման եղանակը չպետք է ազդի փորձարկումների արդյունքների վրա:

Օդի կիրառվող ճնշումը (մանոմետրական) պետք է լինի հետևյալը՝

Փաթեթավորման խումբ I	Փաթեթավորման խումբ II	Փաթեթավորման խումբ III
30 կՊա-ից ոչ պակաս (0.3 բար)	20 կՊա-ից ոչ պակաս (0.2 բար)	20 կՊա-ից ոչ պակաս (0.2 բար)

Թույլատրվում են նույնպես այլ՝ ոչ պակաս արդյունավետ փորձարկման մեթոդներ:

6.1.5.4.4. *Փորձարկումներն անցնելու չափորոշիչ՝* չպետք է տեղի ունենա ոչ մի արտահոսք:

**6.1.5.5. Ներքին ճնշման (հիդրավլիկ փորձարկումը )**

6.1.5.5.1. *Փորձարկվելիք փաթեթվածքներ*

Ներքին ճնշման (հիդրավլիկ) մասով փորձարկման պետք է ենթարկվեն հեղուկների համար նախատեսվող՝ կառուցվածքի բոլոր տեսակների մետաղյա, պլաստմասսայից եւ բարդ փաթեթվածքները: Այդ փորձարկումը պարտադիր չէ հետևյալի համար՝

- համակցված փաթեթվածքների ներքին փաթեթվածքներ.
- 6.1.3.1(ա)(ii)-ի համաձայն՝ «ՌԻԴ/ԱԴՌ» խորհրդանշանով մակնշված բարդ փաթեթվածքի ներքին տարաներ (ապակուց, ճենապակուց կամ կերամիկայից).
- 6.1.3.1(ա)(ii)-ի համաձայն՝ «"RIDՌԻԴ/ADRԱԴՌ"» խորհրդանշանով մակնշված եւ այնպիսի նյութերի համար նախատեսվող թեթեւ մետաղյա փաթեթվածք, որոնց մածուցիկությունը 23 °C ջերմաստիճանում գերազանցում է 200 մմ<sup>2</sup>/վ-ը:

6.1.5.5.2. *Փորձանմուշների քանակը՝* երեքական նմուշ կառուցվածքի յուրաքանչյուր տեսակի հաշվով կամ յուրաքանչյուր արտադրողի հաշվով:

6.1.5.5.3. Նմուշների՝ փորձարկմանը հասնելու նախապատրաստումը՝ կամ բաց թողնող կափույրներով սարքավորված փականները, պետք է փոխարինվեն համանման փականներով, որոնք չունեն նման հարմարանքներ, կամ բաց թողնող կափույրները պետք է հերմետիկ փակ լինեն:

6.1.5.5.4. Փորձարկման մեթոդը եւ կիրառվող ճնշումը՝ մետաղյա փաթեթվածքները եւ բարդ փաթեթվածքները (ապակուց, ճենապակուց կամ կերամիկայից), այդ թվում նաեւ փականները, պետք է հինգ թուղթի ընթացքում ենթարկվեն փորձարկային ճնշման: Պլաստմասսայից փաթեթվածքը եւ բարդ փաթեթվածքը (պլաստիկ նյութից), այդ թվում նաեւ փականները, պետք է երեսուն թուղթի ընթացքում ենթարկվեն փորձարկային ճնշման: Հենց այդ ճնշումը պետք է ներառվի 6.1.3.1 (դ)-ով նախատեսվող մակնշման մեջ: Փաթեթվածքը պահելու մեթոդը չպետք է ոչ հավաստի դարձնի փորձարկումների արդյունքները: Փորձարկման ընթացքում ճնշումը պետք է կիրառվի անդադար եւ համաչափ: Այն պետք է պահվի մշտական մակարդակում փորձարկման ամբողջ ընթացքում: Ստորեւ բերված մեթոդներից ցանկացածով որոշվող կիրառվող հիդրավլիկ (մանոմետրական) ճնշումը պետք է լինի՝

ա) փաթեթվածքում չափված ընդհանուր մանոմետրական ճնշումից ոչ պակաս (այսինքն՝ լցնող հեղուկի գոլորշիների ճնշման եւ օդի կամ այլ չեզոք գազերի մասնակի ճնշման գումարը՝ հանած 100 կՊա) 55 °C ջերմաստիճանում բազմապատկած 1.5 անվտանգության գործակցով, դրա ընդհանուր մանոմետրական ճնշումը որոշվում է 4.1.1.4-ով նախատեսվող լցավորման առավելագույն աստիճանի եւ 15 °C լցավորման ջերմաստիճանի հիման վրա կամ

բ) 50 °C ջերմաստիճանում ոչ պակաս, քան 1.75 անգամ փոխադրման ենթակա հեղուկի գոլորշիների ճնշումից բարձր՝ հանած 100 կՊա-ն, սակայն 100 կՊա-ից ոչ ցածր կամ

գ) 55 °C ջերմաստիճանում ոչ պակաս, քան 1.5 անգամ փոխադրման ենթակա հեղուկի գոլորշիների ճնշումից բարձր՝ հանած 100 կՊա, սակայն 100 կՊա-ից ոչ ցածր:

6.1.5.5.5. Բացի դրանից՝ փաթեթավորման խմբի հեղուկի համար նախատեսվող փաթեթվածքը պետք է փորձարկվի 250 կՊա նվազագույն (մանոմետրիկ) ճնշման տակ 5 կամ 30 թուղթի ընթացքում՝ պայմանավորված այն նյութով, որից պատրաստված է փաթեթվածքը:

6.1.5.5.6. Փորձարկումներն անցնելու չափորոշիչ՝ չպետք է տեղի ունենա որեւէ արտահոսք:

#### **6.1.5.6. Դարսակման փորձարկումը**

Դարսակման փորձարկմանը պետք է ենթարկվեն կառուցվածքի բոլոր տեսակի փաթեթվածքները (ապակուց, ճենապակուց կամ կերամիկայից)՝ բացառությամբ 6.1.3.1(ա)(ii)-ի համաձայն «ՌԻԴ/ԱԴՌ» խորհրդանշանով մակնշված պարկերի եւ չդարսակվող բարդ փաթեթվածքների:

6.1.5.6.1. *Փորձարկման նմուշների քանակը՝* երեքական նմուշ *կառուցվածքի* յուրաքանչյուր տեսակի համար կամ յուրաքանչյուր արտադրողի համար:

6.1.5.6.2. *Փորձարկման մեթոդ՝* փորձանմուշը ենթարկվում է այն ուժի ազդեցությանը, որը գործադրվում է իր վերին մակերեսին եւ համարժեք է բոլոր այն համանման փաթեթների ընդհանուր քաշին, որոնք փոխադրման ընթացքում կարող են դարսակվել դրա վրա: Եթե փորձանմուշի պարունակությունն այնպիսի հարաբերական խտությամբ հեղուկ է, որը տարբերվում է այն հեղուկի հարաբերական խտությունից, որը փոխադրվելու է, ապա ուժը պետք է հաշվարկվի այդ հեղուկի նկատմամբ: Դարսակի, այդ թվում նաեւ նմուշի նվազագույն բարձրությունը պետք է կազմի 3 մետր: Փորձարկման տեւողությունը կազմում է 24 ժամ, բացառությամբ պլաստմասսայից թմբկազլանների եւ կանխատրների, ինչպես նաեւ հեղուկների փոխադրման համար նախատեսվող 6HH1 եւ 6HH2 տեսակի բարդ փաթեթվածքների, որոնք պետք է 40 °C-ից ցածր ջերմաստիճանում 28 օրվա ընթացքում դարսակման փորձարկման ենթարկվեն:

6.1.5.2.5-ի համաձայն փորձարկումներ անցկացնելիս օգտագործվում է նախնական լցանյութ, 6.1.5.2.6-ի համաձայն փորձարկումներ կատարելիս դարսակման փորձարկման ընթացքում պետք է օգտագործվի ստանդարտ հեղուկ:

6.1.5.6.3. *Փորձարկումներն անցնելու չափորոշիչները՝* ոչ մի նմուշից չպետք է տեղի ունենա արտահոսք: Բարդ կամ համակցված փաթեթվածքները փորձարկելիս ներքին տարայից կամ ներքին փաթեթվածքից չպետք է տեղի ունենա իրենց մեջ պարունակվող նյութի արտահոսք: Ոչ մի փորձանմուշ չպետք է ունենա վնասվածքների նշաններ, որոնք կարող են բացասաբար անդրադառնալ փոխադրման անվտանգության վրա, կամ դեֆորմացման նշաններ, որոնք կարող են նվազեցնել ամրությունը կամ փաթեթների դարսակներում անկայունություն առաջացնել: Մինչեւ փորձարկումների արդյունքները գնահատելը՝ պլաստմասսայից փաթեթվածքը պետք է սառեցվի մինչեւ մթնոլորտային ջերմաստիճանը:

**6.1.5.7. *Բացառությամբ 6HA1 փաթեթվածքի՝  $\leq 60$  °C բռնկման ջերմաստիճանով հեղուկների փոխադրման համար նախատեսվող՝ 6.1.4.8-ով նախատեսվող պլաստմասսայից թմբկազլանների եւ***

**Կանխարկերի ու 6.1.4.19-ով նախատեսվող բարդ փաթեթվածքի (պլաստիկ նյութից) համար թափանցելիության առումով լրացուցիչ փորձարկում**

Պոլիէթիլենային փաթեթվածքը ենթարկվում է այս փորձարկմանը բացառապես այն դեպքում, եթե այն պետք է թույլատրվի բենզոլի, տոլուոլի, քսիլոլի կամ նշված նյութերը պարունակող խառնուրդների եւ պատրաստուկների փոխադրման համար:

- 6.1.5.7.1. Փորձանմուշների քանակը՝ փաթեթվածքի երեքական միավոր՝ կառուցվածքի յուրաքանչյուր տեսակի կամ յուրաքանչյուր արտադրողի հաշվով:
- 6.1.5.7.2. Նմուշների՝ փորձարկումներին հատուկ նախապատրաստումը՝ փորձանմուշները պետք է նախապես պահվեն նախնական լցանյութի հետ 6.1.5.2.5-ի համաձայն կամ պոլիէթիլենից փաթեթվածքի համար՝ 6.1.5.2.6-ի համաձայն հեղուկ ածխաջրածինների ստանդարտ խառնուրդի հետ (սպիտակ սպիրտ):
- 6.1.5.7.3. Փորձարկման մեթոդ՝ այնպիսի նյութով լցավորված փորձանմուշները, որոնց պահման համար դրանք թույլատրվելու են, պետք է կշռվեն մինչեւ 23 °C ջերմաստիճանում 28 օրվա ընթացքում եւ 50% օդի հարաբերական խոնավության դեպքում պահպանումը կամ դրանից հետո: Որպես լցանյութ՝ պոլիէթիլենից փաթեթվածքի փորձարկման դեպքում բենզոլի, տոլուոլի եւ քսիլոլի փոխարեն կարելի է օգտագործել հեղուկ ածխաջրածինների ստանդարտ խառնուրդ (սպիտակ սպիրտ):
- 6.1.5.7.4. Փորձարկումներն անցնելու չափորոշիչ՝ թափանցելիությունը չպետք է գերազանցի 0.008 գ/լ.ժ-ը:

**6.1.5.8. Փորձարկումների արձանագրությունը**

- 6.1.5.8.1. Պետք է կազմվի եւ փաթեթվածքն օգտագործողներին ներկայացվի փորձարկումների արձանագրություն, որը պարունակում է առնվազն հետևյալ տեղեկությունները՝
  1. Փորձարկումներն իրականացրած կազմակերպության անվանումը եւ հասցեն.
  2. Հայտատուի անունը եւ հասցեն (հարկ եղած դեպքում).
  3. Փորձարկումների արձանագրության անհատական համարը.
  4. Փորձարկումների արձանագրության կազմման ամսաթիվը.
  5. Փաթեթվածքն արտադրողը.
  6. Փաթեթվածքի կառուցվածքի տեսակի նկարագրությունը (օրինակ՝ չափսերը, նյութերը, փականները, հաստությունը եւ այլն)՝ ներառյալ պատրաստման եղանակը (օրինակ՝ փչելու միջոցով

ծեավորումը), որը կարող է ներառել գծագիրը(գծագրերը) եւ (կամ) նկարը (նկարները).

7. Առավելագույն տարողությունը.
8. Փորձարկումների ժամանակ օգտագործված պարունակության բնութագրերը, օրինակ՝ հեղուկների համար մածուցիկությունը եւ հարաբերական խտությունն ու պինդ նյութերի համար մասնիկների չափսերը.
9. Փորձարկումների նկարագրությունը եւ արդյունքները.
10. Փորձարկումների արձանագրությունը պետք է ստորագրվի՝ արձանագրությունը ստորագրած անձի ազգանվան եւ պաշտոնի նշմամբ:

6.1.5.8.2. Փորձարկումների արձանագրությունում պետք է լինի հայտարարություն այն մասին, որ փաթեթվածքը, որը պատրաստվել է այնպես, ինչպես կպատրաստվեր փոխադրման համար, փորձարկվել է սույն բաժնին համապատասխան պահանջների համաձայն եւ որ այլ մեթոդների կամ փաթեթի բաղադրիչների կիրառման դեպքում արձանագրությունը կարող է դառնալ անվավեր: Փորձարկումների արձանագրության պատճեն պետք է փոխանցվի իրավասու մարմնին:

**6.1.6. Պոլիէթիլենից փաթեթվածքների, այդ թվում նաեւ ՍՄԿ-ների քիմիական համատեղելիության համար համապատասխանաբար 6.1.5.2.6-ի եւ 6.5.6.3.5-ի համաձայն ստուգման համար ստանդարտ հեղուկները**

6.1.6.1. Այդ պլաստիկ նյութի համար օգտագործվում են հետեւյալ ստանդարտ հեղուկները՝

- ա) **Թրջող լուծույթ՝** այնպիսի նյութերի համար, որոնք բեռնվածության տակ առաջացնում են պոլիէթիլենի ուժեղ ճաքճքվածություն, մասնավորապես, թրջող հավելումներ պարունակող բոլոր լուծույթների եւ պատրաստուկների համար:

Անհրաժեշտ է օգտագործել ակլիլբենզոլսուլֆոնատի 1%-ոց ջրային լուծույթ կամ նոնիլֆենոլէտոքսիլատի 5%-ոց ջրային լուծույթ, որը մինչեւ փորձարկումների ընթացքում առաջին օգտագործումը նախապես պահվել է առնվազն 14 օր 40 °C ջերմաստիճանում: Այդ լուծույթի մակերեսային լարվածությունը պետք է կազմի 31-35 մՆ/մ՝ 23 °C ջերմաստիճանում:

Դարսակման փորձարկման ժամանակ որպես հիմք է ընդունվում 1.20-ից ոչ պակաս հարաբերական խտությունը:

Քացախաթթվի հետ համատեղելիության մասով փորձարկումը չի պահանջվում, եթե ապացուցված է թրջող լուծույթի հետ

բավականաչափ քիմիական համատեղելիությունը:

Լցանյութերի օգտագործման դեպքում, որոնք առաջացնում են թրջող լուծույթի նկատմամբ կայուն պոլիէթիլենի լարվածության տակ ճաքճքվածություն, բավականաչափ քիմիական համատեղելիությունը կարող է հավաստվել 6.1.5.2.6-ի համաձայն 40 °C ջերմաստիճանում երեք շաբաթվա ընթացքում նախնական պահման միջոցով, սակայն նախնական լցանյութի օգտագործմամբ:

- բ) **Քացախաթթու՝** այն նյութերի եւ պատրաստուկների համար, որոնք բեռնվածության տակ առաջացնում են պոլիէթիլենի ճաքճքվածություն, մասնավորապես մոնոկարբոքսիլային թթուների եւ միավալենտ սպիրտների համար:

Անհրաժեշտ է օգտագործել 98-100% կոնցենտրացիայով քացախաթթու:

Հարաբերական խտությունը = 1.05:

Դարսակման փորձարկման ժամանակ որպես հիմք է ընդունվում 1.1-ից ոչ պակաս հարաբերական խտությունը:

Լցանյութերի օգտագործման դեպքում, որոնք առաջացնում են ավելի շատ ուռչում, քան քացախաթթուն եւ այն աստիճանի, որ պոլիէթիլենի զանգվածի ավելացումը կարող է կազմել մինչեւ 4%, բավարար քիմիական համատեղելիությունը կարող է հավաստվել 6.1.5.2.6-ի համաձայն 40 °C ջերմաստիճանում երեք շաբաթվա ընթացքում նախնական պահման միջոցով, սակայն նախնական լցանյութի օգտագործմամբ:

- գ) **Նորմ-բութիլացետատ/նորմ-բութիլացետատ՝ հագեցած թրջող լուծույթ՝** այն նյութերի եւ պատրաստուկների համար, որոնք առաջացնում են պոլիէթիլենի այնպիսի ուռչում, որ պոլիէթիլենի զանգվածի ավելացումը կարող է կազմել մոտավորապես 4% եւ, որոնք միաժամանակ առաջացնում են ճնշման տակ ճաքճքում են, մասնավորապես բույսերի, հեղուկ ներկերի եւ բարդ եթերների մշակման համար նյութերի համար: 6.1.5.2.6-ի համաձայն, նախնական պահման դեպքում անհրաժեշտ է օգտագործել 98-100% կոնցենտրացիայով նորմ-բութիլացետատ:

6.1.5.6-ի համաձայն, դարսակման փորձարկման ժամանակ անհրաժեշտ է օգտագործել փորձարկման համար նախատեսվող՝ վերը նշված (ա) ենթակետի համաձայն 2%-ոց նորմ-բութիլացետատի հետ խառնված 1-10%-ոց ջրային թրջող

լուծույթից բաղկացած հեղուկ:

Դարսակման փորձարկման ժամանակ որպես հիմք է ընդունվում 1.0-ից ոչ պակաս հարաբերական խտությունը:

Այն լցանյութերի օգտագործման դեպքում, որոնք առաջացնում են պոլիէթիլենի ուռչում ավելի, քան նորմ-բութիլենը եւ այնքանով, որ պոլիէթիլենի զանգվածի ավելացումը կարող է կազմել մինչեւ 7.5%, բավարար քիմիական համատեղելիությունը կարող է հավաստվել 6.1.5.2.6-ի համաձայն 40 °C ջերմաստիճանում երեք շաբաթվա ընթացքում նախնական պահման միջոցով, սակայն նախնական լցանյութի օգտագործմամբ:

- դ) **Ածխաջրածինների խառնուրդ (սպիրակ սպիրո)** այնպիսի նյութերի եւ պատրաստուկների համար, որոնք առաջացնում են պոլիէթիլենի ուռչում, մասնավորապես ածխաջրածինների, բարդ եթերների եւ կետոնների համար:

Անհրաժեշտ է օգտագործել 160 °C - 220 °C եռման ջերմաստիճանով, 0.78-0.80 հարաբերական խտությամբ, > 50 °C բռնկման ջերմաստիճանով եւ 16% - 21% արմատիկ նյութերի պարունակությամբ ածխաջրածինների խառնուրդ:

Դարսակման փորձարկման ժամանակ որպես հիմք է ընդունվում 1.0-ից ոչ պակաս հարաբերական խտությունը:

Այն լցանյութերի օգտագործման դեպքում, որոնք առաջացնում են պոլիէթիլենի ուռչում ավելի, քան նորմ-բութիլենը եւ այնքանով, որ պոլիէթիլենի զանգվածի ավելացումը կարող է կազմել մինչեւ 7.5%, բավարար քիմիական համատեղելիությունը կարող է ապացուցվել 6.1.5.2.6-ի համաձայն 40 °C ջերմաստիճանում երեք շաբաթվա ընթացքում նախնական պահման միջոցով, սակայն նախնական լցանյութի օգտագործմամբ:

- ե) **Ազոտաթթու**՝ բոլոր այն նյութերի եւ պատրաստուկների համար, որոնք պոլիէթիլենի վրա թթվեցնող ազդեցություն ունեն եւ առաջացնում են մոլեկուլների քայքայում այնքանով, որքանով 55%-ով ազոտաթթուն կամ պակաս:

Անհրաժեշտ է օգտագործել 55%-ից ոչ պակաս կոնցենտրացիայով ազոտաթթու:

Դարսակման փորձարկման ժամանակ որպես հիմք է ընդունվում 1.4-ից ոչ պակաս հարաբերական խտությունը:

Այն լցանյութերի օգտագործման դեպքում, որոնք թթվեցնող ներգործություն ունեն եւ առաջացնում են մոլեկուլների քայքայում ավելի քան 55%-ոց ազոտաթթուն, փորձարկումները կատարվում են



6.1.5.2.5-ի համաձայն:

Օգտագործման տեղությունը պետք է նման դեպքերում որոշվի՝ հաշվի առնելով վնասվածքի աստիճանը (օրինակ՝ երկու տարի 55%-ից ոչ պակաս կոնցենտրացիայով ազոտաթթվի համար):

- զ) **Ջուր**՝ այն նյութերի համար, որոնք չեն ազդում պոլիէթիլենի վրա (ա)-(ե) ենթակետերում թվարկված դեպքերից եւ ոչ մեկում, մասնավորապես, անօրգանական թթուների եւ մոխրաջրերի համար, ջրային աղի լուծույթների համար, պոլիվալենտային սպիրտների եւ ջրային լուծույթում օրգանական նյութերի համար:

Դարսակման փորձարկման ժամանակ որպես հիմք է ընդունվում 1.2-ից ոչ պակաս հարաբերական խտությունը:

Ջրի օգտագործմամբ կառուցվածքի տեսակի փորձարկում չի պահանջվում, եթե թրջող լուծույթի կամ ազոտաթթվի օգտագործմամբ հավաստված է բավարար չափով քիմիական համատեղելիությունը:

## ԳԼՈՒԽ 6.2

### ՃՆՇՈՒՄԱՅԻՆ ՏԱՐԱ, ԱԵՐՈՋՈՒԱՅԻՆ ՑՈՂԱՑԻՐՆԵՐԻ, ԳԱՋ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ՓՈՔՐ ՏԱՐԱՆԵՐԻ (ԳԱՋԻ ԱՆՈԹՆԵՐԻ) ԵՎ ՀԵՂՈՒԿԱՑՎԱԾ ԴՅՈՒՐԱՎԱՌ ԳԱՋԵՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ՎԱՌԵԼԻՔԱՅԻՆ ԷԼԵՄԵՆՏՆԵՐՈՎ ՔԱՐԹՐԻՋՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** Աերոզոլային ցողացիւրների, գազ պարունակող փոքր փարաների (գազի անոթները) եւ հեղուկացված դյուրավառ գազ պարունակող վառելիքային էլեմենտներով քարթրիջների նկատմամբ 6.2.1-6.2.5-ի պահանջները չեն կիրառվում:

#### 6.2.1. Ընդհանուր պահանջները

##### 6.2.1.1. Նախագծումը եւ պատրաստումը

6.2.1.1.1. Ճնշումային տարաների եւ դրանց փականների նախագծումը, արտադրությունը, փորձարկումը եւ տեխնիկական հագեցվածությունը պետք է հնարավոր դարձնեն դրանց դիմակայումը բոլոր պայմաններին՝ ներառյալ այն ծանրաբեռնվածությունը, որը լինելու է բնականոն փոխադրման եւ օգտագործման պայմաններում:

6.2.1.1.2. (Նախատեսվում է վերապահում)

6.2.1.1.3. Պատի նվազագույն հաստությունը ոչ մի դեպքում չի կարող նախագծման եւ պատրաստման տեխնիկական ստանդարտներում նշված հաստությունից պակաս լինել:

6.2.1.1.4. Զոդված ճնշումային տարաների դեպքում պետք է օգտագործվեն միայն զոդման ենթարկվող մետաղներ:

6.2.1.1.5. Բալոնների, գլանների, ճնշումային թմբկազլանների եւ բալոնների կապուկների փորձարկման ճնշման արժեքը պետք է համապատասխանի 4.1.4.1-ի P200 փաթեթավորման ցուցումներին կամ ճնշման տակ գտնվող քիմիական նյութերի դեպքում՝ 4.1.4.1-ի P206 փաթեթավորման ցուցումներին: Փակ կրիոգեն տարաների փորձարկման ճնշման արժեքը պետք է համապատասխանի 4.1.4.1-ի P203 փաթեթավորման ցուցումներին: Մետաղ-հիդրիդային պահման համակարգի փորձարկման ճնշումը պետք է համապատասխանի 4.1.4.1-ի P205 փաթեթավորման ցուցումներին: Ադսորբացված գազի համար գլանների փորձարկման ճնշման արժեքը պետք է համապատասխանի 4.1.4.1-ի P208 փաթեթավորման ցուցումներին:

6.2.1.1.6. Կապուկների մեջ հավաքված ճնշումային տարաները պետք է ունենան կառուցվածքային ամրություն եւ դրանք պետք է միացված լինեն որպես մեկ ամբողջություն: Ճնշումային տարաները պետք է այնպես

ամրացվեն, որ հնարավոր լինի խուսափել դրանց կառուցվածքում ցանկացած տեղաշարժից եւ այնպիսի տեղաշարժից, որը կհանգեցնի վտանգավոր ճնշումների կուտակմանը: Բաշխիչ կոլեկտորներն (օրինակ՝ կոլեկտոր, կափույրներ եւ մանոմետրեր) այնպես պետք է նախագծված եւ պատրաստված լինեն, որ պաշտպանված լինեն հարվածների հետեւանքով վնասվելուց եւ ուժերից, որոնք հանդիպում են փոխադրման ժամանակ: Կոլեկտորների փորձարկման ճնշումը պետք է առնվազն համընկնի բալոնների փորձարկման ճնշմանը: Թունավոր հեղուկացված գազերի դեպքում յուրաքանչյուր ճնշումային տարա պետք է ապահովված լինի մեկուսացնող կափույրով՝ ապահովելու համար, որ յուրաքանչյուր ճնշումային տարա հնարավոր լինի լցնել առանձին, եւ որ փոխադրման ժամանակ տարբեր ճնշումային տարաների պարունակությունը չխառնվի:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** Թունավոր հեղուկացված գազերի դասակարգման ծածկագրերն են՝ 2T, 2TF, 2TC, 2TO, 2TFC կամ 2TOC:

6.2.1.1.7. Պետք է խուսափել իրարից տարբերվող մետաղների շփումից, որը կարող է հանգեցնել գալվանական ազդեցությամբ առաջացող վնասներին:

6.2.1.1.8. *Ստեղծված հեղուկացված գազերի համար փակ կրիոգեն տարաների պատրաստմանը ներկայացվող հավելյալ պահանջները*

6.2.1.1.8.1. Յուրաքանչյուր ճնշումային տարայի համար սահմանվում են օգտագործվող մետաղի մեխանիկական պարամետրերը, այդ թվում՝ հարվածի ամրության եւ ճկվածքի գործակիցը:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** Հարվածի ամրության մասով 6.8.5.3-ում նշվում են փորձարկմանը ներկայացվող այն պահանջները, որոնք կարող են օգտագործվել:

6.2.1.1.8.2. Ծնշումային տարաները պետք է ջերմամեկուսիչ լինեն: Ջերմամեկուսացումը պետք է պաշտպանված լինի պատյանով: Եթե ճնշումային տարայի եւ պատյանի միջեւ տարածության օդը հեռացված է (վակուումային մեկուսացում), ապա պատյանը պետք է այնպես նախագծված լինի, որ առանց մնացորդային դեֆորմացիայի դիմակայի ընդունված տեխնիկական կանոնների համաձայն հաշվարկված առնվազն 100 կՊա (1 բար) արտաքին ճնշմանը կամ 200 կՊա-ից ոչ պակաս (2 բար) հաշվարկված կրիտիկական քայքայող ճնշմանը (մանոմետրական ճնշում): Եթե պատյանն այնքան մոտ է, որ անգազանցիկ է (օրինակ՝ վակուումային մեկուսացման դեպքում), ապա օգտագործվում է մի սարք՝ ճնշումային տարայի եւ դրա կցամասերում անբավարար

անգազանցիկության դեպքում մեկուսացնող շերտում գոյացող վտանգավոր ճնշումները կանխելու համար: Սարքը պետք է կանխի խոնավության ներթափանցումը մեկուսանյութի մեջ:

6.2.1.1.8.3. Փակ կրիոգեն այն տարաները, որոնք նախատեսված են այն սառեցված հեղուկացված գազերի փոխադրման համար, որոնց եռման աստիճանը մթնոլորտային ճնշման պայմաններում 182 °C-ից ցածր է, չեն ընդգրկում այնպիսի նյութեր, որոնք վտանգավոր ռեակցիայի մեջ են մտնում թթվածնի կամ թթվածնով հագեցված մթնոլորտներում՝ ջերմամեկուսացման այն հատվածում գտնվելու դեպքում, որտեղ կա թթվածնի կամ թթվածնով հագեցած հեղուկների հետ շփվելու ռիսկ:

6.2.1.1.8.4. Փակ կրիոգեն տարաները նախագծվում եւ պատրաստվում են բարձրացման եւ ամրակապման համապատասխան հարմարանքներով:

6.2.1.1.9. *Ացետիլենի համար նախատեսված՝ ճնշումային տարաների պատրաստմանը ներկայացվող հավելյալ պահանջներ*

ՄԱԿ-ի նշագրման 1001 համարի լուծված ացետիլենի եւ ՄԱԿ-ի նշագրման 3374 համարի առանց լուծիչների ացետիլենի դեպքում ճնշումային տարաները պետք է լցվեն հավասարապես բաշխված ծակոտկեն նյութով, որը համապատասխանում է իրավասու մարմնի կողմից ճանաչված ստանդարտով կամ տեխնիկական կանոններով սահմանված պահանջներին ու փորձարկմանը, եւ որը՝

ա) համատեղելի է ճնշումային տարայի հետ եւ ացետիլենի կամ լուծիչի հետ (ՄԱԿ-ի նշագրման 1001 համարի դեպքում) վնասակար կամ վտանգավոր միացություններ չի կազմում եւ

բ) կարող է կանխել ացետիլենի տարրալուծված մասնիկների թափանցումը ծակոտկեն նյութի մեջ:

ՄԱԿ-ի նշագրման 1001 համարի դեպքում լուծիչը պետք է համատեղելի լինի ճնշումային տարայի հետ:

## 6.2.1.2. **Նյութեր**

6.2.1.2.1. Ճնշումային տարաների եւ դրանց փականների պատրաստման համար օգտագործվող նյութերի վրա, որոնք անմիջական շփման մեջ են վտանգավոր բեռների հետ, չպետք է ազդեն փոխադրման ենթակա վտանգավոր նյութերը, կամ դրանք չպետք է թուլանան նմանատիպ փոխազդեցության հետեւանքով, եւ չպետք է վտանգավոր ազդեցության պատճառ դառնան, օրինակ՝ նպաստեն ռեակցիայի առաջացմանը կամ

ռեակցիայի մեջ մտնեն վտանգավոր բեռների հետ:

6.2.1.2.2. Ճնշումային տարաները եւ դրանց փականները պետք է պատրաստված լինեն նախագծման եւ պատրաստման տեխնիկական ստանդարտներում եւ ճնշումային տարայով փոխադրման համար նախատեսված նյութերի փաթեթավորման կիրառելի ցուցումներում նշված նյութերից: Նյութերը պետք է դիմակայեն փխրուն կոտրվածքին եւ լարվածության տակ կոռոզիոն ճաքերի գոյացմանը, ինչպես նշված է նախագծման եւ պատրաստման տեխնիկական ստանդարտներում:

### **6.2.1.3. Օժանդակ սարքավորում**

6.2.1.3.1. Ճնշման ենթարկվող կափույրները, խողովակաշարերը եւ մյուս կցամասերը՝ բացառությամբ ճնշումը նվազեցնող սարքերի, պետք է նախագծվեն եւ պատրաստվեն այնպես, որ կարողանան դիմանալ ճնշումային տարայի փորձարկման ճնշումը 1.5 անգամ գերազանցող պայթման ճնշմանը:

6.2.1.3.2. Օժանդակ սարքավորումները պետք է կազմաձեւված կամ նախագծված լինեն այնպես, որ կանխվի ցանկացած այնպիսի վնաս, որը կարող է հանգեցնել փոխադրման նորմալ պայմաններում ճնշումային տարայի պարունակության արտահոսքին: Այն բաշխիչ խողովակաշարերը, որոնք տանում են դեպի փակիչ կափույրներ, պետք է լինեն բավական ճկուն՝ կափույրները եւ խողովակաշարը դեֆորմացվելուց կամ ճնշումային տարայի պարունակության արտահոսքը կանխելու համար: Պետք է հնարավոր լինի պաշտպանելու լցավորման եւ դատարկման կափույրները եւ խցափակիչները ոչ միտումնավոր բացելուց: Կափույրները պետք է պաշտպանված լինեն՝ 4.1.6.8-ի համաձայն:

6.2.1.3.3. Ճնշումային այն տարաները, որոնք հնարավոր չէ տեղաշարժել ձեռքով կամ գլորել, պետք է ապահովված լինեն սարքերով (սահուղի, օղակներ, ամրակներ)՝ ապահովելու համար, որ դրանք կարող են հեշտությամբ տեղաշարժվել մեխանիկական միջոցներով եւ այնպես, որ չվնասվի ճնշումային տարայի ամրությունը կամ դրանում անհարկի ճնշումներ չառաջանան:

6.2.1.3.4. Ճնշումային տարաները պետք է ապահովված լինեն ճնշումը նվազեցնող սարքերով, ինչպես սահմանված է 4.1.4.1-ի կամ 6.2.1.3.6.4-ի եւ 6.2.1.3.6.5-ի փաթեթավորման մասին P200 (2) կամ P205 դրույթում: Ճնշումը նվազեցնող սարքերը պետք է այնպես նախագծվեն, որ կանխվի անցանկալի խառնուրդների ներթափանցումը, գազի արտահոսքը եւ ցանկացած վտանգավոր հավելյալ ճնշման գոյացումը: Դյուրավառ գազով լցված ճնշումային տարաներում տեղադրվելու դեպքում ճնշումը նվազեցնող սարքերը պետք է կարողանան գազն այնպես օդ արտանետել, որ փոխադրման բնականոն պայմաններում կանխվի արտանետվող գազի ներթափանցումը ճնշումային տարաներ:

- 6.2.1.3.5. Ճնշումային այն տարաները, որոնց լցավորման աստիճանը չափվում է ծավալով, պետք է ապահովված լինեն մակարդակի ցուցիչով:
- 6.2.1.3.6. *Փակ կրիոգեն տարաներին ներկայացվող հավելյալ պահանջներ*
- 6.2.1.3.6.1. Դյուրավառ սառեցված հեղուկացված գազերի փոխադրման համար օգտագործվող փակ կրիոգեն տարայում լցավորման եւ դատարկման համար նախատեսված յուրաքանչյուր բացվածք պետք է ապահովված լինի առնվազն երկու իրարից անկախ անջատման սարքերով, որոնցից առաջինը պետք է լինի կասեցման կափույր, իսկ երկրորդը՝ թասակ կամ նմանատիպ սարք:
- 6.2.1.3.6.2. Խողովակաշարերի այն հատվածների համար, որոնք կարող են փակվել երկու կողմերից, եւ որտեղ հեղուկ նյութի հոսքը կարող է կանխվել, պետք է լինի ճնշման ավտոմատ նվազեցման մեթոդ՝ խողովակաշարում հավելյալ ճնշման կուտակումը կանխելու նպատակով:
- 6.2.1.3.6.3. Փակ կրիոգեն տարայի յուրաքանչյուր կցախողովակ պետք է հստակ մակնշված լինի՝ դրա գործառույթը նշելու համար (օրինակ՝ գոլորշի կամ գազային ֆազ):
- 6.2.1.3.6.4. Ճնշումը նվազեցնող սարքեր
- 6.2.1.3.6.4.1. Յուրաքանչյուր փակ կրիոգեն տարա պետք է ապահովված լինի ճնշումը նվազեցնող առնվազն մեկ սարքով: Ճնշումը նվազեցնող սարքը պետք է լինի այնպիսին, որ կարողանա դիմակայել դինամիկ ուժերին, այդ թվում՝ հեղուկի ալիքի հարվածին:
- 6.2.1.3.6.4.2. Բացի դրանից՝ փակ կրիոգեն տարաները կարող են ունենալ մեմբրան, որը պետք է տեղադրված լինի զսպանակած սարքավորմանը (սարքավորումներին) զուգահեռ՝ 6.2.1.3.6.5-ի պահանջները բավարարելու համար:
- 6.2.1.3.6.4.3. Ճնշումը նվազեցնող սարքերի խողովակապտուկների չափսը պետք է այնպիսին լինի, որ հնարավոր դարձնի անհրաժեշտ արտանետվող գոլորշու կամ գազերի անարգել հոսքը դեպի ճնշումը նվազեցնող սարք:
- 6.2.1.3.6.4.4. Ճնշումը նվազեցնող սարքի ներթողման բոլոր բացվածքները, առավելագույն լցման պայմաններում, պետք է տեղադրված լինեն փակ կրիոգեն տարայի՝ գոլորշի պարունակող տարածությունում, իսկ սարքերը պետք է այնպես տեղադրված լինեն, որ ապահովվի գոլորշու անարգել արտահոսքը:
- 6.2.1.3.6.5. Ճնշումը նվազեցնող սարքերի թողունակությունը եւ կարգավորումը
- ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** Փակ կրիոգեն տարաների՝ ճնշումը նվազեցնող սարքերի մասով առավելագույն թույլատրելի

*աշխատանքային ճնշումը (ԱԹԱՃ) նշանակում է առավելագույն մանոմետրական ճնշումը, որը թույլատրելի է աշխատանքային վիճակում գտնվող բեռնված փակ կրիոգեն տարայի վերելի հատվածում, այդ թվում՝ առավելագույն արդյունավետ ճնշումը լցավորելու եւ դատարկելու ընթացքում:*

- 6.2.1.3.6.5.1. Ճնշումը նվազեցնող սարքն ինքնաբերաբար կբացվի առավելագույն թույլատրելի աշխատանքային ճնշումից (ԱԹԱՃ) ոչ պակաս ճնշման տակ եւ ամբողջապես բացված կլինի առավելագույն թույլատրելի աշխատանքային ճնշման (ԱԹԱՃ) 110%-ին հավասար ճնշման տակ: Դատարկումից հետո այն պետք է փակվի դատարկման մեկնարկի պահին առկա ճնշման 10%-ից ոչ ցածր արժեքով ճնշման պայմաններում եւ պետք է փակ մնա բոլոր ավելի ցածր արժեք ունեցող ճնշումների դեպքում:
- 6.2.1.3.6.5.2. Խզվող մեմբրանը պետք է այնպես տեղադրվի, որ պատռվի նոմինալ ճնշման տակ, որը ցածր է կամ փորձարկման ճնշումից, կամ առավելագույն թույլատրելի աշխատանքային ճնշման (ԱԹԱՃ) 150%-ից:
- 6.2.1.3.6.5.3. Վակուումով մեկուսացված փակ կրիոգեն տարայում վակուումի կորստի դեպքում, տեղադրված բոլոր ճնշումը նվազեցնող սարքերի համակցված կարողությունը պետք է բավարար լինի, որպեսզի փակ կրիոգեն տարայի ներսում ճնշումը (ներառյալ կուտակումը) չգերազանցի առավելագույն թույլատրելի աշխատանքային ճնշման (ԱԹԱՃ) 120%-ը:
- 6.2.1.3.6.5.4. Ճնշումը նվազեցնող սարքերի պահանջվող հզորությունը պետք է հաշվարկվի սահմանված տեխնիկական կանոնների համաձայն, որոնք ճանաչվել են իրավասու մարմնի կողմից<sup>1</sup>:

#### **6.2.1.4. *Ճնշումային տարաների հաստատումը***

- 6.2.1.4.1. Ճնշումային տարաների համապատասխանությունը պետք է գնահատվի արտադրման պահին, ինչպես պահանջվում է իրավասու մարմնի կողմից: Ճնշումային տարաները պետք է ստուգվեն, փորձարկվեն եւ հաստատվեն ստուգող մարմնի կողմից: Տեխնիկական փաստաթղթերը պետք է ներառեն նախագծման եւ պատրաստման վերաբերյալ ամբողջական մասնագրեր, ինչպես նաեւ արտադրման ու փորձարկման ամբողջական փաստաթղթերը:

---

<sup>1</sup> Օրինակների համար տե՛ս ՍԳԱ հրատարակումները՝ S-1.2-2003 «Ճնշումը նվազեցնող սարքերի ստանդարտներ. Մաս 2. «Բեռնատար եւ շարժական ցիստերնաներ՝ սեղմված գազերի համար» եւ S-1.1-2003 «Ճնշումը նվազեցնող սարքերի ստանդարտներ. Մաս 1.Սեղմված գազերի համար բաղուններ»:

6.2.1.4.2. Որակի ապահովման համակարգերը պետք է համապատասխանեն իրավասու մարմնի պահանջներին:

**6.2.1.5. Նախնական ստուգումը եւ փորձարկումը**

6.2.1.5.1. Նոր ճնշումային տարաները, բացառությամբ փակ կրիոգեն տարաների եւ մետաղ-հիդրիդային պահման համակարգերի, պետք է արտադրման ժամանակ ու դրանից հետո ենթարկվեն փորձարկման եւ զննման՝ կիրառելի նախագծման ստանդարտների համաձայն՝ ներառելով հետեւյալը

ճնշումային տարաների բավարար չափով ընտրանքի վրա՝

- ա) տարաների պատրաստման համար օգտագործվող նյութերի մեխանիկական հատկությունների փորձարկում:
- բ) պատի նվազագույն հաստության ստուգում:
- գ) արտադրության յուրաքանչյուր խմբաքանակի համար պահանջվող նյութի միատարրության ստուգում,
- դ) ճնշումային տարաների արտաքին եւ ներքին պայմանների ստուգում,
- ե) բկանցքի պարուրակի ստուգում,
- զ) նախագծման ստանդարտներին համապատասխանության ստուգում,

Բոլոր ճնշումային տարաների համար՝

- է) հիդրավլիկ ճնշման փորձարկում: Ճնշումային տարաները պետք է բավարարեն նախագծման եւ պատրաստման ստանդարտով կամ տեխնիկական կանոններով սահմանված թույլատրելի չափանիշներին,

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** *Իրավասու մարմնի համաձայնությամբ՝ հիդրավլիկ ճնշման փորձարկումը կարող է փոխարինվել փորձարկմամբ, որի ժամանակ զազ է օգտագործվում, եթե այդպիսի գործողությունը չի հանգեցնում որեւէ վրանգի:*

- ը) արտադրական թերությունների ստուգումն ու գնահատումը եւ կամ դրանց վերանորոգումը կամ ճնշումային տարաները շահագործման համար ոչ պիտանի դարձնելը: Եռակցված ճնշումային տարաների դեպքում հատուկ ուշադրություն պետք է դարձնել զոդման որակին,
- թ) ճնշումային տարաների վրայի մակնշումների զննումը,
- ժ) բացի դրանից՝ ՄԱԿ-ի նշագրման 1001 համարի լուծված ացետիլենի եւ ՄԱԿ-ի նշագրման 3374 համարի առանց լուծիչների



ացետիլենի համար նախատեսված ճնշումային տարաները պետք է ստուգվեն՝ ապահովելու համար ճիշտ փոխադրումն ու ծակոտկեն նյութի պատշաճ վիճակը եւ, անհրաժեշտության դեպքում՝ լուծիչի քանակությունը:

- 6.2.1.5.2. 6.2.1.5.1 (ա), (բ), (դ), եւ (զ)-ում նշված ստուգումներն ու փորձարկումները պետք է անցկացվեն փակ կրիոգեն տարաների բավարար չափով ընտրանքի վրա: Բացի դրանից՝ եռակցումները պետք է ստուգվեն ճառագայթագրային, ուլտրաձայնային կամ այլ հարմար ոչ-քայքայիչ փորձարկման մեթոդով փակ կրիոգեն տարաների նմուշների վրա՝ կիրառելի նախագծման եւ պատրաստման ստանդարտներին համապատասխան: Եռակցման այս զննումը չի տարածվում պատյանի վրա:

Բացի դրանից՝ բոլոր փակ կրիոգեն տարաները պետք է ենթարկվեն 6.2.1.5.1 (է), (ը) եւ (թ)-ում նշված նախնական ստուգումներին եւ փորձարկումներին, ինչպես նաեւ անջրանցիկության փորձարկմանն ու հավաքակցումից հետո օժանդակ սարքավորման բավարար շահագործման փորձարկմանը:

- 6.2.1.5.3. Մետաղ-հիդրիդային պահման համակարգի դեպքում պետք է հավաստիանալ, որ 6.2.1.5.1 (ա), (բ), (զ), (դ), (ե)-ում նշված զննումներն ու փորձարկումները, եթե կիրառելի են, (զ), (է), (ը) եւ (թ) կատարվել են մետաղ-հիդրիդային պահման համակարգում օգտագործվող բավարար չափով տարաների վրա: Բացի դրանից՝ մետաղ-հիդրիդային պահման համակարգում օգտագործվող բավարար չափով տարաների վրա պետք է իրականացվեն 6.2.1.5.1 (զ) եւ (զ)-ում նշված զննումներն ու փորձարկումները, ինչպես նաեւ 6.2.1.5.1 (ե)-ում նշված զննումներն ու փորձարկումները՝ եթե կիրառելի են, ինչպես նաեւ մետաղ-հիդրիդային պահման համակարգի արտաքին պայմանների զննումը:

Բացի դրանից՝ բոլոր մետաղ-հիդրիդային պահման համակարգերը պետք է ենթարկվեն 6.2.1.5.1 (ը) եւ (թ)-ում նշված նախնական ստուգումներին եւ փորձարկումներին, ինչպես նաեւ անջրանցիկության փորձարկման եւ օժանդակ սարքավորման բավարար շահագործման փորձարկման:

#### **6.2.1.6. Պարբերական ստուգումը եւ փորձարկումը**

- 6.2.1.6.1. Վերալցավորվող ճնշումային տարաները, բացի կրիոգեն տարաներից, պետք է ենթարկվեն պարբերական զննումների եւ փորձարկումների իրավասու մարմնի կողմից լիազորված մարմնի կողմից՝ համաձայն հետեւյալի.

ա) ճնշումային տարաների արտաքին պայմանների ստուգում եւ

սարքավորումների ու արտաքին մակնշումների համապատասխանության հավաստում,

- բ) ճնշումային տարաների ներքին պայմանների ստուգում (օրինակ՝ ներքին զննում, պատի նվազագույն հաստության հավաստիացում),
- գ) պարուրակների ստուգում, եթե կան կոռոզիայի հատկանիշներ կամ եթե կցամասերը հեռացված են,
- դ) ճնշման տակ հիդրավլիկ փորձարկում եւ, անհրաժեշտության դեպքում, համապատասխան փորձարկումների միջոցով նյութի հատկանիշների հավաստումը,
- ե) օժանդակ սարքավորումների, այլ հարմարանքների եւ ճնշումը նվազեցնող սարքերի ստուգում, եթե դրանք պետք է վերադարձվեն շահագործման:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1.** Իրավասու մարմնի համաձայնությամբ՝ հիդրավլիկ ճնշման փակ փորձարկումը կարող է փոխարինվել գազի օգտագործումով փորձարկմամբ, եթե այդպիսի գործողությունը չի հանգեցնում որեւէ վրանգի:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2.** Իրավասու մարմնի համաձայնությամբ, բալոնների կամ գլանների հիդրավլիկ ճնշման փակ փորձարկումը կարող է փոխարինվել համարժեք մեթոդով՝ հիմնված ձայնային փորձարկման կամ ձայնային ու ուլտրաձայնային զննման համակցության վրա: ISO 16148:2006-ը կարող է օգտագործվել որպես ուղեցույց՝ ձայնային փորձարկման ընթացակարգերի համար:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3.** Հիդրավլիկ ճնշափորձարկումը կարող է փոխարինվել ձայնային զննմամբ, որն իրականացվում է ամբողջաձիգ այլումինե համաձուլվածքով գազի բալոնների համար նախատեսված ISO 10461:2005+A1:2006-ին եւ ամբողջաձիգ պողպատյա գազի բալոնների համար նախատեսված ISO 6406:2005-ին համապատասխան:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 4.** Պարբերական զննումների եւ փորձարկումների հաճախականության համար տե՛ս փաթեթավորման P200 ցուցումը՝ 4.1.4.1-ում, կամ ճնշման փակ գտնվող քիմիական նյութերի դեպքում P206 ցուցումը՝ 4.1.4.1-ում:

- 6.2.1.6.2. ՄԱԿ-ի նշագրման 1001 համարի լուծված ացետիլենի եւ ՄԱԿ-ի նշագրման 3374 համարի առանց լուծիչների ացետիլենի փոխադրման համար նախատեսված ճնշումային տարաները պետք է զննվեն միայն 6.2.1.6.1 (ա), (գ) եւ (ե)-ով սահմանվածի համաձայն: Բացի դրանից՝ պետք է զննվի ծակոտկեն նյութի վիճակը (օրինակ՝ ճաքերը, բացակի

անկյունը, թուլացումը, նստվածքը):

6.2.1.6.3. Կրիոգեն փակ տարաների դեպքում ճնշումը նվազեցնող փականները պետք է ենթարկվեն պարբերական ստուգումների եւ փորձարկումների:

#### **6.2.1.7. Արտադրողներին ներկայացվող պահանջները**

6.2.1.7.1. Արտադրողը պետք է ունենա համապատասխան տեխնիկական կարողություններ եւ պետք է տիրապետի ճնշումային տարաների պատշաճ արտադրության համար պահանջվող բոլոր միջոցներին (սա մասնավորապես վերաբերում է որակավորված անձնակազմին), որպեսզի՝

ա) վերահսկի արտադրության ամբողջ գործընթացը,

բ) իրականացնի նյութերի միացման աշխատանքները, եւ

գ) կատարի համապատասխան փորձարկումներ:

6.2.1.7.2. Արտադրողի որակավորման թեստավորումը պետք է բոլոր դեպքերում իրականացվի հաստատման երկրի իրավասու մարմնի կողմից լիազորված ստուգող մարմնի կողմից:

#### **6.2.1.8. Ստուգող մարմիններին ներկայացվող պահանջները**

6.2.1.8.1. Ստուգող մարմինները պետք է անկախ լինեն արտադրող ձեռնարկություններից եւ իրավասու՝ իրականացնելու համար պահանջվող փորձարկումները, ստուգումներն ու հաստատումները:

#### **6.2.2. ՄԱԿ-ի՝ ճնշումային տարաներին ներկայացվող պահանջները**

Ի լրումն 6.2.1-ի ընդհանուր պահանջների՝ ՄԱԿ-ի՝ ճնշումային տարաները պետք է համապատասխանեն այս բաժնի պահանջներին՝ ներառյալ ստանդարտներին, եթե կիրառելի են: Նոր ճնշումային տարաների կամ օժանդակ սարքավորումների պատրաստումը 6.2.2.1-ի եւ 6.2.2.3-ի կոնկրետ ստանդարտի համաձայն չի թույլատրվում աղյուսակի աջ կողմում նշված ժամկետից հետո:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1.** ՄԱԿ-ի նշագրման ճնշումային տարաները եւ օժանդակ սարքավորումները, որոնք պատրաստվել են պատրաստման օրվա դրությամբ կիրառելի ստանդարտների համաձայն, կարող են շարունակել օգտագործվել՝ ենթարկվելով «ԱԴՌ» համաձայնագրի դրույթներով սահմանված պարբերական ստուգման:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2.** Երբ առկա են հետեւյալ ISO ստանդարտների EN ISO տարբերակներ, դրանք կարող են օգտագործվել 6.2.2.1-ի, 6.2.2.2-ի, 6.2.2.3-ի եւ 6.2.2.4-ի պահանջները կատարելու համար:

**6.2.2.1. Նախագծումը, պատրաստումը եւ նախնական ստուգումն ու փորձարկումը**

6.2.2.1.1. Հետեւյալ ստանդարտները կիրառելի են ՄԱԿ-ի նշագրման բալոնների նախագծման, պատրաստման եւ նախնական ստուգման ու փորձարկման համար, սակայն համապատասխանության գնահատման համակարգի եւ հաստատման պահանջները պետք է համապատասխանեն 6.2.2.5-ի պահանջներին:

Հղում	Անվանում	Պատրաստման համար կիրառելի
ISO 9809-1:1999	Գազի բալոններ. Վերալցավորվող ամբողջաձիգ պողպատյա գազի բալոններ. Նախագծում, պատրաստում ու փորձարկում. Մաս 1՝ Նվազագույնը 1 100 ՄՊա ձգման ամրություն ունեցող մխված եւ մխամեղմված պողպատյա բալոններ: <i><b>ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.</b> F գործակցին (փոխակերպման գործակիցը) վերաբերող ծանոթագրությունն այս ստանդարտի 7.3 բաժնում կիրառելի չէ ՄԱԿ-ի բալոնների համար:</i>	Մինչեւ 2018 թվականի դեկտեմբերի 31-ը
ISO 9809-1:2010	Գազի բալոններ. Վերալցավորվող ամբողջաձիգ պողպատյա գազի բալոններ. Նախագծում, պատրաստում ու փորձարկում. Մաս 1՝ Նվազագույնը 1 100 ՄՊա ձգման ամրություն ունեցող մխված եւ մխամեղմված պողպատյա բալոններ:	Հետագայում հայտագիրը ներկայացնելու դեպքում
ISO 9809-2:2000	Գազի բալոններ. Վերալցավորվող ամբողջաձիգ պողպատյա գազի բալոններ. Նախագծում, պատրաստում ու փորձարկում. Մաս 2՝ 1 100 ՄՊա-ին հավասար կամ ավելի ձգման ամրություն ունեցող մխված եւ մխամեղմված պողպատյա բալոններ:	Մինչեւ 2018 թվականի դեկտեմբերի 31-ը
ISO 9809-2:2010	Գազի բալոններ. Վերալցավորվող ամբողջաձիգ պողպատյա գազի բալոններ. Նախագծում, պատրաստում ու փորձարկում. Մաս 2՝ 1 100 ՄՊա-ին հավասար կամ ավելի ձգման ամրություն ունեցող մխված եւ մխամեղմված պողպատյա բալոններ:	Հետագայում հայտագիրը ներկայացնելու դեպքում
ISO 9809-3:2000	Գազի բալոններ. Վերալցավորվող ամբողջաձիգ պողպատյա գազի բալոններ. Նախագծում, պատրաստում ու փորձարկում. Մաս 3՝ Նորմալացված պողպատյա բալոններ	Մինչեւ 2018 թվականի դեկտեմբերի 31-ը
ISO 9809-3:2010	Գազի բալոններ. Վերալցավորվող ամբողջաձիգ պողպատյա գազի բալոններ. Նախագծում, պատրաստում ու փորձարկում. Մաս 3՝ Նորմալացված պողպատյա բալոններ	Հետագայում հայտագիրը ներկայացնելու դեպքում
ISO 9809-4:2014	Գազի բալոններ. Վերալցավորվող ամբողջաձիգ պողպատյա գազի բալոններ. Նախագծում, պատրաստում ու փորձարկում. Մաս 4՝ չճանգոտվող պողպատից բալոններ, Rm-ի՝ 1 100 ՄՊա-ից ցածր արժեքով	Հետագայում հայտագիրը ներկայացնելու դեպքում
ISO 7866:1999	Գազի բալոններ. Վերալցավորվող ամբողջաձիգ այլումինե համաձուլվածքով գազի բալոններ. Նախագծում, պատրաստում եւ փորձարկում <i><b>ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.</b> F գործակցին (փոխակերպման գործակիցը) վերաբերող ծանոթագրությունն այս ստանդարտի 7.2 բաժնում կիրառելի չէ ՄԱԿ-ի բալոնների համար: 6351A -T6 այլումինե համաձուլվածքը կամ դրան համարժեք համաձուլվածքը չպետք է թույլատրվի:</i>	Մինչեւ 2020 թվականի դեկտեմբերի 31-ը
ISO 7866: 2012 + Cor 1:2014	Գազի բալոններ. Վերալցավորվող ամբողջաձիգ այլումինե համաձուլվածքով գազի բալոններ. Նախագծում, պատրաստում եւ փորձարկում <i><b>ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.</b> 6351A այլումինե համաձուլվածքը կամ</i>	Հետագայում հայտագիրը ներկայացնելու դեպքում

Հղում	Անվանում	Պատրաստման համար կիրառելի
	<i>դրան համարժեք համաձուլվածքը չպետք է թույլատրվի:</i>	
ISO 4706:2008	Գազի բալոններ. Վերալցավորվող եռակցված պողպատյա բալոններ. Փորձարկման ճնշումը՝ 60 բար եւ ցածր	Հետագայում հայտագիրը ներկայացնելու դեպքում
ISO 18172-1:2007	Գազի բալոններ. Վերալցավորվող եռակցված չժանգոտվող պողպատյա բալոններ. Մաս 1՝ Փորձարկման ճնշում 6 ՄՊա եւ ցածր	Հետագայում հայտագիրը ներկայացնելու դեպքում
ISO 20703:2006	Գազի բալոններ. Վերալցավորվող եռակցված այլումինե համաձուլվածքով բալոններ. Նախագծում, պատրաստում եւ փորձարկում	Հետագայում հայտագիրը ներկայացնելու դեպքում
ISO 11118:1999	Գազի բալոններ. Չվերալցավորվող մետաղյա գազի բալոններ. Մասնագրեր եւ փորձարկման մեթոդներ	Հետագայում հայտագիրը ներկայացնելու դեպքում
ISO 11119-1:2002	Կոմպոզիտային գազի բալոններ. Մասնագրեր եւ փորձարկման մեթոդներ. Մաս 1՝ Գլանաձեւ հատվածում օղագոտով բոլորված՝ կոմպոզիտային գազի բալոններ	Մինչեւ 2020 թվականի դեկտեմբերի 31-ը
ISO 11119-1:2012	Գազի բալոններ. Վերալցավորվող կոմպոզիտային գազի բալոններ եւ գլաններ. Նախագծում, պատրաստում ու փորձարկում. Մաս 1՝ Գլանաձեւ հատվածում օղագոտով բոլորված՝ վոլկնիտով ամրանավորված կոմպոզիտային գազի բալոններ եւ գլաններ, մինչեւ 450 լ	Հետագայում հայտագիրը ներկայացնելու դեպքում
ISO 11119-2:2002	Կոմպոզիտային գազի բալոններ. Մասնագրեր եւ փորձարկման մեթոդներ. Մաս 2՝ Ամբողջապես փաթաթված՝ վոլկնիտով ամրանավորված կոմպոզիտային գազի բալոններ՝ բեռնվածքը բաշխող մետաղյա ներդիրներով	Մինչեւ 2020 թվականի դեկտեմբերի 31-ը
ISO 11119-2:2012 + Amd 1:2014	Գազի բալոններ. Վերալցավորվող կոմպոզիտային գազի բալոններ եւ գլաններ. Նախագծում, պատրաստում ու փորձարկում. Մաս 2՝ Ամբողջապես փաթաթված՝ վոլկնիտով ամրանավորված կոմպոզիտային գազի բալոններ եւ գլաններ մինչեւ 450 լ՝ բեռնվածքը բաշխող մետաղյա ներդիրներով	Հետագայում հայտագիրը ներկայացնելու դեպքում
ISO 11119-3:2002	Կոմպոզիտային գազի բալոններ. Մասնագրեր եւ փորձարկման մեթոդներ. Մաս 3՝ Ամբողջապես փաթաթված՝ վոլկնիտով ամրանավորված կոմպոզիտային գազի բալոններ՝ բեռնվածքը չբաշխող մետաղյա կամ ոչ մետաղյա ներդիրներով	Մինչեւ 2020 թվականի դեկտեմբերի 31-ը
ISO 11119-3:2013	Գազի բալոններ. Վերալցավորվող կոմպոզիտային գազի բալոններ եւ գլաններ. Նախագծում, պատրաստում ու փորձարկում. Մաս 3՝ Ամբողջապես փաթաթված՝ վոլկնիտով ամրանավորված կոմպոզիտային գազի բալոններ եւ գլաններ մինչեւ 450 լ՝ բեռնվածքը չբաշխող մետաղյա կամ ոչ մետաղյա ներդիրներով	Հետագայում հայտագիրը ներկայացնելու դեպքում

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1՝** Վերոնշյալ ստանդարտներում կոմպոզիտային բալոնները պետք է նախատեսված լինեն 15 տարուց ոչ պակաս շահագործման համար:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2.** 15 տարուց ավելի շահագործման համար նախատեսված կոմպոզիտային բալոնները չպետք է լցավորվեն դրանց պատրաստումից 15 տարի հետո, եթե նախագիծը հաջողությամբ չի անցել շահագործման փորձարկման ծրագիրը: Ծրագիրը պետք է լինի սկզբնական նախագծի տեսակի հաստատման մաս եւ պետք է սահմանի այն ստուգումները եւ փորձարկումները, որոնք պետք է

իրականացվեն ապացուցելու համար, որ պատրաստված բալոնները համապատասխանաբար մնում են անվտանգ մինչև դրանց շահագործման հաշվարկային ժամկետի ավարտը: Շահագործման հաշվարկային ժամկետի փորձարկման ծրագիրը եւ արդյունքները հաստատվում են հաստատման երկրի իրավասու մարմնի կողմից, որը պատասխանատու է բալոնի նախագծի նախնական հաստատման համար: Կոմպոզիտային բալոնի շահագործման հաշվարկային ժամկետը չի երկարաձգվում հաստատված սկզբնական շահագործման հաշվարկային ժամկետից ավելի:

- 6.2.2.1.2. Հետեւյալ ստանդարտները կիրառելի են ՄԱԿ-ի նշագրման գլանների նախագծման, պատրաստման եւ նախնական ստուգման ու փորձարկման համար, սակայն համապատասխանության գնահատման համակարգին եւ հաստատմանը վերաբերող զննման պահանջները պետք է համապատասխանեն 6.2.2.5-ի պահանջներին:

Հղում	Անվանում	Պատրաստման համար կիրառելի
ISO 11120:1999	Գազի բալոններ. Վերացավորվող ամբողջաձիգ պողպատյա գլաններ՝ սեղմված գազի տեղափոխման համար՝ 150 - 3 000 լ տարողությամբ. Նախագծում, պատրաստում ու փորձարկում <b>ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.</b> F գործակցին (փոխակերպման գործակցիցը) վերաբերող ծանոթագրությունն այս ստանդարտի 7.1 բաժնում կիրառելի չէ ՄԱԿ-ի նշագրման գլանների համար :	Հետագայում հայտագիրը ներկայացնելու դեպքում
ISO 11119-1:2012	Գազի բալոններ. Վերացավորվող կոմպոզիտային գազի բալոններ եւ գլաններ. Նախագծում, պատրաստում ու փորձարկում. Մաս 1՝ Գլանաձև հատվածում օղազոտով բոլորված՝ վոլկնիտով ամրանավորված կոմպոզիտային գազի բալոններ եւ գլաններ, մինչեւ 450 լ	Հետագայում հայտագիրը ներկայացնելու դեպքում
ISO 11119-2:2012 + Amd 1:2014	Գազի բալոններ. Վերացավորվող կոմպոզիտային գազի բալոններ եւ գլաններ. Նախագծում, պատրաստում ու փորձարկում. Մաս 2՝ Ամբողջապես փաթաթված՝ վոլկնիտով ամրանավորված կոմպոզիտային գազի բալոններ եւ գլաններ մինչեւ 450 լ՝ բեռնվածքը բաշխող մետաղյա ներդիրներով	Հետագայում հայտագիրը ներկայացնելու դեպքում
ISO 11119-3:2013	Գազի բալոններ. Վերացավորվող կոմպոզիտային գազի բալոններ եւ գլաններ. Նախագծում, պատրաստում ու փորձարկում. Մաս 3՝ Ամբողջապես փաթաթված՝ վոլկնիտով ամրանավորված կոմպոզիտային գազի բալոններ եւ գլաններ մինչեւ 450 լ՝ բեռնվածքը չբաշխող մետաղյա կամ ոչ մետաղյա ներդիրներով	Հետագայում հայտագիրը ներկայացնելու դեպքում
ISO 11515: 2013	Գազի բալոններ. 450 - 3 000 լ տարողությամբ՝ վերացավորվող ամրանավորված կոմպոզիտային գլաններ. Նախագծում, պատրաստում ու փորձարկում	Հետագայում հայտագիրը ներկայացնելու դեպքում

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1.** Վերը նշված ստանդարտների կոմպոզիտային գլանները նախագծվում են 15 տարի շահագործման հաշվարկային ժամկետից ոչ պակաս ժամկետի համար:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2.** 15 տարուց ավելի շահագործման հաշվարկային ժամկետ ունեցող կոմպոզիտային գլանները չպետք է լցավորվեն պատրաստման օրվանից 15 տարին լրանալուց հետո, եթե նախագիծը հաջողությամբ չի անցել շահագործման հաշվարկային ժամկետի փորձարկման ծրագիրը: Ծրագիրը պետք է լինի սկզբնական նախագծի տեսակի հաստատման մաս եւ սահմանի այն ստուգումներն ու փորձարկումները, որոնք պետք է իրականացվեն ապացուցելու համար, որ պատրաստված գլանները համապատասխանաբար մնում են անվտանգ մինչեւ դրանց շահագործման հաշվարկային ժամկետի ավարտը: Շահագործման հաշվարկային ժամկետի փորձարկման ծրագիրը եւ արդյունքները հաստատվում են հաստատման երկրի իրավասու մարմնի կողմից, որը պատասխանատու է բալոնի նախագծի սկզբնական հաստատման համար: Կոմպոզիտային գլանների շահագործման հաշվարկային ժամկետը չի երկարաձգվում հաստատված սկզբնական շահագործման հաշվարկային ժամկետից ավելի:

6.2.2.1.3. Հետեւյալ ստանդարտները կիրառելի են ՄԱԿ-ի նշագրման բալոնների

Նախագծման, պատրաստման, նախնական ստուգման ու փորձարկման համար, սակայն համապատասխանության գնահատման համակարգին եւ հաստատմանը վերաբերող զննման պահանջները պետք է համապատասխանեն 6.2.2.5-ին.

Բալունի կորպուսի համար.

Հղում	Անվանում	Պատրաստման համար կիրառելի
ISO 9809-1:1999	Գազի բալուններ. Վերալցավորվող ամբողջաձիգ գազի բալուններ. Նախագծում պատրաստում ու փորձարկում. Մաս 1՝ 1 100 ՄՊա-ից պակաս ճզման ամրություն ունեցող մխված եւ մխամեղմված պողպատյա բալուններ: <b>ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.</b> <i>F գործակցին (փոխակերպման գործակիցը) վերաբերող ծանոթագրությունն այս սրանդարտի 7.3 բաժնում կիրառելի չէ ՄԱԿ-ի նշագրման բալունների համար:</i>	Մինչեւ 2018 թվականի դեկտեմբերի 31-ը
ISO 9809-1:2010	Գազի բալուններ. Վերալցավորվող ամբողջաձիգ գազի բալուններ. Նախագծում, պատրաստում ու փորձարկում. Մաս 1՝ 1 100 ՄՊա-ից պակաս ճզման ամրություն ունեցող մխված եւ մխամեղմված պողպատյա բալուններ:	Հետագայում հայտագիրը ներկայացնելու դեպքում
ISO 9809-3:2000	Գազի բալուններ. Վերալցավորվող ամբողջաձիգ գազի բալուններ. Նախագծում, պատրաստում ու փորձարկում. Մաս 3՝ Նորմալացված պողպատյա բալուններ	Մինչեւ 2018 թվականի դեկտեմբերի 31-ը
ISO 9809-3:2010	Գազի բալուններ. Վերալցավորվող ամբողջաձիգ գազի բալուններ. Նախագծում, պատրաստում ու փորձարկում. Մաս 3՝ Նորմալացված պողպատյա բալուններ	Հետագայում հայտագիրը ներկայացնելու դեպքում



Բալունում առկա ծակոտկեն նյութի համար.

Հղում	Անվանում	Պատրաստման համար կիրառելի
ISO 3807-1:2000	Ացետիլենի համար նախատեսված բալուններ. Հիմնական պահանջներ. Մաս 1՝ Բալուններ առանց հալուն ապահովիչների	Մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը
ISO 3807-2:2000	Ացետիլենի համար նախատեսված բալուններ. Հիմնական պահանջներ. Մաս 2՝ Բալուններ հալուն ապահովիչներով	Մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը
ISO 3807:2013	Գազի բալուններ. Ացետիլենի բալուններ. Հիմնական պահանջները եւ տեսակի փորձարկումը	Հետագայում հայտագիրը ներկայացնելու դեպքում

6.2.2.1.4. Հետեւյալ ստանդարտը կիրառելի է ՄԱԿ-ի նշագրման կրիոգեն տարաների նախագծման, պատրաստման, նախնական ստուգման ու փորձարկման համար, սակայն համապատասխանության գնահատման համակարգին եւ հաստատմանը վերաբերող զննման պահանջները պետք է համապատասխանեն 6.2.2.5-ի պահանջներին:

Հղում	Անվանում	Պատրաստման համար կիրառելի
ISO 21029-1:2004	Կրիոգեն անոթներ. Շարժական վակուումով մեկուսացված անոթներ՝ ոչ ավելի, քան 1 000լ ծավալով. Մաս 1՝ Նախագծում, արտադրում, զննում եւ փորձարկումներ	Հետագայում հայտագիրը ներկայացնելու դեպքում

6.2.2.1.5. Հետեւյալ ստանդարտները կիրառելի են ՄԱԿ-ի մետաղ-հիդրիդային պահման համակարգերի նախագծման, պատրաստման, նախնական ստուգման ու փորձարկման համար, սակայն համապատասխանության գնահատման համակարգին եւ հաստատմանը վերաբերող զննման պահանջները պետք է համապատասխանեն 6.2.2.5-ի պահանջներին:

Հղում	Անվանում	Պատրաստման համար կիրառելի
ISO 16111:2008	Գազի պահման շարժական սարքեր. Ջրածին կլանված փոխակերպվող մետաղի հիդրիդի մեջ	Հետագայում հայտագիրը ներկայացնելու դեպքում

6.2.2.1.6. Ստորեւ բերված ստանդարտը կիրառվում է ՄԱԿ-ի նշագրման բալունների կապուլկների նախագծման, պատրաստման եւ նախնական ստուգման ու փորձարկման համար: ՄԱԿ-ի նշագրման բալունների կապուլկների յուրաքանչյուր բալուն պետք է լինի 6.2.2-ի պահանջները բավարարող ՄԱԿ-ի նշագրման բալուն: ՄԱԿ-ի նշագրման բալունների կապուլկների համապատասխանության գնահատման համակարգին եւ հաստատմանն առնչվող ստուգման պահանջները պետք է համապատասխանեն 6.2.2.5-ին:

Հղում	Անվանում	Պատրաստման համար կիրառելի
ISO 10961:2010	Գազի բալուններ. Բալունների կապուլկներ. Նախագծում, պատրաստում,	Հետագայում հայտագիրը

	փորձարկում եւ ստուգում	ներկայացնելու դեպքում
--	------------------------	-----------------------

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** ՄԱԿ-ի նշագրման բալոնների կապուկում առկա կառուցվածքի նույն տեսակի, այդ թվում՝ նույն փորձարկման ճնշման մեկ կամ մի քանի բալոններ փոխելու դեպքում չի պահանջվում առկա կապուկի վերասերտիֆիկացում:

6.2.2.1.7. Հետեւյալ ստանդարտները կիրառվում են ՄԱԿ-ի նշագրման ադսորբացված գազի համար նախատեսված բալոնների նախագծման, պատրաստման եւ նախնական ստուգման ու փորձարկման համար՝ բացառությամբ նրա, որ համապատասխանության գնահատման համակարգին եւ հաստատմանն առնչվող ստուգման պահանջները պետք է համապատասխանեն 6.2.2.5-ին:

Հղում	Անվանում	Պատրաստման համար կիրառելի
ISO 11513:2011	Գազի բալոններ. Վերացավորվող եռակցված պողպատյա բալոններ, որոնք պարունակում են ենթամթնոլորտային գազի փաթեթվածքի համար նախատեսված նյութեր (բացառությամբ ացետիլենի). Նախագծում, պատրաստում, փորձարկում, օգտագործում եւ պարբերական զննում	Հետագայում հայտագիրը ներկայացնելու դեպքում
ISO 9809-1:2010	Գազի բալոններ. Վերացավորվող ամբողջածիգ գազի բալոններ. Նախագծում, պատրաստում ու փորձարկում. Մաս 1՝ 1 100 ՄՊա-ից պակաս ձգման ամրություն ունեցող միաված եւ միսամեղմված պողպատյա բալոններ:	Հետագայում հայտագիրը ներկայացնելու դեպքում

### 6.2.2.2. Նյութեր

Ի լրումն նյութերի պահանջների՝ նշված ճնշումային տարաների նախագծման եւ պատրաստման ստանդարտներում ու որեւէ սահմանափակումների՝ նշված փոխադրվող գազի (գազերի) կիրառելի փաթեթավորմանը վերաբերող ցուցումներում (օրինակ՝ 4.1.4.1-ի P200 կամ P205 փաթեթավորման ցուցումներ), հետեւյալ ստանդարտներն են վերաբերում նյութերի համատեղելիությանը.

ISO 11114-1:2012	Գազի բալոններ. Գազի պարունակության հետ բալոնի եւ կափույրի պատրաստման նյութերի համատեղելիություն Մաս 1՝ Մետաղական նյութեր
ISO 11114-2:2013	Գազի բալոններ. Գազի պարունակության հետ բալոնի եւ կափույրի պատրաստման նյութերի համատեղելիություն. Մաս 2՝ Ոչ մետաղյա նյութեր

### 6.2.2.3. Օժանդակ սարքավորում

Փականների եւ դրանց պաշտպանության միջոցների ստանդարտները հետեւյալն են.

Հղում	Անվանում	Պատրաստման համար կիրառելի
ISO 11117:1998	Գազի բալոններ. Կափույրի պաշտպանության թասակներն ու կափույրի պաշտպանիչ սարքեր՝ արդյունաբերական եւ բժշկական գազի բալոնների համար. Նախագծում, պատրաստում ու փորձարկումներ	Մինչեւ 2014 թվականի դեկտեմբերի 31-ը
ISO 11117:2008 + Cor 1:2009	Գազի բալոններ. Կափույրի պաշտպանության թասակներն ու կափույրի պաշտպանիչ սարքեր. Նախագծում, պատրաստում ու փորձարկումներ	Հետագայում հայտագիրը ներկայացնելու դեպքում
ISO 10297:1999	Գազի բալոններ. Վերացավորվող գազի բալոնների կափույրներ. Մասնագրեր եւ նմուշի փորձարկում	Մինչեւ 2008 թվականի դեկտեմբերի 31-ը
ISO 10297:2006	Գազի բալոններ. Վերացավորվող գազի բալոնների կափույրներ. Մասնագրեր եւ նմուշի փորձարկում	Մինչեւ 2020 թվականի դեկտեմբերի 31-ը
ISO 10297:2014	Գազի բալոններ. Բալոնների կափույրներ. Մասնագրեր եւ նմուշի փորձարկում	Հետագայում հայտագիրը ներկայացնելու դեպքում
ISO 13340:2001	Գազի շարժական բալոններ. Բալոնի կափույրներ չցավորվող բալոնների համար. Մասնագրեր եւ նմուշի փորձարկում	Հետագայում հայտագիրը ներկայացնելու դեպքում

ՄԱԿ-ի մետաղ-հիդրիդային պահման համակարգերի համար, հետեւյալ ստանդարտում նշված պահանջները վերաբերում են փականներին եւ դրանց պաշտպանությանը.

Հղում	Անվանում	Պատրաստման համար կիրառելի
ISO 16111:2008	Գազի պահման շարժական սարքեր. Զրաձին՝ ներծծված փոխակերպվող մետաղի հիդրիդի մեջ	Հետագայում հայտագիրը ներկայացնելու դեպքում

### 6.2.2.4. Պարբերական ստուգումը եւ փորձարկումը

Հետեւյալ ստանդարտները վերաբերում են ՄԱԿ-ի նշագրման բալոնների եւ ՄԱԿ-ի նշագրման մետաղ-հիդրիդային պահման համակարգերի պարբերական զննմանն ու փորձարկմանը.

Հղում	Անվանում	Պատրաստման համար կիրառելի
ISO 6406:2005	Ամբողջաձիգ պողպատյա գազի բալոնների պարբերական ստուգում եւ փորձարկում	Հետագայում հայտագիրը ներկայացնելու դեպքում
ISO 10460:2005	Գազի բալոններ. Եռակցված ածխածնային պողպատյա բալոններ. Պարբերական զննում ու փորձարկում <i>ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Սույն ստանդարտի 12.1 կետում նկարագրված եռակցման վերանորոգման աշխատանքների վերանորոգումը չի թույլատրվում: 12.1 կետում նկարագրված վերանորոգման համար պահանջվում է պարբերական ստուգումը եւ փորձարկումը հաստատող իրավասու մարմնի հաստատում՝ 6.2.2.6-ին համապատասխան</i>	Հետագայում հայտագիրը ներկայացնելու դեպքում
ISO 10461:2005 + A1:2006	Ալյումինային ծուլվածքով պատրաստված գազի ամբողջաձիգ բալոններ. Պարբերական զննում եւ փորձարկում	Հետագայում հայտագիրը ներկայացնելու դեպքում
ISO 10462:2005	Գազի բալոններ. Լուծված ացետիլենի համար նախատեսված շարժական բալոններ. Պարբերական զննում ու փորձարկում	Մինչեւ 2018 թվականի դեկտեմբերի 31-ը
ISO 10462:2013	Գազի բալոններ. Ացետիլենի բալոններ. Պարբերական զննում ու փորձարկում	Հետագայում հայտագիրը ներկայացնելու դեպքում
ISO 11513:2011	Գազի բալոններ. Վերալցավորվող եռակցված պողպատյա բալոններ, որոնք պարունակում են ենթամթնոլորտային գազի փաթեթվածքի համար նախատեսված նյութեր (բացառությամբ ացետիլենի). Նախագծում, պատրաստում, փորձարկում, օգտագործում եւ պարբերական զննում	Հետագայում հայտագիրը ներկայացնելու դեպքում
ISO 11623:2002	Գազի շարժական բալոններ. Կոմպոզիտային գազի բալոնների պարբերական զննում եւ փորձարկում	Հետագայում հայտագիրը ներկայացնելու դեպքում
ISO 16111:2008	Գազի պահման շարժական սարքեր. Ջրածին՝ ներծծված փոխակերպվող մետաղի հիդրիդի մեջ	Հետագայում հայտագիրը ներկայացնելու դեպքում

**6.2.2.5. Համապատասխանության գնահատման համակարգ եւ ճնշումային տարաների արտադրության հաստատումը**

**6.2.2.5.1. Սահմանումներ**

Սույն ենթաբաժնի նպատակների համար.

«Համապատասխանության գնահատման համակարգ» նշանակում է արտադրողի՝ իրավասու մարմնի կողմից հաստատման համակարգ՝ ճնշումային տարաների կառուցվածքի տեսակի հաստատումով, արտադրողի որակի կառավարման հաստատումը եւ ստուգող մարմինների հաստատումը,

«Կառուցվածքի տեսակը» նշանակում է ճնշումային տարայի կառուցվածքը, ինչպես սահմանված է կոնկրետ ճնշումային տարայի ստանդարտով,

Ստուգել նշանակում է օբյեկտիվ ապացույցների զննման կամ տրամադրման միջոցով հաստատել, որ նշված պահանջները կատարվել են:

6.2.2.5.2. *Ընդհանուր պահանջները*

Իրավասու մարմինը

6.2.2.5.2.1. Ճնշումային տարան հաստատող իրավասու մարմինը պետք է հաստատի համապատասխանության գնահատման համակարգը, որպեսզի ապահովվի ճնշումային տարաների համապատասխանությունը «ԱԴՌ» համաձայնագրի պահանջներին: Այն դեպքերում, երբ ճնշումային տարան հաստատող իրավասու մարմինը արտադրման երկրի իրավասու մարմինը չէ, հաստատող երկիրն ու արտադրող երկիրը պետք է նշվեն ճնշումային տարայի մակնշման մեջ (տե՛ս 6.2.2.7 եւ 6.2.2.8)

Հաստատման երկրի իրավասու մարմինը պետք է օգտագործման երկրում իր գործընկերոջը ապացույցներ տրամադրի սույն համապատասխանության գնահատման համակարգին համապատասխանության մասին՝ վերջինիս պահանջի դեպքում:

6.2.2.5.2.2. Իրավասու մարմինը կարող է ամբողջությամբ կամ մասամբ պատվիրակել իր գործառույթները համապատասխանության գնահատման սույն համակարգում:

6.2.2.5.2.3. Իրավասու մարմինը պետք է ապահովի, որ հաստատված ստուգող մարմինների ու նրանց նույնականացման նշանների եւ հաստատված արտադրողների ու նրանց նույնականացման նշանները մատչելի լինեն:

*Ստուգող մարմին*

6.2.2.5.2.4. Ստուգող մարմինը պետք է հաստատվի իրավասու մարմնի կողմից՝ ճնշումային տարաների գնման համար եւ պետք է.

ա) ունենա հաստիքային, գիտակ, վերապատրաստված, իրազեկ եւ հմուտ անձնակազմ, որպեսզի պատշաճ կերպով իրականացնի իր տեխնիկական գործառույթները.

բ) ունենա պիտանի եւ բավարար տարածքներ ու սարքավորումներ.

գ) աշխատի անաչառ ձեւով եւ զերծ մնա ցանկացած ազդեցությունից, որը կարող է իր գործառույթներն իրականացնելիս խոչընդոտել իրեն.

դ) ապահովի արտադրողի եւ այլ մարմինների առեւտրային ու սեփական գործողությունների առեւտրային գաղտնիքը.

ե) հստակ տարանջատի ստուգող մարմնի փաստացի գործառույթները եւ դրա հետ կապ չունեցող գործառույթները.

ե) ունենա փաստաթղթով ամրագրված՝ որակի ապահովման

համակարգ.

է) ապահովի համապատասխան ճնշումային տարայի ստանդարտով սահմանված փորձարկումների ու ստուգումների, ինչպես նաև «ԱԴԴ» համաձայնագրի դրույթների իրականացումը.

ը) վարի արձանագրությունների եւ գրառումների արդյունավետ ու համապատասխան համակարգ՝ 6.2.2.5.6-ին համապատասխան:

6.2.2.5.2.5. Ստուգող մարմինը պետք է կատարի կառուցվածքի տեսակի հաստատում, ճնշումային տարաների արտադրական փորձարկումներ, տեխնիկական հսկողություն եւ սերտիֆիկացում՝ ստուգելու համապատասխանությունը ճնշումային տարաների համապատասխան ստանդարտի հետ (տե՛ս 6.2.2.5.4 եւ 6.2.2.5.5):

*Արտադրողը*

6.2.2.5.2.6. Արտադրողը պետք է.

ա) ունենա փաստաթղթով ամրագրված՝ որակի ապահովման համակարգ՝ 6.2.2.5.3-ի համաձայն,

բ) դիմի կառուցվածքի տեսակը հաստատելու համար՝ 6.2.2.5.4-ի համաձայն,

գ) հաստատված ստուգող մարմինների ցուցակից ընտրի հաստատման երկրում իրավասու մարմնի կողմից հաստատված ստուգող մարմին եւ

դ) վարի գրանցամատյան՝ 6.2.2.5.6-ի համաձայն:

*Փորձարկման լաբորատորիա*

6.2.2.5.2.7. Փորձարկման լաբորատորիան պետք է ունենա՝

ա) անձնակազմ ըստ կազմակերպչական կառուցվածքի՝ բավարար թվով, որակավորմամբ ու հմտությամբ, եւ

բ) հարմար եւ պատշաճ տարածքներ ու սարքավորումներ՝ արտադրական ստանդարտով պահանջվող եւ ստուգող մարմինը բավարարող փորձարկումները կատարելու համար:

6.2.2.5.3. *Արտադրողի որակի հսկողության համակարգ*

6.2.2.5.3.1. Որակի հսկողության համակարգը պետք է պարունակի բոլոր տարրերը, պահանջներն ու դրույթները՝ ընդունված արտադրողի կողմից: Այն պետք է փաստաթղթերում ամրագրվի համակարգված

կերպով՝ գրավոր կանոնակարգերի, ընթացակարգերի եւ ցուցումների միջոցով:

Բովանդակությունը պետք է, մասնավորապես, ներառի հետեւյալի նկարագրությունը.

- ա) անձնակազմի կազմակերպչական կառուցվածքն ու պարտականությունները՝ կառուցվածքի եւ ապրանքի որակի հետ կապված,
- բ) նախագծման վերահսկման եւ ստուգման տեխնիկաներ, գործընթացներ ու ընթացակարգեր, որոնք պետք է կատարվեն ճնշումային տարաների նախագծման ընթացքում,
- գ) ճնշումային տարաների արտադրման, որակի հսկողության, որակի ապահովման եւ տեխնոլոգիական գործընթացների համապատասխան ցուցումները, որոնք պետք է կիրառվեն,
- դ) որակի մասին հաշվետվությունները, ինչպիսիք են՝ ստուգման վերաբերյալ հաշվետվությունները, փորձարկման տվյալները եւ չափաբերման տվյալները,
- ե) ղեկավարության կողմից իրականացվող վերանայումները՝ ապահովելու համար որակի հսկողության համակարգի արդյունավետ աշխատանքը՝ հիմնված 6.2.2.5.3.2-ին համապատասխան աուդիտի վրա,
- ե) հաճախորդների պահանջների կատարումը նկարագրող գործընթացը,
- է) փաստաթղթերի եւ դրանց փոփոխությունների հսկողության գործընթացը,
- ը) պահանջներին չհամապատասխանող՝ ճնշումային տարաների, գնված բաղադրիչների, միջանկյալ եւ վերջնական նյութերի վերահսկողության միջոցները, եւ
- թ) համապատասխան անձնակազմի վերապատրաստման ծրագրեր ու որակավորման ընթացակարգերը:

#### 6.2.2.5.3.2. Որակի հսկողության համակարգի աուդիտը

Որակի հսկողության համակարգը պետք է սկզբնապես գնահատվի՝ որոշելու, թե արդյոք այն բավարարում է 6.2.2.5.3.1-ի պահանջները՝ իրավասու մարմնի կողմից սահմանված չափով:

Արտադրողը կտեղեկացվի աուդիտի արդյունքների մասին: Ծանուցումը պետք է պարունակի աուդիտի արդյունքում արված եզրակացությունների եւ պահանջվող ցանկացած ուղղիչ գործողությունների մասին տեղեկություններ:

Պետք է իրականացվեն պարբերական աուդիտներ, որոնք պետք է բավարարեն իրավասու մարմնի պահանջները՝ արտադրողի կողմից որակի հսկողության համակարգի պահպանումն ու կիրառումն ապահովելու համար: Պարբերական աուդիտների հաշվետվությունները պետք է տրամադրվեն արտադրողին:

#### 6.2.2.5.3.3. Որակի հսկողության համակարգի աշխատանքի ապահովումը

Արտադրողը պետք է պահպանի որակի հսկողության համակարգն այնպես, ինչպես որ այն հաստատվել է, որպեսզի այն մնա համարժեք եւ արդյունավետ:

Արտադրողը պետք է տեղեկացնի որակի հսկողության համակարգը հաստատած իրավասու մարմնին որեւէ նախատեսված փոփոխության մասին: Առաջարկված փոփոխությունները պետք է գնահատվեն՝ որոշելու, թե արդյոք որակի հսկողության փոփոխված համակարգը բավարարում է 6.2.2.5.3.1-ի պահանջները:

#### 6.2.2.5.4. Հաստատման գործընթացը

*Կառուցվածքի տեսակի նախնական հաստատումը*

6.2.2.5.4.1. Կառուցվածքի տեսակի նախնական հաստատումը ներառում է արտադրողի որակի հսկողության համակարգի հաստատումն ու արտադրվելիք ճնշումային տարայի կառուցվածքի հաստատումը: Կառուցվածքի տեսակի նախնական հաստատումը պետք է ներառի 6.2.2.5.4.2 - 6.2.2.5.4.6-ի եւ 6.2.2.5.4.9-ի պահանջները:

6.2.2.5.4.2. Ճնշումային տարաների ստանդարտին եւ «ԱԴՌ» համաձայնագրի պահանջներին համապատասխանող ճնշումային տարաներ արտադրել ցանկացող արտադրողը պետք է դիմի կառուցվածքի տեսակի հաստատման սերտիֆիկատ ստանալու համար, ստանա այն եւ պահպանի այդ սերտիֆիկատը՝ թողարկված հաստատման երկրում իրավասու մարմնի կողմից առնվազն մեկ ճնշումային տարայի համար՝ 6.2.2.5.4.9-ում նշված պահանջներին համապատասխան: Այդ սերտիֆիկատը պետք է պահանջի դեպքում ներկայացվի այն երկրի իրավասու մարմնին, որտեղ դա օգտագործվելու է:

6.2.2.5.4.3. Յուրաքանչյուր արտադրական ձեռնարկության համար պետք է ներկայացվի դիմում, որը պետք է ներառի.

ա) արտադրողի անունն ու գրանցված հասցեն եւ, եթե դիմումը ներկայացվում է լիազորված ներկայացուցչի կողմից՝ նաեւ վերջինիս անունն ու հասցեն,



- բ) արտադրական ձեռնարկության հասցեն (եթե տարբեր է վերելում նշվածից),
- գ) որակի հսկողության համակարգի համար պատասխանատու անձի (անձանց) անունը եւ պաշտոնը,
- դ) ճնշումային տարայի անվանումը եւ ճնշումային տարայի համապատասխան ստանդարտը,
- ե) որել է այլ իրավասու մարմնի կողմից համանման հայտի հաստատումը մերժելու ցանկացած դեպքի մանրամասներ,
- զ) կառուցվածքի տեսակի հաստատումն իրականացնող ստուգող մարմնի ինքնության տվյալները,
- է) արտադրական ձեռնարկության մասին փաստաթղթեր՝ համաձայն 6.2.2.5.3.1-ի, եւ
- ը) կառուցվածքի տեսակի հաստատման համար պահանջվող տեխնիկական փաստաթղթերը, որոնք թույլ են տալիս ստուգել ճնշումային տարաների համապատասխանությունը ճնշումային տարաների նախագծի ստանդարտների հետ: Տեխնիկական փաստաթղթերը պետք է ներառեն արտադրության նախագիծն ու մեթոդները եւ պետք է պարունակեն, որքանով անհրաժեշտ է ստուգման համար, առնվազն հետեւյալ տվյալները.
  - i) ճնշումային տարայի նախագծման ստանդարտը, կառուցվածքին վերաբերող եւ արտադրական գծագրերը՝ բաղադրամասերով եւ ենթամասերով, եթե այդպիսիք կան,
  - ii) նկարագրերն ու բացատրությունները, որոնք անհրաժեշտ են գծագրերն ու ճնշումային տարաների նախատեսված գործածությունը հասկանալու համար,
  - iii) ստանդարտների ցուցակ, որն անհրաժեշտ է արտադրական գործընթացի սպառիչ սահմանման համար,
  - iv) նախագծային հաշվարկներն ու մասնագրերը, եւ
  - v) կառուցվածքի տեսակի հաստատման փորձարկումների մասին զեկույցները, որոնք նկարագրում են զննության եւ 6.2.2.5.4.9-ին համապատասխան իրականացված փորձարկումների արդյունքները:

6.2.2.5.4.4. Նախնական աուդիտը՝ համաձայն 6.2.2.5.3.2-ի, պետք է կատարվի այնպես, որ բավարարի իրավասու մարմնի պահանջները:

6.2.2.5.4.5. Եթե արտադրողի հաստատումը մերժվում է, ապա իրավասու մարմինը պետք է գրավոր եւ մանրամասն ներկայացնի այդ մերժման պատճառները:

6.2.2.5.4.6. Տրամադրված 6.2.2.5.4.3-ի համաձայն՝ նախնական հաստատմանը վերաբերող տվյալների փոփոխությունների հաստատումից հետո, այն փոխանցվում է իրավասու մարմնին:

*Կառուցվածքի տեսակի հետագա հաստատումները*

6.2.2.5.4.7. Հերթական կառուցվածքի տեսակի հաստատման հայտը պետք է բավարարի 6.2.2.5.4.8-ի եւ 6.2.2.5.4.9-ի պահանջներն այն պայմանով, որ արտադրողն արդեն ունի կառուցվածքի տեսակի նախնական հաստատումը: Այդ դեպքում, արտադրողի՝ որակի հսկողության համակարգը, համաձայն 6.2.2.5.3-ի, պետք է հաստատված լինի կառուցվածքի տեսակի նախնական հաստատման ընթացքում եւ պետք է կիրառվի նոր կառուցվածքի համար:

6.2.2.5.4.8. Հայտը պետք է պարունակի՝

- ա) արտադրողի անունն ու հասցեն եւ, եթե դիմումը ներկայացվում է լիազորված ներկայացուցչի կողմից՝ նաեւ վերջինիս անունն ու հասցեն,
- բ) որեւէ այլ իրավասու մարմնի կողմից համանման հայտի հաստատումը մերժելու ցանկացած դեպքի մանրամասներ,
- գ) կառուցվածքի տեսակի նախնական հաստատման ապացույցներ, եւ
- դ) տեխնիկական փաստաթղթեր՝ համաձայն 6.2.2.5.4.3 (ը)-ի պահանջների:

*Կառուցվածքի տեսակի հաստատման ընթացակարգը*

6.2.2.5.4.9. Ստուգող մարմինը պետք է՝

- ա) զննի տեխնիկական փաստաթղթերը՝ հավաստիանալու, որ՝
  - i) կառուցվածքը համապատասխանում է ստանդարտի համապատասխան դրույթներին, եւ
  - ii) փորձնական խմբաքանակն արտադրվել է տեխնիկական փաստաթղթերին համապատասխան եւ արտացոլում է կառուցվածքի հատկությունները,
- բ) հավաստիանա, որ արտադրական ստուգումներն

իրականացվել են 6.2.2.5.5-ի պահանջներին համապատասխան,

- գ) փորձնական խմբաքանակից ընտրի ճնշումային տարաներ եւ վերահսկի ճնշումային այդ տարաների փորձարկումը՝ ինչպես պահանջվում է կառուցվածքի տեսակը հաստատելու համար,
- դ) կատարի կամ արդեն կատարած լինի ճնշումային տարայի ստանդարտում նշված գննումները եւ փորձարկումները՝ որոշելու, որ.
  - i) ստանդարտի պահանջները կիրառվել են ու բավարարվել, եւ
  - ii) արտադրողի կողմից ընդունված ընթացակարգը համապատասխանում է ստանդարտի պահանջներին, եւ
- ե) ապահովի, որ հաստատման նպատակով իրականացվող տարբեր տեսակի գննումներն ու փորձարկումները ճշգրտորեն եւ որակով կատարվեն:

Երբ նախատիպի փորձարկումները կատարվել են բավարար արդյունքներով եւ 6.2.2.5.4-ի բոլոր կիրառվող պահանջները բավարարվել են, տրվում է կառուցվածքի տեսակի հաստատման սերտիֆիկատ, որը ներառում է արտադրողի անունն ու հասցեն, գննման արդյունքներն ու եզրակացությունները, ինչպես նաեւ նախագծի տեսակի նույնականացման համար անհրաժեշտ տվյալները:

Եթե արտադրողը կառուցվածքի տեսակի հաստատման մերժում է ստանում, ապա իրավասու մարմինը պետք է գրավոր ձեւով տրամադրի մերժման մանրամասն ներկայացված պատճառները:

#### 6.2.2.5.4.10. Հաստատված կառուցվածքի տեսակների փոփոխությունը

Արտադրողը պետք է կամ.

- ա) տեղեկացնի հաստատումն իրականացնող իրավասու մարմինն հաստատված կառուցվածքի տեսակի փոփոխության մասին, երբ այդ փոփոխությունները չեն հանգեցնում նոր նախագծի՝ ինչպես նշված է ճնշումային տարաների ստանդարտում, կամ
- բ) պահանջի կառուցվածքի տեսակի հերթական հաստատում, երբ այդ փոփոխությունները հանգեցնում են նոր կառուցվածքի՝ համաձայն ճնշումային տարաների համապատասխան ստանդարտի: Այս լրացուցիչ հաստատումը պետք է տրվի որպես սկզբնական կառուցվածքի տեսակի հաստատման

սերտիֆիկատի լրացում:

6.2.2.5.4.11. Իրավասու մարմինը պահանջի դեպքում պետք է ցանկացած այլ իրավասու մարմին ներկայացնի կառուցվածքի տեսակի հաստատումներին, հաստատումների փոփոխություններին եւ դրանց հետ վերցմանն առնչվող տեղեկություններ:

6.2.2.5.5. *Արտադրության ստուգումն ու սերտիֆիկացումը*

*Ընդհանուր պահանջները*

Ստուգող մարմինը կամ նրա պատվիրակը պետք է իրականացնի ճնշումային յուրաքանչյուր տարայի զննումն ու սերտիֆիկացումը: Արտադրության ընթացքում ստուգում ու փորձարկում իրականացնող ստուգող մարմինը կարող է տարբեր լինել կառուցվածքի տեսակի հաստատման փորձարկումն իրականացնող ստուգող մարմնից:

Եթե կարելի է ստուգող մարմնի պահանջներին համապատասխան ապացուցել, որ արտադրողն ունի պատրաստված եւ գիտակ, տեսուչներ, որոնք կապ չունեն արտադրական գործողությունների հետ, ապա ստուգումը կարող է իրականացվել այդ տեսուչների կողմից: Արտադրողն այդ դեպքում պետք է վարի տեսուչների համար նախատեսված դասընթացների գրանցամատյան:

Ստուգող մարմինը պետք է հավաստիանա, որ արտադրողի կողմից իրականացված ստուգումները եւ ճնշումային տարաների վրա կատարած փորձարկումներն ամբողջությամբ համապատասխանում են «ԱԴՌ» համաձայնագրի ստանդարտներին եւ պահանջներին: Այդ ստուգումների եւ փորձարկումների անհամապատասխանության հաստատման դեպքում, արտադրողի տեսուչների կողմից ստուգումներ իրականացնելու թույլտվությունը կարող է հետ վերցվել:

Ստուգող մարմնի կողմից հաստատումից հետո արտադրողը պետք է հայտարարագիր ներկայացնի հավաստագրված կառուցվածքի տեսակին համապատասխանության մասին: Ճնշումային տարայի վրա սերտիֆիկացման մակնշումը պետք է դիտարկվի որպես հայտարարություն, որ ճնշումային տարան համապատասխանում է ճնշումային տարաների կիրառելի ստանդարտին, համապատասխանության գնահատման սույն համակարգին եւ «ԱԴՌ» համաձայնագրի: Ստուգող մարմինը փակցնում կամ պատվիրակում է արտադրողին՝ փակցնելու ճնշումային տարայի սերտիֆիկացման մակնշումը եւ ստուգող մարմնի գրանցված նշանը ճնշումային յուրաքանչյուր հաստատված տարայի վրա:

Նախքան ճնշումային տարան կլցվի՝ պետք է տրվի համապատասխանության սերտիֆիկատ՝ ստորագրված ստուգող մարմնի եւ արտադրողի կողմից:

6.2.2.5.6. *Արձանագրությունները*

Կառուցվածքի տեսակի հաստատումը եւ համապատասխանության սերտիֆիկատը պետք է պահվի արտադրողի ու ստուգող մարմնի մոտ 20 տարուց ոչ պակաս:

6.2.2.6. ***Ճնշումային տարաների պարբերական ստուգումների եւ փորձարկումների հաստատման համակարգը***

6.2.2.6.1. *Սահմանումը*

Սույն բաժնի նպատակներն իրականացնելու համար.

*Հաստատման համակարգ* նշանակում է իրավասու մարմնի կողմից ճնշումային տարաների պարբերական ստուգումներ եւ փորձարկումներ իրականացնող մարմնի հաստատման համակարգ (այսուհետ՝ «պարբերական ստուգումների եւ փորձարկումներ իրականացնող մարմին»)՝ ներառյալ այդ մարմնի՝ որակի հսկողության համակարգի հաստատումը:

6.2.2.6.2. *Ընդհանուր պահանջները*

*Իրավասու մարմինը*

6.2.2.6.2.1. Իրավասու մարմինը պետք է ստեղծի հաստատման համակարգ՝ ապահովելու համար, որ ճնշումային տարաների պարբերական ստուգումներն ու փորձարկումները համապատասխանեն «ԱԴԲ» համաձայնագրի պահանջներին: Այն դեպքերում, երբ իրավասու մարմինը, որը հաստատում է ճնշումային տարաների պարբերական ստուգումներ եւ փորձարկումներ իրականացնող մարմին, ճնշումային տարաների արտադրությունը հաստատող երկրի իրավասու մարմինը չէ, հաստատման երկրի նշանները, որտեղ պարբերական ստուգումներ եւ փորձարկումներ են իրականացվել, պետք է նշված լինեն ճնշումային տարայի մակնշման մեջ (տե՛ս 6.2.2.7):

Պարբերական ստուգումների եւ փորձարկումների հաստատման երկրի իրավասու մարմինը պետք է պահանջի դեպքում օգտագործման երկրում իր գործընկերոջը տրամադրի սույն հաստատման համակարգին համապատասխանելիության ապացույցներ՝ ներառյալ պարբերական ստուգումների եւ փորձարկումների արձանագրությունները:

Հաստատման երկրի իրավասու մարմինը կարող է դադարեցնել 6.2.2.6.4.1-ում նշված հաստատման սերտիֆիկատը՝ հաստատման համակարգի հետ անհամապատասխանելիության ապացույցներ ունենալու դեպքում:

6.2.2.6.2.2. Իրավասու մարմինը կարող է ամբողջությամբ կամ մասամբ

պատվիրակել համապատասխանության գնահատման սույն համակարգում իր գործառույթները:

6.2.2.6.2.3. Իրավասու մարմինը պետք է ապահովի պարբերական ստուգումներ եւ փորձարկումներ իրականացնող հաստատված մարմինների ընթացիկ ցուցակի եւ նրանց նույնականացման նշանների առկայությունը:

*Պարբերական ստուգումներ եւ փորձարկումներ իրականացնող մարմին*

6.2.2.6.2.4. Պարբերական ստուգումներ եւ փորձարկումներ իրականացնող մարմինը պետք է հաստատվի իրավասու մարմնի կողմից եւ պետք է.

ա) ունենա հաստիքային, գիտակ, վերապատրաստված, իրազեկ եւ հմուտ անձնակազմ, որպեսզի պատշաճ կերպով իրականացնի իր տեխնիկական գործառույթները.

բ) ունենա պիտանի եւ բավարար տարածքներ ու սարքավորումներ.

գ) աշխատի անաչառ ձեւով եւ զերծ մնա ցանկացած ազդեցությունից, որը կարող է իր գործառույթներն իրականացնելիս խոչընդոտել իրեն.

դ) պահի առետրային տվյալների գաղտնիությունը,

ե) հստակ տարանջատի պարբերական ստուգումներ եւ փորձարկումներ իրականացնող մարմնի փաստացի եւ դրա հետ կապ չունեցող գործառույթները,

զ) ունենա փաստաթղթերով ամրագրված՝ որակի հսկողության համակարգ՝ համապատասխան 6.2.2.5.3-ի,

է) հաստատման համար հայտեր ներկայացնի՝ 6.2.2.6.4-ին համապատասխան,

ը) ապահովի, որ պարբերական ստուգումներն ու փորձարկումները կատարվեն 6.2.2.6.5-ին համապատասխան, եւ

թ) վարի զեկույցների եւ արձանագրությունների արդյունավետ ու պատշաճ համակարգ՝ 6.2.2.6.6-ին համապատասխան:

6.2.2.6.3. *Պարբերական ստուգումներ եւ փորձարկումներ իրականացնող մարմնի որակի հսկողության համակարգն ու աուդիտը*

6.2.2.6.3.1. Որակի հսկողության համակարգը

Որակի հսկողության համակարգը պետք է պարունակի բոլոր

տարրերը, պահանջներն ու դրույթները՝ ընդունված պարբերական ստուգումներ եւ փորձարկումներ իրականացնող մարմնի կողմից: Այն պետք է համակարգված եւ կանոնավոր ամրագրվի փաստաթղթերում՝ գրավոր կանոնակարգերի, ընթացակարգերի եւ ցուցումների միջոցով:

Որակի հսկողության համակարգը պետք է ներառի.

- ա) կազմակերպչական կառուցվածքի եւ պարտականությունների նկարագրությունը,
- բ) արտադրման, որակի հսկողության, որակի ապահովման եւ տեխնոլոգիական գործընթացների համապատասխան ցուցումները, որոնք պետք է կիրառվեն,
- գ) որակի մասին արձանագրությունները, ինչպես, օրինակ՝ ստուգումների արձանագրությունները, փորձարկումների տվյալները, ստուգաճշտման տվյալները եւ սերտիֆիկատները,
- դ) ղեկավարության կողմից իրականացվող վերանայումները՝ ապահովելու համար որակի հսկողության համակարգի արդյունավետ աշխատանքը՝ հիմնված 6.2.2.6.3.2-ին համապատասխան իրականացված աուդիտների վրա,
- ե) փաստաթղթերի եւ դրանց փոփոխությունների հսկողության գործընթացը,
- զ) ամրագրված պահանջներին չհամապատասխանող՝ ճնշումային տարաների հսկողության միջոցներ, եւ
- է) համապատասխան անձնակազմի վերապատրաստման ծրագրերը եւ որակավորման ընթացակարգերը:

#### 6.2.2.6.3.2. Աուդիտ

Պարբերական ստուգումներ եւ փորձարկումներ իրականացնող մարմինը եւ նրա կողմից կիրառվող որակի կառավարման համակարգը պետք է աուդիտի ենթարկվեն՝ որոշելու համար՝ արդյոք դրանք համապատասխանում են «ԱԴԻ» համաձայնագրի պահանջներին՝ իրավասու մարմնի պահանջների համաձայն:

Աուդիտը պետք է անցկացվի որպես նախնական հաստատման գործընթացի մի մաս (տես՝ 6.2.2.6.4.3): Աուդիտի անցկացում կարող է պահանջվել որպես հաստատումը փոփոխելու գործընթացի մի մաս (տես՝ 6.2.2.6.4.6):

Իրավասու մարմնի պահանջներին համապատասխան՝ պարբերական աուդիտներ պետք է անցկացվեն՝ ապահովելու համար, որպեսզի պարբերական ստուգումներ եւ փորձարկումներ

իրականացնող մարմինը շարունակի համապատասխանել «ԱԴԲ» համաձայնագրի պահանջներին:

Պարբերական ստուգումներ եւ փորձարկումներ իրականացնող մարմինն պետք է ծանուցել յուրաքանչյուր աուդիտի արդյունքների մասին: Ծանուցումը պետք է աուդիտի արդյունքում արված եզրակացությունների եւ պահանջվող ցանկացած ուղղիչ գործողությունների մասին տեղեկություններ պարունակի:

6.2.2.6.3.3. Որակի կառավարման համակարգի պահպանումը

Պարբերական ստուգումներ եւ փորձարկումներ իրականացնող մարմինը պետք է որակի կառավարման համակարգը պահպանի այնպես, ինչպես այն հաստատվել է եւ որ այն մնա համարժեք ու արդյունավետ:

Պարբերական ստուգումներ եւ փորձարկումներ իրականացնող մարմինը պետք է որակի կառավարման համակարգը հաստատող իրավասու մարմինն ծանուցի դրանում ցանկացած փոփոխություն կատարելու մտադրության մասին՝ հաստատումը փոփոխելու՝ 6.2.2.6.4.6-ում նշված գործընթացի համաձայն:

6.2.2.6.4. *Պարբերական ստուգումներ եւ փորձարկումներ իրականացնող մարմինների գործունեության հաստատման գործընթացը*

*Նախնական հաստատում*

6.2.2.6.4.1. Այն մարմինը, ով ցանկանում է իրականացնել ճնշումային տարաների պարբերական ստուգումներ եւ փորձարկումներ, ճնշումային տարաների մասին ստանդարտի եւ «ԱԴԲ» համաձայնագրի համաձայն, պետք է դիմի, ստանա եւ պահպանի իրավասու մարմնի կողմից տրված հաստատման սերտիֆիկատը:

Այդ գրավոր հաստատումը պետք է պահանջի դեպքում ներկայացվի այն երկրի իրավասու մարմին, որտեղ դա օգտագործվելու է:

6.2.2.6.4.2. Պարբերական ստուգումներ եւ փորձարկումներ իրականացնող յուրաքանչյուր մարմին պետք է դիմում ներկայացնի, որը կպարունակի՝

ա) պարբերական ստուգումներ եւ փորձարկումներ իրականացնող մարմնի անունը եւ հասցեն, իսկ այն դեպքում, երբ դիմումը ներկայացված է լիազորված ներկայացուցչի կողմից, ապա այն պետք է պարունակի նրա անունը եւ հասցեն.

բ) պարբերական ստուգումներ եւ փորձարկումներ իրականացնող



ցանկացած ձեռնարկության հասցեն.

- գ) որակի կառավարման համակարգի համար պատասխանատու անձի (անձանց) անունը եւ պաշտոնը.
- դ) ճնշումային տարաների, պարբերական ստուգումների եւ փորձարկումների մեթոդների, ինչպես նաեւ ճնշումային տարաների մասին՝ որակի կառավարման համակարգի կողմից պահպանվող համապատասխան ստանդարտների անվանումները.
- ե) փաստաթղթեր յուրաքանչյուր ձեռնարկության, սարքավորման եւ որակի կառավարման համակարգի մասին՝ 6.2.2.6.3.1-ում նշվածի համաձայն.
- ե) պարբերական ստուգումներ եւ փորձարկումներ իրականացնող անձնակազմի որակավորումների ու վերապատրաստման մասին գրառումներ.
- է) որեւէ այլ իրավասու մարմնի կողմից համանման դիմումի հաստատումը մերժելու ցանկացած դեպքի մանրամասներ.

#### 6.2.2.6.4.3. Իրավասու մարմինները՝

- ա) ուսումնասիրում են փաստաթղթերը՝ ստուգելու համար՝ արդյո՞ք գործողություններն իրականացվել են համապատասխան ճնշումային տարայի մասին ստանդարտների եւ «ԱԴՌ» համաձայնագրի պահանջների համաձայն. եւ
- բ) 6.2.2.6.3.2-ի համաձայն աուդիտ են անցկացնում ստուգելու համար՝ արդյոք ստուգումները եւ փորձարկումներն իրականացվել են համապատասխան ճնշումային տարաների մասին ստանդարտների եւ «ԱԴՌ» համաձայնագրի համաձայն:

6.2.2.6.4.4. Աուդիտ անցկացնելուց հետո գոհացուցիչ արդյունքներ ստանալու եւ 6.2.2.6.4-ի բոլոր կիրառվող պահանջները բավարարված լինելու դեպքում տրվում է հաստատման սերտիֆիկատ: Այն ներառում է պարբերական ստուգումներ եւ փորձարկումներ իրականացնող մարմնի անունը, յուրաքանչյուր ձեռնարկությունում գրանցված ապրանքային նշանը, հասցեն եւ դրա հաստատված գործունեության նույնականացման համար անհրաժեշտ տվյալներ (օրինակ՝ ճնշումային տարաների, պարբերական ստուգումների եւ փորձարկման մեթոդների, ինչպես նաեւ ճնշումային տարաների մասին ստանդարտների անվանումներ):

6.2.2.6.4.5. Այն դեպքում, երբ պարբերական ստուգումներ եւ փորձարկումներ իրականացնող մարմինն իր գործունեության հաստատման մերժում է ստանում, իրավասու մարմինն այդ մերժման պատճառների մասին մանրամասն գրավոր բացատրություն է տրամադրում:

*Պարբերական ստուգումներ եւ փորձարկումներ իրականացնող մարմնի գործունեության հաստատման փոփոխությունները*

6.2.2.6.4.6. Հաստատումն ստանալուց հետո պարբերական ստուգումներ եւ փորձարկումներ իրականացնող մարմինը հաստատման հավաստագիրը տրամադրած իրավասու մարմնին պետք է ծանուցի նախնական հաստատման հետ կապված եւ 6.2.2.6.4.2-ի համաձայն ներկայացված տեղեկությունների ցանկացած փոփոխության մասին: Փոփոխությունները պետք է գնահատվեն՝ որոշելու համար՝ արդյոք կբավարարվեն համապատասխան ճնշումային տարաների մասին ստանդարտների եւ «ԱԴՌ» համաձայնագրի պահանջները: Աուդիտի անցկացում կարող է պահանջվել՝ 6.2.2.6.3.2-ի համաձայն: Իրավասու մարմինը պետք է ընդունի կամ գրավոր մերժի այդ փոփոխությունները եւ անհրաժեշտության դեպքում փոփոխված հաստատման սերտիֆիկատ տրամադրի:

6.2.2.6.4.7. Իրավասու մարմինը պահանջի դեպքում պետք է ցանկացած այլ իրավասու մարմին ներկայացնի նախնական հաստատումներին, հաստատումների փոփոխություններին եւ դրանց հետ վերցմանն առնչվող տեղեկություններ:

6.2.2.6.5. *Պարբերական ստուգումների եւ փորձարկումների իրականացումն ու դրա հավաստումը*

Ճնշումային տարայի վրա պարբերական ստուգումների եւ փորձարկումների մասին մակնշման փակցված լինելը պետք է համարվի հայտարարություն այն մասին, որ այդ ճնշումային տարան համապատասխանում է ճնշումային տարաների մասին կիրառվող ստանդարտներին եւ «ԱԴՌ» համաձայնագրի պահանջներին: Պարբերական ստուգումներ եւ փորձարկումներ իրականացնող մարմինը պետք է պարբերական ստուգումների եւ փորձարկումների մասին մակնշում, այդ թվում նաեւ՝ իր գրանցված ապրանքային նշանն ամրացնի յուրաքանչյուր հաստատված ճնշումային տարայի վրա (տես՝ 6.2.2.7.7):

Պարբերական ստուգումներ եւ փորձարկումներ իրականացնող մարմինը, նախքան ճնշումային տարան կլցնեն, պետք է տրամադրի ճնշումային տարայի պարբերական ստուգումներ եւ փորձարկումներ անցած լինելու փաստը հաստատող արձանագրություն:

6.2.2.6.6. Արձանագրությունները

Պարբերական ստուգումներ եւ փորձարկումներ իրականացնող մարմինը պարբերական ստուգումներ եւ փորձարկումներ անցած ճնշումային տարաների մասին (դրանք թե՛ բարեհաջող անցնելու, թե՛ ձախողելու մասին), ինչպես նաեւ փորձարկումն իրականացրած ձեռնարկության գտնվելու վայրի մասին արձանագրությունները պետք է պահպանի 15 տարուց ոչ պակաս ժամկետով:


Ճնշումային տարայի սեփականատերը պետք է նույնատեսակ արձանագրությունը պահպանի մինչեւ հաջորդ պարբերական ստուգումների եւ փորձարկումների անցկացումը, քանի դեռ ճնշումային տարան մշտապես չի հանվել գործածությունից:

6.2.2.7. **ՄԱԿ-ի նշագրման վերալցավորվող ճնշումային տարաների մակնշումը**

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** ՄԱԿ-ի նշագրման՝ մեդաղ-հիդրիդային պահման համակարգերի մակնշման մասին պահանջները ներկայացված են 6.2.2.9-ում, իսկ ՄԱԿ-ի նշագրման՝ բալոնների կապուկների մակնշման մասին պահանջները ներկայացված են 6.2.2.10-ում:

6.2.2.7.1. ՄԱԿ-ի նշագրման վերալցավորվող տարաները պետք է հստակորեն եւ ընթեռնելի մակնշվեն հաստատման, գործառական ու արտադրական նշաններով: Այդ նշանները պետք է մշտապես փակցված լինեն ճնշումային տարաների վրա (օրինակ՝ դրոշմելու, փորագրելու կամ դաջելու եղանակով): Նշանները պետք է գտնվեն ճնշումային տարայի ուսանման թեքվածքի, վերին ծայրի կամ վզիկի հատվածներում կամ ճնշումային տարայի վրա մշտապես փակցված որեւէ մասի վրա (օրինակ՝ եռակցված անուրի կամ փակ կրիոգեն տարայի արտաքին պատյանի հետ եռակցված հակակոռոզիոն պաշտպանիչ թիթեղ): ՄԱԿ-ի նշագրման փաթեթվածքների խորհրդանշանից բացի՝ մյուս բոլոր նշանների նվազագույն չափսերը 140 մմ կամ ավելի տրամագծով ճնշումային տարաների դեպքում պետք է կազմեն 5 մմ, իսկ 140 մմ-ից պակաս տրամագծով ճնշումային տարաների դեպքում՝ 2.5 մմ: ՄԱԿ-ի նշագրման փաթեթվածքների խորհրդանշանի նվազագույն չափսը 140 մմ կամ ավելի տրամագծով ճնշումային տարաների դեպքում պետք է կազմի 10 մմ, իսկ 140 մմ-ից պակաս տրամագծով ճնշումային տարաների դեպքում՝ 5 մմ:

6.2.2.7.2. Պետք է կիրառվեն հետեւյալ հաստատման նշանները՝

- ա) ՄԱԿ-ի նշագրման փաթեթվածքների խորհրդանշան: 
- Այս խորհրդանշանը չպետք է օգտագործվի որեւէ այլ նպատակով,

բացի նրանից, որպեսզի հաստատի, որ փաթեթվածքը, սորուն բեռների համար նախատեսված փափուկ կոնտեյներները, շարժական ցիստեռնը կամ ԳԲՏԿ-ն համապատասխանում են 6.1, 6.2, 6.3, 6.5, 6.6, 6.7 կամ 6.11 գլուխների համապատասխան պահանջներին:

- բ) նախագծման, արտադրության եւ փորձարկման դեպքում կիրառվող տեխնիկական ստանդարտ (օրինակ՝ ISO 9809-1).
- գ) հաստատման երկիրը նույնականացնող նիշ (նիշեր), ինչպես սահմանված է միջազգային ճանապարհային երթեւեկության մեջ ներգրավված փոխադրամիջոցների վրա կիրառվող տարբերանշաններով<sup>2</sup>.

**ՃԱՆՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** Հաստատման երկիր պետք է հասկացվի այն երկիրը, որը հաստատել է արտադրության ժամանակ որել է առանձին տարա ստուգած մարմնի գործունեությունը:

- դ) ստուգող մարմնի՝ մակնշումը թույլատրող երկրի իրավասու մարմնի կողմից գրանցված անհատական նշանը կամ կնիքը.
- ե) նախնական ստուգման օրը, տարեթիվը (չորս թվով նշված) , որին պետք է հետեւի թեք գծով անջատված (այսինքն՝ «/») ամիսը՝ (երկու թվով նշված):

#### 6.2.2.7.3. Պետք է կիրառվեն հետեւյալ գործառական նշանները՝

- զ) փորձարկման ճնշման մասին նշում՝ արտահայտված բարերով, որին պետք է նախորդեն «PH» տառերը եւ հաջորդեն «BAR» տառերը.
- է) դատարկ ճնշումային տարաների զանգվածի մասի նշում՝ ներառյալ դրան մշտապես կցված բաղկացուցիչ մասերի (վզիկի օղագոտի, հատակամասի օղագոտի եւ այլն) զանգվածները՝ արտահայտված կիլոգրամներով, որոնց պետք է հետեւեն «KG» տառերը: Այդ զանգվածը չպետք է ներառի կափույրի, կափույրի թասակի կամ կափույրի պաշտպանիչ սարքի կամ ացետիլենի դեպքում օգտագործվող ծակոտկեն նյութի կամ ցանկացած պատվածքի զանգվածը: Այդ զանգվածը պետք է արտահայտվի երեք իմաստալից թվանշաններով՝ վերջին թիվը կլորացված: 1 կգ-ից պակաս զանգվածով բալոնների դեպքում, զանգվածը պետք է արտահայտվի երկու իմաստալից թվանշաններով, որոնցից վերջին թիվը՝ կլորացված: Լուծված ացետիլենի համար

<sup>2</sup> Միջազգային երթեւեկության մեջ գործող փոխադրամիջոցների եւ դրանց կցորդների՝ գրանցման պետության տարբերանշաններ, օրինակ՝ 1949 թվականի «Ճանապարհային երթեւեկության մասին» Ժնեւի կոնվենցիային կամ 1968 թվականի «Ճանապարհային երթեւեկության մասին» Վիեննայի կոնվենցիային համապատասխան:

նախատեսված ՄԱԿ-ի նշագրման 1001 համարի եւ առանց լուծիչների ացետիլենի համար նախատեսված ՄԱԿ-ի նշագրման 3374 համարի ճնշումային տարաների դեպքում ամբողջ թիվը տասնորդականից զատող կետից հետո պետք է առնվազն մեկ տասնորդական նիշ, իսկ 1 կգ-ից պակաս զանգվածով ճնշումային տարաների դեպքում առնվազն երկու թիվ ցույց տրվի:

- ը) ճնշումային տարաների պատերի հաստության երաշխավորված նվազագույն չափսը պետք է արտահայտված լինի միլիմետրերով, որին կհաջորդեն «MM» տառերը: Այդ գործակցի նշումը չի պահանջվում 1 լիտր կամ դրանից պակաս տարողությամբ ճնշումային տարաների կամ կոմպոզիտային բալոնների կամ փակ կրիոգեն տարաների դեպքում:
- թ) սեղմված գազերի համար նախատեսված ՄԱԿ-ի նշագրման 1001 համարի՝ լուծված ացետիլենի եւ ՄԱԿ-ի նշագրման 3374 համարի՝ առանց լուծիչների ացետիլենի համար նախատեսված ճնշումային տարաների դեպքում աշխատանքային ճնշման գործակիցը պետք է արտահայտվի բարերով, որին կհաջորդեն «PW» տառերը: Փակ կրիոգեն տարաների դեպքում առավելագույն թույլատրելի աշխատանքային ճնշման գործակցին պետք է հաջորդեն «ԱԹԱՃ» տառերը:
- ժ) հեղուկացված գազերի եւ սառեցված հեղուկացված գազերի համար նախատեսված ճնշումային տարաների դեպքում լիտրով արտահայտված տարողությունը՝ պետք է ներկայացված լինի երեք իմաստալից թվանշաններով՝ վերջին թիվը կլորացված եւ դրանց պետք է հաջորդի «L» տառը: Այն դեպքում, երբ նվազագույն կամ նոմինալ տարողության արժեքն ամբողջ թիվ է, ապա ամբողջ թիվը տասնորդականից զատող կետից հետո եկող թվանշանները կարող են անտեսվել:
- ժա) ՄԱԿ-ի նշագրման 1001 համարի՝ լուծված ացետիլենի համար նախատեսված ճնշումային տարաների դեպքում դատարկ եւ տարան լցնելու ժամանակ չհեռացված կցամասերով ու աքսեսուարներով տարայի, դրա ցանկացած պատվածքի, ծակոտկեն նյութի, լուծույթի եւ հագեցած գազի ընդհանուր զանգվածը պետք է արտահայտված լինի երեք իմաստալից թվանշաններով՝ վերջին թիվը կլորացված եւ դրանց պետք է հաջորդեն «KG» տառերը: Առնվազն մեկ տասնորդական նիշ պետք է ցույց տրվի ամբողջ թիվը տասնորդականից զատող կետից հետո: Զանգվածը 1 կգ-ից պակաս զանգվածով ճնշումային տարաների դեպքում պետք է արտահայտվի երկու

իմաստալից թվանշաններով, որոնցից վերջին թիվը՝ կլորացված.

ժբ) ՄԱԿ-ի նշագրման 3374 համարի՝ առանց լուծիչների ացետիլենի համար նախատեսված ճնշումային տարաների դեպքում դատարկ եւ տարան լցնելու ժամանակ չհեռացված կցամասերով ու արտադրանքներով տարայի, դրա ցանկացած պատվածքի, ծակոտկեն նյութի ընդհանուր զանգվածը պետք է արտահայտված լինի երեք իմաստալից թվանշաններով՝ վերջին թիվը կլորացված եւ դրանց պետք է հաջորդեն «KG» տառերը: Առնվազն մեկ տասնորդական նիշ պետք է ցույց տրվի ամբողջ թիվը տասնորդականից զատող կետից հետո: 1 կգ-ից պակաս զանգվածով ճնշումային տարաների դեպքում զանգվածը պետք է արտահայտվի երկու իմաստալից թվանշաններով, որոնցից վերջին թիվը՝ կլորացված.

6.2.2.7.4. Պետք է կիրառվեն հետեւյալ արտադրական նշանները՝

ժգ) բալոնի վզիկի նույնականացման նշան (օրինակ՝ 25E): Այդ նշանը չի պահանջվում փակ կրիոգեն տարաների դեպքում.

ժդ) իրավասու մարմնի կողմից գրանցված արտադրողի նշան: Այն դեպքում, երբ արտադրության երկիրը տարբեր է հաստատման երկրից, արտադրողի նշանին պետք է նախորդի արտադրության երկիրը նույնականացնող նիշը (նիշերը), ինչպես նշված է միջազգային ճանապարհային երթուղիության մեջ ներգրավված փոխադրամիջոցների վրա օգտագործվող նիշին<sup>2</sup>: Երկրի եւ արտադրողի նշանները միմյանցից պետք է բաժանված լինեն բացատով կամ թեք գծով.

ժե) արտադրողի կողմից սահմանված սերիական համար.

ժե) պողպատյա ճնշումային տարաների եւ ջրածնային փխրունության ռիսկ ենթադրող գազերի փոխադրման համար նախատեսված կոմպոզիտային պողպատյա ներդիրով ճնշումային տարաների դեպքում պետք է նշված լինի «H» տառը, որը ցույց է տալիս պողպատի համատեղելիությունը (տե՛ս ISO 11114-1:2012):

ժէ) կոմպոզիտային բալոնների եւ գլանների դեպքում, որոնք ունեն նախատեսված շահագործման հաշվարկային ժամկետ, «ՎԵՐՋՆԱԿԱՆ» տառերը, որոնց հաջորդում է տարին ցույց

---

<sup>2</sup> Միջազգային երթուղիության մեջ գործող փոխադրամիջոցների եւ դրանց կցորդների՝ գրանցման պետության փարբերանշաններ, օրինակ՝ 1949 թվականի «Ճանապարհային երթուղիության մասին» Ժնեւի կոնվենցիային կամ 1968 թվականի «Ճանապարհային երթուղիության մասին» Վիեննայի կոնվենցիային համապատասխան:

տվող շահագործման հաշվարկային ժամկետը (չորս նիշ), որին հաջորդում է ամիսը (երկու նիշ)՝ առանձնացնելով դրանք միմյանցից թեք գծով (այսինքն՝ «/»):


- ժը) կոմպոզիտային բալոնների եւ գլանների դեպքում, որոնք ունեն 15 տարուց ավելի շահագործման հաշվարկային սահմանափակ ժամկետ, եւ կոմպոզիտային բալոնների եւ գլանների դեպքում, որոնք ունեն շահագործման հաշվարկային անսահմանափակ ժամկետ, «ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» տառերը, որոնց հաջորդում է պատրաստման (նախնական ստուգման) տարուց հաշվարկված 15 տարի հաշվարկով տարեթիվը՝ որպես տարի (չորս նիշ), որին հաջորդում է ամիսը (երկու նիշ)՝ առանձնացնելով դրանք միմյանցից թեք գծով (այսինքն՝ «/»):

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** Երբ նախատեսված նախնական տեսակը համապատասխանում է իր շահագործման հաշվարկային ժամկետի փորձարկման ծրագրի՝ 6.2.2.1.1-ի ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2-ում կամ 6.2.2.1.2-ի ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2-ում նշված պահանջները, հետագա արտադրանքի դեպքում նախնական շահագործման ժամկետի վերաբերյալ մականշում այլևս չի պահանջվում: Մեկ կառուցվածքի տեսակի բալոնների եւ գլանների վրա, որոնք բավարարում են շահագործման հաշվարկային ժամկետի փորձարկման ծրագրի պահանջները, նախնական շահագործման ժամկետի վերաբերյալ մականշումը պետք է չերեւա:

6.2.2.7.5. Վերոնշյալ նշանները պետք է դասակարգվեն երեք խմբի՝

- արտադրական նշանները պետք է կազմեն գազաթային մասում նշված խումբը եւ պետք է ներկայացված լինեն 6.2.2.7.4-ում նշված հաջորդականությամբ՝ բացառությամբ 6.2.2.7.4 (ժէ) եւ (ժը)-ում նկարագրված նշանների, որոնք պետք է գտնվեն 6.2.2.7.7-ում նշված պարբերական ստուգման եւ փորձարկման մասին նշանների կողքին:
- 6.2.2.7.3-ում նշված գործառական նշանները պետք է կազմեն միջին մասում նշված խումբը եւ փորձարկման ճնշման մասին նշմանը (զ) պետք է անմիջապես նախորդի աշխատանքային ճնշման մասին նշումը (թ)՝ վերջինիս անհրաժեշտության դեպքում.
- հաստատման նշանները պետք է կազմեն ստորին մասում նշված խումբը եւ պետք է ներկայացված լինեն 6.2.2.7.2-ում նշված հաջորդականությամբ.

Հետեւյալը բալոնի մակնշման օրինակ է:

	ժգ) 25E	ժդ) D MF	ժե) 765432	ժզ) H
թ)	զ)	է)	ժ)	ը)
PW200	PH300BAR	62.1KG	50L	5.8MM
ա) 	բ) ISO 9809-1	գ) F	դ) IB	ե) 2000/12

6.2.2.7.6. Կողապատի մակերեսից տարբեր՝ այլ մակերեսների վրա թույլատրվում է կատարել ուրիշ նշումներ՝ պայմանով, որ դրանք կկատարվեն թույլ լարման մակերեսների վրա եւ այնպիսի չափսեր եւ խորություն չեն ունենա, որոնց հետեւանքով կստեղծվեն լարումների վնասակար կենտրոնացումներ: Փակ կրիոգեն տարաների դեպքում այդօրինակ նշանները կարող են գտնվել արտաքին պատյանին կցված առանձին թիթեղի վրա: Այդպիսի նշանները չպետք է հակասեն պահանջվող նշաններին:

6.2.2.7.7. Ի հավելումն նախորդ նշանների՝ յուրաքանչյուր վերալցավորվող ճնշումային տարա, որը համապատասխանում է 6.2.2.4-ում նշված պարբերական ստուգումների եւ փորձարկումների պահանջներին, պետք է մակնշվի՝

- ա) պարբերական ստուգումներ եւ փորձարկումներ իրականացնող մարմնի գործունեությունը թույլատրող երկիրը նույնականացնող նիշը (նիշերը), ինչպես նշվում է միջազգային ճանապարհային երթեւեկության մեջ ներգրավված փոխադրամիջոցների վրա օգտագործվող նիշով:<sup>2</sup> Այդ մակնշումը չի պահանջվում այն դեպքում, երբ այդ մարմնի գործունեությունը հաստատվել է արտադրությունը հաստատող երկրի իրավասու մարմնի կողմից.
- բ) իրավասու մարմնի կողմից պարբերական ստուգումներ եւ փորձարկումներ իրականացնելու համար թույլտվություն ստացած մարմնի գրանցված նշանով.

<sup>2</sup> Միջազգային երթեւեկության մեջ գտնվող փոխադրամիջոցների եւ դրանց կցորդների՝ գրանցման պեղության փարբերանշաններ, օրինակ՝ 1949 թվականի «Ճանապարհային երթեւեկության մասին» Ժնեւի կոնվենցիային կամ 1968 թվականի «Ճանապարհային երթեւեկության մասին» Վիեննայի կոնվենցիային համապատասխան:



գ) պարբերական ստուգման եւ փորձարկման անցկացման օրը, տարեթիվը (նշված երկու թվով), որին պետք է հետեւի թեք գծով անջատված (այսինքն՝ «/») ամիսը՝ (նշված երկու թվով): Տարին նշելու համար կարող է չորս թիվ օգտագործվել:

Վերոնշյալ նշանները պետք է նշվեն ներկայացված հաջորդականությամբ:

6.2.2.7.8. Ացետիլենի համար նախատեսված բալոնների դեպքում իրավասու մարմնի համաձայնությամբ կարող են բալոնի կափույրի մոտ գտնվող օղագոտու կալիչի վրա փորագրվել ամենավերջին պարբերական ստուգման ամսաթիվը եւ պարբերական ստուգումն ու փորձարկումն իրականացնող մարմնի կնիքը: Օղակը պետք է այնպես կազմաձեւված լինի, որ այն հնարավոր լինի հեռացնել միայն կափույրը բալոնից առանձնացնելու դեպքում:

6.2.2.7.9. *(Հանվել է):*

#### **6.2.2.8. ՄԱԿ-ի նշագրման չվերալցավորվող ճնշումային տարաների մակնշումը**

6.2.2.8.1. 6.2.2.8.1-ում նշված ՄԱԿ-ի նշագրման չվերալցավորվող տարաները հստակորեն եւ ընթեռնելի պետք է մակնշվեն հաստատման նշաններով, ինչպես նաեւ գազերի համար նախատեսված կամ ճնշումային տարաներին հատուկ նշաններով: Այդ նշանները պետք է մշտապես փակցված լինեն ճնշումային տարաների վրա (օրինակ՝ տպելու, դրոշմելու, փորագրելու կամ դաջելու եղանակով): Բացառությամբ այդ նշանները տպելու դեպքերի՝ նշանները պետք է գտնվեն ճնշումային տարայի ուսանման թեքվածքի, վերին ծայրի կամ վզիկի հատվածներում կամ ճնշումային տարայի վրա մշտապես փակցված որեւէ մասի վրա (օրինակ՝ եռակցված անուր): ՄԱԿ-ի նշագրման փաթեթվածքների խորհրդանշանից եւ «ՉՎԵՐԱԼՑԱՎՈՐԵԼ» նշանից բացի՝ մյուս բոլոր նշանների նվազագույն չափսերը 140 մմ կամ ավելի տրամագծով ճնշումային տարաների դեպքում պետք է կազմեն 5 մմ, իսկ 140 մմ-ից պակաս տրամագծով ճնշումային տարաների դեպքում՝ 2.5 մմ: ՄԱԿ-ի նշագրման փաթեթվածքների խորհրդանշանի նվազագույն չափսը 140 մմ կամ ավելի տրամագծով ճնշումային տարաների դեպքում պետք է կազմի 10 մմ, իսկ 140 մմ-ից պակաս տրամագծով ճնշումային տարաների դեպքում՝ 5 մմ: «ՉՎԵՐԱԼՑԱՎՈՐԵԼ» նշանի նվազագույն չափսը պետք է կազմի 5 մմ:

6.2.2.8.2. 6.2.2.7.2 - 6.2.2.7.4-ում թվարկված նշանները՝ բացառությամբ (է), (ը) եւ (ժգ) կետերում նշվածների, պետք է կիրառվեն: (ժե) կետում նշված սերիական համարը կարող է փոխարինվել խմբաքանակի համարով: Բացի դրանից՝ պահանջվում է, որպեսզի

«ՉՎԵՐԱԼՑԱՎՈՐԵԼ» բառի տառերն ունենան առնվազն 5 մմ բարձրություն:

6.2.2.8.3. Պետք է կիրառվեն 6.2.2.7.5-ի պահանջները:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** Չվերալցավորվող ճնշումային փարաները, հաշվի առնելով դրանց չափսերը, կարող են փոխարինել այս հիմնական նշանների պիտակներին:

6.2.2.8.4. Կողապատի մակերեսից տարբեր՝ այլ մակերեսների վրա թույլատրվում է կատարել ուրիշ նշումներ՝ պայմանով, որ դրանք կկատարվեն թույլ լարման մակերեսների վրա եւ այնպիսի չափսեր ու խորություն չեն ունենա, որոնց հետեւանքով կստեղծվեն լարումների վնասակար կենտրոնացումներ: Այդպիսի նշանները չպետք է հակասեն պահանջվող նշաններին:

**6.2.2.9. ՄԱԿ-ի նշագրման մետաղ-հիդրիդային պահման համակարգերի մակնշումը**

6.2.2.9.1. ՄԱԿ-ի նշագրման մետաղ-հիդրիդային պահման համակարգերը պետք է հստակորեն եւ ընթեռնելի կերպով մակնշվեն վերոնշյալ նշաններով: Այդ նշանները պետք է մշտապես փակցված լինեն մետաղ-հիդրիդային պահման համակարգի վրա (օրինակ՝ դրոշմելու, փորագրելու կամ դաջելու եղանակով): Նշանները պետք է գտնվեն մետաղ-հիդրիդային պահման համակարգի ուսանման թեքվածքի, վերին ծայրի կամ վզիկի հատվածներում կամ մետաղ-հիդրիդային պահման համակարգի վրա մշտապես փակցված որեւէ մասի վրա: ՄԱԿ-ի նշագրման փաթեթվածքների խորհրդանշանից բացի՝ մյուս բոլոր նշանների նվազագույն չափսերը 140 մմ կամ ավելի տրամագծով մետաղ-հիդրիդային պահման համակարգերի դեպքում պետք է կազմեն 5 մմ, իսկ 140 մմ-ից պակաս տրամագծով մետաղ-հիդրիդային պահման համակարգերի դեպքում՝ 2.5 մմ: ՄԱԿ-ի նշագրման փաթեթվածքների խորհրդանշանի նվազագույն չափսը 140 մմ կամ ավելի տրամագծով մետաղ-հիդրիդային պահման համակարգերի դեպքում պետք է կազմի 10 մմ, իսկ 140 մմ-ից պակաս տրամագծով մետաղ-հիդրիդային պահման համակարգերի դեպքում՝ 5 մմ:

6.2.2.9.2. Պետք է կիրառվեն հետեւյալ նշանները՝

ա) ՄԱԿ-ի նշագրման փաթեթվածքների խորհրդանշան:  :

Այս խորհրդանշանը չպետք է օգտագործվի որեւէ այլ նպատակով, բացի նրանից, որպեսզի հաստատի, որ փաթեթվածքը, սորուն բեռների համար նախատեսված փափուկ կոնտեյներները, շարժական ցիստեռնը կամ ԳԲՏԿ-ն

համապատասխանում են 6.1, 6.2, 6.3, 6.5, 6.6, 6.7 կամ 6.11 գլուխների համապատասխան պահանջներին.

- բ) «ISO 16111» (նախագծման, արտադրության եւ փորձարկման տեխնիկական ստանդարտ).
- գ) հաստատման երկիրը նույնականացնող նիշ (նիշեր), ինչպես սահմանված է միջազգային ճանապարհային երթեւեկության մեջ ներգրավված փոխադրամիջոցների վրա կիրառվող տարբերանշաններով<sup>1</sup>:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** Հաստատման երկիր պետք է հասկացվի այն երկիրը, որը հաստատել է արտադրության ժամանակ որել է առանձին տարա ստուգած մարմնի գործունեությունը:

- դ) ստուգող մարմնի՝ մակնշումը թույլատրող երկրի իրավասու մարմնի կողմից գրանցված անհատական նշանը կամ կնիքը:
- ե) նախնական ստուգման օրը, տարեթիվը (նշված չորս թվով), որին պետք է հետեւի թեք գծով անջատված (այսինքն՝ «/») ամիսը՝ (նշված երկու թվով):
- զ) տարայի փորձարկման ճնշման մասին նշում՝ արտահայտված բարերով, որին պետք է նախորդեն «PH» տառերը եւ հաջորդեն «BAR» տառերը.
- է) մետաղ-հիդրիդային պահման համակարգի լիցքավորման նոմինալ ճնշման մասին նշում՝ արտահայտված բարերով, որին պետք է նախորդեն «RCP» տառերը եւ հաջորդեն «BAR» տառերը.
- ը) իրավասու մարմնի կողմից գրանցված արտադրողի նշան: Այն դեպքում, երբ արտադրության երկիրը տարբերվում է հաստատման երկրից, արտադրողի նշանին պետք է նախորդի (նախորդեն) արտադրության երկիրը նույնականացնող նիշը (նիշերը), ինչպես սահմանված է միջազգային ճանապարհային երթեւեկության մեջ ներգրավված փոխադրամիջոցների վրա օգտագործվող նիշի համար<sup>1</sup>: Երկրի եւ արտադրողի նշանները միմյանցից պետք է բաժանված լինեն բացատով կամ թեք գծով.
- թ) արտադրողի կողմից սահմանված սերիական համար.
- ժ) պողպատյա տարանների եւ կոմպոզիտային պողպատյա ներդիրով տարանների դեպքում՝ պողպատի համատեղելիության մասին վկայող «H» տառը (տե՛ս ISO 1114-1:2012) եւ

<sup>1</sup> Միջազգային երթեւեկության մեջ գործվող փոխադրամիջոցների եւ դրանց կցորդների՝ գրանցման պետության տարբերանշաններ, օրինակ՝ 1949 թվականի «Ճանապարհային երթեւեկության մասին» Ժնեւի կոնվենցիային կամ 1968 թվականի «Ճանապարհային երթեւեկության մասին» Վիեննայի կոնվենցիային համապատասխան:

ժա) այն դեպքում, երբ մետաղ-հիդրիդային պահման համակարգերի համար նախատեսված է շահագործման սահմանափակ ժամանակահատված՝ շահագործման ժամկետի լրանալու ամսաթիվը՝ նշված «FINAL» տառերով, որին պետք է հաջորդի տարեթիվը (չորս թվով), ապա՝ ամիսը (երկու թվով) եւ դրանք պետք է միմյանցից առանձնացված լինեն թեք գծով (այսինքն՝ «/»):

Վերոնշյալ (ա) - (ե) կետերում նշված հաստատման նշանները պետք է նշվեն ներկայացված հաջորդականությամբ: (զ) կետում նշված փորձարկման ճնշման մասին նշանը պետք է անմիջապես նախորդի (է) կետի լիցքավորման նոմինալ ճնշման մասին նշումը: Վերոնշյալ (ը)-(ժա) կետերում նշված արտադրական նշանները պետք է նշվեն ներկայացված հաջորդականությամբ:

6.2.2.9.3. Կողապատի մակերեսից տարբեր՝ այլ մակերեսների վրա թույլատրվում է կատարել ուրիշ նշումներ, պայմանով, որ դրանք կկատարվեն թույլ լարման մակերեսների վրա եւ այնպիսի չափսեր ու խորություն չեն ունենա, որոնց հետեւանքով կստեղծվեն լարումների վնասակար կենտրոնացումներ: Այդպիսի նշանները չպետք է հակասեն պահանջվող նշաններին:

6.2.2.9.4. Ի հավելումն նախորդ նշանների՝ յուրաքանչյուր մետաղ-հիդրիդային պահման համակարգ, որը համապատասխանում է 6.2.2.4-ում նշված պարբերական ստուգումների եւ փորձարկումների պահանջներին, պետք է մակնշվի՝

ա) պարբերական ստուգումներ եւ փորձարկումներ իրականացնող մարմնի գործունեությունը թույլատրող երկիրը նույնականացնող նիշով (նիշերով), ինչպես սահմանված է միջազգային ճանապարհային երթեւեկության մեջ ներգրավված փոխադրամիջոցների վրա օգտագործվող տարբերանշաններով<sup>2</sup>: Այդ մակնշումը չի պահանջվում այն դեպքում, երբ այդ մարմնի գործունեությունը հաստատվել է արտադրությունը հաստատող երկրի իրավասու մարմնի կողմից.

բ) իրավասու մարմնի կողմից պարբերական ստուգումներ եւ փորձարկումներ իրականացնելու համար թույլտվություն ստացած մարմնի գրանցված նշանով.

գ) պարբերական ստուգման եւ փորձարկման անցկացման օրը, տարեթիվը (նշված երկու թվով), որին պետք է հետեւի թեք գծով

<sup>2</sup> Միջազգային երթեւեկության մեջ գտնվող փոխադրամիջոցների եւ դրանց կցորդների՝ գրանցման պեղության տարբերանշաններ, օրինակ՝ 1949 թվականի «Ճանապարհային երթեւեկության մասին» Ժնեւի կոնվենցիային կամ 1968 թվականի «Ճանապարհային երթեւեկության մասին» Վիեննայի կոնվենցիային համապատասխան:

անջատված (այսինքն՝ «/») ամիսը՝ (նշված երկու թվով): Տարին նշելու համար կարող է օգտագործվել չորս թիվ:

Վերոնշյալ նշանները պետք է նշվեն ներկայացված հաջորդականությամբ:

**6.2.2.10. ՄԱԿ-ի նշագրման բալոնների կապուկների մակնշումը**

6.2.2.10.1. Բալոնների կապուկների առանձին բալոնները մակնշվում են 6.2.2.7-ի համապատասխան:

6.2.2.10.2. ՄԱԿ-ի նշագրման վերալցավորվող բալոնների կապուկները պետք է հստակորեն եւ ընթեռնելի մակնշվեն հաստատման, գործառական ու արտադրական նշաններով: Այդ նշանները պետք է մշտապես փակցված լինեն (օրինակ՝ դրոշմելու, փորագրելու կամ դաջելու եղանակով) բալոնների կապուկի շրջանակին մշտապես փակցված թիթեղի վրա, ՄԱԿ-ի նշագրման փաթեթվածքների խորհրդանշանից բացի՝ մյուս բոլոր նշանների նվազագույն չափերը պետք է լինեն 5 մմ: ՄԱԿ-ի նշագրման փաթեթվածքների խորհրդանշանի նվազագույն չափը պետք է կազմի 10 մմ:

6.2.2.10.3. Պետք է կիրառվեն հետևյալ արտադրական նշանները

ա) 6.2.2.7.2 (ա), (բ), (գ), (դ) եւ (ե)-ի պահանջներին համապատասխանող սերտիֆիկացման նշաններ.

բ) 6.2.2.7.3 (զ), (թ), (ժ)-ի պահանջներին համապատասխանող գործառնական նշաններ եւ բալոնի շրջանակի եւ մշտապես կցված (բալոններ, բաշխիչ արկղեր, կցամասեր եւ կափույրներ) ընդհանուր զանգվածը: Լուծված ացետիլենի փոխադրման համար նախատեսված ՄԱԿ-ի նշագրման 1001 համարի եւ առանց լուծիչների ացետիլենի փոխադրման համար նախատեսված ՄԱԿ-ի նշագրման 3374 համարի բալոնները պետք է կրեն նաեւ նշաններ տարայի զանգվածի մասին, ինչպես սահմանված է ISO 10961:2010 ստանդարտի B.4.2 կետում. եւ

գ) 6.2.2.7.4 (ժդ), (ժե)-ի, իսկ անհրաժեշտության դեպքում նաեւ (ժզ)-ի արտադրական նշաններ:

6.2.2.10.4. Նշանները պետք է դասակարգվեն երեք խմբի՝

ա) արտադրական նշանները պետք է կազմեն գազաթային մասում նշված խումբը եւ պետք է ներկայացված լինեն 6.2.2.10.3(գ)-ում նշված հաջորդականությամբ.

բ) 6.2.2.10.3(բ)-ում նշված գործառական նշանները պետք է կազմեն միջին մասում նշված խումբը, իսկ 6.2.2.7.3(զ)-ում

նշված գործառնական նշանները պետք է անմիջապես նախորդեն 6.2.2.7.3(թ)-ում նշված նշաններին՝ վերջինիս անհրաժեշտության դեպքում.

գ) հաստատման նշանները պետք է կազմեն ստորին մասում նշված խումբը եւ պետք է ներկայացված լինեն 6.2.2.10.3(ա)-ում նշված հաջորդականությամբ:

**6.2.2.11. Համապատասխանության գնահատման եւ պարբերական ստուգումների ու փորձարկումների համարժեք ընթացակարգերը**

ՄԱԿ-ի նշագրման ճնշումային տարաների դեպքում 6.2.2.5-ով եւ 6.2.2.6-ով սահմանված պահանջները համարվում են կատարված, երբ կիրառվում են հետեւյալ ընթացակարգերը՝

Ընթացակարգը	Համապատասխան մարմինը
Տեսակի հաստատում (1.8.7.2)	Xa
Արտադրական պրոցեսի նկատմամբ վերահսկողություն (1.8.7.3)	Xa կամ IS
Նախնական ստուգումները եւ փորձարկումները (1.8.7.4)	Xa կամ IS
Պարբերական ստուգումները (1.8.7.5)	Xa կամ Xb կամ IS

«Xa» նշանակում է այն իրավասու մարմինը, նրա պատվիրակը կամ ստուգող մարմինը, որը համապատասխանում է 1.8.6.2-ի, 1.8.6.4-ի, 1.8.6.5-ի եւ 1.8.6.8-ի պահանջներին եւ հավատարմագրված է EN ISO/IEC 17020:2012 «A» տեսակի համաձայն (բացառությամբ 8.1.3-ի):

«Xb» նշանակում է ստուգող մարմինը, ով համապատասխանում է 1.8.6.2-ի, 1.8.6.4-ի, 1.8.6.5-ի եւ 1.8.6.8-ի պահանջներին եւ հավատարմագրված է EN ISO/IEC 17020:2012 «B» տեսակի համաձայն (բացառությամբ 8.1.3-ի):

«IS» նշանակում է հայտատուի կողմից իրականացվող ներքին ստուգման ծառայություն, որը վերահսկվում է 1.8.6.2-ի, 1.8.6.4-ի, 1.8.6.5-ի եւ 1.8.6.8-ի պահանջներին համապատասխանող եւ EN ISO/IEC 17020:2012 «A» տեսակի համաձայն (բացառությամբ 8.1.3-ի) հավատարմագրված ստուգող մարմնի կողմից: Ներքին ստուգման ծառայությունը պետք է չառնչվի նախագծման, արտադրության, վերանորոգման եւ սպասարկման գործընթացների հետ:

**6.2.3. ՄԱԿ-ի նշագրման ճնշումային տարա չհանդիսացող տարաների վերաբերյալ ընդհանուր պահանջները**

**6.2.3.1. Նախագծումը եւ պատրաստումը**

6.2.3.1.1. Ճնշումային տարաները եւ դրանց փականները, որոնք նախագծված, պատրաստված, ստուգված, փորձարկված եւ հաստատված չեն 6.2.2-ի

պահանջների համաձայն, պետք է նախագծվեն, պատրաստվեն, ստուգվեն, փորձարկվեն եւ հաստատվեն 6.2.1-ի ընդհանուր պահանջների, ինչպես նաեւ սույնով եւ 6.2.4-ով կամ 6.2.5-ով կատարված լրացումների եւ փոփոխությունների համաձայն:

6.2.3.1.2. Հնարավորության դեպքում պատերի հաստությունը պետք է որոշվի հաշվարկման եւ անհրաժեշտության դեպքում նաեւ՝ լարման փորձնական վերլուծության եղանակով: Պատերի հաստությունը հակառակ դեպքում կարող է որոշվել փորձնական եղանակներով:

Համապատասխան ճնշումային կաղապարների եւ օժանդակ բաղադրիչների համար նախատեսված նախագծային հաշվարկները պետք է օգտագործվեն համապատասխան ճնշումային տարաների անվտանգությունն ապահովելու համար:

Ճնշմանը դիմակայելու համար պատերի նվազագույն հաստությունը պետք է հաշվարկվի՝ հաշվի առնելով, մասնավորապես, հետեւյալը՝

- հաշվարկային ճնշման արժեքները, որոնք չպետք է ավելի ցածր լինեն փորձարկման ճնշման արժեքներից.
- հաշվարկային ջերմաստիճանի արժեքները, որոնք հնարավոր են դարձնում համապատասխան անվտանգության գործակիցների նախատեսումը.
- առավելագույն լարման եւ անհրաժեշտության դեպքում լարման գագաթնային կենտրոնացումները.
- նյութի հատկությանը բնորոշ գործոններ:

6.2.3.1.3. Ձողված ճնշումային տարաների դեպքում պետք է օգտագործվեն միայն զոդվելու հատկություն ունեցող այն մետաղները, որոնք արտաքին միջավայրի  $-20^{\circ}\text{C}$  ջերմաստիճանի դեպքում ունեն հարվածի համապատասխան ամրություն:

6.2.3.1.4. Փակ կրիոգեն տարաների՝ 6.2.1.1.8.1-ի պահանջի համաձայն հարվածի ամրությունը որոշելիս դրանք պետք է փորձարկվեն 6.8.5.3-ով սահմանված կարգով:

6.2.3.1.5. Ացետիլենի համար նախատեսված բալոններ չպետք է տեղադրվեն հալուն ապահովիչների հետ:

**6.2.3.2.** *(Նախատեսվում է վերապահում)*

**6.2.3.3. *Օժանդակ սարքավորումը***

6.2.3.3.1. Օժանդակ սարքավորումները պետք է համապատասխանեն 6.2.1.3-ի պահանջներին:

6.2.3.3.2. *Բացվածքները*

Ճնշումային թմբկազևանների համար կարող են ապահովվել լցավորման եւ դատարկման համար, ինչպես նաեւ մակարդաչափերի, մանոմետրերի կամ ճնշման նվազեցման սարքերի համար նախատեսված բացվածքներ: Անվտանգ շահագործման նորմերին համապատասխանելու համար բացվածքների թիվը պետք է պահպանվի նվազագույն թվով: Ծնշումային թմբկազևանները նույնպես կարող են ապահովված լինեն դիտանցքով, որը պետք է փակված լինի անխափան փականով:

#### 6.2.3.3.3. *Կցամասերը*

- ա) Երբ բալոնները սարքավորված են գլորումը կանխող հարմարանքով, ապա այդ հարմարանքը չպետք է միացված լինի կափույրի թասակին.
- բ) այն ճնշումային թմբկազևանները, որոնք կարող են գլորվել, պետք է սարքավորված լինեն գլորումը կանխող օղագոտով կամ այլ կերպ պաշտպանված լինեն գլորման հետեւանքով եւնթադրվող վնասվածքներից (օրինակ՝ ճնշումային տարայի մակերեսը հակակոռոզիոն մետաղով պատելու միջոցով).
- գ) բալոնների կապուկները պետք է սարքավորված լինեն դրանք անվտանգորեն վերցնելու եւ փոխադրելու համար նախատեսված համապատասխան հարմարանքներով.
- դ) մակարդաչափեր, մանոմետրեր կամ ճնշման նվազեցման սարքեր տեղադրված լինելու դեպքում, դրանք պետք է պաշտպանված լինեն կափույրների դեպքում՝ 4.1.6.8-ով պահանջվող միեւնույն եղանակով:

#### 6.2.3.4. ***Նախնական ստուգումը եւ փորձարկումը***

6.2.3.4.1. Նոր ճնշումային տարաները արտադրության ընթացքում եւ դրանից հետո պետք է ենթարկվեն փորձարկման եւ ստուգման՝ 6.2.1.5-ի պահանջների համաձայն:

6.2.3.4.2. *Այլումինե համաձուլվածքով ճնշումային տարաների նկատմամբ կիրառվող հատուկ դրույթները*

- ա) ի հավելումն 6.2.1.5.1-ի համաձայն պահանջվող նախնական ստուգման, անհրաժեշտ է իրականացնել ճնշումային տարաների ներքին պատերի միջբյուրեղային կոռոզիայի ենթարկվելու հավանականության որոշման նպատակով փորձարկում այն դեպքում, երբ օգտագործվում են պղնձի պարունակությամբ այլումինե համաձուլվածք կամ մագնեզիումի եւ մանգանի պարունակությամբ այլումինե համաձուլվածք, որում մագնեզիումի պարունակությունը 3.5%-ից ավելի է կամ մանգանի պարունակությունը քիչ է 0.5%-ից.



- բ) արտադրողը պետք է ալյումինե (պողպատե) համաձուլվածքի դեպքում փորձարկում իրականացնի՝ իրավասու մարմնի կողմից նոր համաձուլվածքի հաստատման ընթացքում, եւ դա այդուհետ պետք է կրկնվի արտադրության ընթացքում՝ յուրաքանչյուր համահավվածքի լցման ժամանակ.
- գ) ալյումինե (մագնեզիումային) համաձուլվածքի դեպքում արտադրողը պետք է փորձարկում իրականացնի իրավասու մարմնի կողմից՝ նոր համաձուլվածքի, ինչպես նաեւ արտադրական պրոցեսի հաստատման ընթացքում: Փորձարկումը պետք է կրկնել համաձուլվածքի բաղադրության կամ արտադրական պրոցեսի ցանկացած փոփոխության դեպքում:

**6.2.3.5. Պարբերական ստուգումները եւ փորձարկումները**

6.2.3.5.1. Պարբերական ստուգումների եւ փորձարկումների անցկացումը պետք է համապատասխանի 6.2.1.6-ի պահանջներին:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1.** Տեսակի հաստատում տրամադրած երկրի իրավասու մարմնի համաձայնությամբ՝ ՄԱԿ-ի նշագրման 1965 համարի գազերի, ածխաջրածնային գազի խառնուրդի, հեղուկացված, այլ կերպ չնշված, փոխադրման համար նախատեսված եւ 6.5 լ-ից պակաս տարողությամբ յուրաքանչյուր եռակցված պողպատյա բալոնի հիդրավլիկ ճնշափորձարկում կարող է փոխարինվել անվտանգության համարժեք մակարդակ ապահովող մեկ այլ փորձարկմամբ:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2.** Ամբողջածիգ պողպատյա բալոնների եւ գլանների դեպքում 6.2.1.6.1 (բ)-ի ստուգումը եւ 6.2.1.6.1 (դ)-ի՝ ճնշման տակ հիդրավլիկ փորձարկումը կարող են փոխարինվել մի ընթացակարգով, որը համապատասխանում է EN ISO 16148:2016 «Գազի բալոններ. Վերալցավորվող ամբողջածիգ պողպատյա բալոններ եւ գլաններ. Ակուստիկ արտանետումների ուսումնասիրությունը (AT) եւ դրան հաջորդող ուլտրաձայնային ուսումնասիրությունը (UT) պարբերական ստուգման եւ փորձարկման համար» ստանդարտի պահանջներին:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3.** 6.2.1.6.1 (բ)-ի ստուգումը եւ 6.2.1.6.1 (դ)-ի՝ ճնշման տակ հիդրավլիկ փորձարկումը կարող են փոխարինվել ամբողջածիգ ալյումինի համաձուլվածքի գազի բալոնների համար նախատեսված EN 1802:2002 համապատասխան իրականացվող եւ ամբողջածիգ պողպատյա գազի բալոնների համար նախատեսված EN 1968:2002 + A1:2005 ստանդարտի համապատասխան իրականացվող ուլտրաձայնային ուսումնասիրությամբ:

6.2.3.5.2. Փակ կրիոգեն տարաները պետք է ենթարկվեն P203 փաթեթավորման ցուցումների (8)(բ) ենթակետով սահմանված հաճախականությամբ պարբերական ստուգման եւ փորձարկման՝ հետեւյալի համաձայն՝

ա) տարայի ներքին վիճակի գննում եւ սարքավորումների եւ արտաքին նշանների ստուգում.

բ) արտահոսքի փորձարկում:

**6.2.3.6. *Ճնշումային տարաների հաստատումը***

6.2.3.6.1. Համապատասխանության գնահատման համար նախատեսված ընթացակարգերը եւ 1.8.7-ում նշված պարբերական ստուգումները պետք է համապատասխան մարմնի կողմից իրականացվեն հետեւյալ աղյուսակի համաձայն:

Ընթացակարգը	Համապատասխան մարմինը
Տեսակի հաստատում (1.8.7.2)	Xa
Արտադրական պրոցեսի նկատմամբ վերահսկողությունը (1.8.7.3)	Xa կամ IS
Նախնական ստուգումները եւ փորձարկումները (1.8.7.4)	Xa կամ IS
Պարբերական ստուգումներ (1.8.7.5)	Xa կամ Xb կամ IS

Վերալցավորվող ճնշումային տարաների դեպքում կափույրների եւ անվտանգության ապահովման գործառույթ ունեցող այլ հանովի հարմարանքների համապատասխանության գնահատումը կարող է իրականացվել տարաներից անկախ, ընդ որում, համապատասխանության գնահատման ընթացակարգը պետք է լինի այնքան խիստ, որքան եղել է այն ճնշումային տարայի դեպքում, որին կցված են դրանք:

«Xa» նշանակում է այն իրավասու մարմինը, նրա պատվիրակը կամ ստուգող մարմինը, ով համապատասխանում է 1.8.6.2-ի, 1.8.6.4-ի, 1.8.6.5-ի եւ 1.8.6.8-ի պահանջներին եւ հավատարմագրված է EN ISO/IEC 17020:2012 «A» տեսակի համաձայն (բացառությամբ 8.1.3-ի):

«Xb» նշանակում է ստուգող մարմինը, ով համապատասխանում է 1.8.6.2-ի, 1.8.6.4-ի, 1.8.6.5-ի եւ 1.8.6.8-ի պահանջներին ու հավատարմագրված է EN ISO/IEC 17020:2012 «B» տեսակի համաձայն (բացառությամբ 8.1.3-ի):

«IS» նշանակում է հայտատուի կողմից իրականացվող ներքին ստուգման ծառայություն, որը վերահսկվում է 1.8.6.2-ի, 1.8.6.4-ի, 1.8.6.5-ի եւ 1.8.6.8-ի պահանջներին համապատասխանող ու EN ISO/IEC 17020:2012 «A» տեսակի համաձայն (բացառությամբ 8.1.3-ի) հավատարմագրված ստուգող մարմնի կողմից: Ներքին ստուգման

ծառայությունը պետք է չառնչվի նախագծման, արտադրության, վերանորոգման եւ սպասարկման գործընթացների հետ:

6.2.3.6.2. Այն դեպքում, երբ հաստատման երկիրը «ԱԴՌ» համաձայնագրի կողմ չէ, ապա 6.2.1.7.2-ում նշված իրավասու մարմինը պետք է լինի «ԱԴՌ» համաձայնագրի կողմ հանդիսացող երկրի իրավասու մարմին:

**6.2.3.7. Արտադրողներին ներկայացվող պահանջները**

6.2.3.7.1. Պետք է կատարվեն 1.8.7-ի համապատասխան պահանջները:

**6.2.3.8. Ստուգում իրականացնող մարմիններին ներկայացվող պահանջները**

Պետք է կատարվեն 1.8.6-ի պահանջները:

**6.2.3.9. Վերալցավորվող ճնշումային տարաների մակնշումը**

6.2.3.9.1. Մակնշումը պետք է համապատասխանի 6.2.2.7-ի պաշտերին հետեւյալ տարբերակներով՝

6.2.3.9.2. Չպետք է կիրառվի 6.2.2.7.2 (ա)-ով եւ 6.2.2.7.4 (ժէ) եւ (ժը)-ով սահմանված՝ ՄԱԿ-ի նշագրման փաթեթվածքների խորհրդանշանը:

6.2.3.9.3. 6.2.2.7.3(ժ)-ի պահանջները պետք է շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

ժ) ճնշումային տարայի՝ լիտրով արտահայտված տարողությանը պետք է հաջորդի «L» տառը: Հեղուկացված գազերի համար նախատեսված ճնշումային տարաների դեպքում լիտրով արտահայտված տարողությունը պետք է արտահայտվի երեք իմաստալից թվանշաններով՝ վերջին թիվը կլորացված: Այն դեպքում, երբ նվազագույն կամ նոմինալ տարողության արժեքն ամբողջ թիվ է, ապա ամբողջ թիվը տասնորդականից զատող կետից հետո եկող թվանշանները կարող են անտեսվել:

6.2.3.9.4. 6.2.2.7.3 (է) եւ (ը)-ով, ինչպես նաեւ 6.2.2.7.4(ժգ)-ով սահմանված նշանները չեն պահանջվում ՄԱԿ-ի նշագրման 1965 համարի հեղուկացված, այլ կերպ չնշված ածխաջրածնային գազի խառնուրդի համար նախատեսված ճնշումային տարաների դեպքում:

6.2.3.9.5. 6.2.2.7.7(զ)-ի համաձայն պահանջվող ամսաթվի նշումը կատարելիս, ամիսն անհրաժեշտ չէ նշել այն գազերի դեպքում, որոնց պարբերական ստուգումների միջեւ ընկած ժամանակահատվածը կազմում է 10 կամ ավելի տարի (տե՛ս 4.1.4.1-ի P200 եւ P203 փաթեթավորման ցուցումները):

6.2.3.9.6. Նշանները, 6.2.2.7.7-ի համաձայն, կարող են փորագրվել համապատասխան նյութից պատրաստված եւ կափույրի տեղադրված լինելու դեպքում՝ բալոնին կցված օղակի վրա, որը հնարավոր կլինի հեռացնել միայն կափույրը բալոնից առանձնացնելու դեպքում:

6.2.3.9.7. *Բալոնների կապուկների մակնշումը*

6.2.3.9.7.1 Բալոնների կապուկների առանձին բալոններ մակնշվում են 6.2.3.9.1 - 6.2.3.9.6-ին համապատասխան:

6.2.3.9.7.2 Բալոնների կապուկների մակնշումը պետք է համապատասխանի 6.2.2.10.2-ի եւ 6.2.2.10.3-ի պահանջներին՝ բացառությամբ 6.2.2.7.2(ա)-ում նշված Միավորված ազգերի կազմակերպության նշագրման փաթեթվածքների խորհրդանշանի, որը չի կիրառվում:

6.2.3.9.7.3 Ի հավելումն նախորդ նշանների, բալոնների յուրաքանչյուր կապուկ, որը համապատասխանում է 6.2.4.2-ում նշված պարբերական ստուգման եւ փորձարկման պահանջներին, պետք է մակնշվի՝

ա) Պարբերական ստուգումներ եւ փորձարկումներ իրականացնող մարմնի գործունեությունը թույլատրող երկիրը նույնականացնող նիշով (նիշերով), ինչպես միջազգային ճանապարհային երթեւեկության մեջ ներգրավված փոխադրամիջոցի վրա օգտագործվող տարբերանշանը<sup>2</sup>: Այդ մակնշումը չի պահանջվում այն դեպքում, երբ այդ մարմնի գործունեությունը հաստատվել է արտադրությունը հաստատող երկրի իրավասու մարմնի կողմից:

բ) Իրավասու մարմնի կողմից պարբերական ստուգումներ եւ փորձարկումներ իրականացնելու համար թույլտվություն ստացած մարմնի գրանցված նշանով:

գ) Պարբերական ստուգման եւ փորձարկման անցկացման օրը, տարեթիվը (նշված երկու թվով), որին պետք է հետեւի թեք գծով անջատված (այսինքն՝ «/») ամիսը՝ (նշված երկու թվով): Տարին նշելու համար կարող է չորս թիվ օգտագործվել:

Վերոնշյալ նշանները պետք է ներկայացվեն տվյալ հերթականությամբ կա՛մ 6.2.2.10.2-ում նկարագրված թիթեղի վրա կա՛մ բալոնների կապուկի շրջանակին մշտապես ամրացված առանձին թիթեղի վրա:

---

<sup>2</sup> Միջազգային երթեւեկության մեջ գտնվող փոխադրամիջոցների եւ դրանց կցորդների՝ գրանցման պետության տարբերանշաններ, օրինակ՝ 1949 թվականի «Ճանապարհային երթեւեկության մասին» Ժնեւի կոնվենցիային կամ 1968 թվականի «Ճանապարհային երթեւեկության մասին» Վիեննայի կոնվենցիային համապատասխան:

**6.2.3.10. Չվերալցավորվող ճնշումային տարաների մակնշումը**

6.2.3.10.1. Մակնշումները պետք է համապատասխանեն 6.2.2.8-ի պահանջներին՝ բացառությամբ 6.2.2.7.2(ա)-ով սահմանված ՄԱԿ-ի նշագրման փաթեթվածքների խորհրդանշանի, որը չպետք է կիրառվի:

**6.2.3.11. Ճնշման տակ վթարային տարաներ**

6.2.3.11.1. Ճնշման տակ վթարային տարաների հետ փոխադրվող ճնշման տակ տարաների անվտանգ մշակումը եւ հեռացումը թույլ տալու համար կառուցվածքը կարող է ներառել այնպիսի սարքավորումներ, որոնք այլ կերպ չեն օգտագործվում բալոնների եւ ճնշումային թմբկազլանների համար, ինչպիսիք են օրինակ՝ հարթ գլխիկները, արագ բացվող սարքերը եւ բալոնային մասի բացվածքները:

6.2.3.11.2. Ճնշման տակ վթարային տարաների անվտանգ մշակման եւ օգտագործման մասին ցուցումները պետք է հստակ ներկայացվեն հաստատման երկրի իրավասու մարմին ներկայացվող դիմումի փաստաթղթերի հետ միասին եւ պետք է կազմեն հաստատման սերտիֆիկատի մաս: Հաստատման սերտիֆիկատում պետք է նշվեն այն ճնշման տակ տարաները, որոնք նախատեսված են ճնշման տակ վթարային տարաներում փոխադրելու համար: Պետք է նաեւ նշվեն այն բոլոր մասերի պատրաստման նյութերի ցանկը, որոնք կարող են շփման մեջ լինել վտանգավոր բեռների հետ:

6.2.3.11.3. Հաստատման սերտիֆիկատի մի օրինակ արտադրողը տրամադրում է ճնշման տակ վթարային տարաների սեփականատիրոջը:

6.2.3.11.4. Ճնշման տակ վթարային տարաների մակնշումը 6.2.3-ին համապատասխան որոշվում է հաստատման երկրի իրավասու մարմնի կողմից՝ հաշվի առնելով 6.2.3.9-ի՝ դրանց վերաբերող համապատասխան մակնշման մասին դրույթները: Մակնշումը պետք է ներառի տվյալներ ճնշման տակ վթարային տարաների տարողունակության եւ փորձարկումային ճնշման մասին:

**6.2.4. ՄԱԿ-ի նշագրման ճնշումային տարա չհանդիսացող տարաների նկատմամբ կիրառվող պահանջները, որոնք նախագծված, պատրաստված եւ փորձարկված չեն այն ստանդարտների համաձայն, որոնց հղում է կատարված**

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** Ստանդարտներում նշված անձինք կամ մարմինները, որոնք «ԱԴՌ» համաձայնագրի համաձայն, պարտավորություններ են ստանձնել, պետք է բավարարեն «ԱԴՌ» համաձայնագրի պահանջները:

**6.2.4.1. Նախագծումը, պատրաստումը եւ նախնական ստուգումն ու փորձարկումը**

Տեսակի հաստատման սերտիֆիկատները տրամադրվում են 1.8.7-ին համապատասխան: Ստանդարտները, որոնց հղում է կատարվել ստորև ներկայացված աղյուսակում, կիրառվում են տեսակի հաստատումը տրամադրելու նպատակով, ինչպես նշված է 4-րդ սյունակում՝ 6.2 գլխի պահանջները կատարելու համար: Ստանդարտները կիրառվում են 1.1.5-ին համապատասխան: 3-րդ սյունակում նշված է այն վերջնաժամկետը, որի ժամանակ, 1.8.7.2.4-ի համաձայն, հետ են վերցվում գործող տեսակի հաստատումները, իսկ այն դեպքում, երբ ոչ մի օր նշված չէ, ապա տեսակի հաստատումը մնում է վավեր, մինչև դրա վավերականության ժամկետի ավարտը:

2009 թվականի հունվարի 1-ից ի վեր ստանդարտների կիրառությունը, որոնց հղում է կատարված, պարտադիր է: Բացառությունները նշված են 6.2.5-ում:

Եթե միեւնույն պահանջների կիրառության համար հղում է կատարվել մեկից ավելի ստանդարտների, ապա կիրառվում է նրանցից միայն մեկը, սակայն լրիվ ծավալով, եթե ստորև ներկայացված աղյուսակում այլ բան նշված չէ:

Յուրաքանչյուր ստանդարտի կիրառության շրջանակը սահմանվում է ստանդարտի շրջանակին վերաբերող կետով, եթե ստորև բերված աղյուսակում այլ բան նշված չէ:

Հղումը	Փաստաթղթի անվանումը	Կիրառելի ենթաբաժինները եւ պարբերությունները	Նոր տեսակի հաստատման ստացման կամ երկարաձգման համար կիրառելի	Գործող հաստատումների հետ վերջնական վերջնաժամկետը
(1)	(2)	(3)	(4)	(5)
<b>նախագծման եւ պարտադրման համար</b>				
84/525/ԵՏՀ I հավելվածի 1-3-րդ մասեր	«Ամբողջաձիգ պողպատյա գազի բալոնների վերաբերյալ անդամ պետությունների օրենքների համապատասխանեցման մասին» Խորհրդի հրահանգ, որը հրապարակվել է Եվրոպական համայնքների պաշտոնական տեղեկագրի 1984 թվականի նոյեմբերի 19-ի թիվ L300 հրատարակության մեջ:	6.2.3.1 եւ 6.2.3.4	Հետագայում հայտագիրը ներկայացնելու դեպքում	
84/526/ԵՏՀ I հավելվածի 1-3-րդ մասեր	«Ամբողջաձիգ չլեգիրված ալյումինից եւ ալյումինե համաձուլվածքով գազի բալոնների վերաբերյալ անդամ պետությունների օրենքների համապատասխանեցման մասին» Խորհրդի հրահանգ, որը հրապարակվել է Եվրոպական համայնքների պաշտոնական տեղեկագրի 1984 թվականի նոյեմբերի 19-ի թիվ L300 հրատարակության մեջ:	6.2.3.1 եւ 6.2.3.4	Հետագայում հայտագիրը ներկայացնելու դեպքում	
84/527/ԵՏՀ I հավելվածի 1-3-րդ մասեր	«Եռակցված չլեգիրված պողպատյա գազի բալոնների վերաբերյալ անդամ պետությունների օրենքները համապատասխանեցնելու մասին» Խորհրդի հրահանգ, որը հրապարակվել է	6.2.3.1 եւ 6.2.3.4	Հետագայում հայտագիրը ներկայացնելու դեպքում	

Հղումը	Փաստաթղթի անվանումը	Կիրառելի ենթաբաժինները եւ պարբերությունները	Նոր տեսակի հաստատման ստացման կամ երկարաձգման համար կիրառելի	Գործող հաստատումների հետ վերցման վերջնաժամկետը
(1)	(2)	(3)	(4)	(5)
	Եվրոպական համայնքների պաշտոնական տեղեկագրի 1984 թվականի նոյեմբերի 19-ի թիվ L300 հրատարակության մեջ:			
EN 1442:1998 + AC:1999	Հեղուկացված նավթային գազերի (ՀՆԳ) համար նախատեսված շարժական վերալցավորվող եռակցված պողպատե բալոններ. Նախագծում եւ պատրաստում	6.2.3.1 եւ 6.2.3.4	2001 թվականի հուլիսի 1-ից մինչեւ 2007 թվականի հունիսի 30-ը	2012 թվականի դեկտեմբերի 31
EN 1442:1998 + A2:2005	Հեղուկացված նավթային գազերի (ՀՆԳ) համար նախատեսված շարժական վերալցավորվող եռակցված պողպատե բալոններ. Նախագծում եւ պատրաստում	6.2.3.1 եւ 6.2.3.4	2007 թվականի հունվարի 1-ից մինչեւ 2010 թվականի դեկտեմբերի 31-ը	
EN 1442:2006 + A1:2008	Հեղուկացված նավթային գազերի (ՀՆԳ) համար նախատեսված շարժական վերալցավորվող եռակցված պողպատե բալոններ. Նախագծում եւ պատրաստում	6.2.3.1 եւ 6.2.3.4	Հետագայում հայտագիրը ներկայացնելու դեպքում	
EN 1800:1998 + AC:1999	Շարժական գազի բալոններ. Ացետիլենի բալոններ. Հիմնական պահանջներ եւ սահմանումներ	6.2.1.1.9	2001 թվականի հուլիսի 1-ից մինչեւ 2010 թվականի դեկտեմբերի 31-ը	
EN 1800:2006	Շարժական գազի բալոններ. Ացետիլենի բալոններ. Հիմնական պահանջներ, սահմանումներ եւ նմուշի փորձարկում	6.2.1.1.9	2009 թվականի հունվարի 1-ից մինչեւ 2016 թվականի դեկտեմբերի 31-ը	
EN ISO 3807:2013	Գազի բալոններ. Ացետիլենի բալոններ. Հիմնական պահանջներ եւ նմուշի փորձարկում <b>ՃԱՆՈՒԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Հայուն ապահովիչներ չեն տեղադրվում:</b>	6.2.1.1.9	Հետագայում հայտագիրը ներկայացնելու դեպքում	
EN 1964-1:1999	Շարժական գազի բալոններ. 0.5 - 150 լիտր տարողությամբ շարժական վերալցավորվող ամբողջաձիգ պողպատյա գազի բալոնների նախագծման եւ պատրաստման վերաբերյալ մասնագրեր. Մաս 1՝ Rm-ի 1 100 ՄՊա-ից ցածր արժեքով ամբողջաձիգ պողպատյա բալոններ	6.2.3.1 եւ 6.2.3.4	Մինչեւ 2014 թվականի դեկտեմբերի 31-ը	
EN 1975:1999 (բացի է հավելվածից)	Շարժական գազի բալոններ. 0.5 - 150 լիտր տարողությամբ այլումինե համաձուլվածքով գազի բալոնների եւ շարժական վերալցավորվող ամբողջաձիգ այլումինե գազի բալոնների նախագծման եւ պատրաստման վերաբերյալ մասնագրեր	6.2.3.1 եւ 6.2.3.4	մինչեւ 2005 թվականի հունիսի 30-ը	
EN 1975:1999 + A1:2003	Շարժական գազի բալոններ. 0.5 - 150 լիտր տարողությամբ այլումինե համաձուլվածքով գազի բալոնների եւ շարժական վերալցավորվող ամբողջաձիգ այլումինե գազի բալոնների նախագծման եւ պատրաստման վերաբերյալ մասնագրեր	6.2.3.1 եւ 6.2.3.4	2009 թվականի հունվարի 1-ից մինչեւ 2016 թվականի դեկտեմբերի 31-ը	
EN ISO 7866:2012 + AC:2014	Գազի բալոններ. Վերալցավորվող ամբողջաձիգ այլումինե համաձուլվածքով գազի բալոններ. Նախագծում, պատրաստում եւ փորձարկում (ISO 7866:2012)»	6.2.3.1 եւ 6.2.3.4	Հետագայում հայտագիրը ներկայացնելու դեպքում	

Հղումը	Փաստաթղթի անվանումը	Կիրառելի ենթաբաժինները եւ պարբերությունները	Նոր տեսակի հաստատման ստացման կամ երկարաձգման համար կիրառելի	Գործող հաստատումների հետ վերցման վերջնաժամկետը
(1)	(2)	(3)	(4)	(5)
EN ISO 11120-1999	Գազի բալոններ. Վերացավորվող ամբողջաձիգ պողպատյա գլաններ՝ սեղմված գազի տեղափոխման համար՝ 150 - 3 000 լ տարողությամբ. Նախագծում, պատրաստում ու փորձարկում	6.2.3.1 եւ 6.2.3.4	2001 թվականի հուլիսի 1-ից մինչեւ 2015 թվականի հունիսի 30-ը	«H» տառով մակնշված գլանների համար մինչեւ 2015 թվականի դեկտեմբերի 31-ը՝ 6.2.2.7.4(ժգ)-ին համապատասխան
EN ISO 11120:1999 + A1:2013	Գազի բալոններ. Վերացավորվող ամբողջաձիգ պողպատյա գլաններ՝ սեղմված գազի տեղափոխման համար՝ 150 - 3 000 լ տարողությամբ. Նախագծում, պատրաստում ու փորձարկում	6.2.3.1 եւ 6.2.3.4	Հետագայում հայտագիրը ներկայացնելու դեպքում	
EN 1964-3:2000	Շարժական գազի բալոններ. 0.5 - 150 լիտր տարողությամբ շարժական վերացավորվող ամբողջաձիգ պողպատյա գազի բալոնների նախագծման եւ պատրաստման վերաբերյալ մասնագրեր. Մաս 3՝ Rm-ի 1՝ 100 ՄՊա-ից ցածր արժեքով ամբողջաձիգ չժանգոտվող պողպատյա բալոններ	6.2.3.1 եւ 6.2.3.4	Հետագայում հայտագիրը ներկայացնելու դեպքում	
EN 12862:2000	Շարժական գազի բալոններ. Շարժական վերացավորվող եռակցված այլումինե համաձուլվածքով գազի բալոնների նախագծման եւ պատրաստման վերաբերյալ մասնագրեր	6.2.3.1 եւ 6.2.3.4	Հետագայում հայտագիրը ներկայացնելու դեպքում	
EN 1251-2:2000	Կրիոգեն անոթներ. 1 000 լ-ից ոչ ավելի ծավալով շարժական, վակուումով մեկուսացված անոթներ. Մաս 2՝ Նախագծումը, արտադրությունը, ստուգումը եւ փորձարկումը <b>ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.</b> Սույն սրանդարտում հղում կատարված EN 1252-1:1998 սրանդարտը նաեւ կիրառվում է ՄԱԿ-ի նշագրման 1972 համարի փոխադրման համար նախատեսված փակ կրիոգեն փարաների նկատմամբ (ՄԵԹԱՆ. ՍԱՌԵՑՎԱԾ ՀԵՂՈՒԿ կամ ԲՆԱԿԱՆ ԳԱԶ, ՍԱՌԵՑՎԱԾ ՀԵՂՈՒԿ)	6.2.3.1 եւ 6.2.3.4	Հետագայում հայտագիրը ներկայացնելու դեպքում	
EN 12257:2002	Շարժական գազի բալոններ. Ամբողջաձիգ եւ գլանաձեւ հատվածում օղագոտով բոլորված, կոմպոզիտային բալոններ	6.2.3.1 եւ 6.2.3.4	Հետագայում հայտագիրը ներկայացնելու դեպքում	
EN 12807:2001 (բացի Ա հավելվածից)	Հեղուկացված նավթային գազերի (ՀՆԳ) համար նախատեսված շարժական վերացավորվող զոդված պողպատյա բալոններ. Նախագծում եւ պատրաստում	6.2.3.1 եւ 6.2.3.4	2005 թվականի հունվարի 1-ից մինչեւ 2010 թվականի դեկտեմբերի 31-ը	2012 թվականի դեկտեմբերի 31
EN 12807:2008	Հեղուկացված նավթային գազերի (ՀՆԳ) համար նախատեսված շարժական վերացավորվող զոդված պողպատյա բալոններ. Նախագծում եւ պատրաստում	6.2.3.1 եւ 6.2.3.4	Հետագայում հայտագիրը ներկայացնելու դեպքում	



Հղումը	Փաստաթղթի անվանումը	Կիրառելի ենթաբաժինները եւ պարբերությունները	Նոր տեսակի հաստատման ստացման կամ երկարաձգման համար կիրառելի	Գործող հաստատումների հետ վերցման վերջնաժամկետը
(1)	(2)	(3)	(4)	(5)
EN 1964-2:2001	Շարժական գազի բալոններ. 0.5 - 150 լիտր տարողությամբ շարժական վերացավորվող ամբողջաձիգ պողպատյա գազի բալոնների նախագծման եւ պատրաստման վերաբերյալ մասնագրեր. Մաս 2՝ Rm-ի 1 100 ՄՊա եւ ավելի արժեքով ամբողջաձիգ պողպատյա բալոններ	6.2.3.1 եւ 6.2.3.4	Մինչեւ 2014 թվականի դեկտեմբերի 31-ը	
EN ISO 9809-1:2010	Գազի բալոններ. Վերացավորվող ամբողջաձիգ գազի բալոններ. Նախագծում, պատրաստում ու փորձարկում. Մաս 1՝ 1 100 ՄՊա-ից պակաս ձգման ամրություն ունեցող մխված եւ մխամեղմված պողպատյա բալոններ: (ISO 9809-1:2010)	6.2.3.1 եւ 6.2.3.4	Հետագայում հայտագիրը ներկայացնելու դեպքում	
EN ISO 9809-2:2010	Գազի բալոններ. Վերացավորվող ամբողջաձիգ գազի բալոններ. Նախագծում, պատրաստում ու փորձարկում. Մաս 2՝ 1 100 ՄՊա-ից ավելի կամ հավասար ձգման ամրություն ունեցող մխված եւ մխամեղմված պողպատյա բալոններ (ISO 9809-2:2010)	6.2.3.1 եւ 6.2.3.4	Հետագայում հայտագիրը ներկայացնելու դեպքում	
EN ISO 9809-3:2010	Գազի բալոններ. Վերացավորվող ամբողջաձիգ գազի բալոններ. Նախագծում, պատրաստում ու փորձարկում. Մաս 3՝ Նորմալացված պողպատյա բալոններ (ISO 9809-3:2010)	6.2.3.1 եւ 6.2.3.4	Հետագայում հայտագիրը ներկայացնելու դեպքում	
EN 13293:2002	Շարժական գազի բալոններ. Կառուցվածքի վերաբերյալ մասնագրեր նորմալացված մանգանաածխաջրածնային պողպատից ամբողջաձիգ վերացավորվող շարժական գազի բալոնների համար, որոնք սեղմված, հեղուկացված եւ լուծված գազերի դեպքում ունեն մինչեւ 0.5 լիտր, իսկ ածխածնի երկօքսիդի դեպքում՝ մինչեւ 1 լիտր տարողություն	6.2.3.1 եւ 6.2.3.4	Հետագայում հայտագիրը ներկայացնելու դեպքում	
EN 13322-1:2003	Շարժական գազի բալոններ. Վերացավորվող եռակցված պողպատյա գազի բալոններ. Նախագծում եւ պատրաստում. Մաս 1՝ Եռակցված պողպատ	6.2.3.1 եւ 6.2.3.4	մինչեւ 2007 թվականի հունիսի 30-ը	
EN 13322-1:2003 + A1:2006	Շարժական գազի բալոններ. Վերացավորվող եռակցված պողպատյա գազի բալոններ. Նախագծում եւ պատրաստում. Մաս 1՝ Եռակցված պողպատ	6.2.3.1 եւ 6.2.3.4	Հետագայում դ հայտագիրը ներկայացնելու դեպքում	
EN 13322-2:2003	Շարժական գազի բալոններ. Վերացավորվող եռակցված չժանգոտվող պողպատից գազի բալոններ. Նախագծում եւ պատրաստում Մաս 2՝ Եռակցված չժանգոտող պողպատ	6.2.3.1 եւ 6.2.3.4	մինչեւ 2007 թվականի հունիսի 30-ը	
EN 13322-2:2003 +	Շարժական գազի բալոններ. Վերացավորվող եռակցված չժանգոտվող	6.2.3.1 եւ 6.2.3.4	Հետագայում հայտագիրը	

Հղումը	Փաստաթղթի անվանումը	Կիրառելի ենթաբաժինները եւ պարբերությունները	Նոր տեսակի հաստատման ստացման կամ երկարաձգման համար կիրառելի	Գործող հաստատումների հետ վերցման վերջնաժամկետը
(1)	(2)	(3)	(4)	(5)
A1:2006	պողպատից գազի բալոններ. Նախագծում եւ պատրաստում. Մաս 2՝ Եռակցված չժանգոտող պողպատ		ներկայացնելու դեպքում	
EN 12245:2002	Շարժական գազի բալոններ. Ամբողջովին փաթույթով պատված կոմպոզիտային բալոններ	6.2.3.1 եւ 6.2.3.4	Մինչեւ 2014 թվականի դեկտեմբերի 31-ը	
EN 12245:2009 + A1:2011	Շարժական գազի բալոններ. Ամբողջովին փաթույթով պատված կոմպոզիտային բալոններ	6.2.3.1 եւ 6.2.3.4	Հետագայում հայտագիրը ներկայացնելու դեպքում	
EN 12205:2001	Շարժական գազի բալոններ. Չվերալցավորվող մետաղական գազի բալոններ	6.2.3.1 եւ 6.2.3.4	2005 թվականի հունվարի 1-ից մինչեւ 2017 թվականի դեկտեմբերի 31-ը	2018 թվականի դեկտեմբերի 31-ը
EN ISO 11118:2015	Գազի բալոններ. Չվերալցավորվող մետաղական գազի բալոններ. Մասնագրեր եւ փորձարկման մեթոդներ	6.2.3.1, 6.2.3.3 եւ 6.2.3.4	Հետագայում հայտագիրը ներկայացնելու դեպքում	
EN 13110:2002	Հեղուկացված նավթային գազերի (ՀՆԳ) համար նախատեսված շարժական վերալցավորվող եռակցված այլումինե բալոններ. Նախագծում եւ պատրաստում	6.2.3.1 եւ 6.2.3.4	Մինչեւ 2014 թվականի դեկտեմբերի 31-ը	
EN 13110:2012	Հեղուկացված նավթային գազերի (ՀՆԳ) համար նախատեսված շարժական վերալցավորվող եռակցված այլումինե բալոններ. Նախագծում եւ պատրաստում	6.2.3.1 եւ 6.2.3.4	Հետագայում հայտագիրը ներկայացնելու դեպքում	
EN 14427:2004	Հեղուկացված նավթային գազերի համար նախատեսված շարժական, վերալցավորվող, ամբողջովին փաթույթով պատված, կոմպոզիտային բալոններ. Նախագծում եւ պատրաստում <b>ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.</b> Այս ստանդարտը կիրառվում է միայն ճնշման նվազեցման կափույրներով սարքավորված բալոնների նկատմամբ:	6.2.3.1 եւ 6.2.3.4	2005 թվականի հունվարի 1-ից մինչեւ 2007 թվականի հունիսի 30-ը	
EN 14427:2004 + A1:2005	Հեղուկացված նավթային գազերի համար նախատեսված շարժական, վերալցավորվող, ամբողջովին փաթույթով պատված, կոմպոզիտային բալոններ. Նախագծում եւ պատրաստում <b>ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1.</b> Այս ստանդարտը կիրառվում է միայն ճնշումը նվազեցնող կափույրներով սարքավորված բալոնների նկատմամբ: <b>ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2.</b> 5.2.9.2.1-ում եւ 5.2.9.3.1-ում, երկու տեսակների բալոններն էլ ենթակա են պայթման փորձարկման այն դեպքում, երբ դրանք վնասված են խոտրանային հատկանիշներին համարժեք կամ ավելի վատ կերպով:	6.2.3.1 եւ 6.2.3.4	2007 թվականի հունվարի 1-ից մինչեւ 2016 թվականի դեկտեմբերի 31-ը	

Հղումը	Փաստաթղթի անվանումը	Կիրառելի ենթաբաժինները եւ պարբերությունները	Նոր տեսակի հաստատման ստացման կամ երկարաձգման համար կիրառելի	Գործող հաստատումների հետ վերցման վերջնաժամկետը
(1)	(2)	(3)	(4)	(5)
EN 14427:2014	ՀՆԳ սարքավորումներ եւ աքսեսուարներ. ՀՆԳ-ների համար նախատեսված շարժական վերալցավորվող եռակցված պողպատե բալոններ. Նախագծում ու պատրաստում	6.2.3.1 եւ 6.2.3.4	Հետագայում հայտագիրը ներկայացնելու դեպքում	
EN 14208:2004	Շարժական գազի բալոններ. Գազերի փոխադրման համար նախատեսված, մինչեւ 1 000 լիտր տարողությամբ եռակցված ճնշումային թմբկազանների վերաբերյալ մասնագրեր. Նախագծում ու պատրաստում	6.2.3.1 եւ 6.2.3.4	Հետագայում հայտագիրը ներկայացնելու դեպքում	
EN 14140:2003	Հեղուկացված նավթային գազերի (ՀՆԳ) համար նախատեսված շարժական վերալցավորվող եռակցված պողպատե բալոններ. Այլընտրանքային նախագծում ու պատրաստում	6.2.3.1 եւ 6.2.3.4	2005 թվականի հունվարի 1-ից մինչեւ 2010 թվականի դեկտեմբերի 31-ը	
EN 14140:2003 + A1:2006	ՀՆԳ սարքավորումներ եւ աքսեսուարներ. ՀՆԳ-ների համար նախատեսված շարժական վերալցավորվող եռակցված պողպատե բալոններ. Այլընտրանքային նախագծում ու պատրաստում	6.2.3.1 եւ 6.2.3.4	2009 թվականի հունվարի 1-ից մինչեւ 2018 թվականի դեկտեմբերի 31-ը	
EN 14140:2014 +AC:2015 (բացառությամբ բազմաշերտ եռակցված բալոնների)	ՀՆԳ սարքավորումներ եւ աքսեսուարներ. ՀՆԳ-ների համար նախատեսված շարժական վերալցավորվող եռակցված պողպատե բալոններ. Այլընտրանքային նախագծում ու պատրաստում	6.2.3.1 եւ 6.2.3.4	Հետագայում հայտագիրը ներկայացնելու դեպքում	
EN 13769:2003	Շարժական գազի բալոններ. Բալոնների կապուկներ. Նախագծում, արտադրություն, նույնականացում եւ փորձարկում	6.2.3.1 եւ 6.2.3.4	մինչեւ 2007 թվականի հունիսի 30-ը	
EN 13769:2003 + A1:2005	Շարժական գազի բալոններ. Բալոնների կապուկներ. Նախագծում, արտադրություն, նույնականացում եւ փորձարկում	6.2.3.1 եւ 6.2.3.4	մինչեւ 2014 թվականի դեկտեմբերի 31-ը	
EN ISO 10961:2012	Գազի բալոններ. Բալոնների կապուկներ. Նախագծում ու պատրաստում, փորձարկում եւ ստուգում	6.2.3.1 եւ 6.2.3.4	Հետագայում հայտագիրը ներկայացնելու դեպքում	
EN 14638-1:2006	Շարժական գազի բալոններ. 150 լիտրը չգերազանցող տարողությամբ վերալցավորվող եռակցված տարաներ. Մաս 1՝ Փորձարարական մեթոդներով հիմնավորված նախագծի համաձայն պատրաստված եռակցված աուտենիտային չժանգոտվող պողպատից բալոններ	6.2.3.1 եւ 6.2.3.4	Հետագայում հայտագիրը ներկայացնելու դեպքում	
EN 14893:2006 + AC:2007	ՀՆԳ սարքավորումներ եւ աքսեսուարներ. 150 - 1 000 լիտր տարողությամբ ՀՆԳ-ների համար նախատեսված շարժական եռակցված պողպատյա ճնշումային թմբկազաններ	6.2.3.1 եւ 6.2.3.4	2009 թվականի հունվարի 1-ից մինչեւ 2016 թվականի դեկտեմբերի 31-ը	
EN 14893:2014	ՀՆԳ սարքավորումներ եւ աքսեսուարներ. 150 - 1 000 լիտր տարողությամբ ՀՆԳ-	6.2.3.1 եւ 6.2.3.4	Հետագայում հայտագիրը	

Հղումը	Փաստաթղթի անվանումը	Կիրառելի ենթաբաժինները եւ պարբերությունները	Նոր տեսակի հաստատման ստացման կամ երկարաձգման համար կիրառելի	Գործող հաստատումների հետ վերցման վերջնաժամկետը
(1)	(2)	(3)	(4)	(5)
	նրի համար նախատեսված շարժական եռակցված պողպատյա ճնշումային թմբկազվաններ		ներկայացնելու դեպքում	
EN 14638-3:2010 + AC:2012	Շարժական գազի բալոններ. 150 լիտրը չգերազանցող տարողությամբ վերալցավորվող եռակցված տարաներ. Մաս 3՝ Փորձարարական մեթոդներով հիմնավորված նախագծի համաձայն պատրաստված եռակցված առատենիտային չժանգոտվող պողպատից բալոններ	6.2.3.1 եւ 6.2.3.4	Հետագայում հայտագիրը ներկայացնելու դեպքում	
<b>փականների համար՝</b>				
EN 849:1996 (բացի Ա հավելվածից)	Շարժական գազի բալոններ. Բալոնի կափույրներ. Մասնագրեր եւ նմուշի փորձարկում	6.2.3.1 եւ 6.2.3.3	մինչեւ 2003 թվականի հունիսի 30-ը	2014 թվականի դեկտեմբերի 31
EN 849:1996/A2:2001	Շարժական գազի բալոններ. բալոնի կափույրներ. Մասնագրեր եւ նմուշի փորձարկում	6.2.3.1 եւ 6.2.3.3	մինչեւ 2003 թվականի հունիսի 30-ը	2016 թվականի դեկտեմբերի 31
EN ISO 10297:2006	Շարժական գազի բալոններ. բալոնի կափույրներ. Մասնագրեր եւ տեսակի փորձարկում	6.2.3.1 եւ 6.2.3.3	2009 թվականի հունվարի 1-ից մինչեւ 2018 թվականի դեկտեմբերի 31-ը	
EN ISO 10297:2014	Գազի բալոններ. բալոնի կափույրներ. Մասնագրեր եւ նմուշի փորձարկում (ISO/DIS 10297:2012)	6.2.3.1 եւ 6.2.3.3	Հետագայում հայտագիրը ներկայացնելու դեպքում	
EN ISO 14245:2010	Գազի բալոններ. ՀՆԳ-ների բալոնների ինքնափակվող կափույրների վերաբերյալ մասնագրեր եւ փորձարկում (ISO 14245:2006)	6.2.3.1 եւ 6.2.3.3	Հետագայում հայտագիրը ներկայացնելու դեպքում	
EN 13152:2001	ՀՆԳ-ների վերաբերյալ մասնագրեր եւ փորձարկում. Բալոնի կափույրներ. Ինքնուրույն փակվող	6.2.3.1 եւ 6.2.3.3	2005 թվականի հունվարի 1-ից մինչեւ 2010 թվականի դեկտեմբերի 31-ը	
EN 13152:2001 + A1:2003	ՀՆԳ-ների վերաբերյալ մասնագրեր եւ փորձարկումը. Բալոնի կափույրներ. Ինքնուրույն փակվող	6.2.3.1 եւ 6.2.3.3	2009 թվականի հունվարի 1-ից մինչեւ 2014 թվականի դեկտեմբերի 31-ը	
EN ISO 15995:2010	Գազի բալոններ. ՀՆԳ-ների բալոնների կափույրների վերաբերյալ մասնագրեր եւ փորձարկում. Ձեռքով կառավարման (ISO 14245:2006)	6.2.3.1 եւ 6.2.3.3	Հետագայում հայտագիրը ներկայացնելու դեպքում	
EN 13153:2001	ՀՆԳ-ների վերաբերյալ մասնագրերը եւ փորձարկումը. Բալոնի կափույրներ. Ձեռքով կառավարման	6.2.3.1 եւ 6.2.3.3	2005 թվականի հունվարի 1-ից մինչեւ 2010 թվականի դեկտեմբերի 31-ը	
EN 13153:2001 + A1:2003	ՀՆԳ-ների վերաբերյալ մասնագրերը եւ փորձարկումը. Բալոնի կափույրներ. Ձեռքով կառավարման	6.2.3.1 եւ 6.2.3.3	2009 թվականի հունվարի 1-ից մինչեւ 2014 թվականի դեկտեմբերի 31-ը	

Հղումը	Փաստաթղթի անվանումը	Կիրառելի ենթաբաժինները եւ պարբերությունները	Նոր տեսակի հաստատման ստացման կամ երկարաձգման համար կիրառելի	Գործող հաստատումների հետ վերցման վերջնաժամկետը
(1)	(2)	(3)	(4)	(5)
EN ISO 13340:2001	Շարժական գազի բալոններ. Չվերացավորվող բալոնների համար բալոնի կափույրներ. Մասնագրեր եւ փորձարկում	6.2.3.1 եւ 6.2.3.3	2011 թվականի հունվարի 1-ից մինչեւ 2017 թվականի դեկտեմբերի 31-ը	2018 թվականի դեկտեմբերի 31-ը
EN 13648-1:2008	Կրիոգեն անոթներ. Անվտանգության սարքեր հավելյալ ճնշումից պաշտպանելու համար. Մաս 1՝ Անվտանգության կափույրներ կրիոգեն ծառայությունների համար	6.2.3.1 եւ 6.2.3.4	Հետագայում հայտագիրը ներկայացնելու դեպքում	
EN 1626:2008 (բացառությամբ B դասի կափույրի)	Կրիոգեն անոթներ. Կափույրներ կրիոգեն ծառայությունների համար	6.2.3.1 եւ 6.2.3.4	Հետագայում հայտագիրը ներկայացնելու դեպքում	
EN 13175:2014	ՀՆԳ սարքավորումներ եւ արքեստարներ. Մասնագրեր եւ փորձարկումը հեղուկացված նավթային գազի (ՀՆԳ) ճնշումային անոթների եւ կցամասերի համար	6.2.3.1 եւ 6.2.3.3	Հետագայում հայտագիրը ներկայացնելու դեպքում	
EN ISO 17871:2015	Գազի բալոններ. Արագ բացթողման բալոնների կափույրներ. Մասնագրեր եւ տեսակի փորձարկում (ISO 17871:2015)	6.2.3.1, 6.2.3.3 եւ 6.2.3.4	Հետագայում հայտագիրը ներկայացնելու դեպքում	
EN 13953:2015	ՀՆԳ սարքավորումներ եւ արքեստարներ. Ծնշման նվազեցման կափույրներ՝ հեղուկացված նավթային գազերի (ՀՆԳ) համար նախատեսված շարժական վերացավորվող բալոնների համար) <i>ՍԱՆՈՒԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Շրջանակը նկարագրող մասի վերջին նախադասությունը չի կիրառվում</i>	6.2.3.1, 6.2.3.3 եւ 6.2.3.4	Հետագայում հայտագիրը ներկայացնելու դեպքում	
EN ISO 14246:2014	Գազի բալոններ. Բալոնի կափույրներ. Պատրաստումը, փորձարկումը եւ զննումը (ISO 14246:2014)	6.2.3.1 եւ 6.2.3.4	Հետագայում հայտագիրը ներկայացնելու դեպքում	

#### 6.2.4.2. Պարբերական ստուգումներ եւ փորձարկումներ

Ստորեւ ներկայացված աղյուսակում հղում կատարված ստանդարտները կիրառվում են ճնշումային տարանների պարբերական ստուգումների եւ փորձարկումների ժամանակ 3-րդ սյունակում նշված հրահանգների համաձայն՝ պահպանելու համար 6.2.3.5-ի պահանջները: Ստանդարտը կիրառվում է 1.1.5-ին համապատասխան:

Այն ստանդարտների կիրառությունը, որոնց հղում է կատարված, պարտադիր է:

Եթե ճնշումային տարան կառուցված է 6.2.5-ի դրույթների համաձայն, ապա պետք է կիրառվի պարբերական ստուգման այն ընթացակարգը,

որը սահմանված է տվյալ տեսակի հաստատման փաստաթղթի մեջ:

Եթե միեւնույն պահանջների կիրառության համար հղում է կատարվել մեկից ավելի ստանդարտների, ապա կիրառվում է նրանցից միայն մեկը: Այդ դեպքում տվյալ ստանդարտը կիրառվում է լրիվ ծավալով, եթե ստորեւ ներկայացված աղյուսակում այլ բան նշված չէ:

Յուրաքանչյուր ստանդարտի կիրառության շրջանակը սահմանվում է ստանդարտի շրջանակին վերաբերող կետով, եթե ստորեւ բերված աղյուսակում այլ բան նշված չէ:

Հղումը	Փաստաթղթի անվանումը	Կիրառելի
(1)	(2)	(3)
<b>պարբերական ստուգումների եւ փորձարկումների համար</b>		
EN 1251:2000	Կրիոգեն անոթներ. Շարժական վակուումով մեկուսացված անոթներ՝ ոչ ավելի, քան 1000 լ ծավալով. Մաս 3՝ շահագործման պահանջներ	Հետագայում հայտագիրը ներկայացնելու դեպքում
EN 1968:2002 + A1:2005 (բացի Բ հավելվածից)	Շարժական գազի բալոններ. Գազի ամբողջաձիգ պողպատյա բալոնների պարբերական ստուգում եւ փորձարկում	Հետագայում հայտագիրը ներկայացնելու դեպքում
EN 1802:2002 (բացի Բ հավելվածից)	Շարժական գազի բալոններ. Այլումինե համաձուլվածքից գազի ամբողջաձիգ բալոնների պարբերական ստուգում եւ փորձարկում	Հետագայում հայտագիրը ներկայացնելու դեպքում
EN SO 10462:2013	Գազի բալոններ. Ացետիլենի բալոններ. Պարբերական ստուգումը եւ փորձարկումը (ISO 10462:2013)	Հետագայում հայտագիրը ներկայացնելու դեպքում
EN 1803:2002 (բացի Բ հավելվածից)	Շարժական գազի բալոններ. Զողված պողպատյա գազի բալոնների պարբերական ստուգում եւ փորձարկում	Հետագայում հայտագիրը ներկայացնելու դեպքում
EN ISO 11623:2002 (բացի 4-րդ դրոյթից)	Շարժական գազի բալոններ. Կոմպոզիտային գազի բալոնների պարբերական ստուգում եւ փորձարկում	Մինչեւ 2018 թվականի դեկտեմբերի 31-ը
EN ISO 11623:2015	Գազի բալոններ. Կոմպոզիտային կառուցվածք. Պարբերական ստուգումը եւ փորձարկումը	Պարտադիր 2019 թվականի հունվարի 1-ից
EN ISO 22434:2011	Շարժական գազի բալոններ. Բալոնների կափույրների ստուգումը եւ շահագործումը (ISO 22434:2006)	Հետագայում հայտագիրը ներկայացնելու դեպքում
EN 14876:2007	Շարժական գազի բալոններ. Ծնշումային՝ զողված պողպատյա թմբկազլանների պարբերական ստուգում ու փորձարկում	Հետագայում հայտագիրը ներկայացնելու դեպքում
EN 14912:2005	ՀՆԳ սարքեր եւ աքսեսուարներ. ՀՆԳ բալոնների կափույրների գնումն ու շահագործումը գազի բալոնների պարբերական ստուգումների ժամանակ	Հետագայում հայտագիրը ներկայացնելու դեպքում
EN 14912:2015	ՀՆԳ սարքավորումներ եւ աքսեսուարներ. ՀՆԳ բալոնի կափույրների ստուգումը եւ շահագործումը բալոնների պարբերական ստուգման ժամանակ	Պարտադիր 2019 թվականի հունվարի 1-ից
EN 1440:2008 + A1:2012 (բացառությամբ Է եւ Ը հավելվածների)	ՀՆԳ սարքավորումներ եւ աքսեսուարներ. ՀՆԳ շարժական վերալցավորվող բալոնների պարբերական ստուգումը	Մինչեւ 2018 թվականի դեկտեմբերի 31-ը
EN 1440:2016 (բացառությամբ Գ հավելվածի)	ՀՆԳ սարքավորումներ եւ աքսեսուարներ. Շարժական վերալցավորվող ավանդական եռակցված եւ զողված պողպատյա հեղուկացված նավթային գազի (ՀՆԳ) բալոններ. Պարբերական ստուգումը	Պարտադիր 2019 թվականի հունվարի 1-ից
EN 16728:2016 (բացառությամբ 3.5 կետի, 2 հավելվածի եւ Է հավելվածի)	ՀՆԳ սարքավորումներ եւ աքսեսուարներ. Շարժական վերալցավորվող ՀՆԳ բալոններ, բացի ավանդական եռակցված եւ զողված պողպատյա բալոններից. Պարբերական ստուգումը	Պարտադիր 2019 թվականի հունվարի 1-ից
EN 15888:20114	Շարժական գազի բալոնների. Բալոնների կապուկներ. Պարբերական ստուգումը եւ փորձարկումը	Հետագայում հայտագիրը ներկայացնելու դեպքում

**6.2.5. ՄԱԿ-ի նշագրման տարա չհանդիսացող ճնշումային տարաներին ներկայացվող պահանջները, որոնք նախագծված, պատրաստված եւ փորձարկված չեն՝ հղում կատարված ստանդարտների համաձայն**

Իրավասու մարմինը պետք է թույլատրի տեխնիկական կանոնների օգտագործումը, որն ապահովում է պաշտպանության միեւնոյն մակարդակ, որպեսզի հաշվի առնվի գիտական եւ տեխնիկական առաջընթացը, ինչպես նաեւ եթե 6.2.2-ում կամ 6.2.4-ում հղում կատարված չէ որեւէ ստանդարտի, կամ եթե 6.2.2-ում կամ 6.2.4-ում հղում կատարված է որեւէ ստանդարտի՝ տվյալ ստանդարտով չկարգավորվող հայեցակետերը հաշվի առնելու համար:

Տեսակի հաստատման մեջ հաստատում տրամադրող մարմինը սահմանում է պարբերական ստուգումների ընթացակարգը, եթե 6.2.2-ում կամ 6.2.4-ում հղում կատարված ստանդարտները կիրառելի չեն կամ չպետք է կիրառվեն:

Իրավասու մարմինը ՄԱԿ-ի ԵՏՀ-ի քարտուղարություն է ուղարկում տեխնիկական կանոնների ցանկը, որոնք ճանաչվում են իր կողմից: Ցանկում ընդգրկում են հետեւյալ մանրամասները՝ կանոնների անվանումը եւ ընդունման ամսաթիվը, դրանց նպատակը եւ այնպիսի մանրամասներ, թե որտեղ կարելի է դրանք ձեռք բերել: Քարտուղարությունը պարտավոր է նշված տեղեկությունները հրապարակել իր կայքէջում:

Այն ստանդարտը, որն ընդունվել է «ԱԴՌ» համաձայնագրի հետագա հրատարակություններում հղում կատարվելու համար, կարող է օգտագործման համար հաստատվել իրավասու մարմնի կողմից՝ առանց ՄԱԿ-ի ԵՏՀ-ի քարտուղարությանը ծանուցվելու:

Այնուամենայնիվ, պետք է պահպանվեն 6.2.1-ի, 6.2.3-ի եւ ստորեւ նշված պահանջները:

***ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.*** Ստորեւ նշված բաժնի նպատակով 6.2.1-ի տեխնիկական ստանդարտներին կատարված հղումները պետք է համարվեն տեխնիկական կանոններին կատարված հղումներ:

**6.2.5.1. Նյութեր**

Ստորեւ նշված դրույթները ներառում են օրինակներ այն նյութերից, որոնք կարող են օգտագործվել՝ 6.2.1.2-ի նյութերի պահանջները բավարարելու համար՝

- ա) ածխաջրածնային պողպատ՝ սեղմված, հեղուկացված, սառեցված հեղուկացված գազերի եւ լուծված գազերի համար, ինչպես նաեւ 2-րդ դասի 3-րդ աղյուսակում չնշված նյութերի համար (4.1.4.1-ի

փաթեթավորման ցուցում՝ P200)։

- բ) լեգիրված պողպատ (հատուկ պողպատներ)՝ նիկել, նիկելի համաձուլվածք (ինչպես, օրինակ՝ մոնել-մետաղ) սեղմված, հեղուկացված, սառեցված հեղուկացված գազերի եւ լուծված գազերի համար, ինչպես նաեւ 2-րդ դասի 3-րդ աղյուսակում չնշված նյութերի համար (4.1.4.1-ի փաթեթավորման ցուցում՝ P200)։
- գ) պղինձ՝
  - i) 1A, 1O, 1F եւ 1TF դասակարգման ծածկագրերի գազերի համար, որի լցավորման ճնշումը 15 °C ջերմաստիճանում չի գերազանցում 2 ՄՊա-ն (20 բար)։
  - ii) 2A դասակարգման ծածկագրի գազերի, ինչպես նաեւ ՄԱԿ-ի նշագրման 1033 համարի երկմեթիլ եթերի, ՄԱԿ-ի նշագրման 1037 համարի էթիլային քլորիդի, ՄԱԿ-ի նշագրման 1063 համարի մեթիլային քլորիդի, ՄԱԿ-ի նշագրման 1079 համարի ծծմբի երկօքսիդի, ՄԱԿ-ի նշագրման 1085 համարի վինիլ բրոմիդի, ՄԱԿ-ի նշագրման 1086 համարի վինիլ քլորիդի, եւ ՄԱԿ-ի նշագրման 3300 համարի էթիլեն օքսիդի ու ածխածնի երկօքսիդի խառնուրդի համար, որը պարունակում է 87% էթիլեն օքսիդ։
  - iii) 3A, 3O եւ 3F դասակարգման ծածկագրերի գազեր։
- դ) այլումինի համաձուլվածք՝ տե՛ս (ա) կետի հատուկ պահանջները P200 (10) փաթեթավորման ցուցում՝ 4.1.4.1-ում
- ե) կոմպոզիտային նյութ՝ սեղմված գազեր, հեղուկացված գազեր, սառեցված հեղուկացված գազերի եւ լուծված գազերի համար։
- ե) սինթետիկ նյութեր՝ սառեցված հեղուկացված գազերի համար. եւ
- է) 3A դասակարգման ծածկագրի սառեցված հեղուկացված գազերի համար ապակի՝ բացառությամբ ՄԱԿ-ի նշագրման 2187 համարի ածխածնի երկօքսիդի, դրա սառեցված, հեղուկ կամ խառնուրդ տեսակների եւ 3O դասակարգման ծածկագրի գազերի։

#### **6.2.5.2. Օժանդակ սարքավորում**

*(Նախատեսվում է վերապահում)*

#### **6.2.5.3. Մերաղական բալոններ, գլաններ, ճնշումային թմբկազլաններ եւ բալոնների կապուկներ**

Փորձարկման ճնշման ժամանակ, մետաղում ճնշումային տարայի ամենալարված կետի լարվածությունը չպետք է գերազանցի հոսունության երաշխավորված նվազագույն լարվածության (Re) 77%-ը։



«Հոսունության լարվածություն» նշանակում է այն լարվածությունը, որի արդյունքում մնացորդային երկարացումը հազարի համար կազմում է 2 (կամ 0.2%), կամ աուստենիտային պողպատների դեպքում՝ փորձարկվող նմուշի չափման երկարության 1%-ը:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** Մեխաղյա թիթեղի դեպքում ձգվող փորձարկման նմուշների առանցքները պետք է գլոցման ուղղությամբ լինեն ուղղահայաց դիրքում: Ճեղքվածքի մասում մնացորդային երկարացումը հաշվարկվում է շրջանակաձեւ խաչվող հատվածի փորձարկման նմուշի նկատմամբ, որի չափման երկարությունը՝ «l»-ը, հինգ անգամ գերազանցում է տրամագծին՝ «d»-ին ( $l = 5d$ ). Եթե օգտագործվում է ուղղանկյուն խաչվող հատված ներկայացնող փորձարկման նմուշ, ապա մնացորդային երկարությունը՝ «l»-ը հաշվարկվում է հետեւյալ բանաձեւով՝

$$l = 5.65 \sqrt{F_0}$$

որտեղ  $F_0$ -ը ցույց է տալիս փորձարկվող նմուշի լայնական հատվածքի սկզբնական տարածքը:

Ճնշումային տարաները եւ դրանց փականները պատրաստվում են համապատասխան նյութերից, որոնք պետք է փխրուն կոտրվածքի եւ -20 °C-ից մինչեւ +50 °C ջերմաստիճանում լարվածության տակ կոռոզիոն ճաքերի նկատմամբ դիմակայուն լինեն:

Ջողումը պետք է կատարվի հմտորեն եւ ապահովի առավելագույն ապահովություն:

**6.2.5.4. Այլումինե համաձուլվածքներից՝ ճնշումային տարաների մասով լրացուցիչ դրույթներ, որոնք նախատեսված են սեղմված գազերի, հեղուկացված գազերի, լուծված գազերի եւ ճնշման տակ չգտնվող գազերի համար եւ որոնց նկատմամբ գործում են հատուկ պահանջներ (գազի նմուշներ): Նույն դրույթները վերաբերում են նաեւ ճնշման տակ գազ պարունակող պարաստվածքներին՝ բացառությամբ աերոզոլային ցողացիրների եւ գազ պարունակող փոքր տարաների (գազի անոթներ)**

6.2.5.4.1. Այլումինի համաձուլվածքից պատրաստված՝ ճնշումային տարաների պատրաստման թույլատրելի նյութերը պետք է բավարարեն հետեւյալ պահանջները՝

	A	B	C	D
Ձգման ամրություն, Rm, ՄՊա (= Ն/մմ²)	49-ից 186	196-ից 372	196-ից 372	343-ից 490
Հոսունության լարվածության, Re, ՄՊա (= Ն/մմ²) (մնացորդային դեֆորմացիա $\lambda = 0.2\%$ )	10-ից 167	59-ից 314	137-ից 334	206-ից 412
Ճեղքվածքի մասում մնացորդային	12-ից 40	12-ից 30	12-ից 30	11-ից 16

	A	B	C	D
Երկարացում ( $l = 5d$ ) %				
Ծաման փորձարկում (կալակի տրամագիծը $d = n \times e$ , որտեղ $e$ -ն նմուշի հաստությունն է)	$n=5(Rm \leq 98)$ $n=6(Rm > 98)$	$n=6(Rm \leq 325)$ $n=7(Rm > 325)$	$n=6(Rm \leq 325)$ $n=7(Rm > 325)$	$n=7(Rm \leq 392)$ $n=8(Rm > 392)$
Այլումինային արտադրության ասոցիացիայի սերիական համար <sup>u</sup>	1 000	5 000	6 000	2 000

Փաստացի հատկանիշները կախված են համապատասխան համաձուլվածքի բաղադրությունից, ինչպես նաև ճնշումային տարայի վերջնական մշակումից: Այնուամենայնիվ, անկախ թե ինչ տեսակի համաձուլվածք է օգտագործվել, ճնշումային տարայի հաստությունը հաշվարկվում է հետևյալ բանաձևերից որեւէ մեկով՝

$$e = \frac{P_{MPa} D}{\frac{2Re}{1.3} + P_{MPa}} \text{ կամ } e = \frac{P_{bar} D}{\frac{20Re}{1.3} + P_{bar}}$$

որտեղ՝

$e$  = ճնշումային տարայի պատի նվազագույն հաստությունը՝ արտահայտված մմ-երով

$P_{MPa}$  = փորձարկման ճնշումը՝ արտահայտված ՄՊա-ով

$P_{bar}$  = փորձարկման ճնշումը՝ արտահայտված բարով

$D$  = ճնշումային տարայի անվանական արտաքին տրամագիծը՝ արտահայտված մմ-երով է:

$Re$  = հոսունության երաշխավորված նվազագույն պայմանական սահմանաչափ՝ արտահայտված ՄՊա-ով ( $=N/mm^2$ ) է:

Բացի դրանից՝ բանաձևում օգտագործված հոսունության երաշխավորված նվազագույն պայմանական սահմանաչափի արժեքը ( $Re$ ) ոչ մի դեպքում չպետք է գերազանցի ձգման ամրության երաշխավորված նվազագույն սահմանաչափի արժեքի ( $Rm$ ) 0.85-ապատիկը՝ անկախ օգտագործված համաձուլվածքի տեսակից:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1.** Վերոնշյալ բնութագրերը հենվում են ճնշումային տարաների համար օգտագործվող հետևյալ նյութերով նախկինում կատարված փորձարկումների վրա՝

Սյունակ Ա՝ Այլումին, չլեգիրված, 99.5% մաքուր.

Սյունակ Բ. Այլումինի եւ մագնեզիումի համաձուլվածքներ.

<sup>u</sup> Տե՛ս «Այլումինիումի սրանդարներ եւ տվյալներ», հինգերորդ հրատարակությունը, 1976 թվականի հունվար՝ հրատարակված Այլումինային արտադրության ասոցիացիայի կողմից, 750 Third Avenue, New York:

Սյունակ Գ. Ալյումինի, սիլիկոնի եւ մագնեզիումի համաձուլվածքներ, ինչպես, օրինակ՝ ISO/R209-Al-Si-Mg (Ալյումին արտադրողների ասոցիացիա 6351)։

Սյունակ Դ. Ալյումինի, պղնձի եւ մագնեզիումի համաձուլվածքներ։

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2.** Ճեղքվածքի մասում մնացորդային երկարացումը հաշվարկվում է շրջանակաձեւ խաչվող հատվածի փորձարկման նմուշի միջոցով, որի չափման երկարությունը՝ «l»-ը, հինգ անգամ գերազանցում է տրամագիծը՝ «d»-ին ( $l = 5d$ )։ Եթե օգտագործվում է ուղղանկյուն խաչվող հատված ներկայացնող փորձարկման նմուշ, ապա մնացորդային երկարությունը՝ «l»-ը, հաշվարկվում է հետեւյալ բանաձեւով՝


$$l = 5.65 \sqrt{F_0}$$

որտեղ  $F_0$ -ը ցույց է տալիս փորձարկվող նմուշի լայնական հատվածքի սկզբնական տարածքը։

### **ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3.**

- ա) ճկման փորձարկումը (տե՛ս սխեման) իրականացվում է նմուշների վրա, որոնք ստացվում են բալոնի շրջանակային հատվածից  $3e$ , բայց 25 մմ-ից ոչ պակաս լայնության երկու հավասար հատվածներ կտրելու միջոցով։ Նմուշները կարող են մշակվել միայն ծայրերում։
- բ) ճկման փորձարկումն իրականացվում է ( $d$ ) տրամագծով շրջանակի եւ երկու կլոր հենարանների միջոցով՝ ( $d + 3e$ ) հեռավորության վրա։ Փորձարկման ժամանակ ներքին հարթությունները բաժանվում են շրջանակի տրամագիծը չգերազանցող տարածությամբ։
- գ) նմուշը չպետք է ճաքեր տա, երբ այն ճկվում է շրջանակի շուրջը՝ մինչեւ ներքին հարթությունները բաժանվեն շրջանակի տրամագիծը չգերազանցող տարածությամբ։
- դ) շրջանակի տրամագծի եւ նմուշի հաստության միջեւ հարաբերությունը ( $n$ ) պետք է համապատասխանի աղյուսակում տրված արժեքներին։

### Ճկման փորձարկման սխեման



6.2.5.4.2. Երկարացման ստորին նվազագույն արժեքը ընդունելի է՝ պայմանով, որ ճնշումային տարան պատրաստող երկրի իրավասու մարմնի կողմից հաստատված լրացուցիչ փորձարկմամբ հաստատվի փոխադրման անվտանգության միեւնույն մակարդակ, որն ապահովում է 6.2.5.4.1-ի աղյուսակում տրված պահանջներին համապատասխան կառուցվածք՝ ճնշումային տարաների դեպքում (տե՛ս նաեւ EN 1975:1999 + A1:2003):

6.2.5.4.3. Ամենաբարակ հատվածում ճնշումային տարայի պատի հաստությունը պետք է լինի հետեւյալը՝

- եթե ճնշումային տարայի տրամագիծը 50 մմ-ից պակաս է՝ 1.5 մմ-ից ոչ պակաս.
- եթե ճնշումային տարայի տրամագիծը 50 մմ-ից 150 մմ է՝ 2 մմ-ից ոչ պակաս. եւ
- եթե ճնշումային տարայի տրամագիծը 150 մմ-ից ավելի է՝ 3 մմ-ից ոչ պակաս:

6.2.5.4.4. Ճնշումային տարայի ծայրերը պետք է ունենան կիսաշրջանակաձեւ, էլիպսի կամ եռակենտրոն հատված. դրանք պետք է ապահովեն անվտանգության միեւնույն մակարդակ, ինչպիսին ապահովում է ճնշումային տարայի հենամարմինը:

### 6.2.5.5. **Ճնշումային տարաներ՝ կոմպոզիտային նյութերից**

Բալոնների, գլանների, ճնշումային թմբկազլանների եւ բալոնների կապուկների դեպքում, որոնք պատրաստված են կոմպոզիտային նյութերից, պետք է այնպես պատրաստված լինեն, որ պայթմանը դիմադրելու նվազագույն գործակիցը լինի (պայթման ճնշումը բաժանած փորձարկման ճնշման վրա)՝

- 1.67՝ գլանաձեւ հատվածում օղագոտով բոլորված ճնշումային տարաների դեպքում.

- 2.00՝ ամբողջովին փաթույթով պատված՝ ճնշումային տարաների դեպքում:

#### **6.2.5.6. Փակ կրիոգեն տարաներ**

Սառեցված հեղուկացված գազերի համար նախատեսված փակ կրիոգեն տարաների պատրաստման նկատմամբ կիրառվում են հետևյալ պահանջները՝

- 6.2.5.6.1. Եթե օգտագործվում են ոչ մետաղական նյութեր, ապա դրանք պետք է փխրուն կոտրվածքի նկատմամբ դիմակայուն լինեն ճնշումային տարայի եւ դրա կցամասերի ամենացածր աշխատանքային ջերմաստիճանի պայմաններում:
- 6.2.5.6.2. Ճնշումը նվազեցնող սարքերը պետք է պատրաստվեն այնպես, որ դրանք լավագույնս աշխատեն նույնիսկ ամենացածր աշխատանքային ջերմաստիճանում: Այդ ջերմաստիճանում նրանց աշխատանքի վստահելիությունը հաստատվում է ստուգվում է յուրաքանչյուր սարքի կամ միեւնույն տեսակի կոնստրուկցիայով սարքերի նմուշի փորձարկման միջոցով:
- 6.2.5.6.3. Ճնշումային տարաների օդանցքները եւ ճնշումը նվազեցնող սարքերը պետք է նախագծվեն այնպես, որ հեղուկը դուրս չջայտի:

#### **6.2.6. Աերոզոլային ցողացիրների, գազ պարունակող փոքր տարաների (գազի անոթների) եւ հեղուկացված դյուրավառ գազ պարունակող վառելիքային էլեմենտներով քարթրիջների նկատմամբ կիրառվող ընդհանուր պահանջներ**

##### **6.2.6.1. Նախագծումը եւ պատրաստումը**

- 6.2.6.1.1. Միայն մեկ գազ կամ գազերի մեկ խառնուրդ պարունակող ցողացիրները (ՄԱԿ-ի նշագրման 1950 համարի աերոզոլային ցողացիրներ) եւ գազ պարունակող փոքր տարաները (գազի անոթներ) (ՄԱԿ-ի նշագրման 2037 համար) պետք է պատրաստվեն մետաղից: Այս պահանջը չի կիրառվում առավելագույնը 100 մլ տարողունակության ցողացիրների եւ գազ պարունակող փոքր տարաների նկատմամբ (գազի անոթներ), որոնք նախատեսված են ՄԱԿ-ի նշագրման 1011 համարի բութանի համար: Մյուս աերոզոլային ցողացիրները (ՄԱԿ-ի նշագրման 1950 համարի ցողացիրներ) պետք է պատրաստված լինեն մետաղից, սինթետիկ նյութից կամ ապակուց: Մետաղից պատրաստված եւ 40 մմ-ից պակաս արտաքին տրամագիծ ունեցող տարաները պետք է ունենան գոգավոր հատակ:
- 6.2.6.1.2. Մետաղից պատրաստված տարաների տարողունակությունը չպետք է գերազանցի 1 000 մլ-ն. իսկ սինթետիկ նյութից կամ ապակուց պատրաստված տարաներինը՝ 500 մլ-ն:

- 6.2.6.1.3. Տարաների յուրաքանչյուր մոդելը (աերոզոլային ցողացիւրներ կամ գազաբալոններ), նախքան աշխատեցնելը, պետք է անցնեն հիդրավլիկ ճնշման փորձարկում, որը պետք է իրականացվի 6.2.6.2-ի պահանջների համաձայն:
- 6.2.6.1.4. Աերոզոլային ցողացիւրների ճնշման արտաթողման կափույրները եւ մանրացման սարքերը (ՄԱԿ-ի նշագրման 1950 համարի ցողացիւրներ) եւ ՄԱԿ-ի նշագրման 2037 համարի՝ գազ պարունակող փոքր տարաների (գազի անոթների) կափույրները պետք է ապահովեն տարաների փակման անջրանցիկությունը, ինչպես նաեւ պաշտպանված լինեն պատահական կերպով բացվելուց: Միայն ներքին ճնշմամբ փակվող կափույրները եւ մանրեցման սարքերը թույլատրելի չեն:
- 6.2.6.1.5. Աերոզոլային ցողացիւրների՝ 50 °C ջերմաստիճանում ներքին ճնշումը չպետք է գերազանցի փորձարկման ճնշման երկու երրորդը կամ 1.32 ՄՊա-ը (13.2 բար): Դրանք պետք է լցվեն այնպես, որ 50°C ջերմաստիճանում հեղուկ ֆազան չգերազանցի դրանց տարողության 95%-ը: Գազ (գազի անոթներ) պարունակող փոքր տարաները պետք է բավարարեն 4.1.4.1-ի P200 փաթեթավորման ցուցումների պահանջները. Բացի այդ, փորձարկման ճնշման եւ ջրի տարողունակության արդյունքը չպետք է գերազանցի 30 բար.լ-ը հեղուկացված գազի դեպքում եւ 54 բար.լ-ն՝ խտացված գազի դեպքում, իսկ փորձարկման ճնշումը չպետք է հեղուկացված գազի դեպքում գերազանցի 250 բարը կամ խտացված գազի դեպքում՝ 450 բարը:

### **6.2.6.2. Հիդրավլիկ ճնշման փորձարկում**

- 6.2.6.2.1. Կիրառվող ներքին ճնշումը (փորձարկման ճնշումը) պետք է 1.5 անգամ գերազանցի ներքին ճնշումը՝ 50 °C ջերմաստիճանում եւ պետք է կազմի 1 ՄՊա (10 բար)-ից ոչ պակաս:
- 6.2.6.2.2. Հիդրավլիկ ճնշման փորձարկումը պետք է իրականացվի յուրաքանչյուր տեսակի առնվազն հինգ դատարկ տարաներում՝
- ա) մինչեւ ստացվի սահմանված փորձարկման ճնշումը, որի դեպքում տեղի չի ունենա արտահոսք կամ որեւէ տեսանելի եւ մնացորդային դեֆորմացիա եւ
  - բ) մինչեւ տեղի ունենա արտահոսք կամ ճայթում. գոգավոր հատակը, եթե այդպիսին կա, պետք է սկզբում մի փոքր իջնի ցած եւ տարան չպետք է արտահոսի կամ ճայթի մինչեւ փորձարկման 1.2-ապատիկ ճնշման հասնելը կամ դրանից անցնելը:

### **6.2.6.3. Հերմետիկության (անջրանցիկության) փորձարկում**

Աերոզոլային յուրաքանչյուր լցված ցողացիւր կամ գազի անոթ կամ վառելիքային էլեմենտներով քարթրիջ պետք է անցնի փորձարկում տաք ջրով լցված տաշտում՝ 6.2.6.3.1-ին համապատասխան կամ

համարժեք որեւէ այլ տաշտում, որը հաստատվել է փորձարկման համար՝ 6.2.6.3.2-ին համապատասխան:

6.2.6.3.1. Փորձարկում տաք ջրով լցված տաշտում

6.2.6.3.1.1. Տաշտի ջրի ջերմաստիճանը եւ փորձարկման տեսողությունը պետք է լինեն այնպիսին, որ ներքին ճնշումը հասնի այն մակարդակին, որը ձեռք կբերվեր 55 °C ջերմաստիճանում (50 °C՝ եթե հեղուկ ֆազան 50 °C ջերմաստիճանում չի գերազանցում աերոզոլային ցողացիրի, գազի անոթի կամ վառելիքային էլեմենտներով քարթրիջի տարողության 95%-ը): Եթե պարունակությունը զգայուն է ջերմության նկատմամբ, կամ եթե աերոզոլային ցողացիրները, գազի անոթները կամ վառելիքային էլեմենտներով քարթրիջները պատրաստված են պլաստիկ նյութից, որը փափկում է փորձարկման ջերմաստիճանի դեպքում, ապա ջրի ջերմաստիճանը պետք է լինի 20 °C-ի եւ 30 °C-ի միջեւ, բացի դրանից՝ 2000 ցողացիրներից, գազի անոթից կամ վառելիքային էլեմենտներով քարթրիջից մեկը պետք է փորձարկվի ավելի բարձր ջերմաստիճանում:

6.2.6.3.1.2. Չպետք է տեղի ունենա աերոզոլային ցողացիրի, գազի անոթի կամ վառելիքային էլեմենտներով քարթրիջի արտահոսք կամ մնացորդային դեֆորմացիա՝ բացառությամբ այն դեպքերի, երբ պլաստմասսայից աերոզոլային ցողացիրը, գազի անոթը կամ վառելիքային էլեմենտներով քարթրիջը կարող է դեֆորմացվել փափկելիս, սակայն ոչ մի դեպքում արտահոսք չպետք է տեղի ունենա:

6.2.6.3.2. *Այլընտրանքային մեթոդներ*

Իրավասու մարմնի կողմից համաձայնության դեպքում կարող են օգտագործվել այլընտրանքային մեթոդներ, որոնք ապահովում են անվտանգության համարժեք մակարդակ՝ պայմանով, որ 6.2.6.3.2.1-ի եւ, համապատասխանաբար, 6.2.6.3.2.2-ի եւ 6.2.6.3.2.3-ի պահանջները պահպանվեն:

6.2.6.3.2.1. Որակի հսկողության համակարգ

Աերոզոլային ցողացիրներ, գազի անոթ կամ վառելիքային էլեմենտներով քարթրիջ լցավորողները եւ բաղադրիչներ արտադրողները պետք է ունենան որակի հսկողության համակարգ: Որակի հսկողության համակարգով իրականացվում են այնպիսի ընթացակարգեր, որոնք ապահովում են, որ աերոզոլային ցողացիրները, գազի անոթները կամ վառելիքային էլեմենտներով քարթրիջները, որոնք արտահոսում են կամ ենթարկվում են ձեւափոխման, չընդունվեն եւ չփոխադրվեն:

Որակի հսկողության համակարգը պետք է ներառի.

- ա) կազմակերպական կառուցվածքի եւ պարտականությունների նկարագրություն.
- բ) վերահսկողության եւ փորձարկման, որակի հսկողության, որակի ապահովման եւ տեխնոլոգիական գործընթացների համապատասխան ցուցումները, որոնք պետք է կիրառվեն.
- գ) որակի մասին արձանագրությունները, ինչպես, օրինակ՝ ստուգող ստուգումների արձանագրություններ, փորձարկումների արդյունքների մասին տվյալներ, ստուգաճշտման տվյալներ եւ սերտիֆիկատներ.
- դ) որակի համակարգի արդյունավետ գործարկումն ապահովելու նպատակով կառավարման գործընթացների ստուգումներ.
- ե) փաստաթղթերի եւ դրանց փոփոխությունների հսկողության գործընթաց.
- զ) ամրագրված պահանջներին չհամապատասխանող աերոզոլային ցողացիները, գազի անոթները կամ վառելիքային էլեմենտներով քարթրիջները վերահսկելու միջոցներ.
- է) համապատասխան անձնակազմի վերապատրաստման ծրագրեր եւ որակավորման ընթացակարգեր.
- ը) ընթացակարգեր, որոնց միջոցով կարելի է համոզվել, որ վերջնական արտադրանքը վնասված չէ:

Պետք է կատարվի նախնական աուդիտ եւ պարբերական աուդիտներ, որոնք պետք է բավարարեն իրավասու մարմնի պահանջները: Այդ աուդիտների միջոցով պետք է համոզվել, որ հաստատված համակարգը բավարար ու արդյունավետ է եւ շարունակում է մնալ այդպիսին: Հաստատված համակարգում առաջարկվող ցանկացած փոփոխության մասին պետք է նախօրոք ծանուցվի իրավասու մարմնին:

#### 6.2.6.3.2.2. Աերոզոլային ցողացիներ

##### 6.2.6.3.2.2.1. Աերոզոլային ցողացիների ճնշման եւ արտահոսքի փորձարկում՝ նախքան դրանց լցավորումը

Յուրաքանչյուր դատարկ աերոզոլային ցողացի պետք է ենթարկվի լցավորված աերոզոլային ցողացիներից հնարավոր առավելագույն ճնշմանը հավասար կամ դրանից բարձր ճնշման՝ 55 °C ջերմաստիճանում (50 °C՝ եթե 50 °C ջերմաստիճանում հեղուկ ֆազան չի գերազանցում աերոզոլային ցողացիի



տարողության 95%-ը ): Նման ճնշումը պետք է կազմի աերոզոլային ցողացիրի նախագծային ճնշման առնվազն երկու երրորդը: Եթե որեւէ աերոզոլային ցողացիրում փորձարկման ճնշման ժամանակ նկատվում է  $3.3 \times 10^{-2}$  մբար.լ.ս<sup>-1</sup>-ին հավասար կամ դրանից բարձր արագությամբ արտահոսք, շեղում կամ որեւէ այլ խոտան, ապա այն պետք է խոտանվի:

6.2.6.3.2.2.2. Աերոզոլային ցողացիրի փորձարկումը լցավորումից հետո

Լցավորում իրականացնելիս առաջ այն իրականացնող անձը պետք է ապահովի, որ ամրացնող սարքը բավարար չափով ամրացված է եւ օգտագործվել է պահանջվող արտամղիչը:

Լցավորված յուրաքանչյուր աերոզոլային ցողացիր պետք է կշռվի եւ անցնի հերմետիկության փորձարկում: Արտահոսք հայտնաբերելու համար նախատեսված սարքերը պետք է 20 °C ջերմաստիճանում զգայուն լինեն առնվազն  $2.0 \times 10^{-3}$  մբար.լ.ս<sup>-1</sup> արագությամբ արտաթողման նկատմամբ:

Լցավորված ցանկացած աերոզոլային ցողացիր, որի դեպքում նկատվում է արտահոսք, դեֆորմացիա կամ ավելորդ զանգված, պետք է խոտանվի:

6.2.6.3.2.3. Գազի անոթներ եւ վառելիքային էլեմենտներով քարթրիջներ

6.2.6.3.2.3.1. Գազի անոթների եւ վառելիքային էլեմենտներով քարթրիջների փորձարկումը ճնշման տակ

Յուրաքանչյուր գազի անոթ կամ վառելիքային էլեմենտներով քարթրիջ պետք է ենթարկվի փորձարկման այնպիսի ճնշման տակ, որը հավասար է կամ գերազանցում է 55 °C ջերմաստիճանում (50 °C՝ եթե հեղուկ ֆազան 50 °C ջերմաստիճանում չի գերազանցում տարողության 95%-ը) առաջացող նվազագույն նախատեսված ճնշմանը: Այս ճնշման տակ փորձարկումը պետք է լինի գազի անոթի կամ վառելիքային էլեմենտներով քարթրիջի համար նշված ճնշում եւ չպետք է լինի գազի անոթի կամ վառելիքային էլեմենտներով քարթրիջի համար նախատեսված ճնշման երկու երրորդից պակաս: Եթե որեւէ գազի անոթ կամ վառելիքային էլեմենտներով քարթրիջ ունենում է ճնշման տակ փորձարկման  $3.3 \times 10^{-2}$  մբար.լ.վ<sup>-1</sup>-ին հավասար կամ ավելի արագությամբ արտահոսքի կամ դեֆորմացման կամ որեւէ այլ դեֆեկտի ապացույց, այն պետք է մերժվի:

6.2.6.3.2.3.2. Գազի անոթի կամ վառելիքային էլեմենտներով քարթրիջի արտահոսքի փորձարկումը

Նախքան լցավորելը կամ կապարակնքելը լցավորողը պետք է

ապահովի, որ փականները (եթե այդպիսիք կան) եւ դրանց առնչվող կապարակնքման սարքավորումները պատշաճ կերպով փակ լինեն, եւ օգտագործվի սահմանված գազը:

Յուրաքանչյուր լցավորված գազի անոթի կամ վառելիքային էլեմենտներով քարթրիջի գազի ճիշտ զանգվածը պետք է ստուգվի, եւ պետք է իրականացվի արտահոսքի փորձարկում: Արտահոսքի հայտնաբերման սարքավորումները պետք է լինեն բավարար կերպով զգայուն, որպեսզի կարողանան հայտնաբերել  $2.0 \times 10^{-3}$  մբար.լ.վ<sup>-1</sup> արագությամբ առաջացող արտահոսքը 20 °C-ի ժամանակ:

Ցանկացած գազի անոթ կամ վառելիքային էլեմենտներով քարթրիջ, որի գազի զանգվածը չի համապատասխանում հայտարարված զանգվածի սահմանաչափին, կամ ունի արտահոսքի կամ դեֆորմացիայի ապացույց, պետք է մերժվի:

6.2.6.3.3. Իրավասու մարմնի կողմից համաձայնության դեպքում փոքր անրոզոլները եւ տարաները չեն կարգավորվում 6.2.6.3.1-ով եւ 6.2.6.3.2-ով, եթե դրանք պետք է ենթարկվեն մանրէազերծության (ստերիլության), բայց դրանց վրա բացասաբար կարող է անդրադառնալ ջրում փորձարկումը, պայմանով, որ.

- ա) դրանք պարունակեն ոչ դյուրավառ գազ եւ կա՛մ.
  - i) պարունակեն այլ նյութեր, որոնք դեղագործական արտադրանքի բաղադրիչ մաս են կազմում՝ բժշկական, անասնաբուժական եւ նմանատիպ նպատակներով.
  - ii) պարունակեն այլ նյութեր, որոնք օգտագործվում են դեղագործական արտադրանքի արտադրության պրոցեսում. կամ
  - iii) օգտագործվում են բժշկական, անասնաբուժական կամ նմանատիպ նպատակներով.
- բ) անվտանգության համարժեք մակարդակ ձեռք բերվի արտադրողի կողմից՝ արտաթողման հայտնաբերման եւ ճնշման դիմակայության այլընտրանքային մեթոդների կիրառության միջոցով: Նման մեթոդների օրինակներ են հելիումի հայտնաբերումը եւ արտադրական յուրաքանչյուր խմբաքանակում 2000-ի մեջ առնվազն 1 վիճակագրական նմուշի փորձարկումը ջրի տաշտում. եւ
- գ) վերոնշյալ (ա)(i) եւ (iii) կետերում նշված դեղագործական արտադրանքի դեպքում դրանք արտադրվում են ազգային առողջապահական գերատեսչության իրավասության ներքո: Եթե իրավասու մարմինը պահանջում է, ապա պետք է պահպանվեն Առողջապահության համաշխարհային

կազմակերպության (ԱՀԿ)<sup>3</sup> Արտադրական պատշաճ գործելակերպի (ՊԱԳ) սկզբունքները:

#### 6.2.6.4. Հղումներ սրանդարտներին

Սույն բաժնի պահանջները համարվում են բավարարված, եթե պահպանվում են հետևյալ ստանդարտները՝

- աերոզոլային ցողացիրների դեպքում (ՄԱԿ-ի նշագրման 1950 համարի աերոզոլներ)՝ Խորհրդի 75/324/ԵՏՀ<sup>4</sup> հրահանգին կից հավելված, որը փոփոխվել է գործում է արտադրման ամսաթվին.
- ՄԱԿ-ի նշագրման 2037 համարի՝ գազ պարունակող փոքր տարաների (գազի անոթների) դեպքում, որոնք պարունակում են ՄԱԿ-ի նշագրման 1965 համարի ածխաջրածնային գազի խառնուրդ, «այլ կերպ չնշված», հեղուկացված՝ EN 417:2012 չվերալցավորվող մետաղական գազի անոթներ հեղուկ նավթային գազերի համար՝ կափույրով կամ առանց կափույրի, շարժական սարքերի հետ օգտագործման նպատակով. պատրաստում, ստուգում, փորձարկում եւ մակնշում:
- ՄԱԿ-ի նշագրման 2037 համարի՝ գազ պարունակող փոքր տարաների (գազի անոթների) համար, որոնք պարունակում են թունավոր, չայրվող խտացված կամ հեղուկ գազեր. EN 16509:2014. Շարժական գազի բալոններ. Մինչեւ 120 մլ ներառյալ տարողությամբ չլցավորվող, փոքր շարժական, պողպատե բալոններ, որոնք պարունակում են խտացված կամ հեղուկ գազեր (խիտ բալոններ). նախագծումը, պատրաստումը, լցավորումը եւ փորձարկումը (բացառությամբ 9-րդ կետի):

<sup>3</sup> ԱՀԿ հրատարակություն՝ «Դեղագործական ապրանքների որակի ապահովումը: Ուղեցույցների եւ հարակից նյութերի համառոտ ձեռնարկ: 2-րդ հատոր. Պաշտոնապարտական գործելակերպ եւ տեսչական ստուգում»:

<sup>4</sup> 1975 թվականի մայիսի 20-ի 75/324/ԵՏՀ հրահանգ «Աերոզոլային ցողացիրների մասով՝ անդամ պետությունների իրավական ակտերի մոտարկման մասին»՝ հրատարակված Եվրոպական համայնքների պաշտոնական տեղեկագրում՝ թիվ. L 147 09.06.1975թ.:

## ԳԼՈՒԽ 6.3

### 6.2 ԴԱՍԻ «Ա» ԿԱՏԵԳՈՐԻԱՅԻ ՎԱՐԱԿԻՉ ՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՓԱԹԵԹՎԱԾՔՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** Սույն գլխի պահանջները չեն վերաբերում 6.2 դասի նյութերի փոխադրման նպատակով օգտագործվող փաթեթվածքներին՝ 4.1.4.1-ի P621 փաթեթավորման ցուցումների համաձայն:

#### 6.3.1. Ընդհանուր դրույթներ

6.3.1.1. Սույն գլխի պահանջները կիրառվում են «Ա» կատեգորիայի վարակիչ նյութերը փոխադրելու համար նախատեսված փաթեթվածքների նկատմամբ:

#### 6.3.2. Փաթեթվածքների համար նախատեսված պահանջները

6.3.2.1. Սույն բաժնի փաթեթվածքների համար նախատեսված պահանջները հենվում են ներկայումս օգտագործվող փաթեթվածքների վրա, որոնք սահմանված են 6.1.4-ում: Գիտության եւ տեխնոլոգիայի զարգացումները հաշվի առնելու նպատակով, առարկություն չկա, որ օգտագործվեն սույն գլխում սահմանված փաթեթվածքներից տարբեր մասնագրեր ունեցող փաթեթվածքներ՝ պայմանով, որ դրանք լինեն համարժեքորեն արդյունավետ, իրավասու մարմնի համար ընդունելի եւ 6.3.5-ում նկարագրված փորձարկումները հաջող անցնելու ունակ: «ԱԴԴ» համաձայնագրում նկարագրված փորձարկման մեթոդներից տարբեր մեթոդներ ընդունելի են՝ պայմանով, որ դրանք լինեն համարժեք եւ ընդունելի իրավասու մարմնի համար:

6.3.2.2. Փաթեթվածքները պետք է արտադրվեն եւ փորձարկվեն որակի ապահովման ծրագրի համաձայն, որը բավարարում է իրավասու մարմնի պահանջներն այն մասով, որ յուրաքանչյուր փաթեթվածք բավարարի սույն գլխի պահանջները:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** «Փաթեթվածք. Տրանսպորտային փաթեթներ վրանգավոր բեռների համար. Վրանգավոր բեռների փաթեթվածքներ, միջին բեռնվածության կոնտեյներներ (ՍՄԿ-ներ) եւ խոշոր փաթեթվածքներ. ISO 9001 ստանդարտի կիրառության ուղեցույցներ» ISO 16106:2006 ստանդարտը պարունակում է ընդունելի հրահանգներ այն ընթացակարգերի մասին, որոնց կարելի է հետեւել:

6.3.2.3. Փաթեթվածքներ արտադրողները եւ դրանց հետագա վաճառքով զբաղվող ընկերությունները պետք է տեղեկություններ տրամադրեն այն

ընթացակարգերի մասին, որոնց հարկավոր է հետեւել: Նրանք պետք է նկարագրեն նաեւ փականների տեսակները եւ չափսերը (ներառյալ պահանջվող խցանիչները) եւ բոլոր մյուս բաղադրիչները, որոնք անհրաժեշտ են՝ ապահովելու համար, որ փոխադրման համար ներկայացված փաթեթները հնարավորություն ունենան անցնել սույն գլխում նշված՝ կիրառելի շահագործման փորձարկումները:

### **6.3.3. Փաթեթվածքների տեսակների նշանակման ծածկագրերը**

6.3.3.1. Փաթեթվածքների տեսակների նշանակության ծածկագրերը տրված են 6.1.2.7-ում:

6.3.3.2. Փաթեթվածքի ծածկագրի վերջում կարող է գրված լինել «U» կամ «W» տառերը: «U» տառը ցույց է տալիս փաթեթվածքի հատուկ տեսակ, որը բավարարում է 6.3.5.1.6-ի պահանջները: «W» տառը ցույց է տալիս, որ փաթեթվածքն արտադրվել է 6.1.4-ում սահմանված մասնագրերից տարբերվող փաթեթվածքով, չնայած այն պատկանում է ծածկագրում ցույց տրվող տեսակին եւ համարվում է 6.3.2.1-ի պահանջներին համարժեք:

### **6.3.4. Մակնշումը**

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1.** Մակնշումը ցույց է տալիս, որ այն կրող փաթեթվածքը համապատասխանում է կառուցվածքի այն տեսակին, որը հաջողությամբ անցել է փորձարկումը եւ որ այն համապատասխանում է փաթեթվածքի արտադրման եւ ոչ թե կիրառության մասով սույն գլխի պահանջներին:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2.** Մակնշումը նախատեսված է փաթեթվածք արտադրողների, դրանք վերականգնողների, փաթեթվածք օգտագործողների, փոխադրողների եւ կարգավորող մարմինների գործը հեշտացնելու համար:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3.** Մակնշման մեջ միշտ չէ, որ տրամադրվում են մանրամասներ փորձարկման մակարդակների եւ այլնի մասին, իսկ նման մանրամասները կարող են անհրաժեշտ լինել՝ հետազայում հաշվի առնվելու համար, օրինակ, երբ տրվում է փորձարկման սերտիֆիկատ, կազմվում են փորձարկման հաշվետվություններ եւ պատրաստվում է հաջողությամբ փորձարկում անցած փաթեթվածքների գրանցում:

6.3.4.1. «ԱԴԲ» համաձայնագրի համաձայն՝ կիրառության համար նախատեսված յուրաքանչյուր փաթեթվածքի վրա պետք է լինի մակնշում, որը պետք է լինի չջնջվող, ընթեռնելի եւ պետք է տեղակայված լինի այնպիսի մասում եւ փաթեթվածքի համեմատությամբ լինի այնպիսի չափսերի, որ այն հեշտ տեսանելի լինի: Ավելի քան 30 կգ անզուտ քաշով փաթեթների դեպքում մակնշումը կամ դրա կրկնօրինակը պետք է լինի փաթեթվածքի վերին հատվածում կամ կողքին: Տառերը,

թվերը եւ խորհրդանշանները պետք է լինեն առնվազն 12 մմ բարձրության՝ բացառությամբ 30 լիտր կամ 30 կգ, կամ պակաս տարողունակության փաթեթվածքների, որոնց դեպքում դրանք պետք է լինեն առնվազն 6 մմ բարձրության: Բացառություն են նաեւ 5 լիտր կամ 5 կգ կամ պակաս քաշ ունեցող փաթեթվածքները, որոնք պետք է լինեն համապատասխան չափսերի:

6.3.4.2. Սույն բաժնի եւ 6.3.5-ի պահանջներին բավարարող փաթեթվածքները պետք է մակնշվեն՝

ա) Միավորված ազգերի կազմակերպության փաթեթվածքների խորհրդանշանով՝



Այս խորհրդանշանը պետք է օգտագործվի՝ հաստատելու համար, որ փաթեթվածքը, սորուն բեռների համար նախատեսված փափուկ կոնտեյները, շարժական ցիստեռնը կամ ԳՔՏԿ-ն համապատասխանում են 6.1, 6.2, 6.3, 6.5, 6.6, 6.7 կամ 6.11 գլուխների համապատասխան պահանջներին եւ չպետք է օգտագործվեն որեւէ այլ նպատակով.

բ) ծածկագիր, որը ցույց է տալիս փաթեթվածքի տեսակը՝ 6.1.2-ի պահանջների համաձայն.

գ) «6.2 դաս» գրությունը.

դ) փաթեթվածքի արտադրման տարվա վերջին երկու թվերը.

ե) մակնշման տրամադրումը հաստատող պետությունը, որի վրա նշվում է միջազգային ճանապարհային երթուղեկության մեջ ներգրավված փոխադրամիջոցների վրա կիրառվող տարբերանշանը<sup>1</sup>

զ) արտադրողի անունը կամ փաթեթվածքի նույնականացման այլ նշան, որը սահմանվել է իրավասու մարմնի կողմից.

է) 6.3.5.1.6-ի պահանջները բավարարող փաթեթվածքների դեպքում՝ «Ս» տառը, որը նշվում է վերոնշյալ (բ) կետով պահանջվող մակնշումից անմիջապես հետո:

6.3.4.3. Մակնշումը կիրառվում է 6.3.4.2 (ա)-(է)-ում նշված հերթականությամբ. սույն ենթապարբերություններում պահանջվող մակնշման յուրաքանչյուր նշան պետք է հստակ առանձնացվի, օրինակ՝ գծիկով կամ տարածությամբ, որը պետք է լինի հեշտ նկատելի: Օրինակների համար տե՛ս 6.3.4.4-ը:

<sup>1</sup> Միջազգային երթուղեկության մեջ գտնվող փոխադրամիջոցների եւ դրանց կցորդների՝ գրանցման պետության փարբերանշաններ, օրինակ՝ 1949 թվականի «Ճանապարհային երթուղեկության մասին» Ժնեւի կոնվենցիային կամ 1968 թվականի «Ճանապարհային երթուղեկության մասին» Վիեննայի կոնվենցիային համապատասխան:

Իրավասու մարմնի կողմից արտոնված ցանկացած այլ մակնշման դեպքում պետք է հնարավոր լինի ճիշտ կիրառել 6.3.4.1-ով պահանջվող մակնշումը:

#### 6.3.4.4. **Մակնշման օրինակներ**



4G/CLASS 6.2/06 համաձայն 6.3.4.2 (ա), (բ), (գ) եւ (դ)-ի  
S/SP-9989-ERIKSSON համաձայն 6.3.4.2 (ե) եւ (զ)-ի

#### 6.3.5. **Փաթեթվածքների համար պահանջվող փորձարկման պահանջները**

##### 6.3.5.1. **Փորձարկումների իրականացումը եւ հաճախականությունը**

- 6.3.5.1.1. Փաթեթվածքի կառուցվածքի յուրաքանչյուր տեսակ պետք է փորձարկում անցնի, ինչպես սահմանված է սույն բաժնում՝ պահպանելով իրավասու մարմնի կողմից հաստատված ընթացակարգերի պահանջները, որոնց համաձայն պետք է մակնշում կատարվի: Փաթեթվածքների բոլոր տեսակները պետք է հաստատվեն այդ իրավասու մարմնի կողմից:
- 6.3.5.1.2. Փաթեթվածքի կառուցվածքի յուրաքանչյուր տեսակ պետք է հաջողությամբ անցնի սույն գլխում սահմանված փորձարկումները՝ նախքան դրանց օգտագործումը: Փաթեթվածքի կառուցվածքի տեսակը սահմանվում է ըստ կառուցվածքի, չափի, նյութի եւ հաստության, պատրաստման ձեւի եւ փաթեթավորման, սակայն կարող է ներառել արտաքին մակերեսային մշակման տարբեր միջոցներ: Այն նաեւ ներառում է տարբեր փաթեթվածքներ, որոնք տարբերվում են կառուցվածքի տեսակից միայն կառուցվածքի ավելի ցածր բարձրությամբ:
- 6.3.5.1.3. Փորձարկումները պետք է կրկնվեն արտադրական նմուշների համար՝ իրավասու մարմնի կողմից հաստատված միջակայքերով:
- 6.3.5.1.4. Փորձարկումները պետք է նաեւ կրկնվեն յուրաքանչյուր փոփոխություն կատարելուց հետո, որով փոփոխվում է նմուշի պատրաստումը, նյութը կամ փաթեթվածքի պատրաստման եղանակը:
- 6.3.5.1.5. Իրավասու մարմինը կարող է թույլ տալ կատարել փաթեթվածքների ընտրովի փորձարկում, եթե դրանք միայն մի փոքր են տարբերվում փորձարկման տեսակից, օրինակ՝ առավել փոքր չափ կամ առաջնային տարաների առավել փոքր զտաքաշ. նման օրինակ են նաեւ թմբկազլանները եւ արկղերը, որոնք արտադրվում են արտաքին առավել փոքր չափերով:
- 6.3.5.1.6. Ցանկացած տեսակի առաջնային տարա կարող է հավաքվել երկրորդային փաթեթվածքի ներսում եւ կարող է փոխադրվել առանց փորձարկման՝ կոշտ արտաքին փաթեթվածքի ներսում հետեւյալ

պայմանների համաձայն՝

- ա) կոշտ արտաքին փաթեթվածքը պետք է հաջողությամբ փորձարկում անցած լինի 6.3.5.2.2-ի համաձայն փխրուն առաջնային տարաների հետ (օրինակ՝ ապակի)։
- բ) առաջնային տարաների ընդհանուր միասնական անզուտ քաշը չպետք է գերազանցի վերելի (ա) կետում նկարագրված՝ անկման փորձարկման նպատակով օգտագործվող առաջնային տարաների անզուտ քաշի կետը։
- գ) առաջնային տարաների միջև եւ առաջնային տարաների ու երկրորդային փաթեթվածքի արտաքին մակերեսույթի միջև պաշտպանիչ նյութի հաստությունը չպետք է լինի ավելի պակաս, քան նախնական փորձարկում անցած փաթեթվածքի համապատասխան հաստությունը։ Եթե նախնական փորձարկման ժամանակ օգտագործվել է մեկ առաջնային տարա, ապա պաշտպանիչ նյութի հաստությունը առաջնային տարաների միջև չպետք է ավելի պակաս լինի, քան երկրորդային փաթեթվածքի եւ առաջնային փաթեթվածքի արտաքին մակերեսույթի միջև հաստությունը, որոնք օգտագործվել են նախնական փորձարկման ժամանակ։ Եթե օգտագործվել են թվով ավելի քիչ կամ ավելի փոքր առաջնային տարաներ (ի համեմատություն անկման փորձարկման ժամանակ օգտագործված առաջնային տարաների), ապա պետք է օգտագործվի լրացուցիչ պաշտպանիչ նյութ՝ դատարկ տարածքները լրացնելու համար։
- դ) կոշտ արտաքին փաթեթվածքը պետք է դատարկ վիճակում հաջողությամբ անցնի 6.1.5.6-ում նշված դարսակման փորձարկումը։ Նմանատիպ փաթեթների լրիվ զանգվածը պետք է որոշվի վերոնշյալ (ա) կետի անկման փորձարկման ժամանակ օգտագործվող փաթեթվածքների ընդհանուր զանգվածի հիման վրա։
- ե) հեղուկ պարունակող առաջնային տարաների դեպքում պետք է առկա լինի բավարար քանակությամբ կլանիչ նյութ՝ ներծծելու համար առաջնային տարայի ամբողջ հեղուկ պարունակությունը։
- զ) Եթե կոշտ արտաքին փաթեթվածքը նախատեսված է հեղուկների համար առաջնային տարաներ պարունակելու համար եւ անթափանցելի չէ, կամ նախատեսված է կոշտ նյութերի համար առաջնային տարաներ պարունակելու համար եւ թափվող նյութերի համար դիմակայուն չէ, ապա պետք է միջոցներ ձեռնարկվեն՝ հեղուկը կամ պինդ պարունակությունը տարայի մեջ պահելու համար դրանց արտահոսքի դեպքում՝ անջրանցիկ ներդիրի, պլաստմասսայից պարկերի կամ որեւէ այլ համարժեք արդյունավետության պահպանման միջոցներով։



է) 6.3.4.2 (ա)-(զ)-ում սահմանված մակնշումից բացի՝ փաթեթվածքը պետք է մակնշվի 6.3.4.2 (է)-ի համաձայն:

6.3.5.1.7. Իրավասու մարմինը ցանկացած ժամանակ կարող է սույն բաժնի համաձայն իրականացվող փորձարկման հիման վրա ապացույց տրամադրել, որ փաթեթվածքի սերիական արտադրությունը բավարարում է կառուցվածքի տեսակի մասին փորձարկման պահանջները:

6.3.5.1.8. Կարելի է կատարել մի քանի փորձարկումներ միեւնույն նմուշի վրա՝ պայմանով, որ դա չազդի փորձարկման արդյունքների հավաստիության վրա եւ իրավասու մարմինը տա իր համաձայնությունը:

**6.3.5.2. Փաթեթվածքի նախապատրաստումը՝ փորձարկում անցնելու համար**

6.3.5.2.1. Փաթեթվածքների նմուշները պետք է պատրաստվեն այնպես, ինչպես դրանք պետք է փոխադրվեն: Բացառություն են կազմում հեղուկ կամ պինդ վարակիչ նյութերը, որոնք պետք է փոխարինվեն ջրով, կամ եթե նախատեսվում է  $-18\text{ }^{\circ}\text{C}$  աստիճանում պահելու պայման՝ ջուր/հակասառիչ հեղուկով: Առաջնային տարաները պետք է լցվեն իրենց տարողունակության 98%-ից ոչ պակաս նյութով կամ հեղուկով:

**ՇԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** «Ջուր» եզրույթի տակ պետք է հասկանալ 0.95 նվազագույն հարաբերական խտությամբ ջուր/հակասառիչ հեղուկ՝  $-18\text{ }^{\circ}\text{C}$  ջերմաստիճանում փորձարկվելու համար:

6.3.5.2.2. Պահանջվող փորձարկումները եւ նմուշների քանակությունը

**Փաթեթվածքի տարբեր տեսակների համար պահանջվող փորձարկումներ**

Փաթեթվածքի տեսակը <sup>ա</sup>			Պահանջվող փորձարկումը					
Կոշտ արտաքին փաթեթվածք	Առաջնային տարա		Ջրով ցողման փորձարկում 6.3.5.3.6.1	Ցածր ջերմաստիճանին դիմակայունության փորձարկում 6.3.5.3.6.2	Անկման փորձարկում 6.3.5.3	Անկման լրացուցիչ փորձարկում 6.3.5.3.6.3	Պատովածք ադիմացկունության փորձարկում 6.3.5.4	Դարսակման փորձարկում 6.1.5.6
	Պլաստմասսա	Այլ	Նմուշների թիվը	Նմուշների թիվը	Նմուշների թիվը	Նմուշների թիվը	Նմուշների թիվը	Նմուշների թիվը
Փայտաթելքային սալից արկղ	x		5	5	10	Պահանջվում է կատարել մեկ նմուշի վրա, եթե փաթեթվածքը նախատեսված է չոր սառույց պարունակելու համար	2	Պահանջվում է կատարել երեք նմուշների վրա «Ս» տառով մակնշված փաթեթվածքներ փորձարկելիս, ինչպես սահմանված է 6.3.5.1.6-ում՝ հատուկ դիրքերի համար
		x	5	0	5		2	
Փայտաթելքային սալից թմբկազյան	x		3	3	6		2	
		x	3	0	3		2	
Պլաստմասսայից արկղ	x		0	5	5		2	
		x	0	5	5		2	
Պլաստմասսայից թմբկազյան/կանի ստր	x		0	3	3		2	
		x	0	3	3		2	

Այլ նյութերից պատրաստված արկղեր	x		0	5	5		2	
		x	0	0	5		2	
Այլ նյութերից պատրաստված թմբկազվաններ/կանխատրեր	x		0	3	3		2	
		x	0	0	3		2	

<sup>ա</sup> «Փաթեթվածքի տեսակ»-ը դասակարգում է փաթեթվածքները փորձարկման նպատակով՝ փաթեթվածքի տեսակի եւ նյութի հատկանիշների համաձայն:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1.** Եթե առաջնային տարան բաղկացած է երկու կամ ավելի նյութերից, ապա համապատասխան փորձարկումը հենվում է այն նյութի վրա, որի դեպքում վնասվելու հավանականությունը ամենամեծն է:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2.** Երկրորդային փաթեթվածքի նյութը հաշվի չի առնվում փորձարկման տեսակը ընտրելիս կամ չի պայմանավորում փորձարկման հաջողությունը:

Աղյուսակից օգտվելու բացատրություններ

Եթե փորձարկման փաթեթվածքը բաղկացած է փայտաթելքային սալից պատրաստված արկղից, որն ունի պլաստմասսայից առաջնային տարա, ապա ջրի ցողման փորձարկում պետք է անցնեն հինգ նմուշներ (տե՛ս 6.3.5.3.6.1)՝ նախքան անկման փորձարկումը եւ մեկ այլ հինգ նմուշ պետք է փորձարկվի -18 °C ջերմաստիճանում (տե՛ս 6.3.5.3.6.2)՝ նախքան անկման փորձարկումը: Եթե փաթեթվածքը պետք է պարունակի չոր սառույց, ապա մեկ նմուշ պետք է վայր գցվի հինգ անգամ՝ 6.3.5.3.6.3-ի համաձայն փորձարկում անցնելուց հետո:

Փոխադրման համար պատրաստ փաթեթվածքները պետք է անցնեն փորձարկում 6.3.5.3-ի եւ 6.3.5.4-ի համաձայն: Արտաքին փաթեթվածքների դեպքում աղյուսակի բաժինները վերաբերում են փայտաթելքային սալին կամ նմանատիպ նյութերին, որոնք կարող են արագորեն ազդեցության ենթարկվել խոնավության հետեւանքով. ինչպես օրինակ պլաստմասսան, որը ցածր ջերմաստիճանի դեպքում կարող է փափկել. եւ այլ նյութերին, ինչպես, օրինակ՝ մետաղին, որն ազդեցության չի ենթարկվում խոնավության կամ ջերմության դեպքում:

**6.3.5.3. Անկման փորձարկում**

6.3.5.3.1. Նմուշները պետք է 9 մ բարձրությունից ենթարկվեն առանց խոչընդոտների անկման 9 մ բարձրությունից՝ առաձգական, հորիզոնական, տափակ, զանգվածային եւ կոշտ մակերեսայինների վրա՝

6.1.5.3.4-ին համապատասխան:

6.3.5.3.2. Եթե նմուշն ունի արկղի ձեւ, ապա հինգ նմուշ պետք է նետվի՝ յուրաքանչյուրը հետեւյալ դիրքով՝

- ա) տափակ կողմով՝ հիմքի վրա
- բ) տափակ կողմով՝ գագաթի վրա.
- գ) տափակ կողմով՝ ամենաերկար կողմի վրա.
- դ) տափակ կողմով՝ ամենակարճ կողմի վրա.
- ե) անկյունով:

6.3.5.3.3. Եթե նմուշները թմբկազանի ձեւ ունեն, ապա պետք է վայր գցվի երեք նմուշ, որից յուրաքանչյուրը հետեւյալ դիրքով՝

- ա) անկյունագծով՝ հատակի վերին մասի ակոսվածքի վրա, իսկ ծանրության կենտրոնը պետք է լինի հարվածի կետի նկատմամբ ուղղաձիգ.
- բ) անկյունագծով՝ հատակի ստորին մասի ակոսվածքի վրա.
- գ) տափակ կողմով՝ կողքի վրա:

6.3.5.3.4. Չնայած նմուշը պետք է վայր գցվի պահանջվող ուղղությամբ, այնուամենայնիվ հնարավոր է, որ աերոդինամիկ պատճառներով ազդեցությունը տեղի չունենա հենց այդ ուղղությամբ:

6.3.5.3.5. Համապատասխան հերթականությամբ վայր նետումներ կատարելուց հետո առաջնային տարաներից, որոնք պետք է պաշտպանված լինեն երկրորդային փաթեթվածքի պաշտպանիչ/կլանիչ նյութով, արտահոսք չպետք է լինի:

6.3.5.3.6. *Անկման փորձարկման նմուշների հատուկ նախապատրաստում*

6.3.5.3.6.1. Փայտաթելքային սալ. ջրով ցողման փորձարկում

Փայտաթելքային սալից արտաքին փաթեթվածքներ՝ նմուշը պետք է ցողել ջրով առնվազն մեկ ժամ՝ ժամում 5 սմ արագությամբ այնպես, որ այն հիշեցնի անձրեւի թափվելը: Այն պետք է ենթարկվի 6.3.5.3.1-ում նկարագրված փորձարկման:

6.3.5.3.6.2. Պլաստիկ նյութ. Դիմակայունություն ցածր ջերմաստիճանին

Պլաստմասսայից առաջնային տարաներ կամ արտաքին փաթեթվածքներ՝ Փորձարկման նմուշի եւ իր պարունակության ջերմաստիճանը պետք է նվազեցվի մինչեւ  $-18^{\circ}\text{C}$  կամ ավելի ցածր՝ առնվազն 24 ժամվա ընթացքում եւ մոտավորապես այդ միջավայրից

15 րոպե դուրս բերվելուց հետո, փորձարկվող նմուշը պետք է ենթարկվի 6.3.5.3.1-ում նկարագրված փորձարկման: Եթե նմուշը պարունակում է չոր սառույց, դիմակայունության ժամկետը պետք է նվազեցվի մինչև 4 ժամ:

6.3.5.3.6.3. Չոր սառույց պահելու համար նախատեսված փաթեթվածքներ. Լրացուցիչ անկման փորձարկում

Եթե փաթեթվածքի մեջ պետք է դրվի չոր սառույց, 6.3.5.3.1-ում, իսկ հարկ եղած դեպքում՝ 6.3.5.3.6.1-ում կամ 6.3.5.3.6.2-ում սահմանված փորձարկումից բացի, պետք է իրականացվի լրացուցիչ փորձարկում: Մեկ նմուշ պետք է այնպես պահել, որ ամբողջ չոր սառույցը գոլորշիանա: Դրանից հետո այն պետք է նետել 6.3.5.3.2-ում նկարագրված այն դիրքերից որեւիցե մեկով, որը փաթեթվածքը վնասելու ամենամեծ հավանականությունն ունի:

#### **6.3.5.4. Պարովածքադիմացկունության փորձարկում**

6.3.5.4.1. *7 կգ կամ դրանից պակաս անզուր քաշով փաթեթվածքներ*


Նմուշները պետք է դրվեն կոշտ հարթ մակերեսույթի վրա: Առնվազն 7 կգ զանգվածով, 38 մմ տրամագիծ ունեցող պողպատից գլանաձեւ ձող, որի հարվածային ծայրն ունի 6 մմ-ը չգերազանցող շառավիղ (տե՛ս 6.3.5.4.2 պատկերը) ուղղահայաց դիրքով առանց խոչընդոտների պետք է նետվի նմուշի վրա 1 մետր բարձրությունից, որը չափվում է ձողի հարվածային ծայրից մինչև նմուշի՝ ազդեցությանը ենթարկված մակերեսույթը: Մեկ նմուշ պետք է դրվի դրա հիմքի վրա: Երկրորդ նմուշը պետք է դրվի առաջին նմուշի համար օգտագործված դիրքին ուղղահայաց դիրքով: Յուրաքանչյուր դեպքում պողպատից ձողը պետք է ուղղված լինի առաջնային տարային: Յուրաքանչյուր հարվածից հետո թույլատրելի է, որ ծակվի երկրորդային փաթեթվածքը՝ պայմանով, որ առաջնային տարայից (տարաններից) արտահոսք չգրանցվի:

6.3.5.4.2. *7 կգ անզուր քաշը գերազանցող փաթեթվածքներ*

Նմուշները նետվում են գլանաձեւ պողպատե ձողի ծայրին: Ձողը պետք է ուղղահայաց դիրքով դրվի կոշտ հարթ մակերեսույթի վրա: Այն պետք է ունենա 38 մմ տրամագիծ, իսկ վերին ծայրը պետք է ունենա 6 մմ չգերազանցող շառավիղ (տե՛ս 6.3.5.4.2 պատկերը): Ձողը պետք է ցցվի մակերեսույթից՝ առնվազն առաջնային տարայի (տարանների) կենտրոնի եւ արտաքին փաթեթվածքի արտաքին մակերեսույթի միջեւ ընկած տարածությանը հավասար բարձրության վրա, որը չպետք է լինի 200 մմ-ից պակաս: Մեկ նմուշ պետք է առանց խոչընդոտների վայր նետվի վերին կողմով ուղղահայաց դիրքով՝ 1 մետր բարձրությունից, որը հաշվարկվում է պողպատե

ձողի ծայրից: Երկրորդ նմուշը պետք է նետվի միեւնույն բարձրությունից առաջին նմուշի համար օգտագործված դիրքին ուղղահայաց դիրքով: Յուրաքանչյուր դեպքում փաթեթվածքը պետք է լինի այնպիսի դիրքում, որ պողպատե ձողը հնարավորություն ունենա ներթափանցելու առաջնային տարա (տարաներ): Յուրաքանչյուր հարվածից հետո թույլատրելի է, որ ծակվի երկրորդային փաթեթվածքը՝ պայմանով, որ առաջնային տարայից (տարաներից) արտահոսք չգրանցվի:

## Պատկեր 6.3.5.4.2



### 6.3.5.5. Փորձարկման հաշվետվություն

6.3.5.5.1. Պետք է կազմվի գրավոր հաշվետվություն փորձարկման մասին՝ առնվազն հետևյալ տեղեկությունների վերաբերյալ: Այն պետք է հասանելի լինի փաթեթվածք օգտագործողներին՝

1. փորձարկման կենտրոնի անվանումը եւ հասցեն.
2. հայտ ներկայացնողի անունը եւ հասցեն (ըստ անհրաժեշտության).
3. փորձարկման մասին հաշվետվության անհատական համարը.
4. փորձարկման իրականացման եւ հաշվետվության կազմման ամսաթիվը.
5. փաթեթվածք արտադրողը.
6. փաթեթվածքի կառուցվածքի տեսակի նկարագրությունը (օրինակ՝ չափերը, նյութերը, փականները, հաստությունը եւ այլն)՝ ներառյալ արտադրման մեթոդը (օրինակ՝ փչման միջոցով կաղապարում): Նկարագրության մեջ կարող են ներառվել գծապատկեր (գծապատկերներ եւ (կամ) լուսանկար (լուսանկարներ).
7. առավելագույն տարողությունը.
8. փորձարկման ժամանակ օգտագործվող պարունակությունը.
9. փորձարկման նկարագրությունը եւ արդյունքները.
10. փորձարկման մասին հաշվետվությունը պետք է ստորագրվի՝ նշելով ստորագրող անձի անունը եւ պաշտոնը:

6.3.5.5.2. Փորձարկման հաշվետվությունը պետք է ներառի

հայտարարություններ այն մասին, որ փաթեթվածքները, որոնք պատրաստված են այնպես, ինչպես դրանք պետք է փոխադրվեն, փորձարկվել են սույն գլխի համապատասխան պահանջների համաձայն եւ որ փաթեթվածքի կամ դրա բաղադրիչների համար այլ մեթոդների կիրառումը այդ հաշվետվությունը դարձնում է անվավեր: Փորձարկման հաշվետվության մեկ օրինակ տրամադրվում է իրավասու մարմնին:

## ԳԼՈՒԽ 6.4

### ՌԱԴԻՈԱԿՏԻՎ ՄԵՏԱՂ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ՓԱԹԵԹՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ, ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ՈՒ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԵՎ ԱՅԴ ՄԵՏԱՂԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

#### 6.4.1. (Նախատեսվում է վերապահում)

#### 6.4.2. Ընդհանուր պահանջները

- 6.4.2.1. Փաթեթի կառուցվածքը՝ դրա զանգվածի, ծավալի եւ ձեւի առումով, պետք է այնպիսին լինի, որ հնարավոր լինի դրա դյուրին եւ անվտանգ փոխադրումը: Բացի դրանից՝ փաթեթի կառուցվածքը պետք է այնպիսին լինի, որ հնարավոր լինի փոխադրման ժամանակ այն պատշաճորեն ամրացնել փոխադրամիջոցի մեջ կամ վրա:
- 6.4.2.2. Կառուցվածքը պետք է այնպիսին լինի, որ փաթեթի վրա տեղակայված ցանկացած ամբարձիչ հարմարանք, նախատեսված ձեւով օգտագործելիս, աշխատի անխափան եւ հարմարանքների խափանման դեպքում փաթեթի համապատասխանությունը սույն հավելվածի մյուս պահանջներին չտուժի: Կառուցվածքում պետք է հաշվի առնվեն ամրության պաշարի համապատասխան գործակիցները՝ այն դեպքերում, երբ փաթեթը բարձրացվում է հրմամբ:
- 6.4.2.3. Փաթեթի արտաքին մակերեսային վրա առկա հարմարանքները եւ բոլոր մյուս սարքերը, որոնք կարող են օգտագործվել այն բարձրացնելու համար, պետք է ունենա այնպիսի կառուցվածք, որ կարողանա դիմակայել փաթեթի ծանրությանը՝ 6.4.2.2-ի պահանջների համաձայն կամ փոխադրման ժամանակ հնարավոր լինի դրանք հեռացնել կամ որեւէ այլ կերպ դարձնել օգտագործման համար ոչ պիտանի:
- 6.4.2.4. Փաթեթվածքը պետք է, հնարավորության սահմաններում, այնպիսի կառուցվածք եւ մշակում ունենա, որ արտաքին մակերեսայինները չունենան դուրս ցցված մասեր եւ հնարավոր լինի դրանք դյուրորեն ապակտիվացնել:
- 6.4.2.5. Փաթեթի արտաքին շերտը պետք է, հնարավորության սահմաններում, այնպիսի կառուցվածք ունենա, որ նրա վրա ջուր չկուտակվի եւ չմնա:
- 6.4.2.6. Փոխադրման ժամանակ փաթեթին ավելացվող ցանկացած հարմարանք, որը փաթեթի մասը չէ, չպետք է այն պակաս անվտանգ դարձնի:
- 6.4.2.7. Փաթեթը պետք է ունենա փոխադրման սովորական պայմաններում առաջացող արագացման, թրթռման (վիբրացիային) կամ թրթռման ռեզոնանսի ցանկացած ազդեցությանը դիմակայելու հատկություն՝



որեւէ կերպ չվատթարացնելով տարբեր տարաների փականների արդյունավետությունը կամ չխախտելով փաթեթի ամբողջականությունն առհասարակ: Մասնավորապես, մանեկները, հեղույսները եւ ամրացնող հարմարանքները պետք է այնպիսի կառուցվածք ունենան, որ բացառվի դրանց ինքնաբերաբար թուլանալը եւ կամ անջատվելը՝ անգամ բազմիցս օգտագործելուց հետո:

- 6.4.2.8. Փաթեթվածքի նյութերը եւ դրանց բոլոր բաղադրիչները կամ կառուցվածքներն, իրենց ֆիզիկական կամ քիմիական հատկանիշներով, պետք է համատեղելի լինեն միմյանց, ինչպես նաեւ ռադիոակտիվ պարունակության հետ: Պետք է հաշվի առնվեն դրանց հատկությունների փոփոխությունը ճառագայթահարման ազդեցության ներքո:
- 6.4.2.9. Բոլոր այն փականները, որոնց միջոցով ռադիոակտիվ պարունակությունը կարող է դուրս գալ, պետք է պաշտպանված լինեն չարտոնված գործողություններից:
- 6.4.2.10. Փաթեթի կառուցվածքը մշակելիս պետք է հաշվի առնվեն արտաքին միջավայրի այն ջերմաստիճանները եւ ճնշումները, որոնք կարող են գոյանալ փոխադրման սովորական պայմաններում:
- 6.4.2.11. Փաթեթը պետք է ունենա այնպիսի կառուցվածք, որ ունենա պաշտպանիչ պատյան՝ ապահովելու, որ փոխադրման սովորական պայմաններում եւ փաթեթի համար նախատեսված առավելագույն ռադիոակտիվ պարունակության դեպքում փաթեթի արտաքին մակերեսի որեւէ կետում ճառագայթման մակարդակը չի գերազանցում 2.2.7.2.4.1.2, 4.1.9.1.10 եւ 4.1.9.1.11-ում նշված արժեքները՝ անհրաժեշտության դեպքում հաշվի առնելով 7.5.11 CV33 (3.3) (բ)-ն եւ (3.5)-ը:
- 6.4.2.12. Այլ վտանգավոր հատկություններ ունեցող ռադիոակտիվ նյութերի փոխադրման համար նախատեսված փաթեթի կառուցվածքում պետք է հաշվի առնվեն այդ հատկանիշները. Տե՛ս 2.1.3.5.3 եւ 4.1.9.1.5:
- 6.4.2.13. Փաթեթվածքներ արտադրողները եւ դրանց հետագա վաճառքով զբաղվող ընկերությունները պետք է տեղեկություններ տրամադրեն այն ընթացակարգերի մասին, որոնց հարկավոր է հետեւել, ինչպես նաեւ փականների տեսակների եւ չափսերի նկարագրությունը (ներառյալ պահանջվող խցվածքները) եւ բոլոր մյուս բաղադրիչները, որոնք անհրաժեշտ են՝ ապահովելու, որ փոխադրման համար ներկայացված փաթեթները կարողանան անցնել սույն գլխում նշված՝ կիրառելի շահագործման փորձարկումները:

**6.4.3. (Նախատեսվում է վերապահում)**

**6.4.4. Ազատված փաթեթներին ներկայացվող պահանջներ**

Ազատված փաթեթի կառուցվածքը պետք է այնպիսին լինի, որ բավարարվեն 6.4.2.-ում նշված պահանջները:

**6.4.5. Արդյունաբերական փաթեթներին ներկայացվող պահանջներ**

6.4.5.1. IP-1, IP-2 եւ IP-3 տեսակի փաթեթները պետք է բավարարեն 6.4.2-ում եւ 6.4.7.2-ում նշված պահանջները:

6.4.5.2. IP-2 տեսակի փաթեթը 6.4.15.4-ում եւ 6.4.15.5-ում նշված փորձարկումներին ենթարկելու դեպքում պետք է կանխարգելվի.

- ա) ռադիոակտիվ պարունակության արտահոսքը կամ տարածումը, եւ
- բ) ճառագայթման առավելագույն մակարդակի՝ 20%-ից ավելի բարձրացումը փաթեթի արտաքին մակերեսույթի ցանկացած մասում:

6.4.5.3. IP-3 տեսակի փաթեթը պետք է բավարարի 6.4.7.2 - 6.4.7.15-ում նշված պահանջները:

**6.4.5.4. IP-2 եւ IP-3 տեսակների փաթեթներին ներկայացվող այլընտրանքային պահանջներ**

6.4.5.4.1. Փաթեթները կարող են օգտագործվել որպես IP-2 տեսակի փաթեթ՝ պայմանով, որ.

- ա) դրանք բավարարեն 6.4.5.1-ի պահանջները,
- բ) դրանց կառուցվածքը բավարարի 6.1 գլխում փաթեթավորման I կամ II խմբի համար սահմանված պահանջները, եւ
- գ) 6.1 գլխում I կամ II խմբի համար պահանջվող փորձարկումներին ենթարկվելիս՝ դրանք կարողանան կանխարգելել.
  - i) ռադիոակտիվ պարունակության արտահոսքը կամ տարածումը, եւ
  - ii) ճառագայթման առավելագույն մակարդակի՝ 20%-ից ավելի բարձրացումը փաթեթի արտաքին մակերեսույթի ցանկացած մասում:

6.4.5.4.2. Շարժական ցիստեռնները նաեւ կարող են օգտագործվել որպես IP-2 եւ IP-3 տեսակների փաթեթներ՝ պայմանով, որ.

- ա) դրանք բավարարեն 6.4.5.1-ի պահանջները,
- բ) դրանց կառուցվածքը բավարարի 6.7 գլխում սահմանված պահանջները եւ կարողանան դիմակայել 265 կՊա կազմող

փորձարկման ճնշմանը, եւ

- գ) դրանց կառուցվածքը լինի այնպիսին, որ նախատեսված ցանկացած լրացուցիչ պաշտպանական միջոց կարողանա դիմակայել փոխադրման սովորական պայմաններում բեռի մշակման ժամանակ առաջացող ստատիկ եւ դինամիկ բեռնվածքներին ու կանխարգելել ճառագայթման առավելագույն մակարդակի՝ 20%-ից ավելի բարձրացումը շարժական ցիստեռնի արտաքին մակերեսային ցանկացած մասում:

6.4.5.4.3. Այն ցիստեռնները, որոնք շարժական ցիստեռններ, չեն, կարող են օգտագործվել նաեւ որպես IP-2 կամ IP-3 տեսակների փաթեթներ LSA-I եւ LSA-II հեղուկների եւ գազերի փոխադրման համար՝ 4.1.9.2.5 աղյուսակում սահմանվածի համաձայն՝ պայմանով, որ.

- ա) դրանք բավարարեն 6.4.5.1-ի պահանջները,
- բ) դրանց կառուցվածքը բավարարի 6.8 գլխում սահմանված պահանջները, եւ
- գ) դրանց կառուցվածքն այնպիսին լինի, որ նախատեսված ցանկացած լրացուցիչ պաշտպանական միջոց կարողանա դիմակայել փոխադրման սովորական պայմաններում բեռի մշակման ժամանակ առաջացող ստատիկ եւ դինամիկ բեռնվածքներին ու կանխարգելել ճառագայթման առավելագույն մակարդակի՝ 20%-ից ավելի բարձրացումը շարժական ցիստեռնի արտաքին մակերեսային ցանկացած մասում:

6.4.5.4.4. Այն կոնտեյներները, որոնք ունեն մշտական պատյանով ծածկվելու հնարավորություն, կարող են օգտագործվել որպես IP-2 կամ IP-3 տեսակների փաթեթներ՝ պայմանով, որ.

- ա) ռադիոակտիվ բովանդակությունը սահմանափակվի պինդ նյութերով,
- բ) դրանք բավարարեն 6.4.5.1-ի պահանջները, եւ
- գ) դրանց կառուցվածքը համապատասխանի ISO 1496-1:1990 ստանդարտին՝ «1-ին սերիայի կոնտեյներներ. Մասնագրեր եւ փորձարկում. Մաս 1-ին. Ընդհանուր նշանակության կոնտեյներներ» եւ հետագա փոփոխություններին՝ 1:1993, 2:1998, 3:2005, 4:2006 եւ 5:2006՝ բացառությամբ չափսերի եւ դասակարգումների: Դրանց կառուցվածքը պետք է այնպիսին լինի, որ այդ փաստաթղթում սահմանված փորձարկումներին եւ փոխադրման սովորական պայմաններում առաջացող արագությունների ազդեցությանն ենթարկվելու դեպքում կարողանան կանխարգելել.

- i) ռադիոակտիվ պարունակությունների արտահոսքը կամ տարածումը, եւ
- ii) ճառագայթման առավելագույն մակարդակի՝ 20%-ից ավելի բարձրացումը կոնտեյներների արտաքին մակերեսային ցանկացած մասում:

6.4.5.4.5. Սորուն բեռների համար նախատեսված միջին բեռնվածության մետաղական կոնտեյներները նաեւ կարող են օգտագործվել որպէս IP-2 եւ IP-3 տեսակների փաթեթներ՝ պայմանով, որ.

- ա) դրանք բավարարեն 6.4.5.1-ի պահանջները, եւ
- բ) դրանց կառուցվածքը բավարարի 6.5 գլխում փաթեթավորման I կամ II խմբի համար սահմանված պահանջները եւ այդ գլխում սահմանված փորձարկումներին ենթարկվելու դեպքում, երբ անկման փորձարկումն իրականացվում է՝ ընտրելով առավելագույնս վնասարար ուղղությունը, դրանք կանխարգելեն.
  - i) ռադիոակտիվ պարունակությունների արտահոսքը կամ տարածումը, եւ
  - ii) ճառագայթման առավելագույն մակարդակի՝ 20%-ից ավելի բարձրացումը սորուն բեռների համար նախատեսված միջին բեռնվածության կոնտեյներների արտաքին մակերեսային ցանկացած մասում:

**6.4.6. Ուրանի հեքսաֆտորիդ պարունակող փաթեթներին ներկայացվող պահանջները**

6.4.6.1. Ուրանի հեքսաֆտորիդ փոխադրելու համար նախատեսված փաթեթները պետք է համապատասխանեն «ԱԴՌ» համաձայնագրի այլ բաժիններով սահմանված պահանջներին, որոնք վերաբերում են նյութի ռադիոակտիվ եւ տրոհման հատկություններին: Բացառությամբ 6.4.6.4-ով նախատեսված դեպքերի՝ 0.1 կգ կամ ավելի զանգված ունեցող ուրանի հեքսաֆտորիդը նույնպէս պետք է փաթեթավորվի եւ փոխադրվի ISO 7195:2005 «Ատոմային էներգիա. ուրանի հեքսաֆտորիդի (UF<sub>6</sub>) փաթեթավորումը տեղափոխելու համար» դրույթների ու 6.4.6.2-ի եւ 6.4.6.3-ի պահանջների համաձայն:

6.4.6.2. Յուրաքանչյուր փաթեթ, որը պարունակում է 0.1 կգ կամ ավելի ուրանի հեքսաֆտորիդ, պետք է ունենա այնպիսի կառուցվածք, որ բավարարվեն հետեւյալ պահանջները.

- ա) առանց արտահոսքի եւ անթույլատրելի լարման՝ ISO 7195:2005-ում նշվածի համաձայն, դիմակայի 6.4.21.5-ում նշված կառուցվածքի փորձարկմանը՝ բացառությամբ 6.4.6.4-ով թույլատրվող դեպքերի,

բ) առանց արտահոսքի եւ ուրանի հեքսաֆտորիդի տարածման դիմակայի 6.4.15.4-ում նշված ազատ անկման փորձարկմանը, եւ

գ) առանց պաշտպանիչ պատյանի համակարգի խախտման՝ դիմակայի 6.4.17.3-ում նշված ջերմային փորձարկմանը՝ բացառությամբ 6.4.6.4-ով թույլատրվող դեպքերի:

6.4.6.3. Այն փաթեթները, որոնք նախատեսված են 0.1 կգ կամ ավելի ուրանի հեքսաֆտորիդ փոխադրելու համար, չպետք է ունենան ճնշումը նվազեցնող սարքեր:

6.4.6.4. 0.1 կգ կամ ավելի ուրանի հեքսաֆտորիդ փոխադրելու համար նախատեսված փաթեթների բազմակողմանի հաստատման դեպքում՝ դրանց փոխադրումը թույլատրվում է, եթե.

ա) փաթեթների կառուցվածքը համապատասխանում է միջազգային եւ ազգային ստանդարտներին՝ բացառությամբ ISO 7195:2005-ի, պայմանով, որ պահպանվի անվտանգության համարժեք մակարդակը, եւ/կամ

բ) առանց արտահոսքի եւ անթույլատրելի լարման դիմակայում են 2.76 ՄՊա-ից պակաս փորձարկման ճնշմանը՝ 6.4.21.5-ում նշվածի համաձայն, եւ/կամ

գ) պարունակում են 9 000 կգ կամ ավելի ուրանի հեքսաֆտորիդ եւ չեն բավարարում 6.4.6.2 (գ)-ում նշված պահանջը:

Մյուս բոլոր առումներով պետք է բավարարվեն 6.4.6.1 - 6.4.6.3-ում նշված պահանջները:

#### **6.4.7. «Ա» տեսակի փաթեթներին ներկայացվող պահանջները**

6.4.7.1. «Ա» տեսակի փաթեթները պետք է ունենան այնպիսի կառուցվածք, որ բավարարվեն 6.4.2-ի եւ 6.4.7.2 - 6.4.7.17-ի պահանջները:

6.4.7.2. Փաթեթի ընդհանուր արտաքին նվազագույն եզրաչափքը (գաբարիտային չափսը) չպետք է 10 սմ-ից պակաս լինի:

6.4.7.3. Փաթեթի արտաքին մասում պետք է լինի հարմարանք, ինչպես, օրինակ՝ կապարակնիք, որը չպետք է լինի հեշտորեն վնասվող եւ որի անվնաս լինելը կվկայի այն մասին, որ փաթեթը չի բացվել:

6.4.7.4. Փաթեթի վրա եղած ցանկացած ամրացման հարմարանքների կառուցվածք պետք է այնպիսին լինի, որ փոխադրման թե՛ նորմալ եւ թե՛ վթարային պայմաններում, այդ հարմարանքներում առաջացող լարումների արդյունքում չտուժի փաթեթի համապատասխանությունը «ԱԴԴ» համաձայնագրի պահանջներին:

6.4.7.5. Փաթեթի կառուցվածքում փաթեթվածքի բաղադրիչների համար պետք է

հաշվի առնվի  $-40^{\circ}\text{C}$ -ից մինչև  $+70^{\circ}\text{C}$  ջերմաստիճանների ընդգրկույթը (դիապազոնը): Ուշադրություն պետք է դարձվի տվյալ ջերմաստիճանի ընդգրկույթում հեղուկների սառցակալման ջերմաստիճաններին եւ փաթեթվածքի նյութերի հատկությունների հնարավոր վատթարացմանը:

- 6.4.7.6. Պատրաստման եւ արտադրման եղանակները պետք է համապատասխանեն ազգային կամ միջազգային ստանդարտներին կամ իրավասու մարմնի համար ընդունելի մյուս պահանջներին:
- 6.4.7.7. Կառուցվածքը պետք է ներառի պաշտպանիչ պատյանի համակարգ՝ ամուր փակված այնպիսի հուսալի ամրացնող հարմարանքով, որը չի կարող բացվել պատահականորեն կամ փաթեթի ներսում առաջացած հնարավոր ճնշման արդյունքում:
- 6.4.7.8. Հատուկ տեսակի ռադիոակտիվ նյութը կարող է համարվել պաշտպանիչ պատյանի համակարգի բաղադրիչ:
- 6.4.7.9. Եթե պաշտպանիչ պատյանի համակարգը կազմում է փաթեթի առանձին միավոր, ապա այն պետք է ամուր փակվի փաթեթվածքի որեւէ այլ մասից անկախ հուսալիորեն ամրացնող հարմարանքով:
- 6.4.7.10. Հարկ եղած դեպքում «A» տեսակի փաթեթի պաշտպանիչ պատյանի համակարգի ցանկացած բաղադրիչի կառուցվածքում պետք է հաշվի առնվի հեղուկների կամ այլ խոցելի նյութերի ճառագայթային քայքայման, քիմիական ռեակցիաների կամ ռադիոլիզի պատճառով գազերի անջատման հնարավորությունը:
- 6.4.7.11. Պաշտպանիչ պատյանի համակարգը պետք է պահպանի իր ռադիոակտիվ պարունակությունը արտաքին ճնշման՝ մինչև  $60$  կՊա նվազման դեպքում:
- 6.4.7.12. Բացառությամբ ճնշումը նվազեցնող փականի՝ բոլոր մյուս փականները պետք է ապահովված լինեն փականի միջով արտահոսքի որեւէ դեպք կանխելու համար նախատեսված հարմարանքով:
- 6.4.7.13. Ճառագայթային պաշտպանությունը, որն ընդգրկում է փաթեթի որեւէ բաղադրիչ, որը համարվում է պաշտպանիչ պատյանի համակարգի մի մաս, պետք է ունենա այնպիսի կառուցվածք, որ կանխվի տվյալ բաղադրիչի պատահական ելքը պաշտպանության սահմաններից դուրս: Եթե ճառագայթային պաշտպանությունը եւ դրա նման բաղադրիչը կազմում է առանձին միավոր, ճառագայթային պաշտպանությունը պետք է ամուր փակվի փաթեթվածքի որեւէ այլ կառուցվածքից անկախ հուսալիորեն ամրացնող հարմարանքով:
- 6.4.7.14. Փաթեթի կառուցվածքը պետք է այնպիսին լինի, որ 6.4.15-ում նշված փորձարկումներին ենթարկելու դեպքում կանխարգելվի.
  - ա) ռադիոակտիվ պարունակության արտահոսքը կամ տարածումը, եւ

բ) ճառագայթման առավելագույն մակարդակի՝ 20%-ից ավելի բարձրացումը փաթեթի արտաքին մակերեսույթի ցանկացած մասում:

6.4.7.15. Հեղուկ ռադիոակտիվ նյութերի համար նախատեսված փաթեթի կառուցվածքում պետք է նախատեսվի լրացուցիչ դատարկ ծավալի առկայություն, ինչը թույլ կտա հարմարեցնել պարունակության ջերմաստիճանային տատանումները, դինամիկ էֆեկտները եւ լցավորման դինամիկան:

*Հեղուկների համար նախատեսված «A» տեսակի փաթեթները*

6.4.7.16. Հեղուկ ռադիոակտիվ նյութի փոխադրման համար նախատեսված «A» տեսակի փաթեթը, ի լրումն, պետք է.

ա) բավարարի վերոնշյալ 6.4.7.14 (ա)-ում նշված պայմանները, եթե փաթեթը ենթարկվել է 6.4.16-ում նշված փորձարկումներին, եւ

բ) կամ՝

i) ապահովված լինի հեղուկ պարունակության կրկնակի ծավալ կլանելու համար նախատեսված բավարար չափով կլանիչ նյութով:

ii) նման կլանիչ նյութը պետք է տեղադրված լինի այնպես, որ արտահոսքի դեպքում տեղի ունենա շփում հեղուկի հետ, կամ՝

iii) ապահովված լինի առաջնային ներքին եւ երկրորդային արտաքին պաշտպանիչ պատյանի բաղադրիչներից բաղկացած պաշտպանիչ պատյանի համակարգով, որը նախատեսված է երկրորդային արտաքին պաշտպանիչ պատյանի բաղադրիչների ներսում հեղուկ պարունակությունն ամբողջությամբ ընդգրկելու եւ դրա արտահոսքը կանխելու համար՝ անգամ առաջնային ներքին բաղադրիչներից արտահոսքի դեպքում:

*Գազերի համար նախատեսված «A» տեսակի փաթեթները*

6.4.7.17. Գազերի համար նախատեսված փաթեթը պետք է կանխարգելի ռադիոակտիվ պարունակության արտահոսքը կամ տարածումը 6.4.16-ում նշված փորձարկումների ենթարկվելու դեպքում: Այս պահանջը չի կիրառվում ռադիոակտիվ տրիտիումի կամ իներտ գազերի համար նախատեսված «A» տեսակի փաթեթի նկատմամբ:

#### **6.4.8. «B(U)» տեսակի փաթեթներին ներկայացվող պահանջները**

6.4.8.1. «B(U)» տեսակի փաթեթները պետք է ունենան այնպիսի կառուցվածք, որ բավարարվեն 6.4.2-ում եւ 6.4.7.2 - 6.4.7.15-ում նշված պահանջները՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այդպես է

նախատեսվում 6.4.7.14 (ա)-ով եւ, բացի դրանից, 6.4.8.2 - 6.4.8.15-ում նշված պահանջները:

6.4.8.2. Փաթեթը պետք է ունենա այնպիսի կառուցվածք, որ 6.4.8.5-ում եւ 6.4.8.6-ում նշված արտաքին պայմաններում փաթեթի ներսում ռադիոակտիվ պարունակության կողմից անջատվող ջերմությունը փոխադրման նորմալ պայմաններում, 6.4.15-ում նշված փորձարկումներով ներկայացվածի համաձայն, փաթեթի վրա չթողնի այնպիսի բացասական ազդեցություն, որի արդյունքում այն դադարի բավարարել պաշտպանիչ պատյանի եւ ճառագայթային պաշտպանության համար կիրառելի պահանջները՝ մեկ շաբաթ չսպասարկվելու դեպքում: Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել ջերմության այնպիսի ազդեցության վրա, որը կարող է առաջ բերել հետեւյալ մեկ կամ մի քանի իրավիճակ՝

ա) փոխել ռադիոակտիվ պարունակության տեղադրությունը, երկրաչափական ձեւը կամ ֆիզիկական վիճակը կամ, եթե ռադիոակտիվ պարունակությունը գտնվում է անոթի կամ տարայի մեջ (օրինակ՝ պատյանի մեջ գտնվող միջուկային ռեակտորի վառելիքային տարրերը), բերել անոթի, տարայի կամ ռադիոակտիվ պարունակության ձեւափոխության կամ հալման, կամ

բ) թուլացնել փաթեթվածքի արդյունավետությունը ճառագայթային պաշտպանության համակարգի նյութի դիֆերենցիալ ջերմային ընդարձակման, ճաքման կամ հալման միջոցով,

գ) խոնավության առկայության դեպքում արագացնել կոռոզիան:

6.4.8.3. Փաթեթը պետք է ունենա այնպիսի կառուցվածք, որ 6.4.8.5-ում նշված արտաքին պայմաններում եւ, ինսուլացիայի դեպքում, փաթեթի արտաքին մակերեսային մատչելի մասերում ջերմաստիճանը չգերազանցի 50°C-ը, եթե միայն տվյալ փաթեթը չի փոխադրվում բացառիկ օգտագործման պայմաններում:

6.4.8.4. Բացառիկ օգտագործման պայմաններում փոխադրման ժամանակ փաթեթի մակերեսային հեշտ հասանելի ցանկացած մասում առավելագույն ջերմաստիճանը չպետք է գերազանցի 85°C-ը՝ 6.4.8.5.-ում նշված արտաքին պայմաններում ինսուլացիայի բացակայության դեպքում: Անձանց պաշտպանության ապահովման համար կարող են նախատեսվել արգելքներ կամ էկրաններ՝ առանց այդ արգելքները կամ էկրանները որեւէ փորձարկման ենթարկելու անհրաժեշտության:

6.4.8.5. Արտաքին միջավայրի թույլատրելի ջերմաստիճանը պետք է լինի 38°C:

6.4.8.6. Արեւային ինսուլացիայի պայմանները պետք է որոշվեն 6.4.8.6 աղյուսակում նշված արժեքների համաձայն:





### Աղյուսակ 6.4.8.6. Ինսուլացիայի արժեքները

Օրինակ	Մակերեսային ձեւը եւ դիրքը	Օրական 12 ժամվա ընթացքում ինսուլացիան (Վտ/մ <sup>2</sup> )
1	Հորիզոնական վիճակում՝ դիմային կողմը դեպի ներքեւ փոխադրվող հարթ մակերեսայինները	0
2	Հորիզոնական վիճակում՝ դիմային կողմը դեպի վերեւ փոխադրվող հարթ մակերեսայինները	800
3	Ուղղահայաց վիճակում փոխադրվող մակերեսայինները	200 <sup>ա</sup>
4	Դիմային կողմը դեպի ներքեւ (ոչ հորիզոնական) վիճակում գտնվող մյուս մակերեսայինները	200 <sup>ա</sup>
5	Մյուս բոլոր մակերեսայինները	400 <sup>ա</sup>

*<sup>ա</sup> Որպես այլընտրանք՝ կարող է օգտագործվել սինուսոիդային ֆունկցիա՝ ընդունելով կյանման գործակիցը եւ անտեսելով հարակից առարկաներից հնարավոր անդրադարձման ազդեցությունը:*

6.4.8.7. Փաթեթը, որը 6.4.17.3-ում նշված ջերմային փորձարկման պահանջները բավարարելու նպատակով պարունակում է ջերմային պաշտպանություն, պետք է ունենա այնպիսի կառուցվածք, որ, անհրաժեշտության դեպքում, 6.4.15-ում եւ 6.4.17.2 (ա) եւ (բ)-ում կամ 6.4.17.2 (բ) եւ (գ)-ում նշված փորձարկումներին ենթարկվելու դեպքում, այդ պաշտպանությունը պահպանի իր արդյունավետությունը: Փաթեթի արտաքին մասում գտնվող ցանկացած նման պաշտպանություն չպետք է խաթարվի խզման, կտրման, սահքի, շփման կամ անփույթ վարվելակերպի դեպքում:

6.4.8.8. Փաթեթը պետք է ունենա այնպիսի կառուցվածք, որ.

ա) 6.4.15-ում նշված փորձարկումներին ենթարկվելու դեպքում սահմանափակվի ռադիոակտիվ պարունակության արտահոսքը՝ կազմելով ոչ ավելի, քան ժամում  $10^{-6}$  A<sub>2</sub>, եւ

բ) 6.4.17.1, 6.4.17.2 (բ), 6.4.17.3 կամ 6.4.17.4-ում նշված փորձարկումներին ենթարկվելու դեպքում եւ հետեւյալ ենթակետերում նշված փորձարկումներին ենթարկվելու դեպքում.

i) 6.4.17.2 (գ)՝ երբ փաթեթի զանգվածը կազմում է ոչ ավելի, քան 500 կգ, ընդհանուր խտությունը՝ ոչ ավելի, քան 1000 կգ/մ<sup>3</sup>, որը որոշվում է արտաքին եզրաչափերով, եւ ռադիոակտիվ պարունակությունը՝ ավելի քան 1 000 A<sub>2</sub>, որը հատուկ տեսակի ռադիոակտիվ նյութ չէ, կամ

ii) 6.4.17.2 (ա)՝ մյուս բոլոր փաթեթների համար,

այն պետք է բավարարի հետևյալ պահանջները.

- պահպանի բավարար չափով պաշտպանություն՝ ապահովելու, որ փաթեթի մակերեսային 1 մ հեռավորության վրա ճառագայթման մակարդակը չգերազանցի 10 մՋվ/ժամը՝ պարունակության առավելագույն ռադիոակտիվության դեպքում, ինչի փոխադրման համար նախատեսված է փաթեթը, եւ
- սահմանափակի մեկ շաբաթվա ընթացքում ռադիոակտիվ պարունակության ընդհանուր արտահոսքը՝ հասցնելով այն ոչ ավելի, քան  $10 A_2$ ՝ 85 կրիպտոնի համար, եւ ոչ ավելի, քան  $A_2$ ՝ բոլոր մյուս ռադիոնուկլիդների համար:

Տարբեր ռադիոնուկլիդների խառնուրդների առկայության դեպքում պետք է կիրառվեն 2.2.7.2.2.4 - 2.2.7.2.2.6-ի դրույթները, սակայն 85-կրիպտոնի համար կարող է օգտագործվել  $A_2(i)$  էֆեկտիվ նշանակությունը՝ հավասար  $10 A_2$ -ի: Վերոնշյալ (ա) ենթակետում նշված դեպքում, գնահատման ժամանակ պետք է հաշվի առնվեն 4.1.9.1.2-ով նախատեսվող արտաքին ռադիոակտիվ աղտոտվածության թույլատրելի սահմանները:

- 6.4.8.9.  $10^5 A_2$ -ը գերազանցող ակտիվությամբ ռադիոակտիվ պարունակության համար նախատեսված փաթեթը պետք է ունենա այնպիսի կառուցվածք, որ 6.4.18-ում նշված ջրի մեջ խորասուզման (իմերսիայի) ուժեղացված փորձարկմանը ենթարկվելու դեպքում չվնասվի դրա պաշտպանիչ պատյանի համակարգը:
- 6.4.8.10. Համապատասխանությունն ակտիվության արտահոսքի թույլատրելի սահմաններին չպետք է կախված լինի ոչ ֆիլտրերից եւ ոչ էլ սառեցման մեխանիկական համակարգից:
- 6.4.8.11. Փաթեթը չպետք է ունենա պաշտպանիչ պատյանի համակարգից ճնշումը նվազեցնող համակարգ, որը հնարավորություն կտա 6.4.15-ում եւ 6.4.17-ում նշված փորձարկումների պայմաններում խուսափելու ռադիոակտիվ նյութերի արտահոսքից:
- 6.4.8.12. Փաթեթը պետք է ունենա այնպիսի կառուցվածք, որ նորմալ շահագործման ճնշման առավելագույն արժեքի դեպքում եւ 6.4.15-ում եւ 6.4.17-ում նշված փորձարկումներին ենթարկվելիս պաշտպանիչ պատյանի համակարգում մեխանիկական լարումները չհասնեն այնպիսի մակարդակների, որոնք կարող են բացասաբար ազդել փաթեթի վրա այնպես, որ այն դադարի բավարարելի համապատասխան պահանջները:
- 6.4.8.13. Փաթեթում նորմալ շահագործման ճնշման առավելագույն արժեքը չի

կարող գերազանցել 700 կՊա կազմող մանոմետրական հավելյալ ճնշմանը:

- 6.4.8.14. Տարածման ցածր հատկություն ունեցող ռադիոակտիվ նյութ փոխադրող փաթեթը պետք է ունենա այնպիսի կառուցվածք, որ տարածման ցածր հատկություն ունեցող ռադիոակտիվ նյութին ավելացվող եւ այդ նյութի մասը չհանդիսացող որեւէ տարր կամ փաթեթվածքի որեւէ բաղադրիչ չկարողանա բացասաբար ազդել տարածման ցածր հատկություն ունեցող ռադիոակտիվ նյութի հատկությունների վրա:
- 6.4.8.15. Փաթեթի կառուցվածքը մշակելիս պետք է հաշվի առնվի արտաքին միջավայրի  $-40^{\circ}\text{C}$ -ից մինչեւ  $+38^{\circ}\text{C}$  ջերմաստիճանների ընդգրկույթը:

#### **6.4.9 «B(M)» տեսակի փաթեթներին ներկայացվող պահանջները**

- 6.4.9.1 «B(M)» տեսակի փաթեթները պետք է բավարարեն 6.4.8.1-ում նշված «B(U)» տեսակի փաթեթներին ներկայացվող պահանջները, սակայն այն փաթեթներին, որոնք փոխադրվում են որոշակի երկրի ներսում կամ միայն որոշակի երկրների միջեւ, կարող են ներկայացվել այդ երկրների իրավասու մարմինների կողմից հաստատված այլ պայմաններ, որոնք վերոնշյալ 6.4.7.5, 6.4.8.4 - 6.4.8.6-ում եւ 6.4.8.9 - 6.4.8.15-ում ներկայացված պայմանները չեն: Այնուամենայնիվ 6.4.8.4-ում եւ 6.4.8.9 - 6.4.8.15-ում «B(U)» տեսակի փաթեթներին ներկայացվող պահանջները պետք է, հնարավորության սահմաններում, բավարարվեն:
- 6.4.9.2 Կարող է թույլատրվել փոխադրման ժամանակ «B(M)» տեսակի փաթեթների օդափոխման կամ հավելյալ ճնշման նվազեցման պարբերաբար իրականացում՝ պայմանով, որ նման օդափոխման կամ հավելյալ ճնշման նվազեցման նկատմամբ շահագործման հսկողության միջոցառումներն ընդունելի լինեն համապատասխան իրավասու մարմինների համար:

#### **6.4.10 «C» տեսակի փաթեթներին ներկայացվող պահանջները**

- 6.4.10.1 «C» տեսակի փաթեթները պետք է ունենան այնպիսի կառուցվածք, որ բավարարվեն 6.4.2-ում եւ 6.4.7.2 - 6.4.7.15-ում նշված պահանջները՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այդպես է նշվում 6.4.7.14 (ա)-ում, ինչպես նաեւ 6.4.8.2 - 6.4.8.6, 6.4.8.10 - 6.4.8.15, եւ, բացի դրանից՝ 6.4.10.2 - 6.4.10.4-ում նշված պահանջները:
- 6.4.10.2 Փաթեթը  $0.33 \text{ Վտ.մ}^{-1}.\text{Կ}^{-1}$  ջերմափոխանցման գործակից եւ անշարժ վիճակում  $38^{\circ}\text{C}$  ջերմաստիճան ունեցող միջավայրում թաղվելուց հետո պետք է բավարարի 6.4.8.8 (բ)-ով եւ 6.4.8.12-ով փորձարկումների համար սահմանված գնահատման չափորոշիչները: Որպես գնահատման ելակետային պայմաններ, պետք է ընդունվի, որ ջերմային

ցանկացած մեկուսացման դեպքում փաթեթը վնասված չլինի, փաթեթը գտնվի նորմալ շահագործման առավելագույն ճնշման պայմաններում եւ արտաքին միջավայրի ջերմաստիճանը հավասար լինի 38°C-ի:

6.4.10.3 Փաթեթը պետք է ունենա այնպիսի կառուցվածք, որ նորմալ շահագործման ճնշման առավելագույն արժեքի դեպքում.

ա) 6.4.15-ում նշված փորձարկումներին ենթարկվելու դեպքում սահմանափակվի ռադիոակտիվ պարունակության արտահոսքը՝ կազմելով ոչ ավելի, քան ժամում  $10^{-6}$  A<sub>2</sub>, եւ

բ) 6.4.20.1-ով նախատեսվող փորձարկումների շարքին ենթարկվելու դեպքում, բավարարվեն հետեւյալ պահանջները.

i) պահպանի բավարար չափով պաշտպանություն՝ ապահովելու, որ փաթեթի մակերեսային 1 մ հեռավորության վրա ճառագայթման մակարդակը չգերազանցի 10 մՋվ/ժամը՝ պարունակության առավելագույն ռադիոակտիվության դեպքում, ինչի փոխադրման համար նախատեսված է փաթեթը, եւ

ii) սահմանափակի 1 շաբաթվա ընթացքում ռադիոակտիվ պարունակության ընդհանուր արտահոսքը՝ հասցնելով այն ոչ ավելի, քան 10 A<sub>2</sub>՝ 85-կրիպտոնի համար, եւ ոչ ավելի, քան A<sub>2</sub>՝ բոլոր մյուս ռադիոնուկլիդների համար:

Տարբեր ռադիոնուկլիդների խառնուրդների առկայության դեպքում պետք է կիրառվեն 2.2.7.2.2.4 - 2.2.7.2.2.6-ի դրույթները, սակայն 85-կրիպտոնի համար կարող է օգտագործվել A<sub>2</sub>(i) էֆեկտիվ նշանակությունը՝ հավասար 10 A<sub>2</sub>-ի: Վերոնշյալ (ա) ենթակետում նշված դեպքում, գնահատման ժամանակ պետք է հաշվի առնվեն 4.1.9.1.2-ով նախատեսվող արտաքին ռադիոակտիվ աղտոտվածության թույլատրելի սահմանները:

6.4.10.4 Փաթեթը պետք է ունենա այնպիսի կառուցվածք, որ 6.4.18-ում նշված ջրի մեջ խորասուզման ուժեղացված փորձարկում կատարելուց հետո չվնասվի դրա պաշտպանիչ պատյանի համակարգը:

#### **6.4.11 Տրոհվող նյութեր պարունակող փաթեթներին ներկայացվող պահանջները**

6.4.11.1 Տրոհվող նյութը պետք է փոխադրվի այնպես, որ.

ա) փոխադրման նորմալ եւ վթարային պայմաններում պահպանվի ենթակրիտիկականությունը. մասնավորապես, պետք է հաշվի առնվեն հետեւյալ անկանխատեսելի դեպքերը.

i) ջրի ներհոսքը փաթեթներ կամ արտահոսքը փաթեթներից,

- ii) փաթեթի մեջ դրված նեյտրոնների կլանիչների կամ դանդաղեցուցիչների արդյունավետության անկումը,
  - iii) փաթեթի մեջ կամ փաթեթից դուրս գալու արդյունքում պարունակության վերաբաշխումը,
  - iv) փաթեթների մեջ կամ դրանց միջև տարածությունների կրճատումը,
  - v) փաթեթների ընկղմումը ջրի մեջ կամ թաղումը ձյան մեջ, եւ
  - vi) ջերմաստիճանի փոփոխությունները, եւ
- բ) բավարարվեն.

- i) 6.4.7.2-ի պահանջները, բացառությամբ, չփաթեթավորված այն նյութերի, որոնք թույլատրված են 2.2.7.2.3.5(ե)-ի համաձայն,
- ii) «ԱԴՌ» համաձայնագրի այլ բաժիններով սահմանված պահանջները, որոնք վերաբերվում են նյութի ռադիոակտիվ հատկություններին,
- iii) 6.4.7.3-ի պահանջները, եթե նյութը բացառված չէ 2.2.7.2.3.5-ով,
- iv) 6.4.11.4 - 6.4.11.14-ի պահանջները, եթե նյութը բացառված չէ ըստ 2.2.7.2.3.5, 6.4.11.2 կամ 6.4.11.3-ով:

6.4.11.2 6.4.11.4 - 6.4.11.14-ի պահանջները չեն կիրառվում (դ) ենթակետի դրույթների եւ ստորեւ նշված (ա)-(զ) դրույթներից որեւէ մեկը բավարարող տրոհվող նյութ պարունակող փաթեթների նկատմամբ:

- ա) Ցանկացած ձեռով տրոհվող նյութ պարունակող փաթեթները, եթե՝
  - i) Փաթեթի արտաքին ամենափոքր չափը 10 սմ-ից պակաս չէ,
  - ii) Փաթեթի կրիտիկականության տեսակետից անվտանգության ինդեքսը հաշվարկված է հետեւյալ բանաձեւի օգտագործմամբ՝

$$CSI = 50 \times 5 \times \left( \frac{\text{փաթեթում } U - 235 - \text{ի զանգվածը (գ)}}{Z} + \frac{\text{փաթեթում այլ տրոհվող նուկլիդների զանգվածը (գ)}}{280} \right)$$

\* Պլուտոնիումը կարող է ունենալ ցանկացած իզոտոպային կազմ, եթե փաթեթում Pu-241-ի չափը ավելի պակաս է, քան Pu-240-ի չափը

եթե «Z»-ի արժեքները վերցվել են աղյուսակ 6.4.11.2-ից,

- iii) Յուրաքանչյուր փաթեթի ԿԱԻ-ն չի գերազանցում 10-ը,

- բ) Ցանկացած ձեռով տրոհվող նյութ պարունակող փաթեթները, եթե՝
- i) Փաթեթի արտաքին ամենափոքր չափը 30 սմ-ից պակաս չէ,
  - ii) 6.4.15.1 - 6.4.15.6-ում նշված փորձարկումների հնթարկվելուց հետո փաթեթը պետք է՝
    - պահպանի տրոհվող նյութի պարունակությունը
    - պահպանի փաթեթի ընդհանուր արտաքին նվազագույն եզրաչափքը՝ առնվազն 30 սմ-ի չափով, եւ
    - բացառի 10 սմ կողով խորանարդի ներթափանցումը:
  - iii) Փաթեթի կրիտիկականության տեսակետից անվտանգության ինդեքսը հաշվարկված է հետեւյալ բանաձեւի օգտագործմամբ՝

$$CSI = 50 \times 2 \times \left( \frac{\text{փաթեթում } U - 235 - \text{ի զանգվածը (գ)}}{Z} + \frac{\text{փաթեթում այլ տրոհվող նուկլիդների զանգվածը (գ)}}{280} \right)$$

\* Պլուտոնիումը կարող է ունենալ ցանկացած իզոտոպային կազմ, եթե փաթեթում Pu-241-ի չափը ավելի պակաս է, քան Pu-240-ի չափը

եթե «Z»-ի արժեքները վերցվել են աղյուսակ 6.4.11.2-ից,

- iv) Յուրաքանչյուր փաթեթի կրիտիկականության տեսակետից անվտանգության ինդեքսը չի գերազանցում 10-ը,
- գ) Ցանկացած ձեռով տրոհվող նյութ պարունակող փաթեթները, եթե՝
- i) Փաթեթի արտաքին ամենափոքր չափը 10 սմ-ից պակաս չէ,
  - ii) 6.4.15.1 - 6.4.15.6-ում նշված փորձարկումների հնթարկվելուց հետո փաթեթը պետք է՝
    - պահպանի տրոհվող նյութի պարունակությունը
    - պահպանի փաթեթի ընդհանուր արտաքին նվազագույն եզրաչափքը՝ առնվազն 10 սմ-ի չափով, եւ
    - բացառի 10 սմ կողով խորանարդի ներթափանցումը:
  - iii) Փաթեթի ԿԱԻ-ը հաշվարկված է հետեւյալ բանաձեւի օգտագործմամբ՝

$$CSI = 50 \times 2 \times \left( \frac{\text{փաթեթում } U - 235 - \text{ի զանգվածը (գ)}}{450} + \frac{\text{փաթեթում այլ տրոհվող նուկլիդների զանգվածը (գ)}}{280} \right)$$

\* Պլուտոնիումը կարող է ունենալ ցանկացած իզոտոպային կազմ, եթե

փաթեթում Pu-241-ի չափը ավելի պակաս է, քան Pu-240-ի չափը

iv) Յուրաքանչյուր փաթեթում տրոհվող նուկլիդների առավելագույն զանգվածը 15 գրամ է,

դ) Առանձին փաթեթում բերիլիումի ընդհանուր զանգվածը, դեյթերիումով հարստացած ջրածնային նյութը, գրաֆիտը եւ ածխածնի այլ ալոտրոպային ձեւերը չպետք է լինեն ավելի շատ, քան այդ փաթեթում տրոհվող նուկլիդների զանգվածը, բացառությամբ եթե դրանց ընդհանուր խտությունը յուրաքանչյուր 1 000 գրամում չի գերազանցում 1 գրամը: Համաձուլվածքի մինչեւ 4% քաշով՝ պղնձի համաձուլվածքներում ներառված բերիլիումը չպետք է հաշվի առնվի:

Աղյուսակ 6.4.11.2 «Z»-ի արժեքները կրիտիկականության տեսակետից անվտանգության ինդեքսի հաշվարկման համար՝ 6.4.11.2-ի համաձայն

Հարստացում <sup>ա</sup>	Z
Մինչեւ 1.5% հարստացած ուրան	2200
Մինչեւ 5% հարստացած ուրան	850
Մինչեւ 10% հարստացած ուրան	660
Մինչեւ 20% հարստացած ուրան	580
Մինչեւ 100% հարստացած ուրան	450

<sup>ա</sup> Եթե փաթեթը պարունակում է տարբեր հարստացումներով ուրան U-235, հետո ամենաբարձր հարստացմանը համապատասխանող արժեքն է օգտագործվում «Z»-ի համար:

6.4.11.3 6.4.11.4 - 6.4.11.14-ը չեն կիրառվում 1 000 գրամից ոչ ավել պլուտինիում պարունակող փաթեթների նկատմամբ, եթե՝

ա) պլուտինիումի ամբողջ զանգվածի ոչ ավել քան 20%-ը տրոհվող նուկլիդներ են,

բ) փաթեթի կրիտիկականության տեսակետից անվտանգության ինդեքսը հաշվարկված է հետևյալ բանաձևի օգտագործմամբ՝

$$CSI = 50 \times 5 \times \frac{\text{պլուտինիումի զանգվածը (գ)}}{1000}$$

գ) եթե պլուտինիումի հետ առկա է ուրան, ապա ուրանի զանգվածը չպետք է լինի պլուտինիումի զանգվածի 1%-ից ավելի:

6.4.11.4 Եթե հայտնի չեն ֆիզիկական կամ քիմիական ձեւը, իզոտոպային կազմը, զանգվածը կամ կոնցենտրացիան, դանդաղեցման գործակիցը կամ խտությունը, կամ երկրաչափական կառուցվածքը, ապա 6.4.11.8 - 6.4.11.13-ով նախատեսված գնահատումները պետք է կատարվեն՝



ելնելով այն կանխապայմանից, որ յուրաքանչյուր անհայտ ցուցանիշ ունի այնպիսի նշանակություն, որ այդ գնահատումների հայտնի պայմանների եւ ցուցանիշների դեպքում նեյտրոնների բազմացումը հասնում է առավելագույնի:

6.4.11.5 Ճառագայթահարված միջուկային վառելիքի համար 6.4.11.8 - 6.4.11.13-ով նախատեսված գնահատումները պետք է հիմնված լինեն իզոտոպային կազմի վրա, որը ցույց է տալիս.

ա) ճառագայթահարման ժամանակահատվածի ընթացքում նեյտրոնների առավելագույն բազմացումը, կամ.

բ) փաթեթի գնահատումների համար նեյտրոնների բազմացման չափավոր գնահատականը: Ճառագայթահարումից հետո, սակայն մինչեւ փոխադրումը պետք է կատարվի չափում իզոտոպային կազմի նկատմամբ հաշվենկատության (զգուշության) հաստատման նպատակով:

6.4.11.6 6.4.15-ում նշված փորձարկումներին ենթարկվելուց հետո փաթեթը պետք է.

ա) պահպանի փաթեթի ընդհանուր արտաքին նվազագույն եզրաչափքը՝ առնվազն 10 սմ-ի չափով, եւ

բ) բացառի 10 սմ կողով խորանարդի ներթափանցումը:

6.4.11.7 Փաթեթի կառուցվածքը մշակելիս պետք է հաշվի առնվի արտաքին միջավայրի  $-40^{\circ}\text{C}$  մինչեւ  $+38^{\circ}\text{C}$  ջերմաստիճանի ընդգրկույթը, եթե իրավասու մարմնի կողմից փաթեթի կառուցվածքի հաստատման սերտիֆիկատում այլ բան չի նախատեսվում:

6.4.11.8 Առանձին փաթեթի համար պետք է ենթադրել, որ փաթեթի բոլոր դատարկ տարածությունների մեջ, այդ թվում՝ պաշտպանիչ պատյանի համակարգի, կարող է ջուր ներհոսել կամ դրանցից արտահոսել: Սակայն, եթե փաթեթի կառուցվածքը ներառում է ջրի՝ որոշակի դատարկ տարածություններ նման ներհոսքը կամ դրանցից արտահոսքը բացառելու համար նախատեսված հատուկ միջոցներ, ապա անգամ սխալ գործողությունների արդյունքում, կարելի է ենթադրել, որ բացակայում է այդ տարածություններ ջրի ներհոսքը եւ դրանցից արտահոսքը: Հատուկ միջոցները պետք է ներառեն հետեւյալը.

ա) ջրի մի քանի բարձրորակ արգելափակոցներ, որոնցից առնվազն երկուսը պետք է մնան անջրանցիկ, փաթեթի՝ 6.4.11.13 (բ)-ով սահմանված փորձարկումներին ենթարկվելու դեպքում, որակի վերահսկման բարձր մակարդակ՝ փաթեթվածքների արտադրման, տեխնիկական սպասարկման եւ նորոգման, ինչպես նաեւ փորձարկումների ժամանակ, ինչը կվկայի յուրաքանչյուր

փոխադրումից առաջ յուրաքանչյուր փաթեթի հերմետիկության մասին, կամ

- բ) միայն ուրանի հեքսաֆտորիդ պարունակող փաթեթների համար, ուրան 235-ով առավելագույնը 5 զանգվածային տոկոսով հարստացվելու դեպքում.
  - i) փաթեթներ, որոնցում 6.4.11.13 (բ)-ով սահմանված փորձարկումներից հետո, փականի եւ փաթեթվածքի որեւէ այլ բաղադրիչի միջեւ, բացառությամբ ամրացման նախնական կետի, ֆիզիկական շփում առկա չէ, եւ որոնցում, բացի դրանից, 6.4.17.3-ով նախատեսված փորձարկումից հետո փականները մնում են հերմետիկ փակված, եւ
  - ii) որակի վերահսկման բարձր մակարդակ՝ փաթեթվածքների արտադրման, տեխնիկական սպասարկման եւ նորոգման ժամանակ՝ փորձարկումների կատարմանը զուգահեռ, ինչը կվկայի յուրաքանչյուր փոխադրումից առաջ յուրաքանչյուր փաթեթի հերմետիկության մասին:

6.4.11.9 Պետք է ենթադրել նաեւ, որ տեղայնացման համակարգն ամբողջովին կանդրադարձվի առնվազն 20 սմ հաստությամբ ջրի շերտով կամ անդրադարձման նման բարձր աստիճան կարող է նաեւ ապահովվել փաթեթվածքը շրջապատող նյութով: Սակայն, եթե հնարավոր է հաստատել, որ 6.4.11.13 (բ)-ով սահմանվող փորձարկումներից հետո փաթեթվածքի մեջ տեղայնացման համակարգը մնում է անվնաս, ապա 6.4.11.10 (գ)-ի դեպքում կարող է ենթադրվել փաթեթի ամբողջական անդրադարձում առնվազն 20 սմ հաստությամբ ջրի շերտով:

6.4.11.10 Փաթեթը պետք է մնա ենթակրիտիկական 6.4.11.8-ում եւ 6.4.11.9-ում նշված պայմանների դեպքում, ընդ որում, այն պայմանները, որոնցում գտնվում է փաթեթը, պետք է այնպիսին լինեն, որ նեյտրոնների առավելագույն բազմացումը համապատասխանի.

- ա) փոխադրման սովորական պայմաններին (առանց միջադեպերի),
- բ) 6.4.11.12 (բ)-ում նշված փորձարկումներին,
- գ) 6.4.11.13 (բ)-ում նշված փորձարկումներին,

6.4.11.11 *(Նախատեսվում է վերապահում)*

6.4.11.12 Փոխադրման նորմալ պայմանների համար պետք է որոշվի «N» թիվն այնպես, որ, «N» փաթեթների հնգակի ավելացման դեպքում պահպանվի ենթակրիտիկականությունը այն տեղադրության եւ փաթեթի պայմանների համար, որոնք հանգեցնում են նեյտրոնների

առավելագույն բազմացմանը՝ հետեւյալ պահանջների համաձայն.

- ա) փաթեթների միջեւ տարածությունները պետք է լինեն դատարկ, իսկ փաթեթի տեղադրության անդրադարձը պետք է ապահովվի բոլոր կողմերից շրջափակող առնվազն 20 սմ հաստությամբ ջրի շերտով, եւ
- բ) որպես փաթեթների վիճակ՝ պետք է ընդունվի 6.4.15-ում նշված փորձարկումներին ենթարկվելուց հետո դրանց գնահատված կամ փաստացի վիճակը:

6.4.11.13 Փոխադրման վթարային պայմանների համար պետք է որոշվի «N» թիվն այնպես, որ, «N» փաթեթների կրկնակի ավելացման դեպքում պահպանվի ենթակրիտիկականությունն այն տեղադրության եւ փաթեթի պայմանների համար, որոնք հանգեցնում են նեյտրոնների առավելագույն բազմացմանը՝ հետեւյալ պահանջների համաձայն.

ա) փաթեթների միջեւ ընկած տարածությունները լցված են ջրածին պարունակող դանդաղարարով, իսկ փաթեթի տեղադրության անդրադարձն ապահովվում է բոլոր կողմերից շրջափակող առնվազն 20 սմ հաստությամբ ջրի շերտով, եւ

բ) 6.4.15-ում նշված փորձարկումներից հետո կատարվում են ստորեւ նշված այն փորձարկումները, որոնք առաջադրում են առավել խիստ սահմանափակումներ.

i) 6.4.17.2 (բ)-ում նշված փորձարկումները եւ կամ 6.4.17.2 (գ)-ում նշված փորձարկումներն այն փաթեթների համար, որոնց զանգվածը կազմում է ոչ ավելի, քան 500 կգ, ընդհանուր խտությունը՝ ոչ ավելի, քան 1000 կգ/մ<sup>3</sup>, որը որոշվում է արտաքին եզրաչափերով, կամ 6.4.17.2 (ա)-ում նշված փորձարկումները՝ մյուս բոլոր փաթեթների համար. այնուհետեւ անհրաժեշտ է իրականացնել 6.4.17.3-ում նշված փորձարկումը եւ, որպես եզրափակում, 6.4.19.1 - 6.4.19.3-ում նշված փորձարկումները կամ

ii) 6.4.17.4-ում նշված փորձարկումը եւ

գ) այն դեպքում, երբ 6.4.11.13 (բ)-ում նշված փորձարկումների արդյունքում տեղի է ունենում տրոհվող նյութի ցանկացած մասի արտահոսք՝ պաշտպանիչ պատյանի համակարգի սահմաններից դուրս, պետք է ենթադրել, որ տրոհվող նյութի արտահոսքը տեղի է ունենում տվյալ խմբաքանակի յուրաքանչյուր փաթեթից, եւ ամբողջ տրոհվող նյութի համար պետք է ապահովվի համապատասխան տեղադրություն եւ դանդաղեցում, ինչը կարող է հանգեցնել նեյտրոնների առավելագույն բազմացմանը, ինչի դեպքում ամբողջովին անդրադարձումն ապահովվում է առնվազն

20 սմ հաստությամբ ջրի շերտով:

6.4.11.14 Տրոհվող նյութ պարունակող փաթեթների համար կրիտիկականության տեսանկյունից անվտանգության ինդեքսը (ԿԱԻ/CSI) որոշվում է՝ 50 թիվը բաժանելով 6.4.11.12-ի եւ 6.4.11.13-ի համաձայն դուրս բերված N թվի 2 արժեքներից ավելի փոքրի վրա (այսինքն՝ ԿԱԻ/CSI=50/N): Կրիտիկականության տեսանկյունից անվտանգության ինդեքսի արժեքը կարող է հավասար լինել զրոյի՝ պայմանով, որ անսահմանափակ թվով փաթեթներ լինեն ենթակրիտիկական (այսինքն՝ N թիվը, փաստորեն, երկու դեպքում էլ հավասար է անսահմանության):

#### **6.4.12. Փորձարկման ընթացակարգերը եւ համապատասխանության հաստատումը**

6.4.12.1. Աշխատանքային բնութագրերի համապատասխանությունը 2.2.7.2.3.1.3, 2.2.7.2.3.1.4, 2.2.7.2.3.3.1, 2.2.7.2.3.3.2, 2.2.7.2.3.4.1, 2.2.7.2.3.4.2 եւ 6.4.2 - 6.4.11-ում նշված պահանջներին պետք է հաստատվի ստորեւ նշված մեթոդներից որեւէ մեկի կամ մի քանիսի համադրության միջոցով.

- ա) Փորձարկումների կատարում այնպիսի փորձանմուշներով, որոնք LSA-III նյութեր կամ հատուկ տեսակի ռադիոակտիվ նյութեր կամ տարածման ցածր հատկությամբ ռադիոակտիվ նյութեր են, կամ՝ փաթեթվածքների նախատիպերով կամ փորձանմուշներով, երբ փորձարկման համար փորձանմուշի կամ փաթեթվածքի պարունակությունը պետք է հնարավորինս ճշգրտորեն նմանեցվի ռադիոակտիվ պարունակության բնութագրերի ակնկալվող ընդգրկույթին եւ փորձարկման ենթարկվելիք փորձանմուշը կամ փաթեթվածքը պետք է նախապատրաստվեն այնպիսի ձեով, ինչպես փոխադրման համար ներկայացվելու դեպքում է,
- բ) հղում նախորդ համանման գոհացուցիչ հաստատումներին,
- գ) փորձարկումների կատարում՝ համապատասխան մասշտաբի մոդելներով, որոնք ներառում են փորձարկվելիք փորձանմուշի համար էական տարրեր, եթե տեխնիկական փորձով ցույց է տրվել, որ նման փորձարկումների արդյունքները նպատակահարմար են կառուցվածքի մշակման նպատակների համար: Մասշտաբային մոդելների օգտագործման դեպքում պետք է հաշվի առնվի փորձարկումների որոշակի պարամետրերի, օրինակ՝ անցքահատիչի տրամագծի կամ սեղմման բեռնվածքի ճշգրտման անհրաժեշտությունը,
- դ) Հաշվարկ կամ հիմնավորված փաստարկ այն դեպքում, երբ հաշվարկման մեթոդները կամ պարամետրերը լայնորեն ընդունված են որպես հուսալի կամ չափավոր:

6.4.12.2. Փորձանմուշը, նախատիպը կամ մոդելը փորձարկումներին ենթարկելուց հետո պետք է կիրառվեն գնահատման համապատասխան եղանակներ, որոնք թույլ կտան հաստատել փորձարկման ընթացակարգերի համար նախատեսված պահանջների կատարումը՝ համաձայն ընդունված նորմերի եւ աշխատանքային բնութագրերի, որոնք սահմանված են 2.2.7.2.3.1.3, 2.2.7.2.3.1.4, 2.2.7.2.3.3.1, 2.2.7.2.3.3.2, 2.2.7.2.3.4.1, 2.2.7.2.3.4.2 եւ 6.4.2-6.4.11-ում:

6.4.12.3. Բոլոր փորձանմուշները մինչեւ փորձարկումը պետք է ստուգվեն՝ հայտնաբերելու եւ գրանցելու համար անսարքությունները կամ վնասվածքները, այդ թվում՝

ա) կառուցվածքի պարամետրերից շեղումները,

բ) պատրաստման թերությունները,

գ) կոռոզիան կամ որակը վատթարացնող այլ գործոններ, եւ

դ) հատկանիշների ձեւափոխությունը (դեֆորմացիաները):

Պետք է հստակորեն նշված լինի փաթեթի պաշտպանիչ պատյանի համակարգը: Պետք է հստակորեն որոշված լինեն փորձանմուշի արտաքին հատկանիշներն այնպես, որ հնարավոր լինի պարզ եւ հստակորեն հղում կատարել տվյալ փորձանմուշի ցանկացած մասին:

**6.4.13. Պաշտպանիչ պատյանի համակարգի եւ պաշտպանության ամբողջականության փորձարկումն ու կրիտիկականության տեսանկյունից անվտանգության գնահատումը**

6.4.15 - 6.4.21-ում նշված կիրառելի յուրաքանչյուր փորձարկումից հետո.

ա) պետք է հայտնաբերվեն եւ գրանցվեն անսարքություններն ու վնասվածքները,

բ) պետք է որոշվի, թե արդյո՞ք պահպանվել է պաշտպանիչ պատյանի համակարգի եւ պաշտպանության ամբողջականությունը փորձարկվող փաթեթին՝ 6.4.2 - 6.4.11-ում ներկայացվող պահանջներին համապատասխան, եւ

գ) տրոհվող նյութ պարունակող փաթեթների համար պետք է որոշվի, թե արդյո՞ք 6.4.11.1 - 6.4.11.14-ով մեկ կամ մի քանի փաթեթների համար պահանջվող գնահատման ժամանակ օգտագործվող ենթադրություններն ու պայմաններն ընդունելի են:

**6.4.14. Անկման փորձարկումների համար օգտագործվող թիրախը**

2.2.7.2.3.3.5 (ա), 6.4.15.4, 6.4.16 (ա), 6.4.17.2 եւ 6.4.20.2-ում նշված անկման փորձարկումների համար օգտագործվող թիրախը պետք է

լինի այնպիսի հարթ եւ հորիզոնական մակերեսույթ, որ փորձանմուշի ազդեցության հետեւանքով դրա տեղաշարժման կամ դեֆորմացիայի նկատմամբ դիմադրության աճի արդյունքում զգալիորեն չավելանա փորձանմուշին պատճառով ոչ վնասը:

**6.4.15. Փոխադրման նորմալ պայմաններում դիմակայելու հատկությունները հաստատելու համար անհրաժեշտ փորձարկումները**

6.4.15.1. Փորձարկումները ներառում են՝ ջրացողմամբ փորձարկումը, ազատ անկման փորձարկումը, դարսակման փորձարկումը եւ ներթափանցման խորության փորձարկումը: Փաթեթի փորձանմուշներն ազատ անկման, դարսակման եւ ներթափանցման խորության յուրաքանչյուր փորձարկումից առաջ պետք է ենթարկվեն ջրացողմամբ փորձարկմանը: Բոլոր փորձարկումների համար կարող է օգտագործվել մեկ փորձանմուշ՝ պայմանով, որ բավարարվեն 6.4.15.2-ի պահանջները:

6.4.15.2. Ջրացողմամբ փորձարկման ավարտի եւ հաջորդող փորձարկման միջեւ ընկած ժամանակահատվածը պետք է այնպիսին լինի, որ ջուրը հասցնի առավելագույնս ներծծվել՝ առանց փորձանմուշի արտաքին մակերեսույթի նկատելի չորացման: Հակառակի մասին վկայող փաստերի բացակայության դեպքում այդ ժամանակահատվածն ընդունվում է երկու ժամի հավասար, եթե ջրացողումը չորս ուղղությունից միաժամանակ է կատարվում: Սակայն, եթե ջրացողումն այդ չորս ուղղությունից յուրաքանչյուրից հաջորդաբար է կատարվում, ապա որեւէ ժամանակահատված չպետք է լինի:

6.4.15.3. Ջրացողմամբ փորձարկումը. Փորձանմուշը պետք է ենթարկվի ջրացողմամբ փորձարկմանը առնվազն մեկ ժամ՝ ժամում մոտավորապես 5 սմ արագությամբ թափվող անձրեւի նմանությամբ:

6.4.15.4. Ազատ անկման փորձարկումը. Փորձանմուշը պետք է ընկնի թիրախի վրա այնպես, որ անվտանգության փորձարկվող միջոցներին առավելագույն վնասվածք պատճառվի:

ա) Անկման բարձրությունը, որը չափվում է փորձանմուշի ամենաստորին կետից մինչեւ թիրախի ամենավերին հարթությունը, պետք է լինի ոչ պակաս, քան աղյուսակ 6.4.15.4-ում համապատասխան զանգվածի համար նշված հեռավորությունը: Թիրախը պետք է համապատասխանի 6.4.14-ում սահմանված պահանջներին:

բ) 50 կգ-ը չգերազանցող զանգված ունեցող ուղղանկյուն փայտաթելքային սալից կամ փայտե փաթեթների յուրաքանչյուր առանձին փորձանմուշ պետք է յուրաքանչյուր անկյան վրա 0.3 մ բարձրությունից ենթարկվի ազատ անկման փորձարկման:

- գ) 100 կգ-ը չգերազանցող զանգված ունեցող գլանաձեւ փայտաթելքային սալից փաթեթների յուրաքանչյուր առանձին փորձանմուշ պետք է 0.3 մ բարձրությունից գլանի յուրաքանչյուր եզրի յուրաքանչյուր քառորդամասի վրա ենթարկվի ազատ անկման փորձարկման:

**Աղյուսակ 6.4.15.4. Ազատ անկման բարձրությունը փոխադրման նորմալ պայմաններում փաթեթների փորձարկման ժամանակ**

Փաթեթի զանգվածը (կգ)	Ազատ անկման բարձրությունը (մ)
Փաթեթի զանգվածը < 5 000	1.2
5 000 ≤ փաթեթի զանգվածը < 10 000	0.9
10 000 ≤ փաթեթի զանգվածը < 15 000	0.6
15 000 ≤ փաթեթի զանգվածը	0.3

6.4.15.5. Դարսակման փորձարկումը. Եթե փաթեթվածքի ձեւը գործնականում չի բացառում դարսակման հնարավորությունը, ապա փորձանմուշը 24 ժամվա ընթացքում ենթարկվում է սեղմման բեռնվածքի, որը պետք է հավասար լինի կամ գերազանցի.

- ա) ընդհանուր քաշը, որը հավասար է սվյալ փաթեթի առավելագույն քաշի հնգապատիկին, եւ
- բ) այն ջանքը, որը համարժեք է 13 կՊա ճնշման եւ փաթեթի ուղղահայաց պրոյեկցիայի մակերեսի արտադրյալին:

Բեռնվածքը պետք է հավասարաչափ բաշխվի փորձանմուշի երկու հակադարձ կողմերի միջեւ, որոնցից մեկը հիմքն է, որի վրա սովորաբար կանգնում է փաթեթը:

6.4.15.6. Ներթափանցման խորության փորձարկումը. Փորձանմուշը պետք է տեղադրվի կոշտ, հարթ, հորիզոնական մակերեսույթի վրա, որը զգալիորեն չի տեղաշարժվի փորձարկման կատարման ժամանակ:

- ա) Կիսագնդաձեւ ծայրով 3.2 սմ տրամագծով եւ 6 կգ զանգվածով ձողը պետք է, իր երկայնական առանցքի ուղղահայաց դիրքում, ազատ անկմամբ գցվի փորձանմուշի ամենաթույլ մասի կենտրոնի ուղղությամբ այնպես, որ փաթեթի մեջ բավականաչափ խորը ներթափանցելու դեպքում այն հարվածի պաշտպանիչ պատյանի համակարգին: Փորձարկման կատարման ժամանակ ձողը զգալի ձեւափոխության չպետք է ենթարկվի:
- բ) Ձողի անկման բարձրությունը, որը չափվում է դրա ամենացածր ծայրից մինչեւ փորձանմուշի մակերեսույթի վրա ազդելու նախատեսվող կետը, պետք է կազմի 1 մ:

**6.4.16. Հեղուկների եւ գազերի համար նախատեսված «A» տեսակի փաթեթների լրացուցիչ փորձարկումները**

Փորձանմուշը կամ առանձին փորձանմուշները պետք է ենթարկվեն ստորեւ բերված փորձարկումներից յուրաքանչյուրին, եթե հնարավոր չէ հաստատել, որ տվյալ փորձանմուշի համար մեկ փորձարկման պայմաններն ավելի ծանր են, քան մյուսներինը, որի դեպքում տվյալ փորձանմուշը ենթարկվում է առավել ծանր պայմաններով փորձարկմանը:

ա) Ազատ անկման փորձարկումը. Փորձանմուշը պետք է գցվի թիրախի վրա այնպես, որ դրա պաշտպանիչ պատյանին առավելագույն վնասվածք պատճառվի: Անկման բարձրությունը, որը չափվում է փորձանմուշի ամենաստորին մասից մինչեւ թիրախի ամենավերին հարթությունը, պետք է կազմի 9 մ: Թիրախը պետք է համապատասխանի 6.4.14-ում սահմանված պահանջներին:

բ) Ներթափանցման խորության փորձարկումը. Փորձանմուշը պետք է ենթարկվի 6.4.15.6-ում նշված փորձարկմանն այն տարբերությամբ, որ անկման բարձրությունը ավելացվում է՝ 6.4.15.6 (բ)-ում նշված 1 մ-ից հասցվելով 1.7 մ-ի:

**6.4.17. Փոխադրման վթարային պայմաններում դիմակայելու հատկությունները հաստատելու համար անհրաժեշտ փորձարկումներ**

6.4.17.1. Փորձանմուշը պետք է ենթարկվի 6.4.17.2-ում եւ 6.4.17.3-ում նշված փորձարկումների ընդհանուր ազդեցություններին՝ նշված հաջորդականությամբ: Այս փորձարկումներից հետո կամ այս փորձանմուշը կամ մեկ այլ փորձանմուշ պետք է ենթարկվի 6.4.17.4-ում, եւ, եթե կիրառելի է, 6.4.18-ում նշված ջրի մեջ խորասուզման փորձարկման (փորձարկումների) ազդեցությանը (ազդեցություններին):

6.4.17.2. Մեխանիկական փորձարկում. Մեխանիկական փորձարկումը բաղկացած է անկման երեք տարբեր փորձարկումներից: Յուրաքանչյուր փորձանմուշ պետք է ենթարկվի 6.4.8.8-ում կամ 6.4.11.13-ում նշված անկման համապատասխան փորձարկումներին: Փորձանմուշի անկման փորձարկումներին ենթարկվելու հաջորդականությունը պետք է այնպիսին լինի, որ մեխանիկական փորձարկման ավարտից հետո փորձանմուշին պատճառվեն այնպիսի վնասվածքներ, որոնք հաջորդող ջերմային փորձարկման ժամանակ կհանգեցնեն դրա առավելագույն վնասմանը:

ա) I անկման ժամանակ փորձանմուշը թիրախի վրա պետք է այնպես ընկնի, որ այն առավելագույնս վնասվի, իսկ անկման



բարձրությունը, որը չափվում է փորձանմուշի ամենաստորին կետից մինչև թիրախի ամենավերին հարթությունը, պետք է կազմի 9 մ: Թիրախը պետք է համապատասխանի 6.4.14-ում սահմանված պահանջներին:

բ) II անկման ժամանակ փորձանմուշը պետք է ուղղաձիգ, ամուր կերպով թիրախի վրա ամրացված ցցաձողի վրա ընկնի այնպես, որ առավելագույնս վնասվի: Անկման բարձրությունը, որը չափվում է փորձանմուշի ազդեցության նախատեսվող կետից մինչև ցցաձողի վերին մակերեսույթը, պետք է կազմի 1 մ: Ցցաձողը պետք է պատրաստված լինի  $15.0 \pm 0.5$  սմ տրամագիծ եւ 20 սմ երկարություն ունեցող շրջանաձեւ հատվածքի փափուկ պողպատից, եթե ավելի երկար ցցաձողի դեպքում փորձանմուշին չի պատճառվի ավելի մեծ վնասվածք. այս դեպքում պետք է օգտագործվի բավարար երկարություն ունեցող ցցաձող՝ առավելագույնս վնասվածք պատճառելու նպատակով: Ցցաձողի վերին ծայրը պետք է լինի հարթ եւ հորիզոնական՝ եզրի կորության ոչ ավելի քան 6 մմ շառավղով: Թիրախը, որի վրա ամրացված է ցցաձողը, պետք է համապատասխանի 6.4.14-ում նշված պահանջներին:

գ) III անկման ժամանակ փորձանմուշը պետք է ենթարկվի դինամիկ քայքայման փորձարկմանը՝ փորձանմուշը թիրախի վրա տեղադրելով այնպես, որ փորձանմուշի վրա 9 մ բարձրությունից 500 կգ զանգվածի ընկնելու դեպքում դրան պատճառվի առավելագույն վնասվածք: Այդ զանգվածը պետք է պատրաստված լինի փափուկ պողպատից եւ ունենա 1 մ x 1 մ չափսեր ունեցող պինդ թիթեղի տեսք ու ընկնի հորիզոնական դիրքով: Պողպատյա թիթեղի ստորին հատվածն ունի իր եզրերը եւ անկյունները՝ եզրի կորության ոչ ավելի, քան 6 մմ շառավղով: Անկման բարձրությունը պետք է չափվի թիթեղի ներքեւի մասից մինչև փորձանմուշի ամենավերին կետը: Թիրախը, որի վրա տեղադրվում է փորձանմուշը, պետք է համապատասխանի 6.4.14-ում սահմանված պահանջներին:

6.4.17.3. Ջերմային փորձարկում. Փորձանմուշը պետք է գտնվի ջերմային հավասարակշռության վիճակում արտաքին միջավայրի  $38^{\circ}\text{C}$  ջերմաստիճանի դեպքում՝ աղյուսակ 6.4.8.6-ում նշված արեւային ինսոլյացիայի պայմաններում եւ փաթեթի ներսում ռադիոակտիվ պարունակությունից ներքին ջերմության անջատման առավելագույն հաշվարկային արագության պայմաններում: Որպես այլընտրանք՝ նշված պարամետրերից յուրաքանչյուրը կարող է, նախքան փորձարկումը եւ դրա ժամանակ, ունենալ այլ արժեքներ՝ պայմանով, որ դրանք պատշաճ կերպով հաշվի առնվեն փաթեթի բնութագրի

հետագա գնահատման ժամանակ:

Ջերմային փորձարկումը պետք է այնուհետեւ նախատեսի.

ա) 30 րոպե ժամանակահատվածով փորձանմուշի տեղադրում ջերմային միջավայրում, որտեղ ջերմային հոսքն առնվազն համարժեք կլինի օդային միջավայրում ածխաջրածնային վառելիքի այրման օջախում եղած ջերմային հոսքին. արտաքին միջավայրի պայմանները գործնականորեն պետք է հաստատուն լինեն, իսկ  $800^{\circ}\text{C}$  միջին ջերմաստիճանի դեպքում կրակի ճառագայթման գործակիցը պետք է առնվազն 0.9 լինի. կրակը պետք է ամբողջովին ծածկի փորձանմուշը, իսկ մակերեսության կլանման գործակիցը պետք է 0.8-ին հավասար ընդունվի կամ այն արժեքին, որը չափումներով հաստատված է՝ նշված կրակի օջախում տեղադրված փաթեթի համար:

բ) փորձանմուշի տեղադրում արտաքին միջավայրի  $38^{\circ}\text{C}$  ջերմաստիճանի, աղյուսակ 6.4.8.6-ում նշված արեւային ինսոլացիայի եւ փաթեթի ներսում ռադիոակտիվ պարունակությունից ներքին ջերմության անջատման առավելագույն հաշվարկային արագության պայմաններն ունեցող միջավայրում այնքան ժամանակ, որ հնարավորություն կտա հավաստիանալու, որ փորձանմուշի բոլոր մասերում ջերմաստիճանի արժեքները նվազում են եւ (կամ) մոտենում են նախնական կայուն վիճակի պայմաններին: Որպես այլընտրանք՝ նշված պարամետրերից յուրաքանչյուրը կարող է տաքացման ավարտից հետո ունենալ այլ արժեքներ՝ պայմանով, որ դրանք պատշաճ կերպով հաշվի առնվեն փաթեթի բնութագրի հետագա գնահատման ժամանակ:

Փորձարկման ժամանակ եւ դրանից հետո փորձանմուշը չպետք է արհեստականորեն սառեցվի, իսկ փորձանմուշի նյութերի ցանկացած այրում պետք է շարունակվի բնական ձեւով:

6.4.17.4. Ջրի մեջ խորասուզման փորձարկում. Փորձանմուշը պետք է, ոչ պակաս, քան ութ ժամ, գտնվի առնվազն 15 մ բարձրությամբ ջրի սյան ազդեցության տակ այնպիսի դիրքով, որը կարող է առավելագույն վնասվածքներ ստանալու պատճառ լինել: Հաստատման նպատակներով՝ առնվազն 150 կՊա կազմող մանոմետրական հավելյալ ճնշումը համարվում է այս պայմանները բավարարող:

**6.4.18. Ավելի քան  $10^5$  A<sub>2</sub> ակտիվությամբ ռադիոակտիվ պարունակությամբ «B(U)» եւ «B(M)» տեսակների փաթեթների եւ «C» տեսակի փաթեթների՝ ջրի մեջ խորասուզման փորձարկում**

Ջրի մեջ խորասուզման ուժեղացված փորձարկում. Փորձանմուշը պետք է, ոչ պակաս, քան 1 ժամ, գտնվի առնվազն 200 մ

բարձրությամբ ջրի սյան ազդեցության տակ: Հաստատման նպատակներով՝ առնվազն 2 ՄՊա կազմող մանոմետրական հավելյալ ճնշումը համարվում է այս պայմանները բավարարող:

#### **6.4.19. Տրոհվող նյութ պարունակող փաթեթների հերմետիկության փորձարկումը**

6.4.19.1. Նման փորձարկումից պետք է ազատվեն այն փաթեթները, որոնց նկատմամբ 6.4.11.8 - 6.4.11.13-ով նախատեսված գնահատման նպատակով ենթադրվել է, որ դրանց մեջ ներհոսում եւ դրանց միջից արտահոսում է այնքան ծավալով ջուր, որը հանգեցնում է ռեակտիվության ամենաբարձր աստիճանի:

6.4.19.2. Մինչեւ ստորեւ նշված հերմետիկության փորձարկմանը ենթարկվելը, փորձանմուշը, 6.4.11.13-ի պահանջների համաձայն, պետք է ենթարկվի սույն կանոնների 6.4.17.2 (բ)-ում, եւ 6.4.17.2 (ա)-ում կամ (գ)-ում նշված փորձարկումներին, ինչպես նաեւ 6.4.17.3-ում նշված փորձարկմանը:

6.4.19.3. Փորձանմուշը պետք է, ոչ պակաս, քան առնվազն 8 ժամ, գտնվի առնվազն 0.9 մ բարձրությամբ ջրի սյան ազդեցության տակ այնպիսի դիրքով, որի դեպքում կակնկալվի ջրի առավելագույն ներհոսք:

#### **6.4.20. «С» տեսակի փաթեթների փորձարկումները**

6.4.20.1. Փաթեթները պետք է ենթարկվեն հետեւյալ փորձարկման հաջորդականություններից յուրաքանչյուրի ազդեցությանը՝ նշված հերթականությամբ.

ա) 6.4.17.2 (ա), 6.4.17.2 (գ), 6.4.20.2 եւ 6.4.20.3-ում նշված փորձարկումներին, եւ

բ) 6.4.20.4-ում նշված փորձարկմանը:

(ա) եւ (բ) հաջորդականություններից յուրաքանչյուրի համար կարող են օգտագործվել տարբեր փորձանմուշներ:

6.4.20.2. Ծակման/պատռման փորձարկում. Փորձանմուշը պետք է ենթարկվի ուղղահայաց փափուկ պողպատից պատրաստված ձողով վնասման ազդեցությանը: Փաթեթի փորձանմուշի դիրքը մակերեսային նկատմամբ, ինչպես նաեւ փաթեթի մակերեսային վրա հարվածի կետը պետք է լինեն այնպիսին, որ 6.4.20.1 (ա)-ում նշված փորձարկման հաջորդականությունից հետո պատճառվի առավելագույն վնասվածք:

ա) ոչ պակաս, քան 250 կգ զանգված ունեցող փաթեթով փորձանմուշը պետք է տեղադրվի թիրախի վրա եւ հարվածի նախատեսվող կետի վրա 3 մետր բարձրությունից դրա վրա պետք է գցվի 250 կգ զանգվածով ձող: Այս փորձարկման համար

օգտագործվող ձողը պետք է լինի 20 սմ տրամագծով գլանաձև ձող, որի հարվածող ծայրը 30 սմ բարձրությամբ եւ 2.5 սմ տրամագծով գազաթով հատված ուղիղ շրջանային կոն է՝ եզրի կորության ոչ ավելի քան 6 մմ շառավղով: Թիրախը, որի վրա տեղադրվում է փորձանմուշը, պետք է համապատասխանի 6.4.14-ում նշված պահանջներին,

բ) 250 կգ եւ ավելի զանգվածով փաթեթների դեպքում ձողի հիմքն ամրացվում է թիրախին եւ փորձանմուշը զցվում է դրա վրա: Անկման բարձրությունը, որը չափվում է փորձանմուշի՝ հարվածի համար նախատեսվող կետից ձողի ամենավերին հարթությունը, պետք է լինի 3 մ: Այս փորձարկման համար ձողը պետք է ունենա վերոնշյալ (ա) կետում նշված նույն հատկությունները եւ չափսերը, այն բացառությամբ, որ ձողի երկարությունն ու զանգվածը պետք է այնպիսին լինեն, որ փորձանմուշին առավելագույն վնասվածք պատճառվի: Թիրախը, որի վրա տեղադրվում է ձողի հիմքը, պետք է համապատասխանի 6.4.14-ում նշված պահանջներին:

6.4.20.3. Ուժեղացված ջերմային փորձարկում. Այս փորձարկման պայմանները պետք է համապատասխանեն 6.4.17.3-ի պահանջներին՝ այն բացառությամբ, որ փորձանմուշը պետք է 60 րոպե գտնվի ջերմային միջավայրում:

6.4.20.4. Բախման փորձարկում. Փորձանմուշը պետք է ենթարկվի թիրախի հետ բախման 90 մ/վրկ արագությամբ այնպիսի դիրքով, որ նրան առավելագույն վնասվածք պատճառվի: Թիրախը պետք է համապատասխանի 6.4.14-ում նշված պահանջներին, այն բացառությամբ, որ թիրախի մակերեսային կարող է հարվածի ենթարկվել ցանկացած դիրքով, որի դեպքում դրա մակերեսային ուղղաձիգ կլինի փորձանմուշի հետագծին:

**6.4.21. 0.1 կգ կամ ավելի ուրանի հեքսաֆտորիդ պարունակելու համար նախատեսված փաթեթվածքների ստուգումներ**

- 6.4.21.1. Արտադրված յուրաքանչյուր փաթեթվածք եւ դրա՝ տեխնիկական սպասարկման եւ կառուցվածքային սարքավորումները պետք է, միասին կամ առանձին-առանձին, ենթարկվեն նախնական ստուգման՝ մինչեւ շահագործման հանձնվելը եւ, այնուհետեւ՝ պարբերական ստուգումների: Այս ստուգումների կատարումը եւ հավաստումը պետք է իրականացվի իրավասու մարմնի համաձայնությամբ:
- 6.4.21.2. Նախնական ստուգումը պետք է ներառի կառուցվածքի բնութագրերի ստուգումը, կառուցվածքային ամրության փորձարկումը, անջրանցիկության փորձարկումը, ջրի տարողության փորձարկումը եւ օժանդակ սարքավորումների պատշաճ աշխատանքի ստուգումը:
- 6.4.21.3. Պարբերական ստուգումները պետք է ներառեն արտաքին զննումը, կառուցվածքային ամրության փորձարկումը, անջրանցիկության փորձարկումը եւ օժանդակ սարքավորումների պատշաճ աշխատանքի ստուգումը: Պարբերական ստուգումների կատարման միջեւ առավելագույն ժամանակահատվածը պետք է հինգ տարի լինի: Այն փաթեթվածքները, որոնք ստուգման չեն ենթարկվել հինգ տարվա ընթացքում, պետք է զննության ենթարկվեն փոխադրումից առաջ՝ իրավասու մարմնի կողմից հաստատված ծրագրի համաձայն: Դրանք կարող են վերալցավորվել միայն պարբերական ստուգումների ծրագրի՝ ամբողջ ծավալով իրականացումից հետո:
- 6.4.21.4. Կառուցվածքի բնութագրերի ստուգումը պետք է հաստատի համապատասխանությունը տվյալ կառուցվածքի տեսակի մասնագրերին եւ արտադրության ծրագրին:
- 6.4.21.5. Կառուցվածքի ամրության նախնական փորձարկման համար, 0.1 կգ կամ ավելի ուրանի հեքսաֆտորիդ պարունակելու համար նախատեսված փաթեթվածքները պետք է ենթարկվեն հիդրավլիկական փորձարկման առնվազն 1.38 ՄՊա ներքին ճնշման պայմաններում, սակայն, այն դեպքում, երբ փորձարկման ճնշումը կազմում է 2.76 ՄՊա-ից քիչ, տվյալ կառուցվածքի համար պահանջվում է բազմակողմ հաստատում: Կրկնակի փորձարկման ենթարկվող փաթեթվածքների համար կարող է կիրառվել ցանկացած այլ համարժեք չքայքայող փորձարկման մեթոդ՝ պայմանով, որ այն ենթարկվի բազմակողմ հաստատման:
- 6.4.21.6. Անջրանցիկության փորձարկումը պետք է կատարվի այնպիսի ընթացակարգին համապատասխան, որը հնարավորություն կտա 0.1 Պա.լ/վ ( $10^{-6}$  բար.լ/վ) ճշգրտությամբ որոշելու պաշտպանիչ պատյանի համակարգում արտահոսքի վայրերը:
- 6.4.21.7. Փաթեթվածքների ջրային տարողությունը պետք է որոշվի  $\pm 0.25\%$

ճշգրտությամբ՝ 15 °C սկզբնական ջերմաստիճանի պայմաններում: Տարողության ծավալը պետք է նշվի 6.4.21.8-ում նկարագրված ցուցանակի վրա:

6.4.21.8. Յուրաքանչյուր փաթեթվածքի վրա, դրա հեշտ հասանելի մասում, պետք է ամուր կերպով ամրացված լինի քայքայումակայուն (կոռոզիակայուն) մետաղից պատրաստված ցուցանակ: Ցուցանակի ամրացման եղանակը չպետք է խաթարի փաթեթվածքի ամրությունը: Դրոշմավորման կամ համարժեք որեւէ այլ եղանակով ցուցանակի վրա պետք է մակնշված լինեն առնվազն հետեւյալ տվյալները՝

- հաստատման համարը,
- արտադրողի կողմից դրված սերիական համարը, առավելագույն աշխատանքային ճնշումը (մանոմետրական ճնշումը),
- փորձարկման ճնշումը (մանոմետրական ճնշումը),
- պարունակությունը՝ ուրանի հեքսաֆտորիդի,
- տարողությունը՝ լիտրերով,
- ուրանի հեքսաֆտորիդի լցավորման առավելագույն թույլատրելի զանգվածը,
- տարայի զանգվածը,
- նախնական փորձարկման եւ ամենավերջին պարբերական փորձարկման ամսաթիվը (ամիսը, տարին),
- փորձարկումներն իրականացրած փորձագետի դրոշմը:

#### **6.4.22. Փաթեթի կառուցվածքների եւ նյութերի հաստատումներ**

6.4.22.1. 0.1 կիլոգրամ կամ ավելի ուրանի հեքսաֆտորիդ պարունակող փաթեթների կառուցվածքների հաստատման համար պահանջվում է հետեւյալը.

- ա) 6.4.6.4-ում նշված պահանջները բավարարող յուրաքանչյուր կառուցվածքի համար պահանջվում է բազմակողմ հաստատում:
- բ) 6.4.6.1 - 6.4.6.3-ի պահանջները բավարարող յուրաքանչյուր կառուցվածքի համար պահանջվում է կառուցվածքի ծագման երկրի իրավասու մարմնի կողմից կատարվող միակողմ հաստատում, եթե, «ԱԴԴ» համաձայնագրի համաձայն, այլ դեպքերում բազմակողմ հաստատում չի պահանջվում:

6.4.22.2. «B(U)» եւ «C» տեսակի յուրաքանչյուր փաթեթի կառուցվածքի համար պահանջվում է միակողմ հաստատում, այն բացառությամբ, որ.

- ա) տրոհվող նյութերի համար նախատեսված այն փաթեթի

կառուցվածքի համար, որի վրա տարածվում են 6.4.22.4, 6.4.23.7 եւ 5.1.5.2.1-ի պահանջները, պահանջվում է բազմակողմ հաստատում, եւ

բ) տարածման ցածր հատկություն ունեցող ռադիոակտիվ նյութի համար նախատեսված «B(U)» տեսակի փաթեթի կառուցվածքի համար պահանջվում է բազմակողմ հաստատում:

6.4.22.3. «B(M)» տեսակի փաթեթի յուրաքանչյուր կառուցվածքի համար՝ ներառյալ տրոհվող նյութի համար նախատեսված կառուցվածքները, որոնց վրա եւս տարածվում են 6.4.22.4, 6.4.23.7 եւ 5.1.5.2.1-ի պահանջները, ինչպես նաեւ այն կառուցվածքների համար, որոնք նախատեսված են տարածման ցածր հատկություն ունեցող ռադիոակտիվ նյութի համար, պահանջվում է բազմակողմ հաստատում:

6.4.22.4. Տրոհվող նյութ պարունակող ցանկացած փաթեթի կառուցվածք, որը բացառված չէ 2.2.7.2.3.5 (ա)-(զ)-ից որեւէ մեկով եւ 6.4.11.2-ով եւ 6.4.11.3-ով, պահանջում է բազմակողմ հաստատում:

6.4.22.5. Հատուկ տեսակի ռադիոակտիվ նյութի համար նախատեսված կառուցվածքի համար պահանջվում է միակողմ հաստատում: Տարածման ցածր հատկություն ունեցող ռադիոակտիվ նյութի համար նախատեսված կառուցվածքի համար պահանջվում է բազմակողմ հաստատում (տե՛ս նաեւ 6.4.23.8):

6.4.22.6. 2.2.7.2.3.5 (զ)-ին համապատասխան՝ «ՏՐՈՀՎՈՂ» դասակարգումից բացառված՝ տրոհվող նյութի համար կառուցվածքը պահանջում է բազմակողմ հաստատում:

6.4.22.7. 2.2.7.2.2.2 (բ)-ին համապատասխան՝ սարքերի կամ պատրաստվածքների ազատված բեռի ակտիվության այլընտրանքային սահմանները պահանջում են բազմակողմ հաստատում:

6.4.22.8. Ցանկացած կառուցվածք, որի համար պահանջվում է միակողմ հաստատում այն երկրի կողմից, որը «ԱԴՌ» համաձայնագրի Պայմանավորվող կողմ է, պետք է հաստատվի տվյալ երկրի իրավասու մարմնի կողմից. եթե կառուցվածքի ծագման երկիրը «ԱԴՌ» համաձայնագրի Պայմանավորվող կողմ չէ, ապա փոխադրումը հնարավոր է իրականացնել հետեւյալ պայմանները բավարարելու դեպքում.

ա) տվյալ երկրի կողմից տրամադրվել է հավաստագիր, որը վկայում է այն մասին, որ փաթեթի կառուցվածքը բավարարում է «ԱԴՌ-ում» սահմանված տեխնիկական պահանջները, եւ որ այդ հավաստագիրը վավերացվել է «ԱԴՌ» համաձայնագրի Պայմանավորվող կողմի իրավասու մարմնի կողմից:

բ) Եթե «ԱԴԴ» համաձայնագրի Պայմանավորվող կողմ հանդիսացող որեւէ երկրի կողմից չի տրամադրվել հավաստագիր, եւ փաթեթի կառուցվածքը չի հաստատվել, ապա այն պետք է հաստատվի «ԱԴԴ» համաձայնագրի Պայմանավորվող կողմի իրավասու մարմնի կողմից: Եթե «ԱԴԴ» համաձայնագրի Պայմանավորվող կողմ հանդիսացող որեւէ երկրի կողմից չի տրամադրվել սերտիֆիկատ եւ փաթեթի կառուցվածքը չի հաստատվել, ապա այն պետք է հաստատվի «ԱԴԴ» համաձայնագրի Պայմանավորվող կողմ հանդիսացող բեռնառաքման երթուղով առաջին երկրի իրավասու մարմնի կողմից:

6.4.22.9. Անցումային միջոցների կիրառմամբ հաստատված կառուցվածքների համար տե՛ս 1.6.6:

#### **6.4.23. Ռադիոակտիվ նյութերի փոխադրման հայտերն ու հաստատումները**

6.4.23.1. *(Նախատեսվում է վերապահում)*

6.4.23.2. Առաքումը հաստատող հայտերը պետք է ներառեն.

ա) առաքման ժամկետը, որի հաստատման համար ներկայացվել է հայտը,

բ) փաստացի ռադիոակտիվ պարունակությունը, փոխադրման ակնկալվող տեսակները, փոխադրամիջոցի տեսակը, եւ հավանական կամ առաջարկվող երթուղին, եւ

գ) մանրամասները, թե ինչպես են, կիրառության դեպքում, իրագործվելու փաթեթի կառուցվածքի հաստատման հավաստագրերում նշված նախազգուշական, վարչական կամ գործունեության հսկման միջոցները՝ նշված 5.1.5.2.1 (ա)(v), (vi) կամ (vii)-ում, պետք է դրվեն գործողության մեջ:

6.2.23.3. Հատուկ պայմաններում կատարվող առաքումների թույլտվության համար ներկայացված հայտերը պետք է ներառեն այն բոլոր տեղեկությունները, որոնք անհրաժեշտ են՝ բավարարելու համար իրավասու մարմնի կողմից հաստատված պահանջներն այն մասին, որ փոխադրման ընթացքում անվտանգության ընդհանուր մակարդակը առնվազն համարժեք է այն մակարդակին, որը կապահովվի, եթե «ԱԴԴ» համաձայնագրի բոլոր համապատասխան պահանջները բավարարվեն:

Հայտը պետք է նաեւ պարունակի.

ա) հայտարարություն շեղումների մասին, որոնց դեպքում եւ որոնց պատճառով առաքումը չի կարող կատարվել այնպես, որ լիարժեքորեն բավարարի «ԱԴԴ» համաձայնագրի կիրառելի



պահանջները, եւ

- բ) որեւէ հատուկ նախագգուշական միջոց կամ հատուկ վարչական կամ գործառական հսկողություն, որը պետք է կիրառվի փոխադրման ընթացքում՝ փոխհատուցելու համար «ԱԴՌ» համաձայնագրի կիրառելի պահանջները չկատարելը:

6.2.23.4. «B(U)» կամ «C» տեսակի փաթեթների կառուցվածքի հաստատման համար ներկայացված հայտը պետք է ներառի.

- ա) առաջարկվող ռադիոակտիվ պարունակության մանրամասն նկարագրություն՝ դրա ֆիզիկական եւ քիմիական վիճակների ու արձակած ճառագայթման հատկանիշների նկարագրությամբ:
- բ) կառուցվածքի մանրամասն նկարագրություն՝ ներառյալ սպառիչ ինժեներատեխնիկական գծագրերը, օգտագործվող նյութերը եւ արտադրման մեթոդները,
- գ) իրականացված փորձարկումների եւ դրանց արդյունքների մասին հայտարարություն, հաշվարկային մեթոդների վրա հիմնված ապացույց կամ այլ ապացույցներ, որ կառուցվածքը բավարարում է կիրառելի պահանջները,
- դ) փաթեթվածքի օգտագործման համար առաջարկվող աշխատանքային կամ սպասարկման ցուցումները,
- ե) այն դեպքում, երբ փաթեթը նախագծված է այնպես, որ ունենա առավելագույն նորմալ աշխատանքային ճնշում, որը գերազանցում է 100 կՊա մանոմետրական ճնշումը՝ պաշտպանիչ պատյանի համակարգի արտադրման համար նախատեսված նյութերի մասնագրերը, վերցվելիք նմուշների եւ կատարվելիք փորձարկումների նկարագրությունները,
- զ) այն դեպքում, երբ առաջարկվող ռադիոակտիվ պարունակությունը ճառագայթահարված վառելիք է, անվտանգության վերլուծության մեջ ներկայացվում է 6.4.11.5 (բ)-ով պահանջվող վառելիքի առանձնահատկություններին եւ առաքումից առաջ արված չափումներին վերաբերող որեւէ ենթադրության նկարագրությունն ու հիմնավորումը:
- է) որեւէ հատուկ պահեստավորման պայմանների նկարագրությունը, որոնք անհրաժեշտ են՝ ապահովելու համար փաթեթից ջերմության անվտանգ հեռացումը՝ հաշվի առնելով փոխադրման համար օգտագործվելիք տարբեր մեթոդները, փոխադրամիջոցի տեսակն ու կոնտեյները:
- ը) վերարտադրելի գծապատկեր՝ 21սմ x 30սմ-ից ոչ մեծ չափսերով, որի վրա պատկերված է փաթեթի արտաքին տեսքը, եւ

- թ) կիրառելի կառավարման համակարգի մասնագիրը, ինչպես պահանջվում է 1.7.3-ով:
- 6.2.23.5. Ի լրումն ընդհանուր տեղեկությունների, որոնք պահանջվում են «B(U)» տեսակի փաթեթների հաստատման համար 6.4.23.4-ում նշված փաթեթների հաստատման պահանջներին համապատասխան, «B(M)» տեսակի հաստատման համար ներկայացված հայտը պետք է ներառի.
- ա) 6.4.7.5, 6.4.8.4 - 6.4.8.6 եւ 6.4.8.9 - 6.4.8.15-ում նշված պահանջների ցուցակ, որոնց տվյալ փաթեթը չի համապատասխանում,
- բ) տվյալների փոխադրման ընթացքում կիրառվելիք որեւէ լրացուցիչ գործառական հսկողության մասին, որը նշված չէ սույն հավելվածում, սակայն անհրաժեշտ է՝ ապահովելու փաթեթի անվտանգությունը կամ (ա) կետում նշված թերությունները փոխհատուցելու համար,
- գ) հայտարարություն փոխադրման ձեւի որեւէ սահմանափակումների եւ որեւէ հատուկ բեռնման, փոխադրման, բեռնաթափման կամ տնօրինման ընթացակարգերի մասին, եւ
- դ) եղանակային պայմանների (ջերմաստիճան, արեւային ճառագայթում) դիապազոնի մասին հաշվետվությունը, որն ակնկալվում է փոխադրման ընթացքում եւ որը հաշվի է առնվել կառուցվածքի մեջ:
- 6.2.23.6. 0.1 կգ կամ ավելի ուրանի հեքսաֆտորիդ պարունակող փաթեթների կառուցվածքների հաստատման համար ներկայացված հայտերը պետք է ներառեն բոլոր տեղեկությունները, որոնք անհրաժեշտ են՝ բավարարելու համար իրավասու մարմնի կողմից հաստատված պահանջներն այն մասին, որ կառուցվածքը համապատասխանում է 6.4.6.1-ի կիրառելի պահանջներին, ինչպես նաեւ 1.7.3-ով պահանջվող կիրառելի կառավարման համակարգի նկարագրությանը:
- 6.2.23.7. Տրոհվող նյութ պարունակող փաթեթի հաստատման համար ներկայացված հայտը պետք է ներառի բոլոր տեղեկությունները՝ բավարարելու համար իրավասու մարմնի կողմից հաստատված պահանջներն այն մասին, որ կառուցվածքը համապատասխանում է 6.4.11.1-ի պահանջներին, ինչպես նաեւ 1.7.3-ով պահանջվող կիրառելի կառավարման համակարգի մասնագիրը:
- 6.2.23.8. Հատուկ տեսակի ռադիոակտիվ նյութի եւ տարածման ցածր հատկություն ունեցող ռադիոակտիվ նյութի փոխադրման համար կառուցվածքի հաստատման համար ներկայացված հայտը պետք է

ներառի.

- ա) ռադիոակտիվ նյութի մանրամասն նկարագրությունը կամ, եթե դա պարկուճ է, ապա՝ պարունակությունը. հատկապես պետք է նշվի ֆիզիկական եւ քիմիական վիճակը,
- բ) ցանկացած պարկուճի կառուցվածքի մասին մանրամասն նկարագրությունը,
- գ) հայտարարություն իրականացված փորձարկումների եւ դրանց արդյունքների մասին, կամ հաշվարկային մեթոդների վրա հիմնված ապացույցներ, որոնք ցույց են տալիս, որ ռադիոակտիվ նյութը կարող է համապատասխանել կատարողական ստանդարտներին, կամ այլ ապացույցներ, որ հատուկ տեսակի ռադիոակտիվ նյութը կամ տարածման ցածր հատկություն ունեցող ռադիոակտիվ նյութը համապատասխանում է «ԱԴՌ» համաձայնագրի պահանջներին,
- դ) կիրառելի կառավարման համակարգի մասնագիրը, ինչպես պահանջվում է 1.7.3-ով, եւ
- ե) այն գործողությունների նկարագրությունը, որոնք պետք է կատարվեն նախքան առաքումը եւ որոնք վերաբերում են հատուկ տեսակի ռադիոակտիվ նյութի կամ տարածման ցածր հատկություն ունեցող ռադիոակտիվ նյութի խմբաքանակին:

6.4.23.9. 2.2.7.2.3.5 (գ)-ով նախատեսված՝ 2.2.7.2.1.1 աղյուսակին համապատասխան՝ «ՏՐՈՒՎՈՂ» դասակարգումից բացառված՝ տրոհվող նյութի համար կառուցվածքի հաստատման համար դիմումը պետք է ներառի՝

- ա) նյութի մանրամասն նկարագրությունը, հատկապես պետք է նշվի եւ՝ ֆիզիկական, եւ՝ քիմիական վիճակը,
- բ) փորձարկումների անցկացման մասին հայտարարություն եւ դրանց արդյունքները կամ հաշվարկային մեթոդների վրա հիմնված ապացույցներ, որոնք ցույց են տալիս, որ նյութը համապատասխանում է 2.2.7.2.3.6-ում նշված պահանջներին,
- գ) կիրառելի կառավարման համակարգի մասնագիրը, ինչպես պահանջվում է 1.7.3-ով,
- դ) հայտարարություն այն հատուկ գործողությունների մասին, որոնք պետք է կատարվեն առաքումից առաջ:

6.4.23.10. Սարքերի կամ պատրաստվածքների ազատված բեռի ակտիվության այլընտրանքային սահմանների հաստատման համար դիմումը պետք է ներառի՝

- ա) սարքերի կամ պատրաստվածքների նշանակությունը եւ մանրամասն նկարագրությունը, դրանց՝ ըստ նշանակության օգտագործումը եւ ներառված ռադիոնուկլիդը (ռադիոնուկլիդները),
- բ) սարքերում կամ պատրաստվածքներում ռադիոնուկլիդի (ռադիոնուկլիդների) առավելագույն ակտիվությունը,
- գ) սարքերից կամ պատրաստվածքներից առաջացող առավելագույն արտաքին ճառագայթման մակարդակները,
- դ) սարքերում կամ պատրաստվածքներում պարունակվող ռադիոնուկլիդի (ռադիոնուկլիդների) քիմիական եւ ֆիզիկական ձեւերը,
- ե) սարքերի կամ պատրաստվածքների կազմի եւ կառուցվածքի մանրամասները, հատկապես ինչ վերաբերում է փոխադրման ստանդարտ, նորմալ եւ վթարային պայմաններում ռադիոնուկլիդների պաշտպանիչ պատյանին եւ պաշտպանությանը,
- զ) կիրառելի կառավարման համակարգը, այդ թվում՝ ռադիոակտիվ աղբյուրների, բաղադրիչների եւ վերջնական արտադրանքի մասով կիրառվող որակի փորձարկման եւ ստուգման ընթացակարգերը՝ ապահովելու, որպեսզի ռադիոակտիվ նյութի՝ նշված առավելագույն ակտիվությունը կամ սարքերի կամ պատրաստվածքների համար նշված ճառագայթման առավելագույն մակարդակը չգերազանցվի, եւ որ սարքերը կամ պատրաստվածքները համապատասխանեն կառուցվածքի մասնագրերին,
- է) յուրաքանչյուր բեռի դեպքում եւ տարեկան առաքվող սարքերի կամ պատրաստվածքների առավելագույն քանակը,
- ը) դոզայի գնահատումները՝ ԱԷՄԳ-ի Անվտանգության շարքերից թիվ 115, Վիեննա (1996), «Իոնացնող ճառագայթումից պաշտպանության եւ իոնացնող ճառագայթման աղբյուրների անվտանգության միջազգային հիմնական ստանդարտներով սահմանված սկզբունքներին եւ մեթոդաբանություններին համապատասխան, այդ թվում՝ անհատական դոզաները աշխատողների եւ հանրության անդամների փոխադրման համար, եւ անհրաժեշտության դեպքում, փոխադրման ստանդարտ, նորմալ եւ վթարային պայմաններից առաջացող հավաքական դոզաները, որոնք հիմնված են փոխադրման օրինակ հանդիսացող այն սցենարների վրա, որոնց համաձայն պետք է փոխադրվեն բեռները:

6.4.23.11. Իրավասու մարմնի կողմից տրված հաստատման յուրաքանչյուր

սերտիֆիկատ պետք է ստանա նույնականացման նշան: Նույնականացման նշանը պետք է ունենա հետեւյալ ընդհանրացված ձեւը.

VRI/Համարը/Տեսակի Ծածկագիրը

- ա) բացառությամբ 6.4.23.12 (բ)-ում նշված դեպքերի, VRI-ն միջազգային երթեւեկության մեջ գտնվող փոխադրամիջոցների տարբերանշան է<sup>1</sup>,
- բ) համարը պետք է տրվի իրավասու մարմնի կողմից ու պետք է եզակի եւ հատուկ լինի որոշակի կառուցվածքի կամ առաքման կամ ազատված բեռի ակտիվության այլընտրանքային սահմանների համար: Առաքման հաստատման նույնականացման նշանը պետք է հստակորեն կապված լինի կառուցվածքի հաստատման նույնականացման նշանի հետ,
- գ) ներքեւում նշված հետեւյալ տեսակի ծածկագրերը պետք է օգտագործվեն՝ հաստատման համար տրամադրված սերտիֆիկատների տեսակը նշելու նպատակով.

AF A տեսակի փաթեթի կառուցվածք՝ տրոհվող նյութի համար

B(U) B (U) տեսակի փաթեթի կառուցվածք [B (U) F, եթե տրոհվող նյութի համար է]

B(M) B (M) տեսակի փաթեթի կառուցվածք [B (M) F, եթե տրոհվող նյութի համար է]

C C տեսակի փաթեթի կառուցվածք (CF, եթե տրոհվող նյութի համար է)

IF Արդյունաբերական փաթեթի կառուցվածք, եթե տրոհվող նյութի համար է

S Հատուկ տեսակի ռադիոակտիվ նյութ

LD Տարածման ցածր հատկություն ունեցող ռադիոակտիվ նյութ

FE Տրոհվող նյութ՝ 2.2.7.2.3.6-ի պահանջներին համապատասխան

T Առաքում

X Հատուկ պայմաններ

AL Այլընտրանքային գործունեության սահմանները գործիքների կամ պատրաստվածքների ազատ առաքման համար

Ոչ տրոհվող կամ տրոհվող ուրանի հեքսաֆտորիդի փաթեթի կառուցվածքի դեպքում, երբ վերոնշյալ ծածկագրերը չեն կիրառվում, օգտագործվում են հետեւյալ տեսակների ծածկագրերը.

H(U) Միակողմանի հաստատում

---

<sup>1</sup> Միջազգային երթեւեկության մեջ գտնվող փոխադրամիջոցների եւ դրանց կցորդների՝ գրանցման պետության փարբերանշաններ, օրինակ՝ 1949 թվականի «Ճանապարհային երթեւեկության մասին» Ժնևի կոնվենցիային կամ 1968 թվականի «Ճանապարհային երթեւեկության մասին» Վիեննայի կոնվենցիային համապատասխան:

H(M) Բազմակողմանի հաստատում

- դ) փաթեթի կառուցվածքի եւ հատուկ տեսակի ռադիոակտիվ նյութի հաստատման սերտիֆիկատների դեպքում, որոնք տարբերվում են 1.6.6.2 - 1.6.6.4-ի անցումային դրույթների համաձայն տրամադրվածներից, ինչպես նաեւ տարածման ցածր հատկությամբ ռադիոակտիվ նյութի հաստատման սերտիֆիկատների դեպքում, «-96» խորհրդանշանը պետք է ավելացվի տեսակի ծածկագրին:

6.4.23.12. Այս նույնականացման նշանները պետք է օգտագործվեն հետեւյալ կերպ.

- ա) յուրաքանչյուր սերտիֆիկատ եւ փաթեթ պետք է ունենա համապատասխան նույնականացման նշան, որը ներառում է վերոնշյալ 6.4.23.11 (ա), (բ), (գ) եւ (դ)-ում նշված խորհրդանշանները, սակայն փաթեթների դեպքում՝ միայն կառուցվածքի տեսակի համապատասխան ծածկագրերը, որոնք ներառում են, եթե կիրառելի է, «-96» խորհրդանշանը, պետք է հայտնվեն երկրորդ տողից հետո, այսինքն՝ «T» եւ «X» ինդեքսները չպետք է հայտնվեն փաթեթի նույնականացման նշանի մեջ փաթեթի վրա: Այն դեպքում, երբ կառուցվածքի հաստատումն ու առաքման հաստատումը համախմբված են, համապատասխան տեսակի ծածկագրերը կրկնել չի պահանջվում: Օրինակ՝

A/132/B(M)F-96: Տրոհվող նյութի համար «B(M)» տեսակի փաթեթի կառուցվածքը, որը պահանջում է բազմակողմանի հաստատում, որի համար Ավստրիայի իրավասու մարմինն ամրագրել է 132-րդ կառուցվածքի համարը (փաթեթի կառուցվածքի համար պետք է նշված լինի եւ՝ փաթեթի վրա, եւ՝ հաստատման սերտիֆիկատի վրա),

A/132/B(M)F-96T: Փաթեթի համար սահմանված փոխադրման հաստատումը, որը կրում է վերելում նշված նույնականացման համարը (պետք է նշված լինի միայն սերտիֆիկատի վրա),

A/137/X: Ավստրիայի իրավասու մարմնի կողմից սահմանված հատուկ ռեժիմի հաստատումը, որին ամրագրվել է 145 թիվը (պետք է նշված լինի միայն սերտիֆիկատի վրա),

A/139/IF-96: Արդյունաբերական փաթեթի կառուցվածք տրոհվող նյութի համար՝ հաստատված Ավստրիայի իրավասու մարմնի կողմից, որին

ամրագրվել է փաթեթի կառուցվածքի 139 թիվը (պետք է նշվի եւ փաթեթի եւ փաթեթի կառուցվածքի համար հաստատման հավաստագրի վրա), եւ

A/145/H(U)-96: Փաթեթի կառուցվածք տրոհվող-ազատված ուրանի հեքսաֆտորիդի համար՝ հաստատված Ավստրիայի իրավասու մարմնի կողմից, որին ամրագրվել է փաթեթի կառուցվածքի 145 թիվը (պետք է նշվի եւ՝ փաթեթի, եւ՝ փաթեթի կառուցվածքի համար հաստատման հավաստագրի վրա),

- բ) այն դեպքում, երբ բազմակողմանի հաստատումն իրականացվում է 6.4.23.20-ի պահանջներին համապատասխան վավերացմամբ, միայն կառուցվածքի ծագման կամ առաքման երկրի նույնականացման նշանն է օգտագործվում: Եթե բազմակողմանի հաստատումն իրականացվում է հաջորդող երկրների կողմից սերտիֆիկատների տրամադրման եղանակով, ապա յուրաքանչյուր սերտիֆիկատ պետք է կրի համապատասխան նույնականացման նշանը, իսկ այն փաթեթը, որի կառուցվածքն այդ եղանակով է հաստատվել, պետք է կրի բոլոր համապատասխան նույնականացման նշանները: Օրինակ՝

A/132/B(M)F-96

CH/28/B(M)F-96

դա կլինի այն փաթեթի նույնականացման նշանը, որը սկզբնապես հաստատվել է Ավստրիայի կողմից եւ հետագայում առանձին սերտիֆիկատով հաստատվել է Շվեյցարիայի կողմից: Լրացուցիչ նույնականացման նշանները՝ որպես աղյուսակ, նույնպես ներկայացվում են փաթեթի վրա,

- գ) սերտիֆիկատի վերանայումը պետք է նշվի փակագծերի մեջ սերտիֆիկատի նույնականացման նշանից հետո: Օրինակ՝ A/132/B(M)F-96 (Rev.0) նշանակում է ավստրիական փաթեթի կառուցվածքի հաստատման սերտիֆիկատի 2-րդ վերանայում, կամ A/132/B(M)F-96 (Rev.0)՝ նշանակում է ավստրիական փաթեթի կառուցվածքի հաստատման սերտիֆիկատի սկզբնական տրամադրումը: Սկզբնական տրամադրումների դեպքում, փակագծերի մեջ մուտքագրումը կամընտիր է, եւ «Rev.0»-ի փոխարեն կարող են օգտագործվել այլ բառեր, ինչպես, օրինակ՝ «սկզբնական տրամադրում»: Սերտիֆիկատի վերանայման թվերը

կարող են թողարկվել միայն սկզբնական սերտիֆիկատը տրամադրած երկրի կողմից:

- դ) նույնականացման նշանի վերջում կարող են ավելացվել լրացուցիչ խորհրդանշաններ (որոնք կարող են պահանջվել ազգային կանոնակարգերով), օրինակ՝ A/132/B(M)F-96(SP503),
- ե) անհրաժեշտություն չկա փոփոխելու փաթեթվածքի վրայի նույնականացման նշանը յուրաքանչյուր անգամ, երբ կառուցվածքի սերտիֆիկատի վերանայում է կատարվում: Այդպիսի վերամակնշումը կարող է պահանջվել միայն այն դեպքերում, երբ փաթեթի կառուցվածքի սերտիֆիկատի վերանայումը երկրորդ կոտորակային նշանից հետո ներառում է փաթեթի կառուցվածքի տեսակի տառային ծածկագրերի փոփոխություն:

6.4.23.13. Իրավասու մարմնի կողմից տրամադրած՝ հատուկ տեսակի ռադիոակտիվ նյութի կամ տարածման ցածր հատկություն ունեցող ռադիոակտիվ նյութի յուրաքանչյուր հաստատման սերտիֆիկատ պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները.

- ա) սերտիֆիկատի տեսակը,
- բ) իրավասու մարմնի նույնականացման նշանը,
- գ) տրամադրման ամսաթիվն ու գործողության ժամկետի ավարտը,
- դ) ազգային եւ միջազգային կիրառելի կանոնակարգերի ցուցակը՝ ներառյալ «Ռադիոակտիվ նյութերի անվտանգ փոխադրման մասին ԱԷՄԳ-ի կանոնակարգերի» հրատարակումը, որը հիմք է ծառայել հատուկ տեսակի ռադիոակտիվ նյութը կամ տարածման ցածր հատկություն ունեցող ռադիոակտիվ նյութը հաստատելու համար,
- ե) հատուկ տեսակի ռադիոակտիվ նյութի կամ տարածման ցածր հատկություն ունեցող ռադիոակտիվ նյութի նույնականացումը,
- զ) հատուկ տեսակի ռադիոակտիվ նյութի կամ տարածման ցածր հատկություն ունեցող ռադիոակտիվ նյութի նկարագրությունը,
- է) հատուկ տեսակի ռադիոակտիվ նյութի կամ տարածման ցածր հատկություն ունեցող ռադիոակտիվ նյութի կառուցվածքի մասնագրերը,
- ը) ռադիոակտիվ պարունակության մասնագիրը, որը ներառում է ընդգրկված միջոցառումները, եւ որը կարող է ներառել ֆիզիկական ու քիմիական ձեւը,
- թ) որակի ապահովման կիրառվող ծրագրի մասնագիրը, ինչպես



պահանջվում է 1.7.3-ով:

- ժ) հղում դիմողի կողմից տրամադրած տեղեկությանը, որն առնչվում է նախքան առաքումն իրականացվելիք հատուկ գործողություններին,
- ժա) հղում դիմողի ինքնությանը, եթե պահանջվում է իրավասու մարմնի կողմից,
- ժբ) սերտիֆիկատը հաստատող պաշտոնյայի ստորագրությունն ու նույնականացումը:

6.4.23.14. Իրավասու մարմնի կողմից տրամադրած՝ «ՏՐՈՀՎՈՂ» դասակարգումից բացառված նյութի համար յուրաքանչյուր հաստատման սերտիֆիկատ պետք է պարունակի հետևյալ տեղեկությունը.

- ա) սերտիֆիկատի տեսակը,
- բ) իրավասու մարմնի նույնականացման նշանը,
- գ) տրամադրման ամսաթիվն ու գործողության ժամկետի ավարտը,
- դ) ազգային եւ միջազգային կիրառելի կանոնակարգերի ցուցակ՝ ներառյալ «Ռադիոակտիվ նյութերի անվտանգ փոխադրման մասին ԱԷՄԳ-ի կանոնակարգերի վերաբերյալ տեղեկատվական նյութերի» հրատարակումը, որը հիմք է ծառայել բացառման համար,
- ե) բացառված նյութի նկարագրություն,
- զ) բացառված նյութի համար սահմանափակման առանձնահատկություններ,
- է) կիրառելի կառավարման համակարգի մասնագիրը, ինչպես պահանջվում է 1.7.3-ով,
- ը) Հղում դիմողի կողմից տրամադրած տեղեկությանը, որն առնչվում է նախքան առաքումը իրականացվելիք հատուկ գործողություններին,
- թ) Հղում դիմողի ինքնությանը, եթե պահանջվում է իրավասու մարմնի կողմից,
- ժ) Հաստատող պաշտոնյայի ստորագրությունն ու նույնականացումը,
- ժա) Հղում այն փաստաթղթերին, որոնք ցույց են տալիս 2.2.7.2.3.6.-ի հետ համապատասխանությունը:

6.4.23.15. Իրավասու մարմնի կողմից՝ հատուկ ռեժիմի համար տրամադրված յուրաքանչյուր հաստատման հավաստագիր պետք է պարունակի հետևյալ տեղեկությունը.

- ա) Հավաստագրի տեսակը,
- բ) Իրավասու մարմնի նույնականացման նշանը,
- գ) Տրամադրման ամսաթիվն ու գործողության ժամկետի ավարտը,
- դ) Փոխադրման (փոխադրումների) եղանակները,
- ե) Փոխադրման եղանակների ցանկացած սահմանափակում, տրանսպորտային միջոցի տեսակը, կոնտեյները եւ այլ անհրաժեշտ երթուղային ցուցումներ,
- զ) Ազգային եւ միջազգային կիրառելի կանոնակարգերի ցուցակ՝ ներառյալ «Ռադիոակտիվ նյութերի անվտանգ փոխադրման մասին ԱԷՄԳ-ի կանոնակարգերի վերաբերյալ տեղեկատվական նյութերի» հրատարակումը, որը հիմք է ծառայել հատուկ արտոնության հաստատման համար,

է) Հետևյալ հայտարարությունը՝

«Այս հավաստագիրը չի ազատում բեռնառաքողին որեւէ երկրի կառավարության որեւէ պահանջից, որի տարածք կամ որի տարածքով փաթեթը պետք է փոխադրվի»,

- ը) հղումներ այլընտրանքային ռադիոակտիվ պարունակության համար տրամադրված սերտիֆիկատներին, այլ իրավասու մարմնի վավերացմանը կամ լրացուցիչ այլ տեխնիկական տվյալներ կամ այնպիսի տեղեկություն, որը կպահանջվի իրավասու մարմնի կողմից,
- թ) փաթեթվածքի նկարագրությունը՝ հղում կատարելով գծագրերին կամ կառուցվածքի մասնագրին: Եթե իրավասու մարմինն անհրաժեշտ համարի, ապա պետք է տրամադրվի նաեւ վերարտադրելի գծապատկեր՝ 21սմ x 30սմ-ից ոչ մեծ չափսերով, որի վրա պատկերված է փաթեթի արտաքին տեսքը՝ կից ունենալով փաթեթվածքի համառոտ նկարագրությունը՝ ներառյալ արտադրման նյութերը, զուտ քաշը, ընդհանուր արտաքին չափսերն ու տեսքը,
- ժ) թույլատրված ռադիոակտիվ պարունակության մասնագիրը՝ ներառյալ ռադիոակտիվ պարունակության որեւէ սահմանափակում, որը կարող է ակնհայտ լինել փաթեթվածքի բնույթից: Այն պետք է պարունակի տեղեկություն ֆիզիկական եւ

քիմիական ձեւերի մասին, ընդգրկված ակտիվությունները (համապատասխան դեպքերում ներառելով տարբեր իզոտոպների ակտիվությունը), քանակը գրամներով (համապատասխան դեպքերում տրոհվող նյութերի եւ տրոհվող նուկլիդների մասով), եւ արդյոք տվյալ նյութը հատուկ տեսակի ռադիոակտիվ նյութ, տարածման ցածր հատկություն ունեցող ռադիոակտիվ նյութ կամ 2.2.7.2.3.5 (գ)-ով բացառված տրոհվող նյութ է, եթե դա կիրառելի է,

ժա) ի լրումն դրա՝ տրոհվող նյութեր պարունակող փաթեթները պետք է ունենան՝

- i) թույլատրված ռադիոակտիվ պարունակության մանրամասն նկարագրությունը,
- ii) կրիտիկականության տեսակետից անվտանգության ինդեքսի արժեքը,
- iii) հղում պարունակության կրիտիկականության տեսակետից անվտանգությունը հաստատող փաստաթղթերին,
- iv) ցանկացած առանձնահատկություն, որի հիմքի վրա կրիտիկականության գնահատման ընթացքում որոշակի մասերում ենթադրվել է ջրի բացակայություն,
- v) նեյտրոնների բազմացման գործընթացի փոփոխման հետ կապված ցանկացած թույլատրելի շեղման հնարավորություն (6.4.11.5 (բ)-ի պահանջների հիման վրա), որը ենթադրվում է կրիտիկականության գնահատման ընթացքում՝ որպես փաստացի ճառագայթման հետեւանք, եւ
- vi) արտաքին պայմանների ջերմաստիճանի տիրույթ, որի համար նշանակվել են հատուկ պայմաններ,

ժբ) որեւէ լրացուցիչ գործառական վերահսկողության մանրամասն նկարագրություն, որն անհրաժեշտ է բեռի պատրաստման, բեռնման, փոխադրման, բեռնաթափման եւ տնօրինման համար, այդ թվում՝ ջերմության անվտանգ հեռացման համար պահանջվող հատուկ պահպանման ցանկացած պայման,

ժգ) իրավասու մարմնի կողմից պահանջի դեպքում՝ հատուկ պայմանների նշանակման պատճառները,

ժդ) փոխհատուցման միջոցների նկարագրությունը, որոնք պետք է կիրառվեն առաքումը հատուկ պայմաններում իրականացվելու պատճառով,

- ժե) հղում դիմողի կողմից տրամադրած տեղեկությանը, որն առնչվում է նախքան առաքումն իրականացվելիք հատուկ գործողություններին կամ փաթեթվածքի օգտագործմանը,
- ժե) արտաքին պայմանների մասին հայտարարություն՝ ընդունված կառուցվածքի նպատակների համար, եթե դրանք չեն համապատասխանում 6.4.8.5, 6.4.8.6 եւ 6.4.8.15-ի պայմաններին (կիրառելիության դեպքում),
- ժէ) իրավասու մարմնի կողմից պահանջվող որեւէ վթարային միջոցի նկարագրությունը,
- ժը) կիրառելի կառավարման համակարգի մասնագիրը, ինչպես պահանջվում է 1.7.3-ով,
- ժթ) հղում դիմողի եւ փոխադրողի ինքնությանը, եթե պահանջվում է իրավասու մարմնի կողմից,
- ի) սերտիֆիկատը հաստատող պաշտոնյայի ստորագրությունն ու նույնականացումը:

6.4.23.16. Իրավասու մարմնի կողմից տրամադրած յուրաքանչյուր հաստատման սերտիֆիկատ պետք է պարունակի հետեւյալ տեղեկությունները.

- ա) սերտիֆիկատի տեսակը,
- բ) իրավասու մարմնի նույնականացման նշանը (նշանները),
- գ) տրամադրման ամսաթիվն ու գործողության ժամկետի ավարտը,
- դ) ազգային եւ միջազգային կիրառելի կանոնակարգերի ցուցակ՝ ներառյալ «Ռադիոակտիվ նյութերի անվտանգ փոխադրման մասին ԱԷՄԳ-ի կանոնակարգերի վերաբերյալ տեղեկատվական նյութերի» հրատարակումը, որը հիմք է ծառայել առաքումը հաստատելու համար,
- ե) փոխադրման եղանակների ցանկացած սահմանափակում, փոխադրամիջոցի տեսակը, կոնտեյները եւ որեւէ այլ անհրաժեշտ երթուղային ցուցում,
- զ) հետեւյալ հայտարարությունը՝  
«Այս սերտիֆիկատը չի ազատում բեռնառաքողին որեւէ երկրի կառավարության որեւէ պահանջներից, որի տարածք կամ որի տարածքով փաթեթը պետք է փոխադրվի»,
- է) ցանկացած լրացուցիչ գործառական վերահսկողության մանրամասն նկարագրություն, որն անհրաժեշտ է բեռի պատրաստման, բեռնման, փոխադրման, բեռնաթափման եւ տնօրինման համար՝ ներառյալ ջերմության անվտանգ հեռացման

կամ կրիտիկականության տեսակետից անվտանգության համար պահանջվող ցանկացած պայման,

- ը) հղում դիմողի կողմից տրամադրած տեղեկությանը, որն առնչվում է նախքան առաքումն իրականացվելիք հատուկ գործողություններին,
- թ) հղում կառուցվածքի հաստատման կիրառելի սերտիֆիկատին (սերտիֆիկատներին),
- ժ) թույլատրված ռադիոակտիվ պարունակության մասնագիրը, այդ թվում՝ ռադիոակտիվ պարունակության որեւէ սահմանափակում, որը կարող է ակնհայտ չլինել փաթեթվածքի բնույթից: Այն պետք է տեղեկություն պարունակի ֆիզիկական եւ քիմիական ձեւերի մասին, ընդգրկված ակտիվությունները (համապատասխան դեպքերում ներառելով տարբեր իզոտոպների ակտիվությունը), քանակը գրամներով (համապատասխան դեպքերում տրոհվող նյութերի եւ տրոհվող նուկլիդների մասով), եւ արդյոք տվյալ նյութը հատուկ տեսակի ռադիոակտիվ նյութ, տարածման ցածր հատկություն ունեցող ռադիոակտիվ նյութ կամ 2.2.7.2.3.5 (գ)-ով բացառված տրոհվող նյութ է, եթե դա կիրառելի է,
- ժա) իրավասու մարմնի կողմից պահանջվող ցանկացած վթարային միջոցառման նկարագրություն,
- ժբ) որակի ապահովման կիրառվող ծրագրի մասնագիրը, ինչպես պահանջվում է 1.7.3-ով,
- ժգ) հղում դիմողի ինքնությանը, եթե պահանջվում է իրավասու մարմնի կողմից,
- ժդ) սերտիֆիկատը հաստատող պաշտոնյայի ստորագրությունն ու նույնականացումը:

6.4.23.17. Իրավասու մարմնի կողմից տրամադրված յուրաքանչյուր հաստատման սերտիֆիկատ պետք է պարունակի հետեւյալ տեղեկությունները.

- ա) սերտիֆիկատի տեսակը,
- բ) իրավասու մարմնի նույնականացման նշանը,
- գ) տրամադրման ամսաթիվն ու գործողության ժամկետի ավարտը,
- դ) փոխադրման եղանակների որեւէ սահմանափակում, եթե կիրառելի է.
- ե) ազգային եւ միջազգային կիրառելի կանոնակարգերի ցուցակ՝ ներառյալ «Ռադիոակտիվ նյութերի անվտանգ փոխադրման մասին ԱԷՄԳ-ի կանոնակարգերի վերաբերյալ տեղեկատվական նյութերի» հրատարակումը, որը հիմք է ծառայել կառուցվածքի

հաստատման համար.

- զ) հետեւյալ հայտարարությունը՝  
«Այս սերտիֆիկատը չի ազատում բեռնառաքողին որեւէ երկրի կառավարության որեւէ պահանջից, որի տարածք կամ որի տարածքով փաթեթը պետք է փոխադրվի»,
- է) հղումներ այլընտրանքային ռադիոակտիվ պարունակությունների համար տրամադրված սերտիֆիկատներին, այլ իրավասու մարմնի վավերացմանը կամ լրացուցիչ այլ տեխնիկական տվյալներ կամ տեղեկություն, որը կպահանջվի իրավասու մարմնի կողմից,
- ը) անհրաժեշտության դեպքում՝ առաքումը թույլատրող հայտարարություն, երբ առաքման հաստատումը պահանջվում է 5.1.5.1.2-ի դրույթներով,
- թ) փաթեթվածքի նույնականացումը,
- ժ) փաթեթվածքի նկարագրությունը՝ գծագրերին կամ կառուցվածքի մասնագրին կատարված հղումով: Եթե իրավասու մարմինն անհրաժեշտ համարի, ապա պետք է տրամադրվի նաեւ վերարտադրելի գծապատկեր, 21սմ x 30սմ-ից ոչ մեծ չափսերով, որի վրա պատկերված է փաթեթի արտաքին տեսքը՝ կից ունենալով փաթեթվածքի կարճ նկարագրությունը, ներառյալ արտադրման նյութերը, զուտ քաշը, ընդհանուր արտաքին չափսերն ու տեսքը,
- ժա) կառուցվածքի մասնագիրը՝ գծապատկերներին կատարված հղումով,
- ժբ) թույլատրված ռադիոակտիվ պարունակության մասնագիրը՝ ներառյալ ռադիոակտիվ պարունակության որեւէ սահմանափակում, որը կարող է ակնհայտ լինել փաթեթվածքի բնույթից: Այն պետք է տեղեկություն պարունակի ֆիզիկական եւ քիմիական ձեւերի մասին, ընդգրկված ակտիվությունները (համապատասխան դեպքերում ներառելով տարբեր իզոտոպների ակտիվությունը), քանակը գրամներով (համապատասխան դեպքերում, յուրաքանչյուր տրոհվող նյութերի եւ տրոհվող նուկլիդների ընդհանուր զանգվածի կամ յուրաքանչյուր տրոհվող նուկլիդի զանգվածի մասով) եւ արդյո՞ք տվյալ նյութը հատուկ տեսակի ռադիոակտիվ նյութ, տարածման ցածր հատկություն ունեցող ռադիոակտիվ նյութ կամ 2.2.7.2.3.5 (զ)-ով բացառված տրոհվող նյութ է, եթե դա կիրառելի է,
- ժգ) պաշտպանիչ պատյանի համակարգի նկարագրությունը,
- ժդ) Տրոհվող նյութ պարունակող այն փաթեթի կառուցվածքի համար,

որը պահանջում է փաթեթի կառուցվածքի բազմակողմանի հաստատում՝ 6.4.22.4-ին համապատասխան՝

- i) թույլատրված ռադիոակտիվ պարունակության մանրամասն նկարագրությունը,
- ii) տեղայնացման համակարգի նկարագրությունը,
- iii) կրիտիկականության տեսակետից անվտանգության ինդեքսի արժեքը,
- iv) հղում պարունակության կրիտիկականության տեսակետից անվտանգությունը հաստատող փաստաթղթերին,
- v) ցանկացած առանձնահատկություն, որի հիմքի վրա կրիտիկականության գնահատման ընթացքում որոշակի մասերում ենթադրվել է ջրի բացակայություն,
- vi) նեյտրոնների բազմացման գործընթացի փոփոխման հետ կապված ցանկացած շեղման հնարավորություն՝ (6.4.11.5 (բ)-ի պահանջների հիման վրա), որը ենթադրվում է կրիտիկականության գնահատման ընթացքում՝ որպես փաստացի ճառագայթման հետեւանք, եւ
- vii) արտաքին միջավայրի ջերմաստիճանի ընդգրկույթ, որի համար հաստատվել է փաթեթի կառուցվածքը,

ժե) «B(M)» տեսակի փաթեթների դեպքում՝ հայտարարություն, որում նշվում են 6.4.7.5, 6.4.8.4, 6.4.8.5, 6.4.8.6 եւ 6.4.8.9 - 6.4.8.15-ի այն պահանջները, որոնց փաթեթը չի համապատասխանում եւ որեւէ մանրամասն տեղեկություն, որը կարող է օգտակար լինել այլ իրավասու մարմինների համար,

ժե) ավելի քան 0.1 կգ ուրանի հեքսաֆտորիդ պարունակող փաթեթների դեպքում, 6.4.6.4-ում նշված կիրառելի ցուցումները, եթե այդպիսիք կան, կամ այլ մանրամասնող տեղեկություն, որը կարող է օգտակար լինել այլ իրավասու մարմինների համար,

ժե) ցանկացած լրացուցիչ գործառական վերահսկողության մանրամասն նկարագրություն, որն անհրաժեշտ է բեռի պատրաստման, բեռնման, փոխադրման, բեռնաթափման եւ տնօրինման համար, այդ թվում՝ ջերմության անվտանգ հեռացման համար պահանջվող հատուկ պահպանման ցանկացած պայման,

ժը) հղում դիմողի կողմից տրամադրված տեղեկությանը, որն առնչվում է նախքան առաքումն իրականացվելիք հատուկ գործողություններին կամ փաթեթվածքի օգտագործմանը,

ժթ) արտաքին միջավայրի պայմանների մասին հայտարարություն՝

ընդունված կառուցվածքի նպատակների համար, եթե դրանք չեն համապատասխանում 6.4.8.5, 6.4.8.6 եւ 6.4.8.15-ի պայմաններին (կիրառելիության դեպքում),

ի) կիրառելի կառավարման համակարգի մասնագիրը, ինչպես պահանջվում է 1.7.3-ով,

իա) իրավասու մարմնի կողմից պահանջվող ցանկացած վթարային միջոցառման նկարագրություն,

իբ) հղում դիմողի ինքնությանը, եթե պահանջվում է իրավասու մարմնի կողմից,

իգ) սերտիֆիկատը հաստատող պաշտոնյայի ստորագրությունն ու նույնականացումը:

6.4.23.18. Սարքերի կամ պատրաստվածքների ազատված բեռի ակտիվության այլընտրանքային սահմանների համար իրավասու մարմնի կողմից տրամադրված յուրաքանչյուր հավաստագիր՝ 5.1.5.2.1 (դ)-ի համաձայն պետք է պարունակի հետեւյալ տեղեկությունները՝

ա) Հավաստագրի տեսակը,

բ) Իրավասու մարմնի նույնականացման նշանը,

գ) Տրամադրման ամսաթիվն ու գործողության ժամկետի ավարտը,

դ) Ազգային եւ միջազգային կիրառելի կանոնակարգերի ցուցակ՝ ներառյալ «Ռադիոակտիվ նյութերի անվտանգ փոխադրման մասին ԱԷՄԳ-ի կանոնակարգերի վերաբերյալ տեղեկատվական նյութերի» հրատարակումը, որը հիմք է ծառայել բացառման հաստատման համար,

ե) Սարքերի կամ պատրաստվածքների նույնականացումը,

զ) Սարքերի կամ պատրաստվածքների նկարագրությունը,

է) Սարքերի կամ պատրաստվածքների կառուցվածքի մասնագրերը,

ը) ռադիոնուկլիդի (ռադիոնուկլիդների) մասնագիրը, սարքի (սարքերի) կամ պատրաստվածքի (պատրաստվածքների) բեռի (բեռների) ակտիվության՝ հաստատված այլընտրանքային սահմանները,

թ) Փաստաթղթերին կատարված հղումները, որոնք ցույց են տալիս 2.2.7.2.2.2 (բ)-ին համապատասխանությունը,

ժ) Հղում դիմողի ինքնությանը, եթե պահանջվում է իրավասու մարմնի կողմից,



Ժա) Հաստատող պաշտոնյայի ստորագրությունն ու նույնականացումը:

- 6.4.23.19. Իրավասու մարմինը պետք է տեղեկացվի յուրաքանչյուր փաթեթվածքի սերիական համարի մասին, որն արտադրվել է 1.6.6.2.1, 1.6.6.2.2, 6.4.22.2, 6.4.22.3 եւ 6.4.22.4-ի պահանջներով իրենց կողմից հաստատված կառուցվածքին համապատասխան:
- 6.4.23.20. Բազմակողմանի հաստատումը կարող է կատարվել կառուցվածքի ծագման կամ առաքման երկրի կողմից տրված սկզբնական սերտիֆիկատի վավերացմամբ: Այդպիսի վավերացումը կարող է կատարվել սկզբնական սերտիֆիկատի հաստատման կամ այն երկրի իրավասու մարմնի կողմից առանձին հաստատման, հավելվածի, լրացման եւ այլնի տրման եղանակով, որի տարածք կամ որի տարածքով է կատարվում փոխադրումը:

## ԳԼՈՒԽ 6.5

### ՍՈՐՈՒՆ ԲԵՌՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋԻՆ ԲԵՌՆՎԱԾՈՒԹՅԱՆ ԿՈՆՏԵՅՆԵՐՆԵՐԻ (ՍՄԿ-ներ) ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՈՒ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

#### 6.5.1. Ընդհանուր պահանջները

##### 6.5.1.1. Գործողության ոլորտը

6.5.1.1.1. Սույն գլխի պահանջները վերաբերում են սորուն բեռների համար նախատեսված միջին բեռնվածության կոնտեյներներին (ՍՄԿ-ներ), որոնց օգտագործումը որոշ վտանգավոր բեռների փոխադրման համար հստակորեն թույլատրված է՝ համաձայն 3.2 գլխի Ա աղյուսակի 8-րդ սյունակում նշված փաթեթավորման ցուցումների: 6.7 կամ 6.8 գլխի պահանջները համապատասխանաբար բավարարող շարժական ցիստեռնները կամ ցիստեռն-կոնտեյներները չեն համարվում սորուն բեռների համար նախատեսված միջին բեռնվածության կոնտեյներներ (ՍՄԿ-ներ): Սորուն բեռների համար նախատեսված միջին բեռնվածության կոնտեյներները (ՍՄԿ-ները), որոնք բավարարում են սույն գլխի պահանջները, չեն համարվում կոնտեյներներ՝ «ԱԴՌ» համաձայնագրի նպատակներով: ՍՄԿ տառերը տեքստում օգտագործվում են միայն սորուն բեռների համար նախատեսված միջին բեռնվածության կոնտեյներները նշելու համար:

6.5.1.1.2. Բացառիկ դեպքերում, այն ՍՄԿ-ները եւ նրանց օժանդակ սարքավորումները, որոնք խստորեն չեն համապատասխանում սույն փաստաթղթի պահանջներին կարող են ներկայացվել իրավասու մարմնի հաստատմանը: Բացի դրանից՝ գիտության եւ տեխնոլոգիաների ոլորտում առաջընթացը հաշվի առնելով, իրավասու մարմնի կողմից կարող է դիտարկվել այլընտրանքային միջոցների կիրառումը, որոնք ապահովում են օգտագործման մեջ առնվազն համարժեք անվտանգություն՝ տեղափոխվող նյութերի հատկանիշների համատեղելիության եւ հարվածին, բեռնմանը կամ կրակին համարժեք կամ գերազանց դիմադրության առումով:

6.5.1.1.3. ՍՄԿ-ների պատրաստումը, սարքավորումները, փորձարկումը, մակնշումը եւ շահագործման պայմանները պետք է ենթակա լինեն ՍՄԿ-ները հաստատող երկրի իրավասու մարմնի հաստատմանը:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** ՍՄԿ-ները շահագործելուց հետո այլ երկրներում ստուգումներ եւ փորձարկումներ կատարող կողմերը պետք է ընդունվեն այն երկրի իրավասու մարմնի կողմից, որում ՍՄԿ-ն հաստատվել է, սակայն ստուգումները եւ փորձարկումները պետք է անցկացվեն ՍՄԿ-ի հաստատման մասով նշված կանոնների համաձայն:

6.5.1.1.4. ՍՄԿ-ներ արտադրողները եւ դրանց հետագա վաճառքով զբաղվող ընկերությունները պետք է տեղեկություններ տրամադրեն այն ընթացակարգերի մասին, որոնց հարկավոր է հետեւել, ինչպես նաեւ պետք է նկարագրեն նաեւ փականների տեսակները եւ չափերը (ներառյալ պահանջվող խցվածքները) եւ բոլոր մյուս բաղադրիչները, որոնք անհրաժեշտ են՝ ապահովելու համար, որ փոխադրման համար ներկայացված ՍՄԿ-ները կարողանան անցնել սույն գլխում նշված՝ կիրառելի շահագործման փորձարկումները:

6.5.1.2. (Նախատեսվում է վերապահում )

6.5.1.3. (Նախատեսվում է վերապահում )

**6.5.1.4. ՍՄԿ-ների ծածկագրման համակարգ**

6.5.1.4.1. Ծածկագիրը պետք է բաղկացած լինի (ա) ենթակետում նշված երկու արաբական թվանշաններից, որին պետք է հետեւի (բ) ենթակետում նշված մեծատառը, որից հետո պետք է դրվի ՍՄԿ-ի կարգը նշող արաբական թվանշանը, եթե այն պետք է նշվի առանձին բաժնով:

ա)	Տեսակը	Լցված կամ դատարկված պինդ նյութերի համար		Հեղուկների համար
		ինքնահոսով	ավելի քան 10 կՊա (0.1 բար) ճնշման տակ	
	Կոշտ	11	21	31
	Փափուկ	13	-	-

բ) Նյութեր

- A. Պողպատ (մակերեւույթի մշակման բոլոր տեսակները)
- B. Ալյումին
- C. Բնական փայտ
- D. Նրբատախտակ
- F. Վերամշակված փայտ
- G. Փայտաթելքային սալ
- H. Պլաստիկ նյութ
- L. Տեքստիլ
- M. Բազմաշերտ թուղթ
- N. Մետաղ (պողպատից կամ ալյումինից տարբեր)

6.5.1.4.2. Բարդ ՍՄԿ-ների դեպքում օգտագործվում են երկու լատինական մեծատառեր, որոնք հաջորդաբար դրվում են ծածկագրի երկրորդ դիրքում: Առաջին տառը նշում է ՍՄԿ-ի ներքին տարայի

պատրաստման նյութը, իսկ երկրորդը՝ ՍՄԿ-ի արտաքին փաթեթվածքի պատրաստման նյութը:

6.5.1.4.3. Դասվում են ՍՄԿ-ների հետեւյալ տեսակներն ու ծածկագրերը.

Նյութ	Կատեգորիա	Ծածկ ազիր	Ենթաբաժին
<b>Մետաղ</b>			
«A.» պողպատ	ինքնահոսով լցված կամ դատարկված պինդ նյութերի համար	11A	6.5.5.1
	ճնշման տակ լցված կամ դատարկված պինդ նյութերի համար	21A	
	հեղուկների համար	31A	
«B.» Ալյումին	ինքնահոսով լցված կամ դատարկված պինդ նյութերի համար	11B	
	ճնշման տակ լցված կամ դատարկված պինդ նյութերի համար	21B	
	հեղուկների համար	31B	
«N.» Պողպատից կամ ալյումինից տարբեր մետաղներ	ինքնահոսով լցված կամ դատարկված պինդ նյութերի համար	11N	
	ճնշման տակ լցված կամ դատարկված պինդ նյութերի համար	21N	
	հեղուկների համար	31N	
<b>Փափուկ</b>			
«H» Պլաստմասսա	հյուսածո պլաստմասսայից պատրաստված՝ առանց պատվածքի կամ ներդիրի	13H1	6.5.5.2
	հյուսածո պլաստմասսայից պատրաստված՝ պատվածքով	13H2	
	հյուսածո պլաստմասսայից պատրաստված՝ ներդիրով	13H3	
	հյուսածո պլաստմասսայից պատրաստված՝ պատվածքով եւ ներդիրով	13H4	
	պլաստմասսայե ժապավեն	13H5	
«L.» Տեքստիլ	առանց պատվածքի կամ ներդիրի	13L1	
	պատվածքով	13L2	
	ներդիրով	13L3	
	պատվածքով եւ ներդիրով	13L4	
«M.» Թուղթ	բազմաշերտ	13M1	
	բազմաշերտ, ջրադիմացկուն	13M2	
«H.» Կոշտ պլաստմասսա	ինքնահոսով լցված կամ դատարկված պինդ նյութերի համար՝ կառուցվածքային սարքավորմամբ	11H1	6.5.5.3
	ինքնահոսով լցված կամ դատարկված պինդ նյութերի համար՝ առանց կառուցվածքային սարքավորումների	11H2	
	ճնշման տակ լցված կամ դատարկված պինդ նյութերի համար՝ կառուցվածքային սարքավորմամբ	21H1	

Նյութ	Կատեգորիա	Ծածկ ազիր	Ենթաբաժին
	ճնշման տակ լցված կամ դատարկված պինդ նյութերի համար՝ առանց կառուցվածքային սարքավորումների	21H2	
	հեղուկների համար՝ կառուցվածքային սարքավորմամբ	31H1	
	հեղուկների համար՝ առանց կառուցվածքային սարքավորումների	31H2	
«ՀZ» Բարդ՝ պլաստմասայե ներքին տարայով <sup>ա</sup>	ճնշման տակ լցված կամ դատարկված պինդ նյութերի համար՝ կոշտ պլաստմասայից ներքին տարայով	11HZ1	6.5.5.4
	ինքնահոսով լցված կամ դատարկված պինդ նյութերի համար՝ փափուկ պլաստմասայից ներքին տարայով	11HZ2	
	ինքնահոսով լցված կամ դատարկված պինդ նյութերի համար՝ կոշտ պլաստմասայից ներքին տարայով		
	ճնշման տակ լցված կամ դատարկված պինդ նյութերի համար՝ փափուկ պլաստմասայից ներքին տարայով	21HZ2	
	հեղուկների համար՝ կոշտ պլաստմասայից ներքին տարայով	31HZ1	
	հեղուկների համար՝ փափուկ պլաստմասայից ներքին տարաներով	31HZ2	
«Գ.» Փայտաթելքային սալ	ինքնահոսով լցված կամ դատարկված պինդ նյութերի համար	11G	6.5.5.5
<b>Փայտե</b>			
«C» Բնական փայտ	ինքնահոսով լցված կամ դատարկված պինդ նյութերի համար՝ ներդիրով	11C	6.5.5.6
«D» Նրբատախտակ	ինքնահոսով լցված կամ դատարկված պինդ նյութերի համար՝ ներդիրով	11D	
«F» Վերամշակված փայտ	ինքնահոսով լցված կամ դատարկված պինդ նյութերի համար՝ ներդիրով	11F	

<sup>ա</sup> Այս ծածկագրի օգտագործման ժամանակ պետք է փոխարինել Z տառը մեծատառով՝ համաձայն 6.5.1.4.1 (բ)-ի՝ նշելու համար արտաքին պատյանի համար օգտագործված նյութի տեսակը:

6.5.1.4.4. «W» տառը կարող է դրվել ՍՄԿ ծածկագրից հետո: Վերջինս նշանակում է, որ չնայած ՍՄԿ-ն պատկանում է ծածկագրով նշված տեսակին, սակայն պատրաստված է համապատասխան մասնագրից, որը տարբեր է 6.5.5-ում նշված մասնագրից եւ համարվում է համարժեք՝ 6.5.1.1.2-ի պահանջներին համապատասխան:

## 6.5.2. Մակնշումը

### 6.5.2.1. Առաջնային մակնշումը

6.5.2.1.1. Յուրաքանչյուր ՍՄԿ, որն արտադրվել է նախատեսվել է «ԱԴԴ» համաձայնագրին համապատասխան օգտագործման համար, պետք է ունենա մակնշումներ, որոնք պետք է լինեն չջնջվող, ընթեռնելի եւ տեղադրվեն այնպես, որ լինեն լավ տեսանելի: Տառերը, թվերը եւ խորհրդանշանները պետք է ունենան առնվազն 12 մմ բարձրություն, իսկ մակնշումը պետք է ցուցադրի՝

ա) Միավորված ազգերի կազմակերպության փաթեթվածքների խորհրդանշանը



Այս խորհրդանշանը չպետք է օգտագործվի որեւէ այլ նպատակով, բացի նրանից, որ հաստատի, որ փաթեթվածքը, սորուն բեռների համար նախատեսված ճկուն կոնտեյները, շարժական ցիստեռնը կամ ԳԲՏԿ-ն համապատասխանում են 6.1, 6.2, 6.3, 6.5, 6.6, 6.7 կամ 6.11 գլուխների համապատասխան պահանջներին: Մետաղյա ՍՄԿ-ների դեպքում, որոնց մակնշումը կատարված է դրոշմման կամ փորագրման եղանակով, խորհրդանշանի փոխարեն կարող են կիրառվել «UN» մեծատառերը,

բ) համաձայն 6.5.1.4-ի՝ ՍՄԿ-ի տեսակը մատնանշող ծածկագիրը,

գ) հաստատված կառուցվածքի տեսակով փաթեթավորման խումբը (խմբերը) նշող մեծատառ՝

i) «X»-ը՝ փաթեթավորման I, II եւ III խմբերի դեպքում (ՍՄԿ-ներ՝ միայն պինդ նյութերի համար),

ii) «Y»-ը՝ փաթեթավորման II եւ III խմբերի դեպքում,

iii) «Z»-ը՝ միայն փաթեթավորման III խմբի դեպքում,

դ) արտադրության ամիսը եւ տարին (վերջին երկու թվերը),

ե) նշանի զետեղումը թույլատրող պետությունը՝ նշված միջազգային երթուղիներում ներգրավված փոխադրամիջոցների վրա օգտագործվող տարբերանշանով<sup>1</sup>,

զ) արտադրողի անվանումը կամ խորհրդանշանը եւ ՍՄԿ-ների նույնականացման այլ նշան՝ ինչպես սահմանված է իրավասու մարմնի կողմից,

<sup>1</sup> Միջազգային երթուղիության մեջ գործող փոխադրամիջոցների եւ դրանց կցորդների՝ գրանցման պետության տարբերանշաններ, օրինակ՝ 1949 թվականի «Ճանապարհային երթուղիության մասին» Ժնևի կոնվենցիային կամ 1968 թվականի «Ճանապարհային երթուղիության մասին» Վիեննայի կոնվենցիային համապատասխան:

է) դարսակման փորձարկման բեռնվածությունը՝ կիլոգրամով:  
Դարսակման համար չնախատեսված ՍՄԿ-ները պետք է նշվեն «0» պատկերով,

ը) թույլատրելի առավելագույն անզուտ քաշը՝ կիլոգրամներով:

Վերոնշյալով պահանջվող առաջնային մակնշումը պետք է կատարվի հետևյալ ենթապարբերությունների հերթականությամբ: 6.5.2.2-ով պահանջվող եւ իրավասու մարմնի կողմից հաստատված յուրաքանչյուր այլ մակնշում պետք է այնպես կատարվի, որ թույլ տա առաջնային մակնշումների ճշգրիտ նույնականացումը:

(ա)-(ը)-ի եւ 6.5.2.2-ի համաձայն կատարված յուրաքանչյուր մակնշում, հեշտ ճանաչելի լինելու համար, պետք է հստակ առանձնացված լինի մյուսից, օրինակ՝ թեք գծով կամ բացատով:

**6.5.2.1.2. ՍՄԿ-ների համար նախատեսված տարբեր մակնշումների օրինակներ՝ համաձայն վերոնշյալ 6.5.2.1.1 (ա)-(ը)-ի.**



11A/Y/02 99  
NL/Mulder 007  
5500/1500

Մետաղյա ՍՄԿ-ների համար՝ նախատեսված ինքնահոսով արտանետվող պինդ նյութերի համար եւ պատրաստված պողպատից/փաթեթավորման II եւ III խմբերի համար/ արտադրված 1999 թվականի փետրվարին/ հաստատված Նիդեռլանդների կողմից/ արտադրված Mulder ընկերության կողմից եւ կառուցվածքի այն տեսակը, որին իրավասու մարմինը կցել է 007 սերիական համարը/դարսակման փորձարկման բեռնվածությունը՝ կիլոգրամով/ թույլատրելի առավելագույն անզուտ քաշը՝ կիլոգրամներով:



13H3/Z/03 01  
F/Meunier 1713  
0/1500

Փափուկ ՍՄԿ-ների համար՝ նախատեսված, օրինակ՝ ինքնահոսով արտանետվող պինդ նյութերի համար եւ պատրաստված հյուսածո պլաստմասսայից՝ ներդիրով/ նախատեսված չէ դարսակման համար: Կոշտ պլաստմասսայից ՍՄԿ-ների համար՝ նախատեսված հեղուկների համար, պատրաստված պլաստմասսայից՝ կառուցվածքային սարքավորումներով, որոնք կարող են դիմանալ դարսակման բեռնվածությանը:



31H1/Y/04 99  
GB/9099  
10800/1200

Բարդ ՍՄԿ-ների համար՝ նախատեսված հեղուկների համար՝ կոշտ պլաստմասսայից ներքին տարաներով եւ պողպատե արտաքին պատյանով:



31HA1/Y/05 01  
D/Muller 1683  
10800/1200



11C/X/01 02  
S/Aurigny 9876  
3000/910

Փայտյա ՍՄԿ-ների համար՝ նախատեսված հեղուկների համար՝ ներքին ներդիրով՝ հաստատված I, II եւ III խմբի հեղուկների համար:

**6.5.2.2. Լրացուցիչ մակնշում**

6.5.2.2.1. Յուրաքանչյուր ՍՄԿ-ի վրա պետք է լինի 6.5.2.1-ով պահանջվող մակնշումը, ինչպես նաեւ պետք է ունենա հետևյալ տեղեկությունը, որը կարող է նշվել հակակոռոզիոն պաշտպանիչ թիթեղի վրա, որը մշտապես փակցված է լավ ընթեռնելի տեղում:

Լրացուցիչ մակնշում	ՍՄԿ-ի Կատեգորիան
--------------------	------------------


	Մետա- ոյա	Կոշտ պլաստ- մասսա- յից	Կոմպոզիտ ային կառուց- վածքով	Փայտաթել քային սալից	Փայտե
Տարողությունը լիտրերով <sup>ա</sup> 20 °C ջերմաստիճանի դեպքում	X	X	X		
Տարայի զանգվածը <sup>ա</sup> կիլոգրամներով	X	X	X	X	X
Փորձարկման (մանոմետրական) ճնշումը՝ կՊա-ով կամ բարերով <sup>ա</sup> , եթե կիրառելի է		X	X		
Լցավորման/ արտամղման առավելագույն ճնշումը՝ կՊա-ով կամ բարերով <sup>ա</sup> , եթե կիրառելի է	X	X	X		
Հենամարմնի պատրաստման նյութը եւ նվազագույն հաստությունը մմ-ով	X				
Անջրանցիկության վերջին փորձարկման ամսաթիվը, եթե կիրառելի է (ամիսն ու տարին)	X	X	X		
Վերջին ստուգման ամսաթիվը (ամիսն ու տարին)	X	X	X		
Արտադրողի կողմից սահմանված սերիայի համարը	X				
Պարսակման առավելագույն թույլատրված բեռնվածությունը <sup>բ</sup>	X	X	X	X	X

<sup>ա</sup> Պետք է նշվի օգտագործված չափման միավորը

<sup>բ</sup> Տե՛ս 6.5.2.2.2: Այս լրացուցիչ մակնշումը կիրառելի է բոլոր ՍՄԿ-ների համար, որոնք արտադրվել, վերանորոգվել կամ վերականգնվել են 2011 թվականի հունվարի 1-ից հետո (տե՛ս նաեւ 1.6.1.15):


6.5.2.2.2. Թույլատրված առավելագույն դարսակման բեռնվածությունը, որը կիրառելի է, երբ ՍՄԿ-ն գտնվում է գործածության մեջ, պետք է նշվի պատկերանշանով, ինչպես ցույց է տրված 6.5.2.2.2.1 նկարում կամ 6.5.2.2.2.2 նկարում: Պատկերանշանը պետք է լինի հուսալիորեն ամրացված եւ լավ տեսանելի:

**Նկար 6.5.2.2.1**



Նվազագույն չափսը՝ 100մմ

**Նկար 6.5.2.2.2**



Նվազագույն չափսը՝ 100մմ

ՍՄԿ-ներ, որոնք կարող են դարսակվել ՍՄԿ-ներ, որոնք չեն կարող դարսակվել

Նվազագույն չափսը պետք է լինի 100 մմ (լայնությունը) x 100 մմ (բարձրությունը). Քաշը նշող տառերն ու թվերը պետք է ունենան



առնվազն 12 մմ բարձրություն:

Չափագրական նշումներով նշված՝ տպիչի նշանները տվյալ հատվածում պետք է լինեն քառակուսի:

Եթե չափսերը նշված չեն, ապա բոլոր հատկանիշները պետք է մոտավոր համաչափ լինեն ցուցադրված պատկերի հատկանիշներին: Խորհրդանշանի վերելում նշված զանգվածը չպետք է գերազանցի տեսակի փորձարկման ժամանակ հաշվարկված բեռնվածությունը բաժանած 1.8-ի ցուցանիշը (տե՛ս 6.5.6.6.4):

6.5.2.2.3. Ի լրումն 6.5.2.1-ով պահանջվող մակնշման՝ փափուկ ՍՄԿ-ները կարող են ունենալ գրաֆիկական պատկեր, որը նշում է խորհուրդ տրվող բարձրացման մեթոդները:

6.5.2.2.4. ՍՄԿ կառուցվածքի տեսակ ունեցող բարդ ներքին տարան պետք է ունենա 6.5.2.1.1 (բ), (գ), (դ)-ում նշված մակնիշավորումը, երբ այդ ամսաթիվը համընկնում է պլաստմասսայից ներքին տարայի արտադրման ամսաթվի հետ, (ե) եւ (զ): ՄԱԿ-ի փաթեթվածքի խորհրդանշանը չպետք է կիրառվի: Մակնշումը պետք է կիրառվի 6.5.2.1.1-ում ցուցադրված հաջորդականությամբ: Այն պետք է լինի դիմացկուն, ընթեռնելի եւ նշվի այնպիսի տեղում, որը հեշտորեն տեսանելի լինի, երբ ներքին տարան տեղադրվում է արտաքին պատյանի մեջ:

Պլաստմասսայից ներքին տարայի արտադրման ամսաթիվը կարող է այլ կերպ նշվել ներքին տարայի վրա՝ մնացած մակնշման կողքին: Այդ դեպքում մականշվածքում եւ ժամացույցի ներքին շրջանում տարվա երկու թվերը պետք է լինեն նույնանման: Մակնշման համապատասխան մեթոդը ցուցադրված է ներքեւում՝



**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1.** Չնշվող, տեսանելի եւ ընթեռնելի ձեւով ներկայացված՝ պահանջվող նվազագույն տեղեկություններ ապահովող այլ մեթոդներ նույնպես ընդունելի են:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2.** Ներքին տարայի արտադրման ամսաթիվը կարող է տարբերվել բարդ ՍՄԿ-ի արտադրման (տե՛ս 6.5.2.1), վերանորոգման (տե՛ս 6.5.4.5.3) եւ վերարտադրման (տե՛ս 6.5.2.4) նշված ամսաթվից:

6.5.2.2.5. Երբ բարդ ՍՄԿ-ները նախագծվում են այնպես, որ արտաքին պատյանը դատարկ վիճակում փոխադրման դեպքում

ապամոնտաժվում է (երբ օրինակ ՍՄԿ-ն վերադարձվում է սկզբնական բեռնառաքողին՝ կրկնակի օգտագործման համար), այդ ընթացքում առանձնացվող յուրաքանչյուր բաղադրամասի վրա պետք է նշվի արտադրման ամիսն ու տարին, արտադրողի անվանումն ու խորհրդանշանը եւ ՍՄԿ-ի այլ նույնականացում՝ ինչպես սահմանված է իրավասու մարմնի կողմից (տե՛ս 6.5.2.1.1 (գ)):

**6.5.2.3. Համապատասխանությունը կառուցվածքի տեսակին**

Մակնշմամբ ցուցադրվում է, որ ՍՄԿ-ն համապատասխանում է հաջողությամբ փորձարկված կառուցվածքի տեսակին, եւ որ սերտիֆիկատում նշված պահանջները բավարարված են:

**6.5.2.4. Վերարտադրված բարդ ՍՄԿ-ների մակնշումը (31H21)**

6.5.2.1.1-ում եւ 6.5.2.2-ում նշված մակնշումը պետք է հեռացվի սկզբնական ՍՄԿ-ից կամ դարձվի մշտապես անընթեռնելի եւ նոր մակնշումներ պետք է արվեն «ԱԴՌ» համաձայնագրին համապատասխան վերարտադրված ՍՄԿ-ի վրա:

**6.5.3. Պատրաստման պահանջները**

**6.5.3.1. Ընդհանուր պահանջները**

6.5.3.1.1. ՍՄԿ-ն պետք է դիմացկուն կամ պատշաճորեն պաշտպանված լինի արտաքին միջավայրի գործոններով պայմանավորված վնասվածքներից:

6.5.3.1.2. ՍՄԿ-ները պետք է պատրաստվեն եւ փակվեն այնպես, որ փոխադրման նորմալ պայմաններում՝ ներառյալ տատանման հետեւանքները կամ ջերմաստիճանի, խոնավության կամ ճնշման փոփոխությունները, պարունակության որեւէ կորուստ չարձանագրվի:

6.5.3.1.3. ՍՄԿ-ներն ու նրանց փականները պետք է պատրաստվեն այնպիսի նյութերից, որոնք համատեղելի են դրանց պարունակության հետ, կամ պետք է ունենան այնպիսի ներքին պաշտպանություն, որպեսզի.

ա) ենթարկվեն պարունակության ազդեցությանն այնպես, որ դրանց օգտագործումը դառնա վտանգավոր,

բ) չթուլատրեն, որպեսզի պարունակությունը ռեակցիայի մեջ մտնի ու քայքայվի կամ ՍՄԿ-ի հետ կազմի վտանգավոր կամ վնասակար միացություններ:

6.5.3.1.4. Միջադիրները, եթե դրանք օգտագործվում են, պետք է պատրաստվեն այնպիսի նյութերից, որոնք չեն քայքայվում ՍՄԿ-ների պարունակության ազդեցությունից:

6.5.3.1.5. Բոլոր օժանդակ սարքավորումները պետք է այնպես տեղադրվեն կամ պաշտպանվեն, որպեսզի պարունակության կորստի ռիսկը՝

պայմանավորված տնօրինման կամ փոխադրման ընթացքում առաջացած վնասվածքով, հասնի նվազագույնի:

6.5.3.1.6. ՍՄԿ-ները, դրանց օժանդակ հարմարանքները, ծառայողական եւ կառուցվածքային սարքավորումները պետք է այնպես նախագծվեն, որ առանց պարունակության կորստի դիմակայեն պարունակության ճնշմանը եւ նորմալ պայմաններում տնօրինման ու փոխադրման ազդեցությանը: Դարսակման համար նախատեսված ՍՄԿ-ները պետք է դարսակման համար համապատասխան կառուցվածք ունենան: ՍՄԿ-ների բարձրացման կամ ամրացման յուրաքանչյուր սարք պետք է բավարար ամրություն ունենա՝ դիմակայելու տնօրինման եւ փոխադրման նորմալ պայմաններին՝ առանց զգալի ձեւախախտման կամ վնասվածքի եւ պետք է տեղադրվեն այնպես, որ ՍՄԿ-ի ոչ մի մասում ծանրաբեռնվածություն չառաջանա:

6.5.3.1.7. Այն դեպքում, երբ ՍՄԿ-ն բաղկացած է հիմնակմախքի մեջ գտնվող հենամարմնից, այն պետք է պատրաստվի այնպես, որպեսզի հավաստիացվի, որ՝

ա) հենամարմինը չի մաշվում կամ հպվում հիմնակմախքին, որի հետեւանքով կարող է նյութական վնասվածք հասցվել հենամարմնին,

բ) հենամարմինը մշտապես պահվում է հիմնակմախքի ներսում,

գ) սարքավորման տարրերն ամրացվում են այնպես, որ չվնասվեն, երբ հենամարմնի եւ հիմնակմախքի միջեւ առկա միացումները թույլ տան հարաբերական լայնացում եւ շարժում:

6.5.3.1.8. Այն դեպքում, երբ տեղադրված է բեռնաթափման ստորին կափույրը, այն պետք է փակ վիճակում անվտանգ լինի, իսկ բեռնաթափման ամբողջ համակարգը պետք է պատշաճորեն պաշտպանված լինի վնասվածքից: Այն կափույրները, որոնք ունեն ոտնակի փականներ, պետք է պաշտպանված լինեն պատահական բացվելուց, իսկ փակված կամ բացված դիրքը պետք է լավ տեսանելի լինի: Հեղուկ պարունակող ՍՄԿ-ների դեպքում բեռնաթափման անցքի հերմետիկ փակման երկրորդական միջոցը նույնպես պետք է տրամադրված լինի, օրինակ՝ անշարժ կցաշուրթերով կամ համարժեք սարքավորմամբ:

#### **6.5.4. Փորձարկում, սերտիֆիկացում եւ ստուգում**

6.5.4.1. *Որակի ապահովում.* ՍՄԿ-ները պետք է արտադրվեն, փորձարկվեն եւ կրկին արտադրվեն որակի ապահովման ծրագրի համաձայն, որով ապահովվում է իրավասու մարմնի պահանջների կատարումն այն

մասով, որ յուրաքանչյուր արտադրված կամ վերարտադրված ՍՄԿ-ն բավարարի սույն գլխի պահանջները:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** ISO 16106:2006 «Փաթեթվածք. Տրանսպորտային փաթեթներ վրանգավոր բեռների համար. Վրանգավոր բեռների փաթեթվածքներ, սորուն բեռների համար նախատեսված միջին բեռնվածության կոնտեյներներ (ՍՄԿ) եւ խոշոր փաթեթվածքներ. ISO 9001» ստանդարտի կիրառման ուղեցույցը պարունակում է ընդունելի հրահանգներ այն ընթացակարգերի մասին, որոնց կարելի է հետեւել:

6.5.4.2. Փորձարկման պահանջները. ՍՄԿ-ն պետք է ենթակա լինի կառուցվածքի տեսակի փորձարկման եւ, եթե կիրառելի է, սկզբնական ու պարբերական ստուգումների եւ փորձարկումների՝ համաձայն 6.5.4.4-ի:

6.5.4.3. Սերտիֆիկացում. ՍՄԿ-ի յուրաքանչյուր կառուցվածքի տեսակի համար պետք է սերտիֆիկատ տրամադրվի եւ կատարվի մակնշում (ինչպես նշված է 6.5.2-ում), ինչը կհաստատի, որ նախագծային կառուցվածքը, դրա սարքավորումներով հանդերձ, համապատասխանում է փորձարկումների պահանջներին:

#### **6.5.4.4. Ստուգումն ու փորձարկումները**

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** Տե՛ս նաեւ 6.5.4.5՝ վերանորոգված ՍՄԿ-ների փորձարկումների եւ ստուգումների համար:

6.5.4.4.1. Յուրաքանչյուր մետաղյա, կոշտ պլաստմասսայից եւ բարդ ՍՄԿ պետք է ստուգվի՝ ճշտելու համար, որ այն համապատասխանում է իրավասու մարմնի պահանջներին.

ա) մինչեւ շահագործման սկիզբը (այդ թվում նաեւ վերարտադրումից հետո) եւ դրանից հետո հինգ տարին չգերազանցող ընդմիջումներով եւ հետեւյալի մասով՝

i) համապատասխանությունը կառուցվածքի տեսակին՝ ներառյալ մակնշումը,

ii) ներքին եւ արտաքին մակերեսների վիճակը,

iii) օժանդակ սարքավորման պատշաճ աշխատանքը:

Եթե առկա է ջերմամեկուսացում, ապա այն պետք է այնքան հեռացվի, որքան անհրաժեշտ է ՍՄԿ-ի հենամարմինը պատշաճ զննելու համար:

բ) ոչ պակաս, քան երկու տարվա պարբերականությամբ եւ հետեւյալի մասով՝

- i) արտաքին վիճակը,
- ii) օժանդակ սարքավորման պատշաճ աշխատանքը:

Եթե առկա է ջերմամեկուսացում, ապա այն պետք է այնքան հեռացվի, որքան անհրաժեշտ է ՍՄԿ-ի հենամարմինը պատշաճ զննելու համար:

Յուրաքանչյուր ՍՄԿ պետք է բոլոր առումներով համապատասխանի դրա կառուցվածքի տեսակին:

6.5.4.4.2. Հեղուկների կամ պինդ նյութերի համար յուրաքանչյուր մետաղյա, կոշտ պլաստմասսայից կամ բարդ ՍՄԿ, որը ճնշման տակ լցվող կամ արտանետվող է, պետք է անցնի անջրանցիկության համապատասխան փորձարկում: Այս փորձարկումը 6.5.4.1-ով սահմանված՝ որակի ապահովման ծրագրի մաս է կազմում, որը ցույց է տալիս 6.5.6.7.3-ով սահմանված համապատասխան փորձարկումների մակարդակին դիմակայելու հնարավորությունը:

- ա) նախքան փոխադրման համար դրա առաջին օգտագործումը,
- բ) ոչ պակաս, քան երկուս ու կես տարվա պարբերականությամբ եւ հետեւյալի մասով:

Այս փորձարկման համար ՍՄԿ-ի վրա պետք է տեղադրվի առաջնային ստորին փական: Բարդ ՍՄԿ-ի ներքին տարան կարող է փորձարկվել առանց արտաքին պատյանի, եթե դա չի ազդում փորձարկման արդյունքների վրա:

6.5.4.4.3. Յուրաքանչյուր ստուգման եւ փորձարկման զեկույց պետք է պահվի ՍՄԿ-ի սեփականատիրոջ մոտ առնվազն մինչեւ հաջորդ ստուգումն ու փորձարկումը: Զեկույցը պետք է ներառի ստուգման եւ փորձարկման արդյունքներն ու պետք է նշի, թե ով է կատարել ստուգումն ու փորձարկումը (տե՛ս նաեւ մակնշման պահանջները 6.5.2.2.1-ում):

6.5.4.4.4. Իրավասու մարմինը ցանկացած ժամանակ կարող է ապացույց պահանջել՝ սույն գլխի պահանջներին համապատասխան, որ ՍՄԿ-ն համապատասխանում է կառուցվածքի տեսակի փորձարկումների պահանջներին:

#### **6.5.4.5. Վերանորոգված ՍՄԿ-ները**

6.5.4.5.1. Այն դեպքում, երբ ՍՄԿ-ն վնասվել է հարվածի (օրինակ՝ պատահարի հետեւանքով) կամ այլ պատճառով, այն պետք է վերանորոգվի կամ ստանա այլ սպասարկում (տե՛ս 1.2.1-ում նշված «ՍՄԿ-ների ընթացիկ տեսչական սպասարկման» սահմանումը), որպեսզի

համապատասխանի կառուցվածքի տեսակին: Կոշտ պլաստմասսայից ՍՄԿ-ների վնասված հենամարմինները եւ բարդ ՍՄԿ-ների վնասված ներքին տարաները պետք է փոխարինվեն:

6.5.4.5.2. Ի լրումն «ԱԴՌ» համաձայնագրով նախատեսված որեւէ այլ փորձարկման եւ ստուգման պահանջների՝ ՍՄԿ-ները պետք է ենթարկվեն 6.5.4.4-ով սահմանված փորձարկումների եւ ստուգումների պահանջներին, եւ այն բոլոր դեպքերում, երբ դրանք վերանորոգվում են, պետք է կազմվեն պահանջվող զեկույցները:

6.5.4.5.3. Վերանորոգումից հետո փորձարկումներ եւ ստուգումներ իրականացնող կողմը պետք է չջնջվող մակնշում կատարի ՍՄԿ-ի վրա արտադրողի՝ ՄԱԿ-ի կառուցվածքի տեսակի մակնշման մոտ՝ նշելով հետեւյալը.

ա) այն երկիրը, որտեղ կատարվել են փորձարկումներն ու ստուգումները,

բ) փորձարկումներն ու ստուգումներն իրականացնող կողմի անվանումն ու թույլատրված խորհրդանշանը, եւ

գ) փորձարկումների եւ ստուգումների ամսաթիվը (ամիսը, տարին):

6.5.4.5.4. Այն փորձարկումներն ու ստուգումները, որոնք կատարվել են 6.5.4.5.2-ին համապատասխան, կարող են համարվել երկուսուկես եւ հինգ տարի պարբերականությամբ կատարվող փորձարկումների եւ ստուգումների պահանջները բավարարող:

## **6.5.5. ՍՄԿ-ների վերաբերյալ հատուկ պահանջները**

### **6.5.5.1. Մեքադական ՍՄԿ-ների վերաբերյալ հատուկ պահանջները**

6.5.5.1.1. Սույն պահանջները կիրառվում են պինդ նյութերի եւ հեղուկների փոխադրման համար նախատեսվող մետաղական ՍՄԿ-ների նկատմամբ: Գոյություն ունեն ՍՄԿ-ների երեք կատեգորիաներ՝

ա) այնպիսիները, որոնք նախատեսված են պինդ նյութերի համար եւ լցավորվում կամ դատարկվում են ինքնահոս եղանակով (11A, 11B, 11N).

բ) այնպիսիները, որոնք նախատեսված են պինդ նյութերի համար եւ լցավորվում կամ դատարկվում են 10 կՊա-ից բարձր (0.1 բար) (21A, 21B, 21N) մանոմետրական ճնշման տակ եւ

գ) այնպիսիները, որոնք նախատեսված են հեղուկների համար (31A, 31B, 31N):

6.5.5.1.2. Հենամարմինները պետք է պատրաստվեն համապատասխան կոեյլի մետաղից, որի եռակցելիությունն ամբողջությամբ հաստատված է: Եռակցման կարանները պետք է հմտորեն դրված լինեն եւ

ապահովեն լիարժեք անվտանգություն Անհրաժեշտության դեպքում պետք է հաշվի առնվի նյութի ցածր ջերմաստիճանում գործածվելու հանգամանքը:

6.5.5.1.3. Զգույշ պետք է լինել տարասեռ մետաղների անմիջական հարեանության պատճառով առաջացող գալվանական ազդեցության հետեւանքով առաջացող վնասվածքներից խուսափելու համար:

6.5.5.1.4. Դյուրավառ հեղուկների փոխադրման համար նախատեսված այլումինե ՍՄԿ-ները չպետք է ունենան որեւէ շարժվող մաս, ինչպես օրինակ՝ կափարիչներ, փականներ եւ այլն՝ պատրաստված ժանգոտման ենթակա պաշտպանիչ շերտ չունեցող պողպատից, որը շփման կամ հարվածի հետեւանքով կարող է վտանգավոր ռեակցիայի մեջ մտնել այլումինի հետ:

6.5.5.1.5. Մետաղական ՍՄԿ-ները պետք է պատրաստված լինեն մետաղներից, որոնք բավարարում են ստորեւ նշված պահանջները՝

ա) պողպատի համար՝ երկարացումը խզման դեպքում չպետք է լինի 10000/Rm-ից պակաս՝ 20% բացարձակ նվազագույն արժեքի դեպքում.

որտեղ Rm-ն կիրառվելիք պողպատի երաշխավորված նվազագույն ձգման ամրությունն է՝ Ն/մմ<sup>2</sup>-ով արտահայտված.

բ) այլումինի եւ դրա համաձուլվածքի համար՝ երկարացումը խզման դեպքում չպետք է լինի 10000/6Rm-ից պակաս՝ 8% բացարձակ նվազագույն արժեքի դեպքում

Խզման դեպքում երկարացումը որոշելու համար օգտագործվող նմուշները պետք է գլոցման ուղղությամբ լինեն ուղիղ անկյան տակ (լայնակի) եւ պետք է ամրացված լինեն այնպես, որ՝

$$L_0 = 5d \text{ կամ}$$

$$L_0 = 5.65\sqrt{A}$$

որտեղ՝

$L_0$  = մինչեւ փորձարկումը նմուշի հաշվարկային երկարությունը.

$d$  = տրամագիծ

$A$  = փորձարկվող նմուշի լայնակի հատման մակերեսը:

6.5.5.1.6. Պաշտի նվազագույն հաստությունը՝

ա)  $Rm \times A_0 = 10\ 000$  արդյունքով բնութագրվող ստանդարտ պողպատի համար պատի հաստությունը չպետք է ստորեւ

նշված արժեքներից ցածր լինի՝

Տարողությունը (C) լիտրերով	Պատի հաստությունը (T) մմ-ով			
	11A, 11B, 11N տեսակները		21A, 21B, 21N, 31A, 31B, 31N տեսակները	
	Չպաշտպանված	Պաշտպանված	Չպաշտպանված	Պաշտպանված
$C \leq 1000$	2.0	1.5	2.5	2.0
$1000 < C \leq 2000$	$T = C/2000 + 1.5$	$T = C/2000 + 1.0$	$T = C/2000 + 2.0$	$T = C/2000 + 1.5$
$2000 < C \leq 3000$	$T = C/2000 + 1.5$	$T = C/2000 + 1.0$	$T = C/1000 + 1.0$	$T = C/2000 + 1.5$

որտեղ՝  $A_0$  = կիրառվելիք ստանդարտ պողպատի երկարացման նվազագույն արժեքն է (տոկոսներով)՝ ձգման լարվածության պարագայում խզման դեպքում (տե՛ս 6.5.5.1.5 կետը)։

բ) (ա) ենթակետում նկարագրված ստանդարտ պողպատից տարբեր՝ այլ մետաղների համար պատի նվազագույն հաստությունը որոշվում է հետևյալ բանաձևի հիման վրա՝

$$e_1 = \frac{21.4 \times e_0}{\sqrt[3]{Rm_1 \times A_1}}$$

որտեղ՝  $e_1$  = կիրառվելիք մետաղի համար պատի պահանջվող համարժեք հաստությունը (մմ-ով)։

$e_0$  = ստանդարտ պողպատի դեպքում պատի պահանջվող նվազագույն հաստությունը (մմ-ով)։

$Rm_1$  = կիրառվելիք մետաղի ձգման ամրության երաշխավորված նվազագույն արժեքն է՝ Ն/մմ<sup>2</sup>-ով արտահայտված (տե՛ս (գ) ենթակետը)

$A_1$  = կիրառվելիք մետաղի երկարացման նվազագույն արժեքն է (տոկոսներով)՝ ձգման լարվածության պարագայում խզման դեպքում (տե՛ս 6.5.5.1.5)։

Այնուամենայնիվ, ցանկացած դեպքում պատի հաստությունը պետք է լինի 1.5 մմ-ից ոչ պակաս։

գ) (բ) կետում նկարագրված հաշվարկման նպատակներով կիրառվելիք մետաղի ձգման ամրության երաշխավորված նվազագույն արժեքը ( $Rm_1$ ) նյութերի վերաբերյալ, ազգային կամ միջազգային ստանդարտների համաձայն պետք է դիտվի որպես նվազագույն արժեք։ Այնուհանդերձ, աուստենիտային պողպատների դեպքում  $Rm$ -ի նշված նվազագույն արժեքը



նյութերի վերաբերյալ ստանդարտների համաձայն կարող է ավելացվել մինչև 15%-ով, եթե նյութի ստուգման հավաստագրում պաշտոնապես նշված է առավել բարձր արժեք: Եթե տվյալ նյութի վերաբերյալ ստանդարտներ չկան, ապա Rm-ի արժեքը պետք է ծառայի նյութի ստուգման հավաստագրով հաստատված նվազագույն արժեքը:

6.5.5.1.7. Ճնշումը նվազեցնելու վերաբերյալ պահանջները՝ հեղուկների համար նախատեսված ՍՄԿ-ները պետք է ունենան կրակի բռնկման դեպքում բավականաչափ գոլորշի բացթողնելու հնարավորություն՝ հենամարմնի ճեղքումը բացառելու նպատակով: Դա կարող է իրականացվել ճնշումը նվազեցնող սովորական սարքերի միջոցով կամ այլ կառուցվածքային միջոցներով: Ճնշման թուլացման մեկնարկի պահին ճնշման արժեքը չպետք է գերազանցի 65 կՊա-ը (0.65 բար) եւ այն չպետք է ցածր լինի ՍՄԿ-ում առկա ընդհանուր մանոմետրական ճնշման արժեքից (այսինքն՝ լցանյութի գոլորշու ճնշման արժեքին գումարած օդի եւ այլ չեզոք գազերի մասնակի ճնշման արժեքը՝ հանած 100 կՊա (1բար)) 55 °C ջերմաստիճանում, որը որոշվում է 4.1.1.4.-ով սահմանված լցավորման առավելագույն մակարդակի հիման վրա: Պահանջվող ճնշումը նվազեցնող սարքերը պետք է տեղադրվեն գոլորշի պարունակող տարածքում:

#### **6.5.5.2. Փափուկ ՍՄԿ-ների վերաբերյալ հատուկ պահանջները**

6.5.5.2.1 Սույն պահանջները կիրառվում են հետեւյալ տեսակների փափուկ ՍՄԿ-ների նկատմամբ՝

13H1 առանց պատվածքի կամ ներդիրի հյուսածո պլաստմասսայից

13H2 պատվածքով պատված հյուսածո պլաստմասսայից

13H3 հյուսածո պլաստմասսայից՝ ներդիրով

13H4 հյուսածո պլաստմասսայից՝ պատվածքով եւ ներդիրով

13H5 պոլիմերային թաղանթից

13L1 առանց պատվածքի կամ ներդիրի կտորից

13L2 կտորից՝ պատվածքով

13L3 կտորից՝ ներդիրով

13L4 կտորից՝ պատվածքով եւ ներդիրով

13M1 բազմաշերտ թղթից

13M2 բազմաշերտ անջրանցիկ թղթից

Փափուկ ՍՄԿ-ները նախատեսված են միայն պինդ նյութերի

փոխադրման համար:

- 6.5.5.2.2. Հենամարմինները պետք է պատրաստվեն համապատասխան նյութերից: Փափուկ ՍՄԿ-ների նյութի ամրությունը եւ կառուցվածքը պետք է համապատասխանեն դրա տարողությանը եւ նպատակային օգտագործմանը:
- 6.5.5.2.3. 13M1 եւ 13M2 տեսակների փափուկ ՍՄԿ-ների պատրաստման համար օգտագործված բոլոր նյութերը 24 ժամից ոչ պակաս ջրի մեջ լրիվ ընկղմվելուց հետո պետք է պահպանեն ձգման ամրության այն արժեքի առնվազն 85%-ը , որը նախապես հաշվարկվել է 67% կամ ավելի պակաս հարաբերական խոնավության պայմաններում նյութը հավասարակշռության վիճակի բերելու պարագայում:
- 6.5.5.2.4. Կարանները պետք է դրվեն կարելու, ջերմախցանափակման, սոսնձման կամ ցանկացած համարժեք այլ մեթոդով: Բոլոր կարված կարանների ծայրերը պետք է ապահովված լինեն:
- 6.5.5.2.5. Փափուկ ՍՄԿ-ները պետք է ուլտրամանուշակագույն ճառագայթման, կլիմայական պայմանների կամ դրանցում պարունակվող նյութերի ազդեցության հետեւանքով հնեցմանը կամ քայքայմանը դիմակայելու բավականաչափ հնարավորություն ունենան, որը դրանք պիտանի կդարձնի նպատակային օգտագործման համար:
- 6.5.5.2.6. Փափուկ ՍՄԿ-ների համար ուլտրամանուշակագույն ճառագայթումից պաշտպանություն պահանջվելու դեպքում, պետք է ավելացվի մուր կամ այլ համապատասխան գունանյութեր կամ ինհիբիտորներ: Այդ հավելանյութերը պետք է համատեղելի լինեն պարունակության հետ եւ պետք է պահպանեն իրենց հատկանիշները հենամարմնի շահագործման ամբողջ ընթացքում: Փորձարկված կառուցվածքի տեսակի արտադրության ժամանակ օգտագործվածներից տարբեր՝ մուր, գունանյութեր կամ ինհիբիտորներ օգտագործվելու դեպքում կրկնակի փորձարկման անցկացում կարող է չպահանջվել այն դեպքում, երբ մրի, գունանյութի կամ ինհիբիտորի պարունակության մեջ կատարված փոփոխությունները բացասաբար չեն անդրադառնում պատրաստման համար օգտագործված նյութերի ֆիզիկական հատկությունների վրա:
- 6.5.5.2.7. Այն նյութին, որից պատրաստված է հենամարմինը, կարելի է հավելանյութեր ավելացնել հնեցմանը դիմակայելու հատկության բարելավման կամ այլ նպատակներով՝ պայմանով, որ դրանք բացասաբար չեն անդրադառնա նյութի ֆիզիկական հատկությունների վրա:
- 6.5.5.2.8. ՍՄԿ-ների հենամարմինների պատրաստման համար չպետք է օգտագործվեն նախկինում օգտագործված տարաներից

վերականգնված նյութեր: Այնուամենայնիվ, կարող են օգտագործվել արտադրության միեւնույն գործընթացի արդյունքում ստացվող արտադրական մնացորդները կամ թափոնները: Կարելի է նաեւ օգտագործել բաղադրիչների այնպիսի մասեր, ինչպիսիք են կցամասերը եւ տակդիրի հիմքերը՝ պայմանով, որ այդ դետալները ոչ մի կերպ չեն վնասվել նախորդ օգտագործման ժամանակ:

6.5.5.2.9. Լցված լինելու դեպքում բարձրության եւ լայնության գործակիցը պետք է լինի 2:1-ից ավելի:

6.5.5.2.10. Ներդիրը պետք է պատրաստված լինի համապատասխան նյութից: Օգտագործվող նյութի ամրությունը եւ ներդիրի կառուցվածքը պետք է համապատասխանեն ՍՄԿ-ների տարողությանը եւ դրա նպատակային օգտագործմանը: Կցվանքներն ու փականները պետք է լինեն անթափանցելի եւ պետք է կարողանան դիմակայել ճնշմանը ու ներգործություններին, որոնք կարող են առաջանալ բեռնման, բեռնաթափման եւ փոխադրման սովորական պայմաններում:

**6.5.5.3. Կոշտ պլաստմասայե ՍՄԿ-ների վերաբերյալ հատուկ պահանջները**

6.5.5.3.1. Սույն պահանջները կիրառվում են պինդ նյութերի կամ հեղուկների փոխադրման համար նախատեսված կոշտ պլաստմասայե ՍՄԿ-ների նկատմամբ: Գոյություն ունեն կոշտ պլաստմասայե ՍՄԿ-ների հետեւյալ տեսակները՝

11H1 այնպիսիները, որոնց վրա տեղադրված են կառուցվածքային սարքավորումներ, որոնք նախատեսված են դարսակված ՍՄԿ-ների ամբողջ բեռնվածությանը դիմակայելու համար, երբ դրանք լցված են ինքնահոսով լցավորվող կամ դատարկվող պինդ նյութերով

11H2 ինքնահոսով լցավորվող կամ դատարկվող պինդ նյութերի համար նախատեսված՝, առանց լրացուցիչ սարքավորման.

21H1 այնպիսիները, որոնց վրա տեղադրված են կառուցվածքային սարքավորումներ, որոնք նախատեսված են դարսակված ՍՄԿ-ների ամբողջ բեռնվածությանը դիմակայելու համար, երբ դրանք լցված են ճնշման տակ լցավորվող կամ դատարկվող պինդ նյութերով

21H2 ճնշման տակ լցավորվող կամ դատարկվող պինդ նյութերի համար նախատեսված՝, առանց լրացուցիչ սարքավորման .

31H1 այնպիսիները, որոնց վրա տեղադրված են կառուցվածքային սարքավորումներ, որոնք նախատեսված են հեղուկների համար նախատեսված, դարսակված ՍՄԿ-ների ամբողջ բեռնվածությանը դիմակայելու համար .

31H2 հեղուկների համար նախատեսված՝ առանց լրացուցիչ սարքավորումների:

6.5.5.3.2. Հենամարմինները պետք է արտադրվեն այնպիսի պլաստիկ նյութից, որը հայտնի է իր բնութագրերով եւ ունի հենամարմնի տարողության եւ նախատեսված գործածության համար համապատասխան ամրություն: Նյութը պետք է համարժեքորեն կայուն լինի դրանում պարունակվող նյութի կամ համապատասխան դեպքերում ուլտրամանուշակագույն ճառագայթման պատճառով հնեցման եւ հատկությունների վատթարացման նկատմամբ: Անհրաժեշտության դեպքում պետք է հաշվի առնվի ցածր ջերմաստիճանում գործածվելու հանգամանքը: Պարունակվող նյութի ցանկացած ներթափանցում փոխադրման բնականոն պայմաններում չպետք է վտանգ առաջացնի:

6.5.5.3.3. Ուլտրամանուշակագույն ճառագայթումից պաշտպանություն պահանջվելու դեպքում, պետք է ավելացվի մուր կամ այլ համապատասխան գունանյութեր կամ ինհիբիտորներ: Այդ հավելանյութերը պետք է համատեղելի լինեն պարունակության հետ եւ պահպանեն իրեն արդյունավետությունը հենամարմնի օգտագործման ողջ ընթացքում: Փորձարկված կառուցվածքի տեսակի արտադրության ժամանակ օգտագործվածներից տարբեր՝ մուր, գունանյութեր կամ ինհիբիտորներ օգտագործվելու դեպքում կրկնակի փորձարկման անցկացում կարող է չպահանջվել այն դեպքում, երբ մրի, գունանյութի կամ ինհիբիտորի պարունակության մեջ կատարված փոփոխությունները բացասաբար չեն անդրադառնում պատրաստման համար օգտագործված նյութերի ֆիզիկական հատկությունների վրա:

6.5.5.3.4. Այն նյութին, որից պատրաստված է հենամարմինը, կարելի է հավելանյութեր ավելացնել հնեցմանը դիմակայելու հատկության բարելավման կամ այլ նպատակներով՝ պայմանով, որ դրանք բացասաբար չեն անդրադառնա նյութի ֆիզիկական հատկությունների վրա:

6.5.5.3.5. Կոշտ պլաստմասսայե ՍՄԿ-ների պատրաստման համար չպետք է օգտագործվեն նախկինում օգտագործված նյութեր՝ բացառությամբ արտադրական մնացորդների կամ միեւնույն արտադրական գործընթացի արդյունքում ստացված մանրացված նյութերի:

**6.5.5.4. Պլաստմասսայե ներքին տարաներով բարդ ՍՄԿ-ների վերաբերյալ հատուկ պահանջները**

6.5.5.4.1. Սույն պահանջները կիրառվում են պինդ նյութերի եւ հեղուկների փոխադրման համար նախատեսված հետեւյալ տեսակի բարդ ՍՄԿ-ների նկատմամբ՝

- 11HZ1 ինքնահոսով լցավորվող կամ դատարկվող պինդ նյութերի փոխադրման համար նախատեսված կոշտ պլաստմասսայե ներքին տարայով բարդ ՍՄԿ-ներ.
- 11HZ2 ինքնահոսով լցավորվող կամ դատարկվող պինդ նյութերի փոխադրման համար նախատեսված փափուկ պլաստմասսայե ներքին տարայով բարդ ՍՄԿ-ներ.
- 21HZ1 ճնշման տակ բեռնվող կամ բեռնաթափվող, պինդ նյութերի փոխադրման համար կոշտ պլաստմասսայե ներքին տարողությամբ ՍՄԿ-ներ.
- 21HZ2 ճնշման տակ լցավորվող կամ դատարկվող պինդ նյութերի փոխադրման համար նախատեսված փափուկ պլաստմասսայե ներքին տարայով ՍՄԿ-ներ.
- 31HZ1 հեղուկների փոխադրման համար նախատեսված կոշտ պլաստմասսայե ներքին տարայով բարդ ՍՄԿ-ներ.
- 31HZ2 հեղուկների փոխադրման համար նախատեսված փափուկ պլաստմասսայե ներքին տարայով բարդ ՍՄԿ-ներ:

Նշված ծածկագիրը պետք է ամբողջացվի՝ 6.5.1.4.1 (բ) կետի համաձայն «Z» տառը այլ մեծատառով փոխարինելու եղանակով՝ արտաքին պատյանի համար օգտագործվող նյութի տեսակը նշելու նպատակով:

- 6.5.5.4.2. Ներքին տարան նախատեսված չէ առանց արտաքին պատյանի տեղայնացման գործառույթ կատարելու համար: «Կոշտ» ներքին տարան՝ մի տարա է, որը պահպանում է իր ընդհանուր ձեւը դատարկ վիճակում՝ առանց փականների եւ առանց արտաքին պատյանի օգնության: «Կոշտ» չհամարվող յուրաքանչյուր ներքին տարողություն համարվում է «փափուկ»:
- 6.5.5.4.3. Արտաքին պատյանը, որպես կանոն, բաղկացած է միեւնույն ձեւ ունեցող կոշտ նյութից՝ պաշտպանելու համար ներքին տարողությունը բեռնման-բեռնաթափման եւ փոխադրման ընթացքում մեխանիկական վնասվածքներից, բայց այն ինքնին նախատեսված չէ նյութերի տեղայնացման գործառույթ կատարելու համար: Անհրաժեշտ դեպքերում այն նաեւ ներառում է տակդիրի հիմք:
- 6.5.5.4.4. Ամբողջությամբ պատող արտաքին պատյանով բարդ ՍՄԿ-ները պետք է այնպես նախագծված լինեն, որպեսզի հեշտությամբ հնարավոր լինի որոշել դրանց ներքին տարայի ամբողջականությունը՝ անջրանցիկության փորձարկումներից եւ հիդրավլիկ ճնշափորձարկումներից հետո:
- 6.5.5.4.5. 31HZ2 տեսակի բարդ ՍՄԿ-ների տարողությունը չպետք է

գերազանցի 1 250 լիտրը:

- 6.5.5.4.6. Ներքին տարան պետք է արտադրված լինի այնպիսի պլաստիկ նյութից, որը հայտնի է իր բնութագրերով եւ ունի տարայի տարողության եւ նախատեսված գործածության համար համապատասխան ամրություն: Նյութը պետք է համարժեքորեն կայուն լինի դրանում պարունակվող նյութի կամ համապատասխան դեպքերում ուլտրամանուշակագույն ճառագայթման պատճառով հնեցման եւ հատկությունների վատթարացման նկատմամբ: Անհրաժեշտության դեպքում պետք է հաշվի առնվի ցածր ջերմաստիճանում գործածվելու հանգամանքը: Պարունակվող նյութի ցանկացած ներթափանցում փոխադրման բնականոն պայմաններում չպետք է վտանգ առաջացնի:
- 6.5.5.4.7. Ուլտրամանուշակագույն ճառագայթումից պաշտպանություն պահանջվելու դեպքում պետք է ավելացվի մուր կամ այլ համապատասխան գունանյութեր կամ ինհիբիտորներ: Այդ հավելանյութերը պետք է համատեղելի լինեն պարունակության հետ եւ պահպանեն իրենց արդյունավետությունը ներքին տարայի օգտագործման ամբողջ ընթացքում: Փորձարկված կառուցվածքի տեսակի արտադրության ժամանակ օգտագործվածներից տարբեր մուր, գունանյութեր կամ ինհիբիտորներ օգտագործվելու դեպքում կրկնակի փորձարկման անցկացում կարող է չպահանջվել այն դեպքում, երբ մրի, գունանյութի կամ ինհիբիտորի պարունակության մեջ կատարված փոփոխությունները բացասաբար չեն անդրադառնում պատրաստման համար օգտագործված նյութերի ֆիզիկական հատկությունների վրա:
- 6.5.5.4.8. Այն նյութին, որից պատրաստված է ներքին տարան, կարելի է հավելանյութեր ավելացնել հնեցմանը դիմակայելու հատկության բարելավման կամ այլ նպատակներով՝ պայմանով, որ դրանք բացասաբար չեն անդրադառնա նյութի ֆիզիկական հատկությունների վրա:
- 6.5.5.4.9. Ներքին տարաների պատրաստման համար չպետք է օգտագործվեն նախկինում օգտագործված նյութեր՝ բացառությամբ արտադրական մնացորդների կամ միեւնույն արտադրական գործընթացի արդյունքում ստացված մանրացված նյութերի:
- 6.5.5.4.10. 31H22 տեսակի ներքին տարան պետք է պատված լինի թաղանթի առնվազն երեք շերտով:
- 6.5.5.4.11. Արտաքին պատյանի նյութի ամրությունը եւ կառուցվածքը պետք է համապատասխանեն բարդ ՍՄԿ-ների տարողությանը եւ դրա նպատակային օգտագործմանը:

- 6.5.5.4.12. Արտաքին պատյանի վրա չպետք է լինի ոչ մի ցցված մաս, որը կարող է վնասել ներքին տարան:
- 6.5.5.4.13. Մետաղական արտաքին պատյանները պետք է պատրաստված լինեն բավականաչափ հաստության համապատասխան մետաղից:
- 6.5.5.4.14. Բնափայտից արտաքին պատյան պատրաստելիս պետք է կիրառվի լավ պահորակված եւ առետրային տեսանկյունից չոր փայտ, որը չունի այնպիսի թերություններ, որոնք կարող են զգալիորեն նվազեցնել պատյանի որելե մասի ամրությունը: Վերին եւ ստորին մասերը կարող են պատրաստված լինել անջրանցիկ վերամշակված փայտի այնպիսի տեսակներից, ինչպիսիք են կոշտ սովարաթուղթը, փայտատաշեղային սալը կամ այլ համապատասխան տեսակները
- 6.5.5.4.15. Նրբատախտակից արտաքին պատյան պատրաստելիս պետք է կիրառվի կեղեւահան, ռանդած կամ սղոցած միաշերտ նրբատախտակ, որը պետք է առետրային տեսանկյունից չոր լինի, ինչպես նաեւ զերծ լինի թերություններից, որոնք զգալիորեն կարող էին նվազեցնել պատյանի ամրությունը: Բոլոր կից շերտերը պետք է սոսնձված լինեն ջրակայուն սոսնձով: Նրբատախտակից բացի՝ պատյանը պատրաստելու համար կարելի է օգտագործել այլ հարմար նյութեր: Պատյանը անկյունային հենարանների կամ ծայրերի մասում պետք է ամուր մեխված լինի կամ հավաքվի նմանատիպ համապատասխան հարմարանքներով
- 6.5.5.4.16. Արտաքին պատյանի պատերը պետք է պատրաստված լինեն անջրանցիկ վերամշակված փայտի այնպիսի տեսակներից, ինչպիսիք են կոշտ սովարաթուղթը, փայտատաշեղային սալը կամ այլ համապատասխան տեսակները: Պատյանի մյուս մասերը կարող են պատրաստված լինել այլ կիրառելի նյութերից:
- 6.5.5.4.17. Փայտաթելքային սալից արտաքին պատյանների դեպքում պետք է օգտագործվի պատյանի տարողության եւ նախատեսված գործածության համար համապատասխան ամուր եւ լավ որակ ունեցող երկկողմանի ծալքավոր փայտաթելքային սալ (մեկ շերտով կամ բազմաշերտ): Արտաքին մակերեսի ջրակայունությունը զանգվածի ավելացման դեպքում, ինչպես որոշվել է 30 րոպե տեւողությամբ Cobb մեթոդով ջրակլանելիության որոշման նպատակով իրականացված փորձարկման ժամանակ, չպետք է գերազանցի 155 գ/մ<sup>2</sup> արժեքը (տես՝ ISO 535:1991): Այն պետք է ունենա ճովելու համապատասխան հատկություն Փայտաթելքային սալը պետք է կտրվի, ծավլի առանց անհարթությունների եւ ակոսատվի, որպեսզի հնարավոր լինի դրա հավաքումն առանց ճաքերի, մակերեսի վնասվածքների կամ չափից ավելի ծավլելու: Ծալքավոր փայտաթելքային սալը կամ դրա պատրաստման համար

օգտագործվող ալիքավոր շերտը պետք ամուր ստանձված լինեն արտաքին շերտերին:

- 6.5.5.4.18. Փայտաթելքային սալից պատրաստված արտաքին պատյանի եզրերը կարող են ամրացվել փայտե շրջանակով կամ դրանք կարող են ամբողջությամբ պատրաստված լինել փայտից: Ամրության համար կարող են կիրառվել փայտե ձողեր:
- 6.5.5.4.19. Փայտաթելքային սալից պատրաստված արտաքին պատյանի արտադրական կցվանքները պետք է ժապավենով միացված, եզրածածկված եւ ստանձված կամ եզրածածկված եւ երկաթակապերով կարված լինեն: Եզրածածկված կցվանքները պետք է ունենան համապատասխան պատվածք: Այն դեպքում, երբ կցվանքները դրվել են ստանձման կամ ժապավենով միացնելու եղանակով, ապա պետք է օգտագործվի ջրակայուն ստանձանյութ:
- 6.5.5.4.20. Եթե արտաքին պատյանը պատրաստվում է պլաստիկ նյութից, ապա կիրառվում են 6.5.5.4.6 - 6.5.5.4.9-ի համապատասխան պահանջները՝ հաշվի առնելով այն, որ ներքին տարային վերաբերող պահանջները կիրառվում են բարդ ՍՄԿ-ների արտաքին պատյանի նկատմամբ:
- 6.5.5.4.21. 31H22 տեսակի ՍՄԿ-ների արտաքին պատյանը պետք է բոլոր կողմերից ընդգրկի ներքին տարան:
- 6.5.5.4.22. ՍՄԿ-ի տակդիրի հիմքը կազմող ցանկացած ամբողջական մաս կամ առանձնացվող տակդիր պետք է հարմար լինի թույլատրելի առավելագույն անզուտ քաշով լցված ՍՄԿ-ները մեխանիկական եղանակով բեռնելու-բեռնաթափելու համար:
- 6.5.5.4.23. Տակդիրը կամ դրա ամբողջական հիմքը այնպես պետք է նախագծված լինեն, որ հնարավոր լինի խուսափել ՍՄԿ-ի հիմքի դուրս պրծնելուց, որը կարող է բեռնման-բեռնաթափման ժամանակ հանգեցնել վնասվածքների առաջացման:
- 6.5.5.4.24 Արտաքին պատյանը պետք է ցանկացած առանձնացվող տակդիրին այնպես ամրացված լինի, որ բեռնման-բեռնաթափման եւ փոխադրման ժամանակ ապահովվի դրա կայունությունը: Առանձնացվող տակդիր կիրառելու դեպքում դրա վերին մակերեսը պետք է զերծ լինի սուր ելուստներից, որոնք կարող են վնասել ՍՄԿ-ն:
- 6.5.5.4.25. Դարսակման արդյունավետության բարձրացման նպատակով կարող են օգտագործվել ամրացման այնպիսի պարագաներ, ինչպիսիք են փայտե ամրակապերը, սակայն դրանք ներքին տարայից դուրս պետք գտնվեն
- 6.5.5.4.26. Դարսակման համար նախատեսված ՍՄԿ-ների կրող մակերեսն



այնպիսին պետք է լինի, որը թույլ կտա անվտանգ եղանակով բաշխել բեռնվածքը: Նման ՍՄԿ-ները պետք է կառուցված լինեն այնպես, որ բեռնվածքը չընկնի ներքին տարայի վրա:

**6.5.5.5. Փայտաթելքային սալից պատրաստված ՍՄԿ-ների վերաբերյալ հատուկ պահանջները**

6.5.5.5.1. Սույն պահանջները կիրառվում են այնպիսի պինդ նյութերի փոխադրման համար նախատեսված փայտաթելքային սալից ՍՄԿ-ների նկատմամբ, որոնք լցվում կամ դատարկվում են ինքնահոսով: Փայտաթելքային սալից ՍՄԿ-ները 11G տեսակի են:

6.5.5.5.2. Փայտաթելքային սալից ՍՄԿ-ները չպետք է վերին մասից ամբարձիչ սարքեր ունենան:

6.5.5.5.3. Հենամարմինը պատրաստելիս պետք է օգտագործվի ՍՄԿ-ների տարողության եւ նախատեսված գործածության համար համապատասխան ամուր եւ լավ որակ ունեցող երկկողմանի ծալքավոր փայտաթելքային սալ (մեկ շերտով կամ բազմաշերտ): Արտաքին մակերեսի ջրակայունությունը զանգվածի ավելացման դեպքում, ինչպես որոշվել է 30 րոպե տեւողությամբ Cobb մեթոդով ջրակլանելիության որոշման նպատակով իրականացված փորձարկման ժամանակ, չպետք է գերազանցի 155 գ/մ<sup>2</sup> արժեքը (տե՛ս ISO 535:1991 ստանդարտը): Այն պետք է ունենա ծովելու համապատասխան հատկություն: Փայտաթելքային սալը պետք է կտրվի, ծալվի առանց անհարթությունների եւ ակոսատվի, որպեսզի հնարավոր լինի դրա հավաքումն առանց ճաքերի, մակերեսի վնասվածքների կամ չափից ավելի ծալվելու: Ծալքավոր փայտաթելքային սալը կամ դրա պատրաստման համար օգտագործվող ալիքավոր շերտը պետք ամուր սոսնձված լինեն արտաքին շերտերին:

6.5.5.5.4. Պատերը՝ այդ թվում նաեւ վերին եւ ստորին, ISO 3036:1975-ի համաձայն, պետք է առնվազն 15 J պատռվածքադիմացկունություն ունենան:

6.5.5.5.5. ՍՄԿ-ների հենամարմնի վրա արտադրական կցվանքները պետք է ունենան համապատասխան պատվածք, դրանք պետք է ժապավենով միացված, սոսնձված, երկաթակապերով կարված կամ առնվազն համարժեք արդյունավետ մեկ այլ եղանակով ամրացված լինեն: Այն դեպքում, երբ կցվանքները դրվել են սոսնձման կամ ժապավենով միացնելու եղանակով, ապա պետք է օգտագործվի ջրակայուն սոսնձանյութ: Երկաթակապերը ամբողջությամբ պետք է անցնեն ամրացվող բոլոր մասերի միջով եւ դա պետք է արվի կամ պաշտպանված լինի այնպես, որ ներքին ներդիրներից ոչ մեկը չքերվի կամ ծակվի դրանց հետեւանքով:

- 6.5.5.5.6. Ներդիրը պետք է պատրաստված լինի համապատասխան նյութից: Օգտագործվող նյութի ամրությունը եւ ներդիրի կառուցվածքը պետք է համապատասխանեն ՍՄԿ-ների տարողությանը եւ դրա նպատակային օգտագործմանը: Կցվանքներն ու փականները պետք է լինեն անթափանցելի եւ պետք է կարողանան դիմակայել ճնշմանը ու ներգործություններին, որոնք կարող են առաջանալ բեռնման, բեռնաթափման եւ փոխադրման սովորական պայմաններում:
- 6.5.5.5.7. ՍՄԿ-ի տակդիրի հիմքը կազմող ցանկացած ամբողջական մաս կամ առանձնացվող տակդիր պետք է հարմար լինի թույլատրելի առավելագույն անզուտ քաշով լցված ՍՄԿ-ն մեխանիկական եղանակով բեռնելու-բեռնաթափելու համար:
- 6.5.5.5.8. Տակդիրը կամ դրա ամբողջական հիմքը այնպես պետք է նախագծված լինեն, որ հնարավոր լինի խուսափել ՍՄԿ-ի հիմքի դուրս պրծնելուց, որը կարող է բեռնման-բեռնաթափման ժամանակ հանգեցնել վնասվածքների առաջացման:
- 6.5.5.5.9. Հենամարմինը պետք է ցանկացած առանձնացվող տակդիրին այնպես ամրացված լինի, որ բեռնման-բեռնաթափման եւ փոխադրման ժամանակ ապահովվի դրա կայունությունը: Առանձնացվող տակդիր կիրառելու դեպքում դրա վերին մակերեսը պետք է զերծ լինի սուր ելուստներից, որոնք կարող են վնասել ՍՄԿ-ն:
- 6.5.5.5.10. Դարսակման արդյունավետության բարձրացման նպատակով կարող են օգտագործվել ամրացման այնպիսի պարագաներ, ինչպիսիք են փայտե ամրակապերը, սակայն դրանք ներդիրից դուրս պետք գտնվեն
- 6.5.5.5.11. Դարսակման համար նախատեսված ՍՄԿ-ների կողմ մակերեսն այնպիսին պետք է լինի, որը թույլ կտա անվտանգ եղանակով բաշխել բեռնվածքը:

**6.5.5.6. Փայտե ՍՄԿ-ների վերաբերյալ հատուկ պահանջները**

6.5.5.6.1. Սույն պահանջները կիրառվում են ինքնահոսով լցվող կամ դատարկվող պինդ նյութերի փոխադրման համար նախատեսված փայտե ՍՄԿ-ների նկատմամբ: Գոյություն ունեն փայտե ՍՄԿ-ների հետեւյալ տեսակները՝

11C բնափայտից՝ ներքին ներդիրով

11D նրբատախտակից՝ ներքին ներդիրով

11F վերամշակված փայտից՝ ներքին ներդիրով

6.5.5.6.2. Փայտե ՍՄԿ-ները չպետք է վերին մասից ամբարձիչ սարքեր ունենան:

- 6.5.5.6.3. Օգտագործվող նյութերի ամրությունն ու հենամարմնի պատրաստման եղանակը պետք է համապատասխանեն ՍՄԿ-ների տարողությանը եւ նպատակային օգտագործմանը:
- 6.5.5.6.4. ՍՄԿ-ների օգտագործման համար նախատեսվող բնափայտը պետք է լավ պահորակված, առետրային տեսանկյունից չոր լինի, ինչպես նաեւ զերծ լինի թերություններից, որոնք կարող են էապես նվազեցնել ՍՄԿ-ի ցանկացած մասի ամրությունը ՍՄԿ-ների յուրաքանչյուր մաս պետք է բաղկացած լինի մեկ ամբողջական կամ համանման կտորից: Մասերը համարվում են մեկ ամբողջական կտորին համարժեք, երբ կիրառվում է հավաքվածքի կազմաձեւման սոսնձման համապատասխան եղանակ, օրինակ Լինդերմանի միացքի, ագուցավոր միացքի, վրափակման կամ քառորդան կապակցման միացքի կամ ծայրիծայր միացքի կիրառմամբ՝ յուրաքանչյուր միացքի վրա առնվազն երկու ամրակման ալիքավոր մանրամասերով կամ առնվազն համարժեք արդյունավետության այլ մեթոդների կիրառման դեպքում:
- 6.5.5.6.5. Նրբատախտակից պատրաստված հենամարմինները պետք է բաղկացած լինեն առնվազն 3 շերտից: Դրանք պետք է պատրաստված լինեն լավ պահորակված ծլեպված միաշերտ, ռանդված կամ սղոցված նրբատախտակից, որը պետք է առետրային տեսանկյունից չոր լինի, ինչպես նաեւ զերծ լինի թերություններից, որոնք կարող են էապես նվազեցնել հենամարմնի ամրությունը: Բոլոր հարակից շերտերը պետք է սոսնձված լինեն ջրակայուն սոսնձանյութով: Հենամարմնի պատրաստման նպատակով նրբատախտակի հետ կարող են օգտագործվել այլ համապատասխան նյութեր:
- 6.5.5.6.6. Վերամշակված փայտից պատրաստված հենամարմինները պետք է պատրաստված լինեն անջրանցիկ վերամշակված փայտի այնպիսի տեսակներից, ինչպիսիք են կոշտ ստվարաթուղթը, փայտատաշեղային սալը կամ այլ համապատասխան տեսակները:
- 6.5.5.6.7. ՍՄԿ-ները անկյունային հենարանների կամ ծայրերի մասում պետք է ամուր մեխված լինեն կամ հավաքվեն նմանատիպ համապատասխան հարմարանքներով:
- 6.5.5.6.8. Ներդիրը պետք է պատրաստված լինի համապատասխան նյութից: Օգտագործվող նյութի ամրությունը եւ ներդիրի կառուցվածքը պետք է համապատասխանեն ՍՄԿ-ների տարողությանը եւ նպատակային օգտագործմանը: Կցվանքներն ու փականները պետք է անթափանցելի լինեն եւ պետք է կարողանան դիմակայել ճնշմանը ու ներգործություններին, որոնք կարող են առաջանալ բեռնման, բեռնաթափման եւ փոխադրման սովորական պայմաններում:

- 6.5.5.6.9. ՍՄԿ-ի տակդիրի հիմքը կազմող ցանկացած ամբողջական մաս կամ առանձնացվող տակդիր պետք է հարմար լինի թույլատրելի առավելագույն անզուտ քաշով լցված ՍՄԿ-ն մեխանիկական եղանակով բեռնելու-բեռնաթափելու համար:
- 6.5.5.6.10. Տակդիրը կամ դրա ամբողջական հիմքը այնպես պետք է նախագծված լինեն, որ հնարավոր լինի խուսափել ՍՄԿ-ի հիմքի դուրս պրծնելուց, որը կարող է բեռնման-բեռնաթափման ժամանակ հանգեցնել վնասվածքների առաջացման:
- 6.5.5.6.11. Հենամարմինը պետք է ցանկացած առանձնացվող տակդիրին այնպես ամրացված լինի, որ բեռնման-բեռնաթափման եւ փոխադրման ժամանակ ապահովվի դրա կայունությունը: Առանձնացվող տակդիր կիրառելու դեպքում դրա վերին մակերեսը պետք է զերծ լինի սուր ելուստներից, որոնք կարող են վնասել ՍՄԿ-ն:
- 6.5.5.6.12. Դարսակման արդյունավետության բարձրացման նպատակով կարող են օգտագործվել ամրացման այնպիսի պարագաներ, ինչպիսիք են փայտե ամրակապերը, սակայն դրանք ներդիրից դուրս պետք գտնվեն:
- 6.5.5.6.13. Դարսակման համար նախատեսված ՍՄԿ-ների կողմ մակերեսն այնպիսին պետք է լինի, որը թույլ կտա անվտանգ եղանակով բաշխել բեռնվածքը:

**6.5.6. ՍՄԿ-ների փորձարկումների վերաբերյալ պահանջները**

**6.5.6.1. Փորձարկումների իրականացումը եւ հաճախականությունը**

- 6.5.6.1.1. Մինչեւ շահագործումը եւ մակնշման թույլտվություն տվող իրավասու մարմնի կողմից հաստատումը՝ ՍՄԿ-ների կառուցվածքի յուրաքանչյուր տեսակ պետք է բարեհաջող անցնի սույն գլխով նախատեսվող փորձարկումները: ՍՄԿ-ների կառուցվածքի յուրաքանչյուր տեսակ որոշվում է կառուցվածքով, չափսով, նյութով եւ դրա հաստությամբ, պատրաստման տեխնոլոգիայով եւ լցավորման ու դատարկման համար հարմարանքներով, սակայն կարող է ներառել մակերեսի մշակման տարբեր մեթոդներ: Այն նույնպես ներառում է այնպիսի ՍՄԿ-ներ, որոնք իրենց կառուցվածքի տեսակից տարբերվում են միայն իրենց ավելի փոքր արտաքին չափսերով:
- 6.5.6.1.2. Փորձարկումների պետք է ենթարկվեն փոխադրման համար պատրաստված ՍՄԿ-ները: ՍՄԿ-ները պետք է լցավորվեն այնպես, ինչպես նշված է համապատասխան բաժիններում: Այն նյութերը, որոնք փոխադրվելու են ՍՄԿ-ներով, կարող են փոխարինվել այլ նյութերով, եթե դա չի ներգործի փորձարկումների արդյունքների վրա: Եթե մեկ պինդ նյութի փոխարեն օգտագործվում է մեկ այլ

պինդ նյութ, ապա այն պետք է ունենա նույն ֆիզիկական հատկությունները (զանգվածը, մասնիկների չափսը եւ այլն), ինչ փոխադրման ենթակա նյութը: Փաթեթի պահանջվող ընդհանուր զանգվածը ստանալու համար թույլատրվում է օգտագործել հավելյալ առարկաներ, ինչպիսիք են պարկերը կամ կապարակտորները, այն դեպքում, երբ դրանք այնպես են դրված, որ չեն ազդի փորձարկման արդյունքների վրա:

#### **6.5.6.2. *Կառուցվածքի տեսակի փորձարկումները***

6.5.6.2.1. Յուրաքանչյուր կառուցվածքի տեսակի, չափսի, պատերի հաստության եւ պատրաստման տեխնոլոգիայի մեկ ՍՄԿ-ն պետք է ենթարկվի 6.5.6.3.7-ում նշված փորձարկումներին այն հերթականությամբ, որով դրանք թվարկված են աղյուսակում եւ 6.5.6.4 - 6.5.6.13-ում ներկայացված պայմաններին համապատասխան: Կառուցվածքի տեսակի այդ փորձարկումները պետք է կատարվեն իրավասու մարմնի կողմից տրված ցուցումների համաձայն:

6.5.6.2.2. Համապատասխանաբար 31HH1 եւ 31HH2 բաղադրյալ բարդ ՍՄԿ-ների եւ 31H2 տեսակի կոշտ պլաստմասսայե ՍՄԿ-ների դեպքում 6.5.6.3.3-ի կամ 6.5.6.3.5-ի համաձայն ՍՄԿ-ներում պարունակվող գազերի կամ ստանդարտ հեղուկների հետ բավարար քիմիական համատեղելիության ապացույցի համար կարելի է օգտագործել երկրորդ ՍՄԿ-ն, այն դեպքում, երբ ՍՄԿ-ները նախատեսված են դարսակման համար: Այդ դեպքում երկու ՍՄԿ-ներն էլ պետք է ենթարկվեն նախնական պահման:

6.5.6.2.3. Իրավասու մարմինը կարող է թույլատրել այն ՍՄԿ-ների ընտրանքային փորձարկումը, որոնք մի փոքր են միայն տարբերվում փորձարկում անցած տեսակից, օրինակ՝ արտաքին չափսերից մի փոքր պակաս չափսերով:

6.5.6.2.4. Եթե փորձարկումներն անցկացնելիս կիրառվում են առանձնացվող տակդիրներ, ապա փորձարկումների՝ 6.5.6.14-ի համաձայն կազմվող արձանագրությունում պետք է ներառվի կիրառվող տակդիրների տեխնիկական բնութագիրը:

#### **6.5.6.3. *ՍՄԿ-ների նախապատրաստումը փորձարկումներին***

6.5.6.3.1. Թղթե եւ փայտաթելքային սալից ՍՄԿ-ները եւ փայտաթելքային սալից արտաքին պատյաններով բարդ ՍՄԿ-ները առնվազն 24 ժամ պետք է պահվեն կարգավորվող ջերմաստիճանով եւ հարաբերական խոնավությամբ (h/խ) մթնոլորտային պայմաններում: Երեք տարբերակից անհրաժեշտ է ընտրել մեկը: Մթնոլորտի նախընտրելի ջերմաստիճանը  $23\text{ }^{\circ}\text{C} \pm 2\text{ }^{\circ}\text{C}$  է, իսկ հարաբերական խոնավությունը՝  $50\% \pm 2\%$  (h/խ): Մյուս երկու տարբերակներն են՝  $20\text{ }^{\circ}\text{C} \pm 2\text{ }^{\circ}\text{C}$  եւ 65%

$\pm 2\%$  հ/խ կամ  $27\text{ }^{\circ}\text{C} \pm 2\text{ }^{\circ}\text{C}$  եւ  $65\% \pm 2\%$  հ/խ:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** Միջին արժեքները պետք է տարանվեն նշված սահմաններում: Կարճաժամկետ տարանումները եւ չափման թերությունները կարող են պատճառ հանդիսանալ, որպեսզի առանձին չափումների հարաբերական խոնավության արժեքը մինչեւ  $\pm 5\%$ -ով տարբերվի մյուսներից, առանց խախտելու փորձարկման վերարտադրելիությունը

- 6.5.6.3.2. Պետք է ձեռնարկվեն լրացուցիչ միջոցներ՝ համոզվելու համար, որ կոշտ պլաստմասսայե ՍՄԿ-ների (31H1 եւ 31H2 տեսակներ) եւ բարդ ՍՄԿ-ների (31HZ1 եւ 31HZ2) պատրաստման համար օգտագործվող պլաստիկ նյութերը համապատասխանում են համապատասխանաբար 6.5.5.3.2 - 6.5.5.3.4-ում եւ 6.5.5.4.6 - 6.5.5.4.9-ում նշված պահանջներին:
- 6.5.6.3.3. Պարունակվող բեռների հետ բավարար քիմիական համատեղելիությունն ապացուցելու համար ՍՄԿ-ների նմուշները պետք է ենթարկվեն վեցամսյա ժամանակահատվածով նախնական պահման, որի ընթացքում այդ նմուշները պետք է շարունակ լցված մնան այն նյութերով, որոնց փոխադրման համար դրանք նախատեսված են կամ այն նյութերով, որոնք ինչպես հայտնի է, առաջացնում են ուսումնասիրվող պլաստիկ նյութերի առնվազն նույնքան ուժեղ ճաքճքում, ամրության նվազեցում կամ մոլեկուլների կառուցվածքի խախտում. որից հետո նմուշները պետք է ենթարկվեն 6.5.6.3.7-ի աղյուսակում նշված համապատասխան փորձարկումների:
- 6.5.6.3.4. Եթե պլաստիկ նյութի բավարար դրսեւորումը փորձվել է այլ մեթոդներով, ապա համատեղելիության մասով վերը նշված փորձարկումը կարելի է չանցկացնել: Այդ մեթոդները պետք է լինեն առնվազն նույնչափ արդյունավետ, ինչ համատեղելիության մասով վերը նշված փորձարկումը եւ պետք է ճանաչվեն իրավասու մարմնի կողմից:
- 6.5.6.3.5. 6.5.5.3-ով նախատեսվող պոլիէթիլենից կոշտ պլաստմասսայե ՍՄԿ-ների (31H1 եւ 31H2 տեսակներ) եւ 6.5.5.4-ի համաձայն նախատեսվող պոլիէթիլենից ներքին տարայով բարդ ՍՄԿ-ների (31HZ1 եւ 31HZ2 տեսակներ) համար 4.1.1.21-ի համաձայն ստանդարտ հեղուկներին դասված հեղուկ լցանյութերի հետ քիմիական համատեղելիությունը կարող է ստուգվել, ինչպես նկարագրված է ստորեւ, ստանդարտ հեղուկների կիրառմամբ (տե՛ս 6.1.6):

Ստանդարտ հեղուկները կործանարար ազդեցություն ունեն պոլիէթիլենի վրա, քանի որ դրանք առաջացնում են լայնանալու միջոցով փափկեցում լարվածության տակ ճաքելու, մոլեկուլների տրոհման եւ այդ տեսակների համակցության ներգործության

արդյունքում:

ՍՄԿ-ների բավարար քիմիական համատեղելիությունը կարող է ստուգվել համապատասխան ստանդարտ հեղուկի (հեղուկների) կիրառմամբ 40 °C ջերմաստիճանում երեք շաբաթվա ընթացքում պահանջվող փորձանմուշների պահման եղանակով. եթե այդ ստանդարտ հեղուկը ջուրն է, ապա, սույն ընթացակարգի համաձայն, պահում չի պահանջում: Դարսակման փորձարկումների ժամանակ օգտագործվող փորձանմուշների պահումը չի պահանջվում ինչպես «խոնավացնող լուծույթ», այնպես էլ «քացախաթթու» ստանդարտ հեղուկների դեպքում: Այդ պահումից հետո փորձանմուշները պետք է ենթարկվեն 6.5.6.4 - 6.5.6.9-ով նախատեսվող փորձարկումների:

40%-ից ավելի պերօքսիդի եւ 5.2 դասին դասված պերօքսիացետիկ թթուների պարունակությամբ տրետ-բութիլի հիդրոպերօքսիդի համատեղելիության վերաբերյալ փորձարկումը չպետք է կատարվի ստանդարտ հեղուկների օգտագործմամբ: Այդ նյութերի դեպքում փորձանմուշների բավարար քիմիական համատեղելիությունը պետք է ստուգվի արտաքին միջավայրի ջերմաստիճանի պայմաններում այն նյութերի հետ վեց ամիս ժամկետով պահման ընթացքում, որոնց հետ դրանք նախատեսված են փոխադրվել:

Պոլիէթիլենից ՍՄԿ-ների վերաբերյալ սույն պարբերությամբ նախատեսված ընթացակարգի համաձայն կատարված փորձարկումների արդյունքները կարող են հաստատվել կառուցվածքի միեւնույն տեսակի ՍՄԿ-ների համար, որոնց ներքին մակերեսը մշակված է ֆտորով:

6.5.6.3.6. 6.5.6.3.5-ով նախատեսվող փորձարկումներն անցած 6.5.6.3.5-ում նշված ՍՄԿ-ների կառուցվածքի տեսակների համար լցանյութերի հետ քիմիական համատեղելիությունը կարող է ստուգվել լաբորատոր փորձարկումների միջոցով, որոնք հաստատում են, որ նման լցանյութերի ազդեցությունը փորձանմուշների վրա պակաս զգալի է, քան համապատասխան ստանդարտ հեղուկի (հեղուկների) ազդեցությունը՝ հաշվի առնելով փլուզման համապատասխան գործընթացները: Ինչ վերաբերում է հարաբերական խտությանը եւ գոլորշու ճնշմանը, ապա կիրառվում են 4.1.1.21.2-ով նախատեսվող նույն պայմանները:

6.5.6.3.7. *Կառուցվածքի տեսակի պահանջվող փորձարկումները եւ դրանց անցկացման հերթականությունը*

ՍՄԿ-ների տեսակը	Թրթթակայու նության <sup>9</sup>	Ներքեի հատվածից բարձրացման	Գագաթի հատվածից բարձրացման <sup>10</sup>	Դարսակման <sup>11</sup>	Անջրանցիկության	Հիդրավիլիկ ճնշման	Անկման	Պատման	Շրջվելու	Ուղղման <sup>12</sup>
Մետաղական՝										

ՍՄԿ-ների տեսակը	Թրթռակայրու նույնան Գ	Ներքեի հատվածից բարձրացման	Գագաթի հատվածից բարձրացման Ծ	Դարսակման Բ	Անջրանցիկության	Հիդրավիկ ճնշման	Անկման	Պատման	Շրջվելու	Ուղղման Գ
11A, 11B, 11N	-	1-ին Ծ	2-րդ	3-րդ	-	-	4-րդ Ե	-	-	-
21A, 21B, 21N	-	1-ին Ծ	2-րդ	3-րդ	4-րդ	5-րդ	6-րդ Ե	-	-	-
31A, 31B, 31N	1-ին	2-րդ Ծ	3-րդ	4-րդ	5-րդ	6-րդ	7-րդ Ե	-	-	-
Փափուկ Գ	-	-	Խ Գ	Խ	-	-	Խ	Խ	Խ	Խ
Կոշտ պլաստմասայից՝										
11H1, 11H2	-	1-ին Ծ	2-րդ	3-րդ	-	-	4-րդ	-	-	-
21H1, 21H2	-	1-ին Ծ	2-րդ	3-րդ	4-րդ	5-րդ	6-րդ	-	-	-
31H1, 31H2	1-ին	2-րդ Ծ	3-րդ	4-րդ Է	5-րդ	6-րդ	7-րդ	-	-	-
Բարդ՝										
11HZ1, 11HZ2	-	1-ին Ծ	2-րդ	3-րդ	-	-	4-րդ Ե	-	-	-
21HZ1, 21HZ2	-	1-ին Ծ	2-րդ	3-րդ	4-րդ	5-րդ	6-րդ Ե	-	-	-
31HZ1, 31HZ2	1-ին	2-րդ Ծ	3-րդ	4-րդ Է	5-րդ	6-րդ	7-րդ Ե	-	-	-
Փայտաթելքային սալից	-	1-ին	-	2-րդ	-	-	3	-	-	-
Փայտե	-	1-ին	-	2-րդ	-	-	3	-	-	-

Ծ Եթե ՍՄԿ-ն կառուցված է բեռնման/բեռնաթափման այդ մեթոդի համար:

Բ Եթե ՍՄԿ-ն նախատեսված է դարսակման համար:

Գ Եթե ՍՄԿ-ն նախատեսված է վերին կամ կողային մասից բարձրացնելու համար:

Դ Պահանջվող փորձարկումը նշված է “Խ” նշանով. մեկ փորձարկում անցած ՍՄԿ-ն կարող է օգտագործվել ցանկացած հերթականությամբ այլ փորձարկումների անցկացման համար:

Ե Անկման փորձարկման ժամանակ կարող է օգտագործվել միեւնույն կառուցվածքի տեսակի ցանկացած այլ ՍՄԿ:

Զ Թրթռակայրունության փորձարկման ժամանակ կարող է օգտագործվել միեւնույն կառուցվածքն ունեցող մեկ այլ ՍՄԿ:

Է Երկրորդ ՍՄԿ-ն, ինչպես նախատեսված է 6.5.6.2.2-ում, կարող է օգտագործվել անկախ փորձարկումների անցկացման հերթականությունից նախնական պահումից անմիջապես հետո:

#### 6.5.6.4. Ներքեի հատվածից բարձրացման փորձարկում

##### 6.5.6.4.1. Կիրառելիությունը

Կատարվում է որպես կառուցվածքի տեսակի փորձարկում փայտաթելքային սալից ՍՄԿ-ի եւ փայտե ՍՄԿ-ի ու բոլոր այն տեսակի ՍՄԿ-ների վրա, որոնք սարքավորված են հիմքից բարձրացնելու հարմարանքներով:

##### 6.5.6.4.2. ՍՄԿ-ի նախապատրաստումը փորձարկմանը

ՍՄԿ-ն պետք է լցված լինի: Պետք է ավելացվի հավասարաչափ բաշխված բեռնվածություն: Լցված ՍՄԿ-ի զանգվածը պետք է 1.25 անգամ գերազանցի առավելագույն թույլատրելի անզուտ քաշը:

##### 6.5.6.4.3. Փորձարկման մեթոդը



ՍՄԿ-ն պետք է պետք է երկու անգամ բարձրացվի եւ իջեցվի ճանկավոր ավտորեռնիչով, որի բեռնաեղանը պետք է տեղակայված լինի հիմնատակի կենտրոնում եւ գրավի դրա չափսի երեք քառորդի չափով տարածություն (եթե, բեռնաեղանի ներանցման կետերը ֆիքսված չեն): Բեռնաեղանը հիմնատակի չափսի երեք քառորդին համարժեք խորությամբ ներանցման ուղղությամբ պետք է ներս տարվի: Փորձարկումը պետք է կրկնվի ներանցման ցանկացած հնարավոր ուղղությունից:

**6.5.6.4.4. Փորձարկումն անցնելու չափորոշիչները**

Մնացորդային դեֆորմացիայի բացակայությունը, որը խոշոր փաթեթվածքը՝ առկայության դեպքում տակդիրը եւս, կդարձնեն փոխադրման համար ոչ անվտանգ, ինչպես նաեւ պարունակության կորստի բացառումը:

**6.5.6.5. Գազաթի հատվածից բարձրացման փորձարկում**

**6.5.6.5.1. Կիրառելիությունը**

Կատարվում է որպես կառուցվածքի տեսակի փորձարկում բոլոր այն տեսակի ՍՄԿ-ների վրա, որոնք նախատեսված են գազաթի հատվածից բարձրացնելու համար եւ փափուկ ՍՄԿ-ների վրա, որոնք նախատեսված են գազաթի կամ կողային հատվածներից բարձրացնելու համար:

**6.5.6.5.2. ՍՄԿ-ի նախապատրաստումը փորձարկմանը**

Մետաղական, կոշտ պլաստմասսայե եւ բարդ ՍՄԿ-ները պետք է լցված լինեն: Պետք է ավելացվի հավասարաչափ բաշխված բեռնվածություն: Լցված ՍՄԿ-ի զանգվածը պետք է երկու անգամ գերազանցի առավելագույն թույլատրելի անզուտ քաշը: Փափուկ ՍՄԿ-ները պետք է լցված լինեն տիպիկ նյութով եւ այնուհետեւ դրանք պետք է բեռնվեն դրանց առավելագույն թույլատրելի անզուտ քաշի վեցապատիկի չափով, ընդ որում բեռնվածությունը պետք է հավասարաչափ բաշխված լինի:

**6.5.6.5.3. Փորձարկման մեթոդները**

Մետաղական եւ փափուկ ՍՄԿ-ները պետք է բարձրացվեն դրանց համար նախատեսված եղանակով մինչեւ հատակից պոկելու պահը եւ այդ դիրքում պահվեն հինգ րոպե:

Կոշտ պլաստմասսայե եւ բարդ ՍՄԿ-ները պետք է բարձրացվեն՝

- ա) ամբարձիչ սարքերի՝ անկյունագծով տեղակայված յուրաքանչյուր զույգի օգնությամբ այնպես, որ բարձրացնող ուժը ուղղաձիգ կերպով ազդի եւ պահվի այդ դիրքում հինգ րոպե եւ

բ) ամբարձիչ սարքերի՝ անկյունագծով տեղակայված յուրաքանչյուր զույգի օգնությամբ այնպես, որ բարձրացնող ուժը 45° անկյան վրա ազդի եւ պահվի այդ դիրքում հինգ րոպե:

6.5.6.5.4. Փափուկ ՍՄԿ-ների համար կարող են կիրառվել եւ այլ՝ գազաթի հատվածից բարձրացման փորձարկումների անցկացման եւ փորձարկումներին նախապատրաստելու առնվազն նույնչափ արդյունավետ մեթոդներ:

6.5.6.5.5. *Փորձարկումն անցնելու չափորոշիչները*

ա) մետաղական, կոշտ պլաստմասսայե եւ բարդ ՍՄԿ-ներ. ՍՄԿ-ն շարունակում է մնալ անվտանգ փոխադրման սովորական պայմաններում, բացակայում է ՍՄԿ-ի ակնհայտ մնացորդային դեֆորմացիան (առկայության դեպքում տակդիրինը եւս) եւ չկա պարունակության կորուստ:

բ) փափուկ ՍՄԿ-ներ՝ ՍՄԿ-ի կամ դրա ամբարձիչ սարքերի վնասվածքի բացակայությունը, որն առկայության դեպքում ՍՄԿ-ն կդարձնե փոխադրման կամ բեռնման-բեռնաթափման համար ոչ անվտանգ, ինչպես նաեւ պարունակության կորստի բացառումը:

### **6.5.6.6. *Դարսակման փորձարկումը***

6.5.6.6.1. *Կիրառելիությունը*

Կատարվում են որպես կառուցվածքի տեսակի փորձարկում բոլոր այն տեսակի ՍՄԿ-ների վրա, որոնք նախատեսված են դարսակման համար:

6.5.6.6.2. *ՍՄԿ-ի նախապատրաստումը փորձարկմանը*

ՍՄԿ-ն պետք է լցված լինի մինչեւ դրա առավելագույն թույլատրելի անզուտ քաշը: Եթե փորձարկման համար օգտագործվող արտադրանքի տեսակարար կշիռը չի թույլ տալիս դա անել, ապա ՍՄԿ-ի նկատմամբ պետք է լրացուցիչ բեռնվածություն գործադրվի, որպեսզի այն փորձարկվի իր առավելագույն թույլատրելի անզուտ քաշով, ընդ որում, բեռնվածությունը պետք է հավասարաչափ բաշխվի:

6.5.6.6.3. *Փորձարկման մեթոդը*

ա) ՍՄԿ-ն իր հիմքով պետք է տեղադրվի հորիզոնական ամուր մակերեսի վրա եւ ենթարկվի հավասարապես բաշխված վերադիր փորձարկային բեռնվածության ազդեցությանը (տե՛ս 6.5.6.6.4): 31H2 տեսակի կոշտ պլաստմասսայե ՍՄԿ-ների եւ 31HH1 եւ 31HH2 տեսակի բարդ ՍՄԿ-ների դեպքում դարսակման

փորձարկումը պետք է անցկացվի նախնական լցանյութի կամ ստանդարտ հեղուկի օգտագործմամբ (տե՛ս 6.1.6) 6.5.6.3.3-ի կամ 6.5.6.3.5-ի համաձայն երկրորդ ՍՄԿ-ի վրա, ինչպես նախատեսված է 6.5.6.2.2-ում նախնական պահումից հետո: ՍՄԿ-ները պետք է ենթարկվեն փորձարկային բեռնվածության ներգործությանը՝ առնվազն հետեւյալ տեսողությամբ՝

- i) հինգ թույլ մետաղական ՍՄԿ-ների դեպքում.
  - ii) 28 օր՝ 40 °C ջերմաստիճանում 11H2, 21H2 եւ 31H2 տեսակի կոշտ պլաստմասսայե ՍՄԿ-ների դեպքում եւ պլաստիկ նյութից արտաքին պատյանով բարդ ՍՄԿ-ների դեպքում, որոնք իրենց վրա են կրում դարսակման բեռնվածությունը (դրանք են՝ 11HH1, 11HH2, 21HH1, 21HH2, 31HH1 եւ 31HH2 տեսակները).
  - iii) 24 ժամ՝ բոլոր մյուս տեսակի ՍՄԿ-ների դեպքում:
- բ) բեռնվածությունը պետք է գործադրվի ստորեւ բերված մեթոդներից մեկի համաձայն՝
- i) Մինչեւ առավելագույն թույլատրելի անգուտ քաշը լցված մեկ կամ մի քանի միատեսակ ՍՄԿ-ները դարսակվում են փորձարկվող ՍՄԿ-ի վրա.
  - ii) Համապատասխան կշռի բեռները դասավորվում են ՍՄԿ-ի հիմքի նմանությամբ հարթ սալիկի կամ տակդիրի վրա, որը դարսակվում է փորձարկվող ՍՄԿ-ի վրա:

#### 6.5.6.6.4. Վերադիր փորձարկային բեռնվածության հաշվարկումը

ՍՄԿ-ի վրա դրվող բեռը պետք է 1.8 անգամ գերազանցի այն քանակության միատեսակ ՍՄԿ-ի ընդհանուր առավելագույն թույլատրելի անգուտ քաշը, որը կարող է դրվել փոխադրման ժամանակ ՍՄԿ-ի վրա վերեւից:

#### 6.5.6.6.5. Փորձարկումն անցնելու չափորոշիչները

- ա) բոլոր տեսակների ՍՄԿ-ները բացի փափուկ ՍՄԿ-ներից. մնացորդային դեֆորմացիայի բացակայությունը, որը ՍՄԿ-ն, առկայության դեպքում տակդիրը եւս, կդարձնել փոխադրման համար ոչ անվտանգ, ինչպես նաեւ պարունակության կորստի բացառումը..
- բ) փափուկ ՍՄԿ-ներ՝ հենամարմնի այնպիսի վնասվածքի բացակայությունը, որն առկայության դեպքում ՍՄԿ-ն կդարձնել փոխադրման համար ոչ անվտանգ, ինչպես նաեւ պարունակության կորստի բացառումը:

**6.5.6.7. Անշրանցիկության փորձարկումը**

**6.5.6.7.1. Կիրառելիությունը**

Կատարվում է որպես կառուցվածքի տեսակի փորձարկում եւ պարբերական փորձարկում ճնշման տակ բեռնվող կամ բեռնաթափվող հեղուկ կամ պինդ նյութերի փոխադրման համար նախատեսվող ՍՄԿ-ների տեսակների վրա:

**6.5.6.7.2. ՍՄԿ-ի նախապատրաստումը փորձարկմանը**

Փորձարկումը պետք է կատարվի մինչեւ ցանկացած ջերմամեկուսացնող սարք տեղադրելը: Օդափոխիչ անցքերով փականները պետք է փոխարինվեն կամ առանց անցքերի համանման փականներով կամ էլ օդափոխիչ անցքերը պետք է փակվեն:

**6.5.6.7.3. Փորձարկման մեթոդը եւ գործադրվող ճնշումը**

Փորձարկումը պետք է անցկացվի 20 կՊա-ից ոչ պակաս (0.2 բար) մանոմետրական ճնշման տակ՝ օդի օգտագործմամբ ոչ պակաս, քան 10 րոպեի ընթացքում: ՍՄԿ-ների օդի անթափանցելիությունը պետք է որոշվի համապատասխան մեթոդով, ինչպես, օրինակ՝ օդի ճնշման անկման չափման դիֆերենցիալ փորձարկման մեթոդով կամ ՍՄԿ-ն ջրի մեջ ընկղմելու միջոցով կամ մետաղական ՍՄԿ-ի դեպքում՝ օճառային լուծույթով կարանները եւ միացքները պատելու եղանակով: Ջրի մեջ ընկղմելու դեպքում անհրաժեշտ է կիրառել ուղղման գործակից՝ հիդրոստատիկ ճնշման հաշվարկի համար:

**6.5.6.7.4. Փորձարկումն անցնելու չափորոշիչները**

Օդի արտահոսքի բացակայություն:

**6.5.6.8. Ներքին ճնշման (հիդրավիկ) փորձարկումը**

**6.5.6.8.1. Կիրառելիությունը**

Կատարվում է որպես կառուցվածքի տեսակի փորձարկում՝ ճնշման տակ լցավորվող կամ դատարկվող պինդ կամ հեղուկ նյութերի փոխադրման համար նախատեսված ՍՄԿ-ների վրա:

**6.5.6.8.2. ՍՄԿ-ի նախապատրաստումը փորձարկմանը**

Փորձարկումը պետք է կատարվի մինչեւ ցանկացած ջերմամեկուսացնող սարք տեղադրելը: Ճնշումը նվազեցնող սարքերը պետք է հանվեն, մինչդեռ դրանց կարգավորման համար անցքերը՝ խլացվեն կամ դրանք պետք է դարձվեն չգործող:

**6.5.6.8.3. Փորձարկման մեթոդը**

Փորձարկումը պետք է կատարվի ոչ պակաս, քան 10 րոպեի ընթացքում հիդրավիկ ճնշման կիրառմամբ, որը չպետք է լինի 6.5.6.8.4-ում նշված

ճնշման արժեքից ցածր: Փորձարկման ընթացքում ՍՄԿ-ները չպետք է ենթարկվեն մեխանիկական ներգործության:

6.5.6.8.4. Գործադրվող ճնշման արժեքները

6.5.6.8.4.1. Մետաղական ՍՄԿ-ներ՝

- ա) փաթեթավորման I խմբի պինդ նյութերի փոխադրման համար նախատեսված՝ 21A, 21B եւ 21N տեսակի ՍՄԿ-ների դեպքում մանոմետրական ճնշումը պետք է կազմի 250 կՊա (2.5 բար)։
- բ) փաթեթավորման II կամ III խմբերի նյութերի փոխադրման համար նախատեսված՝ 21A, 21B, 21N, 31A, 31B եւ 31N մանոմետրական ճնշումը պետք է կազմի 200 կՊա (2 բար)։
- գ) ինչպես նաեւ 31A, 31B եւ 31N տեսակի ՍՄԿ-ների դեպքում մանոմետրական ճնշումը պետք է կազմի 65 կՊա (0.65 բար): Այդ փորձարկումը պետք է իրականացվի մինչեւ 200 կՊա (2 բար) ճնշման փորձարկման անցկացումը:

6.5.6.8.4.2. Կոշտ պլաստմասսայե եւ բարդ ՍՄԿ-ներ՝

- ա) 21H1, 21H2, 21HZ1 եւ 21HZ2 տեսակի ՍՄԿ-ների դեպքում մանոմետրական ճնշումը պետք է կազմի 75 կՊա (0.75 բար)։
- բ) 31H1, 31H2, 31HZ1 եւ 31HZ2 տեսակի ՍՄԿ-ների դեպքում կիրառվում է երկու մեծություններից ամենամեծը, որոնցից մեկը որոշվում է հետեւյալ մեթոդներից մեկի միջոցով՝
  - i) ՍՄԿ-ում չափված ընդհանուր մանոմետրական ճնշումը (այսինքն՝ լցանյութի գոլորշու ճնշման արժեքին գումարած օդի կամ այլ չեզոք գազերի մասնակի ճնշման արժեքը, հանած 100 կՊա)՝ 55 °C ջերմաստիճանում եւ բազմապատկած ամրության պաշարի 1.5 գործակցով: Այդ ընդհանուր մանոմետրական ճնշումը պետք է 4.1.1.4-ի համաձայն որոշվի հաշվի առնելով լցավորման առավելագույն մակարդակը եւ լցավորման՝ 15 °C ջերմաստիճանը.
  - ii) 1.75 անգամ 50 °C ջերմաստիճանում փոխադրվող նյութի գոլորշու ճնշման արժեքը, հանած 100 կՊա՝ առնվազն 100 կՊա-փորձարկային ճնշման պարագայում.
  - iii) 1.5 անգամ 55 °C ջերմաստիճանում փոխադրվող նյութի գոլորշու ճնշման արժեքը՝ հանած 100 կՊա՝ առնվազն 100 կՊա-փորձարկային ճնշման պարագայում.

Իսկ երկրորդը՝ հետեւյալ մեթոդի օգնությամբ՝

- iv) փոխադրվող նյութի ստատիկ ճնշման արժեքի

կրկնապատիկը՝ ջրի ստատիկ ճնշման արժեքի առնվազն կրկնապատիկի պարագայում.

**6.5.6.8.5. Փորձարկումն (փորձարկումներն) անցնելու չափորոշիչները՝**

- ա) 21A, 21B, 21N, 31A, 31B եւ 31N տեսակի ՍՄԿ-ների դեպքում, որոնք ենթարկվում են 6.5.6.8.4.1 (ա) կամ (բ)-ում նշված փորձարկման ճնշմանը՝ արտահոսքի բացառում.
- բ) 31A, 31B եւ 31N տեսակի ՍՄԿ-ների դեպքում, որոնք ենթարկվում են 6.5.6.8.4.1 (գ)-ում նշված փորձարկման ճնշմանը՝ մնացորդային դեֆորմացիայի բացակայություն, որն առկայության դեպքում ՍՄԿ-ն կդարձնել փոխադրման համար ոչ անվտանգ եւ արտահոսքի բացառում.
- գ) կոշտ պլաստմասսայե եւ բարդ ՍՄԿ-ների դեպքում՝ մնացորդային դեֆորմացիայի բացակայություն, որն առկայության դեպքում ՍՄԿ-ն կդարձնել փոխադրման համար ոչ անվտանգ եւ արտահոսքի բացառում:

**6.5.6.9. Անկման փորձարկում**

**6.5.6.9.1. Կիրառելիությունը**

Կատարվում է որպես կառուցվածքի տեսակի փորձարկում՝ բոլոր տեսակի ՍՄԿ-ների համար:

**6.5.6.9.2. ՍՄԿ-ի նախապատրաստումը փորձարկմանը**

- ա) մետաղական ՍՄԿ-ներ՝ ՍՄԿ-ն պետք է պինդ նյութերի դեպքում լցված լինի իր առավելագույն տարողության 95%-ից ոչ պակաս, իսկ հեղուկների դեպքում՝ իր առավելագույն տարողության առնվազն 98%-ից ոչ պակաս: Ճնշումը նվազեցնող սարքերը պետք է հանվեն, իսկ այդ սարքերի համար անցքերը՝ խլացվեն, կամ դրանք պետք է դարձվեն չգործող:
- բ) փափուկ ՍՄԿ-ներ՝ ՍՄԿ-ն պետք է լցված լինի մինչեւ իր առավելագույն թույլատրելի անզուտ քաշը, ընդ որում, պարունակությունը պետք է հավասարաչափ բաշխված լինի:
- գ) կոշտ պլաստմասսայե եւ բարդ ՍՄԿ-ներ՝ ՍՄԿ-ն պետք է պինդ նյութերի դեպքում լցված լինի իր առավելագույն տարողության առնվազն 95%-ից ոչ պակաս, իսկ հեղուկների դեպքում՝ իր առավելագույն տարողության առնվազն 98%-ից ոչ պակաս չափով: Ճնշումը նվազեցնող սարքերը պետք է հանվեն, իսկ այդ սարքերի համար անցքերը՝ խլացվեն, կամ դրանք պետք է

դարձվեն չգործող: ՍՄԿ-ների փորձարկումը պետք է կատարվի այն ժամանակ, երբ փորձանմուշի եւ դրա պարունակության ջերմաստիճանը նվազեցվել է  $-18^{\circ}\text{C}$ -ի կամ ավելի պակաս արժեքի: Եթե բարդ ՍՄԿ-ների փորձանմուշները նախապատրաստված են այդ մեթոդով, ապա 6.5.6.3.1-ով նախատեսված պահորակման պահանջը կարող է չկիրառվել: Փորձարկային հեղուկները պետք է պահպանվեն հեղուկ վիճակում, հարկ եղած դեպքում՝ անտիֆրիզի հավելման եղանակով: Պահորակման պահանջը կարող է անտեսվել, եթե տվյալ նյութերը ցածր ջերմաստիճանում ունեն բավարար կռելիություն եւ ձգման ամրություն:

դ) փայտաթելքային սալից եւ փայտե ՍՄԿ-ներ՝ ՍՄԿ-ն պետք է լցված լինի իր առավելագույն տարողության 95%-ից ոչ պակաս չափով:

#### 6.5.6.9.3. Փորձարկման մեթոդը

ՍՄԿ-ն պետք է վայր նետվի ոչ առաձգական, հորիզոնական, զանգվածեղ եւ կոշտ մակերեսի վրա՝ 6.1.5.3.4-ի պահանջներին համապատասխան եւ այնպես, որ հարվածի կետը գտնվի ՍՄԿ-ի հիմքի այն մասում, որը համարվում է ամենախոցելիին:  $0.45 \text{ մ}^3$  կամ պակաս տարողությամբ ՍՄԿ-ները պետք է նույնպես ենթարկվեն անկման փորձարկմանը՝

ա) մետաղական ՍՄԿ-ներ՝ առավել խոցելի մասով, բացառությամբ այն մասի, որի վրա կատարվել է վայր նետումը առաջին փորձարկման ընթացքում.

բ) փափուկ ՍՄԿ-ներ՝ առավել խոցելի կողային մասով.

գ) կոշտ պլաստմասսայե ՍՄԿ-ներ, բարդ ՍՄԿ-ներ, փայտաթելքային սալից ՍՄԿ-ներ եւ փայտե ՍՄԿ-ներ՝ տափակ կողմով կողային հատվածի վրա, տափակ կողմով զազաթի եւ անկյան վրա:

Ամեն վայր նետման ժամանակ կարող են օգտագործվել միեւնույն կամ տարբեր ՍՄԿ-ներ:

#### 6.5.6.9.4. Վայր նետման բարձրությունը

Պինդ եւ հեղուկ նյութերի դեպքում, եթե փորձարկումը կատարվում է փոխադրման ենթակա պինդ նյութի կամ հեղուկի կամ հիմնականում նույն ֆիզիկական հատկանիշներով օժտված մեկ այլ նյութի օգտագործմամբ՝

Փաթեթավորման I խումբ	Փաթեթավորման II խումբ	Փաթեթավորման III խումբ
1.8 մ	1.2 մ	0.8 մ

Հեղուկների դեպքում, եթե փորձարկումը կատարվում է ջրի

օգտագործմամբ՝

- ա) եթե փոխադրման ենթակա նյութերն ունեն հարաբերական խտության 1.2-ը չգերազանցող արժեք՝

Փաթեթավորման II խումբ	Փաթեթավորման III խումբ
1.2 մ	0.8 մ

- բ) եթե փոխադրման ենթակա նյութի հարաբերական խտությունը գերազանցում է 1.2 արժեքը, վայր նետման բարձրությունը հաշվարկվում է փոխադրման ենթակա նյութի հարաբերական խտության (d) արժեքի հիման վրա՝ կլորացված մինչև առաջին տասնորդական նիշը հետեւյալ կերպ՝

II փաթեթավորման խումբ	III փաթեթավորման խումբ
d x 1.0 մ	d x 0.67 մ

6.5.6.9.5. *Փորձարկումն (փորձարկումներն) անցնելու չափորոշիչները՝*

- ա) մետաղական ՍՄԿ-ներ՝ պարունակության կորստի բացառում:
- բ) փափուկ ՍՄԿ-ներ՝ պարունակության կորստի բացառում: Թեթեւակի արտահոսք՝ հարվածի դեպքում, օրինակ՝ փականների կամ կարերի անցքերից, որը ՍՄԿ-ի թերություն չի համարվում, երբ ՍՄԿ-ն գետնից բարձրացնելուց հետո արտահոսքը դադարում է:
- գ) կոշտ պլաստմասսայե ՍՄԿ-ներ, բարդ ՍՄԿ-ներ, փայտաթելքային սալից ՍՄԿ-ներ եւ փայտե ՍՄԿ-ներ՝ պարունակության կորստի բացառում: Հարվածի դեպքում թեթեւակի արտահոսք փականից, որը ՍՄԿ-ի թերություն չի համարվում այն դեպքում, երբ արտահոսքը դադարում է:
- դ) բոլոր ՍՄԿ-ները՝ այնպիսի վնասվածքի բացակայություն, որը ՍՄԿ-ն կդարձնէր թափոնների հավաքման կամ հեռացման նպատակներով փոխադրման համար ոչ անվտանգ եւ պարունակության կորստի բացառում: Բացի դրանից՝ ՍՄԿ-ն պետք է համապատասխան եղանակներով հատակից բարձրացվելու եւ այդ դիրքով հինգ րոպե պահվելու հնարավորություն ունենա:

**ՃԱՆՈՐԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** (դ) կետով սահմանված չափորոշիչները կիրառվում են 2011 թվականի հունվարի 1-ից արտադրված ՍՄԿ-



*ների կառուցվածքի տեսակների նկարմամբ:*

**6.5.6.10. Պատման փորձարկում**

6.5.6.10.1. *Կիրառելիությունը*

Կատարվում է որպես կառուցվածքի տեսակի փորձարկում բոլոր տեսակի փափուկ ՍՄԿ-ների դեպքում:

6.5.6.10.2. *ՍՄԿ-ի նախապատրաստումը փորձարկմանը*

ՍՄԿ-ն պետք է լցված լինի իր տարողության 95%-ից ոչ պակաս չափով եւ մինչեւ իր առավելագույն թույլատրելի անզուտ քաշը, ընդ որում, պարունակությունը պետք է հավասարաչափ բաշխված լինի:

6.5.6.10.3. *Փորձարկման մեթոդը*

ՍՄԿ-ն գետնի վրա դրվելուց հետո ՍՄԿ-ի հատակի մակերեսից եւ պարունակության վերին մակարդակից հավասար հեռավորության վրա պատի առավել լայն կողմն ամբողջությամբ ներթափանցող 100 մմ երկարության կտրվածք է արվում դանակով՝ ՍՄԿ-ի հիմնական առանցքից 45° անկյան վրա: Այնուհետեւ ՍՄԿ-ն ենթարկվում է վերադիր հավասարաչափ բաշխված բեռնվածության, որը երկու անգամ գերազանցում է առավելագույն թույլատրելի անզուտ քաշը: Այն ՍՄԿ-ն, որը նախատեսված է գազաթի կամ կողային հատվածից բարձրացվելու համար, վերադիր բեռնվածքը հանելուց հետո, պետք է հատակից բարձրացվի եւ այդ դիրքում պահվի հինգ րոպե:

6.5.6.10.4. *Փորձարկումն անցնելու չափորոշիչները*

Կտրվածքը չպետք է տարածվի դրա նախնական երկարության 25%-ից ավելի չափով:

**6.5.6.11. Շրջվելու փորձարկումը**

6.5.6.11.1. *Կիրառելիությունը*

Կատարվում է որպես կառուցվածքի տեսակի փորձարկում բոլոր տեսակի փափուկ ՍՄԿ-ների դեպքում:

6.5.6.11.2. *ՍՄԿ-ի նախապատրաստումը փորձարկմանը*

ՍՄԿ-ն պետք է լցված լինի իր տարողության 95%-ից ոչ պակաս չափով եւ մինչեւ իր առավելագույն թույլատրելի անզուտ քաշը, ընդ որում, պարունակությունը պետք է հավասարաչափ բաշխված լինի:

6.5.6.11.3. *Փորձարկման մեթոդը*

ՍՄԿ-ն պետք է շրջվի իր գազաթի հատվածի ցանկացած մասով կոշտ, ոչ առաձգական, հարթ, տափակ եւ հորիզոնական մակերեսի վրա:

6.5.6.11.4. *Շրջելու բարձրությունը*

Փաթեթավորման I խումբ	Փաթեթավորման II խումբ	Փաթեթավորման III խումբ
1.8 մ	1.2 մ	0.8 մ

6.5.6.11.5. *Փորձարկումն անցնելու չափորոշիչները*

Պարունակության կորստի բացառում: Թեթեակի արտահոսք՝ հարվածի դեպքում, օրինակ՝ փականների կամ կարերի անցքերից, որը ՍՄԿ-ի թերություն չի համարվում, երբ արտահոսքը հետագայում դադարում է:

**6.5.6.12. Ուղղման փորձարկում**

6.5.6.12.1. *Կիրառելիությունը*

Կատարվում է որպես կառուցվածքի տեսակի փորձարկում գազաթի կամ կողային հատվածներից բարձրացնելու համար նախատեսված բոլոր տեսակի փափուկ ՍՄԿ-ների դեպքում:

6.5.6.12.2. *ՍՄԿ-ի նախապատրաստումը փորձարկմանը*

ՍՄԿ-ն պետք է լցված լինի իր տարողության 95%-ից ոչ պակաս չափով եւ մինչեւ իր առավելագույն թույլատրելի անզուտ քաշը, ընդ որում, պարունակությունը պետք է հավասարաչափ բաշխված լինի:

6.5.6.12.3. *Փորձարկման մեթոդը*

Կողային հատվածի վրա գտնվող ՍՄԿ-ն պետք է բարձրացվի 0.1 մ/վ-ից ոչ պակաս արագությամբ մինչեւ ուղղահայաց դիրքին հասնելը, հատակից պոկելով ամբարձիչ մեկ սարքի օգնությամբ կամ երկու նման սարքերի օգնությամբ, եթե նախատեսված է չորս ամբարձիչ սարք:

6.5.6.12.4. *Փորձարկումն անցնելու չափորոշիչները*

ՍՄԿ-ի կամ դրա ամբարձիչ սարքերի վնասվածքի բացառում, որը ՍՄԿ-ն կղարձներ փոխադրման կամ բեռնման-բեռնաթափման համար ոչ անվտանգ:

**6.5.6.13. Թրթռակայունության փորձարկումը**

6.5.6.13.1. *Կիրառելիությունը*

Կատարվում է որպես կառուցվածքի տեսակի փորձարկում

հեղուկների համար օգտագործվող բոլոր ՍՄԿ-ների դեպքում:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** Սույն փորձարկումը կիրառվում է 2010 թվականի դեկտեմբերի 31-ից հետո պատրաստված ՍՄԿ-ների կառուցվածքի տեսակների նկատմամբ (տե՛ս նաեւ 1.6.1.14):

6.5.6.13.2. *ՍՄԿ-ի նախապատրաստումը փորձարկմանը*

ՍՄԿ-ի նմուշը պետք է ընտրվի պատահական սկզբունքով, որը պետք է սարքավորված եւ փակված լինի այնպես, ինչպես փոխադրման համար: ՍՄԿ-ն պետք է լցված լինի իր առավելագույն տարողության 98%-ից ոչ պակաս չափով:

6.5.6.13.3. *Փորձարկման մեթոդը եւ տեսողությունը*

6.5.6.13.3.1. ՍՄԿ-ն պետք է տեղադրված լինի (նվազագույնից մինչեւ առավելագույն տատանումների լրիվ թափը)  $25 \text{ մմ} \pm 5\%$  ուղղահայաց սինուսոիդային կրկնակի ամպլիտուդայով փորձարկային մեքենայի հարթակի կենտրոնում: Հարկ եղած դեպքում հարթակին պետք է ամրացվեն հետ պահող հարմարանքներ, որոնք թույլ են տալիս կանխարգելել հարթակից նմուշի իջնելը՝ միաժամանակ չսահմանափակելով դրա ուղղահայաց տեղաշարժը:

6.5.6.13.3.2. Փորձարկումը պետք է կատարվի մեկ ժամվա ընթացքում տատանումների այնպիսի հաճախականությամբ, որի դեպքում ՍՄԿ-ի հիմքի մի մասը մի պահ կտրվում է վիբրացիոն հարթակից յուրաքանչյուր ցիկլի ընթացքում այն աստիճանի, որ առնվազն ՍՄԿ-ի հիմքի եւ փորձարկային հարթակի միջեւ մեկ կետում կարող է պարբերաբար մետաղական միջադիր ամբողջությամբ դրվել: Փաթեթվածքի հետ ռեզոնանսից խուսափելու նպատակով կարող է պահանջվել հաճախության սկզբնական տրված արժեքի ուղղում: Այնուամենայնիվ, փորձարկային հաճախությունը պետք է կրկին թույլ տա տեղադրել մետաղական միջադիրը ՍՄԿ-ի տակ, ինչպես նկարագրված է սույն կետում: Մետաղական միջադիրը շարունակաբար դնելու հնարավորությունը համարվում է այդ փորձարկումն անցնելու կարելի պայման: Այդ փորձարկման համար օգտագործվող մետաղական միջադիրը պետք է ունենա 1.6 մմ-ից ոչ պակաս հաստություն եւ 50 մմ-ից ոչ պակաս լայնություն եւ պետք է լինի բավականաչափ երկար, որպեսզի այն հնարավոր լինի դնել ՍՄԿ-ի եւ փորձարկային հարթակի միջեւ առնվազն 100 մմ-ի վրա՝ փորձարկումները կատարելու համար:

6.5.6.13.4. *Փորձարկումն անցնելու չափորոշիչները*

Չպետք է նկատվի արտահոսք կամ պատռվածք: Բացի դրանից՝ չպետք է նկատվի կառուցվածքային բաղադրիչների վնասվածք կամ խափանում, ինչպես, օրինակ՝ կարերի քանդվելը կամ ամրացնող

հարմարանքների խափանումը:

**6.5.6.14. Փորձարկման արձանագրությունը**

6.5.6.14.1. Պետք է կազմվի եւ ՍՄԿ-ի օգտագործողներին տրամադրվի փորձարկումների արձանագրություն, որը կպարունակի առնվազն հետեւյալ տեղեկությունները՝

1. Փորձարկումները կատարած կազմակերպության անվանումը եւ հասցեն.
2. Հայտատուի անվանումը եւ հասցեն (հարկ եղած դեպքում).
3. Փորձարկման արձանագրության հատուկ անհատական համարը.
4. Փորձարկման արձանագրության կազմման ամսաթիվը.
5. ՍՄԿ-ի արտադրողը.
6. ՍՄԿ-ի տեսակի նկարագրությունը (օրինակ՝ չափսեր, նյութեր, փականներ, հաստություն եւ այլն), այդ թվում նաեւ՝ պատրաստման եղանակը (օրինակ՝ փչման միջոցով կաղապարում), որը կարող է ներառել գծագիր (գծագրեր) եւ (կամ) լուսանկար (լուսանկարներ).
7. Առավելագույն տարողություն.
8. Փորձարկումների ժամանակ օգտագործված պարունակության բնութագիրը, ինչպես, օրինակ՝ հեղուկների համար մածուցիկությունը եւ հարաբերական խտությունն ու պինդ նյութերի համար՝ մասնիկների չափսերը.
9. Փորձարկումների նկարագրությունը եւ արդյունքները.
10. Փորձարկման արձանագրությունը պետք է ստորագրված լինի եւ պետք է նշված լինեն արձանագրությունը ստորագրած անձի ազգանունն ու պաշտոնը:

6.5.6.14.2. Փորձարկման արձանագրությունը պետք է պարունակի հայտարարություն այն մասին, որ փոխադրման համար պատրաստված ՍՄԿ-ն փորձարկվել է սույն գլխի համապատասխան պահանջների համաձայն, եւ որ փաթեթավորման այլ մեթոդների եւ բաղադրիչների կիրառման դեպքում արձանագրությունը կարող է դառնալ ոչ վավեր: Փորձարկման արձանագրության պատճենը պետք է փոխանցվի իրավասու մարմնին:

**ԳԼՈՒԽ 6.6**

**ԽՈՇՈՐ ՓԱԹԵԹՎԱԾՔՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՈՒ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ**

## 6.6.1. Ընդհանուր դրույթները

6.6.1.1. Սույն գլխի պահանջները չեն կիրառվում հետեւյալների նկատմամբ՝

- 2-րդ դասի փաթեթվածքներ՝ բացառությամբ պատրաստվածքների, ինչպես նաեւ անրոզոլների համար նախատեսված խոշոր փաթեթվածքների.
- 6.2 դասի փաթեթվածքներ՝ բացառությամբ ՄԱԿ-ի նշագրման 3291 համարի կլինիկական թափոնների համար նախատեսված խոշոր փաթեթվածքների.
- 7-րդ դասի ռադիոակտիվ նյութեր պարունակող փաթեթներ:

6.6.1.2. Խոշոր փաթեթվածքները պետք է արտադրվեն, փորձարկվեն եւ վերարտադրվեն որակի ապահովման ծրագրի համաձայն, որով ապահովվում է իրավասու մարմնի պահանջների կատարումն այն մասով, որ յուրաքանչյուր արտադրված կամ վերարտադրված խոշոր փաթեթվածք բավարարի սույն գլխի պահանջները:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** ISO 16106:2006 սրանդարտի՝ «Փաթեթվածք. Վրանգավոր բեռների տրանսպորտային փաթեթներ. Վրանգավոր բեռների փաթեթվածքներ, սորուն բեռների համար նախատեսված միջին բեռնվածության կոնտեյներներ (ՄՄԿ-ներ) եւ խոշոր փաթեթվածքներ. ISO 9001 սրանդարտի կիրառության վերաբերյալ ուղեցույցներ». ISO 16106:2006 սրանդարտով ապահովվում են բավարար ցուցումներ այն ընթացակարգերի մասին, որոնց կարելի է հետեւել:

6.6.1.3. 6.6.4-ի՝ խոշոր փաթեթվածքների վերաբերյալ հատուկ պահանջները հիմնված են ներկայումս օգտագործվող խոշոր փաթեթվածքների համար սահմանված պահանջների վրա: Գիտական եւ տեխնոլոգիական զարգացումները հաշվի առնելով, առարկություն չկա, որ օգտագործվեն 6.6.4-ով սահմանվածից տարբեր՝ այլ մասնագրեր ունեցող խոշոր փաթեթվածքներ՝ պայմանով որ դրանք նույնչափ արդյունավետ եւ իրավասու մարմնի կողմից ընդունելի են եւ կարող են բարեհաջող դիմակայել 6.6.5-ում նկարագրված փորձարկումներին: «ԱԴԴ» համաձայնագրում նկարագրվածից տարբեր՝ մյուս փորձարկման մեթոդներն ընդունելի են՝ պայմանով, որ դրանք համարժեք են եւ ճանաչվում են իրավասու մարմնի կողմից:

6.6.1.4. Փաթեթվածքներ արտադրողները եւ դրանց հետագա վաճառքով զբաղվող ընկերությունները պետք է տեղեկություններ տրամադրեն այն ընթացակարգերի մասին, որոնց հարկավոր է հետեւել, ինչպես նաեւ փականների տեսակների եւ չափսերի նկարագրությունը (ներառյալ պահանջվող խցանիչները) եւ բոլոր մյուս բաղադրիչները, որոնք

անհրաժեշտ են՝ ապահովելու, որ փոխադրման համար ներկայացված փաթեթները կարողանան անցնել սույն գլխում նշված՝ կիրառելի շահագործման փորձարկումները:

## **6.6.2. Խոշոր փաթեթվածքների տեսակների նշանակման ծածկագրերը**

6.6.2.1. Խոշոր փաթեթվածքների դեպքում կիրառվող ծածկագրերը բաղկացած են՝

ա) երկու արաբական թվանշաններից՝

50՝ կոշտ խոշոր փաթեթվածքների դեպքում կամ

51՝ փափուկ խոշոր փաթեթվածքների դեպքում եւ

բ) լատինական մեծատառից, որով նշում է նյութի բնույթը, օրինակ՝ փայտ, պողպատ եւ այլն: Կիրառվող մեծատառերը պետք է լինեն 6.1.2.6-ում ներկայացվածները:

6.6.2.2. «T» կամ «W» տառերին կարող է հաջորդել խոշոր փաթեթվածքի ծածկագիրը: «T» տառը ցույց է տալիս վթարային խոշոր փաթեթվածք, որը համապատասխանում է 6.6.5.1.9-ի պահանջներին: «W» տառը ցույց է տալիս, որ խոշոր փաթեթվածքը, թեւեւ ծածկագրով նշված միեւնոյն տեսակին է պատկանում, սակայն արտադրված է 6.6.4-ում նշվածից տարբեր՝ այլ մասնագրերով եւ որ 6.6.1.3-ի պահանջների համաձայն համարվում է դրան համարժեք:

## **6.6.3. Մակնշումը**

6.6.3.1. ***Առաջնային մակնշումը***

Յուրաքանչյուր խոշոր փաթեթվածք, որն արտադրված է եւ նախատեսված «ԱԴԲ» համաձայնագրի դրույթների համաձայն օգտագործվելու համար, պետք է իր վրա ունենա մակնշումներ, որոնք չջնջվող են եւ դյուրընթեռնելի եւ տեղադրված են այնպիսի վայրում, որ հեշտ տեսանելի լինեն: Տառերի, թվերի եւ խորհրդանշանների բարձրությունը պետք է կազմի 12 մմ եւ պետք է ցույց տա՝

ա) ՄԱԿ-ի նշագրման փաթեթվածքների խորհրդանշան՝



Այս խորհրդանշանը չպետք է օգտագործվի որեւէ այլ նպատակով, բացի նրանից, որպեսզի հաստատի, որ փաթեթվածքը, շարժական փափուկ կոնտեյները, շարժական ցիստեռնը կամ ԳԲՏԿ-ն համապատասխանում են 6.1, 6.2, 6.3, 6.5, 6.6, 6.7 կամ 6.11 գլուխների համապատասխան պահանջներին: Մետաղյա այն խոշոր փաթեթվածքների դեպքում, որոնց մակնշումը կատարված է դրոշմման կամ փորագրման եղանակով, խորհրդանշանի փոխարեն կարող են կիրառվել «UN» մեծատառերը.

- բ) կոշտ խոշոր փաթեթվածքները նշող «50» եւ փափուկ խոշոր փաթեթվածքները նշող «51» թվեր, որոնց 6.5.1.4.1(բ)-ի համաձայն, հաջորդում է նյութի տեսակի մասին նշումը.
- գ) հաստատված կառուցվածքի տեսակով փաթեթավորման խումբը (խմբերը) նշող մեծատառ՝
  - «X»-ը՝ փաթեթավորման I, II եւ III խմբերի դեպքում.
  - «Y»-ը՝ փաթեթավորման II եւ III խմբերի դեպքում.
  - «Z»-ը՝ միայն փաթեթավորման III խմբի դեպքում.
- դ) արտադրության ամիսը եւ տարին (վերջին երկու թվերը).
- ե) նշանի զետեղումը թույլատրող պետությունը՝ նշված միջազգային ճանապարհային երթելեկությունում ներգրավված փոխադրամիջոցների համար նախատեսված տարբերանշանով<sup>1</sup>.
- զ) արտադրողի անվանումը կամ խորհրդանշանը եւ խոշոր փաթեթվածքների նույնականացման այլ նշան՝ ինչպես սահմանված է իրավասու մարմնի կողմից.
- է) դարսակման փորձարկման բեռնվածությունը՝ կիլոգրամով: Դարսակման համար չնախատեսված խոշոր փաթեթվածքները պետք է նշվեն «0» պատկերով.
- ը) առավելագույն թույլատրելի անզուտ քաշը՝ կիլոգրամներով:  
 Վերոնշյալի համաձայն պահանջվող առաջնային մակնշումը պետք է կատարվի ենթապարբերությունների հաջորդականությամբ:

(ա)-(ը) կետերի համաձայն կատարված մակնշման յուրաքանչյուր մակնշում, հեշտ ճանաչելի լինելու համար, պետք է հստակ առանձնացված լինի մյուսից, օրինակ՝ թեք գծով կամ բացատով:

### 6.6.3.2. Մակնշման օրինակները



50A/X/05 01/N/PQRS  
2500/1000

Դարսակման համար պիտանի պողպատյա խոշոր փաթեթվածքների դեպքում.

դարսակման բեռնվածություն՝ 2 500 կգ, առավելագույն անզուտ քաշ՝ 1000 կգ:

<sup>1</sup> Միջազգային երթելեկության մեջ գտնվող փոխադրամիջոցների եւ դրանց կցորդների՝ գրանցման պետության տարբերանշաններ, օրինակ՝ 1949 թվականի «Ճանապարհային երթելեկության մասին» Ժնեւի կոնվենցիային կամ 1968 թվականի «Ճանապարհային երթելեկության մասին» Վիեննայի կոնվենցիային համապատասխան:



50H/Y/04 02/D/ABCD 987  
0/800

Դարսակման համար ոչ պիտանի խոշոր պլաստմասսայե փաթեթվածքի դեպքում առավելագույն անզուտ քաշ՝ 800 կգ:



51H/Z/06 01/S/1999  
0/500

Դարսակման համար ոչ պիտանի խոշոր փափուկ փաթեթվածքի դեպքում առավելագույն անզուտ քաշ՝ 500կգ:




50AT/Y/05/01/B/PQRS 2500/1000

Դարսակման համար պիտանի խոշոր պողպատյա վթարային փաթեթվածքի դեպքում

դարսակման բեռնվածությունը՝ 2 500կգ, առավելագույն անզուտ քաշը՝ 1 000կգ:

**6.6.3.3.** Երբ փոխադրվում է խոշոր փաթեթվածք, դարսակման առավելագույն թույլատրված բեռնվածությունը պետք է ցուցադրվի խորհրդանշանի վրա, ինչպես պատկերված է 6.6.3.3.1 պատկերում կամ 6.6.3.3.2 պատկերում: Խորհրդանշանը պետք է լինի չջնջվող եւ հստակ տեսանելի:





Խոշոր փաթեթվածքներ, որոնք կարող են դարսակվել

Խոշոր փաթեթվածքներ, որոնք չեն կարող դարսակվել

Նվազագույն չափսերը պետք է կազմեն 100մմ x 100մմ: Քաշը ցույց տվող տառերի եւ թվերի բարձրությունը պետք է կազմի առնվազն 12մմ: Չափսերի սլաքներով նշված տպագրված մակնշման տարածքը պետք է լինի քառակուսի: Եթե չափսերը նշված չեն, բոլոր տարրերը պետք է ունենան մոտավորապես ցուցադրված համամասնությունը: Խորհրդանշանի վերին հատվածում նշված քաշը չափսեր է գերազանցի տեսակի փորձարկման ժամանակ հաշվարկված բեռնվածությունը բաժանած 1.8-ի ցուցանիշը (տե՛ս 6.6.5.3.3.4):

#### 6.6.4. Խոշոր փաթեթվածքների վերաբերյալ հատուկ պահանջները

##### 6.6.4.1. Մերադյա խոշոր փաթեթվածքների վերաբերյալ հատուկ պահանջները

50A պողպատ

50B ալյումին

50N մետաղ (պողպատից կամ ալյումինից տարբեր)

6.6.4.1.1. Խոշոր փաթեթվածքները պետք է պատրաստված լինեն համապատասխան, ամբողջապես եռակցելի կռելի մետաղից: Եռակցման կարանները պետք է հմտորեն դրված լինեն եւ ապահովեն լիարժեք անվտանգություն: Անհրաժեշտության դեպքում պետք է հաշվի առնվի ցածր ջերմաստիճանում գործածվելու հանգամանքը:

6.6.4.1.2. Զգույշ պետք է լինել տարասեռ մետաղների անմիջական հարեւանության պատճառով առաջացող գալվանական ազդեցության

հետեւանքով առաջացող վնասվածքներից խուսափելու համար:

**6.6.4.2. Փափուկ նյութից պատրաստված խոշոր փաթեթվածքների վերաբերյալ հափուկ պահանջները**

51H փափուկ պլաստմասսա

51M փափուկ թուղթ

6.6.4.2.1. Խոշոր փաթեթվածքները պետք է արտադրված լինեն համապատասխան նյութերից: Փափուկ խոշոր փաթեթվածքների նյութի ամրությունը եւ կառուցվածքը պետք է համապատասխանի դրա տարողությանը եւ նախատեսված գործածությանը:

6.6.4.2.2. 51M տեսակի փափուկ խոշոր փաթեթվածքների պատրաստման ընթացքում օգտագործված բոլոր նյութերը պետք է ջրում 24 ժամից ոչ պակաս տեւողությամբ ամբողջապես ընկղմված մնալու դեպքում պահպանեն 67% կամ դրանից պակաս հարաբերական խոնավության պայմաններում ի սկզբանե նյութը հավասարակշռության վիճակի բերելու դեպքում հաշվարկված ձգման ամրության առնվազն 85%-ը:

6.6.4.2.3. Կարանները պետք է դրվեն կարելու, ջերմախցանափակման, սոսնձման կամ ցանկացած համարժեք այլ մեթոդով: Բոլոր կարված կարերի ծայրերը պետք է ապահովված լինեն:

6.6.4.2.4. Փափուկ խոշոր փաթեթվածքների դեպքում պետք է ապահովվի համապատասխան կայունություն ուլտրամանուշակագույն ճառագայթմամբ կամ կլիմայական պայմաններով եւ կամ դրանցում պարունակվող նյութերով պայմանավորված հնեցման եւ հատկությունների վատթարացման նկատմամբ, այդպիսով դրանք նախատեսված գործածության համար անհրաժեշտ վիճակի բերելով:

6.6.4.2.5. Պլաստմասսայե փափուկ խոշոր փաթեթվածքների դեպքում, որոնց համար պահանջվում է ուլտրամանուշակագույն ճառագայթումից պաշտպանություն, պետք է ավելացվի մուր կամ այլ համապատասխան գունանյութեր կամ ինհիբիտորներ: Այդ հավելանյութերը պետք է համատեղելի լինեն պարունակության հետ եւ պահպանեն իրենց արդյունավետությունը խոշոր փաթեթվածքի օգտագործման ամբողջ ընթացքում: Փորձարկված կառուցվածքի տեսակի արտադրության ժամանակ օգտագործվածներից տարբեր մուր, գունանյութեր կամ ինհիբիտորներ օգտագործվելու դեպքում կրկնակի փորձարկման անցկացում կարող է չպահանջվել այն դեպքում, երբ մրի, գունանյութի կամ ինհիբիտորի պարունակության մեջ կատարված փոփոխությունները բացասաբար չեն անդրադառնում պատրաստման համար օգտագործված նյութերի ֆիզիկական հատկությունների վրա:

- 6.6.4.2.6. Այն նյութին, որից պատրաստված է խոշոր փաթեթվածքը, կարելի է հավելանյութեր ավելացնել հնեցմանը դիմակայելու հատկության բարելավման կամ այլ նպատակներով՝ պայմանով, որ դրանք բացասաբար չեն անդրադառնա նյութի ֆիզիկական հատկությունների վրա:
- 6.6.4.2.7. Լցված լինելու դեպքում բարձրության եւ լայնության գործակիցը պետք է լինի 2:1-ից ավելի:

**6.6.4.3. Պլաստմասսայե խոշոր փաթեթվածքների վերաբերյալ հայրուկ պահանջները**

50H կոշտ պլաստմասսա

6.6.4.3.1. Խոշոր փաթեթվածքները պետք է արտադրվեն այնպիսի պլաստիկ նյութից, որը հայտնի է իր մասնագրերով եւ ունի փաթեթվածքի տարողության ու նախատեսված գործածության համար համապատասխան ամրություն: Նյութը պետք է համարժեքորեն կայուն լինի դրանում պարունակվող նյութի կամ համապատասխան դեպքերում ուլտրամանուշակագույն ճառագայթման պատճառով հնեցման եւ հատկությունների վատթարացման նկատմամբ: Անհրաժեշտության դեպքում պետք է հաշվի առնվի ցածր ջերմաստիճանում գործածվելու հանգամանքը: Պարունակվող նյութի ցանկացած ներթափանցում փոխադրման բնականոն պայմաններում չպետք է վտանգ առաջացնի:

6.6.4.3.2. Պլաստմասսայե ճկուն խոշոր փաթեթվածքների համար ուլտրամանուշակագույն ճառագայթումից պաշտպանություն պահանջվելու դեպքում, պետք է ավելացվի մուր կամ այլ համապատասխան գունանյութեր կամ ինհիբիտորներ: Այդ հավելանյութերը պետք է համատեղելի լինեն պարունակության հետ եւ պահպանեն իրեն արդյունավետությունը արտաքին փաթեթվածքի օգտագործման ամբողջ ընթացքում: Փորձարկված կառուցվածքի տեսակի արտադրության ժամանակ օգտագործվածներից տարբեր մուր, գունանյութեր կամ ինհիբիտորներ օգտագործվելու դեպքում կրկնակի փորձարկման անցկացում կարող է չպահանջվել այն դեպքում, երբ մրի, գունանյութի կամ ինհիբիտորի պարունակության մեջ կատարված փոփոխությունները բացասաբար չեն անդրադառնում պատրաստման համար օգտագործված նյութերի ֆիզիկական հատկությունների վրա:

6.6.4.3.3. Այն նյութին, որից պատրաստված է խոշոր փաթեթվածքը, կարելի է հավելանյութեր ավելացնել հնեցմանը դիմակայելու հատկության բարելավման կամ այլ նպատակներով՝ պայմանով, որ դրանք բացասաբար չեն անդրադառնա նյութի ֆիզիկական հատկությունների վրա:

**6.6.4.4. Փայտաթելքային սալից խոշոր փաթեթվածքների վերաբերյալ հայրուկ պահանջները**

50G կոշտ փայտաթելքային սալ

6.6.4.4.1. Պետք է օգտագործվի խոշոր փաթեթվածքների տարողության եւ նախատեսված գործածության համար համապատասխան ամուր եւ լավ որակ ունեցող երկկողմանի ծալքավոր փայտաթելքային սալ (մեկ շերտով կամ բազմաշերտ): Արտաքին մակերեսի ջրակայունությունը

զանգվածի ավելացման դեպքում, ինչպես որոշվել է 30 րոպե տեսողությամբ «Cobb» մեթոդով ջրակլանելիության որոշման նպատակով իրականացված փորձարկման ժամանակ, չպետք է գերազանցի 155 գ/մ<sup>2</sup> արժեքը տես՝ ISO 535:1991: Այն պետք է ունենա ծովելու հատկություն: Փայտաթելքային սալը պետք է կտրվի, ծալվի առանց անհարթությունների եւ ակոսատվի, որպեսզի հնարավոր լինի դրա հավաքումն առանց ճաքերի, մակերեսի վնասվածքների կամ չափից ավելի ծալվելու: Ծալքավոր փայտաթելքային սալը կամ դրա պատրաստման համար օգտագործվող ալիքավոր շերտը պետք է ամուր սոսնձված լինի արտաքին շերտերին:

- 6.6.4.4.2. Պատերը՝ այդ թվում նաեւ վերին եւ ստորին, ISO 3036:1975-ի համաձայն, պետք է ունենան առնվազն 15 J պատռվածքադիմացկունություն:
- 6.6.4.4.3. Խոշոր փաթեթվածքների արտաքին փաթեթվածքների վրա դրվող կցվանքները պետք է ունենան համապատասխան պատվածք, դրանք պետք է ժապավենով միացված, սոսնձված, երկաթակապերով կարված կամ առնվազն համարժեք արդյունավետ մեկ այլ եղանակով ամրացված լինեն: Այն դեպքում, երբ կցվանքները դրվել են սոսնձման կամ ժապավենով միացնելու եղանակով, ապա պետք է օգտագործվի ջրակայուն սոսնձանյութ: Երկաթակապերն ամբողջությամբ պետք է անցնեն ամրացվող բոլոր մասերի միջով, եւ դա պետք է արվի կամ պաշտպանված լինի այնպես, որ ներքին ներդիրներից ոչ մեկը չքերվի կամ ծակվի դրանց հետեւանքով:
- 6.6.4.4.4. Խոշոր փաթեթվածքի տակդիրի հիմքը կազմող ցանկացած ամբողջական մաս կամ առանձնացվող տակդիր պետք է հարմար լինի՝ առավելագույն թույլատրելի անզուտ քաշով լցված խոշոր փաթեթվածքները մեխանիկական եղանակով բեռնելու-բեռնաթափելու համար:
- 6.6.4.4.5. Տակդիրը կամ դրա ամբողջական հիմքն այնպես պետք է նախագծված լինի, որ հնարավոր լինի խուսափել խոշոր փաթեթվածքի հիմքի դուրս պրծնելուց, որը կարող է բեռնման-բեռնաթափման ժամանակ հանգեցնել վնասվածքների առաջացման:
- 6.6.4.4.6. Հենամարմինը պետք է ցանկացած առանձնացվող տակդիրին այնպես ամրացված լինի, որ բեռնման-բեռնաթափման եւ փոխադրման ժամանակ ապահովվի դրա կայունությունը: Առանձնացվող տակդիրը կիրառելու դեպքում դրա վերին մակերեսը պետք է զերծ լինի սուր ելուստներից, որոնք կարող են վնասել խոշոր փաթեթվածքը:
- 6.6.4.4.7. Դարսակման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով կարող են օգտագործվել ամրացման այնպիսի պարագաներ,

ինչպիսիք փայտե ամրակապերն են, սակայն դրանք ներդիրից դուրս պետք է գտնվեն:

6.6.4.4.8. Դարսակման համար նախատեսված խոշոր փաթեթվածքների կրող մակերեսն այնպիսին պետք է լինի, որը թույլ կտա անվտանգ եղանակով բաշխել բեռնվածքը:

**6.6.4.5. Փայտյա խոշոր փաթեթվածքների վերաբերյալ հատուկ պահանջները**

50C բնական փայտ

50D նրբատախտակ

50F վերամշակված փայտ

6.6.4.5.1. Խոշոր փաթեթվածքների պատրաստման մեթոդը եւ օգտագործվող նյութերի ամրությունը պետք է համապատասխանի դրանց տարողությանը եւ նախատեսված գործածությանը:

6.6.4.5.2. Բնական փայտը պետք է լավ պահորակված, առետրային տեսանկյունից չոր լինի, ինչպես նաեւ զերծ լինի այն թերություններից, որոնք կարող են էապես նվազեցնել խոշոր փաթեթվածքի ցանկացած մասի ամրությունը: Խոշոր փաթեթվածքի յուրաքանչյուր մաս պետք է բաղկացած լինի մեկ ամբողջական կամ համանման կտորից: Մասերը համարվում են մեկ ամբողջական կտորին համարժեք, երբ կիրառվում է հավաքվածքի կազմաձեւման սոսնձման համապատասխան եղանակ, օրինակ՝ Լինդերմանի միացքի, ագուցավոր միացքի, վրափակման կամ քառորդան կապակցման միացքի կամ ծայրեծայր միացքի կիրառմամբ՝ յուրաքանչյուր միացքի վրա առնվազն երկու ամրակման ալիքավոր մանրամասներով կամ առնվազն համարժեք արդյունավետության այլ մեթոդների կիրառման դեպքում:

6.6.4.5.3. Նրբատախտակից պատրաստված խոշոր փաթեթվածքները պետք է բաղկացած լինեն առնվազն 3 շերտից: Դրանք պետք է պատրաստված լինեն լավ պահորակված ծլեպված միաշերտ, ռանդված կամ սղոցված նրբատախտակից, որը պետք է առետրային տեսանկյունից չոր լինի, ինչպես նաեւ զերծ լինի թերություններից, որոնք կարող են էապես նվազեցնել խոշոր փաթեթվածքի ամրությունը: Բոլոր հարակից շերտերը պետք է սոսնձված լինեն ջրակայուն սոսնձանյութով: Խոշոր փաթեթվածքի պատրաստման նպատակով նրբատախտակի հետ կարող են օգտագործվել այլ համապատասխան նյութեր:

6.6.4.5.4. Վերամշակված փայտից պատրաստված խոշոր փաթեթվածքները պետք է պատրաստված լինեն անջրանցիկ վերամշակված փայտի այնպիսի տեսակներից, ինչպիսիք են կոշտ սովարաթուղթը,

փայտատաշեղային սալը կամ այլ համապատասխան տեսակներն են:

- 6.6.4.5.5. Խոշոր փաթեթվածքները անկյունային հենարանների կամ ծայրերի մասում պետք է ամուր մեխված լինեն կամ հավաքվեն նմանատիպ համապատասխան հարմարանքներով:
- 6.6.4.5.6. Խոշոր փաթեթվածքի տակդիրի հիմքը կազմող ցանկացած ամբողջական մաս կամ առանձնացվող տակդիր պետք է հարմար լինի առավելագույն թույլատրելի անգուտ քաշով լցված խոշոր փաթեթվածքները մեխանիկական եղանակով բեռնելու-բեռնաթափելու համար:
- 6.6.4.5.7. Տակդիրը կամ դրա ամբողջական հիմքն այնպես պետք է նախագծված լինեն, որ հնարավոր լինի խուսափել խոշոր փաթեթվածքի հիմքը դուրս պրծնելուց, որը կարող է բեռնման-բեռնաթափման ժամանակ հանգեցնել վնասվածքների առաջացման:
- 6.6.4.5.8. Հենամարմինը պետք է ցանկացած առանձնացվող տակդիրին այնպես ամրացված լինի, որ բեռնման-բեռնաթափման եւ փոխադրման ժամանակ ապահովվի դրա կայունությունը: Առանձնացվող տակդիր կիրառելու դեպքում դրա վերին մակերեսը պետք է զերծ լինի սուր ելուստներից, որոնք կարող են վնասել խոշոր փաթեթվածքը:
- 6.6.4.5.9. Դարսակման արդյունավետության բարձրացման նպատակով կարող են օգտագործվել ամրացման այնպիսի պարագաներ, ինչպիսիք փայտե ամրակապերն են, սակայն դրանք ներդիրից դուրս պետք է գտնվեն:
- 6.6.4.5.10. Դարսակման համար նախատեսված խոշոր փաթեթվածքների կրող մակերեսն այնպիսին պետք է լինի, որը թույլ կտա անվտանգ եղանակով բաշխել բեռնվածքը:

## **6.6.5. Խոշոր փաթեթվածքների վերաբերյալ փորձարկման պահանջները**

### **6.6.5.1. Փորձարկումների իրականացումը եւ դրանց հաճախականությունը**

- 6.6.5.1.1. Յուրաքանչյուր խոշոր փաթեթվածքի կառուցվածքի տեսակ, 6.6.5.3-ով նախատեսվածի համաձայն, պետք է փորձարկվի նշանի զետեղումը թույլատրող իրավասու մարմնի կողմից սահմանված ընթացակարգերին համապատասխան եւ պետք է հաստատվի իրավասու մարմնի կողմից:
- 6.6.5.1.2. Խոշոր փաթեթվածքի յուրաքանչյուր կառուցվածքի տեսակ պետք է բարեհաջող անցնի սույն գլխով նախատեսված փորձարկումները՝ նախքան դրանց օգտագործումը: Խոշոր փաթեթվածքի կառուցվածքի տեսակը որոշվում է կառուցվածքի, չափսի, նյութի եւ հաստության, պատրաստման եւ փաթեթավորման ձևի համաձայն, սակայն կարող է ներառել արտաքին մակերեսային մշակման տարբեր միջոցներ: Այն նաեւ ներառում է տարբեր խոշոր փաթեթվածքներ, որոնք կառուցվածքի

տեսակից տարբերվում են միայն ավելի ցածր բարձրությամբ:

6.6.5.1.3. Փորձարկումները պետք է կրկնվեն արտադրական նմուշների համար՝ իրավասու մարմնի կողմից սահմանված ընդմիջումներով: Փայտաթելքային սալից պատրաստված խոշոր փաթեթվածքների նման փորձարկումների նախապատրաստումն արտաքին միջավայրի պայմաններում համարվում է 6.6.5.2.4.-ի դրույթներին համարժեք:

6.6.5.1.4. Փորձարկումները պետք է նաեւ կրկնվեն ցանկացած այնպիսի փոփոխությունից հետո, որի հետեւանքով փոփոխվում է խոշոր փաթեթվածքի կառուցվածքը, նյութը կամ խոշոր փաթեթվածքների պատրաստման եղանակը:

6.6.5.1.5. Իրավասու մարմինը կարող է թույլատրել այն խոշոր փաթեթվածքների ընտրանքային փորձարկումը, որոնք մի փոքր են միայն տարբերվում փորձարկում անցած տեսակից, օրինակ՝ ավելի փոքր չափսի կամ պակաս զտաքաշով ներքին փաթեթվածքներ ունեցող, ինչպես նաեւ այն խոշոր փաթեթվածքները, որոնք արտադրվել են արտաքին չափսերից մի փոքր պակաս չափսով(չափսերով):

6.6.5.1.6. (Նախատեսվում է վերապահում)

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** *Խոշոր փաթեթվածքի մեջ տարբեր ներքին փաթեթվածքներ հավաքելու պայմանների եւ ներքին փաթեթվածքներում թույլատրելի փոփոխություններ կատարելու համար տե՛ս 4.1.1.5.1:*

6.6.5.1.7. Իրավասու մարմինը ցանկացած ժամանակ կարող է սույն բաժնի համաձայն իրականացվող փորձարկման ձեռով ապացույց պահանջել, որ սերիական արտադրության խոշոր փաթեթվածքը համապատասխանում է կառուցվածքի տեսակի փորձարկման պահանջներին:

6.6.5.1.8. Տարբեր փորձարկումներ կարելի է կատարել միեւնույն նմուշի վրա՝ պայմանով, որ դա չի ազդի փորձարկման արդյունքների հավաստիության վրա եւ որ դա կարվի իրավասու մարմնի համաձայնությամբ:

6.6.5.1.9. Խոշոր վթարային փաթեթվածքներ

Խոշոր վթարային փաթեթվածքները պետք է փորձարկվեն եւ մակնշվեն կոշտ կամ ներքին փաթեթվածքների փոխադրման համար նախատեսված խոշոր փաթեթվածքների փաթեթավորման II խմբի նկատմամբ կիրառվող դրույթներին համապատասխան՝ բացառությամբ հետեւյալի՝

ա) փորձարկումն իրականացնելու նպատակով օգտագործվող



փորձարկման նյութը պետք է լինի հեղուկ, եւ խոշոր վթարային փաթեթվածքները պետք է լցված լինեն դրանց առավելագույն տարողության 98%-ից ոչ պակաս չափով: Փաթեթի պահանջվող ընդհանուր զանգվածն ստանալու համար թույլատրվում է օգտագործել հավելյալ առարկաներ, ինչպիսիք են օրինակ՝ պարկերը կամ կապարակտորները, այն դեպքում, երբ դրանք այնպես են դրված, որ չեն ազդի փորձարկման արդյունքների վրա: Կամ անկման փորձարկման ժամանակ դեպի վայր նետման բարձրությունը կարող է լինել տարբեր՝ 6.6.5.3.4.4.2(բ)-ին համապատասխան:

- բ) բացի այդ, խոշոր վթարային փաթեթվածքները պետք է բարեհաջող անցնեն անջրանցիկության փորձարկումը 30 կՊա ճնշման դեպքում, իսկ այդ փորձարկումների արդյունքները պետք է ներառվեն 6.6.5.4-ի համաձայն պահանջվող փորձարկումների արձանագրությունում, եւ
- գ) խոշոր վթարային փաթեթվածքի վրա պետք է զետեղվի «T» տառը՝ 6.6.2.2-ում նկարագրված ձևով:

#### 6.6.5.2. Փորձարկման նախապատրաստումը

6.6.5.2.1. Փորձարկումների պետք է ենթարկվեն այն խոշոր փաթեթվածքները, որոնք նախապատրաստվել են այնպես, ինչպես կնախապատրաստվեին փոխադրման համար, այդ թվում՝ դրանց ներքին փաթեթվածքները կամ դրանցում կիրառված պատրաստվածքները: Ներքին փաթեթվածքները հեղուկների դեպքում պետք է լցված լինեն դրանց առավելագույն տարողության 98%-ից ոչ պակաս չափով, իսկ պինդ նյութերի դեպքում՝ 95%-ի չափով: Այն խոշոր փաթեթվածքների դեպքում, որոնց ներքին փաթեթվածքները նախատեսված են թե՛ հեղուկների եւ թե՛ պինդ նյութերի փոխադրման համար, պահանջվում են եւ՛ հեղուկ, եւ՛ պինդ պարունակության առանձին փորձարկումներ: Ներքին փաթեթվածքներում եղած նյութերը կամ խոշոր փաթեթվածքներով փոխադրման ենթակա պատրաստվածքները կարող են փոխարինվել այլ նյութերով կամ պատրաստվածքներով՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք կարող են ոչ հավաստի դարձնել փորձարկումների արդյունքները: Այն դեպքում, երբ օգտագործվում են այլ ներքին փաթեթվածքներ կամ պատրաստվածքներ, դրանք պետք է ունենան միեւնույն ֆիզիկական հատկանիշները (զանգված եւ այլն), ինչպիսիք ունեն այն ներքին փաթեթվածքները կամ պատրաստվածքները, որոնք պետք է փոխադրվեն: Փաթեթի պահանջվող ընդհանուր զանգվածն ստանալու համար թույլատրվում է օգտագործել հավելյալ առարկաներ, ինչպիսիք են պարկերը կամ կապարակտորները, այն դեպքում, երբ դրանք այնպես են դրված, որ

չեն ազդի փորձարկման արդյունքների վրա:

6.6.5.2.2. Հեղուկների համար նախատեսված փաթեթվածքների անկման փորձարկումների ժամանակ այլ նյութ օգտագործվելու դեպքում այն պետք է ունենա միեւնույն հարաբերական խտությունը եւ մածուցիկությունը, ինչպիսիք ունեն այն նյութերը, որոնք պետք է փոխադրվեն: Հեղուկների համար նախատեսված փաթեթվածքների անկման փորձարկման համար կարելի է նաեւ ջուր օգտագործել՝ 6.6.5.3.4.4-ի պայմաններին համապատասխան:

6.6.5.2.3. Պլաստիկ նյութերից պատրաստված խոշոր փաթեթվածքները եւ պլաստիկ նյութերից ներքին փաթեթվածքներ պարունակող խոշոր փաթեթվածքները, որոնք տարբեր են պինդ նյութեր կամ պատրաստվածքներ պարունակելու համար նախատեսված պարկերից, պետք է անկման փորձարկում անցնեն այն դեպքում, երբ փորձանմուշի կամ դրա պարունակության ջերմաստիճանը նվազեցվել է մինչեւ  $-18\text{ }^{\circ}\text{C}$  կամ ավելի պակաս: Պահորակման այս պահանջը կարող է անտեսվել, եթե տվյալ նյութերը ցածր ջերմաստիճանում ունեն բավարար կոեփություն եւ ձգման ամրություն: Այս կերպ նախապատրաստված փորձանմուշների դեպքում 6.6.5.2.4-ում նշված պահորակման պահանջը կարող է չկիրառվել: Փորձարկում անցնող հեղուկները պետք է պահվեն հեղուկ վիճակում՝ անհրաժեշտության դեպքում դրանց ավելացնելով հակասառիչ հեղուկ:

6.6.5.2.4. Փայտաթելքային սալից պատրաստված խոշոր փաթեթվածքներն առնվազն 24 ժամ պետք է պահորակվեն կարգավորվող ջերմաստիճանով եւ հարաբերական խոնավությամբ (h/խ) մթնոլորտում: Գոյություն ունի երեք տարբերակ, որոնցից պետք է ընտրվի մեկը:

Մթնոլորտի նախընտրելի ջերմաստիճանը  $23\text{ }^{\circ}\text{C} \pm 2\text{ }^{\circ}\text{C}$  է, իսկ հարաբերական խոնավությունը՝  $50\% \pm 2\%$  (h/խ): Մյուս երկու տարբերակներն են  $20\text{ }^{\circ}\text{C} \pm 2\text{ }^{\circ}\text{C}$  եւ  $65\% \pm 2\%$  h/խ կամ  $27\text{ }^{\circ}\text{C} \pm 2\text{ }^{\circ}\text{C}$  եւ  $65\% \pm 2\%$  h/խ:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** Միջին արժեքները պետք է տրամադրվեն նշված սահմաններում: Կարճաժամկետ տրամադրումները եւ չափման թերությունները կարող են պատճառ լինել, որ առանձին չափումների հարաբերական խոնավության արժեքը մինչեւ  $\pm 5\%$ -ով տարբերվի մյուսներից, առանց խախտելու փորձարկման վերարտադրելիությունը:

6.6.5.3. Փորձարկման պահանջները

6.6.5.3.1. Ներքելի հատվածից բարձրացման փորձարկում

6.6.5.3.1.1. Կիրառելիությունը

Որպես կառուցվածքի տեսակի փորձարկում խոշոր փաթեթվածքների բոլոր այն տեսակների դեպքում, որոնց վրա հարմարեցված են հիմքի հատվածից բարձրացնելու հարմարանքներ:

6.6.5.3.1.2. Խոշոր փաթեթվածքների նախապատրաստումը փորձարկմանը

Խոշոր փաթեթվածքները պետք է բեռնված լինեն դրանց առավելագույն թույլատրելի անզուտ քաշի 1,25 անգամի չափով՝ բեռի հավասարապես բաշխված լինելու պարագայում:

6.6.5.3.1.3. Փորձարկման մեթոդը

Խոշոր փաթեթվածքները պետք է երկու անգամ բարձրացվեն եւ իջեցվեն ճանկավոր ավտոբեռնիչով, որի բեռնատեղանը պետք է տեղակայված լինի հիմնատակի կենտրոնում եւ գրավի դրա չափսի երեք քառորդի չափով տարածություն (եթե բեռնատեղանի ներանցման կետերը ֆիքսված չեն): Բեռնատեղանը հիմնատակի չափսի երեք քառորդին համարժեք խորությամբ ներանցման ուղղությամբ պետք է ներս տարվի: Փորձարկումը պետք է կրկնվի ներանցման ցանկացած հնարավոր ուղղությունից:

6.6.5.3.1.4. Փորձարկումն անցնելու չափորոշիչները

Մնացորդային դեֆորմացիայի բացակայությունը, որն առկայության դեպքում խոշոր փաթեթվածքը կդարձնել փոխադրման համար ոչ անվտանգ, ինչպես նաեւ պարունակության կորստի բացառումը:

6.6.5.3.2. Գազաթի հատվածից բարձրացման փորձարկում

6.6.5.3.2.1. Կիրառելիությունը

Որպես կառուցվածքի տեսակի փորձարկում բոլոր այն խոշոր փաթեթվածքների դեպքում, որոնք նախատեսված են գազաթի հատվածից բարձրացման համար եւ սարքավորված են բարձրացման հարմարանքներով:

6.6.5.3.2.2. Խոշոր փաթեթվածքների նախապատրաստումը փորձարկմանը

Խոշոր փաթեթվածքները պետք է բեռնված լինեն դրանց թույլատրելի առավելագույն անզուտ քաշի կրկնակի չափով: Փափուկ խոշոր փաթեթվածքների դեպքում դրանք պետք է բեռնված լինեն դրանց առավելագույն թույլատրելի անզուտ քաշը վեց անգամ գերազանցող չափով՝ բեռի հավասարապես բաշխված լինելու պարագայում:

6.6.5.3.2.3. Փորձարկման մեթոդը

Խոշոր փաթեթվածքը պետք է բարձրացվի դրա համար նախատեսված եղանակով՝ մինչեւ հատակից անջատվելը, եւ այդ դիրքում պահվի հինգ րոպե:

#### 6.6.5.3.2.4. Փորձարկումն անցնելու չափորոշիչները

- ա) Մետաղյա եւ կոշտ պլաստմասսայից պատրաստված խոշոր փաթեթվածքների դեպքում՝ մնացորդային դեֆորմացիայի բացակայությունը, որը խոշոր փաթեթվածքը՝ առկայության դեպքում տակդիրը եւս, կդարձնէր փոխադրման համար ոչ անվտանգ, ինչպէս նաեւ պարունակության կորստի բացառումը.
- բ) փափուկ խոշոր փաթեթվածքների դեպքում՝ խոշոր փաթեթվածքի կամ դրա բարձրացման համար նախատեսված սարքերի վնասվածքի բացակայությունը, որն առկայության դեպքում խոշոր փաթեթվածքը կդարձնէր փոխադրման կամ բեռնման-բեռնաթափման համար ոչ անվտանգ, ինչպէս նաեւ պարունակության կորստի բացառումը:

#### 6.6.5.3.3. Դարսակման փորձարկումը

##### 6.6.5.3.3.1. Կիրառելիությունը

Որպէս կառուցվածքի տեսակի փորձարկում՝ խոշոր փաթեթվածքների բոլոր այն տեսակների դեպքում, որոնք նախատեսված են միմյանց վրա դարսվելու համար:

##### 6.6.5.3.3.2. Խոշոր փաթեթվածքների նախապատրաստումը փորձարկմանը

Խոշոր փաթեթվածքը պետք է լցված լինի դրա առավելագույն թույլատրելի անզուտ քաշով:

##### 6.6.5.3.3.3. Փորձարկման մեթոդը

Խոշոր փաթեթվածքն իր հիմքով պետք է տեղադրվի հորիզոնական ամուր մակերեսի վրա եւ ենթարկվի հավասարապէս բաշխված վերադիր փորձարկային բեռնվածության ազդեցությանը (տե՛ս 6.6.5.3.3.4) առնվազն հինգ րոպէ տեւողությամբ, իսկ փայտից, փայտաթելքային սալից եւ պլաստիկ նյութերից պատրաստված խոշոր փաթեթվածքները՝ 24 ժամ տեւողությամբ:

##### 6.6.5.3.3.4. Վերադիր փորձարկային բեռնվածության հաշվարկումը

Խոշոր փաթեթվածքների վրա դրվելիք բեռը պետք է 1,8 անգամ գերազանցի այն մի քանի համանման խոշոր փաթեթվածքների առավելագույն թույլատրելի անզուտ քաշերի ընդհանուր արժեքը, որոնք փոխադրման ժամանակ հնարավոր է դարսվեն խոշոր փաթեթվածքների վրա:

##### 6.6.5.3.3.5. Փորձարկումն անցնելու չափորոշիչները

- ա) Փափուկ խոշոր փաթեթվածքներից տարբեր՝ մյուս բոլոր խոշոր փաթեթվածքների դեպքում՝ մնացորդային դեֆորմացիայի բացակայությունը, որը խոշոր փաթեթվածքը՝ առկայության

դեպքում տակդիրը եւս, կդարձնէր փոխադրման համար ոչ անվտանգ, ինչպէս նաեւ պարունակության կորստի բացառումը.

բ) փափուկ խոշոր փաթեթվածքների դեպքում՝ հենամարմնի այնպիսի վնասվածքի բացակայությունը, որն առկայության դեպքում խոշոր փաթեթվածքը կդարձնէր փոխադրման համար ոչ անվտանգ, ինչպէս նաեւ պարունակության կորստի բացառումը:

6.6.5.3.4. Անկման փորձարկում

6.6.5.3.4.1. Կիրառելիությունը

Որպէս կառուցվածքի տեսակի փորձարկում՝ խոշոր փաթեթվածքների բոլոր տեսակների դեպքում:

6.6.5.3.4.2. Խոշոր փաթեթվածքների նախապատրաստումը փորձարկմանը

Խոշոր փաթեթվածքը պետք է լցված լինի 6.6.5.2.1-ի համաձայն:

6.6.5.3.4.3. Փորձարկման մեթոդը

Խոշոր փաթեթվածքը պետք է վայր նետվի ոչ առաձգական, հորիզոնական, հարթ, զանգվածեղ եւ կոշտ մակերեսի վրա՝ 6.1.5.3.4-ի պահանջներին համապատասխան եւ այնպէս, որ հարվածի կետը գտնվի խոշոր փաթեթվածքի հիմքի այն մասում, որը համարվում է ամենախոցելին:

6.6.5.3.4.4. Վայր նետման բարձրությունը

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** 1-ին դասի նյութերի ու պատրաստվածքների համար նախատեսված խոշոր փաթեթվածքները պետք է փորձարկվեն փաթեթավորման II խմբի որակի ցուցանիշներին համապատասխան:

6.6.5.3.4.4.1. Պինդ կամ հեղուկ նյութեր կամ պատրաստվածքներ պարունակող ներքին փաթեթվածքների դեպքում, երբ փորձարկումն իրականացվում է փոխադրման ենթակա պինդ, հեղուկ նյութերի կամ պատրաստվածքների կամ հիմնականում միեւնոյն հատկանիշներն ունեցող այլ նյութի կամ պատրաստվածքի օգտագործմամբ՝

Փաթեթավորման I խումբ	Փաթեթավորման II խումբ	Փաթեթավորման III խումբ
1,8 մ	1,2 մ	0,8 մ

6.6.5.3.4.4.2. Հեղուկներ պարունակող ներքին փաթեթվածքների դեպքում, երբ փորձարկումն իրականացվում է ջրի օգտագործմամբ՝

ա) այն դեպքում, երբ փոխադրման ենթակա նյութն ունի հարաբերական խտության՝ 1,2-ը չգերազանցող արժեք՝

Փաթեթավորման I խումբ	Փաթեթավորման II խումբ	Փաթեթավորման III խումբ
1,8 մ	1,2 մ	0,8 մ

բ) այն դեպքում, երբ փոխադրման ենթակա նյութերն ունեն հարաբերական խտության 1,2-ը գերազանցող արժեք, ապա վայր նետման բարձրությունը պետք է հաշվարկվի հարաբերական խտության հաշվի առնմամբ («d»-ն փոխադրման ենթակա նյութի հարաբերական խտության արժեքն է՝ կլորացված մինչև առաջին տասնորդական նիշը) հետևյալ կերպ՝

Փաթեթավորման I խումբ	Փաթեթավորման II խումբ	Փաթեթավորման III խումբ
d x 1,5 (մ)	d x 1,0 (մ)	d x 0,67 (մ)

6.6.5.3.4.5. Փորձարկումն անցնելու չափորոշիչները

6.6.5.3.4.5.1. Խոշոր փաթեթվածքը չպետք է ունենա որեւէ վնասվածք, որը կարող է բացասաբար անդրադառնալ փոխադրման անվտանգության վրա: Ներքին փաթեթվածքից (փաթեթվածքներից) կամ պատրաստվածքից (պատրաստվածքներից) չպետք է գրանցվի արտահոսքի եւ ոչ մի դեպք:

6.6.5.3.4.5.2. 1-ին դասի պատրաստվածքների համար նախատեսված խոշոր փաթեթվածքների դեպքում չի թույլատրվում պատռվածքի առկայությունը, որը թույլ կտար խոշոր փաթեթվածքից պայթյունանվտանգ նյութերի կամ պատրաստվածքների դուրս թափվելը կամ դուրս գալը:

6.6.5.3.4.5.3. Խոշոր փաթեթվածքի անկման փորձարկման դեպքում նմուշը բարեհաջող կերպով է անցնում փորձարկումն այն ժամանակ, երբ փականի այլեւս անթափանցելի չլինելու դեպքում անգամ պահպանվում է ամբողջ պարունակությունը:

6.6.5.4. Սերտիֆիկացումը եւ փորձարկման արձանագրությունը

6.6.5.4.1. Խոշոր փաթեթվածքի յուրաքանչյուր կառուցվածքի տեսակի համար պետք է սերտիֆիկատ տրամադրվի եւ մակնշում կատարվի (ինչպես նշված է 6.6.3-ում), ինչը կհաստատի, որ կառուցվածքի տեսակը, այդ թվում՝ դրա սարքավորումները, համապատասխանում են փորձարկման պահանջներին:

6.6.5.4.2. Պետք է կազմվի առնվազն հետևյալ մանրամասները պարունակող հաշվետվություն փորձարկման մասին, եւ այն պետք է հասանելի

լինի խոշոր փաթեթվածք օգտագործողներին՝

1. փորձարկում իրականացնող ընկերության անվանումը եւ հասցեն.
2. հայտ ներկայացնողի անունը եւ հասցեն (ըստ անհրաժեշտության).
3. փորձարկման արձանագրության հատուկ անհատական համարը.
4. փորձարկման արձանագրության կազմման ամսաթիվը.
5. խոշոր փաթեթվածք արտադրողը.
6. խոշոր փաթեթվածքի կառուցվածքի տեսակի նկարագրությունը (օրինակ՝ չափսերը, նյութերը, փականները, հաստությունը եւ այլն) եւ (կամ) լուսանկարը (լուսանկարները).
7. առավելագույն տարողությունը/ առավելագույն թույլատրելի անզուտ քաշը.
8. փորձարկման ժամանակ օգտագործվող պարունակության բնութագիրը, օրինակ՝ կիրառված ներքին փաթեթվածքների կամ պատրաստվածքների տեսակներն ու նկարագրությունները.
9. փորձարկման նկարագրությունը եւ արդյունքները.
10. փորձարկման արձանագրությունը պետք է ստորագրվի եւ դրանում պետք է նշվի ստորագրող անձի ազգանունն ու պաշտոնը:

6.6.5.4.3. Փորձարկման արձանագրությունը պետք է ներառի հայտարարություններ այն մասին, որ խոշոր փաթեթվածքները, որոնք նախապատրաստվել են փոխադրման համար, փորձարկվել են սույն գլխի պահանջների համաձայն, եւ որ փաթեթավորման այլ մեթոդների կամ բաղադրիչների կիրառությունը կարող է արձանագրությունն անվավեր դարձնել: Փորձարկման արձանագրության օրինակը պետք է տրամադրվի իրավասու մարմնին:

## ԳԼՈՒԽ 6.7

### ՇԱՐԺԱԿԱՆ ՑԻՍՏԵՌՆՆԵՐԻ ԵՎ ՄԱԿ-Ի ՆՇԱԳՐՄԱՆ՝ ԳԱԶԻ ԲԱԶՄԱՏԱՐՐ ԿՈՆՏԵՅՆԵՐՆԵՐԻ (ԳՔՏԿ-ներ) ՆԱԽԱԳԾՄԱՆ, ՊԱՏՐԱՍՏՄԱՆ, ՍՏՈՒԳՄԱՆ ՈՒ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** Անշարժ ցիստեռնների (ավտոցիստեռններ), հանովի ցիստեռնների, ցիստեռն-կոնտեյներների եւ ցիստեռնների հանովի թափքերի, որոնց կորպուսները պատրաստված են մետաղական նյութերից, ինչպես նաեւ մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցների եւ ոչ ՄԱԿ-ի նշագրման՝ գազի բազմադարձ կոնտեյներների (ԳՔՏԿ-ներ) համար տե՛ս գլուխ 6.8, վոլոկնիտից պատրաստված ցիստեռնների համար տե՛ս գլուխ 6.9 եւ թափոնների համար նախատեսված վակուումային ցիստեռնների համար տե՛ս գլուխ 6.10:

6.7.1. Կիրառումն ու ընդհանուր պահանջները

6.7.1.1. Սույն գլխի պահանջները կիրառվում են վտանգավոր բեռների փոխադրման համար նախատեսված շարժական ցիստեռնների, ինչպես նաեւ 2-րդ դասի չսառեցված գազերի փոխադրման համար նախատեսված ԳՔՏԿ-ների նկատմամբ՝ փոխադրման բոլոր եղանակների դեպքում: Ի հավելումն սույն գլխի պահանջների, եթե այլ կերպ սահմանված չէ, «Անվտանգ կոնտեյներների վերաբերյալ միջազգային կոնվենցիայի» (ԱԿԿ) 1972թ. կիրառելի պահանջներն իրենց փոփոխություններով հանդերձ պետք է բավարարվեն այդ կոնվենցիայի իմաստով «կոնտեյներ» բառի սահմանմանը համապատասխանող ցանկացած բազմամոդալ շարժական ցիստեռնի կամ ԳՔՏԿ-ի մասով: Հավելյալ պահանջներ կարող են կիրառվել ծովային շարժական ցիստեռնների կամ ԳՔՏԿ-ների նկատմամբ, որոնց փոխադրումը կատարվում է բաց ծովով:

6.7.1.2. Հաշվի առնելով գիտական եւ տեխնոլոգիական առաջընթացը՝ սույն գլխի տեխնիկական պահանջները կարող են փոփոխվել այլընտրանքային կարգավորման համաձայն: Այդ այլընտրանքային կարգավորմամբ պետք է նախատեսվեն փոխադրվող նյութերի համատեղելիության, ինչպես նաեւ հարվածին, բեռնվածությանը եւ կրակի ազդեցությանը դիմակայելու՝ շարժական ցիստեռնի կամ ԳՔՏԿ-ի հնարավորության առնչությամբ անվտանգության՝ սույն գլխում նշվածից ոչ պակաս մակարդակ: Միջազգային փոխադրման դեպքում այլընտրանքային կարգավորման համաձայն պատրաստված շարժական ցիստեռնները կամ ԳՔՏԿ-ները պետք է հաստատվեն համապատասխան իրավասու մարմինների կողմից:

6.7.1.3. Այն դեպքում, երբ նյութի համար 3.2 գլխի Ա աղյուսակի 10-րդ



սյունակում չի նշվում շարժական ցիստեռնի վերաբերյալ որեւէ ցուցում (T1-T23, T50 կամ T75), ապա ծագման երկրի իրավասու մարմնի կողմից փոխադրման համար միջանկյալ հաստատում կարող է տրվել: Հաստատումը պետք է ներառվի բեռի վերաբերյալ փաստաթղթերի մեջ, եւ այն առնվազն պետք է պարունակի շարժական ցիստեռնների ցուցումներով սովորաբար նախատեսված, ինչպես նաեւ նյութի փոխադրման պայմանների վերաբերյալ տեղեկություններ:

6.7.2. 1-ին, ինչպես նաեւ 3-9-րդ դասերի նյութերի փոխադրման համար նախատեսված շարժական ցիստեռնների նախագծման, պատրաստման, ստուգման եւ փորձարկման վերաբերյալ պահանջները:

6.7.2.1. Սահմանումները

Սույն բաժնի նպատակներով՝

«Այլընտրանքային կարգավորում» նշանակում է իրավասու մարմնի կողմից տրամադրված՝ շարժական ցիստեռնի կամ ԳԲՏԿ-ի հաստատում, որը նախագծվել, պատրաստվել կամ փորձարկվել է սույն գլխով սահմանված տեխնիկական պահանջներից տարբեր՝ այլ տեխնիկական պահանջների կամ փորձարկման մեթոդների համաձայն:

«Շարժական ցիստեռն» նշանակում է բազմամողալ ցիստեռն, որն օգտագործվում է 1-ին, ինչպես նաեւ 3-9-րդ դասերի նյութերի փոխադրման համար: Շարժական ցիստեռնը ներառում է կորպուս, որի վրա հարմարեցված են վտանգավոր նյութերի փոխադրման համար անհրաժեշտ օժանդակ եւ կառուցվածքային սարքավորումներ: Շարժական ցիստեռնը պետք է ունենա լցվելու եւ դատարկվելու հնարավորություն՝ առանց դրա կառուցվածքային սարքավորման հեռացման: Ցիստեռնը կորպուսի արտաքին մասում պետք է ունենա կայունացնող դետալներ եւ պետք է լցված վիճակում բարձրացվելու հնարավորություն ունենա: Ցիստեռնը պետք է առաջին հերթին նախագծված լինի շարժիչով փոխադրամիջոցի, վագոնի կամ ծովագնաց կամ ներքին ջրուղիներով նավարկություն իրականացնող նավի վրա բեռնվելու նպատակով եւ պետք է համալրված լինի սահուկներով, ամրաններով կամ մեխանիկական բեռնմանը-բեռնաթափմանն օժանդակող պարագաներով: Ավտոցիստեռնները, վագոն-ցիստեռնները, ոչ մետաղական ցիստեռնները, սորուն բեռների համար նախատեսված միջին բեռնվածության կոնտեյներները (ՍՄԿ-ներ) ներառված չեն շարժական ցիստեռնների սահմանման շրջանակներում:

«Կորպուս» նշանակում է շարժական ցիստեռնի մաս, որի մեջ պահվում է փոխադրման համար նախատեսված նյութը (ցիստեռնին հատուկ), ներառյալ դրա բացվածքները եւ դրանց փականները,

բացառությամբ օժանդակ սարքավորումների կամ արտաքին կառուցվածքային սարքավորումների:

«Օժանդակ սարքավորումներ» նշանակում է չափիչ սարքեր, ինչպես նաև լցավորման, դատարկման, օդափոխման, անվտանգության, տաքացման, հովացման եւ մեկուսացման սարքեր:

«Կառուցվածքային սարքավորում» նշանակում է կորպուսի ուժեղարար, ամրացնող, պաշտպանիչ եւ կայունացնող արտաքին դետալներ.

«Առավելագույն թույլատրելի աշխատանքային ճնշում (ԱԹԱՃ)» նշանակում է ստորեւ նշված ամենաբարձր ճնշումից ոչ պակաս ճնշում, որը չափվում է կորպուսի վերին հատվածում, երբ այն գտնվում է աշխատանքային վիճակում՝

- ա) կորպուսում՝ այն լցավորելու կամ դատարկելու ընթացքում առկա թույլատրելի առավելագույն արդյունավետ մանոմետրական ճնշում, կամ
- բ) կորպուսի համար նախատեսված առավելագույն արդյունավետ մանոմետրական ճնշում, որը չպետք է պակաս լինի հետեւյալների գումարից՝
  - i) 65 °C պայմաններում գտնվող նյութի բացարձակ գոլորշու ճնշում՝ (արտահայտված բարով) հանած 1 բար, եւ
  - ii) օդի կամ այլ գազերի մասնական ճնշում՝ (արտահայտված բարով) տվյալ նյութի կամ գազից վեր ընկած հատվածում, որը սահմանվում է 65 °C գոլորշաօդային միջավայրի առավելագույն ջերմաստիճանի եւ հեղուկի ընդարձակման հիման վրա՝ կապված  $t_r - t_f$ -ի ( $t_f$ ՝ լցավորման ջերմաստիճան, սովորաբար 15 °C,  $t_r$ ՝ առավելագույն միջին ծավալային ջերմաստիճան, 50 °C) միջին ծավալային ջերմաստիճանի բարձրացման հետ:

«Հաշվարկային ճնշում» նշանակում է ճնշում, որն օգտագործվում է ճնշումային անոթների վերաբերյալ կանոններով պահանջվող հաշվարկների ժամանակ: Հաշվարկային ճնշումը չպետք է լինի ավելի ցածր, քան հետեւյալ ճնշումներից ամենաբարձրը՝

- ա) առավելագույն արդյունավետ մանոմետրական ճնշում, որի առկայությունը կորպուսում թույլատրելի է լցավորման ընթացքում կամ այն դատարկելիս. կամ
- բ) հետեւյալի գումարը՝

- i) 65 °C պայմաններում գտնվող նյութի բացարձակ գոլորշու ճնշում՝ (արտահայտված բարով) հանած 1 բար.
  - ii) օդի կամ այլ գազերի մասնական ճնշում՝ (արտահայտված բարով) տվյալ նյութի կամ գազից վեր ընկած հատվածում, որը սահմանվում է 65 °C գոլորշաօդային միջավայրի առավելագույն ջերմաստիճանի եւ հեղուկի ընդարձակման հիման վրա՝ կապված  $tr - tf$ -ի ( $tf$ ՝ լցավորման ջերմաստիճան, սովորաբար 15 °C,  $tr$ ՝ առավելագույն միջին ծավալային ջերմաստիճան, 50 °C) միջին ծավալային ջերմաստիճանի բարձրացման հետ, եւ
  - iii) սեղմման ճնշում, որը որոշվում է ստատիկ ուժերի հիման վրա, ինչպես դրանք սահմանված են 6.7.2.2.12-ում, սակայն, որն ունի 0,35 բարից ոչ պակաս արժեք, կամ
- գ) շարժական ցիստեռնների վերաբերյալ 4.2.5.2.6-ում նշված՝ համապատասխան ցուցումներով սահմանված փորձարկման ճնշման նվազագույն արժեքի երկու երրորդ:

«Փորձարկման ճնշում» նշանակում է հիդրավլիկ ճնշափորձարկման ընթացքում կորպուսի վերին հատվածում առկա առավելագույն մանոմետրական ճնշում, որը կազմում է հաշվարկային ճնշման 1,5-պատիկից ոչ պակաս: Կոնկրետ նյութերի համար նախատեսված շարժական ցիստեռնների նվազագույն փորձարկման ճնշումը սահմանված է շարժական ցիստեռնների վերաբերյալ 4.2.5.2.6-ում նշված համապատասխան ցուցումներով:

«Անջրանցիկության փորձարկում» նշանակում է գազի օգտագործմամբ փորձարկում, որի ընթացքում կորպուսը եւ դրա օժանդակ սարքավորումները ենթարկվում են ԱԹԱՃ-ի 25%-ից ոչ պակաս արդյունավետ ներքին ճնշման:

«Առավելագույն թույլատրելի անզուտ քաշ (ԱԹԱՔ)» նշանակում է շարժական ցիստեռնի տարայի զանգվածի եւ փոխադրման համար առավելագույն թույլատրելի բեռնվածքի գումարը:

«Ստանդարտ պողպատ» նշանակում է պողպատ, որն ունի 370 Ն/մմ<sup>2</sup> ձգման ամրություն եւ երկարացում 27% խզման դեպքում:

«Փափուկ պողպատ» նշանակում է պողպատ, որն ունի 360 Ն/մմ<sup>2</sup> - 440 Ն/մմ<sup>2</sup>-ին համարժեք ձգման ամրությամբ երաշխավորված նվազագույն արժեք ու խզման դեպքում երկարացման երաշխավորված նվազագույն արժեք եւ որը համապատասխանում է 6.7.2.3.3.3-ի պահանջներին:

«Հաշվարկային ջերմաստիճանի միջակայքը» կորպուսի համար պետք է լինի -40 °C - 50 °C այն նյութերի համար, որոնք փոխադրվում են արտաքին միջավայրի պայմաններում: Բարձր ջերմաստիճանային

պայմաններում փոխադրվող նյութերի հաշվարկային ջերմաստիճանը պետք է պակաս չլինի լցավորման, դատարկման կամ փոխադրման ընթացքում նյութի առավելագույն ջերմաստիճանից: Այն շարժական ցիստեռնների համար, որոնք փոխադրվում են առավել խիստ կլիմայական պայմաններում, պետք է դիտարկվեն առավել խիստ հաշվարկային ջերմաստիճաններ:

«Մանրահատիկ պողպատ» նշանակում է ֆեռիտային բյուրեղահատիկի չափսի՝ 6 կամ ավելի բարակ պողպատ՝ համաձայն ASTM E 112-96-ի կամ ինչպես սահմանված է EN 10028-3 ստանդարտի 3-րդ մասով:

«Հալուն տարր» նշանակում է ճնշումը նվազեցնող սարք, որը չունի փակվելու հնարավորություն, ինչպես նաեւ ջերմահաղորդիչ է:

«Ծովային շարժական ցիստեռն» նշանակում է բազմակի օգտագործման համար հատուկ նախատեսված շարժական ցիստեռն, որով դեպի ափամերձ կառույցներ, այդ կառույցներից եւ դրանց միջեւ բեռներ են փոխադրվում: Ծովային շարժական ցիստեռնը նախագծված եւ կառուցված է բաց ծովում փոխադրվող ծովափնյա կոնտեյներների հաստատման այն ուղեցույցներին համապատասխան, որոնք MSC/Circ.860 փաստաթղթում սահմանվել են Ծովագնացության միջազգային կազմակերպության կողմից:

#### 6.7.2.2. Նախագծման եւ պատրաստման ընդհանուր պահանջները

6.7.2.2.1. Կորպուսները պետք է նախագծվեն եւ պատրաստվեն ճնշումային անոթների վերաբերյալ կանոնների համաձայն, որոնք ընդունելի են իրավասու մարմնի համար: Կորպուսները պետք է պատրաստվեն մետաղական նյութերից, որոնք հարմար են պրոֆիլավորման համար: Նյութերը սկզբունքորեն պետք է համապատասխանեն նյութերի վերաբերյալ ազգային կամ միջազգային ստանդարտներին: Եռակցված կորպուսների դեպքում կարելի է օգտագործել միայն այնպիսի նյութ, որի եռակցելիությունը հիմնավորապես ապացուցված է: Եռակցման կարանները պետք է հմտորեն դրված լինեն եւ ապահովեն լիարժեք անվտանգություն: Կորպուսները պետք է ենթարկվեն համապատասխան ջերմային մշակման՝ երաշխավորելու համար եռակցման կարանի եւ ջերմամշակման ենթարկված հատվածի բավարար ամրությունը, եթե դրա անհրաժեշտությունը պայմանավորված է արտադրական պրոցեսով կամ նյութերի հատկություններով: Նյութն ընտրելիս պետք է հաշվի առնվի հաշվարկային ջերմաստիճանի միջակայքը՝ փխրուն քայքայման ռիսկի, լարվածության տակ կոռոզիոն ճաքերի առաջացման եւ հարվածի ամրության առումներով: Եթե օգտագործվում է մանրահատիկ պողպատ, ապա հոսունության սահմանի երաշխավորված արժեքը չպետք է 460 Ն/մմ<sup>2</sup>-ից բարձր լինի, իսկ ձգման ամրության վերին շեմը

չպետք է 725 Ն/մմ2-ից բարձր լինի՝ տվյալ նյութի մասնագրի պահանջների համաձայն: Այլումինը, որպես կառուցվածքային նյութ, կարող է օգտագործվել միայն շարժական ցիստեռնների վերաբերյալ հատուկ դրույթներով նախատեսված եւ 3.2 գլխի Ա աղյուսակի 11-րդ սյունակում կոնկրետ նյութի համար նշված լինելու կամ իրավասու մարմնի կողմից հաստատված լինելու դեպքում: Այլումինի օգտագործման թույլտվության դեպքում այն պետք է մեկուսացվի, որպեսզի հնարավոր լինի կանխել դրա ֆիզիկական հատկությունների զգալի կորուստն այն դեպքում, երբ այն 30 րոպեից ոչ պակաս տեսողությամբ ենթարկվում է 110 կՎ/մ2 ջերմային բեռնվածությանը: Մեկուսացման մեթոդը պետք է շարունակվի կիրառվել 649 °C-ից ցածր ցանկացած ջերմաստիճանի դեպքում, ինչպես նաեւ այլումինը պետք է պատված լինի այնպիսի նյութով, որի հալման ջերմաստիճանը ցածր չէ 700 °C-ից: Այն նյութերը, որոնցից պատրաստված են շարժական ցիստեռնները, պետք է պիտանի լինեն փոխադրման ժամանակ առկա արտաքին միջավայրի պայմաններում օգտագործվելու համար:

6.7.2.2.2. Շարժական ցիստեռնի կորպուսները, կցամասերը եւ խողովակաշարերը պետք է պատրաստված լինեն այնպիսի նյութերից, որոնք՝

ա) էապես կայուն են փոխադրման համար նախատեսված նյութի (նյութերի) ազդեցության նկատմամբ, կամ

բ) պատշաճ կերպով պասիվացված կամ չեզոքացված են քիմիական ռեակցիայի միջոցով, կամ

գ) երեսապատված են հակակոռոզիոն նյութով, որն անմիջականորեն փաթաթված կամ համարժեք եղանակով ամրացված է կորպուսին:

6.7.2.2.3. Խցանիչները պետք է պատրաստված լինեն այնպիսի նյութերից, որոնք չեն ենթարկվում փոխադրման համար նախատեսված նյութի (նյութերի) ազդեցությանը:

6.7.2.2.4. Այն դեպքում, երբ կորպուսները երեսապատված են, երեսապատվածքը պետք է կայուն լինի փոխադրման համար նախատեսված նյութի (նյութերի) ազդեցության նկատմամբ, ինչպես նաեւ պետք է լինի համասեռ, ոչ ծակոտկեն, զերծ պերֆորացիաներից եւ բավականաչափ էլաստիկ, ինչպես նաեւ ունենա հենամարմնի ջերմային ընդարձակման միեւնույն գործակիցները: Յուրաքանչյուր կորպուսի, կցամասի եւ խողովակաշարի երեսապատվածք պետք է ամբողջական լինի եւ պարուրի ցանկացած կցաշուրթի երեսակողմի հատվածը: Այն դեպքում, երբ արտաքին կցամասերը զոդված են ցիստեռնի հետ, երեսապատվածքը պետք է ամբողջական լինի եւ պարուրի կցամասն

ու արտաքին կցաշուրթերը:

- 6.7.2.2.5. Այն նյութերը, որոնցից պատրաստված են երեսապատվածքի վրա առկա միացքները եւ կարանները, պետք է միմյանց միացվեն ձուլման կամ համարժեք արդյունավետության այլ եղանակներով:
- 6.7.2.2.6. Պետք է խուսափել իրարից տարբերվող մետաղների շփումից, որը կարող է հանգեցնել գալվանական ազդեցության հետեւանքով առաջացող վնասվածքների:
- 6.7.2.2.7. Այն նյութերը, որոնցից պատրաստված են շարժական ցիստեռնը, այդ թվում՝ ցանկացած սարք, խցանիչ, երեսապատվածք եւ հարակից սարք, չպետք է բացասաբար անդրադառնան շարժական ցիստեռնով փոխադրման համար նախատեսված նյութի (նյութերի) վրա:
- 6.7.2.2.8. Շարժական ցիստեռնները պետք է նախագծվեն եւ պատրաստվեն փոխադրման ժամանակ անվտանգ հիմք ապահովող հենարանների, ինչպես նաեւ ամբարձիչ եւ ամրակման համապատասխան հարմարանքների կիրառմամբ:
- 6.7.2.2.9. Շարժական ցիստեռնները պետք է նախագծվեն այնպես, որ դրանք առանց իրենց պարունակության կորստի կարողանան դիմակայել պարունակության պատճառով առաջացած ներքին ճնշմանը, ինչպես նաեւ բեռնման-բեռնաթափման եւ փոխադրման նորմալ պայմաններում առկա ստատիկ, դինամիկ եւ ջերմային բեռնվածությանը: Կառուցվածքի միջոցով պետք է ցույց տրվի, որ դրանում հաշվի են առնվել հոգնածության ազդեցությունները, որոնք առաջանում են շարժական ցիստեռնի շահագործման ակնկալվող ժամանակահատվածի ընթացքում այդ բեռնվածությունների բազմակի կիրառության հետեւանքով:
- 6.7.2.2.9.1. Շարժական ցիստեռնների դեպքում, որոնք նախատեսված են ծովային փոխադրման համար, անհրաժեշտ է հաշվի առնել բաց ծովում մշակման արդյունքում առաջացող դինամիկ բեռնվածքները:
- 6.7.2.2.10. Այն կորպուսը, որի վրա տեղադրված չէ վակուումային ապահովիչ սարք, պետք է առանց մնացորդային դեֆորմացիայի կարողանա դիմակայել ներքին ճնշումից ոչ պակաս, քան 0,21 բարով բարձր արժեք ունեցող արտաքին ճնշմանը: Վակուումային ապահովիչ սարքը պետք է կարգավորված լինի (-) 0,21 բարից ոչ ավելի ճնշման պայմաններում աշխատելու համար, եթե կորպուսը նախագծված չէ ավելի բարձր ավելցուկային արտաքին ճնշման համար, որի դեպքում տեղադրող սարքի վակուումային ճնշումը չպետք է գերազանցի ցիստեռնի հաշվարկային վակուումային ճնշման արժեքը: Փաթեթավորման միայն II եւ III խմբերի ու փոխադրման ժամանակ հեղուկ վիճակի չանցնող պինդ նյութերի (փոշենման կամ հատիկավոր)

փոխադրման համար օգտագործվող կորպուսը կարող է նախագծվել ավելի ցածր արտաքին ճնշման պայմաններում շահագործվելու համար, որը սակայն ենթակա է իրավասու մարմնի կողմից հաստատմանը: Այդ դեպքում վակուումային կափույրը պետք է աշխատի նշված ավելի ցածր ճնշման պայմաններում: Այն կորպուսը, որի վրա չպետք է տեղադրվի վակուումային ապահովիչ սարք, պետք է առանց մնացորդային դեֆորմացիայի կարողանա դիմակայել ներքին ճնշումից ոչ պակաս, քան 0,4 բարով բարձր արժեք ունեցող արտաքին ճնշմանը:

6.7.2.2.11. Շարժական ցիստեռների վրա դրվելու համար նախատեսված վակուումային ապահովիչ սարքերը, որոնք օգտագործվում են 3-րդ դասի բռնկման ջերմաստիճանի չափորոշիչները բավարարող նյութերի, այդ թվում՝ բարձր ջերմաստիճանային նյութերի փոխադրման համար, որոնք փոխադրվում են իրենց բռնկման ջերմաստիճանից բարձր ջերմաստիճանային պայմաններում, պետք է կանխեն կրակի կտրուկ ներթափանցումը կորպուս, կամ շարժական ցիստեռնը պետք է ունենա այնպիսի կորպուս, որն առանց արտահոսքի կկարողանա դիմակայել կորպուս կրակի ներթափանցման հետեւանքով առաջացող արտաքին պայթյունին:

6.7.2.2.12. Շարժական ցիստեռները եւ դրանց ամրակման դետալները պետք է հնարավորություն ունենան թույլատրելի առավելագույն բեռնվածության պայմաններում դիմանալու առանձին ազդեցության հետեւյալ ստատիկ ուժերի ներգործությանը՝

ա) շարժման ուղղությամբ՝ ԱԹԱԲ-ի կրկնապատիկը բազմապատկած ազատ անկման արագացման արժեքով (g)<sup>1</sup>.

բ) շարժման ուղղությամբ՝ հորիզոնական դիրքով ուղիղ անկյան տակ՝ ԱԹԱԲ-ը (եթե շարժման ուղղությունը հստակ սահմանված չէ՝ ուժերը պետք է հավասար լինեն ԱԹԱԲ-ի արժեքի կրկնապատիկին) բազմապատկած ազատ անկման արագացման արժեքով (g)<sup>1</sup>.

գ) ուղղահայաց դիրքով՝ ներքեից վերեւ՝ ԱԹԱԲ-ը բազմապատկած ազատ անկման արագացման արժեքով (g)<sup>1</sup>, եւ

դ) ուղղահայաց դիրքով՝ վերեւից ներքեւ՝ ԱԹԱԲ-ի արժեքի կրկնապատիկը (ընդհանուր բեռնվածությունը, ներառյալ՝ ծանրության ուժի ազդեցությունը) բազմապատկած ազատ անկման արագացման արժեքով (g)<sup>1</sup>:

---

<sup>1</sup> Հաշվարկման նպատակներով  $g = 9.81 \text{ մ/ս}^2$ :

- 6.7.2.2.13. 6.7.2.2.12-ում նշված յուրաքանչյուր ուժի ներգործության դեպքում պետք է դիտարկվեն ամրության պաշարի հետտեսլալ գործակիցները՝
- ա) հստակ սահմանված հոսունության սահման ունեցող մետաղների դեպքում՝ ամրության պաշարի 1,5 գործակից՝ հոսունության երաշխավորված սահմանի հարաբերությամբ, կամ
  - բ) հստակ սահմանված հոսունության սահման չունեցող մետաղների դեպքում՝ ամրության պաշարի 1,5 արժեքով գործակից՝ 0,2 % հոսունության երաշխավորված պայմանական սահմանի հարաբերությամբ, իսկ աուստենիտային պողպատների դեպքում՝ 1% հոսունության պայմանական սահմանի հարաբերությամբ:
- 6.7.2.2.14. Հոսունության սահմանի կամ հոսունության պայմանական սահմանի արժեքները պետք է համապատասխանեն նյութերի վերաբերյալ ազգային կամ միջազգային ստանդարտներով սահմանված արժեքներին: Երբ օգտագործվում են աուստենիտային պողպատներ, նյութի վերաբերյալ ստանդարտների համաձայն սահմանված հոսունության սահմանի եւ հոսունության պայմանական սահմանի նվազագույն արժեքները կարող են բարձրացվել մինչեւ 15%-ի չափով, այն դեպքում, երբ նյութի ստուգման սերտիֆիկատում նշված են այդ առավել բարձր արժեքները: Եթե տվյալ մետաղի վերաբերյալ գոյություն չունի որեւէ ստանդարտ, ապա հոսունության սահմանի արժեքը կամ հոսունության պայմանական սահմանի արժեքը պետք է հաստատվի իրավասու մարմնի կողմից:
- 6.7.2.2.15. Այն շարժական ցիստեռնների համար, որոնք նախատեսված են 3-րդ դասի բռնկման ջերմաստիճանի չափորոշիչները բավարարող նյութերի, այդ թվում՝ բարձր ջերմաստիճանային այն նյութերի փոխադրման համար, որոնք փոխադրվում են իրենց բռնկման ջերմաստիճանից բարձր ջերմաստիճանային պայմաններում, պետք է նախատեսվի հողանցման հնարավորություն: Միջոցներ պետք է ձեռնարկվեն՝ վտանգավոր էլեկտրաստատիկ պարպումը կանխելու համար:
- 6.7.2.2.16. Շարժական ցիստեռնների վերաբերյալ 3.2 գլխի Ա աղյուսակի 10-րդ սյունակում նշված եւ 4.2.5.2.6-ում նկարագրված համապատասխան ցուցումների կամ շարժական ցիստեռնների վերաբերյալ 3.2 գլխի Ա աղյուսակի 11-րդ սյունակում նշված եւ 4.2.5.3-ում նկարագրված հատուկ դրույթի համաձայն որոշ նյութերի համար պահանջվելու դեպքում շարժական ցիստեռնների համար պետք է ապահովվի լրացուցիչ պաշտպանություն, որը կարող է կատարվել հենամարմնի պատերի լրացուցիչ հաստության կամ ավելի բարձր փորձարկման



ճնշման ապահովման ձեռով, ընդ որում, կորպուսի պատերի լրացուցիչ հաստությունը կամ ավելի բարձր փորձարկման ճնշման արժեքը պետք է որոշվի տվյալ նյութերի փոխադրմանը բնորոշ ռիսկերի հաշվի առմամբ:

6.7.2.2.17. Բարձր ջերմաստիճանային պայմաններում փոխադրվող նյութերի համար նախատեսված կորպուսի հետ անմիջական շփման մեջ գտնվող ջերմամեկուսացման բոցավառման ջերմաստիճանը պետք է առնվազն  $50^{\circ}\text{C}$ -ով գերազանցի այն ջերմաստիճանը, որը հաշվարկված է ցիստեռնի համար:

6.7.2.3. Կառուցվածքի չափորոշիչները

6.7.2.3.1. Կորպուսները պետք է ունենան այնպիսի կառուցվածք, որը հնարավոր է դարձնում դրա լարման մաթեմատիկական կամ փորձնական ճանապարհով հաշվարկումը՝ իրավասու մարմնի կողմից հաստատված տենզոռեզիստորային կամ այլ եղանակներով:

6.7.2.3.2. Կորպուսները պետք է նախագծվեն եւ պատրաստվեն այնպես, որ դրանք դիմանան հաշվարկային ճնշման 1,5-ապատիկից ոչ պակաս արժեքով փորձարկման ճնշումով հիդրավլիկ փորձարկմանը: Շարժական ցիստեռնների վերաբերյալ 3.2 գլխի Ա աղյուսակի 10-րդ սյունակում նշված եւ 4.2.5.2.6-ում նկարագրված համապատասխան ցուցումների կամ շարժական ցիստեռնների վերաբերյալ 3.2 գլխի Ա աղյուսակի 11-րդ սյունակում նշված եւ 4.2.5.3-ում նկարագրված հատուկ դրույթի համաձայն որոշ նյութերի համար սահմանված են հատուկ պահանջներ: Ուշադրություն պետք է դարձվի կորպուսի պատերի նվազագույն հաստության վերաբերյալ պահանջներին, որոնք սահմանված են 6.7.2.4.1 - 6.7.2.4.10-ում:

6.7.2.3.3. Հստակ սահմանված հոսունության սահման կամ երաշխավորված հոսունության պայմանական սահման ունեցող մետաղների դեպքում (որպես կանոն՝ 0,2% պայմանական հոսունություն կամ աուստենիտային պողպատների դեպքում՝ 1% հոսունության պայմանական սահման), կորպուսում առկա առաջնային մակերեսային լարվածությունը  $\sigma$  (սիգմա) փորձարկման ճնշման ժամանակ չպետք է գերազանցի 0,75 Re կամ 0,50 Rm, նայած թե որի արժեքն է ավելի փոքր, որտեղ՝

Re-ն՝ հոսունության սահման՝ արտահայտված  $\text{N}/\text{մմ}^2$ , կամ 0,2% պայմանական հոսունության սահման, իսկ աուստենիտային պողպատների դեպքում՝ 1% պայմանական հոսունության սահման.

Rm-ը՝ ձգման նվազագույն ամրություն՝ արտահայտված  $\text{N}/\text{մմ}^2$ -ով:

6.7.2.3.3.1. Re եւ Rm արժեքների կիրառության համար սահմանվում են նվազագույն արժեքներ՝ այդ նյութերի վերաբերյալ ազգային կամ

միջազգային ստանդարտների համաձայն: Երբ օգտագործվում են աուստենիտային պողպատներ, նյութերի վերաբերյալ ստանդարտների համաձայն Re եւ Rm սահմանված նվազագույն արժեքները կարող են մեծացվել մինչեւ 15%-ի չափով, եթե այդ առավել բարձր արժեքները նշված են նյութի ստուգման սերտիֆիկատում: Եթե տվյալ նյութի վերաբերյալ գոյություն չունի որեւէ ստանդարտ, ապա Re եւ Rm արժեքները պետք է հաստատվեն իրավասու մարմնի կամ նրա լիազոր մարմնի կողմից:

6.7.2.3.3.2. Եռակցված կորպուսներ պատրաստելու համար արգելվում է օգտագործել 0,85-ից բարձր Re/Rm հարաբերակցությամբ պողպատներ: Այս հարաբերակցության սահմանման ժամանակ օգտագործվող Re եւ Rm արժեքներն այն արժեքներն են, որոնք սահմանված են նյութի ստուգման սերտիֆիկատում:

6.7.2.3.3.3. Կորպուսների պատրաստման համար օգտագործվող պողպատների խզման դեպքում երկարացման արժեքը (արտահայտված տոկոսով) չպետք է լինի 10 000/Rm-ից պակաս՝ 16% բացարձակ նվազագույնի պայմաններում՝ մանրահատիկ պողպատի դեպքում եւ 20%՝ այլ պողպատների դեպքում: Կորպուսների պատրաստման համար օգտագործվող ալյումինի եւ ալյումինե համաձուլվածքների խզման դեպքում երկարացման արժեքը (արտահայտված տոկոսով) չպետք է լինի 10 000/6Rm-ից պակաս 12% բացարձակ նվազագույն արժեքի դեպքում:

6.7.2.3.3.4. Նյութերի իրական արժեքները սահմանելու նպատակով պետք է նշել, որ բարակ թիթեղյա մետաղի դեպքում փորձարկման ձգվող նմուշների առանցքները պետք է գլոցման ուղղությամբ լինեն ուղիղ անկյան տակ (լայնակի): Խզման դեպքում երկարացումը չափվում է ուղղանկյուն լայնական հատվածք ունեցող փորձարկման նմուշների վրա, որոնք համապատասխանում են ISO 6892:1998 ստանդարտին՝ 50 մմ հաշվարկային երկարության դեպքում:

6.7.2.4. Կորպուսի պատերի նվազագույն հաստությունը

6.7.2.4.1. Հենամարմնի պատերի նվազագույն հաստությունը պետք է ունենա հետևյալ արժեքներից ամենամեծին հավասար արժեք՝

ա) 6.7.2.4.2 - 6.7.2.4.10-ի պահանջների համաձայն սահմանված նվազագույն հաստություն.

բ) 6.7.2.3-ի պահանջները ներառող՝ ճնշումային անոթների վերաբերյալ կանոնների համաձայն նվազագույն հաստություն. եւ

գ) շարժական ցիստեռնների վերաբերյալ 3.2 գլխի Ա աղյուսակի 10-րդ սյունակում նշված եւ 4.2.5.2.6-ում նկարագրված համապատասխան ցուցումների կամ շարժական ցիստեռնների

վերաբերյալ 3.2 գլխի Ա աղյուսակի 11-րդ սյունակում նշված ու 4.2.5.3-ում նկարագրված հատուկ դրույթի համաձայն սահմանված նվազագույն հաստություն:

- 6.7.2.4.2. Կորպուսի 1,80 մ-ից ոչ ավելի տրամագծով գլանաձեւ հատվածների, հատակների եւ մտոցի կափարիչների պատերի հաստությունը ստանդարտ պողպատի կամ կիրառվելիք մետաղի դեպքում չպետք է 5 մմ-ից պակաս լինի: 1,80 մ-ից ավելի տրամագծով կորպուսների պատերի հաստությունը ստանդարտ պողպատի կամ կիրառվելիք մետաղի դեպքում չպետք է գերազանցի 6 մմ-ը՝ բացառությամբ փաթեթավորման II կամ III խմբի փոշիացված կամ հատիկավոր պինդ նյութերի փոխադրման համար նախատեսված կորպուսների, որոնց պատերի պահանջվող նվազագույն հաստության արժեքը կարող է նվազեցվել ոչ պակաս, քան 5 մմ-ով՝ ստանդարտ պողպատի կամ կիրառվելիք մետաղի դեպքում:
- 6.7.2.4.3. Այն դեպքում, երբ կորպուսի համար վնասվածքներից խուսափելու համար նախատեսված է լրացուցիչ պաշտպանություն, ապա իրավասու մարմնի համաձայնությամբ 2,65 բարից պակաս փորձարկման ճնշում ունեցող շարժական ցիստեռնների կորպուսների պատերի նվազագույն հաստությունը կարող է նվազեցվել նախատեսված պաշտպանության հետ համեմատական եղանակով: Այնուամենայնիվ, 1,80 մ-ից ոչ ավելի տրամագծով կորպուսների պատերի հաստությունը չպետք է 3 մմ-ից պակաս լինի ստանդարտ պողպատի կամ կիրառվելիք մետաղի դեպքում: 1,80 մ-ից ավելի տրամագծով կորպուսների պատերի հաստությունը չպետք է 4 մմ-ից պակաս լինի ստանդարտ պողպատի կամ կիրառվելիք մետաղի դեպքում:
- 6.7.2.4.4. Բոլոր կորպուսների գլանաձեւ հատվածների, հատակների եւ մտոցի կափարիչների պատերի հաստությունը չպետք է 3 մմ-ից պակաս լինի՝ անկախ դրա պատրաստման համար օգտագործված նյութի տեսակից:
- 6.7.2.4.5. Լրացուցիչ պաշտպանությունը, որի մասին նշված է 6.7.2.4.3-ում, կարելի է ապահովել ամբողջ արտաքին կառուցվածքի պաշտպանության ապահովման միջոցով, ինչպես օրինակ՝ «սենդվիչ» կառուցվածքի համապատասխան տեսակում, որն ունի կորպուսին ամրացված արտաքին երեսվածք (շապիկ), կամ կրկնակի պատերով կառուցվածքի եւ կամ կորպուսը երկայնակի եւ լայնակի կառուցվածքային տարրերով ամբողջական հիմնակմախքի մեջ ներառելու եղանակով:
- 6.7.2.4.6. Ստանդարտ պողպատի համար 6.7.2.4.2-ով սահմանված

հաստության արժեքից տարբեր՝ այլ մետաղի համարժեք հաստությունը որոշվում է հետևյալ բանաձևի միջոցով՝

$$e_1 = \frac{21.4e_0}{\sqrt[3]{Rm_1 \times A_1}}$$

որտեղ՝

$e_1$ -ը կիրառվելիք մետաղի պահանջվող համարժեք հաստությունն է (մմ-ով).

$e_0$  –ն՝ ստանդարտ պողպատի նվազագույն հաստությունը (մմ-ով)՝ սահմանված շարժական ցիստեռների վերաբերյալ 3.2 գլխի Ա աղյուսակի 10-րդ սյունակում նշված եւ 4.2.5.2.6-ում նկարագրված համապատասխան ցուցումներով կամ շարժական ցիստեռների վերաբերյալ 3.2 գլխի Ա աղյուսակի 11-րդ սյունակում նշված եւ 4.2.5.3-ում նկարագրված հատուկ դրույթի համաձայն.

$Rm_1$  = կիրառվելիք մետաղի երաշխավորված ձգման նվազագույն ամրության սահման (Ն/մմ<sup>2</sup>-ով) (տե՛ս 6.7.2.3.3).

$A_1$ -ը կիրառվելիք մետաղի խզման դեպքում երաշխավորված նվազագույն երկարացումն է (%-ով)՝ ազգային կամ միջազգային ստանդարտների համաձայն:

- 6.7.2.4.7. Այն դեպքում, երբ 4.2.5.2.6-ում նկարագրված՝ շարժական ցիստեռների վերաբերյալ համապատասխան ցուցումներով նվազագույն հաստությունը սահմանված է 8 կամ 10 մմ, ապա հարկ է նշել, որ հաստության այդ արժեքները հաշվարկված են ստանդարտ պողպատի եւ 1,80 մ տրամագծով կորպուսի հատկությունների հաշվի առմամբ: Փափուկ պողպատից տարբեր՝ այլ մետաղ օգտագործվելու դեպքում (տե՛ս 6.7.2.1), կամ երբ հենամարմնի տրամագիծը 1,80 մ-ից ավելի է, ապա մետաղի հաստությունը որոշվում է հետևյալ բանաձևի միջոցով՝

$$e_1 = \frac{21.4e_0 d_1}{1,8 \sqrt[3]{Rm_1 \times A_1}}$$

որտեղ՝

$e_1$ -ը կիրառվելիք մետաղի պահանջվող համարժեք հաստությունն է (մմ-ով).

$e_0$ -ն՝ ստանդարտ պողպատի նվազագույն հաստությունը (մմ-ով)՝ սահմանված շարժական ցիստեռների վերաբերյալ 3.2 գլխի Ա աղյուսակի 10-րդ սյունակում նշված եւ 4.2.5.2.6-ում նկարագրված համապատասխան ցուցումներով կամ շարժական ցիստեռների

վերաբերյալ 3.2 գլխի Ա աղյուսակի 11-րդ սյունակում նշված եւ 4.2.5.3-ում նկարագրված հատուկ դրույթի համաձայն.

d1-ը՝ կորպուսի՝ 1,80 մ-ից ոչ պակաս տրամագիծը (մմ-ով).

Rm1-ը՝ կիրառվելիք մետաղի երաշխավորված ձգման նվազագույն ամրության սահմանը (Ն/մմ<sup>2</sup>-ով) (տե՛ս 6.7.2.3.3).

A1-ը կիրառվելիք մետաղի խզման դեպքում երաշխավորված նվազագույն երկարացումն է (%-ով)՝ ազգային կամ միջազգային ստանդարտների համաձայն:

6.7.2.4.8. Ոչ մի դեպքում պատի հաստությունը չպետք է ունենա 6.7.2.4.2-ով, 6.7.2.4.3-ով եւ 6.7.2.4.4-ով սահմանվածից պակաս արժեք: Կորպուսի բոլոր հատվածները պետք է ունենան 6.7.2.4.2 - 6.7.2.4.4-ով սահմանված նվազագույն հաստություն: Այդ հաստության արժեքի մեջ հաշվի չի առնվում կոռոզիան:

6.7.2.4.9. Փափուկ պողպատի օգտագործման դեպքում (տե՛ս 6.7.2.1), 6.7.2.4.6-ում կիրառված բանաձեւի օգտագործմամբ հաշվարկ չի պահանջվում:

6.7.2.4.10. Կորպուսի հատակի եւ գլանաձեւ հատվածի միացման մասում թիթեղի հաստության կտրուկ փոփոխություն չի թույլատրվում:

6.7.2.5. Օժանդակ սարքավորումները

6.7.2.5.1. Բոլոր օժանդակ սարքավորումները պետք է այնպես տեղադրվեն, որպեսզի դրանք պաշտպանված լինեն բեռնման-բեռնաթափման կամ փոխադրման ընթացքում պոկվելու կամ վնասվելու ռիսկից: Եթե հիմնակմախքի եւ կորպուսի միջեւ միացումն այնպիսին է, որը կարող է ենթամասերի միջեւ հարաբերական շարժում թույլ տալ, ապա սարքը պետք է ամրացված լինի այնպես, որ նման շարժումը չվնասի աշխատող մասերին: Դատարկման արտաքին կցամասերը (խողովակների ագույցները, փակիչ սարքերը), ներքին կասեցման կափույրը եւ դրա թամբը պետք է պաշտպանված լինեն արտաքին ուժերի ազդեցության հետեւանքով պոկվելու վտանգից (օրինակ՝ տեղաշարժվող հատվածամասերի օգտագործման եղանակով): Պետք է հնարավոր լինի լցավորման եւ դատարկման սարքերը (այդ թվում՝ կցաշուրթերը եւ պարուրակավոր խցափակիչները) եւ ցանկացած ապահովիչ թասակ պաշտպանել պատահական բացվելուց:

6.7.2.5.2. Կորպուսի այն բոլոր բացվածքները, որոնք նախատեսված են շարժական ցիստեռնի լցավորման եւ դատարկման համար, պետք է սարքավորված լինեն ձեռքով կարգավորվող կասեցման կափույրով,

որը պետք է հնարավորինս մոտ գտնվի կորպուսին: Մյուս բացվածքները, բացառությամբ դեպի օդափոխման կամ ճնշումը նվազեցնող սարքեր տանող բացվածքների, պետք է սարքավորված լինեն կամ կասեցման կափույրով կամ փակելու մեկ այլ համապատասխան սարքով, որը հնարավորինս մոտ կգտնվի կորպուսին:

- 6.7.2.5.3. Բոլոր շարժական ցիստեռնները պետք է ունենան մտոցներ կամ համապատասխան մեծության այլ՝ ներքին զննման համար նախատեսված դիտանցքներ՝ տեխնիկական սպասարկման աշխատանքներ իրականացնելու եւ վերանորոգելու նպատակով ցիստեռնի ներսը մուտք գործելու համապատասխան հնարավորությամբ: Հատվածամասերի բաժանված շարժական ցիստեռնները յուրաքանչյուր հատվածամասի համար պետք է ունենան մտոցներ կամ այլ դիտանցքներ:
- 6.7.2.5.4. Արտաքին կցամասերը պետք է հնարավորինս խմբավորված լինեն: Մեկուսացված շարժական ցիստեռնները, դրանց գազաթի հատվածի կցամասերը պետք է շրջապատված լինեն նյութի թափման դեպքերի համար նախատեսված եւ դատարկման հարմարանքներ ունեցող հավաքիչ սարքով:
- 6.7.2.5.5. Շարժական ցիստեռնի յուրաքանչյուր կցախողովակ պետք է ունենա դրա գործառույթը նշող հստակ մականշվածք:
- 6.7.2.5.6. Յուրաքանչյուր կասեցման կափույր կամ փակելու այլ հարմարանք պետք է նախագծված եւ պատրաստված լինի կորպուսի ԱԹԱՃ-ից ոչ պակաս նոմինալ ճնշման համար՝ հաշվի առնելով փոխադրման ընթացքում ակնկալվող ջերմաստիճանները: Բոլոր կասեցման կափույրները, որոնք ունեն պտուտակավոր իլեր, պետք է փակվեն ժամացույցի ուղղությամբ պտտեցնելով: Այլ կասեցման կափույրների դեպքում փակման դիրքը (բաց եւ փակ) եւ ուղղությունը պետք է հստակ նշված լինեն: Բոլոր կասեցման կափույրները պետք է նախագծված լինեն այնպես, որ հնարավոր լինի կանխել դրանց պատահական բացվելը:
- 6.7.2.5.7. Շարժուն դետալները, ինչպիսիք կափարիչներն են, փականների դետալները եւ այլն, չպետք է պատրաստված լինեն առանց պատվածքի, կոռոզիայի ենթարկվելու հավանականությամբ պողպատից, այն դեպքում, երբ դրանք ենթակա են շփական կամ հարվածական հպման այնպիսի նյութերի փոխադրման համար նախատեսված այլուրից շարժական ցիստեռնների հետ, ինչպիսիք են 3-րդ դասի բռնկման ջերմաստիճանի չափորոշիչները բավարարող նյութերը, այդ թվում՝ բարձր ջերմաստիճանային այն նյութերը, որոնք փոխադրվում են իրենց բռնկման կամ դրանից բարձր

ջերմաստիճանի պայմաններում:

- 6.7.2.5.8. Խողովակաշարերը պետք է նախագծված, պատրաստված եւ տեղադրված լինեն այնպես, որ հնարավոր լինի խուսափել ջերմային ընդարձակման եւ սեղմման, մեխանիկական ցնցման եւ վիբրացիայի հետեւանքով վնասվելու ռիսկից: Բոլոր խողովակաշարերը պետք է պատրաստված լինեն համապատասխան մետաղական նյութից: Որտեղ հնարավոր է, պետք է օգտագործվեն խողովակների եռակցված միացքներ:
- 6.7.2.5.9. Պղնձից խողովակների միացքները պետք է զոդվեն կամ կազմեն համարժեքորեն ամուր մետաղական ամբողջություն: Զոդված նյութերի հալման ջերմաստիճանը չպետք է լինի 525 °C-ից ցածր: Միացքները չպետք է նվազեցնեն խողովակների ամրությունը, օրինակ՝ պարուրակները կտրելիս:
- 6.7.2.5.10. Բոլոր խողովակաշարերի եւ դրանց կցամասերի պայթման ճնշումը չպետք է պակաս լինի հետեւյալ արժեքներից ամենաբարձրից, այն է՝ հենամարմնի ԱԹԱՃ-ի ճնշման արժեքի քառապատիկից կամ պոմպի եւ կամ մեկ այլ սարքի (բացառությամբ՝ ճնշումը նվազեցնող սարքերի) շահագործման հետեւանքով առաջացած ճնշման արժեքի քառապատիկից:
- 6.7.2.5.11. Կափույրներ եւ արքեսուարներ պատրաստելիս պետք է օգտագործվեն կռելի մետաղներ:
- 6.7.2.5.12. Ջեռուցման համակարգը պետք է նախատեսվի կամ կառավարվի այնպես, որ նյութի ջերմաստիճանը չհասնի այնպիսի մակարդակի, որի դեպքում ճնշումը ցիստեռնում կգերազանցի իր ԱԹԱՃ-ը կամ կառաջացնի այլ վտանգ (օրինակ՝ վտանգավոր ջերմային քայքայում):
- 6.7.2.5.13. Ջեռուցման համակարգը պետք է նախատեսվի կամ կառավարվի այնպես, որ ներքին ջեռուցման տարրերի սնուցում ստանան միայն այն դեպքում, երբ ջեռուցման տարրերն ամբողջությամբ բեռնված են: Ներքին ջեռուցման սարքավորումների ջեռուցման տարրերի մակերեսի ջերմաստիճանը կամ արտաքին ջեռուցման սարքավորումների կորպուսի ջերմաստիճանը ոչ մի դեպքում չպետք է գերազանցի փոխադրվող նյութերի ինքնաբոցավառման ջերմաստիճանի 80%-ը (°C-ով):
- 6.7.2.5.14. Եթե ցիստեռնում տեղադրված է էլեկտրական ջեռուցման համակարգ, այն պետք է կահավորվի անջատիչ ունեցող հողանցման սարքով՝ 100 մԱ-ից ոչ պակաս անջատման լարումով:
- 6.7.2.5.15. Ցիստեռնների վրա ամրացված էլեկտրական անջատիչների վահանները չպետք է ունենան ուղիղ միացում ցիստեռնի ներքին հատվածին եւ պետք է ունենան առնվազն IP56 տեսակին համարժեք

պաշտպանություն՝ IEC 144-ին կամ IEC 529-ին համապատասխան:

6.7.2.6. Հատակային բացվածքները

6.7.2.6.1. Որոշ նյութեր չպետք է փոխադրվեն հատակային բացվածքներ ունեցող շարժական ցիստեռններում: Այն դեպքում, երբ շարժական ցիստեռնների վերաբերյալ 3.2 գլխի Ա աղյուսակի 10-րդ սյունակում նշված եւ 4.2.5.2.6-ում նկարագրված համապատասխան ցուցումներում նշվում է, որ արգելվում է հատակային բացվածքների առկայությունը, ապա կորպուսում հեղուկի համար նախատեսված մակարդակից ցածր չպետք է որել բացվածք լինի, երբ այն լցված է լցավորման թույլատրելի առավելագույն չափով: Գոյություն ունեցող բացվածքը փակելու դեպքում ներսի եւ դրսի կողմերից թիթեղ պետք է եռակցվի կորպուսին:

6.7.2.6.2. Որոշ պինդ, բյուրեղացող կամ բարձր մածուցիկության նյութերի փոխադրման համար նախատեսված շարժական ցիստեռնների դատարկման հատակային բացվածքները պետք է սարքավորված լինեն հաջորդաբար տեղադրված եւ միմյանցից անկախ փակիչ սարքերով: Սարքավորման կառուցվածքը պետք է արժանանա իրավասու մարմնի կամ նրա լիազոր մարմնի հավանությանը եւ այն պետք է ներառի հետեւյալը՝

ա) կորպուսին հնարավորինս մոտ տեղադրված արտաքին կասեցման կափույր, որը նախագծված է այնպես, որ հնարավոր լինի կանխել հարվածի կամ հանկարծակի գործողության հետեւանքով պատահական բացվելու ցանկացած դեպք, եւ

բ) արտաթողման խողովակի ծայրին տեղադրված եւ հեղուկի համար նախատեսված հերմետիկ փական, որը կարող է լինել հեղույսներով ամրացված անշարժ կցաշուրթ կամ պտուտակավոր թասակ:

6.7.2.6.3. Յուրաքանչյուր դատարկման հատակային բացվածք, բացառությամբ 6.7.2.6.2-ով նախատեսված դեպքերի, պետք է սարքավորված լինի հաջորդաբար տեղադրված եւ միմյանցից անկախ փակիչ սարքերով: Սարքավորման կառուցվածքը պետք է արժանանա իրավասու մարմնի կամ նրա լիազոր մարմնի հավանությանը եւ այն պետք է ներառի հետեւյալը՝

ա) ինքնուրույն փակվող ներքին կասեցման կափույր, որը գտնվում է կորպուսի կամ զոդված կցաշուրթի կամ հեղույսված միացնող կցաշուրթի ներսի կողմում, ընդ որում՝

i) կափույրի կառավարման սարքերն այնպես են նախագծված, որ հնարավոր է կանխել հարվածի կամ այլ



հանկարծակի գործողության հետեւանքով պատահական բացվելու ցանկացած դեպք.

- ii) կափույրը կարող է կառավարվել վերելից կամ ներքեւից.
- iii) հնարավորության դեպքում կափույրի (բաց կամ փակ) դիրքերը պետք է հնարավոր լինի ստուգել գետնից.
- iv) բացառությամբ 1 000 լիտրից ավելի տարողությամբ շարժական ցիստեռնների, մյուս բոլոր շարժական ցիստեռնների համար պետք է նախատեսված լինի կափույրը փակելու հնարավորություն ցիստեռնի վրա հասանելի վայրից, որն ինքնին հեռու է կափույրից. եւ
- v) կափույրը պետք է շարունակի աշխատել այն կարգավորող արտաքին սարքի վնասվելու դեպքում.

բ) կորպուսին հնարավորինս մոտ տեղադրված արտաքին կասեցման կափույր. եւ

գ) արտաթողման խողովակի ծայրին տեղադրված եւ հեղուկի համար նախատեսված հերմետիկ փական, որը կարող է լինել հեղույսներով ամրացված անշարժ կցաշուրթ կամ պտուտակավոր թասակ:

6.7.2.6.4. Երեսապատված կորպուսի դեպքում 6.7.2.6.3(ա)-ով պահանջվող ներքին կասեցման կափույրը կարող է փոխարինվել լրացուցիչ արտաքին փակիչ կափույրով: Արտադրողը պետք է համապատասխանի իրավասու մարմնի կամ նրա լիազոր մարմնի պահանջներին:

6.7.2.7. Դատարկման ապահովիչ սարքերը

6.7.2.7.1. Բոլոր շարժական ցիստեռնների վրա պետք է տեղադրված լինի ճնշումը նվազեցնող առնվազն մեկ սարք: Բոլոր ապահովիչ սարքերը պետք է այնպես նախագծված, պատրաստված եւ մակնշված լինեն, որպեսզի բավարարեն իրավասու մարմնի կամ նրա լիազոր մարմնի պահանջները:

6.7.2.8. Ճնշումը նվազեցնող սարքերը

6.7.2.8.1. 1 900 լիտրից ոչ պակաս տարողությամբ ցանկացած շարժական ցիստեռնի եւ համարժեք տարողությամբ շարժական ցիստեռնի ցանկացած առանձին հատվածամասի համար պետք է նախատեսվեն ճնշումը նվազեցնող մեկ կամ ավելի զսպանակավոր սարքեր, ու այդ ցիստեռնները լրացուցիչ կերպով կարող են ունենալ զսպանակավոր սարքերին զուգահեռ տեղադրված պատռվող

մեմբրան կամ հալուն տարր, բացառությամբ այն դեպքերի, երբ դա արգելված է 6.7.2.8.3-ին կատարված հղում պարունակող եւ շարժական ցիստեռնների մասին 4.2.5.2.6-ում նշված համապատասխան ցուցման համաձայն: Ճնշման նվազեցման սարքերը պետք է ունենան արտաթողման բավարար հզորություն՝ գերճնշման կամ լցավորման, դատարկման կամ պարունակության տաքացման հետեւանքով առաջացած վակուումի պատճառով կորպուսի պատռվելը կանխելու համար:

- 6.7.2.8.2. Ճնշումը նվազեցնող սարքերը պետք է այնպես նախագծվեն, որ հնարավոր լինի կանխել անցանկալի նյութերի ներթափանցումը, հեղուկի արտահոսքը եւ ցանկացած հավելյալ վտանգավոր ճնշման գոյացումը:
- 6.7.2.8.3. Շարժական ցիստեռնների վերաբերյալ 3.2 գլխի Ա աղյուսակի 10-րդ սյունակում նշված եւ 4.2.5.2.6-ում նկարագրված համապատասխան ցուցումների համաձայն որոշ նյութերի համար պահանջվելու դեպքում շարժական ցիստեռնները պետք է ունենան իրավասու մարմնի կողմից հաստատված ճնշումը նվազեցնող սարք: Բացառությամբ, երբ հատուկ նշանակության շարժական ցիստեռնը համալրված է հաստատված ապահովիչ սարքով, որը պատրաստված է փոխադրվող նյութի հետ համատեղելի նյութից, ճնշումը նվազեցնող սարքը պետք է պարունակի զսպանակավոր ճնշման նվազեցման սարքին նախորդող՝ պատռվող մեմբրան: Երբ պատռվող մեմբրանը հաջորդաբար տեղադրվում է ճնշման նվազեցման պահանջվող սարքից հետո, ապա դրանց միջեւ ընկած հատվածում պետք է նախատեսվի ճնշաչափ կամ ճնշումը նվազեցնող համակարգը խափանելու հավանականություն ունեցող՝ մեմբրանի պատռման, ծակվելու կամ դրանից արտահոսք գրանցվելու դեպքերի մասին ազդանշող համապատասխան հսկիչ-ազդանշանային սարք: Պատռվող մեմբրանը պետք է պատռվի նոմինալ ճնշման այն արժեքի դեպքում, որը 10%-ով գերազանցում է ճնշումը նվազեցնող սարքի գործարկման ճնշման արժեքը:
- 6.7.2.8.4. 1 900 լիտրից պակաս տարողությամբ ցանկացած շարժական ցիստեռնի վրա պետք է տեղադրվի ճնշումը նվազեցնող սարք, որը կարող է լինել պատռվող մեմբրան, երբ այն համապատասխանում է 6.7.2.11.1-ի պահանջներին: Այն դեպքում, երբ չի օգտագործվում ճնշումը նվազեցնող զսպանակավոր սարք, պատռվող մեմբրանը պետք է ունենա փորձարկման ճնշմանը համարժեք նոմինալ ճնշման դեպքում պատռվելու կարգավորում: Բացի այդ, կարող են օգտագործվել 6.7.2.10.1-ի պահանջները բավարարող հալուն տարրեր:
- 6.7.2.8.5. Այն դեպքում, երբ կորպուսը սարքավորված է ճնշման տակ դատարկվելու համար, ապա ներթող խողովակի համար պետք է

նախատեսված լինի կորպուսի ԱԹ-ԱՃ-ի արժեքից ոչ բարձր ճնշման դեպքում աշխատելու կարգավորմամբ ճնշումը նվազեցնող սարք, եւ կասեցման կափույրը պետք է տեղադրվի հենամարմնին հնարավորինս մոտ:

6.7.2.9. Ճնշումը նվազեցնող սարքերի կարգավորումը

6.7.2.9.1. Հարկ է նշել, որ ճնշումը նվազեցնող սարքերը պետք է աշխատեն ջերմաստիճանը չափազանց բարձրանալու պայմաններում միայն, քանի որ կորպուսը փոխադրման բնականոն պայմաններում չպետք է ենթարկվի ճնշման անհարկի տատանումների (տե՛ս 6.7.2.12.2):

6.7.2.9.2. Ճնշումը նվազեցնող պահանջվող սարքերն այն կորպուսների դեպքում, որոնք ունեն 4.5 բարից ոչ ավելի եւ 110% փորձարկման ճնշում, պետք է աշխատեն փորձարկման ճնշման արժեքի հինգ - վեցերորդի չափով նոմինալ ճնշման պարագայում, իսկ 4,5 բարից ավելի փորձարկման ճնշում ունեցող կորպուսների դեպքում՝ դրա երկու երրորդի պարագայում: Ճնշումը նվազեցնելուց հետո սարքը պետք է փակվի ճնշման այնպիսի արժեքի դեպքում, որը 10%-ով ցածր է ճնշման նվազեցնելն սկսելու պահին առկա ճնշման արժեքից: Սարքը պետք է փակ մնա ճնշման ավելի ցածր արժեքների դեպքում: Սույն պահանջը չի խոչընդոտում վակուումային ապահովիչ սարքերի կամ դրանց եւ ճնշումը նվազեցնող սարքերի համակցության գործածությունը:

6.7.2.10. Հալուն տարրերը

6.7.2.10.1. Հալուն տարրերը պետք է գործեն 100 °C-ից մինչեւ 149 °C ջերմաստիճանի դեպքում, պայմանով, որ հալման ջերմաստիճանի ժամանակ կորպուսում առկա ճնշումը չպետք է գերազանցի փորձարկման ճնշման արժեքը: Դրանք պետք է տեղադրվեն կորպուսի գագաթի մասում այնպես, որ դրա ներթող բացվածքները գտնվեն շոգու տարածության մեջ, եւ փոխադրման անվտանգության նպատակներով օգտագործվելու դեպքում դրանք չպետք է պաշտպանված լինեն արտաքին ջերմությունից: Հալուն տարրերը չպետք է օգտագործվեն փորձարկման ճնշման 2,65 բարը գերազանցող արժեք ունեցող շարժական ցիստեռնների վրա՝ բացառությամբ 3.2 գլխի Ա աղյուսակի 11-րդ սյունակի TP36 հատուկ դրույթով նախատեսված դեպքերի: Բարձր ջերմաստիճանային նյութերի փոխադրման համար նախատեսված շարժական ցիստեռնների վրա օգտագործվող հալուն տարրերը պետք է այնպես նախագծված լինեն, որ կարողանան աշխատել փոխադրման ընթացքում ակնկալվող առավելագույն ջերմաստիճանից բարձր ջերմաստիճանի պայմաններում եւ պետք է համապատասխանեն իրավասու մարմնի կամ նրա լիազոր մարմնի պահանջներին:

- 6.7.2.11. Պատռվող մեմբրանները
- 6.7.2.11.1. Բացառությամբ 6.7.2.8.3-ով սահմանված դեպքերի՝ պատռվող մեմբրանները պետք է փորձարկման ճնշմանը համարժեք նոմինալ ճնշման դեպքում պատռվելու կարգավորում ունենան՝ հաշվարկային ջերմաստիճանի միջակայքի պայմաններում: Պատռվող մեմբրանների օգտագործման դեպքում հատուկ ուշադրություն պետք է դարձվի 6.7.2.5.1-ի եւ 6.7.2.8.3-ի պահանջներին:
- 6.7.2.11.2. Պատռվող մեմբրանները պետք է հաշվարկված լինեն շարժական ցիստեռնում առաջացող վակուումային ճնշման համար:
- 6.7.2.12. Ճնշումը նվազեցնող սարքերի թողունակությունը
- 6.7.2.12.1. 6.7.2.8.1-ով պահանջվող ճնշումը նվազեցնող զսպանակավոր սարքը պետք է ունենա հոսքի լայնական հատման՝ 31,75 մմ տրամագծով բացվածքին համարժեք տարածություն: Այն դեպքում, երբ օգտագործվում են վակուումային ապահովիչ սարքեր, դրանք պետք է ունենան 284 մմ<sup>2</sup>-ից ոչ պակաս հոսքի լայնական հատման տարածություն:
- 6.7.2.12.2. Ճնշման նվազեցման համակարգի ընդհանուր թողունակությունը (հաշվի առնելով հոսքի նվազեցումն այն դեպքում, երբ շարժական ցիստեռնի վրա տեղադրված է ճնշումը նվազեցնող զսպանակավոր սարքերին նախորդող՝ պատռվող մեմբրաններ, կամ երբ ճնշումը նվազեցնող զսպանակավոր սարքերի համար նախատեսված են կրակի ներթափանցումը կանխող սարքեր) ամբողջ շարժական ցիստեռնում հրդեհի բռնկման դեպքում պետք է բավական լինի կորպուսում առկա ճնշումը՝ ճնշումը նվազեցնող սարքի գործարկման ճնշման արժեքից 20%-ով ավելի մակարդակի հասցնելու համար: Նախատեսված ամբողջ թողունակության ապահովման նպատակով կարող են օգտագործվել ճնշումը նվազեցնող վթարային սարքեր: Այդ սարքերը կարող են լինել հալուն տարրեր, զսպանակավոր սարքեր կամ պատռվող մեմբրաններ կամ դրանց բաղադրամասեր: Ապահովիչ սարքերի պահանջվող ընդհանուր թողունակությունը կարելի է որոշել 6.7.2.12.2.1-ում կամ 6.7.2.12.2.3-ի աղյուսակում նշված բանաձեռով:
- 6.7.2.12.2.1. Ճնշումը նվազեցնող սարքերի պահանջվող ընդհանուր թողունակությունը որոշելու համար, որը բոլոր օժանդակ սարքերի թողունակության առանձին արժեքների գումարն է, կիրառվում է հետևյալ բանաձեռը՝

$$Q=12.4 \frac{FA^{0.82}}{LC} \sqrt{\frac{ZT}{M}}$$

որտեղ՝

Q-ն օդի դատարկման պահանջվող նվազագույն արագությունն է՝ արտահայտված խորանարդ մետր վայրկյանում ( $m^3/vրկ$ )՝ ստանդարտ պայմաններում՝ 1 բար եւ  $0^\circ C$  ( $273 K$ )։

F-ը գործակիցն է՝ հետեւյալ արժեքներով՝

չմեկուսացված կորպուսների համար՝  $F = 1$

մեկուսացված կորպուսների համար՝  $F = U(649-t)/13,6$ , բայց ոչ մի դեպքում՝ 0,25-ից ոչ պակաս

որտեղ՝

U-ն մեկուսացման ջերմահաղորդականությունն է՝ արտահայտված կՎ.մ-2.Կ-1՝  $38^\circ C$  ջերմաստիճանի պայմաններում։

t-ն՝ նյութի՝ լցավորման ընթացքում ունեցած փաստացի ջերմաստիճանը ( $^\circ C$ -ով արտահայտված), իսկ այն դեպքում, երբ այդ ջերմաստիճանն անհայտ է, ապա համարվում է, որ  $t = 15^\circ C$ -ի։

Մեկուսացված կորպուսների համար F-ի վերոնշյալ արժեքը կարող է կիրառվել՝ պայմանով, որ մեկուսացումը համապատասխանում է 6.7.2.12.2.4-ի պահանջներին։

A-ն կորպուսի ընդհանուր արտաքին մակերեսն է՝ արտահայտված քառակուսի մետրով։

Z-ը գազի սեղմման գործակիցն է կուտակման պայմաններում (եթե գործակիցն անհայտ է, ապա համարվում է, որ  $Z = 1,0$ )։

T-ն Կելվինով ( $^\circ C + 273$ ) արտահայտված բացարձակ ջերմաստիճանն է ճնշումը նվազեցնող սարքերի վերին մասում՝ կուտակման պայմաններում։

L-ը՝ հեղուկի գոլորշիացման թաքնված ջերմությունը՝ արտահայտված կՋ/կգ-ով՝ կուտակման պայմաններում։

M-ը՝ բաց թողնված գազի մոլեկուլային զանգվածը։

C-ն հաստատուն մեծություն է, որն ստացվում է հետեւյալ բանաձեւերից մեկի միջոցով՝ որպես տեսակարար ջերմունակության  $k$  հարաբերակցության ֆունկցիա՝

$$k = \frac{c_p}{c_v}$$

որտեղ՝

$c_p$ -ն տեսակարար ջերմունակությունն է կայուն ճնշման տակ եւ

$c_v$ -ն տեսակարար ջերմունակությունն է կայուն ծավալի դեպքում։

Երբ  $k > 1$

$$C = \sqrt{k \left( \frac{2}{k+1} \right)^{\frac{k+1}{k-1}}}$$

Երբ  $k = 1$  կամ  $k$ -ն անհայտ է՝

$$C = \frac{1}{\sqrt{e}} = 0,607$$

որտեղ  $e$ -ն մաթեմատիկական կայուն մեծություն է՝ 2,7183

$C$ -ն կարելի է ստանալ հետևյալ աղյուսակից՝

k	C	k	C	k	C
1,00	0,607	1,26	0,660	1,52	0,704
1,02	0,611	1,28	0,664	1,54	0,707
1,04	0,615	1,30	0,667	1,56	0,710
1,06	0,620	1,32	0,671	1,58	0,713
1,08	0,624	1,34	0,674	1,60	0,716
1,10	0,628	1,36	0,678	1,62	0,719
1,12	0,633	1,38	0,681	1,64	0,722
1,14	0,637	1,40	0,685	1,66	0,725
1,16	0,641	1,42	0,688	1,68	0,728
1,18	0,645	1,44	0,691	1,70	0,731
1,20	0,649	1,46	0,695	2,00	0,770
1,22	0,652	1,48	0,698	2,20	0,793
1,24	0,656	1,50	0,701		

6.7.2.12.2.2. Որպես վերոնշյալ բանաձևի այլընտրանք՝ հեղուկների փոխադրման համար նախատեսված կորպուսների ապահովիչ սարքերի չափսերը կարող են սահմանվել 6.7.2.12.2.3-ի աղյուսակում նշվածի համաձայն: Այս աղյուսակով ենթադրվում է, որ մեկուսացման F գործակցի արժեքը 1 է, որը մեկուսացված կորպուսի դեպքում պետք է ընդունի համապատասխան արժեքը: Այս աղյուսակի սահմանման ընթացքում օգտագործված մյուս արժեքները հետևյալներն են՝

$$\begin{aligned}
 M &= 86,7 & T &= 394 \text{ K} \\
 L &= 334,94 \text{ կՋ/կգ} & C &= 0,607 \\
 Z &= 1
 \end{aligned}$$

6.7.2.12.2.3. Օդի դատարկման համար պահանջվող նվազագույն արագություն՝ Q, արտահայտված խորանարդ մետր վայրկյանում՝ 1 բար եւ 0 °C (273 Կ) պայմաններում:

A	Q	A	Q
Մակերեսային մակերեսը (քառակուսի մետր)	(օդի խորանարդ մետր վայրկյանում)	Մակերեսային մակերեսը (քառակուսի մետր)	(օդի խորանարդ մետր վայրկյանում)
2	0,230	37,5	2,539
3	0,320	40	2,677

A Մակերեսային մակերեսը (քառակուսի մետր)	Q (օդի խորանարդ մետր վայրկյանում)	A Մակերեսային մակերեսը (քառակուսի մետր)	Q (օդի խորանարդ մետր վայրկյանում)
4	0,405	42,5	2,814
5	0,487	45	2,949
6	0,565	47,5	3,082
7	0,641	50	3,215
8	0,715	52,5	3,346
9	0,788	55	3,476
10	0,859	57,5	3,605
12	0,998	60	3,733
14	1,132	62,5	3,860
16	1,263	65	3,987
18	1,391	67,5	4,112
20	1,517	70	4,236
22,5	1,670	75	4,483
25	1,821	80	4,726
27,5	1,969	85	4,967
30	2,115	90	5,206
32,5	2,258	95	5,442
35	2,400	100	5,676

6.7.2.12.2.4. Այն մեկուսիչ համակարգերը, որոնք օգտագործվում են օդափոխման կարողությունը նվազեցնելու համար, պետք է հաստատվեն իրավասու մարմնի կամ նրա լիազոր մարմնի կողմից: Բոլոր դեպքերում, այս նպատակով հաստատված մեկուսիչ համակարգերը պետք է՝

ա) պահպանեն իրենց աշխատունակությունը մինչև 649 °C հասնող ցանկացած ջերմաստիճանի դեպքում. Եւ

բ) ծածկված լինեն այնպիսի նյութով, որի հալման ջերմաստիճանը 700 °C կամ ավելին է:

6.7.2.13. Ծնշումը նվազեցնող սարքերի մակնշումը

6.7.2.13.1. Յուրաքանչյուր ճնշում նվազեցնող սարքի վրա պետք է հստակորեն եւ մշտապես մակնշվեն հետեւյալ մանրամասն տվյալները՝



- ա) այն ճնշումը (արտահայտված բարով կամ կՊա-ով) կամ ջերմաստիճանը (արտահայտված °C-ով), որոնց պայմաններում սարքն սկսում է արտաթողել.
- բ) զսպանակավոր սարքերի գործարկման ճնշման արժեքի թույլատրելի շեղումը.
- գ) պատռվող մեմբրանների պատռման նոմինալ ճնշմանը համապատասխանող սկզբնական ջերմաստիճանը.
- դ) հալուն տարրերի համար նախատեսված ջերմաստիճանի թույլատրելի շեղումը. եւ
- ե) ճնշումը նվազեցնող զսպանակավոր սարքերի, պատռվող մեմբրանների կամ հալուն տարրերի հաշվարկային թողունակությունը, որն արտահայտվում է վայրկյանում օդի ստանդարտ խորանարդ մետրերով ( $\text{մ}^3/\text{վրկ}$ ).
- զ) ճնշման նվազեցման զսպանակավոր սարքերի հոսքի լայնական հատման տարածությունները, պատռվող մեմբրանները եւ հալուն տարրերը՝ արտահայտված  $\text{մ}^2$ -ով:

Եթե հնարավոր է, անհրաժեշտ է ցույց տալ նաեւ հետեւյալ տեղեկությունները՝

- է) արտադրողի անվանումը եւ սարքի համապատասխան համարն ըստ կատալոգի:

6.7.2.13.2. Ճնշումը նվազեցնող զսպանակավոր սարքերի վրա մակնշվող հաշվարկային թողունակության արժեքը որոշվում է ISO 4126-1:2004 եւ ISO 4126-7:2004 ստանդարտների համաձայն:

6.7.2.14. Ճնշումը նվազեցնող սարքերի միացումները

6.7.2.14.1. Ճնշումը նվազեցնող սարքերի միացումները պետք է բավարար չափի լինեն՝ ապահովելու համար արտաթողվող նյութի անխափան հոսքն ապահովիչ սարք: Կասեցման կափույրներ չպետք է տեղադրվեն կորպուսի եւ ճնշումը նվազեցնող սարքերի միջեւ, բացառությամբ այն դեպքերի, երբ տեխնիկական սպասարկման կամ այլ նպատակներով կրկնօրինակ սարքեր են տեղադրվում, իսկ կասեցման կափույրները, որոնք ծառայում են փաստացի օգտագործվող սարքերին, ամրացված են բաց դիրքում, կամ կասեցման կափույրները փոխադարձ բլոկավորված են այնպես, որ կրկնօրինակ սարքերից գոնե մեկը մշտապես աշխատում է: Ներթողման խողովակ կամ ճնշումը նվազեցնելու համար նախատեսված սարք տանող բացվածքում չպետք է լինի այնպիսի խցանում, որը կարող է արգելափակել կամ կրճատել հոսքը կորպուսից դեպի այդ սարք: Ճնշումը նվազեցնող սարքից դուրս եկող օդանցքները կամ

խողովակները, եթե դրանք օգտագործվում են, պետք է մթնոլորտ արտաթողեն գոլորշի կամ հեղուկ՝ ճնշումը նվազեցնող սարքի վրա հակադիր նվազագույն ճնշման պայմաններում:

- 6.7.2.15. Ճնշումը նվազեցնող սարքերի դասավորվածությունը
- 6.7.2.15.1. Ճնշումը նվազեցնող յուրաքանչյուր սարքի ներթողման բացվածք պետք է տեղադրված լինի կորպուսի վերեւի հատվածում այն դիրքով, որ հնարավորինս մոտ գտնվի կորպուսի երկայնական եւ լայնական կենտրոնին: Ճնշումը նվազեցնող սարքի ներթողման բոլոր բացվածքներն առավելագույն լցավորման պայմաններում պետք է տեղադրված լինեն կորպուսի՝ գոլորշի պարունակող տարածությունում, իսկ սարքերը պետք է այնպես տեղադրված լինեն, որ ապահովեն արձակվող գոլորշու անարգել արտահոսքը: Դյուրավառ նյութերի դեպքում բաց թողնվող գոլորշին պետք է դուրս մղվի կորպուսից հեռու այնպես, որ այն չկարողանա շփվել կորպուսի հետ: Պաշտպանիչ սարքերը, որոնք փոխում են գոլորշու հոսքի ուղղությունը, թույլատրվում են՝ պայմանով, որ սարքերի պահանջվող թողունակությունը չի նվազում:
- 6.7.2.15.2. Պետք է ձեռնարկվեն միջոցներ՝ կանխելու համար ոչ իրավասու անձանց համար ճնշումը նվազեցնող սարքերի հասանելիությունը եւ շուտ գալու դեպքում այդ սարքերը վնասվելուց պաշտպանելու համար:
- 6.7.2.16. Չափիչ-ստուգիչ սարքերը
- 6.7.2.16.1. Ապակուց մակարդաչափերը եւ այլ փխրուն նյութից պատրաստված չափիչ-ստուգիչ սարքերը, որոնք անմիջականորեն հաղորդակցվում են ցիստեռնի պարունակության հետ, չպետք է օգտագործվեն:
- 6.7.2.17. Շարժական ցիստեռնի հենարանները, հիմնակմախքները, ամբարձիչ եւ ամրակման հարմարանքները
- 6.7.2.17.1. Շարժական ցիստեռնները պետք է նախագծվեն եւ կառուցվեն հենարանային կոնստրուկցիայով, որն ապահով հիմք է փոխադրման ընթացքում: Կառուցվածքի այս առումով հաշվի են առնվում 6.7.2.2.12-ում նշված ուժերը եւ 6.7.2.2.13-ում նշված ամրության պաշարը: Թույլատրելի են սահուկներ, հիմնակմախքներ, հենոցներ եւ համանման այլ կոնստրուկցիաներ:
- 6.7.2.17.2. Շարժական ցիստեռնի ամրանների հետեւանքով ընդհանուր լարվածությունը (օրինակ՝ հենոցներ, հիմնակմախքներ եւ այլն), ինչպես նաեւ շարժական ցիստեռնի վերհան եւ ամրակման հարմարանքները կորպուսի որեւէ հատվածում չպետք է ծայրահեղ լարվածություն առաջացնեն: Բոլոր շարժական ցիստեռններին պետք է ամրացված լինեն մշտական ամբարձիչ եւ ամրակման

հարմարանքներ: Գերադասելի է, որ դրանք ամրացվեն շարժական ցիստեռնի հենարաններին, բայց կարող են ամրացվել նաև կորպուսի հենարանային հատվածներում տեղակայված ուժեղարար թիթեղներին:

6.7.2.17.3. Հենարանները եւ հիմնակմախքները նախագծելիս անհրաժեշտ է հաշվի առնել շրջակա միջավայրի կոռոզիոն ազդեցությունը:

6.7.2.17.4. Ավտոբեռնիչի ճանկավոր բռնիչների համար նախատեսված բացվածքները պետք է հնարավոր լինի փակել: Ավտոբեռնիչի ճանկավոր բռնիչների համար նախատեսված բացվածքները փակելու համար նախատեսված միջոցները պետք է կազմեն հիմնակմախքի անբաժանելի մասը կամ ամուր ամրացված լինեն դրան: Մեկ հատվածամասով շարժական ցիստեռնը, որի երկարությունը 3,65 մետրից պակաս չէ, կարող է չունենալ ավտոբեռնիչի ճանկավոր բռնիչների համար նախատեսված փակվող բացվածքները՝ պայմանով, որ՝

ա) կորպուսը եւ բոլոր կցամասերը լավագույնս պաշտպանված լինեն ճանկավոր բռնիչի հարվածներից, եւ

բ) ավտոբեռնիչի ճանկավոր բռնիչների համար նախատեսված բացվածքների կենտրոնների միջեւ հեռավորությունը պետք է առնվազն հավասար լինի շարժական ցիստեռնի առավելագույն երկարության կեսին:

6.7.2.17.5. Այն դեպքում, երբ շարժական ցիստեռնները պաշտպանված չեն փոխադրման ընթացքում, 4.2.1.2-ի համաձայն, կորպուսները եւ օժանդակ սարքավորումները պետք է պաշտպանված լինեն կողային կամ երկայնական հարվածների կամ շրջվելու հետեւանքով առաջացող վնասվածքներից: Արտաքին կցամասերը պետք է այնպես պաշտպանված լինեն, որ շարժական ցիստեռնի հարվածի կամ շրջվելու դեպքում կորպուսի պարունակությունը չլցվի դրա կցամասերի վրա: Նման պաշտպանության օրինակներ են՝

ա) կողային հարվածից պաշտպանությունը, որը բաղկացած է կորպուսի երկու կողմերը միջին գծի մակարդակով պաշտպանող երկայնական ձողերից.

բ) շարժական ցիստեռնի պաշտպանությունը շրջվելուց, որը կարող է բաղկացած լինել հիմնակմախքի երկայնքով ամրացված ամրանային օղագոտիներից կամ ձողերից.

գ) պաշտպանությունը հետեւի հարվածից, որը կարող է բաղկացած լինել թափարգելից կամ հիմնակմախքից.

դ) կորպուսի պաշտպանություն՝ հարվածի կամ շուռ գալու հետեւանքով վնասվելուց՝ օգտագործելով ISO 1496-3:1995

ստանդարտին համապատասխան հիմնականախմբեր:

6.7.2.18. Կառուցվածքի տեսակի հաստատումը

6.7.2.18.1. Իրավասու մարմինը կամ նրա լիազոր մարմինը շարժական ցիստեռնի ցանկացած նոր կառուցվածքի տեսակի համար պետք է տրամադրի տեսակի հաստատման սերտիֆիկատ: Այդ սերտիֆիկատով հավաստվում է, որ շարժական ցիստեռնը զննության է ենթարկվել այդ իրավասու մարմնի կողմից եւ համապատասխանում է դրա համար նախատեսված նպատակին եւ սույն գլխի պահանջներին, իսկ անհրաժեշտության դեպքում՝ 4.2 գլխի եւ 3.2 գլխի Ա աղյուսակում ներկայացված նյութերի դեպքում կիրառվող դրույթներին: Այն դեպքում, երբ արտադրվում են մի շարք շարժական ցիստեռններ առանց կառուցվածքի փոփոխության, սերտիֆիկատը գործում է ամբողջ շարքի համար: Սերտիֆիկատում նշվում են նախատիպի փորձարկման արդյունքները, նյութերը կամ նյութերի խմբերը, որոնք թույլատրվում են փոխադրման համար, ինչպես նաեւ կորպուսի եւ երեսապատվածքի (հարկ եղած դեպքում) պատրաստման համար օգտագործված նյութերը եւ հաստատման համարը: Հաստատման համարը բաղկացած է այն երկրի տարբերակիչ պայմանանշանից կամ մակնշվածքից, որի տարածքում տրվել է հաստատումը, ինչպես սահմանված է միջազգային ճանապարհային փոխադրման ժամանակ փոխադրամիջոցների համար օգտագործվող տարբերակիչ նշանների մասին կոնվենցիայով<sup>2</sup>, ինչպես նաեւ գրանցման համարից: 6.7.1.2-ի համաձայն՝ բոլոր այլընտրանքային պայմանավորվածությունները նշվում են սերտիֆիկատում: Կառուցվածքի տեսակի հաստատումը կարող է հիմք լինել նմանատիպ եւ նույն հաստությունն ունեցող նյութից, նույն տեխնիկական ընթացակարգով պատրաստված ու նույն հենարաններ, համարժեք փականներ եւ այլ պարագաներ ունեցող ավելի փոքր շարժական ցիստեռնների հաստատման համար:

6.7.2.18.2. Կառուցվածքի տեսակի հաստատման նպատակով նախատիպի փորձարկման հաշվետվության մեջ ներառվում է առնվազն հետեւյալը՝

ա) ISO 1496-3:1995 ստանդարտով սահմանված հիմնականախմբի համապատասխան փորձարկման արդյունքները.

բ) 6.7.2.19.3-ի համաձայն՝ նախնական ստուգման եւ

---

<sup>2</sup> Միջազգային երթուղեկության մեջ գտնվող փոխադրամիջոցների եւ դրանց կցորդների՝ գրանցման պետության տարբերանշաններ, օրինակ՝ 1949 թվականի «Ճանապարհային երթուղեկության մասին» Ժնեւի կոնվենցիային կամ 1968 թվականի «Ճանապարհային երթուղեկության մասին» Վիեննայի կոնվենցիային համապատասխան:

փորձարկման արդյունքները. եւ

զ) 6.7.2.19.1-ում նշված հարվածի փորձարկման արդյունքները, եթե կիրառելի է:

6.7.2.19. Ստուգումը եւ փորձարկումը

6.7.2.19.1. 1972 թվականի «Անվտանգ կոնտեյներների վերաբերյալ միջազգային կոնվենցիայում» (ԱԿԿ) (փոփոխությունների համաձայն) ընդգրկված կոնտեյների սահմանմանը համապատասխանող շարժական ցիստեռնները չպետք է օգտագործվեն՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դրանց յուրաքանչյուր կառուցվածքի նախատիպը, անցնելով դինամիկ, երկայնական հարվածի փորձարկում, որը նշված է «Փորձարկումների եւ չափորոշիչների ձեռնարկ»-ի IV մասի 41-րդ բաժնում, օգտագործման համար պիտանի է համարվել:

6.7.2.19.2. Յուրաքանչյուր շարժական ցիստեռնի կորպուս եւ սարքավորում պետք է ստուգվեն եւ փորձարկվեն՝ նախքան առաջին անգամ շահագործվելը (նախնական ստուգում եւ փորձարկում): Դրանից հետո դրանք պետք է ստուգվեն եւ փորձարկվեն հինգ տարին չգերազանցող միջակայքերով (5 տարվա պարբերական ստուգում եւ փորձարկում), իսկ 5 տարվա պարբերական ստուգումներին եւ փորձարկումներին միջանկյալ պետք է կատարվեն երկուսուկես տարին մեկ ստուգումներ եւ փորձարկումներ ( երկուսուկես տարվա պարբերական ստուգում եւ փորձարկում): Երկուսուկես տարին մեկ պարբերական ստուգումը եւ փորձարկումը կարող են իրականացվել նշանակված օրվանից հետո 3 ամսվա ընթացքում: Անկախ վերջին պարբերական ստուգման ու փորձարկման ամսաթվից՝ անհրաժեշտության դեպքում կարող է իրականացվել արտահերթ ստուգում եւ փորձարկում՝ 6.7.2.19.7-ի համաձայն:

6.7.2.19.3. Շարժական ցիստեռնի նախնական ստուգումը եւ փորձարկումը պետք է ներառի կառուցվածքային հատկանիշների ստուգում, շարժական ցիստեռնի եւ դրա կցամասերի արտաքին ու ներքին զննում՝ պատշաճորեն հաշվի առնելով փոխադրվելիք նյութերի բնույթը, ինչպես նաեւ ճնշափորձարկումը: Նախքան շարժական ցիստեռնի շահագործումը՝ իրականացվում է բոլոր օժանդակ սարքավորումների անջրանցիկության եւ բավարար աշխատունակության ստուգում: Այն դեպքում, երբ կորպուսն ու դրա կցամասերը միմյանցից առանձին են անցնում ճնշման փորձարկում, ապա դրանք հավաքակցվելուց հետո պետք է միասին անցնեն անջրանցիկության փորձարկումը:

6.7.2.19.4. 5 տարվա պարբերական ստուգումը եւ փորձարկումը ներառում է ներքին ու արտաքին ուսումնասիրություն եւ որպես կանոն՝ հիդրավլիկ ճնշափորձարկում: Թունավոր կամ քայքայիչ նյութերից

բացի փոխադրման ժամանակ չհեղուկացող պինդ նյութերի փոխադրման նպատակով միայն օգտագործվող ցիստեռնների համար հիդրավլիկ ճնշափորձարկումը կարող է փոխարինվել համապատասխան ճնշափորձարկմամբ, որը մեկուկես անգամ գերազանցում է ԱԹԱՃ-ի ճնշման արժեքը՝ համաձայն իրավասու մարմնի հաստատման: Եզրակարումը, ջերմային մեկուսացումը եւ նմանատիպ կոնստրուկցիաները պետք է հեռացվեն միայն շարժական ցիստեռնի վիճակի վստահելի գնահատում իրականացնելու անհրաժեշտության դեպքում: Եթե կորպուսը եւ սարքավորումները ճնշաստուգում են անցում առանձին-առանձին, ապա դրանք պետք է միմյանց հավաքակցվելուց հետո ենթարկվեն անջրանցիկության փորձարկման:

6.7.2.19.5. Երկուսուկես տարվա պարբերական միջանկյալ ստուգումը եւ փորձարկումը պետք է առնվազն ներառի շարժական ցիստեռնի եւ նրա կցամասերի ներքին ու արտաքին զննություն՝ պատշաճ կերպով հաշվի առնելով փոխադրման համար նախատեսված նյութերի բնույթը, անջրանցիկության փորձարկումը եւ բոլոր օժանդակ սարքավորումների բավարար աշխատունակության ստուգումը: Եզրակարումը, ջերմային մեկուսացումը եւ նմանատիպ կոնստրուկցիաները պետք է հեռացվեն միայն շարժական ցիստեռնի վիճակի վստահելի գնահատում իրականացնելու անհրաժեշտության դեպքում: Միայն մեկ նյութի փոխադրման համար նախատեսված շարժական ցիստեռնների դեպքում երկուսուկես տարվա միջանկյալ ուսումնասիրությունը կարող է չկատարվել կամ փոխարինվել այլ փորձարկման մեթոդներով կամ ստուգման ընթացակարգերով, որոնք սահմանված են իրավասու մարմնի կամ նրա լիազոր մարմնի կողմից:

6.7.2.19.6. Շարժական ցիստեռնը չպետք է լցվի եւ փոխադրման հանձնվի վերջին 5 կամ երկուսուկես տարին մեկ իրականացվող պարբերական ստուգման կամ փորձարկման ժամկետը լրանալուց հետո՝ 6.7.2.19.2-ի պահանջի համաձայն: Այնուամենայնիվ, վերջին պարբերական ստուգման կամ փորձարկման ժամկետը լրանալուց առաջ լցավորված շարժական ցիստեռնը կարող է փոխադրվել տվյալ վերջին պարբերական ստուգման կամ փորձարկման ժամկետի լրանալուց հետո՝ առավելագույնը երեք ամսվա ընթացքում: Բացի այդ, շարժական ցիստեռնը կարող է փոխադրվել վերջին պարբերական ստուգման եւ փորձարկման ժամկետը լրանալուց հետո՝

ա) դատարկումից հետո, բայց նախքան մաքրումը՝ վերալցավորումից առաջ հաջորդ պահանջվող փորձարկումը կամ ստուգումն իրականացնելու նպատակով, եւ

բ) եթե իրավասու մարմնի կողմից այլ կերպ սահմանված չէ, ապա վերջին պարբերական փորձարկման կամ ստուգման ժամկետը

լրանալուց հետո վեց ամսվա ընթացքում՝ վտանգավոր բեռների պատշաճ տնօրինման կամ վերամշակման նպատակով վերադարձնելու համար: Տրանսպորտային փաստաթղթի մեջ հղում պետք է կատարվի սույն բացառությանը:

6.7.2.19.7. Անհրաժեշտ է կատարել արտապլանային ստուգում եւ փորձարկում, եթե նկատվում է, որ շարժական ցիստեռնը վնասվել է կամ ունի կոռոզիայի ենթարկված տարածքներ, կամ արտահոսում է կամ գտնվում է այլ խոտանային վիճակում, ինչը կարող է ազդել շարժական ցիստեռնի ամբողջականության վրա: Արտահերթ ստուգման եւ փորձարկման մասշտաբը կախված է շարժական ցիստեռնի վնասվածքի կամ քայքայման աստիճանից: Համաձայն 6.7.2.19.5-ի՝ այն առնվազն պետք է ներառի երկուսուկես տարին մեկ անցկացվող ստուգում եւ փորձարկում:

6.7.2.19.8. Արտաքին եւ ներքին ուսումնասիրությամբ պետք է ապահովվի, որ՝

- ա) կատարվի կորպուսի կետային քայքայման, կոռոզիայի, կամ հղկանյութերի, ներճմվածքների, դեֆորմացիայի, եռակցման կարանների խոտանների եւ այլ պայմանների, այդ թվում՝ արտահոսքի ստուգում, որոնք կարող են շարժական ցիստեռնը փոխադրման համար վտանգավոր դարձնել: Պատերի հաստությունը ստուգվում է համապատասխան չափումներով, եթե այդ ստուգումը ցույց է տալիս պատերի հաստության նվազեցում.
- բ) կատարվի խողովակների, կափույրների, տաքացման/հովացման համակարգերի, խցանիչների ստուգում՝ կոռոզիա հայտնաբերելու նպատակով, ինչպես նաեւ խոտանների եւ այլ պայմանների, այդ թվում՝ արտահոսքի ստուգում, որոնք կարող են շարժական ցիստեռնը վտանգավոր դարձնել լցավորման, դատարկման կամ փոխադրման համար.
- գ) ճշտվի, որ մտոցների կափարիչներն ամրացնելու սարքերը գտնվում են աշխատանքային վիճակում եւ մտոցների կափարիչներից կամ խցանիչներից արտահոսք չկա.
- դ) կցաշտրթային միացքի կամ անշարժ կցաշտրթի վրայի բացակայող կամ թույլ հեղույսները, կամ մանեկները փոխարինվեն կամ ամրացվեն.
- ե) վթարային բոլոր սարքերը եւ կափույրները քայքայված, դեֆորմացված չլինեն եւ չունենան որեւէ այլ վնասվածք կամ թերություն, որը կարող է խանգարել դրանց բնականոն շահագործմանը: Հեռակառավարման փակիչ սարքերը եւ ինքնափակվող կասեցման կափույրները գործարկվեն՝ դրանց

պատշաճ աշխատանքը ցույց տալու համար.

- զ) երեսապատվածքները, եթե այդպիսիք կան, ստուգվեն երեսապատվածքն արտադրողի կողմից նշված չափորոշիչների համաձայն.
- է) շարժական ցիստեռնի վրա պահանջվող նշանները լինեն դյուրընթեռնելի եւ բավարարեն համապատասխան պահանջները.
- ը) հիմնականաբար, հենարանները եւ շարժական ցիստեռնը բարձրացնելու համար նախատեսված հարմարանքները լինեն բավարար վիճակում:

6.7.2.19.9. 6.7.2.19.1, 6.7.2.19.3, 6.7.2.19.4, 6.7.2.19.5 եւ 6.7.2.19.7-ում նկարագրված ստուգումները եւ փորձարկումները պետք է իրականացվեն եւ կատարվեն փորձագետի ներկայությամբ, որին իրավասու մարմինը կամ նրա լիազոր մարմինը հավանություն է տվել: Եթե ճնշափորձարկումը նախատեսված է ստուգման կամ փորձարկման ծրագրով, ապա կիրառվում է այն փորձարկման ճնշումը, որը նշված է շարժական ցիստեռնի տվյալների ցուցանակի վրա: Ճնշման տակ գտնվելու ժամանակ անհրաժեշտ է ստուգել արտահոսքի առկայությունը շարժական ցիստեռնի կորպուսում, խողովակաշարում կամ սարքավորումներում:

6.7.2.19.10. Բոլոր դեպքերում, եթե կորպուսում իրականացվում են կտրման, այրման կամ զոդման աշխատանքներ, ապա այդ աշխատանքները պետք է հաստատվեն իրավասու մարմնի կամ նրա լիազոր մարմնի կողմից՝ հաշվի առնելով կորպուսի պատրաստման համար օգտագործված ճնշումային անոթների վերաբերյալ կանոնները: Աշխատանքի ավարտից հետո անցկացվում է ճնշափորձարկում՝ օգտագործելով նախնական փորձարկման ճնշումը:

6.7.2.19.11. Այն դեպքում, երբ հայտնաբերվում է որեւէ վտանգավոր թերություն, շարժական ցիստեռնը դուրս է բերվում շահագործումից եւ նորից սկսում է օգտագործվել միայն թերությունը վերացնելուց ու կրկնակի փորձարկում անցկացնելուց եւ այն բարեհաջող անցնելուց հետո:

6.7.2.20. Մակնշումը

6.7.2.20.1. Յուրաքանչյուր շարժական ցիստեռնին պետք է մշտապես կցվի հակակոռոզիոն մետաղական ցուցանակ, որն ամուր ամրացվում է շարժական ցիստեռնի վրա՝ տեսանելի եւ վերահսկման համար հարմար հատվածում: Եթե շարժական ցիստեռնի բաղկացուցիչ մասերի դասավորվածության պատճառով կորպուսի վրա հնարավոր չէ մշտապես ամրացնել ցուցանակ, ապա կորպուսը պետք է առնվազն մակնշված լինի ճնշումային անոթների վերաբերյալ կանոններով պահանջվող տեղեկություններով: Դրոշմման կամ



նմանատիպ որեւէ այլ մեթոդով ցուցանակի վրա պետք է մակնշված լինի առնվազն հետեւյալ տեղեկությունները՝

- ա) սեփականատիրոջ վերաբերյալ տեղեկություններ
  - i) սեփականատիրոջ գրանցման համարը.
- բ) արտադրության վերաբերյալ տեղեկություններ
  - i) արտադրության երկիրը.
  - ii) արտադրության տարին.
  - iii) արտադրողի անվանումը կամ ապրանքանիշը.
  - iv) արտադրողի կողմից դրված խմբաքանակի համարը.
- գ) հաստատման վերաբերյալ տեղեկություններ

- i) ՄԱԿ-ի նշագրման փաթեթվածքների խորհրդանշան



Այս խորհրդանշանը պետք է օգտագործվի՝ հաստատելու համար, որ փաթեթվածքը, փափուկ, սորուն բեռների համար նախատեսված կոնտեյները, շարժական ցիստեռնը կամ ԲԳԿ-ն համապատասխանում են 6.1, 6.2, 6.3, 6.5, 6.6, 6.7 կամ 6.11 գլուխների համապատասխան պահանջներին եւ չպետք է օգտագործվի որեւէ այլ նպատակով.

- ii) հաստատման երկիրը.
  - iii) կառուցվածքի տեսակի հաստատման մասով լիազորված մարմինը.
  - iv) կառուցվածքի տեսակի հաստատման համարը,
  - v) «AA» տառերը, եթե կառուցվածքը հաստատվել է այլընտրանքային կարգավորումներին համապատասխան (տե՛ս 6.7.1.2).
  - vi) ճնշումային անոթների վերաբերյալ այն կանոնները, որոնց համաձայն կառուցվել է տվյալ կորպուսը.
- դ) ճնշումները
- i) ԱԹԱՃ (մանոմետրական, արտահայտված բարեքով կամ կՊա-ով)<sup>3</sup>.
  - ii) փորձարկման ճնշումը (մանոմետրական՝ արտահայտված բարեքով կամ կՊա-ով)<sup>3</sup>.

- iii) սկզբնական ճնշափորձարկման ամսաթիվը (ամիսը եւ տարին).
  - iv) այն անձի նույնականացման նշանը, ով ներկա է սկզբնական ճնշափորձարկմանը.
  - v) արտաքին հաշվարկային ճնշում<sup>4</sup> (մանոմետրական՝ բարով կամ կՊա-ով)<sup>3</sup>,
  - vi) ԱԹԱՃ՝ տաքացման/հովացման համակարգը (մանոմետրական՝ արտահայտված բարեքով կամ կՊա-ով)<sup>3</sup> (կիրառելիության դեպքում).
- ե) ջերմաստիճանները
- i) հաշվարկային ջերմաստիճանի միջակայքը (°C-ով)<sup>3</sup>.
- զ) նյութերը
- i) կորպուսի նյութը (նյութերը) եւ նյութի ստանդարտ նմուշը (նմուշները).
  - ii) ստանդարտ պողպատի համարժեք հաստությունը (արտահայտված մմ-ով)<sup>3</sup>.
  - iii) երեսապատվածքի նյութը (կիրառելիության դեպքում).
- է) տարողությունը
- i) ցիստեռնի տարողությունը՝ 20 °C-ի պայմաններում (արտահայտված լիտրերով)<sup>3</sup>.

Այս նշմանը պետք է հետեւի «S» խորհրդանշանը, այն դեպքում, երբ կորպուսն ալեբեկիչ միջնորմներով բաժանված է 7500 լիտրից ավելի տարողությամբ խցիկների.

- ii) յուրաքանչյուր հատվածամասի տարողությունը՝ 20 °C-ի պայմաններում (արտահայտված լիտրերով)<sup>3</sup> (բազում հատվածամասերով ցիստեռնների դեպքում):

Այս նշմանը պետք է հետեւի «S» խորհրդանշանը, այն դեպքում, երբ հատվածամասն ալեբեկիչ միջնորմներով բաժանված է 7500 լիտրից ավելի տարողությամբ խցիկների.

- ը) պարբերական ստուգումներ եւ փորձարկումներ
- i) ամենավերջին պարբերական փորձարկման տեսակը (երկուսուկես տարին մեկ, 5 տարին մեկ կամ արտահերթ փորձարկում).
  - ii) ամենավերջին պարբերական ստուգման ամսաթիվը (ամիսը եւ տարին).


- iii) ամենավերջին պարբերական փորձարկման ճնշում (մանոմետրական՝ բարով կամ կՊա-ով)<sup>3</sup> (եթե կիրառելի է).
- iv) այն լիազորված մարմնի նույնականացման նշանը, ով իրականացրել է ամենավերջին փորձարկումը կամ ներկա է գտնվել դրա իրականացմանը:

---

<sup>3</sup> Կիրառվող չափման միավորը պետք է նշվի:

<sup>4</sup> Տե՛ս 6.7.2.2.10:

### Պատկեր 6.7.2.20.1. Ցուցանակի մակնշման օրինակ

Սեփականատիրոջ գրանցման համարը						
ԱՐՏԱԴՐՈՂԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ						
Արտադրման երկիրը						
Արտադրման տարին						
Արտադրողը						
Արտադրողի կողմից դրված խմբաքանակի համարը						
ՀԱՍՏԱՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ						
	Հաստատման երկիրը					
	Կառուցվածքի տեսակի հաստատման մասով լիազորված մարմինը					
	Կառուցվածքի տեսակի հաստատման համարը				'AA' (եթե կիրառելի է)	
Կորպուսի կառուցվածքի վերաբերյալ կանոնները (ճշումային անոթների վերաբերյալ կանոնները)						
ՃՆՇՈՒՄՆԵՐԸ						
ԱԹԱՃ		բար կամ կՊա				
Փորձարկման ճշումը		բար կամ կՊա				
Սկզբնական ճշափորձարկման ամսաթիվը	(ամիսը/տարին)	Ներկա գտնվող անձի կնիքը				
Արտաքին հաշվարկային ճշումը		բար կամ կՊա				
Տաքացման/ հովացման համակարգերի ԱԹԱՃ (հարկ եղած դեպքում)		բար կամ կՊա				
ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ						
Հաշվարկային ջերմաստիճանի միջակայքը		°C	մինչև	°C		
ՆՅՈՒԹԵՐԸ						
Կորպուսի պատրաստման նյութը (նյութերը) եւ նյութի ստանդարտին կատարված հղումը (հղումները)						
Ստանդարտ պողպատի համաժժեք հաստությունը		մմ				
Երեսապատվածքի նյութը (կիրառելիության դեպքում)						
ՏԱՐՈՂՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ						
Ցիստեռնի տարողությունը՝ 20 °C-ի պայմաններում				լիտր	«S» (կիրառելիության դեպքում)	
Հատվածամասի տարողությունը՝ 20 °C-ի պայմաններում (բազում հատվածամասերով ցիստեռնների համար՝ կիրառելիության դեպքում):				լիտր	«S» (կիրառելիության դեպքում)	
ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԸ/ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆԵՐԸ						
Փորձարկման տեսակը	Փորձարկման ամսաթիվը	Մասնակցի կնիքը եւ փորձարկման ճշումը <sup>ա</sup>		Փորձարկման տեսակը	Փորձարկման ամսաթիվը	Մասնակցի կնիքը եւ փորձարկման ճշումը <sup>ա</sup>
	(ամիսը/տարին)		բար կամ կՊա		(ամիսը/տարին)	բար կամ կՊա

<sup>ա</sup> Փորձարկման ճշումը՝ կիրառելիության դեպքում

6.7.2.20.2. Հետեւյալ տեղեկությունները չջնջվող նշանով նշվում են կա՛մ հենց

շարժական ցիստեռնի վրա, կա՛մ շարժական ցիստեռնի վրա ամուր ամրացրած մետաղական թիթեղի վրա:

Օպերատորի անվանումը

Առավելագույն թույլատրելի անզուտ քաշը (ԱԹԱԲ)\_\_\_\_\_կգ

Բեռնված զանգվածը\_\_\_\_\_կգ

Շարժական ցիստեռնի վերաբերյալ ցուցումը՝ 4.2.5.2.6-ի համաձայն

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** Փոխադրվող նյութերի նույնականացման համար տե՛ս նաեւ 5-րդ մասը:

6.7.2.20.3. Եթե ցիստեռնը կառուցված եւ հաստատված է բաց ծովում փոխադրման համար, ապա նույնականացման ցուցանակի վրա պետք է նշագրված լինեն «ԾՈՎԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՄԱՆ ՑԻՍՏԵՐՆ» բառերը:

6.7.3. Չսառեցված-հեղուկացված գազերի փոխադրման համար նախատեսված շարժական ցիստեռնների նախագծման, պատրաստման, ստուգման եւ փորձարկման պահանջները

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** Այս պահանջները կիրառվում են նաեւ ճնշման տակ գտնվող քիմիական նյութերի փոխադրման համար նախատեսված շարժական ցիստեռնների նկատմամբ (ՄԱԿ-ի նշագրման 3500, 3501, 3502, 3503, 3504 եւ 3505 համարներ):

6.7.3.1. Սահմանումներ

Սույն բաժնի նպատակներով՝

«Այլընտրանքային պայմանավորվածություն» նշանակում է իրավասու մարմնի կողմից տրամադրված թույլտվություն՝ շարժական ցիստեռնի կամ ԳԲՏԿ-ի համար, որը նախագծվել, պատրաստվել կամ փորձարկվել է սույն գլխում սահմանված տեխնիկական պահանջներից տարբեր՝ այլ տեխնիկական պահանջների կամ փորձարկման մեթոդների համաձայն.

«Շարժական ցիստեռն» նշանակում է բազմամողալ ցիստեռն, որն ունի 450 լիտրը գերազանցող տարողունակություն եւ օգտագործվում է 2-րդ դասի չսառեցված- հեղուկացված գազերի փոխադրման համար: Շարժական ցիստեռնը բաղկացած է օժանդակ սարքավորումներով եւ կառուցվածքային սարքավորումներով համալրված կորպուսից, որն անհրաժեշտ է գազ փոխադրելու համար: Շարժական ցիստեռնը պետք է հնարավոր լինի լցավորել եւ դատարկել առանց կառուցվածքային սարքավորումներից առանձնացման: Ցիստեռնը կորպուսի արտաքին մասում պետք է ունենա կայունացնող տարրեր, եւ պետք է հնարավոր լինի այն բարձրացնել լիքը վիճակում:

Տիստեռնը պետք է նախագծված լինի նախ եւ առաջ փոխադրամիջոցի, վագոնի կամ ծովագնաց կամ ներքին ջրուղիներով նավարկություն իրականացնող փոխադրամիջոցի վրա բեռնվելու նպատակով եւ պետք է համալրված լինի սահուկներով, հենարանով կամ բեռնման-բեռնաթափման մեխանիկական գործողություններին օժանդակող աքսեսուարներով: Ավտոցիստեռնները, վագոն-ցիստեռնները, ոչ մետաղական ցիստեռնները, սորուն բեռների համար նախատեսված միջին բեռնվածության կոնտեյներները (ՍՄԿ-ներ), գազի բալոնները եւ խոշոր տարանները շարժական ցիստեռններ չեն սույն սահմանման նպատակով:

«Կորպուս» նշանակում է շարժական ցիստեռնի մաս, որի մեջ պահվում է փոխադրման համար նախատեսված չսառեցված-հեղուկացված գազ (ցիստեռնին հատուկ), ներառյալ՝ բացվածքները եւ նրանց փականները, բայց ոչ օժանդակ սարքավորումները կամ արտաքին կառուցվածքային սարքավորումները:

«Օժանդակ սարքավորում» նշանակում է չափիչ սարքեր եւ լցավորման, բեռնաթափման, օդափոխման, անվտանգության եւ մեկուսացման սարքեր:

«Կառուցվածքային սարքավորում» նշանակում է կորպուսի արտաքին մասին կից ուժեղարար, ամրացնող, պաշտպանիչ եւ կայունացնող տարրեր:

«Առավելագույն թույլատրելի աշխատանքային ճնշում (ԱԹԱՃ)» նշանակում է ստորեւ նշված ամենաբարձր ճնշումներից ոչ պակաս ճնշում, որը չափվում է կորպուսի վերին հատվածում, երբ դրանք գործարկվում են, եւ որը ցանկացած դեպքում չպետք է լինի 7 բարից պակաս՝

ա) առավելագույն արդյունավետ մանոմետրական ճնշում, որը թույլատրելի է կորպուսում՝ լցավորման ընթացքում կամ դատարկելիս, կամ

բ) առավելագույն արդյունավետ մանոմետրական ճնշում, որի համար նախագծված է կորպուսը, որը պետք է լինի՝

i) 4.2.5.2.6-ում նշված շարժական ցիստեռնների T50 ցուցման մեջ նշված չսառեցված-հեղուկացված գազի դեպքում՝ ԱԹԱՃ-ը (արտահայտված բարով), որը նշված է շարժական ցիստեռնների T50 ցուցման մեջ՝ տվյալ գազի համար:

ii) չսառեցված-հեղուկացված այլ գազերի դեպքում՝

- չսառեցված-հեղուկացված գազի գոլորշու բացարձակ

ճնշումը (արտահայտված բարով) հաշվարկային ստանդարտ ջերմաստիճանում՝ հանած 1 բար. Եւ

- օդի կամ այլ գազերի մասնական ճնշումը (արտահայտված բարով) վերին հատվածում, որը սահմանվում է հաշվարկային ստանդարտ ջերմաստիճանով եւ հեղուկ ֆազի ընդարձակմամբ՝ պայմանավորված  $tr$  - $tf$ -ի ( $tf$ -ը՝ լցավորման ջերմաստիճան, սովորաբար  $15\text{ }^{\circ}\text{C}$ ,  $tr$ -ը՝ առավելագույն միջին ծավալային ջերմաստիճան,  $50\text{ }^{\circ}\text{C}$ ) միջին ծավալային ջերմաստիճանի բարձրացմամբ.

- iii) ճնշման տակ գտնվող քիմիական նյութերի դեպքում՝ ԱԹԱՃ-ը (արտահայտված բարերով), որը նշված է 4.2.5.2.6-ում բերված T50 ցուցումներում արտամղիչ գազերի հեղուկացված գազային մասի համար շարժական ցիստեռնների T50 ցուցումներում.

«Հաշվարկային ճնշում» նշանակում է այնպիսի ճնշում, որն օգտագործվում է ճնշումային անոթների վերաբերյալ կանոններով պահանջվող հաշվարկների ժամանակ: Հաշվարկային ճնշումը չպետք է լինի ավելի ցածր, քան հետեւյալ ճնշումներից ամենաբարձրը՝

ա) առավելագույն արդյունավետ մանոմետրական ճնշում, որը թույլատրելի է կորպուսում լցավորման ընթացքում կամ դատարկելիս, կամ

բ) հետեւյալի գումարը՝

- i) առավելագույն արդյունավետ մանոմետրական ճնշում, որի համար նախագծված է կորպուսը, ինչպես սահմանված է ԱԹԱՃ-ի սահմանման մեջ (տե՛ս վերելում), եւ

- ii) սեղմման ճնշում, որը սահմանվում է ստատիկ ուժերի հիման վրա, ինչպես դրանք սահմանված են 6.7.3.2.9-ում, սակայն 0,35 բարից ոչ պակաս.

«Փորձարկման ճնշում» նշանակում է առավելագույն մանոմետրական ճնշում կորպուսի վերին հատվածում, որն արձանագրվում է ճնշափորձարկման ժամանակ.

«Անջրանցիկության փորձարկում» նշանակում է գազի

օգտագործմամբ փորձարկում, որի ընթացքում կորպուսը եւ կորպուսի օժանդակ սարքավորումները ենթարկվում են ԱԹԱՃ-ի 25%-ից ոչ պակաս արդյունավետ ներքին ճնշման.

«Առավելագույն թույլատրելի անգուտ քաշ (ԱԹԱՔ)» նշանակում է շարժական ցիստեռնի տարայի զանգվածի եւ փոխադրման համար առավելագույն թույլատրելի բեռնվածքի գումարը.

«Ստանդարտ պողպատ» նշանակում է պողպատ, որն ունի 370 Ն/մմ<sup>2</sup> ձգման ամրություն եւ երկարացում 27% խզման դեպքում.

«Փափուկ պողպատ» նշանակում է երաշխավորված նվազագույն սահմանաչափի 360 Ն/մմ<sup>2</sup> - 440 Ն/մմ<sup>2</sup> ձգման ամրություն եւ երաշխավորված նվազագույն երկարացում ունեցող պողպատ, որը համապատասխանում է 6.7.3.3.3-ի պահանջներին.

«Հաշվարկային ջերմաստիճանի միջակայքը» կորպուսի համար պետք է լինի -40 °C - 50 °C՝ չսառեցված-հեղուկացված գազերի համար, որոնք փոխադրվում են շրջակա միջավայրի պայմաններում: Այն շարժական ցիստեռնների համար, որոնք տեղափոխվում են առավել խիստ կլիմայական պայմաններում, ընդունելի են առավել խիստ հաշվարկային ջերմաստիճաններ.

«Հաշվարկային ստանդարտ ջերմաստիճան» նշանակում է ջերմաստիճան, որի դեպքում պարունակության գոլորշու ճնշումը սահմանվում է ԱԹԱՃ-ը հաշվարկելու նպատակով: Հաշվարկային ստանդարտ ջերմաստիճանը պետք է լինի ավելի ցածր, քան փոխադրման ենթակա չսառեցված-հեղուկացված գազի կամ ճնշման տակ գտնվող քիմիական նյութերի հեղուկացված արտամղիչ գազերի կրիտիկական ջերմաստիճանը՝ ապահովելով, որ այդ գազը մշտապես մնա հեղուկ վիճակում: Շարժական ցիստեռնների դեպքում այս արժեքը հետեւյալն է՝

- ա) 1,5 մ կամ պակաս տրամագծով կորպուս՝ 65 °C.
- բ) 1,5 մ-ից ավելի տրամագծով կորպուս՝
  - i) առանց մեկուսացման կամ արեւապաշտպան էկրանի՝ 60 °C.
  - ii) արեւապաշտպան էկրանով (տե՛ս 6.7.3.2.12)՝ 55 °C. եւ
  - iii) մեկուսացմամբ (տե՛ս 6.7.3.2.12)՝ 50 °C.

«Լցավորման խտություն» նշանակում է չսառեցված-հեղուկացված գազի միջին զանգվածը՝ կորպուսի տարողունակության մեկ լիտրի համար (կգ/լ): Լցավորման խտության մասին նշվում է 4.2.5.2.6-ում՝ շարժական ցիստեռնների T50 ցուցման մեջ:



- 6.7.3.2. Նախագծման եւ պատրաստման ընդհանուր պահանջները
- 6.7.3.2.1. Կորպուսները պետք է նախագծվեն եւ պատրաստվեն բարձր ճնշումային անոթների վերաբերյալ կանոնների համաձայն, որոնք ընդունելի են իրավասու մարմնի համար: Կորպուսները պետք է պատրաստվեն պողպատից, որը հարմար է պրոֆիլավորման համար: Նյութերը սկզբունքորեն պետք է համապատասխանեն այդ նյութերի մասով ազգային կամ միջազգային ստանդարտներին: Եռակցված կորպուսների դեպքում կարելի է օգտագործել միայն այնպիսի նյութ, որի եռակցելիությունը հիմնավորապես ապացուցված է: Եռակցման կարանները պետք է հմտորեն դրված լինեն եւ ապահովեն լիարժեք անվտանգություն: Կորպուսները պետք է ենթարկվեն համապատասխան ջերմային մշակման՝ երաշխավորելու համար եռակցման կարանի եւ ջերմամշակման ենթարկված հատվածի բավարար ամրություն, եթե այդպես պահանջվում է տվյալ տեխնոլոգիական պրոցեսով եւ նյութերով: Նյութն ընտրելիս պետք է հաշվի առնվի հաշվարկային ջերմաստիճանի միջակայքը՝ բեկուն կոտրվածքի, լարվածության տակ կոռոզիոն ճաքերի եւ հարվածի ամրության առումներով: Եթե օգտագործվում է մանրահատիկ պողպատ, ապա հոսունության սահմանի երաշխիքային արժեքը չպետք է լինի 460 Ն/մմ<sup>2</sup>-ից բարձր, իսկ ձգման ամրության վերին շեմը չպետք է լինի 725 Ն/մմ<sup>2</sup>-ից բարձր՝ տվյալ նյութի մասնագրի համաձայն: Շարժական ցիստեռնի նյութը պետք է հարմարեցված լինի արտաքին միջավայրին, որտեղ այդ ցիստեռնը կարող է փոխադրվել:
- 6.7.3.2.2. Շարժական ցիստեռնի կորպուսները, կցամասերը պետք է պատրաստված լինեն այնպիսի նյութերից, որոնք՝
- ա) չեն ենթարկվում չսառեցված-հեղուկացված գազի (գազերի) կողմից ազդեցության, որոնք պետք է փոխադրվեն այդ ցիստեռնով, կամ
  - բ) պատշաճ կերպով պասիվացված կամ չեզոքացված են քիմիական ռեակցիայի միջոցով:
- 6.7.3.2.3. Խցանիչները պետք է պատրաստված լինեն այնպիսի նյութերից, որոնք չսառեցված-հեղուկացված գազի (գազերի) կողմից այնպիսի ազդեցության չեն ենթարկվում, որը պետք է փոխադրվի այդ ցիստեռնով:
- 6.7.3.2.4. Պետք է խուսափել իրարից տարբերվող մետաղների շփումից, որը կարող է հանգեցնել գալվանական ազդեցությամբ առաջացող վնասների:
- 6.7.3.2.5. Շարժական ցիստեռնի, ներառյալ որեւէ սարքերի, խցանիչների եւ

աքսեսուարների նյութերը չպետք է բացասաբար անդրադառնան չսառեցված-հեղուկացված գազի (գազերի) վրա, որը պետք է փոխադրվի այդ շարժական ցիստեռնով:

- 6.7.3.2.6. Շարժական ցիստեռնները պետք է նախագծվեն եւ պատրաստվեն այնպիսի հենարանային մասերով, որոնք անվտանգ հիմք կապահովեն փոխադրման ժամանակ: Դրանք նաեւ պետք է ունենան բարձրացման եւ ամրացման համապատասխան միջոցներ:
- 6.7.3.2.7. Շարժական ցիստեռնները պետք է նախագծվեն այնպես, որ դրանք առանց իրենց պարունակության կորստի կարողանան դիմակայել պարունակության պատճառով առաջացած ներքին ճնշմանը, ինչպես նաեւ նորմալ պայմաններում բեռնման/ բեռնաթափման եւ փոխադրման ժամանակ ստատիկ, դինամիկ եւ ջերմային բեռնվածությանը: Կառուցվածքի միջոցով պետք է ցույց տրվի, որ հաշվի են առնվել հոգնածության ազդեցությունները, որոնք կարող են առաջանալ շարժական ցիստեռնի շահագործման ակնկալվող ժամկետի ընթացքում բեռնվածությունների կրկնվող կիրառությունից:
- 6.7.3.2.8. Կորպուսները պետք է նախագծվեն այնպես, որ դրանք առանց մնացորդային դեֆորմացիայի կարողանան դիմակայել ներքին ճնշումից առնվազն 0,4 բար բարձր արտաքին ճնշմանը (մանոմետրական ճնշում): Եթե կորպուսը պետք է ենթարկվի ծավալուն վակուումային ազդեցության նախքան լցավորումը եւ դատարկման ընթացքում, ապա այն պետք է նախագծվի այնպես, որ կարողանա դիմակայել ներքին ճնշումից առնվազն 0,9 բար (մանոմետրական ճնշում) բարձր արտաքին ճնշմանը եւ պետք է փորձարկվի այդ ճնշման տակ:
- 6.7.3.2.9. Շարժական ցիստեռնները եւ դրանց ամրակապերը պետք է կարողանան թույլատրելի առավելագույն բեռնվածության պայմաններում դիմանալ առանձին ազդեցության հետեւյալ ստատիկ ուժերի ներգործությանը՝
- ա) շարժման ուղղությամբ՝ ԱԹԱԲ-ի կրկնապատիկը բազմապատկած ազատ անկման արագացման արժեքով (g)<sup>1</sup>.
  - բ) շարժման ուղղությամբ՝ հորիզոնական դիրքով ուղիղ անկյան տակ՝ ԱԹԱԲ-ը (եթե շարժման ուղղությունը հստակ սահմանված չէ՝ ուժերը պետք է հավասար լինեն ԱԹԱԲ-ի արժեքի կրկնապատիկին) բազմապատկած ազատ անկման արագացման արժեքով (g)<sup>1</sup>.
  - գ) ուղղահայաց դիրքով՝ վարից վեր՝ ԱԹԱԲ-ը բազմապատկած ազատ անկման արագացման արժեքով (g)<sup>1</sup>.եւ

<sup>1</sup> Հաշվարկի նպատակով՝  $g = 9,81$  մ/վ<sup>2</sup>:

դ) ուղղահայաց դիրքով՝ վերելից ներքե՛ ԱԹԱԲ-ի արժեքի կրկնապատիկը (ընդհանուր բեռնվածությունը, ներառյալ՝ ծանրության ուժի ազդեցությունը) բազմապատկած ազատ անկման արագացման արժեքով (g)<sup>1</sup>:

6.7.3.2.10. 6.7.3.2.9-ում նշված յուրաքանչյուր ուժի ներգործության դեպքում պետք է դիտարկվեն ամրության պաշարի հետեւյալ գործակիցները՝

ա) հստակ սահմանված հոսունության սահման ունեցող պողպատների դեպքում՝ ամրության պաշարի 1,5 գործակիցը՝ հոսունության երաշխավորված սահմանի հարաբերությամբ. կամ

բ) հստակ սահմանված հոսունության սահման չունեցող պողպատների դեպքում՝ ամրության պաշարի 1,5 գործակիցը՝ հոսունության երաշխավորված պայմանական սահմանի 0,2 % հարաբերությամբ, իսկ աուստենիտային պողպատների դեպքում՝ 1% հոսունության պայմանական սահմանի հարաբերությամբ:

6.7.3.2.11. Հոսունության սահմանի կամ հոսունության պայմանական սահմանի արժեքները տվյալ նյութերի գծով ազգային կամ միջազգային ստանդարտների արժեքներն են: Երբ օգտագործվում են աուստենիտային պողպատներ, հոսունության սահմանի եւ հոսունության պայմանական սահմանի՝ տվյալ նյութի գծով ստանդարտների համաձայն սահմանված նվազագույն արժեքները կարող են բարձրացվել մինչեւ 15%-ի չափով, եթե նյութի ստուգման սերտիֆիկատում նշված են այդ առավել բարձր արժեքները: Եթե տվյալ պողպատի գծով ստանդարտ գոյություն չունի, ապա հոսունության սահմանի արժեքը կամ հոսունության պայմանական սահմանի արժեքը պետք է հաստատվի իրավասու մարմնի կողմից:

6.7.3.2.12. Եթե չստեղծված-հեղուկացված գազեր փոխադրելու համար նախատեսված կորպուսները համալրված են ջերմամեկուսիչ սարքերով, ապա ջերմամեկուսիչ համակարգերը պետք է բավարարեն հետեւյալ պահանջները՝

ա) այն պետք է ունենա այնպիսի էկրան, որը պետք է ծածկի ոչ պակաս, քան վերին երրորդ հատվածը, կամ ոչ ավելի, քան կորպուսի մակերեսային վերին կեսը, եւ իր ամբողջ մակերեսային վրա պետք է կորպուսից բաժանված լինի մոտավորապես 40 մմ օդային միջանցքով.

բ) այն պետք է ծածկված լինի բավարար հաստությամբ մեկուսիչ նյութերով, որոնք պաշտպանված պետք է լինեն խոնավության

ներթափանցումից եւ փոխադրման նորմալ պայմաններում՝ վնասվածքից եւ պետք է ապահովեն 0,67 (Վտ.մ-2.Կ-1)-ից ոչ ավելի ջերմահաղորդականություն.

- գ) եթե պաշտպանիչ պատյանն անգազանցիկ է, ապա օգտագործվում է մի սարք, որը պետք է կանխարգելի մեկուսիչ շերտում վտանգավոր ճնշման առաջացումն այն դեպքերում, երբ կորպուսը կամ դրա սարքերը չեն ապահովում բավարար անգազանցիկություն. եւ
- դ) ջերմամեկուսացումը չպետք է խանգարի կցամասերի եւ դատարկման սարքերի հասանելիությանը:

6.7.3.2.13. Դյուրավառ չսառեցված-հեղուկացված գազերի փոխադրման համար նախատեսված շարժական ցիստեռնները պետք է հողակցման հնարավորություն ունենան:

6.7.3.3. Կառուցվածքի չափորոշիչները

6.7.3.3.1. Կորպուսները պետք է ունենան կլոր լայնակի հատվածք:

6.7.3.3.2. Կորպուսները պետք է նախագծվեն եւ պատրաստվեն այնպես, որ դրանք դիմանան հաշվարկային ճնշման 1,3-ապատիկից ոչ պակաս փորձարկման ճնշման: Կորպուսը նախագծելիս պետք է հաշվի առնվի ԱԹԱՃ-ի նվազագույն արժեքները, որոնք տրված են շարժական ցիստեռնների T50 ցուցման մեջ՝ 4.2.5.2.6-ում՝ փոխադրման համար նախատեսված յուրաքանչյուր չսառեցված-հեղուկացված գազի համար: Պետք է ուշադրություն դարձնել կորպուսի պատերի նվազագույն հաստության պահանջներին, որոնք սահմանված են 6.7.3.4-ում:

6.7.3.3.3. Հստակ սահմանված հոսունության սահման կամ հոսունության երաշխավորված պայմանական սահման ունեցող պողպատների դեպքում (որպես կանոն՝ 0,2% հոսունության պայմանական սահման կամ աուստենիտային պողպատների դեպքում՝ 1% հոսունության պայմանական սահման) առաջնային մակերեսության լարվածությունը  $\sigma$  (սիգմա) կորպուսում փորձարկման ճնշման ժամանակ չպետք է գերազանցի 0,75 Re կամ 0,50 Rm՝ նայած թե որն է ավելի փոքր մեծություն:

Re -ը՝ հոսունության սահման՝ արտահայտված Ն/մմ<sup>2</sup>, կամ 0,2% հոսունության պայմանական սահման, իսկ աուստենիտային պողպատների դեպքում՝ 1%.

Rm-ը՝ ձգման նվազագույն ամրություն՝ արտահայտված Ն/մմ<sup>2</sup>-ով:

6.7.3.3.3.1. Re եւ Rm արժեքների կիրառության համար սահմանվում են նվազագույն արժեքներ՝ տվյալ նյութերի գծով ազգային կամ

միջազգային ստանդարտների համաձայն: Երբ օգտագործվում են աուստենիտային պողպատներ, տվյալ նյութի գծով ստանդարտների համաձայն Re եւ Rm նվազագույն սահմանված արժեքները կարող են մեծացվել մինչեւ 15%-ի չափով, եթե այդ առավել բարձր արժեքները նշված են նյութի ստուգման սերտիֆիկատում: Եթե տվյալ պողպատի գծով գոյություն չունի ստանդարտ, ապա Re եւ Rm արժեքները պետք է հաստատվեն իրավասու մարմնի կամ նրա լիազոր անձի կողմից:

- 6.7.3.3.3.2. 0,85-ից բարձր Re/Rm գործակից ունեցող պողպատներն արգելվում են օգտագործել եռակցված կորպուսներ պատրաստելու համար: Այս հարաբերակցությունը սահմանելու համար օգտագործվող Re եւ Rm արժեքներն այն արժեքներն են, որոնք սահմանվում են նյութի ստուգման սերտիֆիկատում:
- 6.7.3.3.3.3. Կորպուսների պատրաստման համար օգտագործվող պողպատների խզման դեպքում երկարացման արժեքը (արտահայտված տոկոսով) չպետք է լինի 10 000/Rm-ից պակաս՝ 16% բացարձակ նվազագույնի պայմաններում մանրահատիկ պողպատի դեպքում եւ 20%՝ այլ պողպատների դեպքում:
- 6.7.3.3.3.4. Նյութերի իրական արժեքները սահմանելու նպատակով պետք է նշել, որ բարակ թիթեղյա մետաղի դեպքում փորձարկման ենթակա ձգվող նմուշների առանցքները պետք է գլոցման ուղղությամբ լինեն ուղիղ անկյան տակ (լայնակի): Խզման դեպքում երկարացումը չափվում է ուղղանկյուն լայնակի հատվածք ունեցող փորձարկման նմուշների վրա, որոնք համապատասխանում են ISO 6892:1998 ստանդարտին՝ 50 մմ հաշվարկային երկարության դեպքում:
- 6.7.3.4. Կորպուսի պատերի նվազագույն հաստությունը
- 6.7.3.4.1. Կորպուսի պատերի նվազագույն հաստությունը պետք է ունենա հետևյալ արժեքներից ամենամեծին հավասար արժեք
- ա) 6.7.3.4-ի պահանջների համաձայն սահմանված նվազագույն հաստություն, եւ
- բ) 6.7.3.3-ի պահանջները ներառող՝ ճնշումային անոթների վերաբերյալ կանոնների համաձայն նվազագույն հաստություն:
- 6.7.3.4.2. Կորպուսի գլանաձեւ հատվածները, ծայրերը (գագաթները) եւ մտոցի կափարիչները, որոնց տրամագիծը 1,80 մ եւ ավելի երկարություն ունի, պետք է ստանդարտ պողպատի դեպքում 5 մմ հաստությունից պակաս կորպուսի պատեր կամ համարժեք հաստություն չունենան: 1,80 մ-ից ավելի տրամագծով կորպուսների պատերի հաստությունը չպետք է 6 մմ-ից պակաս լինի ստանդարտ պողպատի կամ կիրառվելիք մետաղի դեպքում

6.7.3.4.3. Կորպուսի գլանաձեւ հատվածները, ծայրերը (գագաթները) եւ մտոցի կափարիչները պետք է 4 մմ հաստությունից պակաս կորպուսի պատեր չունենան՝ անկախ օգտագործված նյութի տեսակից:

6.7.3.4.4. 6.7.3.4.2-ում ստանդարտ պողպատի համար սահմանված հաստությունից բացի այլ պողպատների համարժեք հաստությունը սահմանվում է հետեւյալ բանաձեւի միջոցով՝

$$e_1 = \frac{21,4e_0}{\sqrt[3]{Rm_1 \times A_1}}$$

որտեղ՝

$e_1$ -ը կիրառվող պողպատի պահանջվող համարժեք հաստությունն է (մմ-ով).

$e_0$ -ն՝ ստանդարտ պողպատի նվազագույն հաստությունը (մմ-ով), ինչպես սահմանված է 6.7.3.4.2-ում.

$Rm_1$ -ը կիրառվող պողպատի երաշխավորված նվազագույն ձգման ամրությունն է (Ն/մմ<sup>2</sup>) (տե՛ս 6.7.3.3.3).

$A_1$ -ը՝ կիրառվող պողպատի խզման դեպքում երաշխավորված նվազագույն երկարացումը (%-ով)՝ ազգային կամ միջազգային ստանդարտների համաձայն:

6.7.3.4.5. Ոչ մի դեպքում պատի հաստությունը չպետք է 6.7.3.4.1 - 6.7.3.4.3-ում սահմանված հաստությունից պակաս լինի: Կորպուսի բոլոր մասերը պետք է նվազագույնն ունենան 6.7.3.4.1 - 6.7.3.4.3-ում սահմանված հաստություն: Այդ հաստության մեջ հաշվի չի առնվում կոռոզիան:

6.7.3.4.6. Փափուկ պողպատի օգտագործման դեպքում (տե՛ս 6.7.3.1) 6.7.3.4.4-ում կիրառված բանաձեւի օգտագործմամբ հաշվարկ չի պահանջվում:

6.7.3.4.7. Կորպուսի ծայրերի (գլխիկների) եւ գլանաձեւ հատվածի միացման մասում թիթեղների հաստության կտրուկ փոփոխություն չի թույլատրվում:

6.7.3.5. Օժանդակ սարքավորումը

6.7.3.5.1. Բոլոր օժանդակ սարքավորումները պետք է այնպես տեղադրվեն, որպեսզի դրանք պաշտպանված լինեն օգտագործման կամ փոխադրման ընթացքում պոկվելու կամ վնասվելու ռիսկից: Եթե հիմնակմախքի եւ կորպուսի միջեւ միացումն այնպիսին է, որ ենթամասերի միջեւ հնարավոր է որոշակի շարժում տեղի ունենա, ապա սարքը պետք է ամրացված լինի այնպես, որ նման շարժումը

չվնասի աշխատող մասերը: Դատարկման արտաքին կցամասերը (խողովակների ագույցները, փակիչ սարքերը), ներքին կասեցման կափույրը եւ դրա թամբը պետք է պաշտպանված լինեն արտաքին ուժերի ազդեցության հետեւանքով պոկվելու վտանգից (օրինակ՝ տեղաշարժվող հատվածամասերի օգտագործման եղանակով): Պետք է հնարավոր լինի լցավորման եւ դատարկման սարքերը (այդ թվում՝ կցաշուրթերը եւ պարուրակավոր խցափակիչները) եւ ցանկացած ապահովիչ թասակ պաշտպանել պատահական բացվելուց:

- 6.7.3.5.2. Բոլոր այն բացվածքները, որոնք շարժական ցիստեռնի կորպուսում ունեն 1,5 մմ-ը գերազանցող տրամագիծ, բացի ճնշումը նվազեցնելու համար նախատեսված սարքերի բացվածքներից, դիտանցքերից եւ գազաթողման փակ անցքերից, պետք է համալրված լինեն առնվազն երեք իրարից առանձին եւ իրար փակիչ սարքերով, որոնցից առաջինը պետք է լինի ներքին կասեցման կափույր, հավելյալ հոսքի կափույր կամ համարժեք սարք, երկրորդը պետք է լինի արտաքին կասեցման կափույր, իսկ երրորդը պետք է լինի անշարժ կցաշուրթ կամ համարժեք սարք:
- 6.7.3.5.2.1. Եթե շարժական ցիստեռնը հավելյալ հոսքի կափույր ունի, ապա այն պետք է ամրացված լինի այնպես, որ դրա թամբը լինի կորպուսի ներսում կամ եռակցված կցաշուրթի ներսում, կամ եթե այն ամրացված է արտաքինից, ապա դրա ամրակապման մասերը պետք է նախագծված լինեն այնպես, որ հարվածի դեպքում դրանց արդյունավետությունը չկորի: Հավելյալ հոսքի կափույրները պետք է ընտրվեն եւ ամրացվեն այնպես, որ արտադրողի կողմից սահմանված առավելագույն հոսքի դեպքում դրանք մեխանիկորեն փակվեն: Նման կափույրների միացումները կամ աքսեսուարները, որոնք մտնում կամ դուրս են գալիս նման կափույրից, պետք է ունենան հավելյալ հոսքի կափույրի համար նախատեսված հոսքի համար նախատեսվածից ավելի թողունակություն:
- 6.7.3.5.3. Լցավորման եւ դատարկման համար նախատեսված բացվածքների դեպքում որպես փակիչ սարք պետք է կիրառվի ներքին կասեցման կափույրը, եւ եւս երկրորդ կասեցման կափույրը պետք է տեղադրված լինի հասանելի դիրքում՝ լցավորման եւ դատարկման յուրաքանչյուր խողովակի վրա:
- 6.7.3.5.4. Այն շարժական ցիստեռնների լցավորման եւ դատարկման համար նախատեսված եւ ներքեւում տեղադրված բացվածքների դեպքում, որոնք նախատեսված են դյուրավառ եւ (կամ) թունավոր չսառեցված-հեղուկացված գազեր կամ ճնշման տակ գտնվող քիմիական նյութեր փոխադրելու համար, ներքին կասեցման կափույրը պետք է ունենա արագ փակման ապահովիչ, որը մեխանիկորեն պետք է փակվի

շարժական ցիստեռնի՝ լցավորման եւ դատարկման ժամանակ չնախատեսված շարժման կամ հրդեհի բռնկման դեպքում: 1000 լիտրը գերազանցող տարողունակություն ունեցող շարժական ցիստեռնների դեպքում պետք է հնարավոր լինի աշխատեցնել այս սարքը հեռահար կառավարմամբ:

- 6.7.3.5.5. Լցավորումից, դատարկումից եւ գազի ճնշումը կարգավորող անցքերից բացի կորպուսները կարող են ունենալ այնպիսի բացվածքներ, որտեղ կարող են տեղադրված լինել մակարդաչափեր, ջերմաչափեր (տերմոմետրեր) եւ ճնշաչափեր (մանոմետրեր): Նման սարքերի միացումները պետք է պատրաստված լինեն համապատասխան զոդված ծայրափողակներից եւ տուփերից, այլ ոչ թե պտուտակների միջոցով ամրացված լինեն կորպուսին:
- 6.7.3.5.6. Բոլոր շարժական ցիստեռնները պետք է ունենան մտոցներ կամ համապատասխան մեծության այլ՝ ներքին զննման համար նախատեսված դիտանցքեր՝ տեխնիկական սպասարկման աշխատանքներ իրականացնելու եւ վերանորոգելու նպատակով ցիստեռնի ներսը մուտք գործելու համապատասխան հնարավորությամբ:
- 6.7.3.5.7. Արտաքին կցամասերը պետք է հնարավորինս խմբավորված լինեն հարմարավետության նկատառումներով:
- 6.7.3.5.8. Շարժական ցիստեռնի յուրաքանչյուր կցախողովակ պետք է հստակ մակնշված լինի դրա գործառույթը նշելու համար:
- 6.7.3.5.9. Յուրաքանչյուր կասեցման կափույր կամ փակելու այլ հարմարանք պետք է նախագծված եւ պատրաստված լինի կորպուսի ԱԹԱՃ-ի համար նախատեսված նոմինալ ճնշումից ոչ պակաս ճնշման համար՝ հաշվի առնելով փոխադրման ընթացքում ակնկալվող ջերմաստիճանը: Բոլոր կասեցման կափույրները, որոնք ունեն պտուտակավոր իլեր, պետք է փակվեն ժամացույցի ուղղությամբ պտտեցնելով: Այլ կասեցման կափույրների դեպքում փակման դիրքը (բաց եւ փակ) ու փակման ուղղությունը պետք է հստակորեն նշված լինեն: Բոլոր կասեցման կափույրները պետք է նախագծված լինեն այնպես, որ հնարավոր լինի կանխել դրանց պատահական բացվելը:
- 6.7.3.5.10. Խողովակները պետք է նախագծված, պատրաստված եւ տեղադրված լինեն այնպես, որ հնարավոր լինի խուսափել ջերմային ընդլայնման եւ սեղմման, մեխանիկական ցնցման եւ վիբրացիայի հետեւանքով վնաս ստանալու ռիսկից: Խողովակները պետք է պատրաստված լինեն համապատասխան մետաղական նյութից: Հնարավորության դեպքում պետք է օգտագործվեն խողովակների զոդված հանգույցներ:



- 6.7.3.5.11. Պղնձից խողովակների հանգույցները պետք է զոդվեն կամ ունենան համարժեքորեն ամուր մետաղական միացում: Չողված նյութերի հալման ջերմաստիճանը պետք է 525 °C-ից ցածր չլինի: Հանգույցները չպետք է նվազեցնեն խողովակների ամրությունը, օրինակ՝ պարուրակները կտրելիս:
- 6.7.3.5.12. Բոլոր խողովակաշարերի եւ դրանց կցամասերի պայթման ճնշումը չպետք է պակաս լինի հետեւյալ արժեքներից ամենաբարձրից, այն է՝ հենամարմնի ԱԹԱՃ-ի ճնշման արժեքի քառապատիկից կամ պոմպի եւ կամ մեկ այլ սարքի (բացառությամբ՝ ճնշումը նվազեցնող սարքերի) շահագործման հետեւանքով առաջացած ճնշման արժեքի քառապատիկից:
- 6.7.3.5.13. Կափույրներ եւ օժանդակ սարքեր պատրաստելիս պետք է օգտագործվեն կռելի մետաղներ:
- 6.7.3.6. Ստորին հատվածում գտնվող բացվածքները
- 6.7.3.6.1. Արգելվում է փոխադրել որոշ չսառեցված-հեղուկացված գազեր ստորին հատվածի բացվածքներ ունեցող այնպիսի շարժական ցիստեռններով, որոնց դեպքում 4.2.5.2.6-ում նշված T50 շարժական ցիստեռնների վերաբերյալ ցուցմամբ արգելվում են նման բացվածքները: Կորպուսի հեղուկի մակարդակից ներքեւ բացվածքներ չի թույլատրվում, երբ կորպուսը լցավորված է առավելագույն թույլատրելի մակարդակով:
- 6.7.3.7. Ճնշումը նվազեցնելու համար նախատեսված սարքերը
- 6.7.3.7.1. Շարժական ցիստեռնները պետք է ունենան ճնշումը նվազեցնելու համար նախատեսված մեկ կամ մի քանի զսպանակային սարքեր: Ճնշումը նվազեցնող սարքն ինքնաբերաբար պետք է բացվի առավելագույն թույլատրելի աշխատանքային ճնշումի արժեքից (ԱԹԱՃ) ոչ պակաս ճնշման տակ եւ պետք է ամբողջապես բացված լինի ԱԹԱՃ-ի 110%-ին հավասար ճնշման տակ: Այդ սարքերը դատարկվելուց հետո պետք է փակվեն դատարկման սկզբում արձանագրված ճնշման 10%-ից ցածր ճնշման տակ եւ պետք է փակ մնան ավելի ցածր ճնշումների դեպքում: Ճնշումը նվազեցնող սարքերը պետք է լինեն այնպիսի տեսակի, որ դիմակայեն դինամիկ ուժերին, այդ թվում՝ հեղուկի ալիքի հարվածին: Պատովող մեմբրանները, որոնք հերթականությամբ ամրակցված չեն ճնշումը նվազեցնող զսպանակային սարքերին, չեն թույլատրվում:
- 6.7.3.7.2. Ճնշումը նվազեցնող սարքերը պետք է այնպես նախագծվեն, որ կանխվի անցանկալի նյութերի ներթափանցումը, գազի արտահոսքը եւ ցանկացած հավելյալ վտանգավոր ճնշման գոյացումը:
- 6.7.3.7.3. Որոշ չսառեցված-հեղուկացված գազերի փոխադրման համար

նախատեսված շարժական ցիստեռնները, որոնք սահմանված են 4.2.5.2.6-ի T50 ցուցմամբ, պետք է ունենան ճնշումը նվազեցնող այնպիսի սարքեր, որոնք պետք է հաստատված լինեն իրավասու մարմնի կողմից: Բացառությամբ այն հանգամանքի, երբ հատուկ նշանակության շարժական ցիստեռնը համալրված է հաստատված ապահովիչ սարքով, որը պատրաստված է բեռին համապատասխան նյութից, այդ սարքը պետք է ունենա պատռվող մեմբրան, որը պետք է նախորդի զսպանակավոր սարքին: Պատռվող մեմբրանի եւ սարքի միջեւ ընկած տարածության մեջ պետք է տեղադրված լինի ճնշման մանոմետր կամ համապատասխան հսկիչ-ազդանշանային սարք: Նման դասավորվածությունը թույլ է տալիս հայտնաբերել մեմբրանի պատռվածքը, ծակվելը կամ արտահոսքը, որը կարող է ճնշումը նվազեցնող սարքի անսարքություն առաջացնել: Պատռվող մեմբրանը պետք է պատռվի նոմինալ ճնշման տակ, որը 10%-ով գերազանցում է ապահովիչ սարքի գործարկման ճնշումը:

6.7.3.7.4. Բազմանպատակ նշանակության շարժական ցիստեռնների դեպքում ճնշումը նվազեցնող սարքը բացվում է 6.7.3.7.1-ում նշված ճնշման ժամանակ այդ ցիստեռնում փոխադրումը թույլատրող գազերի առավելագույն թույլատրելի ճնշման ամենաբարձր կետի դեպքում:

6.7.3.8. Ճնշումը նվազեցնող սարքերի տարողունակությունը

6.7.3.8.1. Ճնշումը նվազեցնող սարքերի ընդհանուր թողունակությունը պետք է բավարար լինի, որպեսզի հրդեհի բռնկման դեպքում կորպուսի ներսի ճնշումը (ներառյալ՝ կուտակումը) չգերազանցի ԱԹԱՃ-ի 120 %-ը: Սահմանված լրիվ թողունակություն ստանալու համար օգտագործվում է Ճնշումը նվազեցնող զսպանակավոր սարք: Բազմանպատակ նշանակության շարժական ցիստեռնների դեպքում ճնշումը նվազեցնող սարքի ընդհանուր թողունակությունը պետք է ապահովվի այն գազի հաշվով, որը տվյալ շարժական ցիստեռնում փոխադրման համար թույլատրելի գազերի ամենաբարձր թողունակություն է պահանջում:

6.7.3.8.1.1. Ճնշումը նվազեցնող սարքերի պահանջվող լրիվ թողունակությունը սահմանելու համար, որը մի քանի առանձին սարքերի թողունակության ընդհանուրն է, կիրառվում է հետեւյալ բանաձեւը<sup>5</sup>

---

<sup>5</sup> Այս բանաձեւը կիրառելի է միայն չստեղծված-հեղուկացված գազերի համար, որոնց կրիտիկական ջերմաստիճանները կուրակման պայմանների ջերմաստիճանից բարձր են: Այն գազերի դեպքում, որոնց կրիտիկական ջերմաստիճանը մոտ կամ ցածր է կուրակման պայմանների ջերմաստիճանից, ճնշումը նվազեցնող սարքի թողունակությունը հաշվարկելիս հաշվի է առնվում գազի այլ ջերմադինամիկական հատկությունները (տե՛ս օրինակ CGA S-1.2-2003 «Ճնշումը նվազեցնող սարքի սղանդարներ. մաս 2. Սեղմված գազերի համար բեռնապար եւ շարժական ցիստեռններ»):

$$Q = 12,4 \frac{FA^{0.82}}{LC} \sqrt{\frac{ZT}{M}}$$

որտեղ՝

Q-ն օդի դատարկման համար պահանջվող նվազագույն արագությունն է՝ արտահայտված մեկ վայրկյանում խորանարդ մետրով (մ<sup>3</sup>/վրկ) ստանդարտ պայմաններում՝ 1 բար եւ 0 °C (273 Կ)։

F-ը գործակից է, որն ունի հետեւյալ արժեքները՝

չմեկուսացված կորպուսների համար՝ F = 1.

չմեկուսացված կորպուսների համար՝ F = U(649-t)/13,6, բայց ցանկացած դեպքում 0,25-ից ոչ պակաս

որտեղ՝

U-ն մեկուսացման ջերմահաղորդականությունն է՝ արտահայտված Վտ.մ-2.Կ-1՝ 38 °C ջերմաստիճանի պայմաններում։

t-ն չսառեցված-հեղուկացված գազի փաստացի ջերմաստիճանն է լցավորման ընթացքում (°C)։ Եթե այդ ջերմաստիճանը հայտնի չէ, ապա այն համարվում է t=15 °C.

F-ի վերոնշյալ արժեքը մեկուսացված կորպուսների համար կարող է կիրառվել՝ պայմանով, որ մեկուսացումը կատարված լինի 6.7.3.8.1.2-ի համաձայն։

որտեղ՝

A-ն կորպուսի ընդհանուր արտաքին մակերեսն է՝ արտահայտված քառակուսի մետրով.

Z-ը գազի սեղմման գործակիցն է կուտակման պայմաններում (եթե գործակիցն անհայտ է, ապա արժեքը համարվում է Z =1,0)։

T-ն բացարձակ ջերմաստիճանն է Կելվինով (°C + 273) ճնշումը նվազեցնող սարքերի վերին մասում՝ կուտակման պայմաններում.

L-ը հեղուկի գոլորշիացման լատենտ ջերմությունն է՝ արտահայտված կՋ/կգ-ով՝ կուտակման պայմաններում.

M-ը բաց թողնված գազի մոլեկուլային զանգվածն է.

C-ն հաստատուն մեծություն է, որն ստացվում է հետեւյալ բանաձեւերից մեկի միջոցով՝ որպես տեսակարար ջերմունակության k հարաբերակցության ֆունկցիա՝

$$k = \frac{c_p}{c_v}$$

որտեղ՝

ср-ն տեսակարար ջերմունակությունն է կայուն ճնշման տակ, եւ

сv-ն տեսակարար ջերմունակությունն է կայուն ծավալի դեպքում:

Երբ  $k > 1$ ՝

$$C = \sqrt{k \left( \frac{2}{k+1} \right)^{\frac{k+1}{k-1}}}$$

Երբ  $k = 1$  կամ  $k$ -ն անհայտ է՝

$$C = \frac{1}{\sqrt{e}} = 0,607$$

որտեղ  $e$ -ն մաթեմատիկական կայուն մեծություն է՝ 2.7183

$C$ -ն կարելի է ստանալ հետեւյալ աղյուսակից՝

k	C	k	C	k	C
1,00	0,607	1,26	0,660	1,52	0,704
1,02	0,611	1,28	0,664	1,54	0,707
1,04	0,615	1,30	0,667	1,56	0,710
1,06	0,620	1,32	0,671	1,58	0,713
1,08	0,624	1,34	0,674	1,60	0,716
1,10	0,628	1,36	0,678	1,62	0,719
1,12	0,633	1,38	0,681	1,64	0,722
1,14	0,637	1,40	0,685	1,66	0,725
1,16	0,641	1,42	0,688	1,68	0,728
1,18	0,645	1,44	0,691	1,70	0,731
1,20	0,649	1,46	0,695	2,00	0,770
1,22	0,652	1,48	0,698	2,20	0,793
1,24	0,656	1,50	0,701		

6.7.3.8.1.2. Այն մեկուսիչ համակարգերը, որոնք օգտագործվում են օդափոխման կարողունակությունը նվազեցնելու համար, պետք է հաստատվեն իրավասու մարմնի կողմից կամ նրա կողմից լիազորված որեւէ այլ մարմնի կողմից: Բոլոր դեպքերում, այս նպատակով հաստատված մեկուսիչ համակարգերը պետք է՝

ա) պահպանեն իրենց աշխատունակությունը մինչեւ 649 °C

հասնող ցանկացած ջերմաստիճանի դեպքում, եւ

բ) ծածկված լինեն նյութով, որի հալման ջերմաստիճանը  $700\text{ }^{\circ}\text{C}$  կամ ավելին է:

6.7.3.9. Ճնշումը նվազեցնող սարքերի մակնշումը

6.7.3.9.1. Յուրաքանչյուր ճնշումը նվազեցնող սարքի վրա պետք է հստակորեն եւ մշտապես մակնշվեն հետեւյալ մանրամասն տվյալները՝

ա) գազի բացթողման համար նախատեսված ճնշումը (բարով կամ կՊա-ով).

բ) զսպանակավոր սարքերի դեպքում գազի բացթողման ճնշումից շեղման թույլատրելի շեղումը.

գ) սկզբնական ջերմաստիճանը, որը համապատասխանում է պատռվող մեմբրանների պատռման նոմինալ ճնշմանը.

դ) սարքի հաշվարկային թողունակությունը, որն արտահայտվում է մեկ վայրկյանում օդի ստանդարտ խորանարդ մետրերով ( $\text{մ}^3/\text{վրկ}$ ). եւ

ե) ճնշման նվազեցման զսպանակավոր սարքերի հոսքի լայնական հատման տարածությունները, պատռվող մեմբրանները՝ արտահայտված  $\text{մ}^2$ -ով:

Եթե հնարավոր է, տրամադրվում է նաեւ հետեւյալ տեղեկությունը՝

զ) արտադրողի անվանումը եւ սարքի համապատասխան համարն ըստ կատալոգի:

6.7.3.9.2. Ճնշումը նվազեցնող սարքի վրա մակնշված հաշվարկային թողունակությունը սահմանվում է ISO 4126-1:2004 եւ ISO 4126-7:2004 ստանդարտների համաձայն:

6.7.3.10. Ճնշումը նվազեցնող սարքերի միացումները

6.7.3.10.1. Ճնշումը նվազեցնող սարքերի միացումները պետք է բավարար չափի լինեն, որպեսզի հնարավոր լինի առանց խոչընդոտների բաց թողնել գազերի կամ գոլորշու պահանջվող քանակություն դեպի ապահովիչ սարքը: Ոչ մի կասեցման կափույր չպետք է տեղադրված լինի կորպուսի եւ ճնշումը նվազեցնող սարքերի միջեւ, բացառությամբ այն դեպքերի, երբ տեխնիկական սպասարկման նպատակով կամ այլ պատճառներով տեղադրված են կրկնօրինակ սարքեր, եւ այդ սարքերը սպասարկող կասեցման կափույրները բաց վիճակում բլոկավորված են կամ կասեցման կափույրները փոխադարձաբար բլոկավորված են այնպես, որ առնվազն մեկ կրկնօրինակ սարք գտնվում է աշխատանքային ռեժիմում եւ կարող է բավարարել

6.7.3.8-ի պահանջները: Դեպի արտաթողման խողովակներ կամ ճնշումը նվազեցնող սարք տանող անցքում չպետք է լինի ոչ մի խոչընդոտ, որը կարող է սահմանափակել կամ ընդհատել կորպուսից դեպի այդ սարք տանող հոսքը: Ճնշումը նվազեցնող սարքերից դուրս եկող խողովակները, եթե դրանք օգտագործվում են, պետք է մթնոլորտ արտաթողեն գոլորշի կամ հեղուկ՝ ճնշումը նվազեցնող սարքի վրա հակադիր ճնշման նվազագույն պայմաններում:

6.7.3.11. Ճնշումը նվազեցնող սարքերի դասավորվածությունը

6.7.3.11.1. Ճնշումը նվազեցնող սարքի ներթողման յուրաքանչյուր կափույր պետք է տեղադրվի կորպուսի վերին մասում՝ կորպուսի երկայնական եւ լայնական կենտրոնին հնարավորինս մոտիկ: Ճնշումը նվազեցնող սարքի ներթողման բոլոր կափույրներն առավելագույն լցման պայմաններում պետք է տեղադրված լինեն կորպուսի գոլորշու հատվածում, իսկ սարքերը պետք է այնպես տեղադրված լինեն, որ ապահովվի գոլորշու անարգել արտահոսքը: Բաց թողնվող գոլորշին դյուրավառ չսառեցված-հեղուկացված գազերի դեպքում պետք է դուրս մղվի կորպուսից հեռու այնպես, որ այն չկարողանա շփվել կորպուսի հետ: Գոլորշու հոսքի ուղղությունը փոխող պաշտպանիչ սարքերը թույլատրելի են՝ պայմանով, որ ճնշումը նվազեցնող սարքի պահանջով տարողունակությունը չնվազեցվի:

6.7.3.11.2. Պետք է միջոցներ ձեռնարկվեն՝ կանխելու համար ոչ իրավասու անձանց համար ճնշումը նվազեցնող սարքերի հասանելիությունը եւ այդ սարքերը շարժական ցիստեռնի շուռ գալու դեպքում վնասվելուց պաշտպանելու համար:

6.7.3.12. Հսկիչ-չափիչ սարքերը

6.7.3.12.1. Բացառությամբ այն հանգամանքի, երբ շարժական ցիստեռն լցավորելիս հաշվի է առնվում քաշը, մնացած բոլոր դեպքերում ցիստեռնի վրա պետք է լինի մեկ կամ մի քանի հսկիչ-չափիչ սարքեր: Չի կարելի օգտագործել ապակուց եւ այլ փխրուն նյութերից հսկիչ-չափիչ սարքեր, եթե դրանք ուղղակիորեն շփվում են կորպուսի պարունակության հետ:

6.7.3.13. Շարժական ցիստեռնի հենարաններ, հիմնակմախքներ, վերհան եւ ամրացման միջոցներ

6.7.3.13.1. Շարժական ցիստեռնները պետք է նախագծվեն եւ պատրաստվեն հենարան ունեցող կոնստրուկցիաների միջոցով, որոնք փոխադրման ընթացքում կծառայեն որպես անվտանգ հիմք: 6.7.3.2.9-ում սահմանված ծանրությունները եւ 6.7.3.2.10-ում սահմանված ամրության գործակիցը պետք է հաշվի առնվեն նախագծի այս

հատվածում: Թույլատրելի են սահուկներ, հիմնականախքներ, հենոցներ եւ այլ համանման կոնստրուկցիաներ:

- 6.7.3.13.2. Շարժական ցիստեռնի ամրանների հետեւանքով ընդհանուր լարվածությունը (օրինակ՝ հենոցներ, հիմնականախքներ եւ այլն), ինչպես նաեւ շարժական ցիստեռնի վերհան եւ ամրացման միջոցները չպետք է ծայրահեղ լարվածություն առաջացնեն կորպուսի որեւէ հատվածում: Բոլոր շարժական ցիստեռնները պետք է ունենան ստացիոնար վերհանման եւ ամրացման կցամասեր: Նախապատվելի է, որ դրանք ամրացվեն շարժական ցիստեռնի հենարաններին, բայց կարող են ամրացվել նաեւ կորպուսի հենարանային հատվածներում տեղակայված ուժեղարար թիթեղներին:
- 6.7.3.13.3. Հենարաններ եւ հիմնականախքներ նախագծելիս անհրաժեշտ է հաշվի առնել շրջակա միջավայրի կոռոզիոն ազդեցությունները:
- 6.7.3.13.4. Երկժանիք բռնիչների որմնանցքերը պետք է ունենան փակվելու հնարավորություն: Երկժանիք բռնիչի որմնանցքերը փակելու միջոցները պետք է կազմեն հիմնականախքի անբաժանելի մասը կամ ամուր կցված լինեն հիմնականախքին: 3,65 մետրից պակաս երկարություն ունեցող այն շարժական ցիստեռնները, որոնք բաղկացած են մեկ կտորից, պարտադիր չէ, որ ունենան երկժանիք բռնիչի որմնանցք՝ պայմանով, որ՝
- ա) կորպուսը եւ բոլոր կցամասերը լավագույնս պաշտպանված լինեն երկժանիք բռնիչի հարվածներից, եւ
  - բ) երկժանիք բռնիչի որմնանցքերի կենտրոնների միջեւ տարածությունը պետք է լինի շարժական ցիստեռնի առավելագույն երկարության առնվազն կեսը:
- 6.7.3.13.5. Եթե շարժական ցիստեռնները պաշտպանված չեն փոխադրման ընթացքում 4.2.2.3-ի պահանջների համաձայն, ապա կորպուսները եւ օժանդակ սարքավորումները պետք է պաշտպանված լինեն կողային կամ երկլայնական հարվածների կամ շուռ գալու հետեւանքով կորպուսին կամ օժանդակ սարքին հասցվող վնասից: Արտաքին կցամասերը պետք է այնպես պաշտպանված լինեն, որ շարժական ցիստեռնի հարվածի կամ շրջվելու դեպքում կորպուսի պարունակությունը չլցվի դրա կցամասերի վրա: Նման պաշտպանության օրինակներ են՝
- ա) կողային հարվածի դեմ պաշտպանությունը, որը կարող է իրականացվել երկու կողմից կորպուսը երկայնակի ձողերով պաշտպանելու միջոցով՝ միջին գծի մակարդակով.
  - բ) շարժական ցիստեռնի պաշտպանությունը շուռ գալուց, որը

կարող է իրականացվել հիմնականաբար շուրջն արմատուրային օղակների կամ ձողերի ամրացման միջոցով.

- գ) հետեւից ստացվող հարվածից պաշտպանությունը, որը կարող է բաղկացած լինել թափարգելից եւ հիմնականաբարից.
- դ) կորպուսի պաշտպանություն՝ հարվածից կամ շուռ գալու հետեւանքով վնասվելուց՝ օգտագործվելով ISO 1496-3:1995-ի համաձայն կառուցված ISO հիմնականաբարները:

#### 6.7.3.14. Կառուցվածքի հաստատումը

6.7.3.14.1. Իրավասու մարմինը կամ նրա կողմից լիազորված մարմինը շարժական ցիստեռնի ցանկացած նոր կոնստրուկցիայի համար տրամադրում է կառուցվածքի հաստատման սերտիֆիկատ: Սույն սերտիֆիկատով հավաստվում է, որ այդ մարմինն ուսումնասիրել է տվյալ շարժական ցիստեռնը, այն համապատասխանում է նախատեսված նպատակին եւ բավարարում է սույն գլխի, իսկ անհրաժեշտության դեպքում՝ 4.2.5.2.6-ի շարժական ցիստեռնների T50 ցուցման՝ գազերի համար նախատեսված դրոյթների պահանջները: Եթե շարժական ցիստեռնները պատրաստվում են սերիական եղանակով՝ առանց կոնստրուկցիայի որեւէ փոփոխության, ապա հրահանգը վավեր է ամբողջ սերիայի համար: Սերտիֆիկատում նշվում է նախատիպի փորձարկման մասին հաշվետվությունը, փոխադրման համար թույլատրելի գազերը, կորպուսի պատրաստման թույլատրելի նյութերը եւ հաստատման համարը: Հաստատման համարը բաղկացած է այն պետության առանձնահատուկ պայմանանշանից եւ մակնշումից, որի տարածքում հաստատումը կատարվել է, ինչպես սահմանված է միջազգային ճանապարհային փոխադրման ժամանակ փոխադրամիջոցների համար օգտագործվող տարբերակիչ նշանների մասին կոնվենցիայով<sup>2</sup>, եւ գրանցման համարից: 6.7.1.2-ի համաձայն՝ բոլոր այլընտրանքային պայմանավորվածությունները նշվում են սերտիֆիկատում: Կառուցվածքի հաստատումը կարող է հաստատում համարվել ավելի փոքր շարժական ցիստեռնների համար, որոնք պատրաստված են միեւնույն նյութից եւ ունեն միեւնույն հաստությունը, օգտագործվել են միեւնույն տեխնոլոգիական պրոցեսներով եւ ունեն միեւնույն հենարանները, համարժեք փականները եւ այլ պարագաներ:

#### 6.7.3.14.2. Կառուցվածքի հաստատման նպատակով նախատիպի փորձարկման

---

<sup>2</sup> Միջազգային երթելեկության մեջ գտնվող փոխադրամիջոցների եւ դրանց կցորդների՝ գրանցման պետության տարբերանշաններ, օրինակ՝ 1949 թվականի «Ճանապարհային երթելեկության մասին» Ժնեւի կոնվենցիային կամ 1968 թվականի «Ճանապարհային երթելեկության մասին» Վիեննայի կոնվենցիային համապատասխան:



հաշվետվության մեջ ներառվում է առնվազն հետևյալը՝

- ա) ISO 1496-3:1995 ստանդարտում սահմանված հիմնականախքի համապատասխան փորձարկման արդյունքները.
- բ) 6.7.3.15.3-ում նշված սկզբնական ստուգումների եւ փորձարկումների արդյունքներն, ու
- գ) 6.7.3.15.1-ում նշված հարվածի փորձարկման արդյունքները, եթե կիրառելի են:

6.7.3.15. Ստուգումներն ու փորձարկումները

6.7.3.15.1. 1972 թվականի «Անվտանգ կոնտեյներների վերաբերյալ միջազգային կոնվենցիայում» (ԱԿԿ) (փոփոխությունների համաձայն) ընդգրկված կոնտեյների սահմանմանը համապատասխանող շարժական ցիստեռնները չպետք է օգտագործվեն՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դրանց յուրաքանչյուր կառուցվածքի նախատիպը, անցնելով դինամիկ, երկայնական հարվածի փորձարկում, որը նշված է «Փորձարկումների եւ չափորոշիչների ձեռնարկ»-ի IV մասի 41-րդ բաժնում, օգտագործման համար պիտանի են համարվել:

6.7.3.15.2. Յուրաքանչյուր շարժական ցիստեռնի կորպուս եւ սարքավորում պետք է ստուգվեն եւ փորձարկվեն նախքան առաջին անգամ շահագործվելը (նախնական ստուգում եւ փորձարկում): Դրանից հետո դրանք պետք է ստուգվեն եւ փորձարկվեն յուրաքանչյուր հինգ տարին չգերազանցող միջակայքերով (յուրաքանչյուր 5 տարին մեկ անգամ պարբերական ստուգում եւ փորձարկում), իսկ 5 տարվա պարբերական ստուգումներին եւ փորձարկումներին միջանկյալ պետք է կատարվեն յուրաքանչյուր երկուսուկես տարին մեկ անգամ ստուգումներ եւ փորձարկումներ (յուրաքանչյուր երկուսուկես տարին մեկ անգամ պարբերական ստուգում եւ փորձարկում): Երկուսուկես տարվա միջակայքով ստուգումը եւ փորձարկումը կարող են իրականացվել սահմանված օրվանից հետո 3 ամսվա ընթացքում: Բացառիկ ստուգում եւ փորձարկում պետք է իրականացվի՝ անկախ նրանից, թե երբ է իրականացվել վերջին պարբերական ստուգումը եւ փորձարկումը, եթե դա անհրաժեշտ է՝ 6.7.3.15.7-ի համաձայն:

6.7.3.15.3. Շարժական ցիստեռնի նախնական ստուգման եւ փորձարկման մաս են կազմում նախագծման բնորոշիչները, շարժական ցիստեռնի եւ դրա կցամասերի արտաքին եւ ներքին ուսումնասիրությունը՝ պատշաճորեն հաշվի առնելով չսառեցված-հեղուկացված գազեր փոխադրելու հանգամանքը: Այդ ստուգման եւ փորձարկման մաս է կազմում ճնշափորձարկումը, որը հենվում է փորձարկման ճնշումների վրա՝ 6.7.3.3.2-ի համաձայն: Ճնշափորձարկումը կարող է

իրականացվել որպես հիդրավլիկ փորձարկում կամ մեկ այլ հեղուկի կամ գազի կիրառությամբ փորձարկում, եթե դրա մասին համաձայնություն է տվել իրավասու մարմինը կամ նրա կողմից լիազորված մեկ այլ մարմին: Նախքան շարժական ցիստեռնը գործարկելը պետք է իրականացվի նաև բոլոր օժանդակ սարքավորումներից անջրանցիկության եւ բավարար աշխատունակության փորձարկում: Եթե կորպուսը եւ կցամասերը ճնշափորձարկում են անցնում առանձին-առանձին, դրանք իրար միացվելուց հետո պետք է ենթարկվեն անջրանցիկության փորձարկման: Բոլոր եռակցման կարանները, որոնք կորպուսի ներսում ուժեղ լարվածության են ենթարկվում, պետք է նախնական փորձարկման ժամանակ ստուգվեն ռադիոգրաֆիկ, գերձայնային եւ այլ համապատասխան անվտանգ փորձարկման մեթոդներով: Սա չի տարածվում պատյանի վրա:

- 6.7.3.15.4. 5 տարվա պարբերական ստուգումը եւ փորձարկումը ներառում են ներքին եւ արտաքին ուսումնասիրություն եւ որպես կանոն՝ հիդրավլիկ ճնշափորձարկում: Եզրակարումը, ջերմային մեկուսացումը եւ նմանատիպ կոնստրուկցիաները պետք է հեռացվեն միայն շարժական ցիստեռնի վիճակի վստահելի գնահատում իրականացնելու անհրաժեշտության դեպքում: Եթե կորպուսը եւ արմատուրաները ճնշափորձարկում են անցնում առանձին-առանձին, ապա դրանք պետք է իրար միացվելուց հետո ենթարկվեն անջրանցիկության փորձարկման:
- 6.7.3.15.5. Յուրաքանչյուր երկուսուկես տարին մեկ անգամ պարբերական միջանկյալ ստուգումը եւ փորձարկումը պետք է առնվազն ներառի շարժական ցիստեռնի ու դրա կցամասերի ներքին եւ արտաքին ուսումնասիրությունը՝ պատշաճ կերպով հաշվի առնելով փոխադրման ենթակա չսառեցված-հեղուկացված գազերը, անջրանցիկության փորձարկումն ու բոլոր օժանդակ սարքավորումների բավարար աշխատունակության ստուգումը: Եզրակարումը, ջերմային մեկուսացումը եւ նմանատիպ կոնստրուկցիաները պետք է հեռացվեն միայն շարժական ցիստեռնի վիճակի վստահելի գնահատում իրականացնելու անհրաժեշտության դեպքում: Միայն մեկ չսառեցված-հեղուկացված գազ փոխադրելու նպատակով շարժական ցիստեռնների դեպքում յուրաքանչյուր երկուսուկես տարին մեկ անգամ միջանկյալ ուսումնասիրությունը կարող է չկատարվել կամ փոխարինվել այլ փորձարկման մեթոդներով կամ ստուգման ընթացակարգերով, որոնք սահմանված են իրավասու մարմնի կամ նրա կողմից լիազորված մեկ այլ մարմնի կողմից:
- 6.7.3.15.6. Շարժական ցիստեռնը չի կարող լցավորվել եւ հանվել փոխադրման վերջին 5 տարվա կամ երկուսուկես տարվա պարբերական

ստուգման եւ փորձարկման ժամկետի ավարտից հետո, ինչպես պահանջվում է 6.7.3.15.2-ով: Այնուամենայնիվ, վերջին պարբերական ստուգման եւ փորձարկման ժամկետի ավարտից առաջ լցավորված շարժական ցիստեռնը կարող է փոխադրվել վերջին պարբերական փորձարկման կամ ստուգման ժամկետի ավարտից հետո երեք ամիսը չգերազանցող ժամկետում: Բացի այդ, շարժական ցիստեռնը կարող է փոխադրվել վերջին պարբերական փորձարկման եւ ստուգման ժամկետի ավարտից հետո՝

ա) դատարկումից, բայց ոչ մաքրումից հետո, եթե ցիստեռնը տեղափոխվում է՝ հաջորդ փորձարկումը կամ ստուգումն իրականացնելու նպատակով՝ նախքան վերալցավորումը, եւ

բ) եթե այլ բան սահմանված չէ իրավասու մարմնի կողմից, վերջին պարբերական փորձարկման կամ ստուգման ժամկետի ավարտից վեց ամիս հետո՝ նպատակ ունենալով վերադարձնել վտանգավոր բեռները՝ պատշաճ հեռացում կամ վերամշակում իրականացնելու համար: Նման արտոնությունից օգտվելու իրավունքը պետք է նշվի փոխադրման փաստաթղթի մեջ:

6.7.3.15.7. Անհրաժեշտ է կատարել արտապլանային ստուգում եւ փորձարկում, եթե նկատվում է, որ շարժական ցիստեռնը վնասվել է կամ ունի կոռոզիայի ենթարկված հատվածներ կամ արտահոսում է կամ գտնվում խոտանված այնպիսի վիճակում, որը կարող է ազդել շարժական ցիստեռնի ամբողջականության վրա: Արտապլանային ստուգման եւ փորձարկման մասշտաբը կախված է շարժական ցիստեռնին հասցված վնասի կամ դրա վիճակի վատթարացման չափից: Ամեն դեպքում, 6.7.3.15.5-ի համաձայն, պետք է առնվազն յուրաքանչյուր երկուսուկես տարին մեկ ստուգում եւ փորձարկում կատարվի:

6.7.3.15.8. Արտաքին եւ ներքին ուսումնասիրությամբ պետք է՝

ա) կատարվի կորպուսի կետային քայքայման, կոռոզիայի կամ հղկանյութերի, ներճմվածքների, դեֆորմացիայի, եռակցման կարանների խոտանման եւ այլ դեպքերում, այդ թվում՝ արտահոսքի ստուգում, որոնք կարող են շարժական ցիստեռնը փոխադրման համար վտանգավոր դարձնել: Պատերի հաստությունը ստուգվում է համապատասխան չափումներով, եթե այդ ստուգումը ցույց է տալիս պատերի հաստության նվազեցում.

բ) կատարվի խողովակների, կափույրների, խցանիչների ստուգում՝ կոռոզիա հայտնաբերելու նպատակով, ինչպես նաեւ խոտանների եւ այլ պայմանների, այդ թվում՝ արտահոսքի ստուգում, որոնք կարող են շարժական ցիստեռնը վտանգավոր

դարձնել լցավորման, դատարկման կամ փոխադրման համար.

- գ) ճշտվի, որ մտոցների կափարիչներն ամրացնելու սարքերը սարքին են, եւ մտոցների կափարիչներից կամ խցանիչներից արտահոսք չկա.
- դ) փոխարինվեն կամ պնդացվեն բացակայող կամ թույլ հեղույսները կամ պնդողակները կցաշուրթերի միացման կամ անշարժ կցաշուրթերի մասում.
- ե) համոզվի, որ ոչ մի վթարային սարքի կամ կափույրի վրա կոռոզիա, խափանում կամ որելէ այլ վնասվածք կամ խոտան չկա, որը կարող է խանգարել նորմալ շահագործմանը. հեռակառավարման փակիչ սարքերը եւ ինքնուրույն փակվող կասեցման կափույրները գործարկվեն՝ դրանց պատշաճ աշխատանքը ցույց տալու համար.
- զ) շարժական ցիստեռնի վրա պահանջվող նշանները լինեն դյուրընթեռնելի եւ բավարարեն համապատասխան պահանջները.
- է) հիմնակմախքը, հենարանային հատվածները եւ շարժական ցիստեռնը բարձրացնող միջոցները լինեն բավարար վիճակում:

6.7.3.15.9. 6.7.3.15.1, 6.7.3.15.3, 6.7.3.15.4, 6.7.3.15.5 եւ 6.7.3.15.7-ում նկարագրված ստուգումներն ու փորձարկումները պետք է իրականացվեն եւ կատարվեն փորձագետի ներկայությամբ, որին իրավասու մարմինը կամ նրա կողմից լիազորված մեկ այլ մարմին հավանություն է տվել: Եթե ստուգման կամ փորձարկման մաս է կազմում ճնշափորձարկումը, ապա փորձարկման ճնշումը պետք է լինի նշված ճնշումը:


6.7.3.15.10. Բոլոր դեպքերում, եթե կորպուսում իրականացվում են կտրման, այրման կամ զոդման աշխատանքներ, այդ աշխատանքները պետք է հաստատվեն իրավասու մարմնի կամ նրա կողմից լիազորված այլ մարմնի կողմից՝ հաշվի առնելով կորպուսի պատրաստման համար օգտագործված ճնշումային անոթների վերաբերյալ կանոնները: Աշխատանքն ավարտելուց հետո պետք է իրականացվի ճնշափորձարկում, որի ժամանակ պետք է կիրառվի սկզբնական փորձարկման ճնշումը:

6.7.3.15.11. Երբ հայտնաբերվում է որելէ վտանգավոր վիճակ, ապա շարժական ցիստեռնը հանվում է գործածությունից մինչեւ ուղղումները կատարելը եւ մինչեւ կրկին անգամ հաջող ավարտով ճնշափորձարկում կատարելը:

6.7.3.16. Մակնշումը

6.7.3.16.1. Յուրաքանչյուր շարժական ցիստեռն պետք է ունենա կոռոզիային դիմակայուն մետաղական թիթեղ, որը հիմնավոր ամրացված պետք է լինի շարժական ցիստեռնին տեսանելի հատվածում, որտեղ ստուգում կատարելը հեշտ կլինի: Եթե շարժական ցիստեռնի կառուցվածքի պատճառով թիթեղը հնարավոր չէ հիմնավոր ամրացնել կորպուսին, ապա կորպուսը պետք է մակնշվի առնվազն ճնշումային անոթների վերաբերյալ կանոններով պահանջվող տեղեկություններով: Նվազագույնը հետեւյալ տեղեկությունները պետք է մակնշվեն թիթեղի վրա՝ կապարակնքման կամ որեւէ այլ նմանատիպ մեթոդով՝

- ա) սեփականատիրոջ մասին տեղեկություններ
  - i) սեփականատիրոջ գրանցման համարը.
- բ) արտադրության մասին տեղեկություններ
  - i) արտադրության երկիրը
  - ii) արտադրության տարին
  - iii) արտադրողի անվանումը կամ ապրանքանիշը
  - iv) արտադրողի սերիական համարը
- գ) հաստատման մասին տեղեկություններ

i) Միավորված ազգերի կազմակերպության փաթեթվածքների խորհրդանշանը 

Այս խորհրդանշանը պետք է օգտագործվի՝ հաստատելու համար, որ փաթեթվածքը, փափուկ, սորուն բեռների համար նախատեսված կոնտեյները, շարժական ցիստեռնը կամ ԳՔՏԿ-ն համապատասխանում են 6.1, 6.2, 6.3, 6.5, 6.6, 6.7 կամ 6.11 գլուխների համապատասխան պահանջներին, եւ չպետք է օգտագործվի որեւէ այլ նպատակով.

- ii) հաստատող երկիրը
- iii) կառուցվածքի հաստատում տրամադրող իրավասու մարմինը
- iv) կառուցվածքի հաստատման համարը
- v) 'AA' տառերը, եթե նախագիծը հաստատվել է

այլընտրանքային պայմանավորվածությունների համաձայն (տե՛ս 6.7.1.2)

- vi) ճնշումային անոթների վերաբերյալ կանոնները, որոնց համաձայն այդ կորպուսը նախագծվել է
- դ) ճնշումները
  - i) ԱԹԱՃ (մանոմետրական՝ բարով կամ կՊա-ով)<sup>3</sup>.
  - ii) փորձարկման ճնշում (մանոմետրական՝ բարով կամ կՊա-ով)<sup>3</sup>.
  - iii) սկզբնական ճնշափորձարկման ամսաթիվը (ամիսն ու տարին).
  - iv) այն անձի նույնականացման նշանը, որը ներկա է գտնվել սկզբնական ճնշափորձարկում իրականացնելիս.
  - v) արտաքին հաշվարկային ճնշում<sup>6</sup> (մանոմետրական՝ բարով կամ կՊա-ով)<sup>3</sup>.
- ե) ջերմաստիճանները
  - i) հաշվարկային ջերմաստիճանի միջակայքը (°C)<sup>3</sup>.
  - ii) հաշվարկային ստանդարտ ջերմաստիճանը (°C)<sup>3</sup>.
- զ) նյութերը
  - i) կորպուսի նյութը (նյութերը) եւ նյութի ստանդարտը (ստանդարտները).
  - ii) համարժեք հաստությունը ստանդարտ պողպատի համար (մմ)<sup>3</sup>.
- է) տարողությունը
  - i) ցիստեռնի տարողությունը՝ 20 °C-ի պայմաններում (արտահայտված լիտրերով)<sup>3</sup>.
- ը) պարբերական ստուգումներ եւ փորձարկումներ
  - i) ամենավերջին պարբերական փորձարկման տեսակը (երկուսուկես, 5 տարին մեկ կամ արտահերթ փորձարկում).
  - ii) ամենավերջին պարբերական փորձարկման ամսաթիվը (ամիսն ու տարին).
  - iii) ամենավերջին պարբերական փորձարկման ճնշումը


<sup>6</sup> Տե՛ս 6.7.3.2.8.

<sup>3</sup> Պեղք է նշվի օգտագործված տեսակը

(մանոմետրական՝ բարով կամ կՊա-ով)<sup>3</sup> (եթե կիրառելի է).

- iv) ամենավերջին փորձարկումն իրականացրած կամ դրան ներկա գտնված իրավասու մարմնի նույնականացման նշանը:

### Պատկեր 6.7.3.16.1 Թիթեղի մակնշման օրինակ

Սեփականատիրոջ գրանցման համարը							
ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ							
Արտադրության երկիրը							
Արտադրության երկիրը							
Արտադրողը							
Արտադրողի սերիական համարը							
ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ							
	Հաստատող երկիրը						
Կառուցվածքի հաստատում տրամադրող իրավասու մարմինը							
Կառուցվածքի հաստատման համարը						'AA' (եթե կիրառելի է)	
Կորպուսի նախագծման ծածկագիրը (ճշումային անոթների վերաբերյալ կանոններ)							
ՃՆՇՈՒՄՆԵՐԸ							
ԱԹԱՃ		բար կամ կՊա					
Փորձարկման ճշումը		բար կամ կՊա					
Սկզբնական ճշափորձարկման ամսաթիվը	(ամիս/տարի)	Փորձաստուգման ակնանտեսի կնիքը					
Արտաքին հաշվարկային ճշումը		բար կամ կՊա					
ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ							
Հաշվարկային ջերմաստիճանի միջակայքը		°C-ից		մինչև		°C	
Հաշվարկային ստանդարտ ջերմաստիճանը		°C					
ՆՅՈՒԹԵՐ							
Կորպուսի նյութը (նյութերը) եւ նյութի ստանդարտը (ստանդարտները)							
Համարժեք հաստությունը՝ ստանդարտ պողպատի համար		մմ					
ՏԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ							
ցիստեռնի տարողությունը՝ 20 °C-ի պայմաններում		լիտր					
ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԸ/ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆԵՐԸ							
Փորձարկման տեսակը	Փորձարկման ամսաթիվը	Մասնակցի կնիքը եւ փորձարկման ճշումը <sup>ա</sup>		Փորձարկման տեսակը	Փորձարկման ամսաթիվը	Մասնակցի կնիքը եւ փորձարկման ճշումը <sup>ա</sup>	
	(ամիս/տարի)	բար կամ կՊա			(ամիս/տարի)	բար կամ կՊա	

<sup>ա</sup> Փորձարկման ճշումը, եթե կիրառելի է:



6.7.3.16.2. Հետեւյալ տեղեկությունները չջնջվող նշանով մակնշվում են կա՛մ հենց շարժական ցիստեռնի վրա, կա՛մ շարժական ցիստեռնի վրա ամուր ամրացրած մետաղական թիթեղի վրա:

Օպերատորի անվանումը

Փոխադրման համար թույլատրված չսառեցված-հեղուկացված գազի (գազերի) անվանումը

Թույլատրելի առավելագույն բեռնվածության զանգվածը յուրաքանչյուր թույլտվություն ստացած չսառեցված-հեղուկացված գազի համար \_\_\_\_\_ կգ

Առավելագույն թույլատրելի անզուտ քաշ (ԱԹԱՔ) \_\_\_\_\_ կգ

Դատարկ ցիստեռնի քաշը \_\_\_\_\_ կգ

Շարժական ցիստեռնի վերաբերյալ ցուցում՝ 4.2.5.2.6-ի համաձայն

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** Փոխադրման ենթակա չսառեցված-հեղուկացված գազերի նույնականացման համարը, տե՛ս նաեւ 5-րդ մասը:

6.7.3.16.3. Եթե շարժական ցիստեռնը նախագծվել է հաստատվել է բաց ծովերում տեղափոխման եւ շահագործման համար, ապա «ԾՈՎԱՅԻՆ ՇԱՐՇԱԿԱՆ ՑԻՍՏԵՐՆ» բառերը պետք է մակնշվեն նույնականացման թիթեղի վրա:

6.7.4. Սառեցված-հեղուկացված գազերի փոխադրման համար նախատեսված շարժական ցիստեռնների նախագծման, պատրաստման, ստուգման եւ փորձարկման պահանջները

6.7.4.1. Սահմանումներ

Սույն բաժնի նպատակներով՝

«Այլընտրանքային պայմանավորվածություն» նշանակում է իրավասու մարմնի կողմից տրամադրված թույլտվություն շարժական ցիստեռնի կամ ԳԲՏԿ-ի համար, որը նախագծվել, պատրաստվել կամ փորձարկվել է սույն գլխում սահմանված տեխնիկական պահանջներից տարբեր այլ տեխնիկական պահանջների կամ փորձարկման մեթոդների համաձայն.

«Շարժական ցիստեռն» նշանակում է ջերմամեկուսացված բազմամոդուլային ցիստեռն, որն ունի 450 լիտրից ավելի տարողություն եւ համալրված է օժանդակ սարքավորումներով ու կառուցվածքային սարքավորումներով, որոնք անհրաժեշտ են սառեցված-հեղուկացված գազեր փոխադրելու համար: Պետք է

հնարավոր լինի լցնել եւ դատարկել շարժական ցիստեռնը՝ չհեռացնելով կառուցվածքային սարքավորումները: Ցիստեռնի արտաքին մասում պետք է լինեն կայունացնող տարրեր, եւ պետք է հնարավոր լինի բարձրացնել այն լիքը վիճակում: Ցիստեռնը պետք է նախագծված լինի նախ եւ առաջ փոխադրամիջոցի, վագոնի կամ ծովագնաց կամ ներքին ջրուղիներով նավարկություն իրականացնող փոխադրամիջոցի վրա բեռնվելու նպատակով ու պետք է համալրված լինի սահուկներով, հենարանով կամ բեռնման-բեռնաթափման մեխանիկական գործողություններին օժանդակող սարքերով: Ավտոցիստեռնները, վագոն-ցիստեռնները, ոչ մետաղական ցիստեռնները, սորուն բեռների համար նախատեսված միջին բեռնվածության կոնտեյներները (ՍՄԿ-ներ), գազի բալոնները եւ խոշոր տարաները ներառված չեն շարժական ցիստեռնների սահմանման շրջանակում.

«Ցիստեռն» նշանակում է կառուցվածք, որը սովորաբար բաղկացած է կա՛մ

ա) պատյանից եւ մեկ կամ մի քանի կորպուսներից, որի դեպքում կորպուսի (կորպուսների) եւ պատյանի միջեւ տարածությունից օդը հանված է (վակուումային մեկուսացում) եւ կարող է պարունակել ջերմամեկուսացման համակարգ, կա՛մ

բ) պատյանից եւ ներքին կորպուսից, որի միջնամասում տեղադրված է կոշտ ջերմամեկուսացման նյութ (օրինակ՝ պինդ փրփրապլաստ).

«Կորպուս» նշանակում է շարժական ցիստեռնի մաս, որի մեջ պահվում է փոխադրման համար նախատեսված սառեցված-հեղուկացված գազ, ներառյալ դրա բացվածքները եւ դրանց փականները, բացառությամբ օժանդակ սարքավորումների կամ արտաքին կառուցվածքային սարքավորումների.

«Պատյան» նշանակում է արտաքին մեկուսիչ ծածկ կամ թաղանթ, որը կարող է մեկուսացման համակարգի մաս կազմել.

«Օժանդակ սարքավորում» նշանակում է չափիչ սարքեր եւ լցավորման, բեռնաթափման, օդափոխման, անվտանգության, ճնշման բարձրացման, սառեցման եւ ջերմային մեկուսացման սարքեր.

«Կառուցվածքային սարքավորում» նշանակում է կորպուսի արտաքին մասին կից հզորացնող, ամրացնող, պաշտպանիչ եւ կայունացնող տարրեր.

«Առավելագույն թույլատրելի աշխատանքային ճնշումը (ԱԹԱՃ)» նշանակում է առավելագույն արդյունավետ մանոմետրական ճնշում, որը թույլատրելի է աշխատանքային ռեժիմում գտնվող բեռնված շարժական ցիստեռնի կորպուսի վերեւի հատվածում, այդ թվում՝ լցավորման եւ դատարկման ժամանակ առավելագույն արդյունավետ ճնշում.

«Փորձարկման ճնշում» նշանակում է առավելագույն մանոմետրական ճնշում կորպուսի վերին մասում, որն արձանագրվում է ճնշափորձարկման ժամանակ.

«Անջրանցիկության փորձարկում» նշանակում է գազի օգտագործմամբ փորձարկում, որի ընթացքում կորպուսը եւ դրա օժանդակ սարքավորումները ենթարկվում են ԱԹԱՃ-ի 90%-ից ոչ պակաս արդյունավետ ներքին ճնշման.

«Առավելագույն թույլատրելի անգուտ քաշ (ԱԹԱԲ)» նշանակում է շարժական ցիստեռնի տարայի զանգվածի եւ փոխադրման համար առավելագույն թույլատրելի բեռնվածքի գումարը.

«Պահման ժամկետ» նշանակում է նախնական լցավորումից եւ ջերմության հոսքի պատճառով ճնշման բարձրացումից մինչեւ ճնշման սահմանափակման սարքի (սարքերի) ամենացածր արձանագրված ճնշման միջեւ ընկած ժամանակը.

«Ստանդարտ պողպատ» նշանակում է պողպատ, որն ունի 370 Ն/մմ<sup>2</sup> ձգման ամրություն եւ երկարացում 27% խզման դեպքում.

«Նվազագույն հաշվարկային ջերմաստիճան» նշանակում է ջերմաստիճան, որն օգտագործվում է կորպուսը նախագծելու եւ պատրաստելու համար եւ որը չպետք է ավելի բարձր լինի, քան լցավորման, բեռնաթափման ու փոխադրման նորմալ պայմաններում պարունակության ամենացածր (ամենասառը) ջերմաստիճանը (աշխատանքային ջերմաստիճան):

6.7.4.2. Նախագծման եւ պատրաստման ընդհանուր պահանջները

6.7.4.2.1. Կորպուսները պետք է նախագծվեն եւ պատրաստվեն ճնշումային անոթների վերաբերյալ կանոնների համաձայն, որոնք ընդունելի են իրավասու մարմնի համար: Կորպուսները եւ պատյանները պետք է պատրաստվեն մետաղական նյութից, որը հարմար է պրոֆիլավորման համար: Պատյանները պետք է պատրաստված լինեն պողպատից: Ոչ մետաղական նյութերը կարող են օգտագործվել որպես կորպուսի եւ պատյանի միջեւ արմատուրա եւ հենարաններ՝ պայմանով, որ դրանք նվազագույն հաշվարկային ջերմաստիճանում իրենց նյութական հատկություններով շահագործման համար պիտանի լինեն: Նյութերը սկզբունքորեն

պետք է համապատասխանեն ազգային կամ միջազգային ստանդարտներին: Եռակցված կորպուսների եւ պատյանների դեպքում կարելի է օգտագործել միայն այնպիսի նյութ, որի եռակցելիությունը հիմնավորապես ապացուցված է: Եռակցման կարանները պետք է հմտորեն դրված լինեն եւ ապահովեն լիարժեք անվտանգություն: Եթե տեխնոլոգիական պրոցեսը կամ նյութերն այդպես են պահանջում, ապա կորպուսը պետք է ենթարկվի համապատասխան ջերմային մշակման՝ երաշխավորելու համար եռակցման կարանի եւ ջերմամշակման ենթարկված հատվածի բավարար ամրություն: Նյութ ընտրելիս պետք է հաշվի առնվի հաշվարկային ջերմաստիճանը՝ բեկուն կոտրվածքի, ջրածնային փխրունության, լարվածության տակ կոռոզիոն ճաքերի եւ հարվածի ամրության առումներով: Եթե օգտագործվում է մանրահատիկ պողպատ, ապա հոսունության սահմանի երաշխիքային արժեքը չպետք է լինի 460 Ն/մմ<sup>2</sup>-ից բարձր, իսկ ձգման ամրության վերին շեմը չպետք է լինի 725 Ն/մմ<sup>2</sup>-ից բարձր՝ տվյալ նյութի մասնագրի համաձայն: Շարժական ցիստեռնի նյութը պետք է հարմարեցված լինի արտաքին միջավայրին, որտեղ այդ ցիստեռնը կարող է փոխադրվել:

- 6.7.4.2.2. Շարժական ցիստեռնի ցանկացած մաս, ներառյալ՝ կցամասերը, խցանիչները եւ խողովակաշարը, որը, որպես կանոն, կարող է շփման մեջ գտնվել փոխադրվող սառեցված-հեղուկացված գազի հետ, պետք է համատեղելի լինի նման սառեցված-հեղուկացված գազի հետ:
- 6.7.4.2.3. Պետք է խուսափել իրարից տարբերվող մետաղների շփումից, որը կարող է հանգեցնել գալվանական ազդեցությամբ առաջացող վնասների:
- 6.7.4.2.4. Ջերմամեկուսացման համակարգը պետք է ապահովի արդյունավետ մեկուսիչ նյութերով կորպուսի (կորպուսների) լիակատար ծածկումը: Արտաքին մեկուսացումը պետք է պաշտպանված լինի պատյանով այնպես, որ խոնավություն չներթափանցի եւ նորմալ փոխադրման պայմաններում այլ վնասվածքներ տեղի չունենան:
- 6.7.4.2.5. Եթե պատյանը գազի համար անթափանց է, ապա պետք է նախատեսել այնպիսի սարք, որը կկանխի մեկուսացման տարածքում վտանգավոր ճնշման առաջացումը:
- 6.7.4.2.6. Շարժական ցիստեռնները, որոնք նախատեսված են այն սառեցված-հեղուկացված գազերի փոխադրման համար, որոնց եռման աստիճանը մթնոլորտային ճնշման պայմաններում մինուս (-) 182 °C-ից ցածր է, չպետք է ընդգրկեն այնպիսի նյութեր, որոնք վտանգավոր ռեակցիայի մեջ են մտնում թթվածնի կամ թթվածնով հագեցված մթնոլորտներում՝ ջերմամեկուսացման այն հատվածում գտնվելու

դեպքում, որտեղ թթվածնի կամ թթվածնով հագեցած հեղուկների հետ շփվելու ռիսկ կա:

6.7.4.2.7. Մեկուսիչ նյութերը չպետք է շահագործման ընթացքում կորցնեն իրենց հատկանիշները:

6.7.4.2.8. Շարժական ցիստեռնում փոխադրման ենթակա յուրաքանչյուր սառեցված-հեղուկացված գազի համար պետք է սահմանվի պահման բազային ժամանակ:

6.7.4.2.8.1. Պահման թույլատրելի ժամանակը սահմանվում է իրավասու մարմնի կողմից հաստատված մեթոդով՝ հաշվի առնելով հետևյալը՝

ա) մեկուսացման համակարգի արդյունավետություն, որը սահմանվում է 6.7.4.2.8.2-ի համաձայն.

բ) ճնշման ամենացածր մակարդակը, որին հարմարեցված է ճնշումը սահմանափակող սարքը (սարքերը).

գ) լցավորման նախնական պայմանները.

դ) շրջակա միջավայրի ենթադրվող ջերմաստիճանը, որը պետք է լինի 30 °C-ին հավասար.

ե) սառեցված-հեղուկացված կոնկրետ գազերի ֆիզիկական հատկանիշները, որոնք նախատեսված են փոխադրման համար:

6.7.4.2.8.2. Մեկուսացման համակարգի արդյունավետությունը (ջերմության ներհոսքը՝ արտահայտված Վատով) սահմանվում է շարժական ցիստեռնի տիպային փորձարկման միջոցով՝ իրավասու մարմնի համար ընդունելի ընթացակարգի համաձայն: Այդ փորձարկման մաս են կազմում կամ՝

ա) կայուն ճնշափորձարկումը (օրինակ՝ մթնոլորտային ճնշման պայմաններում), որի ժամանակ սառեցված-հեղուկացված գազի կորուստը չափվում է որոշակի ժամանակահատվածում, կամ

բ) փակ համակարգի փորձարկումը, որի ժամանակ որոշակի ժամանակահատվածում չափվում է ճնշման բարձրացումը:

Կայուն ճնշափորձարկման ժամանակ հաշվի է առնվում մթնոլորտային ճնշման տատանումները: Երկու փորձարկման դեպքում էլ պետք է կատարվեն ուղղումներ մթնոլորտային ջերմաստիճանի ցանկացած փոփոխության դեպքում, եթե այդ ջերմաստիճանը տարբերվում է մթնոլորտային ջերմաստիճանի 30 °C բազային արժեքից:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** Յուրաքանչյուր ուղեորությունից առաջ պահման փաստացի ժամանակը սահմանելու համար տե՛ս 4.2.3.7:

- 6.7.4.2.9. Վակուումային մեկուսացման եւ կրկնակի պատեր ունեցող ցիստեռնի պատյանը պետք է ունենա կամ 100 կՊա-ից (1 բար) (մանոմետրական ճնշում) ոչ պակաս ցածր արտաքին հաշվարկային ճնշում, որը հաշվարկվում է ընդունելի տեխնիկական կանոններին համապատասխան կամ պետք է ունենա հաշվարկված կրիտիկական քայքայող ճնշում, որը չպետք է 200 կՊա-ից ավելի պակաս լինի (2 բար) (մանոմետրական ճնշում): Ներքին եւ արտաքին հզորացման սարքերը կարող են ներառվել, երբ հաշվարկվում է պատյանի՝ արտաքին ճնշմանը դիմակայելու ունակությունը:
- 6.7.4.2.10. Շարժական ցիստեռնները պետք է նախագծվեն եւ պատրաստվեն այնպիսի հենոցներով, որոնք փոխադրման ժամանակ կապահովեն անվտանգ հիմք: Դրանք նաեւ պետք է ունենան բարձրացման եւ ամրացման համապատասխան միջոցներ:
- 6.7.4.2.11. Շարժական ցիստեռնները պետք է նախագծվեն այնպես, որ դրանք առանց իրենց պարունակության կորստի կարողանան դիմակայել պարունակության պատճառով առաջացած ներքին ճնշմանը, ինչպես նաեւ նորմալ պայմաններում բեռնման/ բեռնաթափման եւ փոխադրման ժամանակ ստատիկ, դինամիկ եւ ջերմային բեռնվածությանը: Կառուցվածքի միջոցով պետք է ցույց տրվի, որ հաշվի են առնվել հոգնածության ազդեցությունները, որոնք առաջացել են շարժական ցիստեռնի շահագործման համար ակնկալվող ժամկետի ընթացքում բեռնվածությունների կրկնվող կիրառությունից:
- 6.7.4.2.12. Շարժական ցիստեռնները եւ դրանց ամրակման միջոցները պետք է կարողանան թույլատրելի առավելագույն բեռնվածության պայմաններում դիմանալ առանձին ազդեցության հետեւյալ ստատիկ ուժերի ներգործությանը՝
- ա) շարժման ուղղությամբ՝ ԱԹԱԲ-ի կրկնապատիկը բազմապատկած ազատ անկման արագացման արժեքով (g)<sup>1</sup>.
  - բ) շարժման ուղղությամբ՝ հորիզոնական դիրքով ուղիղ անկյան տակ՝ ԱԹԱԲ-ը (եթե շարժման ուղղությունը հստակ սահմանված չէ՝ ուժերը պետք է հավասար լինեն ԱԹԱԲ-ի արժեքի կրկնապատիկին) բազմապատկած ազատ անկման արագացման արժեքով (g)<sup>1</sup>.
  - գ) ուղղահայաց դիրքով՝ վարից վեր՝ ԱԹԱԲ-ը բազմապատկած ազատ անկման արագացման արժեքով (g)<sup>1</sup>, եւ
  - դ) ուղղահայաց դիրքով՝ վերից վար՝ ԱԹԱԲ-ի արժեքի կրկնապատիկը (ընդհանուր բեռնվածությունը, ներառյալ՝

<sup>1</sup> Հաշվարկման նպատակներով  $g = 9,81 \text{ մ/ս}^2$ :

ծանրության ուժի ազդեցությունը) բազմապատկած ազատ անկման արագացման արժեքով (g)<sup>1</sup>:

- 6.7.4.2.13. 6.7.4.2.12-ում նշված յուրաքանչյուր ուժի ներգործության դեպքում պետք է դիտարկվեն ամրության պաշարի հետեւյալ գործակիցները՝
- ա) հստակ սահմանված հոսունության սահման ունեցող նյութերի դեպքում՝ ամրության պաշարի 1,5 գործակիցը՝ հոսունության երաշխավորված սահմանի հարաբերությամբ, կամ
  - բ) հստակ սահմանված հոսունության սահման չունեցող նյութերի դեպքում՝ ամրության պաշարի 1,5 գործակիցը՝ հոսունության երաշխավորված 0,2 % պայմանական սահմանի հարաբերությամբ, իսկ աուստենիտային պողպատների դեպքում՝ 1% հոսունության պայմանական սահմանի հարաբերությամբ:
- 6.7.4.2.14. Հոսունության սահմանի կամ հոսունության պայմանական սահմանի արժեքները տվյալ նյութերի գծով ազգային կամ միջազգային ստանդարտների արժեքներն են: Երբ օգտագործվում են աուստենիտային պողպատներ, տվյալ նյութի գծով ստանդարտների համաձայն, նվազագույն սահմանված արժեքները կարող են մեծացվել մինչեւ 15%-ի չափով, եթե այդ առավել բարձր արժեքները նշված են նյութի ստուգման սերտիֆիկատում: Եթե տվյալ նյութի գծով գոյություն չունի ստանդարտ, կամ եթե օգտագործվել են ոչ մետաղական նյութեր, ապա հոսունության սահմանի արժեքը կամ հոսունության պայմանական սահմանի արժեքը պետք է հաստատվի իրավասու մարմնի կողմից:
- 6.7.4.2.15. Դյուրավառ չսառեցված-հեղուկացված գազերի փոխադրման համար նախատեսված շարժական ցիստեռնները պետք է հողակցման հնարավորություն ունենան:
- 6.7.4.3. Կառուցվածքի չափորոշիչները
- 6.7.4.3.1. Կորպուսները պետք է ունենան կլոր լայնական հատվածք:
- 6.7.4.3.2. Կորպուսները պետք է նախագծվեն եւ պատրաստվեն այնպես, որ դրանք դիմանան ԱԹԱՃ-ի 1,3-ապատիկից ոչ պակաս փորձարկման ճնշման: Վակուումային մեկուսացում ունեցող կորպուսների դեպքում փորձարկման ճնշումը չպետք է լինի ԱԹԱՃ-ի եւ 100 կՊԱ (1 բար) ճնշման գումարի 1,3-ապատիկից ցածր: Ցանկացած դեպքում փորձարկման ճնշումը չպետք է լինի 300 կՊա (3 բար) ճնշումից ցածր (մանոմետրական ճնշում): Պետք է ուշադրություն դարձնել կորպուսի պատերի նվազագույն հաստության մասին պահանջներին, որոնք սահմանված են 6.7.4.4.2 - 6.7.4.4.7-ում:
- 6.7.4.3.3. Հստակ սահմանված հոսունության սահման կամ երաշխավորված

հոսունության պայմանական սահման ունեցող մետաղների դեպքում (որպես կանոն՝ 0,2% պայմանական հոսունություն կամ աուստենիտային պողպատների դեպքում՝ 1% հոսունության պայմանական սահման) կորպուսում առաջնային մակերելուֆային լարվածությունը  $\sigma$  (սիգմա) փորձարկման ճնշման ժամանակ չպետք է գերազանցի 0,75 Re կամ 0,50 Rm՝ նայած թե որն է ավելի փոքր մեծություն, որտեղ՝

Re-ն հոսունության սահմանն է՝ արտահայտված  $\text{N}/\text{մմ}^2$ , կամ 0,2% հոսունության պայմանական սահմանն է, իսկ աուստենիտային պողպատների դեպքում՝ 1% պայմանական հոսունության սահմանն է.

Rm-ը ձգման նվազագույն ամրությունն է՝ արտահայտված  $\text{N}/\text{մմ}^2$ -ով:

- 6.7.4.3.3.1. Re եւ Rm արժեքների կիրառության համար սահմանվում են նվազագույն արժեքներ՝ այդ նյութերի գծով ազգային կամ միջազգային ստանդարտների համաձայն: Երբ օգտագործվում են աուստենիտային պողպատներ, տվյալ նյութի համար ստանդարտների համաձայն Re եւ Rm նվազագույն սահմանված արժեքները կարող են մեծացվել մինչեւ 15%-ի չափով, եթե այդ առավել բարձր արժեքները նշված են նյութի ստուգման սերտիֆիկատում: Եթե տվյալ նյութի համար ստանդարտ գոյություն չունի, ապա Re եւ Rm արժեքները պետք է հաստատվեն իրավասու մարմնի կամ նրա լիազոր անձի կողմից:
- 6.7.4.3.3.2. Արգելվում է օգտագործել 0,85-ից բարձր Re/Rm հարաբերություն ունեցող պողպատներ՝ կորպուսներ պատրաստելու համար: Այս հարաբերությունը սահմանելու համար օգտագործվող Re եւ Rm արժեքներն այն արժեքներն են, որոնք սահմանվում են նյութի ստուգման սերտիֆիկատում:
- 6.7.4.3.3.3. Կորպուսների պատրաստման համար օգտագործվող պողպատների խզման դեպքում երկարացման արժեքը (արտահայտված տոկոսով) չպետք է լինի 10 000/Rm-ից պակաս՝ 16% մանրահատիկ պողպատի դեպքում եւ 20%՝ այլ պողպատների դեպքում՝ բացարձակ նվազագույնի պայմաններում: Կորպուսների պատրաստման համար օգտագործվող այլումինի եւ այլումինի համաձուլվածքների խզման դեպքում երկարացման արժեքը (արտահայտված տոկոսով) չպետք է լինի 10 000/6Rm-ից պակաս՝ 12% բացարձակ նվազագույն արժեքի դեպքում:
- 6.7.4.3.3.4. Նյութերի իրական արժեքները սահմանելու նպատակով պետք է նշել, որ բարակ թիթեղյա մետաղի դեպքում փորձարկման ձգվող նմուշների առանցքները պետք է գլոցման ուղղությամբ լինեն ուղիղ անկյան տակ (լայնակի): Խզման դեպքում երկարացումը չափվում է ուղղանկյուն լայնական հատվածք ունեցող փորձարկման նմուշների



վրա, որոնք համապատասխանում են ISO 6892:1988 ստանդարտին 50 մմ հաշվարկային երկարության դեպքում:

- 6.7.4.4. Կորպուսի պատերի նվազագույն հաստությունը
- 6.7.4.4.1. Կորպուսի պատերի նվազագույն հաստությունը պետք է ունենա հետևյալ արժեքներից ամենամեծին հավասար արժեք՝
- ա) 6.7.4.4.2 - 6.7.4.4.7-ի պահանջների համաձայն սահմանված նվազագույն հաստություն, կամ
  - բ) 6.7.4.3-ի պահանջները ներառող՝ բարձր ճնշումային անոթների վերաբերյալ կանոնների համաձայն նվազագույն հաստություն:
- 6.7.4.4.2. 1,80 մ-ից ոչ ավելի տրամագծով կորպուսների պատերի հաստությունը չպետք է 5 մմ-ից պակաս լինի ստանդարտ պողպատի կամ կիրառվելիք մետաղի դեպքում: 1,80 մ-ից ավելի տրամագծով կորպուսների պատերի հաստությունը չպետք է 6 մմ-ից պակաս լինի ստանդարտ պողպատի կամ կիրառվելիք մետաղի դեպքում:
- 6.7.4.4.3. Վակուումային մեկուսացում ունեցող ցիստեռնների՝ 1,80 մ-ից ոչ ավելի տրամագծով կորպուսի պատերի հաստությունը չպետք է 3 մմ-ից պակաս լինի ստանդարտ պողպատի կամ կիրառվելիք մետաղի դեպքում: 1,80 մ-ից ավելի տրամագծով նման կորպուսների պատերի հաստությունը չպետք է 4 մմ-ից պակաս լինի ստանդարտ պողպատի կամ կիրառվելիք մետաղի դեպքում:
- 6.7.4.4.4. Վակուումային մեկուսացում ունեցող ցիստեռնների դեպքում պատյանի եւ կորպուսի ընդհանուր հաստությունը պետք է համապատասխանի 6.7.4.4.2-ում սահմանված նվազագույն հաստությանը, որից կորպուսի հաստությունը միայն չպետք է 6.7.4.4.3-ում սահմանված նվազագույն հաստությունից պակաս լինի:
- 6.7.4.4.5. Կորպուսի պատերի հաստությունը չպետք է 3 մմ-ից պակաս լինի՝ անկախ օգտագործված մետաղի տեսակից:
- 6.7.4.4.6. 6.7.4.4.2 եւ 6.7.4.4.3-ում ստանդարտ պողպատի համար սահմանված հաստությունից բացի այլ մետաղների համարժեք հաստությունը հաշվարկվում է հետևյալ բանաձևի միջոցով՝

$$e_1 = \frac{21,4e_0}{\sqrt[3]{Rm_1 \times A_1}}$$

որտեղ՝

$e_1$ -ը օգտագործվող մետաղի պահանջվող համարժեք հաստությունն է (մմ-ով)

$e_0$ -ն ստանդարտ պողպատի նվազագույն հաստությունն է (մմ-ով), ինչպես սահմանված է 6.7.4.4.2 եւ 6.7.4.4.3-ում.

Rm1-ը օգտագործվող մետաղի երաշխավորված ձգման նվազագույն ամրության սահմանն է (Ն/մմ<sup>2</sup>) (տե՛ս 6.7.4.3.3).

A1-ը օգտագործվող պողպատի խզման դեպքում երաշխավորված նվազագույն երկարացումն է (%-ով)՝ ազգային կամ միջազգային ստանդարտների համաձայն:

6.7.4.4.7. Ցանկացած դեպքում պատի հաստությունը չպետք է լինի 6.7.4.4.1 - 6.7.4.4.5-ում սահմանված հաստությունից պակաս: Կորպուսի բոլոր մասերը պետք է նվազագույնն ունենան 6.7.4.4.1 - 6.7.4.4.6-ում սահմանված հաստությունը: Այդ հաստության մեջ հաշվի չի առնվում կոռոզիան:

6.7.4.4.8. Կորպուսի ծայրերի (գլխիկների) եւ գլանաձեւ հատվածի միացման մասում թիթեղների հաստության կտրուկ փոփոխություն չի թույլատրվում:

6.7.4.5. Օժանդակ սարքավորումը

6.7.4.5.1. Բոլոր օժանդակ սարքավորումները պետք է այնպես տեղադրվեն, որ դրանք պաշտպանված լինեն բեռնման/բեռնաթափման կամ փոխադրման ընթացքում պոկվելու կամ վնասվելու ռիսկից: Եթե հիմնակմախքի եւ կորպուսի միջեւ միացումն այնպիսին է, որ ենթամասերի միջեւ հնարավոր է որոշակի շարժում տեղի ունենա, ապա սարքը պետք է ամրացված լինի այնպես, որ նման շարժումը չվնասի աշխատող մասերը: Դատարկման արտաքին կցամասերը (միացման կցորդիչները, փակիչ սարքերը), կասեցման կափույրները եւ դրա թամբը պետք է պաշտպանված լինեն արտաքին ուժերի ազդեցության տակ պոկվելու վտանգից (օրինակ՝ տեղաշարժիչ հատվածների կիրառության միջոցով): Պետք է հնարավոր լինի լցավորման եւ դատարկման սարքերը (այդ թվում՝ կցաշուրթերը եւ պարուրակավոր խցափակիչները) եւ ցանկացած ապահովիչ թասակ պաշտպանել պատահական բացվելուց:

6.7.4.5.2. Դյուրավառ սառեցված-հեղուկացված գազերի փոխադրման համար օգտագործվող շարժական ցիստեռնում լցավորման եւ դատարկման համար նախատեսված յուրաքանչյուր բացվածք պետք է ապահովված լինի առնվազն երեք իրարից անկախ փակիչ սարքերով, որոնցից առաջինը պետք է լինի կասեցման կափույր, որը պետք է հնարավորինս մոտ տեղադրված լինի պատյանին, երկրորդը՝ պարզապես կասեցման կափույր, իսկ երրորդը՝ անշարժ կցաշուրթ կամ նմանատիպ սարք: Պատյանին ամենամոտ գտնվող փակիչ սարքերը պետք է լինեն արագ փակվող սարքեր, որոնք

մեխանիկորեն փակվում են շարժական ցիստեռնի պատահական շարժման դեպքում, որը կարող է տեղի ունենալ լցավորման կամ դատարկման կամ հրդեհի դեպքում: Այս սարքը պետք է հեռահար կառավարման հնարավորություն ունենա:

- 6.7.4.5.3. Դյուրավառ սառեցված-հեղուկացված գազերի փոխադրման համար օգտագործվող շարժական ցիստեռնում լցավորման եւ դատարկման համար նախատեսված յուրաքանչյուր բացվածք պետք է ապահովված լինի առնվազն երկու իրարից անկախ փակիչ սարքերով, որոնցից առաջինը պետք է լինի կասեցման կափույր, որը պետք է հնարավորինս մոտ տեղադրված լինի պատյանին, իսկ երկրորդը՝ անշարժ կցաշուրթ կամ նմանատիպ սարք:
- 6.7.4.5.4. Խողովակաշարերի այն հատվածների համար, որոնք կարող են փակվել երկու կողմից, եւ որտեղ հեղուկ նյութի հոսքը կարող է կանխվել, պետք է գործի ճնշման ավտոմատ նվազեցման մեթոդ՝ խողովակաշարում հավելյալ ճնշման կուտակումը կանխելու նպատակով:
- 6.7.4.5.5. Վակուումային մեկուսացում ունեցող ցիստեռնների համար զննման բացվածք չի պահանջվում:
- 6.7.4.5.6. Արտաքին կցամասերը պետք է հնարավորինս խմբավորված լինեն հարմարավետության նկատառումներով:
- 6.7.4.5.7. Շարժական ցիստեռնի յուրաքանչյուր կցախողովակ պետք է հստակորեն մակնշված լինի՝ դրա գործառույթը նշելու համար:
- 6.7.4.5.8. Յուրաքանչյուր կասեցման կափույր կամ փակելու այլ հարմարանք պետք է նախագծված եւ պատրաստված լինի կորպուսի ԱԹԱՃ-ի համար նախատեսված նոմինալ ճնշումից ոչ պակաս ճնշման համար՝ հաշվի առնելով փոխադրման ընթացքում ակնկալվող ջերմաստիճանը: Բոլոր կասեցման կափույրները, որոնք ունեն պտուտակավոր իլեր, պետք է փակվեն ժամացույցի ուղղությամբ պտտեցնելով: Այլ կասեցման կափույրների դեպքում, փակման դիրքը (բաց ու փակ) եւ փակման ուղղությունը պետք է հստակորեն նշված լինեն: Բոլոր կասեցման կափույրները պետք է նախագծված լինեն այնպես, որ հնարավոր լինի կանխել դրանց պատահական բացվելը:
- 6.7.4.5.9. Եթե օգտագործվում են ճնշումը բարձրացնող սարքեր, դեպի այդ սարք հեղուկ եւ գոլորշի մատակարարող միացումները պետք է ունենան կափույր, որը պետք է տեղադրված լինի պատյանին հնարավորինս մոտ՝ կանխելու համար պարունակության կորուստն այն դեպքերում, երբ ճնշման բարձրացման սարքերում առաջանում է վնասվածք:
- 6.7.4.5.10. Խողովակները պետք է նախագծված, պատրաստված եւ

տեղադրված լինեն այնպես, որ հնարավոր լինի խուսափել ջերմային ընդլայնման եւ սեղմման, մեխանիկական ցնցման եւ վիբրացիայի հետեւանքով վնաս ստանալու ռիսկից: Խողովակները պետք է պատրաստված լինեն համապատասխան նյութից: Հրդեհի հետեւանքով արտահոսքից խուսափելու համար անհրաժեշտ է պատյանի եւ միացումների միջեւ օգտագործել միայն պողպատից խողովակներ եւ զողված հանգույցներ, որոնք միացած են արտաթողման բացվածքի առաջին փականին: Փականը միացման տեղին ամրացնելու եղանակը պետք է բավարարի իրավասու մարմնի կամ նրա կողմից լիազորված անձի պահանջները: Խողովակների հանգույցներն անհրաժեշտության դեպքում պետք է զողվեն:

- 6.7.4.5.11. Պղնձից խողովակների հանգույցները պետք է զողվեն կամ ունենան համարժեքորեն ամուր մետաղական միացում: Զողված նյութերի հալման ջերմաստիճանը պետք է 525 °C-ից ցածր չլինի: Հանգույցները չպետք է նվազեցնեն խողովակների ամրությունը, օրինակ՝ պարուրակները կտրելիս:
- 6.7.4.5.12. Կափույրների եւ օժանդակ սարքերի պատրաստման նյութերը պետք է պահպանեն իրենց հատկությունները շարժական ցիստեռնի ամենացածր աշխատանքային ջերմաստիճանում:
- 6.7.4.5.13. Բոլոր խողովակաշարերի եւ դրանց կցամասերի պայթման ճնշումը չպետք է պակաս լինի հետեւյալ արժեքներից ամենաբարձրից, այն է՝ հենամարմնի ԱԹԱՃ-ի ճնշման արժեքի քառապատիկից կամ պոմպի եւ կամ մեկ այլ սարքի (բացառությամբ՝ ճնշումը նվազեցնող սարքերի) շահագործման հետեւանքով առաջացած ճնշման արժեքի քառապատիկից:
- 6.7.4.6. Ծնշումը նվազեցնող սարքերը
  - 6.7.4.6.1. Շարժական ցիստեռնները պետք է ճնշումը նվազեցնող առնվազն երկու առանձին զսպանակավոր սարք ունենան: Ծնշումը նվազեցնող սարքն ինքնաբերաբար պետք է բացվի առավելագույն թույլատրելի աշխատանքային ճնշման արժեքից (ԱԹԱՃ) ոչ պակաս արժեքով ճնշման տակ եւ պետք է ամբողջապես բացված լինի ԱԹԱՃ-ի 110%-ին հավասար ճնշման տակ: Այդ սարքերը դատարկվելուց հետո պետք է փակվեն դատարկման սկզբում արձանագրված ճնշման 10%-ից ոչ ցածր ճնշման տակ եւ պետք է փակ մնան ավելի ցածր ճնշումների դեպքում: Ծնշումը նվազեցնող սարքերը պետք է այնպիսի տեսակի լինեն, որ դիմակայեն դինամիկ ուժերին, այդ թվում՝ հեղուկի ալիքի հարվածին:
  - 6.7.4.6.2. Ոչ դյուրավառ սառեցված-հեղուկացված գազեր եւ ջրածին տեղափոխող կորպուսները կարող են նաեւ ունենալ պատռվող

մեմբրաններ, որոնք պետք է գործեն 6.7.4.7.2 եւ 6.7.4.7.3-ում նշված զսպանակավոր սարքերի հետ զուգահեռ:

- 6.7.4.6.3. Ճնշումը նվազեցնող սարքերը պետք է այնպես նախագծվեն, որպեսզի կանխվի անցանկալի նյութերի ներթափանցումը, գազի արտահոսքը եւ ցանկացած հավելյալ վտանգավոր ճնշման առաջացում:
- 6.7.4.6.4. Ճնշումը նվազեցնող սարքերը պետք է հաստատվեն իրավասու մարմնի կամ նրա կողմից լիազորված այլ մարմնի կողմից:
- 6.7.4.7. Ճնշումը նվազեցնող սարքերի թողունակությունը եւ կարգավորումը
- 6.7.4.7.1. Վակուումով մեկուսացված փակ կրիոգեն տարայում վակուումի կորստի կամ պինդ նյութերով մեկուսացված տարայի մեկուսացման 20%-ի կորստի դեպքում տեղադրված ճնշումը նվազեցնող բոլոր սարքերի համակցված թողունակությունը պետք է բավարար լինի, որպեսզի կորպուսի ներսում ճնշումը (ներառյալ՝ կուտակումը) չգերազանցի ԱԹԱՃ-ի 120%-ը:
- 6.7.4.7.2. Ոչ դյուրավառ սառեցված-հեղուկացված գազերի (բացառությամբ թթվածնի) եւ ջրածնի դեպքում այս թողունակությունը կարելի է ապահովել պահանջվող ապահովիչ-բեռնաթափիչ սարքերին զուգահեռ՝ օգտագործելով նաեւ պատռվող թաղանթներ: Պատռվող թաղանթները պետք է պատռվեն կորպուսի փորձարկման ճնշմանը հավասար նոմինալ ճնշման տակ:
- 6.7.4.7.3. 6.7.4.7.1-ում եւ 6.7.4.7.2-ում նկարագրված հանգամանքներում տեղադրված ճնշումը նվազեցնող բոլոր սարքերի համակցված թողունակությունը հրդեհի ամբողջական բռնկման պայմաններում պետք է բավականաչափ լինի, որպեսզի ճնշումը կորպուսում չգերազանցի փորձարկման ճնշումը:
- 6.7.4.7.4. Ճնշումը նվազեցնող սարքերի պահանջվող թողունակությունը պետք է հաշվարկվի համաձայն սահմանված այն տեխնիկական կանոնների, որոնք ընդունվում են իրավասու մարմնի կողմից<sup>7</sup>
- 6.7.4.8. Ճնշումը նվազեցնող սարքերի մակնշումը
- 6.7.4.8.1. Յուրաքանչյուր ճնշումը նվազեցնող սարքի վրա պետք է հստակորեն եւ մշտապես մակնշվեն հետեւյալ մանրամասն տվյալները՝
- ա) այն ճնշումը (արտահայտված բարերով կամ կՊա-ով), որի տակ սարքից արձակվում է գազը.
  - բ) զսպանակավոր սարքերի համար թույլատրելի շեղումն

<sup>7</sup> Տե՛ս, օրինակ, ՍԳԱ S-1.2-2003 «Ճնշումը նվազեցնող սարքի սրանդարտներ- մաս 2 -սեղմված գազերի համար նախատեսված բեռնադար եւ շարժական ցիստերններ»:

արտամղման ճնշումից.

- գ) պատռվող թաղանթների նոմինալ ճնշմանը համապատասխանող սկզբնական ջերմաստիճանը.
- դ) սարքի հաշվարկային թողունակությունը՝ արտահայտված մեկ վայրկյանում օդի ստանդարտ խորանարդ մետրերով ( $\text{մ}^3/\text{վ}$ ). Եւ
- ե) ճնշումը նվազեցնող զսպանակավոր սարքի հոսքի լայնական հատման տարածքները եւ պատռվող մեմբրանները՝  $\text{մ}^2$ -ով:  
Եթե հնարավոր է, անհրաժեշտ է ցույց տալ նաեւ հետեւյալ տեղեկությունները՝
- զ) արտադրողի անունը եւ սարքի համապատասխան համարը կատալոգում:

6.7.4.8.2. Ճնշումը նվազեցնող սարքերի վրա նշվող հաշվարկային թողունակությունը որոշվում է ISO 4126-1:2004 եւ ISO 4126-7:2004 ստանդարտի համաձայն:

6.7.4.9. Ճնշումը նվազեցնող սարքերի միացումները

6.7.4.9.1. Ճնշումը նվազեցնող սարքերի միացումները պետք է հուսալի չափի լինեն՝ ապահովելու համար գազի անխափան հոսքն ապահովիչ սարք: Կասեցնող կափույրները չպետք է տեղադրվեն կորպուսի եւ ճնշումը նվազեցնող սարքերի միջեւ, բացառությամբ այն դեպքերի, երբ տեխնիկական սպասարկման կամ այլ նպատակներով կրկնօրինակ սարքեր են տեղադրվում, իսկ կասեցնող կափույրները, որոնք ծառայում են փաստացի օգտագործվող սարքերին, ամրացված են բաց դիրքում, կամ այս կասեցնող կափույրները փոխադարձ կողպված են այնպես, որ 6.7.4.7-ի պահանջները մշտապես իրականացվում են: Ներթողման խողովակ կամ ճնշումը նվազեցնող սարք տանող բացվածքում չպետք է լինի այնպիսի խցանում, որը կարող է արգելափակել կամ կրճատել հոսքը կորպուսից դեպի այդ սարք: Այն դեպքում, երբ օգտագործվում են ճնշումը նվազեցնող սարքերից գոլորշու կամ հեղուկի հեռացման համար նախատեսված խողովակաշարերը, ապա դրանցից գոլորշին կամ հեղուկը պետք է օդ արտամղվի նման սարքերի համար նվազագույն հակաճնշման պայմաններում:

6.7.4.10. Ճնշումը նվազեցնող սարքերի տեղակայվածությունը

6.7.4.10.1. Յուրաքանչյուր ճնշումը նվազեցնող սարքի ներթողման բացվածք պետք է տեղադրված լինի կորպուսի վերելի հատվածում այն դիրքով, որ գործնականում հնարավորինս մոտ լինի կորպուսի երկայնական եւ լայնական կենտրոնին: Ճնշումը նվազեցնող սարքի ներթողման բոլոր բացվածքներն առավելագույն լցավորման պայմաններում

պետք է տեղադրված լինեն կորպուսի՝ գոլորշի պարունակող տարածությունում, իսկ սարքերը պետք է այնպես տեղադրված լինեն, որ ապահովվի արձակվող գոլորշու անարգել արտահոսքը: Սառեցված-հեղուկացված գազերի դեպքում արձակվող գոլորշին պետք է կորպուսից այնպես հեռացվի, որ այն չկարողանա ազդել ցիստեռնի վրա: Պաշտպանիչ այն սարքերը, որոնք փոխում են գոլորշու հոսքի ուղղությունը, թույլատրվում են՝ պայմանով, որ սարքերի պահանջվող թողունակությունը չի նվազում:

6.7.4.10.2. Միջոցներ են ձեռնարկվում՝ ոչ իրավասու անձանց տվյալ սարքերից հեռու պահելու եւ շարժական ցիստեռնը շրջվելու դեպքում սարքերը վնասվելուց պաշտպանելու նպատակով:

6.7.4.11. Չափիչ-ստուգիչ սարքերը

6.7.4.11.1. Բացառությամբ այն դեպքերի, երբ շարժական ցիստեռնը նախատեսված է ըստ զանգվածի լցավորվելու համար, այն պետք է սարքավորված լինի մեկ կամ մի քանի չափիչ-ստուգիչ սարքերով: Ապակուց մակարդաչափերը եւ այլ փխրուն նյութից պատրաստված չափիչ-ստուգիչ սարքերը, որոնք անմիջականորեն շփվում են կորպուսի պարունակության հետ, չպետք է օգտագործվեն:

6.7.4.11.2. Վակուումով մեկուսացված շարժական ցիստեռնի շափիկի մեջ պետք է տեղադրվի խողովակառոտ՝ վակուումային մակարդաչափի համար:

6.7.4.12. Շարժական ցիստեռնի հենարանները, կարկասները, ամբարձիչ եւ ամրակման հարմարանքները

6.7.4.12.1. Շարժական ցիստեռնները պետք է նախագծվեն եւ կառուցվեն հենարանային կոնստրուկցիայով, որն ապահով հիմք է փոխադրման ընթացքում: Կառուցվածքի այս առումով հաշվի են առնվում 6.7.4.2.12-ում նշված բեռնվածքները եւ 6.7.4.2.13-ում նշված ամրության պաշարի գործակիցը: Թույլատրվում է օգտագործել սահաճողեր, կարկասներ, հենոցներ կամ նմանատիպ այլ կառուցվածքներ:

6.7.4.12.2. Շարժական ցիստեռնի ամրանների (օրինակ՝ հենոցներ, կարկասներ եւ այլն) եւ դրա ամբարձիչ ու ամրակման հարմարանքների կողմից առաջացող համակցված լարումները չպետք է ցիստեռնի որեւէ հատվածում չափազանց ուժեղ լարում առաջացնեն: Շարժական բոլոր ցիստեռններին պետք է ամրացված լինեն մշտական ամբարձիչ եւ ամրակման հարմարանքներ: Նախընտրելի է դրանք ամրացնել շարժական ցիստեռնի հենարանների վրա, բայց դրանք կարող են նաեւ ամրացվել կորպուսն ուժեղացնող տարրերին, որոնք տեղակայված են ցիստեռնի հենարանային հատվածներում:

6.7.4.12.3. Հենարանները եւ կարկասները նախագծելիս անհրաժեշտ է հաշվի

առնել շրջակա միջավայրի կոռոզիոն ազդեցությունը:

6.7.4.12.4. Ավտոբեռնիչի ճանկավոր բռնիչների համար նախատեսված որմնաբացվածքները պետք է հնարավոր լինի փակել: Ավտոբեռնիչի ճանկավոր բռնիչների համար նախատեսված որմնաբացվածքները փակելու համար նախատեսված միջոցները պետք է կազմեն կարկասի անբաժանելի մասը կամ ամուր ամրացված լինեն դրան: Մեկ հատվածամաս ունեցող շարժական ցիստեռնները, որոնց երկարությունը 3,65 մետրից պակաս չէ, կարող են չունենալ ավտոբեռնիչի ճանկավոր բռնիչների համար նախատեսված փակվող որմնաբացվածքներ՝ պայմանով, որ՝

ա) ցիստեռնը եւ բոլոր կցամասերը լավ պաշտպանված են ճանկավոր բռնիչների հարվածներից, եւ

բ) ավտոբեռնիչի ճանկավոր բռնիչների համար նախատեսված որմնաբացվածքների կենտրոնների միջեւ հեռավորությունը պետք է առնվազն հավասար լինի շարժական ցիստեռնի առավելագույն երկարության կեսին:

6.7.4.12.5. Այն դեպքում, երբ շարժական ցիստեռնները պաշտպանված չեն փոխադրման ընթացքում, 4.2.3.3-ի համաձայն, կորպուսները եւ օժանդակ սարքավորումները պետք է պաշտպանված լինեն կողային կամ երկայնական հարվածների կամ շրջվելու հետեւանքով առաջացած վնասվածքներից: Արտաքին կցամասերը պետք է այնպես պաշտպանված լինեն, որ շարժական ցիստեռնի հարվածի կամ շրջվելու դեպքում կորպուսի պարունակությունը չլցվի դրա կցամասերի վրա: Նմանատիպ պաշտպանության օրինակներ են՝

ա) կողային հարվածից պաշտպանությունը, որը բաղկացած է կորպուսի երկու կողմը միջին գծի մակարդակով պաշտպանող երկայնական ձողերից.

բ) շարժական ցիստեռնի պաշտպանությունը շրջվելուց, որը կարող է բաղկացած լինել շրջանակի երկայնքով ամրացված ամրանային օղագոտիներից կամ ձողերից.

գ) պաշտպանությունը հետեւի հարվածից, որը կարող է ապահովվել թափարգելի կամ շրջանակի միջոցով.

դ) հարվածի կամ շրջվելու դեպքում կորպուսի պաշտպանությունը վնասվելուց՝ ISO 1496-3:1995 ստանդարտին համապատասխանող ISO շրջանակն օգտագործելու միջոցով.

ե) շարժական ցիստեռնի պաշտպանությունը հարվածից կամ շրջվելուց վակուումով մեկուսացնող շապիկի միջոցով:

6.7.4.13. Կառուցվածքի տեսակի հաստատումը



6.7.4.13.1. Իրավասու մարմինը կամ նրա կողմից լիազորված մարմինը շարժական ցիստեռնի ցանկացած նոր կառուցվածքի տեսակի համար տվյալ տեսակի հաստատման սերտիֆիկատ է տալիս: Այդ սերտիֆիկատով հաստատվում է, որ շարժական ցիստեռնը հետազոտվել է տվյալ մարմնի կողմից, հարմար է նախատեսված նպատակով օգտագործվելու համար եւ համապատասխանում է սույն գլխի պահանջներին: Այն դեպքում, երբ արտադրվում են մի շարք շարժական ցիստեռններ առանց կառուցվածքի փոփոխության, սերտիֆիկատը գործում է ամբողջ շարքի համար: Սերտիֆիկատում նշվում են նախատիպի փորձարկման արդյունքները, սառեցված-հեղուկացված այն գազերը, որոնք թույլատրվում են փոխադրման համար, կորպուսի եւ շապիկի կառուցման համար օգտագործված նյութերը եւ հաստատման համարը: Հաստատման համարը բաղկացած է այն երկրի տարբերակիչ պայմանանշանից կամ մականշվածքից, որի տարածքում տրվել է հաստատումը՝ նշված միջազգային ճանապարհային փոխադրման համար օգտագործվող տարբերակիչ նշանով<sup>2</sup>, ինչպես նաեւ գրանցման համարից: Ցանկացած լրացուցիչ պայման՝ 6.7.1.2-ի համաձայն, նույնպես նշվում է սերտիֆիկատում: Կառուցվածքի տեսակի հաստատումը կարող է հիմք լինել նմանատիպ եւ նույն հաստությունն ունեցող նյութից, նույն տեխնիկական ընթացակարգով պատրաստված եւ նույնպիսի հենարաններ, համարժեք փականներ եւ այլ պարագաներ ունեցող ավելի փոքր շարժական ցիստեռնների հաստատման համար:

6.7.4.13.2. Կառուցվածքի տեսակի հաստատման համար նախատիպի փորձարկման արդյունքները ներառում են առնվազն հետեւյալ տեղեկությունները՝

ա) ISO 1496-3:1995-ում նշված կարկասի համապատասխան փորձարկման արդյունքները.

բ) 6.7.4.14.3-ում նշված նախնական ստուգման ու փորձարկման արդյունքները, եւ

գ) հարկ եղած դեպքում նաեւ 6.7.4.14.1-ում նշված հարվածի փորձարկման արդյունքները:

6.7.4.14. Ստուգումը եւ փորձարկումը

6.7.4.14.1. 1972 թվականի «Անվտանգ կոնտեյներների վերաբերյալ միջազգային

---

<sup>2</sup> Միջազգային երթուղեկության մեջ գտնվող փոխադրամիջոցների եւ դրանց կցորդների՝ գրանցման պեղության տարբերանշաններ, օրինակ՝ 1949 թվականի «Ճանապարհային երթուղեկության մասին» Ժնեւի կոնվենցիային կամ 1968 թվականի «Ճանապարհային երթուղեկության մասին» Վիեննայի կոնվենցիային համապատասխան:

կոնվենցիայում» (ԱԿԿ) ընդգրկված կոնտեյնների սահմանմանը համապատասխանող շարժական ցիստեռնները վերջինս փոփոխվելու դեպքում չպետք է օգտագործվեն՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դրանց յուրաքանչյուր կառուցվածքի նախատիպը, դինամիկ, երկայնական հարվածի փորձարկում անցնելով, որը նշված է «Փորձարկումների եւ չափորոշիչների ձեռնարկ»-ի IV մասի 41-րդ բաժնում, օգտագործման համար պիտանի են համարվել:

6.7.4.14.2. Ցիստեռնը եւ յուրաքանչյուր շարժական ցիստեռնի սարքավորման տարր պետք է ստուգվեն եւ փորձարկվեն առաջին անգամ շահագործվելուց առաջ (նախնական ստուգում եւ փորձարկում), իսկ հետագայում ոչ ավելի, քան յուրաքանչյուր հինգ տարին մեկ անգամ (յուրաքանչյուր 5 տարին մեկ անգամ պարբերական ստուգում եւ փորձարկում), ինչպես նաեւ պետք է անցնեն պարբերական միջանկյալ ստուգում եւ փորձարկում յուրաքանչյուր 5 տարին մեկ անգամ պարբերական ստուգումների եւ փորձարկումների միջեւ ընկած ժամանակահատվածում (յուրաքանչյուր երկուսուկես տարին մեկ անգամ պարբերական ստուգում եւ փորձարկում): Յուրաքանչյուր երկուսուկես տարին մեկ անգամ պարբերական ստուգումը եւ փորձարկումը կարող են իրականացվել նշանակված օրվանից հետո 3 ամսվա ընթացքում: Անկախ վերջին պարբերական ստուգումից ու փորձարկումից՝ անհրաժեշտության դեպքում կարող է իրականացվել արտահերթ ստուգում եւ փորձարկում՝ 6.7.4.14.7-ի համաձայն:

6.7.4.14.3. Շարժական ցիստեռնի նախնական ստուգումն ու փորձարկումը ներառում են կառուցվածքի առանձնահատկությունների ստուգումը, շարժական ցիստեռնի կորպուսի եւ դրա կցամասերի ներքին ու արտաքին զննումը՝ պատշաճ կերպով հաշվի առնելով փոխադրվող սառեցված-հեղուկացված գազերը, ինչպես նաեւ ճնշման տակ փորձարկումը՝ 6.7.4.3.2-ի համաձայն փորձարկման ճնշումների կիրառմամբ: Իրավասու մարմնի կամ իրավասու մարմնի կողմից լիազորված մարմնի համաձայնությամբ ճնշման տակ փորձարկումը կարող է լինել հիդրավլիկ փորձարկում կամ փորձարկում այլ հեղուկի կամ գազի կիրառմամբ: Նախքան շարժական ցիստեռնի շահագործումն իրականացվում է բոլոր օժանդակ սարքավորումների անջրանցիկության փորձարկում եւ գոհացուցիչ աշխատունակության ստուգում: Այն դեպքում, երբ կորպուսը եւ դրա կցամասերն առանձին են անցնում ճնշման փորձարկումը, ապա դրանք հավաքելուց հետո պետք է նաեւ միասին անջրանցիկության փորձարկում անցնեն: Ամբողջական դիմադրողականության փորձարկման ենթարկվող բոլոր եռակցման կարանները պետք է ստուգվեն ճառագայթագրային, ուլտրաձայնային կամ այլ հարմար ոչ քայքայիչ փորձարկման մեթոդով: Այս դրույթը չի կիրառվում շապիկի նկատմամբ:

- 6.7.4.14.4. 5 եւ երկուսուկես տարին մեկ անգամ պարբերական ստուգումները եւ փորձարկումները ներառում են շարժական ցիստեռնի եւ դրա կցամասերի արտաքին զննում՝ պատշաճ կերպով հաշվի առնելով փոխադրվող սառեցված-հեղուկացված գազերը, ինչպես նաեւ անջրանցիկության փորձարկում, բոլոր օժանդակ սարքավորումների գոհացուցիչ աշխատանքի ստուգում եւ վակուումաչափի տվյալների գրանցում, եթե վերջինս առկա է: Առանց վակուումի մեկուսացվող տարաների դեպքում շապիկը եւ մեկուսացնող նյութը հեռացվում են երկուսուկես եւ 5 տարին մեկ պարբերական ստուգումների եւ փորձարկումների ժամանակ, բայց միայն այն դեպքում, երբ վստահելի գնահատական ստանալու համար դա անհրաժեշտ է:
- 6.7.4.14.5. (Հանվել է)
- 6.7.4.14.6. Շարժական ցիստեռնը չպետք է լցվի եւ փոխադրման հանձնվի վերջին 5 կամ երկուսուկես տարին մեկ պարբերական ստուգման կամ փորձարկման ժամկետը լրանալուց հետո՝ 6.7.4.14.2-ի պահանջի համաձայն: Այնուամենայնիվ, վերջին պարբերական ստուգման կամ փորձարկման ժամկետը լրանալուց առաջ լցավորված շարժական ցիստեռնը կարող է փոխադրվել տվյալ վերջին պարբերական ստուգման կամ փորձարկման ժամկետը լրանալուց հետո՝ առավելագույնը երեք ամսվա ընթացքում: Բացի այդ, շարժական ցիստեռնը կարող է փոխադրվել վերջին պարբերական փորձարկման եւ ստուգման ժամկետը լրանալուց հետո՝
- ա) դատարկումից հետո, բայց նախքան մաքրումը՝ վերալցավորումից առաջ հաջորդ պահանջվող փորձարկումը կամ ստուգումն իրականացնելու նպատակով, եւ
  - բ) եթե իրավասու մարմնի կողմից այլ կերպ սահմանված չէ, վերջին պարբերական փորձարկման կամ ստուգման ժամկետի լրանալուց հետո վեց ամսվա ընթացքում՝ վտանգավոր բեռները ոչնչացման կամ վերամշակման նպատակով վերադարձնելու համար: Սույն բացառությանը հղումը պետք է կատարվի փոխադրման փաստաթղթի մեջ:
- 6.7.4.14.7. Արտահերթ ստուգում եւ փորձարկում անհրաժեշտ է, երբ շարժական ցիստեռնը վնասված կամ քայքայված հատվածներ, արտահոսք կամ այլ թերություններ ունի, որոնք կարող են ազդել ցիստեռնի կառուցվածքի ամբողջականության վրա: Արտահերթ ստուգման եւ փորձարկման մասշտաբը կախված է շարժական ցիստեռնի վնասվածքի կամ քայքայման աստիճանից: 6.7.4.14.4.-ի համաձայն՝ այն առնվազն պետք է երկուսուկես տարին մեկ անցկացվող ստուգում եւ փորձարկում ներառի:
- 6.7.4.14.8. Նախնական ստուգման եւ փորձարկման ժամանակ իրականացվող

ներքին զննման ընթացքում անհրաժեշտ է ապահովել, որ ստուգվի կորպուսի կետային քայքայումը, կոռուզիան կամ եռակցման կարանների մաշվածությունը, խանդակները, խաթարումները կամ ցանկացած այլ թերություն, որոնք կարող են շարժական ցիստեռնը փոխադրման համար վտանգավոր դարձնել:

6.7.4.14.9. Արտաքին զննումն ապահովում է, որ՝

- ա) ստուգվի, թե արդյոք արտաքին խողովակաշարերը, կափույրները, ճնշման բարձրացման/հովացման համակարգերը եւ խցանիչները քայքայված մասեր կամ ցանկացած այլ թերություններ ունեն, այդ թվում՝ արտահոսք, որը կարող է շարժական ցիստեռնը վտանգավոր դարձնել լցավորման, դատարկման կամ փոխադրման համար.
- բ) որեւէ մտոց կափարիչից կամ խցանիչներից արտահոսք տեղի չունենա.
- գ) կցաշտրթային միացքի կամ անշարժ կցաշտրթի վրայի բացակայող կամ թույլ հեղույսները, կամ մանեկները փոխարինվեն կամ ամրացվեն.
- դ) վթարային բոլոր սարքերը եւ կափույրները քայքայված, դեֆորմացված չլինեն եւ չունենան որեւէ այլ վնասվածք կամ թերություն, որը կարող է խանգարել դրանց բնականոն շահագործմանը: Հեռակառավարման փակիչ սարքերը եւ ինքնափակվող-կասեցնող փականները գործադրվեն՝ դրանց պատշաճ աշխատանքը ցույց տալու համար.
- ե) շարժական ցիստեռնի վրա պահանջվող մակնշումը լինի դյուրընթեռնելի եւ բավարարի համապատասխան պահանջները.
- զ) կարկասը, հենարանները եւ շարժական ցիստեռնը բարձրացնելու համար նախատեսված հարմարանքները լինեն բավարար վիճակում:

6.7.4.14.10. 6.7.4.14.1, 6.7.4.14.3, 6.7.4.14.4 եւ 6.7.4.14.7-ով նախատեսված ստուգումներն ու փորձարկումներն իրականացվում են իրավասու մարմնի կամ նրա լիազորված մարմնի կողմից նշանակված փորձագետի կողմից կամ վերջինիս ներկայությամբ: Եթե ճնշման փորձարկումը նախատեսված է ստուգման եւ փորձարկման ծրագրով, ապա կիրառվում է այն փորձարկման ճնշումը, որը նշված է շարժական ցիստեռնի տվյալների ցուցանակի վրա: Ճնշման տակ գտնվելու ժամանակ անհրաժեշտ է ստուգել արտահոսքի առկայությունը շարժական ցիստեռնի կորպուսում, խողովակաշարում կամ սարքավորումներում:

6.7.4.14.11. Ամեն անգամ, երբ շարժական ցիստեռնի կորպուսի վրա իրականացվում են կտրատման, այրման կամ եռակցման աշխատանքներ, այդ աշխատանքը պետք է հաստատվի իրավասու մարմնի կամ նրա լիազորված մարմնի կողմից՝ հաշվի առնելով ճնշումային անոթների շահագործման այն կանոնները, որոնց համաձայն կառուցվել է կորպուսը: Աշխատանքի ավարտից հետո անցկացվում է ճնշման փորձարկում՝ օգտագործելով նախնական փորձարկման ճնշումը:

6.7.4.14.12. Այն դեպքում, երբ հայտնաբերվում է որեւէ վտանգավոր թերություն, շարժական ցիստեռնը դուրս է բերվում շահագործումից եւ նորից սկսում է օգտագործվել միայն թերությունը վերացնելուց եւ կրկնակի փորձարկում անցնելուց հետո:

6.7.4.15. Մակնշումը

6.7.4.15.1. Յուրաքանչյուր շարժական ցիստեռնի պետք է մշտապես կցվի հակակոռոզիոն մետաղական ցուցանակ, որն ամուր ամրացվում է շարժական ցիստեռնի վրա տեսանելի եւ վերահսկման համար հարմար հատվածում: Եթե շարժական ցիստեռնի բաղկացուցիչ մասերի դասավորվածության պատճառով հնարավոր չէ կորպուսին մշտական ցուցանակ ամրացնել, ապա կորպուսի վրա պետք է առնվազն մակնշված լինեն ճնշումային անոթների շահագործման կանոններով պահանջվող տեղեկությունները: Դրոշմավորման կամ նմանատիպ որեւէ այլ մեթոդով ցուցանակի վրա պետք է առնվազն մակնշված լինեն՝

ա) սեփականատիրոջ վերաբերյալ տեղեկություններ

i) սեփականատիրոջ գրանցման համարը.

բ) արտադրության վերաբերյալ տեղեկություններ


i) արտադրության երկիրը.

ii) արտադրության տարին.

iii) արտադրողի անունը կամ ապրանքանիշը.

iv) արտադրողի կողմից դրված խմբաքանակի համարը.

գ) հաստատման վերաբերյալ տեղեկություններ

i) Միավորված ազգերի կազմակերպության փաթեթվածքների խորհրդանշանը .

Այս խորհրդանշանը պետք է օգտագործվի՝ միայն հաստատելու համար, որ փաթեթվածքը, սորուն բեռների համար նախատեսված փափուկ կոնտեյները, շարժական ցիստեռնը կամ ԳՖՏԿ-ն

համապատասխանում են 6.1, 6.2, 6.3, 6.5, 6.6, 6.7 եւ 6.11 գլուխների համապատասխան պահանջներին եւ չպետք է օգտագործվեն որեւէ այլ նպատակով.

- ii) հաստատման երկիրը.
  - iii) կառուցվածքի տեսակի հաստատման մասով լիազորված մարմինը.
  - iv) կառուցվածքի տեսակի հաստատման համարը.
  - v) «AA» տառերը, եթե կառուցվածքը հաստատվել է այլընտրանքային կարգավորումներին համապատասխան (տե՛ս 6.7.1.2).
  - vi) ճնշումային անոթների շահագործման այն կանոնները, որոնց համաձայն կառուցվել է տվյալ կորպուսը.
- դ) ճնշումներ
- i) ԱԹԱՃ (մանոմետրական, արտահայտված բարեքով կամ կՊա-ով)<sup>3</sup>.
  - ii) փորձարկման ճնշումը (մանոմետրական, արտահայտված բարեքով կամ կՊա-ով)<sup>3</sup>.
  - iii) նախնական ճնշման փորձարկման ամսաթիվը (ամիսը եւ տարին).
  - iv) այն անձի նույնականացման նշանը, ով ներկա է նախնական ճնշման փորձարկմանը.
- ե) ջերմաստիճաններ
- i) հաշվարկային նվազագույն ջերմաստիճանը (արտահայտված °C-ով)<sup>3</sup>.
- զ) նյութեր
- i) կորպուսի նյութը (նյութերը) եւ նյութի ստանդարտ նմուշը (նմուշները).
  - ii) ստանդարտ պողպատի համարժեք հաստությունը (արտահայտված մմ-ով)<sup>3</sup>.
- է) տարողություն
- i) ցիստեռնի տարողությունը՝ 20 °C-ի պայմաններում (արտահայտված լիտրերով)<sup>3</sup>.
- ը) մեկուսացում
- i) «Ջերմամեկուսացում» կամ «Վակուումով մեկուսացում»


(ըստ առանձին դեպքերի).

- ii) մեկուսացման համակարգի արդյունավետությունը (ջերմության հոսք) (արտահայտված Վտ-ով)<sup>3</sup>.
- թ) շարժական ցիստեռնով փոխադրման թույլատրվող յուրաքանչյուր սառեցված-հեղուկացված գազի պահման ժամկետը
  - i) սառեցված-հեղուկացված գազի ամբողջական անվանումը.
  - ii) պահման ստուգիչ ժամկետը (օրերով կամ ժամերով)<sup>3</sup>
  - iii) նախնական ճնշումը (մանոմետրական, բարերով կամ կՊա-ով)<sup>3</sup>.
  - iv) լցավորման աստիճանը (արտահայտված կիլոգրամներով)<sup>3</sup>.
- ժ) պարբերական ստուգումներ եւ փորձարկումներ
  - i) ամենավերջին պարբերական փորձարկման տեսակը (երկուսուկես տարին մեկ, 5 տարին մեկ կամ արտահերթ փորձարկում).
  - ii) ամենավերջին պարբերական փորձարկման ամսաթիվը (ամիսը եւ տարին).
  - iii) այն լիազորված մարմնի նույնականացման նշանը, ով իրականացրել է ամենավերջին փորձարկումը կամ ներկա է գտնվել դրա իրականացմանը:

---

<sup>3</sup> Կիրառվող չափման միավորը պետք է նշվի:

### Պատկեր 6.7.4.15.1. Մակնշման ցուցանակի օրինակ

Սեփականատիրոջ գրանցման համարը					
ԱՐՏԱԴԴՐՈՂԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ					
Արտադրման երկիրը					
Արտադրման տարին					
Արտադրողը					
Արտադրողի կողմից դրված խմբաքանակի համարը					
ՀԱՍՏԱՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ					
	Հաստատման երկիրը				
	Կառուցվածքի տեսակի հաստատման մասով լիազորված մարմինը				
	Կառուցվածքի տեսակի հաստատման համարը		«AA» տառերը (ըստ անհրաժեշտության)		
Կորպուսի կառուցվածքի վերաբերյալ կանոնները (ճնշումային անոթների շահագործման կանոնները)					
ՃՆՇՈՒՄՆԵՐԸ					
ԱԹԱՃ		բարերով կամ կՊա-ով			
Փորձարկման ճնշումը		բարերով կամ կՊա-ով			
Նախնական ճնշման փորձարկման ամսաթիվը	(ամիսը/տարին)	Ներկա գտնվող անձի կնիքը			
ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ					
Հաշվարկային նվազագույն ջերմաստիճանը		°C			
ՆՅՈՒԹԵՐԸ					
Կորպուսի նյութը (նյութերը) եւ նյութի ստանդարտ նմուշը (նմուշները)					
Ստանդարտ պողպատի համարժեք հաստությունը		մմ			
ՏԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ					
Ցիստեռնի տարողությունը՝ 20 °C-ի պայմաններում		լիտր			
ՄԵԿՈՒՍԱՑՈՒՄԸ					
«Ջերմամեկուսացում» կամ «Վակուումով մեկուսացում» (ըստ առանձին դեպքերի)					
Ջերմության հոսքը		վատտ			
ՊԱՀՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ					
Թույլատրվող սառեցված-հեղուկացված գազը (գազերը)	Պահման ստուգիչ ժամկետը	Նախնական ճնշումը	Լցավորման մակարդակը		
	Օրերը կամ ժամերը	բարերով կամ կՊա-ով	կգ		
ՊԱՐԲԵՐԱՎԱՆ ԱՏՈՒԳՈՒՄՆԵՐԸ/ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆԵՐԸ					
Փորձարկման տեսակը	Փորձարկման ամսաթիվը	Ներկա գտնվող անձի կնիքը	Փորձարկման տեսակը	Փորձարկման ամսաթիվը	Ներկա գտնվող անձի կնիքը
	(ամիսը/տարին)			(ամիսը/տարին)	

6.7.4.15.2. Շարժական ցիստեռնը կամ շարժական ցիստեռնի վրա ամուր



ամրացված մետաղական ցուցանակը պետք է ունենա չջնջվող մակնշում հետեյալ մանրամասն տվյալներով՝

Սեփականատիրոջ եւ օպերատորի անունը

Փոխադրվող սառեցված-հեղուկացված գազի անվանումը (եւ նվազագույն միջին ծավալային ջերմաստիճանը)

Առավելագույն թույլատրելի անզուտ քաշը (ԱԹԱԲ)\_\_\_\_\_կգ

Բեռնված զանգվածը\_\_\_\_\_կգ

Փոխադրվող գազի իրական պահման ժամկետը\_\_\_\_\_օր (կամ ժամ)

Շարժական ցիստեռնի վերաբերյալ ցուցումը՝ 4.2.5.2.6-ի համաձայն

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Փոխադրվող սառեցված-հեղուկացված գազի(գազերի) նույնականացման համար տե՛ս նաեւ 5-րդ մասը:

6.7.4.15.3. Եթե շարժական ցիստեռնը կառուցված եւ հաստատված է բաց ծովում փոխադրման համար, ապա նույնականացման ցուցանակի վրա պետք է նշագրված լինեն «ԾՈՎԱՅԻՆ ՇԱՐժԱԿԱՆ ՑԻՍՏԵՐՆ» բառերը:

6.7.5. Չսառեցված գազերի փոխադրման համար նախատեսված ՄԱԿ-ի նշագրման՝ գազի բազմատարր կոնտեյներների (ԳՐՏԿ-ներ) նախագծման, պատրաստման, ստուգման եւ փորձարկման պահանջները

6.7.5.1. Սահմանումներ

Սույն բաժնի նպատակներով՝

«Այլընտրանքային պայմանավորվածություն» նշանակում է իրավասու մարմնի կողմից տրամադրված՝ շարժական ցիստեռնի կամ ԳՐՏԿ-ի հաստատում, որը նախագծվել, պատրաստվել կամ փորձարկվել է սույն գլխում սահմանված տեխնիկական պահանջներից տարբեր՝ այլ տեխնիկական պահանջների կամ փորձարկման մեթոդների համաձայն.

«Դետալներ» են համարվում բալոնները, գլանները կամ բալոնների կապուկները.

«Անջրանցիկության փորձարկում» նշանակում է այնպիսի փորձարկում, որի ընթացքում գազի կիրառմամբ ԳՐՏԿ-ի տարրերն ու օժանդակ սարքավորումները ենթարկվում են արդյունավետ ներքին ճնշման, որը կազմում է փորձարկային ճնշման առնվազն 20%-ը.

«Կոլեկտոր» նշանակում է խողովակաշարերի եւ փականների հավաքվածք, որը միացնում է լցավորման եւ (կամ) դատարկման դետալների բացվածքները.

«Առավելագույն թույլատրելի անզուտ քաշ (ԱԹԱՔ)» նշանակում է ԳԲՏԿ-ի տարայի զանգվածի եւ փոխադրման համար թույլատրելի առավելագույն բեռնվածքի գումարը.

«ՄԱԿ-ի նշագրման՝ գազի բազմատարր կոնտեյներները (ԳԲՏԿ-ներ)» բալոնների, գլանների եւ բալոնների կապուկների հավաքվածքներ են, որոնք փոխկապակցված են կոլեկտորով եւ որոնք որպես մեկ ամբողջություն հավաքված են շրջանակավոր կառուցվածքի մեջ: ԳԲՏԿ-ն ներառում է գազերի փոխադրման համար անհրաժեշտ օժանդակ եւ կառուցվածքային սարքավորումներ.

«Օժանդակ սարքավորումներ» նշանակում է չափիչ սարքեր եւ լցավորման, բեռնաթափման, օդափոխման, անվտանգության սարքեր.

«Կառուցվածքային սարքավորումներ» նշանակում է կաղապարի արտաքին մասին կից հզորացնող, ամրացնող, պաշտպանիչ եւ կայունացնող դետալներ:

6.7.5.2. Նախագծման եւ կառուցման ընդհանուր պահանջները

6.7.5.2.1. Պետք է հնարավոր լինի լցնել եւ դատարկել ԳԲՏԿ-ն՝ չառանձնացնելով այն կառուցվածքային սարքավորումներից: Այն պետք է դետալներին կից ունենա կայունացնող սարքավորումներ՝ բեռնման-բեռնաթափման եւ փոխադրման ընթացքում կառուցվածքային ամբողջականություն ապահովելու համար: ԳԲՏԿ-ները պետք է նախագծվեն եւ կառուցվեն հենարանային սարքավորումներով, որոնք փոխադրման ընթացքում ապահով հիմք են, ինչպես նաեւ ամբարձիչ եւ ամրակցման հարմարանքներով, որոնք ծառայում են ԳԲՏԿ-ի բարձրացման համար, այդ թվում՝ նաեւ այն ժամանակ, երբ այն լցավորված է իր առավելագույն թույլատրելի անզուտ քաշով: ԳԲՏԿ-ն պետք է նախագծված լինի ավտոտրանսպորտի, վագոնի կամ ծովագնաց կամ ներքին ջրուղիներով նավարկություն իրականացնող փոխադրամիջոցի վրա բեռնվելու նպատակով եւ պետք է համալրված լինի սահաճողերով, ամրաններով կամ մեխանիկական եղանակով բեռնման-բեռնաթափման գործողություններին օժանդակող հարմարանքներով:

6.7.5.2.2. ԳԲՏԿ-ները պետք է նախագծվեն, պատրաստվեն եւ սարքավորված լինեն այնպես, որ կարողանան դիմակայել բոլոր այն բեռնվածքներին, որոնց նրանք ենթարկվելու են իրենց բնականոն բեռնման-բեռնաթափման եւ փոխադրման պայմաններում: Նախագծման ընթացքում պետք է հաշվի առնվեն դինամիկ բեռնման եւ ծանրաբեռնվածության հետեւանքները:

6.7.5.2.3. ԳԲՏԿ-ի դետալները պետք է պատրաստված լինեն անկարան պողպատից եւ կառուցվեն ու փորձարկվեն 6.2.1 եւ 6.2.2-ի

համաձայն: ԳԲՏԿ-ի բոլոր տարրերը պետք է լինեն նույն կառուցվածքի տեսակի:

- 6.7.5.2.4. ԳԲՏԿ-ների դետալները, կցամասերը եւ խողովակաշարերը պետք է՝
- ա) համատեղելի լինեն այն նյութերի հետ, որոնք նախատեսված են փոխադրման համար (տե՛ս ISO 11114-1:2012 եւ ISO 11114-2:2013 ստանդարտները), կամ
  - բ) պատշաճ կերպով պասիվացված կամ չեզոքացված են քիմիական ռեակցիայի միջոցով:
- 6.7.5.2.5. Պետք է խուսափել իրարից տարբերվող մետաղների շփումից, որը կարող է հանգեցնել գալվանական ազդեցությամբ առաջացող վնասների:
- 6.7.5.2.6. ԳԲՏԿ-ի, ներառյալ ցանկացած սարքի, խցանիչի եւ հարակից սարքերի նյութերը չպետք է բացասաբար ազդեն այն գազի (գազերի) վրա, որը նախատեսված է այդ ԳԲՏԿ-ով փոխադրվելու համար:
- 6.7.5.2.7. ԳԲՏԿ-ները պետք է նախագծվեն այնպես, որ դրանք առանց իրենց պարունակության կորստի կարողանան առնվազն դիմակայել պարունակության պատճառով առաջացած ներքին ճնշմանը, ինչպես նաեւ նորմալ պայմաններում բեռնման- բեռնաթափման եւ փոխադրման ժամանակ ստատիկ, դինամիկ եւ ջերմային բեռնվածքին: Նախագծի միջոցով պետք է ցույց տրվի, որ հաշվի են առնվել ծանրաբեռնվածության այն ազդեցությունները, որոնք առաջացել են ԳԲՏԿ-ի շահագործման համար ակնկալվող ժամկետի ընթացքում տվյալ բեռնվածքների շարունակաբար առաջանալու հետեւանքով:
- 6.7.5.2.8. ԳԲՏԿ-ները եւ դրանց ամրակցման դետալները պետք է կարողանան թույլատրելի առավելագույն բեռնվածության պայմաններում դիմանալ հետեւյալ ստատիկ բեռնվածքների առանձին ազդեցությանը՝
- ա) շարժման ուղղությամբ՝ ԱԹԱԲ-ի կրկնակին բազմապատկած ազատ անկման արագացմամբ (g)<sup>1</sup>
  - բ) շարժման ուղղությամբ՝ հորիզոնական դիրքով ուղիղ անկյան տակ՝ ԱԹԱԲ-ը (եթե շարժման ուղղությունը հստակ սահմանված չէ, բեռնվածքները պետք է հավասար լինեն կրկնակի ԱԹԱԲ-ի) բազմապատկած ազատ անկման արագացմամբ (g)<sup>1</sup>.
  - գ) ուղղահայաց դիրքով՝ ներքեից վերեւ՝ ԱԹԱԲ-ը բազմապատկած ազատ անկման արագացմանը (g)<sup>1</sup>, եւ
  - դ) ուղղահայաց դիրքով՝ վերից վար՝ ԱԹԱԲ-ի կրկնակին

(ընդհանուր բեռնվածությունը, ներառյալ ծանրության ուժի ազդեցությունը) բազմապատկած ազատ անկման արագացմանը ( $g$ )<sup>1</sup>:

- 6.7.5.2.9. 6.7.5.2.8-ում նշված բեռնվածքների ներքո դետալների ամենաուժեղ ճնշում ունեցող հատվածում ճնշումը չպետք է գերազանցի այն արժեքները, որոնք բերված են 6.2.2.1-ում նշված համապատասխան ստանդարտներում կամ օգտագործման երկրի իրավասու մարմնի կողմից հաստատված տեխնիկական կանոններում կամ ստանդարտում այն դեպքում, երբ դետալները նախագծվել, պատրաստվել եւ փորձարկվել են ոչ այդ ստանդարտների համաձայն (տե՛ս 6.2.5):
- 6.7.5.2.10. 6.7.5.2.8-ում նշված բեռնվածքներից յուրաքանչյուրի ազդեցության դեպքում պետք է պահպանվեն կարկասի եւ ամրակցման դետալների ամրության պաշարի հետեւյալ գործակիցները՝
- ա) հստակ սահմանված հոսունության սահմանաչափ ունեցող պողպատների դեպքում՝ 1,5 ամրության պաշարի գործակիցը՝ հոսունության երաշխավորված սահմանաչափի հարաբերությամբ, կամ
  - բ) հստակ սահմանված հոսունության սահմանաչափ չունեցող պողպատների դեպքում՝ 1,5 ամրության պաշարի գործակիցը՝ հոսունության երաշխավորված 0,2 %, իսկ աուստենիտային պողպատների դեպքում՝ 1% պայմանական սահմանաչափի հարաբերությամբ:
- 6.7.5.2.11. Դյուրավառ գազերի փոխադրման համար նախատեսված ԳՔՏԿ-ները պետք է հողակցման հնարավորություն ունենան:
- 6.7.5.2.12. Դետալները պետք է այնպես ամրացվեն, որպեսզի դրանց կառուցվածքում հնարավոր լինի խուսափել անցանկալի այնպիսի տեղաշարժից, որը կհանգեցնի վտանգավոր ճնշումների կուտակմանը որեւէ հատվածում:
- 6.7.5.3. Օժանդակ սարքավորումները
- 6.7.5.3.1. Օժանդակ սարքավորումները պետք է կազմաձեւված կամ նախագծված լինեն այնպես, որ կանխվի ցանկացած այնպիսի վնաս, որը կարող է հանգեցնել բեռնման-բեռնաթափման եւ փոխադրման նորմալ պայմաններում ճնշումային տարայի պարունակության արտահոսքի: Եթե կարկասը եւ դետալները միացված են այնպես, որ հավաքվածքի մասերի միջեւ հնարավոր է տեղի ունենա որոշակի տեղաշարժ, ապա սարքը պետք է ամրացված լինի այնպես, որ նման

<sup>1</sup> Հաշվարկման նպատակներով  $g = 9,81 \text{ մ/ս}^2$ .

շարժումը չվնասի աշխատող մասերին: Կոլեկտորները, մղիչ կցամասերը (խողովակների համար նախատեսված միացնող կցորդիչներ, փակիչ սարքվածքները) եւ կասեցնող փականները պետք է պաշտպանված լինեն արտաքին ուժերի ազդեցության տակ պոկվելու վտանգից: Կոլեկտորի խողովակաշարերը, որոնք տանում են դեպի փակիչ կափույրները, պետք է բավական ճկուն լինեն՝ կափույրների եւ խողովակաշարի դեֆորմացումը կամ ճնշումային տարայի պարունակության արտահոսքը կանխելու համար: Պետք է հնարավոր լինի լցավորման եւ դատարկման սարքերը (այդ թվում՝ կցաշուրթերն ու պտուտակային խցափակիչները) եւ ապահովիչ թասակները պաշտպանել ցանկացած ոչ միտումնավոր բացումից:

6.7.5.3.2. Թունավոր գազերի փոխադրման համար նախատեսված ցանկացած դետալ (T, TF, TC, TO, TFC եւ TOC խմբերին պատկանող գազերը) պետք է կափույր ունենա: Հեղուկացված թունավոր գազերի կոլեկտորը (2T, 2TF, 2TC, 2TO, 2TFC եւ 2TOC դասակարգման ծածկագրերին դասվող գազերը) պետք է այնպես նախագծվի, որ դետալները հնարավոր լինի առանձին լցավորելու եւ միմյանցից առանձնացված պահելու այնպիսի կափույրի միջոցով, որը կարող է հերմետիկորեն կնքվել: Դյուրավառ գազերի փոխադրման դեպքում («F» խմբի գազեր), դետալները պետք է կափույրի միջոցով բաժանված լինեն խմբերի, որոնցից յուրաքանչյուրի տարողությունը չպետք է գերազանցի 3 000 լիտրը:

6.7.5.3.3. ԳՐՏԿ-ի լցավորման եւ դատարկման համար նախատեսված բացվածքների դեպքում երկու հաջորդաբար միացված կափույրներ պետք է տեղադրվեն մատչելի դիրքում՝ լցավորման եւ դատարկման խողովակներից յուրաքանչյուրի վրա: Կափույրներից մեկը պետք է լինի հակադարձ կափույր: Լցավորման եւ դատարկման սարքերը պետք է ամրացված լինեն կոլեկտորին: Խողովակաշարերի այն հատվածների համար, որոնք կարող են փակվել երկու կողմերից, եւ որտեղ հեղուկ նյութի հոսքը կարող է կանխվել, պետք է լինի ճնշման նվազեցման համար նախատեսված կափույր՝ հավելյալ ճնշման կուտակումը կանխելու նպատակով: ԳՐՏԿ-ի մեկուսացնող հիմնական կափույրները պետք է հստակորեն մակնշվեն՝ դրանց փակման ուղղությունը ցույց տալու նպատակով: Յուրաքանչյուր կասեցնող կափույր կամ այլ փակիչ սարքավորումներ պետք է նախագծվեն եւ պատրաստվեն այնպես, որ կարողանան դիմակայել այն ճնշմանը, որն առնվազն 1,5 անգամ գերազանցում է ԳՐՏԿ-ի փորձարկման ճնշումը: Բոլոր կասեցնող կափույրները, որոնք ունեն պտտվող իլեր, պետք է պտտվեն ժամացույցի ուղղությամբ: Այլ կասեցնող կափույրների դեպքում փակման դիրքը (բաց ու փակ) եւ փակման ուղղությունը պետք է հստակորեն նշված լինի: Բոլոր կասեցնող կափույրները պետք է նախագծված լինեն եւ տեղադրվեն

այնպես, որ հնարավոր չլինի հանկարծակի բացել դրանք: Կափույրներ կամ օժանդակ սարքեր պատրաստելիս պետք է կռելի մետաղներ օգտագործվեն:

6.7.5.3.4. Խողովակները պետք է նախագծված, պատրաստված եւ տեղադրված լինեն այնպես, որ հնարավոր լինի խուսափել ընդլայնման եւ սեղմման, մեխանիկական ցնցման ու վիբրացիայի հետեւանքով վնաս ստանալու ռիսկից: Խողովակների հանգույցները պետք է զոդված լինեն կամ ունենան համարժեքորեն ամուր մետաղական միացում: Չողված նյութերի հալման ջերմաստիճանը պետք է 525 °C-ից պակաս չլինի: Օժանդակ սարքավորումների եւ կոլեկտորի նոմինալ ճնշումը չպետք է դետալների փորձարկման ճնշման երկու երրորդից պակաս լինի:

6.7.5.4. Ճնշումը նվազեցնող սարքերը

6.7.5.4.1. ՄԱԿ-ի մակնշման 1013 համարի ածխածնի երկօքսիդի եւ ՄԱԿ-ի մակնշման 1070 համարի ազոտի օքսիդի փոխադրման համար օգտագործվող ԳՐՏԿ-ների դետալները պետք է կափույրի միջոցով բաժանված լինեն խմբերի, որոնցից յուրաքանչյուրի տարողությունը չի գերազանցում 3 000 լիտրը: Յուրաքանչյուր խումբ պետք է ճնշումը նվազեցնող մեկ կամ ավելի սարք ունենա: Օգտագործման երկրի իրավասու մարմնի պահանջով ԳՐՏԿ-ները պետք է ունենան ճնշումը նվազեցնող սարքեր, որոնք սահմանված են տվյալ իրավասու մարմնի կողմից:

6.7.5.4.2. Այն դեպքում, երբ ճնշումը նվազեցնող սարքերը տեղադրվում են, ԳՐՏԿ-ի յուրաքանչյուր դետալ կամ դետալների խումբ, որը կարող է մեկուսացվել մյուսներից, պետք է սարքավորվի ճնշումը նվազեցնող եւս մեկ կամ մի քանի սարքերով: Ճնշումը նվազեցնող սարքերը պետք է այնպիսին լինեն, որ կարողանան դիմակայել դինամիկ բեռնվածքներին, այդ թվում՝ հեղուկի ալիքային հարվածին, ինչպես նաեւ պետք է այնպես նախագծվեն, որ կանխվի անցանկալի խառնուրդների ներթափանցումը, գազի արտահոսքը եւ ցանկացած հավելյալ վտանգավոր ճնշման գոյացումը:

6.7.5.4.3. 4.2.5.2.6-ի շարժական ցիստեռնի վերաբերյալ T50 ցուցմամբ սահմանված որոշ չսառեցված գազերի փոխադրման համար օգտագործվող ԳՐՏԿ-ները կարող են ունենալ ճնշումը նվազեցնող սարք՝ օգտագործման երկրի իրավասու մարմնի պահանջին համապատասխան: Բացառությամբ այն դեպքի, երբ հատուկ նշանակությամբ ԳՐՏԿ-ն համալրված է ճնշումը նվազեցնող հաստատված սարքով, որը պատրաստված է փոխադրվող գազի հետ համատեղելի նյութից, այդ սարքը պետք է ունենա պատռվող թաղանթ, որը պետք է ամրացված լինի զսպանակավոր սարքի

դիմային հատվածում: Պատռվող թաղանթի եւ զսպանակավոր սարքի միջեւ ընկած տարածության մեջ կարող է տեղադրված լինի ճնշման մանոմետր կամ համապատասխան հսկիչ-ազդանշանային սարք: Նման դասավորվածությունը թույլ է տալիս հայտնաբերել թաղանթի պատռվածքը, ծակվելը կամ արտահոսքը, որը կարող է ճնշումը նվազեցնող սարքի անսարքություն առաջացնել: Պատռվող թաղանթը պետք է պատռվի նոմինալ ճնշման տակ, որը 10%-ով գերազանցում է զսպանակավոր սարքի գործարկման ճնշումը:

6.7.5.4.4. Ցածր ճնշմամբ հեղուկացված գազերի փոխադրման համար օգտագործվող բազմանպատակ նշանակությամբ ԳԲՏԿ-ների դեպքում ճնշումը նվազեցնող սարքերը պետք է սկսեն աշխատել 6.7.3.7.1-ում նշված ճնշման ներքո, որը կիրառվում է այն գազի համար, որը ԳԲՏԿ-ով փոխադրման համար թույլատրվող բոլոր գազերից ունի ամենաբարձր առավելագույն թույլատրելի աշխատանքային ճնշումը:

6.7.5.5. Ճնշումը նվազեցնող սարքերի թողունակությունը

6.7.5.5.1. Ճնշումը նվազեցնող սարքերի ընդհանուր թողունակությունը պետք է բավարար լինի, որպեսզի ԳԲՏԿ-ի հրդեհի բռնկման դեպքում դետալների ներսի ճնշումը (ներառյալ՝ կուտակումը) չգերազանցի ճնշումը նվազեցնող սարքի գործարկային ճնշման 120 %-ը: Ճնշումը նվազեցնող սարքերի համակարգի նվազագույն ընդհանուր թողունակությունը որոշելու համար օգտագործվում է այն բանաձեւը, որը բերված է «Ճնշումը նվազեցնող սարքերի ստանդարտներ. Մաս 2. սեղմված գազերի համար նախատեսված բեռնատար եւ շարժական ցիստեռններ» ՍԳԱ՝ Տ-1.2-2003-ում: «Ճնշումը նվազեցնող սարքերի ստանդարտներ. Մաս 1. սեղմված գազերի համար նախատեսված բալոններ» ՍԳԱ՝ Տ-1.1-2003-ը կարող է կիրառվել առանձին դետալների թողունակությունը որոշելու համար: Հսպանակի վրա ամրացված ճնշումը նվազեցնող սարքերը կարող են կիրառվել՝ հասնելու համար ցածր ճնշմամբ հեղուկացված գազերի համար նախատեսված ամբողջական թողունակության: Բազմանպատակ նշանակության ԳԲՏԿ-ների դեպքում ճնշումը նվազեցնող սարքի ընդհանուր թողունակությունը պետք է ապահովվի այն գազի հաշվով, որը տվյալ ԳԲՏԿ-ով փոխադրման համար թույլատրվող գազերից պահանջում է ամենաբարձր թողունակությունը:

6.7.5.5.2. Ճնշումը նվազեցնող այն սարքերի պահանջվող ընդհանուր թողունակությունը որոշելու համար, որոնք տեղադրված են հեղուկացված գազերի փոխադրման համար նախատեսված դետալների վրա, անհրաժեշտ է հաշվի առնել գազի թերմոդինամիկական հատկությունները (տե՛ս, օրինակ, ՍԳԱ՝ Տ-1.2-

2003 «Ճնշումը նվազեցնող սարքերի ստանդարտներ. Մաս 2. սեղմված գազերի համար նախատեսված բեռնատար եւ շարժական ցիստեռններ»՝ նախատեսված ցածր ճնշմամբ հեղուկացված գազերի համար, եւ S-1.1-2003 «Ճնշումը նվազեցնող սարքերի ստանդարտներ. Մաս 1. սեղմված գազերի համար բալոններ»՝ նախատեսված բարձր ճնշմամբ հեղուկացված գազերի համար):

6.7.5.6. Ճնշումը նվազեցնող սարքերի մակնշումը

6.7.5.6.1. Ճնշումը նվազեցնող սարքերը պետք է հստակորեն եւ մշտապես մակնշվեն հետեւյալ տվյալներով՝

- ա) արտադրողի անունն ու համապատասխան համարը՝ ըստ կատալոգի,
- բ) գործարկման ճնշումը եւ (կամ) գործարկման ջերմաստիճանը,
- գ) վերջին փորձարկման ամսաթիվը,
- դ) ճնշումը նվազեցնող զսպանակավոր սարքի հոսքի լայնական հատման տարածքները եւ պատռվող մեմբրանները՝ մմ<sup>2</sup>-ով:

6.7.5.6.2. Ճնշումը նվազեցնող սարքի հաշվարկային թողունակությունը սահմանվում է ISO 4126- 1:2004 եւ ISO 4126-7:2004 ստանդարտների համաձայն:

6.7.5.7. Ճնշումը նվազեցնող սարքերի միացումները

6.7.5.7.1. Ճնշումը նվազեցնող սարքերի միացումները պետք է բավարար չափով լինեն, որպեսզի հնարավոր լինի առանց խոչընդոտների բաց թողնելու գազերի կամ գորրորշու պահանջվող քանակությունը դեպի ճնշումը նվազեցնող սարք: Կասեցնող կափույրները պետք է տեղադրված լինեն դետալի եւ ճնշումը նվազեցնող սարքերի միջեւ, բացառությամբ այն դեպքերի, երբ տեխնիկական սպասարկման նպատակով կամ այլ պատճառներով տեղադրված են կրկնօրինակ սարքեր, եւ փաստացի օգտագործվող այդ սարքերը սպասարկող՝ կասեցնող կափույրները բաց վիճակում բլոկավորված են, կամ կասեցնող կափույրները փոխադարձաբար բլոկավորված են այնպես, որ կրկնօրինակ սարքերից առնվազն մեկը գտնվում է աշխատանքային վիճակում եւ կարող է բավարարել 6.7.5.5-ի պահանջները: Դեպի արտաթողման խողովակներ կամ ճնշումը նվազեցնող սարք տանող բացվածքում չպետք է լինի ոչ մի խոչընդոտ, որը կարող է սահմանափակել կամ ընդհատել դետալից դեպի այդ սարք տանող հոսքը: Բոլոր խողովակաշարերի եւ կցամասերի միջեւ ընկած հատույթը պետք է ունենա առնվազն այն նույն թողունակությունը, ինչպիսին ունի ճնշումը նվազեցնող սարքի ներթողման բացվածքը: Դատարկման խողովակաշարը պետք է լինի նույն նոմինալ չափի, ինչպիսին ճնշումը նվազեցնող սարքի



արտաթողման բացվածքն է: Ճնշումը նվազեցնող սարքերից դուրս եկող խողովակները, եթե դրանք օգտագործվում են, պետք է մթնոլորտ գոլորշի կամ հեղուկ արտաթողեն՝ ճնշումը նվազեցնող սարքի հակադիր նվազագույն ճնշման պայմաններում:

6.7.5.8. Ճնշումը նվազեցնող սարքերի դասավորվածությունը

6.7.5.8.1. Ճնշումը նվազեցնող յուրաքանչյուր սարք առավելագույն լցավորման պայմաններում պետք է շփման մեջ գտնվի հեղուկացված գազերի փոխադրման համար նախատեսված դետալների գոլորշի պարունակող տարածության հետ: Տեղադրվող սարքերը պետք է այնպիսի դասավորվածություն ունենան, որպեսզի ապահովեն, որ արտամղվող գոլորշին հեռացվի ներքեից դեպի վեր ուղղությամբ եւ առանց խոչընդոտների՝ կանխելու համար արտամղվող գազի հոսքի կամ հեղուկի ազդեցությունը ԳԲՏԿ-ի, դրա դետալների կա անձնակազմի վրա: Դյուրավառ հրակիր եւ օքսիդացնող գազերի դեպքում, արտամղվող գոլորշին պետք է դետալից հեռու դուրս մղվի այնպես, որ այն չկարողանա շփվել այլ դետալների հետ: Գազի հոսքի ուղղությունը փոխող ջերմակայուն պաշտպանիչ սարքերը թույլատրելի են՝ պայմանով, որ ճնշումը նվազեցնող սարքի պահանջվող թողունակությունը չնվազեցվի:

6.7.5.8.2. Միջոցներ են ձեռնարկվում ոչ իրավասու անձանց ճնշումը նվազեցնող սարքերից հեռու պահելու եւ ԳԲՏԿ-ի շրջվելու դեպքում սարքերը վնասվելուց պաշտպանելու նպատակով:

6.7.5.9. Չափիչ-ստուգիչ սարքերը

6.7.5.9.1. Եթե ԳԲՏԿ-ն նախատեսված է լցավորվելու ըստ զանգվածի, ապա դրա վրա պետք է տեղադրվեն մեկ կամ մի քանի չափիչ-ստուգիչ սարքեր: Չի կարելի օգտագործել ապակուց եւ այլ փխրուն նյութերից պատրաստված մակարդաչափեր:

6.7.5.10. ԳԲՏԿ-ի հենարանները, կարկասները, ամբարձիչ եւ ամրակման հարմարանքները

6.7.5.10.1. ԳԲՏԿ-ները պետք է նախագծվեն եւ պատրաստվեն հենարան ունեցող կոնստրուկցիաների միջոցով, որոնք փոխադրման ընթացքում կծառայեն որպես անվտանգ հիմք: 6.7.5.2.8-ում սահմանված բեռնվածքները եւ 6.7.5.2.10-ում սահմանված ամրության պաշարի գործակիցը պետք է կառուցվածքի այս առումով հաշվի առնվեն: Թույլատրելի են սահաճողերը, կարկասները, հենոցները եւ համանման այլ կոնստրուկցիաներ:

6.7.5.10.2. Դետալների ամրանների (օրինակ՝ հենոցներ, կարկասներ եւ այլն) հետեւանքով առաջացած ընդհանուր լարվածությունը, ինչպես նաեւ ԳԲՏԿ-ի ամբարձիչ եւ ամրակցման հարմարանքները չպետք է

ծայրահեղ լարվածություն առաջացնեն կորպուսի որեւէ դետալում: Բոլոր ԳՔՏԿ-ները պետք է ունենան ստացիոնար ամբարձիչ եւ ամրակցման հարմարանքներ: Ամրանները կամ հարմարանքները ոչ մի դեպքում չպետք է զոդվեն տարրերի վրա:

6.7.5.10.3. Հենարանները եւ կարկասները նախագծելիս անհրաժեշտ է հաշվի առնել շրջակա միջավայրի կոռոզիոն ազդեցությունները:

6.7.5.10.4. Երբ ԳՔՏԿ-ները պաշտպանված չեն փոխադրման ընթացքում, ապա 4.2.4.3-ի համաձայն՝ տարրերը եւ օժանդակ սարքավորումները պետք է պաշտպանված լինեն վնասվելուց կողային կամ երկայնական հարվածների կամ շրջվելու դեպքում: Արտաքին կցամասերը պետք է այնպես պաշտպանված լինեն, որ հարվածի կամ շրջվելու դեպքում ԳՔՏԿ-ի պարունակությունը չթափվի դրա կցամասերի վրա: Հատուկ ուշադրություն է դարձվում կոլեկտորի պաշտպանության վրա: Նման պաշտպանության օրինակներ են՝

ա) կողային հարվածից պաշտպանությունը, որը կարող է ապահովվել երկայնական ձողերի միջոցով,

բ) պաշտպանությունը շրջվելուց, որը կարող է ապահովվել շրջանակի երկայնքով ամրացված ամրանային օղագոտիների կամ ձողերի միջոցով,

գ) պաշտպանությունը հետեւի հարվածից, որը կարող է ապահովվել թափարգելի կամ շրջանակի միջոցով,

դ) հարվածի կամ շրջվելու դեպքում տարրերի կամ օժանդակ սարքավորումների պաշտպանությունը վնասվելուց՝ համաձայն ISO 1496-3:1995 ստանդարտի համապատասխան դրոյթների՝ ISO շրջանակի օգտագործման միջոցով:

6.7.5.11. Կառուցվածքի տեսակի հաստատումը

6.7.5.11.1. Իրավասու մարմինը կամ նրա կողմից լիազորված մարմինը ԳՔՏԿ-ի ցանկացած նոր կառուցվածքի համար տրամադրում է կառուցվածքի տեսակի հաստատման սերտիֆիկատ: Այս սերտիֆիկատով հաստատվում է, որ ԳՔՏԿ-ն հետազոտվել է այդ մարմնի կողմից, հարմար է նախատեսված նպատակով օգտագործվելու համար եւ համապատասխանում է սույն գլխի պահանջներին, 4.1 գլխում գազերի համար կիրառվող դրոյթներին եւ P200 փաթեթավորման ցուցմանը: Այն դեպքում, երբ արտադրվում են մի շարք ԳՔՏԿ-ներ առանց կառուցվածքի փոփոխության, ապա սերտիֆիկատը գործում է ամբողջ շարքի համար: Սերտիֆիկատում նշվում են նախատիպի փորձարկման արդյունքները, կոլեկտորի կառուցման համար օգտագործված նյութերը, այն ստանդարտները, որոնց համաձայն պատրաստվել են դետալները, եւ հաստատման համարը:

Հաստատման համարը բաղկացած է այն երկրի տարբերակիչ պայմանանշանից կամ մակնշվածքից, որի տարածքում տրվել է հաստատումը, նշված միջազգային ճանապարհային փոխադրման համար օգտագործվող տարբերակիչ նշանով<sup>2</sup>, ինչպես նաև գրանցման համարից: 6.7.1.2-ի համաձայն՝ բոլոր այլընտրանքային պայմանավորվածությունները նշվում են սերտիֆիկատում: Կառուցվածքի տեսակի հաստատման հավաստագիրը կարող է համարվել հաստատում ավելի փոքր ԳՐՏԿ-ների համար, որոնք պատրաստված են միեւնույն նյութից եւ ունեն միեւնույն հաստությունը, օգտագործվել են միեւնույն տեխնոլոգիական պրոցեսներով եւ ունեն միեւնույն հենարանները, համարժեք փականները եւ այլ պարագաներ:

6.7.5.11.2. Կառուցվածքի տեսակի հաստատման նպատակով նախատիպի փորձարկման հաշվետվության մեջ ներառվում է առնվազն հետեւյալը՝

ա) ISO 1496-3:1995 ստանդարտում սահմանված կարկասի համապատասխան փորձարկման արդյունքները,

բ) 6.7.5.12.3-ում նշված սկզբնական ստուգումների եւ փորձարկումների արդյունքները,

գ) 6.7.5.12.1-ում նշված հարվածի փորձարկման արդյունքները, եւ

դ) հավաստագրի փաստաթղթերը, որոնք հաստատում են բալոնների եւ գլանների համապատասխանությունը կիրառվող ստանդարտներին:

6.7.5.12. Ստուգումը եւ փորձարկումը

6.7.5.12.1. 1972 թվականի «Անվտանգ կոնտեյներների վերաբերյալ միջազգային կոնվենցիայում» (ԱԿԿ) ընդգրկված կոնտեյների սահմանմանը համապատասխանող ԳՐՏԿ-ները վերջինիս փոփոխվելու դեպքում չպետք է օգտագործվեն՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դրանց յուրաքանչյուր կառուցվածքի նախատիպը, անցնելով դինամիկ, երկայնական հարվածի փորձարկում, որը նշված է «Փորձարկումների եւ չափորոշիչների ձեռնարկ»-ի IV մասի 41-րդ բաժնում, օգտագործման համար պիտանի են համարվել:

6.7.5.12.2. Յուրաքանչյուր ԳՐՏԿ-ի սարքավորման դետալները եւ տարրերը

---

<sup>2</sup> Միջազգային երթելեկության մեջ գտնվող փոխադրամիջոցների եւ դրանց կցորդների՝ գրանցման պետության տարբերանշաններ, օրինակ՝ 1949 թվականի «Ճանապարհային երթելեկության մասին» Ժնեւի կոնվենցիային կամ 1968 թվականի «Ճանապարհային երթելեկության մասին» Վիեննայի կոնվենցիային համապատասխան:

պետք է ստուգվեն եւ փորձարկվեն առաջին անգամ շահագործվելուց առաջ (նախնական ստուգում եւ փորձարկում): Հետագայում ԳՔՏԿ-ները պետք է փորձարկվեն ոչ ավելի, քան հինգ տարին մեկ (5 տարին մեկ պարբերական ստուգում եւ փորձարկում): Անկախ վերջին պարբերական ստուգումից ու փորձարկումից՝ անհրաժեշտության դեպքում կարող է իրականացվել արտահերթ ստուգում եւ փորձարկում՝ 6.7.5.12.5-ի համաձայն:

- 6.7.5.12.3. ԳՔՏԿ-ի նախնական ստուգումն ու փորձարկումը ներառում է կառուցվածքի առանձնահատկությունների ստուգումը, ԳՔՏԿ-ի եւ դրա կցամասերի ներքին արտաքին զննումը՝ պատշաճ կերպով հաշվի առնելով փոխադրվող գազերը, ինչպես նաեւ ճնշման տակ փորձարկումը՝ 4.1.4.1-ի P200 փաթեթավորման ցուցման համաձայն փորձարկման ճնշումների կիրառմամբ: Իրավասու մարմնի կամ իրավասու մարմնի կողմից լիազորված մարմնի համաձայնությամբ ճնշման տակ փորձարկումը կարող է լինել հիդրավլիկ փորձարկում կամ փորձարկում այլ հեղուկի կամ գազի կիրառմամբ: Նախքան ԳՔՏԿ-ի շահագործումն իրականացվում է բոլոր օժանդակ սարքավորումների անջրանցիկության փորձարկում եւ գոհացուցիչ աշխատունակության ստուգում: Այն դեպքում, երբ դետալները եւ դրանց կցամասերն առանձին ճնշման փորձարկում են անցնում, ապա դրանք հավաքելուց հետո պետք է նաեւ միասին անջրանցիկության փորձարկում անցնեն:
- 6.7.5.12.4. 5 տարին մեկ պարբերական ստուգումները եւ փորձարկումները ներառում են կառուցվածքի, դետալների եւ օժանդակ սարքավորումների արտաքին զննում՝ 6.7.5.12.6-ի համաձայն: Դետալները եւ խողովակաշարը պետք է փորձարկվեն այն պարբերականությամբ, որը նշված է P200 փաթեթավորման ցուցման մեջ եւ 6.2.1.6-ում նշված դրույթների համաձայն: Այն դեպքում, երբ դետալները եւ սարքավորումներն առանձին ճնշման փորձարկում են անցնում, ապա դրանք հավաքելուց հետո պետք է նաեւ միասին անջրանցիկության փորձարկում անցնեն:
- 6.7.5.12.5. Արտահերթ ստուգում եւ փորձարկում անհրաժեշտ է, երբ ԳՔՏԿ-ն ունի վնասված կամ քայքայված հատվածներ, արտահոսք կամ այլ թերություններ, որոնք կարող են ազդել ԳՔՏԿ-ի կառույցի ամբողջականության վրա: Արտահերթ ստուգման եւ փորձարկման մասշտաբը կախված է ԳՔՏԿ-ի վնասվածքի կամ քայքայման աստիճանից: Այն առնվազն պետք է ներառի 6.7.5.12.6-ով պահանջվող զննումները:
- 6.7.5.12.6. Ձննումներն ապահովում են, որ՝
- ա) արտաքին զննման ընթացքում ստուգվեն դետալների կետային

քայքայումը, կոռուզիան, եռակցման կարանների մաշվածությունը, խանդակները, խաթարումները կամ ցանկացած այլ թերություններ, ներառյալ՝ արտահոսքը, որոնք կարող են շարժական ցիստեռնը փոխադրման համար վտանգավոր դարձնել:

- բ) ստուգվեն, թե արդյոք արտաքին խողովակաշարերը, կափույրները եւ խցանիչներն ունեն քայքայված մասեր կամ ցանկացած այլ թերություններ, ներառյալ արտահոսք, որը կարող է ԳՔՏԿ-ն վտանգավոր դարձնել լցավորման, դատարկման կամ փոխադրման համար:
- գ) կցաշտրթային միացքի կամ անշարժ կցաշտրթի վրայի բացակայող կամ թույլ հեղույսները կամ մանեկները փոխարինվեն կամ ամրացվեն:
- դ) վթարային բոլոր սարքերը եւ կափույրները քայքայված, դեֆորմացված չլինեն եւ չունենան որեւէ այլ վնասվածք կամ թերություն, որը կարող է խանգարել դրանց բնականոն շահագործմանը: Հեռակառավարման փակիչ սարքերը եւ ինքնափակվող կասեցնող փականները գործադրվեն՝ դրանց պատշաճ աշխատանքը ցույց տալու համար:
- ե) ԳՔՏԿ-ի վրա պահանջվող մակնշումը լինի դյուրընթեռնելի եւ բավարարի համապատասխան պահանջները:
- զ) կարկասը, հենարանները եւ ԳՔՏԿ-ն բարձրացնելու համար նախատեսված հարմարանքները լինեն բավարար վիճակում:


6.7.5.12.7. 6.7.5.12.1, 6.7.5.12.3, 6.7.5.12.4 եւ 6.7.5.12.5-ով նախատեսված ստուգումներն ու փորձարկումներն իրականացվում են իրավասու մարմնի կամ նրա լիազորված մարմնի կողմից նշանակված փորձագետի կողմից կամ վերջինիս ներկայությամբ: Եթե ճնշման փորձարկումը նախատեսված է ստուգման կամ փորձարկման ծրագրով, ապա կիրառվում է այն փորձարկման ճնշումը, որը նշված է ԳՔՏԿ-ի տվյալների ցուցանակի վրա: Ճնշման տակ գտնվելու ժամանակ անհրաժեշտ է ստուգել արտահոսքի առկայությունը ԳՔՏԿ-ի դետալներում, խողովակաշարում կամ սարքավորումներում:

6.7.5.12.8. Այն դեպքում, երբ հայտնաբերվում է որեւէ վտանգավոր թերություն, ԳՔՏԿ-ն դուրս է բերվում շահագործումից եւ նորից սկսում է օգտագործվել միայն թերությունը վերացնելուց եւ կրկնակի փորձարկումներ անցնելուց հետո:

6.7.5.13. Մակնշումը

6.7.5.13.1. Յուրաքանչյուր ԳՔՏԿ-ի վրա պետք է մշտապես կցվի հակակոռուզիոն մետաղական ցուցանակ, որն ամուր ամրացվում է

ԳԲՏԿ-ի տեսանելի եւ վերահսկման համար հարմար հատվածում: Մետաղական ցուցանակը չպետք է տեղադրվի դետալների վրա: Դետալները պետք է մակնշվեն 6.2 գլխի համաձայն: Դրոշմավորման կամ նմանատիպ որեւէ այլ մեթոդով ցուցանակի վրա պետք է մակնշված լինեն առնվազն հետեւյալ տեղեկությունները՝

- ա) սեփականատիրոջ վերաբերյալ տեղեկություններ
  - i) սեփականատիրոջ գրանցման համարը.
- բ) արտադրության վերաբերյալ տեղեկություններ
  - i) արտադրության երկիրը.
  - ii) արտադրության տարին.
  - iii) արտադրողի անունը կամ ապրանքանիշը.
  - iv) արտադրողի կողմից դրված խմբաքանակի համարը.
- գ) հաստատման վերաբերյալ տեղեկություններ
  - i) Միավորված ազգերի կազմակերպության փաթեթվածքների խորհրդանշանը .

Այս խորհրդանշանը պետք է օգտագործվի՝ հաստատելու համար, որ փաթեթվածքը, սորուն բեռների համար նախատեսված փափուկ կոնտեյները, շարժական ցիստեռնը կամ ԳԲՏԿ-ն համապատասխանում են 6.1, 6.2, 6.3, 6.5, 6.6, 6.7 կամ 6.11 գլուխների համապատասխան պահանջներին եւ չպետք է օգտագործվեն որեւէ այլ նպատակով.


- ii) հաստատման երկիրը.
  - iii) կառուցվածքի տեսակի հաստատման մասով լիազորված մարմինը.
  - iv) կառուցվածքի տեսակի հաստատման համարը.
  - v) «AA» տառերը, եթե կառուցվածքը հաստատվել է այլընտրանքային կարգավորումներին համապատասխան (տե՛ս 6.7.1.2).
- դ) ճնշումները
- i) փորձարկման ճնշումը (մանոմետրական, արտահայտված բարերով)<sup>3</sup>.
  - ii) նախնական ճնշման փորձարկման ամսաթիվը (ամիսը եւ տարին).

- iii) այն անձի նույնականացման նշանը, ով ներկա է նախնական ճնշման փորձարկմանը.
- ե) ջերմաստիճանները
  - i) հաշվարկային ջերմաստիճանի միջակայքը ( $^{\circ}\text{C}$ )<sup>3</sup>.
- զ) դետալները/տարողությունը
  - i) դետալների քանակը.
  - ii) ընդհանուր տարողությունը (լիտրերով)<sup>3</sup>.
- է) պարբերական ստուգումներ եւ փորձարկումներ
  - i) ամենավերջին պարբերական փորձարկման տեսակը (5 տարին մեկ կամ արտահերթ փորձարկում).
  - ii) ամենավերջին պարբերական ստուգման ամսաթիվը (ամիսը եւ տարին).
  - iii) այն լիազորված մարմնի նույնականացման նշանը, ով իրականացրել է ամենավերջին փորձարկումը կամ ներկա է գտնվել դրա իրականացմանը:

---

<sup>3</sup> Կիրառվող չափման միավորը պետք է նշվի:

**Պատկեր 6.7.5.13.1. Նույնականացման ցուցանակի մակնշման օրինակ**

Սեփականատիրոջ գրանցման համարը					
ԱՐՏԱԴՐՈՂԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ					
Արտադրման երկիրը					
Արտադրման տարին					
Արտադրողը					
Արտադրողի կողմից դրված խմբաքանակի համարը					
ՀԱՍՏԱՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ					
	Հաստատման երկիրը				
	Կառուցվածքի տեսակի հաստատման մասով լիազորված մարմինը				
	Կառուցվածքի տեսակի հաստատման համարը				«AA» տառերը (ըստ անհրաժեշտության)
ՃՆՇՈՒՄՆԵՐԸ					
Փորձարկման ճնշումը		բար			
Նախնական ճնշման փորձարկման ամսաթիվը		(ամիսը/տարին)	Ներկա գտնվող անձի կնիքը		
ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ					
Հաշվարկային ջերմաստիճանի միջակայքը		°C      մինչև      °C			
ԴԵՏԱԼՆԵՐԸ/ՏԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ					
Դետալների թիվը					
Ընդհանուր տարողությունը		լիտր			
ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՍՏՈՒԳԻՈՒՄՆԵՐԸ/ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆԵՐԸ					
Փորձարկման տեսակը	Փորձարկման ամսաթիվը	Ներկա գտնվող անձի կնիքը	Փորձարկման տեսակը	Փորձարկման ամսաթիվը	Ներկա գտնվող անձի կնիքը
	(ամիսը/տարին)			(ամիսը/տարին)	

6.7.5.13.2. Հետեյալ տեղեկությունները պետք է մակնշվեն մետաղական ցուցանակի վրա, որն ամուր ամրացված է ԳԲՏԿ-ի վրա՝

օպերատորի անունը

բեռնավորման առավելագույն թույլատրելի զանգվածը \_\_\_\_\_ կգ

աշխատանքային ճնշումը 15°C-ում՝ \_\_\_\_\_ մանոմետրական, արտահայտված բարերով

առավելագույն թույլատրելի անզուտ քաշը (ԱԹԱՔ)՝ \_\_\_\_\_ կգ



բեռնված զանգվածը \_\_\_\_\_ կգ

## ԳԼՈՒԽ 6.8

### ԱՆՇԱՐԺ ՑԻՍՏԵՌՆՆԵՐԻ (ԱՎՏՈՑԻՍՏԵՌՆՆԵՐԻ), ՀԱՆՈՎԻ ՑԻՍՏԵՌՆՆԵՐԻ, ՑԻՍՏԵՌՆ-ԿՈՆՏԵՅՆԵՐՆԵՐԻ ԵՎ ՄԵՏԱՂԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԿՈՐՊՈՒՍՈՎ ՀԱՆՈՎԻ ԹԱՓՔ-ՑԻՍՏԵՌՆՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՄԱՐՏԿՈՑԱՆՄԱՆ ՀԱՎԱՔՎԱԾՔՈՎ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ԳԱԶԻ ԲԱԶՄԱՏԱՐՐ ԿՈՆՏԵՅՆԵՐՆԵՐԻ (ԳՐՏԿ-ներ) ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ, ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ, ՏԵՍԱԿԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ, ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՄԱԿՆՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1.** Շարժական ցիստեռնների եւ ՄԱԿ-ի նշագրման՝ գազի բազմաարար կոնտեյներների (ԳՐՏԿ-ներ) համար տե՛ս 6.7 գլուխը, վոլրկնիտից պատրաստված ցիստեռնների համար տե՛ս 6.9 գլուխը, թափոնների համար նախատեսված վակուումային ցիստեռնների համար տե՛ս 6.10 գլուխը:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2.** Անշարժ ցիստեռնների (ավտոցիստեռնների) եւ լրացուցիչ սարքերով հանովի ցիստեռնների համար տե՛ս 3.3 գլխի 664-րդ հատուկ դրույթը:

6.8.1. Գործողության ոլորտը

6.8.1.1. Այն պահանջները, որոնք նշված են էջի ամբողջ լայնությամբ, կիրառվում են ինչպես անշարժ ցիստեռնների (ավտոցիստեռնների), հանովի ցիստեռնների եւ մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցների, այնպես էլ ցիստեռն-կոնտեյներների, հանովի թափք-ցիստեռնների եւ ԳՐՏԿ-ների նկատմամբ: Առանձին սյունակում ընդգրկված պահանջները կիրառվում են միայն՝

- անշարժ ցիստեռնների (ավտոցիստեռնների), հանովի ցիստեռնների եւ մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցների նկատմամբ (ձախ սյունակ).
- ցիստեռն-կոնտեյներների, հանովի թափք-ցիստեռնների եւ ԳՐՏԿ-ների նկատմամբ (աջ սյունակ):

6.8.1.2. Սույն պահանջները կիրառվում են

անշարժ ցիստեռնների (ավտոցիստեռնների), հանովի ցիստեռնների եւ մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցների նկատմամբ,

ցիստեռն-կոնտեյներների, հանովի թափք-ցիստեռնների եւ ԳՐՏԿ-ների նկատմամբ,

որոնք օգտագործվում են գազային, հեղուկ, փոշենման եւ հատիկավոր նյութերի փոխադրման համար:

6.8.1.3. 6.8.2-ով սահմանված են այն պահանջները, որոնք կիրառվում են բոլոր դասերին պատկանող նյութերի փոխադրման համար նախատեսված անշարժ ցիստեռնների (ավտոցիստեռնների), հանովի ցիստեռնների, ցիստեռն-կոնտեյներների եւ հանովի թափք-ցիստեռնների նկատմամբ, ինչպես նաեւ 2-րդ դասին պատկանող գազերի համար նախատեսված մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցների եւ ԳԲՏԿ-ների նկատմամբ: 6.8.3 - 6.8.5-ը պարունակում են 6.8.2-ի պահանջները լրացնող կամ փոփոխող հատուկ պահանջներ:

6.8.1.4. Այս ցիստեռնների օգտագործման վերաբերյալ դրույթների համար տե՛ս 4.3 գլուխը:

6.8.2. Բոլոր դասերի նկատմամբ կիրառվող պահանջները

6.8.2.1. Պատրաստումը

Հիմնական սկզբունքները

6.8.2.1.1. Կորպուսները, դրանց հարմարանքները եւ օժանդակ ու կառուցվածքային սարքավորումները պետք է նախագծվեն այնպես, որ առանց պարունակության կորստի կարողանան դիմակայել (բացառությամբ գազի այն քանակի, որը դուրս է գալիս գազերի հեռացման համար նախատեսված անցքերի միջով)՝

- ստատիկ եւ դինամիկ բեռնվածքներին փոխադրման սովորական պայմաններում՝ սահմանված 6.8.2.1.2-ով եւ 6.8.2.1.13-ով.
- նախատեսված նվազագույն բեռնվածքներին՝ սահմանված 6.8.2.1.15-ով:

6.8.2.1.2 Ցիստեռնները եւ դրանց ամրակման դետալները պետք է կարողանան թույլատրելի առավելագույն բեռնվածության պայմաններում դիմակայել հետեւյալ ճնշումներին, որոնք համապատասխանում են՝

- շարժման ուղղությամբ՝ ընդհանուր զանգվածի կրկնապատիկին.
- շարժման ուղղությամբ՝ ուղիղ անկյան տակ՝ ընդհանուր զանգվածին.
- ուղղահայաց դիրքով դեպի վերեւ՝ ընդհանուր զանգվածին.
- ուղղահայաց դիրքով դեպի ներքեւ՝ ընդհանուր զանգվածի կրկնապատիկին:

Ցիստեռն-կոնտեյներները եւ դրանց ամրակման դետալները պետք է կարողանան թույլատրելի առավելագույն բեռնվածության պայմաններում դիմակայել հետեւյալ ճնշումներին, որոնք համապատասխանում են՝

- շարժման ուղղությամբ՝ ընդհանուր զանգվածի կրկնապատիկին.
- շարժման ուղղությամբ՝ հորիզոնական դիրքով ուղիղ անկյան տակ՝ ընդհանուր զանգվածին.
- (եթե շարժման ուղղությունը հստակ սահմանված չէ՝ ընդհանուր զանգվածի կրկնապատիկին՝

յուրաքանչյուր ուղղությամբ).

- ուղղահայաց դիրքով դեպի վերեւ՝  
ընդհանուր զանգվածին

- ուղղահայաց դիրքով դեպի ներքեւ՝  
ընդհանուր զանգվածի  
կրկնապատիկին:

6.8.2.1.3. Կորպուսի պատերը պետք է ունենան առնվազն հետտեյալ կետերում սահմանված հաստությունը՝

6.8.2.1.17 - 6.8.2.1.21

6.8.2.1.17 - 6.8.2.1.20:

6.8.2.1.4. Կորպուսները պետք է նախագծվեն եւ պատրաստվեն 6.8.2.6-ում նշված ստանդարտների պահանջներին համապատասխան կամ իրավասու մարմնի կողմից ճանաչված՝ 6.8.2.7-ին համապատասխան տեխնիկական կանոնների պահանջներին համապատասխան, որտեղ նյութն ընտրվում է, եւ կորպուսի պատերի հաստությունը սահմանվում է՝ հաշվի առնելով լցավորման եւ աշխատանքային առավելագույն ու նվազագույն ջերմաստիճանները, սակայն, այդուհանդերձ, 6.8.2.1.6 - 6.8.2.1.26-ի նվազագույն պահանջները պետք է պահպանվեն:

6.8.2.1.5. Որոշակի վտանգավոր նյութերի համար նախատեսված ցիստեռնները պետք է ունենան լրացուցիչ պաշտպանություն: Այս պաշտպանությունը կարող է ապահովվել կորպուսի պատերի լրացուցիչ հաստություն (առավել մեծ հաշվարկային ճնշում)՝ հաշվի առնելով տվյալ նյութերի վտանգավոր բնույթը, կամ պաշտպանիչ սարքի տեղադրման միջոցով (տե՛ս 6.8.4-ի հատուկ դրույթները):

6.8.2.1.6. Զոդակարերը պետք է լինեն որակյալ եւ ապահովվեն առավելագույն հուսալիություն: Զոդակարերի իրականացումը եւ դրանց ստուգումները պետք է համապատասխանեն 6.8.2.1.23-ի պահանջներին:

6.8.2.1.7. Կորպուսները բացասական ներքին ճնշման հետեւանքով առաջացած դեֆորմացիայի ռիսկից պաշտպանելու համար պետք է միջոցներ ձեռնարկվեն: 6.8.2.2.6-ին համապատասխան կորպուսներից տարբեր կորպուսները, որոնք, ըստ նախագծի, հագեցած են վակուումային կափույրներով, պետք է առանց մնացորդային դեֆորմացիայի կարողանան դիմակայել ներքին ճնշումից բարձր՝ առնվազն 21 կՊա (0,21 բար) արտաքին ճնշմանը: Միայն II եւ III փաթեթավորման խմբերի՝ փոխադրման ժամանակ չհեղուկացող պինդ նյութերի (փոշենման կամ հատիկավոր) փոխադրման համար օգտագործվող կորպուսները կարող են նախագծվել ավելի ցածր արտաքին ճնշման համար, բայց 5 կՊա-ից (0,05 բար) ոչ պակաս: Վակուումային կափույրները պետք է կարգաբերվեն՝ ցիստեռնի հաշվարկային վակուումային ճնշումը չգերազանցող ճնշման ազդեցության դեպքում

գործելու համար: Այն կորպուսները, որոնք, ըստ նախագծի, հագեցած չեն վակուումային կափույրներով, պետք է առանց մնացորդային դեֆորմացիայի կարողանան դիմակայել ներքին ճնշումից բարձր՝ առնվազն 40 կՊա (0,4 բար) արտաքին ճնշմանը:

Կորպուսների նյութերը

6.8.2.1.8. Կորպուսները պետք է պատրաստվեն համապատասխան մետաղական նյութերից, որոնք, եթե տարբեր դասերում այլ ջերմաստիճանի միջակայքեր նախատեսված չեն, ապա պետք է կայուն լինեն փխրուն քայքայման եւ լարվածության տակ կոռոզիոն ճաքերի նկատմամբ՝  $-20\text{ }^{\circ}\text{C}$ -ից  $+50\text{ }^{\circ}\text{C}$  ջերմաստիճանի միջակայքում:

6.8.2.1.9. Կորպուսների կամ դրանց պաշտպանիչ երեսապատվածքների նյութերը, որոնք շփման մեջ են պարունակության հետ, չպետք է պարունակեն դրա հետ վտանգավոր ռեակցիայի մեջ մտնող նյութեր (տե՛ս «Վտանգավոր ռեակցիան» 1.2.1-ում), առաջացնեն վտանգավոր միացություններ կամ էապես թուլացնեն նյութի ամրությունը:

Եթե փոխադրվող նյութի եւ կորպուսի պատրաստման համար օգտագործվող նյութի միջեւ շփումն առաջացնում է կորպուսի պատերի հաստության աստիճանական նվազում, ապա արտադրության ժամանակ այս հաստությունը պետք է ավելացվի համապատասխան չափով: Հնարավոր քայքայման (կոռոզիայի) համար նախատեսված այս լրացուցիչ հաստությունը չպետք է հաշվի առնվի՝ կորպուսի պատերի հաստությունը հաշվարկելիս:

6.8.2.1.10. Եռակցված կորպուսների դեպքում պետք է օգտագործվեն միայն անթերի զոդվելու հատկություն ունեցող նյութեր, որոնք արտաքին միջավայրի  $-20\text{ }^{\circ}\text{C}$  ջերմաստիճանի դեպքում ունեն հարվածի երաշխավորված ամրություն մասնավորապես զոդակարերի եւ դրանց հարող տարածքների շրջանում:

Եթե օգտագործվում է մանրահատիկ պողպատ, ապա Re-ի հոսունության սահմանի երաշխավորված արժեքը չպետք է գերազանցի  $460\text{ Ն/մմ}^2$ -ն, իսկ Rm-ի ձգման ամրության վերին շեմի երաշխավորված արժեքը չպետք է գերազանցի  $725\text{ Ն/մմ}^2$ -ն՝ տվյալ նյութի մասնագրերին համապատասխան:

6.8.2.1.11. Եռակցված ցիստեռնների պատրաստման համար օգտագործվող պողպատների դեպքում չեն թույլատրվում Re/Rm՝ 0,85-ը գերազանցող հարաբերակցությունները:

Re-ը՝ ակնհայտ հոսունության սահմանը՝ հստակ արտահայտված հոսունության սահման ունեցող պողպատների դեպքում, կամ

երաշխավորված 2,0% պայմանական հոսունության սահմանը՝ հստակ

արտահայտված հոսունության սահման չունեցող պողպատների դեպքում (1% աուստենիտային պողպատների դեպքում),

Rm-ը՝ ձգման ամրության սահմանը:

Նյութի ստուգման սերտիֆիկատում սահմանված արժեքները պետք է հիմք լինեն այս հարաբերակցությունը յուրաքանչյուր դեպքում սահմանելու համար:

6.8.2.1.12. Պողպատի երկարացումը խզման դեպքում (%-ային արտահայտմամբ) պետք է լինի նվազագույնը

10 000

սահմանված ձգման ամրության սահման՝  
արտահայտված  $\text{N}/\text{մմ}^2$ -ով,

սակայն ամեն դեպքում մանրահատիկ պողպատի համար այն պետք է լինի նվազագույնը 16% եւ նվազագույնը 20%՝ այլ պողպատների համար:

Այլումինի համաձուլվածքների դեպքում երկարացումը խզման դեպքում պետք է լինի նվազագույնը 12%<sup>1</sup>

Կորպուսի պատերի հաստության հաշվարկումը

6.8.2.1.13. Այն ճնշումը, որի վրա հիմնված է կորպուսի պատերի հաստությունը, չպետք է լինի հաշվարկային ճնշումից ցածր, սակայն պետք է հաշվի առնել նաեւ 6.8.2.1.1-ում նշված բեռնվածքները եւ անհրաժեշտության դեպքում հետեւյալ բեռնվածքները՝

Այն փոխադրամիջոցների դեպքում, որտեղ ցիստեռնը բեռնվածքի տակ գտնվող ինքնակիր միավոր է, կորպուսը պետք է կառուցվի այնպես, որ դիմակայի այդ բեռնվածքին՝ բացի այլ աղբյուրների՝ իր վրա ազդող ճնշումներից:

Այս բեռնվածքների ազդեցության դեպքում կորպուսի եւ դրա ամրակման դետալների առավել լարված կետի

Այս բեռնվածքներից յուրաքանչյուրի ազդեցության դեպքում պետք է

<sup>1</sup> Մեքսիկյան ցուցանակի դեպքում ձգման փորձարկման նմուշների առանցքները պետք է փաթեթվածքի ուղղությամբ լինեն ուղղահայաց դիրքում: Մնացորդային երկարացումը խզման դեպքում չափվում է կլոր լայնակի հատումով փորձարկման նմուշների վրա, որտեղ նիշերի միջեւ հեռավորությունը՝ «l»-ը, հինգ անգամ գերազանցում է տրամագծին՝ «d»-ին ( $l = 5d$ ). Եթե օգտագործվում է ուղղանկյուն հատումով փորձարկման նմուշ, ապա նիշերի միջեւ հեռավորությունը հաշվարկվում է հետեւյալ բանաձեռով՝

$$l = 5,65 \sqrt{F_0}$$

որտեղ  $F_0$ -ը ցույց է տալիս փորձարկման նմուշի լայնական հատվածքի սկզբնական տարածքը:

ճնշումը չպետք է գերազանցի  
6.8.2.1.16-ում սահմանված  $\sigma$  արժեքը:

պահպանել ամրության պաշարի  
հետեւյալ գործակիցները՝

- հստակ արտահայտված  
հոսունության սահման ունեցող  
մետաղների դեպքում՝ 1,5 ամրության  
պաշարի գործակից՝ ակնհայտ  
հոսունության սահմանի  
հարաբերությամբ. կամ

- հստակ արտահայտված  
հոսունության սահման չունեցող  
մետաղների դեպքում՝ 1,5 ամրության  
պաշարի գործակից՝ երաշխավորված  
0,2% հոսունության պայմանական  
սահմանի հարաբերությամբ  
(1% առավելագույն երկարացում՝  
աուստենիտային պողպատների  
դեպքում)

6.8.2.1.14. Հաշվարկային ճնշումը նշված է ծածկագրի երկրորդ մասում (տե՛ս  
4.3.4.1)՝ համաձայն 3.2 գլխի Ա աղյուսակի 12-րդ սյունակի:

Եթե նշված է «G» տառը, ապա կիրառվում են հետեւյալ  
պահանջները՝

ա) 50 °C-ի դեպքում 110 կՊա-ից ոչ ավելի (1,1 բար) (բացարձակ  
ճնշում) գոլորշու ճնշում ունեցող նյութերի փոխադրման համար  
նախատեսված՝ ինքնահոս դատարկվող կորպուսների  
հաշվարկային ճնշումը պետք է հավասար լինի փոխադրվող  
նյութի ստատիկ ճնշման կրկնապատիկին, բայց ոչ պակաս,  
քան ջրի ստատիկ ճնշման կրկնապատիկը:

բ) 50 °C-ի դեպքում 110 կՊա-ից ոչ ավելի (1,1 բար) (բացարձակ)  
գոլորշու ճնշում ունեցող նյութերի փոխադրման համար  
նախատեսված՝ ճնշման տակ լցավորվող կամ դատարկվող  
կորպուսների հաշվարկային ճնշումը պետք է գերազանցի  
լցավորման կամ արտամղման ճնշումը 1,3 անգամ:

Եթե նվազագույն հաշվարկային ճնշման թվային արժեքը տրված է  
(մանոմետրական ճնշում), ապա կորպուսը պետք է հաշվարկվի այս  
ճնշման համար, որը պետք է առնվազն 1,3 անգամ գերազանցի

լցավորման կամ արտամղման ճնշումը: Այս դեպքերում կիրառվում են հետևյալ նվազագույն պահանջները՝

- գ) 50 °C-ի դեպքում 110 կՊա-ից ավելի (1,1 բար) գոլորշու ճնշում եւ 35 °C-ից բարձր եռման ջերմաստիճան ունեցող նյութերի փոխադրման համար նախատեսված կորպուսների հաշվարկային ճնշումը, անկախ լցավորման կամ դատարկման համակարգից, պետք է հավասար լինի առնվազն 150 կՊա մանոմետրական ճնշմանը (1,5 բար) կամ գերազանցի լցավորման կամ արտամղման ճնշումը 1,3 անգամ՝ կախված այն հանգամանքից, թե այս երկու արժեքներից որն է ավելի բարձր:
- դ) 35 °C-ից ոչ ավելի եռման ջերմաստիճան ունեցող նյութերի փոխադրման համար նախատեսված կորպուսների հաշվարկային ճնշումը, անկախ լցավորման կամ դատարկման համակարգից, պետք է գերազանցի լցավորման կամ արտամղման ճնշումը, սակայն պետք է լինի 0,4 ՄՊա-ից ոչ պակաս (4 բար) (մանոմետրական ճնշում):

6.8.2.1.15. Փորձարկման ճնշման դեպքում  $\sigma$  լարվածության արժեքը կորպուսի ամենալարված կետում չպետք է գերազանցի ստորեւ նշված սահմանները՝ կախված նյութից: Անհրաժեշտ է հաշվի առնել զոդակարերի ամրության հնարավոր թուլացումը:

6.8.2.1.16. Փորձարկման ճնշման դեպքում  $\sigma$  լարվածության արժեքը բոլոր մետաղների եւ համաձուլվածքների համար պետք է լինի ավելի ցածր, քան հետևյալ բանաձևերում բերված արժեքներից ամենափոքրը՝

$$\sigma < 0,75 Re \text{ կամ } \sigma < 0,5 Rm$$

որտեղ՝

Re-ն՝ ակնհայտ հոսունության սահման՝ հստակ արտահայտված հոսունության սահման ունեցող պողպատների դեպքում, կամ

երաշխավորված 2,0% պայմանական հոսունության սահման՝ հստակ արտահայտված հոսունության սահման չունեցող պողպատների դեպքում (1%՝ աուստենիտային պողպատների դեպքում)

Rm-ը՝ ձգման ամրության սահման:

Կիրառվող Re եւ Rm արժեքները պետք է լինեն սահմանված նվազագույն արժեքներ՝ տվյալ նյութերի գծով ստանդարտների համաձայն: Եթե տվյալ մետաղի կամ համաձուլվածքի գծով ստանդարտ գոյություն չունի, ապա Re եւ Rm արժեքները պետք է հաստատվեն իրավասու մարմնի կամ նրա կողմից նշանակված մարմնի կողմից:

Աուստենիտային պողպատների օգտագործման դեպքում տվյալ



նյութի գծով ստանդարտների համաձայն սահմանված նվազագույն արժեքները կարող են մեծացվել մինչև 15%-ի չափով, եթե այդ առավել բարձր արժեքները հաստատված են նյութի ստուգման սերտիֆիկատում: Այնուամենայնիվ, նվազագույն արժեքները չպետք է գերազանցվեն, եթե կիրառվում է 6.8.2.1.18-ում նշված բանաձևեր:

Կորպուսի պատերի նվազագույն հաստությունը

6.8.2.1.17. Կորպուսի պատերի հաստությունը պետք է լինի ոչ պակաս, քան հետևյալ բանաձևերով հաշվարկված արժեքներից ամենամեծը՝

$$e = \frac{P_T D}{2 \sigma \lambda}$$

$$e = \frac{P_C D}{2 \sigma}$$

որտեղ՝

e-ն՝ կորպուսի պատերի նվազագույն հաստությունը՝ արտահայտված մմ-ով

P<sub>T</sub>-ն՝ փորձարկման ճնշումը՝ արտահայտված ՄՊա-ով

P<sub>C</sub>-ն՝ 6.8.2.1.14-ում սահմանված հաշվարկային ճնշումը՝ արտահայտված ՄՊա-ով

D-ն՝ կորպուսի ներքին տրամագիծը՝ արտահայտված մմ-ով

σ-ն՝ 6.8.2.1.16-ում սահմանված թույլատրելի լարվածությունը՝ արտահայտված Ն/մմ<sup>2</sup>-ով

λ-ն՝ 1-ը չգերազանցող գործակից, որը հաշվի է առնում զոդակարերի պատճառով ամրության հնարավոր թուլացումը եւ կապված է 6.8.2.1.23-ում սահմանված ստուգման մեթոդների հետ:

Հաստությունը ոչ մի դեպքում չպետք է լինի ավելի փոքր, քան մեծությունները՝ սահմանված

6.8.2.1.18 - 6.8.2.1.21-ում:

6.8.2.1.18 - 6.8.2.1.20-ում:

6.8.2.1.18 1,80 մ-ից ոչ ավելի տրամագիծ ունեցող կլոր լայնակի հատումով կորպուսների պատերը<sup>2</sup>, բացառությամբ 6.8.2.1.21-ում նշված կորպուսների, պետք է ունենան 5 մմ-ից ոչ պակաս հաստություն, եթե պատրաստված են փափուկ

Կորպուսների պատերը պետք է ունենան 5 մմ հաստություն, եթե պատրաստված են փափուկ պողպատից<sup>3</sup> (6.8.2.1.11-ի եւ 6.8.2.1.12-ի պահանջներին համապատասխան), կամ համարժեք հաստություն, եթե

պողպատից<sup>2</sup>, կամ համարժեք հաստություն, եթե պատրաստված են այլ մետաղից:

Եթե տրամագիծը գերազանցում է 1,80 մ-ը, ապա այս հաստությունը պետք է ավելացվի մինչև 6 մմ, եթե կորպուսը պատրաստված է փափուկ պողպատից<sup>3</sup>, բացառությամբ այն կորպուսների, որոնք նախատեսված են փոշենման կամ հատիկավոր նյութերի փոխադրման համար, կամ ավելացվի մինչև համարժեք հաստություն, եթե կորպուսը պատրաստված է այլ մետաղից:

պատրաստված են այլ մետաղից:

Եթե տրամագիծը գերազանցում է 1,80 մ-ը, ապա այս հաստությունը պետք է ավելացվի մինչև 6 մմ, եթե կորպուսը պատրաստված է փափուկ պողպատից<sup>4</sup>, բացառությամբ այն կորպուսների, որոնք նախատեսված են փոշենման կամ հատիկավոր նյութերի փոխադրման համար, կամ ավելացվի մինչև համարժեք հաստություն, եթե կորպուսը պատրաստված է այլ մետաղից:

Անկախ օգտագործվող մետաղից, կորպուսի պատերի հաստությունը ոչ մի դեպքում չպետք է 3 մմ-ից պակաս լինի:

<sup>2</sup> Ոչ կլոր լայնակի հատումով կորպուսների դեպքում, ինչպիսիք են օրինակ՝ ուղղանկյունաձև կամ էլիպսաձև կորպուսները, նշված տրամագծերը համապատասխանում են նույն տարածքի կլոր լայնակի հատման հիման վրա հաշվարկվող տրամագծերին: Լայնակի հատման նման ձևերի դեպքում կորպուսի պատի ուռուցիկության շառավիղը չպետք է գերազանցի 2000 մմ-ը, իսկ վերին եւ ստորին պատերի ուռուցիկության շառավիղը՝ 3000 մմ-ը:

<sup>3</sup> «Փափուկ պողպատի» եւ «ստանդարտ պողպատի» սահմանումները տե՛ս 1.2.1 բաժնում: Տվյալ դեպքում «փափուկ պողպատ» հասկացությունը ներառում է նաեւ EN նյութերի գծով ստանդարտներում որպես «փափուկ պողպատ» նշված պողպատը, որի նվազագույն ձգման ամրությունը կազմում է 360 Ն/մմ<sup>2</sup>-490 Ն/մմ<sup>2</sup>, եւ որի երկարացումը խզման դեպքում համապատասխանում է 6.8.2.1.12 կետում նշված արժեքին:

«Համարժեք հաստություն» նշանակում է հետեւյալ բանաձեւի միջոցով ստացված հաստությունը<sup>4</sup>

$$e_1 = \frac{464e_0}{\sqrt[3]{(R_{m1} A_1)^2}}$$

6.8.2.1.19 Եթե ցիստեոնը պաշտպանված է կողային հարվածներից առաջացող վնասվածքներից կամ շրջվելուց՝ համաձայն 6.8.2.1.20-ի, իրավասու մարմինը կարող է թույլատրել նվազեցնել վերը նշված նվազագույն հաստությունը՝ նախատեսված պաշտպանության համամասնությամբ. այնուամենայնիվ, այդ հաստությունը պետք է լինի 3 մմ-ից ոչ պակաս՝ փափուկ պողպատի<sup>3</sup> համար կամ համարժեք հաստությունից ոչ պակաս՝ այլ նյութերի համար այն կորպուսների դեպքում, որոնց տրամագիծը չի գերազանցում 1,80 մ-ը: Այն կորպուսների համար, որոնց տրամագիծը գերազանցում է 1,80մ-ը, վերը նշված նվազագույն հաստությունը պետք է ավելացվի մինչև 4 մմ՝ փափուկ պողպատի<sup>3</sup>

Եթե ցիստեոնը պաշտպանված է վնասվածքներից՝ համաձայն 6.8.2.1.20-ի, իրավասու մարմինը կարող է թույլատրել նվազեցնել վերը նշված նվազագույն հաստությունը՝ նախատեսված պաշտպանության համամասնությամբ. այնուամենայնիվ, այդ հաստությունը պետք է լինի 3 մմ-ից ոչ պակաս՝ փափուկ պողպատի համար<sup>3</sup> կամ համարժեք հաստությունից ոչ պակաս՝ այլ նյութերի համար այն կորպուսների դեպքում, որոնց տրամագիծը չի գերազանցում 1,80 մ-ը: Այն կորպուսների համար, որոնց տրամագիծը գերազանցում է 1,80մ-ը, այս նվազագույն հաստությունը պետք է ավելացվի մինչև 4 մմ՝ փափուկ պողպատի<sup>3</sup> դեպքում եւ մինչև 4 համարժեք հաստություն՝ այլ

<sup>4</sup> Այս բանաձեւը դուրս է բերված հետեւյալ ընդհանուր բանաձեւից՝

$$e_1 = e_0 \sqrt[3]{\left(\frac{R_{m0} A_0}{R_{m1} A_1}\right)^2}$$

որտեղ՝

$e_1$ -ը՝ ընտրված մետաղից պատրաստված կորպուսի պարի նվազագույն հաստությունը՝ արտահայտված մմ-ով.

$e_0$ -ն՝ փափուկ պողպատից պատրաստված կորպուսի պարի նվազագույն հաստությունը՝ արտահայտված մմ-ով՝ համաձայն 6.8.2.1.18-ի եւ 6.8.2.1.19-ի.

$R_{m0}$ -ն՝ 370 (ձգման ամրության սահմանը՝ ստանդարտ պողպատի դեպքում՝ արտահայտված Ն/մմ<sup>2</sup>-ով. տե՛ս սահմանումը 1.2.1, բաժնում).

$A_0$ -ն՝ 27 (երկարացումը խզման դեպքում ստանդարտ պողպատի դեպքում՝ արտահայտված %-ով).

$R_{m1}$ -ը՝ ընտրված մետաղի ձգման ամրության նվազագույն սահմանը՝ արտահայտված Ն/մմ<sup>2</sup>-ով, եւ  $A_1$ -ը՝ ընտրված մետաղի նվազագույն երկարացումը խզման դեպքում ձգման ճնշման տակ՝ արտահայտված %-ով:

<sup>3</sup> «Փափուկ պողպատի» եւ «ստանդարտ պողպատի» սահմանումները տե՛ս 1.2.1 բաժնում: Տվյալ դեպքում «փափուկ պողպատ» հասկացությունը ներառում է նաեւ EN նյութերի գծով ստանդարտներում որպես «փափուկ պողպատ» նշված պողպատը, որի նվազագույն ձգման ամրությունը կազմում է 360 Ն/մմ<sup>2</sup>-490 Ն/մմ<sup>2</sup>, եւ որի երկարացումը խզման դեպքում համապատասխանում է 6.8.2.1.12 կետում նշված արժեքին:

դեպքում եւ մինչեւ համարժեք հաստություն՝ այլ մետաղների դեպքում:

«Համարժեք հաստություն» նշանակում է 6.8.2.1.18-ում նշված բանաձեւով հաշվարկված հաստությունը:

Բացառությամբ 6.8.2.1.21-ով նախատեսված դեպքերի՝ 6.8.2.1.20 (ա) կամ (բ)-ին համապատասխան վնասվածքներից պաշտպանություն ունեցող կորպուսների պատերի հաստությունը պետք է լինի ոչ պակաս, քան ստորեւ ներկայացվող աղյուսակում նշված արժեքները:

մետաղների դեպքում:

«Համարժեք հաստություն» նշանակում է 6.8.2.1.18-ում նշված բանաձեւով հաշվարկված հաստությունը:

6.8.2.1.20-ին համապատասխան վնասվածքներից պաշտպանություն ունեցող կորպուսների պատերի հաստությունը պետք է լինի ոչ պակաս, քան ստորեւ ներկայացվող աղյուսակում նշված արժեքները:

	Կորպուսի տրամագիծը	< 1.80 մ	> 1.80 մ
Կորպուսների պատերի նվազագույն հաստությունը	Աուստենիտային չժանգոտվող պողպատ	2,5 մմ	3 մմ
	Ֆերիտոաուստինիտային չժանգոտվող պողպատ	3 մմ	3,5 մմ
	Այլ պողպատներ	3 մմ	4 մմ
	Ալյումինի համաձուլվածքներ	4 մմ	5 մմ
	99,80% մաքուր ալյումին	6 մմ	8 մմ

6.8.2.1.20 1990 թվականի հունվարի 1-ից հետո պատրաստված ցիստեռնները համարվում են վնասվածքներից պաշտպանված, ինչպես նշված է 6.8.2.1.19-ում, եթե ձեռնարկվել են հետեւյալ միջոցառումները<sup>5</sup> կամ դրանց համարժեք միջոցառումներ.  
ա) Փոշենման կամ հատիկավոր

6.8.2.1.19-ում նշված պաշտպանությունը կարող է լինել՝  
- ամբողջական արտաքին կառուցվածքային պաշտպանություն, ինչպիսին «սենդվիչ» տեսակի կառուցվածքն է, որտեղ արտաքին երեսվածքն

<sup>5</sup> Համարժեք միջոցառումներ նշանակում է 6.8.2.6 կետում հղում կատարված սրանդարտում տրված միջոցառումներ:

նյութերի փոխադրման համար նախատեսված ցիստեռնների դեպքում վնասվածքներից պաշտպանության մակարդակը պետք է բավարարի իրավասու մարմնի պահանջները:

բ) Այլ նյութերի փոխադրման համար նախատեսված ցիստեռնների դեպքում վնասվածքներից պաշտպանությունը համարվում է ապահովված, եթե՝

ամրացված է կորպուսին. կամ

- կառուցվածք, որտեղ կորպուսը տեղադրված է լրակազմ կարկասի մեջ, որը ներառում է երկայնական եւ լայնական կառուցվածքային դետալներ. կամ

- երկպատ կառուցվածք:

1. Կլոր կամ էլիպսաձեւ լայնակի հատումով եւ առավելագույնը 2 մ կորության շառավիղ ունեցող կորպուսները հագեցած են ուժեղացնող դետալներով, այդ թվում՝ բաժանարար միջնապատերով, ալեբեկիչ միջնորմներով կամ ներքին կամ արտաքին օղակներով, եւ տեղադրված են այնպես, որ բավարարվում է հետեւյալ պահանջներից առնվազն մեկը.

- Երկու հարակից ուժեղացնող դետալների միջեւ հեռավորությունը չի գերազանցում 1,75 մ-ը:

- Երկու բաժանարար միջնապատերի կամ ալեբեկիչ միջնորմների միջեւ տարածության ծավալը չի գերազանցում 7500 լ-ն:

Կցորդման դետալով ցանկացած օղակի ուղղահայաց հարթության լայնակի հատումը պետք է ունենա առնվազն 10 սմ<sup>3</sup> դիմադրության մոմենտ:

Եթե ցիստեռններն ունեն կրկնակի պատեր՝ վակուումային միջնաշերտով, ապա արտաքին մետաղական պատի եւ կորպուսի պատի ամբողջական հաստությունը պետք է համապատասխանի 6.8.2.1.18-ով սահմանված պատի նվազագույն հաստությանը, այնուամենայնիվ, կորպուսի պատերի հաստությունը պետք է լինի 6.8.2.1.19-ով սահմանված նվազագույն հաստության չափսից ոչ պակաս:

Եթե ցիստեռններն ունեն կրկնակի պատեր՝ պինդ նյութից պատրաստված եւ առնվազն 50 մմ հաստությամբ միջանկյալ շերտով, ապա արտաքին պատը պետք է ունենա 0,5 մմ-ից ոչ պակաս հաստություն փափուկ պողպատից<sup>3</sup> պատրաստված լինելու դեպքում կամ առնվազն 2 մմ հաստություն, եթե պատրաստված է ապակե մանրաթելով ամրապնդված պլաստիկ նյութից: Որպես պինդ նյութից պատրաստված միջանկյալ

<sup>3</sup> «Փափուկ պողպատի» եւ «սրանդարձ պողպատի» սահմանումները տե՛ս 1.2.1 բաժնում: Տվյալ դեպքում «փափուկ պողպատ» հասկացությունը ներառում է նաեւ EN նյութերի գծով սրանդարտներում որպես «փափուկ պողպատ» նշված պողպատը, որի նվազագույն ձգման ամրությունը կազմում է 360 Ն/մմ<sup>2</sup> - 490 Ն/մմ<sup>2</sup>, եւ որի երկարացումը խզման դեպքում համապատասխանում է 6.8.2.1.12 կետում նշված արժեքին:

Արտաքին օդակների ցցված ծայրերի շառավիղը պետք է լինի առնվազն 2,5 մմ:

Բաժանարար միջնապատերը եւ ալեբեկիչ միջնորմները պետք է համապատասխանեն 6.8.2.1.22-ի պահանջներին:

Բաժանարար միջնապատերի եւ ալեբեկիչ միջնորմների հաստությունը պետք է ոչ մի դեպքում կորպուսի պատերի հաստությունից պակաս չլինի:

2. Եթե ցիստեռններն ունեն կրկնակի պատեր՝ վակուումային միջնաշերտով, ապա արտաքին մետաղական պատի եւ կորպուսի պատի համատեղ հաստությունը համապատասխանում է 6.8.2.1.18-ով սահմանված պատի հաստությանը, իսկ կորպուսի պատերի հաստությունը կազմում է 6.8.2.1.19-ով սահմանված նվազագույն հաստության չափսից ոչ պակաս:

3. Եթե ցիստեռններն ունեն կրկնակի պատեր՝ պինդ նյութերից պատրաստված եւ առնվազն 50 մմ հաստությամբ միջանկյալ շերտով, ապա արտաքին պատի հաստությունը կազմում է 0,5 մմ-ից ոչ պակաս՝ փափուկ պողպատից<sup>3</sup> պատրաստված լինելու դեպքում կամ առնվազն 2 մմ, եթե պատրաստված է ապակե մանրաթելով ամրապնդված պլաստիկ նյութից: Որպես պինդ նյութից պատրաստված միջանկյալ շերտ՝ կարելի է օգտագործել կոշտ

շերտ՝ կարելի է օգտագործել հարվածները կլանելու այնպիսի հատկությամբ օժտված կոշտ փրփրապլաստ, ինչպիսին է օրինակ՝ պոլիուրեթանի փրփրապլաստը:

<sup>3</sup> «Փափուկ պողպատի» եւ «ստանդարտ պողպատի» սահմանումները տե՛ս 1.2.1 բաժնում: Տվյալ դեպքում «փափուկ պողպատ» հասկացությունը ներառում է նաեւ EN նյութերի գծով ստանդարտներում որպես «փափուկ պողպատ» նշված պողպատը, որի նվազագույն ձգման ամրությունը կազմում է 360 Ն/մմ<sup>2</sup>-490 Ն/մմ<sup>2</sup>, եւ որի երկարացումը խզման դեպքում համապատասխանում է 6.8.2.1.12 կետում նշված արժեքին:

փրփրապլաստը (օժտված հարվածները կլանելու այնպիսի հատկությամբ, ինչպիսին է օրինակ՝ պոլիուրեթանի փրփրապլաստը):

4. Այն կորպուսները, որոնց ձեւը նախատեսված չէ 1-ին կետով, հատկապես արկղածեւ կորպուսները՝ ամբողջ պարագծով՝ իրենց բարձրության միջնակետում եւ իրենց բարձրության առնվազն 30%-ի լայնությամբ, հագեցած են այնպիսի պաշտպանությամբ, որը նախագծված է՝ ապահովելու համար տեսակարար առաձգականություն, որն առնվազն հավասար է փափուկ պողպատից պատրաստված եւ 5 մմ հաստություն ունեցող (այն դեպքում, երբ կորպուսի տրամագիծը չի գերազանցում 1,80 մ-ը) կամ 6 մմ հաստություն ունեցող (այն դեպքում, երբ կորպուսի տրամագիծը գերազանցում է 1,80 մ-ը) կորպուսի տեսակարար առաձգականությանը: Այս պաշտպանությունը պետք է հուսալիորեն ամրացվի կորպուսին:

Տվյալ պահանջն առանց տեսակարար առաձգականության հետագա ապացույցի համարվում է բավարարված, եթե պաշտպանություն ապահովելու նպատակով կորպուսի՝ ամրացման ենթակա տարածքի վրա զդրվում է այնպիսի ցուցանակ, որը պատրաստված է նույն նյութից, ինչ կորպուսը, այնպես որ պատի նվազագույն հաստությունը համապատասխանի 6.8.2.1.18-ում նշված արժեքին:

Այս պաշտպանությունը կախված է վթարի դեպքում փափուկ պողպատից<sup>3</sup> պատրաստված այն կորպուսների վրա ազդող բեռնվածքներից, որոնց

հատակի եւ պատերի հաստությունը կազմում է առնվազն 5 մմ՝ 1,80 մ-ը չգերազանցող տրամագծով կորպուսի դեպքում կամ առնվազն 6 մմ՝ 1,80 մ-ը գերազանցող տրամագծով կորպուսի դեպքում: Այլ մետաղ օգտագործելու դեպքում համարժեք հաստություն ստանում են 6.8.2.1.18-ում նշված բանաձեւի միջոցով:

Հանովի ցիստեռնների համար այս պաշտպանությունն անհրաժեշտ չէ այն դեպքում, երբ նրանք բոլոր կողմերից պաշտպանված են իրենց փոխադրող տրանսպորտային միջոցի հետ բացվող կողեզրերով:

- 6.8.2.1.21 6.8.2.1.14 (ա)-ի համաձայն կառուցված եւ մինչեւ 5000 լիտր տարողունակությամբ կամ յուրաքանչյուրը մինչեւ 5000 լիտր տարողությամբ անջրանցիկ հատվածամասերի բաժանված կորպուսների հաստությունը կարող է կազմել այնպիսի մեծություն, որը, եթե այլ բան սահմանված չէ 6.8.3-ով կամ 6.8.4-ով, պետք է, այնուամենայնիվ, լինի ոչ պակաս, քան հետեւյալ աղյուսակում ներկայացված համապատասխան արժեքը՝



Կորպուսի կորության առավելագույն շառավիղը (մ)	Կորպուսի կամ կորպուսի հատվածամասի տարողությունը (մ3)	Նվազագույն հաստությունը (մմ)
		Փափուկ պողպատ
≤ 2	≤ 5,0	3
2 - 3	≤ 3,5	3
	> 3,5 բայց ≤ 5,0	4

Եթե օգտագործվում է փափուկ պողպատից<sup>3</sup> տարբեր այլ մետաղ, ապա հաստությունը պետք է հաշվարկվի 6.8.2.1.18-ում նշված համարժեք հաստության հաշվարկի բանաձևով եւ պետք է լինի ոչ պակաս, քան հետեւյալ աղյուսակում նշված արժեքները՝

Կորպուսի կորության առավելագույն շառավիղը (մ)	≤ 2	2-3	2-3
	Կորպուսի կամ կորպուսի հատվածամասի տարողությունը (մ3)	≤ 5,0	≤ 3,5
Կորպուսի պատերի նվազագույն հաստությունը	Առուտենիտային չժանգոտվող պողպատներ 2,5 մմ	2, մմ	3 մմ
	Ֆերիտոաուստինիտային չժանգոտվող պողպատներ 3 մմ	3 մմ	3,5 մմ
	Այլ պողպատներ 3 մմ	3 մմ	4 մմ
	Ալյումինի համաձուլվածքներ 4 մմ	4 մմ	5 մմ
	99,80% մաքուր ալյումին 6 մմ	6 մմ	8 մմ

<sup>3</sup> «Փափուկ պողպատի» եւ «ստանդարտ պողպատի» սահմանումները տե՛ս 1.2.1 բաժնում: Տվյալ դեպքում «փափուկ պողպատ» հասկացությունը ներառում է նաեւ EN նյութերի գծով ստանդարտներում որպես «փափուկ պողպատ» նշված պողպատը, որի նվազագույն ձգման ամրությունը կազմում է 360 Ն/մմ<sup>2</sup> - 490 Ն/մմ<sup>2</sup>, եւ որի երկարացումը խզման դեպքում համապատասխանում է 6.8.2.1.12 կետում նշված արժեքին:

Բաժանարար միջնապատերի եւ ալեբեկիչ միջնորմների հաստությունը պետք է ոչ մի դեպքում ավելի պակաս չլինի, քան կորպուսի պատերի հաստությունը:

6.8.2.1.22 Ալեբեկիչ միջնորմները եւ բաժանարար միջնապատերը պետք է գոգավորվեն (դեպի դուրս) առնվազն 10 սմ խորություն ունեցող գոգավորությամբ կամ ծալքավորվեն, գլանվեն կամ այլ կերպ ուժեղացվեն՝ ապահովելու համար համարժեք ամրություն: Ալեբեկիչ միջնորմի տարածքը պետք է կազմի ցիստեռնի լայնակի հատման այն տարածքի առնվազն 70%-ը, որտեղ տեղադրված է ալեբեկիչ միջնորմը:

### ***Եռակցման աշխատանքների իրականացումը եւ դրանց ստուգումը***

6.8.2.1.23. Արտադրողի՝ զոդման աշխատանքներ իրականացնելու կարողությունը պետք է ստուգվի եւ հաստատվի կա՛մ իրավասու մարմնի, կա՛մ այդ մարմնի կողմից նշանակված մարմնի կողմից, որը տրամադրում է տեսակի հաստատումը: Զոդման որակի ապահովման համակարգը պետք է իրականացվի արտադրողի կողմից: Զոդման աշխատանքները պետք է իրականացվեն որակավորված եռակցողների կողմից՝ օգտագործելով որակյալ զոդման գործընթաց, որի արդյունավետությունը (ներառյալ՝ հնարավոր ջերմամշակումը) ապացուցվել է փորձարկումների միջոցով: Ոչ քայքայիչ փորձարկումները պետք է իրականացվեն ճառագայթագրման կամ ուլտրաձայնի միջոցով եւ պետք է հաստատեն, որ եռակցման որակը համապատասխանում է բեռնվածքներին:

Արտադրողի կողմից կիրառվող յուրաքանչյուր զոդման գործընթացով կատարված զոդման համար անհրաժեշտ է անցկացնել հետեւյալ ստուգումները՝ 6.8.2.1.17-ում կորպուսի հաստությունը սահմանելու համար օգտագործվող  $\lambda$  գործակցի արժեքի համաձայն՝

$\lambda = 0,8$ ՝ բոլոր զոդակարերը, հնարավորության սահմաններում, պետք է վիզուալ ստուգվեն երկու կողմից եւ ընտրողաբար ենթարկվեն ոչ քայքայիչ հսկողության: Ոչ քայքայիչ հսկողությունը պետք է ներառի բոլոր T-աձեւ եռակցված միացությունները եւ բոլոր ներդիրները, որոնք օգտագործվում են եռակցված կարանների հատումներից խուսափելու համար: Ստուգվող եռակցված կարանի ընդհանուր երկարությունը կազմում է ոչ պակաս, քան

բոլոր երկայնական եռակցված կարանների երկարության 10%-ը,

օղակաձեւ եռակցված կարանների երկարության 10%-ը,

ցիստեռնների հատակում օղակաձեւ եռակցված կարանների երկարության 10%-ը, եւ

շառավղային կարերի երկարության 10%-ը:

$\lambda = 0,9$ ՝ զոդակարերը, հնարավորության սահմաններում, պետք է վիզուալ ստուգվեն երկու կողմից եւ ընտրողաբար ենթարկվեն ոչ քայքայիչ հսկողության: Ոչ քայքայիչ հսկողության պետք է ենթարկվեն բոլոր եռակցված միացությունները եւ ներդիրները, որոնք օգտագործվում են եռակցված կարանների հատումներից եւ մեծ շառավիղ ունեցող սարքավորումների պարագաների մոնտաժման եռակցված կարաններից խուսափելու համար: Ստուգվող եռակցված կարանի ընդհանուր երկարությունը կազմում է ոչ պակաս, քան

բոլոր երկայնական եռակցված կարանների երկարության 100%-ը,

օղակաձեւ եռակցված կարանների երկարության 25%-ը,

ցիստեռնների հատակում օղակաձեւ եռակցված կարանների երկարության 25%-ը, եւ

շառավղային կարերի երկարության 25%-ը:

$\lambda = 1$ ՝ բոլոր եռակցված կարաններն իրենց ողջ երկայնքով պետք է ենթարկվեն ոչ քայքայիչ հսկողության եւ հնարավորության սահմաններում ստուգվեն երկու կողմից: Զոդման աշխատանքների որակն ստուգելու համար անհրաժեշտ է փորձարկման նմուշ վերցնել:

$\lambda = 0,8$  կամ  $\lambda = 0,9$  դեպքում, երբ եռակցման որեւէ հատվածում հայտնաբերվում է անընդունելի թերության առկայություն, ոչ քայքայիչ հսկողության գործընթաց պետք է իրականացվի նաեւ հավասար երկարության եռակցման այլ հատվածի համար՝ այդ թերությունը պարունակող հատվածի երկու կողմերում: Եթե ոչ քայքայիչ հսկողության արդյունքում հայտնաբերվում է լրացուցիչ անընդունելի թերություն, ոչ քայքայիչ հսկողություն իրականացվում է եռակցման համանման գործընթացի բոլոր մնացած եռակցված կարանների համար:


Եթե կա՛մ իրավասու մարմինը, կա՛մ այդ մարմնի կողմից նշանակված մարմինը եռակցման կարանների, այդ թվում՝ ոչ քայքայիչ հսկողության արդյունքում հայտնաբերված որեւէ թերության շտկման համար արված եռակցված կարանների որակի վերաբերյալ կասկածանքներ ունի, ապա այն կարող է պահանջել լրացուցիչ ստուգումներ:

Կառուցվածքին ներկայացվող այլ պահանջներ

6.8.2.1.24. Պաշտպանիչ երեսապատվածքը պետք է արված լինի այնպես, որ նրա անջրանցիկությունը պահպանվի՝ անկախ փոխադրման սովորական պայմաններում առաջացող հնարավոր դեֆորմացիաներից (տե՛ս 6.8.2.1.2):

6.8.2.1.25. Ջերմամեկուսիչ շերտը պետք է պատրաստվի այնպես, որ չխոչընդոտի լցավորման եւ դատարկման սարքավորումների, ինչպես նաեւ ապահովիչ կափույրի մուտքը եւ դրանց աշխատանքը:

6.8.2.1.26. Եթե 60°C-ը չգերազանցող բռնկման ջերմաստիճան ունեցող դյուրավառ հեղուկների փոխադրման համար նախատեսված կորպուսները հագեցած են ոչ մետաղական նյութերից պատրաստված պաշտպանիչ երեսապատվածքով (ներքին շերտերը), ապա կորպուսները եւ երեսապատվածքը պետք է պատրաստված լինեն այնպես, որ էլեկտրաստատիկ լիցքերի պատճառով բռնկման վտանգ չառաջանա:

6.8.2.1.27 Այն կորպուսները, որոնք նախատեսված են 60°C-ը չգերազանցող բռնկման ջերմաստիճան ունեցող հեղուկներ կամ դյուրավառ գազեր, ինչպես նաեւ ՄԱԿ-ի նշագրման 1361 համարի ածխածին կամ ՄԱԿ-ի նշագրման 1361 համարի մուր (փաթեթավորման II խումբ) փոխադրելու համար, պետք է միացվեն շասսիին առնվազն մեկ ամուր մալուխի միջոցով: Անհրաժեշտ է խուսափել էլեկտրաքիմիական քայքայում (կոռոզիա) առաջացնող ցանկացած մետաղական կոնտակտից: Կորպուսները պետք է հագեցած լինեն «» խորհրդանշանով մակնշված եւ էլեկտրական միացման համար պիտանի առնվազն մեկ հողանցման սարքով:

Այն ցիստեռն-կոնտեյնների բոլոր մասերը, որոնք նախատեսված են 60°C-ը չգերազանցող բռնկման ջերմաստիճան ունեցող հեղուկներ կամ դյուրավառ գազեր, ինչպես նաեւ ՄԱԿ-ի նշագրման 1361 համարի ածխածին կամ ՄԱԿ-ի նշագրման 1361 համարի մուր (փաթեթավորման II խումբ) փոխադրելու համար, պետք է ունենան էլեկտրական հողանցման սարքեր: Անհրաժեշտ է խուսափել էլեկտրաքիմիական քայքայում (կոռոզիա) առաջացնող ցանկացած մետաղական կոնտակտից:

6.8.2.1.28 Վերին կցամասերի (ֆիթինգների) պաշտպանությունը

Կորպուսի վերին մասում

տեղադրված կցամասերը  
(ֆիթինգները) եւ օժանդակ  
սարքավորումները պետք է շրջվելու  
դեպքում պաշտպանված լինեն  
վնասվածքներից: Այս  
պաշտպանությունը կարող է  
ապահովվել ուժեղացնող օղակների,  
ապահովիչ թասակների կամ  
լայնական կամ երկայնական  
դետալների հաշվին, որոնց ձեւը  
պետք է արդյունավետ  
պաշտպանություն ապահովի:

6.8.2.2. Սարքավորման դետալները

6.8.2.2.1. Օժանդակ եւ կառուցվածքային սարքավորումների պատրաստման համար կարելի է օգտագործել համապատասխան ոչ մետաղական նյութեր:

Սարքավորման դետալները պետք է տեղաբաշխվեն այնպես, որ բացառվի դրանց պոկվելու կամ փոխադրման կամ բեռնման-բեռնաթափման ժամանակ վնասվելու վտանգը: Դրանք պետք է ապահովեն հուսալիության այնպիսի աստիճան, ինչպիսին ապահովում են կորպուսներն իրենք, եւ պետք է մասնավորապես՝

- համատեղելի լինեն փոխադրվող նյութերի հետ, եւ
- համապատասխանեն 6.8.2.1.1-ի պահանջներին:

Խողովակաշարերը պետք է նախագծվեն, պատրաստվեն եւ տեղադրվեն այնպես, որ բացառվի ջերմային ընդարձակման ու սեղմման, մեխանիկական ցնցման եւ թրթռման (վիբրացիայի) հետեւանքով դրանց վնասման վտանգը:

Հնարավորինս մեծ թվով սարքավորումների համար պետք է հնարավորինս քիչ թվով բացվածքներ պահանջվեն կորպուսի վրա: Անհրաժեշտ է ապահովել օժանդակ սարքավորումների, ներառյալ գննման համար նախատեսված բացվածքների փականի (կափարիչի) անջրանցիկությունը նույնիսկ ցիստեռնի շրջվելու դեպքում՝ հաշվի առնելով հարվածից առաջացող ճնշումները (օրինակ՝ արագացման կամ պարունակության դինամիկ ճնշման դեպքում): Այնուամենայնիվ, թույլատրվում է ցիստեռնի պարունակության սահմանափակ քանակության արտահոսք հարվածի ժամանակ առաջացող առավելագույն ճնշման ազդեցության տակ:

Պետք է ապահովել օժանդակ սարքավորումների անջրանցիկությունը նույնիսկ ցիստեռն-կոնտեյների շրջվելու դեպքում:

Խցանիչները պետք է պատրաստվեն փոխադրվող նյութի

պայմանների հետ համատեղելի նյութից եւ պետք է փոխարինվեն իրենց արդյունավետության նվազման դեպքում, ինչպես օրինակ՝ մաշվածության հետեւանքով:

Խցանիչները, որոնք ապահովում են ցիստեռնի նորմալ շահագործման դեպքում աշխատող կցամասերի (ֆիթինգների) անջրանցիկությունը եւ մտնում են կցամասերի (ֆիթինգների) կազմի մեջ, պետք է հաշվարկվեն եւ տեղադրվեն այնպես, որ կցամասերի աշխատանքը չվնասի խցանիչներին:

6.8.2.2.2. Ցիստեռնի ստորին մասի լցավորման կամ դատարկման համար նախատեսված յուրաքանչյուր բացվածք՝ նշված 3.2 գլխի աղյուսակ Ա-ի 12-րդ սյունակում, եւ որի ծածկագրի երրորդ մասը պարունակում է «A» տառը (տե՛ս 4.3.4.1.1 կետը), պետք է հագեցած լինի առնվազն երկու՝ հաջորդաբար տեղադրված եւ միմյանցից անկախ փականներով, ինչպիսիք են՝

- արտաքին փակման կափույրը՝ պլաստիկ մետաղական նյութից պատրաստված խողովակառոտով. եւ
- յուրաքանչյուր խողովակառոտի ծայրին մոնտաժված փակող սարքը, ինչպիսին կարող է լինել պտուտակային խցանը, անշարժ կցաշուրթը կամ այլ համարժեք սարք: Այս փակող սարքը պետք է լինի անթափանցիկ, որպեսզի նյութի արտահոսք տեղի չունենա: Անհրաժեշտ է միջոցառումներ ձեռնարկել, որպեսզի դատարկման խողովակում տեղի ունենա ճնշման անվտանգ նվազեցում՝ նախքան փակող սարքն ամբողջովին հանելը:

Ցիստեռնի ստորին մասի լցավորման կամ դատարկման համար նախատեսված յուրաքանչյուր բացվածք՝ նշված 3.2 գլխի Ա աղյուսակի 12-րդ սյունակում, եւ որի ծածկագրի երրորդ մասը պարունակում է «B» տառը (տե՛ս 4.3.3.1.1 կամ 4.3.4.1.1 կետը), պետք է հագեցած լինի առնվազն երեք՝ հաջորդաբար տեղադրված եւ միմյանցից անկախ փականներով, ինչպիսիք են

- ներքին փակման կափույրը, այն է՝ փական, որը մոնտաժված է ցիստեռնի ներսում՝ եռակցված կցաշուրթում կամ դրա միացնող կցաշուրթում.
- արտաքին փակման կափույրը կամ համարժեք այլ սարք<sup>6</sup>

տեղադրված յուրաքանչյուր  
խողովակառոտի ծայրին

տեղադրված հնարավորինս  
մոտ կորպուսին

<sup>6</sup> 1մ<sup>3</sup>-ից պակաս փարողությամբ ցիստեռն-կոնտեյներների դեպքում արտաքին փակման կափույրը կամ այլ համարժեք սարք կարող է փոխարինվել անշարժ կցաշուրթով:

եւ

- յուրաքանչյուր խողովակառուտի ծայրին մոնտաժված փակող սարքը, ինչպիսին կարող է լինել պտուտակային խցանը, անշարժ կցաշարժը կամ այլ համարժեք սարք: Այս փակող սարքը պետք է լինի անթափանցիկ, որպեսզի նյութի արտահոսք տեղի չունենա: Անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել, որպեսզի դատարկման խողովակում տեղի ունենա ճնշման անվտանգ նվազեցում՝ նախքան փակող սարքն ամբողջովին հանելը:

Այնուամենայնիվ, որոշակի բյուրեղացող կամ մեծ մածուցիկության նյութերի փոխադրման համար նախատեսված ցիստեռնների, ինչպես նաեւ էրոնիտե եւ ջերմապլաստիկական պատվածքով կորպուսների դեպքում ներքին փակման կափույրը կարող է փոխարինվել լրացուցիչ պաշտպանությամբ հագեցած արտաքին փակման կափույրով:

Ներքին փակման կափույրը պետք է գործարկվի վերելից կամ ներքելից: Երկու դեպքում էլ ներքին փակման կափույրի դիրքը՝ փակված կամ բացված, պետք է հնարավորինս վերահսկելի լինի գետնից: Ներքին փակման կափույրի կառավարման սարքերը պետք է կառուցված լինեն այնպես, որ հարվածի կամ այլ չնախատեսված գործողության ժամանակ կափույրը պատահականորեն չբացվի:

Ներքին փակող սարքը պետք է արտաքին կառավարման սարքի վնասվելու դեպքում շարունակի մնալ աշխատանքային վիճակում:

Արտաքին կցամասերի (խողովակառուտեր, կողային փակող սարքեր) վնասման դեպքում պարունակության կորուստը կանխելու նպատակով ներքին փակման կափույրը եւ դրա թամբը պետք է պաշտպանված լինեն արտաքին ճնշումների հետեւանքով տեղից դուրս գալու վտանգից կամ պետք է այնպես նախագծված լինեն, որպեսզի կարողանան դիմակայել նման ճնշումներին: Դատարկման սարքերը (այդ թվում՝ կցաշարժերն ու պտուտակային խցանները) եւ խցափակիչները (եթե այդպիսիք կան) պետք է հուսալիորեն պաշտպանված լինեն ցանկացած պատահական բացումից:

Փականների դիրքը եւ (կամ) ուղղությունը պետք է հստակորեն տեսանելի լինեն:

Ցիստեռնների այն բոլոր բացվածքները՝ նշված 3.2 գլխի Ա աղյուսակի 12-րդ սյունակում, եւ որոնց ծածկագրի երրորդ մասը պարունակում է «C» կամ «D» տառը (տե՛ս 4.3.3.1.1 եւ 4.3.4.1.1), պետք է տեղակայվեն հեղուկի մակարդակից բարձր: Այս ցիստեռնները չպետք է ունենան հեղուկի մակարդակից բարձր խողովակաշարեր կամ խողովակային միացություններ:



Այնուամենայնիվ, ցիստեռններում, որոնց ծածկագրի երրորդ մասում նշված է «C» տառը, թույլատրվում է մաքրման համար նախատեսված բացվածքների առկայությունը կորպուսի ստորին մասում: Այս բացվածքները պետք է հերմետիկորեն փակվեն կցաշուրթով, որի կառուցվածքը պետք է հաստատվի իրավասու մարմնի կամ նրա կողմից նշանակված մարմնի կողմից:

6.8.2.2.3. Հերմետիկորեն չփակվող ցիստեռնները կարող են հագեցած լինել վակուումային կափույրներով, որոնք թույլ են տալիս խուսափել անցանկալի բացասական ներքին ճնշումից. այս վակուումային կափույրները պետք է կարգաբերվեն՝ ցիստեռնի հաշվարկային վակուումային ճնշումը չգերազանցող ճնշման ազդեցության դեպքում գործելու համար (տե՛ս 6.8.2.1.7): Հերմետիկորեն փակվող ցիստեռններում վակուումային կափույրներ չեն տեղադրվում: Այնուամենայնիվ, առնվազն 21 կՊա (0,21 բար) բացասական ճնշման դեպքում գործող՝ վակուումային կափույրներով հագեցած եւ SGAH, S4AH կամ L4BH ցիստեռնի ծածկագրով ցիստեռնները պետք է համարվեն հերմետիկորեն փակ: Միայն II եւ III փաթեթավորման խմբերի եւ փոխադրման ժամանակ չհեղուկացող պինդ նյութերի (փոշենման կամ հատիկավոր) փոխադրման համար նախատեսված ցիստեռնների դեպքում բացասական ճնշումը կարող է նվազեցվել մինչեւ ոչ պակաս, քան 5 կՊա (0,05 բար):

Վակուումային կափույրները եւ շնչող սարքերը (տե՛ս 6.8.2.2.6), որոնք օգտագործվում են բռնկման ջերմաստիճանի վերաբերյալ 3-րդ դասի չափորոշիչներին համապատասխանող նյութերի փոխադրման համար նախատեսված ցիստեռնների վրա, պետք է կանխեն բոցի անմիջական անցումը կորպուս՝ համապատասխան ապահովիչ սարքի միջոցով, կամ ցիստեռնի կորպուսը պետք է կարողանա առանց պարունակության արտահոսքի դիմակայել պայթյունի ճնշման շոկին, ինչը նշանակում է, որ կկարողանա դիմակայել բոցի անցման հետեւանքով առաջացած պայթյունին:

Եթե ապահովիչ սարքը բաղկացած է համապատասխան բոցորսիչից կամ բոցամարիչից, ապա այն պետք է կորպուսին կամ կորպուսի հատվածամասին հնարավորինս մոտ տեղադրվի: Հատվածամասերի բաժանված ավտոցիստեռնների դեպքում յուրաքանչյուր հատվածամաս պետք է ունենա առանձին պաշտպանություն:

6.8.2.2.4. Կորպուսը կամ նրա հատվածամասերից յուրաքանչյուրը պետք է բավականաչափ մեծ բացվածք ունենա, որը թույլ կտա ներքին զննում անցկացնել:

6.8.2.2.5. (Նախատեսվում է վերապահում)

6.8.2.2.6. 50 °C-ի դեպքում 110 կՊա-ից ոչ ավելի (1,1 բար) (բացարձակ)

գոլորշու ճնշում ունեցող հեղուկների փոխադրման համար նախատեսված ցիստեռնները պետք է ունենան շնչող սարք եւ ապահովիչ սարք, որոնք շրջվելու դեպքում կանխում են ցիստեռնի պարունակության արտահոսքը. այլ պարագայում դրանք պետք է համապատասխանեն 6.8.2.2.7-ի կամ 6.8.2.2.8-ի պահանջներին:

- 6.8.2.2.7. 50 °C-ի դեպքում 110 կՊա-ը գերազանցող (1,1 բար) գոլորշու ճնշում եւ 35 °C-ից բարձր եռման ջերմաստիճան ունեցող նյութերի փոխադրման համար նախատեսված կորպուսները պետք է ունենան ապահովիչ կափույր, որը կարգաբերված է գործելու առնվազն 150 կՊա (1,5 բար) (մանոմետրական ճնշում), եւ ամբողջությամբ բացվում է փորձարկման ճնշումը չգերազանցող ճնշման դեպքում. այլ պարագայում դրանք պետք է համապատասխանեն 6.8.2.2.8-ի պահանջներին:
- 6.8.2.2.8. 35 °C-ից ոչ ավելի եռման ջերմաստիճան ունեցող հեղուկների փոխադրման համար նախատեսված ցիստեռնները պետք է ունենան ապահովիչ կափույր, որը կարգաբերված է աշխատելու առնվազն 300 կՊա (3 բար) (մանոմետրական ճնշում) եւ ամբողջությամբ բացվում է փորձարկման ճնշումը չգերազանցող ճնշման դեպքում. այլ դեպքում դրանք պետք է հերմետիկորեն փակվեն<sup>7</sup>
- 6.8.2.2.9. Շարժական դետալները, ինչպիսիք են կափարիչները, փականները եւ այլն, որոնք կարող են շփման կամ հարվածի հետեւանքով կոնտակտի մեջ մտնել 60 °C-ը չգերազանցող բռնկման ջերմաստիճան ունեցող դյուրավառ հեղուկների կամ դյուրավառ գազերի փոխադրման համար նախատեսված այլումինե կորպուսների հետ, չպետք է պատրաստվեն կոռոզիայի ենթարկվող չպաշտպանված պողպատից:
- 6.8.2.2.10. Եթե հերմետիկորեն փակվող ցիստեռնները սարքավորված են ապահովիչ կափույրներով, ապա դրանց առջեւ պետք է տեղադրվի պատռվող մեմբրան, եւ պետք է պահպանվեն հետեւյալ պայմանները՝ պատռվող մեմբրանի եւ ապահովիչ կափույրի դասավորվածքը պետք է բավարարի իրավասու մարմնի պահանջները: Պատռվող մեմբրանի եւ ապահովիչ կափույրի միջեւ պետք է տեղադրվի մանոմետր կամ չափման այլ համապատասխան գործիք, որպեսզի հնարավոր լինի հայտնաբերել մեմբրանի պատռումը, պերֆորացիան (ծակատումը) կամ դրա միջով արտահոսքը, որոնց հետեւանքով ապահովիչ կափույրը կարող է չգործել:

### 6.8.2.3. Տեսակի հաստատումը

- 6.8.2.3.1. Իրավասու մարմինը կամ նրա կողմից նշանակված մարմինն

<sup>7</sup> Տե՛ս «հերմետիկորեն փակվող ցիստեռնի» սահմանումը 1.2.1 բաժնում:

ավտոցիստեռնի, հանովի ցիստեռնի, ցիստեռն-կոնտեյների, հանովի թափք-ցիստեռնի, մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցի եւ ԳԲՏԿ-ի յուրաքանչյուր նոր տեսակի համար տրամադրում է սերտիֆիկատ՝ ըստ որի նրա կողմից հետազոտություն անցած տեսակը, այդ թվում՝ դրա ամրակները, պիտանի է նպատակային օգտագործման համար եւ համապատասխանում է կառուցվածքին ներկայացվող պահանջներին՝ նշված 6.8.2.1-ում, սարքավորմանը ներկայացվող պահանջներին՝ նշված 6.8.2.2-ում, եւ փոխադրվող նյութերի տարբեր դասերին վերաբերող հատուկ պահանջներին:

Սերտիֆիկատում նշված են՝

- փորձարկումների արդյունքները.
- տեսակի հաստատման համարը.

Հաստատման համարը կազմված է այն պետության միջազգային ճանապարհային երթեւեկությունում ներգրավված փոխադրամիջոցի համար օգտագործվող տարբերակիչ նշանից<sup>8</sup>, որի տարածքում շնորհվել է հաստատումը, եւ գրանցման համարից:

- ցիստեռնի ծածկագիրը՝ համաձայն 4.3.3.1.1-ի կամ 4.3.4.1.1-ի.
- 6.8.4-ի՝ կառուցվածքին (TC), սարքավորմանը (TE) եւ տեսակի հաստատմանը (TA) վերաբերող հատուկ դրույթների տառաթվանշանային ծածկագրերը, որոնք նշված են 3.2 գլխի Ա աղյուսակի 13-րդ սյունակում այն նյութերի համար, որոնց փոխադրման համար ցիստեռնը պաշտոնապես հաստատվել է.
- եթե պահանջվում է՝ այն նյութերը եւ (կամ) նյութերի խումբը, որոնց փոխադրման համար ցիստեռնը պաշտոնապես հաստատվել է: Պետք է նշվեն նրանց քիմիական անվանումները կամ համապատասխան հավաքական դիրքը (տե՛ս 2.1.1.2), ինչպես նաեւ նրանց դասակարգումը (դասը, դասակարգման ծածկագիրը եւ փաթեթավորման խումբը): Բացառությամբ 2-րդ դասի նյութերի, ինչպես նաեւ 4.3.4.1.3-ում

<sup>8</sup> Միջազգային երթեւեկության մեջ գտնվող փոխադրամիջոցների եւ դրանց կցորդների՝ գրանցման պետության տարբերանշաններ, օրինակ՝ 1949 թվականի «Ճանապարհային երթեւեկության մասին» Ժնևի կոնվենցիային կամ 1968 թվականի «Ճանապարհային երթեւեկության մասին» Վիեննայի կոնվենցիային համապատասխան:

թվարկված նյութերի, թույլատրված նյութերը կարելի է չթվարկել: Նման դեպքերում այն նյութերի խմբերը, որոնք թույլատրված են փոխադրման՝ հիմնվելով 4.3.4.1.2-ում զետեղված՝ ռացիոնալացված մոտեցման աղյուսակում նշված ցիստեոնի ծածկագրի վրա, պետք է թույլատրվեն փոխադրման՝ հաշվի առնելով համապատասխան հատուկ դրույթները:

Սերտիֆիկատում նշված նյութերը կամ նյութերի խմբերը՝ հաստատված համաձայն ռացիոնալացված մոտեցման, պետք է ընդհանուր առմամբ համատեղելի լինեն ցիստեոնի հատկանիշների հետ: Եթե այս համատեղելիությունը մանրամասն չի ուսումնասիրվել տեսակի հաստատման ժամանակ, ապա փորձարկումների սերտիֆիկատում պետք է համապատասխան վերապահում ներառվի:

Սերտիֆիկատի պատճենը պետք է կցվի յուրաքանչյուր ցիստեոնի, մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցի կամ ԳԲՏԿ-ի ցիստեոնի մասին գրառումներին (տե՛ս 4.3.2.1.7):

Իրավասու մարմինը կամ իրավասու մարմնի կողմից նշանակված մարմինը դիմորդի պահանջով իրականացնում է կափույրների եւ այլ օժանդակ սարքերի առանձին տեսակի հաստատում, որի համար 6.8.2.6.1-ի աղյուսակում նշված է ստանդարտ՝ այդ ստանդարտին համապատասխան: Ցիստեոնի համար սերտիֆիկատ տրամադրելիս պետք է հաշվի առնել այս առանձին տեսակը, եթե ներկայացված են փորձարկման արդյունքները, եւ կափույրներն ու այլ օժանդակ սարքեր համապատասխան են նախատեսված նպատակի համար:

6.8.2.3.2. Եթե ցիստեոնները, մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցները կամ ԳԲՏԿ-ներն արտադրվում են սերիական կարգով եւ առանց փոփոխության, ապա հաստատումը վավեր է այն ցիստեոնների, մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցների կամ ԳԲՏԿ-ների համար, որոնք արտադրված են սերիական կարգով կամ նախատիպի համաձայն:

Տեսակի հաստատումը, այնուամենայնիվ, կարող է հիմք ծառայել կառուցվածքի այնպիսի աննշան փոփոխություններ կրած ցիստեոնների հաստատման համար, որոնք կամ նվազեցնում են ցիստեոնի լարվածությունը եւ բեռնվածքը (օրինակ՝ ցածր ճնշում, փոքր զանգված, փոքր ծավալ) կամ բարձրացնում են կառուցվածքի անվտանգությունը (օրինակ՝ պատերի ավելի մեծ հաստություն, ավելի մեծ թվով ալեբեկիչ միջնորմներ, բացվածքների ավելի փոքր տրամագիծ): Այս աննշան փոփոխությունները պետք է հստակորեն նշված լինեն տեսակի հաստատման սերտիֆիկատում:

6.8.2.3.3. Հետեւյալ պահանջները կիրառվում են այն ցիստեռնների նկատմամբ, որոնց նկատմամբ չի կիրառվում 6.8.4-ի TA4 հատուկ դրույթը (եւ, հետեւաբար, 1.8.7.2.4 կետը):

Տեսակի հաստատումը վավեր է առավելագույնը տասը տարի: Եթե նշված ժամկետի ընթացքում «ԱԴՌ» համաձայնագրի համապատասխան տեխնիկական պահանջները (այդ թվում՝ այն ստանդարտները, որոնց հղում է կատարվել) այնպես են փոխվել, որ հաստատված տեսակն այլեւս չի համապատասխանում դրանց հետ, ապա տեսակի հաստատում տվող իրավասու մարմինը կամ նրա կողմից նշանակված մարմինը դադարեցնում է դրա գործողությունը եւ դրա մասին տեղեկացնում է տեսակի հաստատման տիրոջը:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** Հարկ եղած դեպքում տեսակի գործող հաստատումների չեղյալ ճանաչման ժամկետների համար տե՛ս 6.8.2.6-ում կամ 6.8.3.6-ում նշված աղյուսակների 5-րդ սյունակը:

Եթե տեսակի հաստատման ժամկետը լրացել է, կամ դրա գործողությունը դադարեցվել է, ապա ցիստեռնների, մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցների կամ ԳԲՏԿ-ների արտադրությունը, նշված տեսակի հաստատման համաձայն, այլեւս չի թույլատրվում:

Նման դեպքում ժամկետը լրացած եւ գործողությունը դադարեցված տեսակի հաստատման մեջ ընդգրկված ճնշումային ցիստեռնների, մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցների կամ ԳԲՏԿ-ների շահագործմանը, պարբերաբար ու միջանկյալ ստուգմանը վերաբերող համապատասխան դրույթները շարունակվում են կիրառվել նախքան տեսակի հաստատման ժամկետը լրանալը կամ գործողությունը դադարեցնելը պատրաստված ցիստեռնների, մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցների կամ ԳԲՏԿ-ների նկատմամբ, եթե դրանք կարող են դեռեւս շահագործվել:

Դրանք կարող են օգտագործվել այնքան ժամանակ, քանի դեռ համապատասխանում են «ԱԴՌ» համաձայնագրի պահանջներին: Եթե դրանք այլեւս չեն համապատասխանում «ԱԴՌ» համաձայնագրի պահանջներին, ապա կարող են օգտագործվել միայն այն դեպքում, եթե դրանց օգտագործումը թույլատրվում է 1.6 գլխով սահմանված համապատասխան անցումային դրույթներով:

Տեսակի հաստատումների ժամկետը կարող է երկարաձգվել երկարաձգման ամսաթվին կիրառելի «ԱԴՌ» համաձայնագրի դրույթներին համապատասխանության համապարփակ ուսումնասիրություն եւ գնահատում իրականացնելուց հետո: Տեսակի

հաստատման ժամկետը չի կարող երկարաձգվել, եթե դրա գործողությունը դադարեցվել է: Տեսակի գործող հաստատման միջանկյալ փոփոխությունները, որոնք չեն ազդում համապատասխանության վրա, չեն երկարաձգում կամ փոփոխում սերտիֆիկատի սկզբնական գործողության ժամկետը:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.**

Համապատասխանության ուսումնասիրությունը եւ գնահատումը կարող են իրականացվել տեսակի սկզբնական հաստատումը տվող մարմնից բացի այլ մարմնի կողմից:

Տեսակի հաստատում տվող մարմինը պետք է պահի տեսակի հաստատման բոլոր փաստաթղթերը դրա գործողության, այդ թվում՝ երկարաձգման դեպքում, երկարաձգումների ամբողջ ժամանակահատվածի ընթացքում:

Եթե հաստատում տվող մարմնի նշանակումը չեղյալ է հայտարարվում կամ սահմանափակվում է, կամ մարմինը դադարեցնում է իր գործունեությունը, ապա իրավասու մարմինը պետք է համապատասխան քայլեր ձեռնարկի՝ ապահովելու համար, որ առկա փաստաթղթերը մշակվեն մեկ այլ մարմնի կողմից կամ շարունակեն հասանելի մնալ:

6.8.2.3.4. Ուժի մեջ գտնվող, ուժը կորցրած կամ հետ կանչված տեսակի հաստատմամբ ցիստեռնի փոփոխության դեպքում փորձարկման, ստուգման եւ հաստատման գործընթացներն իրականացվում են միայն ցիստեռնի այն մասերի համար, որոնք փոփոխվել են: Փոփոխությունը պետք է բավարարի «ԱԴՌ» համաձայնագրի այն դրույթների պահանջները, որոնք կիրառելի են փոփոխությունը կատարելու ժամանակ: Բոլոր այն մասերը, որոնք ազդեցություն չեն կրում փոփոխության արդյունքում, սկզբնական տեսակի հաստատման փաստաթղթերը շարունակում են լինել ուժի մեջ:

Փոփոխությունը կարող է կիրառվել տեսակի հաստատման մեջ ներառված մեկ կամ մի քանի ցիստեռնների վրա:

Փոփոխությունը հաստատող սերտիֆիկատը տրամադրվում է «ԱԴՌ» համաձայնագրի Պայմանավորվող կողմի իրավասու մարմնի կամ այդ մարմնի կողմից նշանակված այլ մարմնի կողմից եւ պահպանվում է որպես ցիստեռնի մասին գրառումների մի մաս:

Փոփոխության հաստատման սերտիֆիկատի համար տրված յուրաքանչյուր դիմում ներկայացնում է մեկ իրավասու մարմին կամ այդ իրավասու մարմնի կողմից նշանակված այլ մարմին:

6.8.2.4. Ստուգումները եւ փորձարկումները

6.8.2.4.1. Կորպուսները եւ դրանց սարքավորումները պետք է միասին կամ

յուրաքանչյուրն առանձին նախնական ստուգում անցնեն՝ նախքան շահագործման հանձնվելը: Այս ստուգումը պետք է ներառի՝

- հաստատված տեսակի հետ համապատասխանության ստուգում.
- կառուցվածքային հատկանիշների ստուգում<sup>9</sup>.
- ներքին եւ արտաքին պայմանների զննում.
- հիդրավլիկ ճնշման տակ փորձարկում<sup>10</sup> 6.8.2.5.1-ում սահմանված ցուցանակի վրա նշված փորձարկման ճնշման կիրառմամբ, եւ
- անջրանցիկության փորձարկում եւ սարքավորումների բավարար աշխատանքի ստուգում:

Բացառությամբ 2-րդ դասի՝ փորձարկման ճնշումը, որը կիրառվում է ճնշման տակ հիդրավլիկ փորձարկման դեպքում, կախված է հաշվարկային ճնշումից եւ պետք է առնվազն հավասար լինի ստորեւ նշված արժեքին՝

Հաշվարկային ճնշում (բար)	Փորձարկման ճնշում
G <sup>11</sup>	G <sup>11</sup>
1,5	1,5
2,65	2,65
4	4
10	4
15	4
21	10 (4 <sup>12</sup> )

2-րդ դասի համար փորձարկման ճնշման նվազագույն արժեքները ներկայացված են 4.3.3.2.5-ում նշված գազերի եւ գազային

<sup>9</sup> Կառուցվածքային հատկանիշների ստուգումն առնվազն 1 ՄՊա (10 բար) փորձարկման ճնշում պահանջող կորպուսների համար ներառում է նաեւ նմուշառում՝ եռակցումային միացումների փորձարկման նպատակով (աշխատանքային նմուշներ)՝ համաձայն 6.8.2.1.23-ի, ինչպես նաեւ 6.8.5 բաժնում սահմանված փորձարկումները:

<sup>10</sup> Հատուկ դեպքերում եւ իրավասու մարմնի կողմից հաստատված փորձագետի համաձայնությամբ՝ ճնշման տակ հիդրավլիկ փորձարկումը կարող է փոխարինվել ճնշման տակ փորձարկումով՝ այլ հեղուկի կամ գազի կիրառմամբ, եթե նման գործողությունը որեւէ վրանգ չի ներկայացնում:

<sup>11</sup> G-ն՝ նվազագույն հաշվարկային ճնշում՝ համաձայն 6.8.2.1.14-ի ընդհանուր պահանջների (տե՛ս 4.3.4.1 ենթաբաժինը)

<sup>12</sup> Նվազագույն փորձարկման ճնշումը ՄԱԿ-ի նշագրման 1744 համարի բրոմի կամ ՄԱԿ-ի նշագրման 1744 համարի բրոմի լուծույթի համար:

խառնուրդների աղյուսակում:

Ճնշման տակ հիդրավլիկ փորձարկումը պետք է իրականացվի ամբողջական կորպուսի վրա եւ հատվածամասերի բաժանված կորպուսների յուրաքանչյուր հատվածամասի վրա առանձին:

Փորձարկումը պետք է իրականացվի յուրաքանչյուր հատվածամասի վրա՝ հետեւյալ ճնշման տակ, որը հավասար է՝

- 1,3 անգամ առավելագույն աշխատանքային ճնշումը, կամ
- 1,3 անգամ փոխադրվող նյութի ստատիկ ճնշումը, սակայն ոչ պակաս, քան 1,3 անգամ ջրի նվազագույն ճնշումը՝ նվազագույնը 20 կՊա-ով (0,2 բար)՝ ինքնահոս դատարկվող ցիստեռների դեպքում՝ 6.8.2.1.14 (ա)-ին համապատասխան:

Ճնշման տակ հիդրավլիկ փորձարկումը պետք է իրականացվի նախքան ջերմամեկուսացման տեղադրումը, եթե այդպիսին անհրաժեշտ է:

Եթե կորպուսները եւ դրանց սարքավորումները փորձարկվում են յուրաքանչյուրն առանձին, ապա հավաքումից հետո դրանք պետք է միասին անջրանցիկության փորձարկում անցնեն՝ համաձայն 6.8.2.4.3-ի:

Անջրանցիկության փորձարկումը պետք է իրականացվի հատվածամասերի բաժանված կորպուսների յուրաքանչյուր հատվածամասի վրա առանձին:

6.8.2.4.2. Կորպուսները եւ դրանց սարքավորումները պետք է պարբերական ստուգումներ անցնեն ոչ ուշ, քան յուրաքանչյուր

վեց տարին մեկ անգամ: | հինգ տարին մեկ անգամ:

Այս պարբերական ստուգումները ներառում են՝

- արտաքին եւ ներքին զննում.
- կորպուսի անջրանցիկության փորձարկում իր սարքավորումների հետ միասին՝ համաձայն 6.8.2.4.3-ի, եւ ամբողջ սարքավորման բավարար աշխատանքի ստուգում.



- որպես կանոն ճնշման տակ հիդրավլիկ փորձարկում<sup>10</sup> (կորպուսների եւ հատվածամասերի փորձարկման ճնշման համար, եթե կիրառելի է, տե՛ս 6.8.2.4.1):

Ջերմամեկուսացման կամ այլ պաշտպանության նպատակով արված երեսապատվածքը պետք է հեռացվի միայն այն ժամանակ, երբ դա անհրաժեշտ է կորպուսի հատկանիշները հավաստի գնահատելու համար:

Իրավասու մարմնի կողմից հաստատված փորձագետի համաձայնությամբ փոշենման կամ հատիկավոր նյութերի փոխադրման համար նախատեսված ցիստեռնների դեպքում ճնշման տակ պարբերական հիդրավլիկ փորձարկումները կարող են չիրականացվել եւ փոխարինվել անջրանցիկության փորձարկումներով՝ համաձայն 6.8.2.4.3-ի, առավելագույն աշխատանքային ճնշումից ոչ պակաս արդյունավետ ներքին ճնշման դեպքում:

- 6.8.2.4.3. Կորպուսները եւ դրանց սարքավորումները պետք է միջանկյալ ստուգումներ անցնեն առնվազն յուրաքանչյուր

երեք տարին մեկ անգամ | երկուսուկես տարին մեկ անգամ

նախնական ստուգումից եւ յուրաքանչյուր պարբերական ստուգումից հետո: Այս միջանկյալ ստուգումները կարող են անցկացվել նշված ամսաթվից երեք ամիս առաջ կամ հետո:

Այնուամենայնիվ, միջանկյալ ստուգումը կարող է անցկացվել նշված ամսաթվից առաջ ցանկացած ժամանակ:

Եթե միջանկյալ ստուգումն անց է կացվում նախատեսված ամսաթվից ավելի քան երեք ամիս առաջ, ապա հերթական միջանկյալ ստուգումը պետք է անցկացվի ոչ ուշ, քան այդ ամսաթվից

երեք տարի հետո: | երկուս ու կես տարի հետո:

Այս միջանկյալ ստուգումները ներառում են կորպուսի անջրանցիկության փորձարկում իր սարքավորումների հետ միասին եւ ամբողջ սարքավորման բավարար աշխատանքի ստուգում: Այս նպատակով ցիստեռնը ենթարկվում է արդյունավետ ներքին ճնշման, որն առնվազն հավասար է առավելագույն աշխատանքային ճնշմանը: Հեղուկների կամ հատիկավոր կամ փոշենման պինդ նյութերի փոխադրման համար նախատեսված ցիստեռնների

---

<sup>10</sup> Հարուկ դեպքերում եւ իրավասու մարմնի կողմից հաստատված փորձագետի համաձայնությամբ՝ ճնշման տակ հիդրավլիկ փորձարկումը կարող է փոխարինվել ճնշման տակ փորձարկումով՝ այլ հեղուկի կամ գազի կիրառմամբ, եթե նման գործողությունը որեւէ վրանգ չի ներկայացնում:

դեպքում, երբ անջրանցիկության փորձարկման համար գազ է օգտագործվում, այն պետք է անցկացվի առավելագույն աշխատանքային ճնշման առնվազն 25 %-ին հավասար ճնշման տակ: Բոլոր դեպքերում այդ ճնշումը պետք է լինի առնվազն 20 կՊա (0,2 բար) (մանոմետրական ճնշում):

Շրջվելիս ցիստեռնի պարունակության արտահոսքը կանխարգելող ապահովիչ սարքով եւ շնչող սարքով հագեցած ցիստեռնների դեպքում անջրանցիկության փորձարկումը պետք է իրականացվի այնպիսի ճնշման տակ, որն առնվազն հավասար է փոխադրվող ամենախիտ նյութի ստատիկ ճնշմանը, հեղուկի ստատիկ ճնշմանը կամ 20 կՊա-ին (0,2 բար)՝ կախված նրանից, թե դրանցից որն ունի ամենամեծ արժեքը:

Անջրանցիկության փորձարկումը պետք է իրականացվի հատվածամասերի բաժանված կորպուսների յուրաքանչյուր հատվածամասի վրա առանձին:

6.8.2.4.4. Եթե վերանորոգման, կառուցվածքի փոփոխության կամ ավտոճանապարհային պատահարի հետեւանքով ցիստեռնի կամ դրա սարքավորումների հուսալիության աստիճանը կարող է նվազած լինել, ապա պետք է անցկացնել արտապլանային ստուգում: Եթե իրականացվել է 6.8.2.4.2-ի պահանջները բավարարող արտապլանային ստուգում, ապա այդ արտապլանային ստուգումը կարող է դիտարկվել որպես պարբերական ստուգում: Եթե իրականացվել է 6.8.2.4.3-ի պահանջները բավարարող արտապլանային ստուգում, ապա այդ արտապլանային ստուգումը կարող է դիտարկվել որպես միջանկյալ ստուգում:

6.8.2.4.5. 6.8.2.4.1 - 6.8.2.4.4-ին համապատասխան՝ փորձարկումները եւ ստուգումները պետք է անցկացվեն իրավասու մարմնի կողմից հաստատված փորձագետի կողմից: Պետք է տրամադրվեն այնպիսի սերտիֆիկատներ, որտեղ անգամ բացասական արդյունքների դեպքում նշված են այս գործողությունների արդյունքները: Այս սերտիֆիկատները պետք է հղումներ պարունակեն տվյալ ցիստեռնով փոխադրման համար թույլատրված նյութերի ցանկին կամ ցիստեռնի ծածկագրին եւ 6.8.2.3-ին համապատասխան հատուկ դրույթների տառաթվանշանային ծածկագրերին:

Այս սերտիֆիկատների պատճենը պետք է կցվի յուրաքանչյուր փորձարկված ցիստեռնի, մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցի կամ ԳԲՏԿ-ի ցիստեռնի մասին գրառումներին (տե՛ս 4.3.2.1.7):

6.8.2.5. Մակնշումը

6.8.2.5.1. Յուրաքանչյուր ցիստեռն պետք է սարքավորված լինի կոռոզիակայուն մետաղական ցուցանակով, որը հուսալիորեն ամրացված է ցիստեռնին՝ վերահսկման համար մատչելի տեղում: Ցուցանակի վրա դրոշմման կամ նմանատիպ այլ մեթոդով գրվում են առնվազն ստորեւ նշված տվյալները: Այս տվյալները կարող են փորագրվել անմիջապես կորպուսի պատերին, եթե պատերն ուժեղացված են այնպես, որ դա չի հանգեցնի կորպուսի ամրության նվազեցմանը<sup>13</sup>.

- հաստատման համարը.
- արտադրողի անունը կամ նշանը.
- արտադրողի սերիական համարը.
- արտադրության տարին.
- փորձարկման ճնշումը (մանոմետրական ճնշում).
- արտաքին հաշվարկային ճնշումը (տե՛ս 6.8.2.1.7).
- կորպուսի տարողությունը, իսկ հատվածամասերի բաժանված կորպուսների դեպքում՝ յուրաքանչյուր հատվածամասի տարողությունը, ինչպես նաեւ «S» խորհրդանշանը, երբ ավելի քան 7 500 լիտր տարողունակությամբ կորպուսը կամ հատվածամասն ավելի միջնորմների միջոցով բաժանված են ոչ ավելի, քան 7 500 լիտր տարողունակությամբ բաժինների.
- հաշվարկային ջերմաստիճանը (միայն եթե բարձր է +50 °C-ից կամ ցածր -20 °C-ից).
- վերջին փորձարկման ամսաթիվը եւ տեսակը. «ամիս, տարի», որոնց հետեւում է «P» տառը, եթե փորձարկումը նախնական է կամ պարբերական՝ 6.8.2.4.1-ին եւ 6.8.2.4.2-ին համապատասխան, կամ «ամիս, տարի», որոնց հետեւում է «L» տառը, եթե անջրանցիկության միջանկյալ փորձարկում է 6.8.2.4.3-ին համապատասխան.
- փորձարկումներն իրականացրած փորձագետի դրոշմը.
- նյութը, որից պատրաստված են կորպուսը, եւ հարկ եղած դեպքում՝ պաշտպանիչ երեսապատվածքը, ինչպես նաեւ նյութերի գծով ստանդարտները, եթե այդպիսիք կան.
- ամբողջական կորպուսի փորձարկման ճնշումը եւ հատվածամասերի փորձարկման

<sup>13</sup> Թվային արժեքներից հետո նշել չափման միավորները:

ճնշումը՝ արտահայտված ՄՊա-  
ով կամ բարով  
(մանոմետրական ճնշում), եթե  
հատվածամասերի ճնշումն  
ավելի ցածր է, քան կորպուսի  
ճնշումը:

Բացի այդ, ճնշման տակ լցավորվող կամ դատարկվող ցիստեռնների  
վրա պետք է նշված լինի թույլատրելի առավելագույն  
աշխատանքային ճնշումը:

6.8.2.5.2 Հետեւյալ տվյալները պետք է գրված լինեն ավտոցիստեռնի վրա (կամ անմիջապես ցիստեռնի կամ ցուցանակի վրա)<sup>13</sup>.

- տիրոջ կամ օպերատորի անունը.
- ավտոցիստեռնի քաշը դատարկ վիճակում, եւ
- ավտոցիստեռնի թույլատրելի առավելագույն քաշը:

Հանովի ցիստեռնների վրա (կամ անմիջապես ցիստեռնի կամ ցուցանակի վրա)<sup>13</sup> պետք է ներկայացվեն հետեւյալ տվյալները՝

- սեփականատիրոջ կամ օպերատորի անվանումը.
- «հանվող ցիստեռն».
- դատարկ ցիստեռնի քաշը.
- ցիստեռնի առավելագույն թույլատրելի անզուտ քաշը.
- 4.3.4.1.3-ում նշված նյութերի դեպքում փոխադրման համար ընդունված նյութի (նյութերի) ճիշտ բեռնառաքման անվանումը.

- ցիստեռնի ծածկագիրը՝ 4.3.4.1.1-ին համապատասխան, եւ

- ցիստեռնով փոխադրման ենթակա նյութերի վերաբերյալ 3.2 գլխի Ա աղյուսակի 13-րդ սյունակում նշված TC եւ TE հատուկ դրույթների տառաթվանշանային ծածկագրերը՝ 4.3.4.1.3-ով նախատեսված նյութերից տարբեր այլ նյութերի համար:

Հետեւյալ տվյալները պետք է գրված լինեն ցիստեռն-կոնտեյնրի վրա (կամ անմիջապես ցիստեռնի կամ ցուցանակի վրա)<sup>13</sup>.

- տիրոջ կամ օպերատորի անունները.

- կորպուսի տարողությունը.

- տարայի զանգվածը.

- թույլատրելի առավելագույն քաշը բեռնված վիճակում.

- փոխադրման համար թույլատրված նյութի կամ նյութերի բեռնառաքման ճշգրիտ անվանումը՝ 4.3.4.1.3-ով նախատեսված նյութերի համար.

- ցիստեռնի ծածկագիրը՝ 4.3.4.1.1-ին համապատասխան.

- ցիստեռնով փոխադրման ենթակա նյութերի վերաբերյալ 3.2 գլխի Ա աղյուսակի 13-րդ սյունակում նշված TC եւ TE հատուկ դրույթների տառաթվանշանային ծածկագրերը՝ 4.3.4.1.3-ով նախատեսված նյութերից տարբեր այլ նյութերի համար:

<sup>13</sup> Թվային արժեքներից հետո նշել չափման միավորները:

6.8.2.6. Ցիստեոնների նկատմամբ կիրառվող պահանջները, որոնք նախագծված, պատրաստված եւ փորձարկված են այն ստանդարտների համաձայն, որոնց հղում է կատարված

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** Ստանդարտներում նշված անձինք կամ մարմինները, որոնք «ԱԴՌ» համաձայնագրի համաձայն ստանձնել են պարտավորություններ, պետք է բավարարեն «ԱԴՌ» համաձայնագրի պահանջները:

6.8.2.6.1. Նախագծումը եւ պատրաստումը

Տեսակի հաստատման սերտիֆիկատները տրամադրվում են 1.8.7-ին կամ 6.8.2.3-ին համապատասխան: Ստանդարտները, որոնց հղում է կատարվել ստորեւ ներկայացված աղյուսակում, կիրառվում են տեսակի հաստատման տրամադրման նպատակով, ինչպես նշված է 4-րդ սյունակում՝ 6.8 գլխի պահանջների կատարման համար: Ստանդարտները պետք է կիրառվեն 1.1.5-ին համապատասխան: 5-րդ սյունակում նշված է այն վերջնաժամկետը, որի դեպքում, 1.8.7.2.4 կամ 6.8.2.3.3-ի համաձայն, չեղյալ են համարվում գործող տեսակի հաստատումները, իսկ այն դեպքում, երբ ամսաթիվ նշված չէ, տեսակի հաստատումը մնում է վավեր՝ մինչեւ դրա վավերականության ժամկետի ավարտը:

2009 թվականի հունվարի 1-ից ի վեր ստանդարտների կիրառությունը, որոնց հղում է կատարված, պարտադիր է: Բացառությունները դիտարկվում են 6.8.2.7-ում եւ 6.8.3.7-ում:

Եթե միեւնույն պահանջների կիրառության համար հղում է կատարվել մեկից ավելի ստանդարտների, ապա կիրառվում է նրանցից միայն մեկը: Այդ դեպքում տվյալ ստանդարտը կիրառվում է լրիվ ծավալով, եթե ստորեւ ներկայացված աղյուսակում այլ բան նշված չէ:

Յուրաքանչյուր ստանդարտի կիրառման շրջանակը սահմանված է ստանդարտի՝ շրջանակին վերաբերող բաժնում, եթե աղյուսակում այլ բան նախատեսված չէ:

Հղումը	Փաստաթղթի անվանումը	Կիրառելի ենթաբաժինները եւ պարբերությունները	Նոր տեսակի հաստատման ստացման կամ երկարաձգման համար կիրառելի	Գործող տեսակի հաստատումների գործողության դադարեցման վերջնաժամկետը
(1)	(2)	(3)	(4)	(5)
Ցիստեոնների նախագծման եւ պատրաստման համար				
EN 14025:2003 + AC:2005	Վտանգավոր բեռների փոխադրման համար նախատեսված ցիստեոններ. Ճնշման տակ մետաղական ցիստեոններ. Նախագծում եւ պատրաստում	6.8.2.1	2005 թվականի հունվարի 1-ից մինչեւ 2009 թվականի հունիսի 30-ը	

Հղումը	Փաստաթղթի անվանումը	Կիրառելի ենթաբաժինները եւ պարբերությունները	Նոր տեսակի հաստատման ստացման կամ երկարաձգման համար կիրառելի	Գործող տեսակի հաստատումների գործողության դադարեցման վերջնաժամկետը
(1)	(2)	(3)	(4)	(5)
EN 14025:2008	Վտանգավոր բեռների փոխադրման համար նախատեսված ցիստեռններ. Ճնշման տակ մետաղական ցիստեռններ. Նախագծում եւ պատրաստում	6.8.2.1 եւ 6.8.3.1	2009 թվականի հուլիսի 1-ից մինչեւ 2016 թվականի դեկտեմբերի 31-ը	
EN 14025:2013	Վտանգավոր բեռների փոխադրման համար նախատեսված ցիստեռններ. Նախագծում եւ պատրաստում	6.8.2.1 եւ 6.8.3.1	2015 թվականի հունվարի 1-ից մինչեւ 2018 թվականի դեկտեմբերի 31-ը	
EN 4025:2013+ A1:2016 ( 0 0 0 0 0 0 0 0 0 0 0 0 0 0 )	Վտանգավոր բեռների փոխադրման համար նախատեսված ցիստեռններ. Մետաղական ճնշումային ցիստեռններ. Նախագծում եւ պատրաստում	6.8.2.1 եւ 6.8.3.1	Մինչեւ հետագա ծանուցումը	
EN 13094:2004	Վտանգավոր բեռների փոխադրման համար նախատեսված ցիստեռններ. Աշխատանքային ճնշման 0,5 բարը չզերազանցող մետաղական ցիստեռններ. Նախագծում եւ պատրաստում	6.8.2.1	2005 թվականի հունվարի 1-ից մինչեւ 2009 թվականի դեկտեմբերի 31-ը	
EN 13094: 2008 + AC:2008	Վտանգավոր բեռների փոխադրման համար նախատեսված ցիստեռններ. Աշխատանքային ճնշման 0,5 բարը չզերազանցող մետաղական ցիստեռններ. Նախագծում եւ պատրաստում	6.8.2.1	2010 թվականի հունվարի 1-ից մինչեւ 2018 թվականի դեկտեմբերի 31-ը	
EN 13094:2015	Վտանգավոր բեռների փոխադրման համար նախատեսված ցիստեռններ. Աշխատանքային ճնշման 0,5 բարը չզերազանցող մետաղական ցիստեռններ. Նախագծում եւ պատրաստում	6.8.2.1	Մինչեւ հետագա ծանուցումը	
EN 12493:2001 (բացի Գ հավելվածից)	Հեղուկացված նավթային գազերի (ՀՆԳ) համար նախատեսված՝ զողված պողպատյա ցիստեռններ. Վազոն-ցիստեռններ. Նախագծում եւ պատրաստում ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Ըստ «ԱԴՌ» համաձայնագրի՝ «վազոն-ցիստեռններ» եզրույթն օգտագործվում է «անշարժ ցիստեռններ» եւ «հանովի ցիստեռններ» իմաստով:	6.8.2.1 (բացառությամբ 6.8.2.1.17-ի), 6.8.2.4.1 (բացառությամբ անջրանցիկության փորձարկման), 6.8.2.5.1, 6.8.3.1 եւ 6.8.3.5.1	2005 թվականի հունվարի 1-ից մինչեւ 2010 թվականի դեկտեմբերի 31-ը	2012 թվականի դեկտեմբերի 31
EN 12493:2008 (բացի Գ հավելվածից)	ՀՆԳ սարքավորումներ եւ օժանդակ սարքեր. Հեղուկացված նավթային գազերի (ՀՆԳ) համար նախատեսված զողված պողպատյա ցիստեռններ. Վազոն-ցիստեռններ. Նախագծում եւ արտադրություն ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Ըստ «ԱԴՌ» համաձայնագրի՝ «վազոն-ցիստեռններ» եզրույթն օգտագործվում է «անշարժ ցիստեռններ» եւ «հանովի ցիստեռններ» իմաստով:	6.8.2.1 (բացառությամբ 6.8.2.1.17-ի), 6.8.2.5, 6.8.3.1, 6.8.3.5, 6.8.5.1-6.8.5.3	2010 թվականի հունվարի 1-ից մինչեւ 2013 թվականի դեկտեմբերի 31-ը	2014 թվականի դեկտեմբերի 31
EN 12493:2008 +A1:2012 (բացի Գ հավելվածից)	Հեղուկացված նավթային գազերի (ՀՆԳ) համար նախատեսված՝ զողված պողպատյա ցիստեռններ. Վազոն-ցիստեռններ. Նախագծում եւ պատրաստում ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Ըստ «ԱԴՌ» համաձայնագրի՝ «վազոն-ցիստեռններ» եզրույթն օգտագործվում է «անշարժ ցիստեռններ» եւ «հանովի ցիստեռններ»	6.8.2.1 (բացառությամբ 6.8.2.1.17-ի), 6.8.2.5, 6.8.3.1, 6.8.3.5, 6.8.5.1 - 6.8.5.3	Մինչեւ 2013 թվականի դեկտեմբերի 31-ը	2015 թվականի դեկտեմբերի 31





Հղումը	Փաստաթղթի անվանումը	Կիրառելի ենթաբաժինները եւ պարբերությունները	Նոր տեսակի հաստատման ստացման կամ երկարաձգման համար կիրառելի	Գործող տեսակի հաստատումների գործողության դադարեցման վերջնաժամկետը
(1)	(2)	(3)	(4)	(5)
EN 14432:2014	Վտանգավոր բեռների փոխադրման համար նախատեսված ցիստեռններ. Ֆիստեռնի սարքավորումներ՝ նախատեսված հեղուկ քիմիական նյութերի եւ հեղուկացված գազերի փոխադրման համար. Նյութերի դատարկման եւ օդի ներթողման կափույրներ  ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Սույն ստանդարտը կարող է նաեւ կիրառվել աշխատանքային ճնշման 0,5 բարը չզերազանցող ցիստեռնների դեպքում	6.8.2.2.1, 6.8.2.2.2 եւ 6.8.2.3.1	Մինչեւ հետագա ծանուցումը	
EN 14433:2006	Վտանգավոր բեռների փոխադրման համար նախատեսված ցիստեռններ. Ֆիստեռնի սարքավորումներ՝ նախատեսված հեղուկ քիմիական նյութերի փոխադրման համար. Ստորին կափույրներ	6.8.2.2.1	2009 թվականի հունվարի 1-ից մինչեւ 2018 թվականի դեկտեմբերի 31-ը	
EN 14433:2014	Վտանգավոր բեռների փոխադրման համար նախատեսված ցիստեռններ. Ֆիստեռնի սարքավորումներ՝ նախատեսված հեղուկ քիմիական նյութերի եւ հեղուկացված գազերի փոխադրման համար. Ստորին կափույրներ  ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Սույն ստանդարտը կարող է նաեւ կիրառվել աշխատանքային ճնշման 0,5 բարը չզերազանցող ցիստեռնների դեպքում	6.8.2.2.1, 6.8.2.2.2 եւ 6.8.2.3.1	Մինչեւ հետագա ծանուցումը	
EN 12252:2000	ՀՆԳ վազոն-ցիստեռնների սարքավորումը  ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Ըստ «ԱԴՌ» համաձայնագրի՝ «վազոն-ցիստեռններ» եզրույթն օգտագործվում է «անշարժ ցիստեռններ» եւ «հանովի ցիստեռններ» իմաստով:	6.8.3.2 (բացառությամբ 6.8.3.2.3-ի)	2005 թվականի հունվարի 1-ից մինչեւ 2010 թվականի դեկտեմբերի 31-ը	2012 թվականի դեկտեմբերի 31
EN 12252:2005 + A1:2008	ՀՆԳ սարքավորումը եւ օժանդակ սարքերը. ՀՆԳ վազոն-ցիստեռնների սարքավորումը  ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Ըստ «ԱԴՌ» համաձայնագրի՝ «վազոն-ցիստեռններ» եզրույթն օգտագործվում է «անշարժ ցիստեռններ» եւ «հանովի ցիստեռններ» իմաստով:	6.8.3.2 (բացառությամբ 6.8.3.2.3-ի) եւ 6.8.3.4.9	2011 թվականի հունվարի 1-ից մինչեւ 2018 թվականի դեկտեմբերի 31-ը	
EN 12252:2014	ՀՆԳ սարքավորումը եւ օժանդակ սարքերը. ՀՆԳ վազոն-ցիստեռնների սարքավորումը  ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Ըստ «ԱԴՌ» համաձայնագրի՝ «վազոն-ցիստեռններ» եզրույթն օգտագործվում է «անշարժ ցիստեռններ» եւ «հանովի ցիստեռններ» իմաստով:	6.8.3.2 եւ 6.8.3.4.9	Մինչեւ հետագա ծանուցումը	
EN 14129:2014	ՀՆԳ սարքավորումը եւ օժանդակ սարքերը. Ճնշումը նվազեցնող կափույրներ՝ ՀՆԳ ճնշումային տարաների համար	6.8.2.1.1 եւ 6.8.3.2.9	Մինչեւ հետագա ծանուցումը	
EN 1626:2008 (բացի F կատեգորիայից)	Կրիոգեն տարաներ. Կափույրներ՝ կրիոգեն օժանդակ սարքավորումների համար	6.8.2.4 եւ 6.8.3.4	Մինչեւ հետագա ծանուցումը	
EN 13648-1:2008	Կրիոգեն տարաներ. Անվտանգության սարքեր՝ հավելյալ ճնշումից պաշտպանելու համար. Մաս 1՝ Անվտանգության կափույրներ՝ կրիոգեն օժանդակ սարքավորումների համար	6.8.2.4, 6.8.3.2.12 եւ 6.8.3.4	Մինչեւ հետագա ծանուցումը	
EN 13082:2001	Վտանգավոր բեռների փոխադրման համար	6.8.2.2 եւ 6.8.2.4.1	2005 թվականի	2014 թվականի

Հղումը	Փաստաթղթի անվանումը	Կիրառելի ենթաբաժինները եւ պարբերությունները	Նոր տեսակի հաստատման ստացման կամ երկարաձգման համար կիրառելի	Գործող տեսակի հաստատումների գործողության դադարեցման վերջնաժամկետը
(1)	(2)	(3)	(4)	(5)
	Նախատեսված ցիստեռններ. Օժանդակ սարքավորումներ՝ ցիստեռնների համար. Գոլորշիների հեռացման կափույր		հունվարի 1-ից մինչեւ 2013 թվականի հունիսի 30-ը	դեկտեմբերի 31
EN 13082: 2008 + A1:2012	Վտանգավոր բեռների փոխադրման համար նախատեսված ցիստեռններ. Օժանդակ սարքավորումներ՝ ցիստեռնների համար. Գոլորշիների հեռացման կափույր	6.8.2.2 եւ 6.8.2.4.1	Մինչեւ հետագա ծանուցումը	
EN 13308:2002	Վտանգավոր բեռների փոխադրման համար նախատեսված ցիստեռններ. Օժանդակ սարքավորումներ՝ ցիստեռնների համար. Ինքնահոս կերպով բեռնաթափման կափույր	6.8.2.2 եւ 6.8.2.4.1	Մինչեւ հետագա ծանուցումը	
EN 13314:2002	Վտանգավոր բեռների փոխադրման համար նախատեսված ցիստեռններ. Օժանդակ սարքավորումներ՝ ցիստեռնների համար. Լցավորման բկանցքի կափարիչ	6.8.2.2 եւ 6.8.2.4.1	Մինչեւ հետագա ծանուցումը	
EN 13316:2002	Վտանգավոր բեռների փոխադրման համար նախատեսված ցիստեռններ. Օժանդակ սարքավորումներ՝ ցիստեռնների համար. Ճնշման տակ բեռնաթափման կափույր	6.8.2.2 եւ 6.8.2.4.1	Մինչեւ հետագա ծանուցումը	
EN 13317:2002 (բացառությամբ Բ հավելվածի նկարի եւ Բ.2 աղյուսակի) (նյութը պետք է համապատասխան ի EN 13094:2004 ստանդարտին, կետ 5.2)	Վտանգավոր բեռների փոխադրման համար նախատեսված ցիստեռններ. Օժանդակ սարքավորումներ՝ ցիստեռնների համար. Դիտանցքի կափարիչ	6.8.2.2 եւ 6.8.2.4.1	2005 թվականի հունվարի 1-ից մինչեւ 2010 թվականի դեկտեմբերի 31-ը	2012 թվականի դեկտեմբերի 31
EN 13317:2002 + A1:2006	Վտանգավոր բեռների փոխադրման համար նախատեսված ցիստեռններ. Օժանդակ սարքավորումներ՝ ցիստեռնների համար. Դիտանցքի կափարիչ	6.8.2.2 եւ 6.8.2.4.1	Մինչեւ հետագա ծանուցումը	
EN 14595:2005	Վտանգավոր բեռների փոխադրման համար նախատեսված ցիստեռններ. Օժանդակ սարքավորումներ՝ ցիստեռնների համար. Շնչող կափույր	6.8.2.2 եւ 6.8.2.4.1	Մինչեւ հետագա ծանուցումը	
EN 16257:2012	Վտանգավոր բեռների փոխադրման համար նախատեսված ցիստեռններ. Օժանդակ սարքավորումներ. Ստորին կափույրներ. 100մմ շառավիղով (անվ) ստորին կափույրներից բացի այլ չափսերի ստորին կափույրներ	6.8.2.2.1 եւ 6.8.2.2.2	Մինչեւ հետագա ծանուցումը	
EN 13175:2014	ՀՆԳ սարքավորումներ եւ օժանդակ սարքեր. Մասնագրեր եւ փորձարկում՝ հեղուկացված նավթային գազի (ՀՆԳ) համար նախատեսված. ճնշումային տարաների կափույրներ եւ կցամասեր	6.8.2.1.1, 6.8.2.2, 6.8.2.4.1 եւ 6.8.3.2.3	Մինչեւ հետագա ծանուցումը	

6.8.2.6.2. Ստուգումը եւ փորձարկումը

Ստորեւ ներկայացված աղյուսակում հղում կատարված ստանդարտները պետք է կիրառվեն ցիստեռնների ստուգումների եւ փորձարկումների նպատակով, ինչպես նշված է 4-րդ սյունակում, պահպանելու համար 3-րդ սյունակում նշված 6.8 գլխի պահանջները: Ստանդարտները պետք է կիրառվեն 1.1.5-ին համապատասխան:

Ստանդարտների կիրառությունը, որոնց հղում է կատարված, պարտադիր է:

Յուրաքանչյուր ստանդարտի կիրառման շրջանակը սահմանված է ստանդարտի՝ շրջանակին վերաբերող բաժնում, եթե աղյուսակում այլ բան նախատեսված չէ:

Հղումը	Փաստաթղթի անվանումը	Կիրառելի ենթաբաժինները եւ պարբերությունները	Կիրառությունը թույլատրվում է
(1)	(2)	(3)	(4)
EN 12972:2007	Վտանգավոր բեռների փոխադրման համար նախատեսված ցիստեռններ. Մետաղական ցիստեռնների փորձարկում, ստուգում եւ մակնշում	6.8.2.4 6.8.3.4	Մինչեւ հետագա ծանուցումը
EN 14334:2014	ՀՆԳ սարքավորումները եւ օժանդակ սարքերը. ՀՆԳ ճանապարհային ցիստեռնների ստուգումը եւ փորձարկումը	6.8.2.4 (բացառությամբ 6.8.2.4.1-ի), 6.8.3.4.2 եւ 6.8.3.4.9	Մինչեւ հետագա ծանուցումը

6.8.2.7. Հղում կատարված ստանդարտների համաձայն նախագծված, պատրաստված եւ փորձարկված ցիստեռնների նկատմամբ կիրառվող պահանջները

Իրավասու մարմինը կարող է թույլատրել անվտանգության միեւնույն մակարդակն ապահովող տեխնիկական կանոնների օգտագործում, որպեսզի հաշվի առնվի գիտական եւ տեխնիկական առաջընթացը, ինչպես նաեւ այն դեպքում, երբ 6.8.2.6-ում հղում կատարված չէ որեւէ ստանդարտի, կամ 6.8.2.6-ում հղում կատարված ստանդարտներով չկարգավորվող հայեցակետերը հաշվի առնելու համար: Այնուամենայնիվ, ցիստեռնները պետք է բավարարեն 6.8.2-ով սահմանված նվազագույն պահանջները:

Իրավասու մարմինը պետք է ՄԱԿ-ի ԵՏՀ-ի քարտուղարությանն ուղարկի տեխնիկական կանոնների ցանկը, որոնք ճանաչվում են իր կողմից: Ցանկում պետք է ներառվեն հետեւյալ մանրամասները՝ կանոնի անունը եւ ընդունման ամսաթիվը, կանոնի նպատակը եւ մանրամասներ, թե որտեղ կարելի է այն ձեռք բերել: Քարտուղարությունը պարտավոր է նշված տեղեկությունները հրապարակել իր կայքէջում:

Այն ստանդարտը, որն ընդունվել է «ԱԴՌ» համաձայնագրի հետագա

հրատարակություններում հղում կատարելու համար, կարող է օգտագործման համար հաստատվել իրավասու մարմնի կողմից՝ առանց ՄԱԿ-ի ԵՏՀ-ի քարտուղարությանը ծանուցելու:

Փորձարկումների, ստուգումների եւ մակնշման համար կարող է նաեւ օգտագործվել 6.8.2.6-ում հղում կատարված կիրառելի ստանդարտը:

6.8.3 2-րդ դասի նկատմամբ կիրառվող հատուկ պահանջները

6.8.3.1. Կորպուսների պատրաստումը

6.8.3.1.1. Սեղմված կամ հեղուկացված գազերի կամ լուծված գազերի փոխադրման համար նախատեսված կորպուսները պետք է պատրաստվեն պողպատից: Շեղում կատարելով 6.8.2.1.12-ի դրույթներից՝ անկարան կորպուսների դեպքում թույլատրվում է 14% նվազագույն երկարացումը խզման դեպքում, ինչպես նաեւ ստորեւ նշված սահմանները չգերազանցող կամ այդ սահմանին հավասար  $\sigma$  լարվածությունը՝ կախված նյութից՝

ա) եթե  $Re/Rm$  հարաբերակցությունը (նվազագույն երաշխավորված հատկանիշները ջերմամշակումից հետո) բարձր է 0,66-ից, բայց չի գերազանցում 0,85-ը՝

$$\sigma \leq 0,75 Re,$$

բ) եթե  $Re/Rm$  հարաբերակցությունը (նվազագույն երաշխավորված հատկանիշները ջերմամշակումից հետո) բարձր է 0,85-ից՝

$$\sigma \leq 0,5 Rm:$$

6.8.3.1.2. Եռակցված կորպուսների նյութերի եւ կառուցվածքի նկատմամբ կիրառվում են 6.8.5-ի պահանջները:

6.8.3.1.3. (Նախատեսվում է վերապահում)

Մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցների եւ ԳՐՏԿ-ների պատրաստում

6.8.3.1.4. Բալոնները, գլանները, ճնշումային թմբկազլանները եւ բալոնների կապուկները, որպես մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցի եւ ԳՐՏԿ-ի դետալներ, պետք է պատրաստվեն՝ 6.2 գլխին համապատասխան:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1.** Բալոնների այն կապուկների նկատմամբ, որոնք մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցի կամ ԳՐՏԿ-ի դետալներ չեն, կիրառվում են 6.2 գլխի պահանջները:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2.** Ցիստեոնները, որպես մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցների կամ ԳՐՏԿ-ների դետալներ,

պատրաստվում են 6.8.2.1-ին եւ 6.8.3.1-ին համապատասխան:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3.** Հանովի ցիստեռնները<sup>14</sup> չեն դիտարկվում որպես մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցի կամ ԳՐՏԿ-ների դետալներ:

6.8.3.1.5.

Մարտկոցանման հավաքվածքով  
փոխադրամիջոցի

ԳՐՏԿ-ների շրջանակն ու

դետալները եւ դրանց ամրակման միջոցները պետք է թույլատրելի առավելագույն բեռնվածության դեպքում կարողանան դիմակայել 6.8.2.1.2-ում սահմանված ճնշմանը: Յուրաքանչյուր ճնշման համար տարրի եւ դրա ամրակման միջոցների լարվածությունն առավել լարված կետում չպետք է գերազանցի բալոնների, գլանների, ճնշումային թմբկազլանների եւ բալոնների կապուկների համար 6.2.5.3-ում սահմանված արժեքը եւ ցիստեռնների համար՝ 6.8.2.1.16-ում սահմանված  $\sigma$  արժեքը:

6.8.3.2. Սարքավորման դետալները

6.8.3.2.1. Անհրաժեշտ է ապահովել, որ ցիստեռնների՝ դատարկման համար նախատեսված խողովակները փակվեն անշարժ կցաշուրթերի կամ համարժեք հուսալիության այլ սարքի միջոցով: Սառեցված-հեղուկացված գազերի փոխադրման համար նախատեսված ցիստեռնների դեպքում այս անշարժ կցաշուրթերը կամ համարժեք հուսալիության մյուս սարքերը պետք է ունենան 1,5 մմ-ը չգերազանցող տրամագծով բացվածքներ՝ ճնշումը նվազեցնելու համար:

6.8.3.2.2. Հեղուկացված գազերի փոխադրման համար նախատեսված կորպուսները, բացի 6.8.2.2.2-ով եւ 6.8.2.2.4-ով սահմանված անցքերից, կարող են ունենալ մակարդակաչափի, ջերմաչափի եւ մանոմետրի տեղադրման բացվածքներ, ինչպես նաեւ օդափոխման բացվածքներ, որոնք անհրաժեշտ են դրանց նորմալ շահագործման եւ անվտանգության համար:

6.8.3.2.3. Ներքին փակման կափույրը, որը մոնտաժված է այն ցիստեռնների լցավորման եւ դատարկման բոլոր բացվածքների վրա, որոնք

| ունեն 1 մ3-ը գերազանցող տարողություն

եւ նախատեսված են հեղուկացված դյուրավառ կամ թունավոր

<sup>14</sup> «Հանովի ցիստեռնի» սահմանումը տե՛ս 1.2.1 բաժնում:

գազերի փոխադրման համար, պետք է լինի արագագործ եւ պետք է մեխանիկորեն փակվի ցիստեռնի չնախատեսված շարժման կամ հրդեհի դեպքում: Ներքին փակման կափույրի հեռակառավարումը պետք է նույնպես հնարավոր լինի:

Այնուամենայնիվ, հեղուկացված ոչ թունավոր դյուրավառ գազերի փոխադրման համար նախատեսված ցիստեռններում հեռակառավարվող ներքին փակման կափույրը կարող է փոխարինվել հակադարձ կափույրով, որը տեղադրվում է ցիստեռնի լցավորման բացվածքների վրա՝ միայն գոլորշու ֆազում: Հակադարձ կափույրը պետք է մոնտաժվի ցիստեռնի ներսում, լինի զսպանակային տեսակի, որպեսզի փակվի, եթե լցավորման խողովակաշարի ճնշումը հավասար է կամ ցածր է ցիստեռնի ճնշումից, ինչպես նաեւ հագեցած լինի համապատասխան հերմետիկացնող խտարարով<sup>15</sup>

- 6.8.3.2.4. Հեղուկացող դյուրավառ եւ (կամ) թունավոր գազերի փոխադրման համար նախատեսված ցիստեռնների ավելի քան 1,5 մմ նոմինալ տրամագծով բոլոր բացվածքները, բացառությամբ փակ օդափոխիչ անցքերի եւ այն անցքերի, որոնցում տեղադրված են ապահովիչ կափույրները, պետք է սարքավորված լինեն ներքին փակող սարքով:
- 6.8.3.2.5. Անկախ 6.8.2.2.2, 6.8.3.2.3 եւ 6.8.3.2.4-ի պահանջներից՝ սառեցված-հեղուկացված գազերի փոխադրման համար նախատեսված ցիստեռնները կարող են սարքավորված լինել ոչ թե ներքին, այլ արտաքին փակման սարքերով, եթե արտաքին սարքերն ապահովում են առնվազն նույնպիսի պաշտպանություն արտաքին վնասվածքներից, ինչպիսին ապահովում է կորպուսի պատը:
- 6.8.3.2.6. Եթե ցիստեռնները սարքավորված են փոխադրվող նյութի հետ անմիջական շփման մեջ գտնվող մակարդակաչափերով, ապա այդ սարքերը չպետք է պատրաստվեն թափանցիկ նյութից: Եթե կան ջերմաչափեր, ապա դրանք չպետք է անմիջականորեն ընկղմվեն գազի կամ հեղուկի մեջ կորպուսի պատերի միջով:
- 6.8.3.2.7. Ցիստեռնի վերին մասում տեղակայված լցավորման եւ դատարկման

<sup>15</sup> Մեդաղը մեդաղի վրա սկզբունքով պատրաստված խտարարի օգտագործումն արգելված է:

բացվածքները, ի լրումն 6.8.3.2.3-ում սահմանված պահանջների, պետք է սարքավորված լինեն երկրորդ արտաքին փակող սարքով: Այս սարքը պետք է փակվի անշարժ կցաշտրթով կամ համարժեք հուսալիության այլ սարքով:

6.8.3.2.8. Ապահովիչ կափույրները պետք է բավարարեն ստորեւ ներկայացված 6.8.3.2.9 - 6.8.3.2.12-ի պահանջները:

6.8.3.2.9. Սեղմված կամ հեղուկացված գազերի կամ լուծված գազերի փոխադրման համար նախատեսված ցիստեռնները կարող են սարքավորված լինել զսպանակային ապահովիչ կափույրներով: Այս կափույրները պետք է հնարավոր լինի մեխանիկորեն բացել այն ցիստեռնի փորձարկման ճնշման 0,9-1,0-ին հավասար ճնշման դեպքում, որի վրա դրանք տեղադրված են: Կափույրները պետք է լինեն այնպիսի տեսակի, որ կարողանան դիմակայել դինամիկ ճնշումներին, այդ թվում՝ հեղուկի ալիքի հարվածին: Սեփական քաշի ազդեցության տակ գործող կափույրների կամ հակակշռով կափույրների օգտագործումն արգելվում է: Կափույրների պահանջվող թողունակությունը պետք է հաշվարկվի 6.7.3.8.1.1-ում նշված բանաձևի համաձայն:

6.8.3.2.10. Եթե ցիստեռնները նախատեսված են ծովով փոխադրման համար, ապա 6.8.3.2.9-ի պահանջներով չի արգելվում ՎԲՄԾԿ կանոնագրքի համապատասխան ապահովիչ կափույրների տեղադրումը:

6.8.3.2.11. Սառեցված-հեղուկացված գազերի փոխադրման համար նախատեսված ցիստեռնները պետք է սարքավորված լինեն երկու կամ ավելի անկախ ապահովիչ կափույրներով, որոնք հնարավոր է բացել ցիստեռնի վրա նշված առավելագույն աշխատանքային ճնշման դեպքում: Այս ապահովիչ կափույրներից երկուսը պետք է անհատական չափսեր ունենան՝ ապահովելու այն գազերի արտաթողումը ցիստեռնից, որոնք ձեւավորվում են նորմալ շահագործման ժամանակ գոլորշացման հետեւանքով, այնպես, որ ճնշումը երբեւէ 10%-ից ավելի չգերազանցի ցիստեռնի վրա նշված աշխատանքային ճնշումը:

Ապահովիչ կափույրներից մեկը կարող է փոխարինվել պատռվող մեմբրանով, որը պետք է պատռվի փորձարկման ճնշման դեպքում:

Երկպատ ցիստեռնի ապահերմետիկացման կամ միապատ ցիստեռնների մեկուսապատվածքի 20%-ի քայքայման դեպքում ճնշումը նվազեցնող սարքերի համակցությունը պետք է ապահովի գազի արտաթողումն այնպես, որ ճնշումը կորպուսի ներսում չկարողանա գերազանցել փորձարկման ճնշումը: 6.8.2.1.7-ի դրույթները չեն կիրառվում վակուումային մեկուսացումով ցիստեռնների նկատմամբ:

- 6.8.3.2.12. Սառեցված-հեղուկացված գազերի փոխադրման համար նախատեսված ցիստեռնների ճնշումը նվազեցնող սարքերի կառուցվածքը պետք է ապահովի դրանց անխափան աշխատանքը նույնիսկ ամենացածր աշխատանքային ջերմաստիճանի դեպքում: Այս սարքերի աշխատանքի հուսալիությունը նման ջերմաստիճանի դեպքում սահմանվում է ստուգվում է կա՛մ յուրաքանչյուր սարքի առանձին փորձարկման, կա՛մ կառուցվածքի յուրաքանչյուր տեսակի սարքերի նմուշի փորձարկման միջոցով:
- 6.8.3.2.13. Այն հանովի ցիստեռնների կափույրները, որոնց կարելի է գլորել, պետք է հագեցած լինեն ապահովիչ թասակներով:
- Ջերմամեկուսացումը
- 6.8.3.2.14. Եթե հեղուկացված գազերի փոխադրման համար նախատեսված ցիստեռնները սարքավորված են ջերմամեկուսացումով, ապա այս մեկուսապատվածքը պետք է լինի՝
- արեապաշտպան էկրան, որը պետք է ծածկի կորպուսի մակերեսային վերին մասի առնվազն մեկ երրորդը, բայց ոչ ավելի, քան կեսը եւ կորպուսից պետք է բաժանված լինի առնվազն 4 սմ լայնությամբ օդային միջանցքով, կամ
  - բավարար հաստությամբ ամբողջական պատվածք՝ պատրաստված մեկուսիչ նյութերից:
- 6.8.3.2.15. Սառեցված-հեղուկացված գազերի փոխադրման համար նախատեսված ցիստեռնները պետք է ջերմամեկուսացվեն: Ջերմամեկուսացումը պետք է ապահովվի հոծ պատյանի միջոցով: Եթե կորպուսի եւ պատյանի միջեւ տարածությունը վակուումացված է (վակուումային մեկուսացում), ապա պաշտպանիչ պատյանը պետք է հաշվարկված լինի այնպես, որ առանց դեֆորմացիայի դիմակայի առնվազն 100 կՊա (1 բար) (մանոմետրական ճնշում) արտաքին ճնշմանը: Շեղում կատարելով 1.2.1-ում նշված «հաշվարկային ճնշման» սահմանումից՝ հաշվարկների դեպքում պետք է հաշվի առնվեն արտաքին եւ ներքին ուժեղացնող դետալները: Եթե պատյանն անգազանցիկ է, ապա օգտագործվում է մի սարք, որը պետք է կանխարգելի մեկուսիչ շերտում վտանգավոր ճնշման առաջացումն այն դեպքերում, երբ կորպուսը կամ դրա սարքերը չեն ապահովում բավարար անգազանցիկություն: Այս սարքը պետք է կանխարգելի խոնավության թափանցումը ջերմամեկուսիչ պատյան: Մեկուսացման համակարգի արդյունավետության փորձարկման տեսակի համար տե՛ս 6.8.3.4.11:



6.8.3.2.16. Այն հեղուկացված գազերի փոխադրման համար նախատեսված ցիստեռնները, որոնց եռման ջերմաստիճանը մթնոլորտային ճնշման պայմաններում  $-182^{\circ}\text{C}$ -ից ցածր է, պետք է ո՛չ ջերմամեկուսացման կառուցվածքում, ո՛չ ամրակման դետալներում չունենան որեւէ այրվող նյութ:

Վակուումային մեկուսացումով ցիստեռնների դեպքում կորպուսի եւ պատյանի միջեւ ամրակման դետալները կարող են, իրավասու մարմնի թույլտվությամբ, պոլիմերային նյութեր պարունակել:

6.8.3.2.17. Շեղում կատարելով 6.8.2.2.4-ի պահանջներից՝ սառեցված-հեղուկացված գազերի փոխադրման համար նախատեսված կորպուսներում զննման համար նախատեսված բացվածքների առկայությունը պարտադիր չէ:

Մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցների եւ ԳՖՏԿ-ների սարքավորման դետալները

6.8.3.2.18. Օժանդակ եւ կառուցվածքային սարքավորումները պետք է հարմարակազմված կամ նախագծված լինեն այնպես, որ կանխվի ցանկացած այնպիսի վնաս, որը կարող է հանգեցնել բեռնման-բեռնաթափման, ինչպես նաեւ բեռնման-բեռնաթափման եւ փոխադրման նորմալ պայմաններում ճնշումային տարայի պարունակության արտահոսքին: Եթե մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցի կամ ԳՖՏԿ-ի շրջանակի եւ դետալների միջեւ միացումն այնպիսին է, որ հնարավոր է ամբողջական հանգույցների որոշակի շարժում միմյանց նկատմամբ, ապա սարքը պետք է ամրացված լինի այնպես, որ նման շարժումը չվնասի աշխատանքային մասերը: Բաշխիչ խողովակաշարերը, որոնք տանում են դեպի փակման կափույրները, պետք է լինեն բավական ճկուն՝ պաշտպանելու կափույրները եւ խողովակաշարը պոկվելուց կամ ճնշումային տարայի պարունակության արտահոսքը կանխելու համար: Անհրաժեշտ է հնարավոր դարձնել լցավորման եւ դատարկման սարքերը (այդ թվում՝ կցաշուրթերը եւ պտուտակային խցանները) ու խցափակիչների պաշտպանությունը ցանկացած չնախատեսված բացումից:

6.8.3.2.19. Վնասվելու դեպքում պարունակության ցանկացած կորստից խուսափելու համար կոլեկտորները, դատարկման կցամասերը (միացնող ագույցները, փակող սարքերը) եւ փակման կափույրները պետք է պաշտպանված կամ տեղաբաշխված լինեն այնպես, որ բացառեն արտաքին ճնշումների ազդեցության տակ պոկվելու վտանգը, կամ պետք է ունենան այնպիսի կառուցվածք, որը կարող է դիմակայել այդպիսի ճնշումներին:

6.8.3.2.20. Կոլեկտորը պետք է նախագծվի  $-20^{\circ}\text{C}$ -ից  $+50^{\circ}\text{C}$  ջերմաստիճանային

միջակայքում օգտագործվելու համար:

Կոլեկտորը պետք է նախագծված, պատրաստված եւ տեղադրված լինի այնպես, որ հնարավոր լինի խուսափել ջերմային ընդարձակման եւ սեղմման, մեխանիկական ցնցման ու թրթռման (վիբրացիայի) հետեւանքով վնասվելու ռիսկից: Ամբողջ խողովակաշարը պետք է պատրաստված լինի համապատասխան մետաղական նյութից: Հնարավորության դեպքում պետք է օգտագործվեն խողովակների զոդված հանգույցներ:

Պղնձե խողովակների հանգույցները պետք է զոդվեն կարծր զոդանյութով կամ ունենան համարժեք ամուր մետաղական միացում: Կարծր զոդանյութերի հալման ջերմաստիճանը պետք է լինի 525°C-ից ոչ ցածր: Հանգույցները չպետք է նվազեցնեն խողովակների ամրությունը, օրինակ՝ պարուրակները կտրելիս:

- 6.8.3.2.21. Բացառությամբ ՄԱԿ-ի նշագրման 1001 համարի լուծված ացետիլենի՝ տարաների վրա փորձարկման ճնշման դեպքում կոլեկտորի համակարգում  $\sigma$  առավելագույն թույլատրելի լարվածությունը չպետք է գերազանցի նյութերի հոսունության սահմանի երաշխավորված արժեքի 75%-ը:

ՄԱԿ-ի նշագրման 1001 համարի լուծված ացետիլենի փոխադրման դեպքում կոլեկտորի համակարգում պատերի անհրաժեշտ հաստությունը պետք է հաշվարկվի հաստատված տեխնիկական կանոններին համապատասխան:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** Հոսունության սահմանին վերաբերող դրույթները տես՝ 6.8.2.1.11-ում:

Սույն պարբերության հիմնական պահանջները համարվում են բավարարված, եթե կիրառվում են հետեւյալ ստանդարտները. (Նախատեսվում է վերապահում):

- 6.8.3.2.22. Շեղում կատարելով 6.8.3.2.3, 6.8.3.2.4 եւ 6.8.3.2.7-ի պահանջներից՝ բալոնների, գլանների, ճնշումային թմբկազլանների եւ բալոնների կապուկների (շրջանակների) համար պահանջվող փակող սարքերը, որոնք կազմում են մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցի կամ ԳՔՏԿ-ի դետալները, կարող են տեղադրվել կոլեկտորի համակարգում:
- 6.8.3.2.23. Եթե դետալներից մեկն ունի ապահովիչ կափույր, եւ դետալների միջեւ տեղադրված են փակող սարքեր, ապա յուրաքանչյուր դետալ պետք է սարքավորված լինի նման կափույրով:
- 6.8.3.2.24. Լցավորման եւ դատարկման սարքերը կարող են միացվել կոլեկտորին:

- 6.8.3.2.25. Յուրաքանչյուր դետալ, այդ թվում՝ կապուկի յուրաքանչյուր առանձին բալոն, որը նախատեսված է թունավոր գազերի փոխադրման համար, պետք է մեկուսացվի առանձին փակման կափույրի միջոցով:
- 6.8.3.2.26. Թունավոր գազերի փոխադրման համար նախատեսված մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցները կամ ԳԲՏԿ-ները պետք է սարքավորված լինեն ապահովիչ կափույրներով միայն այն դեպքում, եթե նրանց առջեւ տեղադրված է պատռվող մեմբրան: Այս դեպքում պատռվող մեմբրանի եւ ապահովիչ կափույրի դասավորությունը պետք է բավարարի իրավասու մարմնի պահանջները:
- 6.8.3.2.27. Եթե մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցները կամ ԳԲՏԿ-ները նախատեսված են ծովով փոխադրման համար, ապա 6.8.3.2.26-ի պահանջներով չի արգելվում ՎԲՄԾԿ կանոնագրքին համապատասխան ապահովիչ կափույրների տեղադրումը:
- 6.8.3.2.28. Դյուրավառ գազերի փոխադրման համար նախատեսված մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցի կամ ԳԲՏԿ-ի դետալներ կազմող տարաները պետք է միավորվեն 5 000 լիտրը չգերազանցող տարողունակությամբ խմբերում, որոնք կարող են մեկուսացվել փակման կափույրի օգնությամբ:
- Դյուրավառ գազերի փոխադրման համար նախատեսված մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցի կամ ԳԲՏԿ-ի յուրաքանչյուր դետալ, եթե այդ մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցը կամ ԳԲՏԿ-ն բաղկացած են սույն գլխի պահանջներին համապատասխան ցիստեռններից, պետք է մեկուսացվի փակման կափույրով:
- 6.8.3.3. Տեսակի հաստատումը  
Հատուկ պահանջներ չեն նախատեսված:
- 6.8.3.4. Ստուգումները եւ փորձարկումները
- 6.8.3.4.1. Բոլոր զոդված կորպուսների նյութերը, բացառությամբ մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցների կամ ԳԲՏԿ-ների դետալներ կազմող բալոնների, գլանների, ճնշումային թմբկազլանների եւ բալոնների կապուկների, պետք է փորձարկվեն 6.8.5-ում նշված մեթոդով:
- 6.8.3.4.2. Փորձարկման ճնշման վերաբերյալ հիմնական պահանջները ներկայացված են 4.3.3.2.1 - 4.3.3.2.4-ում, իսկ փորձարկման ճնշման նվազագույն արժեքները բերված են 4.3.3.2.5-ում ներկայացված գազերի եւ գազային խառնուրդների աղյուսակում:
- 6.8.3.4.3. Առաջին հիդրավլիկ փորձարկումը ճնշման տակ պետք է

իրականացնել նախքան ջերմամեկուսացման ապահովումը: Եթե կորպուսը, դրա կցամասերը (ֆիթինգները), խողովակները եւ սարքավորման դետալները փորձարկվել են յուրաքանչյուրն առանձին, ապա ցիստեռնը հավաքումից հետո պետք է ենթարկվի անջրանցիկության փորձարկման:

6.8.3.4.4. Ըստ զանգվածի սեղմված գազերի, հեղուկացված գազերի կամ լուծված գազերի փոխադրման համար նախատեսված յուրաքանչյուր կորպուսի տարողությունը պետք է սահմանվի իրավասու մարմնի կողմից հաստատված փորձագետի հսկողության տակ՝ կորպուսը լցավորող ջրի կշռման կամ ծավալի չափման միջոցով. կորպուսի տարողունակության չափման դեպքում անճշտությունը չպետք է գերազանցի 1%-ը: Չի թույլատրվում տարողությունը սահմանել հաշվարկային ճանապարհով՝ հիմք ընդունելով կորպուսի չափսերը: Լցավորման թույլատրելի առավելագույն զանգվածը պետք է սահմանվի հաստատված փորձագետի կողմից՝ համաձայն 4.1.4.1-ում նշված P200 կամ P203 փաթեթավորման ցուցման, ինչպես նաեւ համաձայն 4.3.3.2.2-ի եւ 4.3.3.2.3-ի:

6.8.3.4.5. Զոդակարերի ստուգումը պետք է իրականացվի  $\lambda=1$  գործակցի վերաբերյալ 6.8.2.1.23-ի պահանջներին համապատասխան:

6.8.3.4.6. Շեղում կատարելով 6.8.2.4.2-ի պահանջներից՝ պարբերական ստուգումները պետք է իրականացվեն՝

առնվազն վեց տարի հետո | առնվազն ութ տարի հետո

եւ այնուհետեւ առնվազն յուրաքանչյուր 12 տարին մեկ անգամ՝ սառեցված-հեղուկացված գազերի փոխադրման համար նախատեսված ցիստեռնների դեպքում:

Յուրաքանչյուր պարբերական ստուգումից հետո առնվազն վեց տարին մեկ անգամ պետք է իրականացնել միջանկյալ ստուգումներ՝ համաձայն 6.8.2.4.3-ի:

Ցանկացած երկու հաջորդական պարբերական ստուգումների միջեւ իրավասու մարմնի պահանջով կարող է իրականացվել անջրանցիկության փորձարկում կամ միջանկյալ ստուգում՝ համաձայն 6.8.2.4.3-ի:

6.8.3.4.7. Վակուումային մեկուսացմամբ ցիստեռնների դեպքում ճնշման տակ հիդրավիլ փորձարկումը եւ ներքին պայմանների ստուգումը կարող են հաստատված փորձագետի համաձայնությամբ փոխարինվել անջրանցիկության փորձարկմամբ եւ վակուումի չափմամբ:

6.8.3.4.8. Եթե պարբերական ստուգումների ընթացքում սառեցված-հեղուկացված գազերի փոխադրման համար նախատեսված ցիստեռններում բացվածքներ են արվել, ապա դրանց փակման

մեթոդը, նախքան կորպուսները կվերադարձվեն շահագործման, պետք է սահմանվի հաստատված փորձագետի կողմից, եւ պետք է երաշխավորվի կորպուսի կառուցվածքի ամբողջականությունը:

6.8.3.4.9. Գազերի փոխադրման համար նախատեսված ցիստեռնների անջրանցիկության փորձարկումները պետք է իրականացվեն ճնշման դեպքում, որը կազմում է առնվազն՝

- սեղմված գազերի, հեղուկացված գազերի եւ լուծված գազերի դեպքում՝ փորձարկման ճնշման 20%-ը.
- սառեցված-հեղուկացված գազերի դեպքում՝ առավելագույն աշխատանքային ճնշման 90%-ը:

Սառեցված-հեղուկացված գազերի փոխադրման համար նախատեսված ցիստեռն-կոնտեյներների պահման ժամկետները

6.8.3.4.10.

Սառեցված-հեղուկացված գազերի փոխադրման համար նախատեսված ցիստեռն-կոնտեյներների պահման ստուգիչ ժամկետը պետք է սահմանվի հետեւյալ հիմունքներով՝

ա) մեկուսացման համակարգի արդյունավետությունը, որը սահմանվում է 6.8.3.4.11-ի համաձայն,

բ) ճնշման ամենացածր մակարդակը, որին հարմարեցված է (են) ճնշումը սահմանափակող սարքը (սարքերը),

գ) լցավորման նախնական պայմանները,

դ) շրջակա միջավայրի ենթադրվող ջերմաստիճանը, որը պետք է լինի 30 °C-ին հավասար,

ե) սառեցված-հեղուկացված կոնկրետ գազերի ֆիզիկական հատկանիշները, որոնք նախատեսված են տեղափոխման համար:

6.8.3.4.11.

Մեկուսացման համակարգի արդյունավետությունը (ջերմության հոսք՝ արտահայտված Վտ-ով) պետք է սահմանվի ցիստեռն-կոնտեյներների տեսակի փորձարկմամբ: Այդ փորձարկման մաս է կազմում կա՛մ՝

ա) կայուն ճնշման փորձարկումը (օրինակ մթնոլորտային ճնշման պայմաններում), որի

Ժամանակ սառեցված-հեղուկացված գազի կորուստը չափվում է որոշակի ժամանակահատվածում, կա՛մ

բ) փակ համակարգի փորձարկումը, որի ժամանակ որոշակի ժամանակահատվածում չափվում է ճնշման բարձրացումը:

Կայուն ճնշման փորձարկման ժամանակ հաշվի է առնվում մթնոլորտային ճնշման տատանումները:

Երկու փորձարկման դեպքում էլ պետք է կատարվեն ուղղումներ մթնոլորտային ջերմաստիճանի ցանկացած փոփոխության դեպքում, եթե այդ ջերմաստիճանը տարբերվում է մթնոլորտային ջերմաստիճանի 30 °C թույլատրելի արժեքից:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.**

*ISO 21014:2006 «Կրիոգեն անոթներ. Կրիոգենային մեկուսացման համակարգ».*  
*մանրամասնում է կրիոգեն անոթների մեկուսացման կատարումը եւ սպահովում է ստուգիչ ժամկետը հաշվարկելու մեթոդը:*

Ստուգումներ եւ փորձարկումներ՝ մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցների եւ ԳՔՏԿ-ների մասով

6.8.3.4.12. Յուրաքանչյուր մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցի եւ ԳՔՏԿ-ի դետալներն ու սարքավորումները պետք է առաջին անգամ, միասին կամ յուրաքանչյուրն առանձին, ստուգումների եւ փորձարկումների ենթարկվեն նախքան շահագործման հանձնվելը (նախնական ստուգումներ եւ փորձարկումներ): Հետագայում այն մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցները կամ ԳՔՏԿ-ները, որոնց դետալներ են կազմում տարաները, պետք է ենթարկվեն ստուգումների ոչ ավելի, քան հինգ տարին մեկ անգամ: Այն մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցները եւ ԳՔՏԿ-ները, որոնց դետալներ են կազմում տարաները, պետք է ենթարկվեն ստուգման՝ 6.8.3.4.6-ին համապատասխան: Անկախ վերջին պարբերական ստուգման եւ վերջին պարբերական փորձարկման ժամկետներից, անհրաժեշտության դեպքում պետք է անցկացվեն արտապլանային ստուգումներ եւ փորձարկումներ՝ 6.8.3.4.16-ին համապատասխան:

6.8.3.4.13. Նախնական ստուգումը պետք է ներառի՝

- հաստատված տեսակի հետ համապատասխանության ստուգում.
- կառուցվածքային հատկանիշների ստուգում.
- ներքին եւ արտաքին պայմանների զննում.
- հիդրավլիկ փորձարկում ճնշման տակ<sup>10</sup> 6.8.3.5.10-ով սահմանված ցուցանակի վրա նշված փորձարկային ճնշման կիրառմամբ.
- անջրանցիկության փորձարկում առավելագույն աշխատանքային ճնշման դեպքում, եւ
- սարքավորման բավարար աշխատանքի ստուգում:

Եթե դետալները եւ դրանց կցամասերը (ֆիթինգները) ճնշման տակ փորձարկման են ենթարկվել յուրաքանչյուրն առանձին, ապա դրանք պետք է միասին անջրանցիկության փորձարկում անցնեն հավաքումից հետո:

6.8.3.4.14. Բալոնները, գլանները, ճնշումային թմբկազլանները, ինչպես նաեւ բալոնների կապուկների մաս կազմող բալոնները պետք է ենթարկվեն փորձարկումների՝ համաձայն 4.1.4.1-ում ներկայացված P200 կամ P203 փաթեթավորման ցուցման:

Մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցի կամ ԳԲՏԿ-ի կոլեկտորի փորձարկման ճնշումը պետք է լինի նույնը, ինչ մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցի կամ ԳԲՏԿ-ի դետալների փորձարկման ճնշումը: Իրավասու մարմնի կամ նրա կողմից լիազորված կազմակերպության համաձայնությամբ կոլեկտորի փորձարկումը ճնշման տակ կարող է իրականացվել որպես հիդրավլիկ փորձարկում կամ այլ հեղուկի կամ այլ գազի կիրառմամբ փորձարկում: Շեղում կատարելով այս պահանջից՝ ՄԱԿ-ի նշագրման 1001 համարի լուծված ացետիլենի փոխադրման դեպքում մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցի կամ ԳԲՏԿ-ի փորձարկման ճնշումը պետք է լինի առնվազն 300 բար:

6.8.3.4.15. Պարբերական ստուգումը ներառում է անջրանցիկության փորձարկում առավելագույն աշխատանքային ճնշման դեպքում եւ առանց ապամոնտաժման՝ կառուցվածքի, դետալների եւ օժանդակ սարքավորումների արտաքին զննում: Դետալները եւ խողովակաշարերը պետք է ենթարկվեն փորձարկումների այն

<sup>10</sup> Հատուկ դեպքերում եւ իրավասու մարմնի կողմից հաստատված փորձագետի համաձայնությամբ՝ ճնշման տակ հիդրավլիկ փորձարկումը կարող է փոխարինվել ճնշման տակ փորձարկումով՝ այլ հեղուկի կամ գազի կիրառմամբ, եթե նման գործողությունը որեւէ վրանգ չի ներկայացնում:

պարբերականությամբ, որը սահմանված է 4.1.4.1-ում նշված P200 փաթեթավորման ցուցմամբ եւ համապատասխանաբար 6.2.1.6-ի եւ 6.2.3.5-ի պահանջներին համապատասխան: Եթե դետալները եւ սարքավորումները ճնշման տակ փորձարկման են ենթարկվել յուրաքանչյուրն առանձին, ապա դրանք պետք է միասին ենթարկվեն անջրանցիկության փորձարկման հավաքումից հետո:

6.8.3.4.16. Արտապլանային ստուգումները եւ փորձարկումները պահանջվում են այն դեպքում, եթե մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցը կամ ԳԲՏԿ-ն ունեն վնասված կամ քայքայված (կոռոզիացված) մասեր, արտահոսք կամ այլ արատներ, որոնք կարող են խախտել մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցի կամ ԳԲՏԿ-ի կառուցվածքի ամբողջականությունը: Արտապլանային ստուգումների եւ փորձարկումների, ինչպես նաեւ անհրաժեշտության դեպքում դետալների ապամոնտաժման ծավալը կախված է մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցի կամ ԳԲՏԿ-ի վնասման աստիճանից կամ վիճակի վատթարացումից: Դրանք պետք է առնվազն ներառեն այն զննումները, որոնք անցկացվում են 6.8.3.4.17-ի պահանջներին համապատասխան:

6.8.3.4.17. Զննումների ժամանակ անհրաժեշտ է՝

ա) արտաքինից ստուգել դետալները՝ հայտնաբերելու կետային քայքայումը, կոռոզիան, հղկանյութային մաշվածքը, ակոսները, դեֆորմացիաները, եռակցման կարանների մաշվածությունը կամ ցանկացած այլ թերություններ, այդ թվում՝ արտահոսքը, որոնք կարող են մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցները եւ ԳԲՏԿ-ները վտանգավոր դարձնել փոխադրման համար.

բ) ստուգել խողովակաշարերը, կափույրները եւ խցանիչները՝ հայտնաբերելու քայքայված (կոռոզիացված) տարածքները, արատները կամ այլ թերություններ, այդ թվում՝ արտահոսքը, որոնք կարող են մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցները կամ ԳԲՏԿ-ները վտանգավոր դարձնել լցավորման, դատարկման կամ փոխադրման համար.

գ) փոխարինել կամ ձգել բացակայող կամ թույլ հեղյուսները կամ մանեկները ցանկացած կցաշարթային միացման կամ անշարժ կցաշարթի մասում.

դ) համոզվել, որ ոչ մի վթարային սարք եւ կափույր չունի քայքայում (կոռոզիա), դեֆորմացիա եւ այլ վնասվածքներ կամ արատներ, որոնք կարող են խոչընդոտել դրանց նորմալ աշխատանքը: Անհրաժեշտ է գործարկել հեռակառավարվող փակիչ սարքերը եւ ինքնափակվող կափույրները՝ դրանց



անխափան աշխատանքի մեջ համոզվելու համար.

- ե) համոզվել, որ մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցների կամ ԳԲՏԿ-ների վրա արված մակնշումներն ընթեռնելի են եւ բավարարում են կիրառելի պահանջները, եւ
- զ) համոզվել, որ մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցների կամ ԳԲՏԿ-ների կարկասը, հենարանները եւ բարձրացման հարմարանքները գտնվում են բավարար վիճակում:

6.8.3.4.18. 6.8.3.4.12 - 6.8.3.4.17-ով նախատեսված փորձարկումները եւ ստուգումները պետք է անցկացվեն իրավասու մարմնի կողմից հաստատված փորձագետի կողմից: Պետք է տրամադրվեն այնպիսի սերտիֆիկատներ, որոնցում նշված են այս գործողությունների արդյունքները, նույնիսկ բացասական արդյունքների դեպքում:

Այս սերտիֆիկատները պետք է հղումներ պարունակեն այն նյութերին, որոնք տվյալ մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցով կամ ԳԲՏԿ-ով թույլատրված են փոխադրման համար՝ համաձայն 6.8.2.3.1-ի:

Այս սերտիֆիկատների պատճենները պետք է կցվեն յուրաքանչյուր փորձարկված ցիստեռնի, մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցի կամ ԳԲՏԿ-ի ցիստեռնի մասին գրառումներին (տե՛ս 4.3.2.1.7):

6.8.3.5. Մակնշումը

6.8.3.5.1. 6.8.2.5.1-ով սահմանված ցուցանակի կամ ուղղակիորեն կորպուսի պատերի վրա, եթե դրանք ուժեղացված են այնպես, որ դա չի հանգեցնի ցիստեռնի ամրության նվազեցմանը, դրոշմման կամ նմանատիպ այլ մեթոդով պետք է գրվեն հետեւյալ լրացուցիչ տվյալները:

6.8.3.5.2. Միայն մեկ նյութի փոխադրման համար նախատեսված ցիստեռնի վրա՝  
- գազի բեռնառաքման ճշգրիտ անվանումը եւ բացի այդ, «այլ կերպ չնշված» դիրքում դասակարգված գազերի համար՝ տեխնիկական անվանումը<sup>16</sup>]

<sup>16</sup> Բեռնառաքման ճշգրիտ անվանման կամ, եթե կիրառելի է, «այլ կերպ չնշված» դիրքի բեռնառաքման ճշգրիտ անվանման (որին հետեւում է տեխնիկական անվանումը) փոխարեն թույլատրվում է հետեւյալ անվանումների կիրառումը՝

- ՄԱԿ-ի նշագրման 1078 համարի ստոեցնող գազի դեպքում՝ «այլ կերպ չնշված»՝ F1 խառնուրդ, F2 խառնուրդ, F3 խառնուրդ.
- ՄԱԿ-ի նշագրման 1060 համարի մեթիլացեթիլենային եւ պրոպանի ենի կայունացված

Այս տվյալը պետք է լրացվի՝

- ըստ ծավալի լցավորվող (ճնշման տակ) սեղմված գազերի փոխադրման համար նախատեսված ցիստեռների դեպքում՝ տվյալ ցիստեռնի համար թույլատրված լցավորման առավելագույն ճնշման նշումով (15°C-ի դեպքում), եւ
- ըստ զանգվածի լցավորվող սեղմված գազերի, ինչպես նաեւ հեղուկացված, սառեցված-հեղուկացված կամ լուծված գազերի փոխադրման համար նախատեսված ցիստեռների դեպքում՝ բեռնավորման թույլատրելի առավելագույն զանգվածի նշումով՝ արտահայտված կիլոգրամներով, եւ լցավորման ջերմաստիճանի նշումով, եթե այն չի գերազանցում -20 °C-ը:

6.8.3.5.3. Բազմանպատակային նշանակությամբ ցիստեռների վրա՝

- գազերի բեռնառաքման ճշգրիտ անվանումը եւ բացի այդ, «այլ կերպ չնշված» դիրքում դասակարգված գազերի համար՝ այն գազերի տեխնիկական անվանումը, որոնց փոխադրման համար հաստատված է տվյալ ցիստեռը<sup>16</sup>:

Այս տվյալները պետք է լրացվեն յուրաքանչյուր գազի համար բեռնավորման թույլատրելի առավելագույն զանգվածի նշումով՝ արտահայտված կիլոգրամներով:

6.8.3.5.4. Սառեցված-հեղուկացված գազերի փոխադրման համար նախատեսված ցիստեռների վրա՝

- թույլատրելի առավելագույն աշխատանքային ճնշումը:

պահման ստուգիչ ժամկետը (օրով կամ ժամով) յուրաքանչյուր գազի համար<sup>13</sup>,

համապատասխան նախնական ճնշումը (մանոմետրական ճնշման բար կամ կՊա մանոմետրական ճնշմամբ)<sup>13</sup>

6.8.3.5.5. Ջերմամեկուսացումով սարքավորված ցիստեռների վրա՝

*խառնուրդների դեպքում՝ P1 խառնուրդ, P2 խառնուրդ.*

- ՄԱԿ-ի նշագրման 1965 համարի ածխաջրածնային գազի հեղուկացված խառնուրդի դեպքում՝ «այլ կերպ չնշված»՝ խառնուրդ A, խառնուրդ A01, խառնուրդ A02, խառնուրդ A0, խառնուրդ A1, խառնուրդ B1, խառնուրդ B2, խառնուրդ B, խառնուրդ C: Սովորաբար առեւտրում կիրառվող եւ 2.2.2.3-ում նշված անվանումները, 2F դասակարգման ծածկագիրը, ՄԱԿ-ի նշագրման 1965 համարը, 1-ին ծանոթագրությունը կարող են օգտագործվել միայն որպես լրացում.
- ՄԱԿ-ի նշագրման 1010 համարի կայունացված բութադիենների դեպքում՝ 1,2-բութադիեն՝ կայունացված, 1,3-բութադիեն՝ կայունացված:

- «ջերմամեկուսացված» կամ «վակուումով ջերմամեկուսացված» գրությունը:

6.8.3.5.6. Ի լրումն 6.8.2.5.2-ով սահմանված տվյալների՝ հետեւյալ տվյալները պետք է նշված լինեն ցիստեռն-փոխադրամիջոցի վրա (ցիստեռնի կամ ցուցանակի վրա)<sup>13</sup> | Ի լրումն 6.8.2.5.2-ով սահմանված տվյալների՝ հետեւյալ տվյալները պետք է նշված լինեն ցիստեռն-կոնտեյնների վրա (ցիստեռնի կամ ցուցանակի վրա)<sup>13</sup>

- ա) - ցիստեռնի ծածկագիրը՝ համաձայն սերտիֆիկատի (տե՛ս 6.8.2.3.1)՝ ցիստեռնի փաստացի փորձարկման ճնշման նշումով.

- «նվազագույն թույլատրելի լցավորման ջերմաստիճան՝...» գրությունը.

- բ) միայն մեկ նյութի փոխադրման համար նախատեսված ցիստեռնի դեպքում՝

- գազի բեռնառաքման ճշգրիտ անվանումը եւ բացի այդ, «այլ կերպ չնշված» դիրքում դասակարգված գազերի համար՝ տեխնիկական անվանումը<sup>16</sup>.

- ըստ զանգվածի լցավորվող սեղմված գազերի, ինչպես նաեւ հեղուկացված, սառեցված-հեղուկացված կամ լուծված գազերի համար՝ բեռնավորման առավելագույն թույլատրելի զանգվածը՝ արտահայտված կիլոգրամներով.

- գ) բազմանպատակ նշանակության ցիստեռնների դեպքում՝

- գազի բեռնառաքման ճշգրիտ անվանումը եւ բացի այդ, «այլ կերպ չնշված» դիրքում դասակարգված գազերի համար՝ բոլոր այն գազերի տեխնիկական անվանումները<sup>16</sup>, որոնց փոխադրման համար

<sup>16</sup> Բեռնառաքման ճշգրիտ անվանման կամ, եթե կիրառելի է, «այլ կերպ չնշված» դիրքի բեռնառաքման ճշգրիտ անվանման (որին հետեւում է տեխնիկական անվանումը) փոխարեն թույլատրվում է հետեւյալ անվանումների կիրառումը՝

- ՄԱԿ-ի նշագրման 1078 համարի սառեցնող գազի դեպքում՝ «այլ կերպ չնշված»՝ F1 խառնուրդ, F2 խառնուրդ, F3 խառնուրդ.
- ՄԱԿ-ի նշագրման 1060 համարի մեթիլացետիլենային եւ պրոպանի հեղուկացված խառնուրդների դեպքում՝ P1 խառնուրդ, P2 խառնուրդ.
- ՄԱԿ-ի նշագրման 1965 համարի ածխաջրածնային գազի հեղուկացված խառնուրդի դեպքում՝ «այլ կերպ չնշված»՝ խառնուրդ A, խառնուրդ A01, խառնուրդ A02, խառնուրդ A0, խառնուրդ A1, խառնուրդ B1, խառնուրդ B2, խառնուրդ B, խառնուրդ C: Սովորաբար առեւտրում կիրառվող եւ 2.2.2.3-ում նշված անվանումները, 2F դասակարգման ծածկագիրը, ՄԱԿ-ի նշագրման 1965 համարը, 1-ին ծանոթագրությունը կարող են օգտագործվել միայն որպես լրացում.
- ՄԱԿ-ի նշագրման 1010 համարի կայունացված բութադիենների դեպքում՝ 1,2-բութադիեն՝ կայունացված, 1,3-բութադիեն՝ կայունացված:

նախատեսված է տվյալ ցիստեռնը՝ դրանցից յուրաքանչյուրի համար բեռնավորման առավելագույն թույլատրելի զանգվածի նշումով՝ արտահայտված կիլոգրամներով.

- դ) ջերմամեկուսացումով սարքավորված կորպուսի դեպքում՝
- «ջերմամեկուսացված» (կամ «վակուումով ջերմամեկուսացված») գրությունը՝ գրված գրանցման երկրի պետական լեզվով, ինչպես նաև անգլերեն, ֆրանսերեն կամ գերմաներեն, եթե այդ պետական լեզուն անգլերենը, ֆրանսերենը կամ գերմաներենը չէ, եթե այլ բան նախատեսված չէ տրանսպորտային գործունեությամբ զբաղվող համապատասխան երկրների միջև ձեռք բերված համաձայնությամբ:

6.8.3.5.7. (Նախատեսվում է վերապահում)

6.8.3.5.8. Այս տվյալները չեն պահանջվում հանովի ցիստեռնների փոխադրող փոխադրամիջոցների դեպքում:

6.8.3.5.9. (Նախատեսվում է վերապահում)

Մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցների եւ ԳԲՏԿ-ների մակնշումը

6.8.3.5.10. Յուրաքանչյուր մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոց եւ յուրաքանչյուր ԳԲՏԿ պետք է սարքավորված լինի կոռոզիակայուն մետաղական ցուցանակով, որը մշտապես ստուգման համար մատչելի վայրում է փակցված: Առնվազն հետեւյալ տվյալները պետք է նշված լինեն ցուցանակի վրա՝ դրոշմման կամ նմանատիպ այլ մեթոդով<sup>13</sup>

- հաստատման համարը.
- արտադրողի անունը կամ նշանը.
- արտադրողի սերիական համարը.
- արտադրության տարին.
- փորձարկման ճնշումը 1,5 բար) (մանոմետրական ճնշում).
- հաշվարկային ջերմաստիճանը (միայն եթե բարձր է +50 °C-ից կամ ցածր է -20 °C-ից).
- 6.8.3.4.12-ի եւ 6.8.3.4.15-ի համաձայն անցկացված նախնական փորձարկման եւ վերջին պարբերական փորձարկման ամսաթիվը (ամիսը եւ տարին).

<sup>13</sup> Թվային արժեքներից հետո նշել չափման միավորները:

- փորձարկումներն անցկացրած փորձագետի դրոշմը:

<p>6.8.3.5.11. Հետեւյալ տվյալները պետք է գրվեն մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցի կամ ցուցանակի վրա<sup>13</sup></p> <ul style="list-style-type: none"> <li>- տիրոջ կամ օպերատորի անվանումները.</li> <li>- դետալների թիվը.</li> <li>- դետալների ընդհանուր տարողությունը.</li> </ul> <p>Եւ ըստ զանգվածի լցավորվող մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցների համար՝</p> <ul style="list-style-type: none"> <li>- քաշը դատարկ վիճակում.</li> <li>- թույլատրելի առավելագույն զանգվածը:</li> </ul>	<p>Հետեւյալ տվյալները պետք է գրվեն կամ ԳԲՏԿ-ի կամ ցուցանակի վրա<sup>13</sup></p> <ul style="list-style-type: none"> <li>- տիրոջ կամ օպերատորի անվանումները.</li> <li>- դետալների թիվը.</li> <li>- դետալների ընդհանուր տարողությունը.</li> <li>- թույլատրելի առավելագույն զանգվածը բեռնված վիճակում.</li> <li>- ցիստեռնի ծածկագիրը՝ համաձայն հաստատման սերտիֆիկատի (տե՛ս 6.8.2.3.1)՝ ԳԲՏԿ-ի փաստացի փորձարկման ճնշման նշումով.</li> <li>- գազերի բեռնառաքման ճշգրիտ անվանումը եւ բացի այդ, «այլ կերպ չնշված» դիրքում դասակարգված գազերի համար՝ այն գազերի տեխնիկական անվանումը<sup>16</sup>, որոնց փոխադրման համար օգտագործվում է ԳԲՏԿ-ն.</li> </ul> <p>Եւ ըստ զանգվածի լցավորվող ԳԲՏԿ-ների համար՝</p> <ul style="list-style-type: none"> <li>- տարայի քաշը:</li> </ul>
---	--

<sup>16</sup> Բեռնառաքման ճշգրիտ անվանման կամ, եթե կիրառելի է, «այլ կերպ չնշված» դիրքի բեռնառաքման ճշգրիտ անվանման (որին հետեւում է տեխնիկական անվանումը) փոխարեն թույլատրվում է հետեւյալ անվանումների կիրառումը՝

- ՄԱԿ-ի նշագրման 1078 համարի ստեղծող գազի դեպքում՝ «այլ կերպ չնշված»՝ F1 խառնուրդ, F2 խառնուրդ, F3 խառնուրդ.
- ՄԱԿ-ի նշագրման 1060 համարի մեթիլացետիլենային եւ պրոպանի հեղուկացված խառնուրդների դեպքում՝ P1 խառնուրդ, P2 խառնուրդ.
- ՄԱԿ-ի նշագրման 1965 համարի ածխաջրածնային գազի հեղուկացված խառնուրդի դեպքում՝ «այլ կերպ չնշված»՝ խառնուրդ A, խառնուրդ A01, խառնուրդ A02, խառնուրդ A0, խառնուրդ A1, խառնուրդ B1, խառնուրդ B2, խառնուրդ B, խառնուրդ C: Սովորաբար առեւտրում կիրառվող եւ 2.2.2.3-ում նշված անվանումները, 2F դասակարգման ծածկագիրը, ՄԱԿ-ի նշագրման 1965 համարը, 1-ին ծանոթագրությունը կարող են օգտագործվել միայն որպես լրացում.
- ՄԱԿ-ի նշագրման 1010 համարի կայունացված բութադիենների դեպքում՝ 1,2-բութադիեն՝ կայունացված, 1,3-բութադիեն՝ կայունացված:

6.8.3.5.12. Մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցի կամ ԳԲՏԿ-ի շրջանակի վրա՝ լցավորման սարքի տեղադրման մասին մոտ, պետք է ցուցանակ տեղակայվի, որի վրա նշված է՝

- լցավորման համար թույլատրված առավելագույն ճնշումը<sup>13</sup> (15°C-ի դեպքում) սեղմված գազերի համար նախատեսված դետալների համար.
- գազի բեռնառաքման ճշգրիտ անվանումը՝ 3.2 գլխին համապատասխան, եւ բացի այդ, «այլ կերպ չնշված» դիրքում դասակարգված գազերի համար՝ տեխնիկական անվանումը<sup>16</sup>.

եւ բացի այդ, հեղուկացված գազերի փոխադրման դեպքում՝

- թույլատրելի առավելագույն բեռնվածքի զանգվածը՝ յուրաքանչյուր տարրի համար<sup>13</sup>:

6.8.3.5.13. Բալոնները, գլանները, ճնշումային թմբկազլանները եւ բալոնների կապուկները պետք է մակնշվեն 6.2.2.7-ին համապատասխան: Անհրաժեշտ չէ այս տարաներից յուրաքանչյուրի վրա տեղադրել նախազգուշացնող պիտակներ, որոնք պահանջվում են 5.2 գլխին համապատասխան:

Մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցները եւ ԳԲՏԿ-ները պետք է ունենան տեղեկատվական ցուցանակներ ու լինեն մակնշված՝ 5.3 գլխին համապատասխան:

6.8.3.6. Հղում կատարված ստանդարտներին համապատասխան նախագծված, պատրաստված եւ փորձարկված մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցներին եւ ԳԲՏԿ-ներին ներկայացվող պահանջները

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** Ստանդարտներում նշված անձինք կամ մարմինները, որոնք «ԱԴՌ» համաձայնագրի համաձայն պարտավորություններ են ստանձնել, պետք է բավարարեն «ԱԴՌ» համաձայնագրի պահանջները:

Տեսակի հաստատման սերտիֆիկատները պետք է տրամադրվեն 1.8.7-ին համապատասխան: Այն ստանդարտները, որոնց հղում է կատարվել ստորեւ ներկայացված աղյուսակում, կիրառվում են տեսակի հաստատումը տրամադրելու նպատակով, ինչպես նշված է 4-րդ սյունակում՝ 3-րդ սյունակում նշված 6.8 գլխի պահանջները կատարելու համար: Ստանդարտները պետք է կիրառվեն 1.1.5-ին համապատասխան: 5-րդ սյունակում նշված է այն ամենաուշ ժամկետը, երբ գործող տեսակի հաստատումները չեղյալ են համարվում՝ 1.8.7.2.4-ի համաձայն, իսկ եթե ժամկետ նշված չէ, ապա

<sup>13</sup> Թվային արժեքներից հեջոն նշել չափման միավորները:

տեսակի հաստատումը մնում է վավեր՝ մինչև դրա վավերականության ժամկետի ավարտը:

2009 թվականի հունվարի 1-ից ի վեր ստանդարտների կիրառությունը, որոնց հղում է կատարված, պարտադիր է: Բացառությունները նշված են 6.8.3.7-ում:

Եթե միեւնույն պահանջների կիրառության համար հղում է կատարվել մեկից ավելի ստանդարտների, ապա կիրառվում է նրանցից միայն մեկը: Այդ դեպքում տվյալ ստանդարտը կիրառվում է լրիվ ծավալով, եթե ստորեւ ներկայացված աղյուսակում այլ բան նշված չէ:

Յուրաքանչյուր ստանդարտի կիրառման շրջանակը սահմանված է ստանդարտի կետերում, եթե ստորեւ բերված աղյուսակով այլ բան նախատեսված չէ:

Հղումը	Փաստաթղթի անվանումը	Կիրառելի ենթաբաժինները եւ պարբերությունները	Նոր տեսակի հաստատման ստացման կամ երկարաձգման համար կիրառելի	Գործող տեսակի հաստատումների դադարեցման վերջնաժամկետը
(1)	(2)	(3)	(4)	(5)
EN 13807:2003	Շարժական գազի բալոններ. Մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցներ. Նախագծումը, արտադրությունը, նույնականացումը եւ փորձարկումը  <i><b>ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.</b> Համապատասխան դեպքում այս ստանդարտը կարող է նաեւ կիրառվել ԳՐՏԿ-ների նկատմամբ, որոնք բաղկացած են ճնշումային տարաներից:</i>	6.8.3.1.4 եւ 6.8.3.1.5, 6.8.3.2.18 - 6.8.3.2.26, 6.8.3.4.12 - 6.8.3.4.14 և 6.8.3.5.10 - 6.8.3.5.13	Մինչև հետագա ծանուցումը	

6.8.3.7. Այն մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցներին եւ ԳՐՏԿ-ներին ներկայացվող պահանջները, որոնք նախագծված, պատրաստված եւ փորձարկված չեն հղում կատարված ստանդարտներին համապատասխան

Իրավասու մարմինը կարող է թույլատրել տեխնիկական կանոնների կիրառում, որն ապահովում է անվտանգության միեւնույն մակարդակ, որպեսզի հաշվի առնվի գիտական եւ տեխնիկական առաջընթացը, ինչպես նաեւ եթե 6.8.3.6-ում հղում չի կատարված որեւէ ստանդարտի, կամ հաշվի առնելու համար 6.8.3.6-ում հղում կատարված ստանդարտով չկարգավորվող հայեցակետերը: Մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցները եւ ԳՐՏԿ-ները, այնուամենայնիվ, պետք է համապատասխանեն 6.8.3-ով սահմանված նվազագույն պահանջներին:

Տեսակի հաստատման մեջ հաստատում տրամադրող մարմինը սահմանում է պարբերական ստուգումների ընթացակարգը, եթե 6.2.2, 6.2.4 կամ 6.8.2.6-ում հղում կատարված ստանդարտները կիրառելի չեն կամ չպետք է կիրառվեն:

Իրավասու մարմինը ՄԱԿ-ի ԵՏՀ-ի քարտուղարություն է ուղարկում տեխնիկական կանոնների ցանկը, որոնք ճանաչվում են իր կողմից: Ցանկում պետք է ներառվեն հետեյալ մանրամասները՝ կանոնի անվանումը եւ ընդունման ամսաթիվը, կանոնի նպատակը եւ մանրամասներ, թե որտեղ կարելի է այն ձեռք բերել: Քարտուղարությունը պարտավոր է նշված տեղեկությունները հրապարակել իր կայքէջում:

Այն ստանդարտը, որն ընդունվել է «ԱԴՌ» համաձայնագրի հետագա հրատարակություններում հղում կատարելու համար, կարող է օգտագործման համար հաստատվել իրավասու մարմնի կողմից՝ առանց ՄԱԿ-ի ԵՏՀ-ի քարտուղարությանը ծանուցելու:

#### 6.8.4. Հատուկ դրույթները

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1.** Այն հեղուկների համար, որոնց բռնկման ջերմաստիճանը չի գերազանցում 60°C-ը, եւ դյուրավառ գազերի համար տե՛ս 6.8.2.1.26, 6.8.2.1.27 ու 6.8.2.2.9:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2.** Առնվազն 1 ՄՊա (10 բար) ճնշման տակ փորձարկվող ցիստերոններին կամ սառեցված-հեղուկացված գազերի փոխադրման համար նախատեսված ցիստերոններին վերաբերող պահանջները տե՛ս 6.8.5-ում:

Այն դեպքում, երբ դրանք ցույց են տրված որեւէ դիրքում՝ 3.2 գլխի Ա աղյուսակի 13-րդ սյունակում, կիրառվում են հետեյալ հատուկ դրույթները՝

ա) պատրաստումը (TC)

TC1 Այս կորպուսների նյութերի եւ կառուցման նկատմամբ կիրառվում են 6.8.5-ի տվյալները:

TC2 Կորպուսները եւ դրանց սարքավորման դետալները պետք է պատրաստվեն առնվազն 99,5% մաքուր ալյումինից կամ համապատասխան պողպատից, որը ջրածնի պերօքսիդի քայքայում չի առաջացնում: Եթե կորպուսները պատրաստված են առնվազն 99,5% մաքուր ալյումինից, ապա պարտադիր չէ, որ պատերի հաստությունը գերազանցի 15 մմ-ը, նույնիսկ եթե 6.8.2.1.17-ին համապատասխան հաշվարկներով ավելի մեծ արժեք է դուրս բերվում:

TC3 Կորպուսները պետք է պատրաստվեն աուստենիտային



պողպատից:

TC4 Կորպուսները պետք է ունենան էմալային կամ համարժեք պաշտպանիչ ներքին երեսապատվածք, եթե նյութը, որից պատրաստված է կորպուսը, ենթակա է ՄԱԿ-ի նշագրման 3250 համարի քլորաքացախաթթվի ազդեցությանը:

TC5 Կորպուսները պետք է ունենան առնվազն 5 մմ հաստությամբ կապարե երեսապատվածք կամ համարժեք երեսապատվածք:

TC6 Եթե ցիստեռնների պատրաստման համար անհրաժեշտ է այլումինի օգտագործումը, ապա նման ցիստեռնները պատրաստվում են առնվազն 99,5% մաքուր այլումինից. պարտադիր չէ, որ պատերի հաստությունը գերազանցի 15 մմ-ը, նույնիսկ եթե 6.8.2.1.17-ին համապատասխան հաշվարկներով ավելի մեծ արժեք է դուրս բերվում:

TC7 Կորպուսի պատերի նվազագույն արդյունարար հաստությունը պետք է կազմի առնվազն 3 մմ:

TC8 Կորպուսները պետք է պատրաստված լինեն այլումինից կամ այլումինի համաձուլվածքից: Կորպուսները կարող են նախագծվել 5 կՊա-ից (0,05 բար) ոչ պակաս նախագծային արտաքին ճնշման համար:

բ) Սարքավորման դետալները (TE)

TE1 (Հանվել է)

TE2 (Հանվել է)

TE3 Բացի այդ, ցիստեռնները պետք է բավարարեն հետևյալ պահանջները՝ տաքացնող սարքը չպետք է տեղադրվի կորպուսից ներս, այլ պետք է տեղադրված լինի դրսի կողմից: Այնուամենայնիվ, ֆոսֆորի դատարկման համար օգտագործվող խողովակառուստը կարող է սարքավորված լինել տաքացնող շապիկով: Շապիկի տաքացման սարքը պետք է կարգաբերվի այնպես, որ ֆոսֆորի ջերմաստիճանը չգերազանցի կորպուսի լցավորման ջերմաստիճանը: Այլ խողովակաշարերը պետք է կորպուս մտնեն դրա վերին մասից, բացվածքները պետք է տեղակայված լինեն ֆոսֆորի լցավորման թույլատրելի առավելագույն մակարդակից բարձր եւ ամբողջովին փակվեն սեւեռապնդիչ թասակներով: Ցիստեռնը պետք է հագեցած լինի չափիչ-ստուգիչ սարքով՝ ֆոսֆորի մակարդակը չափելու համար եւ ջրի՝ որպես պաշտպանիչ միջոց օգտագործելու դեպքում՝ ֆիքսված նշագծով, որը ցույց է տալիս ջրի թույլատրելի առավելագույն մակարդակը:

TE4 Կորպուսները պետք է ունենան ջերմամեկուսացում, որը

պատրաստված է ոչ դյուրավառ նյութերից:

TE5 Եթե կորպուսներն ունեն ջերմամեկուսացում, ապա այն պետք է պատրաստված լինի ոչ դյուրավառ նյութերից:

TE6 Ցիստեռնները կարող են սարքավորված լինել այնպիսի կառուցվածք ունեցող սարքով, որը բացառում է ցիստեռնի խցանումը փոխադրվող նյութով եւ որը կանխում է հեղուկի արտահոսքը եւ կորպուսի ներսում ավելցուկային ճնշման կամ ցածրացած ճնշման առաջացումը:

TE7 Կորպուսի դատարկման համակարգը պետք է սարքավորված լինի երկու՝ միմյանցից անկախ եւ հաջորդաբար տեղադրված փակող սարքերով, որոնցից առաջինը հաստատված տեսակի արագագործ ներքին փակման կափույր է, իսկ երկրորդը՝ արտաքին փակման կափույր, եւ որոնք տեղադրված են դատարկման խողովակառուստի յուրաքանչյուր ծայրում: Յուրաքանչյուր արտաքին փակման կափույրի ելքին պետք է տեղադրվի նաեւ անշարժ կցաշուրթ կամ համարժեք անվտանգությունն ապահովող այլ սարք: Խողովակառուստի պոկվելու դեպքում փակման կափույրը պետք է միացված մնա կորպուսին փակ վիճակում:

TE8 Ցիստեռնների արտաքին խողովակառուստերի միացումները պետք է պատրաստված լինեն այնպիսի նյութերից, որոնք ջրածնի պերօքսիդի քայքայում չեն առաջացնում:

TE9 Ցիստեռնների վերին մասում պետք է տեղադրված լինի փակող սարք, որը կանխում է փոխադրվող նյութերի քայքայման հետեւանքով կորպուսի ներսում ավելցուկային ճնշման առաջացումը, ինչպես նաեւ հեղուկի արտահոսքն ու կողմնակի նյութերի ներթափանցումը կորպուս:

TE10 Ցիստեռնները փակող սարքերը պետք է կառուցված լինեն այնպես, որ բացառեն փոխադրման ժամանակ դրանց խցանումը պնդացած նյութով: Եթե ցիստեռնները հագեցած են ջերմամեկուսացմամբ, ապա դրանք պետք է պատրաստված լինեն ոչ օրգանական չայրվող նյութից:

TE11 Կորպուսները եւ դրանց օժանդակ սարքավորումները պետք է կառուցված լինեն այնպես, որ կանխեն կողմնակի նյութերի ներթափանցումը, հեղուկի արտահոսքը կամ կորպուսի ներսում փոխադրվող նյութերի քայքայումից վտանգավոր ավելցուկային ճնշման առաջացումը: Այս դրույթն իրականացվում է նաեւ կողմնակի նյութերի մուտքը կանխարգելող ապահովիչ կափույրի առկայությամբ:

TE12 Ցիստեռնները պետք է սարքավորված լինեն

ջերմամեկուսացմամբ, որը համապատասխանում է 6.8.3.2.14-ի պահանջներին: Եթե ցիստեռնում օրգանական պերօքսիդի ԻՏՋ-ն հավասար է կամ ցածր է 55 °C-ից, կամ եթե ցիստեռնը պատրաստված է ալյումինից, ապա կորպուսը պետք է ամբողջովին ջերմամեկուսացվի: Արեւապաշտպան էկրանը եւ ցիստեռնի ցանկացած մաս, որը ծածկված չէ այդ էկրանով, կամ ամբողջական ջերմամեկուսացման արտաքին պատյանը պետք է ծածկված լինեն սպիտակ ներկով կամ փայլուն մետաղով: Յուրաքանչյուր փոխադրումից առաջ ներկը պետք է մաքրվի եւ դեղնած կամ վնասված լինելու դեպքում թարմացվի: Ջերմամեկուսացումը չպետք է պարունակի այրվող նյութեր: Ցիստեռնները պետք է սարքավորված լինեն ջերմաստիճանի տվիչներով:

Ցիստեռնները պետք է սարքավորված լինեն ապահովիչ կափույրներով եւ ճնշումը նվազեցնող վթարային սարքերով: Կարող են օգտագործվել նաեւ վակուումային ապահովիչ սարքեր: Ճնշումը նվազեցնող վթարային սարքերը պետք է գործեն օրգանական պերօքսիդի հատկանիշներին եւ ցիստեռնի կառուցվածքային առանձնահատկություններին համապատասխան սահմանված ճնշումների դեպքում: Չի թույլատրվում դյուրահալ դետալների օգտագործումը կորպուսի հենամարմնում:

Ցիստեռնները պետք է սարքավորված լինեն զսպանակային ապահովիչ կափույրներով՝ կանխելու համար կորպուսի ներսում ճնշման զգալի բարձրացումը, որն առաջանում է 50°C ջերմաստիճանի դեպքում քայքայման արգասիքների եւ գոլորշիների ձեւավորման արդյունքում: Ապահովիչ կափույր(ներ)ի թողունակությունը եւ գործարկման ճնշումը պետք է հիմնված լինեն TA2 հատուկ դրույթով սահմանված փորձարկումների արդյունքների վրա: Գործարկման ճնշումը, այնուամենայնիվ, ոչ մի դեպքում չպետք է այնպիսին լինի, որ թույլ տա հեղուկի արտահոսք՝ ապահովիչ կափույրի (կափույրների) միջով ցիստեռնի շրջվելու դեպքում:

Ճնշումը նվազեցնող վթարային սարքերը կարող են լինել զսպանակային կամ պատռվող տեսակի, որոնք նախատեսված են կորպուսի՝ առնվազն մեկ ժամ տեւողությամբ ամբողջական հրդեհման ընթացքում անջատվող քայքայման արգասիքների եւ գոլորշիների հեռացման համար՝ հետեւյալ բանաձեւերով սահմանված պահանջներին համապատասխան՝

$$q = 70961 \times F \times A^{0,82}$$

որտեղ՝

q-ն՝ ջերմակլանում [Վտ]

A-ն՝ խոնավացված տարածության մակերեսը [մ2]

F-ը՝ մեկուսացման գործակիցը

F = I առանց ջերմամեկուսացման ցիստեռնների համար. կամ

$$F = \frac{U (923 - TP0)}{47032}$$
 իզոթերմային ցիստեռնների համար

որտեղ՝

K-ն՝ մեկուսիչ շերտի հաղորդականություն [Վտ·մ-1·Կ-1]

L-ը՝ մեկուսիչ շերտի հաստություն [մ]

U = K/L-ը՝ ջերմամեկուսիչ նյութի ջերմահաղորդականության գործակիցը [Վտ·մ-2·Կ-1]

TPO-ն՝ պերօքսիդի ջերմաստիճանը՝ ճնշումը նվազեցնելու պահին [Կ]

Վթարային սարքի (սարքերի) գործարկման ճնշումը պետք է գերազանցի վերը նշված ճնշումը եւ պետք է սահմանվի TA2 հատուկ դրույթով նախատեսված փորձարկումների արդյունքների հիման վրա: Ծնշումը նվազեցնող վթարային սարքերը պետք է այնպիսի չափսեր ունենան, որ ցիստեռնում առավելագույն ճնշումը երբեք չգերազանցի ցիստեռնի փորձարկման ճնշումը:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** Ծնշումը նվազեցնող վթարային սարքերի չափսերի սահմանման համար փորձարկումների մեթոդի օրինակը բերված է «Փորձարկումների եւ չափորոշիչների ձեռնարկ»-ի 5-րդ հավելվածում:

Հոծ պատյանից բաղկացած ջերմամեկուսացումով սարքավորված ցիստեռնների համար ճնշումը նվազեցնող սարքի (սարքերի) թողունակությունը եւ կարգաբերումը պետք է սահմանվեն՝ ելնելով մեկուսացման մակերեսի 1%-ի խախտման հնարավորությունից:

Ցիստեռնների վակուումային ապահովիչ սարքերը եւ զսպանակային ապահովիչ կափույրները պետք է սարքավորված լինեն բոցամարիչներով, բացառությամբ այն դեպքերի, երբ փոխադրման ենթակա նյութերը եւ դրանց քայքայման արգասիքներն այրվող չեն: Անհրաժեշտ է պատշաճորեն հաշվի առնել ապահովիչ սարքի թողունակության նվազեցումը բոցամարիչի տեղադրման հետեւանքով:

TE13 Ցիստեռնները պետք է ապահովված լինեն ջերմամեկուսացումով եւ արտաքին տաքացնող սարքով:

TE14 Ցիստեռնները պետք է ապահովված լինեն

ջերմամեկուսացումով: Կորպուսի հետ անմիջական շփման մեջ գտնվող ջերմամեկուսացման բոցավառման ջերմաստիճանը պետք է առնվազն 50°C-ով գերազանցի այն ջերմաստիճանը, որի համար հաշվարկված է կորպուսը:

TE15 (Հանվել է)

TE16 (Նախատեսվում է վերապահում)

TE17 (Նախատեսվում է վերապահում)

TE18 190°C-ից բարձր ջերմաստիճանի պայմաններում լցավորվող նյութերի փոխադրման համար նախատեսված ցիստեռնները պետք է սարքավորված լինեն դեֆլեկտորներով՝ տեղադրված լցավորման վերին բացվածքների ուղղությամբ ուղիղ անկյան տակ՝ խուսափելու համար լցավորման ժամանակ պատերի ջերմաստիճանի հանկարծակի տեղային բարձրացումից:

TE19 Ցիստեռնի վերին մասում տեղադրված կցամասերը (ֆիթինգները) եւ օժանդակ հարմարանքները պետք է՝

- կամ տեղադրվեն ներկառուցված բնիկի մեջ.

- կամ սարքավորված լինեն ներքին ապահովիչ կափույրով.

- կամ պաշտպանված լինեն թասակով կամ լայնական եւ (կամ) երկայնական դետալներով կամ այլ համարժեք արդյունավետության մասերով, որոնց ձեւը պետք է ապահովի կցամասերի (ֆիթինգների) եւ օժանդակ հարմարանքների պաշտպանությունը վնասվածքներից շրջվելու դեպքում:

Ցիստեռնի ստորին մասում տեղադրված կցամասերը (ֆիթինգները) եւ օժանդակ հարմարանքները՝

խողովակաոստերը, կողային փակող սարքերը եւ դատարկման բոլոր սարքերը պետք է կա՛մ առնվազն 200 մմ հեռավորությամբ ներս ընկած լինեն ցիստեռնի եզրաչափերի նկատմամբ, կա՛մ պաշտպանված լինեն ձողով, որի իներցիայի գործակիցը կազմում է

առնվազն 20 սմ<sup>3</sup> շարժման ուղղության նկատմամբ լայնակի ուղղությամբ. լցավորված ցիստեռնի դեպքում դրանց հեռավորությունը գրունտից պետք է կազմի առնվազն 300 մմ:

Ցիստեռնի հետին մասում տեղադրված կցամասերը (ֆիթինգները) պետք է պաշտպանված լինեն 9.7.6-ով սահմանված թափարգելով: Գրունտի նկատմամբ դրանց բարձրությունը պետք է այնպիսին լինի, որ թափարգելն ապահովի դրանց հուսալի պաշտպանությունը:

TE20 Անկախ ցիստեռնների այլ ծածկագրերից, որոնք թույլատրված են համաձայն ցիստեռնների ստորակարգության՝ 4.3.4.1.2-ում նշված ռացիոնալացված մոտեցման շրջանակներում, ցիստեռնները պետք է սարքավորված լինեն ապահովիչ կափույրով:

TE21 Փականները պետք է պաշտպանված լինեն սեւեռապնդիչ թասակներով:

TE22 (Նախատեսվում է վերապահում)

TE23 Ցիստեռնները պետք է սարքավորված լինեն այնպիսի կառուցվածք ունեցող սարքով, որը բացառում է ցիստեռնի խցանումը փոխադրվող նյութով եւ որը կանխում է հեղուկի արտահոսքը եւ կորպուսի ներսում ավելցուկային ճնշման կամ ցածրացած ճնշման առաջացումը:

TE24 Եթե բիտումների փոխադրման եւ բեռնման-բեռնաթափման համար նախատեսված ցիստեռնները սարքավորված են ցրցայտման ձողով, որն ամրացվում է լցավորման խողովակի ծայրին, ապա փակող սարքը, ինչպես նշված է 6.8.2.2.2-ում, կարող է փոխարինվել փակիչ ծորակով, որը տեղադրվում է լցավորման խողովակի վրա՝ ցրցայտման ձողի առջեւ:

TE25 (Նախատեսվում է վերապահում)

գ) Տեսակի հաստատումը (TA)

TA1 Ցիստեռնները չեն թույլատրվում օրգանական նյութերի

փոխադրման համար:

TA2 Այս նյութը կարող է փոխադրվել անշարժ կամ հանովի ցիստեռններով կամ ցիստեռն-կոնտեյներներով՝ պահպանելով ծագման երկրի իրավասու մարմնի հաստատած պայմանները, եթե ստորեւ նշված փորձարկումների արդյունքների հիման վրա իրավասու մարմինը եզրակացնում է, որ նման փոխադրումը կարող է իրականացվել անվտանգ կերպով: Եթե ծագման երկիրը «ԱԴՌ» համաձայնագրի կողմ չէ, ապա այս պայմանները պետք է ճանաչվեն «ԱԴՌ» համաձայնագրի կողմ հանդիսացող այն երկրի իրավասու մարմնի կողմից, որի տարածքով առաջինն է անցնում բեռը:

Տեսակի պաշտոնական հաստատման համար պետք է անցկացվեն փորձարկումներ՝

- ապացուցելու նյութի համատեղելիությունն այն բոլոր նյութերի հետ, որոնց հետ այն սովորաբար շփման մեջ է մտնում փոխադրման ժամանակ.
- ստանալու տվյալներ, որոնք թույլ են տալիս հաշվարկել ճնշումը նվազեցնող վթարային սարքերի եւ ապահովիչ կափույրների կառուցվածքը՝ հաշվի առնելով ցիստեռնի հաշվարկային բնութագրերը. եւ
- սահմանելու ցանկացած տեսակի հատուկ պահանջներ, որոնք անհրաժեշտ են՝ ապահովելու նյութի անվտանգ փոխադրումը:

Փորձարկման արդյունքները պետք է ներառվեն տեսակի պաշտոնական հաստատման արձանագրության մեջ:

TA3 Այս նյութը կարող է փոխադրվել միայն LGAV կամ SGAV ցիստեռնի ծածկագրով ցիստեռններով. 4.3.4.1.2-ով սահմանված ստորակարգությունը կիրառելի չէ:

TA4 1.8.7-ով սահմանված համապատասխանության գնահատման ընթացակարգերը պետք է կիրառվեն իրավասու մարմնի, նրա պատվիրակի կամ ստուգող մարմնի կողմից, որը համապատասխանում է 1.8.6.2, 1.8.6.4, 1.8.6.5 եւ 1.8.6.8-ի պահանջներին եւ հավատարմագրված է EN ISO/IEC 17020:2012 (բացառությամբ 8.1.3-ի) «A» տեսակի համաձայն:

TA5 Այս նյութը կարող է փոխադրվել միայն S2.65AN(+) ծածկագիրն ունեցող ցիստեռններով, 4.3.4.1.2-ում արտահայտված ստորակարգությունը կիրառելի չէ:

դ) Փորձարկումները (ՏՏ)

ՏՏ1 Մաքուր ալյումինից պատրաստված ցիստեոնները պետք է ենթարկվեն նախնական եւ պարբերական հիդրավլիկ փորձարկումների միայն 250 կՊա (2,5 բար) (մանոմետրական ճնշում) ճնշման տակ:

ՏՏ2 Կորպուսների ներքին երեսապատվածքի վիճակը պետք է ստուգվի տարին մեկ անգամ իրավասու մարմնի կողմից հաստատված փորձագետի կողմից, ով կորպուսի ներքին զննում է անցկացնում:

ՏՏ3 Շեղում կատարելով 6.8.2.4.2-ի պահանջներից՝ պարբերական ստուգումներ պետք է անցկացվեն առնվազն ութ տարին մեկ անգամ եւ պետք է ներառեն պատերի հաստության ստուգում՝ համապատասխան չափիչ գործիքների օգնությամբ: Նման ցիստեոնների անջրանցիկության փորձարկումը եւ ստուգումը՝ նախատեսված 6.8.2.4.3-ով, պետք է անցկացվեն առնվազն չորս տարին մեկ անգամ:

ՏՏ4 (Նախատեսվում է վերապահում)

ՏՏ5 Ճնշման տակ հիդրավլիկ փորձարկումները պետք է անցկացվեն առնվազն

երեք տարին մեկ անգամ: | Երկուսուկես տարին մեկ անգամ:

ՏՏ6 Պարբերական փորձարկումները, այդ թվում՝ ճնշման տակ հիդրավլիկ փորձարկումը, պետք է անցկացվեն առնվազն երեք տարին մեկ անգամ:

ՏՏ7 Շեղում կատարելով 6.8.2.4.2-ի պահանջներից՝ ներքին վիճակի պարբերական ստուգումը կարող է փոխարինվել իրավասու մարմնի կողմից հաստատված ծրագրով:

ՏՏ8 Այն ցիստեոնները, որոնք մակնշված են ՄԱԿ-ի նշագրման 1005 համարի ԱՄՈՆԻԱԿ՝ ԱՆՋՈՒԲ դիրքի համար պահանջվող բեռնառաքման ճշգրիտ անվանմամբ՝ 6.8.3.5.1 - 6.8.3.5.3-ին համապատասխան, եւ որոնք պատրաստված են հոսունության սահմանը 400 Ն/մմ<sup>2</sup>-ն գերազանցող մանրահատիկ պողպատից՝ նյութերի գծով ստանդարտներին համապատասխան, պետք է 6.8.2.4.2-ի համաձայն անցկացվող յուրաքանչյուր պարբերական ստուգման ժամանակ ենթարկվեն մագնիսացուցային մեթոդով ստուգումների՝ հայտնաբերելու մակերեսային ճաքերը:

Յուրաքանչյուր կորպուսի ստորին հատվածում պետք է ստուգվի յուրաքանչյուր օղակաձեւ եւ երկայնական զոդակարի երկարության



առնվազն 20%-ը, ինչպես նաև խողովակաուստերի բոլոր զողակարերը եւ բոլոր այն տարածքները, որտեղ իրականացվել են վերանորոգման աշխատանքներ կամ ողորկում:

Եթե նյութի մակնշումը հեռացվում է ցիստեռնի կամ ցիստեռնին կցված ցուցանակի վրայից, ապա պետք է իրականացնել ստուգում մագնիսացուցային մեթոդով, իսկ ցիստեռնի մասին գրառումներին կցվող ստուգման սերտիֆիկատում պետք է կատարվի համապատասխան գրառում:

Մագնիսական մասնիկների այդպիսի ստուգումներն իրականացվում են այս մեթոդի մասով որակավորում ունեցող իրավասու անձի կողմից՝ համաձայն EN ISO 9712:2012-ի (Ոչ քայքայիչ փորձաստուգում. ՈՔՓ-ի անձնակազմի որակավորումը եւ հաստատումը. Ընդհանուր սկզբունքներ):

TT9 Ստուգումների եւ փորձարկումների (այդ թվում՝ արտադրության վերահսկման) նպատակներով՝ 1.8.7-ով նախատեսված ընթացակարգերը պետք է կիրառվեն իրավասու մարմնի, նրա պատվիրակի կամ ստուգող մարմնի կողմից, որը համապատասխանում է 1.8.6.2, 1.8.6.4, 1.8.6.5 եւ 1.8.6.8-ի պահանջներին եւ հավատարմագրված է EN ISO/IEC 17020:2012 (բացառությամբ 8.1.3-ի) «A» տեսակի համաձայն:

TT10 Պարբերական ստուգումները, 6.8.2.4.2-ի համաձայն, տեղի են ունենում՝

առնվազն յուրաքանչյուր երեք տարին մեկ

առնվազն յուրաքանչյուր երկուսուկես տարին մեկ

TT11 Բացառապես ՆՀԳ-ի փոխադրման համար օգտագործվող ֆիքսված ցիստեռնների (ավտոցիստեռնների) եւ հանովի ցիստեռնների համար, որոնք ածխաջրածնային պողպատի կորպուսներով եւ սպասարկման սարքավորումներով են, հիդրավլիկ ճնշափորձարկումը պարբերական ստուգումների ժամանակ եւ դիմողի պահանջով կարող է փոխարինվել ստորեւ թվարկված ոչ քայքայիչ փորձաստուգման (ՈՔՓ) եղանակով: Այս եղանակը կարող է օգտագործվել առանձին կամ համատեղությամբ, ինչպես իրավասու մարմինը, դրա ներկայացուցիչը կամ ստուգում

իրականացնող մարմինը հարմար է գտնում (տե՛ս հատուկ դրույթ TT9)՝

- EN ISO 17640:2010 - զոդակարերի ոչ քայքայիչ փորձաստուգում. ուլտրաձայնային փորձաստուգում. եղանակներ, ստուգման մակարդակներ եւ գնահատում,

- EN ISO 17638:2009 - զոդակարերի ոչ քայքայիչ փորձաստուգում. մագնիսական մասնիկների ստուգում՝ EN ISO 23278:2009-ին համապատասխան սահմանված ցուցումների ընդունմամբ. զոդակարերի մագնիսական մասնիկների ստուգում:

Ընդունման մակարդակները՝

- EN 1711:2000 - զոդակարերի ոչ քայքայիչ փորձաստուգում. զոդակարերի հոսանքի ընթացիկ զննում՝ համալիր պարզ վերլուծությամբ,

- EN 14127:2011 - ոչ քայքայիչ փորձաստուգում. ուլտրաձայնային հաստության չափում,

ՈՔՓ-ի մեջ ներգրավված անձնակազմը պետք է լինի որակավորված, հավատարմագրված եւ պետք է ունենա համապատասխան գիտելիքներ այն ոչ քայքայիչ փորձաստուգման մասին, որն իրենք իրականացնում են, սահմանում, վերահսկում, դիտանցում կամ գնահատում հետեւյալի համաձայն՝

- EN ISO 9712:2012 - ոչ քայքայիչ փորձաստուգում. ՈՔՓ-ի անձնակազմի որակավորումը եւ հավատարմագրում:

Ջերմության ուղղակի կիրառումից հետո, ինչպիսին է ցիստեռնի տարր պարունակող ճնշման մասով զոդակցումը կամ կրճատումը, հիդրավլիկ փորձարկումն իրականացվում է ի լրումն ցանկացած սահմանված ՈՔՓ-ի:

ՈՔՓ-ն իրականացվում է ստորեւ ներկայացված աղյուսակում թվարկված կորպուսների կամ սարքավորումների

հատվածում՝

Կորպուսների կամ սարքավորումների հատվածը	ՈՔՓ
Կորպուսների երկայնավոր ծայրակից կար	100% ՈՔՓ՝ օգտագործելով հետեւյալ եղանակներից մեկը կամ մի քանիսը, ուլտրաձայնային, մագնիսական մասնիկների կամ հոսանքի ընթացիկ փորձաստուգում
Կորպուսների շրջանային ծայրակից կար	
Հարմարանքներ, սանդղիկներ, ծայրափողակներ եւ հենամարմիններին ուղղված բացող զոդակարեր (ներքին)	
Երկկողմանի կափոջակն ամրացնող բարձր ճնշման գոտիներ (թամբակետի վերջին հատվածում՝ զուսարած 400 մմ ներքեւ յուրաքանչյուր կողմից)	
Խողովակաշարեր եւ այլ սարքավորումների զոդակարեր	
Հենամարմիններ, որոնք վիզուալ չեն կարող ստուգվել դրսից	Ուլտրաձայնային հաստության ուսումնասիրություն, ներսից՝ 150 մմ (առավելագույն) տարածված ցանցի վրա

Անկախ ցիստեռնի համար օգտագործված սկզբնական կառուցվածքից, կառուցվածքային ստանդարտներից կամ տեխնիկական ծածկագրից՝ թերությունների ընդունման մակարդակը պետք է համապատասխանի EN 14025:2013 + A1:2016-ի (Վտանգավոր բեռների փոխադրման համար նախատեսված ցիստեռններ. մետաղական ճնշումային ցիստեռններ. նախագիծը եւ կառուցվածքը), EN 12493:2013 + A1:2014 + AC:2015-ի («ՀՆԳ սարքավորումներ եւ օժանդակ սարքեր. եռակցված պողպատե ցիստեռններ հեղուկացված նավթային գազի համար (ՀՆԳ). ավտոցիստեռններ. կառուցվածքը եւ արտադրությունը), EN ISO 23278:2009-ի (Զոդակարերի ոչ քայքայիչ

փորձաստուգում. զոդակարերի մագնիսական մասնիկների ստուգում. ընդունման մակարդակները) կամ կիրառելի ՈՔՓ ընդունման ստանդարտների համապատասխան մասերի պահանջներին:

Եթե ՈՔՓ-ի արդյունքում ցիստեռնում հայտնաբերվել է ոչ ընդունելի թերություն, այն պետք է շտկվի եւ վերստուգվի:

Չի թույլատրվում դրա մասով հիդրավլիկ փորձարկումներ անցկացնել առանց պահանջվող շտկումները կատարելու:

ՈՔՓ-ի արդյունքները պետք է արձանագրվեն եւ պահպանվեն մինչեւ ցիստեռնի շահագործման ժամկետի ավարտը:

ե) Մակնշումը (TM)

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** Այս տվյալները պետք է գրանցվեն հաստատման երկրի պետական լեզվով, ինչպես նաեւ անգլերեն, ֆրանսերեն կամ գերմաներեն, եթե այդ պետական լեզուն անգլերենը, ֆրանսերենը կամ գերմաներենը չէ, եթե այլ բան նախատեսված չէ տրանսպորտային գործունեությամբ զբաղվող համապատասխան երկրների միջեւ ձեռք բերված համաձայնությամբ:

TM1 Բացի 6.8.2.5.2-ով նախատեսված տվյալներից, ցիստեռնների վրա պետք է լինի հետեւյալ գրությունը՝ «Զբացել փոխադրման ժամանակ: Ինքնառեակտիվ նյութ» (տե՛ս նաեւ վերը նշված ծանոթագրությունը):

TM2 Բացի 6.8.2.5.2-ով նախատեսված տվյալներից, ցիստեռնների վրա պետք է լինի հետեւյալ գրությունը՝ «Զբացել փոխադրման ժամանակ: Զրի հետ փոխազդեցության մեջ մտնելիս գոյանում են դյուրավառ գազեր» (տե՛ս նաեւ վերը նշված ծանոթագրությունը):

TM3 Բացի այդ, ցիստեռնների՝ 6.8.2.5.1-ով նախատեսված ցուցանակի վրա պետք է նշված լինեն բեռնառաքման ճշգրիտ անվանումները եւ այս նյութի թույլատրելի առավելագույն բեռնվածությունը՝ արտահայտված կիլոգրամներով:

TM4 6.8.2.5.2-ով սահմանված ցուցանակի կամ ուղղակիորեն կորպուսի պատերի վրա, եթե դրանք ուժեղացված են այնպես, որ դա չի հանգեցնի ցիստեռնի ամրության նվազեցմանը, դրոշմման կամ

նմանատիպ այլ մեթոդով պետք է գրվեն հետեւյալ լրացուցիչ տվյալները՝ համապատասխան նյութի քիմիական անվանումը՝ հաստատված կոնցենտրացիայի նշումով:

TM5 Բացի 6.8.2.5.1-ում նշված տվյալներից, ցիստեոնների վրա պետք է նշված լինի կորպուսի ներքին պայմանների վերջին ստուգման ամսաթիվը (ամիսը, տարին):

TM6 (Նախատեսվում է վերապահում)

TM7 6.8.2.5.1-ով նախատեսված ցուցանակի վրա, դրոշմման կամ այլ համարժեք մեթոդով պետք է դրոշմվի եռաշերտ խորհրդանշանը, որի նկարագրությունը տրված է 5.2.1.7.6-ում: Այս եռաշերտ նշանը կարող է ուղղակիորեն փորագրվել կորպուսի պատերի վրա, եթե պատերն ուժեղացված են այնպես, որ դա չի հանգեցնի կորպուսի ամրության նվազեցմանը:

6.8.5. Անշարժ եռակցված ցիստեոնների, հանովի եռակցված ցիստեոնների եւ ցիստեոն-կոնտեյներների եռակցված կորպուսների, որոնց համար նախատեսվում է 1 ՄՊա-ից (10 բար) ոչ պակաս փորձարկման ճնշում, ինչպես նաեւ 2-րդ դասի սառեցված-հեղուկացված գազերի փոխադրման համար նախատեսված անշարժ եռակցված ցիստեոնների, հանովի եռակցված ցիստեոնների եւ ցիստեոն-կոնտեյներների եռակցված կորպուսների նյութերի եւ պատրաստման վերաբերյալ պահանջները

6.8.5.1. Նյութերը եւ կորպուսները

6.8.5.1.1. ա) Կորպուսներ, որոնք նախատեսված են ստորեւ նշվածները փոխադրելու համար՝

- 2-րդ դասի սեղմված, հեղուկացված կամ լուծված գազեր.
- 4.2 դասի ՄԱԿ-ի նշագրման 1380, 2845, 2870, 3194 եւ 3391 - 3394 համարները, եւ
- 8-րդ դասի՝ ՄԱԿ-ի նշագրման 1052 համարի անջուր ֆտորաջրածին եւ ՄԱԿ-ի նշագրման 1790 համարի ֆտորաջրածնաթթու՝ 85%-ից ավելի ֆտորաջրածնի պարունակությամբ,

պետք է պատրաստվեն պողպատից.

բ) կորպուսներ՝ պատրաստված մանրահատիկավոր պողպատներից եւ նախատեսված ստորեւ նշվածների փոխադրման համար՝

- 2-րդ դասի կոռոզիոն գազերի եւ ՄԱԿ-ի նշագրման 2073 համարի ամոնիակի լուծույթ, եւ

- 8-րդ դասի՝ ՄԱԿ-ի նշագրման 1052 համարի անջուր ֆտորաջրածին եւ ՄԱԿ-ի նշագրման 1790 համարի ֆտորաջրածնաթթու՝ 85%-ից ավելի ֆտորաջրածնի պարունակությամբ.

պետք է ենթարկվեն ջերմամշակման՝ ջերմաստիճանային լարվածությունները հանելու նպատակով.

- գ) 2-րդ դասի սառեցված-հեղուկացված գազերի փոխադրման համար նախատեսված կորպուսները պետք է պատրաստվեն պողպատից, ալյումինից, ալյումինի համաձուլվածքից, պղնձից կամ պղնձի համաձուլվածքից (ինչպես օրինակ՝ արույրից): Այնուհանդերձ, պղնձից եւ պղնձե համաձուլվածքից պատրաստված կորպուսները թույլատրվում են ացետիլեն չպարունակող գազերի փոխադրման համար: Սակայն էթիլենը կարող է պարունակել 0,005%-ից ոչ ավելի ացետիլեն.
- դ) կարող են օգտագործվել միայն այնպիսի նյութեր, որոնք նպատակահարմար են կորպուսների եւ դրանց կցամասերի ու աքսեսուարների աշխատանքային նվազագույն եւ առավելագույն ջերմաստիճանների համար:

6.8.5.1.2. Կորպուսի պատրաստման համար թույլատրվում է օգտագործել հետեւյալ նյութերը՝

- ա) պողպատներ, որոնք ենթակա չեն փխրուն քայքայման նվազագույն աշխատանքային ջերմաստիճանի պայմաններում (տե՛ս 6.8.5.2.1)՝
  - փափուկ պողպատներ (բացառությամբ 2-րդ դասի սառեցված-հեղուկացված գազերի համար նախատեսված կորպուսների).
  - մինչեւ  $-60\text{ }^{\circ}\text{C}$  ջերմաստիճանում մանրահատիկավոր պողպատ.
  - նիկելային պողպատ (0,5-ից 9% նիկելի պարունակությամբ) մինչեւ  $-196\text{ }^{\circ}\text{C}$  ջերմաստիճանում՝ կախված նիկելի պարունակությունից.
  - մինչեւ  $-270\text{ }^{\circ}\text{C}$  ջերմաստիճանում աուստենիտային քրոմնիկելային պողպատ.
- բ) 99,5%-ից ոչ պակաս մաքրությամբ ալյումին կամ ալյումինի համաձուլվածքներ (տե՛ս 6.8.5.2.2).
- գ) 99,9%-ից ոչ պակաս մաքրությամբ թթվածնազերծված պղինձ

կամ 56%-ից ավելի պղնձի պարունակությամբ պղնձի համաձուլվածքներ (տե՛ս 6.8.5.2.3):

6.8.5.1.3. ա) Պողպատե, ալյումինե կամ ալյումինի համաձուլվածքներից պատրաստված կորպուսները պետք է լինեն կամ անկար, կամ եռակցված:

բ) Աուստենիտային պողպատից, պղնձից կամ պղնձի համաձուլվածքից պատրաստված կորպուսները պետք է կարծր զոդանյութով զոդված լինեն:

6.8.5.1.4. Կցամասերը եւ արքեսուարները կարող են պտուտակման եղանակով ամրացվեն կորպուսներին կամ ամրացվեն հետեւյալ կերպ՝

ա) պողպատից, ալյումինից կամ ալյումինի համաձուլվածքից պատրաստված կորպուսներին՝ եռակցման միջոցով.

բ) աուստենիտային պողպատից, պղնձից կամ պղնձի համաձուլվածքից պատրաստված կորպուսներին՝ եռակցման միջոցով կամ կարծր զոդանյութով զոդելու միջոցով:

6.8.5.1.5. Կորպուսների պատրաստումը եւ դրանց ամրացումը փոխադրամիջոցին, ամրաշրջանակին կամ կոնտեյների հենոցին պետք է ամբողջությամբ բացառեն կրող մասերի սառեցման հավանականությունը, որի հետեւանքով դրանք կարող են դառնալ փխրուն: Իրենց իսկ կորպուսների ամրացման հարմարանքներն այնպես պետք է կառուցված լինեն, որ նույնիսկ ամենացածր աշխատանքային ջերմաստիճանում դրանք պահպանեն անհրաժեշտ մեխանիկական հատկանիշները:

6.8.5.2. Փորձարկման վերաբերյալ պահանջները

6.8.5.2.1. Պողպատե կորպուսները

Կորպուսների պատրաստման համար օգտագործվող նյութերը եւ եռակցման կարանները պետք է ամենացածր աշխատանքային ջերմաստիճանում, որն այնուամենայնիվ  $-20^{\circ}\text{C}$ -ից ոչ պակաս է, բավարարեն ստորեւ նշված՝ հարվածի ամրության վերաբերյալ պահանջները՝

- փորձարկումները պետք է կատարվեն V-աձեւ կտրվածքով նմուշների վրա.

- փորձարկման այն նմուշների համար հարվածի ամրության նվազագույն արժեքը (տես 6.8.5.3.1 - 6.8.5.3.3), որոնք տեղադրված են այնպես, որ իրենց երկայնակի առանցքը գլանման նկատմամբ գտնվում է ուղիղ անկյան տակ, իսկ V-աձեւ կտրվածքը (ISO R 148 ստանդարտի համաձայն)

ուղղահայաց է թիթեղի մակերեսին, պետք է կազմի  $34 \text{ Զ/սմ}^2$  փափուկ պողպատի համար (որի համար, համապատասխան ISO ստանդարտների համաձայն, փորձարկումները կարող են անցկացվել այն նմուշների վրա, որոնց երկայնակի առանցքը համընկնում է գլանման ուղղության հետ), մանրահատիկավոր պողպատի համար,  $\text{Ni} < 5\%$  պարունակությամբ լեգիրացված ֆերիտային պողպատի,  $5\% < \text{Ni} < 9\%$  միջակայքում նիկել պարունակող լեգիրացված ֆերիտային պողպատի կամ աուստենիտային քրոմնիկելային պողպատի համար.

- աուստենիտային պողպատների համար հարվածական ամրության փորձարկման պետք է ենթարկվեն միայն եռակցման կարանները.
- $-196^\circ\text{C}$ -ից ցածր աշխատանքային ջերմաստիճանների համար հարվածական ամրության փորձարկում չի կատարվում աշխատանքային նվազագույն ջերմաստիճանում, այն սակայն կատարվում է  $-196^\circ\text{C}$  ջերմաստիճանում:

6.8.5.2.2. Ալյումինի կամ ալյումինի համաձուլվածքներից պատրաստված կորպուսները

Կորպուսների կարերը պետք է համապատասխանեն իրավասու մարմնի կողմից սահմանված պահանջներին:

6.8.5.2.3. Պղնձից կամ պղնձի համաձուլվածքներից պատրաստված կորպուսները

Հարվածի ամրության համապատասխանության որոշման համար անհրաժեշտ չէ փորձարկումներ իրականացնել:

6.8.5.3. Հարվածի ամրության փորձարկումները

6.8.5.3.1. 10 մմ-ից պակաս, սակայն 5 մմ-ից ոչ պակաս հաստության թերթային նյութերի համար օգտագործվում են 10 մմ x e մմ լայնակի հատմամբ նմուշներ, որտեղ «e»-ն թերթի հաստությունն է: Հարկ եղած դեպքում թույլատրվում է մինչեւ 7,5 մմ կամ 5 մմ մեխանիկական մշակում:  $34 \text{ Զ/սմ}^2$  նվազագույն արժեքը պետք է պահվի բոլոր դեպքերում:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** 5 մմ-ից պակաս հաստության թերթերի եւ դրանց եռակցման կարանների վրա չի կատարվում հարվածի ամրության փորձարկում:

6.8.5.3.2. ա) Թերթային նյութը փորձարկելիս հարվածի ամրությունը որոշվում է երեք նմուշների վրա: Նմուշները կտրվում են գլանման ուղղությամբ ուղիղ անկյան տակ, սակայն փափուկ պողպատի դեպքում դրանք կարող են կտրվել գլանման ուղղությամբ:




բ) Եռակցման կարանները փորձարկելու համար նմուշները կտրվում են հետևյալ կերպ՝

որտեղ  $e < 10$  մմ՝

երեք փորձարկման նմուշ՝ եռակցման կարանի կենտրոնում՝ ակոսիկով.

եռակցման հետեանքով առաջացած ջերմային այրվածքի գոտու կենտրոնում ակոսիկով երեք փորձարկման նմուշ (միաձուլման սահմանագիծը հատող V-աձեւ ակոսիկ՝ նմուշի կենտրոնում).




Եռակցման կենտրոնը

Եռակցման հետեանքով առաջացած ջերմային այրվածքի գոտի


որտեղ  $10 \text{ մմ} < e < 20 \text{ մմ}$

երեք փորձարկման նմուշ՝ եռակցման կարանի կենտրոնում.

եռակցման հետեանքով առաջացած ջերմային այրվածքի գոտու կենտրոնում ակոսիկով երեք փորձարկման նմուշ (միաձուլման սահմանագիծը հատող V-աձեւ ակոսիկ՝ նմուշի կենտրոնում).




Եռակցման կարանի կենտրոնը




Եռակցման հետեանքով առաջացած ջերմային այրվածքի գոտին

**որտեղ  $e > 20$  մմ՝**

երեք նմուշներից բաղկացած երկու լրակազմ (մեկ լրակազմը՝ արտաքին կողմից, մյուսը՝ ներքին), որոնք կտրվում են ստորեւ նշված տեղերից յուրաքանչյուրում (եռակցման հետեւանքով առաջացած ջերմային այրվածքի գոտում կտրված նմուշների կենտրոնում V-աձեւ ակոսիկը հատում է միաձուլման սահմանագիծը):



Եռակցման կարանի կենտրոնը



Եռակցման հետեւանքով առաջացած ջերմային այրվածքի գոտին

- 6.8.5.3.3. ա) Թերթային նյութի համար երեք փորձարկումների միջին արժեքը պետք է համապատասխանի 6.8.5.2.1-ով նախատեսվող  $34 \text{ Ջ/սմ}^2$  նվազագույն արժեքին. ոչ ավելի, քան մեկ առանձին արժեք կարող է ցածր լինել նվազագույն արժեքից, սակայն այն չպետք է լինի  $24 \text{ Ջ/սմ}^2$ -ից ցածր.
- բ) եռակցման կարանների համար եռակցման կարանի կենտրոնում կտրված երեք նմուշների վրա կատարված փորձարկումներից ստացված միջին արժեքները չպետք է լինեն  $34 \text{ Ջ/սմ}^2$  նվազագույն արժեքից ցածր, ոչ ավելի, քան մեկ առանձին արժեք կարող է լինել նվազագույն արժեքից ցածր՝ սակայն այն չպետք է լինի  $24 \text{ Ջ/սմ}^2$ -ից ցածր.
- գ) եռակցման հետեւանքով առաջացած ջերմային այրվածքի գոտու համար (V-աձեւ ակոսիկը հատում է փորձարկման նմուշի

կենտրոնում գտնվող ձուլման սահմանագիծը) փորձարկման երեք նմուշից ոչ ավելի, քան մեկի արդյունքում ստացված արժեքը կարող է ցածր լինել 34 Ջ/սմ<sup>2</sup> նվազագույն արժեքից, սակայն այն չպետք է լինի 24 Ջ/սմ<sup>2</sup>-ից ցածր:

6.8.5.3.4. 6.8.5.3.3-ով նախատեսվող պահանջների չկատարման դեպքում կրկնակի փորձարկում կարող է անցկացվել միայն մեկ անգամ, եթե՝

ա) առաջին երեք փորձարկման միջին արժեքը ցածր է 34 Ջ/սմ<sup>2</sup> նվազագույն արժեքից, կամ

բ) մեկից ավելի փորձարկումների արժեքը ցածր է 34 Ջ/սմ<sup>2</sup> նվազագույն արժեքից, սակայն ցածր չէ 24 Ջ/սմ<sup>2</sup>-ից:

6.8.5.3.5. Թերթերի եւ եռակցման կարանների հարվածի ամրության կրկնակի փորձարկումների ժամանակ առանձին արժեքներից եւ ոչ մեկը չպետք է լինի 34 Ջ/սմ<sup>2</sup>-ից ցածր: Նախնական եւ կրկնակի փորձարկումների բոլոր արդյունքների միջին արժեքը պետք է հավասար կամ ավելի լինի 34 Ջ/սմ<sup>2</sup> նվազագույն արժեքից:

Եռակցման հետեւանքով առաջացած ջերմային այրվածքի գոտում նյութի հարվածի ամրության կրկնվող փորձարկման ժամանակ առանձին արժեքներից եւ ոչ մեկը չպետք է լինի 34 Ջ/սմ<sup>2</sup>-ից ցածր:

6.8.5.4. Հղումներ ստանդարտներին

6.8.5.2-ի եւ 6.8.5.3-ի պահանջները համարվում են կատարված, եթե կիրառվել են հետեւյալ ստանդարտները՝

EN 1252-1:1998՝ Կրիոգեն անոթներ. Նյութեր. 1-ին մաս՝ -80 °C-ից ցածր ջերմաստիճանում հարվածի ամրության վերաբերյալ պահանջները

EN 1252-2:2001՝ Կրիոգեն անոթներ. Նյութեր. 2-րդ մաս՝ -80 °C-ից -20 °C ջերմաստիճանում հարվածի ամրության վերաբերյալ պահանջները:

## ԳԼՈՒԽ 6.9

### ՎՈՒՄԱՆՆԵՐԻ ԳՐԱՍՏՄԱՍՍԱՅԻՑ ԱՆՇԱՐԺ ՑԻՍՏԵՌՆԵՐԻ (ԱՎՏՈՑԻՍՏԵՌՆԵՐԻ), ՀԱՆՈՎԻ ՑԻՍՏԵՌՆԵՐԻ, ՑԻՍՏԵՌՆ-ԿՈՆՏԵՅՆԵՐՆԵՐԻ ԵՎ ՀԱՆՈՎԻ ԹԱՓՔ-ՑԻՍՏԵՌՆԵՐԻ ՆԱԽԱԳԾՄԱՆ, ՊԱՏՐԱՍՏՄԱՆ, ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ, ՏԵՍԱԿԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ, ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ԵՎ ՄԱԿՆՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** Շարժական ցիստեռնների եւ ՄԱԿ-ի նշագրման՝ գազի բազմաարար կոնտեյներների (ԳՐՏԿ-ներ) համար տե՛ս 6.7 գլուխը. անշարժ ցիստեռնների (ավտոցիստեռնների), հանովի ցիստեռնների, ցիստեռն-կոնտեյներների եւ հանովի թափք-ցիստեռնների, մեքանիկական նյութերից պատրաստված կորպուսների, ինչպես նաեւ մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցների եւ ՄԱԿ-ի կողմից սահմանված պահանջներին համապատասխանող ԳՐՏԿ-ներից տարբեր՝ այլ գազի բազմաարար կոնտեյներների (ԳՐՏԿ-ների) համար տե՛ս 6.8 գլուխը, թափոնների վակուումային ցիստեռնների համար տե՛ս 6.10 գլուխը:

- 6.9.1. Ընդհանուր դրույթները
  - 6.9.1.1. Վոլյունիտից ցիստեռնները պետք է նախագծվեն, պատրաստվեն եւ փորձարկվեն իրավասու մարմնի կողմից ընդունված որակի ապահովման ծրագրի համաձայն. մասնավորապես լամինացման եւ թերմոպլաստիկից ծածկույթով պատելու աշխատանքները պետք է կատարվեն որակավորված անձնակազմի կողմից՝ իրավասու մարմնի կողմից հաստատված ընթացակարգի համաձայն:
  - 6.9.1.2. Վոլյունիտից ցիստեռնի նախագծման եւ փորձարկման նկատմամբ կիրառվում են նաեւ 6.8.2.1.1, 6.8.2.1.7, 6.8.2.1.13, 6.8.2.1.14 (ա) եւ (բ), 6.8.2.1.25, 6.8.2.1.27, 6.8.2.1.28 եւ 6.8.2.2.3-ի դրույթները:
  - 6.9.1.3. Վոլյունիտից ցիստեռնների համար չպետք է օգտագործվեն տաքացուցիչ տարրեր:
  - 6.9.1.4. Ավտոցիստեռնների կայունության նկատմամբ կիրառվում են 9.7.5.1-ի պահանջները:
- 6.9.2. Պատրաստումը
  - 6.9.2.1. Կորպուսները պետք է պատրաստվեն համապատասխան նյութերից, որոնք պետք է համատեղելի լինեն  $-40^{\circ}\text{C}$ -ից  $+50^{\circ}\text{C}$  աշխատանքային ջերմաստիճաններում փոխադրման ենթակա նյութերի հետ, եթե այն երկրի իրավասու մարմնի կողմից, որի տարածքում փոխադրումներ են իրականացվում կոնկրետ կլիմայական պայմանների համար, սահմանված չեն այլ ջերմաստիճանային ինտերվալներ:

6.9.2.2. Կորպուսները պետք է բաղկացած լինեն հետևյալ երեք տարրերից՝

- ներքին երեսպատվածք,
- կառուցվածքային շերտ,
- արտաքին շերտ:

6.9.2.2.1. Ներքին երեսպատվածքը կորպուսի պատերի որպես առաջին պաշտպանիչ շերտ ծառայող ներքին կեղևն է, որը նախատեսված է փոխադրվող նյութերի քիմիական ներգործության նկատմամբ երկարատև դիմադրություն ապահովելու համար, եւ որը խոչընդոտում է պարունակության հետ վտանգավոր ռեակցիան կամ վտանգավոր միացությունների գոյացումը, ինչպես նաեւ կառուցվածքային շերտի ամրության ցանկացած զգալի թուլացումը՝ ներքին երեսպատման միջոցով արտադրանքի դիֆուզիայի ենթարկվելու արդյունքում:

Ներքին երեսպատվածքը կարող է լինել վոլկնիտից կամ քերմապլաստից:

6.9.2.2.2. Կոլոկնիտից երեսպատվածքը պետք է ներառի՝

ա) մակերեսային շերտ («գելային ծածկույթ»)՝ խեժի բավարար պարունակությամբ, պատվածքով ամրանավորված, խեժի եւ պարունակության հետ համատեղելի մակերեսային շերտ: Այդ շերտը պետք է պարունակի զանգվածով ոչ ավելի, քան 30% մանրաթել եւ ունենա 0,25-ից 0,60 մմ հաստություն:

բ) ամրացնող շերտ (ամրացնող շերտեր)՝ 2 մմ-ից ոչ պակաս հաստությամբ մեկ կամ մի քանի շերտեր, որը (որոնք) պարունակում է (են) առնվազն 900 գ/մ<sup>2</sup> ապակե մանրաթել կամ 30%-ից ոչ պակաս ապակու զանգվածային պարունակությամբ արդյունաբերական մանրաթելքային նյութ, եթե չի դրսևորվել համարժեք անվտանգություն՝ ապակու ավելի ցածր պարունակության դեպքում:

6.9.2.2.3. Ջերմապլաստից երեսպատվածքը պետք է բաղկացած լինի 6.9.2.3.4-ում նշված՝ պահանջվող ձեռով միմյանց եռակցված քերմապլաստիկ թերթերից, որոնց միացված են կառուցվածքային շերտեր: Կառուցվածքային շերտերը երեսպատվածքի հետ ամուր միացնելը կատարվում է համապատասխան սոսնձի օգտագործմամբ:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** Դյուրավառ հեղուկների փոխադրման համար կարող է պահանջվել էլեկտրական լիցքերի կուտակումը կանխելու նպատակով 6.9.2.14-ի համաձայն ներքին շերտի առնչությամբ լրացուցիչ միջոցների ձեռնարկում:

6.9.2.2.4. Կորպուսի կառուցվածքային շերտն այն գոտին է, որը 6.9.2.4 - 6.9.2.6-ի համաձայն հատուկ նախատեսված է մեխանիկական լարվածությանը դիմակայելու համար: Կորպուսի այդ մասը, որպես կանոն, բաղկացած է սահմանված ուղղություններում տեղակայված վոլոկնիտի մի քանի շերտերից:

6.9.2.2.5. Արտաքին շերտը համարվում է կորպուսի այն մասը, որը ենթակա է մթնոլորտի անմիջական ներգործությանը: Այն պետք է բաղկացած լինի 0,2 մմ-ից ոչ պակաս հաստություն ունեցող խեժով հարուստ շերտից: 0,5 մմ-ից ավելի հաստության դեպքում անհրաժեշտ է օգտագործել ներքնակ: Նման շերտում ապակու պարունակությունը պետք է կազմի 30%-ից ոչ պակաս, եւ այդ շերտը պետք է հնարավորություն ունենա դիմակայելու արտաքին ներգործություններին, մասնավորապես, փոխադրվող նյութի հետ պատահական շփմանը: Խեժը պետք է պարունակի լցանյութեր կամ հավելանյութեր, որոնք ապահովում են կորպուսի կառուցվածքային շերտի պաշտպանությունն ուլտրամանուշակագույն ճառագայթման ներգործության հետեւանքով քայքայումից:

6.9.2.3. Ելանյութերը

6.9.2.3.1. Վոլոկնիտից ցիստեռնների պատրաստման համար օգտագործվող բոլոր նյութերի ծագումը եւ բնութագիրը պետք է հայտնի լինեն:

6.9.2.3.2. Խեժերը

Խեժային խառնուրդը մշակելիս խստորեն կատարվում են մատակարարի առաջարկությունները: Այդ պահանջը վերաբերում է հիմնականում պնդարարների, ակտիվարարների եւ արագարարների օգտագործմանը: Կարող են օգտագործվել խեժերի հետեւյալ տեսակները՝

- չհագեցված բազմաթերային խեժեր.
- վինիլթերային խեժեր.
- էպօքսիդային խեժեր.
- ֆենոլալդեհիդային խեժեր:

Խեժի ջերմային դեֆորմացման ջերմաստիճանը (HDT), որը որոշվում է ISO 75-1:2013 ստանդարտի համաձայն, պետք է առնվազն 20°C-ով գերազանցի ցիստեռնի առավելագույն աշխատանքային ջերմաստիճանը եւ ցանկացած դեպքում կազմի 70 °C-ից ոչ ցածր:

6.9.2.3.3. Ամրացնող մանրաթելերը

Որպես կառուցվածքային շերտերի պաշտպանիչ նյութ պետք է

օգտագործվեն համապատասխան մանրաթելքեր, ինչպես օրինակ՝ E կամ ECR տեսակի ապակեթելեր՝ ISO 2078:1993 ստանդարտի համաձայն: Ներքին երեսապատումը կարող է կատարվել C տեսակի ապակեթելից՝ ISO 2078:1993 ստանդարտի համաձայն: Ջերմապլաստիկ ծածկույթները կարող են օգտագործվել ներքին երեսապատման համար միայն նախատեսվող պարունակության հետ՝ դրանց համատեղելիությունը հաստատելու պայմանով:

6.9.2.3.4. Ջերմապլաստիկ երեսապատման նյութը

Որպես ջերմապլաստիկ երեսապատվածքներ կարող են օգտագործվել այնպիսի ջերմապլաստիկներ, ինչպես օրինակ՝ չպլաստիկացված պոլիվինիլքլորիդը (PVC-U), պոլիպրոպիլենը (PP), պոլիվինիլ-դենֆտորիդը (PVDF), պոլիտետրաֆտորէթիլենը (PTFE) եւ այլն:

6.9.2.3.5. Հավելանյութերը

Խեժերի մշակման համար անհրաժեշտ հավելանյութերը, ինչպես օրինակ՝ կատալիզատորները, արագարարները, պնդարարները եւ թիքսոտրոպ նյութերը, ինչպես նաեւ ցիստեոնի որակը բարելավելու համար օգտագործվող նյութերը, ինչպես օրինակ՝ ներկանյութերը, պիգմենտները եւ այլն, չպետք է առաջացնեն նյութի ամրության նվազեցում՝ հաշվի առնելով այն շահագործման ժամկետը եւ աշխատանքային ջերմաստիճանները, որոնց համար նախատեսված է կառուցվածքի տեսակը:

6.9.2.4. Կորպուսները, դրանց հարմարանքները, ինչպես նաեւ դրանց օժանդակ եւ կառուցվածքային սարքավորումները պետք է հաշվարկված լինեն այնպես, որ շահագործման հաշվարկային ժամկետի ընթացքում կարողանան առանց պարունակության կորստի (հաշվի չառնելով գազի բաց թողնման անցքերի միջով դուրս եկող գազի քանակությունը) պահել հետեւյալ բեռնվածությունները՝

- ստատիկ եւ դինամիկական բեռնվածությունները փոխադրման սովորական պայմաններում.
- 6.9.2.5 - 6.9.2.10-ում նշվածի համաձայն նախատեսված նվազագույն բեռնվածությունները:

6.9.2.5. 6.8.2.1.14 (ա) եւ (բ)-ում նշված ճնշումների եւ տվյալ տեսակի կառուցվածքի համար նշված առավելագույն խտությամբ պարունակության հետեւանքով առաջացող ծանրության ստատիկ ուժերի ինչպես նաեւ լցավորման առավելագույն մակարդակի դեպքում  $\sigma$  հաշվարկային լարվածությունը կորպուսի ցանկացած շերտում երկայնակի եւ շրջանաձեւ ուղղություններով չպետք է գերազանցի հետեւյալ արժեքները՝

$$\sigma \leq \frac{R_m}{K}$$

որտեղ՝

Rm-ը՝ ձգման ամրության արժեք, որն ստացվում է փորձարկումների արդյունքների միջին մեծությունից հանելով փորձարկումների արդյունքների ստանդարտ շեղումը բազմապատկած երկուսով: Փորձարկումները պետք է կատարվեն EN ISO 527-4:1997 եւ EN ISO 527-5:2009 ստանդարտի պահանջների համաձայն, տվյալ կառուցվածքի տեսակի եւ պատրաստման մեթոդի համար բնորոշ առնվազն վեց նմուշի վրա:

$$K = S \times K_0 \times K_1 \times K_2 \times K_3$$

որտեղ՝

K-ն պետք է ունենա 4 նվազագույն արժեք, եւ

S-ը՝ ամրության պաշարի գործակից: Սովորական կառուցվածքի ցիստեռնների դեպքում, եթե դրանք 3.2 գլխի Ա աղյուսակի 12-րդ սյունակում նշված են ցիստեռնի ծածկագրով, որի երկրորդ մասը ներառում է «G» տառը (տե՛ս 4.3.4.1.1), «S»-ի արժեքը պետք է հավասար կամ ավելի լինի 1.5-ից: Անվտանգության բարձր մակարդակ պահանջող նյութերի փոխադրման համար նախատեսված ցիստեռնների դեպքում, այսինքն՝ եթե ցիստեռնները 3.2 գլխի Ա աղյուսակի 12-րդ սյունակում նշված են ցիստեռնի ծածկագրով, որի երկրորդ մասը ներառում է «4» թիվը (տե՛ս 4.3.4.1.1), ապա «S»-ի արժեքը պետք է բազմապատկվի 2 գործակցով, եթե կորպուսը սարքավորված չէ վնասվածքների դեմ երկայնակի եւ լայնակի կառուցվածքային տարրեր ներառող ամբողջական մետաղական հիմնակմախքից կազմված պաշտպանության միջոցներով .

K0-ն՝ փոխադրման ենթակա նյութերի սողքի կամ հնեցման հետեւանքով եւ քիմիական ներգործության արդյունքում նյութի հատկանիշների վատթարացման գործակից: Այդ գործակիցը հաշվարկվում է հետեւյալ բանաձեւի հիման վրա՝

$$K_0 = \frac{1}{\alpha\beta}$$

որտեղ՝ «α»-ն սողքի գործակիցն է, իսկ «β»-ն՝ հնեցման գործակիցը, որը որոշվում է EN 978:1997 ստանդարտի համաձայն EN 977:1997 ստանդարտի համաձայն կատարվող փորձարկումներից հետո: Որպես այլընտրանք կարելի է կիրառել  $K_0 = 2$  հաստատուն արժեքը: α եւ β արժեքները որոշելու համար առաջնային շեղման մեծությունը



պետք է հավասար լինի 2σ-ին.

K1-ը՝ խեժերի աշխատանքային ջերմաստիճանից եւ ջերմային հատկություններով պայմանավորված գործակից, որը որոշվում է 1 նվազագույն արժեքով հետեւյալ հավասարման համաձայն՝

$$K1 = 1,25 - 0,0125 (HDT - 70)$$

որտեղ HDT-ն °C ջերմաստիճանում խեժի ջերմային դեֆորմացման ջերմաստիճանն է.

K2-ը՝ նյութի հոգնածության գործակից. անհրաժեշտ է կիրառել  $K2 = 1,75$ , եթե իրավասու մարմնի կողմից այլ մեծություն հաստատված չէ: Դինամիկ կառուցվածքի դեպքում, ինչպես նշված է 6.9.2.6-ում, կիրառվում է  $K2 = 1,1$  արժեքը.

K3-ը՝ հետեւյալ արժեքներն ունեցող պնդացման գործակիցը՝

- 1,1, եթե պնդացումը կատարվում է համապատասխան փաստաթղթերով հաստատված գործընթացի համաձայն.
- 1,5՝ մնացած այլ դեպքերում:

6.9.2.6. 6.8.2.1.2-ում նշված դինամիկ բեռնվածությունների դեպքում հաշվարկային լարվածության մեծությունը չպետք է գերազանցի 6.9.2.5-ով նախատեսված արժեքը բաժանած  $\alpha$  գործակցի:

6.9.2.7. 6.9.2.5-ում եւ 6.9.2.6-ում նշված ցանկացած բեռնվածության դեպքում որեւէ ուղղությամբ երկարացումը չպետք է գերազանցի 0,2%-ը կամ խզման դեպքում խեժի երկարացման արժեքի մեկ տասներորդը՝ նայած, թե որ արժեքն է դրանցից ավելի փոքր:

6.9.2.8. Նշված փորձարկման ճնշման դեպքում, որը չպետք է լինի 6.8.2.1.14 (ա) եւ (բ)-ով նախատեսված համապատասխան հաշվարկային ճնշումից պակաս, կորպուսի առավելագույն ձգման արժեքը չպետք է գերազանցի խզման դեպքում խեժի երկարացման արժեքը:

6.9.2.9. Կորպուսը պետք է հնարավորություն ունենա առանց որեւէ ներքին կամ արտաքին ակնհայտ վնասվածքների դիմակայելու 6.9.4.3.3-ի համաձայն ընկնող գնդի հարվածի փորձարկմանը:

6.9.2.10. Միացման տեղերում շերտավոր նյութից ծածկույթը, այդ թվում նաեւ հատակները միացնող ծայրակցատեղերը, ինչպես նաեւ ալեբեկիչ միջնորմները եւ կորպուսի միջնապատերը միացնող ծայրակցատեղերը պետք է հնարավորություն ունենան դիմակայելու վերը նշված ստատիկ եւ դինամիկ բեռնվածություններին: Շերտավոր նյութից ծածկույթում լարվածությունների կենտրոնացումից խուսափելու նպատակով կիրառվող կոնավորությունը չպետք է գերազանցի 1:6 արժեքը:

Ցիստեռնի տարրերի եւ դրանց միացված շերտավոր նյութից ծածկույթի տեղաշարժման մասով ամրության գործակիցը պետք է լինի ոչ պակաս, քան՝

$$\tau = \frac{Q}{I} \leq \frac{\tau_R}{K}$$

որտեղ՝

$\tau_R$ -ը  $\tau_R = 10 \text{ N/մմ}^2$  նվազագույն արժեքի դեպքում EN ISO 14125:1998+ AC:2002 + A1:2011 ստանդարտի համաձայն տեղաշարժման մասով միացման ամրությունն է (երեք կետերի մեթոդ), եթե առկա չեն չափված մեծություններ.

Q-ն բեռնվածության մեծությունն է լայնության միավորի հաշվով ստատիկ եւ դինամիկական բեռնվածությունների դեպքում.

K-ն՝ ստատիկ եւ դինամիկական բեռնվածությունների համար 6.9.2.5-ի համաձայն հաշվարկված գործակիցը.

I-ը՝ շերտավոր նյութից ծածկույթի երկարությունը:

- 6.9.2.11. Կորպուսում բացվածքները պետք է ամրացվեն՝ ապահովելու համար 6.9.2.5-ում եւ 6.9.2.6-ում նշված ստատիկ եւ դինամիկ բեռնվածությունների ներգործության դեպքում ամրության պաշարի առնվազն՝ կորպուսի համար նախատեսված միեւնույն գործակիցները: Բացվածքների քանակությունը պետք է հասցված լինի նվազագույնի: Օվալ բացվածքների առանցքների հարաբերակցությունը չպետք է գերազանցի 2 արժեքը:
- 6.9.2.12. Կորպուսին ամրացված կցաշուրթերը եւ խողովակաշարերը նախագծելիս անհրաժեշտ է նաեւ հաշվի առնել բեռնման-բեռնաթափման գործողությունների եւ հեղույսի ձգման ժամանակ առաջացող բեռնվածությունները:
- 6.9.2.13. Ցիստեռնը պետք է այնպես նախագծված լինի, որ առանց պարունակության զգալի արտահոսքի դիմակայի փորձարկումների վերաբերյալ 6.9.4.3.4-ով նախատեսված պահանջների համաձայն 30 րոպեի ընթացքում կրակով լրիվ բռնկման դեպքում տեղի ունեցող ազդեցություններին: Իրավասու մարմնի համաձայնությամբ փորձարկումները կարող են չանցկացվել, եթե բավարար ապացույցներ կարող են ապահովվել համադրելի կառուցվածքով ցիստեռնների վրա կատարված փորձարկումների արդյունքում:
- 6.9.2.14. 60 °C-ից ոչ բարձր բռնկման ջերմաստիճանով նյութերի փոխադրման վերաբերյալ հատուկ պահանջները  
60 °C-ից ոչ բարձր բռնկման ջերմաստիճանով նյութերի

փոխադրման համար օգտագործվող վոլյունիտից ցիստեոնները պետք է այնպես նախագծված լինեն, որ ապահովեն տարբեր բաղադրիչ մասերից ստատիկ էլեկտրականության հանումը՝ խուսափելու համար վտանգավոր էլեկտրաստատիկ լիցքերի կուտակումից:

- 6.9.2.14.1. Չափումների միջոցով կայացված՝ կորպուսի ներքին եւ արտաքին մակերեսներում մակերելույթային դիմադրության արժեքը չպետք է գերազանցի 109 Օմ-երը: Դա հնարավոր է իրականացնել խեժի կամ միջջերտային էլեկտրահաղորդալարային թերթերի, ինչպես օրինակ՝ մետաղական կամ ածխածնային ցանցի հետ հավելանյութերի օգտագործման միջոցով:
- 6.9.2.14.2. Չափումների միջոցով կայացված՝ գետնին լիցքի դիմադրության արժեքը չպետք է գերազանցի 107 Օմ-երը:
- 6.9.2.14.3. Կորպուսի բոլոր տարրերը պետք է ձյութօղակվեն միմյանց հետ, ցիստեոնների օժանդակ ու կառուցվածքային սարքավորումների մետաղական դետալների եւ փոխադրամիջոցի հետ: Շփվող էլեմենտների եւ սարքավորման միջեւ դիմադրությունը չպետք է գերազանցի 10 Օմ-երը:
- 6.9.2.14.4. Մակերեսային դիմադրության եւ գետնին լիցքի դիմադրության նախնական չափումը կատարվում է յուրաքանչյուր պատրաստված ցիստեոնի կամ կորպուսի նմուշի վրա՝ իրավասու մարմնի կողմից ճանաչված ընթացակարգի համաձայն:
- 6.9.2.14.5. Գետնին լիցքի դիմադրության չափումը պետք է կատարվի յուրաքանչյուր ցիստեոնի պարբերական ստուգման ընթացքում իրավասու մարմնի կողմից հաստատված ընթացակարգի համաձայն:
- 6.9.3. Սարքավորման տարրերը
  - 6.9.3.1. Կիրառվում են 6.8.2.2.1, 6.8.2.2.2 եւ 6.8.2.2.4 - 6.8.2.2.8-ի պահանջները:
  - 6.9.3.2. Բացի այդ, կիրառվում են 6.8.4 (բ) կետի հատուկ դրույթները (TE), եթե դրանք նշված են 3.2 գլխի Ա աղյուսակի 13-րդ սյունակի համապատասխան դիրքի համար:
- 6.9.4. Կառուցվածքի տեսակի փորձարկումները եւ հաստատումը
  - 6.9.4.1. Վոլյունիտից ցանկացած ցիստեոնի կառուցվածքի համար այն նյութերը, որոնցից այն պատրաստվում է, եւ ներկայացուցչական նախատիպը պետք է ենթարկվեն ստորեւ նկարագրված՝ կառուցվածքի տեսակի փորձարկումներին:
  - 6.9.4.2. Նյութերի փորձարկումները

- 6.9.4.2.1. Օգտագործվող խեժերի համար EN ISO 527-4:1997 կամ EN ISO 527-5:2009 ստանդարտի համաձայն որոշվում է խզման դեպքում երկարացման մեծությունը եւ EN ISO 75-1:2013 ստանդարտի համաձայն՝ ջերմային դեֆորմացման ջերմաստիճանը:
- 6.9.4.2.2. Կորպուսից կտրված նմուշների համար որոշվում են ստորեւ նշված պարամետրերը: Զուգահեռ պատրաստված նմուշները կարող են օգտագործվել միայն, եթե կորպուսից նմուշներ հնարավոր չէ կտրել: Մինչեւ փորձարկումների կատարումը բոլոր ծածկույթները հանվում են:
- Փորձարկումները պետք է ներառեն հետեւյալ պարամետրերը՝
- շերտային նյութերի հաստությունը, որոնցից պատրաստված են կորպուսի պատերը եւ հատակը.
  - զանգվածով պարունակությունը եւ ապակեթելի բաղադրությունը, պաշտպանիչ շերտերի ուղղվածությունն ու դիրքը.
  - EN ISO 527-4:1997 կամ EN ISO 527-5:2009 ստանդարտի համաձայն՝ ձգման ամրությունը, խզման դեպքում երկարացումը եւ առաձգականության մոդուլները՝ բեռնվածությունների ներգործության ուղղությամբ: Բացի այդ, ուլտրաձայնի միջոցով որոշվում է խեժի՝ խզման դեպքում երկարացման արժեքը.
  - ոլորքի ամրության եւ շեղման մեծության արժեքները՝ ստացված EN ISO 14125:1998 + AC:2002 + A1:2011 ստանդարտի համաձայն, մինչեւ հենարանն առնվազն 20 անգամ պատի հաստությունը գերազանցող հեռավորության վրա 50 մմ-ից ոչ պակաս լայնություն ունեցող նմուշի վրա 1000 ժամվա ընթացքում կատարվող՝ ոլորքի դեպքում սողունության փորձարկումների միջոցով: Բացի այդ, տվյալ փորձարկման ընթացքում EN 978:1997 ստանդարտի համաձայն որոշվում են սողունության  $\alpha$  գործակիցը եւ հնեցման  $\beta$  գործակիցը:
- 6.9.4.2.3. Տեղաշարժման առումով միջշերտային միացումների ամրությունը չափվում է EN ISO 14130:1997 ստանդարտի համաձայն, ճեղքվելու դեպքում ամրության մասով ներկայացուցչական նմուշների փորձարկման ընթացքում:
- 6.9.4.2.4. Փոխադրման ենթակա նյութերի հետ կորպուսի քիմիական համատեղելիությունը պետք է ապացուցվի իրավասու մարմնի համաձայնությամբ ստորեւ բերված մեթոդներից որեւէ մեկի միջոցով: Այդ ապացույցը պետք է վերաբերի փոխադրման ենթակա նյութերի հետ կորպուսի նյութերի եւ դրա սարքավորման համատեղելիության բոլոր ասպեկտներին, այդ թվում նաեւ կորպուսի նյութի քիմիական հատկանիշների վատթարացմանը, պարունակվող նյութի մեջ կրիտիկական ռեակցիաների մեկնարկին եւ կորպուսի ու

պարունակության միջեւ վտանգավոր ռեակցիաներին.

- որոշելու համար կորպուսի նյութի հատկանիշների որեւէ վատթարացում, կորպուսից վերցված ներկայացուցչական նմուշները, այդ թվում նաեւ եռակցման կարերով ներքին երեսապատման ցանկացած մաս ենթարկվում են EN 977:1997 ստանդարտի համաձայն 50°C ջերմաստիճանում 1000 ժամվա ընթացքում քիմիական համատեղելիության փորձարկումների: Իր նախնական վիճակի հետ համեմատած՝ նմուշը կարող է կորցնել EN 978:1997 ստանդարտի համաձայն ծալքի մասով փորձարկումների ժամանակ չափված ամրությունը եւ ճկունությունը ոչ ավելի, քան 25%-ով: Անթույլատրելի են ճաքերը, ուռչումները, կետային կոռոզիաները, շերտատումները եւ անհարթությունները.
- դրական փորձերի մասին սերտիֆիկացված եւ փաստաթղթավորված տվյալների օգնությամբ, որոնք վկայում են այն պատերի նյութերի հետ համապատասխան փոխադրվող նյութերի համատեղելիության մասին, որոնք շփվում են այդ նյութերի հետ տվյալ ջերմաստիճաններում, ժամանակային եւ շահագործման այլ համապատասխան պայմաններում.
- իրավասու մարմնի կողմից կիրառելի համարվող համապատասխան գրականությունից, ստանդարտներից կամ այլ աղբյուրներից վերցված տեխնիկական տվյալների օգնությամբ:

#### 6.9.4.3. Տեսակի փորձարկումները

Ցիստեռնի ներկայացուցչական նախատիպը պետք է անցնի ստորեւ նշված փորձարկումները: Այդ իսկ նպատակով օժանդակ սարքավորումները պետք է հարկ եղած դեպքում փոխվեն այլ սարքավորումներով:

6.9.4.3.1. Նախատիպը ստուգվում է կառուցվածքի տեսակի մասնագրի համապատասխանության մասով: Նման ստուգումը ներառում է ներքին եւ արտաքին տեսողական զննում ու հիմնական չափսերի սահմանում:

6.9.4.3.2. Նախատիպը, որը սարքավորված է տենզոմետրերով բոլոր այն հատվածներում, որտեղ պահանջվում է հաշվարկային բնութագրերի հետ փորձարկային տվյալների համադրություն, ենթարկվում է հետեւյալ բեռնվածություններին՝ լարվածությունների գրանցմամբ՝

- նախատիպը լցվում է ջրով մինչեւ լցավորման առավելագույն աստիճանը: Փորձարկումների արդյունքները, 6.9.2.5-ի համաձայն, օգտագործվում են հաշվարկային պարամետրերի չափաբերման համար.

- մինչև լցավորման առավելագույն աստիճան լցված եւ տրանսպորտային միջոցի վրա տեղադրված նախատիպին հաղորդվում են արագությունները բոլոր ուղղություններով հաջորդաբար վարելու եւ արգելակելու միջոցով: 6.9.2.6-ի համաձայն հաշվարկային պարամետրերի հետ համադրումների համար գրանցված լարվածություններն արտարկում են 6.8.2.1.2-ով պահանջվող եւ չափված արագությունների գործակցի նկատմամբ.
- նախատիպը լցվում է ջրով եւ ենթարկվում նշված փորձարկման ճնշմանը: Նման ճնշման տակ չպետք է տեղի ունենա կորպուսի ակնհայտ վնասում կամ դրա պարունակության արտահոսք:

6.9.4.3.3. Նախատիպը ենթարկվում է EN 976-1:1997, թիվ 6.6 ստանդարտի համաձայն՝ ընկնող գնդով հարվածի միջոցով փորձարկումների: Ընդ որում, չպետք է ակնհայտ վնասվածքներ լինեն ցիստեռնի ներսից կամ դրսից:

6.9.4.3.4. Մինչև 80% ջրով լցված իր օժանդակ եւ կառուցվածքային սարքավորումներով նախատիպը ենթարկվում է 30 րոպեի ընթացքում կրակով լրիվ բռնկման՝ վառարանային վառելիքով լցված բաց ռեզերվուարի օգտագործմամբ կամ նույն ներգործությունն ունեցող կրակի ցանկացած այլ տեսակի միջոցով: Ռեզերվուարի չափսերը պետք է գերազանցեն ցիստեռնի չափսերը յուրաքանչյուր կողմից ոչ պակաս, քան 50 սմ-ով, մինչդեռ վառելիքի մակերեսի մակարդակի եւ ցիստեռնի կորպուսի միջեւ հեռավորությունը պետք է լինի 50- 80 սմ միջակայքում: Հեղուկի մակարդակից ցածր տեղակայված՝ ցիստեռնի մնացած էլեմենտները, ներառյալ՝ բացվածքները եւ փականները, պետք է լինեն անջրանցիկ՝ բացառությամբ աննշան դուրս հոսելուն:

6.9.4.4. Տեսակի հաստատումը

6.9.4.4.1. Իրավասու մարմինը կամ վերջինիս կողմից նշանակված մարմինը ցիստեռնի յուրաքանչյուր նոր տեսակի համար տրամադրում է հաստատում, որը փաստում է այն մասին, որ կառուցվածքը համապատասխանում է իր նշանակությանը եւ բավարարում է պատրաստման եւ սարքավորման վերաբերյալ սույն գլխի պահանջները, ինչպես նաեւ փոխադրման ենթակա նյութերի նկատմամբ կիրառվող հատուկ դրույթները:

6.9.4.4.2. Հաստատումը պետք է հիմնված լինի հաշվարկների եւ փորձարկումների արձանագրությունների վրա, ներառյալ նյութերի ու նախատիպերի բոլոր փորձարկումների արդյունքները, ինչպես նաեւ հաշվարկային պարամետրերի հետ համադրության արդյունքները, եւ այնտեղ պետք է նշվեն կառուցվածքի տեսակի մասնագրերն ու

որակի ապահովման ծրագիրը:

- 6.9.4.4.3. Հաստատման մեջ պետք է նշվեն այն նյութերը կամ նյութերի խմբերը, որոնց համատեղելիությունը կորպուսի նյութերի հետ երաշխավորված է: Պետք է նշված լինեն դրանց քիմիական անվանումները եւ համապատասխան հավաքական դիրքի անվանումը (տե՛ս 2.1.1.2), ինչպես նաեւ դրանց դասը եւ դասակարգման ծածկագիրը:
- 6.9.4.4.4. Այնտեղ նաեւ պետք է նշվեն սահմանված հաշվարկային եւ սահմանային արժեքները (ինչպես օրինակ՝ շահագործման ժամկետը, աշխատանքային ջերմաստիճանների միջակայքը, աշխատանքային եւ փորձարկման ճնշումների արժեքները, նյութերի մասին տվյալներ) եւ նախազգուշական այն միջոցները, որոնք պետք է ձեռնարկվեն կառուցվածքի հաստատված տեսակի համաձայն պատրաստվող ցանկացած ցիստեռնի պատրաստման, փորձարկման, տեսակի հաստատման, մակնշման եւ շահագործման ժամանակ:
- 6.9.5. Ստուգումները
- 6.9.5.1. Կառուցվածքի հաստատված տեսակի համաձայն պատրաստված յուրաքանչյուր ցիստեռնի ստուգումը եւ նյութերի փորձարկումները կատարվում են ստորեւ ներկայացված պահանջների համաձայն:
- 6.9.5.1.1. 6.9.4.2.2-ի համաձայն նյութերի փորձարկումները կատարվում են կորպուսից վերցված նմուշների վրա, բացառությամբ ձգման ամրության փորձարկումների, ինչպես նաեւ ծալքի դեպքում սողունության փորձարկումների, որոնց դեպքում փորձարկման տեղությունը կրճատվում է՝ հասնելով մինչեւ 100 ժամի: Չուգահեռ պատրաստված նմուշները կարող են օգտագործվել միայն, երբ կորպուսից նմուշներ հնարավոր չէ կտրել: Պետք է պահպանվեն կառուցվածքի հաստատված տեսակի համար ընդունված արժեքները:
- 6.9.5.1.2. Նախքան շահագործումը կորպուսները եւ դրանց սարքավորումները պետք է միասին կամ առանձին ենթարկվեն նախնական ստուգման: Այդ ստուգումը պետք է ներառի՝
- կառուցվածքի հաստատված տեսակին համապատասխանության ստուգում.
  - կառուցվածքային բնութագրերի ստուգում.
  - ներքին եւ արտաքին զննում.
  - ճնշման տակ հիդրավլիկ փորձարկում, որը նշված է 6.8.2.5.1-ով նախատեսվող ցուցանակի վրա.

- սարքավորման աշխատանքի ստուգում.
- անջրանցիկության փորձարկում, եթե կորպուսը եւ դրա սարքավորումները փորձարկվել են ճնշման տակ առանձին:

6.9.5.2. Ցիստեռնների պարբերական ստուգման ժամանակ կիրառվում են 6.8.2.4.2 - 6.8.2.4.4-ի պահանջները: Բացի այդ, 6.8.2.4.3-ի համաձայն անցկացվող ստուգումը պետք է ներառի կորպուսի ներքին վիճակի զննում:

6.9.5.3. 6.9.5.1-ի եւ 6.9.5.2-ի համաձայն՝ ստուգումները եւ փորձարկումները պետք է կատարվեն իրավասու մարմնի կողմից հաստատված փորձագետի կողմից: Տրվում են սերտիֆիկատներ, որտեղ ներկայացվում են այդ գործառնությունների արդյունքները: Այդ սերտիֆիկատներում պետք է առկա լինի 6.9.4.4-ի համաձայն տվյալ ցիստեռնում փոխադրման համար թույլատրված նյութերի ցանկը:

6.9.6. Մակնշումը

6.9.6.1. 6.8.2.5-ի պահանջները կիրառվում են վոլոկնիտից պատրաստված ցիստեռնների մակնշման նկատմամբ հետեւյալ փոփոխություններով՝

- ցիստեռնին ամրացվող ցուցանակը նույնպես կարող է լամինացվել կորպուսին կամ պատրաստվել համապատասխան պլաստիկ նյութից.
- միշտ պետք է նշվի հաշվարկային ջերմաստիճանների միջակայքը:

6.9.6.2. Բացի այդ, կիրառվում են 6.8.4 (ե) (TM)-ի հատուկ դրույթները, եթե դրանք նշված են 3.2 գլխի Ա աղյուսակի 13-րդ սյունակում համապատասխան դիրքի համար:



## ԳԼՈՒԽ 6.10

### ԹԱՓՈՆՆԵՐԻ ՎԱԿՈՒՈՒՄԱՅԻՆ ՑԻՍՏԵՌՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ, ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ, ՏԵՍԱԿԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ, ՍՏՈՒԳՄԱՆ ԵՎ ՄԱԿՆՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1.** Շարժական ցիստեռնների եւ ՄԱԿ-ի նշագրման՝ գազի բազմադարձ կոնտեյնրների (ԳԲՏԿ-ներ) համար տե՛ս 6.7 գլուխը. անշարժ ցիստեռնների (ավտոցիստեռնների), հանովի ցիստեռնների, ցիստեռն-կոնտեյնրների եւ հանովի թափք-ցիստեռնների, մետաղական նյութերից պատրաստված կորպուսների, ինչպես նաեւ մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցների ու գազի բազմադարձ կոնտեյնրների (ԳԲՏԿ-ներ) համար, բացառությամբ ՄԱԿ-ի ԳԲՏԿ-ների, տե՛ս 6.8 գլուխը. վոլկնիտից պատրաստված ցիստեռնների համար տե՛ս 6.9 գլուխը:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2.** Սույն գլուխը կիրառվում է անշարժ ցիստեռնների, հանովի ցիստեռնների, ցիստեռն-կոնտեյնրների եւ հանովի թափք-ցիստեռնների նկատմամբ:

6.10.1. Ընդհանուր դրույթները

6.10.1.1. Սահմանումը

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** 6.8 գլխի պահանջներն ամբողջությամբ բավարարող ցիստեռնը չի համարվում «թափոնների վակուումային ցիստեռն»:

6.10.1.1.1. «Պաշտպանված գոտի» եզրույթը նշանակում է հետեւյալ գոտիները՝

ա) ցիստեռնի ստորին մասում՝ ստորին ծնորդի երկու կողմերում ձգվող 60° անկյան սեկտորը.

բ) ցիստեռնի վերին մասում՝ վերին ծնորդի երկու կողմերում ձգվող 30° անկյան սեկտորը.

գ) ավտոտրանսպորտային միջոցների վրա ցիստեռնի դիմացի հատակի մակերեսը.

դ) ցիստեռնի հետին հատակին՝ պաշտպանված տարածք 9.7.6-ով նախատեսվող կորպուսում ընկղմված սարքի համար:

6.10.1.2. Կիրառման ոլորտը

6.10.1.2.1. 6.10.2 - 6.10.4-ի հատուկ պահանջները լրացնում կամ փոփոխում են 6.8 գլուխը եւ կիրառվում են թափոնների վակուումային ցիստեռնների նկատմամբ:

Թափոնների վակուումային ցիստեռնները կարող են ունենալ բացվող հատակներ, եթե 4.3 գլխի պահանջների համաձայն, թույլատրվում է ներքեից փոխադրվող նյութերի դատարկում ներքեի կողմից (նշված են «A» կամ «B» տառով 3.2 գլխի Ա աղյուսակի 12-րդ սյունակում նշված ցիստեռնի ծածկագրի 3-րդ մասում՝ 4.3.4.1.1-ի պահանջների համաձայն):

Թափոնների վակուումային ցիստեռնները պետք է բավարարեն 6.8 գլխի պահանջները, բացառությամբ այն դեպքերի, երբ սույն գլխում առկա հատուկ դրույթներով այլ բան է նախատեսված: Այնուամենայնիվ, 6.8.2.1.19, 6.8.2.1.20 եւ 6.8.2.1.21-ի պահանջները չեն կիրառվում:

#### 6.10.2. Կառուցվածքը

6.10.2.1. Ցիստեռնները կառուցվում են՝ հաշվի առնելով այն հաշվարկային ճնշումը, որը 1,3 անգամ գերազանցում է լցավորման կամ դատարկման ճնշումը, սակայն պակաս չէ 400 կՊա-ից (4 բար) (մանոմետրական ճնշում): Այն նյութերի փոխադրման ժամանակ, որոնց համար 6.8 գլխում նշված է ցիստեռնի առավել բարձր հաշվարկային ճնշում, կիրառվում է այդ առավել բարձր ճնշումը:

6.10.2.2. Ցիստեռնները կառուցվում են այնպես, որ դիմակայեն 100 կՊա (1բար) ներքին բացասական ճնշմանը:

#### 6.10.3. Սարքավորման տարրերը

6.10.3.1. Սարքավորման տարրերը տեղադրվում են այնպես, որ դրանք պաշտպանված լինեն փոխադրման կամ բեռնման-բեռնաթափման աշխատանքների ժամանակ պոկվելու կամ վնասվելու ցանկացած վտանգից: Այդ պահանջը կարող է կատարված լինել այսպես կոչված «պաշտպանված գոտում» այդ սարքավորումը տեղադրելու միջոցով (տե՛ս 6.10.1.1.1):

6.10.3.2. Կորպուսների ներքեից դատարկման համակարգը կարող է բաղկացած լինել կորպուսին հնարավորինս մոտ գտնվող կասեցման կափույրներով արտաքին խողովակատարից եւ անշարժ կցաշուրթի ձեով երկրորդ փականից կամ այլ համարժեք սարքից:

6.10.3.3. Կորպուսի կամ մեկուսամասերի բաժանված կորպուսի ցանկացած մեկուսամասի հետ միացված կասեցնող կափույրի (կափույրների) դիրքը եւ ուղղությունը պետք է հստակ նշված լինեն, ընդ որում, պետք է դրանք գետնից ստուգելու հնարավորություն լինի:

6.10.3.4. Լցավորման եւ դատարկման արտաքին կցամասերի (խողովակներ, կողմնային փակող սարքեր) վնասվելու դեպքում պարունակության որեւէ կորստից խուսափելու նպատակով, ներքին կասեցնող կափույրը կամ առաջին արտաքին կասեցնող կափույրը (երբ դա

կիրառելի է) եւ դրա թամբը պետք է պաշտպանված լինեն արտաքին բեռնվաճառությունների ներգործության տակ պոկվելու վտանգից կամ պետք է այնպես նախագծված լինեն, որ կարողանան դիմակայել այդ բեռնվաճառություններին: Լցավորման եւ դատարկման սարքերը (ներառյալ՝ կցաշուրթերը եւ պարուրակավոր խցանները) եւ պաշտպանիչ կափարիչները (եթե այդպիսիք կան) պետք է հուսալի կերպով պաշտպանված լինեն պատահական բացվելուց:

6.10.3.5. Ցիստեռնները կարող են ունենալ բացվող հատակներ: Բացվող հատակները պետք է բավարարեն հետեւյալ պահանջները՝

ա) հատակների կառուցվածքը պետք է ապահովի դրանց հերմետիկ փակումը.

բ) պետք է բացառվի դրանց պատահական բացվելու հավանականությունը.

գ) եթե բացման մեխանիզմն էլեկտրական շարժակ ունի, ապա էլեկտրաէներգիայի մատակարարման վթարային ընդհատման դեպքում հատակը պետք է մնա հուսալի փակված.

դ) պետք է տեղադրված լինի պաշտպանիչ կամ բլոկավորող սարք՝ ապահովելու համար, որ հատակը չի բացվի ցիստեռնում մնացորդային ճնշման պահպանման դեպքում: Այդ պահանջը չի կիրառվում էլեկտրական շարժակով բացվող հատակների նկատմամբ, եթե դրանց աշխատանքը հուսալիորեն կարգավորվում է: Այդ դեպքում կառավարման սարքերը պետք է գործեն ավտոմատ հսկողության ռեժիմում եւ գտնվեն այնպիսի տեղում, որ օպերատորը հնարավորություն ունենա մշտապես հետեւելու հատակի շարժմանն ու դրա բացվելու եւ փակվելու ժամանակ չենթարկվի վտանգի, եւ

ե) պետք է նախատեսվի բացվող հատակի պաշտպանություն, որը կկանխարգելի դրա բացումը մեքենաների, ցիստեռն-կոնտեյներների կամ հանովի թափք-ցիստեռնների շուռ գալու դեպքում առաջացող բեռնվաճառությունների ներգործության տակ:

6.10.3.6. Ցիստեռնների մաքրումը կամ դատարկումը դյուրացնելու համար ներքին մխոցային արտամղիչներով սարքավորված թափոնների վակուումային ցիստեռնները պետք է ունենան կանգնեցման այնպիսի սարքեր, որոնք կանխարգելում են ցիստեռնից մխոցային արտամղիչի դուրս ընկնելն իր ցանկացած աշխատանքային դիրքում, երբ արտամղիչը ենթարկվում է ցիստեռնի առավելագույն աշխատանքային ճնշմանը համարժեք ներգործության: Ցիստեռնների կամ օդաճնշիչ մխոցային արտամղիչներով սարքավորված խցիկների առավելագույն աշխատանքային ճնշումը

չպետք է գերազանցի 100 կՊա-ը (1,0 բար): Մխոցային արտամղիչը պետք է պատրաստվի այնպես եւ այնպիսի նյութերից, որ արտամղիչը տեղափոխելիս այրման աղբյուր չառաջանա:

Մխոցային արտամղիչը կարող է օգտագործվել որպես բաժանիչ միջնորմ, եթե այն անշարժ ամրացված է: Եթե մխոցային արտամղիչի ամրացման որեւէ էլեմենտ գտնվում է ցիստեռնի արտաքին մասում, ապա այն պետք է այնպես տեղադրվի, որ ապահովվի դրա պաշտպանությունը պատահական վնասվելուց:

6.10.3.7. Ցիստեռնները կարող են սարքավորված լինել ներծծող մետաղաձողերով, եթե՝

ա) մետաղաձողն ունի կորպուսի կամ կորպուսին եռակցված խողովակաճյուղի վրա անմիջականորեն տեղադրված ներքին կամ արտաքին կասեցման կափույր. կորպուսի կամ խողովակաճյուղի եւ արտաքին կասեցնող կափույրի միջեւ կարող է տեղադրված լինել շրջվող ատամնավոր անիվ, եթե այն տեղակայված է պաշտպանված գոտում, եւ եթե կասեցման կափույրով կառավարման սարքը պատյանով կամ կափարիչով պաշտպանված է արտաքին բեռնվաճուղայան ներգործության արդյունքում պատռվելու վտանգից.

բ) (ա) ենթակետով նախատեսվող կասեցման կափույրը տեղադրված է այնպես, որ հնարավոր չի եղել իրականացնել փոխադրումն այն դեպքում, երբ այն գտնվում է բաց վիճակում, եւ

գ) մետաղաձողը կառուցված է այնպես, որ մետաղաձողին պատահական հարվածի արդյունքում ցիստեռնից արտահոսք տեղի չունենա:

6.10.3.8. Ցիստեռններում հարմարեցվում են հետեւյալ լրացուցիչ օժանդակ սարքավորումները՝

ա) պոմպի/օդաձծիչի արտաթողման խողովակ, որն ապահովում է ցանկացած դյուրավառ կամ թունավոր գոլորշիների դուրսբերումն այնտեղ, որտեղ դրանք վտանգ չեն ներկայացնում.

բ) վակուումային պոմպի/օդաձծիչի բոլոր բացվածքների վրա տեղադրվում է կրակն անմիջապես կասեցնող սարք, որն ապահովում է բռնկման աղբյուրները, եւ որը տեղադրվում է դյուրավառ թափոնների համար օգտագործվող ցիստեռնի վրա, կամ ցիստեռնը պետք է լինի պայթյունի ճնշման դեպքում հարվածադիմացկուն, ինչը նշանակում է, որ այն առանց արտահոսքի կկարողանա դիմակայել կրակի ներթափանցման հետեւանքով առաջացած պայթյունին, սակայն կառաջացնի

դեֆորմացիա.

- գ) այն պոմպերը, որոնք կարող են հավելուրդային ճնշում առաջացնել, պետք է ունենան պաշտպանիչ սարք՝ դրված այն խողովակատարի վրա, որը կարող է գտնվել ճնշման տակ: Այդ պաշտպանիչ սարքը տեղադրվում է ցիստեռնի առավելագույն աշխատանքային ճնշումը չգերազանցող ճնշման տակ աշխատելու համար.
- դ) կասեցնող կափույրը տեղադրվում է կորպուսի կամ կորպուսի վրա տեղադրված՝ գերլցումից պաշտպանության սարքի արտաթողման անցքի եւ կորպուսը պոմպի/օդածծիչի հետ միացնող խողովակատարի միջեւ.
- ե) ցիստեռնը սարքավորվում է համապատասխան մանոմետրով/վակուումաչափով, որը տեղադրվում է այնպիսի դիրքում, որ դրա ցուցումները հեշտությամբ հնարավոր լինի հաշվարկել պոմպի/օդածծիչի օպերատորի կողմից: Մանոմետրի սանդղակը պետք է ունենա ցիստեռնի առավելագույն աշխատանքային ճնշումը ցույց տվող տարբերանշան.
- զ) ցիստեռնը եւ դրա յուրաքանչյուր մեկուսամաս, եթե այն բաժանված է մեկուսամասերի, պետք է սարքավորված լինեն մակարդակաչափով: Որպես մակարդակաչափ կարող են օգտագործվել դիտապակիներ, եթե՝
  - i) դրանք կազմում են ցիստեռնի պատի մաս եւ ունեն ցիստեռնի դիմադրողականության հետ համադրելի ճնշման դիմադրողականություն, կամ եթե դրանք տեղադրված են ցիստեռնի արտաքին կողմից.
  - ii) ցիստեռնի վերին եւ ստորին միացումները սարքավորված են փակիչ կափույրներով, որոնք տեղադրված են անմիջապես կորպուսի վրա այնպես, որ փոխադրումն իրենց բաց վիճակում հնարավոր չէ.
  - iii) դրանք հարմար են ցիստեռնի առավելագույն աշխատանքային ճնշման դեպքում օգտագործման համար. եւ
  - iv) դրանք տեղադրված են այնպես, որ բացառվում է պատահական վնասվելու հավանականությունը:

6.10.3.9. Թափոնների վակուումային ցիստեռնների կորպուսները պետք է սարքավորված լինեն ապահովիչ կափույրով, որի առջեւ պետք է տեղադրված լինի պոկովի թաղանթ:

Կափույրը պետք է ավտոմատ կերպով բացվի այն ճնշման պայմաններում, որը հավասար է 0,9-1,0 ճնշման եւ այն ցիստեռնի

փորձարկման ճնշման արտադրյալին, որի վրա տեղադրված է կափույրը: Արգելվում է սեփական կշռի ներգործության տակ աշխատող կափույրների կամ հակակշռով կափույրների օգտագործումը:

Պոկովի թաղանթը պետք է ճեղքվի ոչ շուտ այն պահից, երբ կապահովվի այն ճնշումը, որի դեպքում կափույրն սկսում է բացվել, եւ ոչ ուշ այն պահից, երբ այդ ճնշումը կհասնի ցիստեռնի այն փորձարկային ճնշմանը, որի համար այն նախատեսված է:

Պաշտպանիչ սարքերը պետք է այնպես նախագծված լինեն, որ դրանք կարողանան դիմակայել բեռնվածություններին, այդ թվում՝ հեղուկի ալիքային հարվածին:

Պոկովի թաղանթի եւ ապահովիչ կափույրի միջեւ տարածությունում պետք է տեղադրվի մանոմետր կամ այլ համապատասխան չափիչ սարք՝ հայտնաբերելու համար թաղանթում ճեղքերը, ծակերը կամ արտահոսքը, որոնք կարող են խախտել ապահովիչ կափույրի աշխատանքը:

#### 6.10.4. Ստուգումները

Ի լրումն 6.8.2.4.3-ի համաձայն իրականացվող փորձարկումների, թափոնների վակուումային ցիստեռնները պետք է ենթարկվեն ներքին զննման՝ երեք տարին մեկ անգամ անշարժ եւ հանովի ցիստեռնների դեպքում, ու առնվազն երկուսուկես տարին մեկ անգամ՝ ցիստեռն-կոնտեյներների եւ հանովի թափք-ցիստեռնների դեպքում:

### ԳԼՈՒԽ 6.11

#### **ՍՈՐՈՒՆ ԲԵՌՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԿՈՆՏԵՅՆԵՐՆԵՐԻ ՆԱԽԱԳԾՄԱՆ, ՊԱՏՐԱՍՏՄԱՆ, ՍՏՈՒԳՄԱՆ ԵՎ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ**

##### 6.11.1. (Նախատեսվում է վերապահում)

##### 6.11.2. Կիրառումը եւ ընդհանուր պահանջները

6.11.2.1. Սորուն բեռների համար նախատեսված կոնտեյներները եւ դրանց օժանդակ ու կառուցվածքային սարքավորումները պետք է կառուցված ու պատրաստված լինեն այնպես, որ առանց պարունակության կորստի դիմակայեն բեռնման-բեռնաթափման եւ փոխադրման սովորական պայմաններում առաջացող պարունակության ներքին ճնշմանն ու բեռնվածությանը:

6.11.2.2. Եթե կոնտեյները սարքավորված է բեռնաթափման կափույրով, ապա այդ կափույրը պետք է հնարավոր լինի ամուր պահել փակ վիճակում, եւ

ամբողջ բեռնաթափման համակարգը պետք է պատշաճ կերպով պաշտպանված լինի վնասվածքներից: Լծակային փականներով կափույրները պետք է պաշտպանվեն պատահական բացվելուց, եւ դրա բաց կամ փակ դիրքը պետք է հստակ նշված լինի:

6.11.2.3. Սորուն բեռների համար նախատեսված կոնտեյներների տեսակները նշելու համար ծածկագիրը

Ստորեւ բերված աղյուսակում նշված են այն ծածկագրերը, որոնք պետք է օգտագործվեն՝ նշելու համար սորուն բեռների համար նախատեսված կոնտեյներների տեսակները.

<b>Սորուն բեռների համար նախատեսված կոնտեյներների տեսակը</b>	<b>Ծածկագիրը</b>
Բրեզենտից ծածկով սորուն բեռների համար նախատեսված կոնտեյներ	BK1
Սորուն բեռների համար նախատեսված փակ կոնտեյներ	BK2
Սորուն բեռների համար նախատեսված փափուկ կոնտեյներ	BK3

6.11.2.4. Հաշվի առնելու համար գիտատեխնիկական առաջընթացի նվաճումները՝ իրավասու մարմինը կարող է դիտարկել այլընտրանքային միջոցների կիրառման հնարավորությունը, որը կապահովի առնվազն համարժեք մակարդակի անվտանգություն՝ ի համեմատություն այն մակարդակի, որն ապահովվում է սույն գլխի պահանջների համաձայն:

6.11.3. Որպես BK1 կամ BK2 սորուն բեռների համար նախատեսված կոնտեյներներ օգտագործվող՝ ԱԿԿ-ի դրույթներին համապատասխանող կոնտեյներների նախագծման, պատրաստման, ստուգման եւ փորձարկման վերաբերյալ պահանջները

6.11.3.1. Նախագծման եւ կառուցման վերաբերյալ պահանջները

6.11.3.1.1. Սույն ենթաբաժնի նախագծման եւ կառուցման վերաբերյալ ընդհանուր պահանջները համարվում են կատարված այն դեպքում, եթե սորուն բեռների համար նախատեսված կոնտեյները բավարարում է «1-ին սերիայի բեռնատար կոնտեյներներ. Տեխնիկական պայմանները եւ փորձարկումները. 4-րդ մաս՝ պինդ սորուն բեռների համար նախատեսված՝ ճնշման տակ չաշխատող կոնտեյներներ» ISO 1496-4:1991 ստանդարտի պահանջները, եւ եթե կոնտեյներն անթափանց է:

6.11.3.1.2. «1-ին սերիայի բեռնատար կոնտեյներներ. Տեխնիկական պայմանները եւ փորձարկումները. Մաս 1՝ ընդհանուր նշանակության

ունիվերսալ կոնտեյներներ» ISO 1496-1:1990 ստանդարտի համաձայն կառուցված եւ փորձարկված կոնտեյներները պետք է սարքավորված լինեն շահագործման սարքավորմամբ, որը, ներառելով կոնտեյների հետ իր միացումը, նախատեսված է ճակատային պատերի ամրացման եւ անհրաժեշտության դեպքում երկայնակի ուղղությամբ ամրության բարձրացման համար փորձարկումներին վերաբերող՝ ISO 1496-4:1991 ստանդարտի համապատասխան պահանջների կատարման նպատակով:

- 6.11.3.1.3. Սորուն բեռների համար նախատեսված կոնտեյներները պետք է անթափանց լինեն: Եթե սորուն նյութերի համար նախատեսված կոնտեյների անթափանցիկությունն ապահովելու նպատակով միջադիր է օգտագործվում, ապա այն պետք է պատրաստված լինի համապատասխան նյութից: Միջադիրի նյութի ամրությունը եւ դրա կառուցվածքը պետք է համապատասխանեն կոնտեյների տարողությանը եւ վերջինիս ըստ նշանակության օգտագործմանը: Միջադիրի միացումները եւ կափույրները պետք է դիմակայեն ճնշմանն ու դինամիկ ներգործություններին, որոնք կարող են առաջանալ բեռնման-բեռնաթափման եւ փոխադրման սովորական պայմաններում: Սորուն բեռների համար օդափոխող կոնտեյներների դեպքում միջադիրը չպետք է խոչընդոտի օդափոխիչ սարքերի աշխատանքը:
- 6.11.3.1.4. Շուռ տալու միջոցով դատարկվող սորուն բեռների համար շահագործման սարքավորումը պետք է կարողանա պահել շուռ տրված դիրքում լցված ընդհանուր զանգվածը:
- 6.11.3.1.5. Ցանկացած հանովի կափարիչ կամ ցանկացած կողմնային կամ ճակատային պատ կամ գազաթի սեկցիա պետք է սարքավորված լինի ապահովիչ սարքեր ունեցող փակիչ սարքերով, որոնք գետնի մակարդակին գտնվող անձին ցույց կտան «փակ» դիրքը:
- 6.11.3.2. Օժանդակ սարքավորումները
  - 6.11.3.2.1. Լցավորման եւ բեռնաթափման համար սարքերը պետք է այնպես կառուցված եւ տեղակայված լինեն, որ դրանք պաշտպանված լինեն փոխադրման եւ բեռնման-բեռնաթափման ընթացքում պայթելու կամ վնասվելու վտանգից: Լցավորման եւ բեռնաթափման համար սարքերը պետք է պաշտպանված լինեն պատահական բացվելուց: «Բաց» եւ «փակ» դիրքերն ու փակելու ուղղությունները պետք է հստակ նշված լինեն:
  - 6.11.3.2.2. Բացվածքների խցվածքները պետք է այնպես սարքավորված լինեն, որ բացառվի սորուն բեռների համար նախատեսված կոնտեյներների շահագործման, լցավորման եւ դատարկման արդյունքում դրանց վնասվելու հավանականությունը:



6.11.3.2.3. Եթե անհրաժեշտ է օդափոխում, ապա սորուն բեռների համար նախատեսված կոնտեյներները պետք է սարքավորված լինեն բնական կոնվեկցիայի միջոցով օդափոխանակությունն ապահովող օդափոխիչ սարքերով, օրինակ՝ բացվածքների օգնությամբ կամ ակտիվ էլեմենտների, օրինակ՝ օդափոխիչների օգտագործման միջոցով: Օդափոխության համակարգը պետք է այնպես հաշվարկված լինի, որ կանխարգելի կոնտեյներում ցանկացած պահին բացասական ճնշումը: Դյուրավառ նյութերի կամ դյուրավառ գազեր կամ գոլորշիներ առաջացնող նյութերի փոխադրման համար նախատեսվող՝ սորուն բեռների համար նախատեսված կոնտեյներների օդափոխիչ համակարգի էլեմենտները պետք է կառուցված լինեն այնպես, որ դրանք այրման աղբյուր չհանդիսանան:

6.11.3.3. Ստուգումները եւ փորձարկումները

6.11.3.3.1. Սույն բաժնի պահանջների համաձայն՝ որպես սորուն բեռների համար նախատեսված կոնտեյներներ օգտագործվող, պահվող կամ հաստատված կոնտեյներները պետք է փորձարկվեն եւ հաստատվեն ԱԿԿ-ի համաձայն:

6.11.3.3.2. Որպես սորուն բեռների համար նախատեսված կոնտեյներներ օգտագործվող եւ դասակարգված կոնտեյներները պետք է, ԱԿԿ-ի համաձայն, ենթարկվեն պարբերական ստուգումների:

6.11.3.4. Մակնշումը

6.11.3.4.1. Որպես սորուն բեռների համար նախատեսված կոնտեյներներ օգտագործվող կոնտեյներները պետք է ունենան մակնշում՝ ԱԿԿ-ի համաձայն, անվտանգության պայմաններով թույլտվության մասին ցուցանակի տեսքով:

6.11.4. ԱԿԿ-ի դրույթներին համապատասխանող կոնտեյներներից բացի BK1 կամ BK2 սորուն բեռների համար նախատեսված կոնտեյներների նախագծման, պատրաստման եւ հաստատման վերաբերյալ պահանջները

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** Երբ սույն բաժնի դրույթներին համապատասխանող կոնտեյներներն օգտագործվում են սորուն պինդ նյութերի փոխադրման համար, ապա տրանսպորտային փաստաթղթում պետք է կատարվի հետևյալ գրառումը՝

«Իրավասու մարմնի կողմից հաստատված՝ սորուն բեռների համար նախատեսված կոնտեյներ BK(x) ...»: (տե՛ս 5.4.1.1.17)»:

6.11.4.1. Սույն բաժնով նախատեսվող սորուն բեռների համար նախատեսված

կոնտեյներներ են բունկերները, սորուն բեռների համար նախատեսված ծովային կոնտեյներները, սորուն բեռների փոխադրման համար բունկերները, հանովի թափքերը, ակոսաձեւ կոնտեյներները, անիվների վրա կոնտեյներները եւ փոխադրամիջոցի բեռնախցիկները:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** *Սորուն բեռների համար նախատեսված այս կոնտեյներները նաեւ ներառում են 7.1.3-ում նշված ԵՄՄ 591, 592 եւ 592-2 - 592-4 հուշաթերթերի դրույթներին համապատասխանող ու ԱԿԿ դրույթներին չհամապատասխանող կոնտեյներներ:*

- 6.11.4.2. Սորուն բեռների համար նախատեսված այս կոնտեյներները պետք է այնպես նախագծված եւ կառուցված լինեն, որպեսզի դրանք բավականաչափ ամուր լինեն եւ դիմակայեն այն հարվածներին եւ բեռնվածություններին, որոնք սովորաբար առաջանում են փոխադրման ընթացքում, ինչպես նաեւ համապատասխան դեպքում տրանսպորտի մեկ տեսակից մյուս տեսակ փոխադրելու ժամանակ:
- 6.11.4.3. (Նախատեսվում է վերապահում)
- 6.11.4.4. Սորուն բեռների համար նախատեսված այս կոնտեյներները պետք է հաստատված լինեն իրավասու մարմնի կողմից, եւ հաստատումը պետք է ներառի 6.11.2.3-ի համաձայն սորուն բեռների համար նախատեսված կոնտեյներների տեսակների նշման համար ծածկագրերը, ինչպես նաեւ ստուգումների եւ փորձարկումների վերաբերյալ համապատասխան պահանջները:
- 6.11.4.5. Եթե վտանգավոր բեռները պահելու համար անհրաժեշտ է օգտագործել միջադիր, ապա միջադիրը պետք է բավարարի 6.11.3.1.3-ի դրույթները:
- 6.11.5. BK3 սորուն բեռների համար նախատեսված փափուկ կոնտեյներների նախագծման, պատրաստման եւ հաստատման վերաբերյալ պահանջները
  - 6.11.5.1. Նախագծման եւ պատրաստման վերաբերյալ պահանջները
    - 6.11.5.1.1. Սորուն բեռների համար նախատեսված փափուկ կոնտեյներները պետք է լինեն անթափանցելի:
    - 6.11.5.1.2. Սորուն բեռների համար նախատեսված փափուկ կոնտեյներները պետք է լինեն լրիվ փակ՝ պարունակության թափվելը կանխարգելելու համար:
    - 6.11.5.1.3. Սորուն բեռների համար նախատեսված փափուկ կոնտեյներները պետք է լինեն անջրանցիկ:

- 6.11.5.1.4. Վտանգավոր բեռների հետ անմիջական շփման մեջ գտնվող սորուն բեռների համար նախատեսված փափուկ կոնտեյներների մասերը՝
- ա) չպետք է ենթարկվեն այդ վտանգավոր բեռների ներգործությանը եւ զգալի չափով կորցնեն իրենց ամրությունը նման ներգործության հետեւանքով.
  - բ) չպետք է առաջացնեն վտանգավոր ազդեցություն, օրինակ՝ նպաստեն ռեակցիայի առաջացմանը կամ ռեակցիայի մեջ մտնեն վտանգավոր բեռների հետ.
  - գ) չպետք է թույլ տան վտանգավոր բեռների ներթափանցումը, ինչը կարող է վտանգ առաջացնել փոխադրման նորմալ պայմաններում:
- 6.11.5.2. Օժանդակ սարքավորումները եւ բեռնման եւ բեռնաթափման սարքերը
- 6.11.5.2.1. Լցավորման եւ դատարկման սարքերը պետք է պատրաստվեն այնպես, որ պաշտպանված լինեն վնասվածքներից փոխադրման եւ բեռնման եւ բեռնաթափման ժամանակ: Լցավորման եւ դատարկման սարքերը պետք է պաշտպանված լինեն պատահական բացվելուց:
- 6.11.5.2.2. Սորուն բեռների համար նախատեսված փափուկ կոնտեյների ճոպանները, եթե ամրացված են, պետք է դիմակայեն ճնշմանը եւ դինամիկ ուժերին, որոնք կարող են առաջանալ բեռնման եւ բեռնաթափման կամ փոխադրման կանոնավոր պայմաններում:
- 6.11.5.2.3. Բեռնման եւ բեռնաթափման սարքերը պետք է լինեն բավականաչափ ամուր՝ կրկնակի օգտագործմանը դիմակայելու համար:
- 6.11.5.3. Ստուգումը եւ փորձարկումը
- 6.11.5.3.1. Յուրաքանչյուր սորուն բեռների համար նախատեսված փափուկ կոնտեյների կառուցվածքի տեսակ պետք է փորձարկվի 6.11.5-ում սահմանված կարգով՝ մակնշումը թույլատրած իրավասու մարմնի կողմից սահմանված ընթացակարգերին համապատասխան, եւ պետք է հաստատվի իրավասու մարմնի կողմից:
- 6.11.5.3.2. Փորձարկումները պետք է նաեւ կրկնվեն կառուցվածքի տեսակի յուրաքանչյուր փոփոխությունից հետո, որի արդյունքում փոխվում է սորուն բեռների համար նախատեսված փափուկ կոնտեյների կառուցվածքը, նյութը, պատրաստման եղանակը:
- 6.11.5.3.3. Փորձարկումները պետք է իրականացվեն այնպես ինչպես դրանք իրականացվում են փոխադրման համար սորուն բեռների համար նախատեսված կոնտեյներների դեպքում: Սորուն բեռների համար նախատեսված կոնտեյներները պետք է լցավորվեն իրենց

օգտագործման համար թույլատրելի առավելագույն քաշի չափով, իսկ պարունակությունը պետք է հավասարաչափ բաշխվի: Այն նյութերը, որոնք փոխադրվելու են սորուն բեռների համար նախատեսված կոնտեյներներում, կարող են փոխարինվել այլ նյութերով՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այդ փոխարինումը փորձարկումների արդյունքները կարող է դարձնել անիրատեսական: Եթե այլ նյութ է օգտագործվում, ապա այն պետք է ունենա միեւնույն ֆիզիկական հատկությունները (զանգվածը, մասնիկների չափսը եւ այլն), ինչ այն նյութը, որը փոխադրվելու է: Սորուն բեռների համար նախատեսված կոնտեյներների պահանջվող ընդհանուր զանգվածն ապահովելու նպատակով թույլատրվում է հավելումների օգտագործում, ինչպես օրինակ՝ կապարե կոտորուքներով պարկեր՝ պայմանով, որ դրանք այնպես տեղադրված լինեն, որ դրանց օգտագործումը չանդրադառնա փորձարկումների արդյունքների վրա:

6.11.5.3.4. Սորուն բեռների համար նախատեսված կոնտեյներները պետք է արտադրվեն եւ փորձարկվեն որակի ապահովման ծրագրի համաձայն, որը բավարարում է իրավասու մարմնի պահանջներն այն մասով, որ սորուն բեռների համար նախատեսված արտադրված յուրաքանչյուր կոնտեյներ բավարարի սույն գլխի պահանջները:

6.11.5.3.5. Անկման փորձարկումը

6.11.5.3.5.1. Կիրառելիությունը

Սորուն բեռների համար նախատեսված կոնտեյներների բոլոր տեսակները, որպես կառուցվածքի տեսակի փորձարկում:

6.11.5.3.5.2. Փորձարկման նախապատրաստումը

Սորուն բեռների համար նախատեսված կոնտեյները պետք է լցված լինի իր օգտագործման համար թույլատրելի առավելագույն անզուտ քաշի չափով:

6.11.5.3.5.3. Փորձարկման մեթոդը

Սորուն բեռների համար նախատեսված կոնտեյները պետք է վայր նետվի ոչ առաձգական եւ հորիզոնական փորձարկման հարթակի վրա: Փորձարկման հարթակը պետք է լինի՝

ա) ամբողջական եւ բավականաչափ զանգվածային՝ անշարժ մնալու համար.

բ) հարթ եւ առանց մակերեսային տեղային թերությունների, որոնք կարող են ազդել փորձարկումների արդյունքների վրա.

գ) բավականաչափ կոշտ, որպեսզի չդեֆորմացվի փորձարկումների անցկացման ժամանակ եւ չվնասվի փորձարկումների ընթացքում, եւ

դ) բավականաչափ մեծ մակերեսով, որպեսզի փորձարկվող փաթեթն ամբողջությամբ ընկնի դրա մակերեսի վրա:

Անկումից հետո սորուն բեռների համար նախատեսված կոնտեյները պետք է վերականգնվի ուղղահայաց դիրքով՝ դիտարկման համար:

6.11.5.3.5.4. Անկման բարձրությունը պետք է լինի՝

Փաթեթավորման խումբ III՝ 0,8 մ:

6.11.5.3.5.5. Փորձարկումներն անցնելու չափորոշիչները

ա) Չպետք է լինի պարունակության կորուստ: Հարվածի դեպքում փականից (փականներից) նյութի աննշան ներթափանցումը չի համարվում սորուն բեռների համար նախատեսված կոնտեյների թերություն՝ պայմանով, որ կոնտեյներն իր ուղղահայաց դիրքում վերականգնելուց հետո արտահոսք տեղի չի ունենում.

բ) չպետք է լինի այնպիսի վնասվածք, որը սորուն բեռների համար նախատեսված կոնտեյները կդարձնի վթարային թափոնների հավաքման կամ հեռացման նպատակներով փոխադրման համար ոչ անվտանգ:

6.11.5.3.6. Գազաթի հատվածից բարձրացման փորձարկումը

6.11.5.3.6.1. Կիրառելիությունը

Սորուն բեռների համար նախատեսված կոնտեյներների բոլոր տեսակները որպես կառուցվածքի տեսակի փորձարկում:

6.11.5.3.6.2. Փորձարկման նախապատրաստումը

Սորուն բեռների համար նախատեսված կոնտեյները պետք է լցված լինի 6 անգամ ավելի, քան իր օգտագործման համար թույլատրելի առավելագույն զուտ քաշն է՝ հավասարաչափ բաշխելով բեռնվածությունը:

6.11.5.3.6.3. Փորձարկման մեթոդը

Սորուն բեռների համար նախատեսված կոնտեյներները պետք է բարձրացվեն դրանց համար նախատեսված եղանակով մինչև հատակից պոկվելու պահը եւ այդ դիրքում պահվեն հինգ րոպե:

6.11.5.3.6.4. Փորձարկումներն անցնելու չափորոշիչները

Չպետք է լինի այնպիսի վնասվածք, որը սորուն բեռների համար նախատեսված կոնտեյները կդարձնի վթարային թափոնների հավաքման կամ հեռացման նպատակներով փոխադրման համար ոչ անվտանգ, չպետք է լինի պարունակության կորուստ:

6.11.5.3.7. Շրջվելու փորձարկումը

#### 6.11.5.3.7.1. Կիրառելիությունը

Սորուն բեռների համար նախատեսված կոնտեյներների բոլոր տեսակները, որպես կառուցվածքի տեսակի փորձարկում:

#### 6.11.5.3.7.2. Փորձարկման նախապատրաստումը

Սորուն բեռների համար նախատեսված կոնտեյները պետք է լցված լինի իր օգտագործման համար թույլատրելի առավելագույն անզուտ քաշի չափով:

#### 6.11.5.3.7.3. Փորձարկման մեթոդը

Սորուն բեռների համար նախատեսված կոնտեյները պետք է շրջվի իր գագաթի հատվածի ցանկացած մասով՝ բարձրացնելով անկման եզրից ամենահեռու գտնվող կողմը կոշտ, ոչ առաձգական եւ հորիզոնական փորձարկման հարթակի վրա: Փորձարկման հարթակը պետք է լինի՝

ա) ամբողջական եւ բավականաչափ զանգվածային՝ անշարժ մնալու համար.

բ) հարթ եւ առանց մակերեսային տեղային թերությունների, որոնք կարող են ազդել փորձարկումների արդյունքների վրա.

գ) բավականաչափ կոշտ, որպեսզի չդեֆորմացվի փորձարկումների անցկացման ժամանակ եւ չվնասվի փորձարկումների ընթացքում, եւ

դ) բավականաչափ մեծ մակերեսով, որպեսզի փորձարկվող փաթեթն ամբողջությամբ ընկնի դրա մակերեսի վրա:

#### 6.11.5.3.7.4. Բոլոր սորուն բեռների համար նախատեսված կոնտեյներների շրջվելու բարձրությունը սահմանվում է հետևյալով՝

Փաթեթավորման խումբ III՝ 0,8 մ

#### 6.11.5.3.7.5. Փորձարկումներն անցնելու չափորոշիչները

Չպետք է լինի պարունակության կորուստ: Հարվածի դեպքում փականներից նյութի աննշան ներթափանցումը չի համարվում սորուն բեռների համար նախատեսված կոնտեյների թերություն՝ պայմանով, որ հետագայում արտահոսք տեղի չունենա:

#### 6.11.5.3.8. Ուղղման փորձարկումը

##### 6.11.5.3.8.1. Կիրառելիությունը

Որպես կառուցվածքի տեսակի փորձարկում գագաթի կամ կողային հատվածներից բարձրացնելու համար նախատեսված բոլոր տեսակի սորուն բեռների համար նախատեսված կոնտեյներների դեպքում:

#### 6.11.5.3.8.2. Փորձարկման նախապատրաստումը

Սորուն բեռների համար նախատեսված կոնտեյները պետք է լցված լինի իր տարողության 95%-ից ոչ պակաս չափով եւ մինչեւ իր առավելագույն թույլատրելի անզուտ քաշը:

#### 6.11.5.3.8.3. Փորձարկման մեթոդը

Կողային հատվածի վրա գտնվող սորուն բեռների համար նախատեսված կոնտեյները պետք է բարձրացվի առնվազն 0,1 մ/վ արագությամբ մինչեւ ուղղահայաց դիրքին հասնելը՝ հատակից պոկելով ոչ ավելի, քան ամբարձիչ սարքերի կեսի օգնությամբ:

#### 6.11.5.3.8.4. Փորձարկումներն անցնելու չափորոշիչները

Չպետք է լինի այնպիսի վնասվածք, որը սորուն բեռների համար նախատեսված կոնտեյները կամ իր ամբարձիչ սարքը կդարձնի վթարային փոխադրման կամ բեռնման եւ բեռնաթափման համար ոչ անվտանգ:

#### 6.11.5.3.9. Պատռման փորձարկումը

##### 6.11.5.3.9.1. Կիրառելիությունը

Սորուն բեռների համար նախատեսված կոնտեյներների բոլոր տեսակները որպես կառուցվածքի տեսակի փորձարկում:

##### 6.11.5.3.9.2. Փորձարկման նախապատրաստումը

Սորուն բեռների համար նախատեսված կոնտեյները պետք է լցված լինի իր օգտագործման համար թույլատրելի առավելագույն անզուտ քաշի չափով:

##### 6.11.5.3.9.3. Փորձարկման մեթոդը

Գետնի վրա դրված սորուն բեռների համար նախատեսված կոնտեյներների դեպքում սորուն բեռների համար նախատեսված կոնտեյների պատի առավել լայն կողմին ամբողջությամբ բոլոր շերտերը ներթափանցող 300 մմ երկարությամբ կտրվածք է արվում: Կտրվածքն արվում է սորուն բեռների համար նախատեսված կոնտեյների հիմնական առանցքից 45° անկյան տակ, պարունակության ստորին մակերեսի եւ գագաթի մակարդակի միջեւ ընկած տարածության կեսի չափով: Այնուհետեւ սորուն բեռների համար նախատեսված կոնտեյները ենթարկվում է վերադիր հավասարաչափ բաշխված բեռնվածքի, որը երկու անգամ գերազանցում է առավելագույն թույլատրելի անզուտ քաշը: Բեռնվածքը պահպանվում է առնվազն տասնհինգ րոպե: Այն սորուն բեռների համար նախատեսված կոնտեյները, որը նախատեսված է գագաթի կամ կողային հատվածից բարձրացվելու համար, վերադիր

բեռնվածքը հանելուց հետո պետք է հատակից բարձրացվի եւ այդ դիրքում պահվի տասնհինգ րոպե:

6.11.5.3.9.4. Փորձարկումներն անցնելու չափորոշիչները

Կտրվածքը չպետք է տարածվի դրա նախնական երկարության 25%-ից ավելի չափով:

6.11.5.3.10. Դարսակման փորձարկումը

6.11.5.3.10.1. Կիրառելիությունը

Սորուն բեռների համար նախատեսված կոնտեյնրների բոլոր տեսակները որպես կառուցվածքի տեսակի փորձարկում:

6.11.5.3.10.2. Փորձարկման նախապատրաստումը

Սորուն բեռների համար նախատեսված կոնտեյնրը պետք է լցված լինի իր օգտագործման համար թույլատրելի առավելագույն անզուտ քաշի չափով:

6.11.5.3.10.3. Փորձարկման մեթոդը

Սորուն բեռների համար նախատեսված կոնտեյնրը պետք է ենթարկվի վերին մակերեսի վրա գործադրվող ուժի, որը 4 անգամ ավելի է, քան 24 ժամվա համար նախատեսված կառուցվածքի բեռնատարողությունը:

6.11.5.3.10.4. Փորձարկումներն անցնելու չափորոշիչները

Փորձարկման ժամանակ կամ բեռնվածքը հեռացնելուց հետո չպետք է լինի պարունակության կորուստ:

6.11.5.4. Փորձարկումների արձանագրությունը

6.11.5.4.1. Պետք է կազմվի եւ փաթեթվածքն օգտագործողներին ներկայացվի փորձարկումների արձանագրություն, որը պարունակում է առնվազն հետեւյալ տեղեկությունները՝

1. Փորձարկումներն իրականացրած կազմակերպության անվանումը եւ հասցեն.
2. Հայտատուի անունը եւ հասցեն (հարկ եղած դեպքում).
3. Փորձարկումների արձանագրության անհատական համարը.
4. Փորձարկումների արձանագրության կազմման ամսաթիվը.
5. Սորուն բեռների համար նախատեսված փափուկ կոնտեյնր արտադրողը.




6. Սորուն բեռների համար նախատեսված փափուկ կոնտեյնների կառուցվածքի տեսակի նկարագրությունը (օրինակ՝ չափսերը, նյութերը, փականները, հաստությունը եւ այլն) եւ (կամ) նկարը (նկարները)։
7. Առավելագույն տարողությունը/ առավելագույն թույլատրելի անզուտ քաշը։
8. Փորձարկումների ժամանակ օգտագործված պարունակության բնութագրերը, օրինակ՝ պինդ նյութերի համար մասնիկների չափսերը։
9. Փորձարկումների նկարագրությունը եւ արդյունքները։
10. Փորձարկումների արձանագրությունը պետք է ստորագրվի արձանագրությունը ստորագրած անձի ազգանվան եւ պաշտոնի նշմամբ։

6.11.5.4.2. Փորձարկումների արձանագրությունում պետք է լինի հայտարարություն այն մասին, որ սորուն բեռների համար նախատեսված փափուկ կոնտեյները, որը պատրաստվել է այնպես, ինչպես կպատրաստվեր փոխադրման համար, փորձարկվել է սույն բաժնին համապատասխան պահանջների համաձայն, եւ որ պաշտպանիչ այլ մեթոդների կամ բաղադրիչների կիրառման դեպքում արձանագրությունը կարող է դառնալ անվավեր։ Փորձարկումների արձանագրության պատճենը պետք է փոխանցվի իրավասու մարմնին։

6.11.5.5. Մակնշումը

6.11.5.5.1. Յուրաքանչյուր սորուն բեռների համար նախատեսված փափուկ կոնտեյներ, որն արտադրվել եւ նախատեսվել է «ԱԴԲ» համաձայնագրին համապատասխան օգտագործման համար, պետք է ունենա մակնշումներ, որոնք պետք է լինեն չջնջվող, ընթեռնելի եւ տեղադրվեն այնպես, որ լինեն լավ տեսանելի։ Տառերը, թվերը եւ խորհրդանշանները պետք է ունենան առնվազն 24 մմ բարձրություն, իսկ մակնշումը պետք է ցուցադրի՝

ա) Միավորված ազգերի կազմակերպության փաթեթվածքների խորհրդանշանը ։

Այս խորհրդանշանը չպետք է օգտագործվի որեւէ այլ նպատակով, բացի նրանից, որ հաստատի, որ փաթեթվածքը, սորուն բեռների համար նախատեսված փափուկ կոնտեյները, շարժական ցիստեռնը կամ ԳԲՏԿ-ն համապատասխանում է 6.1, 6.2, 6.3, 6.5, 6.6, 6.7 կամ 6.11 գլուխների համապատասխան պահանջներին։

բ) BK3 տեսակը մատնանշող ծածկագիրը։

զ) հաստատված կառուցվածքի տեսակով փաթեթավորման խումբը (խմբերը) նշող մեծատառ՝

«Z»-ը՝ միայն փաթեթավորման III խմբի դեպքում.

դ) արտադրության ամիսը եւ տարին (վերջին երկու թվերը).

ե) նշանի գետեղումը թույլատրող պետությունը՝ նշված միջազգային ճանապարհային երթեւեկությունում ներգրավված փոխադրամիջոցների համար նախատեսված տարբերանշանով<sup>1</sup>.

զ) արտադրողի անվանումը կամ խորհրդանշանը եւ սորուն բեռների համար նախատեսված փափուկ կոնտեյների նույնականացման այլ նշան, ինչպես սահմանված է իրավասու մարմնի կողմից.

է) դարսակման փորձարկման բեռնվածությունը՝ կիլոգրամներով.

ը) թույլատրելի առավելագույն անզուտ քաշը՝ կիլոգրամներով:

Մակնշումը պետք է կատարվի (ա)-(ը) ենթակետերի հերթականությամբ: Այս ենթակետերով պահանջվող յուրաքանչյուր մակնշում պետք է հստակ առանձնացված լինի մյուսից, օրինակ, թեք գծով կամ բացատով եւ այնպես կատարվի, որ թույլ տա մակնշման տարբեր բաղադրիչների ճշգրիտ նույնականացումը:

#### 6.11.5.5.2. Մակնշման օրինակ



BK3/Z/11 09

RUS/NTT/MK-14-10

56000/14000:

<sup>1</sup> Միջազգային երթեւեկության մեջ գործվող փոխադրամիջոցների եւ դրանց կցորդների՝ գրանցման պեղության տարբերանշաններ, օրինակ՝ 1949 թվականի «Ճանապարհային երթեւեկության մասին» Ժնեւի կոնվենցիային կամ 1968 թվականի «Ճանապարհային երթեւեկության մասին» Վիեննայի կոնվենցիային համապատասխան:

## ԳԼՈՒԽ 6.12

### **ՑԻՍՏԵՌՆՆԵՐԻ, ՍՈՐՈՒՆ ԲԵՈՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԿՈՆՏԵՅՆԵՐՆԵՐԻ, ՊԱՅԹՈՒՑԻԿՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՇԱՐԺԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ՝ (ՊԱՇՄ-ներ) ՊԱՅԹՈՒՑԻԿ ՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀԱՏՈՒԿ ԽՑԻԿՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ, ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ, ՏԵՍԱԿԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ, ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ, ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՄԱԿՆՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ**

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1.** Շարժական ցիստեռնների համար տե՛ս 6.7 գլուխը, մետաղական նյութերից պատրաստված կորպուսներով անշարժ ցիստեռնների (ավրոցցիստեռնների), հանովի ցիստեռնների, ցիստեռն-կոնտեյներների եւ հանովի թափք-ցիստեռնների համար տե՛ս 6.8 գլուխը, վոլոկնիտից ցիստեռնների համար տե՛ս 6.9 գլուխը, թափոնների վակուումային ցիստեռնների համար տե՛ս 6.10 գլուխը, սորուն բեռների համար նախատեսված կոնտեյներների համար տես 6.11 գլուխը:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2.** Սույն գլուխը կիրառվում է այն անշարժ ցիստեռնների, հանովի ցիստեռնների, ցիստեռն-կոնտեյներների, հանովի թափք-ցիստեռնների նկատմամբ, որոնք չեն համապատասխանում 1-ին ծանոթագրությունում նշված գլխի բոլոր պահանջներին, ինչպես նաեւ սորուն բեռների համար նախատեսված կոնտեյներների եւ պայթուցիկ նյութերի համար նախատեսված հատուկ խցիկների նկատմամբ:

#### 6.12.1. Գործողության ոլորտը

Սույն գլխի պահանջները կիրառվում են ՊԱՇՄ-ների՝ վտանգավոր բեռների փոխադրման համար նախատեսված հատուկ խցիկների, ցիստեռնների եւ սորուն բեռների համար նախատեսված կոնտեյներների նկատմամբ:

#### 6.12.2. Ընդհանուր դրույթները

6.12.2.1. Անկախ անշարժ ցիստեռնների համար 1.2.1-ով սահմանված նվազագույն տարողությունից՝ ցիստեռնները պետք է բավարարեն սույն գլխի հատուկ դրույթների համաձայն փոփոխված 6.8 գլխի պահանջները:

6.12.2.2. ՊԱՇՄ-ներում վտանգավոր բեռների փոխադրման համար նախատեսվող սորուն բեռների համար նախատեսված կոնտեյներները պետք է համապատասխանեն BK2 տեսակի սորուն բեռների համար նախատեսված կոնտեյներների վերաբերյալ պահանջներին:

6.12.2.3. Եթե առանձին ցիստեռնը կամ սորուն բեռների համար

նախատեսված առանձին կոնտեյները պարունակում է մեկ նյութից ավելի նյութեր, ապա յուրաքանչյուր նյութ պետք է մյուս նյութերից առանձնացվի առնվազն երկու պատերով, որոնց միջև առկա պետք է լինի չոր օդային տարածություն:

6.12.3. Ցիստեռները

6.12.3.1. 1000 լիտր կամ ավելի տարողությամբ ցիստեռները

6.12.3.1.1. Այդ ցիստեռները պետք է համապատասխանեն 6.8.2-ի պահանջներին:

6.12.3.1.2. ՄԱԿ-ի նշագրման 1942 եւ 3375 համարների դեպքում ցիստեռը պետք է համապատասխանի 4.3 եւ 6.8 գլուխների՝ շնչող սարքերի վերաբերյալ պահանջներին, եւ բացի այդ, դրանք պետք է ունենան պոկովի թաղանթ կամ այլ՝ օգտագործող երկրի իրավասու մարմնի կողմից հաստատված՝ վթարային իրավիճակներում ճնշումը նվազեցնելու համար նախատեսված այլ համապատասխան միջոցներ:

6.12.3.1.3. Ոչ շրջանաձեւ լայնակի հատմամբ, ինչպես օրինակ՝ ուղղանկյուն կամ էլիպսաձեւ կորպուսների դեպքում, որոնք չեն կարող հաշվարկվել 6.8.2.1.4-ի պահանջների եւ դրանում նշված ստանդարտների կամ տեխնիկական կանոնների համաձայն, թույլատրելի լարվածությանը դիմակայելու հնարավորությունը պետք է համապատասխան կերպով հաստատվի իրավասու մարմնի կողմից նշված ճնշափորձարկման կատարման միջոցով:

Այդ ցիստեռները պետք է համապատասխանեն 6.8.2.1-ի՝ բացառությամբ 6.8.2.1.3, 6.8.2.1.4 եւ 6.8.2.1.13 - 6.8.2.1.22-ի պահանջներին:

Այդ կորպուսների պատերի հաստությունը չպետք է լինի ստորեւ բերված աղյուսակում նշված արժեքներից ցածր.

Նյութեր	Նվազագույն հաստություն
Ակուստիկ չժանգոտվող պողպատ	2,5 մմ
Այլ պողպատներ	3 մմ
Ալյումինե համաձուլվածքներ	4 մմ
99,80% մաքրության ալյումին	6 մմ

Պետք է ապահովվի կողային հարվածների կամ շուռ գալու հետեւանքով առաջացող վնասվածքներից ցիստեռնի պաշտպանությունը: Պաշտպանությունը պետք է ապահովվի 6.8.2.1.20-ի համաձայն, կամ էլ իրավասու մարմինը պետք է հաստատի պաշտպանության այլընտրանքային միջոցները:

- 6.12.3.1.4. Շեղում կատարելով 6.8.2.5.2-ի պահանջներից՝ ցիստեռնները կարող են չմակնշվել ցիստեռնի ծածկագրով եւ համապատասխան դեպքում՝ հատուկ դրույթներով:
- 6.12.3.2. 1 000 լիտրից պակաս տարողությամբ ցիստեռնները
- 6.12.3.2.1. Այդ ցիստեռնների պատրաստման ժամանակ պետք է բավարարվեն 6.8.2.1-ի՝ բացառությամբ 6.8.2.1.3, 6.8.2.1.4, 6.8.2.1.6, 6.8.2.1.10 - 6.8.2.1.23 եւ 6.8.2.1.28-ի պահանջները:
- 6.12.3.2.2. Այդ ցիստեռնների սարքավորումները պետք է համապատասխանեն 6.8.2.2.1-ի պահանջներին: ՄԱԿ-ի նշագրման 1942 եւ 3375 համարների դեպքում ցիստեռնը պետք է համապատասխանի 4.3 եւ 6.8 գլուխների՝ շնչող սարքերի վերաբերյալ պահանջներին, եւ բացի այդ, դրանք պետք է ունենան պոկովի թաղանթ կամ օգտագործող երկրի իրավասու մարմնի կողմից հաստատված՝ վթարային իրավիճակում ճնշումը նվազեցնելու համար նախատեսված այլ համապատասխան միջոցներ:
- 6.12.3.2.3. Այդ կորպուսների պատերի հաստությունը չպետք է լինի ստորեւ բերված աղյուսակում նշված արժեքներից ցածր.

Նյութեր	Նվազագույն հաստություն
Ակուստիկ չժանգոտվող պողպատ	2,5 մմ
Այլ պողպատներ	3 մմ
Ալյումինե համաձուլվածքներ	4 մմ
99,80% մաքրության ալյումին	6 մմ

- 6.12.3.2.4. Ցիստեռնները կարող են ունենալ առանց ուռուցիկության շառավղի կառուցվածքային էլեմենտներ: Այլընտրանքային ուժեղարար միջոցներ կարող են լինեն կորացված պատերը, ծալքավորված պատերը կամ կողերը: Ցիստեռնի յուրաքանչյուր կողմի վրա զուգահեռ տեղադրված ուժեղարար միջոցների միջեւ հեռավորությունն առնվազն մեկ ուղղությամբ չպետք է 100 անգամից ավելի գերազանցի պատերի հաստության արժեքը:
- 6.12.3.2.5. Եռակցման կարանները պետք է կատարվեն որակյալ կերպով եւ ապահովեն կառուցվածքի առավելագույն հուսալիությունը: Եռակցման աշխատանքները պետք է կատարվեն որակավորված եռակցողների կողմից եռակցման մեթոդների համաձայն, որոնց արդյունավետությունը (ներառյալ հնարավոր ջերմամշակումը) հաստատվել է փորձարկումներով:
- 6.12.3.2.6. 6.8.2.4-ի պահանջները չեն կիրառվում: Սակայն այդ ցիստեռնների սկզբնական եւ պարբերական ստուգումների կատարման համար պատասխանատվությունը դրված է ՊԱՇՄ-ի օգտագործողի կամ

սեփականատիրոջ վրա: Կորպուսները եւ դրանց սարքավորումներն առնվազն յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ ենթարկվում են իրենց արտաքին եւ ներքին վիճակի տեսողական զննման ու անջրանցիկության փորձարկումների, եւ դրանց արդյունքները պետք է բավարարեն իրավասու մարմնի կողմից ներկայացվող պահանջները:

6.12.3.2.7. Տեսակի հաստատմանը վերաբերող 6.8.2.3-ի եւ մակնշմանը վերաբերող 6.8.2.5-ի պահանջները չեն կիրառվում:

6.12.4. Սարքավորման տարրերը

6.12.4.1. Ներքեւից դատարկվող՝ ՄԱԿ-ի նշագրման 1942 եւ 3375 համարների համար նախատեսված ցիստեռնները պետք է ունենան առնվազն երկու փական: Այդ փականներից մեկը կարող է լինել պոմպը՝ արտադրանքի խառնիչը, բեռնաթափման պոմպը կամ հորատիչ մեքենան:

6.12.4.2. Առաջին փականից հետո տեղակայված ցանկացած խողովակատար պետք է պատրաստված լինի հալուն նյութից (այսինքն՝ ռեզինից փողրակ) կամ ունենա հալուն տարրեր:

6.12.4.3. Արտաքին պոմպերի եւ բեռնաթափող կցամասերի (խողովակաճյուղ) վնասվելու դեպքում պարունակության ցանկացած կորստից խուսափելու նպատակով առաջին փականը եւ դրա թամբը պետք է պաշտպանված լինեն արտաքին բեռնվածության ազդեցության ներքո պատռվելու վտանգից կամ պետք է ունենան այնպիսի կառուցվածք, որ կարողանան դիմակայել այդ բեռնվածություններին: Լցավորման եւ դատարկման հարմարանքները (ներառյալ՝ կցաշուրթերը եւ պարուրակավոր խցանները) եւ ապահովիչ թասակները (եթե այդպիսիք կան) պետք է պատահական բացվելուց հուսալի կերպով պաշտպանված լինեն:

6.12.4.4. 6.8.2.2.6-ով նախատեսված՝ ՄԱԿ-ի նշագրման 3375 համարի համար նախատեսված ցիստեռնների շնչող սարքերը կարող են փոխարինվել կրկնակի ճյուղավորումներով: Նման սարքավորումները պետք է պաշտպանված լինեն պոմպերի վտանգից արտաքին բեռնվածությունների ներգործությունների ներքո կամ պետք է ունենան այնպիսի կառուցվածք, որ կարողանան այդ բեռնվածություններին դիմակայել:

6.12.5. Պայթուցիկ նյութերի համար նախատեսված հատուկ խցիկները

Դետոնատորներ եւ (կամ) դետոնատորների հավաքվածքներ եւ «D» համատեղելիության խմբի նյութեր կամ պատրաստվածքներ պարունակող՝ պայթուցիկ նյութերի փաթեթների համար նախատեսված խցիկները պետք է ունենան դրանք միմյանցից

տարանջատող այնպիսի կառուցվածք, որով կբացառվի դետոնատորներից եւ (կամ) դետոնատորների հավաքվածքներից դետոնացիայի փոխանցման վտանգը «D» համատեղելիության խմբի նյութերին կամ պատրաստվածքներին: Տարանջատումը պետք է ապահովվի առանձին բաժինների կիրառման կամ երկու տեսակ պայթուցիկ նյութերից մեկ տեսակը պաշտպանիչ պատյանի համակարգի մեջ տեղադրելու միջոցով: Տարանջատման յուրաքանչյուր մեթոդ պետք է հաստատվի իրավասու մարմնի կողմից: Եթե խցիկների պատրաստման համար օգտագործված է մետաղ, ապա խցիկի ամբողջ ներքին մակերեսը պետք է պատված լինի պատշաճ հրակայունություն ապահովող նյութերով: Պայթուցիկ նյութերի համար նախատեսված խցիկները պետք է տեղադրված լինեն այնպիսի տեղերում, որտեղ դրանք պաշտպանված կլինեն հարվածներից եւ անհարթ մակերեսի վրայով տեղաշարժման դեպքում առաջացող վնասվածքներից, ինչպես նաեւ այլ վտանգավոր բեռների հետ վտանգավոր փոխազդեցությունից եւ փոխադրամիջոցի վրա բռնկման աղբյուրներից, ինչպես օրինակ՝ արտանետման խողովակներ եւ այլն:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** EN 13501-1:2007 + A1:2009 սրանդարտի համաձայն B-s3-d2 դասին դասված նյութերի դեպքում հրակայունության վերաբերյալ պահանջները համարվում են կատարված:

## **ՄԱՍ 7**

**Փոխադրման, բեռնման, բեռնաթափման եւ  
վարվելակարգի վերաբերյալ դրույթները**



## ԳԼՈՒԽ 7.1

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

7.1.1. Վտանգավոր բեռների փոխադրման համար պարտադիր նախապայման է հատուկ տեսակի տրանսպորտային սարքավորումների օգտագործումը՝ համաձայն սույն գլխի եւ փաթեթներով փոխադրման վերաբերյալ 7.2 գլխի դրույթների, խուռնաբեռն փոխադրման վերաբերյալ 7.3 գլխի եւ ցիստեռններով փոխադրման վերաբերյալ 7.4 գլխի դրույթների: Միաժամանակ, անհրաժեշտ է պահպանել բեռնման, բեռնաթափման եւ վարվելակարգի վերաբերյալ 7.5 գլխի դրույթները:

3.2. գլխի Ա աղյուսակի 16-րդ, 17-րդ եւ 18-րդ սյունակներում ներկայացված են սույն մասի այն դրույթները, որոնք կիրառվում են հատուկ վտանգավոր բեռների նկատմամբ:

7.1.2. Ի լրումն սույն մասի դրույթների՝ վտանգավոր բեռների փոխադրման նպատակով օգտագործվող փոխադրամիջոցները նախագծման, կառուցվածքի եւ հարկ եղած դեպքում հաստատման մասով պետք է բավարարեն 9-րդ մասի համապատասխան պահանջները:

7.1.3. ԵՄՄ (UIC) թիվ 591 (3-րդ հրատարակություն՝ 01.10.2007 թվականի դրությամբ), թիվ 592 (2-րդ հրատարակություն՝ 01.10.2013 թվականի դրությամբ), թիվ 592-2 (6-րդ հրատարակություն՝ 01.10.2004 թվականի դրությամբ), թիվ 592-3 (2-րդ հրատարակություն՝ 01.01.1998 թվականի դրությամբ) եւ թիվ 592-4 (3-րդ հրատարակություն՝ 01.05.2007 թվականի դրությամբ) տեղեկաթերթերով սահմանված կարգի համաձայն կամ ԱԿԿ-ում (CSC) (1972թ.) կատարված համապատասխան փոփոխություններով ու «կոնտեյներ» հասկացությամբ սահմանված մեծ կոնտեյներները, ԳՖՏԿ-ները, շարժական ցիստեռնները եւ ցիստեռն-կոնտեյներները չեն կարող օգտագործվել վտանգավոր բեռների փոխադրման նպատակով, եթե մեծ կոնտեյները, ԳՖՏԿ-ները կամ շարժական ցիստեռնի կամ ցիստեռն-կոնտեյների հիմնակմախքը (կարկասը) չի համապատասխանում ԱԿԿ-ի կամ ԵՄՄ թիվ 591, 592 եւ թիվ 592-2 - 592-4 տեղեկաթերթերի դրույթներին:

7.1.4. Մեծ կոնտեյները ենթակա է օգտագործման՝ փոխադրման նպատակով միայն կառուցվածքապես շահագործելի լինելու դեպքում:

«Կառուցվածքապես շահագործելի» նշանակում է, որ կոնտեյները չունի կառուցվածքային բաղադրիչների տեխնիկական խոշոր թերություններ, ինչպես օրինակ՝ վերին եւ ստորին կողային հեծանների, դռան շեմքի եւ կցվանքի, հատակածածկույթի լայնակի տարրերի, անկյունային կանգնակների ու անկյունային կցամասերի տեխնիկական

թերություններ: «Խոշոր տեխնիկական թերություններ» են համարվում կառուցվածքային տարրերում ավելի քան 19 մմ խորությամբ փոսերը կամ ծովածքները՝ անկախ դրանց երկարությունից, կառուցվածքային տարրերի ճաքերը կամ կոտրվածքները, վերին կամ ստորին ճակատային հեծաններում կամ դռան կցվանքում մեկից ավելի միացքներ կամ սխալ միացք (օրինակ՝ եզրածածկ միացք), կամ երկուսից ավելի միացք վերին կամ ստորին ցանկացած երկայնական հեծանում, ցանկացած միացք դռան շեմքին կամ անկյունային կանգնակներում, լրված, ձեւախախտված, կոտրված, պակասող կամ որեւէ այլ պատճառով անսարք դռան ծխնիները եւ մետաղական օժանդակ մասերը, ոչ հերմետիկ խցանիչները եւ խտարարները, ինչպես նաեւ ընդհանուր կոնֆիգուրացիայի ցանկացած այնպիսի խախտում, որը խոչընդոտում է բեռնման-բեռնաթափման սարքերի պատշաճ օգտագործումը, տեղակայումը եւ ամրակցումը շասսիի վրա կամ փոխադրամիջոցում:

Բացի այդ, անկախ օգտագործված շինանյութի տեսակից, անթույլատրելի է կոնտեյնների բաղադրիչ ցանկացած մասի տեխնիկական վիճակի վատթարացումը, ինչպես օրինակ՝ կողապատերի ժանգոտած մետաղը կամ քայքայված ապակեթելը: Այնուհանդերձ, թույլատրելի է բնականոն մաշվածությունը, ներառյալ՝ օքսիդացումը (ժանգաբծերը), աննշան փոսերը եւ քերծվածքները, ինչպես նաեւ այլ թերություններ, որոնք չեն ազդում շահագործման պիտանիության կամ եղանակադիմացկունության վրա:

Բեռնելուց առաջ անհրաժեշտ է նաեւ ստուգել, որ կոնտեյներում առկա չլինեն նախորդ բեռի մնացորդները, իսկ ներքին պատերն ու հատակը զերծ լինեն ելուստներից:

7.1.5. Մեծ կոնտեյներները պետք է բավարարեն սույն մասով սահմանված փոխադրամիջոցի թափքին առնչվող եւ անհրաժեշտության դեպքում 9-րդ մասով սահմանված պահանջներն առանձին տեսակի բեռների համար, որի դեպքում փոխադրամիջոցի թափքին չեն ներկայացվում այդ պահանջները:

Այնուհանդերձ, վերոնշված պահանջները բավարարող կրակադիմացկուն եւ մեկուսապատվածքով տախտակամած ունեցող փոխադրամիջոցներով փոխադրվող մեծ կոնտեյներներին չեն ներկայացվում նշված պահանջները:

Սույն դրույթը կիրառվում է նաեւ պայթուցիկ նյութերի եւ 1-ին դասի պատրաստվածքների փոխադրման նպատակով օգտագործվող փոքր կոնտեյներների նկատմամբ:

7.1.6. Համաձայն 7.1.5-ի առաջին նախադասության վերջին մասով սահմանված դրույթների՝ այն փաստը, որ մեկ կամ մի քանի կոնտեյներներում առկա են վտանգավոր բեռներ, չպետք է անդրադառնա փոխադրամիջոցին ներկայացվող պահանջների վրա՝ պայմանավորված փոխադրվող վտանգավոր բեռների բնույթով եւ քանակություններով:

## ԳԼՈՒԽ 7.2

### ՓԱԹԵԹՆԵՐՈՎ ՓՈԽԱԴՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

7.2.1. Եթե այլ բան նախատեսված չէ 7.2.2 - 7.2.4-ով, փաթեթները կարող են բեռնվել՝

- ա) փակ փոխադրամիջոցներում կամ փակ կոնտեյներներում, կամ
- բ) բրեզենտից ծածկով փոխադրամիջոցներում կամ բրեզենտից ծածկով կոնտեյներներում, կամ
- գ) բաց փոխադրամիջոցներում կամ բաց կոնտեյներներում:

7.2.2. Խոնավության նկատմամբ զգայուն նյութից պատրաստված փաթեթվածքներ պարունակող փաթեթները պետք է բեռնել փակ կամ բրեզենտից ծածկով փոխադրամիջոցներում կամ փակ կամ բրեզենտից ծածկով կոնտեյներներում:

7.2.3. (Նախատեսվում է վերապահում)

7.2.4. Այն դեպքում, երբ դրանք ցուցադրված են որեւէ դիրքում, 3.2 գլխի Ա աղյուսակի 16-րդ սյունակում, կիրառվում են հետևյալ հատուկ դրույթները՝

V1 Փաթեթները պետք է բեռնվեն փակ կամ բրեզենտից ծածկով փոխադրամիջոցներում կամ փակ կամ բրեզենտից ծածկով կոնտեյներներում:

V2 1) Փաթեթները պետք է բեռնվեն բացառապես EX/II կամ EX/III փոխադրամիջոցներում, որոնք բավարարում են 9-րդ մասի պահանջները: Փոխադրամիջոցի ընտրությունը պայմանավորված է փոխադրման ենթակա բեռների քանակությամբ, որն ունի սահմանափակումներ տրանսպորտային յուրաքանչյուր միավորի դեպքում՝ համաձայն բեռնման մասին դրույթների (տե՛ս 7.5.5.2): Եթե տրանսպորտային միավորը բաղկացած է EX/II եւ EX/III փոխադրամիջոցներից, որոնք երկուսն էլ փոխադրում են պայթուցիկ նյութեր կամ պատրաստվածքներ, 7.5.5.2.1-ում նշված EX/II փոխադրամիջոցների նկատմամբ կիրառելի քանակականությունների սահմանափակումները կիրառվում են ողջ տրանսպորտային միավորի նկատմամբ:

2) Բացառությամբ կիսակցորդների՝ EX/II կամ EX/III փոխադրամիջոցներին ներկայացվող պահանջները բավարարող կցորդները կարող են քարշակվել մեխանիկական փոխադրամիջոցներով, որոնց չեն ներկայացվում այդ պահանջները:

Կոնտեյներներում փոխադրման համար տե՛ս նաեւ 7.1.3 - 7.1.6:

Եթե 1-ին դասի նյութերը կամ պատրաստվածքները, որոնց քանակությունների դեպքում պահանջվում է EX/III փոխադրամիջոցից (փոխադրամիջոցներից) բաղկացած տրանսպորտային միավորի օգտագործում, համակցված տրանսպորտային փոխադրումների շրջանակում կոնտեյներներով փոխադրվում են դեպի նավահանգիստներ, երկաթուղային տերմինալներ կամ օդանավակայանների ժամանման կամ մեկնման տերմինալներ կամ փոխադրվում են այս բոլոր վայրերից, ապա թույլատրվում է օգտագործել EX/II փոխադրամիջոցից (փոխադրամիջոցներից) բաղկացած տրանսպորտային միավոր՝ պայմանով, որ փոխադրվող կոնտեյներները բավարարեն ՎԲՄԾ կանոնակարգի կամ ՌԻԴ-ի համապատասխան պահանջները կամ համապատասխանեն ԻԿԱՕ-ի տեխնիկական ցուցումներին:

V3 Սորուն փոշենման նյութերի եւ հրկիզման միջոցների դեպքում կոնտեյների հատակը պետք է ունենա ոչ մետաղական մակերեսույթ կամ պատվածք:

V4 (Նախատեսվում է վերապահում)

V5 Արգելվում է փոխադրել փաթեթները փոքր կոնտեյներներում:

V6 Փափուկ ՍՄԿ-ները պետք է փոխադրվեն փակ փոխադրամիջոցներում կամ փակ կոնտեյներներում, բրեզենտից ծածկով փոխադրամիջոցներում կամ բրեզենտից ծածկով կոնտեյներներում: Բրեզենտը պետք է պատրաստված լինի հերմետիկ եւ հրադիմացկուն նյութից:

V7 (Նախատեսվում է վերապահում)

V8 1) Ջերմաստիճանի կարգավորմամբ կայունացված նյութերի փոխադրումը պետք է իրականացվի այնպիսի եղանակով, որի դեպքում 2.2.41.1.17 եւ 2.2.41.4 կամ 2.2.52.1.16 եւ 2.2.52.4-ում նշված վերահսկման ջերմաստիճանների մակարդակները չեն անցնի թույլատրելի սահմանը:

2) Բեռնափոխադրումն իրականացնելիս ջերմաստիճանի վերահսկողության մեթոդների ընտրությունը պայմանավորված է մի շարք գործոններով, ինչպիսիք են՝

- փոխադրման ենթակա նյութի (նյութերի) վերահսկման ջերմաստիճանը (ջերմաստիճանները),
- տարբերությունը վերահսկման ջերմաստիճանի եւ

- ակնկալվող մթնոլորտային ջերմաստիճանի միջեւ,
- ջերմամեկուսացման արդյունավետությունը,
- բեռնափոխադրման տեսողությունը, եւ
- անվտանգության գործակիցը ճանապարհային հետաձգումների դեպքում:

3) Վերահսկման ջերմաստիճանի թույլատրելի սահմանի գերազանցումը կանխող մեթոդները թվարկված են ստորեւ՝ ըստ արդյունավետության աճման կարգի.

R1 ջերմամեկուսացում՝ պայմանով, որ նյութի (նյութերի) սկզբնական ջերմաստիճանը բավականաչափ ցածր լինի վերահսկման ջերմաստիճանից,

R2 ջերմամեկուսացում եւ սառնազդակով հովացման համակարգի գործարկում՝ պայմանով, որ

- փոխադրվի ոչ դյուրավառ սառնազդակի բավարար քանակություն (օրինակ՝ հեղուկ ազոտ կամ ածխածնի երկօքսիդ՝ պինդ (չոր սառույց)), ինչպես նաեւ սառնազդակի պահեստային բավականաչափ պաշար՝ ճանապարհին հնարավոր հետաձգումների դեպքում, կամ ապահովվեն պաշարների համալրման միջոցները,
- հեղուկ թթվածինը կամ օդը չօգտագործվի որպես սառնազդակ,
- ապահովվի հավասարաչափ հովացում, նույնիսկ եթե սպառվել է սառնազդակի մեծ մասը, եւ
- տրանսպորտային միավորի դռան (դռների) նախազգուշական ցուցանակի միջոցով հստակորեն նշվի տրանսպորտային միավորն օդափոխելու անհրաժեշտությունը մուտք գործելուց առաջ:

R3 Ջերմամեկուսացման եւ պարզ մեխանիկական սառեցման կիրառում՝ պայմանով, որ վթարային ջերմաստիճանի եւ 5°C-ի գումարից ցածր բռնկման ջերմաստիճան ունեցող նյութերի դեպքում հովացվող խցիկում օգտագործվեն հակապայթյունավտանգ էլեկտրասարքավորումներ՝ EEx IIB T3՝ կանխելու համար նյութերից գոյացող դյուրավառ գոլորշիների բռնկումը:

R4 Ջերմամեկուսացում, համակցված մեխանիկական սառեցման համակարգի եւ հովացման համակարգի կիրառում՝ պայմանով, որ

- երկու համակարգերը գործում են իրարից անկախ, եւ
- վերոնշված R2 եւ R3 մեթոդների պահանջները բավարարված են:

R5 Ջերմամեկուսացում եւ կրկնակի մեխանիկական սառեցման համակարգի կիրառում՝ պայմանով, որ

- էներգամատակարարման միասնական բլոկից զատ՝ երկու համակարգերը գործում են իրարից անկախ,
- յուրաքանչյուր համակարգ ինքնուրույն կարող է պահպանել ջերմաստիճանի համապատասխան կարգավորում, եւ
- վթարային ջերմաստիճանի ու 5°C-ի գումարից ցածր բռնկման ջերմաստիճան ունեցող նյութերի դեպքում հովացվող խցիկում օգտագործվեն հակապայթյունավտանգ էլեկտրասարքավորումներ՝ EEx IIB T3՝ կանխելու համար նյութերից գոյացող դյուրավառ գոլորշիների բռնկումը:

4) R4 եւ R5 մեթոդները կարող են կիրառվել բոլոր տեսակի օրգանական պերօքսիդների, ինքնառեակտիվ նյութերի եւ պոլիմերային նյութերի նկատմամբ:

R3 մեթոդը կարող է կիրառվել ինչպես «C», «D», «E» եւ «F» տեսակի օրգանական պերօքսիդների եւ ինքնառեակտիվ նյութերի, այնպես էլ օրգանական պերօքսիդների ու «B» տեսակի ինքնառեակտիվ նյութերի եւ պոլիմերային նյութերի դեպքում, երբ փոխադրման ժամանակ ակնկալվող մթնոլորտային առավելագույն ջերմաստիճանն ավելի քան 10 °C-ով չի գերազանցում վերահսկման ջերմաստիճանը:

R2 մեթոդը կարող է կիրառվել «C», «D», «E» եւ «F» տեսակի օրգանական պերօքսիդների ու ինքնառեակտիվ նյութերի եւ պոլիմերային նյութերի դեպքում, երբ փոխադրման ժամանակ ակնկալվող մթնոլորտային առավելագույն ջերմաստիճանը չի գերազանցում վերահսկման ջերմաստիճանն ավելի քան 30 °C-ով:

R1 մեթոդը կարող է կիրառվել «C», «D», «E» եւ «F» տեսակի օրգանական պերօքսիդների եւ ինքնառեակտիվ նյութերի եւ պոլիմերային նյութերի դեպքում, երբ փոխադրման ժամանակ ակնկալվող մթնոլորտային առավելագույն ջերմաստիճանն առնվազն 10°C-ով ցածր է վերահսկման ջերմաստիճանից:

- 5) Իզոթերմային, սառեցված կամ մեխանիկական սառնարան-փոխադրամիջոցները կամ սառնարան-կոնտեյներները, որոնցում անհրաժեշտ է փոխադրել նյութերը, պետք է բավարարեն 9,6 գլխի պահանջները:
- 6) Սառնազդակով հագեցած պաշտպանիչ փաթեթվածքներում պարունակվող նյութերը պետք է բեռնվեն փակ կամ բրեզենտից ծածկով փոխադրամիջոցներում կամ փակ կամ բրեզենտից ծածկով կոնտեյներներում: Անհրաժեշտ է պատշաճորեն օդափոխել օգտագործման ենթակա փակ փոխադրամիջոցները կամ կոնտեյներները: Բրեզենտից ծածկով փոխադրամիջոցները եւ կոնտեյներները պետք է ունենան կողեզրեր ու հետեւի կողպատեր: Նշված փոխադրամիջոցների եւ կոնտեյներների բրեզենտը պետք է պատրաստված լինի հերմետիկ ու հրադիմացկուն նյութից:
- 7) Սառեցման համակարգի կառավարման բոլոր սարքերը եւ ջերմաստիճանային տվիչները պետք է ցանկացած պահի հասանելի լինեն, իսկ էլեկտրական բոլոր միացումները պետք է լինեն եղանակադիմացկուն: Օդի ջերմաստիճանը տրանսպորտային միավորի ներսում պետք է չափվի երկու առանձին տվիչներով, ընդ որում, տվյալները պետք է գրանցվեն այնպես, որը հնարավորություն կտա արագորեն հայտնաբերելու ջերմաստիճանի ցանկացած փոփոխություն: Առնվազն +25 °C-ից ցածր վերահսկման ջերմաստիճան ունեցող նյութերի փոխադրման դեպքում տրանսպորտային միավորը պետք է ունենա սառեցման համակարգից անկախ էլեկտրասնուցվող եւ վերահսկման ջերմաստիճանին հավասար կամ դրանից ցածր ջերմաստիճանի դեպքում աշխատելու կարգավորմամբ տեսաձայնային վթարային ազդանշանման սարքեր:
- 8) Պետք է առկա լինեն պահեստամասեր կամ սառեցման պահեստային ենթահամակարգ (back-up):

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** Սույն V8 դրույթը չի կիրառվում 3.1.2.6.-ում նշված նյութերի նկատմամբ, եթե դրանք կայունացված են քիմիական այնպիսի ինհիբիտորների ներմուծմամբ, որոնց դեպքում ԻՏԶ-ն (ինքնապրոհման ջերմաստիճան) գերազանցում է 50 °C-ը: Այս դեպքում կարող է ծագել ջերմաստիճանի վերահսկողության



անհրաժեշտություն փոխադրման այնպիսի պայմաններում, երբ ջերմաստիճանը կարող է գերազանցել 55 °C-ը:

V9 (Նախատեսվում է վերապահում)

V10 ՍՄԿ-ները պետք է փոխադրվեն փակ կամ բրեզենտից ծածկով փոխադրամիջոցներում կամ փակ կամ բրեզենտից ծածկով կոնտեյներներում:

V11 Մետաղական կամ կոշտ պլաստմասսայից ՍՄԿ չհանդիսացող ՍՄԿ-ները պետք է փոխադրվեն փակ կամ բրեզենտից ծածկով փոխադրամիջոցներում կամ փակ կամ բրեզենտից ծածկով կոնտեյներներում:

V12 31HZ2 տեսակի ՍՄԿ-ները (31HA2, 31HB2, 31HN2, 31HD2 եւ 31HH2) պետք է փոխադրվեն փակ փոխադրամիջոցներում կամ կոնտեյներներում:

V13 ՄԲԿ-ները 5H1, 5L1 կամ 5 M1 պարկերում փաթեթավորվելու դեպքում պետք է փոխադրվեն փակ փոխադրամիջոցներում կամ կոնտեյներներում:

V14 3.3. գլխի թիվ 327 հատուկ դրույթի համաձայն վերամշակման կամ հեռացման նպատակով փոխադրվող աերոզոլները պետք է բացառապես տեղափոխվեն օդափոխվող կամ բաց փոխադրամիջոցներում կամ կոնտեյներներում:

## ԳԼՈՒԽ 7.3

### ԽՈՒՌՆԱԲԵՌՆ ՓՈԽԱԴՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

- 7.3.1. Ընդհանուր դրույթները
- 7.3.1.1. Բեռները կարող են փոխադրվել սորուն բեռների համար նախատեսված կոնտեյներներում, կոնտեյներներում կամ փոխադրամիջոցներում, եթե՝
- ա) 3.2 գլխի Ա աղյուսակի 10-րդ սյունակում նշված է փոխադրման սույն եղանակը հստակորեն թույլատրող «BK» ծածկագրով սահմանված հատուկ դրույթ կամ հղում հատուկ պարբերությանը, եւ բավարարված են 7.3.2-ի համապատասխան պահանջները՝ ի լրումն սույն բաժնի պայմանների, կամ
  - բ) 3.2 գլխի Ա աղյուսակի 17-րդ սյունակում նշված է փոխադրման սույն եղանակը հստակորեն թույլատրող «VC» ծածկագրով սահմանված հատուկ դրույթ կամ հղում հատուկ պարբերությանը, եւ բավարարված են այս հատուկ դրույթի 7.3.3-ով սահմանված հատուկ դրույթները «AP» ծածկագրով սահմանված լրացուցիչ հատուկ դրույթի հետ միասին՝ ի լրումն սույն բաժնի պայմանների:
- Այնուհանդերձ, դատարկ ու չմաքրված փաթեթվածքները կարող են փոխադրվել մեծ քանակությամբ, եթե փոխադրման այս եղանակն ուղղակիորեն չի արգելվում «ԱԴՌ» (ADR) համաձայնագրի այլ դրույթներով:
- ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** Ցիսպրեռններով փոխադրման համար տե՛ս 4.2 եւ 4.3 գլուխները:
- 7.3.1.2. Այն նյութերը, որոնք փոխադրման ժամանակ հավանական ջերմաստիճանային պայմաններում կարող են վերածվել հեղուկի, արգելվում են խուռնաբեռն փոխադրման:
- 7.3.1.3. Սորուն բեռների համար նախատեսված կոնտեյները, կոնտեյներները կամ փոխադրամիջոցների թափքը պետք է լինի հերմետիկ եւ փակվի այնպես, որ փոխադրման բնականոն պայմաններում, ինչպես նաեւ վիբրացիայի հետեւանքով կամ ջերմաստիճանի, խոնավության կամ ճնշման փոփոխման հետեւանքով պարունակության որեւէ կորուստ չարձանագրվի:
- 7.3.1.4. Նյութերը պետք է բեռնվեն եւ հավասարաչափ բաշխվեն այնպես, որ նվազագույնի հասցվի սորուն բեռների համար նախատեսված կոնտեյների, կոնտեյների կամ փոխադրամիջոցի համար վտանգավոր որեւէ տեղաշարժ կամ վտանգավոր բեռների արտահոսք:
- 7.3.1.5. Օդափոխման սարքերը, առկայության դեպքում, պետք է պահվեն

մաքուր եւ սարքին վիճակում:

- 7.3.1.6. Նյութերը չպետք է վտանգավոր ռեակցիայի մեջ մտնեն այն նյութերի հետ, որոնցից պատրաստված են սորուն բեռների համար նախատեսված կոնտեյները, կոնտեյները, փոխադրամիջոցը, խցանիչները, սարքավորումները, ներառյալ՝ կափարիչները եւ բրեզները, ինչպես նաեւ բեռան հետ շփվող պաշտպանիչ պատվածքների հետ եւ չպետք է բացասաբար անդրադառնան դրանց դիմացկունության վրա: Սորուն բեռների համար նախատեսված կոնտեյներները, կոնտեյներները կամ փոխադրամիջոցները պետք է կառուցվեն կամ հարմարեցվեն այնպես, որ բեռները չներթափանցեն փայտե հատակածածկից ներս կամ չհաղորդակցվեն սորուն բեռների համար նախատեսված կոնտեյների, կոնտեյների կամ փոխադրամիջոցի այն հատվածամասերի հետ, որոնց վրա կարող են ազդել փոխադրվող բեռները կամ դրանց մնացորդները:
- 7.3.1.7. Նախքան բեռնելը եւ փոխադրման հանձնելը՝ սորուն բեռների համար նախատեսված յուրաքանչյուր կոնտեյներ, կոնտեյներ կամ փոխադրամիջոց պետք է ստուգվի եւ մաքրվի՝ բացառելու սորուն բեռների համար նախատեսված կոնտեյների, կոնտեյների կամ փոխադրամիջոցի ներքին եւ արտաքին հատվածներում բեռների որելէ մնացորդ, որը, առկայության դեպքում, կարող է՝
- վտանգավոր ռեակցիայի մեջ մտնել փոխադրման ենթակա նյութի հետ,
  - բացասաբար անդրադառնալ սորուն բեռների համար նախատեսված կոնտեյների, կոնտեյների կամ փոխադրամիջոցի կառուցվածքային ամբողջականության վրա, կամ
  - ազդել սորուն բեռների համար նախատեսված կոնտեյների, կոնտեյների կամ փոխադրամիջոցի՝ վտանգավոր բեռների պահպանման հզորության վրա:
- 7.3.1.8. Սորուն բեռների համար նախատեսված կոնտեյներների, կոնտեյներների կամ փոխադրամիջոցների թափքի արտաքին մակերեսին փոխադրման ընթացքում չպետք է լինեն (չպետք է կպած մնան) վտանգավոր նյութերի մնացորդներ:
- 7.3.1.9. Եթե մի քանի փակման համակարգեր տեղակայված են հաջորդաբար, ապա նախքան լցավորումն առաջինը պետք է փակվի փոխադրման ենթակա նյութին ամենամոտը գտնվող սարքվածքը:
- 7.3.1.10. Սորուն բեռների համար նախատեսված դատարկ կոնտեյներները, կոնտեյներները կամ փոխադրամիջոցները, որոնք մեծ քանակությամբ վտանգավոր պինդ նյութ են փոխադրել, պետք է բավարարեն «ԱԴԴ» համաձայնագրի՝ սորուն բեռների համար նախատեսված բեռնված

կոնտեյներին, կոնտեյներին կամ փոխադրամիջոցին ներկայացվող նույն պահանջները, եթե չեն ձեռնարկվել ցանկացած վտանգ չեզոքացնելուն ուղղված համապատասխան միջոցներ:

7.3.1.11. Եթե սորուն բեռների համար նախատեսված կոնտեյներները, կոնտեյներները կամ փոխադրամիջոցներն օգտագործվում են փոշու բռնկումներ հարուցող կամ դյուրավառ գոլորշի արձակող (օրինակ՝ որոշակի թափոնների դեպքում) բեռների խուռնաբեռն փոխադրման նպատակով, ապա պետք է ձեռնարկվեն նյութի փոխադրման, լցավորման կամ բեռնաթափման ժամանակ բռնկման աղբյուրները բացառող եւ վտանգավոր էլեկտրաստատիկ պարպումները կանխող միջոցներ:

7.3.1.12. Այն նյութերը (օրինակ թափոնները), որոնք կարող են վտանգավոր ռեակցիայի մեջ մտնել մեկը մյուսի հետ, ինչպես նաեւ տարբեր տեսակի նյութերը եւ «ԱԴԲ» համաձայնագրով չկարգավորվող բեռները, որոնք օժտված են մեկը մյուսի հետ վտանգավոր ռեակցիայի մեջ մտնելու հատկությամբ, չպետք է միախառնվեն սորուն բեռների համար նախատեսված միեւնույն կոնտեյներում, կոնտեյներում կամ փոխադրամիջոցում: Վտանգավոր ռեակցիաներ են՝

ա) այրումը եւ (կամ) զգալի քանակությամբ ջերմության արձակումը.

բ) դյուրավառ եւ (կամ) թունավոր գազերի արտանետումը (էմիսիան).

գ) կոռոզիոն հեղուկների գոյացումը. կամ

դ) անկայուն նյութերի առաջացումը:

7.3.1.13. Սորուն բեռների համար նախատեսված կոնտեյները, կոնտեյները կամ փոխադրամիջոցը պետք է արտաքննապես ստուգվեն բեռնելուց առաջ՝ համոզվելու համար, որ այն կառուցվածքապես պիտանի է շահագործման, ներքին պատերը, առաստաղը եւ հատակը զերծ են ելուստներից կամ վնասվածքներից, եւ ցանկացած ներքին ներդիր կամ նյութի պահպանման սարքավորում զերծ է պատռվածքներից, կտրվածքներից կամ սարքավորման՝ բեռի պահպանման հզորությունը վտանգող ցանկացած այլ վնասվածքից: «Կառուցվածքապես պիտանի շահագործման համար» նշանակում է, որ սորուն բեռների համար նախատեսված կոնտեյների, կոնտեյների կամ փոխադրամիջոցի բաղադրիչ մասերը զերծ են տեխնիկական խոշոր թերություններից, ինչպես օրինակ՝ վերին եւ ստորին կողային հեծանների, վերին եւ ստորին երկայնական հեծանների, դռան շեմքի եւ դռան կցվանքի, հատակի ծածկույթի, սորուն բեռների համար նախատեսված կոնտեյների կամ կոնտեյների անկյունային կանգնակների եւ անկյունային կցամասերի թերությունները: Խոշոր թերություններ են համարվում՝

ա) ծովածքները, ճաքերը կամ պատռվածքները կոնստրուկտիվ կամ

հենարանային բաղադրիչ մասերում, որոնք ազդում են սորուն բեռների համար նախատեսված կոնտեյնների եւ կոնտեյնների ամբողջականության կամ փոխադրամիջոցի թափքի վրա.

- բ) սխալ կամ մեկից ավելի միացքները (եզրածածկ միացք) վերին եւ ստորին երկայնական հեծաններում կամ դռան կցվանքում.
- գ) երկուսից ավելի միացքներ՝ վերին կամ ստորին կողային հեծաններից որեւէ մեկում.
- դ) ցանկացած միացք՝ դռան շեմքին կամ անկյունային կանգնակներում.
- ե) լրված, ձեւախախտված, կոտրված, բացակայող կամ որեւէ այլ պատճառով անսարք ծխնիները եւ դռան մետաղական օժանդակ մասերը.
- զ) ոչ հերմետիկ խցանիչները եւ խտարարները.
- է) սորուն բեռների համար նախատեսված կոնտեյնների կամ կոնտեյնների ընդհանուր կոնֆիգուրացիայի ցանկացած այնպիսի խախտում, որը խոչընդոտում է բեռնման-բեռնաթափման սարքերի պատշաճ օգտագործումը, տեղակայումը եւ ամրակցումը շասսիի վրա կամ փոխադրամիջոցում.
- ը) ամբարձիչ հարմարանքների կամ բեռնման-բեռնաթափման սարքավորումների միացման սարքերի ցանկացած վնասվածք. կամ
- թ) օժանդակ կամ շահագործվող սարքավորումների ցանկացած վնասվածք:

7.3.2. 7.3.1.1 (ա)-ի դրույթների կիրառման դեպքում խուռնաբեռն փոխադրմանն առնչվող դրույթները

7.3.2.1. Ի հավելումն 7.3.1 ենթադասում նշված ընդհանուր դրույթների՝ կիրառվում են սույն բաժնի դրույթները: 3.2 գլխի Ա աղյուսակի 10-րդ սյունակում ներկայացված BK1, BK2 եւ BK3 ծածկագրերը գործածվում են ստորեւ նշված իրենց համապատասխան նշանակությամբ՝

BK1 թույլատրվում է իրականացնել խուռնաբեռն փոխադրում սորուն բեռների համար նախատեսված բրեզենտից ծածկով կոնտեյններում.

BK2 թույլատրվում է իրականացնել խուռնաբեռն փոխադրում սորուն բեռների համար նախատեսված փակ կոնտեյններով.

BK3 թույլատրվում է իրականացնել փոխադրում սորուն բեռների համար նախատեսված փափուկ կոնտեյններով.

7.3.2.2. Սորուն բեռների համար օգտագործվող կոնտեյնները պետք է համապատասխանի 6.11 գլխի պահանջներին:

7.3.2.3. 4.2 դասի բեռներ

Սորուն բեռների համար նախատեսված կոնտեյներում պարունակվող ընդհանուր զանգվածը պետք է այնպիսին լինի, որ դրա ինքնաբռնկման ջերմաստիճանը 55°C-ից բարձր լինի:

7.3.2.4. 4.3 դասի բեռներ

Այս բեռները պետք է տեղափոխվեն սորուն բեռների համար նախատեսված անջրանցիկ կոնտեյներներում:

7.3.2.5. 5.1 դասի բեռներ

Սորուն բեռների համար նախատեսված կոնտեյներները պետք է կառուցվեն կամ հարմարեցվեն այնպես, որ բեռները չշփվեն փայտի կամ որեւէ այլ անհամատեղելի նյութի հետ:

7.3.2.6. 6.2 դասի բեռներ

7.3.2.6.1. Սորուն բեռների համար նախատեսված կոնտեյներներում թույլատրվում է տեղափոխել վարակիչ նյութեր պարունակող կենդանական ծագման հումք, եթե բավարարված են հետևյալ պահանջները (ՄԱԿ-ի նշագրման 2814, 2900 եւ 3373 համարներ)՝

- ա) փոխադրումը թույլատրվում է սորուն բեռների համար նախատեսված բրեզենտից ծածկով BK1 ծածկագրով կոնտեյներներում՝ պայմանով, որ դրանք չբարձվեն ըստ առավելագույն տարողության՝ բրեզենտի հետ նյութերի շփումը կանխելու նպատակով: Փոխադրումը թույլատրելի է նաեւ սորուն բեռների համար նախատեսված BK2 ծածկագրով փակ կոնտեյներներում.
- բ) սորուն բեռների համար նախատեսված փակ եւ բրեզենտից ծածկով կոնտեյներների ու դրանց բացվածքների անջրանցիկությունը պետք է ապահովվի դրանց կառուցվածքով կամ համապատասխան ներդիրի կիրառմամբ.
- գ) բեռնելուց առաջ կենդանական ծագման հումքը պետք է ամբողջությամբ մշակվի համապատասխան ախտահանիչով՝ նախքան փոխադրումն իրականացնելը.
- դ) սորուն բեռների համար նախատեսված բրեզենտից ծածկով կոնտեյներները պետք է ծածկվեն լրացուցիչ ներդիրով, որի վրա դրվում է համապատասխան ախտահանիչով մշակված կլանիչ նյութի շերտ.
- ե) արգելվում է վերաօգտագործել սորուն բեռների համար նախատեսված փակ կամ բրեզենտից ծածկով կոնտեյներները՝ նախքան դրանք ամբողջությամբ մաքրելը եւ ախտահանելը:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** Համապատասխան ազգային առողջապահական մարմինները կարող են պահանջել լրացուցիչ դրույթների ներմուծում:

7.3.2.6.2. 6.2 դասի թափոնները (UN 3291)

- ա) (Նախատեսվում է վերապահում).
- բ) սորուն բեռների համար նախատեսված փակ կոնտեյներները եւ դրանց բացվածքները պետք է անջրանցիկ կառուցվածք ունենան: Սորուն բեռների համար նախատեսված այդ կոնտեյներների ներքին մակերեսը պետք է լինի ոչ ծակոտկեն եւ զերծ ճաքերից կամ կոնտեյների ներսում գտնվող փաթեթավածքների համար վտանգավոր, վարակազերծման աշխատանքները բարդացնող եւ պատահական արտազատում առաջացնող կառուցվածքային այլ թերություններից.
- գ) ՄԱԿ-ի նշագրման 3291 համարի թափոնները պետք է կուտակվեն սորուն բեռների համար նախատեսված փակ կոնտեյներներում գտնվող ՄԱԿ-ի տեսակի փորձարկում եւ հաստատում անցած, կնքված եւ պլաստմասսայից անջրանցիկ պարկերում, որոնք ենթարկվել են պինդ նյութերի փաթեթավորման II խմբի փորձարկմանը եւ նշագրված են 6.1.3.1.-ի համաձայն: Նմանատիպ պլաստմասսայից պարկերը պետք է կարողանան անցնել պատռվածքների եւ հարվածների դեմ դիմացկունության փորձարկումները՝ համաձայն ISO 7765-1:1988 «Պլաստմասսայից թաղանթ եւ թերթ - հարվածադիմացկունության մակարդակի որոշումը բեռի ազատ անկման եղանակով - մաս 1՝ աստիճանական մեթոդ»-ի եւ ISO 6383-2:1983 «Պլաստմասսա՝ թաղանթ եւ թերթ - պատահոտման դիմադրության որոշման մեթոդ - մաս 2՝ էլմենդորֆի մեթոդ»-ի: Յուրաքանչյուր պարկ, երկարության առումով, պետք է ունենա հարվածադիմացկունություն՝ առնվազն 165 գ լցված լինելու եւ պատահոտման դիմադրություն՝ առնվազն 480 գ լցված լինելու դեպքում, ինչպես զուգահեռ, այնպես էլ ուղղահայաց հարթությամբ: Յուրաքանչյուր պլաստմասսայից պարկի առավելագույն զտաքաշը պետք է 30 կգ լինի.
- դ) 30 կգ-ը գերազանցող եզակի պատրաստվածքները, ինչպես օրինակ՝ կեղտոտ ներքնակները, կարող են փոխադրվել առանց պլաստմասսայից պարկի մեջ տեղադրման՝ համաձայն իրավասու մարմնի թույլտվության.
- ե) ՄԱԿ-ի նշագրման 3291 համարի հեղուկներ պարունակող թափոնները պետք է փոխադրվեն բավարար չափով կլանիչ

նյութ ունեցող պլաստմասսայից պարկերում, որոնք կներծծեն հեղուկի ամբողջ քանակությունը՝ չթափելով այն սորուն բեռների համար նախատեսված կոնտեյներում.

- զ) ՄԱԿ-ի նշագրման 3291 համարի սուր առարկաներ պարունակող թափոնները պետք է փոխադրվեն բացառապես ՄԱԿ-ի տեսակի փորձարկում եւ հաստատում անցած կոշտ փաթեթվածքներով, որոնք բավարարում են փաթեթավորման P621, IBC620 կամ LP621 ցուցումների դրույթները.
- է) փաթեթավորման P621, IBC620 կամ LP62 ցուցումներով սահմանված կոշտ փաթեթվածքները նույնպես կիրառելի են: Փաթեթվածքների ամրակցումը պետք է հուսալի լինի՝ փոխադրման բնականոն պայմաններում վնասները կանխելու նպատակով: Սորուն բեռների համար նախատեսված միեւնույն փակ կոնտեյներում կոշտ փաթեթվածքներով եւ պլաստմասսայից պարկերով համատեղ փոխադրվող թափոնները պետք է պատշաճ կերպով տարանջատվեն մեկը մյուսից, օրինակ՝ համապատասխան կոշտ տարանջատման միջոցներով եւ միջնորմներով, մետաղական ցանցերով կամ ամրակման այլ միջոցներով՝ կանխելու համար փոխադրման բնականոն պայմաններում փաթեթվածքներին հասցվող վնասը.
- ը) արգելվում է սորուն բեռների համար նախատեսված փակ կոնտեյներում սեղմել պլաստմասսայից պարկերում գտնվող ՄԱԿ-ի նշագրման 3291 համարի թափոններն այնպես, որը բացասաբար կանդրադառնա պլաստմասսայից պարկերի անջրանցիկության վրա,
- թ) սորուն բեռների համար նախատեսված փակ կոնտեյները պետք է ստուգվի յուրաքանչյուր երթուղու ավարտից հետո արտահոսքերի կամ նյութերի դուրս թափումը բացահայտելու նպատակով: Եթե ՄԱԿ-ի նշագրման թիվ 3291 համարի թափոններն արտահոսել կամ դուրս են թափվել սորուն բեռների համար նախատեսված փակ կոնտեյներում, ապա արգելվում է վերաօգտագործել այդ կոնտեյները նախքան այն ամբողջությամբ մաքրելը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ ախտահանելը կամ վարակազերծելը համապատասխան նյութերով: Բժշկական կամ անասնաբուժական թափոններից զատ արգելվում է փոխադրել որեւէ այլ բեռներ ՄԱԿ-ի նշագրման թիվ 3291 համարի թափոնների հետ համատեղ: Սորուն բեռների համար նախատեսված միեւնույն փակ կոնտեյներում փոխադրվող նմանօրինակ այլ թափոններ պետք է ստուգման ենթարկվեն՝ հնարավոր աղտոտվածություն հայտնաբերելու նպատակով:



- 7.3.2.7. 7-րդ դասի նյութեր  
Չփաթեթավորված ռադիոակտիվ նյութերի փոխադրման համար տե՛ս 4.1.9.2.4:
- 7.3.2.8. 8-րդ դասի բեռներ  
Նմանատիպ բեռները պետք է փոխադրվեն սորուն բեռների համար նախատեսված անջրանցիկ կոնտեյներներում:
- 7.3.2.9. 9-րդ դասի բեռներ
- 7.3.2.9.1. ՄԱԿ-ի նշագրման 3509 համարի դեպքում կարող են օգտագործվել միայն սորուն բեռների փոխադրման համար նախատեսված փակ կոնտեյներներ (BK2 ծածկագիր): Սորուն բեռների համար նախատեսված կոնտեյներները պետք է լինեն անջրանցիկ եւ ունենան անջրանցիկ եւ չպատռվող նյութից կապարակնքված ներդիրներ կամ պարկեր եւ պետք է ունենան փոխադրման ընթացքում արտահոսող հեղուկի պահման միջոց, օրինակ՝ կլանիչ նյութ: Դուրս գրված, դատարկ, չմաքրված փաթեթվածքները 5.1 դասի մնացորդներով պետք է փոխադրվեն սորուն բեռների համար նախատեսված կոնտեյներներով, որոնք պատրաստվել կամ համապատասխանեցվել են այնպես, որ բեռները չկարողանան լինել շփման մեջ փայտի կամ այլ այրվող նյութի հետ:
- 7.3.2.10. Սորուն բեռների համար նախատեսված փափուկ կոնտեյներները
- 7.3.2.10.1. Սորուն բեռների համար նախատեսված փափուկ կոնտեյները պետք է արտաքննապես ստուգվի բեռնելուց առաջ՝ համոզվելու համար, որ այն կառուցվածքապես պիտանի է շահագործման, իր մանածագործվածքային առասանները, կրող կառուցվածքի գոտիները, թափքի երեսվածքի գործվածքը, բացովի կամուրջի կողպեքի մասերը, ներառյալ՝ մետաղական եւ մանածագործվածքային մասերը, զերծ են ելուստներից եւ վտանգներից, եւ որ ներքին ներդիրները զերծ են պատռվածքներից, կտրվածքներից կամ այլ վնասվածքներից:
- 7.3.2.10.2. Սորուն բեռների համար նախատեսված փափուկ կոնտեյներում վտանգավոր բեռների փոխադրման համար թույլատրվող օգտագործման թույլատրելի ժամկետը պետք է լինի սորուն բեռների համար նախատեսված կոնտեյների արտադրման օրից հետո երկու տարի:
- 7.3.2.10.3. Օդափոխման սարք պետք է տեղադրվի այն դեպքում, երբ սորուն բեռների համար նախատեսված փափուկ կոնտեյներում կարող է լինել վտանգավոր գազերի կուտակում: Օդափոխիչը պետք է նախագծվի այնպես, որ փոխադրման բնականոն պայմաններում կանխարգելվի օտար նյութերի ներթափանցումը կամ ջրի

ներթափանցումը:

7.3.2.10.4. Սորուն բեռների համար նախատեսված փափուկ կոնտեյներները պետք է բեռնվեն այնպես, որ բեռնելուց հետո բարձրության եւ լայնության գործակիցը չգերազանցի 1,1 ցուցանիշը: Սորուն բեռների համար նախատեսված փափուկ կոնտեյներների առավելագույն անզուտ քաշը չպետք է գերազանցի 14 տոննան:

7.3.3. 7.3.1.1 (բ)-ի դրույթների կիրառման դեպքում խուռնաբեռն փոխադրմանն առնչվող դրույթները

7.3.3.1. 7.3.1-ում նշված ընդհանուր դրույթներից բացի կիրառվում են սույն բաժնի դրույթները այն դեպքում, երբ դրանք ցուցադրված են որեւէ դիրքում՝ 3.2 գլխի Ա աղյուսակի 17-րդ սյունակում: Սույն բաժնի շրջանակներում օգտագործվող բրեզենտից ծածկով կամ փակ կոնտեյներները պարտադիր չպետք է բավարարեն 6.11 գլխի պահանջները: 3.2 գլխի Ա աղյուսակի 17-րդ սյունակի VC1, VC2 եւ VC3 ծածկագրերն ունեն հետեւյալ նշանակությունը՝

VC1 թույլատրվում է իրականացնել խուռնաբեռն փոխադրում բրեզենտից ծածկով փոխադրամիջոցներում, բրեզենտից ծածկով կոնտեյներներում կամ սորուն բեռների համար նախատեսված բրեզենտից ծածկով կոնտեյներներում.

VC2 թույլատրվում է իրականացնել խուռնաբեռն փոխադրում փակ փոխադրամիջոցներում, փակ կոնտեյներներում կամ սորուն բեռների համար նախատեսված փակ կոնտեյներներում.

VC3 թույլատրվում է իրականացնել խուռնաբեռն փոխադրում հատուկ սարքավորված փոխադրամիջոցներում կամ կոնտեյներներում՝ համաձայն ծագման պետության իրավասու մարմնի կողմից սահմանված ստանդարտների: Եթե ծագման երկիրը «ԱԴՌ» համաձայնագրի կողմ չէ, փոխադրման համար սահմանված պայմանները պետք է հաստատվեն «ԱԴՌ» համաձայնագրի կողմ հանդիսացող այն երկրի իրավասու մարմնի կողմից, որի տարածքն առաջինն է բեռի ճանապարհին.

7.3.3.2. Երբ օգտագործվում են խուռնաբեռն բեռների համար նախատեսված VC ծածկագրերը, պետք է կիրառվեն 3.2 գլխի Ա աղյուսակի 17-րդ սյունակում ցուցադրված հետեւյալ լրացուցիչ դրույթները՝

7.3.3.2.1. 4.1 դասի բեռներ

AP1 Փոխադրամիջոցները եւ կոնտեյներները պետք է լինեն մետաղյա, իսկ ամրացված լինելու դեպքում բրեզենտից ծածկերը պետք է լինեն ոչ այրվող:

AP2 Փոխադրամիջոցները եւ կոնտեյներները պետք է ունենան համապատասխան օդափոխություն:

7.3.3.2.2. 4.2 դասի բեռներ

AP1 Փոխադրամիջոցները եւ կոնտեյներները պետք է ունենան մետաղյա հենամարմին, իսկ ամրացված լինելու դեպքում բրեզենտից ծածկը պետք է լինի ոչ այրվող:

7.3.3.2.3. 4.3 դասի բեռներ

AP2 Փոխադրամիջոցները եւ կոնտեյներները պետք է ունենան համապատասխան օդափոխություն:

AP3 Բրեզենտից ծածկով փոխադրամիջոցները եւ բրեզենտից ծածկով կոնտեյներները պետք է օգտագործվեն միայն այն դեպքում, երբ նյութը կտորներով է (ոչ փոշենման, հատիկավոր, փոշու կամ մոխիրի տեսքով):

AP4 Փակ փոխադրամիջոցները եւ փակ կոնտեյներները պետք է կահավորված լինեն հերմետիկորեն փակ բացվածքներով, որոնք օգտագործվում են բեռնման եւ բեռնաթափման համար՝ գազի արտահոսքը կանխարգելելու եւ խոնավության ներթափանցումը բացառելու նպատակով:

AP5 Փակ փոխադրամիջոցների կամ փակ կոնտեյներների բեռնախցիկի դռները պետք է նշագրվեն 25մմ-ից ոչ պակաս բարձրության հետեւյալ տառերով.

«ԶԳՈՒՇԱՑՈՒՄ

ՕԴԱՓՈՒՄՈՒԹՅՈՒՆ ՉԿԱ

ԲԱՑԵԼ ԶԳՈՒՇՈՒԹՅԱՄԲ»

Սա պետք է գրվի այն լեզվով, որը բեռնառաքողը նպատակահարմար է գտնում:

7.3.3.2.4. 5.1 դասի բեռներ

AP6 Եթե փոխադրամիջոցը կամ կոնտեյները պատրաստված է փայտից կամ այլ այրվող նյութից, այն պետք է ապահովվի հրադիմացկուն պատվածքով մակերեսայնորեն կամ նատրիումի սիլիկատով կամ այլ համանման նյութով ծածկով. Բրեզենտից ծածկը եւս պետք է լինի հրադիմացկուն եւ ոչ այրվող:

AP7 Թույլատրվում է իրականացնել խուռնաբեռն փոխադրում միայն որպես լրիվ բեռնվածք:

7.3.3.2.5. 6.1 դասի բեռներ

AP7 Թույլատրվում է իրականացնել խուռնաբեռն փոխադրում միայն որպես լրիվ բեռնվածք:

7.3.3.2.6. 8-րդ դասի բեռներ

AP7 Թույլատրվում է իրականացնել խուռնաբեռն փոխադրում միայն որպես լրիվ բեռնվածք:

AP8 Կոնտեյներների կամ փոխադրամիջոցների բեռնախցիկների նախագծման ժամանակ պետք է հաշվի առնել մնացորդային ցանկացած հոսանք եւ մարտկոցների տեղաշարժման հարվածները:

Փոխադրամիջոցների կամ կոնտեյներների բեռնախցիկները պետք է պատրաստված լինեն մարտկոցներում պարունակվող կոռոզիոն նյութերի նկատմամբ դիմացկուն պողպատից: Թույլատրվում է օգտագործել նվազ կոռոզիադիմացկուն պողպատ, եթե պատի հաստությունը բավականաչափ մեծ է կամ կոռոզիոն նյութերի նկատմամբ առկա է դիմացկուն պլաստմասսայից երեսապատվածք (շերտ):

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** Կոռոզիադիմացկուն է համարվում այն պողպատը, որի աստիճանական մաշվածության առավելագույն չափը կոռոզիոն նյութերի ազդեցության տակ չի գերազանցում տարեկան 0,1 մմ-ը:

Բեռնվածքի բարձրությունը չպետք է գերազանցի փոխադրամիջոցների կամ կոնտեյներների բեռնախցիկների պատերի բարձրությունը:

Թույլատրվում է իրականացնել նաեւ փոխադրում փոքր պլաստմասսայե կոնտեյներներում, որոնք լրիվ բեռնված լինելու դեպքում պետք է կարողանան դիմանալ 0,8 մետր բարձրությունից կոշտ մակերեսային ընկնելու հարվածին  $-18^{\circ}\text{C}$  ջերմաստիճանային պայմաններում, որի դեպքում չի խախտվի դրանց կառուցվածքային ամբողջականությունը:

7.3.3.2.7. 9-րդ դասի բեռներ

AP2 Փոխադրամիջոցները եւ կոնտեյներները պետք է ունենան համապատասխան օդափոխություն:

AP9 ՄԱԿ-ի նշագրման սույն համարը կրող 1000 մգ/կգ-ը չգերազանցող նյութ պարունակող կոշտ նյութերի կամ խառնուրդների, ինչպես օրինակ, պատրաստուկների կամ թափոնների խուռնաբեռն փոխադրումը թույլատրելի է: Այդ նյութի կամ նյութերի կոնցենտրանցիան բեռնվածքի ոչ մի կետում չպետք է գերազանցի 10 000 մգ/կգ-ն:

AP10 Փոխադրամիջոցները եւ կոնտեյներները պետք է լինեն անջրանցիկ եւ ունենան անջրանցիկ կամ չպատռվող նյութից կապարակնքված ներդիրներ կամ պարկեր եւ պետք է ունենան փոխադրման ընթացքում արտահոսող հեղուկի պահման միջոց, օրինակ՝ կլանիչ նյութ: Դուրս գրված, դատարկ, չմաքրված փաթեթվածքները 5.1 դասի մնացորդներով պետք է փոխադրվեն փոխադրամիջոցներով եւ կոնտեյներներով, որոնք պատրաստվել կամ համապատասխանեցվել են այնպես, որ բեռները չկարողանան լինել շփման մեջ փայտի կամ այլ այրվող նյութի հետ:

## ԳԼՈՒԽ 7.4

### ՑԻՍՏԵՌՆՆԵՐՈՎ ՓՈԽԱԴՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

- 7.4.1. Արգելվում է վտանգավոր բեռները փոխադրել ցիստեռններում, քանի դեռ 3.2 գլխի Ա աղյուսակի 10-րդ կամ 12-րդ սյունակներում տրված չէ համապատասխան ծածկագիր, կամ իրավասու մարմինը 6.7.1.3-ով սահմանված կարգով չի տվել իր թույլտվությունը: Անհրաժեշտության դեպքում փոխադրումը պետք է իրականացնել 4.2, 4.3, 4.4 կամ 4.5 գլխի դրույթների համաձայն: Փոխադրամիջոցները, անկախ այն հանգամանքից՝ կոշտ շրջանակով փոխադրամիջոցներ, քարշակներ, կցորդներ թե կիսակցորդներ են, պետք է բավարարեն օգտագործմանը վերաբերող 9.1, 9.2 եւ 9.7 գլուխների համապատասխան պահանջները, ինչպես նշված է 3.2 գլխի Ա աղյուսակի 14-րդ սյունակում:
- 7.4.2. 9.1.1.2-ում EX/III, FL կամ AT ծածկագրով նշված փոխադրամիջոցները պետք է օգտագործվեն հետևյալ կերպ՝
- եթե փոխադրման նպատակով նախատեսված է EX/III փոխադրամիջոցի օգտագործում, ապա պետք է օգտագործել բացառապես EX/III փոխադրամիջոց.
  - եթե փոխադրման նպատակով նախատեսված է FL փոխադրամիջոցի օգտագործում, ապա պետք է օգտագործել բացառապես FL փոխադրամիջոց.
  - եթե փոխադրման նպատակով նախատեսված է AT փոխադրամիջոցի օգտագործում, ապա պետք է օգտագործել AT եւ FL փոխադրամիջոցներ:

## ԳԼՈՒԽ 7.5

### ԲԵՌՆՄԱՆ, ԲԵՌՆԱԹԱՓՄԱՆ ԵՒ ՎԱՐՎԵԼԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

7.5.1. Բեռնման, բեռնաթափման եւ վարվելակարգի վերաբերյալ ընդհանուր դրույթները

7.5.1.1. Կոնտեյներների բեռնափոխման կայաններ ունեցող բեռնման եւ բեռնաթափման վայր ժամանելուն պես վարորդը եւ փոխադրամիջոցը, ինչպես նաեւ կոնտեյները (կոնտեյներները), սորուն բեռների համար նախատեսված կոնտեյները (կոնտեյներները), ԳՐՏԿ-ն (ԳՐՏԿ-ները), ցիստեռն-կոնտեյները (կոնտեյներները) կամ շարժական ցիստեռնը (ցիստեռնները), եթե այդպիսիք կան, պետք է բավարարեն սահմանված նորմատիվ պահանջները (համապատասխանեն կարգավորիչ դրույթներին) (հատկապես բեռնման եւ բեռնաթափման նպատակով օգտագործվող փոխադրամիջոցի պատշաճ աշխատունակության, անվտանգության, հուսալիության եւ մաքրության առումով):

7.5.1.2. Եթե «ԱԴՌ» համաձայնագրով այլ բան նախատեսված չէ, բեռնումը չպետք է իրականացվի, եթե՝

- փաստաթղթերի ստուգման արդյունքները կամ
- փոխադրամիջոցի կամ կոնտեյների (կոնտեյներների), սորուն բեռների համար նախատեսված կոնտեյների (կոնտեյներների), ԳՐՏԿ-ի (ԳՐՏԿ-ների), ցիստեռն-կոնտեյների (կոնտեյներների) կամ շարժական ցիստեռնի (ցիստեռնների), եթե այդպիսիք կան, ինչպես նաեւ բեռնման եւ բեռնաթափման աշխատանքներում կիրառվող դրանց սարքավորումների արտաքին զննումը

վկայում է այն մասին, որ փոխադրամիջոցը, վարորդը, կոնտեյները, սորուն բեռների համար նախատեսված կոնտեյները, ԳՐՏԿ-ն, ցիստեռն-կոնտեյները, շարժական ցիստեռնը կամ դրանց սարքավորումները չեն բավարարում սահմանված նորմատիվ պահանջները: Փոխադրամիջոցի կամ կոնտեյների ներքին եւ արտաքին մակերեսները պետք է ստուգվեն բեռնելուց առաջ՝ համոզվելու, որ դրանց կառուցվածքային ամբողջականությանը կամ բեռնման ենթակա փաթեթների կառուցվածքային ամբողջականությանը սպառնացող վտանգ չկա:

7.5.1.3. Եթե «ԱԴՌ» համաձայնագրով այլ բան նախատեսված չէ, ապա բեռնաթափումը չպետք է իրականացվի, եթե վերը նշված ստուգումների արդյունքում հայտնաբերվում են այնպիսի

թերություններ, որոնք կարող են ազդել բեռնաթափման ապահովության կամ անվտանգության վրա:

7.5.1.4. Համաձայն 7.3.3-ի կամ 7.5.11-ի եւ 3.2 գլխի Ա աղյուսակի 17-րդ եւ 18-րդ սյունակների հատուկ դրույթների՝ որոշակի վտանգավոր բեռներ փոխադրվում են միայն «լրիվ բեռնվածք»-ով (տե՛ս սահմանումը 1.2.1-ում): Այդ դեպքում իրավասու մարմինները կարող են պահանջել, որ նմանօրինակ փոխադրման համար օգտագործվող փոխադրամիջոցը կամ մեծ կոնտեյները բեռնվի միայն մի կետում եւ բեռնաթափվի միայն մի կետում:

7.5.1.5. Փաթեթի կամ տրանսպորտային կապոցների ճիշտ դիրքը մատնանշող սլաքների անհրաժեշտության դեպքում փաթեթների դիրքը պետք է համապատասխանի այդ նշումներին:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** Վրանգավոր հեղուկ բեռները հնարավորության դեպքում պետք է բեռնվեն վրանգավոր չոր բեռների տակ:

7.5.1.6. Բոլոր տեղայնացման համակարգերը պետք է բեռնվեն եւ բեռնաթափվեն բեռնման եւ բեռնաթափման այն մեթոդին համապատասխան, որի համար դրանք նախատեսվել են եւ անհրաժեշտության դեպքում փորձարկվել:

7.5.2. Արգելքներ խառը բեռնման համար

7.5.2.1. Արգելվում է միեւնույն փոխադրամիջոցում կամ կոնտեյներում համատեղ բեռնել նախազգուշացնող տարբեր պիտակներ կրող փաթեթներ, եթե չի թույլատրվում խառը բեռնում՝ համաձայն նախազգուշացնող պիտակների հիման վրա կազմված հետեւյալ աղյուսակի՝

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1.** Համաձայն 5.4.1.4.2-ի՝ պետք է կազմվեն առանձին տրանսպորտային փաստաթղթեր այն բեռների համար, որոնք չեն կարող համատեղ բեռնվել միեւնույն փոխադրամիջոցում կամ կոնտեյներում:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2.** Միայն 1-ին դասի նյութեր եւ պատրաստվածքներ պարունակող եւ այս փաթեթվածքների համար պահանջվող՝ վրանգ ցույց փոխադրող այլ պիտակներից բացի թիվ 1, 1.4, 1.5 կամ 1.6 մոդելներին համապատասխան պիտակավորված փաթեթվածքների դեպքում խառը բեռնումը թույլատրվում է 7.5.2.2-ին համապատասխան: 7.5.2.1-ի աղյուսակը կիրառվում է միայն, երբ այդ փաթեթվածքները բեռնվում են այլ դասի նյութեր եւ պատրաստվածքներ պարունակող փաթեթվածքների հետ միասին:



Պիտակների համարները	1	1.4	1.5	1.6	2.1, 2.2, 2.3	3	4.1	4.1 + 1	4.2	4.3	5.1	5.2	5.2 + 1	6.1	6.2	7 A, B, C	8	9				
1	Տե՛ս 7.5.2.2										դ							բ				
1.4					ա	ա	ա		ա	ա	ա	ա		ա	ա		ա	ա	ա	ա	ա	
1.5																						բ
1.6																						բ
2.1, 2.2, 2.3		ա			X	X	X		X	X	X	X		X	X	X	X	X				
3		ա			X	X	X		X	X	X	X		X	X	X	X	X				
4.1		ա			X	X	X		X	X	X	X		X	X	X	X	X				
4.1 + 1								X														
4.2		ա			X	X	X		X	X	X	X		X	X	X	X	X				
4.3		ա			X	X	X		X	X	X	X		X	X	X	X	X				
5.1	դ	ա			X	X	X		X	X	X	X		X	X	X	X	X				
5.2		ա			X	X	X		X	X	X	X	X	X	X	X	X	X				
5.2 + 1												X	X									
6.1		ա			X	X	X		X	X	X	X		X	X	X	X	X				
6.2		ա			X	X	X		X	X	X	X		X	X	X	X	X				
7A, B, C		ա			X	X	X		X	X	X	X		X	X	X	X	X				
8		ա			X	X	X		X	X	X	X		X	X	X	X	X				
9	բ	ա բ գ	բ	բ	X	X	X		X	X	X	X		X	X	X	X	X				

X Թույլատրվում է իրականացնել խառը բեռնում:

ա Թույլատրվում է իրականացնել 1.4S ծածկագրով նյութերի եւ պատրաստվածքների խառը բեռնում:

բ Թույլատրվում է իրականացնել 1-ին դասի բեռների եւ 9-րդ դասի փրկարարական սարքավորանքի խառը բեռնում (ՄԱԿ-ի նշագրման 2990, 3072 եւ 3268 համարներ):

գ Թույլատրվում է իրականացնել 1.4 ենթադասի «G» համարտեղեխության խմբի (ՄԱԿ-ի նշագրման 0503 համար) անվտանգության հրատեխնիկական սարքերի եւ 9-րդ դասի (ՄԱԿ-ի նշագրման 3268 համար) անվտանգության հրատեխնիկական սարքերի խառը բեռնում:

դ Թույլատրվում է պայթող պայթուցիկների (բացառությամբ ՄԱԿ-ի նշագրման 0083 համար «C» տեսակի պայթուցիկ նյութերի) եւ ամոնիումի նիտրատի (ՄԱԿ-ի նշագրման 1942 եւ 2067 նշագրման համարներ), ամոնիումի նիտրատի էմուլսիա, սուսպենզիա կամ դոնդող (ՄԱԿ-ի նշագրման 3375 համար) եւ ավալիական մետաղի նիտրատների եւ հողալկալիական մետաղի նիտրատների խառը բեռնում՝ պայմանով, որ բեռնավարվելակարգը նույնականացվի 1-ին դասի պայթող պայթուցիկների վարվելակարգի հետ ցուցանակների փակցման, տարանջատման, դասավորման եւ թույլատրելի առավելագույն բեռնվածության որոշման նկատառումներով: Ալկալիական մետաղի նիտրատների շարքին են դասվում

ցեսիումի նիտրատը (ՄԱԿ 1451), լիթիումի նիտրատը (ՄԱԿ 2722), կալիումի նիտրատը (ՄԱԿ 1486), ռուբիդիումի նիտրատը (ՄԱԿ 1477) և նատրիումի նիտրատը (ՄԱԿ 1498): Հողալկալիական մեդաղի նիտրատների շարքին են դասվում բարիումի նիտրատը (ՄԱԿ 1446), բերիլիումի նիտրատը (ՄԱԿ 2464), կալցիումի նիտրատը (ՄԱԿ 1454), մագնեզիումի նիտրատը (ՄԱԿ 1474) և սպրոնցիումի նիտրատը (ՄԱԿ 1507):

7.5.2.2. 1-ին դասի նյութեր կամ պատրաստվածքներ պարունակող փաթեթները, որոնք պիտակավորված են համատեղելիության տարբեր խմբերին դասվող թիվ 1, 1.4, 1.5 կամ 1.6 մոդելներին համապատասխան, կարող են համատեղ բեռնվել միեւնույն փոխադրամիջոցում կամ կոնտեյներում, եթե թույլատրվում է իրականացնել խառը բեռնում՝ համապատասխան համատեղելիության խմբերի համար նախատեսված հետեւյալ աղյուսակի համաձայն՝

Համատեղելիության խումբ	A	B	C	D	E	F	G	H	J	L	N	S
A	X											
B		X		ա								X
C			X	X	X		X				բ գ	X
D		ա	X	X	X		X				բ գ	X
E			X	X	X		X				բ գ	X
F						X						X
G			X	X	X		X					X
H								X				X
J									X			X
L										դ		
N			բ գ	բ գ	բ գ						բ	X
S		X	X	X	X	X	X	X	X		X	X

X Թույլատրվում է իրականացնել խառը բեռնում:

ա Միեւնույն փոխադրամիջոցում կամ կոնտեյներում հնարավոր է համարել բեռնել «B» համատեղելիության խմբի պատրաստվածքներ պարունակող փաթեթները եւ «D» համատեղելիության խմբի նյութեր կամ պատրաստվածքներ պարունակող փաթեթները՝ պայմանով, որ դրանք պարզաճորեն փարանջապված լինեն՝ կանխելու համար «B» համատեղելիության խմբի պատրաստվածքներից «D» համատեղելիության խմբի նյութերին կամ պատրաստվածքներին դեփոնացումը փոխանցելու վրանգը: Տարանջապումը պետք է իրականացվի մեկուսացված խցիկների օգտագործմամբ կամ պայթյունավրանգ նյութերի եւ պատրաստվածքների այս երկու խմբից որեւէ մեկը տեղավորելով հատուկ պաշտպանիչ պաշտպանի համակարգում: Տարանջապման ցանկացած եղանակ հաստատվում է իրավասու մարմնի կողմից:

բ 1.6 ենթադասի «N» համատեղելիության խմբի տարբեր տեսակների պատրաստվածքները կարող են համարել փոխադրվել որպես 1.6 ենթադասի «N» համատեղելիության խմբի պատրաստվածքներ միայն այն դեպքում, եթե փորձարկումների միջոցով կամ համարժեք եղանակով ապացուցվում է, որ պատրաստվածքների փոխադրելիության արդյունքում դեփոնացման պայթյունի լրացուցիչ վրանգ չկա: Հակառակ դեպքում դրանք պետք է համարվեն 1.1 ենթադասի վրանգավոր պատրաստվածքներ:

գ «N» համատեղելիության խմբի պատրաստվածքները «C», «D» կամ «E» համատեղելիության խմբերի նյութերի կամ պատրաստվածքների հետ համարել փոխադրելու դեպքում «N» համատեղելիության խմբի պատրաստվածքները պետք է համարվեն «D»

համարտեղելիության խմբի առանձնահատկություններով օժտված պատրաստվածքներ:

դ «L» համարտեղելիության խմբի նյութեր եւ պատրաստվածքներ պարունակող փաթեթները կարող են բեռնվել միեւնույն փոխադրամիջոցում կամ միեւնույն կոնտեյներում տվյալ համարտեղելիության խմբի նույն տեսակի նյութեր եւ պատրաստվածքներ պարունակող փաթեթների հետ համարտեղ:

7.5.2.3. Միեւնույն փոխադրամիջոցում խառը բեռնման վերաբերյալ արգելքների կիրառման նպատակով հաշվի չեն առնվում հաստ կողապատերով փակ կոնտեյներներում պարունակվող նյութերը: Այնուհանդերձ, խառը բեռնման 7.5.2.1-ով սահմանված արգելքները, որոնք վերաբերում են թիվ 1, 1.4, 1.5 կամ 1.6 մոդելներին համապատասխան պիտակավորված փաթեթների խառը բեռնմանն այլ փաթեթների հետ, եւ համատեղելիության տարբեր խմբերի պայթուցիկների խառը բեռնման վերաբերյալ 7.5.2.2-ով սահմանված արգելքները կիրառվում են նաեւ կոնտեյներում պարունակվող վտանգավոր բեռների նկատմամբ, ինչպես նաեւ այդ նույն փոխադրամիջոցում բեռնված մնացած այլ վտանգավոր բեռների նկատմամբ՝ անկախ նրանից՝ մնացած մյուս բեռները գտնվում են մեկ, թե մի քանի այլ կոնտեյներներում:

7.5.2.4. Բացի 1.4 ենթադասի եւ ՄԱԿ-ի նշագրման 0161 եւ 0499 համարների նյութերից՝ սահմանափակ քանակությամբ ցանկացած պայթուցիկ նյութի եւ պատրաստվածքի հետ վտանգավոր բեռների խառը բեռնումն արգելվում է:

7.5.3. (Նախատեսվում է վերապահում)

7.5.4. Նախազգուշական միջոցներ՝ կապված ուտելիքի, սպառողական այլ ապրանքների եւ անասնակերի հետ

Եթե 3.2 գլխի Ա աղյուսակի 18-րդ սյունակում նյութի կամ պատրաստվածքի համար նշված է CV28 հատուկ դրույթը, ապա ուտելիքի, սպառողական այլ ապրանքների եւ անասնակերի հետ կապված, պետք է ձեռնարկվեն նախազգուշական հետեւյալ միջոցները:

Թիվ 6.1 կամ 6.2 մոդելներին համապատասխան պիտակավորված փաթեթները, ինչպես նաեւ դատարկ չմաքրված փաթեթվածքները, ներառյալ՝ խոշոր փաթեթվածքները եւ սորուն բեռների համար նախատեսված միջին բեռնվածության կոնտեյներները (ՍՄԿ-ները), եւ այնպիսիք, որոնք ունեն թիվ 9 մոդելին համապատասխան պիտակավորում եւ ունեն ՄԱԿ-ի նշագրման 2212, 2315, 2590, 3151, 3152 կամ 3245 համարներ, չպետք է դարսակվեն կամ բեռնվեն փոխադրամիջոցներում, կոնտեյներներում, բեռնման, բեռնաթափման

կամ վերաբեռնման վայրերում շատ մոտ այնպիսի փաթեթներին, որոնցում պարունակվում է սննդամթերք, սպառողական այլ ապրանքներ կամ անասնակեր:

Նշված պիտակավորմամբ փաթեթները սննդամթերք, սպառողական այլ ապրանքներ կամ անասնակեր պարունակող փաթեթներին շատ մոտ բեռնելու դեպքում պետք է հեռու գտնվեն դրանցից՝

ա) հոծ միջնորմներով, որոնց բարձրությունը պետք է նշված պիտակները կրող փաթեթների բարձրությանն ուղիղ համեմատական լինի,

բ) թիվ 6.1, 6.2 կամ 9 մոդելներին համապատասխանող պիտակ չունեցող փաթեթներով կամ թիվ 9 մոդելին համապատասխանող պիտակ ունեցող փաթեթներով, սակայն եթե դրանք չեն պարունակում ՄԱԿ-ի նշագրման 2212, 2315, 2590, 3151, 3152 կամ 3245 համարների բեռներ, կամ

գ) բաժանվեն առնվազն 0,8 մ տարածությամբ,

եթե նշված պիտակավորմամբ փաթեթները չունեն լրացուցիչ փաթեթավորում կամ ամբողջությամբ ծածկված չեն (օրինակ՝ բրեզենտով, փայտաթելքային սալից ծածկով կամ այլ միջոցներով):

7.5.5. Փոխադրվող քանակությունների մասով սահմանափակումները

7.5.5.1. Եթե ներքոթվարկյալ դրույթներով կամ 3.2. գլխի Ա աղյուսակի 18-րդ սյունակի համաձայն կիրառելի 7.5.11-ի լրացուցիչ դրույթներով պահանջվում է փոխադրվող որոշակի բեռների քանակության սահմանափակում, ապա այն հանգամանքը, որ վտանգավոր բեռները գտնվում մեկ կամ մի քանի կոնտեյներում, չպետք է բացասաբար անդրադառնա տրանսպորտային յուրաքանչյուր միավորին ընկնող սույն դրույթներով սահմանված քանակության սահմանափակումների վրա:

7.5.5.2. Պայթյունավտանգ նյութերի եւ պատրաստվածքների մասով սահմանափակումները

7.5.5.2.1. Փոխադրվող նյութեր եւ քանակություններ

Պայթյունավտանգ նյութի ընդհանուր զտաքաշը՝ արտահայտված կիլոգրամներով (կամ բոլոր պատրաստվածքներում պարունակվող պայթյունավտանգ նյութի ընդհանուր զտաքաշը պայթյունավտանգ պատրաստվածքների դեպքում), որը կարող է փոխադրվել տրանսպորտային միավորով, պետք է սահմանափակվի՝ համաձայն հետեւյալ աղյուսակի (տե՛ս նաեւ 7.5.2.2 խառը բեռնման մասին սահմանափակումների վերաբերյալ)։

1-ին դասի բեռներում պարունակվող պայթյունավտանգ նյութի թույլատրելի առավելագույն զտաքաշը տրանսպորտային յուրաքանչյուր

**միավորի համար՝ արտահայտված կիլոգրամներով**

Տրասնպորտային միավոր	Ենթադաս	1.1		1.2	1.3	1.4		1.5 եւ 1.6	Դատարկ չմաքրված փաթեթավածքներ
	Համատեղելիության խումբ	1.1A	1.1 A-ից տարբեր			1.4 S-ից տարբեր	1.4S		
EX/II փոխադրամիջոցներ ա		6.25	1 000	3 000	5 000	15 000	Անսահման ավակ	5 000	Անսահմանավակ
EX/III փոխադրամիջոցներ ա		18.75	16 000	16 000	16 000	16 000	Անսահման ավակ	16 000	Անսահմանավակ

ա EX/II եւ EX/III փոխադրամիջոցների նկարագրության համար տե՛ս 9-րդ մասը:

7.5.5.2.2. Եթե 1-ին դասի տարբեր ենթադասերի նյութերն ու պատրաստվածքները բեռնվում են մեկ տրանսպորտային միավորում՝ համաձայն 7.5.2.2-ի խառը բեռնման մասին արգելքների պահանջների, ապա դրանք ամբողջությամբ պետք է դիտարկվեն որպես առավելագույն վտանգ ներկայացնող բեռների ենթադասին պատկանող նյութեր (1.1, 1.5, 1.2, 1.3, 1.6, 1.4 հաջորդականությամբ): Այնուհանդերձ, «S» համատեղելիության խմբի պայթուցիկների զտաքաշը չպետք է հաշվի առնվի փոխադրված քանակների սահմանավակումների հաշվարկման ժամանակ:

Եթե որպես 1.5D դասակարգված նյութերը փոխադրվում են 1.2 ենթադասի նյութերի կամ պատրաստվածքների հետ համատեղ մեկ տրանսպորտային միավորում, ապա դրանք ամբողջությամբ պետք է դիտարկվեն որպես փոխադրման ենթակա 1.1 ենթադասի նյութեր:

7.5.5.2.3. Պայթուցիկների փոխադրումը ՊԱՇՄ-ներով

Պայթուցիկների փոխադրումը ՊԱՇՄ-ներով թույլատրվում է բացառապես հետեւյալ պայմանների բավարարման դեպքում.

ա) իրավասու մարմինը պետք է թույլատրի փոխադրման աշխատանքների իրականացումն իր տարածքում.

բ) փոխադրվող փաթեթավորված պայթուցիկների տեսակն ու քանակը պետք է սահմանավակվեն այնքանով, որն անհրաժեշտ է՝ ՊԱՇՄ-ներում նյութի համապատասխան քանակի արտադրման համար եւ ոչ մի դեպքում չպետք է գերազանցեն հետեւյալ արժեքները՝

- 200 կգ «D» համատեղելիության խմբի պայթուցիկներ, եւ
- դետոնատորների հավաքվածքների կամ դետոնատորների ընդամենը 400 միավոր, կամ դրանք միասին,

Եթե այլ բան հաստատված չէ իրավասու մարմնի կողմից.

գ) փաթեթավորված պայթուցիկները պետք է փոխադրվեն

բացառապես 6.12.5-ի պահանջները բավարարող բեռնախցիկներում.

- դ) միեւնույն բեռնախցիկում, փաթեթավորված պայթուցիկներից զատ, արգելվում է փոխադրել վտանգավոր այլ բեռներ.
- ե) անմիջապես փոխադրումից առաջ փաթեթավորված պայթուցիկները պետք է միայն բեռնվեն ՊԱՇՄ-ներում վտանգավոր այլ բեռների բեռնումն ավարտելուն պես.
- զ) եթե թույլատրվում է իրականացնել 5.1 դասի պայթուցիկների եւ նյութերի խառը բեռնում (ՄԱԿ-ի նշագրման 1942 եւ 3375 համարներ), ապա բեռն ամբողջությամբ դիտարկվում է որպես 1-ին դասի պայթուցիկներ բեռնամեկուսացման, դասավորման եւ թույլատրելի առավելագույն բեռնվածության նկատառումներով:

7.5.5.3. Մեկ տրանսպորտային միավորի մեջ 5.2 դասի օրգանական պերօքսիդների եւ 4.1 դասի «B», «C», «D», «E» կամ «F» տեսակի ինքնառեակտիվ նյութերի եւ 4.1 դասի պոլիմերային նյութերի առավելագույն քանակությունը սահմանափակված է 20 000 կգ-ով:

7.5.6. (Նախատեսվում է վերապահում)

7.5.7. Տնօրինումը եւ դասավորումը

7.5.7.1. Փոխադրամիջոցը կամ կոնտեյներն ըստ անհրաժեշտության պետք է հագեցվի այնպիսի սարքերով, որոնց շնորհիվ վտանգավոր բեռների ամրացման եւ տնօրինման աշխատանքները դյուրին կլինեն: Փոխադրամիջոցում կամ կոնտեյներում վտանգավոր նյութեր եւ չփաթեթավորված վտանգավոր պատրաստվածքներ պարունակող փաթեթները պետք է ամրակել փոխադրման ընթացքում բեռների դիրքի կամ բեռների վրա բացասաբար անդրադարձող տեղաշարժն արգելող համապատասխան միջոցներով (ինչպես օրինակ՝ ամրակման գոտիներով, տարաշարժուն վերադրակներով, արտաշարժ բարձակներով (կալունակներով)): Եթե վտանգավոր բեռները փոխադրվում են այլ բեռների հետ (օրինակ՝ ծանր սարքավորումներ կամ կավարամածներ), ապա փոխադրամիջոցներում կամ կոնտեյներներում այդ բոլոր բեռները պետք է հուսալիորեն ամրակվեն կամ դասավորվեն այնպես, որը կկանխի վտանգավոր բեռների անջատումը: Փաթեթների տեղաշարժը կարելի է կանխել բլոկավորման կամ ամրակման միջոցով, ինչպես նաեւ ազատ տարածքներում տակդիրներ տեղադրելով: Եթե օգտագործվում են բեռի ամրացման այնպիսի սարքեր, ինչպիսիք են բանդաժային ժապավենները կամ գոտիները, ապա դրանք չպետք է չափազանց ծիգ լինեն, որպեսզի փաթեթի դեֆորմացում կամ վնասվածք չառաջացնեն<sup>1</sup> Սույն

<sup>1</sup> Վտանգավոր բեռների դասավորման մասին ցուցումները ներկայացված են «Ճանապարհային

պարբերության պահանջները համարվում են բավարարված, եթե ապահովվում է բեռի անվտանգությունը EN 12195-1:2010 ստանդարտին համապատասխան:

7.5.7.2. Փաթեթները չպետք է դարսակվեն, եթե նախատեսված չեն այդ նպատակի համար: Եթե պետք է համատեղ բեռնվեն տարբեր կառուցվածքի տեսակների փաթեթներ, որոնք նախատեսված են դարսակման համար, ապա անհրաժեշտ է հաշվի առնել դարսակման առումով դրանց համատեղելիությունը: Կրող հարմարանքների միջոցով անհրաժեշտության դեպքում պետք է կանխել վերնամասում դարսակված փաթեթների վտանգավոր ազդեցությունը դրանցից ներքե գտնվող փաթեթների վրա:

7.5.7.3. Անհրաժեշտ է կանխել վտանգավոր բեռներ պարունակող փաթեթների վնասվելը բեռնման եւ բեռնաթափման ժամանակ:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** Սխալ բեռնման-բեռնաթափման կամ տեղափոխման դեպքում պատահական վնասելուց խուսափելու նպատակով անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել փաթեթների կարգավորմանը՝ դրանք փոխադրմանը նախապատրաստելիս, փոխադրման նպատակով օգտագործվող փոխադրամիջոցի կամ կոնտեյնրի տեսակին, ինչպես նաեւ բեռնման կամ բեռնաթափման եղանակին:

7.5.7.4. Փոխադրամիջոցներով փոխադրվող կոնտեյնրների, ցիստեռն-կոնտեյնրների, շարժական ցիստեռնների եւ ԳԲՏԿ-ների բեռնման, դասավորման եւ հեռացման նկատմամբ կիրառվում են նաեւ 7.5.7.1-ի դրույթները:

7.5.7.5. Փոխադրամիջոցի անձնակազմի անդամներին արգելվում է բացել վտանգավոր բեռներ պարունակող փաթեթները:

7.5.7.6. Սորուն բեռների համար նախատեսված փափուկ կոնտեյնրների բեռնումը

7.5.7.6.1. Սորուն բեռների համար նախատեսված փափուկ կոնտեյնրը պետք է փոխադրվի այնպիսի փոխադրամիջոցով կամ կոնտեյնրով, որն ունի կոշտ պատեր եւ ծայրեր, որոնք ձգվում են սորուն բեռների համար նախատեսված փափուկ կոնտեյնրի բարձրության առնվազն երկու երրորդի չափով: Փոխադրման համար նախատեսված փոխադրամիջոցները պետք է ունենան փոխադրամիջոցի կայունության ապահովման հնարավորություն՝ հաստատված ԵՏՀ-ի թիվ 13<sup>2</sup>

---

Կրանսպորտով փոխադրվող բեռների դարսման եվրոպական լավագույն գործելակերպ»-ի ուղեցույցներում՝ հրատարակված Եվրոպական հանձնաժողովի կողմից: Այլ ցուցումներ կարելի է ձեռք բերել իրավասու մարմիններից եւ արդյունաբերական գերատեսչություններից:

<sup>2</sup> ԵՏՀ թիվ 13 կանոնակարգ (M, N եւ O կատեգորիայի փոխադրամիջոցների հաստատման վերաբերյալ միասնական դրույթներ՝ արգելակման մասին):



կանոնակարգով:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** Սորուն բեռների համար նախատեսված փափուկ կոնտեյները փոխադրամիջոց կամ կոնտեյներ բեռնելիս հատուկ ուշադրություն է պետք դարձնել 7.5.7.1-ում եւ ՄՄԿ/ԱՄԿ/ՄԱԿ-ի ԵՏՀ-ի «Բեռների տրանսպորտային միավորների փաթեթավորման պրակտիկայի մասին» օրենսգրքում (CTU Code) նշված վտանգավոր բեռների բեռնման եւ բեռնաթափման եւ դասավորման վերաբերյալ ուղեցույցին:

7.5.7.6.2. Սորուն բեռների համար նախատեսված փափուկ կոնտեյներները պետք է ամրակել փոխադրման ընթացքում փոխադրամիջոցում կամ կոնտեյներում սորուն բեռների համար նախատեսված փափուկ կոնտեյների դիրքը փոփոխող կամ դրա վրա բացասաբար անդրադարձող տեղաշարժն արգելող համապատասխան միջոցներով: Սորուն բեռների համար նախատեսված փափուկ կոնտեյներների տեղաշարժը կարելի է կանխել բլոկավորման կամ ամրակման միջոցով, ինչպես նաեւ ազատ տարածքներում տակդիրներ տեղադրելով: Եթե օգտագործվում են ամրացման այնպիսի սարքեր, ինչպիսիք են բանդաժային ժապավենները կամ գոտիները, ապա դրանք չպետք է չափազանց ձիգ լինեն, որպեսզի սորուն բեռների համար նախատեսված փափուկ կոնտեյներների դեֆորմացում կամ վնասվածք չառաջացնեն:

7.5.7.6.3. Սորուն բեռների համար նախատեսված փափուկ կոնտեյներները չպետք է դարսակվեն:

7.5.8. Բեռնաթափումից հետո իրականացվող մաքրման աշխատանքները

7.5.8.1. Այն դեպքում, երբ փաթեթավորված վտանգավոր բեռներ պարունակող փոխադրամիջոցը կամ կոնտեյները բեռնաթափելուց հետո հայտնաբերվում է բեռների արտահոսք, անհրաժեշտ է ցանկացած դեպքում, նախքան վերաբեռնումը, հնարավորինս արագ մաքրել փոխադրամիջոցը կամ կոնտեյները:

Եթե մաքրումը տեղում հնարավոր չէ իրականացնել, ապա, պահպանելով անվտանգության համապատասխան պահանջները, անհրաժեշտ է փոխադրել փոխադրամիջոցը կամ կոնտեյները համապատասխան մոտակա տարածք, որտեղ մաքրումը կարող է իրականացվել:

Փոխադրումը համարվում է պատշաճ անվտանգությամբ կազմակերպված, եթե ձեռնարկված են վտանգավոր բեռների անվերահսկելի անջատումը կանխող համապատասխան միջոցներ:

7.5.8.2. Նախքան վերաբեռնումն անհրաժեշտ է պատշաճ մակարդակով մաքրել սորուն վտանգավոր բեռներով բեռնված փոխադրամիջոցները կամ կոնտեյներները, եթե լցավորման ենթակա նոր բեռը տարբերվում է նախորդից:

7.5.9. Ծխելու արգելքը

Բեռնման-բեռնաթափման աշխատանքների ժամանակ արգելվում է ծխել փոխադրամիջոցների կամ կոնտեյներների մոտակայքում եւ փոխադրամիջոցների կամ կոնտեյներների ներսում: Ծխելու հետ կապված այդ արգելքը վերաբերում է նաեւ էլեկտրոնային ծխախոտների եւ նմանատիպ սարքերի օգտագործմանը:

7.5.10. Նախազգուշական միջոցներ էլեկտրաստատիկ լիցքերից խուսափելու համար

Դյուրավառ գազերի, 60 °C կամ դրանից ցածր բռնկման ջերմաստիճան ունեցող հեղուկների կամ ՄԱԿ-ի նշագրման 1361 համարի փաթեթավորման II խմբի ածխածնի կամ մրի դեպքում ցիստեռնները դատարկելուց կամ լցավորելուց առաջ անհրաժեշտ է ապահովել փոխադրամիջոցի շասսիի, շարժական ցիստեռնի կամ ցիստեռն-կոնտեյների պատշաճ էլեկտրական հողանցում: Բացի այդ, անհրաժեշտ է սահմանափակել լցավորման արագությունը:

7.5.11. Առանձին դասերի կամ հատուկ տիպի բեռների նկատմամբ կիրառվող լրացուցիչ դրույթները

Ի լրումն 7.5.1 - 7.5.10-ի դրույթների՝ պետք է կիրառվեն հետեւյալ դրույթները 3.2 գլխի Ա աղյուսակում 18 սյունակի որեւէ դիրքում ներկայացվելու դեպքում.

CV1 1) Արգելվում է իրականացնել հետեւյալ գործողությունները.

ա) բեռնել կամ բեռնաթափել բեռները հասարակական վայրերի կառուցապատ տարածքներում առանց իրավասու մարմինների հատուկ թույլտվության.

բ) առանց իրավասու մարմիններին նախօրոք տրված համապատասխան ծանուցման՝ բեռնել կամ բեռնաթափել բեռները կառուցապատ տարածքներից զատ հասարակական այլ վայրում, եթե միայն նմանատիպ գործողությունների հրատապ իրականացումը չի բխում անվտանգության նկատառումներից:

2) Այն դեպքում, երբ բեռնման-բեռնաթափման աշխատանքները

որել է պատճառով պետք է իրականացվեն հասարակական վայրում, ապա տարատեսակ նյութերն ու պատրաստվածքները պետք է առանձնացվեն ըստ նախազգուշական պիտակների:

CV2 1) Փոխադրամիջոցի կամ կոնտեյնների բեռնման մակերեսը պետք է ամբողջությամբ մաքրվի բեռնելուց առաջ:

2) Արգելվում է բեռներ տեղափոխող փոխադրամիջոցներում կամ կոնտեյններում, դրանց հարեանությամբ, ինչպես նաև այդ բեռների բեռնման եւ բեռնաթափման ժամանակ օգտագործել կրակ կամ բաց բոց:

CV3 Տե՛ս 7.5.5.2:

CV4 «L» համատեղելիության խմբի նյութերն ու պատրաստվածքները պետք է բացառապես փոխադրվեն լրիվ բեռնվածքով:

CV5 - CV8-ը (Նախատեսվում է վերապահում):

CV9 Արգելվում է վայր գցել կամ հարվածների ենթարկել փաթեթները:

Անհրաժեշտ է տարաները տեղավորել այնպիսի փոխադրամիջոցում կամ կոնտեյններում, որը շուտ չի գալիս կամ չի ընկնում:

CV10 Անհրաժեշտ է 1.2.1-ում սահմանված բալոնները հորիզոնական դիրքով տեղակայել փոխադրամիջոցի կամ կոնտեյնների երկայնական առանցքին զուգահեռ կամ ուղիղ անկյան տակ, այնուհանդերձ, առջեւի լայնական պատին մոտ գտնվող բալոնները պետք է տեղակայվեն դեպի նշված առանցքի ուղիղ անկյուն: Մեծ տրամագծով կարճ բալոնները (մոտ 30սմ եւ ավելի) կարող են տեղակայվել երկայնական ուղղությամբ, ընդ որում, դրանց փականների պաշտպանիչ հարմարանքները պետք է ուղղվեն դեպի փոխադրամիջոցի կամ կոնտեյնների կենտրոն:

Թույլատրվում է ուղղահայաց դիրքով տեղակայել այն բալոնները, որոնք բավականաչափ դիմացկուն են կամ փոխադրվում են համապատասխան այնպիսի հարմարանքներով, որոնք գործնականորեն կանխում են դրանց շուտ գալը:

Անհրաժեշտ է հուսալիորեն եւ համապատասխանորեն ամրակել, կապկպել կամ ամրացնել հորիզոնական դիրքով տեղակայված բալոնները՝ կանխելու համար դրանց տեղաշարժը:

CV11 Տարաները պետք է միշտ տեղադրվեն սկզբնապես նախատեսված դիրքին համապատասխան եւ պաշտպանված լինեն այլ փաթեթներից առաջացող հնարավոր վնասվածքներից:

CV12 Եթե պատրաստվածքների հետ բեռնված տակդիրները դարսակված են, ապա տակդիրների յուրաքանչյուր բաժին պետք է հավասարաչափ բաշխվի դրանից ներքե գտնվող բաժնի վրա՝ անհրաժեշտության դեպքում բաժինների միջև տեղադրելով բավականաչափ ամուր նյութ:

CV13 Եթե որեւէ նյութ արտահոսել եւ թափվել է փակ փոխադրամիջոցի կամ կոնտեյնների մեջ, ապա արգելվում է կրկին օգտագործել այդ փոխադրամիջոցը կամ կոնտեյնները, քանի դեռ այն ամբողջությամբ չի մաքրվել եւ անհրաժեշտության դեպքում՝ ախտահանվել կամ վարակագերծվել: Անհրաժեշտ է ստուգել միեւնույն փոխադրամիջոցով կամ կոնտեյներով փոխադրվող ցանկացած այլ տեսակի բեռներ եւ պատրաստվածքներ՝ հնարավոր ռադիոակտիվ աղտոտվածության հայտնաբերման նպատակով:

CV14 Բեռները պետք է փոխադրման ընթացքում պաշտպանված լինեն արեւի ուղիղ լույսից եւ տաքությունից:

Փաթեթները պետք է պահպանվեն միայն զով, լավ օդափոխված վայրում՝ ջերմության աղբյուրներից հեռու:

CV15 Տե՛ս 7.5.5.3:

CV16 - CV19-ը (Նախատեսվում է վերապահում)

CV20 5.3 գլխի եւ 7.2 գլխի V1 եւ V8(5) եւ (6) հատուկ դրույթները չեն կիրառվում, եթե նյութը փաթեթավորված է 4.1.4.1-ում նշված P520 փաթեթավորման ցուցման «OP1» կամ «OP2» փաթեթավորման մեթոդով, իսկ նյութերի ընդհանուր քանակությունը, որոնց նկատմամբ կիրառվում է սույն շեղումը, մեկ տրանսպորտային միավորի համար սահմանափակված է 10 կգ-ով:

CV21 Բեռնելուց առաջ անհրաժեշտ է մանրակրկիտ ստուգման ենթարկել տրանսպորտային միավորը:

Նախքան փոխադրումը բեռնառաքիչին պետք է տեղեկացնել՝

- սառեցման համակարգի աշխատունակության, ինչպես նաեւ փոխադրման ճանապարհին սառնազդակի մատակարարների մասին,
- ջերմաստիճանի նկատմամբ վերահսկողությունը կորցնելու դեպքում ձեռնարկվելիք գործողությունների մասին:

7.2 գլխի V8(3) հատուկ դրույթով նախատեսված R2 կամ R4 մեթոդներին համապատասխան ջերմաստիճանի վերահսկողության դեպքում անհրաժեշտ է ունենալ բավարար քանակությամբ ոչ դյուրավառ սառնազդակ (օրինակ՝ հեղուկ ազոտ կամ չոր սառույց),

ներառյալ՝ պահեստային բավականաչափ պաշարները ճանապարհային հնարավոր ուշացումների դեպքում, եթե չկան համալրման միջոցներ:

Անհրաժեշտ է դարսակել փաթեթներն այնպես, որ դրանք ցանկացած պահի հասանելի լինեն:

Փոխադրման, բեռնման, բեռնաթափման, ինչպես նաև միջանկյալ ցանկացած կանգառների ամբողջ ընթացքում պետք է պահպանվի վերահսկման նշված ջերմաստիճանը:

CV22 Փաթեթները պետք է այնպես բեռնվեն, որը բեռնման ամբողջ հատվածում օդի ազատ շրջանառության շնորհիվ թույլ կտա բեռի հավասարաչափ ջերմաստիճանն ապահովելը: Եթե մեկ փոխադրամիջոցի կամ մեծ կոնտեյնների պարունակությունը գերազանցում է դյուրավառ պինդ նյութերի, պոլիմերային նյութի եւ (կամ) օրգանական պերօքսիդների 5 000 կգ-ը, ապա անհրաժեշտ է բաժանել բեռը 5 000 կգ-ը չգերազանցող կոմպլեկտների՝ առանձնացված առնվազն 0,05 մ օդային բացակներով:

CV23 Փաթեթների դասավորման ժամանակ անհրաժեշտ է ձեռնարկել հատուկ միջոցներ՝ ջրի հետ դրանց շփումը կանխելու նպատակով:

CV24 Բեռնելուց առաջ փոխադրամիջոցները եւ կոնտեյնները պետք է ամբողջությամբ մաքրվեն, մասնավորապես, հեռացվեն դյուրավառ ցանկացած մնացուկ (ծղոտ, չորացրած խոտ, թուղթ եւ այլն):

Արգելվում է փաթեթների դարսակման նպատակով օգտագործել արագ բռնկվող (դյուրավառ) նյութեր:

CV25 1) Անհրաժեշտ է փաթեթներն այնպես դարսակել, որ ցանկացած պահի հասանելի լինեն:

2) Եթե անհրաժեշտ է փոխադրել փաթեթները ոչ ավելի, քան 15 °C մթնոլորտային ջերմաստիճանի պայմաններում կամ սառեցված վիճակում, ապա բեռնաթափման կամ պահպանման ընթացքում պետք է ապահովվի նշված ջերմաստիճանը:

3) Փաթեթները պետք է պահպանվեն բացառապես ջերմության աղբյուրներից հեռու գտնվող զով վայրում:

CV26 Փոխադրամիջոցի կամ կոնտեյնների փայտե մասերը, որոնք շփվել են այս նյութերի հետ, պետք է ապամոնտաժվեն եւ այրվեն:

CV27 1) Անհրաժեշտ է դարսակել փաթեթներն այնպես, որ

ցանկացած պահի հասանելի լինեն:

- 2) Եթե անհրաժեշտ է փոխադրել փաթեթները սառեցված վիճակում, ապա բեռնաթափման կամ պահպանման ընթացքում պետք է ապահովվի սառնարանային շղթայի անխափան աշխատանք:
- 3) Փաթեթները պետք է պահպանվեն բացառապես ջերմության աղբյուրներից հեռու գտնվող զով վայրում:

CV28 Տե՛ս 7.5.4:

CV29 - CV32-ը (Նախատեսվում է վերապահում)

**CV33 ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1.** «Կրիտիկական խումբ» նշանակում է հասարակության անդամների խումբ, որը բավականաչափ միատարր է ճառագայթման տվյալ աղբյուրով եւ ճառագայթահարման տվյալ եղանակով ճառագայթման ենթարկվելու առումով, եւ որի անդամներից յուրաքանչյուրն ստանում է առավելագույն էֆեկտիվ դոզա նշված աղբյուրից ճառագայթահարման նշված եղանակով:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2.** «Հասարակության անդամներ» նշանակում է ընդհանուր առմամբ հասարակության յուրաքանչյուր անդամ՝ բացառությամբ մասնագիտական կամ բժշկական ճառագայթահարման ենթարկվող անձանց:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3.** «Աշխատող» նշանակում է ցանկացած անձ, ով աշխատում է, անկախ այն հանգամանքից՝ աշխատում է լրիվ աշխատաժամանակով, ոչ լրիվ աշխատաժամանակով, թե ժամանակավոր, եւ ընդունել է մասնագիտական ճառագայթահարումից պաշտպանվելու վերաբերյալ իրավունքներն ու պարտականությունները:

1) Տարանջատումը

1.1) Ռադիոակտիվ նյութ եւ չփաթեթավորված ռադիոակտիվ նյութ պարունակող փաթեթները, տրանսպորտային կապոցները, կոնտեյներները եւ ցիստեռնները փոխադրման ժամանակ պետք է տարանջատված լինեն՝

ա) մշտական աշխատանքի գոտիներում աշխատող անձնակազմից.

i) համաձայն ստորեւ ներկայացված Ա աղյուսակի, կամ

ii) բաժանող հեռավորությամբ, որը հաշվարկված է

տարեկան ճառագայթահարման 5 մՋվ-ին (mSv) համարժեք դոզայով եւ մոդելների խելամտորեն ընտրված պարամետրերով:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** Բաժանող հեռավորության հաշվարկման ժամանակ հաշվի չի առնվում ճառագայթային պաշտպանության նկատառումներով անհատական դոզիմետրիկ հսկողության ենթակա աշխատող անձնակազմը:

- բ) բնակչության ներկայացուցիչներից հանրության համար մշտապես հասանելի վայրերում.
  - i) համաձայն ստորեւ ներկայացված Ա աղյուսակի, կամ
  - ii) բաժանող հեռավորությամբ, որը հաշվարկված է տարեկան ճառագայթահարման 1 մՋվ-ին (mSv) համարժեք դոզայով եւ մոդելների խելամտորեն ընտրված պարամետրերով,
- գ) չերեւակված լուսանկարչական երիզներից եւ փոստային ծանրոցներից.
  - i) համաձայն ստորեւ ներկայացված Բ աղյուսակի, կամ
  - ii) բաժանող հեռավորությամբ, որի հաշվարկման համար պետք է ելնել նրանից, որ չերեւակված լուսանկարչական երիզների խմբաքանակի ճառագայթահարման դոզան չպետք է գերազանցի 0,1 մՋվ (mSv) մակարդակը ռադիոակտիվ նյութի փոխադրման արդյունքում, եւ

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** Պետք է համարվի, որ փոստային ծանրոցները պարունակում են չերեւակված լուսանկարչական երիզներ եւ թիթեղներ, այդ իսկ պատճառով անհրաժեշտ է միեւնույն եղանակով տարանջատել դրանք ռադիոակտիվ նյութերից:

- դ) վտանգավոր այլ բեռներից՝ համաձայն 7.5.2-ի պահանջների:

**Աղյուսակ Ա. Նվազագույն հեռավորությունը «II-ԴԵՂԻՆ» (II-YELLOW) կամ «III-ԴԵՂԻՆ» (III-YELLOW) կատեգորիայի փաթեթների եւ մարդկանց միջեւ**

Տրասնպորտային ինդեքսների գումարը ոչ ավելի, քան	Ճառագայթման տեսողությունը մեկ տարվա ընթացքում (ժամում)			
	Հանրության համար մշտապես հասանելի վայրերում		Մշտական աշխատանքի գոտիներում	
	50	250	50	250
	Պաշտպանիչ պատյանի բացակայության դեպքում բաժանող հեռավորությունը՝ արտահայտված մետրերով			
2	1	3	0,5	1
4	1,5	4	0,5	1,5
8	2,5	6	1,0	2,5
12	3	7,5	1,0	3
20	4	9,5	1,5	4
30	5	12	2	5
40	5,5	13,5	2,5	5,5
50	6,5	15,5	3	6,5

**Աղյուսակ Բ. Նվազագույն հեռավորությունը «II-ԴԵՂԻՆ» (II-YELLOW) կամ «III-ԴԵՂԻՆ» (III-YELLOW) կատեգորիայի փաթեթների եւ փոստային ծանրոցների կամ «FOTO» բառով նշված փաթեթների միջեւ**

Փաթեթների ընդհանուր թիվը ոչ ավելի, քան		Տրասնպորտային ինդեքսների գումարը ոչ ավելի, քան	Տեղափոխման կամ պահպանման տեսողությունը՝ արտահայտված ժամերով							
			1	2	4	10	24	48	120	240
Կատեգորիա		«III-դեղին»	Հեռավորության նվազագույն չափերն արտահայտված մետրերով							
«III-դեղին»			0,2	0,5	0,5	0,5	0,5	1	1	2
		0,5	0,5	0,5	0,5	1	1	2	3	5
	1	1	0,5	0,5	1	1	2	3	5	7
	2	2	0,5	1	1	1,5	3	4	7	9
	4	4	1	1	1,5	3	4	6	9	13
	8	8	1	1,5	2	4	6	8	13	18
1	10	10	1	2	3	4	7	9	14	20
2	20	20	1,5	3	4	6	9	13	20	30
3	30	30	2	3	5	7	11	16	25	35
4	40	40	3	4	5	8	13	18	30	40
5	50	50	3	4	6	9	14	20	32	45



1.2) «II-ԴԵՂԻՆ» (II-YELLOW) կամ «III-ԴԵՂԻՆ» (III-YELLOW) կատեգորիայի փաթեթները կամ տրանսպորտային կապոցները փոխադրելիս պետք է բացառվի փոխադրամիջոցի նույն հատվածում ուղեւորների ներկայությունը՝ բացառությամբ նշված փաթեթները կամ տրանսպորտային կապոցներն այդ նպատակով հատկացված հատվածներում փոխադրելիս ուղեկցելու համար հատուկ լիազորված անձանց:

1.3) Արգելվում է այլ անձանց ներկայությունը «II-YELLOW» կամ «III-YELLOW» կատեգորիայի փաթեթներ, տրանսպորտային կապոցներ կամ կոնտեյներներ փոխադրող փոխադրամիջոցում՝ բացառությամբ փոխադրամիջոցի անձնակազմի:

2) Փոխադրամիջոցում ակտիվության մակարդակը

LSA կամ SCO տեսակի նյութի քանակությունը 1-ին տեսակի արդյունաբերական փաթեթում (IP-1), 2-րդ տեսակի արդյունաբերական փաթեթում (IP-2), 3-րդ տեսակի արդյունաբերական փաթեթում (IP-3), կամ չփաթեթավորված վիճակում փոխադրելու դեպքում փոխադրամիջոցում լիարժեք ակտիվության մակարդակը չպետք է գերազանցի Գ աղյուսակում նշված հետեւյալ սահմանները.

**Աղյուսակ Գ. Փոխադրամիջոցում ակտիվության մակարդակն արդյունաբերական փաթեթներով կամ առանց փաթեթների LSA եւ SCO տեսակի նյութերի փոխադրման ժամանակ**

Նյութի կամ առարկայի բնույթը	Փոխադրամիջոցի ակտիվության մակարդակը
LSA-I	Առանց սահմանափակման
LSA-II եւ LSA-III չայրվող պինդ նյութեր	Առանց սահմանափակման
LSA-II եւ LSA-III այրվող պինդ նյութերը, բոլոր հեղուկներն ու գազերը	100 A2
SCO	100 A2

3) Բեռների դասավորումը փոխադրման ընթացքում եւ պահպանումը տարանցիկ պահման ժամանակ

3.1) Բեռները պետք է լինեն հուսալիորեն դասավորված:

3.2) Եթե փաթեթի կամ տրանսպորտային կապոցի մակերեսի մոտ միջին ջերմային հոսքը չի գերազանցում 15 Կտ/մ<sup>2</sup>, իսկ վերջիններիս անմիջականորեն շրջապատող հիմնական բեռները չեն գտնվում պարկերի մեջ, փաթեթը կամ տրանսպորտային կապոցը կարող է փոխադրվել կամ պահպանվել փաթեթավորված հիմնական բեռների հետ՝ առանց պահպանելու դասավորման վերաբերյալ որեւէ հատուկ պահանջ, բացառությամբ այն դեպքի, երբ հաստատման մասին իրավասու մարմնի կողմից տրված համապատասխան սերտիֆիկատում կա դասավորմանը վերաբերող հատուկ պահանջ:

3.3) Կոնտեյներների տեղավորումը եւ փաթեթների, տրանսպորտային կապոցների ու կոնտեյներների կուտակումը պետք է վերահսկվի հետևյալ կերպ՝

ա) բացառությամբ բացառիկ օգտագործման դեպքերի եւ LSA-1 տեսակի նյութերի բեռների, մեկ փոխադրամիջոցով փոխադրվող փաթեթների, տրանսպորտային կապոցների եւ կոնտեյներների ընդհանուր քանակը պետք է սահմանափակվի այնպես, որ փոխադրամիջոցում տրանսպորտային ինդեքսների ընդհանուր գումարը չգերազանցի ստորեւ ներկայացվող Դ աղյուսակում բերված արժեքները.

բ) սովորական պայմաններում փոխադրման դեպքում ճառագայթման մակարդակը փոխադրամիջոցի արտաքին մակերեսի ցանկացած կետում չպետք է գերազանցի 2 մՋվ/ժամը, իսկ նրանից 2 մետր հեռավորության վրա՝ 0,1 մՋվ/ժամը՝ բացառությամբ բացառիկ օգտագործման կարգով

փոխադրվող բեռների, որոնց փոխադրամիջոցի ռադիոակտիվ ճառագայթման թույլատրելի մակարդակը սահմանված է (3.5) կետի (բ) եւ (գ) մասերով.

- գ) կրիտիկականության տեսակետից անվտանգության ինդեքսների ընդհանուր գումարը կոնտեյներում եւ փոխադրամիջոցում չպետք է գերազանցի ստորեւ ներկայացվող Ե աղյուսակում բերված արժեքները:

**Աղյուսակ Դ. Բացառիկ օգտագործման պայմաններում չգտնվող կոնտեյներների և փոխադրամիջոցների տրանսպորտային ինդեքսների սահմանային արժեքները**

Կոնտեյների կամ փոխադրամիջոցի տեսակը	Կոնտեյների համար կամ փոխադրամիջոցի թափքում տրանսպորտային ինդեքսների սահմանային ընդհանուր գումարը
Փոքր կոնտեյներ	50
Մեծ կոնտեյներ	50
Փոխադրամիջոց	50

**Աղյուսակ Ե. Տրոհվող նյութեր պարունակող կոնտեյներների և փոխադրամիջոցների կրիտիկականության տեսակետից անվտանգության ինդեքսների արժեքները**

Կոնտեյների կամ փոխադրամիջոցի տեսակը	Կրիտիկականության տեսակետից անվտանգության ինդեքսների (CSI) սահմանային ընդհանուր գումարը	
	Բացառիկ օգտագործման պայմաններից դուրս	Բացառիկ օգտագործման պայմաններում
Փոքր կոնտեյներ	50	չի կիրառվում
Մեծ կոնտեյներ	50	100
Փոխադրամիջոց	50	100

3.4) Ցանկացած փաթեթ կամ տրանսպորտային կապոց, որն ունի 10-ից բարձր տրանսպորտային ինդեքս, կամ ցանկացած բեռ, որի կրիտիկականության տեսակետից անվտանգության ինդեքսը 50-ից բարձր է, պետք է փոխադրվի միմիայն բացառիկ օգտագործման պայմաններում:

3.5) Բացառիկ օգտագործման կարգով փոխադրվող բեռների համար ճառագայթման մակարդակը չպետք է գերազանցի հետևյալ արժեքները՝

ա) 10 մՋվ/ժամ՝ ցանկացած փաթեթի կամ տրանսպորտային կապոցի արտաքին մակերեսի ցանկացած կետում և կարող է գերազանցել 2 մՋվ/ժամը միայն այն դեպքում, եթե՝

i) փոխադրամիջոցում առկա է արգելափակված բեռնապահեստ, որը, սովորական պայմաններում փոխադրման դեպքում արգելում է կողմնակի անձանց մուտքն արգելափակված գոտուց ներս.

- ii) ձեռնարկված են փաթեթը կամ տրանսպորտային կապոցը փոխադրամիջոցի մեջ ամրացնելու այնպիսի միջոցներ, որոնց շնորհիվ փոխադրամիջոցի բեռնապահեստում դրանց դիրքը սովորական փոխադրման պայմաններում կմնա անփոփոխ.
  - iii) փոխադրման ժամանակ չեն կատարվում բեռնման եւ բեռնաթափման աշխատանքներ.
  - բ) 2 մՋվ/ժամ՝ փոխադրամիջոցի արտաքին մակերեսի, ներառյալ վերին եւ ստորին մակերեսները, ցանկացած կետում, իսկ բաց փոխադրամիջոցի դեպքում՝ նաեւ բեռի արտաքին մակերեսում.
  - գ) 0,1 մՋվ/ժամ՝ փոխադրամիջոցի արտաքին կողային մակերեսներով կազմված ուղղահայաց հարթություններից 2 մետր հեռավորության վրա, իսկ եթե բեռը փոխադրվում է բաց փոխադրամիջոցով՝ փոխադրամիջոցի արտաքին սահմաններով անցնող ուղղահայաց հարթություններից 2 մետր հեռավորության վրա ցանկացած կետում:
- 4) Տրոհվող նյութերի փոխադրման եւ տարանցիկ պահման վերաբերյալ լրացուցիչ պահանջները
- 4.1) Տարանցիկ պահման ժամանակ տրոհվող նյութ պարունակող փաթեթների, տրանսպորտային կապոցների եւ կոնտեյներների թիվը ցանկացած առանձին պահման տեղում պետք է սահմանափակվի այնպես, որպեսզի այդպիսի փաթեթների, տրանսպորտային կապոցների կամ կոնտեյներների ցանկացած խմբի համար կրիտիկականության տեսակետից անվտանգության ինդեքսների ընդհանուր գումարը չգերազանցի 50-ը: Այդպիսի փաթեթների, տրանսպորտային կապոցների կամ կոնտեյներների յուրաքանչյուր խմբի եւ նմանօրինակ փաթեթների, տրանսպորտային կապոցների կամ կոնտեյներների այլ խմբերի միջեւ պետք է առնվազն 6 մետր հեռավորություն լինի:
- 4.2) Եթե փոխադրամիջոցի թափքում կամ կոնտեյներում կրիտիկականության տեսակետից անվտանգության ինդեքսների ընդհանուր գումարը գերազանցում է 50-ը, ինչպես նշված է վերոնշված Ե աղյուսակի թույլատրելի արժեքներում, ապա դրանց պահումը պետք է կազմակերպվի այնպես, որ նրանք առնվազն 6 մետր հեռավորության վրա գտնվեն տրոհվող նյութ պարունակող փաթեթների, տրանսպորտային կապոցների կամ կոնտեյներների այլ խմբերից կամ ռադիոակտիվ նյութեր փոխադրող այլ փոխադրամիջոցներից:

- 4.3) Տրոհվող նյութերը, որոնք համապատասխանում են 2.2.7.2.3.5-ի (ա)-(զ) դրույթների պահանջներին, պետք է ապահովեն հետևյալ պահանջները՝
- ա) մեկ բեռի համար թույլատրվում է 2.2.7.2.3.5-ի (ա)-(զ) դրույթներից միայն մեկը.
  - բ) Մեկ բեռի համար թույլատրվում է միայն մեկ հաստատված տրոհվող նյութ, որը դասակարգված է 2.2.7.2.3.5 (զ)-ին համապատասխան, եթե հաստատման սերտիֆիկատում չեն թույլատրվում տարբեր նյութեր.
  - գ) 2.2.7.2.3.5-ի (զ)-ին համապատասխան դասակարգված տրոհվող նյութը պետք է փոխադրվի 45 գրամը չգերազանցող տրոհվող նուկլիդ պարունակող բեռով.
  - դ) 2.2.7.2.3.5 (դ)-ին համապատասխան դասակարգված տրոհվող նյութը պետք է փոխադրվի 15 գրամը չգերազանցող տրոհվող նուկլիդ պարունակող բեռով.
  - ե) 2.2.7.2.3.5 (ե)-ին համապատասխան չփաթեթավորված կամ փաթեթավորված տրոհվող նյութը պետք է փոխադրվի բացառիկ օգտագործման պայմաններում՝ 45 գրամը չգերազանցող տրոհվող նուկլիդներ պարունակող փոխադրամիջոցով:
- 5) Վնասվածքներով կամ արտահոսք ունեցող փաթեթներ եւ ռադիոակտիվ աղտոտվածությամբ փաթեթվածքներ
- 5.1) Եթե հայտնաբերվում է, որ փաթեթը վնասված է կամ արտահոսք ունի, կամ հիմքեր կան կասկածելու, որ փաթեթն արտահոսք է ունեցել կամ եղել է վնասված, ապա անհրաժեշտ է սահմանափակել նման փաթեթին մոտենալը եւ հնարավորինս արագ իրականացնել ռադիոակտիվ աղտոտվածության աստիճանի եւ փաթեթից ճառագայթման մակարդակի գնահատում համապատասխան մասնագետի կողմից: Անհրաժեշտ է ստուգել փաթեթը, փոխադրամիջոցը, փոխադրամիջոցի բեռնման եւ բեռնաթափման հարակից տարածքները, իսկ անհրաժեշտության դեպքում նաեւ բոլոր այն նյութերն ու իրերը, որոնք փոխադրվել են այդ փոխադրամիջոցով: Անհրաժեշտության դեպքում, փաթեթի վնասվածքի կամ արտահոսքի հետեւանքները նվազագույնի հասցնելու եւ կանխելու, ինչպես նաեւ մարդկանց սեփականության, բնակչության եւ շրջակա միջավայրի պաշտպանության կազմակերպման նպատակով պետք է ձեռնարկվեն լրացուցիչ միջոցներ՝ համաձայն իրավասու մարմնի կողմից սահմանված դրույթների:

- 5.2) Վնասվածքներով կամ բնականոն պայմաններում փոխադրման համար թույլատրելի սահմանների գերազանցմամբ ռադիոակտիվ նյութերի արտահոսք ունեցող փաթեթները պետք է տեղափոխվեն հսկողության տակ գտնվող մոտակա հարմար մի վայր: Արգելվում է նման փաթեթների հետագա փոխադրումը մինչև վերջիններիս ապասկտիվացման ու վերականգնման աշխատանքների ավարտը:
- 5.3) Պարբերաբար պետք է իրականացվի ռադիոակտիվ նյութերի փոխադրման համար մշտապես օգտագործվող փոխադրամիջոցի կամ սարքավորման ռադիոակտիվ աղտոտվածության ստուգում: Նման ստուգումների անցկացման հաճախականությունը պայմանավորված է ռադիոակտիվ նյութերի փոխադրումների ծավալով եւ ռադիոակտիվ աղտոտվածության հավանականությամբ:
- 5.4) Բացառությամբ (5.5) պարբերության կանոնների՝ ցանկացած փոխադրամիջոց կամ սարքավորում կամ դրանց մասերը, որոնք ռադիոակտիվ նյութերի փոխադրման ժամանակ ենթարկվել են 4.1.9.1.2-ում նշված սահմանների գերազանցմամբ ռադիոակտիվ աղտոտման, կամ նրանց մակերեսի վրա ճառագայթման հզորությունը գերազանցում է 5  $\mu\text{R}/\text{ժամ}$  (5  $\text{մՋվ}/\text{ժամ}$ ), պետք է անմիջապես ապասկտիվացվեն համապատասխան մասնագետի կողմից եւ վերստին չօգտագործվեն այնքան ժամանակ, մինչև ապահովվեն հետեւյալ պայմանները՝
- ա) չամրացված ռադիոակտիվ աղտոտվածությունը չպետք է նվազի 4.1.9.1.2-ում նշված մակարդակներից.
  - բ) ապասկտիվացումից հետո ամրացված ռադիոակտիվ աղտոտվածությամբ պայմանավորված ճառագայթման հզորությունը մակերեսի վրա չպետք է ցածր լինի 5  $\mu\text{R}/\text{ժամ}$  (5  $\text{մՋվ}/\text{ժամ}$ ):
- 5.5) Բացառիկ օգտագործման նպատակով չփաթեթավորված ռադիոակտիվ նյութերի փոխադրման համար հաստատված կոնտեյները, ցիստեռնը, սորուն բեռների համար նախատեսված միջին բեռնվածության կոնտեյները կամ փոխադրամիջոցը պետք է ազատվեն նախորդ (5.4) պարբերության եւ 4.1.9.1.4-ի պահանջներից միայն իրենց ներքին մակերեսների մասով եւ այնքան ժամանակով, քանի դեռ գտնվում են բացառիկ օգտագործման նպատակով հաստատված լինելու պայմաններում:
- 6) Այլ դրույթներ
- Այն դեպքում, երբ բեռը հնարավոր չէ առաքել հասցեատիրոջը, անհրաժեշտ է տեղադրել այն անվտանգ տեղում եւ դրա մասին

հնարավորինս շուտ տեղեկացնել իրավասու մարմնին՝ խնդրելով նրանից տալ համապատասխան ցուցումներ իր հետագա գործողությունների վերաբերյալ:

CV34 Ճնշումային տարաները փոխադրելուց առաջ անհրաժեշտ է համոզվել, որ ճնշումը չի բարձրացել՝ պայմանավորված ջրածնի հավանական գոյացմամբ:

CV35 Եթե պարկերն օգտագործվում են որպես առանձին փաթեթվածքներ, ապա պետք է պատշաճ կերպով առանձնացվեն իրարից ջերմության հեռացման նպատակով:

CV36 Փաթեթները նախընտրելի է բեռնել բաց կամ օդափոխվող փոխադրամիջոցներում կամ բաց կամ օդափոխվող կոնտեյներներում: Եթե սա իրագործելի չէ, եւ փաթեթները փոխադրվում են փակ փոխադրամիջոցներում կամ կոնտեյներներում, ապա փոխադրամիջոցների կամ կոնտեյներների բեռնախցիկի դռները պետք է նշագրվեն 25մմ-ից ոչ պակաս բարձրության հետեւյալ տառերով.

«ԶԳՈՒՇԱՅՈՒՄ

ՕԴԱՓՈՒՆՈՒԹՅՈՒՆ ՉԿԱ

ԲԱՅԵԼ ԶԳՈՒՇՈՒԹՅԱՄԲ»

Սա պետք է գրվի այն լեզվով, որը բեռնառաքողը նպատակահարմար է գտնում:

ՄԱԿ-ի նշագրման 2211 եւ 3314 համարների դեպքում այս նշանը չի պահանջվում, եթե փոխադրամիջոցը կամ կոնտեյներն արդեն մակնշված է ՎԲՄԾ կանոնագրքի 965 հատուկ դրույթին համապատասխան<sup>3</sup>.

CV37 Նախքան բեռնելն այս կողմնակի արտադրանքները պետք է ստուգվեն մինչեւ արտաքին միջավայրի ջերմաստիճանի, եթե դրանք չեն կալցինացվել խոնավությունը հեռացնելու համար: Փոխադրամիջոցները եւ կոնտեյներները, որոնք պարունակում են սորուն բեռներ, պետք է համապատասխանաբար օդափոխվեն եւ պաշտպանվեն ջրի ներթափանցումից երթի ժամանակ: Փակ փոխադրամիջոցների կամ փակ կոնտեյներների բեռնախցիկի դռները պետք է նշագրվեն 25մմ-ից ոչ պակաս բարձրության հետեւյալ տառերով.

<sup>3</sup> Զգուշացնող նշանը, որը ներառում է «ԶԳՈՒՇԱՅՈՒՄ - ԿԱՐՈՂ Է ՊԱՐՈՒՆԱԿԵԼ ԴՅՈՒՐԱՎԱՌ ԳՈԼՈՐՇԻ ԱՐՁԱԿՈՂ ՆՅՈՒԹ» բառերը, նշագրված 25մմ-ից ոչ պակաս բարձրության տառերով, փակցվում են այնպիսի հարմար վայրում, որտեղից այն պարզ տեսանելի կլինի փոխադրամիջոցը կամ կոնտեյները բացող կամ այնտեղ մտնող անձանց համար մինչեւ դա անելը:



«ԶԳՈՒՇԱՑՈՒՄ  
ՓԱԿ ՏԵՂԱՅՆԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ  
ԲԱՅԵԼ ԶԳՈՒՇՈՒԹՅԱՄԲ»

Սա պետք է գրվի այն լեզվով, որը բեռնառաքողը նպատակահարմար է գտնում:

**ՀԱՎԵԼՎԱԾ Բ**

**ԴՐՈՒՅԹՆԵՐ՝ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ  
ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

## **ՄԱՍ 8**

**Փոխադրամիջոցի անձնակազմերի, սարքավորումների, աշխատանքի ու  
փաստաթղթավորման վերաբերյալ պահանջները**

## ԳԼՈՒԽ 8.1

### ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻՆ ԵՎ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

- 8.1.1. Տրանսպորտային միավորները  
Վտանգավոր բեռներով բեռնված տրանսպորտային միավորը ոչ մի դեպքում չի կարող ունենալ մեկից ավելի կցորդ (կամ կիսակցորդ):
- 8.1.2. Այն փաստաթղթերը, որոնք պետք է գտնվեն տրանսպորտային միավորում
- 8.1.2.1. Այլ կանոնակարգերով պահանջվող փաստաթղթերից բացի՝ տրանսպորտային միավորում պետք է լինեն հետևյալ փաստաթղթերը՝
- ա) 5.4.1-ով սահմանված տրանսպորտային փաստաթղթերը, որոնք վերաբերում են այն փոխադրվող բոլոր վտանգավոր բեռներին, իսկ անհրաժեշտության դեպքում 5.4.2-ով սահմանված մեծ կոնտեյների/փոխադրամիջոցի փաթեթավորման սերտիֆիկատը.
  - բ) 5.4.3-ով սահմանված գրավոր ցուցումները.
  - գ) (Նախատեսվում է վերապահում).
  - դ) փոխադրամիջոցի անձնակազմի յուրաքանչյուր անդամի նույնականացման միջոցը լուսանկարով՝ 1.10.1.4-ին համապատասխան.
- 8.1.2.2. Եթե «ԱԴՌ» համաձայնագրի դրույթներով պահանջվում է կազմել հետևյալ փաստաթղթերը, ապա դրանք նույնպես պետք է գտնվեն տրանսպորտային միավորի մեջ՝
- ա) 9.1.3-ում նշված հաստատման սերտիֆիկատը՝ յուրաքանչյուր տրանսպորտային միավորի կամ դրա տարրի մասով.
  - բ) 8.2.1-ով սահմանված՝ վարորդի վերապատրաստման սերտիֆիկատը.
  - գ) իրավասու մարմնի կողմից հաստատման օրինակ, երբ պահանջվում է 5.4.1.2.1(գ)-ով կամ (դ)-ով կամ 5.4.1.2.3.3-ով:
- 8.1.2.3. 5.4.3-ով սահմանված գրավոր ցուցումների մասին փաստաթղթերը պետք է պահվեն հեշտ հասանելի տեղում:
- 8.1.2.4. (Հանվել է)
- 8.1.3. Տեղեկատվական ցուցանակների տեղադրումը եւ մակնշումը  
Վտանգավոր բեռներ փոխադրող տրանսպորտային միավորները

պետք է ունենան տեղեկատվական ցուցանակներ ու լինեն մակնշված՝ 5.3 գլխին համապատասխան:

8.1.4. Հակահրդեհային սարքավորումները

8.1.4.1. Հետեյալ աղյուսակը ցույց է տալիս A, B եւ C հրանվտանգության դասերի<sup>1</sup> համար նախատեսված շարժական կրակմարիչների համար նվազագույն դրույթները, որոնք կիրառվում են վտանգավոր բեռներ փոխադրող տրանսպորտային միավորների նկատմամբ՝ բացառությամբ 8.1.4.2-ում նշվածների՝

(1) Առավելագույն քաշ ունեցող տրանսպորտային միավոր	(2) Կրակմարիչների նվազագույն թիվը	(3) Տրանսպորտային միավորի ընդհանուր նվազագույն տարողությունը	(4) Շարժիչ կամ խցիկի համար նախատեսված կրակմարիչ: Առնվազն մեկը հետեյալ նվազագույն տարողությամբ՝	(5) Լրացուցիչ կրակմարիչի (կրակմարիչների) մասով պահանջները: Առնվազն մեկ կրակմարիչ նվազագույն տարողությամբ՝
< 3,5 տոննա	2	4 կգ	2 կգ	2 կգ
> 3,5 տոննա < 7,5 տոննա	2	8 կգ	2 կգ	6 կգ
> 7,5 տոննա	2	12 կգ	2 կգ	6 կգ

Քանակը նախատեսված է չոր փոշու սարքերի համար (կամ հրդեհ մարելու համար նախատեսված մեկ այլ հարմար նյութի համարժեք քանակի):

8.1.4.2. 1.1.3.6-ին համապատասխան վտանգավոր բեռներ փոխադրող տրանսպորտային միավորները պետք է ապահովված լինի հրանվտանգության A, B եւ C դասերի<sup>1</sup> համար նախատեսված մեկ շարժական կրակմարիչով, որը պետք է պարունակի նվազագույնը 2 կգ (կամ հրդեհ մարելու համար նախատեսված մեկ այլ նյութին համարժեք քանակի) չոր փոշի:

8.1.4.3. Շարժական կրակմարիչները պետք է հարմար լինեն փոխադրամիջոցում օգտագործման համար եւ համապատասխանեն «Շարժական կրակմարիչների մասին» EN 3 ստանդարտի պահանջներին, 7-րդ մաս (EN 3-7:2004 + A1:2007):

Եթե փոխադրամիջոցն ապահովված է շարժիչում հրդեհը մարելու համար ավտոմատ կամ հեշտությամբ գործարկվող կրակմարիչով, շարժական կրակմարիչը կարող է նախատեսված չլինել շարժիչում առաջացած հրդեհը հանգցնելու համար: Կրակմարիչ նյութերը պետք է այնպիսին լինեն, որ կրակի տաքության ազդեցությամբ թունավոր

<sup>1</sup> Հրավերանգության դասերի սահմանման համար տե՛ս Հրդեհների դասակարգման մասին EN 2:1992 + A1:2004 ստանդարտը:

գազեր չարտանետեն վարորդի խցիկ:

8.1.4.4. 8.1.4.1-ի կամ 8.1.4.2-ի դրույթներին համապատասխանող շարժական կրակմարիչները պետք է տեղադրվեն կնքված վիճակում, որով հաստատվում է դրանց օգտագործված չլինելը:

Ընդունված ազգային ստանդարտներին համապատասխան՝ կրակմարիչները ենթարկվում են պարբերական ստուգումների՝ դրանց ֆունկցիոնալ անվտանգությունը երաշխավորելու համար: Դրանց վրա պետք է լինեն իրավասու մարմնի կողմից ընդունված ստանդարտին համապատասխանության նշան եւ նշագիր, որի վրա նշվում է հաջորդ ընթացիկ ստուգման ամսաթիվը (ամիսը, տարին) կամ անհրաժեշտության դեպքում օգտագործման թույլատրելի առավելագույն ժամկետը:

8.1.4.5. Տրանսպորտային միավորներում կրակմարիչները պետք է տեղադրվեն այնպես, որ հեշտությամբ հասանելի լինեն փոխադրամիջոցի անձնակազմին: Տեղադրումը պետք է իրականացվի այնպես, որ կրակմարիչները պաշտպանված լինեն եղանակային ազդեցություններից՝ դրանց աշխատանքային անվտանգության վրա չազդելու համար: Փոխադրման ընթացքում 8.1.4.4-ում նշված ամսաթիվը (ժամկետը) չպետք է լրացած լինի:

8.1.5. Տարբեր սարքավորումներ եւ անհատական պաշտպանության սարքավորումները

8.1.5.1. Վտանգավոր բեռներ փոխադրող յուրաքանչյուր տրանսպորտային միավոր պետք է ապահովված լինի ընդհանուր եւ անհատական պաշտպանության համար նախատեսված սարքավորումներով՝ 8.1.5.2-ին համապատասխան: Սարքավորումներն ընտրվում են բեռնավորված բեռների վրա վթարային պիտակի համարին համապատասխան: Պիտակի համարները կարող են որոշվել տրանսպորտային փաստաթղթի միջոցով:

8.1.5.2 Հետեւյալ սարքավորումները պետք է լինեն տրանսպորտային միավորի մեջ՝

- յուրաքանչյուր փոխադրամիջոցի համար՝ փոխադրամիջոցի առավելագույն քաշին ու անվի տրամագծին հարմարեցված չափսեր ունեցող արգելակային կաղապար.
- հենակ ունեցող երկու նախազգուշական նշան.
- աչքերը լվանալու հեղուկ<sup>2</sup>, եւ  
փոխադրամիջոցի անձնակազմի յուրաքանչյուր անդամի համար՝

<sup>2</sup> Չի պահանջվում 1, 1.4, 1.5, 1.6, 2.1, 2.2 եւ 2.3 համարների վթարային պիտակների դեպքում:

- մեկ ազդանշանային ժիլետ (օրինակ՝ ինչպես նկարագրված է EN 471:2003 + A1:2007 ստանդարտում).
- շարժական լուսավորող սարք՝ 8.3.4-ի դրույթներին համապատասխան.
- մի զույգ պաշտպանիչ ձեռնոց, եւ
- աչքերի պաշտպանական միջոցներ (օրինակ՝ պաշտպանիչ ակնոց):

#### 8.1.5.3 Որոշակի դասերի համար պահանջվող լրացուցիչ սարքավորումներ՝

- փոխադրամիջոցի անձնակազմի յուրաքանչյուր անդամի համար վթարային իրավիճակում փոխադրամիջոցից հեռանալու համար նախատեսված դիմակ<sup>3</sup>, որը պետք է պահվի տրանսպորտային միավորում՝ 2.3 կամ 6.1 համարները կրող վթարային պիտակների առկայության դեպքում.
- մեկ թի<sup>4</sup>.
- դրենաժային ծուղակ<sup>4</sup>.
- հավաքող կոնտեյներ<sup>4</sup>:

<sup>3</sup> Օրինակ՝ վթարային իրավիճակում փոխադրամիջոցից հեռանալու համար նախատեսված A1B1E1K1-P1 կամ A2B2E2K2-P2 տեսակի դիմակ՝ համակցված գազի (փոշու) ֆիլտրով, որը նման է EN 14387:2004 + A1:2008 ստանդարտում նկարագրված առարկային:

<sup>4</sup> Պահանջվում է միայն 3, 4.1, 4.3, 8 կամ 9 համարների վթարային պիտակներ կրող պինդ նյութերի ու հեղուկների դեպքում:

## ԳԼՈՒԽ 8.2

### ՓՈԽԱԴԻՐԱՄԻՋՈՑԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

- 8.2.1. Գործողության շրջանակը եւ վարորդների վերապատրաստմանը ներկայացվող ընդհանուր պահանջները
- 8.2.1.1. Վտանգավոր բեռներ փոխադրող փոխադրամիջոցների վարորդները պետք է ունենան իրավասու մարմնի կողմից տրված սերտիֆիկատ այն մասին, որ վերջիններս մասնակցել են վերապատրաստման դասընթացին եւ քննությունը հաջողությամբ են հանձնել՝ կապված այն կոնկրետ պահանջների հետ, որոնք պետք է բավարարվեն վտանգավոր բեռների փոխադրման ընթացքում:
- 8.2.1.2. Վտանգավոր բեռներ փոխադրող փոխադրամիջոցների վարորդները պետք է հաճախեն հիմնական վերապատրաստման դասընթացներին: Վերապատրաստումը պետք է անցկացվի իրավասու մարմնի կողմից հաստատված ծրագրով: Դրանց հիմնական նպատակը վարորդներին իրազեկելն են վտանգավոր բեռների փոխադրման ժամանակ առաջացող վտանգների մասին եւ նրանց այնպիսի հիմնական տեղեկություններ տրամադրելը, որոնք անհրաժեշտ են՝ վթարների հավանականությունը նվազեցնելու համար, իսկ վթարի դեպքում հնարավորություն տալ նրանց ձեռնարկելու այնպիսի միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել իրենց իսկ, հասարակության եւ շրջակա միջավայրի անվտանգության համար՝ վթարի ազդեցությունները սահմանափակելու համար: Այդ վերապատրաստումը, որը ներառում է անհատական գործնական պարապմունքներ, պետք է լինի բոլոր դասերի վարորդների վերապատրաստման դասընթացների հիմք՝ ընդգրկելով առնվազն 8.2.2.3.2-ով սահմանված թեմաները: Իրավասու մարմինը կարող է հաստատել վերապատրաստման դասընթացները հատուկ վտանգավոր բեռների կամ հատուկ դասի կամ դասերի սահմաններում: Սահմանափակումներով վերապատրաստման այդ հիմնական դասընթացներով չի վերապահվում 8.2.1.4-ում նշված դասընթացներին մասնակցելու իրավունք:
- 8.2.1.3. 1 մ<sup>3</sup> ծավալը գերազանցող անշարժ ցիստեռներով կամ հանովի ցիստեռներով վտանգավոր բեռներ փոխադրող փոխադրամիջոցների կամ ՊԱՇՄ-ների վարորդները, 1 մ<sup>3</sup> ընդհանուր ծավալը գերազանցող մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցների վարորդները կամ մեկ տրանսպորտային միավորի վրա 3 մ<sup>3</sup> առանձին ծավալը գերազանցող ցիստեռն-կոնտեյներներով, շարժական ցիստեռներով կամ ԳԲՏԿ-ներով վտանգավոր բեռներ փոխադրող փոխադրամիջոցների կամ ՊԱՇՄ-ների վարորդները պետք է



հաճախ են ցիստեռններով փոխադրման գծով մասնագիտական վերապատրաստման դասընթացների, որոնք պետք է ընդգրկեն առնվազն 8.2.2.3.3-ով սահմանված թեմաները: Իրավասու մարմինը կարող է հատուկ վտանգավոր բեռների կամ հատուկ դասի կամ դասերի սահմաններում հաստատել ցիստեռնների գծով մասնագիտական վերապատրաստման դասընթացները: Սահմանափակումներ նախատեսող ցիստեռնների գծով մասնագիտական վերապատրաստման դասընթացներով չի նախատեսվում 8.2.1.4-ում վերապատրաստման դասընթացներին մասնակցելու իրավունք:

- 8.2.1.4. Բացառությամբ 1.4 ենթադասի S համատեղելիության խմբի նյութերի եւ պատրաստվածքների՝ 1-ին դասի կամ 7-րդ դասի վտանգավոր բեռներ տեղափոխող փոխադրամիջոցների վարորդները պետք է հաճախ են առնվազն 8.2.2.3.4-ում կամ 8.2.2.3.5-ով սահմանված թեմաներն ընդգրկող վերապատրաստման մասնագիտական դասընթացի:
- 8.2.1.5. Վերապատրաստման բոլոր դասընթացները, գործնական պարապմունքները, քննությունները եւ իրավասու մարմինների դերը պետք է համապատասխանեն 8.2.2-ի դրույթներին:
- 8.2.1.6. Սույն բաժնի պահանջներին համապատասխանող եւ Պայմանավորվող կողմի իրավասու մարմնի կողմից 8.2.2.8-ին համապատասխան տրված վերապատրաստման բոլոր սերտիֆիկատները պետք է մյուս Պայմանավորվող կողմերի իրավասու մարմինների կողմից ընդունվեն դրանց վավերականության ժամկետի ընթացքում:
- 8.2.2. Վարորդների վերապատրաստմանը ներկայացվող հատուկ պահանջները
  - 8.2.2.1. Անհրաժեշտ գիտելիքներ ու հմտություններ փոխանցվում են տեսական դասընթացներ ու գործնական պարապմունքներ ընդգրկող վերապատրաստման միջոցով: Գիտելիքները ստուգվում են քննության միջոցով:
  - 8.2.2.2. Վերապատրաստման մարմինն ապահովում է, որ վերապատրաստող մասնագետներն ունենան լավ գիտելիքներ եւ հաշվի առնեն կանոնակարգերում առկա վերջին զարգացումները եւ վտանգավոր բեռների փոխադրմանը վերաբերող վերապատրաստման պահանջները: Վերապատրաստման դասընթացը պետք է ունենա գործնական ուղղվածություն: Վերապատրաստման դասընթացների ծրագիրը պետք է համապատասխանի 8.2.2.6-ում նշված հաստատմանը եւ ներառի 8.2.2.3.2 - 8.2.2.3.5-ով սահմանված թեմաները: Վերապատրաստման դասընթացները պետք է ընդգրկեն նաեւ առանձին գործնական պարապմունքներ (տե՛ս 8.2.2.3.8):

8.2.2.3. Վերապատրաստման կառուցվածքը

8.2.2.3.1. Վերապատրաստումը պետք է կազմակերպվի վերապատրաստման հիմնական դասընթացի, իսկ կիրառելիության դեպքում՝ վերապատրաստման մասնագիտական դասընթացների ձեռով: Վերապատրաստման հիմնական ու մասնագիտական դասընթացները կարող են կազմակերպվել վերապատրաստման համապարփակ դասընթացների ձեռով՝ անցկացվելով միասնաբար, միեւնոյն պարագայում եւ վերապատրաստում իրականացնող նույն մարմնի կողմից:

8.2.2.3.2. Վերապատրաստման հիմնական դասընթացում ներառվող թեմաները պետք է լինեն առնվազն հետեւյալը՝

- ա) վտանգավոր բեռների փոխադրումը կարգավորող ընդհանուր պահանջներ.
- բ) վտանգի հիմնական տեսակներ.
- գ) տեղեկություններ՝ շրջակա միջավայրի պաշտպանության մասին թափոնների արտանետման վերահսկում իրականացնելու պարագայում.
- դ) վտանգի տարբեր տեսակներին համապատասխանող կանխարգելիչ ու անվտանգության միջոցներ.
- ե) ինչպես վարվել պատահարի դեպքում (առաջին օգնություն, ճանապարհային անվտանգություն, պաշտպանիչ սարքավորումների օգտագործման մասին հիմնական գիտելիքներ, գրավոր ցուցումներ եւ այլն).
- զ) մակնշում, պիտակավորում, տեղեկատվական ցուցանակների տեղադրում եւ նարնջագույն թիթեղով մակնշում.
- է) ինչպես պետք է վարվի եւ ինչպես չպետք է վարվի վարորդը վտանգավոր բեռներ փոխադրելիս.
- ը) փոխադրամիջոցում տեխնիկական սարքավորումների գործարկման նպատակն ու մեթոդը.
- թ) արգելքները՝ կապված միեւնոյն փոխադրամիջոցում կամ կոնտեյներում խառը բեռնավորման հետ.
- ժ) վտանգավոր բեռների բեռնավորման ու բեռնաթափման ընթացքում ձեռնարկվող նախազգուշական միջոցները.
- ժա) քաղաքացիական պատասխանատվությանը վերաբերող ընդհանուր տեղեկություններ.
- ժբ) տեղեկություններ բազմաձեւ փոխադրման գործողությունների մասին.

- ժգ) փաթեթների բեռնավորում-բեռնաթափում եւ դասավորում.
- ժդ) թունելներում կիրառվող երթեւեկության սահմանափակումներ եւ թունելներում վարվելակերպի մասին ցուցումներ (պատահարների կանխարգելում, անվտանգություն, հրդեհի կամ այլ վթարների դեպքում իրականացվող գործողություններ եւ այլն).
- ժե) անվտանգության ապահովման միջոցների իմացություն:

8.2.2.3.3. Ցիստեռններով փոխադրումների վերաբերյալ վերապատրաստման մասնագիտական դասընթացում ներառվող թեմաները պետք է լինեն առնվազն հետեւյալը՝

- ա) ճանապարհին փոխադրամիջոցների աշխատանքի ռեժիմը, ներառյալ՝ բեռնվաճքի տեղաշարժերը.
- բ) փոխադրամիջոցներին վերաբերող կոնկրետ պահանջները.
- գ) լցավորման ու արտանետման բազմատեսակ ու տարբեր համակարգերի մասին ընդհանուր տեսական գիտելիքներ.
- դ) այդպիսի փոխադրամիջոցների օգտագործման նկատմամբ կիրառելի կոնկրետ հավելյալ դրույթներ (հաստատման սերտիֆիկատ, հաստատող մակնշում, տեղեկատվական ցուցանակների տեղադրում եւ նարնջագույն թիթեղով մակնշում եւ այլն):

8.2.2.3.4. 1-ին դասի նյութերի եւ պատրաստվածքների փոխադրման վերաբերյալ վերապատրաստման մասնագիտական դասընթացում ներառվող թեմաները պետք է լինեն առնվազն հետեւյալը՝

- ա) պայթյունավտանգ ու հրատեխնիկական նյութերի ու պատրաստվածքների հետ կապված կոնկրետ վտանգները.
- բ) 1-ին դասի նյութերի ու պատրաստվածքների խառը բեռնավորմանը վերաբերող կոնկրետ պահանջներ:

8.2.2.3.5. 7-րդ դասի ռադիոակտիվ նյութերի փոխադրման վերաբերյալ վերապատրաստման մասնագիտական դասընթացում ներառվող թեմաները պետք է լինեն առնվազն հետեւյալը՝

- ա) իոնացնող ճառագայթման հետ կապված հատուկ վտանգներ.
- բ) ռադիոակտիվ նյութերի փաթեթավորմանը, բեռնավորման-բեռնաթափմանը, խառը բեռնավորմանն ու դասավորմանը վերաբերող կոնկրետ պահանջներ.
- գ) ռադիոակտիվ նյութի առկայությամբ պատահարի դեպքում ձեռնարկվող հատուկ միջոցներ:

8.2.2.3.6. Դասաժամերի տևողությունը պետք է լինի 45 րոպե:

8.2.2.3.7. Սովորաբար դասավանդման յուրաքանչյուր օրվա ընթացքում թույլատրվում է անցկացնել ոչ ավելի, քան ութ դասաժամ:

8.2.2.3.8. Առանձին գործնական պարապմունքները պետք է անցկացվեն տեսական դասընթացներին զուգահեռ եւ պետք է ընդգրկեն առնվազն առաջին օգնության, հակահրդեհային միջոցառումներ, եւ թե ինչպես պետք է վարվել դեպքի կամ պատահարի դեպքում:

8.2.2.4. Նախնական վերապատրաստման ծրագիրը:

8.2.2.4.1. Նախնական վերապատրաստման յուրաքանչյուր դասընթացի կամ համապարփակ վերապատրաստման դասընթացի տեսական մասի նվազագույն տեւողությունը պետք է լինի հետեւյալը՝

Հիմնական վերապատրաստման դասընթաց 18 դասաժամ

Ցիստեռններով փոխադրման վերաբերյալ մասնագիտական վերապատրաստման դասընթաց 12 դասաժամ

1-ին դասի նյութերի ու պատրաստվածքների փոխադրման վերաբերյալ մասնագիտական վերապատրաստման դասընթաց 8 դասաժամ

7-րդ դասի ռադիոակտիվ նյութերի փոխադրման վերաբերյալ մասնագիտական վերապատրաստման դասընթաց 8 դասաժամ

Հիմնական վերապատրաստման դասընթացի ու ցիստեռններով փոխադրման վերաբերյալ մասնագիտական վերապատրաստման դասընթացի դեպքում 8.2.2.3.8-ում նշված գործնական պարապմունքների համար պահանջվում են լրացուցիչ դասաժամեր, որոնց թիվը կորոշվի՝ կախված դասընթացներին մասնակցող վարորդների թվից:

8.2.2.4.2. Համապարփակ վերապատրաստման դասընթացի ամբողջ տեւողությունը կարող է որոշել իրավասու մարմինը, որը պետք է պահպանի ընդհանուր վերապատրաստման դասընթացի եւ ցիստեռններին առնչվող մասնագիտական վերապատրաստման դասընթացի տեւողությունը, սակայն կարող է դրանց ավելացնել 1-ին եւ 7-րդ դասերի համար նախատեսված մասնագիտական վերապատրաստման կարճատեւ դասընթացներ:

8.2.2.5. Կրկնակի վերապատրաստման ծրագիրը

8.2.2.5.1. Կանոնավոր պարբերականությամբ կազմակերպվող կրկնակի վերապատրաստման դասընթացների նպատակը վարորդների գիտելիքների արդիականացումն է. այն ընդգրկում է տեխնիկական, իրավական եւ ոլորտային նոր զարգացումները:

- 8.2.2.5.2. Կրկնակի վերապատրաստման դասընթացի տեւողությունը, ներառյալ առանձին գործնական պարապմունքները, պետք է լինի առնվազն երկու օր՝ համապարփակ վերապատրաստման դասընթացների դեպքում, իսկ անհատական վերապատրաստման դասընթացների դեպքում՝ նախնական հիմնական կամ նախնական մասնագիտական դասընթացների համար նախատեսված տեւողության առնվազն կեսը, ինչպես սահմանված է 8.2.2.4.1-ով:
- 8.2.2.5.3. Վարորդի ցանկությամբ կրկնակի վերապատրաստման դասընթացն ու քննությունը կարող են փոխարինվել նախնական վերապատրաստման դասընթացով ու քննությամբ:
- 8.2.2.6. Վերապատրաստման դասընթացի հաստատումը
- 8.2.2.6.1. Վերապատրաստման դասընթացները հաստատվում են իրավասու մարմնի կողմից:
- 8.2.2.6.2. Հաստատումը կարող է տրվել միայն գրավոր դիմումների հիման վրա:
- 8.2.2.6.3. Հաստատմանը ներկայացված դիմումին կցվում են հետեւյալ փաստաթղթերը՝
- ա) ուսումնական մանրամասն ծրագիր, որում նշվում են ուսուցանվող թեմաները եւ ժամանակացույցն ու ուսուցման պլանային մեթոդները.
  - բ) ուսուցանող անձնակազմի որակավորումները եւ գործունեության ոլորտները.
  - գ) տեղեկություններ դասընթացների անցկացման վայրերի եւ ուսումնական նյութերի, ինչպես նաեւ գործնական պարապմունքների համար անհրաժեշտ միջոցների մասին.
  - դ) դասընթացներին մասնակցելու պայմանները, օրինակ՝ մասնակիցների թիվը:
- 8.2.2.6.4. Իրավասու մարմինը կազմակերպում է վերապատրաստման դասընթացների ու քննությունների նկատմամբ վերահսկողությունը:
- 8.2.2.6.5. Իրավասու մարմինը պետք է գրավոր հաստատի հետեւյալ պայմանների դեպքում՝
- ա) վերապատրաստումը պետք է անցկացվի դիմումի հետ ներկայացված փաստաթղթերին համապատասխան.
  - բ) իրավասու մարմինն պետք է վերապատրաստման դասընթացներին ու քննություններին ներկա գտնվելու նպատակով լիազորված անձինք ուղարկելու իրավունք ընձեռվի.
  - գ) իրավասու մարմինը ժամանակին տեղեկացվում է անհատական

վերապատրաստման դասընթացների անցկացման ժամկետների ու վայրերի մասին.

դ) հաստատումը կարող է չեղյալ համարվել, եթե հաստատում ստանալու համար ներկայացվող պայմանները չեն պահպանվում:

8.2.2.6.6. Հաստատման համար ներկայացված փաստաթղթերում նշվում է տվյալ դասընթացների հիմնական կամ մասնագիտական վերապատրաստման դասընթաց, սկզբնական կամ կրկնակի վերապատրաստման դասընթաց լինելու փաստը, եւ նշում է կատարվում նաեւ այն մասին, թե արդյոք դրանք սահմանափակվում են հատուկ վտանգավոր բեռների կամ կոնկրետ դասի կամ դասերին առնչվելու հանգամանքով:

8.2.2.6.7. Եթե վերապատրաստում անցկացնող մարմինը, վերապատրաստման դասընթացի համար հաստատում ստանալուց հետո մտադրություն ունի հաստատմանն առնչվող մանրամասների փոփոխություններ կատարելու, ապա այն պետք է նախապես թույլտվություն ստանա իրավասու մարմնից: Դա վերաբերում է մասնավորապես վերապատրաստման ծրագրին առնչվող փոփոխություններին:

8.2.2.7. Քննությունները

8.2.2.7.1. Հիմնական վերապատրաստման դասընթացի քննությունները

8.2.2.7.1.1. Հիմնական վերապատրաստման դասընթացի ավարտից հետո, ներառյալ գործնական պարապմունքները, համապատասխան հիմնական վերապատրաստման դասընթացից քննություն է անցկացվում:

8.2.2.7.1.2. Քննության ժամանակ թեկնածուն պետք է ապացուցի, որ նա հիմնական վերապատրաստման դասընթացով նախատեսված գիտելիքներ, պատկերացում եւ հմտություններ ունի վտանգավոր բեռներ փոխադրող փոխադրամիջոցների պրոֆեսիոնալ վարորդի գործունեություն իրականացնելու համար:

8.2.2.7.1.3. Այդ նպատակով իրավասու մարմինը նախապատրաստում է հարցաշար, որը վերաբերում է 8.2.2.3.2-ում ամփոփված խնդիրներին: Քննական հարցերը կազմվում են այդ հարցաշարից: Նախքան քննությունը՝ թեկնածուները չպետք է իմանան հարցաշարից ընտրված հարցերը:

8.2.2.7.1.4. Համապարփակ վերապատրաստման դասընթացների համար կարող է անցկացվել մեկ ընդհանուր քննություն:

8.2.2.7.1.5. Յուրաքանչյուր իրավասու մարմին վերահսկում է քննությունների անցկացման եղանակները, այդ թվում՝ անհրաժեշտության դեպքում

էլեկտրոնային քննության ապահովման ենթակառուցվածքը եւ կազմակերպումը՝ 8.2.2.7.1.8-ին համապատասխան, եթե դրանք պետք է անցկացվեն:

- 8.2.2.7.1.6. Քննությունը կազմակերպվում է գրավոր կամ եւ՝ գրավոր, եւ՝ բանավոր: Հիմնական վերապատրաստման դասընթացի համար յուրաքանչյուր թեկնածուի պետք է տրվի առնվազն 25 գրավոր հարց: Եթե քննությունը հաջորդում է կրկնակի վերապատրաստման դասընթացին, տրվում է առնվազն 15 գրավոր հարց: Այդ քննությունների տեսողությունը պետք է լինի համապատասխանաբար առնվազն 45 ու 30 րոպե: Այդ հարցերը կարող են լինել բարդության տարբեր աստիճանի եւ ստանալ գնահատման տարբեր արժեքներ:
- 8.2.2.7.1.7. Յուրաքանչյուր քննություն պետք է վերահսկվի: Յուրաքանչյուր մեքենայություն եւ խաբեություն պետք է հնարավորինս բացառվի: Պետք է ապահովվի թեկնածուի ինքնության ստուգումը: Քննությանն առնչվող բոլոր փաստաթղթերը պետք է փաստաթղթավորվեն և պահվեն թղթային տարբերակով կամ էլեկտրոնային եղանակով՝ որպես ֆայլ:
- 8.2.2.7.1.8. Գրավոր քննությունները պետք է իրականացվեն ամբողջությամբ կամ մասամբ որպես էլեկտրոնային քննություն, եթե պատասխաններն արձանագրվում եւ գնահատվում են՝ օգտագործելով էլեկտրոնային տվյալների մշակման (էՏՄ) գործընթացները, եթե բավարարվում են հետեւյալ պայմանները՝
- ա) սարքաշարը եւ ծրագրաշարը պետք է ստուգվեն եւ ընդունվեն իրավասու մարմինների կողմից.
  - բ) ապահովվում է պատշաճ տեխնիկական շահագործում: Այն մասով կարգավորումները, թե ինչպես քննությունը կարող է շարունակվել, պետք է իրականացնել սարքերի եւ սարքավորումների ձախողման համար: Ներանցման սարքավորումների վրա չպետք է կիրառվեն հարմարանքներ (օրինակ՝ էլեկտրոնային որոնման գործառույթը), տրամադրված սարքավորումը թեկնածուներին չպետք է թույլ տա քննության ընթացքում կապ ստեղծել որեւէ այլ սարքի հետ.
  - գ) յուրաքանչյուր թեկնածուի վերջնական ներանցումը պետք է գրանցվի: Արդյունքների հաստատումը պետք է լինի թափանցիկ.
  - դ) էլեկտրոնային կրիչից կարելի է օգտվել միայն այն դեպքում, երբ այն տրամադրվում է քննական մարմնի կողմից: Չպետք է լինի որեւէ միջոց, որի օգնությամբ թեկնածուները կկարողանան հետագայում տվյալներ մուտքագրել տրամադրված

էլեկտրոնային կրիչի վրա. թեկնածուները կարող են միայն պատասխանել հրապարակված հարցերին:

- 8.2.2.7.2. Ցիստեռններով փոխադրման կամ 1-ին դասի նյութերի ու պատրաստվածքների փոխադրման կամ 7-րդ դասի ռադիոակտիվ նյութերի փոխադրման մասին մասնագիտական վերապատրաստման դասընթացների քննությունները
- 8.2.2.7.2.1. Հիմնական վերապատրաստման դասընթացի քննությունից եւ ցիստեռններով փոխադրման կամ 1-ին դասի նյութերի ու պատրաստվածքների փոխադրման կամ 7-րդ դասի ռադիոակտիվ նյութերի փոխադրման մասին մասնագիտական վերապատրաստման դասընթացների հաճախելուց հետո թեկնածուին թույլ է տրվում մասնակցել համապատասխան վերապատրաստմանը:
- 8.2.2.7.2.2. Այդ քննությունն անցկացվում է վերահսկվում է 8.2.2.7.1-ում նշված նույն հիմունքներով: Հարցաշարում անհրաժեշտության դեպքում ընդգրկվում են 8.2.2.3.3-ում, 8.2.2.3.4-ում կամ 8.2.2.3.5-ում ամփոփված նյութերը:
- 8.2.2.7.2.3. Յուրաքանչյուր մասնագիտական վերապատրաստման դասընթացի առնչությամբ տրվում է առնվազն 15 գրավոր հարց: Եթե քննությունը հաջորդում է կրկնակի վերապատրաստման դասընթացին, տրվում է առնվազն 10 գրավոր հարց: Այդ քննությունների տեսողությունը պետք է լինի համապատասխանաբար առնվազն 30 ու 20 րոպե:
- 8.2.2.7.2.4. Եթե քննությունը հիմնվում է հիմնական վերապատրաստման սահմանափակ դասընթացի վրա, մասնագիտական վերապատրաստման դասընթացի քննությունը սահմանափակվում է նույն շրջանակում:
- 8.2.2.8. Վարորդի վերապատրաստման սերտիֆիկատը
- 8.2.2.8.1. 8.2.1.1-ում նշված սերտիֆիկատը պետք է տրվի՝
- ա) վերապատրաստման հիմնական դասընթացի ավարտից հետո՝ պայմանով, որ թեկնածուն բարեհաջող հանձնել է քննությունը՝ համաձայն 8.2.2.7.1-ի,
  - բ) անհրաժեշտության դեպքում, ցիստեռններով փոխադրման կամ 1-ին դասի նյութերի եւ պատրաստվածքների կամ 7-րդ դասի ռադիոակտիվ նյութերի փոխադրման վերաբերյալ մասնագիտական վերապատրաստման դասընթացի ավարտից հետո կամ 8.5 գլխի S1 եւ S11 հատուկ դրոյթներով սահմանված գիտելիքները ձեռք բերելուց հետո՝ պայմանով, որ թեկնածուն



բարեհաջող հանձնել է քննությունը՝ համաձայն 8.2.2.7.2-ի,

- զ) անհրաժեշտության դեպքում, վերապատրաստման հիմնական սահմանափակ կամ սահմանափակումներ նախատեսող ցիտեռնների գծով մասնագիտական վերապատրաստման դասընթացի ավարտից հետո՝ պայմանով, որ թեկնածուն բարեհաջող հանձնել է քննությունը՝ համաձայն 8.2.2.7.1-ի կամ 8.2.2.7.2-ի: Տրված սերտիֆիկատը պետք է հստակ նշում պարունակի դրա գործողության սահմանափակ բնույթի մասին, որը գործում է համապատասխան վտանգավոր բեռների կամ դասի (դասերի) համար:

8.2.2.8.2. Վարորդի վերապատրաստման սերտիֆիկատի վավերականության ժամկետը 5 տարի է՝ սկսած այն պահից, երբ վարորդը նախնական հիմնական (բազային) վերապատրաստման դասընթացից կամ նախնական հիմնական (բազային) վերապատրաստման համալիր դասընթացից քննություն է հանձնում:

Սերտիֆիկատի գործողության ժամկետը նորացվում է, եթե վարորդը ներկայացնում է կրկնակի վերապատրաստում անցնելու մասին ապացույց՝ համաձայն 8.2.2.5-ի, եւ եթե հանձնել է քննություն՝ համաձայն 8.2.2.7-ի, հետեւյալ դեպքերում.

- ա) նախքան սերտիֆիկատի գործողության ժամկետի ավարտը՝ տասներկու ամսվա ընթացքում: Իրավասու մարմինը տրամադրում է հինգ տարի ժամկետով վավեր նոր սերտիֆիկատ, որի գործողության ժամկետը մեկնարկում է նախորդ սերտիֆիկատի գործողության ժամկետն ավարտվելուն պես,
- բ) նախքան սերտիֆիկատի գործողության ժամկետի ավարտը՝ տասներկու ամիս առաջ: Իրավասու մարմինը տրամադրում է հինգ տարի ժամկետով վավեր նոր սերտիֆիկատ, որի գործողության ժամկետը մեկնարկում է՝ կրկնակի վերապատրաստման դասընթացից քննություն հանձնելու ամսաթվից սկսած:

Եթե վարորդն ընդլայնում է իր սերտիֆիկատի գործողության ոլորտը վավերականության ժամկետի ընթացքում՝ բավարարելով 8.2.2.8.1-ի (բ) եւ (զ) պահանջները, ապա նոր սերտիֆիկատի դեպքում պահպանվում է նախկին սերտիֆիկատի վավերականության ժամկետը: Եթե վարորդը հանձնել է քննություն մասնագիտական վերապատրաստման դասընթացից, ապա մասնագիտացումն ուժի մեջ է մինչեւ սերտիֆիկատի գործողության ժամկետի ավարտը:

8.2.2.8.3. Սերտիֆիկատը պետք է ունենա 8.2.2.8.5-ում ներկայացված նմուշի ձևը: Այն պետք է պատրաստվի պլաստիկից, իսկ չափսերը պետք է

լինեն ISO 7810:2003 ID-1 ստանդարտին համապատասխան: Հենքը պետք է լինի սպիտակ, տառաշարը՝ սեւ: Սերտիֆիկատի վրա պետք է առկա լինեն պաշտպանական լրացուցիչ տարրեր, օրինակ՝ հոլոգրամ, UV տպագրված պատկեր, որը տեսանելի է ուլտրամանուշակագույն լույսի ներքո, կամ գիլյոշային պատկերներ:

8.2.2.8.4. Սերտիֆիկատը պետք է կազմվի այն տրամադրող երկրի իրավասու մարմնի լեզվով (լեզուներով) կամ լեզուներից որեւէ մեկով: Եթե այդ լեզուներից եւ ոչ մեկը անգլերեն, ֆրանսերեն կամ գերմաներեն չէ, ապա սերտիֆիկատի վերնագիրը, 8-րդ կետի վերնագիրը եւ դարձերեսին գրված վերնագրերը պետք է կազմվեն անգլերենով, ֆրանսերենով կամ գերմաներենով:

8.2.2.8.5. Վտանգավոր բեռներ փոխադրող փոխադրամիջոցների վարորդների վերապատրաստման սերտիֆիկատի նմուշ

ՎԱՐՈՐԴԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ «ԱԴՌ» ՍԵՐՏԻՖԻԿԱՏ	
	**
	1. (ՍԵՐՏԻՖԻԿԱՏԻ ՀԱՄԱՐԸ)*
	2. (ԱԶԳԱՆՈՒՆԸ)*
	3. (ՄՅՈՒՍ ԱՆՈՒՆԸ (ԱՆՈՒՆՆԵՐԸ))*
	4. (ԾՆՆԴՅԱՆ ԱՄՍԱԹԻՎԸ՝ օրը, ամիսը, տարին)*
Դիմերես	(Վարորդի լուսանկարը)
	5. (ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ)*
	6. (ՎԱՐՈՐԴԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ)*
	*
	7. (ՏՐՎԱԾ Է)*
	8. ՎԱՎԵՐ Է ՄԻՆՉԵՎ՝ (օրը, ամիսը, տարին)*

ՎԱՎԵՐ Է ԴԱՍԻ (ԴԱՍԵՐԻ) ԿԱՄ ՄԱԿ-Ի ՆՇԱԳՐՄԱՆ ՀԱՄԱՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ	
ՑԻՍՏԵՌՆՆԵՐ	ՑԻՍՏԵՌՆՆԵՐԻՑ ԲԱՑԻ
9. (Դասի կամ ՄԱԿ-ի նշագրման համարի (համարների) մուտքագրում)*	10. (Դասի կամ ՄԱԿ-ի նշագրման համարի (համարների) մուտքագրում)*
Դարձերես	

\* Տեքստը փոխարինել՝ մուտքագրելով համապատասխան տվյալները:

\*\* Միջազգային երթուղային մեջ գտնվող փոխադրամիջոցների տարբերանշաններ (1968 թվականի «Ճանապարհային երթուղային մասին» կոնվենցիայի կամ 1949 թվականի

«Ճանապարհային երթելեկության մասին» կոնվենցիայի կողմերի դեպքում, համապատասխանաբար այս կոնվենցիաների 45(4) հոդվածի կամ 4-րդ հավելվածի համաձայն Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղարին ծանուցված կարգով):

8.2.2.8.6. Պայմանավորվող կողմերը ՄԱԿ-ի ԵՏՀ-ի քարտուղարությանը պետք է դեռեւս գործող սերտիֆիկատների նմուշների օրինակների հետ մեկտեղ տրամադրեն ցանկացած այն սերտիֆիկատի ազգային նմուշի օրինակ, որը նախատեսված է այս բաժնին համապատասխան տրամադրման համար: Պայմանավորվող կողմը կարող է հավելյալ տրամադրել բացատրական ծանոթագրություններ: ՄԱԿ-ի ԵՏՀ-ի քարտուղարությունը պետք է ստացված տեղեկատվությունը հասանելի դարձնի բոլոր Պայմանավորվող կողմերին:

8.2.3. Վարորդներից բացի վտանգավոր բեռների ճանապարհային փոխադրումն ապահովող անձանց վերապատրաստումը, ովքեր 8.2.1-ին համապատասխան սերտիֆիկատ ունեն

Այն անձինք, ովքեր զբաղվում են վտանգավոր բեռների ճանապարհային փոխադրմամբ, պետք է վերապատրաստվեն նման բեռների փոխադրումը կարգավորող՝ 1.3 գլխում նշված պայմանների համաձայն՝ ըստ իրենց պարտականությունների եւ գործառույթների: Այս պահանջը կիրառվում է ավտոտրանսպորտային օպերատորի կամ բեռնառաքողի կողմից աշխատանքի վերցված անձանց նկատմամբ, այն անձնակազմի նկատմամբ, որը բեռնում կամ բեռնաթափում է վտանգավոր բեռները, բեռնափոխադրումներ իրականացնող տրանսպորտային-առաքիչ եւ բեռնատար գործակալությունների, ինչպես նաեւ 8.2.1-ի համաձայն՝ սերտիֆիկատ ունեցող վարորդներից բացի վտանգավոր բեռների ճանապարհային փոխադրումն ապահովող փոխադրամիջոցների վարորդների նկատմամբ:

## ԳԼՈՒԽ 8.3

### ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԱՐԲԵՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ

#### 8.3.1. Ուղեւորները

Բացառությամբ փոխադրամիջոցի անձնակազմի անդամների՝ արգելվում է փոխադրել ուղեւորներ վտանգավոր բեռներ փոխադրող տրանսպորտային միավորներում:

#### 8.3.2. Հակահրդեհային սարքավորումների օգտագործումը

Փոխադրամիջոցի անձնակազմի անդամները պետք է տեղյակ լինեն հակահրդեհային սարքավորումների օգտագործմանը:

#### 8.3.3. Փաթեթները բացելու արգելքը

Վարորդին կամ վարորդի օգնականին արգելվում է բացել վտանգավոր բեռներ պարունակող փաթեթը:

#### 8.3.4. Լուսավորման շարժական սարքերը

Օգտագործվող լուսավորման շարժական սարքերը չպետք է ունենան մետաղական այնպիսի մակերեսային, որը կարող է կայծագոյացման պատճառ դառնալ:

#### 8.3.5. Ծխելու արգելքը

Բեռնման-բեռնաթափման աշխատանքների ժամանակ արգելվում է ծխել ինչպես փոխադրամիջոցների մոտակայքում, այնպես էլ փոխադրամիջոցների ներսում: Ծխելու արգելքը նաեւ կիրառելի է էլեկտրոնային ծխախոտների եւ նմանատիպ սարքերի նկատմամբ:

#### 8.3.6. Շարժիչի աշխատանքը բեռնման կամ բեռնաթափման ժամանակ

Բեռնման եւ բեռնաթափման աշխատանքների ժամանակ շարժիչը պետք է լինի անջատված՝ բացառությամբ այն դեպքերի, երբ շարժիչի գործադրումն անհրաժեշտ է՝ փոխադրամիջոցի բեռնումը կամ բեռնաթափումն ապահովող պոմպերը կամ այլ մեխանիզմներ աշխատանքային ռեժիմի բերելու նպատակով, եւ եթե թույլատրվում է նմանօրինակ գործադրում այն երկրի օրենքներով, որտեղ գտնվում է տվյալ փոխադրամիջոցը:

#### 8.3.7. Կայանման արգելակների եւ արգելակային կաղապարների օգտագործումը

Արգելվում է առանց կայանման արգելակների գործադրման կայանել

վտանգավոր բեռներ փոխադրող ցանկացած փոխադրամիջոց: Արգելակային սարքեր չունեցող կցորդների տեղաշարժն անհրաժեշտ է կանխել՝ օգտագործելով առնվազն մեկ արգելակային կաղապար, որի նկարագրությունը տրված է 8.1.5.2-ում:

#### **8.3.8. Էլեկտրական միացումների կիրառումը**

Մեխանիկական փոխադրամիջոցից եւ 3,5 տոննա առավելագույն զանգվածը գերազանցող կցորդից բաղկացած ու արգելակային հակաբլոկավորման համակարգով սարքավորված տրանսպորտային միավորի դեպքում պետք է կիրառվեն 9.2.2.6-ում նշված միացումները՝ միացնելու քարշակը եւ կցորդը փոխադրման ամբողջ ժամանակահատվածում:

## ԳԼՈՒԽ 8.4

### ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

8.4.1. Այն փոխադրամիջոցները, որոնք 8.5 գլխի S1 (6) եւ S14 - S24 հատուկ դրույթներում ներկայացված քանակություններով վտանգավոր բեռներ են փոխադրում՝ ըստ առանձին բեռների համար սահմանված քանակությունների՝ համաձայն 3.2 գլխի Ա աղյուսակի 19-րդ սյունակի, պետք է գտնվեն վերահսկողության ներքո կամ առանց վերահսկողության կարող են այլ կերպ կանգնեցվել հուսալի կայանատեղերում կամ գործարանային տարածքներում: Նմանատիպ պայմանների բացակայության դեպքում փոխադրամիջոցը կարող է կանգնեցվել մեկուսացված տարածքներում անվտանգության համապատասխան միջոցառումներ ձեռնարկելուց հետո: Այդ տարածքները պետք է բավարարեն ներքոհիշյալ (ա), (բ) կամ (գ) պահանջները.

- ա) ավտոկայանատեղ՝ վերահսկվող սպասարկող այնպիսի անձնակազմի կողմից, որը տեղեկացվել է բեռի բնույթի մասին եւ գիտի վարորդի գտնվելու վայրը,
- բ) հանրային կամ մասնավոր օգտագործման ավտոկայանատեղ, որտեղ փոխադրամիջոցին այլ փոխադրամիջոցներից հասցվող վնասի հավանականությունը չնչին է,
- գ) հանրային նշանակության ճանապարհներից եւ բնակելի տարածքներից առանձնացված համապատասխան բաց տարածք, որտեղ մարդիկ սովորաբար չեն հավաքվում կամ չեն հատում այդ տարածքները:

(բ) ենթակետով թույլատրելի ավտոկայանատեղերը պետք է օգտագործվեն բացառապես այն դեպքերում, երբ (ա) ենթակետում նկարագրված տարածքները գոյություն չունեն, իսկ (գ) ենթակետում ներկայացված տարածքները պետք է օգտագործվեն այն դեպքում, երբ (ա) եւ (բ) ենթակետերում նկարագրված տարածքները գոյություն չունեն:

8.4.2. Անհրաժեշտ է վերահսկողություն սահմանել բեռնված ՊԱՀՄ-ների նկատմամբ կամ հնարավոր է դրանք այլ կերպ կանգնեցնել հուսալի կայանատեղերում կամ գործարանային տարածքներում առանց վերահսկողության: Սույն պահանջը չի գործում դատարկ չմաքրված ՊԱՀՄ-ների նկատմամբ:



## ԳԼՈՒԽ 8.5

### ՈՐՈՇԱԿԻ ԴԱՍԵՐԻ ԿԱՄ ՆՅՈՒԹԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Ի լրումն 8.1 - 8.4 գլուխների պահանջների՝ որոշակի դասերի կամ նյութերի փոխադրմանը կարող են ներկայացվել հետեւյալ պահանջները, եթե 3.2 գլխի Ա աղյուսակի 19-րդ սյունակում դրանց հղում է արվում: 8.1 - 8.4 գլուխների պահանջների հետ հակասություն առաջանալու դեպքում կիրառվում են սույն գլխի պահանջները:

**S1: Լրացուցիչ պահանջներ պայթուցիկ նյութերի եւ պատրաստվածքների (Դաս 1) փոխադրման վերաբերյալ**

**1) Վարորդների հատուկ վերապատրաստումը**

Եթե Պայմանավորվող կողմ հանդիսացող երկրում գործող այլ կանոնակարգերի համաձայն վարորդն անցել է համարժեք վերապատրաստման դասընթաց այլ ձեւաչափով կամ այլ նպատակով, սակայն որը ներառում է 8.2.2.3.4-ով սահմանված թեմաները, ապա վարորդը կարող է ամբողջությամբ կամ մասամբ ազատվել մասնագիտական վերապատրաստման դասընթաց անցնելու անհրաժեշտությունից:

**2) Լիազորված անձի ներկայությունը**

Եթե նման բան նախատեսված է ազգային կանոնակարգերով, ապա «ԱԴԻ» համաձայնագրի Պայմանավորվող կողմ հանդիսացող երկրի իրավասու մարմինը կարող է պահանջել, որ փոխադրողն իր միջոցների հաշվին փոխադրամիջոցում ապահովի լիազորված անձի ներկայությունը:

**3) Ծխելու, կրակի եւ բաց բոցի արգելքը**

Արգելվում է ծխել, օգտագործել կրակ կամ բաց բոց 1-ին դասի նյութեր եւ պատրաստվածքներ տեղափոխող փոխադրամիջոցներում, դրանց մոտակայքում, ինչպես նաեւ այդ նյութերի ու պատրաստվածքների բեռնման եւ բեռնաթափման ժամանակ: Ծխելու արգելքը նաեւ կիրառելի է էլեկտրոնային ծխախոտների եւ նմանատիպ սարքերի նկատմամբ:

**4) Բեռնման եւ բեռնաթափման վայրերը**

ա) արգելվում է իրականացնել 1-ին դասի նյութերի եւ պատրաստվածքների բեռնման ու բեռնաթափման աշխատանքները հասարակական վայրերի կառուցապատ



տարածքներում առանց իրավասու մարմինների հատուկ թույլտվության,

- բ) առանց իրավասու մարմիններին նախօրոք տրված համապատասխան ծանուցման արգելվում է բեռնել կամ բեռնաթափել 1-ին դասի նյութերը եւ պատրաստվածքները կառուցապատ տարածքներից զատ հասարակական այլ վայրում, եթե միայն նմանատիպ գործողությունների հրատապ իրականացումը չի բխում անվտանգության նկատառումներից,
- գ) այն դեպքում, երբ բեռնման-բեռնաթափման աշխատանքները որեւէ պատճառով պետք է իրականացվեն հասարակական վայրում, ապա տարատեսակ նյութերն ու պատրաստվածքները պետք է առանձնացվեն ըստ նախազգուշական պիտակների,
- դ) եթե բեռնման-բեռնաթափման աշխատանքների իրականացման նպատակով 1-ին դասի նյութեր եւ պատրաստվածքներ տեղափոխող փոխադրամիջոցներն անհրաժեշտ է կանգառել հասարակական վայրում, ապա անշարժ փոխադրամիջոցների միջեւ պետք է պահպանվի առնվազն 50մ հեռավորություն: Այս հեռավորությունը չի վերաբերում այն փոխադրամիջոցներին, որոնք միեւնոյն տրանսպորտային միավորին են վերաբերում:

#### **5) Ավտոշարասյունները**

- ա) եթե 1-ին դասից նյութեր եւ պատրաստվածքներ տեղափոխող փոխադրամիջոցները երթեւեկում են ավտոշարասյունով, ապա տրանսպորտային միավորների միջեւ 50 մետրից ոչ պակաս հեռավորություն պետք է պահպանվի,
- բ) իրավասու մարմինը կարող է ավտոշարասյունների դասավորման հաջորդականության կամ կազմման վերաբերյալ կանոններ սահմանել:

#### **6) Վերահսկողությունը փոխադրամիջոցների նկատմամբ**

8.4 գլխի պահանջները կիրառելի են բացառապես այն դեպքերում, երբ փոխադրամիջոցում տեղափոխվող 1-ին դասի նյութերում եւ պատրաստվածքներում պարունակվող պայթյունավտանգ նյութի ընդհանուր զտաքաշը գերազանցում է ստորեւ ներկայացված սահմանային արժեքները.

Ենթադաս 1.1՝

0 կգ

Ենթադաս 1.2՝

0 կգ

Ենթադաս 1.3, «C» համատեղելիության խումբ	0 կգ
Ենթադաս 1.3՝ բացառությամբ «C» համատեղելիության խմբի	50 կգ
Ենթադաս 1.4՝ բացառությամբ ներքոթվարկյալ խմբերի	50 կգ
Ենթադաս 1.5՝	0 կգ
Ենթադաս 1.6՝	50 կգ
ՄԱԿ-ի նշագրման 0104, 0237, 0255, 0267, 0289, 0361, 0365, 0366, 0440, 0441, 0455, 0456 եւ 0500 համարների 1.4 ենթադասի նյութեր ու պատրաստվածքներ	0 կգ

Խառը բեռների դեպքում փոխադրվող ցանկացած նյութի կամ պատրաստվածքի համար կիրառելի նվազագույն սահմանային արժեքը տարածվում է ամբողջ բեռի վրա:

Բացի այդ, այս նյութերն ու պատրաստվածքները պետք է գտնվեն մշտական վերահսկողության ներքո՝ ցանկացած չարանենգ գործողություն կանխելու եւ բեռների կորստի կամ հրդեհի բռնկման դեպքում վարորդին ու իրավասու մարմիններին զգուշացնելու նպատակով:

Սույն պահանջները չեն կիրառվում դատարկ չմաքրված փաթեթվածքների նկատմամբ:

### **7) Փոխադրամիջոցները փակելը**

1-ին դասի նյութերի եւ պատրաստվածքներ տեղափոխող EX/II փոխադրամիջոցների բեռնախցիկների դռները եւ կոշտ կափարիչները, ինչպես նաեւ EX/III փոխադրամիջոցների բեռնախցիկների բոլոր բացվածքները պետք է փակված լինեն փոխադրման ընթացքում՝ բացառությամբ բեռնման եւ բեռնաթափման աշխատանքների իրականացման ժամանակահատվածի:

## **S2: Լրացուցիչ պահանջներ դյուրավառ հեղուկների կամ գազերի փոխադրման վերաբերյալ**

### **1) Լուսավորման շարժական սարքերը**

Արգելվում է 60 °C-ը չգերազանցող բռնկման ջերմաստիճան ունեցող հեղուկներ կամ 2-րդ դասի դյուրավառ նյութեր կամ պատրաստվածքներ տեղափոխող փակ փոխադրամիջոցների բեռնախցիկներ մուտք գործելը լուսավորման շարժական այնպիսի սարքերով, որոնց կառուցվածքը եւ նախագծումը չի բացառում փոխադրամիջոցից ներս թափանցած դյուրավառ գոլորշիների կամ գազերի բռնկումը:

### **2) Վառելիքի այրման սարքերի գործարկումը բեռնման կամ բեռնաթափման ընթացքում**

Արգելվում է գործարկել «FL» տեսակի փոխադրամիջոցներում (տե՛ս 9-րդ մասը) տեղադրված վառելիքի այրման սարքերը բեռնման եւ բեռնաթափման աշխատանքների ժամանակ, ինչպես նաեւ բեռնման վայրերում:

**3) Նախազգուշական միջոցներ՝ էլեկտրաստատիկ լիցքերից խուսափելու համար**

«FL» տեսակի փոխադրամիջոցների դեպքում (տե՛ս 9-րդ մասը) ցիստեռնները դատարկելուց կամ լցավորելուց առաջ անհրաժեշտ է փոխադրամիջոցի շասսիի պատշաճ էլեկտրական հողանցում ապահովել: Բացի այդ, անհրաժեշտ է սահմանափակել լցավորման արագությունը:

**S3: Վարակիչ նյութերի փոխադրման հետ կապված հատուկ դրույթներ**

8.1.4.1 եւ 8.3.4-ում 2-րդ, 3-րդ եւ 5-րդ աղյուսակի սյունակների պահանջները չեն կիրառվի:

**S4: Վերահսկվող ջերմաստիճանային պայմաններում փոխադրման հետ կապված լրացուցիչ պահանջներ**

Էական է պահպանել սահմանված ջերմաստիճանն անվտանգ փոխադրման նկատառումով: Ընդհանուր առմամբ անհրաժեշտ է՝

- ամբողջական ստուգման ենթարկել տրանսպորտային միավորը բեռնելուց առաջ,
- փոխադրողին ցուցումներ տալ սառեցման համակարգի գործարկման վերաբերյալ, ինչպես նաեւ տրամադրել փոխադրման ճանապարհին սառնազդակի մատակարարների ցանկը,
- տեղեկացնել փոխադրողին ջերմաստիճանի նկատմամբ վերահսկողությունը կորցնելու դեպքում ձեռնարկվելիք գործողությունների մասին,
- պահպանել մշտական վերահսկողություն գործող ջերմաստիճանների առումով, եւ
- ապահովել պահեստամասեր կամ սառեցման պահեստային ենթահամակարգ (back-up):

Օդի ջերմաստիճանը տրանսպորտային միավորի ներսում պետք է չափվի երկու առանձին տվիչներով, ընդ որում, տվյալները պետք է այնպես գրանցվեն, որ հնարավորություն ընձեռեն արագորեն արձանագրել ջերմաստիճանի ցանկացած փոփոխություն:

Անհրաժեշտ է ստուգել ջերմաստիճանն ամեն 4-6 ժամը մեկ եւ գրանցել

արդյունքը:

Եթե փոխադրման ընթացքում վերահսկման ջերմաստիճանը գերազանցում է թույլատրելի սահմանային արժեքը, ապա անհրաժեշտ է ձեռնարկել հակավթարային համապատասխան միջոցառումներ, որը ներառում է սառեցման սարքավորման անհրաժեշտ վերանորոգման աշխատանքներ կամ սառեցման հզորության ավելացում (օրինակ՝ ավելացնելով հեղուկ կամ պինդ սառնազդակ): Բացի այդ, անհրաժեշտ է անցկացնել ջերմաստիճանի հաճախակի ստուգում եւ պահպանել հակավթարային միջոցառումների ձեռնարկման պատրաստվածություն: Վթարային ջերմաստիճանի առկայության դեպքում հակավթարային միջոցառումներ իրականացնելու անհրաժեշտություն է առաջանում (տե՛ս նաեւ 2.2.41.1.17 եւ 2.2.52.1.15 - 2.2.52.1.18):

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** Սույն S4 դրույթը չի կիրառվում 3.1.2.6.-ում նշված նյութերի նկատմամբ, եթե դրանք կայունացված են քիմիական այնպիսի ինհիբիտորների ներմուծմամբ, որոնց դեպքում ԻՏԶ-ն (արագացող ինքնատրոհման ջերմաստիճան) գերազանցում է 50 °C-ը: Այս դեպքում կարող է ծագել ջերմաստիճանի վերահսկողության անհրաժեշտություն փոխադրման այնպիսի պայմաններում, երբ ջերմաստիճանը կարող է գերազանցել 55 °C-ը:

**S5: Ընդհանուր առմամբ միայն ազատված փաթեթներով 7-րդ դասի ռադիոակտիվ նյութերի փոխադրման հետ կապված հատուկ դրույթներ ( ՄԱԿ-ի նշագրման 2908, 2909, 2910 եւ 2911 համարներ)**

Գրավոր ցուցումներին վերաբերող 8.1.2.1 (բ), 8.2.1, 8.3.1 եւ 8.3.4-ի պահանջները չեն կիրառվում:

**S6: Բացառությամբ ազատված փաթեթների՝ ընդհանուր առմամբ այլ փաթեթներով 7-րդ դասի ռադիոակտիվ նյութերի փոխադրման հետ կապված հատուկ դրույթներ**

8.3.1-ի դրույթները չեն կիրառվում բացառապես «I-ՍՊԻՏԱԿ» («I-WHITE») կատեգորիայի պիտակով փաթեթներ, տրանսպորտային կապոցներ կամ կոնտեյներներ փոխադրող փոխադրամիջոցների նկատմամբ:

8.3.4-ի դրույթները չեն կիրառվում՝ պայմանով, որ լրացուցիչ որեւէ ռիսկ չկա:

Հատուկ դրույթներ կամ լրացուցիչ այլ պահանջներ

**S7:** (Հանվել է)

**S8:** Տրանսպորտային միավորով նմանատիպ նյութերի ավելի քան 2 000 կգ փոխադրելու դեպքում հնարավորինս չպետք է կանգ առնել բնակավայրերի

կամ մարդկանց հավաքատեղիների մոտակայքում, եթե տեխնիկական սպասարկման անհրաժեշտություն է առաջացել: Երկարատե կանգառը նմանատիպ վայրերի մոտակայքում թույլատրվում է միայն իրավասու մարմինների համաձայնության դեպքում:

**S9:** Եթե տեխնիկական սպասարկման անհրաժեշտություն է առաջացել նմանատիպ նյութերի փոխադրման ընթացքում, ապա հնարավորինս չպետք է կանգ առնել բնակավայրերի կամ մարդկանց հավաքատեղիների մոտակայքում: Երկարատե կանգառը նմանատիպ վայրերի մոտակայքում թույլատրվում է միայն իրավասու մարմինների համաձայնության դեպքում:

**S10:** Երբ փոխադրամիջոցն անշարժ կանգնած է, փաթեթներն ապրիլից հոկտեմբեր ընկած ժամանակահատվածում պետք է հուսալիորեն պաշտպանված լինեն արելի ճառագայթների ազդեցությունից, օրինակ՝ բեռները ծածկելով բրեզենտով՝ դրանց մակերեսից 20 սմ բարձրությունից ոչ պակաս, եթե դա պահանջվում է այն երկրի օրենսդրությամբ, որի տարածքում կայանված է տվյալ փոխադրամիջոցը:

**S11:** Եթե Պայմանավորվող կողմ հանդիսացող երկրում գործող այլ կանոնակարգերի համաձայն վարորդն անցել է համարժեք վերապատրաստման դասընթաց այլ ձեւաչափով կամ այլ նպատակով, սակայն որը ներառում է 8.2.2.3.5-ով սահմանված թեմաները, ապա վարորդը կարող է ամբողջությամբ կամ մասամբ ազատվել մասնագիտական դասընթաց անցնելու անհրաժեշտությունից:

**S12:** Եթե ռադիոակտիվ նյութ պարունակող, փոխադրվող փաթեթների ընդհանուր թիվը տրանսպորտային միավորում չի գերազանցում 10-ը, իսկ տրանսպորտային ինդեքսների գումարը չի գերազանցում 3-ը, եւ չկան լրացուցիչ ռիսկեր, ապա վարորդների վերապատրաստման մասով 8.2.1-ի պահանջները պետք է կիրառել: Այնուամենայնիվ, վարորդներն այս դեպքում պետք է ռադիոակտիվ նյութերի փոխադրումը կարգավորող պահանջներին համապատասխան անցնեն իրենց գործառույթներին համահունչ վերապատրաստում, որի արդյունքում իրազեկված կլինեն ռադիոակտիվ նյութերի փոխադրման ընթացքում առկա ճառագայթահարման վտանգի մասին: Նմանատիպ հարցերով իրազեկման վերապատրաստման դասընթաց անցնելու փաստը պետք է հաստատվի գործատուի կողմից տրամադրվող սերտիֆիկատով: Տե՛ս նաեւ 8.2.3:

**S13:** (Հանվել է )

**S14:** Փոխադրամիջոցի վերահսկողության հետ կապված 8.4 գլխի դրույթները կիրառվում են այդ նյութերի ցանկացած քանակ փոխադրող փոխադրամիջոցների նկատմամբ:

- S15:** Փոխադրամիջոցների վերահսկողությանն առնչվող 8.4 գլխի դրույթները կիրառվում են այդ նյութերի ցանկացած քանակ փոխադրող փոխադրամիջոցների նկատմամբ: Այնուհանդերձ, 8.4 գլխի դրույթները կարող են չկիրառվել այն դեպքում, երբ բեռնված խցիկը փակված է կամ փոխադրվող փաթեթները որեւէ այլ կերպ պաշտպանված են անթույլատրելի բեռնաթափումից:
- S16:** Փոխադրամիջոցի վերահսկողությանն առնչվող 8.4 գլխի դրույթները կիրառվում են այն դեպքում, երբ փոխադրամիջոցում առկա այդ նյութերի ընդհանուր զանգվածը գերազանցում է 500 կգ-ը:
- Բացի այդ, այդ նյութերի ավելի քան 500 կգ փոխադրող փոխադրամիջոցները ենթակա են մշտական վերահսկողության ցանկացած չարանենգ գործողություն կանխելու եւ նյութերի կորստի կամ հրդեհի բռնկման դեպքում վարորդին ու իրավասու մարմիններին զգուշացնելու նպատակով:
- S17:** Փոխադրամիջոցի վերահսկողությանն առնչվող 8.4 գլխի դրույթները կիրառվում են այն դեպքում, երբ փոխադրամիջոցում առկա այդ նյութերի ընդհանուր զանգվածը գերազանցում է 1 000 կգ-ը:
- S18:** Փոխադրամիջոցի վերահսկողությանն առնչվող 8.4 գլխի դրույթները կիրառվում են այն դեպքում, երբ փոխադրամիջոցում առկա այդ նյութերի ընդհանուր զանգվածը գերազանցում է 2 000 կգ-ը:
- S19:** Փոխադրամիջոցի վերահսկողությանն առնչվող 8.4 գլխի դրույթները կիրառվում են այն դեպքում, երբ փոխադրամիջոցում առկա այդ նյութերի ընդհանուր զանգվածը գերազանցում է 5 000 կգ-ը:
- S20:** Փոխադրամիջոցի վերահսկողությանն առնչվող 8.4 գլխի դրույթները կիրառվում են այն դեպքում, երբ փոխադրամիջոցում առկա այդ նյութերի ընդհանուր զանգվածը կամ ծավալը գերազանցում է 10 000 կգ-ը փաթեթավորված բեռների փոխադրման կամ 3 000 լիտրը ցիստեռններով փոխադրելու դեպքում:
- S21:** Փոխադրամիջոցի վերահսկողությանն առնչվող 8.4 գլխի դրույթները կիրառվում են բոլոր նյութերի նկատմամբ՝ անկախ նրանից, թե ինչ զանգված ունեն դրանք: Բացի այդ, այդ բեռները ենթակա են մշտական վերահսկողության՝ ցանկացած չարանենգ գործողություն կանխելու եւ բեռների կորստի կամ հրդեհի բռնկման դեպքում վարորդին ու իրավասու մարմիններին զգուշացնելու նպատակով: Այնուհանդերձ, 8.4 գլխի դրույթները կարող են չկիրառվել այն դեպքում, երբ՝
- ա) բեռնված բեռնախցիկը փակված է կամ փոխադրվող փաթեթները որեւէ այլ կերպ պաշտպանված են անթույլատրելի

բեռնաթափումից, եւ

բ) ճառագայթման մակարդակը չի գերազանցում 5  $\mu$ Չվ/ժամը փոխադրամիջոցի արտաքին մակերեսի ցանկացած մատչելի կետում:

**S22:** Փոխադրամիջոցի վերահսկողության հետ կապված 8.4 գլխի դրույթները կիրառվում են այն դեպքում, երբ փոխադրամիջոցում առկա այդ նյութերի ընդհանուր զանգվածը կամ ծավալը գերազանցում է 5 000 կգ-ը՝ փաթեթավորված բեռների փոխադրման, կամ 3 000 լիտրը ցիստեռններով փոխադրելու դեպքում:

**S23:** Փոխադրամիջոցի վերահսկողության հետ կապված 8.4 գլխի դրույթները կիրառվում են այն դեպքում, երբ այդ նյութը փոխադրվում է մեծ քանակությամբ կամ ցիստեռններով, իսկ փոխադրամիջոցում առկա ընդհանուր զանգվածը կամ ծավալը համապատասխանաբար գերազանցում է 3 000 կգ-ը կամ 3 000 լիտրը:

**S24:** Փոխադրամիջոցի վերահսկողության հետ կապված 8.4 գլխի դրույթները կիրառվում են այն դեպքում, երբ փոխադրամիջոցում առկա այդ նյութերի ընդհանուր զանգվածը գերազանցում է 100 կգ-ը:

## ԳԼՈՒԽ 8.6

### ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԹՈՒՆԵԼՆԵՐՈՎ ՎՏԱՆԳԱՎՈՐ ԲԵՌՆԵՐ ՏԵՂԱՓՈԽՈՂ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ

#### 8.6.1. Ընդհանուր դրույթներ

Սույն գլխի դրույթները կիրառվում են այն դեպքում, երբ փոխադրամիջոցների երթևեկությունն ավտոճանապարհային թունելներով սահմանափակված է՝ համաձայն 1.9.5-ի:

#### 8.6.2. Վտանգավոր բեռներ տեղափոխող փոխադրամիջոցների երթևեկությունը կարգավորող ճանապարհային նշանները կամ ազդանշանները

Թունելի այն կատեգորիան, որին իրավասու մարմնի կողմից դասվում է տվյալ ավտոճանապարհային թունելը՝ համաձայն 1.9.5.1-ի՝ սահմանափակելու վտանգավոր բեռներ փոխադրող տրանսպորտային միավորների երթևեկությունը, պետք է նշվի ճանապարհային նշաններով եւ ազդանշաններով հետեւյալ կերպ.

Նշաններ եւ ազդանշաններ	Թունելի կատեգորիան
Նշանը բացակայում է	«A» կատեգորիայի թունել
B տառը կրող լրացուցիչ ցուցանակի վրա նշված նշան՝	«B» կատեգորիայի թունել
C տառը կրող լրացուցիչ ցուցանակի վրա նշված նշան՝	«C» կատեգորիայի թունել
D տառը կրող լրացուցիչ ցուցանակի վրա նշված նշան՝	«D» կատեգորիայի թունել
E տառը կրող լրացուցիչ ցուցանակի վրա նշված նշան՝	«E» կատեգորիայի թունել

#### 8.6.3. Թունելներով բեռների փոխադրման սահմանափակումների ծածկագրերը

8.6.3.1. Թունելներով հատուկ վտանգավոր բեռների փոխադրման սահմանափակումները հիմնված են թունելով այդ բեռների փոխադրման սահմանափակման ծածկագրի վրա, որը նշված է 3.2 գլխի Ա աղյուսակի 15-րդ սյունակում: Թունելով բեռների փոխադրման սահմանափակումների ծածկագրերը նշվում են վանդակի ներքեի հատվածում՝ փակագծերում: Եթե թունելով բեռների փոխադրման սահմանափակումների ծածկագրերից որեւէ մեկի փոխարեն նշվում է «(—)» նշանը, ապա թունելով բեռների փոխադրման ցանկացած սահմանափակում չի տարածվում վտանգավոր բեռների վրա, սակայն ՄԱԿ-ի նշագրման 2919 եւ 3331 համարների վտանգավոր բեռների



դեպքում, թունելներով փոխադրումը, այնուամենայնիվ, կարող է կարգավորվել իրավասու մարմնի (մարմինների) կողմից սահմանված հատուկ պայմաններով՝ 1.7.4.2-ի հիման վրա:

8.6.3.2. Եթե տրանսպորտային միավորը պարունակում է թունելով բեռների փոխադրման սահմանափակումների տարբեր ծածկագրերով նշված վտանգավոր բեռներ, ապա բեռն ամբողջությամբ պետք է նշվի այդ ծածկագրերից ամենից շատ սահմանափակում նախատեսող ծածկագրով:

8.6.3.3. Թունելով բեռների փոխադրման սահմանափակումները չեն տարածվում 1.1.3-ի համաձայն փոխադրվող վտանգավոր բեռների վրա եւ չպետք է դիտարկվեն թունելով բեռների փոխադրման սահմանափակումների այն ծածկագրի սահմանման դեպքում, որով նշվում է տրանսպորտային միավորի ամբողջ բեռը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ պահանջվում է, որ տրանսպորտային միավորը մակնշված լինի 3.4.13-ին համապատասխան՝ հաշվի առնելով 3.4.14-ը:

8.6.4. Վտանգավոր բեռներ փոխադրող տրանսպորտային միավորների համար թունելով երթեւեկության սահմանափակումները

Թունելով փոխադրման մասով սահմանափակումները կիրառվում են հետեւյալի նկատմամբ՝

- տրանսպորտային միավորներ, որոնց համար պահանջվում է մակնշում՝ 3.4.13-ին համապատասխան, հաշվի առնելով 3.4.14-ը E կատեգորիայի թունելների դեպքում, եւ
- տրանսպորտային միավորներ, որոնց համար ըստ 5.3.2-ի պահանջվում է նարնջագույն թիթեղի մակնշում՝ ստորեւ ներկայացված աղյուսակին համապատասխան, եթե տրանսպորտային միավորի ամբողջ բեռի վրա նշվելիք թունելի սահմանափակումների ծածկագիրը հաստատվել է:

Թունելով ամբողջ բեռի փոխադրման սահմանափակումների ծածկագիրը	Սահմանափակումը
B	Երթեւեկությունը «B», «C», «D» եւ «E» կատեգորիայի թունելներով արգելվում է
B1000C	<p>Եթե իրականացվում է փոխադրում՝</p> <ul style="list-style-type: none"> <li>- որի դեպքում յուրաքանչյուր տրանսպորտային միավորին ընկնում է 1 000 կգ-ից ավելի ընդհանուր զուտ պայթուցիկ զանգված, ապա երթեւեկությունը «B», «C», «D» եւ «E» կատեգորիայի թունելներով արգելվում է,</li> <li>- որի դեպքում յուրաքանչյուր փոխադրամիջոցին ընկնում է 1 000 կգ-ը չգերազանցող ընդհանուր զուտ պայթուցիկ զանգված, ապա երթեւեկությունը «C», «D» եւ «E» կատեգորիայի թունելներով արգելվում է:</li> </ul>
B/D	<p>Ցիստեռններով փոխադրման դեպքում երթեւեկությունը «B», «C», «D» եւ «E» կատեգորիայի թունելներով արգելվում է:</p> <p>Այլ փոխադրումների դեպքում երթեւեկությունը «D» եւ «E» կատեգորիայի թունելներով արգելվում է:</p>
B/E	<p>Ցիստեռններով փոխադրման դեպքում երթեւեկությունը «B», «C», «D» եւ «E» կատեգորիայի թունելներով արգելվում է:</p> <p>Այլ փոխադրումների դեպքում երթեւեկությունը «E» կատեգորիայի թունելներով արգելվում է:</p>
C	Երթեւեկությունը «C», «D» եւ «E» կատեգորիայի թունելներով արգելվում է:
C5000D	<p>Եթե իրականացվում է փոխադրում՝</p> <ul style="list-style-type: none"> <li>- որի դեպքում յուրաքանչյուր տրանսպորտային միավորին ընկնում է 5 000 կգ-ից ավելի ընդհանուր զուտ պայթուցիկ զանգված, ապա երթեւեկությունը «C», «D» եւ «E» կատեգորիայի թունելներով արգելվում է,</li> <li>- որի դեպքում յուրաքանչյուր փոխադրամիջոցի ընկնում է 5 000 կգ-ը չգերազանցող ընդհանուր զուտ պայթուցիկ զանգված, ապա երթեւեկությունը «D» եւ «E» կատեգորիայի թունելներով արգելվում է:</li> </ul>
C/D	<p>Ցիստեռններով փոխադրման դեպքում երթեւեկությունը «C», «D» եւ «E» կատեգորիայի թունելներով արգելվում է:</p> <p>Այլ փոխադրումների դեպքում երթեւեկությունը «D» եւ «E» կատեգորիայի թունելներով արգելվում է:</p>
C/E	<p>Ցիստեռններով փոխադրման դեպքում երթեւեկությունը «C», «D» եւ «E» կատեգորիայի թունելներով արգելվում է:</p> <p>Այլ փոխադրումների դեպքում երթեւեկությունը «E» կատեգորիայի թունելներով արգելվում է:</p>

D	Երթեւեկությունը «D» եւ «E» կատեգորիայի թունելներով արգելվում է:
D/E	Խոտնաբեռն կամ ցիստեռններով փոխադրման դեպքում երթեւեկությունը «D» եւ «E» կատեգորիայի թունելներով արգելվում է:  Այլ փոխադրումների դեպքում երթեւեկությունը «E» կատեգորիայի թունելներով արգելվում է:
E	Երթեւեկությունը «E» կատեգորիայի թունելներով արգելվում է:
-	Երթեւեկությունը թույլատրվում է բոլոր թունելներով (ՄԱԿ-ի նշագրման 2919 եւ 3331 համարների առումով, տե՛ս նաեւ 8.6.3.1):

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1.** Օրինակ՝ ՄԱԿ-ի նշագրման 0161 համարի, 1.3C դասակարգման ծածկագրով, թունելով բեռների փոխադրման սահմանափակումների C5000D ծածկագրով, 3 000 կգ ընդհանուր զույր պայթուցիկ զանգվածին համարժեք քանակությամբ անծուխ վառոդ փոխադրող տրանսպորտային միավորի երթեւեկությունը «D» եւ «E» կատեգորիայի թունելներով արգելվում է:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2.** E դասի թունելներով փոխադրվող սահմանափակումները չեն վերաբերում ՎԲՄԾ ծածկագրին համապատասխան՝ կոնտեյներներում կամ տրանսպորտային միավորներում փոխադրվող սահմանափակ քանակություններով փաթեթավորված վրանգավոր բեռներին, եթե սահմանափակ քանակություններով փաթեթավորված վրանգավոր բեռներ պարունակող փաթեթի ընդհանուր անզույր քաշը յուրաքանչյուր տրանսպորտային միավորում չի գերազանցում 8 տոննան:

## **ՄԱՍ 9**

**Փոխադրամիջոցների կառուցվածքի եւ  
հաստատման վերաբերյալ պահանջները**

## ԳԼՈՒԽ 9.1

### ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ, ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԱՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ, ՈՐՈՆՔ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ ԵՆ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆԸ

9.1.1. Գործողության շրջանակը եւ սահմանումները

9.1.1.1. Գործողության շրջանակը

9-րդ գլխի պահանջները վերաբերում են «N» եւ «O» կատեգորիայի փոխադրամիջոցներին, ինչպես սահմանված է «Փոխադրամիջոցների կառուցվածքի մասին» միասնական որոշման մեջ (R.E.3)<sup>1</sup>, որոնք նախատեսված են վտանգավոր բեռների փոխադրման համար:

Սույն պահանջները վերաբերում են փոխադրամիջոցների կառուցվածքին, տեսակի հաստատմանը, «ԱԴՌ» համաձայնագրի հաստատմանը եւ տարեկան տեխնիկական ստուգումներին:

9.1.1.2. Սահմանումները

9-րդ մասի նպատակներով՝

«Փոխադրամիջոց» նշանակում է որեւէ փոխադրամիջոց՝ ամբողջական, ոչ ամբողջական կամ լրակազմված, որը նախատեսված է ճանապարհով վտանգավոր բեռների փոխադրման համար.

«EX/II փոխադրամիջոց» կամ «EX/III փոխադրամիջոց» նշանակում է այնպիսի փոխադրամիջոց, որը նախատեսված է պայթուցիկ նյութերի կամ պարագաների փոխադրման համար (1-ին դաս).

«FL փոխադրամիջոց» նշանակում է՝

ա) այնպիսի փոխադրամիջոց, որը նախատեսված է այն հեղուկների փոխադրման համար, որոնց բռնկման ջերմաստիճանը չի գերազանցում 60 °C-ն (բացառությամբ դիզելային վառելիքի, որը համապատասխանում է EN 590:2013 + AC:2014 ստանդարտին, նավթագազին եւ ջերմային յուղերին (թեթեւ). ՄԱԿ-ի նշագրման 1202 համար. EN 590:2013 + AC:2014 ստանդարտում նշված բռնկման ջերմաստիճանով) 1 մ<sup>3</sup> տարողությունը չգերազանցող անշարժ ցիստեռնների կամ հանովի ցիստեռնների մեջ կամ 3 մ<sup>3</sup> անհատական տարողությունը չգերազանցող ցիստեռն-կոնտեյներների կամ շարժական ցիստեռնների մեջ, կամ

բ) այնպիսի փոխադրամիջոց, որը նախատեսված է դյուրավառ գազերի փոխադրման համար՝ 1 մ<sup>3</sup> տարողությունը գերազանցող անշարժ ցիստեռնների կամ հանովի ցիստեռնների մեջ կամ 3 մ<sup>3</sup> անհատական

<sup>1</sup> ՄԱԿ-ի ԵՏՀ փաստաթուղթ TRANS/WP.29/78/Rev. 3

տարողությունը գերազանցող ցիստեռն-կոնտեյներների, շարժական ցիստեռնների կամ ԳԲՏԿ-ների մեջ, կամ

- գ) մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոց՝ 1 մ<sup>3</sup> ընդհանուր տարողությունը գերազանցող՝ դյուրավառ գազերի փոխադրման համար, կամ
- դ) փոխադրամիջոց, որը նախատեսված է կայունացված ջրածնի պերօքսիդի, ավելի քան 60% հիդրոգեն պերօքսիդով կայունացված ջրային լուծույթի (5.1 դաս, ՄԱԿ-ի նշագրման 2015 համար) փոխադրման համար 1 մ<sup>3</sup> տարողությունը գերազանցող անշարժ ցիստեռնների կամ հանովի ցիստեռնների մեջ կամ 3 մ<sup>3</sup> անհատական տարողությունը գերազանցող ցիստեռն-կոնտեյներների կամ շարժական ցիստեռնների մեջ:

«AT փոխադրամիջոց» նշանակում է՝

- ա) այն փոխադրամիջոցները, բացառությամբ EX/III, FL փոխադրամիջոցների կամ ՇՄԱԿ-ների, որոնք նախատեսված են վտանգավոր բեռների փոխադրման համար 1 մ<sup>3</sup> տարողությունը գերազանցող անշարժ ցիստեռնների կամ հանովի ցիստեռնների մեջ կամ 3 մ<sup>3</sup> անհատական տարողությունը գերազանցող ցիստեռն-կոնտեյներների, շարժական ցիստեռնների կամ ԳԲՏԿ-ների մեջ, կամ
- բ) 1 մ<sup>3</sup> ընդհանուր տարողությունը գերազանցող մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոց՝ բացի FL փոխադրամիջոցից,

«ՊԱՇՄ» նշանակում է այնպիսի փոխադրամիջոց, որը համապատասխանում է պայթուցիկների արտադրության շարժական մեքենային, որը սահմանված է 1.2.1-ով.

«Լրիվ փոխադրամիջոց» նշանակում է ցանկացած փոխադրամիջոց, որը հետագա լրացման կարիք չունի (օրինակ՝ ավտոֆուրգոն, բեռնատար մեքենա, տրակտորներ, կցասայլեր).

«Ոչ լրիվ փոխադրամիջոց» նշանակում է ցանկացած փոխադրամիջոց, որը դեռ լրացման կարիք ունի առնվազն մեկ հետագա փուլում (օրինակ՝ խցիկով շասսին, կցորդ շասսին).

«Լրացված փոխադրամիջոց» նշանակում է ցանկացած փոխադրամիջոց, որը բազմափուլ գործընթացի արդյունք է (օրինակ՝ թափքով լրացված շասսին կամ խցիկով շասսին).

«Պաշտոնապես հաստատված տեսակի փոխադրամիջոց» նշանակում է ցանկացած փոխադրամիջոց, որը հաստատվել է համաձայն ԵՏՀ թիվ

105<sup>2</sup> կանոնակարգով:

«ԱԴԴ հաստատում» նշանակում է սերտիֆիկացում որեւէ Պայմանավորվող կողմի իրավասու մարմնի կողմից այն մասին, որ վտանգավոր բեռներ փոխադրելու համար նախատեսված տվյալ փոխադրամիջոցը համապատասխանում է սույն մասով սահմանված տեխնիկական պահանջներին՝ որպես EX/II, EX/III, FL, կամ AT փոխադրամիջոց կամ որպես ՇՄԱԿ:

9.1.2. EX/II, EX/III, FL եւ AT փոխադրամիջոցների եւ ՊԱՇՄ-ների հաստատումը

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** Փոխադրամիջոցների համար, բացառությամբ EX/II, EX/III, FL, եւ AT փոխադրամիջոցների եւ ՊԱՇՄ-ների, ոչ մի հատուկ հաստատման սերտիֆիկատ չի պահանջվում՝ բացի ծագման երկրում որպես կանոն կիրառվող անվտանգության ընդհանուր կանոնակարգերով պահանջվող սերտիֆիկատներից:

9.1.2.1. Ընդհանուր դրույթներ

EX/II, EX/III, FL եւ AT փոխադրամիջոցներն ու ՊԱՇՄ-ները պետք է համապատասխանեն սույն մասով սահմանված համապատասխան պահանջներին:

Յուրաքանչյուր ամբողջական կամ լրակազմված փոխադրամիջոց պետք է իրավասու մարմնի կողմից ենթարկվի առաջին ստուգման՝ սույն գլխի վարչական պահանջներին համապատասխան, որպեսզի ստուգվի համապատասխանությունը 9.2 - 9.8 գլուխներով սահմանված կիրառելի տեխնիկական պահանջներին:

Իրավասու մարմինը կարող է չկիրառել համաձայն 9.1.2.2-ի հաստատված տրակտորի՝ կիսակցորդի համար իրականացվող առաջին ստուգումը, որի համար արտադրողը, իր պատշաճորեն լիազորված ներկայացուցիչը կամ իրավասու մարմնի կողմից նշանակված մարմինը 9.2 գլխի պահանջների հետ համապատասխանության հայտարարագիր են տվել:

Փոխադրամիջոցի համապատասխանությունը պետք է սերտիֆիկացվի՝ 9.1.3-ի համաձայն հաստատման սերտիֆիկատի տրամամբ:

Եթե պահանջվում է, որ փոխադրամիջոցներն ունենան դիմացկուն արգելակման համակարգ, փոխադրամիջոցն արտադրողը կամ իր

---

<sup>2</sup> ԵՏՀ թիվ 105 կանոնակարգ (միասնական դրույթներ, որոնք վերաբերում են վրանգավոր բեռների փոխադրման համար նախատեսված փոխադրամիջոցների հաստատմանը՝ իրենց կառուցվածքային առանձնահատկությունների մասով):

պատշաճորեն լիազորված ներկայացուցիչը պետք է տա ԵՏՀ թիվ 13<sup>3</sup> կանոնակարգի 5-րդ հավելվածի կիրառվող կարգադրություններին համապատասխանության հայտարարագիր: Այդ հայտարարագիրը պետք է ներկայացվի առաջին տեխնիկական ստուգման ժամանակ:

9.1.2.2. Պաշտոնապես հաստատված տեսակի փոխադրամիջոցների պահանջները

Փոխադրամիջոցն արտադրողի կամ իր պատշաճորեն լիազորված ներկայացուցչի խնդրանքով՝ համաձայն 9.1.2.1-ի, «ԱԴՌ» համաձայնագրի հաստատման ենթակա փոխադրամիջոցների տեսակը կարող է հաստատվել իրավասու մարմնի կողմից: 9.2 գլխի համապատասխան տեխնիկական պահանջները համարվում են կատարված, եթե տեսակի հաստատման սերտիֆիկատը տրվել է իրավասու մարմնի կողմից՝ համաձայն ԵՏՀ թիվ 105<sup>2</sup> կարգադրության հրահանգի, եթե վերոնշյալ կարգադրության կամ հրահանգի տեխնիկական պահանջները համապատասխանում են սույն մասի 9.2 գլխի պահանջներին, եւ եթե փոխադրամիջոցի ոչ մի փոփոխություն չի փոխում դրա վավերականությունը: ՊԱՇՄ-ների դեպքում, ԵՏՀ թիվ 105 կարգադրության համաձայն դրված տեսակի հաստատման նշանը պետք է նույնականացնի փոխադրամիջոցը կամ որպես ՊԱՇՄ կամ որպես EX/III: ՊԱՇՄ-ները պետք է ճանաչվեն այդպիսին միայն հաստատման սերտիֆիկատի մեջ՝ տրված 9.1.3-ի համաձայն:

Տեսակի այդ հաստատումը՝ տրված պայմանավորվող մեկ կողմի կողմից, պետք է ընդունվի պայմանավորվող մյուս կողմերի կողմից՝ որպես փոխադրամիջոցի տեսակը երաշխավորող, երբ այդ փոխադրամիջոցը ներկայացվում է ստուգման՝ «ԱԴՌ» համաձայնագրի պահանջների հետ համապատասխանությունը հաստատելու համար:

«ԱԴՌ» համաձայնագրի հաստատման համար իրականացվող ստուգման ընթացքում, պաշտոնապես հաստատված տեսակի ոչ լրիվ փոխադրամիջոցի միայն այն բաղադրամասերը, որոնք ավելացվել են կամ փոփոխվել լրացման գործընթացի ընթացքում պետք է ստուգվեն՝ 9.2 գլխի կիրառվող պահանջներին համապատասխանելու համար:

9.1.2.3. Տարեկան տեխնիկական ստուգումը

EX/II, EX/III, FL եւ AT փոխադրամիջոցները եւ ՊԱՇՄ-ները ենթակա են տարեկան տեխնիկական ստուգման իրենց գրանցման երկրում՝ հավաստիանալու համար, որ նրանք համապատասխանում են սույն մասի կիրառվող պահանջներին եւ անվտանգության ընդհանուր

<sup>3</sup> ԵՏՀ կանոնակարգ թիվ 13 (M, N եւ O կատեգորիաների փոխադրամիջոցների հաստատման միասնական դրույթներ՝ արգելակման մասով):



կանոնակարգերին (վերաբերում են արգելակներին, լույսերին եւ այլ), որոնք ուժի մեջ են գրանցման երկրում:

Փոխադրամիջոցի համապատասխանությունը պետք է հաստատվի կամ հաստատման սերտիֆիկատի վավերականության ժամկետի երկարաձգմամբ կամ համաձայն 9.1.3-ի նոր հաստատման սերտիֆիկատի տրմամբ:

### 9.1.3. Հաստատման սերտիֆիկատը

9.1.3.1. EX/II, EX/III, FL եւ AT փոխադրամիջոցների եւ ՊԱՇՄ-ների համապատասխանությունը սույն Մասի պահանջներին հաստատվում է հաստատման սերտիֆիկատով («ԱԴՌ» համաձայնագրի հաստատման սերտիֆիկատ)<sup>4</sup>, որը տրվում է գրանցման երկրի իրավասու մարմնի կողմից յուրաքանչյուր փոխադրամիջոցի համար, որի ստուգումը հանգեցնում է բավարար արդյունքների կամ համապատասխանության հայտարարագրի տրմանը՝ համաձայն 9.2 գլխի 9.1.2.1-ի:

9.1.3.2. Պայմանավորվող երկրում գրանցված փոխադրամիջոցի համար այդ Պայմանավորվող կողմի իրավասու մարմնի կողմից տրված հաստատման սերտիֆիկատի վավերականությունը պետք է ընդունվի այլ պայմանավորվող երկրների իրավասու մարմինների կողմից այնքան ժամանակ, ինչքան որ այդ վավերականությունն ուժի մեջ է:

9.1.3.3. Հաստատման սերտիֆիկատը պետք է լինի նույն ձեւի, ինչ 9.1.3.5-ում բերված նմուշը: Դրա չափսերը պետք է լինեն 210 մմ x 297 մմ (A4 ձեւաչափ): Կարող է օգտագործվել ինչպես առջեւի, այնպես էլ հետեւի էջը: Գույնը պետք է լինի սպիտակ՝ վարդագույն, ուղղահայաց զուլով:

Սերտիֆիկատը կազմվում է տրամադրող երկրի լեզվով կամ լեզուներից որեւէ մեկով: Եթե այդ լեզուն անգլերենը, ֆրանսերենը կամ գերմաներենը չէ, ապա հաստատման սերտիֆիկատի վերնագիրը եւ թիվ 11 սյունակում արվող նշումները պետք է գրվեն անգլերենով, ֆրանսերենով կամ գերմաներենով:

Թափոնների վակուումային ավտոցիստեռնների հաստատման սերտիֆիկատը պետք է ունենա հետեւյալ նշումը՝ «թափոնների վակուումային ավտոցիստեռններ»:

9.1.3.4. Հաստատման սերտիֆիկատի վավերականությունը պետք է սպառվի ոչ ուշ, քան սերտիֆիկատի տրամադրմանը նախորդող փոխադրամիջոցի տեխնիկական ստուգման ամսաթվից մեկ տարվա ընթացքում: Հաստատման հաջորդ ժամկետը, սակայն, պետք է կապված լինի վերջին նոմինալ սպառման ամսաթվի հետ, եթե տեխնիկական

<sup>4</sup> Հաստատման սերտիֆիկատը լրացնելու համար նախատեսված ուղեցույցներին կարող եք ծանոթանալ Եվրոպայի հարցերով ՄԱԿ-ի տնտեսական հանձնաժողովի քարտուղարության կայքէջում (<http://www.unece.org/trans/danger/danger.htm>):

ստուգումը կատարվել է այդ ամսաթվից առաջ կամ հետո մեկ ամսվա ընթացքում:

Սակայն պարտադիր պարբերական ստուգման ենթակա ցիստեռնների դեպքում սույն դրույթը չպետք է նշանակի, որ անջրանցիկության փորձարկումները, հիդրավլիկ ճնշափորձարկումները կամ ցիստեռնների ներքին ստուգումները պետք է կատարվեն ավելի կարճ ընդմիջումներով, քան ինչպես նշված է 6.8 եւ 6.9 գլուխներում:

### 9.1.3.5. Որոշակի վտանգավոր բեռներ փոխադրող փոխադրամիջոցների հաստատման սերտիֆիկատի նմուշը

ՈՐՈՇԱԿԻ ՎՏԱՆԳԱՎՈՐ ԲԵՌՆԵՐ ՓՈԽԱԴՐՈՂ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՍԵՐՏԻՖԻԿԱՏԸ				
Սույն սերտիֆիկատը հաստատում է, որ ներքետում նշված փոխադրամիջոցը բավարարում է «Ավտոճանապարհով վտանգավոր բեռների միջազգային փոխադրումների մասին» («ԱԴՌ») Եվրոպական համաձայնագրի պայմանները:				
1. Սերտիֆիկատի համարը.	2. Փոխադրամիջոցի արտադրողը.	3. Փոխադրամիջոցի նույնականացման համարը.	4. Գրանցման համարը (եթե առկա է).	
5. Փոխադրողի, օպերատորի եւ սեփականատիրոջ անունն ու իրավաբանական հասցեն.				
6. Փոխադրամիջոցի նկարագրությունը. 1				
7. Փոխադրամիջոցի օգտագործման նպատակը (նպատակները) <sup>1</sup> համաձայն «ԱԴՌ» համաձայնագրի 9.1.1.2-ի. <sup>2</sup>				
EX/II	EX/III	FL	AT	ՊԱՇՄ
8. Դիմացկուն արգելակման համակարգ. <sup>3</sup>				
<input type="checkbox"/> Կիրառելի չէ <input type="checkbox"/> «ԱԴՌ» համաձայնագրի 9.2.3.1.2-ի համաձայն՝ արդյունավետությունը բավարար է՝ տրանսպորտային միավորի ընդհանուր զանգվածի _____ տ <sup>4</sup> համար:				
9. Անշարժ ցիստեռնի (ցիստեռնների)/ մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցի նկարագրությունը (եթե առկա է).				
9.1 Ցիստեռնն արտադրողը՝				
9.2 Ցիստեռնի/ մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցի հաստատման համարը՝				
9.3 Ցիստեռնն արտադրողի սերիայի համարը/ մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցի տարրերի նույնականացումը՝				
9.4 Արտադրման տարեթիվը՝				
9.5 Ցիստեռնի ծածկագիրը՝ համաձայն «ԱԴՌ» համաձայնագրի 4.3.3.1 կամ 4.3.4.1-ի՝				
9.6 TC եւ TE հատուկ դրոյթներ՝ համաձայն «ԱԴՌ» համաձայնագրի 6.8.4-ի (եթե կիրառելի է) <sup>6</sup> :				
10. Փոխադրման համար նախատեսված վտանգավոր բեռներ.				
Փոխադրամիջոցը բավարարում է այն պայմանները, որոնք պահանջվում են վտանգավոր բեռների փոխադրման համար՝ նշված փոխադրամիջոցների օգտագործման նպատակով (նպատակներով) թիվ 7 սյունակում.				
10.1 EX/II-ի կամ EX/III փոխադրամիջոցի <input type="checkbox"/> Բեռներ 1-ին դասի համար, ներառյալ՝ «J» համատեղելիության խումբը դեպքում 3. <input type="checkbox"/> Բեռներ 1-ին դասի համար՝ բացի «J» համատեղելիության խմբից				
10.2 Ավտոցիստեռնի/ մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցի դեպքում <sup>3</sup>				
<input type="checkbox"/> Կարող են փոխադրվել միայն ցիստեռնի ծածկագրով կամ թիվ 9 սյունակի որեւէ հատուկ դրոյթներով թույլատրված նյութերը <sup>5</sup> , կամ <input type="checkbox"/> Կարող են փոխադրվել միայն հետեւյալ նյութերը (Դասը, ՄԱԿ-ի նշագրման համարը եւ անհրաժեշտության դեպքում փաթեթավորման խումբն ու բեռնառաքման ճշգրիտ անվանումը). Կարող են փոխադրվել միայն այն նյութերը, որոնք ի վիճակի չեն վտանգավոր ռեակցիայի մեջ մտնել կորպուսի, խցանիչների, սարքավորումների եւ պաշտպանիչ աստառների հետ(եթե կիրառելի է):				
<b>11. Նշումներ.</b>				
12. Վավեր է մինչեւ՝				
			Տրամադրող հաստատության կնիքը	
			Վայրը, ամսաթիվը, ստորագրությունը	

<sup>1</sup> Համաձայն շարժիչով շարժման մեջ դրվող տրանսպորտային միջոցների եւ «N» ու «O» կատեգորիաների կցասայլերի սահմանումների, որոնք սահմանված են «Փոխադրամիջոցների կառուցվածքի մասին» միասնական որոշման (R.E.3) 7-րդ հավելվածի կամ 2007/46/ԵՀ հրահանգի մեջ:

<sup>2</sup> Զնջել այն, ինչ հարկավոր չէ:

<sup>3</sup> Նշել հարկավորը:

<sup>4</sup> Նշել համապատասխան արժեքը: 44 t-ի արժեքը չպետք է սահմանափակի «գրանցման/ շահագործման առավելագույն թույլատրելի զանգվածը», որը նշված է գրանցման փաստաթղթում (փաստաթղթերում):

<sup>5</sup> 9-րդ սյունակում սահմանված ցիստեռնի ծածկագրերով նշված նյութերը կամ այլ ցիստեռնի ծածկագրերով, որոնք թույլատրված են համաձայն 4.3.3.1.2-ում կամ 4.3.4.1.2-ում նշված աստիճանակարգի՝ հաշվի առնելով հարույժ դրոյթը (դրոյթները), եթե առկա են:

<sup>6</sup> Չի պահանջվում, եթե թույլատրված նյութերը թվարկված են թիվ 10.2 սյունակում:

13. Վավերականության երկարաձգումը	
Վավերականությունը երկարաձգվել է մինչև	Սերտիֆիկատը տրամադրող հիմնարկի կնիքը, վայրը, ամսաթիվը, ստորագրությունը.

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** Սույն սերտիֆիկատը պետք է վերադարձվի այն տրամադրած հիմնարկին, երբ փոխադրամիջոցը դուրս է հանվում շահագործումից, երբ փոխադրամիջոցը փոխանցվում է մեկ այլ փոխադրողի, օպերատորի կամ սեփականատիրոջ՝ ինչպես նշված է թիվ 5 սյունակում, երբ սերտիֆիկատի վավերականությունը սպառվում է, եւ եթե նյութական փոփոխություն կա փոխադրամիջոցի մեկ կամ մեկից ավելի կարելուր հարկանիշների մեջ:

## ԳԼՈՒԽ 9.2

### ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

9.2.1. Սույն գլխի պահանջների կատարումը

9.2.1.1. EX/II, EX/III, FL եւ AT փոխադրամիջոցները պետք է համապատասխանեն սույն գլխի պահանջներին՝ համաձայն ներքետում բերված աղյուսակի:

EX/II, EX/III, FL եւ AT փոխադրամիջոցներից բացի այլ փոխադրամիջոցների համար՝

- 9.2.3.1.1-ի պահանջները (Արգելակման սարքավորումներ՝ համաձայն ԵՏՀ թիվ 13 կանոնակարգի կամ 71/320/ԵՏՀ հրահանգի) կիրառվում են բոլոր փոխադրամիջոցների համար, որոնք առաջին անգամ գրանցվել են (կամ անցել են շահագործման, եթե գրանցումը պարտադիր չէ) 1997 թվականի հունիսի 30-ից հետո.
- 9.2.5-ի պահանջները (Արագության սահմանափակման սարք՝ համաձայն ԵՏՀ թիվ 89 կանոնակարգի կամ 92/24/ԵՏՀ հրահանգի) կիրառվում են 12 տոննա առավելագույն զանգվածը գերազանցող բոլոր մեխանիկական փոխադրամիջոցների համար, որոնք առաջին անգամ գրանցվել են 1987 թվականի դեկտեմբերի 31-ից հետո եւ 3,5 տոննա առավելագույն զանգվածը գերազանցող, բայց 12 տոննայից ոչ ավելի զանգվածով բոլոր մեխանիկական փոխադրամիջոցների համար, որոնք առաջին անգամ գրանցվել են 2007 թվականի դեկտեմբերի 31-ից հետո:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳՐԵՐ		ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐ				ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ
		EX/II	EX/III	AT	FL	
9.2.2	ԷԼԷԿՏՐԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ					
9.2.2.1	Ընդհանուր դրոյթներ	X	X	X	X	
9.2.2.2.1	Մայրվանդակներ	X	X	X	X	
9.2.2.2.2	Լրացուցիչ պաշտպանություն	Xա	X	Xբ	X	ա. Կիրառվում է 3,5 տոննա առավելագույն զանգվածը գերազանցող փոխադրամիջոցների համար, որոնք առաջին անգամ գրանցվել են (կամ անցել են շահագործման, եթե գրանցումը պարտադիր չէ) 2018 թվականի մարտի 31-ից հետո: բ. Կիրառվում է այն փոխադրամիջոցների համար, որոնք գրանցվել են (կամ անցել են շահագործման, եթե գրանցումը պարտադիր չէ) 2018 թվականի մարտի 31-ից հետո:
9.2.2.3	Հալուն ապահովիչներ եւ անջատիչներ	Xբ	X	X	X	բ. Կիրառվում է այն փոխադրամիջոցների համար, որոնք գրանցվել են (կամ անցել են շահագործման, եթե գրանցումը պարտադիր չէ) 2018 թվականի մարտի 31-ից հետո:
9.2.2.4	Մարտկոցներ	X	X	X	X	
9.2.2.5	Լուսավորություն	X	X	X	X	
9.2.2.6	Էլեկտրական միացումներ	Xգ	X	Xբ	X	բ. Կիրառվում է այն փոխադրամիջոցների համար, որոնք գրանցվել են (կամ անցել են շահագործման, եթե գրանցումը պարտադիր չէ) 2018 թվականի մարտի 31-ից հետո: գ. Կիրառվում է 3,5 տոննա առավելագույն զանգված ունեցող կցասայլերը եւ 3,5 տոննա գերազանցող առավելագույն զանգվածով կցասայլերը քաշելու համար նախատեսված մեխանիկական փոխադրամիջոցների նկատմամբ, որոնք առաջին անգամ գրանցվել են (կամ անցել են շահագործման, եթե գրանցումը պարտադիր չէ) 2018 թվականի մարտի 31-ից հետո:
9.2.2.7	Լարում	X	X			
9.2.2.8	Մարտկոցի անջատոց		X		X	
9.2.2.9	Մշտապես հոսանքի տակ գտնվող շղթաներ					
9.2.2.9.1					X	
9.2.2.9.2			X			
9.2.3	ԱՐԳԵԼԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ					
9.2.3.1	Ընդհանուր դրոյթներ	X	X	X	X	
	Հակաբլրկային արգելակման համակարգ	Xե	Xդ,ե	Xդ,ե	Xդ,ե	դ. Կիրառվում է 16 տոննա առավելագույն զանգվածը գերազանցող մեխանիկական փոխադրամիջոցների համար (տրակտորներ եւ կոշտ շրջանակով փոխադրամիջոցներ) եւ այն մեխանիկական փոխադրամիջոցների համար, որոնք թույլատրված են քարշակելու 10 տոննա առավելագույն զանգվածը գերազանցող կցորդները (այսինքն՝ ամբողջական կցորդներ, կիսակցորդներ եւ կենտրոնական սոնիով կցորդներ): Մեխանիկական փոխադրամիջոցները պետք է ապահովված լինեն 1-ին կատեգորիայի հակաբլրկային արգելակման համակարգով: Կիրառվում է 10 տոննա առավելագույն զանգվածը գերազանցող կցորդների համար (այսինքն՝ ամբողջական կցորդներ, կիսակցորդներ եւ կենտրոնական սոնիով կցորդներ): Կցորդները պետք է ապահովված լինեն «A» կատեգորիայի հակաբլրկային արգելակման համակարգով: ե. Կիրառվում է 3,5 տոննա առավելագույն զանգված ունեցող կցասայլերը եւ 3,5 տոննա գերազանցող առավելագույն զանգվածով կցասայլերը քաշելու համար նախատեսված մեխանիկական փոխադրամիջոցների նկատմամբ, որոնք առաջին անգամ գրանցվել են (կամ անցել են շահագործման, եթե գրանցումը պարտադիր չէ) 2018 թվականի մարտի 31-ից հետո:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳՐԵՐ	ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐ				ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ
	EX/II	EX/III	AT	FL	
Դիմացկուն արգելակման համակարգ	Xq	Xէ	Xէ	Xէ	գ. Կիրառվում է 16 տոննա առավելագույն զանգվածը գերազանցող մեխանիկական փոխադրամիջոցների համար կամ թույլատրված քարշակելու 10 տոննա առավելագույն զանգվածը գերազանցող կցորդներ: Արգելակման դիմացկուն համակարգը պետք է լինի IIA տեսակի: է Կիրառվում է 16 տոննա առավելագույն զանգվածը գերազանցող մեխանիկական փոխադրամիջոցների համար կամ թույլատրված քարշակելու 10 տոննա առավելագույն զանգվածը գերազանցող կցորդներ: Արգելակման դիմացկուն համակարգը պետք է լինի IIA տեսակի:
9.2.4 ՀՐԴԵՀԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ					
9.2.4.3 Վառելիքի բաքեր	X	X		X	
9.2.4.4 Շարժիչ	X	X		X	
9.2.4.5 Արտանետիչ համակարգ	X	X		X	
9.2.4.6 Փոխադրամիջոցի արգելակման դիմացկուն համակարգ	Xq	X	X	X	գ. Կիրառվում է 16 տոննա առավելագույն զանգվածը գերազանցող մեխանիկական փոխադրամիջոցների համար կամ թույլատրված քարշակելու 10 տոննա առավելագույն զանգվածը գերազանցող կցորդներ, որոնք առաջին անգամ գրանցվել են 2018 թվականի մարտի 31-ից հետո: Արգելակման դիմացկուն համակարգը պետք է լինի IIA տեսակի:
9.2.4.7 Վառելիքի այրման սարքեր					
9.2.4.7.1	Xը	Xը	Xը	Xը	ը. Կիրառվում է այն մեխանիկական փոխադրամիջոցների համար, որոնք համալրվել են 1999 թվականի հունիսի 30-ից հետո: Մինչև 1999 թվականի հուլիսի 1-ը համալրված փոխադրամիջոցների դեպքում՝ պարտադիր համապատասխանություն մինչև 2010 թվականի հունվարի 1-ը: Եթե համալրման ամսաթիվն առկա չէ, ապա օգտագործվում է փոխադրամիջոցի առաջին գրանցման ամսաթիվը:
9.2.4.7.2					
9.2.4.7.5					
9.2.4.7.3				Xը	ը. Կիրառվում է այն մեխանիկական փոխադրամիջոցների համար, որոնք համալրվել են 1999 թվականի հունիսի 30-ից հետո: Մինչև 1999 թվականի հուլիսի 1-ը համալրված փոխադրամիջոցների դեպքում՝ պարտադիր համապատասխանություն՝ մինչև 2010 թվականի հունվարի 1-ը: Եթե համալրման ամսաթիվն առկա չէ, ապա օգտագործվում է փոխադրամիջոցի առաջին գրանցման ամսաթիվը:
9.2.4.7.4					
9.2.4.7.6	X	X			
9.2.5 ԱՐԱԳՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓՈՒՄԱՆ ՍԱՐՔ	Xթ	Xթ	Xթ	Xթ	թ. Կիրառվում է 12 տոննա առավելագույն զանգվածը գերազանցող մեխանիկական փոխադրամիջոցների համար, որոնք առաջին անգամ գրանցվել են 1987 թվականի դեկտեմբերի 31-ից հետո եւ 3,5 տոննա առավելագույն զանգվածը գերազանցող, բայց 12 տոննայից ոչ ավելի զանգված ունեցող բոլոր մեխանիկական փոխադրամիջոցների համար, որոնք գրանցվել են 2007 թվականի դեկտեմբերի 31-ից հետո:
9.2.6 ԿՑՈՐԴՆԵՐԻ ԿՑՈՐԴՄԱՆ ՍԱՐՔ	X	X	Xժ	Xժ	ժ. Կիրառվում է մեխանիկական փոխադրամիջոցների եւ կցասայլերի կցորդման այլ սարքվածքների եւ այն մեխանիկական փոխադրամիջոցների համար, որոնք առաջին անգամ գրանցվել են (կամ անցել են շահագործման, եթե գրանցումը պարտադիր չէ) 2018 թվականի մարտի 31-ից հետո:

9.2.1.2. ՊԱՇՄ-ները պետք է համապատասխանեն սույն գլխի՝ EX/III տեսակի փոխադրամիջոցներին վերաբերող պահանջներին:

9.2.2. Էլեկտրական սարքավորումները

9.2.2.1. Ընդհանուր դրույթներ

Տեղադրումը պետք է այնպես նախագծվի, կառուցվի եւ պաշտպանվի, որ փոխադրամիջոցների նորմալ շահագործման ընթացքում չառաջացնի որեւէ բռնկում կամ կարճ միացում:

Էլեկտրական սարքավորումներն ընդհանուր առմամբ պետք է համապատասխանեն 9.2.2.2 - 9.2.2.9-ի դրույթներին՝ համաձայն 9.2.1 աղյուսակի:

9.2.2.2. Հաղորդալար

9.2.2.2.1. Մալուխներ

Էլեկտրական շղթաներում ոչ մի մալուխի հոսանք չպետք է գերազանցի տվյալ մալուխի համար նախատեսված հոսանքի չափը: Հաղորդիչները պետք է պատշաճ կերպով մեկուսացված լինեն:

Մալուխը պետք է հարմար լինի փոխադրամիջոցի տարածքի կիրառման համար նախատեսված պայմանների համար, ինչպես օրինակ՝ ջերմաստիճանի միջակայքի եւ հեղուկի համատեղելիության պայմանները, ինչպես տրված է ISO 16750-4:2010 եւ ISO 16750-5:2010 ստանդարտներում:

Մալուխները պետք է համապատասխանեն ISO 6722-1:2011 + Cor 01:2012 կամ ISO 6722-2:2013 ստանդարտներին:

Մալուխները պետք է ապահով կերպով ամրացվեն եւ տեղադրվեն այնպես, որ պաշտպանված լինեն մեխանիկական եւ ջերմային ծանրաբեռնվածությունից:

9.2.2.2.2. Լրացուցիչ պաշտպանություն

Վարորդի խցիկի հետեւում եւ կցասայլերի վրա գտնվող մալուխները պետք է լրացուցիչ կերպով պաշտպանվեն՝ նվազեցնելու ցանկացած բռնկում կամ կարճ միացում ընդհարման կամ դեֆորմացիայի դեպքում:

Լրացուցիչ պաշտպանությունը հարմար է փոխադրամիջոցի նորմալ օգտագործման պայմանների համար:


Լրացուցիչ պաշտպանությունը համարվում է պահանջներին համապատասխան, եթե կիրառվում են բազմաջիղ մալուխները՝ ISO 14572:2011 ստանդարտի համաձայն, կամ ստորեւ ներկայացված 9.2.2.2.2.1 - 9.2.2.2.2.4 պատկերների օրինակներից մեկը կամ այլ լրակազմ, որոնցով առաջարկվում են հավասարապես արդյունավետ



պաշտպանություն:

Պատկեր 9.2.2.2.1

Ալիքավոր պոլիամիդային մալուխ




Առանձին մեկուսացված լարեր

Պատկեր 9.2.2.2.2

Ալիքավոր պոլիամիդային մալուխ

Մեկուսացնող ծածկ




Առանձին մեկուսացված լարեր

Պատկեր 9.2.2.2.3


Պոլիուրեթանային ծածկ

Ներքին ծածկույթով



Առանձին մեկուսացված լարեր

#### Պատկեր 9.2.2.2.4



Անիվի պտտման արագության տվիչների կաբելների համար լրացուցիչ պաշտպանության կարիք չկա:

EX/II մինիվեն ավտոֆուրգոնների վրա գտնվող փոխադրամիջոցները, երբ վարորդի խցիկի հետեւի լարերը պաշտպանված են մարմնի կողմից, համապատասխանում են այս պահանջներին:

#### 9.2.2.3. Հալուն ապահովիչներ եւ շղթայի անջատիչներ

Բոլոր շղթաները պետք է պաշտպանված լինեն ապահովիչներով կամ ավտոմատ անջատիչներով՝ բացառությամբ հետեւյալ ուղղությամբ շղթաների՝

- ստարտեր մարտկոցից դեպի շարժիչի սառը միացման համակարգերը.
- ստարտեր մարտկոցից դեպի գեներատոր.
- գեներատորից դեպի հալուն ապահովիչների կամ անջատիչ տուփ.
- ստարտեր մարտկոցից դեպի ստարտեր շարժիչ.
- ստարտեր մարտկոցից դեպի արգելակման դիմացկուն համակարգի միացման համակարգ (տե՛ս 9.2.3.1.2), եթե այդ համակարգն էլեկտրական է կամ էլեկտրամագնիսական.
- ստարտեր մարտկոցից դեպի էլեկտրական ամբարձիչ մեխանիզմ՝ սայլակի տնին բարձրացնելու համար:

Վերոնշյալ չպաշտպանված շղթաները պետք է լինեն հնարավորինս կարճ:

#### 9.2.2.4. Մարտկոցներ

Մարտկոցի հպակները պետք է էլեկտրական մեկուսացման ենթարկվեն, կամ մարտկոցը պետք է ծածկված լինի մեկուսացնող ծածկով:

Մարտկոցները, որոնք կարող են առաջացնել բռնկվող գազ եւ տեղադրված չեն շարժիչի կափույրի տակ, պետք է հարմարեցվեն բացվածքով տուփի մեջ:

#### 9.2.2.5. Լուսավորությունը

Պտուտակավոր թասակով լույսի աղբյուրները չպետք է կիրառվեն:

#### 9.2.2.6. Մեխանիկական տրանսպորտային միջոցների եւ կցասայլերի միջեւ էլեկտրական միացումները

##### 9.2.2.6.1. Էլեկտրական միացումները պետք է նախագծվեն այնպես, որպեսզի կանխարգելեն՝

- խոնավության եւ կեղտի ներթափանցումը, միացված մասերը պետք է ունենան նվազագույնը IP 54 աստիճանի պաշտպանություն՝ IEC 60529-ին համապատասխան,
- պատահական անջատումը, միակցիչները պետք է համապատասխանեն ISO 4091:2003 ստանդարտի 5.6 կետին:

##### 9.2.2.6.2. 9.2.2.6.1-ի պահանջները համարվում են կատարված՝

- այն միակցիչների համար, որոնք ստանդարտացվել են հատուկ նպատակներով՝ համաձայն ISO 12098:2004<sup>1</sup>, ISO 7638:2003<sup>1</sup>, EN 15207:2014<sup>1</sup> կամ ISO 25981:2008<sup>1</sup> ստանդարտների
- եթե էլեկտրական միացումներն ավտոմատ միացման համակարգերի մաս են կազմում (տե՛ս ԵՏՀ կանոնակարգ թիվ 55<sup>2</sup>):

##### 9.2.2.6.3. Էլեկտրական միացումները տրանսպորտային միջոցների կամ դրանց սարքավորումների պատշաճ գործունեության հետ կապված այլ նպատակներով կարող են օգտագործվել՝ պայմանով, որ դրանք բավարարեն 9.2.2.6.1-ի պահանջները:

#### 9.2.2.7. Լարումը

Էլեկտրական համակարգի նոմինալ լարումը չպետք է գերազանցի 25 Վ A.C. կամ 60 Վ-ն D.C.:

Բարձր լարում թույլատրվում է էլեկտրական համակարգի գալվանական մեկուսացված մասերում, եթե այդ մասերը տեղադրված չեն բեռնախցիկի կամ ցիստեռնի դրսի մասից առնվազն 0,5 մետր

<sup>1</sup> ISO 4009 ստանդարտը, որը նշված է այս ստանդարտում, չպետք է կիրառվի:

<sup>2</sup> ԵՏՀ թիվ 55 կանոնակարգ (Ընդհանուր դրույթներ փոխադրամիջոցների մեխանիկական կցորդային բաղադրիչների հաստատման վերաբերյալ):

հեռավորությամբ:

Բացի այդ, 1000Վ A.C. կամ 1500Վ D.C.-ից բարձր լարումով աշխատող համակարգերը պետք է ինտեգրվեն փակ կորպուսում:

Եթե Քսենոն լույսերն օգտագործվում են, միայն այդ ինտեգրված ստարտերներն են թույլատրվում:

#### 9.2.2.8. Մարտկոցի անջատիչ

9.2.2.8.1. Էլեկտրական շղթան անջատող անջատիչը պետք է այնքան մոտ տեղադրված լինի մարտկոցին, որքան դա գործնականում հնարավոր է: Եթե օգտագործվում է միաբեւեռ անջատիչ, այն պետք է տեղադրվի հոսանքի, այլ ոչ թե հողանցման մալուխի վրա:

9.2.2.8.2. Կառավարման սարքը՝ նախատեսված անջատիչի անջատման եւ միացման համար, պետք է տեղադրված լինի վարորդի խցիկում: Այն պետք է լավ հասանելի լինի վարորդին եւ պետք է ունենա հստակ մակնշավորում: Այն պետք է կամ պաշտպանիչ պատյանով կամ երկակի կառավարման սարքով կամ այլ համապատասխան միջոցով պաշտպանված լինի հանկարծակի գործարկումից: Կառավարման լրացուցիչ սարքեր կարող են տեղադրվել, եթե դրանք հստակորեն մակնշված են եւ պաշտպանված են հանկարծակի գործարկումից: Եթե կառավարման սարքը (սարքերը) աշխատում է (են) էլեկտրական շարժաբեռությամբ, ապա վերահսկման սարքը (սարքերը) պետք է համապատասխանի (համապատասխանեն) 9.2.2.9-ի պահանջներին:

9.2.2.8.3. Անջատիչը պետք է անջատի շղթան վերահսկման սարքն ակտիվացնելուց հետո՝ 10 վայրկյանի ընթացքում:

9.2.2.8.4. Անջատիչը պետք է ունենա պատյան՝ IP 65 պաշտպանիչ աստիճանով՝ համաձայն IEC 60529 ստանդարտի:

9.2.2.8.5. Անջատիչի վրայի մալուխային միացումները պետք է ունենան IP 54 պաշտպանիչ աստիճան՝ IEC 60529 ստանդարտին համապատասխան: Սակայն սա չի կիրառվում, եթե այդ միացումները գտնվում են ինչ-որ մի խցիկում, որը կարող է լինել մարտկոցի արկղը: Այդ դեպքերում բավական է մեկուսացնել միացումները կարճ միացումներից, օրինակ՝ ռետինե կափարիչով:

#### 9.2.2.9. Մշտապես հոսանքի տակ գտնվող շղթաներ

9.2.2.9.1. ա) Էլեկտրական սարքավորման այն մասերը, այդ թվում՝ կապակցող մասերը, որոնք մնում են հոսանքի տակ, երբ մարտկոցի անջատիչի կոնտակտները զատված են, պետք է նախատեսված

լինեն շահագործվելու վտանգավոր տարածքներում: Այդպիսի սարքավորումը պետք է համապատասխանի IEC 60079 ստանդարտի 0 եւ 14<sup>3</sup> մասերի պահանջներին եւ լրացուցիչ այն պահանջներին, որոնք կիրառելի են IEC 60079 ստանդարտի 1, 2, 5, 6, 7, 11, 15 կամ 18 մասերով.

բ) IEC 60079 ստանդարտի 14<sup>3</sup> մասի կիրառման համար պետք է օգտագործվի հետտեյալ դասակարգումը՝

Մշտապես էլեկտրական հոսանքի տակ գտնվող սարքավորումները, ներառյալ՝ կապակցող մալուխները, որոնք ենթակա չեն 9.2.2.4-ի եւ 9.2.2.8-ի պահանջներին, պետք է համապատասխանեն 1-ին գոտու՝ ընդհանրապես էլեկտրական սարքավորումներին վերաբերող պահանջներին, կամ համապատասխանեն 2-րդ գոտու՝ վարորդի խցիկում տեղադրված էլեկտրական սարքավորումներին վերաբերող պահանջներին: «IIC» պայթյունավտանգ խմբի, T6 ջերմաստիճանային դասի պահանջները պետք է բավարարվեն:

Սակայն այն դեպքում, երբ մշտապես էլեկտրական հոսանքի տակ գտնվող սարքավորումները տեղադրվել են այնպիսի միջավայրում, որտեղ այդտեղ տեղադրված ոչ էլեկտրական սարքավորումները պատճառ են դառնում ջերմաստիճանի՝ T6 ջերմաստիճանային սահմանի գերազանցմանը, մշտապես էլեկտրական հոսանքի տակ գտնվող սարքավորումների ջերմաստիճանային դասակարգումը պետք է համապատասխանի առնվազն T4 ջերմաստիճանային դասին.

գ) մշտապես էլեկտրական հոսանքի տակ գտնվող սարքավորումների սնուցող միացումները պետք է կա՛մ համապատասխանեն IEC 60079 ստանդարտի 7-րդ մասի դրույթներին («Բարձր անվտանգություն») եւ պաշտպանված լինեն ապահովիչով կամ շղթայի ավտոմատ անջատիչով, որոնք պետք է տեղադրված լինեն հնարավորինս մոտ հոսանքի աղբյուրին, կա՛մ «ակնհայտորեն անվտանգ սարքավորման» դեպքում պետք է պաշտպանված լինեն անվտանգության պատնեշով, որը պետք է հոսանքի աղբյուրին հնարավորինս մոտ տեղադրված լինի:

9.2.2.9.2. Մարտկոցի անջատիչի կոնտակտների զատման դեպքում մշտապես հոսանքի տակ գտնվող էլեկտրական սարքավորումների մարտկոցի հետ շրջանցիկ միացումները պետք է պաշտպանված լինեն գերտաքացումից համապատասխան միջոցներով, օրինակ՝

---

<sup>3</sup> ԵՏՀ թիվ 60079 ստանդարտի 14-րդ մասի պահանջները սույն մասի պահանջների նկատմամբ գերակայություն չունեն:

ապահովիչով, շղթայի անջատիչով կամ անվտանգության պատնեշով (հոսանքի սահմանափակիչով):

### 9.2.3. Արգելակման սարքավորումներ

#### 9.2.3.1. Ընդհանուր դրույթներ

9.2.3.1.1. Այն ավտոտրանսպորտային միջոցներն ու կցորդները, որոնք նախատեսված են օգտագործվելու որպես վտանգավոր բեռների տրանսպորտային միավորներ, պետք է բավարարեն ԵՏՀ թիվ 13<sup>4</sup> կանոնակարգի բոլոր համապատասխան պահանջները՝ փոփոխություններով եւ դրանց մեջ նշված կիրառման ամսաթվերով հանդերձ:

9.2.3.1.2. EX/II, EX/III, FL եւ AT տեսակի փոխադրամիջոցները պետք է բավարարեն ԵՏՀ թիվ 13<sup>4</sup> կանոնակարգի 5-րդ հավելվածի պահանջները:

#### 9.2.3.2. (Հանվել է)

### 9.2.4. Հրդեհի առաջացման ռիսկերի կանխարգելում

#### 9.2.4.1. Ընդհանուր դրույթներ

Հետեւյալ տեխնիկական դրույթները կիրառվում են 9.2.1 աղյուսակի համաձայն:

#### 9.2.4.2 (Հանվել է)

#### 9.2.4.3 Վառելիքի բաքեր եւ գազաբալոններ

Փոխադրամիջոցի շարժիչի վառելիք մատակարարող վառելիքային բաքերը եւ գազաբալոնները պետք է համապատասխանեն հետեւյալ պահանջներին.

ա) փոխադրման նորմալ պայմաններում ցանկացած արտահոսքի դեպքում հեղուկ վառելիքը կամ գազային վառելիքի հեղուկ ֆազը պետք է արտահոսվի գետին՝ առանց փոխադրամիջոցի տաք մասերի կամ բեռի հետ շփման մեջ մտնելու.

բ) հեղուկ վառելիքի համար նախատեսված վառելիքի բաքերը պետք է համապատասխանեն ԵՏՀ թիվ 34<sup>5</sup> կանոնակարգին, բենզին պարունակող վառելիքի բաքերը պետք է ապահովված լինեն արդյունավետ բոցամարման համակարգով լցուկի

<sup>4</sup> ԵՏՀ թիվ 13 կանոնակարգ (M, N եւ O կարեգորհիաների փոխադրամիջոցների հաստատման միասնական դրույթներ՝ արգելակման մասով):

<sup>5</sup> ԵՏՀ թիվ 34 կանոնակարգ (Հրդեհի առաջացման ռիսկերի կանխարգելման մասով փոխադրամիջոցների հաստատման միասնական դրույթներ):

բացվածքում կամ այնպիսի փականով, որը հնարավորություն կտա այն հերմետիկորեն փակելու: ՀԲԳ-ի եւ ՍԲԳ-ի համար վառելիքի բաքերը եւ գազաբալոնները պետք է համապատասխանաբար բավարարեն ԵՏՀ թիվ 110<sup>6</sup> կանոնակարգի համապատասխան պահանջները: ՆՀԳ-ի համար նախատեսված վառելիքի բաքերը պետք է բավարարեն ԵՏՀ թիվ 67<sup>7</sup> կանոնակարգի համապատասխան պահանջները:

- գ) գազային վառելիք պարունակող ճնշումը նվազեցնելու համար նախատեսված սարքի եւ (կամ) վառելիքի բաքի ճնշման նվազեցման կափույրների բացվածքից (բացվածքներից) արտազատումը պետք է կատարվի օդի ներթողման սարքից, վառելիքի բաքից, փոխադրամիջոցի տաք մասերից կամ բեռից եւ չպետք է բախվի փակ տարածքների, այլ փոխադրամիջոցների, օդի ներթողման օղակավոր համակարգերի (այսինքն՝ օդորակման համակարգեր), շարժիչի մուտքի կամ շարժիչի արտանետումների հետ: Վառելիքի համակարգի խողովակները չպետք է ամրացվեն բեռ պարունակող կորպուսներին:

9.2.4.4. Փոխադրամիջոցը շարժման մեջ դնող շարժիչը պետք է ապահովված լինի այնպիսի սարքավորումներով եւ տեղադրված լինի այնպես, որպեսզի բեռը չենթարկվի տաքացման կամ բռնկման վտանգին: ՍԲԳ-ի կամ ՀԲԳ-ի որպես վառելիք օգտագործումը թույլատրվում է միայն, եթե ՍԲԳ-ի կամ ՀԲԳ-ի հատուկ բաղադրիչները հաստատված են ԵՏՀ թիվ 110<sup>6</sup> կանոնակարգի համաձայն եւ համապատասխանում են 9.2.2-ի դրույթներին: Փոխադրամիջոցի վրա տեղադրված սարքավորումները պետք է համապատասխանեն 9.2.2-ի եւ ԵՏՀ թիվ 110<sup>6</sup> կանոնակարգի տեխնիկական պահանջներին: ՆՀԳ-ի որպես վառելիք օգտագործումը թույլատրվում է միայն, եթե ՆՀԳ-ի հատուկ բաղադրիչները հաստատված են ԵՏՀ թիվ 67<sup>7</sup> կանոնակարգի համաձայն եւ համապատասխանում են 9.2.2-ի դրույթներին: Փոխադրամիջոցի վրա տեղադրված սարքավորումները պետք է համապատասխանեն 9.2.2-ի

<sup>6</sup> ԵՏՀ թիվ 110 կանոնակարգ (Հեղուկային հաստատմանը վերաբերող միասնական դրույթներ՝

I. Իրենց շարժիչային համակարգում սեղմված բնական գազ (ՍԲԳ) եւ (կամ) հեղուկացված բնական գազ (ՀԲԳ) օգտագործող շարժիչային տրանսպորտային միջոցների հատուկ բաղադրիչների մասով:

II. Տրանսպորտային միջոցների՝ իրենց շարժիչային համակարգում սեղմված բնական գազի (ՍԲԳ) եւ (կամ) հեղուկացված բնական գազի (ՀԲԳ) օգտագործման համար նախատեսված՝ հաստատված տեսակի հատուկ բաղադրիչների տեղադրման մասով:)

<sup>7</sup> ԵՏՀ թիվ 67 կանոնակարգ (Հեղուկային հաստատմանը վերաբերող միասնական դրույթներ՝

I. «M» եւ «N» կատեգորիայի այն փոխադրամիջոցների հատուկ սարքավորման հաստատում, որոնք իրենց շարժիչի համակարգում օգտագործում են հեղուկացված նավթային գազեր:

II. «M» եւ «N» կատեգորիայի այն փոխադրամիջոցների հաստատում, որոնք ունեն իրենց շարժիչային համակարգերում հեղուկացված նավթային գազերի օգտագործման համար նախատեսված հատուկ սարքավորում՝ այդ սարքավորումը տեղադրելու մասով:)



եւ ԵՏՀ թիվ 67<sup>7</sup> կանոնակարգի տեխնիկական պահանջներին:

EX/II եւ EX/III փոխադրամիջոցների դեպքում պետք է օգտագործվի սեղմումային բոցավառմամբ աշխատող շարժիչ, որի համար օգտագործվում է միայն 55 °C ջերմաստիճանից բարձր բռնկման ջերմաստիճան ունեցող հեղուկ վառելիք: Գազեր չեն օգտագործվում:

#### 9.2.4.5. Արտանետիչ համակարգ

Արտանետիչ համակարգը (ներառյալ՝ արտանետիչ խողովակները) պետք է այնպես ուղղված եւ պաշտպանված լինի, որպեսզի բեռը չենթարկվի տաքացման կամ բռնկման վտանգի: Արտանետիչ համակարգի մասերը, որոնք գտնվում են վառելիքի բաքից անմիջապես ներքեւի մասում, պետք է վերջինից հեռացված լինեն առնվազն 100 մմ-ով կամ պաշտպանված լինեն ջերմային պատնեշով:

#### 9.2.4.6. Փոխադրամիջոցի արգելակման դիմացկուն համակարգ

Այն փոխադրամիջոցները, որոնք ապահովված են արգելակման դիմացկուն համակարգով, որը տեղադրված է վարորդի խցիկի հետնապատի հետեւի մասում, եւ որի ջերմաստիճանը կարող է բարձրանալ տաքանալու հետեւանքով, պետք է ապահովված լինի ամուր փակցված ջերմային պատնեշով՝ տեղադրված այդ համակարգի եւ ցիստեռնի կամ բեռի միջեւ, որպեսզի ցիստեռնի պատը կամ բեռը չենթարկվի որեւէ տաքացման՝ անգամ տեղային:

Բացի այդ, ջերմային պատնեշը պետք է պաշտպանի արգելակման համակարգը բեռի ցանկացած հոսակորստից կամ արտահոսքից:

Օրինակ՝ երկթաղանթյա պատնեշ ներառող պաշտպանությունը համարվում է բավարար:

#### 9.2.4.7. Վառելիքի այրման սարքեր

9.2.4.7.1. Վառելիքի այրման սարքերը պետք է համապատասխանեն ԵՏՀ թիվ 122<sup>8</sup> կանոնակարգին, ինչպես որ փոփոխված է, համաձայն դրանց մեջ նշված կիրառման ամսաթվերին եւ 9.2.4.7.2 - 9.2.4.7.6-ի դրույթներին, որոնք կիրառվում են 9.2.1 աղյուսակի համաձայն:

9.2.4.7.2. Վառելիքի այրման սարքերը եւ դրանց բանաձև գազերի արտանետման ուղղությունը պետք է նախագծվի, տեղայնացվի, պաշտպանվի կամ ծածկվի այնպես, որ բեռի որեւէ տաքացման կամ բռնկման անընդունելի ռիսկը բացառվի: Սույն պահանջը համարվում է բավարարված, եթե վառելիքի ցիստեռնը եւ սարքավորման արտանետիչ համակարգը համապատասխանում են այն դրույթներին,

<sup>8</sup> ԵՏՀ կանոնակարգ թիվ 122 (M, N եւ O կատեգորիաների փոխադրամիջոցների հաստատման միասնական դրույթներ՝ տաքացնող համակարգի մասով):

որոնք նման են համապատասխանաբար 9.2.4.3-ով եւ 9.2.4.5-ով փոխադրամիջոցների վառելիքի բաքերի եւ արտանետիչ համակարգերի մասով սահմանված դրույթներին:

9.2.4.7.3. Վառելիքի այրման սարքերը պետք է անջատվեն առնվազն հետեւյալ մեթոդներով.

ա) վարորդի խցիկից կանխամտածված մեխանիկական անջատումով.

բ) կանգնեցնելով փոխադրամիջոցի շարժիչը. այս դեպքում տաքացնող սարքը կարող է վարորդի կողմից մեխանիկորեն անջատվել եւ միացվել.

գ) միացնել փոխադրամիջոցի վտանգավոր բեռների համար նախատեսված սնուցող պոմպը:

9.2.4.7.4 Երբ վառելիքի այրման սարքերի անջատումից հետո աշխատանքը թույլատրվում է, 9.2.4.7.3 (բ)-ում եւ (գ)-ում նշված մեթոդների համար այրման օդի մատակարարումը համապատասխան միջոցներով պետք է դադարեցվի ոչ ավելի, քան 40 վայրկյան տեւողությամբ հետաշխատանքային ժամանակահատվածից հետո: Պետք է օգտագործվեն միայն այն տաքացուցիչները, որոնց համար ապացույցներ են տրամադրվել այն մասին, որ ջերմափոխանակիչ սարքը դիմացկուն է հետաշխատանքային 40 վայրկյանով կրճատված տեւողությամբ ժամանակահատվածում՝ այդ սարքերի նորմալ աշխատանքային ընթացքի ժամանակ:

9.2.4.7.5. Վառելիքի այրման սարքը պետք է միացվի մեխանիկական կերպով: Ծրագրավորող սարքավորումների օգտագործումը պետք է արգելվի:

9.2.4.7.6. Գազային վառելիքով աշխատող վառելիքի այրման սարքերը չեն թույլատրվում:

9.2.5. Արագության սահմանափակման սարք

3,5 տոննա առավելագույն զանգվածը գերազանցող մեխանիկական փոխադրամիջոցները (կոշտ շրջանակով փոխադրամիջոցներ եւ տրակտորներ՝ կիսակցորդների համար) պետք է ապահովվեն արագության սահմանափակման սարքով՝ համաձայն ԵՏՀ թիվ 89 կանոնակարգի<sup>9</sup>, ինչպես որ փոփոխված է: Սարքը պետք է այնպես կարգավորվի, որ արագությունը չգերազանցի 90 կմ/ժ՝ հաշվի առնելով

<sup>9</sup> ԵՏՀ թիվ 89 կանոնակարգ՝ Ընդհանուր դրույթներ հետեւյալի հաստատման մասով.

- I. Փոխադրամիջոցների՝ դրանց առավելագույն արագության մասով,
- II. Փոխադրամիջոցների՝ հաստատված տեսակի արագության սահմանափակման սարքի (ԱՍՍ) տեղադրման մասով,
- III. Արագության սահմանափակման սարքերի մասով(ԱՍՍ):

սարքի տեխնոլոգիական դիմացկունությունը:

9.2.6. Ավտոմատ փոխադրամիջոցների եւ կցորդների կցորդման սարքերը

Ավտոմատ փոխադրամիջոցների եւ կցորդների կցորդման սարքերը պետք է համապատասխանեն ԵՏՀ թիվ 55<sup>2</sup> կանոնակարգի պահանջներին, ինչպես որ փոփոխված է՝ համաձայն այդտեղ նշված կիրառման ամսաթվի:

9.2.7. Վառելիքի հետեւանքով առաջացած այլ ռիսկերի կանխարգելումը

9.2.7.1. Այն շարժիչների համար վառելիքի համակարգեր, որոնք լցվում են ՀԲԳ-ով, պետք է սարքավորվեն եւ տեղադրվեն այնպես, որպեսզի հնարավոր լինի խուսափել բեռը վտանգելուց՝ սառեցված գազի պատճառով:

---

<sup>2</sup> ԵՏՀ թիվ 55 կանոնակարգ (Ընդհանուր դրույթներ փոխադրամիջոցների մեխանիկական կցորդային բաղադրիչների հաստատման վերաբերյալ):

### ԳԼՈՒԽ 9.3

#### ՓԱԹԵԹՆԵՐՈՒՄ՝ ՊԱՅԹՅՈՒՆԱՎՏԱՆԳ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՔՆԵՐԻ (ԴԱՍ 1) ՓՈԽԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿԱՄ ԼՐԱԿԱԶՄՎԱԾ EX/II ԿԱՄ EX/III ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

- 9.3.1. Փոխադրամիջոցների թափքի արտադրման համար օգտագործվող նյութեր
- Թափքի պատրաստման համար չպետք է օգտագործվեն այնպիսի նյութեր, որոնք կարող են վտանգավոր միացություններ կազմել փոխադրվող պայթյունավտանգ նյութերի հետ:
- 9.3.2. Վառելիքի այրման սարքեր
- 9.3.2.1. Վառելիքի այրման սարքեր կարող են տեղադրվել միայն EX/II եւ EX/III փոխադրամիջոցների վրա՝ վարորդի խցիկը կամ շարժիչը տաքացնելու համար:
- 9.3.2.2. Վառելիքի այրման սարքերը պետք է բավարարեն 9.2.4.7.1, 9.2.4.7.2, 9.2.4.7.5-ի եւ 9.2.4.7.6-ի պահանջները:
- 9.3.2.3. Վառելիքի այրման սարքի անջատիչը կարող է տեղադրվել վարորդի խցիկից դուրս:
- Անհրաժեշտ չէ ապացուցել, որ ջերմափոխանակիչ սարքը դիմացկուն է հետաշխատանքային կրճատված տետղությանը ժամանակահատվածում:
- 9.3.2.4. Բեռնախցիկում չպետք է տեղադրված լինեն վառելիքի այրման սարքեր կամ վառելիքի բաքեր, սնուցման աղբյուրներ, այրման կամ տաքացման համար օդի ներքաշման կամ արտանետման խողովակային ելքեր, որոնք անհրաժեշտ են վառելիքի այրման սարքի աշխատանքի համար:
- 9.3.3. EX/II փոխադրամիջոցներ
- Փոխադրամիջոցները պետք է այնպես նախագծվեն, արտադրվեն եւ ապահովվեն, որպեսզի պայթուցիկները պաշտպանված լինեն արտաքին վտանգից եւ եղանակից: Դրանք պետք է լինեն կամ փակ կամ բրեզենտաձածկ: Բրեզենտաձածկը պետք է հեշտությամբ չենթարկվի պատռմանը, արտադրված լինի հերմետիկ նյութից եւ դյուրավառ չլինի<sup>1</sup> Բրեզենտաձածկը պետք է այնպես ձգվի, որպեսզի բոլոր կողմերից փակի բեռնման տարածքը:

<sup>1</sup> Դյուրավառության դեպքում սույն պահանջը կհամարվի բավարարված, եթե, համաձայն ISO 3795:1989 ստանդարտի, «Ավտոմոբիլային փոխադրամիջոցներ, տրակտորներ եւ մեխանիզմներ՝ գյուղատնտեսության ու անտառային տնտեսության համար. Ներքին նյութերի դյուրավառության մասին որոշումը» բրեզենտաձածկի փորձանմուշները 100 մմ/րոպեում այրման արագություն ունեն:

Փակ փոխադրամիջոցների բեռնախցիկների բոլոր բացվածքները պետք է ունենան ամուր կողպվող դռներ կամ կոշտ կափարիչներ: Վարորդի խցիկը պետք է բեռնախցիկից առանձնացված լինի շարունակական պատնեշով:

#### 9.3.4. EX/II փոխադրամիջոցներ

9.3.4.1. Փոխադրամիջոցները պետք է այնպես նախագծվեն, արտադրվեն եւ ապահովվեն, որ պաշտպանված լինեն արտաքին վտանգից եւ եղանակից: Այդ փոխադրամիջոցները պետք է փակ լինեն: Վարորդի խցիկը պետք է բեռնախցիկից առանձնացված լինի շարունակական պատնեշով: Բեռնման մակերեսը պետք է շարունակական լինի: Կարող են տեղադրվել բեռի ամրացման սարքեր: Բոլոր միացումները պետք է հերմետիկորեն փակվեն: Բոլոր բացվածքները պետք է հնարավոր լինի կողպել: Դրանք պետք է այնպես արտադրվեն եւ տեղադրվեն, որ միացման կետերում համընկնեն:

9.3.4.2. Թափքը պետք է պատրաստվի տաքադիմացկուն եւ բոցադիմացկուն նյութերից՝ 10 մմ նվազագույն հաստությամբ: Համաձայն EN 13501-1:2007 + A1:2009 ստանդարտի՝ համարվում է, որ B-s3-d2 դասի ներքո դասակարգված նյութերը բավարարում են սույն պահանջը:

Եթե թափքի համար օգտագործվող նյութը մետաղյա է, ապա թափքի ամբողջ ներքին մասը պետք է ծածկված լինի նույն պահանջը բավարարող նյութերով:

#### 9.3.5. Շարժիչը եւ բեռնախցիկը

EX/II կամ EX/III փոխադրամիջոցը տեղաշարժող շարժիչը պետք է տեղադրվի բեռնախցիկի առջեւի պատից առաջ, սակայն այն կարող է տեղադրվել բեռնախցիկի ներքեւում, միայն եթե դա այնպես արվի, որ չափազանց ջերմությունը վտանգ չներկայացնի բեռի համար՝ 80 °C-ից ավելի բարձրացնելով բեռնախցիկի ներքին մակերեսի ջերմաստիճանը:

#### 9.3.6. Ջերմության արտաքին աղբյուրները եւ բեռնախցիկը

EX/II եւ EX/III փոխադրամիջոցների արտանետիչ համակարգը կամ այդ ամբողջական կամ լրակազմված փոխադրամիջոցների մյուս մասերը պետք է արտադրվեն եւ տեղադրվեն այնպես, որ չափազանց ջերմությունը վտանգ չներկայացնի բեռի համար՝ 80 °C-ից ավելի բարձրացնելով բեռնախցիկի ներքին մակերեսի ջերմաստիճանը:

#### 9.3.7. Էլեկտրական սարքավորումներ

9.3.7.1. Էլեկտրական սարքավորումները պետք է բավարարեն 9.2.2.1, 9.2.2.2 9.2.2.3, 9.2.2.4, 9.2.2.5, 9.2.2.6, 9.2.2.7, 9.2.2.8 եւ 9.2.2.9.2 համապատասխան պահանջները:

9.3.7.2. Բեռնախցիկի էլեկտրական սարքավորումները պետք է լինեն առնվազն

IP54 աստիճան փոշուց պաշտպանված կամ դրան համարժեք՝ համաձայն IEC 60529-ի: «յ» համատեղելիության խմբի ապրանքների եւ պարագաների փոխադրման դեպքում առնվազն IP 65 աստիճանի կամ դրան համարժեք պաշտպանություն պետք է ապահովված լինի՝ համաձայն IEC 60529-ի:

- 9.3.7.3. Ոչ մի լար չպետք է տեղադրվի բեռնախցիկում: Ցանկացած էլեկտրական սարքավորում, որը հասանելի է բեռնախցիկից, պետք է լինի ներսից բավարար կերպով պաշտպանված:

## ԳԼՈՒԽ 9.4

### ՓԱԹԵԹՆԵՐՈՒՄ ՎՏԱՆԳԱՎՈՐ ԲԵՌՆԵՐԻ ՓՈԽԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿԱՄ ԼՐԱԿԱԶՄՎԱԾ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ (ԲԱՑԻ EX/II ԵՎ EX/III ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻՑ) ԹԱՓՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

- 9.4.1. Վառելիքի այրման սարքերը պետք է բավարարեն հետևյալ պահանջները.
- ա) անջատիչը կարող է տեղադրվել վարորդի խցիկից դուրս.
  - բ) սարքը կարող է անջատվել բեռնախցիկի դրսի մասից. եւ
  - գ) անհրաժեշտ չէ ապացուցել, որ ջերմափոխանակիչ սարքը դիմացկուն է հետաշխատանքային կրճատված տեղադրամբ ժամանակահատվածում:
- 9.4.2. Եթե փոխադրամիջոցը նախատեսված է այնպիսի վտանգավոր բեռների փոխադրման համար, որոնց համար 1, 1.4, 1.5, 1.6, 3, 4.1, 4.3, 5.1 կամ 5.2 մոդելներին համապատասխան պիտակ է սահմանված, բեռնախցիկում չպետք է տեղադրված լինեն վառելիքի բաքեր, սնուցման աղբյուրներ, այրման կամ տաքացման օդի ներքաշման կամ արտանետման խողովակային ելքեր, որոնք անհրաժեշտ են վառելիքի այրման սարքի աշխատանքի համար: Պետք է ապահովվի, որ բեռը չխանգարի տաքացված օդի արտանետմանը: Ջերմաստիճանը, որի ներքո տաքացվում են փաթեթները, չպետք է գերազանցի 50°C-ը: Բեռնախցիկում տեղադրված տաքացուցիչները պետք է այնպես նախագծվեն, որ նորմալ շահագործման պայմաններում կանխվի պայթյունավտանգ մթնոլորտի բռնկումը:
- 9.4.3. Կոնկրետ վտանգավոր բեռների փոխադրման համար նախատեսված փոխադրամիջոցների թափքի կառուցման լրացուցիչ պահանջներ կամ հատուկ փաթեթվածքներ կարող են ներառվել 7-րդ մասի 7.2 գլխում՝ համաձայն 3.2 գլխի Ա աղյուսակում (16) տրված ցուցումների, որոնք վերաբերում են տվյալ նյութին:

## ԳԼՈՒԽ 9.5

### ՎՏԱՆԳԱՎՈՐ ՊԻՆԴ ՆՅՈՒԹԵՐԻ ԽՈՒՌՆԱԲԵՌՆ ՓՈԽԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿԱՄ ԼՐԱԿԱԶՄՎԱԾ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԹԱՓՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

- 9.5.1. Վառելիքի այրման սարքերը պետք է բավարարեն հետևյալ պահանջները.
- ա) անջատիչը կարող է տեղադրվել վարորդի խցիկից դուրս.
  - բ) սարքը կարող է անջատվել բեռնախցիկի դրսի մասից.
  - գ) անհրաժեշտ չէ ապացուցել, որ ջերմափոխանակիչ սարքը դիմացկուն է հետաշխատանքային կրճատված տեղողությամբ ժամանակահատվածին:
- 9.5.2. Եթե փոխադրամիջոցը նախատեսված է այնպիսի վտանգավոր բեռների փոխադրման համար, որոնց համար 4.1, 4.3 կամ 5.1 մոդելներին համապատասխան պիտակ է սահմանված, բեռնախցիկում չպետք է տեղադրված լինեն վառելիքի բաքեր, սնուցման աղբյուրներ, այրման կամ տաքացման օդի ներքաշման կամ արտանետման խողովակային ելքեր, որոնք անհրաժեշտ են վառելիքի այրման սարքի աշխատանքի համար: Պետք է ապահովվի, որ բեռը չխանգարի տաքացված օդի արտանետմանը: Ջերմաստիճանը, որի ներքո տաքացվում է բեռը, չպետք է գերազանցի 50 °C-ը: Բեռնախցիկում տեղադրված տաքացուցիչները պետք է այնպես նախագծվեն, որ նորմալ շահագործման պայմաններում կանխվի պայթյունավտանգ մթնոլորտի բռնկումը
- 9.5.3. Վտանգավոր պինդ նյութերի խուռնաբեռն փոխադրման համար նախատեսված փոխադրամիջոցների թափքերը պետք է բավարարեն 6.11 եւ 7.3 գլուխների պահանջները՝ ըստ անհրաժեշտության, ինչպես նաեւ 7.3.2 կամ 7.3.3 գլուխների պահանջները, որոնք կարող են կիրառվել կոնկրետ նյութի համար՝ համաձայն 3.2 գլխի Ա աղյուսակի համապատասխանաբար 10-րդ կամ 17-րդ սյունակների ցուցումների:



## ԳԼՈՒԽ 9.6

### ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՄԲ ՆՅՈՒԹԵՐԻ ՓՈԽԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿԱՄ ԼՐԱԿԱԶՄՎԱԾ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

- 9.6.1. Այն իզոթերմային փոխադրամիջոցները, սառնարան-փոխադրամիջոցները եւ մեխանիկական եղանակով սառեցվող սառնարան-փոխադրամիջոցները, որոնք նախատեսված են ջերմաստիճանի կարգավորմամբ նյութերի փոխադրման համար, պետք է համապատասխանեն հետեւյալ պայմաններին՝
- ա) փոխադրամիջոցը պետք է իր մեկուսացման կամ սառեցման միջոցների մասով այնպես սարքավորվի, որ 2.2.41.1.17, 2.2.52.1.16, 2.2.41.4 եւ 2.2.52.4-ով փոխադրվող նյութի համար սահմանված վերահսկման ջերմաստիճանը չգերազանցվի: Ջերմափոխանակման ընդհանուր գործակիցը չպետք է գերազանցի 0,4 Վտ/մ<sup>2</sup>Կ-ն.
  - բ) փոխադրամիջոցը պետք է այնպես սարքավորվի, որ փոխադրվող նյութի կամ սառնազդակի գոլորշիները չթափանցեն վարորդի խցիկ.
  - գ) պետք է տրամադրվի համապատասխան սարք, որով հնարավոր կլինի վարորդի խցիկից ցանկացած պահի որոշել բեռնման հատվածի ջերմաստիճանը.
  - դ) բեռնման հատվածում պետք է լինեն օդափոխման անցքեր կամ փականներ, եթե այդտեղ չափից ավելի վտանգավոր ճնշման առաջացման ռիսկ է առկա: Անհրաժեշտության դեպքում պետք է միջոցներ ձեռք առնվեն, որպեսզի սառցապահումը չխափանվի օդափոխման անցքերի կամ փականների պատճառով.
  - ե) սառնազդակը չպետք է դյուրավառ լինի. եւ
  - զ) սառնարան-փոխադրամիջոցի սառեցման համակարգը պետք է կարողանա աշխատել փոխադրամիջոցը շարժող շարժիչի աշխատանքից անկախ:
- 9.6.2. 7.2 գլխում (R1 - R5) ներկայացված են վերահսկման ջերմաստիճանի գերազանցումը կանխող համապատասխան մեթոդները (տե՛ս V8(3)): Կախված օգտագործված մեթոդից՝ 7.2 գլխում կարող են ներառվել լրացուցիչ դրույթներ փոխադրամիջոցների թափքի կառուցվածքի վերաբերյալ:

## ԳԼՈՒԽ 9.7

### ԱՎԵԼԻ ՔԱՆ 1 Մ<sup>3</sup> ՏԱՐՈՂՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՆՈՎԻ ՑԻՍՏԵՌՆԵՐՈՒՄ ԿԱՄ ԱՎԵԼԻ ՔԱՆ 3 Մ<sup>3</sup> ՈՒՆԵՑՈՂ ՑԻՍՏԵՌՆ-ԿՈՆՏԵՅՆԵՐՆԵՐՈՒՄ, ՇԱՐԺԱԿԱՆ ՑԻՍՏԵՌՆԵՐՈՒՄ ԿԱՄ ԳԲՏԿ-ՈՒՄ (EX/III, FL ԵՎ AT ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐ) ՎՏԱՆԳԱՎՈՐ ԲԵՌՆԵՐԻ ՓՈԽԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՆՇԱՐԺ ՑԻՍՏԵՌՆԵՐԻ (ԱՎՏՈՑԻՍՏԵՌՆԵՐԻ), ՄԱՐՏԿՈՑԱՆՄԱՆ ՀԱՎԱՔՎԱԾՔՈՎ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿԱՄ ԼՐԱԿԱԶՄՎԱԾ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

- 9.7.1. Ընդհանուր դրույթներ
- 9.7.1.1. Բացի բուն փոխադրամիջոցից կամ այն փոխարինող շարժական մասի տարրերից՝ ավտոցիստեռնը բաղկացած է մեկ կամ ավելի կորպուսներից, դրանց սարքավորումներից եւ փոխադրամիջոցին կամ ընթացային մասերին դրանք ամրացնելու կցամասերից:
- 9.7.1.2. Եթե հանովի ցիստեռնը փոխադրամիջոցին է ամրացվել, ապա այդ ամբողջ միավորը բավարարում է ավտոցիստեռնների համար սահմանված պահանջները:
- 9.7.2. Ցիստեռններին վերաբերող պահանջները
- 9.7.2.1. Մետաղից պատրաստված անշարժ ցիստեռնները կամ հանովի ցիստեռնները պետք է համապատասխանեն 6.8 գլխի համապատասխան պահանջներին:
- 9.7.2.2. Մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցների կամ ԳԲՏԿ-ների տարրերը պետք է համապատասխանեն 6.2 գլխի համապատասխան պահանջներին՝ բալոնների, խողովակների, ճնշումային թմբկազլանների եւ բալոնների կապուլկների մասով, ու 6.8 գլխի պահանջներին՝ ցիստեռնների մասով:
- 9.7.2.3. Մետաղից պատրաստված ցիստեռն-կոնտեյներները պետք է համապատասխանեն 6.8 գլխի պահանջներին, շարժական ցիստեռնները պետք է համապատասխանեն 6.7 գլխի պահանջներին կամ, եթե կիրառելի է, ՎԲՄԾ կանոնակարգի պահանջներին (տե՛ս 1.1.4.2):
- 9.7.2.4. Վոլոկնիտից պատրաստված ցիստեռնները պետք է համապատասխանեն 6.9 գլխի պահանջներին:
- 9.7.2.5. Թափոնների վակուումային ցիստեռնները պետք է համապատասխանեն 6.10 գլխի պահանջներին:
- 9.7.3. Ամրակապեր

Ամրակապերը պետք է նախագծվեն այնպես, որ դիմադրեն նորմալ փոխադրման ընթացքում ստատիկ եւ դինամիկ ծանրաբեռնվածությանն ու նվազագույն ծանրաբեռնվածությանը, ինչպես սահմանված է 6.8.2.1.2, 6.8.2.1.11 - 6.8.2.1.13, 6.8.2.1.15 եւ 6.8.2.1.16-ում ավտոցիստեռնների, մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցների եւ հանովի ցիստեռններ ունեցող փոխադրամիջոցների համար:

9.7.4. FL փոխադրամիջոցների հողանցումը

FL ավտոցիստեռնների մետաղից կամ վոլոկնիտից պատրաստված ցիստեռնները եւ FL մարտկոցանման հավաքվածքով փոխադրամիջոցների մարտկոցային տարրերը պետք է ամրացվեն սունիին առնվազն մեկ ամուր էլեկտրական միացումով: Պետք է խուսափել ցանկացած մետաղական կոնտակտից, որը կարող է էլեկտրաքիմիական կոռոզիա առաջացնել:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** *Տե՛ս նաեւ 6.9.1.2-ը եւ 6.9.2.14.3-ը:*

9.7.5. Ավտոցիստեռնների կայունությունը

9.7.5.1. Գետնամերձ հենամակերեսի (նույն սոնու ծախս եւ աջ անվադողի գետնի հետ արտաքին կոնտակտների միջեւ հեռավորությունը) ընդհանուր լայնությունը պետք է առնվազն հավասար լինի բեռնված ավտոցիստեռնի ծանրության ուժի բարձրության 90%-ին: Հողակապակցված փոխադրամիջոցի դեպքում բեռնված կիսակցորդների բեռնակիր միավորի սունիների ծանրաբեռնվածությունը չպետք է գերազանցի ամբողջապես բեռնված վիճակում լրիվ հողակապակցված փոխադրամիջոցի նոմինալ ընդհանուր քաշի 60%-ը:

9.7.5.2. Բացի այդ, ավելի քան 3 մ<sup>3</sup> տարողունակությամբ անշարժ ցիստեռններ ունեցող ավտոցիստեռնները, որոնք նախատեսված են 4 բարից պակաս ճնշումով փորձարկված հեղուկ կամ հալված վիճակում վտանգավոր բեռների փոխադրման համար, պետք է համապատասխանեն ԵՏՀ թիվ 111<sup>1</sup> կանոնակարգի կողային կայունության մասով տեխնիկական պահանջներին, ինչպես փոփոխված է՝ համաձայն այդտեղ նշված կիրառման ամսաթվերի: Պահանջները կիրառելի են այն ավտոցիստեռնների համար, որոնք առաջին անգամ գրանցվել են 2003 թվականի հուլիսի 1-ից հետո:

9.7.6. Փոխադրամիջոցների պաշտպանությունը հետեւի կողմից

Փոխադրամիջոցների հետեւի մասն ամբողջ երկայնքով պետք է

---

<sup>1</sup> ԵՏՀ թիվ 111 կանոնակարգ, Շրջվելու դեմ կայունության մասով N եւ O կարեգործիայի ավտոցիստեռնների հաստատման ընդհանուր դրույթները:

սարքավորված լինի հետեւի կողմից հարվածից բավարար պաշտպանություն ապահովող թափարգելով: Ցիստեռնի հետեւի պատի եւ թափարգելի հետնամասի միջեւ պետք է լինի առնվազն 100 մմ տարածություն (այդ տարածությունը չափվում է սկսած ցիստեռնի ամենահետին կետից, ցցուն կցամասերից կամ օժանդակ սարքերից, որոնք փոխադրվող նյութի հետ շփում ունեն): Փոշենման կամ հատիկավոր նյութեր փոխադրելու համար թեքվող կորպուս ունեցող փոխադրամիջոցները եւ թափոնների, թեքվող կորպուսով հետնամասային բեռնաթափմամբ վակուումային ցիստեռնները թափարգել չեն պահանջում, եթե կորպուսի հետնամասային կցամասերն ապահովված են պաշտպանության այնպիսի միջոցներով, որոնք պաշտպանում են կորպուսը նույն կերպ, ինչ թափարգելը:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1.** Սույն դրույթը չի կիրառվում այն փոխադրամիջոցների դեպքում, որոնք նախատեսված են ցիստեռն-կոնտեյնիւրներում, ԳՐՏԿ-ներում կամ շարժական ցիստեռններում վրանգավոր բեռների փոխադրման համար:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2.** Տե՛ս 6.8.2.1.20 եւ 6.8.2.1.21՝ ցիստեռնները կողային հարվածից կամ շրջվելուց կամ 6.7.2.4.3 եւ 6.7.2.4.5՝ շարժական ցիստեռնները վնասվելուց պաշտպանելու համար:

9.7.7. Վառելիքի այրման սարքեր

9.7.7.1. Վառելիքի այրման սարքերը պետք է բավարարեն 9.2.4.7.1, 9.2.4.7.2, 9.2.4.7.5-ի եւ հետեւյալ պահանջները՝

- ա) անջատիչը կարող է տեղադրվել վարորդի խցիկից դուրս.
- բ) սարքը կարող է անջատվել բեռնախցիկի դրսի մասից. եւ
- գ) անհրաժեշտ չէ ապացուցել, որ ջերմափոխանակիչ սարքը դիմացկուն է հետաշխատանքային կրճատված տեւողությամբ ժամանակահատվածում:

Եթե այդ սարքերը տեղադրված են FL փոխադրամիջոցների վրա, ապա դրանք պետք է բավարարեն 9.2.4.7.3-ի եւ 9.2.4.7.4-ի պահանջները:

9.7.7.2. Եթե փոխադրամիջոցը նախատեսված է այնպիսի վտանգավոր բեռների փոխադրման համար, որոնց համար 1.5, 3, 4.1, 4.3, 5.1 կամ 5.2 մոդելներին համապատասխան պիտակ է սահմանված, բեռնախցիկում չպետք է տեղադրված լինեն վառելիքի բաքեր, սնուցման աղբյուրներ, այրման կամ տաքացման օդի ներքաշման կամ արտանետման խողովակային ելքեր, որոնք անհրաժեշտ են վառելիքի այրման սարքի աշխատանքի համար: Պետք է ապահովվի, որ բեռը չխանգարի տաքացված օդի արտանետմանը: Ջերմաստիճանը, որի ներքո տաքացվում է բեռը, չպետք է գերազանցի 50 °C-ը: Բեռնախցիկում տեղադրված տաքացուցիչները պետք է այնպես

նախագծվեն, որ նորմալ շահագործման պայմաններում կանխվի պայթյունավտանգ մթնոլորտի բռնկումը:

9.7.8. Էլեկտրական սարքավորումներ

9.7.8.1. FL փոխադրամիջոցների վրա տեղադրված էլեկտրական սարքավորումները, պետք է բավարարեն 9.2.2.1, 9.2.2.2, 9.2.2.4, 9.2.2.5, 9.2.2.6, 9.2.2.8 եւ 9.2.2.9.1. ենթակետերի պահանջները:

Սակայն փոխադրամիջոցի էլեկտրական սարքավորումների լրացումները կամ փոփոխությունները պետք է բավարարեն էլեկտրական սարքերի համապատասխան խմբի եւ ջերմաստիճանային դասի պահանջները՝ ըստ փոխադրվող նյութերի:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** Անցումային դրույթների համար տե՛ս նաեւ 1.6.5:

9.7.8.2. FL փոխադրամիջոցների էլեկտրական սարքավորումները, որոնք տեղակայված են այնպիսի մասերում, որտեղ առկա է կամ հնարավոր է պայթյունավտանգ մթնոլորտ այն չափերով, որ պահանջվում է հատուկ ուշադրություն, պետք է համապատասխան լինեն վտանգավոր գոտում օգտագործելու համար: Այդ սարքավորումները պետք է համապատասխանեն IEC 60079 ստանդարտի 0 եւ 14 մասի ընդհանուր պահանջներին ու IEC 60079 ստանդարտի 1, 2, 5, 6, 7, 11 կամ 18 մասերի լրացուցիչ պահանջներին: Էլեկտրական սարքերի համապատասխան խմբի եւ ջերմաստիճանային դասի պահանջները՝ ըստ փոխադրվող նյութերի, պետք է բավարարվի:

IEC 60079 ստանդարտի 14 մասի կիրառման համար պետք է օգտագործվի հետեւյալ դասակարգումը՝

#### ԳՈՏԻ 0

Ցիստեռնի խցիկի ներսի մասը, լցավորման կամ արտանետման կցամասերը եւ գոլորշին հավաքող խողովակաշարերը:

#### ԳՈՏԻ 1

Լցավորման եւ արտանետման համար օգտագործվող սարքավորումների պահարանների ներսի մասը եւ օդափոխման սարքերից ու ճնշման նվազեցման ապահովիչ կափույրներից 0,5 մ-ի սահմաններում ընկած գոտին:

9.7.8.3. Մշտապես էլեկտրական հոսանքի տակ գտնվող սարքավորումները, ներառյալ՝ կապակցող մալուխները, որոնք տեղակայված են 0 եւ 1-ին գոտիներից դուրս, պետք է բավարարեն 1-ին գոտու՝ էլեկտրական սարքավորումների մասով ընդհանուր պահանջները կամ 2-րդ գոտու պահանջները՝ համաձայն IEC 60079 ստանդարտի՝ վարորդի խցիկում տեղակայված էլեկտրական սարքավորման վերաբերյալ 14102 մասի: Էլեկտրական սարքերի համապատասխան խմբի պահանջները՝ ըստ

փոխադրվող նյութերի, պետք է բավարարվեն:

- 9.7.9. EX/III փոխադրամիջոցներին առնչվող անվտանգության լրացուցիչ պահանջները
- 9.7.9.1. EX/III փոխադրամիջոցները պետք է սարքավորվեն շարժիչի խցիկի համար ավտոմատ կրակմարիչով:
- 9.7.9.2. Մետաղե ջերմային պատնեշներով բեռի պաշտպանությունն անվադողերի բռնկումից:

### **ԳԼՈՒԽ 9.8**

#### **ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿԱՄ ԼՐԱԿԱԶՄՎԱԾ ՊԱՇՄ-ՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ**

- 9.8.1. Ընդհանուր դրույթներ

Բացի բուն փոխադրամիջոցից կամ այն փոխարինող շարժական մասի տարրերից, ՊԱՇՄ-ը բաղկացած է մեկ կամ ավելի ցիստեռններից եւ սորուն բեռների համար նախատեսված կոնտեյներներից, դրանց սարքավորումներից եւ փոխադրամիջոցին կամ ընթացային մասերին դրանք ամրացնելու կցամասերից:

- 9.8.2. Սորուն բեռների համար նախատեսված կոնտեյներներին եւ ցիստեռններին վերաբերող պահանջները

Ցիստեռնները, սորուն բեռների համար նախատեսված կոնտեյներները եւ ՊԱՇՄ-ների պայթուցիկների փաթեթների համար նախատեսված հատուկ խցիկները պետք է բավարարեն 6.12 գլխի պահանջները:

- 9.8.3. ՊԱՇՄ-ների հողանցումը

Մետաղից կամ վոլոկնիտից պատրաստված ցիստեռնները, սորուն բեռների համար նախատեսված կոնտեյներները եւ պայթուցիկների փաթեթների համար նախատեսված հատուկ խցիկները պետք է ամրացվեն սոնուն առնվազն մեկ ամուր էլեկտրական միացումով: Ցանկացած մետաղական կոնտակտ, որը կարող է առաջացնել էլեկտրաքիմիական կոռոզիա կամ ռեակցիա մեջ մտնել ցիստեռններում եւ սորուն բեռների համար նախատեսված կոնտեյներներում փոխադրվող վտանգավոր բեռների հետ, պետք է խուսափվի:

- 9.8.4. ՊԱՇՄ-ների կայունությունը

Գետնամերձ հենամակերեսի (նույն սոնու ձախ եւ աջ անվադողի գետնի

հետ արտաքին կոնտակտների միջեւ հեռավորությունը) ընդհանուր լայնությունը պետք է առնվազն հավասար լինի բեռնված փոխադրամիջոցի ծանրության ուժի բարձրության 90%-ին: Հողակապակցված փոխադրամիջոցի դեպքում բեռնված կիսակցորդների բեռնակիր միավորի սունիների ծանրաբեռնվածությունը չպետք է գերազանցի ամբողջապես բեռնված վիճակում լրիվ հողակապակցված փոխադրամիջոցի նոմինալ ընդհանուր քաշի 60%-ը:

9.8.5. ՊԱՇՄ-ների պաշտպանությունը հետեւի կողմից

Փոխադրամիջոցների հետնամասի ցիստեռնն ամբողջ երկայնքով պետք է սարքավորված լինի հետեւի կողմից հարվածից բավարար պաշտպանություն ապահովող թափարգելով: Ցիստեռնի հետեւի պատի եւ թափարգելի հետնամասի միջեւ պետք է լինի առնվազն 100 մմ տարածություն (այդ տարածությունը չափվում է սկսած ցիստեռնի ամենահետին կետից, պաշտպանիչ կցամասերից կամ օժանդակ սարքերից, որոնք փոխադրվող նյութի հետ շփում ունեն): Թեքվող կորպուս ունեցող փոխադրամիջոցները թափարգել չեն պահանջում, եթե կորպուսի հետնամասային կցամասերն ապահովված են պաշտպանության այնպիսի միջոցներով, որոնք պաշտպանում են կորպուսը նույն կերպ, ինչ թափարգելը:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.** Սույն դրույթը չի տարածվում ՊԱՇՄ-ների վրա, եթե ցիստեռնները պատշաճորեն պաշտպանված են հետեւի կողմի հարվածից այլ միջոցներով, օրինակ՝ վրանգավոր բեռներ չպարունակող տեխնիկայի կամ խողովակաշարերի միջոցով:

9.8.6. Վառելիքի այրման սարքեր

9.8.6.1. Վառելիքի այրման սարքերը պետք է բավարարեն 9.2.4.7.1, 9.2.4.7.2, 9.2.4.7.5, 9.2.4.7.6-ի եւ հետեւյալ պահանջները՝

- ա) անջատիչը կարող է տեղադրվել վարորդի խցիկից դուրս.
- բ) սարքը կարող է անջատվել ՊԱՇՄ խցիկի դրսի մասից. եւ
- գ) անհրաժեշտ չէ ապացուցել, որ ջերմափոխանակիչ սարքը դիմացկուն է հետաշխատանքային կրճատված տեղողությամբ ժամանակահատվածում:

9.8.6.2. Ցիստեռններ պարունակող բեռնախցիկում չպետք է տեղադրված լինեն վառելիքի այրման սարքեր կամ վառելիքի բաքեր, սնուցման աղբյուրներ, այրման կամ տաքացման օդի ներքաշման կամ արտանետման խողովակային ելքեր, որոնք անհրաժեշտ են վառելիքի այրման սարքի աշխատանքի համար: Պետք է ապահովվի, որ

տաքացված օդի արտանետմանը ոչինչ չխանգարի: Ջերմաստիճանը, որի ներքո տաքացվում է ցանկացած սարքավորում, չպետք է գերազանցի 50 °C-ը: Խցիկներում տեղադրված տաքացուցիչները պետք է այնպես նախագծվեն, որ նորմալ շահագործման պայմաններում կանխվի պայթյունավտանգ մթնոլորտի բռնկումը:

9.8.7. Անվտանգության լրացուցիչ պահանջներ

9.8.7.1. ՊԱՇՄ-ները պետք է սարքավորվեն շարժիչի խցիկի համար ավտոմատ կրակմարիչով:

9.8.7.2. Մետաղե ջերմային պատնեշներով բեռի պաշտպանությունն անվադողերի բռնկումից:

9.8.8. Անվտանգության լրացուցիչ պահանջներ

ՊԱՇՄ-ներում տեխնոլոգիական սարքավորումները եւ հատուկ խցիկները պետք է ապահովվեն կողպեքներով:

## **Ուղղումներ**



Վաճառք թիվ E.16.VIII.1  
(ECE/TRANS/257, հատոր I և II)  
2017 թվականի մարտ  
Նյու Յորք և ժնև

«ՎՏԱՆԳԱՎՈՐ ԲԵՌՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ  
ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ  
(«ԱԴՌ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ)  
(կիրառվում է 2017 թվականի հունվարի 1-ից)

Ուղղումներ

Ծանոթագրություն. «ԱԴՌ» համաձայնագրի հրապարակված տարբերակների ուղղումները, դրանք թողարկելուց հետո, ինչպես նաև մինչև հաջորդ տարբերակն ուժի մեջ մտնող փոփոխությունները տեղադրվում են Միավորված ազգերի կազմակերպության Եվրոպայի հարցերով տնտեսական հանձնաժողովի կայքէջում հետևյալ հասցեով՝ [www.unece.org/trans/danger/danger.html](http://www.unece.org/trans/danger/danger.html)

ՀԱՏՈՐ I

1. Գլուխ 2.2, 2.2.2.1.7, ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ 4-ի առաջին նախադասությունից հետո

Տեքստը չպետք է գրվի շեղատառ:

2. Գլուխ 2.2, 2.2.7.2.3.3.6 (ա)(i)

«հավասար կամ պակաս է» բառերը կարդալ՝ «պակաս է»:

3. Գլուխ 3.2, 3.2.1, Աղյուսակ Ա, սյունակ (12), աջ կողմի էջ, 3531 և 3533 համարներ

«SGAN+»-ը կարդալ՝ «SGAN(+)

4. Գլուխ 3.2, 3.2.1, Աղյուսակ Ա, սյունակ (12), աջ կողմի էջ, 3532 և 3534 համարներ

«L4BN+» կարդալ՝ «L4BN(+)

5. Գլուխ 3.3, հատուկ դրույթ 363 (ա)

Ջնջել այն քանակությունները, որոնք բարձր են 3.2 գլխի Աղյուսակ Ա-ի սյունակ (7ա)-ում նշված քանակություններից:

## ՀԱՏՈՐ II

6. Բովանդակություն, 5.4.2

«Մեծ կոնտեյներ» բառերը կարդալ՝ «Կոնտեյներ»:

7. Գլուխ 4.1, 4.1.4.1, P650 (14), վերջում

«միեւնույն փոխադրամիջոցով կամ կոնտեյներով» բառերը կարդալ՝ «միեւնույն բեռի տրանսպորտային միավորով»:

8. Գլուխ 4.3, 4.3.2.3.7, առաջին պարբերություն, վերջում

«6.8.3.4.10»-ը կարդալ «6.8.3.4.12»:

9. Գլուխ 4.3, 4.3.4.1.3 (բ), ՄԱԿ-ի նշագրման 3533 համար (ծածկագիր՝ SGAN) եւ ՄԱԿ-ի նշագրման 3534 համար (ծածկագիր՝ L4BN)

Ջնջել «ստաբիլիզացված» բառը:

10. Գլուխ 5.4, 5.4.3.4, գրավոր ցուցումների մոդելի երկրորդ էջ, առաջին սյունակ, Նախագրուշացնող պիտակներ եւ տեղեկատվական ցուցանակներ<sup>3</sup>, բջջի վերելում

Լրացնել «Պայթյունավտանգ հեղուկներ»:

Ծանոթագրություն. Սույն ուղղումը չի վերաբերում էլեկտրոնային տարբերակին:

11. Գլուխ 6.1, 6.1.3.1 (ա) (i), «Ծալքավորված մետաղից փաթեթվածքների» բառերից առաջ

Լրացնել «Նշված խորհրդանշանը չպետք է օգտագործվի այն փաթեթվածքի համար, որը բավարարում է 6.1.1.3, 6.1.5.3.1 (ե), 6.1.5.3.5 (զ), 6.1.5.4, 6.1.5.5.1 եւ 6.1.5.6-ով (տե՛ս նաեւ (ii) ստորեւ) նախատեսվող պարզեցված պայմանները»:

12. Գլուխ 6.2, 6.2.2.7.2 (ա), վերջում

Լրացնել «Այդ խորհրդանշանը չպետք է օգտագործվի այն ճնշումային տարաների դեպքում, որոնք համապատասխանում են միայն 6.2.3 - 6.2.5-ի պահանջներին (տես՝ 6.2.3.9).»:

13. Գլուխ 6.8, 6.8.3.2.15, վերջին նախադասությունը («Մեկուսացման համակարգի արդյունավետության փորձարկման տեսակի համար տե՛ս 6.8.3.4.11:»)

Տեղափոխել աջ կողմի սյունակ:

14. Գլուխ 7.5, 7.5.2.1, աղյուսակ, վերջին տողի եւ վերջին սյունակի անվանումը

«9» կարդալ՝ «9, 9Ա»:

15. Գլուխ 7.5, 7.5.5.3

Լրացնել հետևյալ վերնագրով՝

«Օրգանական պերօքսիդների, ինքնատեակտիվ նյութերի եւ պոլիմերային նյութերի հետ կապված սահմանափակումները»:

16. Գլուխ 9.2, 9.2.1.1, աղյուսակ, 9.2.2.6, աղյուսակի ծանոթագրություն Գ, «որը գերազանցում է 3,5 տոննան» բառերից առաջ

Կիրառելի չէ հայերեն տարբերակում:

17. Գլուխ 9.2, 9.2.1.1, աղյուսակ, 9.2.4.3, երկրորդ սյունակ

«Վառելիքի բաքեր» բառերը շարադրել հետևյալ կերպ՝ «Վառելիքի բաքեր եւ բալոններ»:

18. Գլուխ 9.2, 9.2.1.1, աղյուսակ 9.2.6, աղյուսակի ծանոթագրություն Ժ, «առաջին անգամ գրանցվել են» բառերից առաջ

Ջնջել «եւ մեխանիկական փոխադրամիջոցների» բառերը:

19. Գլուխ 9.2, 9.2.1.1, աղյուսակ, վերջում

Լրացնել հետևյալ տողով՝

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐ		ՓՈՒԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐ				ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ
		EX/II	EX/II	FL	AT	
9.2.7	Վառելիքից առաջացող այլ ռիսկերի կանխարգելում			X	X	

20. Գլուխ 9.2, 9.2.2.6.2, առաջին տողագլուխ

«ISO 12098:20041, ISO 7638:20031, EN 15207:20141 կամ ISO 25981:20081» բառերը շարադրել հետևյալ կերպ՝ «ISO 12098:20041, ISO 7638:20031, EN 15207:20141 կամ ISO 25981:20081»:

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 1957թ. սեպտեմբերի 30-ին ստորագրված «Վտանգավոր բեռների միջազգային ճանապարհային փոխադրումների մասին» եվրոպական համաձայնագրի հայերեն պաշտոնական թարգմանությունն է:



**Հայաստանի Հանրապետության  
արտաքին գործերի նախարարություն**